ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1915-1922թթ.)



9(47.925
Ս-85

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ – ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3103

ԳՐԱԴԱՐԱՆ
B[illegible]TEKA

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ – 2000

Նվիրվում է
Հայոց Ցեղասպանության
85-ամյակին

Ջ Ո Ն

Սույն հատորը հրատարակվում է մեկենասությամբ
Մեծի Տաճն Կիլիկիո Կաթողիկոսության:
Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում
Մեծի Տաճն Կիլիկիո
Նորին Սուրբ Օծությունն Տեր Տեր
ԱՐԱՄ Ա. Կաթողիկոսին,
քանզի իր հայրապետական լուսամիտ հովանավորությամբ
հրատարակելով
հայ ժողովրդի պատմական հիշողությունը՝
որպես անցյալի վկայություն և ապագայի նախազգուշացում,
այն ներկայացվում է
աշխարհին և մարդկության արդար դատին:

Վ. Ս.

Dedicated
to the 85th Anniversary
of the Armenian Genocide

DEDICATION

This volume is published with the patronage of

the Catholicosate of the Eminent House of Cilicia.

We express our deep gratitude to

His Holiness

ARAM I Catholicos

of the Eminent House of Cilicia
for, publishing with his patriarchal enlightened patronage

the historical memory of the Armenian nation,

as an evidence of the past and a warning for the future,

it is presented to the world and to the impartial judgement of mankind.

V. S.

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

MUSEUM–INSTITUTE OF THE ARMENIAN GENOCIDE

VERJINÉ SVAZLIAN

THE ARMENIAN GENOCIDE

TESTIMONIES OF THE EYE-WITNESS SURVIVORS

"GITUTIUN" PUBLISHING HOUSE OF THE NAS RA
YEREVAN – 2000

Dédié
au 85e Anniversaire
du Génocide des Arméniens

DEDICATION

Ce volume est publié sur le mécénat du
Catholicossat de la Maison Eminente de Cilicie.
Nous exprimons notre profonde gratitude à
Sa Sainteté
ARAM Ier Catholicos
de la Maison Eminente de Cilicie
car c'est sous son saint patronage éclairé que la
publication de la mémoire historique du peuple arménien,
comme témoignage du passé et avertissement d'avenir,
est présenté du monde et au jugement équitable de l'humanité.

V. S.

ACADEMIE NATIONALE DES SCIENCES
DE LA REPUBLIQUE D'ARMENIE

MUSEE–INSTITUT DU GENOCIDE DES ARMENIENS

VERJINÉ SVAZLIAN

LE GENOCIDE DES ARMENIENS

TEMOIGNAGE DES SURVIVANTS

EDITIONS "GUITOUTIUN" ANS RA
EREVAN – 2000

Посвящается
85-летию
Геноцида Армян

ПОСВЯЩЕНИЕ

Настоящий том публикуется под меценатством

Католикосата Великого Дома Киликии.

Выражаем глубокую признательность

Его Первосвятейшеству

АРАМУ I, Католикосу

Великого Дома Киликии,

ибо, издав под своим патриаршеским просветительским покровительством

историческую память армянского народа,

как свидетельство прошлого и предостережение будущему,

предоставляет ее миру и на справедливый суд человечества.

В. С.

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МУЗЕЙ-ИНСТИТУТ ГЕНОЦИДА АРМЯН

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

ГЕНОЦИД АРМЯН

СВИДЕТЕЛЬСТВА ОЧЕВИДЦЕВ

ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
ЕРЕВАН – 2000

ԳՏՀ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) 52
Ս 850

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝
պատմական գիտությունների դոկտոր *Հավրենտի Բարսեղյան*
բանասիրական գիտությունների դոկտոր *Սարգիս Հարությունյան*
պատմական գիտությունների թեկնածու *Ալեքսանդր Սաֆարյան*

ՍՎԱԶԼՅԱՆ Վ.Գ.

Ս 850 Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ / Խմբ.՝ Լ. Ա. Բարսեղյան, Ս. Բ. Հարությունյան, Ա. Վ. Սաֆարյան: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ – Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 500 էջ, 1 մամ. ներդիր, քարտեզ:

Ժողովածուն ընդգրկում է Արևմտյան Հայաստանից, Կիլիկիայից և Անատոլիայի հայաբնակ շրջաններից տարագրված, Հայաստանում, մասամբ նաև Սիրիայում բնակություն հաստատած Հայոց ցեղասպանության ականատես–վկա վերապրողներից գրի առնված, ձայնագրված ու տեսագրված ժողովրդական բանավոր հուշերը, պատմական բնույթի զրույցներն ու երգերը (600 միավոր): Բարբառային ուսումնասիրություններին կցված են գրական լեզվով թարգմանություններ: Պատմաբանագիտական ակնարկում պատմական ու ժողովրդագիտական տվյալների հիման վրա ներկայացված են արևմտահայության բաժին ընկած ողբերգական կյանքի դրվագները, նրանց ազնիվ ու արդար ոգորումները՝ պաշտպանելու համար իրենց ապրելու մարդկային տարրական իրավունքը: Ժողովածուն ունի նաև բառարան, երգերի նոտագրություններ, նյութերի և վերապրողների մասին տեղեկատվական ծանոթագրություններ, լուսանկարներ, տեղահանության և ցեղասպանության մասին քարտեզ, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն ամփոփումներ:

Նախատեսվում է քաղաքագետների, պատմաբանների, բանասերների, ազգագրագետների և ժողովրդագիտությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանների համար:

Ս 0503020913 / 703(02) - 00 2000

ԳՄԴ 63.3 (2Հ) 52

ISBN 5 – 8080 – 0433 – 0

© Վ. ՍՎԱԶԼՅԱՆ, 2000

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սույն ժողովածուն ընդգրկում է Հայոց ցեղասպանությունից վերապրած սերնդից անմիջականորեն գրի առնված ժողովրդական բանավոր վկայությունները, երգերը, որոնք տասնամյակների ընթացքում մեծ համբերությամբ ու ևվիրվածությամբ գրի է առել բանասիրական գիտությունների դոկտոր Վերժինե Սվազլյանը:

Ժողովածուն ունի հույժ պատմական, անգամ քաղաքական արժեք ու նշանակություն, մասնավորապես այնտեղ զետեղված Հայոց ցեղասպանության սահմռկեցուցիչ տեսարանները պատկերող բազմաթիվ հուշապատումներով և դերզորյան տառապանքներն ու ողբերգական մտորումներն արձանագրող ժողովրդական հայերեն ու թուրքալեզու երգերով:

Կատարված է տքնաջան ու շնորհակալ մեծ աշխատանք Հայոց ցեղասպանությունից վերապրողների (որոնք արդեն չկան) խամրող հիշողությունից և հավերժ մոռացության վտանգից հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ողբերգական ու հերոսական պատմության անգուգական հուշերն ու երգերը փրկելու և անմահացնելու ուղղությամբ:

Այդ նյութերն իսկապես պատմական կարևորագույն վավերագրեր են հայոց մեծագույն ողբերգության ցնցող պատկերները ժողովրդական կենդանի լեզվով վերարտադրելու առումով:

Բացի բնագրերից, ժողովածուն ունի նյութերը գիտական վերլուծության ենթարկող Ներածություն և Պատմաբանագիտական ակնարկ, որտեղ հեղինակն իր գրառած հա-

րուստ ու բազմազան նյութերը հմտորեն զուգակցել է պատմական ստույգ փաստերի հետ և առաջինները դարձրել պատմական ճշմարտությունները հավաստող, հիմնավորող, մանրամասնող ժողովրդական յուրօրինակ վավերագրեր: Հարկ է նշել, որ հեղինակն առաջինն է գիտական շրջանառության մեջ դրել Հայոց ցեղասպանության շուրջ հյուսված հիշյալ նյութերը՝ հատկապես ժողովրդական հուշերն ու թուրքալեզու երգերը:

Ժողովածուն օժտված է բառարանով, անհրաժեշտ ծանոթագրություններով, երգերի նոտագրություններով, լուսանկարներով և ամենակարևորը՝ թուրքալեզու երգերին ու բարբառային բնագրերին կցված գրառողի կատարած թարգմանություններով, որոնք մեծապես դյուրացնում են նյութերի ընկալումը:

Ականատեսների այդ հուշերն ու մանավանդ թուրքալեզու երգերն ունեն պատմական վավերագրերի արժեք ոչ միայն հայ ժողովրդի ողբերգական այդ շրջանի պատմությունը ճիշտ հասկանալու և ըմբռնելու իմաստով, այլև Հայ Դատի պաշտպանությունն առավել հիմնավորելու և հատկապես թուրք ու թուրքամետ պատմաբաններին հենց թուրքալեզու երգերով ու նրանցում հնչող մեղադրանքներով հակահարված տալու առումով:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բանասիրության դոկտոր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որքան տարիներն անցնում են, այնքան ավելի է մեծանում հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ, մանավանդ որ, թուրք ու թուրքամետ պատմաբաններն առ այսօր ամեն կերպ ընդգնում են խեղաթյուրել հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած 1915-1922 թթ. պատմական ստույգ իրողությունները:

Հայոց ցեղասպանության մասին տարբեր լեզուներով լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, հաղթագետների և հասարակական գործիչների ասույթներ, գեղարվեստական ստեղծագործություններ, սակայն հրատարակված այդ գրականության մեջ բացակայել են պատմական հիշյալ իրադարձություններից անմիջական տպավորություններ ստացած ականատես–վկա վերապրողների պատմած հուշերն ու հաղորդած ժողովրդական երգերը, որոնք ևս պատմանանչողական և փաստավավերագրական կարևոր արժեք են ներկայացնում: Քանի որ հայ ժողովուրդն ի՛նքն է կրել այդ բոլոր անասելի տառապանքները, հետևաբար, ժողովուրդն ի՛նքն է այդ զանգվածային ոճրագործության առարկան (object): Եվ ինչպես ամեն մի հանցագործություն բացահայտելիս որոշիչ են վկաների ցուցմունքները, նույնպես և այս պարագայում պետք է հենվել նաև ականատես վերապրողների վկայությունների վրա, որոնցից յուրաքանչյուրն ապացուցողական նշանակություն ունի Հայ Դատի արդարացի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման գործում:

Տակավին 1956 թվականից, երբ Խորհրդային Հայրենիքում Հայոց ցեղասպանության մասին բացահայտ խոսել չէր կարելի, երբ մազապուրծ վերապրած ականատես–վկա տարագիր հայրենադարձները հանիրավի զրպարտվելու և ամոթվելու վախ ու դողի մեջ էին ապրում, ես՝ Երևանի Խ. Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտի նորավարտս, արհամարհելով ամեն կարգի դժվարություն և գիտակցելով ժողովրդական բանավոր ավանդության այդ կարգի նյութերի պատմագիտական և փաստավավերագրական արժեքը, սկզբում արևմտահայի արյան կանչով և անձնական նախաձեռնությամբ, իսկ 1960 թվականից Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հովանու ներքո, գիտական այլ աշխատանքներին զուգահեռ, ամառվա կիզիչ արևին, ձմեռվա ցուրտ սառնամանիքին, թաղից թաղ, գյուղից գյուղ ոտով շրջելով, Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված ականատես–վկաներին որոնել–գտնելով, նրանց հոգեբանորեն մոտեցնալով, առանց կողմնակի հարցերով շեղելու նրանց ուշադրությունը, այլ թողնելով ազատ արտահայտել իրենց անմիջական տպավորությունները, գրի ենք առել (նաև ձայնագրել) նրանց պատմած սահմռկեցուցիչ հուշերը, տպավորիչ զրույցներն ու պատմական տարաբնույթ երգերը, որոնք մինչ այդ ո՛չ Հայրենիքում և ո՛չ Սփյուռքում չէին գրառվել և հրատարակվել[1]:

Այնուհետև, 1995 թ. Միջեռնակաբերդում (Երևան), հիմնադրված Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի տնօրինության ընձեռած հնարավորություններով, շարունակել ենք այդ աշխատանքները[2] ոչ միայն գրառելով, ձայնագրելով, այլև՝ տեսագրելով (օպերատոր՝ Գալուստ Հալաջյան) 80-ից ավելի վերապրող ականատես–վկաների պատմած հուշերը, որոնք, համալրելով անցյալում և հետագայում մեր գրառած այլ հուշերի հետ, ամփոփել ենք սույն հատորի մեջ:

Որոշ կրճատումներով հատորում ընդգրկել ենք նաև ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի արխիվի Ձեռագիր օրագրերի և

---

[1] *Տե՛ս Վ. Սվազլյան, Մուսա լեռ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 16, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984: Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1994: Մեծ եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1995:*

[2] *Տե՛ս Վ. Սվազլյան, Մեծ եղեռնը հայ ժողովրդական հուշապատումներում և թուրքալեզու երգերում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1997: Геноцид в воспоминаниях и туркоязычных песнях западных армян. Изд. "Гитутюн" НАН РА, Ереван, 1997. The Armenian Genocide in the Memoirs and Turkish Language Songs of the Eye-Witness Survivors. "Gitutiun" Publishing House of the NAS RA, 1999.*

հուշապատումների ֆոնդում պահվող ականատես–վկա վերապրողների հուշագրությունները (12 միավոր), որոնք գալիք սերունդներին ավանդ թողնելու նպատակով, անցյալում թղթին էին հանձնել իրենց անմիջական տպավորությունները՝ հուշերի ձևով:

Հատորում տեղ ենք տվել նաև ֆրանսահայ ազգային բարեգործ Վահե–Մամաս Քիրապճյանի կողմից Լիոնում գրի առնված ականատես վերապրողների պատմած հուշերին (5 միավոր)[3]:

Մեր ուշադրությունից չեն վրիպել նաև ՀՀ ԳԱԱ Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի նախկին գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Նուբար Զալըմյանի ղեկավարությամբ և այլոց համագործակցությամբ [Մալրի Ղազարյան (ԱՄՆ), Սարգիս Քեշիշյան (Բելգիա), Վահան Գյուրջյան, Արամ Գրիգորյան, Ղուկաս Հակոբյան], 1989 թ. Հայաստանի տարածքում տեսագրված Հայոց ցեղասպանությունից վերապրող ականատես–վկաների պատմած հուշերը (33 միավոր): Այդ աշխատանքը կատարելիս նրանք հիմք էին ընդունել ԱՄՆ-ի Զորյան ինստիտուտի կազմած «Բանավոր պատմության ծրագիր» հարցարանը: Սակայն ինչպես հիշյալ տեսաերիզները, նույնպես և Մեծ եղեռնի ճահճակ իրավաբան–գրող Գրիգոր Զոհրապի դստեր՝ Դոլորես Զոհրապ–Լիպմանի պատմած հուշի ձայնագրությունը (կատարված Ն. Զալըմյանի կողմից 1989 թ. Նյու Յորքում), մինչև օրս չէին վերծանվել և գիտական շրջանառության մեջ չէին դրվել: Վերջիններս, ինչպես նաև մեր կողմից ձայնագրված ու տեսագրված հուշերը, պատմական բնույթի զրույցներն ու երգերը (550 միավոր) համբերությամբ, բառ առ բառ վերծանելով ու համադրելով, ամփոփել ենք սույն ժողովածուի մեջ:

Ներկա հատորում ի մի բերված ժողովրդական բոլոր նյութերը (600 միավոր) պահվում են ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան–ինստիտուտի արխիվում (տե՛ս հատորիս Մանրաթարգությունների բաժինը):

Ժողովրդական այդ նյութերը հաղորդող շուրջ 550 վերապրող–բանասացները գերազանցապես ավագ սերնդի ներկայացուցիչներն են՝ իրենց պատմական բնօրրանից բռնագաղթված հայերը, որոնք 1915 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ տարագրվել են Արևմտահայաստանից, Կիլիկիայից (1921 թ.) և Անատոլիայի հայաթափ գավառներից (1922 թ. Իզմիրի աղետ):

Պատմական այդ իրադարձությունների ընթացքում արևմտահայության զգալի մասն անխնա բնաջնջվել է, իսկ հրաշքով փրկվածները, գաղթի ճամփաների գրկաճիները ճաշակելով և բազմաթիվ զոհեր տալով, հասել են Արևելյան Հայաստան կամ՝ սփռվել աշխարհի տարբեր երկրներ: Հետագայում այդ մնացորդացի որոշ մասը Կ.Պոլսից, Հունաստանից, Ֆրանսիայից, Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Եգիպտոսից, Բալկանյան երկրներից և Ամերիկայից պարբերաբար ներգաղթել են Մայր Հայաստան և բնակություն հաստատել իրենց երբեմնի բնօրրանների հիշատակները խորհրդանշող Երևանի մերձակա նորակառույց թաղամասերում (Այգեստան, Սարի թաղ, Նոր Բութանիա, Նոր Արեշ, Նոր Խարբերդ, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Նոր Եդեսիա, Նոր Այնթապ, Նոր Արաբկիր, Նոր Մարաշ, Նոր Հաճըն, Նոր Զեյթուն, Նոր Մուսալեռ, Նոր Կիլիկիա), ինչպես նաև Վաղարշապատում, Արմավիրում, Արարատում, Թալինում, Հրազդանում, Գյումրիում, Վանաձորում և այլուր:

Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված վերապրող ականատես–վկաներին մենք մշտապես հանդիպել ենք իմ ճամփոփ ու լուռ՝ իրենց մտորումների մեջ խորասուզ: Այդ խորհրդավոր լռությունը ևս ունեցել է իր պատճառը, քանի որ տասնամյակներ շարունակ խորհրդային Հայրենիքում տիրող քաղաքական արգելքները թույլ չեն տվել իրենց անցյալի մասին ազատ ու անկաշկանդ պատմել կամ վիպել: Հետևաբար, այդ կարգի նյութերը մեծ դժվարությամբ ենք հայտնաբերել ու գրի առել:

Հարատևելիք տարիների ընթացքում մեր հետևողական պրպտումներով, ինչպես Հայաստանի տարբեր շրջաններում, նույնպես և Հունաստան, Ֆրանսիա, ԱՄՆ և Թուրքիա կատարած մեր անձնական կարճատև ուղևորությունների ընթացքում մշտապես որոնել, հայտնաբերել ենք Հայոց ցեղասպանությունից վերապրող ականատեսների ավագ, միջին և կրտսեր սերունդների ներկայացուցիչներին, մոտիկից ծանոթացել նրանց հետ, թափանցել նրանց հոգու խորխորատները: Տեղի տալով մեր թախանձագին հորդորներին՝ նրանք, պտրգկացող հուզումով կրկին վերապրելով իրենց տխուր անցյալը, արցունքախառն հեկեկոցներով սկսել են պատմել իրենց հիշողության մեջ անթեղած սրտամորմոք հուշերը, թե ինչպես երիտթուրքական ոստիկանները բռնի տեղահանել են իրենց պապենական շեն ու առատ օջախներից և իրենց աչքերի առաջ անմարդկայնորեն հոշոտել իրենց ծնողներին ու հարազատներին, պատվազրկել իրենց մայրերին ու քույրերին, բարերով նվաստել նորածին մանուկներին...:

Ականատես վերապրողներից յուրաքանչյուրն իր կյանքի հուշը պատմել է իրեն հարազատ հայերեն խոսվածքով, հաճախ նաև՝ բարբառով կամ օտարախառն հայերենով և կամ՝ թուրքերեն, էրզերեն և այլ լեզուներով:

[3] Այդ հուշերը նա ինձ էր տրամադրել 1999 թ., երբ Փարիզ էի հրավիրված Արևելյան լեզուների ինստիտուտի (INALCO) միջազգային 6-րդ գիտաժողովում զեկուցելու և այդ անձնական կարճատև ուղևորության ընթացքում, Լուվրի թանգարանի սրահներից մեկում հապճեպորեն գրի էի առնում Մեծ եղեռնից մազապուրծ իր ծնողների մասին, ինչպես նաև ամերիկահայ գբոսաշրջիկ, վերապրող Սարգիս Սարոյանի (ծնվ. 1911 թ., Բալու) պատմած հուշերը:

Մեր գրի առած, ձայնագրած ու տեսագրած ժողովրդական բանավոր նյութերն ականատես վերապրողների անմիջական տպավորությունների վերհուշերն են, նրանց խոհերն ու մտորումները՝ արևմտահայությանը բաժին ընկած ճակատագրի կենդանի պատկերների ստույգ ու ճշմարտացի վերարտադրությամբ:

Ականատես–վկաների պատմած հուշերում արտացոլված են հայրենի բնաշխարհի գեղեցկությունները, նրանց նահապետական առօրյա կենցաղն ու սովորույթները, նրանց ապրած ժամանակաշրջանը՝ հասարակական-քաղաքական կյանքի պայմանները, նշանակալից պատմական իրադարձությունները, երիտթուրքական կառավարության պարագլուխների (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազիմ, Բեհաեդդին Շաքիր ...) գործադրած դաժանությունները (հարկահավաք, զորահավաք, զինահավաք, ողջակեզ, բռնագաղթ, ջարդ, կոտորած), վերջիններիս կազմակերպած բռնի տեղահանությունները դեպի ամայի անապատներ (Դեր Զոր, Ռաս ուլ Այն, Ռաֆֆա, Հոմս-Համմա, Մեսքենե, Սուրուճ ...), հայերի կրած անասելի տառապանքները (ֆայէ ուժասպառվելու աստիճան, ծարավ, քաղց, համաճարակ, մահվան սարսափ ...), ինչպես նաև արևմտահայ տարբեր հատվածների մղած արդար ու ազնիվ ոգորումները ընդդեմ բռնության՝ պաշտպանելու համար իրենց ապրելու տարրական իրավունքը (1915 թ. Վանի հերոսամարտ, Շատախի, Շապին-Գարահիսարի, Սասունի գոյամարտեր, Մուսալեռան, Ուրֆայի, ավելի ուշ՝ 1920-1921 թթ. Այնթապի, Հաճընի հերոսամարտերը), այդ իմաստով պաշտպանական հերոսամարտերում մարտիրոսացած ազգային հերոսներ (շապինգարահիսարցի Անդրանիկ Օզանյան, վանեցի Արմենակ Եկարյան, Մեծն Մուրադ [Համբարձում Բոյաջյան], մուսալեռցի Եսայի Ցաղուբյան, ուրֆացի Մկրտիչ Յոթնեղբայրյան, այնթապցի Ադուր Լևոնյան, զեյթունցի Արամ Զոլաֆյան, ազգային վրիժառու Սողոմոն Թեհլերյան) և բազմաթիվ այլ հայտնի ու անհայտ հայորդիներ, որոնք ժողովրդական զանգվածների հետ միաձուլված պայքարել են, նահատակվել, նաև դիմակայել ու վերապրել ...:

Հատորի **պատմաբանագիտական** ակնարկում պատմական ստույգ փաստերը համադրված, մանրամասնված ու լրացված են ականատես վերապրողների հաղորդած վավերական վկայություններով:

Ժողովրդական նյութերի առաջին բաժնում ներկայացված ականատես–վկա վերապրողների պատմած հուշերը (240 միավոր) հնարավորություն են տալիս գիտական հետազոտության ենթարկել այդ կարգի նյութերի ժանրային տիպաբանական առանձնահատկությունները:

Հայոց ցեղասպանության ականատես–վկաների պատմած հուշերը, որպես ժողովրդական բանավոր ավանդության տարատեսակ, իրենց կառուցվածքով կա՛մ հակիրճ են ու սեղմ, կա՛մ՝ ծավալուն ու երկարապատում, որոնք ներառում են նաև զանազան երկխոսություններ, մեջբերումներ, ժողովրդական բանահյուսության տարաբնույթ ժանրեր (երգ, վիպերգ, զրույց, առած-ասացվածք, օրհնանք, անեծք, աղոթք և այլն)՝ հաստատելու համար իրենց պատմածի հավաստիությունը, առավել հուզիչ ու տպավորիչ դարձնելով իրենց բանավոր խոսքը:

Խնդրո առարկա հուշերը, ենթարկելով բանականն ու որակական մանրակրկիտ վերլուծության՝ պարզել ենք, որ, ինչպես առանց հիշողության մարդ չկա, նույնպես և առանց հիշողության չկա ժողովուրդ, բանի որ հիշողությունը մարդու կամ ժողովրդի ապրած տարիների կյանքն է, նրա անցյալը, նրա պատմությունը:

Հայոց ցեղասպանությունը, որն իրագործվել է բանբերդ դարասկզբին, անմիջականորեն ընկալվել է ականատեսների զգայարաններով, և այդ բոլորն անջնջելի կերպով տպավորվել է նրանց հիշողության մեջ:

Պատմական այդ իրադարձությունների ականատես–վկաները, ցավագնորեն վերապրելով իրենց տխուր անցյալը, մեզ են հաղորդել իրենց անձնական հուշերը՝ պատմական բնօրրանի, հայրենի օջախի, սիրելի հարազատների մասին, որոնք, ավա՜ղ, վաղուց չկան: Այդ անձնական հուշապատկերները նրանք կրել են իրենց ողջ կյանքի ընթացքում՝ չկարողանալով ազատագրվել ճնշող մղձավանջից: Եվ բանի որ վերապրողների պատմած հուշերը ներկայացնում են արևմտահայերին վիճակված պատմական յուրահատուկ իրադարձությունների անմիջական տպավորությունները, ուստի հագեցած են խոր **պատմականությամբ**:

Առարկայորեն վերարտադրելով տվյալ ժամանակաշրջանի կյանքը, նիստ ու կացը, բարքերը, **հաղարհասարակական հարաբերությունները**, վերապրողների հաղորդած հուշերը **ճշմարտացի են, վավերական և ունեն հավաստի վկայությունների արժեք**:

Հուշապատումի մեջ հանդես եկող գլխավոր անձը պատմողի կերպարն է, որը ոչ միայն պատմում է պատմական նշանակալից իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի մասին, այլև իմաստավորում է դրանք՝ դրսևորելով իր աշխարհայացքի և անհատականության հիմնական հատկանիշները, իր մոտեցման ուրույն տեսակետը, իր յուրահատուկ լեզուն և ոճը: Հետևաբար, ականատես–վկայի պատմած հուշը միանշանակ է **իր եզակիությամբ**: Այն տվյալ անհատի անձնական կենսագրությունն է՝ անցյալի իր իմաստավորմամբ, որը, յուրաքանչյուր անգամ վերապատմելիս, հուշի առանցքային բովանդակությունը գրեթե մնում է անփոփոխ:

Միաժամանակ վերապրողների պատմած հուշերը նաև **համանման** են: Քանի որ տարբեր վայրերում, սեռատարիքային տարբեր խմբերի (տղա-

մարդ, կին, ավագ, միջին, կրտսեր սերունդներ) պատմած հուշերն իրարից անկախ, գրեթե նույնությամբ նկարագրում են պատմական միևնույն ժամանակաշրջանի իրադարձությունները, պատմական համանման դեպքերն ու դեմքերը, իրենց տեսած ու զգացած նույն սարսափազդու տեսարաններն ու դաժանությունները, որոնք, համադրվելով, գալիս են միմյանց հաստատելու, միմյանց շարունակելու, լրացնելու և ամբողջացնելու՝ միտվելով անձնականից ու առարկայականից դեպի համընդհանուրն ու համազգայինը: Հետևաբար, ականատեսների հուշերն իրենց ներքին բովանդակությամբ բնութագրում են ոչ միայն տվյալ անհատին ու նրա միջավայրը, այլև ողջ հավաքականությանը՝ դառնալով **արևմտահայոց հավաքական պատմական հիշողությունը**:

Սակայն ժողովրդի պատմական հիշողությունը նաև **հարատևելու կարողություն ունի**: Թեպետ պատմական այդ իրադարձություններից 85 տարի է անցել, և հրաշքով փրկված ականատես–վկաներից շատ-շատերն արդեն չկան, սակայն ավագ սերնդի ներկայացուցիչների պատմածներն ընտանիքներում այնքա՜ն են լսվել, այնքա՜ն են կրկնվել, որ դարձել են նաև հետագա սերունդների ժառանգությունը և, բերնից բերան անցնելով, բանահյուսական երկերին բնորոշ ձևափոխության (transformation) ենթարկվելով, շարունակում են հարատևել նաև հետագա սերունդների հիշողության մեջ՝ արդեն պատմական զրույցների տեսքով:

Ժողովածուի երկրորդ բաժնում ներկայացված **պատմական զրույցները** (50 միավոր) մեծ մասամբ գրի են առել հետագա սերունդներից, որպես վկայություն այն իրողության, որ ժողովրդի պատմական հիշողությունը բնավ չի մեռնում, այլ շարունակում է գոյատևել սերունդների մեջ բանահյուսական նոր որակով՝ վիպական, անգամ առասպելական նոր գծերով հարստացված ու փոխակերպված:

Ժողովածուի երրորդ բաժնում ներկայացված են Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների հաղորդած պատմական բնույթի **երգերն ու վիպերգերը** (288 միավոր), որոնք գեղարվեստորեն վերարտադրում են երիտթուրքական կառավարության կազմակերպած զորահավաքի, զինահավաքի, տեղահանության, ջարդի ու կոտորածի, ինչպես նաև որդեկորույս մայրերի, որբի և որբանոցի, հայրենասիրության ու հերոսամարտերի մասին հուզիչ ու տպավորիչ դրվագներ: Այդ երգերն իրենց թեմատիկ ինքնատիպությամբ ու գաղափարական բովանդակությամբ ոչ միայն նորույթ են հայ բանագիտության բնագավառում, այլև դրանց շնորհիվ նորովի է ընկալվում պատմական տվյալ ժամանակաշրջանը՝ իր բնորոշ գծերով: Հետևաբար, հորինվելով հայ ժողովրդի արևմտահայ հատվածին վիճակված պատմական յուրահատուկ իրադարձությունների անմիջական տպավորությունների ներքո, այդ կարգի երգերը հագեցած են **պատմականությամբ**: Նույնման երգեր միաժամանակ հորինվել են զանազան տարբերակներով ու փոխակերպումներով: Հանգամանք, որը վկայում է պատմական այդ երգերի ժողովրդական բնույթի մասին: Ժողովրդական այդ երգերի բազմազան տարբերակները, պատմական ստուգությամբ հանդերձ, բնութագրվում են սեղմ պատկերավորությամբ և հայ միջնադարյան լալյաց երգերին բնորոշ նուրբ մեղեդայնությամբ: Այդ երգերի յուրաքանչյուր տողն ու բառակապակցությունը մի ավարտուն պատկեր է, զանգվածային ողբերգության մի սահմռկեցուցիչ տեսարան, իսկ լալահառաչ կրկներգերը համալրում և ամբողջացնում են բանաստեղծական մտքի հուզահոգեբանական երանգը: Հատորում ներկայացված են նաև ժողովրդական պատմական իմքնատիպ **երգերի եղանակներ** (22 միավոր):

Պատմական բնույթի երգերը հորինվել են ոչ միայն հայերեն, այլև՝ թուրքերեն, բայց պատմաողբական տվյալ հանգամանքներում Օսմանյան Թուրքիայի որոշ գավառներում հայերեն խոսելն արգելված է եղել, իսկ տեղահանության ու ամսորի ճամփաներին այդ խստություններն ավելի են սաստկացել: Հետևաբար, արևմտահայերն իրենց վիշտն ու տառապանքն ստիպված արտահայտել են նաև թուրքերեն:

Զբաղտելով երկարատև համատեղ կեցության պայմաններում երկու ժողովուրդների հոգևոր մշակույթների փոխազդեցությունները, հարկ է նշել, որ վկայություններ կան, թե «հայ բառ արտասանողներու լեզուները կտրած էին, հետեւաբար, Կիլիկիայի մի շարք քաղաքների (Սիս, Ադանա, Տարսոն, Անթէպ) և անոնց շրջակայքում ապրող հայերը կորուցել էին իրենց մայրենին»[4]: Եվ կամ՝ «թուրքերուն հարստահարութիւնն ու հալածանքն այնման խիստ եղաւ, որ հայախօս Անթէպ եղաւ թուրքախօս, Փոքր Ասիոյ ուրիշ գլխավոր քաղաքներու պէս: Եւ վերջին կտրուկ հարուածը հայախօսութեանը եղիչերիներն էին, որ տվին՝ ծայրատելով հայերեն խօսողներուն լեզուները»[5]:

Մեր գրառած և այս հատորում զետեղած հուշերում ևս բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ Քյոթահիայի, Բուրսայի, Ադանայի, Կեսարիայի, Էսմիշեհիրի և այլ վայրերի հայերը հիմնականում թուրքախոս էին: Ադանացի վերապրող Միքայել Քեշիշյանի (ծնվ. 1904 թ.) վկայությամբ՝ «արդեն արգելված էր հայերեն խոսիլը և սորվիլը. ոչ միայն լեզուն կկտրեին, նաև թևերուն տակ խաշած տաք հավկիթ կդնեին, որ խոստովանվի, թե հայերեն կսորվեցնեն ուրիշներուն: Եթե կխոստովանվեր՝ կտանեին, կկախեին կամ՝ կսպանեին» [I. 182 (182).]:

Նկատի ունենալով լեզվական ձուլման նախնական մակարդակը ներկայացնող այդ տխուր երեվույթի հասարակական-բաղաքական հանգամանքները, զանազան բարբառներով գրառված նյութերի հետ, մեր ուշադրությունից չեն վրիպել նաև թուրքալեզու, սակայն բացահայտ հայկական ծագմամբ ժողովրդական երգերը: Դրանք թեպետ հորինվել են հայերի կողմից և այն էլ ոչ կատարյալ թուրքերենի իմացությամբ (հաճախ հիշատակվում են հայերեն բառեր ու արտահայտություններ, հայկական անձնանուններ ու տեղանուններ, նկատվում են բերականական և հնչյունային անճշտություններ), սակայն իրենց գաղափարական բովանդակությամբ ունեն պատմանաչողական կարևոր արժեք: Վերջիններս, ինչպես և բարբառային բնագրերը, հատորում ներկայացված են մեր իսկ կատարած զուգահեռ գրական հայերեն թարգմանություններով՝ նույնանիշ համարակալմամբ:

Գրառումների և վերծանումների ընթացքում ջանացել ենք անաղարտ պահպանել վերապրողների բանավոր խոսքի ինքնատիպ յուրահատկությունները՝ այդ բոլորը ներկայացնելով բարբառագիտական ընդունված տառադարձությամբ: Բարբառային բնագրերը գրառելիս հաշվի ենք առել ինչպես պատմական Հայաստանի, նույնպես և Կիլիկիայի ու Անատոլիայի հայության լեզվական երբեմնի բաժանումները:

Հատուկ նպատակադրումով ջանացել ենք ընդգրկել Արևմտահայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայաշատ ավելի քան 70 բնակավայրերից (Սասուն, Մուշ, Բիթլիս, Շատախ, Վան, Բայազետ, Իգդիր, Ալաշկերտ, Կարս, Արդահան, Բաբերդ, Շապին-Գարահիսար, Սեբաստիա, Էրզրում, Խնուս, Երզնկա, Դերջան, Կամախ, Թոխաթ, Արաբկիր, Խարբերդ, Քղի, Բալու, Մալաթիա, Տիգրանակերտ, Մերդին, Ադիյաման, Եդեսիա, Եվդոկիա, Զեյթուն, Ջընդըջագ, Հաճըն, Մարաշ, Այնթապ, Մուսա լեռ, Քեսաբ, Բիյլան, Դյորտյոլ, Ադանա, Հասան Բեյ, Տարսոն, Մերսին, Կոնիա, Օրդու, Նիդե, Կեսարիա, Թոմարզա, Էվերեկ, Աֆիոն-Գարահիսար, Էսմիշեհիր, Զմյուռնիա, Յոզղատ, Ստեճոզ, Ամասիա, Սամսուն, Ադաբազար, Նիկոմեդիա, Պարտիզակ, Բուրսա, Բանդըրմա, Բիլեջիկ, Քաստեմունի, Չանաքկալե, Ռոդոսթո, Կ. Պոլիս և այլն) տեղահանված վերապրողների, որպեսզի առավել ամբողջական պատկերացում տրվի ողջ արևմտահայության կրած տառապանքների, նրանց հուզաշխարհի և մտորումների մասին:

Պատմական բնույթի երգերը հատորում ներկայացված են պատմաժամանակագրական հաջորդականությամբ, իսկ հուշերն ու զրույցները՝ խմբավորված ըստ ականատես–վկաների ծննդավայրերի ու տարիքային առանձնահատկությունների:

Բառարանում տրված են բնագրերում առկա դժվար հասկանալի և օտարամուտ բառերի բացատրությունները:

Ծանոթագրությունների աղյուսակում գրառված ժողովրդագիտական նյութերի գրառման և ծագման վայրերը, ինչպես նաև վերապրողների մասին կենսագրական տեղեկությունները հաղորդված են ըստ ժողովածուի երեք հիմնական բաժինների՝ յուրաքանչյուր բաժնի ու ենթաբաժնի ներսում առանձին ու շարունակական համարակալումներով:

Ժողովածուին կցված են նաև ականատես–վկա վերապրողների լուսանկարներ, ձայնագրված երգերի նոտագրություններ, անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն ամփոփումներ, ինչպես նաև 1915 թ. երիտթուրքական կառավարության կողմից իրականացված հայերի տեղահանության ու ցեղասպանության մասին գաղափար տվող ուղեցույց բառարեզ:

Այսպիսով, անհետ կորստից փրկված, սույն հատորով սերունդներին ավանդվող ականատես վերապրողների հաղորդած հուշերն ու պատմական բնույթի երգերն իրենց պատմանանաչողական արժեքով դառնում են Հայոց ցեղասպանությունը և դրան հաջորդող պատմական իրադարձությունները ժողովրդական պարզ լեզվով լուսաբանող վկայություններ, հավաստի, առարկայական և փաստագրական վավերագրեր, որոնք ոչ միայն անցյալի վկայություն են, այլև՝ ապագայի նախազգուշացում...

Ահա թե ինչու առանձնապես կարևորվում է Հայոց ցեղասպանության անմեղ նահատակների ու կորցրած Երկրի մասին ժողովրդական խոհերն ու մտորումները սույն հատորով լույս աշխարհ հանելն ու գիտական շրջանառության մեջ դնելը, քանի որ ժողովրդի ականատես-վկաներն են հաղորդել իրենց տեսածն ու հիշածը՝ ցավագնորեն վերապրելով իրենց ողբերգական անցյալը: Անցյալ, որը հայ ժողովրդի անցյալն է, նրա պատմությունը, նրա հավաքական պատմական հիշողությունը, որը պետք է ներկայացվի աշխարհին ու մարդկության արդար դատին:

---

[4] Գ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 698:

[5] Գ. Սարաֆեան, Պատմութիւն Անթէպի հայոց, հ. Ա, Լոս Անճելես, 1953, էջ 5:

3103

ԳՐԱԴԱՐԱՆ



Բանասիրական գիտությունների դոկտոր, ժողովրդագետ Վերժինե Սվազլյանը
Հայոց ցեղասպանությունից վերապրած Մարիամ Բաղդիշլյանի
(ծնվ. 1909 թ., Մուսա լեռ) հուշերն ու երգերը գրի առնելիս

Քառասունհինգ տարիների ընթացքում բառ առ բառ, պատառիկ առ պատառիկ գրի առնելով (նաև՝ ձայնագրելով ու տեսագրելով), ստեղծվել ու ամբողջացվել են սույն ժողովածուի բանավոր հուշարձանները:

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված այն սերունդներին, որոնք հերոսաբար դիմագրավելով կյանքի դաժան պայմաններին, իրենց հիշողության խորխորատներում անթեղած պահել, պահպանել ու մեզ են հաղորդել իրենց տեսածն ու հիշածը՝ անհետ կորստից փրկելով ***հայ ժողովրդի պատմական հավաքական հիշողությունը,*** որպեսզի քոնը քեզ ևվիրեմ իմ Հայ ժողովուրդ:

Վ. Ս.

ՊԱՏՄԱԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1915 թ. Մեծ եղեռնից վերապրող ականատես-վկաներն ամենայն մանրամասնությամբ են հիշում քսաներորդ դարում կատարված առաջին ցեղասպանության պատմաքաղաքական հանգամանքները: Նրանց ավագ սերնդի ներկայացուցիչները նույնիսկ հիշում են Թուրքիայի 1908 թ. սահմանադրության ընդունումը, երբ երկրում համաժողովրդական ցնծություն էր տիրում, քանի որ բոլոր ազգերին օրենքով հավասար իրավունքներ էին վերապահվում:

Քաղաքական այդ աննախադեպ իրադարձության մասին է մեզ պատմել խարբերդցի վերապրող Սարգիս Խաչատրյանը (ծնվ. 1903 թ.). «... Հիշում եմ 1908 թվին, երբ հեղաշրջում եղավ Թուրքիայում, մարդիկ փողոցներում երգում էին.

Քալքը՛ն, ռէչ վաթանդաշլա՛ր
Սէվիլէրիմ յօղդաշլա՛ր,
Իշդէ սիզէ հյուրիէթ.
Ցաշասը՛ն օսմանլարը:

Վե՛ր կացեք, հայրենակիցնե՛ր,
Սիրենք միմյանց, ընկերնե՛ր,
Ահա ձեզ ազատություն.
Կեցցե՛ն օսմանցիները [III.2.2(337).][1]:

Իսկ բիթլիսցի վերապրող Հմայակ Բոյաջյանը (ծնվ. 1902 թ.) իր պատմած հուշի մեջ նկատում է. «Սկզբում բոլորս այն կարծիքին էինք, որ հայ ու թուրք եղբոր պես պիտի ապրեն: Անգամ մեր գյուղում տոնախմբություն եղավ և հրացանաձգություն կատարվեց» [I.17(17).]:

Դեռևս 19-րդ դարում ծնված սասունցի Եղիազար Կարապետյանը (ծնվ. 1886 թ.), վերհիշելով անցյալի պատմական իրողությունները՝ նշում է. «...1908 թ. հյուրիեթը բոլոր քաղաքական բանտարկյալներին ազատություն տվեց, որից հետո հայը, թուրքը, քյուրդը բոլորն էլ հավասար իրավունք պիտի ունենային: Ամեն տեղ հնչում էին ցնծության աղաղակներ: Հյուրիեթի օրենքով վերջ էր տրվում հայերի ստորացմանը, ծեծին, հայհոյանքին, թալանին, կողոպուտին և արհամարհանքին: Նման վերաբերմունք ցուցաբերողը ենթարկվում էր ամենախիստ պատժի, նույնիսկ կախաղանի: Կատարյալ վստահության վրա էին դրվում երկու ժողովուրդները: Հայերը ստանում էին ազատ ձայնի իրավունք, ընտրում ու տալիս էին իրենց պատգամավորը: Սա արևմտահայերի կյանքում մի նոր վերածնունդ էր» [I.1(1).]:

Սակայն թուրքական սահմանադրության հրոչակման մեկ տարին դեռ չէր բոլորել, երբ համիդյան կոտորածներից զերծ մնացած Ադանան ու նրա շրջակա հայաշատ գյուղերը իթթիհատականների ատելության թիրախ դարձան:

1909 թ. Ս. Զատկի շաբաթը արյան ծարավ ամբոխը հարձակվում է Ադանայի հայկական թաղամասերի և շրջակա գյուղերի վրա, կողոպտում է բոլոր խանութները, կոտորում անզեն ու անպաշտպան հայերին, չխնայելով անգամ կանանց ու երեխաներին: Մեծ եղեռնի ճանճատակ, պատմավիպագիր Սմբատ Բյուրատի՝ ժողովրդականություն վայելող հետևյալ բանաստեղծությունը, որպես պատմական վկայություն, մեզ է հաղորդել զեյթունցի վերապրող Կարապետ Թոզլյանը (ծնվ. 1903 թ.).

Կոտորածն անգութ՝ հայերը թող լան,
Անապատ դարձավ շքեղ Ադանան,
Կրակն ու սուրը և անխիղճ թալան,
Ոուբինյանց տունը, ա՛խ, ըրին վերան:

[1] Ականատես-վկա վերապրողների պատմած հուշերի և նրանց հաղորդած պատմական երգերի հատվածները մեջբերված են սույն ժողովածուից, կրում են բաժնի, ենթաբաժնի և նյութի հերթական ու շարունակական համարակալումները: Մեր գրառած թուրքալեզու բնագրերում հնարավոր է հանդիպել շեղումներ թուրքերենի քերականական և հնչյունային կանոններից (k=ք > ղ,խ) և կամ՝ հայերեն բառեր ու ձևույթներ: Բանասացների հաղորդած տեղեկությունները անխաթար պահպանելու նպատակով հավատարիմ ենք մնացել նրանց բանավոր խոսքին: Թուրքալեզու բնագրերը ներկայացրել ենք մեր կատարած զուգահեռ թարգմանությամբ՝ նույնանիշ համարակալմամբ (Վ. Ս.):

Այսուհետև մեր ծանոթագրությունները կլինեն փակագծերի մեջ կամ տողատակում՝ առանց հղումների, իսկ բանասացների հաղորդած տեղեկությունները՝ Ծ. Բ. – Ծանոթություն բանասացի:

Րոպե մը չանցավ ու անզեն հայեր
Ինկան սուրիճ տակ խուժանին առջև,
Ժամեր, դպրոցներ բոցի մեջ կորան,
Բյուրավոր հայեր անհնա մեռան:

Անգութ թուրքերը որբացրին, թողին.
Ջավակը՝ մորմեն, հարսը՝ իր փեսեն,
Ջարդ ու խուրդ ըրին ինչ որ պատահեց,
Կերան, կշտացան հայու արյունեն…

Երեք օր-գիշեր կրակը՝ ներսեն,
Թշնամու սուրը, գնդակը՝ դուրսեն,
Ջնջեցին հայեր երկրի երեսեն,
Արյուն կվազեր հայ փողոցներեն…[III.2.7(342).]:

Ադանայի կոտորածը կանխամտածված բնույթ էր կրում: Այդ է վկայում Թուրքիայի ներքին գործերի խորհրդական Ադիլ Բեյի հետագիրը, որն ուղղված էր Կիլիկիայի շրջանի բոլոր թուրք պաշտոնյաներին, որտեղ ասվում էր. «Մեծագույն ուշադրությամբ հոգ տարվի, որ վնաս չի հասնի օտար կրոնային հաստատությանց և հյուպատոսարաններուն»[2]:

Այդ դեպքերը կիլիկիացիների հիշողության մեջ մնացել են որպես «Ղըյմա (ջարդված) Ադանա», և նրանք հորինել են հետևյալ թուրքալեզու երգը.

Հե՛յ, չամլա՛ր, չամլա՛ր, ալնը-աջըխ, չամլա՛ր,
Հէր գիւնէշ վուրունջա՝ սաքըզ դամլար,
Սաքըզ դամլար սա՝ յիւրէիմ աղլար…
Ադանա ըրմաղը լէշ իլէն քանլար.
Քալդըրը՛ն լէշլէրի՝ Ադանա քօքար.
Օ՛ֆ, իշդէ գէլդիմ սանա, ղըյմա՛ Ադանա,
Օ՛ֆ, իշդէ գօրդիւմ սիզի, ղըյմա՛ չօջուքլար:

Հե՛յ, մայրինե՛ր, մայրինե՛ր, հպարտ մայրինե՛ր,
Ամեն արև դիպչելիս՝ խեժը ծորում է կաթ-կաթ,
Խեժը ծորալիս՝ սիրտս է լաց լինում…
Ադանայի գետը՝ արյուն ու դիակ,
Հավաքե՛ք դիակները. կհոտի Ադանան.
Ավա՛ղ, քեզ եկա, ջարդվա՛ծ Ադանա,
Ավա՛ղ ձեզ տեսա, մանուկնե՛ր մորթված
[III.2.5(340).]:

Ադանացի ականատես-վկա Միքայել Քեշիշյանը (ծնվ. 1904 թ.) հուզումով է մեզ պատմել. «1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ ես հինգ տարեկան էի: Այդ սարսափելի գիշերը թուրքերեն կոչվեց «Ջամուզ դէլլիդի» այսինքն՝ «գոմեշը գժվեց»: Քանի որ, իրոք, սուլթանը գժվել էր: Նրա հրամանով մարդկանց մորթեցին, մոտ երեսուն հազար հայ սպանեցին, տները քանդեցին, վառեցին, մոխիր դարձուցին: … Բոլորին հավաքեցին տարին Ադանա ըրմաղը (գետը), սուլթան Համիդին լուր ղրկեցին, որ հայերին բոլոր հավաքել ենք, բերել գետին եզերքը, իրմե հրաման կսպասեն: Մեկ կողմը ջուր, մեկ կողմը՝ կրակ: Պապաս ինձի գրկած էր: Ես կհիշեմ, շալակեն կտեսնայի: Մամաս ալ մեզի հետ էր, գետին եզերքը լեցուցեր էին: Սուլթանեն հրաման եկավ՝ ներումի հրաման: Մեզ ալ. «Փադիշահըմ չօ՛ք յաշա» (Թագավորը շա՛տ ապրի) ըսել տվին: Տուն եկանք, բայց սպանվողները՝ սպանվեցան» [I.182(182).]:

Ադանայի կոտորածի ընթացքում ավերվում և հրկիզվում են տասնյակ հայկական քաղաքներ ու գյուղեր: Իսկ Մուսա լեռը, Դյորտյոլը, Հաճընը, Սիսը, Զեյթունը, Շեյխ Մուրադը, Ֆընդըջագը և մի շարք այլ բնակավայրեր իրենց հերոսական ինքնապաշտպանությամբ կասեցնում են տասնյակ հազարավոր թուրքերի հարձակումը և փրկվում են ջարդերից:

Ըստ էության, այդ Մեծ եղեռնի սկիզբն էր, երբ սուլթան Համիդի իշխանության տապալումից հետո կառավարության գլուխն անցած երիտթուրքերը, որդեգրելով համիդյան ջարդարարական քաղաքականությունը և դավանելով պանթուրքական գաղափարախոսությանը, ձգտում էին ոչ միայն պահպանել Օսմանյան կայսրությունը, այլև բռնությամբ ոչնչացնել կամ ձուլել, թուրքացնել հայերին և քրիստոնյա մյուս հպատակ ժողովուրդներին, ստեղծել համաթուրանական տերություն՝ Միջերկրականից մինչև Արալյան ծով, որի մեջ պիտի մտնեին բոլոր մահմեդականները: Երիտթուրքերը տենդորեն նախապատրաստվում էին հիմնովին բնաջնջել հայ ժողովրդին՝ ապասելով հարմար առիթի: Այդ առիթն ստեղծվեց, երբ բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Թուրքիան պատերազմի մեջ մտավ զավթողական նպատակներով և հայերի բնաջնջումն իրականացնելու իր հրեշային ծրագրով:

Դեռևս 1915 թ. ապրիլի 15-ին թուրքական կառավարության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի, ռազմական նախարար Էնվեր փաշայի և Իթթիհատի գլխավոր քարտուղար ու լուսավորության նախարար դոկտ. Նազիմի ստորագրությամբ գաղտնի հրաման է ուղարկվում իշխանություններին՝ հայերի տեղահանության ու բնաջնջման վերաբերյալ: Եվ Թալեաթ փաշան կատաղի ատելությամբ ազդարարում է. «Պետք է մաքրել հայերի հաշիվը», խոստանալով ոչինչ չխնայել այդ նպատակի համար[3]:

Իթթիհատի գործադիր կոմիտեի նիստերից մեկում Բեհաէդդին Շաքիրը հայտարարում է, որ անհրաժեշտ է անմիջապես սկսել և վերջացնել հայերի տեղահանությունը և այդ ընթացքում կոտորել ժողովըրդին. «Պատերազմի մեջ ենք, - ասել է նա, - Եվրոպայի և մեծ պետությունների միջամտության վախ չկա, աշխարհի մամուլն ալ չի կրնար բողոք բարձրացնել: Եթե ըլլա իսկ, ոևէ արդյունք չունենար, առաջիկային խնդիրը կատարված իրողություն մը կդառնա»[4]:

Երիտթուրքերի կառավարության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան հատուկ հրաման էր արձակել. «Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը լիովին վերացված է: Դրան համապատասխան կառավարությունը հրամայում է՝ չխնայել անգամ օրորոցի երեխաներին…»[5]:

Իթթիհատի գործադիր կոմիտեն նախատեսում էր այդ տեղահանությունը և կոտորածը կատարել ոչ թե բանակի և ոստիկանության միջոցով, այլ՝ բանտից ազատված ոճրագործներին, մարդասպաններին, ինչպես նաև քրդերին և չեչեններին հանձնելով այդ գործը:

Պատմաքաղաքական այս հանգամանքներում Թուրքիայում ապրող քրիստոնյա ազգերի, այդ թվում նաև հայերի համար մեծագույն չարիք էր դարձել սեֆերբերլիքը (ընդհանուր զորակոչ): Քսանից-քառասունհինգ տարեկան տղամարդկանց, զորահավաքի անվան տակ, ներգրավում էին աշխատանքային գումարտակների մեջ և ըստ ռազմական նախարար Էնվեր փաշայի հատուկ հրահանգի՝ աչքից հեռու, ծածուկ վայրերում՝ սպանում:

«… 1914 թ. Թուրքիան ընդհանուր մոբիլիզացիա հայտարարեց, - պատմել է խարբերդցի Սարգիս Խաչատրյանը (ծնվ. 1903 թ.), - հայ երիտասարդներին թուրքական բանակ զորակոչեցին: Տարան, աշխատացրին ամիլե թաբուրի մեջ, հետո էլ բոլորին սպանեցին» [I.110(110).]:

Իսկ խարբերդցի Սարգիս Մարտիրոսյանը (ծնվ. 1903 թ.) ավելի մանրամասն է անդրադարձել. «Առաջին համաշխարհային պատերազմին հայերին զինվոր տարին, շուրջ երեք հարյուր հազար հայ երիտասարդներ թուրքական բանակ ղրկվեցան: Սկզբում անոնց ձեռքը զենք տվին, բայց հետո Էնվեր փաշան ըսեր է. «Մենք ճամփաներ պիտի շինենք՝ աշխատող ձեռքերու պետք ունինք»: Բայց իրականության մեջ անոնց փորած փոսերուն մեջը ննտած, սպանած են» [I.111(111).]:

Էրզրումցի Հարություն Գրիգորյանը (ծնվ. 1898 թ.) վկայել է. «Թուրքական բանակի հայ զինվորները զինաթափ եղած ու սպանված են: Նախ՝ որպես ճանկատ ղրկելու նպատակով կհավաքեն, փոխանակ ճանկատ ղրկելու գործավորական բանակներ կկազմեն (ամելե թաբուր), ուր հայ զինվորները թիապարտի կյանքի կմատնվին: Անգութ հրամանատարները կաշխատացնեն հայերը ճամփա շինելու, առանց խըտրության՝ բեդել վճարողներուն և չվճարողներուն: Անոնց, շրջապատված հեծյալ ոստիկաններով, անոթի, ծարավ, ժամերով կքայլեցնեն: Զինվորները կսկըսին նախատել և վիրավորել, որը հետո կվերածվի հարվածների: Փարչանի և Քեսիրիկի ճամփու վրա, երբ աղբյուրի մը կմոտենան, երկու հազար հոգու չեն թողուր, որ ջուր խմեն, ով կհանդգներ՝ անոր գլխուն կիջնար հրացանի կոթի հարվածը: Գրեթե բոլորը բնաջինջ եղան, և զոհերու մարմինները ննտվեցան հասարակաց փոսի մը մեջ: Նույն կերպ կվարվեին Դիարբեքիր ղրկված երկու հազար աշխատավորներու հետ: Կարմիր խոնաղ (Կարմիր շենք) հավաքել էին տանջելու Խարբերդի երիտասարդ դպրոցականներին և զինաթափ եղած զինվորներին, որոնք խոշտանգված դիակները իրար վրա թափված, նեխված էին: Ամեն անկյուն՝ արյուն, փսխուք, կղկղանք: Գետնի վրա պառկողները պատերազմի դաշտին վրա փռված դիակներու կնմանեին: Այսպես, իրարու ետևե մեկ կողմե գյուղերեն և ավաններեն բերված չափահաս կամ տարիքոտ անձինք Կարմիր խոնաղ կհետեն, մյուս կողմե՝ ձերբակալվածները կղրկեն Եդեսիա՝ իբր երկաթուղային գիծերու վրա աշխատելու» [I.89(89).]:

Ծոզոատցի վերապրող Վերոնիկա Բերբերյանը (ծնվ. 1907 թ.) ևս անդրադարձել է թուրքական զորահավաքին. «… Շաբաթ օրը, իրիկվան դեմ բոլոր տղամարդկանց կհավաքեն թուրքական բանակ ղըրկելու, բայց այնտեղ հայերը կզատեն թուրքերից: Տերտեր պապիկս՝ Հակոբ քահանա Բերբերյանը, որ լիազորված էր հայերի իրավունքը պաշտպանելու, կտեսնա, որ հայերին ջոկում են թուրք զինակոչիկներից, կըսե. «Ինչու՞ հայերին ջոկում եք»: Թուրք հազարապետը կըսե. «Փափազ (քահանա) էֆենդի, հայերը պիտի գնան ճանապարհ շինելու, թուրքերը պիտի գնան ռուսական ճակատ:

Հաջորդ օրը կիրակի էր: Պապս Ս. Պատարագը վերջացրել, հազիվ տուն էր եկել: Դեռ շունչ չառած, բոթը հասավ մեզի: Արթին աղային տղան ջրաղացպան էր, առտուն կելլա, կերթա աշխատանքի, կտեսնա ջրաղացին քովը լի՛քը մարդկանց գլուխներ, ոտքեր, ձեռքեր: Լեզուն վախեն բռնված հևիհև կուգա տուն, կպատմե տեսածը: Արթին աղան տղային հետ եկան պապիկիս պատմեցին, ըսին. «Էրեկվա զինվոր տարվածները գիշերով մորթել են»: Պապիկս կըսե. «Գնացե՛ք, բողոքեցեք ղայմաղամին»: Արթին աղան կերթա ղայմաղամին բողոքելու, բայց ան գիշերը ալ տուն չի գար:

Հաջորդ օրը՝ երկուշաբթի, երկու թուրք ժանդարմա քոփալներով էկան: Ուրիշ անգամ, երբ մեր տունը ժանդարմա կուգար, քաղաքավարի կերպով կըսեին, որ փափազ էֆենդին հագնվի ու իրենց հետ գնա: Այս անգամ էկան, կոշտ կերպով ըսին. «Հայդէ՛, քալքըն» (դե՛, վե՛ր կացեք): Պապիկիս տարին ղայմաղամին մոտ: Պապիկիս հետ տարել են նաև տեղի երևելիներին, վաճառականներին, մտավորականներին: Մի թուրք ասում է պապիկիս. «Փափա՛զ էֆենդի, մոտիկացավ վերջին ժամդ, ի՞նչ ունիս ըսելիք»: Պապիկս ծունկ կչոքե, կաղոթե: Ան ետեղեն թուրք զինվոր մը կացինով կհարվածե, պապիկիս գլուխը կգլորվի գետին: Կսկսին ֆուտբոլ խաղալ իմ խելացի պապիկիս գլխուն հետը» [I.214(214).]:

Ահա թե ինչու թուրքական բանակին բռնի զորակոչված, վեսիկա (վկայագիր) ստացած հայ երիտասարդը նախազգում էր, որ այդ «մաճվան ճամփա» է.

[2] **Մ. Միգմէեան**, *Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925*, Ֆրէզնո, 1930, էջ 174:

[3] **Ա. Անտոնեան**, *Մեծ ոճիրը*, Բոսթոն, 1921, էջ 232:

[4] *Տէր Զոր*, Փարիզ, 1955, էջ 258:

[5] **Մ. Ներսիսյան**, *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)*, Երևան, 1991, էջ 564-565:

Ա՜հ՛, օյանդը՛ր բէնի, գիդէլիմ թաալիմէ,
Այնալը մարթինը ալայըմ էլիմէ,
Գիթմէյէ դօղրու վաթան յօղընա,
Բունա ծլո՛ւմ յօլը դէրլէր,
Ալլահ սաքլասըն,
Էրմէնիլէր չօքդըր դէրլէր,
Ալլահ քուրթարսըն:

Մա՛յր, արթնացրու ինձ, գնամ վարժանքի,
Ձեռս վերցնեմ հայկեպատ մարթին,
Գնալու եմ ուղիղ ճամփով հայրենի,
Սրան մահվան ճամփա կասեն.
Աստված պահպանի,
Հայերն այնտեղ շատ ու շատ են.
Աստված թող փրկի [III.1.11(301).]:

Թուրքական զորաճավաքն ուղեկցվում էր համատարած շուրջկալներով, որոնց ընթացքում «զենք» հավաքելու պատրվակի տակ ավերում էին հայերի տները, կողոպտում նրանց ունեցվածքը, ձերբակալում ու սպանում էին շատերին:

«Նախքան կոտորածը թուրքական ոստիկանները եկան զենքերը հավաքեցին: Հարուստ Կարապետ էֆենդիի տղան ասել է՝ «զենք չկա»: Ոստիկանները խուզարկել էին, գտել էին, ահոր եղունգները քաշել էին, թևերում տակն ալ խաշած հավկիթ էին դրել ու կապել», - պատմել է նախորդ վերապրողը:

Արևմտահայության մեջ տարածված թուրքախառն հետևյալ երգի մեջ թուրք զինվորական պաշտոնյան հարցնում է հայ երիտասարդին.

- Ուլան գյավու՛ր, դօղրու սօյլէ,
Սէնդէ մարթին վա՞րմըշ:

- Գյավու՛ր տղա, ճիշտն ասա,
Քո մոտ հրացան կա՞:

Հայ երիտասարդը ժխտում է՝ այն համարելով զրպարտություն.

- Հայըր էֆէնդիմ, իֆդիրադըր,
Բիլմէ՛մ, գօրմէդի՛մ, բիլմէ՛մ, գօրմէդի՛մ:

- Ո՛չ, տե՛ր իմ, ներյուրա՛ք է,
Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել:

Բայց հետո՝ հայերենով ծածուկ ավելացնում է.

Պատեն կախված է՝ չե՛մ ըսեր,
Հայոց ազգը չե՛մ մատներ [III.1.33(323).]:

Զորաճավաքին ու զինաճավաքին հաջորդում է հայ մտավորականների ձերբակալությունը: 1915 թ. ապրիլի 24-ին, շաբաթ կեսգիշերին, Կ.Պոլսում ապրող երկու հարյուր յոթանասուներեք երևելի դեմքեր բռնությամբ տարվում են ոստիկանատուն, որոնք հաջորդ օրն իսկ աքսորվում են: Ադաբազարցի վերապրող Մարի Երկաթը (ծնվ. 1910 թ.) պատմել է. «... Տարին մեզի Էսքիշեհիր, լեցուցին խանի մը մեջ: Մեր քովի խանը, որը մերինին պես աղտոտ էր ու մութ, հոն ալ բերին լեցուցին Պոլիսեն աքսորված բոլոր մտավորականներուն: Անոնք ալ ըսես նե՝ քոլալը օձիքներով, յախա-քրավաթով, հագած-կապած, բայց արդեն վրանին-գլուխնին պա՛տո-պա՛տո, գզգզվա՛ծ: Մենք ամեն գիշեր լսում էինք անոնց լաց ու կոծի ձայներն ու հառաչանքները, որովհետև թուրք զաբիթներն ու ոստիկանները անոնց սաստիկ ծեծում էին: Քանի մը օրեն անոնց բոլորին ալ տարին: Լսեցինք, որ անոնց շատ տանջանքներով սպանել են» [I.226(226).]:

Դեպի Չանղըրըի և Այաշի անապատներն էին քշվել ու սպանվել օսմանյան խորհրդարանի անդամ, իրավաբան-գրող Գրիգոր Զոհրապը, բանաստեղծներ Դանիել Վարուժանը, Սիամանթոն, գրողներ Ռուբեն Զարդարյանը, Ռուբեն Սևակը, Հովհաննես Թլկատինցին, Մելքոն Կյուրճյանը, Երուխանը, Սմբատ Բյուրատը, Տիգրան Չոկյուրյանը, Նազարեթ Տաղավարյանը և շատ ու շատ հայտնի դեմքեր Կ. Պոլսից, Սվազից, Դիարբեքիրից, Մարզվանից, Էրզրումից, Կեսարիայից, Իզմիրից և այլ հայաբնակ վայրերից:

Ամենուրեք փակվում էին հայկական դպրոցներն ու վարժարանները.

Դպրոցը մտան, վարժուհուն բռնեցին,
Վա՛յ, ամա՛ն,
Բերանը բացեցին՝ լեզուն կտրեցին,
Ա՛խ, ամա՛ն [III.2.17(352).]:

Քանի որ վարժուհին հանդգնել էր հայ մանուկներին հայերեն սովորեցնել:

Հայկական կրթական օջախների հետ ավերվում են նաև հայկական եկեղեցիները: Կ.Պոլսի Հայոց պատրիարքությունը միացվում է Սիսի կաթողիկոսությանը, և Թուրքիայի հայության հոգևոր պետ է ճանաչվում Սահակ Բ կաթողիկոս Խաբայանը:

Ռուսական հետախուզությունը 1915 թ. մարտի 15-ին և ապրիլի 3-ին Թուրքիայի վերաբերյալ հաղորդումների մեջ նշել է, որ ամբողջ երկրում տեղի են ունենում հայերի ձերբակալություններ, սիստեմատիկ կոտորածներ՝ Էրզրումում, Դյորտյոլում, Ջեյթունում և շրջակայքում, արյունալի ընդհարումներ Վանում, Բիթլիսում, Մուշում, բռնություններ, թալան, սպանություններ՝ Ակնում և ամբողջ Փոքր Հայքում, ժողովրդի տնտեսական քայքայում, ընդհանուր կոտորած...

Արևմտահայության ահավոր վիճակի մասին է վկայել 1905 թ. Վանի Հայոց ձորի Կեմ գյուղում ծնված Սիրակ Մանասյանը. «1915 թ. մարտի 4-ին լուր հասավ, որ պարոն Իշխանին մեր հարևան Հիրճ գյուղում սպանել են[6]: Այդ այն ժամանակն էր, երբ

[6] Իշխան – Միքայելյան Նիկողայոս Պողոսի (1881-1915), հայ ազատագրական շարժման գործիչ: Հակամարտության մեջ մտնելով թուրք իշխանավորների հետ՝ պաշտպանել է Վանի հայերի շահերը, զարկ է տվել կրթական գործին: Սպանվել է Վանի ապրիլյան ինքնապաշտպանության նախօրյակին, կուսակալ Ջևդեթի հրամանով:

թուրքերը Ջևդեթ փաշայի միջոցով մեր մեծերին կանչում և գլուխները ուտում էին: Այդ աճուռնի օրերին պր. Իշխանին հանկարծակի սպանում են և գցում են հորը: Զբավարարվելով դրանով, նրա երկու երեխաներին ևս ողջ-ողջ գցում են հորը: Մենք, որ այդ լսեցինք, հայրենակիցներով իրար անցանք: Մենք սկսեցինք պատրաստվել թուրքերի հարձակմանը:

1915 թ. մարտի 5-ին հուժկու հրետանու ձայն լսեցինք: Ժողովուրդը հավաքվեց հրապարակ և գընաց, լցվեց եկեղեցին: Թուրքերն արդեն նախօրոք զորահավաք էին կազմակերպել և բոլոր երիտասարդներին հավաքել: Քանի որ երիտասարդներ չկային, մերոնք ստիպված էին դիրքերը թողնել-գնալ հարևան գյուղերը: Մենք գնացինք Կյուկյանց հայկական գյուղը: Այնտեղ մի քանի հազար մարդիկ էին, մեզ տեղավորեցին մարագների մեջ: Ամեն օր թուրքերը բռնում էին հայերին և մեր աչքի առաջ կախում կամ մորթում էին: Դրանցից մեկն էլ իմ հորեղբայր Պետրոսն էր: Նա ոռնչպար էր: Երբ տեսանք Պետրոսին այդ վիճակում, մենք չճանաչեցինք...: Մենք այդ ահավոր դեպքերից սարսափած՝ ուզում էինք փախչել այդ գյուղից: ... Հաջորդ օրը բարձրացանք լեռները, որոնք շատ անտառախիտ էին: Մենք Ռըոքըո լեռան լանջին էինք: Մեր գյուղի դիրքն այնպիսին էր, որ մենք սարի լանջին էինք ապրում: Շաղբաթի ահուելի գետը և Շամիրամի ջրանցքն էին անցնում մոտից: Մենք բարձրացանք լեռան գագաթը, անտառի մեջ, տեսանք, թե ինչպես թուրքերը և քրդերը մեր անասունները, անկողինները, մեր սպիտակեղենները թալանում էին: Մենք տեսանք, որ ամեն առավոտ թուրքի լամուկները գալիս են, սկսում են կրակել ինչ-որ թիրախի վրա: Երբ թուրքերը հեռացան, մեր տղաները իջան ու մոտեցան, տեսան, որ այդ թիրախը իմ պապի գլուխն էր: Անխիղճ թուրքերը պապիս թաղել էին հողի մեջ կենդանի-կենդանի, գլուխը թողել էին դուրսը և կրակում էին անընդհատ: Երբ վերադարձանք գյուղ, պապիս մարմինը, որ արդեն քայքայված էր, մի կերպ թաղեցինք:

Չեմ կարող մոռանալ 1915 թիվը, երբ մենք լեռներով, գյուղերով անցանք. մարտ ամիսն էր՝ անձրևային, բուք, սոսկալի ցուրտ: Վերջին գյուղը, որ Վարագ էր տանում, դա Բերդակն էր: Մենք այնտեղ տեսանք փողոցներում մերկ, սպանված մարդիկ, որոնք ուռել էին և նեխել: Հոտում էին: Մենք այդ բոլորի միջով անցանք դեպի Վարագ: Լուսաբացին Վարագի լեռներում թուրքերը, որ դիրքեր էին բռնել, մեզ տեսան և սկսեցին կրակել մեզ վրա: Ժողովուրդը սարսափահար լաց էր լինում: ...Մենք փախչում ենք ու մոտենում Վանին: Միշտ գիշերով էինք գնում, քանի որ ցերեկը մեզ հետապնդում էին: Երբ Վանին մոտեցանք ու Քաղաքամեջ պիտի մտնեինք, թուրքերը կանգնեցրին, սկսեցին տղամարդ փնտրել: Վանի հերոսները հեռադիտակով նայում էին, սկսեցին կրակել: Թուրքերից ոմանք ընկան, ոմանք փախան, և մենք ազատվեցինք, մտանք Վան: ...Վանում մեզ տեղավորեցին դպրոցի շենքում: Ամեն առավոտ Վանի փոդայինն ավագախումբը նվագելով մաս էր գալիս՝ երեխաները նրա ետևից: Արդեն Վանի ապստամբությունն էր: Մի հայ ասաց մեզ՝ երեխաներիս. «Գնացեք փամփուշտներ հավաքեք, բերեք, որ նորը պատրաստեն»: Մենք գնացինք փամփուշտներ հավաքեցինք, տվեցինք արհեստանոցին: Հասավ օրը, երբ կռիվն ուժեղանում էր Վանում, Այգեստանում: Վասպուրականցիները, որ հավաքվել էին այնտեղ, մեծ կամքի ուժով պաշտպանեցին և՛ Այգեստանը, և՛ Վանի կենտրոնը՝ Քաղաքամեջը: Մերոնք ուժեղ մարտեր մղեցին և՛ Այգեստանում, և՛ Քաղաքամեջում: Թուրքերը լսելով, որ ռուսական զորքը Սալմաստից գալիս է Վան, խուճապահար սկսեցին հեռանալ: Մերոնք հարձակվեցին, ոչ միայն թուրքերին ոչնչացրին, այլև մեծ ավար ձեռք բերեցին՝ հրետանի, փամփուշտներ և այլն: Մայիսի 26-ին Վանի բերդի վրա ծածանվեց Հայաստանի դրոշակը: Վասպուրականցիները մեծ սիրով ընդունեցին ռուսական զորքերին և հայ կամավորներին՝ Անդրանիկ փաշայի ղեկավարությամբ» [I.30(30).]:

Վանի շրջակա գյուղերում թուրքերը հասցրել էին տեղում բնաջնջել հազարավոր հայերի: Երբ ռուսական զորքերը մոտենում են Վանին, նրանց ետևից նաև հայ գրողներ Հովհաննես Թումանյանն ու Ալեքսանդր Շիրվանզադեն ականատես են դառնում սահմռկեցուցիչ տեսարանների. «Որտեղ հասցրել են՝ կոտորել են հայերին, - գրել է Հովհաննես Թումանյանը իր հուշերում, - գլխավորապես՝ տղամարդկանց ու հետները տարել գեղեցիկ կանանց: Եվ եթե ժամանակ են ունեցել, ռուսական բանակի և հայ կամավորների սարսափը շատ մոտ չի եղել, բարբարոսական զվարճություններ են հորինել. խաչել են, կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել՝ մինչև կեսը դրել են պղնձի մեջ ու կեսից ներքև եփել, որ մյուս կեսը՝ կենդանի տեսնի ու զգա...: Շիկացած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել, կենդանի խորովել են: Ծնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ՝ ծնողներին...»

Բնականաբար, եթե Վանում ինքնապաշտպանության չդիմեին, հայերը նույն ձևով պիտի ճահատակվեին: Այստեղ տեղին է հիշատակել վանեցի վերապրող Արծրուն Հարությունյանի (ծնվ. 1907 թ.) խոսքերը. «Ինքնապաշտպանությունը ծնվում է, երբ ժողովրդի ընկատմամբ բռնություն է լինում» [I.35(35).]: Այնպես որ, ինչպես Վանի, նույնպես և Շատախի և այլ վայրերում մղված ինքնապաշտպանական հերոսամարտերը իթթիհատական կառավարության կիրառած բռնությունների դեմ ընդոստացող արևմտահայության ազնիվ պոռթկումն էր, նրա բողոքի ձայնը՝ ուղղված աշխարհի մեծ տերություններին: Այդ է վկայում նաև ժողովրդական երգի պատառիկը.

Հովհ. Թումանյան, *Երկերի ժողովածու*, հ. 6, Երևան, 1959, էջ 212-213:

Վան փոքրիկ քաղաք գավառակներով,
Լցվան դիակներ հարյուր հազարով,
Ներկվեցավ դաշտը կարմիր արյունով,
Ջայն տվին ամպեր, երկինք ու աստղեր,
Այնպես կգոռան ու կհրամայեն,
Որ Եվրոպան և Ամերիկան լսեն [III.4.2(532).]:

Սակայն ո՛չ Եվրոպան և ո՛չ Ամերիկան չմիջամտեցին, միայն ազգային հերոսներն էին, որ սատար էին կանգնում անօգնական ժողովրդին:

Առաջին համաշխարհային պատերազմի ընկզբից ինչպես բոլոր արևմտահայերը, նույնպես և սասունցիները ենթարկվում են նոր, դաժան հալածանքների, կողոպուտների և սպանությունների:

1915 թ. մարտին թուրքական հրոսակները ներխուժում են նաև Սասուն: Ապրիլ-մայիս ամիսներին տեղի են ունենում սասունցիների առաջին մարտերը: Հերոսական դիմադրություն ցույց տալով թուրքական զորքերին, բայց մեծ կորուստներով հայ մարտիկները նահանջում են դեպի Անդոք լեռան լանջերը և այնտեղից շարունակում ինքնապաշտպանությունը: Հունիսին համառ կռիվներ են տեղի ունենում Ասանքի շրջանում: Գոմուց վանքի և Տալվորիկի մարտիկները խուճապի են մատնում քյուրդ հրոսակներին և գրավում Սատանի կամուրջը. քսակցիները օգնության են հասնում նրանց: Հուլիսի 30-ին սասունցիները ազատում են Շենիկը, բայց թշնամին նոր հարձակումով գրավում է Անդոքի փեշերին գտնվող գոմերը: Անդոքի, Ծովասարի և Գերինի լեռներում սասունցիները հերոսաբար պաշտպանվում են իրենց վրա հարձակվող թուրքերից և քրդերից: Մշո և նրա դաշտում կոտորածներից փրկված և Ռանա ու Հավատորիկի լեռներում պատսպարված մոտ երեսուն հազար հայեր դիմադրում են հերոսաբար: Սակայն հերոսական այդ դիմադրությունը դաժանորեն ճնշվում է:

«Թուրքը հարձակվավ, սկսավ կոտորել, - պատմել է սասունցի վերապրող Առաքել Դավթյանը (ծնվ. 1904 թ.), - լավ աղջիկներին, լավ կնիկներին տարան, փախցրին: Մեր գյուղը Միսակ անունով մի ֆեդայի կար: Էն զենք ուներ, մտավ վանք, սկսավ կռվիլ: Մենք զենք չունեինք: Սասուն երկու ամիս դիմադրեց: Թուրք զինվորներ եկան պաշարեցին, սկսեցին կոտորել» [I.4(4).]:

Պատերազմի սկզբից, ինչպես բոլոր արևմտահայերը, այնպես էլ սասունցիները ենթարկվում են նոր դաժան հալածանքների: Սասունցի ականատես -վկա Եղիազար Կարապետյանը (ծնվ. 1886 թ.) ավելի հանգամանորեն է մեկնաբանել պատմական այդ իրադարձությունների մանրամասները. «Քրդերի հարձակումները հայերի վրա իբր թե անպաշտոն բնույթ էին կրում, բայց ընդհանուր համոզմունք կար, որ այդ բոլորը կատարվում էր կառավարության տրված խորհուրդներով, որի կենդանի ապացույցը այն էր, որ հայերի բողոքները չէին լսվում, դիմումներին պատասխան չէր տրվում: Սերվեթ փաշան երիտթուրք էր, գավառի փաշան էր և իսլամին հավատարիմ մարդ: Հետևաբար, նա էլ պետք է իր պարտքը կատարեր այնպես, ինչպես որ կատարել էին մյուս գավառների բոլոր փաշաները: Հունիսի 10-ից քյուրդ աշիրաթապետները խմբված ձիավորներով աջ ու ձախ կողմերից մտնում էին Մուշ, հրահանգներ էին ստանում ու վերադառնում էին իրենց տները: Ամեն գիշեր սայլերով ու բեռներով քաղաքից դուրս զենք ու փամփուշտ էր տեղափոխվում՝ քրդերին զինելու համար: Հայերի կոտորածը հաջող ավարտելու նպատակով կառավարության կողմից կազմված էր հատուկ ծրագիր, կատարված էր գյուղերի բաժանումը, նշանակված էր հարձակման օրը, ժամը այնպիսի պատրաստությամբ, որ այդ մեկ օրվա ընթացքում պետք է հիմնովին ավարտվեր Մշո դաշտի հարյուր հինգ գյուղերի բնաջնջումը՝ առանց մի երեխա խնայելու: Բաշխումը կատարված էր հետևյալ կերպ: Սկսած Մուշի աջակողմյան գյուղերից մինչև Մեղրագետի ակունքը, երեսունհինգ գյուղերի ջարդը հանձնված էր հաջի Մուսաբեկին, որը իր տրամադրության տակ ուներ երեք հազար հինգ հարյուր ձիավոր ու հետևակ քուրդ: Քաղաքի հյուսիս-արևմտյան կողմի տասնհինգ գյուղերի ջարդը հանձնված էր ֆատկանցի Ալեման աղային, որը իր տրամադրության տակ ուներ հազար զինված քուրդ: Ս. Կարապետի շրջանի քսան գյուղերի ջարդը հանձնված էր չեթեապետի օգնական, երիտթուրք Ռաշիդ էֆենդուն, որը ուներ հինգ հարյուր չեթեական ձիավոր ուժ, նաև նրանց մասնակցում էր Ս. Կարապետի վանքում նստած զորքը և Ջիարեթ գյուղում նստած մյուդուրը՝ իր ժանդարմաներով: Դաշտի հյուսիս-արևելյան կողը՝ տասնհինգ գյուղերի ջարդը հանձնված էր ջբրանցի Դրբոյի Ջնդուն, Կոլոտոյի Ջուբերին և Աղչանի մյուդուրին, որոնք իրենց տրամադրության տակ ունեին հազարից ավելի քուրդ և ժանդարմա: Դաշտի արևելյան կողմը՝ Ձխուրի քսան գյուղերի ջարդը հանձնարարված էր շեյխ Հազրեթին, որը իր տրամադրության տակ ուներ հազար երկու հարյուր ձիավոր՝ կազմված Ձիլանի և Ռոսուրի քրդերից: Այս կազմակերպված ուժերից դուրս, յուրաքանչյուր մահմեդականի վրա սրբազան պարտք էր դրված, որ նրանք իրենց հանդիպող հային առանց խնայելու սպանեն ու ոչնչացնեն: Գոյություն ունեցող դրությունը միանգամից փոխվեց: Հայերն այլևս գյուղից քաղաք գնալ-վերադառնալ չէին կարող: Թուրքերը հանդիպողին չարաչար ծեծում ու տանջում էին, տեղի էին ունենում նաև սպանության դեպքեր: Երբեմն հասակավոր կանայք անհրաժեշտ մի բան բերելու համար գնում էին քաղաք, նրանք էլ ճանապարհին միշտ ենթարկվում էին հալածանքի ու անպատվաբեր հիշոցների: Տագնապը համակել էր ժողովրդին, մարդիկ քուն ու հանգիստ չունեին:

Հունիսի 22-ին բաքրանցի քրդերից հարյուր ձիավորներ իջևանում են Կոնկան գյուղի սարը: Հունիսի 23-ին նրանցից տասը ձիավորներ եկան մեր գյուղը և գյուղի իշխաններից պահանջեցին տասը հատ ոչխար, տասը կոտ ալյուր և տասը հատ թաղիք: Ասոանց առարկության նրանք ձրիաբար ստացան այդ բոլորը և, հնուց ծանոթ լինելով հավատորիկցիների հետ կամ խղճի խայթից դրդված, Թամոյի Ալին ասաց. «Հայե՛ր, ես ձեր աղն ու հացը շատ եմ կերել, հիմա ձեզ մի ճշմարտություն պետք է ասեմ: Սուլթանից հրաման է եկել, որ օսմանցու հողի վրա ապրող բոլոր հայերին անխնա պետք է կոտորենք: Այժմ, եթե դուք կանգնեք ու հետվից դիտեք Սլիվանի դաշտի վրա, կտեսնեք, որ ցորենի արտերը հասել են, հասկը՝ հասկի վրա է ընկել, բայց ճնճղուկ անգամ դուք այնտեղ տեսնել չեք կարող: Տիրել է մի չտեսնված ամայություն: Մենք հիմնովին կոտորել ենք այդ միջավայրի հայերին, հիմա էլ կառավարությունը մեզ կանչել է այստեղ, որ մենք Մշո դաշտի և Սասունի հայերին էլ կոտորենք: Մի քանի օր է մնացել, որ ձեզ մոտ էլ կոտորած սկսվի, և պետք է այնպես լինի, որ Հիսուս Քրիստոսի անունը տվող մարդ՝ այս հողի վրա կենդանի չմնա»: Քրդերը վերցրին իրենց պահանջածը, գնացին, իսկ մենք մտածմունքի մեջ ընկանք...: Այսպես, դարերի ընթացքում հողին ու մաճին կառչած հայաշատ այդ գավառը մի ցերեկվա և մի գիշերվա մեջ դարձավ ամայի՝ անմարդաբնակ, իսկ նրա սեփական տերերը անողոք թուրքերի ու քրդերի ձեռքով հրեշային գործողությամբ՝ սրով մորթվեցին, կրակով այրվեցին, ջրով խեղդամահ եղան՝ հարյուր հինգ գյուղերի յոթանասուն-ութսուն հազար երկու սեռի պատկանող հայ բնակիչները: Թալանի տրվեց միլիոնների հասնող նրանց հարստությունը: ... Հունիսի 28-ի օրը ոչ բարով Վարդավառի կիրակին էր. հայ ժողովրդի ուրախության տոնը, ավա՜ղ, դարձավ «մարդավառի» կիրակի՝ Տարոնի դաշտի հայության համար» [I.1(1).]:

Սասունի Շենիկ գյուղից ականատես-վկա Խաչիկ Խաչատրյանը (ծնվ. 1900 թ.) պատմել է. «Էկավ թուրքական զորքը՝ մոտ վաթսուն հազար: Էկան շրջապատեցին գյուղը: Մերոնք դիմադրեցին: Երկու անգամ թուրքական բանակ լցվավ գյուղը: Երկու անգամ էլ մեր ֆեդայիները և ովքեր որ զենք ունեին, ետ քշեցին: Հավաքվել էին գյուղի կենտրոնը: Երեք օր առաջ մեր ժողովուրդ քաշվել էր գյուղից: Գնացել էր Անտոք: Երեխաները կանանց հետ, ես էլ հետները գնացի: Հուլիսի սկիզբը գնացինք Անտոք: Ո՛չ հաց, ո՛չ ջուր, միայն անլի միսն էր, աղ էլ չկար: Մոտ քառասունհինգ օր էնտեղ մնացինք: Կովողները՝ կովան: Թուրքական զորքը էկավ Անտոք: Էդտեղ էլ կովան: Քառասունհինգ օր վերջը մեր հաց, մեր պաշար լրացավ: Հաց չկար: Մնաց փոխինդը: Թուրքի զորք էկավ լցվավ: Ջորեր երեխաների ջանդակներ լցվան: Մայրեր չկարցան փախցնել: Թուրքերն ու քյուրդերը կրակում էին: Մեյ գնդակից տասը մարդ էր ընկնում: Ով փախավ՝ պրծավ: Հարսներին տարան: Գետի ջուր էնքան մարդ տարավ» [I.2(2).]:

Վերոհիշյալ Վարդավառի օրվա մասին է պատմում նաև մշեցի Շողեր Տոնոյանը (ծնվ. 1901 թ.). «1915 թվին Վարդեվրի օրը եղավ կոտորում: Թուրք ասկյարներ Դաղդնու չեչեններ բերին, մեզ կոտորին: Մեր գեղ էկան թալանին, ոխչար, գոմշդանք, մալ քշին տարան: Ով խորոտ էր՝ տարան: Իմ հորքուրին մե տղա կար, էն գիշեր-ցերեկ իմ մոտ էր, դրան լե տարան: Տղամարդ չմնաց: Հավաքին մեծ ու մանր, տարան լցրին Ավզուտ կեղի գոմերու մեջ, կրակ տըվին, վառին: Լցրին Մալխասի Մարդոյի գոմերու մեջ, խոտի դեզեր դարսին գոմու շուրջ բոլոր, վրեն նավթ ցանին, տվին կրակին: Իմ հոր տնից վաթսուն ջան վառվան էդ գոմերու մեջ: Էն օր ես եմ տեսել, լաո՛, թող իմ թշնամին չտեսնա: Մենակ ես ու ախպերս ազատվանք: Առաջուց խորոտ հարս ու աղջիկ տարան թուրքացրին, ինչ լե մատղաշ տղա-էրեխա կար՝ մորերու գրկից պոկեցին տարան, որ դարձուն զաբթիա: Գոմի մեջ օր ծուխ ու կրակ մտավ, ժողովուրդ սկսավ հազալ ու խեղդվան: Մեր զմանուկ ուրացավ, լաո՛, իսկական սոդոմ-գոմոր էր: Վառվող մարդիկ վազվզում, խփվում էին պատերուն, ոտի տակ տրորում գետնին ընկած իրենց մանրերուն: Էն օր ես իմ աչքով եմ տեսել, լաո՛, թող սարի գիլանք չտեսնեն: Կըսեն, թուրք մոլլան էդ օր տեսավ՝ չդիմացավ, ինքն ուրան կախեց: Էդ ալալորումի մեջ, մարդկանց մեծ մաս խեղդվավ, մեռավ: Գոմի տանիք փլավ: Փլավ, լցվավ մեռուկներու վրա: ... Երանի ես ու քորփա ախպերս լե վառվեինք, իմալ օր քառասուն-հիսուն ջան վառվան, օր չտեսնեինք իդա անհավատ մարդոց անխիղճ ու անաստված օրենք: Գոմերու մեջ վառեցին մեր կեղ՝ Վարդենիսի, Մշախշենի, Աղբենիսի, Ավզուտի, Խվների ու էլի շրջակա գյուղերու սաղ կեղացոց: Էն օր ես եմ տեսել, զիմ դուշման չտեսնա... Գոմի գերաններ օր վառան, տանիք փլավ, էրդիկ բացվավ, բոց ու ծուխ էդ ծակից դուրս էլավ, մզի օդ էկավ: Հմա օր օդ առանք, ես ու իմ հորեղբոր աղջիկ՝ Արեգ, վերցրինք իմ ուշաթափուկ ախպոր ոտ ու ձեռից թալինք տանինք: Ես ու Արեգ լե վառված գերաններու, ջանդգներու վրայով էդ էրդկից մզի թալինք դուրս: Օր էլանք տանինք, տեսանք թուրք զինվորներ շուրջպար բռնած կպարեն, կուրախանան: Մինչև էսօր իմ աննկջներու մեջ է ընկոց երգի ձեն. «Յօրի յանդըմ, յօրի» ասում ու թրեր իրար զարկելով կպարեին» [I.8(8).]:

1904 թ. ծնված մշեցի ականատես-վկա Սեդրակ Հարությունյանը ևս շատ շատերի նման վկայել է. «Ես ոչ միայն մեր գյուղի կոտորումն եմ տեսել, այլ նաև մեր բոլոր գյուղերի փախեփախն եմ տեսել: Խսիրի պես համատարած գետնին փռված դիակներ էին» [I.9(9).]:

Իսկ խնուսցի Հրանտ Գասպարյանը (ծնվ. 1908 թ.) վկայում է. «Ես ինչ որ տեսել եմ, էն իմ տեսածը պատմեցի ձեզ: Ամբողջ աչքիս դեմն է իմ տեսածը: Խնուսից ոչ մի բան չենք բերել: Միայն ջաններս ենք ազատել: Մեր գերդաստանը հարյուր քառասուներեք հոգի էին. մի քուր, մի ախպեր, մերս ու ես փրկվանք» [I.12(12).]: Եթե հարյուր քառասուներեք շնչից բաղկացած նահապետական մեծ գերդաստանից միայն չորս հոգի է փրկվել, ուստի կարելի է երևակայել, թե ֆաշիստական գազանցիկների նախատիպերը հանդիսացող

կրակի տրված գոմերում և մարագներում քանի՜, քանի՜ հազար հայ է ողջակիզվել:

Պատմական այս իրադարձություններին առընթեր հյուսվել է նաև ժողովրդական երգը.

Սասուն գավառ անտառներով,
Պարսպապատ բարձր լեռներով,
Դեմ կանգնեց միշտ թուրք զորքին.
Սասուն բուրե տաք արյան հոտ [III.4.1(531).]:

«Տաք արյան հոտ էր բուրում» նաև հերոսական Շապին-Գարահիսարում, Շատախում, Կարինում, Պոնտոսում, Մուշում, Սվազում, Խարբերդում, Մալաթիայում, Դիարբեքիրում, Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի հայաբնակ վայրերում՝ Իզմիթում, Բուրսայում, Անկարայում, Կոնիայում և այլուր: Աննկարագրելի դաժանությամբ ոչնչացնում էին բոլորին՝ չխնայելով նույնիսկ մանուկներին:

Եվ երբ ռուսական զորքերը նահանջում են, նրանց ետևից Արևելահայաստան են գաղթում նաև Վանի, Սասունի, Շատախի, Մուշի, Բիթլիսի, Ալաշկերտի, Բայազետի, Բաբերդի, Էրզրումի և այլ բնակավայրերի հայերը:

Ահավոր ողբերգություն... Ահավոր մղձավանջ ապրեց նաև Կիլիկիայի հայությունը: Հայաշատ Կիլիկիայով էր անցնում բացառիկ կարևորություն ներկայացնող Բեռլին-Բաղդադ երկաթուղին: Այդ հանգամանքը մտահոգում էր Թուրքիայի կառավարությանը, քանի որ Կիլիկիայի աշխատասեր ու գործունյա հայությունն իր բարգավաճ վիճակով կարող էր տիրապետող դառնալ թուրքական տնտեսության մեջ: Լեռնային Կիլիկիայում Հաճընից, Զեյթունից մինչև Դյորտյոլ սփռված էին հայկական գյուղերն ու ավանները, որոնց բնակիչները թեև զբաղվում էին մետաքսագործությամբ, ջուլհակությամբ, գորգագործությամբ և այլ տոհմիկ արհեստներով, սակայն նոր սերունդը բավական լուսավորյալ էր՝ այնտեղ գործող հայ և օտար դպրոցների ու վարժարանների շնորհիվ, որոնք կարևոր դեր էին կատարել նրանց հոգեգիտակցական աշխարհի ձևավորման վրա: Բացի այդ, ռուս-թուրքական պատերազմից հետո խոստացված, բայց չիրականացված «բարեփոխումների» առնչությամբ, Թուրքիայի շատ գավառներում ծայր առած բռնություններն ու կոտորածները դեռևս ի սպառ չէին բնաջնջել ի բնե ազատատենչ կիլիկիացիներին: Կիլիկիայի արծվաբույն Զեյթունն արդեն վաղուց թուրքական բռնակալության զայրույթի կիզակետն էր: Հետևաբար, ժամանակն էր հին հաշիվները մաքրել նաև համարձակ զեյթունցիների հետ:

Զեյթունցիները, որ անցյալի ազգային-ազատագրական պայքարի փառապանծ ավանդույթներ ունեին, կարող էին այս անգամ ևս անձնվեր պայքարի դուրս գալ, բայց դրան խանգարում են Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խաբայանն ու հայ երևելիները, որոնք, խաբվելով թուրքական կառավարության կեղծ խոստումներից, «հնազանդության» կոչ են անում, պատճառաբանելով, թե «Փոքր շարժում մը կրնա վըտանգել Թուրքիո նահանգներու ամբողջ հայությանը»: Վերևից պարտադրված այս «անգործնականությունը» ողբերգական տողերով է նկարագրված «Կաթողիկոսդան գէլդի քարա խաբէրը» («Կաթողիկոսից եկավ սև լուրը», այսինքն՝ զենքի չդիմելու պատգամը – Վ. Ս.) ժողովրդական ծավալուն վիպերգում, որը հաղորդել է հաճընցի Սաթամյան Նազենին [III.4.14(544).]:

Արդեն թուրքական կառավարությունը ինչպես այլ վայրերում, այստեղ ևս հավաքել էր հայերի զենքերը, երիտասարդներին զորակոչել թուրքական բանակ, բայց նրանցից շատերը կարողացել էին բանակից փախչել և թաքնվել Զեյթունում: Խուրշիդ փաշան իր երեք հազար զորքով գալիս, պահանջում է դասալիքներին, որոնք ապաստանել էին Բերզնկա լեռան վրա կառուցված հինավուրց Ս. Աստվածածնի վանքում: 1915 թ. մարտի 25-ին թշնամին սկսում է գնդակոծել վանքը: Զեյթունի ինքնապաշտպանները, Փանոս Չագրյանի գլխավորությամբ, պատասխանում են թշնամուն՝ խնայելով իրենց փոքրաքանակ փամփուշտները:

«... Վանքը Զեյթունի ճիշտ դիմացն էր, - մեզ պատմել է զեյթունցի Կարապետ Թոզլյանը (ծնվ. 1903 թ.), - մենք՝ զեյթունցիներս, կանգնած սեյիր կընեինք: Մեյ մըն ալ քանի մը ասկյարներ թեներեով գազյաղը տարին, որ վանքը այրեն: Ամմա էշխիները վանքին մեջեն անոնց սպանեցին...» [I.139(139).]: Տասներկու ժամ տևող այդ կռվից հետո զեյթունցի վաթսուն երիտասարդներ գիշերով, վանքի ետևի պատուհաններից դուրս թռչելով, բարձրանում են լեռ: Նրանք գնում, օգնության են հասնում Զեյթունի մոտակա Ֆրնըզցագցի իրենց եղբայրներին, որոնց ևս թշնամին սպառնում էր ոչնչացնել: Ինն օր տևող այդ հերոսամարտում թշնամին մի քանի հարյուր զոհեր է տալիս: Հայերի փամփուշտներն սպառվում են: Նրանք սկսում են կռվել քարերով: Այդ մարտերում զոհվում են օգնության հասած քսանվեց զեյթունցի, փրկվում են մի քանիսը, այդ թվում՝ Զեյթունի հերոս Արամ Չոլաքյանն իր զինակիցներով:

Ապրիլի 9-ին Զեյթունի երևելիները տարվում են զորանոց, ապա՝ նաև նրանց ընտանիքները, որոնց բոլորին քշում են անծանոթ վայրեր: Սրանք առաջին տարագրվողներն էին: Սկսվում է Զեյթունի բռնագաղթը: Նախ՝ դատարկվում է վանքի թաղը, հետո՝ Զեյթունի շրջակա գյուղերը: Այնուհետև ավերվում է արծվաբույն Զեյթունը:

Մերձավոր Արևելքի միսիոներների նախագահ Յոհան Լեփսիուսը՝ «Հայաստանի ջարդերը» գաղտնի տեղեկագրի մեջ անդրադառնալով Զեյթունի տեղահանությանը, նշում է. «Քիչ ատենեն տեղի ունեցավ ամբողջ Զեյթունի հայ բնակչության տարագրությունը՝ իրարու ետևէ շատ մը կարավաններով: Շուրջ քսան հազար հոգի էին անոնք: Քաղաքը չորս թաղեր ուներ: Բնակիչները տարվեցին՝ մեկը մյուսի ետևեն, շատ անգամ կիները և մանուկներն այրերեն զատված: Յուրաքանչյուր արհեստե միայն մեյ մեկ հոգի ըլլալով՝ միայն վեց հայեր կրցան մնալ: Տարագրությունը շաբաթներ տևեց: Մայիսի երկրորդ կեսին Զեյթունը ամբողջովին պարպված էր: Զեյթունի բնակիչներեն վեց-ութ հազար հոգի Կոնիայի և Էրեյլիի մեջտեղ, Քարափունարի և Սյուլեմանիեի ճախճախուտ մարզերը ղրկվեցան և տասնհինգ-տասնվեց հազար հոգի՝ դեպի Դեր Զոր, Եփրատի վրա, Միջագետքի տափաստանը: Անվերջանալի կարավաններն անցան Մարաշեն, Ադանայեն և Հալեպեն: Սնունդն անբավարար էր, բան մը չեղավ զանոնք տեղ մը հաստատելու համար կամ նույնիսկ իրենք իրենց տարագրության վախճանին հասցնելու համար...»[8]:

Անզեն ու անդեկ մնացած անօգնական հայերը, թուրքական զաբիթների մտրակների ու ավինների հարվածների ներքո, արցունքն աչքերին, սոված ու ծարավ քշվում էին իրենց հայրենի շեն օջախներից: «Հայերի բռնագաղթը լոկ նենգամտորեն քողարկված մահվան դատավճիռ էր»[9], - գրել է ֆրանսիացի հրապարակախոս Ռընե Պինոն իր «Հայերի ոչնչացումը. գերմանական մեթոդ–թուրքական գործ» աշխատության մեջ:

Տարագրության ճամփաներին անխիղճ ոստիկաններն ու զինվորական համազգեստ հագած բանտերից դուրս բերված հանցագործ մարդասպանները կողոպտում, թալանում էին բոլորին, առևանգում, պատվազրկում կանանց ու աղջիկներին:

Հայերի բնաջնջումն իրականացվում էր թե՛ տեղերում և թե՛ աքսորավայրերում՝ Միջագետքի անծայրածիր անապատներում, հատկապես Ռաքքայում, Հավրանում, Ռաս ուլ Այնում, Մեսքենեյում, Սուրուճում և Դեր Զորում:

«... Մեր գյուղեն միայն ես եմ մնացել ողջ, - պատմել է զեյթունցի Եվա Չուլյանը (ծնվ. 1903 թ.), - թուրքերը էկան բոլորին գյուղեն հանեցին: Խամշիով կմխթեին, որ քայլենք: Բոլորին ձեռքերը ետևները կապած տարին լեցուցին դշլաղի պես բարձր տեղ մը: Մեջը դամայով ու բալթայով մեկի ձեռքը, մյուսի՝ ոտքը, մյուսի՝ թևը ջարդեցին: Մեզի մերկացուցին, մորե մե՛րկ... չը՛ս-չըլբախ էինք, ո՛չ վարտիք, ո՛չ շապիկ...: Ադ տեղը Դեր Զորն էր» [I.140(140).]:

Ըստ խարբերդցի Արամ Քյոսեյանի (ծնվ. 1908 թ.). «1915 թ. ես յոթը տարեկան էի, երբ մեզի Խարբերդից տեղահանելու հրաման հանեցին: Հագած-կապած, զուգված-զարդարված ճամփա ելանք, կարծես, հարսանիք էինք գնում: Ճամփին սկսվեց թալանը, ան ալ մեկ անգամ չէ՝ իրար ետևէ՝ ով ինչ կգտնար՝ կփախցըներ: Վերջում արդեն տակի շորերով էինք մնացած, անոնք ալ ծվեն-ծվեն... Մամաս իմ աչքերը կփակեր, որ գետնին պառկած մեռնողներուն չտեսնամ: Վերջում՝ մամաս և եղբայրս մնացին ճամփին. չկրցան քալել, մեռան, ի՞նչ եղան՝ չգիտեմ: Մեր ետևեն թուրքերը գալիս էին, հավաքում էին չոջուխներուն: Ալ չգիտեմ՝ մեզի պիտի մեռցնե՞ն, զավա՞կ պիտի ընեն՝ չգիտեմ: Ալ վրանիս ու՛ժ չկար, անքան քալել էինք: Վերջապես հրաման եկավ՝ կանգ առնել: Ձորի մը մեջ կանգ առանք: Սկսան մեծերուն հարցնել. «Հա՞յ ես, թե՞ թուրք»: Ով՝ «Հայ եմ» ըսեր, անոր մեկ կողմ կանգնեին, ով՝ «թուրք եմ» ըսեր՝ մյուս կողմ: «Հայ եմ» ըսողներուն բոլորի՛ն տարին հեռուն, մորթեցին: «Թուրք եմ» ըսողները՝ ազատվեցան...: Գիշերը մեզի՝ փոքրերիս, պզտիկ բլուրի պես տեղ մը հավաքեցին: Մենք հոգնած էինք, դու մի ասա, էդ բոլորը մարդկանց գլուխներ էին: Առավոտուն, երբ լույսը բացվեց, տեսանք կտրված գլուխներ՝ իրար վրա դիզված, բլուր էր կազմված...» [I.115(115).]:

Վերոնշյալ զեյթունցի Եվա Չուլյանը շարունակել է. «...Առավոտյան եկան, նորեն թափեցին մեզի, նորեն սկսան ջարդել և ջուրը լցնել. մաղարային տակեն Խաբուր գետն էր գնում: Մեկին՝ գլուխը, մյուսին՝ ոտքը, մեկալին՝ ձեռքը կտրեցին, փրթեցին, ամենքին ալ գետնին իրար վրա լեցուցին: Մարդ կա՝ չէ՛ մեռած, ամմա՝ ջնջխված է, մեկը՝ կույա՛, մյուսը՝ կծվա՛, արյունին հո՛տը՝ մեկ կողմեն, անոթությու՛նը՝ մյուս կողմեն» [I.140(140).]:

Այս ահասարսուռ տպավորությունների ներքո հյուսվել է տառապյալ ժողովրդի աղեկտուր եղերերգը.

Բլբուլն ալ կկանչե. գարու՛ն է, գարու՛ն,
Մի՛ բանար յարանիս. խորու՛ն է, խորու՛ն,
Ամա՛ն, ողորմա՛ծ Տեր, աս ի՛նչ Դեր Զոր է.
Լալեն աչվընիս կապեր է փերդե [III.2.29(364).]:

Եվ քանի որ հայերեն խոսելն արգելված էր, նրանք ստիպված իրենց վիշտն ու տառապանքը մեծ մասամբ արտահայտել են թուրքերեն:

Հայերի կողմից ստեղծված դերգորյան թուրքալեզու երգաշարից հատվածներ առաջին անգամ գրանցել ենք դեռևս 1956 թվականին Երևանի Վարդաշեն թաղամասում վերապրող Եղիսաբեթ Քալաշյանից (ծնվ. 1888 թ., Մուսա լեռ): Միաժամանակ նա մեզ պատմել է իր տխուր կյանքը. «Արաբստանի անապատում մեր եղած ժամանակ կենդանիների պես էինք՝ ո՛չ հագուստ, ո՛չ ապրուստ, ո՛չ լվացվել, ո՛չ խըմել...: Բնական պետքի համար անգամ ջանդարմը գլխուդ կայնած կըլլար. ո՛չ կին կճանչնային, ո՛չ աղջիկ, ո՛չ նամուս...: Կերակու՞ր, ի՞նչ կերակուր. խո՛տ էինք հավաքում, անասունների պես խո՛տ էինք արածում: Ադ գտնվեր նէ՝ աղեկ. կթաթխեինք աղին. ավելի համով կըլլար: Մեկ-մեկ հեռուեն արաբներ կերևային. բեդևի (բեդվին) արաբները ոչխար-մոչխար շատ ունեին, ամմա տուն-տեղ չունեին. չադըրներուն տակ կապրեին: Ադ քրիստոնյա արաբները մեզի կմեղքնային. քիչ մը փիլավ տային նէ՝ ձեռքով-մատներով կըլպստեինք, կուտեինք. չունքի ջիգյարը անու՛շ է...: Իմին երեք պզտիկ ձագուկներս ալ աքսորի ճամփաները մեռան: Անոր համար աս տարիքիս մեն-մենակ

[8] Գ. Գալուստեան, *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն*, էջ 178:

[9] **R. Pinon,** *La suppression des Armeniens Méthode allemande - travail turc.* Paris, 1916, p. 27.

մնացած եմ...» [III.2.32(367).]: Յոթանասունամյա այդ կինն առաջին անգամ մեզ հաղորդեց դերզորյան թուրքալեզու երգաշարից հատվածներ, որոնք երգում էր՝ վերհիշելով իր դառն անցյալը, իր կորցրած զավակներին. արցունքներն անվերջ հոսում էին նրա աչքերից, ձայնը խզվում էր ու չէր կարողանում երգել. մի փոքր շունչ էր առնում, կրկին սկսում էր երգել ու կրկին արտասվել.

Դէր Զօր չօլլէրինի բէուրիւդու դուման,
Ամանը՛մ, յամա՛ն, հալլըմըզ յաման.
Ինսան վէ յէշիլ բօյանդը քանա,
Դինիմին ուղրունա ծլէն էրմէնի:

Մշուշն է պատել Դեր Զոր անապատին,
Ավա՛ղ, ավա՛ղ, մեր վիճակն է ողբալի.
Մարդ ու կանաչ արյունով ներկվեցին.
Հավատի համար մեռնող հայեր [III.2.35(370).]:

Եվ կամ՝

Սաբախդան քալքթըմ, գիւնէշ փաղլըյօր,
Օսմանլը ասքէրը սիլահ յաղլըյօր,
Էրմէնիյէ բաքդըմ՝ յա՛ման աղլըյօր,
Դինիմին ուղրունա ծլէն էրմէնի:

Առավոտյան վեր կացա՝ արևն էր փայլում,
Օսմանցի ասկյարը զենքն էր յուղում,
Հայերին ննջեցի՝ սաստի՛կ էին լաց լինում,
Հավատի համար մեռնող հայեր [III.2.59(394).]:

Քրիստոսի խաչելության տոնով սկսվում են Կիլիկիայի հայության աննկարագրելի տառապանքներն ու նահատակությունը.

Ջատիկ-կիրակի չադըր սէքթիւլէր,
Բէյթիւն էրմէնիլէրի չէլէ դէքդիւլէր,
Ռէչի գիբի էրմէնիլէրի քէսդիլէր.
Դինիմին ուղրունա ծլէն էրմէնի:

Ջատիկ-կիրակի վրանները քանդեցին,
Բոլոր հայերին անապատը լցրեցին,
Այծերի պես հայերին մորթեցին.
Հավատի համար մեռնող հայեր [III.2.51(386).]:

Եվ «հավատի համար մեռնող» հայերի դիակները սփռված էին ամենուրեք.

Դէր Զօր դէդիքլէրի բէյիւք քասաբա,
Ռէսիլէն էրմէնի գէլմէզ հէսաբա,
Օսմանլը էֆրադը դէնմիւշ ղասաբա.
Դինիմին ուղրունա ծլէն էրմէնի:

Դեր Զոր կոչվածն էր մի մեծ տեղավայր,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի պետերը մսագործ դարձան.
Հավատի համար մեռնող հայեր [III.2.38(373).]:

Անհաշիվ էին ոչ միայն «մորթված հայերը», այլև հիվանդներն ու մահամերձները, քանի որ նաև մոլեգնում էր տիֆի համաճարակը.

Դէր Զօր չօլիւնդէ բիր սրա միշմիշ,
Էրմէնի մուհաջիրի թիֆօյա դիւշմիւշ,
Օ՛յ անամ, օ՛յ անամ, հալիմիզ յամա.
Դէր Զօր չօլիւնդէ քալդըղըմ զամա:

Դեր Զորի անապատում մի շարք ծիրանի,
Հայ գաղթականները վարակվել են տիֆ,
Վա՛յ, մայրիկ, վա՛յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը.
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը
[III.2.44(379).]:

Դեր Զորի անապատը դարձել էր կենդանի գերեզմանոց.

Դէր Զօրում իչինդէ նանէլէր բիթէր.
Ծլմիւշլէրին քօքուսու դիւնյայա յէթէր.
Բու սիւրգիւնլիւք բիզէ ծլիւմդէ բէթէր.
Դինիմին ուղրունա ծլէն էրմէնի:

Դեր Զորի անապատում անանուխն է բուսել,
Դիակների եհխաճոտն աշխարհն է բռնել.
Այս աքսորը մեզ մահից վատթար է.
Հավատի համար մեռնող հայեր [III.2.46(381).]:

Իսկ ողջ մնացողների վիճակն ավելի անմխիթար էր.

Դէր Զօր չօլիւնդէ յարալը չօքդըր,
Գէ՛լմէ, դօքթօ՛ր, գէ՛լմէ՝ չարէսի յօ՛քդըր,
Ալլահդան բաշխա քիմսիմիզ յօ՛քդըր.
Դինիմին ուղրունա ծլէն էրմէնի:

Դեր Զորի անապատում վիրավոր շատ կա,
Մի՛ գա, բժի՛շկ, մի՛ գա. մեկ է՝ ոչյս չկա.
Աստծուց բացի էլ ո՛չ ոք չկա,
Հավատի համար մեռնող հայեր [III.2.75(410).]:

Եվ հայ ժողովրդի տխրաթախիծ երգը վեր է ածվել աղոթքի.

Ըղխա-չըխա չըխդըմ յօխուշ բաշընա,
Նէլէ՛ր գէլդի էրմէնիհին բաշընա,
Հըզըր Ալլա՛հըմ, հըզըր յէթի՛շ.
Էրմէնի միլլէթիհի քուրթա՛ր, գէչի՛ր:

Ելա, բարձրացա գագաթը սարի,
Ինչե՛ր ասես չեկավ գլուխը հայի.
Հզո՛ր Աստված, օգնության հասիր.
Հայ ժողովրդին փրկի՛ր, ազատի՛ր [III.2.97(432).]:

Ու միմյանց են հաջորդում սահմռկեցուցիչ տեսարանները.

Դէր Զօր չօլիւնդէ ուզանմըշ, յաթմըշ,
Ռէլլէսի յօք դըր, քի յիւզիւնէ բաքայըմ,
Էրմէնիլէր բու գիւնէ օլաշմըշ,
Դինիմին ուղրունա ծլէն էրմէնի:

Դեր Զորի անապատում փոկել, պառկել է,
Գլուխը չկա, որ դեմքը տեսնեմ,
Այս օրվան հասան խեղճ հայերը,
Հավատի համար մեռնող հայեր [III.2.96(431).]:

Եվ լսվում են նրանց հոգեվարքի խուլ հառաչանքները.

Գիդէ-գիդէ՝ գիդմէզ օլդու դիզլէրիմ,
Աղլա-աղլայա՝ գօրմէզ օլդու գօզլէրիմ,
Ամանը՛մ, յամա՛ն, հալիմիզ յաման.
Դէր Զօր չօլիւնդէ քալդըղըմ զաման:

Գնալով-գնալով՝ հոգնեցին ծնկներս,
Լալով-ողբալով կուրացան աչքերս,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը.
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը
[III.2.47(382).]:

Քանի որ անօթևան էր հայերի վիճակը.

Դէր Զօր չօլիւնդէ քիթմէդի յէշիլ,
Ղուրշունա դիզդիլէր էլլի բին քիշի.
Մէրաքդան դօքիւլդիւ միլլէթին դիշի.
Դինիմին ուղրունա ծլէն էրմէնի:

Դեր Զորի անապատում կանաչ չի բուսնի,
Հիսուն հազար մարդ գնդակահարեցին,
Ժողովրդի ատամները վշտից թափվեցին.
Հավատի համար մեռնող հայեր [III.2.53(388).]:

Ադաբազարցի Աշոտ Օհանյանը (ծնվ. 1905 թ.) պատմել է. «1914 թ. մեր տղամարդկանց թուրքական կառավարությունը հավաքեց, տարավ թուրքական բանակ, որից հետո ընտանիքներուն ըսին. «Կաորեր վարձեցեք, մոտիկ տեղ պիտի գնանք»: Ով փող ուներ ֆուրղուն վարձեց, ով չուներ՝ ոտքով: Մենք ալ չոջուխ էինք, մորեղբուս փեշեն բռնած գացինք ոտքով: Երկար գնացինք: Առաջին կանգառնիս եղավ Կոնիան: Էնտեղ փոխանակ մեզի քաղաք մտցնեն, սարերում ոստիկանների հսկողության տակ պահեցին՝ սոված, ծարավ: Մյուս առավոտ մեզի ճամփա հանեցին դեպի Բոզգուր: Անտեղեն ալ անցանք: Օրերո՛վ, շաբաթներո՛վ ոտքով քալլում էինք: Ոտքերնիս արյունոտ քալլում էինք: Ոստիկանները մտրակներով խփում էին: Շատերը չդիմացան, ճանապարհին մեռան: Դիակները մնում էին գետնին: Դիշերը գայլերը ուտում էին: Մեզ քայլեցնում էին ոտքով: Արդեն քչացել էինք, քանի որ շատերը մեռել էին: Մեկ էլ Իդե անունով մի գյուղի մոտ հասանք: Էնտեղ մեր վրա հարձակվեցին, սկսվեց թալանը. «Փարանըզ յո՞ք. չքարընը՛զ (փող չունե՞ք. հանե՛ք) ասելով...» [I.221(221).]:

Առանձնապես ծանր է եղել կողոպտված, որդեկորույս մայրերի վիճակը: Ապրելու տարրական պայմաններից զրկված հայ մայրերն իրենց ունեցվածքը թուրքական կառավարությանն ու զինված ավազակներին թողնելուց հետո, զգալով իրենց մոտալուտ վախճանը, իրենց սիրասուն զավակներին պահ են տվել բարի արաբներին, որպեսզի եթե իրենք նահատակվեն, գոնե իրենց երեխաները ողջ մնան.

Ձօ՛լ վէր, Խաբու՛ր, յօ՛լ վէր, գէչէլիմ չօլիւ.
Էվլադըմ չըս-չըբլախ արաբըն քօլիւ,
Ամանը՛մ, յամա՛ն, հալիմիզ յաման,
Դէր Զօր չօլիւնդէ քալդըղըմ զաման:

Ճամփա տուր, Խաբու՛ր, անապատն անցնեմ.
Զավակս մերկ-տկլոր արաբի գյուղումն է,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը
[III.2.79(414).]:

Նիկոմեդիացի Բարուհի Չորեքյանը (ծնվ. 1900 թ.) մեզ պատմել է. «Երբ մեզի աքսոր քշեցին, մենք տասներկու ամիս անապատին մեջը մնացինք: Չորս քույրով փախանք անտառները: Ձրի մեջ լողալով Խաբուր գետը անցանք, արաբ բեդվիններու բովը հասանք: Անոնք մերին ոջլոտված մազերը խուզեցին, երեսնիս մելանով ծեծեցին, որ հայ ըլլալնիս չիմացվի: Իրենց ոչխարները մեզի տվին, որ արածացնենք» [I.229(229).]:

Իր հուշերում 90-ամյա Գրիգոր Գյոզալյանը (ծնվ. 1903 թ.) անհուն երախտագիտությամբ է հիշում Հոմս-Համմայի ճամփին, Մուհարդի գյուղի արաբ քրիստոնյա բարի պառավին, որն ամեն երեկո իր եփած փլավն ու գոտու մեջ խցկած հացի կտորները պատերի տակ ուժասպառ ծվարած հայ որբուկներին գաղտագողի բաժանելուց հետո անհետանում էր մթության մեջ [I.163(163).]:

Ջարդի ու կոտորածի աննկարագրելի թոհուբոհի մեջ երեխաները կորցրել են իրենց ծնողներին.

Դէր Զօր չօլիւնդէ շաշըրդըմ, քալդըմ,
Ցիթիրդիմ անամը, յիթիրդիմ բաբամը,
Վա՛յ անամ, վա՛յ անամ, հալիմիզ յաման,
Դէր Զօր չօլիւնդէ քալդըղըմ զաման:

Դեր Զորի անապատում շվարեցի, մնացի,
Մորս ու հորս այնտեղ կորցրեցի,
Վա՛յ մայրիկ, վա՛յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը
[III.2.71(406).]:

Տիգրանակերտցի Կարապետ Մկրտչյանը (ծնվ. 1910 թ.) հուզումով ու դողդոջուն ձայնով է մեզ պատմել իր մանկական հիշողության մեջ տպավորված պատկերները՝ միաժամանակ մրմնջալով հետևյալ տողերը.

Դէր Զօրա գէլդի բիր Շէքիր փաշա,
Աթընը բաղլադը Դէլիքլի թաշա,
Էրմէնի սըղմադը դաղ իլէ թաշա.
Դինիմին ուղրունա ծլէն էրմէնի:

Դեր Զոր եկավ մի Շեքիր փաշա,
Նժույգը կապեց Ծակ քարի վրա[*],
Զորերում հայերին տեղ չմնաց.
Հավատի համար մեռնող հայեր [III.2.93(428).]:

Այնուհետև նա շարունակել է. «Վերջապես էկանք, հասանք Դեր Զորի անապատի վերևի մասը՝ Մերդին քաղաքը, որտեղ գնացքը կուգար, Հալեպ կերթար: Անտեղ մեզ իջեցուցին, կանաչ դաշտ էր: Ներքևը ձոր կար: Մեզ՝ փոքրերիս ջոկեցին, իսկ մեծերին՝ տարին ձորի կողմը հերթ կայնեցրին. երեք - չորս հարյուր հոգիի չափ մեծեր էին, այդքան ալ երեխաներ էինք: Ուրեմն մեզ՝ էրեխեքիս կանաչ դաշտի վրա նստեցրին. մենք չգիտենք՝ ինչ պիտի ըլլա...: Մայրս իր հերթը խախտելով գալիս էր մեզի համբուրո՛ւմ, համբուրո՛ւմ, գնում էր: Մենք՝ ես, մեծ եղբայրս և փոքր եղբայրս, որը մեկ տարեկան էր, հեռվից տես-

[*] Մարաշում մի մեծ ժայռ կար, որի միջից ջուր էր հոսում, որին Դելիքլի թաշ (Ծակ քար) էին ասում:

նում էինք մի շարան կանայք հերթի մեջ շարժվում են. մեր մայրը անոնց մեջն էր: Տունեն երբ էլանք, մեր մայրը ազգային տարազներով էր՝ թավիշ, ոսկեկար հագուստներով, գլուխը զարդարված էր ոսկեդրամներով, վիզը ոսկե շղթա կար, հագուստներուն մեջը երկու կողմը քսանհինգ-քսանհինգ ոսկի էր կարած՝ գաղտնի… Վերջին անգամ, երբ մեր մայրը էկավ մեզի խենթի պես համբուրեց, կհիշեմ, արդեն միայն տակի ճերմակ ներքնազգեստով էր. ո՛չ զարդ կար, ո՛չ ոսկի կար, ո՛չ ալ թավիշե հագուստները… Մենք՝ էրեխեքս, բանից անտեղյակ ենք: Էնտեղ բաներ մը կատարվում են, բայց չգիտենք ի՞նչ է կատարվում: Դու մի ըսեր բոլորին հերթով հագուստները հանում էին, մի կողմի վրա շարում, բոլորին մերկացնում էին, կացինով գլուխը կտրում էին, նետում էին ձորը…» [I.128 (128).]:

«… Պատահում էր այնպես, - պատմել է ֆրնդրնագցի Հարություն Ալբոյաջյանը (ծնվ. 1904 թ.), - որ տղաներին փախցնում էին, ստիպում էին միայն թուրքերեն խոսել, իսկ աղջիկներին՝ բռնաբարում էին, սպանում կամ կնության առնում, որպեսզի ազնըվացնեն իրենց ցեղը» [I.144(144).]:

Մարիամ Բաղդիշյանը (ծնվ. 1909 թ.) պատմել է, թե ինչպես ինքը հազիվ հինգ-վեց տարեկան էր, երբ աքսորի ճամփաներին իր քրոջ հետ անապատի ավազների վրա պառկած իրենց մայրիկի խոպոպների հետ էին խաղում՝ չիմանալով, որ նա արդեն մեռած է: Հետո ինչ որ մի արաբ կին նրան տանում է իր տունը, որտեղ փոքրիկ Մարիամը չորս տարի փարչով ջուր է կրում ջրհորից: Մի անգամ, երբ նրա դեմքն ուզում էին կապույտ թանաքով դաջել, նա գաղտնի փախչում է և մի քահանայի շնորհիվ ապաստան գտնում հայկական որբանոցում [I.168(168).]:

Թ՛ուրքլէր բաշլադը էվլադ քաչըրմայա,
Անալար ղըյմադը յ՛ուզ՛ու օփմէյա,
Բաքթըմ քի գիզլիջէ աղլըյօր յամա՛ն.
Դինինին ուղրունա ծլէն Էրմէնի:

Թուրքերն սկսեցին զավակ փախցնել,
Մայրերը չհասցրին երեսը համբուրել,
Տեսա ծածուկ սաստի՜կ էին լաց լինում,
Հավատի համար մեռնող հայեր [III.2.67(402).]:

Պատահում էր նաև, որ մայրերի մոտից փախցնում էին երեխաներին, հարսերին ու աղջիկներին բռնաբարում էին, հետո, կապկպելով, նետում էին ձորը կամ չորացած ջրհորների մեջ և կրակի տալով՝ բոլորին այրում.

Հայաթըն չէշմէսի բուզ գիբի աքար,
Թ՛ուրք բաջըլարը չաղըրդան բաքար,
Էրմէնի գէլիյօր էլլէրի բաղլը.
Անալար աղլըյօր՝ չօջուղում դիյէ,
Գէլինլէր աղլըյօր՝ հօջամում դիյէ,
Քըզլար աղլըյօր՝ նամուսում դիյէ:

Բակի ծորակը սառույցի պես է հոսում,
Թուրք բաջիները վրանից են նայում,
Հայերն են գալիս ձեռնակապերով,
Մայրերն են լալիս՝ զավակս ասելով,
Հարսներն են լալիս՝ ամուսինս ասելով,
Աղջիկներն են լալիս՝ պատիվս ասելով [III.3.16(484).]:

Նաև կատարվել է ավելի սոսկալին. քայլելու անկարող մեծահասակ հարազատներին ստիպված թողել են ճամփին և թուրք ոստիկանների մտրակների տարափի ներքո, արցունքն աչքերին՝ շարունակել իրենց մահվան ճամփան: Այդ մասին են պատմել ու զանազան տարբերակներով երգել արաբների կողմից կապույտ թանաքով դաջված դեմքերով զեյթունցի Գայանե Ատուրյանը (ծնվ. 1909 թ.), ադաբազարցի Սիրենա Ալաճաճյանը (ծնվ. 1910 թ.) և շատ ուրիշներ.

Դէր Զօր չօլ՛ունդէ յօրուլդում, քալդըմ,
Անամը, բաբամը յօլդա բըրաքթըմ,
Վա՛յ անամ, վա՛յ անամ, հալիմիզ յաման.
Դէր Զօր չօլ՛ունդէ քալդըղըմ զաման:

Դեր Զորի անապատում հոգնեցի, մնացի,
Մորս ու հորս ճամփին թողեցի,
Վա՜յ մայրիկ, վա՜յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը.
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը
[III.2.70(405).]:

Թեպետ մասամբ օտարացած հայ որբուկը ստիպված թուրքերենով է արտահայտել իր հոգու վիշտը, սակայն նա դեռ չի մոռացել իր համար նվիրական «մայրիկ» հայերեն բառը.

Ցէչիլ դուրբան օլայըմ գէչէն գ՛ունլէրէ, մայրի՜կ,
Քըրըլդը քանաթլարըմ. քալդըմ չօլլէրդէ՝
Անասըզ, բաբասըզ, մայրի՜կ,
Դ՛ուշդ՛ում դիյար ղուրբէթթէ, մայրի՜կ,
Ցա բէն աղլամայըմ, մայրի՜կ,
Քիմլէ՞ր աղլասըն, մայրի՜կ:

Դալար զոհ դառնամ անցած օրերին, մայրի՜կ,
Փշրվեցին թևերս, մնացի անապատում՝
Առանց հայր, առանց մայր, մայրի՜կ,
Ընկա օտար վայրեր, մայրի՜կ,
Եթե ես լաց չլինեմ, մայրի՜կ,
Ո՞վքեր լաց լինեն, մայրի՜կ [III.3.18(486).]:

Թեպետ անհայր ու անմայր մնացած հայ որբուկները, օտարների մոտ գոյատևելով մոռացել էին իրենց մայրենի լեզուն, սակայն քրիստոնեական խաչակնքումը նրանք չէին մոռացել: Անապատական արաբների կողմից իր դեմքը կապույտ թանաքով դաջված ադաբազարցի Սիրենա Ալաճաճյանը (ծնվ. 1910 թ.) պատմել է, թե ինչպես զինադադարից հետո որբահավաքներն իր մեկ խաչակնքումով հայտնաբերել են իրեն ու տարել հանձնել հայկական որբանոց [I.227(227).]:

Վերապրողներից մեր գրառած հուշերի մեջ բազմաթիվ վկայություններ կան նաև հայ երեխաներին բռնությամբ հավատափոխ անելու մասին: Ֆրնդրջագցի Հարություն Ալբոյաջյանը խոր հուզմունքով էր հիշում թուրքական որբանոցում անցկացրած իր ծանր օրերը, երբ ծնողներին կորցրած մեծ

ու փոքր (նույնիսկ ծծկեր) հարյուրավոր քաղցած հայ մանուկներ վխտում էին թուրքական որբանոցի մեծ սրահի մեջտեղում՝ հարդի կույտի վրա, չզգալով, որ իրենցից շատերն արդեն սովից անշնչացած են, իսկ ողջ մնացողներին քաշկռտելով տանում էին թլպատելու՝ անունն ու հավատը փոխելու [I.144(144).]:

Հետևաբար՝ հավատափոխ չլինելու, թուրքի կին չդառնալու, թուրք երեխաներ չծնելու համար.

… Հայ աղջիկներ ձեռնե ի ձեռ բռնեցին,
Իրենք զիրենց Եփրև* գետը նետեցին [III.2.27(362).]:

Արցունքներով երգում էր արժանահիշատակ երգասաց Մարիամ Բաղդիշյանը և վերհիշելով իր տխուր մանկությունը, սրբում էր աչքերի արտասուքը.

Գիդէ՛ն, գիդէ՛ն, Էրմէնի քըզլա՛ր,
Բիր գ՛ուն ծլ՛ում բիզէ դ՛ուշէր,
Դ՛ուշմանա ավրաթ օլմամայա՝
Եփրատըն իչինդէ ծլ՛ում բուլայըմ:

Գնացո՛ղ, գնացո՛ղ, հայ աղջիկնե՛ր,
Մի օր մահը դեմ կգա մեզ,
Թշնամուն կին չդարձած՝
Եփրատի մեջ կգտնենք մահ [III.3.28(496).]:

Երզնկացի ականատես-վկա, հետագայում հայտնի մտավորական դարձած Գառնիկ Ստեփանյանը (ծնվ. 1909 թ.) պատմել է. «Ապրիլյան օրեր էին Դեր Զորի մոտ՝ Հեքիմխանայում, ահավոր բան կատարվեց: Մեր քարավանին միացրել էին զվանցի երեսուն գեղեցիկ հարսներ: Մի գիշեր դրանց հավաքեցին տարան. մերկացրել էին, ստիպել էին պարել ու զվարճացնել իրենց: Երբ նրանց ետ բերեցին, գզգզված մազերով ու այլանդակված վիճակում, նրանք միմյանց ձեռք-ձեռքի բռնած իրենց գցեցին Եփրատ գետը»: Նույն հուշի մեջ վերապրողը պատմել է նաև բազմանդամ մի ընտանիքի պատվազրկված մոր մասին. «Յոթ հոգինոց մի ընտանիք կար. մայրը վեցին թունավորեց, գնաց իրեն գցեց Եփրատ գետը» [I.95(95).]:

Մերսինցի Սողոմոն Եթենեկյանը (ծնվ. 1900 թ.) իր հուշերում մեզ պատմել է. «Թշնամիս թող չտեսնա ան, ինչ որ մեր աչքերը տեսան Դեր Զորի ճամփին… Սիրտս կանգ կառնե, որ կհիշեմ ադ բոլորը… Աղջիկներ, երեք-չորս հարյուր հոգի գոտիներնին հանած, իրար կապված, իրար հետևից Եփրատ գետը կնետվեին, որ թուրքի բաժին չդառնան… Ջուրին երթալը չէիր տեսնար, լեշերը դուրս ելած էին, բերդի պես իրար վրա դիզված էին…, շուները կատղած էին մարդու միս ուտելեն…» [I.188(188).]:

Պատմական այդ իրողությունը ևս գեղարվեստական լեզվով արտահայտված երգի է վերածվել.

Դէր Զօր չօլլէրի թաշլըդըր. գէչիլմէզ,
Ցէփրատ գէտին սուլարը աջըդըր. բիր թաս իչիլմէզ,
Էրմէնի քանըյլա սու դա իչիլմէզ,
Դինինին ուղրունա ծլէն Էրմէնի:

Դեր Զորի անապատը քարոտ է. չի անցնվի,
Եփրատ գետի ջրերը դառն են. մի թաս չի խմվի,
Հայերի արյունով ջուրը չի խմվի,
Հավատի համար մեռնող հայեր [III.2.85(420).]:

Ամենադաժան ձևերով նահատակվում էր հայ ժողովուրդը: Բռնի տեղահանության ու աքսորի ճամփաներից շատ քչերն էին հրաշքով վերադառնում.

Մէյվասըզ աղաջլար մէյվայա դ՛օն՛դ՛ու,
Մուհաջիր գիդէնին յարըսը դ՛օնմէդի:

Անպտուղ ծառերը պտղավորվեցին,
Կեսը ետ չեկավ գաղթականների [III.2.99(434).]:

Այդ իրադարձություններին ականատես-վկա մուսալեռցի Պողոս Սուպկուկյանը (աշուղ Դևելլի, ծնվ. 1887 թ.) Կիլիկիայի տեղահանության մասին իր տպավորությունները դեռևս 1956 թ. մեզ է հաղորդել վիպերգի ձևով.

Էնվէր վէ Թալաաթ տիժգը փաշինէ
Սաքաք իդուն մըհաջըրըլըքէն.
Բըթըն մաֆ իդէն Էրմանը միլլ՛աթէն.
Լիզվընէն թըղ չիրնիր՝ չվա՞ զադ ՛ացէն:
Հազուր էննը հարէր դըսնըհէնց դարէն
Իղուվ փըրթըվիլը Կիլիկը Էրմանէն,
Զա՞ միդք գունիրէն մախսըմ չուջըխնէն,
Ծառվընէն թըղ գդրիր քըլըըն գիխ՛ուղնէն,
Զու՞ց մինք բըր մառնունք Էրմանը չուջըխնէն,
Ժօրը քարվիցուն հիդվէն քուրվըղէն,
Դիր գայնհուղ չիդուվ Էրմանը միլլ՛աթէն:

Էնվեր և Թալեաթ թուրք փաշաները
Պատճառ դարձան գաղթականության.
Լրիվ ոչնչացրին հայ ժողովրդին,
Լեզուները չորանար, ինչու՞ ասացին,
Հազար ինն հարյուր տասնհինգ թվին
Եղավ կոտորածը Կիլիկիո հայության,
Ի՞նչ մեղք ունեին մատղաշ մանուկները,
Թող կոտրվեին սուր բռնող ձեռքերը,
Ինչպե՞ս մոռանանք հայ մանուկներին,
Ջուրը նետվեցին քույրերով միասին.
Տեր կանգնող չեղավ հայ ժողովրդին [III.2.25(360).]:

Եվ իրոք, «տեր կանգնող չեղավ հայ ժողովրդին», որը զինաթափ և հուսահատ քշվում էր աքսորի ճամփաներով: Երիտթուրքական բռնակալության նախաձեռնած տեղահանությունն ու կոտորածը մի քանի ամսվա ընթացքում արդեն ծավալուն բնույթ էր ստացել՝ ընդգրկելով Փոքր Հայքն ու Անատոլիան: Մեկը մյուսի ետևից դատարկվում էին Սվազը, Շապին-Գարահիսարը, Խարբերդը, Մալաթիան, Դիարբեքիրը, Իզմիթը, Բուրսան, Անկարան, Կոնիան և Կենտրոնական ու Արևմտյան Անատոլիայի այլ հայաբնակ վայրերը:

Երիտթուրքերի կազմակերպած համատարած սպանդի պայմաններում արևմտահայերը երկրի մի շարք շրջաններում անհավասար կռիվ մղեցին թշնամու գերազանց ուժերի դեմ, սակայն այդ ինքնապաշտպանական մարտերը մղվում էին առանց ծրագրի,

* Իմա՝ Եփրատ:

տարերայնորեն, մեկը մյուսից անջատ: Հերոսական պայքարի շնորհիվ, Վանում, Շատախում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Մուսա լեռում և այլուր տասնյակ հազարավոր կյանքեր փրկվեցին երիտթուրքական յաթաղանից:

Հուլիսի 18-ին ստացվում է Քեսաբի հայության բռնագաղթի հրամանը: Արդեն պատվելի Տիգրան Անդրեասյանը Զեյթունից բռնագաղթված թափորներից նողոպրելով հասել էր հայրենի Մուսա լեռ ու պատմել թշվառ տարագիրների կրած տառապանքների մասին: Տեսնելով, որ հերթն իրենց է հասնելու, հուլիսի 19-ին Մուսա լեռան յոթ գյուղերի գրեթե բոլոր բնակիչները միաբանվելով, որոշում են՝ չենթարկվել տեղահանության կորստաբեր հրամանին.

Խուսքը լսվիցուվ Յաղուբինց Իսայէն.
«Լիոը թըղ ըննին, - ձսուց կէղանդէն,
Վէզ չը՛բըր ձոինք մինք միր դուշմանէն.
Նիդինք, նիդըդվինք՝ միոնինք միր խուղէն»:

Եսայի Յաղուբյանի խոսքերը հնչեցին.
«Թող լեռ բարձրանան, - ասաց բոլորին, -
Թշնամու առաջ մենք վիզ չե՛նք ծռի.
Զարկենք, զարկվենք, մեր հողում մեռնենք»
[III.2.25(360).]:

Մուսա լեռան հերոսամարտի մասնակից, 106-ամյա Մովսես Փանոսյանը (ծնվ. 1885 թ.) իրեն հատուկ երիտասարդական ավյունով մեզ է պատմել այդ դեպքերը՝ վերհիշելով մուսալեռցիների երդումը. «Իս հոււ ձննուձ իմ. հու՛ս ձլէ բըր միոնիմ, իս չը՛մ ուրթօ յասսէր քիմը դուշմանէն յամրէն վըրքը չարչարանքում միոնիլ. թվունքը ծառիս գը միոնէմ յաս դիղը, թաքա մուհաջըր չը՛մ ըննօ»: *(Ես այստեղ եմ ծնվել, այստե՛ղ էլ պիտի մեռնեմ, ես չե՛մ գնա գերիի պես թշնամու հրամանի տակ չարչարանքով մեռնելու. հրացանը ձեռքիս կմեռնեմ այստեղ, բայց գաղթական չե՛մ դառնա)* [I.156(156).]:

Պատմական այդ իրադարձությունների մասին են պատմել նաև մուսալեռցի Մովսես Բալաբանյանը (ծնվ. 1891 թ.), Հովհաննես Իփրեջյանը (ծնվ. 1896 թ.) և ուրիշներ, որոնք նույնպես մասնակցել են հերոսամարտին [I.157(157)., 158(158).]:

Բողոքի ու վրեժխնդրության զգացումը համակում է բոլորին: Այր ու կին, մանուկ ու ծեր, թողնելով իրենց տունն ու այգին, բարձրանում են Մուսա լեռան անմատչելի գագաթը՝ պաշտպանելու իրենց պատիվն ու արժանապատվությունը, կռվով դիմադրելու թշնամու բազմահազար զորքերին: Բոլորն անխտիր, առանց ժամանակ կորցնելու, կազմակերպված ձևով սկսում են ինքնաշեն կառուցել, խրամատներ փորել, ամուր պատերով պատնեշներ բարձրացնել՝ ներսից փոքր հրակնատներ թողնելով: Որոշ տեղերում, թըշնամուն տեսնելու համար, կտրատում են խիտ անտառները: Նույնիսկ փոքրիկ տղաները՝ «թելեֆոնի տղաները», կապավոր են դառնում: Կանայք կազմակերպում են սնունդը, աղջիկներն ու հարսները հեռվից ջուր են կրում՝ կռվողներին հասցնելու: Թշնամին քայլ առ քայլ մոտենում է մուսալեռցիների դիրքերին, բայց տարբեր կետերից բացված կրակը կատարյալ շրջապատման տպավորություն է ստեղծում, և թուրքերը սարսափահար փախչում են՝ թողնելով հարյուրավոր սպանվածներ:

Հիսուներեք օր համառ մարտեր են մղվում՝ Եսայի Յաղուբյանի, Պետրոս Դմլաքյանի և Տիգրան Անդրեասյանի գլխավորությամբ: Այդ ընթացքում Քըզըլչայի, Քուզչըղազի, Դամլաջըքի և Քափլան-Դուզաղի բարձունքներում չորս լուրջ ճակատամարտ է տեղի ունենում: Եվ դարձյալ հյուսվել է ժողովրդական երգը.

Մենք մուսալեռցի քաջ կտրիճներ ենք,
Բոլորս ալ վարժ զենք կրողներ ենք,
Թուրքը մեզ կուզե տեղահան անել,
Անապատներում մեզ բնաջնջել:

Մենք չենք կամենար լինել շանսատակ,
Մենք կուզենք թողնել մի լավ հիշատակ.
Փառքով մեռնելը մեզի պատիվ է,
Նահատակվելը ազգին պարծանք է [III.4.9(539).]:

Հակառակորդը նորանոր ուժեր է կենտրոնացնում ըմբոստ հայերին պատժելու համար: Մուսալեռցիների պարենն ու զինամթերքն սպառվում են: Հորդառատ անձրևն անօգտագործելի է դարձնում նրանց ունեցած ընդամենը երեք հարյուր որսորդական հրացանները: Նրանք ճարահատյալ լեռան ծովահայաց կողմից օգնություն ստանալու հույսով սպիտակ սավաններն իրար են միացնում՝ մեկի վրա գրում. «Քրիստոնյաները վտանգի մեջ են, փրկեցե՛ք», իսկ մյուսի վրա՝ Կարմիր խաչի նշան, և պարզում լեռան լանջին:

Սեպտեմբերի 5-ին Միջերկրական ծովի խորքով անցնող ֆրանսիական «Գիշեն» մարտանավը նկատում և դանդաղեցնում է ընթացքը: Մետաղյա արկղը վզին, մեջը օտար լեզվով գրված խնդրագրով, ծովն է նետվում Մովսես Գըրըզյանը: Նա լողալով հասնում է նավին, երեսը խաչակնքելով նավապետին է ներկայացնում նամակը: Սեպտեմբերի 14-ին ֆրանսիական «Ժաննա դ՛Արկ» շոգենավը, անգլիական ռազմանավերի ուղեկցությամբ մոտենում է Մուսա լեռան և վերցնելով ավելի քան չորս հազար երկու հարյուր մուսալեռցիներին, փոխադրում է Պորտ Սայիդ, որտեղ նրանք պատսպարվում են բրեզենտյա վրանների տակ: Մուսա լեռան հերոսամարտն աշխարհը ցնցեց: Այն ցույց տվեց մարդկությանը, թե ինչի է ընդունակ մի բուռ ժողովուրդ, եթե ունի հերոսական ավանդույթներ և միասնական կամքի ուժ:

Դեռևս 1915 թ. մայիսից Ուրֆայի (Եդեսիա) նոր մյութեսարիֆ իթթիհատական Ալի Հայդարը կազմակերպել էր տեղի քառասուն երևելիների ձերբակալությունն ու բոլոր հայերից պահանջել քառասունութ ժամվա ընթացքում հանձնել զենքերը: Հուլիսի վերջին ձերբակալվել էր Ուրֆայի հայ թեմի լուսավորյալ առաջնորդ Արտավազդ վրդ. Գալենտերյանը: Օգոստոսին՝ Գուտեմե և Քարաքյոփրի վայրերում ոչնչացվել էին զորակոչված հազար հինգ հարյուր ուրֆացի հայ երիտասարդներ: Այնուհետև ձերբակալել էին հարյուր առևտրականների ու նրանց հարազատներից կաշառք հավաքել, թե իբր պիտի ազատեն, բայց բոլորին սպանել էին: Ձերբակալել էին նաև հարյուր հոգու, որոնք նույն բախտին էին արժանացել: Այդ օրերին Ուրֆա են հասնում իրենց քաջարի երիտասարդներից զրկված, աքսորյալ զեյթունցիների, ապա՝ Թուրքիայի նահանգներից աքսորված թշվառ հայերի քարավանները, ինչպես նաև որդեկորույս մայրերի ողբն ու հեծեծանքը, դեռատի աղջիկների և անմեղ մանուկների մասին սահմռկեցուցիչ պատմությունները: Ուրֆայում բնակվող երեսունհինգ հազար հայեր, հատուկ խորհրդակցությամբ որոշում են մուսալեռցիների պես զենքի դիմել:

Հոկտեմբեր ամսին կազմակերպվում է Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը՝ Մկրտիչ Յոթնեղբայրյանի և Հարություն Ռասթկելենյանի գլխավորությամբ: Ոտքի է կանգնում Ուրֆայի ողջ հայությունը: Մանուկ ու ծեր, տղա ու աղջիկ, բոլորը մեկ մարդու նման ինքնամոռաց կռվում են քսանհինգ օր ու գիշեր անդադար: Հայոց թաղամասերը բաժանվում են վեց մարտական շրջանների, որտեղ տեղաբաշխված էին ութ հարյուր մարտիկներ: Ուրֆացիները երդվում են. «... Մենք պատրաստ ենք մեռնելու զենքը ձեռքներիս»[10]:

Սակայն թուրք ոստիկաններն ու խուժանն անցնում են նոր հարձակման. գրավում են հայ կաթոլիկ եկեղեցին: Ուրֆացիները թշնամուն թույլ են տալիս ներխուժել հայկական թաղամասը և դարանակալելով՝ ոչնչացնում: Ասելիք էր դարձել նրանց խիզախությունը.

Ուրֆա բիւյիւք՝ այրըլմազ,
Դիբի ղայիմ՝ ղաղըլմազ,
Ուրֆանըն իգիթլէրի
Հիչ բիր յէրդէ բուլունմազ:

Ուրֆան մեծ է՝ չի բաժանվի,
Հիմքն ամուր է՝ չի փլվի,
Ուրֆայի կտրիճները
Ոչ մի տեղում չի գտնվի [III.4.12(542).]:

Հանդիպելով համառ դիմադրության, Ֆախրի փաշայի հրամանատարությամբ Ուրֆա է ուղարկվում վեց հազար կանոնավոր զորք, որին միանում են տասներկու հազար հրոսակներ: Ուրֆայի ինքնապաշտպանները զգալի կորուստներ են պատճառում թուրք ջարդարարներին: Կատաղած Ֆախրի փաշան մտահոգ ասում է. «Ի՞նչ կլինի մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի Ուրֆաներ մեր դեմ այսպես ծառանան»[11]:

Ծնկից ծանր վիրավոր Մ. Յոթնեղբայրյանը

[10] **Ա. Սահակեան**, *Դիւցազնական Ուրֆան և իր հայորդիները*, Պէյրութ, 1955, էջ 818:

[11] **Մ. Արզումանյան**, *Հայաստան. 1914-1917*, Երևան, 1969, էջ 453:

պատգարակով դիրքերից դիրք էր անցնում, ոգևորում կռվողներին: Ֆախրի փաշան Մ. Յոթնեղբայրյանի մոտ բանագնաց է ուղարկում գերմանացի գործարանատեր Մ. Էքարտին, որը նրան հորդորում է դադարեցնել կռիվը և հանձնվել: Սակայն հերոսական Ուրֆայի որդին պատասխանում է. «Եթե ձեր մեջ քաղաքակիրթ և քրիստոնյա մարդու զգացում կա՝ փրկեցեք անապատներում մեջ կոտորվող ամեն հայ ժողովուրդը»[12]:

Հաջորդ օրն իսկ թշնամին ավելի է սեղմում պաշարման օղակը և հուժկու թնդանոթաձգությամբ ոչնչացնում հայկական թաղամասը: Հայերի դրությունն օրըստօրե ծանրանում է: Հոկտեմբերի 23-ին թուրքերը ներխուժում են հայկական թաղամասը և դաժան հաշվեհարդար տեսնում Ուրֆայի անձնվեր հերոսների հետ: Իսկ մերձակա հայաբնակ Կարմուջ գյուղի կենդանի մնացած ութ հարյուր ընտանիքներին քշում են Դեր-Զոր և մեծ մասին անխնա կոտորում:

Տեղահանությունն ու կոտորածն արդեն ընդգրկել էր ոչ միայն Կիլիկիան ու Արևմտահայաստանը, այլև Փոքր Հայքը, Արևելյան ու Կենտրոնական Անատոլիայի հայաբնակ գավառները. այլ կերպ ասած՝ ամբողջ Օսմանյան Թուրքիան: Մեծ եղեռնին զոհ դարձան ավելի քան մեկուկես միլիոն հայեր[13]:

Մահվան ճանապարհ անցնող հայ գաղթականներն իրենց զայրույթն անեծքով են բանաձևել.

Շու մուհաջիրլիք իջաթ էդէն
Ջէննէթ յիւզիւ գէօրմէսին:

Այս գաղթականությունը հնարողը
Թող չարժանանա դրախտի [III.2.98(433).]:

Եվ կամ՝

Շու սիւրգիւնլիւք իջաթ էդէն
Ջէհէննէմ յօլունա դուրբան օլսուն:

Այս աքսորը հնարողը
Դժոխքի ճամփին թող զոհվի [III.2.99(434).]:

Հայ ժողովուրդն անիծել է նաև երիտթուրքական կառավարության ղեկավարներին՝ հատկապես Թալեաթին և Էնվերին, որոնք ծրագրված կերպով կազմակերպեցին հայ ժողովրդի այդ հրեշավոր նախճիրը.

Աթըմ բաղլադըմ դէլիքլի թաշա,
Քէօր օլասըն սէն, Էնվէ՛ր փաշա,
Սէն օլմայայդըն, սէն գէբէրէյդին,
Շուն-Թալաթ փաշա.
Էրմէնիլէրի դաղըթթըն դաղլարդան թաշա:

Նժույգս կապեցի ծակ քարի վրա,
Կուրանա՛ս դու, Էնվե՛ր փաշա,
Դու չծնվեի՛ր, դու սատկեի՛ր,
Շո՛ւն-Թալեաթ փաշա.
Հայերին ցրեցին լեռ ու անապատ [III.2.114(449).]:

[12] *Հուշամատեան Մեծ եղեռնի*, Պէյրութ, 1965, էջ 804:

[13] Ավելի մանրամասն տե՛ս **Ջ. Կիրակոսյան**, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, Երևան, 1965:

Իսկ հայ ժողովրդի դահիճ Թալեաթ փաշան լկտիորեն պարծենում էր, թե ինքը մի քանի ամսվա ընթացքում լուծեց Հայկական հարցը, ինչը սուլթան Համիդին չէր հաջողվել անել տասնամյակների ընթացքում:

Զեյթունցի վերապրող Սամվել Արշիկյանը (ծնվ. 1907 թ.) խոսելով իրենց տեղահանության մասին՝ ասել է. «... Թալեաթ, Ջեմալ և Էնվեր փաշաները կազմակերպեցին, որ խանչալներով բոլոր հայերին սպանեն: Ես յոթը տարեկան էի, երբ Զեյթունից դուրս եկանք: Օսմանյան կայսրությունն առանց կոշիկի, առանց հացի աքսոր դուրս բերեց հայերին՝ դեպի Մարաշ: Սպանող, թալանող, կողոպտող մի կառավարություն էր այդ» [I.142(142).]:

Անդրադառնալով այդ հարցին սեբաստացի վերապրող Խորեն Գյուլբենկյանը (ծնվ. 1900 թ.) ավելացրել է. «Կառավարությունը ժողովրդին լարել էր հայերի դեմ ասելով, թե իբր հայերը անհավատներ են, նրանք աչք ունեն մեր հողերին, բազմաթիվ անգամներ ապստամբել են մեր պետության դեմ, հետևաբար նրանց հոշոտելը և սպանելը մեղք չէ» [I.87(87).]: Իսկ խարբերդցի Հակոբ Հոլոբիկյանը (ծնվ. 1902 թ.) եզրակացրել է. «... Թուրք իթթիհատականների կողմից կատարված այս ոճրագործությունը երբեք չի մոռացվի...» [I.109(109).]:

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916 թվին, դաշնակից տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ներքին պայմանավորվածությամբ (Սայքս-Պիկո), Թուրքիայի պարտության դեպքում, երկու միլիոն վեց հարյուր հազար հեկտար մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի հսկողությանը: Անգլիայի և Ֆրանսիայի իշխանությունները Հայկական Ազգային պատվիրակության հետ նախապես համաձայնվել էին, որ եթե հայ կամավորները կռվեն Թուրքիայի դեմ, հաղթանակից հետո հայերին կտրվեն քաղաքական լայն հնարավորություններ, և հայ կամավորները կդառնան նորակազմ Ինքնավար Հայկական Կիլիկիայի քաղաքապահ զինվորներ: Ուստի թուրքական բանակից, աքսորի ճամփաներից ու տարբեր վայրերից, նույնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդները (մուսալեռցի, այնթապցի, մարաշցի, քեսաբցի, հաճընցի, հուսեյնիկցի, չնգուշցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի և այլն) զինվորագրվում են ֆրանսիական բանակին՝ ստեղծելով Արևելյան (Հայկական) լեգեոնը:

Հայ կամավորներն իրենց միլիոնավոր անմեղ նահատակ հարազատների վրեժով լցված, արհամարհելով մահը, պարտության են մատնում թուրք-գերմանական զորքերին՝ նվաճելով Արարայի փայլուն հաղթանակը Նաբլուսի՝ Պաղեստինի մոտ.

Բիրէմ-բիրէմ սայդըմ դօրթ սէնէ օլդու,
Էրմէնի ասքէրի Նաբլուսու ալդը.
Էրմէնի ասքէրի բին բէշ յիւզ քիշի.
Ինգիլիզ, ֆրանսըզ շաշդը բու իշէ:

Մեկիկ-մեկիկ հաշվեցի չորս տարին,
Հայ կամավորները Նաբլուսը գրավեցին.
Հայերը հազար հինգ հարյուր հոգի էին.
Անգլիացին, ֆրանսիացին ապշեցին [III.2.116(451).]:

Հայ բաջարի լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական հրամանատարության դրվատանքին: Գեներալ Ալեմբին, 1918 թ. հոկտեմբերի 12-ին, Հայ Ազգային պատվիրակության նախագահ Նուբար փաշային հղած հեռագրում գրել է. «Ես հպարտ եմ իմ հրամանատարության տակ հայկական զորամաս ունենալու համար: Նրանք կռվեցին փայլուն կերպով և մեծ բաժին ունեցան հաղթանակի մեջ»[14]:

Պատերազմից հետո կնքված Սևրի պայմանագրով Կիլիկիայի վրա հաստատվելու էր Անտանտի երկրների հսկողությունը, և թուրքական զորքերն իբր արդեն դուրս էին բերվելու Կիլիկիայից: Դեր Զորի, Ռաս ուլ Այնի և այլ կենդանի գերեզմանոցներից հրաշքով փրկված, ուժասպառ, հյուծված և ունեզրկված հայ աքսորականները աստիճանաբար գալիս, տեղավորվում էին Կիլիկիայում: Նրանք, ապագայի նկատմամբ վառ հույսով ու հավատքով, սկսում են վերականգնել ավերվածը, մշակել խոպանացած այգիները: Սակայն թուրքերին հաջողվում է լեզու գտնել դաշնակից տերությունների հետ և ստիպել ֆրանսիացիներին՝ իրենց խաղաղապահ զորքերը դուրս բերել Կիլիկիայից:

Ֆրանսիական զինվորական վարչությունը ոչ միայն լուրջ միջոցներ չի ձեռնարկում հայերի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, այլև տեղերում իշխանությունը թողնում է թուրք զինվորական պաշտոնյաների ձեռքին, և նրանք չեն զինաթափվում:

Չնանաչելով Սևրի պայմանագիրը և օգտվելով ֆրանսիական զինվորական վարչության անվճռականությունից և թուլությունից, թուրքական զորքերն ու տեղի չեթեներն իրենց զենքն ուղղում են Կիլիկիայի հայության դեմ:

1920 թ. հունվարից թուրքական զորքերը գրոհում են Կիլիկիայի հայկական բնակավայրերը: Քսաներկու օր տևող կատաղի մարտերում Մարաշ քաղաքի տասնմեկ հազար հայեր կոտորվում են ու մոխրանում.

Մարաշդա Մարաշ դէրլէր, յամա՛ն, յամա՛ն,
Մարա՛շ, բու նա՞սըլ Մարաշ դէրլէր.
Մարաշըն իչինդէ քիլիսէ յանար.
Քիլիսէ իչինդէ էրմէնի յանար:

Ավա՛ղ, Մարաշին Մարաշ են ասում,
Մարա՛շ, քեզ ինչպե՞ս են Մարաշ ասում,
Երբ քո մեջ եկեղեցի են հրկիզում,
Եկեղեցու մեջ՝ հայեր մոխրացնում [III.2.121(456).]:

Մարաշից մազապուրծ ականատես-վկա Վերգինե Մայիկյանը (ծնվ. 1898 թ.) մեզ պատմել է. «Քառասուն Մանկանց եկեղեցին շինված էր բարձունքի

[14] **Մ. Քէլէշեան,** *Սիս-Մատեան,* Պէյրութ, 1949, էջ 592:

վրա: Եկեղեցիին մեջը լցված հայերը կսպասեին, որ գիշերը պիտի դուռը բանան, բայց գիշերվա ժամը տասը, տասնմեկ, տասներկու եղավ, դուռը բացող չկա: Հայ ժողովուրդը մեջը լիքը. ո՛չ ջուր կա, ո՛չ լույս, ամեն ինչ մեջը՝ ալ կեղտոտություն. մեկը՝ կուլա, մյուսը՝ կողբա, մեկալը՝ կաղոթե: Մեկ խոսքով, չտեսնված իրարանցում: Անոնց ձայները մենք լսում էինք մեր տունին նկուղեն, ուր մենք ալ պահմտած էինք: Մեյ մըն ալ պզտիկ լուսանցքեն տեսանք, որ գիշերվա ժամը մեկ անց կեսին քանի մը թուրք եկեղեցիին կամարաձև կտուրին վրա են բարձրացած, նավթոտած վառվող շորի կտորները նետում են եկեղեցիին գմբեթեն ներս...: Խանձահոտը աշխարհը բռնեց: Եկեղեցիեն եկող ձայները մարդու սիրտն էին փլում...: Հրեշները իրենց ընելիքը ըրեր էին: Ալ ոչ ոք ողջ կար եկեղեցու և մեր տուներուն շրջակայքում: Եկեղեցիին մեծ քարերով սալահատակված տարածությունը, որը մի քանի հարյուր մետր էր, կարծես օճառի հաստ շերտով էր ծածկված. մոտ երկու մատ հաստությամբ մարդկանց ճարպը հալեր, հոսեր էր ու թանձրացեր...» [I.148(148).]:

Այնուհետև ողջ մնացած ութ հազար մարաշցիներ, Ուրֆայի վեց հազար հայ բնակչության հետ, հարկադրված բռնում են գաղթի ճամփան՝ դեպի Սիրիա՝ Հալեպ, Դամասկոս, Բեյրութ, Երուսաղեմ, Բաղդադ և դեպի Անատոլիայի հունական շրջաններ:

1920 թ. ապրիլի 1-ին թուրքերը պաշարում են Այնթապը: Պատերազմի ավարտից և զինադադարից հետո այնտեղ վերաբնակված շուրջ տասը հազար այնթապցիների և ութ հազար սեբաստացի հայ գաղթականների հազիվ խաղաղված կյանքը նորից է փոթորկվում: Տեղում Ազգային միության կից ստեղծվում է Զինվորական կենտրոնական մարմին՝ Ադուր Լևոնյանի գլխավորությամբ: Վերջինս հաշվառման է ենթարկում եղած զենքն ու զինամթերքը և կազմակերպում ռումբեր պատրաստելու գործը:

Պատմական այդ իրադարձությունները ներշնչանքով է մեզ պատմել այնթապցի Գևորգ Հեքիմյանը. «... Ադուր փաշան այնթապցիներու կերակուրի պղինձներն անգամ հալեցնել տվավ, որ բոմբաներ շինեն: Ան իր կամավորներով հարձակվեցավ թշնամու վրա և դուրս եկավ պաշարումեն: Ալի Քըլընջի քառանչորս հազարանոց զորքը մեկ գիշերվա մեջ սարսափահար ետ փախավ՝ «Գյավուրըն գöզի քան դօլդու» գոռալով, այսինքն՝ հայու աչքն արյուն լցվեց, որը կնշանակե՝ հայերը վրեժով լցվեցին: Մեր Այնթապում Ադուր Լևոնյանի վրա այս երգը հանել էին.

Ադու՛ր փաշա, քա՛լքսանա,
Չամ չըրայը յա՛քսանա,
Թիւրքլէր հիւջիւմ էդիյօր.
Կամավորլա՛ր, ա՛րշ էդին:

Ադու՛ր փաշա, ոտքի՛ ելիր,
Մարխիդ կրակը վառի՛ր,
Թուրքերը գրոհում են՝
Կամավորնե՛ր, արշավե՛ք» [III.4.15(545).]:

Այնթապի հայերը կազմակերպում են ինքնապաշտպանությունը: Ստեղծվում է շուրջ յոթ հարյուր հիսուն հոգուց բաղկացած զորախումբ: Անհավասար այդ կռիվը, որոշ ընդհատումներով շարունակվում է...

Այդ ընթացքում Կիլիկիայի գրավման ընդհանուր հրամանատար Գողան օղլու Դողան բեյն իր բազմահազար զորքով պաշարում է Հաճըն քաղաքը, որի երեսուն-երեսունհինգ հազար հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկվել էին միայն վեց հազարը: Թուրքերի կարծիքով «Կիլիկիո հայկական միջնաբերդը՝ Հաճընը, հիմնովին կործանելն ու բնաջնջելը մեկ ժամվա գործ էր և աննշան հարձակումով մը պիտի կրնան թաղել վեց հազար հայությունը»[15]: Սակայն հաճընցիները լի էին վճռականությամբ: Նրանք իրենց կառավարիչ փաստաբան Կարապետ Չալյանի ղեկավարությամբ կազմում են Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդը: Պաշտպանության հրամանատար են ընտրում Զորավար Անդրանիկի զինակից սպա Սարգիս Ճեպենյանին: Կազմակերպում են չորս վաշտ, վաթսուն հեծյալից բաղկացած էսկադրոն: Հաճընն ու իր շրջակայքը բաժանում են պաշտպանական չորս շրջանների: Փորում են խրամատներ, մարտական տրամադրությունը համակում է բոլորին: Ամենուրեք հնչում են ազատատենչ երգեր.

Հառա՛ջ, հառա՛ջ, հաճընցինե՛ր,
Մեր ոխերիմ թուրքն է եկել,
Հառա՛ջ, կռվե՛նք՝ ի զե՛ն, ի զե՛ն,
Տեսնենք թշնամին ի՞նչ կուզե [III.4.21(551).]:

Զենք կրելու ընդունակ տասնվեցից-հիսուն տարեկան հազար երկու հարյուր տղամարդկանց բաժանվում է եղած-չեղած հարյուր երեսուներկու հրացանը: Հետագայում ձեռք է բերվում նաև երեք հարյուր հրացան, սակայն այդ ևս խիստ անբավարար էր բոլշևիկյան անսպառ ռազմամթերքով զինված թուրքական բանակի դեմ կռվելու համար: Ահա թե ինչու զենքի խիստ կարիք զգացող հաճընցիներն անհամբերությամբ սպասում էին Ադանայի Ազգային միության միջոցով դրսից ակնկալվող օգնությանը, որի շնորհիվ ոչ միայն զենք ու զինամթերք, այլև կռվող նոր ուժեր պիտի հասնեին: Վերջապես երկնքում հայտնվում է բաղձալի օդանավը.

Օդանավն եկավ մեծ ավետիսով,
Մեր սրտերը լցվան ուրախ հույսերով,
Թափառին բոլոր մարտիկներն անզեն.
Անոնք հոգիով թուրք ջարդել կուզեն:

Եղբայրներն արդեն նամակ գրեցին.
«Կռվեցե՛ք, եղբա՛յրք, կհասնինք», - ըսին,
Սակայն ի՛նչ խաբար, օրերնիս անցան.
Հազար հոգիեն երկուք չերևցան [III.4.22(552).]:

Եվ հաճընցի «անզեն մարտիկների» վիճակը

[15] **Ա. Յ. Թերզեան,** *Հաճընի ութամեայ դիւցազնամարտը,* Պուենոս-Այրես, 1956, էջ 241:

դառնում է հուսահատական, քանի որ ֆրանսիական զինվորական ներկայացուցիչներ Թեյարտան և գընդապետ Բրեմոնը վարում էին երկդիմի քաղաքականություն. թեպետ խոստացել էին ինքնապաշտպանության համար տրամադրել սննդամթերք, զենք ու զինամթերք, սակայն իրենց խոստումը ոչ միայն չեն հարգում, այլև թուրքերին տեղեկացնում են հայերի ինքնապաշտպանության կազմակերպման մասին.

Ապրիլ կամ՝ մեռնիլ, կտրի՛ճ հաճընցի,
Գրավենք՝ ըսին, թե ոչ՝ կմեռնինք,
Գրավենք զմեզ թնդանոթն ահեղ,
Թող հաղթանակը տանինք փառահեղ [III.4.22(552).]:

Հաճընցի ազատամարտիկները մեծ դժվարությամբ գրավում են թշնամու հսկա թնդանոթը, սակայն արկեր չեն գտնում, որ կրակեն ու պաշտպանվեն: Սովը նեղում է հաճընցիներին. «Ժողովուրդը կստիպվի ուտել կատու, մուկ, շուն, կաշի, ծառի կեղև, տրեխ»[16]: Թշնամին նորանոր թնդանոթներով ու անհամար կանոնավոր զորքով համալրում է իր ուժերը: Ութամսյա երկարատև ու համառ դիմադրությունից հետո թուրքերին հաջողվում է հրետանու խաչաձև կրակոցների հեղեղով ավերել ու հրկիզել նաև Հաճընի քարաշեն տները: Հարյուրավոր քաջարի մարտիկներ ընկնում են դիրքերում, հազարավոր հաճընցիներ անխնա կոտորվում են: Միայն երեք հարյուր ութսուն հոգու հաջողվում է կովելով ճեղքել թշնամու պաշարման շղթան և դուրս գալ աճավոր հրդեհի շրջապատումից.

Երեք հարյուր հայ քաջերով,
Բոլոր զինված մոսիններով,
Դողան բեյին մենք ջարդ տալով,
Հաճընն ինկավ՝ «Վրե՛ժ» գոռալով [III.4.23(553).]:

«Վրե՛ժ» գոռալով ընկնում են նաև ընդհատումներով երեք հարյուր տասնչորս օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքամայր Սիսը, պատմական անցյալ ունեցող Տարսոնը, առևտրի կենտրոն Ադանան և հայերով բնակեցված Կիլիկիայի այլևայլ բնակավայրեր: Ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր դաշնակցային պարտավորությունները, 1921 թ. հոկտեմբերի 20-ին, Անկարայում կնքված պայմանագրով, Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով Կիլիկիայի հայությանը:

Իսկ արծվաբույն Զեյթունը, որի երեսուն հազար կայտառ ու շեն բնակիչներից միայն հազար հինսունութը էր Մեծ եղեռնից մազապուրծ վերադարձել ու հազիվ սկսել էր վերականգնել ավերվածն ու հրկիզվածը, այդ զեյթունցիներից շատերը, ազգային հերոս Արամ Չոլաքյանի գլխավորությամբ և նրա զինակիցներ Հովհաննես Սիմոնյանի, Էշխիա Կարապետի, Մանուկի և այլ կտրիճների հետ, միանում են Ամանոսի լեռներում ըմբոստացած հասանքեյցի (Ադանա) Ավետիսի հերոսների խմբին: Հետզհետե ստվարացող, հինգ հարյուրի հասնող, այր ու կին քաջերի այդ հսկա խումբը Տավրոսի անանցանելի լեռներում, զենքը ձեռքներին, գիշեր-ցերեկ կռվելով, ահ ու սարսափի են մատնում շրջակա թուրք գյուղերը և թեպետ հետապնդվում են ասկյարներից, սակայն, անասելի դժվարություններ հաղթահարելով, մինչև զինադադարը շարունակում են մարտնչել թուրքական զորքերի դեմ՝ հույս ունենալով փրկել իրենց նախնիների օրրան, երբեմնի շենշող Կիլիկիան: Այդ մասին մանրամասնորեն պատմել է 1903 թ. ծնված զեյթունցի Հովսեփ Բշտիկյանը [I.138(138).]

Թեպետ թուրքական կառավարությունը դաժանորեն ընկճում էր տարբեր վայրերում ծայր առած դիմադրողական-ինքնապաշտպանական հերոսամարտերը, սակայն իրենց մարդկային տարրական իրավունքների և ազգի ֆիզիկական գոյության համար մարտնչող անձնուրաց հայ հերոսները փայլուն հետք թողեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ: Այդ ժամանակ է, որ հայոց Մեծ եղեռնի միլիոնավոր զոհերի վրեժը լուծեց ազգային հերոս Սողոմոն Թեհլերյանը: Ժողովուրդն այդ ցնցող իրադարձությանը ևս բանաստեղծական շունչ է հաղորդել.

Թալեաթ փաշան փախավ Բեռլին.
Թեհլերյանը հասավ ետին,
Ջարկավ ճակտին՝ փռեց գետնին.
Գինի լի՛ց, ախպեր ջա՛ն,
Գինի լի՛ց, խմողաց անու՛շ:

Թալեաթ փաշան դրին հողը,
Լուրը ղրկին ցնկած մորը,
Կեցցե՛ գերման դատավորը.
Գինի լի՛ց, ախպեր ջա՛ն,
Գինի լի՛ց, խմողաց անու՛շ [III.4.24(554).]:

Թեպետ «գերման դատավոր»-ները արդարացրին հայ վրիժառուին, սակայն դրանով չբարվոքվեց արևմտահայության վիճակը...

1921 թ. Կիլիկիայի հայության պարպումից հետո հերթը հասել էր Անատոլիայի հայերին, որոնց մեծ մասն արդեն Եղեռնի ժամանակ անխնա կոտորվել էր, իսկ հրաշքով փրկվածներն իրենց գոյությունը շարունակում էին որոշ հայաբնակ վայրերում և հատկապես նավահանգիստ Իզմիրում (Զմյուռնիա):

1922 թ. հրո ճարակ են դառնում նաև Զմյուռնիայի հայկական և հունական թաղամասերը՝ քրիստոնյաներին քշելով ծովափ: Այդ ահասարսուռ իրադարձությունը ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Իզմիրի աղետ»: Հուզումով վերհիշելով այդ ահավոր տեսարանները, աֆիոնգարահիսարցի վերապրող Արփինե Բարթիկյանը (ծնվ. 1903 թ.) մեզ պատմել է. «... Մեյ մըն ալ սկսավ քեմալականների շարժումը: Իզմիրը կրակի տվին: Առաջին կրակը Հայնոցը տվին: Ս. Ստեփանոս եկեղեցին այրեցին:

[16] **Արամ Ասպետ**, *Դրուագներ Հաճընոյ հերոսամարտէն*, Պէյրութ, 1961, էջ 242:

Քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին մտած էին, որ պաշտպանվեն: Վերջը հայերս փախանք, գնացինք ծովեզերք: Ծովին վրա լի՛քը նավակներ էին, բայց թուրքերը նախօրոք բոլոր նավակները ծակել էին, որ ջուրը լցվի ու հայերը չկրնան ազատվիլ: Նավակ էին ճստում խեղճ հայերը, քիչ մը կլողար նավակը, վերջը՝ լը՛կ-լը՛կ, ջուրը կլեցվեր մեջը: Բոլորը ծովի մեջ շուռ կուգային, ծովի վրա լի՛քը ուռած մարմիններ էին: Մեզի տարան Բալջովա: Ծովում եզերքը փայտե բարաքներ կային, հոն լեցուցին: Սկսան մեզի աչքե անցնել: Սիրուն աղջիկներուն բռնում, քաշում, քաշքշում, տանում էին...» [I.197(197).]:

Եվ ժողովրդի տառապանքի հետ հյուսվել է նաև տխրաթախիծ երգը.

Ա՛ֆիոնեն դուրս էկանք,
Իզմիր քաղաքը մտանք,
Ազիզ մորս չգտա.
Հոնգու՛ր-հոնգու՛ր լաց էղա:

Ա՛խ, մամա՛ ջան, խաբեցին,
Ինձի քեզնից բաժնեցին,
Ձեզ ալ կրակը ճետեցին.
Ըղթը՛ր-չըթը՛ր այրեցին [III.2.132(467).]:

Դրությունն օրհասական էր ու անել. ետևը՝ հուր, առաջը՝ ջուր: Թոհ ու բոհի այդ գեհենից ազատվում էին միայն նրանք, ովքեր իրենց մնացած վերջին ոսկեդրամներն ու զարդերը տալիս էին թուրքերին՝ իրենց կյանքը փրկելու համար, իսկ նրանք, ովքեր ոչ մի միջոց չունեին, արհամարհելով մահը, ճետվում էին ծովի հուժկու ալիքների մեջ՝ լողալով հասնելու հեռվում խարիսխ գցած եվրոպական դրոշներ կրող շոգենավերին, որոնք հայ անտուներին տանելու էին ուր որ պատահեր.

Էլանք Պոլիս գնացինք,
Ժամուն դուռը մնացինք,
Հաց ու զեյթուն տվեցին,
Իրեք օր մեզ պահեցին:

Անկե փախանք Հունաստան,
Շատ շատերն ալ՝ Ֆրանսա,
Մեկալները՝ Եգիպտոս.
Սապես ցրվանք ամե՛ն կողմ [III.2.133(468).]:

Պապենական հողից արմատախիլ եղած հայ գաղթականներն օտար երկրներում, անտեղյակ օտար լեզուներին ու օրենքներին, միայն էժան աշխատուժ էին, ինչքան էլ որ օտարների հիացմունքին արժանանային հայկական տոհմիկ արհեստավորների բազմաշնորհ վարպետությունը և ժրաջան հայ կանանց նրբագեղ ձեռագործներն ու գորգերը: Այնինչ ձուլումի, այլասերումի և մանավանդ գործազրկության սարսափը հանգիստ չէր տալիս աստանդական հայերին.

Օտարության մեջ ինկեր ենք,
Կուլամ կարոտո՛վ-կարոտո՛վ,
Հայ խնդիրը լուծվեր շուտով.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛:

Ուրախացիր, մի՛ լար տխուր,
Ոտքիդ վրա կայնի՛ր ամուր,
Շուտով կլսես ներգաղթի լուր.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛ [III.5.11(567).]:

Ու ներգաղթի իրարահաջորդ քարավաններով սկսվում է հայրենադարձությունը. նախ՝ 1920-30-ական թթ. Կոստանդնուպոլսից, Ֆրանսիայից և Հունաստանից: Ապա՝ 1946-48 թթ.՝ զանգվածային հայրենադարձությունը Սիրիա-Լիբանանից, Եգիպտոսից, Իրաքից, Ֆրանսիայից, Հունաստանից, Բալկանյան երկրներից, հետավոր Ամերիկայից...

Գալիս էին հայրենադարձները՝ լի կարոտով ու խանդավառությամբ: Գալիս էին երգելով. «Սովետական ազա՛տ աշխարհ Հայաստան...»: Գալիս էին ընրանք, իրենց հայրենի քույր-եղբայրների հետ ձեռք-ձեռքի տված, Երկրորդ աշխարհամարտից Հայրենիքի ստացած վերքերին սպեղանի դնելու: Այդ ազնիվ ու վեհ նպատակի համար բանվորները բերում էին իրենց բազկի ուժը, արհեստավորները բերում էին իրենց ձեռքի շնորհքը, մտավորականները՝ իրենց գիտելիքները, հարուստները՝ իրենց ունեցվածքն ու գործարանները, ծնողները՝ իրենց զավակներին.

Հայաստան երթալու եմ,
Մշտական մնալու եմ,
Ես ի՞նչ ընեմ օտար աշխարհ.
Ահա կերթամ Հայաստան [III.5.13(569).]:

Գալիս էին հայրենադարձների խուռներամ քարավանները՝ ոգեշնչված Խորհրդային Միության հաղթանակով և մանավանդ նրա 1945 թ. նոյեմբերի 1-ին Թուրքիային առաջադրած հայկական ու վրացական հողերի պաշտոնական պահանջով...: Ու մեծ հույսերի հետ բերնից բերան հյուսվում էր նաև ժողովրդական երգը.

Հայաստան երթալ կուզեմ,
Երևան տեսնալ կուզեմ,
Մասիս սարի կատարին
Դրոշակ պարզել կուզեմ [III.5.14(570).]:

Եվ կամ՝

Կուզե՛նք զայն, կուզե՛նք զայն.
Մերն է Կարսն ու Արդահան...

Կարս-Արդահանը մեզի
Պիտի շուտով դարձվի,
Որ այդ հողերն ամայի
Փոխակերպենք դրախտի [III.5.19(575).]:

Սակայն թուրքական դիվանագետները, մոռացության մատնելով մոտիկ անցյալում կատարված հայտնի պատմական իրադարձությունները, պատասխանում են. «Ոչ ոքի պարտք ունինք թուրք հողերեն և իրավունքներեն»[17]:

Եվ թեպետ անտուն ու անհայրենիք մնացած

[17] **Գ. Լազեան**, *Հայաստան եւ Հայ դատը (վավերագրեր)*, Գահիրէ, 1946, էջ 372:

արևմտահայ հայրենադարձները, վերաբնակվելով Երևանի շրջակայքում, սկսում են հիմնադրել իրենց պատմական հայրենիքի հիշատակները խորհրդանշող ավաններ ու թաղամասեր, սակայն երբեմնի ավերակված տան, հանգած օջախի մրմուռը շարունակում է մխալ նրանց հիշողության մեջ ու կորցրած Երկրի երազանքը հոգու կանչ դարձած՝ ավանդվում սերնդից սերունդ.

Երբ որ բացվին դռներն հույսի,
Եվ մենք Երկիր դառնանք կրկին,
Ձքնաղ երկիր մեր Հայրենյաց,
Որ բռնությամբ առին մեզնից:

Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.
Օդը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ,
Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.
Վանքեր, բերդեր հոնտեղ շա՛տ կան:

Երբ որ լուծվի Հայոց Հարցը,
Եվ մեզ տրվի նախնյաց հողը,
Մենք կվարենք մեր արտերը.
Կշենացնենք մեր գյուղերը:

Ցանկամ տեսնել Սասուն ու Վան,
Զեյթուն, Հաճըն և Մուսա Դաղ,
Տարսոն, Մարաշ, Սիս ու Այնթապ,
Կծաղկացնենք մենք անպայման [III.5.6(562).]:

Մեծ եղեռնից վերապրողների հաղորդած բանահյուսական նյութերի մեջ արծարծվել է նաև ժողովրդական հստակ մտածելակերպն արդի միջազգային քաղաքական հարաբերությունների և Արցախյան հիմնահարցի վերաբերյալ.

Ղարաբաղը մեր փոքրիկ
Մասն է Հայոց աշխարհի,
Ինչու՞ թողնենք օտարին,
Երբ հայերն են հոն բնիկ [III.5.20(576).]:

Եվ ժողովրդական երգը հնչում է որպես միասնական պայքարի համազգային պատգամ.

Մեր հայ եղբայրնե՛ր, մենք շա՛տ լռեցինք,
Բավական է մեզ ասչափ համբերենք.
Մեր Ղարաբաղը մեզնից խլեցին,
Հիմա ուժ ունենք՝ ետ առնենք նորից [III.5.21(577).]:

Արցախահայության պատմական այդ մեծ խիզախումը ևս դարձել է այսօրվա արևմտահայերի ստեղծագործական ներշնչանքի աղբյուր, քանզի այն մարմնավորում է նաև իրենց Հայրենի Երկրի ազատագրման ճնիրական երազը...

Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990:
Անդրեասեան Տ., *Զէյթունի տարագրութիւնը և Սուետիոյ ապստամբութիւնը*, Հալէպ, 1935:
Անտոնեան Ա., *Մեծ ոճիրը*, Բոսթոն, 1921:
Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, *Ազգ, եկեղեցի, հայրենիք*, Անթիլիաս, 1999:
Արամ Ասպետ, *Դրուագներ Հանընդոյ հերոսամարտէն*, Պէյրութ, 1961:
Արզումանյան Մ., *Հայաստան. 1914-1917*, Երևան, 1969:
Գալուստեան Գ., *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն*, Նիւ Եորք, 1934:
Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, *Անցեալը անցած չէ (Ուխտյց ի Տէր Զոր)*, Անթիլիաս, 1986:
Գուշագճեան Մ., *Յուշամատեան Մուսա Լերան*, Պէյրութ, 1970:
Թերզեան Ս. Յ., *Հաճընի ութամսեայ դիւցազնամարտը*, Պուենոս-Այրես, 1956:
Թէմիրեան Ա., *Հեսապ (1909-1946)*, Պէյրութ, 1956:
Թորոսյան Շ. Թ., *Կիլիկիայի հայերի ազգային ազատագրական շարժումները 1919-1920 թթ.*, Երևան, 1987:
Թումանյան Հովհ., *Երկերի ժողովածու*, հ. 6, Երևան, 1959:
Լազեան Գ., *Հայաստան եւ Հայ դատը (վավերագրեր)*, Գահիրէ, 1946:
Կարապետյան Մ., *Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ*, Երևան, 1998:
Կիրակոսյան Զ., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, Երևան, 1965:
Համբարյան Ա. Ս., *Արևմտահայերի 1915 թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը*, Երևան, 1990:
Հայկազ Ա., *Շապին-Գարահիսարն ու իր հերոսամարտը*, Նիւ Եորք, 1957:
Հուշամատեան Մեծ եղեռնի, Պէյրութ, 1965:
Միքմէճեան Մ., *Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925*, Ֆրէզնո, 1930:
Յիշատակարան նուիրուած Վասպուրականի 1890-ի և 1915-ի հերոսամարտերուն, Հիւս. Ամերիկա, 1945:
Ներսիսյան Մ., *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու)*, Երևան, 1991:
Պողոսեան Կ. Պ., *Հաճընի ընդհանուր պատմութիւնը*, Լոս Անճելես, 1942:
Պողոսյան Հ. Մ., *Զեյթունի պատմությունը*, Երևան, 1969:
Սահակեան Ա., *Դիւցազնական Ուրֆան և իր հայորդիները*, Պէյրութ, 1955:
Սահակյան Ռ. Գ., *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.*, Երևան, 1970:
Սարաֆեան Գ., *Պատմութիւն Անթէպի հայոց*, հ. Ա և Բ, Լոս Անճելես, 1953:
Սվազլյան Վ., *Մուսա լեռ*, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 16, Երևան, 1984:
Սվազլյան Վ., *Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը*, Երևան, 1994:
Սվազլյան Վ., *Մեծ եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ*, Երևան, 1995:
Սվազլյան Վ., *Մեծ եղեռնը հայ ժողովրդական հուշապատումներում և թուրքալեզու երգերում*, Երևան, 1997:
Տէր Զոր, Փարիզ, 1955:
Փափազյան Ա., *Ցեղասպանություն և գոյատևման պայքար*, Երևան, 2000:
Քելեշեան Մ., *Սիս-Մատեան*, Պէյրութ, 1949:
A Crime of Silence. The Armenian Genocide. Cambridge, 1985.
Dadrian, V. *Documentation of the Armenian Genocide in Turkish Sources.* London, 1991.
Dadrian, V. *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus.* Providence, Oxford, 1995.
Hovannisian, R. G., ed. *The Armenian Genocide in Perspective.* New Brunswick, Oxford, 1988.
Pinon, R. *La suppression des Armeniens Méthode allemande - travail turc.* Paris, 1916.
Svazlian, V. *The Armenian Genocide in the Memoirs and Turkish-Language Songs of the Eye-Witness Survivors.* Yerevan, 1999.

«ԻՄ ԱՆՑՅԱԼԸ ԻՄ ԱՆՑՅԱԼԸ ՉԷ ՄԻԱՅՆ,

ԱՅԼ ՆԱԵՎ ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՑՅԱԼՆ Է»։

Ականատես–վկա վերապրող
Տիգրան Օհանյան (ծնվ. 1902 թ., Կամախ)
Հուշ 97 (97).

I

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՀՈՒՇԵՐ



1 (1).
ԵՂԻԱԶԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1886 Թ., ՏԱՐՈՆ, ՍԱՍՈՒՆ)

1908 թ. հյուրիեթը* բոլոր քաղաքական բանտարկյալներին ազատություն տվեց, որից հետո հայը, թուրքը, քյուրդը, բոլորն էլ հավասար իրավունք պիտի ունենային:

Երիտասարդ թուրքերի և դաշնակցական կուսակցության եղբայրական դաշինքի համաձայն, վերջ էր տրվում հայկական ազատագրական պայքարին, և Թուրքիայում ապրող բոլոր ազգերը միացյալ ուժերով պետք է հայրենասիրական ոգով լցված, հավատարմորեն պաշտպանեին Օսմանյան կայսրությունը, նրա ստեղծած Սահմանադրությունը, նրա առաջադիմական օրենքներ հիմնադրող նոր կառավարությունը: Հատուկ հրովարտակով Մուշ հրավիրվեցին Փեդայիները: Ռուբենի գլխավորությամբ հայտնվեց հայդուկների խումբը՝ առանց զենքերի: Ամեն տեղ ինչում էին ցնծության աղաղակներ: Հյուրիեթի օրենքով վերջ էր տրվում հայերի ստորացմանը, ծեծին, հայհոյանքին, թալանին, կողոպուտին և արհամարհանքին: Նման վերաբերմունք ցուցաբերողը ենթարկվում էր ամենախիստ պատժի, նույնիսկ կախաղանի: Կատարյալ վստահության վրա էին դրվում երկու ժողովուրդները: Հայերը ստանում էին ազատ ձայնի իրավունք, ընտրում ու տալիս էին իրենց պատգամավորը: Սա արևմտահայերի կյանքում մի նոր վերածնունդ էր: Նորընտիր պառլամենտը իր անդրանիկ նիստում մի շարք օրենքներ հաստատեց, այդ թվում՝ հայերին օսմանյան բանակում զինվորական ծառայության մեջ ընդունելու օրենքը:

Սուլթան Համիդը դեռ մնում էր Թուրքիայի սուլթան, երբ 1909 թ. մարտի 31-ի օրը Կիլիկիայում ջարդվեցին 30 հազար հայեր: 1909 թ. ապրիլին գահընկեց եղավ սուլթան Համիդը և գահ բարձրացավ նրա ավագ եղբայր Մուհամեդ Ռեշադը: Իշխանության գլուխ անցավ Էնվերի, Թալեաթի, Ջեմալի և Նազիմի նոր կառավարությունը, որը չեղյալ համարեց սուլթան Համիդի օրենքները, ցրեց համիդիե բաշիբոզուկ զինված ուժերին: «Խաղաղություն, հավասարություն, եղբայրություն» լոզունգներով հայ ժողովրդի դարավոր երազանքը իրականություն էր դարձել:

Հնչակ և դաշնակ քաղաքական երկու հայ կուսակցությունների կենտրոնական կոմիտեները արտաքնապես գտնվում էին շատ մոտիկ և սիրալիր հարաբերությունների մեջ: Երկու կողմերի ղեկավարները ամեն օր հավաքվում էին կլուբում և գեղեցիկ Սահմանադրության առթիվ հայրենասիրական ճառեր էին արտասանում: Թուրք և հայ ղեկավարները փոխադարձ իրար էին հրավիրում, հացկերույթ և խնջույքներ էին սարքում, թևանցուկ շրջում էին քաղաքի փողոցներով, միասին այցելում էին պետական հիմնարկություններ և հայոց առաջնորդարան:

Հայերը մեծ արտոնություններ էին վայելում, նրանք անգամ խառնվում էին դատական գործերին, բարդ վեճերին:

Պատվելի Միհրանը բերեց Առաջին համաշխարհային պատերազմի լուրը: Օգոստոսի 3-ին տեղի ունեցավ արևի խավարումը:

Էնվեր փաշայի ազգական Սերվեթ փաշան եկել էր հավաքելու բանակի համար պետք ու կարիքը՝ այն էլ աճավոր դաժան միջոցներով:

Հպատակության տակ ապրող հայերի նկատմամբ ատելությունը սկսեց ավելի խորանալ: Ջայրույթը միայն հայ կամավորական խմբերով չէր սահմանափակվում, որոնք միացած ռուսական բանակին՝ կռվում էին իրենց դեմ:

Հայերի նկատմամբ թուրքերի գրգռվածությունը ավելի թունավոր դարձնելու նպատակով, կառավարությունը հրապարակ հանեց մի նոր, ավելի խռովահույզ խնդիր, հայտարարելով, թե բանակում ծառայող հայ զինվորներն ու սպաները՝ մարտերի ժամանակ օգտվելով պատեհ առիթից, լքում են ռազմաճակատը, փախչում, անցնում են ռուսների կողմը՝ դավաճանում, գաղտնիքներ են հաղորդում և զենքերը շուռ տված կռվում են թուրքերի դեմ: Դրանց գումարվեցին նաև անցյալի ոխն ու վրեժը: Թալեաթի ու Էնվերի գլխավորած սահմանադրական Թուրքիան որոշեց սրի ու հրի միջոցով կոտորել՝ արմատախիլ անել երկիրը միշտ ծանկեցնող իր հպատակ քաղաքացիներին՝ հայ ժողովրդին: Հրամանը եղավ զինաթափ անել թուրքական բանակում ծառայող հայերին և նրանցից կազմել ամիլե թաբուրներ: Բոլոր զորամասերում եղած հայ զինվորների ձեռքից խլեցին հրացանները, նրանց շարքից դուրս հանեցին, ճանապարհները շինելու և բեռներ տեղափոխելու համար կազմեցին աշխատանքային խմբեր, ձմեռվա ցրտին լծեցին տաժանակիր աշխատանքների:

* 1908 թ. հռչակվեց Օսմանյան Թուրքիայի «Սահմանադրությունը», որի կարգախոսն էր՝ «Ազատություն, արդարություն, եղբայրություն, հավասարություն ժողովրդին»:

Պատերազմի սկզբի օրվանից թուրք կառավարության բռնած դիրքը հայերի հանդեպ բարյացակամ և հուսալի չի եղել: Այն հայերին համարել է թշնամի: Իսկ ջրաղացի փախստականների կրակոցը և Կոմս գյուղում տասներեք ժանդարմների հրկիզումը էժան չէր նստելու հայերի վրա:

Փետրվարի 20-ի գիշերը տասնհինգ գյուղերից հրավիրված ութսուն ներկայացուցիչներ հավաքվել էին Առաքելոց վանքում՝ խորհրդակցելու, որպեսզի նախապատրաստվեն ինքնապաշտպանությանը և հավաքվեն Առաքելոց վանքում: Սասունցիները ունեին հազար հինգ հարյուր հրացան:

Փետրվարի 22-ին Առաքելոց վանքից կրակոցներ լսվեցին:

Մարտի 13-ին շեյխ Հազրեթը Մուշի շուկայում էր, հետո Սերվեթ փաշայի մոտ հաջի Մուսաբեկի և երիտթուրք ղեկավարների հետ խորհրդակցության նստեց, որոշեցին հայերին ջարդել:

Ապրիլի 7-ին թուրքական կառավարության և հայերի միջև սկսվել էին վանի անհավասար կռիվները: Հայ փեդայիների կողմից Ս. Առաքելոց վանքի Աստվածածնի մատուռի մոտ տեղի ունեցած կռիվների ժամանակ սպանվել էր Ահմեդ փաշան: Սասուն գավառի մութեսերիֆ Սերվեթ փաշան Ահմեդ փաշայի գերեզմանի վրա արտասանած իր ճառում ասել է. «Ահմե՛դ, օղլու՛մ, դու հանգիստ պառկիր, ես քո գերեզմանի վրա երդում կանեմ, որ ինչքան մազ որ դու ունես քո գլխի վրա, այնքան հայ քո փոխարեն պետք է սպանվի»: Սա համբերությունը կորցրած ու վրեժխնդիր մութեսերիֆ փաշայի հոգու խորքում բույն դրած վերջին խոսքն ու վերջին երդումն էր, որը երբեք չէր մոռանալու, և այդ սուրբ խոստումը մոտիկ ապագայում պետք է իրականացվեր:

1915 թ. քրդերը հարձակվում են Սասունի Ալիվանի հայերի վրա ու կոտորում, այնուհետև սարմեցի, մուսերցի, բաքրանցի մոտ հազար հոգի զինված, Ավդուլ Ազիզի գլխավորությամբ ապրիլի 22-ին արշավանք գործեցին Փասնքի քաոս գյուղերի վրա: Նրանք սկսեցին անխնա կերպով հայերին սպանել ու թալանել: Անզեն հայերը կարճատև դիմադրություն ցույց տալուց հետո, չդիմանալով այդ մեծ ուժին, ամեն ինչ թողեցին, իրենց կյանքը ազատելու համար կին ու երեխա փախան լեռները: Քրդերը խուժեցին ներս, հրդեհ տվին ու թալանեցին ամբողջ գյուղը: Նրանց մի մասը՝ հարյուր հիսուն տղամարդ ու կին, երեխաներ, փախուստի միջոց չգտնելով, վանահայր Ստեփան վարդապետի և Գոմրտեր գյուղացի Աղջեի գլխավորությամբ, մտան Գոմաց վանքի մեջ և ապաստանեցին: Ավդուլ Ազիզը կոաճելով հայերի այդտեղ լինելը, իր քրդերով մոտեցավ, շրջապատեց վանքը, շարունակվեց երկարատև կռիվը: Քրդերը պարսպից ներս մտնել չկարողացան, բայց փոխարենը դրսի կողմից փակեցին վանքի բակում հոսող ջրի խողովակը, որպեսզի հայերը ստիպված լինեն իրենց հանձնվել: Մոտ կես ամիս պաշարված հայերը ապրեցին գրեթե առանց ջրի և մատնված մեծ հուսահատության: Այդ միջոցին՝ Աղջեին ծանոթ Սոսե անունով մի քրդուհի, լսելով, որ պաշարված հայերի վրա ջուրը փակել են, գիշերով գաղտնի գնում է և ջուրը իր կտրված տեղից նորից բաց է թողնում դեպի վանքը: Անակնկալ երեվույթը հայերին զարմանք է պատճառում, տիրում է ուրախություն: Մինչև առավոտ բոլոր կարասներն ու ամանները լցվում են ջրով: Արևածագին քրդերը գլխի են ընկնում և անցքը նորից փակում են:

Պաշարված հայերը, դրսի հարաբերությունից կտրված, մեկ ամիս կռվեցին ու պաշտպանվեցին, բայց վերջին անգամ, երբ նկատեցին, որ դրությունը գնալով վատանում է և փրկության համար հույս չի մնացել, վարդապետն ու Աղջեն Սաճակ անունով մի երիտասարդի գաղտնի ճանապարհով վանքից դուրս փախցրին, նրա միջոցով նամակ հասցրին Անդոկ, ուր նկարագրելով իրենց ծանր վիճակը՝ նրանք աղերսագին խնդրել էին կամ շտապ կերպով օգնության հասցնել, կամ թե անելիքի մասին խորհուրդներ տալ: Ռուբենը պատասխան նամակ է գրում, թե՝ օգնության հասնել չենք կարող, իսկ ձեր այնտեղ մնալը այլևս նպատակ չունի, ուստի, եթե կարող եք ճարը գտնել, անմիջապես վանքից դուրս եկեք և միացեք մեզ:

Երեսուն օր պաշարված մնալուց հետո հայերը մի գիշեր ճեղքեցին օղակը, բոլորը միասին փախան դեպի Տալվորիկի ժայռերը, այնտեղից էլ՝ Անդոկի սարը: Հայերի գույքը և անասունները թալանելու նպատակով քրդերը մրցում էին միմյանց հետ, հայերին սպանելու և կողոպտելու համար մեկը մյուսից առաջ էր վազում:

Մայիսի 2-ին խիանցի և բադկանցի աշիրաթները Փառգա գյուղում նստած մյուդուր Հոռո Սլեմանի աղայի գլխավորությամբ ամեն օր արշավում էին Տալվորիկի գյուղերի վրա, նպատակ ունենալով գրավել Անդոկը, ցրիվ տալ այնտեղ կուտակված հայերին և վերցնել ավարը: Բայց նրանք կորուստներ տալով՝ չկարողացան մոտենալ: Այդ կռիվների ընթացքում բալաքցի աշիրաթից* երկու հարյուր զինված քրդեր գիշերով բարձրացան Մովասար: Լուսաբացին հարձակվեցին Աղբիկ գյուղի մի օբայի վրա, թալանեցին ամբողջ հոտը: Շեգոտան քրդերը, որոնք համարվում էին Աղբիկի հայերի աղաները, լսելով բալաքցի քրդերի թալանի մասին, փոխանակ իրենց վրեժը լուծելու նրանցից, ծրագրում են՝ հայերի մնացած ունեցվածքը թալանել: Այդ նպատակով մայիսի 6-ին Շեգո աշիրաթի պետ, Դալրձոր գյուղում բնակվող Հաբեի Յուսուֆը իր հորեղբայր Ֆատոյի երկու տղաների՝ Խալլոյի և Մուսոյի հետ, քսան զինված քրդերի հետ ուղղվում են դեպի Աղբիկ, որպեսզի համոզեն հայերին. «Կարող է ձեզ դժբախտություն պատահի, ձեր ունեցածը ուրիշները տանեն, ավելի լավ կլինի, որ դուք այսօրվանից ձեր անասունները հանձնեք մեզ: Մենք ձեր աղաներն ենք՝ կպահենք ձեզ: Ո՞վ իմանա, գուցե հետագայում դուք կազատվեք, ձեր ապրանքը նորից ետ կստանաք»:

Բայց հայ երիտասարդները երբ տեսան նրանց մոտենալը, կրակ բացեցին: Այդ կռիվը տևեց ամբողջ

* Մի ցեղապետի ենթարկվող քրդական ցեղ:

ցերեկը, մինչև արևի մայր մտնելը: Քրդերից սպանվեցին տասնմեկ մարդ, որոնց թվում Խալլոն և Մուսոն, իսկ հայերից՝ հինգը: Յուսուֆը փախավ: Այդ դեպքը շատ ազդեց մուսուլման քրդերի վրա, որովհետև այդ միջոցին հազար հայ մի հավի չափ արժեք չուներ, իսկ մի քյուրդը արժեր հազար հայ:

Մայիսի 14-ին այս անգամ բալաքցի և Շեգո աշիրաթները միացած իրար հետ, մոտ երկու հազար զինված ու անզեն քրդերով, լուսաբացին տարբեր ուղղություններով հարձակվեցին Գարմակ և Քոր գյուղերի վրա:

Հայերը կանոնավոր զենքեր չունեին, նրանք չախմախլի* հրացաններով պաշտպանվեցին, լեռների և հովիտների միջով շարժվեցին դեպի Սեմալ գյուղը: Ճանապարհին օգնություն խնդրեցին Տափիկ գյուղի մյուդուր Թալիբ Էֆենդուց, բայց նա երբ նկատեց քրդերի արշավանքը և հայերի փախուստը, իսկույն իր քսան ժանդարմայի հետ քյոշկի ներսը մտավ և դուռը փակեց: Հայերը ճարահատված Իրիցանք գյուղի մոտ դիրք բռնեցին, կասեցրին քրդերին: Ուժիվը երկու կողմում սաստկացավ: Լուրը հասել էր Սեմալ, օրվա կեսին Կորյուն, Վարդան և երեք հարյուր զինված սասունցիներ օգնության եկան: Մոտ մի ժամ համառ մարտ մղելուց հետո քրդերը դիմեցին փախուստի՝ իրենց հետ տանելով ավարը:

Քրդերի հարձակումները հայերի վրա իբր թե անպաշտոն բնույթ էին կրում, բայց ընդհանուր համոզմունք կար, որ այդ բոլորը կատարվում էր կառավարության տված հրահանգով, որի կենդանի ապացույցն այն էր, որ հայերի բողոքները չէին լսվում, դիմումներին պատասխան չէր տրվում: Խուզարկության է ենթարկվում Վահան Փափազյանի բնակարանը, բայց ինքը տանը չի լինում:

Սերվեթ փաշան երիտթուրք էր, գավառի փաշան էր և իսկամին հավատարիմ մարդ: Հետևաբար, նա էլ պետք է իր պարտքը կատարեր այնպես, ինչպես որ կատարել էին մյուս գավառների բոլոր փաշաները:

Հունիսի 10-ից քյուրդ աշիրաթապետները խըմբված ձիավորներով, աջ ու ձախ կողմերից մտնում էին Մուշ, հրահանգներ էին ստանում ու վերադառնում էին իրենց տները: Ամեն գիշեր սայլերով ու բեռներով քաղաքից դուրս զենք ու փամփուշտ էր տեղափոխվում՝ քրդերին զինելու համար: Հայերի կոտորածը հաջող ավարտելու նպատակով կառավարության կողմից կազմված էր հատուկ ծրագիր, կատարված էր գյուղերի բաժանումը, նշանակված էր հարձակման օրը, ժամը այնպիսի պատրաստությամբ, որ այդ մեկ օրվա ընթացքում պետք է հիմնովին ավարտվեր Մշո դաշտի հարյուր հինգ գյուղերի բնաջնջումը՝ առանց մի երեխա խնայելու: Բաշխումը կատարված էր հետևյալ կերպ: Սկսած Մուշի աջակողմյան գյուղերից մինչև Մեղրագետի ակունքը, երեսունհինգ գյուղերի ջարդը հանձնված էր հաջի Մուսաբեկին, որը իր տրամադրության տակ ուներ երեք հազար հինգ հարյուր ձիավոր ու հետևակ քյուրդ: Քաղաքի հյուսիս-արևմտյան կողմի տասնհինգ գյուղերի ջարդը հանձնված էր Ֆատկանցի Սլեման աղային, որը իր տրամադրության տակ ուներ հազար

* Կայծքարային

զինված քյուրդ: Ս. Կարապետի շրջանի **քսան գյուղերի** ջարդը հանձնված էր **չեթեապետի** օգնական, **երիտթուրք** Ռաշիդ Էֆենդուն, որը ուներ հինգ **հարյուր** չեթեական ձիավոր ուժ, նաև նրանց մասնակցում էր Ս. Կարապետի վանքում նստած զորքը և Զիարեթ գյուղում նստած մյուդուրը՝ իր ժանդարմաներով: Դաշտի հյուսիս-արևելյան կողմը՝ տասնհինգ գյուղերի **ջարդը հանձնված** էր ջբրանցի Դրբոյի Ջնդուն, Կոլոտոյի Ջուբերին և Աղչանի մյուդուրին, որոնք իրենց **տրամադրության** տակ ունեին հազարից ավելի քյուրդ և **ժանդարմա**: Դաշտի արևելյան կողմը՝ Չխուրի քսան գյուղերի ջարդը հանձնարարված էր շեյխ Հազրեթին, որը իր տրամադրության տակ ուներ հազար երկու **հարյուր** ձիավոր՝ կազմված Զիլանի և Քոսուրի քրդերից:

Այս կազմակերպված ուժերից դուրս, յուրաքանչյուր մահմեդականի վրա արբազան պարտք էր դրված, որ նրանք իրենց հանդիպող հային առանց խնայելու սպանեն ու ոչնչացնեն:

Գոյություն ունեցող դրությունը միանգամից փոխվեց: Հայերն այլևս գյուղից քաղաք գնալ-վերադառնալ չէին կարող: Թուրքերը **հանդիպողին** չարաչար ծեծում ու տանջում էին, տեղի էին **ունենում** նաև սպանության դեպքեր: Երբեմն հասկանալի կանայք անհրաժեշտ մի բան բերելու համար **գնում** էին քաղաք, նրանք էլ ճանապարհին միշտ ենթարկվում էին **հալածանքի** ու անպատվաբեր հիշոցների: Տագնապը համակել էր ժողովրդին, մարդիկ քունն ու **հանգիստ չունեին**:

Հունիսի 22-ին բաքրանցի **քրդերից հարյուր** ձիավորներ իջևանում են Կոնկան գյուղի սարը: Հունիսի 23-ին նրանցից տասը ձիավորներ եկան մեր գյուղը և գյուղի իշխաններից պահանջեցին տասը **հատ ոչխար**, տասը կոտ ալյուր և տասը հատ թաղիք: Առանց առարկության նրանք ձրիաբար ստացան այդ բոլորը և հինուց ծանոթ լինելով հավատորիկցիների **հետ կամ խղճի** խայթից դրդված, Թամոյի Ալիհ ասաց. «Հայե՛ր, ես ձեր աղն ու հացը շատ եմ կերել, հիմա ձեզ մի ճշմարտություն պետք է ասեմ: Սուլթանից հրաման է եկել, որ օսմանցու հողի վրա ապրող բոլո՛ր հայերին անխնա **պետք** է կոտորենք: Այժմ, եթե դուք կանգնեք ու **հետվից դիտեք** Սլիվանի դաշտի վրա, կտեսնեք, որ ցորենի արտերը հասել են, հասկը՝ հասկի վրա է ընկել, բայց ճնճղուկ անգամ դուք այնտեղ տեսնել չեք կարող: Տիրել է մի չտեսնված ամայություն: Մենք հիմնովին կոտորել ենք այդ միջավայրի հայերին, հիմա էլ կառավարությունը մեզ կանչել է այստեղ, որ մենք Մշո դաշտի և Սասունի հայերին էլ կոտորենք: Մի քանի օր է մնացել, որ ձեզ մոտ էլ կոտորած սկսվի և պետք է այնպես լինի, որ Հիսուս Քրիստոս աշունը տվող մարդ՝ այս հողի վրա կենդանի չմնա»: Քրդերը վերցրին իրենց պահանջածը, գընացին, իսկ մենք մտածմունքի մեջ ընկանք:

Հունիսի 23-ի գիշերը Առաղ գյուղից լսվեցին հրացանների ձայներ: Գիշերով Առաղից փախած տղամարդկանց խմբեր հասան Հավատորիկ: Նրանք պատմեցին, որ առաղցի երկու երիտասարդներ, հայերի գընդխին չարիք բերելու համար, մթության մեջ հրացան էին կրակել և փողոցով վազել, մտել էին աղայի երկհարկանի քյոշկը. նրան ասել էին, թե Զորիկը ատրճանակով մեզ վրա կրակեց: Մամե Էֆենդին միանալով խոովարարներին, երեքով սկսել էին կրակել քյոշկի լուսամուտներից գյուղի վրա: Վախ կրելով, որ վանքի զորքը արդեն կլսի և կշարժվի դեպի Առաղ, նրանք փախել, եկել էին մեզ մոտ: Իրոք, վանքի միլիսները հաջորդ օրը մտան Հավատորիկ: Ամբողջ ցերեկը նրանք վազվզում էին դեսուդեն: Վերջում իմացանք, որ տասնմեկ հայ է սպանվել: Հաջորդ առավոտ մի քանի սգավոր մայրեր ու կանայք աղի արցունք աչքերին՝ կանգնեցին կառավարության դուռը, որպեսզի ոճիրի համար իրենց բողոքը հայտնեն, բայց առանց ընդունելու՝ ժանդարմները մտրակի հարվածով նրանց քաղաքից դուրս էին քշել: Սա դաշտի հայերին կոտորելու ազդանշանն էր, իսկ մենք դեռ թուրքերից ողորմություն էինք ակնկալում: Իսկ քյուրդ հարկահավաքները շարունակում էին իրենց բռնի հարկահավաքությունը, որ մինչև հայերին կոտորելը գոնե մի բան փախցնեն: Առաղից փախածները պատմեցին. «Երեկ կեսօրից հետո երկու հարյուրից ավելի ժանդարմաներ, միլիսներ, չավուշներ և օճբաշիներ, մի ոմն հարյուրապետ Քամիլ Էֆենդու գլխավորությամբ, Մուշի կողմից եկան, մտան գյուղը, փակեցին ճանապարհները և սկսեցին տղամարդկանց հավաքել ու լցնել Ալիբեկի ախոռի մեջ, որտեղ սպանեցին»:

Հունիսի 26-ի ցերեկը Սերվեթ փաշան ոստիկանապետ Բեհջեթ Էֆենդու միջոցով՝ կարևոր հանձնարարություններ տալու համար, քաղաքի թաղերից իր մոտ կանչել էր տվել քաղաքի աչքի ընկնող վաճառականներին, պետության մոտ ծառայություն կատարող հայ պաշտոնյաներին, Առաջնորդ Վարդան վարդապետին, թվով երեք հարյուր հիսուն մարդ և նրանց ասել. «Հայե՛ր, ինձ անհայտ պատճառներով հրամայված է, որ դուք բոլորդ ժամանակավորապես Մուշից տեղափոխվեք Դիարբեքիր, մինչև որ պատերազմը վերջանա»: Այս հայտարարությունից հետո փաշան չթողեց, որ նրանք տուն վերադառնան: Բայց հայտնի չէ, թե նրանց ու՞ր կորցրին, քանի որ նրանցից ոչ մեկը ետ չեկավ:

Հունիսի 28-ի օրը ոչ բարով Վարդավառի կիրակին էր. հայ ժողովրդի ուրախության տոնը, ավա՛ղ, դարձավ «մարդավառի» կիրակի՝ Տարոնի դաշտի հայության համար: Կիրակին և հաջորդ գիշերը տեղի ունեցավ Մշո դաշտի գյուղերում անմեղ ու անզեն կանանց և երեխաների բնաջնջումը: Շաբաթ օրը Առաղ գյուղում սպանվել էին երեք մարդ, հիսունտհինգ-վաթսուն հոգի առնված էին կալանքի տակ, զորքը գյուղից չէր հեռացել: Առավոտը նրանք Առաղից շարժվեցին Հավատորիկ: Ամբողջ գիշեր Յուսուֆ Էֆենդին և իր ժանդարմները ո՛չ հանվեցին, ո՛չ քնեցին: Զենքերը ձեռներին նստած էին. վախենում էին, որ հայ ֆեդայիները կգան և իրենց կսպանեն:

Ամբողջ և գող քյուրդ Դոնդոն ասում է հայերին. «Հիմա Օսման օնբաշին ինձ ասաց, որ երեկ Ազիզ չավուշը ասել է, թե անպայման վաղը սկսելու է հայերի տեղահանությունը և ջարդը»: Եվ իրոք, Մուսա բեկը բազմաթիվ ձիավորներով գալիս է Տարոնի դաշտով: Նրանց մի մասը ուղղվում է Բերդակի վրա, մի մասը՝ Առաղի վրա, մի մասը՝ Մոկունքի վրա, մյուս մասն էլ Տերգեվանքի վրա. սկսվեց հրացանազարկությունը: Արտերի մեջ նրանք, սպանելով ջուր անող մարդկանց, հինձվորներին, տավարած հոտաղներին, սրարշավ լցվեցին գյուղերի մեջ: Երիտթուրքերի կառավարությունը, քրդական բեկերի, աղաների ու շեյխերի գլխավորությամբ, այդ կիրակի Մուշի դաշտը ամայի դարձրեց, տասնյակ հազար կանանց ու երեխաների ծխի ու կրակի մեջ խորովելով ու խեղդելով: Իսկ առաղցի հիսունհինգ հայերին, բոլորի թևերը կապած, տարել էին վանքի մոտ: Քամիլ Էֆենդին նստել էր բարձր տեղ ու հրամայել, որ կրակ բաց անեն կապկպված հայերի վրա, որոնք տեղնուտեղը սպանվել էին: Վերևի գյուղերը մատնված էին արյան և ավարի, իսկ ցածի կողմը՝ Նորաշեն, Ազիզրնաև, Սոխգոմ, Օղոնք, Հունաև գյուղերը դեռ սովորական կյանքով էին ապրում, բայց ընդհանք էլ պաշարվեցին, թալանվեցին ու քշվեցին դեպի հրկիզման վայրերը:

Հունիսի 28-ի գիշերը մինչև առավոտ Քրդագոմի, Խասգյուղի և Հունաևի խոշոր գոմերի ու մարագների ներսում, կրակի բոցերի մեջ այրվեցին, ածուխ դարձան տասը-տասներկու հազար հայ կանայք, մանուկներ, ծերեր և երիտասարդներ: Այդ նույն գիշերը շեյխ Հազրեթը, Մուսա բեկի երկու եղբայրները՝ Խասում և Նըրոո բեկերը, Ավրամ և իր շրջակա գյուղերում՝ Կոլոտոն, Ջուբերը և չեչենները, Ս. Կարապետի կողմը՝ Ռաշիդ Էֆենդին և Զիարեթի մյուդուրը, Ղզլաղաջ և իր մոտակա գյուղերը՝ Ֆատկանցի Սլեման աղան, իսկ քաղաքի շրջակայքում՝ չեթեների ընդհանուր հրամանատար, Մուշի երիտթուրքերի առաջնորդ Ֆալամազ աղան, ժանդարմաների մասնակցությամբ նույն գործողությունները կատարեցին ամենուրեք: Լույս երկուշաբթի առավոտ դաշտի բոլոր մասերում այլևս ոչ մի կենդանի հայ չէր շարժվում: Միայն հրկիզված գյուղերի վրա թանձր ծուխ էր ծառել, ճենճաճոտը տարածվել էր մթնոլորտի մեջ, որը գալիս, հասնում էր մինչև մեր լեռները:

Այսպես, դարերի ընթացքում ճողին ու մաճին կառչած հայաշատ այդ գավառը մի ցերեկվա և մի գիշերվա մեջ դարձավ ամայի՝ անմարդաբնակ, իսկ նրա սեփական տերերը՝ անողոք թուրքերի ու քրդերի ձեռքով հրեշային գործողությամբ սրով մորթվեցին, կրակով այրվեցին, ջրով խեղդամահ եղան՝ հարյուր հինգ գյուղերի յոթանասուն-ութսուն հազար երկու սեռի պատկանող հայ բնակիչները: Թալանի տրվեց միլիոնների հասնող նրանց հարստությունը: Կորյունի կազմակերպած խմբերը և գյուղական դաշնակցական կոմիտեները՝ վստահ չլինելով իրենց փոքրաքանակ ուժերի վրա, մնացին իրարից կտրված, դիմադրել չկարողացան:

Հուսահատության և անորոշ դրության մեջ ընկնելու գլխավոր պատճառներից մեկն էլ այն էր, որ յուրաքանչյուր գյուղ կարծում էր, թե այդ օրվա արշավանքը միայն իր վրա է կատարված, իսկ մնացած գյուղերը դեռ ազատ են մնացել: Որոշ չափով արգելք հանդիսացան կանայք և երեխաները, որովհետև մարդկանց մտքերում այն կարծիքը կար, թե՝ հավանաբար կոտորածը նրանց վրա չի տարածվի, իսկ եթե դիմադրություն ցույց տրվի, այն դեպքում նրանք էլ կընկնեն շաոի մեջ և անտեղի կզոհվեն:

Ալիջան գյուղի երիտասարդները այդ առավոտ մինչև երեկո համառ կերպով կռվեցին Ջնդիի բազմաթիվ քրդերի դեմ: Գյուղը նրանց ձեռքը չմատնեցին, մինչև որ մութն ընկավ: Երբ գիշեր եղավ ու քրդերը հեռացան, նրանք մեծ հույսով բոլոր ծերունիներին, կանանց ու երեխաներին հանեցին և ուղարկեցին Աղչան գյուղը՝ մյուդուրին հանձնվելու համար, որ նրա կողմից պաշտպանություն գտնեն, իսկ իրենք՝ տղամարդիկ հիսուն-վաթսուն հոգի փախուստի դիմեցին դեպի Քաճասարը: Ճանապարհին նրանք անցան Օդոնք, Սոխգոմ, Ալիզրնան գյուղերի միջով, հանդիպեցին սպանված մարդկանց դիակների, աչքով տեսան ավերակ ու դատարկ մնացած գյուղեր, ապա նոր հասկացան, որ դաշտի մեջ տեղի է ունեցել հայերի ընդհանուր կոտորած:

Այդ գիշեր փախած մարդիկ հասան Քաճա բարձունքի վրա, բայց Աղչան ուղարկված հինգ-վեց հարյուր աձը, մյուդուրի և ժանդարմաների ձեռքով, նույն օրը լցվեցին մարագների մեջ ու այրվեցին: Չորս հարյուր տուն ունեցող Ավրան գյուղի տղամարդիկ ամբողջ ցերեկ կռվեցին Ջուբերի հրամանատարության տակ գտնված չեչենների ու քրդերի դեմ, բայց նրանք էլ պարտվեցին ու զոհվեցին միայն այն ժամանակ, երբ նրանց սակավաթիվ զենքերի փամփուշտները վերջացել էին:

Մուշի հյուսիս-արևելյան մասում, քաղաքից հինգ կիլոմետր հեռավորություն ունեցող երեք հարյուր հիսուն տնից բաղկացած Գառնեն գյուղի հայերը երկու ցերեկ ու գիշեր անընդհատ մաճու-կենաց կռիվ մղեցին Ֆալամազ աղայի չեթեների, Մուշից հասած ժանդարմաների և ուրիշ բաշիբոզուկների դեմ, մինչև որ բոլորը ուժասպառ եղան և կենդանի մատնվեցին թշնամու ձեռքը: Ջարդարարները ներս մտան, այրեցին ամբողջ գյուղը, սպանեցին և կրակի տակ թաղեցին մոտ հազար երեք հարյուր անմեղ աձների:

Ուրիշ մի քանի գյուղերում անհատ մարդիկ, տեղ-տեղ երեք-չորս հոգի միացած, զենքերով ապաստանեցին տների մեջ, կռվեցին, քրդերից իրենց նահատակների վրեժը լուծեցին, բայց դուրս գալու ճանապարհ չգտնելով՝ նրանք էլ հրդեհի մեջ վառվեցին:

Թե ինչպիսի խմբավորումներ էին կատարվել շրջաններում և ինչպես էր նախապատրաստվել ու իրագործվել դաշտի կոտորածը, այդ առթիվ քաղաքի մեջ բնակված հայերը բոլորովին տեղեկություն չունեին: Հիշյալ «մարդավառի» կիրակին՝ լույս երկուշաբթի գիշերը, մի խումբ զինված ու անզեն երիտասարդներ, մոտ քառասուն-հիսուն հոգի, փորձ կատարեցին քաղաքից դուրս գալ և փախչել դեպի Սասուն:

Կեսգիշերին՝ Գավառեցոց թաղից նրանք զգույշ քայլերով շարժվեցին դեպի վերև, որ շուտ գան, մտնեն Շեխանց ձորը ու ազատվեն, բայց Սայկի դուրանում խրամատավորված ասկյարները կռահեցին, մթության մեջ սկսեցին կրակել: Հանդիպելով այդ արգելքին, տղաների կեսը ձորից ետ վերադարձավ քաղաք, իսկ մյուս կեսը բռնված գծից դուրս պրծավ, խիտ այգիների միջով ճանապարհվեց դեպի Հավատորիկ: Սրանք էլ անցան ավերակ դարձած Մոկունք, Տերգեվանք գյուղերից, տեսան սպանվածների դիակներ, սարսափ կրելով հասկացան, թե ինչ զուլում է ստեղծվել հայերի գլխին: Դիշերվա այդ կրակոցը և երեք հարյուր հիսուն երևելի մարդկանց ետ չվերադառնալը արդեն քաղաքի հայերին դրեց տագնապի և կասկածի մեջ: Դեպքերի տպավորության տակ թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք քուն ու հանգիստ չունեին:

Լուսացավ երկուշաբթին, հունիսի 29-ի առավոտը: Փողոցները դատարկ էին, մարդ արարած չէր երևում, շարժում ու շշուկ չկար: Միայն բարձրաբերձ բարդիների վրայից լսվում էին տասնյակ հազարավոր սև ագռավների բոթաբեր սև կռնչյունները: Այդ պահին, երբ արևը բավականաչափ բարձրացել էր երկնակամարի վրա, մեկ էլ հանկարծակի հայկական թաղերի գլխավոր փողոցներում լսվեցին թուրք մուհետիկների կանչի զիլ ձայները. «Հայե՛ր, մութեսերիֆ փաշայի հրամանով, դուք ձեր սայլերով, ջորիներով, ձեր բոլոր գույքով ու ընտանիքներով, այսօր ժամը տասին պետք է հավաքվեք, ներկայանաք կառավարության դուռը, Դիարբեքիր մեկնելու համար: Ով որ մերժի ու չկատարի այս հրամանը, նրա ունեցվածքը կբռնագրավվի, ընտանիքը բռնի ուժով քաղաքից դուրս կարտաքսվի»: Այդ կանչերին ոչ ոք չհնազանդվեց: Կեսօրին մոտ փոլիսներն ու զինված ժանդարմաները փողոցով առաջացան դեպի հայոց Վերին թաղը, որպեսզի բռնի ուժով հայերին տեղահան անեն ու քշեն դեպի անհայտ ուղղությունները: Նրանք համարձակ քայլերով մոտեցան, կանգ առան Աստուր աղայի երկհարկանի տան առաջ, որը ներսի կողմից փակված էր: Բախելով պահանջեցին դուռը բաց անել: Տան երկրորդ հարկում գտնվում էր պաշտպանության այն դիրքը, որտեղ Ասլանյան Լևոնի ղեկավարությամբ հսկում էին մի տասնյակ զինված տղաներ: Երբ դռան բացումը չկատարվեց, ժանդարմաները սկսեցին կոտրելու փորձ կատարել: Տղաները վերևից իրենց զենքերի փողերը լուսամուտներից դուրս կախեցին և միացյալ կրակ բացեցին՝ փողոցում խմբված փոլիսների և ժանդարմաների վրա: Ութ մարդ սպանվեց, իսկ մնացածները վիրավոր ու կենդանի ետ փախան դեպի կառավարության շենքը և պատահած դեպքը պատմեցին Սերվեթ փաշային: Լսելով վերջին լուրը, որ Բաշմահլեում հայերը կրակել են փոլիսների վրա և ութ մարդ են սպանել, Սերվեթ փաշան իսկույն հրաման արձակեց, և թնդանոթները խաչաձև որոտացին հայկական չորս թաղերի վրա: Հազար երեք հարյուր բնակիչներ կանգնեցին աձեղ օրհասի առջև, ռումբերի ու գնդակների տարափի տակ, ձեռք-ձեռքի տված նրանք աշխատում էին մարտնչել ու պատվով մեռնել:

Այդ ժամին ավեր գործող հրանոթների ու բազմաձազար հրացանների որոտմունքների հետ թուրքական թաղերի կողմից ներդաշնակ լսվում էին մուհետիկների անողորմ կանչի ձայները. «Ո՛վ մուսուլմաններ, կառավարության հրամանը բոլորիդ ի գիտություն: Ձեզանից ով որ հանդգնի մի հայ երեխա, աղջիկ, կին կամ տղամարդ վերցնի իր տանը մեջ և նրան հովանավորի, հայտնվելու դեպքում այդպիսին կհամարվի գյավուր, նրա տունն ու տեղը իր գլխի վրա կայրվի»:

Այնպես որ, որևէ տեղից օգնություն ստանալու հույսերը բոլորովին կտրված էին, ռուսական կայսերական բանակները հանգստանում էին Բասենում և Մանազկերտում, իսկ սահմանադրական Թուրքիայի ջարդարարները, գերմանական ներկայացուցիչների ցուցմունքներով գործում էին ազատ ու համարձակ՝ Մուշի դաշտը և նրա քաղաքը առնելով կրակի տակ, կոտորում, արմատախիլ անում բոլոր հայերին՝ մեծից մինչև փոքր: Հավատորիկի սահմանը մոտավորապես ընդգրկում էր երեք հարյուրից երեք հարյուր հիսուն քառ. կիլոմետր տարածություն, որը ամբողջապես կազմված է անառիկ լեռներից, ճյուղավորված լեռնաթևերից, խոր-խոր հովիտներից, քարանձավներից ու ժայռերից, և այդ հյուսվածքը միացված է Սասնո լեռնաշխարհի հետ՝ Մուշից մինչև Դիարբեքիր, Բիթլիսից մինչև Գենջ և ավելի հեռուները: Այդ տարածության մեծագույն մասը ծածկված էր պուրակներով, խիտ-խիտ թփուտներով, փարթամացած զանազան տեսակի խոտաբույսերով: Հովիտների մեջ թե լանջերի վրա գտնվում էին գյուղին պատկանող մի քանի մզրաներ, որտեղ իրենց հողերին մոտիկ տուն էին շինել և ապրում էին ընտանիքներ: Այնտեղ, որտեղ որ մշակելու հնարավորություն կար, ցանված ու հասկած վիճակում էին գտնվում ցորենի, գարու և կորեկի բազմաթիվ արտերը: Սմեն քայլափոխի կային սառնորակ աղբյուրներ, բյուրեղանման կարկաչող վտակներ ու առվակներ, կանաչ բուսականություն, ճոխ ծաղիկների անուշ բուրմունք: Բնությունը գեղեցիկ էր, օդը մաքուր, և այդ հարմարությունը հնարավորություն էր տվել, որ հավատորիկցիները պարապեն խաշնարածությամբ, ունենային մեծ քանակությամբ ոչխար ու տավար:

Զգալով վտանգի մոտալուտ լինելը, դեռ մի ամիս առաջ տնտեսությունները իրենց ունեցած գույքի արժեքավոր մասը, զարդ ու զարդեղենները գաղտնի կերպով քաշել, թաղել էին հողի տակ, այն հույսով, որ գուցե իրենք մի օր կազատվեն և այդ բոլորը նորից կվայելեն:

Հուլիսի առաջին օրը գյուղում մնացել էին միայն մի քանի անզոր ծերունիներ, երկու-երեք հոգի կույր կանայք, շներ և կատուներ ու երկու հազարի չափ կավե փեթակներից անձրևի կաթիլների պես դուրս թռչող ու ներս մտնող միլիոնավոր մեղուներ, որոնք լույսի արագությամբ ճեղքում էի օդը, սարից-ձորից մեղր էին փոխադրում, իրենց տարեկան պաշարն էին պատրաստում և չէին հասկանում, թե մոտիկ ապագայում իրենք էլ իրենց տերերի պես բարբարոսաբար հրո ճարակ պետք է դառնան:

Հազար երկու հարյուր հոգի, մեզ հետ շարժելով տասը հազար ոչխար, երկու հազար տավար, բեռնած ամաններ, թաղիքներ ու կարպետներ, քաշվեցինք դեպի հարավ, գյուղից տասներկու-տասներեք կիլոմետր հեռու, Շեխնիստ մազրային մոտիկ Խոռկի հովիտում, որի արևելյան մասում մայր ձորից այն կողմը ձգվում է Կոնկան գյուղի անտառապատ, բաց գագաթներ ունեցող լեռնաշղթան: Բոլորս տեղավորվեցինք սաղարթախիտ պուրակների մեջ, ամենուրեք խարույկները սկսեցին վառվել, մսով լիքը պտուկները քլթքլթում էին, խորովածի շամփուրները շրջվում էին թեժացած կրակների վրա, օրվա դառն հոգսերը մոռացության տալու համար մեկը սրախոսում էր, մեկը՝ ծիծաղում, մեկը՝ ողբում ու արտասվում: Լսվում էին ծծկեր երեխաների լացի ձայներ, գառների մայոց, հորթերի բառաչ, չարագուշակ շների ոռնոց, և այդ ամենը ներդաշնակելով կանանց հառաչանքների, ախ ու վախերի հետ, կեսը՝ քուն, կեսը՝ արթուն, բացվեց հուլիսի երկրորդ օրվա առավոտը: Կար երկու հարյուր հիսուն տղամարդ, բայց մենք պետք է պաշտպանվեինք ութ հատ հասարակ փամփուշտավոր հրացաններով և մոտ հիսուն չախմախլի հրացաններով: Հեռվից եկավ բագրանցի քրդերի մի խումբ՝ ձիերի վրա հեծած: Նրանք բանակցեցին, որ իրենց պետք է ճվեր տրվի և որոշվեց քսանչորս ոսկի հավաքել, տալ նրանց: Վերջում նրանք անտառակի մեջ թաքնված հայերին սկսեցին կրակել, սպանեցին հինգ տղամարդ, մի քսաներկու տարեկան հղի կնոջ առևանգեցին և քշեցին-տարան երեսունհինգ եզ ու կով: Բագրանցի քրդերը միշտ էլ հայերին սպանել ու թալանել են դեռ օրենքի մեջ եղած ժամանակ, իսկ այժմ ինչու՞ պիտի խնայեին, քանի որ հայերը օրենքից դուրս էին հանված, և կառավարությունը նրանց իրավունք էր տվել՝ սպանել բոլոր հայերին:

Մենք արդեն հալածված ժողովուրդ էինք, երկրի իշխանությունը մեզ քշել էր սպանդանոց, իր սուրը դրել էր մեր կոկորդի վրա, ամենուրեք հայերի արյունը հոսում էր: Մեր մահվան վերջին ժամերը մոտեցել էին, ջարդարարների հանդեպ մեր վրեժը պետք է մնար առանց հատուցանելու, որովհետև զենք չունենալու պատճառով մեր ձեռքերը ծալված էին մեր կրծքի վրա, իսկ իրավունքն ու արդարությունը մնացել էին բարբարոսների ձեռքում:

Վտանգից խուսափելու համար թողեցինք Խոռկի հովիտը, ետ վերադարձանք դեպի արևմուտք, գյուղի կողմի վրա բարձրացանք Սինամերիկի վերև, Կապրեդավի կոչված տեղը, հսկող պահակախմբեր դասավորեցինք: Ժողովուրդն ու անասունները տեղավորվեցին սաղարթախիտ փոքրիկ դուրանի մեջտեղում:

Կորյունը մի խումբ զինվորների հետ գտնվում էր Կուրտըկի բարձունքներում, պահում էր Մուշի և Սասունի մեջտեղը ընկած սահմանը: Նա հետվից նայում էր այրվող քաղաքին, լսում թնդանոթների ու հրացանների ձայները, սիրտը կսկծում էր և Սեմալից զինված ուժ էր պահանջում, որ գիշերով հարձակվեր քաղաքի վրա, թուրքերին խուճապի մատներ, հայերի համար ազատվելու ճանապարհ բացեր: Սասունցիները համաձայն էին քաղաքի պաշարված հայերին օգնության հասնել: Բայց դա, ըստ Ռուբենի*, վտանգավոր էր: Ռուբենը, Վարդանը և փեթարցի Մանուկը, վերցնելով բավական թվով սասունցիների ու այլ զինվորների, Սեմալից բարձրացան Կուրտըկ՝ Կորյունի** մոտ, որպեսզի այդ

* Ռուբեն – Միհնաս Տեր-Միհնասյան (1882, Ախալքալաք – 1951, Ֆրանսիա), ազգային ազատագրական շարժման գործիչ: 1915թ. եղել է Սասունի ինքնապաշտպանության ղեկավարներից:

** Կորյուն – Գոմսա Իսո (1870, Գոմս գ. – 1915, Սասուն), ազգային ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի: Եղել է Մշո դաշտի Գոմս գյուղի գյուղապետը և Սասունի 1915 թ. ճերոսամարտի ղեկավարներից, զոհվել է մարտում:

գիշեր հարձակվեն թուրքերի վրա: Կուրտըկի մոտ Արջկլորի գագաթին թուրքերի պահակները դիրք էին բռնել: Մանուկն իր տղաներով բարձրացավ այդ գագաթը և մի քանի մարդով այդ Արջկլորի դիրքը գրավեց: Համաձայն պայմանի, երբ Մանուկի և նրա զինվորների կողմից հրացանի ձայներ լսվեին, Կուրտըկից անմիջապես զինված օգնություն պիտի գար, որ արշավանք գործեին քաղաքի վրա: Բայց Մանուկը մինչև լուսաբաց սպասեց, և ոչ մի մարդ օգնության չեկավ: Հուսահատված ետ վերադարձան Կուրտըկի գագաթը, տեսան՝ վեճ և անհամաձայնություն: Մի քանի մարդ պահակ թողեցին այնտեղ, մնացածները նորից իջան Սեմալ: «Վատարվեց Ռուբենի կամքը՝ միայն թե ինքը կենդանի մնա», - ասում էին շարքային զինվորները, բայց իրականությունը այն եղավ, որ վերջում Սասունն էլ չազատվեց:

Ողբերգության վերջին գիշերն էր, թնդանոթները դեռ որոտում էին: Վերին թաղի և Ս. Մարինեի թաղի տները բոցավառվում էին, տասնյակ հազար հայեր չորս կողմերից հավաքվել, խցկվել էին ձորի թաղի տներում ու նկուղներում: Մոտիկ էր վախճանը: Անօրինական ու դաժան մահով մեռնելը մարդկանց համար ծանր էր: Հետևաբար, խելքով հասունացած տղամարդիկ ու երիտասարդությունը՝ խմբված պատերի տակ, մութ անկյուններում, խոսում, կազմակերպվում էին, որպեսզի գաղտնի կերպով, առանց մեկին իմաց տալու, բաժանվեն իրենց սիրելիներից և իրենք քաղաքից դուրս գալու համար փախուստի փորձ կատարեն, ով՝ մեռավ, ով՝ ազատվեց: Քառն-երեսուն հոգիով, տարբեր ուղղություն վերցնելով, փախուստի ճամփան բռնեցին: Լավագույն միջոցը քաղաքի միջով անցնող ջրի հոսանքի հետ գնալն էր: Շուրջ քառասուն երիտասարդներ լողացին, դուրս եկան Տեր-Գևանք գյուղի ետևում, ժայռերի մեջ թաքնվեցին: Բայց նրանց հաջորդող խումբը՝ յոթանասուն հոգի, նույնպես ջուրը մտան, բայց թուրքերը նկատեցին և բոլորին գնդակահարեցին:

Հուլիսի 6-ի առավոտը զորքը աջից, ձախից շարժվեց, մտավ ձորի թաղը, տներից դուրս թափեց տասը հազար կանանց, երեխաների, ծերերի ու երիտասարդների, ինչքան որ տղամարդ կար, բոլորին տեղում գընդակահարեցին, իսկ մնացածներին ժանդարման քաղաքից դուրս հանեց, տարավ մոտակա գյուղերը, սովորական կարգով լցրեցին գոմերի մեջ ու այրեցին:

Հայերի թողած հարստությունը թալանի տրվեց: Պետությունն իր բաժինը ամբարեց Ս. Մարինե, Ս. Գևորգ և Շեկ Ավետարան եկեղեցիներում, իսկ մնացածը՝ հետագա շաբաթների ընթացքում, գիշեր ու ցերեկ անընդհատ իրենց տներն էին տեղափոխում թե՛ քաղաքի թուրքերը, թե՛ քրդական աշիրաթները: Մուշի անզեն ու անզոր հայերը յոթ օր ներոսաբար կովեցին, պաշտպանվեցին, բայց Թալեաթի և Էնվերի բարբարոս սուրը նրանց էլ գլխատեց, նրանց շեմ ու հարուստ օջախները գետնին հավասար դարձրեց: Բացառությամբ հինգվեց հոգի հացթուխ վարպետների, որոնց զորքին հաց թխելու համար առանց ընտանիքների փակել, պահել էին փոերի ներսում, դաշտում ու քաղաքում այլևս ոտքի վրա կանգնած կենդանի հայ չէր մնացել: Հեռվից երևում էր միայն սոսկումնավոր **ամայի** տարածությունը, որի վրայից քայլում, անցնում էին թալան **փախչ**ցնող քրդերի ավազակային խմբերը:

Հուլիսի 7-ի գիշերը Վահան Փափազյանը* և Ավետիսը, մշեցի ու դաշտեցի քառասուն հոգուց բաղկացած մի խումբ զինվորներով, **Սեմալ**ից եկան **Կապրեդավի**: Հյուրերի ներկայությունը հուսահատ ժողովրդին մեծ ուրախություն պատճառեց, որպես զինված օգնություն, նրանց գալուստը **մեր կող**մից գրկաբաց ընդունելություն գտավ: Նրանք **Սեմալից մինչև** մեզ մոտ հասնելը անցել էին երեսուն հինգ կիլոմետր ճանապարհ, հետևապես շատ հոգնած էին ու սոված: Կերան ու քնեցին: Առավոտյան գնացինք դիրքերը ճշտելու: Իզամ քարի գլուխ կանաչ ճյուղերից մի քանի տաղավարներ հյուսեցինք, Փափազյանն իր **կենտրոնը** հիմնեց այնտեղ: Սկսած Միրի կատարից մինչև ցածի տորոտները, վերևից ներքև և ճյուղավորված բոլոր լեռնաթևերը, Առաքելոց վանքը, դաշտի տարածության մեծ մասը, Գանա և Մառնիկ լեռները պարզ հայելու պես փռված էին մեր առջև: Կարճատև **խորհրդ**ակցությունից հետո կովող ուժերին դասավորելու և ղեկավարելու գործը հանձնվեց Ավետիսին, իսկ ընդհանուր կարգադրությունը՝ Փափազյանին:

Ավետիսը զինված տղաներին բաժանեց տասնյակների, ճշանակեց տասնապետներ: Խմբերը անձայն դիրք բռնեցին այդ լեռան թևի **երկարությ**ամբ: Վանքում եղած միլիսները ամեն օր երեսուն-քառասուն մարդով գալիս էին դեպի մեր **դիրքերը**, հեռվից կրակում էին մեզ վրա: Մենք էլ փոխադարձ կրակում էինք, միևչև մութն ընկներ: Հետո նրանք վերադառնում էին վանք:

Գավառում՝ ժամանակավորապես սրից ու հրից պրծած, փախստական և քրդերի ամենօրյա հալածանքներին ենթարկված հայերի համար ստեղծվեց ինքնապաշտպանության չորս խմբավորում:

ԱՌԱՋԻՆ տեղը Անդոկ սարն էր, ուր գաղթել, կենտրոնացել էին դեռ կոտորածի չմատնված սասունցի հայերը՝ իրենց ընտանիքներով, որոնց թիվը Սլիվանից, Բշերիկից, Սղերդից և զանազան վայրերից փախած ու այնտեղ ապաստան գտած մարդկանց հետ կազմում էր քառասուն հինգից-հիսուն հազար հոգի:

ԵՐԿՐՈՐԴԸ Քանա և Հավատորիկի սարերն էին, որտեղ դաշտի և քաղաքի փախստականների թիվը կազմում էր տասը-տասներկու հազար հոգի:

ԵՐՐՈՐԴԸ Ս. Կարապետի վանքի անտառն էր, որի խիտ թփուտների մեջ պահվում ու պաշտպանվում էին Վարդովի և շրջակա գյուղերից փախած մոտ երկու հազար տարբեր սեռի և հասակի անձինք:

ՉՈՐՐՈՐԴԸ Չխուրի մասում Մեղրագետի ակունքից դեպի հյուսիս-արևելք, մեծ տարածություն բռնող շամբն էր, որի խորքում՝ վայրի խոզերի բնակատեղում, փախել ու ապաստանել էին Վարդենիսի,

* Վահան Փափազյան (Կոմս) (1876, Թավրիզ – 1973, Բեյրութ) – ազգային ազատագրական շարժման գործիչ: 1913–1914 թթ. եղել է Մուշում: Առաջին աշխարհամարտի տարիներին միացել է Ռուբենի ֆիդայիների խմբին: 1918 թ. մեկնել է Թիֆլիս:

Աղբենիսի, Արտոքի, Կարսի և այլ գյուղերից փախած մոտ հազար հինգ հարյուր կանայք ու երեխաներ:

Սլիվանցի քրդախոս Տիգրանին քյուրդ ձևացնելով՝ մի անգամ ուղարկեցինք մինչև ռուսական բանակ, վերադարձավ, բայց հուսալի լուր չբերեց: Երկրորդ անգամ ուղարկեցինք՝ էլ ետ չվերադարձավ: Ամեն րոպե հետադիտակը մեր աչքերին դրած նայում էինք Առաքելոց վանքին, տեսնում՝ զորքը ել ու մուտ է անում: Միլիսները դրսի կողմից քանդում էին հնադարյան եկեղեցու խորանի պատերը և քարերը գլորում դեպի ներքև:

Հուլիսի 15-ին, միլիսների կեսը՝ մոտ երկու հարյուր հոգի, չավուշների գլխավորությամբ մնացին վանքում, մնացած երկու հարյուր հոգին Քամիլ Էֆենդու հետ բարձրացան վերև, սարի ետևում՝ Միրզա աղայի աղբյուրի մոտ վրաններ կանգնեցրին, լեռնաթևի երկարությամբ դիրքեր բռնեցին՝ մինչև Միրին կատարի գագաթը: Այդ տեսնելով՝ մենք էլ մեր դիրքերը տարանք Միրին կատարին մոտ և կանգնեցինք դեմ առ դեմ: Թուրքերը մեկ-մեկ կրակում էին մեր դիրքերի վրա, հետո դադարում էին: Այդ ձևի թույլ կռիվներ գնում էին նաև Անդոկի շուրջ, որին մասնակցում էին բացառապես քյուրդ աշիրաթները:

Չնայած Հավատորիկը բնակիչներից դատարկված էր, բայց գտնվում էր մեր տրամադրության տակ, զորքը և քրդերը դեռ չէին համարձակվել այդ ձորերում մուտք գործել: Գյուղի շրջակայքում գարին հասել էր: Սարերի վրա թափառող ժողովուրդը մատնված էր սովի, պետք էր այդ գարին օգտագործել: Գիշերով մարդիկ խմբերով գաղտնի իջնում էին սարից, գնում արտերը, շտապ գարին հնձում էին, կալսում: Հատիկի մի մասը տանում էին ձորում գտնվող ջրաղացում աղում, լուսաբացին ալյուրը բերում, հասցնում էին սարի գլուխ: Մնացած մասը խարկում, շինում էին փոխինդ և խնայողաբար պահում էին, որպես ավելի սև օրվա պաշար: Բայց տասնյակ հազարավոր մարդկանց կշտացնելը դժվար էր, հետևաբար, նրանք կերակրվում էին մսով՝ դեռ իր սեփականությունը կազմող տավարներից ու ոչխարներից: Ամառվա տաք եղանակները օգնում էին, որ մարդիկ առանց բնակարանի ու անկողնու ապրեն բացօթյա: Դիրքերը գործում էին, կրակոցների ձայները շարունակ լսվում էին, և մենք այդ միճակով դիմացանք ու ապրեցինք մինչև հուլիս ամսի քսանինը: Դաշտի և քաղաքի կոտորածից անցել էր մոտ մեկ ամիս: Ինչպես ասացի, թշնամու ուժերով շրջապատված այդ կետերում ապրում ու պաշտպանվում էր դեռ վաթսունհինգ հազար հայություն:

Հուլիսի 25-ի առավոտ Մուշի դաշտը, որ դարձել էր ամայի և անմարդաբնակ, տնքում էր հարյուր հազարավոր մարդկանց ու անասունների ոտքերի տակ, որոնք Ախլաթի, Բուլանըխի, Խնուսի և այլ կողմերից հեղեղի պես հոսելով շարժվում էին դեպի արևմուտք, դեպի Խոզմոյի սարը:

Մենք նկատեցինք, որ այդ հոսանքը թուրք և քյուրդ գյուղացիներ էին, որոնք հաճախում էին, քանի որ ռուսական բանակը առաջ էր գալիս: Գեներալ Աբացիևը երեսուն հազար զորքով, հայկական կամավորների հետ Խադավինի և Ախլաթի կողմից առաջացել, մտել էր Չխուր, Մուշի դաշտ: Բայց ռուսական բանակը արագությամբ հետհանջեց: Վահան Փափազյանի այն համոզմունքը, թե՝ «վաղը կամ մյուս օրը մենք ու ռուսները իրար կհանդիպենք»՝ հաջողություն չունեցավ: Նա ուշացած, անհույս քայլի դիմեց: Հուլիսի 27-ին իր մոտ կանչեց մի քանի ընկերների, որ գնան հասնեն ռուսական զորքին: Ռուսերեն իմացող Ավետիսը և բուլանըխցի Մարտիրոս վարժապետը ճամփա ընկան: Մարտիրոսը ետ եկավ շուտով: Ճանապարհին քրդերի էին հանդիպել: Ավետիսը քրդերի հետ պայքարել էր ամբողջ մի օր և վերջին գնդակով իրեն խփել: Եվ այդպես չէր հասել ռուսական զորքին:

Օգոստոսի 1-ի առավոտ Անդոկի վրա որոտացին թնդանոթները: Շուրջ տասնհինգ-քսան հազար զորք ու քյուրդ ամեն կողմից եկել էին Անդոկի ստորոտները, կատաղի մարտեր մղելով սկսեցին մագլցել դեպի Անդոկի բարձունքները: Անդոկի արևելյան կողմ՝ Ամբըրների գագաթը կոչվեց Կորյունի դիրք: Հարավային կողմը՝ դեպի Կաբլորի սարը, Մուշեղի, Դավիթի և Տիգրանի դիրք: Արևմտյան կողմը՝ Սուրբ Հակոբա գլուխը՝ Մանուկի դիրք, հյուսիսային կողմը՝ Մերգերի փոսը՝ Զոլոյի և Ղազարի դիրք, իսկ Ռուբենը, Մկրտիչն ու Վարդանը մնացել էին կենտրոնում՝ Սխտոր քար, որպեսզի թիկունքում կարգ պահպանեին և դիրքերում կովողների համար ռազմամթերք, հաց ու ջուր մատակարարեին: Թուրքերը զույգ-զույգ թնդանոթները տեղավորել էին Կապրե-Շերիֆ խան, Գրեքոլ բարձունքների վրա և այդտեղից ռմբակոծում ու խորտակում էին հայերի՝ քարից կառուցված դիրքերը: Նրանց պայթող ռումբերի տակ զոհվում էին կովող ուժերը, կանայք ու երեխաները: Հանդիպելով հայերի համառ դիմադրություններին, կրելով ծանր կորուստներ, թուրքերը շատ դժվարությամբ առաջ էին շարժվում: Նրանց մեծ բանակի, թնդանոթների, գնդացիրների, հրացանների ու անհատնում ռազմական միջոցների դեմ կովում էին մի քանի հարյուր հայեր, այն էլ՝ չորս ամսվա անընդհատ կռիվներ մղելուց հետո, երբ փամփուշտները վերջանում էին և ճարահատ արճճե գնդակները կիսում էին երկու մասի, նոր փամփուշտներ էին լցնում և կիսատկիսատ կրակում: Վերջին հուսահատական րոպեներին Սասունցի անզեն տղամարդիկ ու կանայք քարերով ու փայտերով գրոհում էին թշնամու դիրքերի վրա:

Օգոստոսի 3-ին լուր ստացվեց, որ դիրքից-դիրք անցնելիս Կորյունը սպանվել է: Սպանվել էին նաև Դավիթը և Տիգրանը: Չորս օրվա ահեղ մարտերի ընթացքում կովող զինվորներից և ղեկավարներից շատերը սպանվեցին: Զենքերի կեսը շարքից դուրս եկավ: Խուճապն ու փախուստը անխուսափելի էին:

Օգոստոսի 4-ի երեկոյան կողմ Անդոկի հարավարևմտյան թևից թուրքերը հայերից գրավեցին Ս. Հակոբա դիրքերը, աղմուկ-աղաղակով արշավեցին անզեն կանանց ու երեխաների վրա: Ժողովուրդը լեղապատառ փախչում էր այնպիսի տեղերից, ուր գրեթե մինչև այդ մարդկային ոտք չէր կոխել:

Զորքն ու աշիրաթը այդ գիշեր մնացին Անդոկի վրա, զբաղված երեսուն-քառասուն հազար անտեր ու ավար թողնված ոչխար-տավարի հետ: Նրանք հան-

գըստացան, խորոված կերան, սպասեցին մինչև լույսը բացվեց: Մինչև կեսօր նրանք ինչ որ գտան, թալանեցին ու սպանեցին, իսկ կեսօրից հետո Անդոկի ու Գեբինի ջրերն ընդգրկող՝ Գելիեսան կոչվող խոր ձովտում, երկու ժամվա ընթացքում ջարդարարները սրախողխող ու գնդակահար արեցին մոլորված և այդ ձորի խորքում կուչ եկած քսանհինգ հազար հայերի՝ կանանց և երեխաների, որոնց արյունը խառնվելով Սասուն գետի ջրերի հետ, սողաց դեպի Արևելյան Տիգրիսը, ապա՝ դեպի Պարսից ծոցը...: Այդ երեկո, երբ ամեն մեկը մյուսին կորցրած, աճաբեկված փախչում էր մի կողմի վրա, այդ երեկո Սասունի ռազմական մարմինը կորցրեց իր զինված ուժերին, կորցրեց նաև իր իրավունքները, վերջնականապես իր գոյությունը: Խուճապի, լացի ու արցունքի այդ գիշերը Ռուբեն Տեր-Մինասյանը, առանց իր զինակից ընկերներին ու զինվորներին լուր տալու կամ որևէ կարգադրություն անելու, գաղտնի անհետացավ մի քանի տղաների հետ, փախավ Տալվորիկի անառիկ ժայռերը և Ճոճո քարի մոտ մի շաբաթ քարայրից դուրս չեկավ, մինչև որ խուզարկությունները մեղմացան, և թուրքական զորքերի մեծ մասը Սասունից հեռացավ: Ռուբենը երկու ամիս թաքնվեց այդ լեռներում:

Չորս ամիս ավարառու և մարդասպան քրդական ցեղերի դեմ կռիվներ մղելուց և իր գոյությունը պահպանելուց հետո վերջապես կառավարական թընդանոթները ծնկի բերեցին այդ հերոս ժողովրդին, Անդոկի գլխից ցրիվ տվեցին քառասունհինգ խմբավորված հայերի. մութ գիշերին ժայռերի գլխից ցած գլորեցին դեպի խորախոր անդունդները, ջարդեցին ու ոչնչացրին, որովհետև նրանք խաբված էին, տեր և օգնող չունեին: Սկսած Շատախից մինչև Տալվորիկի վերջին ծայրը, մեկ էլ չվերականգնվելու պայմանով, հայերի բոլոր գյուղերը այրված էին, նույնիսկ հավ պատըսպարելու համար մի փոքր խրճիթ կանգուն չէր մնացել:

Հարյուրապետ Քամիլ Էֆենդին քաղաքից ստացել էր ժանդարմայի լրացուցիչ ուժ, կանչել էր վանքում թողած միլիսներին, հավաքել էր շրջապատում գտնըվող քրդերին, պատրաստ սպասում էր Անդոկի վախճանին: Եվ երբ լուր ստացավ, որ Անդոկի հայերը պարտվել են, երեկոյան կողմ վեց հարյուր ժանդարմներով, միլիսներով ու քրդերով Ծիրին կատարի արևմըտյան և հյուսիսային կողմերից հարձակում գործեց մեր դիրքերի վրա: Մեր կռվողները ունեին երեսուն հրացան, այն էլ՝ խնայողաբար փամփուշտ էին կրակում, կռվում էին վեց հարյուր հրացանի դեմ, որոնց փամփուշտները անհաշիվ էին: Անհավասար կռիվը տևեց երկու ժամ: Առիջեցի Սահակը սպանվեց, մշեցի Արմենակը և Աշոտը վիրավորվեցին, իսկ մնացածները դիմեցին փախուստի: Կռվի տեղից հինգ կիլոմետր ներքև ձորերի և տերևախիտ պուրակների մեջ լցված, աճ ու դողով բռնված, խլրտում էր տասը հազար փախստական ժողովուրդ: Մեծ թվով տղամարդիկ ուզում էին կռվել թշնամու դեմ, բայց ինչպե՞ս, ինչո՞վ: Ժողովրդի հույսը Փափազյանն էր: Հանկարծ սուրհանդակը լուր բերեց Փափազյանից, որ փամփուշտները վերջացել են, դիմադրել այլևս չենք կարող: Ժողովուրդը խուճապի մատնվեց: Հավատորիկցիների մոտ դեռ մեծ թվով ոչխար ու տավար, ամառ ու անկողին կային, այդ բոլորը հավաքել, փախչել՝ հեշտ գործ չէր:

Արշալույսը բացվեց: Լսվեցին համազարկերի ձայներ: Թուրքերը կրակում էին, վազում, իջնում էին դեպի մեր կողմը: Հայ զինվորները գիշերը թողել էին դիրքերը, իջել, մոտեցել էին Իզամ քարին, ուր գտնվում էր Փափազյանը: Նրանք խորհրդակցել, որոշել էին, որ իրենք էլ ժողովրդի հետ խառնված պիտի փախչեն: Տասը հազար ժողովուրդ, տասը հազար ոչխար ու տավար իրար խառնված Դիկ սարալանջից ձյունի հյուսի պես սկսեցինք թավալվել դեպի մեծ ձորը: Ուժեղները թույլերին ոտքի տակ էին տալիս ու անցնում: Ստեղծվել էր մի սոսկալի տեսարան: Մինչև ժողովրդի առաջին մասը ձորից անցավ մյուս կողմը, ետևից թուրքերը արդեն գրավեցին Իզամ քարը և վերևից ներքև սկսեցին գնդակոծել հալածվող ամբոխին:

Քամիլ Էֆենդին գյուղի արևմտյան կողմից, հարյուր հիսուն միլիսների հետ խուժեց, մտավ Հավատորիկ ու սկսեց այրել ժողովարանի շենքը, կից դպրոցը, պատվելու երկհարկանի բնակարանը: Հետո կրակի տվեցին մեր տունը: Նրանք այրեցին վաթսուն-յոթանասուն տուն: Այրեցին նաև մեղվանոցներում շարված մոտ երկու հազար, մեղրով լցված մեղվի փեթակները: Վեց հարյուր մարդով նրանք մեր գյուղը տակնուվրա արեցին, թալանեցին: Մարագի մեջ գտան երեք կույր կին, նրանց էլ սպանեցին: Արևը մայր չմտած, նրանք այրված գյուղը թողեցին, բույնը կորցրած մեղուների ողբերգական ճվագի տակ քաշվեցին-գնացին Առաքելոց վանքը: Ժողովուրդը Հավատորիկի լեռներից անցավ Քանա սարերի վրա: Հոգնած ու սոված բազմությունը ցրիվ եկավ անտառների մեջ: Թուրքական զորքերը նորից գնացել, հասել էին Մանազկերտ՝ մինչև Ալաշկերտի հովիտը: Երբ թշնամին քսան հազար զորք ու խուժանով կործանման էր ենթարկել Անդոկը և օրական մի քանի հազար հայեր էին մորթվում, այլևս ոչ ոք չէր կարող օգնել: Փափազյանը հայտարարեց. «Ամեն մարդ թող իր գլխի ճարը տեսնի»: Նա իր խմբով բաժանվեց ժողովրդից ու գնաց դեպի Բուրթել:

Խչուրցի (խաչը ուրացող) Ավդուլան լուր բերեց, թե Հաջի Մուսաբեկ և ուրիշներ հարձակում պիտի գործեն Քանա սարի վրա և մնացած հայերին պիտի կոտորեն: Հավատորիկցիները խչուրցի քրդերի հետ խորհրդակցելու գնացին անտառում: Այդ պահին երեք հարյուր ջարդարար միլիսներ և նրանց խառնված քրդեր հայտնվեցին, բայց խչուրցի Ավդուլան նրանց ճամփու դրեց: Քյուրդ լամուկները թակարդ էին սարքել և Հավատորիկի հայերին խաբելով, տարել, մտցրել Շուժընգի ձորը, որպես ապահով վայր, այնինչ Քազիմ բեյը հենց այնտեղ էր գալու: Իսկ Դամփելի և Փիրզինի բոլոր քրդերը հավաքվել էին Շուժնգի ձորի մոտ, սպասում էին հարուստ ավարի: Նրանք հայերի ձեռքից վերցրին ութ հազար ոչխար ու տավար, ասացին. «Թաքնվեք այս ձորում, մենք հետվից կհսկենք մինչև որ զորքը այստեղից կհեռանա»:

Փախստական դառնալու օրվանից հավատորիկցիները քառասուն օր ապրեցին լեռների վրա: Ընդրանք հիմնովին թալանվեցին, զրկվեցին բոլոր տեսա-

կի բարիքներից, դավաճան խչուրցիի խորհրդով քաշվեցին Շուժնգի ձորը, մտան թաքստոցներ, այդ ձևով ուզում էին իրենց կյանքը փրկել: Իսկ ստորաքարշ քըրդերը իրենց սև ծրագիրը իրականացնելուց հետո անմիջապես Քազիմ բեյին լուր հասցրին, թե Շուժնգի ձորում մեծ թվով թաքնված հայեր կան: Լեռները թնդացին հազարավոր հրացանների որոտմունքից: Կոտորածը սկսվեց: Դիակներ թափվեցին: Հոսեց մարդկանց ու անմեղ մանուկների առատ արյունը: Ուժերիցս վեր եմ համարում մանրամասն նկարագրել, թե ինչպիսի ճիչ ու վայնասուն էր համակել ամբողջ սարուձորը, թե ինչպես քարից-քար, թփից-թուփ փախչում էին լեղապատառ կանայք և երեխաները ու մի վայրկյանում գնդակահար եղած փովում էին գետնի վրա: Անթիվ ու անհամար մարդասպանները շրջապատել, փակել էին փախուստի ճանապարհները, կրակում էին, գոռում, գոչում էին, թաքնված տեղերից դուրս էին փախցնում մոլորված որսերին և անխտիր բոլորին էլ սպանում: Մսագործ դահիճները մորթեցին ու սպանեցին, մինչև որ իջավ երեկոյան փրկարար խավարը, իր սև ու անթափանց քողով ծածկեց մեզ համար թշնամի արևի լուսատու երեսը:

Գիշերը Քազիմ բեյը իր զորամասով վերադարձել էր Սասուն, Քամիլ Էֆենդին իր միլիսների հետ՝ Առաքելոց վանքը, Հաջի Մուսաբեկը՝ իր քրդերով՝ դեպի Չխուր, իսկ թալան փախցնող աշիրաթները՝ իրենց վերցրած մեծ ավարը տեղ հասցնելու և իրար բաժանելու համար՝ դեպի իրենց բնակավայրերը:

Սասունի կողմից մի մարդ եկավ, պատմեց, որ Քազիմ բեյը հազարապետ Մուրադ բեյին հինգ հարյուր ժանդարմաների ու միլիսների հետ թողել է Շենիկ գյուղում, որ տեղական քրդերի օժանդակությամբ ամեն օր խուզարկություններ կատարեն, կենդանի մնացած հայերին ոչնչացնեն, իսկ ինքը իր սիլարա թաբուրիով (պաշտպանության գումարտակ) մեկնել է դեպի Բիթլիս: Սասունից հետացել էր նաև Դիարբեքիրից եկած ղասաբ թաբուրին (մսագործների գումարտակ): Այսպիսով, Մուրադ բեյը հինգ հարյուր զինվորներով նստեց Սասունում՝ այնտեղի փախստական հայերի հետ իր հաշիվը տեսնելու: Հարյուրապետ Քամիլ Էֆենդին երեք հարյուր միլիսներով ու ժանդարմաներով նստեց Առաքելոց վանքից չորս կիլոմետր վերև, Միրզաղայի աղբյուրի մոտ: Հավատորիկի և այլ տեղերից այդ սահմանների վրա թափառող հայերի հետ իր հաշիվը տեսնելու, իսկ Քանա և Մարնիկ անտառներում գտնված հայերին արմատախիլ անելու պարտավորությունը մնացել էր Հաջի Մուսաբեկի վրա:

Որքան ես հասկանում եմ, եթե համեմատության մեջ դնելու լինենք, աշխարհում չի լինելու այնպիսի ծանր ու հոգնեցուցիչ աշխատանք, ինչպիսին է մարդ սպանելը: Մի բարբարոս արհեստ, որը ծնունդ է առել վայրենի ցեղերի ու ցեղապետների կողմից և դարերի ընթացքում զարգանալով, եկել ընդգրկել է քաղաքակրթված աշխարհի մարդկանց, որոնք իրենց անձնական փառքի ու շահի համար պատերազմներ են ստեղծում, միլիոնավոր անմեղ մարդկանց արյունն են թափում:

Թալեաթի ու Էնվերի զինվորները ամիսների ընթացքում Տարոնի դաշտում և Սասունի լեռներում այնքան անգեհ հայ էին սպանել ու այրել, որ արդեն այդ «աշխատանքից» հոգնել էին ու բեզարել և այժմ փոխարինող գերբնական մի ուժ էին փնտրում, որպեսզի իրենք մի կերպ ազատվեին այդ պարտականությունից և վերադառնային իրենց տները:

1915 թ. օգոստոսին կառավարությունը ներում է շնորհում, որը սուտ էր: Հայերին բնաջինջ անող մի այդպիսի դաժան կառավարության կողմից մեզ՝ վերջին թափթփուկներիս համար այլևս իրական աֆու (ներում) և ազատություն չէ՛ր լինելու:

Արդեն 1915 թ. աշունն էր, անկողին, հագուստ չկար, ուտելու բան արտերում չէր մնացել, տիֆը տարածվել էր, աֆուն սուտ էր: Այդ պատրվակով Քամիլը վաթսուն-յոթանասուն միամիտ հայեր էր որսացել:

Նրանց, ում ուղարկել էին Դիարբեքիր բնակվելու, բոլորին տարել, թափել էին Մուրադ գետի մեջ՝ շուրջ երկու հարյուր հիսուն անմեղ զոհեր, պատմել է Միհրան Հովհաննիսյանը, որը տասներկու տարեկան է եղել և մի բարի քրդուհի նրան հանել է գետից ու պահել: Նա հետո դարձել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը ավարտած ինժեներ:

... 1917 թ. փետրվարի 4-ի գիշերը հայ գեներալ Նազարբեկովի* բանակը և խմբապետ Դրոյի** կամավորները տիրացել էին Մուշ քաղաքին:

Ռուսական բանակի մուտքով մի պահ Տարոնի դաշտն ու քաղաքը ազատագրված էին բռնակալության լծից:

Արդեն փետրվարի 3-ին ռուսները գրավել էին Էրզրումը, 4-ին՝ Բիթլիսը, փետրվարի 13-ին մտան Բոնաշեն՝ քրդերի անզոր դիմադրությունը կոտրելով:

Սարերում, ձորերում թափառող հայերը հավաքվեցին Մուշում՝ իրար աչքալուսս տալով: Սակայն Ռուսաստանում բռնկվել էր Հոկտեմբերյան հեղափոխությունը, Կերենսկու ժամանակավոր կառավարությունը տապալվել էր, երկրի ներսում ծայր էին առել քաղաքացիական կռիվները: Նոյեմբեր ամսում զորքերը՝ չհեթարկվելով ոչ մի կարգադրության, լքեցին ամբողջ ճակատը, գունդ առ գունդ, վաշտ առ վաշտ, մեկը մյուսին հաջորդելով, օր ու գիշեր սկսեցին քաշվել, հետևյալ դեպի թիկունք: Երբ մեկը հարց էր տալիս, թե՝ ու՞ր եք գնում, բոլորի բերաններից լսվում էր միևնույն պատասխանը՝ «դամո՛յ, դամո՛յ» (տու՛ն, տու՛ն), և այդպես «դամոյ» ասելով ռուսական զորամասերը Թուրքիայի հողի վրա՝ Տրապիզոնից մինչև Վան, ամեն տեղ թողեցին մեծ քանակությամբ թնդանոթներ, գնդացիրներ, հրացաններ, միլիոնավոր փամփուշտներ, անհաշիվ ալյուրի պարկերի դեզեր, շաքարի, լուղի, պահածոների, ընդեղենի և այլ բազմատեսակ ապրանքների պահեստներ ու անվերադարձ խորացան, գնացին իրենց հետևավոր հայրենիքը...

---

* Նազարբեկով – Թովմաս Նազարբեկով (1855–1928, Թիֆլիս), ռուսական բանակի գեներալ–մայոր:

** Դրո – Դրաստամատ Կանայան (1883, Իգդիր – 1956, Բոստոն), ռազմական և քաղաքական գործիչ: Առաջին աշխարհամարտի ժամանակ եղել է Հայկական երկրորդ կամավորական գնդի հրամանատար:

Լսեցինք, որ Բրեստում կնքված է պայմանագիր և ռուսական բանակներին իրավունք է տրված թողնել բոլոր ռազմաճակատները և վերադառնալ իրենց հայրենիքը:

1918 թվի փետրվարի 27-ի գիշերը հեռագիր ստացվեց, որ Անդրանիկը* Էրզրումը թողել է թուրքերին, որովհետև զինվորները իր հրամաններին չեն ենթարկվել, չեն կռվել, և հայերի զորամասերը ևս հանձնել են դեպի Հասանկալա, դեպի Սարիղամիշ:

Փետրվարի 28-ին նոր համալրված ուժերով թուրքերն ու քրդերը լեռների բարձունքներից գրոհեցին:

Մարտի 1-ին արդեն Խնուսի ճանապարհով հեռանում էին ընտանիքներ, զինված խմբեր, պոլկովնիկ Սամարցովը իր վաշտերի հետ՝ նոր պատրաստված ճանապարհներով՝ ռազմական ու նյութական հարուստ ավարը ամբողջապես թողնելով օսմանցիներին: Խոր ձյան միջով մենք քայլեցինք դեպի արևելք, Դութաղի, Ղլիչգետուկի, Դիադինի, Կորուն-Մոսունի վրայով:

Մարտի 16-ի առավոտ Խուջախ գյուղի վերևն էինք: Մենք կանգնած էինք ռուս-թուրքական հին սահմանի վրա, և առաջին անգամ մեր աչքերի առջև բացվեց Արարատյան դաշտավայրը, նրա աջ կողմում ծերացած Մասիսն էր, իսկ դիմացը՝ Ալագյազը:

Թույլ տվեք կանգնել այս բարձր սարի վրա, վերջին անգամ «Մնա՛ք բարով» ասել որբացած հայրենիքին, նրա սրբավայր տաճարներին, հուշարձաններին, ծաղկաբույր լեռներին, արգավանդ դաշտերին, գետերին ու աղբյուրներին և որպես գաղթական մարդ՝ իմ սակավաթիվ հայրենակիցների հետ հյուրընկալվել ու ապրել դեռ սովի, գաղթի ու արյունահեղության մատնված Արևելյան Հայաստանում:

2 (2).
ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ԱԱՍՈՒՆ, ՇԵՆԻԿ Գ.**)

Մեր գյուղը շատ գեղեցիկ էր: Պտղատու ծառեր շատ ունեինք: Ամենահարթավայրը մեր գյուղն էր: Մյուս գյուղերը ձորի վրա էին: Մեր գյուղի տները միահարկանի քարաշեն էին: Տան մեջ կար թունդիր, մարագ: Ամառվա գիշերներին պառկում էինք կտուրին, հողե տանիք էր: Բուխարիկ ունեինք, էդտեղից լույս կուգար: Վառելու համար անտառից փայտ էինք բերում, իսկ անասնաթորիքը կլցնեինք արտեր, որ պարարտացվի հողը: Գիտություն չկար, կույր երկիր էր: Մեր գոմերի տաքությունից մենք էլ էինք տաքանում: Մեր յորղանդոշակը բրդից էր: Հողը սեփական էր. ինչ կուզես՝ ցանիր, բայց պետությանը հարկ պիտի տայիր: Բերքի յոթը չափը կուտար քեզի, մեկը՝ պետությանը: Ունեինք երկու գետ, մեկը՝ Մուրադ գետն էր. էդ շատ սարսափելի գետ էր, մեկ էլ՝ Մեղրագետը:

Մենք երկու տուն էինք, բոլորս քսաներկու անձ: Մեր ընտանիքը յոթ անձ էինք, իսկ հորեղբորս ընտանիքը՝ տասնհինգ անձ: Բոլորս իրար հետ ապրում էինք հաշտ ու խաղաղ: Մեր էրկիր տուն կար՝ վաթսուն անձ էր: Հարս ու կեսուր իրար հետ հաշտ ապրում էին: Մայրըս հացը թխում էր, ճաշը եփում, ցախը բերում անտառից, ծխախոտը հավաքում: Մեր բերքը հայրս շալակով տանում էր Մշո քաղաք, ծախում էր:

Մեր գյուղում դպրոց կար, աղջիկներ, տղաներ ջոկ-ջոկ էին սովորում չորս դասարաններում: Սովորում էինք հայոց լեզու, թվաբանություն, պատմություն: Թուրքերեն՝ չկար: Ես մի քանի ամիս դպրոց գացի: Հետո հերս ինձ հանեց, ասեց՝ կովերը արածացրու: Դպրոցի մեջ գետինը խսիրի վրա ծալապատիկ կնստեինք, մինչև կեսօր գիրք, սաղմոս կկարդայինք, տետրակ չկար: Գրատախտակի վրա կավիճով էինք գրում: Չարություն անեինք, պատիժ կկանգնեինք մի ոտի վրա կամ ոստոտ փետով ծեծ կքաշեր վարժապետը՝ շաբաթով կկապտեր: Գարեգին երեցը մեզի դաս կուտար: Վանքերի մոտ կար գիշերօթիկ. երբ երեխան որբ էր մնում, տանում էին Ս. Հովհաննեսի վանք կամ Ս. Կարապետի վանք: Մեր եկեղեցին կար խորան, սուրբ գրքեր դրուկ, տիրացուներով կարգ կկատարեին: Ժողովուրդը կանգնած լսում էր: Տոն օրերին գնում էինք եկեղեցի: Աստուծո ստեղծած մարդն ես՝ հավատում ես, «փա՛ռք, տեր Աստված, առողջ, անփորձանք պահես մեզ» ասում էինք: Զմռանը Քրիստոսի ծնունդն էին տոնում, գարնանը՝ Քրիստոսի խաչելությունը, սոխի կճեպով հավկիթ էին կարմրցնում:

Եկեղեցին քանի անգամ շինել էին, թուրքերը վառել էին: Մի փայտաշեն եկեղեցի ունեինք: Էնտեղ հարսանիք, կնունք էին անում: Հարսանիքները շատ ուրախ էին անցնում:

Մեր խմելու ջուրը կժերով բերում էին աղբյուրից: Մի հատ էլ առու կար՝ լողանալու և լվացքի համար:

1914 թ. սկսեցին տղամարդկանց տասնութ տարեկանից զինվորական ծառայության տանել: Դրա համար էլ տղա որ ծնվեր, ծխական տերտերի մոտ գրել էին տալիս՝ աղջիկ, որ բանակ չտանեն:

Արհեստները մեզ մոտ քիչ էին: Ոչխարի բուրդը

* Անդրանիկ Օզանյան (1865, Շապին–Գարահիսար – 1927, Զիկո, ԱՄՆ) – ազգային ազատագրական շարժման գործիչ: Ժողովրդի կողմից արժանացել է «Ջորավար» և «Փաշա» կոչումների:

** Այսուհետև ծննդավայրի «գյուղ» նշումը կհիշատակվի համառոտ՝ գ.:

կմանեին, կիները կգործեին: Բամբակը ճախարակով մանում էին, հետո ջուլհակը գործում էր: Մի դարբին կար, խոփ էր զոդում:

Մեր գյուղում թուրք չկար. կառավարության ներկայացուցիչը կուգար ժանդարմայով իր հախը կառներ, պետության կտաներ: Թուրք-քյուրդ գործ չունեին մեզի հետ: Հողի տերը պետությունն էր:

Մեր շրջապատում շատ քրդական գյուղեր կային: Մինչև տեղահանությունը մենք քրդի լեզուն չգիտեինք: Մեր գյուղում երեք հայտնի ֆեդայիներ կային՝ Զալո, Մանուկ, Ղազար: Նրանք ուխտյալ զինվորներ էին, իրենց ազգի համար զոհվող մարդիկ էին, մոսին հրացան, մուզեր, հեռադիտակ ունեին, հատուկ փորմա ունեին: Որտեղ որ պետք ըլներ՝ կկանչեին ֆեդայիներին: Ժողովուրդը կսիրեր, կհարգեր նրանց: Էդ իրեքն էլ մեզի ազգական էին: Նրանցից մեկը 1907 թ. մատնությամբ սպանվեց: Գյուղացի ժողովուրդը զենք չուներ: Եթե մենք զենք ունենայինք, էդպես հեշտ կպարտվեի՞նք:

Տեղահանությունը եղավ առանց նախօրոք լուրի: Արդեն Մշո դաշտի հայերին կոտորել էին, ու ֆեդայիներ, փախստականներ եկան հուլիս-օգոստոս ամիսներին, լուր տվին: Եկան, մենք էդոնց բաժանեցինք ամեն տունի վրա: Օրինակ՝ Տիգրանակերտից երկու մարդ մեր տան մեջ մնաց: Մշո դաշտից էլ եկածները հատուկենտ մնացին, հետո բոլորը կոտորվան:

Մեր գյուղը մի ժամվա մեջ հավաքվանք: Հայրս, մայրս ընտանիքով գնացին Ամտոք, կովանք, կոտորվանք: Էն օրը որ կոտորվանք, առաջը ջուր էր, հետևը՝ սուր, գնացինք: Մի ջուր կար, բոլորը թափվան ջրի մեջ: Հայրս ինձ շալկեց, ես բռնեցի նրա վզից, ջուրն անցանք, բայց գետն ինչքան ժողովուրդ տարավ՝ էդ երկինքն իմացավ: Ամտոքից ես ու հայրս ողջ մնացինք: Երեք ամիս հետո իմացանք՝ տատս, մայրս ուրիշ գյուղի անտառում են թաքնված, գնացինք գտանք: Տատս մեռավ: Երկու ախպերներս քեռուս հետ կովի ժամանակ սպանվան: Մնացինք ես ու հայրս: Էկավ թուրքական զորքը՝ մոտ վաթսուն հազար: Էկան շրջապատեցին գյուղը: Մերոնք դիմադրեցին: Երկու անգամ թուրքական բանակ լցվավ գյուղը: Երկու անգամ էլ մեր ֆեդայիները և ովքեր որ զենք ունեին, ետ քշեցին: Հավաքվել էին գյուղի կենտրոնը: Երեք օր առաջ մեր ժողովուրդ քաշվել էր գյուղից: Գնացել էր Ամտոք: Երեխաները կանանց հետ, ես էլ հետները գնացի: Հուլիսի սկիզբը գնացինք Ամտոք: Ո՛չ հաց, ո՛չ ջուր, միայն անլի միսն էր, աղ էլ չկար: Մոտ քառասունհինգ օր էնտեղ մնացինք: Կովողները՝ կովան: Թուրքական զորքը էկավ Ամտոք: Էդտեղ էլ կովան: Քառասունհինգ օր վերջը մեր հաց, մեր պաշար լրացավ: Հաց չկար: Մնաց փոխինդը: Թուրքի զորք էկավ լցվավ: Զորեր երեխաների ջանդակներ լցվան: Մայրեր չկարցան փախցնել: Թուրքերն ու քյուրդերը կրակում էին: Մեյ գնդակից տասը մարդ էր ընկնում: Ով փախավ՝ պրծավ: Հարսներին տարան: Գետի ջուր էնքան մարդ տարավ: Վերջում լեռից ժողովրդին թափում էին գետը, որ փամփուշտ չօգտագործեն: Էդ հարձակումը տևեց մեկ օր, բայց սպանությունները տևեցին հինգ-վեց ամիս: Թուրքերը ամտաոների մեջ ման էին գալիս, որտեղ հայ էին տեսնում՝ սպանում էին: Մենք՝ ես ու հերս, մեր գյուղից փախանք, անտառներում սոված, ծարավ, ծառի կլեպ էինք ուտում, զոռ ու շառին յոլա էինք գնում: Նոյեմբեր ամիսն էր, քամին տվել էր ծառի տերևները թափվան, հերս ասաց.

- Հե՛յ ծառ, քո տերևների տակ թաքնվում էինք, էն էլ հիմա չկա:

Մեր գյուղի վերջին հավաքոցը վառել էին: Ցերեկը ելլեիր ջրի գնայիր, թուրքերը տեսնեին՝ կսպանեին: Մինչև գիշեր պիտի ծարավ սպասեինք: Մայր երեխեքին թափեցին ծառերի տակ, քանի լացի ձայն կուգար: Ոչ մի երեխա չպահեցին: Բոլորին թափեցին, որ թշնամին չլսի դրանց ձայն: Տասնյոթ տարեկան եղբայրս էլ սպանվավ: Հորեղբորս տղան էլ սպանվավ:

Դեկտեմբեր ամիս մնացինք քրդի գյուղը: Մշակ էինք: Էնտեղ հերս մահացավ: Մայրս մի գյուղ էր, ես՝ մի ուրիշ գյուղ: Հետո իրար գտանք: Մերս ասաց.

- Խաչի՛կ, գնա էդ մացառների մեջ նստի, ես կգամ:

Մորս հետ եկանք, հասանք Շենիկ գյուղի դեմ: Նստանք: Մթնեց: Գիշեր էր: Ու՞ր էրթանք: Էլանք տեսանք ռուսական բանակ մեր առաջ եկավ: Ռուսական բանակի հետ եկանք Մուշ: Տկլոր ենք, ոտներս բորբիկ, ոտքերիցս արյունը կհոսեր: Մեկ զինվոր հանեց իր շորտվեց ինձ, որ հագնեմ: Մի հաց կար սեղանին, հաց՝ չտվեց: Միայն սուխարի տվեց, ասաց.

- Էս երեխեն էնքա՜ն սոված է մնացել, էնքա՜ն կանաչ է կերել, որ կուշտ ուտի՝ կմեռնի: Ձիչ-քիչ հաց տվեք, որ ուտի:

Մուշ երկու ամիս մնացինք: Հետո ռուսական զորքի հետ եկանք Ալեքսանդրապոլ: Էնտեղ երկու տարի որբանոց մնացի: Մի անգամ մայրս եկավ, տեսա: Էդ ժամանակ ինքը կապրեր Թալինում:

Մեր որբանոցը փոխադրեցին Կարս: Որբանոցի մեջ յոթանասունհինգ հոգի էինք: Ամեն տարիքի երեխեք կային: Ինչ կյանք որ արել եմ, որբանոցի կյանքն է եղել: Լավ հագցնում էին, լավ-մաքուր տեղաշորում քնացնում էին, ճաշարան կար, լողարան կար, դպրոց կար: Սովորեցի: Գալիս էինք, իրիկվան ուտացնում էին, զբաղեցնում էին: Մեր վերակացուհ Շուշիից էր, ութսուն տարեկան մի կին էր, երկու տղա ուներ, մեկը բժիշկ էր, մյուսը՝ օֆիցեր ռուսական բանակում:

Թուրքը նորից եկավ Կարսը գրավեց: Մեզ փոխադրեցին Ջալալօղլի: Մեզ տարան Թիֆլիսի որբանոցը, արդեն 1918 թ. էր: Հետո մորս հետ գնացի Ռուսաստան՝ Կրասնոդարի շրջան: Մայրս ամուսնացավ:

1920 թ. ես ետ եկա Հայաստան՝ ճիշտ էս մեր Աշնակ գյուղը: Արդեն սովետական կարգեր էին: Սա թուրքի գյուղ էր: Թուրքերը փախել էին: Էստեղ երեսուներկու գյուղ թուրքի գյուղ կար: Մենք էկանք, մտանք: Մինչև Աշտարակ թուրքի գյուղեր էին՝ բացի Թալիշից:

Մենք էն հաշվով տեղավորվանք, իբր մեծ տերություններ պիտի լսեն մեր հարցը: Իբր վեց ամսով պիտի մնայինք ու պիտի դառնայինք մեր էրկիր: Մինչև աչքս կբացվի, ես մեր էրկիր կկարոտիմ. էրթալի մեր էրկիր, տեսնալի, հետո՝ աչքս փակեի: Էրկրի կարոտ ուրի՛շ է: Գիշեր-ցերեկ մտքիս մեջ է:

1924-ին ամուսնացա, ինը զավակ ունեցա: Հիմա ես ամենափոքրի հետ եմ ապրում:

1935-55 թվականները շատ խեղճ էինք, կաշխատեինք կոլխոզի մեջ, աշխատանքը շատ քիչ էր, դժվար կապրեինք:

Հետո Հայրենական պատերազմ եղավ: Հինգ տարի մարդկային զոհեր տվինք: 1942-1944 թվերին եղա Ղրիմի ճակատում: Կուվել եմ, վիրավորվել: 1942-ին տղայիս էլ տարան ճակատ: Էն վեց տարի մնաց բանակում: Ապրվանք: Եղավ Հայաստան: Ծիներ երկիր լեռնոտ երկիր էր, սարեր, ձորեր շատ կային: Մենք անասուն կպահեինք: Մեր գյուղը փոքր գյուղ էր: Թուրքական պետությանը հարկ էինք տալիս: Մեր լավ թիքեն թուրքին կուտայինք: Գյուղը դուրսն տեղ էր, աղբյուրներ շատ կային:

Մենք կապրեինք իմ հոր՝ Մանուկի և հորեղբայր Կարոյի ընտանիքի հետ: Բոլորս իրար հետ քսան-քսանհինգ հոգի էինք:

Տալվորիկ գյուղը երեսուն գյուղերից մեկն էր, որոնք բոլորն էլ հայկական էին: Ամեն գյուղ դպրոց չուներ: Ես դպրոց չեմ գնացել. անասուն, գառ էի պահում: Ամեն մի գյուղ իր եկեղեցին ուներ: Ուխտի կուգային մեր գյուղը: Ջատկին հավկիթ կներկեինք, ձու կկռվեցնեինք կանաչ-կարմիր գույներով: Վարդավառ, Տրնդեզ կըննեինք: Արտերու մեջ կրակ կըննեինք: Մեր կողմերից Հալեպ կերթային ուխտի: Գյուղի քյոխվեն Ապրեն էր: Ան ֆեդայիներուն հետ ժողով կըներ: Թուրքերը մեր տղերքին կտաներին թուրքի բանակ, անոնց կկոտորեին:

1915 թ. հայերը թուրքի հետ կռվան, ֆեդայիները եկան կռվան: Թուրքական զորքը եկավ մեզ կոտորեց: Մենք փախանք սարը, անտառները: Մերոնց բոլորին բռնեցին, նորոգեցինք: Հիմա հացը կա, տունը կա, աշխատանքը կա, լավ հագնված ենք, ալյուրը կա, մաքրություն կա, բժշկությունը կա, հարմարությունը կա: Մեր անցած օրերի համեմատությամբ լավ ենք ապրում, փառք Աստծո:

Թուրքը մեզ կոտորեց, բայց իր հարցը լուծեց: Մենք կոտորվանք: Եթե ուժ ունես՝ հողի հարցը կլուծվի, թղթով, գրչով էրկիր հետ չեն տա:

3 (3).
ՀԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՍԱՍՈՒՆ, ՏԱԼՎՈՐԻԿ)

Մեր երկիր լեռնոտ երկիր էր, սարեր, ձորեր շատ կային: Մենք անասուն կպահեինք: Մեր գյուղը փոքր գյուղ էր: Թուրքական պետությանը հարկ էինք տալիս: Մեր լավ թիքեն թուրքին կուտայինք: Գյուղը դուրսն տեղ էր, աղբյուրներ շատ կային:

Մենք կապրեինք իմ հոր՝ Մանուկի և հորեղբայր Կարոյի ընտանիքի հետ: Բոլորս իրար հետ քսան-քսանհինգ հոգի էինք:

Տալվորիկ գյուղը երեսուն գյուղերից մեկն էր, որոնք բոլորն էլ հայկական էին: Ամեն գյուղ դպրոց չուներ: Ես դպրոց չեմ գնացել. անասուն, գառ էի պահում: Ամեն մի գյուղ իր եկեղեցին ուներ: Ուխտի կուգային մեր գյուղը: Ջատկին հավկիթ կներկեինք, ձու կկռվեցնեինք կանաչ-կարմիր գույներով: Վարդավառ, Տրնդեզ կըննեինք: Արտերու մեջ կրակ կըննեինք: Մեր կողմերից Հալեպ կերթային ուխտի: Գյուղի քյոխվեն Ապրեն էր: Ան ֆեդայիներուն հետ ժողով կըներ: Թուրքերը մեր տղերքին կտաներին թուրքի բանակ, անոնց կկոտորեին:

1915 թ. հայերը թուրքի հետ կռվան, ֆեդայիները եկան կռվան: Թուրքական զորքը եկավ մեզ կոտորեց: Մենք փախանք սարը, անտառները: Մերոնց բոլորին թուրքերը սպանեցին: Մենակ ես փրկվա մեր ընտանիքից: Բոլորին իմ աչքի առաջ սպանեցին: Մենք փախանք, թուրքերի խարաբա մի գյուղում մնացինք: Մի թուրքի մոտ ես գառ էի պահում, ցախ էի կտրում, բերում, տալիս իմ տիրոջը:

Մեկ էլ իմացանք, որ հայ կամավորներ են եկել:

1917 թ. Կարմիր խաչի մարդիկ եկան, գտան, տարան մեզի: Բերին Մուշ, հետո՝ Խնուս Խոզլու գյուղ: Մեր գյուղից երկու հոգի միայն ազատվանք: Մեզ պահեցին Էնտեղի հայերը: Խնուսցիների հետ ճամփա ելանք՝ գաղթի ճամփան: Ամիսներ տևեց, մինչև հասանք Նախիջևան, հետո Խոյ, հետո եկանք Քյավառա կողմ, հետո՝ Դարալագյազ, վերջը՝ հասանք Աշնակ գյուղ: Էդ ժամանակ արդեն թուրքերին քշեցին: Արդեն Սովետը եկավ:

1928 թ. ամուսնացա: Ութ զավակ ունեցա՝ Մուշեղ, Սիրուշ, Աստղիկ, Անահիտ, Հայկուշ, Պետրոս, Տիգրան, Լուսիա: Հետո պատերազմ գնացի: Հունգարիա հասա: Պատերազմը վերջացավ, զորացրվա:

Տալվորիկի զավակն եմ քաջ,
Չեմ խոնարհվի թուրքի առաջ:

4 (4).
ԱՌԱՔԵԼ ԿԱՐԱՊԵՏԻ ԴԱՎԹՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1904 Թ., ՍԱՍՈՒՆ, ԱՐԻՎԴԵՄ Գ.)

Մեր գյուղը Սասունի Արիվդեմ գյուղն էր, որը կնշանակեր արևի դիմաց: Մեր գյուղի մեջ տասներկու տուն էր՝ հայ, քյուրդ և արաբ: Մերոնք հողագործ էին և անասուն կպահեին: Ծորեն չկար, կիլկիլ, կորեկ կցանեին: Էն էլ հազիվ մեզ կհերիքեր: Ճուկա չկար: Առուտուր չկար: Տները երկու հարկանի էին: Ներքին հարկում անասուններն էին մնում, վերևը՝ մենք: Մեր տան շուրջը ընկույզի, փշատի, ճուռի, թուզի ծառեր կային: Ամեն ինչ տնից էր, միայն հագնելիքը դուրսեն կառնեինք: Պտուղ կծախեինք, դրամը հագուստի կուտայինք:

Էն ժամանակ ես տասնմեկ տարեկան էի: Կհիշեմ, հայերը հայերեն կխոսեին, արաբերեն ալ գիտեին, քանի որ մեր շրջապատը արաբ էր: Չորս տուն հայ էր, ութը տուն՝ արաբ: Արաբները շատ հավատացյալ էին, Մուհամմեդին կհավատային: Հայերը եկեղեցի ունեին: Տարին անգամ մը մեր գյուղի վերևը կերթայինք կույս Վարվառա՝ ուխտի. մատաղ կընեինք: Կըսեին՝ կույս Վարվառան կույս աղջիկ է եղել, անոր անունով էր եկեղեցին: Ուրիշ գյուղերեն ալ կուգային: Գյուղին մեջ դըպրոց չկար: Դպրոցը միայն Գոմք գյուղում կար, ան ալ

դրամով էր: Սասունը մեզի մոտ էր, մեկ օրվա ոտքի ճամփա էր: Մեր շուրջը քսան ուրիշ գյուղեր ալ կային: Մեր երկրի ջուրն էր լավ, օդն էր լավ: Սասուն շատ քյուրդ կար:

Մեր տունը մեծ զալ էր: Ներքևը թունդիր կար: Օրական հաց կթխեին: Մենք կիլկիլով հաց կուտեինք: Շաբաթը անգամ մը կլողանայինք: Բժիշկ չկար, բան չկար: Մալարիա կար: Մեր շորեր բրդից էին: Բուրդ կըմանեինք, կգործեինք, կծախեինք: Շալվար կհագնեինք, շապիկը տակն էր, ոտքը՝ չարուխ էր՝ մալի կաշիից կտրտված, ծայրերը, կողքերը կկարվեր: Գլխու վրա գդակ կար: Կիները ամեն գույն կհագնեին: Գլխուն ճերմակ թաշկինակ կկապեին: Կրոնական Ս. Խաչի տոնին խաչը կգցեին ջուրը: Ջատիկին քառասուն օր պաս կըպահեին, հետո հավկիթ կներկեին: Նոր տարուն կուտեին, կխմեին՝ եղածին չափ: Վարդավառին իրարու վրա ջուր կթափեին:

Սահմանադրությունից հետո, 1915 թ. եղավ հայկական կոտորածը: Քսան տարեկանից բարձր զինվոր տարան: Թուրքը հարձակվավ, սկսավ կոտորել: Լավ աղջիկներին, լավ կնիկներին տարան փախցրին: Մեր գյուղը Միապ անունով մի ֆեդայի կար: Էն զենք ուներ, մտավ վանք, սկսավ կռվիլ: Մենք զենք չունեինք:

Սասուն երկու ամիս դիմադրեց: Թուրք զինվորներ եկան պաշարեցին, սկսեցին կոտորել: Օգնություն չկար: Կոտորեցին: Ինչ որ մնաց, մտան քարանձավները: Վերջը մենք եկանք Մուշ: Ով պրծավ՝ գաղթեց: Էդի

1916 թ. դեկտեմբերին էր: Էկանք Մուշի միջով անցանք, գացինք Խնուս: Մենք չորս հոգի էինք՝ մերս, ախպերս, ես ու քուրս: Էնտեղ մի տարի մնացինք: 1918 թ. էկանք Խոնզոլու գյուղ: Էդի հայկական գյուղ էր, հայեր կոտորվել էին, տներ դատարկ էին: Մենք էկանք Արփաչայը անցանք: Կուզեինք ետ էրթալ մեր էրկիր: Ո՞վ կիմանար, որ հեղափոխություն պիտի սկսվեր: Ռսի զորքը ճաճանչեց, որ էթա ռսի երկիր պաշտպանի: Էկանք Իգդիր: Անցանք եկանք Քանաքեռ: Էնտեղ մնացինք քսան օր: Պիտի գնայինք Ծիրանասա, քանի Երևան սով էր ու վտանգավոր: Անդրանիկ փաշան հետ դարձավ: Մենք Էնոր ետևեն գացինք Խոյ, հետո՝ Ղարաբաղ: 1919 թ. Երևան էկավ: Էկավ Առաջնորդարան, իր զորքի զենքեր թափեց, զորքին ազատեց, որ գնան: Լենինը հրաման ստորագրեց, որ մենք պահանջ չունինք թուրքեն: Կարս, Արդահան, Սարիղամիշ, Իգդիր տվեց թուրքին: Ստալինն էլ Ղարաբաղն ու Նախիջևանը տվեց թուրքին, Ախալքալաքն ու Ախալցխան տվեց Վրաստանին, Հայաստանից էլ ամեն օր մի սաստավ ղրկեց Սիբիր: Երբ որ եկանք Աշնակ, մեր հույս կտրեցինք, էլ մեր էրկիր դառնալու հույս չկար, քանի ստորագրել էին, որ մենք հողային պահանջ չունենք թուրքից:

1930 թ. ախպորս որպես դաշնակցական տարին Սիբիր, Իրկուտսկ: Էնտեղ մնաց վեց տարի: 1936-ին էկավ, 1937-ին էլի տարան, իմացանք, որ կոտորել են իրան ու Վարդանին, Արշակին, Ներսոյին և շատ ուրիշների:

5 (5).
ՄՈՒՇԵՂ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՍԱՍՈՒՆԻ ՏԱԼՎՈՐԻԿԻ ՇՐՋ. ՔԱՐԱՎԱՆՔ Գ.)

Մեր ընտանիքը Տալվորիկի Քարավանք գյուղում քառասուներկու շունչից էր բաղկացած, որոնցից ութը աշխատող տղամարդիկ էին, մնացածները՝ հարս, երեխա, ծերեր էին:

Ես, ճիշտ է, ութը տարեկան էի, բայց հայրիկիս հետ միշտ շրջում էի հանդ ու անտառ և բոլորը հիշում եմ այսօրվա պես՝ հողն ու ջուրը, աղբյուրները, ամեն ինչը...

1915 թ. հունիս ամիսն էր, ցանքսը՝ ցորենն ու գարին, հասկակալման շրջանում էին, երբ մեզ տեղահանեցին: Տեղահանման ժամանակ մենք ամբողջ ընտանիքով անցանք Սասնա բերդից եկող գետը, որը կոչվում էր Ջանդուսագյալի, այսինքն՝ Ջանդուսից եկող:

Անցանք ջրի մյուս ափը՝ դեպի արևմուտք, տեղավորվեցինք մի մեծ քարայրի մեջ: Քրդերն արդեն ընկել էին գյուղերը և կոտորում էին հայերին: Մենք էդ քարաժայռից տեսնում էինք: Երկու ժամ չանցած՝ քըրդերը հասան մեր տուն: Հասնելուն պես սալով, ցախ, փետ հավաքեցին, դրին դռան վրա, տունը պաժար տվին: Մեր տունն էլ քարաշեն տուն էր, որը կառուցվել էր երկու հարյուր հիսուն տարի առաջ, իմ մեծ պապի օրոք: Մեր աչքի առաջ մեր պապենական տունը կրակների մեջ այրվեց: Հայրս, որ աճուղի, հսկա, դիմացկուն մարդ էր, երեխայի պես լաց եղավ ու ասաց.

- Լաո՛, մըր վերջին օրեր էկան, էլ մըզի լավ օրեր չհանդիպի, - ինչքան փող որ ունեինք՝ ոսկի թե արծաթ, հայրս բաժանեց իր եղբայրներին և եղբոր տղաներին ու շարունակեց, - լաո՛, գացեք, ձեր գլխու ճար էրեք, կարող է իրար տեսնանք, կարող է իրար չտեսնանք:

Հաջորդ օրը ամեն մեկը իր կնոջն ու երեխեքին առավ ու գնաց հաց ճարելու՝ կյանք որոնելու: Մենք ցիրուցան եղանք իրարից: Մնացինք ես, հայրս ու մայրս, հարսս, քանի որ ախպերս Հալեպումն էր, երկու քույր և հորեղբորս տղան:

Էդպես թաքնվանք անտառներում, քարայրներում, մինչև ուշ աշուն: Հասունացած արտերից ցորեն, գարի, գիլգիլ, ընկույզ, կաղին էինք հավաքում, պաշար լցնում տոպրակների մեջ: Թափառում էինք՝ քանի որ քրդերը խումբ-խումբ հարձակվում էին հայերի վրա, որսում էին նրանց ու սպանում: Դրա համար մենք թաքնվում էինք մաղարաների մեջ:

Մի անգամ մեր հարևան գյուղերից երկու-երեք ընտանիքի հետ մտել էինք մի մաղարայի մեջ, մոտ քառասուն-հիսուն հոգի էինք, օգոստոս ամիսն էր, շոգ օր

էր, երեխեքը, մարդիկ ծարավ կոտորվում էին: Մեր մեջ կային երկու տղա՝ մեկը եղբայրս էր՝ Խաչոն, մյուսը՝ հորեղբորս տղան՝ Տիգրան անունով: Նրանց ուղարկեցինք գետից տիկով ջուր բերելու, որ ժողովրդին խմցընենք: Տղաները ջուրը լցրել էին տկերի մեջ, լցրին եկան: Քրդերի խմբերը, որոնք հետու էին, հետապնդում էին, դիմացի սարալանջից տեսել էին այդ տղաներին: Նրանց հետևելով՝ եկան մեր տեղը գտան մաղարայի մեջ: Բոլորիս հանեցին դուրս, անցկացրին գետը՝ դեպի քրդերի գյուղը տանելու համար: Տարան մի տեղ, որ տեղավորեն ու գիշերը մնանք, արդեն ուշ երեկո էր: Արևը մայր էր մտել: Դեռ տեղ չէինք հասել, քույրս ձեռքին ծծկեր երեխա ուներ, հարսս՝ նույնպես: Քրդերից մի քանիսը արդեն ձգատակ էին դրել նրանց սեփականացնել: Նրանց կրծքերի երկու երեխաներին մայրերի գրկերից առան, գցեցին լճի մեջ: Արդեն մութ էր: Հարսս ու քույրս փախան: Քրդերը չտեսան, թե որտեղով փախան: Մեր խումբը հասավ որոշված տեղը: Քրդերի խմբի ղեկավարը կոչվում էր Թումմո Ամառ, այսինքն՝ Ամառի տղա Թումմո, որը մինչև 1896 թվականը հայ էր եղել, բայց Սասունի կոտորածի ժամանակ քրդացել էր: Նրանք էլ երդվյալ են, շատ դաժան:

Երկու ժամ չանցած՝ Խաչո եղբորս, որ քսան-քսանմեկ տարեկան տղա էր, հանեցին, ուղարկեցին ժողովրդից դուրս: Ասեցին. - Նստի արտի թումբի վրա:

Եղբայրս նստավ: Ութը գնդակով խփեցին: Եղբայրս գլորվավ: Քրդերը նրան հարցրին.

- Խաչո՛, ո՞նց ես:

Խաչոն ըսավ. - Լավ եմ:

Քրդերը ըսին. - Խաչո՛, արի քո վերքերը բուժենք:

Խեղճ եղբայրս չորեքթաթ եկավ դեպի կանչող քրդերը, բայց նրանք նորից չորս գնդակով խփեցին, և նա մահացավ:

Մորս մոտ մի հատ ոսկի կար: Տվեցինք էդ քրդացած Ամառին, և նա մեզ՝ հինգ երեխա, ես ու մերս, ազատեց, ասավ՝ գնացեք:

Ախպորս դիակը մնաց գետնին անթաղ: Եկանք հասանք մեր անտառներում թաքնված տղաներին: Մի որոշ ժամանակ մնացինք թափառելով անտառներում և քարափներում: Ամեն մեկը իրենը վերցրեց ու գնաց: Քույրս իր ամուսնու հետ քոչեց դեպի Բշերիկ, որը աճուռի մեծ դաշտ էր, այնտեղ ապրում էին քրդախոս հայեր, որոնք նույնիսկ տերտեր ունեին:

Հարսս գնացել էր դեպի քրդական գյուղը: Բռնել, տարել, քրդացրել էին, կնությանն վերցրել: Էն էլ էդպես գնաց... Ինձ ու մի քրոջս մայրս տարավ քրդական գյուղ՝ ծանոթ քրդերի մոտ, Սիմոր կոչված գյուղը: Քյուրդ քիրվաները մեզի վերցրին ու թաքցրեցին: Էդպես ձմեռը վրա հասավ: Մնացել են հորեղբորս տղան, հայրս ու մայրս: Ապրում էին քարայրների մեջ: Էդպես մնացին մինչև փետրվար ամիսը:

Փետրվարին ռուսը թուրքերից գրավեց Մուշ քաղաքը: Սասունից ինչքան մարդ որ գաղտագողի փախել էր, միանում է ռուսական զորքին, գալիս Մուշ քաղաք, որտեղ ռուսներ էին:

Հայկական դաշնակցական ազգային կոմիտեն տարբեր տեղերից եկած հայերին ընդունում էր, նպաստ էր տալիս: Հայերը Մուշում նպաստ էին ստանում:

Ես ու քույրս մնացինք էդ քրդական գյուղում: Հորեղբորս տղան օգոստոս ամսի կեսերին էկավ ինձ ու քրոջս բերելու Մուշ: Քրոջս չտվեցին: Նա տասը տարեկան էր, իրենց տղաների հետ ամուսնացրին: Հորեղբորս տղան ինձ բերեց Մուշ: Դա արդեն օգոստոսի 18-ն էր:

Օգոստոսի 19-ին գնացինք ռուսական զորքի մեջ, հաց, շաքար, տվեցին մեզ: Էդ գիշերը տրիվոգ տվեցին, թե ռուսը նահանջում է: Մենք էլ նրանց հետ գաղթեցինք:

Հայրս մինչև իմ գալը արդեն մահացել էր: Մնացել էինք ես, մերս, հորեղբորս տղան, ախպորս կինը: Էդպես գաղթեցինք Էկանք, Մուրադ գետը անցանք, Չարբուհուր գյուղը հասանք: Էնտեղ մի օր մնացինք հանգստանալու: Հետո քոչեցինք դեպի Խնուս՝ թալանվելով, մահանալով, ողբալով, սովածությունով, տիֆով, քոչվորական ձևով էկանք Ալաշկերտի բերդը հասանք: Հետո՝ Կաղզվան, Կողբ, Ղարաղալի կամուրջով էկանք Արաքս կայարանը, որը կենտրոնական կայարան էր: Էլի ազգային կոմիտեի միջոցով մեզ տեղափոխեցին, ֆուրգոններով, եզի սայլերով հասանք Վերին Թալին: Թե քանի հատ անասուն էին մորթել, սեղան էին դրել, որ մեզ դիմավորեն, էլ հաշիվ չկար: Մեզ կերակրեցին: Մենք երեք հարյուր-չորս հարյուր հոգի էինք: Տեղավորեցին Մաստարա (Վերին Փերթիկան), Սողուկսու, այսինքն՝ Սառնաղբյուր գյուղը: Ժողովրդին բաժանեցին Թալինի շրջանի գյուղերի վրա: Մեզ տարան Թալիբօղլի գյուղը: Հորեղբորս տղան Անդրանիկի զինվոր էր: Ինձ տարան ամերիկյան որբանոց: Մի օրիորդ էր ղեկավարը: Մինչև 1918 թ. մայիսը եղել եմ որբանոցում: Որբանոցի ընկերներս էին Սերոբ Դեմիրճյանը՝ Կարեն Սերոբովիչ Դեմիրճյանի հայրը, Համո Իսրայելյանը, Նիկողոս Դանիելյանը, Մուշեղ Խաչատրյանը և ուրիշներ:

1918 թ. ապրիլին, երբ թուրքը Կարսը վերցրեց, Արևմտյան Հայաստանից գաղթողները՝ տեսնելով թուրքերի վտանգը՝ հավաքվեցին, դեպի Վրաստան քոչեցին: Գնացին հասան Թիֆլիս: Մի շաբաթ էնտեղ մնալուց հետո քոչեցին Կազբեկ սարով դեպի Հյուսիսային Կովկաս: Մեկ ամիս Վլադիկավկազ մնալուց հետո ցրվեցինք Հյուսիսային Կովկասով մեկ, մինչև Կրասնոդարի մարզ, Արմավիր քաղաքը: Մինչև 1922 թ. ապրեցինք էնտեղ՝ մուրացկանությունն անելով, ապրուստի միջոցներ հայթայթելով:

1922 թ. փետրվար ամսին էկանք Թալինի շրջան Շղարշիկ գյուղը: Շղարշիկ է կոչվում գյուղը, քանի որ միշտ մշուշներով է շղարշված: 1922 թվից բնակվել եմ Շղարշիկում: Մինչև 1929 թ. եղել եմ հոտաղ, գառնարած, հովիվ:

1929-32 թթ. եղել եմ հողագործ: 1932-ից ընդունվել եմ կոլխոզ: կոլխոզի կազմակերպիչ էի, ունեինք տասնութ տնտեսություն: Սկզբում աշխատել եմ պահեստապետ, բրիգադավար, ֆերմայի վարիչ, կոլխոզի նախագահ եմ եղել տասնչորս տարի, նաև գյուղատնտես՝ մինչև 1972 թ.: Հետո քոչեցի, գնացի Երևան, տղայիս մոտ: Մեկ ձմեռ մնալուց հետո քաղաքի պայմաններին չհամակերպվեցի, քանի որ ես դաշտ ու դուրս մարդ եկող մարդ եմ, եկա Էս գյուղը՝ Ներքին Սասնաշեն, իմ բարեկամների մոտ: Տուն շինեցի: Ունեմ մի տղա, մի աղջիկ, երեք թոռ, երկու ծոռ: Փա՛ռք Տիրոջը:

6 (6).
ՌԵՀԱՆ ՄԱՆՈՒԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ՏԱՐՈՆ, ՈՒՐԱՑՆ Գ.)

Ես ծնվել եմ Տարոնում: Մեսրոպ Մաշտոցն էլ Տարոնից էր: Մեր գյուղում եկեղեցի կար և վանք կար՝ Ս. Աստվածածին անունով: Շատերը ուխտի էին գալիս Տարոն: Խութը մեր Տարոնին շատ մոտ էր: Հորս մերը խութեցի էր:

1915 թ. ապրիլի 24-ին դեռ արևը չծագած վեր էինք կացել, հայրս հանդ պիտի գնար, մայրս էլ հաց պիտի թխեր: Ես ունեի մի փոքր եղբայր: Մենք էլ տեսանք, որ թուրք ասկյարները եկան՝ հրացանները ուսներին գցած, եկան, խուժեցին մեր տունը, ասացին. «Արդեն կռիվ է, մեր սուլթանը հրամայել է, որ հայերին պիտի քշենք»:

Տասնհինգ-քսան րոպե չանցած՝ մեզ տնից դուրս հանեցին: Մեր չորս կողմերը ասկյարներ էին, որոնք բղավում էին. «Շու՛տ արեք, շու՛տ արեք»: Էսպես մեզ գյուղից դուրս հանեցին: Տեսանք՝ մեր մոտիկ խումբ գյուղի հայերին էլ են տեղահանել: Վանքի էս կողմից մենք էինք բարձրանում, վանքի մյուս կողմից էլ խմբեցիք էին բարձրանում: Մեզ բերին հասցրին Խութ: Արդեն ասի՝ իմ հոր մայրը խութեցի էր, էնտեղ էր ապրում: Խութի մեջ ապրողների կեսը հայ էր, կեսը՝ եզդի: Առաջ մեզ էին տեղահանել, հետո Խութի հայերին էլ տեղահանեցին: Խառնվածք իրար: Ասկյարները մեզ քշեցին ոչխարների հոտի պես: Մեզնից հետո սկսել էին մեր տները թալանել: Էսպես քայլելով, տված, ծարավ, հոգնած, ուժասպառ հասանք Վան՝ Արտամետ: Էնտեղ մի քիչ հանգստացանք: Էնտեղ իմ տատն ու ախպերս մեռան: Հերս տարավ իր ձեռքովը թաղեց:

Վանից դուրս եկանք: Գիշերով էինք գնում, որ ապահով լինենք: Արդեն մութ էր: Մենք քայլում էինք, հասանք թուրքերի բինաներին, դրանց շները սկսեցին հաչալ: Թուրքերը եկան մեզ պաշարեցին, տղամարդկանց սկսեցին խուզարկել, զենքերը հավաքեցին, նրանց մի կողմ տարան՝ սպանեցին: Կանանց ու երեխաներին բերին իրենց մոտ, վրաններ տակ: Բայց նրանք լսել էին, որ ռուսական զորքը գալիս է, եկան մերոնց ասին.

- Ով կուզի՝ տանենք ձեզ տանք ռսին:

Իմ մայրը ասաց.

- Դուք թուրք եք, դուք իմ զավակին սպանեցիք, ես ձեզ մոտ չեմ մնա, կերթամ ռսի մոտ:

Էդ թուրքերը մեզ գցեցին իրենց առաջները, բերին մի ձորի բերան, սկսեցին կրակել: Երբ մամայիս կրակեցին, ես լաց լինելով վրան ընկա, քիթս վիրավորվեց, ձեռքս կոտրվեց՝ կախվեց, ուշքս գնաց: Թուրքերը կարծեցին՝ ես էլ եմ մեռած, թողին ու գնացին: Ես մնացի դիակների վրա: Շուրջս լուռ էր: Ես ցավերի մեջ էի, քիթս տնքում էր, ձեռքս ևս: Աստղերը ելան: Հետո առավոտ եղավ: Արևը էլավ, էլ չգիտեմ ինչքան ժամանակ անցավ: Մեկ էլ իմ հորեղբոր կնոջ ախպերը, որը ինքտասը տարեկան մի տղա էր, եկել, տեսել է, որ ես կենդանի եմ, մորս դիակի վրա եմ ելնում, նստում, քանի որ փոքր էի, չէի հասկանում, որ մայրս արդեն մեռած է: Էդ տղան ինձ առնում է, սկսում ենք քայլել: Մեր շրջապատը ողջ մարդ չկար, միայն դիակներ էին, թուրքերը սպանել, թողել, գնացել էին:

Մենք, երկու երեխա, ձեռք-ձեռքի բռնած գնում էինք, իրիկունը որ վրա էր գալիս, իրար գրկած քնում էինք: Ես վիրավոր եմ՝ քիթս ճեղքված, արյունը լերդացել, քարացել է, ձեռքիս ոսկորը կոտրված կախվել է, բայց մենք քայլում ենք սոված, ծարավ, գոնե մարդկային շունչ ենք ուզում հանդիպել: Մեկ էլ տեսանք՝ մի վրան: Էս տղան եզդիերեն խոսաց, նրանք հասկացան, որ թուրքերը մեզ վնասել են, մեղքացան, տարան իրենց վրանը, մի փոքր ուլ մորթեցին: Ութսուներեք տարի է անցել, բայց դեռ չեմ կարող մոռանալ. էդ ուլի կաշին քերթեցին, քաշեցին ձեռքիս ու քթիս: Էդ երեխուն ղրկեցին ջրի, ձեռքը տվին գյուգյումը, էն գնաց: Ես սկսա լացել, որ տեսա իմ նոր ախպերացուն եկավ, ես հանգստացա:

Եզդիները ասին. «Մնացեք մեզ մոտ մի շաբաթ. էդ վերքերը բուժենք, նոր՝ գնացեք», բայց մենք չմնացինք: Եզդիները մեզ հաց ու պանիրով բոխչա տվին, որ ճամփին ուտենք: Մենք եկանք հասանք ռուսների մոտ: Էնտեղ հորեղբորս կինը տեսավ մեզ, եկավ տարավ: Ջինվորական գաթիլոկը ձեռքս տվեց, ասեց. «Դու վիրավոր ես, գնա՛, ռուսներից ճաշ ուզի»: Գնացի, բերի, կերանք:

Ռուսները ճամփա ելան դեպի Ռուսաստան, մենք էլ դրանց հետ սկսանք քայլել: Իմ մի կողմը հորեղբորս կինն էր, մյուս կողմս՝ էդ տղան: Էն կողմից երկու կին ասեցին հորեղբորս կնկան. «Էս վիրավոր աղջիկը տանես, ի՞նչ անես, բանի պետք չէ»:

Նա լսեց դրանց խոսքը, ինձ տվեց ռուս զինվորներին: Իմ ախպերացուն իմ մոտից լալով հետացավ: Ռուսները ինձ տարան բրեզենտով փակված արաբաների մեջ դրեցին, որտեղ շատ ռուս վիրավոր զինվորներ կային: Դրանց հետ ես եկա Իգդիր:

Իգդիրում լիքը գաղթականներ էին, բոլորը գետնին նստած էին: Ռուս զինվորները եկան անունս, ազգանունս հարցրին, ես չգիտեի իմ անունը: Իմ լուրը տարածվել էր գաղթականների մեջ, որ Մանուկի աղջիկը վիրավոր ողջ է մնացել: Մեկ էլ մի աղջիկ եկավ, ինձ տեսավ, ասաց. «Ես սրան գիտեմ, Մանուկի աղջիկն է»: Իմ անունը գրել տվեց՝ «Ռեհան Մանուկի Մանուկյան»: Ես ընկա մարդու ձեռք: Ինձ բերին Երևան:

Մեր ընտանիքը եղել է շատվոր՝ պապս, հորեղբայրս, նրա կինը, ես, մերս, փոքր ախպերս: Էս բոլորը մեռան թուրքի ձեռքից, միայն ես եմ մնացել կենդանի, էն էլ նապաստակի քթի պես ճեղքված քթով ու կոտրված ձեռքով: Տե՛ս, մատս չկա. կտրված է, համ էլ ամաչում եմ, որ քեզ հետ խոսամ, բայց ինչ արած, էս էլ իմ ճակատագիրն է:

Ինձ բերին, հասցրին Ղարաքիլիսայի որբանո-

ցը: Տարիուկես մնացի որբանոցում, էնտեղ կոշիկ, շոր տվեցին: Հետո մեզ տեղափոխեցին Թիֆլիս, երբ ցարին գահընկեց արին: Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը դարձել էր մանկատուն: Բոլոր որբերին հավաքել էին էնտեղ: Միջանցքներն անգամ լիքն էին անտեր երեխաներով:

1918 թ. մեզ տարան Կարս: Ամերկոմը տեր կանգնեց որբերին, բերեց Կարս:

Երբ Կարսի կռիվն սկսվեց, մենք նստել էինք ճաշի: Թուրքերը խփեցին: Ամերիկացիները կանգնած որբանոցի դռան մոտ, չթողին, որ ներս խուժեն, իրենց դրոշակը բարձրացրին, որ մեզ չվնասեն: Ամերիկացի մեր շեֆը ասել էր թուրքերին. «Միայն հայ որբեր չունեմ, թուրք որբեր էլ ունեմ»:

Թուրքերը Կարսում սկսել էին իրենց ալան-թալանը, որտեղ սիրուն հարս ու աղջիկ կտեսնեին՝ կտանեին: Էդ հարս ու աղջիկներից շատերը հուսահատված եկան մեր Ամերկոմի որբանոցը, ամերիկացիները սրանց ներս առին, ու երեկոյան թեյից հետո ամեն մեկիս գլխին, իբր, մի խնամակալ էր դրված: Էդ հարս ու աղջիկներին ամեն մեկիս ծոցը քնացրին, իբր, մեր խնամակալներն են: Ամեն մեկին սավանը կտրեցին, բուլավկայով ամրացրին վզից, իբր գիշերանոց: Էդպիսով ոչ միայն մեզ ազատեցին, այլև Կարսի էդ հարս ու աղջիկներին: Ես և ուրիշ շատ-շատերը գոհ ու շնորհակալ ենք ամերիկացիներից, քանի որ իրենց ենք պարտական մեր կյանքը: Բացի այդ, ես ամերիկյան որբանոցում ձեռագործ սովորեցի, որով իմ ընտանիքի հետագա կյանքըապահովեցի: Հետո, դպրոցում էլ լավ եմ սովորել: Թուրքը ուզեց ինձ էլ սպանել՝ իմ բոլոր հարազատների հետ, բայց ես ոչ միայն չոչնչացա, այլև իմ կամքի ուժով ապրեցի, վերապրեցի և երեք սերունդ ստեղծեցի:

Հիմա ունեմ ինձ վրա գործ տվող տղաս՝ Ռազմիկ Այվազյանը, որը Հայաստանի վաստակավոր մարզիչ է, Երևանի ճարտարագիտական համալսարանի մարմնակրթության ամբիոնի դոցենտ:

Հիմա երրորդ սերունդն եմ վայելում, ունեմ լավ փեսա՝ նկարիչ Գարեգին Պապոյանը, և շրջապատված եմ իմ հարազատներով:

7 (7).
ՏՈՆԱԿԱՆ ԱԲՐԱՀԱՄԻ ՏՈՆՈՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1893 Թ., ՄՈՒՇ, ԲՈՒԼԱՆԸԽ, ՀԱՄՋԱԼԵԽ Գ.)

Հիշում եմ մանկությանս օրերը, երբ հասակակիցներով հավաքվում էինք և գնում գյուղի անմիջապես շարունակությունը կազմող անտառը, հավաքում ընկույզ, սունկ, տանձ, հատապտուղներ: Բնությունը գեղեցիկ էր, բարիքներով հարուստ: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմը խաթարեց մեր բնականոն կյանքը, և մենք դարձանք բնավեր հավքեր՝ քշվեցինք հետու հետուներ...

Մուրադ գետի հովտում, Մշո դաշտի Բուլանըխ գավառի Համզաշեխ գյուղում էինք ապրում: Հայրս՝ Աբրահամը, և մայրս՝ Մարիամը, ունեցել էին տասնչորս արու զավակներ, նույնքան հարսներ, բազմաթիվ թոռներ ու ծոռներ: Ընտանիքի շուրջ յոթանասուն անդամներ էինք՝ չհաշված հարս գնացած չորս աղջիկներին:

Մարիամը հորս երկրորդ կինն էր: Առաջին կինը ութերորդ զավակի ծննդաբերության ժամանակ մեռել էր: Աբրահամ հայրս ամուսնացել էր իրենից բավական ջահել Մարիամի հետ, որը սիրով ու հոգատարությամբ խնամեց որբացած փոքրիկներին, և իր մեծ հարսների հետ զավակներ ունեցավ: Ես Մարիամի ամենափոքր զավակն էի:

Նոր ընտանիք կազմած մեծ եղբայրներս մեր օջախը շրջապատել էին նորակառույց տներով և ելումուտ էին անում հայրական ընդարձակ բակով: Օգտվում էին ընդհանուր դարձած չորս լուծ եզներից, գոմեշներից, գութանից, արորից և չութից: Մառանը՝ ուտելիքի շտեմարանը, նույնպես ընդհանուր էր: Մեկտեղ էին աշխատում մեծ գերդաստանի անդամները, մեկտեղ ուտում, մեկտեղ ուրախանում, նաև՝ մեկտեղ տխրում...

Հյուրիեթի տարին, այսինքն՝ 1908-ին, աճապարով մի դեպքից ցնցված, հայրս անկողին ընկավ և աչքերը փակեց ընդմիշտ:

Հայրս եղել էր գյուղի հեղինակավոր և սիրված մեծերից: Նա հաշտարարի դեր էր կատարում ծագած վեճերի ժամանակ, և մանավանդ, երբ հայտնվում էին հարկահավաքները կամ օրենքի մարդիկ՝ զենք փընտրելու և կամ զորակոչ հավաքելու, նրանք հյուրընկալվում էին հորս օջախում:

Մայրս՝ Մարիամ Դաշտեցին, մեր օջախի միանձնյա իշխանուհին էր: Նրան համարյա հասակակից մեր եղբայրները սիրով ու հարգանքով լսում ու ճնազանդվում էին:

Եվ ահա, 1908 թվին, հյուրիեթի օրերին, իմ մեծ եղբայր Աղաջանը, որն արդեն ամուսնացած էր և տաճկական զորակոչից խուսափելով՝ միացել էր Անդրանիկին, չգիտեմ ինչպես հայտնվել էր Ռուսաստանում, Ցալթայում և յոթ տարի ապրել էր ընտանիքից հետու:

Չորս տարի հետո, 1912 թվին, ես ևս տաճկական բանակ զորակոչվեցի: Բայց ես զորակոչից փախա, գնացի փնտրելու եղբորս: Քանի որ Մարիամ մայրս արցունքն աչքերին ինձ ասում էր. «Ժամանակները խառն են, զավակս, հայերի համար նոր փոթորիկ է պատրաստվում, հայրդ չկա, որ պաշտպանի ընտանիքի պատիվը, խաղաղություն բերի մեր օջախին: Գտի՛ր եղբայրներդ, վերադարձրու՛ տուն նրանց, ընտանիքի անդամները թող համախմբվեն օջախում»:

Բայց ինչպես պիտի համախմբվեին, երբ նրանցից շատերը Անդրանիկի բանակումն էին:

Խեղճ իմ մայր, այդպես էլ չտեսավ իր զավակներին ու թոռներին: Միայն տարիներ հետո հայկական եկեղեցու միջոցով ես հայտնեցի իմ հարազատներին, որ Կրասնոդարում եմ ապրում: Հայկական եկեղեցու միջոցով գտա նաև իմ ավագ եղբոր երկու որդիներին՝ Մխիթարին՝ Հունաստանում, իսկ Հրանտին՝ Լենինականի որբանոցում:

Հրանտը շատ ծանր օրեր էր տեսել: 1915 թ. գարնանը, թուրքական ասկյարը երբ ներխուժում է Համզաշեխ՝ զենք փնտրելու և զինակոչիկներ հավաքագրելու պատրվակով, թալանում, սպանում, տեղահան է անում բնակչությանը և քշում ամայի դաշտեր: Մայրս չի ուզում հեռանալ իր օջախից և բավական պաշար ու զենք վերցնելով՝ թաքնվում է բակի խորքում եղած հսկա մարագում: Զինվորները կրակ են բացում նրանց վրա: Մայրս չի կրակում, խնայում է երեխաներին: Բայց երբ նրանք մոտենում են դռանը, որ կոտրեն, մայրս կրակում է և թույլ չի տալիս, որ զինվորները մոտենան դռանը: Մի թուրք զինվոր պահակ թողնելով մարագի դռան մոտ՝ թուրք ասկյարները հեռանում են:

Մեր տան կողքին մի լավ թուրք հարևան ունեինք: Նա պահակ դրված թուրք զինվորին կանչում է իր տունը՝ մի կտոր հաց ուտելու: Զինվորը մերժում է: Մեր թուրք հարևանը նրան ուտելիք է բերում և գինի: Շուտով կշտացած ու գինովցած ասկյարը քնում է: Թուրք հարևանը օգտվելով առիթից, գալիս մոտենում է մարագի ետևի դռանը, որը դեպի անտառ էր տանում, խնդրում է մորս հեռանալ գյուղից, քանի որ գաղտնի հրաման կա՝ բոլոր հայերին կոտորել: Մայրս հրաժարվում է, մտածելով, որ իրեն կհետապնդեն և կսպանեն, բայց խնդրում է նրան՝ օգնել ջահելներին, որ փրկվեն:

Եվ ահա, գաղտնի մուտքով դուրս են գալիս քսան-քսաներիոք ջահել հարսներ, հասուն աղջիկներ ու մանուկներ, որոնց հետ է լինում նաև տասներկու տարեկան Հրանտը:

Նրանք երբ մոտենում են Մուրադ գետի կամրջին, բաժանվում են երկու խմբի, որ իրենց չնկատեն: Նրանց մի մասը փորձում է անցնել կամրջով: Քիչ անց կրակոցներ են լսվում, ու թփերի մեջ թաքնված մեր ջահելները տեսնում են, որ թուրք ասկյարները հարձակվեցին մյուս խմբի ջահել աղջիկների վրա և ուզում են փախցնել նրանց: Զինվորներից մեկը ջահել հարսի գրկից խլում է իր մանկիկին և ջուրն է նետում: Մայրը առանց մտածելու նետվում է նրա ետևից: Գազանացած զինվորներից սարսափահար, մեր օջախի հարսներն ու աղջիկները, զգալով թե ինչ է սպասում իրենց, նետվում են Մուրադ գետի ջրերի մեջ: Անհոգի ասկյարները քացիներով հրում ջուրն են գցում կամուրջի վրա մոլորված մնացած, անպաշտպան երեխաներին ու կրակ են բացում նրանց վրա: Ասկյարները տեսնելով, որ բոլորը ոչնչացան, թողնում են ու գնում:

Վրա է հասնում գիշերը:

Մյուս խումբը, որ թաքնված էր թփերի արանքում, կամացուկ դուրս է գալիս և շարունակում է քայլել: Առավոտյան, երբ լուսանում է, նրանք թաքնվում են մի կիսավեր մատուռի մեջ: Բայց ասկյարները գալիս տեսնում են բոլորին քնած: Սկսվում է թոհուբոհը: Էլ չեմ կարող պատմել ջահել հարս ու աղջիկների անպաշտպան վիճակը: Երբ ասկյարները իրենց գործը տեսնում են, բոլորին սպանում են ու հեռանում:

Հրանտը, որ կամրջի իրարանցումից հազիվ էր փախել, հեռվից լսում է կրակոցների ձայները: Մոտենում է կիսավեր մատուռին, տեսնում իր հարազատները՝ կիսամերկ, արյունաշաղախ սպանված: Հրանտը նրանց մեջ նկատում է իր մոր անշնչացած դիակը: Փաթաթվում է նրան, սկսում է լալ: Այնպես էլ ուժասպառ նրա քունը տանում է այնտեղ:

Հաջորդ օրը գաղթականների մի նոր խումբ, լսելով Հրանտի լացի ձայնը, մոտենում է ավերակ մատուռին, գտնում Հրանտին, ուժով նրան բաժանում իր մոր դիակից և իրենց հետ վերցնելով անտեր որբուկին՝ շարունակում է իր ճամփան:

Ոտքով երկար քայլելուց հետո Հրանտը հասնում է Կարս, հետո՝ Ալեքսանդրապոլ և ընկնում որբանոց:

Այդքա՜ն մեծ գերդաստանից սերված, այդքա՜ն հարազատներ ունեցող մանուկը ընկնում է որբանոց:

Ցալթայում ես գտա իմ եղբորը՝ Աղաջանին և նրա հետ ուզեցինք վերադառնալ Մուշ, բայց ճամփաները փակ էին: Մեծ դժվարություններով վերջապես մենք հասանք մեր յայլաները: Մեր թուրք բարի դրացիները մեզ խղճացին, առին, պահեցին ու թաքցրեցին: Նրանցից մենք իմացանք, որ մեր շեն գերդաստանից ազատվել է Աղաջանի կինը՝ Վարդուշը, որը հարևան Շերվանշեխ գյուղում իր հոր տանը հյուր էր եղել:

Երբ եղբորս՝ Աղաջանի կինը վերադարձել է իր հայրական տնից, տեսել է մեր ավերված օջախը, գիշերով, հենց մարագում մի կերպ հողով ծածկել է սպանված հարազատների կիսավառ դիակները, բայց նկատելով, որ ջահել հարսներն ու աղջիկները, ինչպես նաև երեխաները այնտեղ չկան, ինքն էլ հուսահատ, խառնվում է գաղթականների ծվատված խմբին, գիշերով հեռանում է դեպի Կարս:

Երբ ես ու եղբայրս հասանք Կարս, միացանք Անդրանիկի խմբին, բայց մյուս եղբայրներիցս ոչ մեկին չգտանք այլևս: Անդրանիկը Կարսը հանձնելու հրաման էր ստացել և զայրացած զորացրել էր իր բանակը...: Մենք հետո գտանք միայն եղբորս կնոջը՝ Վարդուշին: Ես 1916-ին ամուսնացա Կարսում, տասնվեց տարեկան Սաթենիկի հետ: Նա Կարսում սովորել էր Եղիշե Չարենցի և Կարինե Քոթանջյանի հետ:

Կարսում ես ու եղբայրս իրար չհասկացանք: Ես ուզում էի գնալ դեպի Ալեքսանդրապոլ, փրկել մեր ընտանիքը, իսկ եղբայրս սայլին բարձել էր ունեցվածքը և պատրաստվում էր «Էնգլիա» գնալ: Նա ինձ համոզում էր լսել իրեն՝ քանի որ ինքը ինձանից տասնհինգ տարի մեծ էր և մեր ընտանիքի միակ կրթություն ստացածն էր:

Ես պնդում էի, որ Անգլիա գնալը հեշտ չէ, մանավանդ ինքը չորս ամսական մի զավակ արդեն ուներ, բայց եղբայրս մտադրվել էր հասնել Բաթումի, ծովով

շարունակել ճանապարհը մինչև Անգլիա: Նա ինձ հանձնեց իր կնոջ ու երեխայի խնամքը, սայլը քշեց ու հետացավ...

Խեղճ եղբայրս դժվարությամբ ստեղծած ունեցվածքից չէր կարողանում բաժանվել, բայց՝ հարազատներից բաժանվեց:

Ես, կինս, եղբորս կինը՝ Վարդուշը, մեծ դժվարություններով Կարսից մեկ զինվորական գնացքի վագոնների տանիքին փռված, մեկ՝ վարձված սայլով, մեկ՝ ոտքով հասանք Ալեքսանդրապոլ, ուր գաղթականները հավաքված էին, իսկ տիֆի համաճարակը զոհեր էր խլում: Մենք սարսափահար գնացինք Թիֆլիս: Թիֆլիսը այդ օրերին հայ գաղթականներին չէր ընդունում: Հոգնած, ջարդված, ուժասպառ շարունակելով մեր ճանապարհը՝ վերջապես հասանք Եկատերինոդար, որը հիմա Կրասնոդար է կոչվում: Այնտեղ գաղթականներին տրամադրել էին փայտյա բարաքներ, ուր մեկ ընտանիքը մյուսից առանձնանում էր կախված սավանով միայն:

Երեք տարի հետո գտա Աղաջան եղբորս: Նամակ գրեցի, որ գա մեզ գտնի: Եկավ: Իրար գտանք: Մի քանի տարի էնտեղ մնացինք:

1932 թվին երկու եղբայրներով եկանք Հայաստան և բնակություն հաստատեցինք Երևանում:

1941-ին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը... Նորից տանջանք, նորից տառապանք...

Երբեմն մտքով կթռչիմ դեպի Մուշ...

Երբ մտածում եմ, ինձ թվում է, թե ես կխելագարվեմ, երբ հիշում եմ մեր հայրենի օջախը, մեր հարազատներին, բարձր բարդիներով շրջափակված մեր հսկա բակը, բակի բարդիների վրա ամեն գարնան հետ բուն դնող արագիլներին... Բակի ջրհորը, մարագը, թոնրատունը, բակի շարունակությունը կազմող զովասուն անտառը և յայլաները... անտառի կաղնին, ընկույզը, մոմակալած վայրի մեղրը՝ բեքմեզով, քամած մածունը, Նոր տարվա սեղանի զարդը՝ փշատը, չիր ու չամիչը, մորս արդար ձեռքով հունցած ու թխած կաթնահունց բաղարջը: Ջատիկին կամ իմ ծննդին բաղարջի մեջ մորս պահած բախտի կոճակը...: Հիշում եմ մղկտալով՝ մեկ առ մեկ, անուն առ անուն, հիշում եմ մեր անթաղ մեռելներին, անգերեզման մնացած հարազատներին, անհայտ կորած եղբայրներիս, նրանց կանանց ու որդիներին: Գազանացած ասկյարներից փախչող ու Մուրադ գետի պաղ ջրերը նետված անմեղ քույրերիս, ջահել հարսներին. ո՛րը հիշեմ, ո՛ր մեկին ափսոսամ...

Պատրաստ եմ ուղեցույց-վալադ դառնալ, ոտաբոբիկ գնամ, ծունկի գամ հորս գերեզմանի առաջ, խունկ ծխեմ, մեղքերուս թողություն խնդրեմ: Գտնեմ, սուրբ հողին հանձնեմ հարազատներիս անթաղ ոսկորները, Եփրատ-Մուրադի* հունից հանեմ իրենց պատիվը փրկելու համար ջուրը նետված իմ քույրերի ու զարմուհիների սուրբ մասունքները, աշխարհով մեկ շրջեմ, փնտրեմ ու գտնեմ անհայտ կորած իմ քառասունութ հարազատներին...

8 (8).
ԾՈՂԵՐ ԱԲՐԱՀԱՄԻ ՏՈՆՈՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1901 Թ., ՄՈՒՇ, ՎԱՐԴԵՆԻՍ Գ.)

Պապիս անունն էր Հովհաննես, տատիս անունը՝ Հիշմիշ: Սուլթանի ժամանակ պապիս զոռով կտանին Ստամբուլ: Իմ պապուն կդնին բանտ: Իմ պապ բանտ կմեռնի:

Ես ծնվել եմ 1901 թվին, Մշո Վարդենիս կեղ: Մեր կեղի մեջ ութ հարյուր հայ տուն կար: Մեր կեղի միջով Մեղրագետ կանցներ: Անձրև կիգար, ձկներ ջրից դուրս կելնեին: Խմելու ջուր կժով կբերեինք աղբրից:

Մեր կեղի տների տանիք հողով էր ծածկուկ: Թունդիրը տան մեջտեղն էր: Ամեն օր լավաշ կթխեինք: Տունին դուրսը օջախ կար, ցախ, փետ կվառեինք: Դուրսը պատի տակ դրուկ էր էրկու քար՝ վրեն խաչէրկաթ:

Մեր ապրած տուն մեծ էր: Այգի չունեինք: Մեր տան մեջ ծալքի տեղ կար շինուկ, էդոր վրեն ծալք կըդարսեն, կողինք կելներ կպներ առիք: Կարավաթ չկար: Մութ աշխարհ էր: Օխչար, կով, գոմեշ, մատակ կպահեինք: Ցորեն, ոսպ, կտավատ կցաներինք: Մենք տասներկու գոմեշ, ութ կով, երկու հարյուր օխչար ունեինք: Գութան ունեինք: Հինգ-վեց տուն իրար կմիանային արտեր կվարեին, կցաներին: Ցորեն էնքան շատ կցաներինք, օր տեղ չկար բերքը լցնելու:

Հողը թուրքինն էր: Հողի հարկ կտայինք թուրքին: Ցորեն կցաներ, կհնձեր, կծեծեր, թեփ կիտան քամուն, կպրծներ, թուրք պետությունից մարդ կիգար գեղի ռեսի հետ, մի փետ կբերեր, փետով կնախշեր: Թուրք կչափեր՝ յոթ չափ կիտեր ցորենի տիրուն, մեկ չափ՝ կառներ, կտաներ: Սիսեռ, ոսպ, կաներից հարկ չէր առներ:

Մեր տան մեջ ամեն մարդ իր գործ գիտեր, գործեր բաժանուկ էին: Ցոթ կնկտիք տան մեջ՝ հարս ու տալ հաշտ կապրեինք իրար հետ՝ կղեկավարեր ամենամեծը: Մեր տան հարսեր էին Ոսկի, Մարիամ, Նարե... Իրիկուն էրեխեքով քարկտիկ կխաղայինք:

Իրիկուն, ի առավոտ բոլորը ժամ կերթային: Մեծ կնկտիք, հարսներ, աղջիկներ կհագվեին, կկապվեին, կերթային ժամ: Տոներին պաս կպահեինք: Ամեն օր պատարագ կենեին: Մեր գյուղ երկու տերտեր կար: Երկուսին լե թուրքեր սպանեցին: Մեր մոտ առանց պսակ չէին կարգվի: Հարսը կհագներ լավ կտորից շոր, մեկ էլ ժակեթ կհագներ, գլխու վրա թափա կար՝ արծաթե թաս դրուկ: Դեղին-կանաչ-կարմիր շորեր գցուկ իր էրեսին: Մինչև էրեխա չբերեր էրեսը ծածկուկ էր: Հարսի շոր ղութնի էր, ղադիֆա: Մեր էրկրի շորեր լավ էին:

* Եփրատ գետի թուրքերեն անվանումը:

Աղջիկներին տասներեք-տասնչորս տարեկանից հարս կտանեին: Հասած տարվան օր ըլեր՝ չէին տանի, կըսեին՝ մեծ է, «մնացկուրդ» է: Ինչքան կուզեն էրեխա կբերեն: Աղջկա հետ ջհեզ կդնեն՝ յորղան, դոշակ, բարձ, շալ, չուլկի: Նվեր կիտեն ոսկի մատնիք, վզի ոսկի շղթա: Բարիկեդնդանին դիոլ-զուռնան կխաղան, կուտեն, կխըմեն: Մենք հալվա, գաթա կենենք: Պաս օրերուն քիշի կենենք ձեթով:

Մեր էրկիր շոգ էր: Ձարդախ կար, շոգ օրերին էնտեղ կնստեն, կխորաթեն: Կնիկ ազգ չաշխատեր՝ տան մեջ կաշխատեր: Շոգ օրերին գետը կլողանանք ամեն օր: Ջրհոր կար: Գյուղի պես լե տեղ փորուկ էր, մատկըներ մեջը կլողեն, հետո՝ ջուրը բաց կթողեն դաշտեր:

Մշո քաղաք բժիշկ չկար, հեքիմ կար: Շատ առողջ էինք, լավ կապրեինք, մտածմունք չկար:

Մեր գեղը դպրոց կար: Տասը գյուղի էրեխեք գալիս էին մեր գյուղի դպրոցը: Դպրոց տղաների հըմար էր: Աղջիկներ դպրոց չէին գնա, տանը ձեռագործ կէնեին: Մեր գեղը վարժապետ կար: Գիրք կար: Մեր գեղի ժողովուրդ ավետարան կկարդար, հայոց գիրք կըկարդար:

Մինչև հյուրիեթ հայերուն բանակ չըն տանե: Իմ հորեղբեր թուրքի բանակ գնաց:

Քրդի գեղեն քյուրդ ծանոթ քիրվաներ ունեինք, կիգեին մեր տուն: Քրդերու աման, դգալ, կրուշկա լվացուկ դրուկ էր հացի ամբըրներու տակ: Ըդոնցով իրավունք չկար մենք ուտենք: Իմ հորեղբոր տղան տասը տարեկան կըլլեր կոտորումի ժամանակ: Մեր ծանոթ քյուրդ քիրվան էնոր տարավ փրկեց: Քյուրդ լավ էր թուրքից: Թուրքի մեջ լե լավ ու վատ կա, քյուրդի մեջ լե լավ ու վատ կա, հայու մեջ լե լավ ու վատ կա: Ամեն ազգի մեջ լավ ու վատ կա:

Վարժապետ Մարգար, լուս իջնի վրեն, հեղափոխական էր, ասկյարներու հետ կռվավ, տարան Մուշ քաղաք, կախաղան հանին: Թուրքեր էնոր վիզ կտրին: Հայեր ուր գլուխ օսկով առան, տարան Մշո Ս. Կարապետու վանքի պատի տակ թաղին: Կըսեն ամեն աղոթըրնին ուր գերեզմանին լուս կիջներ: Մարգարի գերեզման հայերու ուխտավայր էր:

Կոտորումեն առաջ թուրքի բանակ տանելու մահանով հայ ջահելներուն հավաքին, տարան, կոտորին:

Իմ հոր՝ Աբրահամին, կար յոթ կրականի. թուրքեր էկան իր զենքով իրան կրակին, պարան գցին վիզ, քաշ տվին, տարան գցին կրակի մեջ, վառին: Իմ մեր՝ Ալթուն, տեսավ, չդիմացավ, միամիտ մեռավ: Իմ ախպեր՝ Հովհաննես, տասը օր իմ մոր ծիծ կերավ: Մնացինք ես ու իմ ախպեր որբ:

1915 թվին Վարդեվրի օրը եղավ կոտորում: Թուրք ասկյարներ Դաղդնու չեչեններ բերին, մեզ կոտորին: Մեր գեղ էկան թալանին, օխչար, գոմշդանք, մալ քշին տարան: Ով խորոտ էր՝ տարան: Իմ հորքորին մե տղա կար, էն գիշեր-ցերեկ իմ մոտ էր, դրան լե տարան: Տղամարդ չմնաց: Հավաքին մեծ ու մանր, տարան լցրին Ավզուտ կեղի գոմերու մեջ, կրակ տվին, վառին: Էդ գոմեր էնքան մեծ էին, իմալ օր հիդա մեր կոլխոզի գոմերն են: Լցրին Մալխասի Մարդոյի գոմերու մեջ, խոտի դեզեր դարսին գոմու շուրջ բոլոր, վրեն նավթ ցանին, տվին կրակին: Իմ հոր տնից վաթսուն ջան վառվավ էդ գոմերու մեջ: Էն օր ես եմ տեսել, լա՛ռ, թող իմ թշնամին չտեսնա: Մենակ ես ու ախպերս ազատվանք: Էն օր ես իմ աչքերով եմ տեսել, լա՛ռ: Առաջուց խորոտ հարս ու աղջիկ տարան թուրքացրին, ինչ լե մատղաշ տղա-էրեխա կար՝ մորերու գրկից պոկեցին տարան, որ դարձուն զաբթիա:

Գոմի մեջ օր ծուխ ու կրակ մտավ, ժողովուրդ սկսավ հազալ ու խեղդվան: Մեր զմանուկ ուրացավ, լա՛ռ, իսկական սոդոմ-գոմոր էր: Վառվող մարդիկ վազվզում, խփվում էին պատերուն, ոտի տակ տրորում գետնին ընկած իրենց մանրերուն: Էն օր ես իմ աչքով եմ տեսել, լա՛ռ, թող սարի գիլանք չտեսնեն: Կըսեն, թուրք մոլլան էդ օր տեսավ՝ չդիմացավ, ինքն ուրան կախեց: Էդ ալալորումի մեջ, մարդկանց մեծ մաս խեղդվավ, մեռավ: Գոմի տանիք փլավ: Փլավ, լցվավ մեռուկներու վրա: Երանի ես ու քորփա ախպերս լե վառվեինք, իմալ օր վաթսուն ջան վառվան, օր չտեսնեինք իդա անհավատ մարդոց անխիղճ ու անաստված օրենք: Գոմերու մեջ վառեցին մեր կեղ՝ Վարդենիսի, Մշախշենի, Աղբենիսի, Ավզուտի, Խվների ու էլի շրջակա գյուղերու սաղ կեղացոց: Էն օր ես եմ տեսել, գիմ դուշման չտեսնա: Մեր մեջ մի շատ տարիքով կին կար: Էնոր ճանչըցողներ կըսեն Փոլո Արշակի զոքանչ: Էդ կին կեղներ հարյուր տարեկան: Ծուխ օր սկսե մտնել գոմու մեջ, էն հավքեց տղա-էրեխեքուն, պառկցուց վըր քիթ ու բերնին, ու իրանց մերերուն պառկցուց էրեխեքու վրեն: Իմ ախպոր լե պառկցուց գետնին: Հանեց զուր գոգնոց լե, թալեց վրեն, ընձիկ լե բրթեց, օր պառկիմ ախպորս վրեն՝ չթողնիմ օր էլնի, ինչքան լացի-չլացի՝ չթողնիմ օր էլնի: Աստված զուր հոգին լուսավորի, լուսի փայ էղնի ընդրա հոգին: Էդ կնիկ ըսավ. «Լա՛ռ, լալով բան դուրս չի գա, պտի ընենց անենք, օր ամեն օջախեն մի տղա պրծնի, դուրս գա կրակից, օր ըդրանց ծուխ չմարի, օր աշխարհին պատմեն անաստված ու անխիղճ թուրքի արածներ: Ժողովո՛րդ, ձեր հույս մի՛ կըտրեք, ձգի մի՛ կորցնեք, մնացե՛ք ձեր հավատին: Նայեր մարդու Աստված մեծ է, բալքի մի դուռ կբանա»: Ես իմ ջանդրկով ծածկի իմ ախպորս: Գոմի կեղտի մեջ, քիթ ու բերնին ընկած խեղճի շունչը կկտրեր, էն կուզեր դուրս գալ: Էնքան լաց-լաց, ուշքը գնաց, խաղաղվեց: Գոմի գերաններ օր վառան, տանիք փլավ, էդդին բացվավ, բոց ու ծուխ էդ ծակից դուրս էլավ, մզի օդ էկավ: Հմա օր օդ առանք, ես ու իմ հորեղբոր աղջիկ՝ Արեգ, վերցրինք իմ ուշաթափուկ ախպոր ոտ ու ձեռից թալինք տանից: Ես ու Արեգ լե վառված գերաններու, ջանդրգներու վրայով էդ էդդկից մզի թալինք դուրս: Օր էլանք տանից, տեսանք թուրք զինվորներ շուրջպար բռնած կպարեն, կուրախանան: Մինչև էսօր իմ անկըջներու մեջ է ընոնց երգի ձեն. «Ցորի յանդըմ, յորի» ասում ու թրեր իրար զարկելով կպարեին: Էդ պար, լա՛ռ, հայ տան մեջ պտի չպարվի. էդի անխիղճ, անաստված, վայրենի գազաններու խաղ է, լա՛ռ: Էդ պարով ընկած ընոնք մզի չտեսան: Ես ախպորս առա շալակս ու փախա: Փախա, մտա մոտիկ ղամիշներու մեջ: Էդ ղամիշ-

խա: Փախա, մտա մոտիկ ղամիշներու մեջ: Էդ ղամիշներուն շամբ կըսեն: Մութն օր ընկավ, առա ախպերս ու փախա, թե ինչքան ժամանակ փախա կամ ուր փախա՝ չգիտեմ, մեկ էլ տեսա, որ դպա մեր յանը մարդիկ կուգան: Ախպորս առա ու թաքնվա բլերու տակ: Մեկ էլ լսեցի էդ մարդիկ հայերեն կխոսան: Վազեցի, միացա ընոնց խմբին: Էդ խումբ Անդրանիկի խումբն էր: Ես մեռնե՜մ էնոր ոտերու հողու փոշուն: Մենք գացինք, ու՛ր գացինք՝ թուրք բռնեց մեր առեջ: Անդրանիկի հետ գացինք Պարսկաստան, Խոյի ճամփեն՝ թուրք բռնեց մեր առեջ, փախանք, գացինք Նախջըվան, Ղարաբաղ, Ղափան, Գորիս, Սիսիան, Սևան...: Է՛, լաո՛, ու՛ր ասես օր չենք փախել ու տանջվել...: Գորիսի յայլաներուց լե էկանք հիդա Թալին: Էն օր ես եմ տեսե, լաո՛, թող իմ դուշման չտեսնի:

Սիսիանի՞, թե՞ Գորիսի մի գյուղամեջ, էդ գյուղի անուն Աղուդի-Վաղուդի էր, գաղթականությունը արտերուց հասկ էր հավքել, ամեկ՝ հինգ-վեց կիլոյի չափ ցորեն սարքել: Ութ-տասը մանր էրեխեքով գացել էին ձորը ջրաղաց՝ էդ ցորեններ աղալու: Էդ քոփեք գացին ու չեկան: Էլան տղամարդիկ գացին, օր ի՜նչ տեսնան: Իմ աչքեր քոռներ, չտեսնեի: Էդ ադրբեջան-թուրքեր էրեխեքուն լցրած ջրաղացի բուխարիկի մեջ, կրակ տըված, վառած: Լաո՛, էստեղի թուրքեր ոչ մի բանով չեն տարբերվի էն թուրքերուց, թե կուզիս ճիշտն իմանաս, սրանք ավելի քաֆուր ու զոլում են, քանց մեր էրգրի թուրքեր:

Էկան Անդրանիկ փաշին ասին, օր մատղշներուն լցրած են բուխերիկի մեջ, վառած են: Անդրանիկ փաշան զուր բուխարի-փափախ հանեց, չոքավ գետին ու երդվավ՝ անպայման զուր վրեժ առնի ու էդպես լե էնեց: Էդ գյուղի թուրքերու հախից եկավ: Ես մեռնիմ Անդրանիկի ոտքի հողերուն...

1922 թվին էկանք էստեղ Թալինի շրջան Մեհրիբան, մկա՝ Կաթնաղբյուր գյուղ: Էս Կաթնաղբյուր գյուղ հայի գյուղ է էղել, թուրքեր էկել, քանդել են մեր եկեղեցիներ. շոշ (խճուղի) օր շինին, խաչքարեր էլան հողի տկից: Պսակվա սասունցի Արփի գյուղացի Գրիգոր Տոնոյանի հետ: Իմ ամուսին մեր գյուղի գյուղսովետի առաջին նախագահ էղավ: Ուսում չուներ, համա շատ խելոք էր: Էն էլ իմ բախտից 1955 թվին մեռավ: Ինը էրեխա եմ պահել: Իմ էրեխեքի անուններ՝ Աղավնի, Վարդուշ, Գյուլնազ, Մկրտիչ, Սարգիս, Վաչագան, Հրեղեն, Անահիտ, Շուշիկ: Երեսունվեց թոռ ու ծոռներ ունիմ: Իմ էրեխեք լավ են. էդքան պահեցի՝ ո՛չ մեկը խուժան չեղավ:

Իմ ախպեր Կարսա ամերիկյան որբանոց ուսում առավ, էղավ լավ, կրթված ուսուցիչ: Էրնեկ մանկատուն տված չեղնեի. թող մնար իմ կողքին, դառնար չոբան, կարգվեր, էրեխեք ունենար, լցներ թուրքի պակասացրածը: Թուրքի սրից ու կրակից փախցրի մատղաշ ախպորս, կարծեցի, թե՝ էլ ուրիշ հուր ու սուր չկա: Ասի՝ հիդա Հայաստան է, էլ թուրք ու կրակ չկա: Ասի՝ թող կարդա, գրագետ մարդ դառնա, օր կարանա աշխարքին պատմի մեր գլխով էկած-անցածը: Ի՞նչ իմանայի, լաո՛, օր հլա 37-ի աքսորը կար տեսնալու:

Իմ ախպեր՝ Հովհաննես Աբրահամյան, ծնվել էր Մուշ 1912 թիվ*: Իմ ախպեր որբանոցեն էկավ, գնաց Ռուսաստան՝ Կրասնոդար, հետո էկավ Մեղրի, Ապարանի դպրոցների տեսուչ, Թալինի, Ազիզբեկովի Գընդեվազ գյուղի դպրոցի տնօրեն էղավ: 37 թվին մեղադրվեց որպես դաշնակցական: 37 թիվ մթերումի տարի էր: Տարան, շա՛տ տարան, տարան իմ մինուճար ախպոր լե: Իմ ախպեր կապին Զարենցի ու Աղասի Խանջյանի հետ ու տարան, տարան ու գլուխը կերան: Գազանի բերնից փախցրի, ազատեցի, բերի, գցի անհավատ բորենու բերան: Անաստված ու անհավատ բորենին տարավ իմ մինուճար ախպոր, տարավ ու կերավ: Գիշեր, ցերեկ՝ կլամ: Պիտի լամ մինչև գերեզման: Կուզիմ իմ գերեզմանի վրա իմ ախպոր անուն լե գրին: Մկա լե իդա լեն ու բոլ աշխարքի մեջ մե՜ն-մենա՛կ եմ, ոչինչ չունեմ, ոչ ոք չունեմ, բացի իմ էրեխեքուց ոչ ոք չունեմ:

Իմ Սարգիս տղա, իմ միակ հույս-ապավեն է: Վերև՝ Աստված, ներքև՝ Սարգիս: Իմ Սարգիս տղա իմ ձեռք բռնեց, գացի Եղեռնի հուշարձան, լալով-ողբալով ծաղիկ դրի, կարծեցի իմ վառումներ էնտեղ են, իմ սպանվածների գերեզման հիդա է: Շա՛տ կուլամ. կուզեմ էրթամ մըր էրգիր: Էրթամ մըր անու՛շ Մեղրագետի ջուր խմեմ, մըր անու՛շ սարերի զուլալ օդ շնչեմ, իմ անու՛շ էրգիր: Մ'ըր էրգրի համն ու հոտ ուրիշ է, լաո՛: Շա՛տ կուզեմ էրթամ մըր էրգիր: Կհուսամ Աստծուց, օր ես չըմ տեսնա, հըմա իմ էրեխեք, իմ թոռներ անպայման կտեսնան՝ օր մըր Մշո քաղաք էղնի Հայաստան, իմալ օր Էրևան քաղաք:

Ցանկանամ հայուն՝ հույս, սեր, հավատ, ամոթ, խիղճ: Էս պետությունն լավ է, համա՝ չհավատա Աստված: Եթե խիղճ ունեցար՝ արդար ես, քո հոգին սուրբ է:

---

* Այս հուշը պատմող Շողեր Տոնոյանի եղբոր՝ Հովհաննես Աբրահամյանի և Եղիշե Զարենցի մտերմության մասին է մեզ պատմել նրա որդի բժիշկ Սարգիս Տոնոյանը: Պարզվում է, որ Զարենցն ու Հովհաննեսը 1937 թվականին եղել են միևնույն բանտախցում: ՀՀ Պետական անվտանգության արխիվներից պատմական գիտությունների թեկնածու, գնդապետ Արմենակ Մանուկյանը հայտնաբերել է Եղիշե Զարենցի «Նա այրեց «Կապիտալը»» անտիպ պոեմը, որտեղ մեծ բանաստեղծն անդրադարձել է իր բանտային կյանքի առօրյային և մի շարք քաոյակներ նվիրել է նաև մեր տառապյալ բանասաց Շողեր Տոնոյանին.

Իր թոռնիկի ձեռքից բռնած
Ու մի կապոց շալակին,
Պառավ Շողոն վիզը ծռած
Աղաչում էր պահակին:
- Գյուղից եկել՝ երեք օր է
Մենք հերթի ենք սպասում,
Հանձնեք մի քիչ հաց ու շորեր, -
Բայց նրան ո՞վ էր լսում:
- Բանտապետը եկավ, - ասին, -
Շողոն վազեց նրա մոտ:
- Էլի՞ տեսակցության մասին.
Վա՛ղը...

9 (9).
ՍԵԴՐԱԿ ԱԲՐԱՀԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1904 Թ., ՄՈՒՇ, ԱՌՆՋԿՈՒՍ Գ.)

1904 թ. ծնվել եմ Մուշի Աղջավազի շրջանի Առնջկուս գյուղում: Մինչև 1915 թիվը խաղաղ ապրում էինք:

Մինչև տասնմեկ տարեկան դառնալս մեր գերդաստանի մեջ մարդ չէր մեռեր, բայց թուրքը բոլորին ջարդեց:

1908 թվին թուրքական կառավարությունը հյուրիներ արեց, այսինքն՝ ազատություն տվեց: Մեզ մոտ քառասուն հայկական գյուղ կար: Սիփանա սարը մեր շրջանում էր, լանջերը գալիս էին Վանա ծովի հյուսիսային ափը: Էդ ամբողջ տարածությունը լրիվ հայ էր, ո՛չ մեկ թուրք, ո՛չ մեկ քյուրդ չկար: Միայն քաղաքում ծառայող զաբիթներն էին թուրք:

Սիփանա սարից ջրերով լի գետ էր իջնում, վրան քասնհինգ ջրաղաց էր շարժվում: Գիտե՞ս ինչ ալյուր էր աղում: Մենք որ մաշկի հիվանդություն էինք ունենում, մտնում էինք Վանա ծովը, լողանում, լավանում էինք: Նոր տարուն, Զատիկին տառեխ էինք ուտում. մեջն էլ փուշ չկար:

Երեկոյան արևը թեքվել էր, ոչխարը դաշտից եկավ: Մերս, հորեղբորս կնիկները ոչխարը կթում էին, ես ու հերս փայտով ոչխարը ղեկավարում էինք:

Մեկ էր գյուղի արևմտյան կողմից՝ Մշո, Բիթլիսի կողմից, ձայն եկավ. «Հավա՜ր, գյուղը կոտորեցին...»:

Մերը մանուկը ուրացավ. թե ով որ կողմն էր փախչում՝ հայտնի չէ: Գյուղը խառնվավ իրար, ով որտեղ ասես փախավ:

Մեր տան երեխան ես էի: Հերս ասաց. «Ձեզ փրկեմ, բա մնացածին ի՞նչ անեմ»: Ինքը փախավ: Ես ասի՝ բարձրանամ, տեսնամ: Տեսա, ձիավորները ձեռքներին հրացաններով գալիս են: Հերս ու հորեղբայրս փախան, մտան մի տուն, թաքնվան: Ես մնացի շիվարած: Մազերս երկար էին: Ինձ աղջկա շոր էին հագցրել: Հորեղբայրս՝ հարուստ Պետոն յոթ հարյուր գլուխ ոչխար ուներ, իննսունութ տարեկան էր: Ինքն ու իր նախընչի Մելոն գալիս էին, էդ երկուսին էլ խփեցին: Մեկ էլ տեսա՝ աջ կողմից մեկը ինձ գրկեց: Տեսա՝ քրդի կինն է, որին մենք հաց էինք տալիս: Երևի ձիերի ոտքերի տակ կմնայի. էդ կինը փրկեց ինձ, տարավ մորս մոտ, ասաց մորս. - Սարե՜, երեխին գրկեմ, որ չսպանեն, թող իմանան քրդի երեխա է:

Երբ ձիավորները եկան, էդ քրդի կինը ասաց. «Եկան բոլորին սպանեցին, էլ մարդ չմնաց»:

Ձիավորները հավատացին, ելան գնացին:

Էդ կինը ինձ տարավ իր տունը: Մեր բոլոր գերդաստանի երեխեքը էդ տանն էին թաքնված: Էդ քրդի տան մեջ էր նաև հորեղբորս բոյով-ջանով տղան, որի անունը Հարություն էր:

Մութն ընկավ: Քրդի կինն ասաց. «Եթե հիմա գան, էս աղջիկներին գան տանեն, ես ի՞նչ կարող եմ անել. էլեք գացեք ռեսի՝ գյուղի քյոխվի տունը»:

Հենց դուրս եկանք, որ ռեսի տունը երթանք, ասկյարները եկան, ուզում էին հորեղբորս տղին սպանել: Նա որ խփեց՝ երեքն էլ ընկան. փոխանակ նրանց զենքը վերցնի ու սպանի նրանց, ելավ փախավ: Ես ու երեք երեխաներ, մեր ձեռքերը իրար բռնած, գնացինք գյուղի մեջ: Պլեթով խփում են, սպանում են: Ես տեսա ռեսի տան մոտ ութ հոգու սպանել էին, տանջելով սպանել էին. մեկի թևն էին կտրել, մեկի գլխին էին խփել: Մի քանի օր մնացինք ռեսի տանը: Մի օր մերս գնաց մեր տունը, տեսավ հացի փշրանքներ կան, բերեց: Վեց երեխա ենք, ես էլ՝ յոթը: Սոված ենք: Մեկ էլ մերս գնաց, տեսավ ոչինչ չեն թողել: Ամբարի միջի ալյուրն էլ թափել են գետնին: Մերս էդ հողով խառնված ալյուրը բերեց, որ յուխա սարքի՝ ուտենք: Ցոնջա էլ ենք կերել:

Մեկ էլ հերս եկավ, մեզ գտավ: Թուրք ասկյարը տեսնում է հորս գալ-գնալը, ձայն չի հանում: Հետո մորս ասում է. - Ես Աբրեհն գալուց էլ եմ տեսել, գնալուց էլ եմ տեսել: Բայց ես ձեր տանը հաց եմ կերել, չկրցա խըփել. գլուխս շուտ տվի, որ իբր չեմ տեսել:

1915 թ. ռուսը գալիս էր արդեն: Քրդերը փախչում են դեպի Բիթլիս՝ արևմուտք: Բայց լցվան ժողովրդի մեջ, սկսին թալանել, նույնիսկ վրի շորերը հանում, տանում էին: Օսմանյան ասկյարները եկան քրդերին քշեցին:

Մենք մտածեցինք, որ Ղարաքեշիշ գյուղը գընանք, էնտեղ ավելի ապահով էր, քանի որ ճանապարհից դուրս էր: Դեպի արևելք ենք գնում: Քրդերը սկսեցին կրակել մեզ վրա: Մի ջահել հարս ազատվավ, երկու երեխա բերեց: Երեխեքին թողեց հողի վրա ու փախավ:

Հասանք Ղարաքեշիշ գյուղը: Էնտեղ էլ սիրուն աղջիկներին փախցնում էին: Մեր հինգ երեխեքը՝ երեք տղա, երկու աղջիկ՝ Սամսոնը, Ենոքը, Սուրենը, Ազնիվը, Հայկանուշը մեկ օրում սովից մեռան: Մերս գնաց ասկյարի մոտ, խնդրեց, որ թույլ տա թաղել իր երեխեքին, բայց նա ասաց, որ գերեզման չի կարելի: Ստիպված ձեռքերով հողը փորեցինք, հինգին էլ մեջը լցրինք:

Մի օր տեսանք ասկյար չկա: Մեր գյուղի մի աղջիկ բորոզան փչող ասկյարը տարել էր իրան կին: Մեր գյուղից յոթ աղջիկ էին տարել: Հորեղբորս աղջկան էլ մերս պահում էր սալոմի մեջ, գիշերը վրեն էր պառկում, որ չիմանան:

Ես ոչ միայն մեր գյուղի կոտորումն եմ տեսել, այլ նաև մեր բոլոր գյուղերի փախեփախն եմ տեսել: Խսիրի պես համատարած գետնին փռված դիակներ էին: Վերջը բոլորը լցրին ծովը, որ խոլեր չլինի:

Մեկ էլ տեսանք՝ ծովի կողմից մի մարդ եկավ, ասաց.

- Ռուսական զորքը Սիփանա սարի ետևից, Մանազկերտից եկել է Բիթլիսն է վերցրել, իսկ ծովի հարավային ափով Անդրանիկն ու ռուսական զորքը Վանն

են վերցրել, արդեն հասել են Տիգրանակերտի մոտ:

Մի դավաճան հայ կար: Թուրքացել էր, գնացել խաբար էր տվել, որ տղամարդիկ թաքնվել են թունելի մեջը: Թուրք ասկյարները էդ դավաճան հային տանում են, որ ցույց տա, դու մի ասա՝ Արամ Մանուկյան* փաշան գիշերով եկել էր ու բոլորին տարել: Էդ դավաճան հային բերին Ղարաքեշիշ գյուղ, կայնացրին, խփին, խփին, խփին: Մերս ասաց. - Ինչի՞ կխփիք:

- Էս որ ձեր ազգից է ու ձեզ դավաճանել է, ավելի լավ է՝ թող մեռնի:

Գյամիք բերին մեզ տարին: Բիթլիսից, Սասունից, Բաղեշից բոլոր հայերին տարին Վան:

Հերս որ վնասվել էր, գնաց ռուսական բժշկի մոտ, բայց հենց այդ օրն էլ մահացավ:

Մենք տասնութ հոգի էինք: Մեր հարյուր հիսուն հոգիանոց ազգուտակից միայն ես ու հորեղբորս տղան՝ Թաթոսն ենք ազատվել:

Մեկ էլ ռուսը հրամայեց, թե ես ետ եմ նահանջում, գնացեք Ռուսահայաստան: Մինչև Օլթի ռուսական գրանիցն էր: Ճանապարհին ռուսական զորքը մեզ տերություն արեց, բերեց մինչև Իգդիր: Ռուսը սկսեց մեզ նպաստ տալ: Մեշոկներով ալյուրը խոտի դեզերի պես կիտված էին իրար վրա:

Եկանք: Ես որբ էի: Ես գնացի ամերիկյան որբանոց, Թաթոսը գնաց Էջմիածին:

1920 թվին Սերոբ Դեմիրճյանը, Նաիրի Զարյանը և շատ ուրիշներ որբանոցում էին: Զարենցը մեր դաստիարակն էր: Նիհար-նիհար որբ տղա էր, բայց գրագետ էր:

Մեր որբանոցը բերին Երևան, որ տանեն Ամերիկա: Մի մասին տարան, մեզ էլ պիտի տանեին, բայց չհասցրին: Հայաստանի դաշնակցական կառավարության՝ Խատիսյանի հետ, թուրքերը ստոր պայմանագիր կնքեցին: Ջուլֆայի ու Ղարաքիլիսայի գիծը տվեցին թուրքին:

1920 թ. նոյեմբերի 29-ին Սարգիս Կասյանի** հետ տասնմեկերորդ բանակը մուտք գործեց Իջևան և հեռագիր տվեց Լենինին. «Աչքդ լույս, Հայաստանը Սովետական է»:

Էդպես տարիներ անցան: Ես մեծացա, կամավոր գնացի սովետական բանակ: Պոլկովնիկը կանչեց, ասաց.

- Տղա ջան, բանակ ես ուզում գնալ, բայց փոքր ես:

Ես էլ ասի.

- Ես որբ տղա եմ, ուզում եմ գնամ, տուն չունեմ:

Գնացի հայկական երկրորդ դիվիզիա, որի հրամանատարը Բագրատ Ավագյանն էր, իսկ հայկական դիվիզիայի հրամանատարը Մելիք-Շահնազարովն էր: Առաջին գունդը Երևանում էր: Բաղրամյանը գնդի հրամանատարն էր:

Բանակից եկա: Երևանում միլիցիայի դպրոց գնացի: Նշանակեցին Մեղրի: Չորս տարի միլիցապետի տեղակալ եմ եղել: 1935 թվից հետո սովորել եմ Թիֆլիսում: Հետո ընտանիքս տարա Թիֆլիս, էնտեղ սովորա, ավարտեցի: Եկանք Երևան:

Քառասուն հոգի կուրսանտների միջից ինձ նշանակեցին Հայաստանի երկաթուղու պետ: Էն ժամանակ երկաթգիծը Վրաստանին էր պատկանում:

1941 թ. Հայրենական պատերազմն սկսվեց: Մոսկվայից բրոնյա եկավ, ինձ ֆրոնտից ազատեցին:

1945 թ. իմացանք, որ Գերմանիան կապիտուլյացիայի է ենթարկվել:

Պատերազմի ժամանակ թիկունքում լավ ծառայության համար պարգևատրվել եմ և՛ Կարմիր աստղ, և՛ Կարմիր դրոշ, և՛ Լենինի շքանշանով. քսան հատ մեդալ ունեմ:

10 (10).
ՍԱԹԵՆԻԿ ՆԱԶԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՄՈՒՇ, ԳՅՈՒՄԳՅՈՒՄ Գ.)

Նազար աղան իմ հայրիկն էր, որը հարուստ, անվանի վաճառական էր և գյուղի մխտարն էր: Մորս անունը Սրբուհի էր: Մենք չորս եղբայր, երկու քույր էինք: Մեկ եղբայրս մահացավ մինչև պատերազմը: Եղբայրներիս անունները՝ Աբգար, Թուրո, Գիրիշ, Զոհրապ, իսկ քույրս՝ Արեգնազ: Նաև երկու հարս ունեի՝ մեկի անունը Մաքրուհի էր, մյուսի անունը չեմ հիշում:

Թուրոն որ մեռավ, հայրս հարսին ըսավ՝ աս քու տունդ է, ոնս կնստիս:

Քաղաքին ծայրեն գետակ մը կանցներ: Հոն տուն շինեցինք, ծառեր տնկեցինք: Հայրս կտորի վաճառական էր, քրդերը կուգային, կգնեին:

Աբգար եղբայրս վերգի հավաքող էր: Թուրոն դերձակ էր: Գիրիշը նալբանդ էր: Մեր տունը երկու սենյակ էր: Թունդիր կար, մարագ, ախոռ, հարդի տեղ կար, որ ձիերը ուտեն:

Տունին առաստաղը գերաններով էր, հատակը փայտից էր: Հայերուն թաղերը առանձին էին: Բայց քյուրդերուն հետ հաշտ էինք:

Մենք ձմեռը լահանա թթու կդնեինք աղաջուրի մեջ: Տոլմա կեփեինք, փորով քյուֆթեն կխաշեինք թրթուով կուտեինք: Բլղուրով փիլավ կեփեինք, ձավարով մածուն ապուր կեփեինք: Խմորեղեններ՝ գաթա կեփեինք, բիշի յուղի մեջ կտապակեինք, շաքարով կուտեինք: Կանաչեղեն՝ ֆասոլիա, լահանա կեփեինք: Հացը՝ խմոր կշաղեինք, կբանայինք, բարձի պես բան մը կար, թոնիրին մեջը կփակցնեինք, կեփեինք, լավաշը տասնհինգ օրը մեկ կեփեինք:

Բաղնիքի համար ջուր կտաքացնեինք: Կեղտաջուրը դուրս առուով կերթար: Ջմեռը փայտ կվառեինք: Բորուլով ծուխը դուրս կհանեինք:

Անկողինները գետինը կփռեինք: Առտուն յուքլինկը կհավաքեինք: Մայրս Մուշեն վարժուհի բերել տվեց իր ընտանիքով և մեր հին տունը դպրոց դարձրեց: Տասնհինգ աշակերտներ էինք: Մեզ մոտ մեկ լուսավորչական եկեղեցի կար: Ս. Կարապետ կերթայինք, մեկ օրվա ճամփա էր: Տոնական օրերը Ս. Ջատիկը, Ս. Ծնունդը կհիշեինք: Քառասուն օր պաճ կպահեինք, ընկույզով, ձեթով կերակուրներ կուտեինք: Ջատիկին հավկիթ կներկեինք, դրացիներուն կբաժնեինք: Կաղանդին պապաս թեփսիին մեջ մեծ խմոր կշաղեր, կեփվեր, պապաս կկտրեր, մեջը բախտ դրված կըլլար ամենուս անուններով, նաև անասուններուն անուններով:

Պտուղներու տեսակներ ունեինք՝ խնձոր, տանձ, սալոր. ցիտրուս չունեինք: Ջմեռը ցուրտ կըլլար, ձյունը ճամփաները կգոցեր:

Թուրոյի հարսանիքը կհիշեմ: Հարսը աղքատի աղջիկ էր, մերոնք չէին ուզեր: Եղբայրս սիրահարված էր: Մայրս հերոս կին էր, ան առավ ինձ, եղբորս հարսնացուին, գնացինք հորեղբորս տունը, տերտեր բերավ, պսակեց. ամուսնացան:

Մորեղբայրս կառավարական մարդ էր: Անունը Շուքրի կըսեին: Երբ Ս. Կարապետի վանք կերթայինք, իրենց կմնայինք գիշերը: Մամաս տասը զավակ ունեցած է, հինգը մեռած են: Մեզ մոտ բժիշկ չկար, բայց դայակ մը կար:

Ս. Կարապետի օրը մամաս, հորեղբայրներիս կիները, բոլորս կերթայինք ուխտի: Մեզի՝ ինձ ու հորեղբորս աղջկան խուրջինի մեջ կդնեին, պզտիկ էինք: Հոն անգամ մը փահլևան մը ելավ, սկսավ խաղալ, թելին վրայեն վար ինկավ, ոտքը կոտրեցավ: Կայինք, որ փայտե ոտքեր կհագնեին, դրամ կհավաքեին: Վանքին քովը սենյակներ կային, հոն կմնայինք: Վանքը մեծ երկաթե դռներ ուներ: Եկեղեցիին չորս կողմը պարիսպ էր: Հատակը ճերմակ մարմար էր: Կիներ կային, որ ճերմակ ձյութ կծախեին: Ուխտավորները ծնկի վրա եկեղեցի կմտնային: Դուրս ելլալև ալ՝ ետ-ետ կերթային: Եկեղեցին մեծ էր: Խունկ, մոմ կվառեին: Մուրացկաններ չկային: Մեծ մասամբ կիները ուխտի կերթային:

Կուսակցականներ կային: Եղբայրներս դաշնակցական էին: Անոնք կրթված էին, հայերեն, ֆրանսերեն գիտեին, ժողովներու կերթային: Մեր տանը երեք-չորս հատ զենք կար: Որ մը եղբայրներս զենքերը մաքրելու համար հանեցին, եղբայրս խուրջինը կրակի մեջ ձգեց՝ պայթեցավ, երեսը վառվեցավ: Մամաս թթու լահանա կապեց՝ աղեկցավ: Ես Սերոբ փաշայի կնոջը՝ Սոսո մայրիկին, տեսեր եմ: Սգավոր հագած եկավ մեր գյուղը, Լևոն էֆենդիին տունը մնաց:

Մենք շատ խաղաղ էինք տաճիկներուն հետ: Տաճիկ ժանդարմաներ եկան հայ կիներուն ըսին. «Եկե՛ք, ցորեն մաքրեցեք, ալյուր շաղեք թուրք զինվորներուն համար»: Մայրս հավաքեց հայ կիները, գնաց գայմագամին մոտ, ես ալ հետն էի: Ան ըսավ գայմագամին. «Մենք հավատար ենք, ինչու՞ մեզի կստիպեն ալյուր շաղենք, հաց թխենք»:

Գիրիշ եղբայրս նալբանդ էր: Ձիավորներ կուգային, պայտեր կմեխեր:

Աբգար եղբորս հավաքեցին, ուրիշ տղաներու հետ տարին թուրքի բանակ: Մամաս Գիրիշին հեռագիր զարկավ. «Աբգարը կուգա կոր», ըսելով, բայց Աբգարը Մուշ չհասավ: Լսեցինք, որ Աբգարին սպանել են:

Մամաս ձի ննստավ, գնաց Մուշ: Մեկ-երկու օր վերջը թուրքերը եկան, բոլոր հայ էրիկմարդոց հավաքեցին: Մի բեյ մը կար, ուզեց մեզի օգնել, բայց չստացվեց: Պապաս հանձնվեցավ, տարին բանտ: Դեռ չբանտարկած, պապայես հագուստ ուզեցի. - Սու՛ս, ժամանակը գեշ է, - ըսավ:

Ժանդարմաները եկան, ըսին. - Ելե՛ք տանեն, ի՛նչ կուզեք, առեք ձեզի հետ:

Մեր ամեն ունեցածը բաժանեցինք մեր թուրք դրացիներուն, բոլոր հայերը հավաքվեցան գյուղին կենտրոնը, պարտեզին մեջ: Քուրս ոսկիներով հյուսած էր մազերը. հարուստներուն օրենքն էր ան: Հարսերս ոսկի սրմաներով կապույտ թավիշ հագուստ հագած էին: Մեկ հսկա քյուրդ մը եկավ: Ադ հագուստները տվինք մեր ծանոթ քյուրդին, որ մեզի ազատի: Ան մեզի տարավ իր տունը: Հազիվ մեկ ժամ ճամփա գացինք, քյուրդերը վրաներնիս հարձակվեցան: Կիներուն հագուստները հանեցին: Ես ալ վարտիքով մնացի: Քրոջս տաճիկ մը փախցուց: Մենք չբլախ ենք: Առտուն էլանք: Ժանդարման եկավ, մեզի տարավ: Քյուրդը եկավ մեզի ետ վերցուց, նորեն բերավ իր տունը: Չէ որ քրոջս փախցուցեր էին, ետ եկավ, ինձի ըսավ. - Ես թույլ եմ խմեր, երե մեռնիմ դուն գիտցիր մեր ապրանքներուն տեղը:

Ես ու մորեղբորս աղջիկը գացեր էինք ջրի: Մեկ ալ տեսանք քյուրդը նորեն առավ, տարավ քրոջս: Ի՞նչ ընենք: Մորեղբորս աղջիկին ալ տարին: Ես մնացի մենակ: Ան քյուրդը ինձի տարավ մեր քյուրդ դրացիին տունը: Ան ինձի տեսավ, զարմացավ, ըսավ. - Դուն ո՞ղջ ես: Դրացիին տունը ձեր հայ ծանոթներն՝ Շուշան աբլան և ուրիշներ կան, տաճիկին հացը կեփեն, գնա՛ անոնց մոտը:

Մեր տունեն անցա, լացի: Մեր տունը տաճիկ մը նստած էր: Ըսավ ինձի. - Հորդ ապրանքներուն տեղը ըսե: - Գիշերը՝ փաթ-քյութ, տաճիկները փախան: Ռուսը եկավ: Մենք ոտքով գացինք Խարբերդ: Բոլոր գյուղերու հայերը արդեն գաղթած էին: Ալի էֆենդին տարավ ինձ իր տունը, իր աղջիկին պես պահեց: Վերջը ադ տաճիկ ընտանիքը Մալաթիա գնաց: Տաճիկը մեռավ: Կնիկը ինձի ղրկեց թութի պլյուր գնելու: Գացի, տեսա տաճիկ երկու աղջիկ նստած, մայրն ալ հետերնին: Անոնք ինձի տարին լոգցուցին, մաքուր հագուստ

* Արամ Մանուկյան (Արամ փաշա) (1879, Զեյվա – 1919, Երևան) – պետական, հասարակական գործիչ: Կազմակերպել ու ղեկավարել է 1915 թ. Վանի հերոսամարտը, որի հաղթական ավարտից հետո ղեկավարել է Վանի նահանգապետությունը (70 օր):

** Սարգիս Կասյան (1876, Շուշի – 1937) – հայ կուսակցական և պետական գործիչ: Նրա ստորագրությամբ 1920 թ. հրապարակվել է Հայաստանում Խորհրդային կարգեր հաստատվելու վերաբերյալ Դեկլարացիան:

հագցուցին: Մայր ու աղջիկները ինձի սիրեցին: Տաճիկ մայրս ինձի պահեց:

Խարբերդի մեջ պատվելի Եղոյանի տունին առջևը մի կնիկ տեսա, ան ըսավ. - Եկու՛ր, քեզի որբանոց տանիմ:

- Չէ՛, չեմ գա, - ըսի, - քանի որ ինձի լավ կնային:

Տունին հարսը ինձի հրամայեց, ըսավ. - Ախոռը ավլե՛:

Ես մտածեցի՝ փախչել:

Արդեն զինադադար եղած էր: Տիկին մը ինձի որբանոց տարավ: Չորս տարի Խարբերդի որբանոցը մընացի: Ամերիկյան որբանոց էր, արդեն տասներկու տարեկան էի: Բոլորս ալ իրարու պես որբեր էինք: Առտուն կելլայինք, աղոթք կընեինք, հոգևոր երգեր կերգեինք, կնախաճաշեինք, դպրոց կերթայինք, հայերեն կսորվեինք: Ես չնայած Գյումգյումի մեջ դպրոց գացած էի, սկսա Ս. Գիրք մը կարդալ, բայց ինձմե մեծերը կարդալ չգիտեին: Կես օր ընդ կաշխատեի, հիվանդ կլողացնեի, ճաշ կուտեցնեի, անկողինը կշտկեի, օրվա մյուս կեսն ալ՝ կսորվեի:

1922-ին Խարբերդեն ուտելիքով, անկողինով, բարձերով մեզի կառքերը դրին, տարին Տիգրանակերտ: Մեզի սենյակներ պատրաստած էին: Լողացրին, կերցրին, վերջն ալ թրենով Հալեպ տարին, Բեյրութ տարին, Պոլիս, Հունաստան բերին, Կորնթոսի դպրոց-որբանոցը գացի: Դոկտոր Հեքիմյանը ինձի հոգեզավակ վերցուց: Հետո ինձի բերին Եգիպտոս: Ես Եգիպտոս ամուսնացա: Մամբրե սրբազանը հոգևոր առաջնորդն էր: Որ մը մեզի տարած էին եկեղեցի, Մամբրե սրբազանը ինձի ըսավ. - Գիտե՞ս, Սաթենիկ, երիտասարդ մը կա, Սուդան գացած է: Ան՝ երկար մազերով աղջիկ մը կուզեմ, ըսած է: Կուզե՞ս հետը ամուսնանալ:

- Դուք ուզել եք, ես ալ կուզեմ, - ըսի:

Կեսուրս եկավ, ինձի տուն տարավ: Ես ըսի. - Ես որբ եմ:

Կեսուրս ըսավ. - Ես ալ որբ եմ եղած: Մենք քեզի մայր, հայր կըլլանք:

Տարին իրենց տունը: Վերջը գացինք Սուդան: Տղաինի երկաթագործ էր: Հոն երեք երեխա ունեցա:

Սուդանում վեց ընտանիք հայ կար: Հետո սանահատացանք, անգլիական կառավարության ժամանակ դժվարացավ մեր վիճակը:

1931-ին եկանք Եգիպտոս: Պրոպագանդ ըրին, թե Հայաստանը լավ է: Ես արդեն որբևայրի էի: Մեզի բերին Բաթում, «Պոբեդա» նավով: Ես իմ զավակներով գացինք Հայաստան: Բոլորս ալ գործարանը աշխատեցանք: Տղուս աչքը սկսավ ցավիլ: Սխալ դեղ տվին՝ կուրացավ: Ժողովուրդը շա՛տ խեղճ էր: Մեր աղջիկները գործարան չէին ուզեր աշխատիլ: Գործեն ելան: Ես աշխատեցա անհայր երեխաներու մանկատունը: Ես ճաշ եփող էի: Տղաս կուրացավ, մեռավ: Աղջիկներս մեր եկող տղաներ առին: Հիմա Ամերիկայի մեջ շատ լավ ենք: Զավակներս քովս են:

Միշտ կաղոթեմ, որ իմ նահատակներուս հոգին Աստված լուսավորե: Ես կհավատամ Աստծուն: Ես կաղոթեմ բոլոր աշխարհի համար: Աստվածաշունչը կըսե՝ թշնամուդ մի՛ ատեր: Հիսուս ըսավ՝ փնտրեցեք, պիտի գտնաք:

11 (11).
ԱՐՇԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՄՈՒՇ)

Ես ծնվել եմ հյուրիեթի տարին: Հայրս հովիվ էր: Ոչխարը կուշտ ուտելուց և խմելուց հետո պառկում էր ավազի վրա, որ կաթը առատ լինի: Կեսօրին գալիս էին բերվորները, կթում էին նրանց ու կաթը տանում:

Օրերից մի օր ցերեկով հանկարծ արևը խավարեց: Հայրս ու ես Մուրադ գետի ափին էինք: Ոչխարը խրտնած վեր թռավ, շները ոռնացին: Ես գետի ափին «Հե՛յ, հե՛յ» էի բղավում: Հայրս ինձ տարավ ինձվորների մոտ: Մեկը ասում է՝ կարկուտ կգա, երկրաշարժ կլինի: Մյուսը՝ թե՝ բան չկա, վախենալու չէ: Արևը կրկին շողաց: Բայց այդ օրերին 1914 թ. սկսվեց աշխարհացուցց պատերազմը, որը սարսափելի հետևանքներ բերեց իր հետ: Այդ ժամանակ թուրքական կառավարությունը սկսեց խրախուսել թալանը, կողոպուտը, հայերի կոտորածները: Վախեցած մարդիկ չէին կարողանում տներից դուրս գալ, ցորենը քաղել, տուն բերել: Սկսվեց թշնամություն հայերի դեմ: Թուրքերը հարձակվում էին հայերի օջախների վրա, թալանում էին, թալանը միմյանց ձեռքից խլում և իրար հետ կռվում ու իրար փոր էին թափում:

Այդ օրերին, մի օր ուշ երեկոյան հոտը իր նստատեղումն էր, հայրս գնաց սև ոչխարի կաթը կթելու: Բերեց կաթը, ինձ խմացրեց ու քնացրեց: Հանկարծ մեր հոտի շները վեր թռան ու առաջ վազեցին: Հայրս ձայն տվեց. - Ովքե՞ր եք:

- Քիրվաներ ենք, - հայրս շներին զսպեց:

Ձիավորները մոտեցան, բայց չբարևեցին:

Հայրս բարևեց ու ասաց. - Այս գիշերով ու՞ր եք գնում, իջեք խորոված անեմ, հյուրասիրեմ:

Ձիավորները իջան: Հայրս մտավ հոտի մեջ, որ ոչխար ընտրի: Ձիավորներից մեկը հրացանը պատրաստեց, որ խփի: Ընկերը ասաց. - Սպասի՛ր, խորովածը կուտենք, հետո՝ կսպանենք:

Ես քնածս տեղից լսեցի, բայց չշարժվեցի: Մեկ էլ զգացի՝ մեկը ննջեց իմ պառկած տեղի վրա: Ես շարժվեցի ու սկսեցի լաց լինել, կանչեցի հորս: Հայրս եկավ: Ես դողում էի: Քյուրդը ասեց. - Գյորնափշտիկ է կարծես՝ վախեցա: Էս լամուկի վիզը չկտրե՞մ:

- Չէ՛, - ասաց հայրս, - սա իմ սիրած զավակն է, մի՛ սպանե:

Մյուս քյուրդը ասեց.

- Այ քիրվա, դու հովիվ ես, հայրս էլ հովիվ է:

- Ո՞վ է հայրդ:

- Թեմուրը:

- Ես ու հայրդ՝ Թեմուրը, քիրվա ենք: Քիրվաները իրար կսպանե՞ն:

- Եթե ձեղը ընկնեն՝ կսպանեն: Մեր Նադո բեկը ասում է, որ դու սուտ հովիվ ես, բայց ֆեդայի ես: Մեզ դրկել է, որ գլուխդ կտրենք, տանենք, - քյուրդը հետո շարունակեց, - ա՛յ քիրվա, շուտ հավաքվի՛, ելի՛ր գնա, քանի ողջ ես:

- Աստված մեծ է, դուռը հազար, - ասեց հայրս ու ինձ վերցնելով՝ հետացավ:

Այդ օրվանից մենք կորցրինք մեր ոչխարները:

Եկավ աշուն: Բոշաներ էին եկել՝ մաղ ծախելու: Եկել էին նաև հարկահավաքները՝ թաջիները, ցորենը թաջում էին, այսինքն՝ նշան էին անում, որ չխախտվի:

Ես էդ պահին ձմերուկ ուզեցի, մայրս ցորենի շեղջի մոտից անցնելով ինձ ձմերուկ բերեց, որ ուտեմ: Թաջիները տեսան, որ շեղջի կողքից խախտված է: Սկսեցին պոռալ, կանչել: Եվ որպես պատիժ՝ հորս ստիպում են մի պարկ ցորենը ուսին դրած տանի մինչև Բուլանըխ:

Եկավ ձմեռը: Գյուղի մեծերը մտածում էին՝ ոնց պիտի ազատվեն այդ վիճակից:

Եկավ 1915 թվի գարունը, արյունոտ գարունը: Այդ ժամանակ գյուղ էր վերադարձել Ջան-ֆիդա Նադոն: Նա սարից իջել էր գյուղ: Գյուղացիները, ինչպես ասի, վախենում էին սայլով գնալ դաշտ՝ ցորենը բերելու: Ջան-ֆիդա Նադոն հրացանով ուղեկցում է գյուղացիներին, որ իրենք գնան դաշտից ցորենը բերեն: Մեկ էլ քյուրդները հարձակվում են նրանց վրա: Ջան-ֆիդա Նադոն, որ տեսնում է սրանց, սկսում է կրակել նրանց վրա ու հրամայում է գյուղացիներին. - Կովե՛ք բահերով, գերանդիներով:

Սայլվորը ասում է. - Ջան-ֆիդա Նադո, քեզ մատնել են, արի սայլի մեջ մտի, առվույտի մեջ թաքնվիր:

Ֆիդա Նադոն թաքնվում է:

Ձիավորները մոտենում են ու հարցնում. - Ու՞ր է ֆիդա Նադոն:

- Գնաց դեպի գետը, - ասում է սայլվորը:

Սրանք կրակի են տալիս սայլը: Ֆիդա Նադոն կաքավի պես դուրս է թռնում սայլի միջից և սկսում է կռվել: Քրդերը կրակում, սպանում են Ջան-ֆիդա Նադոյին: Նադոյի որդիներին պահում է Խաթուն Մարեն: Այդ ժամանակ կոտորածը հասել էր մեր գյուղերին, կոտորում էին բոլորին՝ ծերերին, երեխաներին, ովքեր իրենց ձեռքն էին ընկնում: Մի օր ապրիլին հանկարծ գյուղը խուժեցին թուրք զինվորներ, քրդեր: Գյուղի Նադոն բոլոզը գլխին առաջ եկավ դեպի ֆեդայի Նադոյի տունը: Հրացանը քաշեց, որ ներս մտնի: Մեր ֆեդայի Նադոյի Խաթուն Մարեն բեկի ոտքերը ընկավ. - Նադո՛ բեկ, խնայի՛ր իմ թոռներին, նրանց հորը սպանեցին արդեն...

Բեկը ծիծաղեց քաո-քաո, ու բոլոզը վար ընկավ: Մեծ Մարեն, որ հավատում էր ամեն խոսքին, ներս է մտնում, ասում. - Զավակնե՛րս, զենքերը տվե՛ք բեկին: - Մարեն Գեղամին ու Արմենին առաջը գցած՝ հրացանները բերեց: Բեկը Արմենին տան շեմի վրա կրակում է, հետո՝ Գեղամին:

Հայրս լսում է այս իրողությունը, սարսափած տուն մտավ: Հայրս ինձ ու մեծ եղբորս տարավ գետը անցկացրեց: Տարավ դիմացի գյուղը մի մարագ, որը գետնին հավասար էր ու մարդաբոյ խոտով ծածկված: Հայրս մեզ թողեց էնտեղ: Էդ մարագի մեջ կային թաքնված շատ կանայք ու երեխաներ: Մարագի փոքր անցքից լույս էր թափանցում: Թե ինչքան էնտեղ մնացինք, ես չգիտեմ, միայն հիշում եմ, որ երբ երեխաները լաց էին լինում, վախեցած մայրերը սաստում էին:

Մի օր մարագի տանիքի վրա ոտնաձայն լսվեց: Ներս խուժեց թուրք ասկյարների խուժանը, որոնք սկսեցին ապտակել կանանց ու երեխաներին: Քաշում էին կանանց ականջօղերը, արյունլվա էին անում: Մի հաղթանդամ կին գրտնակով խփում էր, մի ուրիշ կին կճուճը խփեց թուրքի գլխին, կճուճը կոտրվեց: Կանայք մեզ իրենց փեշերի տակ թաքցրած տարան մարագից դուրս: Մենք փորսող գյուղից դուրս եկանք: Մեր շորերը հանեցինք, կապեցինք մեր գլխին:

Մեզ բռնեցին: Եղբորս ապտակեցին: Մեր գլխին կապած շորերը խլեցին, իրար մեջ բաժանեցին: Մեր ձեռքերը կապեցին, մեջքով դեպի գետը կանգնեցրին, որ կրակեն ու ջուրը գցեն: Հանկարծ քրդերը իրար մեջ խոսեցին: Եղբայրս հասկանում էր քրդերեն, ասեց. - Աշո՛ւտ, մի՛ վախենա, ասում են՝ ափսոս է իրենց գնդակը:

Եղբորս գնդակով խփեցին, նա գետը ընկավ: Ինձ ջուրը գցեցին: Ես պղտոր ջրի մեջ տեսա եղբորս գլուխը: Մի կերպ մազերից բռնեցի: Ջուրը մեզ տանում էր: Թուրքերը տեսան, որ մենք չենք մեռած, սկսեցին կրակել: Փոխանակ երեք փամփուշտ վատնեն, ավելի շատ վատնեցին: Գետը մեզ տարավ: Հասանք մյուս ափը: Մենք կանգնեցինք ավազի վրա: Եղբայրս և իր ընկերները ուրախ էին, որ ողջ ենք: Եղբայրս և իր ընկերը ինձ ավազի մեջ թաղեցին, իրենք էլ ավազի մեջ թաղվեցին ու քնեցինք: Եղբայրս ականջ էր դնում, հանկարծ լսեց հայերի ձայն, կանչեց. - Հե՛յ, հե՛յ, հասե՛ք:

Բայց նրանք վախից հետացան:

Եղբայրս նորից բղավեց. - Հայե՛ր ենք:

Նրանք եկան, մոտեցան մեզ, տեսան մերկ ենք, իրենց շորերից հանեցին, մենք հագանք: Դրանք մեր գյուղի տղաներն էին, պատմեցին, որ մարագի մեջ մնացած կիներին ու երեխաներին այրել են:

Ուշ երեկո էր, հասանք մեր գյուղը: Տեսանք՝ մեր Ջեյրան և Խնձոր կովերի նորածին հորթերը սատկել էին: Մնացինք մինչև ուշ երեկո: Մեր ընտանիքը, որ մեծ էր՝ երեք քույր, չորս անչափահաս եղբայրներ, խառնըվեց քոչին: Ամփին ես հոգնում էի, եղբայրս ինձ շալակում էր մեկ-մեկ: Մեզ հասցրին Մուրադ գետը: Մեզ բաժանեցին տների վրա: Առավոտ կանուխ մենք ճանապարհ ընկանք Մուրադ գետի ափով: Երեկոյան կողմ հասանք մի տեղ: Քոչվորները տեսան սպիտակ վրաններ, մարդիկ ուրախացան, որ ռուսների վրաններ են: Երբ վրաններին հասանք, տեսանք, որ թուրք ասկյարների վրաններ են: Նրանք դուրս թռան չաղրըներից, հարձակվեցին մեզ վրա, տղամարդկանց վիրավորեցին: Մի թուրք

մորս արյունախառն լաչակը քաշեց, մեզ քշեցին ձորը, կապեցին մեր թևերը: Ես մորս փեշը բաց չէի թողնում: Լուսնյակը դուրս եկավ, նորից ամպի տակ մտավ: Այդպես մութին գնացինք: Մի քանի հայ կարողացան մոտենալ տղամարդկանց, նրանց ձեռքերի կապերը ատամներով կտրեցին, ազատեցին: Դրանց մեջ էր նաև իմ արյունլվա հայրը: Նրանք չորսով հարձակվեցին ասկյարների վրա, նրանց հրացանները խլեցին, նրանց ֆորմաները հանեցին, իրենք հագան: Թուրք ասկյարների ձեռք-ոտքը կապեցին: Հասանք վարարած Մուրադ գետին: Ժողովուրդը շվարած էր, թե ինչպե՞ս պիտի անցնի գետը: Տղամարդիկ կարող էին լողալով անցնել գետը, բայց իրենց քոչն ու ընտանիքը չէին կարող թողնել: Մի երիտասարդ շորերը հանեց, իր կնոջն ու երեխային գրկեց, ջուրը մտավ: Անողոք գետը նրանց քշեց ու տարավ: Մինչև մարդիկ նետվեցին գետը՝ փրկելու, միայն իրեն ու երեխային փրկեցին: Մեր «թուրք» դարձած չորս տղամարդիկ ոչխարներ բերին, մորթեցին, տիկ սարքեցին, ուռի ճյուղերով միացրին, լաստ շինեցին, մեզ անցկացրին գետը: Մայրս մեր ուտելիքի պաշարի վերջին փշրանքները հանեց, բաժանեց ըստ տարիքի, ասեց. - Գնացե՛ք, էնտեղ մանանա կա, հացի վրա քսեք կերեք:

Մենք գնացինք կերանք: Ծառից ճյուղ էինք պոկում, թուր ու հրացան սարքում, խաղում էինք: Հանկարծ լսեցինք մորս ձայնը. - Երեխանե՛ր, փախե՛ք, մըտե՛ք խոտերի մեջ. թուրքերը գալիս են:

Մենք տեսանք, որ մի խումբ հեծյալներ գալիս են՝ հրացանները վեր բռնած: Նրանք զարմացան, թե ոնց ենք մենք գետը անցել: Նրանցից մեկը հրացանը վեր բռնած մտավ գետը: Գետը տարավ նրան: Մեր «թուրքացած» չորս զինվորները մեզ ասացին. - Փախե՛ք:

Նրանք մեր քոչի ետևից զինված գալիս էին: Մենք սոված-ծարավ քայլում էինք: Մեկ էլ տեսանք, թուրք զինվորների մի խումբ է գալիս դեմից: Մեր չորս զինված «թուրք» զինվորները, հորս ղեկավարությամբ, առաջ անցան: Ձիավորները այնքան ճարպիկ էին, որ ձիու տակը մտած էին քշում: Սրանք բեղ-մորուք չունեին: Ծեկ էին, սիրուն: Սրանք ծիծաղում էին: Ինչ-որ բաներ էին ասում, մենք չէինք հասկանում: Նրանք հասան մեր չորս «թուրք» զինվորներին, ձեռքերը կապեցին ու հեռու տարին: Մենք սարսափեցինք:

Մեկը ասաց Արտեմին. - Հարցրու՝ ովքե՞ր են:

Սրանք Արտեմին տեսան՝ բեղերը երկար, քոլոզը գլխին, սկսեցին քահ-քահ ծիծաղել: Զինվորներից մեկը հարցնում է՝ ցույց տալով չորսին, որոնց ձեռքերը կապել էին. թե՝ они армяне? (սրանք հա՞յ են):

Մեր շշմած ռուսագետը՝ Արտեմը, գլուխը բացասական է շարժում: Զինվորները կասկածում են, որ մենք հայ քոչվորներ ենք: Արտեմը տեսնելով, որ զինվորներից երկուսը վազում են դեպի մեր «թուրք» չորս ասկյարների կողմը, որ բռնեն նրանց՝ ուշացումով ասում է . - Հա՛յ ենք, հա՛յ ենք:

Բայց երբ տեսանք, որ չորսին կապեցին, մենք խառնվեցինք իրար: Դու մի ասա, սրանք գերմանացի են: Քանի որ Գերմանիան թուրքի կողմն էր: Մենք չէինք կասկածում գերմանացիների վրա: Այդ պահին մեր եկած ճանապարհով ամպ բարձրացավ, գալիս էին ձիավորներ: Ռուս զինվորները այդ որ տեսան՝ ուռա՜, ուռա՜ ասելով՝ նրանց վրա հարձակվեցին: Մեր չորսն էլ նրանց միացան: Սկսվեց կռիվը: Արտեմը ընկավ: Մենք՝ վա՜յ գոռացինք: Թուրքերը գոռում էին: Հանկարծ ետևից ռուս զինվորների եկած ճանապարհով եկան ռուսական այլ զորքեր, թուրքերին սկսեցին ջարդել: Մնացածն էլ փախավ: Ռուսները մեզ տարան իրանց վրանները, իրենց պայոկը տվին մեզ: Նրանք մեզ ճամփու դրին դեպի արևելք:

Մենք գաղթում էինք: Մի օր Մեծ Ղարաքիլիսայի (Կիրովական, այժմ՝ Վանաձոր) միջով էինք անցնում, մեզ մնացել էր մի նիհար կով: Հայրս այլևս չկար, զոհվել էր: Մայրս, մեզ հավաքած, Ղարաքիլիսայի փոքրիկ ու նեղ փողոցով տանում էր, մենք գնում էինք մեր կովի ետևից: Տեսանք մի խանութ, մեջը կողովով լիքը կաղին: Ես ու եղբայրս կանգ առանք ու նայում ենք: Մայրս եկավ, մեզ հասավ, ասաց. - Ինչու՞ եք կանգնել:

Խանութպանը ասում է. - Ա՛ռ, տու՛ր, երեխաներդ ուտեն: Ոսկի չունես, տու՛ր կովը ինձ, կաղին առ՝ տար:

Մայրս գնաց կովի վրայի բարձածները վար իջեցրեց, կովը տվեց խանութպանին: Նա մորս գոգնոցով մեկ կաղին տվեց: Սկսեցինք ագահորեն ուտել: Գնացինք մի բարի մարդու տուն: Կաղինը ջարդում ուտում էինք: Տանտերը մի հոյակապ մարդ էր ու գնալ-գալով ասում էր. - Ծուտով ամեն ինչ լա՛վ կլինի:

Առավոտյան մայրս մեզ տարավ կայարան, որ գնանք Ռուսաստան: Այդ պահին եկան մեզ հրելով իջացրին: Նորից գաղթի ճամփան բռնեցինք:

Հասանք Դիլիջանի պավառոտները: Մայրս վերջին փշրանքները մեզ տվեց՝ կերանք: Մտածում էինք՝ ի՞նչ անել, ու՞ր գնանք: Այդ ժամանակ նոյեմբեր ամիսն էր արդեն, Կարմիր բանակի զորքը հասավ Հայաստան: Մենք խառնվանք զինվորներին և քոչվորներին՝ ուրախացանք: Իմ մանկությունից մեր հարազատները՝ հորեղբայրներս, նրանց հարազատները, ընկերներս այլևս չկային:

Հետագայում ես կարողացա ավարտել մանկավարժական ուսումնարանը, աշխատել դպրոցում: Ուշ աշնանը ես տեսնում էի, որ աշակերտները անձրևից թրջված շորերով գալիս էին, դասի նստում, ես մտահոգված ասում էի. - Երեխանե՛ր, դասի մի՛ եկեք այդպիսի եղանակին:

Մտածեցի՝ Բայանդուր գյուղից կամուրջ կառուցել: Եվ կառուցել տվեցի:

1934 թ. ընդունվեցի Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Փոխադրվեցի երրորդ կուրս, ինձ կանչեցին դեկանատ: Հետո՝ Կենտկոմ: Մեկը դուրս եկավ, թե՝ ինձ Արթիկում դատավոր են նշանակել: Ես էլ մտա: Ինձ էլ Արթիկում դատախազ նշանակեցին: Եկա տուն, մորս ասի. - Ինձ դատախազ են նշանակել:

Մերս ասաց. - Տղա՛ս, ինչ աշխատես, ուրիշի մեղուի վրա ոտք չկոխես:

12 (12).
ՀՐԱՆՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՄՈՒՇ)

Երկու տարեկան էի, որ Մուշից Խնուս գնացինք: 1914 թվի ջարդի ժամանակ առաջին դասարան էի:

Արդեն 1914 թ. իմ հեր գնացեր էր ռայոններ ցորեն հավաքելու, որովհետև ինքը հացթուխ էր: Երբ հերս գյուղերից եկավ հելե ձիուց չէր իջել, երկու զաբթիա եկան ըսին. - Հովհաննես, հոքմաթ քեզի կանչում է:

Խեղճ հերս հաց էլ չկերավ: Տարան, էլ ետ չեկավ: Մենք գացինք հարցնելու, թե ինչու՞ բռնել եք: Իմացանք, որ էդ օրը երեսունմեկ նշանավոր մարդկանց բռնել են, բոլորին տարել են բանտը: Դրանց անուններն էին՝ Անտոնյանց Մուշեղ, Թերզի (դերձակ) Օհաննես, իմ հեր՝ Փռնչի (փռապան) Հովհաննես (Կակաչ կըսեին), Ալթը Փարմաղ (վեց մատով), վերջապես երեսունմեկի անունը չեմ կարող հիշել, բայց մեզի մոտիկ մարդիկ էին:

Էն մյուս օր, առավոտ էլանք բանտ գնացինք, որ հաց տանենք, ասկյարները չեն թողնում մոտենանք: Էդ բերդը ժայռերի վրա էր: Հերս վանդակների մեջ նստած էր, ըսավ. - Գոնե մի տղիս համբուրեմ, - գացի՝ համբուրեց: Էդ բանտի մեջ բռնվածները չոր խոտերի վրա նստած էին: Բոչկան ալ մեջտեղն էր, որ կեղտոտեն: Հերս հանեց մի մեջիդե տվավ ինձի: Անդի երկար ժամանակ մնաց իմ քեսիկի մեջ: Էն մյուս օրը բոլորին աքսոր հանեցին:

Արազը մեր քաղաքի մոտի Բինգյոլ սարերից էր սկիզբ առնում: Հորեղբորս երկու տղերքը՝ Միհրան և Խաչիկ, Մուշից եկել էին մեր տունը էդ օրը: Էլանք որ հաց տանենք՝ ես, մերս, քույրս, ախպերտիքս, հորեղբորս երկու տղերքը, մեկը տարավ բողչեն: Էդ շան որդի ժանդարմերը բողչեն գցին գետնին, քացով տվին, սկսին խփել ջարդել հորեղբորս տղին: Մենք լացով-կոծով էկանք տուն: Մեկ էլ մի սպիտակ ձիու վրա մեր մուխտարը, որ կաշխատեր թուրքերի մոտ, էն էլ գնաց, էն էլ խորտկվավ: Էդ երեսունմեկ հոգուն տանում, իջեցնում են Մուրադ գետի ափը, քարերը կապում են վզներից, գնդակահարում են, գցում գետը: Մեկը հրաշքով պրծել էր՝ էկել էր, պատմեց, բայց նրան էլ կախեցին:

Էդ ամբողջ մեծ մարդկանց տարան-սպանին, մնացինք ճիժ-միժ, քաչալ-թոփալ:

Ասկյարները էկան, ըսին. - Ելե՛ք, ձեր դռները փակեք, կառավարությունը ձեզի նոր քաղաք՝ Վերանշահ է ղրկում, գյավուր ռուսը գալիս է:

Վերցրինք մի կով, մի խուրջին ալյուր, մերս մի քեսիկ ոսկի մտցրեց ալյուրի տոպրակի մեջ, մի քանի ոսկի կարեց մեր խրխաներուն մեջ, քրոջս թումբանի մեջ:

Թուրք ասկյարները էկան գոռում-գոչյունով. - Դե, ելեք:

Մեզանից առաջ տարել էին կողքի գյուղը՝ բոլորին կոտորել էին:

Մեզի հավաքին, տարին Սողոյենց դաշտը, ոնց որ նախիրը հավաքում տանում ես արածացնելու: Երեսուն-քառասուն ասկյարով իջացրին Խնուսա կարմունջը, հանեցին դեպի Բինգյոլա սարերը:

1915 թվի հունիս ամիսն էր, երբ մեզի տարան կոտորելու: Քրդերը էկան մանգաղներով՝ հնձելուց էին գալիս: Մեզի չեչենները կտանեին, Բինգյոլա սարի լանջերն էր՝ ծաղիկ ծառաստան: Ծան որդի չեչենները բերին մեզի մի ձորի մեջ, արդեն արևը մայր էր մտնում, ասին. - Էստեղ կմնա՛ք: Առավոտ կելնեք կերթաք Վերանշահ քաղաք:

Երբ մութն ընկավ, գոռում-գոչյումն սկսվավ: Էդ շան որդի զաբիթները սիրուն հարս ու աղջիկ ինչքան կար, դայիշը գցում էին վիզը, տանում էին: Մերը որ գոռում էր, խանչալը կոխում էին փորը՝ ձենը կտրվում էր, սսկվում:

Հելե արև չէր ծագե, առավոտ ժամը վեցը կար, հանին մեզի, գոռում-գոչյումով առաջ գացինք: Տեսա մի քահանա, ուռած: Ծառերի մեջ կոտորված մեռելները գետնին փռված: Տեսանք հեռվում սպիտակ բաներ: Դու մի ըսեր՝ քրդերն են: Կառավարությունը ղրկել է դրանց, որ մեզ ջարդեն, թալանեն: Մեկ ա՝ ո՛չ դատ կա, ո՛չ դատաստան:

Քույրս էշի վրա նստած էր, առաջից էր գնում: Զաբիթը կրակեց, նշան տվեց: Քրդերը ընկան մեզ վրա: Էդ տեսարանը մինչև հիմա չի թողնում, որ քնեմ: Էս որ հիվանդացել եմ, էդ տեսարան իմ աչքի դեմն է գալիս: Հորեղբորս երկու տղաներին թև-թևի տվին, կապեցին, տարան իջեցրին ձորը: Սաղ-սալամաթ եկել էին Մուշից մեր տունը՝ Խնուս՝ հյուր. խեղճ Միհրանին ու Խաչիկին սպանեցին: Ջրի մեջ դիակները թափված, արյունը՝ կերթա: Մի տասնհինգ տարեկան տղա ձեռքը կըտրել էին, թափել. արյունը կերթար, ինքը «մամա ջան, մամա ջան» կըսեր, լաց էր լինում: Ասկյարը խանչալ կոխեց փորը՝ սպանեց, որ ձենը կտրի: Էն մատաղ տղի մերը թույն խմեց: Իմ մերն էլ ուզեց թույն խմել, ես թափեցի:

Էլանք Մուրադ գետի ափը: Մի հատ տանձի՝ քարջինի ծառ կար, երեսուն-քառասուն քոռ ու թոփալ, վիրավոր, ոնց որ ոչխարներ, նստանք գետի ափ: Մեկ էլ քրդերն էկան, մանգաղները ուսերին: Քրդերն ընկել են թալան-թուլանի ետև: Թալլեցին: Բռնում, բացում են երեխանց բալուլները, ասում են՝ էս տղա՞ ա: Տեսան փուփուլը: Մանգաղ գցին վզներին, էդ երեխեքը մորթված հավի պես թփրտացին արյունի մեջ: Էդ չեմ մոռնա մինչև հիմա: Մեկն էլ իմ գլխին խփեց: Ինձի կոխին կնկտոց փեշերի տակ:

Քրդերը թալլեցին, էլան ջայնմվան, գացին: Մեկ էլ տեսա սարի ծերին մի տկլոր աղջիկ ոռնող գալիս ա. - Մամա՜, - ըսի, - քույրս՝ Աղավնին:

Ախպերս վազեց գնաց օգնելու, բերդանկի գյուլլեն ընկնում է ախպորս սիրտը և քրոջս ոտքը: Ախպերս տեղնուտեղը ընկավ մեռավ:

Քրդերը տկլորացրել էին քրոջս, ով գիտի ինչ

էին արել: Մերս քամեց քրոջս արնոտ թումբանը, լվաց Մուրադ գետի ջրի մեջ: Իր վրայի շորերը հանեց, հագցրեց վախից դողդողացող քրոջս:

Մեկ էլ քրդերի միջից մեզի ծանոթ մի քիրվա կար, անոր անունը Մահմեդ աղա էր: Ապրում էր Բինգյոլի դաշի գյուղը: Էդի Ռուսաստանից ցորեն էր բերում հորս համար: Էդի մավզերներ ու մոսինններ, հրացաններ էր կոխում ցորենի մեջ ու ծախում հայերին: Կառավարությունն իմացավ, դրան կախաղան պիտի հանեին, դրա կնիկն էկավ, ընկավ հորս ոտքեր՝ Մահմեդին պիտի կախեն: Հերս էլավ իր բարեկամ հյուքմաթ ղայմաղամին մոտը: Ան ըսավ՝ արդեն որոշված է, պիտի կախենք, բայց թե կարող ես՝ մի հատ ուրիշ քյուրդ բեր, դրան կախենք: Էդենց էլ արել էր հերս: Էդ դրա լավություն էլավ մեր դեմ:

Մեկ էլ տեսնամ՝ էդ մեր Մահմեդ քիրվայի տղան էկել է էդ կողմը, մեզի տեսավ: Մերս չորս լեզու գիտեր: Մերս մոտեցավ, խոսաց ընդդա հետ: Էդ Ահմեդ քիրվայի տղան իբր մեզ տանում է մորթի ու մեր շորերը տա իր երեխեքին, մեզի տարավ իրենց տուն: Էդ քրդի կնիկ ըսավ. - Ռոռանա՜մ, էդ ի՞նչ հալի եք:

Էդ ջարդի ժամանակ իմ ախպեր Անդրանիկ սաղ-սալամաթ էկեր էր էդ քիրվայի տունը, ճիշտ է, շատ կորուստ ունեցանք, բայց Անդրանիկ ողջ էր, ուրախացանք:

Իրիկունը քիրվեն էկավ, ըսավ. - Ես ձեզի չեմ կարող պահել, զաբիթներ կուգան, կտեսնան: - Դիմացը անտառ կար, մեզի տարավ անտառ, ըսավ՝ ցերեկը էստեղ կմնաք, գիշերը՝ մեր տունը: Էդ քիրվան մի հատ կտրտուկ վերմակ տվեց մեզի, օձի բերան տաս՝ օձը կմեռնի: Մերս քրոջս ոտը եզան լեզու էր կապում, էդենց լավացավ:

Քիրվան գիշերները մեզի տանում էր իր տուն, ուտացնում, խմացնում, քնացնում: Մի օր էլ քյուրդը մեր անունները փոխեց, քրդու անուն դրեց, որ չիմանան: Իմ անուն դրին Ադրաման, քրոջս՝ Գուլե, մորս՝ Ասյա, ախպորս՝ Հայդո, որ գոռում էինք, կյամ էինք քշում: Ոնց էղավ՝ ես ու մերս փախանք անտառ: Քուրս ու ախպերս կյամ էին քշում: Բռնեցին անոնց, տարան: Մերս սկսեց ողբալ. Գուլեին ու Հայդոյին տարան: Ութ-տասը հոգի հավաքում էին ու տանում:

Էդ քիրվայի տանը զուգարան չկար, տան ետև էրթում էինք: Էլա որ չիշիկ անեմ, տեսա քույրս, ախպերս եկան: Հինգ տեղով քրոջս էին խփել, ախպորս էլ աղիքները դուրս էին պրծել: Գացինք մտանք անտառ: Մերս եզան լեզվով էդ վերքերը սաղցուց: Մեկ էլ իմ գլուխ քոր էկավ, քորեցի, տեսնամ երկու որդ ձեռքիս մեջ: Դու մի ասա՝ իմ գլուխ որ քյուրդ խփել էր, վերք էր բացվել ու ես չեմ իմացել, մնացել, թարախոտվել, որդնոտվել էր: Ոչխարների ոտները որ որդնում են, էդոնց մատների արանքը շիր են քսում: Մերս առավ շիր քսեց իմ գլուխ: Ցոթ-ութ որդ թափան վերքիցս:

Քիրվան մի օր ըսավ մորս. - Տղիդ, աղջկադ տանենք Խնուս որքանոց:

Մամաս ըսավ. - Չէ՛:

Մի օր թուրքերն եկան ինձ ու մորս գցեցին ձիու առաջ: Ախպերս ու քույրս մնացին էնտեղ: Մեզի տարան Խնուս: Խնուսա ժամը բանտ են արել, մեզ կոխին մեջը: Մտանք ժամը ի՞նչ տեսնենք, մի աճուելի տեսարան: Սովից մի տասը հոգի մեռել, ուռել են: Զուգարան չկա՝ կեղտոտել են, հիվանդացել: Մի քանիսը՝ հոգի են տալիս: Ինչ անենք: Եկեղեցուն կից դպրոց կար: Մերս եկեղեցու պատուհանից ուզեց դուրս գալ՝ չստացվեց: Մերս սկսեց լաց ըլել, ըսավ. - Լա՛ռ, երանի մենք էլ սպանվեինք էն անտառի ծաղիկների մեջ, մեր լեշեր գելեր ուտեին:

Էդ մեր Խնուսա Ս. Սարգիս եկեղեցին ձորի բերանին էր շինած: Ձորի յանը մի փոքր պատուհան կար: Մերս էլավ էդ սաղ մնացած կնկտոց շալերը վեց-յոթ մետրանոց պարան ոլորեց, ինձ մեշոկի մեջ կախում էին, որ գնամ հաց բերեմ: Ոնց որ մեր Երևանի Զորագեղից շուկա գնամ, դե մեր գյուղն է, ես լավ գիտեմ: Վեց-յոթ բուխանկա առնում-տանում էի, կապում էին հացեր, վեր էին քաշում, հետո ինձի էին քաշում: Մեկ շաբաթ էդենց ապրեցինք: Մեկ շաբաթից հետո դռան առաջ պահակ կանգնած զաբթին տեսավ, որ ինձ պարանով իջեցնում են, եկավ ծեծեց ինձի, հելե իմ կողեր կցավին մինչ հիմի: Երեք օր մնացինք: Էկան դռները բացին վեց-յոթ ասկյարով, որ տանեն սպանեն մեզի: Մեզի տանում էին քաղաքի ոլոր-մոլոր ճամփաներով: Թուրքեր խշտիկներով մեզի կտանին: Վաթսուն-յոթանասուն հոգի ենք: Եկեղեցուց էլ տասը-տասներկու հոգի հանեցին: Բոլորիս կտանին սպանեն: Մերս ինձ ասաց. - Լա՛ռ, փախի՛, գնա՛ Անարենց տունը:

Ես մորիցս ձեռք չեմ քաշում: Մեկ էլ խառնվան իրար: Մերս բռնեց իմ ձեռքը, փախանք Մահմեդ աղի տունը: Մերս ասաց. - Ամա՜ն, քույրի՛կ, մենք փախել ենք: Աստվա՜ծ սիրես, մեզ տերություն արա:

Էդ կնիկ մեզ մտցրեց գոմը: Եկան երկու ասկյար ըսին. - Երկու հոգի փախան, ձեր տու՞ն մտան:

Էդ կնիկ էկավ մեզ ըսավ. - Չէ՛ որ չէ՛, չե՛մ կարող ձեզ պահել:

Մերս տվեց ոսկե ականջի օղերը, ըսավ. - Տար տուր դրանց:

Կնիկը տարավ, տվեց: Էդ շները գացին:

Ես երկու մորքուր ունեի: Մեկին բոստանչի թուրք Հասո կար, յոթանասուն տարեկան էր, քսան տարեկան հայ աղջիկ զոռով տարել էր. էդ աղջիկ էլ իմ մի մորքուրն էր: Մեկ էլ Հասոն էկավ, չարշաֆ բերեց: Մեզի տարավ աթարի ամրոցը: Մերս մի ոսկի տվեց Հասոյին: Հասոն գնաց մեր գյուղ, ըսեց. - Հովհաննեսի կինն ու տղին ես պահում եմ:

Գիշերով մեզի դրին եզների վրա: Տարան քրոջս ու ախպորս հանդիպանք էնտեղ: Էդի հրաշք էր:

Մնացինք: Դրանից հետո Մահմեդ աղա քյուրդը ըսավ. - Բաջի՛, էլ ես չեմ կարող քեզ պահել:

Էդ ժամանակ մենք Բինգյոլն էինք: Էլանք իրանք ցորեն բերին, մեզ էլ հետը, էկանք: Իմ մեր վերցրեց մեզ, մտանք մի ախոռ: Տեսանք ախորի պուճախը ձիու թրիք կար, բուղը էլնում էր: Մակեցինք թրիքը, մտանք մեջը: Մեր Խնուսա ցուրտը Սիբիրի նման է: Մենք էդտեղ մնացինք: Մերս գնում է ցորեն մաղելու: Ցորեն էր բերում: Աղաձե ենք անում, ուտում:

Մեկ էլ մի թուրք էկավ, մեզի տեսավ թրիքի մեջ

մտած, քանի որ թրիքը տաք էր: Խղճաց մեզի: Հաց բերեց: Կրակ վառեց: Մարդ ու կնիկ էին, ըսին. - Գյուղաձի դըր լար (մեղք են):

Անոնց մեջ էլ լավերը կային:

Մեկ էլ էդ թուրքը էկավ ըսավ. - Բաջի՛, գաթա կարա՞ս թխել:

Մերս ըսեց. - Էդի իմ փեշակն է: Մարդս հացթուխ էր:

Թուրքը ալյուր բերեց: Թոնդիր վառեց: Մերս գաթա սարքեց: Մի քանի հատ տվեց մեզի:

Ժամանակ անց թուրքը սանկեն կապեց, իրանք փախան: Քանի որ՝ գյավուր գելիոր (անհավատը /ռուսը/ գալիս է): Բանալին տվեց մորս:

Մերս մտածեց՝ հանկարծ համիդիե զորքը կուգա, մեզ կտեսնի: Էլանք իրար ձեռք բռնինք, իջանք ձոր: Էդտեղ գինանոց կար, թուրքեր պայթեցրին, որ ռուսների ձեռք չընկնի: Մենք սոված ենք: Իմ մեր գաթա էր պահել: Էլավ թուրքի մոր չարշաֆ գցեց իր գլխին, էդ մեզ օգնած թուրքն էլ հրացանով՝ գնացին: Մեկ էլ ետ եկավ էդ թուրքը՝ իմ մոր չարշաֆը իր ձեռին:

Մենք ըսինք. - Մեր մոր սպանի՞ր:

- Ի՞նչ սպանել: Ռուսն է եկել:

Էդի 1914 թ. դեկտեմբերի վերջն էր, երկու օրից Նոր տարի էր: Իմ մեր, որ գնում է էդ թուրքի հետ, կլսի մի տղա կասի. - Արմենակ, արի էս յան:

Իմ մեր կըսի.

- Ես ձեր քաքն ուտեմ, դուք հա՞յ եք:

- Մենք հայ ենք, ոսի հետ ենք:

Մերս կմնա էնտեղ:

Մենք էլանք, էկանք մորս գտանք: Գտանք մի հարուստ մարդու տուն: Բերին լցրին ուտելիք, հագնելիք: Ձիան նալ ու մեխ ենք կրում: Սկսինք լավ ապրել: Դուրս էկան հայ կանայք, տղամարդիկ՝ թաք ու բիր: Սկսան քոչարի պարել: Նոր տարի ա իբր: Կնիկները գժված երգում են՝

Ու՞ր է իմ մարդ
Ու՞ր է իմ ախպեր,
Ու՞ր են երեխեք:

Մնացինք մի ամիս: Հետո էլանք, լցվեցինք փուրգոնները, գնացինք դեպի Ալաշկերտ՝ ռուսական սահման էկանք: Ալաշկերտ մեծ որբանոց կար: Ես ու իմ ախպեր մտանք որբանոց: Մերս էղավ ճաշ էփող: Էդտեղ չորս հարյուր որբ կար: Քույրս հիվանդանոցը կաշխատեր: Սիրահարվավ հեքիմ Սիմոնի տղի հետ, ամուսնացավ:

Մի տարի հետո ռուսը ետ գնաց: Մենք նորից ցիրուցան էղանք: Մենք անցանք Մասիսի յանից, եկանք, Սմբատ զորավարը մեզի բերեց: Ճամփին գնացինք Ջուլֆայով, Գորիսով, Նախիջևանով, էկանք հասանք Երևան՝ Կոնդ:

Ես ինչ որ տեսել եմ, էն իմ տեսածը պատմեցի ձեզ: Ամբողջ աչքիս դեմն է իմ տեսածը: Խնուսից ոչ մի բան չենք բերել: Միայն ջաններս ենք ազատել:

Մեր գերդաստանը հարյուր քառասուն երեք հոգի էին. մի քուր, մի ախպեր, մերս ու ես փրկվանք:

Էդ Առաջին համաշխարհային պատերազմն էր: Ես մասնակցել եմ Երկրորդ համաշխարհային պատերազմին: Փոթիում կովելու ժամանակ գերի եմ ընկել: Գերմանիա են ինձ տարել: Ուզեցան Ամերիկա ինձ տանել, բայց հինգ երեխա ու կինս գիտեի, ինձ են սպասում: Բայց հաղթանակից հետո ինձ ուղիղ քշեցին Սիբիր: Ինը տարի Սիբիր աքսորված մնացի: 1954 թվին ազատեցին, բայց Երևան իրավունք չտվին ապրեմ: Ղափանի մոլիբդենի հանքերում եմ աշխատել: Մոնտաժնիկ եմ աշխատել, գործարան եմ կառուցել, 1962 թվին եկա Երևան ու ինձ արդարացրին:

13 (13).
ՀՐԱԶ ԵՂԻԱԶԱՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1915 Թ., ՄՈՒՇ, ՀԱՎԱՏՈՐԻԿ Գ.)

Մեր նախնիները եկեր են Զեյթունից: Բնակություն հաստատել Մուշի Հավատորիկ գյուղում: Շատ անգամներ ընդհարվել են թուրքերի հետ: Մեթուկը մեր նախնիներից էր: Նա Զեյթունից եկել է Սասուն, Աղբի գյուղ: Սասունցիների մոտ սովորություն կար, որ բոլորը պետք է պարեն: Մեթուկը վիրավոր ու կաղ կսկսի պարել: Բոլորը կզարմանան: Մեթուկը կասի. - Ինձ կարգեք:

Մեթուկ կամուսնանա, կունենա չորս տղա: Տղաներ կմեծնան, լավ, երևելի տղաներ կդառնան: Մեր մեծեր կպատմեին, որ Մեթուկ տղաներեն մեկն ուղարկեց Մշո նահանգի Փեթար գյուղ, մյուսը՝ Հավատորիկ գյուղ, երկուսը մնացին Աղբի գյուղում: Մեթուկ դարձավ ունեվոր, կառուցել տվեց մի եկեղեցի: Մեր գյուղի կոլխոզի հավատորիկցի նախագահ կպատմեր, որ իրենք կգնային էդ եկեղեցին, որի խորանի վրա փորագրված էր Մեթուկի ձեռքը: Նրան կոչել են Տեր Խմե: Կըսեն, թե՝ էդ եկեղեցին մինչև հիմա էլ կա:

Աղբիում մնացել են Մեթուկի շառավիղները: Էդ գյուղ լրիվ հայեր էին:

Հավատորիկ գյուղում իմ պապին՝ Գրեյան Հովհաննեսը, ունեցել է չորս տղա: 1915 թ. մեր տան մեջ եղել են երեսուներկու ան՛, որից քրդերը երեսունին լցրել են գոմեր ու վառել և միայն երկու հոգի է ազատվել՝ Եղիազար և Կաժե՝ քույր-եղբայր Խաչատրյանները:

Մուշ քաղաքում իմ հայր ամուսնացել է: Գաղթի ժամանակ իմ փոքր եղբայր եղել է քառասուն օրական: Գաղթի ճամփին Փեթարա Ախոն և Մանուկ՝ Գևորգ

Չավուշի* խմբից էին: Գաղթի ճամփին բոլորը հոգնած, չարչրկված, բեռնավորված քայլելիս էդ երեխան կնչա: Գաղթականները կրսեն. «Թուրքերը մեզ պիտի հետապնդեն երեխու ձայնը լսելով»: Նրանք կստիպեն մորս, որ երեխան գցի ու բոլորի հետ փախնի: Իմ մայր ստիպված երեխան կտանի կդնի ճանապարհի դրան: Մի քիչ հետո իմ տատին, երբ գալիս է սայլով, հեռվից տեսնում է, որ դա իրենց երեխայի բալուլն է, կրսե սայլապանին. - Գրքո՛, լաո՛, էսի մեր Թամմի բալուլ չէ՞, - սայլը կանգնեցնում է:

Գրքոն գնում է բալուլը բերելու, իմ տատ կասի. - Սա մեր երեխան է:

Երբ ազատվում են և հասնում են տեղ, Փեթարա Ախոն հանդիպում է Գրքոյին, գրկում ու համբուրում է ասելով. - Այս երեխան դու նոր պարգևեցիր մեզ:

Առաջ երեխայի անուն եղել է Հարություն, իսկ Ախոն ասում է. - Երեխայի անունը պետք է լինի Ֆարման, այսինքն՝ հրաման, քանի որ հրաման էր եկած, որ պիտի գաղթենք: Հետո Ֆարման Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գնաց բանակ ու զոհվավ:

Մեր գաղթի մասին Անդրանիկ Զորավար հայտարարել էր, թե՝ Ջուլֆայի կամուրջ թուրքեր գրաված են, մնում է միմիայն մենք մեզ կարողանանք պաշտպանել:

Այնուամենայնիվ, Անդրանիկի և Ախոյի անմիջական աջակցությամբ կարողանում են կամուրջից անցնել ու ազատվել: Եկան բնակություն հաստատեցին Թալինի շրջան:

Այստեղ մերոնք որ եկել են, եղել են վեց տուն թուրք և վեց տուն հայ: Հայեր եկան թուրքերին կոտորեցին ու բնակություն հաստատեցին Վերին Բազմաբերդ գյուղում ու մտան նրանց տները: Վերջում թուրքերը բերում էին իրենց մոտ մնացած հայ երեխաներին ու փրկագնով ծախում էին: Քույրս մեկ ոսկի էր տալիս ու գնում էր երեխեքին:

Հայրս եղել է անգրագետ, միայն գիտեր գրել իր անունը: 1937 թ. նրան հիսուն տարեկան հասակում աքսորեցին: Մեզ կուլակաթափ արեցին:

14 (14).
ԽԱՉԱՏՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1898 Թ., ԲԻԹԼԻՍ, ՀԱՎԱՐԻՔ Գ.)

Մորս անունը Նուբար էր, հորս՝ Հարություն, մեծ մայրս՝ Քոթո, աղբերներս՝ Մարգար, Միրոն, Մկրտիչ: Բոլորս մեկ տունի մեջ կապրեինք: Մեր գյուղում երկու հարյուր-երեք հարյուր տուն հայություն կար, թուրքեր, արաբներ շատ կային: Կցանեինք ցորեն, գարի: Հողի համար տասնվեց փութ ցորեն հարկ կտայինք: Ես մինչև տասնհինգ տարեկան հորս հետ կաշխատեի:

Մեր գյուղում մի եկեղեցի կար Ս. Աստվածածին անունով: Գյուղի մեջ դպրոց չկար: Մեր գյուղի ջուրը հինգ օր մեզ կուտային, հինգ օր՝ թուրքերին, խմելու ջուրը պաղ աղբյուրից կբերեինք: Ունեինք ոչխար, այծ, կով, եզ: Միայն մենք հարյուր-հարյուր հիսուն հատ ոչխար ունեինք մեր գոմի մեջ: Իմ հեր կերթար Բիթլիս շուկա, ամեն մարդու ջոկ-ջոկ բան կառներ, կբերեր:

Հետո սկսեց կոտորածը: Ֆեդայիներ կային, լավ կռվան, բայց կոտորվան: Ես Անդրանիկի խմբի մեջն էի: Մեր ձեռքին գերմանական զենք կար: Անդրանիկ Դրոյի հետ չուներ: Անդրանիկ կուզեր անցնի երթա արտասահման՝ չթողին: Թուրքական խմբեր եկան, մենք՝ պարտվանք:

Եկանք: Էստեղերքը բոլո՛ր քրդեր էին, կռվեցինք, դրանց հանինք դուրս: Մենք մտանք իրանց տըներ, ապրանք:

Պատերազմի ժամանակ սովետական բանակ գնացի: Կռվել եմ Գորիի, Սոչիի, Բաքվի ճակատներում:

Հիմա երեք տղաներիս հետ կապրիմ:

15 (15).
ԹԱԳՈՒՀԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ԲԻԹԼԻՍ)

Երբ տեղահանությունն սկսավ, ես տասնհինգ տարեկան էի: Թուրքական կառավարութենեն հրաման եկած էր, որ այր մարդկանց հավաքեն զինվորության, իսկ մնացածին աքսորեն, հետո՝ ջարդեն:

Մեծ հայրիկիս ու մեծ մորեղբայրիս տարին թուրքի բանակ, որովհետև իրենց մեկ ազգականը կառավարական պաշտոնյա էր: Ասոր համար չձգեցին, որ մեզի հետ աքսորվին: Ես տունին միակ աղջիկն էի: Եղբայրներս՝ Հարությունը, Սիրեկանը, Գրիգորը, մեր տունին թանկարժեք առարկաները տունին տակը տարին, պահեցին: Ինչ որ պետք էր, առինք հետերնիս: Զաբիթները ասում էին. «Հայդէ՛, էրմէնիլէր, արաբալարընա բինդիրդիլէր» (Դե՛, հայե՛ր, շտապե՛ք, սայլերի մեջ լցվեցե՛ք):

* Գևորգ Չավուշ (1870, Սասուն – 1907) – հայ ազգային ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի: Զորավար Անդրանիկի զինակից:

Գառնիկ էֆենդիին ձեռքերը քելեփչե դրին, տարին:

Մեզի Կոնիա տարին: Հոն թուրք մը եկավ, պապայիս ըսավ. «Քըզընը բանա վէրիր սեն, սիզի քաչըրըրըմ» (աղջկադ եթե ինձ տաս, ձեզ կփախցնեմ): Նե՛ պապաս, նե՛ մամաս՝ չտվին: Պապաս ճամփին մեռավ, չորս կնիկ եկան, ձեռք ու ոտքեն բռնեցին, տարին փոս մը փորված էր, նետեցին մեջը, ես ադ տեսա: Ադ փոսը ուրիշ շատ հիվանդներ ողջ-ողջ նետեցին, կամ սուրերը կտնկեին, հայերուն, լո՛փ, վրան կնետեին, որ մեռնին: Արյունները ամե՛ն կողմեն կվազեին… մոռցվելիք բա՞ն է: Կհիշեմ, երկինքեն ալ չեքիրգե կտեղար: Մեկը՝ անոթութենեն չեքիրգե կուտեր, մյուսը՝ կովին արյունը կուտեր: Հորաքույրս սատկած կովին արյունը թենեքեի մը մեջ եփեց, մենք կերանք: Յա՝ պիտի մեռնինք, յա՝ պիտի ապրինք: Ձիերուն քալած տեղը չիշ, անձրև լցված էր, ադ ալ ջուրի պես խմեցինք, ի՞նչ ընենք՝ ծարավ ենք: Ջուր կփնտրենք, ջուր՝ չկա: Ես եմ, իմ ետևես հորաքույրիս չոջուխները, բոլորս ալ ծարավ ենք: Մամաս ու եղբայրս շատ ծանր հիվանդ էին, անոնց ճամփին ծառի մը տակ թողեցինք, քանի որ այսօր-վաղը մեռնելիք էին: Իմ քովս անթիկա վազո մը կար բախըր, ան ալ թուրքերը գողցան, վրայիս ոսկիներուն հետ: Ետքը իրարանցումը սկսավ. աղջիկ կփախցնեին, շատերը կփախչեին, որ չբռնեն: Ես մենակս մնացի մի տեղ ինկած, իբր մեռած եմ, բայց կտեսնայի շատերը Եփրատ գետը նետվեցան ողջ-ողջ, ես՝ չնետվեցա: Հոն ինկած էի. արևը մայր մտնելու վրա էր, սկսա մտածել՝ գիշերը վրա կուգա, կվախնամ գայլերը ինձի պիտի ուտեն: Մեկեն ուժ մը եկավ վրաս: Ելա, սկսա քալել: Հեռուեն ուղտ մը տեսա, խորհեցա, թե անպայման մարդ կա այդ կողմերը: Նորեն քալեցի, մինչև մոտեցա, մութը ինկավ: Փոթորիկ մը ելավ, փոշին պատեց ամեն տեղ:

Հազիվ տեսա քով-քովի վրաններ, մեծ շունչ մը առի: Առաջին վրանին հասա, շունչս կտրվում էր: Արաբ կնիկ մը տեսա: Ան ինձ օգնեց, կերակուր տվավ, ներս տարավ, ոջիլներս մաքրեց, ինձ լվաց: Ադ բեդվինները անապատը կապրեին, ոչխար, ուղտ կպահեին: Ադ կնիկը չոջուխներ ալ ուներ: Հոն ուրիշ հայ աղջիկներ ալ կային, կհիշեմ Ազնիվ Կրբաչյանին: Անոր անունը Մարիամ դրած էին, Մարիամ թաուլ կըսեին, թաուլ արաբերեն մեծ կնշանակե, իմ անունն ալ Մարիամ զուղայար, այսինքն՝ փոքր Մարիամ դրած էին: Հոն մենք իրար հետ հայերեն կխոսեինք: Թուրքերուն ձեռքը չիյնալու համար բեդվինները մեր երեսները կանաչ մելանով դաջել էին: Բոլորս տասներկու հայ աղջիկ էինք: Հոն բացօթյա տեղ մը փաշա մը կար: Ամեն օր մեկ հայ աղջիկ կտաներ իր քովը: Ադ փաշան հարեմի պես բան մըն էր շինած:

Օր մը դուռին առջևը նստած էի, մեկը ինձի ըսավ. «Յա՛, բնթի՛, բնթի՛ (Ա՛յ, աղջի՛կ), քեզի ուղտի վրա պիտի նստեցնեմ, չիյնաս»: Ես ելա, ուղտի վզին փաթթվեցա:

Ադ արաբ մարդը ուզեց ինձ հետ ամուսնանալ: Ես ըսի. - Կամուսնանամ քեզի հետ, պայմանով, որ եղբորս գտնաս. «Կգտնա՛մ» ըսավ արաբը:

Ադ բեդվիններու քովը հաց եփել սորվեցա, ծառի չորցած փայտերեն կրակ կվառեի և կրակին մոտ երկա՛ր ժամեր կմնայի, բոլորին համար հաց կեփեի: Ադկե է, որ աչքիս բիբը վնասված է, մինչև հիմա մեկ աչքով կտեսնամ միայն:

Օր մըն ալ բեդվիններուն մոտ վաճառական մը եկավ՝ այծեր, ոչխարներ առնելու, որ տանի Սուրիա, Մուսուլ…

Ես արդեն բեդվին ամուսինես երկու տղա ունեցած էի: Ադ բեդվին ամուսինս ինձի շատ կսիրեր, կըմեղքնար ալ: Օր մը ըսավ. «Եկուր էրթանք Մուսուլ, հոն շատ հայեր կան: Մեր ծանոթ վաճառականն ալ հոն է, կարող է քո եղբորը գտնենք»:

Մենք պատրաստվեցանք, երկու զավակով գացինք Մուսուլ: Տուն վարձեցինք: Ադ բեդվին ամուսինս ինձի շատ կսիրեր: Սուտ չեմ կրնար խոսիլ, հոգի ունիմ տալու: Ինչ որ պետք էր, ամուսինս կբերեր շուկայեն, բայց հոն երկու զավակներս ալ հիվանդացան, մեռան: Բեդվին ամուսինս իրեն ծանոթ ադ վաճառականին միջոցով դիմեց հայկական եկեղեցիին, թերթերու միջոցով իմացանք, որ եղբայրս Եգիպտոսում է: Սկըսվեց դժվար վիճակ մը: Բեդվին ամուսի՞նս, թե՞ հայ, հարազատ եղբայրս: Կուլայի՛, կողբայի՛: Ամուսինս տեսավ վիճակս, մեղքցավ, ինձի ազատ թողեց: Մինակս ճամփա ելա դեպի Սուրիա, հետո Լիբանան, անտեղեն ալ՝ Եգիպտոս, գտա եղբորս: Ժամանակ մը հետո ամուսնացա հայ Արզերունյանի հետ, ունեցա երկու զավակ՝ Աբրահամին և Ջարուհուն:

Եգիպտոսեն ալ եկանք հոս՝ Լոս Անջելես, աղջիկըս՝ Ջարուհին, նկարչուհի դարձավ, տղաս՝ Աբրահամը, ոսկերչական ֆաբրիկա ունի: Ես ալ հանգիստ կվայլեմ իմ ծերությանս օրերը…

16 (16).
ՍՈԿՐԱՏ ՀԱԿԵՅԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1901 Թ., ԲԻԹԼԻՍ ՆԱՀԱՆԳ, ԽԼԱԹ ԳԱՎԱՌ, ՓՐԽՈՒՍ Գ.)

Մեր գյուղը՝ Փրխուսը, գտնվում էր Արևմտյան Հայաստանի Խլաթ (պատմական Բզնունիք) գավառում, Նազիկ լճի ափին, Նեմրութ լեռան դիմաց, որից դեպի արևմուտք տարածվում էր Մշո դաշտը, հարավում՝ Վանա լիճը, իսկ արևելքում՝ Սիփանը: Մեր գյուղն ուներ ծուռումուռ փողոցներ, հողածածկ, մեկը մյուսին թիկնած երդիկներով կտուրներ: Գյուղացիների բնակարանները և անասնագոմերը իրար կից էին, մարդիկ և անասունները շնչում էին նույն օդը: Գյուղում կար կարմիր տուֆից եկեղեցի: Մեր գյուղի մոտն էր Նազիկ լիճը, որի մասին պատմում էին, թե արաբական նժույգները սերվել են նրա խորքերից: Նազիկի ջրերում կարմ-

րախայտ ձկներ կային, որոնք բացի համեղ լինելուց նաև բուժիչ հատկություն ունեին: Նազիկից սկիզբ էր առնում Թլբի գետակը, որը գնում-թափվում էր Վանա լիճը:

Նեմրութ լեռան հարթ գագաթներից մեկի վրա պայծառ օրերին խոշոր մարդանմանի քարեր էին երեվում: Ժողովուրդը լեգենդ էր հյուսել, թե շատ հին ժամանակներում ամոանը ինչ-որ հովիվ իր հոտի հետ բարձրանում է լեռը: Հանկարծ երկինքը խառնվում է, լեռը սուզվում է ամպերի մեջ, և սկսում է հորդ անձրև տեղալ ու չտեսնված մեծությամբ կարկուտ: Դրա համար էլ գյուղում երգում էին.

«Երկինք ամպեր, կուգա կարկուտ,
Կուգա գոլի քամբախ Նեմրութ»:

Սարսափած հովիվը ծնկի է գալիս և Աստծուց աղերսում է փրկություն՝ խոստանալով իր հոտի ամենալավ թոխլին մատաղ անել իրեն: Անձրևն ու կարկուտը միանգամից դադարում են: Արևը ժպտում է: Ծիածանը կամար է կապում: Հոտը և հովիվը փրկվում են: Բայց հովիվը ընտիր թոխլիի փոխարեն իր վրայից մի չաղ ոչիլ է բռնում, դնում իր բութ մատների եղունգների արանքը, ջարդում այն ու գլուխը վեր բարձրացնելով՝ գոչում. «Ամենակարո՛ղ Տեր, ընդունված համարիր մատաղս»: Եվ, իբր թե, Աստված այդ խոսքերի վրա զայրանալով՝ հովիվին իր ամբողջ հոտի հետ քար է դարձնում:

«Էնի անաստված հովիվ էր, լաո՛, էդոր հապով որ պատիժ ստացավ, լաո՛», - ասում էր պապս:

Մայրս փոքր-ինչ գրագետ կին էր և մի ձմեռ ինձ դպրոց ուղարկեց՝ մի պատահական գիրք տալով ձեռքս: Այնտեղ ես հազիվ գրաճանաչ դարձա:

Մեր գյուղում ցանում էին ցորեն, գարի, կտավատ, կանեփ, կաղամբ, շաղգամ և այլ բանջարեղեն: Գյուղում զարգացած էր անասնապահությունը: Մեր գյուղը քիչ էր կապված նահանգային Բիթլիս քաղաքի հետ:

Յոթ տարեկանից աշխատել եմ հորս հետ, լուծ եմ քաշել, տավար պահել:

1913-14 թ. ձմռանը երևաց պոչով աստղը: Մեծերից շատերը գուշակություններ էին անում. «պատերազմ է լինելու. գետերով արյուն է հոսելու» կամ՝ «երկրաշարժ է լինելու», «սով է լինելու»:

1914 թ. կիզիչ ամոանը թեթև քամուց ծփում էին հասած ցորենի ու տարեկանի արտերը: Հանկարծ հեռվից նկատեցի մի ձիավոր, որը դեպի մեր արտն էր գալիս: Նա մոտեցավ և հորս հայտնեց, որ պատերազմ է սկսվել, պետք է գնալ գյուղ, զորահավաք է:

Մեծահասակ տղամարդկանց անգամ բանակ էին զորակոչում, որպես բեռնակիրներ, «դամուռ բաշիներ»: Հայկական լեռնաշխարհի դաժան ձմեռվա պայմաններում Բիթլիսից, Վանից, Էրզրումից, Խարբերդից, Սեբաստիայից և այլ վայրերից հայ մեծահասակ մարդկանց շալակն էին տալիս երեք, չորս փութ գարի, որպեսզի հայ տարեց մարդիկ Սարիղամիշ, տանկական բանակին սնունդ հասցնեն: Դա հայ տղամարդկանց սուսուփուս, ցրտից ու սովից ոչնչացնելու ամենադաժան, ամենանենգ, ամենամարդակուլ ու նողկալի ծրագիրն էր, որ սկսվեց 1914 թ. Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից, և հարյուր հազար հայ տղամարդկանց դիակներով ծածկվեցին ձմեռային ձյունածածկ ճանապարհները: Իմ հորը էլ տարան, որպես բեռնակիր, և մենք նրան այլևս չտեսանք: Այդ հրեշավոր արարքը միայն մի նպատակ էր հետապնդում՝ դատարկել հայկական գյուղերը տղամարդկանցից, որպեսզի հետո անպաշտպան կանանց, երեխաներին ու ծերերին մորթեն հեշտությամբ:

Լուրեր էին գալիս, որ Սարիղամիշում տանկական բանակն ամբողջովին ջախջախվել է, որ նրանց մի մասը սառել, փայտացել է Սարիղամիշի անտառներում, որ նրանց դիակներով է ծածկվել ամբողջ անտառը: Ասում էին, որ այդ սպանդից միայն Էնվեր փաշան է կարողացել ազատվել՝ խայտառակ փախուստի միջոցով: Ասում էին, որ անվախ ռուսը, որ ձյունից ու սառնամանիքից վախ չուներ, տաք հագնված քշում է աղաձնակեր տանկական բանակին: Ասում էին, որ շուտով փրկություն կլինի:

1915 թ. մարտ ամսին մեր գավառ և մեր գյուղ հասան Սարիղամիշում ջախջախված տանկական բանակի ողբալի մնացորդները՝ ցնցոտիապատ, կմախքացած, ոջլի մեջ կորած, տիֆով ու դիզենտերիայով վարակված:

1915 թ. գարնանը Ալաշկերտի անառիկ Ջիլանի լեռներում ու ձորերում բնակվող քրդերը ռուսական բանակի առաջխաղացման պատճառով փախչում էին դեպի արևմուտք: Այդ խուժանը թուրքական կառավարությունից հրահանգ էր ստացել՝ կողոպտել գյավուրներին, սրի քաշել՝ չխնայելով ոչ կանանց, ոչ երեխաներին և ոչ էլ ծերերին:

Ապրիլյան մի օր այդ խուժանը՝ զինված բիրդանգի հրացաններով, մեր գյուղ հասավ և երեկոյան շրջապատեց այն: Մութը չընկած, գերեզմանների մոտ ընթանք սպանեցին մի տղամարդու: Ոչ ոք սիրտ չարեց նրա մոտ գնալ տեսնելու՝ մեռե՞լ է, թե՞ դեռ ողջ է: Ընտանիքներով հավաքվել էինք իրար մոտ: Օղակված գյուղից ոչ ոք չէր կարող դուրս գալ: Քրդական այդ ոհմակը սիրտ չարեց գիշերով գյուղ մտնել: Առավոտյան, երբ տեսան, որ ոչ մի դիմադրություն չկա, չորս կողմից իրենց կանանց հետ, սպանելու և կողոպտելու նպատակով այնպիսի վայրագությամբ գյուղ խուժեցին, ինչպես ձմռան քաղցից ոռնացող գայլերի ոհմակն է հարձակվում իր անպաշտպան ու անզեն զոհի վրա: Սկզբում ոչնչացնում էին միայն յոթանասուն-ութսուն տարեկան ծերունիներին, հետո սկսեցին հոնձել և պատանիներին: Իմ աչքի առաջ մեր շեմի վրա սպանեցին իննսուն տարեկան պապիս: Առավոտից մինչև մայրամուտ գյուղի բոլոր թաղերից անընդհատ կրակոցներ էին լսվում: Ոչ մի գնդակ զուր չէր անցնում: Ծուտով փողոցներում ու տների ներսում կուտակվեցին դիակներ: Դիակներ էին ընկած նաև կտուրների ու ճամփեքի վրա: Մայրերը կորցրին երեխաներին, երեխաները՝ մայրերին, քանի որ չէին թողնում մի տեղ մնալ: Մարդկանց քշում էին փողոցից փողոց: Ես էլ կորցրեցի մորս ու քրոջս: Հետո չգիտեմ ինչպես, մայրս կիսախելագար վիճակում ինձ գտավ, տարավ բարձր պատեր ունեցող մի բակ, ուր սարսափից կծկված, պատին կպած էին մի քանի կին:

Չանցած մի քանի րոպե, հանկարծ երկու քրդեր մի զույգ հրացանի փողեր վերևից ուղղեցին մեզ վրա: Ատամները թափված մի քյուրդ բիրդանգի հրացանը դեմ արավ կրծքիս՝ ասելով. «Տղա՛ է. բավական է, պետք է ոչնչացնել»: Մի ակնթարթում նկատեցի, թե ինչպես մայրս կուացած համբուրում է ծեր քրդի ոտքերը և խնդրում, որ ինձ չսպանի: Քյուրդը սկսեց տատանվել, ես իսկույն թողեցի մորս ու ծուռումուռ փողոցներով փախա քեռուս տան դիմացի բակը: Մի փոքր հետո մազերը արձակ, շնչահեղձ, մեռելի գույն ստացած մայրս բակ մտավ՝ ասելով. «Սպանու՛մ են, ո՛չ մի տղա չեն թողնու՛մ, արդեն շատ տղաներ իրենց արյան մեջ ընկած են փողոցներում: Գնա՛նք, գնա՛նք այստեղից, հիմա ուրիշ քրդեր կգան, կսպանեն մեզ» և ուժով ինձ քարշ տվեց իր ետևից, ու մենք մտանք քեռուս տուն: Այնտեղ իմ հասակակից քեռուս տղային՝ Բենիամինին, մի քանի րոպե առաջ էին սպանել, և նա անշնչացած էր իր արյան մեջ: Մայրս ինձ պառկեցրեց նրա մոտ ու նրա արյունից մատով առավ, ինձ վրա քսեց, իբր ես էլ եմ մեռած: Հետո ինձ տարավ փողոց, սպանվածների մեջ պառկեցրեց, ուր կանայք կիսախելագար պոկում էին իրենց գլխի մազերն ու հագուստները: Դեղեցիկ հարսներն ու աղջիկները մրով ու ցեխով այլանդակում էին իրենց դեմքերը, որ չգերվեն ու բռնի կերպով քրդի կին չդառնան: Բայց հաճախ այդ չէր օգնում, և շատերի մազերից քարշ տալով՝ նրանց բաժանում էին իրենց հարազատներից ու տանում: Րոպե առ րոպե փողոցներում և տներում բարձրանում էին դիակների կույտերը: Ես պառկած էի դեռ մի երկու ժամ առաջ կենդանի, պայծառ դեմքերով իմ հարազատների, ընկերների ու հարևանների դիակների մեջ, որոնց շրջապատել էին կիսախելագար կանայք, այդ թվում և իմ մայրը: Նրանք մոնչում էին՝ իրենց զավակների, եղբայրների ու ամուսինների գլուխները գրկած: Շատերին՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց բռնում, տանջամահ էին անում՝ պահանջելով ցույց տալ թաքցրած ապրանքների, ոսկու և արծաթի տեղերը: Արևը արդեն մայր էր մտել, հրացանների կրակոցները դեռ չէին դադարել, երբ կենդանի մնացած կանանց ու երեխաների մեջ լուր տարածվեց, որ ժողովուրդը փախչում է դեպի Նազիկ լիճը:

Մոտ չորս հարյուր տնից բաղկացած գյուղը արյունով ու արտասուքով ողողելուց հետո բորենիների ոհմակը հեռացավ գյուղից, իսկ խելակորույս ժողովրդի մնացորդները, առանց իրենց հաշիվ տալու, փախչում էին, բայց ու՞ր, իրենք էլ չգիտեին՝ հարազատների արևի տակ ուռած, այլանդակված դիակները թողած գետնին: Մայրս, որ ամբողջ ժամանակ իմ կողքին էր, գլխի վրա արդեն մազ չէր թողել: Նա ինձ շտապ ոտքի հանեց՝ գյուղից փախչելու համար: Մի երկու փողոց դեռ չէինք անցել, երբ հանկարծ դիմացի տնից դուրս եկավ մի զինված քյուրդ, վազեց դեպի ինձ: Հենց այդ պահին փախչում էր նաև Սիմոնը, որը իմ ընկերն էր: Քյուրդը ինձ թողեց, նրա ետևից վազեց: Օգտվելով առիթից, ես կտուրների վրայով փախա դեպի մեր տունը: Մտա ու թաքնվեցի աթարի ամրոցի տակ: Մնացի այնտեղ մինչև գիշեր: Դուրս եկա: Ուզեցի տուն մտնել, բայց պապիս անշնչացած մարմինը ընկած էր շեմին: Որոշեցի ետ գնալ, նորից պառկել դիակների մեջ, բայց այստեղ էլ ես գտա մորս՝ փոքր եղբորս սեղմած կրծքին: Նա ինձ տեսավ, չհավատաց, որ կենդանի եմ, տարավ հարևանի տունը, ուր մի խումբ կանայք և երեխաներ մթության մեջ, տան անկյունում կքած էին: Ես ջուր ուզեցի, բայց ջուր էլ չէր մնացել: Ամեն ինչ կոտրել, թափել էին: Առավոտյան մենք բռնեցինք փախուստի ճամփան: Գյուղից փախչող կանանց և երեխաների խմբերը գրիվ եկան տարբեր ուղղություններով, ոմանք վաղ առավոտյան լեռնահովիտներով փախան Խոլիկ հայկական գյուղը, որին շատ մոտ էր կանգնած ռուսական բանակը, և հեշտությամբ ազատվեցին: Մենք ձորը մտանք: Փախստականները սկսեցին ուտել գարնանային թարմ կանաչն ու խմել վարարած գետի ջուրը: Մայրս փոքր եղբորս պառկեցրեց գետի ափին, մի մեծ ժայռակտորի տակ, կանաչների վրա և ինձ պատվիրեց, որ չհեռանամ երեխայի մոտից: Իսկ ինքը գնաց դեպի Սպռաձոր հայկական գյուղը՝ մի քիչ ուտելու բան ճարելու: Բայց հազիվ էր հեռացել, մի խումբ քրդեր գոռալով, հայհոյելով սկսեցին կրակել գետի ափին, ձորի մեջ գրիվ եկած փախստականների՝ կանանց ու երեխաների վրա: Ջորը լցվեց կանանց ու երեխաների վայնասունով: Ես թողեցի եղբորս, թաքնվեցի քարակույտի ետևում: Մայրս կրակոցի ձայները լսելով՝ շնչակտուր ետ եկավ, կանաչների վրայից վերցրեց եղբորս ու աչքերով ինձ փնտրեց: Երբ քրդերը հեռացան, ես դուրս եկա, մոտեցա մորս: Մենք բարձրացանք դեպի լիճը: Հանկարծ մեզ վրա հարձակվեց քրդերի մի այլ խումբ: Նրանցից մեկը աչքը տնկեց իմ մեծ կոշիկներին, խանչալը հանեց, որ ինձ սպանի: Մայրս ընկավ նրա ոտներին, բայց նրա գութը չշարժվեց: Մի քրդի կին նրան չթողեց, որ կրակի: Ես փախա դեպի Խիարտանք գյուղը, ուր եկավ նաև մայրս՝ հարյուր հիսուն սոված ու ծարավ փախստականների հետ: Մենք այնտեղ մնացինք մի որոշ ժամանակ: Հունիսի սկզբներին մարդիկ եկան հայտարարեցին, որ սուլթանի նոր հրամանով ամեն տեղ արգելվել է հայերի կոտորածը, և կենդանի մնացածները բոլորն էլ իրենց գյուղերը պետք է վերադառնան: Մենք ստիպված վերադարձանք:

Մեր Խլաթ գավառի քսաներեք հայկական գյուղերի մի մասը նստած էր Նեմրութի փեշերին ու լանջերին: Նրանց բնակիչներն ամբողջովին սրի էին քաշվել: Հիմնահատակ կործանվել էին Խլաթ գավառի հայկական բոլոր գյուղերը՝ Ագրակը, Հաղաղը, Էյմալը, Թեղվուտը, Թուխը, Տափավանքը, Խուլիկը, Խոտաձորը, Ծաղկենը, Ծղակը, Կոշտյանը, Կծվակը, Կամուրջը, Հերսոնքը, Ջիզիրեն, Մեծքը, Մատնավանքը, Ջամուլդին, Շամիրամը, Ուրթափը, Ջրհորը, Սպռաձորը, Միանձակը: Հասնելով մեր գյուղը՝ մենք լցվեցինք գյուղի վերին մասում գտնվող մի մեծ տան մեջ: Քաղցած ու ծարավ, իրար թիկնած, այդ տանջալի գիշերը մի կերպ լուսացրինք: Առավոտյան քրդերը եկան մեզ գտան, հարս ու աղջիկներին մեր աչքերի առաջ բռնաբարեցին: Մի տղա կար, որ աղջկա շորեր էր հագած, նրան էլ որպես աղջկա տարան, բայց երբ զգացել էին, որ տղա է, սպանել էին: Մենք նրա դիակը տեսանք, երբ

մորս, փոքր եղբորս ու քրոջս հետ փախչում էինք դեպի լիճը: Ճամփին մեկ տարեկան եղբայրս մեռավ: Մենք մեր ձեռքերով հողը փորեցինք, նրա խաղձարուրը թաղեցինք: Մայրս ինձ հանձնեց ծանոթ քյուրդ Բինբոյին, որ նրա մոտ հոտաղ աշխատեմ: Բայց նա մորս և քրոջս չպահեց: Նրանք կրկին վերադարձան եղբորս շիրմի մոտ, ավերակ բակը:

Մի քանի օրից քրդերը խուճապի մատնված սկսեցին փախչել դեպի Մշո դաշտ: Նիկոլայ Երկրորդի զորքը առաջ էր շարժվում: Հայաշատ մեր Խլաթ գավառում ոչ մի հայի շունչ չկար: Նրա բոլոր գյուղերի բնակիչներին սրի էին քաշել: Հիմա հերթը հասնում էր Մշո դաշտին ու նրա լեռնային մասերին՝ Սասունին:

Ես շտապ գնացի, մորս գտա եղբորս շիրմի վրա լաց լինելիս: Մայրս դժվարությամբ բաժանվեց ինձանից: 1915 թ. հունիսին, որպես գերի, իմ քյուրդ տիրոջ հետ ճամփա ընկա դեպի Մշո դաշտ: Ջիզրեն գյուղի քրդերը ահաբեկված փախչում էին: Քյուրդ Բինբոն իր սայլին լծել էր չորս եզները, վերջին լուծի վրա նստել էի ես ու քշում էի եզներին: Անցանք մեր գյուղի դաշտերի մոտով: Ոչ մի երդիկից ծուխ չէր դուրս գալիս: Ես արդեն ամեն ինչով քրդի էի նման: Անունս փոխել էին՝ Սոկրատը դարձրել էին Ավդըլբաղի, մազերս խուզել էին քրդական ձևով և գլխիս քոլոզ էին դրել: Բայց քրդի լամուկներն իմացել էին իմ հայ լինելը և մի օր, երբ հոտաղության էի անում, ինձ բռնեցին և խաչաձև դրված իրենց փայտերի վրա ստիպեցին հայհոյել քրիստոնեական խաչին: Ես չենթարկվեցի. նրանք ամբողջ մի կաթսա կաթը իմ գլխի վրա թափեցին՝ ի նշան վրեժխնդրության ու գնացին: Նրանցից մեկը ետ մնաց ու հայերենով ինձ ասաց. «Քֆրեիր էլի, ի՞նչ կլիներ, խոմ կպրծնեիր»: Ես շատ զարմացա, որ նա հայ էր և կարողացել էր հաշտվել իր վիճակի հետ:

Ես փախա քյուրդ տիրոջս մոտից: Շատ անգամներ ինձ վրա հարձակվեցին քրդերը, բայց հրաշքով ես ազատվեցի: Մեծ դժվարությամբ հասա ռուսական բանակի զինվորներին, որտեղ շատ հայ կամավորներ կային: Բայց ընդամենը մեկ օր նրանք մնացին Մշո դաշտում. դա 1915 թ. հուլիսի 16-ն էր: Եվ երբ նահանջեցին, ամբողջ Մշո դաշտի մնացած հայությունը նրանց հետ գաղթի ճամփան բռնեց: Գաղթի ճամփան ահավոր էր: Մայրս չկար, ես գտել էի իմ հինգ տարեկան քրոջը, որի ձեռքից բռնած մեծ դժվարությամբ եկանք հասանք Իգդիր, այնուհետև՝ Էջմիածին: Բայց քանի որ գաղթականների մեջ տարածվել էին տիֆը և այլ համաճարակներ, մենք շատ, անհաշիվ զոհեր տվեցինք: Ամեն առավոտ սայլով գալիս հավաքում էին մահացածներին, նրանց հետ և մահամերձներին:

Հետո ես մտա Էջմիածնի որբանոցը, որից հետո մեզ փոխադրեցին Աշտարակ: 1915 թ. աշնան վերջին Աշտարակում արդեն հինգ որբանոց կար՝ երեք հարյուրից ավելի երեխաներով: Այդ մանկատները գտնվում էին Մոսկվայի հովանավորության տակ և մեզ շատ լավ ուսում ու նաև գործնական, աշխատանքային դաստիարակություն տվեցին: Բայց մեր երկրի կարոտը մեր սրտում մնաց:

17 (17).
ՀՄԱՅԱԿ ԲՈՑԱՋՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ԲԻԹԼԻՍ, ԽԱԼԹԻԿ Գ.)

Մեր գյուղը շրջապատված էր անտառներով: Միայն Խաչի անտառից փայտ կտրելը մեղք էին համարում: Մյուս անտառներից կտրում էին փայտ: Լեռան փեշին մեր գյուղն էր: Մեր գյուղի մեջ ինը ինքնահոս աղբյուրներ ունեինք, երկու գետակ ունեինք, որոնք ընդպատավոր պայմաններ էին ստեղծում ցանքսը ջրովի դարձնելու համար: Մեր գյուղում հինգ հարյուր հիսուն հայ ընտանիք էր ապրում: Ամեն մի ընտանիքը վեց-յոթ հոգի էր, ուրեմն մոտ երեք հազար բնակիչ հայ կար:

Մեր գյուղը նման էր քաղաքի: Երկու հարկանի քարաշեն շենքերում էինք ապրում: Բնակչությունը հիմնականում զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Արհեստներից տարածված էր ջուլհակությունը, բրուտագործությունը, դարբնությունը: Իմ հայրը դարբին էր: Նա հատուկ մեխեր էր շինում կոշիկի տակը խփելու համար: Ցանում էինք կորեկ, ցորեն, շաղգամ: Տարին երկու անգամ բերք էինք ստանում: Բերքը հազիվ էր բավարարում: Բամբակագործությունը նաև զարգացած էր: Բամբակը ցանում էին, հավաքում, ճախարակով մանում, ապա կտավ գործում, ներկում, վերջում՝ ծախում էին: Իսկ բրուտները գյուղի բնակիչների կարիքներն էին հոգում և դրսի գյուղերն ու քաղաքներն էին տանում ու վաճառում:

Գյուղում ունեինք երկու կամարակապ կամուրջ, քարից էին և ամուր:

Մերոնք երկու հորեղբայր էին, իրար հետ բոլորը միասին ապրում էին: Տասնհինգ տուն էինք, ամեն մեկը տասը-տասնհինգ շունչից բաղկացած: Բոլորն իրար հետ համերաշխ էին: Ամառը լողանում էինք սառը ջրերի մեջ, իսկ ձմեռը՝ ջուր էինք տաքացնում գոմում, լողանում էինք: Դոմում ունեինք կով, էշ, եզ: Մի տարի հիվանդություն ընկավ, և մեր անասունները ոչնչացան:

Տան առաջին հարկում ընդհանուր սենյակն էր՝ քնելու համար: Շենքը պատուհաններ ուներ, բայց ապակի չկար, թուղթը յուղոտում, կպցնում էին:

Մեր ընտանիքում ես էի, հայրս, մայրս, եղբայրս և քույրս: Գյուղում երկու դպրոց կար, մեկը՝ լուսավորչական էր հարյուր չորս աշակերտով, որից չորսը աղջիկ էին, մնացածը՝ տղա: Կար նաև բողոքականների դպրոց: Դպրոցում անցնում էինք մայրենի լեզու, թուրքերեն, ֆրանսերեն, պատմություն, աշխարհագրություն: Ես մինչև 1914 թ. գնացել եմ դպրոց:

Ունեինք Ս. Գևորգ եկեղեցի, որը կառուցված էր սրբատաշ բազալտից, ներսում չորս սյուներով: Տոներին ամբողջ գյուղը լցվում էր այդ եկեղեցին: Առաքելականներն ու բողոքականները իրար հետ հաշտ ու խաղաղ ապրում էին: Կոտորածի ժամանակ թուրքերը ուզեցին քանդել այդ եկեղեցին, բայց՝ չկարողացան:

Գյուղում ունեինք հեթիմներ, որոնք նույնիսկ տրախոմաև էին բուժում: Խոսում էինք հայերեն, չնայած քրդական գյուղերին մոտ էինք, բայց շատերը քրդերեն չգիտեին: Մեծ մասամբ գրաբարյան արտահայտություններ կային եկեղեցական քարոզների մեջ:

Հավաքույթները կատարվում էին եկեղեցու բակում, իսկ մկրտություն, հարսանիք՝ եկեղեցու ներսում: Նիստուկացը գրեթե եվրոպական ձևի էր, քանի որ շատերը գնում էին արտասահման աշխատելու, գալիս էին, իրենց հետ բերում էին եվրոպական հագուստներ, կոշիկներ:

Հայերն ու քրդերը գրեթե համերաշխ էին, բայց հիշում եմ մի դեպք, երբ քյուրդ ֆարազ աղան փախցրել էր մի հայ կնոջ, որի ամուսինը փող վաստակելու համար գնացել էր պանդխտության: Քյուրդի կինը բողոքում է, իսկ քյուրդ աղան ասել է. «Ես նրան բերել եմ բանացնելու համար, դու ես իմ իսկական կինը»: Այդ հայ կինը եկավ գյուղ, հետո փախավ Մուշ:

Ֆեդայիներ ունեինք՝ Մուրադ, Հակոբ անուններով, որոնք Սերոբ փաշայի խմբի մեջ էին, բայց իրար հետ անհաշտ էին:

1908 թ. հյուրիեթ որ եղավ, սկզբում բոլորն այն կարծիքին էին, որ հայ ու թուրք եղբոր պես պիտի ապրեն: Անգամ մեր գյուղում տոնախմբություն եղավ և հրաձգություն կատարվեց: Բայց հետևյալ օրերին զգացինք, որ այն կեղծ է: Հորեղբորս տղան ինձ վերցրեց, գնացինք Բիթլիս: Ճամփին գնում էինք՝ ես նրա փեշից բռնած: Գնացինք Բիթլիս, շուկայում պտտվեցինք, մուզիկայի տեղը գտանք: Մենք գյուղի տղա, զարմացած նայում էինք: Վալին դուրս եկավ, նվագողներին մի-մի ոսկի տվեց: Մենք վերադարձանք, անցանք Կարմրավանքով, որտեղ Սերոբ փաշայի գերեզմանն էր՝ մի խաչ վրան: Համբուրեցինք ու շարունակեցինք մեր ճամփան:

Հետագա տարիներին սկսվեց սառնությունը: Մարդիկ շուտով հասկացան, որ թուրքի քաղաքականությունը չի փոխված:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ես տասներեք տարեկան էի: Պատերազմը գընում էր ռուսների դեմ, որոնց թուրքերն ու քրդերը համարում էին մեր «քեռիները»: Եթե մինչև հյուրիեթը քրիստոնյաներից զինվոր չէին վերցնում, ապա հյուրիեթից հետո սկսեցին հայերից էլ զորք վերցնել, որ կռվեն ռուսի դեմ: Ով հրաժարվում էր, ծեծում, սպանում էին: Բոլորի զենքերը հավաքեցին: Ձեղած տեղը զենք էին փնտրում:

Մեզ մոտ կոտորածն սկսվեց 1915 թ. հունիսի 12-ին: Բիթլիսի հետ մեր գյուղն էլ կոտորվեց, որովհետև մեր գյուղում բոլորն արհեստավոր էին, թուրքական կառավարությունը իբր մեզ պաշտպանելու համար մի զորամաս դրեց: Նրանք վախենում էին մեր գյուղի բնակիչներից: Շրջապատի քյուրդ աղաների զորքերն էլ կային, և մեր գյուղը պարտավոր էր բոլորին կերակրել: Հայ երիտասարդներին արդեն տարել էին թուրքական բանակ: Մեր սարերի վրա դիրքեր էին փորել, որ Բիթլիսը պաշտպանեն: Հաշվի առած՝ ով ինչ արհեստ ուներ, լծեցին գործի: Բոլոր արհեստավորները ծառայում էին բանակին: Ծառերը կտրել էին տալիս, բրուտները կավից ամանեղեն, փողրակներ էին շինում, որ ջուր գա Բիթլիս, դերձակները զինվորական համազգեստներ էին կարում: Ճաբաթը երեք անգամ պատրաստի ապրանքները տանում էին կառավարությանը հանձնելու:

Արդեն ռուսական զորքը մոտենում էր: Թուրք զորքը մասսայականորեն փախչում էր: Մի օր հորեղբայրս հիվանդացել էր: Մենք մի էշ ունեինք: Գյուղացիների հետ ես էլ գնացի Բիթլիս՝ ապրանք հանձնելու: Չորս զինված քրդեր մեզ ուղեկցում էին: Մեզ ասացին՝ «Շուտ վերադարձեք ձեր գյուղը»: Մեկ էլ տեսանք՝ արաբական ֆորմայով զինվորներ չալմայով, չարուխներով ու մի թումբանով լցվան Բիթլիս: Այնպես եղավ, որ քաղաքի շարժումը կանգ առավ: Վերադառնալու համար մենք քաղաքի միջից անցանք, մի ինչ-որ երկար ճամփով անցանք: Մեկ էլ լսեցինք սուգ ու շիվան:

Ջարդը սկսվել էր: Թուրքերը հարձակվեցին մեզ վրա, կողոպտեցին մեր էշերը, ջորիները տարան ու սկսեցին ծեծել, հետո մեզ տարան ոստիկանատուն: Բիթլիսում սկսվեց կոտորածը: Կրակի էին տալիս տները: Մինչև առավոտ մնացինք Էնտեղ: Մենք հինգ-վեց երեխա էինք: Մտածում էինք, թե երբ մեզ պիտի սպանեն: Մի հատ փուրգոն եկավ ծածկված, վարագույրը թրի ծայրով դեն էին քաշում, թքում էին ու գնում: Անցավ մի քանի ժամ, տեսա մի սպանված ռուսի դիակ, որին տարան փոսի մոտ, մի ռուս գեներալ էլ էր եկել, նրա գլխին էլ տվին, գցեցին փոսը՝ և՛ մեռածին, և՛ կիսամեռածին:

Մենք վեց տղաներ էինք, մեկն էլ Մուշեղ Ղազարյանն էր: Մեզ վերադարձրին, բայց մինչև Բիթլիսից դուրս եկանք, տեսանք թուրք կանայք տանիքների վրա բղավում էին. «Ու՞ր եք տանում սրանց, կոտորեք դրանց»: Մեզ քաղաքից դուրս բերին: Ճանապարհին մի դաշտ կար: Մեկ էլ տեսանք թուրքեր են գալիս, քրդեր են գալիս, ուզում են մեզ սպանել: Ասացին. «Մեզ մի բան խոստացեք՝ ձեզ կազատենք»: Խոստացանք: Հասանք գյուղ: Տեսանք՝ գյուղում կոտորածն սկսվել է: Մենք երեք երեխեքով և Ղազարյան Մուշեղը փախանք սարը, որտեղից երևում էր Վանա լիճը: Մութն ընկավ: Տեսանք՝ գյուղից ով կարողացել է, փախել, մի-մի քարի տակ թաքնվել է: Մեզ, երեխաներիս ուղարկեցին գյուղ, որ իմանանք կոտորածը դադարե՞լ է: Դեմներս ելան թուրք զինվորներ: Մենք սկսանք փախչել: Թուրքերը՝ մեր ետևից: Ես ու իմ հորեղբոր տղան՝ Հրաչը, փախչում էինք: Հորեղբորս տղային բռնեցին, էլ չիմացանք՝ ինչ եղավ, երևի սպանեցին: Հետո ես եկա մեր տուն, տեսա մերոնք սգում են:

Մի քանի օր հետո, երբ նորից պիտի քաղաք գնայինք, տեսանք նորից են կոտորում: Ուզեցի փախչել: Մի ոստիկան եկավ, ուզում էր ինձ սպանել: Մի թուրք կնիկ ինձ փրկեց: Էլ մեր ընտանիքից ոչ ոքի

չգտա: Ինչքան մաճ եկա՝ չգտա: Միայն վերջին օրը բարձրացանք մի սար, ծարավ էինք ու սոված: Քարերի տակին կիներ, երեխաներ, ողջ, մեռած՝ լիքը: Տեսանք՝ մի մարդ ներքևից բարձրացավ վերև: Մենք սարից իջանք, մարդը մեզ տեսավ, ուրախացավ: Երկու կտոր հաց ու մի բուռ ցորեն տվեց, մենք չորս հոգով ագահորեն կերանք: Նա մեզ ասաց. «Ծուտ ջուր խմեք ու փախեք»: Մենք փախանք սար: Գիշերը մի ձորում մնացինք: Առավոտյան նորից որոշեցինք գնալ գյուղ: Եկանք այգիների մեջ, պտուղ ենք փնտրում, որ ուտենք. սոված ենք: Տեսանք՝ մի խումբ մեր գյուղից փախած մարդիկ՝ մոտ քսան հոգի, թաքնվել են փոսի մեջ: Կանայք արտերի մեջ լցված, լա՛ց ու կո՛ծ: Ես նորից սար բարձրացա, մտածում եմ՝ գուցե մորս գտնեմ: Արդեն լույսը բացվել էր: Թուրքերը թալանում են մեր գյուղը: Տեսնում ենք, թե ինչպես թուրքերը իրար ձեռքից են խլում թալանը: Էլ ոչ մի ազգական չգտա: Ամբողջ գյուղը այրվում էր: Երկինքը լուսավորվել էր: Տեսանք մի վիրավոր, Թորոս էր անունը, ասինք. - Մեզ հետ արի:

Ասեց. - Չէ՛, չե՛մ գա, չե՛մ կարող. վիրավո՛ր եմ:

Մենք փախանք: Ոտքս փուշ էր մտել, ցավում է, լաց եմ լինում: Մեկ էլ տեսանք՝ մարդ է գալիս: Փախանք: Թուրք զինվորները գյուղից մի խումբ կանանց հավաքած՝ տանում են զորանոց: Էդ պահին փոսի մեջ թաքնված հայերը փախան: Թուրքերը կրակեցին, մի մարդու սպանեցին: Մի մարդ իմ ոտքի տակով ուզում էր փախչել, ես մնացի նրա մեջքին: Մենք չորս ոտքով սողալով գնացինք, հարյուր մետրի չափ գնացինք: Մի քարայր մտանք, տեսանք մեջը լիքը մարդ: Օդ չկա, խեղդվում ենք: Շարժվել չենք կարող: Մեզ՝ հինգ երեխաներիս, դուրս հանեցին: Տեսանք, որ դրսում կրակոց է: Թուրքերը դիրք են բռնել և՛ ներքևում, և՛ վերևում: Մեկ-մեկ քարայրից դուրս եկանք: Չորս հոգի ներսը մնացինք: Թուրք մի օֆիցեր խարբերդցի մի տղայի բըռնեց, շաքար տվեց, որ հայերեն ասի. «Դու՛րս եկեք»: Թուրքը մոմ տվեց էդ տղայի ձեռքը, ասեց. - Գնա՛, ձայի՛, ո՞վ կա ներսը:

Էդ տղան դուրս եկավ, ասաց. - Մա՛րդ չկա:

Չորակի միջից կրակոցներ էին լսվում: Մեզ տարան թուրքական զորամաս: Իրիկուն եղավ: Տղամարդկանց ձեռքերը կապեցին: Մերոնք խելքի եկան, որ կաշառք խոստանան: Բայց առավոտյան կոիվը սկսվեց Բիթլիսի կողմից: Տեսանք՝ գլխավոր հրամանատարը զորամաս եկավ: Զինվորները եկան թնդանոթներով: Մենք սպասում ենք, թե երբ պիտի մեզ կոտորեն: Մենք էլ սոված ենք: Եկան բոլոր երեխեքին կապեցին: Երբ որ հերթը հասավ ինձ, պարանը վերջացավ: Ես սկսեցի մտածել, որ ամենաերջանիկն եմ, որ չեմ կապված ու փախա: Չորս կողմը՝ գաղթական: Կոտորած: Չորս թուրք զինվորներ ելան դեմս, բռնել են երկու խեղճ հայերի, դրանք խնդրեցին ջուր խմել, հետը ծովեցին, գլխներին տվեցին՝ սպանեցին: Երկու դիակները փովեցին գետնին, ես դողում եմ վախից:

Մեկ էլ ռուս զորքը գալիս է: Թուրք գաղթականությունը փախչում է: Իրարանցում: Ուզում եմ փախչել: Թեքվեցի տան ետևը ու փախա: Կեսգիշերին բարձրացա սարը: Առավոտյան տեսնեմ սարի գլխից Բիթլիսը երևում է: Վերևից երևում է մեր գյուղը: Երկու օր **մնացի** մի քարի տակ: Մենակ եմ, մոտս մարդ չկա: Մեկ էլ **երեխայի** ձայն լսեցի: Տեսա՝ մի ցորենի արտ: **Կանայք** ընտոտած են: Էնտեղ գտա մորաքույրիս **և** հորեղբորս տղային: Բոլորն էլ սոված էին: Թափված **ցորենի հատիկներն** էին ուտում:

Ինձ ասին՝ գնա Ռուբենին արթնացրու: Գնացի, արթնացրի: Երկու քյուրդ եկան ինձ քարշ տվին: Քյուրդը ուզեց ինձ սպանել, կողքինն **ասաց**՝ մեղք է: Ինձ տարան իրենց տունը: Ցերեկը անասուններին տանում էի արածացնելու, գիշերը տուն էի գալիս: **Ես** էլ տիֆով հիվանդ եմ, երբ անասուններին տանում եմ, մեր **գյուղը** հեռվից երևում էր: Իրիկունը քրդի լամուկները ինձ խըփում էին փայտերով: Ես չարաչար **աշխատում** էի: Էդ գյուղում էր նաև հորեղբորս կինը, բայց մենք իրավունք չունեինք տեսնելու իրար: Էդ քրդական գյուղ**ում** ես հանդիպեցի Մանուկյան Ասքանազին, նա **մեր գյուղ**ացի էր, և միասին սկսեցինք արածացնել անասուններին: Նա իր մոր և քրոջ հետ մի այլ քրդի տանն էր ապրում: Ձմեռը վրա հասավ: Մենք մի ամսից **ավելի** ապրեցինք այնտեղ: Մարդիկ կարծում էին, որ **ես մուսուլման եմ**: Բայց մի մարդ եկավ ինձ ասաց. - Դու հա՛յ ես, մուսուլման չես:

Քյուրդ կանայք ասին. - Չէ՛, նա մուսուլ**ման է**:

Մարդը ասաց. - Եթե մուսուլման է, **թող** խաչը քֆրի:

Ես էլ իմ չիմացած քրդերենով **իր** հավատը քըֆրեցի:

Սա զայրացավ, ուզեց ինձ սպանել: Էն **տունը**, որ ես ապրում էի, ինձ առանձին էին ճաշ տալիս: Մեկ էլ քրդի երեխաները գդալը վերցնում էին, գալիս էին իմ ճաշն էին ուտում: Էսպես ապրեցի մինչև ձմեռ:

1916 թ. փետրվարն էր, ռուսները եկան: Բոլորս փախչում ենք: Մենք՝ շալակավորված: Լուր եկավ, թե ռուսները մտել են գյուղը, բոլոր քրդերը փախել են, անասունները մնացել են գոմերում: Քանդեցինք անասունների կապերը, շարժվեցինք: Սառույց է, գետակը սառել է: Ես ընկա սառած գետի մեջ: Թաց եմ: Դողում եմ: Փախանք երկու օր: Շալակս՝ ծանր: Մտածեցի՝ միջոց գտնեմ. միտքս փախչելն է: Առավոտյան երբ բոլորը պատրաստ են, ես թեքվեցի տան ետևը: Ես քոլոզով եմ, քրդի շորերով: Եկա մի խոր ձորի մեջ: Տեսնեմ՝ դիմացից մի խումբ քրդեր են գալիս. իրենց անասուններով փախչում են: Ինձ ձայն տվին՝ ու՞ր ես գնում: Ես փախա: Մտա մի մարագ, խոտերի վրա քնեցի: Առավոտյան ելա գյուղը մտա: Երկու թուրք զինվոր եկան, սրանց մոտից էլ փախա: Մեկ էլ մի ռուս կազակ եկավ ձիով: Ես գրկեցի նրան:

Ասի. - Ես հա՛յ եմ:

Հարցրեց - Կգա՞ս մեզ հետ:

Ասի. - Հա՛:

Ինձ տարավ հրամանատարի մոտ: Բերին ուտելիքներ: Բերին մի փարչ, ասին՝ գնա ջուր բեր: Գնացի բերեցի, փարչը ջրով դրին թուրք գերիների առաջ, մի բուխանկա էլ հաց:

Ես հետևեցի ռուսներին: Գնացինք մի ուրիշ գյուղ: Հանդիպեցի երկու տղաների: Սոված էին: Տվի հացս, կերան: Պատրաստվանք, որ Բիթլիս պիտի գնանք: Ռուսները իմ անունը դրին «Բալա ջան»: Դրանք ձիերով գնում են, ես նրանց պոչից՝ ոտքով: Էդ երեխաներին թողին գյուղում, ինձ վերցրին իրենց հետ տարան դեպի Բիթլիս: Մտանք մի գյուղ: Ձիերի ոտքերը խրվում էին ձյան մեջ: Երկու թուրք բռնեցին: Արդեն երկու գերի էլ կար, դարձան չորս թուրք: Եկանք որ ճանապարհն անցնենք, էն չորս գերիներին կամրջով տարան, ես հրամանատարի հետ մտա ջուրը, գետն անցա: Բիթլիս մըտանք: Ինձ հագցրին: Մեկ էլ քեռուս հանդիպեցի: Նա վերցրեց ինձ, տարավ բողոքական ժողովարան: Մի քանի օր հետո մեզ պիտի փոխադրեն Վան: Գնացին Անդրանիկից, Սմբատից իրավունք առան: Էդ օրը որ պիտի գնայինք Վան, Անդրանիկը Մուշից եկել էր Բիթլիս: Մեզ պիտի բերեն Դատվան: Անդրանիկը եկավ հասավ: Դատվանից ոտքով հասանք Վան: Էնտեղ որբանոց մնացի՝ 1916 թ. մարտից մինչև ամառ: Էդ որբանոցում հինգ հարյուր երեխա կար:

Երկրորդ գաղթի ժամանակ մեզ ֆուրգոնները լցրին, բերին Հին Բայազեդ: Մեր ճանապարհը պահեցին հայ կամավորները: Անցանք Բերկրիի գետը: Էնտեղից՝ Իգդիր, Ալեքսանդրապոլ, Դիլիջան:

1916 թ. հաստատվեցինք Սևանում: Անդրանիկը Ջալալօղլիից եկավ Սևան: Մենք ծանր վիճակում ենք, հաց ենք մուրում: Եղիշե վարդապետը մեզ խորհուրդ տվեց գնալ ալյուր խնդրել, բայց՝ չտվին: Հետո մեզ տարան Ծաղկաձոր: Մինչև 1920 թ. ես մնացի որբանոցում:

Երբ դուրս եկանք, մենակ ապրել չէի կարողանում: Ամուսնացա, չորս աղջիկ, մի տղա ունեցա:

Ես կոտորածի ժամանակ կորցրել եմ բոլոր հարազատներիս և գերության ժամանակ տեսել եմ թուրքերի և քրդերի դաժանությունը: Ես վրեժ ունեմ: Ես իմ երեխաների անունները դրել եմ իմ ննահատակների անունով՝ Ծողիկ, Երվանդ:

Ես, ինչպես Եղիշե Չարենցն է ասում, մտածում եմ, որ մեր փրկությունը մեր հավաքական ուժի մեջն է:

18 (18).
ԱՂԱՎՆԻ ՄԿՐՏԻՉԻ ՄԿՐՏՉՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԲԻԹԼԻՍ)

Մենք քսիկ բիթլիսցիներ ենք: Ես Մուխսի* վարդանի թոռն եմ: Մեր տունը թուրքերը քանդեցին: Մեր տանը յոթանասուն հոգի էինք: Մեր ընտանիքում յոթը տղա կար, հինգ աղջիկ: Բոլոր տղաները թուրքի ձեռքով սպանվել են: Հիմա մեր մեծ գերդաստանից միայն ես եմ մնացել, մեկ էլ Միսաքը, որ Մոսկվայում գեներալ է:

Նախքան մեզ տեղահանելը, 1914 թ. եկան մեծ եղբորս թուրքի բանակ տարան, օնբաշի դարձավ: Մի անգամ եկավ մեզ տեսնելու, հայրս ասաց. - Խոսրո՛վ, լաո՛, մի՛ գնա:

Եղբայրս ասաց. - Ո՞նց չգնամ, ես օնբաշի եմ, եթե չգնամ, թուրքերը ձեզ կվառեն:

Գնաց ու ետ չեկավ: Մի քանի հայ զինվորներ որոշել են փախչել, թուրքերը կրակ են բացել, բայց մի քանիսը իրենց գցում են Արազը, փրկվում են, անցնում են ռուսի բանակը:

Հայրս փախել էր թուրքական բանակից, մտել էր մեր տան մոտի դարմանի դեզի մեջ: Օսմանյան թուրքերը եկան դուրս քաշեցին, նրան սպանեցին: Մենք մնացինք որբ:

Մեր հարևանը՝ թուրք Յուսուֆ Էֆենդին, մեղքացավ մեզ, տարավ իր տունը: Քրդական համիդիեի զինվորները եկան, հարցրին մորս. «Ու՞ր են ոսկիները»: Մայրս վախից ասաց. «Հրեն, գյուգյումի մեջն են»: Թուրքերը առան ոսկիները, գնացին: Էդ թուրք հարևանը, որ մեզի պահել էր, մորս վրա նեղացավ, թե ինչու իրեն չտվեց, ու մեզ դուրս հանեց իր տնից: Դուրս եկանք, փողոցները ամբողջ սպանվածների դիակներ էին, բոլոր հայերին կոտորել էին: Մնացածներիս քշեցին՝ ու՞ր, չգիտենք: Ճամփին՝ աղմուկ, աղաղակ, իրարանցում: Թուրք ոստիկանները սվիններով խփում էին ետ մնացողներին: Գիշերները գալիս աղջիկ-կնիկներին փախցնում էին: Մորս էլ տարան բռնաբարեցին, ետ բերեցին: Լավ է հայրս սպանված էր՝ չտեսավ իր պատվի արատավորումը:

Հիշում եմ, գաղթի ճամփին մեր սայլը շուռ եկավ ջրի մեջ: Եփրատ գետում շատերը ողջ-ողջ խեղդվեցին, շատերին էլ սպանում ու գցում էին գետը: Այնպես որ, Եփրատ գետը ամբողջ արյուն էր:

Ոտքով քայլելով-քայլելով եկանք հասանք Կարս: Լորիս Մելիքովի արձանը տեսանք՝ մի մարդ արծվի վրա էր ոտքը դրել: Էնտեղից ոտքով եկանք Իգդիր: Գաղթականների հետ եկանք Էջմիածին: Գաղթականները հիվանդ, հյուծված, ուժասպառ փռված էին վանքի պատերի տակ. ծեր, ջահել, բոլորը հիվանդ, մահամերձ: Երկու մարդ եկան, հաց ու ձու բաժանեցին երեխաներին: Մորս մի ձու և հաց տվին: Մերս ասաց. - Ես երկու ձագուկ ունեմ:

Նրանք մի ձու էլ տվեցին, ու մենք կերանք: Դու մի ասա՝ դրանցից մեկը Հովհաննես Թումանյանն էր: Մեկ էլ սկսվեց հորդ աննրկը: Բոլոր գաղթականները մնացին աննրկի տակ: Մերս մի մուշամբա գցեց մեզ վրա, որ չթրջվենք:

Հովհ. Թումանյանը ղրկեց ժամկոչին կաթողիկոսի մոտ, որ աբեղաների խուցերի բանալիները տա, որ գաղթականները պատսպարվեն, բայց նա հրաժարվել, ասել էր, որ խուցերը կկեղտոտվեն: Էդ ժամանակ Հովհաննես Թումանյանը վերցրեց կացինը, սկսեց խու-

* Երուսաղեմ ուխտի գնացած:

ցերի դռները կոտրել և գաղթականներին ներս առնել ու ասաց. - Գնացեք ասեք, որ ամենայն հայոց կաթողիկոսը մերժեց, բայց ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը կացինով կոտրեց դռները և գաղթականներին ներս մտցրեց:

Մերս մուշամբան մեր վրայից քաշեց, վրայի ջուրը թափեց, մեզ տարավ, մտցրեց էն խուցերը՝ տաքացանք: Բայց առավոտյան շատերը մահացել էին արդեն: Խոլերան աճավոր չափերի էր հասել: Իմ խեղճ մերս էլ խոլերայի փայ դարձավ ու մեռավ: Ես մնացի լրիվ մենակ ու անտեր: Գաղթականների հետ եկա հասա Երևան: Երևանում մեզ լավ չընդունեցին: Մեզ «գաղթական» էին ասում:

Երևանում սովորեցի Աբովյանի **անվ**ան դպրոցում: 1933 թ. ավարտեցի Գյուղատնտեսա**կան** ինստիտուտը, որը այն ժամանակ համալսարա**նի** ֆակուլտետն էր: 1933-36 թթ. Ստեփանավանում աշխատել **եմ** գյուղատնտես: Ծանոթացել եմ Աղասի Խանջյանի* հետ, իսկ Մացակ Պապյանը** **մեր կոլխոզի** նախագահն էր: Ստացել եմ վաստակավոր գյուղատնտե**սի** կոչում: Պատերազմի տարիներին թիկունք**ում** ծառայել եմ ու պարգևատրվել: Հիսունհինգ տարի **աշխատել եմ** հացամթերումների նախարարությու**նում**, որպես գլխավոր մասնագետ, ունեմ մի շարք պատվո**գրեր** ու գովեստագրեր:

19 (19).
ՍՐԲՈՒՀԻ ՄԿՐՏԻՉԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1911 Թ., ԲԻԹԼԻՍ ՆԱՀԱՆԳ, ԽԻԶԱՆ ԳԱՎԱՌ, Ս. ԽԱՉ Գ.)

Ես Եղեռնից վերապրած եմ, որ հիմա ապրում եմ Երևանում: Ես ուզում եմ պատմել մեր գերդաստանի մասին: Ծնվել եմ 1911 թ. Բիթլիսի նահանգի Խիզան գավառի Ս. Խաչ գյուղում, Ս. Խաչ վանքի հարևանությամբ: Իմ պապերի պապերը Ս. Խաչ գյուղը հիմնել են սարի լանջին, մի գեղեցիկ վայրում, որտեղ ապրում էին միայն տասը հայ ընտանիք և բոլորը իրար հարազատ էին:

Մեր գերդաստանը շատ մեծ է եղել, մոտավորապես հարյուր հոգի: Իմ պապը՝ Մուրադյան Մուրադը, եղել է Երուսաղեմում և դրա համար նրան անվանում էին Մուղդուսի Մուրադ: Պապս ունեցել է երեք տղա՝ Հակոբը, որը շատ խելացի մարդ է եղել, նաև Խաչատուրը, որը գաղթի ժամանակ վանքի ոսկյա խաչը գիշերով վար է բերել և թաքցրել պատի մեջ, իսկ իմ հայրը՝ Մկրտիչը, հոգաբարձու էր և քաջ մարդ էր, Բիթլիսի և գյուղի կապը պահել է: Մուրադ պապս շատ խելացի մարդ է եղել, և իր գերդաստանը մեծ հարգանք էր վայելում Խիզան գավառում:

Իսկ մայրական պապս՝ Բաղդասարը, եղել է Խիզան գավառի մի գյուղի գյուղացի: Նա ունեցել է երեք աղջիկ և շատ տղաներ, որոնցից երկուսին ես հիշում եմ, իսկ աղջիկներից Կաքավը իմ մայրն էր: Նա ուներ երկու քույր՝ Փարիշան և Նիգյարան:

Դեռևս համիդյան ժամանակաշրջանում իմ պապը, նկատի ունենալով թուրքերի վայրագությունները, իր երեխաներին, նույնիսկ աղջիկներին իր հետ որսի է տարել և ասել է. «Սիրելինե՛րս, մենք այնպիսի ժամանակներ ենք ապրում, որ բոլորդ պետք է հրացան բռնել իմանաք»: Եվ այդ բանը պապիս հաջողվել է: Իմ մայրիկը՝ Կաքավիկը, գաղթի ժամանակ երկու հոգու է սպանել, որոնցից մեկը ավազակապետ Ջբոն էր: Նա գյուղի վրա էր հարձակվել: Գյուղացիները դիմադրել են, այդ քյուրդ Ջբոն գալիս է գյուղ, ամենաճարպուստ տան կտուրին նստում է և պահանջում է ոսկիներ: Մայրը գաղտնի ճանապարհով իմաց է տալիս իմ պապ Բաղդասարին, ասում է. - Ջբոն նորից է եկել, ոսկի է ուզում, բայց ես էլ փող չունեմ:

Պապս ասում է. - Դու դիմադրի՝ ներսից, մենք՝ դրսից կկրակենք:

Եվ այդպես կռիվն սկսվում է:

Էդ ժամանակ իմ հայրը գտնվում էր Պոլսում և մորս ատրճանակ էր ուղարկել: Մայրս պարտեզից կրակել է. ավազակ Ջբոն մեռնում է մորս բրաունինգի գնդակից:

1915 թվին, երբ թուրքերը հարձակվում են, հայրը՝ ուստա Բաղդասարը, երկաթագործի իր արհեստանոցը տեղափոխում է Խիզանի լեռների քարայր և ինքնաշեն զենքեր է պատրաստում, ատրճանակ, հրացան է սարքում և ուղարկում է մոտակա սարերում թաքնված ֆեդայիներին:

Մայրս՝ Կաքավիկը, իր երեխաներով մնացել էր տանը, բոլորս իրար հետ տասնմեկ հոգի էինք:

1915 թ. թուրքերը հարձակվեցին Բիթլիսի նահանգի վրա, ճանապարհները փակվեցին, և սկսվեց սոսկալի կոտորածը: Թուրքերը ժողովրդին հավաքեցին, մարագների մեջ լցրեցին և կրակի տվին: Ոչ մի տարբերությունչէին դնում՝ կանանց, ծծկեր երեխաներին, բոլորին սպանում էին:

Մեր հովիվ Աբրոն, որը քյուրդ էր, եկավ մեզ օգնության: Մեզ տարավ հարևան Բուսականց գյուղը, որտեղ մնացինք երկու ամիս: Բայց մեզ մատնեցին և ուզում էին գետը շպրտել ու խեղդել: Սակայն Բուսականց գյուղի լեռների քառասունհինգ հոգուց կազմված ֆեդայիների խմբի ղեկավար Գնելին իմաց են տալիս. Նա իր ֆեդայիներով հարձակվում է թուրքերի վրա ու ճանապարհ է բացում: Մեզ տարան, հասցրին Բիթլիսից դեպի Վան շարժվող գաղթականների քարավանին:

---

* Աղասի Խանջյան (1901, Վան – 1936, Թբիլիսի) – խորհրդային կուսակցական և պետական գործիչ: 1930 թվականից եղել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի Առաջին քարտուղար:

** Խորհրդային պետական աշխատող: 1938–1954 թթ. եղել է ՀՍՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության Նախագահ:

Ինչքան ես հիշում եմ, ֆեդայիների ղեկավար Գնելը իմ մորաքրոջ ամուսինն էր, որը դեռ 1894-96 թթ. կոտորածի ժամանակվանից կռվելու փորձ ուներ և ֆեդայիների խումբ էր կազմել: Նա Աղթամարի վանքում ուսում էր ստացել: 1915 թվին երկու հարյուր հոգիանոց ֆիդայական մի խումբ էր ստեղծել, որոնք լեռնային էդ ճանապարհին, որ թուրքերը փակել էին, գիշերով հարձակվում են թուրքերի վրա, նրանց խուճապի մատնում և բացում ճանապարհը դեպի Վան ու գաղթականներին էլ ուղեկցում դեպի Վան:

Մի բացատում շատ գաղթականներ էին եկել հավաքվել՝ երկրի տարբեր գավառներից: Եկել էին, մի աղբյուրի մոտ նստոտել, մի քիչ ջուր խմել, հանգստացել: Այդ խմբերի մեջ էինք նաև մենք: Կաքավիկ մայրս խուրջինի երկու աչքերի մեջ դրել էր իր փոքրիկ երեխաներին՝ միակ տղա Մուրադիկին և մի աղջկան, իսկ երկու մեծ աղջիկներս՝ ես ու քույրս, նրա ձեռքերից էինք բռնել: Հանկարծ մի թուրք հայտնվեց. նա տեսավ մորս կախարդիչ գեղեցկությունը և քարացավ, հետո սկսեց կրակել մեզ՝ երեխաներիս վրա, որ մորս փախցնի: Բայց մայրս իր ականթարու տակից հանեց ատրճանակը և կրակեց նրա ճակատին: Թուրքը ընկավ, բայց ես էլ էի վիրավոր: Ես ձեռքս երկարացրի, մորս փեշը հազիվ բռնեցի: Նա տեսավ, որ ես վիրավոր եմ, տարավ ինձ աղբյուրի մոտ, վերքս մաքրեց, լվաց, ջուր խմեցրեց: Մի քարայրում գիշերեցինք: Թուրքերը գիշերով հարձակվեցին մեզ վրա ու կրակեցին: Մայրս իր մարմնով մեզ վրա պառկեց, որ մեզ գնդակ չկպնի: Երբ թուրքերը հեռացան, մայրս մեզ մեկիկ-մեկիկ համբուրեց: Բայց Մուրադիկ եղբորս արյունը նրա բերանը լցվեց: Մայրս շատ լաց եղավ ու ողբաց, ձեռքերով գերեզման փորեց նրա համար, ու լուսադեմին մենք ճամփա ընկանք: Բավական գնացել էինք: Հանկարծ ձիերի դոփյուն լսվեց: Մայրս կարծեց թուրքերն են կրկին հարձակվել, մեզ ասաց. - Ավելի լավ է ջուրը նետվենք, քան թե թուրքերի ձեռքն ընկնենք:

Խեղճ մայրս խուրջինը ուսին դրեց՝ մեջը երկու երեխայով, իմ ձեռքը բռնեց և ջուրը նետվեցինք: Բայց եկողները ռուս զինվորներ էին, զգացին, որ մայրս ռուսահատությունից իրեն և մեզ գցեց ջուրը, իսկույն նետվեցին ջրի մեջ և մեզ ազատեցին, տարան ռուս գեներալի մոտ: Մայրս որպես շնորհակալություն հանձնեց իր հրացանը և տվեց ռուս գեներալին ու ասաց, որ դրանով ինքը մի թուրք ասկյար է սպանել:

Այսպես վանից հասանք Վաղարշապատ: Մեր գերդաստանը մոտ հարյուր հոգուց էր բաղկացած, բայց մնացինք ընդամենը մայրս, երկու քույրերս և ես: Իսկ հայրս, որ Պոլսում էր, 1920 թվին վերադարձավ, մեզ գտավ որբանոցում, որտեղ պատսպարվել էինք, այնտեղ մայրս մայրապետ էր աշխատում: Հայրս մեզ բերեց Երևան:

Երևանում սովորեցի, դարձա գյուղատնտես: 1953 թ. պաշտպանեցի թեկնածուական դիսերտացիան: Հիսուն տարի աշխատել եմ խաղողագործության և գինեգործության ասպարեզում որպես գիտական աշխատող՝ Փարաքարում: Այժմ թոշակառու եմ:

20 (20).
ՆՎԱՐԴ ՄԿՐՏՉԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1912 Թ., ԲԻԹԼԻՍ)

Բիթլիսում մենք շատ խաղաղ ու լավ էինք ապրում: Մեր տունը երկու հարկանի էր: Առաջին հարկում գոմերն էին՝ խոշոր եղջերավոր անասունները և մանր եղջերավոր անասունները առանձին էին, այծերը՝ առանձին: Գոմերի դռները բացվում էին դեպի անտառ: Գյուղի հյուսիսային մասում կամարակապ հուշարձան-աղբյուր կար: Լեռան տակից մեծ ջուր էր գալիս, որը գետակի նման աշխատեցնում էր մեր ջրաղացը :

Մեր Բիթլիսում շատ դաժան ձմեռներ էին լինում: Մի տարի լեռներից ձյունը իջել ծածկել էր ճանապարհները, և մեր տունը մնացել էր ձյան տակ, անասուններն էլ կոտորվել էին: Ունեինք գեղեցիկ մի եկեղեցի: Մերոնք հավատացյալ էին, բարի և ունևոր: Իմ պապը մի հետաքրքիր բան էր արել: Ձմեռը այն ճամփաներին, որ տանում էին դեպի Բիթլիս, մի քանի իջևանատներ էր կառուցել: Նա իր միջոցներով վառելափայտ, սնունդ էր դրել մեջը, որ ճանապարհորդները գան պատրաստի սնունդ ստանան և հանգստանան:

Վանի հերոսամարտի ժամանակ պապս իր տղաներով իր զինագործի արհեստանոցը փոխադրել էր քարանձավի մեջ, որտեղ շատ տեսակի հրացաններ, ինքնաշեն զենքեր էին պատրաստում և ֆեդայիներին էին ուղարկում: Ֆեդայիների ղեկավարը Գնելն էր՝ պապիս աղջկա ամուսինը, որը շատ գեղեցիկ տղամարդ էր:

Մի գիշեր Գնելը՝ այսինքն մորաքրոջս ամուսինը, իր ջոկատով գալիս է այն լեռնանցքը, որը փակել էին թուրքերը, գիշերով ոչնչացնում է թուրքական պահակախումբը և ճանապարհը բաց է անում դեպի Վան:

Թեև բիթլիսցիները շատ էին կոտորվել, քանի որ մեծ կոտորած էր եղել, մարդկանց լցրել էին մարագները և այրել, բայց դրանից հետո ողջ մնացողներս սկսել ենք գաղթել դեպի Վան: Գնելը գաղթականներին ուղեկցում է Վան:

1915 թ. գաղթեցինք գնացինք Պարսկաստան, ոմանք էլ գնացին այլ երկրներ: Մենք Պարսկաստանում մնացինք երկու տարի՝ 1915-1917 թթվը: Հետո կրկին եկանք Վան, քանի որ ռուսները հասել էին մինչև Բիթլիս: Ռուսաստանում հեղափոխություն է սկսվում, ռուսական զորքերը ետ են քաշվում և մեզ էլ իրենց հետ բերում հասցնում են Վաղարշապատ:

Հիշում եմ, ինձ ու քրոջս՝ Սրբուհուն, դրել էին խուրջինի մեջ: Մորս ոտքերն ուռել էին, նրան ջորիների

վրա դրեցին: Խոշաբա գետի **մոտ** զիլանցի քրդերը թուրքական բանակի հետ հարձակվեցին մեզ վրա, սկսեցին կոտորել, և մենք շատ զոհ տվեցինք:

Քրդերը հարցրեցին **մորս**. - Դուք որտեղի՞ց եք:

- Խիզանից ենք:

- Դե որ Խիզանից եք, **ասեք**, ո՞վ էր էնտեղի շեյխը:

Մայրս պատասխանեց. - Շեյխ Սայդալին էր:

Էդ անունը լսելով՝ հրամանատարը ասում է. - Ձսպանել սրանց:

Եվ բավարարվում ենք միայն թալանելով: Խուրջինների մեջ ֆուրգոնով մեզ բերել հասցրել են: Ես փոքր էի ու ճամփին շատ լաց էի լինում: Կարմիր խաչի քույրը ինձ գրկեց: Հասանք Վաղարշապատ: Ինձ ու քրոջս դրեցին Քանաքեռի տղաների մանկատունը:

1920 թվին եկան **ասին**. «Ձեր հայրը եկել է Պոլսից»: Մամաս մեզ հետ էր, նա **մայրապետ** էր աշխատում մանկատանը: Երբ հայրս եկավ, ուզեց մեզ Ամերիկա տանել, որովհետև հորեղբորս տղան տասնութ տարեկան էր և զինվոր պիտի տաներ: Հայրս մեզ բերեց Երևան:

1926 թ. հայրս մահացավ: Ես Խ. Աբովյանի անվան դպրոցը ընդունվեցի: Հետո Պոլիտեխնիկ ինստիտուտը ավարտեցի գերազանցությամբ: Հետո սկսեցի Կիրովի գործարանում աշխատել որպես ինժեներ, բայց ինձ գրավում էր պարտիական աշխատանքը, և Կիրովի գործարանում աշխատեցի որպես կոմսոմոլի կոմիտեի քարտուղար: Հետո աշխատել եմ քաղկոմում հրահանգիչ: Տասնվեց տարի եղել եմ ռայկոմի քարտուղար, վերջում՝ կենտկոմում աշխատել եմ հրահանգիչ արդյունաբերության գծով: Հիմա թոշակի եմ կոչված: Ունեմ մի աղջիկ՝ Նելլին, որն ավարտել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դաշնամուրի բաժինը: Նա հիմա խնամում է ինձ և իմ քրոջը:

Վերջում ասեմ, որ թուրքերը ոչ միայն մեզ կոտորել են, այլև մեր հողերին, մեր ունեցվածքին են տիրացել: Մեր հարյուր հոգիանոց գերդաստանից մնացել ենք միայն ես ու քույրս:

21 (21).
ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ*
(ԾՆՎ. 1903 Թ., ՍՂԵՐԴ ԳԱՎԱՌ**, ՖԸՆԴՔԿ Գ.)

Հորս անունը Մուրադ էր, պապիս անունը՝ Մարտիրոս: Մենք երեք քույր և երեք եղբայր էինք: Մենք ապրում էինք Սղերդ գավառի Ֆընդքկ գյուղում: Մեր գյուղում թուրքեր չկային: Մեր գյուղում հիսուն-վաթսուն քուրմանջի*** ընտանիքներ կային, որոնք լավ հարաբերության մեջ էին հայերի հետ: Քուրմանջի քուրդերը մուսլուման թուրքերի հետ վատ էին, բայց նրանք երբեք զենք չեն բարձրացրել տեղի հայերի վրա: Նրանք ոճրագործություն չէին անում:

Ֆընդքկում գյուղացիները զբաղվում էին անասնապահությամբ, հողագործությամբ և զամբյուղագործությամբ: Ծուկա չկար: Ֆընդքկից դուրս գնում էինք Ջեզիրե գնումներ անելու: Ֆընդքկում դպրոց, ուսումնական հաստատություն չկար: Միայն Դըռներից եկած մի վարժապետ կար, քրդերեն տառեր էր սովորեցնում:

1915 թվին ես տասներկու տարեկան էի, երբ թուրք ասկյարները մտան մեր գյուղը, սկսեցին ավերել հայերի տները: Իմ երկու եղբայրներիս սպանեցին, երեք քույրերիս փախցրին, մեր ամբողջ ազգ ու տակիկ վերացրին: Մայրս ինձ տվել էր բարի քուրմանջիներին, որ ինձ պահեն, և այդպես ես փրկվեցի:

Ես իմ աչքերով շատ ահավոր բաներ եմ տեսել: Իմ աչքերը պլըշըշեցին այդ բոլորը տեսնելով: Թուրքերը բոլոր հայերին ոչնչացրին: Ինձ նման մի քանիսը հարևան գյուղի քուրմանջիների շնորհիվ ողջ մնալ կարողացան: Նրանք էլ դեսից-դենից մի բան խնդրելով կամ մուրալով իրենց գոյությունը քարշ էին տալիս:

Մի օր ես մեր բարի քուրմանջիների տանը մի խաչնալ գտա, վերցրի, որ գնամ թուրքերին սպանեմ: Տնեցիները ինձ ասացին. «Ի՞նչ ես անում, նրանք քե՛զ կսպանեն»: Էդ գյուղում շատ հայ գաղթականներ էին եկած ու իրենց գոյությունը պահպանում էին:

Հետո մենք գնացինք Ուասկե գյուղը: Էնտեղ էլ քառասուն-հիսուն քուրմանջի-եզդի ընտանիքներ էին ապրում: Ես էնտեղ ամուսնացա Խալիլա անունով մի աղջկա հետ: Նա քուրմանջի էր: Ունեցանք երկու տղա, երեք աղջիկ: Երեխաներիս անունները իմ ևահատակ հարազատների անունները դրեցի. օրինակ՝ տղայիս անունը հորս անունն եմ դրել, աղջկանս՝ մորս անունն եմ դրել: (Սկսեց հուզվել և լաց լինել - Վ.Ս.): Ես կուզենայի վրեժ լուծել թուրքերից, բայց ձեռքս ոչինչ չկա: Էդ թուրքերը մարդ չէին:

Մի տարի հետո վախից մենք դուրս եկանք էդ գյուղից, գնացինք Ստամբուլ, մեր ծանոթներից մեկի տանը ապրեցինք:

Հետո մենք գնացինք Ջըզիրե: Տուն-տեղ դրեցինք, խանութ բացեցի: Հողամաս գնեցի: Օրինեցի Աստծուն, որ ողջ եմ մնացել: Էդտեղ արդեն շատ սուրիացիներ կային: Մի օր էլ լսեցի, որ աշխարհի վրա Հայաստան կա, որը առաջադիմության մեջ է: 1966-ին եկանք Հայաստան: Հիմա երեսունից ավելի թոռներ ունեմ: Նրանք բոլորն էլ սովորում են հայկական դպրոցներում: Նրանցից շատերը նաև քրդերեն գիտեն, քանի որ լսել են իրենց մեծերից:

* Վերապրողը քրդախոս հայ է: Հուշը քրդերենից հայերեն թարգմանել է ՀՀ ԳԱԱ գիտաշխատող Ջենֆիրա Խատիևան:

** Արևմտյան Հայաստան, Բիթլիսի վիլայեթի Սղերդ սանջակի կենտրոն (Մեծ Հայքի Աղձնիք ևահանգ):

*** Քրիստոնյա քուրդ (եզդի) ցեղախումբ:

22 (22).
ԱՆԴՐԵԱՍ ԵՍԱՅԻՈՒ ԳՅՈՒԼԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ՇԱՏԱԽ)

Մոտ մի տարի էր անցել, երբ երիտթուրքերը 1908 թվից իշխանության գլուխն էին անցել և իրենց ձևացնում էին որպես Թուրքիայում ապրող բոլոր ազգային փոքրամասնություններին հարազատ: Եվ հայտարարում էին, որ Թուրքիան բոլոր ազգերի հայրենիքն է: Սակայն այդ բոլորը կեղծիք էր: Նրանք նպատակ ունեին օգտագործել Առաջին համաշխարհային պատերազմը և որպես Գերմանիայի դաշնակից ներխուժել Հայաստան՝ կոտորել հայերին: Այդ նպատակը իրականացնելու համար գաղտնի ժողովներ են եղել, և այդ բոլորը գործադրվեցին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Մեր Շատախի գյուղացիները ակտիվ մասնակցել են ինքնապաշտպանությանը և պատմում էին զանազան պատմական դեպքեր, որոնք ես լսել ու հիշում եմ:

1895-96 թթ. տեղի ունեցած հայկական կոտորածներից անցել էր քսան տարի, արդեն 1915 թ. գարունն էր: Երիտթուրքերը Կ.Պոլսից կարգադրել էին Վանի նահանգապետ Ջևդեթ փաշային, որը Թալեաթի, Էնվերի, Ջեմալի դաժան գործակատարն էր, կոտորել Վանի, Շատախի հայությանը:

Առաջին հերթին ձերբակալեցին և գլխատեցին Շատախի հայտնի ղեկավար Հովսեփ Զոլոյանին, որը ՀՅԴ-ի ղեկավարն էր՝ Վանի կողմից նշանակված դեռևս 29 մարտի 1915 թվից: Նա Շատախի գայմագամի ծանոթն էր, բայց փողոցով անցնելիս նրան իր հինգ ընկերների հետ ձերբակալեցին ու տարան Շատախի Թաղ կոչվող կենտրոնը: Նրա ընկերներից էր Տիգրան Բաղդասարյանը, որը ռուս-թուրքական ճակատում վիրավորվել, ազատվել և եկել էր Շատախ: Նա գնում է և գայմագամին ասում. - Ինչու՞ եք բանտարկել Հովսեփ Զոլոյանին, չէ՞ որ նա գավառի հայկական դպրոցների տեսուչն է և բանտարկության ենթակա չէ:

Շատախի գայմագամ Մեյթի բեյը, որը ֆրանսիական կրթություն էր ստացել, պատասխանում է. - Ոչինչ, որ Հովսեփ Զոլոյանին ձերբակալել ենք: Նա սենյակում նստած է, շուտով ազատ կարձակենք իր ընկերներով, պայմանով, որ հիսուն-վաթսուն երիտասարդ թաղեցիների իրենց զենքերով պիտի բերեք հանձնեք մեզ, այն ժամանակ կազատենք Հովսեփ Զոլոյանին:

Տիգրան Բաղդասարյանը պատասխանում է. - Թուրքական կառավարությունը արդեն հինգ-վեց ամիս է զորահավաք է հայտարարել, և Թաղի բոլոր երիտասարդները զորակոչվում են կռվելու ռուսների դեմ: Մենք զինված մարդ չունենք:

Գայմագամը պատասխանում է. - Մենք ամեն ինչ գիտենք:

Դու մի ասի՝ Շատախի ղեկավարությունը Հովսեփ Զոլոյանի անմիջական ղեկավարությամբ դեռևս մեկ-երկու ամիս առաջ՝ մարտ-ապրիլ ամիսներին 1915 թվի, հաշվի են առել Շատախի հիսունհինգ հայկական գյուղերում ո՞ր գյուղացին ի՞նչ զենք և քանի՞ պատրոն ունի: Կազմակերպել են խմբեր, որոնք Թաղի տներում և Շատախի կարևոր հայկական գյուղերում ինքնապաշտպանության մարտեր պիտի մղեն, երբ որ թուրքական կողմը դիմի հայասպանության: Իսկ Շատախում մոտ տասներկու հազար հայություն կար, որից հազար երկու հարյուրը՝ Թաղ քաղաքատիպ ավանում: Այդ բոլոր ցուցակները գտնվելիս են եղել Հովսեփ Զոլոյանի գրպանում: Խուզարկության ժամանակ հայտնվել են:

Երբ Տիգրան Բաղդասարյանը գայմագամից վերադառնում է Թաղ՝ իր տունը, հաջորդ օրը մի ուրիշ ընկերոջ հետ նորից գնում է գայմագամի մոտ, որ նորից խնդրեն Հովսեփ Զոլոյանի ազատվելը: Բայց գայմագամը նորից նույնն է ասում: Բացի այդ, գայմագամը կարգադրում է իր ոստիկաններին՝ Շատախի երկուերեք գյուղերում, տուրքեր հավաքելու պատրվակով, սպանել մի քանի հայերի: Կարգադրված էր նաև քյուրդ ավազակապետերին, որ նրանք սպանեն Շատախի չորս-հինգ ամենահայ երիտասարդների: Այնպես որ, թուրքերն արդեն սկսել էին հայերի բնաջնջումը:

Դեռ 1914 թ. ուշ աշնանից պահակախմբեր (որոնք գորտոններ էին կոչվում) էին դրված Շատախի բոլոր մեծ գյուղերում, որոնց թվում երկու պահակախումբ դրած է լինում Սիվտիկին գյուղում, մի պահակախումբ գյուղի տներին մոտ, իսկ մյուս պահակախումբը գյուղից հինգ կիլոմետր հյուսիս՝ Արտոս լեռան ստորոտին, որտեղից սկսվում է, պատմաբան Ա.-Դոյի խոսքերով, «Շատախի հոչակավոր ձորը», որի արևելյան կողմից կաուկաս լեռնաշղթան է, մյուս կողմից՝ Ռիշտունյաց լեռնաշղթան: Հյուսիսից դեպի հարավ ձորն է, որի հովիտներում, սարերի լանջերին տարածված են վարելահողերը, մարգագետինները:

Հովսեփ Զոլոյանի բանտարկության մանրամասները պարզելուց հետո Շատախի Թաղ կենտրոնում հրավիրվում է գյուղերի փորձված, հասակավոր մարդկանց և երիտասարդների ժողովը, որոնք պիտի խորհրդակցեին, թե ի՞նչ անել: Որոշում են ընտրել ինքնապաշպանության զինվորական մարմին:

1. Ընտրվում են երեք հոգի՝ Տիգրան Բաղդասարյան, Սամվել Մեսրոպյան (Թաղից) և Ազատ Սիմոնյան (Սիվտիկից):

2. Որոշում են մեկ-երկու օրվա ընթացքում կտրել Թաղից դեպի հյուսիս՝ Վան տանող հեռախոս-հեռագրի սյուները, որպեսզի գավառապետը չկարողանա կապվել նահանգապետ Ջևդեթի հետ:

Հայերը սուրհանդակներ ունեին՝ լուր ուղարկելու համար:

3. Այդ երկու օրվա մեջ ոչնչացնել Սիվտիկին գյուղում երկու պահակակետերը, որովհետև այդտեղից ճանապարհները գնում են Ուտանով և Հայոց ձորով դեպի Վան:

Ես անձամբ ականատես եմ եղել, իմ մոր հետ, գյուղի բարձունքներից մեկում այդ կռվին, որը տեղի ունեցավ Սիվտիկին գյուղում: Որոշեցին, որ կանայք, փոքր երեխաները գնան սարերը, մինչև կռիվը վերջանա:

Մարտի 31-ին Արշակ Պետրոսյանի խումբը (Սիվտիկին գյուղից) Հաշկանց գյուղից գալիս է Սիվտիկին գյուղի եզրը և այնտեղ մնացած հայ կռվողները՝ հայտնի ֆեդայի Բազիկ Պետրոսյանի ղեկավարությամբ, գյուղի չորս կողմը մարտիկներ են դասավորել, և երբ Արշակ Պետրոսյանը հասնում է գյուղի եզերքը, ազդանշանով մի գնդակ է արձակում: Բազիկ Պետրոսյանը իր գյուղի տներից մեկի դիրքից բղավում է թուրքական պահակախմբի ղեկավարին՝ Բայրի օնբաշիին, անձնատուր լինել: Բայց թուրքերը անձնատուր չեն լինում: Եվ սկսվում է երկկողմանի կրակը: Թուրքերի պետը գյուղի նորակառույց դպրոցի պատուհանում դիրք է բռնում և կրակում է հայերի վրա, երկկողմ հրաձգություն է տեղի ունենում: Ամբողջ գյուղը մեր աչքի առաջ եռում էր: Մենք մորս հետ սարում, քարի տակից տեսնում էինք: Մոտ քառասուն կրակոց եղավ: Ամեն ինչ դադարեց: Երկինքը ամպոտ էր, բայց ցուրտ չէր: Ես, մորս ձեռքը բռնած, իջա ձորը, եկանք գյուղ, ինչպես այլ կանայք եկան գյուղ և պատմեցին, թե ինչ է տեղի ունեցել: Սպանվել է Բայրի օնբաշին, և իր օգնականն ու նրանց ասկյարները իջևանատան պատուհանից իրենց հրացանները գցում են ներքև և ձեռքերը բարձրացնում, անձնատուր լինում: Մերոնք բանտարկում են նրանց՝ մի պառավ հայ կնոջ տանը: Սիվտիկին գյուղի կռվի մանրամասները հասնում են Վան: Վանի ճահճագապետ Ջևդեթ փաշան կանչում է հայ նշանավոր գործիչ Իշխանին (ղարաբաղցի), կարգադրում է նրան (Իշխանը ընտրվել էր Վանի մեծը)՝ «մի քանի ոստիկանների հետ գնա Շատախ՝ տես, ինչու՞ է կռիվ լինում: Գնա հանգստացրու»:

Իշխանը դեռ Սիվտիկին գյուղի ճամփի կեսը չհասած, ոստիկանների հետ, Հայոց ձորի Հիրճ գյուղում (Շատախ-Վանի մեջտեղում) մութը վրա է հասնում: Թուրք ոստիկանապետը Իշխանին ասում է. - Մութը ընկավ, ինչպե՞ս շարունակենք: Արի Հիրճ գյուղում հանգստանանք, առավոտը գնանք Շատախ, հանդարտեցնենք հայերին:

Բայց դա խաբեություն էր: Երբ Իշխանը իր չորս ընկերներով գիշերում է, թուրք ոստիկանները նրանց սպանում են, գիշերով թաղում, հողն էլ վրան ծածկում: Նույն օրը Ջևդեթ փաշան կանչում է Պոլսի մեջլիսի անդամ Վռամյանին, որը գործում էր Վանում: Տանում է Վանա լճի ափ, Ավանց գյուղը, քար է լցնում տոպրակի մեջ, կապում է նրա վզին և Վանա լճի մեջ խեղդում: Բայց, բարեբախտաբար, Վռամյանին հաջողվում է մինչ այդ մի նամակ գրել Արամ Մանուկյանին, որը Վանի ինքնապաշտպանության ապագա ղեկավարն էր: Մի երկտող է գրում, տալիս իր կնոջը, որ եթե Ջևդեթը Արամին կանչի, նա չներկայանա, քանի որ նրան էլ կսպանեն:

Եվ սկսվում է Շատախի ինքնապաշտպանությունը: Թուրքերը հարձակվում են հայերի գյուղերի վրա: Ինքնապաշտպանությունն սկսվում է ապրիլի 4-ից, տևում է մինչև մայիսի կեսերը, մոտ քառասունհինգ օր*: Ինչպես Վանը, նույնպես և Շատախը դիմադրում է թուրքական և քրդական գերազանցորեն զինված դահիճներին: Ընդհանուր առմամբ, Շատախի ինքնապաշտպանության ժամանակ հայերը լավ պաշտպանվում են, չնայած թուրքերը լավ զինված էին:

Շատախի ինքնապաշտպանության այդ քառասունհինգ օրերին հայերը, ընդհանուր առմամբ, հաջող դիմադրում են, չնայած պաշարված էին, զենք և փամփուշտը պակաս էին: Սակայն Շատախի մի գյուղի՝ Սոզվանց անունով, որը Թաղից երեք-չորս կիլոմետր լեռնալանջին էր հարում, դիրքի հայ պաշտպանները ցրտի պատճառով սխալ են գործում, չնայած իրենց ղեկավար Գարումյան Հովսեփի դիմադրությանը, դիրքերից քաշվում են և գնում հետու, տների մեջ հանգստանում: Առավոտն էլ շատ ուշ են գնում իրենց դիրքերը: Սոզվանցը Շատախի պահեստարանն էր: Էդ գյուղը թուրքերը գրավում են: Շատախի առանձին խմբերի մեջ որոշ հուսահատություն է նկատվում, բայց հիմնական խմբերը քաջություն են ցուցաբերում՝ ասելով. - Պիտի մեռնենք, պիտի ապրենք՝ միասին:

Հետո այդ Սոզվանցը կրկին հայերի կողմից գրավվում է: Շատախը շարունակում է ինքնապաշտպանվել: Բարեբախտաբար, ռուսական զորքերը Ալաշկերտից հասնում են Բերկրի, մոտենում են Վան քաղաքին: Ջևդեթը փախուստ է տալիս իր զորքերով: Ռուսական կայսերական զորքերը, պատմության մեջ առաջին անգամ, մտնում են Վան քաղաքը՝ 1915 թ. մայիսի 6-ին (հին տոմարով): Նրանց հետ էր նաև հայ նշանավոր զորավար Դրոյի կամավորական խումբը: Մայիսի 15-ին (նորով՝ 27-ին), Շատախի ղեկավարության պահանջով, Արամ Մանուկյանը Դրոյի խմբին ուղարկում է Շատախ: Շատախի թուրքերը՝ լսելով կամավորների գալը, փախուստի են դիմում: Այսպիսով, Շատախի ինքնապաշտպանության քառասունհինգ օրվա հերոսամարտը պսակվում է փառահեղ հաղթանակով: Վանում ստեղծվում է ճահճագապետություն՝ Արամ Մանուկյանի ղեկավարությամբ, իսկ Շատախում՝ Տիգրան Բաղդասարյանի ղեկավարությամբ:

Գյուղացիները բարձրանում են ամառանոցները, իսկ քաղաքում վերականգնվում են խաղաղ աշխատանքները՝ և՛ հողագործությունը, և՛ արհեստները, և՛ առևտուրը: Հայերը Վանում և Շատախում դիմավորում են ռուսներին:

1915 թ. հուլիսի վերջերին ռուսները Վանա լճի հյուսիսային և հարավային մասով միանում են, սակայն այդտեղ տեղի է ունենում մի դեպք: Թուրքերին հաջողվում է յոթ կիլոմետրով ճեղքել ճակատը, և ռուսները ճահճջում են: Հինգ-վեց օրվա մեջ՝ կռվելով ետ են քաշվում մի քանի հարյուր կիլոմետր, հասնում են Ալաշկերտ, Աբաղայի դաշտը, մինչև Բերկրի են հասնում: Ստեղծվում է վտանգ Վանի հայության համար:

Վանում գեներալ Նիկոլաևը կանչում է Արամ Մանուկյանին, ասում. - Վանում մոտ քսանչորս հազար հայ բնակչություն և գավառների գաղթականություն կա կուտակված, ժողովրդին պետք է գաղթեցնել Արևվելյան Հայաստան:

Սկսվում է Վանի ճահճագի և Շատախի գավառի գաղթը: Այն սկսվեց օգոստոսի սկզբին:

Մենք մեր Քրդասար ամառանոցում էինք, սարի գլխին, ոչխար-տավարով: Դեռ լույսը չբացված, մութխավարին հայրս եկավ, մեզ քնած տեղից արթնացրեց. «Վե՛ր կացե՛ք, պիտի գաղթենք»:

Բարձեցինք անասունները, երկու-երեք օրվա մեջ հասանք գյուղ: Գյուղի տան մեջ ծնողներս ինչ-որ ուտելիք վերցրին, բարձեցինք էշերին և վերջին անգամ տրխուր-տրտում, մեզամաղձոտ, տուն-տեղը թողած, պապական օջախը թողած, բռնեցինք գաղթի ճամփան:

Երկու օրից հասանք Վան, որը մեր գյուղից մոտ քառասուն կիլոմետր էր: Վանի ժողովուրդն արդեն երկու օր առաջ գաղթել էր, տներում թողնելով առևտրական ապրանքներ: Վան քաղաքի մոտ մենք մնացինք մեկ գիշեր, դա արդեն երրորդ գիշերն էր:

Երկու հարյուր հազար հայեր գալիս էին: Ժողովուրդը տներում, խանութներում եղածները՝ շաքար, չիթ, թոփով կտոր, վերցրեց իր հետ, որոնք ճանապարհին թալանի գնացին:

Երեք օրից, կեսգիշերին հասանք Բերկրի: Այնտեղ մի կամուրջ կար գետի վրա: Սարսափելի մութ էր: Երեկոյան դեռ արևը մայր չմտած, մի կողմից Վանա լճի հյուսիսային ափով ռուսական զորքն է մոտենում Բերկրիին, իսկ մյուս կողմից Ջիլանի քյուրդ ավազակապետերը հարձակվում են Բերկրիի կամուրջի վրայով անցնող գաղթականների վիթխարի քարավանների վրա, որոնք ոտքով էին, երեխաները շալակած, անասունների վրա բարձած իրենց ունեցվածքը...: Դա մի սարսափելի տեսարան էր: Երկու հարյուր հազար հայ գաղթում է՝ մի ծայրը հասել է Իգդիր, մյուս ծայրը դեռ Վանի հարավի գավառներում է՝ Շատախում, Մոքսում, Գավաշում: Մի անգամ ինձ նստեցրին էշի վրա, տեսա շարժվող գաղթականական խմբին և՛ ետևում, և՛ առջևում, ժողովուրդը փոշու մեջ կորած, ամառվա շոգին՝ օգոստոս ամիսն էր...:

Երբ մենք հասանք Բերկրի, մութ կեսգիշեր էր: Ամբողջ օրը քայլել ենք առանց դադարի: Հասել ենք Բերկրիից տասը կիլոմետր հյուսիս Բանդիմահու գետի կամուրջին: Մի կողմից՝ գաղթականությունը ուզում է անցնել, մյուս կողմից՝ ռուսական զորքի ձիավորները՝ իրենց երկանիվ սայլերով: Ամեն մեկը ուզում է անցնել, հասնել Աբաղայի դաշտը, որ փրկվի: Իմ հայրը և մերոնք տեսան, որ կամուրջով անցնելու հնարավորություն չկա, շատ կանայք երեխաներին գցում են ջուրը, քանի որ անհնարին վիճակ էր: Հայրս մեզ մի կողմ քաշեց, որ սպասենք, որ նոսրանա ամբոխը. կնոսրանա՞, մի ծայրը Վանում է: Հայրս տեսավ, որ այս վիճակը չի լավանա: Կանայք, տղամարդիկ՝ բեռնված անասունների վրա մտան օղակի մեջ, որ անցնեն կամուրջը: Մինչև իրար հրմշտկելով անցանք կամուրջը, մենք իրար կորցրինք: Ես, մեծ՝ ամուսնացած եղբայրս կնոջ հետ, որի գրկում յոթ ամսական երեխան էր, մեկ էշով և եզով, իսկ հայրս, մայրս, տատս և միջնեկ եղբայրս միասին՝ կորցրինք իրար: Շատերը սպանվեցին այդ Բանդիմահու կամրջի մոտ: Ամբողջ գիշերը մթության մեջ գնում ենք իրար կորցրած: Միայն կամուրջը անցել ենք: Ամբողջ գիշերը ոչ մի հանգիստ, գնո՜ւմ ենք, գնո՜ւմ դեպի Աբաղայի դաշտը, որտեղ ռուսական զորքն է: Մթության մեջ երևաց մի կարմիր լույս օդում: Ժողովուրդը կարծեց՝ դա թշնամու զենքն է: Բայց մթության մեջ քայլում ենք մինչև արևածագ, հասանք Աբաղայի դաշտը, ուր ռուսական զորքերն են: Ժողովրդի մի մասը հանգստանում է, մի մասը ճանապարհը շարունակում է:

Առավոտյան ժամը տասի մոտ իմ կորցրած հայրը, մայրը, տատս, միջնեկ եղբայրս եկան, մեզ գտան: Բան չենք կերել: Հայրս վերցրեց ինձ և միջնեկ եղբորս՝ գաղթի ճանապարհից երկու-երեք մետր հետու մի մեծ բազալտ քար կար՝ էնտեղ նստեցինք:

Աբաղայի դաշտը կանաչ էր, իսկ քարը գետնից մի քիչ բարձր էր: Հայրս ինձ տարավ էդ քարի վրա նստեցրեց, մի տոպրակ կար՝ լավաշի փշրանքներով, փշրանքները թափեց քարի վրա, ասաց՝ կերեք փշրանքները:

Ոնց եղավ, ես նորից կորցրի հորս, միջնեկ ախպորս: Երևի կերա լավաշի փշրանքները, ծարավեցի, գնացի ջրի: Վերադարձա, տեսնեմ մերոնք չկան: Երկու-երեք ժամ ես ընտանիքի մյուս անդամներին փընտրում եմ՝ ժողովրդի մեջ քայլելով՝ ո՛չ մերոնց եմ գտնում, ո՛չ ջուր եմ գտնում: Վերջապես տեսա տավարի սմբակի ոտնահետքի տեղը ջուր էր կուտակվել: Ես կզվեցի, ուզեցի ծծել՝ նեխահոտ էր, կուլ չտվի: Շարունակեցի ճամփան: Մեկ էլ գաղթականների քարավանների զանգվածի միջից հերս կանչեց. «Ա՛յ Անդրո, ա՛յ շան լակոտ, ու՞ր կորար»: Ուրախությանս չափ չկար: Մեր բեռների մեծ մասը թալանվել էր: Ժողովրդի հետ վերջապես հասանք Բանդիմահու գետի վերին հոսանքին: Հերս իր ոտնամանները հանեց, շալվարը ծալեց, ինձ էլ գրկեց, ջրի մեջ մտավ, որ անցնի, բայց ջրի մեջ քարերը լպրծուն են: Անցանք գետը: Սկսվեց թափառիս բարձր լեռը. բարձրացանք: Գիշերը վրա տվեց: Էնտեղ գիշերեցինք, բաց երկնքի տակ: Առավոտ լույսը չբացված՝ գաղթը պիտի շարունակենք: Էդ գիշեր երազի մեջ ես տեսա, որ մեր գյուղի ամառանոցում ենք: Մայրս ինձ բերեց մածնի սեր, պիտի կերցնի: Երազի մեջ եմ: Էդ պահին հերս ասաց. «Վե՛ր կացեք, պիտի գնանք»: Ինձ նստացրին էշի վրա: Պիտի անցնենք Հին Բայազեդի մոտ՝ Դըզըլ դիզա: Մութ էր, հասանք, մի քիչ արև կար, էնտեղ գիշերեցինք: Առավոտյան շուտ լուսաբացին ենք ելնում: Բարձրանում ենք Մեծ Արարատ լեռան արևմտյան լանջը, Օրգով է կոչվում: Դա ռուս-թուրքական սահմանն էր: Գիշեր էր: Բարձր տեղ էր: Չնայած ամառ էր, բայց ցուրտ էր, մոտ երկու կիլոմետր բարձր էր: Սաստիկ քամի էր, մի գիշեր էդտեղ մնացինք: Առավոտյան իջանք սարի ստորոտը: Մի առու կար, ժողովուրդը հարձակվեց վրան, սկսեց խմել, բոլորն էլ ծարավ են: Մինչև իջանք՝ մեկ օր տևեց: Հասանք Իգդիր՝ Ավետիս Ահարոնյանի ծննդավայրը: Իգդիր կանգ չառանք, անցանք, եկանք Արաքս գետը, որի վրա ռուսները երեք կամարանի կամուրջ էին շինել: Գետի

---

* Վանի վիլայեթի Շատախի գավառի հայ բնակչության ինքնապաշտպանական մարտերը թուրք ջարդարարների դեմ 1915 թ. տևեց 45 օր՝ ապրիլ-մայիս ամիսներին:

ձախ ափին Մարգարա գյուղն էր: Շատ տներ չկային: Գյուղի եզրին մի քաց տեղ մեր բեռները վար առինք, եղած-չեղածը դրինք գետնին, նստանք հանգստանալու: Էնտեղ բամբակ էին ցանել: Էդտեղ մնացինք մոտ երկու-երեք շաբաթ: Ուտելիք չկա, եղածն էլ թալանել են, ո՛չ բժշկություն, ո՛չ սանիտարիա, բաց, չոր տեղ, չորս կողմը՝ փշատի ծառեր և բամբակի դաշտեր:

Առաջին գիշերը մնացինք: Առավոտյան հայրս ասեց.

- Արա՛ Անդրո, էս էշերը տար չիմանը արածեն:

Էնտեղ մի անգամ մթերք տվինք: Հերթը շատ էր: Եղբայրս ասեց. - Դու սպասիր, ես առնեմ կգամ:

Չորս-հինգ կգ ալյուր և մեկ կգ շաքար բաժանեցին ամեն մի ընտանիքին: Հաց չկա: Ալյուրը շաղախեցինք, կրակի վրա եփեցինք: Մի կողմից՝ օգոստոսյան շոգը, մյուս կողմից՝ Արաքսի աովի կեղտոտ ջուրը: Տարածվել են տիֆը, խոլերան: Մեր ընտանիքի անդամներից երևի շատերը հիվանդացան: Էդ շոգի դիմաց ամեն մեկը մի փայտ է տնկած, վրան մի շոր է գցած: Մեր ընտանիքը ութ անդամ էր: Ես ոչ մի տեղ չեմ գնացել, զարմանքով առաջին անգամ տեսնում եմ ավտոները ռուսական զորքի համար մթերք են տանում: Մերոնք հիվանդ են բոլորը: Մարգարայի սոսկալի օրերը մոռանալու բան չեն: Եթե մեր երեք հազար ոչխարները մեզ հետ լինեին, մենք Իգդիր չէինք գնա, լեռնային մի տեղ կմնայինք, անասնապահությամբ կզբաղվեինք:

Առաջին հիվանդը եղավ իմ պապերից մեկի կինը՝ Շարցին: Նայում էր՝ Արարատ սարի գլխին ձյունը նստած, ասում էր. - Ի՞նչ կլինի էն գավուց մի քիչ բերեիր, ես ուտեմ ու մեռնեմ:

Ամուսինը գնաց, էշով ձյուն բերեց: Նա կերավ ու մեռավ:

Լուր տարածվեց, որ ռուսները նորից գրավել են Վանը: Թուրքերը երեք օր են մնացել Վանում: Քրդերը չեն հասցրել թալանել: Ժողովուրդը լսեց՝ Վա՛ն: Շատերը հասել են Թիֆլիս, Երևան: Երեսուն-քառասուն հազար հայ գաղթականներ Էջմիածնից, Մարգարայից ետ դարձան՝ հուսով, որ Երկիր են գնում: Օգոստոսի վերջն է արդեն: Գնում ենք ետ: Վիրավորներ, հիվանդներ, մահամերձների հառաչանքներ: Մինչև Վան հասնելը, ճանապարհին իմ միջնեկ ախպերը էշի բեռի միջից ասաց. - Ինձ իջեցրեք, ես հանգստանամ:

Հայրս ասաց. - Արա՛մ ջան, քիչ մնաց:

Կես ժամ անցած՝ գնացինք, բայց հայրս գիտի, որ նա ծանր հիվանդ է: Սարի լանջով որ իջանք, բեռները դրինք, հանգստացանք: Բոլորը նստել են բեռների շուրջը, ես նստել նայում եմ դեպի ճամփան, հերս ասաց. - Արա՛մ ջան, վեր կաց, գլուխդ բարձրացրու, տե՛ս քանի մանեթ է, որ գնամ բոստանը ձմերուկ առնեմ բերեմ, - երեք անգամ ասաց, պատասխան չտվեց:

Առավոտ լույսը չբացված՝ բեռները բարձին, Արամին դրին ջվալի մեջ՝ գլուխը դուրս՝ Տատո էշին: Ճանապարհը երևում էր: Մեկ էլ երկու ժամ հետո տատս ասաց. - Արամ մեռավ, - քանի որ նրա վիզը թեքվել էր:

Հասանք Գըզըլ դիզա: Մեր գյուղացիները փոսեր փորեցին, շատ մեռելներ կային: Տարան թաղեցին: Կես ժամ հետո շարժվեցինք:

Երկու-երեք օրից հասանք Բերկրի: Անցանք Փանզ գյուղը՝ Վանա լճից դեպի արևմուտք, մնացինք Էդտեղի տների պատերի տակ: Մեծ ախպորս ոտքը ցավալ սկսեց: Ավելի ուռեց, ընկավ անկողին: Ասին՝ այծի մորթին թարմ-թարմ քաշես վրեն՝ չօգնեց: Մեծ ախպերս էլ էնտեղ մեռավ: Էկանք Վանից երեսուն կիլոմետր հետու՝ Ջանիկ գյուղ կա: Էդտեղով անցնում ենք. իմ մեծ ախպոր կինը, որ չխոսկան էր, ձևերով հասկացրեց, որ յոթ ամսական երեխան մեռավ. հենց ճամփին հողի փուխր թումբի մեջ երեխին թաղեցին:

Երկրորդ օրը հասանք Լեզք կոչված Վանի գյուղը: Մենք էնտեղ տների պատերի տակ տեղավորվանք: Տատս, մերս ցախ հավաքեցին, օջախ սարքեցին: Ջրով ցորեն խաշեցին օջախի վրա: Տատս հանկարծ ետ գնաց ու մեռավ: Տարանք, հայկական գերեզմանատուն կար, թաղեցինք:

Իմ հորաքույրը, որ ամուսնացած էր, երկու ջահել տղա ուներ, տղաներից մեկն էլ մեռավ: Հարսը գնաց իր հորանց հետ: Մնացել ենք հորաքույրս, մերս, հերս ու ես: Մայրս՝ Շաղգիկը, արդեն հիվանդ էր: Լեզքում անկողին ընկավ: Ոչխարն արդեն թալանվել է: Էշերին ես տանում եմ արածելու: Խաղող, խնձոր, տանձ կար: Վանի ինքնապաշտպանությունից հետո, երկու ամիս, վանեցիները լավ իշխանություն էին ստեղծել ևան Շատախում՝ հողը վարել, մշակել էին, լավ բերք էր տվել: Մերս ու հորաքույրս մեռել էին, ես չեմ իմացել: Էկա արածացնելուց, տեսա մերս չկա: Մնացինք ես ու հերս:

Ես ու հերս Լեզք գյուղից գնացինք Հայոց ձորի մոտ՝ Բերդակ գյուղը մնացինք, որ Վանից տաս կիլոմետր հետու է: Մնացինք էդտեղ 1915-ի ձմեռը: Ետ վերադարձին մի պոպոքի ծառ կար, հերս թափ տվեց, կոտրում էր, ուտում էինք, դրանով էլ ապրեցինք:

Գարուն որ եկավ, Բերդակից իջանք մյուս լանջով, գնացինք Հայոց ձոր, Գելբալասան գյուղ: Այնտեղ շատ գայլեր կային: Գյուղը սարի լանջին էր, կողքով Խոշաբ գետն էր գնում, Ոստանի մոտ թափվում էր Վանա լիճը, մեջը լիքը ձուկ կար: Կողքից էլ Շամիրամա առուն էր գնում, որը ուրարտացիներն էին շինել, վաթսուն կիլոմետր, Հայոց ձորից գալիս էր Արտամետով՝ Վանի բոստանները ջրում է, այդ մասն էլ կոչվում է Այգեստան, որի մեկ կողմը հայ էր, մյուս կողմը՝ թուրք: Շատախում թուրք չկար գրեթե, իսկ Վանում՝ կեսը հայ էր, կեսը՝ թուրք:

Գելբալասան գյուղում մենք մնացինք 1916 թ. գարուն և ամառը: Հետո օգոստոս ամսին լուր եկավ, որ թուրքերը Ոստանի կողմից հարձակվում են, պիտի մըտնեն կոտորեն ռուս զորքին և հայերին: Հայոց ձորում տեղավորված տարբեր գավառների գաղթականներս Վան քաղաքի միջով անցանք, դեռ Բերկրի չհասած՝ լուր տարածվեց, որ սուտ է: Մենք ետ վերադարձանք, մեզ հետ՝ ևան այլ գաղթականներ. եկանք Վան, Ջաղլի փողոցը մի տուն կար, 1916 թ. աշնանից մինչև 1917 թ. գարուն մնացինք էդտեղ: Ես Նորաշենի դպրոցի երկրորդ դասարանը գնացի: Էդտեղ մնացինք մինչև 1918 թ. ապրիլ ամսի 5-ը:

Մեր՝ Վան վերադարձած երեսուն հազար հայ գաղթականների ղեկավարը ղարաբաղցի Կոստյա Համբարձումյանն* էր: Նա ուզեց մեզ Բերկրիով բերել Արևելյան Հայաստան, բայց Բերկրիում թուրքերը կըտրել էին ճամփան: Դեպի Երևան գալը հնարավոր չէր:

Արդեն հեղափոխություն էր եղել. 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունն էր եղել, ռուսական զորքերը ետ քաշվեցին: Համբարձումյանը ուզեց Խոյով, Ջուլֆայով, Նախիջևանով մեզ բերել Երևան: Էդ ճամփան էլ փակ էր: Մենք՝ Վանից գաղթած երեսուն հազարը, Կոտուրի ձորով դեռ Խոյ չհասած՝ թեքվեցինք, գնացինք Սալմաստ: Կռիվ էր: Քրիստոնյա ասորիները հայերի հետ կռվում էին թուրքերի և քրդերի ավազակախմբերի դեմ: Դա այն ժամանակն էր, երբ Անդրանիկը գրավում է Ջուլֆան, Խոյը, որպեսզի հասնի Սալմաստ և օգնի Վանից եկած հայ գաղթականներին ու նրանց ապահով տանի դեպի Համադան-Քիրմանշահ, որտեղ անգլիական զորքերն են՝ եկած Պարսից ծոցից:

Ինձ և մեր շատ ուրիշ գյուղացի երեխաների ուղարկում են Համադան, նոր բացված որբանոցը, իսկ գաղթականների մնացած զանգվածին անգլիացիները երկաթուղիով տանում են Բաղդադի մոտ՝ Միջագետք՝ Բաքուբա կոչված քաղաքի մոտ: Տիգրիսի գետափին, անապատում տնկած անգլիական մեծ վրանների տակ հինգ-վեց ընտանիք ապրում են մոտ երեք տարի՝ 1918 թ. հոկտեմբերից մինչև 1922 թ. հունվար-փետրվար: Գաղթականների որոշ մասը շոգին չդիմանալով՝ մահացավ: Բայց երեք տարի մնացին վրանների տակ, Բաքուբա, հետագայում՝ Նաջր-ումար, Բասրա քաղաքի, Պարսից ծոցի մոտ: Ողջ մնացած շուրջ տաս հազար հայերին անգլիական երեք նավերով՝ ամեն նավի մեջ մոտ երեք հազար անձ, Պարսից ծոցով, Հնդկական օվկիանոսով, Կարմիր ծովով, Սուեզի ջրանցքով, Պորտ-Սայիդով, Միջերկրական ծովով, Բոսֆորի նեղուցով, Սև ծովով, Բաթում հասանք: Էնտեղից երկաթուղիով մեզ հանձնեցին Ալեքսանդր Մյասնիկյանին՝ նոր ստեղծված Սովետական Հայաստանին: Մեզ տեղավորեցին Արտաշատի (Ղամարլու), Արարատի (Մեծ Վեդի) շրջանների գյուղերում: Մի քանի օր մնացինք Դավալու գյուղում: Ես ու հայրս եկանք Երևան: Ես գնացի Ամերկոմ, Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի գրասենյակը, մտա աշխատելու որպես նամակատար. ցերեկը աշխատում էի, գիշերը՝ սովորում: Սովորեցի նաև բանֆակում: Հետո ընդունվեցի Պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը: Դարձել եմ վաստակավոր գյուղատնտես: Մասնակցել եմ Հայրենական պատերազմին և արժանացել բարձր կոչումների:

23 (23).
ՀԱՅՐԻԿ ՄԱՆՈՒԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ** ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ՇԱՏԱԽ, ՋՆՈՒԿ Գ.)

Մեր Վարագա սարի լանջը Վանի լեռան գագաթին էր: Էդ սարի թևը աստիճանաբար իջնելով՝ մտնում է Վանա լիճը: Հայաստանի ամենալավ խնձորը Արտամետի խնձորն է:

Վարագա սարի լանջին կար մի ծաղիկ՝ գիշերը մոմի նման վառվում էր, ոնց որ լույս է վառվում: Երբ մոտենում ես, որ պոկես, էլ լույս չի տալիս: Էդ ծաղկին սիրադեղ էին ասում:

Մենք ունենք խալդերի տաճար, որ լիճը ծածկել է: Աղթամար կղզին փոքր ու քարքարոտ է եղել: Գագիկ թագավորը այդ կղզու վրա կառուցել է տվել Աղթամարա հայտնի վանքը:

Վանի չորս կողմը քյաֆուր վարդ էր, քյաֆուր վարդը կապույտ էր լինում...

Մայիսյան մի պայծառ օր Զոզան մայրիկը գնում է մեր Ջերմուկ (ջրերի գյուղ): Մի անգամ խնդրեցի հորեղբորս՝ այդ հանքային աղբյուրների անունները հիշել, նա երկու հարյուր տասը աղբյուրի անուն հիշեց: Համարյա մեր բոլոր արտերը ջրվում էին բնական: Ուրեմն այդ օրը մայրս գնում է Արնոս լեռան լանջին բանջար քաղելու: Հանկարծ կայծակ ու ամպրոպ է սկսվում, ապա՝ կարկուտ, և մայրս որոշում է մի կերպ հասնել քարայրը. խավարծիլի տերևի մեկը՝ գլխին, մեկը՝ վրան գցած հասնում է քարայր: Ինքը ծոցվոր էր: Սկսվում են երկունքի ցավերը, և ծնվում եմ ես: Բույսի շեղբով կտրում է պորտս, իր շապիկը հանում և փաթաթում է ինձ: Հայրս տեսնում է, որ եղանակը վատացավ, մտահոգված գալիս է այդտեղ, քարայրի պոնկի վրա հանդիպում է մորս և ինձ տուն է բերում, դնում են ինձ օրորոցի մեջ: Տատս բարձի տակ պարան է դնում, որ չարքերը կապվեն, գյուղի ուսուցիչը ականջիս դրած մատիտը հանում, դնում է իմ կողքին՝ թող գրագետ լինի՝ ասելով: Պապս էլ թուրը հանում է, դնում կողքս՝ թող ֆեդայի դառնա, ասում է:

Հիշում եմ, երբ Շատախի հերոսամարտը սկըսվեց: Միհրանցի քրդեր կային, որոնք մեզ հետ բարիդրացիական հարաբերությունների մեջ էին, գալիս էին մեր տունը իջևանում, ուտում, խմում, գիշերում, հետո գնում էին: Մենք նրանց ճանչվոր էինք ասում: Էդ ժամանակ էդ մեր ճանչվորը մի անգամ եկավ, մի խալաթ տվեց պապիկիս: Դա ծիրանագույն մի խալաթ էր, և մի արաբական ձիու մտրուկ, որը երեք տարեկան էր: Ես շատ էի սիրում նրա վրա նստել, դա իմ ձին էր, մենք նրան տարանք մինչև Միջագետք:

---

* Կոստի Համբարձումյան (Ոսկանյան) (1882, Շուշի – 1918, Իրաք) – ազգային ազատագրական շարժման գործիչ: 1915 թ. մայիսին մասնակցել է Վանի ազատագրմանը:

** Հայ ժողովրդական երգի գիտակ, ժողովրդական երգիչ, պատմաբան:

Հերոսամարտի ժամանակ շատախցիները ունեին երեք հարյուր վաթսուն-չորս հարյուր զինված ռազմիկներ, իսկ թշնամին վեց հազար հոգիանոց զորք հանեց մեր դեմ: Կռիվը տևեց մեկուկես ամիս: Միայն մի անգամ հաջողվեց թուրքերին հաղթել: Մենք ամբողջ գավառն էինք պաշում: Հայերը տվեցին քառասունութ զոհ, իսկ թուրքերը՝ երկու հազար զոհ:

Դրոն եկավ և մեր գյուղում ճառ արտասանեց, գովեց հերոս շատախցիներին և «Ապրե՛ք» ասաց: Բայց ռուսական զորքը ևաճանջեց, և սկսվեց գաղթը: Ամբողջ ճանապարհը՝ մինչև Վան, դիակներով էր լցված:

1915 թվին ռուսական զորքի վիճակը շատ ծանր էր: Ռուս զինվորներն ընկնում էին հայերի տները և հաց էին մուրում, քանի որ երեք ամիս սնունդ չէին ստացել: Բայց հայերս սիրում էինք ռուս զինվորներին, նրանց ասում էինք՝ բարի ռուս:

Լռնդախտով հիվանդացանք: Մի սալմաստեցի հայ եկավ, չիբուխի պես մախորկայի նման մի բան ծխել տվեց, և մենք լավացանք: Ծամփին մահացան իմ հայրը, հորեղբայրը, Սալմաստում՝ պապս: Մայրս լավ երգում էր: Պապս մորս շատ էր սիրում. «Երեսունչորս հոգիանոց մեր ընտանիքի Խաթունն է», - ասում էր: Մահից մի օր առաջ, երբ պառկում էինք քնելու, պապս ասաց. - Վաղվա արևը չպիտի տեսնեմ, եկեք ձեզ օրհնեմ, - մորս խնդրեց, որ երգի իր համար, և ինքը օրհնեց մեզ՝ բոլորիս, հետո՝ հոգին ավանդեց...

Գաղթի ճանապարհին մեզ ղեկավարում էր Կոստանդին Համբարձումյանը: Մենք հինգ հազարանոց զորք ունեինք: Զորքը բաժանվեց մի քանի մասի, մի գունդը ձորի ձախ կողմից, մյուսը՝ մեր առջևից, մյուսը՝ մեր ետևից: Այսպես քառասուն հազար հայ Վանից դուրս եկանք: Մենք չգիտեինք, որ թուրքերը կաշառել էին Սմկոյի բանդիտների խմբին: Նրանք պաշարել էին մեր ճանապարհը և փակել էին: Մենք պիտի գնայինք խոյի ճամփով, պիտի միանայինք Կովկասի հայությանը, բայց ստիպված գնացինք Սալմաստ:

Ձորի միջով գնում ենք, ճանապարհը նեղ է: Նրանք մի հսկա քար դրել էին ճամփի մեջտեղը, որ մենք չկարողանանք անցնել: Մեր երիտասարդները հրելով՝ այդ քարը ձորը գցեցին: Բայց հետո քրդերը սկսեցին վրա տալ: Մենք դժվարանց ձորի ճանապարհով բարձրացանք: Աջ թևի քրդերը շրջապատել էին մեզ, և մեր զորքերը կոտորեցին քրդերին: Նրանց դիակները փռված էին:

Քանի որ գաղթից առաջ մենք ռուս զորքերին օգնում էինք, հիմա էլ իրենք մեզ մենակ չէին թողնում՝ ոչ միայն պաշտպանում էին, այլև ուտելիքի ժամանակ մեզ կանչում էին. - Եկեք, միասին ուտենք, - ասում էին:

Սալմաստում կար մի ռուսական հրետանային գումարտակ, որը չէր կարողացել փախչել, մեզ օգնեց, և այդ գումարտակի հրամանատարը մեզ հայտնեց, որ մենք հայերի հետ կլինենք մինչև վերջ:

Գաղթի ժամանակ ճանապարհին թուրքական բանակը մեզ հետապնդում էր: Թուրքերը իրենց տասնհինգ հազար զորքով եկել էին մեզ վրա, Սալմաստում մերոնք կռվեցին և ծանր կորուստներ տվին: Թուրքերի դիրքերը ամուր էին, իրենք վերևից էին կռվում, իսկ մենք՝ բաց դաշտից: Ռուսական զորքի օգնությամբ մենք փրկվանք:

Ուրմիայում պարսիկները մեզ աղ ու հացով դիմավորեցին: Ուրմիայում շատ ասորիներ կային: Ժամհարյանը մեր գումարտակի հրամանատարն էր, երբ տեսավ, որ թուրքերը հարձակվում են նաև ասորիների վրա, նա սկսում է պաշտպանել ասորիներին: Իր զորքերը, ճիշտ է, շատ էին, շատ էլ զոհվում են, բայց ասորիները ևս փրկվում են: Կռիվները շարունակվում էին: Ուրմիայի կռիվներին ադրբեջանցիները ևս մեզ վրա հարձակվեցին: Մենք գնացինք, հասանք Քիրմանշահ: Թուրքերը գալիս են մեր հետևից: Պարսկական հայտնի մի զորահրամանատար՝ յոթանասուն-ութսուն հոգով, առաջ էր անցել, որ կողքից հարձակվի: Նրանք հանդիպում են Կոստյա Համբարձումյանին:

Շահը հրամայել էր՝ հայկական քարավաններին չդիմադրել, դրա համար մեզ աղ ու հացով դիմավորեցին: Մեզ հանդիպեց մի անգլիական հեծյալ վաշտ: Նրանք տեղից չշարժվեցին: Քիրմանշահում ուտելիք չկա, սնունդ չկա: Արաբներն էլ անընդհատ մորս շուրջը պտտվում են՝ ասելով. - Էս ձին մեզ ծախի:

Մայրս վերջապես համաձայնվեց. - Ինչքան փող կտաս՝ տուր:

- Մի քսան ոսկի:

Եթե մայրս ավելի ուզեր, պիտի տային, քանի որ արաբական նժույգ էր: Ես շատ լաց եղա իմ նժույգի ետևից: Ես տասներեք տարեկան էի: Ես նրան հեծնելով՝ անասուններին տանում էի արոտ: Նա իր մեջքը ծռում էր, որ ես նստեի: Ինձ հետ շատ կապված էր: Կամաց-կամաց գնացինք Միջագետք: Ռուսական դիվիզիան մեզ հետ էր: Մենք հասանք Միջագետք: Այնտեղ անգլիացիները Նահրումար անապատում վրաններ տակ էին: Հնդկաստանի հայերը մեզ նյութապես օգնություն ուղարկեցին՝ բժիշկ, անգլերենի դասատուներ: 1918 թ. անգլիացիները մեր զորքին դարձրին գաղութային զորք: Իրաքում սկսվեց ազատագրական պայքար: Իրաքի արաբները դուրս եկան անգլիացիների դեմ: Անգլիացիները ուզեցին, որ հայերը գնան արաբների դեմ:

Լևոն Շաղոյանը* մեր քարավանի հրամանատարն էր, Կոստինից հետո: Նա ընդամենը վեցերորդ դասարանի ուսում ուներ, բայց խելոք մարդ էր: Շաղոյանն ասում է. «Մենք գտնվում ենք օտար երկրում, մենք արաբների դեմ կռվի դուրս չենք գա»: Անգլիացիները գազազում են: Անգլիացիները պատրաստվում էին հրաժարվել հայկական մանդատից: Լուրը հասնում է շեյխին: Բեդվինները եկան, լցվան մեր վրանների մեջ, մաարաբա - շատ ապրիք, - ասացին:

Իսկ ասորիները կռվում էին արաբների դեմ: Բայց արաբները նրանց ոչնչացրին մինչև վերջին մարդը:

1921 թ. հետո հրաման ստացանք, որ Կովկասում Հայաստանի Հանրապետություն է ստեղծված, և Ալեքսանդր Մյասնիկյանը խնդիր է դրել Իրաքի կառավարության առջև՝ քարավանը բերել Հայաստան:

Մենք երկու վաճառականներ ունեինք Իրաքում: Իրենք՝ Հակոբ Էֆենդին և Հովսեփ Էֆենդին, որոշում են մեզ փոխադրել հայրենիք: Եկանք Պարսից ծոցով, պտտվեցինք եկանք Կարմիր ծովով, Միջերկրականով, Սև ծովով, Բաթումով, այնտեղ խորհրդային իշխանության ներկայացուցիչները մեզ դիմավորեցին 1922 թ. հունվարի 1-ին: Քառասունհինգ օր նավարկելուց հետո եկանք Հայրենիք: Բայց երևի տասը հազար մարդ կորցրինք՝ մեծ մասը համաճարակից:

Մեր երեսունչորս հոգուց բաղկացած գերդաստանից մնացինք մայրս, ես, եղբայրս՝ Ռոստոմը, քույրս՝ Նունեն, հորեղբայրս՝ Դավիթը, տատս՝ Զանոն, պապս՝ Զիբրայելը, երևի այդքան:

Լևոն Շաղոյանը չեկավ մեզ հետ, ասաց. - Հոն բոլշևիկները ինձ չեն հասկնար, ես դաշնակցական եմ, ես ու՞ր էրթամ:

Աբրահամյանն էլ ասաց. «Ես էլ քեզ հետ կմընամ»: Ամբողջ Արմաշ գյուղը ասաց. «Մեր Աբրահամյանը մնում է, մենք էլ կմնանք»:

Ծեյխը լսում է, որ մոտ երեք հազար հայ մնում է, ասում է. - Ձեզ իրավունք եմ տալիս: Գնացեք, մաև եկեք, որտեղ կհավանեք՝ ձեզնից հարկ չեմ ուզի, էնտեղ էլ ապրեք:

Հայերը տեսնում են անապատի խորքով մի սքանչելի գետ է գնում, հավանում, ասում են. - Պոմպ կդնենք, անապատը կջրենք:

Այդ Զախո վայրն էր: Այնտեղ հիմնվեց մեր գաղութը հայրենադարձության ժամանակ, մինչև հիմա էդ գաղութը կա: Արաբները միշտ լավ են ընդունել մեզ՝ հայերիս:

Հայաստան եկանք, տարածվեցինք Երևան, Աշտարակ, Էջմիածին, Արտաշատ: Կար մի բարեպաշտ մարդ՝ Եղիկը, իր տան դիմաց ուներ փոքրիկ տնակներ, մեզ տրամադրեց, և մենք ապրեցինք: Ես թունավոր լուծով հիվանդացա: Եղիկն եկավ, ասաց. - Նանա՛, տուր էս տղին, ես լավացնեմ:

Մայրս արցունքն աչքերին՝ գիշեր-ցերեկ լաց էր լինում: Ես ոսկրացել էի:

Եղիկը վերցրեց սայլը՝ լավաշով, բանով բերեց իր ամենաճոխ ավագին, որը Այգեզարդ գյուղին սահմանակից էր: Այգու վերևը ցորենի արտ էր, ծով լորիկներ էին, թակարդներ դրեց ու կորեկ լցրեց, որ լորերը գան, ընկնեն թակարդը: Ինձ ասաց. «Ձեզ փեշքեշ: Ամեն առավոտ, ինչքան կարող ես, խաղող կեր: Թմբերի մեջ մաև կուգաս, կհավաքես լորերը, կխորովես, կուտես»:

Յոթերորդ օրը մայրս և Զիբրո պապս եկան ինձ տեսության: Տեսան՝ գույնս տեղն է եկել: Ուրախացան: Սնդուկի մեջ լավաշը լիքն էր: Ես տանիքի վրա էի քընում՝ մաքուր օդին:

Աշնանը բոլոր խաղողը հավաքել եմ, հինգհարյուր են լցրել, գինի են սարքում: Եղիկն ասաց.

- Փոզենք այգին, այսինքն՝ քաղենք այգին:

Մենք էլ ձյունախառն անձրև տեղաց: Այգին քաղեցինք, բերքը տեղափոխեցինք: Եղիկն եկավ երկու ռուսական ոսկի տվեց մորս, ասաց. - Նանա՛, տղեն էգին պահել է, ուրան հալալ ի:

Մայրս ասաց. - Ա՛յ Եղի՛կ, դու իմ տղային փրկել ես:

Եղիկը նորից է ասում. - Էգին պահե՛լ ի:

Մայրս չընդունեց փողը: Եղիկը մեր լուսամուտից երկու ոսկին գցեց ներս, որ անպայման առնենք:

1936 թ. երբ Խանջյանի չարագործ սպանությունը տեղի ունեցավ, կենտկոմի քարտուղար դարձավ Ամատունի Վարդապետյանը: Նա սկսեց Խանջյանի կողմնակիցներին զանգվածաբար ոչնչացնել, դրանց մեջ էի նաև ես:

Խանջյանը ինձ գուրգուրանքով էր նայում, ինձ շատ էր սիրում: Ինձ առաջ են քաշել, երբ Խանջյանը դեռ Հայաստանում չէր: Նրա մասին ես իմ հուշերում գրել եմ: Լենինականի քաղկոմի կազմբաժնի քարտուղար էի: Ես ու Աննան՝ կինս, ապրում էինք հյուրանոցում՝ սառը, խոնավ. մի կերոսինկա ունեինք: Ես ինչքան դիմում էի, ինձ չէին բաց թողնում: Խանջյանը ինձ հրավիրեց և նշանակեց Ցուվալի սովխոզի տնօրեն: Այնտեղ շատ գործեր եմ արել:

Հետո ինձ վերցրին կոմսոմոլի աշխատանքի՝ Ղուրդուղուլի (Հոկտեմբերյան, այժմ՝ Արմավիր) շրջանում:

Շատ բան եմ տեսել, շատ բան է գլխովս անցել, շատ ցավ եմ տեսել, բայց և այնպես հիմա նստած եմ և իմ հուշերն եմ շարադրում...

* Լևոն Շաղոյան (1887–1933) – ազգային ազատագրական շարժման գործիչ: 1915 թ. մասնակցել է Շատախի և նրա գյուղերի ինքնապաշտպանական մարտերին:

24 (24).
ԷԴՈՒԱՐԴ ՄԱՐԳԱՐԻ ԴԱՇՏՈՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ՇԱՏԱԽ)

Մեր գյուղը Շատախի Կաճեթ գյուղն էր: Թուրքերն ու քրդերը եկան ու տիրացան մեր գյուղին: Պապիս եղբայրը քրդերի մեծին սպանեց, և մենք եկանք Վան՝ Խաչփողան, որտեղ և տուն ունեինք:

Հայրս որպես լավ խոհարար աշխատել է ճաշարանում՝ Այգեստանի մեջ, դրա համար իրեն անունը Աշջի Մարգար էին դրել:

1915 թ. Վանի պաշտպանության ժամանակ մերոնք դիմադրել են, բայց երբ ռուսական զինվորները ևաճանջեցին, մերոնք ստիպված գաղթեցին: Ամբողջ շրջապատը այրված էր, քանդված, դիակներով լցված:

Հայրս, մայրս, հորեղբայրներս, մորաքույրներս, պապս, տատս, բոլորս միասին մյուս գաղթականների հետ հասանք Իգդիր, հետո անցանք Արաքս գետը և բնակվեցինք Աշտարակում, որտեղ տիֆի համաճարակն էր տարածվել, որի հետևանքով մեր ողջ ընտանիքը բնաջնջվեց: Ես ու մայրս միայն ողջ մնացինք, եկանք Երևան, պապիս հորեղբոր տղայի՝ Մուրադ Դաշտոյանի տունը: Այնտեղ մահացավ նաև մայրս: Ինձ տվեցին Ալեքսանդրապոլի Պոլիգոնի որբանոցը:

25 (25).
ՍԱՀԱԿ ՄԻՐՋՈՅԻ ԲԱԶՁԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ՄՆՎ. 1913 Թ., ՇԱՏԱԽ, ՋՆՈՒԿ Գ.)

Հորեղբորս որդին՝ Բազիկյան Բազիկը պատմել է Շատախի հերոսամարտի մասին:

1915 թ. ապրիլ: Ութսուն հոգուց բաղկացած առաջապահ մի պահականումբ մտնում է Շատախի Ջնուկ գյուղը, Շատախի և Մոկսի սահմանային վերջին գյուղը: Նրանց կարգադրված էր տուրք հավաքելու, ապա ասկյար հավաքելու պատրվակով դուրս բերել տղամարդկանց, մինչև իրենց բուն ուժերի հասնելը, որպեսզի անարգել սկսեն կոտորածը: Ահա այդ ոճրագործ ծրագրով, պահականումբի ութսուն անդամները լցվում են Ջնուկ, բռնությամբ հավաքում են տուրքը: Մի քանի ժամում երբ վերջացնում են, սկսում են պարտադրել ամեն տան, մի գիշերվա ընթացքում գործել թաթման և թաթ (ձեռնոցներ և գուլպա), առավոտյան ութսուն զույգ իրենց հանձնելու: Խեղճ գյուղացիները անքուն են անցկացնում գիշերը, գործում են և առավոտյան հանձնում: Առավոտյան սկսում են հավաքել տղամարդկանց՝ ասկյար տանելու անվան տակ: Ստիպում են մի քանի մարդկանց իրենց մեկիկ-մեկիկ ուղեկցել տները: Ուղեկցողներից մեկը Բազկե Շահինն* էր, որը ամեն տուն մտնելիս, տեսնելով առավոտյան թոնիրը վառվելիս, հսկայական ցաւ (վառելիք) լցնում է թոնիր, բարձրացնում վիթխարի մուխ. այդ թանձրության մեջ ոչինչ չկարողանալով որոնել ու տեսնել, թուրք պահականյինները հեռանում էին տնից: Շուտով նրա օրինակին հետևում են մյուս ուղեկցողները, հաց թխելու համար թոնիրները վառած կանայք: Եվ այսպես, ամբողջ գյուղից թուրք պահականյինները, իրենց ամբարտավանությամբ հանդերձ, կարողանում են հավաքել միայն երեք տղամարդ՝ Ավդո, Չակո Մանուկ**, որին կաշառքով հետո ազատում են ասկյար տանելուց, և էլի մեկը: Նրանց չի հաջողվում բոլոր տղամարդկանց հավաքել, որովհետև մեծագույն մասը վաղ առավոտյան մեկնել էր փխիր, այսինքն՝ մեկնել էին հանդ, որպեսզի հող փորեն և փորած հողը լցնեն արտերը ծածկած ձյան վրա, որ շուտ սկսի ձնհալը և գարնանացանը: Գյուղում մնացած տղամարդկանց ու պատանիների մյուս մասը պահվել էր ոչխարների հորերում: Այդպես էին կոչվում այդ հորերը, որովհետև դրանք փորված էին ոչխարները հաշվառումից թաքցնելու համար, երբ հաշվառման գալիս էին թուրք գրագիր-ոստիկանները, քանի որ գյուղացին հարկադրվում էր ոչխարների գլխաքանակի համար: Այնտեղ պահում էին ոչխարներին, երբ թուրք կամ քյուրդ ավազակաբարո շրջիկները գալիս էին: Այժմ այդ հորերը ծառայում են տղամարդկանց թաքցնելու համար: Տեսնելով, որ ապարդյուն է անցնում իրենց ջանքը, նրանք բռնում են տանուտերին՝ կեթո կազարին և ստիպում են ի հայտ հանել տղամարդկանց: Սա հաջողացնում է փախչել: Նետվում է մեկի տունը՝ թաքնվելու նրանց հորում, բայց չեն թողնում, որովհետև չէր բավարարում իրենց տղամարդկանց թաքցնելու համար: Ստիպված փախչում է: Փախուստի պահին՝ կրակում և վիրավորում են: Ընկնում է Տիգրիս գետը և մնում այնքան, մինչև արյունաքամ է լինում ու մեռնում: Ականձագերը գնում են դիակը բերում միայն այն ժամանակ, երբ պահականումբը հեռացել էր գյուղից:

Պահականումբը տեսնելով, որ արդյունքի չի հասնում՝ ասկյար հավաքելու, դուրս է գալիս գյուղից, շրջապատում է գյուղը և ննստում: Բայց դա էլ չօգնեց: Տղամարդիկ ոչ հորերից դուրս եկան և ոչ էլ հանդից վերադարձան: Եվ այսպես, երեք օրվա իրենց կողոպուտի ու վայրագությունների այս երրորդ միջոցը անհաջող անցած, հուսահատված, որ ուշանում է թուրքական բանակը, ութսուն հոգիանոց այս առաջապահ պահականումբը որոշում է Ջնուկից անցնել Հիճենց՝ հավաքել տուրքը և ասկյար, անցնել Կաղպի, Վանք, Սակ գյուղերը: Բոլոր տեղերում տուրք և ասկյար հավաքելու անվան տակ աճաբեկում, թալանում, բռնաննում են ժողովրդին: Բայց ամեն տեղ նրանց սպասում էր նույն ճակատագիրը: Ամեն տեղ նրանց հաջողվում է տուրքի հավաքումը, բայց ասկյար՝ ոչ: Հայը ըմբոստացած՝ չմեկնեց թուրքական բանակ, չդարձավ թուրքի ասկյար:

Սա Շատախի ժողովրդի ըմբոստության և դիմադրավման առաջին քայլն էր, որը ստեղծվեց տարերայնորեն ներքևից՝ ժողովրդական զանգվածների ընդերքից:

Ժողովրդական դիմադրավման առաջին փորձը: Հավաքվում են՝ Ջնկուց՝ երեք մարդ, Հիճենցից՝ երեք մարդ, Կաղպի գյուղից՝ հինգ մարդ: Ընդամենը տասնըմեկ հոգի, որոնք հետո փախչում են Սակից, երբ շրջապատված տան մեջ էին՝ թուրքերի հետ: Դիտենալով տան գաղտնի անցքը, նրանք փախչում են, նրանց ետևից՝ մի քանի թուրք զինվոր:

Երկրորդ քայլը լինում է ութսուն հոգու պահականումբի շրջապատումը Սակում, անտառի մեջ գտնվող մի գյուղում, ուր բնակվում էին հինգ տուն հայ և մի քանի տուն՝ քյուրդ: Ապա գերում են տուրքը Թաղ տանող խմբին: Պահականումբը անհամբեր սպասում էր թուրքական օգնական զորքին: Երեք օր մնաց Սակ գյուղում, բայց օգնող զորք չեկավ: Այդ երեք օրվա ընթացքում, Սվտիկին գյուղի հայերը՝ տասնհինգ-քսան հոգի, զինված, հարձակվում են կորդոնի (ութսուն հոգուց բաղկացած պահականումբի) վրա, խլում են զենքերը և տանում են Թաղ:

Ջնուկ, Կաղպի, Հիճենց, Վանք, Միծանց գյուղերի զինված հայերը պահանջում են կոմիտեից՝ ապստամբել: Կոմիտեն գլխավորում էր Սամվելը (տեղական), որովհետև նախագահին՝ Հովսեփին սպանել էին:

Նրա սպանությունը լինում է այսպես. Հովսեփին կանչում են Վան՝ խորհրդակցության մասնակցելու: Քննում էին այն հարցը, թե հայերը պիտի ապստամբե՞ն, թե՞ ոչ: Հովսեփը պահանջում է՝ ապստամբել: Արամ փաշան առաջարկում է՝ չապստամբել: Վանի կոմիտեի անդամներն էին Վռամյանը, Իշխանը և ուրիշներ: Հովսեփը հեռանում է նիստից: Վերադառնում է Շատախ, որպեսզի սկսի ապստամբությունը, բայց ճանապարհին բռնում են թուրքերը: Առաջարկվեց գրիների փոխանակում կատարել: Համաձայնվեցին: Հայերը բաց թողին թուրք գերիներին՝ հարկահավաքներին, որոնց բռնել էին հավաքած հարկի հետ: Իսկ թուրքերը՝ ոչ և սպանում են հայ գերիներին: Հովսեփին ութ հոգով բռնել էին ու բերել Թաղի գայմագամի մոտ. նրան սպանում են գայմագամի վճռով, նետում են Տիգրիս գետը: Գերված մի հայ հասցնում է փախչել և գալ զինված հայերի մոտ: Թաղի կոմիտեն մերժում է Կաղպի գյուղի մարդկանց ապստամբել: Մերժված՝ նրանք վերադառնում են Սակ, հայտնում սպասող հայ զինված ապստամբներին, որոնք ի պատասխան այդ մերժման, գնում պաշարում են Սակում գտնվող ութսուն հոգուց բաղկացած թուրք պահականումբին: Հայ ապստամբներին ղեկավարում էր Գյուլամիրը և Հարոն՝ Հարությունյանը: Պաշարվածները փակված էին մի տան մեջ: Հարոն առաջարկում է նավթ լցնել դուռն վրա և հրդեհել տունը ու ով փորձի փախչել՝ գնդակահարել: Դրան դեմ է կանգնում իմ հայրը՝ Բազկե Միրզոն, այն համարելով անզգույշ քայլ, որովհետև ներսից կրակում էին: Նաև Գյուլամիրը չի լսում Հարոյին, ասում է, թե՝ «Դա քաջություն չի»: Առավոտյան վաղ Գյուլամիրը վերցնում է երկու մաուզեր, մտնում թուրք պաշարվածների մեջ ու սպանում մի տասնվեց-տասնյոթ հոգու: Երբ վերադառնում է նորից լցնելու իր տասնոցները, ծոծրակից նրան խփում են, նա ընկնում է շեմին:

Գյուլամիրի սպանվելը առիթ է լինում մերոնց հարձակման: Գալիս է մեկը և հայտնում. «Խուժանը նկավ»: Ներսից թուրքերը լսում են և ուրախացած բացականչում՝ «բարով գան» ու կրակում, սպանում են «խուժանն նկավ» ասողին: Մերոնք խուճապի են մատնըվում, սկսում են փախչել: Այդ պահին Վանից եկած Բազեյան Սեթոն հասնում է և բղավում. «Մի՛ք փախչի, օգնությունը գալի՛ս է»: Վերադառնում են և շարունակում կռիվը պաշարվածների դեմ: Բոլորին կոտորում են: Միայն երկու հոգի կարողանում են փախչել, հասնելով Խոլքան կամուրջ. մեկին հասնում է Բազկե Միրզոյի անվրեպ գնդակը հենց կամրջի վրա՝ սպանվում ու ընկնում է գետը: Մյուսը փախչում է անտառ, բարձրանում ծառը, ցույց տալով, թե կրակում է: Բազկե Մխիթարը, որը իմ հորեղբայրն էր, նկատում է, որ փամփուշտ չունի, հարձակվում և սպանում է նրան:

Սակի դեպքով, դրան նախորդած Հովսեփի ու նրա հետ եղած վեց հոգու գերումով ու սպանությամբ սկսում է ապստամբությունը, Վանի ապստամբությունից մի շաբաթ առաջ: Շատախցի ապստամբները Թաղում, ապստամբության օրերին, պատրաստում են թնդանոթ՝ ընկույզի փայտից, փայտը թիթեղով փաթաթելով: Պատրաստում է Գելեկե Թովմասը: Ամեն երեք կրակոցից հետո փայտը պայթում էր. նորն էին պատրաստում: Արհեստական այդ թնդանոթը աճագին մեծ դեր խաղաց: Շատախի ապստամբները կտրեցին նաև հեռագրալարը՝ Վան, Շատախ, Բաշկալան (Աղբակ) միացնող: Թուրքերը և քրդերը մեծ ջարդ կրեցին: Նոր էր անցել Շատախի ապստամբության առաջին տասը օրը, երբ Ջևդեթ փաշան դիմում է Արամ փաշին, թե մարդ ուղարկի Շատախ, որ հաշտություն կապի մեզ հետ: Վանից մեկնում է Իշխանը՝ տասնմեկ հոգով: Իմանալով այդ մասին, Ջևդեթ փաշան զորք է ուղարկում նրանց բռնելու: Եվ Հայոց ձորի Հիրճ գյուղում բռնում են ու բոլորին սպանում: Վանում էլ բռնում են Վռամյանին: Վռամյանին որպես մեջլիսի անդամ իբր ուղարկում են Պոլիս, բայց Տարոն հասնելուն պես, Բիթլիսի կամրջի վրա սպանում և գցում են գետը: Ուզում են բռնել նաև Արամին: Որպեսզի չկասկածի, ուղարկում են թուրք կառապանին, որ նրան շուքով բերի: Բայց կառապանը հայտնում է Արամին և դատարկ վերադառնում, ասելով, թե Արամը չեկավ:

Առավոտյան սկսում է Վանի հերոսամարտը*:

Սակի կռիվները Շատախի ապստամբության առաջին փուլն էին: Երկրորդ փուլը եղան Սոքանց՝ քրդի գյուղի, կռիվները: Այդ նոր փուլը եղավ ավելի մեծ: Հունիսին, երբ հայ կամավորները մտան Շատախ, Սոքանցից յոթ հոգի գնում են աշիրեթներին հայտնելու, որ գան Շատախը կոտորեն: Հայերը, լսելով այդ մասին, երեք օր շարունակ պաշարում են Սոքանցը: Երեք օր հետո, հունիսի սկզբներին, երբ գալիս են կամավորները, կոտորում են Սոքանցը: Շատախցիները պաշարել էին այն, բայց չէին հարձակվել: Սոքանցը կոտորելուց հետո Դրոյի կամավորական գունդը մտնում է Մոկս: Նրանց հետ իբրև ճանապարհաճանաչ գնում է Բազկե Միրզոն: Կռիվը շարունակվում է Մոկսում: Քրդերը փախչում են: Երկու տասներկուամյա քյուրդ երեխա հայտնվում են գիշերվա պահակատեղը: Պահակ էր Միրզոն: Միրզոն տանում է նրանց կամուրջից անցկացնում, ցույց է տալիս նրանց հեռվում վառվող կրակները, քրդերի հավաքատեղին, ուղեկցում մինչև քրդական օբաները, որպեսզի կամավորների ձեռքը չընկնեն: Նրանց ազատում է, ինքը վերադառնում է պահակատեղ:

---

* Բազկե Շահին (Շահին Բազիկյան) – Սահակ Բազյանի հորեղբայրն է: «Սասունցի Դավիթ» էպոսի տաղանդավոր վիպերգող: Նրա անունը էպոսի պատմության մեջ է մտել Մանուկ Աբեղյանի խմբագրությամբ լույս տեսած «Սասնա ծռերի» առաջին հատորի հրատարակությամբ, 1936 թ.-ից: Մինչ այդ երկու անգամ գրի է առնվել «Սասունցի Դավթի» նրա երգապատումը: Վերջին գրառումը ներկա է եղել Հովհաննես Թումանյանը: Հետագայում որոշ բաներ նա օգտագործել է իր «Սասունցի Դավթի» մշակման մեջ: Բազկե Շահինի «Սասունցի Դավիթ» երգապատումը հրատարակված էր Շատախում և Մոկսում: Տե՛ս «Հայրենիքի ձայն», 1974, թիվ 59 (Մ.Բ.):

* * Չակո Մանուկ – երգիչ Հայրիկ Մուրադյանի հայրն է (Մ.Բ.):

* 1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին Վան քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչության ինքնապաշտպանական մարտերը թուրք ջարդարարների դեմ:

26 (26).
ԹՈՎԻԿ ԹՈՎՄԱՍԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1901 Թ., ՎԱՆ, ՀԱՅՈՑ ՁՈՐԻ ՀՆԴՍՏԱՆ Գ.)

Ծ նվել եմ չքավորի ընտանիքում: Այսօր էլ մեր գյուղը աչքիս առաջ է: Մեր գյուղը ուներ երեսուներոր տուն բնակիչ, որից քսանհինը հայ էր, ութը՝ թուրք, ընդհանուր հաշվով մոտ երկու հարյուր քսան հոգի:

Գյուղացիները զբաղվում էին հողագործությամբ և անասնապահությամբ: Գյուղում ունեինք միայն երկու հյուսն արհեստավոր, որոնք ձրի նորոգում էին դուռ ու պատուհան, սարքում էին իշատուիկներ: Մեր գյուղը թաղված էր այգիների մեջ: Պատմում էին, որ երբ հեռավոր Հնդկաստանից մի մարդ է գալիս ու հիմնում է այդ գյուղը, անունը մնում է՝ Հնդստան: Իսկ Մկրտիչ Խրիմյանն ասել է՝ դա այգեստան է, հանդ ու անդաստան, դրա համար է անունը կոչվում Հնդստան:

Գյուղի բնակչությունն ունեցել է իր տնտեսությունը, տները կլոր, փոքր քարից էին և դարմանի ու հողի շաղախից, իրար կպած: Յուրաքանչյուր տուն ուներ առանձին անցք, որտեղից շատ գաղտնի, կարևոր տեղեկություններ էին հաղորդում միմյանց: Թուրք զաբթիաները գալիս էին որտեղ ասես, և այդ անցքերից հայերը իրենց հասած աղջիկներին անցքից-անցք էին անցկացնում, որ թուրքերը չտիրեն նրանց: Հատակը հողից էր: Թունդիրը վառում էին աթարով, և այդ ծուխը երկու-երեք ժամ մոլեգնում էր, նույնիսկ հարազատի երեսը տեսնելն անհնար էր: Դուրս էինք գալիս, հետո մտնում, պզզում թունդիրի շուրջը: Փոքրիկ ձեռագործ կավե ամանի մեջ ձեթ էին լցնում, մեջը՝ պատրույգ և ամրացնում էին սյանը, աղեղի ծայրով պատրույգը բարձրացնում էր մի հասած աղջիկ, որը կանգնած էր լինում սյան տակ:

Ես արդեն խելահաս էի դարձել: Մենք մի երինջ ունեինք, դա կով էր դարձել, խայտաբղետ էր: Երբեմն մայրս ստիպում էր, որ ես հորիցս առանձին դրան տանեմ արածացնելու: Մի գետ էր հոսում: Կեսօրին անասունները ջրի մոտ հանգստանում էին, իսկ մենք լողանում էինք գետում:

Վեց-յոթ տարեկան էի, երբ ամերիկյան բողոքականներն իրենց դպրոցը բացեցին: Ուսուցիչը աչքերը խփած աղոթք էր անում, աստվածապաշտ էր, Հիսուս Քրիստոսի անունն էր տալիս մշտապես: Աշակերտները քսան-երեսուն հոգի էինք: Շատերն իրենց ծնողներից լսել էին Ավետարանի մասին, և նրանք գալիս էին, լսում նրա դասերը: Մենք սովորում էինք ոչ թե հնչական, այլ՝ այբ, բեն, գիմ ասելով, որպեսզի հեշտ լինի երգի վերածել, որ երգելով սովորենք: Այս մեթոդով Ղուրանն* ենք սովորեցրել Արևելքում: Ես գյուղում քիչ սովորեցի: Ով ինչ գիրք բերում էր, դա էլ սկսում էր կարդալ: Ես երեք ամսական հասակում էի՝ հայրս մահանում է, և մայրս ամուսնանում է երկրորդ անգամ: Ամուսինը մահանում է, նրա չորս զավակների հետ ես էլ որբ եմ մնում: Բայց իմ քեռին ինձ տարավ Վարագա վանք, որը մեր գյուղից քսանհինգ կիլոմետր հեռու էր: Թե ինչպիսի գեղեցկություն էր, բառերով չեմ կարող նկարագրել: Լուսամուտից ցած՝ Վան քաղաքն էր բացվում ծովափին, Շամիրամա բերդը, Շամիրամի առուն, որը խառնվում էր ծովակին:

Մեր գյուղի քրդերը հայերի հետ եղբոր պես էին: Մեր հայերի և քրդերի միջև եղբայրական կապ կար: Հայերը խոսում էին քրդերեն, հայերեն, քրդերը ևս: Հայերը քրդերի հետ աշխատում էին, հնձում էին, կալսում էին, իրար հետ փոխնիփոխ նույն գդալով ուտում էին: Երբ քրդերը ներս էին մտնում, խեղճ հայերը բեկի առաջ խոնարհվում էին, ձին կերակրում էին: Դրա համար էլ քրդերը հայերի հետ լավ էին: Բայց հետո քրդերն էլ սկսեցին հայերին կոտորել:

Քանի որ կառավարությունը գիտեր, որ հայը ուժեղ է և հարուստ, դրա համար էլ սուլթան Համիդը կազմակերպեց համիդեական գնդեր, որոնք քրդեր էին և մեծ փորձանք եղան հայերի համար:

Գյուղերում թուրք զաբթիաները գալիս, հարկերը հավաքում էին, բայց երբ քյուրդ բեկերը գալիս էին, հայերը հեռանում էին իրենց տներից: Դա արհավիրք էր, որ գալիս էր:

Ես սովորում էի Վարագա վանքում: 1912 թ. Վարագա վանքում հայ գրերի գյուտի հազար չորս հարյուր ամյակի առթիվ մեծ հանդիսություն եղավ: Ես հիշում եմ Իշխանի ելույթը: Իշխանից ազատվելու համար Զևդեթ փաշան ուզեց նրան վերացնել և ուղարկեց նրան, որ հայ-քյուրդ հարաբերությունները բարելավի:

Երեսուն օր թուրքերը կովեցին հայերի դեմ: Հայերը դիրքեր էին փորում: Մենք անփորձ էինք, չգիտեինք, թե ինչ կա, բայց Վանի երեխաները շատ բան գիտեին: Մեզ երբ Վարագա վանքից բերեցին Վան, տեսա հայկական թաղամասում՝ Այգեստանում Ֆանֆարի ընագախումբը «Մեր հայրենիք» էր ընագում և ոգևորում էր կռվողներին: Երեսուն օր հետո, երբ թուրքերը ռուսների անունը լսեցին, փախչում էին: Քանի որ Էնվեր փաշայի բանակից միայն փշրանքներ ետ եկան, Անդրանիկը գնում է, Բիթլիսը գրավում: Ռուսները չէին ուզում Բիթլիսը գրավել: Անդրանիկը կամավորական ջոկատների օգնությամբ գրավում է Բիթլիսը:

Երբ կռիվը վերջացավ, ես գնացի գյուղ: Մայրս վեց որդիներով էր: Ես ու իմ խորթ եղբայրները միացանք, մեզնից խլված անասունները ետ բերեցինք քրդերից: Դարձանք երկու կովի և մեկ ձիու տեր: Մեր գյուղի գյուղացիները փախել էին: Ովքեր զենք ունեին և կռվել էին, եկել, կուտակվել էին Վարագա վանքում, որը գաղթականության կենտրոնատեղին էր դարձել:

Ցարական Ռուսաստանը իր զորքին հրամայեց նահանջել: Մենք էլ ստիպված գաղթեցինք դեպի Բերկրի, ուր մի անդնդախոր ձոր կար, որից հետո պիտի մըտնեինք Աբաղայի դաշտը: Հարյուր հազարավոր գաղթականներ լցվել էին, որոնք իրենց փրկությունը համարում էին Երևան հասնելը: Մորս, երեխաների հետ հասանք Բանդիմահու փրփրադեզ գետը: Ես խնդրեցի մորս, որ գնամ ջուր շտեմ երեսս: Ես գնացի, հանկարծ կարկտաբեր մի բան սկսվեց: Քրդերը պաշարել էին հանդիպակաց ձորի վերին մասը, կրակում էին, մարդիկ գլորվում էին: Ես տեսնում էի, թե ինչպես եկողներն իրենց գցում էին ջուրը: Ես էլ հանվեցի, նետվեցի ջուրը: Մինչև գետի կեսը որ հասա, ջրի հոսանքը ինձ տարավ ներքև: Դիակները հարյուրներով գալիս էին իրար ետևից, քշվում էին դեպի ծով: Հանկարծ մի փեշ կպավ ինձ, մի կին բռնել էր ծառից: Ես նրա փեշից կպա ու կամաց-կամաց դուրս եկա: Ես էդ կնոջ ազատածն եմ: Ո՞վ էր այդ կինը՝ չգիտեմ: Դուրս եկանք գետից՝ մրսում եմ, դողում եմ: Ես մի ռուս զինվորի խնդրեցի, որ մեզ նստեցնի ձիու վրա: Ձին չգնաց: Իջա: Տեսա մի կով կա: Բեռնակիր կովի ջվալները ընկել էին, մեջը գաթա կար: Ես սոված էի, կերա: Մի մարդ ինձ նստեցրեց կովի վրա ու կապեց պարանով: Ժողովուրդը գոռում, գոչում է, ամեն մեկը իր հարազատին է փնտրում:

Ես էլ երեկոյան մյուսների հետ մի տեղ հասա, նստեցինք հանգստանալու: Ես իջա, կովի պարանը կապեցի ոտքիս, պառկեցի: Մտածում եմ՝ ի՞նչ եղան մերոնք: Մեկ էլ մի ձայն լսեցի, տեսնեմ ամուսնացած քույրս է: Փաթաթվեցինք: Ես կովի հետ առաջ գնացի: Գտա մորս, քույրերիս, մորաքույրս նստել էր կանաչների վրա՝ վայ-վույ էին անում, ողբում էին իմ մահը: Հանկարծ ինձ որ տեսան, ձեռքերի վրա բարձրացրին: Շարունակեցինք, հասանք Աբաղայի դաշտը, հետո Օրգով, որը ռուսական սահմանն էր: Առաջին օգնությունը հայերին տվին, հաց բերին, բաժանեցին: Մենք սկսեցինք առաջին անգամ ախորժակով բոքոն ուտել: Երկու-երեք օր մնացինք, հետո Իգդիրի վրայով դեպի Էջմիածին եկանք:

Խելքիս փչեց իմ ընկերոջ հետ գնալ Էջմիածնում սովորել: Հանկարծ ես տեսա՝ մի կին մոտեցավ ինձ, իմացավ, որ գրագետ եմ, ասաց. - Ա՛յ տղա, հոգեզավակ չե՞ս ուզում դառնալ ինձ:

Իմ մայրը արդեն գնացել էր առաջ: Ես ու ընկերս մնացել էինք Էջմիածնի եկեղեցու մոտ: Ասի. - Ուզում եմ:

- Դե՛, վե՛ր կաց, գնացինք մեր տունը:

Ինձ տարավ իր տունը՝ Խաթունարխ գյուղում: Կանչեց ամուսնուն ու բարեկամներին, խրախճանք արեցին: Ինձ կնքեցին, անունս Աղվան դրին: Նրանք ուրախ էին, որ զավակ ունեցան վերջապես, այն էլ՝ գրագետ:

Նրանք գնում էին աշխատանքի, իմ ուտելիքը պատրաստում էին: Մի շաբաթ մնացի, բայց կարոտեցի մերոնց: Հանկարծ լսեցի իմ անունը՝ «Բաղդասա՛ր»: Ընկերս էր: Ինձ ասաց, որ լավ կլինի, եթե փախչենք: Գնացինք տուն: Հարստությունը՝ լիքը: Մենք ոչ փող ունենք, ոչինչ չունենք: Մի սնդուկի մեջ մեկ ռուբլի կար, ման եկա, տեսա մի արծաթյա բյամար: Վերցրի, որ ծախեմ, կապեցի մեջքս, երկու տակ փաթաթեցի: Եկանք Էջմիածին: Քննեցինք որբանոցում: Առավոտյան վեր կացանք, մոտ երկու հարյուր երեխա մահացել էր: Խոլերան հնձում էր: Ճուտգոններով տանում էին դիակները, լցնում փոսերի մեջ:

Հովհ. Թումանյանը* էդ ժամանակ եկել էր Էջմիածին՝ գաղթականներին սփոփելու համար: Այն մարդիկ, որ Վանում, Շատախում կռվել էին, հիմա մեռնում էին հիվանդությունից:

Առավոտյան ճեմարանի առաջն էինք, մեկ էլ նոր մայրացուս եկավ ու ընկերոջս գլխին խփեց, ասաց. - Իմ տղին ու՞ր ես տանում:

Եկավ, ինձ գրկեց, սկսեց լալ ու ասել. - Աղվա՛ն ջան, ինչի՞ ես գնում, ինչի՞ կարիք ունես:

Էս խեղճ կինը լաց էր լինում ու ամեն կերպ համոզում էր ինձ: Ասի. - Ես ախպեր, քույր, մայր ունեմ:

- Ուրեմն դու մա՞յր ունես: Է՛հ, որդիս, ես քո մոր գրկից քեզ խլողը չեմ, - գրկեց, սեղմեց, բյամարը արձակվեց, ընկավ ոտքերիս մեջ: Վերցրեց բյամարը ու գնաց:

Արդեն Էջմիածին, դիակների մեջ մնալ հնարավոր չէր: Սոված ենք, ոչ ոք չունենք: Սեխի կլեպները ուտելով, ոտքով հասանք Երևան: Սկսեցի ջուր ծախել: Մի օր տեսա մի սայլ է գալիս, վրան զանգակ հագերով: Գնացի խնդրեցի. - Մի՛ կտոր հաց...

- Գաղթականների համար է, - պատասխանեց սայլապանը:

- Ե՛ս էլ եմ գաղթական:

Գցեց ինձ մի մեծ զանգակ հաց: Մեկ էլ տեսա՝ ընկերոջս մայրը, քույրը, եղբայրը դեմներս ելան: Մեզ գտան: Էդ ընկերոջս մի աներձագ ուներ, անունը Իսրայել, որը սովորել էր Դերմանիայում: Լսել էր, որ հայերը գաղթում են, եկել էր Բեռլինից, որ գտնի իր մորը և հետը տանի Բեռլին: Ինձ ասաց. - Ես քեզ կտանեմ Բաքու:

Ինձ էդ ընկերոջս հետ տարավ Բաքու, որբանոց: 1916 թ. արդեն Բաքվի որբանոցում էի: Առավոտյան վեր էինք կենում, հոգևոր երգեր էինք երգում: Դա մի շատ լավ կացարան էր: Կառավարիչը Իսրայելն էր: Աղոթք էինք անում նոր ճաշի նստում: Կառավարիչը մեզ հետ էր ուտում: Նույնիսկ մի կոպեկի համար հաշիվ էր պահանջում: Բողոքականների մի համայնք կար Բաքվում: Ամեն շաբաթ նվերներով գալիս էին, ինչքա՜ն քաղցրաբարո մարդիկ էին, ինչքա՜ն բարի: Էն լվացարար կինը, որ մեզ լողացնում էր, փաթաթում իր ձեռքերով, հագցնում: Մենք էլ ուրախ էինք, որ այդպիսի տերեր ունենք: Մեկ տարի երեք ամիս մնացի այնտեղ: Ես սովորություն չունեի եփած սոխ ուտելու: Դրանք էլ սոխառածով էին եփում: Ես գդալով սոխերը հավաքում, լցնում էի ընկերոջս ամանի մեջ: Կառավարիչը տեսավ, ասաց. - Ի՞նչ ես անում:

- Ջզվու՛մ եմ:

Վերցրեց գդալով սոխերը, լցրեց բերանս: Ես թքքեցի, գնաց կպավ նրա ճակատին: Նա ջղայնացավ, սկսեց ինձ ծեծել: Ես ասի. - Էլ որբանոցում չե՛մ մնա:

Առավոտյան խնդրեց, որ չգնամ:

- Չէ՛, պիտի գնամ, - ասի:

Էդ մարդը ինձ վերարկու գցեց: Ութը ռուբլի փող

---

* Ղուրան – մահմեդականության Ս. Գիրքը:

* Հովհաննես Թումանյան (1869, Դսեղ – 1923, Մոսկվա) – բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ:

վերցրեց, որ տոմս առնենք ու գնամ Աղստաֆա կայարան, հետո ոտքով՝ Իջևան, Դիլիջան: Էդ օրը չկարողացանք տոմս առնել: Ես գնացի Բալաջայի կայարանը, տոմս առա, եկանք հասանք Աղստաֆա: Գտա իմ Մելքոն հորեղբորս տղային, որի հայրը ֆեդայի էր: Հետո մեզ փոխադրեցին Թավրիզ: Պարսիկները շատ մոլեռանդ էին, տգետ: Երկու և կես ամիս մնացինք այնտեղ: Մյասնիկյանը մարդ ուղարկեց, թե ով գաղթական է, թող գա: Եկանք Հայաստան:

Արշալույս գյուղում տուն սարքեցի: Եղբայրս կոմբջիջի քարտուղար էր, ես՝ ուսուցիչ: 1929 թ. ընդունվեցի համալսարան: Ամուսնացա, ունեցա վեց տղա, մեկ աղջիկ:

Պարգևատրվել եմ Լենինի շքանշանով, Կարմիր աստղի շքանշանով:

Հայոց ցեղասպանության հիմնական պատճառն այն էր, որ հայերն ուզում էին թուրքերի և քրդերի հետ հավասար ապրել, բայց նրանց շարիաթը իրավունք չէր տալիս: Բացի այդ, Թուրքիայի ամենից բանիմաց ժողովուրդը հայերն էին, որ բարձր մշակույթ ունեին՝ ճարտարապետները, երաժիշտները, առևտրականները հայերն էին: Հայերի ինքնավարությունից խուսափելու, նոր Բուլղարիա չստեղծելու համար նրանք ամեն կերպ ուզեցին հայերին վերացնել:

Թուրքերի նկատմամբ մեր վերաբերմունքն այն է, որ մենք երբեք չենք մոռանա կատարվածը: Բայց թուրք ժողովուրդը ի՞նչ կարող էր անել, քանի որ մեզ առաջին հերթին կոտորել է թուրք վերնախավը: Մենք երբեք չենք կարող մոռանալ նրանց արարքը: Մենք մեր սերունդներին պետք է ավանդենք, որ մեր իրավունքները պահանջենք, մեր հողերը ետ տան: Նրանք մեր չորս հազար եկեղեցիներն են քանդել: Հազարավոր մարդիկ են կոտորել: Ապրիլի 24-ը մեզ համար սրբազան օր է: Մենք ընտանիքով՝ որդիներով, թոռներով, ծոռներով, այդ օրը գնում ենք Եղեռնի հուշարձանի մոտ, որպեսզի նրանք իրենց հոգում պահեն այդ հիշողությունը:

Ապագա սերունդներին կուզեմ ասել, որ ամեն մի հայ զգա, թե իր պապը ինչպես է ոտք դրել Արևելյան Հայաստան: Հայը ունեցել է իր չքնաղ հայրենիքը: Նոր սերունդները չպետք է մոռանան և ամեն ինչ պետք է անեն, որ արդարությունը հաղթանակի, և արևմտահայության հարցը լուծվի: Գերմանացի խոշոր գործիչներ Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը* քննադատեցին Վիլհելմյան կառավարությունը: Թուրքերը հենց իրենք դատապարտեցին Թալեաթ փաշային և շատերին: Ես հույս ունեմ, որ ՄԱԿ-ը իր արդար դատը կկատարի:

27 (27).
ՄԱՆՎԵԼ ՄԱՐՈՒԹՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1901 Թ., ՎԱՆ, ԲԵՐԴԱՇԵՆ Գ.)

Մեր ընտանիքը մեծ էր, հինգ եղբայրներով՝ քառասունհինգ հոգի, ահապետական ձևով ապրում էինք միասին, հաշտ ու խաղաղ: Առաջ այր մարդիկ էին սեղան նստում, հետո՝ երեխաները, հետո՝ կանայք, հետո՝ աղախինները: Մեր տան մեջ, մինչև Վասպուրականի հերոսամարտը, մենք ուրախ էին ու երջանիկ:

Ես մեծ մորս կհիշեմ, բոլոր տղաներն ու հարսները հնազանդ էին նրան ու նրանից խորհուրդ էին հարցնում: Մենք՝ երեխաներս, սիրում էինք նրան: Նա մեզ հեքիաթներ էր պատմում թագավորների մասին: Մեծ մայրիկս տասնութ թոռ ուներ, բայց ինձի շատ կսիրեր: Հանի որ մայրս յոթը զավակ կորսնցնելուց հետո ինձ էր ունեցել:

Հորս հինգ եղբայրներն էին՝ Փանոս, Մարտիրոս, Վահան, որը քաղաքապետն էր, Խոսրովը վաճառական էր, Մարութը ամենափոքրն էր: Սա և հայրս տասնութ գյուղ կշրջեին և կղեկավարեին: Հայրս գաղտնի ձևով զենք կբերեր Վան: Հինգ եղբայրներեն յուրաքանչյուրը ուներ երեք սենյակ, որը հավասար է տասընհինգ սենյակի, նաև ծառաների, հյուրերի համար հատուկ սենյակներ ունեին: Հյուրերի համար հատուկ հաստ դոշակներ ունեին: Մահճակալ չկար: Մենք՝ երեխաներս ևս իրար հետ սիրով էինք: Երբեք չեմ լսած, որ իրար վիրավորած ըլլայինք: Մենք իրար հետ կկռվեինք, բայց իմ մայրը ինձի կապտակեր, նրա մայրը՝ ահոր կապտակեր, վերջն ալ կրսեին՝ համբուրվեցե՛ք. ամեն ինչ կվերջանար:

Հորաքույրներս՝ Նվարդը և Էլիզը, ամուսնացած էին: Հովակիմյան գերդաստանի աղջիկները մեր տան հարսներն էին: Խնամիներով կապված էին: Շատ անգամ Նոր տարվա գիշերը կհավաքվեին մեր հյուրասենյակը, ուր մեծ սեղան կդրվեր՝ չոր պտուղներով:

Երբ հորեղբայրս ամուսնացավ, երեք օր տևեց հարսանիքը: Առաջին օրը հայերն էին հրավիրված, երկրորդ օրը՝ թուրքերը, երրորդ օրը՝ ծանոթները:

Մեր տան ծառաները կուգային մեր պատկան գյուղերեն և շատ ուրախ կըլլային: Ընտանիքով կուգային գյուղեն, ուսում կստանային: Անոնցմե մեկը նույնիսկ քահանա դարձավ: Մենք կխաղայինք անոնց հետ, անոնք մեզի հետ կխաղային: Մի անգամ մեր պզտիկներեն մեկը անոնցմե մեկուն ըսավ. «Դու գյուղացի ես», հորեղբայրս պատժեց անոր՝ երեք օր առանձին ճաշ կերավ:

Մեր ծնողները պարտավոր էին առավոտը յոթ ուկեսին վեր կենալ: Մեր տունեն տասնութ տղաներ դպրոց կերթային էշով: Ինձ հայրս մի անգամ ապտակեց: Քանի որ ինքը գերմանական մասուզեր ուներ, ես գողացա, կապեցի մեջքս, գնացի դպրոց, անցա ոստիկանատան մոտով՝ չնկատեցին, բայց հայրս գիտցավ և ապտակեց:

Ամերիկյան միսիոներները դպրոց և հիվանդանոց ունեին Այգեստանի մեջ: Գերմանական միսիոներները ևս ունեին: Դպրոցի տնօրենը Քաղաքամեջում Հայկակ Կոսոյանն էր, որը դաձավ Քաղաքամեջի կոիվների ղեկավարը: Գևորգյան ճեմարանը սովորած, կայուն սիրտ ունեցող, հրաշալի մի մարդ էր: Մեր ուսուցիչները Եվրոպայում սովորած մտավորականներ էին: Մեծ, ֆալախկա չկար, խրատով, դաստիարակելով էին սովորեցնում: Դասարանի մեջ երեսուն–երեսունհինգ աշակերտ կար: Բողոքականների դպրոցում անգլերեն էինք անցնում, իսկ մյուս դպրոցներում՝ ֆրանսերեն: Շաբաթը մեկ անգամ մոլլա մը կուգար, մենք այդ ժամերուն կերգեինք, կպարեինք, ան՝ կձգեր, կերթար: Դպրոցը տասնմեկ տարի էր: Համբարձում Երամյանը տնօրենն էր: Կույր էր, բայց բոլորին ճանաչում էր ձայնով: Ան մեզի պատմություն կդասավանդեր: Դպրոցը լավ ուսուցչական կազմ ուներ և սուղ ըլլալուն՝ ունևորների զավակներն էին հաճախում: Բողոքականների դպրոցը ձրի էր:

Մեծ հորեղբայրս մեծ գրադարան ուներ: Ես միջին տասնչորս տարեկանս ոչ միայն հայկական գրականություն, այլև Վիկտոր Հյուգո, Բալզակ կկարդայի և շատ ընթերցասեր էի: Խաղ չէի սիրեր: Ունեինք «Լույս» և «Տիրամայրիկ» գրադարաններ: Պոլսից կուգար «Բյուզանդիոն», Ռուսաստանից՝ «Մշակ»:

Մայրս ֆրանսերեն գիտեր: Լավ ձայն ուներ: Մեր Վանը ուներ շատ գեղեցիկ երգեր, որոնք Կոմիտասը* հավաքեց, և Շահմուրադյանը** կատարեց. «Դիլե յաման», «Վարդն ի բացվի», «Մոկաց Միրզան», «Ալեքսիանոս» և այլն: Վանում ունեինք քառաձայն երգչախումբ:

Երբ որ ես տասնչորս տարեկան դարձա, մայրս ըսավ հորս. - Մարտիրոս, մեկ հատ գյուղ մը ծախե, Մանվելին ղրկենք Փարիզ՝ ուսանելու:

Հայրս դեմ եղավ:

Ես ուզում էի աշուղ դառնալ:

Հորս հինգ եղբայրները կերպասի վաճառական էին. Արճեշում հսկա խանութ ունեին: Հայրս և փոքր հորեղբայրս մեր գյուղերը կհսկեին, իսկ մեծ հորեղբայրը քաղաքի նահանգապետն էր: Ժողովուրդը կընտրեր: Երրորդ եղբայրը Վանի քաղաքապետն էր: Թուրքերը և հայերը քսանմեկ տարեկանեն վեր քվե կուտային, երեսունհինգ տարեկանեն կընտրվեին քսան տարով: Մեր գյուղերի տները մենք էինք շինում, սերմացուն, խոփը, արորը, ոչխարը, կովը մենք էինք տալիս գյուղացիներին, իսկ բերքը կես-կես կընեինք: Մեր բոլոր գյուղերում եկեղեցի ու քահանաներ կային, դպրոցներ, ուսուցիչներ կային, և դրանց ռոճիկները մենք կուտայինք:

Իմ մորաքրոջ ամուսինը Ոստան քաղաքի քաղաքապետն էր, որին սպանեցին, քանի որ իրենք չէին թողնում, որ քյուրդ խուժանը ներս մտնի:

Անցյալում բարձր պաշտոններու վրա հայերն էին: Թուրքերը զինվոր էին, ոստիկան էին, էշի վրա պտուղ ծախող էին, իսկ հայերը առևտրականներ ու արհեստավորներ էին: Շատ հյուրեր կունենայինք, հայերեն զատ, թուրքերը հյուրընկալելու հատուկ սենյակներ ունեինք: Փաշաներ, բեկեր կուգային մեր տունը, ճոխ սեղաններ կդրվեին:

Նախ՝ մի հրապարակ կար մեր տան առաջը, հոն ախոռներն էին, ծառաների հարմարություններով, երկաթյա դուռ էր բակի շքամուտքը: Սանդուղքներով կբարձրանային գորգերով վեց սենյակները: Առանձին-առանձին հարկաբաժիններ կային՝ առանձին բակերով հորեղբայրներիս ընտանիքների համար:

Շատ ընդարձակ էր մեր քարաշեն տունը, մոտ չորս հազար քառակուսի մետր տարածությամբ: Մեծ պարտեզ ունեինք՝ պտղատու ծառերով, բանջարեղեն, կանաչեղեն կցանեին: Խոհարարներ ունեինք, բայց հարսները և մայրս օգնում էին: Հատուկ նախօրոք մտածում էին, ոչխար կամ հավ էին մորթում: Մառան ունեինք՝ միս, գինի կպահեինք: Մաքրությունը բաժանված էր: Էլեկտրականություն չկար: Փոքր հարսի պարտականությունն էր, որ նավթի ճրագները նավթ լցնի: Մյուս հարսը հացը պիտի հսկեր և այլն: Մենք ջրհոր ունեինք և ֆրանսայեն բերված մեքենա մը ունեինք, որ ջուր էր քաշում: Քաղաքամեջում աղբյուրներ ալ կային:

Շուկան մեծ էր: Առանձին արհեստավորները՝ առանձին էին, օրինակ՝ ոսկերիչները, երկաթագործները: Մենք շուկայի հարկ չունեինք: Ամեն ինչ գյուղեն կուգար: Միայն ցուրտ ժամանակ, երբ ոչխարները հղի էին լինում, միսը դրսից էինք առնում: Հացը տանն էինք թխում, խանութից առնողը աղքատ կըլլար:

Երբ ես ծնվել եմ, մայրս ուխտ է անում, որ ես մեկ տարի եկեղեցին ծառայեմ, մազերս չեն կտրել յոթը տարի: Եղբայրս իմ փոխարեն գնում էր, երգում էր շարական: Տոն օրերուն կերթայինք եկեղեցի, բայց մեր մայրերը գրեթե ամեն օր կերթային: Եկեղեցու զանգի ղողանջը արգիլված էր՝ փայտի վրա կխփեին:

Այգեստանում ամերիկյան բողոքական եկեղեցի կար, հիվանդանոց, դեղատուն, դպրոց ունեին, շատ հաճախ աղքատներուն կօգնեին:

Ս. Վարդան եկեղեցին, որը մեր տան մոտն էր, պապս շինել տված էր և կուզեր Էնտեղ թաղվիլ: Ինքը իր միջոցներով կառավարական զորքին մթերքը հայթայթողն է եղել: Մի օր, երբ փաշան կգա, ինքը բոլոր մուրհակները կվառե ջեզվեին տակը, կրսե. «Ես վառեցի»: Պապիս շիրմաքարը Իտալիայից բերված մարմար էր, որի վրա փորագրված էր.

«Ես ասացի՝ ես եմ,
Ով ասի՝ ես եմ,
Կդառնա ինչ ես եմ»:

---

* Գերմանական և միջազգային բանվորական շարժման գործիչներ:

* Կոմիտաս (Սողոմոն Սողոմոնյան) (1869, Քյոթահիա – 1935, Փարիզ) – երգահան, երաժիշտ բանահավաք, տեսաբան, խմբավար, մանկավարժ: Հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր:

** Արմենակ Շահ–Մուրադյան (1878, Մուշ – 1939, Փարիզ) – հայ երգիչ, հռչակվել է որպես «Տարոնի Սոխակ»:

Վանում շատ աշուղներ կային, չնգուրով կնվագեին ու կերգեին Անդրանիկի, Սերոբ փաշայի* երգերը: Ես կուզեի աշուղ դառնալ: Մի անգամ հայրս ապտակեց ինձի, ես փախա, մինչև Ջանիկ գյուղը հասա, ինձի ըսին. «Ու՞ր ես գնում, պզտիկ տղա»: Ասի. «Գնում եմ Էջմիածին՝ վարդապետ դառնամ»: Գիշերը ես քնել եմ էնտեղ: Աչքերս բացի, տեսա՝ պզտիկ հորեղբայրս գլխիս վրա նստած, ըսավ. «Բարև՛, եպիսկոպո՛ս աղա»: Առավ ինձ, տարավ տուն:

Վանի մեջ ամուսնալուծում գրեթե չկար: Մի հայ աղջիկ գնաց թուրք ոստիկանի հետ, եղբայրը գիշերով գնում է քրոջը և թուրքի վիզը կտրում է: Ամուսնությունների մեջ հաճախ մայրերն ու հայրերը դեր կկատարեին: Հայրս մի հարսանիքի մեջ տեսել է մի գեղեցիկ աղջիկ, ասել է. «Աղջի՛կ, աղջի՛կ, ինձ կառնե՞ս»: Մայրս չի մերժել, քանի որ հարուստ ընտանիքի զավակ էր: Մայրս շատ բարի էր: Մեկ էլ կտեսնայինք՝ լաց է լինում, ասելով. «Մեկը մեռեր է՝ չեմ ճանչնար, բայց՝ որբերը մե՛ղք են»:

Մեզ մոտ ամերիկյան, գերմանական որբանոցներ կային: Ֆիզիկապես հիվանդներին լավ էին վերաբերվում, խնձում էին:

Նախապաշարումներ ունեցողներ կային, օրինակ՝ ուզում էին տեղ գնալ, եթե առաջեն սև կատու կանցներ՝ վատ էր, կամ եթե փռնկտար՝ չէր գնար: Թալիսմաններ ունեին հետամնացները:

Պզտիկ աղջիկները տասնվեցեն, տղաները՝ տասնութեն կամուսնանային: Վերջին տարիներին արդեն ազատություն կար՝ պարտեզի պատի տակեն կխոսեին իրարու հետ, բայց իրար մոտենալ չկար:

Հայրս սնդուկ մը ուներ, մեջը՝ ատրճանակներ, հրացաններ ուներ: Բոլոր հորեղբայրներս ատրճանակ ունեին, քանի որ միշտ վախը կար, որ քրդերը կարող են հարձակվել: Զենք բերողները դաշնակցականներն էին, որոնք Ռուսաստանից զենքեր էին բերում: Քանի որ զգում էին, որ կարող է վիճակը բռնկվի:

Մերոնք երեք հարյուր տարի առաջ Տարոնից՝ Մարութա սարից էին եկել:

1915 թ. դեպքերը ամբողջ հիշում եմ, ինչպես աչքիս դիմացը՝ տեսնում եմ: Բավական հայ երիտասարդներ տարված էին թուրքական բանակ: Իմացվեց, որ դրանք բանակից դուրս են բերված և գնդակահարված են: Հայերը համբերեցին: Հետո ժողովրդի վրա հարձակվեցին, սկսեցին թալանել, ըմբոստություններ եղան: Փաշան Արամ Մանուկյանին կանչեց, ըսավ. - Ազդու մարդ ղրկեք, որ դադարեցնեն:

Արշակ Վռամյանը**, որ Պոլիսում հայերի կողմից պառլամենտի անդամ էր, գնում է, Մանուկյանին ասում. - Ես գնում եմ, բայց դու չգաս: Սիրտս վատ բան է գուշակում:

Նավավարները ծանր երկաթ են կապում Վռամյանի վզից և գցում են ծովը: Վռամյանից հետո մենք արդեն զգացինք, որ այդ խորամանկություն է և ուր որ է պիտի պայթի, սկսեցինք զինվել: Քաղաքամեջում երկու հարյուր հոգի զենք ուներ: Քսանհինգ-երեսուն օր կյանքի և մահվան կռիվ տեղի ունեցավ: Վանեցիները կռվեցին տասնհինգ հազարանոց թուրքական կանոնավոր զորքի և քյուրդ ամբոխի դեմ, բայց դիմադրեցին: Պատանիներ կային, որ թնդանոթ էին նետում, պատրույգով էին նետում, տասը կիլոգրամ վառոդ կար մեջը: Պատրույգը հանում էին, տանում էին, որ նորից լցնեն: Մոն Շեր անունով ֆրանսացի մը կար, որ քիմիագետ էր, ըսավ. «Ես վառոդ կպատրաստեմ, միայն թե հայտարարեք, որ բոլոր մարդիկ իրենց տների մեզը հավաքեն». դրանով վառոդ էին պատրաստում: Հետո ինքը սպանվեց:

Մոտ երկու հարյուր հոգի զենքի տակ էին, չորս հարյուր հոգի դիրքերն էին պատրաստում գիշերները: Ով մթերք ուներ՝ բերավ Առաջնորդարան: Ամեն մարդ պաշտոն ուներ: Այգեստանի միջից մի խենթ աղջիկ ղրկել էին, որ հայերից լուր առնեն, բայց նա վերադարձին սպանվեց: Մեկ թուրքի կաշառեցին, որ երկտող տանի Քաղաքամեջ, որով հայտնում էին, թե՝ մեկ շաբաթ դիմացեք, ռուսական զորքը գալիս է: Թուրքերը այդ լսելով՝ կամաց-կամաց հեռացան: Մենք երեխա էինք, բայց չէինք վախենում, փամփուշտ էինք հավաքում: Հայրս ճարտարապետ էր, դիրքերու շինությունը կհսկեր: Քահանաները և վարդապետները ևս կռվում էին: Թուրքերը քյուրդերին էին գցում մեզ վրա: Հիշում եմ, երբ կռիվը վերջացավ, մի թուրք եկավ, ասաց. «Ամբողջ մորթված դիակներ են: Քահանան մորթված է եկեղեցու շեմին, գլուխը Մարիամ Աստվածածնի նկարի առաջ է դրված»: Թուրքական բանակից հետո ո՛ր գյուղը մտանք, դիակներ էին, գազազած շները, կատուներն ու անգղները հոշոտում էին դիակները, որոնց թուրքերը սպանել էին ու լցրել փոսերի մեջ. նրանք առանց աղոթքի հողին հանձնվեցին: Վասպուրականցիները երեսուն-քառասուն զոհ տվեցին, բայց անպաշտպան ժողովրդից հազարներ զոհվեցան: Ես ինչ որ պատմում եմ, ականատեսի հուշերս են: Ռուսական բանակը մոտեցավ: Առաջ կամավորական բանակը մըտավ, և մենք փրկվեցինք: Եթե նրանք չգային, մենք էլ Ուրֆայի, Շապին-Գարահիսարի նման կոչնչանայինք:

Մենք՝ երիտասարդներս, գնացինք կամավորներին դիմավորելու: Առաջին խումբը Նժդեհի խումբն էր, որ եկավ: Այդ խմբի մեջ իմ մորեղբոր տղան էլ կար: Այդ գիշեր մեզ հյուր եկավ Նժդեհը:

Հերոսամարտից հետո շատ տներ քանդված էին, սնունդի պակաս կար: Թուրքերը փախան, բայց մենք ալ վնասով ելանք: Մենք արդեն բերդը գրավել էինք և վրան եռագույնը պարզել էինք: Արամ փաշային քաղաքապետ նշանակեցին:

Արամ Մանուկյանի կառավարությունը ստեղծվեց: Բայց պարզվեց, որ ռուսները ուզում էին Վանը պարպել, որ կազակներ բերեն բնակեցնեն: Ռուսական խաղն էր այդ: Ռուսական զորքը նահանջեց: Մենք ևս գաղթի ճամփան բռնեցինք: Մենք այդքան հարուստ էինք, բայց արդեն ոչինչ չէր մնացել: Բոլորը գաղթեցին, բայց իրարից անջատ-անջատ՝ իրար կորցնելով:

* Աղբյուր Սերոբ (Սերոբ փաշա) (1864, Խլաթ – 1899, Սասուն) – ազգային ազատագրական շարժման գործիչ:

** Արշակ Վռամյան (Օնիկ Դերձակյան, Վահագ, Վարազ) (1870, Կ.Պոլիս – 1915, Վան) – ազգային ազատագրական շարժման գործիչ: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Կ.Պոլսում ընտրվել է օսմանյան խորհրդարանի երեսփոխան: 1915 թ. ապրիլին դարձել է դավադրության զոհ:

Առաջին հերթին հասանք Ջանիկ գյուղը, ապա՝ Բերկրի: Կամավորական խմբերը մեզ ուղեկցում էին: Ով ինչ ուներ՝ իր համար էր: Այլևս միահամուռ չէր ժողովուրդը: Ճամփին, Բերկրիի մոտ թուրքերը հարձակվեցին, շատերը ետ դարձան դեպի Պարսկաստան: Շատերը իրենց գցեցին Բանդիմահու գետը: Մի կին իր յոթը գեղեցիկ աղջիկներով գետը նետվեց: Մի տղա ջրի մեջ մի քարի էր կպել, ողջ էր մնացել, ան հիմա Գերմանիա է: Մենք կանխիկ փող չունեինք, բայց ողջ-առողջ էինք:

Ռուսական դավը ստիպեց, որ հայը լքե իր ծննդավայրը, վանքերը, գերեզմանները ու գաղթի դեպի Արևելահայաստան: Շատերը՝ ոտքով, շատերը՝ էշերով հասան Օրգով, որը ռուսական սահմանն էր: Հետո հասանք Իգդիր, ուր սկսվեց տիֆի և խոլերայի համաճարակը, որը հարյուր հազարավոր զոհեր խլեց:

Վերջապես հասանք Երևան: Նորքում մի տուն վարձեցինք: Բոլորս տիֆով հիվանդացանք: Եղբայրներիցս մեկը մեռավ: Ամեն մարդ անոթի էր: ՀՕԿ-ը Հովհ. Թումանյանի գլխավորությամբ ղեկավարում էր օգնության գործը: Կերակուր, հացուստ էին բաժանում:

Ողջ մնացողներս հազիվ սկսել էինք շունչ քաշել, երբ նորից սկսվեց թուրքական արշավանքը: Դավում էին Վրաստանը, Ադրբեջանը և Ռուսաստանը:

Թուրքերը արշավում էին Արևելահայաստանի վրա: Արդեն տասնչորս կիլոմետր էր մնում, որ հասնեին Երևանին: Նրանք գրավել էին Արաքսի կամուրջը, քիչ էր մնում մտնեին Երևան: Այդ մահու կենաց կռիվ էր: Եթե Վանի հերոսամարտը ինքնապաշտպանություն էր, ապա այստեղ՝ զինվորական քարտեզով բաց դաշտի կռիվ էր: Արամ Մանուկյանին ընտրեցին դիկտատոր: Նա կազմեց բանակ: Մեկ շաբաթ վարժեցնում էին, ղրկում էին ճակատ: Իսկ մենք արդեն վարժ էինք: Սկսվեց Սարդարապատի, Բաշ-Ապարանի ճակատամարտը: Հայ ժողովուրդը նորեն դիմադրեց: Բոլոր խմբապետները՝ Նժդեհը, Սեպուհը, Դրոն, իրենց բանակները բերին: Դիրքեր փորեցին: Կիները թխում էին, կերակուր էին պատրաստում: Աղջիկները սափորներով ջուր էին հասցնում կռվողներին: Հարուստի կանայք գլուխնին շոր կապած՝ վիրավորների վերքերն էին կապում: Արդեն գաղթականներն էին հիմնական կռվողները՝ տարոնցիները, մշեցիները, վանեցիները, որոնք սպայական կազմն էին: Հրճվանք էր անկախության գաղափարը, որը իրողություն էր: Ճիշտ է, մենք գրեթե սոված էինք, բայց մեր հոգին կուշտ էր և քաղց չէինք զգում: Թուրքական զինված բանակը անխնա հարձակվում էր, իսկ մենք զենքի պակաս ունեինք: Մենք՝ աշակերտներս, ուզեցինք ընդունվել բանակի մեջ: Մեզ տարան Սարդարապատի ճակատ, բայց մենք ըստիպված էինք սպասել, մինչև մեկը սպանվի, որ հրացանը վերցնենք: Արամ փաշան պատգամ հղեց. «Մընանք դաշտում, կամ՝ կվերադառնանք հաղթական վահանի տակ կամ՝ վահանի վրա»: Հայ ժողովուրդը կռվեց կատաղի կերպով:

Ինձ պես շատ տղաներ կային: Ես քսանհինգ հոգիանոց խումբ ունեի: Քսանհինգից յոթը վերադարձան, չորսը վիրավորվեցին, տասնչորսը՝ սպանվեցին: Թըշնամին պարտվեց, և մայիսի 28-ը որպես հաղթանակի օր նշվեց:

Ընտրություններին մասնակցեցին դաշնակցական, հնչակյան և ռամկավար կուսակցությունները: Ութսնասունհինգ անդամներից վաթսունը դաշնակցական էին: Այդ ընթացքում բանակ, նախարարություններ ստեղծվեցին, դպրոցներ բացվեցին գաղթականների համար: Հիմնադրվեց համալսարանը՝ իր պրոֆեսորներով: Բացվեց դրամատիկական ստուդիան:

Երբ ես ավարտեցի Երևանի թեմական միջնակարգ դպրոցը, տասնյոթ տարեկան էի: Շատ սեր ունեի դեպի թատրոնը: Զարիֆյանը* եկել էր Երևան: Մենք խաղում էինք «Պաղտասար ախպար»-ը: Ես գլխավոր դերում էի: Նա մոտեցավ ինձ, ասաց. «Բալի՛կ ջան, վաղը կարո՞ղ ես ինձ մոտ գալ՝ ժամը տասին, դրամատիկական ստուդիա»:

Գիշերը իմ քունը չտարավ, գնացի մասնակցեցի խաղերին, խաղում էինք Շիլլերի «Ավազակները»:

Հանրապետության ժամանակ, երբ Նիկոլ Աղբալյանը** լուսավորության նախարար էր, նա Լևոն Շանթին*** նշանակեց, որ մեր դրամատիկ ստուդիայում դասավանդի: Հաճախ ինքն ալ կուգար տեսնելու մեր խաղը: Մեր խմբի մեջն էին Գուրգեն Ջանիբեկյանը, Օրի Բունիաթյանը, Չարենցի ապագա կինը՝ Արփենիկը: Երկու տարի մրցանակ ստացա: Նույնիսկ անցյալ տարի «Հանրագիտարանի» մեջ հիշատակվեց այդ մասին:

Հայրս այդ ժամանակ որբանոցների վերակացուն էր, ամերիկյան նպաստամատույցն էր կազմակերպել: Հորեղբայրս սպանված էր Արճեշում, մյուսը՝ հացի փուռն էր ղեկավարում: Արդեն առանձին ընտանիքներով էինք ապրում: Բայց մեր գերդաստանից հիվանդությունից շատ-շատերը մեռել էին: Մեր հարսները ուրախ էին, որ Հայաստան եկանք, քանի որ կոճակը կսեղմեինք՝ էլեկտրական լամպը կվառվեր:

Այդ ժամանակ դաշնակցություն կուսակցությունն էր գործում: Ուրիշ կուսակցություն գրեթե չկար: Մեկ բոլշևիկ կար ընդամենը, բայց հետո կամաց-կամաց դաշնակցության տակը փորեցին, ռուսներն ալ օգնեցին այդ գործին: Ես կադետական երիտասարդական միության մեջ էի:

1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախության տարեդարձի հանդիսությանը նստած էին Հայոց կաթողիկոսը, նախարարները: Պառլամենտի անդամները ճառեր էին արտասանում: Քանի որ ես աշխատանքային միության նախագահն էի, լավ աշխատող էի, ավելի զարգացած էի, խոսելու ընդունակություն ունեի, ձայնս լավ էր և ինձ պատիվ ըրին, որ արտասանեմ հետևյալը. «Փա՛ռք նրանց, որ ընկան մայիսի 28-ին, Հայաստանի Հանրապետության համար, և պատիվ նրանց, որ այսօր կան»:

* Հովհաննես Զարիֆյան (1879, Ալեքսանդրապոլ – 1937, Նյու Յորք) – հայ դերասան:

** Նիկոլ Աղբալյան (1875, Թիֆլիս – 1947, Բեյրութ) – հասարակական, քաղաքական գործիչ, գրականագետ:

*** Լևոն Շանթ (Սեղբոսյան) (1869, Կ.Պոլիս – 1951, Բեյրութ) – գրող, հրապարակախոս, մանկավարժ, հասարակական գործիչ:

28 (28).
ԱՂԱՍԻ ԳԱՐԵԳԻՆԻ ՔԱՆՔԱՆՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1904 Թ., ՎԱՆ)

Ես ծնվել եմ գեղատեսիլ Վասպուրականի չըբնաղագեղ Վան քաղաքում: Հայրս եղել է փորագրիչ–արհեստավոր: Նա հայտնի էր իր շնորհքով: Նա կարող էր ճստեցնել պատվիրատուին իր դիմացը և արծաթյա տուփի վրա փորագրել նրա դեմքը: Մայրիկս Վանի Սանդուխտյան–Մարիամյան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի էր: Վանի առաջին կին ուսուցչուհիներից մեկը: Նրա աշակերտուհիներն էին՝ Սիլվա Կապուտիկյանի մայրը, Ժաժան Լիան և ուրիշներ:

Վանում մենք ապրում էինք խաղաղ, բարոյական և ստեղծագործ աշխատանքով: Միայն միշտ մեր գլխին դամոկլյան սրի նման կախված էր թուրքական ջարդի, կոտորածի վտանգը: Այդպիսի կոտորածներ պարբերաբար կրկնվում էին Արևմտահայաստանի տարբեր վայրերում: Հայտնի է, որ այդպիսի կոտորածներ տեղի են ունեցել 1894-96 թվերին*, որոնց զոհ են գնացել նաև իմ պապը և մորեղբայրը: Նրանք ապրում էին Վանի Ս. Հակոբ եկեղեցու թաղում, փողոցի մի կողմն ապրում էին հայեր, մյուս կողմում՝ թուրքեր: Երբ որ կոտորածն սկսվում է, այդ թաղամասի տղամարդիկ պատըսպարվում են Ս. Հակոբ եկեղեցում, դուռը ամուր փակում, հույս ունենալով, որ արտասահմանյան ութը հյուպատոսները կմիջնորդեն, և կոտորածը կդադարի: Բայց թուրքերը փորձում են եկեղեցին հրկիզել: Եկեղեցում պատսպարվածները որոշում են դուռը բացել և արագ փախչել: Եկեղեցուց դուրս փախչողներից մեկը լինում են իմ քառասուներեքամյա պապը՝ Խաչատուր Իշխանյանը, և տասնյոթամյա մորեղբայրս:

Մորեղբորս տատս չի թողնում, որ թուչի ու փախչի: Իրենց դրացի թուրք Մահմուդ աղան ասում է. «Սառա խաթուն, տուր տղայիդ պահեմ մինչև խառնաշփոթը անցնի», բայց տատս չի վստահում: Տղային հագցընում է աղջկա շոր, տղան վազում է, որ գնա հայաշատ մասը և պետք է անցներ մի բաց տարածություն: Այդ տարածության վրա հանդիպում է թուրքի լամուկներին, որոնք ճանաչում և խփում են: Տատս հասնում է ետևից, գրկում վիրավոր տղային: Արյունը հոսում է տատիս գոգնոցի վերից վար: Տատս վշտից խելագարվում է: Արյունոտ գոգնոցը վրայից չի հանում: Պառկում է հատակին, որ ինքն էլ մահանա: Իսկ տասներկու տարեկան աղջիկը՝ հորը և եղբորը կորցնելուց հետո նույնպես հոգեկան ցնցում է ստանում: Չի խոսում: Բարեկամները հավաքվում ու հորդորում են. «Սառա խաթուն, խելքի արի, աղջիկդ փոքր է, որբ կմնա, եթե քեզ հետ մի բան պատահի»:

Սառա տատիկս քիչ-քիչ ուշքի է գալիս, բայց արյունոտ, սևացած գոգնոցը վրայից չի հանում: Անցնում են տարիներ, 1902 թ. իր աղջիկը՝ իմ մայրիկը, ամուսնանում է մի որբի հետ, որը իմ հայրն էր: Հաջորդ տարին ծնվում է թոռնիկը՝ Անդրանիկը, և տատս հրաշքով վերակենդանանում է ու արյունոտ գոգնոցը թոռնիրն է գցում: 1904 թ. ծնվում է երկրորդ թոռը, տատս զբաղվում է տնտեսությամբ: Այդ տարիներին ավարտում է իմ մայրիկը, որին որպես ընդունակ պահում են Սանդուխտյան–Մարիամյան դպրոցում՝ կրոնի և լեզվի ուսուցչուհի: Ծնվում են երկու աղջիկները: Ընտանիքը մեծանում է: Մենք լավ էինք ապրում, բարեկեցիկ էինք: Լավ վաստակում էին մայրս ու հայրս: Ունեինք հրաշագեղ այգի Վանում, որին ես մինչև հիմա կարոտում եմ: Հիշում եմ, թե մանուշակները որտե՞ղ էին բուսնում, կակաչները ու՞ր էին բուսնում, իսկ տունը, որ նոր էինք կառուցել, չհասցրինք վայելել...

Ահա այդ էր մեր ընտանիքը: Պատերազմի ժամանակ, Վասպուրականի հերոսամարտից հետո լուր տարածվեց, որ ռուսական բանակը շարժվում է դեպի Վան, որ ետ գրավի Վանը, քանի որ թուրքերն ուզում էին Վանը ետ վերցնել:

Ռուսական բանակը չէր ուզում կռվել, իսկ հայերը ուժ չունեին: Պետք էր թողնել Վանը, գնալ ռուսական հողը՝ Իգդիր: Խուճապահար ժողովուրդը գաղթի պատրաստվեց: Գաղթը ահավոր իրադարձություն է մի ժողովրդի համար, որը դարեր շարունակ ապրել է իր հարազատ քաղաքում: Մեր ընտանիքն էլ պատրաստվեց: Մայրիկիս ղեկավարությամբ որոշվեց, թե ի՞նչ վերցնենք մեզ հետ, որ դիմանանք տասը օրվա հետիոտն ճամփորդությանը:

Մեր հարազատ տունը մենք թողել ենք 1915 թ. հուլիսի 13-ին, ժամը տասնմեկին: Նախքան տնից դուրս գալը մայրիկս հավաքեց ընտանիքի անդամներին, լացակումած համբուրեց բոլորին և ասաց՝ մենք գնում ենք դժվարին ու անհայտ մի ճանապարհ, թե ի՞նչ կպատահի մեզ հետ՝ չգիտենք: Ձեր խնդիրն է, որ դուք դիմանաք և խուճապի մեջ չկորցնեք հայրիկին ու մայրիկին:

Մենք տնից դուրս եկանք: Դուռը չփակեցինք, մի տեսակ քարացել էինք, դարձել էինք անզգա: Սկսեցինք շարժվել դեպի գլխավոր փողոցը՝ Խաչփողան: Տներից նորանոր ընտանիքներ էին դուրս գալիս և միանում իրար: Թափորը մեծանում էր ու շարժվում դեպի առաջ: Մենք մինչև Իգդիր հասնելը տասը օր ճանապարհ անցանք, անձրևի տակ, արևի տակ, ցեխերի մեջ՝ կիսաքաղց ու ծարավ: Ճանապարհին քրդերը հաճախ վրա էին տալիս, մարդկանց կոտորում, թալանում: Դա հատկապես տեղի ունեցավ Բանդիմահու կամուրջի մոտ, որտեղ կուտակում էր տեղի ունենում: Այդ կամուրջից ինչքա՜ն մայրեր երեխաներին գրկած՝ ջուրն են նետվել, որ թուրքերի ու քրդերի ձեռքը չընկնեն: Ճանապարհին ովքեր սպանվում էին, ովքեր մահանում էին, թողնում էին ճանապարհի եզրին, շատ դեպքերում ծածկում էին հողով, շատ դեպքերում՝ ոչ: Անթաղ դիակներ տեսնելով՝ ես այնպես եմ ազդվել, որ ստացել եմ տխրացավ, և մինչև հիմա այդ շարունակվում է: Ես լիաթոք չեմ կարող ուրախանալ: Չնայած ես մեր թաղի ամենաառողջ երեխան էի, ձյան վրա բոբիկ վազում էի և չէի հիվանդանում, բայց գաղթից հետո այդ կարմրաթուշիկ, առողջ երեխան գունատվեց, խամրեց, տխրեց, դարձավ չխոսկան: Մայրս հայրիկիս ստիպեց ինձ տանել բժշկի: Արդեն մենք Երևանում էինք: Հայրս երկու ամսում երկու ոսկի հավաքեց, որ բժշկին տա: Եվ հայրս ինձ տարավ բժիշկ Արամ Տեր-Գրիգորյանի մոտ, որը գավազանով և ֆայտոնով էր մամն գալիս: Բժիշկը քննեց ինձ ու ասաց. - Տղան ոչ մի հիվանդություն չունի:

- Բա ինչի՞ չի խոսում, նիհարել է, գույնը գցել է:

- Որտեղացի՞ եք:

- Վանեցի գաղթական ենք:

- Տղան գաղթի ճամփին այնքան տխուր դեպքեր է տեսել, որ տխրացավ է ստացել, դա հետևանք է գաղթի: Տխուր դեպքերը ազդել են նրա վրա: Ժամանակի ընթացքում կանցնի:

Այսքանը ի միջի այլոց է, բայց՝ հոգեբանական:

Ուրեմն մենք շարունակեցինք մեր գաղթի ճամփան: Երեկոյան մենք հասանք Լեզք (Արալեզք) գյուղը: Ուր որ կանգնում էինք, գլուխներս դնում էինք գետնին ու քնում էինք: Հայրս, մայրս, տատս հերթով մեզ հսկում էին:

Առավոտ ճանապարհը շարունակեցինք դեպի Արարատ: Ճանապարհին հաճախ քրդերը հարձակվում էին, սպանում, թալանում էին մեր ունեցածը: Օրինակ իմ դպրոցական ընկերոջ՝ Սեմերճյանի ծնողներին ճամփին մորթեցին, և այդ փոքրիկ տղան մնաց որբ:

Անցանք Բայազեդի մոտով: Մայրիկս ժամանակ գտավ, ասաց, որ սա Բայազեդ քաղաքն է, որ նկարագրել է Րաֆֆին*: Քաղաք, ուր ոչ մի ծառ չկար, տների պատուհանները, դռները հանել տարել էին վառելու: Արարատի էն կողմը՝ Աբաղայի դաշտով, Ձըլդըր լեռնանցքով անցանք՝ դեպի Արարատյան դաշտը: Տասնմեկերորդ օրը հասանք Իգդիր և իջևանեցինք մեր բարեկամի տանը, որի սենյակներն զբաղված էին մեզնից առաջ եկողներով: Մեզ տեղ տվին պատշգամբում: Ինձ տվին մի ուլի մորթի, որի վրա ես քնում էի: Այսպես նիհարած, քրքրված, տանջված՝ ընտանիքը փորձեց հասնել Երևան: Բայց մեր չար բախտից ռուսները Մարգարայի կամուրջը փակել էին, չէին թողնում, որ գաղթականները ներս գնան: Իսկ Իգդիրի մոտից տարածվել էին տիֆն ու խոլերան: Մայրիկս կպավ հայրիկիս օձիքից, թե՝ մի ճար արա, որ խորքը գնանք: Հայրիկս գտավ մի փուրգոնչի, որը հանձն առավ մեզ Մարգարայի կամուրջով անցկացնել՝ պայմանով, որ մեկ լիրա տանք իրեն և մեզ հասցնի Երևան: Դա հիմիկվա արժեքով հարյուր դոլար է: Մեր ընտանիքը, որ ոչինչ չուներ գրեթե, տեղավորվեց փուրգոնում: Կամուրջին չհասած՝ կառապանը մտրակեց ձիերին և բղավեց՝ խաբարդա: Ռուս պահակները սարսափեցին՝ տեսնելով խրտնած ձիերին, ու փախան: Մենք կառքի մեջ չէինք երևում, մեզ վրա շոր էր գցել, իբր մեջը մարդ չկա: Կառապանը մեզ բերեց, մինչև Զանգուի հին կամուրջից անցկացրեց: Բերեց մինչև Ապտեչկայա ուլիցա, հիմիկվա պետական բանկի տեղը կար գաղթականական լագեր: Եվ մենք հունիսի վերջին եկանք իջանք, հողի վրա նստեցինք, արևի տակ, ոչի՛նչ չունենք:

Մեր ընտանիքը յոթ հոգուց էր բաղկացած՝ սենյակ չտվին: Թուրքի թաղում մի փոքրիկ սենյակ վարձեց հայրս: Մեկ լիրա էլ տան վարձ տվեց հայրս: Իր մոտ մնաց մեկ լիրա: Չալթիկից ծղոտի վրա պառկում էինք: Մայրս իննսունութ տարի ապրեց: Տատս թունավոր լուծ ընկավ ու մեռավ: Մեր ընտանիքը սկսեց պայքարել: Դժվար էր կյանքը: Երևանում ևս համաճարակ կար: Ֆուրգոնները գալիս էին, զանգերը տալիս էին, դիակները հավաքում, տանում էին, հիմիկվա Կոմիտասի անվան այգում իրար վրա թափում էին հորի մեջ: Էդտեղ հայկական եկեղեցի էլ կար: Սարդարի բերդը կար: Էդ այգիները բոլորը պարսիկներինն էին: Հիմա Երևանում պարսիկների մեջիդը վերակառուցում են:

Տասը տարեկանից աշխատել եմ: Հայրս ֆաղլա բազարում իր ուժն էր ծախում: Ես ջուր էի ծախում: Պապիրոս էի ծախում: Երեկոյան գաղթականական դպրոց էի վազում: Ուսումս չեմ թողել: Ավարտեցի Երևանի պետական համալսարանը: Գերմաներա սովորած դասախոսներին եմ լսել: Ես ևս դարձա համալսարանի դասախոս, պրոֆեսոր՝ քիմիայի գծով:

Ամուսնացա Հովսեփյան Գայանեի հետ, որը հոգեբանության դասախոս դարձավ Մանկավարժական ինստիտուտում: Տասներեք գիրք եմ գրել, որից վեցը հրատարակված են: Անալիտիկ քիմիայի՝ իմ գրած դասագիրքը մինչև հիմա ուսանողների ուղեցույցն է:

---

* Սուլթան Համիդի կազմակերպած հայկական կոտորածները 1894–1896 թթ.:

29 (29).
ՍՄԲԱՏ ԴԱՎԹԻ ԴԱՎԹՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ՎԱՆ, ՆԱՐԵԿ Գ.)

Մեր գյուղը Գրիգոր Նարեկացու գյուղն է եղել: Տոն օրերին ուխտավորները գալիս էին Նարեկ գյուղ ուխտի: Մեր գյուղը երկու հարյուր հիսուն տուն հայ կար, ոչ մի այլազգի չկար: Մեր հարևան գյուղերը քրդական էին: Մեր ընտանիքը՝ վեց ախպեր, բոլորին ես հիշում եմ: Մի հարկանի մեծ տուն ունեինք: Իմ հորեղբայրը միշտ ինձ գրկում էր, և ամբողջ գերդաստանով հացի էինք նստում: Հորեղբայրներիցս մեկը ատաղձագործ էր, հայրս՝ արաբա շինող: Մայրս չէր աշխատում: Ունեինք ոչխարներ, կովեր: Ամառ ժամանակ գյուղի վերևը աղբյուր կար: Տան առաջ պտղատու ծառերով հսկա այգի ունեինք: Մենք վեց երեխա էինք՝ երեք տղա, երեք

---

* Րաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան) (1835, Սալմաստ – 1888, Թիֆլիս) – գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ:

աղջիկ, հայր, մայր, բոլորս ութ հոգի էինք: Մյուս հորեղբայրներս կամաց-կամաց տներ շինեցին ու առանձնացան: Մեր գյուղացիները մեծ մասամբ զբաղվում էին գյուղատնտեսությամբ: Շատերը գնում էին Ամերիկա, Ֆրանսիա՝ աշխատելու, փողն էլ ուղարկում էին հարազատներին, հետո վերադառնում էին: Մեր գյուղի մեջ չորս շենք կար, որոնք երկու հարկանի էին, դրանք հարուստների ու տերտերի տներն էին, իսկ մնացածը՝ մի հարկանի էին. հացատուն, գոմ: Հետո շատերը տները բարձրացրին փայտով: Հայրս մեր տան երկրորդ հարկը պիտի ծածկեր, կոտորածը սկսվեց: Այդում շատ տեսակի պտուղներ ունեինք, բայց չէինք ծախում, ով աղքատ էր, նրան էինք տալիս: Մեկ մեկու օգնում էին: Գյուղում մեծ ձիթհանք ունեինք: Ձմեռ ժամանակ գյուղի մարդիկ էնտեղ էին հավաքվում, խոսում, զրուցում: Հաղորդակցության միջոց չկար, սայլերով էին գնում:

Մեր տան ներսը, բակից որ մտնում էինք, թունդիր կար, ուր հացն էինք թխում: Պատի արանքը փարդա էինք կապել, անասուններն էինք պահում: Ջուրը բերովի էր, սարից աղբյուրի ջուր էր գալիս, մեր տան առաջով էր անցնում: Էդ ջուրը մի տեղ հավաքվում էր, մեջը գոմեշներն ու երեխաները լողանում էին: Էդ գետի անունը Սաղ գետ էր: Էդ գետի մի երեսը քրդերն էին ապրում, մյուս երեսը մեր գյուղն էր: Իրար հետ գնալ-գալ ունեինք: Իրար հետ շատ լավ էինք, հետո խառնվեց:

Մեր գյուղում յոթը դասարանով դպրոց կար, եկեղեցու բակում էր: Ես գնացի առաջին դասարան: Աղջիկներն առանձին էին, տղաներ՝ առանձին: Սովորում էինք հայերեն ու կրոն: Ուսուցիչները մեզ պատմում էին Գր. Նարեկացու մասին, մեզ դաստիարակում էին Քրիստոսի պատգամներով: Ջատիկից առաջ պաս էինք պահում: Ջատիկին ձու էինք ներկում, ով կոտրում էր, տանում էր: Եկեղեցին միշտ լիքն էր հավատացյալներով: Տոները միշտ հիշում էինք: Երբ երեխա էր ծընվում, տանում էին, կնքում, քրիստոնյա էին դարձնում: Բոլորը առաքելական եկեղեցուն էին պատկանում: Ազատ ժամանակ, եթե ամառ էր, գնում էինք այգիները զբոսանքի: Հայրս, մայրս քրդերեն գիտեին, առևտուր անելիս խոսում էին: Տոներին մյուս գյուղերից գալիս էին վանքի դուռը, փող էին գցում, մատաղ մորթում, ղազանը դնում, եփում էին, հետո բաժանում էին բոլորին:

Ամռանը մեր ցորենի կալում հավաքվում էին շատ մարդիկ, ծեծում էին ցորենը և խոսում էին, թե կարող է ջարդ լինել: Գյուղում խմբապետներ կային, հավաքում էին ժողովրդին: Մեր գյուղացիք զինված էին, հայրս և մեծ եղբայրս մասուզեր ունեին: Մեր գյուղից զինվոր չեն տարել:

1915 թ. թուրքերը սկսեցին հարձակվել: Գյուղերը մտան, եկան հասան մեր գյուղը, բարձրացան սարը: Մերոնք բարձրացան սարերը, կանայք, երեխաներս մնացինք գյուղում: Գնացինք մտանք եկեղեցին: Լաց, կոծ: Մեկ էլ շրջապատվեցինք թուրք զինվորներով: Եկան ժամի դարվազը խփեցին, մտան ներս: Հրաման կար՝ անգամ կրծքի տղա երեխաներին մորթել: Մերս իմ ականջները ծակեց, օղեր կախեց, աղջկա շորեր հագցրեց: Իմ երկու քույրերը արդեն մահացել էին: Մերը էր և մեր հարևանը՝ իր տղա երեխայով: Եկան ստուգեցին, հենց ստուգեցին, տեսան մորս կողքին հարևանի գրկին մի տղա երեխա, խանչալը խփին վզին, սպանեցին: Հարևանի կինը ընկավ վրեն, սկսեց լալ: Մերս էլ վրան ընկավ, ես ծվացի, բղավեցի, քսան-քսանհինգ տղաներ սպանեցին: Ինձ աղջկա տեղ դրեցին: Աղջիկներին հավաքեցին տարան: Մայրերը սկսեցին ծվալ: Դարվազի դուռը բաց էր մնացել: Տեսանք՝ մոտ քսան-երեսուն տղամարդ, քեռիս էլ՝ ոտքը կտրված, դրանց մեջն էր, լցրին վանքի գոմը բոլորին, ճավթ լցրին ու վառեցին: Մերս դարդից մեռավ: Մենք մնացինք ամներ: Մեկ էլ լուր էկավ՝ Անդրանիկ Զորավարը գալիս ա: Անդրանիկը եկավ՝ սպիտակ ձիու վրա նստած, ժամի հայաթը: Պապս տասը հատ ոչխար և մի կով ճվիրեց Անդրանիկին:

Գաղթի ժամանակ Անդրանիկի զորքը եկավ, գընացինք դեպի Ռուսաստան: Ամբողջ մեր գյուղը և շըրջապատի գյուղերը գաղթում էին: Եկանք, հասանք Բերկրիի կամուրջը: Էնտեղ ռուսական զորքը կանգնեց: Առավոտը լուսացավ: Մեկ էլ ռուսական զորքը ետ գնաց Վան: Էդտեղից մեզ ետ տվին: Մենք գնացինք դեպի Սալմաստ: Անդրանիկը մեզ հետ էր: Խանասորում Անդրանիկի վրա հարձակվեցին: Անդրանիկը հրամայեց ժողովրդին տանել վանքի մեջ: Հայերը եկան, մեզ տարան: Առավոտը փայտերի վրա մի դիակ բերին, ասին. «Խմբապետ Քեռին* է», որը խանասորում զոհվել է: Եկան դամբանական խոսեցին: Քեռուն տարան Թիֆլիս թաղեցին, իսկ մեզ ասին՝ դուք էստեղ կմնաք: Ձմեռը մեզ պահեցին Էնտեղ: Հայրս վիրավոր մեզ հետ գալիս էր, եզի վրա:

1916 թ. հրաման եղավ, որ ամեն մարդ իր գյուղը գնա: 1915 թ. ցորենը չէինք հավաքել, նորից էր բուսնել: Սկսեցինք հավաքել ցորենը: Տները վառված էին, պատերն էին մնացել: Սկսեցին տների կտուրները ծածկել: Էս անգամ էլ հարայ եղավ, որ քոչեք, որ գնանք դեպի Արևելյան Հայաստան: Եկանք, հասանք Բերկրիի կամուրջը, որն արդեն սարքել էին: Եկանք Իգդիր: Ոչինչ չունեինք: Հերս էնտեղ ծանոթ էր մի մարդու: Հերս գընաց էդ մարդու տունը: Մեկ էլ էդ մարդու կինը, երեխեքը եկան, մեզ տարան իրենց տունը: Էնտեղ ապրեցինք մինչև Իգդիրից քոչելը:

Իմ վեց հորեղբայրներից մահացել էին երկուսը: Մնացել էին մորս հերը, ախպերը, մի քեռու երկու տղաները:

1920 թ., երբ բոլշևիկները մտան Երևան, մենք Կոնդումն էինք ապրում: Կոնդը ամբողջ թուրքի տներ էին, հայերը մտել էին էդ տները: Ախպերս մոսին առավ, նրանց միացավ: Ես տասնհինգ տարեկան էի: Ախպերս գնաց Զանգեզուրում դաշնակների հետ կովելու, զոհվեց: Իմ խեղճ Ռուբեն ախպորս էր կորցրինք: Էլի սկսվեց խառնակությունը: Ոչինչ չկա: Հերս ասեց. «Գնանք հորեղբորս տղաների մոտ, Արմավիր»: Մյուս օրը լսեցինք, որ մեր գյուղի տերտերը Գանձակումն է: Հերս մեզ՝ ինձ, փոքր ախպորս ու քրոջս վերցրեց, հորս եզի վրա դրինք, եկանք Գանձակ:

Արդեն 1921 թ. է: Գանձակում հին հայկական եկեղեցի կար՝ Շահ Աբասի օրոք շինված: Էդ եկեղեցու ամբողջ շրջապատը հայեր էին ապրում: Մի մեծահասակ մարդ մոտեցավ, ասեց. «Թողեք ես էս մարդկանց տանեմ իմ տունը»: Մեզ տարավ իր տունը: Բախչա ուներ: Տարավ իր տան ներքին հարկը տվեց մեզ, ասեց. «Ա՛նենք հասակով մարդ ու կին ենք, էստեղ ապրեք: Մենք ձեզ կօգնենք, դուք էլ կաշխատեք»: Մենք էլ երեխեք էինք, բախչան էինք նայում: Էդ տանտերի այգու ետևը փողոց էր, էնտեղ նա մի խանութ ուներ, որը հացի փուռ էին դարձրել: Մեզ տարավ էդ փուռը, ասաց. «Սրանք գաղթական են, սրանց օգնեցեք»: Մեզ հաց տվին:

Հետո եկանք Երևան:

Մեր մյուս ազգականներից ոչ մեկը չէր մնացել, բոլորը զոհվել էին, ճամփին մահացել էին: Հերս արդեն ոտքի էր, բայց չէր կարող աշխատել: Մեզ տարան Զանգուի ափին գինու գործարանի մոտ մի սև շենք կար, մեջը որբանոց կար: Հարյուր-երկու հարյուր որբեր սոված, տկլոր հավաքված էին: Մի երկու մարդ պատմեցին հորս, թե Քանաքեռում լավ որբանոց կա: Մենկն էլ ասաց, թե՝ Էջմիածնի որբանոցը ավելի լավն է: Մենք գնացինք Էջմիածին: Ասինք՝ որբանոցը որտե՞ղ է: Հրես, երկու հարկանի շենք ա: Մեզ տարան մեծի մոտ: Ասինք. «Ես ու ընկերս՝ Սողոմոնը ոչ հեր ունենք, ոչ մեր»: Մեզ տարան, շորերը փոխին, հաց-մաց բերին, կերանք: Մնացինք երկու ամիս: Ախպորս մեկը մնացել է Երևանի որբանոցը, իսկ մենք՝ ես ու ընկերս՝ Սողոմոնը, փախանք գնացինք Քանաքեռ: Հարցնելով գնացինք, Աշտարակով: Սոված ենք: Տեսանք՝ հաց են թխում: Մըտանք, խնդրեցինք. - Մայրիկ, մի կտոր հաց տուր:

- Ձեր գլուխը թաղեմ, որբանոցից փախել են, եկել են, հաց են ուզում, - ասաց կինը:

Ետ դարձանք: Մի մարդ մեզ տարավ իր տունը: Մի դաստա հաց տվեց, որ ուտենք: Գնացինք, հասանք Եղվարդ: Գյուղացիք մոտենում են մեզ, հարցնում են. - Ու՞ր եք գնում:

Էդ տեղից մեկը բարեկամ դուրս եկավ, տարավ իր տունը, ուտացրեց, մեզ տվեց մի չարչու: Ես էլ գնացի մեր տունը: - Այ տղա, ու՞ր ես, - հարցրեց հերս, շորերս հանեց, որ որբանոցից լինելս չիմանան: Ինձ ու ախպորս տարավ Քանաքեռի որբանոցը: Մի կտոր հաց, մի քանի հատ չամիչ, մի բաժակ չայ: Ուտելիք չկար: Հետո ամերիկացիները եկան, մեզ շատ լավ սկսեցին խնամել: Շատ լավ էին պահում: Ես սկսեցի դպրոց գնալ: Շատերին, ով ծնող չուներ, տարան Ամերիկա: Հետո հերս եկավ, մեզ տարավ Գանձակ: Գանձակում մնացի մինչև 1948 թվը: Էնտեղ ամուսնացա: Սկզբում ադրբեջանցիները էնքան էլ հայերի հետ լավ չէին, բայց հետո կամաց-կամաց լավացան: Սկսեցինք իրար մոտենալ, մինչև 1936 թ., երբ կոլխոզ էր կազմակերպվում, իրար հետ շատ լավ էինք: Գանձակում հիմա ունեմ մեկ ախպեր, որի երեք աղջիկների ամուսինները մահացած են պատերազմում: Հիմա ուզում եմ բոլորին բերել Հայաստան: Մեկը ծախեց տունը, եկավ Հայաստան: Ճանապարհին ջարդում են, կոտորում, թալանում են: Գալու են, մնալու են Հայաստանում: Քանի որ Էնտեղ վատ են վերաբերվում հայերին: Հացի չեն կարող դուրս գալ տնից: Մի թուրք հարևան է գնում իրանց հացը առնելու, ջրի չեն թողնում գնալ: Հայերեն խոսել չեն թողնում: Մի բան լսում են, գլխին են տալիս: Հիմա իմ կնոջ եղբայրը Էնտեղ ա, բայց խփել են՝ ուսերը կոտրել են: Սումգայիթում կոտորել են, Ղարաբաղում կոտորում են* : Մենք ո՞նց թուրքի հետ եղբայրանանք: Անարդարությունը շատ է: Կինս մեռավ, ես երկրորդ անգամ ամուսնացա, տղա ունեցա, դրի իմ Ռուբեն ախպորս անունով:

Եթե մենք կարողանանք՝ Ադրբեջանից ինչքան հայ կա կբերենք Հայաստան: Սոված լինենք՝ իրար հետ լինենք:

30 (30).
ՍԻՐԱԿ ՄԵՍՐՈՊԻ ՄԱՆԱՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ՎԱՆ)

Ես ծնվել եմ 1905 թվին, Հայոց ձորի Կեմ գյուղում, որը Վանից հետու է տասնվեց կիլոմետր: Մեր գերդաստանը անվանում էին Ջհուզենց տուն: Չորս հորեղբայր եմ ունեցել, որոնք գնացել են արտասահման՝ փող աշխատելու: Մեկը զոհվել է 1914 թ. պատերազմին, մյուսը մահացել է Ամերիկայում, իսկ հայրս մնացել էր Ամերիկայում:

1915 թ. լուր հասավ, որ պարոն Իշխանին մեր հարևան Հրիճ գյուղում սպանել են: Այդ այն ժամանակն էր, երբ թուրքերը Զևդեթ փաշայի միջոցով մեր մեծերին կանչում և գլուխները ուտում էին: Այդ աճոեղի օրերին պր. Իշխանին հանկարծակի սպանում են և գըցում են հորը: Չբավարարվելով դրանով, նրա երկու երեխաներին ևս ողջ-ողջ գցում են հորը: Մենք որ այդ լսեցինք, հայրենակիցներով իրար անցանք: Մենք ընկըսեցինք պատրաստվել թուրքերի հարձակմանը:

1915 թ. մարտի 5-ին հուժկու հրետանու ձայն լսեցինք: Ժողովուրդը հավաքվեց հրապարակ և գնաց, լցվեց եկեղեցի: Թուրքերն արդեն նախօրոք զորահավաք էին կազմակերպել և բոլոր երիտասարդներին հավաքել: Քանի որ երիտասարդ չէր մնացել, մերոնք ստիպված էին դիրքերը թողնել-գնալ հարևան գյու-

---

* Քեռի (Արշակ Գավաֆյան) (1858, Կարին – 1916, Ռևանդուզ)– ազգային ազատագրական շարժման գործիչ:

* Նկատի ունի 1988 թ. փետրվարին Սումգայիթում և 1990 թ. հունվարին Բաքվում հայերի նկատմամբ ադրբեջանցիների կազմակերպած ջարդերը և 1991 թ. սկսված Արցախյան ազատամարտը:

ղերը: Մենք գնացինք Կյուկյանց հայկական գյուղը: Այնտեղ մի քանի հազար մարդիկ էին, մեզ տեղավորեցին մարագների մեջ: Ամեն օր թուրքերը բռնում էին հայերին և մեր աչքի առաջ կախում կամ մորթում էին: Դրանցից մեկն էլ իմ հորեղբայր Պետրոսն էր: Նա ռանչպար էր: Երբ տեսանք Պետրոսին այդ վիճակում, մենք չճանաչեցինք: Մեզ առանձնացրին հատուկ մարագի մեջ: Դուռը փակեցին ու մեզ վրա պահակ նշանակեցին: Մենք այդ աճավոր դեպքերից սարսափած՝ ուզում էինք փախչել այդ գյուղից: Մարագում նույնիսկ անասնակեր չկար:

Ինձ հաջողվեց դուրս պրծնել, գնալ գյուղը, մերոնց գտնել: Հաջորդ օրը բարձրացանք լեռները, որոնք շատ անտառախիտ էին: Մենք Քրդքըռ լեռան լանջին էինք: Մեր գյուղի դիրքն այնպիսին էր, որ մենք սարի լանջին էինք ապրում: Շաղբաթի աիռելի գետը և Շամիրամի ջրանցքն էին անցնում մոտից: Մենք բարձրացանք լեռան գագաթը, անտառի մեջ, տեսանք, թե ինչպես թուրքերը և քրդերը մեր անասունները, անկողինները, մեր սպիտակեղենները թալանում էին: Մենք տեսանք, որ ամեն առավոտ թուրքի լամուկները գալիս են, սկսում են կրակել ինչ-որ թիրախի վրա: Երբ թուրքերը հեռացան, մեր տղաները իջան ու մոտեցան, տեսան, որ այդ թիրախը իմ պապի գլուխն էր: Անխիղճ թուրքերը պապիս թաղել էին հողի մեջ կենդանի-կենդանի, գլուխը թողել էին դուրսը և կրակում էին անընդհատ: Երբ վերադարձանք գյուղ, պապիս մարմինը, որ արդեն քայքայված էր, մի կերպ թաղեցինք:

Թուրքերը և քրդերը մեր անասունները տանում էին: Մեր գյուղացի Կակոսենք, որ շատ հարուստ էին, քառասուն զույգ գոմեշ ունեին. դրանցից մեկը՝ Մարալը փախչում ետ է գալիս ու մտնում իր փարախը: Ինչո՞վ էինք ապրում լեռներում: Մեզ պահում էին մեր ոչխարները: Մեր շները առավոտյան տանում էին ոչխարներին, արածացնում և երեկոյան բերում: Մենք կթում էինք և ապրում: Օրերից մի օր հարևանի տղան գոռում է՝ Սիրա՞կ, քեռիդ եկել է: Մենք կորցրել էինք մեր քեռուն: Դա Արշակ Մխիթարյանն էր: Նա մեզ սկսեց տիրություն անել:

Չեմ կարող մոռանալ 1915 թիվը, երբ մենք լեռներով, գյուղերով անցանք. մարտ ամիսն էր՝ աննձրևային, բուք, սոսկալի ցուրտ: Վերջին գյուղը, որ Վարագ էր տանում, դա Բերդակն էր: Մենք այնտեղ տեսանք փողոցներում մերկ, սպանված մարդիկ, որոնք ուռել էին և նեխել: Հոտում էին: Մենք այդ բոլորի միջով անցանք դեպի Վարագ: Լուսաբացին Վարագի լեռներում թուրքերը, որ դիրքեր էին բռնել, մեզ տեսան և սկսեցին կրակել մեզ վրա: Ժողովուրդը սարսափահար լաց էր լինում: Վարագը մեր սրբավայրերից մեկն է, որտեղ մի շարք եկեղեցիներ կան, Խրիմյան Հայրիկը այնտեղ դպրոցի տնօրեն է եղել: Մեզ տեղավորեցին գոմերում: Վարդապետները մեզ երկու հարյուր գրամ հաց էին տալիս՝ զրկելով իրենց բերնից:

Չեմ մոռանում, երբ մեզ տեղավորեցին գոմերում, մի գիշեր, կես գիշերին, մեկ էլ մի հսկա ոտք իմ փորի վրա ծանրացավ: Ես գոռացի: Բոլորը վախեցած արթնացան, լույսերը վառեցին, տեսանք՝ գոմեշ էր:

Մեկ-երկու ամիս այնտեղ մնալով՝ մենք փախչում ենք ու մոտենում Վանին: Միշտ գիշերով էինք գընում, քանի որ ցերեկը մեզ հետապնդում էին:

Երբ Վանին մոտեցանք ու Քաղաքամեջ պիտի մտնեինք, թուրքերը կանգնեցրին, սկսեցին տղամարդ փնտրել: Վանի հերոսները հեռադիտակով նայում էին, սկսեցին կրակել: Թուրքերից ոմանք ընկան, ոմանք փախան, և մենք ազատվեցինք, մտանք Վան: Քաղաքում կային նաև օտարերկրյա հյուրպատոսներ: Մայրս եղբորս հետ հենվել էր մի սյան վրա, ասաց՝ տղերք ականջ արեք, տեսեք: Մենք լսեցինք, որ իրոք ձայն կա: Երևի հեռագրասյուն էր: Մայրս ասաց՝ կանչեք ձեր հորը, Ամերիկայից թող գա:

Վանում մեզ տեղավորեցին դպրոցի շենքում: Ամեն առավոտ Վանի փողային ննջագախումբը նվագելով մաս էր գալիս՝ երեխաները նրա ետևից: Արդեն Վանի ապստամբությունն սկսված էր: Մի հայ ասաց մեզ՝ երեխաներիս. «Գնացեք փամփուշտներ հավաքեք, բերեք, որ նորը պատրաստեն»: Մենք գնացինք փամփուշտներ հավաքեցինք, տվեցինք արհեստանոցին:

Հասավ օրը, երբ կռիվն ուժեղացավ Վանում, Այգեստանում: Վասպուրականցիները, որ հավաքվել էին այնտեղ, մեծ կամքի ուժով պաշտպանեցին և՛ Այգեստանը, և՛ Վանի կենտրոնը՝ Քաղաքամեջը: Մերոնք ուժեղ մարտեր մղեցին և՛ Այգեստանում, և՛ Քաղաքամեջում: Թուրքերը լսելով, որ ռուսական զորքը Սալմաստից գալիս է Վան, խուճապահար սկսեցին հեռանալ: Մերոնք հարձակվեցին, ոչ միայն թուրքերին ոչնչացրին, այլև մեծ ավար ձեռք բերեցին՝ հրետանի, փամփուշտներ և այլն:

Մայիսի 26-ին Վանի բերդի վրա ծածանվեց Հայաստանի դրոշակը: Վասպուրականցիները մեծ սիրով ընդունեցին ռուսական զորքերին և հայ կամավորներին՝ Անդրանիկ փաշայի ղեկավարությամբ: Երբ ուրախություն էր համատարած, մեզ մոտեցավ մի ռուս օֆիսեր և նկարեց՝ ես էի, մայրս էր և եղբայրս: Այդ ժամանակ սկսում է Ռուսաստանի հեղափոխությունը, որը հարկադրեց ռուսական զորքին ետ վերադառնալ Ռուսաստան, որոնց հետ նաև շատ գաղթականներ՝ դեպի Հայաստան:

Գաղթեցինք դեպի Հայաստան: Ճանապարհն անցնում էր խոր ձորերով և աիռելի գետերով: Այդ ժամանակ նորից թուրքերը ուզում էին կտրել մեր ճանապարհը: Մեծ կորուստներ տվեցին հայերը՝ այդ գետերի կամուրջների մոտ: Ժողովուրդը խռնված, անասունները ևս, մայրը գցում էր երեխային, ինքը գետն էր նետվում: Վերջը մեր կամավորական ջոկատների օգնությամբ, փշրված, սոված, ծարավ անցանք Արևելյան Հայաստան:

Առաջին հանգրվանը եղավ Օրգովի ռուսական սահմանապահների մոտ: Այդտեղ մեզ շատ լավ դիմավորեցին ռուս սահմանապահները: Մեզ լավ ընդունեցին, հաց տվեցին, կերակրեցին:

Եկանք հասանք Իգդիր՝ Սուրմալու: Սուրմալուի Հախվերիս գյուղում ես աշխատեցի որպես բատրակ: Պահում էի երկու գոմեշ: Մի օր նախքան տուն վերադառնալս վազելազ գալիս է իմ քեռին և գրկում է ինձ՝ ասելով. «Հայրդ եկել է, աչքդ լույս»:

Հայրս արդեն մեզ տիրություն արեց:

Նա կրթված մարդ էր, եղել էր Ամերիկայում և ահա 1917 թվին վերադառնալով Ամերիկայից, գալիս գտնում է մեզ: Հայրս մեզ վերցրեց Իգդիրի Հախվերիս գյուղից, բերեց Երևան, որտեղ մենք երկու ամիս ապրեցինք, հետո գնացինք Ավան գյուղը: Մեր գերդաստանից քսանյոթ հոգի զոհ էինք տվել:

Երևանում ես աշխատեցի որպես բանվոր, երկաթգծի վրա: Հետո տպարանում՝ գրաշար: Այնտեղ էին նաև Ալազանը և շատ ուրիշներ: Ապա հարել եմ կոմերիտական աշխատանքների, հետևել եմ հրահանգչական կուրսերին, դարձել եմ Հայաստանի կոմերիտմիության հիմնադիրներից՝ Աշտարակի մանկատանը: Հաճախել եմ կուսակցական դպրոց: Այդ նույն ժամանակ իմ կրթությունը շարունակել եմ թեմական դպրոցում՝ հիմիկվա Ս. Սարգիս եկեղեցու բակում: Եղել եմ Աշտարակի կոլխոզի նախագահ, Էջմիածնի կոլխոզի նախագահ, Էջմիածնի կուսակցական շրջկոմի առաջին քարտուղար: Միաժամանակ հաճախել եմ Պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, եղել եմ այգեգիտնգործական գործարանի տնօրեն:

1936 թ. Աղասի Խանջյանի սպանության պատճառով հեռացվել եմ աշխատանքից՝ որպես վասպուրականցի և ընդունվել Մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը, ավարտել պատմության ֆակուլտետը:

Սկսվել է Հայրենական մեծ պատերազմը, որի առաջին օրերից մասնակցել եմ որպես գումարտակի հրամանատար: Մինչև 1946 թ. գտնվել եմ բանակում:

Այնուհետև եղել եմ Երևանի ռադիոկոմիտեի նախագահի տեղակալ, Հայգրքի տնօրեն, «Գիտելիք» ընկերության գիտական քարտուղար:

1965 թվից թոշակավորվել եմ: Ունեմ երկու աղջիկ, հինգ թոռ և ինը ծոռ:

31 (31).
ՎԱՐՍԻԿ ԱԲՐԱՀԱՄԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ՎԱՆ)

Մենք խաղաղ ապրում էինք Վանում: Այնտեղ Վանա լիճը կար: Մենք այգի ունեինք և որպես ամառանոց գնում էինք Ավանց գյուղը: Այգեստան տատիկենցս տունն էր: Մի օր հայտարարեցին, թե՝ բոլոր ավանցիները հավաքվեն Այգեստանի խաչփողան հրապարակը, այսինչ ժամին ելույթ պիտի ունենան՝ ի օգուտ հայերի: Էդ ժամանակ բոլորը հավաքվեցին: Վեր կացան, խոսեցին, ամենավերջը ասին. «Հյուրիե՛թ, աղալե՛թ, մուսաֆա՛թ»:

Հորս հարցրի. - Էս ի՞նչ է կըսեն:

- Մենք՝ հայերս ու թուրքերը, եղբայր պիտի լինենք:

Երբ որ վերջացան ելույթները, թուրքական ննջագախումբը նվագել սկսեց: Հետո ուրիշները ևս խոսեցին:

Մի ժամանակ անցավ, մեր ղեկավարներին՝ Վռամյանին և ուրիշներին տարան սպանեցին, գցին ծովը: Հետո թուրքերը պատրաստվան կռվի: Առաջին հերթին փակեցին հայկական եկեղեցիները: Մենք չորս հատ եկեղեցի ունեինք՝ Ս. Նշան, Ս. Պողոս-Պետրոս, Ս. Վարդան, Ս. Ամենափրկիչ, որոնք վառեցին, հետո կռիվն սկսվեց: Հարձակվան հայերի վրա: Հայերն էլ ինքնապաշտպանությամբ կռվեցին մինչև վերջ: Թուրքերը մարդ ուղարկեցին թե՝ հայերը թող հանձնվեն: Հայերը թե՝ մենք չենք հանձնվի, մինչև արյան վերջին կաթիլը պիտի կռվինք: Կռիվն սկսվեց: Իմ հայրը ռամկավար էր: Մայրս ճաշ էր պատրաստում, ես հորս դիրքը ճաշ էի տանում՝ օրական երկու անգամ: Էդ դիրքն էլ շատ վտանգավոր տեղ էր: Հայրս մի թուղթ գրեց, տվեց, որ գնամ, տանեմ Առաջնորդարան: Էնտեղ գրել էր. «Էս շատ վտանգավոր դիրք է, Բերդի տակն է», իսկապես էլ գոմի կողմից պետք է փիլաքան դնել, կտուրը ելնել: Կտուրը ելան, փորեցին, հայաթի դուռը փակեցին, ժողովրդին տեղափոխեցին մեջը: Թուրքերը, որ հեռադիտակով նայում էին, մտածում են, որ մարդ չկա դիրքերում, գրոհում են: Մերոնք պատրաստված էին, թուրքերից ով որ թոկը բռնում էր, ընկնում էր ցած և սպանում էին. էդպես հայերը ուժեղացան:

Էդ կռվի ժամանակ հորքուրս վեդրոն ձեռքը, որտեղ որ թոփը ընկնում էր, ջուրը լցնում էր վրեն, հավաքում, տանում էր գործարան ու նորից բարութ էին պատրաստում:

Մեր գերդաստանից շատերը մահացան: Թուրքերը եկան հայ նավաստիներին տարան, որ իրենց տանեն, փախցնեն, քանի որ լսել էին, որ ռուսը գալիս է: Հայ նավավարը թուրքերին լցնում է նավը, տանում է ծովի մեջտեղը, նավը խորտակում է, ինքն էլ լողվոր էր, լողալով դուր է գալիս, ազատվում: Թուրքերը խեղդվում են:

Ռուսները եկան: Երկար ժամանակ ապրեցին մեզ հետ: Ասին՝ այսինչ տեղը ճակատ է բացվել, եթե մենք գնանք, թուրքերը ձեզ կսպանեն: Տղամարդիկ գնացին սարը կռվելու: Ժողովուրդը գաղթել սկսեց...:

Բերկրիի գետը չանդակ է, որ բերում էր: Հորքուրս երեխու հետ մտնում է ջուրը, երեխան ջուրը տանում է: Խեղճ հորաքույրս ամբողջ կյանքում հիշում էր. «Բաբկենին չկարողացա պահել, ջուրը տարավ, ոսկիներս էլ շորի մեջ էի կարել, քամեցի ջրի միջից հանեցի, դրի քարին, որ չորանա, էնտեղ էլ էդ մոռացա եկա»: Տղին ջուրը տարավ, ունեցվածքը կորցրեց, հենց հասանք Իգդիր, հորքուրս դարդից մահացավ: Իմ հորեղբայրը կռվի մեջ մեռավ: Իգդիրից հետո սայլերով եկանք Արևելյան Հայաստան: Հերս ասաց. - Մենք ջրի, հողի, մրգի ժողովուրդ ենք:

Մեզ տարան Ղամարլու՝ Արտաշատ: Գնացինք, էնտեղ էլ ապրեցինք: Հետո, շատ տարի հետո փոխադրվանք, եկանք Երևան:

32 (32).
ՍԻՐԱՆՈՒՇ ՍԻՄՈՆԻ ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1906 Թ., ՎԱՆ)

Ծնվել եմ վանեցի հարուստ վաճառականի ընտանիքում: Մեր ընտանիքը բազմանդամ էր: Հայրս ունեցել է վեց եղբայրներ, որոնցից երեքը 1895 թ. քաղաքական իրադարձությունների ժամանակ զոհվել են: Թուրքերը հարձակվել են Վանի վրա: Վանեցիները կտրել են բարդիները, բարիկադներ են սարքել և տասը օր շարունակ կռվել թուրքերի դեմ: Բայց հայերի փամփուշտները վերջացել են: Վանը ունեցել է շատ հարուստ մտավորականներ, որոնք մտածել են, որ ավելի լավ է հեռանան Պարսկաստան: Իսկ հայրս և հորեղբայրս ետ են եկել, թաքնվել են լեռներում, Վարագա վանքում, Աստղիկ դիցուհու մեհյանում, քանի որ հորս գլուխը գնահատված է եղել երկու հարյուր ոսկի:

Մայրս ունեցել է տասներկու զավակ, ութը՝ տղա, չորս աղջիկ: Հայրս առևտրական էր: Վանում կային շատ արհեստավորներ: Բոլոր տներին կից կար այգի: Այգեստանը տարածված էր: Պտղատու ծառերի առատություն էր և ծաղկանոցներ: Եթե պատահեր, որ դրացին չունենար, նվիրում էին: Սեխը, ձմերուկը բերում էին կողքի գյուղերից: Քիչ թուրքեր կային: Առևտուրը մեծ մասամբ հայերի ձեռքին էր: Պղնձագործները շատ գեղեցիկ փորագրված սկահակներ էին պատրաստում կարմիր պղնձից: Մեր բոլոր բազկաթոռները ծիրանի կամ ընկույզի փայտից էին՝ վրան սադաֆով զարդարված: Մեր սպասքը արծաթից էր: Մեր տանը ճաշակով և նուրբ ապակեղեն ունեինք:

Վանը ուներ մի քանի շուկաներ: Խաչփողանում հայրիկիս խանութն էր: Հորս խանութը մեծ էր, սկզբում ապակեպատ գրասենյակն էր, ուր նստում էր հայրս և կարդում թերթեր: Ստանում էր անգլիական լավագույն կտորեղեն, ռուսական չիթ, փաթուխա: Հորս խանութի մասնաճյուղերը գտնվում էին նաև Տրապիզոնում և Էրզրումում: Հրեա վաճառականները Բաշքալեից գալիս, գնում էին: Ոսկերչությունը ևս զարգացած էր: Մեր տան մեծ դահլիճները անտիկա գորգերով էին զարդարված:

Քաղաքը կազմակերպվել է մ.թ.ա. 9-րդ դարում: Սկզբում կոչվել է Տուշպա, ապա՝ Երվանդավան, Վան: Վան քաղաքն ուներ ծուռումուռ փողոցներ, իսկ Այգեստանը ամառանոց էր: Այն հսկայական մի թաղամաս էր: Մեր տունը անկյունային էր: Մեր տանը շատ հյուրեր էին լինում:

1896-ի դեպքերից հետո հայրս կապ ուներ Փարամազի հետ: Արամ փաշան, Վռամյանը, Դերձակյանը մեր տանը լինում էին: 1913 թ. մեզ մոտ բացվեց դաշնակցության տունը, որի հիմնադիրն էր Բարունակ Կապուտիկյանը՝ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի հայրը:

Մեր տունը երկու և կես հարկ էր: Յուրաքանչյուր հարկ հինգ-վեց մետր բարձր էր: Տանիքը տափակ էր, ծիրան էինք փռում, որը դեղին շափյուղայի պես էր լինում և բերանդ դնեիր, լեզվիդ վրա կհալվեր: Առաջին հարկում հացի շտեմարանն էր: Կային մեծ թաջիրներ: Հացը եփում էին երկու շաբաթը մի անգամ: Կողքին մառանն էր: Ջնարակված ամանների մեջ լցվում էր պահուստը: Խաղողը կախում էինք: Նրա դիմացը կապույտ բազալտ քարով ծածկված սենյակ կար, ուր պահում էինք խմորեղենը: Այնտեղ կային թոնիրներ, որոնք վառվում էին գազով: Ունեինք ներքնատուն, որտեղ մարդու հասակին կարասներ կային՝ թաղված ծովի ավազի մեջ և լցված էին Շահբաղի գինով: Այնտեղ էին պահվում նաև անուշեղենները: Մենք ունեինք ռոկֆորից ավելի լավ պանիր, որը կանաչիով էին պահում և ամանի բերանը փակում էին ու թաղում ավազի մեջ: Կար նաև փայտատուն:

Կալոշ, բոթին էինք հագնում: Մեր շքեղ հագուստները գալիս էին Պոլսից: Առաջին հարկում մենք ունեինք նաև ամառային և ձմեռային ճաշասրահներ: Պատերին նկարներ, լուսամուտներին՝ վարագույրներ: Խրիմյան Հայրիկի նկարը մեր հյուրասենյակի պատից էր կախված:

Երկրորդ հարկում մի հսկա քառակուսի սրահ ունեինք, որը երկու հարյուր հիսուն հոգի կառներ: Երբ կամավորական խմբերը եկան, գեներալ Նիկոլաևը տասնհինգ օր մնաց մեզ հյուր, և այդ խրախճանքը մեր տանը եղավ: Այդ սենյակում կային բազկաթոռներ, բանեփաներ՝ կանաչ թավիշով ծածկված, իսկ բազկաթոռների ծայրերին ոսկեգույն աղյուծներ էին, սեղանի վրա հեռադիտակ և Անիի ավերակների նկարների ալբոմը: Մեկ պատշգամբից երևում էր Վանա ծովը: Մյուս պատշգամբից երևում էր Սիփանա սարը՝ մով կապույտի մեջ թաղված, հարավից՝ Տավրոսի սկիզբն էր, հյուսիսից՝ Շահբաղի գյուղը և Ակռովըթին՝ հայտնի Մհերի Ագռավի քարը և ծաղկի դաշտը, որն սպիտակ էր երևում, որտեղից հետո հարձակվեցին թուրքերը:

Մենք ունեինք չորս ծառաներ, խոհարար, կառապան: Ախոռատուն ունեինք, երկու արաբական նժույգ ունեինք, կովեր, ոչխարներ ունեինք Դարման գյուղում: Աղո ծառայի հարսանիքը մեր տանն է կատարվել՝ ողողված լույսերի մեջ: Կենտրոնում կախվում էր ջահը: Ունեինք գրամոֆոն, որը բերել էին Եվրոպայից, նաև հայերեն ձայնասկավառակներ:

Մեծ հարգանք, պատիվ, սեր և ունկնդրություն կար մեծերի նկատմամբ, նաև ազգականների հանդեպ: Մեր տանը դառը խոսք չեմ լսել: Բոլորս սիրում էինք իրար:

Վանը ուներ երեք թատերական խումբ: Մենք ունեինք այցելության հատուկ օրեր: Հայրիկիս անունը Սիմոն էր, Տեառնընդառաջին հարյուրի չափ հյուր էինք ունենում: Խաղողի որթի ճյուղերը վառում էին, վրայից թռնում էին:

Ամառը գնում էինք Վարագա վանքը: Դա մի սրբազան վայր էր, որտեղ գյուղերից գալիս էին: Հայ ժողովուրդը հավաքվում էր, երգում, պարում էին:

Վանում կար յոթը եկեղեցի: Կային նաև կաթոլիկներ և բողոքականներ, որոնք ունեին առանձին դպրոցներ, հիվանդանոց: Բայց լուսավորչականներն ավելի շատ էին: Մենք Ս. Աստվածածին եկեղեցին էինք գնում: Այն բավական մեծ էր, մոտ հինգ հարյուր մարդ կտեղավորվեր: Ապրիլի 7-ին, երբ ինքնապաշտպանական կռիվը սկսվեց, Արսեն քահանան պատարագ էր մատուցում, ծերերն ու երեխաները բազկատարած աղոթում էին: Մենք հավատում էինք, որ Աստված մեզ տեսնում է երկնքից և հետևում է յուրաքանչյուր կենդանի էակի վարք ու բարքին: Այդպիսի երկյուղածություն կար: Ամեն մի հարուստ ընտանիքից հաց էինք ուղարկում եկեղեցուն: Մեծ սիրով տանում էինք եկեղեցու աշխատողների համար: Իմ պապը՝ Գրիգորը, երբ թաղապետ պիտի ընտրվեր, մեծ թոնիրը վառել են, հաց են թխել: Ավ. Թերզիբաշյանը գրել է այդ մասին Փարիզում, «Արծիվը իր գույնին մեջ» գրվածքում:

Մենք ունեինք յոթը դպրոց՝ Ազգային դպրոցը Սանդխտյան դպրոցն էր, ուր ես եմ սովորել: Կար որբանոց: Կային նաև երկամյա և քառամյա բարձրագույն դպրոցներ, որտեղ սովորում էին գյուղում դպրոց ավարտածները: Ունեինք նաև Կենտրոնական վարժարան:

Ուսուցչական կազմը մեծ չէր: Շատերն ավարտել էին Պոլսում: Ինչպես իմ եղբայրները, յոթը և ինը տարեկան, գնացել էին Պոլիս սովորելու: Նրանք հետո պիտի գնային Փարիզ, ճարտարապետական կրթություն ստանալու: Ես յոթը տարեկանից մանկապարտեզ եմ գնացել: Մեր բոլոր ուսուցիչները նշանավոր դեմքեր էին: Դասավանդում էին հայերեն, աշխարհագրություն, իրավագիտություն, բնագիտություն, երգեցողություն, նկարչություն, սովորեցնում էին հայրենասիրական երգեր: Դասամիջոցին գնդակ էինք խաղում, որը կարում էինք տանը: Պարան էինք խաղում: Պահմըտոցի էինք խաղում: Ես շատ երես առած եմ եղել: Մի օր ասացի. «Վաղը դպրոց չկա», ոչ մի աշակերտ չի եկել: Ուսուցիչը իմացավ, ծնողքիս կանչեց, բայց ես ներողություն խնդրեցի, որ ստախոսի անուն չստանամ:

Վանում առաջին անգամ բեմադրվեց Լևոն Շանթի «Հին աստվածները»: Հայրս, մայրս ինձ ու Գուրգենին չէին տանում: Մենք մեր լավ հագուստները դրինք կառքի մեջ, երեկոյան ես ու Գուրգենը հագած գնացինք նրանց ետևից: Տոմսը մեկ ոսկի էր: Երբ հայրս մեզ տեսավ՝ զարմացավ, բայց՝ բան չասաց: Այդ պիեսը Կենտրոնական վարժարանում բեմադրվեց: Սիրողների խմբեր էին, բայց խաղում էին նաև եվրոպական ստեղծագործություններ: Զարիֆյանը երբ եղել է Վանում, զարմացել է: Դերակատարներից մեկը եղել է Լեո Կամսարը: Վանեցիները թատերասեր էին: Հետագային վարժապետանոցին կից շինեցին դահլիճ, որը յոթ հարյուր հոգի կտաներ: Այնտեղ կազմակերպում էին ցուցահանդեսներ, դասախոսություններ, կուսակցական ժողովներ: Ստանում էինք «Աշխատանք» և «Վանտոսպ» թերթերը: Իմ մայրը ևս ուսում առած էր: Նա մեզ պատմում էր Վիկտոր Հյուգոյի «Թշվառները»: Անգրագետ տղամարդ չկար Վանում: Մեր Սանդխտյան դպրոցը շատ առաջավոր էր:

Վանա ծովում Վանա տառեխ շա՛տ կար, որը էժան էր, և՛ հարուստին էր մատչելի, և՛ աղքատին: Մեր թաղում աղքատներ կային: Հայրիկս աշնանը սայլի վրա դնում էր ալյուր, պանիր և այլն ու տանում, բաժանում էր այդ ընտանիքներին: Շատերը պանդուխտ էին գնում՝ իրենց ընտանիքին օգնելու նպատակով:

Մենք ունեինք կեռաս՝ ծիրանի չափ: Պտուղը առատ էր, բացի սեխ ու ձմերուկից: Ծիրանը արտաքինից շողշողուն էր և համով, քաղցր: Ազատ ժամանակ այգիներում խաղում էինք: Ծովափ էինք գնում՝ լողալու: Ծովափը քաղաքից քսանհինգ կիլոմետր հեռու էր: Մայրս ամեն առավոտ կառքով գնում էր, ծով էր մտնում՝ ես էլ իր հետ: Շատ գեղեցիկ ծովափ էր: Գնում էինք նաև Վարագա վանք, Նարեկա վանք, Ս. Գրիգոր Լուսավորչի վանքը: Նավ և շոգենավ կային ծովային պտույտի համար: Արտամետից Բաղեշ խնձոր էին տանում և բերում էին մեծ ձմերուկ, որի վրա կարելի էր նստել:

Ունեինք տան և դրսից հագուստ: Դուրս գալուց հագած-կապած էինք լինում և միշտ հիշում՝ «Դու ինձ պահե բողչի մեջ, ես քեզ պահեմ մարդամեջ» ասացվածքը: Մայրս հագնում էր ատլասից զունավոր, մինչև փեշը բլուզկա՝ կարմիր, մանիշակագույն, ճերմակ գույնի: Մայրս պոմպարխաթից վերնազգեստ ուներ: Մազերը բաց էին թողնված, բայց յազմա կար գլխին: Հայրս՝ ռեդինկոտ էր հագնում՝ կապույտ կամ սև գլխարկ, ձեռնափայտ, ժիլեթ, ոսկյա շղթայով ժամացույց: Տրապիզոնից թութուն էինք ստանում: Ժամփորդություններ էինք անում: Ամառը գնում էինք Արտամետ, որը հըրվանդան էր ծովի մեջ, որտեղ վրաններ կային:

Տանը երկաթյա մահճակալների վրա էինք քընում: Մայրս տանը ղեկավարում էր ամեն ինչը: Օրական տասը-տասնհինգ հոգի հյուր էր գալիս: Ամեն ինչ տանը կար՝ հավ, ոչխար, բանջարեղեն: Ուխտագնացության օրվա համար հատուկ կպատրաստվեին, բաղարջ կեփեին, հալվա, ձու կխաշեին և կանաչի:

Հուղարկավորության ժամանակ երեխաներ չէին տանում: Կանայք գերեզմանատուն չէին գնում: Վարագա Ս. Աստվածածին եկեղեցին ուներ պանթեոն:

Ամուսնությունները շատ շքեղ ու պաշտոնական էին լինում: Առանց սիրո կարող էին ապրել: Սիրո բոլոր երանգները առկա էին: Ամուսնության ժամանակ ծնողների վերջնական համաձայնությունը պիտի լիներ: Ամուսնալուծում լինում էր, երբ բերանից հոտ էր գալիս և կամ երեխա չէր ունենում: Անբարոյականություն՝ չեմ լսել: Մայրս տասնվեց տարեկան է եղել, երբ ամուսնացել է, իսկ հայրս՝ քսան:

Դաշնակցության տունը մեր տան մոտն էր: Կային նաև հնչակյաններ և ռամկավարներ: Այդ բոլոր կազմակերպություններն էլ հեղափոխական են եղել, բայց լավ կլիներ, եթե այդ բոլոր ճիգ ու ջանքերը ուղղվեին մի նպատակի: Պիտի ունենայինք մի կուսակցություն, ինչպես եղել է Վանում: Վարդգես Սարենգյուլյանը Ջոհրապի հետ Պոլսո պառլամենտի անդամ է եղել: Մենք ունեցել ենք նաև ֆեդայիներ: Հայտնի էր Տիգրան Դերոյանը*:

Վանի ժողովուրդը զինված էր: Մեր տանը չորս

* Տիգրան Դերոյան (Վազգեն) (1873, Վան – 1898, գ. Կուռուբաշ, (Վան) - ազգային ազատագրական շարժման գործիչ:

հատ զենք կար, տղամարդիկ պահում էին իրենց գըրպանում: Երբ կռիվը սկսվեց, հայրիկս մեր զենքերը հանձնեց թուրքական կառավարությանը: 1909 թ. Ադանայի ողբերգությունից հետո վանեցիները մտածում են՝ զինվել: Հավաքում են փող, դիմում են Վռամյանին, Դավթյանին: Նրանք գնում են Պոլիս, հանդիպում են Զոհրապին* և Սարեանցյուլյանին: Այդ ժամանակ մենք պետք է զինվեինք:

Մինչև 1915 թ. Վանում կային քաղաքական հեղինակավոր գործիչներ՝ ինչպիսիք էին Վռամյանը, Վահան Փափազյանը, Արտակ Դարբինյանը, Փարամազը, Իշխանը**: Հնչակյանները շատ մեծ դեր կարող էին կատարել, եթե գաղտնապահ լինեին: 1914 թ. Կոստանցայում կազմակերպված խորհրդակցության մասին թուրքերը իմանում են և Պոլսո Բայազեդի հրապարակում քսան հոգու կախեցին:

Փարամազը եկել էր Վան, որպեսզի փորձի իրենց՝ հնչակյանների ազդեցությունը, բայց տեսել է, որ Վանում դաշնակները շատ են և լավ կազմակերպված են: Արմենականների տրադիցիաները ուժեղ էին: Ընդհանք շատ ճաճատակներ տվեցին՝ Մկրտիչ Ավետիսյան և այլոք:

Եղել է ժամանակ, որ հայահալած քաղաքականություն չի եղել Թուրքիայում, և հայերի վիճակը շատ լավ է եղել: Հայերը կարող էին թուրքերի հետ հաշտ ու խաղաղ ապրել:

Սահմանադրությունից հետո հայերից սկսեցին զորակոչիկներ տանել տասնութից քառասունհինգ տարեկան տղամարդկանց: Շատ հայեր հիսուն ոսկի էին տալիս և ազատվում բանակից: Իմ եղբայրը պատրաստվում էր Փարիզ մեկնել, մյուս եղբայրս էլ՝ Զվիցերիա, բայց թոհ ու բոհը սկսվեց: Միշտ քրդերը հարձակվում էին քաղաքի ճանապարհներին ճամփորդների վրա: Քրդերի գեները թալանչի էին, և թուրք կառավարությունը չէր խանգարում:

Մինչև 1914 թ. թուրքերը անպաշտոն կերպով ուժեղացրել էին բռնությունները հայերի նկատմամբ. մերոնք դիվանագիտորեն մեղմում էին, բայց նաև զինվում էին:

Քաղաքը ուներ երեք բաղնիք, որոնք շատ լավն էին: Մարդիկ առավոտից գնում էին, այնտեղ լողանում էին, ճաշում, երեկոյան վերադառնում: Բաղնիքում հաճախ աղջիկտեսի կերթային, որ մարմնական բարեմասնությունները տեսնային: Այնտեղ հանդիպումներ էին լինում, զրուցում էին: Մենք մեր տանն էինք լողանում, մեծ տաշտի մեջ՝ շաբաթը մեկ անգամ: Մեր տան մոտ նաև հոր կար: Ամեն փողոց երկու կողմից առու ուներ: Մեր շենքի մեջ զուգարան կար: Սանիտարական մաքրություն կար:

Փոքր քույրս երբ ծնվեց, տատմեր եկավ: Մեզ հեռացրին տնից: Մայրիկիս ձայնը լսում էինք այգուց: Հայրիկս ասեց. «Ես գնացի ծովից մի փոքրիկ աղջիկ բերի»: Եվ մենք հավատում էինք: Ես ութը տարեկան էի: Ամոթխածություն կար: Մեր գիտելիքները սահման ունեին: Ընտանիք էր, ուր ամեն մեկը գիտեր իր տեղը: Մեզ մոտ ձեռագործ շատ էին անում, հատկապես ժանյակագործություն, բայց ես սիրում էի կարդալ:

Տղամարդիկ խմում էին օղի՝ մատնաչափ բաժակներով: Ազգականները փոխայցելություններ կանեին: Մեր հարսները Ճիտեճյանների, Հյուսյանների, Գափամաճյանների, Թերլեմեզյանների, Շահբաղունցյանների երևելի ընտանիքներից էին, որոնք նպաստել էին ազատագրական պայքարին:

Վանում հիմնված էր Կանանց միություն: Ֆեդայիները ծպտված գալիս էին մեր տունը: Նրանց «դաչաղ» էին ասում: Նրանց սնունդը ապահովված էր, և իրենք գալիս էին, հաշվետվություն կտային: Մենք՝ երեխաներս, գիտեինք, որ ոչ ոքի չպիտի հայտնենք ընդհանց մասին: Գիտեինք, որ ղաչաղները հեղափոխականներ են: Նրանցից շատերին ես անձամբ ճանաչում էի:

Մենք լավ հարաբերությունների մեջ էինք նաև թուրք նահանգապետ Ջևդեթի, Գասիմ բեկի հետ: Նրանց տները մորս հետ գնում էինք այցելության:

* Գրիգոր Զոհրապ (1861, Կ.Պոլիս – 1915, Մեծ եղեռնի նահատակ) – գրող, հրապարակախոս, փաստաբան–իրավագետ, հասարակական, քաղաքական գործիչ:

** Ազգային ազատագրական շարժման գործիչներ:

33 (33).
ՊԱՏՐԻԿ ԱՎԵՏԻՍԻ ՍԱՐՈՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1906 Թ., ՎԱՆ)

Ըստ անձնագրի ծնվել եմ 1906 թվին, բայց մայրըս ասում էր, որ ես ծնվել եմ 1907 թ., Խրիմյան Հայրիկի մահվանից հետո:

Այսօրվա պես հիշում եմ մեր տունը, որը գտնվում էր Վանա բերդի տակը, Ս. Նշան եկեղեցու մոտ: Մեր տունը երեք հարկանի շենք էր: Հիշում եմ իմ ընկերներին, որոնց հետ բարձրանում էինք բերդի բացատը և խաղում էինք: Հարուստ չէինք: Հիշում եմ Վանա գեղեցիկ ծովը: Հայրս ձեռքս բռնած տարավ ծով, որը շատ աղի էր, և ես քիչ էր մնում խեղդվեի:

Ցոթ տարեկան էի, երբ թուրք ոստիկանները գալիս, սպառնում էին, որ մեր զենքերը հանձնենք: Նրանք հաճախ գալիս էին և սպառնում հորեղբայրներիս և հորս:

Այդ ժամանակ վախճանվեց մեծ եղբայրս՝ Հարությունը: Մայրս ինձ տեղավորեց եկեղեցու մանկապարտեզը: Մի անգամ պիտի գնայի տատիկիս տունը, մեղուները ինձ խայթեցին: Մանկապարտեզում իմ դաստիարակն էր տիկին Մանկասարյանը, որն ինձ սովորեցրել էր գրագիտություն: Դպրոցում էլ դաստիարակվել եմ հայրենասիրության ոգով:

Հիշում եմ, փափախավոր հայեր գալիս էին մեր տունը և ժողովի էին նստում:

1914 թ. եղավ արևի խավարում: Հնչեցին եկեղեցու զանգերը: Ծատերը գուշակեցին, որ կռիվ է լինելու: 1915 թ. ապրիլի սկզբին թուրք ժանդարմները հրեշ Ջևդեթի ղեկավարությամբ հարձակվեցին Վանի վրա: Արդեն նախօրոք հավաքել էին բոլոր երիտասարդներին՝ իբր թուրքական բանակ են տանելու, բայց ճամփին կոտորել էին: Ղևոնդ հորեղբայրս կարողանում է փախչել այդ սպանվածների միջից:

Սկսվեց կռիվը: Հայերը լսել էին, որ թուրքերն ասում են. «Վանը թուրքերին պետք է մնա»: Մի քանի օր առաջ թուրքերն ու քրդերը հարձակվել էին քաղաքի հայերի խանութների վրա, թալանել էին: Վանում գործում էին դաշնակցական, ռամկավար և հնչակյան կուսակցությունները, որոնք վտանգը տեսնելով՝ միացան և հանդես եկան միասնաբար: Քաղաքում բերդի վրայից անընդհատ հրացաններով կրակում էին: Երկու հորեղբայրներս՝ Ղևոնդն ու Մարտիրոսը, սկսեցին մասնակցել կռիվներին: Մարտիրոսը ընտանիք ուներ, իսկ Ղևոնդը ամուրի էր: Նրանց հաց ու ջուր ես ու Վրույրը՝ Մարտիրոսի տղան, տանում էինք , որ ուտեն:

Մեր տան երրորդ հարկից հայրս հսկում էր, որ թուրքերը բերդից վար չիջնեն դեպի Քաղաքամեջ: Հայրս մեկ էլ տեսնում է, որ թուրքերը սկսեցին պարաններով իջնել: Հայրս սկսում է կրակել նրանց վրա, և թուրքերը աճից այլևս չեն իջնում: Ամեն ինչ ճակատամարտի համար էր: Խառնակոնիսից գաղթականներ էին գալիս և մտնում քաղաք՝ Այգեստան:

Մայիսի սկզբին սկսվեց թնդանոթների որոտը: Մեր տղաներին մեր մայրերը աղջկա շորեր էին հագցրել և երեսները ցեխոտել էին:

Թուրքերը նոր տեսակ թնդանոթներ էին օգտագործում, որոնք ականներ էին գցում մեր տների վրա: Դրանք երկար հավանգի ձև ունեին: Հաճախ չէին պայթում, մեր կանայք զգուշությամբ ականազերծում էին:

Մայիսի 5-ին, երբ հաղթանակը եղավ, թուրքերն սկսեցին փախչել նավակներով՝ ծովի վրայից: Նրանք փախցնում էին իրենց ընտանիքներին: Հաղթական վանեցիները մեծ նվագախմբով Այգեստանից եկան Քաղաքամեջ և միմյանց սկսեցին համբուրել:

Այգեստանը Քաղաքամեջից հեռու էր չորս-հինգ կիլոմետր տարածությամբ: Հետո ռուսական զորքը մոտեցավ Վանին: Հայրս ինձ բարձրացրել էր իր ուսին, որ ես լավ տեսնեմ: Վերջապես լսվեց ձիերի դոփյուն: Առաջին հերթին Վանին մոտեցավ Անդրանիկը, հետո՝ Դրոն, Համազասպը*, Գայը**: Անդրանիկը Վան չմըտավ, կռվից հետո վանեցիները սկսում են թալանել թուրքերի տները: Հայրս այդ թալանին չմասնակցեց: Այդ օրերին հայրս իմ ձեռքը բռնած բարձրացել էր բերդը: Մի բացատում հայրս տեսավ տասնհինգ հատ ձու: Թաշկինակի մեջ դրեց, տուն տարանք: Մայրս ծիծաղեց հորս վրա, թե՝ «Քարվան գնաց, փետուր բերեց», քանի որ ոչինչ էր այդ:

Կռվից առաջ թուրքերը տարել են Իշխանին և գիշերով սպանել են: Հիշում եմ Իշխանի թաղումը: Նա դաշնակցական խոշոր գործիչ էր և մասնակցել էր ֆիդայական շարժմանը: Իշխանի դիակը դրվեց Ս. Վարդան եկեղեցում, հոգեհանգիստ եղավ, իսկ տղան՝ «հոպ, հոպ կանեմ, թուրք կսպանեմ» ասում էր:

Հետո գեներալ Նիկոլաևը կազմակերպում է Վանի կառավարությունը, որը և սկսում է գործել:

Հուլիսի 15-ին գեներալ Նիկոլաևը պահանջում է, որ հայերը գաղթեն, որ թուրքական զորքը հսկայական ուժ է ստացել և հարձակման է պատրաստվում: Հայ ղեկավարները՝ Արամ Մանուկյանը և այլոք, հրաժարվում են գաղթել և ասում են գեներալ Նիկոլաևին. «Մենք առանց օգնության հաղթեցինք, մենք ունենք կամքի ուժ, որ պաշտպանենք մեր երկիրը», բայց Նիկոլաևը և Անդրանիկը, որպես ղեկավար, ռուսների հետ համաձայնվում են հահանջել: Տիրեց իրարանցում:

Երեք օր ժամանակ տվեցին: Ինչքան պղնձե կաթսա ունեինք, տարան լցրին հորերը: Էն հույսով, որ պիտի ետ գանք: Մայրս գաթա թխեց, հալվա սարքեց: Հայրս մի էշ գնեց, էդ էշին բարձեցինք մեր անկողինները, իսկ կովը սանձած տվին իմ ձեռքը: Մայրս ասաց՝ տունը վառենք: Հայրս ասաց՝ ետ պիտի գանք:

Սկսվեց գաղթը: Հասանք Ավանց նավահանգիստը: Այնտեղ տեսանք շատ դիակներ, որոնց սպանել էին թուրքերը: Հայրս տրեխներ էր կարել ու հագցրել էր ինձ: Վանեցիները արցունքն աչքերին հեռանում էին իրենց հայրենի օջախներից, բայց սարսափը պատել էր բոլորին, որ թուրքերը ուր որ է՝ գալու են: Էլ շենրի ոռնոց, մարդկանց բղավոց: Էդ աղմուկ-աղաղակի մեջ մեր էշը կորավ՝ հետը միասին մեր անկողինները:

Հասանք Աբաղայի դաշտը: Կողքից հոսում էր Բանդիմահու գետը՝ իր ահռելի հոնդյունով: Այնտեղ շատ մայրեր իրենց կրծքի երեխաներին նետում էին գետը, քանի որ կամրջի վրայից անցնելը շատ դժվար էր և վտանգավոր: Դրա համար էլ ասում են՝ Բանդիմահու գետը արյուն էր դարձել:

Քրդերը իջնում էին լեռներից, որ մեզ թալանեն: Մենք՝ արյունլվա ոտքերով, հոգնած, ուժասպառ, սոված քայլում էինք օր ու գիշեր: Հասանք Օրգով: Բայազեդից հետո մի բարձունք բարձրացանք, աչքս ընկավ Արարատ լեռան: Ես առաջին անգամ էի տեսնում այդ սուրբ լեռը: Մոռացա մեր անցկացրած դժվարությունները ու հոգնությունը: Ես հիշեցի Րաֆֆու խոսքերը. «Արդյոք կգա՞ ժամանակ, որ Արարատի գլխին ծածանվի հայկական դրոշակ»:

Կամաց-կամաց սկսեցինք իջնել դեպի ցած: Քրդերը հարձակվեցին մեզ վրա, սկսեցին կոտորել: Հայ երիտասարդները դիմադրում էին և մեզ պաշտպանում:

Հոծ գաղթականությունը վերջապես հասավ Իգդիր: Իգդիրցիները լավ չընդունեցին մեզ: Նրանք ջուր էին կապել, որ գաղթականներն իրենց այգիներում չնստեն և վեր կենան, գնան:

* Համազասպ (Համազասպ Սրվանձտյան) (1873, Վան – 1921, Երևան) – ազգային ազատագրական շարժման գործիչ:

** Գայ (Հայկ Բժշկյան) (1887, Թավրիզ – 1937) – ռուսական ռազմական գործիչ:

մտնում եմ վան, որտեղ կազմակերպում եմ կառավարություն:

Մայրս մեզ տեղավորում է Իգդիրում, որտեղ ես տիֆով հիվանդացա:

Լսեցինք, որ հայ գաղթականներին պիտի ուղարկեն Սիբիր: Դրա համար էլ հայ գաղթականներից շատերը գնացին Կրասնոդար կամ արտասահման: Էջմիածնի պատերի տակ, լճի ափին հայ գաղթականությունը ծվարած էր: Խոլերան, տիֆը ճնճղում էին բոլորին: Մայրերը առանց պատանքի թաղում էին իրենց երեխաներին: Մայրս մի փուրգոն է վարձում, և մենք գալիս ենք Երևան: Հետո Ս. Սարգիս եկեղեցու մոտ տեղավորվեցինք: Տատս չկա, մայրս՝ նոր էր ազատվել, գաղթի ճամփին ծնվել էր մի աղջիկ, որը հիվանդ էր և պիտի մեռներ: Ասացին՝ եթե չկնքվի, չենք թաղի: Ս. Սարգիսում կնքեցինք, անունը Դժբախտ դրեցինք, քանի որ հայ ժողովրդի դժբախտության մեջ էր ծնվել:

Հետո ես ինչ ասես՝ չեմ արել: Աստաֆյան փողոցում սառը ջուր եմ ծախել, ռուս հրամանատարներին ջուր եմ տվել: Նրանք կոտրեցին իմ բաժակը և կուլան: Ես սկսեցի լաց լինել: Մի աղջիկ եկավ, ինձ հարցրեց, թե ինչու՞ եմ լալիս: Ես նրան պատմեցի: Նա ինձ մեղքացավ, տարավ «Լույս» տպարան, աշխատանքի ընդունել տվեց: Ես խազեինի տնից ճաշ էի տանում, որ ուտի: Սովորեցի, դարձա գրաշար:

Սարդարապատի ճակատամարտի ժամանակ լուր եկավ, որ թուրքերը գալիս են, փակել են Քանաքեռի ելքը. հայրենիքը վտանգի մեջ է, ով ինչով կարող է՝ թող օգնի:

Նազարբեկյանի, Սիլիկյանի, Դրոյի կովողները հաղթում են: Եթե Անդրանիկը Ջալալօղլիից միանար՝ ճիշտ կլիներ: Հայաստանում 1918 թվի մայիսի 28-ին դաշնակցական կառավարություն է հիմնադրվել:

Ինձ որպես դաշնակցական տրոցկիստ 1937 թ. բռնել են: Իմ գործը քննվեց Մոսկվայում: Մի քանի ժամվա մեջ մի քանի հոգու մեղադրեցին, բայց կեղծիք էր. վկաներին էլ սպառնացել էին, նրանք էլ վախից ստորագրել էին: Վաթսունյոթ հոդվածի առաջին մասով ինձ դատապարտեցին հինգ տարի ժամկետով: Բանտի ճակատին գրված էր՝ «Ով չի տեսել, նա՝ կտեսնի, ով տեսել է՝ չի մոռանա»: Ես էնտեղ հիվանդացա, ինձ տարան հիվանդանոց:

Հետո վերադարձա, որպես պոլիգրաֆիստ աշխատեցի: Պարգևատրվեցի: Մասնակցել եմ Հայրենական մեծ պատերազմին, ստացել եմ շքանշաններ: Հիմա թոշակառու եմ:

34 (34).
ՄԱՔՐՈՒՀԻ ՄԻՀՐԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ՎԱՆ, ԲԺՆԿԵՐՏ Գ.)

Ես ծնվել եմ Վանի Բժնկերտ գյուղում, 1907 թվին: Մերոնք շատ հարուստ են եղել: Մեր տունը միշտ լիքն էր: Հսկայական հողեր ունեինք, որոնք վարում, ճնճում էինք, յոթաչքանի ջրաղաց ունեինք, հազարավոր անասուններ ունեինք: Մեր տանը կաթը լիքն էր, ջրի տեղ էինք խմում:

Հորս անունը Ռաֆիկ էր, Ռաֆո էինք ասում: Հերս չորս տղա է ունեցել, երկուսը մահացել են:

1915 թվին մի պայծառ առավոտ շուտ կոտոմասս վերցնում է կուժը, որ իջնի Շամիրամի աղվից ջուր բերի: Հորեղբորս կինը էդ օրը հաց էր թխում: Մերս հեռվից տեսնում է մոտեցող ձիավորներին՝ ձեռներին սվիններ արևի տակ փայլփլում էին: Մահր ու պետ վանեցիները կտուրների վրա նայում են: Թուրքերը եկել կոլոնվել են մեր գյուղը, շրջապատել են, հանդիպած մարդկանց խփել, սպանել: Մերս, որ հեռվից տեսնում է էդ իրարանցումը, կուժը կոտրում է, վազում է տուն: Տեսնում է՝ թուրքերը լցված են մեր տունը: Շուռ են տվել հացի խմորը գետնին, ամեն ինչ իրար խառնված: Երկու հորեղբորս կնիկներին և յոթ երեխեքին լցնում են մարագը: Իմ հորեղբոր կինը դուրս է փախչում երեխաների ձեռքին, նրան բռնում սպանում են: Ես ինքը տարեկան մի ախպեր եմ ունեցել՝ Մովսես անունով: Բեկի կնիկը տանում պահում է նրան. մենք էլ չտեսանք, տարան նրան թուրքացրին:

Գեղեցիկ աղջիկներին գցում էին ձիու թարկը, տանում էին: Երեխեքին սվինների վրա հանում, գցում էին գետին՝ սպանված: Մորը գցում էին ձիու թարկը տանում: Մերս իր երեխաները գրկում է, գնում է քեռու տունը: Ջահել հարսներին, որ ընկնում էին թուրքերի ձեռքը և չէին ենթարկվում նրանց, կուրծքը կտրում էին, գցում էին շներին: Իմ մի հորեղբորս խփել, գցել են Շամիրամի գետը: Մանուկ հորեղբորս էլ նմանապես սպանել են սարսափելի ձևով:

Էդ բոլորը ես տեսել եմ իմ աչքերով, ու ամբողջ օրը մինչև հիմա աչքերիս առաջն է:

Ես եմ եղել, Վարդանուշ քույրս, Ենոքը՝ հորեղբորս տղեն, հորեղբորս կնկան՝ Հասմիկին, սվինով սպանեցին մեր տան շեմին, հրացանի կոնդախներով խփում, գցում էին գետնին: Քանի որ ընտանիքի հարընտությունը մեծ հարսի ձեռքին էր լինում, էն էլ կապված էր նրա մեջքին, նրան սպանեցին, հաց թխելու թևնոցները ճղճղեցին, շորերը ճղճղեցին, մեջքին կապած ոսկիները գտան, հանին, առին ու գնացին:

Մենք՝ երեխեքս՝ Հայրոն, Նշանը, Ենոքը, Վարդանուշը և ես, մնացինք հորեղբորս կնկա՝ Պայծառի հույսին: Հորեղբորս չորս տղերքին մեր աչքի առաջ սպանեցին՝ Պետրոսին, Հմայակին, Հարությունին, Մեսրոպին:

Հորեղբորս կնիկը՝ Պայծառը, մեզ վերցրեց, մարագի մեջ մտանք: Թուրք հարևանի կնիկը դարմանը լցրել էր մեզ վրա, որ մեզ չգտնեն ու չսպանեն: Մեր

հարևանի ութ տարեկան աղջկան, որը ծնողների կողքից հեռացել էր, թուրքերը երեք հոգով բռնաբարեցին հենց բակում: Մենք դեզի միջից տեսնում էինք: Եվ նա մեկ ժամ հետո մահացավ:

Էն մյուս օր գիշերը էդ թուրքի կնիկը մեզ՝ հինգվեց երեխեքիս, տարավ իր տունը, կերակրեց, պահեց ու գիշերով մեզ ուղարկեց Վան: Մենք էնտեղ մնացինք մինչև սկսվեց գաղթը: Մենք Պայծառի՝ հորեղբորս կնոջ և Ատոմ քեռուս հետ, որը Անդրանիկի զորքից էր, գաղթել սկսեցինք: Ճամփին երկու կողմը սար էր, երկու կողմից ջարդում էին. որը մտել էր ձնասունի տակը՝ փախել էր: Վերջապես գնացինք, հասանք Բանդիմահի կամուրջի մոտ, էդտեղ համարյա ժողովուրդ չմնաց. եզների վրա սայլերի մեջ երեխեքին դրել էին, սայլերը շուռ էին գալիս գետի մեջ: Որին սպանում էին, որն էլ իրան գցում էր ջուրը: Ժողովուրդը մի յանից փախչում էր, մի յանից ետևը նայում, որ տեսնի թուրքերը ետևից չե՞ն ընկնում:

Հասանք մի դաշտ: Ո՛րն սկսեց օջախ անել, ո՛րը սաճի վրա հաց եփել: Սոված ենք ու ծարավ: Ով ուժասպառ է լինում, մնում է գետնին ընկած, մնացածը շարժվում են առաջ:

Եկանք հասանք Իգդիր, բայց էնտեղ չմնացինք: Տանջանքով, տառապանքով եկանք, հասանք Էջմիածնի մոտ: Փոքր հորեղբայրս՝ Մանուկը, խոլերայից մեռավ: Մեկ էլ մեկը ձեռ է տալիս. - Բժնկերտ գյուղից ո՞վ կա...

Հորեղբորս կինը ասաց. - Ա՛րի՛, Ատո՛ւմ, գնանք:

Մեզ հավաքեցինք: Ես, հորեղբորս տղերքը՝ հինգ երեխա, եկանք Էջմիածին: Ճեմարանի շենքը մեր առաջին մահկատուն եղավ: Էլ չեմ հիշում: Հետո մեզ տարել են Դիլիջան:

Հորեղբորս կնիկը Արշալույսին ու Ներսեսին վերցնում է, դրանք մեծ էին, առնում գնում է:

Մահկատանը մեզ պահեցին: Բայց Էնքան միջոց չկար: Հեռագիր են տալիս Ամերիկա: Միստր Նելսոնը, միսս Քըմբըլը եկան, հայ որբերին հավաքեցին, տարին Ալեքսանդրապոլ, կազարմաների մեջ մտցրին:

Էնքան շատ էինք, որ մի տեղաշորի վրա երկու հոգի էինք քնում, երկու հարկանի մահճակալներ էին: Մեզ մթերքով ապահովեցին, հագցրին: Ամերիկացիները մնացին մեզ մոտ: Մեզ խնամում էին տիկին Թագուհին, տիկին Նվարդը, օրիորդ Մաքրուհին, Շուշանիկը, Գոհարը, բոլորն էլ վանեցի էին: Մայրապետները մեզ լողացնում էին: Ամերիկացիների վրա երգ էին հնարել.

- Հեռագիր տվին Ամերիկա,
Միստր Բրաունը եկավ,
Որբերին հավաքեց
Չթողեց ոչ մեկին
Անտեր, անպաշտպան:

Ես այնտեղ լավ էի սովորում: Արդեն գիտեի անգլերեն, ռուսերեն: Միստր Բրաունը մի օր ինձ կանչեց, ուզեց ինձ Ամերիկա ուղարկել: Բայց ես չհամաձայնվա:

Մեր գերդաստանից շատ քչերը հասան Հայաստան: Հորեղբորս աղջիկը՝ Արշալույսը, պատմում էր, որ իր ամուսինը՝ Սահակը էդ առավոտյան շատ շուտ, ժամը յոթին գնացել էր կովերին ճանապարհ դնելու: Վերադարձին թուրք հարևանը զգուշացրել է. - Սահա՛կ, օղլու՛մ, չգնաս ձեր բակը. թուրքերը եկել, մտել են ձեր բակը, սպանում են բոլորին:

Սահակը մտնում է դեզի մեջ, նայում, թե ի՞նչ է կատարվում իրենց բակում: Եվ տեսնում է, որ իր հորը անկողնից հանեցին թումբանով, բերեցին երեք տղաներին կապկպված և հորը ստիպում են, որ ինքը իր տղաներին սպանի: Հայրը չի կրակում: Թուրքերը նրան էլ են կապում ծառից: Երեք տղաների ատամները քաշում են ճակատներին խփում, եղունգները քաշում են, երեսները սվիններով ճղճղում են ու երեքին էլ էդ ձևով տանջամահ են անում, հետո էլ հորը սպանում են:

Սահակը էդ բոլորը տեսնում է իր աչքերով, խոտի դեզի մեջ ուշքը գնում է: Լուսադեմին թուրք հարևանը գալիս տանում է Սահակին ու թաքցնում: Սահակը էդպես ազատվում է, գալիս է Երևան:

1965 թվին Սահակը երեք ոչխար մատաղ արեց իր երեք եղբայրների և իր հոր հիշատակի համար, հոգեհաց տվեց:

35 (35).
ԱՐԾՐՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ՎԱՆ)

Ծնվել եմ Վանի Այգեստան թաղամասում: Հայերը Վանում զբաղվում էին արհեստներով՝ դերձակ, ոսկերիչ, հյուսն, ծաղկագործ: Իմ հայրը դերձակ էր, տղամարդկանց համար շորեր էր կարում:

Վանում կային երեք-չորս հարկանի շենքեր: Ծնողներս ունեին յոթը զավակ: Ունեին նաև երկու կով, մի այգի՝ ընկույզի և այլ ծառերով:

Ֆիդայական շարժումներն ուղղված էին անարդարության, կողոպուտի, հալածանքի դեմ: Հայրս հրացաններ ուներ ցախատանը: 1915 թ. վանեցիները կարողացան պաշտպանվել շնորհիվ իրենց զենքերի: Ինքնապաշտպանությունը ծնվում է, երբ ժողովրդի նկատմամբ բռնություն է լինում:

Գաղթի ճանապարհին, Բանդիմահի կամուրջով անցնելիս, թուրքերը քարաժայռերի ետևից կրակ մաղեցին մեզ վրա: Դա մի սոդոմ գոմոր էր: Մենք մի քանի փոքրիկներով սայլերումն էինք: Մի փոքրիկ մեր աչքի առաջ արյունոտվեց ու գլուխը թեքեց, անշարժացավ: Մենք չզգացինք, որ նա սպանվեց:

Ութսունն անց եմ և զգում եմ, որ այդ նահիճը ծրագրված էր: Ովքեր ողջ մնացին այդ դժոխքից, ընդամենը երեքը չեն մոռանա իրենց աչքերով տեսածները:

Իգդիրում հայրս գտավ մեզ: Եկանք Էջմիածին: Ամբողջ Էջմիածինը լցված էր գաղթականներով: Վանքի պատերի տակ, լճակի ափին մեռնում էր մի ամբողջ ժողովուրդ: Մենք երկար չմնացինք Էջմիածնում: Եկանք Երևան, որտեղ մաճացավ իմ երկու տարեկան եղբայրը: Մենք մեկնեցինք Թիֆլիս: Ամբողջ ճանապարհին ճպոտած աչքերս կուրացել էին: Թիֆլիսում մեզ ապաստան տվեց հորեղբորս տղան: Մեր ընտանիքից մնացել էինք ես, Վարազդատը և մայրս: Հայրս մեռավ Արամյան հիվանդանոցում: Փոքր քույրս՝ Արփենիկը, որը մեկ տարեկան էր, մաճացավ տիֆից: Մեծ քույրս՝ Արաքսիս ևս: Նա մի փոքրիկ աղջիկ ուներ, որը որբ մնաց: Մեր փեսան ամուսնացավ իմ մյուս քրոջ՝ Սիրանուշի հետ, որ երեխային խնամի, ու նրանք գնացին Եգիպտոս բնակվեցին: Մեր ինը հոգիանոց ընտանիքից մնացինք երեք հոգի: Մեր կոտորածն էլ տարափոխիկ հիվանդությունների համաճարակից եղավ արդեն այս կողմում:

Մենք որբանոցում մնացինք մինչև 1918 թիվը: Էնտեղ էին նաև ապագա բանաստեղծ Վաղարշակ Նորենցը, Ազատ Վշտունին, Նորայր Դաբաղյանը: Որբանոցում ես տառաճանաչ դարձա: Մի գիշեր լսեցի, որ մեր որբանոցը փոխադրում են Կարս, որտեղ ստեղծել էին մանկական կացարան: Այնտեղ մեր որբերը շատ կորուստներ ունեցան: Խեղճ մայրս լվացք էր անում: Ես փողոցում կոշիկ էի մաքրում, ջուր էի ծախում: Ես կառչում էի վագոնին, գնում էի գյուղ:

1928 թ. դարձա Լենինականի պետական թատրոնի սկսնակ դերասան: Մոավյանը ղեկավարում էր այդ գործը: Դրա համար Մոավյանի անվան թատրոն կոչվեց: Այդ թատրոնը ինձ շատ բան տվեց: Ես ընկիրվեցի թատրոնին: Թատերական արվեստի միջոցներով ես պետք է ծառայեի իմ ժողովրդին:

Տարիների ընթացքում դարձա վաստակավոր արտիստ, ժողովրդական արտիստ: Հայրենական պատերազմի օրերին ինձ վստահվեց թատրոնի տնօրենի պաշտոնը:

Ես շատ եմ մտածել հայկական ցեղասպանության մասին և զարմանում եմ, որ կան պետություններ, որ չեն ընդունում հայոց ցեղասպանությունը:

Շատ եմ երազել գնալ, տեսնել մեր Վանը: Հիշում եմ մեծ ջրամբարը, որը ջրում էր Այգեստանի այգիները: Ես ուզում եմ տեսնել, թե ո՞վ է այն մարդը, որ առանց քրտինք թափելու վայելում է մեր տոհմական վաստակը:

Ո՛վ արդարություն, թող որ թքնեմ քո ճակատին:

36 (36).
ԵՐՎԱՆԴ ՍԻՄՈՆԻ ՇԻՐԱԿՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ՎԱՆ)

Իմ հոր անունը Սիմոն էր, մորս՝ Աղավնի, քույրերինս՝ Վարսենիկ և Փրկուհի, ունեի նաև մի եղբայր՝ Հրանտ անունով:

Հայրս կոշկակար էր, միաժամանակ կոշիկ կարել է տվել և վաճառել: Նա ուներ մի քանի խանութ: Մենք շատ լավ ապրում էինք:

Հայրս ինձ ֆայթոնով էր մանկապարտեզ տանում:

1914 թ. դպրոց հաճախել սկսեցի: Բայց 1915-ի ապրիլին արդեն դպրոց չկար, որովհետև սկսվել էր Առաջին համաշխարհային պատերազմը, և թուրքերը հարձակվել էին մեզ վրա: Բոլոր հայ տղամարդկանց թուրքական բանակ էին տանում, բայց հորս չտարան, քանի որ նա թուրքերին կոշիկ էր մատակարարում:

1914-ին, երբ պատերազմը սկսվեց, Արևելյան Հայաստանը և Թիֆլիսի հայերը կամավորական զորք կազմեցին և միացան ռուսական բանակին: Թուրքերը իրենց բանակում ունեին վաթսուն հազար հայեր: Այդ որ իմացան, իրենց բանակի հայերին բանակից հանեցին, կազմեցին ոաբոչի բաթալիոն և սկսեցին նրանց կոտորել:

Երբ լուրը հասավ Վան, վանեցիները կազմեցին Ռազմական խորհուրդ և պարիսպավորեցին Վանը, դիրքեր սարքեցին: Իսկ Վանի մեջտեղում կար թուրքական դշլա: Վանեցիները այն վառեցին և մեջտեղից վերացրին:

1915 թ. ապրիլի 6-ից մինչև մայիսի 4-ը մենք պաշտպանվում էինք շատ հաջող: Մայիսի 4-ին ռուսական զորքը մտավ Վան, որի մեջ էր վեց հազար հոգուց բաղկացած հայկական բանակը՝ Զորավար Անդրանիկի ղեկավարությամբ: Ռուսական ղեկավարությունը ընտրեց Վանի ղեկավար Արամ Մանուկյանին: Այսպես ապրեցինք մինչև հուլիսի սկիզբը: 1915 թ. հուլիսի սկզբին ռուսական ղեկավարությունը կարգադրեց հայերին գաղթել:

Վանեցիները ընդհանուր ժողով կազմակերպեցին, որտեղ բուռն ելույթներ ունեցան երիտասարդները, որոնք չէին համաձայնվում գաղթել, բայց և այնպես մեծերը համաձայնվեցին:

Հայրս մի էշ գնեց, մեր ուտելիքները բարձեցինք վրան, իսկ եզի վրա մեր վերմակներն էին:

Մեր գերդաստանից մեզ հետ էր քեռիս, որը ամուսնացած չէր, և մյուս քեռիս՝ իր առանձին ընտանիքով եկավ, ինչպես և հորեղբորս ընտանիքը: Քույրս՝ Փրկուհին երեք ամսական բարուրի մեջ էր: Ես, չորս տարեկան Հրանտ եղբայրս ուսիս դրած էի, իմ մազի միջով անցավ պատրոնը մտավ եղբորս մարմինը, և նա մահացավ:

Մենք գաղթեցինք, երբ ճանապարհին անցանք Բերկրիի կամուրջը, որի անունը Բանդիմահի կամուրջ էր, հայտնեցին, որ քրդերը հարձակվել են մեզ վրա: Քրդերին սովորեցնում էին թուրքերը, որ մեզ կոտորեն: Նրանք էլ երբ հայ էին տեսնում՝ կոտորում էին:

Էշի վրա քույրս էր նստած, ես ետևը: Էշը մտավ ջուրը, թափ տվեց, ես ընկա ջուրը: Հազիվ ինձ ջրից հանեցին:

Մի կերպ հասանք Իգդիր: Մի ոչխար մորթեցինք, եփեցինք, կերանք: Հայրս մի սալլ վարձեց, և մենք լցվանք մեջը, եկանք Երևան: Մեկ սենյակի մեջ երկու ընտանիք էինք՝ ութը հոգով:

Հայրս վերադարձավ Վան: Իր կաշիների խանութը լրիվ թալանել էին, բայց ռուսները արդեն գրավել էին Վանը: Հայրս եկավ, որ մեզ տանի Վան, բայց արդեն Վանը թուրքերին էր անցել: Մենք տեղավորվանք Երևանում: Ես սովորեցի, հետո գնացի Մոսկվա սովորեցի, դարձա ինժեներ, կառուցել եմ կառուչուկի գործարանը և մի քանի ուրիշ բնակելի շենքեր եմ մոնտաժել: Հիմա էլ թոշակառու եմ դարձել:

37 (37).
ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ՎԱՆ, ՀԱՅՈՑ ՁՈՐ, ՀՆԴՍՏԱՆ Գ.)

Մեր նախնիները ապրել են Վանի նահանգի Հայոց ձոր գավառի Հնդստան գյուղում: Այն տարածվում էր կիսաարթավայրի վրա, Խոշաբ գետից մեկ կիլոմետր հեռավորության վրա: Այդ պատճառով էլ մեր գյուղը հյուսիսից և հարավից ճյուղավորած Խոշաբ գետի ջրերը դարձրել էին Հնդստանը ջրառատ և բարեբեր: Գյուղը ուներ շատ պտղատու այգիներ, այդ թվում նաև խաղողի, բայց թուրքական կառավարության տակ գտնվելով՝ հայերի իրավունքը ոտնահարված էր: Դրա համար էլ քրդական բաշիբոզուկների պատճառով որոշ այգիներ ամայացել էին: Նույնիսկ այգու տերը՝ հայ շինականը, ձեռք էր քաշել այն մշակելուց: Մեր գյուղին պատկանող հողային սահմանը բաժանված էր երկու մասի՝ դաշտային, ուր ընկած էին այգիներն ու բանջարանոցները, և լեռնային, ուր բարենպաստ կլիմայի պատճառով գյուղի բնակչությունը զբաղված էր խաշնարածությամբ:

1913 թ. մարդահամարով գյուղը կազմում էր երեսունյոթ տնտեսություն, որից յոթը՝ քրդեր էին, իսկ երեսունը՝ հայեր:

1894 թ. Սասունի կոտորածի ժամանակ, սուլթան Համիդի թուրք ջարդարարները արշավում են նաև մեր գյուղը՝ ցանկանալով ավերել այն: Իմ պապի ընտանիքը կազմված է եղել տասնմեկ անձից: Թուրք և քյուրդ հրոսակախմբերը՝ մտնելով Հայոց ձոր, սկսում են հերթականությամբ ավերել անպաշտպան գյուղերը: Մեր գյուղը գտնվում էր ամենավերջում: Նախորդ կոտորված գյուղերից հրաշքով փրկվածները լուրը հասցնում են: Մեր գյուղացիները լսելով՝ որոշում են փոքր երեխաներին բարձրացնել լեռնային անմատչելի վայրերը և թաքնվել: Իրենք դիմում են ինքնապաշտպանության, դիմադրելով թուրք ջարդարարներին, հույս ունենալով, որ երեքից հինգ օր կկարողանան դիմանալ, և թուրքական կառավարությունը ջարդարար թուրքերին ու քրդերին ետ կկանգնեցնի իրենց արարքներից: Սակայն թուրք իշխանությունը շատ լավ գիտեր կատարված դեպքերը հայկական գյուղերում և դիտավորյալ իրեն անգետի տեղ դնելով, կոտորել էր տալիս հայերին: Իհարկե, սա առաջին դեպքը չէր: Այդպիսի դեպքեր շատ անգամներ էին եղել: Թուրքական կառավարությունը սպասում էր, որ հայերի մի սերունդ աճի, աշխատի, երկիրը գեղեցկացնի և մի չնչին պատճառ բռնելով, մեկ անհատի չենթարկվելու համար, պետական գործիչները՝ գաղտնի կապվելով քյուրդ ցեղապետերի հետ, հրահրում էին քյուրդ ավազակներին՝ թալանելու հայերին պատկանող անասնահոտերը կամ թե գողանալ այգու պտուղները, կտրել ծառերը, ոչնչացնել տուն-տեղն ու ունեցվածքը:

Ահա այսպիսի մի բաժին էլ հասավ մեր գյուղին: Եվ մեր գյուղը դիմադրեց: Բայց ինչ կարող էին անել քսան-երեսուն հոգին թուրք և քյուրդ խաժամուժի դեմ: Նրանք մեր գյուղի բնակչությանը բռնի լցնում են տները, այրում թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց՝ չխնայելով ծծկեր մանուկներին:

Թուրք ենիչերին՝ սունգիի ծայրին անցկացնելով երեխային, գցում էր հինգ-տասը մետր հեռավորության վրա և կանգնում ու հիանում էր իր արածով: Այս կոտորածի ժամանակ էլ զոհվել է իմ պապի ընտանիքից ինը հոգի: Երկուսը մնացել են կենդանի՝ մի քույր և մի եղբայր: Նրանցից մեկը ութը տարեկան, մյուսը՝ տասնըչորս: Տղան՝ Գևորգը լինում է իմ հայրը, իսկ քույրը՝ Ոսկեհատը՝ Կակոն, իմ հորաքույրը: Այսպիսով իմ պապը քառասունհինգ տարեկան հասակում զոհվում է:

1908 թ. թուրքական իշխանությունը հայերի ուշադրությունը շեղելու նպատակով, հրապարակեց իր «Սահմանադրությունը», իբր ազատություն է շնորհում բոլորին:

1907 թ. ծնվել եմ ես, բայց իմ հայրը՝ Գևորգը, լինելով քսանհինգ տարեկան առույգ երիտասարդ, դառնում է ֆեդայի՝ իր նահատակ հարազատների վրեժը լուծելու նպատակով: Նա խանի խմբի հետ կռվում է և շուտ մեռնում:

1914 թ. պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը, որի մեջ ներքաշված էր նաև Օսմանյան կառավարությունը: Ոչ մի հայկական գյուղ, տուն զերծ չմնաց այդ պատերազմի արհավիրքից: Թուրք կառավարությունը բոլոր զինապարտներին տանում է ամիլե թաբուրներ (աշխատանքային գումարտակ):

Հորաքույրս՝ Կակոն, որպես ապահովություն ինձ ու մորս ուղարկում է Վան քաղաք, որտեղ մորս հորեղբայրն էր ապրում:

Ռուս-տաճկական պատերազմին Վանի փոխար-

քան էր Ջևդեթ փաշան: Նա Խալիլ փաշայի հետ կապ պաշտպանելով՝ պայմանավորված էր, հենց որ Խալիլ փաշան գրավեր Պարսկաստանի Դիլմանը, Թավրիզը և Խոյը, որոնք ռուսական ցարական բանակի՝ Զեռնոզուբովի հրամանատարությամբ պահպանվում էին, եթե Խալիլ փաշային հաջողվեր իրագործել իր այդ ռազմական ծրագիրը, որը ստացված էր Գերմանիայից, ապա Ջևդեթը պետք է Վանի ճահճագի մեջ մտնող բոլոր հայկական գավառներում ապրող հայերին արժանացներ այն բախտին, ինչին արժանացան Դեր Զորում զոհված մեկուկես միլիոն հայերը:

Վանի ճահճագի հայ հեղափոխական մարմինները, գլխավորությամբ Արամ փաշայի, Իշխանի, Վռամյանի, Վարդանի, կոահելով Ջևդեթի խորամանկ պլանները, նախօրոք գավառների հայությունը փոխադրելով Վան, գլխավոր պաշտպանության վայրը ընտրելով Այգեստան թաղամասը, սկսեցին ուժեղ պաշտպանական միջոցների դիմել՝ մինչև որ կհասնեն հայ կամավորական և ռուսական բանակը: Ջևդեթը մտածելով, որ Խալիլը բարեհաջող հասել է Դիլման, հրաման տվեց Վանում կանգնած թուրք զորապետերին կատարեն իրենց չարագործությունը: Սակայն վանեցիները իրենց գավառների գյուղացիների հետ լավ կազմակերպված սկսեցին հակահարված տալ թուրքական զորքին: Ապստամբությունը տևեց մեկ ամիս: Կատարված հերոսությունները շատ ու շատ էին:

Այդ պաշարման ժամանակ մենք Վան քաղաքում էինք: Մեզ հետ էին նաև մեր մյուս ազգականները, այնպես որ, հյուսիս մորեղբայր Վարդանի տանը բնակվում էինք քառասունհինգ հոգի: Ամառ էր: Քնում էինք բակում: Մեր սննդամթերքը սպառվեց շատ շուտ: Քաղաքի և գյուղի միջև կապը կտրված էր: Ջևդեթի զինվորները փակել էին ճանապարհը: Բայց իմ ճարպիկ հորաքույր Կակոն, տղամարդու շորեր հագած, հրացանով զինված գնաց գյուղ և մեկ օրից վերադարձավ՝ իր հետ բերելով երկու եզներ՝ բարձած ցորենով: Այդ սննդամթերքով մենք մեր գոյությունը պահպանեցինք մինչև Վանի ազատագրումը:

Վանի ազատագրումից հետո մենք նորից վերադարձանք գյուղ: Նորից սկսվեց ստեղծագործ աշխատանքը՝ հույս ունենալով, որ այլևս տեղաշարժ չի լինելու: Հայ կամավորական խմբերը՝ Անդրանիկի և Նազարբեկովի, ռուսական բանակների հետ անցան մինչև Բիթլիս, Էրզրում: Թուրքական զորքը ճահճեց՝ թողնելով չորս վիլայեթներ:

Վերադառնալով գյուղ, հորաքույրս՝ Կակոն, սկսեց իր տնտեսական խաղաղ աշխատանքը: Ես ու մայրս էլ ապրում էինք՝ հույսներս դնելով Կակոյի վրա:

Անդրանիկի գալու ժամանակ Կակոն քրդերի գյուղերից թալանեց հինգ հարյուր ոչխար, տասնհինգ կով և չորս եզ, երկու ձի՝ այդպիսով իր վրեժը լուծելով իր ճահատակների հիշատակի համար:

Մի քանի ամսից ընդհանուր հրաման եկավ՝ լրիվ կերպով ճահանջել մինչև Իգդիր, Երևան:

Գաղթը աճավոր զրկանքներ ու տանջանքներ բերեց մեզ: Կակոն, մայրս և ես (այդ ժամանակ վեց-յոթ տարեկան էի) գաղթեցինք: Հիշում եմ այն տանջանքները և մինչև հիմա, երբ արդեն վաթսուն տարեկան եմ, դարձյալ չեմ կարող մոռանալ: Ամբողջ Վանի ճահճագի բնակչությունը իր ունեցած փոխադրական միջոցները գործի դնելով՝ սկսած սայլերից, բարձկան չորքոտանի անասուններից, մինչև մարդկանց շալակը բարձած այն, ինչը իրենց համար թանկ է և անհրաժեշտ՝ հետացավ: Իսկ մնացած ոչխարի հոտերը և նախիրը, յուրաքանչյուր գյուղում թողած առանձին վստահելի մարդկանց, մնացած գույքն էլ թողնելով հորերում, հույս ունենալով, որ նորից կվերադառնանք, բռնեցինք գաղթի ճանապարհը:

Անցնելով Խոշաբ գետը, բարձրացանք Վարք լեռան արևմուտքի լեռնաշղթայով, ուղղություն վերցրինք հյուսիս, դեպի Վան: Քաղաքից դուրս գալով՝ ճանապարհը ձգվում էր Վանա լճի երկարությամբ, դեպի հյուսիս-արևելք, մինչև Բերկրի կոչվող գյուղը, որից հետո մտնում Բերկրիի Գայլի կոչված կիրճը, որի միջից հոսում է Բանդիմահի գետը: Այն հոսելով հյուսիս-արևելքից՝ թափվում է Վանա լիճը: Հինգ օր քայլելուց հետո լուրեր տարածվեցին, որ գիլան կոչված քրդական ցեղերից որոշ ավազակախմբեր եկել են Բանդիմահի գետի կամուրջը գրավել, որպեսզի կարողանան թալանել Վանից փախած հայ գաղթականներին՝ նկատի ունենալով, որ վանեցիները հարուստ են, շատ ոսկի ու թանկարժեք իրեր ունեն, նաև շատ ոչխարի հոտեր ու նախիրներ:

Այսպես հայ գաղթականությունը գավառ առ գավառ, գյուղ առ գյուղ, իրենց հարևզատներով ու բարեկամներով դանդաղ շարժվում էր՝ առանց իմանալու վերահաս վտանգը: Գաղթականների որոշ մասը կամուրջն անցնելով՝ հասել էր Բերկրի բաց դաշտը, իսկ մյուս մասը դեռ դանդաղ առաջանում էր. կամուրջը նեղ լինելու պատճառով հերթով էին անցնում:

Արևնամուտ էր: Հանկարծ կիրճի հարավային կողմից լսվեց հրացանների կրակոց, և զիլանցի քրդերի լոլոն հնչեց՝ խփե՛ք, հա՛յ խփե՛ք: Նրանք կամուրջի ելքը կտրեցին: Ոմանք էլ քարավանի ետևից եկողների ճամփան կտրեցին, իսկ զիլանցիների որոշ մասը թաքնված ժայռերի հետևում՝ կրակում էր անցնող գաղթականների վրա՝ հույս ունենալով, որ նրանք անցնելով ինքնապաշտպանության՝ կթողնեն իրենց ունեցվածքը և իրենք էլ կհափշտակեն: Սակայն Վանի ճահճագի հերոս ժողովուրդը, որը կարողացել էր մինչև այդ պաշտպանել իր պատիվը համիդյան ավազակախմբերից, մեծ զոհեր տալով չհուսահատվեց: Բայց եղան նաև մարդիկ, որոնք իրենց նետեցին Բանդիմահիի սրընթաց ալիքների մեջ՝ հույս ունենալով անցնել մյուս ափը, սակայն ալիքները տարան նրանց:

Զինված գաղթականները անմիջապես դիրքավորվեցին: Սակայն քրդերը նախօրոք մտածված ամրացել էին քարաժայռերին, ունենալով բարձր դիրք և միևնույն ժամանակ անտեսանելի կրակում էին անզոր գաղթականների վրա: Շատերը զոհվեցին: Զոհվեցին նաև անասունները: Այսպես տևեց երկու ժամ, մինչև որ օգնության հասավ Բերկրի գյուղում հանգստացող կազակական մի կայազոր: Կամուրջն ազատվեց: Այդ գիշեր առանց հանգիստ առնելու գաղթականությունը շարունակեց իր ճանապարհը:

Կարծես բախտը մեզ ժպտաց: Կակոն, լինելով ճարպիկ, գյուղի մի քանի երիտասարդների հետ զբաղված էր անասունների խնամքով: Իսկ ես և մայրս մեր եզները բարձած, գյուղացիների հետ շարժվում էինք առաջ: Հասնելով Բերկրի՝ մեզ այլևս թույլ չտվին առաջ գնալ, կայազորի հրամանատարը հաղորդեց, որ օգնական ուժեր են ուղարկել, մի քանի ժամից ճանապարհը կազատվի: Մի գիշեր մնացինք Բերկրիում: Հաջորդ առավոտյան շարունակեցինք մեր ճանապարհը: Մինչև մեր շարժվելը հասավ նաև Կակոն՝ իր ոչխարի հոտերով, և մենք նորից բռնեցինք մեր գաղթի ճամփան:

Անցնելով կամուրջով, կիրճում մենք ականատես եղանք մեր գաղթական հարազատների դիակներին: Թե ինչպիսի տեսարան էր, սոսկալի է անգամ վերհիշել, չնայած որ հայը այդպիսի տեսարանների շատ է արժանացել թուրք բարբարոսների կողմից:

Ես միայն կվերհիշեմ մի դեպք մի մարդու մասին, որը իր ժամանակին մեր գավառի համար եղել է հեղինակավոր դեմք, եղել է մեր գյուղի տերը: Դա Մկրտիչ աղան էր: Բնակվում էր Վան քաղաքում: Ինքը լինելով կալվածատեր՝ մեր գյուղը իր նախնիների կալվածքն էր եղել, գյուղում ուներ հիանալի կառուցված տուն-բերդ, որը երկու հարկանի էր, դեռ մինչև գաղթը մնում էր նրա այգին՝ հինգ-վեց հեկտար տարածությամբ, երեք մետր բարձրությամբ պարսպապատ: Գյուղի եկամտի կեսը պատկանում էր նրան: Գյուղում նրան կոչում էին Մկո (Մկոյի պարիսպ, Մկոյի բերդ, Մկոյի արտեր և այլն): Ահա գաղթի այդ ճանապարհին մենք հանդիպեցինք նրան մի սայլի վրա նստած՝ հովանոցը գլխի վերևը բռնած: Գաղթի ճամփին նա զոհ գնաց մի պատահական գնդակի: Երևելի կալվածատիրոջ անփառունակ մահը կարծես ի ցույց էր բոլոր անցնող գաղթականներին, որպեսզի նրանք չցավեին իրենց կորցրածի համար:

Անցնելով Բանդիմահու կամուրջը, մենք մեզ զգացինք կարծես ազատ վտանգներից: Մի քիչ հանգիստ առանք, որպեսզի ուժ հավաքենք գալիք ճանապարհի համար: Թե քանի օրից հասանք Իգդիր, այդ չեմ հիշում: Հիշում եմ, երբ հասանք Իգդիր՝ Ռուսահայաստանի մեջ, սկսեցինք վաճառել մեր անասունները տեղացի հայերին, թողնելով մի քանի բարձկան անասուններ, որոնց բարձելով մեր ուտելիքը, առաջացանք դեպի Երևանի ճահճագի մի շարք գավառներ, ինչպես այն նախատեսել էր կառավարությունը:

Մեզ նշանակեցին Գոգչայում (Մարտունու շրջան), Վերին Ադյաման: Մենք մեր համագյուղացիների հետ փոխադրվեցինք Իգդիրից Երևան՝ Պլանի գյուղ:

Մի քանի խոսք Պլանի գյուղի մասին: Այժմյան Աբովյան փողոցը առաջ կոչվում էր Աստաֆյան: Աստաֆյանի Պողոս-Պետրոս եկեղեցուց մինչև վերջ, դեպի Քանաքեռ տանող ճանապարհը պատած էր խաղողի այգիներով և այլ մրգատու ծառերով: Փողոցը ընկած էր կավե պարիսպների մեջ, միայն ինչպես հիմա, այնպես էլ այդ ժամանակ իր տեղումն էին Պետհամալսարանի հին սև շենքը, Առաջին հիվանդանոցը: Մեզ տեղավորեցին Պլանի գյուղի բարակներում և որոշեցին, որ յուրաքանչյուր գավառում նշանակված գաղթականին պետք է տեղափոխի նաև նույն գավառը: Ջմոռանը Գյոգչայից եկան սայլեր և մեզ փոխադրեցին Վերին Ադյաման: Մեր գյուղից այնտեղ ապրելու էին տասնհինգ տնտեսություն: Գյուղացիները յուրաքանչյուր ընտանիքի տեղավորեցին: Մենք տեղավորվեցինք Մուրադի Ռուբեն անունով տղայի մոր՝ Գուլե անունով մի պառավ կնոջ տանը, որը ուներ մի հարս՝ Գլազ անունով: Ռուբենը՝ տղան, գնացել է Համաշխարհային պատերազմ, ծառայում էր ռուս-գերմանական ֆրոնտում:

Լինելով բարի և հեռատես կին, Գուլե մայրիկը իր ունեցվածքը խառնելով մերին, տան ղեկավարությունը վերցրեց իր ձեռքը և կարգադրեց հարսին խըտրություն չդնել մեր և նրանց միջև: Եվ այդպես մենք մեզ զգում էինք ոնց որ մեր տանը:

Կակոն լինելով մեր «տղամարդը», ձեռնամուխ եղավ տնային ծանր աշխատանքին: Այդպես, 1916 թ. գարնանը լուր ստացանք, որ Տաճկաստանը ազատագրված է, ովքեր ցանկանում են՝ թող վերադառնան իրենց գյուղերը. ինչպես գիտենք, մարդու ծննդավայրը ինչպիսի կախարդական ուժ ունի, ձգողական հատկություն, ձգում է դեպի իրեն հայրենիքը, նահատակված հարազատների գերեզմանները կանչում էին մեզ: Դարձյալ բարձելով մեր երկու եզները՝ վերադարձանք Երևան, այնտեղից էլ՝ մեր ծննդավայրը:

Երևանից Վան մենք պետք է մեկնեինք գնացքով: Գնացքը աշխատում էր մինչև Սովուխ սու (Սառը ջուր) կոչված բնակավայրը, որից հետո՝ փուրգոններով:

1916 թ. գարնանը մենք հասանք մեր գյուղը՝ Հրնդըստան: Ինչպես ծիծեռնակը իր հին բույնն է վերաշինում, այնպես էլ մենք վերադարձանք տուն: Մեր տունը ինչպես թողել էինք, այնպես էլ կանգուն էր: Գաղթի ժամանակ Կակոն տնտեսական շատ իրեր, որոնք հնարավոր չէր տեղափոխել, հորել էր տան մեջ, հանեցինք և նորից սկսեցինք մեր չարքաշ կյանքը:

Իհարկե, Վանի ճահճագի բոլոր գավառների հայերը չվերադարձան, այլ՝ միայն մի որոշ մասը վերադարձավ:

Դեռևս Համաշխարհային պատերազմի օրերին գոյություն ուներ Կարմիր խաչի ընկերություն, որը 1916 թվականին Վան քաղաքում հիմնեց Կարմիր խաչի մանկատուն՝ պատերազմում զոհված, ծնողազուրկ երեխաների համար: Ինձ ևս բախտ վիճակվեց ընդունվել այդ մանկատունը: Հիշում եմ այդ օրը՝ Կակոն և քեռիս՝ Հարությունը, համոզում էին, որ գնամ, գրել-կարդալ կսովորեմ, լավ հագուստ կհագնեմ:

Եվ այսպես, 1916 թ. մայիսյան մի գեղեցիկ առավոտ քեռի Հարությունը տարավ ինձ Վան և հանձնեց մանկատուն: Ենթարկվելով մանկատան կանոններին, ինձ զգում էի փշերի վրա, սակայն երեք ամիս մնալուց հետո համոզվեցի, որ այդպես էլ պետք է լիներ: Սակայն ե՞րբ է կյանքում բախտը ժպտացել որբին, որ ինձ ժպտար: Վրա հասավ 1917 թ. գարունը: Հետո Ռուսաստանում պայթեց Հոկտեմբերյան հեղափոխությունը: Մեր մանկատան, Վանի Կարմիր խաչի օգնության կոմիտեի նախագահն էր Կոստին Համբարձումյանը (մարմնամարզիկ Սերգո Համբարձումյանի եղբայրը),

որը նկատի ունենալով ընդհանուր քաղաքական դրությունը, 1917 թ. աշնանը մեր մանկատան հազար հինգ հարյուր որքերին տեղափոխեց Ալեքպոլ (Լենինական): Այդ օրվանից ես բոլորովին հույսս կտրեցի իմ հարազատներից: Ծատ զրկանքներ կրեցի. սով, կեղտ, Էլ ինչ որ հնարավոր է: Հասնելով Ալեքպոլ, մեզ տեղավորեցին զանազան շենքերում, սակայն մեզ վիճակված չէր նույնիսկ այստեղ դադար առնել. պատերազմի վտանգը սպառնում էր նաև Ալեքպոլին, որի համար մի ձմեռ անցկացնելուց հետո, 1918 թ. գարնանը մեզ տեղափոխեցին Ջալալօղլի (Ստեփանավան): Սնվում էինք սարսափելի վատ, առավոտյան երկու հարյուր գրամ հաց, մի բաժակ կիսաքաղցր թեյ, կեսօրին՝ միայն սուպ կամ բորշչ, այլ կերպ ասած՝ տաք ջուր, միայն այլ գույնի, իսկ երեկոյան երկու հատ խաշած կարտոֆիլ: Ահա մեր սնունդը: Դրանք տանջալի օրեր էին, որոնք մոռանալ երբեք չեմ կարող, նույնիսկ հիմա հիշում եմ այդ սև օրերը:

1918 թ. մայիս թե հունիս ամսին Զորավար Անդրանիկի կամավոր բանակը, մարտնչելով Վեհիբ փաշայի դեմ, հասավ Ջալալօղլի՝ մի քանի օրով հանգստանալու և իր մարտական ուժերը վերակազմելու՝ հույս ունենալով տեղի զորամասի վրա, բայց նա իր հաշիվների մեջ սխալվեց: Տեղական զորամասը տեսնելով, որ Վեհիբ փաշան մեծ զորքով շարժվում է դեպի Ջալալօղլի, բանակի մեջ առաջացավ խուճապ, դասալքություն, չնայած Անդրանիկի ձեռք առած խիստ միջոցներին, դարձյալ հնարավոր չէր կասեցնել մասսայական դասալքումը, որովհետև բոլշևիկյան հեղափոխության ալիքը հասնելով Անդրկովկաս՝ մտել էր ամեն գյուղ ու տուն, մարդկանց գիտակցության մեջ:

Անդրանիկը մնալով Ջալալօղլիում տասը-տասնըհինգ օր, ամեն առավոտ իր թիկնապահ զորականներով ձիերը հեծած գնում ուսումնասիրում էր Ջալալօղլիի շրջապատի լեռնագագաթները՝ ընտրելով հարմար դիրքեր, որպեսզի դիմադրեր և կասեցներ Վեհիբի հորդաներին և կարողանար ապահովել ժողովրդի գաղթը հանկարծակի վերահաս վտանգի դեպքում:

Ես անձամբ եղել եմ այդ օրերի ականատեսը և տանջանքների կրողը: Անդրանիկի բանակը կազմված էր հազար ձիավորներից, հազար հետևակներից: Իրենց տասնհինգ օրվա հանգստի ժամանակ մեզ՝ որբերիս, կերակրում էին, բանակը տեղավորված էր դպրոցի շենքի դիմաց գտնվող այգիների բացատում, իսկ շտաբը՝ դպրոցի շենքում:

Մի ամպամած, մռայլ օր էր: Անդրանիկը գտնվում էր շտաբում, ինչ-որ զինվորական խորհրդակցություն էր: Սուրհանդակ է գալիս, Անդրանիկը հայտնվում է պատշգամբում, պահակին հրամայում է ձին պատրաստ պահել, ապա դառնալով գնդի բժիշկ Բոնապարտյանին և զինվորական խորհրդակցության հավաքված հրամանատարներին՝ Սմբատին և մյուսներին, հրամայում է այրուձին դուրս բերել, իսկ հետևակը հարավում գտնվող բարձունքը բարձրանա և սպասի իր սպասավորի բերած լուրին:

Այնուհետև Անդրանիկը իր ձին հեծած շարժվում է դեպի ձորը տանող ճանապարհով, անցնելով գետը, բաց դաշտում բաժանվում են ըստ զորագնդերի և արշավում Վեհիբ փաշայի վրա: Ջալալօղլին ապրում էր ծանր ժամեր: Դիշերը Անդրանիկը հրամաև է տալիս, որ ժողովուրդը գաղթի Քոլագերան՝ դեպի Թիֆլիս: Իսկ մենք՝ որբերս, մորը կորցրած գառնուկների պես, լաց ու կոծով մնացել ենք անխնամ, սով ու մերկություն այլևս չենք զգում, բայց ու՞ր գնալ և ինչպե՞ս գնալ, չէ՞ որ անզոր ենք մինչև Քոլագերան քայլել ոտքով: Օրը անձրևային էր, ցեխ, քայլելը մեզ նման որբուկների համար անհնարին էր: Ահա այդ հուսակտուր պահին էր, որ Անդրանիկը, հիշելով մեզ՝ որբուկներիս, ուղարկում է հեծյալների վաթսուն հոգանոց մի վաշտ, մեզ՝ որբերիս, մինչև կայարան տեղափոխելու համար: Երեկոյան հասանք Քոլագերան կայարանը: Սպասում ենք հերթական գնացքի, սակայն կայարանապետը հաղորդեց, որ Հայաստանի և Վրաստանի սահմանային կայարանը՝ Սադախլուն, Բորչալուի թուրքերը գրավել են, Թիֆլիսի հետ կապը կտրված է: Վեհիբ փաշան՝ կապ հաստատելով Կովկասի թուրք բնակչության հետ, իր բանակը շարժելով Ջալալօղլիի և Ղարաքիլիսայի ուղղությամբ, ցանկանալով կտրել երկաթգծի ճանապարհը, տեղի թուրք ապստամբների միջոցով Հայաստանը կտրելով Վրաստանից, ցանկանում է մեծ հաղթանակի հասնել, միևնույն ժամանակ կասեցնելով ռուսական բանակների ճակատից վերադարձը:

Լոռվա ձորերը, Դեբեդի երկայնքով, լեփ-լեցուն էին գաղթականներով: Մեզ՝ որբերիս, Քոլագերանից մինչև Ալավերդի տանելով երկաթգծի ուղղությամբ, Ալավերդուց տանող խճուղով գնացինք Թիֆլիս, ովքեր որ մեծ էին և կարողանում էին քայլել: Սակայն Ալավերդում ջոկեցին մեզ: Ինը-տասնմեկ տարեկանները մնացինք Ալավերդի կայարանում՝ մոտ չորս հարյուր-հինգ հարյուր հոգի, իսկ մեծերը շարունակեցին ճանապարհը: Երեք օր անխնամ թափառում էինք գաղթականության մեջ, աղերսում հաց, բայց ո՞վ կգթար մեզ՝ որբերիս, երբ իրենք էլ էին սովամահ լինում: Գարուն էր: Բուսականությունը նոր էր, ստիպված սնվում էինք խոտերով: Դարձել էինք մարդկային կերպարանքով անասուններ: Կյանքում երբեք չեմ մոռանա այդ օրերը, երբ իմ ընկեր Պատուրի հետ թափառում էինք գաղթականների մեջ, գտնելու ուտելու բան, բայց իզուր: Վերցնում էինք ոսկորը, դնում քարի տակ և ուրիշ քարով մանրացնում, այդ մանրացրածը ուտում, այն էլ՝ խնայողությամբ: Անընդհատ աչքերս գետնին էին: Մի օր երկաթգծի վրա գտանք մի կապոց: Կարծեցինք շոր է մեջը: Բացեցինք, տեսանք քառասուն կտոր շաքար, ջարդված կաղին և ընկույզի միջուկ, թթի չիր ու չամիչ: Մենք սկզբում չհավատացինք, կարծեցինք երազ է, բայց մի քանի օր ապրեցինք դրանով: Մի առավոտ, սովորական մի առավոտ, ձորից բարձրացանք լեռները՝ պաշար հավաքելու, լսեցինք պատկառելի մի մարդու ձայն: Դա Կարմիր խաչի Թիֆլիսի բարեգործականի անդամ, հայ հարուստ Միրզոյանն էր, միջահասակ, քիչ շիկագույն, թավ հոնքերով, թլվատ, արագախոս մարդ էր: Նա հրամայեց ոչ ոք տեղից դուրս չգա, պետք է գնայինք Սաճահին գյուղ, տեղի վանքում մեզ սպասում էին լավ կյանք և ուտելիք:

Միրզոյանը Ալավերդու կայարանից մինչև Սաճահին ընկած տարածության վրա որբուկներին հավաքեց և տարավ Սաճահին: Այնտեղ մեզ տեղավորեցին մի եկեղեցում, սկսեցին մեզ կերակրել Թիֆլիսից ստացված ձեթով և կրուպայով: Բայց այդքան տաճաջանքներից, կեղտից արդեն մեր մեջ տարածվել էր տիֆը: Չկար մի առավոտ, որ վեր կենայինք և եկեղեցու ծածկի տակ, խսիրների վրա չմնայինք տասը-տասնհինգ երեխաների դիակներ: Տեսնելով այդ չարիքը, ես և մի քանի հասակակից տղաներ դուրս եկանք եկեղեցուց և գնացինք Հաղպատ, Ռոնակ կոչված գյուղերը՝ մուրացկանության: Բնակիչները տեսնելով մեր վիճակը՝ առաջարկեցին իրենց մոտ ծառայել: Սիրով մնացինք: Մեկս հորթարած դարձավ, մեկս՝ գառնարած կամ անտառից ավանակով փայտ էինք տուն բերում: Այդպես ապրեցինք մինչև 1919 թ.: Ահա այդ թվականին անգլիացիները դուրս եկան Թիֆլիսից և շարժվեցին Բաքու, ճանապարհը ազատվեց, և մի օր Կարմիր խաչի միջնորդությամբ, ամերիկյան մերձարևելյան նպաստամատույց կոմիտեի ձեռնարկած օգնությամբ Ալավերդի կայարանում կանգնեց մի սանիտարական կառախումբ, որը ուներ բաղնիք, խոհանոց, ճաշարան և երեք վագոն ննստատեղեր: Միրզոյանի ջանքերով մեզ հավաքեցին մոտակա գյուղերից, Սաճահին գյուղի եկեղեցում մնացած երեխաներին՝ հինգ հարյուր հոգուց արդեն մնացել էին երկու հարյուր երեսուն հոգի մեկ ամսվա ընթացքում: Մի լավ մաքրելուց և կերակրելուց հետո մեզ փոխադրեցին Թիֆլիս՝ Նավթլուղ:

Միրզոյանը Թիֆլիսի հայ հարուստներից էր, ուներ գեղեցիկ մենատուն Օրթաճալայի շրջանում, Քուռ գետի հարավային կողմում, Ադելխանովի կաշվի գործարանի վերևում: Երեք հարկանի շինվածքը նման էր պալատի: Արևելյան մասում տարածվում էր երեք հեկտար տարածությամբ այգին՝ մրգատու ծառերով, երկու կողմից բարձրանում էին խաղողի վազերը: Այգին ոռոգելու համար կառուցվել էր մի գեղեցիկ ավազան՝ քսան մետր լայնությամբ, հինսւն մետր երկարությամբ և տաս մետր խորությամբ: Թելեթից հոսող մի լեռնային վտակ լցվում էր այդ ավազանը, լիքը լցվելուց հետո ավելացածը հոսում էր ցած, իսկ կուտակված ջուրը ավազանի հատակից հատուկ սարքավորումով բարձրանում էր պալատի պատշգամբների մոտ եղած մի ուրիշ ավազանի մեջ: Առավոտյան արևի շողերը ընկնելով ավազանի ջրի վրա, անդրադառնում էին պալատի պատուհանների վրա և ստեղծում մի գեղեցիկ, կախարդական պատկեր: Ահա այս պալատում էր ապրել ցարական փոխարքա Նիկոլայը:

Ահա այստեղ սկսեցինք ապրել մենք՝ որբերս 1918 թ. ամառվանից մինչև 1920 թ. օգոստոսը: Գրեթե երկու տարի մնալով Թիֆլիսում՝ մենք լավ սնվում և միաժամանակ ուսում էինք ստանում: Բայց այդ ևս կարճ տևեց:

1920 թ. մեզ փոխադրեցին Կարս: Մեզ տեղավորեցին մի զինվորական զորամասում: Երեք հարկանի մի շինություն էր, ուր տեղավորեցին երկու հազար հինգ հարյուր որբերիս: Նորից սկսվեցին մեր դաժան օրերը՝ սով, կեղտոտություն: Մեր որբանոցի կառավարիչը մի շատախցի ամերիկյան միսիոներ էր, որին անվանում էին Արզումանյան: Անգլերեն լավ գիտենալով, նա զեկուցում էր ամերիկյան խնամակալներին, որ մենք գոհ ենք մեր ապրուստից: Այնինչ չորս-հինգ ամիս մնալով Կարսում՝ ինչեր ասես, որ չտեսանք:

1920 թ. Կարսի անկումից հետո մեզ՝ որբերիս, տեղափոխեցին Ալեքսանդրապոլի պոլիգոնները, որոնք վերածվել էին որբանոցների: Դրանք գտնվում էին Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի հովանավորության տակ, որի ղեկավարն էր մստր Էարօ կոչված ամերիկացին, որը տեսնելով Հայաստանի խորհրդայնացումը՝ մի քանի ամերիկացիների և ամերիկուհիների հետ ետ գնաց: Մենք՝ որբերս, մնացինք անպաշտպան: Ընկել էինք դաշտերը, որ մկան բույներ քանդելով ցորեն գտնենք, իսկ այդ մկները տիֆի վարակիչներ էին, և մեզնից շատերը վարակվեցին, նաև մեր ընկեր Մուրադը, որը մի քանի օրից որովայնի տիֆով մահացավ: Մենք՝ որբերս, որպես նրա հարազատներ, հետևում էինք նրան: Երկու մեռելաթաղներ բռնել էին նրա պատգարակը, հանկարծ Մուրադը նստեց պատգարակի վրա, մեռելաթաղերը վախից փախան, բայց մենք նրան տարանք հիվանդանոց, ուր և ապաքինվեց ու փրկվեց մահից: Հետո մենք նրան կատակով անվանում էինք գոռնափշտիկ Մուրադ:

1920 թ. վերջերին Հայաստանը խորհրդայնացվեց, ամերիկացիների հովանավորությունն այլև չկար: Որբերի խնամքն անցավ Հայաստանի խորհրդայնացված իշխանությանը:

1921 թ. սկսվեց առաջին ներգաղթը: Նրանք, ովքեր 1917 թ. գաղթել էին Վանի նահանգից, Պարսկաստանով՝ դեպի Իրաք: Այդ առաջին ներգաղթի հետ նաև եկել էին իմ մայր Եղիսաբեթը և իմ հորաքույր Կակոն: Նրանք տեղավորվել էին Բեջաղլու գյուղում, մի բարի կնոջ՝ Զարդար մայրիկի տանը:

1921 թ. գարնանը Հայաստանում սով էր, ազգամիջյան կռիվներ ու քաղաքացիական պատերազմ: Սովը մտել էր նաև Ղամարլու:

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը տարածվելով Ռուսաստանում՝ հասավ Անդրկովկաս: Ռուսական զորամասերը, թողնելով թուրքական ճակատը, վերադարձան Ռուսաստան:

Հայաստանի երկրային զորամասերը և կամավորական խմբերը չկարողացան պաշտպանել Տաճկահայաստանի ճակատը, որը թողել էին: Ռուսական զորամասերը ետ քաշվեցին, Կարաբեքիր փաշան կտրեց Տաճկաստանի և Երևանի միջև ընկած ճանապարհը՝ վտանգելով Վանի նահանգի հայությանը: Վանի նահանգի՝ 1916 թ. վերադարձած հայերը, տեսնելով իրենց սպառնացող վտանգը՝ Կարաբեքիրի գլխավորությամբ, Կոստին Համբարձումյանի, Լևոն Ծաղոյանի և ասորիների կրոնական առաջնորդ Մարշումոնի՝ վաթսուն հազար ասորիներով և քառասուն-հիսուն հազար հայերով, նախօրոք գաղթեցին Վանի նահանգից դեպի Պարսկաստան՝ Դիլման, այնտեղից ուղղություն վերցնելով դեպի Բաղդադ, որը այդ ժամանակ գրավված էր անգլիացիների կողմից:

Սակայն հեշտ չէր այդքան ճանապարհը, որ գնում էր Պարսկաստանի և Տաճկաստանի սահմանա-

գլխով, որտեղ բնակված էին զանազան քրդական ավազակ ցեղեր և այլ թուրքական ղեկավարներ:

Կոստինը՝ Լևոնի և Մարշումոնի ղեկավարությամբ, կազմակերպեց ինքնապաշտպանության խըմբեր և հետախույզներ՝ ճանապարհների ապահովության համար զինված խմբերը բաժանելով չորս մասի, իսկ ժողովուրդը վերցնելով իրենց կենտրոն՝ սկսեցին շարժվել առաջ: Յուրաքանչյուր ցեղի տարածքի միջով անցնելուց նախօրոք զգուշացնում էին, որ ճանապարհը ապահովեն անցնելու առանց միջադեպի, իսկ հակառակ դեպքում սպառնում էին զենքի ուժով անցնել:

Դիլմանի մոտ քրդական ավազակ Սմկո անունով մի ելուզակ իր խմբով թափառում էր, որտեղ գտներ լավ «որս», հարձակվում և հափշտակում էր: Այդպես էլ հարձակվեց մեր հայ և ասորի գաղթականների վրա, բայց նրանք հակահարված տվեցին:

Ջուլամերիկում գաղթականները խնդրել էին ճանապարհ տալ, որ անցնեն, հասնեն Մուսուլ:

Պատգամավորություն են ուղարկում Կոստին Համբարձումյանի գլխավորությամբ, բայց թուրք պատվիրակությունը նենգորեն գնդակով սպանում է Կոստինին: Լևոնը և Մարշումոնը անթեղ հետագրով կապվում են Մուսուլ՝ անգլիական իշխանության հետ և հայտնում Կոստինի չարաճճեգ սպանության մասին: Հաջորդ առավոտ անգլիական սավառնակները թռչելով Ջուլամերիկի վրա՝ սպառնում են թուրք և քյուրդ իշխանությանը ռմբակոծել, եթե թույլ չտան, որ Իրաքի տարածքով Մուսուլ հասնեն հայերը:

Գաղթականները հասնելով Մուսուլ, որի անգլիական իշխանության տիրապետության տակ էր Իրաքը, ժողովրդին բաժանում են Մուսուլ, Բաղդադ, Բասրա քաղաքների վրա:

Մայրս և Կակո հորաքույրս տղամարդու շորեր հագած չորս տարի մնում և աշխատում են Բասրայում: Բայց քանի որ գիտեին, որ ես Հայաստանի որբանոցումն եմ, ցանկանում են գալ Հայաստան: Առաջին իսկ կանչով, առաջին իսկ քարավանով գալիս են Պարսկական ծոցով, Արաբական ծոցով, Կարմիր ծովով, Սուէզի ջրանցքով, Միջերկրական, Էգեյան ծովերով, Դարդանելի և Բոսֆորի նեղուցներով, Սև ծովով հասնում են Բաթում: Բաթումից՝ Հայաստան, Արտաշատի շրջանի Բեջազլու գյուղը, Զարդար մայրիկի տանը բնակություն հաստատեցին, եկան և ինձ բերեցին որբանոցից իրենց մոտ:

Բայց շուտով վարակիչ հիվանդությամբ հիվանդացավ և վախճանվեց մայրս: Կակո հորաքույրս ինձ ամուսնացրեց՝ ընդամենը 15 տարեկան հասակումս, Քնարիկ անունով խնամի Ռոչոյի (այսինքն՝ քոչած, ներգաղթած) մի ընտանիքի աղջկա հետ: Տարիների ընթացքում ածեց մեր ընտանիքը: Բայց չէի մոռանում, որ տասնմեկ հոգի զոհ էինք տվել մեր ընտանիքից:

Սկսվեց Հայրենական պատերազմը, և մինչև 1945 թիվը ծառայեցի բանակում: Վիրավորվեցի, բայց վերադարձա իմ բազմանդամ ընտանիքի գիրկը:

Ով կերազեր, որ 1896 թ. թուրքական սուլթան Համիդի գազանային վարմունքի հետևանքով իմ պապի 12 անձից բաղկացած ընտանիքի զոհվելուց հետո և 1915 թ. Մեծ եղեռնից միայն ինձ՝ որբ ու անտեր, հինգ տարիներ թափառելով Թիֆլիսի մանկատներում, Կարսում, Ալեքսանդրապոլում, անտանելի զրկանքներով և վարակիչ հիվանդություններով հիվանդանալով, բախտ վիճակվեց վերականգնել իմ պապի կորցրած տասներկու անձերը և իմ վրեժը այդ ձևով լուծել:

38 (38).
ՆՇԱՆ ՍՈՒՔԻԱՍԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՎԱՆ, ԱԼՋԱՎԱԶ (ԱՐԾԿԵ) ԳԱՎԱՌ, ՋԻՐԱՔԼՈՒ Գ.)

Գարնան ամիս էր: Արտերը մշակելու ժամանակ մեզ՝ երեխաներիս, տանում էին արտի մի հարմար տեղ, քնացնում էին, իրենք դաշտային աշխատանք էին կատարում: Այն եմ հիշում, որ էդ դաշտում շատ սունկեր կային, և մի երեխան մի սունկ չէր կարողանում տանել, այնքան մեծ էին: Արտը վարելու ժամանակ շատ բույսեր կային, որ ուտում էինք՝ բուժիչ էին:

Մեր գոմը լիքն էր տավարով: Տաճ առջևից առու էր հոսում, մեջը բադեր էին լողում:

Դաշտում էինք, երբ էկան հայտնեցին, թե քրդերը մեր տավարը տարան: Տանը լսում էի, որ հրանոթի ձայներից են խոսում: Ես էլ ուզում էի լսել, հայրս ինձ ասաց. - Գնա պատի տակի գազին (գետնին) ականջ դիր, կլսես:

Ականջս դրի, լսեցի, սկսեցի լաց լինել: Ռուսական զորքը եկավ, կազակներ էին: Մենք անընդհատ խաչ էինք հանում, որ քրդերից տարբերվենք:

Ես տատիս՝ Թելոյի մեջքին էի, և որտեղից էր՝ ձեռքս փամփուշտ էր տվել: Մի զինվոր խլեց իմ ձեռքից, առավ, տարավ:

Հայրս, եղբայրը՝ Նազոն, մեր ընտանիքը, Գարեենց ընտանիքը, Հրաչուհու ընտանիքը առանց տղամարդկանց, երևի երեսունից ավելի մարդ, պայմանավորվել էին երկու քյուրդ եղբայրների հետ, որ դրանք գիշերով մեզ անցկացնեն, տանեն բեկի տունը, պայմանով, որ մեր ամբողջ հարստությունը թողնենք դրանց: Էն ժամանակ բեկի հրամանը կար՝ էն հայերը, որ կմըտնեն նրա տունը, էլ վտանգ չի լինի. նա գաղտնի հայերին անցկացնում էր Հայաստան:

Մութ գիշերով, վարած արտերի միջով գնում էինք: Գիշերվա մի ժամի քյուրդ երկու եղբայրներից մեկը հրացանով սպանեց հորեղբորս՝ Նազոյին: Հորեղբայրս ընկավ: Հայրս ինձ գցեց մորս, թե երեխային վերցրու ու հարձակվեց քրդի վրա, հրացանը նրա ձեռքից խլեց, դրան սպանեց, իսկ մյուս քյուրդ եղբայրը մղության մեջ փախավ: Հայրս հրացանը շպրտեց: Լուսաբացին հասանք բեկի գյուղը, կարծեմ՝ Հաղթափա անունով էր գյուղը:

Գյուղից մեզ ընկատել էին, մեկին ուղարկել էին մեզ մոտ, եթե տղամարդ կա, պետք է սպաներ, իսկ կանանց ու երեխաներին՝ ընդունում էին: Եկողը իմ հոր հին ծանոթներից դուրս եկավ: Քիրվա էին ասում, անունը՝ Մստո:

Հայրս ասաց. - Մստո՛, բան չունեմ քեզ տալու, ոսկի, արծաթ չունեմ, միայն պահած լավ շալվար ունեմ՝ զինվորական: Միայն սա է, տալիս եմ քեզ, - Մստոն վերցրեց:

Հայրս ասաց նրան, - Մստո՛, ա՛ռ էս շալվարը, միայն քո ձեռքով չսպանվեմ, - նա վերցրեց շալվարը, գնաց, մի ուրիշի ղրկեց: Սա ատրճանակով խփեց հորս: Մայրս հորս շալակեց, էդ երեսուն հոգին լացով, ողբալով հասանք բեկի տունը, մտանք գոմը:

Հայրս վիրավոր թիկունքով հենվել էր գոմի դռանը, քանի որ քառասուն քրդեր ուզում էին դուռը բացել, ներս խուժել, բայց չէին կարողանում: Էդ աղմուկի վրա բեկի կինը դուրս է գալիս, ամոթանք է տալիս, որ էդքանով մի հայի վրա են հարձակվել և ասում է. - Իմ տան մեջ հայի արյուն չպիտի թափվի:

Հայրս իմանալով, որ բեկի կինն է, ետ է քաշվում, դուռը բաց է անում: Քրդերը ներս են խուժում և երկրորդ անգամ խփեցին հորս: Հայրս միանգամից չմահացավ: Նա ինձ սիրում էր, համբուրում էր, ես էլ նրա գրպանից պոպոք էի հանում, ուտում:

Պարզվում է, որ հորեղբայրս գիշերով չի սպանվել: Գնացել, մտել է աթարի ամրոցի մեջ, թաքնվել է: Առավոտը քրդի աղջիկը գալիս է, որ վառելու բան տանի, տեսնում է հորեղբորս, սկսում է բղավել. - Էստեղ հայ կա, - քրդերը հարձակվում, սպանում են հորեղբորս:

Երկու եղբայրներին հողը ձեռքերով ճանկոտելով թաղեցին: Պարզվեց, որ բեկը տանը չէ: Բեկը չեկավ, գնացել էր իր խմբով հայերին սահմանը անցկացնելու: Մեզ բոլորիս լցրել էին գոմը, պիտի վառեին: Գալիս էին, հայ գեղեցիկ կանանց ջոկում, քաշքշելով տանում էին, դրա համար էլ նրանք իրենց երեսները ցեխ էին քսում, մրոտում էին, որ իրենց չփախցնեն: Դոմի առաջից գետ էր գնում, մեր խմբի շատ կիներ իրենց երեխեքին գրկած ջուրն էին նետվում: Շատերն էդպես մեռան: Քրդերը տեսնում էին դրանց դիակները, երկար երկաթյա շշերով ծակում էին նրանց մարմինները, որ իմանան ողջ են, թե՝ մեռած, որ թալանեն:

Տատս մորս ասում է. - Աղջի՛, ա՛ռ երկու տղաներիդ, փախե՛ք, - և դա հաջողվեց մեզ:

Մի աննշան օր էր, կայծակ էր ուժեղ, օգտվելով առիթից, փախանք: Ճանապարհին հանդիպեցինք մի խումբ հայերի. շատ էին, միացանք դրանց, մտանք անտառ: Մեզ վրա հարձակվեց քրդերի մի ցեղ՝ ճելոներ: Դրանք չէին սպանում, մեզ թալանում էին, որը գեղեցիկ կին էր ընտրում, որը երեխա էր վերցնում:

Մեկը մորս վերցրեց իրեն որպես կին՝ փոքր եղբորս հետ, իսկ ինձ հրեց մի կողմ: Ինձ որդեգրեց մի մոլլա: Միառժամանակ հետո, մոլլան իրեն կին էր գտել՝ հետս էլ մի երեխա, նրան բերեց, ինձ դուրս արեց: Ես դուրս եկա գյուղի միջով անցնող ճանապարհով: Հանդիպեցի հայերի մի խմբի՝ յոթը հոգուց բաղկացած: Կանայք էին, երեխաներով: Միացա նրանց: Երբ գյուղից բավական հեռացել էինք, սկսեցին կրակել մեզ վրա, բոլորին սպանեցին: Դիակների մեջ ինձ չնկատեցին, երևի բանի տեղ չդրին, թալանելու բան չկար: Էդպես դուրս եմ եկել, ընկել եմ դաշտ: Տեսա նույն տարիքի ջահել տղամարդիկ էին սպանված, շարված: Գլուխները կտրել էին ուղիղ մի գծի վրա դրել, մարմինները՝ մի. դու մի ասա, դրանք զորակոչի կոչված հայ երիտասարդներ են: Դրանց վրա զազրելի բաներ էին արված: Մեկի մի աչքը հանած, քիթը կտրած, ականջը կտրած, ազդրերին գրպաններ բացած՝ ձեռքերը մեջը խցկած, անդամը բերանը դրած... Ես էդ դիակների վրայով անցնում էի: Դիակները ուռած էին, ոնց որ փչած լինեին:

Հետո ինչ է եկել իմ գլխի՝ չեմ հիշում: Ծրտել էր, ոտքերս ցուրտը տարել էր: Ոտքերիս տակը ջուր էր լցվել, կաշին հաստ էր, չէր պատռվում, և ես չէի կարողանում քայլել, գլորվում էի էս կողմ, էն կողմ: Էդ ձևով հասա մի քրդական գյուղ, հաց խնդրեցի քրդերեն, քանի որ հայերենը մոռացել էի: Տանը մի պառավ կին կար, հաց էր թխում: Էդ կինը ինձ էդ վիճակով տեսավ, տարավ ննջեցրեց թոնիրի կողքին ու ինչ-որ բան ըսկըսեց փնտրել տան մեջ:

Այ Էստեղ ես նոր վախեցա: Պարզվեց, որ շատ բարի կին էր, ճեքիմ էր: Նա բերեց մի մախաթ, ինձ հավի նման գրկեց, ոտքս ծակեց, մեջի ջուրը դուրս եկավ, զոռով իմ ոտքերը կախեց թոնիրը: Էդ կինը ինձ պահեց իր մոտ որպես գառնարած: Նա ուներ երկու տղա, մեկը մեծ էր՝ հողագործ էր, մյուսը՝ ջահել էր, գնում էր հայերին թալանելու: Ես տանում էի գառները արածացնելու: Գառներին չէի կարողանում պահել, հաճախ կորչում էին, գնում էին գլորվում էին ձորը: Մի օր էդ փոքր ախպերը ինձ պառկացրեց, ոնց որ հավն են մորթում, և դանակը հանեց, որ ինձ մորթի:

Մեծ եղբայրը ասաց. - Էդ ի՞նչ ես անում:

- Ի՞նչ պիտի անեմ: Գնում եմ կյանքի գնով թալան եմ բերում, իսկ սա տանում, կորցնում է մեր գառները:

Մեծ ախպերը ինձ պաշտպան կանգնեց: Երկու ախպեր սկսեցին կռվել: Մայրը բարկացավ. - Մի հայ լակոտի համար ուզում եք իրա՞ր սպանել:

Հաջորդ առավոտ փոքր ախպերը գնաց նորից թալանի և էնտեղ իրան սպանել էին: Ես դաշտում էի, երբ ինձ կանչեցին, իմաց տվին, թե՝ աղադ սպանվել է: Դիակը թաղեցին: Անցավ ժամանակ, ինչքա՞ն՝ չգիտեմ, էս մեծ ախպերը ամուսնացավ մի հայ աղջկա հետ: Էդ կնոջ գալուց հետո իմ վիճակը բարելավվեց: Էդ կինը որպես հայ ինձ առանձին ուշադրություն էր դարձնում:

Մի գիշեր էլ էդ կինը ինձ զարթնացրեց.

- Նշա՛ն, վե՛ր կաց, եկել եմ մեզ ազատելու: - Հետո իմացա, որ էդ գյուղը կոչվում էր Հարմիզոն: Էդտեղ հայեր ու քրդեր ապրել են միասին: Պարզվեց՝ այդ կինը եղել է հայ դաշնակցական հարյուրապետ ղաչաղ «Քյուրդ-Ղազո» անունով մարդու եղբոր կինը: Ղազոն տասնվեց հոգով գալիս է նրան ազատելու: Դրա հետ

նաև ազատեց բավական թվով հայերի, նաև ինձ նման գերիների, իր հետ տանելով գյուղի ամբողջ տավարը, նաև իմ տիրոջ տավարը: Բենը զբաղված էր հարսանիքով, նրան լուր եմ տալիս, բայց նա բանի տեղ չի դնում:

Մենք մի դաշտ տեղ նստեցինք: Ինձ նստեցրել էին մի իշու վրա: Դե երեխեն էշի վրա չի մնա, ընկել եմ: Էդ Ղազոն ինձ վերցրեց, նստացրեց իր կողքին՝ ձիու վրա: Ինքը հագած ուներ յափնջի, ես բան չէի տեսնում, միայն զգում էի, որ ինչ-որ ձորեր ենք իջնում, բարձրանում:

Հասանք Իգդիր: Մեզ բերեցին Աշտարակ՝ մանկատուն: Պապիս քույրը՝ Սաննամ անունով, լսել է, որ ես ազատվել եմ, եկավ, որ ինձ տանի, որդեգրի: Ես չգընացի, չէի ճանաչում: Գնաց Լևոնին բերեց, Մայիսի որը: Լևոնին տեսնելուս պես, ես ընկա նրա գիրկը: Էկա Էջմիածին: Սաննամը վերջը ինձ որդեգրեց: Ապրում էինք բժշկի տանը: Ես հիվանդացա դիզենտերիայով: Շատ էին մահանում: Բժշկի խնամքով փրկվա: Առողջացա եկա, Սաննամը մահամերձ էր, մահացավ: Ինձ ղրկեցին ապաստարան: Էջմիածնի ճեմարանի շենքերը հատկացված էին մեզ՝ գիշերելու համար: Ցերեկը գնում էինք, արածում էինք, շուն, կատու, ինչ որ պատահեր ուտում էինք: Առավոտ մեզնից կեսն էր կենդանի զարթնում: Պատահում էր՝ սովածությունից իրար կծոտում էին, գազանացել էին: Թաղող չկար, դիակներն էնքան շատ էին, որ չէին կարողանում մարդավարի թաղել, փորող չկար: Մի հատ եզան սայլ կար, Զվարթնոց գնացող ճամփին փոս կար, դիակները լցնում էին դրա մեջ, հողով ծածկում:

Ամերիկացիները էկան, անկողին տվին, ճաշ էին եփում՝ լոբի, հագուստեղեն բաժանեցին, նույն շենքում որբանոց բացեցին: Չորս հարյուր երեխա էինք: Բավական էր գիշերը մի կատու անցներ, մեկը ճվար, իրար ձեն-ձենի էին տալիս Էջմիածնի բոլոր որբերը: Տերտերներն էլ փոխանակ հանդարտացնեն, հաստատում էին գոռնափշտիկների գոյությունը, վախեցնում էին:

Վանքի մեջ մի ջրհոր կար, տերտերներն ասում էին, որ թուրքը գա, էս ջրերը ծով կդառնան: Մի գիշեր Հռիփսիմեի վանքից վազքով հասանք որբանոց, էլի գերեզմանների ուրվականների վախից: Ես էլ կպչում էի Լևոնին: Նա մեծերի մեջ էր, Հռիփսիմեի վանքում էր աշխատում: Փայտից հրացան էր ինձ համար սարքել:

Ճեմարանի մեծ շենքերը վերածվել էին որբանոցի: Երեկոները ամեն շենքի շուրջը կազմակերպվում էին երգի, պարի երեկոներ: Ամեն մի գավառի երեխաներ իրենց երգերն ու պարերն էին երգում ու պարում: Թաթուլ Ալթունյանի մայրը կառավարիչ էր: Թաթուլը այդ ժամանակվանից թառ նվագել էր սովորել, երգել և այլն:

Ամերիկացիները սկսեցին երեխաներ ջոկել ու տանել Ամերիկա: Ինձ մեր դաստիարակչուհին պահեց մահճակալի տակին, թույլ չտվեց, որ գնայի, թե ինչու՞, չգիտեմ: Ես ծանր հիվանդ էի, բարձր ջերմություն ունեի: Սավանը թրջում, բերում էր, գցում էր վրես, ու ես էնքան տաք էի, որ նա չէր հասցնում սավանը փոխել: Հետո էդ կնոջը շատ մահ եկա, բայց չգտա:

Էջմիածնից մեզ տեղափոխեցին Քանաքեռ: Էդտեղ անտանելի շոգ էր: Փայտյա մահճակալների վրա թախտաբիթիներ էին վխտում: Ստիպված բետոնի վրա էինք պառկում:

Մի օր հինգ-վեց հոգով գնացինք թութ ուտելու: Տերը բռնեց, շարեց, հագներիս ոչինչ չկար, որ վերցներ: Մեկից մի գոտի վերցրեց: Ես պահ էի մտել էդ մարդու ետևում, ինձ չէր նկատել: Երբ ինձ տեսավ, որ թաքնվել եմ, ընկավ իմ ետևից, որ սպանի: Սովորական բան էր սպանությունը: Բանակի զորակոչիկին ծիրանի համար սպանում էին: Ջորի մեջ մի կամուրջ կար: Ջուրը քիչ էր, ես անցա, Շավարշ անունով մի տղա ճարահատված իրեն գցեց կամուրջից: Բոլորս ապշեցինք: Էդ հետապնդող այգու տերը կանգնեց: Բարեբախտաբար ընկել էր ջրի մեջ, փրկվեց: Եկանք որբանոց: Պր. Գևորգը*, որը մեր դաստիարակն էր, շարել էր երեխաներին, ստուգում էր անցկացնում: Մենք զարմացանք նրա վարքագծի վրա, որովհետև մեզ ոչինչ չասեց: Շատ բարի էր:

Մեզ բերեցին Երևան՝ հինգերորդ որբանոց, գինու գործարանի դիմացը: Ինձ հետ էին Առաքելը, Մինասը: Ինձ տեղափոխեցին յոթերորդ որբանոց: Աչքերս ցավում էին: Սարմենի հետ էինք: Դիրիժոր Իսպիրն էր: Չարենցը հիններորդ որբանոցում դասեր ուներ, իսկ Արփենիկը մեզ մոտ ուսուցչուհի էր: «Վարդան զորավար» զրահագնացքի կոմիսարը Չարենցն էր: Լսեցինք, որ գաղտնի Ալեքսանդրապոլ էր գնում-գալիս: Հաց չկար, ցորեն էինք ուտում: Չարենցն ու Արփենիկը սիրահարված էին:

1921 թ. փետրվարին մանկատունը շրջապատել էին դաշնակցականները: Մեզ հարցաքննում էին, թե որտեղ է ձեր ուսուցիչ Չարենցը:

Հեղաշրջման ժամանակ, 1920 թ. նոյեմբերին, տասնմեկերորդ բանակը երբ մտավ Երևան, Քանաքեռի վերևներում, հիմիկվա մոնումենտի տեղը, գնդացիրներ էին դրված: Գնդացիրը քաղաքը կրակի տակ էր վերցրել: Մի հեծյալ էլ կարմիր դրոշով հայտարարում էր, որ Սովետական իշխանություն է: Տղաները դուրս էին գալիս գողությամբ: Ես էլ մի օր դուրս եկա, գնդացիրի գնդակները կպան իմ ետևի պատին, փախա:

Դաշնակցականները հերթով ճառեր էին ասում ու գնում: Ես մի ընկերոջ հետ գնացի սպայի տունը՝ դոմ օֆիցերա: Մեծ հայելի կար: Մենք երեխեքով ճիպոտները դրել էինք ուսներիս, յանի հրացան ա, հայելու առաջ գնում, գալիս էինք:

Նույն օրը գնացինք ռուսական եկեղեցի՝ Շահումյանի արձանի տեղը, մի մարդ անընդհատ մեծ զանգ էր խփում: Մենք սկսեցինք քայլել, եկանք «Արմենիա» հյուրանոցի տեղը, խանութ կար, կողքին ապտեկա էր: Խանութի վիտրինայից մի պաչկա թել վերցրինք, իսկ ապտեկայից մի հատ մեծ ջերմաչափ, եկանք մանկատուն:

Առաքելը պատմում էր, որ բոլշևիկները իրենց գնդացիրը դրել էին հինգերորդ որբանոցի պատի տակ: Ջորի վրայով կրակում էին դաշնակների վրա: Մեծ տղաները ուզում էին դուրս գալ թալանի, դարպասը բացել, աղմկելով դուրս եմ գալիս: Բոլշևիկները կարծում են, որ դաշնակցականները գրավեցին, թողնում են գընդացիրը, փախչում են:

Թուրքերը Ալեքսանդրապոլից նորից էին քաշվել: Մեզ գնացքով տեղափոխեցին Ալեքպոլ: Գնացքը շատ դանդաղ էր գնում: Մի քիչ գնում էր, մենք իջնում էինք, փայտ էինք ճարում, որ վառի, շարժվի:

Սևերսկի, Կազաչի պոստ կազարմաները վերածվել էին որբանոցների: Ես հինգերորդ որբանոցում էի: Իմ համարը 1899-ն էր: Որբանոցներին անուններ էինք կնքել: Առաջինը՝ ամենափոքրերն էին՝ ոջլոտներ, հետո՝ վեր-վեր թոչողներ, սրանք լավ լուր էին հասցնում: Մյուսները՝ խուժաններ, աղքատ-հպարտներ: Դրա կառավարիչը կին էր: Դաշտենցը, Շիրազը էդտեղ էին: Համալսարանի դասախոսների մեծ մասը էդ որբերից էին՝ Նաիրի Զարյանը և ուրիշներ: Ես նրանց սեղանի օրապահն էի, դրա համար գիտեի:

1924 թ. տեղափոխեցին Ստեփանավան՝ Ջալալօղլի: Ալեքպոլից արդեն ընդգրկված էի փողային նվագախմբում: Ինձ հետ եկավ նաև Զազիկ Սողոմոնյանը, որ ինձ սովորեցնում էր ալտի վրա նվագել: Մաեստրոն իմացավ, որ ես գիտեմ գամաները, ինձ օրկեստրի մեջ վերցրեց:

Փոքր աղջիկների մի խումբ էր կազմված, դրանք ներկայացումներ էին տալիս մեր տղաների հետ, երգում էին, պարում: Դրանց մեջ էր Սիրուշը՝ Սիրանուշ Գեորգևնան*: Քաղաքում միացյալ ուժերով լավ ներկայացումներ էին տալիս: Կարոն «Պատվի համար» էր խաղում: Կարոյին Թիֆլիսում Դերենիկ Դեմիրճյանն էր պահում: 1926 թ. եկավ մեզ մոտ՝ Ստեփանավան: Ես, Կարոն ու մի տղա՝ ընկերներ էինք: Գյուղերիտ դպրոցում Սիրուշի հետ էինք: Հետո դա վերածվեց տեխնիկումի: Միասին ավարտեցինք: Արդեն համակրում էինք իրար: Տեխնիկումից հետո՝ 1929 թ. ինձ ու Սիրուշին նշանակեցին ամերիկացիների ստեղծած անասնապահական ֆերմայում զոոտեխնիկներ: Սիրուշը տեղի մանկապարտեզում էր աշխատում, թողեց գյուղատնտեսությունը՝ դաստիարակչուհի դարձավ: Ես գնացի Կիրովական՝ պարտադիր զինծառայության:

1931 թ. ես ընդունվեցի Համալսարանի երկրաբանական ֆակուլտետ: Ես զինվորական պայոկ էի ստանում: Սիրուշի հետ ամուսնացա:

Քաղաքում առաջին անգամ կազմակերպեցին ջազ խումբ՝ կրկեսում նվագելու համար: Ես ընդունվեցի էդտեղ որպես փողհար:

1936 թ. կինո «Մոսկվան» բացվեց, էդտեղ էինք նվագում: Մեր ջազի հիման վրա կազմակերպվեց Արտեմի Այվազյանի խումբը՝ 1936 թ.: Մեր դաշնակահարը Ռոբերտ Աթայանն էր:

* Գևորգ Դեմիրճյան – Դերենիկ Դեմիրճյանի եղբայրը, դաշնակցական, Ն. Աբրահամյանի աները (Մ.Բ.):

ԱՋՆԻՎ ԱՍԼԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՎԱՆ, ԱՐՇԱԿ ԶՐՋ., ԽԱՌԱԿՈՆԻՍ Գ.)

Քյուրդ Սայիդը մեր տան երդիկից մտել էր, իմ պապին կապել էր սյունից և հորեղբորս սպանել էր: Մյուս հորեղբայրս տեսել և սպանել էր քյուրդ Սայիդին: Մերոնք ստիպված Մանդան գյուղից գաղթել էին Խառակոնիս: Քանի որ քյուրդ լամուկները, եթե իմանային, կգային սրի կանցկացնեին մերոնց:

Հետո ես եմ ծնվել, Նահապետ Քուչակի ծնված Խառակոնիս գյուղում: Ես որ ծնվել եմ, ծնող ներս մահացել եմ մալարիայից: Քյուրդերը մեզ հետապնդել են: Պապս ու տատս վերցրել են ինձ, տեղափոխվել ենք Վան:

Հիշում եմ մեր Վանի տունը: Հարուստները մի քանի հարկանի, քարաշեն տներ ունեին, մեր տունը մի հարկանի էր, մի սենյակ ու մի հացատուն: Մենք ապրում էինք Այգեստանից դուրս: Մեր տան առաջով հոսում էր Շամիրամի անունով գետը: Կանայք էդտեղ խալիչա էին լվանում: Շուկան խաչփողան փողոցում էր: Իմ խնամակալը Պետրոս հորեղբայրս էր ու նրա կին Մարգարիտը: Խեղճ կինը գուլպա էր գործում, որ մեզ պահի: Նա երկու աղջիկ ուներ, բայց մահացան: Ես որբ էի, դրա համար ինձ սիրում էին ու երես էին տալիս: Ես շատ ճարպիկ էի, պարում, երգում էի: Հորեղբայրս, որ ապրանք էր բերում, թուրքերին ծախում, ես սովորել էի թուրքերեն հաշվել թվերը:

Վանում դպրոց կար, բայց ես երեք տարեկանից գնացել եմ գերմանական որբանոց: Իմ ձեռքս քարե տախտակ տվին: Այնտեղ ուսում առի, գերմաներեն սովորեցի: Մինչև ութ տարեկանս, այսինքն՝ մինչև գաղթը, մնացել եմ նրանց մոտ: Մեր գերմանուհի վարժուհիները շատ հոգատար էին, մեզ հաճախ տանում էին զբոսանքի: Իրենք հեծնում էին ձիերի վրա, իսկ մեզ՝ ֆուրգոնով տանում էին Վարագա սար, որ Վանի արեվելյան մասում էր գտնվում: Այնտեղ կար Ս. Գր. Լուսավորչի վանքը, այնտեղ տղաներն էին սովորում: Մի անգամ ամռանը մեզ տարան Կարմրավոր, խաղացինք, խավարծիլ քաղեցինք, կերանք, խմեցինք, մաև եկանք վանքը, Մոների դուռը: Տոներին մեզ թույլ էին տալիս տուն գնալ: Ամառն էլ տուն էինք գնում: Հարյուր հիսուն աղջիկ և հարյուր հիսուն տղա կար: Հինգ հարկանի բալկոններով քարե շենք էր: Կառավաթներ չկային: Անկողինները իրար կողքի շարված էին գետնի վրա: Այդ որբանոցը գործում էր շվեյցարական բարեգործների օգնությամբ: Ամեն մեկս մեր ընկարը ղրկում էինք մի ընտանիքի, այդ ընտանիքը որդեգրում էր նրան, նվերներ ուղարկում տոներին: Նրանք մեր բարերարներն էին:

Մեր Վանում ամեն փողոցում եկեղեցի կար: Մեր

* Գևորգ Դեմիրճյանի դուստրը (Մ.Բ.):

փողոցը կոչվում էր Շեմ փողան: Մեզանից էն կողմ թուրքերն էին ապրում:

Տոներին, օրինակ՝ Զատիկին, ձու էինք խաշում, դուրում աուսնով մի խոտ կար, դրանով կարմիր էինք ներկում: Իրարու տներ էինք գնում, շնորհավորում: Հարուստները նոր հագուստ էին հագնում: Նոր տարուն աղաձնի էին անում: Վաճառականները արտասահմանից բերում էին բաղամ, արմավ: Մեզ էլ չոր մրգեր էին նվիրում՝ թաշկինակների մեջ կապված: Որբանոցում տոնածառ էին զարդարում: Ս. Ծնունդը նս տոնում էինք: Ս. Խաչին հարիսա էին եփում: Գերմանուհի վարժուհիները առաձնին իրենց սենյակում էլ տոնում էին: Վարդավառին մեր տներում էինք լինում, իրար ջրում էինք: Հայերը, թուրքերը և ասորիները իրար հետ հաշտ ու խաղաղ ապրում էին: Արհեստավոր ատաղձագործներ, երկաթագործներ ունեինք: Ասորիները արհեստավոր չունեին, առևտուր էին անում: Թուրքերը նս առևտուր էին անում հայերի հետ: Իսկ քրդերը անպետք էին, իրար ծեծում, սպանում էին:

1915 թ. ամռանը առաջին գաղթը եղավ: Մեր որբանոցի գերմանացի վարժուհիները ասին. «Ով ուզում է մեզ հետ գա՝ թող գա, ով չի ուզում՝ գնա իր հարազատների մոտ»: Ես միացա իմ հարազատներին: Հորեղբորս ընտանիքի հետ գաղթեցինք: Ամոռան շոգին մեկ ամիս ճամփա եկանք, հասանք Իգդիր: Խոլերան տարածվեց: Մեր գերդաստանից ութսուն հոգի մահացավ: Մենք անցանք Էջմիածին: Կաթողիկոսը օրական երկու ոչխար մորթել էր տալիս, ճաշ էին եփում, գաղթականներին բաժանում: Իմ հորաքույրը եկավ, մեզ գտավ, տարավ Օշականի եկեղեցու բակում դպրոց կար, էնտեղ իրանց տեղ էին տվել, որ ապրեն: Հետո եկանք Ջրվեժ: Հետո հայերը նորից գնացին Երկիր: 1917 թ. նորից գնացինք Վան: Հորաքույրս երկու երեխա ուներ, ես էլ՝ երեք: Մեզ հորաքույրս տարավ Վան: Մեկ ամբողջ օր սայլով գնացինք, Խառակոնիս գյուղ հասանք: Վանում մնացինք 1917 թ. հոկտեմբերից մինչև 1918 թ. ապրիլ ամիսը:

Հորեղբայրս լսել էր, որ ես հորաքույրիս մոտն եմ, եկավ ինձ տարավ Վան, որ էնտեղ դպրոց գնամ: Դպրոց գնացի մինչև 1918 թ. ապրիլը: Հետո թուրքը նորից հարձակվեց, չորս կողմից պաշարեց, ժողովրդի մեծ մասին կոտորեց: Ինձ որպես որբի դրին ֆուրգոնը ու տարան: Ճանապարհին սպասեցի, որ հորաքույրիս ընտանիքը կգա, բայց հորաքույրս և ամուսինը գնացել էին Արաբիա, իսկ հորեղբորս սպանել էին թուրքերը:

Երկրորդ գաղթի ժամանակ ճանապարհը շատ դժվար էր: Ջանիկ գյուղը անցանք, Բերկրի գյալի ջուրը տարավ իմ հորաքրոջ փոքր երեխային: Տարիներ հետո իմ հորաքրոջ տղան հայրենադարձվել, եկել էր Հայաստան, պատմեց, որ իր քրոջը ջուրը գցեցին: Իմ կոշիկները ֆուրգոնի մեջ կորան: Ես մնացի չուլկիով: Դեռ ցուրտ էր ու ձյուն: Ռեդիս ինձ գտավ գաղթի ճամփին: Նա ռուսական բանակի մեջ էր: Ինձ տվեց իր քուրքը, որ չմրսեմ, տարավ իր հրամանատարի մոտ, ասաց. - Էս իմ քուրս անտեր է մնացել, ի՞նչ անեմ:

- Գիշերը վերցրու մոտդ, - ասաց հրամանատարը, - առավոտը վիրավորների ֆուրգոնը կդնենք, կգնա:

Ռեդիս ինձ տվեց սուխարի և շաքար: Հրամանատարը իր ընտանիքի հետ սենյակում քնեցին, ինձ թողեցին կորիդորը: Ես վախենում էի, բայց առավոտյան ինձ դրեցին ֆուրգոնի մեջ ու շարժվեցինք: Մի գիշեր մնացինք Ռոմուսում: Գիշերը քնեցինք բաց դաշտում: Ես գլուխս քարին դրի, քնեցի: Առավոտյան արթնացա, տեսա բոլորը գնացել են: Սկսեցի լաց լինել: Չորս կողմս մարդ չկա: Հանկարծ ձիու խրխինջ լսեցի: Տեսա հարյուր քայլի վրա մի ընտանիք կա: Ես վազեցի, ասի. - Ծնող չունեմ, հորեղբորս սպանեցին: Ես գիշերը մնացել եմ քնած, անտեր ու անտիրական:

Մարդը ասաց.

- Մի՛ վախի, ես քեզ ֆուրգոնով կտանեմ, կհասցընեմ, - տարավ հասցրեց գաղթականներին:

Անցանք Սավուխլուն, Հին Բայազեդը, Իգդիրում որբերին հավաքեցին: Ինձ նման շատ որբեր կային: Գնացի, ինձ ցուցակագրեցին, մազերս խուզեցին, լողացրին, տաք ճաշ տվին: Տասը օր տաք ճաշ չէի կերել: Իգդիրում տեսա Անդրանիկ Զորավարին՝ բուխարի փափախը գլխին: Մեր դաստիարակները մեզ ֆուրգոն դրին, տարան Մարգարա: Գիշերը քնեցինք, առավոտը շարունակեցինք մեր ճանապարհը:

Արդեն ամառ էր: 1918 թ. եկանք, հասանք Երևան: Երկու օր պահեցին մի հանրակացարանի պես տեղում: Ինձ ու մի ուրիշ աղջկա տարան որբանոց: Այնտեղ մեր գերմանական որբանոցի մեր աղջիկ որբերին տեսանք, շատ ուրախացանք: Ես մնացի էդ որբանոցում: Էնտեղ ես տիֆ ստացա: Ինձ տարան հիվանդանոց, հազիվ մահից պրծա: Հետո նորից բերին որբանոց: Ամերիկացին տասը հազար հայ որբերիս հավաքեց, տարավ Կարս: Էնտեղ մեզ ցուցակագրեցին, բժշկական քննության ենթարկեցին, որ տանեն Ամերիկա, բայց թուրքը վրա տվեց: Էս անգամ թուրքերը հարձակվեցին Կարսի վրա: Թուրքը ամեն գիշեր ռմբակոծում էր Օլթիից, Սարիղամիշից: Գիշերները լսում էինք: Քիչ-քիչ էդ ձայները մոտեցան մեզ: Մի օր էլ լսեցինք, որ թուրքը լցվել է Կարս: Թուրքերը խշտիկներով կոտրում էին մեր որբանոցի ապակիները, որ ներս մտնեն: Մեծ որբուհիները իրենց երեսներին ցեխ սկսեցին քսել, որ թուրքերը իրենց չփախցնեն: Մեր ամերիկուհի տնօրենը ամերիկյան դրոշը բարձրացրեց և աղ ու հացով գնաց թուրքերին ասաց, որ սա որբանոց է: Մեր կողքին կազարմաներ կային: Էնտեղ հայ կիներ կային: Թուրքերը մտան էդ բոլորին տկլորացրին, հետո էլ տկլոր-տկլոր դրանց դիակները գետին փռեցին: Մենք ութը օր մնացինք որբանոցի մեջ փակված: Հետո ամերիկացիները մեր մթերքները լցրին ավտոների մեջ, մեզ տեղափոխեցին Ալեքսանդրապոլ:

1920 թվին թուրքը եկավ Ալեքսանդրապոլ: Արդեն Ալեքսանդրապոլում բոլշևիկություն էր: Թուրքերը քոչեցին, ետ գնացին: Մենք Կազաչի պոստի կազարմաներում ապրեցինք: Դպրոցում ձեռագործ, կար ու ձև սովորեցինք, մինչև 1929 թ. էնտեղ մնացի: Ես արդեն անգլերեն գիտեի, նույնիսկ մեքենագրում էի: Երբ հրաժեշտ էի տալիս, ամերիկուհի միսս Մերին, միսս Մաքան, միսս Հիլը և միսս Ռիփլրը ինձ համբուրեցին:

Քսանհինգ տարեկանից հետո որբ աղջիկները

գնում էին տեքստիլ գործարանում աշխատելու և կամ ուղարկում էին ուսումը շարունակելու: Տղաները առանձին էին, աղջիկները՝ առանձին: Պոլիգոնում արդեն ամեն կողմից գալիս էին, հարսնացու էին ընտրում: Նայում էին արտաքինին, շարժուձևին: Գնում, ասում էին ամերիկուհի տնօրինուհուն, նա էլ ընտրներ էր տալիս, առոք-փառոք ճամփու էին դնում:

Հետո ես մանկավարժական տեխնիկումն ավարտեցի: Գնացի Ղուկասյանի շրջան աշխատելու: Այնտեղ ամուսնացա արթինցի մի տղայի հետ: Երեք երեխա ունեցանք: 1933-ին տեղափոխվեցինք Երևան: Ամուսինս համալսարանավարտ էր, սկսեց Մատենադարանում աշխատել, ես էլ էնտեղ բիբլիոգրաֆ էի, ցուցակներ էի մեքենագրում:

Երբ Հայրենական պատերազմն սկսվեց, ժողովուրդը խանութներում ինչ մթերք կար, լցրեց տները: Ամուսինս կամավոր բանակ գնաց: Աշխատեց որպես քաղղեկ: Հետո տարան Կերչ, որտեղ և զոհվել է որպես անհայտ կորած:

Հիմա ուրախ եմ իմ երեխաներով ու թոռներով: Արդեն ութսուն տարեկան եմ: Մեր երիտասարդներին ցանկանում եմ առողջություն, երկար կյանք և նպատակների իրականացում: Մեր անմեղ զոհերի հիշատակը հավերժացնելու համար՝ նրանց ոսկորներին հանգստություն: Բյուրդերից ու թուրքերից կուզեմ վրեժխնդիր լինել: Բանի որ նրանք իմ ծնողներին սպանեցին, և ես որբ մնացի: Ամբողջ կյանքում ծնողքի կարոտ մնացի:

40 (40).
ՔԱՋԲԵՐՈՒՀԻ ԱՎԵՏԻՍԻ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՎԱՆ)

Մեր երկիր Վանը շատ լավն էր: Մենք ապրում էինք Զաղլի փողանում: Էդ լավ փողոց էր, փողոցի ջուրը երկու կողմից գլգլալեն կիոսեր, կլցվեր ավազանի մեջ:

Ունեի չորս հորեղբայրներ, որոնք առանձին էին ապրում մեր բակում: Ունեինք շատ անասուններ: Հայրիկս և՛ դյուրգար էր, և՛ զինագործ:

Մեր ընտանիքը տասներկու հոգի էինք: Մայրս դերձակուհի էր, ուներ երկու աղջիկ: Ես ամբողջ մանկությունս երազներով եմ ապրել, մինչև Վանից դուրս եկանք:

Հայրիկս՝ Ավետիսը, խելոք մարդ էր, հենց լսել էր, որ թուրքերը գալու են, մեզ հավաքեց ու նախքան ջարդը դուրս եկանք: Հայրիկս զինված էր, մորս ընտացրեց ձիուն, ինձ ու իմ քրոջը խուրջինի մեջ դրեց, յալլա՛, ճամփա ընկանք: Մեզ հետ էին նաև հորեղբորս ընտանիքը և տատիկս:

Ճամփին արդեն լսում էինք թուրքական թնդանոթների ձայները: Մենք մտնում էինք քարերի տակ: Ես վախից լաց էի լինում: Հորեղբայրս ինձ գտավ, կերակրեց: Գաղթականությունը մեր ետևից գալիս էր: Քարերի մեջ մարդիկ էին պառկած: Ես գիտեի, թե դրանք ողջ են: Դու մի ասա, դրանք սպանված են, թաղող չկա: Թնդանոթի կրակոցները դղրդով գալիս էին: Անգամ տերտերը գետնին ընկած մեռած էր, իր ալին-օյինքը թողել էր քարի տակը: Մայրս նրա հագուստները վերցրեց, բերեց հանձնեց Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցին: Ռեդիս ճամփին մահացավ:

Մեզ օգնեցին անգլիացիներն ու ամերիկացիները: Լավ կերակրեցին, հագցրին, մաքրեցին, կրթություն տվին:

Հետո թուրքերը հարձակվեցին Երևանի վրա: Հայրիկս քաանհինգ հոգու հավաքեց, զինեց ու հարձակվեց թուրքերի վրա: Նա խմբապետ էր, մասնակցել է նաև Սարդարապատի ճակատամարտին: Հազիվ ձիով գալիս էր տուն, նորից էին կանչում, որ թուրքերի դեմ կռվի գնա:

1932-ին և 1937-ին հորս, որպես ցացիոնալիստ, բանտարկեցին: Ամբողջ իր պատրոնները, թվանքը թաղել էր հողի մեջ: Խեղճ հորս բռնեցին ուղարկեցին Տաշքենդ, էնտեղ էլ մեռավ: Ասին՝ սովից է մեռել:

41 (41).
ՍԻԼՎԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲՅՈՒԶԱՆԴՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՎԱՆ)

Մեր ընտանիքը Վանում մշակույթի ընտանիք էր: Ֆրանսիացիները եկել էին Վան՝ իրենց լեզուն տարածելու: Պապս մեր տան մեջ մեկ սենյակ հատկացրել էր նրանց, որ պարապմունքներ անցկացնեն: Եվ այդ դպրոցը կոչվում էր Բյուզանդյանների դպրոց:

Մենք շատ մեծ գրադարան ենք ունեցել, որը մշտապես հարստանում էր արտասահմանում տպագրված գրքերով: Մեր տան մեջ նաև մեկ սենյակ հատկացված էր Խրիմյան Հայրիկին, որ նա երբ վերադառնում էր իր շրջագայություններից, գալիս էր այդ սենյակում հանգստանում:

Հայրս շատ շնորհալի մարդ է եղել, հաճախ կուսակցական ժողովներին մասնակցել է և ազատորեն խոսել, շատերը նրան ասում էին՝ Հովհաննես, դու ոսկե բերան ունես:

Վանում շատ երկար ժամանակ խլրտումներ կա-

յին: Թուրքերը եկան, հարձակվեցին Վանի և նրա շըրջակայքի հայության վրա:

Մի օր էլ հրաման եղավ, որ պիտի գաղթենք: Թուրքերը հարձակվեցին խաղաղ բնակչության վրա: Վանեցիները ստիպված ոտքով գաղթեցին: Այդ ժամանակ իմ ծնողներն ինձ կորցրեցին: Ռուս զինվորները ինձ վերցրին, պահեցին: Հանկարծ իմ կնքահայրը ինձ տեսնում է ու ճանաչում, վերցնում է ինձ դնում ձիու խուրջինի մեջ ու առաջ գնում:

Թուրքերը քրոջս փախցրին՝ Սիրվարդին: Նա շատ գեղեցիկ աղջիկ էր և շնորհալի: Շանթի «Հին աստվածներ»-ի մեջ Սեդայի դերն էր կատարել:

Թուրքերը կոտորում էին, ում որ պատահեր: Կտրատում էին մարդկանց ձեռքերը, ոտքերը, ճակատներին մեխ էին խփում, աչքերն էին հանում: Երեխաներին ծնողների առաջ էին կոտորում, ծնողներին՝ երեխաների առաջ: Եվ հաճույք էին զգում, տեսնելով այդ բոլորը: Նրանց նպատակն էր՝ մինչև վերջին հայը կոտորել, և մեկուկես միլիոն հայ զոհվեց:

Մենք եկանք Իգդիր՝ բոլորովին տկլոր, քանի որ մեզ կողոպտել էին: Սոված էինք ու ծարավ: Հետո անցանք Արաքս գետը: Իմ հարազատներից շատերը մեծահասակ էին, չէին կարող քայլել, դրա համար մնացին Վանում և կոտորվեցին: Տիֆի համաճարակը ևս մեզնից շատ զոհեր խլեց: Սով, հիվանդություն, աճյուններ վիճակ:

Բայց այդ բոլորը ներոսաբար տարանք և դիմացանք:

42 (42).
ՍԱՐԳԻՍ ԲԱԴԱԼՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(Ծ.Ն.Վ. 1909 Թ., ՎԱՆ, ՈՍՊԻՏԱԿ Գ.)

Մեր գյուղը Վանից վեց կիլոմետր հեռու էր: Ես հիշում եմ, երբ մենք գյուղից դուրս եկանք ու գաղթի ճամփան բռնեցինք, Վանը արդեն գաղթել էր: Երբ հասանք Վան, մենք միացանք վանեցիներին: Իմ տատը և պապը մնացին մեր գյուղում, իրենց ուզեցվածքից չբաժանվեցին:

Գիշերը քրդերը գալիս էին ու վրա տալիս, մերոնք դիմադրում էին: Սոված, ծարավ քայլում էինք: Առաջ անասունները կոտորվան, մեր բեռները թալանեցին: Մենք հասանք Բանդիմահի գետի մոտ, որը շատ ուժեղ հոսանքով գետ էր: Ժողովուրդը մտնում էր գետը, որ անցնի, բայց գետը շատերին քշեց ու տարավ:

1915-ին էկանք հասանք Էջմիածին, բայց սով էր: Նիկոլի զորքը ետ գնաց Վան, մենք էլ հետը գնացինք Վան: Երկու տարի Վանում լավ ապրեցինք: Երբ Նիկոլը ընկավ, մեր կյանքն էլ դեպի վատը գնաց: Նորից գաղթի ճամփան բռնեցինք: Ոտքով գալիս էինք: Արդեն շատ հոգնել էինք: Ես ու քույրս փոքր էինք: Մայրս մեզ քնացրեց: Երբ արթնացանք, տեսանք գաղթականները առաջ էին գնացել: Մենք՝ ետ մնացողներս, քիչ չէինք, շատ էինք, բայց մենք ճանապարհ ցույց տվող չունեինք: Մի կին ասաց. «Ես գիտեմ ճամփան»: Նա տարավ, տարավ, Պարսկաստանի սահմանը տարավ: Դրանք մեզ տեսան, ուրախացան: Սկսան մեզ թալանել: Մեր հագուստների կոճակները բացում էին, տկլորացնում էին, թքում էին մեզ վրա: Մենք զենք չունեինք: Մեզ տարան ասորի գերիների տեղը: Մենք խառնվանք դրանց հետ: Դրանք ուտում են, մենք՝ նայում: Մենք սոված ենք: Մենք մեկ ամիս էդտեղ մնացինք: Գնում էինք դաշտը, առվույտ էինք քաղում ուտում, սունկ էինք քաղում՝ ուտում: Թուրքերը սրի քաշեցին ասորիներին:

Մենք դուրս ելնելու իրավունք չունեինք: Մեր ընտած տեղը կեղտոտում էինք: Թուրք փաշաները գալիս էին, առնանգում էին աղջիկներին ու կանանց, հետո ետ էին բերում մեռած վիճակում: Մայրս էնտեղ երեխա ունեցավ: Բալուլը դրին լուսամուտը: Ատտուն ելանք, տեսանք մերս արյունաքամ էր եղել ու մաճացել էր: Քաշ տվին, մորս տարին թաղելու: Մի կին ինձ ու իմ քրոջը տեր կանգնեց:

Անցավ ժամանակ, Անդրանիկ Զորավարը լսում է, որ հայ գերիներ կան էնտեղ, գալիս է, մտնում է Դիլման քաղաքը, շրջապատում է: Միջի ժողովուրդը լսում է, որ Անդրանիկ Զորավարը եկել է, իրենց խաղութները բաց թողած, ոսկին, արծաթը, մետաքսը թափած թողնում են ու փախչում:

Անդրանիկ Զորավարը էդ տեղի թուրքերին ու պարսիկներին կըսե. «Դուք բերեք հայ գերիներին տվեք ինձ, ես ձեր ազգի գերիներին կտամ ձեզ»:

Մեզ հանին ճամփա: Բայց մերոնց կեսը արդեն կոտորվել էր սովից: Տասը ասկյար ձիերի վրա, մենք՝ ոտքով: Ով ետ է մնում, հարվածում են: Սպանելու իրավունք չկա, քանի որ Անդրանիկին պիտի հանձնեն: Մութը որ կոխեց, մեզ լցրին մի գոմ, իրար վրա սեղմված մնացինք:

Առավոտյան մենք մոտեցանք առվույտի դաշտին, սկսանք ուտել: Մեր գաղթականությունը մեզ տեսավ, եկավ, տարավ, մեզ ճաշ տվին, բայց ճաշը կոկորդից վար չի գնում: Երկու օր մնացինք, էնտեղ հերս մեզ գտավ: Ինձ շալակեց, քույրս քայլելով՝ գնացինք Դիլման քաղաքը, որ Անդրանիկը վերցրել էր: Մեր ժողովուրդը, որ սոված էր, թողեց, որ մտնենք բաց թողնված խաղութները ու վերցնենք ինչ-որ կարող ենք: Ալ ի՛նչ ասես՝ մետաքս, ոսկի, արծաթ վերցրինք, մորքուրս մեկ մեշոկ ցուղ բերեց, ուրախացանք: Բայց մեզ վրա շատ թանկ նստավ էդ թալանը: Քյուրդերը լսել էին, որ մենք Դիլման քաղաքը թալանել ենք, գիշերով երկու սարի մեջտեղը մեզ վրա հարձակվեցին, սկսեցին մեզ թալանել, սպանել: Մենք զենք չունեինք, որ պաշտպանվեինք: Մեր ամեն ինչը թալանեցին:

Էկանք, հասանք Անգլիայի մի գաղութը: Մեր պաշտպան Լևոնը իր բանակով եկավ հանգստանալու, որ հետո իր բանակով գնա Նաիրի Օմար: Սպիտակ հագած երկու անգլիացի ձիավոր եկան, ասին. - Ձեր Լևոնը ու՞ր է:

Մի միամիտ մարդ ասեց. - Է՛ս ա, - ու ցույց տվեց Լևոնին:

Դրանք խփին Լևոնին, մեր քաջ, հայրենասեր Լևոնին: Դու մի ասա, դրանք թուրք են՝ անգլիացու շորեր հագած էին:

Մեր քարավանը շարժվեց դեպի Միջագետք: Մեր դեմը երևացին սև զինվորներ՝ կարճ շալվարներով, զենքերով: Դրանք անգլիական զինվոր էին, բայց սև էին, երեսները սևությունից փայլում էր: Մեզ տարին Նաիրի Օմարի վրանաքաղաքը: Էնտեղ անգլիացիները մեզ լավ նայեցին: Զադրների տակը տասնապետներ նշանակեցին, դիսցիպլինա դրեցին, մեզի աշխատանքի տարան, երբ հիվանդություն ընկավ մեր մեջ, բժիշկներ բերեցին, բուժեցին: Հայ որբերիս հետ որբանոցում նաև քյուրդ որբեր կային: Ես ու քույրս որբանոցը միասին էինք: Մենք հինգ հարյուր տղա ու աղջիկ էինք, ոչ մի անախորժություն չէր լինում: Հայրս Նաիրի Օմարում մահացավ, մնաց հորաքույրս, որը ամուսնացավ արճակցի Խաչիկ Ոսկանյանի հետ: Նա տասնապետ էր վրանների տակ: Նա մեզ պահեց, բայց խորթ աչքով էր նայում:

Մի պր. Հարություն Բաղդադից լսել էր մեր մասին, եկավ մեզ տեր կանգնեց: Նա գնաց Հնդկաստան, հայ հարուստներից փող խնդրեց, որ նյութապես օգնեն: Հարուստները փող են դնում: Պր. Հարությունը ուրախ եկավ, նույնիսկ մի գրամոֆոն հետը բերեց, որ Շահմուրադյանի և Կոմիտասի պլաստինկաները լսենք, զարգանանք:

Մենք անապատի մեջն էինք: Լսեցինք, որ կիլիկիացիները կովի մեջ են, մենք ալ ուզեցինք անոնց օգնել: Դիմեցինք անգլիացիներին: Անոնք մեզ մարզեցին: Արդեն թուրքը պարտվել էր, բայց Քլեմանսոն՝ Ֆրանսիայի պրեզիդենտը, հրամայեց ֆրանսիական զորքին՝ ետ քաշվել: Եվ բոլոր մեր պլանները ջուրն ընկան:

Եփրատը մարմանդ էր ու լայն: Թուրքերը հետևում էին մեզ: Նրանք արաբների հետ խոսքը մեկ էին արել, որ Տիգրիսը կտրեն ու մեզ՝ հայերիս, կոտորեն: Ծառերի միջից գնդակները գալիս էին դեպի մեզ:

Մենք ասինք անգլիացիներուն: Նրանք ասին՝ բանակ կազմեք: Անգլիացին պաշարեց: Սամալիոթը քշեց, բամբիտ արեց:

Երկու նավ բերին: Անիվով նավեր էին: Մտանք: Սուեզի ջրանցքով Կարմիր ծով մտանք, հետո Երուսաղեմ հասանք: Պր. Հարությունը մեզ հրաժեշտ տվեց: Մենք մի խալիչա նվիրեցինք իրեն: Պր. Հարությունը ասեց. «Ես կենդանի հիշատակ եմ ուզում»: Ու մի որբուհու առավ որպես իրեն կին: Էդ գիշեր հարսանիք արինք, ուրախացանք:

Երուսաղեմի Եղիշե պատրիարքը մեզ՝ որբերիս, շատ լավ ընդունեց: Ի՜նչ մարդ էր է, ոնց որ Աստված լիներ, խղճով մարդ էր: Էնտեղ Ս. Հակոբա վանքին մեջը տպարան կար, թանգարան կար: Զատիկ էր լինում, Էնտեղ Ս. Հարությունն եկեղեցին կլոր, բարձրահարկ էր, երկաթե դարպասներով: Ամեն ազգ իր համար առանձին տեղ ուներ: Կենտրոնը մի մատուռ կա՝ Հիսուսի գերեզմանն է՝ մարմարից սարքած: Մնկաչոք պիտի գնաս մինչև էնտեղ: Զատիկի առավոտը դարպասը բացվավ, ժողովուրդը խուժեց ներս: Ամեն տարի Զատիկին էդ մատուռից մի վառած մոմ դուրս են գցում: Ամեն ազգից մեկը կանգնած է, որ առնի, տանի իր պատրիարքին: Ամեն տարի հայերը հաղթում էին: Խալիչաները փռել էին գետնին: Մի հովանոց բռնել էին պատրիարքի գլխին: Հայ բարեգործական միության նվագախումբը նվագում էր: Եթովպացիների թագավորն այնտեղ էր, ասաց. «Հինգ տարով կտանեմ էս նվագախումբը, որ իմ պալատի մեջ նվագեն»:

1924 թվին արդեն Խորհրդային Հայաստան կար: Մեր տեսուչն ասաց. «Մեծ տղաներին (որբերին) ղրկենք Հայաստան: Ո՞վ է ուզում Հայաստան գնալ»: Ես քույր ունեի՝ չմասնակցեցի: Մոտ հարյուր հոգի ղրկեցին Հայաստան: Ով որբերին տարել էր Հայաստան, չթողին որ ետ գա: Ինձ ու միջակներին ղրկեցին Քելեկյան որբանոց, որը Բարեգործականի աջակցությամբ էր գործում: Մեր տեսուչը՝ Եղիշե Վարդանյանը, հրաժեշտ տվավ մեզ: Վերջում ասաց. «Տղաներ, ես ձեզ էսքան տարի մեծացրել եմ...», էլ չկրցավ խոսիլ, հուզվեց: Գնաց Ամերիկա:

Մեզ բերին Քելեկյան որբանոց: Տղաներին տանում էին վարպետների մոտ, որ արհեստ սովորեն: Ես կաճույք սարքել սովորեցի: Արաբ ժողովուրդը շատ լավ ժողովուրդ է: Մեզի շատ լավ ընդունեց ու պահեց: Հրոջս թողեցի, 1930 թ. գնացի Ֆրանսա: Գնացի շինարարության վրա աշխատեցի: Հետո խաղողի այգիների մեջ աշխատեցի: Հոն մնացի տասնյոթը տարի: 1947 թվին եկա Հայաստան: Կաճույքի գործարանը մտա աշխատեցա: Ամուսնացա, հինգ երեխաների հայր դարձա:

43 (43).
ՎԱՐԱԶԴԱՏ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ* ՊԱՏՄԱԾԸ
(Ծ.Ն.Վ. 1909 Թ., ՎԱՆ)

Ծնվել եմ Վան քաղաքի Այգեստաններում, Չաղլի փողանում: Իմ մայրն ասում էր՝ ամեն աշուն մեկը կգլորեինք, այսինքն՝ մի զավակ կունենայինք: Հայրս ու մայրս ունեին յոթը երեխա՝ չորս որդի, երեք դուստր:

Մենք ապրում էինք Չաղլի փողանում, նահապետական մի տան մեջ: Փողոցի կողմում ապրում էր իմ Զատիկ տատիկը, որը չուզեց տունը թողնել և նահատակվեց: Մի կողմում հորեղբայրներս էին ապրում, մյուս կողմում՝ մորեղբայրներս: Բայց հիշարժանը մեր

* Վաստակավոր ճարտարապետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Վասպուրական» հայրենակցական միության պատվավոր նախագահ:

այգիներն էին: Հորեղբայրս՝ Տեր-Արթինեանց Հարությունը ծաղիկներ էր աճեցնում: Ում տանը որ ուրախություն լիներ, գալիս ծաղիկ էին տանում:

Հայրս գնացել էր Պոլիս դարիբության, սովորել էր դերձակություն և վերադարձել Վան: Մենք ապրում էինք խաղաղ, երջանիկ ու ստեղծագործական կյանքով:

Հիշում եմ Վանի 1915 թ. իրադարձությունները՝ ապրիլի 7-ին սկսվեց հայերի ապստամբությունը, որը մայիսի 4-ին հաղթանակով ավարտվեց: Թուրքերը շատ վայրագ էին: Շատ նշանավոր հայ մտավորականների նախօրոք բանտարկել էին: Նրանց մեջ էին Արշավիր Սոլախյանն ու իր ընկերները, որոնց բոլորին սպանել էին թուրքերը: Ամբողջ ժամանակ կրակոցները գալիս էին Հաղաքամիջում և Այգեստանում: Մերոնք սահմանափակ փամփուշտներով կովում էին բազմահազար կանոնավոր թուրքական զորքերի դեմ, որոնք լսելով ռուսական զորքերի գալուստը՝ ճողոպրեցին:

Ռուսական բանակի քաղաքականությունն էր: Ստիպված ետ քաշվեցինք: Հիշում եմ, մայրս ու քույրս հաց էին թխում: Հայրս խուրջիններ էր պատրաստում, որ մեր ունեցածը տեղավորենք:

Խաչփողան փողոցից դուրս եկանք: Մեր ունեցածը բարձել էինք կովի վրա, որն իր համար անսովոր բեռը իր թիկունքից գցեց ու փախավ: Ստիպված մեր ունեցածը մենք շալակեցինք, դուրս եկանք Վանից, դեպի Բերկրի բարձրացանք:

Բանդիմաճու կամուրջով անցնելիս վանեցիները շատ զոհ ունեցան: Կամուրջը նեղ էր, այնքան ցավալի էր, շատերն ստիպված էին երեխաներին գետը նետել:

Ամենից կատաղի կռիվների մենք հանդիպեցինք Բերկրիի մոտ: Ռուսական զորքերը երեխաներին վերցրել էին ռուսական փուրգոնների վրա, և քրդերը, որոնք էն ժամանակ վարձված էին հայերին կոտորելու համար, հարձակվեցին մեզ վրա: Փուրգոնները շուռ էին գալիս: Երեխաները ջուրն էին թափվում, և մեզ ուղեկցող ռուս զինվորները քրդերին քշեցին, որ ձորի բերանը բացեն: Նրանք քրդերին քշեցին, ձորի բերանը բացեցին, իրենք վերադարձան: Ինձ նստեցրել էին փուրգոնի մեջ: Ճանապարհին Իգդիրում մնացինք: Ոմանք դժգոհեցին, որ մենք սոված ենք ու հաց ենք ուզում:

Արաքս գետն անցանք: Եկանք, Էջմիածնի վանքի պատերի տակ գաղթականները լցված, տիֆի համաճարակից օրական հարյուրավոր մարդիկ էին մեռնում: Վիճակը շատ ծանր էր: Տներն անգամ հիվանդանոց էին դարձել: Եղբայրս՝ Գուրգենը, երբ մահացավ, ես տեսա, թե ինչպես փայտը թարս ու շիտակ շարում են իրար վրա, այնպես էլ մեռելներին էին իրար վրա շարում, որ գիշերը տանեն եղբայրական գերեզմանը գցեն:

Հայրս տեսավ, որ մենք ևս պիտի մեռնենք, մեզ հավաքեց, տարավ Թիֆլիս: Այնտեղ էին հորեղբայրս՝ Տեր-Հարությունյաններն իրենց ընտանիքով, որոնք 1896 թ. դեպքերից հետո գաղթել էին: Ես, մայրս, հայրս, եղբայրս՝ Արծրուն Հարությունյանը՝ Արաքսյայի հայրը: Մեզ տեղավորեցին Արամյան հիվանդանոցում: Այնտեղ տիֆից վախճանվեց հայրս:

Մենք մեզ գտանք որբանոցում: Ես, քույրս և եղբայրս Բարեգործականի որբանոցում ենք մեծացել, որի շենությունը Հովհաննես Թումանյանն էր իրականացնում: Նա որդեգրել էր երեք տղաների՝ ապագա բանաստեղծ Վաղարշակ Նորենցին, գրականագետ Նորայր Դաբաղյանին և Միհրան Թյությունջյանին: Թիֆլիսի Միրաձավոր վանքի բակում էր որբանոցը: Ուխտավորները գալիս էին մատաղ անելու, և մենք սնվում էինք, բայց հետո դժվարացավ:

Մեր հայոց լեզվի ուսուցիչ Մերուժ Թորգոմյանը հրատարակում էր «Համբավաբեր» հանդեսը, 1916 թ. մարտ ամսվա համարում լույս է տեսել մեր որբանոցի լրիվ ցուցակը: Այդտեղ ես երկու հարյուր չորս համարում եմ, ընդամենը յոթը տարեկան, եղբայրս՝ ինը, քույրս՝ տասնմեկ տարեկան: Ծնված օրս հայտնի չէր, ես գրեցի նոյեմբերի 29-ը՝ հայ ժողովրդի վերածննդի օրը:

Որբանոցում դրությունը շատ վատացավ: Կիսասով վիճակում ես ու եղբայրս՝ Արծրունը, որբանոցից փախանք, եկանք մեր հարազատների մոտ: Հորեղբայրը ասաց. - Տղաք, որու՞ հույսին եք եկել:

Եթե թուրքերը մեզ չկոտորեցին, ապա գաղթից հետո մեր ինը հոգիանոց ընտանիքից միայն ես, մայրս ու եղբայրս մնացինք:

Ես փողոցներում կոշիկ եմ ներկել: Ջուր եմ ծախել: Սիգարեթ եմ ծախել: Շապիկ չունեի: Մայրիկս հովանոցի կտորից ինձ շապիկ կարեց, որ դպրոց գնամ: Բայց ոտքիս կոշիկները երկուսն էլ նույն ոտքին էին: Ես ասացի՝ ես էդպես դպրոց չեմ գնա: Եղբայրս գիշերով ելել հարմարեցրել էր, և ես կոշիկները հագա:

Թիֆլիսում կար Տիգրան Նազարյանի ճաշարանը, գաղթականներին այնտեղ կերակրում էին: Իր այգու մեջ կար փայտաշեն մի թատրոն, և գաղթականներին այնտեղ քննցնում էին բեմի գետնի վրա: Եղեռնից վերապրած վանեցիների մեջ երևի ես միակ բախտավորն էի, որ առիթ ունեցա Հայաստանից գնալ և տեսնել Վանը:

Վասպուրական հայրենակցական միության կողմից կազմակերպվեց դեպի Վան-Վասպուրական խումբ. երեսունմեկ հոգուց միայն ես էի Վանում ծնված: Վանը մ.թ.ա. իններորդ դարում հիմնադրված Տուշպա քաղաքի վրա է կառուցվել:

Մենք չորս օր մնացինք Վանում: Բարձրացանք Վանի բերդը: Հուզումնալից պահեր ապրեցինք Վանում: Ոչ մի եկեղեցի չի մնացել: Վանը վերածվել է նոր քաղաքի, որտեղ ապրում է հարյուր յոթանասուն հազար բնակիչ: Իսկ մեր ժամանակ՝ երեսունհինգ-քառասուն հազար էր, որի մեծ մասը հայեր էին:

Եղեռնը հիմա վերաբերում է հայկական հուշարձաններին:

44 (44).
ԱՐԾՎԻԿ ԳԱԼՈՒՍՏԻ ԹԵՐՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ՎԱՆ)

Մեր տունը Վանի Խաչփողան փողոցումն էր, այն երկու հարկից էր՝ շրջապատված վարդերի թփերով: Մենք խաղաղ ապրում էինք: Մեզ հարևան էին Խաճջյանները, Արարքցյանները, Դերձակյանները:

Նախքան պատերազմը հայրս փախել էր թուրքական բանակից: Նրան գտել, բանտ էին տարել, նա բանտից էլ էր փախել, և թուրքերը հետապնդում էին, քանի որ ինքը նաև դաշնակցական էր: Երբ փախչելով հասնում է տան մոտ, պիտի պատից թռչեր, մի թուրք նկատում է և կրակում, այնպես որ, հայրս արդեն չկար:

Մենք ութը հոգի էինք գաղթի ժամանակ: Ճանապարհը շատ դժվար էր, բոլորը հոգնած էին, սոված: Ճամփին մեռածներին թողնում էինք ու առաջ անցնում, քանի որ թուրքերը մեզ հետապնդում էին: Ռուսական զորքը մեզ տիրություն էր անում: Սուխարի բաժանեցին: Մենք մնացինք անտեր, անտիրական: Որբ մանուկներին հավաքում էին, ինձ ու քրոջս՝ Արմիկին ևս դրեցին փակ սայլի մեջ ու տարան նախ՝ Իգդիր, ապա՝ Ախիսկեմզա, հետո՝ Երևան. Նորքի Ս. Աստվածածին եկեղեցու մոտ էր մեր մանկատունը, որի ղեկավարն էր օր. Ազնիվը: Այդ մանկատունը Ամերկոմի մանկատունն էր:

45 (45).
ԼՈՒՍԻԿ ՍԱՀԱԿԻ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ՎԱՆ)

Ես ծնվել եմ Վանի Արտամետ գյուղում: Մեր ընտանիքը բաղկացած էր ութ հոգուց՝ մայրս, հայրս, երեք եղբայրներ և երեք քույր էինք:

1915 թ. ապրիլի 15-ին մեր գյուղի վրա հարձակվեցին թուրքերը և սպանեցին եղբորս: Կողոպտեցին ժողովրդին ու գնացին: Տատս ասաց մորս, որ երեխաներին առնի ու փախչեն, քանի դեռ ողջ են: Նույնիսկ չհասցրեցին եղբորս թաղել: Գյուղի տղամարդկանց բոլորին սպանեցին, իսկ մնացածները գյուղի գերեզմանների միջով փախան սարերը: Երկու քույրերս, երկու եղբայրներս և մայրս գնացին դեպի սարերը, իսկ ես կորցնելով իրենց՝ գնացի Վանա լճի ափով դեպի ամերիկացիների ամառանոցները, ուր ժողովրդի կեսը ապաստան էր գտել: Ես այնտեղ մնացի երեք օր, թուրքերը նորից հարձակվեցին: Մենք նորից վերադարձանք գյուղ, մեր հարևան թուրք կինը ինձ տեսավ, ճանաչեց, տարավ իրենց տունը, ասաց, որ ինքը գիտի, թե որտեղ են մերոնք: Նա ինձ տարավ մորս մոտ:

Հաջորդ օրը թուրքերը եկան և մեզ հայտնեցին, որ մենք պետք է գնանք Վան, որտեղ մեզ կտեղավորեն: Մինչև մեզ ճանապարհ ցույց տալը՝ տեղավորեցին զինվորների սենյակներում, որոնք գտնվում էին զինվորական տեղամասի շենքերից մեկում: Հաջորդ առավոտյան շուտ մեզ հանեցին և շարք կազմելով՝ ցույց տվին ճանապարհը դեպի Վան, որը անցնում էր իրենց զորամասի մոտի ճանապարհով: Մի կերպ հասանք Վան, որտեղ մեզ դիմավորեցին Վանի ղեկավարները և մեզ բաժանեցին ըստ տների:

Հետո եկան ռուս զինվորները, ազատեցին որոշ շրջաններ, և մենք նորից վերադարձանք գյուղ:

Որոշ ժամանակ մնալուց հետո հայրս վերադարձավ բանակից: Բայց տեսնելով, որ մեր տունը ավերված է, նա մոխիրի կույտի մեջ գտնում է իր մոր և եղբորս դիակները:

Հետո ռուս զինվորները ասացին, որ իրենք էլ մեզ չեն կարող օգնել, իրենք վերադառնում են, ով ուզի՝ կարող է իրենց հետ գնալ: Մենք երկու-երեք օրից հազիվ կարողացանք դուրս գալ մեր տնից, մինչև որ հայրս ճանապարհի սևունդ պատրաստեց: Այդ սևունդը տեղավորեցինք եզան վրա ու շարժվեցինք եկանք: Հանգըստանում էինք ջրի ափին: Ճանապարհին հայրս հիվանդացավ և նրան տարան հիվանդանոցի պես մի տեղ: Նա այնտեղ էլ մահացավ: Մենք մնացինք երկու քույր և մեկ եղբայր, սկսեցինք քայլել: Մեր մի եղբայրը կորել էր, չէինք կարողանում գտնել, իսկ Արշալույս քույրս արդեն ամուսնացել էր և իր ամուսնու հետ փախել էր: Այնպես որ, նրանց էլ կորցրել էինք:

Իգդիր լճի մոտ ինձնից երկու տարով մեծ քույրս՝ Սիրունը, մահացավ: Այնուհետև իջանք Իգդիր գյուղը, որտեղի ղեկավարությունը մեզ մի կերպ տեղավորեց: Ինձ, մորս և եղբորս ուղարկեցին Բլուր գյուղը: Ամառ էր, քնում էինք դրսում, իսկ ձմեռը՝ քուրսու կողքին: Երբ թուրքերը հարձակվեցին Իգդիրի վրա, մենք եկանք Էջմիածին: Մնացինք վանքի բակում: Հետո ամերիկացիները եկան և որբանոցներ ստեղծեցին: Այնտեղ ճաշարան էլ կար: Փոքրիկ արտադրամասեր ստեղծեցին, ուր մենք բամբակը մանում էինք, թել դարձնում և այդ աշխատանքի դիմաց սևունդ էինք ստանում: Հետո մայրս մահացավ: Մենք մնացինք մենակ: Իմ եղբայրը կույր էր, չէինք ուզում բաժանվել իրարից, բայց ինձ տարան Լենինական, որտեղ ստեղծված էր աղջիկների որբանոց: Ամերիկացիները գեղեցիկ, առողջ աղջիկներին ջոկում, տանում էին Ամերիկա: Հետո գտա Արուսյակ քրոջս, որի ամուսինը թղթերս պատրաստեց և ինձ տարավ Երևան: Բայց ես էլ երբեք չտեսա կուրացած աչքերով իմ եղբորը:

46 (46).
ՎԱՐԴԳԵՍ ՄԵԼԻՔԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1911 Թ., ՎԱՆ)

Մոտ քառասուն հոգի էր մեր գերդաստանը: Ունեի հորեղբայրներ, հորաքույր: Բոլորին կոտորեցին, բոլորին ոչնչացրին:

Պապս ունեցել է **վեց** տղա, մեկ աղջիկ: Իրենք եղել են ունևոր: Վանի կենտրոնում ունեցել են երկհարկանի շենք: Վանում հորս և հորեղբայրներիս թուրքերը սպանել են: Մեր ցեղի բոլոր տղամարդկանց թուրքերը կոտորել են: Մայրս ինձ և երկու քույրերիս շալակով բերել է: Գաղթի երրորդ օրը այլևս լրիվ ուժասպառ՝ էլ չի կարողացել տանել երկու քույրերիս, որոնք չեն կարողացել քայլել: Մայրս նրանց թողել է ճամփին և ինձ շալակած բերել է: Ճանապարհին ձեղում են սովը, հիվանդությունները: Ծանոթները օգնում են մորս մինչև Օրգով: Բայց հանկարծ մայրս էլ կորավ, ես մնացի մենմենակ: Երրորդ օրը մայրս ինձ գտավ: Հարևանները ինձ պահել էին, որ չմեռնեմ: Սով, քաղց, հիվանդություն: Մյուս կողմից էլ քրդերն էին մեզ թալանում: Ոսկի էին փնտրում: Երբ ասում էինք՝ չկա, սպանում էին: Այնպես որ, գաղթի ճամփին շատ-շատերը ոչնչացան: Սայլեր չկային: Կանայք, մանր երեխաներ ոտքով գալիս էինք՝ փոշու մեջ կորած՝ թուրքերի և քրդերի հարձակումներից խուսափելով: Մենք հիմնականում գիշերով էինք գալիս: Նախ, որ թշնամիները մեզ չտեսնեն ու մեզ վրա չհարձակվեն, և հետո, որ շոգը մեզ չսպանի: Թշնամին անխնա կոտորում էր մեծին ու փոքրին: Արդեն մեր ընտանիքի մեծ տղամարդկանց Վանում էին կոտորել:

Անցանք Իգդիրով: Արդեն մեր մեջ տղամարդ չէր մնացել: Միայն կանայք ու երեխեք էին: Անցանք Արաքսը: Եկանք Վաղարշապատ: Էնտեղ էլ սով, շոգ, ջուր չկար: Սկսվեց նոր կոտորածը: Հարյուր-հազարներ էին թափվել գետնին՝ հիվանդ ու մահամերձ: Մայրս նորից է կորցնում ինձ, քանի որ հիվանդացել էի տիֆով:

Ինձ ուրիշների հետ, որպես ծնողազուրկ երեխա, ուղարկեցին Բայազետի ամերիկյան որբանոցը: Որբանոցում պատահում էր, որ օրը մեկ պոպոք էին տալիս ամեն մեկիս: Հետո մեզ փոխադրեցին Գյումրիի որբանոցը: Մոտ քառասուն հազար որբ կար: Մեզ տեղավորեցին ձախկին զինվորական կազարմաններում՝ ըստ հասակի: Ես եղել եմ փոքրերի բաժնում: Այնտեղ ևս մաճը շարունակվում էր, քանի որ շենքը չէին վառում, սնունդը վատ էր, ամերիկացիները երբեմն շատ խիստ պատժում էին, զրկում էին հացից: Բոլորս հաց էինք ուտում, էն պատժվածը անկյունում ննստած մեզ էր նայում: Մենք էլ սառը լոբի էինք ուտում: Քոսը, տրախոմաև տարածված էին: Քյուլյուրդը քսում էին մեր ամբողջ մարմնի վրա և կանգնեցնում էին արևին: Այնտեղ կար դպրոց, դասատուները հայ էին: Սաճառկ վարժապետին շատ էինք սիրում, նա Սողոմոն Տարոնցու հայրը էր: Աթոռ, սեղան չկար: Մի որբը մյուսի մեջքի վրա գեղագրություն պիտի գրեր: Ես սովորում էի գյուղատնտեսական բաժինը: Օրվա առաջին կեսը սովորում էինք, մյուս կեսը՝ պրակտիկա էր: Տանում էին հողի հետ աշխատելու: Մինչև 1928 թիվը որբանոցները ցրեցին:

1937 թվից սկսել եմ աշխատել: Իսկապես շատ վատ սովորություններ կային. մի բատրակը մյուսի վրա բողոք էր գրում, և պատժում էին: Մինչև պատերազմը շատերին ուղարկում էին Կուրսկ՝ բարձրագույն պարտիական դպրոց: Ես հազիվ ավարտեցի Կուրսկի իմ կրթությունը, մեզ հաղորդեցին, որ պատերազմը սկըսված է, և թուրքերը սահմանից կարող են հարձակվել: Հայաստանի սահմանի վրա մեր հսկողությունը ուժեղացրինք: Մեր զորքը վայրկյանի էր սպասում: Բոլոր տաճկահայերը պատրաստ էին, բայց Անգլիան՝ Չերչիլը, խորամանկեց…

Մտածում եմ ես հաճախ, հարյուր հազար հայ որբեր որտեղի՞ց առաջացան: Ինչու՞ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան թույլ տվեցին, որ այդքան հայ սպանվի, որ այդքան որբեր անտեր, անտիրական մընան: Էդ որբերից էին գեներալ Սաֆարյանը, գնդապետներ և շատ ուրիշ մեծ մարդիկ: Ես եղել եմ Վաղարշապատի շրջկոմի երկրորդ քարտուղար, պարտիական պատասխանատու աշխատող: Հիմա թոշակառու եմ: Ունեմ մի տղա, մի աղջիկ և չորս թոռ: Վասպուրական հայրենակցական միության անդամ եմ:

Ես եկել եմ Արևմտյան Հայաստանից: Թուրքը ուզեցել է Հայաստանին տեր դառնա, և Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի թույլտվությամբ Արևմտյան Հայաստանը անցավ թուրքին:

Հայերը նվաճող չեն եղել: Միշտ նրանք են հարձակվել, սպանել, խեղդել, ճահատակել: Նրանք չաշխատող ժողովուրդ էին և հայերին օգտագործում էին իրենց նպատակների համար:

47 (47).
ԱՂԱՎՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1911 Թ., ՎԱՆ, ԱՐԱԼԵԶ Գ.)

Ծ նած եմ 1911-ին Վանի Արալեզ գյուղը: Հորս անունը Աբրահամ Մարգարյան, մորս՝ Կատարինե, ծնյալ Կարապետյան: Չորս քույր, երկու եղբայր էինք: Ունեինք տուն, դաշտ, այգի, կենդանիներ և այլն: Պատերազմի ժամանակ, երբ ռուսական բանակը կհառա ջաներ, կերթայինք Վան, մեր տեղերը, երբ անոնք ետ կքաշվեին՝ կփախչեինք Արտաշատ, այսինքն՝ Արևելյան Հայաստան, որը Վանեն երկու հարյուր երեսուն կիլոմետր հեռու էր:

1917-ին, երբ ռուսները «դեպի տուն» ընելով քաշվեցան՝ հայերը մինակ ձգելով, համաձայնեցան իրենց թնդանոթները, հրացանները և ուրիշ զենքերը հայերուն ձգել: Մենք ճամփա ելանք: Ժամանակ մը Աղթամարի կղզիին դիմացի ծովեզերքը մնացինք: Նավակի պակասի պատճառով չկրցինք Աղթամարի կղզին երթալ ապաստանելու, ինչ որ սովորություն էր: Հոնկե անցանք Պարսկաստանի հայկական գյուղերը, ուր մնացինք մոտավորապես վեց ամիս, մինչև օր մը օդանավ մը տեսանք մեր գլխուն վրա: Քանի մը ռոգի կորոշեն վրան կրակել՝ մտածելով, որ թշնամի մըն է, բայց երբ տեսան, որ անգլիական դրոշակ մը վար նետեցին, չշարժեցան: Հետո լսեցինք, որ Լորանս դ'Արաբիոն կամ իր խումբին կպատկանի այդ օդանավը: Այդ օրեն անգլիացիները մեզի ընկերացան մինչև Բաղդադ: Ճամփան, երբ կանցնեինք ձորի մը մեջեն, բարձունքներուն մեկ կողմը զինված հայեր, մյուս կողմը թուրքեր կային, այս վերջինները մեզ վրա կրակեցին, փամփուշտ մը աղբորս քիթին շատ մոտեն անցնելով, զինք ուշաթափ ըրավ: Եղբայրս կարծելով, որ պիտի մեռնի, մեզի նշան ըրավ, որ մենք ճամփան շարունակենք: Բարեբախտաբար, քիչ վերջ ինքզինքը գտավ, և միասին ճամփան շարունակեցինք:

Մենք ճամփա ելանք մեր սայլերով, բայց վերջը ճամփաներու չգոյության պատճառով սայլերը նետեցինք ու շարունակեցինք մեր կենդանիներով, մինչև Բասրա: Մեզի տեղավորեցին քամփերու մեջ: Որոշված էր՝ հիսուն ընտանիք Բաղդադ տանիլ, որոնք արհեստներ ունին: Հայրս ժամանակ մը Պոլիս արդուկարարություն ըրած ըլլալուն, մենք ալ մաս կազմեցինք այդ խումբին:

Բաղդադ մեծահարուստ հայ տիկին մը ընդառաջակ հող տրամադրեց մեզ, որպեսզի վրան մեր վրանները սարքենք: Գիշերները տեղացի արաբները մեր քիչ ունեցածներեն կգողնային, ստիպվեցանք հողի տնակներ կառուցել, որոնք ավելի ապահով էին: Եղբայրներս անգլերեն գիտեին, անոնք լավ վարձատրությամբ անգլիական օդանավի և նավթի գործերու մեջ կաշխատեին: Բաղդադի կլիման շատ տաք էր, շատերը հիվանդացան խոլերա և խնամքի չգոյության պատճառով մահացան:

1918-ին բոլոր հայերը որոշեցին Հայաստան երթալ, ճամփա ելանք, առջևը զինված մարդիկ, ետևը՝ ծերեր, կիներ, մանուկներ: Տեղ մը մեր զինվածները անցնելե վերջ, թուրք զինվածներ ճամփան գոցեցին: Ստիպվեցանք ետ վերադառնալ:

Երկու անգլիական նավեր Բասրա-Բաթում ճամփով ժողովրդին մաս մը Հայաստան տարին: Երրորդ նավ մը մեզի պիտի տաներ՝ չեկավ: Հետևաբար, որոշեցինք Կանադա կամ Անգլիա երթալ: 1925-ին ի վերջո Ֆրանսա եկանք՝ իբր վաճառական: Ուրեմն Բաղդադեն տաքսիով Շամ (Դամասկոս) գացինք: Ութ օր մընալե վերջ տաքսիով անցանք Բեյրութ: Մեծ եղբայրս ուսանած էր Վարագա վանքը, որուն տնօրենն էր պրն. Մանուկյանը: Այս վերջինը այն ժամանակ Բեյրութի Քելեքյան որբանոցին տնօրենն էր, մեզի ըսավ. «Որբուհի մը ազատեցեք հետերնիդ տանելով»: Այսպիսով մեծ եղբայրս՝ Մարգար Մարգարյանը ամուսնացավ օրիորդ Արշալույս Դեզիճյանի հետ, որը բնիկ տիգրանակերտցի էր: Հարսանիքը ըրինք ու Ֆրանսա եկանք 1925-ին:

Ֆրանսա 1930-ին ամուսնացա բնիկ վանեցի Սերոբ Բարսեղյանի հետ, բոլորովին որբ, կհիշեր, որ իր եղբայրը՝ Արծրուն անոթութենեն մահացած էր, անգլիացիները զինք Երուսաղեմ տարած և որբանոց հանձնած էին, որ եկեղեցականներ կպատրաստեր: Հոն դասընկեր եղած էր Սերոբե Մանուկյանի, որ ապագային Փարիզի Առաջնորդ արքեպիսկոպոս և կաթողիկոս Վազգեն Ա-ի պատվիրակ եղավ: Ունեցանք երկու մանչ՝ Արամ-Պոլ 1932-ին, Արտաշես-Հանրի՝ 1941-ին:

48 (48).
ՇՈՂԻԿ ՀՈՎՆԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ* ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1911 Թ., ՎԱՆ, ԸՆԾԱԿ Գ.)

Ե ս ծնվել եմ 1911 թ. Վանի Ընճակ գյուղում, հողագործ գյուղացու ընտանիքում: Հիշում եմ մեր համեստ տունը, որ հողից էր շինված: Մեր մեծ օդայում ունեինք թոնդիր, որի շուրջ մայրս՝ Շուշանիկը, փռում էր ներքնակները, և մենք գիշերը պառկում էինք:

Հորս անունը Հովնան էր: Նա ուներ եղբայրներ՝ Ավետիսը, Սերոբը, Թովմասը, որոնք ևս իրենց ընտանիքներով մեր տան կից էին ապրում:

Պապիս անունը Մկրտիչ էր: Նա մեր գյուղում սիրված էր և հեղինակություն էր վայելում: Իմ մանկական հուշերի մեջ սեպի պես մեխված է մի տխուր հուշ, որ երբեք չեմ կարող մոռանալ: Դա այն է, որ թուրքերը իմ անուշիկ պապիկիս մեր տան առաջ կախեցին և այդպես սպանեցին: Ես այս տարիքին եմ հասել և մինչև օրս չեմ կարող մոռանալ այդ աճավոր պատկերը: Թուրքերը նաև կտրեցին հորս լեզուն և նա տեղն ու տեղը մահացավ:

Հիշում եմ այդ գիշերը, սարսափելի մի գիշեր էր, երբ թուրքերը արդեն մտնում էին տները ու խաղաղ հայ գյուղացիներին կոտորում, սպանում էին: Գիշերվա ժամը տասներկուս անց կեսն էր, երբ մենք լքեցինք մեր տունը և մյուս գյուղացիների հետ գաղթի ճամփան բռնեցինք: Թուրքերը կրակում էին մեր ետևից: Ցա բախտի ում կպնում էր գնդակը՝ նա մահանում էր:

Ինձ նստեցրել էին գոմեշի մեջքին: Հիշում եմ, երբ ես գոմեշի մեջքի վրայից ընկա գետի ալիքների մեջ, հորեղբայրս ճարպիկ էր, իսկույն նետվեց ջրի մեջ

* Հայաստանի ժողովրդական արտիստուհի:

և ինձ ազատեց: Հետո ինձ դրեցին ֆուրգոնի մեջ, ուր ինձ նման փոքր երեխաներ կային, մի քանիսը հիվանդ էին, մի քանիսը մահամերձ: Էսպես հասանք Իգդիր, բայց արդեն իրար կորցրել էինք, և մեր մեծ գերդաստանից ինձ ծանոթ մնացել էին միայն իմ որդեղբոր տղաները՝ Վարդանը և Լևոնը: Նրանք էլ ինձ հասցրին Ալեքպոլի, այսինքն՝ Լենինականի (այժմ՝ Գյումրի) մանկատունը: Էնտեղ մեզ պահում էին ամերիկյան որբանոցում: Ժամանակները վատ էին՝ սով էր, համաճարակ էր: Կիսաքաղց մեծացա ուրիշ որբերի հետ: Ինձ հետ էին Շիրազը, Նայիրի Զարյանը, Խաչիկ Դաշտենցը, Սամսոն Գասպարյանը և ուրիշներ: Հետո աղջիկների որբանոցը առանձնացրին:

Ես որբանոցում աչքի ընկնող երեխա էի. երգում, պարում էի ու բոլորին զբաղեցնում: Բոլորն ինձ ասում էին «Շողշողուն Շողիկ»:

Տասը տարի ես մնացի մանկատանը: Մի օր մանկատանը լուր տարածվեց, թե եկել ու ընտրում են լավ ձայն ունեցողներին՝ քաղաքում ուսման տալու համար: Ես տասներեք-տասնչորս տարեկան աղջիկ էի, երբ Ալեքպոլի մանկատան վարիչի սենյակում ինձ ուզեցին լսել կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանն ու հայտնի երգիչ Տիգրան Նալբանդյանը: Ես երգեցի, հուզումով ու արցունքոտ աչքերով՝ մտաբերելով իմ կորցրած ծնողներիս ու հայրենի վայրերը:

- Աղջի՛կս, ինչու՞ ես այստեղ, - հարցրեց ինձ Տիգրան Նալբանդյանը:

- Ես ոչ ոք չունեմ, որբ եմ, - պատասխանեցի հուզված ձայնով:

Նրանք ինձ վերցրին, բերեցին Երևան: Ես սովորեցի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցում: Երբ ավարտեցի, երաժշտական կրթությունս շարունակեցի երաժշտական ուսումնարանում և հետո՝ կոնսերվատորիայում: Բայց ուսանող եղած ժամանակս էլ ռադիոյով երգում էի: Էն ժամանակ՝ 1926 թ., մեր Երևանի ռադիոն դեռ նոր էր հիմնադրվել և հաղորդումները միանգամից եթեր էին ձայնասփռում: Բայց դա ինձ չեր սարսափեցնում, և ես եղա հայկական ժողովրդական և աշուղական երգերի առաջին կատարողը մեզանում: Ամուսնացա քամանչահար Գուրգեն Միրզոյանի հետ, որը Հայֆիլհարմոնիայի ժողգործիքների անսամբլի գեղարվեստական ղեկավարն էր: Հետո արդեն այդ խմբի հետ սկսել եմ երգել: Իմ երգերով հմայվել են շատ-շատերը, այդ թվում՝ Եղիշե Չարենցը, Աղասի Խանջյանը, Ավետիք Իսահակյանը, Հրաչյա Աճառյանը, որոնք ինձ օգնել են՝ ամեն մեկը յուրովի: Նաև ելույթներ եմ ունեցել տարբեր հանրապետություններում, նույնիսկ Կրեմլում եմ երգել Ստալինի, Անաստաս Միկոյանի և մյուս մեծերի համար՝ հայ երգը մատուցելով նաև օտարներին: Եվ բոլորը հմայված լսում էին, նույնիսկ աչքերից արցունքներ թափում, քանի որ իմ երգի մեջ ինչում էր իմ հայ ժողովրդի վիշտն ու տառապանքը: 1956 թվականին ինձ շնորհվեց Հայաստանի ժողովրդական արտիստի կոչում: Ամուսնուս մահից հետո ապրում եմ իմ միակ սփոփանք, իմ սիրելի աղջկա՝ Ժաննայի հետ:

Թուրքերը ուզեցին ջարդել, փշրել հայ ժողովրդին, հոգեբանորեն կոտրել նրա կամքը, բայց նորից հայ երգը ինչեց, հայ ձեռքերը կառուցեցին…

49 (49).
ՎԱՐԴՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻ ՓՈԹԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1912 Թ., ՎԱՆ)

Վանում մենք շատ հարուստ ենք եղել: Հերս ունեցել է տասնյոթ կտոր տուն: Օղորմած մերս, որ լուր կառնէ, թե գաղթելու ենք, իր վզի ճտնոցը, իր ունեցած ոսկեղենը խորել է ծառի տակ՝ ջրհորի մոտ, էն մտքով, որ ետ կգանք, էլի կգտնի: Մերս իրա մատին մեզ մի մատանի էր թողել: Գաղթի ժամանակ ես իրեք տարեկան էի: Ես չիմացա, որ գաղթվանք: Միայն կհիշեմ, օղորմած մերս իմ ձեռը մի գաթա դրեց, մեր դարվազը բացին, մենք դուրս եկանք: Օղորմած մերս ասաց. «Բաց թողեք դռները, որ թուրքերը գան՝ չջարդեն»: Իրա խելքով մենք պիտի ետ գայինք: Մերս ճամփին ինձ դրեց իշու վրեն: Ժողովրդի հետ գալիս էինք: Ճամփին ես կորա: Ռուս զինվորները ինչքան կորած երեխեք կային, հավաքել լցրել էին կաչկի մեջ: Ճամփին գիտե՞ս ինչ տեսանք… Ա՛հ, իմ դուշմանը չտեսնա էդ օրը: Վու՛յ, սև ըլեր էդ օրը: Մենք եկել հասել ենք Բերկրիի կարմուջի մոտը: Մեկ էլ ժողովուրդը գոռաց՝ փախ…! Բրթանը տեսանք, Բերկրիի ձորը ձեղ ձոր էր, գետը չհասած՝ քրդերը վրա տվեցին: Հայերը, որ փախնում էին, ոտները սոթ էր տալիս, ընկնում էին գետը, խեղդվում: Ո՛րը աճասունով էր ուզում անցնել, ո՛րը մտնում էր ջուրը՝ ջուրը տանում էր: Գոռում էին, ճչում, լաց լինում: Քրդերը կրակում էին մեզ վրա: Մերը մահուկը ուրացավ…

Անտեր մնա Բերկրիի գյալին, ինչքան մարդոց գլուխ կերավ…

Ռուսները ինչքան կորած երեխա կար, հավաքել, լցրել էին մի չոլի մեջ: Ես երկու ամիս մնացի ռսների մոտ: Օղորմած մերս եկավ ինձ գտավ…

Հասանք Իգդիր: Մերս իմ ձեռքից բռնած ինձ մահ էր ածում, ես էլ սոված եմ, լաց եմ ըլում: Մի իգդիրցի կնիկ լավաշ էր թխում: Օղորմած մերս մոտեցավ, ասաց. «Մի հատ լավաշ տուր, էս էրեխեն ուտի»: Համա էդ անխիղճ կնիկը չտվավ: Օղորմած մերս իր մատի միակ մատանին հանեց մատից, ասաց. «Ա՛ռ էս մատանին, մի հատ լավաշ տուր»: Կնիկը վերցրեց մորս մատանին, մի հատ լավաշ տվեց մորս: Ես սկսեցի ուտել: Շատ սոված էի: Պուճուր էի, համա էդի շա՛տ լավ եմ հիշում:

Եկանք Էջմիածին, անտառների մեջ պառկած էինք: Մեռնողը՝ մեռնում էր: Քեռիս անտառում մահացավ: Ժողովուրդը կաչկա բերեց, տարին թաղին: Տիֆից, խոլերայից ո՛րը մահանում էր, ո՛րը ողջ էր մնում…

Մերս ինձ գտավ, համա ախպերս ու քիրս՝ չգտավ: Նրանք էլ գաղթականների հետ ետ են գնացել դեպի Վան, մերոնց՝ որքուրիս, որեղբորս ընտանիքների հետ: Հորեղբայրս ու իր փեսան որից կդիմադրեն ու կովի մեջ կսպանվին: Քիրս, ախպերս մնում են Վան: Օղորմած քրոջս իրեսը մուր են քսել, թոնդիրի մեջ են պահել, որ չփախցնեն: Վերջապես ճարը կտրած մի մեծ, հորս թալ մեկին կտան՝ որպես ամուսին: 1924-ին նրանք էլ թալանված, կոտորված, վիրավորված ու հիվանդ, եկան Հայաստան:

Կհիշեմ, Զանգվի կարմնջի վրա ես ու մերս ընտած էինք, մեկ էլ մերոնք եկան: Մերս փաթթվավ, ուշքը գնաց: Է՛, ինչե՛ր եմ տեսել…

Տեսանք՝ հորեղբայրս չկա, փեսեն չկա: Էն գիտեմ, որ երկու հորքուր եկան՝ իրենց երեխեքի հետ, մնացածը՝ չգիտեմ ի՞նչ եղան…

Երևանում Կոնդա տակին ամերիկյան մանկատանն եմ եղել: Էնտեղ քոստվա: Մերս եկավ ինձի տուն տարավ: Երևանի թուրքերը թողին իրենց տները, փախան, գնացին: Մենք մտանք թուրքի տուն ու ապրանք:

50 (50).
ԴԵՐԵՆԻԿ ԱՎԵՏԻՍԻ ՍԱՐՈՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1912 Թ., ՎԱՆ)

Այն, ինչ որ պատմում եմ ես մանկությունից, լսել եմ իմ ծնողներից ու մեծ եղբորիցս: Վանը ես հիշում եմ երազի պես: Ես եղել եմ ընդամենը երկուսուկես տարեկան:

Գաղթը մի սարսափելի ողբերգություն էր, քանի որ ծեր ու մանուկ բոլորը գտնվում էին տառապանքի մեջ: Մեզ ասացին, որ պիտի թողնենք Վանը: Մանավանդ որ, ռուսական զորքը նահանջում էր, նրա հետևից՝ նաև Անդրանիկը:

Սկսվեց անասելի գաղթը: Ովքեր սայլ ունեին, դասավորվեցին սայլի վրա: Մենք ապրում էինք Վանա բերդի տակը: Մենք ոչինչ չունեինք: Մենք շարժվեցինք: Հասանք Բերկրի գետի մոտ: Այնքան հոգնած էր ժողովուրդը, որ շատերը իրենց երեխաներին գցում էին գետը, որ իրենց կյանքը փրկեն: Քանի որ ետևից թուրքը գալիս էր մահով: Հասանք մինչև Սուրմալու: Բերքառատ ժամանակ էր: Իգդիրցիք մտան իրենց այգիները և ջուր բաց թողին այգիների մեջ, որ մենք դուրս գանք այգիներից:

Մեր գերդաստանը ութը հոգի էր: Տատս ճամփին մահացավ: Գաղթի ճամփին ծնվեց քույրս. որովհետև մենք դժբախտության մեջ էինք, նրա անունը դրինք Դժբախտ: Ճամփին կորցրինք նաև մորաքրոջս: Նա տիֆով հիվանդացավ և Իգդիրում թաղեցինք:

Հասանք Էջմիածին, որը շատ սարսափելի վիճակի մեջ էր: Բայց շատ լավ մեզ վերաբերվեցին, իսկույն սնունդ և օթևան տվին: Ամեն օր սայլակներով դիակները տանում էին, Գայանեի վանքի բակում մեծ գերեզմանոց կար, խեթերի մոտ թաղում էին: Հետո մեզ բերեցին Երևան:

Առաջ կար Զարաբի խան: Ալազանը, Գուրգեն Մահարին, Դարչո Գաբուզյանը, Հովհաննես Մոկացյանը և մենք՝ մոտ հարյուր մարդ, մեր ընտանիքից չորս հոգի, հասանք Երևան:

Երեք հորեղբայրներիս ճամփաները թեքվեց՝ մեկը գնաց Լենինական, մյուսը մնաց Էջմիածնում, իսկ մենք եկանք Երևան: Էսպես ցրվեցինք:

1936 թվին, երբ ինձ բանտարկեցին, ես Հայաստանի տուրիզմի նախագահն էի: Դեռ 1935 թ., երբ ես քսաներեք տարեկան էի, Խանջյանն ինձ կանչեց, թե ո՞նց անենք, որ Արարատի գագաթը բարձրանանք և Ստալինի կիսանդրին դնենք:

Այդ շատ դժվար գործ էր, և մեզ մեղադրեցին, որ չստացվեց: Այդ էր պատճառը, որ ինձ հետապնդեցին ու բանտարկեցին:

Հետո եղել եմ Հայաստանի ժողովրդական ստեղծագործության թանգարանի տնօրենը, շատ ու շատ ինքնուս արվեստագետներ ի հայտ եմ բերել և վաստակավորի կոչման եմ արժանացրել: Օրինակ՝ Հայրիկ Մուրադյանին առաջին անգամ ես եմ ձայնագրել, նաև շատ ուրիշների:

51 (51).
ԱՐՄԻԿ ԳԱԼՈՒՍՏԻ ԹԵՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1912 Թ., ՎԱՆ)

Ես շատ փոքր էի, երբ Վանից գաղթեցինք: Հազիվ երեք տարեկան էի: Մեր հայրը եղել է թուրքական բանակում, բայց փախել է, նրան գտել բանտ էին տարել, բայց նա բանտից էլ էր փախել: Նա դաշնակցական էր: Նրան հետապնդել են և գնդակահարել: Այնպես որ, ես հորս չեմ հիշում: Բայց հիշում եմ, որ ինձ մի ցանցկեն սայլի մեջ դրին, էնտեղ շատ ուրիշ փոքրիկ երեխաներ կային՝ իրար վրա թափված, բայց քանի որ վրան ու կողքերը փայտով ցանկապատված էր, մենք անվթար հասանք Երևան: Մեզ տեղավորեցին Նորքի Ս. Աստվածածին եկեղեցու մոտի մանկատանը:

Այնուհետև ես սովորեցի համալսարանի քիմիա-

կան ֆակուլտետում: Հաջողությամբ պաշտպանեցի թեկնածուական դիսերտացիան, աշխատում էի Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում:

Այն ժամանակ պրոֆ. Մնջոյանն էր, նաև պրոֆ. Մետնիկյանը կար:

Ես իմ ուժերը ներածին չափով նվիրել եմ հայրենական գիտությանը: Տարիների վաստակ ունեմ: Սակայն հիմա իմ մեծ քրոջ՝ Արծվիկի հետ ապրում ենք շատ ծանր ու դժվարին վիճակում: Երկուսս էլ հաշմանդամ ենք, թոշակառու, միայնակ, ոչ մի օգնող չունենք: Այնպես որ, մենք հիմա էլ որբ ենք երկու քույրով:

52 (52).
ՂՈՒԿԱՍ ԱԲՐՈՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ*
(ԾՆՎ. 1901 Թ., ՄՈԿՔ ԳԱՎԱՌ, ԱՐՆԱԲԱՏ Գ.)

Մենք ապրում էինք Բոհտան** գավառի Արնաբատ գյուղում: Երբ ամառ էր լինում, բարձրանում էինք սարը, ձմեռնամուտին գալիս էինք մեր գյուղը:

Մեր գյուղում հինգ հայ ընտանիք կար, որոնք քուրմանջիների*** հետ ապրում էին հաշտ ու խաղաղ: Հայերը զբաղվում էին հողագործությամբ և անասնապահությամբ: Հայերից մեկը, որի անունը Մխո էր, ալրաղաց ուներ: Մեր տունը փոքր էր, փոքր հաշտով:

Հորս անունը Աբրո էր: Մենք չորս եղբայր էինք՝ Սնկին, Ախեն, Դհեն և ես: Մեծ եղբայրս շուտ մահացավ: Մեր գյուղում դպրոց, հիվանդանոց չկար: Մենք քաղաքականությամբ չէինք զբաղվում: Մերոնք թաղիք էին գործում: Շաբաթը մեկ անգամ հայ ընտանիքները իրար այցելում էին: Կիրակի օրը գնում էինք եկեղեցի, որը մի փոքրիկ մատուռ էր: Մեր գյուղում տասը ընտանիք կար՝ հինգը հայ էր, հինգը՝ մահմեդական: Պետությունն ավելի մահմեդականների կողմն էր բռնում: Սուլթան Համիդը միշտ հայերի նկատմամբ վատ էր տրամադրված: Նրան հաջորդած երիտթուրքական կառավարությունն էլ ավելի վատ եղավ մեր հայերիս համար:

Մի օր հրաման եկավ, թե բոլոր հայերին պիտի կոտորել:

Էդ օրը մենք բոլորս տանն էինք: Մայրս երեկվա եփած ճաշը բերեց, դրեց սեղանին, որ ուտենք: Մեկ էլ երեք թուրք ասկյարներ ներս մտան: Հորեղբորս տեղն ու տեղը սպանեցին, հորս և եղբորս տղի ձեռքերը կապեցին, տարան, հորեղբորս աղջկան էլ տարան: Տեսանք, որ թուրք ասկյարները լցվել են մեր գյուղը: Ես ու եղբայրս թաքնվեցինք: Թուրք ասկյարները սկսեցին գյուղը ավերել, բոլոր հայերին կոտորեցին, աղջիկներին փախցրեցին, ամեն ինչ թալանեցին: Ոչ մեկին չխնայեցին: Շատերը փախան, մտան մատուռը: Մենք էլ փախանք, մտանք էնտեղ: Ով թաքնվեց՝ փրկվեց: Հայ ընտանիք չկար, որ զոհ տված չլիներ էդ գիշերը: Մենք՝ ես, մայրս և եղբայրս, մեր թաքնված տեղից էլ տուն չվերադարձանք, գնացինք, մտանք արտերի մեջ, թաքնվեցինք: Երեք օր էդպես մնացինք էնտեղ: Էն ինչ որ ես եմ տեսել, թշնամիս թող չտեսնի: Շրջակա բոլոր գյուղերի հայերի տները ավերված էին, ո՛րը՝ աղջիկ կորցրեց, ո՛րը՝ տղա կորցրեց, ո՛րը՝ ծնող կորցրեց: Թուրքերը թալանում էին: Նրանք նաև պահանջում էին փող, որ չսպանեն:

Մենք տասնութ օր մնացինք Ջեզիրեի Դեքաբրա գյուղում: Մի քուրմանջի բարի ընտանիք մեզ ընդունեց, հաց տվեց: Նրանց հոր անունը Մուհամեդ էր: Նա ինձ շատ սիրեց ու պահեց: Մի մարդ եկավ, ուզեց երեք դուրուշ տա իմ տիրոջը, որ ինձ տա իրեն, բայց իմ տերս ինձ չտվեց: Էդ ընտանիքը մեզ պահեց: Մեր բոլորիս նոր, քրդական անուններ դրեցին: Էդպես մենք փրկվեցինք:

Հետո Հաջի անունով մի մարդու մոտ պատսպարվեցինք: Մենք շատ անօգնական էինք: Մենք ու մեր Աստվածը: Աստված օգնեց, որ մենք ողջ մնացինք: Հաջին էլ մեզ պահեց: Մեր հարյուր հոգինոց գերդաստանից երկու-երեք հոգի միայն ողջ մնացինք:

Հետո գնացինք մի քուրդ շեյխի ընտանիքում ապրեցինք: Էնտեղից էլ դուրս եկանք. մի կամուրջ կար, անցանք դրա վրայով ու գնացինք: Ութ օր մնացինք բաց երկնքի տակ: Գիշերները լաց լինելով քայլում էինք, որ մեզ չտեսնեն ու չսպանեն: Մեր ճակատագիրը սա էր: Աստված ոչ մեկին ցույց չտա մեր տեսածները: Իմ փախուստի ճամփին ես երեք գյուղ անցա: Ոչ մի լավ օր չտեսա:

Հետո լսեցի, որ Հայաստան կա, հայերին կանչում է իր մոտ: Ցուցակագրվեցի, եկանք Հայաստան: Տուն շինեցի: Առաջ ապրում էինք Լենինական (այժմ Գյումրի), 1988 թ. երկրաշարժից հետո փոխադրվեցինք Երևան, հաստատվեցինք Լուսավանում: Հիմա ես 89 տարեկան եմ, ունեմ երեք տղա, երեք աղջիկ և վաթսուն թոռ: Բոլորն էլ ողջ են: Արդեն քսաներկու տարի է ապրում ենք Հայաստանում: Փառք Աստծո:

Բայց այն ինչ կատարվել է 1915 թվին, երբեք չի մոռացվի: Թուրքերը ուզում են մոռացվի այդ բոլորը և չեն ընդունում, բայց Աստված թող լինի օգնական և արդար դատավոր մեզ՝ հայերիս համար:

* Վերապրողը քրդախոս հայ է: Հուշը քրդերենից հայերեն թարգմանել է ՀՀ ԳԱԱ գիտաշխատող Զենֆիրա Խատիևան:

** Արևմտյան Հայաստան, Վանի նահանգի Մոկք գավառ:

*** Քրիստոնյա քուրդ (եզդի) ցեղախումբ:

53 (53).
ԿԱՄՍԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ*
(ԾՆՎ. 1898 Թ., ԲԱՅԱԶԵՏ)

Բայազետ քաղաքը տեղավորված էր մեծ Մասիսի փեշերին, Բայազետի բերդի շրջակայքում: Բերդը գտնվում էր բարձրության վրա, տեսքը շատ մռայլ էր: Քաղաքի կողմնորոշումը պայմանավորված էր բերդով. ասում էին «Բերդից աջ», «Բերդից ձախ», «Բերդի տակ», «Բերդի վրա» և այլն: Բերդից ճառագայթաձև ցած էին իջնում նեղ փողոցներ, որոնց ասում էին սոխախներ: Այդ փողոցների երկու կողմերում կառուցված էին տներ, որոնք աստիճանաձև՝ մեկը մյուսի վրա, դասավորություն ունեին՝ այսինքն՝ ներքևի տան կտուրը վերևի տան բակն էր: Բարձրությունից աստիճանաբար իջնում էինք ցած, որտեղ մի փոքր տափարակ տեղ կար:

Մեր տունը գտնվում էր եկեղեցու ետևի պատի տակ, եկեղեցուն շատ մոտիկ: Մեր եկեղեցին առանց գմբեթի էր, տափակ կտուր ուներ: Ասում էին՝ այդ նրա համար է, որ եկեղեցին աչքի չընկնի: Եկեղեցու ետևի պատը միշտ թաց էր: Ասում էին՝ պատի մեջ կենդանի աղջիկ կա, նրա լացի արցունքներից է պատը թրջվում: Երբ եկեղեցին կառուցում էին, պատմում են մեծերը, պատը բարձրացնում էին մինչև երեկո, առավոտյան երբ գալիս էին շարունակելու, տեսնում էին այն քանդված: Ծերունիները խորհուրդ են տվել երիտասարդ աղջիկ կամ տղա դնել պատի մեջ, որ այն կանգուն մնա: Այդպես էլ արել են, ինչ-որ տեղից բերել են մի որբ աղջկա՝ նրա մորաքրոջը մեծ գումար վճարելով: Երբ աղջկան դրել են պատի հիմքի վրա և սկսել շարել, աղջիկը երգով դիմել է մորաքրոջը, իսկ մորաքույրը նրան հանգըստացրել է, թե՝ թո՛ղ շարեն, բալա՛ ջան, թո՛ղ շարեն, մինչև ծունկը, գոտին, կուրծքը և վեր, թող շարեն: Երբ հասել են ուսերին, աղջիկը հասկացել է, որ մորաքույրը ինքն է տվել, որ իրեն շարեն պատի մեջ, լաց է եղել ու անիծել մորաքրոջն՝ ասելով. «Սև ագռավ դառնաս, նստես պատիս, դոդ՜աս»: Այդպես էլ մորքուրը դարձել է ագռավ ու նստել թաց պատին: Մինչև հիմա էլ այդ թաց պատի մոտ լիքը ագռավներ են թռչում: Այս պատմությունը միշտ էլ պատմում էին ու երգում «Շարեցին, մորքու՛ր, շարեցին» բառերով երգը, իսկ աղջիկները, շրջան բռնած, պարում էին:

Քաղաքն ուներ երկդասյան տարրական դպրոց, տղաների և աղջիկների դասարաններով: Ընդմիջումներին բոլորը դուրս էին գալիս բակ, խաղում էին առանձին-առանձին: Աղջիկները պար էին գալիս, իսկ տղաները կանգնում էին թամաշայի: Դրա համար ես ամեն օր կռվում էի իմ քույր Վիկտորի հետ, որ չգնա դպրոց «Լայլո խանե» թռնելու: Վերջը վերցրեցի նրա գրքերը, պատռեցի, որ էլ չկարողանա գնալ:

Քաղաքում ապրում էին հայեր, թուրքեր, իսկ շրջապատի գյուղերում՝ քրդեր: Քրդերն ամեն օր գալիս էին Բայազետի բազարում առևտուր անելու: Քաղաքում բոլորն իրար ճանաչում էին, որովհետև գրեթե բոլորն իրար ծանոթ, ազգական կամ բարեկամ էին: Իրար մասին խոսելիս ավելի շատ մականուններն էին օգտագործում: Օրինակ. մեր տոհմական անունը «Ումբրշատենք» էր, որովհետև մերոնք բոլորը երկարակյացներ էին՝ երկար արև ունեցողներ, երկար կյանք ունեցողներ:

Մայրական կողմը «Բուրդ-Հայրոենք» էին, որովհետև շատ մազոտ էին և բեղ ու մորուք էին պահում. ասում են՝ մի անգամ պապը՝ Հայրոն, բուրդ մթերելու ժամանակ, երբ կշեռքի վրա են դնում բուրդը, քաշը պակաս է մնում, չի գալիս: Հայրոն մտածում է՝ ինչ անի և որոշում է մորուքից կտրել ու բուրդն ավելացնել, որից հետո քաշը ճիշտ է գալիս: Դրանից հետո նրանց ընտանիքը ճանաչվում է որպես «Բուրդ-Հայրոենց»:

Մեր գերդաստանը մեծ էր՝ չորս եղբայր իրենց ընտանիքներով ապրում էին իրար կողքի, համարյա որպես մեկ ընտանիք: Մայրս՝ որպես մեծ հարս, ամբողջ գերդաստանի տանտիկինն էր, եփել-թափելը նրա վրա էր: Համարյա ամեն օր մեր թոնրատանը հաց էր թխվում, գաթա էր թխվում: Հացթուխը մի թրքուհի էր, որ համարյա մեր տնով էր ապրում: Ճաշն էլ, որ իրիկնային կերակուրն էր՝ յախնի, տոլմա, քյուֆթա և ուրիշ տեսակներ, կճուճով կամ հատուկ պղնձե մեծ ամաններով իջեցնում էին թոնիրը:

Գերդաստանի բոլոր անդամները գրվում էին պապիս՝ Խաչատուրի անունով՝ Խաչատրյան, այսինքն՝ խաչի տված, բայց մեր բոլորի հասցեին խոսելիս ասում էին՝ Ումբրշատենց այսինչ կամ՝ այնինչ: Պապս ուներ չորս տղա, մի աղջիկ: Տղաներն էին. Ավետիսը՝ դերձակ, Առաքելը՝ ուսուցիչ, Հարությունը՝ զարգյար և ամենափոքրը, որին ես համարյա չեմ հիշում, անունն էլ կարծես Սիմոն էր: Ես փոքր էի, որ սկզբում նրա կինը, հետո էլ ինքը մահացան և երկու փոքր երեխա՝ մի աղջիկ, մի տղա, թողեցին մորս հույսին: Ամմի Առաքելն ամուսնացած չէր, մեզ հետ էր ապրում: Ավետիսը ուներ երեք տղա զավակ՝ Վահանը, Գագիկը, Հրանտը: Հարությունն ուներ երկու տղա և երկու աղջիկ՝ Սիրականը, Կամսարը, Վիկտորյան, Եփրոսը: Խաչատուր պապի աղջիկը շուտ էր ամուսնացել, գաղթի ժամանակ կորցրել էինք և 40-ական թվականներին նրա զավակներին գտանք Թիֆլիսում ու շատ գնալ - գալ ունեցանք: Ավետիսն էլ իր երեխաներով գնացել էր Թիֆլիս, իսկ հետագայում տղաները տեղափոխվեցին, երկուսը՝ Երևան, մեկը՝ Բաթումի: Բոլորն էլ ամուսնացած էին, մեծն ուներ երկու տղա, միջնեկը՝ մի տղա, իսկ երրորդը՝ մի աղջիկ, որին մենք չճանաչեցինք, որովհետև Հրանտը մեռավ երիտասարդ, չհասցրեցինք գնալ-գալ անել:

Ամմի Առաքելն աշխատում էր Բայազետից երեք կիլոմետր հեռավորության վրա գտնվող Արծափ գյուղում, որպես ուսուցիչ: Ամեն օր գնում ու գալիս էր երեկոյան: Ձմռանը, երբ ձյունը հաստ շերտով նստում էր,

* Հուշը գրի է առել և մեզ տրամադրել վերապրողի դուստր, պատմական գիտությունների թեկնածու Ժենյա Խաչատրյանը:

Ամա մրջյուն ոտքն ճաշասարի՛ արտեղ
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ

Թարմ-թարմ խոտ, ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ,
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ

Ջուր էնքան կա, որ ձկներն էլ ապրում են, ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ
Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ

Ամա ինչ ուզես ճաշասարի՛ արտեղ,

կային, ասում էին՝ նաև հեղափոխականներ կային, մեծերը գիտեին, բայց մեզ ոչ մեկի հետ չէին թողնում շըփվենք: Ըստ ավանդական սովորության, երեխաների հարգանքն ու պատկառանքը մեծերի նկատմամբ անսահման էր, և ոչ ոք նրանց խոսքից աշխատում էր դուրս չգալ: Մեր մեծերն էլ ամեն ինչից զգուշանալով մեզ՝ իրենցից հետու չէին թողնում:

Մենք ամբողջ գերդաստանով միշտ անհանգիստ էինք: Հայրիկը երբեմն գնում էր գյուղերը, քրդերի օբեքը զարգացություն անելու, միշտ հարմարեցնում էին, որ տանը մի տղամարդ անպայման մնա: Կանանց ու երեխաներին մենակ չէին թողնում, որովհետև տարբեր դեպքեր էին տեղի ունենում:

Տան տնտեսությունը վարելու ամբողջ հոգսը մորըս վրա էր՝ Ալխաթունի: Փոքր հորեղբորից որբ մնացած երկու երեխան՝ մի աղջիկ ու մի տղա, մնացել էին մորս խնամքին: Ամմի Առաքելն էլ էր մահացել: Տունը մնացել էինք հայրիկը, մայրիկը, մենք երեքով՝ Սիրականը, Վիկտորը, ես և երկու երեխան: Ավետիսն իր ընտանիքով առանձին տան մեջ էր:

Մեր բոլորի ծննդյան օրերն ու թվերը գրված էին եկեղեցու ավետարանի ետևի մաքուր թերթերի վրա: Երբ սկսվեցին գաղթերը, բոլորս մեր հաշիվները կորցրինք, մանավանդ որ, մոտենում էր նաև թուրքական բանակ զորագրվելու ժամանակը: Մենք աշխատում էինք դրանից խուսափել, և ոչ ոք իր ճիշտ տարիքը չէր ասում, որից էլ խառնվում էին հաշիվները: Գիտեմ, որ մեծը Սիրականն էր, հետո՝ Վիկտորն էր, հետո՝ ես: Մայրիկն ասում էր, որ մեկս մյուսիս վրա երկու տարով էինք մեծ ու փոքր: Հետագայում, երբ բժշկական կոմիսիայով մեզ անցկացրին, ըստ նոր հաշվարկի ես դուրս եկա ամենամեծը, իսկ Վիկտորը՝ ամենաջահելը:

1914 թիվն էր, որ քաղաքն ընկավ խուճապի մեջ, թե՝ թուրքական զորքը գալիս է Բայազետի հայերին կոտորելու: Մենք բոլոր տան դռները փակեցինք, բանալիները պահեցինք ու փախանք Իգդիր: Շուտով մարդիկ ու լուրերը հանդարտվեցին, առաջին խուճապն անցավ, մի քանի ամսից վերադարձանք: Իգդիրում տուն էինք վարձել, ապրում էինք ոնց որ ամառանոցում: Այդ առաջին անգամը նույնիսկ չչարչարվեցինք: Վերադարձանք. ամեն ինչ իր տեղում էր: Բանալիները հանեցինք, դռները բաց արեցինք ու շարունակեցինք նախկին ձևով ապրել: Տանից մի մազ անգամ չէր պակասել: Հարևաններն էլ մեզ լավ ընդունեցին, բայց աչն արդեն սրտներումս էր: Չեմ հիշում ինչքան ժամանակ անցավ, մի անգամ էլ փախանք Իգդիր, բայց շատ կարճ ժամանակով: Համարյա մի ամիս մնացինք ու նորից ետ եկանք: Երրորդ անգամ արդեն ոտքներս կախ էինք գըցում, չէինք ուզում դուրս գալ, բայց այս անգամ ամբողջ քաղաքը խառնվել էր, բոլորը գնում էին դեպի ռուսական սահմանը: Դա 1916 թ. աշնանն էր: Երբ քաղաքը կիսադատարկ էր, արդեն հասկացանք, որ գնալն անխուսափելի էր, և սկսեցինք հավաքվել: Ժամանակ քիչ էր մնացել: Հարևան թուրք կանայք արդեն լցվել էին մեր տունը ու բացահայտ մատնացույց էին անում, թե ով ինչ է ուզում վերցնել: Մեր իրերը մեր ներկայությամբ իրար մեջ բաժանում էին: Մենք դա ընդունում էինք լռությամբ ու իրար հետ աչք ու ունքով էինք խոսում, շա՛տ զգույշ էինք: Մեր հացթուխ թրքուհին ամեն ինչի տեղը գիտեր և կարծես ցույց էր տալիս, թե որտեղ ինչ կա: Ես չէի դիմանում, չգիտեի ի՞նչ անեմ. վերցրեցի հրացանը և ուզում էի մեր հացթուխ կնոջը սպանել: Հայրիկը գլխի ընկավ ու ձեռքս բռնեց. «Կամա՛ր, արունք մի՛ գցիր, իմ օջախը թող մաքուր մնա»: Գիտեր, որ եթե ես խփեի կնոջը, հետևանքը ուրիշ կլիներ՝ մեր տան մեջ մեզ կկոտորեին: Բոլորս լուռ, սրտի կսկիծով դուրս եկանք: Մի քանի կտոր կարպետ ու հագուստ դրել էինք էշի վրա, աչքներիս արդեն ոչինչ չէր գալիս: Մի քանի լավ, թանկարժեք հայելի ունեինք, Սիրականը վերցրեց ու դրեց էդ շորերի վրա, իբր ապահով լինի: Համ էլ հույս էինք փայփայում, թե նորից կվերադառնանք: Մայրիկը գրկեց նորածին քրոջս բարուրը, ես գրկեցի հորեղբորս երկու երեխաներին՝ վեց տարեկան աղջկան ու հինգ տարեկան տղային, դուրս եկանք, դռները նորից փակեցինք, մեր իմացած ապահով տեղում բանալիները պահեցինք, դուրս եկանք փողոց: Քաղաքը ոնց որ դատարկ լիներ: Մենք համարյա վերջիններն էինք: Երբ քաղաքից դուրս էինք եկել, ետ նայեցի. մեզանից հետո համարյա մարդ չկար: Գնում էինք վազքով, որ շուտ հասնենք գաղթականների թափորին: Հասանք: Ռուս զինվորները ձիերին նստած երկու կողմից ու ետևից պաշտպանում էին մեզ: Ճանապարհին ընկերացա մի ռուսի հետ, շատ բարի տղա էր: Տանից դուրս գալուց չէր մտածել, որ աշուն է, և գիշերներն արդեն ցուրտ է: Դա հասկացա ճանապարհին, բայց արդեն ուշ էր, մրսում էի: Իմ ռուս ընկերը հասկացավ այդ, հանեց իր շինելն ու հագցրեց ինձ: Վրաս մեծ էր, ուսերիցըս թափվում էր, բայց՝ տաք էր: Հետո էլ, երբ մեզանից բաժանվում էին, ձին տվեց ինձ, որ նստեմ: Ռուս զինվորները կամաց-կամաց ետ մնացին: Մեր շարքերից դուրս եկան ջահել, գրեթե պատանի և հասակով տղամարդիկ, որոնք զենք ունեին և գրավեցին զինվորների տեղերը: Գաղթականների հոսքը գնալով մեծանում էր, խառնվում էին տարբեր տեղերից փախածները: Մարդկանց բազմությունը քարշ էր գալիս ճանապարհի վրա, լացով ու սգավոր, մահվան սարսափը սրտներին: Մեզ հետվից հետևում էին թուրք զաբիթների խմբերը: Չէին կրակում, լուռ էին, բայց՝ դադար էլ չէին տալիս: Ամբողջ ճանապարհի երկու կողմերում կապոցներով ուտելիք էր թափված: Լավաշ հացը ամեն քայլափոխին դաստեքով թափված էր: Մեզանից առաջ փախչողները հասցրել էին իրենց հետ ուտելիք վերցնել, բայց ճանապարհին աստիճանաբար հոգնածությունից բեռնաթափվել էին: Ով քաղցածանում էր, վերցնում էր այդ ուտելիքից և ուտում, իսկ էշերն ու ձիերը ուղղակի դունչները երկարացնելով, ամբողջ ճանապարհին արածում էին լավաշով: Նայելուց միայն մարդու սիրտը մղկտում էր: Հացը ոտքի տակ թափված էր:

Ես երեխաներին ձիու վրա դրած, ինքս էլ ոտքերս քարշ տալով կողքից գնում էի, հայացքով էլ հետևում, թե մերոնք որտե՞ղ են և ի՞նչ են անում: Արդեն հասնում էինք ռուսական սահմանին, նկատեցի, որ մայրիկը չկա: Մերոնք չգիտեին՝ ու՞ր է: Սկսեցի հարց ու փորձ անել, ոչ ոք ոչ մի պատասխան չուներ: Ճանապարհին կանգնած հերթով հարցնում էի բոլորին, թե՝ երեխան գիրկը կին չե՞ն տեսել: Ամենավերջում, մի կին տեսել էր, որ երեխան գիրկը մի կին ետ էր մնացել ուժասպառությունից: Սիրտս խղճահարությունից ու վշտիցճմլվեց. ի՞նչ անեի. դառն էր. ամբողջ ժամանակ աչքս չէի հեռացնում մորիցս ու վերջում, երբ արդեն սահմանին էինք հասնում, կորցրել էի: Մոտեցա մի պառավ, մենակ կնոջ ու խնդրեցի, որ բռնի երեխաների ձեռքերը ու բաց չթողնի մինչև գամ: Պառավը դժվարությամբ համաձայնվեց: Նստեցի ձին ու քառատրոփ ետ գնացի: Չգիտեմ ինչքան էի գնացել, աչքիս ոչինչ չէր երևում: Հեռվում նշմարվում էին թուրք զինվորների գլուխներն ու զենքերի ծայրերը: Մեկ էլ տեսա մայրիկիս, երեխան գիրկը, հազիվ ոտքերը քարշ տալով գալիս էր, հասել էր մի մեծ քարի. ինձ տեսավ, հուսահատությունից ոտքերը ծալվեցին: Երեխային դրեց քարին, ծունկի եկավ: Երբ հասա, հուսահատությունի՞ց, թե՞ ուրախությունից լաց էր լինում: Իսկույն գրկեցի, դրեցի ձիուս, երեխային տվեցի գիրկը ու ձիու սանձը բռնած, վազքով եկանք մինչև Մարգարա գյուղ: Մութն ընկնում էր, բազմությունը սահմանն անցնելով, հոգնած ու հուսահատ նստել էր գյուղի դաշտերում: Մայրիկիս մի ապահով տեղ տեղավորելուց հետո սկսեցի որոնել հորեղբորս երեխաներին: Մութ էր ու ցուրտ, մարդիկ կրակ էին վառել, ով ուտելիք ուներ՝ ուտում էր: Գյուղացիք թափվել էին, ով ինչով կարող էր օգնում էր, հիվանդներին խնամում էին: Առհասարակ զարհուրելի տեսարան էր: Վերջապես գտա պառավին, ուրախացած վազեցի մոտը, իսկ պառավն ինձ որ տեսավ՝ մի սարսափելի ողբ դրեց: Չէի հասկանում, թե ինչ է պատահել: Երբ մի քիչ հանգստացավ, պատմեց. «Երբ տեղ հասանք, դաշտում շատ մարդիկ էին հավաքվել: Նրանց մեջ քաղաքացիներ էլ կային: Մի քաղաքի կին մոտեցավ, բռնեց տղայի ձեռքն ու հարցրեց, թե՝ ու՞մ երեխան է: Ես ասացի, որ չեմ ճանաչում, ինձ պահ են տվել, մի ջահել տղա էր, բայց ինքն էլ չկա: Կինն ասեց՝ Էս տղին տուր տանեմ պահեմ: Ես չգիտեի ի՞նչ անեմ, մտածեցի՝ դու գնացիր, երևի էլ չես գա. ես էլ մենակ, պառավ կնիկ. ի՞նչ անեմ էս երեխեքի հետ, ո՞նց պահեմ, որ էապես մնացին վրես: Ասեցի՝ վերցրու: Ձեռքը մեկնեց, որ տղի ձեռքը բռնի, քույրը ճչաց, գրկեց ախպորն ու լաց եղավ: Երկուսն էլ լաց էին լինում, այնպես էին մղկտում, որ կնիկը չդիմացավ, ասեց՝ երկուսին էլ տուր, տանեմ պահեմ: Տվեցի»: Ես շատ դառնացա ու մոլորվեցի, չգիտեի ինչ անեմ: Լույսը բացվեց, սկսեցի հարց ու փորձ անել բոլորին: Ոչ մի տեղից ոչ մի լուր չկարողացա առնել: Այդպես էլ ամբողջ կյանքում, ուր գնացել եմ, հարց ու փորձ եմ արել և հույս եմ փայփայել, որ մի օր կգտնեմ, բայց այդպես էլ բացարձակապես ոչ մի տեղեկություն կամ հետք չունեցա նրանցից: Սիրականին էլ էինք կորցրել ճանապարհին: Շատ հետո իմացանք, որ էն հայելին, որ դրել էր բեռի վրա, քիչ էր մնացել որ իր մահվան պատճառը դառնար: Ճանապարհին արևն ընկել էր հայելու վրա ու շողը ընկել սարերը: Որտեղից որտեղ՝ կրակել էին էդ շողի հետքերով ու կպել հայելուն: Հայելին փշրվել էր, իսկ Սիրականը հազիվհազ հասցրել էր իրեն գցել թփերի մեջ ու փրկվել: Հետագայում Սիրականին, ավելի ուշ՝ 1934-35 թթ. մեր հորաքրոջ ու կորցրած հարազատներից շատերին գտանք Թիֆլիսում ու Երևանում:

Մեզ հետ Մարգարա հասած թափորից շատերը մնացին Մարգարայում ու սահմանամերձ գյուղերում, որ հնարավորության դեպքում վերադառնան իրենց տները: Մենք՝ ճանապարհ ընկանք դեպի Մարտունի: Էդ կողմերում բարեկամներ ու ծանոթներ ունեինք: Հույս էինք փայփայում նրանց օգնությունը ստանալ: Ձմեռն առջևում էր: Գնացինք Վերին Ադիյաման, Ջոլաքար, Ջորագյուղ, Ավդալաղալու, բայց ոչ մի տեղ էլ չկարողացանք մնալ: Ամեն տեղ տուն էինք վարձում, զարգացություն անում: Ձմեռն անց կացրինք մի կերպ ու հիմնավորվեցինք Քյավառում: Սիրականն եկավ հասավ մեզ, ամուսնացավ Նավոյենց աղջիկ Ասանեթի հետ: Նրանք գաղթելուց հետո Երևանում էին ապրում: Վիկտորն ամուսնացավ Միրզոյենց Ավետիսի հետ, գընաց Դարաչիչակ (ներկայումս՝ Ծաղկաձոր): Գաղթից հետո Միրզոյենք այնտեղ էին հաստատվել: Դժվար էին ապրում, հայրիկը գնում էր Ագրիջա, քրդերի մեջ, զարգացություն էր անում, որպես վարձատրություն հիմնականում մթերք էր բերում՝ յուղ, պանիր և այլն: Ապրում էինք: Քյավառում ընկերներ ու բարեկամներ ունեինք: Եփրոսը մեծացավ: Բոլորս նորից միասին էինք ապրում: Ես մշտական աշխատանք չունեի:

Արդեն 1927 թիվն էր: Ամուսնացա Տեր-Աբրահամենց Արշամի՝ Արաքսու մեծ եղբոր հետ: Հոր մահից հետո Արաքսուն Արշամը բերել էր քաղաք, որ ուղարկեր տովորելու և մնացել էր եղբոր մոտ, Հռիփսիմեի տալն էր: Երբ իմացավ, որ ես ուզում եմ ամուսնանալ, առաջարկեց իր օգնությունը և հրավիրեց իր տուն: Ծանոթացանք Արաքսու հետ և ամուսնացանք: Մի տարի հետո ծնվեց մեր մեծ աղջիկը, հետո ունեցանք էլի երկու աղջիկ և երկու տղա: Ամուսնանալուց հետո, երբ արդեն երկու երեխա ունեի, Արաքսու հորեղբոր տղան ինձ աշխատանքի տեղավորեց գեոլոգիական արշավախմբերում: Ինքը՝ Արտաշեսը, ճանաչված գեոլոգ էր, չափազանց խելոք ու զարգացած անձնավորություն: Արաքսուն որպես քույր շատ էր սիրում ու նրա նկատմամբ սերը փոխանցեց նաև ինձ: Հաճախ էր շփվում նրա հետ: Աշխատում էր Նոուհուսում, գընում-գալիս էր Քյավառ: Գնալ-գալը դժվար էր և բոլորով որոշեցինք վերջնականապես հաստատվել Երևանում: 30-ական թվականներին փոխադրվեցի ավելի հաստատուն աշխատանքի՝ սկզբում Պետհրատում, ապա՝ նաև համար առաջին տպարանում: Ամբողջ կյանքում մնացի պոլիգրաֆիայի աշխատող:

Սիրում էի կարդալ և բազմաթիվ գիշերներ եմ լուսացրել հատկապես հայ պատմավեպերի վրա: Տպարաններում լույս տեսած բոլոր գրքերի առաջին կամ երկրորդ օրինակն իմն էր: Մեծ գրադարան էի հավաքել, ու դա իմ ամենամեծ հաճույքն էր: 1936-37 թ. շատ արժեքավոր գրքեր, հրաշալի ձևավորմամբ, գիշերով ու աննկատ, իմ ձեռքով վառեցի փայտի վառարա-

ևի մեջ, բայց, այնուամենայնիվ, ենթարկվեցի հետապնդման: Քիչ մնաց, որ ինձ էլ աքսորեին՝ կապված լուսավորության միևիստր Արտո Եղիազարյանի հետ: Նկարս, ինչ-որ առիթով տպագրվել էր թերթում, ևման համարեցին Արտո Եղիազարյանին և երկար ժամանակ ինձ տանում էին հարցաքննության ու հետապնդում էին:

1935 թ. Սիրականը պետական բնակարան ստացավ, հայրիկի ու մայրիկի հետ տեղափոխվեց առանձին ապրելու: Եփրոսը մինչև նրանց տեղափոխվելը մահացավ. վարակվել էր որովայնային տիֆով: Արաքսու և երեք երեխաների հետ մնացինք վարձու տան մեջ և գիշեր-ցերեկ երազում էինք մեր անկյունն ունենալ: 1940 թ. աշնանը, Բայազետի Գզոյանց Սուրենից, նրա սեփականության մեծ տներից, առա մի սենյակ քարե տուն և իմ ձեռքերով վերանորոգեցի ու դարձրի տուն: Այստեղ էլ հայրենական պատերազմը վրա հասավ: Մի քանի անգամ հավաքագրվեցի և բախտի բերումով մնացի տանը: Հայրիկը մահացավ 1937 թվին, երազելով արու թոռ ունենալ: Նա չտեսավ իմ երկու որդիներին, իսկ մայրիկը մահացավ 1947 թվին, երբ արդեն ևույնիսկ իմ երկրորդ տղաև էր ծնվել: Սիրականը զավակներ չունեցավ:

Ամբողջ կյանքում երազեցի մի անգամ էլ տեսնել Բայազետը, մեր տունը: Ինձ թվում էր, որ եթե գնամ Բայազետ, առաջվա պես կվերցնեմ պահած տեղից բանալին, կբացեմ դուռն ու ամեն ինչ կտեսնեմ առաջվա տեղում:

54 (54).
ԷՎԵԼԻՆԱ ՀԱԿՈԲԻ ԿԱՆԱՉԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԻԳԴԻՐ)

Ես ծնվել եմ 1909 թվին Իգդիրում: Մեր Իգդիրում մենք ապրում էինք ուրախ և երջանիկ՝ հայեր, թուրքեր, ռուսներ, քրդեր և եզդիներ: Մենք ունեինք լավ սովորություններ: Մեր հարսանիքները անցնում էին շատ ուրախ: Իմ մայրը բավականին հարուստ ընտանիքից էր: Նրա եղբայրը ամբողջ Իգդիրի գավառի՝ Սուրմալուի գինվորական կոմիսարն էր:

Իգդիրում մենք՝ երեխաներս, ապրում էինք ուրախ կյանքով: Խաղում էինք: Մեր տան մի պատի կողքը թուրք էր ապրում: Հայ ու թուրք շատ մտերիմ էինք: Մի օր մենք երեխաներով խաղում էինք, տեսանք՝ ռուսական բանակը եկավ մեր բակը. նրանք ունեին իրենց ճաշարանը, ամեն ինչը իրենց հետ: Նրանք տեղավորվեցին, սկսեցին ճաշ եփել: Նրանք սև սոմի հաց ունեին, ես նրանց լավաշ տարա:

Նրանք երկու-երեք օրից հետո գնացին դեպի Արևմտյան Հայաստանի կողմը: Ես փոքր տեղովս մըտածեցի. «Ինչի՞ եկան, ինչի՞ գնացին»:

Ես ունեի մի հորեղբայր, որը նոր էր վերջացրել Երևանի օֆիցերսկի ուսումնարանը:

Հետո մենք տեսանք՝ մի բան արագ անցավ: Դու մի ասա՝ վիլիսի մեջ երկու գեներալներ էին՝ փայլուն կոճակներով մունդիրները հագած: Նրանք եկան Մարգարայի կողմից, մեր փողոցով անցան, գնացին Կարս, Արդահան, Էրզրումի կողմը:

Կովից մի օր առաջ մենք՝ հայերս, թուրքերի հետ հաշտ ու համերաշխ ապրում էինք, բայց մի գիշեր թուրքերը հարձակվեցին հայերի վրա: Սկսեցին աճաբեկել, ջարդել, սպանել հայերին, կոտորում էին մեծ ու փոքրին: Հայերը՝ անակնկալի եկած, ևույնիսկ առանց կոշիկի դուրս էին պրծնում իրենց տներից: Այդպես սկսվեց հայերի ջարդը:

Երբ լույսը բացվում է, նրանք հանդիպում են մյուս քաղաքներից եկած հայերին, որոնք ևս ևույն վիճակի մեջ էին:

Թուրք փաշաները որոշել են հայերին ջարդել: Իսկ Իգդիրը ճանապարհն էր դեպի Արևմտյան Հայաստան, դեպի Կարս, Արդահան, Սարիղամիշ, Բիթլիս և այլն:

Հայերը շատ կոտորվան: Գաղթականները ոտքները ուռած, սոված, մի կերպ հասնում էին Իգդիր, մտածելով, որ ուտելու հաց կգտնեն, բայց մերոնք էլ արդեն նեղ վիճակում էին: Իգդիրից մինչև Մարգարա 18 կմ էր:

Ես երեք հորեղբայր ունեի, երեքն էլ մասնակցում էին ֆրոնտի կռիվներին: Մեծ հորեղբայրս չորս երեխա ուներ: Նա «թոռուցիկ» խմբում ձիավոր էր: Էն մի հորեղբայրս Դրոյի խմբումն էր, իսկ օֆիցեր հորեղբայրս մի օր մի որբ երեխա բերեց, որ տատս պահի: Էդ երեխան ամբողջ գիշերը լաց էր լինում. «Ես իմ մարեն կուզեմ» - ասում էր:

Սովը տիրեց ամբողջ Իգդիրը: Անխիղճ թուրքերը մեզ խոլերայով վարակեցին: Իգդիրը դարձավ ոսկորների, դիակների բացօթյա գերեզման: Ոչ մեկի տանը պահուստ չէր մնացել:

Թուրքերը որ վրա տվեցին, անհավասար կռիվ եղավ: Հայերը զենք չունեին: Ոչ միայն գաղթականները, այլև իգդիրցիները մահացան խոլերայից: Մայրս՝ 22 տարեկան, հայրս՝ 25 տարեկան, հորաքույրս՝ 18 տարեկան ամուսնացած էր և երեխայով էր, քույրս՝ 10 տարեկան, օֆիցեր հորեղբայրս: Այս բոլորով գաղթի ճամփան բռնեցինք՝ դեպի Մարգարայի կամուրջը:

Թուրքերը ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Արևելյան Հայաստանի վրա հարձակվեցին:

Հիշում եմ, մենք՝ երեխեքս, քնած էինք, տատս եկավ, մոտեցավ ասաց՝ գաղթու՞մ ենք: Սիրտս ճմլվեց, երբ հայկական եկեղեցու զանգերը ուժեղ ղողանջել սկսեցին: Խոտի դեզերը, ցորենի դեզերը կրակի էին տվել, որ ժողովուրդը տեսնի, թե գիշերով ու՞ր է գնում: Ճանապարհին մարդիկ կորցնում էին իրար:

Հանասունների բառաչը, մարդկանց իրարանցումը. ի՜նչ աղմուկ, ի՜նչ ոտի տակ ընկնել:

Գնացինք հասանք Դրոյի հոր տան մոտ, որը հիվանդանոց էր դարձած: Հայ վիրավոր երիտասարդներին թողել էին էնտեղ պահակած: Թուրքը գալիս էր: Հայ կանանց փորերը ճեղքում էին դանակով, երեխային հանում դուրս, գլուխը ցցի վրա հանում: Ամբողջ Իգդիրը դիակներով էր ողողված: Եթե ՄԱԿ-ից գան, ես կպատմեմ իմ տեսածները... Երեխայի մորը սպանել էին: Իգդիրը բացիլային էր դարձել: Թուրքը Օրգով մըտավ, շոշով դուրս եկավ, ոտք չդրեցին, քանի որ խոլերա էր տարածված: Թուրքերը քրդերին էլ էին կազմակերպել: Նրանց խոստացել էին երկիր տալ: Երբ ես Իգդիր գնամ, կհիշեմ, թե որ տան մեջ քանի դիակ տեսա: Մեր փողոցի վրա տասը տուն կար, որոնց մեջ լիքը ոսկոր էր, բոլորը սովից, խոլերայից մեռել էին:

Կեսգիշերին տատս ասաց. - Էմմա՛ ջան, նայի՛ր, Արազով ենք անցնում, տե՛ս ինչքա՛ն մեծ է:

Իրոք Արազը շա՛տ լայն էր: Եվ երբ փայտից կամուրջի վրայով սայլերը, մարդիկ, ձիերը անցնում էին, տքտքոցի ձայներ էին գալիս: Անցանք Արազի կամուրջը, չիմացանք՝ ու՞ր գնանք:

Մենք որ անցանք, Դրոն մի քիչ ետ գնաց: Ժողովուրդը կարծեց՝ Դրոն փախչում է: Այնինչ, Դրոն գնացել էր դիմադրելու թշնամուն, որ մեզ նեղություն չտան: Մութի մեջ ջուրը հազիվ երևում էր: Դրոն սպասեց, որ մինչև վերջին հայը անցնի կամուրջը: Հետո ասաց. - Մի բալոն նավթ բերեք, Մարգարայի կամուրջը վառեք:

Կամուրջը վառեց, թուրքերը մեր ետևից գալիս են...

Մենք հասանք Մարգարա, հետո՝ Էջմիածին, քանի որ հայերը պաշտպանում էին: Հավաքվեցինք Սարդարապատում: Դրոն գնացել էր Ապարանի մոտ: Մերոնք եթե մի քիչ թույլ լինեին, լրիվ տանուլ կտային Սարդարապատի ճակատամարտը:

Մենք հասանք Երևան: Հորեղբայրս՝ Շահինյան Հովսեփը, Սարդարապատի ճակատամարտում զոհվեց:

55 (55).
ԾԱՂԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՉԻՆԻՄՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԻԳԴԻՐ, ԿՈՂԲ Գ.)

Հորս անունը Գևորգ էր, մորս՝ Թագուհի, հորեղբայրներիս՝ Գալուստ, Մանուկ, Խեչո, Սարգիս, Մնացական: Ապրել ենք մեծ բակում, առանձին-առանձին, բայց իրար հետ հաշտ ու համերաշխ:

1915 թ. Գևորգ հայրս Էրզրումի պատերազմին է մասնակցել՝ թուրքերի դեմ: Թագուհի մայրս երեք երեխայով մնացել է Կողբում: Գաղթի ճանապարհին, որ գալիս էինք, թուրքերը սարերի գլխին էին ու կրակում էին: Մենք ոչինչ չունեինք: Մամաս էր իր երեք երեխաներով: Ով փախավ՝ փախավ, ով որ մնաց՝ սպանվեց:

Հետո ասին՝ թուրքերը քաշվել են, մենք ետ եկանք Իգդիր: Ջմեռը մնացինք: Շատերը մեռան: Հորեղբորս երեխեքը սովից մեռան: Տները քանդված էին: Ցորենը իրան-իրան բուսնել էր, մենք էդ ցորենը հավաքում, փշրում, ուտում էինք:

Գարնանը նորից գաղթեցինք: Մամաս փոքր երեխային մեջքին էր կապել, մեկին ձեռքն էր բռնել, ես էլ նրա ձեռքն էի բռնել:

Մայրս ասիծում էր, որ թուրքերի պատճառով եղբայրս և քույրս մեռան: Թուրքի անուն որ տալիս էին, նա ասում էր. «Թուրքը իմ ընտանիքիս կործանման պատճառը դարձավ»: Մայրս մեզ բերեց մանկատուն:

Մեր գերդաստանը հինգ հորեղբայրներն էին, բոլորն էլ երեխաներ ունեին, հիմա մնացել ենք միայն ես ու իմ մի հորեղբորս թոռը: Բոլորը մեռան: Երեսուն հոգուց մնացինք երկուսս: Մեծացել ենք Ալեքսանդրապոլի մանկատանը: Հետո սովորեցի դպրոցում: Հետո ավարտեցի պարտիական դպրոցը: Աշխատել եմ Հայկոոպում որպես հրահանգչուհի: Պատերազմի տարիներին եղել եմ մանկապարտեզի վարիչ: Ամուսինս՝ Շավարշ Չինիմյանը (ծնվ. 1907 թ.), սովետական բանակի հետ հասել է Բեռլին: Նա հրաշքով դուրս է պրծել տանկի թրթուրների տակից, միայն վիրավորվել է:

Մեր սերունդը շատ ցավ տեսավ. և՛ եղեռն ու գաղթ, և՛ ֆաշիստական պատերազմ:

56 (56).
ՀՐԱՆՏ ԳԵՂԱՄԻ ԽՈՆԴԿԱՐՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1911 Թ., ԻԳԴԻՐ)

Խոնդկարյան տոհմակրան ազգանունը ծնունդ է առել Հայաստանի տասնմեկերորդ մայրաքաղաք Անիում:

Մեր պապերի պապերն ապրել են եղբայրներով ու ընտանիքներով: Նրանք Շահ-Աբասի հրամանով 1604 թվին բռնագաղթվել են և բնակություն հաստատել հինչպես Ղարաբաղում, ևույնպես և Սուրմալու գավառի Հախվերիս գյուղում, որը Իգդիրից հեռու է ընդամենը մեկ-երկու կիլոմետրով:

Մեր նախնիները մշտական բնակություն են հաստատել Հախվերիսում, կառուցել են սեփական տներ իրար՝ կողք-կողքի, աճեցրել են պտղատու այգիներ տների դիմաց:

Հայրս՝ Գեղամը, առևտրական գործունեություն

սկսելու նպատակով տեղափոխվել է Իգդիր և բուլվարի մեջ բացել է իր մեծ խանութը՝ վաճառելով մետրով կըտորներ՝ բրդյա, բամբակյա և վուշից, ինչպես նաև պատրաստի հագուստներ, ոսկյա և արծաթյա զանազան զարդեր: Հայրս հպարտ էր իր խանութով և իր հարստությամբ: Նա առևտուր էր անում Երևանի, Ալեքսանդրապոլի և Թիֆլիսի առևտրականների հետ:

Հայրս ամուսնացել է 1910 թվին Մաթևոս Ավագյանի դուստր Լուսաբերի հետ: Ես ծնվել եմ 1911 թ. Իգդիրում: Հետո ծնվեց քույրս՝ Ռոզան:

1917 թ. հայրս մեզ մոտ չէր: Նա գնացել էր իր առևտրական գործերով, երբ հրաման եկավ, որ պիտի գաղթենք դեպի Արևելյան Հայաստան: Անօգնական մնացած մայրս մի պահ մոլորվել էր, թե փոքր երեխաներով ինքը ի՞նչ է անելու, երբ մեր տան դուռը բացվեց և ներս մտավ իմ բարի քեռիս՝ Ավետիս Ավագյանը: Նա շտապով օգնեց մորս հավաքվելու, վարձեց մի ֆուրգոն, մեզ տեղավորեց ֆուրգոնի մեջ և շարժվեցինք:

Արդեն մեզ մոտ էր գտնվում ռուսական զորամասը, որ մեր նեղ օրերին դեղին հատիկով շիլա էր եփում ու բաժանում, որ սովից չմեռնենք: Ես էլ եմ կերել նրանց եփած շիլայից: Ահա այդ ռուսական զորքերը մեզ օգնեցին: Նախ նրանք փակել էին ճանապարհը, որ թուրքերը չհասնեն գաղթականներին և չվնասեն, հետո նրանք էլ շարժվեցին մեր ետևից, և մենք անվթար եկանք, անցանք Մարգարայի կամուրջով: Նախ հասանք Էջմիածին, ապա՝ գնացինք Քանաքեռ և ի վերջո հանգրվանեցինք Երևանի Կոնդ թաղամասում, Ամիրյան փողոցի վրա:

Արդեն կառավարությունը դաշնակցականների ձեռքին էր: Հիշում եմ, մի օր դաշնակ օֆիցերներ եկան, մտան մեր տունը և հայտարարեցին, որ մենք պետք է օգնենք բանակին:

Ավետիս քեռիս զարմացած ասաց.

- Բայց սրանք ոչինչ չունեն, որ տան ձեզ:

Եվ իսկապես, մենք ոչինչ չունեինք: Հորս խանութից մնացած կտորները մենք ներքնակ էինք դարձրել ու քնում էինք դրանց վրա: Օֆիցերները հավաքեցին այդ կտորները, որ տանեն: Ավետիս քեռիս հուզված ասաց. - Ու՞ր եք տանում, այդ կտորներից բացի սրանք ոչինչ չունեն:

Դաշնակ օֆիցերը հրացանը լարեց, որ մեզ կրակի, բայց երևի խնայեց: Վերցրին այդ կտորները և տարան: Մենք մնացինք չոր հատակին:

Այդ թոհուբոհի ժամանակ իմ մյուս քեռիները՝ Աբգարը, Ներսեսը, Կարապետը և Սուրենը, գնացին Ամերիկա: Սուրենը ճանապարհին անհայտ կորել էր, իսկ մյուսները հաստատվեցին Կալիֆոռնիայում: Նրանց Ամերիկայում լինելու հանգամանքը ազդեց Ավետիս քեռուս տղայի՝ Մաթևոսի վրա, որը բժիշկ էր դարձել և Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Թամանյան դիվիզիայով հասել էր մինչև Բեռլին, բայց քանի որ Ամերիկայում ազգականներ ուներ, նրան իր ընտանիքով 1949 թվին աքսորեցին Սիբիր: Հոգ չէ, թե խեղճ Մաթևոսը նույնիսկ նամակագրություն չուներ նրանց հետ: Ավետիս քեռուս մեծ տղան՝ Զավենը, կամավոր գնաց կռվելու ֆաշիստների դեմ և չվերադարձավ: Նույնը և Ռուբեն քեռուս տղան:

Այնպես որ, մերոնք շատ են տուժել Ամերիկայում հարազատներ ունենալու պատճառով:

1936 թվին լավ գնահատականներով ես ավարտել եմ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի ֆինանսական բաժինը և սկսել եմ աշխատել զանազան հիմնարկ-ձեռնարկություններում:

1949 թ. մեկնել եմ Լենինական՝ մանկատնում տևական ստուգումներ կատարելու: Հետո ամուսնացա Սոնիայի հետ: Ունեցանք Շուշանիկին և Լուսիկին, նաև Դավիթին: Դավիթս ամուսնացած է Նունեի հետ և ինձ պարգևել են երկու սիրուն թոռնիկներ՝ Հրանտիկը և Հայկը:

Ես հիմա թոշակառու եմ և հաճախ վերապրում եմ մեր գաղթի տեսարանները:

57 (57).
ԱՆԴՐԱՆԻԿ ԱԶԻԶԻ ՍԻՄՈՆՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ԱԼԱՇԿԵՐՏ, ԿԱՐԱՔԻԼԻՍԱ)

Ես ծնվել եմ Ալաշկերտի Կարաքիլիսա քաղաքում 1902 թ.: Մեր ընտանիքը բաղկացած էր ութ շնչից. հայրս՝ Ազիզ, մայրս՝ Համաս, մեծ եղբայրս՝ Միսաք, քույրս՝ Վերգուշ, ես՝ Անդրանիկ, Արտավազդ, Գառնիկ և տատս՝ Նարգիզ: Հայրս զբաղվում էր կերպասի առևտրով և ուներ վաճառատուն, նաև երկու հազարից ավելի եզներ, կովեր, ոչխարներ, որոնց պահում էին մեր քաղաքից ոչ հեռու Քեռսադաղ կոչված սարերում՝ տասնըվեց հովիվների հսկողությամբ:

Մենք ապրում էինք հանգիստ ու խաղաղ: Երբ ծագեց Առաջին համաշխարհային պատերազմը, թուրք կառավարությունը զորակոչ արեց, ովքեր բանակ գնացին, էլ ետ չեկան: Կառավարությունը բռնագրավեց հորս հինգ հարյուր ոչխարը, նաև կտորեղենը և պատճառաբանեց, որ բանակի համար է: Այդ օրերին լուրեր էին պտտվում, որ հայերին Բիթլիսում, Սասունում և այլ վայրերում կոտորում են և ներթը պիտի հասնի մեզ. Ալաշկերտի հայերին ևս պիտի տեղահանեն, պիտի աքսորեն: Կարաքիլիսայի հայերը մտավախության մեջ էին: Նրանք պատրաստվում էին ինքնապաշտպանության դիմել: Հիշում եմ, որ պարկերով հող էին տեղավորում պատուհանների առաջները և զենք էին առնում, քանի որ ժամ առ ժամ սպասում էին վտանգի:

Մի օր մեծ թվով հեծելազոր ռուս կոզակներ և հայ կամավորներ եկան: Քաղաքում հայերը մեծ խանդավառությամբ, աղ ու հացով դիմավորեցին փրկարար զորքին և մի մասին տեղ տվեցին իրենց տներում: Մենք էլ երկու սենյակ հատկացրինք սպաների համար: Այսպես խաղաղ ամիսներ անցան: Մի օր էլ ռուսական զորքը հրաման արձակեց, որ նահանջում են՝ հայերն էլ իրենց հետ պիտի գաղթեն, հակառակ դեպքում, եթե մնան՝ կկոտորվեն: Ժողովուրդը իրեն կորցրած, ով ինչպես կարող էր, գաղթի ճանապարհը բռնեց: Մենք ունեինք չորս հատ կաթնատու կովեր և մեկ ձի: Հայրս կովերը բարձել էր անհրաժեշտ իրերով և ուտելիքներով, իսկ ձիու վրա գցեց խուրջինը, որի մի աչքում դրեց Արտավազդին, մյուս աչքում՝ Նազիկի երեք տարեկան տղային: Մայրս էլ նստեց ձիու վրա՝ յոթ ամսական Գառնիկը գրկում: Ես կարողանում էի քայլել, տատիկիս ձեռքից բռնած, ընկանք ճանապարհ:

Քայլեցինք սարերով, ձորերով մինչև տասնհինգ օր, ճամփին շատերը մահացան ուժասպառությունից և հիվանդություններից: Լինում էր այնպես, որ կանայք չէին կարողանում գրկած տանել իրենց երեխաներին և թողնում էին ճամփին կամ իրենց ունեցվածքը շպրտում էին, որ թեթև քայլեն: Հասանք Իգդիր: Բոլոր գաղթականները լցվեցին Իգդիր: Իգդիրից ազգային մարմինները փուրգոններով գաղթականներին փոխադրում էին Երևան և Էջմիածին: Մեզ տարան Երևան: Մի եկեղեցիի մոտ իջեցրին, չեմ հիշում՝ Էնտեղ որքան ապրեցինք: Մեզ Կոնդում բնակարան տվեցին: Հետո հայրս բնակարան վարձեց Բեյբութովսկի փողոցում, Արշակ բիձու տանը: Մենք ապրում էինք չքավոր վիճակում: Հայրս բոլոր իր հարստությունից կարողացել էր վերցնել քսան հատ տաճկական ոսկի, որը և մորս զարդեղենը ծախելով ապրեցինք երկու տարի:

Ես դպրոց գնացի մինչև չորրորդ դասարան, որից հետո մեր ունեցածը սպառվեց, ես ստիպված սկսեցի թերթ, ջուր ծախելով կոպեկներ շահել: Հայրս ոչ մի գործ չէր անում, այսպիսով մեր տնտեսականը վատթարացավ: Հայրս ինձ և տատիկիս տարավ Կարսի մոտ մի Սոգոթլու գյուղ և մեզ տեղավորեց իր մոտիկ բարեկամի տանը, որպեսզի երկու հոգի պակասի: Հետո հայրս մեզ նորից բերեց Երևան: Հետո էլ տարավ Էջմիածնի որբանոց դրեց ինձ: Որբանոցում մեկ տարի մնացի: Սնունդը այնքան քիչ էր, որ քաղցածությունից տանջվում էինք, և մի օր էլ ինձ նման երեք ուրիշ տղաների հետ որբանոցից փախա, եկա Երևան: Ես սկսեցի թերթ ծախել:

1919 թվին մենք ճամփա ընկանք դեպի Ռուսաստան: Երևանի կայարանում տեղավորվեցինք վագոնում՝ այն ժամանակվա պարետը Շահխաթունին էր. գեղեցիկ, սև աչք-ունքով մի մարդ: Նա իր թիկնապահներով մեր անցագրերը ստուգեց, ապա գնացքը շարժվեց:

Ճանապարհին շատ դժվար էր, քանի որ թուրքերը ամենուրեք էին: Պատահում էր, որ գնացքը օրերով որևէ կայարանում կանգ էր առնում, մենք էլ փոխադրվում էինք բեռնատար վագոններ: Ճամփորդները շատ էին, տեղը՝ նեղ, սնունդ չկար, կեղտի, ոջիլի մեջ էինք, անտանելի, տանջալի ճամփորդություն էր: Մեր նպատակն էր հասնել Թիֆլիս, քանի որ այնտեղ էր ապրում քույրս՝ Սանդուխտը, իր ամուսնու հետ: Թիֆլիսից գնացինք Փոթի, որ նավ նստենք դեպի Նովոռոսիյսկ: Վերջապես նավը հայտնվեց, և մենք ընտանիքով բարձրացանք նավ, տեղ գրավեցինք նավի տախտակամածի վրա:

Գելենջիկում հորաքրոջս տանը մնացինք մեկ ամիս: Այնտեղ հայերը գաղթել էին դեռ 1896 թվին և գրեթե բոլորը նավերի վրա բեռնակիր էին աշխատում:

Հետո մենք գնացինք Նովոռոսիյսկ: Այնտեղ ապրեցինք երեք տարի: Ես լավ աշխատանք ունեի, բայց մեր ընտանիքը փոխադրվեց Պարսկաստան, ես էլ ստիպված նրանց հետ գնացի, քանի որ միակ աշխատող ձեռքը ես էի:

Թավրիզում տուն վարձեցինք, բայց շատ անգործություն կար: Այնտեղ էին հավաքված տարագիր դաշնակցականներ, որոնք սովետական իշխանության հաստատումից հետո փախել էին Հայաստանից: 1921 թ. այդ փախստականների մեջ կային Հայաստանի Հանրապետության մեծ պաշտոնյաներ, մտավորականներ, խմբապետներ ու աչքի ընկնող անձնավորություններ: Թավրիզը ուներ երկու եկեղեցի, տարրական մի քանի դպրոցներ և միջնակարգ թեմական մի դպրոց: Թեմի առաջնորդն էր Ներսես արքեպիսկոպոս Մելիք Թանգյանը: Թեմական միջնակարգ դպրոցը հայտնի էր և նմանը չուներ Պարսկաստանում: Դասավանդողները տարագիր մտավորականներ էին՝ Աճառյանը և ուրիշներ: Թեմականի ընթերցավարտները գնում էին Պարսկաստանի հայաշատ քաղաքները և գյուղերը, ուսուցիչ էին լինում, և նրանց գործուղումը դաշնակցության կուսակցության կողմից էր լինում: Պարսկաստանի դպրոցները կառավարվում էին հիշյալ կուսակցության կողմից: Կար նաև հայկական ակումբ, որտեղ ամեն կիրակի պարի երեկո էր տեղի ունենում: Կար նաև քառաձայն երգչախումբ, որը ղեկավարում էր պր. Լևոն Գրիգորյանը: Նա մեծ թվով ջութակահարներ պատրաստեց, շատ հմուտ և տաղանդավոր արվեստագետ էր:

Թավրիզում ապրող հայ տարագիրներից բացի կային նաև տաճկահայեր, որոնք գաղթել էին 1914 թվին և հաստատվել էին Թավրիզում: Հայերի զգալի մասը գինեգործությամբ էր զբաղվում, կային արհեստավորներ, առևտրական համարյա չկար, քանի որ առևտուրը տեղացի թուրքերի ձեռքում էր, հայերը չէին կարող մրցել նրանց հետ: Կային մի տասնյակ հարուստ վաճառականներ՝ Բուդաղյաններ, Արզումանյաններ, Բաղդասարյաններ, Մելիք-Ասլանյաններ և այլն: Այն ժամանակ Ռիզա շահն էր թագավորում: Երկիրը տառապում էր անգործությունից, գործարաններ չկային, միայն գյուղատնտեսությամբ էին ապրում: Կային գյուղատերեր, որոնք գյուղերի տերն էին: Գյուղացին մշակում, ցանում էր գյուղատիրոջ հողը, նրա հետ բաժանում բերքը: Երկրից արտահանվում էին չոր միրգ, չամիչ, նուշ, չորացած ծիրան, գորգ, բուրդ և այլ գյուղատնտեսական մթերքներ: Փոխարենը ներմուծվում էր ամեն ինչ՝ գործարանային անհրաժեշտ իրեր, ասեղից սկսած մինչև ավտոմեքենա: Հայերի մեջ անգործները մեծ թիվ էին կազմում: Բնիկ թավրիզցիները բավականին լավ պայմաններ ունեին, երեխաները մինչև քառասուն տարեկան ծնողների հաշվին էին ապրում

և ոչ մի գործ չէին ձեռնում: Նրանց համար անպատվաբեր էր արհեստի գնալ, բանվորությունն կամ խանութպանությունն անել, իրենց ուզած գործերն էլ չէր վիճակվում իրենց, և այդպես մնում էին **անգործ** կամ ուսուցիչ էին դառնում: Տարագիրների մեջ կային **արհեստավորներ**՝ ոսկերիչ, արծաթագործ, մեխանիկ, հացթուխ, որոնք իսկույն գործի անցան:

Ես սկսեցի վարսավիրություն անել: Հետո Խաչատուր Բաղդասարյանի խորհրդով գնացի Մարաղա քաղաքը և այնտեղ սեփական վարսավիրանոց բացեցի: Ես բավական հաջողություն ունեցա, քանի որ իմ խանութը եզակի էր: Մարաղան ուներ երկու հարյուր տուն հայ՝ հազար շաչով: Կային հայկական դպրոց, եկեղեցի: Այնտեղ էր եկել հայ դերասան Մկրտիչ Թաշճյանը և ներկայացումներ էր տալիս հայերեն և ադրբեջաներեն, ինչպես օրինակ՝ «Նամուս», «Պատվի համար», «Մաշդիբադ» և այլն: Կային երկու հայ բժիշկներ՝ Մելքոնյան և Առուստամյան, երկուսն էլ Հայաստանից էին եկել: Բուն մարաղացիները առևտրականներ և արհեստավորներ էին: Մարաղան օժտված էր խաղողի այգիներով և մեծ քանակությամբ չամիչ էր արտահանում, այդ պատճառով էլ Թավրիզում եղած վաճառականները բոլորն էլ Մարաղայում չամիչի գործարանի մասնաճյուղեր ունեին, որոնք չամիչը մաքրում էին հատուկ մեքենաներով, լցնում էին արկղերը և ուղարկում Եվրոպա ու Ռուսաստան: Բացի չամիչից, նաև արտահանում էին նուշ: Ես շատ շուտ ընտելացա մարաղացի երիտասարդների հետ, որոնք երեկոները բոլորը հավաքվում էին իմ խանութը, հաճելի ժամանակ էինք անցկացնում: Ես արագորեն սովորեցի թուրքերեն, քանի որ մարաղացիները լավ թուրքերեն գիտեին: Ես սկսեցի լավ վաստակել: Ընտանիքս բերեցի Թավրիզից: Մկրտիչ Թաշճյանի առաջարկով՝ մասնակցեցի մի քանի պիեսների, դերեր վերցրի՝ «Ավերակների վրա», «Հին աստվածներ» և այլն:

1934 թ. ամուսնացա շատ համակրելի և շատ ուսում առած, բանաստեղծական շնորհքով օժտված օրիորդ Լիդիայի հետ: Մենք շատ երջանիկ էինք, մանավանդ երբ ծնվեց Անահիտը, ապա նաև՝ Վահագնը: Հետո հաստատվեցի Թավրիզում: Երրորդ ծննդաբերության ժամանակ իմ սիրելի կյանքի ընկերը աչքերը փակեց ընդմիշտ, թողնելով և՛ ինձ, և՛ Անահիտիս ու Վահագնիս: Նա իր վերջին շնչում գրեց հետևյալ տողերը.

«Թեկուզ մահվան մահիճի մեջ լինեմ,
Դու էլ միշտ կանգնած իմ սևարի մոտ,
Ես հանգիստ սրտով աչքերս կփակեմ,
Իմանալով, որ մեռնում եմ քեզ մոտ»:

Քանի որ երեխաները փոքր էին, ես ստիպված կրկին ամուսնացա, որ երեխաներիս խնամող լինի:

Բավական դժվարություններ ճաշակելուց հետո սինեմայի սրահ վարձեցի, լավ ֆիլմեր բերել տվեցի և ցուցադրեցի, հաջողություն ունեցա: Հետո սեփական սինեմա և «Օթել Ասիա» հյուրանոցը ունեցա: Ես միշտ օգնել եմ իմ հարազատներին, եղբայրներին, որոնք հիմա լավ դիրք ունեն Թավրիզում: Աղջիկս՝ Անահիտը, Թավրիզի համալսարանում լեզվաբանական ճյուղում առաջինը հանդիսացավ և հետո ամուսնացավ, այժմ Լոնդոն է ապրում: Աղջիկս Լոնդոնի հայկական դպրոցի տնօրինուհին է և լոնդոնահայության կողմից շատ ճանաչված:

Ես շատ երկրներ եմ մաս եկել, երևի քարտեզի վրա երկիր չկա, որ տեսած չլինեմ, բայց իմ երազն էր գալ, ապրել հայրենիքումս, և 1995 թ. Մեծ եղեռնի ութսուն ամյակի օրերին ինձ, որպես Եղեռնից վերապրող սփյուռքահայի, Հայաստանի Հանրապետության անձնագիր տվեցին, որը բացառիկ երևույթ էր և ահա ես արդեն երեք տարի է, որ փոխադրվել եմ Երևան, որտեղ արդեն ունեմ իմ տունը և ապրում եմ քրոջս թոռան, կենսաբանական գիտությունների թեկնածու Սուսաննա Ասոյանի հետ: Իմ երազն էր հայրենիքումս ապրել, և այդ երազս իրականություն դարձավ:

58 (58).
ՊԱՐՈՒՅՐ ԳԵՎՈՐԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ԱԼԱՇԿԵՐՏ, ԵՐԵՑ Գ.)

Մեծ եղեռնի ժամանակ ես փոքր էի, բայց հիշում եմ: Մեր ընտանիքը բաղկացած էր՝ հայրս, մայրս, երկու հորեղբայրներս, եղբայրներս՝ Ռուբենը, Խոսրովը, քույրս՝ Հեղինեն: Քանի որ մենք փոքր էինք, ռուսները մեզ դրին սայլի վրա ու բերին: Ճամփին տեսանք՝ գյուղերը վառվում էին, տներ-մարագներ ծխի-մխի մեջ կորած: Ասացին՝ մեջը հայերին լցրել են ու վառել: Մուրադ գետը արյուն էր դարձել: Ամեն կողմ դիակներ էին լողում... Ջորի մեջ թուրք զինվորները հայ աղջիկներին տարել էին, տկլորացրել և ստիպել պարել: Մեր կամավորները տեսնում են, հարձակվում են նրանց վրա: Թուրք զինվորներին կոտորում են և աղջիկներին ազատում:

Մեր երիտասարդները կազմակերպված մեզ պաշտ պանում էին ու ողջ-առողջ տեղ հասանք, չնայած որ թուրքերը մեզ հետապնդում ու կրակում էին: Եկանք, հասանք Իգդիր, հետո՝ Էջմիածին:

1917 թվից Էլեկտահ գյուղը մնացինք երեք տարի: Հետո իմացանք, որ մեր հողերը ռուսին են անցել, Մասիսի կայարանից գնացքով գնացինք Սարիղամիշ: Գնացքի մեջ տեղ չկար: Հայրս մեզ՝ երեք երեխեքիս բարձրացրեց գնացքի կտուրը, էդպես հասանք Սարիղամիշ: Սարիղամիշից ոտքով գնացինք Զամուղու: Գնացինք, տեսանք՝ քեռիներս էնտեղից գաղթել էին: Հետո գնացինք մեր տունը: Տեսանք՝ մեր տունը քանդել էին թուրքերը:

Թուրքերը եղել են մեր ոխերիմ թշնամիները և մնում են այդպիսին: Քանի որ մեր և նրանց մեջ սարեր կան: Նրանք մահմեդական են, մենք՝ քրիստոնյա:

Ես հիմա իննսուն տարեկան եմ, բայց մինչև հիմա հիշում եմ, թե ինչպես թուրքերը մեզ բունությամբ հանեցին մեր տներից, մեր գյուղերից ու անտուն դարձրին: Արևմտյան Հայաստանը խլեցին հայերից, տիրացան մեր հողերին, իսկ այդտեղի բնակիչ հայերին՝ կոտորեցին:

59 (59).
ԼՈՒՍԻԿ ԱՐՇԱԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԱԼԱՇԿԵՐՏ)

Մենք լավ էինք ապրում: Մեր Ալաշկերտի երկրի հող, ջուր շատ լավն էին: Մենք լավ ցորեն, եմիշ, բողկ, գազար կստանայինք: Հիմա աչքիս առաջ են մեր տունը, մեր բաղչան, մեր տանուտերները: Մեր երկրի կանաչին ու պտուղը ուրիշ համ ունեին:

Նախքան գաղթը մեր բարեկամներից, մեր քեռու տղաներից շատերին թուրքական ասկյար տարան ու կոտորեցին: Մերոնցից երեք հոգու տարան:

Ես փոքր երեխա էի, բայց հիշում եմ: Ես իմ տատիկի տանն էի: Տատիկիս տունը երկու հարկանի էր, կողքը մառան կար: Տանը սաղըր ունեին, վրան ասեղնագործված բարձեր կային: Երբ աղմուկ-աղաղակ լսվեց, ես հարցրեցի. - Էս ի՞նչ աղմուկ է:

Տատիկս ասաց. - Թուրքերը եկել են, մեզ ուզում են կոտորել:

- Ի՞նչ պիտի անենք:

- Տեսնենք. եթե ռուսները գան՝ լավ կլինի, թե չէ՝ պիտի տները թողնենք ու գաղթենք:

- Ո՞նց թողնենք տները, - հարցրեցի ես:

- Կթողնենք, կգնանք, թուրքերի ձեռքը չենք ընկնի:

Էսպես խոսում էի տատիկիս հետ, մեկ էլ ռուսները եկան: Մենք հանգստացանք, որ ռուսները եկել են: Էդ թուրքերը գլուխները կախ գերի ընկան, շատերը փախան: Ես դուրս եկա, տեսա թուրքերը ձիերի վրա, գլուխները կախ գցած փախչում էին: Ես էլ չանչեցի նրանց ետևից:

Ամեն կողմից՝ Բիթլիսից, Մուշից, Խաստուրից եկել էին հայ գաղթականները, կուտակվել էին մեր Ալաշկերտում, բայց էդ հանգիստ վիճակը շատ չտևեց:

Երբ ռուսները գնացին, թուրքերը նորից եկան: Թաղե՛մ թուրքերին: Երեխեքին գցում էին ջուրը, մեծերին սպանում էին: Իմ հորեղբայրները ինձ ու երեխեքիս արաբա ետստացրին, տատիս հետ: Ճամփին ի՞նչ եղավ՝ չգիտեմ: Քանի որ արաբայի միջից ոչինչ չէի տեսնում: Տասնհինգ օրում եկանք: Օրգով հասանք՝ Իգդիրի մոտը: Արդեն ռուսական հող էր: Էլ վախ չկար:

Մենք որ դուրս ենք եկել, մեզանից հետո մնացած բոլոր հայերին կոտորել են:

Հետո Իգդիրից դուրս եկանք ոտքով, ոնց որ անասուններ: Իրարանցում էր: Էնքան, որ ես կորցրի իմ ծնողներին: Սկսեցի ուժեղ պոռալ «մամա՛»: Վախեցա, որ կկորչեմ:

Մեկն ասաց. - Աղջի՛կ ջան, մի՛ վախի, թուրքերը էլ մեզ չեն հասնի:

Հասանք Երևան: Բայց երեք հորեղբայրներս, հերս ու մորաքույրս, տատիկներս մահացան ճամփին: Մեզ տարան Կաթողիկե եկեղեցին: Ամերիկացիները մեզ կերակրեցին: Եթե դրանք չլինեին, մենք կկոտորվեինք: Ամեն առավոտ կաչկան գալիս էր, մեռած մարդկանց ջանդակները վերցնում գցում էին մեջը, հավաքում, տանում էին: Քանի որ տիֆի ու խոլերայի սարսափելի համաճարակ կար, ով հիվանդանում էր՝ մեռնում էր: Հիշում եմ, մի երեխա լաց էր լինում՝ «Սովա՛ծ եմ», ասում էր: Ջավարը աղացին, խմոր արեցին, տվին որ ուտի ու չմեռնի:

Ինչքան հիվանդանոց կար, որքանոց դարձրին: Հետո շատ տանջանքներ քաշեցինք մինչև մեծացանք:

Իմ կեսուրը պատմում էր, որ ինքը երեք ամսական երեխա է ունեցել, թուրք հարևանը ասում է՝ ես կպահեմ: Երեք ամիս պահել է նրանց: Հետո կեսրարս գնացել է, նրանց սաղ-սալամաթ բերել է: Հետո ես նրանց տղի հետ ամուսնացա: Հիմա փառք եմ տալիս Աստծուն, որ ողջ եմ մնացել ու իմ երեխեքի հետ ապրում եմ: Թուրքերն ու քրդերը մեզ կոտորում էին: Հողե՛մ դրանց գլուխը:

60 (60).
ՄԻՀՐԱՆ ՀԱԿՈԲԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԱԼԱՇԿԵՐՏ)

Երբ ես ծնվել եմ, մեր ընտանիքը բաղկացած է եղել՝ հայրս, մայրս՝ Անուշը, քույրս՝ Գալիփսեն, եղբայրըս՝ Անդրանիկը և ես:

Մայրս բազմաշնորհ կին էր, մեր երիտասարդ աղջիկներին ձեռագործ էր սովորեցնում՝ առանց հատույցի: Մայրս նաև կրթված էր: Նա ուսուցչի աղջիկ էր, հեղինակություն ուներ: Նրա հայրը Գրիգոր վարժապետն էր: Մայրս շատ մարդասեր էր ու պատվարժան: Նա խալիչա էր գործում, ամեն տեսակ ձեռագործներ էր անում ու պատից փակցնում:

Մեր տները քարաշեն էին, հազարաշեն երդիկով: Երդիկը՝ կտուր-պատուհան էր: Ձմեռը փակում

էին: Դուռը փակվում էր, ներսից ճանապարհ կար դեպի հորեղբորս տունը: Դրսում ջրհոր ունեինք, խմելու ջուր էինք քաշում: Հարուստների տները երկհարկանի էին, լուսամուտներով: Մեր տունը ուներ երկու սենյակ, մեկը՝ ամբարձ էր, դեռ չաղացած ցորենի և ալյուրի համար, մյուսը՝ ննջարանն էր և թոնիր կար: Մաճճակալ չկար: Մի հատ քեչա կար: Տղաները մի տեղ, աղջիկները մի տեղ էին քնում: Լուսավորվում էինք ճավթի ճրագով: Մորս պատրաստած հարիսան, քրչիկը և խավիծը շատ էի սիրում: Մենք ոչ մի շուկա չունեինք: Ամեն ինչ աշնանը պատրաստում էինք, բացի հորս ծխախոտից: Մեր հիմնական բերքը անասունների կաթնեղենն էր, արտից ցորեն էինք ստանում: Դրանից ձավար, բլղուր, հատիկ էինք պատրաստում: Այգում աճեցնում էինք խաղող, խնձոր, ձմերուկ, իսկ չիրերը դրսից էին գալիս: Հատուկ մարդիկ կային հայ կամ ոչ հայ, բերում, ծախում էին ծխախոտ: Գոմեշ ունեինք՝ աննուը Արաբո էինք դրել, քանի որ կովարար էր: Հավանոցում հավեր էինք պահում: Ձորացած մսեղեն չկար: Հայրս ինքնուրույն մարդ էր, ոչ ոքի առաջ գլուխ չի խոնարհել: Մենք ունեինք մի կով: Խնոցիի մեջ մածուն էինք լցնում, կարագ կամ ժաժիկ, թան էինք ստանում: Հայրս ուներ ընկերներ: Մեկի արտը քաղելու համար ընկերով գնում էին հավաքելու:

Հորեղբայր Մարտիրոսը ուներ երկու տղա, երեք աղջիկ: Մեր տունը մոտիկ էր դպրոցին և եկեղեցուն: Մեզ մոտ շատ կաթոլիկներ կային: Ֆրանկների մասին լսել եմ, որ նույն հայերն են, երբ Քրիստոսը ծնվել է, ասել են պիտի տեսնենք՝ նոր հավատանք: Նրանք ամեն ինչին կասկածում էին: Մերոնք կաթոլիկներին աղջիկ չէին տալիս: Մեր գյուղացիների քսան-քսաներկու տոկոսը ֆրանկ էր: Ֆրանկները ավելի հարուստ էին: Նրանք ունեին լավ տներ, շատ անասուններ: Նրանց մոտ մասնավոր սեփականության գաղափարը ավելի շատ էր: Նրանք մինչև չորս դասարան ունեին, իսկ մերը՝ վեց դասարան էր:

Ես ութ տարեկանից եմ դպրոց գնացել: Քանի որ դժվար էի ծնվել, ասում էին, թե ես զույգի թաք եմ: Մեր դպրոցը եկեղեցու մոտ էր: Դպրոցը մեկ հարկանի էր, լուսավոր դասարաններով: Կարգապահություն կար: Օրական մի ծնող մաքրում էր: Ով հերթից էր գալիս, ճաշ էին տալիս: Դպրոցում հայերեն, թուրքերեն էինք անցնում, նաև թվաբանություն, աշխարհագրություն էինք անցնում: Մեր դպրոցում վատ սովորողին ծնկի էին պահում: Քննությունների ժամանակ ծնողները գալիս, լսում էին: Մեր գյուղից շատ խելոք մարդիկ են ելել, օրինակ՝ Հակոբ Հարությունյանը, որը Էջմիածնում սովորել է և գործակցել է Կոմիտասի հետ:

Մեր դպրոցի տեսուչները գալիս էին Էջմիածնից, ստուգում էին մեր ուսման մակարդակը: Ամեն առավոտ եկեղեցու գավիթում հավաքվում էինք, ընթերցվածք էինք կարդում: Մեր դպրոցը սովորելու էին գալիս նաև քրդեր: Ես փոքրուց ինձնից փոքրի նկատմամբ մարդասիրորեն եմ վերաբերվել, սիրել եմ քրոջս, եղբորը: Տան մեջ հայրս մորս գործերին չէր խառնվում: Դեռ պապս հավաքել է իր որդիներին, խրատել է. «Տղամարդը կնոջ սիրտը չպետք է կոտրի. կնոջ սիրտը ապակի է»: Մայրս էլ այնքան խելոք էր, որ թույլ չէր տալիս նկատողություն անել: Հայրս շատ էր սիրում պաչել թուշերը, բայց պատվով էր: Դեռ դպրոցում մեզ սովորեցրին հրացան բացել, փակել: Խաղում էինք գերի-գերի: Փոքր եղբայրս սիրում էր ծեծել, հայրս խրախուսում էր: Հայրս մեծ հայրենասեր էր, անարդարություն չէր հանդուրժում: Ես հայրական սեր քիչ եմ տեսել:

Մեծ հորեղբայրս բույսերից և ծաղիկներից դեղեր էր սարքում: Մենք էինք ծաղիկները հավաքում: Հարսանիքներին մեզ տանում էին: Հիշում եմ հորեղբորս տղայի հարսանիքը. աղջիկները երկար դեղրա էին հագնում, լավ մետաքսից գլխաշորեր էին կապում, ճվագող-երգողներ կային, խմբերից մեկը՝ երգում էր, մյուսը՝ պատասխանում: Գյուղում մի երգիչ ունեինք:

Մեր գյուղում երկու աղբյուր կար՝ Կամարավոր աղբյուր և Ջուլալ աղբյուր: Դրանք առանձին թաղերում էին: Գյուղը քիչ թեքության վրա էր, որը հարթավայր էր դառնում: Վերին չայիրներ և Ներքին չայիրներ կային: Առուից էն կողմ հարթ էր: Արտերը ջրովի էին: Հարուստները սեփական գութան ունեին, անասուններին հանում էին վարելու:

Ինչպես ասացի, ես հայրական սեր քիչ եմ տեսել: Վերջին անգամ հորս տեսա, երբ երկու հարյուր հիսուն հոգով փախան Ռուսաստան: Քեռու խմբում կամավոր դարձան: Հետո հայրս, որ ռուսական զորքերի հետ եկավ, ես արդեն որբանոցն էի:

1915 թ. հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին քրդերի հասցրած վնասները սաստկացան: Նրանք հարձակվում էին մերոնց վրա, թալանում, սպանում էին: Երբ ռուսական բանակը հարձակման անցավ, համիդեական մի բանակ բերին, որոնք գուրմանչի քրդեր էին, տեղավորեցին մեր գյուղում: Մեր գյուղի քրդերը, որոնք մարդկային էին, մեզ զգուշացրին, որ երեխա չթողնենք: Հարս, աղջիկ ելան, գնացին գյուղից մեկ կիլոմետր հեռու: Մենք էլ գնացինք էնտեղ: Համիդեականները մահմեդականություն ընդունած քրդեր էին, որոնք ծառայում էին թուրքական կառավարությանը: Մեր գյուղի ժողովուրդը փախավ էնտեղ: Ես մեկ-երկու անգամ եկա գյուղ, որ յուղ, ալյուր վերցնեմ: Ոչ մի բան չէին թողել, թալանել էին ու տարել: Միայն թողել էին տան պատերը:

Ես մինչ այդ երազ էի տեսել ու պատմել, որ ռուսական աստղը խավարեց, լուսինը պայծառացավ: Հայրս ասել էր. «Ծաղ լակոտ, ուրեմն թուրքերը մեզ պիտի կոտորե՞ն»: 1915 թ. հոկտեմբերի վերջին մերոնք արդեն գնացել էին էնտեղ թաքնվելու, ուր մնացին երկու ամիս: Ես էդ ժամանակ Խաչունք գյուղումն էի՝ հորեղբորս տանը: Գաղթի ժամանակ մերոնք փախնում են, ես էլ շորերս, տրեխներս հագա, նրանց հետ փախա: Գաղթեցինք, մեր գյուղի մոտով անցանք: Ես հորեղբորս տղին ասի. - Նայիր, մերոնք տա՞ն են:

Նա գնաց, տեսավ՝ ոչ ոք չկա: Ես գնացի տեսա՝ իրոք, ոչ ոք չկա: Ես վազեցի գաղթականների երկայնքով՝ մերոնք չկան: Քայլելով անցանք Խաստուր, հասանք Ղարաքիլիսա, ոտքերս սառել են, տրեխներս պատռված, շորերս՝ պատռված: Ինձ բարի մարդիկ

վերցրին, խնամեցին: Քնեցի, արթնացա, որ ինձ խնամողները գիշերը սառել էին, նստած մնացել: Ես «օգնություն» կանչեցի: Ռուս զինվորները եկան ինձ մոտ, վերցրին էդ սառած մարդկանց, շուռ տվին: Ինձ զինվորական բերետ, շինել հագցրին, սալով բերին հասցրին Ցոնջալու, հետո՝ Դիադին, ավելի վերջ՝ Իգդիր, ուր մի տան մեջ տեղավորեցին: Շատ գաղթականներ կային, որոնց հետ վերջապես հասանք Էջմիածին:

Մինչև 1917 թվի սկիզբը մնացի Ախտալի որբանոցում: Հետո՝ Քանաքեռի երկսեռ դպրոցը հաճախեցի, երրորդ դասարան ընդունվեցի: Ուսուցիչներս, հատկապես Շավարշ Ամիրխանյանը, մեզ հետ շատ լավ էին վարվում, ամեն մեկիս հոգեբանությունն էին զգում: Ուսուցչուհի Շուշանիկ Տեր-Հովհաննիսյանը մեր ղեկավարն էր, որը արդարության, հավասարության մասին մեզ գաղափար տվեց:

1917 թ. փետրվարին, ցարի անկումից հետո, Շավարշ Ամիրխանյանն ասաց. - Ես էլ չեմ կարող մնալ, - նա գնաց Էջմիածին:

1919 թ. ես ավարտեցի դպրոցը: Մեր որբանոցը տեղափոխեցին Երևան:

1920 թ. Երևանի կայարանում բանվորություն էի անում: Հույս ունեի, որ կյանքը լավ պիտի լինի: Դեռ դաշնակցական կառավարությունն էր:

Մի օր ելանք առավոտյան, տեսանք, որ կարմիր ծաղիկներ են դրել, դու մի ասա՝ բոլշևիկները մտել են: Երբ Կարմիր բանակը մտավ մեր որբանոց, երեխաներս դիմավորեցինք կարմիր դրոշներով:

Երբ մենք գաղթում էինք, մայրս վեց ամսական քրոջս հետ է լինում: Քրդերը վրա են տալիս, հարձակվում են: Հորեղբայրս շներին է բաց թողնում: Քրդերը սպանում են շներին և իրան: Մորս փախցնում են: Մայրս քրդի շոր հագած քրդերի հետ է մնում, հարսս էլ իր հետ: Հայրս գնում, գտնում է մորս ու մեկ տարեկան դարձած քրոջս: Մեզնից՝ տղաներիցս, լուր չկա: Քանի որ հետո իմացա, որ ախպերս էլ Կարսի որբանոցում է եղել: Մայրս, հայրս և քույրս գալիս են Կոտայք, Զառ գյուղում ապրում: Մայրս հաց թխելով՝ յոլա են գնում: Հետո փոխադրվում են Երևան:

Ես հարց ու փորձով իմացա, որ մերոնք ապրում են Երևանի Գնունի փողոցում: Գնացի, գտա: Հայրս ինձ չճանաչեց: Ես բավական մեծացել էի: Երբ ինձ ճանաչեց հայրս, սկսեց լաց լինել ու ասաց. - Մենք դրժբաղխտ ժողովուրդ ենք:

Հարցի մորս մասին, իմացա, որ քնած է: Գնացի մտա մորս ծոցը: Մայրս աչքերը բացեց, զարմացավ, կարծեց երազ է:

Հետո եղբորս բերին Էջմիածնի որբանոցը, կոմերիտմիության մեջ մտավ, բանաստեղծություններ գրեց: Ես համալսարանում սովորեցի, եղբայրս՝ անասնաբուժական ինստիտուտում: Ավարտեցինք: Ես Շաումյանի անվան տան պրոպագանդայի տան վարիչը դարձա:

61 (61).
ՆՎԱՐԴ ԱՎԵՏԻՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԱԼԱՇԿԵՐՏ)

Մենք խաղաղ ապրում էինք Ալաշկերտում: Մի օր, 1915 թվին, թուրքերը հարձակվեցին մեր գյուղի վրա: Մեր գյուղի մարդկանց բռնեցին, զոռով կապկպելով, հրմշտելով լցրին գոմերի մեջ ու վառեցին: Մեր գերդաստանը քսաներկու հոգի էր, իսկ մեր ընտանիքը հինգ հոգի էր. մայրս, հայրս, երեք քույրերս: Հորեղբորս, հորեղբորս երեխեքին ու թոռներին, քեռիներիս, նրանց թոռներին ու իմ ծնողներին լցրել են գոմը ու վառել:

Մենք՝ երեք քույր, մնացել ենք որբ, անտեր ու անտիրական: Սաղ գաղթի ճանապարհին մենք կոտորված, ջարդված դիակների վրայով դժվարությամբ քայլում էինք: Մի կերպ հասանք Իգդիր: Հետո՝ Հոկտեմբերյանի (այժմ՝ Արմավիր) Էվջիլար գյուղը, որը Արազի ափին էր: Առավոտյան տիֆի հիվանդությունը ընկավ գաղթականների մեջ. շատ-շատերը էնտեղ մեռան: Քույրս ինձ պահեց: Գնացինք Հոկտեմբերյանի Ջանֆիդա գյուղը: Մեր սաղ գյուղից ես ու քույրս էինք ողջ մնացել:

Թուրքը մեզ կոտորեց, սպանեց, որբացրեց, տնից, տեղից, հարազատից զրկեց: Ես կարոտ մնացի իմ ծնողներին: Ես իմ ծնողներին իմ երազի մեջ կտեսնամ միայն...

Ամուսնուս՝ Ռուբենի ընտանիքը, նրանց գերդաստանը ևս, բոլորը կոտորվել են թուրքերի ձեռքից: Թուրքը մեզ շատ վնաս տվեց: Աստված չի ների նրանց արածները...

62 (62).
ՎԱՐԴՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1911 Թ., ԱԼԱՇԿԵՐՏ)

Իմ ծնողները պատմում էին, քանի որ ես շատ փոքր էի, 1915 թ. դեպքերը. մամաս, պապաս հիշում էին իրենց քաշած տառապանքները թուրքերի ձեռքին ու լաց էին լինում: Նրանք հայերին հանել են իրենց տներից, լցրել են մարագները, եկեղեցիները և կրակի են տվել, այրել են: Ողջ մնացածներին կոտորել են: Երբ բոլոր տները վառել են, էլ ճար չի մնացել, ովքեր որ հրաշքով ողջ են մնացել, գաղթի ճամփան են բռնել՝

մայրս, երեք եղբայրներս, իսկ **մի եղ**բայրս՝ Գասպար Տեր-Մելիքսեթյանը, Անդրանիկ Զորավարի բանակումն էր: Նա շատ է օգնել հայերին, որոնք ուզեզրկված էին ու անտուն մնացած:

Գաղթի ճանապարհին շատ մարդիկ հոգնությունից, սովից ու ծարավից **մահաց**ել են: Մուրադ գետը լիքն է եղել դիակներով: Մամաս ու իր երեք քույրերը տղամարդու շորեր են հագել, ժողովրդին լողալով անց են կացրել գետը: Մամաս պատմում էր, թե ինչպես իրենց հարազատներին իրենց աչքերի առաջ սպանել են: Կանանց մերկ-մերկ ստիպել են պարել, անպատվել են ու իրանք հրճվել:

63 (63).
ԳՈՒՐԳԵՆ ԱԲԳԱՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1914 Թ., ԱԼԱՇԿԵՐՏ, ԳՅՈՒԼԶԵՏԿԱՆ Գ.)

Մ ինչև տասներկու-տասներեք տարեկան հասակս չեմ զգացել, որ վերցնովի երեխա էի, որովհետև տատս, պապս ուրիշ երեխա չեն ունեցել և ինձ ջերմությամբ են շրջապատել, բայց **հետո** հարևաններիս երեխաներից լսել եմ, և այդպես շարունակվեց մինչև հիսունական թվերը:

Եղբայրս՝ Սուքիաս Մինասյանը, ինձ գտավ, բայց ահա թե ինչպես գտավ:

Ամենամեծը մեր չորս **երեխա**ներից եղել եմ այդ եղբայրս և երկու քույրերս: Ես մեկ **տարեկան** եմ եղել, երբ 1915 թ. Ալաշկերտի Գյուլզետկան գյուղից գաղթել ենք. մեկ կիլոմետրի չափ գյուղից դուրս գալուց, կանգնեցրել են մեր քարավանը և հորս կապել են ծառին ու բոլորի աչքի առաջ սպանել: Մորս հրամայել են՝ չորս երեխաներիդ առ ու գնա: Երեքը ոտքով գնացել ենք, ես՝ մորս գրկում, երեքուկես ամիս ճանապարհ ենք գնացել, դեպի Բայազետ, Իգդիր, Էջմիածին, մինչև հասել ենք Երևանի Ս. Սարգիս եկեղեցու բակը: Այդ ժամանակ շատ լիքն էր այդ եկեղեցու բակը: Ամենուրեք հիվանդներ էին ու մեռելներ: Հատուկ սայլ կար, որ մեռածներին հավաքում էր ու տանում: Էն ժամանակ Ս. Սարգսից էն կողմ Ղանթարն էր: Մեր գաղթական երեխեքը՝ քույրերս, մեծ եղբայրս, գնում էին հաց-մաց ճարում, բերում, ուտում էինք: Մայրս երկար ճանապարհներին տառապած էր, ինձ կրծքով է կերակրել, բայց Երևան հասնելուց տասներկու-տասներեք օր հետո մայրս վատ է զգացել, և ես լաց եմ եղել:

Երկու ամուսիններ, որոնք երեխա չունեին, միշտ ամեն օր եկել են եկեղեցու բակը, տեսել են մորս ծանր վիճակը և ինձ: Հաջորդ օրը եկել են, տեսել են մայրս մահացած է, և երեխան էլ կրծքի վրա լաց է լինում: Էն ժամանակ եղբայրս գալիս է Ղանթարից, տեսնում է նրանց: Նրանք ասում են. - Մենք վերցնում ենք այս երեխային, տանում ենք Կոնդ:

Եղբայրս երբ դառնում է տասնհինգ-տասնվեց տարեկան, մտածում է իր քույրերի մասին: Ամերիկացիները որբանոց են բացում, և այդտեղ քույրերս տեղավորվում են: Այդ որբանոցի որբուհիներին տանում են Ամերիկա: Մի քանի քաղաքներ է գրում, փնտրում է քույրերին՝ չի գտնում: Սկսում է մտածել իմ մասին: Հիշողությամբ մտածում է, որ երբ ինքը տասը տարեկան էր, մի մարդ ու կին եղբորը տարան Կոնդ...

Էն ժամանակ ես Աշտարակում խերեսի գինու գործարանի շենքն էի կառուցում: Եղբորս գտնելուց առաջ, մեկը ինձ մոտեցավ: Ասաց. - Էս քանի օրը գալու եմ ձեզ մոտ, եղբորս գտնելու:

- Հաստատ գիտե՞ս, - ասեցի:

Յոթ-ութ օր հետո, ես իմ առանձնասենյակում նստած էի, դուռը թակեցին, մի մարդ ու մի կին ներս մտան: Կինը եկավ նստեց, իսկ ամուսինը չնստեց: Եկավ իմ ուսագլխին կանգնեց: Կինը սկսեց պատմել:

Այդ նույն ժամանակ ամուսինը՝ ուսավերևումս կանգնած՝ ուզում էր ինձ հետ շփվել: Նա 1904 թ. ծնված էր: Երբ կինը շատ մանրամասն պատմեց, ես անտարբեր լսում էի: Այդ նույն ժամանակ ամուսինը շատ անհանգիստ էր: Մեկ, մեկուկես ժամ տևեց այդ խոսակցությունը, և պարզվեց, որ դա իմ եղբայրն է:

Վերջապես իմ կարծիքը հարցրեցին: Ես ասեցի՝ մինչև ինձ խնամող ու պահող մայրիկիս հետ չխոսեմ, չեմ կարող պատասխան տալ: Բայց երկու օրից ինձ կանչեցին Երևան, կոլեգիայի նիստի: Երկու ժամ ժամանակ կար, մոտիկ ընկերներ ունեի, գնացի Գերասիմի մոտ՝ խորհուրդ հարցնելու: Սա տեղից վեր կացավ, համբուրեց, ասաց. - Որտե՞ղ է ապրում:

Ես դուրս եմ եկել, ընկերս գտել է եղբորս, սկսել է պատմել:

Կոլեգիայից հետո տուն եմ գալիս, արդեն հայրիկս չկար, մայրս միայն ողջ էր: Կնոջս հարցրի: Մայրս ասաց. - Հանգի՛ստ, եկել են, տեսել ենք: Գուրգե՛ն ջան, մինչև հիմա մեկն եմ ունեցել, հիմա՝ երկուսն ունեմ:

Էդ րոպեին եղբայրս և իր կինը ներս մտան, ուրախության սեղան բացեցին, քեֆ ուրախություն սարքեցին: Տատիս անունը Ծովինար էր, մորս անունը Ծողակն էր, կնոջս՝ Եվգենիա, զավակներս՝ Լաուրան, Արան, Աբգարը և Գագիկը:

Այս բոլորի պատճառը թուրքերի կոտորածներն էին: 1915 թ. Ալաշկերտը ևս զոհ գնաց այդ զուլումին:

Այդպիսով ես մինչև իմ կյանքի վերջը կրեցի իմ ազնիվ հոր՝ Աբգար Մուրադյանի անուն-ազգանունը, քանի որ նրանք փրկեցին ինձ: Ես ու եղբայրս ինչքան փնտրեցինք՝ հիշելու մեր իսկական մոր անունը, այդպես էլ չկարողացանք հիշել, քանի որ և՛ ես, և՛ ինքը շատ փոքր էինք:

64 (64).
ՆԱՏԱԼԻԱ ԱՎԵՏԻՍԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1889 Թ., ԿԱՐՍ, ԾՊՆԻ Գ.)

Մ եր գերդաստանին ասում էին Դարբինենց: Մենք շատ հարուստ էինք: Քեռիներս, մորաքույրներս, հորեղբայրներս ու հորաքույրներս մեզի հետ եկան:

Նախքան թուրքի պատերազմը մյուս քրիստոնյա տղամարդկանց հետ հայերին էլ տարան, սպանեցին: Դրա համար էլ մենք տուն-տեղ, հարստություն թողնինք ու փախանք:

Մամաս վերցրեց իր չորս աղջիկներին՝ Սիրանուշին, Հրանուշին, Նունիկին և ինձ, լծեց գոմեշները ու փախանք: Հասանք մի մեծ գետի: Հորեղբայրս ձիով, հերթով մեզ անցկացրեց էդ գետի մյուս ափը: Ճանապարհին մայրերը հոգնում էին, իրանց էրեխեքին չէին կարողանում տանել, դնում էին գետնին, քայլում էին առաջ: Մենք մեծ էինք, քայլեցինք: Էկանք մի գյուղ, մի տուն իջանք: Թոնիր վառեցինք, չորացանք, տաքացանք: Էդի արդեն Լենինականն էր:

Ես ու իմ մեծ քույրերը էլել ենք դուրսը խաղալու, մութ գիշեր էր, գիտցել եմ, թե մենք անտեր, որբ երեխեք ենք, մեզ վերցրել տարել են որբանոց: Մերս է սկսել հավար գցել, թէ՝ էրեխեքս չկան:

Քեռիներս ասում են, թե տեսնող ա էղել, որ տարել են որբանոց: Հետո մերս էկավ մեզ հետ բերեց: Գնացինք Բոգդանովկա, Էնտեղ էլ ամուսնացա:

Հիմա լավ տղա ունեմ, լավ հարս, լավ թոռներ:

65 (65).
ԱՆՆՄԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ԿԱՐՍ, ԾՊՆԻ Գ.)

1918 թ. երբ ռուսը Կարսը հանձնեց թուրքին, թուրքերը լցվան հայկական գյուղերը: Թուրքերը եկան մտան մեր գյուղը: Ես փոքր էի: Ինձանից մեծ քույր ունեի: Մայրս նրա երեսը ցեխ քսեց և մտցրեց թոնդիրը, որ թուրքերը չփախցնեն: Բայց թուրքերը եկան: Նրանց հետ կար մի թուրք փաշա: Գտավ քրոջս ու առավ, տարավ: Ես մի ուրիշ քույր էլ ունեի, էն էլ վախից մեռավ: Հայրս գյուղի քյոխվան էր: Հորեղբայրս ութը տղա ուներ: Թուրքերը բոլորին տարան, սպանեցին, իմ երկու եղբորն էլ սպանեցին: Սաղ գյուղը կոտորեցին: Մամաս դարդից մեռավ:

Ժողովուրդը ստիպված սկսեց գաղթել դեպի Արագած և գալ Արևելյան Հայաստան: Էդ ժամանակ Ցաղլուջի սարից թուրքերը կրակ են բաց անում: Արփաչայի ջուրը ուժեղ բարձրացած է լինում, հայերը անցնելու ժամանակ ջուրը քշում տանում է նրանց: Տեսնում են, որ ժողովուրդը կոտորվում է, վեց եզ՝ էս կողմից, վեց եզ՝ էն կողմից լծված, փոխադրում են հայերին մեկ ափից՝ մյուս ափը: Թուրքերն էլ մյուս կողմից Ցաղլուջի սարի դոշից կրակում էին, դադար չէին տալիս:

Խաչատուր հորեղբայրս, որ շատ քաջ մարդ էր, գյուղացի քառասուն երիտասարդների հավաքում է ու սկսում են թուրքերի դեմ կռվել, որ ժողովուրդը հանգիստ անցնի Արփաչայ գետը:

Ցաղլուջա սարի դոշին երբ կռվում են, քառասուն հայերից տասնութը գերի է ընկնում: Խաչատուր հորեղբայրս, որ հրամանատարն էր, գերի է ընկնում: Թուրքերը խարույկը վառում են, նրա մաշկի վրա գըրպաններ են բացում, որ տանջամահ անեն, վերջն ալ կրակի վրա ողջ-ողջ խորովում են, իսկ մնացած գերիներին՝ սպանում: Էդ ընթացքում ժողովուրդը գետը անցնում է:

Լուր է գալիս, որ ռուսը նորից գրավել է Կարսը և թուրքերին դուրս է արել: Հայ գաղթականները նորից ետ են գնում, նույն դժվարությունները հաղթահարելով, գնում են տեսնում, որ գյուղի քահանայի, որը չէր ցանկացել լքել իր հարազատ գյուղը, գլուխը թուրքերը կըտրել էին և մեխել իր տան դռան ճակատին: Ետ վերադարձանք, տեսանք մեր խեղճ տերտերի գլուխը մեխված:

Ուրեմն 1919 թ. նորից ետ գնացինք Կարս, մեր գյուղերը: Սկսեցինք վարել, ցանել, հազիվ բերքը պիտի քաղեինք, նորից լուր եկավ, որ թուրքը վերցրել է Կարսը: Նորից գաղթի ճամփան բռնեցինք: Թուրքերը նորից խուժեցին մեր տները, նորից սկսվեցին թալանն ու ավերը: Վարսենիկ հորաքույրս տեսնում է, որ թուրք զորքը մոտենում է, վախից իր երկու երեխաներով իրեն գցում է ջուրը և խեղդվում: Աղասի պապուս և իմ երկու տեգրներին կապին իրար, գցին ջուրը՝ խեղդվան: Ամուսինս յոթը քեռի է ունեցել, յոթին էլ մորթել են:

Նորից սկսվեց գաղթականության զուլումը: Մեզ Կարսից քշեցին, Կաղզվանով գիշերով եկանք: Հորեղբորս կինը գնաց ջրի, ես էլ նրա ետևից գնացի ու կորա: Հետո նա եկավ ինձ գտավ գաղթականների միջից: Կարսից եկանք Լենինական: Ինձ ամերիկյան որբանոց դրեցին: Մեր գյուղացիները հաստատվան Թալինի շրջանի Թութուլավան գյուղում:

66 (66).
ՓԵՓՐՈՆԵ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԹՈՒՄԱՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԿԱՐՍ)

Իմ հայրը՝ Անդրանիկը, Էրզրումցի էր: Նրանք յոթ եղբայր էին, մի եղբայրը Հարությունն Քյուչյուքյանն էր: Երեք եղբայրները ժամագործ էին: Հորս խանութի մեջ նկուղ է լինում, թուրքերը որ հարձակվում են, նրանք թաքնվում են նկուղում, իսկ փոքր եղբորս, որը 21 տարեկան էր, թուրքերը ետևից խփում են ու սպանում: Ութ օր նրա դիակը անթաղ մնում է փողոցում: Եղբայրները վախենում են դուրս գալ: Վերջապես մայրը չադրան գցում է գլխին, գնում, շալակում է տղայի դիակը ու տանում թաղում:

Պապիս մնացած եղբայրները գաղթում են: Հայրը մնում է Սարիղամիշում: Մի եղբայր էլ ունեին, որը Երզնկայում ֆրանսերենի ուսուցիչ էր: Նրա ճակատագիրն էլ շատ դաժան է լինում: Թուրքերը գալիս հորեղբորս ասում են. «Հրաման է եկած, որ պիտի գաղթեք»: Հորեղբայրս ընտանիքով դուրս է գալիս տնից, գնում են գերեզմանոց, կնոջն ասում է. «Մի սիգարա փաթաթի ծխեմ» ու հանկարծամահ է լինում: Նրա ութ տարեկան Արուսյակ աղջկան թուրքերը փախցնում են, տանում են թուրքական որբանոց: Մայրս Արուսյակին ազատում է որբանոցից: Իսկ փոքր տղային թուրքերը տանում են բեկի ոչխարները արածացնելու:

Հիշում եմ, թուրքերը կացինով սպանում, գցում էին ջուրը: Շատերը, ինչպես նաև մորս եղբորը կինը, իր երեխայի հետ իրեն գցեց ջուրը:

Էդ ժամանակ լուր տարածվեց, որ ռուսական զորքը հայ կամավորների հետ դեպի Երզնկա է գալիս: Թուրքերը սկսեցին փախչել: Եվ շատ հայ փոքրիկ տղաներ, որ թուրքերի մոտ հովիվ էին դարձել, երբ լեռ էին բարձրանում, իրար ասում էին. «Հացը պահենք, փախչելու ժամանակ պետք կլինի: Ռուսը որ գա, մենք նրա հետ կփախչենք»: Չնայած որ նրանց արդեն թլպատել էին և ստիպել էին կրոնափոխ լինել, բայց նրանք հոգով հայ-քրիստոնյա էին մնացել:

Երզնկայում, երբ նրանք պիտի փախչեին, երեք թուրք զինվոր նրանց դեմը բռնում են ու հարցնում. - Ո՞վ եք, փախչում եք, գյավուր եք:

- Մենք բեկի հովիվներն ենք, - ասում են հայ տղաները ու գալիս են Երզնկա:

Երզնկա քաղաքը արդեն թուրք չէր մնացել: Թուրքերը փախել էին:

Կեսգիշեր էր: Մեկ էլ քաղաքը լուսավորվեց: Ռուսները լույս էին գցում, որ տեսնեն՝ քաղաքում մարդ կա՞: Երբ առավոտյան ռուսները գալիս են, էս տղաները վազում են նրանց ընդառաջ: Տղաները հագած են լինում թուրքի հագուստներ: Ռուսները ուզում են նրանց սպանել: Սրանք չոքում են ու խաչ են հանում: Ռուսները հարցնում են. - Դուք հա՞յ եք:

- Այո՛, - ասում են տղաները, - մենք հայ գերիներ ենք:

Հայ կամավորները նրանց օգնում, տանում, հանձնում են Սարիղամիշի որբանոցը: Հետո հայրիկս գնում է այդ որբանոցը և հարցնում. - Ո՞վ կա Քյուչյուքյանցներից:

Հորեղբորս տղան մոտենում է և լաց լինելով ասում. - Ես Ավետիս Քյուչյուքյանի տղան եմ:

Հայրիկս վերցնում է նրան և ուղարկում Կարս, քանի որ հայրիկիս եղբայրները այնտեղ էին ապրում:

Մյուս եղբայրներն էլ ժամագործ էին: Արշավիրը ամուսնանում է հայ աղջկա հետ և գալիս է Երևան, այնտեղ էլ մահանում է:

1918 թվին ես ութ տարեկան էի և լավ հիշում եմ: Լսվեցին թնդանոթի ձայները, Անդրանիկ զորավարը եկավ Կարս: Մեր տունին կողքը Չալտիկովների մեծ տունը կար: Նա այնտեղ եկավ: Բոլորը վազում էին այնտեղ, ես էլ վազեցի: Անդրանիկ զորավարը՝ զինվորական հագուստ հագած, մոխրագույն փափախը գլխին, հավաքված ժողովրդին ասաց. - Հա՛յ ժողովուրդ, պետք է կամավոր գրվե՛ք: Պետք է պայքարե՛ք, թե չէ՝ այնտեղ է ձեր գերեզմանը:

Ռուսական զորքը հրաման ստացավ ետ գնալ, քանի որ Ռուսաստանում հեղափոխություն էր սկսվել: Թուրքերը առիթից օգտվեցին և լցվեցին Սարիղամիշ ու Կարս: Հայերը բոլորը փուրգոններ էին վարձում, որ գաղթեն:

Իմ մայրը շատ ճարպիկ էր, իր տեգրոջը հետ գիշերով, դեռ թուրքերը Կարս չլցված, գնացին հաց թրխեցին, ղավուրմա սարքեցին, բերին, որ ճամփին ուտենք: Բայց թուրքերը լցվում էին: Ռուսները 200 հայ կամավորների հետ նահանջում են: Ճամփին թուրքերը կրակ են բացում ռուսների վրա, բայց հայ կամավորների գնացքը գնում է, ազատվում են:

Մենք Վալենկի-գրուզինսկի ճանապարհով գնացինք Թիֆլիսից մինչև Վլադիկավկազ: Ճանապարհին չեչենները հարձակվեցին մեզ վրա, թալանեցին՝ ով ինչ ուներ, աղջիկներին տարան լեռները: Մենք էշերով եկանք, հասանք Վլադիկավկազ: Բայց մեծ քույրը սարսափից մահացավ: Հորեղբայրս Երզնկայում էր, միայն նրա երկու երեխաները փրկվեցին, մյուսները՝ կոտորվեցին:

Մենք մեծ գերդաստան էինք, կեսը կոտորվեց, կեսը՝ փրկվեց: Վլադիկավկազից դեպի Արմավիր փախանք, քանի որ մեկ՝ բոլշևիկներն էին գալիս սպանում, մեկ՝ մենշևիկները գալիս սպանում էին: Էդ ժամանակ հայրս ու մայրս տան դռան առաջ կանգնած են լինում: Մի զինված բոլշևիկ գալիս ասում է. - Ի՞նչ է, դուք կադետների՞ն եք սպասում:

Մի հարևան եկավ ասաց. - Սրանք գաղթական են, ի՞նչ եք ասում, - և այսպես փրկվեցինք:

Արմավիրում էլ քաղաքի մեջ կռիվ էր գնում: Հետո, երբ դադար էր լինում մեռելներին հավաքում թաղում էին, վիրավորներին տանում էին: Արմավիրից էլ դուրս եկանք: Ոտքով կավկազ հասանք: Վերջապես Ռոստով եկանք: Դպրոց սովորանք: Հետո Մոսկվա փոխադրվանք:

1920 թվին Հայաստանը սովետական դարձավ: Հայրս ուզում էր տուն առնել: Եկանք նորից Վլադիկավկազ: Հայրս շատ ծանր հիվանդացավ:

Մայրս ինձ էր թողել հորս խնամքը և գնացել էր բժիշկ կանչելու: Մինչև բժիշկը եկավ, հայրս արդեն չկար:

Հետո արդեն ես ամուսնացա Բունիաթյան Շավասպի հետ: Գնացինք Ռոստով, Մոսկվա, Պարսկաստան: Արդեն 23 տարեկան էի: Պարսկաստանում ունեցա Մարգոյին, Լիզիկին և Ահարոնին: Այնտեղ մնացինք քառասուն տարի: Շավասպը շատ արժանավոր տղամարդ էր, կատարյալ ամուսին և հայր: Նա շատ աշխատասեր և գործունյա անձնավորություն էր, բայց և գնահատում էր լավ կնոջը: Նա ասում էր. «Ամեն մի հաջողած տղամարդու մեջ մի խելացի կին կա կանգնած»: Հետո գնացինք Անգլիա, Ամերիկա, հիմա ապրում եմ Իտալիայում:

67 (67).
ՍԻՐԱՆՈՒՇ ԼԱԶԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԿԱՐՍ)

Մինչև 1918 թիվը մեզ համար ազատ ապրում էինք Կարսում: 1918 թվին սկսվեց հայ-թուրքական պատերազմը: Ես երեխա էի: Մայրս՝ Վարդանուշը, ուներ չորս երեխա: Մեզ ղրկել էին երկու ձի ասելով, թե՝ Ղազար, հենց որ կռիվը սկսվի, երեխեքիդ մեջը կդնես, կգաղթեք: Մենք մեր քաղաքից դուրս եկանք, դեռ թուրքը ներս չէր խուժել: Մենք մի կով ունեինք: Ես շատ էի սիրում դրան: Մենք էդ կովին տարանք հետներս: Բայց տեսանք, որ ճանապարհին կովը մեզ խանգարելու է, թոկը բաց թողինք: Կովը գլուխը թեքեց, մեր կողմը նայեց՝ մինչև մենք կորանք: Գնացինք, մեզ միացան նաև ուրիշ հայեր: Մեկ էլ տեսանք մազրեցի քրդերը եկան: Ուժեղ կրակոց լսվեց: Մենք ձորի այգիների մեջ մտանք, փուրգոններից վար իջանք: Միշտ էդ ժամանակ տասը տարեկան էր:

Ես իմ աչքի տեսածն եմ պատմում: Ժողովուրդը լիքը, իրար վրա լցված, հնար չկար: Մամաս ուզեց ինձ ու քրոջս ջուրը գցի: Ախպերս՝ Միշան, որը տասը տարեկան էր, չթողեց: Շարունակեցինք մեր ճամփան, հասանք սարի դոշը: Մեկ էլ մի զինվոր «խաղաղություն» բղավեց: Հիմա չգիտենք, թե՝ թուրքն է բղավողը, թե՝ հայ գաղթականը: Մարդիկ սկսեցին բղավել. «Ամեն մեկը իր հարազատին գտնի»: Հերս մեզի գտավ, հանեց գլխից գլխարկը, ջրի ափին, զարկեց գլխարկը ջրի մեջ, բերեց, մեզ ջուր խմացրեց, քանի որ մենք բոլորս վախեցած էինք:

Շարունակեցինք մեր ճանապարհը: Քիչ գնացինք, շատ գնացինք, մեկ էլ Ախալքալաքի ճամփին թուրքը հարձակվեց մեզ վրա: Պիտի անցնինք Էրթանք Թիֆլիս, թուրքը վրա է տալիս: Մեր բախտից Անդրանիկ զորավարն եկավ: Թուրքերը էնենց կվախենան Անդրանիկից: Մեկ հատ թուրք չմնաց: Մենք եկանք հասանք Ախալքալաք: Գնացինք Գուլիկամ գյուղը, հետո մտանք Բակուրյան անտառի մեջը: Ամիս մը ճանապարհ կուգայինք: Ամեն մարդ մե ծառի տակ տուն էր դրել, օջախ էր սարքել, ճաշ կեփեինք, բոքոն կեփեինք:

Մեր գյուղի տերտերն ասաց. «Գնամ Թիֆլիս, թույլատրություն բերեմ, որ երեխեքին որբանոց դնենք»: Բոլորին ընդունեցին, ինձ՝ չընդունեցին: Ես կուլամ: Էնենց կուլամ, էնենց կուլամ: Մերս ասաց. - Գնա՛ էդ երեխու ձեռը բռնի, մտի՛ ներս, ո՞վ է խաբար:

Ես էդենց էլ արի: Տարան մեզի Սուրամի որբանոցը, մրից էլանք մրջուրը ընկանք: Երեխեքը պոլի վրա պառկած: Զարկես՝ էն կողքդ մեռած, զարկես՝ էս կողմդ մեռած: Էպիդեմիա է: Էն ժամանակ շատ հիվանդություններ կային, խոլերա, տիֆ...

Ասինք՝ ավելի լավ է էրթանք մեր ծնողի մոտ: Էլանք մատղաշ երեխեք՝ ես ու Միշան, մեզ հետ երկու տղա էլ կար, էլանք փախանք որբանոցից: Ճամփին հասած ցորենը կքաղեինք, կծամեինք, կուտեինք: Հասանք մի գյուղ: Մութն ընկավ: Խնդրինք, որ գիշերը գոնե քնենք: Աստված կյանք տա էդ կնկան, բերեց երկու փուռի հաց ու ջուր: Կերանք, խմեցինք: Մեզի էլ ուրիշ բան պետք չէր: Քնեցինք: Մինչև Սուրամ ոնց հասանք՝ չգիտեմ, գիտեմ, որ հասանք Բորժոմ: Մի մարդ ու կնիկ եկան խնդրին, թե ինձի տանեն: Ես սկսա լալ:

- Միշա՛ ջան, - ասում եմ, - ինձի չտաս, սաղսալամաթ մորս հասցնես: Գիշերը մենք քնանք: Էդ մարդ ու կնիկը առավոտյան էլի եկան: Տեսան որ մենք չենք ուզում, մեզի տոմս առան, հաց առան, տանձ առան, նստացրին վագոն, եկանք հասանք Բակուրյան: Էդ երկու տղաքը ասին. - Էրթանք ճաշարան, ճաշ ուտենք: Մենք մեր ճամփեն գիտենք:

Եկանք տեսանք մեր ծառը կա, բայց մերոնք չկան: Մենք չորսով փաթաթվանք էդ ծառին, սկսանք լալ: Մեր ձենը երկինք կհասներ: Դու մի ասա՝ մերոնք գիշերով փախել են, միայն տերտերն է մնացել: Եկավ ասաց. - Ինչի՞ կուլաք, որդի՛ ջան: Էկեք ձեզի տանեմ որբանոց:

Մեզի տարավ որբանոց: Որբանոցի մեջ սոված էինք, աղբը քրքրում էինք, միջի կեղտը ուտում: Անտառի մեջ էլ խոզի ընկույզ էինք ուտում: Էնպես էինք ցիահարել, որ մարմնի ոսկորը կպել էր մաշկին, վրաներս մազ էր բուսել:

Դու մի ասա՝ մերոնք փնտրում են մեզ: Մենք ո՛չ Սուրամի որբանոցն ենք, ո՛չ Թիֆլիսի: Տերտերը կգնա մերոնց կասի՝ ձեր էրեխեքը Բակուրյանումն են: Մորս ուշքը կգնա: Մամաս ձեռքի բիլազուկը կծախի, հորս կուղարկի Բակուրյան: Ես նստած եմ, երկու-երեք աղջիկներ էինք, ասի.

- Ով որ գա աչքալուսանք տա, էսօրվա ճաշս ձվեր կուտամ:

Մեկ էլ էկան ասին. - Պապադ եկել է:

Ես չեմ հավատում: Լուսամուտի մոտ եկա տեսա: Տեսա՝ իրավ հերս է: Հերս էկավ մեզ փաթաթվեց, սկսեցինք լաց լինել: Մենք լաց ենք լինում ու ասում. - Մեզ կքնացնես, դու կթողնես կգնաս:

Հերս, թե՝ - Ա՛յ բալամ, ես հատուկ եկել եմ ձեզ գտնելու համար, ձեզ ո՞նց թողնեմ, էրթամ:

Լուսը բացվավ: Ընկանք ճանապարհ: Հերս խամ է: Մի կերպ եկանք հասանք վակզալ: Ոտքով տուն ենք գնում: Մեկ էլ հասանք դռան մոտ: Հերս ասաց. - Ջե՛ն չհանեք:

Մերս ներսից ձեն տվեց. - Ո՞վ է:

Հերս ասաց. - Ես եմ, Ղազարն եմ, բաց դուռը:

- Էրեխեքիս բերե՞լ ես:

- Էրեխեքը չկան, - ասաց հերս:

Էդտեղ մորս ուշքը գնացել է: Լավ է եղբայրս մեծ էր, լամպը վառեց, ջուր տվեց, ուշքը տեղը բերեց:

Եկան մեզ տեսության: Բոլորը խրատում են, թե՝ քիչ-քիչ ուտացրու, քանի որ երկար ժամանակ սոված են մնացել: Էն ժամանակ էլ ջադի հաց էր: Մի ամսվա մեջ եղանք պոռչիկ:

1920 թ. Հայաստանը ազատվեց, խորհրդային դարձավ, մենք եկանք Երևան:

68 (68).
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԲԱԼԱԲԵԿԻ ԵՂԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԿԱՐՍ)

Մենք Կարս ապրում էինք շատ խաղաղ: Հայրիկս ուներ խանութ. մեր տունը սեփական էր: Մի օր էլ մայրս ասաց՝ գնանք բաղնիք: Մեզ վերցրեց, գնացինք բաղնիք: Էդ «բալկոնով բաղնիք» էին ասում, քանի որ շինված էր ջրի վրա: Հազիվ մի քիչ լողացել էինք, մեկ էլ ճչոց, գոռում-գոչում լսվեց: Դու մի ասա՝ թուրքերը եկել լցվել են բաղնիքը: Ջահել աղջիկներին մերկ-մերկ քաշում տանում են: Եկել էին սուս ու փուս, որ մարդ չիմանա: Մայրս մեզ տարավ բարեկամի տուն: Հայրս եկավ մեզ գտավ ու ասաց. - Մարիա՛մ, Էստեղ մնալու տեղ չի այլևս: Գնանք Ալեքսանդրապոլ:

- Հետներս ի՞նչ տանենք, - ասաց մայրս:

- Ոչ մի բան չտանենք. երեխեքին ազատենք:

Գնացքով գնացինք Ալեքսանդրապոլ: Մամայիս հարազատները մեզ դիմավորեցին: Երկու օր չէր անցել՝ հայրս եկավ՝ այլայլված, շորերը՝ պատառոտված:

- Էս ի՞նչ է վիճակդ, - հարցրեց մայրս:

- Թուրքերը լցվել են Կարսը: Մերոնց բոլոր բարեկամներին լցրին մարագները, վառին, վերջացրին: Ողջ մնացածներս փախանք Կարսա ձորը: Ով փախավ՝ պրծավ, ով ընկավ թուրքի ձեռքը՝ սպանեցին:

Ալեքսանդրապոլի հրապարակը լիքն էր կրուզավոյներով, ժողովուրդը ուզում է գնալ Թիֆլիս: Իմ մեջքին կապեցին փոքր քրոջս: Մամաս շոր, վերարկու, ուտելիք վերցրեց: Ժողովուրդը լցվել էր հրապարակը: Սաստավ էր եկել, որ տանեն Թիֆլիս: Ինձ քաշեցին վերև, երեխեն թիկունքիս: Ես լաց եմ լինում: Մայրս ներքևն է: Գնացքը ուզում է շարժվել: Հասանք գնացքի կրիշին: Ասեղ գցելու տեղ չկա: Էդպես հասանք Սադախլու: Դարաև մտած թուրքերը թոփ գցին, պարավոզը կանգնեց: Վարորդը մեռավ: Ժողովուրդը դուրս թափվեց: Կռիվն սկսվեց թուրքի հետ: Մենք էլ ուզում էինք իջնել, մի ռուս օֆիցեր կար՝ չթողեց իջնենք: Ռուս օֆիցերը հայրիկիս զենք տվեց: Նա իջավ, սկսեց կռվել թուրքերի հետ: Մենք վագոնի լուսամուտից նայում էինք, տեսնում էինք սպանվածներին, գետնին փռվածներին: Ողջ մնացած թուրքերը փախան: Ով մեռած էր՝ թողին, ով վիրավոր էր՝ քարշ տվին, վագոն բարձրացրին: Գնացքը շարժվեց, մեզ հասցրեց Թիֆլիս: Մեզ տարան տների հայաթները տեղավորեցին:

Հայրիկս գնաց ճատի հաց բերեց: Մենք չենք կարող ուտել, մեզ անսովոր է կուկուրուզից հացը: Թատրոն եկողները մեզ վրա նայում էին ու խղճում: Գետինները փռված, պառկած էին երեխեքը:

Թիֆլիսում ձիերով փուրգոն բռնեցինք, գնացինք դեպի Ռուսաստան: Հասանք Կուբան: Բարձր վիշկա կար, վրեն մարդ կար կանգնած: Դու մի ասա՝ դրանք չեչեն են, հիմա էլ դրանք հարձակվեցին մեզ վրա, սկսեցին կոտորել:

Մենք գնացինք հասանք Արմավիր: Հիմա էլ Ռուսաստանում Չապաևը՝ խուժաններով անխիղճ կերպով թալանում էր, սպանում: Նա շատ անխիղճ մարդ էր, բեժդնցիներին չէր սիրում: Պուլիմյոտը փոացնում էր՝ բոլորին սպանում էր: Էլի եկանք Ալեքսանդրապոլ:

Լավ է, որ հայրիկս Կարսում խանութ ուներ, դրանով մեզ փրկեց: Իր ոսկիները պապաս ինձ վրա էր կապել: Էդ ոսկիներով էլ փրկվանք: Ցոթ երեխա էինք, միայն ես եմ ողջ մնացել:

69 (69).
ՓԱՌԱՆՁԵՄ ԿՈՍՏԱՆԻ ՏԵՐ-ՀԱԿՈԲՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1912 Թ., ԿԱՐՍ)

Ծնվել եմ 1912 թվին Կարսում: Կարսի մոտ, Զահիմ գյուղում ունեցել ենք գյուղական կալվածք, տուն, շատ անասուններ, հողամաս, որի վրա աշխատում էին մշակները: Մշակները զբաղվում էին հողը, ցանում, հավաքում էին բերքը, խնամում էին անասուններին:

Հիշողությանս մեջ տպավորված է իմ պապը՝ Տեր-Հակոբը, որը տասներկու գյուղի քահանա էր և միաժամանակ սպասարկում էր Կարսի եկեղեցին: Նա պատկառելի, սպիտակ մորուքով, շատ բարեկիրթ ու մաքրասեր անձնավորություն էր:

Հայրս՝ Կոստանը, արհեստավոր էր, ատաղձագործ, դարբին. սայլեր էր սարքում: Նա շատ աշխատասեր և ընտանիք սիրող մարդ էր: Ես ունեի չորս եղբայր և երկու քույր, այսինքն՝ վեց երեխա էինք:

Քույրերս՝ Սիրանուշը տասնչորս տարեկան էր, Արեգնազանը՝ տասնվեց: Երեխաներից մեծը Հմայակն էր, ծնված 1899 թվին, հետո՝ Բագրատը, ծնված 1908 թվին, Գուրգենը՝ 1910 թվին և Հակոբը, որի ծննդյան թիվը չեմ հիշում. նա ինձանից էլ փոքր էր: Հմայակը սովորում էր Կարսի գիմնազիայում և մասնակցում էր ուսանողական հավաքներին, որոնց նպատակն ու ծրագիրը ինձ ծանոթ չէին:

Հիշում եմ, երբ 1918 թվին թուրքերը հարձակվեցին, մերոնք պատրաստվում էին տանը հաց թխել: Հանկարծ հայտնեցին, թե՝ «Ով կարող է, թող փախնի. թուրքերը վրա են տվել»: Հայրս մի սայլ վերցրեց, մեզ նստեցրեց մեջը ու փախանք: Ճանապարհին մեր սայլը գողացան, մնացինք մեր ոտքերի հույսին: Հասանք Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր): Այնտեղ մեզ նստեցրին ապրանքատար գնացքի բաց վագոնները և տարան: Չհասած Թիֆլիս, թուրքերը կրակոցներով հարձակվեցին մեր գնացքի վրա: Չգիտեմ ով որ կայարանում մեռավ, բայց զոհեր ունեցանք: Հիշում եմ, որ մեզ իջեցրին Նավթլուղ կայարանը: Այնտեղ կորցրեցինք իմ երկու քույրերին: Մի մեծահարուստ, կարծեմ Մանթաշովն էր, օրը մեկ անգամ ճաշ էր բաժանել տալիս գաղթականներին:

Լուր եկավ, թե թուրքը ետ է գնացել: Մենք վերադարձանք Գյումրի, որ գնանք նորից Կարս՝ մեր տունը: Գյումրիում գտանք կորած քույրերիս և ոտքով գնացինք Կարս: Մեր տունը ավերված գտանք: Բայց մտանք և ստիպված ապրեցինք գարնանից մինչև աշուն: Բերքահավաքի ժամանակ թուրքերը նորից հարձակվեցին հայերի վրա: Նրանք գրավել էին Կարսի բերդը և մնում էին այդտեղ: Հայերը բանակ չունեին: Բանակը ենթարկվում էր դաշնակներին, իսկ նրանք էլ չկային, փախել էին, և բանակը մնացել էր անպաշտպան: Թուրքերը փակել էին փախուստի ճամփաները, մենք չկարողացանք փախչել: Մեր գերդաստանի անդամներից շատերը կորցրին իրար: Ես մնացի մեծ եղբորս՝ Հմայակի կնոջ՝ Սոֆյայի հետ Կարսի ձորում, որտեղ որբանոց կար: Ընտանիքի մյուս անդամները փախել էին մայրիկս՝ Սիմայի հետ: Դրանք էին հայրս, քույրերս, եղբայրներս: Մեծ եղբորս տեղը ընդհանրապես չգիտեինք: Հետո իմացանք, որ նա մասնակցել է Մայիսյան ապստամբությանը, քանի որ նա շատ գրագետ էր, տիրապետում էր ռուսերենին և շատ գրքեր էր կարդացել: Նա հետո ծառայում էր նորաստեղծ Հայկական բանակում որպես քաղաշխատող: Մեր բարեկամները մեզ հետ որոշեցին գնալ Երևան, որտեղ հայրս պետք է իր արհեստը օգտագործեր՝ մեզ մի կերպ պահելու համար:

Երևանում բոլոր գաղթականները լցվել էին Ս. Սարգիս եկեղեցու բակը, որտեղ ապրում էինք բաց երկնքի տակ: Սկսվեց տիֆի և խոլերայի համաճարակը: Հայրս մահացավ՝ հարյուրավոր ուրիշների հետ, որոնց դիակները սայլերով տեղափոխում էին ամբողջ օրը:

Կորցնելով մեր կերակրողին և բաց երկնքի տակ քանի որ հնարավոր չէր այլևս ապրել, մայրս որոշեց մեզ տանել Գյումրի, որտեղ մալարիայից մահացավ մեծ քույրս՝ Սիրանուշը: Մայրս աշխատանք չգտնելով՝ մեզ տարավ որբանոց, իսկ ինքը հորեղբորս ծանոթների միջոցով տեղափոխվեց նրա մոտ: Հորեղբայրս Կարսից փախնելով՝ հաստատվել էր Մեղրաշատ (Ղազանչի) գյուղում: Մենք տեղավորվեցինք տարբեր որբանոցներում, ես՝ այժմյան բանտի տեղը, իսկ եղբայրներս՝ «Չաշկա չայ» (մի բաժակ թեյ) կոչված որբանոցում: Հետագայում եղբայրներիս տեղափոխեցին պարոն Հակոբի որբանոցը, որը գտնվում էր այժմյան երաժշտական հինգերորդ դպրոցի տեղում: Իսկ ինձ տեղափոխեցին Ալաբոտկի որբանոցը, մինչև Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր: Քանի որ ապրուստի ոչ մի միջոց չկար, մեզ տեղափոխեցին այլ որբանոց, որը գտնվում էր այժմյան Մերկուրովի անվան թանգարանի շենքում և որը հովանավորում էին ամերիկացիները: Մեր դպրոցի թարգմանիչն էր օրիորդ Սաթենիկը: Որբանոցում մահացավ քույրս՝ Արեգնազը, իսկ Գուրգենին մահամերձ տուն բերեցին:

Եղբայրս՝ Հմայակը, գտնվում էր քաղաքացիական պատերազմում: Հայաստանում արդեն հաստատվել էին սովետական կարգեր, սակայն պատերազմը չէր ավարտվել: Դաշնակները փոխանակ մազապուրծ ազգը փրկեին, հետապնդում էին ապստամբության մասնակիցներին: Շատ մասնակիցների նրանք սպանեցին Արգինի ձորում, որը գտնվում էր Կարսում: Հմայակը ճակատագրի բերումով փրկվում է՝ փախչելով հայկական նորաստեղծ համար առաջին բանակ և աշխատում է որպես քաղղեկավար: Սակայն նրանից մենք տեղեկություն չունեինք: Նա ունեցավ մեկ տղա, որը 1920 թվի համաճարակին մահացավ: Այդ ընթացքում հարսս՝ Սոֆյան, եղբորս հետ շրջում է պատերազմի դաշտում և օգնում վիրավորներին: Նրանք լինում են Շուշիում, Զանգեզուրում, ապա՝ Դիլիջանում, որից հետո հայկական բանակը տեղափոխվում է Դիլիջանից Քանաքեռ: Գնացող-եկող բանակայիններից մայրս հետաքրքրվելով՝ իմանում է նրա տեղը: Մի քանի ուրիշ մայրերի հետ նա էլ ոտքով հասնում է Քանաքեռ, գտնում եղբորս: Դա արդեն 1923 թ. էր: Իմանալով որ մահը և այն, որ մենք գտնվում ենք որբանոցում և որ ամերիկացին պատրաստվում է մեզ՝ որբերիս, Ամերիկա տանել, եղբայրս գալիս է Գյումրի, որպեսզի մեզ որբանոցից վերցնի: Դա եղավ պատճառ, որ նա բանակից զորացրվեց: Նրան աշխատանք տվեցին հրավապահ մարմիններում: Նա տուն վարձեց քաղաքային այգու մոտ:

Եղբայրներս ու ես ընդունվեցինք դպրոց՝ սովորելու: Բագրատը շատ լավ էր սովորում: 1940 թ. ավարտեց Մոսկվայի Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիան, որից հետո երկար տարիներ նվիրվեց իր մասնագիտությանը, պատվով կատարելով իր գործը: Նա մասնակցեց նաև Հայրենական մեծ

պատերազմին և վիրավոր վերադարձավ 1944 թվին:

Ես ավարտեցի յոթնամյա դպրոցը և ամուսնացա: Ունեցա լավ ամուսին, որը մեկնեց սովետական բանակ, սովորեց, դարձավ հրամանատար, լավ պարաշյուտիստ և այլն: Նրան ուղարկեցին Լեհաստան (Արևմտյան Ուկրաինա)՝ ծառայելու: Մենք գնացինք ընտանիքով: Այնտեղ ունեցա իմ չորրորդ երեխան:

Սկսվեց Մեծ հայրենականը՝ լեհական հենց այն քաղաքից, որտեղ մենք ապրում էինք: Գիշերվա ժամը չորսն էր, լույսը բացվելուն պես ես չորս երեխաներով, բեռնատար մեքենայի մեջ, փախանք այդ քաղաքից: Մենք բավական դժվարությամբ հասանք Հայաստան, Գյումրիում էլ տեղավորվանք: Հիմա արդեն ութսունյոթ տարեկան եմ, թոշակի եմ անցած:

70 (70).
ԽԱՆՈՒՄԱ ՋԸՆԴԻ ՋԱԼԻԼԻ ՊԱՏՄԱԾԸ*
(ԾՆՎ. 1912 Թ., ԿԱՐՍ, ՂԸՋԸԼՂՈՒԼԱ Գ.)

Ես ծնվել եմ 1912 թ. Կարսի Ղըզըլղուլա գյուղում: Պապս գյուղի ջրաբաժանն էր: Մերոնք զբաղվում էին հողագործությամբ և անասնապահությամբ: Իմ հոր անունը Ջընդի էր: Իմ հոր տունը լավ տուն էր, իսկական օջախ էր: Ոսի չինովնիկները գալիս էին, մեր տունն էին իջևանում, հյուրասիրվում: Մերոնք հայերի հետ շատ մտերիմ էին: Հայրս նույնիսկ հայերեն գիտեր:

Մեր գերդաստանը հիսունյոթ հոգի էր: Բոլորը իրար հետ ապրում էին հաշտ ու համերաշխ: Մեր էդ մեծ գերդաստանից միայն ես եմ ողջ մնացել:

Իմ հայրը ուներ մի եղբայր Ռըզգո անունով, իսկ մյուս եղբոր անունը Ղարո էր: Իմ հորեղբայր Սայիդը ևս շատ լավ հարաբերություններ ուներ հայերի հետ:

1918 թվին մենք ևս հայերի հետ, որպես եզդի քրիստոնյաներ, Կարսից գաղթեցինք, քանի որ մեր քրդական ադաթում կար, որ եթե տոհմը գնում է, բոլորը պիտի հետևեն միմյանց:

Մենք Ալագյազի փեշերին ցեղակիցներ ունեինք, եկանք Էնտեղ ու աըթըրվեցինք:

Գաղթի ճամփին թուրքերը մեզ հետապնդում էին: Մեր հետևից էին գալիս ու հանդիպածին կոտորում: Էլ հայ, եզդի, իրար խառնված, փախչում էինք՝ մեր հետևից թողնելով լիքը դիակներ: Բայց մի կամուրջ կար, հիշում եմ մինչև օրս, Էնտեղ թուրքերը հարձակվեցին մեր վրա, սկսեցին սպանել և՛ հայերին, և՛ եզդիներին: Սպանում, գցում էին գետը: Գետի մեջ դիակները իրար վրա կուտակված էին: Էդտեղ հրացանով սպանեցին նաև իմ հորն ու մորը: Իմ հորեղբորս թաքցրել էինք կողիքների ծալքերի մեջ, և նա փրկվավ: Իմ հորեղբայրս վեր կալավ ինձ ու իր տղին՝ Քամելին, ոտքով եկանք, հասանք Աշտարակ:

Արդեն 1920 թիվն էր: Աշտարակում մանկատուն կար, որի տնօրենը եզդի Ալիխանն էր: Բայց նա մեզ տեր չկանգնեց, ասաց՝ փաստաթուղթ չունեք: Էդ մանկատունը և՛ հայ կար, և՛ եզդի, և՛ նույնիսկ թուրք երեխա: Մի թուրք աղջիկ կար շատ սիրուն Թելլի անունով: Այդ մանկատունը հարուստ Բեկլարի տունն էր, որ պետությունը նրա ձեռքից վերցրել էր ու մանկատուն դարձրել: Հորեղբայրս մեզ թողել, գնացել էր: Մենք՝ ես ու Քամելը, մնացինք մանկատնից դուրս: Գիշերը քնում էինք պատերի տակ, ցերեկը՝ մուրացկանություն անելով, մեր գոյությունը պաշտպանում: Ի՞նչ անենք, սոված ենք, հաց ենք հավաքում: Էնտեղ մի կին կար, Սոֆի-ծալո էին ասում: Դա մի օր ինձ կանչեց, ասաց. «Աղջիկ զավակ ես, մի՛ գնա մուրացկանություն անելու, արի՛, քեզ տեղ կտամ իմ տան հայաթում»: Նա ուներ տղաներ՝ Վարդան և Տիգրան ու մի աղջիկ՝ Արփենիկ անունով: Սոֆի-ծալոն նրանց խնդրեց, որ մի թուղթ բերեն, որ եզդի ալիխանին ցույց տանք: Տղաները էդպես էլ արեցին: Ալիխանը մեզ ընդունեց մանկատուն: Օդորմի էդ Սոֆի-ծալոյին, քանի որ մենք նրա շնորհիվ ողջ մնացինք: Հորեղբորս տղան՝ Քամելը, տիֆ ընկավ: Ես մեջքիս առա նրան, տարա Աշտարակի հիվանդանոցը, բայց նա էնտեղ մահացավ: Հովհաննես Թումանյանը մի օր իր աղջկա՝ Նվարդի, հետ եկավ Աշտարակի եզդիների մեր որբանոցը: Նա խտրություն չէր դնում հայի ու եզդու միջև: Մեր գլուխները շոյեց ու ինձ հարցրեց. «Աղջի՛կ ջա՛ն, ո՞նց ես»: Ես ամաչեցի, գլխովս նշան արի, որ լավ եմ:

Ես մանկատանը մնացի մինչև 1926 թիվը, երբ հրաման եկավ, որ բոլոր որբանոցները պիտի միացվեն ու տարվեն Ջալալօղլի, որ հետո կոչեցին Ստեփանավան, և որը դարձավ որբանոցների կենտրոնը: Հետո հրաման եկավ, ում հասակը բռնում է, տանեն Լենինական (այժմ՝ Գյումրի), տեքստիլ-տրիկոտաժի ֆաբրիկա է բացվում՝ էնտեղ աշխատելու: Ես էլ ուզեցի գնալ, բայց ինձ թույլ չտվին: Հետո ճարպկությամբ մտա գնացողների շարքերը, հասա Լենինական: Էնտեղ ճաշի չեք էին տալիս, որ ճաշ ուտենք: Ջեռներս փող չկա: Մեր ճաշի չեքերը ծախեցինք, էդ փողով տոմս առանք, եկանք Երևան: Էդ արդեն 1929 թիվն էր:

Որբերը, որ գալիս էին Երևան, գնում, ներկայանում էին Լուսժողկոմատ: Էնտեղ մի բարի հայ մարդ մեզ շատ օգնեց, ասաց. «Մենք ձեզ ճրագով էինք ման գալիս, լույսով գտանք: Աղասի Խանջյանը եզդիների տեխնիկում է բացել, ձեզ կուղարկեմ էնտեղ՝ սովորելու»:

Ես էլ գնացի եզդիների տեխնիկումը, որի առաջին տնօրենն էր նշանակված Չասըմե Ջալիլը: Էնտեղ մեզ ձրի հագուստ, սնունդ տվեցին, ուսում ստացա, հետո էլ ամուսնացա Չասըմե Ջալիլի հետ: Էնպես որ հայերի օգնությամբ և նրանց շնորհիվ փրկվանք, տունտեղ եղանք: Օդորմի էդ հայ բարի մարդկանց, որ մեզ օգնեցին: Իմ երեխեքը հայկական կրթություն ստացան. Օրդիխանը և Ջալիլը դիսերտացիա պաշտպանեցին, գիտական աստիճաններ ստացան, իսկ աղջիկս՝ Ջեմիլեն, որը երաժիշտ է, ինքն էլ լավ, խելացի երեխաներ է հասցրել և թոռների հետ հիմա ինձ էլ է պահում: Ես շատ շնորհակալ եմ իմ զավակներիցս: Ես էլ իմ թոռներով եմ ուրախանում:

71 (71).
ԱՂԱՍԻ ԱՐՇԱԿԻ ԿԱՐՈՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1913 Թ., ԿԱՐՍ, ԾՊՆԻ Գ.)

Կարսը ռուսական գաղութ էր: Ռուսաստանը եվրոպական երկրների հետ պատերազմի մեջ մտավ և իր զորքը տարավ ճակատամարտ:

Նախ՝ ինչու՞ է մեր գյուղը Ծպնի կոչվում: Դրա պատասխանը հետևյալն է: Գետը որ հոսում է գյուղի միջով, գյուղը բաժանում է երկու մասի: Դրա համար էլ կոչվել է Ծպնի:

Առաջին գաղթը եղավ 1918 թ., երբ թուրքերը հայերին ստիպեցին տեղահանվել: Տիգոր գյուղը ցարական Ռուսաստանի ժամանակ զինվորական նստավայր էր, մեր գյուղից երեք-չորս կմ. հեռու էր:

Թուրքերը զինված եկել, ստիպում էին հայերին ընդունել թուրքական կրոնը և նրանց սովորությունները: Հայերը չէին ուզում և դիմադրել էլ չէին կարող, քանի որ մեր ուժերը թույլ էին. ստիպված գաղթի ճամփան բռնեցին:

Հիշում եմ մեր ընտանիքը. հայրս ինձ ու քրոջս, որը ինձնից երկու տարի մեծ էր, բարձրացրեց սայլի վրա, կապեցին մեզ, որ չընկնենք: Թուրքերը ճանապարհին կրակում էին մեզ վրա: Մենք ստիպված փախչում էինք: Հիշում եմ, ճանապարհին հայրս սայլը կանգնեցրեց, ես ու քույրս սայլից վար իջանք: Մեր գյուղի քարավանն էր այդ: Մի տղա մոտեցավ ինձ, հորս հրացանն իմ ձեռքին էր, ուզեց, ես՝ չտվի, ընկա, թևս կոտրվեց: Պապիս եղբայրը սնհչի էր, կապեց:

Ծպնիից ճանապարհը դեպի կենտրոն՝ այսինքն դեպի Կարս էր գնում: Երբ մտանք Կարս, մայրս ասաց. - Էս Կարսն է:

Ես ու քույրս գլուխներս բարձրացրինք, տեսանք Կարսը՝ ափսեի նման, շրջապատված բարձունքներով, վերևում երկու բերդ կար: Երբ Կարսի միջով անցանք, առաջին անգամ տեսա քաղաքը: Տեսա մարդկանց, խանութներ: Դա ավելի հարուստ էր, քան մեր Ծպնի գյուղը: Մենք Կարսից էլ դուրս եկանք: Գնացինք Ալագյազի ստանցիան:

Արագը անցնելիս՝ վարարման ժամանակն էր, մեր ժողովրդի կեսին ջուրը տարավ: Ես սայլի վրա էի, ջրի միջից անցնելիս մեր սայլի կեսը ջրի մեջն էր խըրված, քաշելով, քաշելով դուրս հանեցինք:

Մեր գերդաստանը քսաներեք հոգի էինք: Արագը անցնելուց հետո շատ քիչ մնացինք: Հայրս ուզում էր գնալ Երևան, բայց Մաստարայի և Թալինի հատման կետում թուրքերը կողոպտեցին և սպանեցին նրան:

Հորեղբայրս մեր անասունները տարել էր Մաստարայի տափարակը արածացնելու, թուրքերը հարձակվում են հորեղբորս վրա, անասունները խլում են, գիտական աստիճաններ ստացան, իսկ աղջիկս՝ Ջեմիլեն, որը երաժիշտ է, ինքն էլ լավ, խելացի երեխաներ է հասցրել և թոռների հետ հիմա ինձ էլ է պահում: Ես շատ շնորհակալ եմ իմ զավակներիցս: Ես էլ իմ թոռներով եմ ուրախանում:

71 (71).
ԱՂԱՍԻ ԱՐՇԱԿԻ ԿԱՐՈՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1913 Թ., ԿԱՐՍ, ԾՊՆԻ Գ.)

Կարսը ռուսական գաղութ էր: Ռուսաստանը եվրոպական երկրների հետ պատերազմի մեջ մտավ և իր զորքը տարավ ճակատամարտ:

Նախ՝ ինչու՞ է մեր գյուղը Ծպնի կոչվում: Դրա պատասխանը հետևյալն է: Գետը որ հոսում է գյուղի միջով, գյուղը բաժանում է երկու մասի: Դրա համար էլ կոչվել է Ծպնի:

Առաջին գաղթը եղավ 1918 թ., երբ թուրքերը հայերին ստիպեցին տեղահանվել: Տիգոր գյուղը ցարական Ռուսաստանի ժամանակ զինվորական նստավայր էր, մեր գյուղից երեք-չորս կմ. հեռու էր:

Թուրքերը զինված եկել, ստիպում էին հայերին ընդունել թուրքական կրոնը և նրանց սովորությունները: Հայերը չէին ուզում և դիմադրել էլ չէին կարող, քանի որ մեր ուժերը թույլ էին. ստիպված գաղթի ճամփան բռնեցին:

Հիշում եմ մեր ընտանիքը. հայրս ինձ ու քրոջս, որը ինձնից երկու տարի մեծ էր, բարձրացրեց սայլի վրա, կապեցին մեզ, որ չընկնենք: Թուրքերը ճանապարհին կրակում էին մեզ վրա: Մենք ստիպված փախչում էինք: Հիշում եմ, ճանապարհին հայրս սայլը կանգնեցրեց, ես ու քույրս սայլից վար իջանք: Մեր գյուղի քարավանն էր այդ: Մի տղա մոտեցավ ինձ, հորս հրացանն իմ ձեռքին էր, ուզեց, ես՝ չտվի, ընկա, թևս կոտրվեց: Պապիս եղբայրը սնհչի էր, կապեց:

Ծպնիից ճանապարհը դեպի կենտրոն՝ այսինքն դեպի Կարս էր գնում: Երբ մտանք Կարս, մայրս ասաց. - Էս Կարսն է:

Ես ու քույրս գլուխներս բարձրացրինք, տեսանք Կարսը՝ ափսեի նման, շրջապատված բարձունքներով, վերևում երկու բերդ կար: Երբ Կարսի միջով անցանք, առաջին անգամ տեսա քաղաքը: Տեսա մարդկանց, խանութներ: Դա ավելի հարուստ էր, քան մեր Ծպնի գյուղը: Մենք Կարսից էլ դուրս եկանք: Գնացինք Ալագյազի ստանցիան:

Արագը անցնելիս՝ վարարման ժամանակն էր, մեր ժողովրդի կեսին ջուրը տարավ: Ես սայլի վրա էի, ջրի միջից անցնելիս մեր սայլի կեսը ջրի մեջն էր խըրված, քաշելով, քաշելով դուրս հանեցինք:

Մեր գերդաստանը քսաներեք հոգի էինք: Արագը անցնելուց հետո շատ քիչ մնացինք: Հայրս ուզում էր գնալ Երևան, բայց Մաստարայի և Թալինի հատման կետում թուրքերը կողոպտեցին և սպանեցին նրան:

Հորեղբայրս մեր անասունները տարել էր Մաստարայի տափարակը արածացնելու, թուրքերը հարձակվում են հորեղբորս վրա, անասունները խլում են, նրան և իր ընկերոջը սպանում, անասուններին քշում, տանում: Մենք էդ օրվանից մնացինք առանց անասունի: Մաստարայում նույնիսկ գետնին ընկած ցորենի հատիկը հավաքում էինք, քանի որ ծայր աստիճան աղքատացանք:

Հետո պապս վարակվեց խոլերայով և մահացավ: Թուրքերը Մարալիկի մոտ պապիս եղբորը հետապնդում են, սպանում են և՛ նրան, և՛ նրա կնոջը, և՛ նրանց տղային՝ Վաչագանին:

Հետո, թե մենք ինչպես ենք վերադարձել մեր գյուղը՝ չեմ հիշում, բայց եկանք գյուղ: Մեր գյուղն ամբողջովին ավերված էր: Մեր տները քանդել էին և անգամ մեր հացատները պարպել էին: Մենք սկսեցինք ապրել այնտեղ: Գյուղում մենք ունեինք ցորեն պահելու գետնափոր հորեր: Մայրս իմ ու քրոջս ձեռքը բռնելով՝ բարձրացավ դիմացի բլուրը, որտեղ մեր գոմերն էին: Էնտեղ էին մեր ցորենի հորերը, գնում էինք մի քիչ ցորեն բերելու, որ ուտենք: Տեսանք, որ թուրքերը ցորենի հորը գտել ու թալանել էին: Ոչ մի հատիկ չէին թողել, գոմերն էլ այրել էին: Այդ ժամանակ մայրս ցույց տվեց թուրքերի հողերը և ասաց. - Սպասի՛ր, մի քիչ բանջար հավաքեմ, գնանք:

Այդ ժամանակ թուրքերը սկսեցին մեր ետևից վազել, որ բռնեն: Մենք շնչակտուր բլուրից ցած իջանք և փախանք:

Ռուսական կառավարությունը, տեսնելով այդ վիճակը, կազմակերպեց սովյալների համար օգնություն՝ սնունդ, հագուստ: Գյուղում սովամահ եղողների թիվը շատ-շատ էր, քանի որ և՛ հիվանդ էին, և՛ սոված էին: Մեզ գարի տվին, որ ցանենք: Մենք և բոլոր գյուղացիները անասուն չունեինք, որ հողը վարեինք: Ջեռիս եկավ մեր գարու տեղը վարեց, ցանեց ու գնաց իրենց Զրչի գյուղը:

1919 թ. երկրորդ գաղթի ժամանակ, երբ որ գարին ցանեցինք և դեռ ոչինչ չունեինք, դաշտից ավելուկ էինք քաղում: Հատիկների սերմը աղում էինք, հաց էինք թխում և այդ կանաչիի հետ ուտում էինք: Ես և քույրս, մեր ամբողջ ընտանիքը անհամբեր սպասում էինք, որ այդ գարին հասունանա, տանենք, աղանք, որ հաց թխենք, ուտենք: Այդպիսի մեծ կարոտով սպասում էինք գարու հասնելուն: Գարին հասունացավ, քաղեցինք, փայտերով ծեծեցինք, չորացնում էինք, որ տանենք աղաց՝ ալյուր դառնա, հայտնեցին, որ Ռուսաստանը Կարսը հանձնել է թուրքերին, և թուրքերը գալիս են: Մեզ մնում էր միայն՝ փախչել:

Նորից մենք բռնեցինք գաղթի ճամփան, Մենք այն ժամանակ ո՛չ անասուն ունեինք, ո՛չ ապրելու հնա-

---

* Թևպետ ազգությամբ եզդի Խանումա Ջալիլը արդեն առաջացած տարիք ունի և անկողնային հիվանդ է, բայց հրաշալի հայերեն է խոսում և իր ամուսնու՝ Չասըմե Ջալիլի հետ դաստիարակել ու հասցրել է ուսումնառու և գիտնական զավակներ:

րավորություն, դատարկ, կիսատկլոր, ոտաբոբիկ ևորից գաղթեցինք: Ընտանիքի մի մասն էլ փոքր երեխաներով ճանապարհին կոտորվեց: Օրինակ, պապիս եղբոր կինը փախուստի ժամանակ իր կրծքի երեխային գցում է ճանապարհին. քարերի վրա, քանի որ չէր կարողանում տանել երեխային: Պապս ճանապարհին ընկատում է, որ երեխան իր եղբոր կնոջ ձեռքին չէ, հարցնում է. - Անու՛շ, որտե՞ղ է երեխան:

Անուշը պատասխանում է. - Ես ինքզինքս չեմ կարողանում տանել, ճամփին թողի քարերի վրա:

Պապս, որ մեծն էր, փոքր եղբորն ասում է. - Գնա՛, երեխային ետ բեր:

Փոքր եղբայրը գնում, ետ է բերում երեխային:

Եկանք հասանք Ալագյազի ստանցիան: Մերոնցից շատերը կոտորվել էին: Հասել էինք Մաստարա: Փոքր երեխաները հիվանդացել էին, սոված, հիվանդ՝ մահացան: Մեր ընտանիքը 23-ից մնացել էր 12 հոգի:

Ալագյազի ստանցիայում՝ Մաստարայում, երկու-երեք օր մնացինք: Ասին. «Թուրքերը գալիս են Մաստարայի վրա»: Մայրս իմ ու իմ քրոջ ձեռքը բռնած՝ փախավ Երևան: Թուրքերը կրակում էին բարձունքից: Մենք ոտաբոբիկ էինք: Ճամփան քարոտ էր ու փշոտ: Այդ ճանապարհով փախնելով՝ հասանք Էջմիածին: Էնտեղ մայրս քրոջս հանձնեց ամերիկյան որբանոց:

Արդեն 1919 թվի աշունն էր, երբ հասանք Երևան: Ծախի մեյդանում անասունի շուկա էր: Մենք՝ գաղթականներս, սոված էինք: Մեծ քանակությամբ գաղթականներ էինք. երեսուն-քառասուն ընտանիք տեղավորվանք մի խանի մեջ, որտեղ լույս չկար՝ մութը ընկնելուն պես պառկում էինք: Երևանում տարածված էին սուր վարակիչ հիվանդություններ՝ բծավոր տիֆ, խոլերա: Մարդիկ մեռնում էին ամեն րոպե, նույնիսկ փողոցում քայլելու ժամանակ: Երևանի փողոցներում ամեն օր շրջագայում էին հատուկ սայլեր՝ մահացածների դիակները հավաքելու համար: Այնպիսի աղքատության էին հասած մարդիկ, որ մահացած մարդկանց շորերը հանում էին, մերկ վիճակում գցում էին սայլի մեջ, որը տանում գցում էր փոսը:

1920 թվին միայնակ և հուսահատ մնացած մայրըս ամուսնացավ մեր գյուղացիներից մեկի հետ, որի անունը Կարո էր: Կարոն մեզ տարավ Արամուս գյուղը: Էնտեղ երկու ամիս մնացինք: Խորթ հայրս մորս ասում էր. - Երեխեքիդ տար որբանոց, ես չեմ կարող պահել:

Մայրս էդ ժամանակ հղի էր. ոտքով Արամուսից, ոտաբոբիկ, բերեց Երևան ինձ, հանձնեց տատիկիս՝ հորըս մորը: Հորեղբորս կինը, որն ապրում էր տատիս հետ, ասաց. - Մենք մեր գլուխը չենք կարող պահել, տար որբանոց:

Մի օր Արարատ տրեստի՝ Շուստովի գործարանի բակում կատարում էին մանուկ, անտեր երեխաների հավաքագրում: Այնտեղ հավաքված երեխաների թիվը հազարից ավելի էր: Իմ հերթը դեռ չէր հասած, ինձնից առաջ երկու հարյուր հոգի կար, երբ սամմանափակեցին ցուցակագրումը: Երբ բոլորը ցրվեցին, հորեղբորս կինը մոտեցավ Շուստովի գործարանի բակի փայտե դարպասին, նկատեց, որ ներքևի մասում տեղ կա՝ երեխային կարող է անցկացնել, ինձ ասաց. - Հլա մի հատ գլուխդ մտցրու, տես, կարո՞ղ ես անցնել:

Ես գլուխս մտցրեցի, տեղավորվեց, ինքն էլ ետևիցս հրեց, ես ընկա ներս, գնացի խառնվեցի բակում գտնված երեխաներին:

Երեկոյան ժամին մեզ նստեցրին սայլերը, տարան Էջմիածին: Սայլի մեջ գտնվող երեխաները կիսամերկ էին, կեղտոտ, ոջլոտ, տառապում էին քոսով: Մեզ տեղավորեցին Հռիփսիմեի տաճարի խուցերի մեջ: Առավոտյան եկան հոգևորականները, սկսեցին ստուգել, թե քանի երեխա ենք բերել: Կարդացին ցուցակը: Իմ անունը ցուցակում չկար: Վարդապետներից մեկը կարգադրեց, որ ինձ ետ ուղարկեն Երևան, բայց մի բարձրահասակ հոգևորական տեսավ, որ ես լաց եմ լինում, խղճաց, հրամայեց, որ ցուցակում ավելացնեն: Բոլոր երեխաների 90 տոկոսը քոսով վարակված էր: Ամեն առավոտ վառարանները վառում էին, որքերը կանգնում էին վառարանի կողքը, տաքանում էին և քյուքյուրդից պատրաստված մածուկը քսում էին մարմիններին, որ այն ժամանակ միակ քոսի բուժումն էր: Այդպես երկու ամիս հետո հազիվ ոմանք բուժվեցին: Իմ Էջմիածնում գտնված ժամանակ քույրս եղել է Էջմիածնի աղջիկների որբանոցում, բայց ես նրան չէի ճանաչում: Տատս գալիս է Երևանից՝ քրոջս տեսնելու, տեսնում է, որ քույրս մերձիմահ է: Պառավ կինը շալակով Երևան է բերում նրան, բայց քույրս մահանում է 1920 թ.: Նա թաղված է Կոմիտասի այգում:

Մայրս 1920 թ. Արամուսում գտնված ժամանակ ծննդաբերում է: Խնդրում է գյուղացիներից մեկին՝ հայտնեն տատիկիս, որ իր մի հատիկ տղա՝ Աղասուն բերեն իրեն մոտ, քանի որ ինքը զգում է, որ մահամերձ է: Ինձ տատիկս բերեց Երևան, Երևանից էլ Արամուս, բայց արդեն մայրս մեռած էր:

Նորից գնացի Էջմիածին, իմ որբանոցը, որը տեղափոխեցին Ստեփանավան: Ստեփանավան գտնըված ժամանակս ես տրախոմայով հիվանդացա: Ամեն օր հիվանդ երեխաների հետ ինձ տանում էին բուժարան՝ կապույտ շիր էին քսում աչքերիս: Մի օր մեր շարքը կանգնեց Ամերիկյան որբանոցների պահեստների դիմաց, քանի որ մի երեխա իրեն վատ էր զգում: Այդ ժամանակ ինձ մոտեցավ այդ պահեստի բանվորներից մեկը, որի անունը Անտիկ էր: Հարցրեց. - Որտեղացի՞ ես:

- Մպնեցի եմ, - ասացի ես:

Նա ինձ ասաց. - Բա ինձ չե՞ս ճանաչում, ես քու հորաքրոջ տեգրն եմ:

Այդ ժամանակ ես կորած էի ամբողջ գերդաստանիս համար: Անտիկի միջոցով կարողացա իմանալ իմ տեղը, քանի որ հետո մեր մանկատունը տեղափոխեցին Ալեքսանդրապոլ, Պոլիգոն էր կոչվում: Ինձ հետ Շիրազն էր, Ալազանը: Այստեղ դրությունը շատ վատ էր: Օրերն անց էինք կացնում կիսաքաղց վիճակում, քանի որ որբանոցի սննդի պահեստը այրվել էր, և մթերք չկար:

Տատիկս եկավ Ալեքսանդրապոլի որբանոցը՝ ինձ տեսնելու, և մինչև 1927 թ. տատիկս այլևս ինձ տեսնելու կամ կանչելու հնար չունեցավ:

1927 թվին, երբ ամերիկացիները, Սովետական Միության պահանջով, այն որբերին, որոնք բարեկամներ ունեին, ուղարկում էին նրանց մոտ, իսկ հարազատ չունեցողներին հանձնում էին սովետական մանկատուն, այդ ժամանակ հայտնեցին բոլոր երեխաների բարեկամներին, որ իրենց երեխաներին գան վերցնեն մանկատնից: Ես չունեի ոչ մի հարազատ, որ ինձնով հետաքրքրվեր: Թալինցի մի մարդ, որը չուներ երեխա, ցանկություն էր հայտնել որբանոցից մի հոգեզավակ վերցնել: Թալինցի մի երեխա, որ ինձ հետ գտնվում էր որբանոցում, պատմել էր իմ մասին, որ ես չունեմ ոչ մի հարազատ և կարող է գալ ինձ վերցնել: Այդ մարդը գրում է Լենինականի որբանոցին, որ, իբր թե, ես իր եղբոր տղան եմ և ցանկանում է ինձ վերցնել, բերել Թալին: Նամակ է գրում որբանոց, որ Աղասի Արշակի Սաֆակյան անունով տղան իր եղբոր տղան է: Բայց Լենինականի որբանոցում այդ անունով երեխա չեն գտնում: Բոլոր Աղասիներին հավաքում են, հարց ու փորձ են անում, հետո կանգնեցին ինձ վրա:

1927 թ. աշնանը ինձ, տասնհինգ երեխաների հետ, նստեցրին սայլի վրա, բերեցին Թալին: Այնտեղ նկատեցին, որ մի մարդ մոտեցավ խմբի ղեկավարին և հարցրեց, թե ո՞րն է Աղասին: Ես զգացի, որ դա մեր բարեկամը չէ: Եվ շատ էի վախենում, նրանք երեխաներին տանում ոչնչացնում էին: Ես չգնացի, ասի. - Դա իմ հորեղբայրը չի:

Ես Թալինում շատ մեծ աղմուկ բարձրացրեցի, այնտեղ կային շատ գյուղացիներ:

Խմբապետն էլ նկատեց, որ անհնար է իմ կամքը կոտրել, ստիպված ինձ ետ տարավ Լենինականի մանկատունը:

Չանցած տասնհինգ օր, այդ աղմուկի մասին իմանում է Փիրմալաքում ապրող պապիս եղբայրը և ասում է. - Դա իմ եղբոր թոռն է:

Գրելով մանրամասն տեղեկություններ իմ պատկանելիության մասին, մեկ ամսից հետո ինձ բերեցին Փիրմալաք: Ես մանկատնից հետո եկա տատիս գտա: Եկա՝ Փիրմալաք չմնացի: Պապիս եղբայրը ինձ բերեց Ալագյազի ստանցիան, որտեղ անասնաբուծական ֆերմա կար: Պապիս քրոջ մոտ հինգ օր մնացի, հետո ոչխարները բարձեցին, ինձ էլ գցեցին ոչխարների մեջ, վագոնի դուռը փակեցին: Պարավոզը ամեն ստանցիան կանգնում էր՝ ջուր, փայտ վերցնում: Երբ ես Երևան հասա, կեղտի մեջ կորած էի: Եկել եմ Երևան, մոռացել եմ տատիս տունը որտեղ էր: Եկա, կանգնեցի 26 կոմիսարների այգու մոտ: Ինձ մոտեցավ մի հատվել՝ փալանը մեջքին, ասաց. - Ինչի՞ ես կանգնել:

- Որբանոցից եմ գալիս, տատիս տունը չգիտեմ ու՞ր է:

- Որտեղացի՞ ես, - հարցրեց նա:

- Մպնեցի եմ:

- Ես ծպնեցի ճանաչում եմ, արի քեզ տանեմ, նա կասի քո հարազատների տեղը:

Բերեց ինձ Ղանթարը* : Հարց ու փորձ արեց, ինձ տարավ պապուս եղբոր աղջկա ամուսնու՝ Արշալույսի խանութը: Արշալույսն ասաց. - Նստի, խանութը որ փակեմ, քեզ ցույց կտամ տատուդ տունը:

Իրիկունը էդ մարդը ինձ տարավ ոչ թե տատուս, այլ՝ հորաքրոջս տունը: Երբ հորաքույրս իմացավ՝ լաց եղավ: Գնաց տատիկիս կանչեց: Տատս իմ հորեղբոր աղջկա հետ միասին եկավ ինձ տեսնելու: Երբ ես տեսա էդ աղջկան ասի. - Ես էս աղջկան տեսել եմ որբանոցում:

Դու մի ասա, դա իմ հալալ հորեղբոր աղջիկն էր՝ չեմ իմացել:

Տատս այն ժամանակ ապրում էր մի մասնավոր մարդու տան միջնցքում: Երբ ինձ տեսան, որ տատիս հետ պիտի ապրեմ, տանտերը ասաց տատիս. - Էլ իմ տանը չես մնա:

Երկու ամիս ապրել ենք փողոցում: Հետո քաղսովետը մեզ մի հատ մառան հատկացրեց, որը քանդված դուռ ուներ, բայց լուսամուտ չկար: Իմ գոյությունը պահպանելու համար շուկայում ջուր եմ ծախել: Իմ ընկերների օգնությամբ գնացել, ընդունվել եմ պիոներ կազմակերպության մեջ: Ամեն կիրակի օր մենք պիոներական հավաք էինք անում, որտեղ անցնում էինք մարմնամարզություն և զեկուցումներ էինք լսում:

Մի անգամ Ժողկոմխորհի շենքի բակում ֆիզիկական կրթության ժամանակ ես հագել էի կարճ շորթիկ, մեջքս կապած էի շորի ձեղ կտորով: Մարմնամարզության ժամանակ կտորը պոկվեց, շորթիկս վրիցըս ընկավ, երեխաներն սկսեցին ծիծաղել ինձ վրա: Այդ ժամանակ Հայկ Ազատյանը կարգադրեց պիոներ ջոկատավարին, որ պարապմունքից հետո այդ երեխային տանեն իր մոտ: Ինձ տարան: Նա կանչեց կանանց բաժնի վարիչ Սիրուշ Մակինցին, որ ինձ հագցընեն: Ֆինբաժնի վարիչը ինձ թոշակ նշանակեց 20 ռուբլի և տեղավորեց Կոնդի դպրոցի չորրորդ դասարանում՝ սովորելու, նաև կարգադրեց, որ քաղսովետը ինձ սենյակ հատկացնի: Սովորեցի նաև Աբովյան դպրոցում: Ավարտելով՝ սովորեցի շինարարական ուսումնարանում, Պետհամալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում: Աշխատել սկսեցի: Մասնակցեցի Հայրենական մեծ պատերազմին:

Այժմ թոշակառու եմ: Ես ինձ գտել եմ, բայց արդեն շատ մեծ եմ:

72 (72).
ԷՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1914 Թ., ԿԱՐՍ)

Ծնվել եմ 1914 թվին Կարսի գավառի Օրթա-Քադիկլար գյուղում, գյուղի հոգևորական Տեր-Ստեփանի բազմանդամ՝ քսանութ հոգիանոց ընտանիքում: Հայրս չորս եղբայր էին: Առաքելական եկեղեցին, որ գտնվում էր գյուղի կենտրոնական մասում, սպասարկում էր երեք գյուղերի՝ Բաշ-Քադիկլարի, Օրթա-Քադիկլարի և Ներքին-Քադիկլարի բնակչությանը և բարձրադիր դիրք էր գրավում այդ տարածքում՝ գեղեցիկ տեսարաններով ու գետակներով շրջապատված: Գյումրի քաղաքի ունևոր ընտանիքների համար այդ վայրը հա-

* Հին Երևանի շուկան:

մարվում էր հանգստի վայր: Տատիկս՝ գեղեցկուհի Նանաջանը, որը Գյումրիի հայտնի աշուղ Ծերամի ազգակցուհին էր, Տեր-Ստեփանի հետ կազմում է մի ամուր ընտանիք՝ ունենալով չորս արու զավակ և երկու աղջնակ: Այս բոլորի մասին ինձ պատմել է մայրս:

Տղաներից ավագը՝ Տեր-Մարտիրոսը, զբաղվում էր աննախանձելի եռանդով՝ մոտակա գյուղերի հետ կատարելով մթերքների փոխանակություն, հոգում իր բազմանդամ ընտանիքի պարենի ապահովությունը:

Մյուս տղային՝ Սրիստակեսին, ուսման են ուղարկում Կարսի հոգևոր դպրոցը, որպեսզի հետագայում փոխարինի պապիկիս:

Իմ հայրը՝ Հարությունը, ավարտելով Բաշ-Քադիկլար գյուղի միջնակարգ դպրոցը, շարունակում է բարձրագույն կրթությունը հեռավոր Ամերիկայի Նյու Յորք քաղաքում: Նա նպատակ ուներ վերադառնալ և իրենց գյուղում դպրոց բացել:

Երբ լրանում է իմ ծննդյան չորս տարին, հայրս՝ Հարությունը Տեր-Ստեփանյանը վերադարձավ ԱՄՆ-ից՝ կրթություն ստացած, բայց չկարողացավ իր երազանքը իրականացնել և դպրոց բացել գյուղում: Հորս վերադառնալուց մեկ ամիս անց գյուղերը խառնվեցին իրար, քանի որ լուր ստացել էին, որ թուրքերը վերցրել են Կարսը: Ռուսական գունդը՝ համալրված հայ զինվորներով, ամուր դիմադրություն է ցուցաբերել, սակայն թուրքական բազմահազար հրոսակները՝ թնդանոթներով լավ զինված, գրավում են Կարսի բերդը, լրիվ կոտորելով նրա պաշտպաններին՝ դիակները թափելով Կարսա գետը:

Այդ պաշտպանության ժամանակ զոհվեց նաև մեծ եղբայրս: Փոքր եղբորս և հորեղբորս մորթեցին, իսկ պապիս՝ Տեր-Ստեփանին, գազանաբար սպանել են եկեղեցում ծիսակատարություն կատարելիս: Մեծ հորեղբայրս՝ աղա Մարտիրոսն էր, թուրքերը բռնում են նրան, շորերը հանում, ուզում են գցել կրակի մեջ: Երկու թուրք ճանաչում են, ասում. - Սա մեր անասունները պահող աղա Մարտիրոսն է, ձեռք չտանք: Մեծ հորեղբայրս էդպես փրկվում է:

Փոքր հորեղբորս տարել էին բանակ, Էնտեղ խոլերայից մահացել էր: Սկսվեց գաղթը՝ քարավաններով: Գաղթի ճամփան անտանելի էր, սոված, ծարավ քայլում էինք անընդհատ: Ճանապարհին թուրքերը հարձակվում էին մեզ վրա: Վերջապես մենք լցվեցինք Հոռոմի ձորը: Էդ Անիի ավերակների մոտն էր: Մենք թաքնվեցինք: Հետո ռուսական զորքը եկավ, մեզ հասցրեց Գյումրի: Մեր ընտանիքից մի քանիսին միայն հաջողվում է փախչել, հասնել Գյումրի:

Հիմա ես քսանութ հոգիանոց մեծ տերտերի ընտանիքի միակ կենդանի վկան եմ, ութսուներեք տարեկան եմ և լավ հիշում եմ, թեև այդ ողբերգական տարիներին եղել եմ հինգ-վեց տարեկան: Այժմ էլ աչքիս առաջ են ջարդերի տպավորությունները՝ մեծ քույրիկիս՝ Արաքսյայի, ուսերին նստած փախչում էինք, անցնելով բազմաթիվ մորթոտված դիակների միջով: Մի կերպ անցանք Արփաչայը և հայտնվեցինք Գյումրի քաղաքում: Այնտեղ մեզ մի ընտանիք պատսպարեց: Հետագայում ամուսնանալով Լենինականի դեպոյի մետաղագործ երիտասարդ Ցոլակ Ասատրյանի հետ, ունեցա երեք արու զավակ: Հետո տեղափոխվել ենք Երևան: Ակտիվ մասնակցել եմ մեր հանրապետության կառուցմանը և բարգավաճմանը:

73 (73).
ՍՏԵՓԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԱՐԴՎԻՆ, ՏԱՆՁՈՏ Գ.)

Մեր ընտանիքը ապրում էր Արդվինի Տանձոտ գյուղում: Հայրս եղել է կաշեգործ: Նա գեղեցիկ ու հաղթանդամ տղամարդ էր: Պապս ուսնոր էր և իր գեղեցիկ աղջկան ամուսնացրել էր հորս հետ:

1914 թ. դեպքերը ես չեմ տեսել: Բայց պատմում են, որ թուրքերը եկել են Օլթի, կապկպել են հայ տղամարդկանց ու տարել են Տանձոտի մոտ վտակի ձորը՝ գնդակահարել: Այդ ժամանակ եթե ռուսական զորքը չնահանջեր, մենք չէինք գաղթի: Մեզ սայլակներով տարել են Արդահան: Մենք առաջից, ռուսական զորքը՝ ետևից: Ռուսական զորքը մեզ թողեց Արդահանում, ինքը գնաց: Մեզ լցրին ռուսական զորանոցները:

1918 թ. գիշերը Արդահանի կամրջով թուրքերը եկան՝ զինված կացիններով ու գերանդիներով: Մենք թաքնված էինք այդ շինության մեջ: Եկան, մտան, խուզարկեցին, իրար վրա դարսված անկողինների տակից երկու թաքնված տղամարդ դուրս քաշեցին, տեղնուտեղը նրանց սպանեցին: Մեր հայ ֆեդայիներին կախաղան հանեցին և գիշերն էլ նրանց վրա նավթ լցրին, որ վառվեն ու մթության մեջ լուսավորեն շրջապատը: Այդ աճավոր տեսարանը ես չեմ կարող մոռանալ: Դա 1918 թ. էր, մենք մնացել էինք զորանոցի մեջ գերի, երբ թուրքերը եկան շրջապատեցին մեր շենքը և շուրջը նավթ թափեցին, որ վառվի շենքը և մենք մեջը ծխով մեռնենք: Շենքի մեջ մնացել էինք մենք՝ երեխաներս ու կանայք: Տասնչորս-տասնհինգ տարեկան աղջիկներին արդեն փախցրել տարել էին:

Այդ ժամանակ էլ Ախալքալաքում գերի էին վերցրել թուրք խաներին ու բեկերին՝ իրենց ընտանիքներով ու ասել էին թուրքերին. «Եթե զորանոցի միջի հայերին ձեռք տաք, մենք կսպանենք այս բարձրաստիճան թուրքերին՝ իրենց ընտանիքներով»: Այսպիսով մեզ հրաշքով ազատ արձակեցին: Ես, մայրս, տատս և փոքր եղբայրս ազատվեցինք: Իսկ երկու եղբայրներս, հայրս, պապս, քեռիս և ուրիշ շատ-շատեր՝ մոտ երկու հարյուր հոգի մեր գյուղից սպանվեցին:

Թուրքերը մեզ քշեցին Ախալքալաք, ով ետ էր մնում՝ սպանում էին: Մայրս իր հարսանեկան շորերը և ոսկիները թողել էր Օլթիում, իր հոր տանը, իբր ետ գալուց պիտի վերցներ: Մայրս մի հատ մինդար էր շինել, մեջը իր հարսանեկան շորերն էին: Էդ մինդարը տատիս ձեռքն էր: Թուրքի զարիթը եկավ, խշտիկով խփեց տատիս մեջքին: Խշտիկը կպել էր մինդարին: Թուրքերը տեսան էդ խաս շորերը, հափշտակեցին ու տարան: Մենք մնացինք առանց մինդարի:

Ճամփին սկսվեց խոլերայի համաճարակը: Տատս և եղբայրս մահացան ճամփին: Ճամփին՝ սոված ենք, ծարավ, բայց ոչինչ չկա՝ ո՛չ ուտելու, ո՛չ խմելու: Հիշում եմ արտի, մեջ մի հում կարտոշկա տեսա, վազեցի վերցրի, բերեցի և այդ մեկ կարտոշկան հում-հում կերանք՝ ես, մայրս, տատս և փոքր եղբայրս: Թուրքերը մեզ բերեցին մինչև Քոռ գետը: Գետի վրայի կամուրջը ճոճվում էր: Մենք հազարներ էինք, իսկ գերի թուրքերը քիչ էին: Ուզեցին մեզ փոխանակել: Բայց իրարանցում սկսվեց: Փոխկրակոցների մեջ մենք փախանք, ազատվեցինք: Եկանք Ախալքալաք՝ Ջավախք: Էնտեղի հայերը իրենց տներում մեզ շատ լավ ընդունեցին: Մեզ լողացրին, կերակրեցին, հագցրին, տուն-տեղ տվին:

Այս բոլոր դաժանությունները ես տեսել եմ իմ աչքերով: Հետո ինձ բերեցին Սուրամի մանկատունը, որը դպրոց էր եղել առաջ ու դարձրել էին հայ մանուկների մանկատուն: ՀՕԿ-ը կազմակերպել էր այդ մանկատան աշխատանքները, որը շատ մեծ փրկություն եղավ մեզ նման գաղթական մանուկների համար:

Թուրք ասելով մենք հասկանում ենք դահիճ, մարդասպան: Նրանք մեզ կոտորեցին: Նրանք նպատակ ունեին հայկական ցեղասպանություն կատարել, որ աշխարհում ոչ մի հայ չմնա: Թուրքերն ու քրդերը կոտորեցին մեզ, մեր գերդաստանի անդամներին:

Հետո մայրս եկավ ինձ գտավ մանկատունը: Ուզեցինք գնալ Բաթում, բայց Բաթումում հայ-վրացական ընդհարումներ էին եղել 1920 թվին: Մենք եկանք Ջանգիբասար*: Էն ժամանակ Երևանի մեծ մասը թուրք էր, իսկ Լենինականում հայերը շատ էին: Երևանում ես ամուսնացա: Սկսեցի սովորել:

Երբ ես ավարտեցի Պոլիտեխնիկական ինստիտուտը, արդեն լեյտենանտ էի: Երբ պատերազմը սկսվեց, ես Թիֆլիսում էի: Եկա Երևան: Մայրս ինձ դիմավորեց ժպիտը երեսին, բայց արցունքն աչքերին. «Աչքդ լույս, տղա ունես, բայց՝ պատերազմ պիտի գնաս»: Գնացի մի ծաղկեփունջ ուղարկեցի կնոջս՝ ծննդատուն և բանակ գնացի: Ես բանակում եղա կոմանդիր զվոդա: Բանակում թուրքեր շատ կային, բայց մենք բարեկամական հարաբերությունների մեջ էինք նրանց հետ: Կռվել եմ Կովկասում, Ղրիմում հրաշքով փրկվել եմ Կերչից: Բայց ֆաշիստները թուրքերի պես չէին, նրանք իրենց գրաված վայրերում բնակիչներին չէին ձեռք տալիս, կանանց, երեխաներին չէին անհանգստացնում: Թուրքը ուրիշ էր:

74 (74).
ՆԵԿՏԱՐ ՀՈՎՆԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԱՐԴՎԻՆ, ՏԱՆՁՈՏ Գ.)

Արդվինի շրջանի Տանձոտ գյուղը՝ իմ ծննդավայրը, մի գեղեցիկ այգեստան էր: Տանձոտ անունն է կրել, քանի որ այնտեղ տասներեք տեսակի տանձ է աճել: Տանձոտը Ծորոխ գետով բաժանվում էր երկու մասի: Մի կողմում ապրում էին հայերը, մյուս կողմում թուրքերը՝ իրենց բարձր մեչիտով: Այս երկու կողմերը իրար միացած էին մի փոքրիկ կամուրջով: Հայը և թուրքը ապրել են մշտապես իրար հետ շատ համերաշխ՝ մինչև 1914 թիվը:

1914-ին, երբ լսեցինք, որ թուրքերը պիտի հարձակվեն հայերի վրա, հայրս իր ընտանիքը վերցրեց ու մեզ տարավ Թիֆլիս, իր քրոջ մոտ: Բայց ճանապարհին թուրքերը փակել էին ճամփան և մեզ չթողեցին առաջ գնալ: Մենք ստիպված ետ վերադարձանք: Հետո Տանձոտում թուրքերը եկան և հայերի մոտից հավաքեցին ամեն տեսակի զենքերը, նույնիսկ հացի դանակները: Հետո հավաքեցին տղամարդկանց, տարան լցրին եկեղեցու մեջ և գիշերով գազանաբար սպանել են բոլորին: Հայրս կարողացել է փախչել այդտեղից և հասնել մորաքրոջս տունը: Մի բարի թրքուհի, որ տեսել էր հորը, հետո պատմել է մորաքրոջս. «Քո գեղեցիկ փեսան գիշերով եկավ, ձեր տան շուրջը պտտվեց, գնաց՝ ամտառ մտավ»:

Հայրիկս այնտեղ պատահել է մի խումբ թուրքերի և մի հայ դավաճանի, որը թուրքերի հանձնարարությամբ սպանել է հայրիկիս: Առավոտյան երբ իմացանք, որ բոլոր տղամարդկանց սպանել են, հուսահատությունը տիրեց ամբողջ Տանձոտի գյուղացիներին: Մայրս, որ Տանձոտի հայտնի Գրիգոր աղայի և Շուշան խանումի աղջիկն էր, որոշեց և՛ իր կյանքին վերջ տալ, և՛ մեր կյանքին վերջ տալ: Նա իր մոտ ուներ մկնդեղ, տվեց մեր թաղի մի քանի աղջիկներին, ինքը խմեց ու խմացրեց ինձ, որ չորս տարեկան էի, և իմ Անուշ քրոջը, բայց իր փոքրիկ տղային, որը տասը ամսական էր, չտվեց:

Մամայիս, քեռանցս հայրական տունը Ծորոխ գետի ափին էր: Մենք բոլորս թույն խմած էինք: Էնտեղ գետի ափին մի շարք կանայք սուգ ու շիվանի մեջ են, որ իրանց ևս պիտի սպանեն թուրքերը: Մայրիկս հուսահատությունից, արդեն թույնն էլ խմել էր, իրեն գցեց Ծորոխ գետը: Մարդիկ եկան մայրիկիս դիակը գետից հանեցին: Անուշ մորաքույրս էլ թույնը խմել էր ու արդեն մահացավ: Ես փոքր էի: Ինձ թթվի ջուր խմացրին, ձեռքըս էլ մի խնձոր տվին, որ ուտեմ: Անուշ քույրս չի մահանում, բայց թույնի ազդեցության տակ ոտքերը սաստիկ ուռեցին: Նրան էլ թթվի ջուր տվեցին, որ խմի: Ես ու Անուշը, ևս տասն ամսական եղբայրս մնացինք որբ:

Այդ ժամանակ Վարդան Մազմանյանը, որ Տանձոտի դպրոցի տնօրենն էր և մամայիս քեռու տղան,

* Այժմ՝ Մասիս:

թուրքերի ձեռքը չընկնելու համար թաքնված է լինում քեռուս տան նկուղում և լսել է, թե ինչպես թուրքերը գալիս են ու պատի տակ խոսում, որ առավոտյան իրենք կգան հարս ու աղջիկներին կփախցնեն, մնացածներին էլ կսպանեն: Վարդանը թաքնված տեղից լսում է այդ բոլորը: Նրանց գնալուց հետո Վարդանը գալիս է մերոնց՝ մորեղբորս տունը: Մերոնք Վարդանին թաքցրնում են գետնին պահված իմ մեռած մոր ու մորաքրոջ մոտ՝ սավանի տակ, վրան ծածկում են և բաց են թողնում միայն երկու մեռած կանանց երեսները: Այդ պահին թուրքերը գալիս են, տունը խուզարկում, Վարդանին են փնտրում: Գետնին պահված երկու մեռելներին են նայում, նրանց վրա զզվանքով թքում են ու հեռանում:

Վարդանենց հարևան բարի թրքուհին իր շորերը բերում է ու ասում. «Հագցրեք Վարդանին, ես նրան որպես թրքուհի տանեմ մինչև Ծորոխ գետը»:

Արդեն դեկտեմբեր ամիսն էր: Տաճձոտը ամտաններով էր շրջապատված: Ձեռի Վարդանը թրքուհու շորերով, թրքուհին էլ կողքը, իբր երկու թրքուհի, գնում են դեպի Ծորոխ գետը:

Ձեռի Վարդանը մեծ դժվարությամբ հասնում է Արդահան, որտեղ ռուսական զորքը էր կանգնած: Ռուսների առաջ խաչ է հանում, ռուսերենով խոսում, աղերսում է, որ իրեն հավատան, որ ինքը թրքուհի չէ, այլ միայն թրքուհու շորերով փախած եկած է ռուսներին պատմելու, որ թուրքերը պատրաստված են հայերին կոտորել և անհրաժեշտ է շտապ օգնել Տաճձոտի հայերին: Ռուսները լսում են, համաձայնվում են օգնության գնալ: Վարդանը ճանապարհը գիտեր, ընկնում է ռուսական զորքի առաջ ու գիշերով գալիս են Տաճձոտ, քանի որ առավոտյան, ինչպես թուրքերն էին ծրագրավորել, պիտի սկսեին իրենց սև գործը: Վարդանը թուրքերից շուտ կարողանում է ռուսական զորքին բերել, հասցնել Տաճձոտ:

Լավեցին հրացանային կրակոցներ, որոնց ուղեկցում էին հայկական եկեղեցու զանգերի ուրախ ղողանջները: Երբ քույրս՝ Անուշը, լսում է եկեղեցու զանգերը, ինձ չոքեցնում է, ասում է՝ խաչ հանիր: Իմ տասն ամսական եղբորս բարուրի միջից թաթիկները դուրս է հանում ու խաչակնքում, որ Աստված օգնության հասավ Տաճձոտի հայերին և ռուսական զորքի օգնությամբ պիտի ազատվենք:

Թուրքերը երբ տեսնում են ռուսական զորքի մուտքը Տաճձոտ, գլխապատառ սկսում են փախչել: Ռուսները գալիս են, սկսում են օգնել հայերին և ասում են. «24 ժամից մենք պիտի հեռանանք, ով որ պատրաստ լինի՝ մեզ կմիանա»: Ինձ, քրոջս՝ Անուշին և փոքրիկ եղբորս ռուս զինվորները, իմանալով որ մենք որբ ենք, սաճնակի վրա խոտ կար փռված, վրան իրենց շինելը փռեցին, վրան մեզ նստեցրին, մեզ վրա էլ մի ուրիշ շինել ծածկեցին, որ չմրսենք, իրենց պայոկից էլ մեզ բաժին հանեցին, կերակրեցին ու բերին հասցրին Ախալքալաքի զինվորների զորանոցը: Ախալքալաքում եկավ տեղի ֆոտոգրաֆը՝ Ծորտանյան Թաթոսը, որը շատ բարի մարդ էր, տեսնելով մեր՝ որբուկներիս անտեր վիճակը, ցանկություն հայտնեց մեր երեքին էլ որդեգրել: Բայց տատիկս միայն մեր տասը ամսական եղբորը տվեց նրան, իսկ մեզ պահեց իր մոտ:

Ախալքալաքում մեկ տարի մնալուց հետո գարնանը, երբ ռուսները գրավել էին այդ տարածքները, մենք նորից եկանք Տաճձոտ: Թուրը արդեն հասել էր: Տաճձոտը դրախտ էր դարձել: Բոլորն ասում էին. «Էն ինչ լավ ապուր է, ուտես ուտես՝ չես կշտանա»: Այնքան որ համեղ էր Տաճձոտի թուրը:

Արդեն 1917 թիվն էր: Վարդանը տեղեկացել էր, որ թուրքերը նորից պիտի գան: Նորից հավաքեց ժողովրդին ու ճամփա ընկանք: Երբ Տաճձոտից դուրս էինք գալիս, մենք անցանք այնպիսի հայկական գյուղերով, որոնք այրված, մոխիր էին դարձած: Ծեր կանայք, երեխաներ գետնին ընկած, սպանված: Այդ դիակների վրա շուն, կատու կապած: Էդ սարսափելի տեսարանները ես իմ կյանքում երբեք չեմ կարող մոռանալ:

Այրված գյուղերի ու սպանված դիակների միջով, սոված ու ծարավ գնալով, վերջապես հասանք մի ասորու գյուղ, որի բնակիչները մեզ շատ լավ ընդունեցին: Վերջապես հաջորդ օրը Վարդանը մեզ բոլորիս հասցրեց Արդահան, էնտեղից էլ՝ Ախալքալաք: Իսկ Տաճձոտի բնակիչների կեսը այս անգամ մնաց Տաճձոտում և երբ թուրքերը գալիս են՝ գերի են ընկնում:

Այդ ժամանակ Ախալքալաքի թուրքերից շատերը գերի են ընկնում ռուսական զորքի ձեռքը: Նրանք որոշում են գերիները փոխանակել: Այնպես որ, եթե ազատվող եղավ՝ այդ ձևով ազատվեցին: Այս երկրորդ գաղթի ժամանակ տատս, իմ բարի տատը չուզեց մեզ հետ գալ, նա արդեն շատ էր ծերացել և մնաց Տաճձոտում: Հետո իմացանք, որ թուրքերը եկել մեր տունը վառել են, խեղճ տատիկիս էլ ծառից կախել են:

Ես մի բանաստեղծություն եմ գրել այդ մասին.

Աշխարհն աշխարհ մանե եկա
Տատիկիս հողաթումբը չգտա,
Որտեղի՞ց ես գտնեի նրան,
Երբ թուրքերը կախել էին ծառից:

Մայրիկիս հողաթումբը ես գտա,
Աղի արցունք թափեցի վրան,
Իմ արցունքներից մայրիկիս
Հողաթումբը կանաչեց:

Հայրիկիս հողաթումբն էլ փնտրեցի,
Բայց որտեղի՞ց ես գտնեի այն,
Երբ նրան անխիղճ թուրքերը
Կտոր-կտոր էին արել, ճոշոտել ...

Ախալքալաքի ճամփին Բակուրյան անտառներում շունչ առինք: Բայց ուժասպառ էինք, բոլորս էլ սոված ու ծարավ: Ու կատարվեց հրաշքը՝ Հայ բարեգործական միությունը եկավ հավաքեց մեզ նման անտեր որբերին ու տարավ Սուրամի եկեղեցին, որը մանկատուն էին դարձրել: Այդ ժամանակ էլ խոլերայի համաճարակն էր սկսվել: Հետո ամերիկացիները եկան, Մեր-ձավոր Արևելքի նպաստամատույց ընկերությունը մեզ վերցրեց իր խնամքի տակ: Հրաշալի մեզ պահեցին՝ և՛ սնունդով, և՛ հագնելիքով, և՛ ուսումով, մեզ մարդ դարձրեցին: Բացի մեր դասերից՝ հայերեն, ռուսերեն և անգ-

լերեն էինք սովորում, նաև ես սովորել եմ այնտեղ ջութակ, բալետ և գեղարվեստ, որը հետագայում ինձ գրեթե արվեստագետ դարձրեց: Տեսեք այս ծառերի կոճղերը և արմատները: Ես իմ ձեռքերով հավաքել եմ, մշակել և այսպիսի տեսքի եմ բերել: Կարծեք ամեն մեկը մի քանդակ լինի, բնության կերտածը, բնության ստեղծագործությունը ...

Ութսուն տարուց ավելի է անցել, բայց ես մինչև այսօր չեմ կարող մոռանալ իմ սիրելի վաղամեռիկ հայրիկին, մայրիկին, քեռուն, հարևաններին, տատիկին, մեր բոլոր ազգականներին, որոնք գազանաբար սպանվեցին և մեզի թողին անտեր ու անօգնական: Իմ ամբողջ կյանքում ես միշտ հիշում եմ այդ սարսափելի տեսարանները, որոնք տեսել եմ իմ աչքերով, և ես երբեք հանգիստ չունեմ: Այնքա՜ն եմ արցունք թափել... Ես իմ բնավորությամբ բարի եմ եղել դեռ փոքրուց: Օտարները չուզեցին մեզ օգնել, ռուսները մեզ օգնեցին: Պիտի ասեմ նաև, որ թուրքերը ոչ բոլորը վատ չեն. նրանց մեջ էլ լավերը կան: Այդ երիտթուրքերի կազմակերպածն էր, թե չէ՝ ժողովուրդը լավն էր, և մենք թուրքերի հետ լավ հարաբերությունների մեջ էինք մշտական: Նրանց մեջ էլ լավ մարդիկ կան, դա էլ փաստ է:

75 (75).
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԿՑՈՒՐԵՂԻ ՏԵՐ-ՆԱԶԱՐԵԹՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ՄՆՎ. 1905 Թ., ԲԱԲԵՐԴԻ ԼՈՒՍՈՆՔ Գ.)

Իմ գլխից գիտե՞ս ինչե՜ր են անցել: Ես եմ իմ գլուխը ազատել էդ շներից: Ես ծնվել եմ 1905 թ. Բաբուրդի (Բաբերդ) Լուսոնք գյուղում: Մեծ հայրս՝ Տեր-Նազարեթը, եղել է շատ հարուստ: Ես ծնվել եմ արտերի մեջ: Մայրս՝ Աղավնին, հայրս՝ Կյուրեղը, եղբայրները՝ Միսաքը և Հակոբը, քույրերս՝ Վարդուհին, Թուրվանդան և ես: Մեր նման հարուստ կալվածատեր չկար: Իմ պապը տերտեր էր: Թուրքերը գալիս, հարցնում էին. - Տեր-Նազարեթի տունը որտե՞ղ է, - գալիս էին, նըստում էին ամիսներով, ուտում-խմում, զվկտվում էին:

Կարասների մեջ մեղր ունեինք, զեյթուն, պանիր ունեինք: Ամեն ինչը ձեչ եղավ: Մեր ամբարները տըրքում էին ուտելիքներից: Տեր-Նազարեթը շատ բարեգործ էր, թուրքերի հետ էլ լավ ընկերություն կէներ: Մինչև անգամ թուրքի արտ էր տվել, որ ցանի: Մի օր էդ թուրքը գաղտնի էկավ մեր տունը, լուր տվեց, որ սուլթանը հրաման է տվել իրենց, ասել է. «Գնացե՛ք, թալե՛ք, բերե՛ք էդ գյավուրների հարստությունը»:

Գիշերը մեր տղերքը՝ իմ հորեղբայրները, զենքերը առան, դուրս եկան տնից: Մերս նրանց հետ պաշար դրեց: Մենք հարյուր ձի ունեինք: Ախոռից քաշին, տարան:

Մեր տղերքը էլան գնացին Անդրանիկի խմբին միացան մեր սարերում: Մենք հանգստացանք, որ գյուղի երիտասարդները հեռացան գյուղից:

1915 թ. մի առավոտ թուրքի զինվորը լցվավ մեր գյուղը, մեր տունը: Իրիցկինը՝ տատիկս, նստած էր թոնրի գլխին, հաց էր թխում: Թուրքերը տեսան, որ մենք շատ հավեր ունենք, հրամայեցին՝ հավերին մորթել ու խորովել: Իրիցկին տատիկիս թևերն էլ հավերը խորովելու տաք-տաք շամփուրներով դաղեցին, տատիկս մեռավ:

Թուրքերը պապիկիս ըսին. - Դու տերտեր ես, շատ ոսկի ունես, հանի՛ր, տու՛ր: Պապիկիս էլ բունին, մորուքը վառեցին: Պապիկս հուսահատված ըսավ. - Նալլա՛թ ըլլի, առե՛ք, տարե՛ք, ժամի խորանը մի սուրբ է թաղված, գնացե՛ք, էն քարի տակն են ոսկիները:

Թուրքերը գնացին, հանեցին, երկու խուրջին լեցրին ոսկիով, բերանները կարեցին մախաթով, եկան պապիկիս գլխին էլ տվին. էնտեղ սպանեցին: Հետո էլ անցան հարսներին, Հորեղբորս կինը՝ Իսկուհին ասաց. - Շնե՛ր, առա՛ք ոսկիները, հիմա ի՞նչ կուզեք, - առավ իր երեխեքին ջուրը գցեց, ինքն էլ իրան գցեց ջուրը խեղդվավ:

Ջաթի կնիկներին տանում էին մոտիկ գետը տկլորացնում, հագուստները առնում, իրանց էլ քամակներին քացով խփում, գետն էին գցում: Էնքան որ ջանդակները գետի մեջ լցվել էին: Իմ պապային տարել գցել էին մի գյուղ՝ մութ տեղ, սոված-ծարավ պահել, ծեծել, բանտարկել են փակ տեղում: Պապաս էլ շինարար էր: Նա մութ տեղում հողի միջից մի երկաթ էր գտել, սկսել է պատը քանդել. փախել է: Մի թուրք տեսել է նրա փախնելը, պապաս իր ձեռքի երկաթով խփել է նրա գլխին, նա սատկել է: Պապաս նրա հագուստները հանել է, ինքն է հագել, նրա պասպորտն առել է, գընացել Ստավրոպոլ: Մեզ էլ գյուղից քշեցին, բոլոր ընտանիքով ոտքով քայլելով գնացինք: Քառասուն օր մեզի ոտքով քշեցին, վերջապես հասանք Երզնկա քաղաք: Ժողովրդին հավաքեցին, որ լցնեն գետը: Էկան բոլոր թուրքերը կայնան: Աղջիկ-կնիկ, բոլորին գցին գետը, ալիքը տարավ: Մենք փախանք: Հասանք մի գյուղ: Տեսանք հայերին կոտորել են: Գյուղը դատարկ էր: Մընտանք մի կիսավեր տուն: Իմ ախպերներ, մենք բոլորս սոված էինք: Տատիկս ասաց. - Հակո՛ր ջան, չարուխի տկից երկու ոսկի հանի, մածուն առնենք:

Հազիվ նստած մածուն էինք ուտում, տեսանք, որ երկու թուրք եկան մտան, ախպերներիս՝ Հակոբին ու Միսաքին բռնին տարան մորթելու: Մնացինք իմ քույրերով, մայրս ու ես: Մեկ էլ տեսանք մի թուրք մեր դեմը պպզել է, մեզ է նայում: Եկավ հորեղբորս կնկին ասաց. - Էդ աղջկան տուր տանեմ, լավ կպահեմ: Մեկ է, ձեզի ջուրը պիտի գցեն, բալի էդի սաղ մնա:

Ինձի տվին դրա ձեռքը: Էդ էլ ինձի բերեց իր տունը: Դու մի ասա՝ էդրա հարսը մեռեր է, երեխան մնացեր է անտեր, ես պիտի պահեմ: Ես հարուստի աղջիկ, ես կարա՞մ էդ երեխուն պահեմ: Երեք օր մնացի, տեսա

չեմ կարողանա, էլա դուռները բաց թողի փախա, մտածում եմ՝ էթամ ինձի ջուրը գցեմ՝ պրծնեմ: Մեկ ա, մեր գերդաստանից մենակ ես եմ մնացել, բոլորին գցել են ջուրը: Ճանապարհին լսեցի թուրքերը խոսում էին. «Էրմէնի մէզէրիձդա ձէչ էրմէնի քալմադը, ձէփիսիդէ սույա աթդըմ» (հայկական գերեզմանատանը ոչ մի հայ չմնաց, բոլորին ջուրը գցեցի):

Ես էդ խոսքերը լսեցի՝ ուրեմն բոլորին ջուրն են գցել: Նստա լաց եմ լինում: Մեկ էլ երկու թուրք կնիկ եկան հարցրին ինձ. «Կգա՞ս մեր տունը»:

Դրանք էլ մեծ զինվորականի կնիկներ էին: Էլա դրանց հետ գնացի: Իմ ձեռքեն բռնեցին, ինձ տարան երկու փողոց էն կողմը: Ինձ լողացրին, շորեր հագցրին, երեք տարի պահեցին: Անունս Գյուլի էին դրած: Մի օր ինձ հարսանիք տարան: Տեսա՝ մեր հայկական եկեղեցու հոգևորականի շուրջառով, վեղարով ու գավազանով մեկը մեջտեղ ելավ, սկսեց տնազ անել: Ես ջղայնացա:

Ինձ ղրկում էին իրենց ախպոր տունը մի բան բերել-տանելու: Մի օր էլ սուբերեյի թխեցին, ձեռքս տվին, որ տանեմ իրենց ախպոր տունը: Ճամփին էդ հին թուրքը ինձ հանդիպեց, ճանաչեց, սկսեց վազել իմ ետևից: Հենց մոտեցավ՝ սուբերեյին տվի դրա գլխին ու ես փախա: Իրիկունը որ մեր տղամարդիկ տուն եկան, էդ թուրքին գնացին ծեծեցին:

Երեք տարի հետո, որ ռուսը եկավ, ինձ թաքցրել էին պադվալը, որ չգտնեն: Քանի որ որբ հայերին հավաքում էին, տանում էին հայկական որբանոց: Ռուսներն ասում էին. «Հայերին ով վնաս տա՝ կպատժենք»:

Դրանց պադվալի լուսամուտին սետկա էր քաշած: Դուռը փակ էր: Մի հատ քալփաթին գտա, քաշեցի, քաշեցի, ընկա թիկունքիս վրա, բայց դուռը բացվավ: Էլա ոտքի. փիլաքանը դրի, էլա կտուրը, տեսա մի հատ ռուս, մի հատ հայ զինվոր, ըսի. - Բէն էրմէնի իմ (ես հայ եմ):

Դրանք լսեցին, ըսին. - Դու հա՞յ ես, թուի՝ բռնենք:

Ես ըսի. - Ես չեմ կարող թռնել: Երեկոյան ժամը հինգին եկեք ինձ ուզեք:

Դու մի ասա, հարևանը լսել է, եկել է, խաբար տվել: Էս երկու քույրերը եկան, լաց լինելով ինձ խընդրում են՝ որ գաս, ասա՝ «Ես մուսուլման եմ»:

Ասի՝ «Հա՛, կասեմ», - բայց ես գիտեմ ինչ պիտի ասեմ:

Երեկոյան էդ ռուս և հայ զինվորները եկան, հետները մի հայ կնիկ՝ աղունը Զարուհի: Եկան ինձ հարցրեցին. - Դու հա՞յ ես:

Ես ասի. - Հա՛, հայ եմ:

Ինձ առին, տարին: Տիկին Զարուհին ինձ վերցրեց իր ծնկին ասաց. - Դու հորեղբայրները Բայբուրդ խաղուխ են բացել: Ռուսը մտել է, ազատել է Բայբուրդը:

Մեկ էլ հերս էկավ ինձ գտավ: Հերս գնացել էր Ստավրոպոլ, ինձ վերցրեց թրոյկայով, ես ու հերս եկանք Բայբուրդ: Տեսանք՝ ամեն տեղ ավեր: Մեր տունը դատարկ: Մեջը բան չկա: Միայն մի հատ խնոցի էր մնացել: Էդ լավ թուրքը, որ ջարդը սկսելուց առաջ եկել էր մեզ ասել էր. «Ես ձեր հացը շատ եմ կերել, վեր կացեք առավոտը փախեք Բայբուրդից»: Էդ թուրքը եկավ, էդ բարի մարդ էր, տեսավ մեր վիճակը, բերեց մեր կոտոշը կոտրած կովը, որ ինքը տարել պահել էր, բերեց, որ մենք դրանով ապրենք: Մեր քոչից մեկ էլ ազատվել է իմ հորեղբոր աղջիկը՝ Եղիսաբեթը: Մի թուրք փախցրել է Եղիսաբեթին, տարել է գոմում պահել: Երբ 1918-ին ռուսները գալիս են հայերին ազատելու, էս թուրք հերը տղին կասի. «Հորից ջուրը քաշելուց հորը գցի»: Էս Եղիսաբեթը գոմում քնած է լինում, լսում է էդ խոսքերը: Երբ տղան Եղիսաբեթին տանում է հորի մոտ, ասում է. «Ջուրը քաշի վեր»: Եղիսաբեթը ասում է. «Ես չգիտեմ, առաջ դու քաշի, ես տեսնեմ»: Տղան փորձում է: Եղիսաբեթը տղային բռնում գցում է հորի մեջ, ինքը թողնում փախչում է: Մթանը բարձրանում է ծառի վրա: Լուսադեմին մի քանի զինվոր են գալիս: Եղիսաբեթը տեսնում է հայերեն են խոսում ասում է. - Վա՛յ, էս իմ Անդրանիկ քեռին է:

Էն մի ընկերն ասում է. - Էս անտառում սատանա կա:

Եղիսաբեթը ծառի վրից ասում է. - Չէ՛, ես եմ, Եղիսաբեթը, - էդնից ազատվում է:

Երեք տարի հետո գացինք Թիֆլիս: Թիֆլիսում մասնակցել եմ թատերական խմբին: Լավ արտասանում էի և երգում: 1938 թվին էլ եկանք Երևան:

76 (76).
ՄԱՍԻՍ ՆԻԿՈՂՈՍԻ ԿՈՋՈՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԲԱԲԵՐԴ)

Իմ հիշողությունների մի մասը վերապրողներից լսած հուշեր են: Մեր գերդաստանը նախքան Բայբուրդը (Բաբերդ) ապրել է Կյումիշխանայում: Այդտեղ եղել են արծաթի հանքեր, իմ նախնիները՝ հատկապես պապս, զբաղվել է, մշակել է: Մեծ մարդ է եղել: Դրա համար էլ «Կոջո» են ասել, մեր ազգանունը դարձել է Կոջոյան: Հետո նրանք փոխադրվել են Բայբուրդ: Մի եղբայրը՝ Կարապետը եկել է Կովկաս՝ Ախալցիխա, որից ծնվել են չորս տղաներ, որոնցից մեկը՝ Հակոբ Կոջոյանն էր, հայտնի նկարիչը: Պապս՝ Մարտիրոսը Բայբուրդում զբաղվել է կտորի վաճառականությամբ: Ունեցել է երեք տղա՝ Մանուկ, Մկրտիչ և Նիկողոս: Ես Նիկողոսի տղան եմ:

Հայրս ծնվել է 1865 թվին: Սովորել է Էրզրումի Սանասարյան վարժարանում: Նա իրենց ընտանիքում եղել է միակ կարդացածը: 1895 թ. կոտորածի ժամանակ պապս եղել է կազինոյում: Նրա մատը գազանաբար կտրել են, տոհմական շքեղ մատանին հանել են իր մատից: Այն ժամանակ սուլթան Համիդի ժամանակն էր: Թուրքերը լրիվ թալանել են մեր ունեցածը:

Մեր գերդաստանի հետ կապ են ունեցել Վենետիկի, Ճենովայի և Կ. Պոլսի վաճառականները, որոնք էլ մեզ օգնել են, որ մենք մեր նախկին ունևոր դիրքը գրավենք, և մենք վերականգնվել ենք: Բայց սուլթան Համիդը բոլոր հանցագործ ավազակներին արձակել էր բանտերից և կոչ էր արել՝ գնալ կողոպտել, թալանել, սպանել գյավուրներին: Այդ ժամանակ հորեղբորս և պապիս սպանել են: Երկու օր հետո տուն չկար, որ սպանված չունենար: Բոլորը մասսայաբար սուգի մեջ էին: Սպանվածներն այնքան շատ էին, որ իրենց մեռելները առանց դագաղի տանում թաղում էին: Պապիս և հորեղբորս համար եկեղեցին դագաղ տվեց, քանի որ նրանք երևելի մարդիկ էին, և եկեղեցու բակում թաղեցին ընդհանուր:

1895 թվի կոտորածից հետո մեր տունը լցվեց որբերով ու անտեր այրիներով: Հայրս բոլորին վերցրեց իր խնամքի տակ: Հայրս, մայրս ու մերոնք բոլորը թաքնվել էին ամբարում՝ մյուս բոլոր որբերի ու այրիների հետ:

Մեր բակի մոտով հոսում էր Ճորոխ գետը: Չորս կողմը կաղամախիների ծառեր էին: Մեր ընտանիքում հինգ երեխա էինք:

Մինչև 1915 թ. կոտորածի սկիզբը, երբ 1914 թ. սկսվեց պատերազմը, հայերին թույլատրում էին հիսուն ոսկի տվողին ազատել բանակից: Հայրս վճարեց հիսուն ոսկի և մեծ եղբայրս չմասնակցեց ռուս-թուրքական պատերազմին:

1915 թ. ապրիլ ամսին, Զատիկից մեկ շաբաթ առաջ բոլոր հայտնի տղամարդկանց բանտարկեցին, այդ թվում նաև հորս: Երկրորդ օրը մայրս ուտելիք վերցրեց, գնացինք բանտ: Էնտեղ հայրս գուշատ էր և անորոշ հայացքով մեզ դիմավորեց: Մեզ դրսում զննեցին, նոր ներս մտցրին:

Հետո հրահանգ եղավ, թե Բայբուրդից դեպի Միջագետքի Բեղլիճ-Բաղդադ երկաթգծի վրա աշխատելու համար քսանչորս ընտանիք պիտի տեղափոխեն:

Դաշնակների դրդմամբ, բոլոր ընտանիքները զենք ունեին: Մայրս էդ զենքը վերցրեց, գիշերով տարավ Ճորոխ գետը գցեց: Եղբայրս մեր խանութի կտորեղենները էժան գներով ծախեց թուրքերին և գնեց մի ձի, որ մենք սայլով ճամփա ընկնենք:

Հաջորդ օրը ամենաանհրաժեշտ իրերը էդ ձիու վրա բարձած՝ ճամփա ելանք: Այդ քսանչորս ընտանիքից բացի մյուսներին էլ աքսոր հանեցին՝ մաս-մաս: Տատս, որ յոթանասուն տարեկան էր ճանապարհին իրեն գետը գցեց, ժանդարմը կրակեց, սպանեց նրան: Երկու օր հետո, երբ բլուրներով շրջապատված հարթ տեղ կար, մեզ վրա հարձակվեցին թուրքերը՝ կացիններով, խանչալներով ու զենքերով զինված, ու սկսեցին կոտորել, թալանել, առևանգել: Ժողովրդի կեսը սպանվեց: Մեզ ուղեկցող ժանդարմները այդ ժամանակ անհետացան: Չորս-հինգ ժամ հետո սկսեցին կանանց փախցնել: Քրոջս տարան: Եղբայրս ուզեց դիմադրել: Նրա գլխին տվին սպանեցին: Մնաց մայրս, մյուս քույրս, մեծ եղբայրս, մեկ էլ հորեղբորս կինը: Մեր սայլը և ձին գողացել տարել էին: Ոչինչ չէր մնացել: Մնացել էինք մերկ ու տկլոր: Այդպես ոտքով Բայբուրդից դեպի Երզնկա ենք գնում՝ սոված, ծարավ, արյունների մեջ, վիրավոր: Մի բլուրից երբ իջանք Երզնկայի մոտ՝ տեսա հազարավոր մեռելներ՝ տկլոր, այլանդակված, մեր աչքերի առաջ փռված: Մենք բոլորս ուժասպառ էինք արդեն: Երկու եղբայր տասնյոթ-տասնութ տարեկան, որոնք այլևս չէին կարող քայլել խմբի հետ, խնդրեցին ժանդարմին, ասին, որ իրենց սպանի: Ժանդարմը առանց մտածելու երկուքին իրար մեջքի կանգնեցրեց և մեկ փամփուշտով սպանեց՝ ուրախանալով, որ մեկ փամփուշտ խնայեց:

Երբ մենք Երզնկա մտանք, Էնտեղ ապրում էր մի հույն բժիշկ: Նա տեսավ մեր թշվառ վիճակը, լաց եղավ, տասներեք տարեկան քրոջս վերցրեց, ժանդարմին փող տվեց ու քրոջս ազատեց, տարավ: Մենք շրջունակեցինք մեր ճանապարհը: Եկանք հասանք Մուրադ (Եփրատ) գետը: Այնտեղ շատ կիներ ու աղջիկներ, որպեսզի թուրքերը իրենց չտանեն, իրենց գցեցին գետը: Ես տեսա՝ Մուրադ գետը լիքն էր դիակներով: Այնտեղ հորեղբորս աղջիկը իրեն ջուրը գցեց՝ իր ծծկեր երեխայի հետ: Գերմանացիները ափին կանգնած ծիծաղում էին ու նկարահանում, իսկ Եփրատը տարավ իմ հորեղբոր աղջկա դիակը՝ իր մանկան հետ: Մի թուրք մոտեցավ, որ ինձ տանի: Մայրս դիմադրեց: Նա մորս գլխին խանչալով խփեց, մի ուրիշ թուրք ինձ գրկեց ու տարավ, իսկ մի ուրիշ թուրք իմ եղբորը տարավ:

Ինձ բերին մի թուրքի գյուղ: Այդ թուրքը ուներ երկու աղջիկ: Ինչ-որ մոլլայի ընտանիք էր: Ինձ սովորեցրին աղոթել: Ես սովորեցի արաբերեն աղոթել: Մի օր ես գոմի մի անկյունում աղոթում էի, դու մի ասա՝ հակառակ կողմ եմ շուռ եկած, նրանք տեսան ինձ, սկսան ծեծել: Ես գաղափար անգամ չունեի, թե ինչու են ինձ ծեծում: Բայց այդ իրենց կրոնի նկատմամբ արհամարհանք էին նկատած: Ես նրանց կովերն ու ոչխարներն էի արածացնում: Հաճախ իմ հոտը տանում էի հայ աքսորվածների լքված այգիները ու այնտեղ արածացնում:

1916 թ. գարնանը ռուսական զորքը մոտենում էր: Հրահանգ եկավ, որ թուրքերը էվակուացվեն: Երբ հրահանգը ստացան, նրանք ժողով արեցին, որոշելու համար, թե ինչ պիտի անեն ինձ հետ: Մի աղջիկ ասաց՝ հորը գցեք, մյուս աղջիկն ասաց՝ մեղք է, մեզ հետ տանենք: Այդպես էլ եղավ: Ես իրենց հետ ճամփա ընկա դեպի Սեբաստիա: Մեկ օր հետո նրանց մեծ աղջիկը մեռավ: Ես նրանց ճամփին կորցրի, բայց մյուս թուրք գաղթողների հետ ճանապարհը շարունակեցի: Հորթերի հետ սկսեցի քայլել, ծծել կովի կաթը, և կովը ինձ թողնում էր ավելի, քան իր հորթին:

Հասանք Ենիխան, որը Սեբաստիայի մոտ է: Իմ անունը Միթարիս օղլի էին դրել, այսինքն՝ վարժապետի տղա, Սապիթ էր անունս: Իբր ես թուրքի տղա եմ: Ենիխանում մի թուրք ինձ տարավ աուլները, ուր առանձին տներ էին: Էդ մարդը հետո իմացա, որ ավազակապետ էր: Այնտեղ ևս ես արածացնում էի գառներ և հորթեր: Էդ մարդը ամիսներով բացակայում էր: Մի օր բերեց մի հրացանով զինվորականի: Հետո իմացա, որ կովկասյան բանակից փախած մի հրամանատար էր:

Մի օր գիշերը դուռը ծեծեցին, տասնհինգ դեզերտիր հույներ եկան՝ հաց ուզելու: Էս մարդը էդ կովկասյան ֆրոնտից փախած հույներին մի լավ թալանեց: Ինձ էլ մի շալվար հասավ, ու ես հագա:

1917 թ. մի օր հորթերը արածացնելու ժամանակ քունս տարել էր: Մեկ էլ զարթնեցի, տեսա գիշեր է, աստղերը փայլում էին, հորթերը՝ չկային: Ես այլևս չէի կարող իմ տիրոջ մոտ գնալ: Գիշերով սկսեցի քայլել ու փախա, կարճ ճանապարհով գնացի Ենիխան: Մի խանութպանի մոտեցա, ասի՝ հաց տուր ինձ:

Էդ խանութպանը ինձ որպես թուրքի տղայի տարավ Սեբաստիայի մի ուրիշ գյուղ: Դրանք շատ աղքատ էին: Ես գնում էի ցորեն էի կալսում: Արդեն յոթութ տարեկան էի դարձել: Ամառը էնտեղ մնալուց հետո աշնանը սրանք ինձ ասին. «Մենք քեզ չենք կարող պահել»: Տանտերը ցորենի հետ ինձ տարավ Սվազ: Մի մարդ ինձ առավ պահեց, ասաց. «Ջմեռը կպահեմ, գարունը՝ կտամ որբանոց»: Այդպես էլ եղավ: Ինձ տարան թրքական որբանոց: Սեբաստիայի թրքական որբանոցում ես մեկ տարի եմ մնացել: Էնտեղ բոլորը տիֆ ընկան: Առողջներին տեղափոխեցին, ինձ էլ նրանց հետ: Ես ցուցակում գրվում էի որպես թուրքի տղա:

Սեբաստիայում ամերիկացիները եկան, հայերին տարան իրենց որբանոցը, բայց ես իբր թուրք եմ, ինձ չտարան: Ինձ հագցրին մի մեծ զինվորի շոր, որի գրպանում գտա ասեղ ու թել: Ես էդ ասեղ թելը որբերին տալիս էի վարձով, դիմացը՝ ինձ տալիս էին մի կտոր հաց:

Մի օր էդ որբանոցի մեջ ձիու չմարսված ցորենները հավաքում էի, որ ուտեմ, որբանոցի շրջակայքում մի տղա ինձ տեսավ, պոռաց՝ «Մասիս»: Ես վախից փախա: Սա գնում է քրոջս ասում է, որը մի թուրքի տանը դաստիարակչուհի էր: Քույրս գալիս է, փնտրում, բայց ասում են՝ Էստեղ հայ չկա:

1919-ին մի իրիկուն բոլոր որբերը հավաքված էին՝ հաց տանելու, քույրս ինձ տեսավ, ճանաչեց, լաց եղավ: Ես չճանաչեցի: Բորոտ եմ, վերքոտ: Որբանոցի վարչությունում հարցուփորձ արեցին, ես ասեցի հայ եմ, սա էլ իմ եղբորս կինն է:

Քույրս ինձ վերցրեց, բերեց էդ թուրքի տունը, ուր ինքն էր: Իսկ մայրս մինչև Խարբերդ ոտքով գնում է այդ քսանչորս ընտանիքների հետ: Էնտեղ գտնում է փոքր քրոջս և իր գոյությունը պահպանում է կար անելով: Քույրս հայտնում է մորս, որ գտել է ինձ և իր մոտն եմ: Մայրս կազմակերպում է մեր փախուստը: Ես ու քույրս գնացինք Խարբերդ: Գտանք մորս ու փոքր քրոջը: Ես ճանաչեցի մորս:

Մայրս ունեցել է մի մորաքույր, որը գտնվում էր Ամերիկայում: Մայրս նամակագրություն է ունեցել նրա հետ, և նրանք առաջարկել են մորս՝ իր երեխաներով գնալ Ամերիկա: Մայրս, քույրս, ես (փոքր քույրս Խարբերդում մահացել էր արդեն) ամերիկյան մեքենաներով պիտի գնայինք Պոլիս, որ գնանք Ամերիկա:

Սեբաստիան մի քաղաք էր, որտեղ կար ամերիկյան դպրոց: Այնտեղ մայրս հանդիպում է իր ընկերուհուն, որը համոզում է մորս, որ Ամերիկա չգնա: Մայրս ընդունվում է կարի արհեստանոց: Քույրս ամուսնանում է այնտեղ աքսորված խնուսցի մի երիտասարդի հետ: Ես ընդունվում եմ դպրոց, սկսում եմ հայերեն սովորել:

Մեր քսաներեք հոգուց բաղկացած գերդաստանը, որ միասին սեղան էինք նստում, մնացել էին երեք հոգի:

Աթաթյուրքը երբ իշխանության գլուխ անցավ, եկավ գավառները պտտվեց: Ամբողջ ժողովուրդը գնաց նրան տեսնելու: Մենք էլ գնացինք: Ես տեսա Աթաթյուրքին:

1925 թվին Արամ Արամյանի մայրը, որը իմ քույրն է, գտնում է իր տղին: Մենք Տրապիզոնից Թիֆլիս եկանք: Մեկ ամիս հետո եկանք Երևան: Ես դպրոց ընդունվեցի, հետո՝ շինարարական տեխնիկումում սովորեցի: Աշխատեցի շինարարություններում: Զանգեզուրի երկրաշարժի ժամանակ, որպես շինարար գնացել, վերականգնել եմ: 1934 թվին ընդունվել եմ Մոսկվայի շինարարական ինստիտուտը: Ավարտել եմ: Նշանակվել եմ, որ գնամ Էստոնիա՝ Բալթիկ ծովի ամրացման աշխատանքներին մասնակցեմ, բայց մորիցս ճամակ ստացա, եկա Հայաստան, որտեղից ինձ ուղարկեցին Փոթի՝ ռազմական օբյեկտներ կառուցելու: Վերադարձա Երևան: Կառուցել եմ թիվ 447 գործարանը:

Պատերազմը երբ սկսվեց, ինձ ուղարկեցին ճակատ: Վերադարձա, կենտկոմում գունավոր մետալուրգիայի բաժնի վարիչ նշանակվեցի: Հետո քաղսովետի բնակարանային բաժնի պետն էի: Շատ բարձր պաշտոններ եմ վարել: Ագարակի, Քաջարանի, Ալավերդու գործարաններում մեծ աշխատանքներ եմ կատարել: Կապ եմ ունեցել Մոսկվայի գունավոր մետալուրգիայի մինիստրության հետ: Խնամի եմ դարձել Հայաստանի Կենտկոմի քարտուղար Զարոբյանի հետ: Հիմա թոշակառու եմ:

77 (77).
ՄԿՐՏԻՉ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ)

Մեր Շապին-Գարահիսարի Քեչեյուդ գյուղում մարդիկ դազգահի վրա թաղիք էին գործում:

Օր մը էկան բոլոր աշխատող հայ տղամարդկանց ջոկեցին, տարին՝ ջամիներ սարքելու: Հետո ալ եկան մեր մայրերին ու քույրերին տարին Ջարայի Ղավախլու գյուղը: Ժանդարմները մտրակներով անասունների պես քշում էին բոլորին: Ծերերին, ովքեր չէին կարողանում քայլել, գլուխները մտցնում էին ոտքերի արանքը, կապում էին ու գլորում Ջարայի ձորը... Պապիկիս կացնով սպանեցին: Անտեղեն մեզ տարին Կայաբաշ ըսված բաց տեղը՝ մեծ քարի դոշին...

Հյուսեին անունով թուրք ժանդարմա մը կար, հետը ուրիշներ ալ կային, սկսան ունեցած-չունեցածնիս մեր վրայեն թալանել, աղջիկներուն մեր աչքի առաջ բռնաբարել, հղի կիներուն փորերը ճղել, չծնված մանուկները հանել իրար նետել: Մեկը մի աղջիկ տարավ, մյուսը մի տղա տարավ. ի՛նչ գտան՝ տարան:

Ինձի տանող թուրքը ինձ քնացրեց իր խանութին մեջը: Հարցուցի. - Ու՞ր են իմ մայրն ու հայրը:

Ձեռքով ցույց տվեց վիզը, թե՝ մորթել են: Էդ մարդու տանը տեսա մեր վերմակը, ուրեմն մեր տունը թալանողը էդ մարդն էր: Մտածեցի փախնել: Գիշերը փախա: Գնացի հրապարակը, ուր շատ հայեր կային հավաքված, ըսի. - Ինձի ալ հետերնիդ տարեք աքսոր:

Միտքս հորս-մորս գտնելն էր: Մարդիկ ինձ պահեցին արաբայի մը մեջ, վրաս ղազան դրին, որ շունչ կարենամ առնել: Անցանք Դալղոս (Տավրոս) գետը: Դիվրիկ հասանք, շա՜տ հետու՝ Վանի մոտ, ուր Եփրատն ու Տիգրիսը իրար էին միանում: Հոն հայ աղջիկները պար բռնելու պես իրար ձեռք բռնեցին, Դիվրիկի ձորով Եփրատ գետը նետվեցին, որ իրենց չբռնաբառեն:

Էնտեղ ոնց եղավ մի թուրք ինձ առավ, Էշու վրա նստեցուց, աչքերս կապեց, հոն յոթ ջաղացք կար, Էնտեղից տարավ: Տարավ, աչքերս բացեց: Տարավ իր գյուղը, իր տունը: Անոնց ծառան դարձա: Հոն հանդիպեցի մեր գյուղի Սիրարփիհն, ըսի. - Ես քեզի կփախցնեմ:

Մենք մահից չէինք վախենում, մենք թու՛րքից էինք վախենում: Երեք օր ու գիշեր սալոմների մեջ մնացինք, դաշտերում իրար արցունքներ լիզելով, հատիկներ ուտելով, ապրեցանք: Ջուր չիկար, դիմացանք: Մեզ եկան բռնեցին, տարին մեր աղաների տունը: Այծերը կարածացնեի: Օր մը այծերը ցորենը կերել էին, աղաս գլուխս ծնկների արանքը խոթեց, սկսեց ծեծել, ես ակռաներով իրեն կծեցի, ինքնապաշտպանությունը լա՜վ բան է:

1919 թ. մի մարդ եկավ իր եղբորը փնտրելու, ինձի տեսավ, ըսավ. - Դուն կերթա՞ս Սեբաստիա:

- Այո՛, կուզեմ երթալ:

Աղայիս խնդրեցի. - Ես չորս տարի աշխատել եմ, աղա՛, ինձի ազատիր:

Աղաս ըսավ. - Կազատեմ. հագուստներդ պիտի հոս թողնես:

Գնացի Սիրարփիհն ալ ուզեցի ինձի հետ տանել, չեկավ:

Մարդը ինձի տարավ հայկական որբանոց մտցուց, միսս, այսինքն՝ օրիորդ Կուշմենի մոտը:

Հոնտեղ ինձ լողացրին, հագցրին, ոտքիս մատը ծուռ էր, ոտքիս կոշիկ չէր մտնում, ոտքս բուժեցին: Հետո նոր միայն 1922 թ. հայերեն այբբենգիմը սորվեցա: Ամուսնացա: Ընտանիքի տեր դարձա: Հայաստան եկանք:

78 (78).
ՀԱԿՈԲ ԹԵՐՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ)

Ես արդեն յոթանասունհինը տարեկան եմ: Շապին-Գարահիսարեն եմ ես: Երբ կդիմադրեին թուրքերուն, ոմանց ջարդեցին, իսկ մեզ նման երեխաներիս տարին թուրքին որբանոցը: Մեզ մերկացրին, սուրը դրեցին վիզներուս: Զաբիթը սուրը քաշում է, մոլլան՝ ասում. «Քրիստոնյայի հավատքը թողնում եմ, մահմեդականություն եմ վերցնում»: Մեզ կրկնել կուտային ադ խոսքերը: Բայց թուրքական որբանոցի հայ տղաները բոլորն ալ հայերեն գիտեին: Մեր դասատուն քսանքսաներկու տարեկան մի սիրուն հայ աղջիկ էր: Ադ աղջկա հետ մի թուրք հրամանատար է ուզեցել ամուսնանալ, բայց ան երեք անգամ մերժել էր ու ըսել. «Քոք օլուր ըմ, թյուրք՝ օլմա՛մ». այսինքն՝ կեղտ լինեմ, թուրք՝ չե՛մ լինի: Հրամանատարը այդ որ լսել է, հանել է սուրը, մորթել է ադ մեր սիրուն դասատուին ու հրաման տվել. - Քանի որ բոք էր ուզում դառնալ, տարե՛ք, որբանոցի պետքարանը լցրեք անոր մարմնի կտորները:

Այդ որբանոցում մեզ դաս էին տալիս զինվորության, ասկյար ըլլալու մասին, իրենց կրոնի մասին: Երեք տարի մնացինք թուրքի որբանոցում: Հետո ամերիկացին էկավ, որբանոցներուն տեր դարձավ: Մեզ ալ բերեց Ամերիկա, լավ պահեց, մարդ դարձրեց...

79 (79).
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1898 Թ., ՍԵԲԱՍՏԻԱ)

Ես ծնվել եմ Սեբաստիայում, Զատիկեն քառասուն օր ետքը՝ Համբարձումի տոնի օրը: Տեր հայրը ինձ կնքելու ժամանակ հարցրել է իմ ծնված օրը և երբ իմացել է, որ Համբարձման տոնին օրն եմ ծնվել, ասել է. «Անունը իր հետ է բերեր» և անունս Համբարձում են դրել:

Հայրս՝ Կարապետը, թիթեղագործ էր, մայրս՝ Ոսկին, տնային տնտեսուհի էր, մեծ եղբորս անունը Հայկազ էր, փոքրը՝ Սուրեն, իսկ քույրս՝ Վարդանուշ: Ապրում էինք չափավոր կյանքով: Մեր Սեբաստիայում յոթ-ութ տարեկանեն դպրոց կերթայինք: Ես հազիվ այբուբենը սորված եմ:

Մայրս, որը շատ բարի և ազնիվ կին էր, շուտ մահացավ: Կհիշեմ ինձի չամիչով հաց տվին, որ ուտեմ: Ես ուրախացա, կերա, բայց էլ ուրիշ բան չեմ հիշում նրա հուղարկավորությունից: Հայրս երկրորդ անգամ ամուսնացավ:

Մեծ եղբայրս՝ Հայկազը, ինժեներ էր ավարտել, ճանապարհաշինարար էր: Թուրքական կառավարությունը նրան որպես մասնագետի տարավ Բեռլին-Բաղդադ երկաթգծի ճանապարհը շինելու, բայց նա այլևս ետ չեկավ, լսեցինք, որ սպանել էին:

Երբ մուսետիկը ձայն տվեց, որ հայերը թող պատրաստվեն տեղափոխվելու համար, թուրք ոստիկանները սկսան հրամայել. «Էրքէկլէր՝ բիր եանա, ավրադլար բիր եանա», այսինքն՝ տղամարդիկ մի կողմ, կիները՝ մի կողմ: Առույգ տղամարդկանց ուղարկում էին ռուս-թուրքական ճակատ՝ կռվելու:

Մեզ քշեցին ոչխարների պես, հանեցին մեր հարազատ տներեն, այգիներեն: Ընկանք ամայի անապատներ: Հարյուր տասը օր բաց երկնքի տակ քայլում էինք՝ գրեթե առանց հանգստանալու: Բաց երկնքի տակ էլ քնում էինք: Մերները և հիվանդները չէին կարող քայլել՝ կամ ճամփին էին մնում, կամ՝ ոստիկանը խփում էր ու սպանում: Մեզ անոթի քայլացնում էին, ջուր անգամ խմել չէին թողնում: Գրդերն ու չեչենները հարձակվում էին մեզ վրա, թալանում էին մեր ունեցածը, աղջիկներին ու հարսներին փախցնում էին: Շատ աղջիկներ ու կիներ իրենք իրենց ջուրն էին նետում: Տիգրիս ու Եփրատ գետերը լցված էին դիակներով: Կհիշեմ, երկրորդ մայրս հղի էր, նրան սպանեցին, սուրը կոխին փորին մեջը, պզտիկը դուրս հանեցին, սկսան խնդալ, որ տղա է, ու շպրտեցին գետնին: Ես այդ տեսարանը երբեք չեմ կրնար մոռնալ: Մենք իրար կորցրեցինք: Ես մինակ մնացի: Օր մը ավազի վրա պառկած էի՝ անոթի ու տկլոր, մի արաբ մարդ եկավ, մոտեցավ ոստիկանին, փող տվեց, ասաց. «Ես սրան տանեմ, ինձ մոտ թող աշխատի»: Առավ տարավ ինձ իր մոտ, որպես ծառա: Ես էդ մարդու մոտ չորս տարի էի անում: Էդ արաբը իմ կյանքը փրկեց: Ես միշտ օրհնում եմ նրան: Միշտ է, գոմում էի ապրում, անասունների հետ էի քնում, բայց կյանքս փրկված էր:

Արաբը ուներ երկու տղա, մեկ աղջիկ: Տղաները տնտեսությանը պիտանի չէին: Արաբը տեսնում էր, որ ես աշխատասեր եմ ու ընդիրված եմ իրեն, ան ինձ որդեգրեց, ձախ ձեռքիս վրա կապույտ թանաքով դաջեց, իմ անունը Ցյուրքի դրեց: Նա ինձ ասում էր. «Իմ տղաներից ես չեմ խերվել, քեզ պիտի կտակեմ իմ ունեցվածքը, դուն գյուղի տերը պիտի ըլլաս, եթե իմ մինուճար աղջիկս հետ ամուսնանաս»: Ինձ տարավ Հալեպ, հագուստներ գնեց՝ հագցրեց, կոշիկներ գնեց՝ հագցրեց: Կոշկակարը սերաստացի հայ մըն էր, ան ինձ օգնեց, ինձ հարցրեց.

- Սէն քի՞մ սըն (Դու ո՞վ ես):

- Բէն էրմէնի իմ (Ես հայ եմ):

Ադ հայ կոշկակարը կազմակերպեց, որ ես փախչեմ արաբի քովեն և չամուսնանամ անոր աղջիկին հետ:

1928 թ. ադ հայ կոշկակարին հետ ես փախա Ֆրանսա: Հոն հողագործ աշխատեցա: Մի օր պատահական մի մարդ հանդիպեցի, որը ինձ հարցրեց.

- Դուն Համբարձումը չե՞ս, Սուրենին եղբայրը չե՞ս մը:

- Այո՛, - ասեցի:

- Գիտե՞ս, Սուրենը ողջ է:

- Խե՞ղճ ես, ի՞նչ ես, աշխարհի վրա հայ մնացա՞ծ է, բոլորին ջարդեցին:

- Ի՞նչ կըսես, դեռ հայեր մնացած են, եղբայրդ՝ Սուրենը, Լիոն կբնակի:

Ադ մարդը, որի անունը Սարգիս էր, ինձի տարավ Լիոն, եղբորս մոտ: Տեսա՝ եղբայրս թիթեղագործ է, հորս պես, ես ալ հողագործ դարձա: Լիոնի մեջ բավական հայություն կար, կհավաքվեինք, ժողովներ կըննեինք: Ես ՀՕԿ-ի մասնաճյուղի անդամ, հետո՝ փոխնախագահ, վերջը ալ՝ նախագահ դարձա: Հայրենասիրությունը մեջս ինձի կայրեր և ինձի խորթ կուգար օտար աշխարհը: Ես միշտ կըսեի. «Լավ է ապրիլ խավարին մեջ, քան թե լուսավոր մթության մեջ»:

Որ մըն ալ ներգաղթի լուրը հասավ Լիոն: Ալ ուրախություննիս չափ չուներ: Հայաստանը մեզի կըկանչեր:

1947 թվին եկանք Հայաստան: Ամուսնացա բելանցի Թագուհիին հետ, ընտանիք կազմեցի: Ունեցանք մի տղա՝ Մկրտիչը և մի աղջիկ՝ Վարդանուշ անունով: Վարդանուշին անունը դրել եմ իմ վշտից: Քանի որ մի օր, երբ արաբների մոտ չորաս էի աշխատում, տեսա արաբները մի աղջկա էին մազերից քաշելով-քաշքրտելով տանում: Մոտեցա հարցրի՝ ինչի՞ց է մահացել: Ասեցին՝ սոված էր, գտանք, մեղքցանք՝ հաց տվինք, կերավ, ստամոքսը պայթեց «միդէ փաթլադը» (ստամոքսը պայթեց) ու մեռավ: Ես մոտեցա, որ դեմքը տեսնեմ, տեսա իմ Վարդանուշ քույրս էր: Ձոքեցի վրան, ասի. - Բու բէնիմ բաջը՛մ դըր (Սա իմ քու՛յրն է):

Արաբ տերս պատվավոր թաղում արեց: Անոր համար ալ իմ աղջկան անունը Վարդանուշ դրի, բայց երբ անոր անունը տամ՝ իմ խեղճ քրոջը կհիշեմ:

Երևանի մեջ շինարար եղա: Կոնյակի գործարանը, գինու գործարանը, Սունդուկյանի թատրոնը իմ տաշած քարերով են շինված, նաև Դվինի հյուրանոցը: Բայց Դվինի հյուրանոցի շինարարության ժամանակ ընկա, և ձեռքս կոտրվեց, այլևս չկարողացա քարտաշ աշխատիլ: Այնինչ, ես լավ, վարպետ քարտաշ էի և ճպարտ կզգամ ինձ, որ հայրենիքիս վերակառուցմանը ես ալ իմ բաժինը դրած եմ, «քար» մըն ալ ես եմ դրած:

Հիմա արդեն միայն գիշերները պահակություն կընեմ հուշանվերներուն ֆաբրիկայում:

80 (80).
ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ՍԵԲԱՍՏԻԱ)

Մեր Խոչհիսար գյուղը գտնվում էր Սեբաստիա (Սվազ) քաղաքից քսանհինգ կիլոմետր դեպի արևելք: Գյուղի միջով անցնում էր Սեբաստիա-Էրզրում (Կարին) գնացող ճանապարհը: Հաճախ հյուրեր էին լինում մեր տանը՝ պապիս մոտ: Ինչքան ես հիշում եմ, իմ պապերը բավական ազդեցիկ մարդիկ էին: Ունեինք երկհարկանի մեծ տներ, ունեինք նաև ամառանոց, անասնապահական յայլաներ՝ Սախար կոչված լեռնաճովիտներում, մեր գյուղից մոտ տասնհինգ-քսան կիլոմետր վերև: Երբ 1914 թվի օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, մեր գյուղի ժողովուրդը զբաղված էր բերքահավաքով, բայց մինչ այդ գյուղ հասնող հայերեն թերթերը վատ լուրեր էին հաղորդում: Օգոստոսի 2-ին մուսետիկները եկան մեր գյուղը, և մեր գյուղի գզիրը կտուրների վրայից սկսեց գոռալ. «Էհէ՛յ, սեֆերբերլիք է (զորահավաք). տասնութ տարեկանից մինչև քառասունհինգ-հինսուն տարեկան տղամարդիկ պետք է ներկայանան Խոչհիսար՝ արձանագրվելու»: Ես լավ հիշում եմ՝ ժողովուրդը խառնվեց. լաց, աղաղակներ ամեն կողմ: Նույն օրը արևը ուժեղ խավարեց՝ մոտ կես ժամ մթագնեց երկինքը: Սա ավելի սարսափեցրեց գյուղի ժողովրդին…

Հոռետեսության զգացմունքը պաշարեց բոլորին: Մեր գյուղի ճանապարհը դարձավ ավելի մարդաշատ՝ երկու կողմից էլ: Մեկ-մեկ թուրք ոստիկաններն սկսեցին կամայականություններ անել, անցնող զինվորներն ուտելիք էին պահանջում կամ օրը ցերեկով մտնում էին գյուղ, չէին գնում գիշերելու կենտրոն, այլ մեր տների վրա էին բաժանվում: Մեր գյուղացիները դիմեցին առաջնորդարան, չորս ոստիկան նշանակեցին մեր գյուղին պահակ:

Երկու ամսվա վարժությունից հետո թուրքական բանակները մեր գյուղի առաջով անցնում էին կանոնավոր, նվագախմբով: Թուրք հյուրերը գովեստով էին խոսում հայ զինվորների մասին, որ նրանք մարզանքը շուտ էին սովորում, զենքի տեխնիկային լավ էին տիրապետում և գովասանքի էին արժանանում հրամանատարության կողմից: Անցան օրեր, նոյեմբեր-դեկտեմբերի ցրտերը և անձրևները զինվորների մեջ առաջացրել էին անկազմակերպվածություն, շատերը սկսել էին բանակից փախչել, դասալքվել: Մեր գյուղից բանակ գնացողների համարյա հիսուն տոկոսը փախել և եկել էր գյուղ, թաքնվել էր գոմերում կամ գյուղի մոտակա քարայրներում. ո՛չ հարցնող կար, ո՛չ էլ փնտրող:

Այսպես անցավ երեք-չորս ամիս: 1914 թվի դեկտեմբերին հանկարծ գյուղում լուրեր տարածվեցին, որ Էնվեր* փաշան գալու է, և մեր գյուղացիները պետք է պատրաստեին ճանապարհը՝ մեր գյուղի հողի սահմաններում, մոտ չորս կիլոմետր երկարությամբ: Մի քանի օր հետո Էնվերի շքախումբը եկավ և կանգնեց մեր գյուղի արևմտյան ծայրին. երեք կառքեր՝ լծված չորսական ձիերով, երկու կողմերին՝ հետևից և առաջից, վեցական ձիավորներով շրջապատված, առաջից գալիս էր Սեբաստացի Մուրադի ** տասներկու հոգուց կազմված ձիու խումբը: Գյուղացիները շրջապատեցին շքախումբը: Ես էլ գնացի՝ հատուկ Էնվեր փաշային տեսնելու: Գյուղացիները աղ ու հաց բերին՝ Մուրադի ցուցմունքի վրա: Էնվեր փաշան կանգնեց կառքի վրա, ընդունեց թեփսիով աղ ու հացը, գլխով շնորհակալություն հայտնեց ժողովրդին, որ շրջապատել էր իր շքախմբին: Ես տեսա, թե ինչպես Էնվեր փաշան ափսեն վերցրեց և հյուրասիրեց իր շքախմբի անդամներին, բոլորին: Էնվերի պատվին ձիարշավ կազմակերպվեց մեր հանդամիջյան ճանապարհով: Ես տեսնում էի, թե ինչպես գնում էին ձիավորները դեպի Ալիս գետը: Հանկարծ ժողովուրդը պոռթկաց. «Մուրա՛դը, Մուրադի՛ Պեգաս ձին շահեց մրցումը»: Մրցող ձիավորները վերադարձան: Մուրադը մոտեցավ Էնվերին, նա կանգնեց կառքի վրա, ժպտաց, բեղերը շտկեց, Մուրադի ձեռքը սեղմեց ու կոնակը շոյեց: Ես կանգնել էի մի բարձր հողաթմբի, տասը քայլ հեռավորության վրա և ճայվածքս հառել էի Էնվեր փաշային, ուշադիր նայում էի՝ հետաքրքրությունից մղված: Ամեն ինչ լավ եմ հիշում, հիմիկվա նման: Եղանակը լավ էր: Էնվեր փաշան հագել էր կիսագինվորական հագուստ, գլխին դրել էր ֆես, ոտքերին ուներ երկարաճիտ փայլուն սաբոկներ, դեմքը կլոր էր, լայն, գեղեցիկ, համաչափ, միջակից բարձր հասակով, մի քիչ երկարած բեղերով, թավ հոնքերով և սև աչքերով: Առաջին կառքի մեջ նստած էր Վեհիբ փաշան***՝ իր օգնականներով:

Ձիամրցումից հետո Էնվեր փաշան կառքի վրա կանգնեց և տասը րոպե խոսեց հավաքված ժողովրդին: Հիմիկվա նման հիշում եմ նրա խոսքերը. «Հայ զինվորները լավ կռվում են իրենց օսմանյան հայրենիքի համար՝ վաթանին համար: Բոլոր ճակատներում, ամեն տեղ հայ բժիշկները և բուժքույրերը բուժում են մեր վիրավորներին: Հայ զինվորներից շատերը լավ են տիրապետում ռազմական տեխնիկային, դրա համար շա՛տ շնորհակալ եմ ձեզանից: Դուք էլ թիկունքում լավ աշխատեք, մեր բանակի սնունդը ապահովելու համար»: Երբ նա իր խոսքը վերջացրեց, Մուրադը ձիու վրա մոտեցավ նրան և սեղմեց նրա ձեռքը: Էնվեր փաշան Մուրադի կռնակը շոյեց և ցածր ձայնով մի բան ասաց նրան: Սուլիչը փչեց, կառքերը շարժվեցին: Էնվեր փաշան կառքի վրայից ձեռքը թափահարելով՝ անհետացավ:

* Էնվեր փաշա (1881–1922) – թուրք պետական և ռազմական գործիչ, Հայոց ցեղասպանության գլխավոր հանցագործներից:

** Սեբաստացի Մուրադ (Խրիմյան) (1874, Սեբաստիա – 1918, Բաքու) – ազգային ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի:

*** Թուրք զինվորական գործիչ, գեներալ:

Այսպես անցան օրեր, ամիսներ, և գյուղում բացառիկ ոչ մի բան չէր պատահել, միայն մեր գյուղացիները ոգևորվել էին, որ ռուսի զորքը շուտով կգա և կմտնի Սեբաստիա (Սվազ), բայց՝ իզուր. ռուսի զորքը չեկավ: Միայն գերիներ եկան: Մեր գյուղացիները հիասթափվեցին իրենց սիրտ, անհիմնաստ հույսերից և հույզերից:

Մի օր երեխաներով գյուղամիջում խաղում էինք, հանկարծ, այս անգամ արևելյան կողմից՝ Կապանից, չորս կառքեր սրարշավ եկան և կանգնեցին գյուղամիջում՝ ճանապարհի վրա: Ժողովուրդը վրա թափվեց իմանալու, թե՝ ի՞նչ է: Ես էլ վազեցի: Այս անգամ նույնպես չորս կառքեր՝ չորսական ձիեր լծված էին: Մուրադի խումբը կանգնել էր կառքերից հեռու՝ լուռ, տխուր: Կառապանները ձիերի սարքերն էին կանոնավորում, ձիերին էին կերակրում: Էնվեր փաշան էր վերադառնում Էրզրումից: Նա շատ զայրացած տեսք ուներ. կատաղությամբ նայում էր ժողովրդի կողմը, ոչ էլ խոսում էր իր կողքիններին հետ:

Ես անցա կառքերի ձախ կողմը ու մի հողաթմբի վրայից անվերջ նայում էի Էնվեր փաշային: Նա ջղային շարժումներ էր կատարում նստած տեղը: Աչքերը չոռեց և նայեց ինձ ատելությամբ: Ես սոսկացի նրա սև աչքերից: Նա յափնջու մեջ փաթաթվեց, մի գազանային-սարսափելի նայվածք գցեց կանգնած ժողովրդի վրա: Էնվեր փաշան առաջվա նման ո՛չ ողջունեց, ո՛չ մնաս բարով ասաց ու գնաց...: Սեյֆեի խանում կանգնում են հանգստանալու: Նա կանչում է Մուրադին և ասում՝ վերին աստիճանի զայրացած ու կատաղած. «Ձերոնք ա՛յ ինչեր են անում Կովկասում՝ ռուսի կողմը: Մենք ի՞նչ ենք ստորագրել ձեզ հետ 1908 թվին և 1914 թվին՝ Էրզրումում: Այդ բանը ձեր վրա թա՛նկ կնստի»: Մուրադը բաժանվում է խմբից վիրավորված և շատ տխուր: Նա ասում է, որ Էնվերը ինչ-որ կամավորների մասին էր բողոքել: Քանի որ մեր գյուղը գտնվում էր Սեբաստիայից (Սվազ) դեպի Էրզրում գնացող ճանապարհի վրա, ինչ-որ կատարվում էր երկրում, իմացվում էր շատ շուտով: Պոլիս գնալիս Էնվեր փաշան Սեբաստիա է հրավիրում վեց հահանգապետներին և հրահանգներ է տալիս նրանց. հայերին ինչպես կոտորել, ոչնչացնել՝ տղամարդկանց տեղում կոտորել, իսկ կանանց և երեխաներին՝ քշել դեպի Տավրոսյան լեռները, որից հետո՝ Արաբիայի անապատները, նրանց սովից, ծարավից, հոգնածությունից՝ բնաջնջել: 1915 թվի մարտի վերջերին սեբաստացի հահանգապետը (վալին) իր մոտ է կանչում Մուրադին: Մուրադը չի գնում, փախչում է լեռները. իմանում է նրա միտքը:

Մի առավոտ արթնացա, տեսա Մուրադը, տասներկու ընկերներով, մեր ամառային օդայում նստած ճաշում է. մայրս ճաշ էր հյուրասիրում նրանց: Նրանք տասը-տասներկու օր մնացին մեր տանը և հետո գնացին Խորոխոն գյուղի կողմը: Ապրիլի 11-ին (24-ին) մայրս իմ առաջը խառնեց մի քանի հորթ և երկու էշի քուռակ, ես տարա գյուղից վերև՝ ձախրին խառնելու: Հանկարծ մի ժանդարմա՝ քսան-քսանմեկ տարեկան թուրք տղա, իրանից մեծ մի հրացան ձեռքին, դեպի ինձ եկավ և հրացանը փորիս դեմ արավ: Ես վախից շշմեցի ու լաց եղա: Վերադարձա տուն, մորս պատմեցի եղածը: Չգիտեմ ու՞յն օրը, թե՞ մյուս օրը, գյուղի մեջ գտնվող տասը-տասներկու ժանդարմներ, մեր գյուղի տերտերին (Տեր Յուստոս կրոնական անունով)՝ Սարգիս Մազմանյանին, էշին հակառակ նստեցրած բերին մեր տունը: Տնեցիներին կոպիտ դուրս վռնդեցին, բայց ես դուրս չգնացի, բանի տեղ չդրեցին ինձ: Ես տեսա, թե ինչպես նալել էին տերտերի ոտքերը, գլխին տաքացրած երկաթե սաջ էին դրել, որը գլխի մազերը և մաշկը վառել էր, մորուքը փետրտված էր և ատամները քաշված էին: Ոստիկանները գազանաբար խփում էին տերտերին: Ծեծելով, բերին մորս, սյուների տակ փայտեր կիտեցին. - Այս տունը վառելու՛ ենք, - գոչում էին, - այս տան մեջ Մուրադի՛ն ես կերակրել, դու օրերո՛վ պահել ես նրա խմբին: Այս տան տեր Արամ Սարգսյանն իր ընկերների հետ մասուզերներով սա՛ր են բարձրացել: Գնացե՛ք, բերե՛ք մասուզերները և նրանց տեղը հայտնե՛ք մեզ:

Մայրս երդում-պատառ էր տալիս, որ ո՛չ մասուզերի մասին բան գիտի և ո՛չ էլ Մուրադի մասին: Ժանդարմներն անվերջ խփում էին մորս: Մայրս լաց էր լինում ու նրանց ասում. - Արամ Սարգսյանը քառասունչորս ոսկի բեդել է տվել, գնացել է սարը՝ մեր տավարը, ոչխարը պահելու:

Աբիգ Սարգսյան հորեղբայրս, որը գյուղի ռեսն էր, վազում էր այս ու այն կողմ, չէր թողնում որ ոստիկանները լուցկին վառեն և մեր տունը կրակի տան, չէր թողնում, որ մորս խփեն: Վերջապես փողի դիմաց մեր տունը չվառեցին, բայց խեղճ մորս տարան իրենց հետ: Խեղճ մորս բռնաբարել էին ամբողջ գիշերը և մյուս օրը նրան մահամերձ բերին տուն: Մենք երեխաներով լաց էինք լինում մորս շուրջը...: Մյուս օրը Քնարիկ քրոջս տարել էին, նա շատ գեղեցիկ էր և նոր ամուսնացած, նրան էլ մորս օրն էին հասցրել...

Գյուղում ժանդարմները տասը-տասներկու երեվելի մարդկանց հավաքել էին մի տեղ: Տասը օր ծեծում, տաք երկաթներով վառում էին նրանց մարմնի մասերը, եղունգները քաշում էին, տաք ձվեր էին դնում նրանց թևերի տակ, ի՛նչ սարսափելի բաներ ասես չէին անում այդ սրիկաները: Վերջապես նրանք այդ մարդկանց տարան իրենց հավաքած տասնյակ զենքերի հետ, ամիսներով չարչարեցին նրանց բանտում, հետո բերին մեր գյուղի առաջ գնդակահարեցին, երբ նրանք մահամերձ էին արդեն՝ ծեծից ու խոշտանգումից: Մայիսի վերջերին ճանապարհները լրիվ փակվեցին, ինչքան անասուն կար՝ կնքեցին, տաք երկաթներով համարակնքեցին, որպեսզի ճանաչվեին, որ հայերի ապրանք են: Խիստ հրաման եղավ հայերի գույքին, ապրանքին ձեռք չտալ, միայն և միայն սպանել հայ տղամարդկանց՝ տեղնուտեղը սպանել առանց խնայելու:

Կամաց-կամաց փոխեցին տեղական ժանդարմներին, նրանց տեղը Ալբանիայի կողմից գազանային կերպարանքով ժանդարմներ բերին: Լուրեր տարածվեցին, որ արդեն Պոլսից լիազորված հատուկ մարդ է եկել՝ Սըտկը բեյը, որը միայն և միայն հայերին կոտորելու համար է եկել: Մի օր ժանդարմները, Առնավուտ Հասան անունով ժանդարմի ղեկավարությամբ, հավաքեցին գյուղի հիսուն-վաթսուն տղամարդկանց, նրանց

թևերը կապեցին ու երեկոյան դեմ տարան գազանաբար սպանեցին: Մյուս առավոտ գյուղ եկան, կերան, խմեցին ու գնացին՝ նրանց հագուստները ձիերի վրա բարձած...: Մյուս օրը գյուղացիները գնացին, գտան նրանց դիակները՝ հոշոտված, այլանդակված, անճանաչելի դարձած: Ոչ ոք իր մարդուն չի՛ գտնում, չի՛ ճանաչում: Երկրորդ անգամ եկան, արդեն շատ քաղաքավարի, ըստ ցուցակի կանչում էին աչքի ընկնող մարդկանց. «Եկե՛ք, գնում ենք կամուրջներ, ճանապարհներ սարքելու, բա՛ն չկա»: Երեկոյան տարան. նրանց բոլորին սպանել էին Պուտնազի ձորում և դիակները ժայռից գցել էին ջուրը: Մեր գյուղի տղամարդիկ վերջացան: Այս անգամ սկսեցին բերել կենտրոնի բանտի կալանավորներին: Ոչ մեկի վրա կարգին դեմք չկար, որի՝ քիթը ջարդված էր, որի՝ աչքը հանված, ատամները թափված, ոտքը ջարդված, գլուխները ուռած, այլակերպ դարձած մարդիկ, որոնց օրերով, ամիսներով ծեծել, նալել, մսերը տաք երկաթով այրել էին, եղունգներն ու ատամները աքցանով քաշել: Այդ կիսամեռ ուրվականներին բերին մեր գյուղի առաջով անցկացրին: Վերջալույսի մոտ, նրանց կես ժամով նստեցրին մեր գյուղի առաջ՝ հուսալով, որ փող կշահեն...: Մեր գյուղի ժողովուրդը վրա թափվեց. ամեն ոք իր մարդն էր փնտրում: Ով գտնում էր՝ փաթաթվում էր իր հարազատներին, մի չտեսնվա՛ծ վայնասուն-ողբ էր բարձրանում: Լալիս էին կալանավորները, որոնց վրա ուժ չկար, հարազատները արցունքներն էին սրբում: Ես նայում էի նրանց, չէի իմանում՝ նրանք մեռած էին, թե՝ ողջ: Նրանք գնացին հեծկլտացող կանանց ձայների և ոստիկանների հարայհրոցի, հայհոյանքների, մտրակների շաչյունների, հարվածների տակ: Գնացին՝ մութ ձորում, խարույկների լույսերի տակ որպես անասուններ մորթվելու: Գնում էին բոլորը՝ լուռ ու գլխահակ: Գյուղը կարծես մթության մեջ ընդունեց մեռելային-գերեզմանային տեսք: Լալիս ու հեկեկում էին մարդիկ, կանայք, երեխաներ: Առավոտյան ժանդարմները եկան գյուղ՝ հավ, ոչխար մորթել տվին. մի լավ կերան, կշտացան, սպանված մարդկանց նոր, լավ հագուստները ձիերի վրա բարձած՝ գնացին:

Գյուղում հատ ու կենտ ծերեր մնացին միայն և տասնվեցից ցածր երեխաներ: Հինգ-տասը օր հետո եկան, մեկական սայլ ամեն մի դռան առաջ կանգնեցրին և հրամայեցին գյուղացի կանանց. «Ով ինչ ուզում է թող բարձի. գնում ենք Արաբիա՝ այնտեղ ապրելու»: Ամեն ինչ երեսի վրա ձգած՝ տուն, տեղ, անասուն, գույք, ճամփա ընկանք: Չտեսնվա՛ծ ողբերգություն. Դանթեի դժոխքը իջել էր գյուղի վրա: Երբ հասանք քաղաքի գլխավոր ճանապարհին, ծայր առավ քաղաքից եկող կառքերի, սայլերի և ձիերի քարավանը. ծայրը մեզ էր հասել, մյուս ծայրը քաղաքից դուրս էր գալիս: Բարձրից երևում էր քաղաքը, Ալիս գետի վրայի Սենեքերիմ թագավորի կառուցած ամրակուռ կամուրջը: Մարդկանց, սայլերի, կառքերի խառնաշփոթ մի հեղեղ պատեց ամբողջ սարալանջը: Մարդիկ չէին իմանում, թե ինչու՞ է այս զուլումը, ու՞ր էին գնում և ինչու՞... Կանանց, երեխաների լացը, ողբը խառնվել էր ոստիկանների, զինվորների գոռգոռոցներին և լպիրշ հայհոյանքներին:

Նրանք խփում էին կանանց, երեխեքին՝ աջ ու ձախ: Հանկարծ եկան տասնհինգ-քսան ձիավորներ, հրամայեցին՝ տարբեր կողմերից եկող բոլոր քարավաններին հավաքվել Ղարդաշլար սարի գագաթին՝ մի սարահարթի վրա: Նախ՝ գորգերը փռել տվին և սկսեցին փող հավաքել ժողովրդից. «Էֆ՛ հել, - գոռաց մի մարդ ձիու վրայից, - ո՞վ կալանավոր ունի քաղաքում բանտարկված, թող մեկ-երկու ոսկի բերի մարդագլուխ, վաղը նեթ ձեր մարդիկ այստեղ կլինեն՝ ձեզ մոտ»:

Կանայք սկսեցին փողեր բերել՝ տալով իրենց ամուսինների անունները: Մի ժանդարմ հսկա մի տետր ձեռքին, իբր թե գրում էր կալանավորի անունը, թաղը, տարիքը և այլն: Մի քանի ժամում խուրջինը համարյա թե լեցվեց փողերով: Երեկոյան նրանք խուրջինը բարձեցին ձիու վրա ու գնացին: Մյուս օրը, տասը ժանդարմներով շրջապատված, բերին մի խումբ մարդկանց՝ մոտ քսան-երեսուն հոգու: Բերին նաև նահանգում ճանաչված մեծահարուստ Խլխլիկին: Նա շատ գեր էր, նրան նստեցրել էին մի խոշոր սպիտակ իշու վրա: Ժողովուրդը վրա վազեց իրենց մարդկանց գտնելու հույսով: Ոստիկանները հետ քշեցին նրանց և մի շրջան կազմել տվեցին: Շրջանի մեջ ոստիկանապետը առաջինը կրակեց Խլխլիկի ականջի ետևին: Խլխլիկը փռվեց գետնին, արյան մեջ խոխոռում էր և ցնցվում: Ոստիկանները քա՛ռ-քա՛ռ ծիծաղում էին, ժողովուրդը սարսափահար շշմել էր ու լռել: Հետո առաջ բերին մյուսներին, ամեն հինգ-վեց հոգուն իրար մեջք գրկել տվին և կրակեցին, հետո փայտերով նրանց գլխներին խփեցին՝ մինչև որ նրանք անշնչացած պառկեցին, նրանց բոլորին շպրտեցին հեղեղատի մեջ, մի քիչ հող տվին վրաները ու գնացին:

Մյուս առավոտ, արևածագից առաջ, մեզ քշեցին դեպի հարավ, անցանք սարը: Մնա՛ս բարով հայրենիք՝ գնում ենք դեպի չարչարա՛նք, դեպի տառապա՛նք և մա՛հ՝ հետագայում ավելի հրեշային, ավելի անմարդկային դեպքեր դիմագրավելու: Մեր մահվանից առաջ գնում ենք դեպի մա՛հ, դեպի խա՛չելությու՛ն: Մնա՛ս բարով իմ հայրենի գյուղ: Իմ մանկական աչքերը տեսան քո սարերը հեռվից, տեսա բարձր Սախառ լեռը, որի հովիտներում ես անցկացրել եմ իմ քաղցրիկ մանկական օրերը: Էլ չե՛մ տեսնելու չքնաղ, զովալ, երկնագույն-կապտավուն գետակները, սվսվացող մշտական կանաչ կաղնու անտառները, էլ չե՛մ լսելու մայրական սրբազան կանչը, էլ չե՛մ լսելու ինձ հասակակից ընկեր տղաների ուրախ ճիչերն ու աղաղակները:

Մնա՛ք բարով, դուք, անթաղ, հոշոտված, կտորկտոր եղած մարդկային դիակներ. անթաղ մնացել եք բաց երկնքի տակ, գազանները ուտում են ձեր դիակները: Եկեղեցիների քաղցրահնչուն զանգերը չեն ղողանջելու այլևս: Դպրոցների դռները չեն բացվելու, հարսանիքներ, քեֆեր չեն լինելու: Մա՛հ, մա՛հ է սպասում բոլորիս՝ ծերին, մանուկին, նորահարսին, նորածին երեխային՝ խանձարուրի մեջ փաթաթված: Ի՞նչ է մեր բոլորի մեղքը, ու՞մ ի՞նչ էինք արել...: Անիծյա՛լ մանկություն, անիծյա՛լ աշխարհ, կործանվե՛ս դուն, փու՛լ գաս: Ի՞նչ է կատարվում մեզ հետ: Նորածիններին հենց առաջին օրերին շպրտեցին գետին՝ մայրերին

արտամորմոք լացացնելով: Նորածինը ի՞նչ մեղք ուներ, երբ նա դեռ չէր գիտակցում ո՛չ մարգարեի, ո՛չ Հիսուսի, ո՛չ Աստծո գոյությունը: Ի՞նչն էր նրանց մեղքը՝ չհասկացա:

Երկու օր մեզ պահեցին Ղարդաշլար սարի գագաթին, բավականին փող հավաքեցին ժողովրդից: Առավոտյան շուտ, արևածագից առաջ մեր սայլերը, կառքերը սկսեցին շարժվել ներթով դեպի հարավ՝ սարն ի վար: Սայլերը, կառքերը հեղեղի նման իջնում էին ցած, նրանց ձայները խառնվում էին մարդկանց լացի, կոծի ու հեկեկոցների ձայներին: Կանայք, ծերեր, երեխաներ՝ մանկահասակ և ծծկերներ մորերնուն գիրկը՝ սայլերի, կառքերի երկու կողմերին քայլում էին՝ հետիոտն, գլուխները կախ, աննձայն: Ոստիկանները գազազած ոչ ոքի չէին թողնում ննստել կառքերին, սայլերին: Նրանք մի բերան գոռում էին. «Սա պետական ապրանք է, իսկ դուք ոչ-ցանկալի՛ ժողովուրդ, մարդի՛կ, գնում եք մեռնելու՛, աննետաննալու՛»: Որոշ տարածություն գնալուց հետո ջահել աղջիկներ և երեխաներ սկսեցին լաց լինել, տրտնջալ: Ամառային հուլիսյան արևը անգթորեն վառում էր գեհիթից: Խմելու ջուր էին ուզում, հաց էին ուզում, տանջվում էին հոգնածությունից: Գնում էր ժողովուրդը՝ գլխահակ, տխուր: Չէր իմանում՝ ինչու՞ է գնում, ու՞ր է գնում, ի՞նչ էր իր մեղքը, ու՞մ ի՞նչ էր արել: Երկար գնալուց հետո երեկոյան դեմ վերջապես իջևանեցինք մի աննշան, ամայի խանի առաջ, որը կոչվում էր Թեհիրի խան: Մոտիկ ձորի մեջ ջուր կար: Կանայք սկսեցին ճաշ եփել իրենց մոտ մնացած մթերքից: Այդ օրը արտակարգ ոչինչ չպատահեց քարավանի հետ: Եզները, ձիերը մի կերպ արածեցին, կշտացան: Այդտեղից ճանապարհվեցինք: Արևամուտից առաջ, երեկոյան հասանք Ղանդալ շրջկենտրոնը, որտեղի հայերը դեռ չէին աքսորվել, և նրանք մեզ հաց, ուտելիք բերին: Նրանք լացով ու կոծով դիմավորեցին մեր քարավանը՝ սպասելով իրենց չար բախտին: Մեր հաջորդ՝ երրորդ կանգառը եղավ Խըրխի խանը, մի գետի վրա, որի ձախ կողմում մի թուրքական գյուղ էր, իսկ աջ կողմում՝ բերքառատ, իր ցորենով հայտնի հայկական Ուլաշ գյուղը:

Այստեղ լավ հանգստացավ ժողովուրդը, եզները լավ արածեցին, վրանները ուժ եկավ: Չորրորդ օրը հասանք Մանջըլըկ հայկական գյուղը. գյուղը անմարդաբնակ էր: Լքված տների պատուհանները մեզ նայում էին դժոխքի սատանաների նման: Մյուս օրը անցանք Քյոթու խանի առաջով և հինգերորդ օրը հասանք մարդկային սպանդանոց՝ Հասան Չելեպի կոչվող գյուղաքաղաքը: Սա մի վայր էր, ուր ոճրագործությունն իր գագաթնակետին էր հասել: Սեբաստիայի սահմանն անցել էինք. գտնվում էինք Խարբերդի նահանգի և քրդական սահմանում: Խիստ հրաման կար՝ ոչ մի արու մարդ չպետք է ողջ անցներ այդտեղից: Բոլորին հավաքել և սպանել էին անխտիր: Դրա համար էլ այդտեղի ձորերը լիքը էին դիակներով: Մեր սայլերը խառնիխուռն կանգնեցին գյուղի առաջ: Չորս կողմն անտառ էր, մեջտեղով հոսում էր մի գետակ, օդը շատ զով էր և հաճելի: Հանկարծ գետի մյուս ափին նկատեցինք դիակներ, որոնք ցաք ու ցրիվ պառկել, թե փռվել էին. երիտասարդներ, ծերեր, մանուկներ, կանայք: Հորեղբորս կինը ուզեց գնալ, տեսնել, երկու զաբիթներ չթողեցին և սկսեցին գոռալ. «Հե՛յ, քավթառ գյավու՛ր, ի՞նչ ես նայում. շուտով դուք էլ կհասնեք այդ մարդկանց օրին»: Երեկոյան եկան մի քանի ոստիկաններ՝ քրդերի հետ, հավաքեցին մեր քարավանի միջի տղամարդկանց, տղաներին և ծերերին, տարան լցրին հարյուր-երկու հարյուր հոգուն մի նեղ, խարխուլ շենքի մեջ. ո՛չ նստելու, ո՛չ էլ կանգնելու տեղ կար: Կեսգիշերին նրանց շարան-շարան տարան դեպի լեռների կողմը: Մյուս առավոտ հանկարծ մի երիտասարդ տղա, գլուխը վեր պահած, կիսամերկ, արյունլվա նստեց իր ծանոթների մոտ: Ես մոտ գնացի, նայում էի նրան ու հիշում մեր գյուղի մարդկանց: Գիշերը խմբով նրանց տարել էին մի սարի գագաթը, բոլորի գլուխները կացնով կտրել ու շպրտել ձորը: Իր վիզը կացինը խորը չէր կտրել, և ինքը դիակների մեջ մնացել էր մինչև առավոտ: Հետագայում ես չիմացա, թե ի՞նչ եղավ այդ երիտասարդը: Հասան Չելեպիից դուրս եկանք: Սկսեցին արդեն տղամարդկանց, կանանց, երեխաների դիակներ երևալ, մանավանդ՝ կանանց, որոնք մերկ, ուռած վիճակում էին: Հեռվում մի կամուրջ երևաց, հանկարծ շշուկներ տարածվեցին, թե անխնա մեզ բոլորիս կոտորելու են այդ կամուրջի վրա: Սկսեցին ի հայտ գալ քրդեր՝ ձեռքներին կացիններ, դանակներ և զենքեր: Հորեղբորս կինը հևհևին վազեց մի ժանդարմի մոտ, երկու ոսկի դրեց նրա ձեռքը և ասաց, որ մենք թուրքանալ ենք ուզում, մեզ տանի այդ գյուղը: Ժանդարմը հանգիստ մեզ ասաց. «Մի՛ վախեցեք, դուք պետք է թուրքացած լինեիք վեց ամիս առաջ, բայց մի՛ վախեցեք, ես ձեր քարավանը ազատ կերպով կանցկացնեմ այդ կամուրջով»: Հասանք կամուրջին, ցածում իրար վրա կիտված դիակնե՛ր, դիակնե՛ր, կանայք՝ մերկ, տկլոր՝ փռված գետի ջրի մեջ: Քրդերը հարձակվում էին գաղտնի մեզ վրա, սպառնում էին դանակներով և մեր վրայի հագուստը հանում ու փախչում: Մեզ ընկերացող ժանդարմները մե՛րթ առաջ էին գնում, մե՛րթ հետ էին գալիս, կրակում էին՝ յա բախտի: Երեկոյան հասանք Հեքիմ խան: Դա մի չտեսնված գեղեցիկ հովիտ էր՝ կանաչների մեջ կորած: Հանկարծ գետի մյուս ափին նկատվեց մի կնոջ արտակարգ ուռած դիակ, մեր տեղից պարզ երևում էր նրա ամոթը՝ մազոտ ճեղքվածքի նման: Կանայք լացակումած անիծում էին պատճառ հանդիսացողներին և նրանց, ովքեր այդ կնոջն ու նրա նմաններին այդ օրին էին հասցրել:

Առավոտյան Հեքիմ խանից դուրս եկանք և շարունակեցինք ճանապարհը, նույն ճակատագրով, ինչպես նախորդ օրերը: Քրդե՛ր, քրդե՛ր ամեն կողմ, փորձում էին կողոպտել, թալանել, սպանել ժողովրդին: Ժանդարմները կրակում էին, կանայք օգնության էին կանչում, սայլերը գնում էին, մե՛րթ իջնում, մե՛րթ բարձրանում: Ահա մի պառավ կին ընկավ սայլից, վերջից եկող սայլերը տակով տվին նրան, նրա աղջիկը լալիս, գոռում էր. «Վա՛յ, մայրիկ ջան, այսպե՞ս պիտի լիներ քո մահը», համբուրում էր հոգեվարքի մեջ գտնվող մոր երեսները ու ճանկռում էր իրեն:

Սարերը, անտառները մեր ետևում մնացին: Երեկոյան աջ թեքվեց մեր քարավանը՝ երկու գետերի խառնված վայրում: Խմելու մաքուր ջուր չկար, գետակները լիքը էին հոտած, լնկած դիակներով: Մութը վրա հասավ, քնեցինք ծարավ՝ ջրի կարոտով: Հանկարծ ժանդարմներ եկան, հավաքեցին հատուկենտ մարդկանց ու տարան, առավոտյան բերին և մեր աչքի առաջ գնդակահարեցին նրանց: Այդ օրը ժամանեցինք Մալաթիայի անջրդի Սուսուզ օվայ լերկ, բուսականությունից զուրկ մի դաշտ: Մյուս առավոտ ժանդարմները ավելացան, սայլերը խառնիխուռն քշել տվեցին, իրենք էլ երկու կողմից պաշտպանում էին մեզ վխտացող քրդերից: Անտանելի շոգ էր: Ժողովուրդը պապակվում էր ծարավից: Ճանապարհի երկու կողմերին, առուների, անձրևաջրերից գոյացած լճակների մեջ հոտած, լնկած դիակներ էին իրար վրա կիտված: Վերջապես քարավանը հասավ Խըրխ գյոզ գետի կամուրջի մոտ, ուր խմբված էին թուրքերը: Դրանցից մեկը բարձրացավ առաջին սայլին և գոռաց. «Էհե՛յ, գյավուրնե՛ր, ով փող չի բերի՝ ամեն սայլի համար մի ոսկի, նրա սայլը գցելու ենք ջուրը»: Աղմո՜ւկ, աղաղա՛կ ամեն կողմ: Վերջապես քարավանը անցավ և կանգնեց մի խանի առաջ, ուր իջևանել էին մեզանից առաջվա քարավանները: Այստեղ մեզնից առաջ Էրզրումի խոտըրջրեցիներին ջարդել էին: Մեզ նեղություն չի տվեցին: Երկու օր հետո հասանք Ֆըրնջըլար գյուղը, որը մի փոքրիկ, աննշան գյուղ էր, բայց հայ ժողովրդի պատմության մեջ դարձավ նշանավոր: Այստեղ մեր սայլերը, կառքերը վերցրին: Ըստ պետական ծրագրի, ժողովուրդը ոտքով պիտի բարձրանար երեք հազար ինը հարյուր մետր բարձրությամբ Տավրոսյան սարերը: Հարյուր հազարավոր քարավաններ գալիս էին այստեղ և գըտնում էին իրենց խաչելությունը, գնում դեպի մահ: Կանայք, մանուկներ, նորածին ծծկեր երեխաներ լքվում էին՝ անտեր-անտիրական: Այստեղ մնաց Քնարիկ քույրս՝ իր ծծկեր երեխայի հետ. հիվանդ էր, չէր կարողանում քայլել: Ֆըրնջըլա՜ր, Ֆըրնջըլա՜ր. լքված երեխաներ, ծեր-անտեր կանայք, հիվանդներ՝ այս ու այն կողմ պառկած, հոգեվարքի մեջ, լնկած դիակներ՝ փալասների տակ կամ առուների մեջ: Մի առավոտ ժանդարմները քյուրդ ամբոխի հետ եկան մեր քարավանը գաղթեցնելու: Ժողովուրդը դժկամում էր. չէին ուզում գաղթել: Ծեծ, հայհոյանքներ, լաց, աղաղակ, երեխաների ճիչեր: Կանայք շալակել էին իրենց երեխաներին: Հասանք լեռան ստորոտը, շոգ արևը վառում էր: Ջուր չկար, ժողովուրդը հոգնել էր: Մեզ մոտիկ մի կին իր փոքրիկ երեխային շպրտեց գետնին ու գնաց. երեխան օրորվում, լաց էր լինում: Ես նայեցի նրան մի քանի րոպե ու գնացի: Որոշ տեղ բարձրանալուց հետո, մի ձորակի մեջ հայտնվեցին երեխաների և ծեր կանանց մարմիններ՝ բոլորովին մերկ՝ ողջ և մեռած: Ողջերը մեզ էին նայում հոգեվարքի մեջ, նվաղկոտ աչքերով. նրանց լրիվ մերկացրել էին, նրանց մարմինների բոլոր անդամները երևում էին արևի ճառագայթների տակ: Բավական բարձրացանք: Մի հսկա ժայռի տակ սառնորակ աղբյուր կար, ժողովուրդը խմեց ագահորեն այդ աղբրի ջրից, կազդուրվեց կարծես թե: Մայրըս չդիմացավ. ուժասպառ ինկավ, մեռավ: Կանանք վրա թափվեցին, նրա վրայի ոսկիները վերցրին ու հեռացան: Մենք լալիս ու լալիս էինք անվերջ: Երբ հասանք լեռան գագաթը, կանանց մեջ փսփսուքներ տարածվեցին՝ տղաներին հավաքում, սպանում են: Մեր մոտից մի տասնվեց տարեկան տղա փախավ, քույրը վազեց, թե՝ եղբայր, մեզ փող տուր: Տղան տվեց փողը ու գնաց: Քույրը լաց լինելով գոռում էր. «Հո՛րս, մո՛րս մորթեցին մեր գյուղում, միակ եղբայրս էլ գնաց, անիծվե՛ս, աշխա՛րհ, անիծվե՛ք, մարդի՛կ, բոլո՛րդ»:

Մի գետի մոտ նորից քարավանը կանգ առավ՝ հոգնած, բեզարած: Այդ երեկո ոչ մի բան չպատահեց մեզ: Նրանք, որոնք հարազատներին թողել էին ճանապարհին, լաց էին լինում աղիողորմ ճիչերով, հեծկլտոցներով...

Գիշերը քնեցինք: Հաջորդ օրը եկան քրդերը, հետները հայտնի Ջեյնալ բեկն ու եղբայրները՝ սրիկա դահիճները...: Նրանք քարավանի միջից ինչքան փոքրիկ տղա գտան, հավաքեցին, թևերը կապեցին ու տարան հեռու սարի գագաթը, ուր վառվում էին թեժ խարույկները: Այնտեղ նրանց գլուխները կացիններով կտրեցին ու շպրտեցին ձորը. այդպես էին արել նախորդ քարավանների երեխաներին: Դրա համար էլ այդ ձորը կոչվեց Արյան ձոր՝ Քանը դերե: Մերոնք ինձ փալասների տակ պահել, վրաս նստել էին. շունչս կըտըրվում էր, ուժասպառ էի լինում, մի կերպ դուրս պըրծա, ինձ չգտան: Լեռնային մի չտեսնված զովաշունչ գիշեր էր: Լուսինը պարզ արևի նման փայլում էր երկընքում, աստղերը պսպղում էին պայծառ լույսով: Այս տեսարանի հետ իմ շուրջը սկսվեց մի սարսափելի ողբերգական տեսարան: Կանայք իրենց զավակների հետեվից լաց էին լինում, լացակումած աղաղակներով անիծում էին իրենց բախտը. աղմո՜ւկ, աղաղա՜կ, ճիչեր, լացի ձայներ, գոռոցներ՝ խռպոտ ձայներով. «Հե՛յ, աչքերդ քոռանա՛, ու՞ր եք կորել, ինչու՞ չեք գալիս մեզ օգնության: Աստվա՛ծ, լուսի՛ն, աստղե՛ր, չե՞ք տեսնում կատարվածը, ու՞ր մնաց մեր պաշտած Աստվածը, Հիսուսը: Ու՞ր մնացին մեր պոռոտախոս, գարշելի մարդիկ, ու՞ր մնացին անհմաստ մեր փեղայիները: Փու՛լ գաս, աշխա՛րհ...»: Ես չէի կարողանում քնել այս աղմուկի տակ. միտք էի անում ինձ ու ինձ և հիշում էի ամեն ինչ...: Այդտեղից գնացինք, Ջեյնալ բեկի ապարանքի մոտ, մի կանաչավուն գետնի վրա իջևանեցինք: Քրդերն այլևս նեղություն չէին տալիս մեզ: Մյուս առավոտ, երբ ճանապարհվում էինք, ես նկատեցի, որ կանայք իրենց փոքրիկ երեխաների ձեռքերից բռնած քաշեքաշ տանում էին պարսպապատ շենքի կողմը, երեխաները ետ էին ընկնում, չէին ուզում գնալ, մայրերը դառնագին լաց էին լինում. երեխան լեղապատառ ճիչով գետին էր տապալվում, մայրը գրկում, վերցնում ու տանում էր, երեխան գոռում էր. - Չե՛մ գնա:

Մայրը թե. - Ի՞նչ անեմ, յավրու՛ս, փարա չունիմ, հալ չունիմ քեզ գրկելու, շալակելու: Ամեն ինչ կորա՛վ, փու՛լ գաս, աշխա՛րհ, - գրկեց երեխայի մեջքից, տարավ շպրտեց պարիսպից այն կողմ՝ այգին: Պարիսպը դրսի կողմից ցածր էր, իսկ ներսի կողմից բավականին բարձր: Ես վազեցի, այդ պարսպից ցած նայեցի. կանաչ խոտերի վրա պառկել էին հարյուր - երկու հարյուր երե-

խաներ՝ մեռած, կիսամեռ, ողջեր. կային կանայք իրենց երեխաների հետ, ոմանք՝ մեռած, ոմանք՝ դեռ ողջ, հոգեվարքի մեջ տառապում էին: Նրանք իրենց ծծկեր երեխաները գրկներին ուժասպառ, գունատ սպասում էին իրենց մահվան: Մի երեխա իր մեռած մոր ստինքն էր ծծում, դարձավ՝ ինձ նայեց, վա՛յ այդ նայվածքը: Նոր ճետված երեխաներից մի քանիսը երբ ինձ տեսան, վազեցին դեպի պատը, երևի ազատվելու հույսով...: Ես կիսախելագարված ցած իջա պատից ու վազեցի քարավանի ետևից: Հիշում եմ այդ սրտաճմլիկ տեսարանը մինչև այսօր: Ա՛յ տխմար ազգային գործիչներ, ձեր ի՞նչ գործն էր Հայկական հա՛րցը, ազատագրական շարժում կոչեցյա՛լը, Եվրոպայից հույս ակնկալե՛լը, Ռուսաստանից եկած ստահակներին հավատ ընծայե՛լը, ձեր ի՞նչ գործն էր Ռուսաստանի կողմից կամավորներով կռվե՛լը: Ի՞նչ արիք. վեց հարյուր տարի ապրող ժողովրդին բնաջնջել տվիք ձեր ապիկար գործունեությամբ, այժմ հայի հետքն անգամ չմնաց Թուրքիայում: Կորաք իսպառ:

Հաջորդ օրն անցանք ապառաժոտ ձեղ արահետներով, որտեղից անցնելը շատ դժվար էր: Շատերը ցած գլորվեցին, մանավանդ հասակավոր կանայք, որոնք ուժ չունեին քայլելու: Իջանք ձորը. մի չտեսնված արագահոս գետ էր, անցնել հնարավոր չէր: Ժանդարմները մեզ հրամայեցին՝ անցնե՛լ գետը: Ահավոր հոգնած, ուժասպառ էինք եղել բոլորս: Մի քանիսը փորձեցին մտնել ջուրը. նրանք ճչալով քշվեցին հոսանքն ի վար: Ոմանք ձի վարձեցին, ոմանց էլ քրդերն էին անցկացնում փողով: Գետի մյուս ափին իջևանեցինք ավազոտ սարի տակին: Մյուս օրը նորից ճանապարհ ընկանք, ժողովուրդը չէր կարողանում բարձրանալ ավազոտ սարը: Բարձրանալիս սահում, ընկնում էինք, հետ իջնում: Քյուրդ կանայք մեզ անտառի միջով մի ճանապարհ ցույց տվին, որով գնացինք առանց վախի: Անտառում մի քյուրդ մարդ հորեղբորս տղայի մեջքի գոտին ուզում էր խլել, սուրը քաշեց նրա վրա, հորեղբորս տղան՝ Ժիրայրը, մի ցավագին ճիչ արձակեց, գոտին տվեց քրդին: Բայց ինքը վախից մահացավ մեկ օր հետո: Վերջապես հասանք Ադիյամանի բերդը: Մի աղբրի մոտ ուզում էի ջուր խմել, մի քյուրդ մարդ մոտեցավ, փայտի մի ուժեղ հարված հասցրեց գլխիս, շալակիս շորերը առավ ու գնաց: Վերջապես գաղթականները տեղեր գրավեցին այս խոշոր բերդի մեջը, որը տեղ-տեղ երկրաշարժը ավերել էր: Մեզ բերդը լցրին ու դռանը պահակներ դրին: Հանկարծ կանայք նկատեցին բերդի աջ կողմում դիզված դիակները: Դիակները լեցված էին ձորում, գետակի ափին: Երկու օր հետո մեզ բաց թողին բերդից. քրդերը բերքահավաքի էին, չէին եկել մեզ ջարդելու: Այսպիսով ազատվեցինք ջարդից. յա բախտի: Փայտի հարվածից բերդում աչքերս սկսեցին ցավել: Ամբողջ գիշեր չկարողացա քնել. մի կոշտ բան խփում էր միշտ աչքիս, աչքս չէի կարողանում փակել: Էշի կաթ կաթեցրին և ծեծած չամիչ կապեցին, լավացավ կարծես թե, բայց լավ չէի տեսնում:

Բերդից հետո անցանք մի հին կամուրջ և սկսեցինք բարձրանալ մի թեք լեռ: Շատերը ճանապարհին մնացին, չէին կարողանում բարձրանալ թեք սարի լանջը: Վերջապես հասանք սարի գագաթը: Մի սիզապատ բարձունքի վրա, սեզերի վրա փափուկ քնեցինք այդ օրը: Երեկոյան սկսեցին գոռալ. «Քաղաքացինե՛րը բաժանվե՛ք գյուղացիների՛ց»: Քաղաքացիները իջան ցած: Երեկոյան նրանց վրաները ստուգեցին. փող էին ման գալիս: Հետո ինչքան հարս, աղջիկ կար՝ տարան հետու մի շենքի կողմը: Քարավանի մեջ սկսվեց լացուկոծը. նրանց տարել և բռնաբարել էին մինչև լույս: Մյուս օրը բերին նրանց, հանձնեցին մայրերին:

Սա մեր վերջին սարն էր. այս բարձունքից երևում էր հետու՛-հետու անապատը, ցածում՝ օվկիանոսի ջրերի նման կարծես թե ալեկոծվում էր: Երևում էին քաղաքներ և հետավոր գյուղեր, երևում էր Ադիյամանը: Այստեղից մի օր գնալուց հետո երևաց այգիների մեջ կորած Ադիյամանը՝ Մ'իսաք Մ'անուշյանի* ծննդավայրը: Ադիյամանի կանաչ այգիների մեջ մի քիչ կարծես հանգստացանք: Տեղի հայերը հաց բերին, մեզ բաժանեցին: Երկու օր մնալուց հետո մեզ նորից քշեցին, մեզ հետ՝ Ադիյամանի ողջ հայությանը: Վերջացան Տավրոսյան գեղեցիկ ու դաժան լեռները: Ահա զովաշունչ լեռներից իջնում ենք ցած, շոգը խեղդում է մեզ: Մ'եր ետևում մնացին քսան-երեսուն տանջալի, տառապալի, մահագույժ օրերը: Մ'եր քարավանը, որը կեսից էլ պակաս էր մնացել, իջևանեց Սամոսատից հարավ՝ Եփրատ գետի ափին: Ամեն կողմ դիակնե՛ր, դիակնե՛ր, մեռած կանայք, երեխաներ ամեն կողմ պառկած ցաք ու ցրիվ, արտերի մեջ, ավազների վրա, ամեն կողմ կիսամեռ հիվանդների տնքոցներ, աղերսագին օգնություն խնդրող նայվածքներ, նրանց կողքին՝ հոտած, փտած, ուռած, լխկած գարշահոտ դիակներ, մեծ մասամբ կանանց. Դանթեի Դժոխքը Եփրատի ափին էր: Ժողովուրդը Եփրատ գետի ջրով լվացվեց: Ինչ որ ճարել էին՝ կերան, փափուկ ավազի վրա քնեցին՝ լուռ, հանգիստ: Վշտի խուլ հեկեկոցները կամաց-կամաց մարեցին, ամեն ինչ խաղաղվեց կարծես, լուսինը չքացավ երկնքից լեռների ետև: Ժողովուրդը հոգնած, ուժասպառ եղած էր: Հանկարծ մթության մեջ թուրք ժանդարմներ, բռնի բերված քրդերի հետ, վայրագորեն մտան գաղթականների շարքերը, տրորելով քնած մարդկանց, մեռածներին, հիվանդներին, աջ ու ձախ սկսեցին խուզարկել բրտորեն. հավաքում էին փոքր երեխաներին: Ժողովուրդը սարսափահար քնից արթնացավ: Ահաբեկված, սկսեցին իրար խառնվել, աղմուկից մենք էլ արթնացանք ու սկսեցինք աջ ու ձախ նայել ապշահար՝ թե ի՞նչ էր կատարվում մեր շուրջը: Հանկարծ մի հսկա քյուրդ ածդահա ինձ նկատեց փալասի տակ, եկավ դեպի ինձ, քաշքշեց, աջ թևը գցեց մեջքիս, վերցրեց ինձ ու տանում էր: Մ'երոնք սարսափահար սկսեցին ճչալ, լաց լինել, հորեղբորս աղջիկը փորձեց մի կերպ ինձ ազատել քրդի ճանկերից, բայց իզուր. քյուրդը ինձ թողեց ու նրան հրեց, գցեց գետին, նորից ինձ վերցրեց ու տանում էր: Տանելու ժամանակ մեջքս այնքան ուժեղ էր սեղմում, համարյա կողերիս ոսկորները ջարդվելու

* Միսաք Մանուշյան (1906, Ադիաման – 1944, Փարիզ) – հայ բանաստեղծ, ֆրանսիական Դիմադրության շարժման գործիչ:

էին, շունչս կտրվում էր: Մի քիչ տանելուց հետո նա հոգնեց, ինձ վայրենաբար շպրտեց գետին և հրամայեց քայլել իր առաջից: Ճանապարհին ուրիշ քրդեր նույնպես բերում էին երեխաներ: Մեզ տարին վառվող խարույկների շուրջը, ուր արդեն հավաքել էին հարյուր հիսուն-երկու հարյուր երեխաներ և չորս ծերունիների: Ես չհասկացա, թե ինչպես այս ծերերը հասել էին այստեղ. հրա՛շք էր, իրոք որ:

Ժանդարմները՝ ութ-տասը հոգի, սվինավոր հրացաններով եկան, հետները տասնհինգ-քսան քրդեր, մեզ շրջապատեցին, ննջեցրին մի ավազոտ թմբի վրա՝ շարք-շարք, ըստ տարիքի, հասակի: Մի կին եկել էր փոքրիկ տղուն ազատելու: Ժանդարմներից մեկը, կոպիտ հայհոյելով նրան, հրեց և գցեց փոսը: Նա վեր կացավ աղիողորմ ճչալով «Հասե՛ք, երեխաներին մորթու՛մ են»: Հանկարծ, մթության մեջ, հազարավոր կանանց խուլ ձայնը բարձրացավ դեպի երկինք: Ժանդարմների պետը հրամայեց կրակել դեպի ժողովուրդը: Նրանք վերցրին հրացանները և կրակեցին դեպի ժողովուրդը. այլևս կանանց ձայներ չլսվեցին, միայն խփվող կանայք լաց էին լինում: Խարույկների կրակները թեժացրին, կանգնեցրին չորս ծերուկներին: Ժանդարմը հրամայեց ծերուկներին. - Թիկն տվեք, թիկն, - նրանք չորսը թիկն տվին, կանգնեցին՝ մեկ մեկու մեջքը գրկած:

Մի ժանդարմ վերցրեց հրացանը, ուզում էր կրակել, վերջի ծերուկը հրացանը մի կողմ հրեց և սկսեց աղաչել. - Մենք ծե՛ր ենք, մենք ոչի՛նչ չենք արել, ի սե՛ր Աստծո, մեզ մի՛ սպանեք:

Ժանդարմը գոռաց. - Դուք ծեր եք, ոչինչ չեք արել, բայց դուք էլ եկեղեցիներում աղոթել եք ձեր Աստծուն, որ ռուսը գա, Թուրքիան խորտակվի, Անդրանիկի սուրը կտրուկ լինի՝ թուրքերին լավ ջարդելու համար, - ժանդարմը կրակեց, չորս ծերերը միասին տապալվեցին գետնին: Կանգնած քրդերը փայտերով սկսեցին խփել նրանց քթին, բերնին, գլխներին, մինչև որ նրանք անշնչացան: Թոկը գցեցին վզները, քրդերը քաշ տվին դեպի մոտակա Եփրատ գետը: Հերթը հասավ երեխաներին: Առաջին շարքից բերում, կանգնեցնում էին երեխային, քրդերը դանակներով խփում էին նրա կռնակին, փորին, մինչև որ պառկած երեխան անշնչանում էր, նրան թոկով քաշում, տանում էին Եփրատ գետը: Այսպես երկու-երեք, թե չորս ժամ: Հերթը հասավ մեր շարքին: Քրդերը մեր վերևը կանգնած հսկում էին: Արդեն սպանել էին մոտ երկու հարյուր երեխա: Մի ժանդարմ դանդաղ եկավ մեր կողմը և գոռաց. - Ռա՛դ եղե՛ք, գնացե՛ք:

Մենք խմբով վազեցինք, խառնվեցինք ժողովըրդին: Հարսիկս արթնացավ, ինձ պառկեցրեց: Կեսգիշերին մի տղա, հանկարծ, թաց շորերով եկավ կանգնեց յուրայինների վերև անվերջ կրկնելով՝ Փա՛ռք քեզ, Աստված, փա՛ռք քեզ, Աստված, չմեռա: Առավոտյան ես տեսա, որ նրա մարմինը ամբողջովին ծակոտված էր, շոգին որդնոտեց և տառապելով մեռավ:

Ռուսն չտարած մեկ էլ լսեցի տարօրինակ մի ձայն՝ մի կին լաց էր լինում մեր գլխավերևում: Բարձր մի տեղ, երկու կանայք իրար փաթաթված, դողահար, սարսափի մեջ կծկված նստել լաց էին լինում: Հազիվհազ նկատեցի՝ մի ածդահա քյուրդ, խոշոր դանակը ձեռքին, հսկում էր նրանց: Հետո իմացա, որ նրանք մայր ու աղջիկ են: Կինը մղկտում էր, անեծքներ էր թափում պատճառ եղողների գլխին: Անեծքնե՛ր, անվերջ անեծքնե՛ր թուրքերի գլխին. վերջում իմացա, որ թուրք ոստիկանապետը առավոտյան եկել, տարել է այդ մայր ու աղջկան:

Եփրատ գետի ափին մահացան հորեղբորս զույգ ծոռները և հորեղբորս հինգ տարեկան Սմբատ տղան, որին ես շատ էի սիրում: Հրաման եղավ շարժվել: Գնացինք Եփրատի ափը: Փալասներով ծածկված մի ինչ-որ նավակ կար, դժվարությամբ ժողովուրդը նավ նստեց. անունն էր նավ: Քրդերը ոտից գլուխ ստուգում էին կանանց. փող էին փնտրում: Նավակը գնում էր հոսանքն ի վար: Ժամեր տևեց մինչև անցանք մյուս ափը: Քրդերը տախտակները շուռ էին տալիս, կանայք, երեխաներ ընկնում էին ջուրը: Մի դեպք, որ ես չեմ մոռանա մինչև իմ մահը. երկու ածդահա քրդեր հարձակվել էին մի հոլանի, գեղեցիկ, հասակավոր կնոջ վրա, ուզում էին նրա փողի քսակը վերցնել: Կինը դիմադրում էր ամբողջ ուժով, նրանց գետին էր գցում, նրանք ելնում, նորից էին հարձակվում նրա վրա: Այսպես չգիտեմ ինչքան տևեց: Կնոջը ամբողջովին մերկացրին, հագուստները պատառոտեցին, քսակը վերցրին ու նրան թողեցին անդամամերկ: Հանկարծ կողքին նկատեցի մի յոթ-ութ տարեկան փոքրիկ աղջնակ, որը հետևում էր մոր պայքարին՝ աչքերը լայնացրած, դողալով, լալով, ճչալով: Ես այդ աղջկա աչքերի նման աչքեր չեմ տեսել ո՛չ նկարիչների մոտ, ո՛չ էլ՝ կյանքում: Կինը պառկած տեղից վեր կացավ, աղջկան գրկեց ու դողդոջուն ձայնով ասաց. - Մեռա՛նք, աղջիկս, ո՛չ փարա ունենք, ո՛չ հագուստ, - և մի ոստյունով աղջկա հետ նետվեց գետը:

Մի ամբողջ օր նորից ճանապարհ էինք ընկել, արևը վառում էր, ջուր չկար, հորեղբորս աղջկան՝ Հայկանուշին թողինք ճանապարհին մի ծառի տակ. նա ողջ էր, մեր հետևից նայում էր: Հեռվից՝ ցածում ջուր նկատվեց: Մարդիկ ամաններն առած վազեցին: Մի ժանդարմ ասաց. - Չի՛ կարելի, ջուրը լի՛քն է դիակներով: - Երկու-երեք օր գնալուց հետո, նորից երեխաներին հավաքեցին, մի երկու-երեք մեծահասակների խփեցին, փող պահանջեցին, հետո մեզ բաց թողին:

Վերջապես երկար, տանջալի ճանապարհ անցնելուց հետո հասանք Սուրուճ անապատը: Սա իսկական սպանդանոց էր. օրական հարյուրներ մահանում էին: Մեր գյուղացիների համարյա յոթանասուն տոկոսը մահացավ այստեղ: Ամենածանր և ահավոր վիշտը ինձ համար այն էր, որ իմ չորս-հինգ տարեկան երամ անունով եղբորս թողեցինք ծառի տակ, նա մեր ետևից լաց էր լինում: Վա՛յ, այն օրը մինչև հիմա չե՛մ մոռանում: Տասնհինգ օր տառապելուց հետո նա լալով մահացել է, ըստ վերջին եկողների՝ սովից, ծարավից, գիշերային ցրտից: Շարժվեցինք դեպի Սուրուճի երկաթուղային կայարանը: Ճանապարհին մի քյուրդ կին Էլմոն քրոջս ձեռքից բռնեց ու տարավ (վեց-յոթ տարեկան էր): Իջևանեցինք երկաթուղային կայարանի մոտ, մի խանում, հետո դուրս արին, քշեցին դեպի Հալեպի

կողմը, ապա բաժանեցին՝ ողջ մնացածների կեսը գնաց Դեր Էլ Զոր, կեսը՝ ետ եկավ նորից Սուրուճ: Մեզ լավաշ հաց բաժանեցին և հրամայեցին գոռալ. - Կեցցե՛ թագավորը (կոմեդիա էր): Ժողովրդի մեջ լուրեր տարածվեցին, թե իբր Էնվեր փաշան եկել, անցել և գնացել է, իր կնոջ հետ, դեպի Տիգրանակերտ (Դիարբեքիր): Այդտեղից մեզ քշեցին երկաթգծով դեպի կայարանի կողմը՝ Ռաս-Էլ-Այն, դեպի արևելք: Հասանք Ռաս-Էլ-Այնի կայարանը: Մեզ տարին, երկու-երեք կիլոմետր սալահատակված ճանապարհի երկու կողմի վրա շարեցին: Սկսեցին բեմահարթակներ սարքել, իրարից որոշ հեռավորության վրա, որոնց վրա նաև՝ ցցեր: Կեսգիշերին բերին, մարդկանց շարեցին ցցերի տակ, ճամփի մեկ ծայրից մյուսը՝ ութական հոգի: Ծառերի գլուխները կտրել էին և քառակուսի կույտեր էին կազմել: Արևելքից մեզ նման գաղթականներ բերեցին, շարեցին ճանապարհի մյուս կողմը: Վերևից արևն էր վառում, ներքևից՝ տաք քարերը: Համարյա թե մեռնում էինք, լացի ձայները՝ ջուր էին աղերսում, բերող չկար, ջուր չկար:

Զինվորներ, ժանդարմներ, քրդեր գնում-գալիս էին, ինչ-որ մի բանի էին պատրաստվում: Հանկարծ, որտեղից որտեղ երկար գնացքը եկավ և կանգնեց մեր դիմաց: Ժողովրդին թափեցին ցած, վագոնները իրենց եկած ճանապարհով ետ գնացին. դրանք թեքեդաղցի՝ ռոդոսթոցիներ էին, ադրիանապոլսեցի (Էդիրնե), մալկարացիներ էին՝ Թրակիայի ժողովուրդը: Ժողովուրդը՝ կանայք, երեխաներ, ծերեր, աղջիկներ, զարմացած, շվարած կանգնել էին: Նրանց խաբել և բերել էին, իբր՝ գնալու եք բնակության նոր վայրեր: Նրանք մեզ նկատեցին հեռվից և սկսեցին աջ ու ձախ շարժվել, ճչալ, լաց լինել իրենց ապրանքների համար: Ոստիկանները վրա պրծան, նրանց հանգստացրին և բռնի նստեցրին երկաթգծի երկայնքով: Նրանք երևում էին մեր տեղից՝ կիրակնօրյա շորեր հագած, աղջիկները սպիտակ շորերով և այլն: Երեկոյան մարդկանց մորթեցին, դիակները շարեցին բեմահարթակների առաջ, հետո բերին սպիտակ շորերով աղջիկներին. գիշերային խավարի մեջ նրանց բոլորին ցցերի վրա նստեցրին: Մեր ականջները խլանում էին նրանց մայրերի, հարազատների ճիչերից, լացերից և գոռում-գոչումներից: Իմացա, որ այդ մարդիկ Անդրանիկ փաշային ուսերի վրա են տարել, իսկ աղջիկները, «Իբրև արծիվ» երգելով, Անդրանիկին ծաղկեփնջեր են մատուցել փողոցներում՝ թուրքերի ներկայությամբ: Ահա վրեժ էին լուծում նրանցից:

Առավոտյան կարմրավուն, վառ արևը ոսկի էր մաղում չորս դին կապուտակ երկնքից, իր ոսկեգույն ճառագայթները փռել էր ամեն կողմ: Դա անապատի արևն էր, որ միակ վկան էր մեր այս անողոք տառապանքի: Վերջապես թրակիացիներին քշեցին, բերին և շարեցին ցցերի առաջ. մեզանից ցածում նրանք շուռ էին գալիս, մեկը իր մարդուն էր փնտրում, մյուսը՝ ցցերի վրայի իր աղջկանը: Ցցերի վրա բարձրացած սպիտակ շորերով աղջիկները արդեն մահացել էին, գլուխները կախ ընկած էին մի կողմի վրա… Իրարանցում, ողբալի ձայներ, աղմուկ, հարայհրոց գաղթականների մեջ՝ ծայրից ծայր:

Հանկարծ աղմուկ-աղաղակ, ծափահարություններ. եկան մարդկանցով լիքը չորս կառք ու կանգնեցին ճանապարհի ծայրին՝ մեզանից քսան քայլի վրա: Երկու կառք բարձրացան և կանգնեցին բարձրում, մյուս երկուսը՝ ճանապարհի ծայրին: Լսեցինք, որ դրանք մեր մտավորականներն էին, ամեն կառքի մեջ չորս հոգի, որոնց բերել են Հալեպից: Հրամանի վրա երկու կառքերը շարժվեցին ճանապարհով, նախ՝ կամաց, հետո՝ արագ: Կառքի վրայի ոստիկանները մտրակներով սկսեցին խփել մեր մտավորականներին: Խփում էին նրանց գլխներին, մարմիններին, երեսներին, որտեղից պատահեր: Կառքերը երկրորդ անգամ եկան, ոստիկանները մտրակների հարվածների տակ գոռում էին. «Հե՛յ, գյավուրնե՛ր, աջ նայե՛ք (մեզ, ցցերի վրայի աղջիկներին և մորթված մարդկանց էին ակնարկում), տեսե՛ք անգլիական ռազմանավերը Ստամբուլ են մտնում»: Գնում էին կառքերը, նորից էին գալիս, լսում էինք. «Գյավուրնե՛ր, ձախ նայե՛ք, քոռ Մոսկովի՝ ռուսի զորքը Սվազ է մտնում, Թուրքիան ոչնչանու՞մ է»: Այսպես անվերջ, տասից ավելի անգամ տանել-բերելուց հետո կառքերը գնացին դեպի Ուրֆայի կողմը: Մյուս օրը մեզ քշեցին նրանց ետևից, դեպի Տիգրանակերտի գլխավոր ճանապարհը, թրակիացի ժողովրդին մեր ետևից բերին: Մեզ շրջանաձև նստեցրին քարքարոտ, առանց մի բուսականության չոր ու ցամաք մի տեղ: Մեզանից մի քիչ հեռու՝ կանաչ այգու մեջ, կամուրջի մոտ կար մի մեծ շենք՝ քարվանսարայի պես բան: Այնտեղ մարդիկ մտնում-ելնում էին: Հանկարծ մարդիկ եկան, տախտակներ, ցցեր շալակած. շրջանի մեջտեղում խփեցին ցցերը և տախտակները ու գնացին: Կես ժամ հետո, ծեծելով, հարայհրոցով բերին մեր ութ մտավորականներին՝ Զոհրապի գլխավորությամբ: Նրանց նստեցրին, եկան ճառեր ասացին, մեր մտավորականների վրա թքեցին ու գնացին: Հետո եկան ութ ոստիկանները՝ սվիններով, հետները մի աժդահա մարդ՝ կիսազինվորական հագուստով: Կիսավայրենու տեսք ուներ: Հրամայեց մեր մտավորականներին մերկացնել, հետո նրանց փորի վրա պառկեցնել տվեց տախտակների վրա, գլուխները առաջ գցած, հետույքները բարձրացած: Հրաման եղավ՝ Սյունգյու դա՛խ (սվինները խրել): Ոստիկանները բոլորը սվինները խրեցին մեր մտավորականների հետույքները. նրանք մահացան, արդեն ծեծի տակ կիսամահ էին եղել: Նրանց դիակները մինչև մեջքը հողի մեջ թաղեցին՝ գլուխները դուրս: Մեզ ասում էին. «Նայե՛ք նրանց, նրանք ձե՛ր մասին են մտածում, դուք էլ աղոթեցեք նրա՛նց հոգու համար, որ ձեզ այս օրին հասցրին»: Ժողովուրդը լալիս էր, ժողովուրդը տառապում էր, տանջվում էր, ժողովուրդը սովից, ծարավից մեռնում էր: Ո՞վ էր մտածողը, փրկողը: Չգիտեմ: Ասում էին, որ Էնվեր փաշան եկել էր Պոլսից հատուկ հայ մտավորականների սպանությանը ներկա լինելու համար, ասում էին, որ Էնվեր փաշան անձամբ ինքն է կազմակերպել այս գործը: Ես տեսա՝ մի խումբ մարդիկ նստել էին պատշգամբում, այգու մեջ: Ջարդը վերջանալուց հետո նրանք իջան, կառքեր նստեցին ու գնացին դեպի Տիգրանակերտի կողմը: Մի օր հետո ժանդարմները մեզ քշեցին որտեղից որ եկել էինք, իսկ թրակիացիներին՝ դեպի հարավ, մորթված մարդկանց և ցցերի վրա գտնվող աղջկերանց կողմը: Մալկարացի Գրիգոր Իշկալյան անունով մի մարդ ինձ պատմել է Թրակիայի դեպքերի մասին և ինքն էլ ականատես է եղել իմ նկարագրած դեպքերին՝ ինը-տասը տարեկան հասակում: Այսպես, թրակիացիներին ասում են. «Ձեր գույքով ունեցվածքով գնալու եք Մեզալիր, պատերազմից հետո կգաք ետ»: Բերին մեզ, այդ օրը գցեցին: Ցցերի վրայի աղջիկները ռոդոսթոցի էին՝ Անդրանիկին ծաղկեփունջ մատուցողները, իսկ երիտասարդները՝ Անդրանիկին ուսերի վրա են տարել, սպանվածների մի մասն էլ օսմանիե թունելի վրա աշխատող բանվորներն էին: Մեզ բերին Ուրֆա, այնտեղից քշեցին դեպի անապատը՝ մի անմարդաբնակ տեղ, ուր միայն մի քանի ծառեր կային: Այդ օրը գիշերը անձրև եկավ և ցուրտ քամի: Գիշերը հարյուրավոր մարդիկ մահացել էին: Քրդերին բերին, մի ընդհանուր խոշոր փոս փորել տվին: Քրդերը թոկերով ընկան ժողովրդի մեջ՝ տրորելով հիվանդներին. մեռած-ողջ՝ ով պառկած էր, վիզը թոկ էին գցում, քաշեքաշ տանում փոսն էին ածում ու վերադառնում: Նույնիսկ ողջերի վիզը թոկ էին գցում, տանում նետում էին փոսը. հարազատների ճիչերը, աղաղակները չէին լսում: Այդտեղից մեզ նորից քշեցին դեպի հարավ՝ մի այլ անմարդաբնակ տեղ: Կանայք՝ տիֆով հիվանդ, ջուր էին աղերսում: Ես մի կեղտոտ ամանով ջուր էի բերում նրանց համար, անձրևից գոյացած կեղտոտ ջրերից: Նրանք ջուրը խմում էին ագահաբար ու մահանում էին անմիջապես: Մի օր էլ ջրի էի գնացել, ճանապարհով անցնող երկու ծեր մարդիկ, էշերն առաջները խառնած, գնում էին: Ինձ տեսան, ծերի մեկը ետ ընկավ, ինձ նայեց, ես վախեցա, սարսափով նայում էի նրան: Նա ասաց. - Մի՛ վախիր, տղա՛ս, արի՛ քեզ տանեմ մեր գյուղը: Մյուս ծերը եկավ, մեկ-մեկու հետ խոսեցին:

Այս ծերուկը նրան ասաց. - Լսի՛ր, իմ ու քո տղաները Բաղդադի ճակատում կռվում են, ես այս հայ տղային կտանեմ կազատեմ մահից, Ալլահն ալ կպահի իմ զավակներին թշնամու գնդակից, - ինձ դրին էշի վրա:

Երկու օր գնալուց հետո հասանք Այնթապի մոտ մի գյուղ Հյուլումեն անունով: Գյուղ չհասած գյուղացիները և ծերուկի հարազատները խմբով վազեցին: Նրանք երբ ինձ էշի վրա տեսան, զարմացած, սարսափահար փախան ամեն մեկը մի կողմի վրա: Գյուղացիները բաժանվեցին երկու մասի. մի մասն ասում էր՝ այս գյավուրին նետի՛ր փոսը, գյուղը կվարակի, մյուս մասն ասում էր՝ Բեսսեն ինչ ուզում է, թող այն լինի, ձեր ի՞նչ գործն է: Աղմուկի ժամանակ մորուքով մի պատկառելի մարդ եկավ, նայեց ինձ, նայեց խուժանին, ծերուկի ձեռքից փայտը վերցրեց, տվեց ում որ պատահեց, ամեն մեկը մի կողմի վրա փախան: Հասանք ծերուկի տունը. հարսը, թոռները փախան տնից: Այս ծերուկի կինը առաջ եկավ, թևիցս բռնեց ու ինձ տարավ մարագը, դարմանի վրա պառկեցրեց և ասաց. - Դուրս չգա՛ս, այստեղ պառկի՛ր:

Փափուկ դարմանի վրա պառկեցի, ազատ շունչ քաշեցի: Որոշ ժամանակ անց տանտիկինը բերեց մի քիչ ոսպով ապուր. անմիջապես խմեցի և ամեն օր այսպես: Որոշ ժամանակ անց՝ կինը ապուրը շատացրեց, հետը փիլավ բերեց, որոշ ժամանակ անց՝ հաց, և ես մի քիչ կազդուրվեցի, սկսեցի ման գալ կամաց-կամաց գոմի մեջ: Արյունս սկսեց շարժվել, վրաս ուժ եկավ, դեմքս կլորացավ:Այս կինը աղջկա հետ ինձ լողացրեց և նոր հագուստներ հագցրեց: Հարսը, լսելով, որ մի նոր հայ տղա է երևացել իրենց տանը, հևիհև, կատաղած եկավ խոհանոց, ուր ես ճաշում էի, գլխիս վերև կանգնեց և գոռաց. - Ա՛յ անա, հերի՛ք չէր մի հոտած գյավուրի տղա պահում ես, հիմա էլ սրա՞ն եք բերել, հա՞:

Ես դառել էի կլոր դեմքով, շեկ, գանգուր մազերով, կապույտ աչքերով տղա, այլևս այն հոտած, նիհար, փորս ուռած կաշի-ոսկոր, զզվելի տղան չէի: Հարսը նայեց ինձ ու գոռաց ուրախության ճիչով և վազեց գոմը, որ գտնի հին, հոտած, նեխած տղուն: Ունայն հետ եկավ և սկսեց. - Ա՛յ անա, ա՛յ այս տղան լավն է, ինչքա՛ն սիրուն է, պահե՛նք:

Ծեր կինը ասաց. - Գնա՛, ոռոսպի՛, իմ տղուն ուզում էիր վռնդել, սպանել հա՞, տունը թողիր, փախար նրա պատճառով, հիմա տեր ես կանգնում իմ տղուն:

Հարսը վազեց բերեց իր երեխաներին տուն, նրանք ինձ ընտելացան և ինձ շատ էին սիրում, նույնը՝ մայրերնին: Գարուն էր արդեն, ես սկսեցի տնային մանր-մունր գործեր կատարել, սկսեցի գառները արածացնել: Ապրում էի որպես տան զավակ: Նրանք գյուղի մարդկանց պատվիրել էին, որ ոչ ոք ձեռք չտա ինձ: Մեկ-երկու տարի հետո, մի օր հանկարծ գյուղի մեջ հավար ինկավ, մարդիկ կանչում, վազում էին դեպի քաղաքի ճանապարհի կողմը, գոռալով. - Բեսսեի տղաները գալիս են, երկու եղբայրները՝ Սայաթը և Հուսեյնը: - Տնեցիները խելակորույս վազեցին, հարայ-հրոցով բերին երկու եղբայրներին տուն: Նրանք նստեցին ճաշ կերան, հանկարծ ինձ նկատեցին: Երեկոյան, երբ ես անցուդարձ էի անում տան մեջ, մեծ տղան՝ Սայաթը դառավ մորը. - Այս տղան ո՞վ է:

Մայրն ասաց. - Սա էլ մեր տղան է, հայրդ գտել է նրան գաղթականների միջից, ձեր մոտից վերադառնալիս և նպատակ է դրել՝ եթե ես այս տղային տանեմ պահեմ, մահից ազատեմ, Ալլահն էլ իմ տղաներին կպահի թշնամու գնդակից. ահա և իրականացավ հորդ երազը:

Տղաները ուրախացան և պատմեցին իրենցը. - Մենք Բաղդադի ճակատում կռվում էինք արդեն երկու ամսից ավելի. մեր հրամանատարը մեզ երկուսիս ուղարկեց, որպես լավ, պարտաճանաչ զինվորների, Օսմանիե հիվանդանոցը՝ կազդուրվելու համար: Այնտեղ մնացինք մի ամիս: Հանկարծ մի օր մի հայ բժիշկ եկավ և մեզ ասաց. «Ձեզ ուղարկում են Բաղդադ, նորից ճակատ. եկեք դուք ձեր զինվորական հագուստները թողեք այստեղ, քաղաքացիական շորեր հագեք, ես ձեզ կտամ մի տարվա հանգստանալու թուղթ»: Մենք համաձայնվեցինք, թուղթը առինք ու եկանք, հայ բժշկին շնորհակալություն հայտնեցինք: Հետո իմացանք, որ Օսմանիեի երկաթուղային թունելում աշխատող հայ բանվորներին աշխատանքը վերջացնելուց հետո սպանելու են: Այս բժիշկը մեր զինվորական շորերը հագցրել է հայերին և ուղարկել է նրանց Բաղդադ, ուր հայերին չէին ջարդում: Այսպես շատերին է արել:

Դրանից հետո տնեցիների ուշքը գնում էր, ինձ շատ էին սիրում, դրանից հետո գյուղացիները ինձ վրա նայում էին իբր հրաշք անձնավորություն: Ինձ բերող Բեսսեն՝ հայրերնին, իր տղաներին ասում էր.

- Ես ջաճելացել եմ, ինչ լավ արի այս հայ տղուն բերի և երջանկացա:

Դրանից հետո ինձ գործ անել չէին թողնում՝ կեր, խմիր, մանե արի, ասում էին: Դու մեր հարազատ տղան ես այլևս:

Հուլումեն գյուղում մնացի մինչև 1919 թիվը. պատերազմը վերջացել էր: Եկա Այնթապ քաղաքը: Ամիսներ սոված, տկլոր մանե եկա: Գաղթականություն՝ լիքը. ո՛չ աշխատանք կար, ո՛չ փող: Զորս-հինգ ամիս հետո ամերիկացիները եկան որբանոց բացին՝ «Հալաճյան որբանոց»: Դիմեցի՝ ինձ ընդունեցին: Այնտեղ մի տարի մնալուց հետո անգլիացիները գնացին, նրանց տեղը եկան ֆրանսիացիները, որից հետո սկսվեց քեմալական շարժումը: Կյանքը դառավ անտանելի: Ամերիկացիները որբանոցը տեղափոխեցին Բեյրութ: Մեր որբանոցը գնաց Ճիբեյլ, որտեղ մնացի մինչև 1924 թիվը: Ամերիկայից հրավերի թուղթ ստացա և գնացի Ամերիկա: Նավը հանդիպեց Հունաստան, Իտալիա և Ֆրանսիա՝ Մարսեյլ, այնտեղից՝ Փարիզ: Գնացի Փարիզում մեզ ընկերակցող Ստեփան Դարդունու մոտ, որն ինձ դաստու էր եղել որբանոցում: Փարիզում ինձ տարավ այն սրճարանը, ուր հաճախում էին դաշնակցականները, ինքը մոլի դաշնակցական էր: Ես սրճարանում տեսա Արմեն Գարոյին (Գարեգին Բաստրմաճյանին). նա մասնակցել էր Բանկ Օթոմանի գրավմանը 1896 թվին: 1914 թվին, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, ինքը երեք հազար կամավորներով կռվել է Սարիղամիշի ճակատում՝ Էնվեր փաշայի դեմ, նրա զորքերի օպերացիաների ժամանակ, նույնիսկ կրակել է Էնվերի վրա: Հակառակ նրան, որ ինքը եղել է թուրքական մեջլիսի անդամ, Էնվեր փաշան թույլատրել է նրան գնալ Կովկաս՝ իր գործարանների, տների հաշիվները մաքրել և գալ ետ՝ Պոլիս:

Նավ նստեցինք, գնացինք, հասանք Ազորյան կղզիների մոտով Նյու Յորք: Ամերիկայում ապրում էի Բոստոնի մոտ Ուոթըրթաունում. մի փոքրիկ քաղաք էր: Ես տեսա Համաստեղին, Սողոմոն Թեհլիրյանին, Ռուբեն Դարբինյանին, ռամկավար Ա. Նազարին՝ «Պայքար» թերթի խմբագրին, Արսեն Միքայելյանին՝ բանաստեղծ էր և մոլի կոմունիստ, Սնար Սնարյանին՝ «Բանվոր» թերթի խմբագրին: Աշխատեցի Hood Rubber գործարանում, հետո՝ Crawford վառարանի գործարանում:

Այստեղից գնացի Դետրոյտ: Երեք-չորս տարի աշխատեցի Ֆորդի ավտոգործարանում: Այստեղ հանդիպեցի հինչակյան կուսակցության հիմնադիր Նազարբեկին: Ծանոթացա Զորավար Սեպուհի հետ: Ապա անցա Չիկագո, ուր աշխատանքի անցա Գաբիկյան Կարապետ անունով սեբաստացու գորգի խանութում: Մի տարի հետո գնացի Մինիապոլիս և Սենտ փոլ (այս երկու քաղաքները մի կամուրջով էին բաժանվում իրարից), որտեղ շատ հայեր կային, ունեին սրճարաններ: Այս հանգը Ամերիկայի ցորենի շտեմարանն էր՝ բերքի տեսակետից: Քաղաքը շատ գեղեցիկ էր և մարդիկ բարի էին: Մի քանի ամիս մնացի մի սեբաստացի գորգավաճառի մոտ, որի անունը չեմ հիշում: Այս խեղճ մարդը թոքախտով տառապում էր. Դենվեր Կոլորադոյի սանատորիաներից մեկում ուղեգիր ուներ և հավատում էր, որ կբուժվի այնտեղ: Երկու ամիս հետո լուր ստացվեց, որ նա մահացել է: Խանութը մնաց մի ուրիշի: Մի ժամանակ էլ պաղպաղակ էի բաժանում խանութներին: Այստեղից գնացի Մոնթանա Ռայթֆիլդ կոչվող փոքրիկ քաղաքը, ուզեցի երկաթգծի վրա աշխատել՝ չհաջողվեց: Այնտեղից գնացի Սպոքեն. Ուաշինկտոնի նահանգում մի փոքրիկ քաղաք էր: Մի ջահել տղա՝ մեր սեբաստացի, գորգի խանութ ուներ: Այստեղ էլ կային մեծ թվով հայեր, այսքան հետու տեղ: Հետո գնացի Փորթլենդ Օրեգոնի քաղաքը: Այս քաղաքը նույնը՝ շատ մաքուր, կոկիկ քաղաք էր, ես շատ սիրեցի այն: Այստեղ կենտրոնական փողոցի վրա մեծ գորգի նորոգման, լվացման փոքրիկ գործարան կար, իսկ գլխավոր փողոցի վրա նոր գորգերի՝ «Արամ, Թադևոս և Տիգրան եղբայրներ» վերտառությամբ: Քաղաքի և նահանգի մեջ բավականին մեծ անուն ունեին նաև Գարթոզյան եղբայրները: Նրանք շատ հոգատար վերաբերվեցին ինձ որպես հայրենակցի և որպես շատ տառապած, անտեր մարդու, խոստացան գործ տալ՝ իբրև մատակարարող. ես չհամաձայնեցի, չեմ հասկանում՝ ինչու՞: Այստեղ հանդիպեցի Էվերեկցի մի բժշկի, որը ամուսնացած էր գերմանուհու հետ՝ շատ հայտնի բժշկի էր քաղաքում: Հյուրանոցում հանդիպեցի Մայքլ Արլենի հետ: Ես այստեղ պատահաբար գտա մեր գյուղացի մի ընտանիք, ինձ հետավոր ազգական Ստեփան Փափազյանին, որը ուներ երկու աղջիկ և երկու տղա: Ինքը աշխատում էր Գարթոզյանների արհեստանոցում՝ նա քենակալ էր Թադևոս Գարթոզյանի հետ, դրա համար էլ հասել էր այս հետու քաղաքը: Նրա տանը մնացի երկու ամիս: Ինձ շատ էր սիրում, ծնողի չափ, փող չէր վերցնում իմ կերածի դիմաց, կինը նույնպես շատ համեստ, հասկացող կին էր և շատ սիրալիր էր իմ հանդեպ: Նրանք մտադիր էին իրենց աղջկան ամուսնացնել ինձ հետ, բայց ես չընդառաջեցի նրա սիրուն, ես շատ սառը մնացի: Այնտեղից եկա Սան-Ֆրանցիսկո՝ գեղեցիկ այգիների քաղաքը: Որոշ ժամանակ մի վանեցու ճաշարանում աշխատեցի, բայց չգիտեմ ինչու՞ Ֆրեզնոն ինձ ձգում էր: Գնացի Ֆրեզնո, առաջին անգամ ծանոթացա «Նոր օր» թերթի խմբագրի հետ, հետագայում՝ գրող Անդրանիկ Անդրեասյանի հետ, որը քեռու փոխարեն խմբագրում էր թերթը: Քեռին՝ Արմենակ Ամիրխանյանը, հիվանդ էր: Մի օր խմբագրատանը ծանոթացա նկարիչ Փանոս Թերլեմեզյանի հետ:

Ֆրեզնոյում էր ապրում Անդրանիկ փաշան. վերջին օրերն էին: Ես տեսա նրան հյուծված և հուսահատ վիճակում, փայտի օգնությամբ գալիս էր կենտրոնական այգին: Հետո նա մահացավ: Ինձ ծանոթացրին Վահե Հայկի հետ, նա չամիչի հարուստ վաճառական Գրիգոր Առաքելյանի փեսան էր, հաճախ գնում էր հայդուկ Սմբատի սրճարանը: Այնտեղ էին լինում Հրաչ Երվանդը՝ ռամկավար, և Արսեն Միքայելյանը՝ դաշնակցական: Հրատարակվում էր երեք թերթ՝ «Նոր օր», «Մշակ», «Ասպարեզ»: «Մշակը» խմբագրում էր Լևոն Լյուլեջյանը: Ֆրեզնոն իր առաջվա փառքը կորցրել էր՝ ամերիկյան «չոր օրենքի» հետևանքով: Խաղողի և չամիչի գները խիստ անկում էին ապրում: Հայերը իրենց այգիները թողել, գնացել էին Սան Ֆրանցիսկո, Լոս Անջելես և այլն: Այստեղ դեղատուն ուներ Հայկ Բոնաֆարթյանը, որը չի կարողացավ պահել, սնանկացավ: Հայերն ունեին երկու եկեղեցի՝ Լուսավորչական-Առաքելական և Բողոքականաց ժողովարանը: Վիլյամ Սարոյանը միջնակարգ դպրոցը նոր էր ավարտել, իր սովորած դպրոցում ֆիզկուլտուրայի դասատու էր նշանակվել: Ես աշխատանք գտա: Աշխատում էի բարձր սարերում՝ երկաթգծի շինարարության վրա: Հայ տղաներով աշխատանքի խումբ էինք կազմել: Սարերում ես տեսա Ջեկ Լոնդոնի «Կանաչ հովիտը» գրքի մեջ նկարագրված վայրերը: Երեք տարի աշխատելուց հետո գնացի Լոս Անջելես: Այն ժամանակ քաղաքի բնակչությունը դեռ մի միլիոնի չէր հասել: Լոս Անջելեսում ես աշխատանքի անցա որպես կինոնկարահանման ժամանակ դերասաններին ընկերակցող. օրական ստանում էի հինգ դոլար: Մի քանի ամիս ես աշխատեցի դերասաններ Ֆէրբենդ Դուկլաս և Մարի Փիկֆորտ ամուսինների մոտ, մասնակցեցի նրանց նկարահանած «Բաղդադի գողերը» ֆիլմի աշխատանքներին: Հետո գնացի Ջեքի Քուգլի մոտ: Սա տասներկու տարեկան դերասան էր, խաղում էր որբերի դերեր, հայերին շատ էր սիրում: Նույնիսկ մի անգամ մի նավ ուտելիք տարավ Հունաստան՝ հայ որբերին: Լոս Անջելես էին հավաքվել հայ մտավորականները: Ես տեսա Արմենակ Շահմուրադյանին, Ալեքսանդր Մելիքին, դերասան Հարութին, ռեժիսոր Ռուբեն Մամուլյանին, մի օպերայի երգչի, որ մեծ անուն էր հանել, բայց անունը չեմ հիշում: Դեռ հայ հարուստներ չկային, միայն մի հայ մարդ ուներ երկաթի գործարան: Մի դերասանի ընտանիք կար. նրանք խմբով նկարահանվել էին «Պարսկական լուսինը» կինոնկարում: Հայերը մեծ մասամբ քաղաքը մաքրող բանվորներ էին, հիմնականում լենինականցիներ և մշեցիներ, որոնք իրենց վարքով չէին փայլում:

Մի օր սրճարաններից մեկում ծանոթացա այնթապցի մի հայ երիտասարդի հետ. նա ինձ տարավ մի տուրիստական ընկերության գրասենյակ և ինձ համար աշխատանք ապահովեց տուրիստական մի նավի վրա: Ես ուրախացա անչափ, որովհետև սիրում էի թափառական կյանքը: Վերջապես ճոխ տուրիստական նավով ճամփա ելանք՝ Հարավային Ամերիկայի շուրջը պտտվելու: Գնացինք Չիլի, Մագելանի նեղուցով անցանք, եղանք Բուենոս Այրեսում, Ռիո դե Ժանեյրոյում, Բրազիլիայում, Մոնտեվիդեոյում: Այստեղ ես գտա որբանոցի իմ երկու հայրենակիցներին՝ Սուրեն Բոյաջյանին և Սարգիս Ալթունյանին, որոնք կոշկակարի խանութ ունեին հենց քաղաքի կենտրոնում: Բուենոս Այրեսում տեսա մեր գյուղացի Տերտերյան Տոնիկին՝ վարսավիր էր աշխատում: Սան Դիեգոյում (Չիլի) տեսա պոլսեցի մի ծերուկի, որը շատ հետաքրքիր բաներ պատմեց իր կյանքից, հայ հեղափոխական կուսակցությունների զավեշտական գործունեությունից և այլն, և այլն: Նավը բարձրացավ Ամազոն գետով: Նավն ամբողջովին ապակեպատված էր՝ թունավոր մրջյուններից, միջատներից, նույնիսկ գազաններից պաշտպանվելու համար: Ազատ դիտարաններ կային՝ Ամազոնի երկու կողմերը դիտելու համար: Ես էլ հաճախ դիտում էի խոշոր հեռադիտակով: Վերջապես հասանք Վենեսուելայի մայրաքաղաքը՝ Կարակաս, և Պանամայի ընդուցով ետ՝ Լոս Անջելես: Երկու ամսից ավելի տևեց իմ ճանապարհորդությունը: Լոս Անջելեսում հանդիպեցի Հայաստանից եկած պատգամավորների, որոնք Անդրանիկի սուրբ բերին Հայաստան: Ես անընդհատ մտածում էի գալ Հայաստան, սովորել համալսարանում, ամուսնանալ հայաստանցի աղջկա հետ:

Հետո նորեն ճամփորդեցի: Նյու Յորքում եղա շատ վայրեր: Ապրում էի հորեղբորս տանը, այցելեցի Բոստոն՝ Ուոթըրթաուն, քրոջս մոտ, որտեղից որ սկսել էի իմ թափառական կյանքը:

Նյու Յորքում մի հայ բժիշկ ինձ տվեց Հայաստանի Հանրապետության անձնագիր, որով եկա Ֆրանսիա, դիմեցի սովետական դեսպան Լունաչարսկուն՝ Խորհրդային Հայաստան գալու համար: Այնտեղ հանդիպեցի Պողոս Մակինցյանին, Դրաստամատ Տեր-Սիմոնյանին, Եղիա Չուբարին, որոնք ինձ հայտնեցին, որ Կիրովի սպանության պատճառով որոշ ժամանակ չի թույլատրվում օտարներին մտնել Սովետական Միություն: Ինձ ասացին, որ սպասեմ որոշ ժամանակ: Մնացի Ֆրանսիայում՝ Մարսել քաղաքում, մեր գյուղացիների մոտ:

Մարսելում, որպես օտարական, ինքնաթուղթ չունեի, հետևաբար ոչ մի տեղ աշխատելու իրավունք չունեի: Առաջնակարգ հյուրանոցներից մեկում ազատ թարգմանիչ էի աշխատում՝ անգլերենի, թուրքերենի և արաբերենի: Ամեն օր գնում էի նավահանգիստ, ճամփորդներին բերում էի հյուրանոց. ինձ լավ էին վարձատրում անգլերենի համար:

Ազատ ամիսներին գնում էի Փարիզ: Սրճարաններում հանդիպում էի հայ մտավորականներին, նրանց հետ վիճում էի քաղաքական հարցերի շուրջ. ռամկավարների սրճարանները առանձին էին, դաշնակցականներինը՝ առանձին: Ես այնտեղ հանդիպեցի հայտնի մարդկանց՝ Ավետիս Ահարոնյանին, Միքայել Վարանդյանին, Սիմոն Վրացյանին, Արշակ Ջամալյանին, Շավարշ Միասքյանին՝ իր խուլի ականջակալներով: Ռամկավարների սրճարանում՝ Լևոն Բաշալյանին, Ռուբեն Որբերյանին, Աղաթոն Բեյլին, Արշակ Չոպանյանին, բարեգործականի քարտուղար՝ Վահան Մալեզյանին, մեծահարուստ մարդկանց, ոսկերչական և մուշտակի խանութների տերերի և այլն, և այլն:

ՀՕԿ-ի սրճարանում ես հաճախ հանդիպում էի Գուրգեն Թահմազյանին, դոկ. Մինասյանին, ՀՕԿ-ի նախագահ Գալճյանին, ՀՕԿ-ի քարտուղար Ա. Իսահակյանին, Զապել Եսայանին, Տիգրան Չավենին, Զարեհ Որբունու և շատերին: Միսաք Մանուշյանի հետ շատ մտերիմ էի: Եղեռնի ժամանակ միասին ենք եղել թուրքական գյուղում, հետո շատ որբանոցներում: Զարեհ Որբունուն, Վազգեն Շուշանյանին, Շահան Շահնուրին հաճախ տեսնում էի դրսում: Արմեն Գարոն և

Ալեքսանդր Խատիսյանը միշտ առանձին էին ընտում արճարանում, մյուսներին չէին խառնվում: Հաճախ տեսնում էի Շահխաթունին, իր հոմանուհու հետ մաճ էր գալիս, ասում էին՝ դերասանություն է անում: Մի անգամ տեսել եմ Մինաս Չերազին և Պողոս Նուբար փաշային, որոնք խոր ծերության մեջ էին: Հայաստանի Հանրապետության տարեդարձին Փարիզ էին եկել Դրոն՝ Ռումինիայից, Բուխարեստից, Նժդեհը՝ Բուլղարիայից, Լեվոն Շանթը՝ Բեյրութից: Այսպես ես տեսա նրանց տոնակատարության ժամանակ, բեմի վրա՝ պատվավոր նախագահության մեջ, սեղանի շուրջը բազմած:

Ռամկավարներն ունեին իրենց առանձին դեսպանական գրասենյակը՝ Զատիկ Խանզադյանի գլխավորությամբ, իրենց դրոշը՝ կախված, դաշնակցականներն իրենցը՝ Ավետիս Aհարոնյանի գլխավորությամբ, իրենց եռագույն դրոշով: Ամեն մեկը իրենց համար գոյություն չունեցող հանրապետություն էր ներկայացնում կարծես: Այս երեք կուսակցության անդամները մեկը մյուսի երեսը տեսնել չէին ուզում, թշնամաբար էին վերաբերում մեկը մյուսին: Ես զարմանում էի հայերի այս ընթացքից, որ գոյություն ուներ թե՛ Ամերիկայում, թե՛ Լիբանանում, թե՛ Ֆրանսիայում. ամեն տեղ, ուր հայեր կային:

Փարիզում դաշնակները, Շավարշ Միսաքյանի խմբագրությամբ, հրատարակում էին «Ցառաջ» թերթը, ռամկավարները՝ Թերզիբաշյանի խմբագրությամբ՝ «Ապագա» թերթը, հնչակյանները հրատարակում էին «Նոր երկիր» թերթը, ՀՕԿ-յանները հրատարակում էին «Երևան», «Մեր ուղին»: Հետո Միսաք Մանուշյանը սկսեց հրատարակել «Զանգու» թերթը:

Ես հաճախ բարձրանում էի Էյֆելյան աշտարակի գագաթը և ժամերով դիտում էի Փարիզի կենդանապատկերը: Գեղեցիկ էին նրա հրապարակները, փողոցները, մարդիկ տաքարյուն և աշխույժ էին: Միտք էի անում Ֆրանսիայի անցյալի մասին, մանավանդ, մեծ ոևողյուցիայի մասին:

Տնտեսական ուժեղ ճգնաժամ սկսվեց Ֆրանսիայում և ընդհանրապես ամբողջ Եվրոպայում: Անգործության առաջին զոհը դարձան հազարավոր հայ բանվորներ: Հայ բանվորներին զրկեցին նույնիսկ նպաստ ստանալու իրավունքից: Առաջ եկավ փոխադարձ

վճարման սկզբունքը: Հայերին ասին. «Դուք հայրենիք չունեք. Ֆրանսիայի հետ չեք կապված առևտրով»: Մարսելում դրությունն ավելի վատ էր, քան մյուս քաղաքներում: Կոմկուսի ցուցումով կազմվեց անգործների միության կոմիտե՝ հայերի համար, ինձ ընտրեցին նախագահ: Միսաք Մանուշյանի հետ մի հետագիր ուղարկեցինք Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհ՝ Սահակ Տեր-Գաբրիելյանին, մեկն էլ՝ Աղասի Խանջյանին և խնդրեցինք ներգաղթ կազմակերպել: ՀՕԿ-ի քարտուղար դոկտ. Գալճյանը հետագրեց Սովետական Միության արտաքին գործերի նախարարին և սովետական դեսպան Լունաչարսկուն: Որոշ ժամանակ անց ընդառաջեցին մեր հետագրերին, և Հայաստանից եկավ Շահվերդյանը: Հայ բարեգործական միությունը, Մալեմեզյանի գլխավորությամբ, հանձն առավ ներգաղթող ընտանիքների ծախսը իր վրա վերցնել մինչև Բաթում: Այսպես 1936 թվի մայիսի 22-ին մոտավորապես հինգ-վեց հազար հոգի ներգաղթեցինք Ֆրանսիայից: Վերջապես իմ նպատակին հասա, Հայաստան գալ ցանկանում էի: Մեզ հետ բերինք Կոմիտասի և Մինաս Չերազի աճյունները: Մեզ հետ էին Ավետիք Իսահակյանը՝ ընտանիքով, Արմաև Կոթիկյանը, դիրիժոր Գևորգ Ջաղուբյանը և շատեր: Այս ներգաղթով մեծ զարկ ստացան Խարբերդ, Սեբաստիա, Մալաթիա, Արաբկիր և Նոր Գեղի (Քղի) երևանամերձ ավանները:

Հայաստան գալուց հետո ես գնացի Մոսկվա: Երկու տարի մնացի Մոսկվայում, զինվորական հետախուզական կենտրոնում, որից հետո եկա Երևան և սկսեցի զբաղվել ուսուցչությամբ: 1941 թվին զորակոչվեցի Կարմիր բանակ, տարիուկես ծառայեցի, ապա ինձ բանակից ազատեցին որպես արտասահմանից եկածի: Վերադարձա և սկսեցի սովորել օտար լեզուների ինստիտուտում, անգլերեն և ֆրանսերեն բաժիններում՝ աշխատանքի հետ զուգընթաց: Աշխատել եմ Ստեփանավանում, Մարալիկում (Անիի շրջան) և Երևանի մի շարք դպրոցներում: 1948-ից մինչև 1955 թիվը եղել եմ լուսավորության նախարարության դպրոցական բաժնի տեսուչ՝ անգլերեն և ֆրանսերեն լեզուների գծով: Բազմաթիվ թղթակցություններ եմ գրել արտասահմանյան թերթերին:

81 (81).
ՍԱԹԵՆԻԿ ՆՇԱՆԻ ԴՈՂՐԱՄԱՋՋԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՍԵԲԱՍՏԻԱ)

Ութաստիճա մենք աղվոր երեք հարկանի տուն մը ունեինք, հայրս ամեն ինչ մեջը լցրել էր: Մենք շատ երջանիկ էինք: Հորս անունը Նշան էր, մորս՝ Նենկտարիհի, եղբայրներս՝ Համազասպ և Ղևոնդ: Մենք դպրոց կերթայինք: Եղբայրս Արամյան վարժարան կերթար և Դանիել Վարուժանի աշակերտը եղած էր: Ան շատ հաճախ մեզի ճաշի կուգար: Հետո ես ալ սկսա հաճախել Արամյան բարձրագույն վարժարանը: Մենք ամեն տարի օդափոխության կերթայինք ջերմուկները, վանքերը: Բայց այն տարին, երբ մայրս պատրաստվեցավ, հունիսին հայրս եկավ, ըսավ. «Էնվեր փաշայեն գաղտնի նամակ է եկել: Պետությունը գաղտնի մտքեր ունի: Հե՛չ լավ չէ կյանքը»:

Օր մը հանկարծ երկու ոստիկաններ եկան մեր տունը, ամեն ինչերնիս՝ գույքերնիս, գորգերնիս, ունեցվածքներս առին տարին, դուռը գոցեցին, մեր վրայի հագուստներով մեզի դուրս հանեցին:

Անկից առաջ եղբայրս դպրոցին մեջ փաշային գովեստներ էր գրած և ան խոստացած էր, որ ան բանակ չերթար, բայց ան ալ գնաց: Հայրիկս վախցավ,

որ անոր ճակատ կղրկեն, ատաղձագործեն թուղթ մը առավ, որ ան արհեստավոր է, բայց օգուտ չունեցավ: Եղբայրս զինվոր գնաց:

Վերջը եկան մեզի աքսոր քշեցին. հայրս մեզի հետ էր: Մինչև Մալաթիա չհասած, Քանլը դերե՝ Ադյուտոր ձոր, կըսեն, տեղ մը, դաշտ մը կա, էնտեղով անցանք, բաց դաշտ էր, մեկ էլ երեք-չորս հոգի հորս առին տարին: Այդ օրը երբեք չեմ մոռնար: Աստված ու՞ր էր, ինչու՞ չլսեց: Հարյուրավոր մարդկանց հավաքեցին տարին: Ի՜նչ աղմուկ, ի՜նչ աղաղակ: Որը՝ հայրի՞կս կըսե, որը՝ եղբա՛յրս կըսե: Ալ տղամարդ չմնաց: Մեզի Մալաթիա տարին: Ալ հայրիկս չկար: Մեր ունեցած անկողիններն ալ առին, ոչ ալ էշ կար, քանի որ հայրս չկար, որ վարձեր: Ոտքով մինչև Ուրֆային առջևեն ալ անցանք: Հետո ուրիշ տեղերե ալ անցանք, անուները հիմա չեմ հիշեր: Դաշտ մը լեցուցին մեզի, որքան աղջիկ կա, պիտի տանին: Մայրս հին բան մը մնացեր էր վերմակի պես, վրաս գցեց, ննջավ վրաս: Ես կպոռամ. - Մեռնու՛մ եմ, մայրիկ:

- Մեռնիս ննե, հո՛ւս պիտի մեռնիս, - ըսավ ու վրաս ննջավ:

Վերջապես անոնք գացին:

Դաշտ մը եկանք, թիթեղներով քարյուղերը առին, որքան որ պզտիկ տղա կար՝ իմ եղբոր չափ, որը տասը տարեկան էր՝ պիտի այրեն: Մայրս բավական կարմիր ոսկի ուներ և հարսնության զարդերը հետը առած էր: Այդ ատենը ըսին. «Ով ինչ դրամ ունի կուտա՝ կազատենք»: Քովերնիս ալ գյուղացի կին մը կար, տղա մը ուներ, կուլա. «Իմ տղուս պիտի վառեն»: Մայրս տվավ իր կեսը, անոր տղայինն ալ ազատեց: Մայրս շա՛տ բարեսիրտ էր: Մուրադ գետին մոտը, անապատին մեջն ենք, աղջիկներուն, որ պիտի տանեին, մայրս իմ մազերը քոքեն կտրեց:

Ամեն օր փուշերուն մեջեն քայլում էինք, ոտքերս ի՜նչ արյուններ տեսան: Մայրս ինձի մթելով բան մը կարած, հագցուցած էր: Գետը պիտի անցնեինք, երկու հոգի եկան, մորս ուսերուն չորեցին, մեջքի գոտին քակեցին, մեջը լիքը կարմիր ոսկի կար, առին: Աղեկ որ մորս գետը չնետեցին:

Դեռ Մուրադ գետը չհասած, մորաքույր մը ունեի՝ Շամիրամ անունով, ի՜նչ գեղեցիկ էր, վեց զավակ ուներ, ճամփան ոստիկանները ուզեցին տանիլ. ան չընհանձնվեցավ դեի, գլուխը կտրեցին, գլուխը մեկ կողմ գնաց, մարմինը՝ մեկ կողմ: Երեխաները եկան, մորս վիզը փաթթվեցան, մայրս ալ վիրավոր էր: Անտեղեն ալ անցանք: Հետո նորեն դաշտի պես տեղ մըն էր, ամեն մարդ ծարավեն կմեռնի կոր. մայրս չդիմացավ, ինկավ: Հեռուեն լիճի պես ջուր մը կերևար, եղբայրս գնաց. խմեր է, հոն ալ պառկեր է: Ես ալ վազեցի, ջուր պիտի բերեմ մորս համար, բայց կուժ մը չունեինք, մի գյուղացի կին տեսա, խնդրեցի իր կուժը. - Մայրի՛կ, տուր, մայրս կմեռնի կոր, - ըսի:

- Չե՛մ տար, - ըսավ:

Ուրիշ կին մը դդումը փորեր, ջուրի աման ըրեր է, ան տվավ, բայց ըսավ՝ եթե չբերես, քեզ կասպանեմ: Հիմա կվազեմ կոր բավական հեռու է, տաք է. մայրս պիտի մեռնի: Վերջապես հասա, խմեց, մայրս ինձի օրհնեց, բայց. - Ո՞ւր է տղաս, - կըսե կոր:

- Չեմ գիտեր, - ըսի:

Երկու-երեք հոգի մորս վերցրին հազիվ անոր ընկըսան քալեցնել: Եղբայրս մնացած, դիակները մեջը նեխված ջուրը խմեր, պառկեր էր: Ուրիշ տղա մը կարծեցի՝ ան է, ճոտոտացի, տեսա ան չէ: Վերջը գտա եղբորս: «Մայրս ու՞ր է», - ըսավ, սկսավ լալ: Եղբայրս քովս է, երկու-երեք քյուրդ եկան, մեկը ինձի բռնեց, մյուսը՝ եղբորս բռնեց: Կքաշե: Մայրս ձեռքես կքաշեն: Ասանկ դանակի պես բան մը հանեցին, մորս կուշտին խփեցին, արյունը սկսավ գետինը վազել, առին տարին ինձի: Ծամփան կերթանք կոր, ժամը իննի ատենն է: Հայրիկս ինձի սորվեցուցած էր՝ «Հավատո խոստովանիմը» սկսա ըսել: Մեկ ալ թուրք մը եկավ, ըսավ. «Ա՛ս պզտիկ աղջիկը ու՞ր կտանիք, - ինձի ըսավ՝ - էսպես կերթաս»:

Իմ ոտքը բոբիկ է, կվազեմ, կկարծեմ կոր, որ ետևենս կուգան կոր: Եղբայրս, գիտե՞ս ինչ ըրեր է. ըսեր է՝ ինձի զոռով մի՛ տանիք, ես ձեր ետևեն կուգամ ձեզ հետ: Ես հիմա անոթի եմ. հաց մը կկերցնեք:

Անոնք վստահել են, ինքը ճամփան միտքը պահել է, փախել, եկել է, մորս գտել:

Կերթամ՝ «Տե՛ր Աստված» կըսեմ: Ադ ճամփան չէ՞, որ ինձի փախցուցին, վախեն լեզուս բռնվեր է: Հիմա մայրս հարցումներ կընե, ես չեմ կրնար կոր պատասխանել: Մայրս կըսե. «Ամա՛ն, ամա՛ն, աղջիկիս լեզուն բռնվեց»:

Գյուղացի մարդ մը կար, ինձի երկու գավաթ թեյ տվավ, դարմանի վրա պառկեցուց: Մայրս մեկ կողմեն վերքին կնայի, մյուս կողմեն՝ ինձի: Երրորդ գիշերը իմ լեզուն բացվեց. - Մայրի՛կ, կտանին կոր, - պոռացի:

Մայրս ուրախացավ, ըսավ. - Փա՛ռք քեզ, Աստված, լեզուն բացվեցավ:

Մեզի բերին Սուրուճ, Հալեպի մոտ: Հոդ ղայմաղամ մը, քովն ալ՝ հայ տղա մը կար: Ան կըսե. «Մայրիկնե՛ր, քույրիկնե՛ր, ով որ գորգ գործել գիտե՝ Դեր Զոր չպիտի ղրկենք, Հալեպ պիտի ղրկենք»: Ես ալ գրվեցա, հորաքույրս սորվեցուցած էր քիչ մը: Մեզի բռնեցին, Հալեպ պիտի բերեն, Բաբ գյուղ կըսեն կոր: Գյուղ մըն է: Հոն չգացած, ի՜նչ տեսանք, հայ մարտիկներուն փոսեր փորել կուտան կոր, վերջն ալ ադ փոսերուն մեջը իրենց կնետեն կոր: Լալով այնտեղեն ալ անցանք: Երիտասարդ մը եկավ: Դեռ հորքուրս չէր մեռած: Եկավ, կեցավ հորքուրիս առջևը, ըսավ. - Ձեզի Դեր Զոր պիտի տանին, եկուր ինձի տուր աս աղջիկը:

Հորքուրս ըսավ. - Կերթա՞ս, Սաթենիկ:

- Չէ՛, չե՛մ երթար, - ըսի, սկսա լալ:

Տղան խաղող և լավաշ բերեր էր սնդուկով, անոնք ձգեց, ըսավ. - Չէ՛, չէ՛, չէ՛, լալով պիտի գա ան՝ չեմ ուզեր:

Եկանք Հոմս: Ադ տեսարանը տեսնես ան, կհավատա՞ս, որ ողջ մնացել ենք: Գիշերը խանի մը մեջ մեզի լեցուցին, քա՛ր, զիբի՛լ: Գիշերը քանի հոգի անոթի կմեռնին, փորերնին կքշե, կմեռնին, իմ ոտքս ու ձեռքս կծկվել են: Կին մը եկավ, նայեցավ չորս կողմը, մամային առաջ եկավ, կայնեցավ. - Քույրի՛կ, - ըսավ, - քեզի Դեր Զոր պիտի տանին, մորթե՛ն պիտի: Ես հազարապետի կնիկ եմ, աղջիկ ունեմ, բայց գիտես ես ով եմ, - կուրծքը բացավ, խաչը վիզեն կախված էր, - ես հույն

եմ, ինձի իմ ամուսինը փախցրել է: Ես քրիստոնյաներու տանջանքը որ կտեսնամ, գիշերները չեմ կրնար քնանալ: Ձու աղջիկդ շատ սիրեցի, քու աղջիկդ տուր ինձի հոգեզավակ:

Մայրս ըսավ. - Կերթա՞ս, աղջիկ:

Չէ՞ որ ճամփին քյուրդերը ինձի կուզեին փախցնել, ըսի. - Կերթա՛մ, մայրի՛կ, գոնե **ասի** շնորհքով կին է:

Ինչ-որ է, կինը մամայիս քիչ մը դրամ տվավ, ինձի իր տունը տարավ: Ժամ մը չտևեց սպասավորը եկավ, ինձի քնքուշ մը լոգցուց, երեսներս համբուրեց, հագցուց: Ամուսինը՝ Բինբաշին **եկավ**, տեսնես՝ կվախնաս: Ըսավ. - Բերի՞ր, շուտ մը բժիշկի տանինք:

Ինձի տարին բժիշկ Արմենակին քովը: Ինձի ոտքես մինչև գլուխիս մազերը քննեց, այնքան նիհարած էի, որ կկարծեին, թե հիվանդ եմ: Ոտքերուս տակերը փուշերուն վրա կոխելով թարախոտ **վերքեր** եղած էին:

- Աս աղջիկը շատ առողջ է, - ըսավ բժիշկը, - կուտեցնենք, միսը և գինին պակաս չեք ըներ, - ըսավ, - որևէ հիվանդություն չունի:

- Ասիկա կու՞յս աղջիկ է, կրնա ըլլալ վաղը թուրքի մը հետ ամուսնացնեմ, գոնե **ճակատս** բաց ըլլա:

Անտեղ հորս խոսքերը հիշեցի, որոնք եղբորս ըսավ. «Մեռնելը ավելի լավ է, քան թե տաճիկ ըլլալը»: Ահին, իրենց տունը տարին: Գացինք: Ալ ի՛նչ արծաթե ամաններով, օրը հինգ անգամ ուտելիք կբերեին. գինի կխմցնեին, բայց ամեն գիշեր երազիս **մեջ** հայրիկս կուգար, կըսեր. «Աղջի՛կս, ես քեզի հո՞ս պիտի տեսնայի» կըսեր, ես ալ կուլայի: Հասան անունով նեֆեր մը ուներ եղեր՝ քսան-քսաներկու տարեկան: Դու մի ըսեր, ան ինձի ծախեր է քառասուն մեջիտի: Քսանը՝ առեր է, քսանն ալ աղջիկը կբերեմ՝ կուտաք, ըսեր է, խաբելով: Գացեր է մորս ըսեր է. - Աղջիկդ ամեն օր կուլա կոր, կուզե՞ս ետ բերեմ:

- Բե՛ր, ինչ պիտի ընեմ: Մենք ի՞նչ ըլլանք, ա՛ն ալ թող ըլլա: - Ես կուգամ, աղջիկս կառնեմ:

Մայրս եկավ: Ես այնպես վախցած եմ երեք շաբթվա մեջ: Հույն մայրս կըսե. «Աս իմ աղջիկն է արդեն»: Մայրս եկավ, ըսավ. - Կուլա կոր եղեր:

- Երթե ինձի անեծք պիտի տաս, միսը եղունգեն չի բաժնվիր: Ես ալ կերթամ ուրիշ մայր չունեցող աղջիկ մը կբերեմ: Միտքս դրած եմ քրիստոնյա աղջիկ մը առնեմ, - ան մորս կերցուց, խմցուց, - ա՛ն, - ըսավ, - պիտի Դեր Զոր երթաք, պիտի մեռնիք: Երանի Սաթենիկին տեսած չըլլայի, ես անոր շա՛տ սիրեցի: - Այսպես լալով բաժնվեցանք: Դուռենեն դուրս պիտի ելլանք, Հասանը դեմերնիս ելավ. - Ո՞ւր կտանիս, աս աղջիկը ես ծախած էի, ես դրամիս կեսը առած եմ:

- Վա՛յ, դուն իմ աղջիկս ծախեր ես, դուն ուրեմն սուտ խոսեցար, որ կուլա կոր ըսիր:

Մամաս ձեռքս կքաշե կոր: Մեյ մըն ալ բինբաշին եկավ, ձիու վրա նստած. - Ի՞նչ է լինում, - հարցուց:

- Ձո պես Էֆենդիին տունը չձգեցի, ասո՞ր պիտի տամ աղջիկս, - ըսավ մայրս:

Բինբաշին երկու ապտակ տվավ Հասանի երեսին, ըսավ. - Դուն ի՞նչ իրավունքով կծախես աս աղջիկը: Դուն բանտ պիտի մտնաս, - բինբաշին մինչև խան բերավ մեզի:

Վերջը մեզի Հալեպ բերին: Հոն Արմենակ անունով մարդ մը կար, դպրոցի տնօրեն էր եղել, ըսավ. - Հո՛ս նայեցեք, հիմա ձեզի Դեր Զոր պիտի տանին, գոնե աս չոջուխները ազատենք, հոս Բարեգործականը որբանոց բացած է, նորն ալ պիտի շինվի: Եկեք, զավակնիդ ձգեցեք հոս, դուք գացեք: Անոնք, որ իրենց զավակը պիտի ձգեն, պետք է արձանագրվին:

Մայրս ինձ ու եղբորս տարավ արձանագրեց: Ադգիշերը հոն մնացինք: Բոլորիս փորը կքշե կոր. հիվանդ ենք, մեզի բրինձով լափա կուտան՝ վրան սումախով: Գետինը մինդեր մը գցած են. վրան կպառկինք: Գլուխնիս վրան դրեր ենք: Ես ու եղբայրս մինչև լույս կուլանք: Հալեպ լուր հասավ, որ ալ գերմանացիները չեն ուզեր, որ մնացած հայերուն աքսորեն. Դեր Զոր տանիլը վերցուցին մեր բախտեն: Մայրերը եկան ըսին. «Մենք մեր զավակները կուզենք»:

Լուր եկեր է, որ տասներկու տարեկաններն վեր եղող աղջիկները պիտի սպասուհի տանին՝ ջրհորեն ջուր պիտի քաշեն: Ան ատենը ջուր չկար Հալեպը: Մայրս ալ եկավ մեզի ետ տանելու, ըսին. «Դուն գիտես՝ կուզես ետ տար զավակներդ»:

Մենք ելանք մայրերնուս հետ ետ եկանք: Բայց Հալեպին մեջ բոլորս մերկ ենք, ոտքերնիս բոբիկ, խանի մը մեջ գլուխնիս ուղտի պես դրեր ենք իրար վրա: Բարեգործականի հարուստ հալեպցի կիները չորս-հինգ հարյուր մեծ, պզտիկ սեբաստացիներուն հագուստ կարեր են: Գիշերը մեր քնած ատենը բերին վրանիս ձգեցին, աչքերնիս բացինք, որ հագնելիք, մեկ-մեկ կապելիք ունինք: Ինչպե՛ս ուրախացանք, բայց ինչպե՛ս ծարավ ենք: Հալեպի տղաները մաքուր ջուրերը լեցուցած բերին, մեզ ասում են. «Մայրիկնե՛ր, քույրիկնե՛ր, մի՛ խմեք ադ կեղտոտ ջուրերը»: Հայերուն սիրտը ինչպե՛ս կցավի կոր: Ադ պզտիկ տղաքը սաթըլներով ջուր բերին, խմեցինք: Գիշերն ալ վրանիս բերին ծածկեցին, քնացանք:

Երկրորդ օրը արաբ բարեսիրտ շեյխերը եկան, մեկը տոպրակ մը դրամ բերեր էր, որ բաժնի հայերուն: Ով որ աչքը բաց էր՝ խլեց: Շեյխը տոպրակը նետեց գետինը՝ գնաց: Ամեն օր ի՛նչ ճաշեր կուգար. ալ լաւմաճուն... Ամեն օր ճաշ կբերեին շեյխերը: Անոնք Աստուծմե վախցող մարդիկներ էին: Հալեպ հրեայի մը քով սպասուհի մտա:

Վերջը լուր եկավ, որ Դամասկոս պիտի երթանք: Ամբողջ ճամփան կառքերով մեզ տարին: Դամասկոսի մեջ անգլիացիները մեզի ճաշ կուտան կոր և ամեն մեկին վրա սևամորթ մը պահակ դրած են, երեսնին ծեծված, դուռներնուս առջևը կավլեն կոր: Անտեղը հայության վիճակը ի՛նչ էր. կիները աղբանոցները կերթային, պզտիկ-պզտիկ կտորները կհավաքեին, վերմակի երես կկարեին: Դամասկոսի մեջ բոլորս ալ ուլուզ՝ բոր, եղանք: Դոկտոր Ալթունյանը եկավ, ամենքիս ալ դեղ տվավ: Միայն ես բոր չեղա: Բաղնիք կտանեին: Տեսակ մը օճառ տված էր դոկտոր Ալթունյանը, ադի քսելով աղեկցան:

Դամասկոսեն մեզի Նեբիկ գյուղը ղրկեցին, անտեղի քրիստոնյաները այնքան կծծի էին, որ չեմ կրնար ըսել: Դեռ անոթի ենք. ամեն մարդ կմուրա կոր, եղբայրս ամչնալեն մուրալու չերթար կոր: Օր մը եկեղեցին ելեր ենք, ճամփան ոսպով փիլավի անուշ **հոտ** մը առինք: Եղբայրս ըսավ. - Ա՛խ, ի՛նչ անուշ կհոտի կոր:

Ես գացի, ըսի. - Եղբայրս անոթի է, քիչ մը կուտա՞ք:

Կինը տաք-տաք բերավ, ձեռքիս մեջը լեցուց: Ես փչելով հեմեն եղբորս բերանը դրի, ես ալ՝ **հոտով** կըշտացա:

Ղայմաղամ մը ըսեր է հայ աղջիկի մը. - Ինձի կառնե՞ս:

Աղջիկը ըսեր է. - Կառնեմ՝ ամմա երդում ըրե, որ հայերուն օգնեմ ըն, չես խոսելու: Աղջիկը ամուսնացեր է, քովն ալ շատ հայ աշխատավոր կիներ է առեր, որ իր քովը հաց ուտեն:

Օր մը եղբայրս պառկեր է, փորին քար մը դրեր է, դու մի ըսեր, խեղճ տղաս անոթի է, **փորի** աղիքները կգալարվին, ինքը կամչնա մուրալ:

Աս հայ աղջիկը տեսեր է, կիներեն մեկուն ղրկեր է, ըսեր է. - Գնա՛, տես, ադ տղաս ինչու՞ է փորին վրա քարը դրեր:

Ադ կուգա, կհարցնե. - Ամմա՛ն, յավրի՛կս, ինչու՞ քարը փորիդ դրեր ես:

Եղբայրս ըսեր է. - Անոթի՛ եմ, ի՞նչ ընեմ, բոլորը մուրալու գացին, ես չե՛մ կրնար մուրալ՝ թող մեռնիմ:

Կինը եկեր, պատմեր է: Ադ հայ աղջիկը ըսեր է. - Եկու՛ր, տղա՛ս, ամեն օր կուգաս մեր գառնուկները կպտտցնես, ես քեզի օրական երկու-երեք սոմի կուտամ՝ կուտես, մամայիդ, քույրիկիդ ալ կտանիս:

Այդպիսով եղբայրս ամիսուկես գառնուկները պահեց, ինքզինքնիս պահեցինք:

Հետո մեզի տարին Հայքի ըսված տեղը, բեդվիներուն գյուղը էր: Գացինք: Ադ տեղ լուր էր եկեր, թե՝ որքան հայ գա գյուղը, պիտի մուսուլման ընեք, եթե չէ՝ կրակը պիտի դնեք, պիտի վառեք:

Հոդ ալ Դամասկոսեն եկած պաշտոնյա մը կա եղեր Մուհամեդ անունով, որին կուզեն գործեն հաճել, եթե հայերին հավատափոխ չանի: Հոն ամենը բեդվիներ էին: Անոնք հարցում ըրին մեզի: Հսկա տեղ մը տվին, մենք երեսուն հոգի էինք, հեչ էրիկ մարդ չկար, երեք տղա կար, մեկը տասներկու տարեկան եղբայրս, մեկն ալ՝ ամասիացի, մյուսը՝ գյուրինցի տղաներ էին: Անոնք չէին մուրար՝ կաշխատեին: Շեյխերը ըսեր են. «Տասըտասը հոգի կառնենք, կպահենք, եթե իրարմե կբաժնըվիք»: Ամիս մը անոնք մեզի պահեցին: Ինչպե՛ս կկերցնեին մեզի, ի՛նչ միսեր, ի՛նչ փիլավներ, ի՛նչ լավաշներ:

Օր մը մուխթարին աղջիկը եկավ, գունավոր բուրդ բերավ, մամայիս տվավ: Մամաս շուտ-շուտ բողազով գուլպաներ գործեց, վրան ծաղիկներ, թռչուններ դրավ: Ալ ամբողջ գյուղը եկավ մորս մոտը, որ հյուսել սորվին: Հոն շաբաթը մեկ անգամ ուղտ կմորթեին, մեզի ալ բաժին կհանեին:

Մենք շեյխերուն տունը չգացինք, մնացինք իրարու հետ: Օր մը Մուհամեդ էֆենդիին եկավ, ըսավ. - Անոնց ամենեն մեծ խզմեթջին ո՞վ է, թող գա իմ մոտս, ըսելիք ունիմ:

Մամաս քառասունի մոտ էր, գնաց, քանի որ լավ թուրքերեն գիտեր: Վալիին ըսեր է. - Ինձի հրաման եկած է, որ բոլորդ մուսուլման ըլլաք, թե չէ՝ ձեզի պիտի սպանենք, պիտի այրենք: Դա փաշայի հրամանն է, ի՞նչ կըսեք:

Մայրս ըսեր է. - Արդեն հորս գլուխը կտրեցին, ամուսինս մեռավ: Ես առանձին չեմ ըլլար, էրթամ իմիններուս հարցնեմ:

Մամաս եկավ, ըսավ, բոլորը մեկ ձայնի ըսին. - Մենք մուսուլման չե՛նք ըլլար, թող գան մեզի մեռցնեն:

Ադ Մուհամեդ էֆենդին քսան տարեկան մի տղա կունենա՝ թոքախտի բռնված, կինը կըսե ամուսնում. - Ամա՛ն, մա՛րդ, ինչ կըլլա, մի՛ ըներ, անեծք կառնենք:

- Ի՞նչ ընեմ, - կըսե մարդը:

- Կերթաս անոնց մեկ-մեկ թուրքերու անուն կդնես, անոնց աղոթքը կառնես:

Մարդը եկավ բոլորիս անուն դրեց: Եղբորս ալ անուն դրին: Ադոր մամաս ալ աղոթք մը ըրավ, տղան աղեկցավ: Կինը ըսեր է. - Տեսա՞ր, մա՛րդ, անոնց խնայեցիր, անոնց աղոթքովը մեր տղան աղեկցավ:

Հետո Եփրուտ գյուղը տարին: Մաքոր գյուղ էր: Անտեղը մեկուն ախորը կավլեի, մեյ մըն ալ զգացի, որ աչքս չի տեսներ կոր: Աչքիս առջևը փերդե քաշվեր է: Մայրս ինձի բժշկի տարավ: Հայ բժիշկ մըն էր, մորս ըսավ. - Աս աղջիկը սնունդ չի առեր, տկարացեր է:

Հոն, Եփրուտ գյուղին մեջը շատ տանջվեցանք: Մեզի ըսին. - Ցորեն կրնա՞ք քաղել:

Մեզի տարին քրդի գյուղ մը: Գացինք ես ու եղբայրս սկսանք ձեռքով աշխատիլ, ցորեն հավաքել: Մենք խանչալով չենք կրնար: Նայեցանք, որ տակը ցորեն կմնա կոր, ըսին. «Ադ ալ ձեզի»: Արաբ Մուհամեդ էֆենդիին ուղտի վրա կդներ, կբերեր մեր տունին առջևը: Ալ բավական ցորեն հավաքեցինք, Մուհամեդ էֆենդիին ըսավ. «Ձեր ցորենը տարեք շուկա, ծախեցեք»: Շատերուն գուլպա կգործեինք՝ դրամ, ցորեն, ուտելիք, պըտուղ կուտային փոխարենը:

Անկե վերջը Ադանա բերին: Այնքան տաք էր հոն, որ մարդ չկրնար ապրիլ: Մեզի դրին վրաններուն տակը, բայց հետո մեզի այրիանոց տարին: Ան ատեն Ֆրանսիայի հրամանին տակն էր Ադանան: Ֆրանսիացիները բուրդի գործ էին սկսած, այրի հայ կիներուն տարին աշխատելու: Ամեն տեսակ գույնի բուրդեր լըցված էին, մենք պիտի զատենք: Օր մըն ալ մեկ հատ սեբաստացի Տիգրան մը եկավ՝ գորգի գծագրություն կըներ, ըսավ. - Ով գորգի գծագրություն կընե, թող գա քովս:

Ես ու երկու աղջիկ էինք, օրինակը կդնեինք առջևիս, կգործեինք: Գույները մենք կդնեինք: Մենք կաշխատեինք: Երեք-չորս կին վրաններուն տակն էինք: Ով հաշիվ գիտեր՝ տարին, ինձ ալ տարին: Մամաս ճաշը պիտի բաժաներ: Ինձի խմբապետ ըրած էին: Օր մը պր. Տիգրանը, որը այրիանոցին մեծն էր, եկավ. ան աղջիկներուն, որ թուրքերը փախցրել էին և ետ էին բերել, անոնց լավ կնայեին: Գացի, ըսի. - Մեզի ալ լավ նայեք:

- Ամա՛ն, աղջի՛կս, համբերե՛, - ըսավ:

Ֆրանսիացիները գացին: Մենք այրիանոցն ենք: Ան ատենը պզտիկ եղբայրս տասնհինգ տարեկան էր,

գնաց կովելու՝ վրեժ լուծելու: Վերջը վրանին մեջը ընտած ատեններուս հորքուրիս աղջիկը մեծ մարդու մը հետ ամուսնացավ: Բայց մայրս չգնաց հարսանիքին: Ան եկավ մորս հետ հաշտվելու, ըսավ. - Ամա՛ն, քեռակի՛ն, անանկ աղվոր տղա մը կա քու աղջիկիդ համար, պիտի գաս ուզեն Սաթենիկին, - ինձի իրենց տունը տարավ, որ ցույց տա տղայի կողմին: Տղան աղվոր կերգեր:

Վերջապես վրաններուն մեջ ամուսնացանք շապինգարահիսարցի Արմենակ Տերտերյանին հետ: Հետո եկանք նավով Բեյրութ, մինչև Տրիպոլի, հետո՝ Բեյրութ: Մեզի քարանթինա դրին: Վերջն ալ Հայաստան եկանք:

82 (82).
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՆԱՍԻ ԳԱՎՈՒՋՋԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ*
(ԾՆՎ. 1905 Թ., ՍԵԲԱՍՏԻԱ)

1915 թվի հունիսի 21-ին մենք՝ երեսունվեց հազար սեբաստացի հայերս հարկադրաբար լքեցինք մեր երկիրը, և սիրիական անապատներում նրանց մեծամասնությունը ևահատակվեց:

Արդեն 1915 թ. ապրիլի 29-ին Սեբաստիայի անվանի մարդկանց՝ այդ թվում նաև Դանիել Վարուժանին**, աքսորել էին:

Ստացվել էր հրաման, որ երեք օրվա ընթացքում պատրաստ լինենք դեպի հարավ մեկնելու: Քանի որ մենք պատերազմական գոտում էինք գտնվում, և մեր անվտանգությունը պետք էր ապահովել: Իսկ պատերազմի ավարտից հետո մենք նորից մեր տները պիտի վերադառնայինք:

Ոչ մի լավ բան չէինք սպասում, քանի որ Կոստանդնուպոլսում ևս բոլոր առաջատար հայերին գիշերով ձերբակալել էին և աքսորել:

Արդեն հայ տղամարդկանց թուրքական բանակ էին զորակոչում: Հայ տղամարդիկ, որոնք զինվորական ծառայության մեջ չէին և պատերազմին չէին մասնակցում, յուրաքանչյուր անձ հիսուն ոսկի (հազար գերմանական մարկ) պիտի վճարեր՝ աշխատանքային ջոկատների կազմում ճանապարհներ և կամուրջներ շինելու և կամ Բեռլին–Բաղդադ երկաթուղու շինարարության վրա աշխատելու համար:

Ինչ վերաբերում է հազար մարկին, ապա այն ժամանակ դա վիթխարի գումար էր, շատ հայեր պիտի պարտք վերցնեին և իրենց ամբողջ կյանքի ընթացքում վճարեին:

Արդեն վրա էր հասել ժամանակը՝ հրամայված մեծ ուղևորությանը նախապատրաստվելու: Անկողինները, հագուստները և սննդամիջոցները բեռնվեցին ձիասայլերի վրա: Հայրս և երեք հորեղբայրներս տարված էին թուրքական բանակ, բացակայում էին: Տատս վշտից մահացավ: Գրպանս լիքը ոսկեդրամ, ես իշին հեծած, մյուսները սայլերի վրա նստած, ժանդարմների ուղեկցությամբ շարժվեցինք քաղաքից դուրս: Մալաթիայից մինչև Եփրատ գետը ընկած հատվածը անցանք մի կերպ, մեծ դժվարություններով: Հասնելով Եփրատ գետին՝ հրամայեցին, որ նավակներով գետն անցնենք, ընդ որում, մարդկանց տեղավորում էին առանձին նավակներում, անասուններին և սայլերը՝ այլ նավակներում. մեզ բերեցին գետի մյուս ափը, սակայն անասունները և սայլերը չբերվեցին: Այսպես սկսվեց թշվառությունը: Ժանդարմները մեզ քշում էին մտրակներով, քանի որ մենք պետք է որոշակի տարածություն անցնեինք: Ով այլևս չէր կարողանում քայլել, մնում էր ճանապարհի եզրին ընկած: Երբ արդեն մըտրակը չէր օգնում, մարդկանց գնդակահարում էին կամ սվինահար անում, որ նրանք հետ չփախչեն: Երբ անցնում էինք մի գյուղի մոտով, փորձեցինք, ինչ մոտներս ունեինք, լինի դա դրամ, զարդ կամ հագուստեղեն՝ փոխանակել սննդամթերքի հետ: Քարավանները, որոնք սկզբում շատ մեծ էին, սկսեցին գնալով նվազել. մասամբ մահանում էին, մասամբ՝ դաժանորեն սպանվում էին, որը չեմ կարող այստեղ վերստին նկարագրել: Մինչև չորս տարեկան երեխաներին մեծ մասամբ առեվանգեցին, որ նրանց որպես թուրք իրենց համար մեծացնեն, այնպես, ինչպես սուլթաններն էին անում: Երիտասարդ աղջիկներին նույնպես իրենց հարազատներից զատեցին, և նրանց ճակատագիրը էլ ավելի դաժան եղավ: Շատերը փորձեցին իրենց Եփրատը նետել, խեղդվել, անարգանքից ձերբազատվել: Մենք երեք անգամ կտրեցինք անցանք Եփրատը, որը շատերի գերեզմանն էր դարձել: Մեր ընտանիքը ևս մեծապես ընվազեց: Թե ինչպես ոմանք մահացան, թող ինձ ներվի, որ լռում եմ:

Մենք հասել էինք Սուրուճ: Մենք դեգերել էինք սիրիական ամբողջ անապատով, հավանաբար երկու հազար կիլոմետր կտրել անցել էինք: Երբ հասանք ջրի մոտ, մի մարդ եկավ, բոնեց մազերիցս և տարավ: Ինձ բերեց մի տուն, ուր ուտելու և խմելու բան տվեցին: Այդ մարդը հարցրեց ինձ. «Դու թուրքերեն խոսել և կարդալ կարո՞ղ ես»: Երբ ես դրական պատասխան տվեցի, նա ասաց, որ ինքը քաղաքապետն է, և ես պիտի իր մոտ մնամ: Ես խնդրեցի նրան՝ արդյոք չե՞մ կարող իմ կրտսեր քրոջը նույնպես ինձ հետ վերցնել: Նա համաձայնվեց և թույլ տվեց մի ժանդարմի ուղեկցությամբ գնալ քրոջս բերելու: Քարավանը չկար, բայց քույրս՝ Վերժինը, որը մնացել էր մեր ընտանիքից, տեղում էր: Հավանաբար ինչ-որ մեկի կողմից ետ էր պահվել: Այդ ընթացքում գյուղում հայտնի դարձավ, որ քաղաքապետը մի հայ է պահել, որը գրել ու կարդալ գիտի և կարող է իշխանությունների հետ նամակագրություն վարել: Այդ պարագան կարող էր վատ հետևանքներ ունենալ: Ուստի քաղաքապետը ուղարկեց ինձ Հալեպ: Մի արկղի մեջ թաքցրեցին ինձ և ուղտի վրա բեռնեցին: Մի օր քարավանապետը ասաց, որ ինքն ինձ իր հետ չի կարող քաղաք տանել, դա նրա համար շատ վտանգավոր է, եթե իմանան, որ ինքը որևէ հայի է քաղաք բերել:

Ես մերկ, ոտաբոբիկ հասա Հալեպ, գնացի հայկական եկեղեցի: Բազմությունը սկսեց հետաքրքրվել, թե ով եմ և որտեղից եմ գալիս: Այստեղ գտան իմ Բենիամին քեռուս, որն ինձ տարավ իր տուն, կերակրեց, քնացրեց: Նա ինձ տեղավորեց հիվանդանոցում, որպեսզի ոտքերիս միջից մանր քարերը և փշերը հեռացնեն ու ինձ բուժեն, քանի որ ես շատ ծանր վիճակում էի:

Երեք լրիվ օր գիտակցությունս կորցրել էի:

Այդպես մոտ մեկուկես միլիոն հայեր սպանվեցին: Միայն պատերազմից հետո շատ քչերին՝ ողջ մնացածներին, սիրիական անապատներից հավաքեցին:

Այնուհետև դպրոցն ավարտելուց հետո գերմանական հյուպատոսն ինձ ծառայության վերցրեց:

Հետո Հալեպի հայ համայնքն ինձ որպես վարիչ և ուսուցիչ հրավիրեց հայկական որբանոց: Հեշտ չէր որբերին քաղաքակիրթ կյանքի վերադարձնելու գործը: Հետագայում հայ որբերին Հայաստան ուղարկեցինք:

Ես հասկացա, որ Դերմանիան մեղսակից էր այս բոլոր ողբերգական իրադարձություններին:

83 (83).
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՄԻ ԶԱԴՐՋՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՍԵԲԱՍՏԻԱ, ԽՈՉՀԻՍԱՐ Գ.)

Մեր գերդաստանի նախնիները վանից են գաղթել, եկել, հաստատվել են Արևմտյան Հայաստանի Քյաղքյիկ գյուղում: Եկել են, վրան են զարկել Սեբաստիայի մոտ և դրանից հետո անունները մնացել է Զադըրջյան:

1913 թվին հորեղբայրս ապրում էր Սեբաստիայի Խոչհիսար գյուղում, որը նշանակում է մեծ սար: Հորեղբայրս կանչում է հորս՝ իր ընտանիքով, որ աշխատի այնտեղ: Հայրս այդ գյուղում փայտամշակման արհեստանոց է բացում: Թուրք մեծավորները հորս հետ շատ մտերմանում են: Թուրք մեծավորներից մեկը խնդրում է հորս, որ արտը քաղելու մի մեքենա սարքի: Հայրս շինում է: Այնպես որ, երբ տեղահանության հրաման էր եկած, հորս պահում են ասելով. «Սրա նման արհեստավոր մենք չունենք»: Այդ նույն թուրք մեծավորը հորս խորհուրդ կուտա. «Գնացե՛ք ջամի մտեք, դուք ձեր աղոթքը ըրե՛ք, դուրս եկե՛ք, ականջնիդ փոխեցե՛ք, գլուխնիդ պահեցե՛ք»: Մայրս չի ուզում: Այդ թուրք մեծավորը ասում է. «Ա՛յ քույրս, սա էլ մի քամի է՝ կանցնի: Համբերել է պետք»:

Քեռիս Սեբաստացի Մուրադի սանիկն էր, դրա համար նրան տարան տաք սաջի վրա նստեցրին, ասեղներով մարմինը ծակեցին, քանի մը օր ետքն ալ ձիու վրա ընկած բերին տուն, որ զենքին տեղը ըսէ: Ան ալ չըսավ, մեր աչքին առջև մորթեցին քեռուս՝ իր երեք երեխաներուն հետ: Փոքր քեռիս աքսորի ճամփաներից փախչում է, միանում է մի ուրիշ խմբի: Իմ մյուս հարազատ տղամարդկանց տարան աշխատանքային գումարտակ, քանի որ նրանք արհեստավոր էին, իսկ նրանց ընտանիքներին ոչնչացրին: Փոքր հորեղբորս և պապիս տանում գնդակահարում են: Լավ է, որ մենք Խոչհիսար գյուղում էինք, թե չէ մեզ էլ կտանեին, կսպանեին: Տատիկիս կոնակին եռացրած ջուր են լցրել, նրան էլ էդպես են սպանել:

Հորս, որպես շինարարի, պահել էին գյուղում. երբ հայերին հավաքած տանում էին սպանելու, թուրք մեծավորը, որը հորս հարգում էր, կըսե հորս. «Հիսուն հոգու հավաքե, որ աշխատեն»: Հայրս տեսնում է թևերը կապկպված հայերին, որոնց տանում էին մորթելու, ընդրանց միջից վաթսուն հոգու կընտրէ, նրանց կյանքը կը փրկե, կտանի իր մոտ, միասին կսկսին շենքեր կառուցել: Տարիներ հետո, իմ հարազատ տղան, երբ գնացել էր Բուլղարիա, ծանոթացել էր մի ծեր մարդու հետ, նա ասել է. «Քո պապը իմ և ուրիշ վաթսուն հոգու կյանքը ազատած է»:

1918 թ. մեծ հորեղբայրս եկավ մեզ տարավ Սեբաստիա: Արդեն զինադադար էր: Մեր գերդաստանից տասնհինգ հոգի կոտորվել են: Շատ հայ աղջիկներ թուրքերի մոտից ետ բերեցին, հայ տղաները նրանց հետ ամուսնացան: Հայկական եկեղեցին, դպրոցը վերաբացված էին, մտանք սովորանք:

Բոլոր հայերը լցված էին Սեբաստիա: Հրաման եկավ՝ բոլոր հայերին փոխադրել Հունաստան՝ Սիրա կղզին: Էնտեղ ես ու քույրս ամերիկյան որբանոց մըտանք: Ես արհեստ ալ սովորեցի:

Երբ 1922 թ. Քեմալ Աթաթյուրքը* ճնտավ կառավարության գլուխ, ան պատժեց բոլոր մեղավորներին, Սեբաստիայի անխիղճ ղեկավարներին կախեց և ասաց. «Էդ ինչ գազան կուսակցություն է Իթթիհատը, ան հայերին թշնամի էր»: Աթաթյուրքը վերին աստիճանի կիրթ մարդ էր:

Հինգ տարի որբանոցը մնացինք: Հետո հայրս նամակ գրեց, թե մենք գնում ենք Հայաստան, դուք էլ եկեք: Գնացի որբանոցի տնօրենին ըսի: Ան ըսավ. - Հայաստանը հետամնաց երկիր է, արի՛, ձեզ ղրկեմ Ամերիկա:

- Չէ՛, - ըսի, - պիտի երթանք միանանք մեր ծնողքին, մեր հայրենիքը պիտի երթանք:

Էկանք Հայաստան: 1941 թ. պատերազմին մասնակցեցա: Շատ կամուրջներ շինեցի: Երկու անգամ վիրավորվեցի: Արձակուրդ տվին: Նկա տուն, նորից գնացի կռիվ: Հասա մինչև Սևաստոպոլ, Չեխոսլովակիա, հաղթական վերադարձա: Աշխատեցի: Հիմա թոշակառու եմ:

---

* Վերապրողն իր հուշը գրի է առել գերմաներեն, որը հատվածաբար թարգմանել է պատմական գիտությունների թեկնածու Վաճրամ Մարտիրոսյանը:

** Դանիել Վարուժան (Զապուգքյարյան) (1884, Սեբաստիա – 1915, Մեծ եղեռնի նահատակ) – բանաստեղծ, գրական, հասարակական գործիչ:

* Մուստաֆա Քեմալ Աթաթյուրք (1881–1938) – Թուրքիայի պետական, քաղաքական և ռազմական ղեկավար: Թուրքական Հարապետության հիմնադիր և առաջին Նախագահ (1923–1938):

84 (84).
ՄԵԼԻՆԵ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՍԵԲԱՍՏԻԱ)

Հայտնի աշխարհագրագետ Զատիկ Խանզադյանը մեր գերդաստանենն է։ Ես որբ եմ մեծացել։ Նենես է ինձ խնամել։ Մեզ աքսորել են Աֆիոն-Գարահիսար։ Նենես կռնակը առած ինձ փախցուցել, հասել է Կոնիա։ Առավոտ կանուխ նենես կելլա, հսկողության տակ կըլլա, կըսե ժանդարմին. - Ինձ ձգեցեք եկեղեցի մը էրթամ, մոմ մը վառեմ. չե՛մ փախի։

Կձգե ժանդարմը։

Նենես կերթա վալիի մոտ, կըսե. - Մենք չենք ուզեր Դեր Զոր էրթալ, կուզենք հոս՝ Կոնիա մնալ, որովհետև Կոնիայեն անդին Դեր Զորի ճամփան պիտի բռնես։

Վալին թույլ տվեց, երեք տարի հոն մնացինք։ Մեծ մայրիկս ամերիկյան կոլեջին մեջը չորս հարյուր հայ որբերուն ճաշ կեփեր։ Ութը հայ հարուստներ հոգաբարձություն կըներին անոնց։ Նենես ադ կոլեջին մեջը արդուկ կըներ, քոլա կըներ։ Հետո նենես տուն բռնեց, մի որբ տղա մը առավ պահեց, որը հիմակ իմ ամուսինն՝ Աղասին դարձավ։ Սելանիկ (Սալոնիկ) ալ նենես որբանոցին մեջ խոհարար էր։ Հոն ալ անոր «Մայրի՛կ» կըսեին։ Վերջը Հունաստանեն Հայաստան եկանք։

85 (85).
ՀԱՅԿՈՒՇ ՄԻՐԻԶԱՆԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՍԵԲԱՍՏԻԱ)

1915 թ. ամենից առաջ տղամարդկանց հավաքեցին, ձեռքերնին կապեցին ու տարին։ Մնացին կընիկմարդիկ և երեխաները։ Անոնց ալ սար, անապատ քշեցին։ Մեզ հետ ինչ որ ունեինք՝ թալանեցին։ Ոչ մի բան մեզի չթողեցին։ Մեզի Դեր Զոր տարան, Սուրուճ տարան։ Մամայիս ոտքերը շատ քալելեն ուռան, կամուրջին տակը նստավ, ալ չկրցավ քալել։ Մեզի հալածողները ձիերու վրա եկան մեզ վրա, հազիվ փախանք։ Ինձի ուզեցին փախցնել, մամաս մազերս կտրեց, քեչել դարձրեց։

Քույր ու եղբայր, հարս ու աղջիկ ձեռք ձեռքի Եփրատն էին նետվում, ղամիշների մեջը խըշ-խըշ փախնում էին, որ թուրքերուն ձեռքը չընկնեն։ Մենք ալ փախանք՝ քույր - եղբայր ձեռք ձեռքի բռնած։

Հոն մի հատ ղըշլա կար։ Հոն հայ զինվորներ կային։ Հոն մեզի ցորեն և երկանք բերին, ըսին. «Քուր-ախպեր աղացե՛ք»։

Ուզեցին մեզի թուղթ հանել, որ տանին որբանոց։

Հոնտեղի արաբ գյուղացի մը երկու աղջիկները մեզի առին, պահեցին, ըսին. «Էս գառնուկները տարեք արածեք»։

Մենք տարանք։ Ամայի է։ Մարդ-մարդազանք չկա։ Մութը ընկավ։ Ճամփա չգիտենք։ Չախմախը վառում եմ, որ գայլերը չգան։ Ոտքերս ցավում են հոգնությունից, հազիվ գտանք արաբին չադրը։ Արաբ կինը ըսավ. «Գնա՛, չոբանին հետը կաթը կրակի վրա դիր»։

Ես ըսես նե՝ հոգնած եմ. արևը խփել է գլխիս։ Գլուխս ցավում է։ Մեկ էլ արաբ կինը դեփիկով խփեց, գլուխս կպավ երկաթյա խուփին, գլուխս ծակվեց։ Արյունը սկսավ չռալ։

Էդ արաբների չադրների կեսը տղամարդոցն էր, կեսը՝ կնիկմարդոց։ Ախպերս իմ ձեռքից բռնեց, տարավ իրանց մեծին քովը։ Ան իր կնիկին խփեց, ըսավ. «Ես էս սեֆիլներուն երեսեն հարստացա, ինչու՞ խփեցիր»։

Արաբները ինձ բռնեցին, պառկացրին, էրկանքի քարը դոշիս դրին։ Ես ոտքերս խփում եմ, որ չեմ ուզում, իրանք էլ ուզում են իմ երեսը դաճել թանաքով, որ եկողը կարծի թե ես արաբ եմ։

Ախպերս ինձնից չորս տարի մեծ էր, միասին փախանք։ Գացի՛նք, գացի՛նք։ Մեկ էլ հայ զինվորներ տեսանք։ Անոնք մեզի տարին Դեր Զորի ղեկավար Գրիգոր Էֆենդիին քովը, որը կազմակերպում էր հայ որբերը հավաքելու գործը։ Անոնք մեզի տարին միսս Եփփե մայրիկին որբանոցը։ Որբանոցին մեջ Ուրֆայի գործ կձեռագործեին, կտանեին Ամերիկա կծախեին։ Ես հոն շատ մնացի, իսկ ախպերս՝ վեց ամիս։ Վերջը տեսա, որ ախպերս մենակը չի կարողանում դասավորել։ Ես ալ որբանոցեն ելա։

Սուրիայում ամուսնացա, երկու տղա ունեցա։ 1946-ին եկանք Հայաստան։

86 (86).
ԱՐԱՔՍԻ ՕՆԲԱՇՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ՍԵԲԱՍՏԻԱ)

Ես ծնվել եմ Սեբաստիայում։ 1915 թվի տեղահանության ժամանակ վեց տարեկան էի։ Մեզի աքսոր հանեցին դեպի Սուրուճ անապատին կողմը։ Ինդոր էղավ չեմ հիշեր՝ ես կորսնվեցա։ Չորս կողմս նայեցի՝ ամայի, մարդ-մարդազանք չիկար։ Ես սկսա լալ...։ Մեյ մըն ալ տեսա հեռուեն ուղտին վրա նստած մարդ մը մոտեցավ ինձի։ Երևի գիտցավ իմ կորսված ըլլալս, ինձի առավ, տարավ իր չադրը։ Ան ինձի հաց տվավ՝ կերա, կաթ տվավ՝ խմեցի, անկյուն մըն ալ ցուցուց՝ հոն քնացա։ Այդտեղ ալ մնացի։ Օրվան մեջ չադրը կավլեի, կմաքրեի, ջրհորեն ջուր կբերեի։ Իմ տերը արաբ բեդվին էր։ Ան ինձի շատ կսիրեր, միշտ կըսեր. «Յա՛, բէնթա՛, էնթա հէլուա՛ աուիյ» (Աղջի՛կ, դուն շա՛տ գեղեցիկ ես)։ Եվ կսպասեր, որ քիչ մը մեծնամ, որ իր տղային հետ ինձի ամուսնացներ, քանի որ ճերմակամորթ էի, երևի կուզեր իրենց սերունդը ճերմկցնել...

Օրին մեկը ոտքերս՝ բոբիկ, վրաս-գլուխս՝ պատըռ-պատըռ, նորեն գացեր էի ջրհորը։ Ջուրով լեցուն խովան վեր քաշելու ժամանակս, մեյ մըն ալ չիմացա՝ ինդոր, մեկը մեջքիս գոտիի պես բան մը զարկավ, ինձի քաշեց իր ձիուն վրա, խամշին զարկավ ձիուն, ձին վազել սկսավ։ Ու՞ր կէրթանք՝ չեմ գիտեր...

Բեդվին տերս անապատին բացության մեջը կերևի տեսավ, որ ձիավոր մը ինձի փախցուց, ուրիշ քանի մը արաբներուն հետ, ուղտերուն վրա նստած սկսան մեզի հետապնդել։ Բայց մենք արդեն հեռացեր էինք...

Նայեցա, ինձի փախցնողը եվրոպացի շատ շընորհքով զինվորական մըն էր։ Ան ինձի հարազատ զավակին պես գրկած, ձիուն վրա հասցուց գյուղի պես տեղ մը։ Հոն բարի քյուրդ կնիկի մը դրամ տվավ, ան մեզի ներս առավ՝ պահեց։ Ադ քյուրդ կինը կկարծեր, որ եվրոպացի զինվորականը իմ հայրս է. «Փափա՞, փափա՞» կհարցներ, հա՞յրդ է, բայց ես ձայն չէի հաներ, քանի որ չգիտեի ի՞նչ ըսելս...

Քանի մը օր հոն մնացինք գաղտնի։ Օրին մեկն ալ տեսնամ աս քյուրդ կինը գետինը չոքեց, արդեն գետինն ալ հող էր, տեսնամ ականջը մոտեցուց գետնին, երբ համոզվեցավ, որ դուրսը ոչ ոք չկա, մեզի կամացուկ մը դուրս հանեց, ճամփու դրեց...

Եվրոպացի զինվորականին ձին մութին մեջը կէրթար. մեյ մըն ալ գայլերու ոռնոց լսեցինք։ Տեսանք արդեն անոնք շրջապատել են մեզի։ Մութին մեջը ամեն մեկ գայլին աչքերը զույգ մը ճրագին պես կփայլեին։ Ես վախես փաթթվեր էի զինվորականին։ Անի ալ կերևի փորձառու էր, հեմեն ֆեները հանեց՝ վառեց։ Գայլերը լույսը տեսնալուն պես փախան։ Մենք շունչ քաշեցինք, մեր ճամփան շարունակեցինք։ Արդեն լուսացեր էր, երբ հասանք Պոլիս։ Աղվոր տունի մը մոտեցանք, ու մեր ձին կանգ առավ։ Երբ տունեն ներս մտանք, իրարանցում մը կար։ Դու մի ըսեր՝ ադ տունին տերը հույն բժիշկ մըն է։ Անոր յոթ-ութ տարեկան աղջիկին թուրքերը փախցուցած կըլլան։ Հույն բժիշկը աս զինվորականին կուտա իր կորսնված աղջիկին պատկերը և կխնդրե անոր, քանի որ ան որպես եվրոպացի սպա իրավունք ուներ Թուրքիո նահանգներուն մեջ ազատ պտտելու, եթե իր աղջիկին գտնա, առնե բերե և իրեն բախշիշը առնե։ Աս սպան կփնտրե հույն բժիշկին աղջիկը, բայց չի գտնար։ Երբ ինձի կտեսնա ջրհորին գլուխը՝ ոտքերս բոբիկ-մոբիկ, կմտածե՝ գնե աս պզտիկ աղջիկը տանիմ հույն բժիշկին՝ իր աղջիկին փոխարեն... Ադ ձևի տակ ինձի կառնե, կբերե Պոլիս։ Երբ մենք տունին կմտնեանք, հույն բժիշկին կինը ձիու սմբակներուն ձայնը լսելուն պես, կնետվի պատուհանը, կտեսնա սպան աղջըկան ձիեն վար կառնե, կկարծե, որ իր հարազատ աղջիկն է գտնված, ուրախութենեն սիրտը կպայթի, տեղնուտեղը կմնա։ Անոր համար ալ, երբ այդ տունեն ներս մտանք, իրարանցում մը կար...։ Բայց հույն բժիշկը նաժիշտներուն ըսավ, որ ինձ տանին լոգցնելու, քանի որ արաբներուն քովը լվացվիլ-մվացվիլ չիկար. կարագը, յուղը կքսվեին, արևին կնստեին, մաշկը կծծեր յուղը, վերջն ալ գետը կմտնային, կլողնային, իբր թե մաքրված կըլլային։ Անոր համար ալ ես շատ աղտոտ վիճակ մը ունեի։ Ինձի բաղնիք մտցուցին, աղվոր մը լոգցուցին։ Վերջն ալ նոր հագուստներ բերին։ Հագցնելու ժամանակ նաժիշտներեն մեկը թևիս վրա տեսավ «Ա-Օ» հայերեն գիրերը. ադ մայրիկս ծեծած էր, որ եթե կորսվիմ՝ գտնան։ Անոնք կանչեցին հույն բժիշկին, ցույց տվին թևիս վրայի գիրերը։ Ան շատ բարի մարդ մըն էր, ակնոցներուն մեջեն նայեցավ՝ արմենիքոս, այսինքն՝ հայ է, ըսավ։ Եվ իր վիշտին մեջ ինձի տարավ հանձնեց հայկական որբանոց։

Քանի մը ժամանակ մնացի որբանոցը։ Օրին մեկը մարդ մը էկավ։ Ան կփնտրեր աղջիկ մը, որուն թևին վրա «Ա-Օ» գիրերը ծեծված ըլլան։ Հայ որբուհիները սկսան իրար հարցնել. - Արդյոք սա որու՞ն բախտն է բացված։

Դուն մի ըսեր, ադ իմին մորեղբայրս է։ Թևիս վրայի գիրերը տեսավ, ուրախութենեն սկսավ ինձի համբուրել։ Ինձի առավ, որբանոցեն դուրս հանեց, տարավ տուն մը։ Դուռը բացավ ճերմակ մազերով կին մը։ Ան ինձին տեսնալուն պես. - Իմի՛նս է, - ըսավ, հուզմունքեն ակռաները բերանին մեջ թափվեցան...

Խեղճ մայրս ինձի կորսնցնելեն վերջը այնքա՛ն լացեր է, որ մազերը ճերմկցեր էին։ Արդեն ինքն ալ բավական տանջվեր էր։ Արաբ փաշայի մը քովը ծառայություն էր ըրեր։ Արաբ փաշան կուզե էղեր իր կույր տղային հետ ամուսնացնել, հարսանիքին օրը մայրս կփախի ադ տունեն։ Ոտքով քալելով-քալելով կուգա, կհասնի Պոլիս։ Հոն կգտնա իր եղբորը։ Ան ալ որբանոցեն ինձի կգտնա, կտանի իր քրոջը՝ Փուփուլին...

Վերջը մամաս ամուսնացավ հայ բարի մարդու մը հետ։ Մենք գնացինք Ռումինիա ապրելու։ Հիտլերին պատերազմին ժամանակ խեղճ մարդը բոմբերուն տակը մնաց՝ մեռավ։ Ես արդեն ամուսնացած էի հայ երիտասարդի մը հետ։ Ան ալ շատ կուզեր Ամերիկա հաստատվիլ։ Վերջապես օրին մեկը էկանք Նյու Յորք։ Հիմա ամուսինս կաշխատի օթոններուն գերեզմանոցը, հոն յըղնված հին օթոններուն, բասերուն մասերը կհանե, կըտանե, կհանձնե, որ նոր օթո շինեն...

Իշտե՛, կյա՛նք մըն է, կապրինք։ Է՛, ձա՛գս, մարդ իր տունեն ոտքը դուրս դնե նե, հազար ու մեկ փորձանքի կուգա։ Ի՞նչ ըսեմ անոնց, որ մեր գլխուն աս զուլումը բերին։ Ղուրբեթ իջադ էդեն գյորմեսին ջեննեթ (Պանդխտություն հնարողը թող չտեսնի դրախտ)։

87 (87).
ԽՈՐԵՆ ԳԱՍՊԱՐԻ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ՍԵԲԱՍՏԻԱ, ԴԵՎՐԻԿ)

Դևրիկ գավառը Սեբաստիայի վիլայեթի մեջ է մտնում: Քաղաքի ձախ կողմից հոսում է Հալիս գետը: Դևրիկը շրջապատված էր ընդարձակ պտղատու այգիներով և պարտեզներով: Քաղաք մտնելիս գրեթե շենքեր չէին երևում, քանի որ նրանք ամբողջությամբ շրջապատված էին կանաչով: Քաղաքն ուներ երեք եկեղեցի և երկու վարժարան: Ազգային կամ Ներսեսյան վարժարան, որն ուներ մոտ հինգ հարյուր աշակերտ և տասնչորս ուսուցիչ: Այդ ժամանակ Թուրքիայի գավառական քաղաքները, առավել ևս՝ գյուղական վայրերը, շատ հետամնաց էին: Մեր քաղաքում շատ գործարաններ չկային, և շատերը գնում էին պանդխտության:

Իմ հայրը նույնպես 1902 թ. աշխատանք է գտնում Սամսուն քաղաքում: Աշխատում է պղնձագործական արհեստանոցում, որպես վարձու բանվոր: Սամսունը գտնվում էր Սև ծովի ծոցերից մեկի ափին, բայց նավամատույցը հարմար չէր, որ նավերը մոտենան ափին: Այդ իսկ պատճառով նավերը խարիսխ էին գցում բաց ծովում, ափից բավական հեռու: Բեռները տեղափոխում էին շատ մեծ նավակներով: Քաղաքի արևմտյան կողմում գտնվում էր Բաֆրան, իսկ արևելյան կողմում՝ Չարշամբա փոքր քաղաքները: Սամսունում բնակվում էին թուրքեր, հայեր, հույներ: Սամսունը հայտնի էր բարձր որակի անուշահոտ ծխախոտով, ձկան պահածոների, զովացուցիչ ջրերի, հրուշակեղենի փաբրիկաներով: Ուներ նաև լավ զարգացած առևտուր: Սամսունում հայրս տուն վարձեց, և մենք ընտանիքով փոխադրվեցինք այդտեղ: Մեր ընտանիքը շատ համեստ էր ապրում:

1907 թ. ընդունվեցի Սամսունի Ներսիսյան միջնակարգ դպրոցը: Դպրոցում բացի հայերենից պարտադիր էին նաև թուրքերենն ու ֆրանսերենը: Դեռ փոքր տարիքում ես շատ էի սիրում նկարել, իսկ դպրոցում է՛լ ավելի տարվեցի նկարչությամբ: Դպրոցում հաճախ էին կազմակերպվում ցուցահանդեսներ, որտեղ ցուցադրվում էին նաև իմ նկարները: Ցուցահանդեսներից մեկի բացմանը եկավ նաև Սամսունի մութասարիֆը: Նա հավանեց և գնեց իմ նկարներից երկուսը: Այս դեպքը հետագայում որոշ դեր խաղաց իմ կյանքում:

1915 թվականի գարնանը, երբ առավոտյան դուրս եկա դպրոց գնալու, տեսա, որ փողոցում ձիավոր ոստիկաններ էին ման գալիս և թույլ չէին տալիս տներից դուրս գալ: Մեր տան դռանը, նաև ուրիշ տեղերում փակցված էին քաղաքագլխի կողմից ստորագրված թերթիկներ, որոնք հայտարարում էին. «Քաղաքի բոլոր հայերը անխտիր մի շաբաթվա ընթացքում պետք է տեղահանվեն և ուղարկվեն երկրի խորքը»: Այնտեղ նշված էր նաև, որ այդ միջոցառումը պետք է գործի մինչև պատերազմի ավարտը: Այդ հայտարարությունը տակնուվրա արեց ամեն ինչ: Հայերը պետք է թողնեին ամեն ինչ և հեռանային:

Սկսվեց արևմտահայերի հերթական և ամենաահավոր գենոցիդը: Հարուստ հայերն իրենց դրամը պահում էին բանկերում: Բայց տնից դուրս գալն արգելված էր, հետևաբար նրանք մնացին միայն իրենց մոտը եղած դրամով:

Երեք օր անց մի առավոտ կառավարության երկու պաշտոնյաներ եկան մեր տունը: Նրանք իրենց հետ բերել էին նաև սայլ և ստիպեցին մեզ հավաքվել ու մեկնել քաղաքից: Մեզ հրամայեցին վերցնել անհրաժեշտ իրեր, բարձել սայլերին և հեռանալ տնից: Մեր քարավանը բաղկացած էր հարյուր ընտանիքից: Մենք ուղղվում էինք դեպի հարավ, Անատոլիայի խորքերը: Ամբողջ օրը ճանապարհ գնալուց հետո գիշերեցինք մի փոքր անտառի եզրին: Բոլորը հոգնած էին, տխուր ու տրտում: Առավոտյան արթնացանք, շարունակեցինք մեր տանջալի ճանապարհը:

Մեր ընտանիքը բաղկացած էր հինգ հոգուց՝ հայրս, մայրս, երկու քույրերս և ես: Կառավարությունը թուրքերին լարել էր հայերի դեմ՝ ասելով, որ հայերը իբրև անհավատներ են, նրանք աչք ունեն մեր հողերին, բազմաթիվ անգամ ապստամբել են մեր պետության դեմ, հետևաբար նրանց հոշոտելը և սպանելը մեղք չէ:

Իմ հորեղբայրը՝ Գևորգ Գյուլբենկյանը, 1914 թ. գերազանց դիպլոմով ավարտել էր Պոլսո բժշկական համալսարանը: Նրան կանչել էին զինվորական ծառայության և ուղարկել Տրապիզոն՝ գնդապետի կոչումով: Ծառայության ժամանակ մի թուրք խնդրել էր նրան տալ իրեն կեղծ տեղեկանք, որով ազատվեր զինվորական ծառայությունից: Հորեղբայրս մերժել էր: Հաջորդ օրը այդ թուրք բարբարոսը դաշույնով սպանել էր հորեղբորս: Նրա միակ մեղքը հայ լինելն էր:

Տասնհինգ օր ճանապարհ գնալուց հետո ամենուրեք հանդիպում էինք նոր սպանված հայերի դիակների: Մեր կրած զրկանքներն ու տառապանքները հնարավոր չէ նկարագրել: Այդ տեսարանները տեսնելուց հետո քարավանի մարդկանց տրամադրությունը շատ վատ էր, հոգեպես ընկճված, ֆիզիկապես հյուծված ու հուսահատված սպասում էին իրենց վախճանին: Ահավոր շոգը, սովը, ծարավն ու հիվանդությունները հալ ու մաշ էին արել բոլորին: Կանայք լաց էին լինում իրենց կորցրած զավակների ու հարազատների համար: Դժվար է նկարագրել այդ բոլորը: Սարսափելի էր երեխաների վիճակը, մեկը՝ ծարավ էր, ջուր էր ուզում, մյուսը՝ սոված էր, հաց էր ուզում, մեկը ուժասպառ էր՝ չէր կարող քայլել և այլն: Շրջակա գյուղերի թուրքերը նույնիսկ ջրամանները էին կոտրում, որ մենք չկարողանանք ջուր խմել: Գյուղերում չէին թողնում, որ աղբյուրներից ջուր խմենք: Պետք է հասնեինք առուների կամ գետերի, որպեսզի դրանց պղտոր ջրերով մեր ծարավը հագեցնեինք: Սարսափելի անելանելի վիճակ էր դեռևս կենդանի մնացածների համար, որոնք սպասում էին մահվան, որը միակ փրկությունն էր նրանց համար: Ճանապարհին շրջապատի թուրքերը, չերքեզները, չեչենները և

քրդերը անընդհատ հարձակումներ էին գործում մեր քարավանի վրա, կողոպտում էին և սպանում: Դրանք սովորական երևույթներ էին դարձել մեզ համար: Մեզ ուղեկցող ոստիկանը անզոր էր որևէ օգնություն ցույց տալու, չնայած նա նույնիսկ փորձ էլ չէր անում: Ճանապարհի տասնիններորդ օրը փոքր քույրս չդիմացավ և մահացավ: Նրա մահը մեծ վիշտ պատճառեց մեր ընտանիքին:

Երբ մեր քարավանը հասավ Ամասիա, որը գտնվում էր Եշիլ ըրմաղ (կանաչ գետ) գետի ափին, տեղի պաշտոնյաները մեզ հայտնեցին, որ քաղաքի միջով անցնելիս ոչ ոքի թույլ չի տրվելու շարքերից հեռանալ և գնումներ կատարել: Նրանք առաջարկեցին քարավանի տղամարդկանց նախօրոք գնալ քաղաք և պետք եղածը գնել: Տղամարդիկ այդպես էլ արեցին, բայց երբ մենք մտանք Ամասիա, ոչ մի տղամարդ չկար, բոլորին սպանել և դիակները գցել էին փոսերը: Այդ մասին մենք իմացանք մեր սայլապանից, որին հայտնել էին տեղացի թուրքերը, որոնք ականատես էին եղել այդ ամենին: Քարավանում բոլորը սկսեցին ողբալ իրենց հարազատների կորուստը: Մնացին ծերունիներ, կիներ և պատանիներ, որոնց թվում նաև ես: Մի քանի օր ճանապարհ գնալուց հետո մենք հանդիպեցինք գողերից, ավազակներից և մարդասպաններից կազմված մի ջոկատի: Ռուսական բանակը հարձակվում էր, և թուրքերը ստիպված, որպես հրանոթի միս, օգտագործում էին նաև բանտարկյալներին: Այդ ջոկատը մեր մոտով անցնելիս, հրամանատարը ինձ հարցրեց, թե՝ ինչու՞ են կանայք և երեխաները լաց լինում: Ես պատասխանեցի, որ՝ շա՜տ են հոգնել, իսկ սայլապանը չի կանգնեցնում, որ հանգստանանք: Հրամանատարը հրամայեց սայլապանին՝ կանչել ոստիկանին իր մոտ: Մինչ ոստիկանի գալը, նա հարցրեց, թե՝ ուր են մեր քարավանի տղամարդիկ: Ես պատմեցի այն ամենը, ինչ կատարվել էր մեզ հետ: Երբ ոստիկանը եկավ, նա հարցրեց, թե ինչու չի կանգնեցնում քարավանը գիշերելու: Ոստիկանը պատասխանեց, որ շուտով հասնելու ենք Քյոռօղլու ձորը, որտեղ և գիշերելու ենք: Իսկ երկրորդ հարցին, թե՝ ու՞ր են տանում մեզ, ոստիկանը հայտնեց, որ հրամայված է մինչև Շեհիր ղշլա, մեզ պիտի հասցնի և ետ պիտի վերադառնա:

Հասանք Քյոռօղլու ձորը: Գիշերվա կեսին մեր քարավանը մտան չորս սպա, որոնք զենքի սպառնալիքով մեզնից հափշտակեցին այն ամենը, ինչ որ մնացել էր մեզ մոտ, իսկ մի քանի ծերունիների և պատանիների, որոնց թվում և ինձ, տարան իրենց հետ: Բավական ճանապարհ գնալուց հետո հանկարծ լսվեց ձիերի դոփյուն: Սպաներն անմիջապես ձիերից վար իջան և դիրք գրավեցին: Մեզ հարցրեցին. «Մուրադ փաշայի այսինքն՝ կովտնցի հերոս Մուրադի զինված խումբը այս կողմերում չի՞ երևացել»: Մենք պատասխանեցինք, որ այդ մասին մենք գաղափար չունենք: Մեզ թույլ տվեցին, որ գնանք մեր հարազատների մոտ:

Վերջապես հասանք Շեհիր ղշլա, որը մեր վերջին հանգրվանն էր լինելու: Այստեղ կար մի ընդարձակ տարածություն, որտեղ հանգրվանել էին տարբեր վայրերից եկած հազարավոր հայեր: Նրանց մեծ մասը կանայք և երեխաներ էին: Այդ դժբախտ մարդիկ անոթի, ծարավ, հիվանդ ու տանջված սպասում էին իրենց վախճանին: Ճամբարում տարածվել էր խոլերան: Մեր հասնելուց մի որոշ ժամանակ անց, եկան մի քանի պաշտոնյաներ: Նրանք հավաքեցին բոլոր պատանիներին և աղջիկներին: Թուրքերը մոտենում էին նրանց և որպես ապրանք ընտրում ու տանում էին տղաներին՝ բատրակության, բանվորության, իսկ աղջիկներին՝ իրենց ընտանիքներում ծառայության: Աղջիկներից ամենագեղեցիկներին տանում էին իրենց հարեմները: Ինձ վերցրեց Շեհիր ղշլայի մի նպարավաճառ՝ իր խանութում աշխատելու: Այդպես իմ կյանքը փրկվեց, բայց ինչ եղավ իմ քրոջ հետ, ես չիմացա և այլևս չտեսա նրան երբեք: Ինձ տրվելիք ուտելիքի մի մասը խնայում էի և տանում մորս, որը շատ ողբալի վիճակում էր մնացել, մեն-մենակ: Նա խնդրում էր, որ իր մոտ չգնամ և վտանգի չենթարկեմ իմ կյանքը. «Տղա՛ս, իմ մասին մի՛ մտածիր, - ասում էր նա, - իմ ժամերն արդեն հաշվված են: Մեր գերդաստանից միայն դու ես մնացել, աշխատիր, որ գոնե դու փրկվես և չթողնես, որ մեր օջախը մարի»: Երբ մի քանի օր հետո նորից գնացի մորս մոտ, նա արդեն մահացել էր:

Մոտ տասնհինգ օր նպարավաճառի մոտ աշխատելուց հետո նա մի օր ինձ հայտնեց, որ իր մոտ մնալը վտանգավոր է իմ կյանքի համար: Եվ առաջարկեց, որ իր ծանոթ մի գյուղացու հետ գնամ նրանց գյուղը: Այդ գյուղացու հետ մենք եկանք Բոզշուտ գյուղը: Այդ գյուղի գյուղացիները ժամանակին գաղթել էին Կարսից և բնակություն էին հաստատել այդ գյուղում: Ինձ բերող գյուղացին գյուղի գյուղապետն էր: Նա ինձ բերել էր, որ ես աշխատեմ իր եղբոր համար: Նրա եղբայրը ծեր էր և կույր: Բացի ինձանից, ուներին մեկ ուրիշ բատրակ: Նրա տնտեսությունը բավական մեծ էր, ուներ հինգ հարյուր գլուխ ոչխար, կով, ձի և ընդարձակ հողատարածություններ:

Աշխատանքը գյուղում շատ ծանր էր: Քանի որ ես ծնվել և մեծացել էի լինելով քաղաքում, բոլորովին սովոր չէի գյուղական աշխատանքներին: Ամենափոքր սխալի համար իմ տերը դաժանորեն ծեծում էր: Մի օր ոչխարը արածացնելու ժամանակ երկու ոչխար կորել էր, քիչ մնաց ինձ սպանեին, եթե մի հովիվ չասեր, որ այդ երկու ոչխարները եկել և խառնվել են իր հոտին: Մոտ չորս տարի աշխատեցի այդ գյուղում: Ոչխար արածացնելու ժամանակ հաճախ հանդիպում էի հայերի դիակների, դրանք մեր շրջապատի թուրքերի կողմից սպանված հայերի դիակներ էին: Ես գիշերը քնում էի գոմում, անասունների հետ: Ճիշտ է, գոմում տաք էր, բայց օդը շատ ծանր էր: Սակայն պետք է դիմանայի, ուրիշ ելք չունեի: Իմ միակ մխիթարանքն այն էր, որ անոթի չէի: Սակայն շատ դժվար էր մուսուլմանների ռամազա կոչվող կրոնական տոնին, որը տևում էր մեկ ամիս: Այդ մեկ ամսվա ընթացքում առավոտյան ժամը վեցից մինչև երեկոյան ժամը վեցը ո՛չ կարելի էր ուտել, ո՛չ խմել: Չուտելուց այնքան չէի նեղվում, բայց ջուր չխմելը շատ դժվար էր: Գյուղի գյուղացիներն անգրագետ էին, դրա համար բոլոր գրագրությունները ես էի անում: Իմ նկատմամբ լավ էին վերաբերվում:

Ամեն տարի որպես **հարկ, գյուղից** հացահատիկ էին տանում Սեբաստիա: **Մի անգամ** Սեբաստիայից վերադառնալիս հանդիպեցի **իմ** ամենալավ ընկերոջը՝ Բարսեղին: Նա ևս **ինձ** նման **բատրակություն** անելով ողջ էր մնացել: Մենք **գրկախառնվեցինք** և սկսեցինք ուրախությունից լաց լինել: Նա ինձ նման մեկ այլ գյուղի գյուղապետի մոտ էր աշխատում, որը **մեր** գյուղից մոտ վեց ժամվա ոտքի ճանապարհ էր: Այդ ժամանակ մենք երկուսով որոշեցինք **փախչել** և գնալ Պոլիս: Ինձ համար հարմար առիթ ստեղծվեց, երբ գյուղի տղամարդիկ սայլերով գնացել էին աղ բերելու: Տարին մեկ անգամ գնում էին աղի հանքից **աղ** բերելու: Այդ օրը տան կանանց հետ ես գնացել էի դաշտ աշխատելու: Կեսօրվա շոգին ճանճերը **հանգիստ** չէին տալիս մեր ձիուն: Ես խնդրեցի թույլատրել տուն տանել ձիուն և վերադառնալ: Տանը մի քանի լավաշ հաց վերցրեցի, ձին թամբեցի և քշեցի դեպի Սեբաստիա: Սակայն շատ շուտով ինձ հասան աղ բերելուց վերադարձած տղամարդիկ, ինձ բռնեցին, կապեցին, երբ դեպի գյուղի ճամփան ընկանք, իմ ետևից եկողներից **երկուսը** ուզեցին ինձ սպանել: Սակայն **երրորդը**, որը գյուղապետի տղան էր, թույլ չտվեց: Նրանք համաձայնության եկան ինձ ետ տանել գյուղ, պահել խիստ **հսկողության** տակ և փոքր կասկածի դեպքում՝ **սպանել**: Այս դեպքից երկու շաբաթ անց ես ավելի լավ սկսեցի աշխատել, բայց այս անգամ որոշեցի փախչել սարերով:

Սեբաստիա գնալու համար պետք է անցնեի Ղզըլ ըրմաղ գետի վրայի կամուրջով: Կամուրջի վրա գիշեր-ցերեկ հերթապահ զինվորներ կային, որովհետև այդ ժամանակ բանակից փախչողներ շատ էին լինում: Ինձ համար վտանգավոր էր կամուրջի վրայով անցնելը: Որոշեցի լողալ: Ծորերս հանեցի, կապեցի մեջքիս և լողալով անցա գետը: Գետի մյուս ափը շորերս հագա, շարունակեցի ճամփաս: Մութը դեռ չէր ընկել, հասա Սեբաստիա: Տեսա հայկական թաղամասի խանութները ավերված են: Չգիտեի՝ ու՞ր գնալ, ու՞մ դիմել: Գրպանումս փող չկար: Երկու օր սոված մնացի, գիշերեցի մի խարխուլ տան մեջ: Առավոտյան արթնացա երկու աչքերս ուռել էին ու փակվել: Կրակի պես վառվում էի: Հազիվ դուրս եկա փողոց: Մի թուրք մոտեցավ ինձ, մեղքացավ, տարավ հիվանդանոց: Էնտեղ չորս օր պահեցին, դուրս գրեցին: Քաղաքում երկար թափառելուց հետո աշխատանք գտա մի փոքրիկ սրճարանում, որպես մատուցող: Ինձ չէին վճարում, միայն կերակրում էին, երբեմն էլ հաճախորդները բախշիշ էին տալիս:

Այդ օրերին ես իմացա, որ ռուսական բանակը Էրզրումից հաղթելով մոտենում է Երզնկային: Ես որոշեցի գնալ Երզնկա, հասնել մինչև ռուսական բանակը և խնդրել, որ ինձ իրենց հետ տանեն կա՛մ Արևելյան Հայաստան, կա՛մ՝ Ռուսաստան: Սակայն բանակը հրաման էր ստացել նահանջել, և ես նորից ճարահատ վերադարձա Սեբաստիա: Իմացա, որ այստեղ գտնվող մի վանք կա, որը դարձրել են պետական գիշերօթիկ դպրոց: Բայց այդ դպրոցը ընդունվելու համար պետք էր Սեբաստիո վալիի թույլտվությունը: Դիմումը գրեցի, գնացի վալիին: Քարտուղարը դիմումս տարավ վալիի մոտ: Վալիին ասել է՝ թող վաղը գա: Հաջորդ օրը, ժամը տասնմեկին գնացի: Վալիին սիրով ընդունեց ինձ, հարցրեց ազգանունս, ասաց. -Նկարչություն անու՞մ ես:

- Այո՛, նույնիսկ մութասերիֆը գնել է իմ նկարները, - ասացի ես:

Վալիին հանեց իր դարակից իմ նկարները, որոնք շատ տարիներ առաջ գնել էր ցուցահանդեսից, ասաց. - Տարեք սրան, թող սովորի:

Գնացի սովորելու: Էնտեղ մի ուրիշ հայ տղա էլ կար, որի հետ նույն սենյակում էինք քնում: Մի գիշեր իմ պատը թխկթխկացնում էին: Կողքիս պառկող ընկերը դուրս եկավ, պարզվեց, որ եկողը Մուրադն է: Եկել էր իր ձիով, ճամփին հետագրական թելերը կտրել էր: Այդ հայ տղան կովտնցի Մուրադի ծննդավայրից էր: Հետո ես իմացա, որ այդ տղան Մուրադին ճանաչում էր և նույնիսկ մի քանի անգամ գիշերը գաղտնի հանդիպել են դպրոցում: Նա նույնիսկ գիտեր Մուրադի պատմածից, որ տեղի հայերը նախքան տեղահանվելը մոտ երեք հարյուր հատ զենք իրենց փամփուշտներով թաղել էին վանքի բակում, որտեղ որ գտնվում էր մեր դպրոցը: Մուրադը խնդրեց մեզ, որ մենք ամեն կերպ գըտնենք այդ հրացանների թաղված տեղը: Մենք անշուշտ չէինք կարող բացահայտ փորփրել շրջապատը: Մենք փնտրեցինք, բայց՝ ապարդյուն: Մի քանի օր հետո Մուրադը իր թիկնապահ Եղոյի հետ հասնում է Սամսուն: Ծովեզերքին գտնվող նավակի տիրոջը զենքի ուժով ստիպում են իրենց տանել ծովի խորքը, մինչև որ հանդիպի ռուսական որևէ նավի: Հանդիպում է մարտանավի և ռուսների օգնությամբ հասնում է Անդրկովկաս:

Ամառային արձակուրդների ժամանակ մենք պարտավոր էինք գնալ մոտակա գյուղերը և օգնել գյուղացիներին՝ հնձող մեքենաներով բերքը հավաքելու: Ես լինելով Դևրիկից, խնդրեցի ինձ ուղարկել իմ ծննդավայրը՝ Դևրիկ: Հասնելով Դևրիկ, ես մեր գյուղի թուրքերին հարց ու փորձ անելով իմացա, թե որտեղ է եղել մեր տունը: Գնացի, գտա: Այդ տանը ապրում էր մի թուրք ընտանիք: Երբ վերադարձա, այլևս չուզեցի գնալ դպրոց: Գործ գտա մի մեծ սրճարանում: Այնտեղ կար երկու սենյակ՝ ճամփորդների համար: Իմ պարտականությունն էր մաքրել նաև այդ սենյակները, ինչպես նաև չորս ձիու խնամքը: Ճամփորդները երբեմն դրամ էին տալիս ինձ: Նրանց տված դրամը ես հավաքում էի, քանի որ մտադրություն ունեի գնալ Պոլիս:

Պոլիսի ճանապարհին Սամսունի հյուրանոցում ծանոթացա մարզվանցի մի շատ հարուստ մարդու հետ: Նա երբ իմացավ, որ ես հասկանում եմ գյուղատնտեսությունից, ինձ խնդրեց, որպեսզի ես վարեմ իր մեծ տնտեսությունը, և ես համաձայնվեցի:

Հասնելով Մարզվան, ես սկսեցի աշխատել գյուղական տնտեսությունում: Ջեռք բերեցի հայտնի Դիարբեքիրի ձմերուկի սերմ, ցանեցի, լավ խնամեցի, հետո չտեսնված բարձր բերք ստացա: Ես որոշեցի՝ ինչ գնով լինի հասնել Պոլիս: Երբ իմ տիրոջ կառքով մեկնեցի Սամսուն, այնտեղ մինչև նավի գալը մի էժանանոց տոմս գնեցի: Քանի որ իմ տոմսը էժան էր, նավի մեջ քնում էի բաց երկնքի տակ, իսկ եղանակը այդեն ցուրտ էր:

Վերջապես կատարվեց իմ երազանքը, և ես հասա Պոլիս: Գրպանումս ոչ մի կոպեկ չէր մնացել: Սրանք հարցնելով՝ իմացա, թե որ թաղամասում ավելի շատ հայ կա: Այդ թաղամասը Ղալաթիան էր: Ես գնացի այնտեղ: Մի խանութի մոտով անցնելիս, լսեցի հայերեն խոսակցություն: Մտա այդ խանութը: Խանութպանը հայերեն հարցրեց. «Հա՞յ ես»:

Ես թուրքերեն պատասխանեցի, քանի որ հայերենը համարյա մոռացել էի: Ես նրան ասացի՝ գալիս եմ Սամսունից, իսկ ինքս ծնվել եմ Դևրիկում և նոր եմ վերադարձել աքսորից: Խանութպանը ինձ տարավ այնտեղ բնակվող դիվրիգցիների մոտ: Պարզվեց, որ նրանցից մեկը իմ պապիկիս եղբոր տղան է: Նրանց մոտ ապրեցի մոտ տասը օր: Նրանք կարում էին թուրքական ֆեսեր: Մի օր էլ նրանց մոտ եկավ մի կին, ինձ տեսնելով փաթաթվեց և համբուրեց ասելով, որ ինքը մայրիկիս հորեղբոր աղջիկն է: Նա ինձ տարավ իրենց տունը: Այդ կնոջ ամուսինը ժամանակին եղել է սուլթան Համիդի խոհարարը: Շատ լավ խոհարար էր և ուներ մի փոքրիկ ճաշարան: Շատերն էին ցանկանում նրա պատրաստած ճաշերը համտեսել, բայց քանի որ ճաշարանը փոքր էր, այդ իսկ պատճառով բոլոր ցանկացողները չէին կարող սպասարկվել: Հետևաբար, հաճախորդների մի մասը ցանկացավ, որ ճաշը մատուցեն իրենց գործատեղերում: Այդ գործը ես էի կատարում: Մոտ երեք-չորս ամիս աշխատեցի: Այդ ընթացքում ես էլ սովորեցի համեղ ճաշեր պատրաստել: Ես եղել եմ եվրոպական և ամերիկյան շատ քաղաքներում և գտնում եմ, որ թուրքական խոհանոցը շատ ավելի բազմատեսակ է և համեղ:

Այս ժամանակամիջոցում հնարավորություն ունեցա ծանոթանալ Պոլսո տեսարժան վայրերին: Պոլիսը իմ կարծիքով աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է: Նա կառուցված է յոթ բլուրների վրա, իսկ Բոսֆորի գեղեցկությունը աննկարագրելի է: Ես ծանոթացա Այա Սոֆիային, փոքր և մեծ կղզիներին, ուր Պոլսո հարուստ բնակիչները ամռանը հանգստանում էին: Իմ սպասարկած հաճախորդներից ես մտերմացա Սեպուհ Ստեփանյանի հետ, որը գյուղատնտեսների միության նախագահն էր: Նրանից իմացա, որ Ադաբազար քաղաքի մոտերքում գտնվող Արմաշի վանքի* կալվածքներում կազմակերպվում է գյուղատնտեսական դպրոց: Նրա օգնությամբ ես ընդունվեցի այդ դպրոցը: Դպրոցը գիշերօթիկ էր և գտնվում էր Հայ Բարեգործական միության իրավասության տակ ու ֆինանսավորվում էր նրա կողմից: Այդ դպրոցը ընդունվեցին մոտ երկու հարյուր հայ որբեր: Մեր ուսուցիչները բավական լավ էին պատրաստված, և մենք շատ բան սովորեցինք: Օրվա կեսը տեսական պարապմունքներ էինք անում, իսկ մյուս կեսը՝ գործնական: Դպրոցում ապրելու պայմաններն այնքան էլ լավ չէին: Գրեթե անոթի էինք մնում: Հետո մեր դպրոցը տեղափոխեցին Պոլիս, որտեղ և մենք շարունակեցինք մեր ուսումը: Այդ ընթացքում Պոլիս ժամանեց Հայաստանի դաշնակցական կառավարության վարչապետ պարոն Խատիսյանը: Նա ուզում էր ստեղծել հիսուն հազարանոց հայկական բանակ: Առիթից օգտվելով, մեր դպրոցի ղեկավարները խնդրեցին նրան դպրոցը փոխադրել Հայաստան: Չորս աշակերտ, որոնց թվում նաև ես, հրաժարվեցինք, իսկ մնացած աշակերտությանը տեղափոխեցին Հայաստան: Մենք շուտով ապաստան գտանք Շիշլիի թաղամասի հայկական որբանոցում:

Մի օր Շիշլիի որբանոցից դեպի Բերայի թաղամաս գնացող տրամվայը նստեցի: Երբ ուզում էի տոմս գնել, տեսա, որ տոմսավաճառն իմ ընկեր Բարսեղն է: Մեր երկուսի ուրախությանը չափ չկար: Անհնար էր հավատալ, որ կոտորածի վախը այլևս չկար: Ես Բարսեղի պատմածից իմացա, որ նա եղբոր հետ մեծ դժվարությամբ հասել է Պոլիս: Աշխատել է հացի փոռում, որպես բանվոր: Եղբայրը մեկնել է Բուլղարիա: Ես այլևս Բարսեղից չբաժանվեցի:

Այդ ժամանակ գյուղատնտեսական դպրոցում չորս որբ ուսանողներ էինք սովորում: Մենք դիմեցինք Բարեգործական միությանը, որ մեզ ուղարկի ԱՄՆ՝ մեր ուսումը շարունակելու: Բարսեղը ևս միացավ մեզ: Բայց Ամերիկա գնալիս ես աչքի տրախոմա ունեի, որը չէին ընդունում, և ես բուժվեցի:

Վերջապես 1921 թ. հունիսին մեզ հաջողվեց մեկնել ԱՄՆ: Մենք այնտեղ գնացինք Բարեգործական միություն, ներկայացրինք Պոլսից բերված մեր հանձնարարականները, և մեզ ընդունեցին գյուղատնտեսական գիշերօթիկ դպրոց, որտեղ երեք տարի պիտի սովորեինք, բայց նախ լեզու սովորեցինք, հետո՝ անցանք ուսումնառության: Հետո մեր ուսումը շարունակեցինք Նյու-Յորքի նահանգի Կորնելի համալսարանում: Բարեգործական միությունը մեր հինգ հոգուս տարեկան ամեն մեկին վճարում էր հինգ հարյուր դոլար, որը կազմում էր մեր ծախսերի հիսուն տոկոսը: Մնացածը մենք հայթայթում էինք աշխատելով: Համալսարանի ճաշարանում Բարսեղի հետ ամանեղ էինք լվանում և ձրի ճաշ էինք ուտում: Ամառը գնում էինք ֆերմաները արտադրական պրակտիկայի, մեզ վճարում էին:

1926 թ. մենք վեց ընկերներով, երբ ավարտեցինք ուսումը, որոշեցինք գալ հայրենիք և օգտակար լինել: Երևանում Նոր Սեբաստիա և Նոր Մալաթիա հիմնելու աշխատանքին մասնակցեցի: Աշխատեցի Ստեփանավանում: Ամուսնացա Պապոյան Աստղիկի հետ: 1928 թ. փոխադրվեցինք Երևան: Աշխատանքի անցա: Հետո Մոսկվայի Տիմիրյազևի անվան բիոլոգիական ինստիտուտում աշխատեցի: Գենետիկան հերքող գիտական հոդվածներ լույս ընծայեցի, որոնք և պատճառ դարձան, որ ես Մոսկվայում չկարողանամ դիսերտացիա պաշտպանել, քանի որ հակառակ էին իմ տեսակետները ընդունված կարծիքին: Վեց տարի Մոսկվայում մնալուց հետո ընտանիքով հաստատվեցինք Երևանում:

* Արմաշի դպրեվանք – հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատություն: Հիմնվել է 1889 թ. Արմաշ գյուղի Չարխափան Ս. Աստվածածին վանքում, Կ. Պոլսի պատրիարք Խորեն Աշըքյանի հովանավորությամբ և Մաղաքիա արք. Օրմանյանի վերատեսչությամբ՝ իբրև Կ. Պոլսի պատրիարքարանի դպրեվանք:

88 (88).
ՄԱՆՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1901 Թ., ՍԵԲԱՍՏԻԱ, ԳՅՈՒՐԻՆ)

Ի մըոլոր հարազատները զոհվել են Մեծ եղեռնի տարիներին: Այդ ժամանակ հայրս քառասուներկու տարեկան էր, մայրս՝ երեսունչորս, մեծ քույրս՝ տասնըհինգ, եղբայրս՝ տասներկու, փոքր քույրս՝ տասը: Մեր մեծ գերդաստանից ողջ մնացի միայն ես: Մեծ հայրս՝ Մանուկ Փանյանը, քարտաշ-որմնադիր էր, կառուցում էր եկեղեցիներ, տներ: Նա բարձրահասակ թիկնեղ մարդ էր: Մեր տունը գտնվում էր քաղաքի կենտրոնում: Մեծ հայրս երկու եղբայր ուներ՝ Հակոբ և Հովհաննես: Հակոբը Ամերիկա էր գնացել, իսկ Հովհաննեսը ուներ երեք տղա՝ Խաչիկը, Սեդրակը և Հակոբը: Նրանք Բալկանյան պատերազմ մեկնեցին որպես շարքային զինվորներ:

Մայրս և տատս մշակում էին մեր տնամերձ հողամասը: Ունեինք թթենի, տանձենի, ընկուզենի և այլ ծառեր:

Հայրս ուսումնասիրել էր աստվածաբանություն: Հետո Սեբաստիայի Առաջնորդի կողմից ձեռնադրվել էր քահանա՝ Տեր-Իգնատիոս անվանակոչումով: Նա լավ ձայն ուներ և ղեկավարում էր եկեղեցու երգչախումբը:

Հայրիկս պատմում էր, որ 1895-96 թվերի ջարդի ժամանակ նա եղել է քսաներկու տարեկան: Նա իր ընկերների հետ թաքնվել է քարայրում: Հաջորդ օրը քարայրի մոտով անցնում է մի քրդուհի և տեսնում է ընրանց, անմիջապես լուր է հասցնում թուրքերին: Քիչ հետո թուրքերը գալիս են, գնդակահարում են բոլորին: Հայրս խորամանկում է, կրակոցի հետ մեկտեղ ընկնում է գետնին: Այդպես մնում է դիակների մեջ մինչև երեկո, հետո դուրս է գալիս և հասնում է տուն:

Այս դեպքից մեկ տարի անց հայրս ամուսնանում է Գոհարի հետ, ծնվում ենք մենք: Մենք տղաներով գնում էինք դպրոց: Մեր հասակակից թուրք տղաները նույնպես խմբով էին գնում դպրոց: Շատ հաճախ նրանք մեզ սպասում էին Թոխմա գետի փայտյա կամրջի վրա, որպեսզի մեզ ծեծեն: Այդ օրը քեռուս տղա Թորոսը մեզ հետ էր, տեսավ, որ թուրքերը սկսեցին մեզ ծեծել, նա հարձակվեց և գետնին տապալեց բոլորին:

Գյուրուն քաղաքում ընդունված սովորություն էր՝ ամեն կիրակի հնդկահավի մսով հարիսա էինք պատրաստում: Երբեք հարիսան տնեցիներով չէինք ուտում, անպայման պետք է հրավիրեինք իրենց հարազատ մարդկանց: Սեղանի գլխին անպայման պետք է նստեր հայրս: Նա օրհնում էր սեղանը, բարձրացնում էր օղու բաժակը և խմում, որից հետո սկսում էին ուտել:

Ես շատ էի սիրում իմ մորը: Նա միջակ կառուցվածքով հմտեստ, խելացի կին էր: Դպրոց էր գնացել, բայց կիսատ էր թողել: Ամեն կիրակի հավաքում էր մեր հարևան կանանց, նստում էր այգում, ծառի տակ և Աստվածաշունչ էր կարդում: Ընթերցանությունից հետո ծածկում էր Ավետարանը, փաթաթում էր կտորի մեջ և դնում գրապահարանը: Բացի կրոնական գրքերից, մենք ունեինք նաև շատ գեղարվեստական գրքեր, որոնք հայրս ստանում էր Պոլիսից: Ահա այսպիսի մտավորական, բարեպաշտ ընտանիքի բոլոր անդամները նահատակվեցին թուրքերու կողմեն:

89 (89).
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՐՈՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1898 Թ., ԷՐԶՐՈՒՄ, ԱՎԸՐԴՆԻԿ Գ.)

Ե րբ ես ծնվել եմ, մայրս մահացել է: Հայրս ինձ ու յոթ տարեկան քրոջս հանձնել է գերմանական որբանոց՝ Մարգարիտ մայրիկի խնամքին: Ես մըստըր Փալենտինադի որբանոցն էի, քույրս՝ Թանթե Կատարինեի որբանոցը: Մեր որբանոցում հարյուր հիսուն որբ կար: Մի անգամ մեծ տղաները թութի ծառի ճյուղը կոտրել էին՝ իմ վրա թողեցին: Տնօրենը կանչեց, ասեց. - Դու՞ ես կոտրել:

Ես ալ ըսի. - Ինձի նայե, ադ ճյուղին նայե. ես պզտիկ, ի՞նչպես կրնամ այդ ճյուղը կոտրել, բայց եթե ընրանք կուզեն, որ ես կոտրած ըլլամ, ես ալ ադպես կըսեմ:

Ան ինձի մեկ հաց տվավ: Տղաքը կարծեցին, որ ծառը կոտրելու համար ինձ հաց տվավ, եկան շուրջս, ուզեցին ձեռքիս հացը՝ ըսելով. - Մենք ծառը կոտրենք, դու՞ հացը ուտես:

Տնօրենը նորեն կանչեց բոլորիս: Նորեն հարցուց: Տղաքը կարծեցին, որ հաց պիտի ստանան, իրենք ըսին. - Մենք ենք կոտրել ծառը:

Տնօրենը անոնց գավազանով վեցական հարված տվավ:

Հետո ինձ փոխադրեցին Փերիի որբանոցը: Հոն իննսուն հոգի էինք. աղջիկ-տղա՝ խառը, բայց ննջարանները առանձին էին: Հացը, ջուրը քիչ էին տալիս: Մեզ արհեստներ էին սովորեցնում, բուրդ էին մանել տալիս, թել էինք ստանում: Աղջիկները բրդից գուլպա էին հյուսում: Մեր դպրոցը մեծ սրահ մըն էր, մեջը վեց հարյուր հոգի կառներ: Կիրակի օրը բողոքականներուն ժողովարանը կերթայինք: Պատվելիին ընտանիքը ինձի շատ կսիրեր: Երկու տարի մնացի հոն: Հետո ինձ փոխադրեցին Խարբերդի որբանոցը: Հոն ալ երկու տարի մնացի: Ամառը ամառանոց կտանեին: Կաղաձիդ տոնածառ կսարքեին, կերգեինք, վերջն ալ թաշկինակներու մեջ չոր պտուղներ՝ խնձոր, նարինջ կբաժանեին՝ Հիսուսի ննկարով: Հետո արհեստանոց բացվեցավ. դարբնություն, ատաղձագործություն կսորվեցնեին՝ առանց վարձքի: Մի օր փախա ընկերոջս հետ: Նա ազգականներ ուներ, իրեն ներս առին, ինձ՝ ոչ: Ուզեցի ետ դառնալ դեպի որբանոց, ճանապարհին հայերը ըսին. - Թուրքերը գիշերով քեզ կսպանեն:

Դատեմում Ջըգըլյան ընտանիքը ինձ որդեգրեց: Դատեմը ուներ երեք հարյուր հիսուն տուն հայ և քսան տուն թուրք: Գյուղում զբաղվում էին հողագործությամբ: Ցանում էին ցորեն, գարի, ոսպ, չեմեն, բամբակ, շուշմա-կտավատ: Արհեստավոր քիչ կար. հինգ հյուսն, ութ պատշար, վեց կոշկակար, չորս ննպարավաճառ: Թուրքերը ոչխար կպահեին: Գյուղեն դուրս, տասնհինգ րոպե հետու հին եկեղեցիի մը ավերակը կար, քովեն աղբյուր մը կբխեր, որը չորս ջրաղաց կդարձներ և գյուղացիներուն այլուրը կաղային, արտերը կջրեին: Բարձր ապառաժներուն մեջը վայրի կենդանիներ, վայրի աղավնիներ և մեղուներ բույն շինած էին: Մենք լողալու համար կգնայինք Ս. Հովհաննեսի Մեծ ջուրը: Դատեմի չորս կողմը թուրքի և քյուրդի գյուղեր էին, բայց ես իմ հովանավորների մոտից էլ դուրս ելա՝ զզված: Հետո Ուլոհոջյան ընտանիքը ինձ ընդունեց: Մեծ տղային անունը Հովհաննես էր, մյուսը՝ Հովսեփ, փոքրը՝ Լևոն: Բոլոր տղաները գնացին սովորելու: Մնացին աղջիկները՝ Կառա, Բրաբիոն և Ռութինա: Ես այդ տանը ապրեցա չորս տարի: Ինձ ուզեցին իրենց աղջկա հետ ամուսնացնել, բայց ես մտածում էի, որ մի օր իմ երեսովս կտան իմ որբությունը: Մի օր քաղաք էի գնացել, ճամփին հանդիպեցի իմ հորեղբոր աղջկան: Նա ինձ տարավ իր տունը: Տվավ ինձ դարբինի մոտ, որ արհեստ սորվիմ: Այդ ժամանակ վարպետներեն շատերը ապառիկ կաշխատեին, այսինքն՝ կալերու ժամանակ կերթային իրենց կատարած աշխատանքներուն դիմաց ապառիկ վարձերը հավաքելու: Այդպես ալ իմ վարպետը կաշխատեր, բայց կարդալ չիմանալուն, իր հաշիվները ես կգրեի: Դրա համար կալերի ժամանակ ինձ իր հետ կտաներ: Գնացինք ապառիկները հավաքելու: Մեկ ամիս Խարբերդի քյուրդի ու թուրքի գյուղերը գնացինք, ապառիկները հավաքեցինք, վերադարձանք տուն: Ձմեռը վրա հասավ: Գարունը եկավ: Մեկ օր տեսանք արևը խավարեց, շատերը ըսին. «Վատ նշան է, տեսնենք ի՞նչ պիտի ըլլա»:

1914 թ. էր, մի օր տեսանք, որ թաղերուն մեջ դավուլ-զուռնայով ման են գալիս, առաջեն մեկ մունետիկ կանչում է. «Սեֆերբերլիկ եղավ, ամեն մարդ պետք է, որ զինվոր ըլլա, որ հայրենիքը պետք է պաշտպանեն, ամեն մարդ պետք է կամավոր զինվոր արձանագրվի»: Թե՛ թուրքերեն և թե քանի մը հայեր կամավոր գրվեցան: Մեկը կար, որ ակնցի էր, անունը՝ Գրիգոր: Ան մինչև Ճապաղջուր չհասած՝ կփախի Խարբերդ: Կբըռնեն, նորեն կղրկեն բանակ, նորեն կփախի: Ան անգամ՝ ոտքը շղթայով կբանտարկեն զորանոցին մեջ: Արդեն ինքը դարբին էր, ոտքի շղթան քարով կկոտրե, կփախի: Եկավ վարպետիս խանութը, հաց ուզեց: Բայց անոր բռնել, նորեն բանտարկել էին:

Խարբերդը ամեն տեսակ բարիքով լի երկիր է. հողի բերքը առատ, պտուղները լի, անուշահամ ջրերով, խոտերով, ծաղիկներով առատ երկիր, արծաթի, պղնձի, քարածխի, աղի հանքերով հարուստ է, նաև՝ հանքաջրերով: Խարբերդում հնություններ կան, Զեվայի մոտ հայկական արձանագրություններով բերդ կա, լաբիրինթոսի քարայրներով: Հեթանոսական մի տաճարի զոհասեղանն էր մնացել: Դեռ կանգուն էին Խուլավանքը, Դատեմի վանքը, Ս. Աստվածամայր եկեղեցին:

Խարբերդի գյուղերը շատ էին: Կային գյուղեր, որ միայն հայկական էին, նաև կային, որ խառն էին՝ հայ և թուրք միասին: Խարբերդում հինգ եղբայրներ կային, որ մետաքսի ֆաբրիկա ունեին, հազար հինգ հարյուր բանվորներ կաշխատացնեին, բայց աքսորեցին և իրենց ֆաբրիկան թուրքերը չկարողացան աշխատցընել, գործիքները գողացան, ավերակի վերածվեց, իսկ նրանց տները թուրք պաշտոնյաներ նստեցին:

Խարբերդի տեղահանության ժամանակ ես տասնյոթ տարեկան էի: Լավ հիշողությանս մեջ է: Թմբուկ զարկին և քաղաքին մեջ կպտտվեր մունետիկը ու կըսեր. «Սեֆերբերլիկ է, պատերազմ պիտի ըլլա...»: Հետո ըսին, թե՝ հայերին պիտի աքսորեն: Քաղաքի մեջ սկսվեցին խուզարկություններ, որպես թե զենք են փնտրում, բայց լրիվ կողոպտում էին, դրամ գտնելիս՝ իրենցն էր, մինչև իսկ սոխ մաքրելու դանակը հավաքեցին: Ով զենք չէր տալիս, եղունգներն էին քաշում, ծեծում էին կամ փող էին ուզում, որ զենք առնեն: Մի անգամ կլոր ծակով երկաթներ կային, որ մեջը փայտ էին հագցնում, հավանգի տեղ էին օգտագործում, դրրանք էլ հավաքեցին: Քաղաքի և գյուղերու մեջ հայ հարուստներուն բանտերը լեցուցին, ժողովուրդը մնաց անհովիվ ոչխարի պես: Քանի մը մեծերու ոտքերը պայտեցին, մի քանիսին ատամները քաշեցին, բանտերու մեջ եղողները տանջանքներին չդիմանալով, ինքզինքնին վառեցին:

1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին թուրք կառավարությունը կձերբակալե հայ հայտնի մտավորականներին, հարուստներին, կղերականներին, պրոֆեսորներին, ուսուցիչներին. Խարբերդի Տեր-Խորենյան Առաջնորդին, Երվանդ Սրմաքեշխանլյանին (Երուխան), Մեզիրեի Ազգային կեդրոնական վարժարանի տեսուչ և հայտնի գրագետ Հակոբ Ճանիկյանին, դոկտոր Միքայել Հակոբյանին, Եփրատ կոլեջի պրոֆեսորներեն՝ պրոֆ. Տոնապետ Լուլեճյանին, պրոֆ. Նիկողոս Թենեքեճյանին (Խարբերդի հայ բողոքականների ազգապետ), պրոֆ. Կարապետ Սողիկյանին, պրոֆ. Մկրտիչ Որբերյանին, պրոֆ. Հովհաննես Պուճագանյանին, ուսուցիչներ՝ Հովհաննես Տինկըլյանին, Հովհ. Հարությունյանին (Թլկատինցի), Տեր-Վարդան քահանա Արսլանյանին, մտավորականներ՝ հացի Հակոբ Ֆերմանյանին, Կարապետ Էքմեքճյանին, Կարապետ Հովսեփյանին, Արմենակ Թերզյանին, Արթին բեյ Հելվաճյանին, Արզումա Արզումանյանին, Մարտիրոս Մուրադյանին, փաստաբան Ալեքսան Նալբանդյանին, Հովհաննես Խարբությանին, Սերոբ Վարդապետյանին, Հ.Ց.Դ. ընկերներեն՝ Կարապետ Տեմիրճյանին (հյուսեցիկցի), Տիգրան Աստիկյանին, դոկտոր Նշան Նահիկյանին, Արամ Արաբյանին, արաբկիրցի

Կարապետ Կոկյուշլեանին, սոցիալիստ-դեմոկրատ հրընչակներեն՝ Հարություն Սեմերճյանին, Կարապետ Թաշճյանին, ռամկավար կուսակցութենեն՝ Խոսրով Թեպեքիճյանին, Սմբատ Արսլանյանին, Հովհ. Դանիելյանին:

Շատ մը ուրիշ հայտնի անձնավորություններ պաշտոնական կըլլան: Ասոնք շուկաներու և փողոցներու մեջ շրթայսկապ, ծեծերու տակ, քարերու գանակոծումներու ենթարկվելով, հետո կհետվեին Մեզիրեի բանտ և կմատնվեին մահացու տանջանքներու: Կեսգիշերին ոստիկանները կշրջապատեն բանտը: Բանտապահ Հասան Էֆենդիի հետ արաբկիրցի Ալի օճաքաշի անունով ոստիկան մը, բանտի դուռը բանալով՝ ներս կմտնա և կերթա դոկտ. Նշան Նահիկյանի կեցած հարկաբաժինը, կհրամայե բանտարկյալներուն մեկ առ մեկ դուրս գալ և պատրաստ ըլլալ Եդեսիա երթալու, բայց Ֆերիդ բեյի հրամանով՝ սրախողխող կըլլան: Հայ բանտարկյալները կորոշեն բանտը հրկիզել, որ ազատվեն, բայց կրակների մեջ կնահատակվին երեսունյոթ հոգի: Նաև թուրքական բանակի հայ զինվորները զինաթափ եղած ու սպանված են: Նախ՝ որպես ճակատ ղրկելու նպատակով կհավաքեն, փոխանակ ճակատ ղրկելու գործավորական բանակներ կկազմեն (ամելե թաբուր), ուր հայ զինվորները թիապարտի կյանքի կմատնվին: Անգութ հրամանատարները կաշխատցնեն հայերը ճամփա շինելու, առանց խտրության՝ բեդել վճարողներուն և չվճարողներուն: Անոնց՝ շրջապատված հեծյալ ոստիկաններով, անոթի, ծարավ, ժամերով կքայլեցնեն: Զինվորները կսկսին նախատել և վիրավորել, որը հետո վերածվում է հարվածների: Փարչանեի և Ռեսիրիկի ճամփու վրա, երբ աղբյուրի մը կմոտենան, երկու հազար հոգու չեն թողուր, որ ջուր խմեն, ով կհանդգներ՝ անոր գլխուն կիջնար հրացանի կոթի հարվածը: Դրեթե բոլորը բնաջինջ եղան, և զոհերու մարմինները ետվեցան հասարակաց փոսի մը մեջ: Նույն կերպ կվարվեին Դիարբեքիր ղրկված երկու հազար աշխատավորներու հետ:

Կարմիր խոնաղ (Կարմիր շենք) հավաքել էին տանջելու Խարբերդի երիտասարդ դպրոցականներին և զինաթափ եղած զինվորներին, որոնք խոշտանգված, ու դիակները իրար վրա թափված, ենխված էին: Ամեն անկյուն՝ արյուն, փխունք, կղկղանք: Դետնի վրա պառկողները պատերազմի դաշտին վրա փռված դիակներու կնմանեին: Այսպես, իրարու ետևե մեկ կողմե գյուղերեն և ավաններեն բերված չափահաս կամ տարիքոտ անձինք Կարմիր խոնաղ կհետեն, մյուս կողմե՝ ձերբակալվածները կղրկեն Եդեսիա՝ իբր երկաթուղային գիծերու վրա աշխատելու:

1915 թ. հուլիսի 14-են հետո, երբ բոլոր երիտասարդները ղրկված էին սպանդանոց, թուրք կառավարությունը անոնց տեղը կլեցնե տարագրեալ ծնողազուրկ որբեր, կիներ ու աղջիկներ: Հայ աղջիկներ աճուրդով կվաճառվեին թուրքերուն: Բարեմիտ թուրքեր գաղտնի կերպով կհաղորդեն բռնագաղթի լուրը իրենց հայ բարեկամներուն:

1915 թ. հունիսի 25-ի առավոտ մուեզինիկը Մեզիրեի և քաղաքի բոլոր թաղերը մեկիկ-մեկիկ շրջելով՝ հայտարարեց կառավարության պաշտոնական հրովարտակը հետևյալ իմաստով. «Հայե՛ր, լսեցե՛ք. խոսքս գյավուրներուն է: Մեր պանծալի պետության և թագավորած թագավորին հրամանով որոշված է Խարբերդի բոլոր գյավուրներուն Ուրֆա ղրկել: Օրորացի մանուկեն սկսյալ մինչև ամենավերջին ծերը՝ ճամփորդ պիտի ըլլա: Հրամանը շատ խիստ է, թե՛ լողաց և թե՛ չլողաց համար օրենքն անփոփոխ է»:

Խուճապը սկսվում է հայերի մեջ: Ամեն տուն իրարանցումով կգնե իր փոխադրության համար կենդանիներ, կառքեր, սայլեր: Կսկսին վաճառել տներ, իրենց ունեցած պաշարը, շատ ցածր գներով: Ոստիկաններն ասում էին. «Ինկիլ դերե (մղկտալու ձոր) պիտի երթաք»: Հայերը կարծում էին «ինկլիթեր» (Անգլիա) պիտի տանին, հոն խաւուտ պիտի բանան: Բայց ոստիկաններն ասում էին «քալըք եմէյի պիտի ըլլաք», այսինքն՝ «ձուկի կեր պիտի ըլլաք», սակայն գաղթականները չէին հասկանում:

1915 թ. հուլիսի 1-ին Մեզիրեի տեղահանության առաջին քարավանը դուրս եկավ հարյուրապետ Ադամ փաշա անունով դաժան պետի մը սվինավոր զինվորներով և հեծյալ ոստիկաններով շրջապատված: Քարավանի ետևեն երկու բարձած սայլեր, մեկը՝ սև սոմին և մյուսը՝ պարաններով բարձված էին: Ճամփին տղամարդկանց առանձնացրին: Ադամ փաշան կիներից հավաքեց նրանց ունեցած դրամն ու զարդերը՝ իբր ապահովության համար և ըսավ. - Տիգրանակերտ հասնելու ըլլաք նե, բոլորն ալ ձեզի կվերադարձնեմ, - հետո զորանոցի մոտ ըսավ, - լա՛վ իմացեք, դուք միլլեթ խալիճի եք (ժողովրդի դավաճան եք), մենք ձեզ կաքսորենք, որ մենք ապահով ըլլանք:

Մի թուրք տղա հայ տղայի մը դանակով հարվածեց, ըսին. - Ի՞նչ կընես:

Տղան ըսավ. - Դանակս կփորձեմ:

Երբ հայերը բողոքեցին, հարյուրապետը ըսավ. - Տղային բռնեցինք, կդատեն, դուք ձեր ճամփան շարունակեցեք:

Բարձրացանք Դեվե բոյնին (ուղտի վիզ) լեռը: Քիթերնիս հոտ կառներ. տեսանք՝ ամեն կողմ ենխված դիակներ են, ադոնց հոտն էր: Քալեցինք, հասանք Ֆըրնուզ խան: Տիգրիսի ծայրը ծառերու տակ մեզ իջեցուցին: Ամբողջ կիներն ու աղջիկները կուլան, զինվորները՝ կծիծաղին ու կընեն. «Երգեցեք, պարեցեք, ի՞նչ կա լալու, ձեր տղամարդիկ խարբերդ մնացին»: Փոքր հանգիստեն վերջ մենք ճամփան շարունակեցինք: Ճանապարհի երկայնքով, ձորերու մեջ, ամբողջ մարդու դիակներ էին, որպես թե թաղած են, բայց շատ տեղ ոտք ու ձեռք հողեն դուրս մնացած էր և շատ կհոտեր: Հասանք Տիգրանակերտի մոտ Խալխանա, ուր գերմանացիները պղինձ կհալեցնեն և ուղտերով Գերմանիա կղրկեն: Հոն քանի մը թուրք տղաներ եկան աղջիկ փախցնելու: Մեկին վիրավորեցին, ընկավ, հայ կիները ճչացին, զինվորները եկան, ըսին. - Ինչու՞ սպանեցիք:

Տղաները ըսին. - Մեկ է, բոլորին ալ պիտի սպանեն:

Ոստիկանը պատասխանեց. - Այո՛, պիտի սպանեն, բայց քաղաքեն դուրս:

Ճամփին լիքը դիակներ էին: Հասանք Տիգրանակերտ: Մեզ ննստեցուցին պարիսպեն դուրսը՝ զորանոցին մոտը, հանգստանալու: Տիգրանակերտը չորս դուռ ուներ՝ Դաղ քափուսի, Մարտին քափուսի, Ուրֆա քափուսի, Ռոում քափուսի: Քաղաքի ամեն կողմը պարիսպ էր: Մեզ Տիգրիս գետի քովեն մինչև կամուրջը քալելով տարին, ալյուրի ֆաբրիկայեն անցանք, կես ժամ հանգիստ տվին, ննստեցինք: Կես ժամ ետքը Տիգրանակերտեն մի քարավան բերին, մեջը ամբողջ կիներ էին: Անոնք սպիտակ չարշաֆներով էին: Մեկ ժամ ետքը երկրորդ քարավանը եկավ: Ադոնց ալ առանց դադարի հետացրին մեզմե: Նույն ճամփով մեզ ալ հանեցին դեպի Մերդին, մինչև կեսօր քալեցինք, կամուրջի մը տակ ննստեցրին մեզի: Ծառ չկար, կամուրջի շուքին տակը ննստանք: Այնտեղ մի կին երկունքի ցավը բռնեց, երկու տղա ունեցավ, բայց ոստիկանները մեզ ճամփա հանեցին՝ նրան ու նորածիններուն թողնելով մենակ: Ինչքան խնդրեցինք՝ իզուր. մեզ սկսեցին մահակներով ծեծել և քայլեցնել: Հասանք խանին ըսված գյուղը: Գիշերը հազարավոր քյուրդեր՝ հին չախմախլու զենքերով, ծուռ սուրերով, փայտեր առած հարձակվեցին մեզ վրա, սկսեցին մեզ թալանել, սպանվածների վրայից հագուստները հանել: Կիները սպանված, ճամփաների եզերքները ինկած էին: Երեք քարավան Տիգրանակերտից նորից բերեցին, բոլորը կիներ էին՝ սպիտակ չարշաֆների մեջ փաթաթված, իրար «Մարիամ խանըմ, Մարիկա խանըմ» կըսեին: Երեխաներին սկսեցին փախցնել: Մի կին սկսեց լալ, թե՝ երեխային մեջքը կապած էի իմ ունեցած ոսկեղենը, երեխային տարան և ունեցածս: Մեր ոստիկանները Տիգրանակերտեն փոխվեցան:

Մերդինի պարտեզները վերջանալեն ետք անապատ ինկանք: Մի պառավ կին ետ մնաց՝ ոտքին նոր գուլպաներ ուներ: Ժանդարմը կուզե գուլպաները, կինը կըսե. - Ոտքիս կոշիկ չունիմ, գոնե գուլպան հագած եմ, որ ոտքս տաք ավազը չվառե:

Ժանդարմը հրացանի կոթով խփեց կնոջ գլխին և ոտքից հանեց նրա գուլպաները: Կինը սկսավ լալ.

- Ղուրբա՛ն ըլլամ, դրամներս մեջն են, գուլպաս մի՛ հաներ ոտքես:

Ժանդարմը ըսավ. - Ավելի՛ լավ, - ու խեղճ կինը ալ չկրցավ քալել, մնաց ճամփին:

Մենք շարունակեցինք: Ժանդարմները ջուր չէին թողնում խմել, ասում էին. «Կամ՝ մեկ ոսկի տվեք, կամ՝ մի կույս աղջիկ»: Կիները ստիպված ջրի ամանի մեջ միզում էին ու խմում:

Գնացինք Վերան շեհիր: Տեսանք սպանվածներ: Կիները ըսին. - Դուք մեզի սպանելու՞ բերիք:

Ժանդարմը ըսավ. - Եթե ուզենք, ձեզի բացօթյա կրնանք սպանել, բայց սպանելու հրաման չկա, ձեզ համրանքով չեն տվել, որ համրանքով պահանջեն: Ով ճամփին մեռավ՝ մեռավ:

Հասանք անապատի մեջ գյուղ մը: Ջուր չկար, միայն մի հոր կար: Ես իջա մեջը, որ բոլորին դույլերով ջուր քաշեմ: Դույլով ջուրը գլխիս ընկավ, ես ցավից դուրս եկա: Արաբները ուզեցին ինձ որպես աշխատող ձեռք պահել իրենց մոտ: Ես ըսի. - Չէ՛, ես իմ ժողովրդի հետ պիտի լինեմ:

Արաբներն ըսին. - Վաղը ձեզ պիտի կոտորեն, ինչպես որ նրանց արեցին:

Եվ իսկապես, հաջորդ օրը տասնութ զինվոր մեզ վրա հարձակվեցին, գետինը մի կարպետ բացին, վրան ամենքից դրամ, ոսկեղեն, մատանի, ապարանջան, ժամացույց սկսան հավաքել: Ամենեն մեծ կողոպուտը այնտեղ եղավ:

Գնացինք, գնացինք: Ժանդարմները ասին. «Ե՛տ դարձեք, սխալ ճամփա է»: Բայց մենք բավականաչափ առաջացած էինք և տեսանք, թե ինչպես կոտորել էին բոլորին՝ տկլոր, արյուններուն մեջը: Մոտեցանք մի հորի, տեսանք մեջը լիքը դիակներ, գլուխներ ու ոտքեր: Մենք շարունակում էինք քայլել՝ ծերերին և հիվանդներին ճամփին թողնելով: Հասանք Ռաս էլ Այն: Երկաթգիծը մինչև էնտեղ էր գալիս: Հոն երկու ջուր իրար կխառնվեին և ըսին՝ ադ Խաբուր գետն է: Գետին երկու կողմը արաբի գյուղեր էին: Ճանապարհին քարավանի առաջեն գացողներու վրա կհարձակեին, կկողոպտեին, ետևը մնացողներուն վրա ալ կհարձակվեին: Այնպես որ, երկու կողմեն հարձակում կար: Մենք չէինք կարող մեզ պաշտպանել, ստիպված խմբով կքալեինք: Ոտքերնիս կոշիկ չէր մնացել: Ավազը կվառեր ոտքերնիս: Վրանիս շոր ալ չէր մնացել, եղածն ալ փոխանակել էինք հացի հետ: Ճամփին խոտերուն վրա կկոխեինք, որ ավազը չվառե: Գիշերը հոն մնացինք: Առավոտը նորեն շարունակեցինք մեր ճամփան, տեսանք, որ ջուրին հակառակ կողմեն շեյխ մը եկավ, մեզի առաջարկեց. - Այսօր դուք իմ հյուրն եք:

Քանի մը արաբներ մեծ ղազանով կերակուրը բերին: Ամեն մարդ իր ամանը առավ, գնաց իր բաժինը ստանալու: Երբ կերակուրնիս կերանք և շնորհակալություն հայտնեցինք, շեյխը ըսավ. - Ես ալ շնորհակալ եմ ձեզմե, որ զիս հարգեցիք և մեր կերակուրը կերաք: Բայց ես մի խնդրանք ունիմ, եթե կարելի է՝ ընդունեցեք: Ես ունիմ քսանհինգ կին և մեկ հայ կին առած եմ: Ես հայ կնոջմեն շատ շնորհակալ եմ, բայց ես կուզեմ մեկ հայ կին մը, որ իմ հայ կինս մենակ չմնա: Ադ հայ կինը մի տղա ունի, որի անունը Ահմեդ եմ դրել:

Տղային կանչեց: Տղան եկավ, մեզ հետ սկսեց հայերեն խոսել, ըսավ. - Շեյխը շա՛տ բարի մարդ է, ինձի և մայրիկիս շա՛տ լավ կնայի: Ես տասնչորս տարեկան եմ, իմ անունս Օհաննես է:

Շեյխը ըսավ. - Ես կարող եմ ձեզմե մի կին բռնի տանել, բայց բռնությունը լավ բան չէ, թող կամքովը գա՝ ով կուզե: Ռունի սեր չըլլար, - բայց մեզմե ոչ ոք չուզեց մնալ: Ադ գիշեր մի երեխա մեռավ: Մայրը կուլար ու կըսեր. «Ասչափ տեղ շալակովս բերի ու հիմա պիտի թաղեմ»: Հողը փայտով փորեցինք, թաղեցինք:

Առավոտյան Սուվար հասանք: Դա բավական մեծ գյուղ մըն էր: Գետին վրա պզտիկ նավ մը կար, որ երկու կողմը մարդ մը կփոխադրեր: Գիշերը հոն մնացինք, քիչ մը հանգստացանք, բայց առտու չեղած՝ ճամփանիս շարունակեցինք: Ճամփան շա՛տ երկար տևեց: Այդ տեղով Խաբուր և Եփրատ գետերը իրար կմիանան: Ջուրերնիս վերջացավ, բոլորս ծարավ ենք, սիրտերնիս կմարի: Մողեսներ հանդիպեցանք՝ մինչև մեկուկես մետր երկարությամբ: Կեսօրին հասանք Եփրատի քովը մեկ գյուղ մը: Հանգստացանք: Արաբները բերին հաց ծախեցին շորով, դրամով: Կերանք, բավական

կազդուրվեցանք և ճամփաձիս շարունակեցինք դեպի Դեր Զոր:

Երկրորդ օրը հասանք Դեր Զորի կամուրջը: Կամուրջը շատ երկար էր: Նավերը իրարմէ չորս մետր հեռու կանգնեցուցած էին, հինգ շարք շղթայով կապված էին, վրան կամուրջ շինած էին, որ եղած էր՝ շարժական: Երբ ջուրը բարձրանում էր, կամուրջն ալ բարձրանում էր, երբ ամառը ջուրը ցածրանում էր, կամուրջն ալ ցածրանում էր: Այդ իրիկուն կամուրջի մոտ պառկեցանք և երրորդ օրը մեզ տարին Դեր Զոր քաղաքին մեջեն անցուցին: Մի քիչ ալ քալեցինք, տեսանք նոր շենքեր են կառուցում, ըսին. «Ով որ աշխատիլ կուզե, թող օրական երկու ղուրուշով աշխատի»: Ես սկսեցի աշխատիլ: Մենք ադ տեղի կլիմային սովոր չէինք, օդը շա՛տ տաք էր, բայց ապրել էր պետք: Հանի մը օր աշխատեցա, լեզու՝ չգիտեմ: Մի արաբ մարդ, որ թուրքի զինվոր էր եղել, վարձեցինք, որ մեզի արաբերեն սորվեցնե: Գացինք քաղաք, թուղթ մատիտ գնեցինք, բայց ճանապարհին չեչեններու տուներ կային, տղաքը մեզի քար կնետեին: Մինչև քաղաք ետևնես կիյնային: Գալով գաղթականությանը՝ կշատնար: Անոթություն, թշվառություն, ամեն պատի տակ հիվանդ ու մեռել: Կառավարությունը սկսավ ողջ մնացածներուն ամիսը երեսուն ղուրուշ տալ: Բայց ան ալ երկու ամիս տվեցին, կտրեցին: Հիվանդները հավաքեցին, կամուրջին այն կողմը տարին, ամեն մարդ կարպետե վրան մը շինեց, որ արևեն պատսպարվի: Արդեն անապատի արաբները իրենց հասակով շապիկ կհագնեին: Վազելու ժամանակ առջևեն փեշը վեր կքաշեին, որ ոտքերնուն չփաթթվի: Իսկ եթե մահ ունենային, եթե ամուսնացած տղամարդ էր, իր կինը ամուսինի արծաթե շղթայով ժամացույցը վրան կկապեր, եթե ամուսինը զենք ուներ՝ վրան կկախեր, եթե սուր ուներ՝ ան ալ պատյանեն կհաներ՝ մեկ ձեռքը սուր, մեկ ձեռքը վեր կառներ, կսկսեր պարել: Հանի մը կիներ դրացիներու, բարեկամներու տուները կերթային լուր տալու, որ հավաքվեցեք այսինչ մարդը մեռեր է: Տղամարդիկ կուգային գետինը կնստեին կամ՝ սիգարեթ, կամ՝ նարգիլե կծխեն, իսկ կիները՝ եկողը կշարվի երկու կողմի վրա, կսկսին ողբալ: Դեմ-դիմաց կանանց խմբերը ձեռքերը երեսներուն կզարնեն ու գլուխներուն մազերը կփետտեն, երեսները կճանկեն:

Մենք խանի մը մեջ գիշերեցինք: Անոթություն, հիվանդություն, թշվառություն, ոջիլները խաղողի ողկույզի պես իրարու վրա շարված էին: Մեզ կողոպտել էին մինչև վերջին վարտիքը և ոչ մի հին շոր չէին ձգած:

Հասանք Դեր Զոր: Ուտելիք չկա: Մեր որբանոցի տղաքը սկսան ճարինջի և ձմերուկի կեղևները ուտել: Դեր Զորի մութասարիֆը՝ քաղաքապետը, փոխված և հայատյաց դահիճը մը եկավ, սկսավ հայերու կոտորածը: Հազարավոր հայեր Դեր Զորեն դուրս կհանեին, դեպի Շետտետիհե, Սուվար, Մարաթ կղրկեին՝ կոտորելու: Թշվառություն, անոթություն, ոջիլ, տիֆ՝ չափեն ավելի էր: Այնպես որ, միայն դուրսի կամուրջին քովը օրական հարյուր հիսուն-երկու հարյուր մարդ կմեռներ: Թաղելու ժամանակ չկար: Ամեն օր մեկ փոս կփորեին, դիակները մեջը կլեցնեին: Հաջորդ օրը նորեն նոր փոս կփորեին: Մենք կտեսնայինք՝ շատերը առանց հագուստի, մերկ, միայն մորթը ոսկորին փակած, կմախք մը կքալե: Առտու մը գացինք, տեսանք մեկ պզտիկ վրանի մը տակ հինգ հոգի պառկած են հին շորերու մեջ, ամենն ալ մեկ անգամեն մեռեր էին, երևի թունավորվել էին: Հանի մը կին շուն մը մորթեր էին՝ արյունի ու մսի համար: Ուրիշ կին մը բաժին ուզած էր, չէին տված: Այդ կինը գացեր, մատներ էր, թե ասոնք կիները շուն են մորթել: Ժանդարմը եկավ, լավ մը ծեծեց ադ կիները, ըսելով. - Ինչու՞ համար մորթեցիք այդ շունը: Դուք շուն մը կարժե՞ք: Շունը ձեզմե շա՛տ աղեկ է և ձեզմե շա՛տ հարգի:

Կիները լալով պատասխանեցին. - Շատ սոված էինք, ուտելու բան չունեինք, ստիպված եղանք մորթելու: Դուք ինչու՞ ոչխարը կմորթեք, ոչխարը մեղք չէ՞:

- Ոչխարը մորթելու համար է ստեղծված, շունը՝ ոչ, - ըսավ ժանդարմը:

Կիները պատասխանեցին. - Մարդն ալ ապրելու համար ստեղծված է, բայց դուք թե՛ կմորթեք, թե՛ գընդակով կսպանեք, թե՛ սուրով կսպանեք: Մենք ալ ձեզի պես մարդ ենք, ինչու՞ այս բաները կընեք:

Ժանդարմը ըսավ. - Դուք գյավուր եք:

Կիները ըսին. - Մարդը՝ մարդ է, Աստուծո քով գյավուրը և մուսուլմանը չկա:

Ժանդարմը ըսավ. - Շունը գյավուրեն լավ է, անգամ մըն ալ այդպիսի գործ չընեք, եթե երկրորդ անգամ պատահի՝ կգնդակահարեմ ձեզի:

Կիները ըսին. - Մահը ավելի լավ է, քան՝ անոթի մնալը, գնդակը մեկ անգամեն կմեռցնե, բայց անոթությունը ամե՛ն օր, ամե՛ն ժամ կհալե ու կմաշե մեզ: Մենք կնախընտրենք գնդակով մահը, որքան՝ շուտ, այնքան՝ լավ: Արդեն ամեն օր երկու հարյուր մարդ կմեռնի հիվանդությունեն, անոթությունեն:

Ժանդարմը ալ չլսեց, հեռացավ: Մենք ալ հեռացանք:

Նոր եկած մութասարիֆի հրամանով սկսան ամեն օր հայերը քաղաքին մեջեն հավաքել ու ղրկել մեծ կամուրջին հակառակ կողմը, անկից ալ Շետտետիհե ու Սուվար ըսված տեղերը: Հարյուրներով, հազարներով ամեն օր, որպես հիվանդ, կամուրջի կողմը կղրկեին, առողջն ալ հետը:

Մեկ օր մը քառասուն կառք երեխաներ հավաքեցին, և Իսմայիլ Հաքքը անունով մարդը տարավ, հրդկիզեց այդ անմեղ մանուկները: Շատ ցավալի օրեր անցուցինք: Մեր որբանոցին մեջ եղած մեծ որբերուն դուրս հանեցին: Ես ալ անոնց հետ ստիպված դուրս եկա: Հալածանքը սկսավ մեզի դեմ: Ինձ բռնեցին, կամուրջի այն կողմը տարին: Տասնհինգերորդ անգամ նորեն բռնեցին: Այդ ջարդարարը գիս ճանչցավ, ըսավ. - Այս գյավուրը տասնհինգերորդ անգամ է, որ կբռնենք ու կփախի, այս անգամ ձեռքերը կապեցե՛ք:

Ես ժանդարմին ըսի. - Տեսա՝ ամեն օր մեռելները կտանին, ան ալ ոչ թե չորս մարդով, այլ՝ մեկ մարդ կապ մը կձգե մեռելին ոտքը, քաշելեն կտանի փոսին քովը, կապը ոտքեն կքանդե ու կձգե փոսին մեջը: Մինչև իրիկուն ադ մարդուն գործը այդ էր:

Մեր քարավանը ճամփա հանեցին դեպի Սուվար: Ճամփին ժանդարմը կնայի, որ իմ ձեռքերը չքանդեմ: Ես խնդրեցի ինձ հետ գացող հայերուն, որ ձեռքիս կապերը քանդեն, բայց անոնք վախցան՝ չքանդեցին: Վերջը տեսա, որ մի արաբ է քալլում քովես, ըսի. «Ի սեր Մուհամեդի, քանդե՛ աս ձեռքիս կապը»: Արաբը մեջքեն սուրը հանեց, կտրեց կապը, ազատեց ինձ: Մեկ ժամի չափ քալլեցինք, վերջապես հասանք կոտորածի տեղը. լա՛ց, ո՛ղբ, Աստուծմե ողորմությու՛ն, օգնությու՛ն կանչող՝ կանչողի, բայց օգու՛տ չկա: Գնդակով սպանել չկա: Գնդակը ափսոս է: Ժանդարմները կըսեին. «Մեկ գնդակը մեկ ղուրուշ է, դուք մեկ ղուրուշ չեք արժեր, ինչու՞ ծախս ընենք»: Մեզ կսպանեին սուրով, նաչաղով, կացինով, փայտով, երկաթի կտորով: Երկաթգծի պտուտակը քանդեր էին, պտուտակի ծակ տեղը փայտ էին անցուցած, կզարնեին, կսպանեին: Ես շվարած, կայնած էի, երբ թուրքը եկավ քովս և այդ փայտին ծայրը անցուցած պտուտակով գլուխիս զարկավ: Ես ինքզինքս կորցուցի, ինկա գետին, մարեր եմ: Որչափ պառկեր եմ՝ չեմ գիտեր, երբ աչքս բացի, տեսա, որ ամբողջ հայերը պառկած են, քանի մը հատ փախող կա, ջարդարարները ետևնին ինկած էին: Ես քաշվեցա դեպի ձորը, իջա ձորին մեջ, բայց ուժ չունեի ոտքի կանգնելու: Ինքզինքս հավաքեցի ու տեղես շարժվեցա, ոտքի կանգնեցի, նորեն ինկա գետին: Այդպես նորեն մնացած եմ, չեմ հիշեր որքան ժամանակ: Այդ ժամանակ այնպես կարծեցի, թե մեկը ինձի կըսե՝ ելի՛ր, գնա՛ աս տեղեն: Ոտքի կայնեցա ու սկսա քալել: Տեսա՝ վրաս ամբողջ արյուն է: Գլուխիս վերքը շատ մեծ էր, երկու մատս մեջը կմտներ: Սկսա քալել: Միայն գիշերները կքալեի, ցերեկը փոսի մը մեջ կպառկեի արևի դեմը: Այդ վիճակով երկու գիշեր քալելով եկա Դեր Զորի կամուրջը: Ինչպես ըսած եմ, Դեր Զորի կամուրջը շինված էր պզտիկ նավերով, մեկ կողմի վրա շարեր էին և վրան փայտով ծածկած էին: Գացի մինչև կամուրջի վերջին մասը, որ այդտեղ ժանդարմները կպահեն, որ փախստականները քաղաք չմտնեն: Նավին մեջը, կամուրջին տակ պահվեցա և մեկ պզտիկ քար մը ձետեցի՝ տեսա ձայն չկա. քնած են: Բայց ճաղերով դուռը փակ էր: Բարձրացա վեր և անցա քաղաքի կողմը: Շիտակ գացի խարբերդցի Մարգարիտ անունով մեկ աղջիկի մը մոտ, որը իր կյանքը ազատելու համար ամուսնացած էր արաբի մը հետ: Դուռը զարկի, ներսեն արաբերեն ձայն տվավ. - Ո՞վ է:

- Դուռը բաց, ես եմ՝ Հարությունը, - ըսի:

Եկավ, դուռը բացավ, տեսավ ես արյուններու մեջ եմ, ճչաց: Ես բերանը բռնեցի, ըսի. - Ի՞նչ կընես, կուգաս զիս ներեն կբռնեն, կտանին:

Մարգարիտը ըսավ. - Այս ի՞նչ է վիճակդ:

Ես ըսի. - Ամեն տարվածներուն ամբողջը ալ կսպանեն, ողջ մնացող չկա: Իմ հոս մնալս չըլլար: Պետք է հեռանամ, եթե զիս տեսնեն, նորեն կտանին: Միայն քեզմե կխնդրեմ, որ հագուստս լվանաս և ինձի ուտելիք առնես: Ես քովս դրամ ունիմ:

Ան խոսքս լսեց: Մարագեն հաց բերավ, արաբական աբա մը տվավ, հագա: Ես մնացի Մարգարիտի արաբ ընտանիքին քովը:

Օր մը ժանդարմ մը եկավ, ըսավ. - Ձեր քովը հայ մը կա, պիտի տաք, որ տանիմ Դեր Զոր:

Մարգարիտին արաբ ամուսինը ըսավ. - Հայ չկա մեր քովը:

Ժանդարմը ըսավ. - Ինձի լուր տված են, որ հոս հայ կա:

Զիս ազատելու համար հինգ մեճիտ դրամ տվեց, ղրկեց: Հանի մը օր վերջ ուրիշ ժանդարմ մը եկավ: Յոթը մեճիտ ալ անոր տվեց, գնաց:

Մարգարիտի ամուսինը ըսավ. - Տղա՛ս, կտեսնես, որ ամեն միջոց կխորհիմ քեզ ազատելու համար, բայց օգուտ չըներ: Քեզ հանձնեմ՝ խիղճս կտանջե: Եկուր քեզի քանի մը մեճիտ դրամ տամ, այստեղեն մինչև Հալեպ գյուղերու անունները ասեմ, գնա՝ ազատիր: Տերը հետդ ըլլա:

Ես համբուրեցի անոր ձեռքը, ինքն ալ իմ ճակատս համբուրեց և բաժանվեցանք: Ես ճամփա ընկա և սկսա մտաբերել իմ անցած կյանքս: Ես կկարծեի, թե աշխարհի վրա այլևս հայ չէ մնացած, բայց հույսս չէի կտրել: Մինակ մնացած ժամանակս ավազի վրա Ա, Բ, Գ կգրեի, որ չմոռնամ: Ամբողջ օրը քալեցի: Գիշերը մի արաբի տանը հյուր եղա: Այնտեղ ալ մնացի, աշխատեցի նրանց ֆասուլիայի արտին մեջ: Բայց աչքերից հիվանդ մի աղջիկ ունեին, դրանք ուզում էին ինձ ամուսնացնել նրա հետ: Ես գիշերով փախա, գացի Սաբիա գյուղաքաղաքը: Այնտեղ երեսուն չափ հայեր կային: Այնտեղ ես ոչխարներ էի արածացնում, բայց ինձ բանակ գրեցին: Ես այնտեղից էլ փախա, Ռաքքա հասա, հետո Համմա, Մեսքենե, հետո Հալեպ: Այնտեղ ուրֆացի երկու եղբայրների մոտ դարբինի գործ գտա: Հետո հեռագրի գործիքներ նորոգողի մոտ աշխատեցա...

1946-ին ընտանիքիս հետ ներգաղթեցինք Հայաստան: Երևանի Արաբկիրի Բանջարանոց ըսված տեղը սկսա տուն շինել: Բանկը վարկ տվեց: Քրտինքովը քարաստանը բուրաստան դարձուցի: Հիմա կնոջս՝ Բրաբիոնի հետ կապրինք, թոշակ կստանամ:

90 (90).
ԼՈՐԻՍ ԱԲԳԱՐԻ ՊԱՊԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ԷՐԶՐՈՒՄ, ԱՂԱԴԻՐ Գ.)

Նախ՝ ասեմ, եթե միտումնավոր կերպով գունազարդած լինեմ դեպքերն ու դեմքերը, թող ներվք լինի ինձ և ընդհանուրի արհամարհանքին արժանանամ:

Ծնվել եմ 1903 թ. Կարնո (Էրզրում) վիլայեթի Դերջանի շրջանի Աղադիր գյուղում, գյուղացու ընտանիքում: Մեր ընտանիքը բաղկացած էր ութը շնչից: Հայրս մի հաղթանդամ մարդ էր:

Գյուղում ունեինք եկեղեցի, բայց քահանա չունեինք: Մայրս ուզում էր, որ հայրս քահանա դառնա, բայց հայրս նախընտրեց գնալ Ամերիկա՝ իր վախճանված

հոր պարտքերը վճարելու համար: Շուտով լսեցինք նրա մահվան լուրը: Մնաց նաև մեծ եղբայրս, որը մեր հոգսն էր տանում: Թոնիրի մեջ ընկավ ու վառվեց փոքր քույրս: Մնացինք՝ ես, եղբայրս և մայրս:

Այդ օրերին լուր եկավ, որ մայրս պետք է ներկայանա Մամախաթուն քաղաքի գայմագամին, որը մորս է հանձնում յոթանասունհինգ ոսկի հորս մահվան ապահովագինը, քանի որ նա գտնվել էր «Տիտանիկ» նավի վրա և աղետի զոհ էր դարձել: Մայրս ինձ տեղավորեց Կարնո (Էրզրումի) Սանասարյան վարժարանը:

1914 թ. սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Շուտով լսեցինք, որ հայերին պիտի տեղափոխեն դեպի Տաճկաստանի «խորքերը»: Հայերը կարծես նախազգում էին իրենց հետ պատահելիք զարհուրելի տանջանքները և չէին ցանկանում դուրս գալ քաղաքից, դիմադրում էին հրամանը կատարել:

Մեզ՝ Սանասարյան վարժարանի աշակերտներիս, թվով ութ հարյուր հոգի, նույնպես հանեցին քաղաքից և ուղարկեցին «խորքերը»: Որպեսզի ժողովրդին միամտացնեն, իրենց ստոր նպատակներն իրականացնելու համար Էրզրումից սկսած մինչև Մամախաթուն քաղաքը գաղթող ժողովրդին ուղեկցում էր՝ «ապահովության համար»՝ տաճկական արնախում ժանդարմերիան, որը ճանապարհին անասելի բռնություններ էր գործադրում՝ կողոպտում, առևանգում ու սպանում աչքի ընկնող մարդկանց: Մի քանի օրից մենք հասանք Դերջանի հովիտը, վրաններ խփեցինք Եփրատ գետի վրա գտնվող Կոթեր գյուղի կամուրջի մոտ: Այնտեղ էին հավաքվել նաև Էրզրում քաղաքի ու նրա շրջակայքի ողջ հայ գաղթականությունը, մոտ երեք հարյուր հազար հոգի:

Էրզրումից մինչև Մամախաթուն անցկացած ճանապարհին տեղի ունեցած սարսափելի տեսարանները համոզեցին հայերին, որ իրենց բոլորին էլ մահ է սպառնում, ու նրանք սկսեցին միջոցներ որոնել՝ լեռները փախչելու: Շուտով ժողովրդի մտադրությունը հայտնի դարձավ թուրք ոստիկաններին: Հետևյալ օրը շրջապատեցին ողջ քարավանը: Արդեն փրկության բոլոր ճամփաները փակված էին: Սկսվեց մի սոսկալի տեսարան: Թուրքական չեթեներն ու ժանդարմները՝ թուրք ամբոխի զինված ելուզակային խմբերի հետ, հարձակվեցին անզեն ու անպաշտպան ժողովրդի վրա, ջոկեցին բոլոր տղամարդկանց, առանձնացրին աղջիկներին, հարսներին և սկսեցին կողոպուտը: Ավարը կրելու համար շրջակա գյուղերից եկել էին թուրք և քյուրդ հազարավոր մարդիկ՝ սայլերով, գրաստներով: Չորս օր ու գիշեր կրում էին հայ ժողովրդի հալալ աշխատանքի ու արյան գնով ձեռք բերված թանկարժեք իրերը: Դրանից հետո սկսվեց մարդկային կոտորածը: Սպանում էին ոչ թե հրազենով, այլ՝ սառը զենքով՝ սրերով, դաշույններով կամ՝ խեղդամահ էին անում: Գիշեր ու ցերեկ չէին դադարում մարդկային աղեկտուր հառաչանքներն ու աղերսանքները, երեխաների լացն ու կոծը, նրանց ողբագին վայնասունն ու թախանձագին բացականչություններին նույնիսկ ամենաքար սիրտը ունեցող մարդը չէր կարող դիմանալ: Բայց արնախում դահիճներն ու մարդակեր գազաններն, ընդհակառակն, ավելի դաժան, ավելի վայրագ միջոցների էին դիմում՝ կենդանի մնացածներին սպանելու համար: Մեր դպրոցի մեծահասակ տղաներին ևս կոտորեցին, իսկ ես ու մի քանիսը ցրվեցինք գաղթականության մեջ:

Թուրք ժանդարմաները խրախճանք էին սարքել կամուրջի մոտ՝ իրենց վրանների շուրջը, ուրախանում էին հայ աղջիկների ու հարսների հետ բռնի կերպով գործադրած առևանգումներով ու իրենց վավաշոտ կրքերին հագուրդ տալու այլ և այլ միջոցներով: Ես ականատես եղա, թե ինչպես թուրք պաշտոնյաները ջոկել էին հայ աղջիկներից ամենագեղեցիկներին, մոտ երեսուն հոգու, իրար կապել ու պահակների հսկողության տակ ուզում էին տեղափոխել իրենց մշտական որջերը՝ հետագա ստոր նպատակների համար: Սակայն աղջիկների այդ խումբը՝ հասնելով Եփրատ գետի կամուրջի վրա, կայծակի արագությամբ, որպես մեկ մարդ, ահռելի բարձրությունից նետվեց Եփրատ գետը՝ մեկընդմիշտ ազատվելով հետագա տանջանքներից ու խոշտանգումներից: Աղջիկների նման վարմունքը կատաղության հասցրեց թուրք ժանդարմների ղեկավարներին, որոնք հրամայեցին կենդանի մնացած բոլոր ծերերին, կանանց ու երեխաներին կապել, խումբ-խումբ գցել ջուրը: Երկու հարյուր մետրից ավելի լայնություն ունեցող խոր գետի երեսը ծածկվել էր մարդկային դիակներով, և կարծես արյուն էր հոսում ջրի փոխարեն: Եփրատ գետը, որ դարեր շարունակ եղել էր հայ ժողովրդի հրճվանքը, նրա խորհրդանշանը, նրա նյութական միջոցների ստեղծման ու առատության աղբյուրը, այսօր դարձել էր այդ ժողովրդի բնաջնջման սպանդանոց: Ու ես մտածում էի՝ ի՞նչ է արել այս դժբա՜խտ ժողովուրդը, որ բարբարոսաբար բնաջնջվում է այսօր:

Եփրատի հովտում ես պատահաբար հանդիպեցի մորս: Նա լսել էր, որ Էրզրումի Սանասարյան վարժարանի սաներին գաղթական են հանել, մեծ դժվարություններով եկել հասել էր էդ կողմերը՝ ինձ փնտրելով: Նա խելագարի պես ինձ սեղմեց իր կրծքին, համբույրներ էր դրոշմում իմ երեսին և չէր հավատում աչքերին, որ իրոք դա՝ ես եմ: Մնում էր, որ մենք դուրս գայինք մահվան այդ օղակից: Այդ անելու համար մենք ստիպված եղանք թաքնվել սպանվածների ու վիրավորների մեջ: Երկու օր ու գիշեր լսեցինք վերքերից տանջամահ եղողների նվոցներն ու հառաչանքները: Մեր բախտից երրորդ գիշերը սաստիկ անձրև տեղաց և մթնեց: Մենք օգտվելով առիթից՝ չորեքթաթ սողալով մարդկային դիակույտերի վրայից, կես ժամից հետո դուրս եկանք մահվան դաշտից ու փախուստի դիմեցինք դեպի մոտակա հայ գյուղերից մեկը:

Գիշերվա ժամը երկուսին հասանք Կոթեր գյուղը: Քիչ հանգստացանք, հազիվ մեր շորերը չորացրինք, առավոտյան գնացինք մեր գյուղը՝ Աղադիր:

Այդ ժամանակ մեր և շրջակա բոլոր հայ գյուղերում լուրեր էին տարածել, որ իբր թե Էրզրումի հայերը դիմադրել են, չեն ենթարկվել թուրք կառավարության հրամաններին, դրա համար էլ նրանց կոտորել են, բայց մնացածներին կոտորած չի սպասում…:

Ես ու մայրս դեռ չէինք հանգստացրել մեր ուղեղները մեր տեսածներից, դեռ ուշքի չէինք եկել՝ լուրստացվեց, որ մեր գյուղից մի քանի կիլոմետրի վրա գտնվող Աբրանք գյուղի հայերին կոտորել են ու կողոպտել: Մեր գյուղում իրարանցում սկսվեց: Եվ ահա գյուղի բարձունքներից հրացանային համազարկեր որոտացին, և չանցած քառորդ ժամ՝ գյուղ ներխուժեցին թուրք և քյուրդ ավազակային հորդաները:

Գիշերային խավարի մեջ հրացանների ձայնից, ժողովրդի ողբագին լաց ու կոծից, երեխաների սրտահար վայնասունից ու անասունների բառաչից գյուղը մի զարհուրելի պատկեր էր ներկայացնում: Դիվահար ժողովուրդը մեկն՝ իր զավակին, մյուսն՝ իր հարազատին կորցնելով դիմում էր փախուստի՝ չիմանալով, որ բոլոր ճանապարհները նախօրոք ավազակների կողմից փակված էին:

Գյուղ մտնող ավազակների պարագլուխը, ի զարմանս բոլորի, քրդերեն հայտարարեց. «Հայե՛ր, եթե ուզում եք ողջ մնալ, թողեք ձեր բոլոր ունեցվածքը և դուրս եկեք գյուղից, միայն բոլորդ պետք է անցնեք Թառու գնացող ճանապարհով և ձեր վրա եղած բոլոր դրամներն ու զարդեղենը հանձնեք իմ մարդկանց, այլապես՝ բոլորիդ կոտորել կտամ»:

Կյանքը թանկ է: Ժողովուրդը համաձայնեց ավազակների առաջարկին, և խումբ-խումբ դուրս եկանք նշված ճանապարհով: Կողոպուտի պահակների մոտով անցնելիս նկատում էինք, թե ինչպես հայերից խլած ոսկիներն ու թանկարժեք զարդարանքները դեզեր են կազմել:

Ամեն ինչ թողած բարբարոսներին՝ ունայն ձեռքով լուսաբացին հասանք Թառու գյուղի սարերը: Դա 1915 թ. մայիս ամիսն էր: Գյուղից դուրս գալուց մեզ թույլ չէին տվել մեզ հետ որևէ ուտելիք վերցնել: Մեր գտնված սարերում ոչինչ չկար, իսկ շրջակա թուրքի գյուղեր գնալը վտանգավոր էր: Երեսուն օր մնացինք այդ լեռներում և սնվում էինք խոտերով ու արմատապտուղներով: Բոլորիս դեմքերը դեղնել ու անճանաչելի էին դառել: Ամեն օր չորս-հինգ հոգի մահանում էր:

Մի օր առավոտյան արթնացանք, տեսանք շրջապատված ենք թուրք հարյուրավոր ոստիկաններով: Սկսեցին տղամարդկանց, կանանց և երեխաներին առանձնացնել: Գազազած ոստիկանները տղամարդկանց տասնյակներով իրար կապեցին, քիչ հեռացրին հավաքվածներից և սկսեցին համազարկերով կոտորել: Այդ հրեշավոր ոճրագործության ժամանակ հարազատներից շատերն իրենց նետում էին սպանվող որդիների ու ամուսինների դիակների վրա և ահռելի կերպով բղավում էին. «Մարդասպաննե՛ր, բարբարոսնե՛ր, բռնեհինե՛ր, մե՛զ էլ սպանեցեք մեր հարազատների հետ»:

Այդ իրարանցումից օգտվելով՝ տղամարդկանց ու կանանց որոշ մասին հաջողվեց ազատվել ոստիկանների ձեռքից ու փախչել: Մնացածներին հավաքեցին ու տեղավորեցին մոտակա քյուրդ գյուղերից մեկում:

Հաջորդ օրը մայրս իմ ու եղբորս ձեռքերը բռնած տարավ ոստիկանապետի մոտ, ընկավ նրա ոտները, խնդրեց ու աղերսեց, որ նա թույլ տա մեզ գնանք մոտակա քյուրդ գյուղերից մեկում, նախկինում մեզ ծանոթ մի քրդի մոտ ապրելու: Սակայն գազազած ոստիկանապետը, որի անունը Շյուքրի-բեկ էր, այնպես ուժգին ապտակեց մորս և ոտքով խփեց, որ խեղճ մայրս ուշագնաց գետին ընկավ: Մեզ՝ երկու եղբայրներիս, ոստիկանապետը ուղարկեց հսկողության տակ գտնվող հայ երեխաների մոտ: Այդ օրվանից ես ու եղբայրս բաժանվեցինք մեր հարազատ մորից, և մինչև իմ ազատվելը չէի իմանում մորս մասին ոչ մի տեղեկություն:

Հետևյալ օրը մեզ՝ թվով երեսուն երեխաների, ութից տասներկու տարեկան հասակի, շարեցին գյուղի հրապարակում: Եկան բոլոր ոստիկանները և սկսեցին ամեն մեկն իր համար ջոկել մեզ: Ոստիկանապետը հայտարարեց. «Երեխանե՛ր, եթե ուզում եք ապրել, պետք է որդեգրվեք իմ զինվորներին և նրանց հետ գնաք: Այլևս չսպասեք ձեր ծնողներին: Նրանք բոլորն էլ սպանված են»: Ի՞նչ կարող էինք անել, ստիպված համաձայնվեցինք գնալ ոստիկանների հետ նրանց տները: Ես որքան աշխատեցի գոնե եղբորս հետ ընկնել մի քաղաքում կամ գյուղում՝ անհնար եղավ: Եղբայրս՝ Ոսկանը, մի ոստիկանի հետ գնաց Սվազի կողմը, իսկ ես գնացի Ռոլոմորի քաղաքը: Այդ օրվանից, այսինքն 1915 թ. օգոստոսից բաժանվեցի նաև փոքր եղբորիցս և մինչև օրս լուր չունեմ նրա որտեղ լինելու մասին:

Ինձ որդեգրողը Երզնկայի շրջանի Ռոլոմորի քաղաքի քաղաքագլխի օգնական Հագիֆ էֆենդին էր: Նախքան իրենց տունը տանելը, նա ինձ տարավ ոտից գլուխ հագցրեց, ինձ համար ձի վարձեց և հեռակա ծանոթացրեց իր ընտանիքի անդամներին: Նա ուներ կին և երկու աղջիկ՝ ութ-ինը տարեկան: «Հայրս» ինձ շատ պատվերներ տվեց և զգուշացրեց, որ եթե ես չպահպանեմ այդ պատվիրանները՝ կորած եմ: Որոնք էին այդ պատվիրանները. ես ինձ անվանելու էի Էրզրումի թուրք մրհաջիրի որդի, ծնողներս «սարի մոսկովների» («դեղին մոսկվացի» էին անվանում ռուսներին) կողմից սպանված: Անունս պետք է լինի Մավլյուա: Երբեք և ոչ ոքի չպետք է ասեմ իմ հայ լինելը և իմ հարազատների կորցնելու հանգամանքները:

Հետևյալ օրը ճամփա ընկանք: Երեք օրից հասանք «հորս» տունը: Ճանապարհին մենք հանդիպում էինք հայ փախստական խմբերի, որոնց բռնել էին թուրք ոստիկանները՝ իրենց թաքնված տեղերից ու տանում էին սպանելու: Ճանապարհին տեսա, թե ինչպես թուրքերը ծաղրում էին նրանց՝ հայ աղջիկներին ու կանանց: Ես հանդիպեցի այնպիսի մի զարհուրելի գազանային տեսարանի, որ աշխարհի պատմության մեջ, նախնադարյան շրջանից սկսած մինչև մեր օրերը, ոչ մի բարբարոս ժողովուրդ նման վայրագություններ չէր արել կանանց հանդեպ: Չորս ստահճանավորներ՝ մարդկային կերպարանքները կորցրած վայրի բորենիների մոլուցքին հասած ստոր վիժվածքներ, նստել էին սեղանի շուրջը, իրենց կողքին կանգնեցրել էին մի խումբ հայ հղի կանանց, որոնք հավանաբար մի քանի օրից պետք է ծննդաբերեին, գրազ էին գալիս նրանց արգանդներում եղած զավակների արու կամ էգ լինելու մասին և կարգադրում ստորադրյալներին՝ դաշույնով բացել հղի կնոջ արգանդը և դուրս բերել այնտեղից

երեխան: Ինչ սոսկալի վայրագություններ ասես չէին անում մարդանմաններ գազանները: Եթե ես անձնապես տեսած չլինեի հիշյալ տեսարանը և այսօր ինձ պատմեին կամ գրքերում կարդայի, ես երբեք չէի հավատա, որ իրոք նման գազանություններ կարող են տեղի ունենալ:

«Հայրս» ինձ ծանոթացրեց տնեցիներին և ներկայացրեց, որ ես որբացել եմ, քանի որ ռուսները սպանել են իմ ծնողներին: «Մայրս»՝ Նազլու խանումը, ինձ լողացրեց, հագցրեց ու մաքուր անկողնում պառկացրեց: Բայց ես չէի կարող քնել, մտածում էի իմ հարազատների մասին: Նրանք իմ նկատմամբ հոգատար էին: Ես էշով գնում էի փայտ և ջուր բերում: Հաճախում էի թուրքական դպրոց և սովորում էի շատ լավ:

Մի օր նրանց երկու աղջիկների հետ խաղում էի, մեկի գլխին խփեցի գնդակը ու վիրավորեցի, «մայրս» այդ տեսավ, ինձ նախատեց: Ես շա՜տ ազդվեցի, ամբողջ օրը հաց չկերա, տուն չմտա: Երեկոյան «հայրս» եկավ, իմացավ կատարվածը, իմ ձեռքից բռնեց, շոյելով ինձ տարավ տուն: Ամբողջ օրը քաղցած՝ մտա անկողին, սկսեցի լաց լինել, հիշել իմ մորը: Այդպես քնել եմ, բայց տաքությունս բարձրացել է և ես սկսել եմ զառանցել հայերեն լեզվով: Նազլու խանումը, որ շատ ուշադիր էր իմ նկատմամբ, ականջ է դնում, որ ես հայերեն եմ զառանցում, գնում է իր ամուսնուն է հայտնում: Նա չի կարողանում այլևս թաքցնել, ասում է՝ որ ես հայ եմ: Այդ օրից հետո Նազլու խանումը ավելի հոգատար էր դարձել իմ նկատմամբ, քթի տակից հայերեն երգերի պատառիկներ էր մրմնջում: Մի օր էլ ինձ հետ առանձին խոսեց ու պատմեց, որ ինքը Պոլսից է: Մեծացել է հայկական շրջապատում: Փոքր տարիքում հաճախել է հայկական դպրոց և երբ մեծացել է՝ սիրահարվել է մի հայ երիտասարդի վրա, բայց երկու կողմերի ծնողները համաձայն չեն եղել: Հայ տղայի ծնողները վերջապես համաձայնվում են, գալիս են Նազլուի ձեռքը խնդրելու, բայց նրա ծնողները չեն համաձայնվում և ամուսնացնում են Հագիֆ Էֆենդու հետ: Այդ օրվանից անցել է տասնհինգ տարի, բայց ինքը չի մոռացել այդ հայ տղային:

Ես այդ ընտանիքում մնացի մինչև 1916 թ. կեսերը: Ռուս-թուրքական պատերազմի լուրերը լավ բան չէին ասում թուրքերի պարտության մասին: Ամեն օր հարյուրավոր վիրավոր ու փախստական ասկյարները քաղաքից անցնելիս ասում էին, որ չտեսնված կոիվ է, ոչ մի ուժ «սարի մոսկովցիներին» չի կարող դիմանալ: Մանավանդ, նրանց հետ եկող հայ կյոնյուլիները (կամավորները) անհնա կերպով կոտորում են թուրքերին, որքան կարելի է պետք է շուտ փախնել: Այդ լուրերը աճ ու սարսափ էին տարածել թուրք ժողովրդի մեջ և շատ ուժեղ դժգոհություններ ստեղծել իրենց կառավարության նկատմամբ, որ նա գազանաբար կոտորեց հայերին, իսկ այսօր փոխարենը հատուցում է անմեղ ժողովուրդը:

Մի քանի օրից հետո պաշտոնապես հայտնեցին քաղաքից գաղթելու մասին: Ժողովուրդը խուճապի մատնվեց, քանի որ Երզնկա քաղաքը գտնվում էր ռուսների ձեռքին, իսկ իրենց մնում էր լեռներով, Դերսիմի

ձյուրդերի միջով փախչել դեպի Դիարբեքիր: Ամեն ինչ թողած՝ փախան: Մենք էլ վերցրինք մեր թանկարժեք իրերը, փախանք: Ճանապարհին «հայրս» իր եղբոր հետ վիճաբանեց և չուզեց նրա հետ ճանապարհ գնալ, նախընտրեց վերադառնալ մեր տունը: Հասանք մեր տունը, արդեն ռուսները եկել էին, բայց մեզ ձեռք չտվին, այլ մեր նկատմամբ շատ հոգատար էին, և ռուս հրամանատարը «հորս» խորհուրդ տվեց տեղափոխվել Երզնկա քաղաքը: Հաջորդ օրը «հայրս», «մայրս» և «քույրս» ճամփա ընկան, մեզ՝ ինձ ու իմ մեծ «քրոջս» թողին տանը, որ վերադարձին գան մեզ և այլ կարևոր իրեր տանեն: Բայց ինչքան սպասեցինք՝ չեկան: Ես ու «քույրս» սկսեցինք լաց լինել: Գիշերվա մութին մեկը մեր դուռը խփեց: Պարզվեց, որ այդ հսկա մարդը մեր թուրքերի տանը ծառա է եղել: Նա 1915 թ. գաղթի ճամփաներին հարձակվել է ժանդարմի վրա, նրա ձեռքից խլել է նրա հրացանը ու փախել: Հետևից կրակել են ու ոտքից վիրավոր հասել է Դերսիմ: Այնտեղ իր ծանոթ քյուրդը իրեն բուժել է: Այդ մարդը զգաց, որ ես հայ եմ, ինձ խորհուրդ տվեց փախչել, բայց ես «քրոջս» չէի կարող մենակ թողնել:

Հետևյալ առավոտ այդ մարդը հրաժեշտ տալով մեզ՝ ասաց. «Երեխաննե՛ր, այսօր ես գնալու եմ մեր գյուղը, բայց դրությունը տեսնելով՝ որոշեցի գնալ Երզնկա, գտնել ձեր ծնողներին, հայտնել ձեր վիճակի մասին և նոր գնալ: Իսկ այժմ ձեզնից մեկն ու մեկը թող ամանները վերցնի գա քաղաք, ես ռուս զինվորներից հաց ու ճաշ վերցնեմ բերեմ, կերեք, դրանով յոլա գնացեք մինչև ձեր հայրը գա տանի ձեզ»: Մենք ուրախացանք, ես ամանները վերցրի իր հետ գնացի ռուս զինվորների մոտ: Այդ մարդը ինձ տարավ մի վրանի մեջ, որտեղ նստած էին երկու աստիճանավորներ, նրանց հայտնեց, որ ես հայ եմ, բայց չեմ ուզում իմ «ծնողներին» դավաճանել և չեմ ուզում գնալ մեր գյուղը: Աստիճանավորը ինձ հարցրեց. «Ինչու՞ չես ուզում գնալ հայերի մեջ, չէ՞ որ բոլոր հայերին հավաքում են և ուղարկում իրենց ծննդավայրը»: Ես չկարողացա հայերեն պատասխանել: Պատասխանեցի թուրքերեն. «Ես չեմ ուզում իմ «քրոջը» մենակ թողնել»: Այդ ժամանակ աստիճանավորը ինձ մի ապտակ հասցրեց ու կարգադրեց ինձ բերողին. «Ձիու վրա կապիր ու տար հանձնիր հայկական շտաբին»: Չինվորական գումակի ձիերով երկու օրում հասանք Երզնկա: Ինձ հանձնեց հայկական շտաբին և իմ ներկայությամբ ինձ բերող մարդուն երկու ոսկի դրամ տվեցին. ինձ տարան հավաքված հայ երեխաների մոտ այն պայմանով, որ ուղարկեն մեր գյուղը: Ես միայն այստեղ հասկացա, թե ինչու հայ մարդը շահագրգռված էր ինձ բերելու: Նա վաղուց գիտեր, որ հայկական շտաբի կողմից հատուկ կարգադրություն կա՝ ով որ մեկ հայ գտնի բերի հանձնի՝ կստանա երկու ոսկի:

Վերջնականապես հույսս կտրած, արցունքներն աչքերիս՝ դիմեցի ինձ բռնությամբ բերող մարդուն՝ խնդրելով, որ նա գոնե գտնի «ծնողներիս», հայտնի ինձ հետ պատահածի մասին և նրանցից տեղեկություն բերի ինձ:

Մենք՝ գնացող երեխաներս, արդեն նստել էինք փուրգոնները և քառորդ ժամից հետո դուրս պետք է

գայինք, եկավ հայ մարդը և հայտնեց. «Քո խնդրանքով գնացի գտա «մորդ» և «քրոջդ», հայտնեցի այնտեղ մնացած «քրոջդ» մասին. իմացա, որ ձեր «հայրը» հետևյալ օրը վերադարձել է ձեզ բերելու, սակայն ճանապարհին հանդիպելով թուրք հետախույզներին, որպես ռուսների մեջ մնացողի, սպանել են, իսկ ճանապարհները վտանգավոր լինելու պատճառով էլ ձեր «մայրը» չի կարողացել գնալ ձեզ բերելու և գիշեր-ցերեկ լաց է լինում»: Թե ի՞նչ եղավ մերոնք՝ այլևս չիմացա, բայց մինչև օրս էլ, երբ հիշում եմ նրանց՝ խիղճս տանջում է, հանգիստ չեմ զգում, թե՝ ինչու՞ ապերախտություն արեցի ու թողի հետացա:

Երեք օրից հետո հասանք Մամախաթուն, և ես այնտեղից գնացի մեր գյուղը՝ Աղադիր: Գյուղում իմացա, որ մորս սպանել են, իսկ փոքր եղբորիցս ոչ մի տեղեկություն չկա: Չնայած գյուղից երկու տասնյակ մարդ ազատվել ու ապրում էին գյուղում, բայց իմ ազգականներից ոչ ոք չէր ազատվել: Այլևս անտանելի էր մնալ գյուղում, որտեղ ամեն րոպե հարազատներիս հիշելիս, անցյալը մտաբերելիս՝ խելագարի պես կորցնում էի ինձ՝ անգգա դառնում: Որոշեցի հաջորդ օրը ճանապարհ ընկնել դեպի Երզնկա: Խորհուրդ տվեցին որբանոց մտնել, բայց իմացա, որ այնտեղ կյանքի պայմանները վատ էին, չգնացի: Հանդիպելով համագյուղացի մի տղայի՝ միասին գնացինք Չութլուկ գյուղը: Այնտեղ դարձա մշակ: Վեց ամիս աշխատելուց հետո, աշխատանքային ծանր պայմաններին չդիմանալով՝ թողի հետացա, գնացի Էրզրում, մտա համագյուղացու՝ Մարութ ամու, սրճարանում որպես մատուցող:

Վրա հասավ 1917 թվը: Ռուսաստանում ծագած հոկտեմբերյան հեղափոխության լուրը կայծակի արագությամբ տարածվեց տանկական ֆրոնտի ռուս զինվորների մեջ, և նրանք թողնելով ճակատը անպաշտպան՝ վերադարձան հայրենիք՝ Թուրքիայից գրաված վայրերի պաշտպանությունը թողնելով հայերին:

Թուրքական կառավարությունը, օգտվելով ռուսաց զորքի ետ գնալուց, 1918 թ. սկզբներին անցավ հարձակման և կարճ ժամանակամիջոցում ետ գրավեց Երզնկան, Էրզրումը և մինչև Ալեքսանդրապոլ հասավ: Տանկաստանից փախած գաղթականության մեծ մասը լցված էր Ալեքսանդրապոլ, և օր չէր լինում, որ քաղաքում անկարգություններ ու մարդասպանություններ տեղի չունենային: Այդ օրերին Ալեքսանդրապոլում էր գտնվում Անդրանիկ փաշան: Նա խիստ խռոված էր դաշնակցականներից և բանակ էր կազմակերպում: Տասն օրից հետո արդեն հավաքագրված ուներ մոտ ութ հազար հետևակ ու հեծելազոր: Ես էլ, որպես անապաստան տղա, համագյուղացիների հետ մտա բանակի շարքերը, որպես ձիապան: Ալեքսանդրապոլում հայտնի դարձավ, որ Անդրանիկը մտադիր է Ջալալօղլի, Դիլիջան, Բայազետ, Դարալագյազ, Նախիջևան մարշրուտով անցնել Պարսկաստան և այնտեղից գնալ Անգլիա: Այդ մտադրությունը բավական էր, որ երեսուն հազար գաղթականություն գար Անդրանիկի բանակի ետևից:

Միշտ այդ օրերին քեմալական զորքերը գտնվում էին Երևանի պարիսպների տակ և իրենց կամքն էին թելադրում դաշնակցական կառավարության պարագլուխներին:

Վեց օրից հետո մենք արդեն Ջուլֆայում էինք: Զորքը և երեսուն հազար գաղթականությունը սկսում էր շրջակայքի գյուղացիների հաշվին: Ջուլֆայում Անդրանիկը, բանակցությունների մեջ մտնելով պարսկական կառավարության հետ, թույլտվություն ստացավ նրանից՝ Խոյ-Սալմաստ ճանապարհով անցնել գնալ Պարսից ծոց: Հաջորդ օրը՝ 1918 թ. հունիս ամսին, անցանք սահմանը և ընթացանք դեպի Խոյ: Երբ մենք և գաղթականությունը անցել էինք սահմանը, Խոյից տասնհինգ կիլոմետր հեռավորության վրա մեր առաջապահ զորամասերը կռվի մեջ էին մտել թուրքական կանոնավոր զորքի հետ: Գերի վերցրած թուրք սպաներից հայտնի դարձավ, որ թուրքական հրամանատարությանը վաղուց հայտնի է եղել Անդրանիկի մտադրությունը և դրա համար կարգադրել է երեսուն հազարանոց բանակը փոխադրել Խոյ՝ փախչող Անդրանիկի բանակին ու գաղթականությանը ոչնչացնելու համար: Տասներկու ժամ համառ ու անհավասար մարտ մղելով թուրքական զորքի հետ՝ ստիպված ետ նահանջեցինք Ջուլֆա: Փախուստի մատնված մեր զորքի ցաք ու ցրիվ խմբերը վերադառնալով Ջուլֆա՝ իմացան, որ Անդրանիկն ու Սմբատը չեն վերադարձել: Զորքի մեջ հազար ու մի ենթադրություններ սկսեցին անել: Անսպասելիորեն Սմբատը հայտնվեց ուրիշի ձիով ու զենքով, ապա հայտնվեց Անդրանիկը: Զորքն ու գաղթականությունը ցնծագին ողջունեցին Անդրանիկի գալուստը:

Սմբատը Խոյի մոտերքում ետ նահանջելու պահին կտրվելով իր հեծելազորից՝ ձին պայտում է և ինքը շրջապատվում է թուրք երկու սպայի ու նրանց թիկնապահ երկու ասկյարների կողմից: Սկսվում է մաուզերով կռվել այնքան ժամանակ, մինչև վերջանում են փամփուշտները: Արագ կողմնորոշվելով՝ նշան է տալիս «հանձնվելու»: Թուրք սպաները ձիերը հանձնելով ասկյարներին՝ մոտենում են Սմբատին, Սմբատի մաուզերի փայլը, որը արծաթ-ոսկեջրած էր, գրգռում է թուրք սպաներին: Սմբատը մաուզերը նետում է դեպի իրեն եկող սպաների առաջ: Մինչև նրանցից ամեն մեկը աշխատում է ինքը առաջինը վերցնել, հարձակվում է ձիեր պահող ասկյարների վրա, ոչնչացնում, ձիերից մեկը նստում և անհետանում մոտակա սարը: Վրա հասնող գիշերային խավարի օգնությամբ՝ թուրքական պահակներից աննկատելի անցնում ու գալիս է Ջուլֆա:

Իսկ Անդրանիկը իր հիսուն հեծյալ թիկնապահներով շրջապատման մեջ ընկնելով՝ համառ, անհավասար մարտ մղելով թուրքական զորքի հետ, տեսնում է, որ անհնար է ճակատը ճեղքել ազատվել՝ որոշում է կայծակնային արագությամբ ետ դառնալ դեպի թիկունքը: Թուրքերը մինչև ուշքի են գալիս, կազմակերպում հետապնդումը, նրանք արդեն իրենց գցում են Խոյից արևմուտք ընկնող լեռները, գիշերային մթության մեջ շրջանցելով տանկական բանակին՝ իջնում են Նախիջևանի ուղղությամբ Արաքս գետը և գալիս Ջուլֆա:

Այդ օրերին Օրդուբադի շրջանում հայ գյուղերը, շրջապատված լինելով շրջակայքի թուրք գյուղերի

կողմից, մի քանի հոգով գալով Անդրանիկի մոտ, խնդրում են օգնել իրենց՝ բնակչությանը ազատել կոտորումից: Հաջորդ օրը Անդրանիկի բանակը հարձակվեց Օրդուբադի գյուղերի վրա, ոչնչացրեց ու փախուստի մատնեց նրանց, ազատեց պաշարված հայ գյուղացիներին:

Գրավված թուրք գյուղերում գտնված կենսամթերքով ճնարավոր եղավ քանի օրով զորքին կերակրել: Հենց այդ ժամանակ էլ զորքի մեջ առաջացավ խոլերա սուր վարակիչ հիվանդությունը, որի հետևանքով օրական հարյուրից ավելի մարդիկ էին մահանում: Մահացողների թիվն այն աստիճան արագ էր աճում, որ նախօրոք փոսեր էին փորել տալիս, ու հիվանդը դեռ կիսամեռ՝ գցում փոսը և հողով ծածկում:

Այդ ժամանակ ես էլ հիվանդացա: Տաքությունս բարձրացավ քառասունմեկ աստիճան: Ինձ դրին սայլակի մեջ, որ տանեն գցեն փոսը: Անձիվ ների ձայնից սթափվեցի, խնդրեցի ինձ չտանել գցել փոսը: Սայլը տանող մարդը ինձ առվակի մոտ իջեցրեց, պայուսակս էլ գլխիս տակ դրեց, գնաց: Հաջորդ առավոտ ես արթնացա: Սովածություն զգացի: Պայուսակիս միջի չոր հացերը կերա, կազդուրվեցի, ոտքի ելա: Լվացվեցի, գնացի մեր տղաների մոտ, որոնք զարմացան, թե այդ ի՛նչ հրաշք է կատարվել ինձ հետ: Քսան օրվա ընթացքում տարափոխիկ հիվանդությունը զորքից խլեց ավելի քան երկու հազար մարդու կյանք: Դեռ չեմ խոսում գաղթականության շարքերից մահացությունների մասին:

Այդ օրերին քեմալական զորքերը մոտենում էին Նախիջևանին: Քաղաքի Ազգային խորհուրդը աճ ու սարսափի մեջ է ընկնում: Մարդ է ուղարկում Անդրանիկի մոտ՝ խնդրելով, որ նա իր զորքով գա Նախիջևան, կազմակերպի քաղաքի ու շրջակա հայ գյուղերի պաշտպանությունը թուրքական զորքերի հարձակումից: Դրա համար խոստանում էին Անդրանիկին յոթ-ութ հազար զորք ու ապահովել նրանց սննդի, հագուստի, ռազմամթերքի մատակարարումը:

Անդրանիկը հաշվի առնելով վերահաս վտանգի լրջությունը և հրապուրվելով Ազգային խորհրդի սին հույսերով՝ զորքը վերցրեց ու գնաց Նախիջևան: Թիկունքի ապահովման համար հարձակվեց Մեհրամ գյուղի վրա: Սակայն ուժեղ դիմադրության հանդիպելով՝ ստիպված եղավ իր զորքի մի մասը թողնել գյուղի շրջակայքում, մնացած մասով կռվի մտավ տասնյակ անգամ թվով գերազանց տանկական զորքի հետ: Մի քանի օրվա արյունալի մարտերը ցույց տվին, որ անմտություն է երկու հազար զորքով, առանց ռազմասննդամթերքի շարունակել կռիվը: Իսկ Ազգային խորհրդի ղեկավարները ոչ միայն զորք ու ռազմամթերք չտվին, այլ նաև կռվող զորքին սննդով չկարողացան ապահովել: Այդ բոլորից հետո Անդրանիկը հուսախաբված՝ մնացած զորքը վերցրեց ու Ղափանի լեռներով գնաց Զանգեզուր:

Զանգեզուրը հանդիսացավ Անդրանիկի զորքի և քառասուն հազար հայ գաղթականության վերջին ապաստարանը: Զորքին կերակրելու համար նրանց բաժանեցին Գորիսի և Սիսիանի գյուղերի վրա, այնպես որ, յուրաքանչյուր տնտեսություն պարտավոր էր մեկ զինվորի կերակրել: Դեռ չեմ ասում այն մասին, որ քառասուն հազար գաղթականություն սփովելով գյուղերը՝ իրենց գոյությունը պահում էին նույնպես գյուղացիների հաշվին:

1919 թ. գարնան ամիսներին Անդրանիկի բանակը հարձակում կատարեց Սապուղի ձորի թուրք գյուղերի վրա՝ նպատակ ունենալով ճանապարհ հարթել Շուշի դալա և միանալ հայ գյուղերի հետ: Սակայն Բաքվից եկող դելեգացիան, ամերիկյան գեներալի գլխավորությամբ, դադարեցնել տվեց կռիվը և թույլ չտվեց Անդրանիկին Շուշի դալա մտնել: Թե ինչ շարժառիթներով ու նկատառումներով Անդրանիկը համաձայնվեց ամերիկյան գեներալին, ինձ անհայտ մնաց, բայց և այնպես մենք ետ վերադարձանք և ամբողջ զորքով գնացինք Էջմիածին: Միայն այստեղ՝ Էջմիածնում մեզ հայտնի դարձավ, որ Անդրանիկն իր բանակը զորացրելու և ինքը գնալու է Ամերիկա:

Մի շաբաթ հանգստանալուց ու վանքի հաշվին սնվելուց հետո զինվորների առաջին հերթը՝ թվով չորս հարյուր հոգի, զորացրին ու վկայականներ տվին, որ մեկ ամիս իրավունք ունեն հաց ստանալու և երկաթուղով ձրի գնալու իրենց տները: Հաջորդ հերթը դեռ դուրս չէր եկել Էջմիածնից, երբ առաջին հերթի զորացրվածներից մի խումբ ետ վերադարձավ Երևանից՝ վիրավոր ու ծեծված դեմքերով և հայտնեցին Անդրանիկին, որ «Դաշնակցականները չեն ճանաչում Ձեր տված վկայականները, թույլ չեն տալիս գնացքով գնալ մեր տները և առհասարակ հայհոյում են Ձեզ, անպատվում են մեզ և նույնիսկ գործը հասավ այնտեղ, որ Դրոյի մասուզերիստները հարձակվեցին մեզ վրա, սպանեցին երկուսին ու ծանր վիրավորեցին հինգ հոգու»: Անդրանիկը լսելով միջադեպի մասին, անմիջապես կարգադրեց բաց թողած զինվորներին ետ կանչել, զենքեր բաժանել և ամբողջ զորքը մարտական կարգով դուրս բերել Էջմիածնից, կանգնեցնել Հոիփսիմեի վանքի մոտ ու սպասել իր հրամանին: Ինքը վերցնելով իր թիկնապահներից հինսուն հոգու, գիշերվա ժամը երկուսին, անձամբ գնում զինաթափ է անում Էջմիածնի դաշնակցական կայազորին, կալանավորում օֆիցերներին, հեռագրահեռախոսային կապը ընդհատում Երևանի հետ և ապա՝ գալիս, զորքին հրաման տալիս շարժվելու: Առավոտյան լուսաբացին Երևանի շրջակայքի կարևոր բարձունքները բռնված էին Անդրանիկի զորքերով և սպասում էին հետախուզական որոշ տեղեկությունների, որ հարձակում գործեին քաղաքի վրա ու ձերբակալեին դաշնակցական կառավարության պարագլուխներին: Քաղաքի բնակչությանը շուտով հայտնի դարձավ Անդրանիկի մտադրությունը, և քաղաքում սկսվում է խուճապի տրամադրություն, կառավարական պարագլուխները փախչում են: Սևան, կայազորը պատրաստվում է անձնատուր լինել: Այդ պահին Երևանում գտնվող ամերիկահայերից մեկը, որն ըստ երևույթին նոր էր եկել, դաշնակների հանձնարարությամբ գալիս է Անդրանիկի մոտ՝ խնդրում ու աղերսում է, որ իր մտադրությունից հրաժարվի, քաղաք չմտնի: Կառավարության անունից խոստանում է լիովին բավարարել

իր պահանջները և միաժամանակ դաշնակցականների հաշվին մեծ գումար է տրամադրում զորացրվածներին բաշխելու համար: Անդրանիկը, հաշվի առնելով, որ իր՝ Երևան մտնելով չտեսնված եղբայրասպան ջարդեր են լինելու, որոշում է ետ վերադառնալ Էջմիածին ու շարունակել զորացրումը: Շատ կարճ միջոցում Անդրանիկը ավարտեց զորացրումը, զենքերն ու գույքը հանձնեց վանքին և ինքը գնաց Ամերիկա:

Ես զորացրվելուց հետո գնացի Երևան: Ոչ մի բարեկամ չունեի, որ նրան ապավինեի: Մանավանդ, այդ ժամանակ սով էր: Երևանի ու Էջմիածնի պատերի տակ հարյուրավոր սովալլուկ մարդիկ, անտուն ու անտեր երեխաներ պառկած, սովածությունից չէին կարող վեր կենալ: Փողոցներում մահացողների դիակները տասնյակ օրերով մնում ու նեխվում էին, վերցնող չկար: Օր չէր լինում, որ Երևանում տասնյակներով մարդասպանություններ տեղի չունենային: Օրը ցերեկով թալանը, կողոպուտը սովորական երևույթ էր: Մի քանի ժամանակ մուրացկանություն անելուց հետո որոշեցի գնալ Սարիղամիշ: Այդ օրերին թուրքերը նոր էին ետ գնացել, և ցանված արտերի հացահատիկով հնարավոր էր գոյություն պահպանել: Սարիղամիշում ես լսեցի, որ Երևանում, Ալեքսանդրապոլում և Կարսում դրությունը լավ չէ, ինչ-որ բոլշևիկյան կազմակերպություններ են ստեղծվել, տեղերում աշխատանքներ են կատարում. կապ են հաստատել Բաքվում գտնվող բոլշևիկների հետ, բայց թե ի՛նչ էին նշանակում այդ բոլորը, ես ոչինչ չէի հասկանում: Զորրորդ գնդի զինվորների մեջ ևս մուտք էին գործել բոլշևիկյան գաղափարները: Հրամանատարությունը կասկածներ ուներ կապիտան Մխչյանի վրա, իբր նա գրգռում է զինվորներին՝ ապստամբելու դաշնակ կառավարության դեմ: Եվ իրոք, 1920 թ. մայիս ամսին չորրորդ գնդի վաշտերից երկուսը ապստամբեցին ու գրավեցին Սարիղամիշի կայարանը: Ապստամբները մի քանի վագոններ վերածեցին զրահապատի ու ամրացան նրանց մեջ: Կապիտան Մխչյանի հանձնարարությամբ մի քանի անգամ գաղտնի ծրարներ եմ տարել կայարանի ապստամբներին ու նոր համոզվել եմ, որ իրոք ապստամբությունը ղեկավարում է Մխչյանը:

Ապստամբները նպատակ ունեին Կարսի ապստամբների հետ միանալ, սակայն նախօրոք երկաթգծի հանապարհը կտրել էին, և այդ նրանց չհաջողվեց: Կարսից եկած ուժերի օգնությամբ ճնշեցին ապստամբությունը, որոշ մասին բռնեցին, դատաստան տեսան:

1920 թ. սեպտեմբերին թուրքական զորքը նորից հարձակվեց ու մինչև Ալեքսանդրապոլ եկավ: Մեր չորրորդ գնդի մնացորդ մասերը նոյեմբերի 10-ին հասան Թալին: Մի քանի օր հանգստանալուց հետո մի առավոտ վեր կացանք, տեսանք, որ գնդի համարյա ամբողջ օֆիցերները փախել են: Հետևյալ առավոտ Երևանից մեզ մոտ եկավ յոթ հոգուց բաղկացած դելեգացիա և հայտնեց, որ «այլևս դաշնակցական կառավարությունը գոյություն չունի: Այսօրվանից՝ 1920 թ. նոյեմբերի 29-ից Հայաստանը հայտարարված է Սովետական»: Իսկ մեզ՝ զինվորականներիս հայտնեցին. «Ով ցանկանում է ծառայել Կարմիր բանակին՝ կարող է մնալ, չցանկացողները կարող են գնալ»: Զինվորների ճնշող մեծամասնությունը համաձայնեց մնալ Կարմիր բանակի շարքերում: Հիսուն հոգու, այդ թվում նաև ինձ, ուղարկեցին Մարգարայի կամուրջը պաշտպանելու, որպես սահմանապահներ:

1920 թ. նոյեմբերի 30-ին հասանք Մարգարա գյուղը, ընդունեցինք կամուրջը ու տեղավորվեցինք մոտիկ տներից մեկում: Մի քանի օրից հետո մենք ծանոթացանք մյուս կողմի թուրք սահմանապահների հետ և մեր մտերմությունն այն աստիճանի հասավ, որ գրեթե ամեն օր գնում ու գալիս էինք միմյանց մոտ: Թուրքերենին լավ տիրապետելուս համար վաշտի հրամանատարն ինձ նշանակեց մշտական իր մոտ մնալու՝ որպես թարգմանիչ: Մի օր ես ու վաշտի հրամանատարը գնացինք թուրք սահմանապահի մոտ՝ փոխադարձ այցելության: Նրանք մեզ լավ հյուրասիրելուց հետո հայտնեցին, որ իրենց ընկերներից մեկն այսօր մի մեծ վայրի խոզ է խփել. արդյոք չե՞նք ցանկանում տանել: Մեր համաձայնությունը ստանալուց հետո նրանք իրենց զինվորների միջոցով խոզը տեղափոխեցին մեզ մոտ: Իսկ մեր կողմից, որպես հարգանք, նրանցից վեց հոգու հրավիրեցինք մեզ մոտ ոչխարի մսից խորոված ուտելու: Ճիշտ որոշված ժամին, հաջորդ օրը հյուրերը եկան, և սկսեցինք ուրախությունը: Երևանի Շուստովի հայտնի կոնյակի ու տեղի ընտիր գինիների ազդեցության տակ՝ լրիվ մեկ ոչխարի միսը չբավականացրեց խորոված ի համար: Մեր գիտությամբ վայրի խոզի մսից պատրաստվեց խորոված ու տապակած և դրվեց սեղանին: Վերջինը բոլորն էլ շատ ախորժակով կերան. թուրքերի կողմից նույնիսկ գովեստներ եղան, որ վերջինն ավելի լավն էր: Երբ արդեն քեֆը վերջանալու վրա էր, մեր վաշտի հրամանատարը միամտաբար թուրքերին զգացնել տվավ, որ վերջին կերածներդ ձեր խփած խոզի միսն էր: Այդ բավական էր, որ բոլորը վեր կենային, մատ տալով՝ կերածները թափեին ու թողնեին հետևանային: Դրանից հետո այլևս նրանք չեկան մեզ մոտ:

1920 թ. դեկտեմբերին ինձ ուղարկեցին Էջմիածին՝ քաղկուրսերում սովորելու: Այնուհետև սովորեցի Երևանի հրամանատարական դպրոցում: 1925 թ. Հայկական դիվիզիայի հրամանատարության կողմից նշանակվեցի Բաքվի պրոլետարական դպրոցի հայկական բաժնի պետ: 1926 թ. աշխատանքի անցա Պետհրատի երկրորդ տպարանում, որպես պարետ: Հետո՝ Հաշմանդամների կոոպերատիվ միությունում: 1941 թվից Հայրենական մեծ պատերազմին մասնակցեցի: Մեկնեցի ռազմաճակատ:

Իմ ամբողջ աշխատանքների համար, թե՛ բանակում և թե՛ քաղաքացիական հիմնարկներում, տասնյակ անգամներ պարգևատրվել եմ բազմաթիվ մեդալներով ու շքանշաններով, նաև պատվոգրերով:

91 (91).
ՕՎՍԱՆՆԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ԷՐԶՐՈՒՄ)

Էրզրումին մեջ **բոլորս** հայ էինք: Ջուտ հայերեն կխոսեինք: Էրզրումին մեջը **մեծ**ահարուստ հայ մը կա եղեր, ասոր չորքաջի կըսեին: Ադ չորքաջիին կնիկն ալ հոն էր: Թուրք մը կուզե **ադ** չորքաջիին կնիկը առնել, կըսե. - Դուն մ'էրթար բարխանա**յին** հետը:

Աքսորականներուն գլուխն ալ քյուրդ աղաներ են: Աս չորքաջիի կնիկին կփախցնեն: Աղային մեկը կզարմանա, կըսե. - Օլա՜ն, աս լեռը **կհալի**, աս կնիկին ամուսինը գիտե՞ս ո՛վ է: Դուք ի**նդո՞**ր ըրիք:

Չորքաջիին խաբար կուգա, **որ** կնիկիդ փախցուցին: Կսկսին չորքաջիին **ծեծել**, որ ձայն չհանե:

Ամա ո՞րը ըսեմ, ո՞րը խոստո**վանիմ**: Մեր գլուխեն շատ բան անցած է:

Վերջը վերջը ամերիկացի**ները** էկան որբանոց բացին: Գացին, պտտեցա**ն** թուրքի **տուներ**են, անապատներեն հայ չոջուխները հավաքեցին տարին: Ութը տան մեջ որբանոց բացին: Բայց պատրիարքարանը տերտեր չմնաց: Բոլորին տարին գլուխները կերան:

Ան ժամանակ բժիշկ չիկար, շուկա չիկար, դեղարան չիկար: Մամաս հիվանդացավ: Մորաքույրս մեզի էկավ կեսուրին հետը, քանի մը օրեն ադ կեսուրն ալ մեռավ: Էշ մը առինք, որ մամաս վրան նստի: Ամմա ի՜նչ սուգ, իրարանցում...

Մեծ մայրս և մայրս ուրիշ կնիկներու հետ կուլա՜ն, կուլա՜ն...

Էրզրում կեցած ատեննիս պապաս մեր տունին արծաթե չայի թախտը կտանի ղայմաղամին: Ղայմաղամը կազատե հայրիկիս ընտանիքը աքսորեն, կըսե. - Կազատեմ քեզի քու ընտանիքիդ հետ աքսորեն, բայց ուրիշին չպիտի՛ ազատեք ձեզի հետ:

Ան ալ ինչու՞ ազատեց, որովհետև պապաս նալբանդ էր, իրենք ալ ձիերը պայտող նալբանդ չունեին հորմես զատ:

1936-ին Արաբկիրեն էկանք հոս:

92 (92).
ՄԱՐԻԱՄ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ԷՐԶՐՈՒՄ)

Ես շատ փոքր էի, երևի յոթը տարեկան էի, բայց լա՛վ կհիշեմ: Թուրքերը եկել էին, սկսել էին թալանել, կրակի էին տվել մեր տուները և կրակի մեջ էին գցում երեխեքին ու մեծերին: Ինձմե մեծ քույրս կրակի մեջ այրվեց, ես ադ տեսա իմ աչքերով: Մորս ալ կրակի մեջ նետեցին, ա՛դ ալ ես կհիշեմ, քանի որ երբ ինձ նետեցին, ես չորեքթաթ դուրս պրծա կրակի միջից, բայց ծունկերս աղվո՛ր մը վառվել էին, մինչև հիմա տեղերը կան, տե՛ս (ու նա ծնկները բացեց, որ ցույց տա այրվածքի հետքերը):

Ալ չգիտեմ ումի հետ էի, բայց թափորի հետ ես ալ աքսոր գնացի. ո՛չ տեր ունեմ, ո՛չ տիրական: Էրզրումից Դիարբեքիր ոտքով տարին: Անտեղեն ալ՝ Հալեպ, հետո ալ՝ Պոլիս...

Կհիշեմ, որ թուրք բեյ մը ինձի վերցրեց տարավ իրեն տունը, ծնկներիս դեղ քսեցին, իմ անունը Ֆերիդա դրին: Այդտեղ կար ինձմե մեծ մի ուրիշ հայ աղջիկ մըն ալ, որին արդեն թուրքացրել էին, և մնացել էր հոն: Ես նրանից փոքր էի: Մարդիկ եկան ինձ հարցրին. - Աղջի՛կս, դու որտեղի՞ց ես:

Ես ալ ըսի. - Հայ եմ:

Դու մի ըսեր՝ այդ մարդիկ հայ գաղթականներ են և լուրը գնացել հասել էր Անդրանիկ փաշային, որ բեյին տունը երկու հայ աղջիկ կա՝ մեկը թուրքացած է, մյուսին ալ պիտի թուրքացնեն:

Անդրանիկը երկու անգլիացի զինվորով եկավ, դուռը խփեց: Իմ խանումս ու բեյս գնացել էին սինեմա: Այդ թուրքացած հայ աղջիկը իջավ դուռը բացեց. Անդրանիկը հարցրեց. - Էստեղ հայ աղջիկ կա՞:

Թուրքացած աղջիկը ըսավ. - Չէ՛, չիկա՛, - խաբեց:

Հետո Անդրանիկ փաշան ըսավ. - Եթե բեյդ գա, վաղը այդ նոր աղջկան թող բերե քաղաքամաս: - Երբ ան գնաց, աս աղջիկը ինձի չարսաֆի մեջ փաթթեց, ծեծեց: Ան վաղուց թուրքացել, ավելի վատ էր դարձել: Ես լացի: Իրիկունը բեյս, որը իմ անունը Ֆերիդա էր դրել, տեսավ լաց եմ լինում, ըսավ աղջկան: - Դուն ինչ իրավունքով ծեծում էիր սրան: Թող սպասեիր, մենք կգայինք, կխոսեինք:

Բեյս հետո ինձ կանչեց. - Արի՛, աղջի՛կս, դու ի՞նչ ըսիր:

- Ո՛չ մի բան չըսի:

- Ո՞վ էր այդ մարդը:

- Չգիտեմ, ես վախցա, չխոսեցի:

Հետո բեյս հարցրեց այդ աղջկան:

Ան ալ ըսավ. - Առավոտյան Ֆերիդային քաղաքամաս պիտի տանես:

Առավոտյան բեյս տարավ ինձի քաղաքամաս: Քննեցին, մեծ-մեծ գիրքեր հանեցին իբր փնտրում են, Ֆերիդա ես փնտրում, չեն գտնում, վերջապես ըսին. - Չէ՛, աս հա՛յ աղջիկ է:

Անդրանիկ փաշան ինձի աթոռի վրա կանգնեցուց, իր հետ միասին ինձի նկարեց: Վրաս գլուխս փոխեց, անձամբ տարավ Բեշիկթաշի որբանոցը. մինչև վեցերորդ դասարան հունարեն և հայերեն սովորեցի: Հետո կամաց-կամաց մեծացա, տասնվեց տարեկան եղա: Մի հայ կաթոլիկ մարդ ու կին եկան որբանոցը: Եկան մի աղջիկ առնել, տանելու: Ինձ հավնեցին, իրենց տունը տարին, պահեցին: Ադ մարդու տունն ալ ամուսնացա մշեցի Ոսկանի հետ: Ան ալ գաղթած էր: Մորաքույր ուներ Հունաստանում: Մենք ալ անցանք Հունաստան: Տուն-տեղ դրինք: Մի տղա, երկու աղջիկ ունեցա: 1947 թ. եկանք Հայաստան: Տղաս մեռավ, մեկ աղջիկս ընտանիքով գնաց ԱՄՆ: Մնացի աս մեկ՝ վարդուհի աղջկաս հետ: Շուտով մենք ալ պիտի էրթանք Լոս Անջելես ըսված տեղը:

93 (93).
ԻՇԽԱՆ ՀԱՅԿԱԶԻ ՀԱՅԿԱԶՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԷՐԶՐՈՒՄԻ ՇՐՋ., ԲԱՍԵՆ Գ.)

Բասենում մենք խաղաղ ապրում էինք: Տուն ունեինք, այգի ունեինք: Հայրս և հորեղբայրս շատ հարուստ էին:

1915 թվին, երբ թուրքերը հարձակվեցին Բասենի վրա, հայրս և հորեղբայրս կամավոր դարձան ինքնապաշտպանական խմբում: Բայց հորս փամփուշտները վերջանում են, ու ինքը զոհվում է:

Հորեղբայրս եկավ մեզ հավաքեց՝ պապս, տատս, մայրս, փոքր եղբայրս, թողինք մեր գյուղը ու փախանք: Ճամփին ամեն կողմը սպանված դիակներ էին: Մենք սոված, ծարավ, ոտաբոբիկ եկանք հասանք Սարիղամիշ: Պապս ասաց. «Ավելի լավ է անտառի մեջ մնանք, որ թուրքերը մեզ չտեսնեն»: Բայց թուրքերը մեզ հետապնդում էին: Էնտեղ էլ թուրքերը մեզ վրա հարձակվան, հորեղբայրս մեզ պաշտպանելու համար ինքն էլ զոհվեց:

Մենք մնացինք առանց պաշտպանի: Պապս, տատս, մայրս՝ փոքր եղբայրս գրկին՝ ճամփա ընկանք դեպի Կարս: Ճամփին փոքր եղբայրս քաղցից մահացավ, հետո նաև տատս մահացավ:

Ես մորս հետ մի կերպ վագոնների վրա ծվարած հասա Թիֆլիս: Ոչ մի ծանոթ չունեինք: Մի տան աստիճանների տակ, քրջերի մեջ քնեցինք: Պապս գործի անցավ: Մայրս ամուսնացավ՝ ինձ մանկատուն դնելով:

Մանկատանը բոլորն էլ ինձ նման վտիտ, թուլակազմ աղջիկներ ու տղաներ էին: Բայց Թիֆլիսի մանկատանը մեզ սովորեցրին արհեստներ, ու յոթնամյա կրթություն ստացանք: Շատերը ավարտելով՝ աշխատանքի անցան գործարաններում ու ֆաբրիկաներում: Շատերն էլ և՛ աշխատում էին, և՛ սովորում բանֆակում կամ տեխնիկումում:

Մի օր նամակ ստացա, թե քու բարեկամները գտնվում են Ռուլնիս Խաչենում: Ծեխոտ-կեղտոտ ելա գնացի հասա: Էդ նամակ գրողները մեզ ազգական էին: Մորս հասցեն տվեցին: Գնացի Ղալթաղչի կայարան, գտա Ուստա Եղիշին. էդ իմ հայրացուն էր: Գտա մորս: Բայց մայրս ինձ շատ սառը ընդունեց: Երկու օր մնացի էդտեղ: Մայրս նոր ամուսնուց ունեցել էր մի տղա ու մի աղջիկ, բայց ինձ ոչինչ չասաց: Միայն վերջում ասաց. «Բարով գնաս, տղա՛ս»: Ես լացով գնացի կայարան, նորից մեր մանկատունը: Երբ ավարտեցի յոթերորդ դասարանը, եկա Երևան:

1936-ին ամուսնացա: Ունեցա երկու երեխա: 1941-ին գնացի պատերազմ: Կովեցի: Երկու անգամ վիրավորվեցի: Հետո ինձ ազատ արձակեցին, մեդալներով եկա Երևան:

Երբեմն մտածում եմ անցած կյանքիս վրա, թե ինչպես թուրքերը հայ անզեն ժողովրդին կոտորում էին անխիղճ ձևով: Ճիշտ է, պատերազմում մենք էլ կովեցինք, մարդ էլ սպանեցինք, բայց դա՝ պատերազմ էր, ու երկու կողմն էլ զենք ուներ: Իսկ հայ ժողովուրդը էն ժամանակ շա՜տ անպաշտպան էր ու անզեն: Հիմա մենք բանակ ունենք և պետականություն:

94 (94).
ՍԻՐԱՆՈՒՇ ՆԱՍՈՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ԷՐԶՐՈՒՄ, ԽՆՈՒՍ)

Տաճկաստանի կովի ժամանակ Անդրանիկ կռկովեր, իր փայլուն թրով կկովեր, հայերին կազատեր:

Մեր Խնուսա քերդ հարուստ տեղ էր, թավլա, ցորեն, տավար, ոչխար ամե՛ն ինչ մեզ կար, մենք հաճգիստ կապրեինք: Թուրքի բալեն կտրվի՛. էկավ, մեզ զուլում կկոտորեր: Բալուլի միջի էրեխեքին գետնին կտփեր, մերեր կուլայի՛ն, կողբայի՛ն:

Մեկ էլ Անդրանիկ զորավար էկավ ճերմակ ձի նստած, վրեն պլաշչ գցած, ինչքա՛ն գյուլլա կզարկվեր, չէ՛ր կպնի ընդրա ջանին, կըսեին՝ ընդրա վրեն սրբի նշաններ կան: Անդրանիկ զորավար էկավ, կանգնեց Արազա Քյոփրի Քոյի կարմունջի մոտը, կովեց, մինչև ժողովուրդը կարմունջից անցավ:

Անդրանիկ ասաց. «Ժողվե՛ք գետնի բոլոր էրեխեքին, տվե՛ք մերերին»: Ի՛սկը հերոս էր Անդրանիկ: Ընդրա աչից թուրքեր կվախնային. «Անդրանիկ փաշա գյալդի՛» կըսեին, կփախնեին:

Անդրանիկ զորավար թուրքին աճ տվեց, ըսավ. «Իմ ժողովրդին, իմ որբանոցներուն ձեռք չտա՛ս, թե չէ՛ քեզ կկոտորեմ»:

Կարսա ժողովրդին փրկեց, որբ էրեխեքին ղրկեց Ամերիկա:

95 (95).
ԳԱՒՌԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԵՐԶՆԿԱ, ՄԱՄԱԽԱԹՈՒՆ Գ.)

Ծնվել եմ Երզնկայում, դերձակի ընտանիքում: Մամախաթուն գյուղի մեր տունը մի հին խրճիթ էր, թոնդրատուն կար, ուր ևաև քնում էինք, և մի մառան: Այնտեղ հազիվ տասնհինգ-քսան ընտանիք հայ կար: 1914 թ. երբ սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը, հորս տանում են թուրքական բանակ և մեզ որպես զինվորականի ընտանիքի՝ չաքսորեցին: Հորեղբորս ընտանիքին ևս չեն աքսորել, քանի որ նա հարուստ վաճառական էր և ամեն շաբաթ մեկ թաշկինակ արծաթ դրամ կաշառք էր տալիս:

1915 թ. նոյեմբերին այդ շրջանում շուրջ երեսուն հազար հայություն կար, որոնք բոլորն էլ աքսորվեցին: Տեղի խորամանկ ղայմաղամը ասում է հորեղբորս. «Հիմա ռուսական բանակը Էրզրումին է մոտենում: Կը-տրամադրեմ ձեզ սայլ, դուն էլ կնստես քո կարմիր ձին, ձեզ ապահով կուղարկեմ երկրի խորքերը»:

Հորեղբորս ընտանիքը վեց հոգի էին. ինքը՝ Ստեփան հորեղբայրս, կինը՝ Ազնիվը, աղջիկները՝ Շողակաթն ու Պերճուհին և երկու տղաները՝ Մկրտիչն ու Մարտիրոսը: Բոլորը նստում են սայլ, հորեղբայրս էլ հեծնում է իր կարմիր ձին, ոստիկաններով տանում են մինչև Սև ջուր: Ժանդարմները, որոնք առաջադրանք ունեին, սպանում են հորեղբորս, ետևո կնոջը գետն են գցում: Գցելու ժամանակ զգում են, որ շատ ծանր է, հանում են ջրից, տեսնում են, որ շորերի մեջ ոսկի կա կարված, տկլորացնում են կնոջը, նորից են գցում ջուրը: Ջուրն են գցում նաև տղաներին, իսկ երկու աղջիկներին տանում են անհայտ ուղղությամբ: Այդ նույն օրը, կեսգիշերին լսվեց հորեղբորս ձիու խրխինջը: Տատիկս ասաց. «Վա՜յ, Ստեփանին սպանեցին», քանի որ ձին փախել, եկել էր Մամախաթուն: Ես իմ «Մղձավանջային օրեր» գրքում պատմել եմ այս բոլորը:

1916 թ. հունվարին մեզ աքսորեցին, երբ արդեն ռուսական բանակը մոտեցել էր: Բոլոր այն թուրք ընտանիքները, որ հայ էին պահել, նրանց քարավան էին կազմել, հանեցին Մամախաթունից: Ես յոթը տարեկան էի, մայրս, տատս, երկու քույրերս: Երեք-չորս օրում սառնամանիքի, ձյան միջով հասանք Նրզնկա, որը արդեն ամայի էր: Ջրհորների մեջ ջուրը սառել էր, բայց մեջը լցված էին դիակներով: Թուրքական բանակում հայերին հավաքել և գնդակահարել էին, հայրս էլ ընթանց մեջն է եղել, բայց մեր բախտից, հայրս կարճահասակ լինելուն՝ գնդակը չի կպել, միայն սվիններով խփել են, բայց ողջ է մնացել: Երզնկայից եկանք, ուժեղ սառնամանիք էր: Տատս ուզում էր իր որդուն տեսնել, որը աշխատում էր դաբաղխանեյում: Վարդանուշ տատիկս դժվարանում է քայլել: Մեկ էլ կանգ առավ, ասաց. «Ինձ խփե՛ք, ես չե՛մ կարող քայլել»: Նա նստեց, ժանդարմները քարշ տվին, մնաց ճանապարհին: Մեզ քշեցին: Մենք մի կողմից գնում էինք ու ետ էինք նայում: Ձյունը գալիս էր, կուտակվում նրա վրա: Վերջապես իմ խեղճ տատիկը դարձավ ձյունե արձան...

Մի կողմից, ամեն քաղաքներից նոր աքսորականներ բերելով, մեր քարավանը մեծանում էր, մյուս կողմից անխնա ոչնչացնելով՝ մեր քարավանը քչանում էր: Արդեն ապրիլյան օրեր էին, Դեր Զորի մոտ, Հեքիմխանայում, աճյուն բան կատարվեց: Մեր քարավանին միացրել էին զվանցի երեսուն գեղեցիկ հարսներ: Մի գիշեր դրանց հավաքեցին տարան, մերկացրել էին, ստիպել էին պարել ու զվարճացնել իրենց: Երբ նրանց ետ բերեցին՝ գզգզված մազերով ու այլանդակված վիճակում, նրանք միմյանց ձեռք-ձեռքի բռնած՝ իրենց գցեցին Եփրատ գետը: Եվ կամ յոթ հոգինոց մի ընտանիք կար, մայրը վեցին թունավորեց, գնաց իրեն գցեց Եփրատ գետը:

Հասանք Մալաթիա: Արդեն գարուն էր: Բոլոր հայերին կոտորել էին: Ամեն տեղ բլուրներ էին՝ տակը հիսուն-հարյուր հոգի թաղված, նույնիսկ կիսամեռ՝ քանի որ վրայի հողը շարժվում էր: Մեր քարավանը նոսրացավ: Մայրս իմ թևը բռնեց և փախանք, մտանք անտառ, հետո՝ քաղաք: Մենք մեր անունները փոխեցինք: Ես դարձա՝ Մենդո, մայրս՝ Նադիա: Իջանք աղբյուրի գլխին, տեսանք երկու թրքուհի կիներ, իբր մենք թուրք մուհաջիր ենք: Բայց սրանք գլխի ընկան, որ մենք հայ ենք՝ բղավեցին: Երկու երիտասարդ եկան խանչալներով, շնորհակալություն հայտնեցին աստուծուն, որ վերջապես առիթ ընծայվեց գյավուր սպանել, որ իրենց հոգին չեննեթ գնա: Մորս մերկացրին, վիզը պարան կապեցին: Թուրք կանայք կանգնած նայում էին: Մեկ էլ դրանց միջից մի կին, որը այդտեղի բեկի մայրը էր, երևի գութը շարժվեց, ձայն տվեց. «Ամբողջ քաղաքի հայերին սպանեցիք, հերիք չէ՞, գոնե սրանց խնայեցեք. մեղք են, սրանց սպանել պետք չէ»:

Մեզ չսպանեցին: Էդ կինը մեզ տարավ իր տունը, հաց տվեց, կերանք: Հետո ասաց. «Դուք այստեղ չեք կարող մնալ: Մեր տղամարդիկ կգան ձեզ կսպանեն, գնացեք, ճամփին կհանդիպեք մի երկհարկանի շենք՝ երկաթյա դռներով, դա Հնչակյան կուսակցության ստեղծած արհեստանոցն է, որը բանակի համար կտավ է գործում: Այնտեղ բոլորը հայ են, բայց՝ թրքացած հայ են»:

Մենք ճամփա ընկանք: Այդ գիշեր մի ավերակ տան մեջ մնացինք: Ուեցանք մի ընկեր, դա մի կատու էր, որ մեր սեղանին մասնակցեց: Այդ տնեցիներին սպանել էին, տունը կողոպտել էին: Առավոտյան շարունակեցինք մեր ճամփան: Վերջապես գտանք այդ խորհրդավոր երկաթյա դռներով շենքը, որի դռները դժվարությամբ ու վախով բացեցին: Նրանց մեծը կարապետ Բալթայանն էր, ասաց. «Էս տղային վերցրեք, վաղը կմեծնա, վրեժ կլուծի»:

Այդ գործարանում մենք մնացինք: Մայրս աշխատում էր, մաքուկ էր գործում: Արդեն 1917 թիվն էր, աճավոր սով էր, քանի որ թուրք գաղթականներ ևս եկել էին սայլերով: Այնքան ծանր էր մեր վիճակը, որ մայրս ինձ դրեց թուրքական որբանոց, Օսմանօղլիի որբանոցը, ուր որպես թուրք ես մնացի երկու ամիս: Այդ որբանոցից մնացել են սարսափելի հիշողություններ: Հաց չկար: Միայն թութ էին ուտում, ևաև հայերի լքված այգիների հասած մրգերը: Քարայր էին գնում, որտեղ լցված էին անթաղ դիակներ, և մարդիկ կարող էին գալ ու նկարել: Մեր որբանոցի թուրք տղաները գնում էին դիակների ոսկե ատամները հանելու: Ինձ էլ տարան: Ես գնացի, որ չկասկածեն, որ ես հայ եմ: Մեզ հետ մի Իբրահիմ անունով տղա կար, դիակները շուռումուռ տալու ժամանակ «հայրի՛կ» ասաց, ուշագնաց ընկավ: Նա գիշերը զառանցում էր հայերեն: Պարզվեց, որ մալաթիացի հայ է՝ Աբրահամ անունով:

Հաջորդ օրը մեզ բաղնիք պիտի տանեին: Ես մտածեցի, որ կարող է ինձ ստուգեն և տեսնեն, որ պտուկներ եղած չեմ և զգաս, որ ես մուսուլման չեմ՝ թողեցի ու փախա: Զինադադարից հետո բացվեցին ամերիկյան, գերմանական, հայկական որբանոցներ: Հայկական որբանոցում, ամեն առավոտ, որբանոցի դռան առաջ կանգնում էին սայլեր: Սայլապանները քրդեր էին, շատ շահավետ գործ էին գտել: Նրանք գնում էին թուրքերից, քրդերից հավաքում էին հայ որբերին, տանում էին որբանոցին ծախում: Նույնիսկ սակարկում էին. տղա երեխաները թանկ էին, քան աղջիկները: Ես այնտեղ քիչ մնացի: Քանի որ ինձ տարան ամերիկյան որբանոց, որտեղ կյանքը ավելի լավ էր, բայց խիստ արգելված էր ազգային որևէ արտահայտություն: Անընդհատ կրոնական երգեր, աղոթքներ պետք է կատարեինք ավետարանից: Մի օր որբերից մեկը ընդհատեց այդ աղոթքը և արտասանեց.

-Հայ եմ ես,
-Քաջ եմ ես,
-Քաջ Վարդանի
Թոռն եմ ես:

Նրան հանեցին ամերիկյան որբանոցից: Տարիներ անց, 1970 թվին, ես նրան հանդիպեցի Աբխազիայում:

1918 թվի վերջին, որբանոցային տղաների մի մասին փոխադրեցին Սեբաստիա: Ես և մայրս ևս գնացինք: Այն հայերը, որոնք հրաշքով փրկվել էին ու վերադարձել, լցվել էին Մալաթիա: Մի քանի հազար երեխաներ, հարսներ, աղջիկներ: Մալաթիայում այն թուրքական որբանոցը, որ ես մնացի երեք ամիս, պատկանել է կաթոլիկ եկեղեցուն և նորից վերադարձրել էին կաթոլիկներին: Ես այդ եկեղեցում առաջին անգամ լսեցի «Առավոտ լուսո»: Երգողների մեջ էր մեր որբանոցի տնօրենի կինը, որին ես չգիտեի, թե հայ է: Այդ հայերի զգալի մասը Սեբաստիա էր հավաքվել, շուրջ տասնհինգ հազար հայ, որից հինգ-վեց հազարը հայ որբեր էին: Ես այնտեղ երկար մնացի և «Ուսաբեր» դասագրքով սովորեցի հայերեն: Ամառը աշխատում էի սրճարանի կոշկակարի մոտ, մինչև 1922 թիվը: Երբ Մուստաֆա Քեմալի զորքերը Իզմիրը վառեցին՝ բենզին, նավթ լցրին և եկեղեցիների մեջ լցված հայերին ու հույներին վառեցին, Սեբաստիայի բոլոր որբերին փոխադրեցին Հունաստան: Այն որբերը, որոնք ծնող ունեին, ինչպես ես՝ մայր ունեի, ցուցակագրեցին ուրիշ հիսուն այլ որբերի հետ, հունվարի սառնամանիքին սայլերով բերին Սամսուն, որտեղ երկու մեծ նավ սպասում էր, որ մեզ տանի Հունաստան: Մեկ նավը սեբաստացի որբերինն էր, մյուսը՝ հույն գաղթականներինը: Մեզ բախտ վիճակվեց հունական գաղթականների նավը մտնել, որտեղ երկու հազարից ավելի գաղթականներ կային: Անհավոր կեղտոտ էր: Սկսվեց ժանտախտի համաճարակը: Սկզբում մեռելներին թափում էին ծովը, հետո՝ արգելեցին: Ոչ ոք մեզ չէր ընդունում: Մերոնք պակասեցին, մնացինք ութ հարյուր հոգի: Մեզ պատվաստեցին: Երկու տակաո ջուրը թափում էին հատակին, և մենք պառկում էինք, որ լզենք: Մի օր ես էլ տաքությունով պառկեցի: Մահամերձ վիճակում մի ձայն լսեցի «Գառնի՛կ»: Մեր հարևանուհին էր: Ես ուժ չունեի, որ նստեմ: Քառասուն օր, օրը երեք թուզ էինք ուտում միայն: Պարզվեց, որ քարանթինաև վերջացել է և հունական կղզիների մոտ ենք: Մի հույն բարերար ձիթայուղով լոքի, զեյթուն և հաց էր ղրկել մեզ՝ իր կնոջ հոգեհանգստի համար: Մեզ նավից իջեցրին: Ախտահանեցին, լողացրին, հագցրին: Մենք բոլորս գոչեցինք «զիթո՛ Հելադա» (կեցցե՛ Հունաստանը), որ իր ծանր օրերին հինգ հազար հայ որբերի ապաստան տվեց հունական կղզիներում: Մեզ սկզբում տարան Բոնո քաղաքը: Երկու-երեք ամիս ապրեցինք թափառական կյանքով: Ես կորցրեցի իմ որբանոցի ընկերներին: Գիշերը անցկացնում էի կայարանում, տախտի մեջ: Առավոտյան մեկը վզիցս բռնեց, ասաց. «մա՛րդ է»: Ինձ կերակրեցին, հետո գտա իմ ընկերներին: Հետո մեզ տարան Էտիփսոս կղզին, որը տաք ջրերի առողջարանային վայր էր: Ես այնտեղ մնացի մի քանի ամիս, կազդուրվեցի:

Մեզ տարան Խալքիտա: Առաջին անգամ մեզ բաժանեցին դասագրքեր և Լևոն Էսաջանյանը՝ արևմտահայ մի բանաստեղծ, որը եղեռնից մազապուրծ էր, բայց հոգեկան խանգարում էր ստացել, երեկոները բազկատարած կանգնում էր ծովեզերքին ու արտասանում, իսկ դասերի ընթացքում լաց էր լինում: Առաջին անգամ ես սովորեցի «Յաթիի մը մեղրը» արևմտահայերեն տարբերակով: Բայց այս կղզում ջուր չկար: Հինգ հարյուր հոգի ծորակի գլխին պիտի կանգնեինք, որ գաղջ մի հեղուկ գա, մեզ հասնի: Սկզբում դուրսն էինք քնում, բացօթյա պառկում, բացօթյա ուտում, ոտաբոբիկ, բլուզով, ուրիշ ոչինչ չունեինք: Հետո մեզ տարան Օրոսֆոս կղզին: Այնտեղ մնացի մեկ տարի: Տնօրենը ամերիկացի էր, որը Լենինականի (այժմ՝ Գյումրի) պոլիգոններում էր եղել: Մենք այնտեղ շատ բան սովորեցինք: Բայց տնօրենը շատ դաժան էր: Մի ողկույզ խաղող գողանալու համար երեսուն-քառասուն ճիպոտի հարված էր հասցնում: Այնտեղ մեզ արհեստ էին սովորեցնում, ատաղձագործություն էինք սովորում, սխտոր էինք ցանում:

1925-ի դեկտեմբերին մեզ լցրին մեքենաները և տեղափոխեցին Աթենք: Գահընկեց արված թագավորի պալատում մեկ շաբաթ մնացինք՝ հայ և հույն որբերս իրար հետ: Ես այնտեղ առաջին անգամ կինո տեսա: Ես սկսեցի թերթերի մեջ հայտարարություն տալ. «Հոս որբ մը կա, անունը Գառնիկ Տեր-Ստեփանյան, մոր

անունը՝ Ոսկեգյուղ, եթե գիտեք, լուր տվեք»: Մի օր Պոլսից նամակ եկավ, բայց ես սննդի պակասից հավկուր էի ստացել: Ինձ համար կարդացին նամակը, որտեղ մայրս գրում էր, որ ինքը ուրախ է ինձ գտնելով: Դրանից հետո մեզ տեղափոխեցին Եգիպտոս՝ Կահիրե: Արդեն մեզ չափահաս համարելով՝ բաժանեցին ածելիներ, որ սափրվենք, որպես տղամարդ, ու մեզ բաց թողեցին մարդկային օվկիանոսի հորձանքի մեջ, բայց դեռ իրենց հսկողության տակն էինք: Կահիրեում մնացի հինգ տարի: Այնտեղ աշխատեցի որպես գրաշար: Աշխատակցել եմ Սովետական Հայաստանի համակիր «Արև» թերթին: Եվ, քանի որ ամենամաքուր ձեռագիրը Երվանդ Օտյանինն էր, ես նրա քրոնիկների գրաշարն էի և օրվա թերթոնը, որ՝ ֆրանսերենից թարգմանում էր Մարկ Տվենի «Աղքատն ու իշխանը» ամեն օր շարում էի այդ երկուսը: Երվանդ Օտյանը ահավոր հյուծված, քայքայված էր: Նա եղել էր արաբական անապատներում, թուրքացել էր, Նուրի անունով անապատներում գոյատևել էր: Ճեմիքա սրճարանում էր նստում, վիսկի էր խմում ու գրում:

Ավելի երկար ես աշխատեցի Վահան Թեքեյանի, Հովհաննես Հակոբյանի հետ, որը «Արև»-ի խմբագիրն էր, որին հալածեցին և որպես համայնավար եկավ Հայաստան: Հետո խմբագիր դարձավ Վահան Թեքեյանը, որը «Արև» թերթին տվեց գեղարվեստական դիմագիծ, տպեց «Եթե Տերը կամենա» ստեղծագործությունը: Նրա հակառակորդները աչքին մեկը կուրացրել էին: Երբ մի օր ես գնացի, ինչեց հետախոսը: Նա ականջակալը վերցրեց, լսեց ու շատ հուզվեց: Ես հարցրի. - Ի՞նչ պատահեց:

Նա պատասխանեց. - Ըսին, որ քո մյուս աչքդ ալ պիտի հանենք, եթե Հայաստանի պրոպագանդան ընես:

Այդ էր պատճառը, որ կիսատ մնաց «Եթե Տերը կամենա» ստեղծագործության տպագրությունը: Թեքեյանական այդ հարաբերությունները չորս տարի ես վայելել եմ, որոնք ինձ համար մի յուրօրինակ դպրոց եղան: Ես ծանոթացա մի շարք մտավորականների, դերասանների հետ: Կահիրեում մոտ հազար որբ ու որբուհիներ կային: Հարուստ ընտանիքները որդեգրում էին որբուհիներին և շատ լավ խնամում էին նրանց՝ առանց տարբերելու իրենց զավակներից: Ակումբում հանդիպումներ էինք ունենում: Այդ ընտանիքները գալիս էին: Անձամբ տեսել եմ Արմենակ Շահմուրադյանին. լսել եմ «Մշո սոխակին», կենդանի մարդու երգը լսելը ուրիշ է, դա մի ամբողջ հոգեկան արժեք է: Ես լսել եմ «Մոկաց Միրզան», «Կոռունկը», «Կալի երգը» անձամբ նրա կատարմամբ: Մեր որբանոցի տնօրենը խնդրեց նրան գալ, և նա չմերժեց: Եկավ, լսեցինք նրան, հետո ասաց. «Իմ ազգի որբե՛ր, դուք պատմական Հայաստանի մեկ-մեկ ծաղիկներ եք, մեկ-մեկ կայծեր, որ եկել եք բուրգերի ստորոտը, այս անապատները: Հայաստանի պտուղները ճաշակած երիտասարդներ, ձեր ապագան պե՛տք է լինի Հայաստանը»:

Գիշերը մինչև ժամը երկուսը մնաց մեզ մոտ:

Այնուհետև ես Կահիրեում առաջին անգամ տեսա Զարիֆյանին, տեսա նրա դերակատարությամբ Լեվոն Շանթի «Հին աստվածները», «Կայսերը»: Ահա այս մթնոլորտը ինձ համար եղավ դպրոց: Հինգ տարի մընացի Եգիպտոսում:

Արդեն հայրս ռուսական բանակի հետ եկել էր Հայաստան և աշխատում էր կարի գործարանում որպես բանվոր: Իսկ մայրս Պոլիսից եկել էր Հայաստան: Հայրս դիմել էր ՀԱՄԽ-ին, որ ինձ բերել տա Հայաստան: Ղրկեց հարցաթերթիկները:

1930-ի հուլիսին եկա Աթենք: Մի օր Անդրոպոլը տեսնելուց հետո ինձ կանչեցին սովետական դեսպանատուն և հանձնեցին սովետական անձնագիրը: Աթենքից Բաթում նավ նստեցի և 1930 թվի սեպտեմբերին եկա Երևան:

Այն, ինչ կատարվեց 1915 թ. մեր ժողովրդի, մեր գերդաստանի հետ, որը հարյուրից ավելի էր և հազիվ տասնհինգ հոգի ազատվեց, աճավոր էր: Իմ մոր կողմից բոլորը սպանվել են կամ ողջ-ողջ լցրել են փոսը: Ասում են՝ հողը շարժվում էր նրանց վրա: Եղեռնին զոհ գնացին նաև Ստեփանյանները, չորս հորաքույրներիս ընտանիքները: Դա մի ամբողջ ողջակիզում էր: Միշտ մտորում եմ, թե մենք կարո՞ղ ենք արդյոք մոռանալ, բայց մենք իրավունք չունենք մոռանալու, քանի որ մենք փոքր թիվ ենք: Վրեժխնդրության կոչ չեմ անում, բայց ես չեմ կարող խորհուրդ տալ, որ մոռանանք: Հայ ժողովուրդը չի կարող մոռանալ այն, ինչ տեսավ իր աչքերով: Եվ ինչպես Ավետիս Ահարոնյանն* է ասել. «Այնքան չարիք եթե մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհը հայում կարդա նախատինք»:

96 (96).
ԱՌԱՔԵԼ ՂԱԶԱՐԻ ԹԱԳՈՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ԴԵՐՋԱՆԻ ՁԼԽԸՆԼՈՑ Գ.)

Մեր գյուղը Դերջանի Ձլխընլոց գյուղն էր: Այնտեղ ապրում էինք Հայրապետ, Դավիթ, Ղազար, Վարդան՝ չորս հորեղբայրներիս ընտանիքների հետ: Մեր ամբողջ գերդաստանը քսաներկու հոգի էր: Մեկ տեսակ ճաշ կեփվեր, և բոլորս իրար հետ ճաշի կնստեինք:

Մինչև ջարդը մենք մեր գյուղում խաղաղ ապրում էինք ու աշխատում: Ունեինք երկու հարյուր այծ ու ոչխար, որոնց հովիվը կտաներ արածացնելու: Ունեինք մեկ ձի, վեց եզ, որոնց գլուխները բուռնջուխներով զարդարված էին, իսկ վիզերնեն՝ զանգակներ էին կախված: Արորին և արաբային կլծեինք եզները: Ունեինք մեղվի շատ փեթակներ: Աշխարհի ամենալավ բերքը մեզ մոտ կստանայինք: Ցորենը կանայք հավա-

* Ավետիս Ահարոնյան (1866, Իգդիրմավա – 1948, Փարիզ) – հասարակական, քաղաքական գործիչ, գրող:

քում էին, տղամարդիկ խուրձ էին կապում, հետո տանում էին կալ, կալսում էին: Պետության հասանելիքը տալիս էինք, մնացածը մեր սեփականությունն էր: Կաթը, մածունը, կարագը, ղավուրման անպակաս էին մեր տնից: Մեր գյուղում երեք հարյուր տուն էր. բոլորը հայ էին:

Մեր գյուղի ետևը լեռ էր: Մամախաթունը մեր գյուղից երկու ժամ հեռու էր: Դաշտեր, գետեր ունեինք՝ մեջը ձուկեր կային: Գիշերը կողովը ամրացնում էինք ջրի հոսանքի ձեղ տեղը, առավոտյան մեջը լիքը ձկներ կուտակված կըլլային:

Ես իմ հորս ու մորս մեկ հատիկ զավակն էի: Ցոթը տարեկան դպրոց գացի, հազիվ այբ, բեն, գիմ սորվեցա, աղոթք սորվեցա: Մեր եկեղեցին գետնափոր էր, իջնում էինք աստիճաններեն վար, մեջը նկարներ, պատերին խաչեր կային:

Հայրս մեռեր էր արդեն: Օր մը քեռիս եկավ մամայիս ըսավ. «Պատրաստվիր, ուխտի պիտի երթանք, Մշո սուլթան Ս. Կարապետ»:

Այդ մեծ ուխտատեղի էր: Հոն գալիս էին Սեբաստիայեն, Բաբերդեն, Դերջանեն, Ակնեն, Քեմախեն: Ճամփան ցույց էին տալիս առաջնորդները: Մեր գյուղից չորս օր էր ոտքով: Քեռիս ինձի ու մամայիս նստեցրել էր ձիու վրա, ինքը ոտքով գալիս էր մեր կողքից: Բարձրանում էինք լեռներ, իջնում էինք ձորեր, հետերնիս տանում էինք մատաղացու անասուններ, որոնց հատուկ ցուցակագրում էին:

Ս. Կարապետ ուխտավայրը քառասուն սենյակ ուներ վանքին մեջը: Ս. Կարապետին գերեզմանը գմբեթին տակն էր. ով հիվանդ ուներ՝ բերում էր, որ առողջանա: Առավոտյան վեր կացանք, տեսանք մեծ ղազանները դրված են, վառելիք փայտերը շարված: Մատաղացուները եփվում են: Ս. Կարապետը ցածր տեղ էր, շուրջ բոլորը բլուրներ են, ձորերի մեջ ջրեր, առվակներ էին հոսում: Ամեն տեղ ընկույզի և այլ պտղատու ծառեր էին: Մամաս ըսավ՝ այս գիշեր ինչ երազ տեսնաս, միտքդ պահե: Ես տեսա, որ Հալեպ քաղաքին մեջն եմ և իմ խաղընկերներիս կորցրել եմ: Մութ է: Ես ընկել եմ մի տեղ: Մենը եկավ, ձեռքես բռնեց, ինձի լույս տեղ հանեց: Արև տեսա:

Այվազ քեռիս ըսավ. - Էս երեխան երազին մեջը Հալեպ քաղաքն է տեսել, խե՛ր ըլլա:

Ուխտավորներեն զատ թուրք և քյուրդ քնակիչները ևս հավաքվում էին, մատաղ ուտում մեզ հետ, մեզ հետ ուրախանում, երգում, պարում: Ս. Կարապետին գերեզմանի վրա հիվանդներ էին բերում, որ բուժվեն:

Մենք հյուրընկալվեցինք մի հայու տանը: Հետո վերադարձանք, եկանք մեր տունը: Աշուն էր: Դավիթ հորեղբայրս ուզում էր մեր երկու տարեկան ղոչին մորթել, մեկ էլ երկինքը մթնեց, արևը խավարեց: Մեծ մարդիկ ըսին. «Աս լավ նշան չէ. աղետ պիտի լինի»:

1914-ին մի առավոտ կանուխ մի խումբ ժանդարմներ եկան: Հորեղբայրս ներս մտավ և իր տղա Հովհաննեսին ու ինձ խիստ պատվիրեց, որ դուրս չելլանք, դուրսը ժանդարմներ կան: Ինքը ճրագը վառեց, իսը բռնեց իր երեսին, որ սևնա ու մաշկը դեղնի:

Մանուկ աղան մեր գյուղապետն էր: Ան ուներ մի գզիր: Այդ գզիրը եկավ հորեղբորս ըսավ. - Ելի՛ր, Մանուկ աղան քեզ է կանչում:

Հորեղբայրս ըսավ տնքալով. - Ես հիվանդ եմ:

Գզիրը գնաց: Եկավ մի ժանդարմ: Ճրագը վառեց և հորեղբորս երեսը նայեց, բայց քանի որ հորեղբայրս մուխը պահել էր երեսին վրա, դեմքը հիվանդի տեսք էր ստացել, հորեղբորս թողեց անկողնին մեջ, ելավ գնաց:

Դրսում բոլոր գյուղի տղամարդիկ հավաքվեցին, գաղտնի ժողով գումարեցին և որոշեցին ինքնապաշտպանության դիմել: Բայց գյուղապետը՝ Մանուկ աղան, ըսեր էր՝ չի կարելի:

Այնինչ, մերոնք արդեն լսել էին, որ Սարիղամիշից հայ աքսորականներ են գալիս և հերթը մեզ պիտի հասնի: Տղամարդիկ մտածում էին փախչել, բայց գյուղը պաշարեցին: Առավոտը ելանք, որ հովիվները ոչխարները պիտի արոտ տանին, բայց ժանդարմները գյուղը շրջապատել էին:

Առաջին հերթին ժանդարմները Մանուկ աղային բռնեցին, ձեռքերը ոտքերը կապկպած տարին ավերակ մի փայտաշեն տան մեջ, նրա չորս կողմը խոտ լցրին, վրան ալ նավթ լցրին ու վառեցին: Գյուղին տերտերին ալ կանչեցին, որ նրա այրված ոսկորները հավաքի լաթի մը մեջ ու տանի թաղի: Ան ձևերով սարսափ էին առաջացնում ժողովրդին մեջ, առաջ գլխավորներին ոչնչացնելով:

Մյուս օրը առավոտ կանուխ նորեն պաշարեցին գյուղը: Արդեն տղամարդկանցից շատերը փախել էին գյուղից, բայց մնացողներ դեռ շատ կային: Իմ հորեղբայրները փախել էին: Դավիթ հորեղբայրս փախել էր թուրքական բանակից, եկել էր գյուղ: Ծերեկները գնում էր գյուղից դուրս, թաքնվում էր. խոտի դեզերի մեջ, գիշերը գալիս էր տուն՝ քնում:

Մեզ պաշարեցին, ըսին. «Հայդե՛, պատրաստվե՛ք, պիտի գնանք ավելի լավ տեղ»: Ժանդարմների հետ ալ մի խումբ չերքեզներ կային պատրաստ, որ սկսեն մեզ թալանել:

Կեսօրին ժամը մեկն էր: Երեք հարյուր տնեցիներիս հանեցին գյուղեն դուրս: Ով դրամ ուներ՝ հետը վերցրեց: Մեր գյուղեն մեկուկես ժամ հեռու Ջամուղու գյուղը կար, հորեղբորս աղջիկը՝ Սրբուհին, մինչև հոն քայլում էր, բայց էլ չկարողացավ քայլել: Մենք նրան թողինք, առաջ անցանք: Հասանք մի մեծ գետի, ադ Մամախաթունի գետի խառնման տեղն էր: Էդ գետեն անցանք: Հայրապետ հորեղբայրս իր զավակները՝ Աղունը, Վարվառան տասնյոթ տարեկան, Միհասը՝ քսան տարեկան, Ստեփանը՝ տասնհինգ տարեկան էր: Այնպես որ, հինգ հոգի նրանք էին: Իսկ Դավիթ հորեղբայրս Շուշան անունով աղջիկ մը ուներ. Պայծառը նոր էր ամուսնացած, իսկ Սրբուհին մնաց պատիճ տակը: Սաճակ հորեղբորս երեխաները և կինը՝ յոթ հոգի էին: Վարդան հորեղբայրս, Մարիամը, Զաբելը, Փիլիպոսը, Մայրենին, ես ու մամաս ալ: Բոլորս տասնութ հոգով աքսոր էլանք: Մեզի տարին, Մամախաթունի գետեն անցանք: Մութը կոխել էր արդեն: Մեկ էլ տեսանք՝ Դավիթ հորեղբայրս ու մի ժանդարմ գալիս են: Եկան: Հորեղբայրս ինձի սիրեց, համբուրեց: Ժանդարմը զենքը

ուսիճ կայնած է: Մեզի քարավանին մեջեն դուրս հանեց: Հորեղբայրս մորս ըսավ. «Թող Առաքելը հետս գա: Ես կաշառել եմ աս ժանդարմին, պիտի փախիմ: Ասի մեզի կփախցուննե»:

Մամաս ինձի չտվեց: Էդ գիշերը Դավիթ հորեղբորս վեց հոգինոց ընտանիքը փախավ դեպի Չամուռլու գյուղը: Ճամփին մի ձայն կլսեն: Կտեսնան՝ մեր Սըրբուհին է: Ծառին ճյուղերը կկտրեն, պատգարակ կշինեն, Սրբուհին վրան կպառկեցնեն, հետերնին կտանին քյուրդ ծանոթ Ղազոյի տունը, որ հանգստանա: Այնպես որ, բոլոր հորեղբայրներս փախան: Գնացել են, տեսել են Սրբուհին ալ հոն է: Հետո հորեղբայրներս կերթան Անդրանիկ զորավարին խումբը կմտնան: Հետո Անդրանիկը բոլորին տարել է Էջմիածին, էդ ժամանակ արդեն Խորհրդային Միությունը հաստատված էր: Երկու հորեղբայրներս Թիֆլիս կերթան, իսկ Դավիթ հորեղբայրս և տղան, որը խարբերդցի կին էր առել, գալիս հաստատվում են Կիրովականում (ներկայումս՝ Վանաձոր): Բայց քանի որ մեր ոսկիները թաղել էինք մեր փեթակներուն տակի թումբերուն մեջը, հորեղբայրս գնում է, որ ոսկիները բերի: Գնացել է ու չի վերադարձել: Էդ ժամանակ ես մի երազ տեսա, որ հորեղբորս գլխին այծի կոտոշ էր բուսեր: Ես զգացի, որ նա փորձանքի մեջ է: Անցեր է սահմանը և սպանել են:

Մենք՝ ես ու մայրս, մնացինք աքսորի ճամփաներում: Մոտ քսան հոգի ենք: Մամախաթունի գետի մոտից մեզ քայլելով տարին, կոթերի կամուրջից անցանք, հասանք Դերսիմի լեռները, որտեղ քյուրդացած հայեր են: Այնտեղ հայկական գյուղ մը կար՝ դատարկ էր: Տուն մը մտանք, տեսանք մարդ մը անկողնին մեջը սպանված, որդնոտած պառկած է: Տուները խարաբա մնացած էին: Մենք վախեցանք, ետ դարձանք: Մի քյուրդ իր թաշկինակին մեջը հաց պանիր ուներ: Մամաս իրեն ոսկի տվավ, առավ ու կերանք: Քանի օր բան չէինք կերել: Մեր քարավանը վեց-յոթ հարյուր հոգի կին, երեխա էինք: Տղամարդ չկար: Հաջորդ օրը, յալլա՛, ձորեն մեզ ստիպեցին քայլել: Աղջիկներին, կիներին փախցնում էին, տանում, բռնաբարում էին, մեզ թալանում էին: Մայրս ինձ աղջկա հագուստ էր հագցրել: Ձեռքես բռնած տարավ առվակի մը մոտ՝ ջուր խմելու, տեսանք չորս-հինգ աղջիկներ կիսամերկ, սպանված ընկած: Մենք սոված ենք, ծարավ, անտեր: Օրերով քայլել ենք, ոտքերնիս ուռած, վիրավոր, արյուններուն մեջը: Կիները, աղջիկները երեսներնին ցեխ էին քսում, որ իրենց չփախցնեն:

Հասանք Երզնկա: Էնտեղ մի կամուրջ կար, անցանք, ճամփին եզերքը թուրքերը կայնած են, մեր վրայի հագուստները քաշում, հանում, տանում են: Մեկն ալ իմ ձեռքես բռնեց, սկսավ քաշքշել: Մայրս մյուս կողմեն կքաշե, չի ձգեր, որ ինձ տանի: Չենք կրնար քայլել, հոգնած ենք: Քայլած ժամանակնիս իրար ենք կորցնում, քանիսներին հենց քայլելու ժամանակ կացիններով սպանում էին, քանիսներին փախցուցին: Մի հատ տերտեր կնկա հագուստ էր հագած, բայց մատնել էին, ժանդարմները բռնեցին նրան, ճամփին փշերը հավաքեցին, գլխին պսակ դրին, ականջներեն զանգակներ կախեցին, ոտքերուն տակն ալ փուշեր կապեցին, ըսին՝ դե հիմա պարիր: Դմբլեկ զարկին, որ պարի: Բայց նա հազիվ մի քանի քայլ ոտք գցեց ու մեռավ: Էդ ժամանակ մի թուրք եկավ, ժողովուրդին ճեղքելով, սկսեց կացինով կոտորել ում որ պատահեր: Յոթ օրեն հասանք: Հորեղբորս կնկան գիրկը երեք տարեկան երեխան կար: Ժանդարմ մը խլեց երեխային, գցեց գետը: Բլուրի պես տեղ մը մեզի հավաքեցին, բերին ամեն մեկիս մի պզտիկ բուռ գարի բաժանեցին: Մենք այնքան անոթի էինք, որ սկսանք ձիերու պես ուտել ադ գարին: Չեմ ուզում հիշել աս բոլորը...

Մեկ ալ տեսանք չորս - հինգ հազար հոգի նոր քարավան մը բերին Բաբերդի, Սեբաստիայի կողմերեն: Մենք մինչև հասանք Ակն այնքան շատցանք նոր գաղթականներով, որ դարձանք մոտ տասը հազար: Ակնա բաղերի մեջ քարավան մը կար, որ լիքը կնիկ-երեխա էին, մեջները մի տղամարդ չկար: Էնտեղ մեկ գիշեր մնացինք: Մամաս իմ ձեռքը բռնել էր: Մեզի հետ էր Վարդան հորեղբորս աղջիկը: Անցանք գետը: Գացինք, գյուղ մը կար: Գացինք, որ հաց ուզենք: Ճար չունենք: Մեկ էլ երկու կնիկ եկան էս Վարդան հորեղբորս աղջկան քաշքշեցին ու տարան: Մենք ալ լալով եկանք մերոնց մոտը: Էնտեղ մի ամիս մնացինք: Մի առավոտ ելանք, որ Փառանձեմը մեռեր է, ծծկեր երեխան ալ ծիծը բերանը մնացեր է: Ձեռքերով փոս փորեցինք, երկուսին ալ թաղեցինք: Գիշերները գալիս են, աղջիկներին փախցնում են, երեխեքին տանում են: Ինչ որ անմարդկային է՝ անում են:

Տասնհինգ օր հոն մնացինք: Հետո եկան ժանդարմները, մեզի մտրակներով ծեծելով կտիպեն. «Ցալլա՛, ելե՛ք, քայլե՛ք»: Ժանդարմները առջևեն, ետևեն, քովերեն, մեզի շրջապատած են, բայց իրենք ձիերի վրա են, իսկ մենք՝ ոտքով: Ժողովուրդին տանում են: Քյուրդ կիները հաց, ջուր են բերում, որ ծախեն, ժանդարմները չեն թողնում, որ մոտենանք: Մայրս իր խըրխային մեջը մի ոսկի ուներ պահած, գաղտնի տվավ մի կնոջ, ջուր առավ: Ժանդարմները ժայռերից գլորում են, սպանում են, հաց չկա: Չեն թողնում առնենք: Եթե զավակը ճամփին մնա, մայրը չի կրնար վերցնել: Գլխին զարկում են, որ չմոտենա իր մեռնող զավակին...: Էսպես մեզի հասցուցին Արաբկիր: Մամաս ինձի շալակեց, քանի որ շատ հոգնած էի, և ոտքերս արյունոտվել էին:

Մի մարդ ու կնիկ ինձի մամայիս գիրկեն հափշտակեցին ու տարին: Մամաս լաց է լինում, ես լսում եմ նրա լացի ձայնը: Ես էլ եմ լաց լինում, բայց ո՞վ է լսողը: Ինձի տարին իրենց տունը, մի երեխայի օրորոցին քովը, ձեռքս դրին օրորոցին վրա, որ օրորեմ: Էդ գիշեր քնեցի էդտեղ: Առավոտը շուտ արթնացա: Տունեն կամաց դուրս ելա, ցանկապատեն ցատկեցի, բարակ ճամփով սկսա վազել: Վազեցի մինչև իջա ձորին մեջ, առու մը կհոսեր: Ծառերուն մեջեն գացի, գացի, ծառերուն մեջեն դուրս ելա, տեսա՝ խանութներ կան: Նայում եմ մարդկանց, ուզում եմ մամայիս գտնել: Միտքես ամեն ինչ անցնում է: Մեկ ալ տեսա մի խումբ կնիկներ՝ գլուխներնին փաթթված ետ նայեցին, տեսան ինձի, ես ալ տեսա, որ քեռուս կնիկն է: Անոնք ինձի տարին մամայիս մոտը: Տեսա՝ մամաս հիվանդ պառկած է: Ինձի տեսավ, վրաս քիչ մը հոգի եկավ: Էնտեղ ալ տասնհինգ օր պահեցին: Թուլլ չեն տալիս, որ գնանք: Հետո Արաբկիրեն դուրս եկանք: Գացի՛նք, գացի՛նք: Ճամփին ձմերուկ, հաց բան ծախում են, բայց մեզ չեն թողնում առնենք: Մեզի բերին գետին եզերքը: Ամեն իրիկուն մի դալալ է կանչում: Էդ էլ մշեցի տերտեր է՝ մահմեդական է դարձել, մեզի քարոզ է կարդում, որ մենք ալ մահմեդական դառնանք. «Հե՛յ, ժողովուրդ, հայութենեն վա՛զ անցեք, մահմեդականություն ընդունեք, որ ապրե՛ք»:

Էդտեղից ճավակներ եկան: Ամեն մի ճավակի մեջ քսան, երեսուն հոգի լցվում են: Ամեն անգամ երկու ճավակ է գալիս: Երբ ճավակը գալիս է, տերտերը ասում է. «Ով փող ունի, թող տա, թե չէ՝ ջուրը պիտի ձետեն ձեզի»: Արդեն մի քանիսին ալ ջուրը ձետեցին, որ բոլորը տեսնան ու վախնան:

Արդեն աշուն է գալիս: Մենք հասել ենք Եփրատ գետի ժայռերի վրա: Մեզ բաժան-բաժան ըրին: Էդ մահմեդական դարձած տերտերը կանչում է. «Սեբաստացինե՛ր, խարբերդցինե՛ր, մալաթիացինե՛ր, խումբ-խումբ առանձնացե՛ք»: Էդ խմբերին տարին ուր՝ չգիտենք: Մեզի բերին ծեծելով, ոմանց սպանելով, բերին Ռոշին գյուղը, ուր հիսուն հայ ընտանիք կա եղեր: Բայց դատարկ էր: Մեզի բերին էդ գյուղի գերեզմանոցը, որ հոն մնանք: Հոն ալ մի աղբյուր կար: Քիչ մը անդին տեսանք քարայր մը կա, մեջը ադ գյուղի հայերուն լցրել են, գնդակահարել են, հետո ալ վառել են: Ես տեսել եմ նրանց կմախքները քարայրին մեջը՝ իրար վրա դիզված:

Երկու օր վերջը մեզ ասին. «Ցալլա՛, ելե՛ք, քայլե՛ք»: Նեղ ճանապարհով մեզ ետ դարձրին մի հարթ տեղ: Չորս կողմը խաղողի այգիներ: Մեզ նստեցրին գետնին: Մի կարպետ գցեցին գետնին: Մեկը բոռաց. «Ժողովու՛րդ, ով ինչ ունի՝ զարդեղեն, թող իր ձեռքով բերի դնի Էս կարպետին վրա»: Ես չէի գիտեր, որ մայրս ոսկե գերդանլըխ և օղեր ունի եղեր թաշկինակին մեջը կապած: Մեր ետևն ալ փշոտ չիչխանի թփեր են: Մամայիս հետ գացինք: Էդ թփերի տակը մամաս հողը փորեց, թաղեց էդ թաշկինակը ու ինձ ըսավ. - Եթե ողջ մնանք, էստեղ եմ թաղում, կհիշես:

Իսկ ժանդարմը դեռ կանչում էր. «Ով ինչ ունի թող բերի իր ձեռքովը Էս կարպետին վրա դնի»:

Բոլորն իրենց ունեցվածքը տարին դրին, կարպետը լցվեց: Մի ձեղ անցք կազմեցին: Չորս հոգի մի կողմը, չորս հոգի մյուս կողմը կեցան: Մեզի մեկ-մեկ անց են կացնում ու վրաներս ստուգում են: Մեկ ալ տեսանք՝ խումբ մը մարդիկ, ձեռքերնին կացիններով. դանակներով, կնիկները տոպրակներուն մեջը քարերով եկան մեզ վրա: Ժանդարմները ետ քաշվեցին: Անոնք՝ առաջ եկան: Մեզի բշեցին ժայռի մի ծայրը՝ Եփրատ գետի եզերքը: Ետևից զարնում են, գցում են Եփրատ գետը: Էդտեղ անհաշիվ մարդ սպանվեց: Մեկ էլ տեսա՝ գլուխս ճեղքվել է, աչքիս տակը ծակվել է: Ես ընկած եմ, վրաս երեսուն-քառասուն հոգի կա ընկած, գլուխս միայն դուրսն է մնացել: Ոտքս կոտրված է, ցավում է: Աչքս արյուն է լցված, բայց դեռ տեսնում եմ: Տեսա մի ծեր, մորուքով մարդ ու մի տղա ինձ են նայում, իսկույն աչքերս փակեցի, որ իբր թե մեռած եմ: Անոնք մի քանիսին քաշեցին-քաշքշեցին, իմ վրայից հանեցին: Մեկ ալ զգացի, որ ես ընկա ցած, բայց վարը գետին մեջը չեմ, այլ՝ ծառերի ճյուղերին վրան եմ ընկած: Անոնց երթալեն վերջը, ելա, որ փախնեմ: Չեմ կարողանում քայլել: Քաշքրտվելով ոտքի ելա, ձեռքս կպավ ծառի մը ճյուղին, տեսա վարը՝ պարապ է՝ քարայր է: Սողալով մտա մեջը: Ընկած մնացեր եմ՝ ո՛չ քնած, ո՛չ արթուն: Մղձավանջի մեջ ընկա, ինձի թվում է, որ ես մամայիս քովն եմ: Մեկ ալ ուշքի եկա, տեսա երկու կին եկան: Անոնց հագուստներն ալ արյունոտ են: Ներս մտան քարայր: Ես գետնին փոված եմ, զգում եմ, ցուրտ է: Գիշերը անոնք ալ մնացին էդ քարայրին մեջը: Առավոտյան արևը ծագեց: Տեսանք թուրքերը եկան ձեռքերնին թուրերով, կացիններով, մահակներով: Եկան էդ երկու կնիկների հագուստները վրաներից հանեցին: Նրանք էլ մնացին մորե մերկ: Ես ալ ընկած եմ գետնին՝ չորցած արյուններուն մեջը: Հետո մի խումբ թուրքեր նորեն եկան: Չգիտեմ էլ ինչ եղավ: Ես ընկած եմ գետնին անզգա: Ինձ թվում է՝ ձայներ են գալիս, կարծում եմ մայրս է, բայց դա միայն ինձ էր թվում: Մութը կոխեց: Էդ երկու կնիկները մորե մերկ նորեն եկան, վիրավոր, տկլոր, սոված: Երևի հուսահատությունեն իրենց ձգեցին ձորը՝ հոն ալ գետն է հոսում, երևի խեղդվեցան, մեռան:

Առավոտյան լույսը բացվեց: Ականջիս մի ձայն եկավ: Հազիվ աչքիս մեկն է բացվում: Նայեցի, տեսա հորեղբորս աղջիկը՝ Շուշանն է: Տեսավ ինձի վիրավոր՝ արյուններուն մեջը, լաց եղավ ու կորավ: Մեկ ալ տեսա մայրս եկավ: Էդ աղջկան շոեցրեց, խմացրեց ինձ: Տեսա՝ մորս խրխան ամբողջ արյուն է: Ճակատի վրայի կաշին բացված է, ոսկորն է երևում: Մայրս շորով կապեց ճակատը: Շուշանին ալ մատներն էին վիրավորված: Ան ինձմե երկու տարի մեծ էր: Մայրս ինձի փաթթեց իր արյունոտ խրխային մեջը: Մեկ ալ տեսանք՝ երկու քյուրդ եկան: Մամայիս ըսին. - Եկեք ձեզի տանենք:

Մամաս ըսավ. - Մենք մեռած ենք արդեն:

- Ռույրի՛կ, մենք ձեր հացը կերել ենք, - դուն մի ըներ, դրանք քյուրդ բոշաներ են, որոնք գալիս էին մեր դռան առաջ ծառին տակը ապրում էին, մաղ էին հյուսում, ծախում: Շաբաթներով հոն մնում էին ու հետո գընում:

Էդ բոշան ըսավ. - Ռույրի՛կ, դուն մեզ չես կարող հիշել, բայց մենք քեզ կհիշենք: Դուն մեզի հաց, կարագ, մածուն կբերեիր, որ մենք ուտենք: Մենք չենք մոռցած քո ըրած լավությունները:

Մամայիս ձեռքը բռնեցին, ինձ ալ գրկեցին, Շուշանին ալ հետերնիս առին ուրիշ քարայր մը: Էդ Եփրատին եզերքը, ծառերուն վրա մորթված ընկած մեռելներուն դիակները այնքան շատ էին, կարծես թաշկինակներ են փոված ծառերուն ճյուղերուն վրա:

Էդ բոշաները գացին մեզի համար հաց, ջուր բերին: Կերանք, ուշքի եկանք: Անոնց քովը լուցկի ալ կար, տվին մամայիս: Մամաս ադ լուցկիով վառում էր իր արյունոտ շորերը և մոխիրը մեր վերքերուն վրա կդներ:

Այնպես որ, մեր կյանքը էդ քյուրդ բոշաները փրկեցին:

97 (97).
ՏԻԳՐԱՆ ՄԻՐԻՋԱՆԻ ՕՀԱՆՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ԿԱՄԱԽ)

Ծ նվել եմ 1902 թվին Քեմախի Գոմիկ գյուղում: Հայրս՝ Միրիջանը, մայրս՝ Հնազանդը իրենց չորս երեխաներով՝ երեքը տղա, մեկ աղջիկ, ապրում էին հանգիստ: Ցորենը աճում էր, սելավը ջրում էր մեր այգին: Ես մի տարի դպրոց եմ տեսել, տատերն եմ սովորել: Մեր գյուղը զուտ հայություն էր, բայց երեք-չորս հարյուր մետրից հետո թուրքեր էին ապրում: Ջորը բաժանում էր մեզ նրանցից: Մենք վերևի մատուռը գնում էինք ուխտի: Այդ վանքի կողքը փշատենի կար, ով գնում էր, մի շյուղ էր բերում:

Նախքան տեղահանությունը դեռ լուր չունեինք, քանի որ հաղորդակցության միջոցներ չկային: Մի անգամ մի մեծ բանակ եկավ, ոչ թե զինվորների, այլ՝ ամբոխ էր՝ ուղտերով, ջորիներով, էշերով: Դրանք եկան, լցվեցան մեր գյուղը, կալերում, դաշտերում, կտուրներին տեղավորվեցին, որպեսզի մերոնք կերակրեն իրենց: Դրանք հազարի չափ գաղթականներ էին, նաև կենդանիներն ալ վրան: Բոլորը սոված էին, ուտելիք չունեին, բան չունեին: Էդ գաղթականներից մենք իմացանք, որ տեղահան են եղած: Առաջին օրը կերակրեցինք: Ջիները, էշերը կոխկրտում, ավերում էին ամեն ինչ, փչացնում, ոտնատակ էին անում, բոստանները ոչընչացնում էին: Վերջապես դրանք գնացին:

Արդեն մեզանից 18-60 տարեկանը զինակոչ էին տարել, մնացել էին կիները, պառավները և երեխաները: Մորեղբորս էլ բանակ էին տարել: Հայրս Պոլիս էր գնացել, էնտեղից Բուլղարիա էր անցել: Մորքուրայրս՝ մորաքրոջս ամուսինն էլ բանակ էր գնացել: Էնպես որ, գյուղը անտեր էր մնացել:

Մեր գյուղը 1914 թ. կեսերին տեղահան արեցին՝ պատճառաբանելով, որ ռուսական սահմանին մոտ ենք: Եկան ծանուցում արեցին. «Վաղը պիտի տները թողնեք, պիտի երթաք»: Կիները սկսեցին գիշերը պաշար պատրաստել, հաց, բաղարջ թխեցին, բուլղուր վերցրին հետները: Մենք երեք երեխա էինք և մայրս: Մեծը ես էի: Ամեն մեկս մի տոպրակ վերցրինք: Կենդանիներ չկային, քանի որ բոլոր կենդանիները արդեն թուրքերը տարել էին: Հայրիկս Բուլղարիա էր, նամակագրությունը կտրվեց: Մենք տեղահանվեցինք: Հաջորդ օրը ճանապարհ ընկանք: Մեր գյուղից մինչև քաղաք ութ կիլոմետր էր: Մեր ճանապարհին պետք է թուրքի գյուղերով անցնեինք, բայց մեզ չթողին, շրջանցեցինք: Եվ մի քանի ժամվա ճանապարհը մի օր տևեց: Քարավանի մի ծայրը գյուղումն էր, մյուս ծայրը՝ հետու: Առաջին գիշերը մեզ հանգիստ տվին, նստեցինք մի տեղ ուտելու: Նույնիսկ երկու թուրք ոստիկանների էլ հյուրասիրեցինք: Գիշերը քնեցինք, բայց ծերունիները խորհրդակցում են, որ արթուն մնան, որ ջահել աղջիկներ կան: Ոմանք արթուն պահակ կանգնեցին: Հաջորդ օրը Մանուշկե գետի ուղղությամբ գնացինք: Այդ գետի խառնարանում, քարքարոտ բարձունքի վրայից երևում էր ներքևը: Մեզ տարին մի տափաստան տեղ, որ հանգրվան տանենք: Ինչ-քիչ ժողովուրդը գալիս էր: Երկնքից կրակ էր թափվում, ջուր չկա, կաթիլ-կաթիլ մի աղբյուրից ժողովուրդը ջուր էր բերում: Բացատ էր: Մեզ չէին թողնում, որ Եփրատի ջուրը խմենք: Մեր Թոքատի տասներկու գյուղից երեք գյուղ չներկայացան: Դրանք իրենց տները կրակի էին տվել ու սարն էին բարձրացել:

Թուրքի ժանդարմները քիչ էին: Մենք հազար-հազար հինգ հարյուր հոգի էինք: Մեր ճանապարհը շարունակեցինք մինչև հոկտեմբերի վերջը: Ճանապարհին ընկնողներ, մեռնողներ՝ շա՜տ, ոմանք ճահիճի ջրեր էին խմել, հիվանդացան ու մեռան: Մեզ տափաստաններով էին տանում, իբր թե՝ գյուղացիները մեզ չընդունեն: Մի օր եկան, հարձակվան մեզ վրա, ուզեցին մեր հարսին փախցնել՝ երեխան գիրկը: Մեծ մայրս չթողեց, խփեցին գլխին, լեզուն կապվեց: Քեռիս թուրքի բանակից փախստական էր, մեզ հետ էր գալիս: Նա չհամբերեց, թուրքի գլխին մի հատ խփեց: Նա մեռավ: Տեղնուտեղը, սուս ու փուս թաղեցինք, ճանապարհը շարունակեցինք: Գնում ենք գյուղի մոտով: Ոմանք մոտեցան գյուղացիներին՝ պաշար գնելու: Ժանդարմները չթողեցին, բայց տեսան, որ մենք փող ունենք: Մի ժայռի մոտ հասանք: Ջուր կար, մի քանի ուռենու և թթի ծառեր կային: Այդ ծառերի վրա ոչ տերև մնաց, ոչ մատղաշ շյուղ: Մերոնք բոլորը սոված էին, սկսեցին ուտել: Ամեն մի ընտանիք մի ապառաժ քարի տակ ծվարեց: Մայրս էնտեղ մեռավ: Քույրս մահացել էր արդեն: Մենք նրանց երանի էինք տալիս, որովհետև գաղթի ժամանակ ինչ որ մենք տեսանք, մահից ավելի վատ էր:

Հաջորդ առավոտ հայտնեցին, որ պիտի շարժվենք: Ես մորս շիրիմի վրա դրված քարի վրա փորագրեցի «Պ. Ղ.», այսինքն՝ Պայծառ Ղազարյան:

Մեզի տարին առաջ: Ներքևը կիրճ էր: Էդտեղից հազիվ մի սայլ կանցներ: Մեզ տարին լցրին այդ կիրճը: Սկսվեց կոտորածը: Ինչով կարող էին՝ երկաթով, դանակով, դաշույնով, սուրով: Անչափահաս տղա, աղջիկ տարբերություն չկա՝ փախցնում են բոլորին: Գյուղացիների խուժանը եկավ, սկսվեց կողոպուտը: Կիրճի բերանը փակել էին, որ չփախչենք: Վերևը ապառաժ էր: Ներքևում՝ կոտորում են մեզ: Մեր տասնմեկ հոգիանոց ընտանիքից երեք հոգու՝ մորաքրոջս երկու աղջիկներին և ամուջային կնոջը փախցրին, մորեմերկ մերկացրին: Իմ մորեղբայրը, որ թուրքի բանակից փախել էր, կանացի շորերով էր, ըսավ. «Ի՞նչ չեմ կարող համբերել»: Կնիկի շորերը վրայեն հանեց, մնաց տակի շորերով, երկու թուրքի սպանեց, նետվեց կիրճից ներքև, բայց հետո քարերով իրեն սպանել էին: Արդեն երեք հոգու առևանգել էին, մնացել էինք ութը հոգի: Ամբողջ մեր շրջապատը դիակներ էին: Վիրավոր մահամերձները ջուր էին ուզում, բայց տվող չկար: Քանի որ ջուրը ութ կիլոմետր հետու էր: Դիակներուն վրայեն անցնելով, մենք նայում ենք, թե ծանոթ մարդ կգտնենք: Մորաքույրս ընկավ մի աղջկա վրա, լաց է լինում: Դու մի ասա իր աղջիկն է: Մազերը պոկում է, կուրծքը պատռում է: Քեռակինս ասաց. «Սա մեր աղջիկը չէ, քանի որ մեր աղջկա մազերը սև էին ու երեսին խալ ուներ»: Նոր մորաքույրս հիշում է, որ դա իր աղջիկը չէ: Վեր կացավ: Սկսեցինք քայլել: Ինը գյուղ կոտորել են: Մնացել ենք չորս հարյուր հոգի: Եկանք, հասանք աղբյուրի մոտ, ուզում ենք ջուր տանել էդ վիրավորներին, բայց արդեն հետու ենք: Ես հիշեցի, թե ինչպես մի ողջ կնոջ մատն էին կտրում, որ մատանին դուրս գար մատից: Ականջիս դեռ լսում եմ վիրավորների ճվոցը՝ ջու՛ր, ջու՛ր: Մենք մորեմերկ ենք, արյունների մեջ: Մենք սոված ենք, ուտելիք չկա: Ետ գնացի, մամալիս գերեզմանի քարը գտա, սկսա լալ. «Մամա՛, վե՛ր կաց, մեզի ալ տեղ տուր, քովդ գանք» բայց՝ ձայն չկա: Մեկ ալ տեսա՝ մի հատ թրքուհի եկավ ջուր վերցնելու: Ես սկսա նրա հետ խոսակցիլ: Մի քիչ կաթ, մածուն եմ ուզում: Բերեց փիլավ, մածուն՝ չադրայի տակը պահած: Էնտեղ ծանոթ թուրքերը դուրս եկան, որոնք մեր պապերի հետ ծանոթ են եղել, հայրս դրանց տղաներին ատաղձագործություն է սովորեցրել: Ծանոթ թուրքերը ինձ առան պահեցին: Բայց հետո, երբ ռուսական զորքը մինչև Քեմախ հասավ, ես էլ թուրքերի հետ աքսորվեցի, եկանք մինչև Սեբաստիա: Էդ թուրքը, որ ինձ տանում էր իրենց հետ, ուզում էր ինձնից ազատվել՝ կրակեց ինձ վրա, ոտս վիրավորեց: Ես Դերջանից կաղալով գալիս եմ, որ միանամ ռուսական զորքին: Մի թուրքի կին ինձ մեղքացավ, վերցրեց խնամեց: Դրա ամուսինը չավուշների պետն էր:

Հաջորդ օրը թնդանոթի ձայներ լսեցինք: Ես թուրքերից բաժանվեցի, ետ մնացի, քարերի տակ թաքնվեցի: Տեսա մի պահակ գալիս է, մեկ՝ առաջ է գնում, մեկ՝ ետ է նայում: Ես քարի ետևից դուրս եկա: Արդեն գիշեր էր: Էդ մարդը ասաց. - Օղլու՛մ, արի՛ գնանք մեր տունը:

Գիշերով եկանք էդ մարդի տունը: Նա երկու երեխա ուներ: Ամբողջ ձմեռը ինձ պահեց: Ես նախիր էի արածացնում: Ամառ եկավ: Արդեն 1916 թիվն էր: Մի օր երկրաշարժ եղավ, ոտքերնուս տակը հողը ակոս-ակոս եղավ: Գնացի մեր Եղիչեյ գյուղը, տեսա գյուղը չկա Ալիս գետի ակին: Ես մերկ եմ, ոտս բոբիկ, շոր չկա վրաս: Մի թուրք զինվոր ինձ վերցրեց ձիու վրա, տարավ իրենց զինվորական հավաքատեղին: Էնտեղ վիրավորներ էին բերում: Ինձ ասին, վիրավորների հետ դրին, հասանք Սվազ: Ինձ հանձնեցին թուրքական որբանոց: Ընտանիքիս հետ կապը կորցրած, մնացի չորս տարի թուրքական որբանոցը: Ոչ ոք չգիտեր, որ ես հայ եմ:

Հետո մինչև 1922 թիվը ամերիկյան որբանոցը մնացի: Երբ Քեմալը եկավ, Սամսունեն Հունաստան եկա, Սալոնիկից Ռումինիա եկա: Հարց ու փորձ արի: Գտա հորս: Հայրս երկրորդ անգամ ամուսնացել էր ուրիշ կնոջ հետ:

1928-34 թթ. Ռումինիայում կանաչ շապիկավորներ դուրս եկան: Դրանք հետապնդում էին օտարներին՝ հրեաներին: Ես Շաուլյան ակումբի անդամ էի, նաև ՀՕԿ-ի անդամ եղա:

1946-ին Ռումինիայից եկանք Հայաստան: Ամուսնացա, երեք տղա, երկու աղջիկ ունեցանք, նահատակ քույրերիս և եղբայրներիս անունները դրեցի:

Ես ցանկանում եմ, որ ինչ ես տեսել եմ, իմ թոռները չտեսնեն: Բայց դժբախտաբար տեսնում ենք նույնը: Ինչ մեղք ենք գործել, ում ենք վատություն արել: Ընդամենը մեր իրավունքն ենք պահանջում, որ Արցախը մեզ տան: Երկրաշարժն էլ վրան եկավ: Իմ անցյալը իմ անցյալը չէ միայն, այլ նաև իմ ժողովրդի անցյալն է:

98 (98).
ԱՆՆԻԿ ՄԱՐԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1892 Թ., ԹՈԽԱԹ)

Մ ինչև 1915 թ. Թոխաթում էինք ապրում: Տուն, տեղ, այգի, ծառ, ծառաստան ունեինք: Բայց թուրքերը եկան, մեզ տեղահանեցին: Նախ՝ բոլոր տղամարդկանց հավաքեցին, տարին սպանեցին: Մեր ունեցած-չունեցածին եկան, տիրացան: Ես երեք պզտիկ երեխայով մինչև Դեր Զորի անապատները քաշկռտվեցա: Ա՛նոթի՛, ծարա՛վ, տաք արևի տակ: Ամեն օր հիվանդություններով մարդիկ էին մեռնում: Մեզնից խումբ-խումբ կհավաքեին, կտանեին ձորի մեջը, բալթայով կմեռցնեին: Քրոջս ալ իր երկու զավակներով տարին, սպանեցին ու փոսի մը մեջ նետեցին, բայց քույրս վիրավորված է եղած, իր զավակներուն և ուրիշ դիակներուն տակեն սողալո՛վ-սողալո՛վ եկած, մեզի գտած է: Ալ չգիտեինք՝ ուրախանա՞նք, որ քրոջս գտանք, թե՞ լանք, որ երկու զավակներուն կորցրեցինք... Երեք տարի քրոջս և զավակներուս հետ Դեր Զորում քարայրի մը մեջ ապրեցանք, որ գոնե իմ երեք ձագուկներուս ձեռք չիտան: Աստուծմե էր, որ հետս թելասեղ առած էի, թուրք զաբիթներուն կնիկներուն՝ հագնըմներուն համար ասեղնագործություն կընեի, հագուստ կկարեի, որ ապրեինք: Հետո՝ հետո արաբ մարդու մը ձեռագործ տվեցի, ան մեզի արաբայի մեջ դրավ, Պոլիս հասցուց, Պոլիսեն ալ անգլիական զրահանավով Եգիպտոս գացինք:

1947 թվին Հայաստան էկանք: Բայց 1949-ին մեզի աքսորեցին Ալթայսկի կրայ* ...

* Իմա՝ Ալթայի երկրամաս, որի սառցակալած տափաստաններն էին աքսորում ստալինյան կարգերի համար անբաղձալի քաղաքացիներին:

99 (99).
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍԻ ԳԻՆՈՍՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ԱՐԱԲԿԻՐ)

Հայրս՝ Պողոսը, 1908-ին երեք երեխաներիս մոր խնամքին թողնելով՝ փախել էր Ֆիլադելֆիա, քանի որ հայերի վիճակը մխիթարական չէր:

Արաբկիրը Անատոլուի Մամուրեթ Էլ Ազիզի Խարբութ (Խարբերդ) նահանգի մեջ մի փոքր գյուղաքաղաք էր: Թուրք մուսուլմանները բաժանվում էին երկու մասի՝ շիա և սյունի. մեծ մասին ղզըլբաշ էին ասում: Այն հայերը, որոնք կոտորածից մի կերպ խույս տված էին, եկած ապստանած էին այստեղ:

Արաբկիրը հիանալի օդով, բարեբեր կանաչների մեջ թաղված, պտղատու ծառերով առատ էր: Ամեն տուն իր տան շրջապատով, առանձին տափարակ տանիքներով: Կապույտ քար կոչվող քիչ մը ցեմենտի հատկություն ունեցող կավ մըն էր, որը գերանները զերծ էր պահում խոնավությունեն: Տների կտուրները լողքարով՝ կապույտ հողով, ամրացնում էին: Հայերը մեծ մասամբ հացագործ էին կամ արհեստավոր: Բամբակի թելից գունավոր գլխաշորեր էին գործում: Ոչ մի թուրք արհեստավոր չկար: Հայերը նաև պղնձագործ էին, կլայեգործ, բրուտագործ, ատուշագործ:

Արաբկիրը չորս եկեղեցի ունեցած է, բայց 1896-ի կոտորածին թուրքերը ավերել էին: Միայն մայր եկեղեցին կիսափուլ մնացեր էր, որը հետո նորոգեցին:

Մեր սովորությունով, մաճը երեք օր սուգ կպահեին: Բարեկամները կիոգային և դրացիները կսպասարկեին սուրճի կամ հոգոցի ծախսերը: Տերը սներ հագած, գիշեր-ցերեկ քովը մխիթարող մը կունենար:

Հարսանիքը նույնպես երեք օր կտևեր: Ջույգերու իրար սիրելը հազվագյուտ էր: Տղային կողմը աղջիկ կգտնար:

Կհիշեմ, Միհրան Սվազլը ատուտով հոետոր մը կար: Միսաք աղային տունը հարգանքով ընդունեցին, սեղան դրին, ճաշեցին: Մարդիկ հավաքվեցին, ես ալ գացի: Լավ խոսում էր: Բոլորը ծափահարում էին: Ես փոքր էի, շատ բան չէի հասկանում, տասնչորս տարեկան էի, միայն մի բան միտքս է, ըսավ. «Մակ տեսնեն՝ մուկ կըլլան, ջուր տեսնեն՝ ձուկ կըլլան»: Երկու թուրք ոստիկաններ եկան. պարոն Միհրան Սվազլը շուտ ներսի աստիճաններից վար իջավ և վարի դռնից անհետացավ: Ոստիկանները ներս մտան հարցուցին, սեղան հրամցուցինք, ըսինք՝ այդ մարդը հոս չի եկեր: Տեսան, որ սեղանին իրենց փնտրածը չկա՝ գնացին: Արդեն 1912-14-ին մեր դպրոցները փակեցին: Հանկարծ պայթեցավ Առաջին համաշխարհայինն պատերազմը: Թուրքիան ալ զորաշարժ հայտարարեց Գերմանիո կողքին, տասնութ-քառասունհինգ տարեկանը զենքի տակ առավ՝ համաձայնականներու դեմ կռվելու: Մեր ընտիր երիտասարդներուն ալ տարավ, որ կռվին ռուսներուն դեմ: Ատոնց մեջ էր նաև իմ քեռին: Գյուղը տխրության մեջ մնաց և կսգար իր սև ճակատագիրը: Ատկից քիչ հետո նորեն եկան և սկսան խուզարկությունը զենքի, այլևայլ գրքերու: Երբ որ մարդ մը հանդիպեր, կստիպեին՝ «զենքդ տուր»: Ան ալ կըսեր. «զենք չունիմ», այն ժամանակ զորքը կատղած՝ մարդուն վրա կհասներ և անխղճաբար կծեծեր, մինչև որ մարդը զենք մը կգըտնար, կհանձներ: Այսպես չորս-հինգ անգամ գյուղը խուզարկեցին և գրեթե զենք չթողուցին, ամբողջը հավաքեցին ու տարին: Ասկե վերջ սկսան տասնհինը-երեսուն տարեկանները նորեն զորք կանչել: Ատոնք ալ հավաքեցին ու տարին: Ատոնց մեջն ալ հորքրանցս Սարգիսը կար: Ատկից քանի մը ամիս վերջը սկսեցին աճոռելի աքսորանքը: Մնացած էրիկ մարդիկները և տասնվեցտասնյոթ տարեկան տղաքը տարին և մի քանի օր բանտը պահեելեն ետք՝ սպանեցին: Միշտ ան ժամանակին էր, որ գյուղը սև հագած կսգար, գյուղի երեսը ոչ մի ուրախություն չկար: Ատոնք ալ ըլլալէ վերջ՝ եկավ ան աճոռելի ու սոսկալի ժամանակը, երբ այլևս գյուղը պիտի աքսորի էլլար: Որչա՜փ սոսկալի էր: Ջորքերը լցված էին գյուղին մեջ և այսպես կպոռային. «Հայդէ՛, չըքը՛ն սէվքիաթէ» (Դե՛, վեր կացեք տեղահանության), և երբ ժողովուրդը կլսեր այդ ազդու հրամանը, ամեն մարդ կսարսռար, կարծես թե մի նիզակ էր, որ կխրվեր մեր սիրտը: Ա՜խ, հայրիկս ինչ լավ էր, որ գացած էր: Վերջապես ամեն մարդ իր պատրաստությունը տեսավ, գլուխ ծռած գառնուկներու պես անցան բարբարոս զորքերուն առջևը, որոնք տարին մեզ մաճվան գիրկը՝ Մալաթիո ճամփան: Ես ալ մեջերնին էի, մորս, քրոջս և եղբորս հետ գնացինք մինչև Մալաթիայի մոտը, չորս ժամ անդին: Այդտեղ ինձի պես պզտիկները զատեցին, որպեսզի Մալաթիա տանին, իբրև թե հոն որբանոց ունեին, և բաժնեցին զիս մորմես, քրոջմես և եղբորմես: Տարին Մալաթիա, իսկ ատնց Մալաթիո հարավային կողմը քշեցին: Այն ատեն որբությունը տիրեց վրաս, մորս, քրոջս և եղբորս համար գիշեր-ցերեկ հանգիստ չունեի: Ադկից վերջն ալ ատնցմե լուր չառի, թե ի՞նչ եղան: Ես Մալաթիո մեջ մնացի: Ինձի հետ կային ուրիշ պըզտիկներ ալ, ամբողջս հազար հոգի կկազմեինք: Կուգային, քանի մը օրը անգամ մը կզատեին մեզ ու կտանեին, կսպաննեին, ոմանց ջուրը կթափեին և ոմանք ալ քյուրդերուն մեջ կցրվեին: Այսպիսով հազար հոգիեն հարյուր քսան հոգի մնացինք: Երբ կուգային մեզի տանելու, ես անմիջապես կփախչեի պարտեզները, կպահվեի, զինվորները կուգային կփնտրեին, բայց չէին կըրնար ինձ գտնալ: Երբ որ կերթային, ես պահված տեղես դուրս կելլեի: Այսպես քսան անգամ սուրին բերանեն փախա և վերջապես տեսա, որ այլևս օգուտ չըներ փախչիլը: Արդեն հարյուր քսան հոգի էինք մնացեր: Այս մնացածներս ալ մաս մը պիտի սպաննեին, մաս մըն ալ պիտի թրքացնեին: Տեսա որ օգուտ չկա, ելա եկա Մալաթիո շուկան, արաբաջի մը բռնեցի, որ զիս գիշերով Խարբերդ փախցնե: Ան ալ համաձայնեցավ, և ես երկու ոսկի խոսք տվի: Մարդը զիս գիշերով առավ և երեք օրեն Խարբերդ բերավ: Եկա քաղաք: Մստըր Րիկզեն երկու ոսկի առի և արաբաջիին տվի, արաբաջիս գնաց: Քաղաքը մաս մը գյուղացիներեն կային, որոնք Էրզրումի Մեհմեդ բեյին շնորհիվ ազատված էին:

Մեր Թորիկանց Օհան ամուին հարսը՝ Թորիկան կինը հոն էր, եկավ և զիս անմիջապես իր քովը տարավ ու պահեց, իմ դրամը մստըր Րիկզը կուտար: Խարբերդի մեջ տասնչորս ամիսնմնալե հետո մեր Եվայիճ հետ, իր դրամով եկա Դերսիմ: Երեք օր Դերսիմ մնալե ետք՝ եկա Երզնկա: Ամիսուկես Երզնկայի որբանոցը մնալե վերջ՝ 1917 թվին եկա Էրզրում՝ Կարին: Հետո Սեբաստիա գացի:

Հետո Ֆրանսա գացի, Լիոնում ՀՕԿ-ի անդամ դարձա: Լիոնաբնակ արաբկիրցիների հայրենակցական միություն կազմեցինք: Պետությունը ճանչցավ, հաստատեց: Անդամավճարներու և փոքր հանդեսներուն հասույթները Ամերիկա՝ Արաբկիրի կեդրոնական վարչությանը ղրկեցինք: Հայաստանի մեջ Նոր Արաբկիր թաղամասին մեջ հողմաս առինք, առաջին շենքի հիմքը դրինք. արծաթյա տախտակի վրա գրված էր Խորհրդային Հայաստանի ղեկավարի ստորագրությունը:

1925-ին հին Արաբկիրից ներգաղթողներին աշխատանքով ապահովելու համար տրիկոտաժի «Կարմիր ջուլհակ», հետո ալ՝ «Քիմիական մաքրման գործարան» հիմնադրվեց:

Ես ալ Հայաստան եկա: Ջուլհակի գործիքներս ծախեցի, տուն շինեցի:

100 (100).
ՀԱՑԿԱՋ ՍԵԴՐԱԿԻ ԹՈՐԻԿՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ԱՐԱԲԿԻՐ)

1914 թվին հորս թուրքական բանակ տարին: Ան որ հայ էր՝ օրենքից դուրս էր: Բոլոր հայ զորակոչվածներուն տարել էին, Էրզրումում փոսեր են փորել տվել, վերջը բոլորին խփել են, փոսերուն մեջը թաղել են: Լուրը եկավ մեր տուն: Սուգ ու շիվանն սկսավ: Տունին մեջը լաց են լինում: Դրացիները լաց են լինում: Ամեն տուն մեկ-երկու զոհ ուներ տված: Վերջը եկան մնացած տղամարդկանց հավաքեցին: Այս անգամ հորեղբորս տարին, որպես մեծի: Ես ալ մինչև վարի չարշին ատոր ճամփու դրի: Ան քիչ մը խուրմա առավ, ինձի տվավ, ըսավ. «Գնա՛ տուն»:

Վերջը լսեցինք, որ ատոնց բոլորին տարեր, Եփրատ գետը թափել էին: Հրաման ելավ. «Ով որ թուրքա՜ն՝ կազատվի»: Մեր ժողովուրդը թուրքությունը չընդունեց: Եկան թուրքերը, մեր տուներուն դուռները փակել տվեցին, մեզի աքսոր քշեցին: Մայրս էր, եղբայրս, քույրս ու ես: Էրզրումից էլ կային, ուրիշ տեղերից էլ կային բերված: Ադ բոլորին հետը մեզի խառնեցին տարին:

Մայրս մի հատ տեղաշոր, մի քիչ հաց, մի քիչ շլորի թթու առավ, որ ճանապարհին ծարավ ըլլանք՝ ուտենք: Խեղճ մայրս էդ բոլորը շալկել էր: Փոքր ախպորս ալ շալկեր էր: Մեզի ոչխարներու պես քշեցին մինչև Եփրատ, մինչև Փըրընջըլար: Եկան երեխեքին հավաքեցին: Մայրս ինձի, ախպորս և հորեղբորս երկու աղջիկներուն տվավ, որ տանին: Մեզի սայլով Մալաթիա տարին: Ադտեղը հայություն կար: Մի մարդ եկավ մեր չորսին տարավ իրենց տունը: Սեղան դրին, հաց էինք ուտում, ես սկսա «Հայր մեր» ըսել, բոլորը աղոթեցին: «Ա՜խ, - ըսավ մարդը, - Աստված թող մեզ ազատի»:

Երկու օր ետքը արթնցանք, որ բոլորին տարել, սպանել էին, միայն ես քնած էի մնացել: Մեկ ալ տեսնամ ժանդարմ մը եկավ, ըսավ. «հարյուր յոթանասունյոթ հայ երեխա հավաքեցինք, տարինք, սպանեցինք: Դուն մընացիր, ես քեզի իմ տունս պիտի տանեմ»: Գացինք: Հյուսեին բեկ անունով գյուղ մըն էր, Մալաթիայի կողմը: Էդտեղ թուրքերը ննստեր էին: Ես ալ ժանդարմին քովը քնել եմ: Մեկ էլ տեսա գյուղին բեկը ինձի գրկել, տանում է: Ես սկսա լաց լինել: Առավ բերավ ժանդարմին քովը: Ան ըսավ ինձի. «Դուն հոս մնա, ես կգամ»: Եկավ: Ինձի տարավ տուն: Լողացրին, մազերս կտրեցին, շորերս փոխեցին: Անունս փոխեցին Հուսեին դրին:

Ադ ժանդարմը ամուսնացած էր, կինը ինձի մոր պես սիրեց: Գառները կարածացնեի: Ես ո՛չ թուրքերեն, ո՛չ ալ քրդերեն գիտեմ: Մեկ էլ տեսա, որ ժողովուրդը, հրացանն առնողը փախչում է: Հաճի մը թուրք զինվոր եկան, ձեռքերս, ոտքերս կապեցին, ինձի գցեցին Եփրատ գետը: Բախտես ուռենու ծառ մը կար ափին բուսնած, ադոր ճյուղերը իջած էին ջուրին վրա, ճյուղերը մի կերպ բռնեցի, մնացի: Ադ տեղեն երեխեք էին անցնում, եկան ինձի ազատեցին: Լալեն եկա ժանդարմին տունը: Ես լաց եմ լինում: Իրիկունը մութը կոխեց, ադ զինվորները եկան ադ ժանդարմին տունը, որ հաց ուտեն, քնեն: Իմ ժանդարմտերը ձեռքես բռնեց, տարավ անոնց քովը, ըսավ. - Ինչու՞ այսօր աս տղային գցեցիք Եփրատը:

Ըսին. - Չիմացանք քո տղան է, - տերս վոնդեց անոնց:

Կհիշեմ, մայրս, երբ մեզի ճամփեց Մալաթիա, ըսավ. «Դուք գացեք, մենք ալ վաղը պիտի գանք»: Ան մեզի խաբեց, որ գոնե մեր կյանքը փրկվի: Իմ փոքր եղբայրս հիվանդ էր, թուրքերը ըսին՝ տանինք բուժենք: Ալ չիմացա ի՞նչ եղավ: Օր մը ոչխարները արածացրի, տուն եկա լալով՝ ախպերս միտս էր ընկել: Տերս էկավ ըսավ. - Ինչու՞ կուլաս:

Ըսի. - Ախպերս միտքս եկավ:

- Էլ լաց մի՛ լինի, - ըսավ, - անոր սաղ-սալ թաղել են:

Ես վերջը լսեցի, որ քրոջս քյուրդերը փախցուցեր են, մայրս ալ մազերը փեթթելով ետևեն վազեր է, մորս ալ սպանել են: Ադ ալ հորեղբորս կնիկը շատ տարի հետո ինձի գրեց Ամերիկայեն, քանի որ ան իրենց հետ էր եղած աքսորի ժամանակ և մի կերպ ազատվեր էր, ամերիկացիները որբանոցով տարել էին Ամերիկա:

Տիրոջս տանը միջնեկ ախպեր մը կար: Ան գիտեր, որ ես գյավուր եմ: Օր մը էշի քուռակին նստած էի, ան ինձ վրա հարձակվեց, ուզում էր ինձ սպանել: Մայրը դոշը տվեց, ինձ ազատեց՝ լաց լինելով. «Ա՜, ֆըլա է», որը քրդերեն կնշանակե՝ մեղք է՝ երեխա է:

Ադ կինը տարավ ինձ մարագ, բուժեց, քանի որ երեսս ուռել էր. այնպես ծեծ մը տված էր, որ ցավից մեռնում էի: Մայրը ականջիս մեջը հալացրած ծամոն կաթեցրեց, արյունս եկավ ականջիցս, ցավը անցավ:

Գյուղացիները ըսին ինձի. «Դուն լավ կընես փախնես, ադ տղան քեզ նորեն կսպանի»:

Ուրիշ արաբկիրցի տղա մը կար, անոր հետ փախանք: Ճամփին խաղող ծախող մը տեսանք, ան ըսավ. «Ո՞ր եք գնում: Ջորով գնացեք, մի տուն կա, դուռը խըփեք, ըսեք Հյուսեինն չաուշը է ղրկել մեզի»:

Գնացինք գտանք ադոր տունը: Սոված էինք, մեզի հաց-մաց տվին, կերանք: Հոն մեկ շաբաթ մնացինք: Ինձի տարին Մալաթիա, ուրիշ գյուղ մը: Հոն ալ հարս ու կեսուր էին, անոնց ոչխարներն էի արածացնում: Մի հատ ոչխար ծնվավ, ինձի առի, տարի, գառը մեծցավ: Ձեռքս առին տարին ծախեցին: Ես ալ ադ տեղեն փախա: Մալաթիա եկա, թուրքի մոտ: Հոն ալ ինձի լավ չէին ընդում, դուրսը պաոկեցնում էին, ձյունը եկել էր, տակը պաոկեր էի: Մարդ մը եկեր տեսեր է, որ ես ձյունի մեջ պաոկած եմ, մեղքցեր է, առավ, տարավ իր գոմը, թրիքի մեջ թաղեց, որ տաքանամ: Իսկապես որ լավացա:

Երկու օր վերջը մի մարդ էշով քաղաք էր գնում, ես ալ դուռը կայնել էի, ան ինձ ըսավ. - Էկուր հոս, էշիս նայե, կեր տուր, իմ քովս կուգա՞ս:

- Կուգամ, ամմա հարևան եք, կոխվ չըլլա իմ պատճառովս, - ըսի ես:

- Չէ՛, էկուր, - ըսավ:

Անոնք ալ նոր շորեր հագցուցին: Շատ ոչխարներ, կովեր ունեին, հարուստ էին: Գիշեր-ցերեկ անոնց անասուններն էի արածացնում: Բերում էի հանդից, կըթում էին, նորեն տանում էի արածացնելու:

Ո՞նց եղավ չգիտեմ, երկու ոչխար ինձնից գողացան: Ինձի տերս ըսավ. «Դուն ծախել ես, որ փախնիս»: Շորերս հանեց, ինձ կապեց, ջուրը վրաս լցրեց ու սկսեց խրբաճով ծեծել: Տունին կնիկը մեղքացավ, եկավ իմ պարանները կտրեց, ինձի դուրս գցեց: Ես փախա: Դըրսում մի ուրիշ մարդ հանդիպեց: Ինձի տեսավ էդ վիճակով, մեղքցավ տարավ տունը: Աղայիս տունը մարդ մը եկավ հրացանով, ըսին՝ ադի խազանջը օղլին է, ան հալ է: Ադ մարդը ինձի հարցրեց. «Դու հա՞յ ես»:

Ես վախենում եմ, արդեն հայերենս ալ մոռցած եմ: Ինձի առին տարին արաբկիրցի թուրք մը կար, անոր քովը տարին: Ես իմ ծնողքիս, հարազատներիս եմ փնտրում, հայերենս մոռցած եմ: Ադոնք ինձ ուզում են թուրքացնել: Տիրոջս ճաշ եմ տանում: Ադոնք ալ տասընհինգ հոգի են, անոնց խզմեթն եմ անում:

Օր մը խանութին առջևը նստած եմ, կնիկ մը եկավ, մեղրով փեթակ է ծախում: Ինձի տեսածին պես լաց եղավ: Ես ըսի. - Ինչու՞ կուլաս:

- Քու անունդ Հայկա՞զ է, մորդ անունը՝ Մաքրուհի՞, պապադ՝ Սեդրա՞կ, քույրդ՝ Փայլու՞ն, եղբայրդ՝ Մուշե՞ղ:

- Ես՝ Թորիկենց Հայկազն եմ, - ըսի:

Ան ամուսնացել էր թուրքի հետ: Ես ըսի. - Մարդու բան չընես: Տունին մեջ գողություն է եղել, ինձ վրա չձգեն:

Ադ կնիկը լաց լինելով գնաց: Գացեր պատմել է:

Առավոտը հաց էինք ուտում, երկու կնիկ եկան, մեկը երեկվա կինն էր.

- Աս Հայկազն է, - ըսավ:

Ես ըսի. - Ես հարազատ չունիմ:

Տերս ըսավ. - Եթե եղունգը միսեն կբաժնվի, հարազատն ալ կբաժնվի:

Կինները ինձի տարին մի տուն: Գացինք պարտեզը ննստանք: Ես հայերեն չգիտեմ, միայն քիչ մը կհասկընամ: Հոն արաբկիրցի մարդ մը կար, գործվածք էր բերեր, ըսի. - Եթե Արաբկիր գնաս Սեդրակ աղային տունեն ո՞վ կա ինձի խաբար բեր:

Էդ մարդը ըսավ. - Քո անունը Հայկա՞զ է: Քո քեռին ըսեր է ինձի՝ եթե Հայկազին գտնաս, կբերես Արաբկիր:

Ադ մարդը ինձի տարավ Արաբկիր: Ադի արդեն 1925 թիվն էր: 1928 թվին ալ Հայաստան եկա, Նոր Արաբկիրում տուն շինեցի, ամուսնացա, ընտանիք կազմեցի: Փա՜ռք Աստծո:

101 (101).
ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐԻ ԱՄԱԼՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1904 Թ., ԱՐԱԲԿԻՐ)

Մերիները Անիից են գաղթել Արաբկիր և ապրել են ու աշխատել: Մեր ընտանիքը չորս ախպեր, հեր ու մեր էինք: 1915 թվին թուրքերը եկան, ախպորս թուրքական զինվոր տարին: Մեծ ախպերս Պոլիս էր, քեռուս մոտը կաշխատեր, անոր ալ Պոլիսեն աքսոր են տարել: Ես չորրորդ դասարան էի սովորում: Պարոն Տիգրանը մեր ուսուցիչն էր: Ան տիգրանակերտցի էր: Օր մը եկավ ըսավ. - Տղա՛ք, աս մեր վերջին օրն է. ամենքդ ալ տուն գացեք:

Մեկ ալ տեսանք՝ երկու ժանդարմներ եկան, ըսին. - Պարոն Տիգրանն ո՞ր է:

- Դաս կուտա:

- Ի՞նչ դաս:

- Մաթեմատիկա:

- Գնա պարոն Պետրոսին ալ կանչե:

Կանչեցինք պարոն Պետրոսին ալ: Ժանդարմը քանդալը ձեռքերնուն անցուց: Պարոն Տիգրանը դպրոցի տնտեսին ըսավ. - Գուրգե՛ն, աշակերտներուն տուն ղրկիր, դպրոցը փակիր, բանալին տար եկեղեցի: Կես ժամ վերջը մեզի արձակեցին:

Ժանդարմը հրամայեց. - Մինդերները տարեք տուն. գյավուրի դպրոցը փակվավ:

Տասնհինգ օր վերջը սկսան հայերուն տանիլը: Գիշերը տուները մտան, երեք հարյուր հոգի տարան: Ամենալավ տղաներուն տարին մորթեցին, թափեցին Եփրատը: Մյուս օրը եկան երեսունեն հիսուն տարեկան տղամարդկանց հավաքեցին, տարին, անոնց ալ սպանեցին: Մնացին կիներն ու երեխեքը:

Տասը օրեն ետքը եկան, մեզ ալ հանեցին: Ըսին. - Շատ բան մի վերցուցեք, միայն ձեր ոսկեղենները և ուտելիք, քանի որ տասնհինգ օրեն ետ պիտի գաք:

Մենք մեր տունին դուռը փակեցինք, բանալին տվինք թուրք հարևանին: Ճանապարհ էլանք: Խալխը էշ է առել, ձի է առել, պաշար է առել: Մենք ո՛չ էշ ունեինք, ո՛չ մի բան: Մեկ էլ ժանդարմներն եկան՝ տասներկու ձիավորներ, ըսին. - Ով որ արհեստավոր է թող մեկ կողմ՝ աջի վրա կայնի:

Շուկան բոլոր հայեր էին: Ամեն մարդ իր խանութը փակել էր արդեն, շատերուն ալ տարել, կոտորել էին: Արդեն տղամարդ չէր մնացել: Հերթը եկավ ախպորս: Ժանդարմը հարցուց. - Արհեստավո՞ր ես:

- Դեմիրճի եմ:

- Ինչքան ազգական ունիս՝ մեկ կողմ թող կանգնին:

Մենք մեկ կողմ կանգնեցինք: Մյուսներուն քշեցին աքսոր: Ալ մեյմըն ալ չտեսանք անոնց:

Ժանդարմն ախպորս պրոպուսկ մը տվավ, ըսավ. - Աս դուռնդ վրան կդնես: Խանութդ ալ կբանաս: Գացե՛ք ձեր տուները:

Դիվրիկը մեզի մոտ էր: Հայրս իր եղբոր հետ գնացել էր Դիվրիկ, իմ եղբայրն ալ հետերնին էին տարել: Հորս էնտեղ կգնդակահարեն: Հորեղբայրս ծեր էր, աչքը կույր էր, չէին սպանել: Ախպորս ալ թողել էին, որ ձեռքեն բռնե քալեցնե: Հայց վերջը խեղճ հորեղբորս ալ կգնդակահարեն: Ախպերս մի կերպ փախչում է, գալիս է Արաբկիր, մեզ մոտ:

Մինչև 1927 թիվը մնացինք Արաբկիրում: 1928 թվին եկանք Հայաստան, անցանք Երզնկայեն: Տրապիզոնեն նավով եկանք Բաթում: Բաթումեն՝ Երևան: Երևանում ալ Նոր Արաբկիր թաղամասը հիմնադրեցինք:

102 (102).
ՂԱԶԱՐ ԳՅՈՒՄԻՇԳԵՐԴԱՆՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ԱՐԱԲԿԻՐ)

Մենք՝ արաբկիրցիներս, շատ հյուրասեր ենք, քանի որ մեր հոնտեղը շատ խաղաղ ու ճոխ կյանքով կապրեինք: Մենք Անիեն գաղթած ժողովուրդ ենք, վեստ Սարգիսը խաբեց Գագիկ թագավորին: Անիի հազար ու մեկ եկեղեցի ունի եղեր: Մեծ հայրիկս կըպատմեր ադ բոլորը:

Ես տասը տարեկան էի, երբ տասնհինգ հոգի, ադոր մեկ հատը՝ հորաքրոջս ամուսինն էր՝ Մարտիկ աղան, մյուսը՝ վարդապետին փոխանորդը՝ Տեր Կոյունը, որը մեր տերտերն էր, և ուրիշներ վիլայեթեն կանչած էին, էկել էին, մենք լուր չունեինք: Մենք դպրոց կերթայինք: Երկու զինվոր ոստիկան պտունգիանավոր էկան դպրոցին առջևը: Եղբորս հետ դպրոցեն էլանք, պապայիս խանութը գացինք: Պապաս ալ նալբանդ էր: Անտեղեն ալ մեր մականունը Նալբանդօղլի կըսեն: Պապաս Խորեն անունով աշկերտ մը ուներ, Աբթիլ վարպետը ըսավ անոր. «Աս չոջուխները տուն տար»:

Քիչ ատեններն շուկան մարդ չմնաց: Տուն գացինք, որ վարի ախոռներուն դուռը բաց է, պապաս գլուխը կապված պառկած է, յորղանը բաց: Հյուրդ աղան՝ Թաթիկլի Մատոն զոփայով պապայիս ծեծեր է: Ութսունհինգ տարեկան մեծ մայրս, մամաս և կույր հորաքույրս աղի արցունք են թափում: Ադ քյուրդին արբանյակները կուգան չեն ձգեր, որ շարունակե: Կձգեն պապայիս գետինը արյուններուն մեջը՝ կերթան: Շուկայի ծանոթ հայ տղաները կուգան արյունի մեջ կոլոլված հայրիկիս տուն կտանին: Ան կես ճամփին չի կրնար քալել, ստիպված կշալկեն, հազիվ տուն կբերեն:

Արաբկիր քսանչորս հազար հայություն կար, կըսեն, ընդամենը մնացեր էր հազար չորս հարյուր հոգի, ան ալ ինչի՞ շնորհիվ, քանի որ հոն ամբողջ արհեստավորները հայ էին՝ ձիուն նալ խփողը, դեմիրճին, բախրճին, նալբանդը: Անանկ որ արհեստավորներուն պահեցին:

Ամբողջ շուկային փողոցները ոստիկանները բռներ էին, Ահմետ-Մուհամետներուն հաներ են դուրս, հայերուն բանտարկել են: Փիլիպոսը պապայիս հորեղբոր տղան էր: Ան շատ ուշիմ էր և միշտ ճեմարանին առաջինը կելլար: Անոր հետ հասակակից էի: Ադ Փիլիպոսը արձակուրդին կուգար տուն, կոշկակարություն կըներ: Աս փորձանքը, որ էկավ մեզի, ադ Փիլիպոսին ալ բռներ տեղ մը տարեր խոթեր են, ուզեցել են թուրքացնել: Թուրք զաբիթ մը կուզե կոշիկ կարել, Փիլիպոսին կբռնե կտիպե, որ կարի: Փիլիպոսն ալ կըսե՝ կաշի չունիմ, դրամ չունիմ, որ կաշի առնեմ: Զաբիթն ալ ադ մահանա կբռնե, կսկսի Փիլիպոսին ծեծել: Վերջը օտարներու հետ Փիլիպոսը Հալեպ կերթա, կազատվի: Հալեպեն ալ Ամերիկա կերթա, բժիշկ կդառնա, 1926-ին ալ Հայաստան կերթա, կհաստատվի: Իշդե ադ Փիլիպոսին հետ պապայիս կաթ տարինք, կլայեկված ամանով: Ժանդարմ մը էկավ, շաքարը առավ, տարավ: Երկու օր վերջն ալ բոլորին զորանոց տարին: Սպասեցինք զորանոցին դուռը: Վերջապես մեզի ձգեցին ներս մտանք: Աջ-ձախ մըտանք, ներսեն կրակ կուգա երեսիդ: Պապայես երկու օր վերջն ալ պապայիս հորեղբոր տղայիե Շմավոնին հայրն ալ տարեր էին հոն: Չորս-չորս հոգի քենդիրով կապված էին իրար: Երկար տեղ մընն էր: Պապաս և հորեղբայրս իրար քով էին: Ես պապայիս ձեռքը բռնեցի: Անտեղեն ոստիկան մը էկավ, մեզի դուրս շպրտեց: Ալ պապայիս և հորեղբորս չտեսա:

Էրզրումին կողմեն էկան գաղթականներու նոր քարավաններ՝ ոստիկաններն ալ հետերնին: Անոնք յախա-քրավաթ, փայթոններով էկան, հարուստ հայեր էին: Անձրևի պես հայերու քարավանները իրարու ետևե կուգային: Երբ վերջը ռուսը մտավ թուրքերուն պատժեց, աքսորեց, ամմա ի՞նչ օգուտ, վերջը վերջը Էրզրումն ալ թուրքին մնաց:

103 (103).
ՅԱՋՈՂՈՒՆ ԿԱԿՑԱՀԱԿ ՈՍՏՏՈՒԹ
(ՃԿԻ. 1906 Թ., ՆԵՖԻՅԻ)

Հրապարակ տալով այս նամակը՝ մենք ուզում ենք ընթերցողներին ծանոթացնել մի նոր երևույթի հետ, որ ներկայումս սկսել է ցույց տալ իր գոյությունը Ռուսաստանի հարավային նահանգներում, մանավանդ Նեֆիյի շրջանում: Այդ երևույթը կարելի է անվանել «ջաղացքարերի ոսկեդարի վերադարձ»: Ինչպես հայտնի է, ջաղացքարերի արտադրությունը մեր երկրում ամենից շատ զարգացած էր 1880-ական թվականներին, երբ Ռուսաստանի ամեն մի նահանգում կային տասնյակ ջաղացքարերի գործարաններ, որոնք ամեն տարի հազարավոր ջաղացքարեր էին ուղարկում ներքին շուկա և արտասահման: Սակայն 1890-ական թվականներին, երբ ցեմենտե գլանները սկսեցին ամենուրեք դուրս մղել քարե գլանները, ջաղացքարերի արտադրությունը սկսեց անկում ապրել, և շատ գործարաններ ստիպված եղան փակվել: Այժմ, սակայն, ինչպես տեսնում ենք, ջաղացքարերի արտադրությունը նորից սկսում է ծաղկել, և ոչ միայն ներքին շուկայի, այլև արտասահմանյան պատվերների համար: Ահա թե ինչ է գրում մեզ մեր թղթակիցը Նեֆիյից.

«Ներկայումս Նեֆիյի շրջանում ջաղացքարերի արտադրությունը հասել է այնպիսի զարգացման աստիճանի, որ ամեն տարի մոտ 100 հազար ջաղացքարեր են ուղարկվում Ռուսաստանի տարբեր նահանգներ և արտասահման: Ջաղացքարերի արտադրությունը կենտրոնացած է Նեֆիյի շրջանի 15 գյուղերում, որոնցից ամենահարուստը Ղարաբուլաղն է: Ղարաբուլաղի 1200 տնտեսություններից 800-ը զբաղվում է ջաղացքարերի պատրաստությամբ: Մնացած 400 տնտեսությունները ևս անմիջական կամ միջնորդական կապեր ունեն ջաղացքարերի առևտրի հետ: Ղարաբուլաղի գրեթե բոլոր տղամարդիկ ծնվելուց հետո սկսում են սովորել ջաղացքարերի պատրաստության արհեստը, և ամեն մի տղամարդ, որ հասել է 15 տարեկանի, արդեն գիտի, թե ինչպես պետք է ճիշտ կտրել ջաղացքարը: Ղարաբուլաղի ջաղացքարերը հայտնի են իրենց որակով, և նրանց համբավը տարածվել է ամբողջ Ռուսաստանում: Ղարաբուլաղցի վարպետները հրավիրվում են հեռավոր նահանգներ՝ ջաղացքարեր պատրաստելու համար, և նրանք ստիպված են լինում ամիսներով մնալ այդ նահանգներում, մինչև որ ավարտեն պատվերը: Ղարաբուլաղցի վարպետների վարձատրությունը շատ բարձր է. նրանք ստանում են օրական 3-4 ռուբլի, բացի կերակրից և բնակարանից, որ տրամադրում է գործատուն: Ղարաբուլաղցի վարպետների մեծ մասը ունի իր սեփական գործիքները, որոնք նրանք ամեն տարի նորոգում են

ջից, ես էլ՝ ետևից: Վերջապես գյուղ մտանք, ես վազեցի հասա նրան և ասացի. - Ես պրծա՛, մնացին մյուս ընկերներս, որ գտնվում են վագոնում:

Երբ մենք հասանք, նա ասաց բանվորներին, որ ես արաբկիրցի եմ, հայ եմ, փախել եմ թուրքի զինվորությունից: Նրանք էլ ասացին. «Թող նստի վրանի մեջ, մինչև սայլապանները գան»: Ես գնացի նստեցի, բայց մտածում էի, որ ընկերներիս դրությունը վատ կլինի, եթե նրանք էլ չփախչին: Այդ մտածմունքիս մեջ մեկ մըն ալ բանվորները ինձ կանչեցին. - Արի՛, հեռվից մարդ է գալիս, այդ ո՞վ է:

Ես ասացի. - Կարող է իմ ընկերներից են:

Եվ իսկապես որ իմ ընկերներն էին: Այդ ծանոթս գնացել կայներ էր երկաթգծի վագոնների կողքը: Երբ նրանք տեսնում են, որ ես ուշացա, ասում են՝ երևի փախավ: Իջնում են վագոնից և տեսնում են այդ մարդուն: Նա էլ կանչում է իր մոտ և հարցնում՝ որտեղացի՞ եք: Նրանք ասում են, որ արաբկիրցի են: Ծուտով նրանց էլ է բերում իր ճամփով: Այդպիսով բոլորին էլ փախցրեց ու բերավ ինձ մոտ, և մենք շնորհակալություն հայտնեցինք նրան:

Մենք արդեն բոլորս էլ փախել ենք և վրանի մեջ նստած ուրախանում ենք: Այնտեղի բանվորները մեզ ասացին, որ հիմի կուգան սայլապանները և մեզ կտանին: Ես գիտեի, որ մի արաբկիրցի սայլապան կա: Մեր տղաներին ասացի. - Եթե նա իմ ծանոթն է, մեզ կտանի: Եթե նա չէ՝ նորից կտանի, քանի որ արաբկիրցի է: - Այսպես խոսում էինք մենք, իսկ պարավոզը սիգնալ էր տալիս, որ մարդիկ հավաքվեն ու գնան: Վերջապես պարավոզը գնալուց հետո բանվորները կանչեցին մեզ և հարցրին՝ ֆրանսերեն գիտե՞ք: Մենք նրանց ասացինք. - Ո՛չ, ի՞նչ կա:

Նրանք մեզ պատասխանեցին, որ մոտիկ հիվանդանոցից կանչում են, որ հաց տան մեզ: Մենք զարմացած մնացինք. ի՞նչ գիտեն այդ հիվանդանոցում, որ մենք փախել ենք և սոված ենք: Դու մի ասի, թուրք կառավարությունը հայտնել է բոլոր տեղերը, թե չորս հոգի թուրք զինվոր է փախել՝ բռնել և հանձնել մեզ: Բանվորները իրենցից մարդ ուղարկեցին, գնաց բերեց չորս հատ փոքր հաց և տվեց մեզ: Մենք իսկույն կերանք, որովհետև շատ սոված էինք: Հացը ուտելուց հետո իմաց տվեցին մեզ, թե սայլերը գալիս են: Մենք դուրս եկանք, գնացինք ճանապարհի վրա կանգնեցինք: Սայլերը եկան և, ի՞նչ տեսնանք. առաջին սայլի վրա նստած է իմ ծանոթը: Երբ ինձ տեսավ, թռավ սայլից ու եկավ փաթաթվեց իմ վիզը: Նրան ասացի, որ փախել եմ: Նա մի տոպրակ տվեց, թե՝ տարեք, կերեք. ինչ ըլլալը չէինք իմանում: Բաց արինք, տեսանք, որ մեր երեք կոպեկանոց հացերից էր և չի կերանք, քանի որ կուշտ էինք. փաթաթեցինք և դրինք մի կողմ: Չանցավ հինգ րոպե, նորից կանչեցին ինձ դուրս: Տեսնեմ նույն ծանոթ սայլապանը այդ տոպրակից մի քանի հատ էլ տվեց, ես տարա: Հետո ինձ ասաց. - Վե՛ր կաց, սայլին նստիր:

Դա ուրիշ սայլ էր և սայլապանին էլ ասաց. - Որ հանկարծ բռնեն, ինչ գնով լինի, կազատես և ցույց կուտաս մեր տունը, որ գնա:

Ես էլ այդ ժամանակ հարցրի. - Ինչու՞ ես մենակ գնամ, հապա ընկերնե՞րս:

Նա էլ ինձ պատասխանեց. - Դու գնա, որովհետև մանե եմ գալիս, որ բռնեն ու տանեն, ես նրանց կբերեմ:

Ես նստեցի այդ սայլի վրա և գնացի: Երբ հասանք Հալեպ, դարբասի դուռը բացվեց, ոստիկանը դուրս եկավ և հարցրեց, թե որտեղի՞ց ենք գալիս: Սայլապանները ասացին, որ մենք քար ենք տարել ճանապարհ սարքելու և ետ ենք դառնում: Հրամայեց՝ անցե՛ք: Մենք արդեն անցա՛նք Հալեպ քաղաքը: Սայլապանը ցույց տվեց իմ ծանոթի տունը: Ինձ որ տեսան, արդեն ճանաչեցին և սկսեցին պատրաստություն տեսնել: Մե՛կ սպասեցինք, երկու՛ սպասեցինք, տեսանք, մարդ չի գալիս. արդեն մութն ընկել էր: Մտածեցի՝ իջնեմ ցած: Այդ ժամանակ ընկերներս իրենք վեր բարձրացան:

Իմ ծանոթի տանը կերանք, խմեցինք, հետո խընդրեցինք, որ մեզ տանի և ման բերի: Երբ դուրս եկանք, գիշեր էր, բայց լույսերը որ վառում էին, ոնց որ ցերեկ լիներ: Փողոցում հանդիպեցինք երկու հոգու, որոնք ևս փախել էին Արաբկիրից: Նրանք էլ մեզ նման առաջին անգամ էին դուրս եկել: Մենք խնդրեցինք մեր ծանոթին, որ մեզ տանի հեռագրատուն: Գնացինք, հեռագիր տվեցինք, ամեն մեկս առանձին, Արաբկիր, որ մենք ողջ-առողջ գտնվում ենք Հալեպում: Հետո գնացինք իմ բարեկամի մոտ, որ այլևս ինձ թողեց: Այդ տանը ես մնացի ութ օր: Ինձ համար սպիտակեղեն կարեցին, որ չունեի. բոլոր ունեցածներս մնացել էին վագոնի մեջ: Ութ օր հետո ես Հալեպից գնացի Բեյրութ, որ այնտեղից գնամ Ֆրանսիա, բայց Ֆրանսիա չկարողացա գնալ, որովհետև ես չունեի Ֆրանսիայի արտոնությունը: Ես Ֆրանսիայում հորաքրոջ զավակներ ունեի: Նամակ գրեցի, որ ինձ արտոնության թուղթ ուղարկեն, որ գնամ. հա՛յ՝ էսօր, հա՛յ՝ էգուց, մոտ մեկուկես տարի մնացի ես Բեյրութ: Բեյրութում աշխատում էի: Արդեն ես լավ փող ունեի: Ուզում էի, որ գնամ Ֆրանսիա, նոր՝ ընտանիքս բերեմ: Մի օր էլ ես նամակ ստացա Թուրքիայից, թե՝ մենք գնում ենք Հայաստան, այլևս մեզ նամակ չի գրես, մինչև մեզանից նամակ չստանաս: Մենք արդեն ճանապարհին ենք: Ես շվարած մնացի՝ նամակ գրեմ, ու՞մ, նրանք այնտեղ չեն, ի՞նչ անեմ: Իմ գործը խարաբ եղավ: Ես մտածմունքի մեջ ընկա. գուցե՝ գնամ Ֆրանսիա, այնտեղից էլ՝ Հայաստան: Երկու ծախս չլինելու համար, որոշեցի Բեյրութից գնամ Հայաստան և այդ մասին գրեցի Ֆրանսիա՝ հորաքրոջս: Նա էլ պատասխանեց՝ դուն ինչպես որոշել ես, այնպե՛ս էլ արա:

Ես մարդ գտա, որ ինձ պասպորտ հանեն Պոլիսի վրայով գամ Հայաստան: Թուրքը ինձ վիզա չի տվեց, քանի որ փախել էի Թուրքիայից: Նորից մտածմունքի մեջ ընկա: Որոշեցինք, որ Պարսկաստանի վրայով գամ Հայաստան, բայց իմ ունեցած դրամը արդեն չի բավարարեց: Հաշվինք, տեսանք, որ իմ դրամը ինձ կհասցնի Պարսկաստանի Քիրմանշահ քաղաքը, նրանից դենը այլևս չէի կարող գնալ: Ես որոշեցի՝ կմնամ այդ քաղաքում, կաշխատեմ, դրամ կհավաքեմ և հետո կգնամ Թավրիզ: Իմ պասպորտս դուրս եկավ, և մենք մուծեցինք ավտոյի փողը մինչև Քիրմանշահ քաղաքը: Դուրս եկանք: Ավտոյով հասանք Լամ քաղաքը: Այդտեղ մնացինք ութ օր, ութ օրից հետո՝ անապատով գնացինք Բաղդադ քաղաքը: Այնտեղ էլ մնացինք ութ

օր: Այդտեղից դուրս եկանք և գնացինք Քիրմանշահ քաղաքը, ուր ես պետք է մնայի: Հոս չի մոռնամ ասելու, որ երբ Բեյրութից դուրս եկա, ինձ հետ կար ընկեր մը իր ընտանիքով՝ խարբերդցի էր: Նա մինչև Թավրիզ էր փողը մուծել, իսկ ես՝ մինչև Քիրմանշահ: Երբ հասանք Քիրմանշահ քաղաքը, մենք բոլորս էլ գնացինք հյուրանոց: Ընկերս հյուրանոցում իր իրերը դասավորում էր, իսկ ես՝ դուրսը բալկոնում կանգնած մտածում էի, թե ի՞նչ պիտի անեմ. ընկերս պիտի գնա, իսկ ես պիտի մնամ: Այդ մտածմունքի մեջ՝ իմ ետևից խփեցին ուսերիս: Ես շուռ եկա, որ տեսնեմ՝ ո՞վ է: Տեսա մի հայ մարդ: Նա ինձ հարցրեց. - Ու՞ր ես գնալու:

Ես ասացի. - Ո՛չ մի տեղ չեմ երթալու, ես պիտի մնամ այստեղ:

Այդ մարդը ինձ ասաց. - Դուն Հայաստան պիտի երթա՞ս:

Ես ասացի. - Հայաստան պիտի երթամ՝ ոչ հիմա. ես փող չունեմ: Պիտի մնամ այստեղ, փող շահիմ և հետո՝ գնամ:

Այդ մարդը ինձ ասաց. - Դրա համա՞ր ես մտածում: Ես ներքևից նկատեցի, որ շա՛տ ես մտածում, դրա համար եկա քեզ մոտ հարցնելու, ինչքա՞ն դրամ ունես:

- Ինձ մոտ վեց թուման փող կա:

Այդ մարդը ինձ ասաց. - Չե՞ս իմանում, որ այստեղ թուրքերը հայերին գործ չեն տալիս. հայերին մունդառ են համարում, ի՞նչ պիտի անես այստեղ. հայ էլ չիկա, եղած հայերն ալ մի քանի հոգի են:

Այդ ժամանակ իմ գլխին կարծես տաք ջուր լցրին: «Ուրեմն ես կորա», - մտածեցի. ո՛չ փող ունիմ ետ գնալու և ո՛չ փող ունիմ առաջ գնալու:

Այդ մարդը ինձ ասաց. - Արի՛, քեզ մի խորհուրդ տամ, արա: Այստեղ կա մի տաճկահայ, նա ունի իր տրամադրության տակ երեսուն ավտոմեքենա, իր սեփականն են, ամեն օր մեկը Քիրմանշահից գնում է Ղազվին քաղաքը, իսկ մյուսը՝ գալիս է ետ: Դու գնա՝ խնդրիր, որ քեզ դնի մի ավտոմեքենայի վրա և ուղարկի Ղազվին, Ղազվինից քո ունեցած վեց թումանով կարող ես հասնել Թավրիզ: Այնտեղ քեզ հայերը կօգնեն:

Տեսա մարդը վատ խորհուրդ չի տալիս, բայց ո՞նց ասեմ, ո՞նց խնդրեմ:

Այդ մարդը ասաց. - Արի՛, քեզ տանեմ այդ մարդու մոտ:

Մենք իջանք ներքև և գնացինք: Ծանապարհին ասաց. - Ահա՛ դարպասը: Դարպասի դիմաց, ճանապարհի մյուս կողմը կա մի դարբնոց. աշխատողները հայ են, նրանց էլ կասեմ, որ քեզ օգնեն:

Առավոտյան վեր կացա, գնացի, այդ մարդուն խնդրեցի, որ ինձ ուղարկի:

Նա իր մեքենայով ինձ տարավ Ղազվին քաղաքը, այնտեղեն ալ՝ Թավրիզ: Թավրիզեն ալ եկա Հայաստան: Մերոնց գտա: Ամուսնացա, ընտանիք կազմեցի, զավակներ ունեցա:

Հիմա աղջիկս՝ Գրետան, կենսաբանական գիտությունների թեկնածու է...

104 (104).
ՍՐԲՈՒՀԻ ԿԻԿԻՇՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԱՐԱԲԿԻՐ)

Մեզի երբ Դեր Զոր տարին, ես պզտիկ էի, ամմա կհիշեմ. հաց չկար, որ ուտեինք, ջուր չկար, որ խմեինք, քար ու անապատ էր: Քալեցի՛նք-քալեցի՛նք, հազիվ մի գյուղ հասանք: Արաբները ջուր բերին, կաթիլ-կաթիլ ջուր դրին բերանիս, մի-մի գիլա էլ՝ խաղող: Հետո արաբները բոլորին բաժանեցին: Մամայիս տվեցին մի ինվալիդ մարդու: Մայրս վիրավորված էր թևից. թարախը ջուրի պես կերթար, ամմա օր ու գիշեր կաշխատեր աք մարդուն համար, քանի որ քեալեմե էր: Օր մը ադ մարդուն դրացին եկավ, ըսավ. «Ռո ծառան վիրավոր է թևեն»: Մեղքցավ, բերավ թարախի մեջ ղաթրանով ֆիտիլ դրավ: Քանի մը օրեն վերքը աղեկցավ: Ետքը աս դրացին մորս ըսավ. «Մեր քովերը հայ կնիկ մը կա, կուզե՞ս ծանոթացնեմ»:

Մամաս կտեսնա, որ ադ իմ հորաքույրս է: Գիշերով ինձի հետերնին առին ու փախանք, գնացինք Ուրֆա: Անտեղ մամաս և հորաքույրս գործարանում աշխատեցան: Հետո գացինք Մալաթիա, հայկական թաղը իջանք: Արաբկիրի մեր թաղեն մի կնիկ հանդիպանք, ըսավ. - Ախչի՛, քո տղան Էստեղ է, երեսին նշան ունի:

- Հապա մյուսնե՞րը, - ըսավ մայրս:

- Մյուսները մեռա՛ն, - ըսավ:

Ադ տղային մամաս շալակը առավ, եկանք, ամմա ան ալ հիվանդացավ, ճամփին մեռավ: Վեց չոջուխ էինք, միայն ես մնացի:

Մամաս միշտ կերգեր ու կուլար...

105 (105).
ԱՐՓԵՆ ՄԻՔԱՑԵԼԻ ԱՂԱՋԱՆՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԱՐԱԲԿԻՐ)

Ես երեխա էի: Մամաս հիվանդ էր: Երկու մորեղբայր ունեի: Քույրս ամուսնացած էր: Թուրքերը էկան, մամայիս տեղաշորեն հանեցին դուրս: Թաղին ժողովուրդին բոլորին աքսոր տարին, մամայիս երկու եղբայրներուն ալ տարին: Մամաս մնաց գետինը պառկած: Ան հիվանդ է, չի կրնար շարժիլ: Ես ալ մամայիս քովն եմ: Բարի կնիկ մը եկավ, մամայիս գրկեց, տարավ, ես ալ անոնց ետևեն:

Երկու տարի մնացինք թուրքերուն մեջը, մեր սաղ ունեցածները կողոպտեցին: Մեր քաշածը ո՛վ է քաշեր...

106 (106).
ՄՈՒՇԵՂ ՍԱՐԳՍԻ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԱՐԱԲԿԻՐ)

Ծ նած եմ Արաբկիր 1910 -ին: Հորս անունը Սարգիս, մորս՝ Սաթենիկ, ծնյալ Թերյան: Ունեցած ենք երեք զավակ՝ Վարսենիկ, Մուշեղ և Արմենուհի: Հայրս երկու եղբայր ուներ, մեծը՝ Կարապետ, կինը՝ Էլմաս, ունեին չորս զավակ՝ Խաչատուր, Զաբել, Ավետիս, Լևոն: Չորսն ալ ամուսնացած և զավակի տեր: Երկրորդ եղբայրը՝ Մարտիրոս, կինը՝ Մարիցա: Ունեին չորս զավակ՝ Գրիգոր, Արուսյակ, Մարաև Անդրանիկ: Բոլորն ալ ամուսնացած և զավակի տեր:

Հայրս և երկու եղբայրները իրենց հորմեն ստացած էին բնակարաններ և երկաթագործի աշխատանոց, ուր միասին կաշխատեին:

Արաբկիրեն մոտավորապես տասը կիլոմետր հեռավորության Անդի կոչված վայրը թուրք աղա մը, որ իրենց կճաչնար իբր լավ արհեստավոր, պատճառ եղած է, որ մեր երեք ընտանիքները ամբողջությամբ չաքսորվին ու իրենց օգուտը բերեն տեղացիներուն: Ես ալ դպրոց կերթայի և ատեն մըն ալ եկեղեցին դպրությունը ըրած եմ:

Այսպես մնացինք Արաբկիր մինչև 1922: Պատերազմին մեռնողները մեռան, մնացողները մնացին: Ի միջի այլոց մեր երեք ընտանիքներում կյանքը տնտեսապես բարելավված էր, բայց հայերու հանդեպ թշնամությունը կշարունակվեր երթալեն ավելի բիրտորեն: Այնպես որ, 1922-ին որոշեցինք գաղթել: Հինգ-վեց օր քալելով հասանք Հալեպ: Հոն հայրս նպարավաճառի խանութ մը բացավ և այսպիսով մեր պետքերը հոգացվեցան: Երկու տարի հետո անցանք Բեյրութ, ուրկե ընտանեկան պասպորտով մը նավով եկանք Մարսել: Հոն կազմակերպություն մը մեզի դրկեց Դրան Լեմպս գյուղաքաղաքը, հյուսվածքեղենի հաստատության մեջ հայրս գործ գտավ, ես ալ դպրոց գացի: Վեց տարի հոն մնալե վերջ ընտանյոք Լիոն եկանք: Հայրս Բերլիեի մեջ բեռնակառքի գործատեղին աշխատանք գտավ: Քույրերս ամուսնացան: Ես ալ մնացի ծնողքիս հետ մինչև՝ նախ՝ հորս, հետո՝ մորս մահը:

Մորս եղբայրը՝ Թերզյան Կարապետ, կինը՝ Սաթենիկ, երեք զավակները՝ Գրիգոր, Մարտիրոս, Արաքսի, ինչպես նաև մորաքույրս՝ Սիրանուշ, ամուսինը՝ Մարտիրոս, զավակները Կարապետ, Մարիամ, Գրիգոր, 1915-ին տարագրվեցան, բոլորն ալ զոհ դարձան ցեղասպանության:

107 (107).
ՀԱՅԿԱԶ ԱՃԵՄՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1892 Թ., ԽԱՐԲԵՐԴ)

1915 թվականի կոտորածի ժամանակ թուրք կառավարությունը մեր գյուղի բոլոր տղամարդկանց հավաքեց, բոլորին կոտորեց, հարյուր քսանհինգ հոգի տարան կապեցին, Եփրատ գետը նետեցին, սպանեցին: Երկու օր հետո մեզ աքսորեցին: Քշեցին Հալեպ, Էնտեղից՝ Դեր Զոր: Սպանեցին բոլորի՛ն՝ հորաքույրներիս, քեռիներիս, բոլորի՛ն: Մեր գյուղը՝ Աշվանը (Արշամավան) Եփրատի ափին էր: Ես լողացի, անցա գետի մյուս ափը, փախա Դերսիմ, ուր զուտ քյուրդեր էին: Մնացի նրանց մոտ: Դերսիմ մնացի մեկ տարի:

Դերսիմը ապստամբ էր: Թուրքերը չէին կարող Դերսիմ մտնել: Առաջին համաշխարհայինի պատերազմի ժամանակ դերսիմցիներին զորակոչեցին, բայց նրանք չկովեցին. զենքերն ստացան, գնացին իրենց տները: Այնպես որ, նրանք միշտ զինված էին:

Դերսիմ անունը հայ քահանայի՝ Տեր Սիմոնի անունից էր եղել: Նա գաղտնի քրիստոնեություն էր քարոզում բունի հավատափոխ դարձածների մեջ: Նրանք հացի վրա խաչ էին անում, իսկ Ս. Սարգիսին Օրիան էին ասում՝ Խըդըր Սուրբ Սարգիս: Ձեյվա գյուղում քըրդերը շատ լավ պահում էին հայկական եկեղեցին, քանի որ գիտեին, որ դա իրենց նախնիներն են կառուցել: Նրանք խոստովանում էին, որ իրենց պապերը հայ են եղել, բայց ստիպողաբար հավատափոխ են արվել՝ մահմեդականություն ընդունել: Այդ Ս. Սարգիս եկեղեցիի կառավարիչը կին էր: Մի օր եկել էր ժամի հախը հավաքելու, ինձ ասաց. - Արի՛, ես քեզ պահեմ վարդի պես:

Ես գնացի մի քանի օր մնացի, բայց հետո փախա, քանի որ ամեն օր ոստիկան էր գալիս հարցնում. - Քո մոտ փախստական հայ կա՞:

Կինը ըսավ. - Անտառներում լիքը փախստական հայ կա, գնացե՛ք բռնեցեք:

Այդ կինը օգնեց, որ ես անտառներով փախա, քյուրդ առաջնորդների հետ անցա սահմանը՝ Երզնկա, որն արդեն ցարական զորքերը գրավել էին, այդպես ազատվեցի: Հետո անցա Էրզրում, որտեղ Անդրանիկի զինվորը դարձա: Ես Անդրանիկ փաշայի հետ 1917 թվից կռվել եմ: Անդրանիկը Էկավ Էրզրում, մենք իրեն դիմավորեցինք: Մինչև 1920 թ. օգոստոսի վերջը եղել եմ նրա հետ: 1917 թ., երբ Էրզրում եկավ, կռվեց թուրքին դեմ, նահանջեց Սարիղամիշ-Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ՝ ապահովելով արևմտահայերի գաղթը դեպի Արևելյան Հայաստան:

Անդրանիկի բանակը զուտ հայերից էր կազմված՝ թվով չորս հազար հինգ հարյուր հոգի, ուներ թնդանոթ և թե հրացան: Անդրանիկը, ձին նստած, մեզ ասում էր. - Մի՛ լռեք, երգեցե՛ք: - Մենք ալ երգում էինք.

Հերոս մոնչաց, սուլթան դողդղաց,
Վիլհելմի աչքից արտասուք ցողաց,
Սուրդ թշնամու կրծքին շողշողաց՝
Կովի սիրաճար, հերոս Անդրանի՛կ:

Արդեն դաշնակցական կառավարությունն էր իշխում:

Անդրանիկն ասաց. - Թուրքական կառավարությունը մեռած կառավարություն է: Նրա զորքը քիչ է ու հոգնած, ընդամենը երկու հազար զինվոր հազիվ ունենա: Ես չորս հազար ունեմ, երկու հազար ալ դուք կուտաք, միասին կկռվենք, թուրքերուն կվռնդենք մեր երկրից:

Դաշնակցականները չլսեցին Անդրանիկին: Անդրանիկն անոնց «խարդա՛խ» ըսավ և հեռացավ: Արդեն Անդրանիկին չէին սիրում: Անդրանիկը պատրոն էր ուզում, դաշնակցականները հաց էին ղրկում, հաց էր ուզում՝ պատրոն էին ղրկում: Նրանք ուզում էին Անդրանիկին մեջտեղից հանել:

Թուրքերն առաջացան, մենք տեղափոխվեցինք ներկայիս Ղուկասյանի շրջան, Ղարաղաչով իջանք Ջալալօղլի (ներկայիս՝ Ստեփանավան): Այնտեղ Մոսկովսկի որբանոց կար՝ մոտ երեք հազար որբով: Անդրանիկ փաշան հրամայեց որբերին փոխադրել Թիֆլիս: Մենք էլանք գացինք Տեղ գյուղը, հետո՝ Դիլիջան:

Անդրանիկ փաշան ըսավ. - Մենք դաշնակների հետ յոլա չե՛նք կարող գնալ, հարկավոր է հեռանալ:

Որոշեցինք հեռանալ Պարսկաստան, Ջուլֆայի կամուրջով անցանք մինչև Խոյ: Արդեն գաղթականություն կար մեզի հետ, մեր բանակի ետևից մոտ երեսուն հազար հայ էր գալիս: Թուրքերը թնդանոթ կապեցին գաղթական ժողովրդի վրա, ժողովուրդը ճահճները: Եկանք Ջուլֆա, իջանք Ղափան, Գորիս: Մի տարի էնտեղ մնացինք: Էնտեղ եղած ժամանակներս օսմանյան թուրքերը Ալեքսանդրապոլը գրավել էին, Դիլիջանով գնացել էին Բաքու: Թուրքերը Գորիս՝ Անդրանիկի մոտ ղրկեցին մի հայ վարդապետ և երկու թուրք, որոնց հետ թուրքերը տվեցին հրամանի թուղթ. «Գորիսի շոշը՝ խըճուղին, մերն է, դու Գորիսով, Լեռնայինն Ղարաբաղից գնացել ես Ջուլֆա, դու մեր ճանապարհի վրա նստել ես ու խանգարում ես մեզ, անձնատու՛ր եղիր. մենք քեզ չենք սպանի և կամ՝ հեռացի՛ր»:

Անդրանիկ փաշան պատասխանեց. «Վաղը առավոտ ես հարձակվում եմ ձեզ վրա: Ես ո՛չ մի շոշ չեմ տա ձեզ: Դուք էս կողմերը գո՛րծ չունեք»:

Ութ-տասը օր հետո անգլիացին եկավ: Մի անգլիացի կապիտան Անդրանիկ փաշայի բանակին միացավ: Մեր բանակը Գորիսից եկավ Էջմիածին: Երևանի վերևեն փայտե կամուրջով, առանց Երևան մտնելու Էջմիածին գնացինք, զենքերը կաթողիկոսին հանձնեցինք: Անդրանիկը Էջմիածնում մեզ «Ազատական» տվեց, այնտեղ գրված էր՝ Էսքան ժամանակ կռվել է մոտս:

Հետո Անդրանիկը գնաց: Երևան գալու ժամանակ, դաշնակ կառավարությունը հավաքեց Անդրանիկի զորքը, սպանեց երկու հոգու և վիրավորեց շատերին:

Անգլիական զորքը գրավել էր Երևանը: Անդրանիկը ըսավ. - Էդ շան թուլա Դրոյին տվեք ինձ, ես ականջները կտրեմ:

Պրոֆեսոր Թևենեքեյան մը կար, հարցուց ինձի. - Ի՞նչ եղավ:

- Անդրանիկին ուզում էին սպանե՛լ:

- Վա՛յ, շա՛ն որդիներ, հազար տարին մեկ էդպես մարդ կծնվի...

Անդրանիկից հետո դաշնակցականները մեզ աշխատանք չէին տալիս: Մեզ փողոց մաքրել տվին, մեզանից երկուսին սպանեցին: Մեզ չէին սիրում, որովհետև Անդրանիկի զինվոր էինք եղել: Նորից փախանք Ապարան, քարշ եկանք, մինչև բոլշևիկյան բանակը եկավ Ալեքսանդրապոլը գրավեց:

108 (108).
ԵՂՍԱ ԱՆՏՈՆԻ ԽԱՉԱՋԱՆՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ԽԱՐԲԵՐԴ, ՀԱԲՈՒՍԻ Գ.)

Ե ս ծնվել եմ Խարբերդի Խաբուսի գյուղը: Կամուրջի մյուս կողմը Բալուն էր: Մինչև 1922 թ. հոն էի: Մեր գյուղը ծառ ու ծաղիկ շատ կար: Մենք վեց հարյուր տուն էինք. ղասաբ, նաջար, կոշկակար, հողագործ ունեինք. բոլորը հայ էին:

Մեր տունին մեջ ապրում էին պապաս, մամաս, չորս հորեղբայրներս՝ Մուշեղ, Մովսես, Տոնապետ և Պողոս, որը Ադանա զարնվավ, մեռավ: Անոնց կնիկները՝ Էվա, Իսկուհի, Գոհար, Նազիկ. եղբայրներս՝ Անդրանիկ, Նիկողոս, Հովհաննես, Հարություն: Մեծ հայր և մեծ մայր չեմ տեսած: Մորս կողմեն Եղսա մորաքույրս կար, հորաքույրս՝ Զարդուհի, ամոր զավակները իր ծընկին վրա մորթեցին: Բեռիներս ալ շատ էին: Ցոթը տուն էր մեր գերդաստանը: Բոլորն ալ գյուղին մեջ էին ու հոն կապրեին: Մերոնք հողագործ էին, կցանեին ցորեն, բախլա, ոսպ, ուրիշ բաներ: Ատոնք կծախեինք, դրամով օճառ, կտավ կառնեինք:

Մեր գյուղը եկեղեցի, դպրոց կար: Մեր դպրոցը բողոքականներունն էր: Խարբերդում Եփրատ կոլեջը կար, որտեղ Ամերիկա գացած ուսանած ուսուցիչներ դաս կուտային: Ինձ տասներեք տարեկանից նշանել են, որ աշխատող ձեռք ըլլա: Լուսավորչականները շատ էին, բայց մեր բողոքականներուն դպրոցը կուգային, քանի որ խելոք ուսուցիչներ ունեինք: Տղա, աղջիկ միասին էին սովորում: Մամաս թազա հաց կեփեր, կուտար ինձ, կասեր՝ տար վարժուհուն տուր:

Գյուղին մեջ աղբյուր կար, քովը գյոլ կար, մեջը գոմեշները կլողացնեինք, վերջն ալ ադ ջուրը կերթար այգիները կջրեր: Ջրերի մեջ մեծ ձուկեր կային:

Տունին մեջը թոնիր կար, ախոռ կար: Ձմեռը

ցուրտ կըլլար: Բամբակը կհավաքեինք, կմանեինք, կուտերև ալ կհանեինք անասուններուն կուտայինք, կուտեին: Ինձի «ճարպիկ չոջուխ» կըսեին: Ես ասեղնագործություն կընեի: Պապայիս հորեղբոր թոռը միշտ ինձ հետ կտավ կգործեր, բամբակից ու բուրդից կգործեինք: Ցորեն կով ունեինք, մեկ հատ գոմեշ, հավեր ունեինք: Տունին ետևը այգի կար՝ պտուղի ծառերով: Որդ* կպահեինք, մետաքսի գործ կընեինք: Հորեղբայրս Ամերիկա գնաց, մեզի դրամ կղրկեր, որ ապրվենք:

Հյուրիեթ եղավ, իբր թուրքը և հայը ախպար պիտի ըլլային: Ադ ըլլալու՞ բան էր: Սու՛տ էր: Թշնամին բարեկամ կըլլա՞: Սոխին աճուշը կըլլա՞:

1909 թվին Ադանայի չարդը եղավ: Մեր գյուղեն երկու հարյուր տղաք գացած էին Ադանա աշխատելու, դրամ վաստակելու, քեռիս ալ մեջն էր. բոլորը չարդըվան:

1915 թ. թուղթ եկավ պատվելիին, որ աս, աս մարդիկը պետք է գան: Կտանեին, ձեռք ու ոտը կկապեին, իրար կզարնեին, որ մեռնին: Տղամարդկանց տարին՝ մորթեցին: Մեկը փորը բացված ետ եկավ: Հերս ալ տարին, կիսամեռ ետ եկավ: Թուրքը ըսեր է. «Հիմա թուրք պիտի ըլլաք, չէ ևե՝ հայ»: Տերտերը ըսեր է. «Մեղա՛ քեզ». բոլոր քահանաներուն չահել-չահել կոտորել ևե: Հայ բողոքական վարժապետին՝ պր. Գևորգին լեզուն կտրել ևե, քանի որ հայերեն սորվեցուցեր էր, վերջն ալ գլուխը կտրեր ևե:

Դաճա ցորենը չէինք քաղել, մայիսին տղամարդկանց տարին, վերջը կնիկներուն տարին: Ես դաշտ էի գնացել, որ ջուր տանեմ: Կուժը լցրի, միլիցիան եկավ: Հայ կնիկները, որ արտը կաշխատեին, եկան, որ ջուր խմեն, միլիցիան չձգեց: Հորս տարին մորթեցին: Հորեղբորս կնիկը բռնել ևե, ըսել է թուրքին մեկը՝ ինձի առ: Ան ալ ըսեր է. «Ջիուն տեղը, էշ չեմ կապի»: 1915 թ. մայիս ամսին, երեք օրվա ամուսնացած էի: Ինձի Մազրա հարս էին տարած: Մարդուս բռնեցին տարին: Ես աղբյուրի գլուխը նստա, սկսա լալ: Թուրքերը մտան մեր տները, սկսան թալանել: Բողոքականներուն չէին սպանում: Մարդս թուրք տղայի մը հետ խաբար ղրկեց, որ իրեն թուղթ մը ղրկեմ, որ մենք բողոքական ենք: Ադ տեսակ թուղթ չկրցա ղրկել՝ արյունը գնաց սելի պես: Ամուսինիս քրոջը վիզը կտրեցին հավի պես: Կեսուրիս ընտանիքեն մարդ չմնաց, բոլորը մեռան գնացին: Հայերուն տարին մորթեցին: Ինձի Աստված է պահել: Երբ բոլորին տարին, ես աղբյուրին քովն էի, տեսա: Շատ հայեր փախել էին անտառներ՝ խոտերուն, ցորենի արտերուն մեջն էին թաքնըվել: Ես ալ փախա: Ես իմ անձը ազատել կուզեի: Մայրը մանուկը ուրացավ:

Մենք ցորենի արտի մեջ էինք, հարյուր հոգիի չափ էինք, երեխաներ ալ կային: Սոված ենք: Ցորենը քարով կտրորեինք, կուտեինք: Ես կորցրեցի բոլորին: Մամաս, քույրս, եղբայրս, հորեղբորս չորս զավակները, բոլորը գնացին, կորան, սոված՝ մեռան, մորթված՝ մեռան: Միայն ես և իմ հորեղբոր աղջիկը ազատվանք, ան ալ ճամփին մեռավ: Հիմա յոթ տուն ընտանիքեն միայն ես եմ մնացած:

Ցուրտը եկավ, թուրքի տուները մնացի: Վերջը ամերիկացին եկավ: Ես լսեցի, բոբիկ, չբլախ վազեցի գացի, ըսի տնօրենին. «Ես եմ, Եղսան եմ»: Դուռը բացին: Ջուր դրին. ոտքերս ցուրտը տարել էր: Հարցրին. «Ոջիլ չե՞ս բերած»:

1917 թ. ինձ ընդունեցին որբանոց: Պարոն Սոկրատը ինձ ընդունեց: Սկսա կտավ գործել: Դրամ շահեցա: Երեք տարի որբանոցը մնացի: Կհիշեմ Վարդումի վարժուհին: Տնօրենը միստր Պիքսն էր: Ան մեր նման հայերուն հայրն էր: Միշտ կըսեր. «Խելոք եղեք, համեստ եղեք, թուրք տեսնաք՝ դուռը գոցեք, ներս մտեք»: Դպրոցին մեջ փոքրերը միասին էին, մեծերը՝ առանձին: Ինձի ուզեցին թուրքերը փախցնել, բայց ազատեցին: Որբանոցը հացերնիս, ճաշերնիս բոլ էր: Հերթեշ իրեն գործը կըներ: Նոր տարիին ձվերներ կուտային, խրատներ կուտային: Հինգ ոսկի ունեի, գացի Հալեպ: Ինչքան ապրել եմ, էնքան տանջվել եմ:

Հետո 1936-ին եկանք Հայաստան: Իմ աչքի արցունքը արյուն դարձավ: Հացի գրքույկ չտվին: 1937-ին մարդս ոչխարը մորթել է, միսը ծախել է ըսելով՝ մատնեցին, մարդուս բանտարկեցին: Ես հաց ու պապիրոս կտանեի: Վերջը լսեցի, որ Սիբիրը սպաններ են: Այնքան խեղճ էի, որ կմուրայի: Ձանի դուռ կաշխատեի: Կտավ կգործեի: Երկու երեխաներս կուգային գործարան, քանի որ տանը պահող չունեի: Միայն թուրքը չէ, հայն էլ է տանջել: Աղջիկներս ամուսնացան, վեց թոռ ունեմ:

109 (109).
ՀԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԻ ՀՈԼՈԲԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ԽԱՐԲԵՐԴ, ՁԱՐՍԱՆՋԱՔ, ԲԵՐՐԻ)

Մեր գավառի վաթսունչորս գյուղերի հայությունը և մեր կենտրոն Բերրի քաղաքը իրենց բարգավաճ վիճակում էին, երբ վրա հասավ կոտորածը: Մեր Բերրի քաղաքի բնակչության մեծ մասը հայեր էին՝ մոտ յոթ հարյուր տնից բաղկացած մի քաղաք էր, որից միայն հարյուրը թուրքի տներ էին, այն էլ՝ եկվորներ էին, ոչ բնիկներ: Քաղաքը բաղկացած էր վեց թաղից՝ Կալերի թաղ, Ծոնաղբյուրի թաղ, Կամարաղբյուրի թաղ, Թուրքական թաղ և Բարտախանայի թաղ, որը բրուտների արհեստանոցների թաղն էր: Նրանք արտադրանքը ամբողջ գավառին բավարարելուց բացի, արտահանում էին քաղաքից դուրս՝ մինչև Մալաթիա, Արաբկիր, որոնք Բերրի գետի հոսանքով լաստանավերով փոխադրում էին: Լաստանավերը ոչխարի տիկից փչված տաս-քսան հատ իրար կպած, փայտով իրար միացած էին, որոնց վարորդները կոչվում էին քյալաքջիներ: Բերրին արհեստավորների մի քաղաք էր, որտեղ գործում էին հարյուրից ավելի

* Իմա՝ շերամ:

մանուֆակտուրային և արհեստավորների խանութներ և միայն մեկ հատ թուրքի խանութ կար, որը սափրիչ էր: Այդ սափրիչի խանութը ներսում ուներ մի վերնահարկ, որը հյուրանոցի դեր էր կատարում դրսից եկած քրդերի և թուրքերի համար:

Մեր ընտանիքը բաղկացած էր հինգ հոգուց՝ հայրս, մայրս, ես տասներեք տարեկան, եղբայրս՝ Ասատուրը յոթ տարեկան, քույրս Լուսինեն՝ չորս տարեկան: Ես ուսում եմ ստացել իմ ծննդավայրի դպրոցում, որը մտնում էր Միացյալ ընկերության համակարգի մեջ: Հայրս արհեստով դարբին էր: Նա գրագետ էր: Մեր ընտանիքը լուսավորչական էր: Հայրս շատ բծախնդիր էր եկեղեցու արարողություններին, և եթե որևէ մեկը սխալ կատարեր, տեղն ու տեղը կուղղեր: Ինքը ևս միշտ եկեղեցու դասում էր կանգնում: Հայրս 1895 թ. որբացած մանուկների որբանոցն էր կազմակերպել և ինքը հոգաբարձուն էր: Այդ կապակցությամբ քաղաքի Առաջնորդի՝ Կորյուն վարդապետի հետ սերտ կապի մեջ էր: Կորյուն վարդապետը ազգասեր, շինարար, քաջակորով, հանդուգն մի անձնավորություն է եղել: Նա մըտահոգված է եղել, թե Չարսանջաքի քաանչորս դերեբեյիներին* ինչպես զսպի, որ հայերին չվնասեն: Եվ նա իր դիվանագիտական քայլն է կատարել: Սուլթան Համիդի տղաներից մեկի մահվան առիթով ցավակցական նամակ է գրել և շնորհակալական հեռագիր է ստացել: Տեղի թուրքերը գալիս են Կորյուն վարդապետին խնդրում, որ նա ցույց տա այդ հեռագիրը: Եվ դրա միջոցով զսպում է նրանց: Բացի այդ, նա շքանշան է ստացել սուլթան Համիդից:

Մի անգամ, երբ նա գավառի կառավարիչի՝ ղայմաղամի պաշտոնատեղին էր գնում, ղայմաղամը վեր է կենում և թուրքական ձեռնասեղմումով ողջունում է այնտեղ նստած մի ուրիշ թուրքի՝ Մեհմեդ բեկին, որը նույնիսկ զորք ուներ: Բայց նա ոտքի չի կանգնում, Կորյուն վարդապետը այդ համարում է վիրավորանք ոչ միայն իր, այլև սուլթան Համիդի շքանշանի նկատմամբ ու փիլոնի տակից ցույց է տալիս շքանշանը: Թուրք բեկը զգում է իր սխալը և ներողություն է խնդրում: Այս միջոցներով Կորյուն վարդապետը բավական զսպում է Չարսանջաքի դերեբեյիներին, և հայերի նկատմամբ բռնությունները որոշ չափով մեղմվում են:

Չարսանջաքը վաթսունչորս գյուղերից էր բաղկացած, մեծ մասը հայեր էին: Ամեն գյուղում բեկի պարտականությունը թուրք ծառաներ կային: Հարաբերությունները ճորտատիրական հիմունքների վրա էին: Ճորտ մարաբաները աշխատում էին հողի վրա, և թուրք բեկը բերքի կեսից ավելին վերցնում էր իրեն: Բացի այդ, շաբաթը մեկ-երկու օր նրա տան կիները պիտի գնային բեկի պալատը՝ որոշ ծառայություններ կատարելու: Իսկ կրոնական առումով հայը միշտ «գյավուր» էր, որը ստորացուցիչ էր հայերիս համար:

Հայրս իր արհեստի շնորհիվ բարեկեցիկ ընտանեկան կյանք էր ստեղծել: Ունեինք երկու կով, մի ձի: Հայրս կովի տված կաթնեղենը գործածում էր մեր տան կարիքների համար, իսկ հաճախ էլ մայրս հասցնում էր կաթ, մածուն նաև աղքատ ընտանիքներին:

* Իմա՝ բռնավոր:

Հայրս իր դարբնի արհեստով քրտնաջան, քրտինքը ճակատից քամած, օրն ի բուն աշխատում էր գարնանը և ամռանը: Աշնանը և ձմռանը փակվում էին ճանապարհները, և մարդիկ գյուղերից չէին կարող գալ քաղաք՝ իրենց գործիքները վերանորոգելու: Հայրս իր աշխատանքի վաստակը կանխիկ չէր ստանում, այլ ապառիկ էր կատարում: Մատյանի մեջ գրանցում էր, թե ինչ գործիք է պատրաստել որ գյուղացու համար: Բոլոր թուրք գյուղացիները անգրագետ էին և վստահում էին հորս: Հայրս աշնանը գնում էր գյուղերը և այդ մատյանի մեջ գրանցվածների դիմաց բնամթերք էր ստանում և հավաքում: Թողնում էր քրդերի և թուրքերի տների մոտ, որոնք պարտավորվում էին իրենց էշերով ոսպը, ցորենը, գարին փոխադրել քաղաք: Այսպիսով, հորս դրամական եկամուտը շատ չնչին էր իր աշխատանքի դիմաց: Մեր տան մեջ ունեինք մի ամբար՝ կրակատան մոտ: Ամբողջը ամբարում էինք այնտեղ: Գարնան ամիսներին հայրս վաճառում էր թուրք և քյուրդ հաճախորդներին, որոնք կարիքը ունեին: Ուրեմն, ինչպես տեսնում ենք, փակ նատուրալ տնտեսությունն էր իշխում մեզ մոտ: Հայրս վերջին անգամ վերադառնում էր՝ մի քանի ոչխար դավուրմացու հետը բերելով, որոնք ձմեռվա ամիսներին օգտագործում էինք: Հացը ևս թրխում էինք ու պահում: Հայության 90 տոկոսը խաղողի և պտղատու այգիներ ուներ: Մեր գերդաստանը չորս եղբայրներ էին՝ մեկը Պետրոսը, Ամերիկայում էր, Կիրակոսը 1911 թ. մահացավ, մյուսը՝ Գրիգորը 1890-ական թվականների վերջերին բողոքական դարձավ: Նա այնքան գրագետ էր, որ բողոքական պատվելիին հաճախ փոխարինում էր: Հյուրիեթից հետո մի հրովարտակ ելավ, որ հայաշատ քաղաքներում քաղաքապետ պիտի ընտրվի հայերից: Գրիգոր հորեղբայրս 1911-1912 թվերին ընտրվեց քաղաքապետ՝ բելեդիե-ռեսի: Ահա այսպիսի հեղինակություն ուներ մեր գերդաստանը:

Աշնան ամիսներին այգեգործությունն սկսվում էր: Ամռանը թութը չորացնում էին, որը հիմնական ուտելիքն էր ձմեռվա համար: Հայերը խաղողի հյութից պատրաստում էին ընկույզի սուջուխ, որը փաթաթվում էր բաստեղի մեջ, տեղավորում էին կճուճի մեջ, որ նոր տարվա օրը բացեն: Մեր գերդաստանի կյանքը այսպիսին էր, որը նման էր բոլոր հայ ընտանիքների կենցաղին: Ես չեմ հիշում, որ որևէ հայ հայհոյանք արտասաներ, այնքան էին իրար նկատմամբ հարգալից: Հայրս ամենաբարկացած պահին կշտամբում էր. «Ծո՛, վրադ երկինք չի՞ գոռգոռացել», այսինքն՝ մարդկային կյանքի մեջ չե՞ս մտել:

Մինչ եղեռնը համառոտակի պատմելուց հետո պիտի անցնեմ հայասպանությանը: Գարնանային մի օր էր: Մեր Բերրիի ցորենի արտերը արդեն հասել էին, և ես մեր տան այվանից՝ պատշգամբից, դիտում էի ցորենի ծփացող ալիքները և լսում էի գետի շառաչը: Այվանում մայրս իր դրացի տիկ. Վարդուհու հետ ցորեն էր մաղում, փալասների վրա կիտված ցորենը, որ ջրաղաց ուղարկեն, ինչպես ամեն տարի: Դեպի գետահունվիտը թեքվելիս նկատեցի, որ մի տան կտուրը բարձրացած մի թուրք ոստիկան, մի ժանդարմ և մի մարդ՝ քաղաքացու շորերով: Այդ երեքին ես նկատեցի: Նը-

րանք ձեռնունայն դուրս էին **եկել**, երևի **տանը** մարդ չկար: Հայրս այդ պահին **խանութից** տուն **հասավ**, և այդ երեքը եկան, մտան մեր **տունը: Արդեն մի** քանի օր առաջ թուրք կառավարության ոստիկանները պարապմունքի ժամին **ներխուժել էին** Առաջնորդարանը և դպրոցը՝ զենքեր **և գրականություն հայտ**նաբերելու նպատակով: Այդ տոկում էր առաջացրել հայ բնակչության մեջ, որը մղձավանջային **ապրում**ների մեջ էր գտնվում: Օրը ցերեկով, **փողոցում, մտնում էին** հայերի տները, դուրս էին բերում հայ տղամարդկանց և քաշկըռտելով սկսում էին ծեծել, սապոգ**ներով** խփել: Ես ականատես եմ եղել Երզնկյանի ծեծվելուն, Թերզյան Կարապետին ինչպես **իր**ենց տան **կտ**ուրին գցել էին գետին և զենք էին պահանջ**ում: Մ**ոտ քսան-քսանհինգ երևելի հայեր արդեն **բանտարկված** էին: Նրանց պահանջը սովորական **ո**րսորդական հրացանը չէր: Այդ երեք անձնավորությունները, **որ** եկան **կոխկռտ**եցին ցորենը, խուզարկեցի**ն** մեր սենյակը, **պատ**ից կախված որսորդական հրացանը տեսան, հայրիկիցս պահանջում էին **ռուսական** տասնոց, **մաուզեր** և այլն: Այդ եղյակի մեջ էր նաև **քաղաքի** դատախազը, **որը** լսել էի, որ առնավուտ՝ ալբանացի **մուսուլման էր**, պաշտոնի տեր: Նրանք նույնպես **դաժան էին, ինչ**պես թուրք ոստիկանները: Հայրիկիցս բացասական պատասխան ստանալով, մտրակով հարվածում **էին**, վերջապես քաշկռտելով հորս տարան բանտ: **Այդ դաժանությունները** կատարելու պահին մայրս ասաց. «դահիճնե՛ր»: Այդ բառի համար մորս դատարկ **տան** մեջ արգելակեցին: Մենք երեքս՝ ես, քույրս և եղբայրս մնացինք մենակ: Ես վազեցի մորս ետևից, դռան ճեղքից նայեցի, մայրս ասաց. «Տղա՛ս, գնացեք Գրիգոր հորեղբոր տունը»:

Նրա կինը՝ Եվան, շատ խնամքով ու գուրգուրանքով պահեց մեզ և հաջորդ օրը առավոտյան թաշկինակի մեջ մի կտոր հաց ու պանիր, կարագ, սեր փաթաթեց, որ տանեմ բանտ՝ հայրիկիս: Մենք տեղյակ էինք, թե ինչ տանջալի վիճակի մեջ է հայրս բանտում: Ես ուտելիքը տարա: Բանտի լուսամուտի առաջ կանգնած՝ տեսա, որ դատարկ էր բանտը: Դա հայ մարդու սրճարան էր, զավթել էին և դարձրել կալանավայր: Ընդամենը հարյուր հոգի հազիվ կաուներ, այնինչ երեքչորս հարյուր հոգի էին լցվել, որոնք շնչահեղձ էին լինում: Նրանցից ոմանց կանայք բողոքեցին գավառապետին, որ փոխարինել էր նախորդին, որը իթթիհատական դահիճներից էր, Աթաև բեկը քմծիծաղով ասում է. «Մի՛ անհանգստացեք, շուտով ձեր բանտարկյալներին կտեղափոխենք», - այսինքն՝ կտեղափոխեն սպանդանոց:

Երբ ես մոտեցա լուսամուտի երկաթե ճաղերին, տեսա հայրիկիս և մեկին, որին ֆեդայի Ավետ էին ասում: Նա մոտ տասնյոթ տարի Գևորգ Չավուշի խմբում է եղել: Հյուրիեթից հետո, որպես ազատություն, հավասարություն հռչակած երկիր, ֆեդայիները դուրս էին եկել բանտերից, բայց նա խորտակված վիճակում ընկած էր բանտի չոր հատակին, ինչպես իմ հայրը: Այդ երկու հոգիները ետ էին մնացել սպանդանոցից, քանի որ քայլել չեն կարողացել: Իսկ երեք-չորս հարյուր հոգուն, զույգ-զույգ թևերից կապած տարել են գետի ափը: Այդ սպանդանոցից ազատվում է միայն Խոսրով Նալբանդյանը, տասնութ տարեկան մի տղա, որը մեր տան մոտ էր ապրում: Հոր հետ կապված վիճակում է եղել, երբ ազատարարը մոտեցել է: Ջարդը կատարվել է շատ դաժան կերպով, Խոսրովի հայրը սպանված է եղել, երբ ազատարարը եղել է հայկական Արմիկ գյուղի Մեհմեդ բեկը, որը իր ապարանքում ուներ տասնյակ ջորիներ, և դրանց պահելու համար մարդ էր պետք: Եվ մարդ է ուղարկում, որ մեկին բերեն: Դա լինում է Խոսրովը: Նրա աղջկա կնքահայրն եմ եղել ես: Այդ սպանդի մեջ եղել են մեր գերդաստանից մոտ տասը հոգի, նաև Ամերիկայից հյուր եկած Հոլոփիկյան Արամը, որը Մարտիրոս հորեղբոր տանը հյուր է եկել և, չնայած ամերիկահպատակ էր, դաժանորեն հոշոտել են: Նա սիրահարված էր բողոքական դպրոցի վարժուհի Ռոզային և դեռ մի շաբաթվա ամուսնացած էր՝ հոշոտեցին:

Հայրս այդ ուտելիքը ընդունելուց ցածրիկ ասաց. «Տղա՛ս, ինձ մի ոչխարի թարմ մորթի հասցրու, որ ես կոնակիս քաշեմ, քանի որ այնքան եմ ծեծել, որ սև արյունակալված են վերքերս»: Ես հայրիկիս այդ խընդրանքը կատարեցի: Կիրակի օրը հորեղբորս տունը վերադարձա: Դեռ այդ օրերին Գրիգոր հորեղբայրս, որպես քաղաքագլուխ, դեռ պաշտոնի գլուխ էր: Նրան խնայել էին: Միջնորդեց, որը առանց կաշառքի չէր լինի, հորս բերինք տուն, ազատվեց: Հորս դարբին ընկերներից Լևոն Խոչիկյանը շալակով նրան հասցրեց տուն, քանի որ չէր կարող քայլել:

Մ'այրս էլ արգելափակումից տուն եկավ: Հայրս խոշտանգված ընկած էր փորի վրա: Թիկունքի վրա չէր կարող պառկել: Հայրս պատմեց, թե մի գիշերվա մեջ ի՛նչ փորձանքներ են բերել թուրք դահիճները: Ահմեդ օնբաշին, դաժան դեմքով մի տասնապետ, բանտախցից հորս բերում է խոշտանգելու խուցը, պառկեցնում է փորի վրա, երկու կողմում կանգնած ոստիկանները կաղնու մահակներով սպասում են հրամանի: Հորիցս դարձյալ պահանջում են մասուզեր, մոսին, տասնոց. - Տու՛ր կամ՝ պառկի՛ր: Սկսե՛ք հարվածել. - հրամայում է օնբաշին:

Քառասուն հարված տալուց հետո ննջեցնում են: Ահմեդ օնբաշին ասում է. - Հը՞, չե՞ս ուզում բերել զենքերդ:

Ըստ հորս պատմածի, Ահմեդ օնբաշին իր կողքը ննջեցրել էր եկեղեցու և դպրոցի հայ երգեցողության ուսուցչին՝ Արմենակ Պետրոսյանին, այսինքն՝ հետո հերթը նրանն էր լինելու:

- Մալիմ էֆենդի (պր. ուսուցիչ) զենք չունեմ:

Նորից են քառասուն հարված հասցնում, նորից է հարցնում: Պատասխանը՝ նույնը: Երրորդ անգամ պառկեցնելուց առաջ ասում է. «Ասա ո՞վ ունի զենք»:

Հայրս մատնիչ չէր կարող լինել: Եթե գիտենար, չէր ասի: Հարյուր քսան հարվածից կիսամեռ վիճակում քարշ են տալիս կալանատունը: Ահա հայրիկիս պատմածը:

Հայրիկիս ծանոթ թուրք երկու աղձինք կարողացան օգնել որոշ չափով: Հայրս դեռևս սարսափելի ցավերի մեջ, թարախակալված վերքերի մեջ, հորեղբորս

կինը՝ Եվան, խնամում, մաքրում, փոխում էր վիրավորի վիրակապը, քանի որ մորս սիրտը չէր դիմանում: Ահա այդ վիճակի մեջ մի օր երեկոյան մութին Ահմեդ էֆենդին, որի տունը հորս խանութի մոտն էր, եկավ մեր տունը:

Ղայմաղամը զինել էր տեղի թուրքերին, նաև համիդիեներին, որոնք քաղաքացիական շորերով քըրդեր էին. գազանատիպ մարդիկ շրջապատել էին քաղաքը: Ոչ ոք չէր կարող փախչել, և խղճամիտ թուրքերը դժվարանում էին մոտենալ իրենց ծանոթ հայերի տներին:

Սարգիս Չախմախչյան զինագործը փորձ էր արել փախչելու: Ահմեդ էֆենդին եկավ օգնության ձեռք մեկնելու: Հայրս փորի վրա պառկած վիճակում պատմեց իր գիշերվա կրած տանջանքները: Ահմեդ էֆենդին ի սրտե էր, թե ինչ՝ չգիտեմ, ասաց. - Հեղինակի տու՛նը քանդվի, այս կոտորածը ստեղծողի տու՛նը քանդվի, քանի որ ոչ մի բեղավոր չի կարող ազատվել:

Հայրս խնդրեց. - Դոնե ընտանիքս փրկեք:

Այդ խոսակցությանը ներկա էինք ես ու եղբայրս: Նա հորս ազատել չկարողանալով՝ ասաց. - Ձեր ընտանիքից կաշխատեմ փրկել կնոջդ և զավակներիդ, բայց փրկելու միակ միջոցը այն պիտի լինի, որ երբ տեղահանությունը սկսվի, քեզ ծանոթ քիրվան՝ Ալի ջորեպանը, իր ջորիով քարավանին ուղեկցի, և նա հանձն առնի հարմար մի վայրում քարավանից փախցնի և մի թուրքի գյուղում պահի: Ես այդ ժամանակ իմ տղա Ոյուքրիի միջոցով կազատեմ: Քանի որ Ոյուքրին բանակում է ծառայում, նրան բերել կտամ բանակից, որ ձեզ ազատի:

Հայրս համաձայնվեց և վարձահատույց լինելու համար ասաց. - Իմ ոսկե ժամացույցը բեր տուր այս մտերիմ Ահմեդ էֆենդիին:

Հայրս նվիրեց ոսկե ժամացույցը: Բացի այդ, մայրս ուներ ոսկյա վզնոց, ոսկե գրավիցա ոսկեդրամ, այդ էլ տվեցին նրա կնոջը տանելու: Այդ բարեկամ թուրքը նվերը ընդունելով գնաց: Նա պատմեց, որ իբր կովն է փնտրում, հազիվ դժվարությամբ եկել է մեր տունը: Անցավ մի քանի օր, հայրս իր աշակերտ Գևորգին ասաց. - Քիրվա Ալիին կանչի մեր տունը, - նրան հայրս շատ օգնել էր:

Նա ուներ մի ձի, հայրս ասաց. - Իմ ձին և երկու կովերը տարեք ձեր տունը՝ պայմանով, որ մեզ ազատես:

Տասը-տասնհինգ օր հետո մունետիկը հայտարարեց, թե որ օրը պետք է դուրս գա այսինչ թաղի հայությունը:

Դահիճապետ Էթեմ բեյը խորամանկություն էր մտածել, ասելով. «Ամերիկա գնացողները թող պատրաստվեն», իբր թե հայրս եղբայր ուներ Ամերիկայում:

Հայրս միացավ Գրիգոր հորեղբորս ընտանիքին: Մոտ ութ հարյուր հոգի՝ ծերեր, երեխաներ, կանայք: Քարավանին ուղեկցում էին քրդեր իրենց էշերով՝ անկար մարդկանց իրենց էշերի վրա տանելու համար: Մոտ հիսուն-վաթսուն զաբթիաներ՝ Ահմեդ աղայի ղեկավարությամբ, քարավանը շարժեցին դեպի արևմուտք: Ճանապարհը անցնում էր Բերրիի այգիների արահետով անցնող ճանապարհով և մենք մոտենում էինք մեր այգիներին: Նայելով մեր թթենիներին և որթատունկերին, սրտաճմլիկ արցունքներ թափելով հեռացանք մեր ծննդավայրի տնից-տեղից:

Գետը անցնելուց հետո, երբ բարձրանում էինք սարը, լացի ձայն լսվեց: Հորեղբորս երեք աղջիկներին՝ Վարսենիկին, Եվգինեին և Վերժինեին փախցրին:

Բոլորիս տեղավորեցին ոչխարների փարախի մեջ՝ այնտեղ գիշերելու: Երեկոյան կրակոցի ձայներ լսվեցին, ժողովուրդը աճ ու դողի մատնվեց: Այդ ժամանակ քարավանի ղեկավարը՝ Ահմեդ օնբաշին ասաց. - Մի՛ վախեցեք, դրանք քրդեր են, որոնք ուզում էին ձեզ թալանել՝ մեր զաբթիաները ձեզ կպաշտպանեն:

Այնինչ ինքը սկսեց քաղաքավարի մեզ բոլորիս մերկացնել և թալանել: Խուրջինի մեջ լցրեց ոսկեղեններն ու զարդերը ու շարժվեց: Մի քանի կիլոմետր գնալով, մի քանի կանանց ևս փախցրին: Մի քանի ժամ հետո գնացինք դեպի արևելք՝ Խազանդարայի ձորով հասանք Վերին Խազանդարան: Այդ ժամանակ քիրվա Ալին մեզ տարավ մի քրդի տուն, ուր մնացինք մի քանի օր: Այդ քրդուհու տանը երեկոյան մի ձիավոր եկավ, որը քարավանի ուղեկցող զաբթիաներից էր, որը լսել էր Ալիից, եկել էր քույրիկիս տանելու:

Տանտերը կանչեց մորս, ասաց. «Պիտի տանի ձեր փոքրիկ աղջիկին»:

Նա բռնի քաշեց քրոջս, նետեց ձիու վրա ու տարավ, ասելով. -Տանելու եմ իմ տղային ապագա կին դարձնեմ:

Մի քանի օր հետո քիրվա Ալին եկավ մորս տարավ Բերրի: Մենք մնացինք այդ տանը: Նա մեզ տարավ Բալու գետը: Արածանիի գետափին, երկար ձողերով հայ սպանվածների դիակներ էին քշում, և Արածիհին քշում, տանում էր հայոց դիակները:

Վերադարձանք այդ քրդուհու տունը: Հաջորդ օրը հասանք Վերին Խազանդարա: Բարեբախտաբար, նույն օրը Ահմեդ էֆենդիի տղան՝ Ոյուքրին, եկավ ձիով: Ինձ ու իմ եղբորը տարավ Բերրի: Մայրս եկավ, մեզ գտավ: Լա՛ց, կո՛ծ: Այդ պատմել, գրել չի՛ լինի ո՛չ գրչով, ո՛չ մելանով:

Ահմեդ էֆենդին ասաց. - Մեծ տղայիդ՝ Հակոբին, այսինքն՝ ինձ, ուղարկիր Ոյուքրիի մոտ, որ ծառայի բանակում: Փոքր տղան կմնա քեզ հետ:

Ես գնացի: Ոյուքրի էֆենդիի կինը հայ էր՝ Մաքրուհի անունով, որը Մաքրուկա էր դարձել: Մի քանի օրվա մեջ բոլոր տները դատարկված էին: Ես իմացա, որ նորից է Բերրիից քարավան եկել, մայրս և եղբայրս էլ մեջը: Գնում են մինչև Զմշկածագ՝ ահավոր դժվարություններով: Երեք-չորս ժամ հետու Բաշքալա գյուղի երեսուն հայ տղամարդկանց սպանում են, մեկը փախչում է: Գնում են Բերդակ: Բերդակում հարյուր հիսուն երեխաներ տանում, գետն են թափում: Քարավանի՝ Զմշկածագի ճանապարհին, թուրք ժանդարմները ընկնողներին խշտիկներով սպանում են չորս հարյուր հոգու, ողջ են մնում հազիվ երեսուն հոգի: Թուրք ժանդարմը կանգնեցնում է մի պառավ կնոջ, հարսին և երեխային մի գնդակով սպանում է և ուրախանում իր քաջագործության վրա: Ճանապարհին եղբորս փախ-

ցընում են քրդերը: Մայրս գնում է, քրդից խնդրում իր տղային: Նա չի տալիս: Մայրս փող է տալիս նրան, որ լավ պահի իր զավակին: Ձմշկածաղ են հասնում հագիվ քսան ոգի: Մայրս շատ է տանջվում: Նա խնդրում է բարձրաստիճան խըդըրի կնոջը, որ քյուրդը իր մոտ եղած տղային վերադարձնի: Վերադարձնում են մորս: Մայրս, եղբայրս գնում են Խարբերդ: Ես անտեղյակ եմ: Այս բոլորը ինձ հետո են պատմել:

Դերսիմի քրդերը հարձակվեցին մեզ վրա: Թուրքերը փախան: Ես մնացի քրդերի մեջ երեք ամիս: Հետո անցա Դերսիմ: Դժվար էր ինձ, քանի որ անգրագետ ժողովուրդ էր: Ուստի ես որոշեցի վերադառնալ Սեիդի մոտ: Նամակ ստացա Ցյուքրի էֆենդիից, որ մայրս Մեծկերտում է: Ես գնացի Մեծկերտ: Թուրքական բանակը հակահարձակում գործեց, ես անցա այդ վայրից: Ցյուքրին ինձ տարավ Բերրի, որն արդեն ավերակ էր, իմ սիրու՛ն ծննդավայրը: Ես նամակ ստացա Խարբերդից՝ մորիցս: Ես փախա, մի թուրք ծանոթ մարդու հետ գնացի Խարբերդ, մորս գտա:

1918 թ. զինադադարից հետո ես ստացա մորս տները և ապրեցի մինչև 1922 թիվը: Ես կոշկակարություն արեցի և ապրեցի, բայց կար վախը հայերի մեջ: Ես էլ վախից փախուստի դիմեցի՝ բոլորովին այլ ճանապարհով, մի ուրֆացի հայ Հակոբի միջոցով հասա Ուրֆա: Գիշերը քայլում էինք, ցերեկը ցորենի արտի մեջ թաքնվում: Տասներկու կիլոմետր մնացած սահմանը անցանք: Ես և նա սիրիական տերիտորիան հասանք՝ Հալեպ: Մեկ ամսից մայրս և եղբայրս եկան՝ Խարբերդից գաղթող քարավանի հետ: Հալեպում ապրեցինք չորս տարի: Այնտեղ ես իմացա, թե ինչ է եղել աշխարհում. Լենինն, հեղափոխություն և այլն: Ահա այդ տարիներին իմանալով, որ Խորհրդային Հայաստան գոյություն ունի, որոշ մարդկանց՝ արաբկիրցիներ էին դրանք, հետ երկու բեռնատար ավտոմեքենայով Հալեպից դուրս եկանք սեպտեմբեր 25-ին Քիրմանշահ, Թավրիզ ճանապարհով: Վարորդ Գևորգը մեզ հասցրեց: Խորհրդային հյուպատոսությունից քսան հոգու վիզա ստացանք, Թավրիզից գնացքով Ջուլֆա եկանք: Անցանք Դեր Ջորով: Ինձ փախցնող ուրֆացի Հակոբը Դեր Ջորում դարձել էր ֆրանսիական ոստիկան: Նա իր պաշտոնի բերումով տարավ ինձ այն վայրերը, ուր դեռ երևում էին հայերի անթաղ ոսկորները: Մենք հասնելով Ջուլֆա՝ Արաքս գետը, 1922 թ. հոկտեմբերի 25-ին գնացքով հասանք Երևան:

Երևանում ծանոթացա Վահան Թոթովենցի հետ, որը ինձ օգնեց համալսարան ընդունվելու: Որպես իրավագետ երեք տարի արդարադատության գծով աշխատելուց հետո տնտեսագիտության գծով սկսեցի աշխատել: Ամուսնացա, ունեցա մի տղա, մի աղջիկ: Երկուսն էլ բարձրագույնն ավարտեցին: Տղաս հիմա Մոսկվայում է: Արդեն թոռ ունեմ: Հայաստանում ես արդեն սովետական քաղաքացի եմ: Այս խժդժություններից հետո երիտթուրքերի կողմից կատարված ոճրագործությունը երբեք չի մոռացվի և չպետք է ներվի:

110 (110).
ՍԱՐԳԻՍ ԿԱՐԱՊԵՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ԽԱՐԲԵՐԴ, ԽՈՒԼԱ Գ.)

Ես ծնվել եմ Խարբերդի Խուլա գյուղում: Մեր ոնք բավական ունևոր էին, զբաղվում էին խաղողագործությամբ: Հայրս գնացել էր Ամերիկա՝ Ֆրեզնո, չամիչի գործով և 1913 թ. վերադարձել էր, որ մեզ էլ տանի Ամերիկա, բայց մեծ հայրս թույլ չէր տվել: Հայրս եկավ Ամերիկայից, որ եղբայրս՝ գնաց: Նրա կինը և աղջիկը մեզ հետ էին ապրում:

Իմ ծննդավայր գյուղը լավ սևահող ուներ: Գյուղում հողագործությամբ էին զբաղվում: Մենք վեց տեսակի խաղող ունեինք: Մեծ հայրս՝ իննսունչորս տարեկան, գալիս էր ամեն օր այգիի մեջ աշխատում էր և ամեն օր գինի էր խմում: Մարդիկ աշխատում ու լավ ապրում էին: Նրանց կենսամակարդակը շատ բարձր էր: Մեր գյուղը Խարբերդից դեպի արևմուտք էր, ոտքով մեկ ժամ հեռու: Մեզանից քիչ հեռու ուրիշ գյուղեր էլ կային՝ Հյուսենիկ և այլն: Մենք էդ գյուղերը գնում էինք ձիով կամ էշով:

Մեր գյուղի տները քարաշեն էին, երկու հարկանի: Առաջին հարկում ճաշ պատրաստելու տեղը առանձին էր, լողարան ունեինք, ջուր էինք տաքացնում և մեծ տաշտի մեջ լողանում էինք: Երկրորդ հարկում հյուրասենյակ էր և քնելու սենյակները: Ունեինք սեղան, աթոռ: Մայրս եփում էր տեսակ-տեսակ ճաշեր՝ ապուր, փիլավ: Միսը առատ էր:

Մեր տանը մենք ինը հոգի էինք՝ հայրս, մայրս, մեծ հայրս, մեծ մայրս, հորեղբորս կինը և աղջիկը: Ես ունեի փոքր եղբայր՝ Հակոբը, մեծ քույր՝ Աղավնին: Մեծ հայրս Մեզրա քաղաքից էր, իսկ մեծ մայրս գյուղից էր:

Մեր գյուղում միայն հայեր էին: Քրդերը ուրիշ գյուղերից մեզ հյուր էին գալիս: Քրդերը ընդհանրապես թալանով էին զբաղվում: Խուլա վանքի եկեղեցական արարողության ժամանակ ուրիշ գյուղերից էին գալիս աղոթելու: Քահանան Տեր Սարգիսն էր: Մեր դպրոցը պարզ տեսք ուներ: Մենք հետներս միդար էինք տանում, որ նստեինք: Բայց բողոքականների եկեղեցին հսկա էր, շքեղ դպրոցը կառուցված էր ամերիկյան միսիոներների կողմից: Նրանց դպրոցը լավ կահավորված էր, նույնիսկ հատ կին էին ցույց տալիս:

Մեր դպրոցը երկու դասարան ուներ: Տարբեր տարիքի երեխաներ կային: Իմ մեծ հայրը ինձ սովորեցրել էր հայերեն, թվաբանություն: Իսկ թուրքերենն ու անգլերենը հայրս էր սովորեցնում, երբ վերադարձել էր Ամերիկայից: Աղջիկների դպրոցն առանձին էր, մերը՝ տղաներինը, առանձին: Դպրոցն ուներ հոգաբարձություն, որը հոգում էր դպրոցի մասին: Գյուղում բժիշկ չունեինք, քաղաքից էին կանչում: Ժողովուրդը առողջ էր: Օդը, ջուրը մաքուր էր, սնունդը՝ որակով: Հիվանդություն չկար: Հեքիմներ շատ կային:

Հիշում եմ, 1908 թ., երբ հեղաշրջում եղավ Թուրքիայում, սուլթան Համիդին փոխարինեցին Երիտասարդ թուրքերը:

Հայերը հույս ունեին, որ նոր սահմանադրությունը կբարվոքի իրենց վիճակը: Բայց դեռ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Թուրքիան միացավ Գերմանիային և հարձակվեց Ռուսաստանի վրա: Ռուսաստանը միացրեց բոլորին, որ ուժեղանա: Վրացիք ասեցին. «ի վիճակի չենք» ու ազատվան: Իսկ դաշնակները ասին. «Այո՛, մենք կմիանանք Ռուսաստանին» և միացան:

Երբ այդ լուրը հասավ Արևմտահայաստան, տարիքոտ մարդիկ ծնկներն էին ծեծում, լաց էին լինում:

1914 թ. Թուրքիան ընդհանուր մոբիլիզացիա հայտարարեց: Հայ երիտասարդներին թուրքական բանակ զորակոչեցին: Տարան աշխատացրին Ամիլե թաբուրի մեջ, հետո էլ բոլորին սպանեցին: Հետո կիներին ու երեխաներին, այսինքն ամբողջ ժողովուրդն քշեցին դեպի Միջագետքի անապատները, մորթեցին: Ոչ մեկին չէին խնայում: Միայն թուրքացողները ազատվում էին: Բայց թուրքերի մեջ էլ բարի մարդիկ կային: Չի կարելի ասել, թե բոլորը վատն են: Թուրք ընտանիքները շատ հայերի առին ու պահեցին, ոմանց էլ դրամով պահեցին: Մեծ մայրս հաճախ էր ինձ տանում մեր ծանոթ թուրք բեյի տունը: Բեյի մայրը ինձ թուրքերեն ոտանավոր էր արտասանել տալիս: Մեծ մայրս ինձ տարավ նրա տունը և ասաց. «Մինչև ես չգամ, էստեղից դուրս չգաս»:

Բեյի մայրը սկսավ իսլամ քարոզել: Ինձ դուրս տվեց, որ կարդամ: Ես զզվեցի, դուրս փախա: Ուշ գիշեր էր արդեն: Եկա, տեսա մեր տունը քանդված էր: Դիմացի տան հարևանուհին, որ հայ էր, բայց թուրքի կին էր դարձել, ինձ տեսավ ու լաց լինելով սկսեց պատմել, որ թուրքերը մերոնց բոլորին սպանել են: Երբ հորս սպանել են, մեծ մայրս քարով ուզեցել է սպանել սպանողին, մեծ մորս էլ են սպանել: Իսկ մայրս՝ Զմրուխտը, թույն է խմել, որ նրանց ձեռքը չանցնի: Էդ կինը ինձ տարավ, տանիք հանեց ու պահեց: Նրա ամուսինը, որ թուրք էր, աքսորի ղեկավարն էր: Էդ բարի կինը ինձ մեկ օր պահեց, հետո ասաց. - Ժամանակները վատ են, քո անունը կլինի Մուստաֆա:

Ես այլևս իմ հարազատներից ոչ մեկին չտեսա: Մեր ինը հոգիանոց ընտանիքից միայն ես եմ ողջ մնացել: Ես որոշեցի վրեժ լուծել: Ոտքով հասա Դերսիմ: Դերսիմի քրդերի հետ մտերմացա: Նրանք քաղաք գալ չէին կարող: Ես ասի. - Քաղաքի գործը ես կանեմ:

Ես քրդի շորով, վզիցս կախած մի արկղ, իբր չարչի եմ, գործ էի անում: Նամակ էի տանում բերում հայերի համար: Եվ կամ՝ ով որ ուզում էր Դերսիմի վրայով Ռուսաստան անցնել, ես օգնում էի էդ հայերին: Խարբերդից, Երզնկայից հայերին բերում էի Դերսիմ կանացի շորերով, քրդերը գալիս էին Եփրատ գետը՝ անց էին կացնում: Տասը հատ գերանը կապում էին իրար, երկու քյուրդ թիավարելով էդ փայտերի վրայով անցնում էին գետը՝ դեպի Ռուսաստան էին գնում:

Դերսիմում ես հիվանդացա տիֆով: Միայն կաշի-ոսկորս էր մնացել: Մի քյուրդ կին ինձ խնամեց, կաթ, մածուն տվեց, կերա, կազդուրվեցի, լավացա:

Եկա անցա Ռուսաստանի կողմը: Երզնկայում կար Տիգրան Դևոյան, որը սպա էր, հայերը և քրդերը նրան Տիգրան փաշա էին ասում: Նա կարգադրեց, որ ես իր մոտ գնամ: Ես գնացի, քրդի շորերով, ոտքիս չարուխներով: Ներս մտա: Ներսում երեք ռուս օֆիցերներ կային: Ինձ որ տեսան՝ զարմացան, բայց հարցրին. - Թուրքերը ի՞նչ են ասում մեր մասին:

Ես պատասխանեցի. - Ռուս կապուտ, այսինքն՝ ռուսը պարտված է:

Ես խնդրեցի Տիգրան Դևոյանին, որ ինձ տեղավորի ռազմական դպրոց: Նա ինձ ուղարկեց Էրզրումի որբանոցը: Երբ ես մտա որբանոց, տեսա աղջիկներ, տղաներ ուրախ պարում էին: Ես զարմացա, թե այդքան տառապանք տեսնելուց հետո ո՞նց կարող են ուրախանալ, բայց նրանք ճիշտ էին: Մարդ ինչքան ապրում է, պետք է ուրախ ապրի: Ես հայկական որբանոցում ինձ լավ զգացի: Շատ լավ պայմաններ էին: Սովորում էինք հայերեն, ռուսերեն, մաթեմատիկա, բնագիտություն, աշխարհագրություն, երգ: Հայ կամավորները օգնեցին Ռուսաստանին, Թուրքիան սկզբում պարտություն էր կրում: Ռուսները գրավում էին որոշ տարածքներ Թուրքիայից, բայց մեջտեղը Լենինը եկավ, հեղափոխություն արեց, և աշխարհը տակնուվրա եղավ: Ռուսական բանակը քայքայվեց: Ռուսական զինվորները այլևս չէին կռվում. «Կորչի՛ պատերազմը, հողը՝ գյուղացուն, գործարանը՝ բանվորին, տո՛ւն, դեպի տո՛ւն» ասում էին: Ցարի մահից առաջ հայ կամավորներին խայտառակ կերպով ցրեցին ռուսական բանակից, մի քանիսին էլ կախաղան հանեցին: Երբ ցարին տապալեցին, հայերը ուրախացան, բայց հենց այդ ժամանակ պետք է կամավորական խմբեր կազմակերպեին: Եթե անեին՝ մենք հիմա միացյալ Հայաստան պիտի ունենայինք: Այնինչ՝ մեր հայ կամավորները նապաստակի պես փախան, երբ ռուսը չկար այլևս: Անդրանիկ զորավարը նույնիսկ 1917 թ. հոկտեմբերին Արմավիրում հայ գաղթականների համար փող էր հավաքում՝ փոխանակ կռվելու:

Թուրքերի բախտը բերեց: Նրանք գրավեցին էդ տարածքները, եկան հասան մինչև Բաթում: Էդ բոլորը Լենինի գործերն էին: Լենինը հայտարարեց, որ Արևմտյան Հայաստանը պետք է միանա Արևելյան Հայաստանին, բայց երեք-չորս ամիս հետո հրաժարվեց և անագին ոսկի տվեց թուրքերին: Լենինը շատ օգնեց Աթաթյուրքին: Աթաթյուրքը ծագումով հրեա էր: Նրա մայրը հրեա էր:

Վիլսոնը* ուզում էր Հայաստանին մանդատ տալ, բայց թուրքերը Լենինից ստացած ոսկիներով կաշառեցին Ամերիկայի կոնգրեսմեններին ու սենատորներին, որ Վիլսոնի պլանին հակառակ քվեարկեն: Եվ Հայաստանը ամերիկյան մանդատը չկարողացավ վերցնել ու իր նպատակին հասնել: Ամերիկայից եկած կոնգրեսմեննե-

---

* Թոմաս Վուդրո Վիլսոն (1856–1924) – ամերիկյան պետական գործիչ, ԱՄՆ-ի 38-րդ պրեզիդենտը, որը Հայկական հարցի դրական լուծման և անկախ հայկական պետության ստեղծման ջատագովն էր, ինչն իր արտահայտությունն էր գտել «Հայաստանի մանդատը» (1920 թ.) ստանձնելու նրա պատրաստակամության մեջ:

րը կաշառված էին թուրքերից, հայտարարեցին. «Հազիվ Առաջին համաշխարհային պատերազմը վերջացավ, եթե Հայաստանին մանդատ տանք, Երկրորդ համաշխարհային պատերազմ կսկսվի»: Եվ բավական հայկական տարածքներ թուրքերը կարողացան գրավել: Վիլսոնը հուսահատությունից հիվանդություն ստացավ:

1920 թ. մայիսի վերջին ես ևկա Բաքու, որ գամ Հայաստան, զինվորական դպրոց ընդունվեմ: Մի նավաստու միջոցով Թիֆլիս հասա: Սարդարապատի կռվի ժամանակ ես Թիֆլիսումն էի: Հավլաբարի հայ գաղթականները ասում էին. «Ա՛յ, մենք էլ պետք է էդպես կռվեինք, որ չկոտորվեինք»: Թիֆլիսում մեկ ամիս մնացի:

1921 թվին Հյուսիսային Կովկաս՝ Կրասնոդար գնացի: Երեք հարյուր հազար հայ փախել, եկել էին Հյուսիսային Կովկաս, որոնց կերակրում էր Հայ բարեգործական միությունը: Էնտեղ աշխատեցի մինչև 1932 թ., միջնակարգ և բարձրագույն կրթություն ստացա, քիմիագետ դարձա, ամուսնացա ղարսեցի Այծեմնիկի հետ:

1939 թ. Կրասնոդարից եկա Հայաստան: Աշխատանքի անցա Ջեթ-օճառ գործարանում: Էդ ժամանակ մեր կառուչկի գործարանը նոր էր կառուցվում: 1944 թվի հոկտեմբերին ինձ ուղարկեցին ԱՄՆ՝ ուսումնասիրելու կառուչկի տեխնոլոգիան: Գնացինք Վաշինգտոն, երկու շաբաթ Էնտեղ մնացինք: Լուիզի կառուչկի գործարանում երեք ամիս մնացի:

Եկա Հայաստան, բայց մեր տեխնոլոգիան միայն 1953 թվին փոխեցինք: 1960-ական թվականներին ինձ հրավիրեցին՝ Սումգայիթում կառուչկի գործարան հիմնելու համար, բայց ես հրաժարվեցի, քանի որ ադրբեջանցիները թուրքերի մասին լավ էին խոսում: Մեր Երևանի կառուչկի գործարանում գիշեր-ցերեկ երկար տարիներ աշխատել եմ քլորոպրենի բաժնի վարիչ, բայց առողջությանս վրա ազդել է: Վաստակավոր ինժեների կոչում եմ ստացել: Հիմա ապրում եմ երկու աղջիկներիս հետ:

Ինչի՞ մեզ համարում են խելացի ժողովուրդ, բայց այս օրին ենք, որովհետև միասնական չենք, կազմակերպված չենք: Ես մեր ապագա սերնդին ցանկանում եմ քաջառողջություն, որովհետև դժվար կյանքում են ապրելու: Թող լինեն նախ՝ որակով մարդ, հայրենասեր և մարդասեր:

111 (111).
ՍԱՐԳԻՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ԽԱՐԲԵՐԴ)

Ծնված եմ Խարբերդ, մայրական կողմե ազնվական Նազլյան ընտանիքի զավակ եմ: Խարբերդ, իբրը հայկական կենտրոն, Թուրքիո մեջ ամենեն լուսավորյալն է: Ես հոն հայ կաթողիկե դպրոցի մեջ սկզբնական կրթությունս առի:

Խարբերդի բնակչության քառասուն-հիսուն տոկոսը հայ էր, տասը տոկոսը՝ քյուրդ էր, որոնցից շատերը հայերեն գիտեին: Մեր դժբախտությունը համաշխարհային պատերազմը եղավ: Հայերին զինվոր տարին, շուրջ երեք հարյուր հազար հայ երիտասարդներ թուրքական բանակ ղրկվեցան: Սկզբում ևոնց ձեռքը զենք տվին, բայց հետո Էնվեր փաշան ըսեր է. «Մենք ճամփաներ պիտի շինենք՝ աշխատող ձեռքերու պետք ունինք», բայց իրականության մեջ սպանած, նետած են ևոնց փորած փոսերուն մեջը:

1915 թ. ապրիլ ամսին տղամարդկանց հավաքեցին, բանտ նետեցին: Քաղաքի մեջ մնացին կիներ և մանուկներ՝ առանց ապահովության: Այդ ժամանակ արդեն վերին շրջաններեն սկսած էին աքսորականներու քարավանները գալ Խարբերդ: Անտեղեն կամ Դեր Զոր կտանեին, կամ՝ Մալաթիայի կողմը: Դիարբեքիրի ճամփով Դեր Զոր կտանեին, ճամփին Եփրատ գետը կնետեին, կխեղդեին, որ փամփուշտ խնայեն:

Ես անասուն կարածացնեի: Տեսա՝ ցորենը կըշարժվի, մոտեցա: Մեջեն տղա մը ելավ, հարցուցի. - Ո՞րտեղեն ելար:

- Երեկ, - ըսավ, - մորս, բոլորին սպանեցին:

Ես ևրան ընկերացա մինչև գյուղը:

Քանի մը օր ետքը թուրք զինվորներ եկան: Գյուղի մոլլան իմ մոր ևունը տվել էր որպես հայի: Ես ևանասունների հետ էի: Տեսա՝ հեռուն կիներ, վերջինը՝ մայրս էր: Ես ուզեցի հետևիլ մորս, չթողեցին: Գացի մոլլային հարցուցի. - Ու՞ր գացին կիները, մայրս մեջերնին էր:

Ես վազեցի, գացի հասա: Տեսա՝ խանի առջևը զինվոր պահակներ: Գաղտնի ևերս մտա, տեսա մայրս ևստած կմտածեր: Տեսավ ինձի, բերանը չբացավ: Կերակուր տարեր էի, բայց մայրս չխոսեցավ: Ելա ետ եկա: Վեց օր այսպես գացի, եկա: Այդ օրերին մայրս ինձ հետ չխոսեցավ բնավ: Խանեն դուրս եկա, պահակ զինվորը դեմս ելավ: Ես փախա: Հաջորդ օրը նորեն գացի: Պահակը ըսավ. - Տղա՛ս, ե՛տ գնա:

- Ինչու՞ համար, - ըսի ես:

- Երեկ տարին բոլորին սպանեցին:

Եկա գյուղ: Քույրս, երկու եղբայրներս հարցուցին: Ես ըսի. - Մենք արդեն որբ ենք, մամաս՝ չկա:

Հաջորդ օրը տունին աղաս կանչեց մեզի, ըսավ. - Դուք այլևս իսլամ եք:

Ես մութն ու լուսին ելա և փախուստ տվի: Ո՞ւր պիտի երթամ՝ չգիտեմ: Գետ մը կար՝ անցա: Խարբերդի ուղղությունը առի: Երեկոյան հասա՝ անոթի, ծարավ: Ջուր մը տեսա՝ խմեցի: Սպասեցի, որ մութը իյնա: Գացի, տեսա մեր տունը լիքն են, թուրքերը մտած էին, ինձ տեսան՝ վռնդեցին: Գացի շուկա. կառք մը կար, տակը մտա քնացա: Վեց օր ջուրով ապրեցա: Ինձի պես ուրիշ տղաներ ալ կային, որոնք խաևութները կմտնային բան մը կառնեին, կուտեին: Ինձի ալ ըսին՝ ըրե: Ես ըսի. - Գողությունը մեղք է:

Բեռնակիր դարձա: Օր մը ոստիկան մը բռնեց զիս, ըսավ. - Ո՞վ ես դու:

- Որբ եմ, - ըսի:

Ան գնաց ճիշտ մեր տունին ճամփան, ես ալ իրեն հետ սկսա քալել: Ճամփին պատմեցի, որ մորս սպանել են: Ան ինձի տարավ իր տունը, հագուստ, կոշիկ տվավ, ըսավ. - Եթե քեզ հարցնեն, կըսես. «Ես Շուքրի էֆենդիի տղան եմ»:

Ես ևնոր մոտ աշխատեցա: Մարդը զիս պահեց: Կուտեի, կխմեի, մաքրություն կընեի: ԵՒնոր կինը հայ էր, որի հայրը տեղի միակ քարագործն էր: ԵՒնոց քովը մնացի, բայց կփնտրեմ հարազատներուս:

Օր մը շուկային մեջ տղաներ հանդիպեցա, ևնոնք ըսին. - Ամերիկյան հյուպատոսին ղավազին հարցուր:

Գացի, ներկայացա: Ան ինձի հարցուց իմ ևունը, ես ըսի: Ըսավ. - Նազլյան ընտանիքը քեզի ի՞նչ կըլլա:

- Մորս ընտանիքն է, - ըսի:

- Եպիսկոպոս մը կա, - ըսավ, - լուր կուզե:

Ես պատմեցի իմ գլուխեն եկածը: Ըսավ. - Շատ աղեկ, ես ևամակ կգրեմ, երբ պատասխան գա, քեզ կըկանչեմ: Եթե դրամի պետք ունիս՝ տամ:

- Ո՛չ, - ըսի:

Նազլյան եպիսկոպոսը մորեղբայրս էր, որը 1915 թ. Տրապիզոնի եպիսկոպոսն էր: Մեկուկես ամիսեն ինձ կանչեցին: Ըսին. - Ճամփա մը գտնենք, քո քույրերդ ու եղբայրդ, որ թուրքի ևունով թուրքի մոտ են, բերենք:

Գացի Շուքրի էֆենդիին ըսի: Ըսավ. - Ես պաշտոնյա եմ, չեմ կրնար: Թող ամերիկյան կոնսուլի ղավազին հետ էրթանք, որ տան:

Գացի, խնդրեցի, ղավազին հետ գացինք: Մարդը չդիմադրեց: Բայց աս անգամ ալ պզտիկները չեն ուզեր գալ, կվախնան որ կսպանվին: Առինք ևնոնց, տարինք Դանիմարկական ընկերության մեջ տեղավորեցինք: Մորգենթաուն լուր ղրկեց, որ ճար մը գտնա, ղրկենք Պոլիս:

1916 թ. գացի Շուքրի էֆենդիին ըսի: Ան գնաց փաստաթուղթ հանեց, որ Խարբերդեն Պոլիս էրթանք: Բարեբախտաբար ամերիկացի կին մը կար, ևն պիտի էրթար Պոլիս: Կոնսուլը մեզ դրավ ևնոր հետ, ճամփա ելանք: Տասնվեց օր ճամփա գացինք: Շուքրի էֆենդին մինչև Մալաթիա եկավ մեզի հետ, որ անվտանգ ըլլա: Գնացք ևստանք Էսքիշեհիր հասանք: Ոստիկան մը էկավ: Ես եվրոպական հագած էի, բայց պզտիկները՝ ոչ: Ոստիկանը ըսավ. - Դուք ո՞վ եք:

Ըսինք. - ԵՒս ամերիկացի կնոջ զավակներն ենք:

Ան մեզ բռնեց, տարավ Պոլիսի ոստիկանատուն: Մեզ՝ երեք տղաքս, բանտ դրին, քույրս ալ՝ աղջիկներուն բանտը:

Քեռիս դիմում ըրած էր ծերակույտին, քանի որ ինքը ծերակույտի ժողովի մեջ տնտեսական հանձնաժողովի նախագահն էր և Թալեաթի օգնականը: Թալեաթի բյուջեն կկարգավորեր: Թալեաթի հրամանով մեզ բանտեն հանեցին: Երկու-երեք ոստիկանով մեզ տարին Պոլիս, կենտրոնական ոստիկանատուն: Մտանք սենյակ մը: Երիտասարդ մը՝ սիվիլ հագած, տարավ մեզի հայկական առաջնորդարան: Մեզի պատրիարքարանի կղերանոցը տարին, հետո ալ պր. Ստեփանյանին տունը ղրկեցին, քանի որ աղտոտ էինք ու ոջիլով լեցուն: Մեզի լոգցուցին, հագցուցին, կերցուցին: Քույրս մայրապետներուն քովը որբանոց դրին, երկու եղբայրներս՝ ճեմարան: Ինձի ալ ավստրիական գիշերօթիկ մը կար, հոն տարին՝ ուսանելու: Մնացինք Պոլիս մինչև 1918-ի նոյեմբեր, երբ պատերազմը վերջացավ:

1919 թվին քեռիս մեզ՝ երկու եղբայրներուս, նավու վրա դրավ: Քույրս մնաց մայրապետներուն քովը, Լևոնն ալ հոն մնաց: Մեզ՝ երկու եղբայրներուս ղրկեց Վենետիկ՝ Մուրատ-Ռաֆայելյան վարժարան: Տասնըհինգ օրվա մեջ իտալերեն սորվեցանք: Տետուչը՝ հայր Վարդան Հացունին և ուրիշ շատ հայրեր մեզ դաս կուտային: Ես հոն երեք տարի ուսում ստացա, ավարտեցի: Ան աշակերտները, որ Պոլիսեն կուգային, ևնոց հետ մրցակցեցա, թոշակ ստացա՝ չորս հարյուր լիր կուտային: Ետքը քանի որ գերմաներեն լավ գիտեի, գացի Վիեննա: Իմ վկայականը ընդունեցին, բայց ժեոմետրիի քննություն հանձնեցի: Հոն մնացի երկու տարի: Սենյակ մը վարձած էի: Դարձա երկրաչափ էլեկտրականության գծով:

1920 թվին, երբ Հայաստանի կառավարությունը բոլշևիկներու ձեռքը անցավ, Եվրոպայի, Վիեննայի մեջ հավաքվեցան դաշնակցական ղեկավարները: Մենք խանդավառված երիտասարդներ էինք: Հոն էր, որ ես ճանչցա Ավետիս Ահարոնյանին, որը որպես խորհրդարանի նախագահ եկած էր Մուրադ-Ռաֆայելյան հանդիսության մը ներկա ըլլալու: Երկրորդ անգամ հանդիպումս Վիեննա եղավ, հետո նաև՝ Հոռմ: Ավետիս Ահարոնյանը գործակցեցավ մորեղբորս հետ, քանի որ ան Հոռմ էր և քաղաքական գործիչ էր:

Հետագային Մուսոլինիի օրոք ռումբ մը իկավ Իտալիո կղզիի մը վրա, ուր շատ մը հայ որբուհիներ մեռան: Մորեղբայրս բողոքեց: Մուսոլինին ահագին դրամ հատկացուց, և մորեղբայրս նոր որբանոցներ շինել տվավ: Ես ձգեցի, գացի Միլանո, երկրորդ մասնագիտությունս ըրի: Ես առաջին և միակ հայն էի, որ երեսուն հոգիին մեջ երկրորդ վկայական առի: Հետո քույրս և Լևոն եղբայրս մորեղբայրս ղրկեց Ամերիկա: Ինձ ու Վիկտոր եղբորս կանչեցին, որ հրաժեշտ տանք:

Ցոթանասուն տարի զիրար չտեսանք: Ցոթանասուն տարի վերջ կնոջս հետ Ամերիկա գացի, գտա քրոջս՝ արդեն մեծ մայր էր, եղբայրս գործարանատեր էր դարձած: Բայց մորս կորուստը շատ ազդած է վրաս: Մոր սերը տարօրինակ բան է:

112 (112).
ԹՐՎԱՆԴԱ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ԽԱՐԲԵՐԴ)

Մուշը, Վանը, Սամսունը, Կարսը, Արդահանը, Էրզրումը, Ռղին, Բալուն, Զաբսանջակը, Էրզնկան, Սվազը, Ցոզղատը, Արաբկիրը, Մալաթիան, Խարբերդը, Տիգրանակերտը և ուրիշները, ասը բոլորը մեր հին Հայաստանն էր: Մեր հին Հայաստանի հողերուն վրա Պարսկաստանի քյուրդերուն աքսորել էին...

Ես 1905 թվի ծնունդ եմ, կհիշեմ դեռ մեզի աքսոր չհանած, թուրքերը էկան, ջահելներուն հավաքեցին, զինվոր տարին: Իմ հորեղբոր աղջկան ամուսինին ալ ուզեցին տանել, ան չհանձնվավ՝ սպանեցին: Ան որ կնկան ուզեցին տանել, որ իրենց կին դառնա, խեղճ հորեղբորս աղջիկն սկսավ բռռալ. - Ինձի չմոտենա՛ք. ես թշնամու ծոցը չե՛մ պառկի...

Ան ժամանակ խեղճը ճարահատ մոտեցավ ծընկնելուշին, հոն թուղթի մեջ փաթթված ճերմակ թույն մը կպահեր: Գառնուկի դմակի վրա, որ վերք կըլլար, ադ կքսեին՝ կանցներ: Առավ ադ թույնը, ափով իր բերանը լեցուց: Վայրկյանին արյունը ֆշշաց ան որ բերանեն՝ մեռավ: Ան որ դիակը դուրս քաշեցին, երևի գազանները կերած...

Ետքը թուրքերը ընկան մեր մեջը. սկսան մեզ կոտորել: Մամաս մեզի փախցրեց թուրքի մը օբայի մեջ, ուրտեղ հորեղբայրս էր թաքնված: Մամաս ան որ ըսավ. - Փախի՛ր, Պետրո՛ս, սաղ գյուղը կոտորեցին...

Ետքը եկան հորեղբորս կնկան սպանեցին, գրկի երեխան գլորվավ բայիրեն, մեռավ... Մամաս փախավ, որ իրեն ալ չսպանեն:

Մեզ՝ երեխեքիս քերին հավաքեցին մի տեղ. չորս հոգի էինք՝ մի տղա, երեք աղջիկ: Կացինը քերին, որ մեզ կոտորեն: Հորեղբորս տղային ականջը կտրեցին: Ադ ժամանակ թուրքի կնիկը մեղքցավ, ականջը առավ տվորոգով կպցուց, պինդ կապեց:

Գիշերը մնացինք թուրքի օբային մեջը, կուլա՛նք: Նե՛ մայր, նե՛ հայր: Գլուխնիս քարերուն կզարնենք, որ մեռնինք, չմեռանք:

Թուրք կնիկը մեր չորսիս, ականջը կապած վիրավոր հորեղբորս տղային ալ հետերնիս, տարավ մեր գյուղը, պզտիկ քույրիկիս ալ ինքը գրկել էր: Մենք ուրախացանք, որ մեր գյուղն ենք գնում, բայց երբ գյուղ մտանք, տեսանք, որ Պետրոս հորեղբորս սպանել են ջաղացքի քովը: Ադ թուրք կնիկը մեզ թողեց էդտեղ, գնաց: Մենք մնացինք մենակ, չենք գիտեր՝ ու՞ր էրթանք, պզտիկ ենք: Տեսանք հետուեն արորով հողագործ մը: Մենք վախերնես իրարու կպանք, վախցանք, որ մեզ պիտի մորթե: Տեսանք, որ մեր մյուս հորեղբայրս է, ըսավ. - Գացե՛ք թուրքի գյուղը, պապաձիդ գյուղապետին քովը կաշխատի:

Մենք էլանք գացինք: Շուները հարձակվան մեզ վրա: Մեկ էլ տեսանք մի ջահել աղչիկ էկավ զիբիլ թափելու: Մեզի տեսավ, շուներեն ազատեց: Ադ աղջկան ալ թուրքերը փախցրել էին, բոլի ամուսնացրել էին իրենց տղի հետ: Էդ աղջիկը մեզի ըսավ. - Ձեր պապան էնտեղ է, աղայի մոտը:

Գնացինք, գտանք, տեսանք՝ մեր պապան է: Ուրախացանք, մեզ էնտեղ ուտացրին...: Իրիկունը թուրք աղան պապային ըսավ. - Գասպա՛ր, ա՛ռ էրեխեքիդ, գնա՛ էստեղից, թե չէ՝ մեզի ալ վնաս կուգա:

Ադ ժամանակ քովի գյուղեն Սայիդ աղան աս մեր Ալի աղային մոտ կուղարկե իր ծառային, որ Գասպարին բերել տա իր մոտը: Դու մի ըսեր, մամաս ու մեծ մամաս ալ ադ Սայիդ աղային քովը կաշխատին: Պապաս մեզի հավաքեց, էլանք գացինք Սայիդ աղային քովը: Հոն պապային տարին գերանդիով խոտ կտրելու: Երկու օր ետքը իմացանք, որ պապային գերանդիով մորթել էին: Սայիդ աղան մամային ու մեծ մամային ըսավ. - Էլե՛ք էստեղից գնացե՛ք, թե չէ՝ մեզի ալ վնաս կուգա:

Մամաս ու մեծ մամաս մեզի առին ու դուրս էկանք: Ո՛չ ճամփա գիտենք, ո՛չ ծանոթ ունինք: Մեկ էլ ասկյար մը դեմերնիս էլավ: Մամաս ըսավ. - Մեզի ճամփա ցույց տուր:

- Ձեր ունեցածը ինձի տվեք, ձեզի ճամփաև ցույց կուտամ, - ըսավ ասկյարը:

Մամաս մեկ հատ քեհրիբարից թեզբեհ ուներ, տվեց թուրք ասկյարին, որ մեզի մեր գյուղի ճամփաև ցույց տա:

Էկանք մեր գյուղը: Դիակներուն հոտը աշխարհքը էր բռնել: Թուրքերը էկել էին մեր տուները մտել: Մամաս կերթար թուրքերու ցորենը կհավաքեր, կպրեինք...

Քեմալը, որ սկզբում հրամաև էր հանել, որ հայերուն ձեռք չտան, վերջը՝ հրամաև ստորագրեց, որ ադ երկիրեն էլլողը այլևս վերադառնալու իրավունք չունի:

Մեզ հանեցին մեր գյուղեն, բոլոր ջահելներին հավաքեցին, խովուշի պես տեղ մը լցրին, կտուրը բացին, մեջը նավթ լցրին, վառեցին: Հետո հավաքեցին բոլոր կանանց, քարերով ողջ-ողջ գլուխները ջնջխեցին: Մամային ու մեծ մամային ալ քարերով սպանեցին, էրեխեքին, ոչխարներուն քովեն գառնուկներու պես առանձնացուցին: Ինձի երեք տարեկան պզտիկ քույր մը ունեի, էրեխեքի հետ ան որ ալ առին Բալուի Մուրադ գետի կամուրջին քովը, վզերը կտրեցին, կոտորեցին, գետը լեցուցին...: Երկու ժանդարմա հինգ հարյուր հոգի աքսոր հանեցին: Սուլիչը կփչեր՝ հինգ հարյուր հոգին ոչխարի պես կնստեին գետինը: Օր մըն ալ ժանդարմային մեկը գնաց, մյուսը ըսավ՝ ես քիչ մը պառկիմ: Հրացանը ծառին հենեց, գետինը պառկեց, քնեց: Մերոնք հրացանը առին, ասոր սպանեցին, պատրոնդաշն ալ առին, լեշն ալ առին քարշ տվին, տարին, գետը նետեցին: Մենք ալ՝ ամեն մեկս մեկ կողմ փախանք, ազատվանք...:

Հետո գնացինք Ջեզիրե, անտեղ ապրեցանք, անտեղեն ալ 1947 թ. էկանք Հայաստան, բայց 1949 թ. մեզի աքսորեցին Սիբիր: Հիմա ալ պատրաստվում ենք Ամերիկա էրթալ:

113 (113).
ՍՏԵՓԱՆ ՋԱՔԱՐԻ ՍՏԵՓԱՆՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ԽԱՐԲԵՐԴ, ԹԻԼ Գ.)

Խ արբերդի Թիլ գյուղը եղել է թագավորանիստ քաղաք՝ Եփրատ գետի ափին, որը հոսում էր մեր գյուղի առաջից:

Խարբերդ քաղաքը տասը հազար հայ կար: Եփրատ կոլեջը կար, շատ ուսյալ մարդիկ, գիտնականներ, մանկավարժներ, բժիշկներ և այլ զարգացած մարդիկ կային: 1908 թվից առաջ հայերը ընչազուրկ էին: Թուրք երիտասարդները գաղընկեց արեցին սուլթանին, և հայերը ևս նույն արտոնություններն ունեցան, ինչ թուրքերը: Դա ազգային սահմանադրություն էր:

Հայությունը մի քիչ շունչ քաշեց, բայց էդ ազատությունը գլխացավ դարձավ: «Հյուրիեթ, ադալեթ, յաշասը՛ն միլլեթ» (Ազատություն, արդարություն, կեցցե՛ ժողովուրդը): Այսպես երգում էին: Հետո հայերը սկսեցին աշխուժանալ: Էդ բանը թուրքերուն դուրը չեկավ: Պառլամենտի անդամներ ունեինք, ինչպես Գր. Զոհրապը, բայց Թալեաթը արտաքին գործոց նախարարն էր, Էնվերը՝ զինված ուժերու, իսկ Ջեմալ փաշան՝ ներքին գործերի նախարարն էր: Սրանք տեսան, որ հայերը փորձանք պիտի դառնան:

1914 թ. սկսվեց պատերազմը: Գերմանիան և Ռուսաստանը մասնակցում էին, Թուրքիան ևս: Եթե մինչև սահմանադրությունը հայ երիտասարդներին բանակ չէին տանում, ապա արդեն սկսվեց զորահավաքը: Մեր հայ երիտասարդներից շատերը որպես կամավոր անցան ռուսի կողմը: Էդ բանը թուրքերի դուրը չեկավ: Նրանք գնացին Վիլհելմ կայսրի մոտ բողոքի: Նա ասաց. «Հայերին տեղահան արեք»:

Սրանք բացի տեղահան անելուց նաև մտածեցին կոտորել հայերին, մտավորականներին, խելոք մարդկանց լցրին բերդերը: Եվ ամեն մի տնից պարտադրեցին մի հրացան հանձնել, եթե նույնիսկ չուներ, փողով պիտի առներ ու տար պետությանը: Այսպես հայ երիտասարդներին զինվոր տարան: Ջենքի փոխարեն լապատկա, բլուգ տվեցին ձեռքերնին, Ամիլէ թաբուրը մտցրին: Էդ կտրիճ երիտասարդներին տարան ոչընչացրին, որոնց թվում էր նաև հորեղբայրս:

Մտավորականներին բոլորին գիշերով բերդից հանում, տանում ոչնչացնում էին: Մնացին հասարակ մարդիկ, որոնք զենք չունեին իրենց ձեռքին, ուղղություն ցույց տվող չկար: Ջաբիթներով գալիս էին գյուղը շրջափակում: Հորս էլ տարել էին բերդը:

Ասլան բեկ անունով մի մարդ կար, հորս հետ վատ էր, եկավ թե՝ ու՞ր է Ջաբարիան:

Մենք ալ ըսինք. - Տարան բանտարկեցին:

- Սուտ եք ասում, հանեք դուրս բերեք թաքնված տեղից, - գնաց: Նորից եկավ: Երկրորդ անգամ նորից փնտրեց, տեսավ չկա:

Երկու օր հետո, հունիս ամսին, 1915 թվին, մեր դուռը գիշերով ծեծում են ուժեղ-ուժեղ: Տանը տղամարդ չկա: Մենք ենք՝ չորս երեխա ու մայրս, մեկ էլ հորեղբորս կինը: Մայրս իջավ, դուռը բացեց, տասը-տասնհինգ հոգու, թևերը կապած բերին մեր հայաթը, հետո էլի տասնհինգ հոգու բերին, եղավ երեսուն հոգի կապկըպված:

Մենք վախից դողում ենք, լաց ենք լինում: Մեկ էլ սկսեցին գնդակահարել ու կոտորել: Վա՛յ, մամա՛ ջան: Իրար վրա թափվեցին դրանց դիակները: Մենք իջանք ցած, տեսանք արյունը լցվել է գետնին, գյուղ է դարձել: Դիակը շուռ էին տալիս, եթե ողջ էր՝ կացինով խփում, սպանում էին: Մենք մի ծառա ունեինք: Ան մեկ թուրք ծառայի հետ կռվել էր, ոխ էր պահել: Մեր հայ ծառան վիրավորվել էր, թուրք ծառան ետևից արյան հետքով գնաց մարագ, կացինով չորս մասի բաժանեց նրա գլուխը: Էդ դիակները մեկ շաբաթ մնացին մեր հայաթը, հոտեցին: Հետո եկան հավաքեցին, տարան:

Թուրքը օրենք հանեց՝ ով որ էդ ընտանիքի տասներկու տարեկան երեխային առնի պահի, նրանց ունեցվածքը իրենը կլինի: Մենք հարուստ էինք, շատ անասուններ ունեինք: Մեր հարևան թուրքը եկավ, մըտավ մեր տունը, իբր մեզ տերություն պիտի անի: Ութ օր հետո եկան, կանգնացրին: Ինչ որ զարդ ու ոսկի ունեինք, հանել տվին, առան, հավաքեցին: Մենք երեխեքս նայում էինք: Նայում էինք, ով սիրուն աղջիկ ունի, առնում տանում էին: Օրինակ՝ իմ հորեղբոր կնոջը մի թուրք եկավ, թե քեզ հետ կամուսնանամ: Նա էլ ասաց. - Քեզ նման շուն ըլի, հետը չեմ ամուսնանա:

- Քո երեխեքին տեր կլինեմ, - ասաց, բայց հորեղբորս կինը չուզեց:

Մի տղա մայրս ուներ, մի տղա էլ հորեղբորս կինը ուներ, դրանց գրկած տարին: Իսկ մենք՝ չորս երեխեքս, որ մի քիչ ավելի մեծ էինք, մնացինք տան մեջ:

Դրանց տանում են երկու-երեք կիլոմետր հետու Բորքընե գյուղը: Մահմեդ աղա անունով մի մարդ հորս ծանոթ կլինի, կմեղքանա, կասի. - Քույրիկնե՛ր, էդ երեխեքին չեք կարող տանել, թողեք էստեղ:

Սրանք ուժասպառ թողնում են էդ աղայի տունը, որի առաջով Եփրատ գետն էր հոսում: Երեխեքին տալիս են ծառային, որ ուշադրություն դարձնի: Մի քանի օր ետքը գետի մոտ խաղալուց, ծառան քացով խփում է երեխուն մեկը ջուրն է գցում: Ջուրը տանում է: Ես որ էդ լսեցի, իմ աղայինն խնդրեցի, լացի, աղաչեցի, որ գընանք, ողջ մնացած եղբորս բերենք: Աղաս համաձայնվեց: Գնացինք, գտանք եղբորս: Նա պատմեց, թե ոնց ծառան շպրտեց գետը: Եղբայրս գրկեց, փաթաթվեց ինձ: Աղան նրան շպրտեց մարագը: Ինձ էլ երկու չափալաղ տվեց: Եղբայրս ճանկոտում էր դուռը, լացում, գոռում էր, բայց լսող չկար: Մի քանի օրից նրան էլ գետն են գցում: Իսկ կանանց ասում են. - Ինչքան ոսկեղեն ունեք, տվեք մեզ, որ քյուրդերը չթալանեն: Նըստեք կանաչ խոտի վրա, հանգստացեք, - ու սկսում են գնդակահարել, հետո նրանց ոտքերից քարշ տալով տանում, գցում են Եփրատը, էնքան, որ իրար վրա դիակները կուտակվում են: Հորեղբորս կինը վիրավոր վիճակում ողջ է մնում: Մի թուրք ասում է. «Է՛, գյավու՛ր,

ո՞ղջ ես մնացել»: Մի քար առնում, խփում է գլխին: Նա ընկնում է գետին: Երկու օր հետո կարողանում է ոտքի կանգնել, հազիվհազ գնում է, դաշտի մեջ վրաններ է տեսնում: Էնտեղ մի աղբյուր է լինում, լվացվում է, ջուր է խմում: Դու մի ասի՝ էդ վրանների տակը թուրք բոշաներ են ապրում: Մեկը գալիս է, տեսնում է, ասում. - Սա Զաքար քեռու հարսն է՝ Սուլթանը, - առնում, տանում է իրենց վրանը:

Տանում են, գլխի մազերը խուզում են, գլխի վերքերի որդերը մաքրում են, վերքի միջից երկու գնդակ են հանում, ասում են նրան. - Մենք ձեր տանը հաց ենք կերել, մենք ձեր լավությունը չե՛նք մոռնար:

Հայրս էլ՝ բանտում եղած ժամանակը բանտապետը ծանոթ կըլլա, կըսե. - Զաքա՜ր, դու մեղք ես, քեզ բաց թողնեմ, գնա:

Հայրս դուրս է գալիս բանտից: Ճամփին ամեն կողմ սպանվածների դիակներ է տեսնում: Կմտածե Օսման բեկի մոտը երթալ: Օսման բեկը ասում է. - Է՛, Զաքա՜ր քեռի, ընողին՝ չմնար, քանի որ եկել ես մեր տունը, քանի ես ու տղաս ողջ ենք, դու էլ կենդանի կմնաս:

Թուրքերի օրենքին մեջ կանանց հարկաբաժինը ոչ ոք իրավունք չուներ մտնելու: Հայրս մնում է էնտեղ, ծառայություն է անում:

Հետո հայրս հետաքրքրվում է մեզանով: Երկու հայ ջորեպաններ, որոնք մեր գյուղն էին գնում, ասում է՝ գնացե՛ք, տեսեք մեր ընտանիքից ովքեր կան: Ջորեպանները եկան մեր բեկ աղային հետ սկսեցին խոսել: Ես կարծեցի՝ ինձ ուզում են տանել: Ես փախա: Եկան ինձ բռնեցին, ասին. - Եկուր քեզ պիտի տանենք հորդ մոտ, - ինձ վերցրին, կապեցին ջորու վրա, տարին հորս մոտ:

Ճամփին, երբ դուրս եկան գյուղից, սկսեցին հայերեն խոսիլ ու պատմել, թե՝ Էստեղ սրան են սպանել, էնտեղ՝ էն մյուսին են սպանել:

Հերս ինձ տեսավ, ուշքը գնաց: Հետո մյուս երեխեքին էլ բերել տվեց: Մեկ էլ մի կին բերին՝ քրդի հագուստով, չալման գցած վրեն, տեսանք՝ հորեղբորս կինն է, փաթաթվանք: Դերսիմի քրդերը առաջ հայ են եղել, հավատափոխ են եղել: Ճիշտ է, թալանում էին, բայց հայերի կյանքին վնաս չէին տալիս: Մեր ունեցածը հավաքեցինք, յա բախտի ճամփա ընկանք:

Մարտ ամիսն էր, 1916 թվի: Լույսը բացվելուն պես մի կերպ մտանք անտառը, տեսանք՝ մի քյուրդ բեկ, մի քանի զինվոր մեզ շրջապատեցին: Լավ է, հորս ծանոթ դուրս եկավ: Քյուրդերը հարձակվեցին թուրքերի վրա, երկու-երք շրջան գրավեցին, աննդամթերք բան գտան և մեզ էլ բերեցին, որ ուտենք:

Հորեղբայրս, երկու երեխեքը, մենք ամբողջ ընտանիքով տասնչորս շունչ էինք՝ չորս հոգի մնացինք: Մնացածին բոլորին սպանեցին մեր գերդաստանից: Քեռի, մորաքույր, հորաքույր՝ բոլորը կոտորվան: Գյուղում ոչ մի տղամարդ չմնաց: Կանանց էլ աքսորի ճամփին մորթեցին, գետը լցրին: Ռուսաստանում հեղափոխություն եղավ: Ռուսական զորքը քաշվեց: Թուրքը սկսեց մեզ կոտորել: Դաշնակները ամեն մեկ հայի համար մեկ ոսկի փող էին տալիս, իսկ եթե տասը հոգի էր գտնում, մի մոսին էին տալիս: Ռուսը որ նահանջեց, մենք գաղթեցինք էկանք Երզնկա, Կարս, Ալեքսանդրապոլ (այժմ Գյումրի): Ամբողջ ճանապարհին դիակներ էին փռված: Երկու միլիոն հայ կոտորեցին տանջանքներով:

1920 թ. եկանք Հայաստան, խոլերա, տիֆ ընկանք: Եկանք, գաղթական էինք, հաց, ջուր մուրացինք:

1929 թվին Նոր Խարբերդը հիմնեցինք, կոլխոզ մտա, տուն շինեցի, ընտանիք կազմեցի, չորս երեխայի տեր դարձա՝ երկու աղջիկ, երկու տղա:

Փա՜ռք Աստծո, հազիվ խաղաղ կյանք կապրինք մեր ազատ հայրենիքում:

114 (114).
ՓԱՅԼՈՒՆ ՊԵՏՐՈՍԻ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(Մ.Ն.Վ. 1907 Թ., ԽԱՐԲԵՐԴ, ԵՂԵԳԻ Գ.)

Խ արբերդի Եղեգի գյուղին մեջը ծնված եմ: 1915 թվին պապս գյուղին ջրաղացպանն էր, թուրքերը եկան, կապեցին, տարին: Բոլորին տանում էին: Մայրս կպատմեր, որ քառասունմեկ հատ դեղին ոսկի են տվել թուրք մեծավորին, որ իրենց ազատի:

Ան ալ ըսեր է. «Հիմա բան չեմ կրնար ընել, միայն թուղթ մը կրնամ կպցնել ձեր դուռին վրա, որ ասոնք թրքացել են և ձեզի ձեռք չեն տար»:

Այդպես ալ եղավ: Մեզի ձեռք չտվին: Մայրս կըտավ կգործեր, մեզի կպահեր՝ երկու քրոջս և եղբորս:

Հայրս այդ ժամանակ Ամերիկա էր: Կլսե որ Խարբերդի վիճակը գեշի է, կուգա: Ճամփին թուրքերը անոր ալ կսպանեն: Այնպես որ, մենք որբ մնացինք:

1921 թ. ամերիկացիները եկան հայ որբերուն Ամերիկա էին տանում: Մայրս մտածեց, որ իր զավակները շատ փայ պիտի դառնան, գնաց ջորեպաններ վարձեց, մեզի տարավ Հալեպ: Հոն ապրեցանք Գյոք մեյդանը (Երկնքի հրապարակ) ըսված թաղամասը:

Հետո փոխադրվանք Ֆրանսա: 1936 թ. հազար երկու հարյուր հոգի հայեր եկանք Հայաստան:

115 (115).
ԱՐԱՄ ՔՅՈՍԵՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(Մ.Ն.Վ. 1908 Թ., ԽԱՐԲԵՐԴ)

1915 թվին ես յոթ տարեկան էի, երբ մեզի Խարբերդեն տեղահանելու հրամանը հանեցին: Ընտանիքով, հագած-կապած, զուգված-զարդարված ճամփա ելանք, կարծես հարսնիք էինք գնում: Ճամփին սկսվեց թալանը: Ան ալ մեկ անգամ չէ՝ իրար ետևէ, ով ինչ կգտնար՝ կփախցներ:

Վերջում արդեն տակի շորերով էինք մնացած, անոնք ալ՝ ծվեն-ծվեն:

Ես կառքին մեջ, մամաս իմ աչքերը կփակեր, որ գետնին պառկած մեռնողներուն չտեսնամ: Վերջում մամաս և եղբայրս մնացին ճամփին, չկրցան քալել, մեռա՞ն, ինչ եղան՝ չգիտեմ: Մեր ետևեն թուրքերը գալիս էին, հավաքում էին չոջուխներուն, ալ չգիտեմ, մեզի պիտի մեռցնեն, զավակ պիտի ընեն՝ չգիտեմ: Դեր Զորում ալ աղջիկ մը կար, յոթը քույր ուներ, բոլորին ալ փախցուցեր էին: Արաբները գաղտնի ըսին. - Ով որ հայ է, թող չերթա, - ատին, բավական հայ պահեցին, ազատեցին:

Ալ վրանիս ուժ չկար: Անքան քալել էինք: Վերջապես հրաման եկավ՝ կանգ առնել: Ջորի մը մեջ կանգ առանք: Սկսան մեծերուն հարցնել՝ հայ ես, թե՝ թուրք: Ով՝ հայ եմ ըսեր, անոր մեկ կողմ կանցնեին, ով՝ թուրք ըսեր՝ մյուս կողմ: Հայ եմ ըսողներուն, բոլորին տարին հետուն, մորթեցին, թուրք եմ ըսողները ազատվեցան:

Գիշերը մեզի՝ փոքրերիս պզտիկ բլուրի պես տեղ մը հավաքեցին: Մենք հոգնած՝ պառկանք, քնացանք: Մենք միամիտ պզտիկ երեխա էինք, դու մի ասա, էդ բոլորը մարդկանց գլուխներ էին, առավոտուն, երբ լույսը բացվեց, տեսանք կտրված գլուխներ՝ իրար վրա դիզված, բլուր էր կազմված: Մենք ալ ամբողջ գիշերը ադ կտրված գլուխներուն վրա ենք քնացած, ամմա խաբար չունինք:

116 (116).
ԵՂՍԱ ԱՆՏՈՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(Մ.Ն.Վ. 1910 Թ., ԽԱՐԲԵՐԴ)

Մ ողներս հողագործ մարդիկ էին: Կհիշեմ, ձմռան օրերին մեծ վերմակ մը կդնեին սեղանի վրա, տակը չաման չով վառելիքը կդնեին, կվառեին, քուրսի կնստեին: Մեր տունը երկու հարկանի էր, կտուրից էինք ելք ու մուտք անում: Կողքի տունը թուրք մյուդուրի տունն էր: Գիշեր մը թուրք մյուդուրը եկավ մեր տունը, հորս ասաց. - Աղաբե՛կ ջան, էսքան տարի իրար հետ հաց ենք կերել, չեմ ուզում վատ բան ըլլա ձեզ. կառավարութենեն հրաման եկած է, որ հայերուն պիտի աքսորեն, պիտի կոտորեն...

Հերս լռում է, ձեն չի հանում: Մերս մյուդուրին սուջուխ-բաստուրմա էր հյուրասիրում:

Մյուդուրի էրթալեն վերջը հայրս եղբորը ըսավ. - Ք...քնեմ մյուդուրի բողազը, կուզե՝ մենք երթանք, ինքը մեր տունը գրավե:

Մյուս օրը, գիշերը եկան թուրք ասկյարները: Դուռը կոտրելու չափ ծեծում էին ու ասում. - Գյավու՛ր, ձեզ պիտի աքսորենք:

Պապաս վախեն կոշիկը հանեց, յուքլիկը մտավ: Ջարիթները ներս մտան, տեսան կոշիկները, ըսին. - Գյավուրը տա՛նն է...

Բացին յուքլիկը, հրացանի կոթով խփեցին պապային, պատի միջից քաշեցին, հանեցին դուրս ու տարին...

Է՛, անցյալս որ հիշում եմ, գիտեմ, որ վերքերս թազացան: Է՛, մենք ի՛նչ տանջանքներ ենք քաշել, ի՛նչ բաներ ենք տեսել...

Պապային քաշեցին տարան, մյուս օրը լսեցինք, որ գյուղի բոլոր հայ տղամարդկանց տուներեն հավաքել, տարել էին, նավթ էին լցրել, վառել, ոչնչացրել էին...

Մյուս օրը էկան, մեզի հավաքեցին, ոչխարների պես քշեցին, ու՞ր՝ չգիտենք: Ճամփին հագիվ քայլում էինք, ընկնում, կանգնում էինք: Երեխեքը մայրերի փեշերից կախվում էին, չէին կարողանում քայլել...: Մի հավուզ կար, վրան ապաև-ղափլան կար փորագրված, հոնտեղեն ջուր խմեցինք... Ջարիթներն իրենց ձիերուն ոտքերի տակը քյոմուր հացի կտորներ էին շպրտում, իսկ մենք՝ իրար ձեռքից էինք խլում, բոլորս ալ անոթի էինք...: Մեզ Դեր Զորի չոլերն էին տանում...

Պապս շատ հարուստ մարդ է եղել: Մեծ մայրս յոթ աղջիկ է ունեցել՝ մեկը մեռել է, վեցը ողջ են մնացել: Բոլորն ալ շատ գեղեցիկ են եղել: Ժամանակին պապս ամեն ինչը ծախել էր, իր ընտանիքը եվրոպական հպատակ դարձրել և չորս աղջիկներին տարել Ամերիկա, իսկ երկու աղջիկները, ամուսնացած ըլլալով, մնացել էին Խարբերդում: Անոնցմե մեկը մայրս էր, մյուսն ալ՝ Աննա մորաքույրս: Թուրք զաբիթները, երբ տեսան, որ մենք եվրոպական հպատակ ենք, մեզ ազատեցին, մյուսներին՝ իզով-թոզով տարան, կորցրեցին: Պապս էդ մի լավությունը արել էր մեզ: Մենք մնացինք ճամփին, մի թուրքի գյուղում: Գիշերը գալիս էին, դանակը պահում վրաներս՝ ձայն հանելու իրավունք չունեինք, թալանում էին մեր ոսկեղենը, մեր խալիները, ամե՛ն ինչը...: Մայրս ինձ ու քրոջս տարավ, տվավ թուրք որբևայրի կնոջ մը, որ մեզ պահի. գոնե մենք ողջ մնանք: Ամեն թուրքի տունին առջևը չորս-հինգ հատ որբ երեխա կար մեռած, ընկած, տկլոր ու սոված: - Բաջի՛, ալլահըն սևերսեն բիր փարչա էքմեզ վեր (Քույրի՛կ, Աստծո սիրուն, մի պատառ հաց տուր), - ասում էին էդ որբ երեխեքը: Եթե թուրքերը խղճում, տալիս էին՝ լավ, թե չէ՝ սովից պատերի տակ ընկնում, մեռնում էին...

Էդ թուրք խանումի մոտ ես մնացի: Ճաշի սեղանը դնում էին, ուտում, պրծնում էին, խանումս էդ փշրանքները լցնում էր մի ամանի մեջ, վրան ջուր էր լցնում, փշրանքները փափկում էին, իմ առաջ էր դնում, ասում. - Եէ՛, գյավուր ղըզը (Կե՛ր, գյավուրի աղջիկ):

Տան մեջ իմ տեղը դռան առաջն էր, ոնց որ շունը կապում ես դռան առաջ, ինձ էլ դռան առաջն էր տեղ տված: Տար՝ կուտեի, չտար՝ չէի ուտի: Ձեր թողնում, որ տեղիցս շարժվեմ, բայց, ոտքերս բոբիկ-տկլոր ուղարկում էր ջրի. ցրտից մեկ ոտքս վեր էի քաշում, մյուսը՝ գետնին, սառույցի վրա էի դնում, որ չմրսեմ...: Մերս մի ուրիշ թուրքի տանը լվացք, մաքրություն կա-

ներ՝ մի փոր հացի համար: Թուրք տերը չէր ուզեր, որ մերս ինձ իր մոտ տանի, մի փոր հացի համար ամբողջ օրը չարաչար կաշխատեցնեին...

Մյուս քույրս մնաց մի ուրիշ թուրքի տանը, խաբար չունեմ՝ ողջ է, թե՝ չէ:

Օր մը մերս էկավ, գաղտնի ինձի ըսավ. - Ամերիկացին որբանոց է բացել, արի՛, էրթա՛նք:

Ըսի. - Թուրք տանտերիս ըսեմ:

Ըսավ. - Չէ՛, փախի՛ ինձ հետ:

Տարավ ինձ գցեց ամերիկյան որբանոցի դռանը, ինքը գնաց, քանի որ եթե իմանային, որ մայր ունեմ, ինձ ներս չէին առներ:

Որբանոցում լավ էր: Ճաշ էին տալիս: Օրը երկու անգամ ափի չափ հաց էին տալիս: Հացերուն մեկը կուտեի, մյուսը կպահեի՝ մորս գաղտնի կուտայի, երբ կուգար ինձի տեսնալու:

Մեզի ըսին՝ ամբողջ որբանոցը Ամերիկա պիտի տանին, բայց հետո հրաժարվեցին. ֆուրգոնով մեզի Հալեպ տարին: Ճանապարհին թուրքերը մեզի քարկոծում էին, մենք իրար վրա էինք պառկել, որ մեզի չըմեռցնեն...: Հետո մեզի տարին Բեյրութ՝ Լիբանան: Հոն խալիի գործարան կար: Ես տասը տարեկան էի, սկսա խալի գործել: Մտքիս մեջ տեսածներս էին, գիշերները քունս կփախեր, կհիշեի...: Մի երկու կնիկ մեծ խալի էին գործում, խնդրեցի՝ ինձ սովորեցրին: Ես խալիի գլուխները կգործեի: Գործարանի վերակացուն եկավ, ինձի ըսավ. - Ինչու՞ դպրոց չես երթար:

Ըսի. - Ի՞նչ ընեմ, ես որբ եմ, մերս հետովում մենակ է ու սոված, գոնե մի քիչ դրամ շահեմ, մորս ղրկեմ:

Արցունքներս տեսավ՝ մեղքցավ: Մի փոքրիկ դազգահ տվեց, որ գործեմ, փող շահեմ: Ամիսը մի հատ խալի էի հանում, աճագին դրամ հավաքեցի: Ուզեցի մորս ղրկեմ՝ ո՛չ հասցեն գիտեմ, ո՛չ մի բան: Մինչև հասցեն իմացա, լսեցի, որ մերս սովից մահացել էր:

Էդ վախտը խաբար էկավ, որ ֆրանսացի գործարանատեր մը եկած է, խալի գործող է ուզում, քանի որ զենահաթը ոսկի բիլեզուկ է: Ան իր ծախսովը պիտի տաներ Ֆրանսա, հետո ծախսը պիտի պահեր: Ես շուտ մը գնացի ցուցակագրվեցի: Քանի մը օր ետքը խաբար եկավ, որ պիտի գնանք: Փողերս մնացին գրասենյակը, առանց փողի գնացի, ըսի՝ ջահանա՛մը, մերս որ մահացել է, փողն ի՞նչ պիտի անեմ, ա՞չքս պիտի կոխեմ...

Ֆրանսան աղվոր երկիր էր, չիկա բառը չիկար, հետ չէինք զգում, որ օտար ժողովուրդ ենք: Ամբողջ օրը աշխատում էի, հոգնած գալիս էի, հանրակացարանի պես տեղ մը կար, աղջիկներով կապրեինք, կուտեինք, կքնանայինք...

Հոն ալ ամուսնացա խարբերդցի որբ տղայի մը հետ... Ամեն մարդ իրեն հարմարը կգտնար, կարևորը՝ հա՛յ ըլլար, երկրացի՛ ըլլար... կաշխատեինք, կապրեինք...

1932 թ. հունվար ամսին էկանք Հայաստան: Էկանք, տեսանք՝ խանութները միայն լուցկի կար, ո՛չ կաթ, ո՛չ հաց: Աղջիկս մեկուկես տարեկան էր, չդիմացավ չունի-չիկային, մեռավ...:

Վերջը տղաս ծնվեցավ, մեծցավ: Հիմա ես անոր մոտն եմ ապրում:

Վերջը բարի՛ն ըլլա...

117 (117).
ՄԱՐԳԱՐԻՏ ՍԱՐԳՍԻ ՆԱՋԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԽԱՐԲԵՐԴ)

Պապայիս կողմը Ղրիեն է գաղթած եղել, բայց մորս կողմը Խարբերդից էր: Մայրս ուսուցչի աղջիկ էր: Իմ պապիս Կարապետ վարժապետ էին ասում: Պապս և քեռիս՝ Կիրակոսը, հայկական դպրոցի մեջ դաս կուտային:

Հորս անունը Սարգիս Թորոսյան էր: Հայրս Կիլիկիայում է եղել և հայ կամավորների հետ կռվել է 1918 թվին՝ հույս ունենալով, որ մեծ տերությունները անկախություն պիտի տան: Մեր գյուղում շատ հայկական տնտեսություններ կային: Մեր գյուղի պես հարուստ գյուղ չկար, ջրերը շա՜տ, հողերը՝ շա՜տ, վաստակը՝ շա՜տ: Ցուղը, միսը, հացը, ամեն ինչը տանը կար, միայն օճառը և շաքարը մեկ ալ կտորեղենը քաղաքեն կբերեին: Մեր գյուղում եմիշ, ձմերուկ, ծիրան, շլոր, թուզ կցանեին: Մեր թութերը կուտ չունեին, կչորցնեինք, կադայինք, պոպոքով կշաղեինք: Մեր պաստիլը բեյազի մեջ կսարքեինք, մաքուր կըլլար: Որպես ճաշ քյուֆթա, սարմա, մածուն կուտեինք:

Մինչև 1915 թ. ջարդը հայ և թուրք իրար հետ շատ լավ էին: Պատերազմը, որ սկսվեց 1914 թ. հայ տղամարդկանց հավաքեցին, տարան, հետո լսեցինք, որ խփել են ու բոլորին գետն են թափել: Մորաքույրս էդ իր աչքով էր տեսել, եկավ պատմեց ու թույն խմեց՝ մեռավ:

Մերոնք կկովեին, բայց մեր կաթողիկոսը ըսավ. «Հանձնվեցե՛ք, մի՛ կովեք»: Մերոնք էլ զենքերը հանձնեցին: Հետո թուրքերը մեզ հավաքին, ոնց որ կոլխոզի նախիրը, քշեցին տարին: Ով արհեստավոր էր, էնոր չտարին:

Թուրք զաբիթները մեզ՝ երկու-երեք հարյուր երեխաներիս պարանով կապել էին՝ Եփրատ գետը գցելու: Հենց էդ ժամանակ հրաման եկավ, որ էտենց բան չանեք: Մեզ տարան Կիլիկիա: Զինադադարեն վերջը շատերը՝ կմախքի պես ևիհար, շատերը՝ վիրավոր կամ հիվանդ ելեր հասել էին Ադանա: Մայրս էլ անոնց հետ եկել էր, բայց ի՜նչ վիճակով: Քանի որ Դեր-Զորում մորս խփել են, փորի միջի աղիքները դուրս են թափվել: Մայրս իրան չի կորցրել, գոտիկը հանել է, պինդ կապել: Բայց արդեն վրան հալ չկար, երբ ինձ գտավ, միայն գրկեց ինձի ըսավ. «Վա՜խ, զավակս» ու գլուխը վար ինկավ:

Եղբայրներուս թուրք վալին առել, դրել էր թուրքական դպրոց:

1918 թ. վերադարձանք մեր տունը: Տեսանք՝ մեր տունը չէր փլած, բայց դռները, պատուհանները հանված էին, մեջը լրիվ թալանված: Սկսանք շինել քանդվածը: Նորեն՝ ցանել, նորեն՝ հնձել:

1922-ին ամերիկացիները մեզ բերեցին Հալեպ: Ես ձեռագործի տան մեջ կաշխատեի՝ ամերիկացիների համար: Մեր ձեռագործները անոնք կղրկեին Ամերիկա: Ամուսնացա: Փոխադրվեցանք Բեյրութ: Ունեցանք երկու աղջիկ, մեկ տղա՝ Ալիս, Արմենուհի, Հովհաննես: Հարուստ չէինք, բայց լավ կապրեինք:

1947 թվին ներգաղթեցինք: Բաթում իջանք, մեր ամեն ինչերնիս թափել տվին: Մի սև բան բերին, կարծեցի աթար է, դու մի ասի հաց էր: Սով էր: Եկանք Հայաստան: Մեզի բերին էստեղ՝ Նուբարաշեն, հետո կոչվեց Սովետաշեն: Սկսանք մեր ունեցած հագուստները, ոսկեղենը ծախել ու ապրիլ: Ես մտա որբանոց՝ ճաշ կեփեի: Ամուսինս մտավ կոլխոզ: Մեր նորեկները աշխատասեր էին, արհեստավոր էին՝ դերձակ, ոսկերիչ, կոշկակար էին: Ամեն բան սուղ էր: Ես որբանոցի խոհարարն էի: Գողություն չէի գիտեր: Մեր կարծիքով, գողությունը ամենաամոթ բանն է: Օր մը իմ ընկերը ըսավ. «Երեխեքիդ ո՞նց կպահես, գողացի՛ր»: Բայց ես չէի կարող գողանալ: Էդենց էլ ամբողջ կյանքս չունի-չիկայով անցավ: Երբ գալիս էինք Հայաստան, կարծում էինք, որ Թուրքիայի մեր հողերը ետ պիտի տան մեզի, ամմա ոչ մի բան չտվին: Հոստեղի հողն ալ քար է ու քար:

Ամուսինս 1980 թ. մեռավ:

Հիմա հայությունը կերթա, ես ընելությունս առել, ըստեր եմ:

Ոնց որ Ղարաբաղի համար են պայքարում, էդենց էլ թող պայքարեն մեր հողերուն համար:

118 (118).
ՌՈԲԵՐ ԽՈՐԵՆԻ ԳԱԼԸՆՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1912 Թ., ԽԱՐԲԵՐԴ)

Հայրս՝ դոկտոր Խորենը, ամերիկյան համալսարանի շրջանավարտ բժիշկ էր, ծառայել էր թուրքական բանակում, որպես զինվորական բժիշկ և դեղագործ: Հետևաբար, պաշտոնի բերմամբ շրջել է բոլոր վիլայեթներում և հայ ժողովրդի բեկորների հետ հասել է մինչև Դեր Զոր: Տեսել է, թե ինչպես շատերին հերթի են կանգնեցրել, որ մորթեն, շատերը խնդրել են բժշկի օգնությունը, և նա ինչքան, որ իր ուժերը ներել է, գաղտնի կերպով ազատել է յաթաղանից:

Խարբերդում Եսթեր անունով մի սիրուն աղջիկ կար: Թուրքերը բռնել են մորը և ծեծել են, թե ու՞ր է աղջիկդ, մայրը հարվածներուն տակ մեռել է, բայց չի ըսել աղջկան տեղը: Մի հայուհի կար, որ ամուսնացել էր իրեն բռնի առևանգած թուրքի հետ: Թուրք ամուսինը կլսե, որ կինը հայերի հետ փախչել է ուզում, գիշերով կգա, խանչալը կհանե, բերանը կճղե՝ ականջե-ականջ:

Թուրքերը հավատափոխ էին անում փոքրիկ երեխաներին, «Մուհամեդ ռասուլ ալլահ» էին ասում այուններ էին անում, այսինքն թլպատում էին, անունները փոխում էին և ստիպում՝ թուրքերեն խոսիլ:

Իմ հոր հայրը Խարբերդում պատվելի է եղել: Երբ թուրքերը եկել մտել են Խարբերդ, պապիկիս սպանել են հենց իր տան տանիքի վրա: Անոր կինը՝ Բամբիշ Ալմաստը տղամարդու պես կին է եղել, կսկսի թուրքերուն հետ կռվիլ, բայց Բամբիշ Ալմաստին ու նրա Խորենն տղային թուրքերը կտանին, կթուրքացնեն. Խորենին Խայրուլլա կըսեին: Մայրը՝ Բամբիշ Ալմաստը վաթսուն ոսկի պահած ունի եղեր, տվեր է տղային բժշկության հետևցուցել է: Թուրքերը կհարգեին և շատ կսիրեին իրենց զաբիթ բժիշկ Խայրուլլային: Նույնիսկ անոր վրա պահակ դրած էին, որ հայերուն չօգնի հանկարծ:

Մի օր թուրքերը պապայիս տանում են մինչև Բալու, որ մի հիվանդի փրկի: Պապաս պայուսակից դեղեր կհանե, կբուժե հիվանդին, որպես շնորհակալություն մի հատ կով կուտան իրեն, բայց կըսեն. - Բալուի մեջեն մի տանիր, որ հայերը չտեսնեն, քանի որ կովը հայերից գողցված է:

Օր մը Խարբերդում Սիրվարդ անունով սիրուն աղջիկ մը թուրքերուն ձեռքեն կազատվի, կուգա հայկական եկեղեցի: Եկեղեցու տերտերներից մեկը Սիրվարդին հետ կուգա հորս՝ բժիշկ Խորենի մոտ, որ նա օգնի և աղջկան Ամերիկա ղրկի, ուր և փախել էր աղջկա հայրը: Բայց թուրքերը կիմանան, տերտերին կծեծեն, աղջկան կփախցնեն: Աղջիկը նորեն կուգա հորս մոտ, կուզե, որ հայրս իրեն օգնի: Հայրս ինչպես կընե, ինչպես չըներ, աս աղջկան կղրկե Պոլիս, որ անտեղեն Ամերիկա էրթա:

Պոլիսի մյուդուրը կտեղեկանա, կկանչե հորս, կըսե. - Դոկտոր Խայրուլլա, լսել եմ, որ դու մուսուլման աղջիկներուն Քրիստոսին ես դարձնում:

Հայրս կզգա, որ իր վիճակը վտանգի տակ է: Արդեն իր ընտանիքի բեռները ղրկած էր Հալեպ՝ գաղտնի ճամփաներով, լեռներուն մեջեն: Գիշերով էկավ Պոլիսեն, շտապ մեզի հավաքեց ու հեռացան Խարբերդեն: Ես կհիշեմ Դև Բոյնի (ուղտի վիզ) կոչվող բարձր սարի վրայեն դժվարությամբ անցանք, հասանք պարսպապատ Տիգրանակերտ քաղաքը, որտեղ շատ մեծ ձմերուկներ կային, Եփրատ գետը քաղաքի մեջեն կհոսեր: Հետը տիղմ ու դիակներ կբերեր: Քաղաքի դռան մոտ ժանդարմը կանգնած էր: Մեզ ստուգեցին, խանը մնացինք: Առավոտյան հասանք Մերդին: Մի կաթոլիկ տերտերի տանը մնացինք, հետո գնացք նստանք, թուրքի սահմանն անցանք: Շունչ մը քաշեցինք, որ թուրքի ժանդարմներից ազատվանք: Հետո անցանք Հալեպ, հետո՝ Բեյրութ, հետո Եգիպտոս, հետո ալ 1948-ին Հայաստան եկանք:

119 (119).
ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՐՈՒՋԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՔՂԻ)

Ի արբերդ քաղաքի մոտիկ գյուղերն են Հուսենիկ, Քասրիկ, Խըրխըրիկ, որոնք երեքն ալ հայկական գյուղեր են:

1915 թվին էր, էկան հայտարարեցին, որ թուրքական կառավարությունը որոշել է բոլոր տղամարդկանց տեղահանել, պայմանով, որ ոչ մեկին ձեռք չեն տալու: Խարբերդը խաբվեց:

Խարբերդի բոլոր տղամարդկանց հավաքեցին, տարին Քյուրդխանե՝ Եփրատի ափին, Մալաթիա չհասած: Բեդրի բեկը, որը թուրք էր, սկսեց խփել, սպանել հայ տղամարդկանց: Հիմա՝ հերթը էկավ հայ կանանց ու աղջիկներին: Ասեցին՝ ձեզի պիտի տանենք ձեր ամուսինների, եղբայրների ու զավակների մոտ և սկսան ճանապարհին կողոպտել, մերկացնել, բռնաբարել: Այնպես որ, մոտ երկու հարյուր հիսուն հազար հայ, իբր պիտի Տիգրանակերտ տանեն, Տիգրանակերտի ճամփին Դևե Բոյնի սարի Գյոլջիկ ըսված լճակին քովը հերթով կոտորեցին: Իսկ Կիլիկիայի հայությանը քշեցին, անոնք հասան մինչև Դեր Զոր: Թուրք, քյուրդ, չերքեզ, որոնք ավազակ էին, մարդասպան էին և բանտարկված էին հարյուր մեկ տարի բանտարկությամբ, ազատեցին, բանտից հանեցին, որ հայերին կացիններով ջարդեն, կոտորեն: Հայերն անզեն էին, մի դանակ անգամ չկար քովերնին: Քանի որ հրաման էլած էր թուրք կառավարության կողմից. «Չենք ում քովը որ գտնենք՝ կգնդակահարենք»:

Ու՞ր մնաց Սեբաստիան: Ու՞ր մնաց Տիգրանակերտը: Ու՞ր մնաց Սասունը: Ու՞ր մնաց Զաբաղջուրը...

- Ով որ յոթ գյավուր սպանի, - ասել է շեյխ Արըֆը, - ջաննաթ կէրթա:

Իրարանցում, տակնուվրայություն: Մեյմընն ալ մեկ կնիկ դեներում, վերմակներում վրա կայնեց, սկսեց խոսել. - Թուրքերը մեզ խաբու՛մ են, մի՛ խաբվիք, մեզ տանում են կոտորեն կամ թուրքացնեն: Դուք թուրք չդառնաք, եթե մի հայ չմնա, ես միևնակ մնամ, եթե հայ տղամարդ չկրնամ առնել, հայ շունի հետ կմնամ, հայ ազգը նորեն մեջտեղ կբերեմ:

Կնիկ, աղջիկ հաշիվ կընեին՝ սատեղը տասընհինգ-քսան տարվա կյանք մը ունինք, ինչու՞ թուրքին կնիկը պիտի ըլլանք, իրար ձեռք-ձեռքի կուտային, յալլա՛, Եփրատ գետը կնետվեին: Հազարներով ջուրը կթափվեին: Կհիշեմ աղջիկան մը մայրը քսան ղուրուշ տվավ թուրք զաբիթի մը, որ լողալով իր աղջիկը ջուրեն դուրս հանե. «Սեբերե քալմասըն» (կարիքի մեջ չմնաս) ըսավ թուրքը, էլավ գնաց:

Մայրս արդեն ծանր հոգեվարք էր, կզգանք՝ պիտի մեռնի, ինձի կանչեց, ըսավ. - Ա՛չքդ քոռանա:

Ըսի. - Մամա՛, ինչու՞ համար այդպես կըսես:

- Այդպես կըսեմ, որ խելքի՛ գաս: Երկու աչքդ քոռանա, փորդ չկշտանա, եթե թուրք աղջիկին հետ ամուսնանաս, - ես ալ թուրք աղջկա հետ նշանված էի: Ետքը շարունակեց. - Թող թուրքերը ըսեն՝ հայուն վերջը տվինք: Ադ թուրքի աղջկան նշանը ե՛տ պիտի ընես: Քեմալ փաշայի աղջիկն ալ, որ քեզի տամ՝ չառնե՛ս. մենք կառավարությունն ունինք, աշխարհքի ո՞ր կողմն է՝ չգիտե՛մ: Դուն հայ ես, պիտի երթա՛ս քո հայրենիքդ: Դրամ ալ չունենաս ե՛ն, տոպրակ մը ետտե վիզդ, մուրացկանությունն ըրե, հայ կառավարությունը գտի՛ր: Երդվի՛ր:

Ես ծունկի եկա մորս անկողինին քովը, երդվեցի:

Մայրս շարունակեց. - Իմ կաթս հալա՛լ ըլլա, ուր որ էրթաս, Աստված քու հե՛տդ ըլլա: Աստված քեզ օգնակա՛ն ըլլա...

Մայրս մեռավ: Թաղեցի: Թուրք աղջկա նշանս ետ ըրի: Քեղիից դուրս եկա: Քառասունհինգ օր ոտքով քալեցի, հասա Հալեպ, եկա մալի՝ ապրանքի բազարը, հայերի հանդիպեցի: Ես թուրքի շորերով էի: Մովսես անունով մարդ մը կար, ինձի հարցուց. - Սեն էրմա՞նի սըն (Դու հա՞յ ես):

- ՀԷ՛ (Այո՛):

- ԲԷն դէ էրմէնի ըմ (Ես ևս հայ եմ):

- Բու գյուն կիրակի դըր, գէթ եկեղեցիէ (Այսօր կիրակի է, գնա եկեղեցի):

Ես ո՛չ «կիրակի», ո՛չ «եկեղեցի» բառերը հասկցա:

- Աղնամադը՞ն, - հարցրեց մարդը (Չհասկացա՞ր):

- Յօ՛ք (Ո՛չ):

- Սէն էրմանի դէյի՞լ սըն (Դու հայ չե՞ս):

- Էրմանի ըմ, ամմա էրմէնջէ բիլմէմ (Հայ եմ, բայց հայերեն չգիտեմ):

Էս մարդը ինձ առավ, տարավ իր տունը: Նոր իմացա հայություն կա: Հոն ամուսնացա: Վերջն ալ Հալեպեն եկանք Հայաստան: Նոր Խարբերդում առաջին տունը իմ տունս կանգնեցավ:

120 (120).
ՀԱԶԱՐԹԱՆ ԵՂԻԱԶԱՐԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ԲԱԼՈՒ)

Ա սքան տարի անցած է, բայց մինչև հիմա գիշերները քուն չունիմ, անցած-դարձածը աչքիս առջև կուգա՝ մեռելները, սաղերը կհաշվեմ:

1915 թ. Զատիկը եկավ: Հավկիթները ներկել էինք, բայց արժանի չեղանք:

Թուրքիայի թագավորը Սերոբ փաշային կանչեց, ըսավ. - Քեզի նշաններ կուտամ, Բիթլիս քաղաքն ալ քեզի կուտամ:

Ան ալ ըսավ.

- Ցված նշաններդ գետինն անցնին, Բիթլիս քաղաքն ալ գլուխդ անցնի: Ես կուզեմ իմ հայ ազգը ազատվի:

Թագավորը հայ ազգին ազատություն տվավ*: Ետքը թագավորը եկավ, զենքերը հավաքեց: Ցոթ ջորու բեռ հավաքեց:

Մի շաբաթ հետո, գիշերը ժամը տասներկուսին, քրդերը կոխեցին մեր գյուղը: Հայերու տղամարդիկը մեկը՝ փախավ բախչան՝ մեկը՝ մարագը...

Առավոտյան էլանք, մեկ հատ մոլլա կար, ադոր ցեղը կտրվի, իբր մեզի պիտի պահե, բայց բոլոր գյուղացիներու վեշերը իրենը պիտի ըլլան: Մեզի տարավ իր տունը: Մենք մտանք ներս: Ան ըսավ. «Տղե՛րք, եկե՛ք, ձեզի ներսը պահեմ, ես էրթամ միլիցիա բերեմ, որ ձեզի պահակություն ընե»: Գնաց միլիցիա բերավ, բոլորին մեկ-մեկ դուրս հանեց, ձեռքերը կապեց: Անոնց մեջեն երկրորդը պապայիս կապեցին: Չոխա շալվարը հանեցին, ադ շալվարին մեջը հինգ հարյուր ոսկի կար կարված: Տարին՝ ջարդ ու փշուր ըրին, ըսին՝ կանալք ազատ են: Թագավորին ծառաները բերին ցորենը, գարին քաղել տվին կնիկներուն: Ես ալ ախպորս երեխան փոքր էր, չաղը կապած էինք, չաղըրին մեջը երեխան կօրորեի: Թագավորի ծառան տեսավ ինձի: Եկավ մորս ըսավ. «Աս աղջիկդ ինձի տուր»: Մամաս չտվավ: Բայց քույրիկիս փախցուցին: Մյուսներուն ջարդեցին, սպանեցին, բոլորին դիակները անթաղ մնացին, արևին տակը ոտնեցան ու ոտնեցան: Հոնտեղը պապայիս ալ սպանեցին: Ջաճելի մեկն ալ եկավ ինձ վրա, ուզեց ինձ սպանել, ես փաթաթվա անոր, ըսի. - Դուն ալ քույր ունիս, ինձի մի՛ սպաներ:

Տղան ըսավ. - Քո խաթերդ քեզ չեմ սպանում:

Ես փախա ետ, դեպի մեր բախչան, մեր տունը մտա, տեսա, որ ախպորս քարտեզները պատերեն պոկել, պատառ-պատառ ըրեր են՝ էշն ի՞նչ գիտի, նուշն ինչ բան է: Էլա լուսամուտը նստա, լացի: Թուրք կնիկ մը եկավ, ըսավ ինձի. - Ինչու՞ կուլաս:

- Ես չիլամ, հապա ի՞նչ ընեմ:

Ադ թուրք կնիկը ինձի տարավ: Ես անոնց ախոռը կպառկեի: Ադ ժամանակ ալ Բայրամի օրերն էր: Իմ քույրիկիս ալ թուրքերը փախցուցած են, ադ գյուղը բերած են: Հոդ ալ քույրս ծանոթ մը ունի՝ Մուշլիս անունով: Թուրքին մեկը ինձի տարավ Մուշլիին տունը, դուռը զարկի: Կնիկը դուռը բացավ ըսավ. - Ես քեզի չեմ կրնար ներս առնել, կվախնամ: Ամմա թռչունը, որ թռչուն է, ինքզինքը փուշի վրա նետե ե՛ն, փուշը կազատե. դուն մեր դուռը եկեր ես, քեզի թուրքին բերանը չե՛մ ձգեր, - ներս առավ:

Ես ալ մեր ընտանիքի ոսկիները կապած եմ ոտքերուս տակը: Մամայիս աքսորած են, խաբար չունեմ: Քույրս թուրքերը փախցուցեր են: Քեռուս մեկը ջորեպան կտրիճ մարդ էր, տասներկու հոգով վրան կհարձակվին անոր կսպանեն: Մորաքրոջս տղային, մյուս երիտասարդներուն հետ, տարել էին թուրքի բանակ՝ Ամիլե թաբուր, բոլորին մարագ մը լեցուցեր են, նավթը տվել, վառել են: Մեծ քրոջս երկու երեխայով վառել են: Մի կույր քույր ունեի, անոր ալ արտերուն մեջը սպանել են: Բոլոր արտերը, սարերը, ձորերը դիակներ ու գանգեր էին լցված: Ադ բոլորը աչքիս առջև են: Ադ տեսակով ջարդ ու խուրդ եղանք:

Երկուշաբթի օրը առտու կանուխ մարդ մը եկավ, իբր որսորդ, փայտի ծայրը անցուցեր է բոխչան, ինձի պիտի տանի Խարբերդ:

- Ու՞ր կերթանք, - հարցուցի:

- Պիտի Խարբերդ էրթանք, եթե թող ընեն:

Հասանք Ղոնաղալմազ: Թուրք տղաները հագնված-սքված էին: Մեր ծանոթ Սեդրակին տունը կփընտրենք, դու մի ըսեր՝ անոր մեծ ախորը խփեր են, կնիկին թուրքերը տարեր են: Ինձի հարցուց. - Դուն ո՞վ ես:

Ես ալ ըսի. - Եթե ղոնաղ կընդունիս, կըսեմ ով եմ ես: Ես Մարգարին բալդըզն եմ, այսինքն՝ քենին:

- Վա՛յ, - ըսավ, - արի՛ ներս:

Մեկ ամիս մնացի հոն: Ցոթը բաթման բամբակը մանեցի: Ինձի տվին, որ տանիմ Խարբերդ: Խարբերդում խազեինս ինձի ցորեն մաղել տվավ, տասներկու ղուրուշ տվավ: Անտեղեն Տիգրանակերտ գացի, վերջը՝ Զարաբլուս, հետո՝ Հալեպ գացի: Մեկ տարի ծառա աշխատեցա: Ուզեցի քեմփը էրթալ, հոն շատ հայեր, անապատներեն ողջ մնացածները հավաքվել էին: Ես ուզեցի մորս գնամ: Կնիկ մը ըսավ. «Աս մեր աղջիկն է»: Հարսիս մորքուրին հետ համբուրվա: Անոնց քովն ալ մնացի:

Քեմալին ժամանակը ես Հալեպ էի: 1930 թ. փետրվարին գացի Ֆրանսա: Ամուսնացա, չոլուխ-չոջուխի տեր դարձա: 1947 թվին եկանք Հայաստան:

121 (121).
ԿԱՐԱՊԵՏ ՍԱՀԱԿԻ ՖԱՐԱՃՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1906 Թ., ԲԱԼՈՒ)

Ծ նած եմ Բալու 1906-ին: Հորս անունը Սաճակ (ծն. 1878), մորս անունը՝ Նարդուհի (ծն. Նաջարյան, Խարբերդ, Էլազիկ գյուղ), քույրս՝ Սիրարփի (ծն. Բալու 1908-ին), քույրս՝ Հռիփսիմե (ծն. Բալու 1911-ին), եղբայրս՝ Գրիգոր (ծն. Բալու 1914-ին): Հորս մեծ եղբայրը՝ Հովսեփ, զինք կկոչեինք Մղսի Հովսեփ, որը Մաւտեսի Հովսեփ ձևի կրճատումն է, տրված ըլլալով, որ Երուսաղեմ գացած էր: Մուղսի բառը մահմեդականներուն հաջի բառին կհամապատասխանի: Հորս մեծ եղբոր կինն էր Մարիամը: Չեմ գիտեր, թե հայրս քանի պզտիկ եղբայրներ և քույրեր ուներ: Անոնք բոլորը Տիգրանակերտ կբնակեին, տարին քանի մը անգամ միայն մեզի կուգային, բեռցված ձիերով և ջորիներով՝ ճամփորդությունը չորս օրեն ընելով, քանի որ Բալուեն Տիգրանակերտ հարյուր հիսուն կիլոմետր էր: Աս բոլորը զոհ գնացին 1915-ի եղեռնին:

* Իմա՝ 1908 թ. թուրքական սահմանադրությունը:

Հովսեփ հորեղբայրս առևտրական էր, խանութ մը ուներ Բալու քաղաքի շուկան, ուրիշ խանութ մըն ալ՝ Ծապաղ ջուր կոչված ավանին մեջ: Հորեղբորս կինը, հայրս, մայրս, երկու եղբայրներս և ես՝ ութը հոգի, նույն շենքին մեջ կբնակեինք՝ մեկ կողմը հորեղբայրս և կինը, մյուս կողմը՝ մենք:

Հայրս ուսուցիչ էր՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո կողքի մանչերու դպրոցը: Իսկ Ս. Աստվածածին եկեղեցուն կցված էին մանկապարտեզը և աղջկանց վարժարանը: Կհիշեմ մանկապարտեզ հաճախելս: Կարմիր գոգնոց ունեի, և պզտիկ աթոռի վրա նստած՝ վարժուհին մեզի Ա, Բ, Գ կսորվեցներ:

Հայրիկս և մայրիկս Խարբերդի մեծ կոլեջը հաճախած էին: Խարբերդի մեջ կային Եփրատ կոլեջը, ֆրանսական կոլեջը, գերմանական կոլեջը և ամերիկյան մեծ կոլեջը: Մենք սովորություն ունեինք մեր ամառանոցի գյուղի բնակարանը երթալ: Գյուղին անունը չեմ հիշեր, ջուրի աղբյուրի մը անունով կկոչվեր: Հոն կանցնեինք տաք օրերը: Հետո այգեկութ ու պտուղները հավաքելե վերջ Բալու կվերադառնայինք: Հայրս խաղողը փայտի տաշտի մը մեջ ոտքերով ճզմելե վերջ, գինի կշիներ հողե կարասներու մեջ:

Հայրս 1914-ի աշնան զինվոր տարին: 1915-ի գարնան հորեղբայրս ձին առավ և իրեն հետ զիս վրան նստեցնելով՝ «այգի երթանք» ըսավ: Երբ այգի հասանք, ձմեռվա պաղեն պաշտպանելու համար որթատունկերուն ոտքերը ծածկող հողակույտերը ետ քաշելե վերջ, զանոնք կտրեց: Մինչ այդ ես կապույտ ծաղիկներ հավաքեցի դաշտերու մեջեն: Երբ տուն վերադարձանք, կիները շատ տխուր էին: Թուրք ոստիկաններ եկած և ըսած էին, որ հորեղբայրս պարտավոր էր կառավարչատուն երթալ, մեյ մըն ալ զինքը չտեսանք: Հայրս ալ զինվոր կանչեցին: Գնաց. մեյ մըն ալ զինք չտեսանք: Վստահ եմ, որ երկուքն ալ մյուս հայերուն պես անմիջապես սպանված են թուրքերեն: Այդ օրերը ճերմակ հագված ոստիկաններ եկան Բալու: Անոնք հայ ընտանիքները եկեղեցվո բակը կտանեին, քանի մը օր հոն պահելե վերջ թող կուտային, անոնք կամ իրենց տունը կվերադառնայինք, կամ միասին մեկու մը տունը կհավաքվեինք: Այսպես օր մը մեզի դրացի Բարսեղենց տանը հավաքված էինք: Կհիշեմ, մայրս պզտիկ եղբորս ծիծ կուտար, ինձի խրատեց, որ եթե թուրքերը հարցնեն, ըսեմ, որ վեց տարեկան եմ: Մեյ մըն ալ տեսանք, որ գայմագամը եկավ, խնդումերես բաներ մը ըսավ, որ ես չըհասկցա: Չեմ հիշեր՝ մեկը ինձի խորհուրդ տվավ, թե՝ ինքնաբերաբար ձգեցի ու շուկա գացի, հայ պայտարի մը կրպակը, ուր քանի մը արհեստավորներ հավաքված էին՝ ատաղձագործ, որմնադիր և այլն: Ինձի ըսին, որ վերնատան մեջ պահվտիմ. քիչ վերջ Սեհմետ հոջա անունով թուրք մը եկավ, ինձի ըսին, որ իրեն հետ երթամ: Կը հիշեմ ձեռքես բռնած ինձի կառավարության շենքը տարավ: Հոն զիս իբր հոգեզավակ «Հյուսեին Իսլամ» անունով արձանագրել տվավ ու տարավ իր բնակած գյուղը: Արածանի գետի վրա Մեծն Տիգրանի օրով շինված կամուրջին վրայեն անցած ատենս տեսա, որ գետը արյունոտ էր: Հոն կտանեին հայերուն և վիզը կտրելե վերջ, կամուրջեն վար՝ գետը կնետեին. այսպիսով անունը «Արյունոտ կամուրջ» եղած էր: Մեհմետ հոջան ինձի տարավ քաղաքեն դուրս՝ Գոհանամ կոչված վայրի իր տունը: Ձիս իր կնոջ ներկայացուց, ըսավ՝ «Քեզի տղա մը բերի՝ անունը Հյուսեին է»:

Կինը անվերապահ ինձի լավ ընդունեց: Կրակին վրա դաշ էքմայի՝ քարի վրա եփված հաց կար, ինձի տվավ, ես ալ ախորժակով կերա: Ինձի ըսավ, որ դուրս երթամ ծառերուն տակ և դաշտերը խաղամ: Հոն կային էշեր, ձիեր, որոնք կարածեին: Ես ալ կենդանիները շատ կսիրեի, հաճույքով անոնց հետ ժամանակ անցուցի: Ինձի այնպես կթվեր, որ հոն օդափոխության գացած էի՝ գիտակցելով, որ քաղաքը սարսափելի դեպքեր տեղի կունենային: Քանի մը օր վերջ անդրադարձա, որ եղելությունը բոլորովին տարբեր է ու սկսա ծնողքս փնտրել: Կուզեի տուն վերադառնալ, բայց ճամփան չէի գիտեր:

Գոհանամ գյուղին մեջ կար նաև Նուրի աղա անունով ծեր թուրք մը, որուն տղան հայ դերձակի մը քով աշակերտություն ըրած էր: Անոր տունը կբնակեին դերձակին երկու աղջիկները, դերձակը և կինը արդեն սպանված էին: Ես պզտիկ աղջկան հետ կխաղայի:

Օր մը կուլայի, Նուրի աղան քովս եկավ, իրեն ըսի. - Ես մեր տունը երթալ կուզեմ:

Ան ինձի ըսավ. - Հա՛, օղլու՛մ, հա՛ (Այո՛, տղա՛ս, այո՛):

Ես իրեն ըսի. - Հայրիկս շատ դրամ ունի, քեզի շատ դրամ կուտա, եթե զիս մեր տունը տանիս:

- Հա՛, օղլու՛մ, հա՛ (Այո՛, տղա՛ս, այո՛), - ըսավ նորեն:

Այսպես հույսով կապրեի, բայց քանի մը օր վերջ սկսա կամաց-կամաց ըմբռնել եղելությունը: Ամիսներ վերջ հասկացա, որ ամեն բան վերջացած է:

Օր մը տեսա, որ Մեհմետ հոջան իր կինը լավ մը ծեծեց, ես մեր տունը այդպիսի բան չէի տեսած, շատ ազդվեցա, բայց տեսնելով, որ այդ դեպքը կկրկնվի, եզրակացուցի, որ այդ իրենց սովորությունն է:

Լսեցի, որ Մեհմետ հոջան ինձմե առաջ հայ, քրղեցի տասներկու տարու տղա մը տունը բերած էր: Երբ ես իր տունը գացի, այդ տղան հոն չէր: Օր մը պարտեզներեն վերադարձիս տեսա այդ տղան, որուն անունը Հասան դրած էին: Տունը ուրիշներ ալ եկած էին և վերադարձին առթիվ խնջույք կընեին: Ի վերջո մեկը Մեհմետ հոջային հարցուց, թե՝ ի՞նչ պիտի ըներ զիս: Այդ վայրկյանին Մեհմետ հոջան կարմիր, խոշոր-խոշոր բացած աչքերեն կարծես կրակ կելլեր, ինձի նայեցավ շեշտակի: Ես այդ վայրկյանին իրմե սարսափեցա: Ի վերջո որոշեցին զիս իրենց պահել, իսկ Հասանը տալ Մեհմետ հոջային պզտիկ եղբոր՝ Մուսթաֆային: Պետք է ըսեմ, որ Մեհմետ հոջան իր կնոջ հետ քանի մը զավակներ ունեցած էր, բայց բոլորն ալ մեռած էին ծնվելու ժամանակ:

Երբ ձմեռը մոտեցավ, ամառանոցը ձգելով՝ քաղաք եկանք: Հոն թուրքերը հայերու գեղեցիկ տուներուն մեջ տեղավորվեցան: Մեհմետ հոջան մեր տունեն քիչ մը վար թաղի տունի մը մեջ հաստատվեցավ, ասոր համար շատ մը թուրքերու պես կառավարութենեն թույլտվություն մը ճարած էր:

Օր մը ես մեր տունը գացի, բոլորովին խեղճ վիճակի մը մեջ էր: Փողոցեն տան մուտքի պզտիկ փայտե կամուրջը քանդված էր, բոլոր դռները, պատուհանները հանված., նայեցա ու սկսա լալ, ի վերջո վերադարձա Մեհմետ հոջային քովը:

Ձմեռը այսպես անցնելե վերջ կրկին Գոհանամ գացինք: Մահմետ հոջային Նուրի տղան գիտնալով, որ հոջան զիս այլևս չի կրնար պահել, խորհուրդ տվավ Հաջի քէօյ երթալ, այրի կնոջ մը քով, որ երկու-երեք զավակ ուներ, մոտավորապես իմ տարիքիս: Անոր քով մնացի մինչև աշնան վերջ: Շատ աղքատ ըլլալուն ինձի ըսավ, թե երկու կոշկակար եղբայրներ կճանչնա Բալու, որ կրնան զիս իրենց տունը առնել: Այսպիսով իրենց քովը մնացի: Մեծ եղբայրը, կինը և երկու զավակներ գետնահարկ մը կբնակեին՝ իրենց սենյակի վերնահարկը քովեն պզտիկ բացվածքով մը պատուհանի նման, ուր կպառկեի: Հոն դրված էր իրենց էշուն խոտը և տախտակե դարանի մը վրա շարված էր ձմեռվա լավաշը: Օրվա ընթացքին գրեթե անոթի գիշերվան կսպասեի, որպեսզի այդ հացեն մեկ հատ առնեմ և փորս կըշտացնեմ: Իրիկուն մը մեծ եղբայր կինը բակեն ճշմարեց հաց ուտելս, ես հացը բարձիս տակը պահեցի և քնանալ ձևացուցի: Մեծ եղբայրը եկավ վրայես ծածկոցը հանեց, ձեռքով շոշափեց, հացը գտնելու համար, բայց ոչինչ գտնելով վար իջավ: Պզտիկ եղբոր կինը, որ անկողինս շտկած էր, հետևյալ օրը ինձի հասկցուց, որ հացը բարձիս տակը գտած էր, բայց որևէ մեկուն բան չըպիտի ըսե:

Մեր Բալուի մեջ կապրեր Թյուֆենկչյան հայ ընտանիք մը: Ամուսինը զինագործ էր, անոր զինվոր տարած էին և մեռած էր: Մնացած էին կինը, աղջիկը՝ տասնըչորս տարու, երկու մանչ տասը-տասներկու տարեկան: Մեհմետ հոջան Թյուֆենկչյանի այրիին կըսե, որ բոլորդ ալ գաղթական պիտի երթաք ու սպանվիք, եկեք մեր տունը՝ Գոհանամ, ես ձեզ կփրկեմ: Այսպիսով այրին և զավակները բոլոր ունեցածներով կերթան Գոհանամ՝ Մեհմետ հոջային տունը: Հոջան այրիին իբր կգործածե, աղջիկն ալ պզտիկ եղբայրը կառնե: Քանի մը օր վերջ այրիին կըսե, որ երկու տղաքը քաղաք պիտի տանի դպրոց դնելու համար: Կը տանի ու մորթելե վերջ Արածանիին մեջ կնետե: Քանի մը օր վերջ այրիին և աղջկան կըսե, որ լաթերը հավաքեն և էշերուն վրա դնեն, գետը երթան լվալու: Ինքն ալ քաղաքի գործերը ընելե վերջ ետ կբերե իրենց Գոհանամ: Երկուքն ալ մորթելե վերջ գետը կնետե: Այս բոլորը Մեհմետ հոջային կինը ինձի պատմեց, երբ օր մը իրենց գացած էի՝ երկու կոշկակար եղբայրներուն տունը եղած ատենս:

Մեհմետ հոջան հայերե կողոպտված կամ լքված կենդանիներ, ոչխար, այծ և այլն տուն կբերեր և ինձի կըսեր, որ տանիմ արածել տամ: Օր մը ձոր իջնելե վերջ դիմացի լեռը բարձրացա և ձգեցի, որ կենդանիները արածեն, ես ալ քիչ մը քնացա, երբ աչքերս բացի կենդանիներեն ոչ մեկը չկար: Ասդին, անդին փնտրեցի, չգտա ու ի վերջո հուսահատ քարի մը վրա նստա ու սկսա լալ: Հայրիկես, մայրիկես միտքս մնացած աղոթքները Աստվածածինին, Քրիստոսին պաղատելով ըսի, որ հոտը գտնամ: Այդ ատեն երեք ձիավոր մինչև ականաները զինված հոնկե կանցնեին: Մեկը զիս ճանչըցավ ու հայերեն ըսավ. «Սահակին տղան է»: Ինձի քիչ մը չամիչ և լեվլեպի տվավ: Միևնույն ժամանակ աչքերը ետևս հառած էի, ետև դարձա՝ հոտս ետևս էր:

Գարնան միտքս դրի կոշկակար երկու եղբայրներուն տունեն հեռանալ: Օր մը ձգեցի ու քաղաք գացի: Հոն խումբ մը հայ կիներ և խումբ մըն ալ ինձի տարեկից տղաք կային, անոնց քովը մնացի, չեմ հիշեր այդ գիշեր ու՞ր անցուցի: Հետևյալ օրը կոշկակար եղբայրներեն մեկը եկավ ու ինձի առջևը դնելով իրենց տունը տարավ: Վրայես մաքուր և կոկիկ հագուստները հանել տալե և ցնցոտիներ հագցնելե վերջ՝ «հիմա ուզած տեղդ գնա» ըսավ:

Ես քաղաք վերադարձա, Զովա բերդին ետև թրքական թաղին մեջ: Մեզի ծանոթ հայ կնոջ մը հանդիպեցա, որ թուրքի մը հետ ամուսնացած էր: Ինձի ըսավ, որ քիչ մը անդին Սրբուհի անունով հայ կին մը կա: Գացի, գտա և քանի մը օր քովը մնացի:

Լսած ըլլալով, որ ամերիկացիները հայերուն կօգնեն, որոշվեցավ Խարբերդ երթալ: Հայ սայլապան մը, որ Խարբերդ ցորեն կտաներ, սայլին ետևեն տաստասնհինգ հայ կիներ ծրարները ուսերնուն ճամփա ելանք: Ճամփան չորս-հինգ թուրք զինվոր մեկ չավուշ կեցուցին մեզի: Մեկը եկավ տասնյոթ տարու հայ աղջկա մը անդին տարավ և բռնաբարելե վերջ ազատ թողուց ու բոլորս ճամփան շարունակեցինք: Վերջապես Խարբերդ մտանք ու սկսանք եկեղեցիներու զանգակները տեսնել: Ես շատ հոգնած հարյուր մետր ետ մնացած էի: Մեր խումբին միացած կաղ թուրք մը կար, որ հայ կնոջ մը հետ բաներ մը կըներ, ես այդ ատեն չէի գիտեր թե ինչ է բռնաբարելը:

Այսպիսով մտանք ասորիներու թաղը: Ասորի եկեղեցի մը կար, ուր հայ կիները սկսան գետնի և քարերու պատերը համբուրել, ազատություն գտնալու զգացումով:

Ինձ տարին ամերիկյան կենտրոնատեղիս հանձնեցին, բավական հանգստացա: Մեզի օրական կտոր մը հաց կուտային: Օր մը բոլոր ամերիկացիները աներևութացան: Այդ շենքերը, որ առաջ դպրոց էին, թուրքերը տեղավորվեցան և հիվանդանոցի վերածեցին: Խարբերդը ուներ հարյուր հիսուն գյուղ, Բալուն՝ երկու հարյուր գյուղ: Խարբերդից Բալու վաթսուն կիլոմետր էր:

Սկիզբը ամերիկացիները մեզի նալիներ տվին, երբ գացին, ես մնացի բոբիկ և մերկ: Հիվանդանոցին մոտ տեղ մը պատռտած հագուստները կնետեի, ես անոնք վրաս կհագնեի: Անդհեն-անդհեն պտուղ կճարեի կամ ճաշարաններու առջև կսպասեի, որ հաճախորդները պրգոլաները ուտեն, ոսկորները նետեն, ես մնացած միսերը կրծելե վերջ ոսկորը, քարի մը վրա ուրիշ քարով մը փշրելե վերջ, կուտեի:

Օր մը բալուցի ընկեր մը գտա, որ այրած տուներու մոխիրներու մեջեն գամեր կհավաքեր, ան ըսավ ինձի. «Քաղաքի կենտրոնի հրապարակին վրա հաստատված թուրք խանութպան մը զանոնք կգնե: Այստեղաց խանութները հայերուն կպատկանեին առաջ»:

Այնպես որ, թուրքին քանի մը անգամ գամ ծա-

խեցի: Ան օր մը ինձի ըսավ, որ այլևս գամ չուզեր: Եթե ապակի տանեմ կգնի: Պտտած ատենս տուն մը մտած էի, ուր մարդ չկար, դուռը բանալով պզտիկ բակին մեջ շրջանակով ապակի կար: Ես ապակիները իրենց շըրջանակով տարի թուրք խանութպանին: Ան ինձի ըսավ, որ սպասեմ: Ինքը գնաց, քանի մը վայրկյան վերջ հայհոյելով եկավ, ես ալ զինքը այդ վիճակին մեջ տեսնելով՝ փախուստ տվի: Ըստ իս, ապակեպատ շրջանակները իր տունենե առած էի: Այսպես Խարբերդի մեջ պտտած ժամանակ բալուցի Պերճ անունով հայ տղու մը հանդիպեցա, որուն մայրը թուրք մեծավորի մը տունը կմնար և անկե ալ զավակ մը ունեցուծ էր: Թուրքը հայու մը գեղեցիկ տունը գրավելով՝ հոն հաստատված էր:

Օր մը Պերճը կորսվեցավ, լսեցի, որ մորը հետ ապրող թուրքը տաս-տասներկու հայ տղաք հավաքելե վերջ կառքով գետը տարած ու մորթելե վերջ ջուրը նետած է:

Օր մը իրիկվան մթնշաղին գետինը կծկված պառկած էի, երկու ոստիկան ոտքի պզտիկ հարվածով մը ինձի արթնցուցին: Հարցուփորձե վերջ տարին ոստիկանատուն, անկե ալ նախապես հայու մը պատկանող ապարանք մը, որ Կարմիր Կոնակ կկոչվեր, հոն մեծ բակի մը մեկ կողմը մեծավորին տունն էր, մյուս երեք կողմն ալ՝ ախոռներ և գոմեր: Բակին մեջ կային թուրք և քյուրդ աքսորականներ, ես ալ անոնց հետ մնացի: Մեզի սոմոն հաց տվին: Տղաքը աղչիկներեն զատելե վերջ երկհարկանի տան մեջ տեղավորեցին: Անկարելի էր հոնկե փախչիլ: Միայն թող կուտային, որ ամաններով բավական հետու առվակե մը ջուր բերենք, բոլորովին մերկացնելե վերջ, որպեսզի չփախչինք: Ես աման մը գտա, զիս մերկացուցին և ջուր բերելու պես գացի ու փախա, վերադարձա քաղաք, հոն զինվորական հիվանդանոցին նետված կտորներով հագվեցա ու սկսա պտտիլ: Շատ անգամ բաղնիքներու առջև կուտակված մոխիրներուն մեջ կպառկեի: Օր մը խոշոր բուրդի կտոր մը գտա, մտածեցի, որ այդ գիշեր հանգիստ մը պիտի քնանամ, բայց հագիվ թե մեջը մտա՝ ոջիլներեն սկսա խայթվիլ, փախա, քանի մը կիլոմետր գետի մը մեջ մտա, բավական պաղ էր, բայց ոջիլներեն զիս ազատեց: Վերադարձա Կոնակ: Կրկին դուրս ելլել փորձեցի: Պահակներ կային, թող չտվին: Բավական մը փնտրելե վերջ գոմի մը պատուհանեն դուրս կրցա ելլել: Այսպիսով հաց բաժնելու ժամանակները կմտնեի և փորս կշտացնելե վերջ դուրս կելլեի ազատ: Բավական հայ ընկերներ ունեի: Բոլորս ալ անոթի, ծարավ մասնավորաբար ձմեռը ուտելիք ոչինչ կար: Աղբամաններուն մեջը կփնտրեինք բանջարեղենի մնացորդ, հավնոցներեն հավկիթ և հավ կգողնայինք, իսկ լավ եղանակներուն խոտ և զանազան բույսերով փորերնիս կկշտացնեինք:

Օր մը ընկերներես մեկը տեսա, որուն բերանը անբնականորեն բացված էր, մինչև աղորիքը կտեսնըվեր, եթե թևերը կամթեին, կարծես միսերը պիտի փրթեին: Գիշեր մը հայ կնոջ մը իր երկու զավակներով տեղ մը միասին կպառկեինք: Մեյ մըն ալ մեկ տղան սկսավ պոռալ. «փո՛րս կցավի»: Բավական պոռալեն ետք ձայնը կտրեց: Երկրորդ տղան և մայրը նույնպես «փո՛րըս» պոռալեն վերջ՝ լռեցին: Առավոտյան երեքն ալ մեռած էին: Ժամանակ մը վերջ ուրիշ հայ տղաքներու հետ մեզի տուն մը դրին: Հոն հայ կին մը կար, որուն մայրիկ կկոչեինք: Ան մեզի կխնամեր և ուտելիք կուտար: Օր մը երիտասարդ հայուհի մը եկավ, գիրկը նորածին մը, քանի մը օր վերջ մայրը մեռավ: Մայրիկը ինձի ըսավ. «Կարապե՛տ, այս երեխան դուն պիտի սընուցանես»: Դաշտերը գացի, ուր հայերու ձգած կենդանիները կարածեինք, կով մը բերի տուն: Մայրիկը կթելե վերջ ըսավ, որ կովը տանիմ տեղը ձգեմ: Կխորհեի, որ կովը պետք է պահեինք:

Անգամ մըն ալ ինձի տարեկից հայ աղջկա մը հանդիպեցա: Վիզին մեկ կողմը կամ դանակով կտըրված և գլուխը մյուս կողմը կախված էր: Ծուրտ էր, չմըսելու համար իրարու փաթթված քնացանք: Հետևյալ առտուն ան մեռած էր:

Այսպես թափառելով որբանոց որբանոց՝ Բալուի, Խարբերդի շրջանները, հետո անցա Հունաստան, ապա՝ Իտալիա և ի վերջո Ֆրանսա հաստատվեցա:

122 (122).
ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐԻ ՍԱՐՈՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1911 Թ., ԲԱԼՈՒ, ՓԻՐԱՆ Գ.)

Մեր գյուղը մեծ մասամբ քյուրդեր կապրեին, քիչ թուրք կար, մնացածը՝ հայեր էինք: Տիգրիս գետի ակունքեն հետու էր մեր գյուղը: Տիգրիսը սկիզբ կառնե Ծովք լիճեն: Ծովքը ծնած է Ներսես Շնորհալին: Ծովքը մեզմե մեկ ու կես օրվա հետու էր: Տիգրիս գետը գարնանը այնքան կվարարեր, որ հետը ծառերի բներ կբերեր: Ես տեսած եմ, թե ինչպես, երբ գետի մեջ ծառերը իրար կկապվեին, քանի մը լողվորներ կմտնային ջուրը, կշտկեին ծառերի ուղղությունը, որ ջուրին ճամփան չըգոցվի: Մեր գյուղ Փիրանեն չորս-հինգ մղոն հետու մի կարմիր ժայռ կար, հոն վայրի մեղուները մեղր կշինեին և փոսի մեջ կհավաքվեր: Մեր գյուղացիները ամաններով կերթային, կլեցնեին, տուն կբերեին:

Ես ծնվել եմ 1911-ին: Հորս անունը Գրիգոր էր, հորեղբորս անունը՝ Կարո, մեծ հայրս՝ Սարգիս: Մեծ եղեռնից երեք ամիս առաջ, երբ արթնցա, մեծ մորս շալակն էի: Հորս քելեփչեներով տարեր էին ոստիկանատուն: Վերջին անգամ անոր տեսա քելեփչեներով կապկպված: Գյուղի բոլոր հայ տղամարդկանց բանտից հանեցին, քշեցին դեպի հյուսիս-արևմուտք: Հետո քրդերը եկան ըսին, որ բոլորին ալ սպանեցին:

1915-ի հուլիս ամսուն տաք օր մըն էր: Քյուրդերը եկած էին, ծառի շուքին տակ նստած անցուդարձը կդիտեին, քանի որ տեղահանության հրամանը եկած էր և ամենուրեք իրարանցում կտիրեր: Թուրք ոստիկանները իրար ձայն կուտային. «Ֆերման գեղդի, բիր գյավուրըն քաֆա քալմայաջաք (հրաման եկած է, մի գյավուրի (հայի) գլուխ չպետք է մնա)»:

Ես այդ ժամանակ չորս տարեկան էի, բայց աղվոր կհիշեմ: Ես աքսոր երթալ չէի ուզեր: Մերիններուն ճամփա հանեցին կեսօրեն առաջ: Ադ մեր քովի քրդական Քալբին գյուղի ճամփան էր, որով մեր նախիրը կըտանեին արածելու: Նախիրը գնաց, փոշի ելավ, մերոնք գնացին: Մայրս, մեծ քույրս՝ Հայկուհին յոթը տարեկան, փոքր քույրս՝ Էսթերը, երկու տարեկան, եղբայրըս՝ Հայկազը՝ չորս ամսական: Փոքր քույրս և եղբայրս աքսորի ճամփին կհոգնին, կսկսին լալ, ոստիկանը կառնե Էսթերին և Հայկազին Տիգրիս գետը կնետե: Մայրիկիս կփախցնե, մեծ քրոջս՝ Հայկուհուն կառևանգեն: Հորեղբորս տղան պզտիկ էր, անոր մորը խանչալով կսպանեն, փոքր Ղևոնդին ալ կսպանեն, քանի որ մայրը չի հնազանդիր ասկյարներուն: Մեր ծանոթներեն՝ Հերմիկը փախեր էր ճամփից, եկավ գյուղ և պատմեց, թե ինչ պատահեց իրենց հետ:

Իսկ ես մերիններուն հետ չգնացի, քանի որ զգալով վերահաս վտանգը՝ ես գացի պահվտեցա մեր ախոռին մեջ: Միլիթարի փոլիս մը եկավ, ինձի գտավ, բռնեց, տարավ, էշու մը վրա դրավ: Ես չուզեցի, սկսա լալ, իջա էշուն վրայեն, գացի նորեն ախոռը մտա, պահվըտեցա: Միլիթարի փոլիսը նորեն եկավ ինձի գտավ, նորեն տարավ էշուն վրա դնելու: Ես նորեն իջա, գացի ծառին տակ նստած քյուրդերուն խառնվեցա: Անոնք զազա ցեղին կպատկանեին և քուրմանչի լեզվով կխոսեին: Անոնք մեզի բարեկամ էին, մեր քիրվաներն էին: Դու մի ըսեր՝ ադ միջոցին մեծ մայրիկս իմ ետևես կուգա: Ան ժողովրդական բժիշկ էր. տեսակ-տեսակ ծաղիկներ կչորցներ և անոնցմով աչքեր կդեղեր, մարդոց կբուժեր: Անոնք ալ իրեն կվարձատրեին՝ տոմատես, բիբեր, մածուն և այլ կուտային փոխարենը:

Ես քսանհինգ տարեկան հորեղբայր մը ունեի, որին կտանին ամբողջ օրը կհարցաքննեն: Ան էր, որ մեր բոլոր գյուղի ձիերուն ոտքերը կնալեր: Հետևաբար, թուրքերը պետք ունեին անոր պես արհեստավորի մը գյուղին մեջ: Ատոր համար ալ իրեն ձգեցին գյուղին մեջ, ես ալ մնացի անոր քովը: Հաջորդ տարին մեզ իսլամացրին, մենք եղանք զազա և քուրմանջի, բայց տունին մեջը հայերեն կխոսեինք: Մոլլա մը եկավ, իմ անունը Սեֆեր դրավ: Ինձի, հորեղբորս և Հովհաննեսին, որի անունը Հասո դրին, բոլորին թլպատեցին: Կհիշեմ սարսափելի ցավ զգացի: Կրակի պես վառեցին մարմինիս ադ մասը և ադ միսի կտրված կտորը դրին արևի տակ, չորցուցին, որ պահեն որպես փաստ:

Մենք քրդերի մոտ մնացինք չորս տարի, մինչև 1919 թիվը: Այդ տարիներուն մենք էշով կերթայինք հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք, պղինձե կաթսաներ կկլայեկեինք: Ես փոքս կփչեի: Մեզի հետ կաշխատեր նաև Հովհաննես-Հասոն: Ան ալ քարերը կփշրեր, պղինձի կաթսաներուն մեջ կլցներ, ոտքով կպտտցներ, մեջը կմաքրվեր, որ անագը լավ կպնի: Հորեղբայրս հին գամերը կհավաքեր, կրակի մեջ կդնեինք, կհալացնեինք, նորեն գամ կշինեինք: Մեկ օր հազար հինգ հարյուր գամ շինեցինք:

Մեր գյուղեն հարավ-արևելք քրդական գյուղեր կային՝ Քալբին և Շեխմալան անուններով: Ես գացած եմ ադ գյուղերը: Հոն իսլամացած հայ հարս մը կապրեր: Դիշեր մը հոն էի: Մեկ ալ փսփսուք լսեցի, քանի որ իսլամացած հայեր, որոնք անոթության մատնված էին, կորոշեն գիշերով ցորենի դաշտերը երթալ և ցորեն գողանալ: Արդեն այդ դաշտերուն ցորենը իրենք աճեցուցած էին, բայց քրդերը տիրացած էին: Հաջորդ օրը եռուզեռի մեջ եմ ոստիկանները: Կիմացվի, որ ցորենը դաշտեն գողացված է, քանի որ տոպրակը ծակ կըլլա և կթափթփի՝ իրենց ետևեն հետքեր ձգելով:

Օր մըն ալ, մեր գյուղեն դեպի արևելք Դեյրան քրդական գյուղը կար, ուր կոնաձև գոմերու մեջ կապրեին քրդերը: Գացի, տեսա, որ ցորենը հասել էր և մենք ալ մեջենք քալելով գացինք Դեյրան քրդական գյուղը: Օդը այնքան տաք էր, որ մեր ետևեն ցորենը բռնկվեց, սկսավ այրվիլ, բայց մեզի վնաս չտվավ, այլ՝ քրդերը տուժեցին, քանի որ ադ հարամ վաստակ էր իրենց համար:

Մինչև 1919 թ. պատերազմը վերջացեր էր: Հորեղբայրս՝ Սիմոնը, կամավոր գրվեցավ Ֆրանսական բանակի Հայկական լեգեոնին մեջ: Կիպրոսի մեջ կըմարզվեին հայ երիտասարդները: Անոնք գացին Ադանա, կռվեցան:

Հետո մենք Տիգրանակերտ եկանք, հետո Մերդին գացինք, հոն երկաթուղի կար: Շատ բարձր բլուրի վրա բերդ մը կար: Իսկ երկաթուղին վարն էր, ձորի մեջ: Շաբաթը մեկ անգամ երկաթուղին կուգար: Մենք մեկ օր առաջ գացինք կայարան, հոն պառկեցանք, որ երկաթուղիին սպասենք:

Շատ հայեր Հալեպ պիտի երթային, և մենք ալ անոնց հետ Հալեպ գացինք: Հորեղբայրս ըսավ. «Բան մը չիկա ուտելու»: Ես սաստիկ տաքությունով հիվանդ էի: Սիմոն հորեղբայրս ինձի կերպով մը վագոն բարձրացրեց, որ շուտ Հալեպ հասնիմ, մի կողմեն ֆրանսացի զինվորները կքաշեն, մյուս կողմեն թուրք զինվորները կքաշեն: Սիմոն հորեղբայրս չկրցավ ինձի հետ Հալեպ գալ, բայց իր կամավորի գլխարկը տվավ ինձի: Ադ Բեռլին-Բաղդադ երկաթուղին էր, որ մեզի Հալեպ հասցուց: Երբ Հալեպ եկանք, գլխարկը դրի գլխուս, հայ կամավորները եկան ինձի տարին: Մենք ազգական մը ունեինք՝ Բաղդադյան անունով, որը Հալեպ հասեր էր իր պատանի տղուն հետ, բայց թուրք մը գլխուն խփել էր և ան կուրացել էր, ան մեզի պահեց, մինչև որ հորեղբայրս եկավ հաջորդ շաբաթ: Ան կամավոր էր, կըրնար ձրի գալ: Հետո ան գնաց Ամերիկա: Ինձի ալ դրամ ղրկեց, 1921-ին ես ալ Ամերիկա գացի, քիմիագետ դարձա: Հետո գացի Բեյրութ՝ Անթիլիասի ճեմարանին մեջը հայերեն սովորելու: Այնտեղ ինձի կդասավանդեին Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը և ուրիշներ: Հոն հանդիպեցա Արմինեին: Կանաչյանի * երգչախմբի մեջ երգել սորվեցանք: Վերջը Ամերիկա գացինք: Հիմա ունինք երկու աղջիկ և երկու տղա: Երկու տղաներս բժիշկ են և Բոսթոն կապրին: Ունինք ութը թոռնիկ: Թուրքերը պակսեցուցին, մենք՝ ավելցուցինք:

Ես նաև գրող եմ և կուսումնասիրեմ հայերենի առնչությունները հնդեվրոպական քույր լեզուներու հետ: Գրքեր ունիմ հրատարակած:

* Բարսեղ Կանաչյան (1885, Ռոդոստո – 1967, Բեյրութ) – Կոմիտասի աշակերտ, հայ կոմպոզիտոր, խմբավար, երաժշտական, հասարակական գործիչ:

123 (123).
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԹԱՇՃԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՄԱԼԱԹԻԱ)

Մալաթիայեն երբ մեզ աքսոր հանեցին, ես դեռ երեխա էի: Թուրքերը եկան մտան մեր տունը: Մենք ալ հաց պիտի եփեինք, թոնդիրը վառել էինք, եկան մեզի ստիպեցին տունեն դուրս գալ, սկսան տունը-տեղը իրար անցուկնել, թալանել: Թալնելու ժամանակ տեսան տանը կաշի կա՝ կոշիկ կարող էր հայրս: Իրար մեջ ըսին. - Աս մարդուն չմորթենք. մեզի օգուտ կուտա:

Էկան մոտեցան ինձի: Մեկը ըսավ պապայիս: Ես ալ պապայիս ձեռքը բռնած էի, ըսավ. - Աս երեխան տու՛ր, տանիմ:

Ես սկսա լալ ու պոռալ. - Հայրի՛կ, ես չե՛մ գնար:

Պապաս չտվավ:

Մեզի քշեցին, տարին Ալմա օղլու բախչա ըսված տեղ մը, ամմա ադ բախչա չէր, ամայի բաց դաշտ մըն էր, մենք գիշերը հոն գետինները պառկեցանք, բաց երկնքի տակ:

Առավոտուն լուսը բացվավ, էկան մեզի ջոկեցին. հայ քրիստոնյաները՝ մեկ կողմ, բողոքականները՝ մեկ կողմ, կաթոլիկները՝ մեկ կողմ: Բողոքականներուն և կաթոլիկներուն չտարին աքսոր: Միայն մեզի՝ հայ քրիստոնյաներիս, որոշեցին ոչխարի պես աքսոր քշել: Բայց քանի որ մեր տունը թալանելու ժամանակ զբիթները տեսել էին, որ հայրս կոշկակար է, ըսին. - Աս մարդը մեզի օգուտ կուտա:

Մեհյուր ըրին մեր թուղթը, մեզի ետ ղրկեցին մեր գյուղը: Էկանք, մտանք մեր տունը, ապրեցանք:

124 (124).
ՄԱՐԻ ՍՏԵՓԱՆԻ ՎԱՐԴԱՆՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ՄԱԼԱԹԻԱ)

Տատիկս ասում էր. «Իմ տանը թուրքերեն չըխոսե՛ք»: Պապս եղել է կառավարական պաշտոնյա: Նա իր համար ուներ սեփական գյուղ, արտեր և այլն: Դրա համար էլ թուրքերը նախանձել են, մի օր որ պապս ձիով գալիս է տուն, երկու կողմից ղավազներով բռնում տանում են պապիս ու էլ ետ չի գալիս, առավոտյան դիակն են բերում:

Ունեցել եմ երեք հորաքույր, երեք քեռիներ, 1915 թ. բոլորին ջարդել են, կոտորել: Մենք ունեինք թուրք օրթախներ, որոնք մեզ համար գործ էին անում ու շատ սիրում էին մեզ: Դրանք պահեցին մեզ: Բայց օրենք կար, որ եթե թուրքի տնից հայ դուրս գա, այդ թուրք տանտերը իր տան դռան առաջ կկախվի:

Արդեն պապայիս տարել էին, իբր աշխատցնելու, բայց մորթել էին: Էդ օրենքն էլ որ հանեցին՝ մեզ աքսոր քշեցին: Շատ քայլելուց իմ և տատիկիս ոտքերը չդիմացան: Այնպես որ, ինձ ու տատիս տարան թուրքական որբանոց, որ թուրքացնեն: Մամաս գաղթականների հետ աքսոր էր հանված: Գաղթի ճամփին անգլիացիները և ֆրանսացիները հայերին ուզեցին տեր կանգնել: Հրամայեցին՝ ով արհեստավոր է, բողոքական կամ կաթոլիկ՝ կազատվի, ետ կղրկվի: Մամաս դրանց մեջ է մտնում, ետ է գալիս: Ճամփին անցնում է էդ մեր որբանոցի առաջով: Ես կանգնած էի դռան ետևը, լացում էի, քանի որ տատս մեռած էր երեք օրվա մեջ: Մամաս տեսնում է՝ սայլ մը, լիքը երեխա, տանում են սաղ-սաղ փոսը պիտի լցնեն, քանի որ մահմեդական թուրքերը ասում էին. «Ով գյավուր մը սպանի, անոր հոգին դրախտ կերթա»:

Մամաս միլիցատան միջոցով փաստեց, որ ես իր զավակն եմ, տարավ տուն: Մորաքույրիս տղան կոտորածի միջից արյունլվա դուրս է գալիս, սողալով գալիս տեսնում է մեր տունը: Տանն էլ չոփ չի մնացած: Հայ հարևանները որ թուրքացել էին, ասում են նրան. «Գե՛թ, գյավուր օղլու» (գնա՛, գյավուրի տղա): Էդ տղան տասնվեց տարեկան էր. տկլոր, մի կերպ գիշերները սողալով ութ օր ճամփա էր կտրել, բայց խեղճը իսպառնական գրիպից մեռավ:

Ամեն օր մեկի տուն մտնում էին, աղջիկներին փախցնում էին, տանը եղած-չեղածը թալանում էին: Մի օր մամաս մի մեծ քար է դնում դռան առաջ, որ ոչ ոք ներս չմտնի: Բայց մեր հարևան գեղեցիկ Սանդուխտին փախցրել էին:

Կեսուրս կպատմեր, որ իրենց եղբայրներին թուրքերը կսպանեն, մորը ողջ կթողնեն: Կանցնի քանի մը տարի, ինքն ալ սընդղչի կըլլա, մի մարդու կբերեն՝ ջարդ ու խուրդ եղած: Մայրը կճանչնա, որ իր տղաներին սպանող թուրքն է: Կաղոթե Աստծուն, որ ուժ տա իրեն, կկապե թուրքին վերքերը, կլավացնե: Մի օր էդ թուրքը մի ջորի լիքը բեռ ցորեն կբերե: Կինը կըսե. «Գնա՛, ես քո ցորենը չեմ ուզեր: Աստված թող քո դատաստանը տեսնա»:

Մենք մի թուրք հարևան ունեինք, նրա ամուսինը մեկ ու կես տարի հիվանդ էր, մեր դռշակների վրա պառկած էր, իսկ մենք տախտակների վրա էինք պառկած, քանի որ մեր բոլոր ապրանքները իր տունն էր լցրել: Սաթենիկ մայրս կըսե հիվանդ թուրքի կնիկին. «Դռշակը փոխե, որ Աստված գիտնա իր ընելիքը»: Թուրքի կինը դռշակը կփոխե, մարդը երեք օրեն կմեռնի:

Մի կին էլ էդ սպանվածների փոսի մեջեն դուրս է գալիս, մերկ, քարի մը վրա նստում է: Կացինի տեղը տըքտըքում է: Մի մարդ անցնում է էդ տեղից, քյուրդ է լինում, գալիս տեսնում է էդ կնոջ վիճակը, հանում է իր

գլխի փաթթոցը, կապում է նրա վերքը ու տանում իր տունը պահում:

Մի տղա՝ Սարգիս անունով, ջարդի տեղեն կըրցած էր փախիլ, եկավ պատմեց. «Թուրքերը բոլորի շորերը հանում են, մի կացինի հարված են տալիս, գցում են փոսը: Ես ութը տարեկան եմ, թուրք զաբիթները մտան մեր տունը, տասներկու հոգի սպանեցին, օրորոցի երեխան անգամ սպանեցին: Ես մտա օրորոցի փեշի տակը: Մայրս ինձ չէր մեռել, ըսավ. «Տղա՛ս, վըրե՛ժ կլուծես»:

1946-ին Հալեպից եկանք Հայաստան: Տուն շինեցինք Նոր Մալաթիա թաղամասում: Ես տրիկոտաժի գործարանում աշխատեցի: Հիմա հանգստի ենք կոչված:

125 (125).
ՎԵՐԳԻՆԵ ՌՈՒԲԵՆԻ ՆԱՋԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ՄԱԼԱԹԻԱ)

Ես հիշում եմ իմ հորը, որ հիվանդ էր: Ձեր հայրը եկավ, ասաց. - Ռուբեն, զենք են ուզում մեզնից, թե չէ՝ ինձ պիտի սպանեն:

Հայրս ասաց. - Գնա՛, դու ճահճատակվի՛ր, բայց զենքը չպետք է հանձնենք:

Նա չլսեց: Ես հիշում եմ, իմ հայրիկին տարան թուրքերը, տարան նաև մեր բոլոր տղամարդկանց: Սկսվեց ալաճ-թալանը:

Մենք մեր թուրք հարևանին տվինք մեր բոլոր ունեցածը, և ան մեզի պահեց: Մենք թուրքի տանը թաքնված էինք, երբ ժանդարմները եկան: Մայրս խնդրեց, որ դուռը չբացեն: Մեր թուրք հարևանը ժանդարմներին օղի տվավ, նրանք խմեցին ու գնացին, դուռը չբացավ, բայց առավոտը ասաց. «Ես ձեզ պահել չեմ կարող, գնացեք»:

Մենք մեր տունը եկանք: Հետո մի ուրիշ թուրք հարևանի տունը գնացինք, որը բժշկություն էր անում: Մայրս իր ոսկեղենները բաժանում է բոլորին, միայն թե մեր հոգիները փրկի: Հետո մայրս գնաց իր մորը տունը: Մայրն ասաց. - Ինչու՞ եկար, Եսթեր:

- Դու մեռնես, ես էլ կմեռնեմ, - ասաց մայրս:

Մայրիկս, տատիկս և երեք երեխաներով գնացինք թուրք ֆաբրիկատերի տունը: Մայրս նրան մի մաղ լիքը ժամացույց տվեց, որ մեզ պահի: Թուրքն ասաց. - Եթե ժանդարմները գան, դուք մտեք բաղնիք, նամահրամ է. ոչ ոք իրավունք չունի այնտեղ մտնել:

Նոր ծնված երեխան օրորոցի մեջ քնած է լինում: Երբ ժանդարմները գալիս են, մայրիկս ինձ ու եղբորս՝ Ժոզեֆին, վերցնում, մտնում է բաղնիք, բայց նորածին երեխային մոռանում է օրորոցի մեջ:

Ժանդարմները կըսեն. - Էս ի՛նչ սիրուն երեխա է, սա թուրք ֆաբրիկատերինը չի՛ կրնար ըլլալ: Երևի սա հայի երեխա է, - կըսեն:

Մայրս զգաց, որ իր փոքրիկին վտանգ է սպառնում, թաքնված տեղեն դուրս եկավ, ըսավ. - Ես բողոքական եմ, - իսկ բողոքականներին ազատում էին աքսորից:

Մեզ տարան Ալմա օղլու բախչան: Էդտեղ բացօթյա արտեր էին: Կին, երեխա, բոլորը ինչ-որ մնացել էին՝ էնտեղ էին: Լուսավորչականներուն առանձնացրին, բողոքականներուն առանձնացրին: Մայրիկս և տատիկս մեզ հետ շշմած կանգնած մնացին:

Էդ ժամանակ Ցյուրքի բեկն է անցնում, որը իմ քեռուս՝ Գարեգինի բարեկամն էր: Մայրս մոտեցավ նրան, ըսավ. - Ցյուրքի բեկ, մենք հե՞չ մի խաթեր չունինք: Ես Թութելյան Գրիգորի կինն եմ:

Նա ասում է. - Էս կողմը գացեք:

Մյուս օրը լուսավորչականներուն տանում, սպանում են: Կաթոլիկներին և բողոքականներին ստուգում են: Տեսնում են՝ մայրիկս մի երեխա ավելի ունի: Տատիկս էդ երեխան գցում է ուսը: Երեխան ոչ մի ձայն չի հանում, Աստված պահում է: Եվ էսպես որպես Թութելյան Գարեգինի ընտանիք, մենք ազատվում ենք: Ցյուրքի բեկը կըսե ժանդարմին. - Սրանց կտանես, կազատես, կհասցնես բողոքականներու մոտ, այսինքն՝ գերմանացիներուն քովը:

Մամաս հուզումից քրտինքներուն մեջ կմնա: Հետո կտեսնա, որ քեռիիս թուրք ծառան տեսնում է, որ մենք ազատվել ենք, ճաշ է եփում ու բերում է, որ մենք ուտենք: Մեր տանը տեսանք, որ հատակները, պատերը քանդել էին, ոսկի էին մաճ եկել: Բայց մենք ազատվել էինք:

Գերմանական որբանոց կար Իզմիրում: Մայրս պզտիկ եղած ժամանակը գերմանական որբանոցում վեց տարի մնացած ըլլալուն լավ գերմաներեն գիտեր: Իրեն հրավիրեցին, որ դաս տա: Բայց բոլորիս համար օրվա մեջ չորս բուլկի էին տալիս: Մենք ուտում էինք, բայց էդ նորածին երեխան սովից մեռավ, քանի որ մայրիկիս կաթը հուզումից չորացել էր:

Որբերյաններուն հայրը ճամփին տեսանք, գլուխը կտրել էին, անդամն ալ կտրել էին բերանն էին դրել, շատերուն հոշոտել էին: Գերմանական որբանոցում մայրիկս հիվանդացավ: Մեր պարտեզին մեջը սինձ, թութ, թուզ ունեինք: Թութից մամաս դռշաք էր սարքել և ամեն օր ջրով մեզ խմցնում էր: Բոլոր ազատվողներուն փորերը, փայծաղները ուռել էին: Մայրիկս էլ լաց էր լինում, քանի որ իր փայծաղն էլ ուռած էր: Գերմանացի բժիշկը դեղ կգրե, բայց մայրիկս կըսե՝ ես փող չունիմ: Բժիշկը կմեղքնա, դեղերը կուտա մորս: Մայրս խմեց, լավացավ: Էդ դեղի մնացորդն ալ մյուս հիվանդներուն տվավ, անոնք ալ լավացան: Եվ էսպես մամաս ողջ մնաց:

Գերմանական որբանոցը փոխվավ՝ Ամերիկյան դարձավ: Մեզի տարին Հալեպ, դա արդեն 1921-ին էր: Մեր գերդաստանը շատ մեծ էր, մոտ 150-200 հոգի էինք: Քեռիներ, հորաքույրներ, հորեղբայրներ ունեի:

Բոլորին Դեր Զորի ճամփաներին կոտորել են: Մնացել ենք երեք հոգի՝ ես, մայրիկս և եղբայրս:

Իմ ամուսինը Համշենի հայ էր: Նրանց ընտանիքը 1895 թվին Օրդուից փախել, ծովափով եկել է Ադլեր միայն նրա համար, որ հավատափոխ չըլլան: Հետո եկել են Երևան, հաստատվել են Նոր Մալաթիայում: Նա երբ հանդիպեց ինձ, պատմեց, որ Ադլերում բոլորը համշենահայեր են, որոնք հավատափոխ չեն եղել: Թուրքերը ո՛չ երեխա, ո՛չ մեծ էին հաշվի առնում: Թուրքերը ասում էին. «Մենք պիտի ջնջենք հայ ազգը, որ միայն թանգարանում մեկ հայ մնա»:

126 (126).
ԳՐԻԳՈՐ ԷՔԻՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1921 Թ., ՄԱԼԱԹԻԱ)

Մինչև 1915 թիվը պապաս երկաթագործ էր՝ չութ, արորի խոփ, զենք-մենք կշիներ: Օր մը թուրքերը էկան մեր տունը խուզարկեցին: Քանի որ մալաթիացի հայերը շատ կազմակերպված էին, անոնք միշտ պատրաստ էին: Ամեն ընտանիքում մեկ-երկու հրացան կըգըտնվեր:

Ուրեմն օր մը երկու թուրք զաբիթներ եկան, հորս ըսին. - Հրացաններդ տուր:

Քանի որ որուն որ հայրս հրացան էր վաճառել, անկե իմացել էին՝ ումե՞ն է առած:

Պապաս ըսավ. - Ես հրացան չունեմ:

- Ո՞նց չունես, մենք գիտենք, որ դուն ունես: Ունենալդ ալ գիտենք, քանի հատ ըլլալն ալ գիտենք:

Պապաս հրացանը պարտեզին մեջը, ծառի տակ թաղած է լինում. կէրթա տեղը ցույց տալու, էստեղ կըփորեն՝ չկա, էնտեղ կփորեն՝ չկա:

- Մեկ է, հրացանդ պիտի տաս տանենք, - կըսեն թուրքերը:

Վերջապես կփորեն, հողի մեջեն կհանեն, իրեն ալ հրացանին հետ կառնեն կտանին: Տունեն դուրս գալու ժամանակ, մութին մեջը, թուրքերեն մեկը կճանչնա իրեն, կըսե ընկերոջը. - Հրացանը տանում ենք, բոլ է, իրեն ի՞նչ պիտի ընենք տանինք, բա՛ց թողենք՝ թող էրթա:

Այսպիսով պապայիս կազատեն, պապաս կուգա տուն:

Քանի մը օր ետքը ուրիշ թուրք զաբիթներ կուգան, կտանին հորս, էն տանելն է, որ տանում են: Քելեփչեներով ձեռքերը կկապեն, երկու հոգու ալ իրար կկապեն քելեփչեներով, որ չփախնին: Թուրքը գործը պինդ կբռնի: Ու՞ր կտանին, Աստված գիտե:

Քանի մը օր կտանին: Պապաս, որ արհեստավոր մարդ է լինում, գրպանը խարտոց կունենա, կամաց-կամաց կխարտե, քելեփչեն կկտրե, մեկը մյուսեն կպոկվի, փախչելու մասին կմտածե: Ցերեկով անհնար էր, կորոշեն գիշերով փախչել: Երբ աքսորականներին կտանին ինչ-որ բաց տեղում գիշերելու, էդ գիշեր կորոշեն փախչել: Գալիս են պահակին խնդրում են, թե՝ պետք ունինք: Պահակը կթողնե, բայց՝ չեն փախչի. օձի ձեռքեն մա՞րդ կփախչի: Երկրորդ անգամ նորեն կխնդրեն՝ պետք ունինք, թուրք պահակը նորեն կձգե, բայց անոնք չեն համարձակվիր փախչիլ: Երրորդ անգամ նորեն կէրթան պահակին կըսեն՝ պետք ունինք: Պահակը, որ հրացանով զինվոր մըն էր, կըսե. - Նե բոք եեջեքսին՝ եի՛ն (ինչ ք… պիտի ուտեք՝ կերե՛ք): Անոնք ուժ կառնեն, կծիկնին կդնեն, կփախին: Քանի մը մետրո հեռանալեն վերջը ետևնեն կպոռան. - Քաչդըլա՛ր, վուրը՛ն (փախա՛ն, կրակե՛ք):

Այսպիսով հայրս կազատվի կուգա նորեն Մալաթիա: Կերթա բարեկամներուն քովը, անոնք չեն ընդունիր. կվախնան, որ իրենց ալ վնաս կուգա: Կերթա Եփրատի ափին Կորուջուխ գյուղը, անտեղ մի թուրք ծանոթ ունի էղեր՝ Հուսեին անունով: Աղ թուրք Հուսեինն ալ կառնե հորս կպահե, չնայած որ հրաման կար. «Որուն տունը որ հայ գտնանք՝ կպատժվի»:

Աս թուրքերը պապայիս կպահեն գետնի տակը՝ թաքստոցի մեջ: Գիշերները դուրս կհանեն, որ օդ առնե, հետո՝ լուսադեմին, նորեն գետնի տակ կմտցնեն:

Երբ հայերուն կոտորածը կվերջանա, պապաս կուզե գալ Մալաթիա՝ իր տունը: Աս թուրք Հուսեինի վեց եղբայրները կխնդրեն հորս, որ մնա, որ իրեն ամուսնացնեն, քանի որ ան իրենց համար արոր, չութ և այլն կշիներ: Բայց հայրս չի համաձայնիր:

Թուրքերը կըսեն. - Է՛, եթե չես համաձայնվում, ուրեմն՝ գնա քո տունը:

Հայրս կուգա Մալաթիա, կլսե, որ կնոջը և երեխային սպանել են աքսորի ճամփաներին…

Ստիպված նորեն կամուսնանա հայու հետ, ծայրեն տուն տեղ կդնե: Ես պապայիս անդրանիկ զավակն եմ՝ Գրիգորը, ծնված եմ 1921 թվին: Հետո՝ 1925-ին կծնվի մյուս եղբայրս: Մինչև 1929 թիվը պապայիս ընտանիքը աղ թուրք Հուսեինի վեց եղբայրներուն հետ շատ սերտ կապեր ուներ, քանի որ անոնք հորս կյանքը փրկած էին: Ամեն տարի կով, յուղ, պանիր, ձմերուկ և ուրիշ շատ բաներ կբերեին մեզի նվեր: Աս թուրքերը մեզի շատ լավություններ ըրին: Այնքան կսիրեին պապայիս, որ իրենց քսիկով ոսկին կբերեին պապայիս մոտը կպահեին: Կամ երբ չուկա կուգային, պապայիս ալ հետերնին կառնեին, որ գնումների հաշիվները ինքը ընե, այնքան որ վստահում էին պապայիս:

1929 թվին, երբ մենք որոշել էինք Մալաթիայեն Հայաստան գալ, Հուսեինը իր վեց եղբայրներով եկավ ավտոյին առաջ, գետինը պառկեցան, խնդրեցին, որ չերթանք: Բայց պապաս ըսավ. - Չէ՛, իմ հայրենիքս է, պիտի՛ էրթամ:

Թուրք եղբայրները ըսին. - Գնա՛, Հովհաննես, բայց չփոշմանես, իսկ եթե լավ ըլլա, գրե՝ մենք ալ կուգանք:

Աս տեսակ թուրքեր ալ կան:

Մենք ընտանիքով 1929 դեկտեմբերին թրենով Սամսուն գացինք, Սամսունեն նավ նստանք, էկանք Տրապիզոն: Աղ ժամանակ ես ինը տարեկան էի: Տասնհինգ օր մնացինք, էդտեղից թույլատրություն առինք, էկանք Բաթում: Բաթումեն ալ տավարնի վագոնով էկանք Հայաստան՝ տուրիստ, ու մնացինք: Մեզի Երևանի Մալաթիա թաղամասը բերին. ան ժամանակ ալ աս կողմերը տուն-մուն չիկար: Միայն տասնըհինգ կիսատ-պռատ տուներ էր կառուցել Դպրոցաշինարարաց ընկերությունը: Մեզի աղ տուներուն մեջը տեղավորեցին: Ոչինչ չունեինք: Ամեն ինչ ծայրեն սկսանք: Կամաց-կամաց տուն-տեղ էղանք: Պապաս առաջին կոլխոզի հիմքը դրեց: Ո՛չ տրամվայ կար, ո՛չ ավտոբուս, ո՛չ աղբյուր կար, ո՛չ լույս, ո՛չ ալ ուտելիք: Բոչկայով ջուրը կբերեին՝ կբաժնեին: Օր կըլլար արաբային թեքերը կփչանար, ջուր չէին բերեր… Անձրևին, ձյունին ջուրերը կհավաքեինք, որ օգտագործենք… մեր տունն ալ հիմիկվա Մալաթիայի շուկային դիմացն էր…

Աս ձևով ապրեցանք, կոլխոզը աշխատեցանք:

1941 թվականին պատերազմը որ սկսվավ, ես կամավոր գնացի ճակատ: Բայց մերոնց, որպես կոլխոզնիկի, հացի գրքույկ անգամ չէին տալիս: Անոնք ալ ստիպված մեր պարտեզում անեցրած խաղողը, խնձորը, տանձը, ճակնդեղը կծախեն էղեր՝ կիլոն հայրյուր մանեթով, հաց կառնեն, կուտեն էղեր:

Աղ երեսուն-քառասունական թվերուն ալ ձմեռները շա՛տ սոսկալի էին, ոչ մի համեմատություն հիմիկվա հետ…:

Մեր կողմերն ալ մարդ-մարդազանք քիչ կար. օձ, կարիճ, մուկ, ի՛նչ ըսես՝ կար…

Ինչ երկարացնեմ, գացի ճակատ, ողջ, առողջ ետ էկա…

1960-ական թիվերուն մարդ մը էկավ Մալաթիայեն և ըսավ, որ հոն հարյուր հիսուն հայ ընտանիք կա, կուզեն փոխադրվիլ Հայաստան: Հայաստանը թույլ չըտըվեց, ըսավ՝ թուրքը չի թույլատրում: Եթե նրանք փոխադրվեն մի ուրիշ երկիր, օրինակ՝ Ֆրանսիա կամ Գերմանիա, հետո՝ անտեղեն կրնանք բերել տալ: Բայց աղ ալ դյուրին բան չէր, այնպես որ, Մալաթիայի հարյուր հիսուն հայ ընտանիքն ալ ցիրուցան էղան, մեկը՝ Ամերիկա, մեկը՝ Անգլիա, մեկը՝ Ֆրանսիա, ցրվեցան: Հիմա Մալաթիայում քիչ՝ հատ ու կենտ են մնացել հայերը:

Ասկե քսան տարի առաջ, 1970-ական թվերուն էր, նամակ մը էկավ, գրված էր. «Ես Ռիզան եմ. Կորուջուխցի Հուսեինի տղան եմ, կարո՞ղ է դուք Գրիգորն եք, Հովհաննեսի տղան: Կուզեմ գտնել Ձեզ: Հայրս՝ Հուսեինը, մեռնելեն առաջ խնդրեց, որ Ձեզ գտնամ»: Մարդու միջոցով մեր հասցեն դժվարությամբ գտել էր ու այդ նամակը ուղարկել:

Այնպես որ, թուրքերուն մեջն ալ լա՛վ մարդիկ կան: Պապայիս վեց-յոթը տարի անոնք պահել էին, ետքն ալ կապը չէին կտրած…

Հիմա ադրբեջանցիներուն մեջը լավ մարդիկ չկա՞ն կամ Սումգայիթում չկա՞ն. կա՛ն, լավ մարդիկ ալ կա՛ն…

127 (127).
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՅՈՌՕՂԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1904 Թ., ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ)

Երբ ես ծնվել եմ, հայրս՝ Հովսեփը և մայրս՝ Նվարդը շատ են ուրախացել, քանի որ երկար ժամանակ զավակի տեր չէին դարձել: Դռնեդուռ ինկած մայրըս արծաթ կհավաքե, եկեղեցիին մեջ օրհնել կուտա, խաչ շինել կուտա, վրան անունս, ծննդյան թիվս փորագրել կուտա, վիզս կկախե, հետո ինձի կուտան ճամբազի մը կռնակը, Եփրատի վրա ալ թել մը կքաշեն, մարդը ինձի շալկած կանցնի այդ թելին վրայեն: Հայրս, որ գյուղի դատախազն է եղել, ըսել է. «Աստված իր հրաշքը եթե պիտի ցուցնե, հիմա՛ պիտի ցուցնե, եթե զավակըս պիտի մեռնի, թող՝ հիմա մեռնի»: Բայց ես հրաշքով ողջ կմնամ, քանի որ Աստծո պահածն եմ եղել: Ինձմե վերջ ուրիշ երեխաներ ալ կծնվին՝ Վերժինը, Ծիրանը, Պարգևը, Սեդրակը:

Երբ ջարդը սկսավ, թուրքերը Տիգրանակերտ մտան և հորս որպես գյուղի աչքի ընկնող մարդու տարան գիշերով: Մայրս կպատմեր, որ թուրքերը անխղճորեն հորս սկսել են չարչարել, եղունգները քաշել, ըսելով. «Պիտի թուրքանաս»:

Հայրս ալ կըսե. «Ես իմ հայությունս, իմ կրոնքս չեմ ուրանար: Ես հայ ծնած եմ, հա՛յ ալ պիտի մեռնեմ»:

Թուրքերը ավելի կկատղին, կսկսին ավելի տանջել, չըրածնին չի մնար, խազըխի՝ ցցի վրա կնստեցնեն, հետո ալ մաշկը կքերթեն, մեջը խոտ կլցնեն, կբերեն իր տունին առջևը կդնեն, իբր օրինակ, որ եթե գյուղին մեջ մնացած հայերը չթուրքանան, իրենց ալ դատախազին պես կընեն…

Ամբողջ գյուղը չթուրքացավ: Շատերուն տանջեցին, չարչարեցին…

Հետո թուրքերը եկան պապայիս քոքը կուզեին կտրել. եղբայրներուն տարին, չարչարեցին, քույրերուն փախցուցին:

Ես աղ ժամանակ բավական մեծ էի և լավ կհիշեմ ամեն ինչը: Իմին պզտիկ եղբայրս՝ Սեդրակը, նոր ծնված էր և քառասուն օրական էր: Ան սկսավ լալ, մայրըս չկրցավ անոր ձայնը կտրել, պզտիկին բերանին լաթ մը կապեց, տարավ գոմը, որ թուրքերը անոր ձայնը չլսեն. գոնե մենք և ան մյուսները, որ մեր տունին մեջ թաքնված էին, չջարդվեն: Երկու օր պզտիկ Սեդրակը մնաց գոմին մեջը: Երկու օր ետքը մայրս ըսավ. «Երևի աղ չոջուխը մեռած է արդեն»: Գնաց, տեսավ՝ Սեդրակը երկու օր անոթի-ծարավ ողջ էր մնացել գոմին մեջը:

Ետքը մայրս գնաց, թուրք բեկին տունին մեջը սպասուհի եղավ, որ մեզի և մեր տունին մեջը պատըսպարված որբերուն ալ պահե, կերակրե: Անոր համար մամայիս Նվարդ չէին ըսեր, «Անա՛» (Մայրի՛կ) կըսեին:

Ինչու քի քանի-քանիներուն կյանքը փրկած է: Կհիշեմ, օր մը երբ ինձի տարած էր ադ թուրքին տունը, ես հոն տեսա մեր տունին խալիները, անկողինները և ուրիշ շատ բաներ, որոնք մեր տունեն թալանել, տարել էին: Մամայիս ըսի. «Աս ամենը մեր ապրանքներն են»: Մամաս մատը բերանին դրավ, ըսավ. «Հովհաննես տղաս, սուս մնա, թե չէ անոնք մեզի ալ կսպանեն»:

Ես հետո ֆեդայի դարձա: 40 օր սառած լեռներուն մեջ մնացինք անոթի, ծարավ, ձյունը կհալեցնեինք կխմեինք: Մեր ունեցածով մի կերպ ապրեցինք, բայց չհանձնվեցինք: Մեկնումեկին կուղարկեինք գյուղ, ուտելիք կժողվեր, մեզ կբերեր:

Հետո խմբով եկանք իջանք Տիգրանակերտ: Թուրքերուն վրա հարձակվեցանք: Ես գացի մամայիս ազատեցի թուրքերու տունեն: Ան իր հետ մի պզտիկ աղջիկ ուներ: Անոր մեռածներուն մեջեն գտել էր, մաքրել, հագցրել ու պահել: Հետո եկանք Հալեպ, բայց հոն չկրցա մնալ, Ֆրանսա անցա, որ հետո ալ՝ մորս տանիմ: Անտեղը հարուստ կին մը կար, իր աղջիկին ուզեց ինձ տալ, բայց ըսավ. - Հովհաննես ինչու՞ ըլլաս, ասկե վերջը քեզի Ժան պիտի ըսենք, Քյոոօղլյանն ալ՝ Քյոոօղլը կըսենք:

Բայց ես չդիմացա, ըսի. - Իմ հայրս մեռավ, անոր կաշին քերթեցին, մեջը խոտ լեցուցին, բայց թուրք չըդարձավ: Մայրս փչացավ, թուրք չեղավ: Ես ֆրանսացի՞ պիտի ըլլամ, նայե՛թ ըլլա ձեր դրա՛մն ալ, ձեր աղջի՛կն ալ:

Տունեն դուրս ելա, ելլելու ատենս մեծ քամիոն եկավ, վրայես անցավ: Ես ջարդ ու խուրդ դարձա, ինձի հիվանդանոց տարին: Մորս լուր է հասել Հալեպ, որ Հովհաննեսը քամիոնի տակ ընկավ, մեռավ: Մամաս սուգերը կմտնա, առանց հանգուցյալի հոգեհանգիստ կընե եկեղեցիին մեջը:

Վեց ամսի չափ մնացի հիվանդանոցը: Օր մը աչքերս բացի, տեսա քովս բժիշկներ, բուժակներ, ինձ հարցուցին. - Ո՞վ ունիս այս քաղաքում:

Ըսի. - Սիմոն և Տիրան Քյոոօղլյանները քազըններս են, հոս կապրին:

Բժիշկները լուր կուտան անոնց, որ ձեր քազընը ողջ է, եկեք տեսեք:

Անոնք կըսեն, մեր քազընը մեռած է: Բայց օր մըն ալ կուգան, կտեսնան, որ իրական իրենց Հովհաննեսն եմ ես:

Վեց ամսի չափ ալ ֆրանսական հիվանդանոցի մեջ աշխատեցի: Բժշկությանս շատ գաղտնիքները սորվեցա, 1931-ին եկա Հալեպ: Հալեպում իմ պզտիկ օֆիսը բացի, 1933-ին ամուսնացա: Հայ, քյուրդ, բոլորը կսիրեին ինձի, «դոկտոր Հովհաննես» կըսեին: Կիներու հիվանդություններու գծով մասնագիտացա, շատերուն բուժեցի և ձրի՛ բուժեցի: Կինս կըսեր հաճախ.

- Հովհաննե՛ս, նորեն դրամ չառի՞ր:

Ինչպես դրամ կրնայի առնել, խեղճ մարդիկ էին, կմեղքնայի…

1952-ին Սուրիայի կառավարությունը որոշեց ինձի օրինավոր բժշկի դիպլոմ՝ վկայական տալ: Մեծ մարդոց զավակները կբուժեի, բույսերով կբուժեի, ոչ դեղերով:

1966-ին եկանք Ամերիկա: Փառք Աստծո, հաճախատ կապրինք… Այնպես որ, իմ գլուխս շա՛տ բան անցած է, բայց, ինչպես ըսի, Աստված ինձի պահած է…

128 (128).
ԿԱՐԱՊԵՏ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ)

Իսկական Տիգրանակերտը Ֆարխինն է, որը քսանհինգ կիլոմետր դեպի Արարատյան դաշտի կողմն է: Մեծն Տիգրան թագավորի պալատը էնտեղ է եղել, բայց երկրաշարժի պատճառով խորտակվել է:

Տիգրանակերտեն կերևար Արարատ լեռը: Հոնտեղեն կանցներ Տիգրիս գետը: Մենք բնիկ տիգրանակերտցի ենք: Ես ամեն ինչ լավ կհիշեմ, մանրամասնությամբ: 1915 թ. հանկարծակի մեզ աքսորեցին: Ես շատ փոքր էի, բայց կհիշեմ՝ որքան ժողովուրդ կար Տիգրանակերտի մեջ, հանեցին դուրս: Քեռիս, որ տասընհինգ տարեկան հազիվ կար, ինձ վերցրեց ուսերին: Մայրս ալ պուճուր եղբորս գիրկը առած՝ քայլում էր: Սրանք հիշում եմ լավ: Մեծ եղբայրս՝ Նշանը, որ ինձմե վեց տարով մեծ էր, ան ալ քայլում էր մեծ մորս ձեռքը բռնած: Քայլելու ժամանակ մեզի խփում էին գավազանով, մտրակով և սուրերով: Վերջապես էկանք, հասանք Դեր Զորի անապատի վերևի մասը՝ Մերդինի քաղաքը, որտեղ գնացքը կուգար, Հալեպ կերթար: Անտեղ մեզ իջեցուցին, կանաչ դաշտ էր: Ներքևը ձոր կար: Մեզ՝ փոքրերիս ջոկեցին, իսկ մեծերին՝ տարին ձորի կողմը հերթ կայնեցրին. երեք-չորս հարյուր հոգիի չափ մեծեր էին, այդքան ալ երեխաներ էինք: Ուրեմն մեզ՝ էրեխեքիս կանաչ դաշտի վրա նստեցրին. մենք չգիտենք՝ ինչ պիտի ըլլա…

Մայրս իր հերթը խախտելով գալիս էր մեզի համբուրու՛մ, համբուրու՛մ, գնում էր: Մենք՝ ես, մեծ եղբայրս և փոքր եղբայրս, որը մեկ տարեկան էր, հետևից տեսնում էինք մի շարան կանայք հերթի մեջ շարժվում են. մեր մայրը անոնց մեջն էր: Տունեն երբ էլանք, մեր մայրը ազգային տարազներով էր՝ թավիշ, ոսկեկար հագուստներով, գլուխը զարդարված էր ոսկեդրամներով, վիզը ոսկե շղթա կար, հագուստներուն մեջը երկու կողմը քսանհինգ-քսանհինգ ոսկի էր կարած՝ գաղտնի…

Վերջին անգամ, երբ մեր մայրը էկավ մեզի խեղթի պես համբուրեց, կհիշեմ, արդեն միայն տակի ճերմակ ներքնազգեստով էր. ո՛չ զարդ կար, ո՛չ ոսկի կար, ոչ ալ թավիշե հագուստները…

Մենք՝ էրեխեքս, բանից անտեղյակ ենք: Էնտեղ բաներ մը կատարվում են, բայց չգիտենք ի՞նչ է կատարվում: Դու մի ըսեր՝ բոլորին հերթով հագուստները հանում էին, մի կողմի վրա շարում, բոլորին մերկացնում էին, կացինով գլուխը կտրում էին, հետում էին ձորը:

Մայրս վերջին անգամ էկավ մեզի նորեն համբուրեց, գնաց: Ամեն անգամ գալուն պահակին մի դեղին ոսկի կուտա եղեր, որ մեր մոտ գա, իր երեք փոքր երեխեքին տեսնելու, մեզի համբուրելու: Էդ միջոցին, որ մայրս մեզ մոտ էկավ վերջին անգամ մեզ համբուրելու, մեկ փաթրոթը մը էլավ, Աստված մի արասցե. դու մի ըսեր, զինված պարսիկները էկան էդ թուրք ժանդարմաներին սկսան կոտորել: Եվ մեզի բոլորիս ազատեցին: Մեզ՝ էրեխեքիս հետ նաև մայրս և մի քանի մեծեր, որոնց հերթը դեռ չէր հասած:

Էդ ժամանակ պարսից շահը հրաման է արձակել, որ ով որ մի հատ հայ բերի՝ ըլլա երեխա, ըլլա մեծ թե փոքր՝ մեկ կարմիր ոսկի կտանա իրմէ՝ մարդ գլուխ: Էս պարսիկ զինվորները մեզի հավաքեցին, որ տանեն Պարսկաստան. շահին հրամանը պիտի կատարեն: Էկան որ պիտի տանեն մեզ, շարքով շարեցին: Էդ միջոցին մի փառավոր ծերուկ, մորուքը ծունկերին հասնող մարդ մը էկավ. անոր անունը շեյխ Աբդըլ Խազըր Գելյանի էր: Էկավ պարսիկներուն ըսավ. - Էս կանանց մեջ դերձակ չիկա՞:

Մայրս, որ հմուտ դերձակ էր, ըսավ. - Ես դերձա՛կ եմ:

Փառավոր շեյխը ըսավ. - Աղջի՛կս, աս երեխաներուն ու՞ր կտանիս, արի վրաններու մեջ մաճ արի, Դեր Զորի շրջակայքում բնակվող արաբ կանանց հագուստ կկարես, անոնք քեզ ցորեն, ուտելիք կուտան, - հետո շուտ էկավ դեպի պարսիկ զինվորների մեծավորի կողմը, ըսավ. - Սրանց ամեն մեկի համար մեյ-մեկ ոսկի պիտի առնեիր չէ՞ շահից, ա՛ռ, - ըսավ, հանեց չորս ոսկի տվավ, մեզի ազատեց:

Էն փառավոր շեյխը մեզի տարավ վրանների մեջ և ըսավ իր մարդոցը. - Եթե սրանց մազից մեկ թել պակսի, ձեր գլուխը կկտրեմ:

Մամաս կէրթար վրանների տակը արաբ կանանց կար կկարեր, ուտելիք կբերեր: Մի կերպ կապրեինք: Գիշերները մեզ հետ կպառկեր կռնակի վրա. փոքր եղբորս կուրծքին վրա կդներ, որ կաթ ուտի, արդեն կուրծք ալ չէր մնացած, որ ուտի, խեղճ մայրս թևերը բացած խաչվածի պես կպառկեր՝ մեկ թևին՝ իմ գլուխը, մյուս թևին՝ մեծ եղբորս գլուխը, պզտիկն ալ՝ կուրծքին վրա, որ մի բան չպատահի: Քանի որ չէր վատահում ոչ մեկին, աչքը վախեցած էր արդեն: Մայրս շա՛տ գեղեցիկ կին էր, օր մը էս շեյխի եղբայրը կսիրահարվի մորս: Մայրս՝ կհրաժարվի: Նա կասի. - Եթե չհամաձայնես, քո երեխաներին պիտի սպանեմ:

Մայրս ըսավ. - Սպանե՛, միևնույն է, քեզ չե՛մ ուզի:

Այդ միջոցին մի մարդ գնաց լուր տվավ շեյխին: Շեյխը էկավ, ըսավ. - Սրիկա՛, ի՞նչ ես ուզում, ես սրանց բարիք արեցի մեղքացա, չորս ոսկի տվի ազատեցի, որ դուս սպանե՞ս: Ուրիշ աղջիկ չիկա՞, որ ամուսնանաս:

Հանեց ատրճանակը՝ թա՛խ-թա՛խ-թա՛խ, մեր աչքի առջևը սպանեց իր եղբորը:

Արդեն մայրս շատ նիհարցել էր, կուրծքը ցամքել էր, պզտիկ եղբայրս չդիմացավ՝ մեռավ: Լաթ մը չիկար, որ փաթաթեինք մեջը, թաղեինք: Մայրս իր ներքնաշորը պատռեց, մեջը ոլորեց, հողի մեջ թաղեցինք:

Հոն բավականին մնացինք, մինչև 1918 թիվը. մինչ այդ՝ ներում էկավ, որ ամեն մարդ, ով կուզե, թող վերադառնա իր երկիրը: Մայրս մեկ հատ ուղտ մը առած էր, ադ ուղտը ծախեցինք, մի հատ էշ առինք, մեր ունեցած-չունեցածը վրան դրինք, մայրս ալ վրան նըստավ, ելանք ճամփա դեպի Մերդին: Մերդինի ճանապարհին մամաս մեզի քովը կանչեց, ծնկի եկավ փոսի մը վրա, որուն մեջը շատ մը մարդկային ոսկորներ կային, հանեց, համբուրեց, մենք բան չհասկացանք, ըսինք. - Դայե՛, ավչի՞ յա (մա՛յր, այս ի՞նչ է), - հարցրինք քրդերեն, քանի որ մենք հայերեն խոսիլը մոռցեր էինք:

Մամաս ըսավ. - Ասոնք մեր քույրերուն և եղբայրներուն ոշխարներն են:

Վերջապես ադ էշով բարձրացանք Մերդին, որտեղեն գնացքը գնում էր Հալեպ: Էդ միջոցին մեզ հայտնեցին, որ ամերիկացիները էկած են, հայերուն կօգնեն: Մենք արդեն մարդկութենեն դուրս էլած էինք՝ մազերնիս երկարած, վրանիս կարգին հագուստ չիկա: Մեզի ըսին՝ տանե՞ք ձեզի Ամերիկա:

Մայրս խելացի կին էր, բայց այդտեղը սխալվեց, հրաժարվեց: Էրթայինք ևե, գոնե մարդ կդառնայինք: Բայց մայրս պատճառ ուներ հրաժարվելու: Քանի որ չարչիների միջոցով իր եղբորը գտել էր, որը Տիգրանակերտում մեր տունը կարգի էր բերել ու ան ալ գալու էր Մերդին՝ մեզ դիմավորելու:

Մեկ ալ տեսանք՝ մայրս համբուրվում է մեկու մը հետ: Գացինք տեսանք հորեղբորս տղան էր, Տիգրանակերտեն էկել էր, պիտի գնար Հալեպ, պատահաբար մեզ էր հանդիպել: Նա գնաց իր տոմսը փոխեց, մեզ ալ էշով տարավ, Տիգրանակերտի խանը իջանք: Մամաս տվավ երկու ղուրուշ, ըսավ. - Գնա՛, Մարտիրո՛ս, (որի անունը Մուհամեդ էին դարձրել արաբները), գնա ըսե եղբորս՝ քույրդ եկել է, թող գա:

Տղան գնում տեսնում է՝ քեռիս մանգաղն է տաշում: Մենք նստած հաց, խաղող էինք ուտում Տիգրանակերտի խանին մեջը: Ողորմած քեռիս էկավ, մեզ գտավ: Քեռիս գլխաբաց, ոտքերը բոբիկ վազել, էկել էր մեզ գտնելու: Եղբայրս ճանաչեց քեռուս: Ալ նկարագրելու՛ բան չէ: Առավ մեզի, մորս հետ, տարավ իր տունը:

Մայրս շատ ջահել մեռավ: Ես քնած էի. առել, տարել, թաղել են, հե՛չ չեմ էլ իմացել:

Մինչև 1923 թիվը Տիգրանակերտ մնացինք: Մայրս արդեն չիկար: Քեռիս երեք երեխայով մնաց շվարած: Արդեն կնոջը թուրքերը աքսորում սպանել էին: Քեռիս ստիպված նորեն ամուսնացավ: Շատ լավ հարս մը բերավ: Ան մեզի հարազատ զավակներուն պես նայեցավ…

Արդեն քեմալականները էկան, մենք ստիպված էինք դուրս գալ Թուրքիայեն: Քեռիս գաղտնի գնաց, որ Հալեպ էրթալու ճար գտնա: Բայց ճանապարհին տեսնում են նրան, քանի որ աչքը շաշ էր, ճանաչում

են: Քանի որ ինքը լավ երկաթագործ վարպետ էր և երկրին պետք էր, կոմանդորը ըսեր է. «Դու մեզի պետք ես, ու՞ր ես գնում»: Բռնում են, շղթաներով ետ բերում: Բայց քեռիս չհանգստացավ, պապորտ հանեց, մենք ալ քեռուս հետ գնացինք Հալեպ:

Հալեպում մեկը էկավ քեռուս ըսավ՝ էս տղային տուր, տանեմ խոզերս արածացնի: Հոն քիչ մը մնացի: Վերջը լսեցի, որ հորեղբայրս **դեմիրյոլը** (երկաթուղի) տարել էին*, աշխատացրել էին ու վերջն ալ սպանել: Հոն սպանվել էին նաև հայրս ու մեծ քեռիս:

Գացի հորեղբորս այրի կնոջը գտա, բայց նա էլ երեխաներով ծանրաբեռնված էր, ինձ տարավ որբանոց: Որբանոցին մեջը ութսուն հոգի էին՝ քառասուն տղա, քառասուն աղջիկ: Ես որբանոցին գետինը կլվայի: Օր մը եկավ հորեղբորս կինը, **ըսավ՝** ախպարդ Ֆրանսա կերթա: Ես զարմացա, **ջրի** դույլը ձեռքես ինկավ: Ախպերս էլավ, Ֆրանսա գնաց: **Հոն** ալ շա՜տ առաջ գնաց, քանի որ մենք ընտանիքով լավ երկաթագործ վարպետներ էինք, ան ալ Ֆրանսայի մեջ շեֆ կոմպանիոն եղավ:

Վերջը որբանոցին խոզապահը դարձա: Խոզերը կտանեի արածացնելու: Երբ պետք ըլլար, կհավաքեի ախոռ կտանեի: Իսկ օրվա մեջ կելլայի ծառի մը վրա, կերգեի: Ներքևից գլուխնին թանով կճուճ դրած սևագգեստ կիներ էին գալիս: Օր մը ատոնցմե մեկը իմ երգած երգիս պատասխանեց: Ես իջա ծառեն, ըսի. - Ո՞վ ես դուն:

Ըսավ. - Ես Գևորգ չավուշի քույրն եմ:

Ես վազեցի, Գևորգ չավուշին լուր տվի. - Գևո՛րգ չավուշ, քույրդ հոս է:

Ան վազեց էկավ, արդեն սև հագած արաբ կնիկները գնացել էին: Փնտրեցինք, շուկան, խաները՝ չկա: Ես նորեն շարունակեցի խոզերը արածացնել, ծառի վրա ելլել, երգել: Քանի որ գիտեմ, ան սևեր հագած աղջիկը գա ևն, պիտի ինձի պատասխանե իմ երգովս: Օր մըն ալ եկավ, բարձր պոռացի. - Գևո՛րգ չավուշ, ա՛ս է քույրդ: - Գևորգ չավուշը վազեց, էկավ: Ան կքաշե աղջնկան ձեռքը, քովի կնիկը կքաշե աղջկա մյուս ձեռքը: Մի կողմեն՝ արաբ կնիկը կքաշե, մյուս կողմեն՝ եղբայրը: Գևորգ չավուշը առավ քրոջը, տարավ: Մի հատ խրփեց արաբ կնոջը, որը ուզում էր ադ հայ աղջկան իր եղբորը հետ ամուսնացնել:

Հաջորդ օրը արաբները հավաքվեցան, բայց Գևորգ չավուշը զինվորական էր, արաբ զինվորների Ղըղըք խանի մեջ կծառայեր, էկավ ըսավ արաբներին.

- Հիմա գնդացիրը կբերեմ, բոլորիդ կջնջեմ:

Ատոնք վախցան, փախան: Աղջիկը մնաց եղբոր մոտ: Ես վերադարձա Հալեպ: Լսեցի, որ ախպերս կուզե ինձի տանել Ֆրանսա: Օր մը հանդիպեցի իմ որբանոցի ընկերներուս, որոնք ուսանելու պիտի երթային Ֆրանսա: Սպասեցի, որ եղբայրս պապորտ ղրկե՝ չղղրկեց: Ադ ընկերներս գնացին Ֆրանսա, ետ եկա՝ քանի որ փախստական էին գնացած: Ես չուզեցի փախստական էրթալ, մնացի, ետո անցա Բեյրութ: Բեյրութ ամուսնացա՝ 1947 թվին ընտանիքով եկա Հայաստան: Երևանում տուն շինեցի Կիլիկիայում: Լավ, փորձված վարպետ էի, Մատենադարանի, գիմու գործարանի մառանի, Հանրապետության հրապարակի և այլ մեծ շենքերի պատուհանների մետաղյա գեղեցիկ վանդակապատումները իմ ձեռքի գործերն են: Ես շատ հարգված ու փորձված երկաթագործ վարպետ էի:

Օր մը սև մեքենա մը եկավ կանգնեց մեր աշխատանքին տեղը: Մարդ մը եկավ դիրեկտորի կաբինետում նստեց, ինձ կանչեցին: Այդ մարդը ինձ ըսավ. - Դուք Ֆրանսա եղբա՞յր ունիք:

Ըսի. - Այո՛:

- Պետք է հրաժարվիք, թե չէ՝ վատ կլինի: Ձեր անկետայի մեջ պետք է գրեք՝ արտասահմանում հարազատ չունեմ:

Ես սկսա մտածել՝ հապա եղբայրս որ լսի, ի՞նչ կմտածե:

- Դուք գիտեք. կա՛մ հրաժարվեք, կա՛մ սև մեքենան կնստեք: - Ես նայեցի իմ դիրեկտորիս երեսը, ան աչքով ըրավ, որ հրաժարվիմ:

- Լավ, - ըսի, - չունեմ եղբայր, - մարդը անկետային մեջ գրեց, որ հարազատ չունեմ արտասահմանում: Իբր թե երկինքեն եմ իջած: Քանի որ ես Մինիստրների սովետին կից արհեստանոցը կաշխատեի, ադ տեսակ պետք է գրվի եղեր: 1949 թ. մեկ գիշերվա մեջ հազարավոր հայեր աքսորեցին: Իմ դիրեկտորի մեկ աչքի թարթումի շնորհիվ մեր ընտանիքը ազատվեց աքսորեն: Ողորմած քեռիիս եմ պարտական իմ նուրբ արհեստը: Ան ինձի տվել էր ոսկերիչի մոտ աշխատելու: Արդեն մեր գերդաստանն ալ երկաթագործ էր: Լավ մասնագետ վարպետ էի, մինչև վերջերս կաշխատեի: Աղջիկս՝ Տիգրանուհին, հաշվապահ դարձավ, իսկ թոռներես մեկը պոլիտեխնիկում դասախոս է, մյուսն ալ ասպիրանտ է կոմպյուտերի գծով, շատ ընդունակ երեխաներ են, ես ալ իրենց հետ կապրիմ, ողորմած կնոջս մահից հետո իրենցմով կմխիթարվիմ...

129 (129).
ԵՎԱ ԹՈՓԱԼՃԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ**
(ԾՆՎ. 1909 Թ., ՄԵՐԴԻՆ, ԴԵՐԻԿ Գ.)

Մերդինի Դերիկ գյուղին մեջ մեր գերդաստանը շատ մեծ էր. հայրս թաղական էր, իսկ հորեղբայրներս՝ Ղազարը, Մուրադը, Սևանը, Մկրտիչը, հորս հետ կտավի վաճառական էին և շատ հարուստ:

Զարդի ժամանակ իրարանցումին մեջ ես և ինձմե երկու տարի պզտիկ քույրս կորսնցուցինք մեր մորը և հորը, գացինք տաճիկ գեղերը մնացինք:

* Ըստ երևույթին Բաղդադ–Բեռլին երկաթուղու կառույցը:

** Վերապրողը քրդախոս է, հայերեն գրեթե չգիտի: Թարգմանել ենք հարազատների օգնությամբ:

Օրին մեկը մայրերնիս եկավ մեզի գտավ, ամմա ըսավ քի պապանիս մեռեր է, ավելի ճիշտը՝ սպանել են: Մամայիս հետ վերադարձանք Մերդին, մեր տուները այրված էին:

Արդեն տաճիկները փախցուցեր էին տասներեք տարեկան քրոջս, քանի որ արդեն հասուն աղջիկ էր: Աստուծո մոտ մեղք ունի՞, ի՞նչ է, չգիտեմ. բայց ես ու քույրս ստիպված հորեղբորսուս երկու տղաներուն հետ ամուսնացանք: Ես արդեն տասնչորս տարեկան էի, քույրս՝ տասներկու, բայց ամուսնացանք, որ թուրքի ձեռք չանցնինք:

130 (130).
ՄԱՐԻԱՄ ԱԽՈՑԱՆԻՊԱՏՄԱԾԸ*
(ԾՆՎ. 1909 Թ., ՄԵՐԴԻՆ, ԴԵՐԻԿ Գ.)

Զարդեն առաջ Մերդինի Դերիկ գյուղին մեջ միայն հայեր կապրեին, միայն հայերեն կխոսեին: Տեր-Պետրոս քահանա մը կար, տաճիկները անոր չորս ոտքի վրա կեցուցին, էշի պես հեծան վրան և կունակն ու վիզը դանակներ մտցուցին, ան կպոռար. - Ո՛վ Քրիստո՛ս, մեզ ազատե:

Տաճիկները ավելի կկատղեին, կըսեին. - Կանչե Քրիստոսին, որ գա քեզ օգնի:

Մեր հին անունը Փափօղլու (տերտերի որդի) էր: Մենք շատ հավատացյալ էինք, մեր գերդաստանին մեջը ադ Տեր-Պետրոս փափ՝ քահանան եղած է: Շատ հարգված ընտանիք էինք, ամմա շատ ալ տանջված ենք:

Մեր Դերիկ գյուղը Մերդինի մեջն էր: Հոն հինգ եկեղեցի կար՝ սուրիական, հայկական, հայ կաթոլիկ, բողոքական և Ս. Գևորգ: Ս. Գևորգին պատերը ևկարներ կային, կոչնակը կչալեր:

Երբ ջարդը սկսավ, մենք դրացիին տունն էինք: Ասկյարները էկան պապայիս տանելու, մամաս վրան ինկավ, սկսավ լալ: Ասկյարները մամայիս անդին ետեցին, պապայիս տարին բանակ: Ան հոն ալ մեռավ:

Ինձի տարին թուրքի գյուղ մը: Մեծերը կխոսեին, ես կլսեի, որ հայերուն կջարդեն կոր, հայ աղջիկներուն կփախցնեն կոր: Ես պզտիկ էի, ամմա խելքս տեղն էր, ճարպիկ էի, երեսս ցեխ կքսեի, ոտքերս, վարտիքս կեղտոտ կպահեի, որ ինձի չհավնին, չգան չփախցնեն: Կըպատմեին, որ հղի կնիկներուն փորերուն վրա քար կդընեն, կելլային վրան կկայնեին, որ մեջի զավակը մեռնի:

Վերջը մամաս էկավ ինձի գտավ տաճիկի գյուղեն: Մամաս մինչև հարյուր տարեկան ապրեցավ: Ան միշտ կըսեր՝ եթե ճնար ըլլար մեջիս բոցը հանեին, ինձի ալ կախաղան հանեին: Ան բոցը մեր և մեր զավակներուն արյունին և ծուծին մեջն է մտած: Խե՜ղճ մամաս, որ մինչև կյանքի վերջը սև հագավ, միշտ կըսեր. «Եթե տաճիկը ձեր տունը գա, ելած սանդուխները և էշինը օճառով ջուրով լվացեք: Եթե ձեզի խնձոր մը տան, գըրպանիդ ծակեցեք, խնձորը դուրս ևտեցեք, որովհետև անոնք կուգան, կպաշարեն տունը, ձեր դրամը կամ ձեր պատիվը կառնեն»: Մայրս միշտ ադ վախը ուներ սիրտին մեջը: Կվախնար, որ տաճիկները կփախցնեն չոջուխներուն:

Դերիկի մեջ երեք հատ դպրոց կար, ամմա մայրս չէր ուզեր, որ աղջիկ թողը դպրոց էրթա: Ան հազիվ նախակրթականը վերջացուց, միջնակարգը նոր սկսած էր, թողնիկիս պայուսակը մայրս առավ, երկու կտոր ըրավ պատռեց, քանի որ կվախնար, որ տաճիկները գեշություն կընեն: Վերջը վերջո եկանք հոս: Թոռներս՝ Գևորգը և եղբայրը դպիր են Սամաթիայի և Գնալը կղզիի եկեղեցիներուն մեջ: Հոստեղը դպրոց կերթան: Հոստեղի հայկական դպրոցները եթե զավակդ կնքված չէ, վարժարան չեն առներ:

Ամեն առտու, ամեն գիշեր օրը հիսուն անգամ կաղոթեմ. «Աստվա՜ծ, թամամ ազատե, չըլլա, որ հայ քրիստոնյան այլազգի ձեռքը ձգես: Հիսուս Քրիստոսը փրկեց մեզի, ան մերին հավատին է»:

Երբ եկանք Պոլիս, եկեղեցիին պատերը, գետինը սկսանք համբուրել: Քանի որ մեր գյուղը շատ հավատացյալ էր՝ պաճքին՝ պաճք կբռնեինք, ծոմին՝ ծոմ կպահեինք:

Մեր Դերիկի Ս. Գևորգ եկեղեցին վեց բանալի ուներ, երեքը աս կողմ կդառնար, երեքը ան կողմ կդառնար: Կոչնակը կչալեր: Հիմա հոն հայկական եկեղեցի չմնաց:

131 (131).
ՄԱՐԻԱՄ ՔԱՐԱՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ԱԴԻՅԱՄԱՆ)

Ես պզտիկ էի, երբ ջարդը սկսավ: Ամենեն առաջ հայերուն զենքերը հավաքեցին, ջահելներուն թուրքական բանակ ղրկեցին, հոն ալ սպանեցին: Քեռիս Թալեաթի քեթիբը՝ գրագիրն էր, իրենց մարդն էր, բայց քանի որ իրենց գաղտնիքները գիտեր, իրեն ալ չխնայեցին, տարին սպանեցին: Մամաս պապիս հետ

* Վերապրողը քրդախոս է, հայերեն գրեթե չգիտի: Թարգմանել ենք հարազատների օգնությամբ:

գնաց, որ քեռուս դիակը գոնե բերեն թաղեն, բայց երբ պապս կտեսնա իր զավակը սպանված, տեղնուտեղը կաթված կխփե, կմեռնի: Թուրք զինվորները կտեսնան, կսկսին խնդալ. «Էս ի՜նչ լավ բան եղավ, մի գնդակ խնայեցինք» կըսեն:

Մամաս եղբոր ու հոր դիակները հոն փռված կըձգե, հազիվ կփախի: Մամաս տուն էկավ լացով, ողբով: Այդ նույն օրը մեր քարաշեն տունին քովը գնդակ մը

պայթեցավ. հայրս մեռավ: Տասը տարեկան եղբայրս քովը կըլլա, ադ տեսնելուն պես ամբողջ մարմինը վերքեր կթափե և մեկ օրվա մեջ ան ալ կմեռնի:

Մնացինք մամաս, երկու տարեկան պզտիկ եղբայրս և ես: Մեզի քշեցին, տարին Սուրուճ: Ո՛չ տուն կա, ո՛չ հաց, ո՛չ ջուր: Մենք ծարավ ենք, անոթի: Մարդիկ այնքան սոված էին, որ կսպասեին ձին կեղտոտի, որ կեղտի միջի գարիները ջոկեն, ուտեն: Ծունն ու կատուն անգամ կուտեին: Կհիշեմ, էշ մը տեսան, խփեցին, էշը սատկեցավ, վրա հասան, կտոր-կտոր ըրին, հումհում սկսան ուտել:

Մամաս ստիպված մեզի ձգեց ծառի մը տակ, ինքը գնաց հաց մուրալու, որ մեզ բերի: Ադ ժամանակ թուրք ժանդարմա մը եկավ, եղբորս երեսի վրա պատկեցուց, վրան մեծ քար մը դրավ, ինքն ալ վրան էլավ, այնքա՜ն տրորեց, այնքա՜ն տրորեց, որ խեղճ չոջուխին փորը, աղիքները դուրս թափվեցան, մեռավ...

Ադ տեղեն քյուրդ կնիկ մը կանցներ, տեսավ, մեղքցավ, երևի, ըսավ. - Աս աղջիկին ալ էդպես պիտի սպանի, - գրկեց ինձ, տարավ:

Մեկ էլ աչքս բացի, որ սև չադրի՝ վրանի մը մեջն եմ: Հոն ինձ պահեցին: Քանի որ շատ մը երեխեքի հետ ինձ ալ կրակի մեջ էին ձետած, ոտքս այրված էր ու թարախ կուգար: Դեղ դրին: Աղեկցուցին: Ինձի աղեկ պահեցին: Հետո երբ ամերիկացիները եկան հայ որբերը հավաքեցին, ինձ ալ տարին Հալեպի որբանոցը...

132 (132).
ԽԱՉԵՐ ՀԱԿՈԲԻ ԱԲԼԱՊՈՒՏՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1893 Թ., ԵԴԵՍԻԱ, ԿԱՄՈՒՐՋ Գ.)

Ես ծնած եմ Ուրֆայի Կամուրջ գյուղին մեջ: Մեր նախահայրերը գաղթած են եղել Սասունից:

Մեր պապերեն լսած եմ, որ Քրիստոս աշխարհ եկած ժամանակ Աբգար թագավորն ուներ 40 տղա, որոնք իր հետ բորոտության բռնվեցան: Ոչ մի բժիշկ չէր կրնար լավացներ: Աբգար թագավոր իմացավ, թե Քրիստոս աշխարհ եկած է, կույրերուն կտեսցնե, կաղերուն կքալեցնե, իր նկարիչ Թադևոսին ղրկեց, որ երթա Քրիստոսին նկարը նկարի, բերի իրեն հանձնի:

Թադևոսը Երուսաղեմ գնաց, Տաճարը մտավ, տեսավ Քրիստոս բեմին վրա կքարոզեր: Ուզեց անոր նկարել, բայց նկարը ծերուկի նկար եղավ: Նկարիչը կտավին մյուս երեսը դարձուց տասներկու տարեկան տղա մը եղավ: Այդ ժամանակ Քրիստոս եկավ նրա մոտ և հարցուց. - Այդ ի՞նչ կընես:

Նկարիչը ըսավ. - Տե՛ր, քու նկարդ կուզեմ հանել, չի ելներ:

Քրիստոսը առավ կտորը, երեսին սեղմեց և նկարիչին տվավ: Նկարիչը կտավը առավ ու ճամփա ինկավ: Ան չէր նկատեր, թե լույսը իրեն ետևից իբր պահապան կերթար: Մարդիկ լույսը տեսնելով՝ գնացին, որ բռնեն լույսը: Նկարիչը կտեսնե, որ զինքը պիտի բռնեն, ավերակի մը քով մեջը ջուր չեղած կույր հոր մը կտեսնա, կտավը հորին մեջը կընձգե: Թադևոս գալով թագավորին մոտ, կըսե. - Քրիստոսի նկարը կույր հորը ձգեցի:

Աբգարը լսեց, հավաքեց իր տղաները: Ան քառասուն տղա ուներ, ըսավ անոնց. - Այդ կույր հորին մեջ ջուր կըլլա՝ կլվանանք:

Երեսունինը տղան հավատացին, բայց փոքր տղան չհավատաց: Թագավորը տղաներին տարավ, անոնք հորեն ջուր քաշելով՝ լողացան ու բուժվեցան: Իսկ փոքր տղուն հայրը անիծեց, ըսելով. - Քու սերունդը ասկե վերջ պակասավոր թող ըլլա:

Մինչև մեր օրերը այդ հորին մեջ միշտ ջուր կար, հիվանդները կերթային, կլվանային, Ս. Սադուրակ կկոչվեր:

Ուրֆա քաղաքի մեջ կար նաև հայր Աբրահամի լիճը՝ ձուկերով լեցուն. արգիլված էր այդ ձուկերեն ուտելը: Քաղաքը շատ սիրուն տեսք ուներ: Ատոր համար կոչվեցավ մայրաքաղաք: Ան իր շուրջը բավական պարտեզներ ուներ, այգիներ: Օդը մաքուր էր, ջուրը՝ առողջարար ու բուժիչ: Կար երկու հիվանդանոց, մեկը քաղաքինն էր, մյուսը՝ գերմանական:

Ես ունեցել եմ հինգ հորաքույրներ, երեք հորեղբայրներ և հայրս:

Մենք երկրագործ և պարտիզպան էինք: Ուրֆայից մի ժամ հեռու Կամուրջ հայաբնակ գյուղն էր: Եկեղեցի, դպրոց ունեինք: Հազար ընտանիք հայ քրիստոնյաներ էին ապրում: Մենք ունեինք տներ, պարտեզներ, այգիներ, ոչխարներ, ձիեր: Աշխատում, ապրում էինք մեզ համար:

Ես ծնված եմ 1893 թ.: Իմ փոքր ժամանակս կըպատմեին 1895-ի տխուր դեպքերուն մասին: Մայրս լալով կպատմեր. որ իր երկու քեռիները Ուրֆայի մեջ սպանված են, մեծը՝ Հակոբը, ամուսնացած էր, փոքրն ալ՝ երիտասարդ: Կառավարության կողմե հրաման կուգա, որ հայերուն զենքերը հավաքեն: Հազար ութ հարյուր մարթին հավաքեցին հայերեն: Չունեցողներուն ստիպեցին՝ գնել և տալ: Սուլթանը հրամայած էր բոլոր հայերին ջնջել: Որպես հարձակման նշան հրացան կարձակեն, թուրք զինվորները և ամբոխը կխուժեն հայկական թաղը ու կսկսին կոտորել: Կացիններով կխորտակեին դուռները: Բնակիչներուն մեկիկ-մեկիկ դուրս կքաշեն, գազանաբար կմորթեն: Մեր տան մեջ աս ձևով քառասուն հոգի կսպանեն: Ծանոթ շեյխ մը հրամայեց. «Ձեռքերը, ոտքերը կապել, ոչխարի պես բերել ինձ մոտ»:

Հարյուրե ավելի մարդոց ձեռքերը և ոտքերը կապելով՝ ոչխարի պես կոկորդներեն կմորթեն: Մարդիկ իրենց հոգիները ազատելու համար ջրհորները կիջնային, թուրքերը ատրճանակով կկրակեին: 1895-ի դեկտեմբերի 19-ի վայրենի մսագործությունը կտևե մինչև կեսօր:

Օաբաթ գիշեր ութ հազար հայ կիներ և երեխաներ եկեղեցիին մեջ կտեղավորվին: Թուրքերը երեսուն թիթեղ քարյուղով կվառեն եկեղեցին և միջի մարդկանց, երեք հազար հայ կսպաննեն կացինով:

Այն ատեն կամուրջցիները ժողով ըրին, ով որ զենք ունի, թող հանե, հսկե գյուղի ճամփաները:

Մեր գյուղի դիրքը լավ էր, կոնակը՝ լեռ, դիմացը՝ դաշտ, տասը ժամ հեռուեն եկողին կարելի էր տեսնալ, իսկ գյուղը մի ճամփա ուներ: Գյուղի տանիքներուն վրա քարե պատնեշներ շինվեցան, մաս մը երիտասարդներ գացին պարտեզներուն մեջ դիրք բռնեցին: Թշնամու մեծ բազմությունը ձիով, ոտքով, ուղտով մեզ վրա կուգային, որ սպաննեն, մեր ունեցածը թալանեն:

Մեր տղաները պարտեզներուն մեջեն կրակ բացին: Հեռուեն տեսանք, որ իրարանցումը ինկած է խուժանին մեջ: Անոնք վախեն հետացան:

Մենք սկսանք մեր ապրուստը հոգալ՝ ցորեն ցանել, քաղել, աշխատիլ, մեծ ու փոքր միասին: Ես ալ փոքրը հասակիս սկսա ծնողներիս հետ մե՛յ մը պարտեզը, մե՛յ մը այգին մշակել, մեր ուլերը կարածացնեի:

Մենք և հորեղբայրներս մեկ բակի մեջ կապրեինք: Մեծ հորեղբայրս՝ Խաչերը, ուներ չորս տղա, երկու աղջիկ: Մյուս հորեղբայրս՝ Հայրապետը, ուներ երեք աղջիկ, երեք տղա: Անոր ցորեն ցանած տեղը սղոցով վիզը կտրած են: Երրորդ հորեղբայրս՝ Դավիթը, հինգ աղջիկ ուներ: Ան շատ քաջ էր: 1915 թ. դեպքերի ժամանակ անոր բանտարկեցին, տարին կախեցին:

Հայրս՝ Հակոբը, սիրված էր բոլորի կողմից: Երբ գյուղում կոիվ կըլլար, հայրս կերթար և կհաշտեցներ, որ կառավարության ձեռքը չիյնան:

1915 թ. հոկտեմբերին կառավարական հրաման եկավ, որ ամեն հայ ընտանիք՝ թե՛ հարուստ, թե՛ աղքատ, պիտի տեղահանվի: Մայրս ինձի և եղբորս աղջկա հագուստ հագցուց, գլուխներուս լաչակ կապեց, որպեսզի տղա ըլլալնիս չիմացվի: Ըսին թե՝ անասունները մի ծախեք, ձեզ պիտի տեղափոխենք Ռաքքա:

Ճամփա ելանք, մեծ ու պզտիկ մի բազմություն, բոլորը տկար, հոգնած, ամբողջ ամառ անդադար աշխատել էին իրենց գոյությունը պաշտպանելու համար, ձմեռվա պատրաստություն էին տեսած, հիմա ալ արդեն ձյունը գետինը ծածկած էր: Ճամփին թուրքերը հարձակվեցին մեր քարավանին վրա, թալանեցին մեր անասունները ու տարան: Եկանք, հասանք անապատը: Հոն ուրիշ տեղերից ալ աքսոր բերած էին, միացուցին մեզի: Բոլորիս քշեցին Ռաքքա, անկից ալ՝ Սապգա: Ռեոկինս ճամփին մեռավ: Այդտեղից հասանք Մաղտանթպկի: Դեր Զորեն թալանելով, սպանելով մեզ տարան Պըսերա Խաբուր գետի վրա: Շատ կիներ և աղջիկներ ջուրը ձետվեցան ու խեղդվեցան, որ թուրքի ձեռք չանցնին: Հայրս արաբերեն գիտեր: Ան մի մարդու դրամ խոստացավ և խնդրեց, որ հոն մնանք: Ադ արաբը մեզ տարավ իր բակը: Առավոտ, երբ գաղթականները ճամփա պիտի ելնեին, տեսան, որ մենք չկանք, ըսեր են՝ մինչև Հակոբենք չգան մեզ հետ, մենք չենք երթար: Այնպես որ, մեզի եկան գտան, միացանք անոնց, շարունակեցինք մեր ճամփան դեպի Սուվար:

Սուվարից հետո Խաբուր գետից անցանք, եկանք Աբուհամադա, ջուրը աղի ու լեղի էր: Ժողովուրդը թութի նման թափվեց գետին, խեղճերը ալ ուժ չունեին: Շարունակեցինք մեր ճամփան, հասանք Այնըլղազալ: Այնտեղ հորեղբորս կինը և աղջիկները մեռան: Մենք գնացինք Թըլխաֆար, շատ մեծ գյուղ էր, հոն շատ հայեր մնացին: Մենք շարունակելով՝ հասանք Ասորեստանի մայրաքաղաք Մուսուլ: Երբ որ այդտեղից ելանք, հայրս հիվանդացավ:

Անցանք Խաբուր գետի տախտակե կամուրջով, հասանք Նեպիեոս: Մեզի տարան մի մեծ խան: Ես աչքովս տեսա մի խոր փոս կար, մարդկանց ողջ-ողջ կքաշեին ոտքերեն, կտանեին, այդ փոսին մեջ կձգեին:

Բավական մնացինք այդտեղ: Հորս Մուսուլ ղրկեցինք, որ բուժվի: Հոն հայրս, քանի որ արաբերեն գիտեր, ծանոթացել է մի հարուստ մարդու քարտուղարի հետ: Ան ըսեր է հորս՝ գնա ընտանիքդ բեր: Հայրս եկավ Նեպիեոս: Այդտեղ հինգ տարեկան եղբայրս խոլերա եղավ ու մեռավ, հորեղբորս տղի կինն ալ մեռավ՝ թողնելով երկու աղջիկները հորս խնամքին:

Մուսուլից դեպի Քարքութ պիտի քշեին մեզի, բայց հայրս զինվորներուն դրամ խոստացավ, որ մեզի ազատ արձակեն: Գիշերվա ժամը երկուքին զինվորը եկավ, դուռը բացավ, և մենք դուրս եկանք այդ զզվելի հոտած որջից:

Այդքան մեծ ընտանիքեն մնացին Դավիթի երեք տղան ու մի աղջիկը, Խաչերի երկու տղան և երկու որբ աղջիկները, Հայրապետին երկու տղան, մի աղջիկը, հայրս, ան որ երկու տղաները և երկու աղջիկները: Մի խոսքով՝ երեսունհինգ հոգինոց ընտանիքեն մնաց տասնյոթ հոգի: Դավիթ հորեղբորս զավակներուն, Խաչերի երկու տղաներուն մի արաբ կտանի կսպանի, երկու աղջիկներեն փոքրին կթրքացնեն, մեկը աքսորեն վերջը եկավ մեզի գտավ: Մենք ի վիճակի չէինք զինքը պահելու, հորեղբայրս իր հետ ան որ տարավ Բաղդադ, մինչև այսօր իրեն չենք տեսած:

Հայ ազգությունը այսպես ցիր ու ցան եղավ: Բոլոր ազգությունը՝ մոլորված գառներու պես, գայլերեն կփախչեինք, աղվեսներու ճանկը կիյնայինք:

Քյուրդը, որ հորս հետ խոսած է, երկու զինվոր փախստական կղրկե, մենք ալ իրենց հետ մինչև գյուղին մոտեցանք, մեզի ցույց տվին, իրենք մեզ թողեցին ճամփին, գնացին: Անձրևը կտեղա, մենք՝ պատսպարվելու տեղ չունեինք, թրջվել էինք, Հայրապետ հորեղբորս չորս երեխաները մեզի հետ են, մենք ալ հինգ հոգի ենք՝ ևս հայրս, մայրս: Հայրս ըսավ. - Երթամ գյուղից անասուն բերեմ, ձեզի տանիմ:

Հայրս և մեծ եղբայրս մինչև գյուղ կհասնին, վանից աքսորված քյուրդերը, Անդրանիկ զորավարի ձեռքեն փախած, հայերին կողոպտելով ու սպանելով, կուգան հորմես դրամ կուզեն: Ըսեր են՝ ձեր ընկերներուն սպանեցինք, ձեզի ալ կսպանենք ու կսկսին հորս ծեծել, կհասմեռ վիճակի մեջ կթողուն կերթան: Հայրս, որ արաբերեն գիտեր, մի կերպ կերթա այդտեղի լիազորին կխնդրե, անոր կնիկին ոտքերուն առաջ կչոքի: Անոնք երկու էշ կուտան եղբորս, որ մեզի բերի իրենց տունը: Մենք գնացինք էդ լիազորին տունը, կրակ ըրին, մեր հագուստները չորցուցինք, մեր մարմինը տաքացավ,

ուտելիք տվին, կերանք: Հայրս ըսավ՝ Նարկիզլի գյուղը պիտի երթանք: Մարդը մեզի կառքով Նարկիզլի գյուղ հասցուց: Մեզ այնտեղ լավ ընդունեցին: Մի մարդ աշխատանք տվավ: Բայց մենք ի վիճակի չէինք աշխատելու: Մեզ տեսնողը կըսեր, թե շուտով պիտի մեռնին, քանի որ ահռելի, ծարավ ու հոգնած էինք:

Էդ մարդը կառքով ղրկեց ասորիներու գյուղը՝ Թըլճաֆաթ: Նամակը պատրիկին տվինք, տատիկես մնացած մի գիրք կար, մայրս տվեց նրան: Նա գիրքը համբուրեց, դրավ գլխուն: Ան մեզի տեղ տվավ, այդտեղ ապրեցանք, զորացանք, լավացանք, լեզուն սորվեցանք, երկու տարի հոն մնացինք:

Մի օր հայրս ըսավ՝ երթանք Մուսուլ, տեսնանք ովքե՞ր ողջ մնացեր են: Ու իջանք Մուսուլ. կամուրջի վրայեն մեկը կպոռա ու կփաթաթվի հորս: Ան մեր դրացիին տղան էր:

Հորեղբորս տղաները եկան, մեզի տարին Գարաճուղ, ձմեռը այնտեղ անցուցինք: Մուսուլից քառասունօթ կիլոմետր հեռու, մի շատ հարուստ մարդ կար, բեյթ Սապունչի կըսեին: Ան ուներ շատ գեղեցիկ պարտեզ, մեջը պտղատու ծառերով: Ան մեզ որպես բանվոր ընդունեց, առանց դրամի կաշխատեինք: Հայրս բամբակ ցանեց: Այդտեղից դուրս եկանք, բաժանվեցինք հորեղբորս երեխաներից, բայց սովը մեզ ճեղնեց:

Մեր ընտանիքով ճամփա ելանք: Շատ կվախնայինք, որ հայ ըլլալնիս իմանան, գետինի քարերը մեզի թշնամի կկարծեինք: Գիշերը մաղարայի մեջ քնեցինք: Մաղարայի մոտը աղբյուր մը կար: Աղբյուրի վրա հայերեն գրված տառեր կային: Մեծ քույրս ըսավ՝ այստեղ հայու գյուղ եղած է և բոլորին սպանած են: Լեռներուն մեջեն գնացինք, տեսանք մի քանդված խանութ: Առավոտը շարունակեցինք մեր ճանապարհը դեպի Միզրաբոդան: Ճամփան ինչ որ չորցած անասնակեր ուտելեն՝ փորերնիս դուրս չէր ելնում: Մի գյուղ հասանք, ճեռուեն եկեղեցին երևում էր: Մոտեցանք, մըտանք մի տուն, բայց մեզի տեղ չտվեցին, քշեցին գոմը: Փոքր քրոջս ձեռքը մի մատանի կար, տանտիրոջ աղջիկը մատանին կուզե, քույրս կըսե, թե քիչ մը հաց տուր: Աղջիկը կտոր մը հաց կուտա, մատանին կառնե: Ադ կտոր մը հացը վեց հոգու մեջ բաժնվանք: Առավոտ նորից քալել սկսանք: Անոթի, ծարավ հասանք Փեշխաբուր մի մեծ գետի: Արաբ զինվորներու մի խումբ ձիավորներ պիտի երթային Միզրաբոդան: Գետը մտան, մենք ալ մտանք, հայրս առաջ մտավ, հետո՝ եղբայրս, հետո՝ ես: Քույրս, մայրս և փոքր քույրս ջուրին մյուս ափին մնացին: Հայրս ելավ գետից, եղբայրներս ալ ելլալու մոտ էին, մեծ քույրս տեսավ, թե զիս ջուրը կտանի՝ գոռաց. հայրս, եղբայրս հասան, ձեռքես բռնեցին, դուրս քաշեցին: Տեսան, որ ջուրը քրոջս ալ պիտի տանի, որոս ձեռքը մի փայտ կար, ուժ տվավ փայտին, անոր ալ ջուրեն դուրս քաշեց: Հայրս գիտեր լեզուն և օրենքները՝ գոռաց արաբերեն. «Պատիվ ունեցողը թող օգնե»: Զինվորները օգնության հասան: Ձեռք-ձեռքի բռնեցին, քրոջս ջուրեն հանեցին: Զինվորներեն մեկը իր վրայի արաբ հանեց, հորս տվավ, ըսավ. «Ա՛ռ, տուր աղջիկներդ թող փաթաթվին, որ չմրսին»: Ձի մըն ալ հորս տվավ, ըսավ «Կինդ ու աղջիկդ գնա բեր»: Հայրս ձիուն հեծավ, գնաց գետի ափից մորս ու քրոջս բերավ: Հայրս շնորհակալություն հայտնեց:

Երկու օր էր, ինչ մեծ եղբորս փորը կցավեր, փորը դուրս չէր եկած: Ըսավ՝ ալ չեմ կրնար քալել: Հայրս ձորը մոտը մնաց: Մենք գնացինք, Տիգրիս գետը նավակով անցանք. այն կողմը Միզրաբոդան քաղաքն էր: Եղբորս հայրս բերավ, մտանք քաղաք: Վեց հոգի մի անկողին ունեինք: Ջմեռը ցուրտ էր: Հունվար ամիսն էր: Մի էշ ճամփից գտանք, մեր շորերը վրան բարձանք ու գնացինք: Մի կնկա հանդիպեցինք, հարցուցինք. - Մի տեղ, մի խան չկա՞, որ այնտեղ մնանք:

Կինը ըսավ. - Հայրի՛կ, մի՛ երթաք խան, այդտեղ հայերուն սպանեցին, հորերը լեցուցին:

Մենք ալ քյուրդերեն գիտեինք, մեծ քույրս ըսավ. - Հայրի՛կ, ադ կնկան խոսքը լսե:

Կնկան հետը գացինք, մի մեծ բակ մտանք: Միայն մենք էինք: Այդ գիշեր հոն մնացինք: Հորս քովը մի մաճիտ դրամ կար, մայրս ղրկեց, որ չիգյար առնե: Մասավաճառը ըսեր է՝ հայերեն մի խոսեք: Քանի որ ինքն ալ հայ կըլլա: Հայրս չիգյարը բերավ, մայրս խաշեց, ջուրը խմցուց եղբորս, փորը դուրս եկավ:

Մենք առտու ճամփա ելանք, հասանք մի գյուղ: Մի տունի մոտեցանք, մի տղամարդու ձայն քյուրդերեն կըսեր. «Քաֆըրի ձայն կուգա»: Այսինքն՝ հայ կա: Մենք փախանք: Ճանապարհին հանդիպեցինք ուղտերու քարավանի: Քարավանապետը մեզ տարավ, սեղան դրեց, ուլ մորթեց, ձավարով փլավ հյուրասիրեցին:

Առավոտ իրենց հետ ճամփա ելանք, մեզի որպես պաշտպան տեր կեցան, եթե մեզմե մեկը չէր կարող քալեր, ուղտերուն վրա կնստեցուներին, որ ճամփին չմնանք: Իմ ոտքերը ուռած էին քայլելեն, ուղտին վրա նստեցուցին, մինչև Մըսպետին եկանք: Մայրս և քույրերս մեզմե առաջ եկած հասած էին, ջաղացքի ետևը մեզի կսպասեին: Փոքր քույրս դեպի գետը կվազե, մեծ քույրը կկանչե. - Աղջի՛կ, եկու՛ր, եթե իմանան, որ հայ ես՝ կսպաննեն մեզ:

Այդտեղից ջաղացքի միջից մի մարդ կելլա, կիմանա, որ հայ ենք, մեզի առին իրենց քովը: Հայրս արդեն աննճանաչելի է դարձած: Անոր քովեն մի ձիավոր կանցնի, հայրս անունը կուտա. «Ինճիներ Մովսես էֆենդի» կըսե: Ձիավորը կկանգնի, կտեսնա գեղեցիկ Հակոբը ինչ է դարձած: Հայրս մեկ ոսկի կուտա, կպայմանավորվին, որ վաղը հանդիպին իրար: Մենք սկըսանք գերմանացիներուն քովը երկաթգծի շինության վրա աշխատիլ, բոլորս՝ մեծ ու պզտիկ:

Հորեղբորս՝ Դավիթի հինգ զավակները, Հայրապետ հորեղբորս մի աղջիկը շարունակեցինք աշխատելը: Հրաման ելավ, որ անգլիացիները եկան, ամեն հայ իր տունը թող երթա: Գերմանացիները փախչում էին, արաբները անոնց ետևեն ընկնում էին, մինչև լույս կրակում էին հրացաններով, արաբները թալանում էին:

Անգլիացիները հարյուր քառասուն վագոն որբեր և որբևայրիներ լեցուցին, չոր ուտելիք տալով, քշեցին դեպի Հալեպ: Այդ որբերը հետո ցիրուցան եղան աշխարհի բոլոր կողմերը: Մենք ալ անոնց հետ եկանք Արաբփունարի, հետո Սուրուճ և Ուրֆա գնացինք: Մի թուրքի տուն մնացինք մի գիշեր: Հետո եկանք Կամուրջ:

Մեր տուները քարուքանդ, թուրքախոս մուհաջիրներ, չեչեններ ու չերքեզներ և այլ ազգեր եկեր մտեր էին: Տուներուն առաստաղների գերանները, դռները, պատուհանները վաներ էին, սենյակներուն պատերը սեփսեն էին:

Մեր ընտանիքեն ինը հոգի էր մնացել: Քանի մը հայ ընտանիքներ, որ թուրքացած էին, մնացեր էին Կամուրջ գյուղի մեջ: Հայ երիտասարդները, որ իրենց զինվորական ծառայությունը լմնցուցեր, եկեր էին, սկսան շինել ավերակները: Սկսանք աշխատիլ: Այդ տարիներուն շատ թանկություն էր, դժվար էր ապրուստ ճարելը: Անասուններ գնեցինք: Սկսեցինք հողը վարել: Ուրֆացիները Հալեպից եկել էին, բայց ամեն ինչ ավերակ էր: Այդ օրերուն իսկապես խեճեթանալու տեսարան էր: Երբեմն մարդիկ իրենց ավերակ տուները մտնելով՝ լաց էին լինում, կանչում էին իրենց ննահատակված սիրելիներուն անունները: Այդ վիճակը երկու տարի տևեց: Ստիպված անոնք հաշտվեցան կացության հետ և սկսան իրենց տուները նորոգել:

1919 թ. սկիզբը Իրաքի անգլիական իշխանությունը դյուրություններ կուտար հայ գաղթականներուն, որ դառնան իրենց երկիրը: Երբ հայերը գյուղ մտան, շատերուն ծունկերը ծալվեցան՝ տեսնելով ավերակները: Քանի որ անօրենները քանդել էին տունուտեղ: Ժամանակի ընթացքում արյուն-քրտինքով հասցուցած ծառերը արմատախիլ էին արել: Մենք հարյուր յոթանասուն ընտանիք էինք:

Վերջապես ամերիկացի աղջկան մը ներկայությունը այդ օրերուն Ուրֆայի մեջ օրհնություն մը եղավ: Եվ հակառակ իրենց կարճ գործունեությանը արժանի դարձան առաքելատիպ միսիոներուհիները՝ միսս Շատըք, միսս Կարեն Եփփե, որը հիվանդացել էր Դաևըմարքա գնաց բուժվելու, քանի որ 1915 թ. դեպքերը շատ ցնցեցին զինքը: Ան շատ հայեր կերակրած ու ազատած է: Թող լույսերուն մեջը պառկի:

1920 թ. թուրքը հույներուն հետ սկսավ կռվիլ: Հայերուն սկսան բանակ տանիլ: Արդեն անգլիացիները գնացել էին, ֆրանսիացիներն էին եկած: Անոնք վեց հարյուր հոգի էին: Չորս տարի հայերը մի քիչ շունչ քաշեցին: Խորամանկ թուրքը ուզեց քաղաքից դուրս հանել հայերին:

1920 թ. մարտի 9-ին սաստիկ ձյուն կուգար: Ապրիլի 6-ի գիշերը ֆրանսիական բանակատեղեն լուր եկավ, որ ֆրանսիացիները ծանր կացության մեջ են, ոչ ոք կրնար երաշխավորել՝ ֆրանսիացիներու երթալեն վերջ թուրքերը պիտի խնայե՞ն հայերուն:

Ապրիլի 10-ին, կեսգիշերին ֆրանսիական զինվորները թուրք ժանդարմներու առաջնորդությամբ ճամփա կիյնան՝ Աքաբայի և Սուրուճի ճամփով հասնելու համար Թելապեատի իրենց բնակատեղին: Երբ ֆրանսիական դրոշակը վար կառնեն, հարյուրապետ Սարժու գնդակ մը կպարպե ուղեղին ու կիյնա: Այս քաջ զինվորը չէր հանդուրժած ֆրանսիական ազգին հասցըված այդ անպատվությունը:

Հայությունը այս սպասումին մեջն էր, երբ Թըլֆուտուրի շրջանի դիրքերեն թողուցիկները լուր բերին, որ Աքաբայի կողմեն զենքերու ձայներ կլսվին: Պարզ է, որ կոիվ կար՝ թուրքերը ծուղակի մեջ էին ձգած

ֆրանսիացիներուն: Ժամ մը վերջը աճագին խուժան թուրք չեթեներ Հալեպի ճամփայեն կմոտենային քաղաքին՝ սվիններու ծայրը անցուցած ֆրանսիացի զինվորներուն գլուխները, քանի որ ֆրանսիացիները՝ հինգ հարյուրից ավելի զինվորներ, ձիավոր ժանդարմներով առաջնորդվում էին և Աքաբայեն անդին՝ Շապաքեի ձորի մեջ խույս տված էին: Նախապես դիրք բռնած թուրքերը անակնկալի բերած էին ֆրանսիացի զինվորներուն և կոտորած: Պաշարվող ֆրանսիացի զինվորները կռված էին մինչև արյան վերջին կաթիլը և ինկած: Այդ կռվի մեջ ներոսաբար ընկած էին նաև ուրֆացի համալսարանական Հովհաննես Չալլանը և Արմենակ Աբաջյանը:

Իսկ ամերիկուհիներուն ներկայությունը այդ օրերուն Ուրֆայի մեջ օրհնություն մըն էր: Ամերիկյան օգնությունը շարունակվեց մինչև 1922 թիվը: Նրանք բացեցին գործարաններ՝ տղամարդկանց համար, իսկ կիներու համար՝ ձեռագործի արհեստանոցներ, որ աշխատեն, իրենց ապրուստը հանեն: Ուրֆայի որբերուն ալ տեղափոխեցին Սուրիա, Լիբանան:

Ֆրանսիացիին երթալեն վերջ ցորեն ցանեցինք, բայց մորեխը եկավ, ցորենը կերավ: Մի օր հայրս քաղաք գնաց, մի ծանոթի հետ խոսելու ժամանակ ասել է. «Այս տարի մեր արտերը թոփ նետեց, մեր ունեցածը կորավ»: Խանութին մեջը մի թրքացած հայ պառկած կըլլա, կլսե, կերթա կառավարությանը լուր կուտա, թե. «Հակոբ աղան ըսավ, թե ֆրանսացին թոփերով եկած է Սուրուճ, որ Ուրֆան խփե»: Ան սուտ վկայությունը տվին, հորս բռնեցին, բանտը դրին, որպես քաղաքական բանտարկյալ:

Մենք՝ երկու եղբայր, մեզ պահեցինք, բանտի մեջ ալ հորս պահեցինք, որ չտկարանա: Վեց ամիս հետո Տիգրանակերտ ղրկեցին, որ դատը էնտեղ ըլլա:

Եղբայրս մարդ տեսավ, դատախազին դիմեց: Եղբորս բերնեն Մուստաֆա Ռեմալին դիմում ղրկվեց, որ մեր հորը ազատեն: Բայց հայրս երեք ամիս բանտը ճտավ: Քանի մը ամիս վերջ Հաջամի փաշան Մուստաֆա Ռեմալի խորհուրդով եկավ մեր Կամուրջ գյուղը: Հաջամի փաշան ըսավ ժողովուրդին՝ «Ձեր հողերը մեզի տվեք»: Հայերը չհամաձայնվան: Մուստաֆա Ռեմալը հրաման տվավ, որ իսլամի գտնված տեղը ուրիշ ոչ մեկը իրավունք չունի: Սկսեցին մեզ նեղություն տալ, ծեծել: Ստիպված յոթ ընտանիքով դուրս եկանք, հասանք Ջարաբլուս: Այնտեղ մեր անասունները ծախեցինք: 1925 թվին կառքով Դեր Զոր գնացինք, հորաքրոջս տղաները իրենց ընտանիքով էնտեղ էին ապրում: Սկսանք պարտիզպանություն ընել արաբներուն մեջ: Հետո Թըլըսում գացինք, սկսանք պատ շարել, քյարփիճ կտրել: Եղբայրս մալարիա բռնվեց ու գնաց Ռաքքա, քանի որ քեռիենքս հոն կբնակվեին: Հետո Դեր Զոր գնացինք: Ֆրանսիական զինվոր դարձանք ես ու եղբայրս, գացինք Դեր Զոր աշխատեցինք:

1931 թ. հայոց վարդապետները գնացին աքսորավայրը, հայերուն ոսկորները հավաքեցին: Դեր Զորի մեջ հողամաս առին, ոսկորներուն վրա հիմք դնելով օծեցին, եկեղեցին պատեցինք: Այդ տարի Գյուլբենկյանին կինը մեռած էր, անոր անունով Մարիամ Աստվածածին կոչվեցավ:

133 (133).
ԽՈՐԵՆ ԱԲԼԱՊՈՒՏՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1893 Թ., ԵԴԵՍԻԱ)

Ես տասնվեց տարեկան էի, երբ Դեր Զոր էլանք: Մեզ բերեցին Պըսերու: Ադ Դեր Զորեն ութ ժամ հեռու էր: Անտեղ տախտակից քյոփրի կար, տակեն Խաբուր գետը կանցներ: Մենք երկու ջարդ տեսանք՝ մեկը 1915-ին էր, մեկն ալ 1921-ին: 1915-ին նորեն գերմանացին էր մեղավորը, ան էր կազմակերպողը: Աքսորի ժամանակ գերմանացիները ճերմակ հաց կուտեին, հացին փորը կնետեին: Տեսան, որ մենք սոված ենք, էդ հացին փորերը սկսան ոռներուն քսել, հետո նետել, որ մենք չուտենք: Կհիշեմ Խաբուր գետի վրա երկու կիլոմետրի չափ տեղ հայ ջահելներուն տկլոր դիակները լողում էին Պըսերուից մինչև Ծըղադի: Ծըղադի ըսված տեղը հավաքված էին մոտ յոթանասունհինգ հազար հայ՝ մանր, մեծ, աղջիկ, կնիկ: Վայրի թուրք ժանդարմները շրջապատած էին մեզ: Մեր ընտանիքեն տասներկու հոգու խփեցին, մեռցուցին: Անա-բաբա գյունի էր: Դեր Զորը հայերու ղասաբխանեն էր: Որ հայը որ Դեր Զորին կողմը ընկավ՝ կորավ գնաց, որը ընկավ Դամասկոսի կողմը՝ ազատվավ: Չեչենները մեր հայ ժողովրդին տանում էին, ջարդում, փշրում, ոսկիները առնում...

Օր մը ժանդարմները էկան հորս տարին արաբ Մըղըղտ փաշայինն մոտը: Փաշան տեսավ, որ հայրս լավ արաբերեն է խոսում, հարցրեց. - Դու հա՞յ ես:

- Բնիկ Ուրֆայի Կամուրջ գյուղեն եմ:

- Արի՛ դու մի՛ երթա, քու տղերքով մնացեք հոս, ես հող կուտամ կցանեք:

Հայրս ըսավ. - Չէ՛, ես իմ ազգի հետ պիտի էրթամ:

Մինչև Մուսուլ մեզ կպնող չեղավ, բայց սովից կոտորվեցինք: Մեզ բոլորիս տանում պտտեցնում էին: Հետո նորեն բերում էին նույն տեղը, որ ժողովուրդը հոգնի:

Մուսուլի շրջապատում ասորիների գյուղեր կային, մենք՝ ուրֆացիներս, չորս տարի հոն մնացինք: Հետո եկան ֆրանսիացին, անգլիացին մտան, 1918 թվին գերմանն ու թուրքը պարտվեցին: Մեզ լցրին տավարնի վագոնը, ասին՝ ամեն մարդ թող էրթա իր երկիրը: Գացինք, որ նույն թուրքերն են հոն: Մայրս չուզեց ներս մտնալ, հետո չեչեններին հանեցինք, մտանք մեր տուներեն ներս: Տեսանք, որ չեչենները զեյթունի ծառերը կտրատում էին, որ հայերուն վնաս ըլլա: Պապաս գնաց քաղաքի մեծի մոտ: Ան հարցրեց հորս. - Հա՛, Հակոբ աղա, ի՞նչ կա գյուղեն:

- Ի՞նչ կա, չեչենները կտրատում են զեյթունի ծառերը:

Մարդը նստավ նամակ մը գրեց, տվավ ինձ: Տարի տվի չեչեններուն: Նամակին մեջը գրված էր. «Հայերուն ձեռք չտալ»:

Մի օր մի թուրք էկավ հորս ըսավ. - Քո զեյթունի բաղերը ինձ պիտի տաս, թե չէ՝ գլուխդ կուտեմ:

Մեկ էլ էկան, թե Աթաթյուրքի հրամանն է, հորս պիտի տանին, որ կախեն:

Ես արդեն մեծացել էի, մեր այգին ծախեցի, որ պապայիս ազատեմ:

Դատախազի մոտ գնացի: Դատախազը էլավ դուռը բացեց, հարցուց. - Դուն ո՞վ ես:

- Ես Աբուլբուտի տղան եմ, - ըսի:

- Չըլի՞ Հակոբի տղան ես:

- Հա՛:

Դու մի ասա, նա էլ հորս ծանոթն էր:

Սկսա պատմել, որ հայրս Դիարբեքիրի բանտն է:

Մարդը հանեց, ոսկիներ տվեց, ըսավ. - Գնա՛, աս դրամով ինչ ծախել ես, ետ վերցրու: Պապադ ժամանակին մեզի շա՛տ լավություններ ըրած է: Ես քու բերդ նամակ մը կգրեմ Մուստաֆա Քեմալ փաշային. - Նամակը ինձ կարդաց: Հետո շտապ ղրկեց:

Աթաթյուրքը Անկարայեն հեռախոս կբանա Տիգրանակերտ, կըսե.

- Աբուլբուտ Աբոջին ազատեք տուն ուղարկեք:

Բանտապահները կըսեն. - Աբուլբու՛տ Աբոջ, գնա՛, Աթաթյուրքին աղոթե, որ քեզ ազատեց:

Հորս կազատեն:

Հետո 1921 թ. Աջեմի փաշան եկավ Սաուտի Արաբստանեն: Աթաթյուրքը ասեց. «Թուրքին գտնված տեղը, ուրիշ ազգ գտնվելու իրավունք չկա»: Հետո եկան մեզ Սուրիա աքսորեցին, քանի որ Բեյրութն ու Սուրիան ֆրանսիացոց ձեռքին էր, իսկ Եգիպտոսը՝ անգլիացու:

134 (134).
ՆՎԱՐԴ ՊԵՏՐՈՍԻ ԱԲԼԱՊՈՒՏՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ԵԴԵՍԻԱ)

Ծնվել եմ 1903 թ. Ուրֆայի մեջ: Մայրս ալ Ուրֆա ծնած է և տասը տարեկանին զրկված է հորից ու մորից: Իրենց ընտանիքը վեց հոգուց բաղկացած է եղել և մնացել են չորսը՝ երեք աղջիկ, մեկ տղա: Հայրը՝ Թադևոսյան Մկրտիչը, դասատու, կրթյալ մարդ էր: Երբ Մկրտիչը կմեռնի, հարազատները նրա երեխաներին կվերցնեն կպահեն: Մեծ աղջկա անունը Լուսյա էր, իսկ մյուսը՝ Խանում, որը հետո իմ մայրը պիտի լիներ, և մյուս քույրը՝ Եղսա, եղբայրը՝ Կարապետ, որին հորեղբայրը կառնի, իր զավակներին հետ կտանի Ամերիկա: Խանումը կմնա քեռու մոտ: Քեռին կառավարական պաշտոնյա էր: Եղսային միսս Եփփե Մայրիկը*

* Իմա՝ Կարեն Եփփե դանիացի միսիոներուհին:

իբր աղջիկ պահած է: Երբ նա դպրոցը կավարտե, նրան կղրկե Այնթապ՝ կրթությունը շարունակելու: Եփփե Մայրիկը նրան կամուսնացնի մի լավ երիտասարդի հետ, նրա օժիտն էլ բերել կուտա Գերմանիայեն:

1915 թ. Խանումը տասներկու տարեկան կըլլա, կնշանեն մի երիտասարդի հետ, յոթը տարի նշանված կմնա, բայց փեսացուին չի տեսնար, միայն տաղավարներին կուգան, ցվերներ կբերեն:

Մայրս կպատմեր. «Մեծ Զատիկ էր: Ռեդիիս աղջիկները եկան, որ միասին եկեղեցի երթանք, քեռեկինս հիվանդ էր, իրենց հետ գնացի: Երբ եկեղեցիին մոտեցանք, մեզմե առաջ երեք երիտասարդ կերթային: Ռեդուս աղջիկները սկսան խնդալ: Հարցուցի, թե՝ ինչու՞ կխնդաք, ըսին՝ չիմացար, քու նշանածդ է, տե՛ս: Երբ եկեղեցի մտանք՝ մտածեցի՝ ասի՞ ինձի հարմար գտած են: Տուն եկանք, տեսանք, որ խնամիներուն կողմե սինի-ցվերներ բերած են: Ըսին՝ իրիկունը խնամիները պիտի գան: Ինչքան զարդեր որ բերած էին, վրայես հանեցի, ըսի՝ «Ես ադ տղային չեմ ուզեր»»:

Խանումին՝ մորս, կղրկեն ծանոթի տուն, նրան կամուսնացնեն Պետրոս Ռելեջյանի հետ: Հայրս փոքր ժամանակ Երուսաղեմ գացած է և անոր մղդսի կըսեին:

1900 թ. նորից թուրքերուն և հայերուն միջև կռիվ եղած էր, թուրքերու թաղին մեջ ապրող հայերը փախած էին հայոց թաղը: Իրենց ուտելիքի պաշարը վերջացած կըլլա, և Պետրոսին տատիս կըսե՝ գնա մեր տունեն ուտելիք բեր: Հայրս կգնա, թուրքերը կառնեն, զինքը կացինով վզին կզարնեն ու կփախչին: Տատիկս կըտեսնա, որ իր տղան ուշացավ, կերթա կտեսնա անոր արյուններուն մեջը, կբերե, բժիշկ կկանչե, կկարեն, կլավանա: Մորս հետ կամուսնանան: Հայտնի վաճառական կդառնա, էշ, ձի, բուրդ և յուղ կծախե:

1915 թ. մեր ընտանիքը բաղկացած էր՝ հայրս, մայրս, երկու տղա, մի աղջիկ, որ ես ալ եղա 1903 թ: Մենք շատ երջանիկ էինք ապրում:

1914 թ. հոկտեմբերս թուրքական բանակ տարին: Հորս բանտարկեցին: չորս հարյուր կարմիր ոսկի տվինք, ազատեցինք: Հորս դրամը վերջացավ: Քաղաքի կացությունը օրեցօր վատացավ: Դպրոցները փակեցին: Խանութները թալանվեցին: Տղամարդկանց բանտերը լեցուցին: Քանի մը օր ետքը կախաղան հանեցին: Ամեն տունեն երիտասարդ մը տարին, մոտ չորս հարյուր հոգի՝ ճամփա շինելու համար, տարին, բայց սպանեցին: Անզեն ու անպաշտպան տուներու վրա կհարձակեին, ինչ որ կարող էին՝ կթալանեին, մեծից փոքր դանակի կքաշեին: Հորերը լցված էին դիակներով: Տղամարդ չէր մնացեր, կիները ևս սկսան կռվիլ: Գերմանացիները թնդանոթներ բերին, սկսան հայ թաղը ռմբակոծել՝ ցերեկ և գիշեր: Շուտով հրաման եկավ, որ հայերի մնացածներին աքսոր քշել: Մենք գետնափոր ընկուղ ունեինք, որտեղ ուտելիք էինք պահում: Եղբայրս մնաց հորս հետ ընկուղի մեջ:

Ադ ժամանակ ես ինը տարեկան էի, քույրս՝ Ազնիվը, տասնմեկ տարեկան էր: Ու՞ր պիտի գնանք, չըգիտենք: Ես կուլամ: Մայրս տեսնելով, որ ես ձայնս չեմ կտրեր, մազերուս ժապավեն մը կապված էր, քանդեց, վզիս կապեց, սկսավ ինձի խեղդել: Թուրք զինվորները իմ լացիս վրա եկան, մտան մեր բակը: Նկուղը մտան, հորս, եղբորս և մյուս տասը տղամարդկանց գտան, տանջամահ արեցին: Մեզ քշեցին: Լաց, կոծ, ողբ, արտասուք. կարծես Աստված խռովել էր: Աքսոր են տանում: Ջյուն, ցուրտ, բոքիկ, անոթի, վրանիս հագուստ չիկա: Մեր շորերը, ոսկեղենները, փողերը, ամեն ինչ թալանել, տարել են: Շատ օրեր քայլեցինք: Քրոջս ոտքերը ուռեցին. կուլա, չի կրնար քալել: Մորաքրոջս չափահաս աղջիկը փախցրեցին, տարան: Եղբայրս յոթ տարեկան էր, մտրակի հարվածից մեռավ: Հասանք Դեր Զորի մոտի գյուղերը: Այդտեղի գթասիրտ արաբները մեզի ջուր և ուտելիք բերին: Դրամ ունեցողը՝ գնեց: Զինվորները երբ կտեսնային՝ ով դրամ ունի, ձեռքեն կառնեին, կծեծեին, կսպաններին: Երեխաներին առնում ետում էին կրակի մեջ. «Հայի լակոտ չպիտի թողնենք» կպոռային: Մամաս հիվանդացավ տիֆով: Մի արաբ կնիկ մոտեցավ մորս, ըսավ, որ ինձ ու քրոջս տանի իր տունը: Մամաս թուղթի մը վրա գրեց էդ կնիկի անունը, որ եթե վերադառնա, ետ առնե: Աքսորականները կըհասնին Մուրադ գետի ափը: Օրեցօր կպակսին քարավանները: Մեկ կողմից թիֆ ու խոլերա, մյուս կողմից՝ մահվան վախ: Չափահաս աղջիկները իրենց գետը կընետեին, որ թուրքի բաժին չդառնան: Մուրադ գետը շատ հայ տարավ:

Երեք օր կմնան Մուրադի ափին: Բազմությանն սիրտը դող կելլար, որ իրենց պիտի սպաննեն:

1915 թ. անմոռանալի պատմությունը դարեր անցնի՝ պիտի հիշվի, բայց որ կհիշեմ լսածներս և տեսածներս, թշնամիս ալ չտեսնե, ինչ որ հայերուն գլխովը անցավ:

Արաբները հայերուն կուզեին օգնել՝ ճաշ կեփեին, կբերեին, որ ուտենք: Թուրք զինվորները կտեսնեին ուտելիքը, կառնեին ավազի վրա կթափեին, ոտքով կընոխկոտեին ու կըսեին. «Հիմա կերե՛ք», բայց ժողովուրդը անոթի էր, վրա կթափվեին և կուտեին: Հայերուն մեջեն ան, որ կրնար աշխատիլ, Դեր Զոր գնաց, սպասումի մտավ, որ գոնե չոր հաց մը ուտել կրնա, ուրիշներուն կնության տարին: Մորս ալ կտանին, հարուստի մը տունը որպես ծառա, մյուս կողմեն մուհամեդիկները կկանչեն՝ թե որու տունը, որ հայ կին կամ աղջիկ կա, նրանց տունը պիտի վառենք, բայց արաբները շատ հայեր ազատեցին: Մայրս այդ հարուստ տիրոջը կըսե, որ իր Ազնիվ անունով աղջիկը այդինչ գյուղը, այդինչ արաբ կնոջ տունն է: Էդ հարուստ մարդը կերթա, քրոջս կբերե: Հույսս կուգա, մորս կպատմե, որ այդ կինը, որ իրեն տարել է իր տունը, հագուստները հանել է, մարմինը յուղով տրորել է ու ննջեցրել արևին, դրա համար էլ սկսել է հազալ. ան թոքերի բորբոքում կըլլա ու կմեռնի: Մայրս կմնա էդ հարուստ մարդու տանը: Էդ տանտերը Ուրֆայի հիվանդանոց նամակ կգրե և կիմանա, որ հորեղբայրս զինվորության գացած է, մորաքույրս և աղջիկը հիվանդանոցը կաշխատին: Մայրս ալ ինձ խեղդած է ու թողած, քանի որ իրեն աքսոր կտանին: Այդ ճամփով մահմեդական զինվորական մը կանցնի, ինձ կտեսնա, որ գետինը ձգված եմ, վիզես ժապավենը կքանդե, կտանի հիվանդանոց, կըսե. «Սա իմ երեխաս է, բուժեցեք»: Ես կլավանամ: Ան կռնակին առած՝ իրեն

տունը կտանի: Ադ մարդը կամուսնանա, բայց զավակ չունենար, անոր համար մենակ կապրեր, թափառական վիճակի մեջ, ինձ էլ հետը կամ ձիու կռնակին, անտուն, անտեր կպտըտեր: Ան զիս այնքան կսիրեր, իր թևերուն վրա կպահեր: Մի օր երկու զինված զինվոր եկան հարցուցին, թե՝ պապադ ու՞ր է: Ես ալ տարի, կորեկի արտին մեջը՝ ցույց տվի: Նրան առին, տարին: Դու մի ասա՝ նա թաքնվել էր, որ բանակ չգնա: Ես մնացի մենակ: Աստված իմ տերը, անոթի, ծարավ, մի տեղաշոր չկա, որ քնեմ: Բայց ադ հայրս նորից փախեր էր, մեկ օր վերջը եկավ, ինձ գտավ: Համբուրեց ինձ, ասաց. - Դուն ինձ ծախեցիր, որ զիս տարին:

Այդ գիշեր նա ուղտ վարձեց, և քաղաք եկանք: Հոն մեր ծանոթը ինձ տեսավ: Դու մի ըսեր՝ ան հղի է մնացեր, չի ուզեցեր թուրքեն լակոտ ունենա, գնացել է հիվանդանոց, որ մի ճար ընեն: Հոն կհանդիպի իմ մորաքրոջը: Կպատմե իմ մասին: Մորաքույրս ու էդ կինը լեբլեբի, շաքար առած եկան ինձ տեսնելու:

Գիշերը, երբ հայրացուս եկավ, ես պատմեցի: Նա մտածեց, որ ադ կինները հայ կըլլան, ինձ վերցրեց ձիու վրա, տարավ Սուրուճ: Հոն երեխաները ինձ «գյավուր» կըսեին, չէին ձգեր, որ իրենց հետ խաղամ: Էդտեղ մի տատիկ կար, նա ինձ հոգ կտաներ:

Մայրս Դեր Զորեն Ուրֆա՝ հորեղբորս նամակ կգրե, թե եթե Նվարդը գտնես՝ ինձի կբերես: Հորեղբայրս կսկսի ինձ փնտրել:

1917-ին անգլիացիները Թուրքիա կուգան՝ որբերը հավաքելու թուրքերու, քյուրդերու և արաբներու մեջեն: Ամեն գերդաստանեն մարդիկ կային ադ վիճակին մեջ: Հորեղբայրս անգլիացիներուն կդիմե և կսկսին ինձ փնտրել: Գալով Սուրուճ՝ լուր կտարածվի, որ գյավուրներուն կհավաքեն:

Հայրս շուկայից եկավ, մեր դրացիին հետ քյուրդերեն սկսավ խոսիլ, ես հասկացա, որ որբերը կհավաքեն: Ինձի լոգցուցին, մեր պառկելիք խսիրի մեջը փաթթեցին, դեպի պատը կայնեցուցին, թե՝ մարդու ձայն լսես, դուն ձայն չհանես, քանի որ զինվորները ամեն տուն կպտըտին, երեխաները կտանին, որ մորթեն:

Ես ալ անձայն կկենամ: Լսեցի, որ մեր տան մեջ զինվորներու ձայներ կուգան: Հորեղբայրս կըսե, թե՝ այստեղ է: Զինվորները կըսեն, թե՝ տեսանք, տանը մեջը մի բան չկար: Դուրս կելլեն, նորից կդառնան, զինվորը խսիրին ծայրեն կբռնե, գետին կձգե: Մեջեն ես կելլեմ, հորեղբորս կտեսնեմ, վիզին կփաթաթվիմ: Աչքերես արցունքները կվազեն: Հորեղբայրս ինձի համբուրելով՝ իր շալակը առավ, գիս Հալեպ տարավ:

Մայրիկս լսած էր իմ ողջ ըլլալս: Այդ ժամանակ հրաման կելլա, որ գաղթականները իրենց տեղերը երթան: Մայրս Հալեպ կուգա, քեռիին աղջիկներուն մոտ կմնա: Հորեղբոյրս ձեռքից բռնած՝ շոգեկառքից իջանք, կառք նստանք: Սանդուղքներեն վեր ելանք, դուռը ծեծեցինք, ներս մտանք: Մի խումբ կիներ նստած, բոլորը սև հագած էին, ոտքից գլուխը: Ես շվարած կայնած էի: Հորեղբայրս ըսավ. «Նայի՛ր, թե ո՞րն է մայրդ»:

Մի պահ ես լուռ նայեցի: Մայրս թևերը բաց արեց, գրկեց և համբուրեց, աչքերեն արցունքները թափվեցան երեսներուս վրա: Այդտեղ նստած կիները սկսան լալ: Բոլորն ալ իրենց զավակները, ամուսինները, իրենց հարազատները կորսնցուցած էին, ոչ մեկը մխիթարություն չուներ:

Մորեղբայրս սափրիչ բերավ, մազերս խուզեցին, ոջլոտ հագուստներս հանեցին: Ես հայր Աբրահամու գիրկը ինկա: Հայերեն խոսիլը մոռացած էի: Մայրիկըս տղու հագուստ հագցուց, նկարվեցինք: Ուրախ էի, մաքուր հագնված, համով ճաշեր, փափուկ անկողին: Ջմեռը գնաց, եկավ գարունը, հետո՝ ամառ, ինձի դպրոց դրին, հայերեն սկսա խոսիլ: Մայրիկս ուզեց Ուրֆա երթալ:

1918-ին, երբ անգլիացիները մեր քաղաքը մըտան, որբերուն հավաքեցին, ծնողներուն վերադարձրին, նորից ընտանիքներ կազմվեցին: Նորից ավերակ բույները սկսան շինել ու մեջը բնակիլ: Մորս հետ մենք Սուրուճ գացինք: Այնտեղ ծանոթ հայրենակից գտնելով՝ մի քանի օր այդտեղ մնացինք: Նրանք երկու չափահաս տղաներ ունեին, իմ ձեռքես բռնելով՝ շուկա տարին: Հոն թուրք հորս հանդիպեցի: Հայրացուս ինձ գրկեց, սկսավ համբուրել ու լալ: Սկսավ գրպաններս չոր պտուղներ լեցնել: Ան ըսավ ադ երկու տղաներուն. - Զիս աղջկանս մորը քովը տարեք, երկու խոսք ունիմ ըսելու:

Եկանք տուն: Թուրք հայրացուս մայրիկիս կանչեց, դռան ետևից սկսավ թուրքերենով խոսիլ մորս հետ. - Դուն Աստուծմեն չվախցա՞ր, խեղդած, ձգած էիր աս աղջկան, ես տարի հիվանդանոց, խնամեցի, ամեն ինչ ձգած՝ գինքը կպահեի: Թող, աս ալ ինձի խնայիր:

Մայրիկս ըսավ. - Ընողին՝ չմնար. մի մեծ ընտանիքեն երկուսով մնացեր ենք:

Թուրք հայրացուս նորից համբուրեց ինձ ու բաժնըվեցանք:

Ուրֆա գացինք, մորս քեռիենց տունը թուրքի թաղում էր: Երկու լավ տուներ ունեին: Ջեռուն տղան բանակեն եկեր էր, քույրն ալ արաբներուն մեջեն գտեր, բերեր էին: Էդ լավ տան դռները, պատուհանները բոշաները հանած, վառած էին: Շատերը արաբներուն քովեն կգտնվեին, կուգային՝ նոր կյանք սկսելու: Մայրս սևեր հագած՝ քահանայով պսակվեցավ: Ես ապշած կնայեի, կզարմանայի, թե ինչու մայրս կուլա: Ինքնիրենս կըսեի. «Երևի միտքը ինկած է հայրս, իր հին տունտեղը, զավակները, երևի նոր բույն կուզե շինել»: Բայց մայրիկիս արցունքները չեն կտրեր: Ան չէր ուզեր մխիթարվիլ: Մեկը չեղած ժամանակը ինձի կուրծքին կսեղմեր ու կըսեր. «Ես քեզ համար նորեն մարդ առա: Եթե աշխատանք երթայի, դուն որու՞ քովը պիտի մնայիր»:

Մայրիկս ամուսնանալեն վերջը Հալեպ գնաց, մեզի հագնելիք, տունին պետքացու բաներ առավ, բերավ: Ես մենակս կխաղայի: Ինձ շուկա կտաևեին, հորեղբայրս պղնձագործ էր, ինձ իր հետը խանութ կտաներ, իրիկունը տուն կբերեր:

1918 թ. ֆրանսիական պատերազմը սկսավ: Բոլոր մարդիկ, աճաբեկված, իրենց տուները թողած, հայոց թաղը հավաքվեցան, որը կենտրոնն էր: Դիրք բըռնեցին ու սկսան կռվիլ: Ջմեռ էր, ցուրտ էր: Մարդիկ չէին դիմանում անոթությանը: Խանութները փակ էին: Ժողովուրդը սկսավ ձիու, էշի միս ուտել:

1919 թ. ֆրանսիացիները հանձնվեցան: Թուրքերը նրանց քաղաքից դուրս հանեցին, չորս հարյուր ֆրանսիացի զինվոր Շապաքա լեռը հանեցին, սպանեցին, իրենց հազարապետին գլուխը՝ երկաթե ձողի վրա անցուցած, բերին քաղաքի մեջ պտըտցուցին: Աչքովս տեսա այդ ցավալի դեպքերը: Հայերուն մեջ վախ մը ինկավ: Ֆրանսիացիները երթալեն մեկ օր վերջը հավաքվեցան, որ ֆրանսիական դրոշակը իջեցնեն. ադ իջեցնողը իր կյանքին վերջ տվավ:

Հայրս պարենավորման հանձնախմբի ատենապետն էր: Ճիշտ է, կռիվը խաղաղվեց, բայց ժողովուրդի սիրտը վախ ինկած էր: Ուր որ կուզեին հայերը դպրոց բանալ, թուրքերը կուգային, գոցել կուտային: Կաթոլիկներուն բակը դպրոց գնացի, ո՛չ ճնտարան կար, ո՛չ սեղան, եկան գոցեցին: Դացինք որբանոցի բակը՝ հոն ալ գոցեցին: Դացինք հայոց եկեղեցիին բակը՝ նորից եկան գոցեցին:

Կռիվեն քանի մը ամիս վերջը Հայկանուշ քույրս եկավ, շատ ուրախացա, որ իրեն հետ պիտի խաղանք: Հորեղբորս կինը տղա մը ունեցավ: Մենք և անոնք մեկ բակի մեջ կապրեինք: Մայրս գիտակից կին էր, հորեղբորս տղան միշտ հիվանդ կըլլար: Մի օր հորեղբայրս ըսավ հորս. - Ես պիտի երթամ Հալեպ: Այստեղ մեզի հաց չմնաց:

Հավաքվեցան քանի մը ընտանիք ու գացին քաղաքից: Թուրքերը կուզեին, որ մենք նորեն տուն-տեղ թողնենք, երթանք, որ իրենք գան, մտնան մեջը: Եղբայր մըն ալ ունեցա, բայց ան կապույտ հազ եղավ, մեռավ: Մայրս Կամուրջ գյուղը մորաքրոջ տղա ուներ և քույր: Քույրը ամուսնացած էր, մեզ առավ, հոն տարավ: Կամուրջը շատ մաքուր օդ ուներ: Ջուրը՝ անուշ, պարտեզներով հարուստ, մրգի ծառերով զարդարված:

1920-ին մեր վիճակը բավական լավացավ: Թուրք մուրացկաններ կուգային մեր դուռը, մայրս անոնց հաց, ճաշ, հագուստ կուտար:

Ես կըսեի. - Հայու տուր:

- Թող ուտեն, թող հագնին, զավակս, հայու ալ կուտամ: Աստված բոլորին հավասար ստեղծեց, - կըսեր մայրս: Ան շատ խիղճով կին էր, կսիրեր աղքատներուն օգնել:

Դեր Զորեն ազատված մորաքույրս և իր աղջիկը հիվանդանոցը կաշխատեին. երբ հայությունը շատցավ քաղաքին մեջը, անոնք հայոց թաղին մեջը փոքր տուն մը վարձեցին, հոն կմնային: Ադ ժամանակ միսս Կարեն Եփփե մայրիկը որբևայրիներուն գործ կուտար, որ տունը աշխատին:

Միսս Կարեն Եփփեն դաճեմարքայից մի աղջիկ էր: Ան շատ անձնազոհ էր: Հայ որբերը ինքը կխնամեր: Աքսորեն դարձած հայ կիներուն ձեռագործի գործարան բացեց, գորգի գործարան բացեց, որ աշխատին, իրենց ապրուստը հոգան: Երբ Հալեպ գացինք, ես ալ գացի իր ձեռագործի տունը: Մորաքույրս և իր աղջիկը մոմի լույսի տակը ձեռագործ կընեին, մամաս ալ պետք եղածը կըներ: Մորաքույրս աղջիկը նշանեց ու Ռաքքա գացին:

1921 թվին քաղաքի կացությունը օրեցօր կվատանար: Դպրոցները կգոցվեին: Թուրքերու միևարենե-

րեն հայոց թաղը ափի պես կերևար: Խեղճ հայեր. հին ցավերը չմոոցած՝ նոր ցավեր վրա կհասանեին: Ամեն ընտանիքեն մեկ-երկու հոգի մնացած էր, գոնե նրանց պահպանել էր պետք:

Հայրս որպես պաշտոնյա կխոսեր քաղաքի կառավարիչի հետ, կըսեր. - Ջեր խուլիգանները զսպեցեք, ժողովուրդը շուկա չի կրնար իջնել, ասոր վերջը ի՞նչ պիտի ըլլա:

Քաղաքի կառավարիչը կըսե. - Բարեկամս, լավ կըսես: Ջեզ հետ անհնար է ապրել, մենք մեր ժողովուրդը չենք կրնար զսպել, ձեզ մի ամիս ժամանակ, առ քու հայերդ, քաղաքից դուրս ելիր:

Հայրս որ տուն եկավ, գույնը նետած էր: Եղելությունը պատմեց: Մենք սկսանք լալ, քանի որ ձմեռ է, տուները պաշարով լեցուն են, ձյունը գետինը լցված: Մենք թուրքի թաղը կմնայինք, գաղտնի փողոց ելնելու դուռ ունեինք: Մի թուրք գաղտնի դռնեն ներս կմտնե, հորս մի թուղթ կուտա: Հայրս կկարդա՝ քսան հոգու անուններ՝ առաջինը իրենն է, մյուսները հարուստ մարդկանց անուններ, որ պիտի սպանվեն բոլորին: Հայրս բոլորին կազմակերպեց, որ առավոտ շուտ քյուրդի և արաբի շորերով փախչին:

Առավոտ լսեցինք, որ Գարեգին Թուրքճյանին սպանվեր են: Ան դեղագործ էր: Այլևս անհնար էր մընալը: Ջորիներ, ձիեր վարձեցինք, վեշերը բարձանք, ելանք ճամփա: Եկանք հասանք Դեր Զոր մաղարա, այնտեղ քարավանը կանգ առավ: Գետինները կտեսնենք մարդկանց գանգեր ու ոսկորներ: Մեզ ուղեկցող զինվորները կուզեին, որ հոն գիշերեևք, բայց ժողովուրդը սկսավ վախնալ, ըսին՝ մենք այստեղ չենք մնա. այստեղ էր, որ չորս հարյուր ֆրանսիացի սպանեցին թուրքերը: Հայրապետի գլուխը Ուրֆայի թաղերը պտըտցուցին: Հայրս խնդրեց զինվորներուն, որ գոնե Սուրուճ երթանք: Ճամփան շարունակեցինք Սուրուճ հասանք: Քաղաքի պետը, որ լսեց հայրս եկած է, եկավ, որ մեզի իր տունը տանի, բայց հայրս մերժեց, ըսավ՝ ժողովուրդս ուր որ մնա, ես ալ հոն: Քաղաքապետը հրամայեց բոլոր խաները դատարկել, ժողովուրդը տեղավորել: Երկու օր անձրև եկավ: Երեք օր մնացինք: Մեզ համար առանձին կերակուր կուգար տունից: Քաղաքապետը մեզ հետ կուտեր: Ան շատ հայասեր էր, կափսոսար, հայուն վիճակը տեսնելով՝ կըսեր՝ պատճառ եղողին չմնար:

Երեք օր վերջը պատրաստ էինք, կարավանը շարժեցավ: Քաղաքապետը ձի նստած մեզ հետ եկավ մինչև Արաբիայի սահմանը: Համբուրվելով բաժանվեց: Հայրս մեզ թողուց, գնաց Ծրապլուս, որ ժողովըրդին համար միջամտե, ամեն մարդու համար կես տոմս վերցնե: Մենք վրաններուն տակն էինք: Գիշեր-ցերեկ անձրև կուգար: Մենք հինգ ընտանիք ելանք ձիերով, եկանք Եփրատի եզերքը, որ նավակներ նստինք, Ծրապլուս՝ հորս մոտ երթանք: Եփրատի ջուրը բարձրացեր էր: Ադ գիշեր էդտեղ մնացինք: Ֆրանսացիին զորքը այդտեղ էր: Զինվորներու օգնությամբ վեշերը նավակը լեցուցինք, Ծրապլուս եկանք: Մի ժամ վերջը հայրս եկավ, մի տուն տված էին, գացինք մեջը մտանք: Տասը օր մնացինք: Երկրորդ քարավանն ալ եկավ,

տոմսակները կտրեցին, և Հալեպ եկանք: Հորեղբայրս ընտանիքով Հալեպ կմնար, եկած էր կայարան, մեզ կառքին մեջ դնելով՝ տուն բերեց: Ներս մտանք, հորեղբորս կինը սև հագած էր, իմացանք, որ քսանվեց տարեկան եղբայրը մահացել է: Ան մորս ալ քեռուն տղան էր, անոնց տանը մեծացել էր: Մի քանի շաբաթ ետոր մենք առանձին տուն գտանք: Մեր տան մոտը բողոքականաց դպրոց կար, հինգ-վեց տարի հոն սորվեցա:

1931-ին ինձի հարս տարին Դեր Զոր: Արդեն Վազգեն վարդապետը և քահանաները Դեր Զորի մեջ եկեղեցի պիտի շինեին, հայոց ոսկորները պիտի հավաքեին, հիմքը օրհնեին: Մեր ալ պսակը հոն եղավ, բայց մերոնք շատ վատ պայմաններուն մեջ կապրեին:

135 (135).
ՀԱՅԿԱՆՈՒԻ ՏԵՐ–ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԵԴԵՍԻԱ)

Մեզ՝ սեփերբելիք՝ գաղթական հանեցին: Մենք երեք քույր, երեք եղբայր էինք: Պապաս երկաթագործ Ներսես Դեմիրճյանն էր, արհեստավոր է ըսելով՝ պահեցին: Մեկ հատ ալ նալբանդ՝ պայտար, մեկ հատ ալ ղալայիջի՝ կալայեկագործ, տարին սարայ մը, դատարանի պես տեղ մը, մեր անունները փոխեցին, մեզի այլազգ՝ թուրք դարձուցին. պապայիս՝ Ահմեդ, ախպարներուս՝ Խալիլ, Իբրահիմ, Մահմեդ, մամայիս՝ Ճաթմա, մեծ քրոջս՝ Զաքիա, մյուսին՝ Էմինե, ինձ՝ Բահիյա անունները դրին: Էկանք թուրքերու թաղը նստանք:

Թուրքերը եկան մեծ քրոջս ուզեցին, բայց չտվեցինք. նալբանդի տղային տված ենք՝ ըսավ պապաս, որ թուրքի բաժին չըլլա:

Թուրքերը Ռամազան կբոնեին՝ ամբողջ օրը ծոմ պիտի պահեինք: Կուգային լեզուին հանել կուտային, որ ստուգեն՝ ճերմակ է, թե՝ ոչ, մեզ կպատժեին: Երբ որ ինգլիզը եկավ, հորեն հայ եղանք, պապաս գնաց հայ աղջիկ, տղա որբերուն հավաքեց, բերեց մեզ հետ պահեց… Գետինը ձգված էր մի հատ կարպետ, մի ձեռք յաթախ: Մեր տնից Ս. գիրքը ուզեցի, որ կարդալով մխիթարվիմ:

Հետո փոխադրվեցինք Մաճարա: Հետո Հալեպ եկանք: 1943-ին Արաբ Փունար փոխադրվեցինք, հետո՝ Հալեպ, հետո՝ Ճրապլուս, հետո ալ եկանք Հայաստան: Շատ ու շատ դժվարություններով գյուղից Երևան փոխադրվանք: Հետերնիս ինչ բերել էինք, մեզ ստիպեցին ծովը թափել: Տուն չկա, փող չկա, աշխատանք չկա, հաց չկա: Քարտային սիստեմ էր: Գիշերով հերթի էինք գնում, որ հաց առնենք: Հողամաս տվին մեզ, Արաբկիրի Բանջարանոց թաղամասում տուն շինեցինք: Կարծես թե Տերը համբերություն տվավ, որ մենք ադ օրերը քաշեցինք:

136 (136).
ՆՎԱՐԴ ՇԻՐԻՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԵՎԴՈԿԻԱ)

Զարդեն առաջ մենք Թոքատ կապրեինք: Մենք շատ հարուստ էինք, ամեն ինչ ունեինք: Առաջ էրիկ մարդոցը տարին, ետ չբերին, լսեցինք, որ մորթել են բոլորին:

Ես հինգ-վեց տարեկան էի, երբ մեզի ալ աքսոր հանեցին: Լեռներ, ձորեր ոտքով քալեցինք, ես շատ կհոգնեի: Անցանք Քըրքըզեն, Մալաթիայեն, Բիլեջիկեն, հասանք մինչև Ճարապլուս: Հասանք Հալեպ, հոն հորեղբորս երկու զավակները մեռան: Մեր ամեն ինչը թալանել էին: 1918 թ. զինադադարեն ետքը հոս՝ Պոլիս եկանք: Ես արդեն ինը տարեկան էի: Հոս ալ շատ նեղություններ տեսանք:

Ամուսնացա սամսունցի Հրանտին հետ:

Կամաց-կամաց ամեն ինչ փոխվեցավ: Հիմա, փա՜ռք Աստծո, հանգիստ կապրինք, ամմա եղածները միտքես չեն ելնար, մի՛շտ կհիշեմ:

137 (137).
ԳՅՈՒՐՋԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՔԵՇԻՇՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ*
(ԾՆՎ. 1900 Թ., ՋԵՅԹՈՒՆ)

Ծնվել եմ Զեյթունի Դաշօլուք գյուղը: Հորս անունը Արթին էր, մորս անունը՝ Թրվանդա: Մենք չորս քույր էինք և երկու եղբայր:

Ան, ինչ որ մենք տեսանք, պատմելով չըլլար, աչքովդ պիտի տեսնայիր, որ հասկնաս, թե ինչե՜ր քաշեց հայ ժողովուրդը:

Ամենեն առաջ Զեյթուն եկան թուրք ասկյարները, եկան, սկսան հայերուն զենքերը հավաքել, պըզտիկ դանակ մը անգամ չձգեցին տուներուն մեջը:

Ետքը եկան էրիկմարդոցը տարին, որ աշխատցընեն, տարան ու ջարդեցին, մորթեցին, ոչնչացուցին: Մենք չտեսանք, բայց՝ ազատվող, հրաշքով փախչող մը եկավ ադ ամենը մեզի պատմեց:

Ութ օր ետքը մեզի աքսոր տարին Մարաշ: Հետերնիս ոչինչ չունեինք, ո՛չ հագուստ, ո՛չ անկողին, ո՛չ ուտելիք: Մարաշում մեկ օր մնացինք: Ետքը եկան ասկյարները «չալլա՛» ըսին, հորեն քշեցին, տարան Այնթապ: Փերուշանություն, սեփիլություն, անոթություն, վրանիս հագուստ չկա՝ չըս-չըբլախ, ոտքերնիս կոշիկ չկա: Մեզի ոչխարներու պես քշում էին, չոլերը տարին՝ կնիկ, երեխեք, մեջներս տղամարդ չկա, տղամարդկանց զաթը տարել էին ու մորթել: Իմիս քսան տարեկան Միսաք ախպորս ալ մորթեցին պապայիս հետ: Իմիս երեք քույրերուս փախցուցին: Անոնցմե մեկուն ձիով մարդ մը քաշեց-քաշքշեց, տեսավ մամաս քրոջս չի տալիս, կտոր մը հաց նետեց մամայիս առաջը: Մամաս ծռվեց, հացը վերցուց: Ան քույրիկիս փախցուց: Մյուս երկուսին՝ գիշերը քնած ժամանակ են փախցուցած: Մեզ քալլեցնում էին: Ճամփին կնիկներին ալ սպանեցին, քանի որ հերթը մեզի եկած էր: Ան ալ գիտե՞ս ինչ ըրին: Չոլը մի մեծ փոս կար, բոլոր կնիկներին ու երեխեքին գլուխը կտրում էին, գցում էին փոսը: Խեղճ մանուկները մախսըմի պես մեռնում էին: Ինձ ալ դանակ զարկին, փոսին մեջը նետեցին, բայց ես կզգամ որ ողջ եմ: Դիակներուն տակը, արյուններուն մեջը, արյունին հոտը աշխարհքը բռնած էր: Ժանդարմները երբ պրծան իրենց գործը, փոսին մեջը բենզին լեցուցին, որ բոլոր դիակները վառվին: Մեռնողները չեն զգար, ամմա ողջերուն ձայները սիրտդ կտոր-կտոր կընեն: Ես մեռելներուն տակն եմ, կզգամ որ ողջ եմ ու մեկը պինդ բռնած է իմ ձեռքս: Մեկ օր հոն՝ փոսի մեջը, մեռելներուն մեջը մնացի: Անոթի եմ, գետինի հողերը բերանս կըմտնան: Վերջը մեկ քաջ կնիկ մը կար, անի ձևով մը գլուխը վեր հանեց, տեսավ որ ժանդարմները գացեր են, սկսավ պոռալ. «Ով որ ո՛ղջ է՝ դուրս ելե՛ք, փախնե՛ք»:

Ադ տաք ձեռքը, որ ինձ միշտ բռնած էր, ինձի քաշելով-քաշելով փոսեն դուրս հանեց: Տեսա, որ ադ իմ մամաս էր՝ գիրկն ալ երեք տարեկան ախպարս՝ ողջ էինք մնացեր:

Ով որ ողջ էր՝ փոսին մեջեն դուրս էլանք, քսանի չափ կնիկ-չոջուխ եղանք: Մեկը վիրավոր՝ արյուններուն մեջը, մյուսը՝ վառված մազերով, սևացած դեմքով: Բոլորս ալ անոթի ենք ու ծարավ: Ո՛չ ջուր կա, ո՛չ ուտելիք: Գետինը խոտեր կային, մայրս պոկեց քիչ, մը ինքը տերևները կերավ, արմատը ինձի տվավ, որ ուտեմ: Բայց բոլորս ալ անոթի ենք: Ամմա ամենեն գեշը՝ կըվախնանք, որ մեզի կտեսնան թուրքերը և կմորթեն: Էս յան, էն յան գնում ենք, ու՞ր ենք գնում՝ չգիտենք: Անոր համար գիշերը քալլում էինք, ցերեկը թաքնվում քարայրներուն մեջը:

Աս ձևով, անոթի-ծարավ մեկ-երկու օր քալլեցինք: Տեղ մը հոգնած ինկանք, քնացանք՝ ես, մամաս, մամայիս գիրկն ալ երեք տարեկան ախպարս… Աչքերնիս բացինք, տեսանք որ քանի մը կնիկներ կրակ են վառել, միս են խորովում: Ինձի և մամայիս ալ կանչեցին: Ես անոթի եմ. գացի, որ ես ալ ուտեմ, բայց մամաս մտաճոգ ասդին-անդին էր վազում իմ երեք տարեկան ախպորս էր փնտրում: Դուն մի ըսեր՝ մեր քնացած ատենը ադ մեր խումբին կնիկները անոթութենեն մտածեր են՝ ի՞նչ ընել: Եկեր են, մամայիս քնացած տեղեն իրենք երեք տարեկան տղային տարեր են, կրակի վրա խորովեր են և կուտեն կոր: Ինձի ալ կտոր մը տվին: Ես չոջուխ եմ, չեմ գիտեր ինչ է, սկսա ուտել: Մայրս խենթի պես եկավ իմ քովս, տեսավ, որ ես միս կուտեմ կոր, բան մը չըսավ, բայց ձեռքես բռնեց, քաշեց տարավ: Մենք հեռացանք ադ կնիկներուն խումբեն: Ետքը, շատ տարի ետքը մայրս ինձի պատմեց, որ իմ կերածս ախպո՛րս ոտքին կրունկն էր: (Աս մի՛ գրեր. ամոթ է, ամմա իրականություն է…)

Մամաս ինձի փախցուց ադտեղեն, քանի որ վաղն ալ ինձի կրնային կրակի վրա խորովել և ուտել, այնքան որ անոթի էին, ալ աչքերնուն բան չէր երևում…

Մենք սկսանք քալել: Մութը ինկավ: Հասանք անապատի արաբներուն չադրներուն: Արաբները շատ բարի, լավ մարդիկ էին, թուրքերուն պես չէին: Մեզի առին, պահեցին: Ինձի հարցուցին. - Անունդ ի՞նչ է:

- Գյուրջի, - ըսի:

- Ասկե վերջը թող Ճարիդա ըլլա, - ըսին:

Մենք երկու տարի հոն մնացինք: Վերջը ամեն տեղ խաղաղություն՝ գինադադար եղավ: Ամերիկացիները եկան հայերուն՝ կին, տղամարդ, բոլորին հավաքեցին, արաբաներով Հալեպ տարին: Չոջուխներուն որբանոց դրին: Մի հայ մարաշցի կին՝ Նաթալի անունով, եկավ ինձի իր տունը տարավ: Ութը տարի ես հոն մնացի:

Օրին մեկը մի կին ինձի տեսավ, ճանչցավ, ըսավ. «Ռու մամադ աստեղ է»:

Հայկական եկեղեցիին միջոցով գտա նաև իմ երկու քույրերուս, մեկը՝ Երուսաղեմ էր ընկած, մյուսը՝ Հորդանան, իսկ մնացածներուն թուրքերը սպանել էին:

Իսկ ամուսինը՝ Քեշիշյան Մանուկը, իրենց քսանհինգ հոգիանոց գերդաստանեն միայն ինքը ողջ մնացած է: Անոր մեկ քրոջ աղջկանը՝ Էլմաստին հանդիպեցի: Ան ալ զեյթունցի էր: Անիկա ինձի պատմեց, որ երբ տղամարդկանց խմբերով տա[illegible] ինքը յոթ տարեկան էր, հորը հետ կփախին չոլերը: Գիշերը որ չոլերում քնում էին, միայն պապան ու ինքը ողջ են մնացել իրենց խումբեն, բոլորին մորթել էին: Իրեն պապան գիշերը իրեն կգրկե, կքնանան եղեր: Առտու մը կարթընանա, կուգե հորը գիրկեն դուրս գալ, կտեսնա հորը թևերը փայտացեր են՝ մեռեր է, ադ ձևով ալ սառեր է մարմինը: Ինքը ձևով մը հոր ձեռքերը կբանա, դուրս կելլա: Մինակը ձեռքերով հողը կփորե, մեջը կդնե հայրիկին դիակը, վրան ալ հող ու քար կլեցունե, բայց դեռ անոր մարմինը կերևա մեջեն: Ինքը կելլա գիշերը ծառին վրան կքնանա: Առտուն կտեսնա, որ չախկալները եկեր են, կերեր են իր հայրիկին մարմինը:

* Ինքնուսյոթ տարեկան վերապրող Գյուրջի Քեշիշյանն իր հուշը պատմել է թուրքախառն հայերենով, որը ներկայացնում ենք թարգմանաբար:

138 (138).
ՀՈՎՍԵՓ ԲԵՏԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՋԵՅԹՈՒՆ)

Մարդու ճակատին եթե գրված է
ողջ պիտի մնա՝ կմնա...

Մինչև 1915 թիվը Զեյթունում երեսուն հազար հայ կար: Ամբողջ Թուրքիայի մեջ միայն Զեյթունն էր, ուր միայն հայեր էին ապրում:

Զեյթունը բաժանված էր չորս թաղերի՝ Ցաղուբյան, Սուրենյան, Նորաշխարհյան, Շովրոյան իշխանական տոհմերի անուններով:

Զեյթունի մեջ հայրս և հորեղբայրս պատշար էին, միասին կաշխատեին, միասին կապրեին՝ իրենց ընտանիքներով: Մենք երեք եղբայր, երկու քույր էինք գաղթականության ժամանակ: Մենք մեծ գերդաստան էինք: Մեր տոհմի բոլոր էմիօղլուների այգիները իրար մոտ էին: 1915 թ. առաջին անգամ զեյթունցիներին աքսորեցին: Ես տասնմեկ-տասներկու տարեկան էի: Մերոնք կովեցին Նորաշխարհյանի ղեկավարությամբ: Չորս-հինգ օր մեր Ս. Աստվածածինն վանքում փեդայիները կռվում էին: Ամեն տարի, Աստվածածնի տոնի օրը, հոն կերթայինք ուխտի: Կուտեինք, կխմեինք, կպարեինք, կերգեինք, խաղեր կընեինք, լարախաղացներ ալ կուգային. դա մեր ավանդությունն էր: Հենց էդտեղ ալ մերոնք կովեցան, շատ թուրքերի կոտորեցին, բայց տեսան, որ չպիտի գլուխ հանեն: Արդեն Զեյթունի մեծամեծներուն, մոտ երեք հարյուր հոգի, թուրքերը մաս-մաս տարել էին զորանոց, Էնտեղից էլ՝ Մարաշ. բանտարկեցին, կախաղան հանեցին, ամոնց ընտանիքներուն ալ աքսոր տարին: Բայց ջահելները, մոտ հարյուր հոգի, բարձրացել էին լեռը՝ կռվելու: Այդ ժամանակ Կիլիկիո կաթողիկոսը՝ Սահակ Խաբայանը, կոնդակ ուղարկեց, որ. «Ամա՜ն, զենք չվերցնե՛ք. կհանձընվե՛ք»: Ան նույնիսկ եկավ Զեյթուն. մենք դպրոցական էինք, մեզ տարին դիմավորելու: Ան քարոզ տվավ, հանգըստացուց ժողովրդին, համոզեց, որ լավ կլինի և պատճառ դարձավ, որ չկռվին զեյթունցիները: Արդեն զեյթունցիները առաջ-առաջ մոտ վաթսուն անգամ կռված էին ու միշտ դիմադրած էին թուրք կառավարության բռնակալությանը և միշտ ալ հաղթած էին: Թուրքերը ամոր համար կվախենային զեյթունցիներեն և տուրք-մուրք չէին կրնար առնել մեզմե: Այս անգամ ալ պատրաստ էին դիմադրելու և մեռնելու, քանի որ գիտեին՝ մեկ է պիտի մեռնին աքսորում՝ Դեր Զորի չոլերում: Ես երրորդ դասարան էի. մարտ ամսին դպրոցները գոցեցին: Մեզ գաղթական հանեցին: Թուրքերը եկան, մեզ էշեր տվին, բարձեցինք, գնացինք Մարաշ: Էնտեղեն ալ ժողովրդի մի մասը աքսորեցին Կոնիայի կողմը, մյուս մասն ալ՝ Դեր Զորի կողմը: Մեզի տարին Կոնիայի կողմը:

Ես փոքր էի, չէի կարող քայլել, ճանապարհին մայրս խնդրեց թուրքերին. «Աս չոջուխին դևեի մը վրա նստեցուցեք»: Արդեն մի քանի երեխաներ կային նստած ուղտերու վրա: Ինձ էլ բարձրացրին մի ուղտի վրա: Ուղտերը կամաց-կամաց կքալեին: Մերոնք առաջ անցան, մենք ետ մնացինք. ուղտի վրա քնել, մնացել եմ: Մութը ինկավ, միանկնիս կուլանք, ծնողքներիս կուզենք: Ճանապարհին մեզի մի գյուղ տարին՝ Ուղուշլա, իջեցուցին, հոն երեք-չորս օր մնացինք: Ադ տեղը թուրքերը մեզ ծեծում էին, հալածում էին, թալանում էին վրաներս ինչ կար, ինչ չիկար: Ես հիվանդացա, դիզենտերի եղա, որը մինչև 1946 թ. Հայաստան գալս վրաս մնաց: Միայն Հայաստանի ջուրը բուժեց ինձի: Հետո մեզի տարին Սուլեյմանիե: Հոն տեսանք մեր Պոլսո մտավորականներուն՝ Զոհրապին, Վարուժանին և ուրիշներուն: Անոնք դեռ չախա-քրավատով, բաստոնշաբխայով էին հագած-կապած քայլում, խոսում էին իրար հետ: Հետո անոնց տարին ուրիշ տեղ, չգիտեմ ինչ եղած...

Հետո մեզի ետ բերին Բոզանթի՝ Ադանայի մոտ: Ադտեղից մեզ էշի՝ բեգիրների վրա բարձած էին: Թուրք զինվորները մեր քովեն կերթային: Մեկ էլ թուրք լակոտ մը տեսավ մեր էշի վրա երկու կողմը հեյբայի մեջ դրված երեք-չորս տարեկան քույրս ու եղբայրս՝ ամեն մեկը մի կողմ: Էդ լակոտը մի ափ հող գետնից վերցրեց ու շպրտեց եղբորս երեսին, եղբորս աչքերը տեղն ու տեղը կուրացան, ինքն ալ վախեն մեռավ: Ճամփին թաղեցինք եղբորս, անցանք առաջ...

Անտեղեն եկանք Ղաթմա: Տեսանք, որ բոլոր կողմերեն սկսել են տեղահանությունը. Ադանա՜, Մերսի՜ն: Թուրքիայի ամե՜ն կողմերեն հայերին բերում էին արաբաներով, տանում էին աքսոր մինչև Ղաթմա, Հալեպ...

Ղաթմայում մենք երեք ամիս մնացինք: Հիվանդություն, կեղտոտություն, չոլ-չափուտներ վրաներս, չադրներուն տակը: Ժողովուրդը սոված, ծարավ, անտեր, անտիրական, տիֆ, կոլերա... Ժողովուրդին կեսեն ավելին հիվանդություններից մեռավ, մնացածին ալ՝ կոտորեցին, ջարդեցին...

Մինչև հոն հասանք՝ անձրևներն սկսան: Աշնան վերջին ամիսներն էին արդեն: Ժողովրդի մի մասին, մեզ ալ հետը, լցրին գնացքները, տարին Ռաս ուլ Այն, իսկ մնացածին՝ Դեր Զոր...

Ռաս ուլ Այնում քուրջ ու փալասից, ծառի ճյուղերից չադրներ խփեցինք, մտանք տակը: Անտեղեն Խաբուր գետը կանցներ: Բլուր մը կար, գաղթականներուն բլուրի վրա տեղավորել էին. չորս կողմը զաբիթները շրջապատել էին: Հսկիչները չեչեններ էին՝ անոնք ըմբոստ ժողովուրդ էին, կողոպտել կսիրեին: Թուրք կառավարությունը բանտերեն ազատել էր էդ ավազակներին, որ մեզ կողոպտեն ու կոտորեն...

Մինչև աքսորը հորեղբայրս, որ պատշար էր, ադ չեչեններուն համար տուներ կշիներ: Ամեն տարի հոն կերթար, կաշխատեր, անոնք ալ կուգային մեր տունը կիջնեին, կուտեին, կխմեին, կքնեին...: Բլուրին վրա եղած ժամանակին, հորեղբայրս կտեսնա, որ հսկիչներեն մեկն իր ծանոթ չեչեն Հասան Իբրահիմն է՝ Չարդախ գյուղեն: Հորեղբայրս կսկսի խոսել իրեն ծանոթ չեչենի հետ:

Անտեղ՝ Ռաս ուլ Այնում, ուտելիք չկար, միայն սուս անունով խոտ մը կար. կուտեինք, արմատները կըվառեինք:

Օր մը երեք հոգով գնացինք փայտ կտրելու: Փայտերը շալկած գալիս էինք, երկու արաբ դեմներս էլան, թոփուզները ձեռքերնին՝ ծայրը երկաթ: Ըսին. - Հայդե՜, ըշլա՜ (դե՜, հանվե՛ք):

Մենք վախից հանվեցինք, վարտիքով մնացինք: Մեր մեջից մեկը՝ փեսանիս, ընդդիմացավ: Խփեցին, թևը կոտրեցին: Էկանք մերոնց մոտ տկլոր, փայտերը շալկած, վախցած...

Խաբուր գետի եզերքը օրական փոս մը կկցվեր, հիվանդները, մեռելները, ամենքին իրար վրա կկցնեին, գիշերները չախակալները կուգային, կհոշոտեին, կուտեին...

Չադրներուն մեջ էինք: Մեկ էլ էկան ըսին. - Աքա՜ղը (ձեռքով ցույց տվին մոտ երեք հարյուր-չորս հարյուր չադր) պիտի տանինք, - արդեն մենք բոլորս քսանհինգ հազար չադր էինք՝ Պոլսեն, Թուրքիայի, բոլո՜ր կողմերեն բերել են Ռաս ուլ Այն...

Մեր ծանոթ Հասան Իբրահիմ դենգեն էկավ, թե՝ պիտի մի մասին տանին: Գետինը գիծ քաշեցին. թե՝ այդքանին պիտի տանինք Մուսուլ:

Առաջին օրը տարին անոնց:

Երկրորդ օրը նորեն եկան: Նորեն գիծ քաշեցին՝ մյուս մասին տարին:

Առտուն կնիկները գնացել էին խոտ հավաքելու, տեսել են ձորի մեջը հայերուն սպանում են: Վախեցած, սարսափած ետ եկան ու պատմեցին տեսածնին, որ հերթով՝ մե՜կ-մեկ սպանում էին, դիակները իրար վրա խաչի ձևով շարում էին: Նոր իմացանք, որ մաս-մաս տանում են ո՛չ թե Մուսուլ, այլ՝ ձորին մեջը ջարդելու... Էդպես մաս-մաս տանում էին: Հենց որ հերթը մեզ հասավ, մեր ծանոթ Հասան Իբրահիմը ըսավ. - Ասոնց երեք օր հետո կտանինք, հիմա թող մնան:

Գիշերը Հասան Իբրահիմը գաղտնի եկավ մեր մոտը, ըսավ. - Պատրաստ եղեք, արաբան պիտի բերեմ: Դուք Խաբուրի մոտ կուգաք, ձեզի իմ տունս պիտի տանիմ:

Դու մի ըսեր, իր կնիկն ալ Էրզրումից փախցված հայ աղջիկ մըն է:

Գիշերը բերեց արաբան, մեզ իր տունը տարավ: Կինը, ինչպես ըսի, Էրզրումի ջարդի ժամանակ փախցուցեր էր. հազիվ տասնվեց տարեկան էր Տիգրանուհին, ինքը՝ հիսուն տարեկան մարդ մըն էր: Տիգրանուհին պատմում էր, թե ինչպես իրենց բերեցին՝ Էրզրումից, Մուշից, Դիարբեքիրից անցան, ինչե՜ր տեսավ: Կպատմեր աղջիկը, սիրտդ կտոր-կտոր կըլլար: Կուլա՜ր, կուլա՜ր...

Հասան Իբրահիմը մեզ ըսավ. «Տուն մը շինել սկսեք ինձի համար»: Մենք չորս տղամարդ, մի քանի կին: Մայրս հոն մեռավ: Մենք մնացինք: Կտոր մը հաց կուտար, կաշխատեցներ մեզի: Սկսանք տուն շինել: Հասան Իբրահիմը երկու եղբայր ուներ: Ղայմաղամի տունն ալ քովն էր: Ղայմաղամը ըսավ. - Գյուղին մեջ ինչքան հայ կա պիտի տանինք:

Հասան Իբրահիմը ըսավ. - Տունս պիտի շինեն, թող շինեն վերջացնեն, ետո կտանինք, մենք չե՞նք սպանողը:

Ադոնց համար մեծ տուն մը շինեցինք բակին մեջը: Կողքը մերդինցի արաբ մը կար, ան ալ ուզեց, որ տուն շինենք: Գնացինք, անոր տունն ալ շինեցինք: Մի կտոր հաց ալ ան կուտար...: Անտեղ մոտերը բեդվիններ կապրեին: Ինձի կղրկեին բեդվիններուն քովը կաթ կբերեի գյուգյումով: Էշին երկու կողմերը հեյբեյի մեջ գյուգյումները դնում էի, բերում էի...

Օր մըն ալ գնացի, հաճընցի մարդ ու կնիկ մը կային, էդ բեդվինի տանը կաշխատեին, բերին կաթը տվին: Մինչև տուն հասա, մութը ընկել էր: Տեսա, որ մերիններուն տարել են: Ի՞նչ ընեմ: Բարձս առի ետ գնացի ադ հաճընցի մարդ ու կնկա մոտ, որոնք արաբ պաշտոնյայի տանն էին ապրում: Անոնք ինձ պահեցին, չնայած որ իրենք ալ պահվտած էին ապրում: Հասի որ Թալեաթեն հրաման էր եկել. «Մեկ մետր բոյ ունեցող հային՝ սպանեցե՛ք»: Ադ հաճընցիները ինձի ալ առին, պահեցին: Իրիկունը պառկում էինք գետինը: Հորեղբորս կնիկը իմ լավ շորերս՝ զեյթունի ղութու, զուբուն, աբա թավիշից, մետաքսից, թանկանոց հագուստներս բարձիս մեջն էր լցրել, որ չգտնեն, բայց էդ տան արաբ պաշտոնյան ձեռքես առավ, ինձ ալ վռնդեց իր տունեն, ըսավ. - Գործ չկա, գնա՛:

Ես տխուր-տրտում, գլուխս կախ, մեն-մենակ դուրս էկա, գնացի: Մի օր մենակս, հոգնած, Խաբուրի եզերքը կովի աղբ եմ հավաքում, որ տանեմ, վառեմ: Մեն-մենակ նստած եմ՝ ոտքս ջուրին մեջ կախած: Մեկ էլ տեսա ճեռուեն ձիու վրա նստած մի չեչեն է գալիս: Ուզեցի փախչել, մտածեցի՝ ի՜նչ փախչեմ, ի՜նչ կուզե ըլլա: Մոտեցավ: Մեկ էլ տեսնամ հորս ծանոթ Հասան Իբրահիմն է: Էկավ ճանչցավ ինձի. - Օղլա՜ն, ի՞նչ կընես հոս:

- Ի՞նչ պիտի ընեմ: Մերիններն տարին: Ես մենակ եմ:

- Կուգա՞ս մոտս:

- Կուգա՜մ:

- Վաղը առտու կանուխեն եկուր հոս՝ քեզ տանիմ: - Հասան Իբրահիմը ձիով եկավ, ինձի տարավ իր յայլան: Իր հայ կնիկը ինձի հաց տվավ, ըսավ. - Գնա՛ ջուր բեր:

Գնացի ջրի: Եկա տուն, տեսա երկու-երեք ժանդարմա եկան: Ես վախեցա, թաքնվեցի: Լսում եմ «Ցուսու՜ֆ, Ցուսու՜ֆ» կըսեն, կպոռան, ես մեջտեղ չեմ ելնում:

Երբ ժանդարմները գնացին, ես մեջտեղ ելա: Տերըս ըսավ, - ինչու՞ չեկար:

- Վախեցա՜:

- Հե՛չ չվախենաս:

Ինձի չեչենի հագուստ հագցուց, քովես դամա մը կապեց, իսկական չեչեն դարձա:

Ըսավ. - Ով որ հարցնե, ըսե՝ Հասանին տղան եմ. ես աս գյուղին մխդարն եմ, չվախնա՛ս:

Մնացի էդ գյուղը: Ջին ջրի էի տանում, կթվերը

պահում, ծառայություն անում...: Բոլոր հայերին տարին, ես մնացի: Հարյուր ընտանիքի չափ հայեր տուն շինեցին, բայց անոնց ալ տարին: Տունները մնացին թուրքերուն: Հայ չմնաց գյուղում: Մի քանի հայ տղա էին մնացել չեչեններուն մոտը, անոնք ալ ծպտված, թուրքի անունի տակ՝ ինձի պես...

Մի օր գարնանը չեչենները մեր տունը հավաքվեցին: Ռաս ուլ Այնից այն կողմ Սաֆա անունով գյուղ մը կար, Էնտեղի չեչեններն ալ եկել էին, մեր տանը նստած իրենց զենքերն էին սրում ու իրար ասում. - Պիտի էրթանք Դեր Զոր՝ հայերուն ջարդելու՛:

Էդ գարնանն էր: Մնացի՝ մինչև աշուն:

Էդ նույն չեչենները աշնանը եկան բեռնված ապրանքներով. Է՛լ Պոլսի կողմեն, Է՛լ Կոնիայի կողմեն, երկրի ամե՛ն կողմերեն բերված հայերուն հարստությու՛նը, հագուստնե՛րը, զարդե՛րը, ոսկինե՛րը, փողե՛րը՝ լիքը, ի՛նչ ուզես, ի՛նչ միտքեդ կանցնի: Ի՛նչ ապրանք էր: Ես տեսնում էի աչքիս պոչով, որ ամա՛նով էին չափում ոսկի դրամը, բաժանում էին, այնքան որ շա՛տ էր: Զէ՞ որ իմ աղաս չեչեններուն պետն էր, իրարու մեջ բաժանեցին, գնացին...

Մի օր չեչեն տերս Սաֆա գյուղը գնաց, եկավ ըսավ. - Գիտե՞ս, Յու՛սուֆ, հորդ, մորդ տեսա: Ա՛ռ, քեզ նամակ են գրել:

Նամակը ցույց տվավ, եղբորս գիրն էր: Գրած էր, որ Սաֆա գյուղում են: Իրենց տեղն իմացա:

Չեչենները հայ աղջիկներին Ռաս ուլ Այնից փախցրել, տարել էին Սաֆա, հարսանիք պիտի անե՛ին: Մի արաբա թալանված ապրանք կար, պետք էր տանել Սաֆա:

Տերս ըսավ. - Յուսո՛ւֆ, դու իմ տեղս Սաֆա հարսանիքի կերթա՞ս:

Արաբան առի, գնացի: Քիչ մը մնացի հարսանիքի տունը, փախա գնացի ծնողքիս քովը: Գյուղեն դուրս տուն շինել էին: Գնացի, գտա: Տերս ինձ մանրամասն բացատրել էր: Գնացի, դռան առաջ շուն կար կապած, ուզում եմ մտնել, չեմ կարողանում: Սպասեցի, որ մեկը գա, անցնի, ինձ ներս տանի: Ով որ գալիս էր, ինձ չեչենի շորերով տեսնում էր, կարծում էր չեչեն եմ: Մեկ էլ մարդ մը եկավ, մոտեցավ, տեսնեմ հայրս է, դեմքը հիշեցի: Պոռացի: Մոտս եկավ, փաթաթվեց, համբուրվեց, տարավ տուն...

Մերոնք պատմեցին, որ իրենց Ռաս ուլ Այնից բերել են Սաֆա գյուղը: Ճանապարհին գիշերով կողոպտել են ամեն ունեցածներնին՝ մորս զարդերը, գլխի արծաթ գլխանոցը, քեմերը...: Բայց թալանողները երեք հոգի են եղել, չեն կարողացել թալանը կիսել, կռվել են իրար հետ: Մերոնք առիթից օգուտ են քաղել, փախել են, մի տուն են տեսել, մտել են մեջը՝ տկլո՛ր, թըրջվա՛ծ, կողոպտվա՛ծ: Կմտնան բակը, կմտնան հարդանոցը, կկծկվին իրարու: Տանը շուն կար, բայց չի հաչել: Ադ տունը մուդիրինն է լինում: Մուդիրի կնիկը կուգա կտեսնա հարդանոցի բերանը մարդիկ կան նստած: Կերթա ամուսնուն կըսե: Մուդիրը կուգա, կտեսնա մերոնց: Հորեղբայրս կպատմե մուդիրին իրենց գլուխին եկածը, որ մարդ չտեսավ իրենց, իրենք փախան, շունը չհաչեց: Չեչեն մուդիրը կըսե. - Ուրեմն, սա ալլահի հրաշքն է, որ շունը չի հաչել, ասքան մարդիկ ներս են մտել բակը:

Էդ[ենց]ով մերոնք հոն կմնան: Արդեն արհեստավոր էին, կսկսին գործ ընել: - Ուստա՛, - կըսե մուդիրը, - ինձի տուն մը շինե: Հոն ալ տուն կշինեն: Օր մըն ալ իմ տերը կերթա, մերոնց կհանդիպի հոն և կուգա ինձ կըսե: Բայց ես ապերախտ չգտնվեցի. իմ տիրոջ մոտ վերադարձա: Երբ նրա հայ կինը երեխա ունեցավ, ես արդեն գնացի իմ ծնողքիս մոտը...

Հետո, երբ 1918 թ. զինադադար եղավ, պատերազմը վերջացավ, հայերը արդեն ետ էին գնում իրենց տեղերը: Մենք ալ Սաֆայեն եկանք կայարան: Հոն մնացինք երկու-երեք օր, հետո Մուսուլի կողմեն շոգեկառքն էկավ: Թուրք զինվորները լցված էին գնացքի մեջն ու վրան: Արդեն նրանք փախչում էին: Գնացքի մեջ տե՛ղ չկար, մենք ալ նստանք ու եկանք:

Ճարաբլուսում կամուրջ մը կար, վառելիք չկար, որ գնացքը գնա: Իջանք խոտ-մոտ, ճյուղեր հավաքեցինք, որ վառելիք ըլլա՝ գնացքը շարժվի: Գնացինք, Ճարաբլուս իջանք: Անգլիացիները արդեն Սուրիան գրավել էին: Թուրք զինվորները փախչում էին: Մենք էկանք Հալեպ: Թուրքական զորանոց մը կար Հալեպի մեջ, հոն լցրել էին հայերին: Մնացինք հոն: Անտեղեն ալ իբր Չեյթուն պիտի երթանք: Արաբա վարձեցինք: Ճանապարհին, Այնթապի մոտ, թուրք դաչաղները կողոպտեցին մեզի, մեր արաբային ձին ալ տարին: Հետո ուրիշ ձի մը առինք: Գնացինք Մարաշ: Մարաշում մնացինք Քառասուն Մանկանց եկեղեցում և դպրոցում, որտեղ լցված էին ամենտեղացի հայեր՝ ֆոնուզցի, ֆընդըջագցի, զեյթունցի, մարաշցի...: (Հետո ադ եկեղեցին, ուր լիքը հայ կար, կրակի տվին)*: Փախանք: Մենք ողջ մնացինք, բայց հայրս մեռավ: Արդեն մայրս ալ Ռաս ուլ Այնում էր մեռել...

Անտեղեն էլանք Չեյթունի ճամփան բռնեցինք: Բոլորս հիվա՛նդ, վրանիս հա՛լ չկա: Եղբայրս ճանապարհին՝ Ղաթմայում մեռավ: Հորեղբորս կինը ծանր հիվանդ հետերնիս տանում էինք: Գնացինք Չեյթուն:

Հաջորդ օրը Չեյթուն հասանք, ի՞նչ տեսնանք: Չեյթունը այրել, մոխիր են դարձուցեր, որ զեյթունցիները այլևս չգան, չմտնեն: Լավ է, մեր տունը քաղաքի եզրին էր, կրակը այնքան չէր հասել: Բայց մեջը թուրք մարդ էր նստել: Ադ մարդն էլ կապի պաշտոնյան էր: Սպասեցինք: Մարդը եկավ, տեսավ մեր վիճակը: Լավ է մարդը մեր տունը թողեց մեզի: Հայերի մեծ մասը, որ առանց տունի մնացին, մտան զորանոցում ապրեցին: Էդ զորանոցը հին ժամանակ թուրքերից էինք գրավել:

Մնացինք բավական ժամանակ. 1918-1920 թվին հոն մնացինք: Հետո թուրքերը սկսան նորեն նեղել մեզի: Մենք մեր տունը թողինք, գնացինք զորանոցը մնացինք, որ բոլորս իրար հետ ըլլանք, եթե թուրքը հարձակվի մեզ վրա: Հայերու վիճակը գնալով վատացավ: Շատ նեղություն քաշեցինք: Երբ մենակ մարդ կտեսնեին՝ կսպանեին: Մենք ալ երեք-չորս հոգով զինված կերթայինք՝ մի բան, օրինակ՝ աղ բերելու: Մենք միշտ իմանում էինք, որ թուրքը օր մը չէ օր մը պիտի մեզ վրա

* Այդ մասին տե՛ս մարաշցի Եվգինե Մալիկյանի (ծնվ. 1898 թ.) պատմածը [148(148).]:

գա նորեն: Անոր համար մենք գլուխ քորելու ժամանակ չունեինք, բարութ, ղուրշուն կշինեինք, պաշար կհավաքեինք: 1921 թ. Գեմալ Աթաթյուրքը հրաման տվավ. «Հայերը թող հանձնվե՛ն»: Մտածում ենք՝ ի՞նչ ընենք. շատ հայերու սպանել են արդեն: Ոմանք ըսին. - Ո՞ւց հանձնվենք: Մենք նոր ենք ազատվել թուրքի ձեռքեն, հիմա թուրքի՞ն հանձնվինք:

Ես եղբորս ըսի. - Դուն ամուսնացած ես, քո կնկանն ա՛ռ, գնա՛, հանձնվի՛ր, ես՝ պիտի կռվիմ: Բոլոր զեյթունցիներս հազար երկու հարյուր հոգի էինք: Վեց հարյուր-յոթ հարյուրը՝ ծեր, կնիկ, աղջիկ, երեխա, հանձնվեցին, գերի ընկան: Մարաշցի մի հայ և մի անգլիացի միսիոներ, որբանոցի տնօրեն միստր Լայմենը եկավ, ըսավ. – Ո՛վ հանձնվի՝ ապահովություն պիտի ունենա ողջ մնալու:

Հանձնվողներուն տարին: Բայց անոնց, որոնց տղամարդիկը դիմադրող, ղաչաղ էին դարձել, տարին որ ջարդեն, իսկ մնացածին քշեցին դեպի հեռուները:

Չեյթունի Ս. Աստվածածնի վանքում մարզանք էին անում 80-ի չափ երիտասարդներ: Արամ բեկ Չոլաքյանն* ալ անոնց մեջն էր, երբ թուրքերը էկան շրջապատեցին վանքը: Մեր տղաները, Արամ բեկի ղեկավարությամբ, պաշտպանվելու ելան: Թուրքերը սկսան կրակել: Հետո թնդանոթով սկսան կրակել: Մեր վանքի տղաներն ալ կրակով պատասխանեցին: Անոնք հույս ունեին, որ Չեյթունում եղած ջահելները դուրսեն կօգնեն իրենց, և Արամ բեկը պատրաստվում էր իր քաջերով հարձակվել թշնամու վրա: Բայց գիշերը մունետիկները լամպերով էլան Չեյթունի թաղերը, լուր տվին բոլորին, որ Սահակ Խաբայան կաթողիկոսեն լուր էկած է. «Ըլլի՛, որ զեյթունցիները կովին թուրքերու դեմ, չըլլա՛, որ բնակիչները օգնության էրթան վանքի ջահելներուն, թե չէ՝ մե՛ծ կոիվ կըլլա»: Այնպես որ, վանքի տղաները օգնության չստացան, չնայած Չեյթունի ժողովուրդը պատրաստ էր գնալ վանքի տղաներուն օգնելու: Ամմա գիշերով, որ լամպերով պտտեցան, ըսին կաթողիկոսին հրամանն է՝ չկովի՛լ, ժողովուրդն ալ անոնց լսեց. տուներնին քանդվեց...

Թուրքերը սկսան կրակել: Մենք չորս հարյուր հիսուն-հինգ հարյուր հոգի դարձանք: Սկսանք դիմադրել թուրք կառավարության կանոնավոր զորքին: Երեք-չորս օր կռվեցինք: Թուրքերը մեր զորանոցը պաշարեցին, սկսան վանքը գերմանական թնդանոթներով ռմբակոծել: Վանքը կրակի տվին: Ջուրը, որ վանքի մոտեն կուգար, կտրեցին: Ես տասնյոթ տարեկան էի: Մեր զենքը պակասում էր: Զորանոցի ետևի կողմի լուսամուտներեն դուրս թռանք գիշերով: Առավոտյան դեմ տեսանք, որ ամբողջ տարածքով մեզի պաշարած են: Ճամփա չկա: Մի կերպ կռվելով մեզ ճամփա բացինք, դուրս էլանք պաշարումեն: Ամեն մեկս իրար կորցրեցինք: Ճամփին, Չեյթունի գետին մոտ երկու-երեք թուրքեր դեմս ելան: Բաշիբոզուկներ էին. ասացին. - Թու՛թ գյավուրը (Բոլոր գյավուրին): Չեյթունցի մի քանի տղաներ ետևես էին գալիս. խփեցի նրանց...

* Արամ բեկ Չոլաքյան (1894, Չեյթուն – 1921) – Չեյթունի և Ֆընդըջագի 1915 թ. և 1921 թ. ինքնապաշտպանական մարտերի հերոս, որին անվանում են «Չեյթունի վերջին Արծիվ»:

Չեյթունից բավական հեռու Աբակով գյուղը կար: Անտեղ մեզանից ոմանք՝ բռնվեցին, ոմանք՝ սպանվեցին: Մնացածներս գյուղի լեռներում կմնայինք...

Հանձնվողներուն Չեյթունի զորանոցը լցրել էին: Ով որ մնացել էր՝ ծեր, կին, աղջիկ, թուրքերը բոլորին սպա՛նել էին, երեխաներին ողջ-ողջ վա՛ռել էին...: Զորանոցը կրա՛կի էին տվել: Մենք լեռներից անոնց ձայնը կլսեինք, կփշաքաղվեինք:

Մեր պահակները թուրք փախստական զինվորներ էին բռնել՝ պիտի սպանեին, տվին մեր Նազարեթին, որ ինքը սպանի, քանի որ նրա բոլոր հարազատներին թուրքերը սպանել էին:

- Ընկնք. - Նազարե՛թ, ա՛ռ, սպանի՛ր, որ վրեժդ լուծես:

Գնացինք Ջահան գետի մոտ: Դա սահմանն էր, եթե անցնեինք՝ Ադանայի կողմը արդեն ֆրանսիացիներն էին, բայց թուրք զինվորները եկան, հասան մեզի, հետապնդեցին մեզ՝ Ֆոնուզից մինչև Անդըրընը: Անդըրընում գետը պիտի անցնեինք, տեսանք՝ թուրքերը նորեն պաշարել են մեզ. - Ո՞վ եք դուք, - հարցրինք:

Ըսին. - Մենք հետապնդում ենք զեյթունցիներին: - Մերոնցից ոմանք գետը նետվեցան. մոտ հիսուն հոգի գետի մեջ սպանեցին: Կնոջս հորեղբոր տղոցը հոն սպանեցին...

Լուսացավ: Իրար կորցրեցինք: Ես ընկա անտառներուն մեջը, փուշերուն մեջը: Հազիվ մի կերպ դուրս եկա, գնացի մեր զեյթունցիների խմբին միացա: Արդեն Արամ Չոլաքյանի խումբը երեսուն հոգի էր մնացել: Թուրքերը պաշարել էին մեզ: Հույս չկա գետը անցնելու: Ճամփա չկա առաջ գնալու՝ լեռնե՛ր են: Անդրընում կռվելուց հետո իրիկունը որոշեցինք ետ դառնալ: Ուզում ենք լեռը անցնի: Մեկ էլ դեմից թուրքերը կրակ բացեցին: Մինչև լույս կռվեցինք: Անտեղ ալ երեք-չորս հոգի ընկավ:

Մենք էլի գնում ենք ետ՝ դեպի Չեյթունի կողմը: Մեզ շրջապատել են: Եթե Ադանայի կողմը անցնինք, հոն ֆրանսիացին է՝ կփրկվինք, բայց չե՛նք կարողանում...

Մեկ էլ մեր պահակը էկավ, ըսավ, որ հեռվում նախիր մը կա: Թուրքերը եկան, մոտեցան: Մենք նորեն փախանք: Քսան-քսանհինգ հոգի ենք, հետերնիս կի՛ն կա, երեխա՛ կա: Մնացած ենք Տավրոսի, Ամանոսի անանցանելի լեռներուն մեջը: Թուրքերը շուներով հետևում են մեզի: Քարայրներու մեջ, ձյուներու մեջ օրերը կանցնենք՝ անո՛թի, ծարա՛վ: Մութը ընկել է: Տեսանք ոսպի պես բան մը բուսել է, չիմացանք ինչ է՝ կերանք. անո՛թի ենք...

Լուսացավ: Իբր թե Չեյթուն՝ Ֆոնուզ, պիտի էրթանք: Տեսանք՝ թուրքերը մեզ շարունակում են հետևել: Հասան, եկան հետևնես: Սեգ լեռի վրա ենք՝ Ֆոնուզի կողմերը: Բարձր ժայռերը բարձրացանք: Երկու-երեք կին ինքզինքնին լեռնեն վար նետեցին, որ թուրքերուն ձեռքը չընկնին: Թուրքերը եկան հետևնես: Դիրք բռնեցինք: Բաշիբոզուկ թուրքերը սկսան կրակել:

Արամ բեկը հրամայեց. «Ցրվեցե՛ք, գոնե առանձի՛ն տեղերեն կրակեք, որ թշնամին կարծե թե շատվո՛ր ենք»: Ան փամփուշտը, տասնոց հրացանը և սուրը

ձեռքը վերցուց, առաջ ընկավ: Մի հատ ալ փամփուշտ բերանը դրավ, որ պատրաստ ըլլա: Ինքը փորձառու մարդ էր. Գյավուր դաղում երեք-չորս տարի կովել էր թուրքերու դեմ: Իր եղբայրը սպանվել էր, ինքը կենդանի էր մնացել, շա՜տ հերոս էր: Անոր քաջությունները շա՜տ են...

Կովեցինք մինչև գիշեր: Նորաշխարհյանը ըսավ. «Գնացե՛ք Արամ բեկի մոտ»: Մենք երկու տղա գնացինք: Թուրքերը սեղմում են: Գնդակները վզզա՜լեն ժայռերուն են կպնում: Ճակատագիրը ինձ փրկեց. ճիշտ գլխուս վրայեն անցավ: Ընկերս խփվեց: Անոր արյունները իմ վրաս վազեցին: Արդեն անոր հայրն ալ մեռած էր: Ես գնացի, հասա Արամ բեկի մոտ: Կուզենք փախչիլ: Բոլոր կողմերից պաշարել են: Միայն տեղ մը կա, որ բաց է, ան ալ ժայռ է, կա՛մ պիտի վար ձետվինք, կա՛մ պիտի մեռնինք: Գիշեր է: Բա՜ն չի՛ երևում: Մեզմե մեկը ըսավ. - Ես ձետվիմ, եթե չմեռնիմ, ձայն կուտամ. դուք ալ կձետվիք:

Նետվեցավ: Բայց ու՞ր, չե՛ք տեսնում: Մու՜թ է: Ձայն տվավ. - Եկե՛ք, ո՛ղջ եմ:

Մենք ալ հետևեն ձետվեցանք, բայց մոտիկում թուրքերու ձայներ են լսվում: Դու մի ասա՝ մոտ են: Մենք չոքեչոք գնացինք, զինվորներու պաշարումեն անցանք Ֆուտնուզ, որը Ձեյթունի մոտ գյուղաքաղաք է: Մարդ չկա հոն, ամայացել է: Մեկ-երկու օր մնացինք: Լեռներեն պտուղ, խոտ կերանք, կազդուրվեցինք: Ուզում ենք գնալ գոնե մեր Ձեյթունը: Հոնտեղի լեռների ճամփաները գիտենք, ջուրը-մուրը: Եկանք՝ ոտքի հետքեր տեսանք: Դու մի ըսեր՝ մեզմե առաջ հարյուր-հարյուր հիսուն զեյթունցիներ անցեր են, ուզում են գնալ Ձեյթուն: Մենք ալ գնացինք հետքերով: Գտանք էդ խմբին: Միացանք դարձանք երեք հարյուրի չափ մարդ: Հետո ես վիրավորվեցի աչքիցս, ու ոտքս ալ ղուրշունի կտոր մըտավ: Ինձի պես երեք-չորս տղա կար՝ տասնհինգտասնվեց տարեկան, կիներ ալ կային հետերնիս: Արամ բեկը ըսավ. - Ֆուտնուզի կողմը գնանք: Մի թուրքի գյուղ մտնենք, ուտելիք-բան ճարենք:

Մի քանի հոգի մեզ թողին, իրենք գնացին դեպի Անդըրընի կողմերը: Եզներ են գտել, քշել են գյուղից դուրս, դավուրմա են ըրել. մեզ բերեցին, որ ուտենք:

Օր մըն ալ թուրքի քարավան մըն էր անցնում, մեր երիտասարդները կտրեցին առաջը, տեսանք ի՞նչ. արկղով փամփուշտ: Ուրախացանք: Մեր փամփուշտը վերջանալու վրա էր: Բայց ի՞նչ փամփուշտ. ռուսական փամփուշտ: Ուրեմն արդեն խորհրդային դարձած ռուսական կառավարությունը տվել է թուրքին, որ մեզ՝ հայերուս սպանեն: Մենք լցրինք մեր գըրպանները, ռեյբեներուն մեջ, շալակեցինք, տարինք, որ կովելու ժամանակ պետք պիտի գա, բայց, ափսո՜ս, մեր մոսիները ռուսական չէին: Մերը կա՛մ գերմանական էր, կա՛մ ճունական: Այնպես որ, ռուսական փամփուշտները ծանր-ծանր կռնակներիս շալակած ամիսներով քարշ եկանք, որ եթե ռուսական մոսին հանդիպի, գրավենք և ունեցած փամփուշտով կովենք: Էդ քարավանի մեջ մի տոպրակ աղ կար: Ադ մեզի փրկեց: Ադաց աղ մարդը կմեռնի: Խոտը աղով կուտեինք, ուժ առինք: Ապրեցինք մի կերպ:

Մի օր խումբը կորսնցուցինք. ցերեկով՝ թաքնվում էինք, գիշերով՝ արածում: Մի ընկեր ունեինք, չենգեն վիրավորված էր: Գնդակը մտել էր, դուրս էր եկել, միսը կախվել էր, վերքը թարախակալվել: Ես լվանում էի, վրան խոտ դնում, թաշկինակով կապում: Հետո երբ Հալեպ եկանք, դոկտոր Ալթունյանի հիվանդանոցը տարինք, դոկտորը զարմացած հարցուց. - Ինչո՞վ բուժեցիք:

- Խոտո՜վ, - ըսի:

Հետո ադ մարդը ամուսնացավ, Ամերիկա գնաց:

Մեր խումբը ցրվել էր: Էն չենգեն վիրավոր տղայի հետ թութ կհավաքեի, որ փափուկ-փափուկ կերցնեմ իրեն: Արդեն իմ մեկ աչքս ալ վիրավոր էր՝ կապված: Մեր խումբին կորցրինք: Մաղարա մը տեսանք: Մտանք, որ հանգստանանք, տեսանք մերոնք հոն են, գտանք իրար, ուրախացանք...

Մի օր հավաքվել էինք աղբյուրի գլուխը և կսպասեինք, որ մեր տասը հոգիի չափ տղաները գան, մեզի հասնին: Արամ բեկը տեսավ, որ ուշացան, հետադիտակը վերցուց, ոտքի ելավ, որ հետուն նայի, տեսնի՝ ու՞ր մնացին: Մեկ էլ թուրքերու ձայներ լսեցինք. - Հէ՛յ, Արամ բէյ, թէսլի՛մ օլ (հանձնվի՛ր): Ու՞ր է Արամ բեյը: Երեկ անոր մայրը, քույրը և կինը սպանեցինք, հիմա ալ իր գլուխը կփնտրենք, - ու սկսան հետուեն կրակ բացել մեզ վրա:

Արամ բեկ Չոլաքյանը Անդրանիկի պես քաջ ու խելացի մարդ մըն էր: Ան և՛ բարի էր, և՛ ազնիվ: Երբ Արամ բեկը տեսավ, որ թուրքերը մեր դեմը կտրեր են, ըսավ. - Ամեն մարդ իրարմե հետու-հետու դիրք բռնեք, թող կարծեն, որ մենք շատվո՛ր ենք, - ինքը վերցրեց իր տասնոց հրացանը, որի մեջ տասը գնդակ կառներ, սկսավ կրակել: Ան՛ը կկրակեն, մե՛ը կկրակենք: Ու Արամ բեկը մեզ սիրտ էր տալիս. - Ղաչաղը չպե՛տք է հուսահատվի. նա պետք է մինչև վերջի՛ն շունչը կըռվի..., - ան հետադիտակով նայած ատենը, գլուխը դիրքեն դուրս հանած կըլլա, մեկ ալ ետևեն թաքուն կխըփեն...: Սկզբում մեզ չհայտնեցին, անոր մարմինը խոտերուն մեջը պահել էին, որ թուրքերուն ձեռքը չանցնի, հետո անոր փեսան եկավ մեզի լուր տվավ, որ ոչ ոք իր դիրքեն չշարժվի, իրիկունը կհավաքվինք...: Ես մեջերնին ամենեն փոքրն էի: Ես տեսա՝ Արամ բեկը զենքը ձեռքին էր մեռել...: Արամ բեկին հողին հանձնեցինք: Բոլորս լուռ ենք, որբացած, այլևս չկա նա, մեր առաջնորդը...: Անոր հորեղբոր տղան ըսավ. - Տղաե՛ր, մենք մեզի պիտի հավաքենք...

Զգացինք, որ ալ չիկա մեր քաջ ղեկավարը: Հուսահատված, հուզված, ժայռերուն մեջ մնացել էի, մեկ էլ տեսնեմ՝ մերոնք գնացել են, ես մնացել եմ, ո՛չ տեղ գիտեմ, ո՛չ մարդ: Ու՞ր գնամ, մտածեցի, ի՞նչ ընեմ: Տեսա հետվում կանաչ գիծ մը կերթա. ջուր էր: «Էրթամ ջուր խմեմ», - ըսի: Չորեքթաթ սողալով մոտեցա ջրին, տեսա, որ հետվում մեկը մոտեցավ. Ալա Մանուկենց Մանուկն էր: Գնացի հասա մերոնց...

Հիմա արդեն Արամ բեկը չկա. Սիմոնյան Հովհաննեսն է անոր տեղը: Նա էլ Գյավուր դաղում կովել էր ժամանակին, ըսավ. - Տղաե՛ր, Գյավուր դաղում ես քյուրդ ծանոթ ունեմ, գնա՛նք:

Ջմե՛ռ է: Ցու՛րտ: Ուզում ենք սահմանն անցնել: Ուր գնում ենք, թուրքերը մեզ շրջապատած, հետապնդում են: Էդպես կովելով-կովելով Գյավուր դաղի մոտերքը հասանք: Ուզում ենք ետ դառնալ՝ ճար չկա: Մեզնից մի քանի հոգի խփվեցին՝ մեռան: Մենք հուսահատվեցինք: Առաջ գնացինք, մտանք մի եղեգնուտ: Անտեղ կորեկ, գիլ-գիլ կար բուսած. մի քիչ քաղեցինք, չանթանին լեցուցինք: Նազարեթ Ձեյթունցյանը ըսավ՝ հոգնեցա: Իսկապես բոլորս շա՜տ հոգնած էինք: Մըտանք եղեգնուտը՝ գոնե մի քիչ հանգչելու: Հոն մնացինք երկու օր: Հետո թուրքերը եկան մեզ պաշարեցին, տեսան, որ դուրս չենք գալիս, կրակի տվին: Աստված յա՜ղրմ ընե (Աստված օգնական լինի), ոնց ատոմային ռումբ աշխարհը գիտես վառվում է՝ չա՜թըր-չա՜թըր: Չախկալ, աղվես, ինչ կա՝ ելան վազում են: Մեր մեծը՝ Սիմոնյան Հովհաննեսը, ըսավ. - Փորեցե՛ք հողը, մեջը գերեզմանի պես մտե՛ք, հողը վրաձեդ ծածկեցե՛ք, կրակը կուգա վրաձեդ կանցնի, կերթա:

Մենք էդպես ալ ըրինք: Հողը փորեցինք, կրակը եկավ մեր վրայեն անցավ, մարեցավ: Մենք ելանք ոտքի, գլուխնիս ազատեցինք, սաղ-սալամաթ հավաքվեցինք մի տեղ: Սիմոնյանն ըսավ. - Էստեղ մի գյուղ կա: Էնդեղ մի քյուրդ մարդ կա՝ Հասան բեկ անունով, ան Արամ բեկին կճանչնար, գնանք ադ մարդը մեզ կօգնի երևի:

Գնացինք, քյուրդերը մեզի տեսան վախցան, փախան: Մենք ամեն մեկս չորս-հինգ ամիս ո՛չ տուն, ո՛չ անկողին, ո՛չ լվացվիլ: Մորուքնիս եկել է, մազերս երկարել, ոջլոտվել ենք: Վայրենիի կերպարանք առած ենք, ոտքերնիս բորիկ, վերքերու մեջ: Ամեն օր զուբունես կպատռեի ոտքերուս վերքերուն կփաթաթեի: Աչքս վիրավոր, թաշկինակով կապված, թարախը կվազե՛ր: Մինչև հիմա ալ աս աչքով չեմ տեսնար: Մենք անոնց ըսինք. - Մենք ձեզի բան չենք ըներ, մենք Հասան բեկին ենք ուզում: Մենք Արամ բեկի խումբն ենք, միայն մեզի ճանապարհ ցույց տվեք, մեզ առաջնորդեցեք, մենք ձեզի կվճարենք:

Հասանը ըսավ. - Մենք ո՞նց ճանապարհ ցույց տանք, մեր պետությունը եթե լսե, մեր արմատը կըքանդե:

Վերջը Հասան բեյը Սիմոնյանին տեսավ, հիշեց իրենց ծանոթությունը և երկու քյուրդ դրեց մեզ հետ, որպես վստահելի մարդիկ: Տասներկու ժամ ճամփա ենք գնացել: Էլ ո՛չ չարոխ է մնացել վրաձիս, ո՛չ՝ շալվար: Շալվարիս փեշը տակից պատռում էի, ոտքերիս կապում, կոշիկներս արդեն ծակվել էին, ոտքերս արյունոտվել, շալվարս կարճացել էր՝ ծունկես վեր: Լեռներուն, ժայռերուն մեջեն ենք անցնում: Մեզ գաղտնի ճամփայով են տանում, որ թուրք զինվորները չիմանան:

Լուսացավ: Քյուրդերը ըսին. - Ալ մենք չենք կրնար ձեզ հետ գալ: Մեզի տեսնան, մեզի ալ կսպանեն: Դուք մարդու հետ մի՛ խոսեք, գնացե՛ք...:

Հինգ ոսկի տվինք, երկու հատ էլ մավզեր տվինք, անոնք գնացին: Մենք շարունակեցինք մեր ճամփան. մինչև Քիլիս պիտի երթանք:

Հոգնած ենք, սոված ենք, մարդու կերպարանք չունինք, մորուքնիս եկած, հագուստ չիկա վրաձիս: Քիլիսը մոտ է արդեն: Հեռուն գյուղ մը կերևար, ջաղաց մը տեսանք, մեջեն մարդիկ դուրս եկան: Մեկ էլ լսեցինք հայերեն կխոսին. - Ո՞վ եք:

Մեր խմբի մեջ մարդ ու կնիկ մը կային, առաջ անոնք գնացին:

- Ձեր ղեկավարը թող գա, - ըսել են: Էդ մարդ ու կնիկը եկան ըսին. - Թող մեր ղեկավարը գնա. հայեր են:

Սիմոնյանը տասնոցը հանեց վար դրեց, առաջ գնաց: Դու մի ըսեր՝ անոնք Ուրֆայի թուրքեր են, և Ուրֆայի թուրքերը հայերեն գիտեն: Ատոնք ամենն ալ սուրերը հանեցին, Սիմոնյանին վրա հարձակվեցին, տեղն ու տեղը սպանեցին: Մենք ետ սկսանք փախչել, մեր առջևը կտրեցին, մեզմե տասնմեկ հոգի սպանեցին: Մի կնիկ կար, իրեն ժայռեն վար ձետեց, որ թուրքի ձեռքը չանցնի: Ուրիշ կին մըն ալ կար, ամուսնուն խնդրեց, որ իրեն սպանի: Ամուսինը կնոջը խփեց, վերջն ալ ինքզինքը սպանեց: Մի ուրիշ կին մըն ալ կար մեր մեջը, անոր ալ գերի տարին...

Ով որ ողջ մնացած էր՝ մի կերպ բլուրի մոտ հասանք, մարդ ուղարկեցինք Քիլիս: Քիլիսի հայերուն լուր ուղարկեցինք, որ մեզի օգնության հասնին: Մեկ ալ հարյուր հոգու չափ զինվորներ էլան մեր դեմը: Մենք ձորեն դիրք բռնեցինք: Անոնք մեզ պաշարեցին, մեզի մզկիթ մը լեցուցին, մեր զենքերը հավաքել ուզեցին: Դու մի ըսեր Ֆրանսան՝ որ Ալժիրիան գրավել էր, ալժիրական զինվորներ էր բերել ադ տեղը, անոնք ալ մեզի բռնել էին:

Քիչ հետո ֆրանսական ժանդարմները եկան: Մեզի տարին ժեներալին քովը: Ժեներալը մեզ տեսավ: Հետո մեզի տարին Հայ Ազգային միության եկեղեցին, դպրոցը: Անտեղ եղող հայերն ալ բոլորը աքսոր գնացել էին, ետ էին եկել: Մեզ տեղավորեցին, հանվեցրին, լոգցըրին, մազերնիս, մորուքնիս կտրեցին: Թանի որ մարդու նման չէինք՝ վիրավո՛ր, հիվա՛նդ: Մեր շորերը վառեցին, նոր շորեր հագցուցին: Լուր տվին Հալեպ, բոլոր աշխարհին, որ հարյուր երեսուն զեյթունցի եկան, հասան: Քիլիսի հնչակյան կազմակերպության ղեկավարն էր Կարապետիկյան Վարդմեխակը: Ան եկավ, ամերիկացիները եկան, բաթաանին, բան բերին, տասնհինգ օր մնացինք, մեզի ուտելիք բերին: Բայց չկրցանք ուտել, քանի որ մեջներնիս չորցած էր անոթի մնալեն...: Հիվանդներին հիվանդանոց տարին: Հետո ֆրանսացիները մեզի Քիլիսից Հալեպ բերին, մեզ նկարեցին, հետո մեր զենքերը առին, ավանդատուն պահեցին: Արդեն 1921 թիվն էր, սեպտեմբերի 1-ը:

Հայերը ամեն տեղեն գաղթել, եկել էին Հալեպ, որբանոցները հազարավոր որբեր կային: Հալեպում մերիններին գտա: Քեռիս տուն վարձեց: Մի քիչ իրենց մոտ մնացի: Աչքս օպերացիա ըրին, ոտքս ալ: Հետո որբանոց մտա: Երկու տարի որբանոցում արհեստ սորվեցա: Հոն եղբորս գտա: Նայեցա, որ այդպես չըլլար, Բեյրութ գընացի, ամուսնացա: 1933 թվից Բեյրութի կոմունիստական կուսակցության անդամ դարձա, գաղափարի համար բանտ նետվեցա: 1946-ին ալ ընտանիքով Հայաստան եկանք, Նոր Ձեյթունը հիմնադրեցինք...:

139 (139).
ԿԱՐԱՊԵՏ ԹՈՋԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՋԵՅԹՈՒՆ)

Մեր գյուղը Ռյուչուկ Զեյթուն կըսեին, այսինքն՝ Փոքր Զեյթուն: Օդը, ջուրը չտեսնվա՛ծ էր, մարդիկ՝ քաջ ու աշխատասեր:

Մենք Թոզլյան ընտանիքեն ենք: Մեր գերդաստանը երկու ճորեղբայր ունեինք, հայրս և ճորեղբայրս զենք սարքող էին, որ թշնամին գա՝ պատրաստ ըլլանք, որ թուրքի դեմ վիզ չծռենք: Մեր տանտիկինները գիշեր ու ցերեկ ուտելիք-պաշար կհավաքեին: Քանի որ ամեն անգամ թուրքերը կուգային, մեզ վրա կհարձակվեին, բայց մենք միշտ հաղթական կելլայինք: Զեյթունը ունեցել է երկաթի հանք: Ես հիշում եմ, քարերը կհալեցնեինք ճորս արեւետանոցում, կտանեինք Զեյթուն քաղաքը, երկաթագործները հրացանի լյուլե, գնդակ կպատրաստեին:

Վանքը Զեյթունի ճիշտ դիմացն էր: Մենք՝ զեյթունցիներս, կանգնած սեյիր կընեինք: Մեկ մըն ալ քանի մը ասկյարներ թեմեքեով գազլաղը տարին, որ վանքը այրեն: Ամմա, էշխիները վանքին մեջեն անոնց սպանեցին:

Երբ ֆեդայիները կովում էին Ս. Աստվածածնի վանքում, հայրս գնաց օգնության: Էնտեղ էլ խփվեց. էն ժամանակից ես որբ եմ մնացել: Ունեցել եմ մայր, երեք քույր և եղբայր:

1915 թվին աքսոր հանեցին մեզի: Տարին Դամասկոսի անապատները: Ոտքով կքալեի՛նք, կքալեի՛նք, վե՛րջ չուներ: Տիֆով հիվանդացանք: Անոթի՛, ծարա՛վ, թանկությու՛ն, ուտելիք չկա՛...

Մենք՝ մոտ տասնհինգ զեյթունցոց ընտանիքներ, փախանք Դամասկոսի մոտերքից: Գնացինք, գնացինք չերքեզի գյուղ մը հասանք: Գյուղում մեզ չընդունեցին, մեզ «մուհաջիր» (գաղթական) էին ասում, այսինքն՝ թափառական: Մենք մնացինք գյուղեն դուրս, բաց երկնքի տակ: Լավ է, ժամանակը ամառ էր: Էդ գյուղի չերքեզ բեկի գոմը գիշերով կատղած գել էր եկել, ուզեցել էր եզներին ուտել, եզը կոտոշով խփել էր, գայլը կծել էր եզի պոզը, եզը կատղել էր ու ընկել դաշտերը, գիշերը տուն չէր եկել: Չերքեզ բեկը մեր զեյթունցոց խնդրեց օգնել, որ եզը բռնեն բերեն: Մերոնք գնացին օգնեցին, եզը տարին բեկի տունը:

Չերքեզ բեկը ըսեր է. - Եզս կծախեմ. առե՛ք, տարե՛ք:

Մերոնք ըսեր են. - Մենք փող չունինք, որ եզ առնենք, մենք անոթի ենք:

Բեկը ըսեր է. - Տարե՛ք, ես փող չեմ ուզում: Տարե՛ք էն ձորը մորթեք, կերեք:

Մենք բոլորս՝ մեծ ու պզտիկ անոթի էինք, օրերով խոտ կուտեինք միայն (քեմեջ կըսեին). կխաշեինք, քիչ մը աղով կուտեինք: Աս աքսորի մեջ միսը ու՞ր էինք տեսել: Գացինք եզը ձորին մեջ մորթեցինք, եփեցինք, կաշին ալ չարուխ ըրինք, որ հագնենք: Միսը եփելու համար փայտ ալ չկար, թրիքով-մրիքով հազիվ եփեցինք: Մտածում էինք, որ կկատղինք, բայց սոված էինք. խաշեցինք ու կերանք, որ եփեցինք՝ թույնը դուրս էր եկել, և մենք չկատղեցինք:

Երկու-երեք օր հետո էդ մարդը նորեն եկավ. իր երկու եզն ու երկու կովն ալ կատղել էին: Այդ անասուններն ալ մեզ տվավ, եփեցինք, կերանք: Ետքը գյուղի մեջի արաբների կովերն ալ կատղան, մեզ ըսին. - Հայե՛ր, եկե՛ք, մեր կատղած անասունները ձորը տարեք, մորթեք, կերեք:

Էդ կատղած կովերը ականջները, պոչերը տըննկում էին ու մարդու վրա հարձակվում. ո՛ր մեկ կենդանին, որ այդ կատղածի արյունի ճոտը կառներ, ինքն ալ կկատղեր, և այսպես գյուղի շատ անասունները կատղան: Արաբները տալիս էին մեզ, մենք ալ տանում էինք ձորը՝ մորթում, ուտում: Արաբները մեզ ալյուր, բլղուր էլ էին տալիս: Բայց մեր մեջ ալ տիֆոյի հիվանդություն ընկավ, շատերը հիվանդացան, մեռան, ինչպես մեր փեսա Նազարեթը, նրա աղջիկը՝ Նուրիցան և ուրիշներ: Մեր աքսորությունը տևեց չորս տարի՝ 1915-ից մինչև 1918 թիվը: Էդ չերքեզ բեկի գյուղից մենք գիշերով փախանք, ավելի դեպի Երուսաղեմի կողմի անապատները, գնում ենք խմբով: Ու՞ր գնում ենք մեզ «մուհաջիր» են ասում: Սովա՛ծ ենք, տկլո՛ր ենք, հոգնա՛ծ ենք, հիվա՛նդ ենք. մեծ, պզտիկ, ծեր, ջահել, ի՛նչ ուզես...

Ի՞նչն էր պատճառը, որ մեզ աքսոր հանեցին ու կոտորեցին: Պատճառը էն էր, որ Գերմանիան ու Թուրքիան 1914 թվին ախպերացել էին, դաշինք ունեին իրար հետ ու պատերազմի մեջ էին Անգլիայի ու Ֆրանսայի դեմ: Արդեն մեր աքսորի պատճառը, իսկականին մեջ, եղավ գերմանացին: Ան թուրք փաշաներուն ըսավ, որ մենք Նաբլուսի դիրքում* կովում ենք անգլիացոց ու ֆրանսացոց դեմ: Ես չեմ գիտեր՝ քանի ամիս կոված, ո՛չ մեկը հաղթեց: Էն ժամանակ ֆրանսական բանակին մեջ կային հազար հինգ հարյուր հայ կամավորներ՝ Հայկական լեգեոն կըսեին, եկել էին ամեն կողմեն, մուսալեռցի, քեսաբցի, հուսենիկցի, ադանացի, ամեն տեղերեն ֆեդայիները գնացել էին Ֆրանսային օգնելու, քանի որ ան հայերուն խոստացել էր Կիլիկիան հայերուն տալ: Մեր հայ ֆեդայիները ասել էին ֆրանսացի ժեներալին. - Մենք էդ Նաբլուսի դիրքը կառնենք:

Ժեներալը ըսել էր. - Դուք ո՞նց կառնեք:

Հայերը ըսել էին. - Քո գործը չէ, մենք վրեժ ունենք թուրքին դեմը, մենք կհաղթենք:

Ժեներալն ալ ըսել էր. - Եթե հաղթեք նե, ձեզի անկախություն կուտանք, ձեզի Կիլիկիան կուտանք:

Հայ կամավորներն ալ աչքերնին արյուն լցված «Հու՛րա, հու՛րա» ըսելով կհարձակվին, կգրավեն դիրքը, կհաղթեն...

Գերմանացին ու թուրքը պոզ կնստին, կփախին

* Նկատի ունի 1918 թ. Պաղեստինի մոտ գերմանա-թուրքական զորքերի դեմ Արարայի ճակատամարտում հայ կամավորների հաղթանակը:

Եգիպտոսի կողմը: Արաբներն ալ վրեժ ունեին թուրքեն, անոնք ալ ան կողմեն սկսան ջարդել թուրքին ու գերմանացիին: Թուրքը ու գերմանացին փախչելու ժամանակը արաբները ան՛ող ջարդ մը տված են, պոզերը շուռ տված են, քանի որ անոնք ալ վրեժ ունեին, քանի որ թուրքն ու գերմանացին գրաված էին արաբներուն երկիրը: Թուրքը և գերմանացին Կիլիկիայեն քաշվեցան: Կիլիկիան մնաց Ֆրանսային ու Անգլիային: Էղավ ազատություն: Էն ժամանակ Արամ բեկը դեռ լեռներումն էր: 1918 թվին էր, որ ազատություն եղավ: Մեր լեռներում կովող Արամ բեկի ֆեդայիները լսեցին, որ Գերմանիան ու Թուրքիան պարտվել են, ու Կիլիկիան ազատվել է: Եկան անցան Ջահան գետը, էկան Սուրիա, մնացել էին քսանութ հայ ֆեդայիներ:

Երբ ֆրանսացին ազատություն տվավ, ֆրանսացիներուն միջոցով ամերիկացի միսիոներներ էին եկել Սուրիա: Անոնք գացին Դեր Զորի անապատները, ինչքան որ արաբներուն քովը հայ կնիկ, հայ աղջիկ կար փախցված, որոնց տարել էին իրենց տուները, ինչքան հայ տղա կար, արաբները իրար մատնեցին, միսիոներները հավաքեցին բոլորին, ով որ չտվավ՝ տանտիրոջը բանտարկեցին: Հավաքեցին լեցուցին Հալեպ քաղաքի որբանոցները. որուն որ հարազատները՝ հայր-մայրը կամ ազգականը ողջ էր մնացել, եկան գտան իրար...

Հելա աքսորի ժամանակ մեր բոլորին երկու մասի էին բաժանած, մեզի պտտցուցին Կոնիայի կողմը: Հետո բերին Հալեպ քաղաքը: Շատերուն Դեր Զոր, Ռաս ուլ Այն տարան, շատերուն ալ՝ Դամասկոսի, Երուսաղեմի կողմը, Հավրանի անապատները: Մենք Դամասկոսի կողմը ինկանք: Մեզի չջարդեցին, էդոր համար բավական հայեր ողջ մնացին, իսկ Դեր Զորի կողմը՝ բոլորին ջարդեցին:

Հելա աքսորի մեջ ենք: Հելա Երկիր չենք գնացել... Մի բան պիտի պատմեմ, տեսած բանս պիտի պատմեմ: Էն ժամանակ, երբ մենք Դամասկոսի կողմը աքսոր էինք, իմ մայրը, քույրերս միասին ու շատ ուրիշ հայեր դեռ աքսորն էինք: Դահա Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները կային: Մեծ Ջեմալ փաշային հրաման եկավ, որ գնա Դամասկոսի կողմի հայերուն ջարդի, էդ իրավունքը անոր տվել էին: Գրությունն էին տվել պեչատով-մեչատով, որ գնա ջարդի հայերուն...

Էդ ճամակը Մեծ Ջեմալ փաշան առել, եկել էր Դամասկոս:

Էն ժամանակ Դամասկոսի մեջ հայոց մայր եկեղեցի մը ունեինք, էնտեղ առաջնորդ ունեինք: Ջեմալ փաշան եկել է առաջնորդարան, մեր հայոց առաջնորդին ըսել է. - Ահավասիկ ճամակ ունեմ, որ հայերուն ջարդեմ պիտի...

Աքսորի ժամանակ ալ Արաբկիրի կողմերեն շատ մը հայերու կտանին Դեր Զորի կողմը՝ ջարդելու: Ադ գաղթի ժամանակ արաբկիրցի հայ ընտանիք մը մեկ սիրուն, դունչա-գյուզելի աղջիկ մը կունենա, երկնքի վրայի արևին կըսե՝ դու մի՛ ծագիր, ես պիտի ծագիմ: Էս Ջեմալ փաշան կտեսնա էդ դունչա-գյուզելի հայ աղջիկը, կառնե, կտանի իր հարեմը: Անոր շատ կսիրե Ջեմալ փաշան: Էդ հայ աղջիկը օր մը Ջեմալ փաշային կըսե. - Փաշա՛, խնդրում եմ, որ էդ հայերը անմեղ ժողովուրդ են, մի բան մտածե, ջարդել մի՛ տուր անոնց. էդ ալ քու բարիքը ըլլա հայերուն...

Էն ժամանակ ես ալ Արաբստանի Դամասկոսի գյուղերն էի, երբ Ջեմալ փաշան հրամանը ձեռքին եկավ, որ ջարդի հայերուն: Էս Ջեմալ փաշան կմտածե, որ էս հայերուն անունները փոխենք, որ ես ալ հեռագիր տամ, որ էստեղ հայ չի մնացել, բոլորը կրոնափոխ են եղել, էլ հայ չի մնացել, որ ջարդեմ:

Ես էն ժամանակ տասնվեց տարեկան էի: Ջեմալ փաշան ըսավ հայերուն. - Դուք նորեն հայ մնացեք, միայն ձեր անուններնիդ փոխեցեք, սուտ-մուտ անուններ ունեցեք, ես ալ հեռագիր պիտի տամ, որ էստեղ հայ չի մնացել, բոլորը հավատափոխ են եղել արդեն...

Կհիշեմ իմ անունս դրել էին Հուսեին, բոլոր հայերուն ալ անունները փոխել էին: Ամեն մեկին մի սուտ-անուն դրել էին, որ փրկեն հայերուն: Ջեմալ փաշան ըսել էր. - Ես կմեռնեմ, բայց հայերը իմ անունս ոսկե տառերով պիտի գրեն:

Այնպես որ, շատ հայեր ադ ձևով ազատվեցան ջարդեն: Շատ հայեր ալ տիֆ ընկան մեռան՝ անոթի, ծարավ, հիվանդություններին չդիմացան, մեռան...

Էդ գաղթից հետո, երբ մեր կամավորները 1918 թվին Նաբլուսի մոտ հաղթանակեցին, ինչպես որ արդեն, երբ ազատություն եղավ, մենք ալ բոլոր ողջ մնացած գաղթականներուն հետ էկանք Հալեպ քաղաքը լցվանք: Էկանք Հալեպ, տեղ չկա նստելու, արաբներուն քովեն հայ երեխեքին բերին որբանոց դրեցին: Երեխեքը արաբերեն կխոսեին: Հայ աղջիկներուն ու կնիկներուն երեսները արաբները կապույտ մելանով նախշել էին, բայց մեր հայ երիտասարդները ըսին. - Ոչի՛նչ, մենք մեր դժբախտացած հայ աղջիկներուն հետ կամուսնանանք, ի՞նչ ընենք, որ արաբները տարել, բանացրել են...

Հետո հրաման եկավ, որ ամեն մարդ կարող է իր տեղը էրթալ ազատ կերպով: Բայց մենք՝ զեյթունցիներս, հավաքվեցինք, հաշիվ ըրինք, որ քառասունհինգ հազարից մնացել ենք միայն հազար հիսունութ ջան: Շատ զեյթունցիներ Արաբստանի Դեր Զորի կողմերը կոտորվել էին. էնոնց ջարդողներն ալ կովկասի չերքեզներն էին: Խաբուր գետի եզերքը երեք հատ չեչենի գյուղ կար: Ժամանակին Նիկոլայ թագավորը աքսորել էր էդ չեչեններին: Անոնք էին հայերին ջարդել և ոչ թե՝ արաբները:

Այնպես որ, 1918 թվին մենք՝ զեյթունցիներս, ամեն գյուղեն մնացել էինք երկու-երեք հոգի: Բոլորը հազար հիսունութ ջան: Հավաքվանք, ճամփա էլանք. Սուրիայեն մինչև Կիլիկիա երթալու համար պիտի անցնեինք Քիլիս քաղաքը, Այնթապ, Մարաշ. ֆրանսացիները լցվել էին ադ տեղերը մինչև Մարաշ...

Արամ բեկն արդեն լեռից իջել էր, եկել էր Հալեպ, մեր զեյթունցոցը գտել էր, մեր Հայրենակցական միությանն նախագահն էր: Մեզ առաջնորդեց դեպի Զեյթուն: Գնացինք, հասանք Զեյթուն, տեսանք մեր տները ամբո՛ղջ վառված: Երբ մեզի աքսորի էին հանել, Սելաճիկի կողմից լազեր էին բերել, մեր տներում բնակեցրել, անոնք ալ մուսուլման էին, «ալլահ ու ակբա՛ր» կըսեին, կերգեին, կաղոթեին...

Արամ բեկը, որ Զեյթունի լեռներն էր փախած, կտեսնա, որ մեր տները լազերն են նստել, կմտածե. «Էրթամ վառեմ մեր տները, անոնք ալ հետը թող վառվին»: Մեր Զեյթունի տներն ալ լավ փայտերով էին շինված. բոլոր տները վառվել, մոխիր էին դարձել: Միայն գյուղի եզերքը տասը-տասնհինգ տուն լավ էին մնացել, չէին վառված: Առաջին օրերը ադ տուներուն մեջ մտանք, հետո կամաց-կամաց սկսանք շինել, վերաևորոգել մեր ավերակ տները: Բոստաններ ունեինք, նորեն սկսանք աշխատիլ, հողը վարել, ցանել, ո՞րը ըսեմ, ո՞րը պատմեմ, ո՞րը խոստովանիմ...

Էդ երկու տարին հանգիստ ապրեցանք, առտուր սկսանք ընել, խաղողի ժամանակն եկավ, լավ բերք ստացանք, չամիչ ըրինք, ծախեցինք, ապրեցանք...

Ադ ժամանակ դաճա Մարաշի պատերազմը չէր սկսած, Մարաշի ամենեն մեծ թուրքը՝ Հասան ղադին հայերու մեծին՝ Խրլախյան Հակոբ աղային կկանչե կրսե. - Հակո՛բ աղա, մենք պիտի ֆրանսացոց հետ կռվինք, անոնց պիտի բշենք մեր երկիրեն, դուք մի՛ խառնվիք, մենք ձեր ուտելիքը կուտանք ձեզի, դուք մի՛ խառնվիք, մենք վաթան-յոլդաշ ենք (հայրենակից ենք):

Հակոբ աղան կրսե. - Դուք՝ թուրքերդ, հայերուն ինչե՛ր ըսես, որ չըրիք, աքսո՛ր հանեցիք, ջարդեցի՛ք, մենք չե՛նք մոռցած, մենք Ֆրանսային հետ ենք, ձեռքես գա նե քեզի կոշիկս ներկել պիտի տամ...

Սապես մեծ կխոսի Հակոբ աղան, կվիրավորե Հասան ղադիին:

Թուրք Հասան ղադին ալ կրսե. - Հակո՛բ աղա, ես էս իմ բեղերը ածիլել կուտամ, եթե քեզի արաբայի հետևը կապել չտամ, քո գլուխն ալ կտրել չտամ...

Հասան ղադին բոլոր թուրքերուն կհավաքե, ժողով կընե, կրսե. - Փարա՞ն թանկ է, թե՞ պատիվը, - ժողովին հավաքված թուրքերը կրսեն, - Իհարկե՛ պատիվը...

- Եթե ձեզ համար պատիվը թանկ է նե, ինչքան ոսկի ունիք՝ բերեք, ես պիտի էրթամ Տաճկաստանի խորքերը, զորք պիտի հավաքեմ՝ ֆրանսացիներուն դեմ կռվելու համար...

Հասան ղադին գնացել է, թուրքերուն հավաքել է գյավուրներուն՝ ֆրանսացիներուն քշելու համար:

Ասի արդեն 1920 թիվն էր: Դեռ մենք էդ ժամանակ Զեյթուն քաղաքն ենք: Թուրքերը սկսան Մարաշ քաղաքում հայերուն ջարդել, որովհետև Հակոբ աղան էդպես բաներ ըսած էր Հասան ղադիին:

Ցուրտ ձմեռ էր: Շատ ցուրտ ձմեռ էր: Հակոբ աղան կզգա, որ իրեն վտանգ կա, հեչբե մը ոսկի կլցնե, ձիուն վրա կկապե, կնստի, կփախի: Փախչելու ժամանակ թուրքերը կբռնեն, անոր գլուխը կկտրեն, արաբայի հետևը կկապեն, կտանին Անկարա: Հասան ղադին կրսե. - Աս գյավուր Հակոբ աղային գլուխն է, որը ինձի ըսավ՝ ես քեզի կոշիկս ներկել պիտի տամ...:

1921 թիվն էր արդեն: Թուրքերը երեսուն հազար զորքով եկել էին Մարաշ՝ կռվելու ֆրանսացիին դեմը: Երեք օր մենք Զեյթունում լսում էինք էդ թնդանոթներուն ձայները... մեկ էլ թնդանոթի ձայնը լռեց: Մարաշից Զեյթուն տասներկու ժամ է ոտքով, բայց լսում ենք. ձայն չկա: Մեր Հայրենակցական միության նախագահը՝ Արամ բեկ Չոլակյանը, ուզում էր իմանալ, լուր առնել, թե ի՞նչ եղավ հայ կամավորներուն վիճակը. ուզում է մարդ ղրկել, բայց ձյուն է, ճամփա չկա, ֆրանսացիները գիշերով փախել են. ով որ հայ կամավորներից ֆրանսացիներուն հետ գնացել էր, սառել էր ցրտից: Մի մարաշցի Միհրան ունեինք, ցրտից մատները սառել էին: Մնացած հայերուն ալ...

Մենք Զեյթուն մնացինք 1918-1921 թիվը: Արդեն 1921 թվի գարունն էր: Մենք Զեյթունումն ենք դեռ: Ֆրանսացիները փախան՝ ձիերուն ոտքերուն տակը քեչե փաթաթած, որ սմբակներով ձայն չհանեն: Մարաշը պարտվեց: Ֆրանսացիները փախան: Հերթը եկավ մեզի: Մենք բոլորս էդ ժամանակ, այսինքն Ֆրանսիայի ու թուրքի կռվի ժամանակ, զորանոցի մեջն էինք մտել, հավաքվել: Էդ զորանոցը մերոնք 1895 թվին գրավել էին թուրքերից, էդտեղ էին ապրել հինգ հարյուր թուրք զինվորները: Երկուշաբթի օր մըն էր, երբ 1921 թվին Քեմալ Աթաթյուրքի զորքերը եկան զորանոցը պաշարեցին: Ես ալ զորանոցին մեջն էի, հազիվ տասնյոթ տարեկան էի: Հայրս արդեն վաղուց մեռած էր, մայրս, երեք քույրերս, ախպորս կինը միասին էինք, մինչև էն ժամանակ:

Քեմալի զորքերը եկան դեմի լեռան գագաթը, գերմանական թնդանոթները լարեցին մեր կողմը: Չի նստած մի զինվոր, ճերմակ դրոշակը ձեռքին, եկավ մեզի մի նամակ բերավ, ուր գրված էր. «Զեյթունցինե՛ր, կա՛մ հանձնվեք, կա՛մ ոմբակոծելու ենք. ձեզի երեք ժամ ժամանակ»: Ադ Քեմալի հրամանն էր:

Արդեն մենք՝ զեյթունցիներս, հազար հիսունութ ջան ենք: Հայրենակցական միությունը ժողով ըրեց, որոշեց՝ հայ երիտասարդները չեն կարող հանձնվել, պիտի կռվին մինչև արյան վերջին կաթիլը: Մարաշեն անգլիացի միսիոներներ եկան մեզի ըսին. - Եթե դուք հանձնվիք, ձեզի չպիտի ջարդեն:

Մեր զեյթունցոց երիտասարդները ըսին. - Մենք չե՛նք հանձնվի, մենք պիտի կռվինք մինչև մեր արյան վերջին կաթիլը:

Արամ բեկը ըսավ. - Ո՛վ կհանձնվի, թող հանձնվի:

Ոնց որ մի նավ ընկղմվի. զորանոցի մեջի ժողովուրդը իրար անցավ... իրար գրկել, համբուրել, լաց ըլլալ, ալ ամենքը իրար խառնված...: Մենք երկու եղբայր էինք: Մեծ եղբայրս՝ Նշանը, որ Արամ բեկի զինանոցը կաշխատեր, նոր էր ամուսնացած, ան ալ մնաց կռվողներուն հետ: Ան ինձի ըսավ. - Կարապե՛տ, մենք երկու եղբայր ենք, արի դու հանձնվիր. մամայիդ, քույրերուդ և իմ կնկանը տերություն արա, գուցե դու ողջ մնաս, մեր տոհմի արյունը շարունակես: Ես Արամ բեկի հետ կռվողներուն մեջ պիտի ըլլամ:

Ես, որ հազիվ տասնյոթ տարեկան էի, հրացան մը առած էի ուսս, որ ես ալ կռվելու երթամ: Մեծ եղբորս խոսքը լսեցի, հրացանն ուսես վար առի, մորս, քույրերուս ու հարսիս տեր կանգնեցի: Ես մորս, քույրերուս և հարսիս հետը գնացի սարի գագաթը, գնացինք՝ հանձնվանք: Մի կնիկ կար, հղի էր, ըսավ ամուսնուն. «Օհանե՛ս, մեղքս քո վիզը, ինձի մի հատ գլուլա խփե», ամուսինը մեր աչքի առաջ, գլուխը սանի դարձուց, նանկ դարձուց՝ թվանգով խփեց, որ կնիկը թուրքին ձեռքը չանցնի իր չծնված զավակին հետը: Վերջն ալ ամուսինը գնաց մտավ Արամ բեկի խմբին մեջ: Երեք օր անոնք կռվան հերոսներու պես: Ջտեսնվա՜ծ կռիվ էր: Գնդակները օդին մեջ կերթային-կուգային: Երեք օր գերմանական թնդանոթները մեր զորանոցին պատերը քանդեցին: Հայերը տեսան, որ իրենց փամփուշտները վերջանում են, արդեն զորանոցն ալ պաշարված է գիշեր-ցերեկ, Արամ բեկը հրամայեց. - Խշտիկները անցուցե՛ք հրացաններուն վրա, պիտի՛ հարձակվինք թշնամու վրա:

Կեսգիշերին հարձակվեցան թշնամու վրա, թուրք զորքի վրա, քանի՛ հոգիներ հոն զոհվեցան, հարյուր հիսուն-երկու հարյուր հոգիի չափ լեռը բարձրացան, սկսան կռվիլ:

Հիմա գանք մեզի: Մեզի տարին թուրքերուն կենտրոնը, զաբիթներուն քովը: Երեք զեյթունցի հայ ծերուկներու պարտականություն տվին, որ պիտի մատնիչություն ընեն, թե ու՞մ ամուսինը, ու՞մ ախպերը փեդայի է, դիրքերում կռվում է, անունները պիտի ըսեն, եթե չըսեն՝ իրենց գլուխները կթռցնեն: Մերուկները ստիպված մեկիկ-մեկիկ ջոկեցին, որոնց հարազատները Արամ բեկի հետ կռվում էին:

Էն ժամանակ մենք՝ ես, մայրս, քույրերս ու հարսըս, իրար վրա կծկված, ոգնիի պես կուչ եկած թաքնվել էինք ծառերուն, թփերուն տակը, որ մեզ չտեսնեն: Էկան երեք քույրերես մեկուն տարին, ամուսինը կռվողներուն մեջն էր: Մյուս երկու քույրերս, հարսս և մայրս մնացինք. մեր բախտը բերեց, իրար հետ էինք: Անոնք, որոնց ամուսինները, ախպերները կռվում էին, առանձին տարին մորթելու, մի երկու-երեք կնիկ ոնց էղեր է էդոնց մեջից փախել են մաղարան են մտել, ետքն ալ գացել միացել են կռվողներուն, իրենք ալ կռվել են հետերնին: Էդ կնիկներեն մեկը հետո, շատ տարի հետո, ինձի պատմեց էդ մասին: Էդտեղից մեզի քշեցին, տարին Վարդապետի կամուրջը: Էդ մեր հողային սահմանն էր թուրքի հետ, տակեն մեծ գետ մը կանցներ: Մեզի լեցուցին կամուրջի վրան, երկու կողմեն պահակ դրին: Մենք մտածեցինք, որ երևի մեզի ջուրը պիտի թափեն: Մեզ ալ հրամայեցին՝ ով փախի՝ կկրակենք:

Ես տասնյոթ տարեկան էի: Ինձ չափ տղաներ շատ կային: Էդ կամուրջից հանեցին մեզի քշեցին առաջ: Քայլում ենք ոտքով, հոգնած ենք, շատերը, գետնին պառկած, չեն կրնար քայլել. հիվանդ են, ծեր են... Գիշերը մնացինք դաշտը, բաց երկնքի տակ: Էդպես օրերով քայլեցինք, վերջապես մեզի քշեցին դեպի Մարաշ: Երեք օր ու գիշեր քայլեցինք: Անոթի, ծարավ, հոգնած, դադրած: Հասանք Մարաշ, տեսանք, որ մեր մեջեն շատերը չկան, ճամփին կոտորվել, մեռել էին: Մեզ անտեղը քսան օր պահեցին: Հայկական եկեղեցիին մեջը լեցուցին: Ամերիկացիք եկան, շատ ուտելիք տվին մեզի: Թուրք զինվորները խշտիկներով կանգնած էին դռանը: Մեր մեջը մի վարդապետ կար ու մի տերտեր: Էդոնք էդ եկեղեցիին մեջ պատարագ ընել սկսան: Ժողովուրդը լի՛քը, բոլորը կուլան, հոնգու՛ր-հոնգու՛ր, արցունքներով գետինը թրջվեցավ: Ադտեղ, ադ եկեղեցիին մեջ քսան օր մնացինք. ո՛չ դուրս ելնել կթողնեն, ո՛չ ներս մտնել, ո՛չ դուրս, ո՛չ ներս, ամեն ինչ ներսը՝ իրարանցու՛մ. չտեսնվա՜ծ վիճակ էր: Մայրս ըսավ ինձի. - Կարապե՛տ, տղա՛ս, արդեն ախպորդ լեռի վրա խփեցին, եթե կրնաս ել՝ փախի, կարող է մեզի ալ կոտորեն, գոնե դու՛ն հոգիդ ազատե:

Եկեղեցու դռան առջևը պահակ թուրք զինվորը խոսքի բռնված էր կնկիկի մը հետ: Ես տեսա ադ ասկարի թիկունքին բաց տեղ կա, հետուեն վազելով եկա, թռա ցանկապատը անցա, փախա: Գնացի Քուբեթլի թաղը, որը Մարաշի հայկական թաղերից մեկն է, այնտեղ թաքնվա մի տունի մեջ: Ինձի ըսին. - Քեզի պես տղաներ կան փախած:

Տներիցներեն մարդ ղրկեցի եկեղեցի, ըսի. - Գացե՛ք, տեսե՛ք անոնք ի՞նչ եղան, ո՞վ կա, ո՞վ չիկա:

Գնացին, եկան, ըսին, որ ոչ ոք չիկա եկեղեցում, բոլորին քշել, տարել էին Թուրքիայի խորքերը՝ աքսոր: Ես լաց եղա, մտածեցի, որ այլևս երևի չեմ տեսնի իմ հարազատներուն, մանավանդ խելացի, հետաոտես մորըս, որ ուզեց ինձ փախցնել, ազատել...

Դու մի ըսեր, մերոնց որ տարել են, աղջիկ-կնիկ, շատ դժվար են ապրել, անոթի, ծարավ, թուրքերուն, արաբներուն ծառայություն ընելով են ապրել կամ մեռել: Իսկ ես մերոնցմե խաբար չունեցա:

Չորս ամիս մնացի Մարաշում, ինձի պես տասներկու տղաների հետ մի կերպ յոլա էինք գնում: Մեկ էլ թուրքական կառավարությունեն հրաման եկավ, որ «Մարաշի հայերը, ով որ իր տուն-տեղը, մալ-մյուլքը թողնի, կարող է պաշապորտ հանի, Սուրիա գնա: Ճամփաներին ձեզ չեն ջարդի, կարող եք Արաբստան գնալ»: Հայերը բոլորն ալ, տուն-տեղ թողած, բոլորն ալ ամեն ինչ թողած, գիշերով, փուրգոններով ճամփա ելան դեպի Սուրիա՝ Հալեպ: Ես ալ էն ժամանակ էդ տասներկու հայ տղաների հետ էի: Մի հայ ինժեներ կար, պետական պալատը կշիներ Մարաշում, անունը Տաճատ էր: Գնացինք անոր ըսինք. - Տաճա՛տ էֆենդի, մենք ալ կուզենք էրթալ Սուրիա՝ Հալեպ, բայց որբ ենք, ո՛չ ոք չունինք:

Տաճատ էֆենդին ըսավ. - Գնացե՛ք, մի-մի հատ նկար քաշվեցե՛ք, բերե՛ք, ձեզ ալ պաշապորտ հանեմ, գնացե՛ք Հալեպ:

Տղերքով գնացինք, նկարվեցինք, տարինք, Տաճատ էֆենդին պաշապորտ հանեց, տվեց մեզ:

Ինկանք ճամփա: Յոթ օր, յոթ գիշեր ճամփա քալեցինք, քալելեն ոտքերնիս ուռել էին, բոլորս ալ անոթի՛, ծարա՛վ, հոգնա՛ծ: Վերջապես հասանք Հալեպ քաղաքը: Իսկ Մարաշի եկեղեցիին մեջ մնացած հայերուն՝ մայրս-քույրերս, հարսս վերջը տարել էին Թուրքիայի խորքերը, շատերուն կոտորել էին...

Հալեպ հայ բարեգործական ընկերությունը սպիտակ վրաններ էր լարել, որ դարիբ հայերը գան, տեղավորվին: Գնացինք, մտանք վրանի մը մեջ: Բոլոր տղերքը փախան, գնացին քաղաք, միայն ես մնացի էդ վրանի մեջ:

Չորս ամիս էր անցել արդեն, մերոնցից լուր չկար: Լեռը կովող ֆեդայիներեն շատերը մեռել էին:

Արամ բեկին թուրքերը սպանել էին: Անոնց հետն է եղել մեր զեյթունցի Հովսեփ Բշտիկյանը*, ան լա՛վ գիտե ադոնց կռիվները: Կռվողներեն մի քանիսը եկան Հալեպ: Գնացի, տեսա, որ փեսաս կա, ախպերս՝ չկա: Գնացի, տասը օր առանց հաց, առանց ջուր մնացի, խըսիր մը փռված էր վրանին մեջը, լաց լինելով եմ անցուցեր էդ օրերը: Մեկ ալ էլա, որ անոթի մեռնում եմ, ուժ չկա մեջս: Ի՞նչ ընեմ, ի՞նչ չընեմ, գնացի ամերիկյան օֆիսը, ըսի. - Ես Զեյթունի որբ եմ:

Ինձ ղրկեցին Լիբանանի ամերիկյան որբանոցը: Հոն նոր շենք էին սարքում, ես ալ սկսա շինել: Երեք ամիս հոն մնացի, հետո ջոկեցին չափահաս տղաներուս՝ երեսուն հոգու, մեր ուտելիքով-պառկելիքով ղըրկեցին արաբական գյուղերը, որ ամերիկացին պահե մեզի: Հոն Համանայում վեց ամիս մնացի: Մի օր եկեղեցի գացինք, աղոթք ըրինք: Տեսանք, որ անոնք ալ մեզի պես քրիստոնյա են: Ինձի սիրեցին, իրենց հետ աշխատանքի մտա, բանվորություն ըրի մետաքսի գործարանում: Աշխատեցա, օրական կես սուրիական կուտային: Աշխատեցա, բավական փող շահեցա, երեք փեշով թուրքական զուբունս հանեցի, դերձակի մոտ գնացի, կոստյում կարվեցա, հագա, գնացի աշխատելու:

Հետո նամակ մը եկավ Հալեպեն. «Կարապե՛տ, տղա՛ս, մենք եկել ենք աքսորեն, եկուր Հալեպ, Զեյթուն խանե»: Մայրս էր գրել տվել: Ուրեմն՝ ո՛ղջ են: Մուհաջիրները եկել էին: Գնացի, գտա: Ես արդեն չափահաս երիտասարդ էի, երբ գտա մորս ու քույրերուս: Տուն մը բռնեցինք, սկսա աշխատիլ, որ անոնց պահեմ: Իտալացոց օթոներում գարաժը մեխանիկ կաշխատեի, վարորդ էի իտալական մեքենաներուն վրա: Մայրս իր տեսած տառապանքին չդիմացավ, շուտ մեռավ: Քրոջս ամուսնացուցի: 1930 թվին ես ալ ամուսնացա, ունեցանք զավակներ՝ Օվսաննա, Առավնի, Մինաս, Նշան:

1946-ին Հալեպեն եկանք Հայաստան: Երևանում Նոր Զեյթուն թաղամասի հիմնադիրներեն դարձա, տուն շինեցինք, աշխատեցանք, ապրեցանք:

140 (140).
ԵՎԱ ՄԱՆՈՒԿԻ ՉՈՒԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ԶԵՅԹՈՒՆ)

1915 թվականի ջարդի ու տեղահանության ժամանակ ես պզտիկ չոջուխ էի, կհիշեմ, Զեյթունեն դուրս եկանք, մեր գյուղը Զեյթունի Այկըցա գյուղն էր: Մայրս շատ սիրուն կնիկ էր: Հինգ զավակի տեր էր, ամա բոլորին կորցրեց, վերջն ալ ինքը մեռավ...: Մեր գյուղեն միայն ես եմ մնացել ողջ: Թուրքերը էկան բոլորին գյուղեն հանեցին: Խամշիով կմխթեին, որ քալենք: Բոլորին ձեռքերը ետևները կապած տարին լեցուցին ղշլաղի պես բարձր տեղ մը: Մեջը դամայով ու բալթայով մեկի ձեռքը, մյուսի՝ ոտքը, մյուսի՝ թևը ջարդեցին: Մեզի մերկացուցին, մորե մե՛րկ... չը՛ս-չըլբախ էինք, ո՛չ վարտիք, ո՛չ շապիկ: Ետևնիս մի պզտիկ տղա թևը կտրված՝ մորն էր կանչում, ամմա մայրը մեռած էր արդեն բալթայով: Ադ տեղը Դեր Զորն էր: Ցու՛րտ էր սաստիկ, իրար վրա էինք պառկում, որ տաքանանք: Առավոտյան եկան, նորեն թոփեցին մեզի, նորեն սկսան ջարդել և ջուրը լցնել. մաղարային տակեն Խաբուր գետն էր գնում: Մեկին՝ գլուխը, մյուսին՝ ոտքը, մեկալին՝ ձեռքը կտրեցին, փրթեցին, ամենքին ալ գետնին իրար վրա լեցուցին: Մարդ կա՝ չէ՛ մեռած, ամմա՝ ջնջխված է, մեկը՝ կուլա՛, մյուսը՝ կծվա՛, արյունին հո՛տը՝ մեկ կողմեն, անոթությու՛նը՝ մյուս կողմեն: Ալ ողջերը սկսան մեռածներուն միսը ուտել...: Ովքեր հրաշքով ողջ էին մնացած՝ լեշերու տակեն դուրս էին էլեր. փրթված մարդոց տակերեն, արյուններուն մեջեն դուրս էլեր էին, ադ հորին մեջ կանալիզացիայի ճամփան գտել էին, սկսել էին քալել: Ով ադ փիս-փիս ջուրերը խմել էր, փորերը ուռան՝ մեռան: Ետքը ես լույս աշխարհ էլա, սկսա քալել: Մարդ-մարդաքանք չիկա, մեյ մըն ալ արաբ հովիվ մը տեսա, մոտեցա: Ան ինձի մեղքցավ, կաթ տվեց՝ խմեցի, վերջն ալ իր չադըրը տարավ, ուտելիք տվավ՝ կերա: Անտեղ քիչ մը դինջացա, ինքզինքս գտա: Վերջը ան ինձի Մարաշ տարավ: Ինձի ալ Մարաշի գերմանական որբանոցը տըվավ: Ես հոն սովրեցա: 1921-ի իրարանցումի ժամանակ Հալեպ եկանք: 1946-ին ալ Հայաստան եկանք, ինչե՛ր են տեսել աս աչքերս, ո՞նց չեն քոռացել աս աչքերս:

141 (141).
ՍԵԴՐԱԿ ԳԱՅԲԱԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ԶԵՅԹՈՒՆ)

Երբ մեզի աքսոր հանեցին, ես տասներկու տարեկան էի, այնպես որ, բավական լավ կհիշեմ: Մեզի Զեյթունեն դուրս քշեցին, մեր տուն-տեղը, լիքը մառանները, այգիները՝ ծառերով ու պտուղներով, ամբողջը ձգեցինք և լաց ու կոծով ճամփա ինկանք: Մեզի Կոնիայի կողմը քշեցին, անտեղեն ալ Դեր Զորի անապատը դուրս էկանք: Հոն, ըսես նե, անա-բաքա գյունի էր, շունը տիրոջը չէր ճանչնար, մեռնող-մեռնողի, հիվանդություն, անոթություն, խեղճություն, ո՞ր մեկը ըսեմ...

Օրին մեկը արաբ մը ինձի տեսավ, երևի մեղքցավ, տարավ իր հետ, իրեն զավակ ըրավ: Ես դարձա

* Տես զեյթունցի Հովսեփ Բշտիկյանի (ծնվ. 1903 թ.) պատմածը [138(138).]:

ուղտապան: Ոտքս՝ բոբիկ, մազերս՝ երկարած, ջուր չըկա, որ լվացվիս, ուղտը որ միզում էր, գլուխս տակը կըբռնեի, կլվանայի...

Երբ որ մարմնիս մի տեղը կցավեր, աս իմ արաբ հայրս կըսեր՝ շեյթանը հոն է մտած, ու վառվող ածուխը միսիս վրա կդներ, որ սատանան դուրս գա. ես ցավեն կմեռնեի, իմ մսի հոտը կզգայի, բայց ձեռքս, ոտքս բռնած կըլլային... Մարմնիս վրա քսան-քսանհինգ տեղ կան ադ տեսակ այրվածքի հետքերը:

Հարևան արաբ ցեղերը հարձակվեցին մեր վրաններուն վրա, թալանեցին, կնիկներուն փախցուցին, տղամարդկանց սպանեցին: Ադ նոր տերերը ուղտերուն ու կնիկներուն հետ ինձի ալ քշեցին, տարին: Հասանք մինչև Իրաքի հյուսիսը՝ Մուսուլ, պատմական Նինվեի մոտ, ուրտեղով Բաղդադ-Բեռլին երկաթուղին կանցներ: Ես ադ արաբներուն քովեն կամացուկ մը փախա, գնացի շուկա, հայերու գտա: Բարի մարդ մը ինձի տարավ իր խանութը, անոր հետ կաշխատեի:

Վերջը ամուսնացա, ընտանիք կազմեցի, եկանք Հայաստան:

142 (142).
ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍԻ ԱՐՁԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ԶԵՅԹՈՒՆ)

Թալեաթ, Ջեմալ և Էնվեր փաշաները կազմակերպեցին, որ խանչալներով բոլոր հայերին սպանեն: Ես յոթ տարեկան էի, Զեյթունից որ դուրս եկանք: Օսմանյան կառավարությունն առանց կոշիկի, առանց հացի աքսոր դուրս բերեց հայերին՝ դեպի Մարաշ: Մի հույն ինձ վերցրեց, որդու պես պահեց: Շամ տարավ: Այնտեղ հույն քրիստոնյա եկեղեցում ապրեցի վեց տարի: Շամում արաբներին սկսեցին կոտորել՝ Մերջի հրապարակում: Շամում շատ լիբանանցի արաբներ կային, բոլորին մորթում էին, նաև հղի կանանց: Մի տղամարդ չմնաց, բոլորը զինվոր գնացին:

Սպանող, թալանող, կողոպտող մի կառավարություն էր այդ: Մեզ թալանեցին, մեզ աքսորեցին, ընկանք աշխարհի չորս կողմերը:

143 (143).
ԳԱՅԱՆԵ ԱՏՈՒՐՅԱՆԻ* ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԶԵՅԹՈՒՆ)

Զեյթունում ջաղացքարերի վարպետներով էր հայտնի մեր Ատուրենց տոհմը: 1915 թ., երբ զեյթունցիներուն աքսոր հանեցին, ես ընդամենը հինգ տարեկան էի: Ունեի չորս քույրիկներ: Բայց թուրքին յաթաղանը ոչ միայն մեզ զրկեց մեր հայրական տունեն, այլև հազարավոր զեյթունցիներուն քշեց արաբական անապատները: Աքսորի անտանելի դժվար ճանապարհին չորս քույրիկներս ալ մեկ շաբաթվա մեջ իրարու ետևե մեռան, ալ չգիտեմ՝ անոթությունեն, չէ նե՝ հիվանդութենեն: Միայն ան գիտեմ, որ ես հրաշքով ազատված եմ և ողջ մնացած: Մեր ընտանիքի հայրն ալ մեռավ: Ան մարդը, որ ջաղացքար սարքող էր և լեռան պես հսկա մարդ մըն էր: Տատս կըսեր. «Աս տանջանքներուն չդիմացավ՝ լեղին ճաքեցավ մեռավ»: Ես մնացի նիհար, փոքրիկ կազմվածքով Զարուհի մորս և իր տղային կորսնցուցած Զարմանուհի մեծ մայրիկիս հետ: Կհիշեմ՝ անոթի, ծարավ քալելեն բերանս փրփրել էր արդեն: Տեղ մը հասանք, ուր մեծ մայրիկս ըսավ. - Ա՛լ չե՛մ կրնար քալել, - խեղճ կնոջ ոտքերը ուռել էին, այլևս չէր կարողանում քայլել, - ինձի ձգեցե՛ք, դուք գացե՛ք, խումբին ետևեն հասե՛ք:

Ես սկսա լալ, քանի որ մեծ մայրիկիս շատ կսիրեի: Ան տեսնելով իմ արցունքները՝ փորձեց վեր կենալ, հազիվ մեկ-երկու քայլ ըրավ, նորեն ինկավ, նստավ գետինը: Մամաս խեղճացել էր, չգիտեր ինչ ընելը: Ձգեց անոր և իմ ձեռքես բռնեց, քալեց առաջ: Ես նորեն սկսա լալ, պոռալ, կանչել. «Դուն փի՛ս մամա ես, ինչու՞ մեծ մայրիկին ձգեցիր հոն», - կըսէի, բայց ես ան ժամանակ չէի կրնար հասկնալ, թե ինչ էր կատարվում իմ խեղճ մամայիս հոգիին մեջը: Մենք հասանք մեր խումբին: Երկու օր ետքը հաջորդ քարավանի մարդիկ եկան պատմեցին, որ իրենք տեսել էին մի ծեր կնոջ մարմին, որը գիշերը շնագայլերը բզկտել էին:

Բավական քալելեն վերջ, գիշերվա մութը արդեն իյնալու մոտ էր: Հրաման եկավ, որ Եփրատի եզերքը մի բաց տեղ նստինք, բայց ո՛չ հաց կա, ո՛չ ուտելիք: Անոթի ենք: Հոն տեղը քանի մը մարդիկներ եկան մամայիս հետ սկսան խոսիլ, հասկցնել, որ քու ամուսինդ և մյուս երեխաներդ արդեն մեռել են, աս երեխային չես կարող պահել, անոթի աս ալ կմեռնի, տուր տանինք որբանոց, հոն կուտացնեն: Մամաս ալ երևի մտածեց, որ իր չորս աղջիկները անոթութենեն մեռան, գոնե աս պզտիկը ողջ մնա, հանեց ինձի տվավ ադ մարդոցը, իմին ձեռքս ալ մի բուռ չամիչ լեցուց, ըսավ՝ ա՛ռ, ճամփան կուտես...

Ադ մարդիկը ինձի առին, ուրիշ քանի մը երեխա-

* Երբ ես հանդիպեցի բարեկիրթ, գեղեցիկ դիմագծերով այս կնոջը, նրա այտերը, ճակատն ու կզակը աղավաղված էին կապույտ դաջվածքի հետքերով:

ներու հետ տարին, հաճձնեցին քյուրդ մարդոց: Ես տեսա, որ ադ մի մեծ, ախոռի պես սենյակ էր, մեջը բլուրի պես դարմանի էր լցված: Ադ դարմանի վրա երկու-երեք հարյուր երեխա կար՝ երեքեն մինչև յոթ տարեկան: Անոնք քնացած էին. մեկին կոնքը մյուսին գլխուն համար բարձ էր դարձած: Ինձի տարին ադ քյուրդ մարդոցը տվին: Անոնք մեր վերակացուներն էին: Ես ալ անոթի փորով քունս տարավ, դեզի վրա քնեցի: Առտուն աչքս բացի աղմուկով մը: Ադ քյուրդ վերակացու կնիկներեն մեկը մի հատ հաց էր ձեռքը բռնած, կը-տոր-կտոր անում էր ու շպրտում, ոնց որ շուներուն առջևը լափ կնետեն: Երեխեքը՝ ով ճարպիկ էր, հարձակվեց, խլեց, կերավ, ով չէ՝ անոթի մնաց: Ետքը եկան երեսուն-քառասուն երեխայի առանձնացրին, փուրգոնի մը մեջ լեցուցին, քշեցին տարին, ու՞ր, ի՞նչ գիտնանք: Հոնտեղը ինձմե քիչ մը մեծ տղա մը կար, եկավ ականջիս փսփսաց. - Գիտե՞ս, ասոնց կտանին մեռցընելու: Եփրատին քենարը ղազաղ մը ջուր է դրված, կրակի վրա կեռա: Աս չոջուխներուն կտանին ոտքերեն բռնելով՝ խաշած ջուրին մեջ կմտցնեն, կհանեն, որ մեռնին: Հետո ալ Եփրատը կնետեն: Ես ալ անոնց մեջն էի, տեսա, փախա, եկա: Եթե կրնաս՝ դուն ալ փախի...

Ես չնայած շատ փոքր էի, բայց՝ խե՛լքս նայե: Երբ մթնելու վրա եղավ, գնացի դռան մոտը, մամայիս տված չամիչները ափիս մեջ լցրի, գացի, դուտին քովը կանգնած պահակ քյուրդ կնոջը ցուցուցի, ըսի. - Ա՛ռ, դուռը բաց, դուրս գամ:

Սա վերցրեց չամիչները, դուռը բացեց, իմ գլխուս ալ մեկ հատ չափալաղ տվեց, ըսավ. - Գնա՛, կորի՛ր:

Ես ադ տունեն դուրս եկա: Ո՛չ ճամփա գիտեմ, ո՛չ տեղ: Մութը իյնալու վրա էր արդեն: Քալել սկսա: Գացի-գացի, կամուրջ մը տեսա: Հիշեցի, որ ադ մարդիկը ինձի կամուրջի վրայով բերել էին, մտածեցի, որ պետք է կամուրջը անցնեմ, բայց տեսա, որ կամուրջին մուտքը գոց է վանդակապատ փայտերով: Քովն ալ պահակ-ասկյար մը կա նստած՝ հրացանին կոթնած, քնացած: Կամացուկ մը մոտեցա, գլուխս մտցուցի վանդակապատին մեջը: Լսել էի, որ եթե գլուխը անցնի՝ մարմինն ալ կանցնի: Տեսա, գլուխս անցավ, մարմինս ալ անցուցի, կամաց-կամաց անցա կամուրջը: Տեսա կնիկ մը, ան ինձի հիշեց երևի, քանի որ մեր քարավանից էր: Ձեռքես բռնեց, տարավ մամայիս քովը: Աստուծմե էր, որ մերինները դեռ տեղերնեն չէին շարժած: Մամաս ինձի տեսնալուն պես ուրախացավ և սկսավ լալ, ըսելով. «Ասիկա Աստծո հրա՛շքն էր, որ կատարվեցավ, քանի որ ես քեզի տվի ադ գերմանացիներուն որբանոց կոչված տեղը, բայց հետո զղջացի: Աստված հրա՛շք կատարեց, որ դուն քո ոտքովդ ետ եկար, և ես քեզի երկրորդ անգամ գտա»:

Հաջորդ առտու մեր քարավանը նորեն ոտքի հանեցին, աղմուկ աղաղակով. - Քալքը՛ն, յորը՛ն (վե՛ր կացեք, քալե՛ք):

Խամշիներով սկսան խփել, մեկուն՝ գլխուն, մյուսին՝ կռնակին, ուր որ հասներ: Մեզ ոչխարներու պես քշում էին: Ամպատի տաք ավազներուն վրա քայլում էինք՝ անոթի, ծարավ: Մարդիկ մարմրում էին, գետնին ընկնում, ալ չէին կարող քայլել: Ես մորս ձեռքեն բռնած՝ հազիվ գնում էի խմբի վերջեն: Դու մի ըսեր՝ խումբին վերջեն քայլողներուն ավելի փորձանք կպատահի էղեր. չեչենները կուգան կթալանեն, աղջիկ, երեխա կը փախցնեն: Անոր համար վերջը չպետք է մնայինք: Ամմա ո՞վ գիտեր ադանկ բաներ: Մեյ մըն ալ տեսանք, որ ձիու վրա նստած վայրենի չեչեն մը նիզակով հարձակվեց մեզ վրա: Ձիու վրայեն թեքվեց, ինձի քաշում է, մորս ձեռքեն կուզե փախցնել: Ես ըսես ևե հազիվ հինգ տարեկան եմ, սկսա պոռալ, կանչել, մեկ ձեռքես չեչենը կքաշե, մյուս ձեռքես մամաս կքաշե, որ չեչենը չտանի ինձի: Վերջապես չեչենը ուժով էր, հաղթեց, ինձի պոկեց մամայես, խլեց, առավ ձիուն վրա և որպես հատուցում հինգ կտոր չոր հաց շպրտեց ձիուն ամբակներուն տակ. ա՛դ էր իմ գինը: Չեչենը ինձի տարավ իր վրանը, ես ըսես ևե՝ կուլա՛մ, կուլա՛մ: Արաբ կնիկ մը էկավ ըսավ. «Ինչու՞ կուլաս, ուրախ եղիր, որ ողջ ես, քանի որ չեչենը կրնար քեզի սպանել, ուրիշ շատերու պես նիզակը կխրեր կուրծքդ՝ կմեռցներ»:

Ադ չեչենը ինձի տարավ Իրաքի Թելաֆար կոչված քաղաքի շուկան և ինձի վաճառեց թուրքմեն Նոր «Հորս»: Անոր քովը հինգ տարի մնացի: Մի փոր հացով կաշխատեի ամբողջ օրը, տունը, բակը կավլեի, ջուր կբերեի, անասուններին կկերակրեի, ադանկ բաներ կընեի: Իմ երեսները կապույտ մելանով դաջեցին, որ արաբի կերպարանք առնեմ, իմ անունն ալ դրին Նուրիյա: Աս ձևի տակ հինգ տարի ապրեցի: Օր մըն ալ էկան, սկսան հայ երեխաներին փնտրել, հավաքել, որ տանին որբանոց կամ՝ վերադարձնեն իրենց ծնողներուն: Էկան ինձի ալ տարին տեղ մը: Անգլիացի՞ էր, ի՞նչ էր, չգիտեմ, բարի մարդ մըն էր, հարցուց. - Հա՞յ ես:

Ըսի. - Չէ՛, - քանի որ հինգ տարի այնքան էին վարժեցրել, որ արդեն մենք ալ հավատացել էինք, որ հայ չենք:

Ըսավ. - Ի՞նչ ուզիս:

Ըսի. - Ոչ մեկը չուզիմ, միայն պզտիկ, ևիհար մայր մը ունեի, ան ալ մեռած է երևի:

Ան ատենը ինձի տարին ուրիշ սենյակ մը, ուր պզտիկ, ևիհար կնիկ մը նստած էր, հարցուցին ադ կնոջը՝ ա՞ս է քո աղջիկը: Անոր արդեն երեք աղջիկ ցուցուցեր էին: Ան ասել էր՝ ո՛չ մեկը չէ իմ աղջիկը: Բայց ինձի որ տեսավ՝ շրթունքները դողալով սկսավ լալ, չկրցավ խոսիլ, միայն ըսավ. - Գայանե՛:

Ես հիշեցի իմ մոր ձայնը. - Մամա՛, - ըսի ու իրար փաթթվանք, սկսանք երկուսով լալ: Բայց ես մոոցեր էի հայերեն խոսիլս:

Ադ արդեն 1920-21 թվականն էր: Արդեն անգլիացին էր էկած: Արաբներու վրաններու տակ ողջ մնացած զեյթունցիներուն և ուրիշ տեղերե հայերուն հավաքեցին Իրաքի Բասրա քաղաքի մոտ՝ Նահր Օմարի անգլիական քեմփերուն մեջ ռեշին* ամեն մեկուն չափով ուտելիք կուտային, մենք ալ կուտեինք: Ինչ մը վրա էկանք: Բայց իմ վրա ծիծաղում էին. հայերեն չգիտեի, երեսներիս կապույտ դաջվածքներ կային: Խեղճ մայրս քեզաբով փորձեց հանել, բայց ան ալ մաշկս այրեց, կծկեց և այրվածքի հետքեր ձգեց երեսիս

* Գաղթականների համար նախատեսված օգնություն:

վրա մինչև հիմա: Ինչ որ է, հազիվ քիչ մը վրա էկանք, ինքզինքնիս գտանք: Ես ալ բոյով-բուսով, փարթամ աղջիկ էի դարձել արդեն: Մեյ մըն ալ լսեցինք, որ ասորիներու ջելո ցեղախմբին վայրենիները, որոնք Պարսկաստանի Ուրմիա գավառեն գաղթած էին, գալիս են, աղջիկ են փախցնում: Մամաս վախցավ, որ ինձ նորեն կփախցնեն, հազիվ տասներկու տարեկան էի, ամուսնացուց զեյթունցի Ղայփախենց աստվածավախ Սեդրակին հետ, որն արդեն քսանհինգ տարեկան էր:

Անգլիացիները մեզի ըսին. - Ո՛վ կուզե՝ տանինք Լոնդոն, ո՛վ կուզե՝ դրամ տանք, իր գլխուն ճարը տեսնա:

Մենք արդեն քանի մը զավակի տեր էինք: Գնացինք Բաղդադի Գելանի քեմփը, որ հայկական թաղամաս էր: Ամուսինս օր մը առավ, սկսավ կոշիկ նորոգել: Ունեցա չորս զավակ, անոնց բոլորին անունները դրի հինգ էր ազգանունս, իսկ անունս Շյուքրի էր: Հայ ընկերջս ալ Էնվեր դարձավ: Մեզ պյուներե ըրին** : Կային շատեր, որոնք թուրքերեն չէին գիտեր, շաբաթներով չէին խոսեր, որ չիմանան, որ հայ են: Զաուշները եթե իմանային, փալախա կքաշեին, քսան-երեսուն-հիսուն գավազան ոտքերուն տակը կզարնեին կամ ժամերով արևին նայել կուտային: Մեզ աղոթել կուտային, երեք անգամ պիտի կրկնեինք «փադիշաիը չո՛ք յաշա» (կեցցե՛ թագավորը): Մեզի կհագցնեին թուրքական հագուստ՝ սպիտակ անթարի, վրան սև ջյուբբե: Ունեինք մյուդուր, մի քանի խոջախանումներ: Ջեմալ փաշան հրամայած էր մեզի լավ նայել: Քանի որ ան շատ կգնահատեր հայերու խելքը և շնորհքը ու հույս ուներ, որ եթե հաղթեր, հազարներով թուրքացած հայ երեխաները պիտի ապագային ազնվացնեն իր ժողովուրդը, մենք պիտի իր ապագա հենարանը դառնայինք: Այդ նպատակով Ջեմալ փաշան Պոլսից ուսուցիչներ, բժիշկներ բերել տվեց, քանի որ մեր որբերի մեծ մասը ցինկայով հիվանդացավ ու մեռավ: Ես շատ նվազ, փոքըր երեխա էի:

Մեր որբանոցը Բեյրութեն մոտ յոթ մղոն դեպի Կիլիկիա էր: Ջյունի հսկա լեռան ստորոտին էր տեղադրված և կտարածվեր մինչև Անթուրայի շենքը, որը ֆրանսական կիսանկախ վիճակ ուներ, անոր համար ֆրանսացիները, անգլիացիներն ու գերմանացիները իրենց կոլեջներն ունեին առանձին-առանձին, բայց արդեն ամեն մեկը քաշված էր:

Մեր թուրքական որբանոցին մեջ քիչ ուտելիք կուտային: Մեր մեծ տղաները՝ ղարավանաջիները, կբաժնեին ճաշը: Օր մը ադ ղարավանաջիներից մեկը՝ կյուրինցի հայ տղա մը, ճաշարան մտնելու ժամանակս ինձ տեսավ, բռնեց թևս ու թուրքերենով ըսավ. - Շյուքրի՛, ինձ մի հատ գոտի կշինե՞ս:

* Ջեմալ փաշա (1872–1922) – թուրք պետական գործիչ, «Միության և առաջադիմության» կուսակցության պարագլուխներից, երիտթուրքերի ղեկավար «եռյակի» (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ) անդամ, հայերի ցեղասպանության գլխավոր հանցագործներից:

** Իմա՝ թլպատել:

144 (144).
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԲՈՅԱՋԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1904 Թ., ՖԸՆԴԸՋԱԳ)

Ֆընդըջագը Զեյթունին շատ մոտ է: 1915 թվին Ֆընդըջագից մեզ աքսոր հանեցին: Քարավանի ծայրը չէր երևար: Հորս արդեն չեմ հիշում, տարել էին թուրքական բանակ, ետ չէր եկել: Կհիշեմ, մայրս շա՛տ հոգնած էր երկար քայլելուց, գրկին փոքր եղբայրս կար, մի արաբ եկավ ձեռքեն երեխային վերցրեց, անհետացավ: Հետո եկավ մի բժիշկ, ինձ ուզում էր տանել: Հիշում եմ, որ մեր մի մասին քշեցին դեպի Հավրանի անապատը, մյուս մասին՝ Դեր Զոր: Մեզ քշեցին Հավրանի անապատը: Բոլորին մեր աչքի առաջ սպանում էին: Կորսնցուցի մերոնց: Մնացինք ես և Օվսաննա քույրս ու հարսնուկս: Մեզ տարին Հոմս, անտեղեն՝ Միսմիա: Գնացք մը եկավ, ըսին օգնություն պիտի տան, քանի որ սարսափելի սոված էինք. ձիու կեղտի միջից չմարսված ցորենի հատիկներն էինք լվանում ուտում, ուրիշ բան չկար: Մեզ մի բուռ ալյուր տվին: Դա տոպրակ մը ոսկիի չափ էր: Ստացողներին անցկացնում էին գնացքի մյուս կողմը: Ես ստացա: Գնացքի տակից կանչեցի քրոջս՝ Օվսաննա՛, Օվսաննա՛: Կարծեցի, որ պիտի անոր ալ ալյուր տան, գնացքի տակից անցկացա, բայց այդ գնացքը շարժվեց, մի ուրիշ գնացք եկավ կանգնեց, ես թռա այն կողմ: Փնտրեցի քրոջս՝ Օվսաննան չկար: Հարցրի հարսնուկիս. - Ու՞ր է Օվսաննան:

Ըսավ. - Մենք գնացքի միջից երեխա էր ուզում, տվի գնաց:

Ես շա՛տ լաց եղա, շա՛տ: Քանի որ Էսթեր փոքր քույրս մորս գիրկեն տարել էին, հիմա ալ Օվսաննան ձեռքե գնաց: Հետո ինձ ու իմ ևման անչափահաս երեխաներին հավաքեցին տարին Ջեմալ փաշայի* թուրքական որբանոցը՝ թուրքացրին: Հինգ հարյուր երեսուն-

Մտածեցի, որ ղարավանաջի է, ինքն ալ ինձի կօգնե, մի քիչ ճաշ ավելի կտա:

Մեր որբանոցի շենքը ֆրանսական կոլեջ էր առաջ, ֆրանսացիները քաշվել էին պատերազմը սկսելեն վերջ: Կողքը վանքեր կային, մեջը արձաններ, մոմիաներ, թավիշի կտորներ և այլն: Ադ կյուրիցի տղան այդ կտորներից բերեց, որ գոտի շինել տա ինձի՝ մեջը գրպաններով, որ փող պահի, քանի որ փոքրիկ հացիկները ևս ծախում էր արաբներին և փող ուներ: Մի օր գիշերը մտածեցի բարձրանամ շենքի կտուրը, ֆրանսացիներից մնացած բաներ մը կըլլա, չէ՞ որ հայրս դարբին էր եղել, ես էլ շնորհքով իրեն էի քաշել երևի: Դնացի տանիք, հոն գտա պողպատյա թել: Գործիքներ չունեի, գործիքներս քարեր էին՝ ո՛չ ասեղ կար, ո՛չ մի բան: Մի կտոր թել կտրեցի, քսեցի քարին, ծայրը սրվեց: Մտածեցի՝ ծայրը քարերով տափակացնեմ, ծեծեմ, հետո ծալեմ, որ ապակիի կտորով ծալածի վրա քսեմ: Տեսա՝ ծակը գոյացավ, փոս եղավ: Փնտրեցի, գտա կոտրված գրչածայր մը. պինդ էր ու սուր ծայրով. դրանով ծակ բացեցի: Ասեղս եղավ: Արդեն կարելի էր կարել: Բայց թել չկար: Մտածեցի կտորները քանդել, թելը ոլորել: Աղբանոցը քրքրեցի, կաշիի պես մուշամբա մը գտա: Ադ կյուրիցի տղային գոտին շինեցի՝ մեջը գրպաններով: Շատ հավնեցավ: Արդեն ուրիշ տղաներ ալ ուզեցին՝ իրենց համար ալ գոտի շինեմ: Քիչ-քիչ փող կշահեի ադ ձևով:

Օր մը Ջեմալ փաշան եկավ որբանոցը, տեսնելու, թե իր թրքացած հայ որբերը ի՞նչ վիճակի մեջ են: Ղուրբան բայրամի՞ օրն էր, թե՞ ռամազանն էր, չեմ հիշում: Այդ օրերուն մեզի լավ ճաշ կուտային, մեջը միսով: Մի անգամ, երբ Ջեմալ փաշան եկավ, կանչեցին ինձ. - Բնշ յուզ օթուզ բնշ, հինգ հարյուր երեսունհինգ-Ծյուքրին դու՞ն չես:

Ըսի. - Ես եմ:

Ընկերներս բռնեցին ինձի տարին շքախմբին մոտ: Ջեմալ փաշան ինձ հարցրեց. - Օղլու՛մ, Ծյուքրի, ի՞նչ ունիս շինած:

Ես մի գզրոց ունեի ձեռքով շինված և գոտի մը ցույց տվեցի:

Ասեց. - Ի՞նչ գործիքներով ես շինել:

Ըսի. - Գործիք չկա, չունեմ:

Ջեմալ փաշան զարմացավ: Ափսոսանքով րսավ. - Դյունա՛ղ դըր դիկատ էդէն, բու հյունէրլի չօջուք դըր (Ափսո՛ս է, ուշադիր եղեք, սա շնորհքով երեխա է):

Երևի ուզում էր մի տեղ տեղավորել, բայց արդեն արաբ Շերիֆը եկավ:

Մի օր առավոտ արթնացանք առանց զանգը հնչելու, դռները չբացվեցին: Հետո մենք բացինք, իջանք ցած, տեսանք, որ ոչ մի թուրքական պահակ ու զինվոր չկա, մեր պաշտոնյաներեն, մյուդուրներեն, ուսուցիչներեն ո՛չ ոք չկա: Զանգը հնչեցնող չկա, որ ճաշարան գնանք: Մեր մեծ թուրքացած հայ որբերը՝ չաուշները, հարձակվել են քյուրդ Սիլոյի վրա ու ծեծում են: Սիլոն ալ գոմեշի պես բղավում է. հազիվ մի կերպ ազատվելով, իրեն գցեց մոտի ամտառը: Սա այն Սիլոն էր, որ միշտ Խորենին ասել էր. «Ինձնուհինը հայ եմ սպանել, հիմա քեզ ալ որ սպանեմ, կըլլա հարյուր»: Ահա աս ադ քյուրդ սրիկա Սիլոն էր, որին հայ մեծ որբերը աղվոր դաս մը տվեցին՝ իրենց ազատ զգալով, քանի որ թուրք պաշտոնյաներից ոչ ոք չկար, որովհետև լսել էին, որ Բեյրութը պիտի հանձնվի:

Քանի որ մեր որբանոցը զինվորական որբանոց էր, հատուկ օրենքներ ունեինք: Ամեն դասարան պիտի իր սեղանի շուրջ կանգներ, բայց ո՛չ չաուշ կար, ո՛չ օնբաշի, ո՛չ բաշչաուշ: Բոլորս կանգնած սպասում ենք, սեղանի վրա էլ հաց չկա: Եկավ մեր Ըրզա բեյը՝ դեղագործը: Ան աստիճանավոր հազարապետ բժիշկ էր, որին երեք հայ որբեր օգնում էին (Արիֆը և ուրիշներ): Ահա մեր այդ բժիշկը եկավ, սեղանների արանքով գընում՛, գալի՛ս է: Հրամանն տվավ՝ նստեցե՛ք: Բոլորս ընտանք: Նա շարունակում էր մտածկոտ գնալ-գալ: Եկավ, մոտեցավ մեր սեղանի չաուշ Էնվերին, որը հայ էր, բայց՝ թլպատված, ըսավ. - Օղլու՛մ Էնվէր, սէնին էրէմէնի իսմին նէ՞ իդի (Էնվե՛ր, տղաս, քո հայկական անունդ ի՞նչ էր):

- Թորո՛ս ըղըր, էֆէնդիմ, - ըսավ տղան բարևի կանգնելով (Թորո՛ս էր, պարո՛ն):

Հետո գնաց մյուս դասարանի չաուշին. - Օղլում Ջեմալ, սէնին էրէմէնի իսմին նէ՞ իդի (Ջեմա՛լ, տղաս, քո հայկական անունն ի՞նչ էր):

- Վարդա՛ն ըղըր, էֆէնդիմ (Վարդա՛ն էր, պարոն):

Մյուսին եկավ հարցուց: Բոլոր բաշչաուշները ոտքի վրա են և իրենց հայկական անունները ըսին: Մեկ րոպե լռություն տիրեց: Բոլորս սպասում ենք...

Ասաց. - Բու գյունդէն սօրա հէփինիզ դէ գէնէ էրմէնի սինիզ (Այս օրվանից հետո բոլորդ նորից հայ եք), - ու ծանր տրամադրությամբ շարունակեց, - ինչպես տեսնում եք, այսօր մերոնցից ոչ ոք չկա. կազմը բացակա է: Եթե ուզենայի, ես ալ ներկա չէի ըլլա, կերթայի ամոնց հետ, բայց ես որոշեցի՝ չգնալ, ձեզ չթողնել: Կարող է պատահի, մի քիչ հետո գամ, իմ ձեռքին քելեփչե դրած տանիմ ինձի և գերի վերցնեմ: Բայց ես մնացի՝ ձեզ չթողնելի: Խնդրում եմ ձեր մոտ եղած քյուրդերուն չնեղեք, մինչև հիմա ինչպես որ հաշտ ու խաղաղ ապրել եք իրար հետ, այդպես ալ եղեք միշտ: Ես կարող էի հոս չըլլալ: Դուք ալ կրնայիք չըլլալ...:

Ինքը չշարունակեց, բայց հետո մենք իմացանք, որ իրեն առաջարկել են որպես դեղագործ-բժիշկ, վերջին ընթրիքին բոլորիս ճաշի մեջ թույն լցնել, բայց ինքը չի կատարել այդ հանձնարարությունը:

Եվ իսկապես արաբ Շերիֆի կողմեն եկան, ձեռնակապեցին ու տարին: Մենք բոլորս տխուր էինք ու լուռ: Երբ դուրս էին տանում, միայն ասաց.

- Ափսո՛ս, որ իմ ըրած լավություններն Աստված դեմս չհանեց, իմ մի հատիկ տղային՝ Նեջատիին կուրացրեց, իսկ ձեզ ես իմ զավակներին տեղը դրած էի:

Արարայի ճակատամարտի փայլուն հաղթանակից հետո, երբ Թուրքիան ու Գերմանիան պարտվեցին, հայ կամավորները Բեյրութ էին մտել. ֆրանսացիներու և անգլիացիներու հետ արդեն «վի՛վ լա Ֆրանս» (կեցցե՛ Ֆրանսիան) կըսեինք: Հետո ամերիկյան կարմիր խաչը վերցրեց մեր որբանոցը: 1919-ից հետո Մերձավոր Արևելքի որբերին Ամերիկյան նպաստամատույց

ընկերությունը կմտատակարեր: Միայն երեսուն հազար հայ որբ կար Ալեքսանդրապոլում, ինչքա՜ն կար Հունաստանում, Բեյրութում...: Բոլորին դյուկերով սննդամթերք կուղարկեին:

Երբ թուրքացումեն դուրս եկանք՝ հայացանք, մեր ուսուցչուհին արաբ էր, բայց տնօրինուհին միսս Մորնին էր: Նրա օրոք հայ ուսուցիչներ ալ եկան, ինչպես օրինակ՝ Վահան Քեհյայանը, Ալյանակյանը, որոնք փող անգամ չէին առնում: Եկան հայ օրիորդներ Զըմարայից և այլ վայրերից:

Միսս Մորնիի ժամանակ մենք շատ լավ կյանք ունեցանք: Նա շատ համակրելի, շատ հմայիչ ամերիկուհի մըն էր, որ իր երիտասարդ կյանքը նվիրել էր հայ որբերի խնամքին: Նա աղջիկներին առանձնացրեց տղաներից: Նա մեր բոլորին մայր դարձավ, և մեզանից ամեն մեկը մինչև մեր կյանքի վերջը երախտապարտ ենք նրան...

Միսս Մորնին այնքա՜ն հետաքրքիր և գեղեցիկ դարձրեց մեր որբերի տխուր կյանքը, որ էլ ասելու չէ: Նա ասեց. - Ու՞մ ձեռքից ի՞նչ շնորհք կուգա, թող ցույց տա, որ Ամերիկա ուղարկենք՝ ցուցադրելու:

Ես արդեն գոտի կշինեի: Ինձ գործիքներ տրամադրեցին, և ես սկսա տարբեր տեսակի խաղալիքներ շինել, մեղրամոմով փոքր քանդակներ քանդակել, որոնք ղրկվեցին Ամերիկա՝ ցուցադրության:

Հետո միսս Մորնիին տարին Հալեպ:

Մի օր ինձ կանչեցին գրասենյակ, ըսին. - Միսս Մորնին լուր է ղրկել չորս տղաներիդ ղրկել Հալեպ. միսս Մորնին կանչում է ձեզ, որ ղրկի Մարզվան՝ սովորելու: Ես զարմացա: Ուրեմն իմ շնորհքի համար միսս Մորնին ինձ հիշել է և կանչել է տալիս:

Չորս տղայով ճամփա ինկանք: Հասանք Հալեպ: Եկեղեցի գնացինք: Հետո գնացինք միսս Մորնիին գտանք: Նա մեզ պիտի ուղարկեր Մարզվան, բայց քեմալական շարժումն սկսվեց: Ճամփաները փակվեցին: Գաղթականներու հետ Բեյրութ եկանք: Հետո գնացինք Ադանա, Սամսուն: Հետո անցա Հունաստան: Այնտեղ ավարտեցի գյուղատնտեսական և տեխնոլոգիական ինստիտուտը՝ Սալոնիկում և 1925 թ., որպես մասնագետ, Հունաստանից Հայաստան եկա, ինձ հետ բերելով ցեղական կովեր, եզներ, ոչխարներ, խոզեր, հավեր, որ Հայաստանում զարգացնենք գյուղատնտեսությունը: Բայց մեր խորհրդային կառավարությունը ոչ միայն չգնահատեց իմ նվիրվածությունը, այլև թալանվեցին բերածներս, և ինձ աքսորեցին Սիբիր: Այնտեղ հինգ տարի տանջվելուց հետո վերադարձա, բայց մասնակցեցի Հայրենական մեծ պատերազմին, գերի ընկա Ֆրանսիա: Այնտեղ գտա իմ եղբորը: Նա ասաց՝ ետ մի՛ գնա, մնա՛: Բայց ես չմնացի և վերադարձա հայրենիքս: Աշխատեցի որպես էլեկտրիկ, ընտանիք կազմեցի: Երեք աղջիկ ունեմ՝ մեծը ժամացույցի գործարանումն է աշխատում, միջնեկը՝ պոլիտեխնիկ ինստիտուտում դասախոսում է, փոքրն էլ երաժշտության՝ ջութակի դասատու է: Հիմա ես թոշակառու եմ:

145 (145).
ԱՀԱՐՈՆ ՄԱՆԿՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՀԱՃԸՆ)

Երբ մեզի աքսոր հանեցին, ճամփին շատ նեղություն քաշեցինք. օրերով, շաբաթներով անոթի, ծարավ, արևներուն տակը կքալեցնեին: Օր մը Եփրատի ափին գերմանացիներ եկան, հաց կերան: Արդեն Ռաքքա հասած էինք: Մենք ալ բոբիկ, անոթի կնալինք անոնց, խաչ կհանինք, որ մեզի մեղքնան: Մեկ մըն ալ տեսանք քի ղութիի մեջի ուտելիքը նետեցին ջուրը: Քանի մը տղաներով նետվեցանք ջուրը, մեզմե երկուքը խեղդվեցան...

Եփրատի ջուրն ալ արյունոտ էր, խմել անգամ չէիր կրնար, դիակները վրայեն կէրթային, մենք ալ կմտնայինք գետի թա՛տակը, որ մաքուր ջուր խմենք...

Ով չէր կրնար քալել, գետնին նստած կամ պառկած «ջու՛ր-ջու՛ր» ըսելով կմեռնեին: Ամեն կողմը չորացած լեշեր էին փռված...

Մենք տեսել էինք Դեր Զորի զուլումը: Երբ մենք Հաճընում կդիմադրեինք, կկովեինք, ադի Դեր Զորի վրեժը կուզեինք առնել *:

Ութսուն տարեկան մի թուրք փաշա կար, ծնողներին կորցրած մի բերզնցի հայ պզտիկ աղջիկ մը առեր էր իրեն կնիկ, գնացինք ադ աղջկան ազատեցինք...

Ջեմալը Հաճընի անունը ուզեց ջնջել, Հաճընը այրեց, հաճընցիներուն մեծ մասը այրեցան, բայց մենք՝ չմեռանք...: Անկե վերջ Հունաստան անցա, հետո՝ Հայաստան եկանք: Հիմա Նոր Հաճընն ավանի մեջը մեր հուշարձանը կա, թանգարանն ալ հետը...

146 (146).
ԵՐՎԱՆԴ ՔԱՐԱՄՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՀԱՃԸՆ)

1915 թ. Թալեաթ, Ջեմալ, Էնվեր փաշաները խոսքերնին մեկ ըրած՝ իրենց պլանը մշակած էին:

Այնպես որ, երբ մեզի աքսոր հանեցին, հասնողը սկսավ մեզի թալանել, մեր ունեցվածքը խլել: Խանչալներով հարձակվում էին, անխղճորեն սպանում բոլորին: Մեսքենեի մեջ հորաքույրս ու հորեղբայրս համա-

* Նկատի ունի 1920 թ. ինքնապաշտպանական ութամսյա հերոսամարտը, որին ինքը մասնակցել է:

ճարակի բռնվեցան, անոնց կիսամեռ ձետեցին ձորը: Մենք ողբում էինք բոլոր անոնց, ովքեր գերեզման չունեցան:

1920 թվի Հաճընի ինքնապաշտպանության ժամանակ ես տասնյոթ տարեկան էի, կովողներուն, հրդեհի բոցերուն մեջեն հազիվ ազատված եմ: Ո՞րը պատմեմ, ես ալ չգիտեմ:

147 (147).
ԵԲՐՈՒՀԻ ՍԱՐԳՍԻ ՋՐՏԼԽՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1906 Թ., ՀԱՃԸՆ)

Հայրիկիս օջախը քառասուն հոգի էր, ջարդից հետո մնացել էինք յոթը հոգի:

Հայրս՝ Սարգիս աղան, շատ հարգված էր:

Թուրքերը հայրիկիս կըսեն. - Սարգիս աղա, Հաճընը վտանգավոր է: Այսինչ գյուղը հայերուն մորթել են:

Պապաս հենց էդ օր մեզ առավ տարավ: Հայկուհի քույրս մորս գիրկն էր: Ես ըսես ձե կուլամ, մորս փեշերու կփաթթվիմ, կհարցնեմ. - Մամա, մեզի պիտի մորթե՞ն:

- Չէ՛, զավակս, մի՛ վախնար, - ըսավ մայրս:

Մենք հազիվ տունենն դուրս փախած ենք: Ոտվերնիս ուտելիք չկա: Սոված ենք: Մամաս մտածեց. «Գնամ քիչ մը պաստրմա, սուջուխ, խմորեղեն առնեմ, բերեմ երեխաներիս համար»:

Հասանք կայարան: Տեսանք՝ լիքը հայություն: Պոեզը լիքն է: Մարդիկ մտնալ են ուզում, պատուհանից են մտնում: Մեկ էլ մեկը առավ ինձի, ձետեց պոեզի մեջ՝ կնիկի մը գիրկը ընկա: Ես պզտիկ եմ՝ կուլամ, կհարցնեմ էդ կնիկին. - Վա՛յ, ինձի պիտի մորթե՞ս, դուն թու՞րք ես...

Հայ կնիկը պատասխանեց. - Վա՛յ, ջա՛ձս, մի՛ վախնար:

- Մամայիս կուզեմ, - ըսելով ես լաց եմ լինում:

Մեկ էլ լսեցինք, որ մի կնիկ՝ երեխան գիրկը, պոեզի տակ է մնացել: Ես կարծեցի՝ ադ մայրս է, փոքր քրոջս հետ: Ավելի սկսեցի լալ:

- Մի՛ լար, - կըսեն ինձի:

Եկանք, հասանք Իսկենդերուն: Էդ ինձի գրկող կնիկը իջավ: Դուն մի ըսեր՝ մորաքույրս՝ հաջի Երանուհին, հոն է ապրում, իր տղային հետ եկել են պոեզը դիմավորելու, որ մեզի գտնան, տանին իրենց չադրը՝ ծովի եզերքը:

Ես ճանչցա իմ մորաքույրիս տղային: Նրանք ինձ գտան, հարցնում են էդ կնոջը. - Ու՞ր է Մարիամ քույրս, - այսինքն՝ մայրս:

Կինը ասաց. - Առ աս քրոջդ աղջիկը, քույրդ՝ Երանուհին ալ պիտի գա:

Հոն մորքուրիս չադրներուն տակը մնացինք: Մորքուրիս հետ ամեն օր գնում էինք կայարան՝ մորս գտնալու: Մի շաբաթ, երկու շաբաթ էպես անցավ: Մի օր մորքուրս ըսավ. - Ես այսօր երազ եմ տեսած:

Մեկ էլ մի տղա եկավ, ըսավ. - Մարկոսյան Մարիամը գալիս է, պոեզը բերավ:

Մորքուրս ըսավ ինձի. - Դուն պաճ մտի:

Ես մտա մաճճակալին տակը: Մամաս եկավ, սկսավ ինձ փնտրել: Ես ելա, մամայիս փաթաթվա:

Մյուս օրը լուր եկավ, որ Սարգիս աղային՝ այսինքն պապայիս, բերում են: Դուն մի ըսեր՝ իր օրթախ թուրքերը թուրք միլիցային փող կտան, որ պապայիս կողքը նստի ու անփորձանք հասցնի Իսկենդերուն:

Մեր քառասուն հոգինոց գերդաստանեն միայն վեց հոգի ողջ մնացինք: Մյուսներին թուրքերը սպանել են, գցել են մեծ փոսերի մեջ կամ էլ էդ փոսի գլուխը կայնած երկու թուրք զաբթե հրել, գցել են փոսի մեջ: Լապատկայով հողը վրանին են լցրել, մեջինները սաղսաղ հող ու քարերի տակն են մնացել: Հետո մեզ քշեցին Արաբստանի չոլերը: Հերս մի ուղտ վարձեց, որ վրեն նստինք: Ինձ դրել էին խուրջինների մեջը: Արաբները եկան, ոսկի են փնտրում: Մամաս չայնիկը դրել էր որ եռա: Արաբը եկավ ինձ հարցրեց. - Ու՞ր են փողերը:

Ես էլ փոքր էի, չհասկցա, ցույց տվի միդերը: Արաբը միդերը առավ, փախավ: Դու մի ըսեր, պապայիս ամբողջ հարստությունը՝ 800 ոսկի, ադ միդերի մեջն էր պահված, ան ալ գնաց:

Էդ անապատը էնքան տաք էր, որ մարդ կվառվեր: Փոքր ախպերս ջուր ուզեց: Ջուր չկար: Մամաս ուղտի շեղը հավաքեց, տվեց, որ ախպերս ջրի տեղ խմի: Ախպերս խմեց ու մեռավ:

Մի տարի Դեր Զորի չոլերը մնացինք: Պապաս արաբների համար եմինի էր կարում, տանում ծախում էր: Սոված, ծարավ էինք, բայց՝ չմեռանք:

Լսեցինք, որ գերմանացին մտել է Շամ, ետ եկանք: Տեսանք մեր տները, խանութները թուրքերը ավերակ են դարձրել:

Հաճընի հերոսամարտի ժամանակ մենք Ադանա էինք: Պապաս մի փոքր տուն էր վարձել: Մամաս հղի էր, ազատվավ էդ տան մեջ: Մամին եկավ, երեխայի պորտը կտրեց, քույրս ծնվեց: Հենց էդ ժամանակ Հաճընի հերոսամարտը սկսավ: Գյուլլաները վըզ-վըզում էին: Մամաս իմ ձեռքես բռնեց, պապայիս հետ տունենն դուրս փախանք: Երեք օր անցավ: Մեկ էլ մամաս սկսավ լաց լինել: Ան հիշեց, որ նորածին երեխուն թողել են մեն-մենակ: Անգլիացի զինվորները մամայիս օգնեցին, տարին մեր տունը: Տեսել են՝ երեխան դեռ ողջ է. ան իր գլխաշորի ծայրը ծծելով երեք օր ապրել էր: Անգլիացիները տաք ջուր են բերում, երեխուն մեջն են դնում, երեխան սկսում է շարժվել: Անգլիացիները շոր, ուտելիք են բերում, մամայիս ու երեխային էլ բերում հասցնում են մեզ մոտ:

Ադանա Հաճընից վիրավորներ են բերում: Էնտեղ մենք շատ բարեկամներ ունեինք: Մամայիս քույրը՝ Տիրուհին, սարերում երեխա է ունեցել: Խեղճը անտեր-անտիրական՝ մեռեր է:

Հաճընի ութ ամսվա հերոսամարտին մեզմե շատերը մեռան՝ մամայիս հորեղբոր տղան զոհվավ, ինչ որ հաճընցի ունեինք՝ բոլորը սպանվան: Իմ մարդուս՝ Սարգիսի բոլոր հարազատները սպանվել են:

Մարդուս տատիկը մի երազ է տեսել, որ բոլորը ժամի մեջն են, մեղուները եկել են բոլորի վրա նստել են, միայն իմ մարդու՝ Սարգիսի վրա չեն նստել: Տատիկը ասել է. «Սարգի՛ս, դուն ողջ կմնաս»: Եվ իսկապես ալ, իրենց գերդաստանից միայն ինքն էր ողջ մնացել: Հորն ու մորը մորթել էին իր աչքի առաջ, ինքը միշտ մղկտում էր: Քանի որ իրա սինսիլեից մարդ չէր մնացել: Ան կերգեր.

Հաճընի լեռներ արյուն լցվավ,
Քաջ Ճեպեճյանը* զոհվեցավ...

Ճեպեճյանը մեր Հաճընի հերոսամարտի հերոսներից էր:

Թուրքերը շրջապատել են Հաճընը, կտրել են ջուրը: Սոված, ծարավ, ոնց մեղուն կվզզա, ժողովուրդի ձայնն էլ էդենց է: Ցոթը զինվոր, մեկը՝ մարդս, փախչում են Ադանայի կողմը: Արամ Կայծակը, որ իրենց հրամանատարն էր, կըսե. - Ով կրնա, թող փախի, քանի որ էլ ճար չկա: Եթե ընկնենք թուրքի ձեռքը՝ պիտի սպանենե:

Մարդս փախուստի ճամփին տեսել է իր տասնըչորս տարեկան քրոջը՝ Նազելիին, տկլոր, վրեն շոր չկա: Ախպերը, որ իր հայ ըլլալը չիմանան ըսելով, թուրք ասկյարի շոր հագած կըլլա, կհանե ժաքեթը, մեջի աստառը կհանե, ղալիշն ալ կհանե, կկապե քրոջը մեջքին: Ցոթ աղջիկ-կնիկ ալ՝ իր քրոջ հետ, կտանի ծառերու մեջ, կըսե. - Ձայն չհանեք, նստեք աստեղը, մենք երթանք, տեսնանք թուրքը գալի՞ս է:

Մեկ էլ կտեսնան, որ արդեն թուրքերը իրենց չորս կողմը պաշարել են: Թուրքերը կուգան ադ մյուս ջահել աղջիկներուն քաշկոտելեն կփախցնեն, իմ մարդու քույրը՝ սիրուն Նազելին կփաթաթվի ախպորը, կըսե. - Ախպե՛ր ջան, խփի՛ ինձ, տե՛ս ան աղջիկներուն տարան:

- Քու՛յրս, ո՞նց խփեմ, - կըսե իմ մարդը՝ Սարգիսը:

- Հրացանիդ մեջ մեկ հատ գնդակ ունիս պահած:

Եղբայրը կտեսնա, որ քույրը ճար չունի, թուրքին ալ չուզեր հանձնվիլ, արդար մեռնելու համար կխփե իր քրոջը: Ինքը թուրքի շոր հագած ըլլալուն կազատվի, բայց կվիրավորվի: Հաճընցի Մանուկը անոր շալակած կբերե Ադանա, անգլիական հիվանդանոց կդնե: Երբ կաղեկնա, կուգա Հունաստան: Մենք արդեն Հունաստանում էինք: Ես արդեն տասներեք տարեկան էի, երբ ընշանվեցա Հաճընի հերոսամարտի մասնակից Արամ Կայծակի զինվոր Սարգիսի հետ: Նա որբ էր և շատ տխուր: Բայց Սարգիսը Հունաստանի գյուղերը մտած թուրքերու դեմ ալ կռվել է: Հունական յոթ գյուղ է ազատագրել: Նա մասնակցել է հունական կռիվներին Սալոնիկի շրջանում և «Սարգիս՝ քաջ սպա» մեդալ է ստացել հունական հրամանատարության կողմե:

Երբ ես աղջիկ զավակ ունեցա, Սարգիսը ուզեց անունը դնենք իր գեղեցիկ Նազելիի անունը: Բայց ան շատ կհուզվեր, երբ երեխան լաց կըլլար, կըսեր ինձի. - Ա՛յ հոգիս, ես քեզ հարգում եմ, քանի որ դուն ալ հաճընցի ես: Քեզմե ուրիշ բան չեմ խնդրում, միայն կխնդրեմ, որ դուն էս երեխային լավ նայես, որ ձայնը չլսեմ, քանի որ ես իմ նահատակ քրոջն եմ հիշում:

1932 թ. եկանք Հայաստան: Երեք օրվա մեջ մարդս սաթըլջան եղավ ու մեռավ: Երեք ամիս հետո տղաս ծնվեց, անունը դրինք հոր անունը՝ Սարգիս: Մենք մենակս երեք երեխա եմ պահել: Մի հատ մեշոկի դերիա վրաս հագած աշխատել եմ, որ Նուբարաշենը շենցընենք: Նուբարաշենի ծառերը մենք ենք տնկել: Աշխատել եմ, հալալ քրտինքովս պահել եմ իմ երեխեքին: Հիմա երեսուն թոռ ունեմ, բոլորն ալ հաճընցի են:

Աս վերջերս շատ հիվանդ էի, արյան ճնշումս բարձրացել էր, ինչ դեղ խմում էի՝ չէր օգնում: Մի գիշեր քնանալե առաջ աղոթեցի, անկողին մտա: Աչքիս Քրիստոսը եկավ, երկու բութ մատերով աչքերուս վրա սեղմեց: Առավոտուն արդեն լավ էի:

Հիմա շատերը ինձի կըսեն. - Եբրուհի՛ տատիկ, ձեռքդ դիր վրաս, որ աղեկնամ:

148 (148).
ՎԵՐԳԻՆԵ ՄԱՑԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1898 Թ., ՄԱՐԱՇ)

Մարաշը իմ և իմ ամբողջ գերդաստանի ծննդավայրն է: Հայրս՝ Թորոս էֆենդին, որը զբաղված էր ուսուցչությամբ, նաև իրավաբանական գործերով, ազգային-քաղաքական կյանքի երևելիներու շարքին կպատկաներ: Շատ ժամանակ հայերի և թուրքերի մեջ ծագած վիճաբանությունների ժամանակ հորս կդիմեին:

Մենք հպարտ էին մեր փոքր քաղաքով, ուր հարազատ էր ամեն մի քարը: Մարաշն ուներ մոտ յոթանասուն հազար բնակիչ, որի քառասուն հազարը հայեր էին, իսկ մնացածը՝ թուրք, պարսիկ, արաբ, հույն և ասորի: Հայ լուսավորչականներն ունեին մի քանի եկեղեցի՝ Ս. Սարգիս, Ս. Գևորգ, Ս. Աստվածածին և ամենամեծը՝ Քառասուն Մանկանցն էր, կային նաև կաթոլիկներ ու բողոքականներ: Մեր խաղաղ կյանքը տևեց 1918-1920 թվը, քանի դեռ ֆրանսիական իշխանությունը Կիլիկիայում էր: Ֆրանսիական ու հայկական թերթերը միշտ գրում էին, որ Ֆրանսիան հավիտյան Կիլիկիայում կմնա, որովհետև Ֆրանսիայի հեղինակությունն Առաջին համաշխարհային պատերազմեն վերջը բարձրացել էր, իսկ Թուրքիայինը՝ ընդհակառակը: Բայց այդ խաղաղությունը, ափսո՛ս, երկար չտևեց:

* Սարգիս Ճեպեճյան (1864, Ցոզղատ – 1920, Հաճընի) – ազգային ազատագրական շարժման գործիչ, Հաճընի ինքնապաշտպանության ուժերի հրամանատար:

Կամաց-կամաց զգացինք, որ թուրքերը կսկսեն ատել մեզի: Օր մըն ալ ելանք, որ ֆրանսիացիները իրենց ձիերուն սմբակներուն տակը քեչե կապեր են և սուս ու փուս հեռացեր են Մարաշեն: Առտուն էլանք, զարմացանք, քանի որ ոչ ոք լուր չուներ այդ մասին: Նույնիսկ հայտնի Հակոբ աղա Խրլախլանին անգամ, որ ամբողջ ֆրանսիական բանակին պարենը ձրի ինքն էր մատակարարում, ժեներալ Դյումոնը ոչինչ չէր հայտնել իրենց հեռանալու մասին: Այնպես որ, 1920-ի սեպտեմբերին ֆրանսիական զորքն այլևս Մարաշում չէր: Թուրքերը երևի առաջվնե լուր ունեին, քանի որ գիշերները հրացաններ կպայթեին այս ու այն կողմը, կը-վախեցնեին մեզի:

Ամուսինս տեսավ, որ օրեօր վիճակը ծանրանում է, ադամանդե մատանին փոխեց, դեմը երկու հատ հրացան առավ, մեկը՝ իր համար, մեկն ալ իր եղբոր՝ Գևորգին համար: Բայց երբ որ մեր դրացի Կարապետ աղայենց դեպքը պատահեցավ, բոլորն ալ ինքզինքնուն եկան: Կարապետ աղան շատ հարուստ, շատ վարպետ կոշկակար էր: Մարաշի երիտթուրքերուն առաջնորդ Ջութքի էֆենդիի կոշիկները ինքը կկարեր և միշտ իրեն ապահով կզգար: Բայց քանի որ ինքը զենք չուներ, չկրցավ պաշտպանվիլ: Գիշեր մը պարտեզին դարբասը կոտրելով թուրք խուժանը ներս կխուժե, տուն կմտնա, մեծեն մինչև պզտիկը կմորթե ու պարտեզի մեջի ջրհորը կլեցնե, ունեցվածքն ալ իրար մեջ կբաժնեն: Ան դեպքերեն վերջը հայերը սկսան ինքնապաշտպանության մասին մտածել: Կիներուն և երեխաներուն, ապահովության համար, փոխադրեցին Քառասուն Մանկանց եկեղեցին, որը եկեղեցիներեն ամենամեծն էր և ամենաապահովը, քանի որ պարիսպով շըրջափակված էր: Հոն փոխադրեցին մեր շրջանի բոլոր կիները, հարսնացու աղջիկները և երեխաները, ամբողջը՝ երևի երկու հազար հոգիեն ավելի մարդ: Ասեղ ձեռելու տեղ չիկար: Խորանը, գավիթը, վերնատունը՝ ամբողջ լեփ-լեցուն էր: Մեր փեդայիները ամեն կողմեն կհսկեին: Բայց թուրք խուժանը կատաղած էր և հայու արյունի ծարավ էր. ամեն կողմե կլսվեին թուրքերուն ձայները. - Հանու՛ն Մուհամեդի սրբազան ուխտի, պիտի ջարդենք բոլոր հայերուն:

Օրին մեկը Քառասուն Մանկանց եկեղեցիին շուրջը թուրք զինված խուժանը շղթայի պես շրջապատեց և օղակի մեջ առավ. դռները բացել անգամ չթողեցին, ասում էին՝ իբր գիշերը պիտի դուռը բացեն, հրամանն այդպես է:

Քառասուն Մանկանց եկեղեցին շինված էր բարձունքի վրա: Մի քանի հարյուր մետր ճամփան որձաքարերով սալահատակված էր, որի լայնքը ձախեն աջ հազիվ չորս մետր կըլլար, երկու կողմը ծառերով:

Եկեղեցիին մեջը լցված հայերը կսպասեին, որ գիշերը պիտի դուռը բանան, բայց գիշերվա ժամը տասը, տասնմեկ, տասներկու եղավ, դուռը բացող չկա: Հայ ժողովուրդը մեջը լիքը. ո՛չ ջուր կա, ո՛չ լույս, ամեն ինչ մեջը՝ ալ մեկը՝ կուլա, մյուսը՝ կողբա, մեկալը՝ կաղոթե: Մեկ խոսքով, չտեսնված իրարանցում: Անոնց ձայները մենք լսում էինք մեր տունին նկուղեն, ուր մենք ալ պահմտած էինք: Մեյ մըն ալ պզտիկ լուսանցքեն տեսանք, որ գիշերվա ժամը մեկ անց կեսին քանի մը թուրք եկեղեցիին կամարաձև կտուրին վրա են բարձրացած, նավթոտած վառվող շորի կտորները նետում են եկեղեցիին գմբեթեն ներս...

Խանձահոտը աշխարհը բռնեց: Եկեղեցիեն եկող ձայները մարդու սիրտն էին փլում: Հազարավոր ձայներ պոռում, գոչում, աղերսում էին՝ դուռը բացել, անոնց ձայները կարծես գետնի տակեն կուգային, երկրաշարժի տնքոցի պես հառաչում էին, այնքան բարձր, որ մինչև մեզի էր հասնում արձագանքը, որը ժամ առ ժամ գնալով ավելի էր նվաղում...: Բայց մարդկանց ոսկորների այդ խանձահոտը ամեն տեղ էր...

Հրեշներն իրենց ընելիքը ըրեր էին: Ալ ոչ ոք ողջ կար եկեղեցու և մեր տուներուն շրջակայքում: Եկեղեցիին մեծ քարերով սալահատակված տարածությունը, որը մի քանի հարյուր մետր էր, կարծես օճառի հաստ շերտով էր ծածկված. մոտ երկու մատ հաստությամբ մարդկանց ճարպը հալեր, հոսեր էր ու թանձրացեր...

Առաջին գացողներուն ոտքերուն հետքերը ծեփվում էին այդ ճարպի շերտի վրա, ինչպես ձյունի վրա... Մեյ մըն ալ տեսանք, որ թուրքի կնիկները ձեռքերնին մեկ-մեկ մաղ առած՝ դեպի եկեղեցի են վազում: Մենք հետվից դիտում էինք, բայց ես չդիմացա, ուզեցի երթալ, տեսնալ հոն կատարվածը: Հագա ֆարաջայի պես բան մը, գլխուս ալ չարշաֆ մը անցուցի, քիթս-բերանս փակեցի, արդեն թուրքերեն շատ աղեկ կխոսեի և վստահ էի, որ ինքզինքս չեմ մատներ: Ես ալ Էլա ճամփա ընկա դեպի մեր Քառասուն Մանկանց եկեղեցին, որի մրոտված պատերն էին մնացել կիսավեր վիճակում, իսկ դռան տակից մարդկանց հալած յուղը հոսել էր բարձունքեն վար... ոտքս կոխում եմ՝ կպնում է, մյուս ոտքս կոխում եմ՝ կպնում է...: Վերջապես տեսա քովես թուրք կին մը գնում է՝ մաղը ձեռքին, ինձ տեսնալով, ըսավ. - Բաջի՛, ինչու՞ հետդ մաղ չես վերցուցած:

Ես առանց շփոթվելու ըսի. - Կվերադառնամ, կվերցնեմ:

Նա էլ ծիծաղելով ըսավ. - Վերադարձեդ վերջ ալ ի՞նչ կմնա...

Արդեն երրորդ օրն էր, բրուտի փուռի պես կարմըրած պատերը դեռ տաք էին: Ներս մտա եկեղեցի, ի՞նչ տեսնամ: Թուրք կնիկները ամեն մեկը մի տեղամաս էին զավթե ու իրար չէին թողնում միմյանց սահմանը մտնել ու իրար վրա բղավում էին. - Ով իմ սահմանը մտնա, կսպանե՛մ...

Ինձի հետ եկող թուրք կնիկը ինձ դառնալով ըսավ. - Եթե գյավուրը պիղծ է, անոր ոսկին մաքուր է...:

Տեսնալը արժեր, թե այդ հրեշի կերպարանքով կնիկները ինչպե՞ս էին ուրախանում, երբ մաղված մոխիրի մեջեն հալած ոսկիի կտոր մը կգտնային...

149 (149).
ՄԱՔՐՈՒՀԻ ՀԱԼԱՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ՄԱՐԱՇ)

Թուրք ժանդարմները իրենց գործը տեսնելեն վերջ՝ աղջիկներուն պտուկները թեզբեղ կշինեին, հարսներուն գլուխները ցիցի վրա կհանեին: Ողջ մնացած հարսները իրենց թազա օժիտները գցում էին հորը, որ թուրքի ձեռքը չանցնի, իրենց երեխեքին ջուրի հորն էին գցում, որ ցիցի վրա չհանեն:

- Մամա՛, - կըսե պզտիկ ախպարս, - դու՞ն ալ ինձի պիտի հորը գցես:

- Չէ՛, տղա՛ս, պիտի հետս տանիմ:

Հետո կտանի մեզ ֆրանսացիներուն քովը կհասցնի: Հազիվ գետնին վրա նստած էինք, թուրքերը զուգարանի կեղտաջուրը բացին մեզ վրա, որ հոսի գա մեզ վրա...

150 (150).
ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍԻ ԷՎՐԵՆԳԵՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՄԱՐԱՇ)

Մարաշի մեջ տղամարդկանց հավաքեցին, տարին ջարդեցին: Մեզ ալ՝ կնիկ, չոլուխ-չոջուխ ոչխարներու պես քշեցին, ընկանք անապատները: Ոտքով հասանք Դեր Ջոր: Գիշեր-ցերեկ քալլում էինք: Հայերուն շրջապատել էին մի քանի տասնյակ ժանդարմներ՝ մեր առաջը, ետևը, կողքերը, որ մարդ չփախչի: Գացինք, գացինք անոթի, ծարավ, ոտքերնիս կոշիկ չիկա, վրանիս հագուստ չիկա: Ճանապարհին երեխեքին փախցընում էին, սիրուն աղջիկներին, հարսներին տանում բանացնում էին: Ճամփին ամեն կողմը ուռած, մեռած դիակներ, մորթված գլուխներ, ալ ինչ կուզես: Էդպես ոտքով քալլելով հասանք Խաբուր գետը: Թուրքերը բոլորին ջարդում էին, մորթում էին, վերջն ալ գցում էին ջրի մեջ, որ գետը տանի: Եվ կամ ճամփի կողքը մի մեծ փոս կար, ժողովուրդին հազարներով ողջ-ողջ գցում էին հորին մեջը: Հետո մեզի տարան Ռաս ուլ Այն: Էնտեղ էլ կնաճիքին, էրեխեքին փախցնում էին, գցում էին ջուրը: Էնտեղ չեչենները հայերուն մորթեցին մինչև վերջին մարդը: Մարդիկներին ողջ-ողջ գցում էին Եփրատ գետը, Խաբուր գետը կամ ալ ճամփին ինկած մեռելները գիշերը գայլերը կուտեին: Դիակների նեխահոտը աշխարհը բռնած էր: Բոլորին սպանեցին, ով մեռավ, ով սաղ մնաց՝ չգիտեմ:

Արաբ մը եկավ ինձի մամայիս գիրկեն քաշեց տարավ, չգիտեմ ալ իմ մամաս ի՞նչ եղավ, ես ադ ժամանակ յոթը տարեկան էի: Ադ արաբը ինձի տարավ իրեն չադրին տակը, պահեց մեկ տարի, վերջը ինձի դուրս հանեց, ըսավ՝ գնա՛: Ես ընկա չոլերը, տկլոր, սոված: Մի ուրիշ արաբ մարդ մը տեսավ ինձի, մեղքցավ, առավ տարավ իրեն տունը: Հոն տեղը գառնուկ-ոչխար կպահեի: Ցոթը տարի մնացի էդ արաբին քովը, մի կտոր հաց էր տալիս, ուրիշ ոչ մի բան չէր տալիս: Ես ալ ոչխարը պահում էի, ոչխարը բերում էի դաշտից, արաբը կթում էր, իր թոռին կաթ էր տալիս, ինձի՝ թաս. ջոկությունն էր անում: Իմ անունը Ալի էր դրել: Բայց ես հիշում էի, որ իմ հայկական անունը Լևոն է և ես Մարաշի հայ եմ:

Ես ճեղացա, թողի գնացի բեդվիճների մեջ: Էնտեղ ոչխար պահեցի: Էն մարդը, որ իրա քովը յոթը տարի աշխատել էի, եկավ ինձի ու ոչխարներին տարավ իրեն մոտը:

Էդ ժամանակ մի մարդ եկավ, ինձի ըսավ. - Դու հայ ես:

Ես վախցա ըսի. - Ո՛չ:

Էլա էդտեղից էլ փախա, ոտքով գացի հասա Բաղդադ: Գործի մտա, աշխատեցա: Երեսուն դինար հավաքեցի: Արաբ տղա մը եկավ ինձի գտավ, ըսավ. - Գիտե՞ս, քու արաբ տերդ մեռավ, կնիկն ալ մեռավ, երեք աղջիկ ունին, որը են մնացել:

Ես մեղքցա: Էլա իմ հավաքած դրամովը հագուստներ, ուտելիք առի, տարի անոնց ընկեր, որ փոխադարձեմ իրենց հոր ըրած լավությունը: 1935 թ. Թելբրակ գացի: Ես սուրույով ոչխար եմ արածացնում, համ էլ փնտրում եմ, որ հայ գտնամ: Բայց հայերեն չգիտեմ, ազգանունս չեմ հիշում, որ գտնեմ իմ հարազատներին: Հարցնում եմ՝ ում տեսնում եմ, համա՝ ոչ մեկին չգտա, ինձի չեն հասկանում, որ գտնամ: Ետ դառա եկա Թելբրակ, երեսուն հատ ոչխար ունեի արդեն իմ սեփականս, եկա մեր գյուղին մխտար Փառունակ Շիշիկյանին* գըտա: Ան հեքիմ էր, հոգեբան, որպես հայի՝ անոր տունը տեղավորվեցա: Իմ ոչխարները խառնեց իրի հետ, ես արածացնել սկսա:

Փառունակի շնորհիվ 1945 թ. Թելբրակում հանդիպեցի Գյուլենին, սիրահարվեցա, ամուսնացանք: Երկու տարի մնացինք, մի հատ տղա ունեցանք:

1947 թ. Բեյրութ եկանք Պորեդա նավին կսպասեինք, որ Հայաստան պիտի գանք, քարանթինային մեջը Հալեպեն իմ քեռակինը տեսավ ինձի, ճանչցավ, քանի որ ինքը բոլորին ասում էր. «Ես հայ եմ, ուզում եմ ճեզիրեցի տղա մը գտնալ, ետևը նշան ունի, շունը կծած է»: Տեսավ՝ ես եմ: Հեռագիր տվավ Հալեպ իմ ախպորը: Ան ալ սրճարանի տեր էր: Լսել է, որ իր ախպերը ողջ է: Սրճարանը փակել է, տուն էլ չի մտել, էկել է Բեյրութ, որ ինձի գտնա:

* Զեյթունի հայտնի հայ ազգային, որը զինադադարից հետո բեդվինի շորեր հագած բազմաթիվ հայ որբ երեխաների է փրկել անապատներից: Հայրենադարձվելով Հայաստան՝ իր բազմանդամ ընտանիքով ապրում էր Էջմիածնի Մեյմանդար գյուղում, հայտնի էր «Մոլլա» անունով և իր հմայական դեղամիջոցներով ու աղոթքներով շատ շատերին է բուժել և հոգեկան կորով պարգևել:

Արդեն երազումս տեսել էի մորս: Ան ըսավ ինձի. «Տղա՛ ջան, դուն իմ անունը չես հիշում, բայց իմ անունը Խաթուն է, չորս ախպեր ունեիր»:

Եվ իսկապես, ախպերս եկավ ինձի հարցուց. - Մեր մորը անունը Խաթու՞ն էր, - ալ գրկվանք, համբուրվանք: Ես գտա իմ Տիրան ախպորը:

Տիրան ախպերս պատմեց, որ իրենց տարել են մինչև Դեր Զորի չոլերը: Բոլորին ողջ-ողջ գցել են փոսը ու վառել են: Մեր մամային ալ էդտեղ են վառել: Հետո անգլիացիները Տիրան եղբորս փախցրել են, տարել են որբանոց: Էնպես որ, մեր չորս ախպերներից Տիրանը և ես ողջ մնացինք: Անոր անգլիացիները փրկեցին, ինձի ալ՝ արաբները: Վերջը Տիրան ախպերս մեզի տարավ Բեյրութում ապրող մեր ազգականների տունը: Հոն քեֆ, ուրախություն ըրինք: Հազիվ տասնհինգ օր իրար տեսանք: Ինքը նորեն գնաց Հալեպ, մենք ալ Հայաստան եկանք: Էդպես նորեն բաժանվեցանք իրարմե: Հայու ճակատագիրն է ասիկա:

151 (151).
ԱՐԱՄ ՄՈՄՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ՄԱՐԱՇ)

1915 թվին վեց տարեկան էի, երբ եկան մեզ աքսոր հանեցին: Շատ քիչ կհիշեմ հորս, որը Մարաշի երկաթգծի վրա կաշխատեր: Իրիկունը տուն կուգար՝ թևի տակ հացի սոմոն մը դրած: Մորս ևս աղոտ կհիշեմ. միայն ականջիս մեջն են իր խոսքերը. - Մեզի Դեր Զոր կտանին մեռցնելու՛, գոնե մեր զավակները ազատվին:

Խեղճ ծնողքիս դիակները Դեր Զորի անապատներուն մեջը թռչուններուն կեր դարձան: Մենք ալ երեք եղբայր էինք՝ ես, Տիգրանը և Վահանը: Վահանը կրծքի երեխա էր: Մորս կաթը հուզումեն չորցավ: Այդ երեխան սովեն մեռավ: Մնացինք ես ու Տիգրանը: Մեզ ալ հրաշքով ազատեց թուրք տղա մը՝ Դուրդու անունով, որը թուրքական բանակում ծառայող քեռուս տղայի՝ Մարաշի գերմանական հիվանդանոցի գլխավոր բժշկի, դոկտ. Հարությունն Տեր-Ղազարյանի սպասավորն էր: Այդ թուրք Դուրդուն, իբր, իր էշն է քշում, էշի վրայի խուրջինի երկու աչքերուն մեջ դրեց ինձ ու Տիգրանին՝ ամեն մեկս մի կողմում, որ ետ տանի Մարաշ՝ քեռուս տղային՝ բժշկին հանձնի մեզ: Ճամփին Տիգրան եղբայրը, որ ինձմե փոքր էր, սկսեց լաց լինել: Թուրք ժանդարմը լսեց երեխայի լացը, եկավ մեր էշի մոտ, խուրջինի մեջ տեսավ սիրուն երեխա է լաց լինողը, վերցրեց եղբորս ու տարավ: Ես մնացի խուրջինի մյուս աչքին մեջ: Թուրք Դուդուն ինձ տարավ ետ՝ Մարաշ, հանձնեց մեր ազգական բժշկի քրոջը՝ Հայկուհուն: Հիվանդանոցի մեջ մեզ նախաճաշ տվին: Հոն ինձի պես ուրիշ երեխաներ ալ կային: Մեր մազերը կտրեցին:

1920 թվի հունվարի 21-ին, երբ սկսավ թուրքի և ֆրանսացիին կոիվը, հայ կամավորներն ալ կմասնակցեին. նա, ով որսորդական հրացան ուներ, թուրքի դեմը կկովեր: Մեր Մարաշի Գյումբեթ և Ղույճախ թաղամասերին մեջտեղը Ս. Սարգիս եկեղեցին կար, մեր թաղի ժողովուրդը հոն հավաքվեցավ: Բայց, մտածելով, որ հին եկեղեցին կարող է անապահով ըլլալ, գիշերվա ժամը մեկին որոշեցին տեղափոխվել ավելի ապահով տեղ մը. ամենամոտիկը Բեյչալըմ որբանոցն էր: Եկեղեցիին մեջ մեռածները շուտ մը թաղեցին՝ եկեղեցիին գետինը փորելով, որ թուրքի ձեռքը չանցնին: Տուներուն պատերը ծակելով, պատեպատ մտնելով, շատ ապահով հասանք Բեյչալըմը: Թուրքերը մտածեցին Բեյչալըմի ջուրը դուրսեն կտրել, որ ծարավ մեռնինք, կամ, երբ կրակի տան, ջուրով չկրնանք մարել: Մենք ներսում առանց ջրի չմնացինք: Մեր մեջ մարդիկ կային, գիտեին, որ Բեյչալըմ որբանոցին մեջեն մզկիթին ջուրը կանցներ: Բակին մեջտեղեն փորեցին, ջուրին խողովակը գըտան, կտրեցին խողովակը և փոս մըն ալ փորեցին, կաթսա մը դրին, ջուրին կեսը թողեցին, որ դեպի մզկիթ էրթա, կեսը քաթաներ խողովակով պոմպով տարին մինչև որբանոցին մեծ ավազանը, որը, պետք եղած ժամանակը, հրդեհ ալ կրնար մարել: Բեյչալըմի փուռին փեղկը ճամփուն կողմեն էր: Թուրքերը ճամփու կողմեն քարյուղ լցրին և վառեցին փեղկը. իրենք վստահ էին, որ մենք ջուր չունենք և հրդեհը կտարածվի, բայց մենք, փուռին փեղկը վառվելու ժամանակ, անմիջապես բակի քարերը մեծով, պզտիկով տարինք փուռ, և վարպետները փեղկի ներսեն պատ մը բարձրացուցին և բացությունը գոցեցին: Թուրքերը չհասան իրենց նպատակին: Փեղկին ետևեն տեսան բարձրացած պատը, զարմացան այդ հրաշքին...

Մենք մնացինք Մարաշի Բեյչալըմ որբանոցը՝ միստըր Լայմընի գլխավորությամբ: Բեյչալըմ որբանոցում եղած ժամանակս՝ պզտիկները կխաղային, բայց մեծերը արհեստ կսորվեին՝ դերձակություն, վարտիք, շապիկ, զպուն կարել կսորվեինք, կկարեինք ձեռքով, նաև բուրդը կմանեինք, թելով գուլպա կհյուսեինք հինգ ճաղերով:

Օրին մեկը երկու թուրք ժանդարմա էկավ մեր որբանոցը: Մենք որբանոցի վերի հարկը հայերեն դաս կառնեինք: Լուրը հասավ մեզի: Մեր վարժապետը՝ պր. Երջանիկը, մեզի ըսավ՝ շուտ հայերեն գրքերը պահեցեք: Մենք անմիջապես պահեցինք: Պր. Երջանիկը սկսավ թուրքերեն խոսիլ մեզի հետ և ձեռքին գավազանը շարժելով մեզի դիտողություն սկսավ ընել. - Նե՞ իչին յոխարդա օլնույօրսընըզ, էնի՛ն հավլըյա օլնայընըզ (Ինչու՞ վերևում եք խաղում, իջե՛ք բակում խաղացեք), - այնպես որ, թուրքերը մտան ներս, տեսան՝ թուրքերեն ենք խոսում:

Բեյչալըմ որբանոցը թուրքերը հետո զորանոց դարձրին: 1922 թ. մեզ տեղափոխեցին Էբկորն որբանոցը: Հետո անգլիացիները եկան, հայ որբերուն հավաքեցին: Մեզ դուրս բերեցին, հավաքվեցինք գերմանական հիվանդանոցի առաջ: Մեզ նստեցրին ձիու կառքի մեջ: Կհիշեմ՝ մեկը մեկուն հարցրեց՝ այսօր ի՞նչ օր է: Մյուսը պատասխանեց՝ մայիսի 12-ն է: Հետո մեզի տա-

րին Քիլիս: Հետո՝ Հալեպ, հետո՝ Հոմս: Հոն վեց ամիս վրաններու տակ մնալե ետք մեզ՝ որբերիս տարին Բեյրութ՝ Ջեբել Անթիլիաս: Հոն հազար հինգ հարյուր հիսուն որբ ասկից-անկից հավաքված էինք: Իմ թիվը հազար երեք հարյուր ութսունյոթն էր: Այնպես որ, 1924 թիվեն ես Անթիլիասի որբանոցն էի: Հոն արհեստ՝ դերձակություն սորվեցա: Վերջն ալ ինձի պես հայ որբուհի Թագուհիին հետ ամուսնացա: Տուն-տեղ եղանք, զավակներ ունեցանք: 1946-ին Հայաստան եկանք: 1949-ին մեզ անմեղ տեղը աքսորեցին: Հետո արդարացրին, ետ եկանք: Հիմա ալ տղաներս մեծացել են: Մեկը սովետական բանակեն եկավ լուրջ հիվանդ: Մտածում ենք Ամերիկա տանել, նրան բուժել և քիչ մը հանգիստ կյանք տեսնել...

152 (152).
ԳԵՎՈՐԳ ԵՂԻԱՅԻ ԿԱՐԱՄԱՆՈՒԿՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ԱՑՆԹԱՊ)

Մեր Այնթապի տունը երեք հարկանի էր: Առաջին հարկը բինբաշիինն էր, երկրորդը մերն էր, երրորդը պապիկիս՝ Գևորգի տունն էր:

1912 թվին պապայիս թուրքերը տարան զինվոր՝ Բալկաններու պատերազմին: Վեց ամիս հետո փախավ, եկավ, պահվտած մնաց տանը:

1915 թ. մեզի մեր տունեն հանեցին Դեր Զոր քշեցին, մինչև Աղաջ ղոյուն տարան, անտեղեն ալ՝ Դեր Զոր: Պապս ըսավ. - Ինձի տեր մի՛ կայնեք:

Բալաբեկ հորեղբորս բռնեցին գերմանացիները, տարին սուխարի թխելու: Պապայիս տարան Ցաճյա՝ բեռնակիր աշխատացնելու: Պապաս ըսավ. - Ինձի հետևիր:

Մամայիս, երկու քույրերուս հետ հորեղբայրս տեր կանգնեց: Մենք պապայիս հետ փախանք Դեր Զորեն: Ընկանք Հալեպ քաղաքը: Փնտրեցինք, գտանք մեր հարազատներուն:

Մեզնից հետո ասորիներուն ալ քշեցին: Ամեն մարդ իր գլխի դարդն էր հոգում: Եկանք Հալեպ մերոնց գըտանք: Մի տուն վարձեցինք, կծկված ապրեցինք: Մի շաբաթ հետո ինձնից չորս տարի փոքր Մարի քույրս մեռավ: Քանի մը օր հետո թուրք ասկյարները հորս բռնեցին, թևերը կապեցին, որ տանեն, էդ ժամանակ մի մարդ կուգա ֆայտոնով, կըսե. - Էս սրան պահեք ինձ համար:

Մարդը կառնի պապայիս, կը տանի Ջեմիլիե հիվանդանոցը: Դու մի ըսեր՝ ան ադ հիվանդանոցի տնօրենն է, կըսե հորս. - Միշտ ասա, դու հա՞յ ես, թե՝ իսլամ:

Պապաս կըսե. - Էֆենդի՛մ, ես հայ քրիստոնյա եմ, անունս Եղիա է:

- Ձեզ նշանակում եմ հինգերորդ հարկը, գնա, ծառայիր, - կըսե մարդը:

Կբերեն հորս ճերմակ խալաթ կը հագցնեն, ան կսկսի աշխատիլ: Երեք օր պապաս չկար: Մենք շատ մտահոգ էինք: Վերջը պապաս կըսե. - Ես կին, երեխաներ ունիմ:

Մարդը կըսե. - Կինդ եթե գրագետ է, ըսե թող գա հոս աշխատի:

Հայրս եկավ, մեզ համբուրեց, մամայիս տարավ հիվանդանոց, որ աշխատի:

Հիվանդանոցի մեջ մի զարիթ մորս կըսե. «Ինձի պիտի առնես»: Մայրս չի համաձայնվիր: Ան կզոռե, մայրս հուսահատ իրեն լուսամուտեն վար կնետե:

Մենք կորցրինք մեր մորը: Սեֆիլ վիճակի մեջ ընկանք, անոթի, գետինեն ցորենի, գարիի հատիկները կը հավաքեինք, որ ուտենք: Երկու մայրապետ եկան մեզ տարան, մեղքցան, վերցրին, լողացրին, հագցրին: Հորս ասեցին. - Արի՛, Եղիա, աս երկու զավակներիդ տուր տանենք Ֆրանսիա:

Հայրս ըսավ. - Քանի ես սաղ եմ, չե՛մ տար իմ երեխեքիս:

Պապաս ինչ ձեռքը անցնում էր, բերում էր մեզ, որ ուտենք:

Առաջին պատերազմի վերջը գերմանացին փախավ, մենք Բաբըլ Ֆարաջում էինք ապրում: Հետո ես ամուսնացա:

1946-ին եկանք Հայաստան: Հիմա ունեմ երեք տղա, չորս աղջիկ: Ես թոշակառու եմ: Ես իմ գլուխը պահում եմ:

153 (153).
ՀԱԿՈԲ ՋՐՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ԱՑՆԹԱՊ)

Մեր գերդաստանը Կիլիկիո Հոռմկլա, այսինքը՝ հույնի բերդ, կոչված տեղեն է: Հոն Ներսես Շնորհալին է ապաշխարած:

15 տարեկան էի, երբ տարագրության մեջ ընկա: Աս աչքերը ավելի լավ է կուրանային, որ ադ սոսկալի տեսարանները չտեսնային: Ոտքով մինչև Հոմս-Համմա ենք հասած: Ճամփին թուրքերը հայ տղամարդկանց հավաքեցին՝ իբր թուրքական բանակ պիտի տանեն, այնինչ անոնց տարին Բեռլին-Բաղդադ երկաթգծին ճանապարհը շինելու, անոնց աշխատանքով շինվեցավ այդ երկաթգիծը: Անասունի պես աշխատցնում էին, խամչիներու տակ, սոված, ծարավ... Իսկ երեխաներուն և կանանց, ձեռքերն ու ոտքերը կապկպած, Եփրատի եզերքը շարքով կանգնեցրել

էին, որ մորթեն: Ադ աքսորականներեն մեկը՝ Դեմիր (Երկաթ) Արթինը, ձեռքերի շղթաները կոտրտեց, ինքն իրեն ջուրը ձետեց, ջուրին տակեն լողաց, մինչև Բերեջիկ հասավ, լուր ուղարկեց, որ իր կինն ու երեխաև գան ջրի մոտ, որ ասնոց ալ ազատի, բայց թուրքերը յոթ գընդակով սպանեցին Արթինին...

Կըսեին որ Օթել Բարոն հյուրանոցի հայ տիրուհին հատուկ նպատակով Ջեմալ փաշայի հետ խոսած է, որ հայերու ճամփան դեպի Դեր Զոր չտանի, այլ՝ Հոմս-Համմա, որ գոնե ողջ մնան:

Ջեմալ փաշան ըսեր է. «Հայերը իմ անունը ոսկի՛ տառերով պիտի գրեն»: Եվ իսկապես Ջեմալ փաշան շատ հայերու խորհուրդ տված է անունննին փոխել, իբր թուրք են արդեն, որպեսզի ողջ մնան...

Ադ ջարդին ամենամեծ դահիճը Թալեաթն էր: Սողոմոն Թեհլերյանը և Լևոն Շանթը եկել, փնտրել են Թալեաթին: Ան ալ փախավ Բեռլին: Անոնք հետապնդեցին, հետևեցան Թալեաթին... Ամեն օր Թալեաթը իր հագուստը կփոխեր, որ չճանչնային իրեն, բայց ճամփաբաժանի մը վրա Թեհլերյանը պոռաց՝ Թալեա՛թ: Ան շուռ եկավ, Սողոմոնը ատրճանակին կոճակը կոխեց...

154 (154).
ՆՈՒՐԻՑԱ ՔՅՈՒՐՔՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ԱՑՆԹԱՊ)

Մի օր տեսանք, որ փողոցը ձիու սմբակների փաթըր-փութըր ձայները կան: Դելալ Մուկուչը սկսավ պոռալ. - Իշիդը՛ն, էհրի ջումահա՛տ (Լսեցե՛ք, հե՛յ, ժողովու՛րդ): Քսան չորս ժամվա մեջ կամ տեղերնիդ պիտի փոխեք, կա՛մ կրոնքնիդ:

Այնթապի ժողովուրդը շշմեցավ: Շատերը ելան, հավաքեցին ունեցած-չունեցածը, գացին: Քսան չորս ժամ ետո ամեն դուռին առաջը մի էշ բերեցին. կա՛մ տունին պառավը պիտի ձստեր, կա՛մ երեխեքը և կա՛մ ուտելիքը, կամ ուրիշ բաներ: Էշը շալակով, մենք՝ ոտքով: Երկու հոգիին տեղը տասը հոգի ձստեցին էշին ետևը: Գնացինք դեպի Մուրադ գետի, այսինքն՝ Եփրատի քենարը: Հոն չադրներ դրինք, բայց մեկ ալ տեսանք՝ սկսան ջարդն ու կոտորածը: Հորը կամ մորը կկայնեցնեին, կըսեին՝ դուք կայնե՛ք, տեսե՛ք ձեր երեխաների արյունը ինչպե՛ս է ֆշշում. դիմացնին ո՛վ էլ լար՝ մորթում էին: Երբ որ հայ կհանդիպեին, կըսեին. - Օլան գյավու՛ր, սէ՞ն դէ մի սաղ (Անհավա՛տ, դու՞ էլ ողջ ես):

Էկան մամայիս ալ տարին: Ես ալ երեխա եմ, մորս ետևից եմ գնում: Լուր չունեմ, որ պիտի տանեն մորթելու:

Հետո մնացածներուն տարին Ուրֆա, հոն ալ տեղ մը լեցուցին մեզի: Տանիքը ծակեցին, նավթ լեցուցին, տունը վառվել սկսավ գիշերով, տունը փլվեց, մենք անտեղեն դուրս փախանք: Մեզ նորեն հավաքեցին անտեղեն Հոմս-Համմա տարին: Հոն հորեղբորս ընտանիքն ալ տարին: Արդեն հորեղբորս մի կողմը անդամալույծ էր, ուղտի վրա են ննստեցրել ու տարել: Նա ուղտի վրայից ընկել է, ողջ է մնացել, բայց հետո թուրքերը բռնել են նրան, ղազըխի վրա են ննստեցրել, ադ ձևով էլ սպանել են:

Պապաս ազատվել էր, քանի որ պայտար էր: Բոլոր արհեստավորները հայ էին, թուրքերը արհեստավոր չէին: Պապայիս ասել են. - Դու մեզ պետք ես. դու անասնաբույժ-պայտար ես:

Հայրս էլ ասել է. «Իմ ուզածը իմ ընտանիքս Դեր Զորեն ազատել, ետ բերելն է»:

Մեր բոլոր հարազատները՝ մորաքույրներս, քեռիներս, հարսիս ընտանիքը, Ավոյենք, բոլորը գնացին Դեր Զոր: Ո՛չ մեկը ետ չեկավ:

Այդպիսով հայրս մեզի ազատեց. Դեր Զորի ճամփային ետ բերել տվավ:

Հետո անգլիացի բողոքականները որբանոց բացեցին: Հայ աղջիկներին, որոնց փախցրել, թուրքացրել էին, նաև երեխաներին, ետ բերին, դպրոց մըտցուցին: Հասած աղջիկներին հայ տղաներու հետ ամուսնացուցին՝ չնայած շատերուն երեսները ծեծված էին կապույտ մելանով* ...

Հետո վրա հասավ 1920 թիվը. ես այն ժամանակ տասնյոթ տարեկան էի, նոր էի ամուսնացած: Թաղային մուխդարը կանչեց պապայիս, ըսավ. - Օվաննե՛ս, այսօր աղջիկներդ, հարսներդ առ ու փախիր, թուրքի ու ֆրանսացիի կոխվը պիտի ըլլա: Ֆրանսացին պիտի գնա:

Մենք թուրքին հետ ո՞նց կմնանք:

Պապաս էկավ՝ ծունկները ծեծելով: Շուտ մը հավքվեցանք բոլորս ալ: Քառասուն օրվա երեխա ալ ունեինք, բոլորս քսանհինգ հոգի կըլլայինք, ննստանք արաբա մը, ֆրանսացի զինվորները մեզի Հալեպ տարին: Երկու ընտանիք մնացել էին, լսեցինք, որ թուրքերը եկել, կտոր-կտոր էին արել, միայն մի ջահել տղա էր փախել:

Մեր ուտելիքը, ամեն ինչը հետերնիս վերցրել էինք: Տասնութը ամիս հոն մնացինք, թութի տերևով սարմա կփաթթեինք, կուտեինք:

Վերջապես ադ օրերն ալ անցան: 1946 թվին եկանք Հայաստան: Հիմա աղջիկս՝ Անժելը, Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտում հայոց լեզվի դասախոս է:

* Անապատական արաբները սովորություն ունեին աղջիկների և կանանց դեմքը հաճախ նույնիսկ մինչև պորտը կապույտ թանաքով և ասեղով ծակծկել՝ դաջել: Մեր ժողովրդագիտական գործունեության ընթացքում բազմաթիվ վերապրող հայ կանանց ենք հանդիպել, որոնց դեմքերն աղավաղված էին կապույտ դաջվածքներով:

155 (155).
ԿԱՐԱՊԵՏ ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ԱՑՆԹԱՊ)

1915 թվի ջարդից առաջ թուրքերն ու հայերը իրար հետ հաշտ ու խաղաղ կապրեին, ետքը-ետքը գերմանացին եկավ Բեռլին-Բաղդադ պոեզի գիծ ուզեց գցել:

Սուլթանին առաջին խորհրդատուն Արթին ամիրան էր, ան ըսել է.

- Փադիշահը՛մ, ապրա՛ծ կենաս, սխալ բան ես անում: Մի՛ շինել տուր:

Ասում են՝ գերմանացիները նեղացել են, անոր համար սկսվել է հայերուն ջարդը: Ադ եղած է ջարդին մահանան:

Մարաշում հավաքում էին հայ էրիկմարդոց, իբր տանում էին թուրքական բանակ, ամմա՝ ճանապարհին մորթում էին: Ետքն ալ կնիկներուն պատիվին հետ կխաղային, կսպանեին, կնետեին չոլերը: Կնիկները խնդրում էին, որ չսպանեն իրենց: Ես կհիշեմ, զաբիթները կըսեին. - Ջորքըմա՛, ղուզուլա՛րըմ, փչաքլարըմըզ դոկտորլարդան մուայէնէլի դիր, հէ՛չ դույմասընըզ (Մի՛ վախենաք, գառնուկնե՛րս, մեր դանակները բժիշկներից ստուգված են, բնա՛վ չպիտի զգաք):

Իմ աչքերն ալ ջարդի ժամանակ փորեցին, դահա չոջուխ էի* ...

156 (156).
ՄՈՎՍԵՍ ՓԱՆՈՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ**
(ԾՆՎ. 1885 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

Մուսա լեռան կռվի ամենեն վերջի պաշտպանը ես եմ մնացած՝ ահա ողջ...

1915 թ. հուլիսի 13-ին թուրք հոքումաթը՝ կառավարությունը, հրաման հանեց, որ յոթ օրվա մեջ ամբողջ հայերը պետք է գաղթեն: Մեր յոթ գյուղերուն մեծերը Յողուն-օլուքի մեջ ժողով ըրին, ըսին. «Իս հուս ձննում իմ. հու՛ս ալէ բըր միոնիմ, իս չը՛մ ուրթօ յասսէր քիմը դուշմանէն յամրէն վըրքը չարչարանքում միոնիլ. թըվունքը ծաղիս գը միոնէմ յաս դիղը, թաքա մուհաջըր չը՛մ ըննօ»: *(Ես այստեղ եմ ծնվել, այստե՛ղ էլ պիտի մեռնեմ, ես չե՛մ գնա գերիի պես թշնամու հրամանի տակ չարչարանքով մեռնելու. հրացանը ձեռքիս կմեռնեմ այստեղ, բայց գաղթական չե՛մ դառնա):* Ադպես ալ որոշեցինք՝ լեռը էլլալ: Ով ինչ ուներ՝ յաթախ, յորղան, թենջիրե, թավա, անասուն, հավ, ամեն ինչ լեռը հանեցինք: Թուրքի զինվորները մեզի կըսեին. «Էշի պես կրարձրանաք, վաղը էշի պես ալ լեռեն կիջնաք, կէրթաք մուհաջիր»:

Հիմա աշխարհը չու՞ց խառնվուն ի, ադ վախտն ալ ադպես էր: Մինչև Մուսա լեռան կռիվը մեր Խըդըրբեկի հնչակյանները պարոն Աղասիի*** հետ գնացել էին Ջեյթուն՝ կռվելու թուրքերուն դեմը: Անոր համար, երբ մեր Մուսա լեռան կռիվը սկսանք, պարոն Աղասին ըսավ. «Ասոնք իմ ցանած սերմերն են»: Արդեն մինչև լեռան կռիվը իմ հերը գիշերները կէրթար մարզանքի, մերս պապիս կըսեր. - Ջեր տղան գիշերով կէրթա մարզանքի, առտուն կուգա, չութ-արորը կառնե, կէրթա դաշտ, տանը հետ չի մնար:

Պապս կըսեր հարսին. - Ադա՛նկ պետք է պատրա՛ստ ըլլանք միշտ:

Էնպես որ, կազմակերպված իլունք լիոր: Միզ ըրգը օնբաշիները՝ տասնապետները, բաժանեցին, մեյը՝ Սաբինցյանն էր, միգալը՝ Մինասին**** բաբոյը՝ մեծ հայրն էր, ան շերամի վարպետ էր: Ցադուր սոնրա միր Թաթարալանգը դուզ, բաց դաշտ տեղ էր: Ժամանակին թաթարները ղալիշով՝ մանգաղով, ուզեցել են հայերին հնձել, ամմա մերոնք անոնց հախեն էկել էին, անոր համար ալ ադ տեղը Թաթարալանգ կըսեին, յանի՝ թաթարներուն ջարդելու տեղը: Թաթարալանգին էրկան բողազը՝ վիզը, մենք դիրք բռնեցինք: Հոն էր Թշենց Պողոսը, ան թուրքական բանակի զինվոր էր եղել, անգլիացիները խփել, վիրավորել էին: Ան աղեկ բորոզան՝ շեփոր, գիտեր փչել, աղեկ լուր կուտար, համ էլ կհասկնար թուրքի բորոզանի ձայներուն միտքը. լավ բան կըսեն, չէ նե՝ գեչ: Ադ բորոզանչի Պողոսը ըսավ մեզի. - Առաջ գացեք, ամմա թուրքական խուրշունը՝ գնդակը, եթե ձեզ խփե՝ կմեռնեք, ան պզտիկ կմտնա, ամմա մե՛ծ կվիրավորե, զգու՛յշ էղեք:

Իմ ունեցածը մեկ հատ որսորդական հրացան էր, կապսուլը՝ պատրոնը, պիտի բերնից լցնեի, պիտի

* Այս զրույցը պատմող Կարապետ Կարամանուկյանը (ծնվ. 1907 թ., Այնթապ) 1915 թ., Մեծ եղեռնի օրերին, երբ յոթ-ութ տարեկան էր, թուրքերը հանել էին նրա երկու աչքերը: Բայց նրա հիշողության մեջ տպավորված մնացել են իր տեսած անասելի տեսարանները: Սակայն վերապրողը շփոթում է ասելով, որ 1915 թ. սուլթանի խորհրդատուն Արթին ամիրան էր, այնինչ Հարություն (Արթին) ամիրա Պեզճյանը (1771–1834 թթ.) եղել է սուլթան Մահմուդ Բ-ի (1808–1839 թթ.) խորհրդատուն:

** Վերապրող Մովսես Փանոսյանն իր հուշը պատմելիս տեղ-տեղ Մուսա լեռան բարբառով է արտահայտվել: Այդ իսկ պատճառով անհասկանալի բառերը տեղում թարգմանաբար ենք ներկայացրել:

*** Աղասի Թուրսարգսյան (1871, Հաճընն – ?) – ազգային ազատագրական շարժման գործիչ: 1894–1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ Ապահի, Մլեհի, Հրաչյայի, Կարապետի և Նշանի հետ ղեկավարել է Ջեյթունի հայերի մի քանի ամիս տևած հերոսական ինքնապաշտպանությունը թուրք և քուրդ ջարդարարներից:

**** Մականուն է:

շշով ծեծեի, որ կրակեր, ձեռքիս շնորհքով զենք չկար, որ անոնց հեր՛ն անիծեի: Հոն Մարջիմագը վիրավորվեց: Իս տիսա, վախցա, տեղս փոխեցի: Բլաղենց Ազուբի փեսան մնաց էնտեղ, խուրշուն մը էկավ, խփեց, աչքիս առջևը մեռավ: Դավիթ ախպարս ալ երեսուն տարեկան էր, հոն մեռավ: Թաղեցինք զինվորական դրոշակին տակը: Մեր Հաջի Հաբիբլիի տղերքը հեսաբսըզ՝ անհաշիվ էին, մեկ ալ օլըղցաքը՝ յողունօլուքցիները, շատ էին: Մերոնք խփեցին թուրքի կումանդորին, մեկ ալ անոնց բորոզան չալողին: Թուրքի ասկյարները աղ տեսնելով՝ փախան: Կռիվեն վերջը մենք իջանք լեռեն, գացինք տեսանք անոնց լեշերը փռված: Թուրքի ասկյարները իրենց անասունները, ուտելիքը թողել, փախել էին: Ես տեսա թուրքի ոչխարները հավաքվել, թափված կորկոտն են ուտում: Ծալակս վերցրի մնացած տոպրակով կորկոտը, որ տանեմ լեռ, հասցնեմ մերոնց: Ամմա մենք Ղըզըլջըխ էինք ընկել, իմ ընտանիքը Սովոլըք էր: Քալեցի, քալեցի, հասա մերոնց: Մայրս, քույրս ինձ տեսան, ուրախացան: Արդեն Հակոբ ախպարս թուրքի բանակ էին տարել, ճանապարհին հայերին շարքեն դուրս էին հանել, տարել էին ձորին մեջը ամենքին սպանել: Անանկ քի Հակոբ ախպարս մեր լեռան կռիվի ժամանակ արդեն չիկար…:

Թուրքերը չորս անգամ հարձակվեցան մեզ վրա, ամմա ամեն անգամ աղվոր պատասխան տվինք անոնց: Մեր Մուսա լեռան տղաները լավ կկռվեին, կընիկ, աղջիկ կօգնեին, կուժերով ջուր կբերեին խմելու: Քանի կնիկ պատրոնդաշը կապած մեզ հետ կկռվեին, մեկին ազգանունը Նաշալյան* էր, ան շատ քաջ էր…: Պզտիկ չոջուխներն ալ կապավոր էին դարձած, խաբար կտանեին աս ճակատեն՝ ան ճակատը…: Ամենքն ալ գործի վրա էին: Օր մըն ալ մեկ թուրք մը էկել էր լեռին վրա, որ մեզի թալանի, մեր կնիկները բռնել, քարերով սպանել էին դրան, աֆերի՛մ կնիկներ: Մեր լեռին վրա միշտ ճերմակ մշուշի պես ամպ մը կըլլար, գիտես քի Աստված հատուկ ղրկած էր, որ դուշմանը մեզի չէր տեսնար, ամմա մենք իրեն վերեն կտեսնայինք: Թուրքերը կուգային՝ էկողը կսատկեր, էկողը կսատկեր. - Յալլա՛, յա Մուհամեդ, յալլա՛, յա Մուհամեդ, - կըսեինք ու էկողին կսատկացնեինք: Թուրքերը երկու ժամ չկըրցան դիմանալ, փախան…

Լեռին վրա անձրև կուգար, անձրևի կաթիլները կծակեին մարդու ջանը: Մենք մտանք ժայռի մը տակ, թաքնվանք: Մեզի հետ էր Շեյխ-Փանոսի տղան: Ան գիրք մը ուներ, միշտ իր հետման կածեր, ըսինք. - Բաց գիրքդ, տեսնանք ի՞նչ կըսե, մեր վերջը ի՞նչ պիտի ըլլա:

Շեյխ-Փանոսի տղան գիրքը բացավ, սկսավ գուշակել, ըսավ. - Երկինքեն մերդիվեն՝ աստիճան մը պիտի իջնա, պիտի փրկվինք:

Ան ըսավ, ամմա մենք չհավատացինք, քանի որ քառասուն օրեն ավելի կռվում էինք՝ օր ու գիշեր, ալ ուժ չէր մնացել, ուտելիքն ու վառոդն ալ պակսած էր…: Մեր թիկունքի կողմը Միջերկրական ծովն էր, հոն գիշերները խարույկ կվառեինք, որ դեմեն անցնող նավ ըլլա նե, տեսնա մեզի՝ մոտենա: Օրվա մեջ ալ արդեն պատվելի Անդրեասյանը մեծ չարշաֆի՝ սավանի մը վրա կարմիր խաչը նկարած, կախել տված էր լեռին դոշը…: Օրեր ետքը, վերջապես ծովին խորքը նավ մը երևաց: Կըրըկյաններուն տղան աղվոր կլողար, նետվեց ծովը, սկսավ լողալ: Անոր վիզեն երկաթե տուփ մը կար կախված, մեջը ֆրանսերեն գրված նամակ մը կար: Նավուն մեջեն դյուրբիններով՝ հեռադիտակներով կնային, կտեսնան, որ մեկը կլողա դեպի նավը, կօգնեն, նավ կբարձրացնեն: Կըրըկենց Մովսեսը հեմեն ծունկի կուգա, խաչ կհանե, ըսելու համար, քի քրիստոնյա ենք, քանի որ ինքը ֆրանսերեն չէր գիտեր, որ խոսա: Գըրված նամակը կհանե կուտա կապիտանին, անոնք կըկարդան, կհասկնան, քի մոտ հինգ հազար հայ քրիստոնյա մուսալեռցիներ լեռին վրա Աստծո փրկությանը կսպասեն: Կապիտանը կհարցնե՝ դուք ու՞ր եք, թշնամին ու՞ր է, ինչքա՞ն ուժ ունիք: Ութ օր դիմացեք, էրթամ իմ կառավարությանը հարցնեմ, իրավունք առնեմ, կամ՝ ձեզի զենք կբերենք, կամ՝ կուգանք ձեզի կազատենք: Զենք չբերեցին, բայց զրահանավերով եկան մեզի ազատելու: Փանոսի տղային ըսածին պես՝ նավուն մեջեն մերդիվեն իջեցուցին, մենք վեր բարձրացանք: Արդեն ամեն ժամանակ իմ մտքիս մեջն էր անոր ըսած խոսքերը, ես հույսս չէի կտրում, և ազատվանք…

Ֆրանսացիները մեզ արդեն գտել էին, երբ վերջին անգամ թուրքերը նորեն հարձակվեցին: Այս անգամ Ֆախրի փաշան տասնհինգ հազար թուրք զորքով եկել էր մեզ վրա, բայց մենք արդեն ծովեզերք իջել էինք. իր գալը ոչ մի օգուտ չտվավ թուրքերուն: Լևշիե քաղաքի մոտ անգլիացիները դպրոց ունեին, մեր վիրավորներուն հոն էինք տեղափոխած: Ֆրանսական նավերը եկան մեզ առնելու: Պետրոս Դմլաքյանն ու Խաչեր Դումանյանը գնացին, խոսեցին ֆրանսիացիներուն հետը: Մերոնք ուզեցել էին, որ ֆրանսական նավերը Անտիոք քաղաքը ռմբակոծեն, բայց նավապետը չէր համաձայնել, ըսել էր. «Մեկ զինվորի մը համար հազար գնդակ կծախսեմ, բայց քաղաքի մը վրա մեկ գնդակ չեմ նետեր»:

Աղ ժամանակ հրաման եկավ մեր ղեկավարեն՝ Եսայի Ցաղուրյանեն**, քի արագացնենք, քանի որ թուրքերը երեք կողմեն շրջապատում էին մեզի: Դամլաջըքեն դուրս գալու ժամանակ ամեն ինչ՝ յաթաղ, յորղան, թենջիրե, թավա, ամեն ինչ թողինք լեռը: Ամեն մարդ ինչ խորոզ, կով, ով ուներ, խփեց, սպանեց, որ դուշմանի ձեռքը չընկնի: Ես այծերի պյուրի ունեի, չղլմշեցի սպանել, թողեցի ազատ, բայց նավուն մեջեն թընդանոթով խփեցին, որ դուշմանին չմնա…

Մենք արդեն նավի մեջն էինք: Նավի ծխնելույզեն ծուխ էր ելնում: Դըմլաղենց*** Պետրոսը սինյալ՝ նշան կուտար, քի ինչ պիտի ըլլա, ինչպես պիտի ըլլա…: Թուրքերուն գնդակներն արդեն շոգենավին սյուներուն էին խփում…: Տոպրակներու մեջ ավազ էր լըցված ու պարիսպի պես իրար վրա շարված, որ գնդակները մեզ չդիպչեն…: Թուրքերուն գնդակները կուգային, կմտնային ավազի տոպրակներուն մեջ. մեզ չէին հասնում…: Շոգենավը հեռացավ ծովափեն, որ թուրքի գնդակներեն պաշտպանվի, գնաց ծովի խորքը, խարիսխ գցեց: Ֆրանսացի հրամանատարը մեզ հարցրեց՝ աղ գնդակները ո՞ր տեղեն են գալիս: Մենք ցույց տվինք դուշմանի կրակի տեղերը: Նավի վրա թնդանոթ կար, թնդանոթը սկսավ խփել Լևշիեի դշլաղը՝ զորանոցը, բոմբան գնաց հոն պայթեցավ… Ալ ձայն չելավ թուրքի կողմեն: Աղ ժամանակ, եթե ֆրանսացին մեզ հրաման տար ու զենք, մենք կհարձակվեինք, անոնց հունդը կջնջեինք…

Կնիկ, չոջուխ՝ բոլորը մտած են նավը: Նավը շարժվեցավ: Առաջին ժամ էրթալեն ետքը ֆրանսացիները գերմանական նավ մը գերի առին: Մենք փոխվանք աղ գերմանական նավը: Ան մեզ տարավ ՊըրտըՍաիդ՝ Պորտ-Սայիդ…

Իջանք Եգիպտոսի հողին վրա: Անապատի դեղին ավազը ոտքերնիս կրակի պես կվառեր: Տեսանք շարքերով բրեզենտե չադըրներ՝ վրաններ, լարել են մեզի համար, մեջը պառկելու անկողին, ամեն ինչ…: Ան ժամանակ Նուբար փաշան* Եգիպտոսի մեծերեն էր, ողորմի իրա հոգուն, ան շատ օգնեց մեզ ալ, Դեր Զորի հայ որբերուն ալ: Հոն մեր երեխեքը անապատի ավազի վրա հայերեն տառերը կգրեին, կսորվեին, մինչև բացվավ՝ վրանի մը տակ, Սիսվան վարժարանը, քովն ալ՝ հիվանդանոց մը… Հոն անգլիացի կապտններ եկան, մեզի մարզանք ընել կուտային՝ ուան, թու, ուայթ, թու (մեկ, երկու, աջ, երկու կըսեին…): Մենք ալ կքայլեինք: Աղ հրաման տվողը, որ անգլիացի էր, մեզի ըսավ. - Դուք ֆրանսացիի կողմեն եկեք, անցեք մեր կողմը:

Մենք ըսինք. «Ֆրանսացին մեզի ազատեց, մենք ֆրանսացիին կողմը պիտի ըլլանք»: Հոն Մլեհը եկավ, մեզի գտավ: Ետքը մենք կամավոր գրվեցանք ֆրանսական բանակին մեջը, Հայկական լեգեոնի հիմքը դըրինք: Ամեն կողմեն՝ Խարբերդեն, Սեբաստիայեն, Արաբկիրեն, Հուսենիկեն, Կիլիկիայի ամեն կողմերեն հայ քաջերը եկան, միացան մեզի, գացինք Նաբլուսի ջեփեն՝ ճակատը, կռվեցինք, շահեցինք…: Անգլիացին մեր հայ մեծերուն ըսավ. - Դուք մեր թագավորեն ալ հարուստ եք, որ աս տեսակ քաջ կտրիճներ ունիք…

Ամեն մեկիս դրամ տվին, որ հաղթել էինք Արարայի ճակատամարտին** …

1919 թվին բոլորին իրավունք տվին ետ երթալ իրենց տեղերը. մենք ալ գացինք Մուսա լեռ: Տեսանք՝ մեր տուները այրված, փլցուցած, քանդված…: Սկսանք շինել, շտկել, այգի տնկել, ծառ, ծառաստան աճեցնել: Վերջն ալ Մուսա լեռան վրա հուշարձան շինեցինք՝ մեզ ազատող նավին ձևով՝ խաչն ալ վրան… Հանգիստ ապրեցանք մինչև 1939 թիվը, երբ ֆրանսացին ու անգլիացին մոռցան հայերուն տված մեծ-մեծ խոստումները, թուրքին նվեր տվին Ալեքսանդրեթի սանջակը՝ Մուսա լեռն ալ հետը: Է՜, մենք ի՞նչ պիտի ընեինք, թուրքին հետ ապրիլ կրնայի՞նք: Ամեն ինչ հավաքեցինք, ճամփա ելանք դեպի Սուրիայի ծովեզերքը՝ Պասիտի դաշտը: Աղ գիշերը մեկ անձրև մը սկսավ տեղալ մեզ վրա, մեկ անձրև մը, Աստված հեռու տանի, ամեն ինչ թափ-թաց եղավ…: Մեր ժողովուրդը ուր փախչելը չգիտեր, ծառ ալ չիկար, որ տակը մտնայինք: Ամբողջ գիշերը անձրևի տակ սկսանք պարել, որ տաքնանք: Առավոտուն շատերը արդեն հիվանդ էին, հիվանդներն ալ՝ մեռած: Ետքը մեզի տարին Այնճար, հոն ալ բաց դաշտ էր, սկսանք նոր տուներ շինել, նոր այգիներ ցանել, ջուր բերինք, քանի մը տարիեն դրախտ դարձուցինք Այնճարը: Ալ նարինջ, լիմոն, ինչ միտքեդ կանցնի՝ կըբուսներ…

1946 թվին մեր Հայաստանեն լուր եկավ, թե ով կուզի՝ թող գա Հայաստան, շատնանք, միանանք, որ թուրքի ձեռքեն մեր հողերը ետ առնենք: Տուն, տեղ, այգի, ամեն ինչ եղածին պես ձգեցինք, ելանք, եկանք Հայաստան: Երևանի Մալաթիա թաղամասը այն ժամանակ շատ տուն չիկար: Ես, կինս՝ Իսկուհին, հինգ տղաներս ու երկու աղջիկներս սկսանք նոր, երկու հարկանի քարաշեն մեծ տուն մը շինել: Ես աշխատում էի մոտիկի կոլխոզը, տղաներս շինարար էին: Երևանի մեջ ինչքան մեծ շենք կա՝ վրան աշխատած են՝ Մատենադարանը, ՑեԿան***, հրապարակի շենքերը, սպորտային համալիրը, ուրիշ շատ մը շենքեր շինած են: Երբ համալիրը վառվում էր, մենք մեր տունեն տեսնում էինք, Սմբատ տղաս երեխի պես լաց էր լինում, չէ՞ որ ինքն ալ շատ ամագ ուներ վրան…: Հիմա բոլորս ալ մեկ բակի մեջ կապրինք: Տղաներուս ամեն մեկը իր տուն, տեղը ունի: Ես ալ թոռներով, ծոռներով կուրախանամ. փառք Աստծո: Տե՛ս, պարտեզ ալ ունինք, պառավս կցանե, կջրե, կզբաղվի: Ես ալ փողոցի կողմը խարաբա հողը կամաց-կամաց քարերեն մաքրեցի: Տե՛ս, հիմա կանաչի, բան-ման ցանած եմ. ափսոս է հողը պարապ մնա… Արդեն հարյուր հինգ տարեկան եմ, ոտքս, ձեռքս դահա կըռնե, ամեն տարի սեպտեմբերին մեր հարիսայի օրվան անհամբեր կսպասեմ, որ մեր ամեն կողմի մուսալեռցիներու հետ երթանք մեր նոր հուշարձանին քովը, գիշերով հարիսան եփենք ու մա-

* Մուսա լեռան հերոսամարտում իրենց քաջագործությամբ աչքի ընկած կանանցից:

** Եսայի Ցաղուրյան (1878, Մուսա լեռ – 1957, Երևան) – 1915 թ. Պետրոս Դմլաքյանի, պատվելի Տիգրան Անդրեասյանի և այլոց հետ ղեկավարել է Մուսա լեռան ինքնապաշտպանական հերոսամարտը:

*** Դմլաքյան ազգանվան բարբառային ձևն է:

* Պողոս Նուբար փաշա Նուբարյան (1851, Կ.Պոլիս – 1930, Փարիզ) – հասարական, քաղաքական գործիչ (Եգիպտոս): Նուբար փաշայի որդին: Նրա նախաձեռնությամբ 1906 թ. Կահիրեում հիմնադրվել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ): Պողոս Նուբարի տրամադրած միջոցներով հայկական տարբեր գաղթավայրերում բացվել են հիվանդանոցներ, մշակութային կենտրոններ և այլն, հրատարակվել մի շարք հայագիտական աշխատություններ: Նա նյութապես աջակցել է նաև օտար երկրներից հայրենիք վերադարձող հայերի համար Երևանի մոտակայքում ավանի կառուցմանը, որն ի պատիվ հովանավորի կոչվել է Նուբարաշեն:

** Նկատի ունի հայ կամավորների նվաճած փայլուն հաղթանակը Արարայի մոտ, Պաղեստինում:

*** Նկատի ունի Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի շենքը, որն այժմ դարձել է ՀՀ Ազգային ժողովի շենքը:

տաղի պես բոլորին բաժնենք, որ ուտողը իմանա, որ մուսալեռցիները, հարիսայի հատիկներու պես իրար միացած, կռվեցան իրենց ազատլըխի՝ ազատության համար*:

157 (157).
ՄՈՎՍԵՍ ԲԱԼԱԲԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ**
(ԾՆՎ. 1891 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

Ես հողագործ էի: Ցորեն, խաղող, թուզ ունեի: Ծերամ ալ կպահեի: Չորս տղա ունեի, կնկաս հետ խաղաղ կապրեինք, երբ 1915 հուլիսի 13-ին թուրք պետությունից հրաման էկավ, որ յոթը օրվա մեջ պիտի գաղթենք: Թուրքը արդեն 1914 թիվեն պատերազմի մեջ էր մտել: Հայաստանի ժողովրդին սկսել էր նեղել, գաղթեցնել: Մեր Խըդըր-բեկի հնչակյանները պարոն Աղասիի հետ գնացել էին Զեյթուն՝ կռվելու թուրքին դարշա (դեմ): Անոր համար, երբ Մուսա լեռան կռիվը սկսանք, պարոն Աղասին ըսավ. «Ասոնք իմ ցանած սերմերն են...»: Վերջը՝ հերթը հասավ մեզ: Ով որ թուրքական բանակում զինվոր ուներ՝ չպիտի գաղթեր: Բայց անոնց ալ հետո աքսորեցին...

Մեր Մուսա լեռան յոթ գյուղերը ժողով ըրին, որոշեցին դիմադրել: Երդում արեցին. «Իս հուս ձննուձ իմ. հու՛ս ձլէ բըր միռնիմ, իս չը՛մ ուրթօ յասսէր քիմը դուշմանէն յամրէն վըրքը չարչարանքում միռնիլ. թվունքը ծառիս գը միռնէմ յաս դիղը, թաքա մուհաջըր չը՛մ ըննօ»: *(Ես այստեղ եմ ծնվել, այստե՛ղ էլ պիտի մեռնեմ, ես չե՛մ գնա գերիի պես թշնամու հրամանի տակ չարչարանքով մեռնելու. հրացանը ձեռքիս կմեռնեմ այստեղ, բայց գաղթական չե՛մ դառնա)*:

Յողուն-օլուք գյուղում տեր-Աբրահամ Գալըստյան երեցը կըլլա առաջնորդ: Ժողովուրդը սկսավ լեռը բարձրանալ: Որոշել էին հավի ճուտ չթողնել գյուղում: Հազիվ լեռան կեսն էինք բարձրացել, մոտ երկու հազար թուրք ասկյար եկավ: Մենք ունեինք միայն լցնովի որսորդական երեք հարյուր հրացան, իսկ թուրքերը շա՛տ ու շա՛տ էին: Սկսեցինք կռիվը: Թուրքերը կկարծեին, քի լեռին տակը ֆրանսական զինվոր կա պահվըտած ու մեզի կօգնի, այնքան որ մերոնք կտրիճ էին ու ամեն կողմեն վրա կուտային: Աղ երկու հազար ասկյարի մի մասը փչացավ, մի մասն ալ փախավ: Չորս-հինգ օր անցավ, եկավ տասը հազար զորք: Նըրանք ալ մի գիշեր մնացին Թաթարալանգի տայրը (հարթավայրը): Աղ տեղը սելևկյան նավահանգիստ էր եղել: Սելևկիա իսկալեն (նավահանգիստ) շեն վախըտը թաթարնեն իգիր ին, զան դեղեն ժողովուրդը ջարթիլին, անուր համուր աղ դեղեն անունը գուասվա Թաթարալանգ: Աղ խոսքը թուրքերեն է, յանի՝ թաթար ալան-թաթարնեն իգուձ ին, առուձին զաղ դիղը:

Միգալ ուրը սկսան կռվիլ: Մթնելու վախըտը աղ դուսը հազար ասկարնեն փախուն: Ան իրիգուն սաբախդան մաշունցը (մացառների) մեջը զասկարը գուղթուխերինք (կհետապնդեինք): Ասկարը փախավ կնուց, շուղը՝ սաղցիցուվ: Քանը ուր մը սունրա Լավշուց (Լավշիայի – թրքական գյուղաքաղաք) մակդուբ (նամակ) մը իգիք, քի. «Դըսնհենգ հազար թուրք ասկար Դուրզը դաղին (լեռան անունն է) հուջում գուկուն ծիր յըրինեն»: Զաղ մակդուբը կրուձ է Լավշուց մուդիրը (քաղաքապետ) մակդըբեն միչը կրվուծ է. «Միր գդրաջնիրը թըղ ուկուն սիլահում թաալիմ ըննուն, սունրա չըլուխ-չօջուխեն վիրընեն սաբաբ թըղ չընուն: Աս ուկուղ ասկարը, նա՛ իման կիդե, նա՛ Աստուձ կիդե, նա՛ Քրիսդուս, նա՛ հավուղ գունա (ձեր կտրիճները թող զենքերով գան ու հանձնվեն, հետո ժողովրդի արյան պատճառ չդառնան: Այս եկող զորքը ո՛չ խիղճ գիտի, ո՛չ Աստված, ո՛չ Քրիստոս և ո՛չ էլ հավատ ունի):

Մեղք առունք՝ մինք աղ մակդըբեն ջուղաբ չդունք (Մտածեցինք՝ մենք այդ նամակին պատասխան չտանք). յիփըր գուկուն, զիրինց խասաբը (հաշիվը) գուղուրթինք (կճշտենք):

Համու իգեն դաջզընեն (տաճիկներ, թուրքեր). ուկուղը՝ սաղցիցուվ, ուկուղը՝ սաղցիցուվ. «յալլա՛, յա Մուհամեդ, յալլա՛, յա Մուհամեդ...»: Աղ ասկարնեն ըրգը սըհաթ չըցարցին տիմանիլ, փախուն (Հիմա թուրքերը եկան. եկողը՝ սատկեց, եկողը՝ սատկեց. «Դե՛ Մուհամեդ, դե Մուհամեդ...»: Այն ասկյարները երկու ժամ չկարողացան դիմանալ, փախան):

Մի օր, ինչպես ամեն օր, կրակ էինք վառել, որ հեռուեն անցնող նավերը մեզ նկատեն: Տիգրան Անդրեասյանն ալ գրել էր մեծ գիրերով. «Սովե՛ նու», ֆրանսերեն կնշանակեր՝ «փրկեցե՛ք մեզ»: Ճերմակ չարշաֆի (սավան) վրա ալ կարմիր խաչի նշան էինք կարել: Հեռուեն մի նավ երևաց, նավուն մեջեն զինվոր մը տեսեր է մեր գրած դրոշակը: Կապտանին (նավապետ) ըսեր է, կապտանը չի հավատացեր, ետքը կապտանը դուլբինը (հեռադիտակը) կդնե, կկարդա գրվածը, կըսե. - Ասոնք հայ են:

Աղ ժամանակ մեր Հաջիհաբիբլի գյուղացի Մովսես Կըրըկյանը մերկացավ, իրեն ջուրը նետեց: Ան աղեկ կլողար: Վիզեն ալ թենեքե՝ տուփ մը կար կախված. մեջը ֆրանսերեն նամակ կար գրված: Լողալով կհասնի նավի մոտերը: Նավին անունը «Կիշեն» էր: Նավին մեջեն կտեսնան, պզտիկ նավակ մը վար կիջեցնեն, մի տասը զինվոր մեջը, կուգան Կըրըկյանին ալ կհանեն նավակին մեջը: Կըրըկյանը ասոնց տեսածին պես խաչ կհանե, այսինքն՝ քրիստոնյա եմ: Ասոր

* 1990 թ. գարնանը վախճանվեց Մուսա լեռան հերոսամարտի վերջին մասնակից Մովսես Փանոսյանը՝ առանց տեսնելու Հայաստանի Անկախության գործընթացի ընկիզը:

** Վերապրողն իր հուշը պատմելիս տեղ-տեղ Մուսա լեռան բարբառով է արտահայտվել, ուստի անհասկանալի բառերը տեղում թարգմանաբար ենք ներկայացրել:

կտանին նավապետին քովը: Թենեքեի մեջի ֆրանսերեն նամակը նավապետը կկարդա: Նավին մեջը հարյուրապետ կապիտան մը կըլլա հայ՝ Տիրան Թեքեյան անունով: Ան ալ հայերենով հարց կուտա. - Դուք ո՞րտե՞ղ եք... թշնամին ինչքա՞ն է...: Ինչքան ուժ ունիք՝ դիմացեք:

Նավապետը ասում է. «Ոչ մի բան չեմ կարող անել, ավելի զենք չունեմ, որ ձեզ տամ: Նավեն դուրս զինվոր չեմ կրնար հանել, տալ ձեզ: Բայց ադմիրալս Պորտ Սայիդ է, անոր հեռագիր կտամ, ան ինչ պատասխանե, անանկ ալ կընեմ»:

Վերջը հեռագիր կուտա: Ադմիրալեն պատասխան կուգա. «Մենք անտեղը ճակատ բացելու իրավունք չունինք, մեր զորքը քիչ է, միայն ութ օրեն անոնց կրնանք փոխադրել Պորտ Սայիդ»:

Ութ օրեն հետո եկան մեզ տանելու: Սեպտեմբերի 14-ին ազատվեցանք լեռեն: Ամեն ինչ ձգեցինք լեռը, միայն հոգինիս ազատեցինք:

Պորտ Սայիդում, ավազներուն վրա, վրաններու տակ կապրեինք: Ամեն մի քսանհինգ վրանը մի թաղ էր, մի վերակացու-չաուշ ուներ: Անտեղ որ գացինք, ոչ մի բան չկար, հացը անգամ դուրսեն կուգար: Ամեն ինչ շինեցինք, արհեստավորները սկսան աշխատիլ:

Պորտ Սայիդը մնացինք չորս տարի: Մինչև 1919 թ., ետքը նորեն վերադարձանք Մուսադաղ: Արդեն ֆրանսացին մտած էր: Ֆրանսացին աղ թուրք վայրենի ժողովրդին անանկ ըրավ որ... վերջը անա՛նկ եղավ, որ ոչխարն ու գայլը մեկտեղ կարածեին: Մի աղջիկ, մի կնիկ կես գիշերը գնար, մազի թելին չէին դիպնար: Ֆրանսըզը հոքումաթը (կառավարությունը) դուզան (կարգ ու կանոն) մը դրուձ իր սանջակին, քի կայլը իլան մակեն միգ դիղը կարձեին (գայլն ու գառը միասին էին արածում): Միր ժողովուրդը հիչ միգ հոքումատը վախտը զաղ հանգստութինը դիսուձ չիր: Այդ հուլը (վիճակը) քսուն դարա դուվից: 1919 թ. ֆրանսացին մտավ Սանջակ*: 1939 թվին դուրս էլավ, քաշվեցավ Սանջակեն: Ամմա մեզի չմոռցավ: Ֆրանսացին քսանմեկ լիբանանյան ոսկիի հողամաս գնեց, մեզի տարավ Այնճար. Այնճուռ՝ սափորի աչք կնշանակե արաբերեն:

Այնճարն ալ ամայի՜, առանց ջու՜ր, բա՜ց դաշտ էր: Անճեցուցինք, բուսցուցինք, շինեցինք, սարքեցինք: 1946 թվին ալ թողեցինք ամեն ինչը՝ եկանք Հայաստան, ըմը դահա Ջեբել մուսացիք** մնուց Այնճար: Ջեբել մուսացիք սիմըվուձին (ցրված են) յախշուրը չուրս տենը՝ Ամերիկա, Ֆրանսիա, Մըսըր (Եգիպտոս), Բաղդուդ (Բաղդադ), Ֆալեստին (Պաղեստին), Թուրքիա, քանե մը ընդանիք ալե մնացուձին Ջեբել Մուսան...

158 (158).
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՓՐԵՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1896 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

Երբ Հյուրիեթ (Ազատություն) եղավ, վերջը 1911 թ. ասկյար հավաքեց թուրք կառավարությունը: Մեր գյուղեն յոթ-ութ հոգի գնաց, ախպերս էլ գնաց: Դաշնակները Անդրանիկին ըսին. - Գնա՛, թուրքերուն հետ բարիշիր, հիմա Էնվերն է, ուրիշ ժամանակներ են:

Անդրանիկը պատասխանեց. - Ես չե՛մ երթար. անոնց ձեռքերը արյունո՛տ են:

Հետո 1914 թ. սեֆերբելիք սկսավ, այսինքն՝ զորահավաք: Ով անցավ ձեռքերնին, առին տարին, ով կրցավ փախիլ, փախավ: Թուրք պաշտոնյաներ էկան, ինչքան անասուն ունեինք բոլորը հաշվառեցին՝ ձի, մալ, կով, որ ուզած ժամանակը հավաքեն:

Հետո եկավ 1915 թ., ուրբաթ օր մըն էր: Եկավ մյուդուրը (գյուղապետ), նամակ մը բերավ, ըսավ. - Էս նամակը չեք բանար, մինչև ես չիգամ: Գա՛լ ուրբաթ ես կուգամ:

Գնաց: Ուրբաթը լրացավ, եկավ, նամակը բացավ, ըսավ. - Ձեզի ութ օր պայմանաժամ, ինչ որ ունիք ծախեք, առեք, ձեզ պիտի աքսորենք:

Մենք ժողով ըրինք, որոշեցինք լեռը ելլալ: Բիթիասի, Խըդըր-բեկի կողմեն անասունները տարինք՝ շուն, կով, էշ, տավար, սարը բարձրացուցինք, քանի որ ժողովուրդը գիտե, որ պետության ձեռքը երկա՛ր կըլլա: Լեռը տարինք մեր ամեն ինչը՝ թենջիրե, թավա, ուտելիք, զենք, երկանք անգամ տարած էինք. ցորենը կաղային, ալյուրը հաց կշինեինք, սաջի վրա կշարեինք, կեփեինք, կուտեինք: Աղը որ պակասեր, կերթայինք ծովի ջուր կբերեինք, կեռացնեինք, աղը կնստեր տակը, աղը մեզ պետք էր. անասուն շատ ունեինք: Փայտերը կտրեցինք, թեք կտուրներով տունիկներ շինեցինք, մեջը մտանք: Միայն մենք յոթը կողինք ունեինք, մեր բնակատեղերն էին Դամլաջըք***, Սովուլըք****, Գըզըլջըք*****, ջուրերուն քովը տեղավորվանք: Թըշնամին սկսավ գալ մեզ վրա երեք կողմեն՝ Ծախուրդեն, մյուսը՝ մեր Խըդըր-բեկի Յոլաղզեն՝ ճամփի բերանեն, մեկալն ալ՝ Բիթիասցոց՝ Գյարմեր Կիդայնի****** կողմեն: Էդ իրեք տեղից կուգային մեզ վրա: Մենք՝ դեմերնին, մեր ետևը՝ ծովն էր, քարափը...

Առաջին կրակողը Մովսես Աբրահամյանը եղավ, «Հաթար» կըսեին անոր: Մեր տղաները որսորդական հրացաններ ունեին, մի քանիսը բելջիկական տասնոցներ ունեին կամ հունական: Կովանք: Աղ թուր-

* Արարայի հաղթանակից հետո Կիլիկիայի վերահսկողությունը հանձնվեց նախ՝ Անգլիային, ապա՝ Ֆրանսիային:

** Մուսա լեռան արաբերեն անվանումն է:

*** Դամլաջըք – կաթկթող ջուր: 1921 թ. հոն շինեցինք մեր հաղթական հուշարձանը, ավազան սարքեցինք, ֆրանսացի ժեներալը եկավ ծաղկեպսակ դրավ (Ծ. Բ.):

**** Պաղ աղբյուր (Ծ. Բ.):

***** Կարմիր աղբյուր (Ծ. Բ.):

***** Կարմիր գետին (Ծ. Բ.):

քի զինվորները չդիմացան, փախան, գնացին: Ահագին զինվոր մեռած թողեցին, գնացին: Մենք իջանք անոնց զենքերը առինք, նորեն լեռը բարձրացանք:

Երկրորդ անգամ երկու հարյուր-երեք հարյուր թուրք զինվոր եկավ: Ամեն տասնհինգ օրը մեկ նոր հարձակում կսկսեին մեզ վրա: Միշտ կիրակի առավոտ կըլլար. երբ մենք պատարագ կընեինք, անոնք՝ կհարձակվեին:

Մեր կովողները բոլորը-բոլորը ութ հարյուր հոգի էինք, մնացածները՝ չոլուխ-չոջուխ, կնիկ, ծերուկ էին: Մեր կենտրոնը ունեինք: Ես ատրճանակ ունեի, իմը հին սիստեմի էր, որսորդական, երկու փողանի, իմը պատրոն չուներ, բարութ կդնեի՝ գյուլլան մեջը, շատ հին սիստեմի էր:

Դեղձաձոր կըսեին՝ ձոր մը ունեինք, շատ դժվար, դիք ձոր էր էդ: Թուրքերը փորձում էին անտեղեն վեր շուլլըվին: Մենք չորս հոգով՝ Կարապետը, որ թուրքի մավզեր ուներ, ես, Սեդրակ Ուրֆալյանը և մեկն ալ՝ հորեղբորս աղջկան ամուսինը: Էլանք, գնացինք Սինջարի դար: Ադ զորանոցեն արևելք էր: Ընտեղ կովանք առտվընե մինչև երեկոյան ժամը հինգը-վեցը: Հորեղբորս աղջկան ամուսինը՝ Հովհաննես Կուժանյանը, որին «փուադ» կըսեին, միայն ինքը տասնչորս թուրք սպանեց: Ախպերս եկավ ըսավ. - Զըլլա՛, որ տեղերնեդ շարժվիք:

Ժամը հինգին էլա, որ գնամ զորանոց, տղաքը ըսին. - Որտեղե՞ն կուգաս: Ըսի. - Սինջարի դարեն:

Տղաքը սկսան զոռ տալ. ամեն կողմեն գյուլլաները կուգային ծառերուն կկպնեին, մեզի չէին կպնի: Ադ ալ Աստծո կամքն էր: Հրա՛շք էր:

Թուրքը հրաման տվեց՝ մեր լեռը կրակի տալ, ամմա լեռը չվառվեց, քիչ տեղ մը վառավ: Հրա՛շք էր: Հետո թուրքերը մեզ կըսեին, որ կոիվը կսկսեր՝ ճերմակ ամպ մը կուգար մեր լեռը կփակեր, անոնք մեզի չէին տեսնար, ամմա մենք իրենց կտեսնայինք վերևեն, ծառերուն մեջեն: Ադ ալ Աստծո հրա՛շքն էր... Գիշերով կիջնայինք լեռեն, բաղերեն պտուղ կհավաքեինք, որ տանենք ուտենք: Մեկ օր լեռից իջանք, ես, հերս, մեր հարևան Մուսան: Ասկյարները եկան ճիշտ գլուխնուս վրա կայնան, բայց մեզ չտեսան՝ գնացին: Հրա՛շք է, չէ՞...

Գիշեր մըն ալ կրակ վառած ենք, շուրջը նստած: Մեկ էլ հերս էլավ կայնավ, գոտին շտկեց, մի պատրոն գոտիին մեջեն ինկավ կրակին մեջ, պայթավ, շա՛տ մարդ կար շուրջը, ո՛չ մեկին բան չէղավ: Հրա՛շք է, չէ՞: Աստված մեզ հետ էր...:

Արդեն մեր ուտելիքը, մեր պաշարը վերջանում էր կամաց-կամաց: Քարափի կողմեն ճերմակ սավաններ կախեցինք՝ վրան կարմիր խաչի նշանով, քովը կրակ վառեցինք, որ Միջերկրականի ծովեն անցնող նավերը մեզ տեսնան: Շատ օրեր ետքը մեկ հատ նավ մը եկավ ֆրանսական, մեզ ազատեց: Ադ ալ Աստծո հրա՛շքն էր:

Երբ պարախողը եկավ, լեռան երկու կողմի ճակատները մենք պահեցինք, որ ժողովուրդը մեջտեղեն իջնան, բարձրանան նավ: Վերջին վայրկյանին Հաբեթ Վանյանը, Հովհաննես Լիջյանը վիրավորվան. նավը բարձրացրինք, բայց ծովի վրա մեռան, անոնց ջուրը գցեցին, ադ օրենք է եղեր:

Արդեն մեր նահատակներու գերեզմաններուն հողերը առանձին-առանձին անդուկներու մեջ առած էինք, հետերնիս տարինք Պորտ Սայիդ, հետո ալ ետ բերինք Մուսա լեռ, հետո՝ Այնճար, մինչև Հայաստան բերինք հետերնիս:

Ամեն ինչ լեռը թողեցինք, մեր անասունները, ամե՛նը մնացին թուրքին: Իսկ կողինքները, մնացածը՝ վառեցինք, քանի որ ֆրանսացին ըսավ՝ միայն հոգիները կազատեմ:

Երբ որ գնացինք Պորտ Սայիդ, դիմում տվինք Ֆրանսային, որ մենք կուզենք կովիլ թուրքին դեմը, միայն թե մեր Կիլիկիան մեզի տրվի:

Ֆրանսացին համաձայնվավ:

Օրին մեկն ալ ֆրանսական, անգլիական բժիշկները եկան քննեցին մեզի: Առողջներուն զինվոր արձանագրեցին, հիվանդ որ մեծեր էին, դրեցին պահակ:

Մենք՝ ջահելներս վեց հարյուր հոգի էինք, որ Հայկական լեգեոնի հիմքը դրեցինք: Հետո արդեն չորս կողմեն լսեցին, եկան ուրիշ տեղերի հայեր. եղանք տասներկու հազար հայ: Մեզ տարին Կիպրոս՝ մարզվելու:

Մի օր հրաման եկավ: Կիպրոսի Մանարկայում* ենք, ըսին. - Պատրաստվե՛ք, պատերազմ պիտի երթաք թուրքին դեմը: Գնացինք նավահանգիստը լցվանք: Նավը էկավ, լցվանք մեջը: Կիպրոսի ցամաքեն հեռացանք: Մեր նավին ետևեն ուրիշ նավ մը կուգար, որ մեզ հսկի, որ ընդոծովյա բան չիգա մեզ վրա: Իջանք Բեյրութ: Հանգստացանք: Հրաման էլավ՝ պիտի շարժինք դեպի Երուսաղեմ՝ Նաբլուս: Ճանապարհին ութը ժամ գնում ենք ոտքով, գնում ենք, կանգնում՝ ուր որ ջուր կգտնանք: Ամեն մեկին շալակը երեսունհինգ կիլոգրամ ծանրություն՝ ադիալ, պալատկա, պատրոն, ուտելիք: Ընտեղ էլ ժամանակ մը անցավ, հրաման եկավ, որ Կիլիկիա՝ Ադանա պիտի էրթանք: Լցրին մեզ շոգենավը: Հասանք Իսկենդերուն: Բաժանեցին մեզի: Միտրալյոզ (ավտոմատ հրաձգող) կոմպանիան մնաց Դորտյոլ, մեկ մասը՝ Թոփրաքկալե, Ջաճան: Տարին մեզի Ադանա, հերթապահ կանգնանք. մինչև Կիլիկիա, Ադանան առած էինք: Ուր որ հայ գտանք, հավաքեցինք. հարյուր տասնհինգ հազար հայ կար հոն: Զեյթունցիները չորս տարի լեռներում թուրքերուն կոտորել էին, նրանց զենքն ու փողը վերցրել էին: Դորտյոլում մի հայ սալդաթ անցել էր Ղարաքիլիսա գետը. ծեծեր էին թուրքերը: Հայերը վառել էին թուրքերուն գյուղը: Հավի ձագ չէին թողել Դորտյոլի և Իսկենդերունի արանքը...

Մեկ էլ ֆրանսացիները խաբար արեցին մեր օֆիսերին. - Հայերը իրենց պատրոնները թող տան:

Մենք ըսինք. - Չե՛նք տա:

Տասնութ մուսալեռցի էինք, մնացածները՝ դուրսեն հայեր էին: Բոլորս ալ ըսինք. - Թուրքը եթե հարձակվի՝ մենք զենքով պիտի կռվի՛նք:

Էդտեղ մի բժիշկ կար քեսաբցի, գերի էր ընկել

* Որտեղ մարզվում էին հայ լեգեոնական կամավորները:

թուրքերուն հետը, քանի որ թուրքական բանակի մեջ էր: Բայց կային նաև հայեր, որոնք թուրքին բանակի մեջ ըլլալով հանդերձ, մեզ էին օգնում: Օրինակ՝ Հայֆալի վրա կաթոլիկների մանաստըրում թուրքական թնդանոթ էր դրված, որի քիթը պտտվում էր իրենց՝ թուրքերուն կողմը. թուրքերուն սպանում էր: Պարզվեց, որ թնդանոթի գլուխը հայ տղա է եղողը և մեր օգտին էր կրակում. թուրքերուն բանակին մեջ ահագին թուրքերու կփոե գետին: Մեզի որ թողնեին, մենք՝ հայերս, ան ժամանակ մինչև հոս՝ Հայաստան կուգայինք: Կազատեինք ամբողջ մեր հողերը: 1919 ապրիլի 28-ին մեզ ազատեցին: Մեզի Մերսին բերին, ճամփին գնացքի մեջ թուրք որ տեսնում էինք, կրակում էինք, մի հատ Չակալյան մը կար, ըսավ. - Տղաննե՛ր, ամո՛թ է, մե՛ղք է, ադ թուրք խեղճ գյուղացիները ի՞նչ մեղք ունին, որ սպանում եք. մենք էրթանք, մեզմե վերջը հոստեղի հայերուն կը ջարդեն...

Մերսին գնացինք, հանձնեցինք զենքերը, մեծ քրոջս Պորտ Սայիդը թաղեցինք, մորս ու մեծ աղջկաս՝ Լիբանան, հերս, ախպերս, քույրս՝ Մուսալեռ...: Երկու աղջիկներս, իրենց ընտանիքներով ու թոռներով, բոլորը քսանվեց հոգի, Լևինականը՝ երկրաշարժեն մեռան 1988 թ. դեկտեմբերի 7-ին: Քառասուն վայրկյան առաջ ես ավտոբուս էի նստել, գալիս էի Երևան: Ես իննսուներեք տարեկան՝ ողջ մնացի, անոնք՝ չահե՛լ-չիվանենե՛րը հողի տակն են...

159 (159).
ՏՈՆԻԿ ԳԱԲՐԻԵԼԻ ՏՈՆԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(Ծ.Ն.Վ. 1898 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

Հարգանքը ամենեն բարձր բանն է աշխարհում: Պատիվը ամենեն բարձր բանն է աշխարհում:

Մենք՝ մուսալեռցիքս, կսիրենք հարգանքով ու պատվով ապրիլ մեր կյանքը:

1909 թվին Ադանայի կոտորածն սկսվեց: Թուրքերը հարձակվան հայերուն տուներուն, խանութներուն վրա, սկսան թալանել, սպանել, մորթել, բռնաբարել: Ալ ինչ որ մտքովդ կանցնի՝ սկսան ընել:

Մեր Մուսա լեռան յոթը գյուղերի հայերս զգուշացանք, գիշերը պահակներ դրինք: Կիլիկիայի շատ տեղերուն մեջ թուրքերը մտան կոտորեցին, կողոպտեցին: Ալ փախող փախողի: Հայերը կփախին կմտնան եկեղեցին: Թուրքերը կմտնան, տուները կթալանեն, կտեսնան, որ հայերը մտած են եկեղեցի, կհարձակին եկեղեցիի վրա, կսկսին հայերուն կոտորել: Առաջին անգամ ծիծի երեխաներուն կոտորել են իրենց մայրերուն, հայրերուն աչքին առջևը, հետո՝ կնիկներուն, տղամարդիկներուն: Բոլորին առանձին-առանձին ընտանիքներով կոտորում են: Արյունը ջուրի պես կերթա եղեր դուռներեն: Ես մեր գյուղումն էի, իմացանք աս բոլորը: Մինչև հիմա արաբներն ու թուրքերը կհիշեն այդ կոտորածները: Ադկե վերջը մենք ավելի զգույշ եղանք, որ թուրքը մեզի վրա ալ կրնա գալ:

1915 թվին, երբ հրաման ելավ աքսորի, մենք մեր ամեն ինչը թողեցինք, տուներեն դուրս էկանք: Մեզի ոտքով քալեցուցին դեպի Անտիոք քաղաքը: Տղամարդկանց առանձնացուցին: Մեզի ուզում էին կոտորել, թափել գետը, որ ծով հասնի, մեյ մըն ալ հրաման եկավ. «Մի՛ կոտորեք, քշե՛ք, տարե՛ք հեռու՛ տեղեր»: Մեզի քալելով տարին: Մենք հինգ երեխա էինք, հորից որբ էինք: Ես ամենեն մեծն էի, փոքրերին շալկած էինք ես ու մամաս: Չինվորները խրբաջով խփում էին: Մամայիս երեսին մեյ մը խփեցին, խփած տեղը խիստ ուռավ: Ձեռքերնիս ալ դրամ չէ մնացած: Քալելով մեզի տարին մինչև Համմա. երեք-չորս օր քալել ենք: Ճամփին՝ մեռնող-մեռնողի: Անոթությու՛ն, ջուր չկա՛, հոգնա՛ծ ենք, չենք դիմանու՛մ, բայց ստիպված ենք քալել:

Հասանք Համմայի անապատը: Վերմակի երեսները հանեցինք, չադրը շինեցինք, մի կերպ տակը մը տանք: Արևը սոսկալի կվառե: Ժողովուրդն սկսավ հիվանդանալ: Իմ փոքր քույրերս ալ մահացան: Մեկը՝ ուրբաթ օրը, մյուսը՝ շաբաթ օրը, մյուսն ալ՝ կիրակի: Թաղում չկա: Մեծ փոս մը կա, հոն տանում են դիակները, գետում են իրար վրա: Ամեն կողմ անոթի, հիվանդ մարմիններ՝ կսպասեն իրենց մահվան: Ճանճերը լիքն են:

Մեյ մըն ալ եկան թուրքերը, սկսան պոռալ. «Հայդե՛, էլե՛ք, քալե՛ք»: Արդեն առողջ մարդ չէ մնացած: Սկսանք քայլել: Գիշերը ուր որ կհասնինք, անտեղ բաց երկնքի տակ գետիները կպառկինք, կքնանանք: Առտուն շատերը չեն արթննար: Վերջապես հասանք Շամ: Հոն ութ-ինն օր մնացինք: Ժողովուրդին մեջ լուր տարածվեցավ, որ մեզի տանում են Դեր Զոր՝ կոտորելու: Մեյ մըն ալ ձիերով էկան քանի մը պետական մարդիկ, ըսին. «Էլե՛ք, պիտի էրթանք»:

Մայրս երկու տարեկան հիվանդ եղբորս գրկած կուլա, վրան հայ չկա շալկել քալելու: Մեյ մըն ալ թուրքերը ըսին. «Ով որ Գևորգ աղային գերդաստանեն է, թող առանձին կանգնի»:

Գևորգ աղան ալ թուրքերուն շատ օգտակար եղած է, իմ մորը քեռին է ու մեր գյուղին մեծն էր: Մենք ընկանք բախտավորներուն խումբին մեջը: Մյուս խումբին տարին դեպի Դեր Զոր: Մեզի ալ պիտի տանեին, բայց երկու տարեկան եղբայրս շատ հիվանդ էր, մայրս չգիտեր ի՞նչ ըներ: Մի մարդ էկավ ըսավ. «Դուք էլեք գացեք, էս երեխան եթե մեռնի, ես կթաղեմ»:

Մենք ստիպված ադ փոքր եղբորս թողինք ադտեղը: Արդեն երեք քույրերս ալ հիվանդացել, մեռել էին: Ես ու մայրս լալեն-լալեն ճամփա ընկանք: Ալ ադ եղբորս չտեսա:

Մեզի տարին խաչապաշտ ժողովուրդի մը մեջ, բոլորը օտար են: Մենք ոչինչ չունինք: Անոթի ենք, սկսանք աս-ան տունեն հաց մուրալ: Ադ խաչապաշտ գյուղը բերին ուրիշ հայ կիներ: Ադոնց տղամարդկանց

ու երեխեքին կոտորել էին, իրենք ալ բարբառ հայերենով կխոսեին: Ադ հայ կիները ձեռք-ձեռքի բռնած կը պարեին, կերգեին, որ դրամ շահին, քանի որ կամչնային մուրացկանություն ընել:

Պատերազմը վերջացավ: Ֆրանսան, Անգլիան, Ռուսաստանը մեկ կողմ էին, թուրքը և Գերմանիան՝ մյուս կողմը: Հայ ժողովուրդին մեծամասնությունը կոտորվել էր արդեն: Հրաման էլավ, որ ամեն մարդ իր տեղը կրնա էրթալ: Էլանք, ոտքով քալելով ետ գացինք դեպի մեր երկիրը: Հասանք մեր գյուղերը: Տեսանք՝ ո՛չ դուռ, ո՛չ պատուհան կա: Ամեն ինչ քանդված: Մտանք մեր ավերված տունը: Արդեն Ֆրանսան եկած մտած էր Կիլիկիա: Ալ սկսանք մեր տունը վերաշինել, մեր հողերը մշակել: Կամաց-կամաց մեր վիճակը լավացավ: Քսան տարի ֆրանսացիներուն շուքին տակը ապրեցանք Մուսա լեռում: Մեր գյուղերուն մեջը թուրք չիկար: Ֆրանսացին մեր թիկունքին կանգնած էր: Մեզի «երկրորդ ախպեր» կըսեին ֆրանսացի զինվորները:

1939 թվին ֆրանսացիները Մուսա լեռեն քաշվան: Մենք ամեն մեկ գյուղեն երկու տղամարդ ընտրեցինք, Անտիոք գացին, ֆրանսացի ժեներալին քովը՝ օգնություն խնդրելու: Մեր Քաբուսիե գյուղեն՝ ես էի: Ձենք ուզեցինք, որ ինքզինքնիս պաշտպանենք: «Ոչ մի զենք չե՛մ տա ձեզ, - ըսավ, - խելոք մնացեք, թուրքին հետ համերաշխ ապրեցեք»:

Մենք չէինք սպասեր աս տեսակ սառը պատասխան: Ուրեմն ֆրանսացին մոռցավ հայերուն քաշած տառապանքները և հիմա հանգիստ խղճով մեզի թուրքին ձեռքը կձգե և ինքը կհեռանա Մուսա լեռեն:

Ըսինք. - Մեզի ազատե թուրքերուն ձեռքեն:

- Ու՞ր տանիմ, Ֆրանսա՞ տանիլ, չե՛մ կրնար:

Ըսինք. - Մեզի ուրիշ խաչապաշտ երկիր մը տար, օրինակ՝ Լիբանան՝ Բեյրութ:

Ֆրանսացիները մեզի գրուզավիկներով տարին Լաթաքիա, անտեղեն ալ՝ նավով Բեյրութ, Բեյրութեն քիչ մը դուրս՝ Այնճար իջեցուցին մեզի: Մենք հազար հինգ հարյուր ընտանիք էինք: Ֆրանսացիները հազար հինգ հարյուր հատ տուն պլանով շինեցին՝ մենք ալ իրենց հետը: Ամեն մի ընտանիք պզտիկ տուն մը ունեցավ: Էդ հողն ալ արաբ հարուստի մըն էր, գնեցին, մեզի բաժանեցին՝ ըստ նաֆարի: Շատ ջուր կար, բերրի հող էր: Սկսանք ցանել, հնձել, քաղել: Բայց յոթը տարի իրավունք ունեինք ադ հողը ցանել: Յոթը տարի հոն ապրեցինք:

Յոթը տարի վերջը՝ 1946 թվին, Հայաստանեն պատվիրակություն եկավ, որ հայերուն Հայաստան պիտի բերեն: Հայաստան ըսելով, մեր ժողովուրդը կը կարծեր, որ դրա՞խտ է գալու: Մեր մայրերը օրոր-օրոր կերգեին.

Օրոր-օրոր յավրուս,
Հայաստանին դուրբաս յավրուս:

Մեզի ադպես մեծցուցած են:

Հայաստանի ներկայացուցիչները՝ երեք հոգի, եկան ինձ մոտ: Ես ալ՝ դիրքս լավ էր էնտեղ, խանութ, ռեստորան ունեի: Լավ ապրուստ ունեի: Այնճարի դաշնակցականները չէին ուզեր Հայաստան երթալ, կըսեին՝ երբ որ Հայաստանը մերինը ըլլա, ան ատենը մենք կերթանք: Դաշնակները ինձի կանչեցին ժողովի: Դաշնակցականներուն մեծը՝ Մովսես Տեր-Գալուստյանն ինձի ըսավ. - Տոնի՛կ, դուն դաշնակցությունեն հրաժարական տվեր ես և Հայաստան կուզես երթալ, ուրիշներուն ալ օրինակ կդառնաս: Էկուր միտքդ փոխե, մնա մեզի հետ, մենք քեզի կօգնենք, ինչի կարիք ունենաս՝ մենք քեզի կուտանք: Միայն թե մի՛ երթար:

Ես ըսի. - Մովսես Էֆենդի, ես դաշնակցական էի և հիմա հրաժարված եմ: Եթե հոս մնամ, գիտեմ, գլուխս կուտեն, ավելի լավ է՝ ես Հայաստան երթամ:

Վերջը ես գացի Բեյրութ, ներգաղթի գրասենյակը ըսի. - Ես ուզում եմ Հայաստան երթալ, հետս ի՞նչ կրնամ տանիլ: Խանութիս ապրանքները տանի՞մ:

- Չէ՛, - ըսին, - հոն ամեն ինչ ձեզի համար պատրաստված է նախօրոք:

- Բայց ի՞նչ տանիմ, որ հոն արժեք ունենա, ընտանիքս կրնամ պահել:

Ըսին. - Ժաժգատիլի քար տար, հոն հարգի է:

Ըսի. - Ես բանվոր չեմ: Ես առևտուր կրնամ ընել հոն:

Ըսին. - Հայաստանին մեջ ազատ ես, ինչ կուզես՝ կընես:

Դու մի ըսեր՝ ինձի խաբեցին: Էդ ժաժգատիլի քարերը առի: Խանութիս մեջ կապույտ բուրդ կտոր ունեի՝ տղամարդու կոստյումի համար: Քսան կոստյումացու ալ ադ կտորեն առի: Տասը հազար հատ ալ սանր առի, լցրի սնդուկներուն մեջը: Քառասուն հատ մուրճմանգաղով կարմիր դրոշակներ շինել տվի, ամեն մի ընտանիքին բաժնեցի: Գացինք նավահանգիստ: Նավ նստանք: Հասանք Բաթումի: Նավին մեջ հրաման ելավ՝ ով ուտելիք ունի՝ ծովը թող թափի: Քսան կիլո հալվա ունեի տուփերուն մեջը: Ձթափեցի: Ինձի ըսին. «Մի քիչ կանֆետ-մանֆետ տուր՝ կանցնիս». Ես ալ մեկերկու կիլո կանֆետ տվի, աչք գոցեցին: Մեր ապրանքները պիտի քննվին: Ես ալ բոլորից շատ վեշ ունիմ: Քառասուն օր մնացինք քառանտինան: Հանեցին մեզի, որ պոեզով պիտի Երևան երթանք: Ըսին՝ ամեն մարդ իր ապրանքին զգույշ ըլլա: Մեզմե մեկը պահակ դարձավ, պոեզին դուռը երկնցած էր, ոտքն ալ թանկ սապոգներ կային: Ադ մեր փեսա Հակոբն էր: Գլուխը ներսի կողմը, ոտքերը դուրսի կողմը քնած էր: Ճանապարհին պոեզը կամացուկ դիք էր բարձրանում: Մեկ մըն ալ ադ Հակոբին ձայնը լսեցինք. «կոշիկներս հանեցին»: Ադոնք Վրաստանի գողերն էին:

Արդեն Բաթումի եղած ատեննիս ինձի կանչեցին, հարցուցին. - Ու՞ր կուզես ապրիլ:

Ես ալ ի՞նչ գիտնամ, միայն Էջմիածինը գիտեի, ըսի. - Էջմիածին կուզեմ:

Ինձի Էջմիածին նշանակեցին: Բարեկամներս ալ Էջմիածին ուզեցին, բայց անոնց Էջմիածին չնշանակեցին, որ իրարու հետ չըլլանք: Հասանք Էջմիածին: Տեսա՝ իմ վեշերը շատ են: Հավաքված մարդիկ ըսին. - Դուն հարուստ ես, երևի կուլակ ես: Ինչու՞ գիլինդըր գլխարկ ես դրել, կեպի չես դրել: Ձեռքիդ ինչու՞ թեզբեխ կա, երևի պարապ մարդ ես:

Մեզի տուն մը տվին, մտանք մեջը: Թաղային էր, ով էր՝ չգիտեմ, օր մը մեզի եկավ՝ ընկեր Իսկենդերյանը: Մենք սուրճ հյուրասիրեցինք: Ան ըսավ. - Առաջին և վերջին անգամ պատերազմի հաղթանակից հետո Բեռլինում եմ խմել կոֆե:

Ես սկսա ներքին կարգով առևտուր ընել: Ժաժգատիլի քարերը ծախել, փողի տեր դարձա:

Օրին մեկը տղային հացի հերթի ղրկեցի: Անոր տվեր էի հիսուննոց մը: Հացավաճառը Հայկուշ անունով կին մըն էր: Տղային ձեռքեն դրամը կառնե, կնայի, կըսե. - Էս փողը կեղծ է:

Հոն ալ հերթ պաշտպանող միլիցիա մը կըլլա, տղային կառնե միլիցատուն կտանի: Երեկոյան եկան միլիցեքը, ինձի ալ տարին միլիցատուն: Գացի: Ես խամ եմ: Նոր եկած ենք: Շատ բան չեմ հասկանում, բայց սեղանին վրա ատրճանակ տեսա՝ մազերս բիզ-բիզ կանգնան: Միլիցապետն ըսավ. - Ընկեր Տոնիկ, ապարատդ բեր:

- Ի՞նչ ապարատ, - զարմացած հարցուցի ես:

- Կեղծ փողի ապարատը:

- Ես անգրագետ մարդ եմ: Հայերեն լավ չգիտեմ: Ես ի՞նչ կարող եմ ընել, որ կեղծ փող շինեմ:

- Գնա՛, բե՛ր, եթե չբերես՝ դու էստեղ չես մնա, - ըսավ միլիցապետը: Հետո հարցեր տվավ, կյանքս պատմել տվավ: Ես ալ ըսի՝ դաշնակցութենեն հրաժարվեցա, որ Հայաստան գամ:

- Հա՛, ուրեմն դաշնակցակա՞ն ես:

- Ո՛չ, հրաժարվա՛ծ եմ: Ես հակառակ եմ եղել, դու՛րս եմ եկել, որ Հայաստան գամ:

Ինձի ազատ արձակեցին: Երկու օր ետքը գիշերվա ժամը տասներկուսին նորեն եկան միլիցատուն տարին: Ըսին.

- Նստի՛ր, հայրի՛կ, արդարացար. բռնվան կեղծ փող շինողները: Երեք հոգի բռնված են, իսկ դու՝ ազատ ես: Բայց մոտդ ուրիշ փող կա՞:

- Հարյուր հատ հիսուննոց ունեմ:

- Որտեղի՞ց քեզ էդքան փողը:

- Ես երբ արտասահմանում՝ Այնճարում էի, խանութ, ռեստորան ունեի: Էնտեղից իմ խանութի ապրանքները բերած եմ, ինչ որ իրենք թույլատրած են: Ադոնք ալ ծախած եմ: Առիս ապրանքս, բայց ինձի կեղծ փող տվին: Ես ի՞նչ գիտնամ, որ կեղծ փող է:

- Հայրի՛կ, բայց ինչու՞ էիր փողդ պահում: Էստեղ արտասահման չի, որ փող պահես: Էստեղ առած փողդ պիտի ուտես, պրծնես:

- Ես փողը հավաքել էի, որ կով առնեմ:

- Էնտեղ ի՞նչ եղած ես:

- Գյուղապետ:

- Հետդ ուրիշ շատ դաշնակցական բերա՞ծ ես:

- Մեզ հետ եկող դաշնակցական չկա, բայց հրաժարվածները կան:

Ինձի որպես արդարացած տուն ղրկեցին, բայց կես գիշերով եկան երեք միլիցիա, մի ղեկավար: Արթնացանք, անկողիններեն ելանք գիշերանոցներով:

- Հավաքի՛ր վեշերդ, - սկսան ստուգել: Հրացան են փնտրում, - հրացան ունե՞ս:

- Ես հոն հանձնել եմ դաշնակներուն:

Բերին մի գրուզավիկ, գիշերով բարձեցին, մեզ մեջը լցրին, մեր տանն էր քնել նաև այդ գիշեր իմ թոռնիկս, ան ալ մեզի հետ վերցրին՝ առանց իր ծնողքին լուր տալու:

Հարցրի. - Ու՞ր ես տանում:

- Հայրիկ, հետու տեղ չէ, որտեղ էլ որ երթաս՝ Սովետական երկիր է:

Մի արկղ օճառ ունեի հետս բերած, ըսի՝ աս ալ վերցնենք:

Առին այդ արկղը բախչեն թափեցին: Ավտոն քշեց: Տեսանք՝ գիշերով ուրիշ շատ գրուզավիկներ կան: Քշեցին, ու՞ր կտանին՝ չգիտենք: Տարին Էջմիածնի կայարանը: Պոեզին վագոնները՝ լիքը հայեր: Մեզ ալ լցրեցին: Ու՞ր պիտի տանին՝ չգիտենք: Պոեզները պլոմբեցին: Տավարնի վագոններ են: Մենք՝ ներսը: Մի պուճուր աչքի տեղ կա միայն: Հասկացանք, որ մեզ տանում են կոտորելու: Տանում են մի օր, երկու օր, երեք օր, շա՛տ օրեր: Վագոնի մեջ երեք ընտանիք էինք: Անկյունը կլոր ծակ մը կար: Յորղանի երեսի կտորը կբըռնեինք, որ ուբորնի ճատեինք:

Քսաներեք օր գնացինք, հասանք Ալթայսկի կրայ Սովետսկի ռայոն: Պոեզի վագոնները լիքն էին, ամեն ազգի՝ հազարներով ժողովուրդ: Իմ բարեկամները՝ երկու փեսաներս՝ ընտանիքներով, հորեղբորս տղան՝ ընտանիքով, բոլորս իրար հետ ենք: Եկավ ինչ-որ մի ջահել տղա, ըսավ. «Ես ուզում եմ այս խումբը առնեմ»:

Իր ավտոն լցրեց մեզի, տարավ երկրորդ սովխոզ, երկրորդ ֆերմա: Մեկ ամիս հոն մնացինք: Մեզնից բացի ուրիշ մարդ չկար: Պատերազմից հետո տղամարդ չէր մնացել, բոլորը կնիկներ էին՝ նախագահը, հաշվապահը: Մեզի տուն ալ չտվին: Արդեն լեզու ալ չգիտենք:

- Աբաժտի՛ (սպասիր), - ասում են:

Էդ իրիկունը հոն մնացինք: Կինս, մայրս լաց են լինում: Տեսա, որ մի գրուզավիկ բերին: Մեզի մեջը լցրին: Տարին մի տան առաջ կանգնեցրին: Մեր ունեցածը մեջը լցրին: Բերին խաշած ձու, բայց հաց չկա: Մարդիկ հաց չունին:

- Կուշա՛յ, խորոշո բուդետ, (կե՛ր, լավ կլինի) - ասացին:

Մենք լաց ենք լինում: Մեկը ձեռքիցս բռնեց, ըսավ. - Պաշլի (գնացինք):

Ես վախեցա, թե ու՞ր պիտի տանին: Տեսա՝ ժողովուրդը կանգնած է: Անոնք ալ կվախնան, որ իրենց տանում են սպանելու: Մեզի տարին մի հայաթ: Մենք յոթը երիտասարդ ենք: Մեզ քաշքշում են, տանում են գետնի տակը բաղնիք: Դու մի ըսեր՝ ադոնք ավելով են լողանում:

Հետո տարին աշխատանքի: Ըսին. - Պլոտնիկ կըլլա՞ս:

Ըսի. «Ցոլա կտանիմ»: Սկսա աշխատիլ:

Ցորեն ցանելու ժամանակը ինձի տարին ցորեն ցանելու: Ցորենը քաղելու ժամանակ ալ տարին՝ ցորեն քաղելու: Ես կյանքումս չեմ աշխատել: Սկսա լալ: Ինձ ու իմ տղային՝ քսաներկու տարեկան Գաբրիելիս, ուղարկեցին անասուններ արածացնելու: Տղաս չդիմացավ ինֆարկտ եղավ, մեռավ: Հոն վեց ամիս մնացինք: Քառասուն հատ դիմում գրեցի Մոսկվա: Պատասխանը միշտ մերժված կըլլար:

Վերջապես օր մը «ազատականը» եկավ: Ոչխար մորթեցի, բոլորին հրավիրեցի, կերան, խմեցին, քեֆ արեցին, մեզի բարի ճանապարհ մաղթեցին:

Եկանք Հայաստան: Ես ուզեցի դիմում գրել՝ գիտնալու համար, թե ինչու՞ ինձի աքսորեցին, չէ՞ որ ես Հայաստանի՞ւ համար էի եկած: Ինձի կանչեցին դիմումիս պատասխան տալու, ըսին. - Հայրի՛կ, դու աքսորված չես եղած:

- Ինչպե՞ս չէ, ես յոթը տարի եմ աքսորված եղել:

Ստալինի վրա թողին: Ըսին. - Քեզի փող տանք:

Ըսի. - Ես փող չեմ ուզում: Աքսորի մեջ տղաս ջահել-ջահել մեռավ, կինս հիվանդացավ, հարսը թոքերից հիվանդացավ, իմ աչքերս չեն տեսնում, ականջներս չեն լսում, առողջություն չի մնացել:

Ինձի թոշակի անցուցին: Ուզեցի տուն շինել: Հողամաս չտվին Մեռելաշենում կամ Ախպարաշենում: Հոն հայրենադարձեր շատ կային: Ադտեղը հիմա Արարատյան զանգված կըսեն: Մեզի ըսին. «Կաշառք տուր՝ կհամաձայնվինք»:

Տղաս առավ տուփ մը կարագ, տարավ աճուրդ տուն: Կնիկը կարագը առեր է: Մեզի աստեղեն՝ Ծառումյանեն հողամաս տվին: Տուն շինեցի երկու հարկանի: Եկան թե՝ պիտի տունդ քանդենք:

- Ես շինեմ, դուք՝ քանդե՞ք, - ըսի:

Ղաղսովետից կանչեցին, ըսին.

- Ինչու՞ երկու հարկ ես շինել, ի՞նչ փողով ես շինել:

- Կնիկիս զարդերով, - հետերնիս բերած էինք քսանչորս հատ ոսկե ապարանջան:

- Ու՞ր են ցեմենտի, քարի դոկումենտները:

Կանչեցին քաղկոմ, ըսին. - Դուք աքսորվել եք 1949 թվին, վեց հոգինոց ընտանիքով աքսորվել եք և ազատվել 1956 թվին: Դուք արդարացված եք:

Բայց սիրտս կոտրված չէ:

Հիմա ալ, աս իմ քյասիբությանս մեջ՝ գոհ եմ: Ես ազգասեր եմ հիմա՛ ալ, վա՛ղն ալ:

Կուզեմ, որ մեր երկրի ղեկավարությունը լա՛վը ըլլա:

160 (160).
ԱՍԱՏՈՒՐ ՍԱՀԱԿԻ ՍՈՒՊՈՒԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1901 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

1914 թվին Թուրքիան ընդհանուր զորակոչ արեց: Հորս, հորեղբորս, ևրա տղաներին բանակ տարան, բայց լսեցինք, որ բոլորին Օրդուի անապատներում սպանել էին: Հորս, Մովսես ամմոյին, Խաչեր ամմոյին տարել էին Օրդուի անապատը ու սպանել: Հորեղբորս մի տղան աչքով տեսել էր, ինքն ալ իբր մեռած է ձևացել, ամմա հետո փախել էր, ոտքով եկավ հասավ Մուսա լեռ: Մեր ազգությունից հինգ տղամարդ թուրքական բանակում զոհվեց:

Հայերի աքսորը սկսվել էր Զեյթունից: Պատվելի Անդրեասյանը աքսորվածներուն մեջեն դուրս էր եկել, եկավ հասավ Մուսա լեռ: Մերոնք ընդհանուր ժողով ըրին, մանավանդ յողուզօլուքցիները, որոշեցին լեռը բարձրանալ: Գյուղերի հավերը, անասունները, ինչ որ կարող էին՝ լեռ բարձրացրին: Էշերին, շուներին մորթեցին, որ ձայն չհանեն:

Կռիվը սկսավ: Մերոնք վերևում՝ Ումարի դաշտեն կկռվեին թուրքերուն դեմը: Մեր տղերքը չտեսնըված կկռվեին: Մեկ ալ թուրքերը եկան մոլլային հետը: Մեր տղերքը ըսին՝ թող մոտենա՝ խփենք:

Մոլլան ասաց. - Հայու զենքը թուրքի վրա չի բարձրանար:

Մերոնք որսորդական հրացանով խփեցին, մոլլան սատկավ: Թուրքերը փախան: Մենք փոքր տղաներ էինք, մեզի «թելեֆոնի տղաներ» կըսեին, քանի որ խաբար կտանեինք կռվողներուն:

Մի քանի անգամ ուժեղ կռիվ եղավ: Եսայի Ցաղուբյանը պահեստային բրիգադ ուներ, որտեղ որ ուժեղ կռիվ կըլլար, հոն օգնության կերթար: Ինքը փոքր ամերիկյան հրացան ուներ, Դըմլաքյան Պետրոսն ու Դուդաքյան Պետրոսը իր հետ կկռվեին: Իսկ Մանուշակ Նաշալյանը սափորով ջուր կտաներ կռվողներուն և լուր կտաներ, որ որտեղ ընդ վիճակ է՝ Ցաղուբյանը օգնության հասնի:

Մեր ժողովուրդը հացի ընդության ունեցավ, զենքը, փամփուշտն ալ սկսան պակսիլ: Ծովի կողմը վերմակի երեսներ կախեցին՝ վրան Կարմիր խաչի նշանով: Քանի մը օր վերջը «Կիշեն» նավը եկավ: Մեր Ղըլըբուշ Կըրըկյանը լողալով նամակ տարավ, որ գան մեզի ազատեն: Նավին կապիտանը ըսեր է. «Վեց օրեն կուգամ»:

Հինգերորդ օրը նավը եկավ: Կիներն ու երեխաները նավ բարձրացան, հետո՝ կռվողները: Նավի վրա միայն մեզ առին, ուրիշ ոչ մի բան չվերցուցին: Մերս գդալ մը տվավ, որ հետս վերցնեմ: Քրաևսիացի զինվորը գդալս ծովը ձգեց: Ես ուզեցի ծովին մեջեն գդալս առնել՝ չթողեցին:

Պետրոս Դուդաքյանը և Մարկոս Սնապյանը մնացին լեռը: Անոնք մեկ ամիս վերջը եկան Պորտ Սայիդ: Պորտ Սայիդը Սուեզի ջրանցքին քովն է: Մեզ հոն տարին, չադրներին տակը ամեն ինչ պատրաստել էին մեզի համար՝ և՛ ուտելիք, և՛ հագնելիք: Մեր վեց գյուղերը առանձին-առանձին թաղեր տեղավորեցին: Դըպրոց բացին, հիվանդանոց բացին, ձեչ ընդություն չքաշեցինք: Չորս տարի հոն մնացինք: Վերջն ալ նորեն Մուսա լեռ գացինք: Տեսանք՝ ամեն ինչ քանդ ու խարաբ: Սկսանք նորեն շինել, մշակել հողը, աճեցնել բերքը: Վերջն ալ 1939 թվին Այնճար տեղափոխվանք:

1947-ին ալ Հայաստան եկանք:

161 (161).
ՊԵՏՐՈՍ ՍԱՐԳՍԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1901 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ, ՀԱՋԻ ՀԱԲԻԲԼԻ Գ.)

Հայրիկիս թուրքական բանակ էին տարած, ամմա անիկա փախստական եղավ, ալ ճամփաները կտրեցին, մենք Մուսա լեռ չկրցանք բարձրանալ:

Քսան տուն էինք մեր գյուղեն, տարան աքսոր: Մի թուրք ժանդարմ կար, պապային ապտակ տվավ: Հայդե՛, ոչխարի հոտի պես մեզ քշեցին: Որոնտես գետը անցանք, գիշեր էր, մեզի թողին, որ հանգստանանք: Կին մը հոն տեղը զավակ բերավ: Առավոտը նորեն սկսանք քալել: Անտիոք քաղաքը անցանք: Ան Քրիստոսեն երեք հարյուր տարի առաջ է կառուցված: Անտիոքեն դուրս եկանք, քրոջս գողացան, մեզի թալանեցին: Հասանք Համմա: Կիզիչ արևին տակը, տաք քարերուն վրա, ըսին՝ հոս պիտի մնանք: Ժողովուրդը յորղաններուն երեսներով չադրը զարկավ, տակը մտավ: Արևը վառում էր: Սոված, ծարավ, հոգնած, հիվանդ, ալ ինչ ուզես՝ կա: Մարդ մը կտոր մը հաց պոռում էր, մարդուն առին, տարին ողջ-ողջ փոսին մեջը նետեցին թուրքերը:

Հայրս մեզի տարավ քաղաք: Տուն բռնեց, որ ապրինք: Ամմա հոն ալ մուննետիկ եկավ, սկսավ կանչել՝ ում տունը որ հայ գտնվի, անոնց ալ պիտի աքսորենք: Հայդե, ուղտեր բերին, աս անգամ մեզի Հոմս տարին:

Մեր ընտանիքեն շատերը մեռան:

Թալեաթը Ստամբուլեն Ջեմալին, որը Դամասկոսին նահանգապետն էր, հրաման կուտա՝ փողոցները շում մը չպիտի մնա: Այսինքն՝ հայերուն պետք է ոչնչացնեք: Բայց ևա խորամանկություն ըրավ՝ փողոցի շուներուն սպանեց, իսկ հայերուն ալ ըսավ՝ ձեր անունները փոխեցեք, իբր թե թուրք եք դարձած: Այդպիսով մենք ազատվանք, իմ անունս Աբրահամ էր՝ դարձու Իբրահիմ, մայրս՝ Ֆաթմա, քույրս՝ Այշա:

162 (162).
ԻՍԿՈՒՀԻ ԿՈՇԿԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

Երբ դալալը մեր գյուղը՝ Յողուն-օլուք էկավ, կանչեց, որ աքսոր պիտի էրթանք, ես ադ ժամանակ աղբյուրը ջուրի գացած էի: Լալով տուն էկա: Տեսա՝ իրար անցած էին բոլորն ալ: Թենջիրեները լիքը՝ ճաշերը մեջը եփած, թողինք, բարձրացանք լեռը:

Լեռին վրա տղամարդիկ կռվան: Շատ կռվան: Գնդակները մեր գլխուն վրայեն կերթային-կուգային, մենք ողջ մնացինք:

Մի օր մեր տեղացի մի մարդ թուրքերուն Դամլաջըքի մեթարիսներուն՝ դիրքերուն ճամփան էր սորվեցնում, մեր տղաները անոր լեզուն կտրեցին, ականջը կացինով խփեցին կտրեցին, քարերը վրան լեցուցին՝ կույտ եղավ, լեռան վրա մինչև հիմա կա երևի: Աղե՛կ ըրին: Ինչի՞ պիտի դուշմանին ցույց տար մեր ճամփան: Արդեն թուրքերը մի քանի հայու բռնել, թուրքացրել էին երեխեքին: Հազարներով թուրք եկավ մեզ վրա: Մենք չընհանձնվանք: Վերջը ճերմակ յորղանի երեսները բայրոտ բացեցինք, քովն ալ կրակ վառեցինք: Արդեն որոշել էինք մենք մեզի ծովը նետել՝ քարերուն, ժայռերուն վրայեն:

Ախպերս սկսավ լալ. - Մամա՛, չերթանք, մեզի ծո՛վը պիտի թափեն:

Ութ օր վերջը ֆրանսական նավեր էկան, դեմերնիս կայնան: Ֆրանսացիները պզտիկ նավակներով էկան-էկան, մեզի տարին մեծ նավերուն մեջ: Ամեն բան թողինք լեռը: Միայն ջաներնիս ազատեցինք: Իմ ձերը՝ Հայրապետ Պոլիսյանը, ճամփաները կպաճեր, իջանք ծովին քենարը... Եսայի Ցաղուբյանը, որ մերին կնքահայրն էր, ամենեն վերջը նավ մտավ: Որ ամենքը մտան նավ, նավուն մեջեն դուլբինով նայեց կապիտանը, որ թուրքերը մեր Յողուն-օլուքը լցվել են: Էդպես անցանք գնացինք Պորտ Սայիդ: Ետքը չորս տարիեն նորեն Մուսա լեռ գացինք:

1939-ին թուրքերը նորեն եկան: Աս անգամ մենք Այնճար գնացինք:

1946-ին Հայաստան եկանք, որ թուրքերեն ազատվինք: Մեզ Մասիսում տեղավորեցին:

163 (163).
ԳՐԻԳՈՐ ԳՅՈՉԱԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ*
(ԾՆՎ. 1903 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

Գյուղում մեծ իրարանցում էր, բոլորը խառնվել էին իրար:

Պատերազմի տարիներ էին: Ես արդեն տասներկու տարեկան էի և շրջապատիս անցուդարձից բավական բան հասկանում էի: Գյուղում կառավարության ներկայացուցիչները հաճախ գալիս էին զանազան հաշվառումներ կատարելու՝ զինակոչիկներին, անասունները, բերքը և այլն: Արդեն 1914 թվականի աշնանը ընդհանուր զորակոչ հայտարարվեց, և զենքի կոչեցին տասնութից մինչև քառասունհինգ տարեկան բոլոր այր

* Գնահատելով մուսալեռցի մտավորական Գրիգոր Գյոզալյանի գեղարվեստական գրելաոճը, նպատակահարմար գտանք մեզ տրամադրած նրա ձեռագիր հուշերից մի ընդարձակ հատված ներկայացնել:

մտածում էին ամբողջ ընթացքում, որ ամեն ինչ ավարտվի հնարավորինս շուտ, որպեսզի կարողանան վերադառնալ իրենց տները: Այդ ֆոնի վրա Ռոմանը ցնծում էր: Նա ուրախ էր, որ ինքը ոչ մի կերպ կապ չունի այդ ամենի հետ, որ ինքը ոչ մի կերպ չի մասնակցում այդ ամենին: Ռոմանը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչպես կարելի է ուրախանալ մարդկանց մահվան կամ նրանց տառապանքների վրա

րովին անվտանգ մի ամբոխ՝ նույնիսկ զինված մի երեխայի քմահաճույքի առարկա:

Մայրամուտին մոտ հրահանգվեց պատրաստվել մեկնելու: Երուզեմն սկսվեց: Իրերը բարձեցին էշերին ու միմյանց շալակը: Հայրս ինձ նորից դրեց իշու վրա բարձած անկողիններին, քրոջս, որ ինձնից մի երեք տարով մեծ էր, կարգադրեց իշու համետի փոկից պինդ բռնել, որ մթանը հանկարծ չլինի թե միմյանց կորցնենք:

Եվ այսպես, կարավանը ճամփա ընկավ դեպի Անտիոք՝ շրջանի խոշորագույն քաղաքը:

Այսպես էլ ավարտվեց մեր ոդիսականի երկրորդ օրը:

Ամբողջ գիշերը գնացինք տարտամ ու գլխիկոր: Իշու վրայի անկողիններին նստած, համեմատաբար հանգիստ լինելով, երբեմն ես ննջում էի: Մեծ դժվարությամբ անցանք Որոնդեսի երկու վտակները՝ մեծ ու փոքր: Գարաչայները, որոնք հոսանքի մեր ճանապարհը հատող մասում քսան-երեսուն մետր լայնություն և մոտ կես մետր խորություն ունեին, և կամուրջ էլ չկար: Ցերեկով դժվար էր այդ քարքարոտ գետակներն անցնելը, ուր մնաց գիշերը, այն էլ՝ շալակներով բեռնավորված, երեխաներով ու ծերերով:

Առավոտ, մոտ ժամը իննին-տասին հասանք Անտիոք: Այն հիմնականում փռված էր Որոնդեսի ձախ ափին: Մենք մնացինք գետի համարյա ամայի կողմում, որտեղ դպրոցն էր և գերեզմանատունը: Ժողովուրդը տեղավորվեց դպրոցի ներսն ու դուրսը, ինչպես նաև գերեզմանատան մոտակայքում:

Որոշ ժամանակ անց պատանիներին ու մեծահասակ տղամարդկանց հավաքեցին ու խցկեցին դպրոցի առաջին և երկրորդ հարկի երկու սենյակները (արդեն միջին տարիքի տղամարդ չկար, բոլորին տարել էին բանակ): Նորից ստուգում ու խուզարկություն: Շուտով ժողովրդի մեջ տարածվեց «կոտորելու» շշուկը: Բոլորն իրար անցան, լաց ու կոծ, խուճապ: Նույնիսկ մի կին ուզեց իր գրկի երեխային գետը գցել... հասան ու խանգարեցին...

Մի քանի ժամ հետո տղամարդկանց բաց թողեցին: Կարծես նոր շունչ եկավ ժողովրդի վրա: Ի՞նչ հուզիչ տեսարան... Կարծես տարիների բաժանումից հետո նոր էին միմյանց հանդիպում...

Շատ չանցած նորից ճանապարհ ընկանք: Մոտ արևամուտին հասանք Անտիոքի Հարբին կոչված ջրաուտ ու հանելի զբոսավայրը, բայց առանց կանգ առնելու շարունակեցինք մեր ճամփան մի նեղ կիրճով... Եվ ավարտեցինք մեր ուղևորության երրորդ օրը...

Արևը հորիզոնից մոտ երկու գրկաչափ արդեն բարձրացել էր, երբ հասանք մի հարթավայր, տիպիկ անապատային: Կլիման էլ իրեն խիստ զգացնել էր տալիս ծովամերձ շրջանի բնակիչների համար: Արևն ասես խանձում էր: Բոլորս էլ շատ էինք նեղվում շոգից: Ուղեկցող ոստիկաններն իհարկե գիտեին ուր են տանում մեզ՝ ոչ դրախտ...: Իսկ մենք իզո՞ր էինք հանգիստ ու ապահովություն երազում:

Անմիջապես լուր տարածվեց, թե տեր Մարկոսի հայրն ու մայրը չկան: ... Մեր առաջին զոհերը, այսինքն՝ մեր գյուղացիներից, մյուս գյուղերի խմբերից լուր չէինք ունենում:

Եվ այսպես օրեր, իրար հաջորդող, անորոշ երթի մեջ, դեպի Սիրիական անապատի խորքերը...

Մի երեկո հասել էինք կիսավեր Մըղրկ բերդի ստորոտը, որտեղ մոտ քսան մետր տրամագծով մի լըճակ կար: Անասուններն այդ լճակում էին հագեցնում իրենց ծարավը՝ մտնելով ջուրը և ամբողջությամբ պղտորելով այն: Ջրի ուրիշ ոչ մի աղբյուր չկար: Մենք նույնպես խիստ ծարավել էինք և ստիպված այդ լճակից պիտի օգտվեինք: Մարդիկ թաշկինակ կամ այլ լաթի կտորների օգնությամբ սկսեցին քիչ-քիչ իրենց ծարավը հագեցնել: Ես էլ նույնը փորձեցի: Ջուրը ոչ միայն պղտոր էր, այլև ամբողջությամբ լեցուն էր զանազան գեռուններով: Հազիվ կարողացա լեզուս թրջել, խմել՝ անհնար էր:

... Արևը մայր էր մտնում. ժողովուրդը հանգըստանում էր: Մի անկյունից լաց ու կոծ լսվեց... Մանկական ընկերոջս՝ Հակոբ Բալջյանի մոր մահվան լուրը տարածվեց: Կեսօրվա տապին չդիմանալով՝ խեղճ կինն ընկել էր ճանապարհին ... ու այդպես էլ չէր կարողացել վեր կենալ...

Մեր երթը տևել է երկու-երեք շաբաթ: Սեպտեմբերի սկզբներին հասանք Դամասկոսի ենթակայության Համմա քաղաքի ընդունման-առաքման ճամբար, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ դժոխք..., որը քաղաքից մոտ կես ժամվա ճամփա էր: Ամենուրեք վրաններ՝ ամենատարբեր գույների: Նույն ցցից կապված մի քանի պարաններ՝ խաչաձև, անկարգ: Կային նաև վրաններ, որոնք ընդամենը մի լաթի կտոր էին հորիզոնական փայտից կապած, մեկ-երկու հոգու համար: Վրանների այդ կույտը մի իսկական մրջնանոց էր ներկայացնում՝ անփողոց ու ճանճերի ամպերով ծածկված:

Չկար մի վրան առանց հիվանդի: Պառկած մարդը հիվանդ էր համարվում, որ երկար չէր մնում կենդանի, մահանում էր ու հեռացվում:

Շատերը նստած էին մահանում: Դիահավաքները, բժշկապետի ուղեկցությամբ, մեծ դժվարությամբ էին խճճված վրանների արանքից տանում մեռածներին:

Ճամբարում հսկողությունը և՛ դժվարացել էր, և՛ թուլացել: Հիվանդ, համաճարակով համակված ժողովուրդը ի՞նչ կարող էր անել կամ ու՞ր կարող էր գնալ: Այնուամենայնիվ լինում էին մարդիկ, որոնք ինչ-որ կերպ կարողանում էին ճամբարից դուրս պրծնել ու իրենց գոյությունը քարշ տալ մոտակա գյուղերում: Հայրը Համմա քաղաքում կարողացավ մի սենյակ վարձել, որը մեզ դրախտ էր թվում ճամբարի համեմատ: Ոստիկանները հայրիկի տեղը շուտով գտան ու ստիպեցին թաղման կարգ կատարել մահացածների համար: Չգիտես ի՞նչ դիվանագիտություն էր և ու՞մ հընազարքն էր դա:

«Պարտականության» կատարման առաջին օրը հայրիկն այնպես տանջահար էր եղել, որ երբ երեկոյան տուն եկավ շղթայի նման ընկավ անկողինն՝ առանց ուտելու կամ խմելու:

Գերեզման կոչվածը խոր, լայն ու երկար մի խանդակ է եղել՝ երկու-երեք հարյուր մեռելների համար, ուր մեռելակառքերով՝ մեռած կամ կիսամեռ մարմինները լցրել են ու կարգադրել «թաղման կարգ» կատարել: Շրջանում հայրս միակը չի եղել: Համաճարակը «առատ հունձ» է մատուցել:

Հայրս երկար չդիմացավ, ու մենք չորս-հինգ օր հետո փախանք այդտեղից ու պատսպարվեցինք վրանի տակ, Որոնդես գետին մոտ, երկաթուղային կայարանի մերձակայքում: Այստեղ էլ երկար չմնացինք՝ խուսափում էինք Հոմս քշվելուց: Ոստիկանները քաղաքում կամ մերձակայքում հայտնաբերված գաղթականներին ետ էին բերում ճամբար, որպեսզի հետո քշեն Հոմս կամ այլուր: Ժողովրդի մեծ մասը օգտագործում էր իր բերած պաշարը՝ երբեմն պակասածը քաղաքից բերելով: Անապատային շոգը, անտանելի ծարավն ու սանիտարական տարրական պայմանների բացակայությունն էին տանջահար անում մարդկանց:

Մի երեկո Հովհաննեսենց Անդրեասը մեզ մոտ էր եկել՝ իր ու ընդհանուր հոգսերից զրուցելու: Խոսքի արանքում նա պատմեց ինչ-որ հունգադավան բնակիչներով մի գյուղի մասին: Իբր ձմռանն այնտեղ այնքան ցուրտ է, որ տղայի մեզը մինչև գետնին հասնելը արդեն սառչում է: Բայց՝ քանի ժողովուրդը քրիստոնյա է, գուցե այդ գյուղում ապրելն ավելի հանդուրժելի լինի: Հորս միտքը պղտորվեց, առանց այն էլ գոհ չէր մեր տեղից, հաճախ էր խոսում այլ շրջան փոխադրվելու մասին:

Մի երեկո էլ հայրս մի արաբի հետ պայմանավորվեց մեզ օգնելու համար՝ համեմատաբար ավելի ապահով մի տեղ առաջնորդելու նպատակով: Հաջորդ առավոտ ադամամութին արաբը ներկայացավ իր ավանդական իշուկով, ու ճանապարհ ընկանք դեպի նոր ապաստարան՝ Մուհարդի: Ամբողջ օրը քայլեցինք մինչև տեղ հասանք: Բավական մեծ գյուղ էր՝ ընդարձակ, ամայի անապատում:

Տեղավորվեցինք Աբու էլ Ասիի մի երկարավուն գոմում: Մարտ ամսի սկզբից չորս հիվանդ կար մեր ընտանիքում՝ հայրս, մայրս, մորաքույրս տատս, որ ամուսնուն թողած մեզ էր միացել Համայից, և ես: Ես ջերմախտով էի վարակված, մյուսների մասին ոչինչ չեմ հիշում: Ոտքի վրա էին միայն տասնվեց տարեկան քույրս՝ Վարդուհին և երեք տարեկան եղբայրս՝ Անդրանիկը: Քույրս հազիվ էր հասցնում մեզ՝ հիվանդներիս ջուր մատակարարել. մոտ մեկ ժամվա ճանապարհ էր միջին Որոնդես գետը՝ ջրի միակ աղբյուրը:

Մարտի 17-ին հայրս ուղեղի ցնցում ստացավ և մի քանի օրով կորցրեց գիտակցությունը: Երկու օր հետո Սարգիս հորեղբայրս՝ Մարիամ քրոջ ու Մարթա քեռու հետ եկավ մեզ մոտ, չիմացա՝ ինչու: Հենց այդ օրն էլ մայրս մահացավ: Դիակը բակում դրեցինք: Հորեղբայրս, քրոջ ու քեռու օգնությամբ, մորս թաղումը կազմակերպեց հաջորդ օրը՝ առանց քահանայի ու թաղման կարգի: Հայրս բոլորովին չէր զգացել մորս մահը: Օրեր անց, երբ հորս գիտակցությունը վերականգնվում է, ընկատում է, որ մայրս չկա: Խեղճ հայրս իր հիվանդ վիճակում դառնագին լաց եղավ: Ես էլ չգիտեմ ինչպես անցավ մորս մահվան առաջին օրը, միայն այն եմ հիշում, որ ամբողջ օրը հեկեկում էի ու լաց լինում, իսկ թաղումը բոլորովին չեմ պատկերացնում, թե ինչպես կատարվեց:

Հորս հիվանդությունն ամիսներ տևեց: Դրա հետ էլ մորս բացակայությունը խիստ բացասաբար անդրադարձավ մեզ վրա: Մենք մեր ցավերի մեջ խճճված՝ համարյա չէինք նկատում մեր շրջապատում տեղի ունեցող անցուդարձը: Մեր հիրարանցման մեջ, մեր անուշադրությունից օգտվելով գողացան հորս փարաջան, որի բղանցքին կարված պահված էր տասնհինգ օսմանյան ոսկի: Մնացինք առանց դրամի: Կորցրինք տան վարձ վճարելու հնարավորությունը, որի պատճառով մեզ տնից դուրս արեցին: Ստիպված միացանք ուրիշ երեք-չորս ընտանիքների և ապրեցինք մի այլ գոմում: Ապրում էինք մեզ հետ բերածը ծայրահեղ խնայողությամբ օգտագործելով և ունեցած դրամը խիստ անհրաժեշտ դեպքում ծախսելով:

Տակավին հայրս չէր ապաքինվել, երբ հավաքեցին քահանաներին ու մենք՝ ես, երեք տարեկան եղբայրս ու տասնվեց տարեկան քույրս, կրկին որբացանք... Մեջներս աշխատող ձեռք չկար, քույրս նախընտրում էր սովամահ լինել, քան թե ձեռք երկարելով մուրացկանություն անել: Այդպիսով՝ տանը որպես «տղամարդ» ես էի մնացել, ես էլ քահանայի զավակ՝ ո՛չ գողանալ գիտեի, ո՛չ էլ հափշտակել կարող էի: Մնում էր սպասել Աստծո ողորմածության...: Հարկադրված դես ու դեն էի ընկնում՝ մի կտոր հաց կամ ուտելիքի այլ մնացորդ ձեռք բերելու համար, ում պատահեր՝ երես էի պնդացնում, խնդրում էի, աղաչում, օրինում ու Աստծո ողորմածությունը մաղթում...: Այսպիսով օրվա ընթացքում հազիվ էի կարողանում մի կերպ մեր գոյությունը պահել ու սնունդ ապահովել: Ընդհանրապես կյանքը խիստ էր դժվարացել նրանով, որ կառավարությունն արդեն հավաքել էր ամբողջ հացահատիկը բանակի համար, և գյուղացին ինքն էլ ապրում էր իր ունեցած-չունեցածով, էլ ու՛ր մնաց, որ մեզ նման անտունանտերներին կարողանար պահել-կերակրել: Մեղադրել չի լինի. ժողովուրդն ինքն ընդհանրապես բոլորովին էլ չար չէր և ոչ էլ լցված էր ատելությամբ՝ մեր նկատմամբ: Մարդիկ շատ անգամ խղճահարվում էին, բայց ինչ կարող էին անել, երբ իրենք էին կիսաքաղց: Հաճախ անհնծում էին կառավարությանը, պատերազմին պատճառ եղածներին, մեզ տնից-տեղից հանողներին, բայց ի՞նչ օգուտ, մեզնից շատերը սովամահ էին լինում: Հահանայահավաքից մի քանի շաբաթ անց մեզ մոտ մի թուրք մոլլա հայտնվեց՝ իր օգնական գրագրով: Մոլլան կարգադրեց հավաքել շրջանում եղած բոլոր գաղթականներին: Մի տասնհինգ րոպե անց քսան-քսանհինգ հոգի ժողովվեց: Մոլլան բավական երկար քարոզ կարդաց մեզ, պարզեց մահմեդականության առավելությունները՝ քրիստոնեության նկատմամբ.

- Ձավակնե՛րս, - ասաց հոետորը, - այսօր դուք մոլորված եք ձեր քրիստոնեական հավատքով: Քրիստոնեությունը ժամանակին ճիշտ կրոն է եղել: Դրա համար էլ մենք պաշտոնապես ընդունում ու հարգում ենք ձեր Հազիրեթի Իսային (Քրիստոսին) որպես մեծ մարգարե: Բայց նրանից հետո եկավ Հազիրեթի Մուհամմեդը և ոչ թե նոր կրոն ստեղծեց, այլ ձեր իսկ աստվածությունն ընդունեց, շատ բաներ ավելացրեց, սրբագրեց ու կատարելագործեց: Մեկ խոսքով՝ ուղղակի քրիստոնեական ճնացած կրոնը բարեփոխեց: Դրանով

մաիմեդական կրոնը մեծ առավելություն ստացավ քրիստոնեության նկատմամբ: Ձեր ամենամեծ սխալն այն է, որ դուք Քրիստոսին ընդունում եք որպես Աստծո որդի... մեղա՛, մեղա՛, մեղա՛... Աստված կին ունի՞, որ որդի էլ ունենա... Դրա համար եմ ասում, որ դուք ուղղակի մոլորվա՛ծ եք: Արդ մեր կառավարությունը ողորմած է, բարեգութ ու ներողամիտ, և ինձ այժմ քաղցր պարտականություն է տրված ձեզ դարձի՝ իսկական հավատի բերել: Այժմ, - խոսքն ուղղեց գրագրին, - բա՛ց արա սուրբ մատյանը և արձանագրի՛ նոր մաիմեդականների անունները:

Ապա՝ առանց մտածելու ժամանակ տալու, մոլլան նորից դիմեց մեզ. - Ո՞վ է առաջին պատվավոր նոր մաիմեդականը:

- Ե՛ս, - գոռաց Պարպուրյան Հակոբը: - Անունս դրեք Մուհամմեդ...

- Աֆերի՛մ, օղլու՛մ, աֆերի՛մ: Իսկ կնոջդ անու՞նը:

- Աիշա, - կրկին բղավեց Պարպուր Հակոբը:

Եվ այսպես, մեկ ժամվա մեջ և մեկ ժամվա համար քսան-քսաներինգ քրիստոնյա հայեր դարձան մաիմեդականներ...

Իհարկե մեր շրջանի դավանափոխությունը միակը չէր, և այլ շրջաններում նույնպես տեղի են ունեցել նման արարողություններ:

Նշենք, որ սա Ջեմալ փաշայի դիվանագիտական հնարավոր խաղերից մեկն էր: Նա անուղղակի տեղյակ է եղել Հալեպի նահանգապետ փաշայի թաքուն հայասիրությանը: Ջեմալ փաշան գիտեր նաև, որ Հաճընցի Կարապետ աղա Կեովտերելյանի գլխավորությամբ ու Հալեպի «Հոթել Պարոնի»* տիրոջ ու մի քանի այլ նվիրյալների աջակցությամբ Հալեպի շրջանում բոլոր գաղթականները ցրվել են, կրոնափոխվել և այդպիսով տասնյակ ու տասնյակ հայեր փրկվել: Ջեմալ փաշան այս բոլորը գիտեր, բայց ի հեճուկս կենտրոնական կառավարության, որևէ խանգարիչ միջոց չէր ձեռնարկում: Հայասեր նահանգապետը կենտրոն զեկուցում է, թե շրջանում գաղթական չի մընացել: Սակայն հետագայում նահանգապետի գործունեությունը կասկածի տակ է առնվում, և հայասերը փոխարինվում է մի ճիվաղով:

Մուհարդի և Սկեղբի գյուղերի բնակիչները հունադավան էին: Մուհարդիում կային երեք արաբ մեծահարուստ ընտանիքներ: Հավանաբար ներքին համաձայնությամբ յուրաքանչյուր տան մեծ մայրը ամեն երեկո կամ մի պղինձ (մեծ բազմականոթ կաթսա) ճաշ կամ փլավ, կամ մի թոնիր հաց էր բաժանում մեզ՝ գաղթականներիս: Այդ մայրիկներին մենք նույնպես «մայրիկ» էինք կոչում: Հատկապես նրանցից մեկը՝ Ապպութ Բայթարենց մայրիկը, տարբեր «մայրիկ» էր: Նա միշտ հացն ու ճաշը կամ կորկոտե փլավը միասին էր բաժանում: Բացի դրանից, այդ մեր «մե՛ծ» մայրիկը հացի կտորներ էր պահում իր լայն գոտու ծալքերի արանքում, որպեսզի ցերեկը բաժանի սովալլուկ մարդկանց ու կատարի իր խղճի պարտքը, հոգեպես հանգստանա:

Իսկ ինչպե՞ս պատասխանեցին մեր գաղթականներն այդ գթասիրտ ընտանիքի բարեգործությանը: Մի գիշեր ութ-տասը հոգի բացում են Ապպութ Բայթարենց հորը ու ցորենը գողանում: Առավոտյան «մեծ» մայրիկը նկատում է դա ու անմիջապես հայտնում իր տղաներին: Սրանք երկաթե շղթաներով ու տոպրակներով գնում են հայերի մոտ: Խորամանկ հայերն իրենց կրակարանը փորել են, ցորենը լցրել փոսը ու հետո ծածկել մոխրով: Փորձառու տղաները հեշտությամբ գտնում են գողացված ապրանքը: Եվ երբ նրանք վերցնում են ցորենը, «մեծ» մայրիկը խնդրում է տղաներին, որ յուրաքանչյուրին գոնե մեկ-երկու կիլոգրամ թողնեն. - Մե՛ղք են, սուվա՛ծ են... չարչարվե՛լ են...:

Լսել էի, որ Սկեղբի հունադավան գյուղում կյանքն ավելի տանելի է... Ջմեռ էր: Մի օր էլ չորս-հինգ ժամ ճանապարհ կտրելով՝ հասա Սկեղբի: Դեռ շուտ էր ողորմածների դուռը թակել: Թափառում էի փողոցներով, հանկարծ հանդիպեցի Եվա սանամորս մի բակում, ուր շատ գաղթականներ կային: Սանամայրս ինձ տեսնելով հուզվեց. «Այս ի՞նչ օրն ես ընկել, կնքահա՛յրս... հյուրասիրելու բան էլ չկա: Արի՛ գլուխդ ծնկներիս դիր, գոնե ոջիլներդ մաքրեմ, վաղը-մյուս օրը մեռնելու եմ... Ինձ կհիշես...» (Իսկապես էլ խեղճ կինը մի քանի ամիս անց սովամահ եղավ):

... Երեկո եղավ: Սովորականի պես որսի ելա: Ժամերով ապարդյուն թափառելուց հետո գտա գյուղի համբավավոր բարեգութ «մայրիկի» տունը՝ բակը, որ պղնձի գլուխն անցած մեկ-մեկ շերեփով ճաշ էր բաժանում... Սրան էլ փա՛ռք, ի՞նչ կարող ես անել...

Գիշերելու տեղ էր պետք ճարել: Մի բակ մտնացայտ արեցինք, ուր ապրում էր մի աղքատ ընտանիք:

- Տղա՛ս, ոչինչ չունենք, որ կարողանանք քեզ տալ՝ ո՛չ ուտելիք, ո՛չ քնելիք: Ինչպե՞ս մեզ մոտ կմնաս, - խղճահարված ասաց տան մայրիկը, որի արտաքինից արդեն հայտնի էր ընտանիքի ողբալի վիճակը:

- Ոչի՛նչ, մայրի՛կ, ինձ այնպես գետնին էլ կպառկեմ, - պնդեցի ես:

- Դու գիտես, որդի՛, հետո ինձ չմեղադրես...

Ցերեկը խեղճերը մի քիչ ցախ ու փուշ էին հավաքել, մայրամուտից քիչ անց վառեցին, որ սենյակ կոչեցյալը գոնե կարճ ժամանակով մի քիչ լուսավորվի ու ջերմանա: Ցախը վերջանալուց հետո սենյակն ընկավ կատարյալ մթության մեջ: Բոլորը քնեցին, ես էլ դրսից մի քար ճարեցի գլխատակիս համար ու մեջքիս փաթթոցը գետին փռելով՝ մի կերպ կուչ եկա սյան տակ:

Սկեբլիի ցուրտը համբավավոր էր: Գյուղը մի բլրի գագաթին էր փռված, բոլոր կողմերից բաց, եղանակը՝ խիստ ցամաքային:

Գիշերը մի ամբողջ հավիտենականություն դարձավ: Ցուրտը մինչև ոսկորներս էր թափանցել, մանավանդ՝ սոված էլ էի: Արևի հրագունդն էլ ասես խռովել էր. չէր ուզում ծագել ու մի քիչ ջերմացնել: Քունս բոլորովին կորել էր: Աչքերս հառած դռան ճեղքերին՝ ամբողջ գիշերն սպասում էի երջանկաբեր գալիք օրվան: Այսպես՝ դե արի ու դիմացի մինչև լուսաբաց... Հաստատապես որոշեցի՝ ինչ գնով էլ լինի պիտի վերադառնամ Մուհարդի, ա՛խ, թե միայն լուսանար...

Վերջապես դռան ճեղքից զգացվեց այգաբացը: Հանդարտորեն, զգույշ ու անաղմուկ քարս վերցրի ու դուրս եկա բակ: Քարը դրեցի իր տեղը, սփռոցս փաթաթեցի մեջքիս ու ճամփա ընկա: Արյունս կարծես սառել էր: Ազատ շնչել չէի կարողանում: Գետինը ծածկվել էր եղյամով ու բարակ սառույցով: Բոբիկ էի, ոտքերս արյունոտվում էին ու խիստ ցավում: Իբր քայլում էի, բայց հազիվ տեղումս ոստոստում էի միայն... Թվում էր, թե արցունքիս կաթիլները սառչում էին այտերիս: Հասա գյուղի աղբանոց: Արեգակի սկավառակը նոր սկսեց երևալ: Մի քիչ տաքանալու հույսով կանգնեցի պատի տակ, բայց՝ ավելի վատ: Աղբանոցի չորս կողմն աչք ածեցի՝ ինչ-որ կանաչեղեն գտնելու հույսով, բայց՝ իզուր...: Ամեն ինչից հիասթափված փորձեցի վազել բլուրն ի վար: Հազիվ մի քիչ տաքացա: Օունչս բացվեց, երբ արդեն ստորոտումն էի: Արևը մի երկու գրկաչափ բարձրացել էր հորիզոնից: Հեռվում նկատեցի մի հովիվ, որ ոչխարներն էր արածացնում: Ուղղվեցի դեպի խաշնարածն ու երբ բավական մոտեցա, սկսեցի կանչել, ձայն տալ: Կանչիս վրա հսկա գամփռը հաչալով վազեց իմ կողմը: Ես իսկույն պպզեցի: Շունը հասավ ինձ, շուրջս մի քանի անգամ պտտվեց, կատաղած աչքերը վրաս սևեռած՝ նստեց ու սկսեց հաճ-հատ հաչալ: Երբ հովիվը, տարիքն առած մի մարդ, մոտենալով ինձ՝ սաստեց շանը, խելոք կենդանին ձայնը կտրեց ու հեռացավ: Շունչ քաշեցի, վեր կացա: Հովիվը չոր հարցրեց. - Ինչ է եղել, ինչ ես ուզում:

- Խնդրում եմ մի կտոր հաց...

Ասես հենց ինձ էր սպասում, որ կուտակված մաղձը դուրս տար: Մի թունդ հայհոյեց մեզ բերողի՛ն էլ, տանողի՛ն էլ, այդ օրը հասցնողի՛ն էլ, պատերազմն ստեղծողի՛ն էլ, պատերազմողի՛ն էլ...: Մի խոսքով, էլ տեղ ու մարդ չմնաց, բաժին չունենար...: Ես արդեն հույսս կտրել և ապշահար լսում էի առավոտյան «ավետարանը»: Բայց ի զարմանս ինձ, մարդը գլուխը տարուբերեց, ձեռքը կոխեց ուսից գցած մախաղը, մի կտոր հաց հանեց ու ինձ մեկնելով թնդաց. - Դե՛, կորի՛, - ու, չսպասելով իմ շնորհակալություններին, բարեմաղթություններին ու օրհնություններին, շուռ եկավ ու հետացավ դեպի իր ոչխարները: Ես էլ շարունակեցի իմ ճանապարհը դեպի Մուհարդի:

Անցան ամիսներ...: Մի օր էլ գյուղում հայտնվեց տեր Մարկոսը: Գնացի այցելության և հետաքրքրվելու հորս մասին: Բոլորովին հյուծված, տանջահար եղած հազիվ մեզ մոտ էր հասել-վերադարձել: Այնքան էր չարչարված ու հոգնած, որ պատմելու տրամադրություն բացարձակ չուներ: Միայն այն ասաց, որ հայրս ողջ է, առողջ, դեսուդեն կողով է հյուսում ու վաճառում, իր գոյությունը մի կերպ քարշ է տալիս: Վերջում էլ երկու մեճիտիե տվեց՝ ասելով, թե դա իր իննարավոր խնայողությունն է, որ մեզ ուղարկում է՝ ծայրահեղ նեղ օրվա համար: Մեծ գանձ էր դա մեզ համար, բայց ոչ մի կերպ չէինք ուզում ծախսել, քանի դեռ կարողանում էինք չմեռնելու չափ մի բան ճարել:

«Հարստանալուց» մի քանի շաբաթ անց հայրս ինքն էլ եկավ: Մեր ուրախությանը չափ չկար: Խեղճը շատ էր տանջվել ու տառապել: Քսաներեք քահանա են հավաքել ու տարել կոտորելու: Հետո հրաշքով ինչ-որ կերպ շատերը փրկվել են: Այժմ հսկողությունը քոլորովին վերացել էր, ժողովուրդն էլ՝ ցրվել՝ ամենուր: Ստեղծված հնարավորությունից օգտվելով՝ մարդիկ ձգտում էին դեպի իրենց ծննդավայրը: Մի խումբ համագյուղացիներ, այդ թվում նաև Մարիամ հորաքույրս իր ամուսնու հետ, նույնպես ցանկացել են վերադառնալ իրենց կողմերը: Որոշել են գնալ Գուսեյր կոչված վայրը, որը համեմատաբար մոտ էր Անտիոքի շրջանին:

Հայրս նստեցրեց կողքին ու որոշակիորեն բացատրեց իր մտքերը:

- Տղա՛ս, - սկսեց նա, - տեսնում ես և զգում, որ ես մեկ փորձությունից մյուսին եմ գնում: Աշխատանք չկա: Մարդիկ ձգտում են դեպի ծննդավայր: Ամեն ինչ մութ է ու անհայտ: Ի վիճակի չեմ ընտանիքին բավարարելու այստեղ նստած: Մեր գյուղացիներից մի խումբ գնում է Գուսեյր: Երբ կհասնենք՝ հայտնի չէ: Մի բան պարզ է, որ այդ գյուղը մեր ծննդավայրին ավելի մոտ է: Ո՞վ գիտի, մի օր էլ մարդիկ տուն հասնեն: Ուզում եմ, որ դու միանաս այդ խմբին, գուցե հասնեք հաջողության, թեև հավանականությունը շատ չէ: Սա նման է Իսրայելի մարդոց երթին՝ Եգիպտոսից դեպի Կարմիր ծով և այնտեղից, Մովսես մարգարեի առաջնորդությամբ, Քանանու երկիր՝ Ավետյաց երկիր: Դուք պիտի ուղղվեք դեպի մեր նախնիների երկիրը՝ Մուսա լեռ, բայց առանց որևէ առաջնորդի: Ես էլ տարբեր ճանապարհով եմ ուզում բախտ փորձել: Ով առաջ տեղ հասնի, մի քիչ ամրանա, թող հետաքրքրվի ընտանիքի մյուս անդամների բախտով: Արդեն քրոջդ պատվիրել եմ, որ փարաջայիդ քղանցքին երկու բարդութ (երկուսունկես դոլարուշնոց) կարի՝ սև օրվա համար: Ուրիշ բան չունեմ քեզ տալու, բացի... օրհնությունիցս...:

Երկու օր անց մեր խումբը, որի մեջ էինք ես, Մարիամ հորաքույրս, իր ամուսինը և մեր հարևան Նաթանը, ուղևորվեց դեպի հայրենի կողմեր: Մեզ ընկերակցում-ճանապարհ էին ցույց տալիս երկու արաբ: Մի տասը օր անց հասանք Ճրսըր էլ Օուղուրի մերձակայքը: Մի առավոտ, աղոթքի ժամին մեր առաջնորդները փռեցին իրենց փոքրիկ գորգիկները, ծունկի եկան ու սկսեցին ամենօրյա ուղերձն ու փառաբանությունն Աստծուն: Մինչ այդ, մեր խումբը քիչ այն կողմ հանգըստանում էր: Մեկ էլ տեսանք՝ հեռվից երեք տղամարդիկ՝ մեկը հրացանով, դեպի մեզ են գալիս: Երբ մեզ հասան, հարձակվեցին մեզ վրա ու սկսեցին մեզ խուզարկել ամեն տեսակ սպառնալիքներով: Մինչդեռ մեր առաջնորդները դեռ աղոթում էին անխոով, ասես ոչինչ էլ չէր կատարվում իրենց շուրջը: Ավազակներից մեկն աչքը տնկել էր Նաթանի փարաջային: Սկսեց քաշկըռտել խեղճին, որպեսզի վրայից հանի փարաջան: Նաթանը խիստ ջղայնացած «դին» (դավանանքին, կրոնին) հայհոյեց: Ավազակը «դին» լսելով հասկացավ, որ Նաթանը իրենց հավատը հայհոյեց, ավելի գազազեց ու դմբուզը գործի դրեց: Խեղճը չդիմանալով ցավին՝ ակամա գոռում էր, ասես եզ էին մորթում: Լավ էր, վերջապես, մեր աղոթող ուղեկիցները երևի խղճահարվեցին, միջամտեցին ու մի կերպ ազատվեցինք ավազակների ձեռքից: Շատ չանցած դիմացից հայտնվեց Սարգիս հորեղբայրս իր որդու հետ: Հայրենակիցների

* Հալեպում հայկական հյուրանոց:

ետ զրուցելիս ինձ էլ ներկայացնելով խմբի մեջ հարցրեց, թե՝ ես ու՞ր եմ գնում: Ասեցի, թե ես էլ խմբի հետ ուզում եմ մեր շրջանին ավելի մոտ վայրեր՝ մասնավորապես Գուսեյր գնալ, և դա հորս ցանկությունն է միաժամանակ:

- Այնտեղ էլ գործ չկա, մարդիկ սոված են, գործ չկա:

- Հայրիկը ինձ ուղարկեց խմբի հետ, էլ ետ չեմ դառնա, - ընդդիմացա ես:

Բայց հորեղբայրս մեծի իրավունքով այնքան պընդեց, որ այլևս չկարողացա հակառակվել ու ստիպված վերադարձա իր հետ: Ոչ մի կերպ չէի հասկանում տրամաբանությունը, մարդիկ ձգտում ու գնում են իրենց ծննդավայրը, իսկ մենք, ընդհակառակը՝ հետևում ենք...

Վերադարձանք Կաստուն կոչված բնակավայրը, որը XI – XIV դարերին եղել է Հայկական Կիլիկիայի արևելյան սահմանամերձ բերդաքաղաքներից մեկը: Բնակավայրի բարձրադիր մասում՝ հավանաբար բերդի ավերակների վրա, տարածվել էր շուրջ հիսուն հայ ընտանիքներից բաղկացած գյուղը, որոնք գաղթել էին վերջին երկու տարիների ընթացքում: Գյուղն ուներ մի փողոց, որի երկու կողմում էլ շարված էին տները: Արևվելյան ծայրին կար մի փուռ՝ հաճախորդների համար նախատեսված առանձին մասով, որը միայն ծածկ ուներ: Փոի սրաճը միաժամանակ ծառայում էր անգործների ու թափառաշրջիկների հանդիպման յուրահատուկ վայր: Փուռը հաճախ ունենում էր նաև արաբ հաճախորդներ՝ շրջակա գյուղերից: Մենք՝ ես, հորեղբայրս ու նրա որդին, մեծ մասամբ գիշերում էինք հիշյալ ծածկի տակ: Հաճախ էլ գիշերն անցկացնում էինք գյուղի հարդանոցում՝ գյուղից մոտ երկու հարյուր մետր հետու, կալերին մոտ:

Այստեղ մնացինք մոտավորապես մի ամիս: Հորեղբայրս ու իր որդին չգիտեմ ինչպես, ես ապրում էի ջրով, խոտով ու սրա-նրա ողորմությամբ: Երբեմն էլ պատահում էր մանր-մունր աշխատանք կամ որևէ ծառայություն՝ մի կտոր հացի դիմաց:

Ես ունեի բրդյա մի փոքրիկ ծածկոց, որը ցերեկը որպես գոտի, գիշերը՝ որպես անկողին էի օգտագործում: Մի օր փոի սրահում երկու արաբ եկան: Նրանցից մեկը առաջարկեց ծածկոցս վաճառել հացով: Ես մերժեցի. - Չե՛մ ծախի...: Սա իմ ամե՛ն ինչն է: Փող առաջարկեց, դարձյալ չհամաձայնեցի: Արաբը ջղայնացավ: Ընկերը թե՝ ինչու՞ ես ջղայնանում, գիշերը կըգաս կհամաձայնի...:

Երեկոյան հորեղբայրս պնդեց, որ այդ գիշեր հարդանոց գնանք քնելու: Ես առարկեցի, բայց նա մնաց իր որոշման վրա:

- Հորեղբա՛յր, չգնանք՝ ծածկոցս կգողանան:

- Մի՛ վախեցիր, ես նրանց..., - ու մի շարան թունդ հայհոյանք:

- Խնդրու՛մ եմ, հորեղբա՛յր, չգնանք կամ դուք՝ գնացեք, ես՝ կմնամ:

- Ո՛չ, քեզ չեմ թողնի, միասին պիտի գնանք:

Չկարողացա հորեղբորս կամակորությունը կոտրել, գնացինք կալեր գիշերելու: Ճանապարհին հետևում նկատեցի մարդկանց ծխելը: Անմիջապես զգուշացրի հորեղբորս ու նորից խնդրեցի վերադառնալ փուռ: Մընացց աներեր: Գնացինք կալեր: Մինչև առավոտ կես քուն, կես արթուն, ահուդողի մեջ, ինչպես լուսացավ՝ միայն ես գիտեմ: Բարեբախտաբար այդ գիշեր բան չպատահեց: Հաջորդ գիշեր հորեղբայրս նորից որոշեց կալերում քնել, քանի որ հարդի մեջ ավելի հանգիստ էր ու տաք: Բայց ես բոլորովին էլ հանգիստ չէի զգում, աին ու սարսափը սրտիցս չէր դուրս գալիս: Այնուհանդերձ գնացինք կալեր գիշերելու: Հորեղբայրս իր տղայի հետ թաղվեց մի մեծ հարդակույտի մեջ, ինձ էլ մի տասնհինգ-քսան մետր հեռու մի հարդակույտ ցույց տվեց, որ պատսպարվեմ.

- Լա՛վ թաղվի՛ր հարդի մեջ, պի՛նդ փաթաթվիր ծածկոցով... ու քնի՛ր:

Հոգնել էի, քնել եմ: Մեկ էլ այն զգացի, որ ծածկոցս սահում է վրայիցս: Կիսաբաց աչքերիս առաջ պարզվեց սարսափազդու մի կերպարանք: Մինչև կիսախեղդ ձայնով օգնություն գոռամ, ծածկոցս արդեն թուա՛վ... Տեղումս նստած՝ սկսեցի լաց լինել կիսաձայն...

- Ի՞նչ է, ի՞նչ է, - այն կողմից գոռաց հորեղբայրս:

- Չասեցի՞, հորեղբա՛յր, որ ծածկոցս պիտի տանեն, չհավատացի՞ր:

- Տարա՞ն:

- Այն էլ ինչպե՞ս:

- Ես նրանց ներս ու մերը... դինն ու յոթը պորտը...

Օրերից մի օր էլ մի արաբ եկավ, աշխատող մարդ ուզեց: Հորեղբայրս ինձ ցույց տվեց: Գնացի՝ մի փոր հացի հույսով: Խոստումները մեծ էին: Տեղ հասանք արևամուտին: Մեկ դեցիմետրի չափ արաբական մի փոքրիկ բաղարջ տվեց ու գիշերելու համար վրանից դուրս մի տեղ առաջարկեց: Շան պես կուչ եկա դրսում մինչև առավոտ՝ հաջորդ օրվա ավելի լավ պայմանների հույսով: Պարտականությունս լոլիկի դաշտի պահակությունն էր, վարձս՝ մի հաց ու մի տհաս լոլիկ: Առաջին օրն անցավ, երեկոյան լոլիկի դաշտի տերը եկավ, ինձ տուն տարավ, մի հացիկ տվեց ու մի լոլիկ: Իսկ երբ գիշերելու տեղ խնդրեցի վրանում, նորից թույլ չտվեցին, ասեցին, որ իմ տեղը դրսում է, երեկվա տեղը: Այլընտրանք չունեի: Հաստատապես որոշեցի փախչել այստեղից: Հաջորդ օրը նորից մի փոքրիկ հաց ստացա: Դաշտը ճանապարհի եզրին էր: Շուրջը բոլորովին անծանոթ: Արևը բավական բարձրացել էր, համարյա անցորդ չկար այլևս: Ամենուրեք՝ ամայի: Պատեհ առիթին դուրս եկա ճանապարհ ու սկսեցի վազել, որքան կարող էի արագ՝ ասես կախաղանից էի փախչում:

Կեսօրն անց էր արդեն, երբ մեր փուռը հասա: Հորեղբայրս իր տղայի հետ նստած ... ճաշ էր քշում: Պատմեցի գլխիս եկածը և ասեցի, որ այլևս այն կողմերը չեմ գնա: Հաջորդ օրը նույն արաբը նորից եկավ ինձ տանելու, բայց ես համառեցի չգնացի՝ չնայած բոլոր հորդորներին:

Մոտ մի ամիս անց, մի առավոտ՝ ադամամութին, հորեղբայրս մեզ արթնացրեց, որ ճամփա ընկնենք:

- Ու՞ր ենք գնալու, հորեղբա՛յր:

- Ես էլ չգիտեմ, դեպի Մուհարդի...

Սարգիս հորեղբայրս կնոջն ու աղջկան Հոմսի գյուղերից մեկում թողնելուց և մորը՝ տատիս թաղելուց հետո իր որդու ու հորս և ուրիշ մի քանի հոգու հետ վերադառնում է դեպի Համա: Միմյանց կորցնում են, ինքը որդու հետ առանձին է թափառում: Հասնում է Անտիոք: Պահակների քնած պահին Որոնդես գետի կամուրջից աննկատելիորեն անցնում և ուղղվում է դեպի գյուղ: Ընդհանրապես, կասկածի տակ չընկնելու մտոք ճամփորդում է գիշերով: Հասնում է գյուղ: Մեր տնամերձի նոնենիների տակ իր ձեռքով հորած մեր մի կուժ պահիրը գտնում է, կուժը առած գիշերով գնում է մինչև թրթաստան-շերամատներ: Այդտեղ էլ ապահով չի զգում, բարձրանում է սարալանջ: Հռոմեացիների կողմից փորված վիմափոր ջրատարի մի խոռոչից ներս է մըտնում, իր և տղու համար ծվարելու տեղ է պատրաստում: Ցերեկը թփերի արանքից դիտում-հետազոտում է թրթաստանները: Հարևան թաթերը, օգտվելով այն բանից, որ տերը աքսոր է քշված, շերամատների ծածկերը և պատերը քանդել, գերաններն ու քարերը որպես շինանյութ թալանել, տարել էին: Մնում էր գիշերով իջնել պարտեզները՝ օգնստոսյան թուզ կամ այլ մրգեր ուտել ու մի քիչ էլ գիշերվա համար տանել, պահիրմրգերով օրը անցկացնել: Ամբողջ մի ամիս: Պահիրը հատնում է, թուզն ու մրգերը քչանում, գիշերով գտնելը դժվարանում է: Վայրի անասունի պես ապրելը վերջ չունի, գյուղերը՝ դատարկ, տները՝ կիսաքանդ, ամայություն: Վախն ու թուրքի սարսափը նրան ստիպում են նորից դիմել դեպի Համայի քիչ տանելի շրջանը: Անհայտ ետդարձի ժամանակ ինձ հանդիպեց, և մենք վերադարձանք: Այս վերադարձի շնորհիվ կարողացա քրոջը՝ Վարդուհուն գտնել ու հայրիկի մոտ վերադառնալ: Մի պահ ուրախացա. գնալու եմ մերոնց՝ հայրիկի, քույրիկի և Անդրանիկի մոտ... Ո՛վ գիտի, գուցե հանդիպենք: Մենք՝ երկու հասակակիցներս առաջ ընկանք, մինչև ինքը, փոի հետևում ինչ-որ բան էր փնտրում, եկավ մեզ միացավ ու դեմ առինք ձախ կողմի բարձրադիր հարթավայրի լանջին, որը բավական բարձր էր: Հարթալանջը փշոտ թփերով էր ծածկված, արահետ, կածան էլ չկար: Բոկոտն, թփերը ճանկոտելով, դժվարությամբ էինք բարձրանում: Մոտ երեք ժամ տևեց մեր տանջալի և արյունլվա վերելքը: Եվ վերջապես հաղթահարեցինք ու հասանք մի բավականին լայն ճանապարհ, որը հավանաբար միջգյուղական ճանապարհ էր:

Հազիվ կես ժամ գնացինք: Դիմացից մի խումբ արաբներ եկան: Պատերազմի տարի է, աղքատությունը ընդհանուր է: Մեզ կանգնեցրին: Հորեղբայրս շալակին ուներ մի կեղտոտ վերմակ, որովհետև միշտ գտնիններն ենք պառկել-քնել և ծրարած ինչ-որ իրեր: Քրքրեցին, հետաքրքրական բան չկար, թեև ինչ-որ բան վերցրին ու ազատ թողեցին, փա՛ռք Աստծո: Թեքվեցինք դեպի ձախ՝ արևելք, արևը արդեն սկսեց ընեղել, ճանապարհի ձախից երկու զինված երիտասարդներ գոռացին. - Կանգնե՛ք, - Պարտավոր ենք կանգնել՝ վատը շրջանցելու մտոք: Հորեղբորս կապոցը նայեցին, տնտղեցին. - Հավաքե՛ք ու կորե՛ք անմիջապես, - ասելով հեռացան: Հավաքվեցինք ու շարունակեցինք մեր ճամփան:

Մի ձորակի կեսին հասանք, մի ձայն կարգադրեց. - Կանգնե՛ք, - Մի ժամ առաջվա ավազակներն էին: Մեկը հրացանն ուղղեց հորեղբորս կրծքին, մյուսը՝ մահակի մի քանի հարվածներով մեզ դաս տվեց ու կարգադրեց կապոցը իջեցնել: Վերմակը բացեց, տնտղեց, մի կողմ դրեց, ուրիշ բան չկար, որ վերցնեն, հորեղբորս որդուն նայում, երեսին էին թեքում: Ինձ խուզարկեցին. բան չգտան: Իմ տախտակ-այբբենարանի մախաղը վզիցս կախ էր. վերցրին, տնտղեցին. - Վերմակին կարկատան կլինի, - ասելով, վերմակի տակ դրին: Գործը ավարտեցին, հրացանի ապտանալիքով ու մահակի հարվածով մեզ ճամփու դրին:

Մոտիկացանք մի գյուղի: Արևը զենիթին էր հասել, կրակ էր թափվում: Գյուղ չմտած՝ երկու երիտասարդներ մոտեցան մահակներով: Անհետաքրքիր էինք, բայց նորից խուզարկեցին: Վերջապես գյուղ մըտանք: Թնդանոթը որոտաց: Կեսօրվա ճաշի ժամն էր: Հորեղբայրս ինձ ասաց. - Մի քանի դուռ թակիր (միջանկյալ պետք է ասել, որ գյուղերում ցերեկով դուռ ծածկելը սովորություն չէ): Ինքն իր տղու հետ ուրիշ կողմ ուղղվեց, ասելով՝ քիչ հետո այստեղ կգաս, կսպասես: Այդպես էլ արեցի, առանց որևէ կոճոն ձեռք բերելու: Պատերազմն ու կառավարական թալանը մարդկանց սիրտը քարացրել էին...: Չգիտեմ, ինչքան սպասեցի: Գրիգորը՝ հորեղբորս տղան, երևաց:

- Ու՞ր է հայրիկը:

- Չգիտեմ, երկու մարդ հետն էին խոսում: Հայրիկն ասաց՝ գնա, ճանապարհ ընկնք, ես կգամ...

Սա հաճելի պատասխան չէր. նա հանգիստ էր, բայց ես մտահոգվում էի: Երկու մարդիկ ի՞նչ գործ ունեն նրա հետ, լավ բան չէի մտածում: Մենք ճամփա ընկանք: Ոտքերս ինձ չէին հնազանդվում, աչքս՝ միշտ ետ էր: Շուրջ տասը րոպե անց նա երևաց երկու երիտասարդների հետ, որոնք քմծիծաղում էին: Հանգստացա: Հորեղբայրս ողջ է... Հորեղբայրս խիստ էր ջղայնացել: Նա ասել է, թե՝ Անտիոքից ենք: Ուզեցել են հավաստիանալ թղպատված է, թե՝ ոչ...

Արևը թեքվել էր դեպի մայրամուտ: Գյուղեզրին մեզ ուղեկից դարձավ մի արաբ պառավ: Հույսի մի ընշույլ թափանցեց մեր էության մեջ: Վերջապես մի ուղեկից ունենք...: Հորեղբայրս սկսեց քչին-քչին զրուցել պառավի հետ: Պառավը սկսեց կարեկցել մեզ: Ճանապարհն անցնում էր ցամաքած, արևի տապից գորշացած մի ձորով: Ձորի համարյա կեսին, ձախ բարձունքներից մի աճարկու ձայն եկավ. - Կանգնե՛ք: - Երկու եղուզակ լանջն ի վեր գլորվում էին դեպի մեզ: Մեկը՝ հրազենով, մեկը՝ մահակով. - Հանվե՛ք, - կարգադրեցին՝ չընշարժվեցինք: Փոքրերս մեկ-մեկ մահակ բաժին ստացանք: Հորեղբորս կրծքին ուղղված հրացանը և մահակի հարվածները նրան սթափեցրին: Հանեց ֆարաջան ու վարտիքը, ներքնաշապիկը, ետևից՝ վերից վար ճղրված, կեղտոտ: Գողացված խմորի բութ խենչալը աչքի խփեց. մահակավոր ավազակը այդ խենչալը վերցրեց, «վավ փոր կճղի» ասելով բռնեց կիսամերկ հորեղբորս օձիքից, խենչալը բարձրացրեց ու իջեցրեց. ներքնաշապիկը աջկից ամբողջությամբ ճղվեց: Սկսեցին քա՛ֆքա՛ֆ խնդալ: Խեղճ հորեղբայրս էլ ակամա խնդաց:

Մեր շորերը հավաքեցինք մի ծրարի մեջ: Հորեղբայրս խնդրեց խուզարկել ու շորերը ետ տալ՝ մեր մերկությունը ծածկելու համար: Ինձ վրա մնացել էր մի ներքնաշապիկ՝ մինչև պորտս: Մահակի՝ զենքի օգնությամբ հորեղբորս խելքի բերեց, ու մենք հեռացանք:

Շուրջ երկու կիլոմետր հետու պառավը նստել ճամփեզրին մեզ էր սպասում: Երբ մոտը հասանք ու նա մեզ այս մերկ վիճակում տեսավ, սկսեց հոնգուրհոնգուր լաց լինել ու անիծել այդ դժբախտ իրավիճակի պատճառները և մարդկային գազանությունները, անխղճություններն ու սադիզմը:

Շարունակեցինք մեր ճամփան: Արևը մայր մտնելուն հազիվ մեկ-երկու գրկաչափ բան էր մնացել, երբ մի այլ, բոլորովին անծանոթ գյուղ մտանք: Մեր ուղեկցուհին բաժանվեց մեզանից՝ մեզ հաջողություն մաղթելով:

Մենք նստեցինք մի տան պատի հովանու տակ, քանի որ դժվար էր կիսամերկ վիճակում մարդկանց երևալ: Դիմացից՝ քառասունի մոտ մի կին, մանիչը ձեռքում ինչ-որ թել մանելով, մեզ մոտեցավ, բարևեց ու սկսեց հարցուփորձը: Հորեղբայրս կծկվել էր. ճղված շապիկով առաջն էր ծածկում՝ քամակն էր բացվում, քամակն էր ծածկում՝ առաջն էր բացվում... Անկախ իրենից կծկվելով՝ մի բուռ դարձավ: Երբ իմացավ, որ մենք... Անտիոքի մոտերքից ենք, Աստծո ողորմածությանն ենք մնացել ու թափառելով մեր բախտն ենք որոնում, մանիչը մի կողմ դրեց, թևերը բացած գոհություն հայտնեց Աստծուն.

- Փա՜ռք Աստուծո, փա՜ռք Աստուծո... Փա՜ռք Աստուծո, որ հայ չեք...

- Ինչու՞, քույրիկ, միթե՞ հայերը այնքան փիսն են, վատը, - ասաց հորեղբայրս, աղճատված արաբերենով:

- Ո՛չ, եղբա՛յր, - ասաց կինը, - հայերը գուցե վատ չեն, բայց անցյալ տարի մեզ մոտ ժանդարմները հիսունի չափ հայ ընտանիքներ բերեցին՝ երեխաներից, կանանցից ու ծերերից բաղկացած: Հաջորդ օրը պատահիներին ու ծերերին հավաքեցին ու իբր աշխատանքի տարան ու չվերադարձրին: Ջահել կանանց ու աղջիկներին ջոկեցին՝ մեջ ընդ մեջ բաժանեցին, մնացածներին էլ տարան անհայտ ուղղությամբ ու կորցրին... Փա՜ռք Աստծո, որ հայ չեք...

Կինը մանիչը վերցրեց ու շարունակեց իր ճամփան. մեզ մատնելով աի ու սարսափի...: Եվ այսպիսի գյուղում մենք պիտի գիշերեինք...

Արևմուտքից աղջամուղջը փոեց իր թևերը: Դըժվար էր հայը թուրքից ջոկելը, վեր կացանք ու, ըստ սովորության, բաժանվեցինք, Աստծո ողորմությունը և մարդկանց գութը խնդրելու ու ողոքելու, նախօրոք՝ մարդկանց գլխին աստվածային օրհնությունը թափելով: Չեմ կարող ասել՝ մարդկանց սրտերը քարացե՞լ էին, թե՞ մարդիկ չար էին դարձել...: Մի քանի դուռ ապարդյուն բախելուց հետո վերադարձա պայմանավորված կետը, ուր քիչ անց հորեղբայրս եկավ իր որդու հետ: Միմյանց օգնելու, միմյանցով հետաքրքրվելու զգացումը վերացել էր, էլ ինչու հորեղբայրս ինձ իմ ճանապարհից ետ դարձրեց՝ մինչև այսօր էլ ես չհասկացա...

Մոլլան գիշերային աղոթքը առ Աստված հղեց միևնույն գագաթից ու լռեց: Մենք երեքով անծանոթ փողոցներով դեգերում էինք, երբ դիմացից մի կին երևաց, մի ծրար ձեռքում, հորեղբայրս հարցրեց. - Քույրի՛կ, մզկիթը որտե՞ղ է...

- Գիշերվա այս ժամին մզկիթը ձեր ինչի՞ն է պետք:

- Գնանք, մեր գիշերվա աղոթքն անենք ու քնելու տեղ փնտրենք:

- Է՛ն է, այնտեղ, այն փոքրիկ դուռը...

Կնոջից բաժանվեցինք ու գնացինք դեպի մատնացույց արված դուռը: Բոթեցինք, դուռը բացվեց, կամացուկ, վախվորելով ներս մտանք, կիսաճածկ մի ընդարձակ սենյակ, պատերի տակին հին ու մին փսիաթներ՝ անխնամ դեսուդեն նետված:

- Այստեղ ու՞ր կքնենք, հորեղբա՛յր:

- Սու՛ս, ձայն մի՛ հանեք:

Նա մի փսիաթ փռեց. - Դե՛, պառկե՛ք, - մեկ ուրիշ փսիաթ էլ վրաներս քաշեց, - դե՛, քնե՛ք...

- Հորեղբա՛յր, արաբները կգան, մեզ կմորթեն:

- Չե՛ն գար, ես նրանց...: Շուտ վեր կկենանք:

Իրոք, աղամամութը չփարատված նա մեզ՝ երեխաներիս արթնացրեց ու անմիջապես մզկիթից դուրս եկանք: Դիմացնիս մոլլան տնկվեց. - Ո՞վ եք դուք, գիշերով ի՞նչ գործ ունեք մզկիթում:

- Անտիոքի թուրքերից ենք, - արդարացավ հորեղբայրս, - լույսը չբացված եկանք մեր աղոթքը Աստծուն առաքեցինք ու մեկնում ենք դեպի Աստծո ողորմության, ցերեկը, արևին, քայլել չի լինում:

- Ապրե՛ք, զավակնե՛րս, ապրե՛ք, ձեզ հաջողություն, բարին ընդ ձեզ:

Ինչ ասց արևը իր պայծառ դեմքը ցույց տվեց: Դանդաղ քայլերով գյուղեզր հասանք. մի բաց աղբանոցի պատի տակ, առավոտյան կենսաբաշխ արևից պատսպարված, մի խումբ մարդիկ նստոտած, կանգնած զրուցում էին, երևի երեկվա տարված ու այսօրվա տանելի աշխատանքի կամ էլ պատերազմի մասին, ինչպես և համատարած աղքատության մասին: Հորեղբայրս ինքն իրեն, թե մեզ, ասաց. - Երթանք մի ճղարա (սիկարեթ) ուզենք:

- Պետք չէ, հորեղբա՛յր, մեզ կմորթեն...

- Մի՛ վախեք, ես նրանց...

Հորեղբայրս իր մերկության հետ հաշտվել էր ու ամոթը կորցրել, անասնացել էր: Գնացինք, նա բարևեց: Մենք՝ երեխաներս, իրավունք չունեինք խոսելու, որ չըմատնվենք: Եվ նա ծխախոտ խնդրեց մեկից: Այդ մեկը, որ սիկարեթի ծխախոտ տվեց, թուղթ չուներ, մի ուրիշից էլ թուղթ վերցրեց ու փաթաթեց: Է՛, կրակ էլ չկար, մեկ այլ ուրիշից կրակ խնդրեց: Մի երիտասարդ ասաց. - Սրանք հայեր կլինեն, եկեք, սրանց մորթենք...: Ահն ու սարսափը պատեց մեզ, հորեղբայրս այս անգամ էլ դիմեց իր ճարտասանության՝ թե Անտիոքից ենք և այլն, և այլն:

Մի ծերունի էլ թե՝ ինչ գործ ունեք խեղճերի հետ, ա՛յ մարդ, թողե՛ք կորչեն...: Դառնալով մեզ՝ գնացե՛ք, գնացե՛ք ձեր ճամփով, Աստված ձեզ հետ...

Հորեղբայրս իր ճղարան քաշեց, մենք՝ երեխաներս՝ մեր շունչը...

Ավելի քան մի շաբաթ թափառելուց հետո, վերջապես, նախքան արևամուտ, հասանք Մուհարդի՝ մեր ծանոթ գյուղը: Հորեղբայրս, իր որդու հետ, իր պարտքը պատվով ու խղճով կատարողի հավատքով, հետացավ գյուղի մեջ: Ես ամաչում էի այդպես՝ համարյա մերկ, մարդու հանդիպել: Արևը կորավ հորիզոնի ետևը: Մարդկանց ոտքը փողոցից քաշվեց: Հեռվում նկատեցի մի կին, թոնիրից հաց էր հանում, հացի բուրմունքը քիթս խտղտացրեց, ինչքա՜ն ժամանակ տաք հացի բուրմունք չէի առել... Զորս կողմս նայեցի, մարդ չկար, երկչոտ ամաչկոտությամբ մոտիկացա ու բարևեցի, կինը ետ դարձավ, ինձ տեսավ. - Ուելի՜... (Աստված իմ...), - գոչեց, - Այս ի՜նչ վիճակ է...

- Մի կտոր հա՜ց, - աղերսեցի, - կինը մի ափսչափ հաց կտրեց, տվեց:

- Տե՜ր Աստված, ողորմությունդ շա՜տ...:

Այդ գիշեր քրոջս ու հիվանդ եղբորս գտա ինձ ծանոթ գոմում, ուր մորական տատս ու Սարգիս քեռիս և Մարիամ հորաքույրս էին խցկվել: Այդ գիշեր... անմոռանալի՜ մի գիշեր, չորս տարեկան հիվանդ եղբայրս՝ Հա՜ց... Հա՜ց... հացի՜կ... շշնջալով հոգին ավանդեց...: Խիղճս ինձ տանջեց, որ հացի կտորը եղբորս չբերեցի: Ի՜նչ իմանայի... Դառնագին լացեցի...

Հայրիկը ինձ մի խմբի հետ ճամբելուց հետո քույրիկիս ու Անդրանիկին թողնում է տեղում, Սառա հորաքրոջս հետ դիմում է դեպի արևմուտք, մի ճավատիրոջ մոտ ծառայող Բայրամյան Սամսոնի գյուղը: Ութը-տասը օր անց հասնում է Սամսոնի մոտ: Ցանկություն է հայտնում աշխատանքի ընդունվելու: Սամսոնը միջնորդում է: Անհետևանք: Նավատերը ոչ ոքի չի ընդունում: Հայրիկը շրջվում է դեպի հյուսիս, կետ նպատակ ունենալով հասնել մինչև Միսր Շուղուրի շրջան՝ Գուսեյր: Ծաբաթներ թափառելով հասնում է շրջանի Ցագուբիե գյուղը՝ զուտ հայկական, բայց՝ արաբացած:

Ցագուբիեն հիմնադրվել է այդ շրջանում շատ վաղուց, որի մասին համարյա տեղեկություն չունենք: Գյուղը հաստատվել է մի բլրի վրա, հարյուր հիսուն-երկու հարյուր ընտանիքով, նույն այդ բլրի ստորոտին կար մի այլ նմանատիպ գյուղ՝ Ղնեյե, որը նույնպես զուտ հայկական էր, բայց՝ կաթոլիկ դավանանքով: Լուսավորչական Ցագուբիեում միայն մեծահարուստ աղան է կաթոլիկ, երբ հարևան գյուղում՝ ընդամենը տասնհինգ-քսան րոպեի տարածությամբ, ո՛չ մի լուսավորչական, նույնպես արաբացած: Այս երկու քույր գյուղերում՝ ո՛չ մեկ հայերեն իմացող մարդ:

Ցագուբիեում գոյություն ուներ թաղական խորհուրդ: Նախագահ Աբու Ֆարահը կարգադրել էր եկեղեցին բացել, ամեն կիրակի առավոտ կոչնահարել ու պատարագ մատուցել մեն-մենակը, մաս-նշխար պատրաստել ու ժողովրդին բաժանել: Ժողովուրդը՝ հավատացյալ, բայց ընդամենը երկու-երեք պառավ ու ծեր հազիվ պատարագին ներկա գտնվեցին: Աբու Ֆարահը մի տղա, մի աղջիկ է ունեցել, ինքը ծերացած՝ ժամանակից շատ շուտ, միակ որդու պատերազմում զոհվելուց հետո: Նա լռակյաց էր, ոչ ոքի հետ չէր հարաբերվում, տան սյունն ու ղեկավարը մնացել էր հաղթանդամ աղջիկը, քահանիհգը անց, և, պիտի ասել՝ տան տղամարդը, որովհետև նա էր մշակում հողերը անձամբ, վարում, ցանում, հնձում ու կալսում, հայրը՝ քայլող մի դիակ: Պատահում էր, որ մաս-նշխարի համար մի բաժակ ցորենի ալյուր չունենալին տանը, քույրիկիս տալիս էինք մի բաժակ գարու կամ կորեկի ալյուր, և քույրիկս գնում էր մեծահարուստի տիկնոջ մոտ այն փոխելու ցորենի ալյուրով...:

Հայրիկս գյուղի քահանայի հողերն էր մշակում ու վարում, օրական երեք ափաչափ հացիկով: Ավելին նրանք էլ չունեին, խեղճության մեջ էին, հազվադեպ-րեն այս երիտասարդը ներկայանում է եկեղեցի ու հայրիկին օգնում է պատարագի ընթացքում:

... Հետադարձ մի ակնարկ՝ մեր հայրիկին միանալու մասին:

Հայրիկը, իր թափառումների ընթացքում ծանոթություն է հաստատում Սկելբիում՝ մի քեսաբցի ընտանիքի հետ: Նույնպես ծանոթանում է Գաստոնի մի երեվելի մարդու հետ, որը շրջանում հեղինակություն էր դարձել: Ցագուբիեում հաստատվելուց հետո մի բանբերի հետ ինձ մի երկտող էր հասցրել՝ մինչև Մուհարդի, որով բացատրում էր ում մոտ իջնել Սկելբիում և Գաստոնում: Պայմանավորվել էր այդ երկու ծանոթների հետ՝ Սկելբիից Գաստոն և Գաստոնից Միսր էլ Շուղուր, իմ, քույրիկի ու Անդրանիկի (նրա մահը հայրիկը չէր իմացել) ճանապարհորդությունը կազմակերպել ու ապահովել:

Մեր ուրախությանը չափ չկար: Մենք երկուսով մի բարձ ու մի փոքրիկ վերմակ ունեինք, իսկ քույրիկը՝ շորերի մի փոքրիկ ծրար: Ես՝ բացի իմ վրայի շորերի ծվեններից ոչինչ չունեի: Ուստի մեր պատրաստությունն էլ րոպեներ էր տևելու: Հաջորդ օրը, առավոտյան մեր ունեցած իրերը երկու մասի բաժանեցինք, շալակնիս վերցրինք ու՝ դեպի Սկելբի: Ուշ ժամանակ տեղ հասանք: Հայրիկի քեսաբցի ծանոթները համեստ մարդիկ էին, իրենց ընթրիքից մեզ էլ բաժին հանեցին: Երրորդ թե չորրորդ օրը մի արաբ էին ճարել. իշուկով առավոտյան ներկայացավ: Փոքրիկ նախաճաշը՝ ինչ որ կար, արդեն վերջացրել էինք: Մեր ունեցած-չունեցածը արաբը էշի վրա բարձեց: Կենդանին չզգաց նույնիսկ, որ իրեն բարձեցին: Ճանապարհ ընկանք: Ես՝ կիսաարաբական զգեստված շորերով մի պատանի: Քույրիկը՝ համարյա գնչուական շորերով:

Կեսօրին հասանք Մընբգի բերդի (անունը կա, ինքը չկա) ավերակների ստորոտը: Նույն կեղտաջուրը, ինչ երկու տարի առաջ: Չկարողացանք ջուր խմել: Շարունակեցինք մեր ճամփան: Շուրջ չորս ժամ անց եղանակը ամպոտեց, հեռավոր հորիզոնները սևացան: Աշունն իր վերջին խոսքն էր ուզում ասել: Արևը մայր մըտավ, թե թանձր ամպերը օրը մթնեցրին, համենայնդեպս, քամի բարձրացավ, հետն էլ կաթիլ-կաթիլ անձրև: Արևազուրկ երեկոն ցրտեց: Ցրտի հետ քամին ուժեղացավ: Համու բերած կաթիլները մեր դեմքին ավազամման գնդիկներ էին դառնում: Սովածությունը և ցուրտը դաշնակցեցին՝ սպառվելու հասած ֆիզիկական ուժի դեմ: Մեր ծնկները թուլացան: Մեր արաբ առաջնորդը ինձ խղճաց ու էշի վրա դրեց: Մի քիչ առաջացանք, քույրիկի ոտքերը հոգնեցին: Ոտքերը նրան

չէին ենթարկվում: Արաբը ինձ իջեցրեց, քույրիկին հեծցրեց էշին: Այս անգամ էլ քույրիկը ինքն իրեն չէր կարողանում պահել, սկսել էր սաղել գրջի (քամոտ աձրև) դեմ: Ստիպված քույրիկին հրեց, աձրևից պաշտպանվելու համար քիչ առաջ ինձ տված մեշլեհ-վերարկուն ինձնից վերցրեց ու հագավ, մի բուռ քույրիկին թևատակին առավ, ձեռքի գավազանը ինձ տալով խորհուրդ տվեց էշին ծեծելով, վազելով Գաստոն գյուղ հասնել ու օգնություն խնդրել. - Շուտո՛վ, վազի՛ր. քույրիկդ սաղչում է...

Մեկ ժամվա ճանապարհը երևի կես ժամում կտրեցի, արդեն լրիվ մութ էր, հանձնարարված մարդուն գտա, որը իր զույգ տղաներին օգնության շտապեցրեց: Համարյա կես ժամ անց քույրիկին բերեցին կես մեռած, հագիվ էր շնչում ընդհատ-ընդհատ: Տանտիրուհին իր զույգ աղջիկներով քույրիկի ոտքերը-ձեռքերը, քունքերը շփելով-շփելով կենդանացրին նրան: Քույրիկի շունչը բացվեց ու սկսեց կանոնավոր շնչել:

Հյուրընկալները ընթրիքին չգիտեմ ինչ կերան, բայց մեզ տվեցին մեկ-մեկ պնակ ջրիկ ճաշ ու կես հաց, երեք տարվա մեջ առաջին անգամ մեր տեսածը...: Սկզբից քույրիկի կոկորդով ճաշը չէր իջնում. ազնվասիրտ տանտիրուհին գդալը, հացը ձեռքից վերցրեց, կուրծքն ու թիկունքը շփելով, թփթփացնելով, ապուրին առաջին գդալը օգնեց կուլ տալ ու իջեցնել: Քույրիկի ճաշը գդալով, քչիկ-քչիկ կերցնելով կարողացավ կոկորդը բացել ու ճաշը ուտեցնել: Տանտիրուհին մեզնից չզզվեց ու մեզ նոր ներքնակ ու ծածկոց տվեց, հանգիստ քնեցինք:

Հաջորդ առավոտյան մեր հյուրընկալները մեզ նախաճաշ տալուց հետո, մի ջորեպանի հետ Ճիար Շուղուր ուղարկեցին: Ճանապարհին քույրիկը չհոգնեց, ջորու վրա հեծավ, իսկ ես՝ ես ինձ տղամարդ էի համարում:

Ես ու քույրիկը սկսեցինք թափառել Ճիար էլ Շուղուրի փողոցները՝ փնտրելով գիշերելու տեղ: Ում տեսնում էի, ապաստանի մասին էի հարցնում (արաբերենով): Մի մարդ ինձ մի բակ մատնանշեց, որը բացի դարպասից ուներ և երկու պատուհան՝ դռան երկու կողմերին: Ներս մտա, ոնց որ անիծյալ, լքված բնակարան: Պատերին կոթճած չորս սենյակներից մեկի դուռը բաց էր: Բակի վրա երկու լուսամուտ էին բացվում՝ առանց փեղկերի: Կարելի էր գիշերել: Երբ մթնեց, մեր ներքնակը փռեցինք գետնին. քար էլ չգտնվեց բարձի տեղ. վերմակը քաշեցինք վրանիս: Երկու րոպե չքաշեց, ոջիլի բազմությունը խուժեց մեզ վրա: Մեր հանգիստը կորավ: Գիշեր է, անծանոթ քաղաք, բնակիչները թուրք են, թե՝ արաբ: Արաբներից վախ չունենք՝ թուրքերը մեզ սարսափի տակ էին պահել: Ու՞ր գնալ, ու՞մ դիմել, ի՞նչ անել, բացի համբերելուց այլ ելք չունեինք: Ձեռքներս մեր մարմի ո՛ր մասին որ քսեինք՝ ոտքերին, երեսներին, փորին կամ թիկունքին, մաշկի փոխարեն ոջիլի զզվելի զանգված էինք շոշափում: Մինչև առավոտ աչք չփակեցինք: Լույսի հետ, լույսի բացվելուն, ոջիլները աստիճանաբար նվազեցին: Բայց դա չէր խանգարում մեզ փողոցները թափառել՝ ծանոթ մեկին հանդիպելու հույսով: Կեսօրվա մոտ, հայրիկի հորեղբոր թոռ Արմենը... երկնքից իջավ մեզ համար...: Այստեղ էլ հայրիկի իմաստնությունն ու հաշվարկները ճիշտ դուրս եկան: Նա Արմենին նախորդ օրվանից հանձնարարել է իջնել Ճիար քաղաք, երեք-չորս ժամ թափառել՝ մեզ հանդիպելու հույսով: Եվ չէր սխալվել: Նա մի խանութից երեք հաց վերցրեց ու մի կտոր պանիր՝ կերանք: Դա և՛ նախաճաշ էր, և՛ ճաշ: Մենք գիշերով հասանք: Անմիջապես մեր շորերը հանեցինք, որ Սառա հորաքույրս սկսեց եռացնել, ու ծածկվեցինք ինչ-որ միջոցներով:

... Մենք այն ձմեռ էլ, 1917 թ. խոտով էինք ապրում: Հայրիկը իր քրոջ՝ Գոհարի լուրը Խեյտըմից առավ: Մի օր էլ որոշեց՝ մենք խոտ ենք ուտում, թող նա էլ մեզ հետ խոտ ուտի...: Մի օր առավոտ շուտ ճամփու ընկավ, մյուս օրը երեկոյան Գոհար հորաքրոջ հետ տուն մտավ:

Աշուն է: Ձիթապտղի հավաք է: Քույրիկն ու հորաքույրներս ինչո՞վ էին զբաղվում՝ չգիտեմ, բայց ես՝ հայրիկի ծանոթության շնորհիվ ձիթհանք մտա աշխատելու: Պտղաղացի ուլունքաճման լողքարը պտտեցնող բազուկին լծած էշն էի քշում, ձիթապտուղ էի աղում: Օրական մի հաց և շաբաթը մի թաս ձեթ էին տալիս: Հորաքույրներիս հավաքած խոտը խաշում էինք, վրան աղ ու ձեթ էինք ածում և ուտում: Չգիտես որտեղից՝ հորեղբայրս լույս աշխարհ ընկավ՝ հիվանդ որդու հետ: Երեք օր անց տղան մահացավ, ինքն էլ հիվանդ պառկած, ես մենակս՝ անզոր: Հարևան գյուղացի երկու-երեք մարդ մոտակա մի լքված վայրում թաղեցին: Մի շաբաթ անց հորեղբայրս էլ մահացավ: Մի կերպ նրան էլ թաղեցինք... Մի կիրակի օր հայրիկը գնաց թաղման կարգը կատարեց...

Հայրիկը մի օր մի ծեր մարդու մոտ ինձ ուղարկեց ինչ-որ հանձնարարությամբ: Գնացի, տեսա, որ ծերունին բամբակ է զտում մի հարմարանքի միջոցով, որը մի քիչ ճարպկություն ու աշխուժություն կպահանջի: Ձիթհանքի աշխատանքը դեմքս փոխել էր, կարծես մի քիչ ուժ էի հավաքել.

- Էմմի՛, - ասացի, - թու՛յլ տուր մի քիչ ես աշխատեմ:

- Ռու՛ֆ, ուղե՛դ (գնա՛, տղա՛), դու՝ ո՞վ, բամբակ զտողն՝ ո՞վ:

- Փորձե՛մ:

- Ո՛չ:

Ծերուկը մի դույլ բամբակը զտել-ավարտելուց հետո հարմարանքից իջավ, մոտս եկավ իմ խնդրանքի վրա: Ես անմիջապես տեղիցս ցատկեցի, դույլը լցրի չզտված բամբակով, դրի հարմարանքին մոտիկ: Հեծա հարմարանքի վրա, աջ ոտքս դրեցի հակառակ ուղղությամբ պտտվող զույգ գլանակներից ներքևինին, որը թափանիվի առանցքն էր կազմում, և այդ թափանիվը պտտեցնող ոտնյակի վրա, աջ ձեռքով վերևի գլանակի բռնակը բռնեցի, ձեռք ու ոտքի սինխրոն շարժումով գլանակները շարժման մեջ դրեցի ու ձախ ձեռքով չզըտված բամբակը բուռ-բուռ մատուցեցի: Արդյունքը քաջալերող էր:

Ոգևորվեցի: Մի դույլ բամբակը տասը րոպե էլ չտևեց: Հանկարծ ծերուկը սարսափահար ձերս ընկավ, կանգնեց շփոթահար, ուրախության մի ժպիտ գծագրվեց դեմքին:

- Ուղե՛դ (տղա՛), - գոչեց ինքն իրենից դուրս եկած, - այդ որտե՞ղ ես այս աշխատանքը սովորել: Արի՛ ինձ մոտ, ես քեզ փող կտամ, ինչքա՛ւ կուզես:

- Չէ՛, Էմմի՛, ես արդեն ձիթհանքում աշխատում եմ, ամո՛թ է այնտեղից դուրս գալ:

1918 թվականի դեկտեմբեր ամիսն ենք: Մենք չէինք իմանում ռազմաճակատներում ինչ կա: Մեզ համար մի բան էր շեշտված. ամենուրեք կատարյալ անիշխանություն էր: Ծննդավայրի կարոտը, տարիների տանջանքներն ու տվայտանքները հայ գաղթական-աքսորական խլյակների սրտերն ու քայլերը դեպի տո՛ւն էին ուղղել: Սամսոն աղան, իր ընտանիքով ու նույն կրակով վառվող համախմբված յուրայիններով ու հետևորդներով, Ցագուբիե ստորոտի Ղևեյի գյուղի եզրին կանգ էր առել ու հարցրել իր մանկական ընկերոջ ու հետագայի թաղական- հոգաբարձու-քահանա գործակցի մասին: Նրան ասել են, թե վերևում՝ Ցագուբիեում մի քահանա կա, բայց անունը չգիտեն: Սա անմիջապես մարդ է ուղարկել հայրիկին, որ նա էլ միանա հայրենադարձ թափորին:

Պատրաստվելու բան չունեինք և ոչ էլ՝ որևէ մեկից թույլտվություն խնդրելու: Անմիջապես իջանք ու թափորին միացանք, ժամ առաջ Անտիոք հասնելու միտքը խթան էր հանդիսացել, ու մարդիկ շտապում էին անտրտունջ՝ հայրենի տան պատկերը աչքերի առաջ: Անտիոք հասանք կեսգիշերն անց և, ըստ պայմանավորվածության, լցվեցինք հայոց եկեղեցի:

Հայրիկը դարձել էր խմբի հետապահը և քանի-երեսուն րոպե ուշացումով տեղ հասավ, հիվանդ, ուժից ընկած իր քրոջ ամուսնու՝ Հովհաննես Նազարյանի հետ:

Շուտով լուսացավ: Ժողովուրդը ուրախությունից համարյա չէր քնել: Թուրք ազգաբնակչության կողմից ո՛չ մեկ ռեակցիա՝ հակագործունեություն: Մերոնք սով չէին զգում... Արևածա՛գ...: Դեպի գյու՛ղ...

Իրիկնամուտին Կալեր հասանք, ճիշտ այն ժամին, որ ժամին որ գյուղից դուրս էինք եկել 1915 թ. օգոստոսի 15-ին: Ուղիղ երեք տարի չորս ամիս և տասնհինգ օր, կամ հազար երկու հարյուր երեսուներեք՝ տանջանքներով ու տվայտանքներով, տառապանքներով ու արցունքներով, սարսափներով ու մահվան մտապատկերներով, սով ու համաճարակներով, մի խոսքով՝ սպիտակ ջարդով հյուսված օրեր...

Արևի վերջին ճառագայթների շողերը կիսաքանդ տներին ու խոպանացած տնամերձներին, շրջապատող սարագագաթներին գորշագույն ու ոսկեգույն շղարշ էին հագցրել: Որբացած գյուղը սկսվել էր, դարձել՝ մի բուռ:

Ինչ հակադրություն: Անծայրածիր, այրվող անապատներ ու սարալանջին ծվարած, որբացած, բայց՝ երազվա՛ծ գյուղ...

Ջովաշունչ ու քաղցրիկ գյուղ, որի դաշտերի ու պարտեզների վրա հինգ-վեց տարի գյուղատնտեսական ամեն աշխատանք պիտի տանենք, որն ինձ խթան պիտի հանդիսանա, ավելի քան կես դար անց շրջանի ազգագրությունը կազմելու՝ հենվելով ինքնակենսագործունեության վրա:

1919 թվից սկսած որբացած գյուղն սկսեց շենանալ, շնորհիվ անձնուրաց աշխատասիրությամբ օժտված նոր սերունդների, մինչև 1939 թ., երկրորդ բրոնագաղթը...

164 (164).
ԲԵՆԻԱՄԻՆ ԲԻՍԼԱՄՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

Որ մը արաբ մարդուն մեկը ինձի պատմեց իր կյանքը, ըսավ. «Ճշմարիտը խոստովանիմ քեզի, ես Թուրքիայում թուրքի ասկյար էի: Մեզի ղրկեցին Մուսա դաղ՝ Մուսա լեռ ըսված տեղը, որ կոտորենք լեռը բարձրացած հայերուն: Մենք երեք կողմից շրջապատեցինք լեռը: Մեկ ալ հանկարծ մեր դիմացը երևաց սանդուղք մը, ան երկինքեն իջավ: Սանդուղքի վրա երկու հոգի կանգնած էին՝ թուրերը ձեռքերնին: Թրերի ծայրերից արյուն էր կաթում: Այդ տեսնելով՝ մենք վախցանք ու ետ փախանք: Վախես մինչև հոստեղը՝ Հոմս, Դամասկոս հասա»:

165 (165).
ԹՈՎՄԱՍ ՀԱԲԵՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ*
(ԾՆՎ. 1903 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ, ՅՈՂՈՒՆ-ՕԼՈՒՔ Գ.)

Մուսա լեռան կոիվի ժամանակը տասներկու տարեկան էի: Կհիշեմ, որ ժողովուրդը խուռներամ կբարձրանար լեռը: Ժողովներ եղան գյուղին մեջ, որ գաղթենք պիտի: Ժողովի մեջ իրարանցում մը սկսավ. Թե՝ մենք հանցանք մը չենք ըրած, ինչու՞ պիտի գաղթենք և կամ թե՝ լեռ բարձրանանք: «Լեռը բարձրանանք» ըսին: Տուն, տեղ, ամեն ինչ ձգեցինք, ելանք լեռը:

Հաջի Հաբիբլի և Բիթիաս գյուղերը երկմտանքի մեջ էին, քանի որ Նոխուդյան պատվելին դեմ էր լեռ բարձրանալուն: Նա համոզեց ժողովրդին, որ գաղթեն: Իսկ Քաբուսիե գյուղը գրեթե ամբողջը գաղթեց: Միայն տասնյոթ ընտանիք լեռը բարձրացավ: Ընդհանուր հաշվով, շուրջ վեց հազար մարդ բարձրացավ լեռը:

Լեռան վրա յուրաքանչյուր ընտանիք փայտից խրճիթներ շինեց, քանի որ կղմինդր, քար չկար: Երիտասարդ տղաները պատնեշներ շինեցին: Երկու ժողով ըրին: Մեկը՝ վարչական, լեռան ներքին կյանքը,

* Այնճարում նկարահանված տեսաերիզը մեզ է տրամադրել հետուստալրագրող Սերգեյ Երիցյանը:

մյուսը՝ ռազմական ուժերը պիտի կազմակերպեր: Այս մարմինները կային: Կոիվը սկսավ: Առաջին պատասխան գնդակը արձակեց Սարգիս Գաբաղյանը: Կոիվը շարունակվեց: Թշնամին զորավոր դիմադրություն մը տեսավ և ետ ևաճանջեց:

Ֆրանց Վերֆելը գեղարվեստորեն Թուրքիո ոճիրը ներկայացուց և հայ ժողովրդի դիմադրողական պայքարը: Ժողովուրդ, որը գիտակցաբար լեո կբարձրանա, գիտակցելով մաճը: Ժողովուրդը զինված ապստամբ մըն էր:

Երեք գլխավոր ճակատամարտ եղավ: Մեր ժողովուրդը միշտ հաղթական ելավ: Գիտեին, որ մեր պարենը ևվազ է, առաջը ձմեռ է, բայց հաղթանակը ոգևորեց մեզ, մենք նաև հույս ունեինք, թե ծովեն եվրոպացի դաշնակից ևավ մը կանցնի: Մեր վիճակը ներկայացված էր դիմումով: Կողքը քրիստոնեական կարմիր խաչ մը կար: Հասած էր օրհասական ժամը: Մեզ ևշմարող եվրոպացի առաջին ևավը «Կիշեն» ևավն էր, որ կխուզարկեր ծովափը: Հեռադիտակով կտեսնեն, որ պաստառներ կան, մարդիկ կան: Կուգան կստուգեն, ևավակ մը կուղարկեն: Ֆրանսերեն, անգլերեն գիտցողներ կային: Ադմիրալը հրամաև կուտա. «Մեկ շաբաթ թող սպասեն»:

Լեռը ամբողջ մշուշ էր: Տասը քայլի վրա իրար չէին տեսնար: Մեկ ալ մշուշը բացվեցավ, ևավը երևաց: Բոլոր վերմակներուև սավաևները քաևդեցին, դրոշակ շինեցին, օդի մեջ պարզեցին ուրախությամբ: Թուրքերը վերջին ճիգ մը ըրին՝ հարձակվեցաև, բայց մերոնք ևորեն վրա տվին: Հերոսաբար պայքարեցին:

Շաբաթ մը հետո ծովակալը ուրիշ չորս ևավեր ալ ղրկեց: Ի վերջո, ծովակալը՝ Դարտիֆ դը Ֆուրնեն ինքը եկավ «Ժաև դ'Արկ» ևավով, տեսավ, որ պաճը ճգնաժամային է, պետք է օգնել և մարդկայնորեն իր աևձնական պատասխանատվությամբ իր ևավերուև մեջը առավ ամբողջ ժողովուրդը, միայև թիկունքը ապահով պահեց, որ թշնամին չհարձակվի:

Նախ՝ Կիպրոս են գացած, դիմած են անգլիացիներուև: Անոնք՝ «Տեղ չունինք» ըսած են: Պորտ Սայիդը հականեխելու փոստ մը կար: Այդ հականեխման կենտրոնը տարին թափեցին մեզի: Նավերը մեզի կերակուր կհասցնեին: Մուսալեռցիները հոև մնացին երեքուկես տարի: Դաշնակից ուժերու պարենավորման բաժինը և Եգիպտոսի կառավարությունը մեզի պահեցին:

Ֆրանսական կառավարությանը մենք խնդրեցինք, որ մեզ վարժեցնեն, քանի որ մեր կոիվը վերջացած չէր թուրքերի հետ: Ֆրանսական դրոշին տակ մեր տղաները զենքի վարժություններ կընեին: Հետո մասնավոր պատգամավորներ այցելեցին և որոշեցին, որ մուսալեռցիներու նախաձեռնությամբ զինվորական մարզանքի վարժություններ կազմակերպվեն: Ազգային խորհուրդը այդ ուզեց: Կազմակերպվեց Հայկական Արևելյան բանակը՝ տասնութից վաթսունհինգ տարեկան՝ առանց բացառության, արձանագրվեցին, ղրկվեցին Կիպրոս, որը ընդհանուր զինվորական մարզական կենտրոն էր:

Հայերը զորավար Ալենբի գլխավորությամբ Արաբայի մոտ թուրք և գերման զինվորական անպարտելի բանակին հաղթեցին և նրանց հալածեցին մինչև Կիլիկիա: Եվ Կիլիկիան հայկական օջախ դարձնելու ծրագիր մը առաջ քաշվեց:

166 (166).
ԴԱՎԻԹ ԴԱՎԻԹՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ, ՔԱԲՈՒՍԻԵ Գ.)

Մայրս կպատմեր, որ մեր Քաբուսիե գյուղին մեջ անցյալ դարի վերջին աղջիկները դպրոց չէին երթար: Մայրս աղջիկ եղած ժամանակը երբ դպրոց կերթար, իրմե պզտիկ տղաքը իրեև վրա քար կնետեև եղեր: Բայց հետո երբ իրենք դպրոցը կավարտեն, նույև դպրոցին մեջ ուսուցչուհի կդառնա:

Ես ծնած եմ 1905-ին: Մայրս իևձի կրցածին չափ ուսում տված է: Հայրս Փարիզ եկած էր և պատշար դարձած, որ մեզի դրամ ղրկե և ես ուսում ստանամ: Երկու հորեղբայր ունեի, ևոնց թուրքական զինվոր տարին: Լսեցինք, որ ճամփին սպանած են:

1915-ին մենք հաևկարծակիի եկանք, լուր առինք, որ թուրքերը մեզ վրա կուգան: Ժողով եղավ: Դաշնակ, հնչակ, ռամկավար կուսակցությունները բան մըն ալ չէին պատրաստած, չնայած հեղափոխություև կքարոզեին, էշեկնե՛րը:

Երբ Մուսա դաղի կոիվը սկսավ, ես տասը տարեկան էի և աչքովս տեսած եմ: Հայրիկս ետ եկած էր գյուղ, և բոլորին հավաքեցին, ըսին՝ լեռը պիտի բարձրաևանք: Հայրիկս մեզի լեռը բարձրացուց: Երբ թուրքերը հարձակվեցաև, մենք արդեև լեռաև ժայռերուև մեջը պաշտպանված էինք, քիչ մը աևդին Որոնդես գետը կհոսեր: Երբ թուրքերուև հալածաևքը սկսավ, մեր մուսադաղցիները իրարմե հետու-հետու դիրքեր բռնեցին, իբր շատ են կովողները: Թուրքերը սկսաև առաջ գալ: Մենք մեր ուևեցած այծերը, մյուս կենդաևիները հետերևիս լեռ տարած էինք: Ես ևոնցմով կզբաղվեի: Գիշեր որ կըլլար, այդ կենդաևիները կուգային, իմ քովը կուզեին քնաևալ, այնքաև որ իևձի կսիրեին: Ես գիշերով հորս հետ կերթայի վարի պարտեզներեև պտուղներ կհավաքեի, որ բերեևք մամայիև կամ մեծ մամայիև տաևք, ապրինք:

Պապաս պզտիկ զենք մը ուևեր: Ուրիշները հին սիստեմի որսի հրացաևներ ուևեին, բայց ևոնց լցնելը դժվար էր, քարի մը վրա պետք է հարմարցնեին, մեջը բարութ լցնեին, չախմախլու կըսեին: Մերոնք կովում էին ադ որսորդական հրացաևներով: Ես իմ աչքերով տեսել եմ, թե ինչպես թուրքերը ընկնում էին գետին ու մեռնում: Մեր մուսադաղցիները քաջ էին, կովում էին ամբողջ ուժով:

Ես մի մորաքույր ուևեի: Ան մի աղջիկ ուևեր, ևոր ծնված: Ան լաց էր լինում, Մուսա դաղի վրա աղմուկ, ձայև չպետք է լսվեր, որ թշնամին մեր տեղը չգտևար: Ադ պզտիկ երեխային ձայևը կտրելու կաշխատեր մորաքույրս: Բոլոր մուսադաղցիները վախեևում էին, որ դրա ձայևից թշնամին կուգա, «գյավուրևեր, ևէրդէ՞ սրև» (գյավուրևեր որտե՞ղ եք) կըսեև: Մորաքույրս ադ երեխային ծիծ տվավ և խոտերուև մեջը քնացուց, մենք փախաևք ավելի ապահով տեղ: Ադ պզտիկը հոև մնաց: Ետքը որ եկանք, տեսաևք հոև դեռ պառկած է: Ադ աղջիկը հետո մեծցավ, Հայաստաևի է հիմա: Շատ մը կիևեր, աղջիկևեր պատրաստված էին իրենց ժայռեև վար, ծովը ևետեև, եթե թուրքը գա իրենց ուզե ձեռք աևցևե:

Մեծ ճակատամարտեր եղաև: Պապաս, մյուս մուսադաղցիները կովեցին: Կովողները քարերուև տակը կպահվտեին, քարթուշ ալ չկար: Ես քաևի ևգամ զենք եմ հասցուցած ճակատի առաջին գիծը: Փոքր էի, բայց աևվախ էի: Աչքիս առջևը տեսած եմ ադ բոլորը: Ուրիշ ևգամներ ալ ջուր տարած եմ կովողներուև: Ես ալ ևոնց կօգևեի, լուր կտաևեի և ևմիջապես լուր կբերեի: Քառասուև օրեև ավելի տևեց ադ մեր կոիվը: Մեր մեջ միայև մեկը ֆրանսերեև գիտցող կար: Կուզեին լեռաև մյուս կողմը ևցնել և ծովի կողմեև օգևություև սպասել: Կևիկները ճերմակ սավաևներ տվին: Իրար միացուցին, վրաև կարմիր խաչի օգևության նշաևը դրին: Ֆրանսիական ևավ մը հետուեև կաևցնի, կտեսնա, կմտեևա. «Աս ի՞ևչ խաչ է» կըսեև: Վերջիվերջո մեկը իջեցուցին. «Մենք քրիստոնյա ենք, մեզի ազատեք» ըսին: Ֆրանսերեև խոսողը բացատրեց, որ թուրքերը մեզի պիտի ջարդեև: Ֆրանսական ևավին կենտրոնը ըսեր է. «Հիմա մենք պատերազմի մեջ ենք»: Մյուսներև ալ ըսեր են. «Մե՛ղք են, քրիստոնյա են, ջաևը՛մ»: Վերջին վերջո, արտոևություև ստացեր են, ևավերը եկաև: Մենք ուրախացաևք: Ինչ որ ուևեիևք՝ մեր այծերը, կովերը, երինջները, հրամաև ելավ, որ պիտի սպաևենք, որ թշնամիին ձեռքը չանցնեև: Ֆրանսացիները եկաև, պըզտիկ ևավակներ բերին, մեզի ևավ բարձրացուցին, տարին Եգիպտոս: Անտեղ պարապ տեղ կար, չեմ հիշեր ու՞ր էր: Անտեղ մեզի կկերակրեին, կպահեին: Ֆրանսական կառավարությունը ազատեց մեզի: Անտեղ մոտ էր Նիլը՝ Նեղոս գետը: Օր մը ես լողալ ուզեցի: Նետվեցա գետին մեջը: Տեսա՝ խորն է, կխեղդվիմ: Մեր ընկերներեև մեկը հասավ, ինձի ազատեց, Նիլին մեջեև դուրս հաևեց:

Երբ պատերազմը դադրեցավ, մեզի տարին Մուսա դաղ* : Ետքը Ֆրանսիա եկաևք: Ֆաշիստական Գերմաևիայի օկուպացիայի ժամաևակ ես Ազգային ճակատի մեջն էի: Մաևուշյաևին** հետ կոված եմ: Հաղթություև Մարտիկյաևն ալ մեզի հետ էր: Մեզ բռևեցին, տարին դեպի գետը: Գետափոները լարած էին հրացաևները, մեզի կհրեև կոր դեպի առաջ, մինչև պատը: Կրակ պիտի բաևան: Նշաև առին, որ մեզի պիտի գնդակահարեն, մեռցևեն պիտի: Ես մտածում եմ. «Ինչո՞ համար»: Դու մի ըսեր՝ հրեայի տեղ են դրած: Մեզի կեցուցին պատին տակը: Զինվորները շարվեցաև, ճակատևուս նշաև բռևեցին: Ես կևայինմ կոր իրենց: Ջղերս լարված են: Այդ պահը մարդ պետք է ապրի, որ հասկաևա: Գետափոները երկու հոգի էին: Մեկը մյուսին բան մը ըսավ: Մեկը եկավ, մոտեցավ իևձի, ըսավ. «Իջեցրու փաևթալոևդ»: Իմ աչքերը կապույտ էին, իևձի հրեա կարծեր էին: Երբ տեսաև, որ թլպատված չեմ, հրեա չեմ, փոխաևակ կրակելու, զենքի կոթով չախ-չուխ զարկին, մեզի ազատ ձգեցին, բայց ետքը Հարություև Մարտիկյաևի հետ Բուխեևվալդ ղրկեցին:

167 (167).
ՍԱՐԳԻՍ ԱԴԱՄՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ***
(ԾՆՎ. 1906 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

Դեռ 1914 թ. պատերազմը չէր սկսած, անթիվ անհամար մորեխ եկավ, երկինք-գետին չէր երևար: Ամբողջ բերքը փչացավ: Ադ Աստծո կամքն էր, որ թշնամու ձեռքը չընկնի բերքը: Մեկ ամիս ետքը թուրք կառավարութենեև եկաև, հայ տղաներուև բանակ կաևչեցին: Բոլոր տղաները գաղտնի Մուսա լեռը բարձրացաև: Թուրք պաշտոևյաները ծնողներեև պահանջեցին, որ տաև իրենց զավակներուև, ևոնք ալ ըսին. - Մենք չգիտենք ու՞ր են:

Սկսաև ծեր մայրերուև, հայրերուև ծեծել:

Ադդր վրա կառավարությունը հասկցավ, որ ասոնք իրենց դեմ են:

Քանի մը օր ետքը երեք պատգամավոր եկաև, ձեռքերնին թուղթ մը, ըսին. - Թող ձեր տղաները հաևձընվին, թե չէ այդքաև ժողովուրդը մեղք է:

Մենք լուր ղրկեցինք, որ չենք հաևձնվում, ինչքաև ուժ ուևենք կկովենք:

Ադ պատգամավորները գևացին, երկու շաբաթ ետքը ուրիշ երեք հոգի եկաև՝ նույն գրությունը ձեռքերնին: Մեր տղերքը ևորեև մերժեցին: Ասոնք ալ գևացին: Ետքը ուրիշ երեք հոգի էկավ, ձեռքին խիստ ևկատողություև գրված էր: Մեր տղաները ևոնցմե մեկուև ականջը կտրեցին, ադ թուղթին մեջը փաթթեցին, ետ ղրկեցին, ըսելու համար, որ մենք հաևձնվող չենք, մենք կովող ենք:

Այդ որ տեսավ թուրք կառավարությունը, մեծ ուժով՝ քսաև հազար զինվոր, մեզ վրա հաևեց: Սկսանք

---

* Մուսա դաղ՝ Մուսա լեռաև թուրքերեև ևվաևումն է:

** Միսաք Մաևուշյաև (1906, Ադիամաև – 1944, Փարիզ) – հայ բաևաստեղծ, ֆրանսիական Դիմադրության շարժման գործիչ:

*** Այս հուշապատումը գրի է առևվել 1973 թ. Էջմիածնի ճամփին, Մուսա լեռ ավանի բարձունքին, որտեղ սկսված էին Մուսա լեռաև հերոսամարտին ևվիրված հուշարձան–կոթողի շինարարական աշխատաևքները, իսկ մուսալեռցի Սարգիս Ադամյաևն այնտեղի պահակն էր:

կովիլ իրար դեմ: Թշնամին չկրցավ դիմանալ, քանի որ մեր կողմը մշուշ էր: Աստված մեր պաշտպանն էր: Երբ թուրքերը մեզ վրա էին գալիս, մշուշն ալ էր գալիս, որ մեզի չտեսնան, իսկ մենք իրենց տեսնում էինք ու կրնվում: Ամեն կիրակի առավոտ մեծ զորքով հարձակվում էին: Ոնց գալիս էին, էնենց էլ փախչում, գնում էին: Ամենեն վերջին պատերազմին Մուսա լեռան բարձունքին վրա բարձրացած էինք, ալ տե՛ղ չկար. մեկ կողմը ծովն էր, մյուս կողմը՝ անդունդ: Իրիկվա դեմ մեծ կռիվ եղավ, մշուշը նորեն մեզի օգնեց: Ադոր վրա թշնամին փախավ, բայց սարից չիջավ, ապաւով տեղ մը գտավ սարի վրա, որ առավոտը շուտ հարձակվի մեզ վրա: Մեր ժողովուրդը ժողով ըրեց, ինչ ընել մտածեց: Երեսուն հոգի հրացաններով, գիշերվա ժամը մեկին, գաղտնի գնացին անտառի միջով, որ ևրանց հանկարծակիի բերեն, փախցնեն: Ձեռքի նռնակները նետեցին, հրացանները աշխատցուցին, թուրքերը վախերնեն իրենց ունեցած-չունեցած զենքերը թողնցին, փախան:

Առավոտ ժամը 12-ին ծովին վրա Կիպրոսին կողմեն նավ մը երևաց: Լողալով գացին, նամակ տարին, մեր դրությունը պատմեցին: Նավապետը ըսավ. - Ութ օր ալ դիմացեք: Նավը գնաց, ութ օրեն եկավ. վեց նավ էին: Լեռան վրա մեր ունեցած ամեն ինչը այրեցինք, միայն շունչ-հոգի ազատեցինք: Տասնութ զոհ նահատակ տվինք, իսկ թուրքերը՝ հազարներով կոտորվան:

Նավերը մեզի Պորտ Սայիդ տեղափոխեցին: Մեր տղաները ուրիշ տեղերու տղաներուն հետ հայ լեգեոնական խումբ կազմակերպեցին ֆրանսական բանակում՝ թշնամի թուրքերուն և գերմանացիներուն հաղթեցին: Նավերը ոնց մեզի տարեր էին, անանկ ալ ետ բերին Մուսա լեռ, ադի 1919-ին էր: Քսան տարի խաղաղ ապրեցանք Մուսա լեռում ֆրանսացիին տիրապետության տակ, ամեն ինչ նորեն սկսանք դասավորել, ցանել, ճնճել...

1939 թվին, երբ սանջակը տվին թուրքին, հայերը ցիրուցան եղան: Հայերը տուժեցին: Թուրքերը իրենց դրոշակը Մուսա լեռան վրա բարձրացուցին: Ֆրանսացիները մեզի Այնճար բերին, հող տվին, տուն շինեցինք, ցանեցինք, քաղեցինք: Ինչը տարի ետքը Հայաստանեն պատգամավորներ եկան, որ եթե հայրենական պատերազմը մեր օգտին վերջանա, պիտի մեր պատմական հողերը ետ վերցնենք...

Մենք ալ ադ հույսով 1946 թվին, յոթ հարյուր հիսուն ընտանիքով, «Պոբեդա» նավով եկանք Հայաստան:

Սկսա կոլխոզում աշխատել: Հիմա երկու տարի է Մուսա լեռան հուշարձանի պահակն եմ: Հայրենիքի մուսալեռցիները դրամ հավաքեցին, որ իրենց ուժերովը շինեն. դեռ միայն կեսն է շինված, բայց մյուս տարի հուշարձանը պատրաստ պիտի լինի* ...

168 (168).
ՄԱՐԻԱՄ ԲԱՂԴԻՇՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

1914 թ. Մուսա լեռան Հաջի-Հաբիբլի գյուղեն պապայիս տարին օսմանյան բանակ: Ջահել մերս երեք փոքր երեխայով չհասցրեց լեռ բարձրանալ, և մենք ընկանք աքսորականների թափորի մեջ՝ Արաբքըտահի չոլերը: Կհիշեմ, թուրքի ժանդարմերը էկան խրքաչը՝ մտրակը ձեռքներին, սկսան մեզ մխտելով, ծեծելով տանիլ Դեր Զոր: Էնպե՜ս կծեծեին, որ մի ծերուկ ճամփին ընկավ գետին, հոգին փչեց: Չտեսնված շատ ժողովուրդ կար: Ամեն կողմեն հայեր կային, Դյորտյոլեն, Հաճընեն, Զեյթունեն, ուրիշ շատ տեղերեն հայերին բերել, լցրել էին: Էնտեղ մնացինք արևի տակ: Բոլորին տարան Դեր Զոր: Պապս, որ մեզ հետ էր, չգնաց, քանի որ իր տղեն, այսինքն իմ հերը, թուրքի բանակի զինվոր էր: Էդպես մենք ազատվանք Դեր Զորեն: Անկե ետքը մեզի տարան Հոմս: Կառավարութենեն ամր՝ հրաման էկավ. «Ովներին թույնե՛ք»: Ան կուզեր հասկըցնել, որ հայերուն գլուխը ուտեն, ամմա Ջեմալ փաշան** մեզի տեր կանգնավ: Ան իսկական շներին թույնել տվեց, հայերին ազատեց մահեն, ամմա ըսավ՝ ձեր անուները պիտի փոխեք, թուրքի անուններ պիտի դնեք, որ ձեզ չսպանեն...: Կըսեին քի Ջեմալ փաշան փոքր ժամանակ հայ կնկա կաթ ծծած է, անոր համար հայերուն աղեկ աչքով կնայեր: Ան վերջը հրաման տըվավ, որ մեր անունները փոխենք. մեկը՝ Ովքրի, մեկը՝ Ահմեդ, մեկը՝ Հյուսեին դարձավ, կնիկներուն, աղջիկներուն անուններն ալ փոխեցին, որ գլուխնին փորձանք չգա:

Էսպեսով հայ մնացինք: Մեզի ըսին՝ ձեզի Հալեպ կտանինք, ամմա Հալեպ չտարին, թողին Հոմսում: Հոն ամեն տեղից շատ մարդ կար, արևը շատ տաք կայրեր, մարդիկ յորղանների էրեսները հանել, չադր էին սարքել, տակը մտել, որ արևը չխանձի: Ծոգ էր: Ջուր չկար: Թքնեիր, թուքդ գետնին չէր հասներ: Պուճուր քույր մը ունեի, անունը Վարդուհի էր, լաց էր լինում, խաղող էր ուզում: Մայրս, որ շատ գեղեցիկ կին էր, ձեռքը դոշին խփելով սկսավ լալ. «Մեր բաղի թարմեքի ճյուղերը կոտրվում էին հասած խաղողի ծանրութենեն, իմ բալաս խաղող կուզե, ես չեմ կրնա տալ»:

Հետո էդ պուճուր քույրս ջուր ուզեց, ամմա ջուր ալ չիկար: Խեղճը՝ ջու՛ր, ջու՛ր ըսելով, մորս գիրկին վրա մեռավ... Պապիս հետ հողը մի կողմ քաշեցինք, մեջը երեխուն դրինք, անցանք, գացինք: Հասանք մի տեղ, էդ գիշերը մնացինք քարերուն, ժայռերուն մեջը: Մեր մեջ մի քանի հիվանդ, ծեր, քոռ, թոփալ տղամարդիկ կային, մնացածը՝ կնիկ էին ու էրեխա: Մեկ էլ տեսանք, թուրքերը էկան մեզ թալանելու: Պապս էնտեղ մեռավ...

Կհիշեմ, գիշերը պառկելու տեղ չիկար, մամաս պառկած էր գետնին, մենք ալ՝ ես ու Խաթուն քույրս, մայրիկիս մազերը կհուսեինք, ևնոր մազերուն հետ կխաղայինք, մեկ ալ կնիկ մը էկավ, անցավ, նայեց մեզ, ըսավ. «Ամա՛ն խեղճ մախսըմ յավրուները խաբար ալ չեն, քի մայրերնին մեռած է...»: Մենք չոջուխ էինք, ի՞նչ գիտնանք, որ մեր մեկ հատիկ մաման՝ ալ չիկա:

Մեր ծանոթ Մարգարին կնիկը օյա՝ ասեղնագործություն կըներ, արաբներուն կծախեր: Արաբի կնիկ մը ևնոր կըսե՝ պզտիկ աղջիկ մը չիկա՞, ինձի օգնական ըլլա: Ան հայ կնիկը ինձի ըսավ՝ քալե քեզի տանիմ արաբի մը տուն: Ես էլա, հետը գացի: Հարուստ, շատ բարի կնիկ մըն էր ադ արաբը, եթե արդեն մեռեր է, ողորմի իրան: Ան մոդիստրա էր, տանը դերձակություն կըներ: Հարուստ խանումները կուգային, կէրթային, խաուվե կխմեին, ջղարա կծխեին, ես ալ հետու ջրիորեն լուսվիկով՝ փարչով, ջուր կբերեի, բուրդ կմանեի...: Տարիքս ի՞նչ էր՝ հինգ-վեց տարեկան: Ես անտեղ մնացի չորս տարի: Վերջեն, երբ գերմանացիին Հոմսեն դուրս եկավ, թուրքն ալ ինկավ, անգլիացին ու ֆրանսացին էկան, մտան: Օր մը նորեն լուսվիկս ձեռքիս ջրիորին գլուխն եմ, մեյմն ալ հույն տերտեր մը էկավ, արաբերենով ինձի հարցուց. - Ցա՛ բենթի, էնթա արմա՞ն (Ա՛յ աղջիկ, դուն հա՞յ ես):

Ես ըսի. - Բիթըմ՝ իսլամ, բըլ ալիմ՝ արման, այսինքն՝ լեզվով իսլամ եմ, սրտով՝ հայ:

Ըսավ. - Շու՛տ արի տանեմ քեզ ձերոնց քովը:

Ես տուն տարի լուսվիկով ջուրը, ոտնամաններս հանեցի, որ ձայն չելլե, կամաց-կամաց տունեն դուրս էլա, գացի տերտերի ետևեն: Ղուրբան էղնեմ Աստծոն: Տերտերն ինձի տարավ Հոռոմի թաղի որբանոցը, հոն շատ որբեր կային, անոնց մեջեն գտա Խաթուն քույրիկիս: Գտա, ուրախացանք, բայց ես հայերեն խոսելս մոռացել էի, արաբերեն էի խոսում: Մեր լեզուն մոռացել էի...

Ժամանակ մը ետքը որբանոց էկավ հորաքույրս, մեզ գտավ, արաբալով տարավ Անթաքիա՝ Անտիոք, քեռուս տունը: Քեռիս ալ նոր էր ամուսնացել: Իր կնիկին ըսավ. - Էս էրեխեքի խաթրին չե՛ս կպնի, մայր ու աղջկա պես կապրիք...

1919 թվի աշնանը նստած էինք քեռուս տանը, մեկ էլ լսում եմ. «Խարիկենց Սարգիսն էկա՜վ թուրքական բանակեն»: Մեկ էլ տեսնամ, երկու հոգի ներս մտան, սկսան կարոտով ինձ ու քրոջս պաչել: Չգիտեմ ո՞ր մեկն էր իմ հերը: Բանակում թուրքերը կիմանան, որ պապաս հայ է, կխփեն: Խեղճ հերս թուրք ասկյարի շորերով վիրավոր ընկած կըլլա գետնին: Անգլիացիները կուգան, կկարծեն թուրք զինվոր է, չեն ուզեր մոտենալ: Հերս խաչ կհանե, որ ցույց տա, որ քրիստոնյա է: Անգլիացիները կտեսնան, որ քրիստոնյա է, կտանեն, վերքերը կկապեն, ուտելիք կուտան, կաթ կխմեցնեն, երբ կլավանա, կէլլա, կէրթա Հոմս՝ մեզ փնտրելու: Միլլեթ ֆեքիլը՝ այսինքն անտեղի մեծավորը, տետրակը կբանա, կրսե՝ քու հարազատներդ հոս չեն: Հերս հարցնելով, հարցնելով կուգա մեզ կգտնա...: Արդեն հրաման էլած էր, որ ով ուզե՝ կրնա իր տեղը ետ երթալ: Հերս վերցրեց մեզ, տարավ Մուսա լեռ: Հոն ո՛չ տուն կա, ո՛չ մեր կա, ո՛չ վրանիս հագուստ կա, ո՛չ մի բան: Քեռուս կինը մի բարակ վերմակ էր տվել, երեք հոգով տակը կպակեինք...: Հերս գնաց ածուխ բերեց, հողից աման-չաման բերեց: Նոր՝ տուն, տեղ էղանք: Նոր մորս հետ ալ ամուսնացավ, երկու եղբայր ալ ունեցա...

Տարիներ անցան, ես ալ մեծցա, ամուսնացա Արարայի ճակատամարտեն նոր վերադարձած կամավոր Կարապետիճ հետ: Տուն-տեղ էղանք: 1939-ին, երբ ֆրանսացին անգլիացիին հետ Ալեքսանդրետի սանջակը, Մուսա լեռն ալ հետը, տվին թուրքին, մենք չուզեցինք թուրքին հետ ապրիլ, մեզի տարին Այնճար: Հոն սկսանք ծայրեն՝ նոր տուն շինել, ջուր բերել, այգի, ծառ, ծառաստան տնկել... վերջն ալ ամեն ինչը թողինք, 1946 թվին եկանք Հայաստան...

Շատ դարդ եմ տեսել, շատ կորուստ եմ տեսել, շատ չարչարվել, հիվանդացել եմ: Առաջ Լենինականը մնացինք: Երկար տարիներ աշխատեցի Լենինականի տեքստիլ-տրիկոտաժի ֆաբրիկայում: Հետո փոխադրվանք Երևանի Մալաթիա թաղը: Հոս ալ նոր տուն շինեցինք, այգի տնկեցինք... Երեք տղաներս՝ Առաքելը, Գևորգը, Սարգիսը և աղջիկս՝ Ազատուհին, ամուսնացած են, տուն-տեղ, երեխաների տեր են: Գևորգս բանասիրական գիտությունների թեկնածու է, Ակադեմիաև կաշխատի, հիմա Կիպրոս ղրկած են, Մելբոնյան վարժարանը հայոց լեզու կուտա: Ես ալ կաղոթեմ, որ խերով, բարով ետ վերադառնա:

169 (169).
ԳԵՎՈՐԳ ՉԻՖԹՉՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

Ես ծնվել եմ Մուսա լեռան Գյաբուսիե գյուղում: Հերոսամարտը դեռ չսկսած՝ հայրս լեռ տարավ մեր անկողինները ու ուտելիքը, հետո եկավ, որ մեզի տանի, թուրքն արդեն չորս-հինգ հարյուր զինվորով եկել պաշարել էր մեր գյուղը, քանի որ մեր գյուղը գլխավոր ճամփին մոտ էր: Ճելաճների մոտ ինչքան էշ կար՝ բարձեցին, մեզ տարին Անթաքիա: Այնտեղից ալ տարին Համմա: Մի մասը ծարավ. ջուր չկա, մեծահասակները չեն կարողանում քայլել, մնացին ճամփաները: Մենք չորս ախպեր էինք: Բոլորն ալ մեռան, քույրս ալ: Հասանք Համմա: Պապուկս ննստած էր գետնին, ժանդարմ մը էկավ, ըսավ. - Պիտի տանիմ քեզ հիվանդանոց:

Պապուկիս տարան: Մյուս օրը հայրս գնաց հորը տեսնելու, տեսավ, որ թույնել էին և արաբալով տարել լցրել էին հորերը՝ հազարավոր հայերի հետ: Մի մաղարա կար, մեզ տարան մեջը լցրին: Հոն Գանա անունով

---

* Մուսա լեռան հերոսամարտի հուշարձան–կոթողի բացումը կատարվել է 1976 թ., Էջմիածնին հարակից Մուսա լեռ ավանի բարձունքին:

** Ադանայի վալին էր (Մ.Բ.):

մի միջատ կար, որ կծի՝ մարդ կմեռնի: Ուտելիք չկա: Սոված ենք: Ջիբիլի միջից հաճում ենք փորթուգալի կեղև, մարուլի տերև, ուտում: Ինձի պես հինգ-վեց տարեկան քառասուն-հիսուն երեխա կար: Մի թուրք փաշա կար, ամեն մեկիս մի պատառ հաց կուտար: Ան ինձի ըսավ. - Քեզի մեթալիք կուտամ, դուն էկուր տունս ավլե:

Գացի ավլեցի, բայց դրամը չտվավ: Ծեծեց ինձի, ես արյունլվա ընկա գետին, երբ ուշքի եկա, փախա անապատ: Հոն տեսա մի արաբ ճամազ կընե: Հոն ինձի բռնեցին, ձիու վրա կապեցին, բայց ես փախա: Ճարբո անունով մի գյուղ կար: Արևը մայր էր մտել, վախենում էի՝ շները ուտեն ինձ: Հոգնած ընկա մի տան մոտ՝ քնացա: Առավոտը տեսա կովերը խոտ կուտեն, ես ալ անոնց հետ խոտ կերա: Տեսա՝ չորաթաև կա, ուզեցի առնել, մեկը թոփուզով խփեց գլխիս: Ես ընկա մեռածի պես: Գիշերը արթնցա, տեսա ցրտեն դողում եմ: Թոնդիրի մեջ մտա, տաքցա: Առտուն արաբ կնիկը եկավ՝ ելի՛ր, ըսավ: Մոխիրի մեջ ծեծված տեղերուս արյունը չորացել էր, ըսավ. «Ալլա՛հ յա խրուբեյթուն, յա՛ հարամ, մի՞ն դարաբակ» (Աստված քանդի նրա տունը, ափսոս, ո՞վ խփեց):

Նստեցրեց, հաց տվեց, ուտելու ժամանակս մի կին էկավ փաթաթվեց ինձ: Տեսա՝ մորքուրս էր. «Ջիգյա՛րս, - ըսավ, - մորդ, հորդ կբերեմ»:

Եվ պատմեց, որ ան թուրք փաշան, որ մի-մի կտոր հաց էր տալիս հայ երեխեքին, հացի մեջ թույն էր լցրել, ամբողջ մի փուրգոն լիքը երեխեք տարել, լցրել էին փոսը: Այնթապում ալ հայերի երեխաներին լցրել էին եկեղեցին, բենզին լցրել, վառել էին, ո՛չ մեկը ողջ չէր մնացել: Ադ ժամանակ Ջեմալ փաշան էր իշխում: Նա ինձնից-տասնչորս տարեկան հայ աղջիկներից իրեն հարեմ էր սարքել: Հայերը դրա համար նրան սպանեցին:

Մյուս օրը մի պառավ ըսավ. «Հայաթը մաքրի՛ր, զիբիլը թափի՛ր»: - Արեցի, համա հացը չտվեց:

Հորս տարին բանակ՝ խրամատ փորելու: Մնացինք ես, մայրս ու ծծի երեխան: Մայրս հիվանդացավ, գժվեց: Երեխան մնաց սոված: Ես գնում էի այծերի կաթը կթում, բերում էի, որ երեխան ծծում էր: Հետո էդ երեխային՝ իմ փոքր եղբորը, տարինք, դրինք եկեղեցու դուռը, քանի որ մենք այլևս չէինք կարող նրան պահել: Արաբ քրիստոնյա մի ընտանիք եկավ նրան տարավ պահելու:

1918 թ. Համմայից Մուսալեռ ոտքով ետ գնացինք: Ուտելիք՝ չկա, ջուր՝ չկա: Մեր մուսալեռցիքը դեռ Պորտ Սայիդեն չեն եկած: Թուրքերը մեզ տեսան.

- Գյավուրները էկան, - ըսին, փըրթ ու փաբուջ փախան:

Բայց չախկալները, վայրի գազանները մեզ գիշերները վախեցնում էին: Կամաց-կամաց ժողովուրդն սկսավ լեցվիլ Մուսա լեռ: Սկսան հողը ցանել, ճնճել, ապրեցինք, ողջ մնացինք...

170 (170).
ԳԱՐՈՒՆ ԱՆՏՈՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ)

Հինգ տարեկան էի, երբ մեզի աքսոր քշեցին: Ես շատ փոքր էի, բայց կհիշեմ մեր քաշածները: Չորս տարի մնացինք Արաբստանի չոլերը: Արդեն հայերեն խոսիլը մոռցել էի, արաբերեն կըսեի. «Ալլահ ատիկուն, խընէ ալէյնա, շըխվը խըբըզ ատինա»: Այսինքն՝ մի քիչ հաց, Աստծո սիրուն, ողորմացեք:

Մամաս արաբի տան մեջ ծառայություն կըներ: Ես ադ տունին խոհանոցին պատուհանին տակը իբրև թե կխաղայի, բայց կսպասեի, որ մամաս հացի խմորը շաղելու ժամանակ, գաղտնի գունդ մը պատուհանեն վար ձետեր, որ գոնե հում-հում ուտեի, քանի որ եփած հացը արդեն հաշիվով կըլլար և չէր կրնար ինձի տալ...

171 (171).
ԱՍԱՏՈՒՐ ՄՈՎՍԵՍԻ ՄԱՒՈՒԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1911 Թ., ՄՈՒՍԱ ԼԵՌ, ԲԻԹԻԱՍ Գ.)

Ծնվել եմ 1911 թ. հունվարի 1-ին, Օսմանյան կայսրության սուլթան Համիդի տիրապետության ժամանակ, Մուսա լեռան Բիթիաս գյուղում: Մախուլյան գերդաստանը բազմանդամ էր և, որպես հարուստ գյուղացիներ, ունեցել են դաշտեր, այգիներ, անասուններ:

Բիթիաս գյուղը Մուսա լեռան ամենագեղեցիկ և օդասուն վայրը էր, քանի որ տեղադրված էր լեռան գագաթին և օդափոխության համար շատ նպատակահարմար: Մեր գյուղն ուներ հազար հինգ հարյուր հայ բնակիչ, մեծ մասամբ լուսավորչական էին, բայց կային նաև բողոքականներ: Մենք լուսավորչական էինք, բայց մայրս՝ նախասիրելով բողոքականների ազատամտությունը և մարդկանց մոտեցման մեղմ ձևերը, մեզ բողոքական դպրոց տվեց:

Առաջին համաշխարհային պատերազմին հայրը՝ Մովսեսը, գնացել է ԱՄՆ՝ փող վաստակելու: Մայրս, ըստ երևույթին, կազմակերպված, խելացի կին էր, և գալիս էին իր հետ խորհրդի: Երբ մայրս արտահայտվում էր կրթական սիստեմի մասին, ասում էր. «Ամենալավը անգլիականն է, այսինքն՝ անգլոսաքսոնը»:

Երբ Առաջին համաշխարհային պատերազմը սկսվեց, թուրքական կառավարությունը բոլոր հայ տղամարդկանց հավաքեց, բանակ տարավ: Մնացինք

կանայք, երեխաներ և ծերեր: Երբ սկսվեց տեղահանությունը, Ջեյթունում պաշտոնավարող պատվելի Տիգրան Անդրեասյանը ընտանիքով այնտեղ էր ապրում: Եվ երբ թուրքերը տեղահանեցին հայերին, նրա ընտանիքն էլ այդ խմբի հետ տեղահանում են: Տիգրան Անդրեասյանը ներկայանում է այդ խմբի թուրք ղեկավարին, և քանի որ այդ ժամանակ հոգևոր առաջնորդներին թույլատրում էին, նրան արտոնում են դուրս գալ աքսորականների թափորից: Տիգրան Անդրեասյանը ընտանիքով փրկվում է: Նա գալիս է իր ծննդավայրը՝ Մուսա լեռ, բացատրում է, թե ինչ է կատարվում այլ տեղավայրերի հայության հետ և, որ ավելի լավ է լեռ բարձրանալ, քան՝ մեռնել: Մուսալեռցիների մեծ մասը համոզվում է և բարձրանում լեռը: Նրանք կազմակերպում են ճակատի համար ուտեստը, հաղորդակցության միջոցները, որպեսզի հետագայում կարողանան փրկության ճանապարհ գտնեն: Լեռան մյուս կողմը Միջերկրական ծովն էր, քանի որ սարը լանջով ուղիղ ծովն էր իջնում: Եվ մենք լեռ բարձրացանք: Հիշում եմ, երբ մամայիս հետ որոշ իրեր բարձրացրինք լեռ, անձրևից թրջվել էինք և մրսում էինք: Մայրս մտածում է՝ իջնենք գյուղ, տանը լվացք անեմ, երեխաներին լողացնեմ, չորացնեմ՝ նոր բարձրանանք լեռ: Բայց արդեն թուրքերը շրջապատել էին և մեզ գաղթականության հանեցին: Տարան մեզ Համմա քաղաքի մոտ: Մայրս, ըստ երևույթին, հորիցս ստացած փող ուներ, մի էշ վարձեց, որ հերթով նստենք, ու ճամփա ընկանք: Մեծ քույրս էր, իննձնից փոքր եղբայր ունեի և ես: Մեզ տանում էին ամայի վայրերով: Կանայք լաց էին լինում: Իրենց փոքր երեխաներին տալիս էին թուրքերին, գոռգոռոց, աղմուկ, աղաղակ: Վերջապես մեզ բերեցին Համմայի մոտ, մի սարի լանջի պես տեղ էր, քարաձավներ կային, մեզ էնտեղ տեղավորեցին, ասեցին՝ չշարժվեք: Ամեն առավոտ գալիս էին թուրք զաբիթները, խումբ-խումբ տանում էին «լավ տեղ» ու սպանում էին Եփրատի ափին: Քըրդական խուժանները հարձակվում էին մերոնց վրա, աղջիկներին առևանգում էին: Սպանվածների միջից մի երիտասարդ տղա վիրավորվել էր, բայց չէր մեռել, եկել էր մորս պատմել էր իր աչքով տեսածները, որ այդ «լավ տեղը» հենց Եփրատի ափն է, ուր համատարած բոլորին սպանում են ու գցում գետը:

Մայրս գտավ մի հայ, որը թուրք ոստիկանների հետ կապ ուներ: Էդ հայուն փող տվեց, որ ոստիկանին կաշառենք, և մենք ճնարավորություն ստացանք մտնել Համմա քաղաքը: Մի խանի մեջ, որտեղ էշեր և ուղտեր էին կապում, մայրս մի սենյակ վարձեց: Մենք այնտեղ մնացինք չորս տարի: Երբ մայրս տեսավ, որ աջ ու ձախ սովից մահանում են, ինձ ուղարկեց մուրացկանության: Ոմանք իրենց երեխաներին հանձնեցին արաբներին, որպեսզի ողջ մնան:

Մի օր մի մահմեդական արաբ ինձ՝ փոքրիկ մուրացկանիս, օգնեց, հաց տվեց, կանչեց, թե՝ արի իմ տղան դարձիր: Ես մամայիս ասի: Նա համաձայնվեց: Ես գնացի, լավ ուտում, լավ հագնում, դպրոց էի գնում: Մայրս երկու ուրիշ մուսալեռցի ընտանիքի կանանց և եղիսաբեթ մորաքրոջս հետ գնում էին, դաշտերում աշխատում էին՝ հողատերերի մոտ, որ փող ստանան: Իսկ քրոջս մայրս տվել էր մի հայ ընտանիքի, որ սոված չմնա: Մի տարի հետո բիթիացի մի մարդ մորս ասաց. «Ամերիկայից փող է ուղարկված և գտնվում է ոստիկանատանը, արի գնանք, ստացիր, կեսը՝ քեզ, կեսը՝ ինձ»: Հորս ուղարկածն էր, ստացանք, մի քիչ շունչ քաշեցինք:

Ես դպրոցում լավ էի սովորում: Ազատ ժամանակ ես մահմեդական երեխաներին սովորեցնում էի իրենց դասերը:

Երբ պատերազմը վերջացավ, զինադադար եղավ, անգլիացիները մտան Համմա, հայերին սկսեցին ցուցակագրել, Մուսա լեռը սիրիական գաղութ դարձավ: Սիրիայի և Լիբանանի արանքը սահման չկար, ազատ էր: Ֆրանսիացիները եկան, Մուսա լեռը անջատեցին Սիրիայից: Հետո եկան անգլիացիները՝ ցուցակագրելու: Մայրս նրանց բերեց իմ խորթ արաբ հոր մոտ, որի անունը Սայիդ Թաթալի էր: Մայրս ուզեց ինձ վերցնել նրա մոտից: Նա դժվարությամբ տվեց, քանի որ ինքը ուրիշ զավակ չուներ: Բայց հետո Սայիդը եկավ, մորս խնդրեց, ինձ նորից տարավ իր մոտ: Մայրս բողոքեց, անգլիացիները եկան, նորից ինձ տարան, դրեցին ամերիկյան որբանոց:

Մի օր մեզ՝ որբերիս, դաշտ տարան խաղալու: Տեսա՝ Սայիդի կողքի հարևանների տղաներն են, համոզեցին ինձ, ես փախա, նորից գնացի Սայիդի մոտ: Մայրս ինձ նորից գտավ, բերեց և խնդրեց, որ մեզ արտաներթ տանեն Մուսա լեռ: Մեզ գրուզավիկի մեջ լցրին, բերին Իսկենդերուն: Մենք էնտեղ մնացինք մի շաբաթ: Անգլիացիները մեզ հաց էին տալիս, ճաշ էին տալիս: Մեզ տարան Անտիոք և հետո եկանք Մուսա լեռ: Դա սեպտեմբերի 18-ն էր: Եկանք մեր գյուղը, ո՛չ տուն կա, ո՛չ պատուհան, ո՛չ անասուն էր մնացել: Քըրդերը, որոնց թաթ էինք ասում, բոլորը տարել էին:

Երբ հայկական լեգեոնականները եկան Մուսա լեռ, զենքով կռվեցին թաթերի դեմ, մեր հողերը, անասունները ետ բերեցին: Սկսեցինք վերակառուցել, շենացնել մեր գյուղը: Դպրոցի, եկեղեցու պատերը կային, բայց պատուհաններն ու դռները հանել էին ու տարել: Սարքեցինք: Դպրոցն ու եկեղեցին սկսեցին գործել: Սկսեցինք սովորել: Հանդեսներ էին կազմակերպում: Մայրս կամաց-կամաց Ամերիկայում գտնվող հորս հետ կապ սկսեց պաշտպանել: Մայրս ինձ ուղարկեց Քեսաբ: Էնտեղ՝ Քեսաբում, մեկ տարի մնացի: Հետո մայրս հայտնաբերեց, որ Հալեպում ամերիկյան գիշերօթիկ դպրոց կա, ուղարկեց ինձ այնտեղ սովորելու: Ես այնտեղ սովորեցի ինը տարի:

1928 թ. հայրս Նյու-Ջերսիից եկավ, մի ամիս մնաց, ասեց. «գնամ, ձեզ կանչեմ՝ կգաք»: Բայց 1932 թ. տնտեսական ամենամեծ ճգնաժամն սկսվեց: Հայրս գրեց, որ իր վիճակը լավ չէ, ամսեկան է լվանում ռեստորանում: Եվ, որ ինքը իմ տարիքում ամուսնացած տղամարդ էր, և հիմա ժամանակն է, որ ես ինձ պահեմ: Անշուշտ, ես զայրացա, պատասխան չգրեցի: Սկսեցի աշխատել, անգլերեն, ֆրանսերեն էի պարապում դպրոցում, որ համալսարանի պարտքս տամ:

1939 թ. մեծ տերությունները որոշեցին Թուրքիայի պահանջած սանջաքը իրեն վերադարձնել: Եվ Ալեքսանդրեթի սանջաքը Սիրիայից անջատեցին ու տվին Թուրքիային: Հայերն ստիպված դուրս եկան Մու-

սա լեռից: Ես այն ժամանակ Հալեպում էի, լավ վիճակի մեջ էի, դասեր էի տալիս: Երբ իմացա, որ հայերին տանում են Լիբանան՝ Այնճար, եկա Սիրիայից Բեյրութ: Հետո գնացի Պաղեստին: Էնտեղ աշխատեցի Թել-Ավիվում, անգլիական առևտրական հիմնարկում: Չորս տարի էնտեղ աշխատեցի: Թուրքերը որպեսզի տիրապետեն այդ հողամասին, եվրոպական դիպլոմատները առաջարկում էին, որ Օսմանյան կառավարությունը վեց վիլայեթները հայերին հատկացնի՝ Օսմանյան տիրապետության տակ, բայց ունենան իրենց ազգային կրթությունը, մշակույթը: Ենթադրելով, որ այդ իրենց քաղաքականությանը վնաս կտա, թուրքերը սուտ խոսեցին և կազմակերպեցին հայերի ջարդը:

Թալեաթը, որ ղեկավարում էր այդ ցեղասպանությունը, ասաց. «Այն ինչ երեսուն տարվա ընթացքում չկարողացավ Սուլթան Համիդը անել, ես երեսուն օրվա մեջ արեցի, Թուրքիայում հայերի հարցը լուծեցի»: Թուրքերը խորամանկ են, իրենց ազգի համար ամեն տմարդության դիմեցին, որ Թուրքիան լինի զուտ մուսուլմանական երկիր: Թուրքը ուր որ գնացել է, ջարդել է: Դրա համար Վիկտոր Հյուգոն ասել է. «Այստեղով անցել է թուրքը»: Հիմա ողջ աշխարհը գիտի Հայոց ցեղասպանության մասին: Մի օր պիտի լինի, որ հայկական տարածքների հարցը դրվի:

1946-ին, օգոստոսի 23-ին եկա Հայաստան, մորս հետ: Երբ գնացի համալսարան՝ քննություն հանձնելու, ինձ հարցրին. - Ի՞նչ կրթություն ունեք:

Ես ասացի. - Լիբանանի ամերիկյան համալսարանն եմ ավարտել:

Ասին. - Գուցե դուք մեզ քննեք, - գնահատական նշանակեցին, ես ընդունվեցի որպես ուսանող:

Հաջորդ օրը գնացի սև շուկա, մեր հագնելիքները ծախելու, որ ապրենք: Գնացի համալսարան: Ասին՝ ռեկտորը կանչում է: Գնացի ներկայացա: Ռեկտորը դարակը բացեց, մի թուղթ հանեց, ասաց. - Մենք ուզում ենք Ձեզ դասախոս ընդունենք, դիպլոմը կբերեք: Հիմա Ձեզ գրություն կտանք, նաև հինգ հարյուր ռուբլի կստանաք, վերջը լավ կլինի...

Այդ ժամանակ համալսարանում Միջազգային հարաբերությունների բաժին էր բացվել: Մեկուկես տարի դասախոսեցի: Կուրսում տասնութ ուսանող կար՝ Համլետ Գևորգյանը, Գևորգ Բրուտյանը իմ լավագույն ուսանողներն էին: Մի ուսանող ունեի, Ռազմիկ Ասոյան անունով: Նրա հայրը մի օր եկավ, մի բուռ ռուբլի դրեց սեղանին: Ես չվերցրի: Դասի ժամանակ դրա տղան, որ վատ էր սովորում, ասաց. - Ընկեր Մախուլյանը շատ լավ մարդ է, բայց երկար չի մնա, քանի որ իմ հայրը չեկիստ է:

1947 թ. դեկտեմբերի 21-ին փողերը փոխվեցին: Ամսի 23-ին ռեկտորը ինձ կանչեց, ասաց. - Ձեզ ուղարկում ենք Կիրովական՝ (ներկայիս՝ Վանաձոր), անգլերենի դրվածքը ուսումնասիրելու: Ամսի 25-ին էնտեղ պետք է լինեք:

Եկա դեկանին ասացի: Նա զանգեց ռեկտորին: Ես իմ խմբի ուսանողներին հայտնեցի, որ ինձ Կիրովական են ուղարկում: Ուսանողներից մեկն ասաց. - Այս ձևով մեր երկրում մարդկանց կալանավորում են: Ես ձեզ կուղեկցեմ:

Գնացինք, տոմս առանք, երկու շիշ պիվա առա, մի հատ գաթա առա: Բուֆետից դուրս եկա, մեկը մոտեցավ. - Ընկեր Մախուլյան, բարև: Ու՞ր եք գնում:

- Կիրովական:

Կայարանի մեջ նա թևս մտավ, մի ուրիշն էլ մյուս թևս մտավ: Ինձ տարան ճաղավոր մի մեքենա մտցրին: Գցեցին մեջը: Չամադանս էլ բերեցին: Ավտոյով բերեցին Նալբանդյան փողոցի վրա Պետական անվտանգության շենքը, բարձրացրին չորրորդ հարկ: Մի գեներալ և մի քաղաքացիական շորով մարդ կար, որը չեկիստ էր: Ես հարցրեցի: - Ինչու՞ եք ինձ բերել:

- Կասենք, - ասին:

- Ինչու՞ տնից չէիք բռնում:

- Ի՞նչ նշանակություն ունի, թե որտեղից: Դուք շատ մեղքեր ունեք, հակապետականությունը ամենից թեթևն է:

Ի դեպ ասեմ, որ Բաթումիում հինգ անգամ իմ գրականությունը ստուգել էին, օտար լեզվով բառարաններս թերթել էին: Գրավոր թեմաներ ունեի կատարած «Ամերիկյան դեմոկրատիան», «Շվեյցարական դեմոկրատիան», «Սովետական դեմոկրատիան»: Դրանք բռնագրավել էին: Իսկ հարցաքննության ժամանակ տեսնեմ՝ դրանք սեղանի վրա են: Ինձ հարցրին. - Ո՞վ է գրել սրանք:

- Սրանք իմ գրած համալսարանական ուսումնասիրություններն են:

Հարցաքննող չեկիստն ասաց. - Էդ ինչպես է, որ անգլերեն լավ գիտեք ու անգլիական լրտես չեք եղել:

Ինձ ութը ամիս դատաքննության տակ պահեցին: Վկա, ապացույց՝ չկա: Հայտարարեցին.

- Բանտարկյալ կալանավորը քաղաքական լրտես է, հակաքաղաքական պրոպագանդ է արել, պահանջում եմ հինգ տարի կալանք:

Հետո ինձ հարցրին. - Դուք խոսք ունե՞ք:

Ասի. - Այո՛, էդ մարդը սուտ է խոսում, ո՛չ փաստ ունի, ո՛չ վկա: Նա պետական դավաճան է: Ես պահանջում եմ տասը տարի կալանք:

Զարմացան իմ համարձակության վրա: Դատավորի երկու կողմը ատենակալներ կային, որոնք օգոստոսյան շոգից թմրել, քնել էին: Նա բրթեց դրանց՝ արթնացան: Ես ասի. - Ա՛յ, հիմա արդարությունը արթնացավ: Հիմա արդարություն կլինի, և ես ազատ կարձակվեմ:

Գնացին, որոշեցին, եկան հայտարարեցին. - Հինգ տարի կալանք, երկու տարի ձայնազրկություն:

Դատից հետո ինձ տարան բերդ, կրկեսի մոտ: Տարան մի փոքր սենյակ: Երեսուն հոգի մեջը՝ կողքկողքի պառկած: Մի կտոր հաց, մի քիչ ջրիկ բորշչ էին տալիս: Մի ամիս մնացի: Երբ անունս կարդացին, ասացին. - Ձեզ էլ Ռուսաստան ենք ղրկում:

Ես ասացի. - Ես ռուսերեն չգիտեմ, ու՞ր եք ղրկում Ռուսաստան:

Պատասխան չտվեց:

Մի գիշեր պողպատյա վագոնների մեջ մտցրին, երեսուներեք հոգի էինք, որից տասնվեցը գողեր էին: Նրանց մեծը Լութոն էր: Ես որ արդեն ութ ամիս մնացել էի բանտում, մայրս բրդյա դոշակ, վերմակ էր բերել,

որ չմրսեմ: Վագոնում Լութոն էր ղեկավարում: Ով ինչ լավ բան ուներ՝ վերցրեց: Վերցրածը տալիս էր հսկող զինվորներին, որ տանեն քաղաք ծախեն, բերեն սպիտակ հաց, սիգարեթ և այլ լավ բաներ:

Մեզ հետ քսանհինգ տարի դատապարտված հինգ հայ տղաներ կային: Նրանք գերության մեջ սովորել էին ֆրանսերեն: Նրանց թուրուն էի տալիս, որ թարգմանություն անեն: Մի լավ ձեռնոց ունեի: Մի օր Լութոն ասաց. - Էս ինձ տուր, ես քեզ «Սևան» սիգարեթ տամ:

Ես չգիտեմ դրանց տրադիցիան: Սիգարեթի պաչկան բացեցի, բոլորին հյուրասիրեցի: Երկրորդ տուփն էլ դրեցի Լութոյի էտաժերի վրա: Մեկ էլ տեսնեմ՝ տուփը չկա: Հարցրեցի. - Լութո, դու՞ ես վերցրել:

- Ո՛չ, - ասեց:

Ես խուզարկեցի բոլորին, մեկի գրպանից հանեցի: Դա աղրբեջանցի էր: Բերդում ինձնից խնդրել էր թուղթ ու մատիտ, որը ոտքիս բթամատի կողքին էի պահում, տվել էի, նաև թուղթ: Տեսա, ջղայնացա, մի հատ խփեցի, ընկավ: Լութոն ասաց. - Պրոֆեսո՛ր, կսպանես, վրանիս կմնա: Արի՛ ինձ մոտ, էս քեզի պապիրոս, հաց, կարագ, պանիր, բոլորը քոնն է, միայն ուրիշին չտաս. - Տեսնեմ ի՞նչ ունես:

Ասի. - Չհամարձակվես վերցնել, միայն՝ կնայես, - ես ցույց տվի՝ շապիկ, շալվար և այլն ու վրան նստեցի:

Լութոն ասեց. - Մի բան տուր ինձ:

Ես նրան տվի մի սարոչկա:

Բավական մեզ տարան, հետո մի դաշտի վրա կանգնեցրին: Ովքեր տարեց էին՝ պահեցին: Ես երիտասարդ ու քաղաքական բանտարկյալ էի, ինձ տարին ավելի ցուրտ տեղ: Երբ հասանք Դուդինկա՝ Ենիսեյի բերանում, մեզ լաստանավով տարան: Առաջից գնում էր մի նորմալ նավ, ետևից կապել էին երեք-չորս բարժ, որոնք բացօթյա բեռ են տանում: Ինը օր բարձրացանք Ենիսեյով: Արդեն սեպտեմբերյան ցուրտն էր, երբ հասանք լագեր: Ես ո՛չ ռուսերեն գիտեմ, ո՛չ մասնագիտություն ունեմ, իսկ անգլերենը պետք չէ իրենց: Սկզբում բեռնակիր էի աշխատում: Նորիլսկ քաղաքի շրջապատը ճահիճներ էին, ճանապարհ չկար: Սնունդը և ամեն ինչը բերում էին մաթերիկից՝ այսինքն՝ Ռուսաստանից՝ հարավից, մայրցամաքից:

Սկսեցի աշխատել: Բրիգադիրը ամեն գործ ինձ էր տալիս. - Արմյաշկա (արհամարհական՝ հայ) գնա՛ տապորը և պիլան բե՛ր:

Ես ռուսերեն չգիտեմ: Հարցնում եմ. - Ի՞նչ է ասում, - գնացի վերցրի կացինը և սղոցը:

Ես սկսեցի աշխատել: Բրիգադիրը եկավ, ձեռքիս կացինը ուզում էր վերցնել: Ես չտվի: Նա ոտքով խփեց: Ես փախա: Վալինկայով վազեցի, կացինը շպրտեցի ու փախա: Գնացի արհեստանոց, նստա, ձեռքերս տաքացրի: Շուրջիններիս ասի, որ ուզում էի բրիգադիրին սպանել: Հարցը հասավ լագերի նաչալնիկին: Նա ինձ տասնհինգ օրով բանտ ուղարկեց: Էնտեղ մի ծանոթ իրավաբան կար, ասաց նաչալնիկին. - Ու՞ր ես սրան բանտ ուղարկում: Սա լավ լեզուներ գիտի:

Հաջորդ օրը կանչեցին նաչալնիկի մոտ: Նա ինձ նոր աշխատանք տվեց պահեստում: Գնացի, տեսա Ֆրանսիայից, Ամերիկայից, Անգլիայից լիքը ապրանք է եկած, ձյան տակ, բակում փչանում է: Գնացի էդ պահեստում աշխատեցի: Եկած ապրանքի պասպորտը հանում էին՝ օտար լեզվով գրված, ես թարգմանում էի, լսում էին: Օգոստոսին ամենատաք ամսին, ցուրտ էր լինում, թելեգրեյկայի մեջ անգամ մրսում էինք: Ողնաշարս քարացել էր: Էսպես մինչև 1950 թ. դեկտեմբերի 20-ը, ինձ ազատեցին: Հինգ տարին վերջացավ: Մոսկվայից կոմիսիան եկավ: Սովետական իշխանությունը որոշել էր՝ լավ աշխատող կալանավորի մեկ օրը երեք օր հաշվել: Ես մի տարի շուտ ազատվեցի: Ուզեցին մնամ էնտեղ բարձր ռոճիկով, ես չմնացի: Ես Սիբիրից վերադարձա ութը հազար ռուբլով: Օդանավով ինձ բերեցին Կրասնոյարսկ: Գնացի կոշիկ առա, վալինկաները ոտքիցս հանեցի: Երկու կիլո խնձոր, կալբաս առա, սկսա ուտել ու մաճ գալ: Հետո գնացքով հինգ օր եկանք Մոսկվա: Եկա Երևան: Ներկայացա միլիցիայի պետին: Ինձ չթողին Երևանում ապրել: Ասին՝ կամ Կիրովական, կամ՝ Ախտա պիտի մնաս: Ասեցի՝ Կիրովական: Գնացի: Երկու տարի ձայնազուրկ պիտի մնայի, բայց Ստալինը մահացավ: Ինձ թույլատրեցին գալ Երևան: Երևանում մայրս ապրում էր Նոր-Զեյթունում: Ինձ տվեցին հողամաս: Ինձ Երևանում չէի գրանցում: Ես ասի. - Ես ախպար չեմ, ես՝ Սիբիրից եմ եկել:

Գրանցեցին: Հետո ինձ համալսարան չէին ընդունում, քանի որ ես Սիբիրից էի եկած: Աշխատեցի 81-րդ դպրոցում: Հետո դատի տվեցի: Եվ չորս տարի իրավունք տվեցին՝ կալանքի տարիները համարել աշխատանքային ստաժ, պետական բնակարան տալ առանց հերթի, երկու ամսվա ռոճիկ անվերադարձ և վերականգնել համալսարանում որպես դասախոս: Սկսեցի անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն դասավանդել: Աշխատեցի երեսուն տարի:

1963-ին ամուսնացա Օրդոյան Նելլիի հետ, որը իմ ուսանողուհին էր: 1965-ին ծնվեց աղջիկս՝ Դիանան, 1969-ին՝ Տիգրանը: Մի թոռ ունենք Ստեփան անունով: Ես արդեն թոշակի եմ անցած: Ահա իմ կյանքը՝ երկու աքսորի պատմությունով:

172 (172).
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԵԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՔԵՍԱԲ)

1909 թ. Ադանայի ջարդը որ եղավ, Ծաղբան աղան քառասուն հազար բաշըբոզուկ հավաքել, եկել էր Քեսաբը թալանելու: Եկել հասել էր Օրդու: Մենք սկսանք դիմադրել: Էսգյուրան Ներքին գեղում կռիվ եղավ, չորս-հինգ ժամ տևեց, մենք դիմադրեցինք: Վերջին-վերջո ըսին մերոնք. - Այլևս անհնար է. զենք չկա, հայդե՛ փախի՛ք:

Մենք գնացինք ծովեզերքը Քեսաբի: Ես վեց

տարեկան էի. - Ցադա՛, զընողներն իգուն (հա՛յր, սպանողներն եկան), - ասեցի:

Իսկապես եկան, ծառի թփերի միջից ոորս բռնեցին, քաշեցին, գետնին պառկեցրին:

- Ամա՛ն, յադա՛, - ասեցի, ոորս վրա ընկա, սկսա լալ:

Մարդիկը կանգնեցին ըսին. - Մենք ալ երեխայի տեր ենք, պիտի մորթեինք, գազաններ պիտի ուտեին: Մենք էս երեխային բաշխեցինք քո կյանքը, ումից ուզում ես գտիր քո մահը: Գնա՛, հալա՛լ ըլլա քեզ:

Էդ մարդիկը գնացին: Ես ըսի. - Ցադա՛, քաղցուձ իմ (հա՛յր, քաղցած եմ):

Գետինները չոր հացի կտորներ գտանք, կերանք: Հեռուեն ֆրանսական նավը էկավ Լաթաքիա: Համիդը ինկավ: Անոր ամօղլի Ռաշիդը էկավ:

Թալեաթը, Էնվերը, Ջեմալը Համիդի փաշաներն էին, ութ օրից ետո հյուրիեթ եղավ, եկանք տուն:

Դրացի թուրքերը ինչ որ տարել էին, ետ բերին՝ յորղան, դոշակ, քիլիմ, կով, այծ, ոչխար...

Եթե երկու վկա բերեիր, որ քու ունեցվածքդ է, «ա՛ո» ասում էին՝ կուտային տիրոջը: Տուները այրված էին: Քանի կարմիր ոսկի տվին, շինեցինք: Բայց ետո, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, մեզ ասին. - Հայ եք, ուրեմն՝ Անգլիո, Ֆրանսիո լրտեսն եք, - մեզ տարին աքսոր:

1915-ին ամառը գաղթեցրին Օրդու: Տասնհինգ օր ոոն մնացինք, ետո՝ Ջըսըր-Շըղըր: Քսանհինգ օր ոոն մնացինք, մինչև աշուն հասանք Եբրուտ-Նեբըկ՝ Դամասկոսից ոետու: Իրիկուն էր հասանք: Հոն չորս տուն բողոքական կար: Պատվելիի կինը հաց դրեց կերանք: Առավոտը էլի հաց տվեց: Մի շաբաթ մեզ պահեց:

Մենք բոլորս երկու հարյուր ոոգի կանք: Ո՛չ տուն, ո՛չ տեղ, ո՛չ հաց, ո՛չ ջուր: Արաբ քրիստոնյա բժիշկ մը կար, ամեն առավոտ հաց, դեղ կբաժներ: Ամեն օր հինգվեց ոոգի կմեռներ, կնիկները խոտ կհավաքեին, որ տըղոցը կերցնեն: Տղամարդիկ դգալ կշինեին, որ ծախեն, փարա ըլլա: Ասպես ձմեռն անցավ:

Գարնանը թուրք կառավարությունը էլի մեզմե զորք հավաքեց. աշխատող ձեռք էր պետք իրեն: Հորս տարին:

Եբրուտ-Նեբըկ մնացինք երկու տարի: Եկանք Հոմս, մեկուկես տարի ալ ոոն մնացինք: Առաջ Ղալադուրանի ծովեզերքի մարդկանց տարին Պորտ Սայիդ՝ ոտքով, Երուսաղեմի ճամփով: Հոմսից գացինք մուրալով-զուրալով: Ճանապարհին մերս մեռավ, մնացի մեն-մենակ:

Էկա հասա Քյուրդ դաղի, ընկա արաբների մոտ Ղընեմիեի մոտերքը: Պատահում էր՝ սարը մնում էի, անասունները կարածացնեի: Հոն մնացի ինը ամիս, աղաս երկու ախոռ անասուն ուներ, անոնք կարածացնեի:

Հետո լսեցի, որ քեսաբցիները ետ են եկել: Միտքըս դրի, ըսի. «Մինչև գարուն ես ալ կփախնեմ»: Դիմացը՝ ձորեն ան կողմը, Քեսաբն էր արդեն:

Գարունը եկավ: Օր մը աղան էկավ իրիկունը, ըսի. - Աղա՛, պիտի գնամ:

Ըսավ. - Ինչու՞ կէրթաս, քեսաբցիները գաղթած են:

Ըսի. - Չէ՛, լսել եմ, որ ետ են եկել:

Աղաս ինձի երկու չափալախ խփեց, ըսավ. - Հանի՛ր շորերդ:

Հանեցի, տվի իրեն, վարտիքով մնացի:

Հիմա Լաթաքիա պիտի էրթամ: Ճամփա էլա, մուրալով, մարդկանց բեռներին օգնելով, երկու կտոր հաց վաստակելով, ճամփա գնացի:

Մարդիկ տեսան՝ ծոցս երկու կտոր հաց կա: Ես ալ երեխա եմ, ինձ ծեծեցին, հացերը գողցան, առին տարին:

Անոթի, լալով կերթամ, մեկ էլ կեցուցին ինձի հարցուցին. - Ու՞ր ես գնում:

- Դար բըլ Լաթկի (դեպի Լաթաքիա):

- Ու՞մ տղան ես:

- Ահմադի:

- Արի՛ ընկերանանք:

- Ընկերանա՛նք:

Պատմեցի գլուխես անցածը, լավ մարդ էր: Ես ալ սոված, հոգնած, ծեծված: Տասնչորս ժամ քալեր եմ. առավոտը ելեր եմ, արդեն գիշեր էր հասանք խան մը: Քնեցինք: Առավոտը օգնեցի մարդուն, բեռները բարձեցի, ես կամացուկ փախա: Երեք օր սոված մնացի, հարցրեցի մեկուց. - Ու՞ր է Քեսաբը:

- Էդ կողմն է:

Էլա մինչև Քարսանա, մի օրվան ճամփան երեք օրեն հասա, անոթի, ծարավ, հոգնած, դադրած: Տուն մը տեսա, գացի դուռը զարկի: Թաթեր էին: Ինձի տեսան, մեղքցան, հաց տվին կերա: Եկան տունին տղաները, նստեցրին, կերցրին, լավ յաթախ տվին, քնեցի: Առավոտը ըսին. - Մենք թութուն պիտի ցանենք, դու մեզ օգնիր: Արի՛, մնա մեզ մոտ:

Մնացի երեք օր իրենց մոտ, օգնեցի:

Ըսին. - Մնա՛:

- Չէ՛, չե՛մ մնա:

Ճամփա ընկա: Հասա Ջեբել Աքրա, բայց հակառակ կողմում եմ, լեռան մյուս փեշը, դիմացս եկողին հարցրի. - Դոր բըլ Քեսա՞բ (դեպի Քեսա՞բ): Մարդը ճանցավ ինձի. - Դուն Օհաննեես ես, - ըսավ, - մորդ ես թաղեցի, կհիշե՞ս:

- Հասե՞լ եմ Քեսաբ:

- Հա՛, միասին կէրթանք:

Հեռվից մեր գյուղի ծառերը արդեն երևում էին: Գերեզմանոցի ծայրը եկանք, մեր պարտեզները տեսա, հորեղբայրս փորում էր հողը: Տեսա շերամ են պահում, թթի տերև են հավաքում: Ապրիլ ամիսն է արդեն: Բարևեցի, լացեցի, մտա տուն, տեսա պատուհանները հանված, տանիքը խոտ էր բուսած, ոչ ոք չկար մերոնցից: Ցոթ հոգուց միայն ես էի մնացել:

Ինձ տարին որբանոց: Մնացի մեկ-երկու տարի Հալեպի որբանոցը: Տասներկու հազար որբ կար, Անթոնյան պատվելին էր էֆենդին: Հե՛մ դպրոց էր, ճե՛մ արհեստանոց: Մնացի երկու տարի: Վերջը հարցրին. «Ուզո՞ւմ ես ամուսնանալ, քեզ ամուսնացնում ենք, վեց ամսվա տունի քիրան տալիս ենք»: Աշխատողին փող էին տալիս. արդեն քառասուն մեջիդիե ունեի խնայած, գնացի Քեսաբ: Մեր տունը նորոգեցի: Հետո գնացի Իսկենդերուն: Ամուսնացա Բերսիթի (Բեաթրիսի) ոետ, նրանք ևս վեց ոոգով աքսոր էին գնացել և միայնակ էր վերադարձել: Մեր տունը միհարկանի էր, երկհարկանի դարձրի: Չորս անգամ տուն եմ շինել: Հետո Բեյրութ գնացի: Պատշար եղա: 1947 թվին եկանք Հայաստան, Էջմիածնի շրջանում հաստատվեցինք:

173 (173).
ԳՅՈՒԼԻՆԻԱ ՅԵՐՈՒՆԻ ՄՈՒՍՈՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՔԵՍԱԲ, ԳԱԼԱԴՈՒՐԱՆ Գ.)

1915 թվին մեզի հանեցին գիշերով, տեղահան արեցին, ուր տարան՝ մենք ալ չգիտենք: Մեր բոլոր ընտանիքներուն պապաներուն արդեն տարած էին թուրքական բանակ: Աքսորի ճամփին պապիկս ծեր էր, դժվար կքալեր, թուրք ժանդարմը եկավ, սկսավ անոր ծեծել: Մամաս ըսավ. - Ինչու՞ կծեծես, չե՞ս տեսնար՝ ծեր է, չի կրնար քալել:

Ան թուրք ժանդարմը խղճի եկավ, գնաց որտեղեն ճարեց՝ չգիտեմ, երկու ուղտ բերավ: Ես երկու հորեղբոր տղա ունեի: Ինձի և մի հորեղբորս տղին մի ուղտի վրա բարձեց, քույրիկիս ու հորեղբորս մյուս տղային՝ մյուս ուղտի վրա: Մամաս ալ խունդախը ձեռքին նստեցուց մյուս ուղտին վրա, պապիկիս ալ մեզի ետ: Գացինք: Ճամփին խեղճ պապիկս սովից մեռավ: Մի քարի տակ փորեցինք, թաղեցինք: Ճամփին մի կնիկ հոգնած ու սոված՝ էլ չէր կարողանում քալել, իր գրկի երեխան թողեց թփի տակ: Մամաս ըսավ. - Մե՛ղք է, մի՛ ըներ:

Ան ըսավ. - Ալ չե՛մ կրնար տանիլ:

Մենք Դեր Զոր չհասանք: Հոն մտնողներեն ոչ ոք ողջ չմնաց: Էնտեղ շատ մորթեցին: Մենք հասանք Համմա գյուղը: Մի թուրքի տանը տեղավորվանք: Դրանք շատ լավ մարդիկ էին: Էնտեղ հորեղբայրս հիվանդացավ, մեռավ: Տանտերը եկավ ըսավ. - Ինչի՞ գիշերը ինձ չասիք, ձեր հիվանդին մի ճար կանեինք, կօգնեինք:

Էդ գյուղը թուրքական գյուղ էր: Եսուքոյրս գնում էինք մուրալու: Մամաս կըսեր. - Ամա՛ն, զգույշ եղեք, թուրքերուն ձեռքը չիյնաք, անոնք հայ աղջիկներուն կփախցնեն:

Անոր համար ալ մեր գյուղի Տեր-Պետրոս քահանա Աբրահամյանը Համմայի մեջ մեկ գիշերվա մեջ երեսուն աղջիկ պսակեց՝ հայ-քրիստոնյայի արարողությամբ, որ թուրքի ձեռքը չիյնան: Հորեղբորս աները խնդրեց հորեղբորս, թե՝ աղջկաս առ՝ պսակվիր, միայն թե թուրքի ձեռք չընկնի:

Աքսորից առաջ Քեսաբի հայ բնակչությունը վեց հազար մարդ էր: Աքսորից ետո հազիվ երկու հազար երկու հարյուրը վերադարձան, ալ հաշիվ ըրէ՝ ինչքա՛ն մարդ զոհվավ:

1918 թ. մենք Համմայեն եկանք Երուսաղեմ: Արդեն զինադադար էր: 1919 թ. վերադարձանք մեր տուները: Տեսանք՝ ամեն ինչ քանդված, վառված, ավերված: Բայց մեր քեսաբցիները չարքաշ ժողովուրդ են, սկսան կամաց-կամաց տները վերանորոգել: Իմ պապայենքս վեց ախպեր էին, մեկին ղրկել էին Ամերիկա, որ թուրքի բանակ չտանին, հինգ ախպերով ձեռք-ձեռքի տվին, մեր տները սարքեցին: Մնացինք Քեսաբի Բաշուրդ գյուղը:

1939 թ. սանջաքը թուրքին անցավ: Ես էն ժամանակ նոր հարս էի:

Ետքը՝ 1947 թվին, ոչխարներու պես իրար նայելով, եկանք Հայաստան: Քանի անգամ տուն ենք փոխել՝ թուրքի երեսեն: Թուրքը չսիրվիր: Որպես ոեհան չառնես, հոտը չքաշես:

174 (174).
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲՈՑՆՄՇԱԿՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1904 Թ., ՔԵՍԱԲ)

Քեսաբում վեց հազար հայություն կար:

Ամենեն վերջը մեր Քեսաբը գաղթական տարին: Արդեն 1913 թ. թուրքական կառավարությունը զորք հավաքեց: Զենքն ալ եկան հավաքելու, բայց մենք դագաղի մեջ լցրինք, հողին տակը թաղեցինք: Մենք ալ ուզում էինք կովել, մուսալեռցիներուն պես լեռը ելլալ, ամմա գետը չկրցանք անցնիլ: Օգոստոս 15-ին մեզ աքսորեցին: Գնացինք, հասանք Թադմոր անապատը, Պաղեստինի մոտը:

Իմ պապը սերթ մարդ էր, ըսավ. - Ես աստեղը չեմ կարող ապրիլ:

Մեր տղերքը գնացին, մեզ համար տեղ ճարեցին Սադատում: Էնտեղ մի տարի մնացինք, անոթությունեն, հիվանդությունեն մենք կոտորվեցանք:

Ես ու իմ ամին առինք մերոնց՝ պապիս, տատիս, մորս ու երկու ախպորս, էկանք Ջըսըլջըղուր:

Պապս ըսավ. - Էրթանք մեր ծանոթ թուրքերի տունը:

Գնացինք: Բայց մեր ծանոթ թուրքերը մեզ ծեծել սկսան, ըսին. - Դուք մուհաջիր եք, դուք աքսո՛ր պետք է գնաք:

Հետո մեզ տարին Ուրդի: Էնտեղ օրական հրաման էինք առնում, գնում էինք հուշի տունը գործ էինք անում, դրամ շահում, հաց առնում...

Օր մը պապս ըսավ. - Տղա՛ս, արի փախնենք:

Պապիս հետ փախանք: Երկու օր բաղերի մեջ մնացինք, թութ էինք հավաքում, ուտում:

Պապս ըսավ. - Տղա՛ս, գնա՛ էն երևացող տունեն մի կտոր հաց ուզե: - Գնացի, ի՞նչ տեսնամ, մայրս էնտեղ է ծառա, վիզս փաթաթվեց, ըսավ. - Ամա՛ն, օղլու՛մ, ու՞ր եք:

- Հենա պապիկ, անտառի մեջն է:

- Տղա՛ս, - ըսավ մայրս, - պապիդ ա՛ռ, արի՛:

Մինչև գնացի պապիս անտառի մեջ գտնեմ, աճագին տեղ գնացի, տեսա մի մարդ ոչխար է խուզում, ասեց. - Նե՞ խաղիյորսըն (ի՞նչ ես ուզում):

- Անամ բուրդա՞դըր (մայրս այստե՞ղ է):

- Ժանդարմալար գելդիլեր (ոստիկաններն եկան), տարան ուրիշ տեղ:

Ես ետ դարձա, տեսա պապս ծառի տակ չկա. - Դեդե՛, դեդե՛, - գոռացի: Տեսա առուի ափին անոթությունեն ուշքը գնացել, ընկել է: Հանեցի ոտի, եկանք ծառի տակը:

Պապս ասաց. - Ինչու՞ եկար, տղա՛ս:

- Մամային տարել են ժանդարմները:

- Գնա՛, էն հասած ցորենները քաղի՛ր, կրակ անենք, խորովենք, ուտենք:

Գնացի, ցորեն հավաքեցի, բայց պապս կրակ չկրցավ վառել. էլ ուժ չուներ, երեսի վրա ընկավ՝ մեռավ:

- Դեդե՛, դեդե՛, - ալ դեդե չկար:

Դեդեիս դամաև վերցրի, քյուլախը դրի գլուխս, գնացի: Գնացի մի մարդ ինձ բռնեց, տարավ ժանդարմին հանձնեց:

Չորս օր մնացի բանտի պես տեղ մը: Հետո ժանդարմը իր առաջը գցեց ինձ ու մի ուրիշ քեսաբցի կնոջ, տարավ Ջըսըլջըղուր, ուր հայեր շատ կային: Մեկ էլ տեսնամ մի տղա կանչեց. - Ախպըրկի՛ն, Վանիսն էկավ:

Մամաս գտավ ինձի, սկսավ լալ. - Ու՞ր է պապդ:

- Ան մեռավ: Ես ձեր մոտը կմնամ:

- Աման, բալա՛մ, ժանդարմը քեզ կսպանե, ե՛տ գնա ժանդարմին քովը: Ես քեզ իրիկունը կգամ բանտեն կհանեմ:

Իրիկունը մամաս էկավ: Մի քիչ բակլա խանձել էր, թաշկինակի մեջ լցրել, բերել էր: Ես ու էդ քեսաբցի պառավը կերանք:

Մամաս գնաց քեսաբցի Հակոբ աղային բերեց, որ խնդրի ինձ ազատեն բանտից: Ազատեցին:

Ես մամայիս հետ գնացի:

1916 թիվն է, օգոստոս ամիսը: Եփրատ գետի ափին ենք: Հայ գաղթականները չադըրներու տակ են: Ամեն գիշեր թուրքերը գալիս թալանում են: Զենք չկա, որ պաշտպանվինք:

Ճահպազյանները երկու մավզեր ունեին, գաղթելու ժամանակ պահել էին իրենց բաղում:

Մի ծանոթ թուրք կար, անոր ասեցին. - Գնա՛, ջրու վրա, թել-ասեղ ծախելու պես ըրե, մեր զենքերը փորե, բեր:

Էդ թուրքը կգնա, տանձի ծառի տակեն թեները կհանե, մեջի հրացանները կառնե, կուգա մեզ մոտ: Զենքը որ բերեց, էդ նույն գիշերը էդ գողերեն մեկին սպանեցին մերոնք: Տեսանք, որ էդ քաղաքի մեծի եղբայրն է մեռնողը:

- Վա՛յ, հայերը թուրք են սպանել: - Աղ մեծ հանցանք էր մեզ համար: Էկան սպանողներուն բռնեցին, երկուսին ալ տարան: Մի հայ բժիշկ կար՝ Չյուրիքչյան անունով, անոր երկու տղաներն էին, երկուսին ալ թուրք գեներալը տարավ, տիֆ եղան մեռան: Մեզ ալ քշեցին Եփրատ գետի ափը: Օրը յոթանասուն-ութանասուն հոգի կմեռներ, թաղում էին ավազի մեջ: Մամաս ծառայություն էր անում. մեզ՝ որբերին պահում: Մենք էլ մի չադըրի տակ էինք:

Օր մը երկու գերմանական նավակներ եկան գետի վրա, քառակուսի պեչենիներ շպրտեցին գետի ափը, որ մենք առնենք ուտենք: Անոթի էինք: Հայ մարդ մը մոտեցավ, թքեց պեչենիների վրա, ըսավ. - Մի՛ վերցնեք, մեզ էս օրին գցեցին սրա՛նք, հիմա ուրախանում են մեզ վրա:

Որոշեցինք Եփրատի էս կողմից փախչել Հալեպ: Ճամփին երկու ժանդարմա մեզ բռնեցին, տարին բանտ: Ծեծեցին: Պահեցին մի քանի օր: Նորեն փախանք: Առաջին օրը մեզի երկու հոգի կանգնեցրեցին, մեզ լրիվ սոթդեցին, ձեռքերնիս հացի կտորներ կային, ա՛ն ալ առին, լմնցա՛վ: Ես հիվանդ եմ, փորս ուռած է, բերանս խաշած է տաքությունեն, մամայիս ըսի. «Մա՛, ինձ հոս թողեք, դուք գնացեք»: Կտրիճ մարե էր. մի երեխին ուսին առավ, ինձ ալ՝ մեջքին, գնացինք…

Եկանք հասանք Յահուդի գեղը: Տեսան, անոթի ենք: Արաբները սխտոր ու հաց բերին, կերան մերոնք: Ես չկրցա ուտել: Բերանս ցավում էր ամբողջ…

Եկավ մի արաբ, մորս ըսավ. - Մի տղա տվեք ինձ, ես վաղուց պասկված եմ, տղա չունեմ: Տվեք վայլեմ:

Մայրս ըսավ. - Էս ա տղա, ա՛ռ:

- Էս մեռա՞ծ է:

- Չէ՛, հիվանդ է:

Արաբը ինձի վերցուց, տարավ իր հայաթը: Իրա արաբ մայրը մի հատ թթու դրած խյար տվեց ինձ, ըսավ՝ կեր, կերա: Աղ մեհլեմի պես եղավ: Քունս տարել է, քնել եմ, մնացել եմ: Ինձի ծածկել են, քնել եմ մինչև առավոտ: Առավոտյան արևը կպել է գլխիս, քրտնած արթնացա, տեսնամ ուրիշ տեղ եմ: Գոռացի. - Մամա՛…

Արաբ մարդը մատը շրթունքներուն տարավ, կամաց ըսավ. - Սու՛ս…: Մի թաս ջուր բերեց, ըսավ. - Լվացվի՛, տղա՛ս:

Արդեն գիշերով գնացել էր, խաղող էր հավաքել ինձ համար, որ ուտեմ: Կերա: Կեսօրին մի քիչ դավուրմա էին եփել, կերցրին, խմցրին:

Արաբը ըսավ. - Ես քեզի պիտի բուժեմ: Մենք բժիշկ չունենք: Ես իմ սիրո՛վը քեզ պիտի բուժեմ:

Եվ իսկապես ալ լա՛վ նայեց, աչքերս բացվեցին, ելա ոտքի: Մնացի էդտեղ: Չոբանություն էի անում, մի կերպ յոլա էի գնում…

Մի օր էլ տեսա ահագին ժողովուրդի ժանդարմները գցել են առաջները, տանում են: Մեկին հարցրի. - Ու՞ր են տանում…

- Մենք ջհուդ ենք, մեզի տանում են Երուսաղեմ:

Ես ադոնց հետ խառնվա, փախա արաբի մոտեն: Որ փախա, տեսա մի տեղ հերկ են անում: Ես էլ անոթի եմ, ոչինչ չկա մոտս, ո՛չ հաց, ո՛չ փող: Մոտեցա հերկ անողներին, բայց վախցա, չխոսեցի: Մենակ եմ: Սկսա լալ: Հեռվում քարին դրի գլուխս քնեցի, մնացի: Արթնացա, տեսա հերկ անողները չկան արդեն: Անցա Հալեպի գետը, ուզեցի ծռվեմ գետեն ջուր խմեմ, մեկ էլ մի ձայն լսեցի. - Տղա՛ս, գետը կընկնես, արի քեզ ջուր տամ:

Ծուռ եկա, տեսնեմ մի կնիկ, ինձ մի թաս ջուր տվեց: Տարավ իր հայաթը: Էնտեղ մի աղջիկ հաց էր

թխում, ըսի. «Մի հատ կտա՞ք ուտեմ»: Տվին մի հաց, կերա: Աբաս վրես գցեցի, գետնին քնա: Արթնացա:

Մի աղջկա ձեն էր լսվում. - Էս դարիբ մարդ է:

Տեսնեմ աղջիկը գնաց, երկու հաց ու մի թաս ջուր բերեց: Ես կերա, էդ գիշեր մնացի էդտեղ:

Աղջիկը ասեց. - Ես երկու ախպեր ունեմ ու մի քույր, եթե կուզես՝ մնա:

Ասի. - Չէ՛, երկու հաց էլ տուր ճամփի համար, ես գնամ:

Հացերը առի, ընկա ճամփան: Տեսա Իբլեդ գյուղի մոտեն մի քարավան է գնում: Էդ քարավանը բաժանվեց երկու մասի, մեկը գնաց Լաթաքիայի կողմը՝ դեպի Արաբստան, ես գնացի հասա դրանց: Ոտնամանըս հանել եմ, աբես էլ գցել եմ ուսս, գնում եմ Ջըսըլջըղուր: Ճամփին մի մոլլա եկավ, մինարեի գլուխը «Ալլա՛ու՛ակբար» կանչեց: Ուզում եմ Ջըսըլջըղուրի կամուրջը գտնեմ: Ճամփաս կորցրի: Վերջապես գնացի հասա Ջըսըլջըղուր՝ օրը կեսօրավ:

Գնացի տեսա էն խանը, ուր մեզ աքսորելու ժամանակ տարել էին: Գնացի էդ խանի հավուզի կողքը նստա: Հիշեցի, երբ մեզ աքսորել էին, մամաս ու եղբայրս էնտեղ էին պառկել: Հիշեցի, սիրտս փլավ, արցունքներ լցվան կոկորդս: Ինձ զսպեցի, ցույց չտվի, որ չբռնեն ինձ: Առաջին հերթին ասեղ-թել գնեցի, որ կարեմ վրաս-գլուխս: Աբաս ծախեցի, գնացի դեպի Ուրդեն:

Ուրդի ճամփով գնում եմ: Հարցրի մի մարդու. - Ու՞ր է ճամփեն Քեսաբի:

- Դու հենց ճամփի վրան ես:

Ես արաբի պես ճերմակ գլխաշոր ունեմ գլխիս գցած, վրաս ալ կլոր սև քենդիր խալխա* :

Տեսա մի մարդ՝ ֆեսը գլխին, գնում է էշի վրա: Ասի՝ երևի սա հայ կլինի: Գնացի, թեթև խփեցի ուսին, ասի. - Բարև՛:

Էս մարդը զարմացած ինձ նայեց, ասեց. - Ու՞ր կերթաս, տղա՛ս, - ըսավ արաբերենով:

- Ուրդի կերթամ, պապի՛, - ասեցի արաբերենով:

- Ուրդի՞ կերթաս, տղա՛ս, - ըսավ: Սկսանք քայլել:

Գնացինք միասին: Ես նորեն հարցրի. - Պապի՛, Քեսաբ գյուղը որտե՞ղ է:

- Մոտ է, - ասեց ու սկսեց բացատրել, որ Քեսաբում չորս եկեղեցի կա՝ կաթոլիկ, պրոտեստան, լատին, օրթոդոքս՝ այսինքն մերը:

Ես նորեն հարցրի. - Պապի՛, Թեկնելու աղբյուրը ու՞ր է: - Հիշեցի, որ փոքր էի, շատ փոքր, էնտեղ ուխտի էինք գնում՝ Բալուի կողմը:

Մարդը ինձ նայեց, ասեց. - Ա՛յ տղա՛, հա՞յ ես: Ո՞վ ես…

- Բոյնմշակյանի տղան եմ:

- Ա՛յ տղա՛, քո մերը սաղ է, գիտե՞ս:

Ես ուրախացա, իսկ ինքը ձեռքը գրպանը մտցրեց, մի բուռ չոր թուզ հանեց տվեց ինձ:

Հասանք մեր գյուղը: Ճամփի վրա մեկը տեսավ, որ պապի հետ մեկը գալիս է, սպասեց, որ մոտենանք, հարցրեց. - Պապի՛, ու՞մ ես բերել:

- Բոյնմշակի տղեն…

- Էդ իմ ամիօղլին է, - ասեց մարդը:

Ուզեցի մենակս գտնեմ մեր տունը, բայց շատ բան փոխվել էր: Մեր տունը Սև ջրի մոտն էր: Մեր ջրի պես ջուր չկար: Բայց ո՞նց գտնեմ…

Մի կին տեսա քթոցը ձեռքին: Հարցրի. - Քույրի՛կ, Ճահենի տունը ո՞րն է:

Կանչեց. - Արի տեսնեմ, դու ո՞վ ես:

1918-ին քեսաբցիները արդեն վերադարձել էին աքսորից: Մեր տները թուրքերը մտել, ապրել էին, չէին թողել քանդել: Մտա հայաթը, տեսնեմ միջնեկ հորեղբայրս ողջ է մնացել, ասի. - Ամի՛, Վանե՛սն եմ:

Նստեցի: Հորեղբայրս ինձ նայեց ու հայհոյեց: Դու մի ասա՝ նա իմ մամային էլ տիրություն չի արել: Փող չի տվել, որ նա գա ինձ ազատի արաբի մոտից:

Ելա, գնացի մորեղբորս տունը: Շաբաթ օր էր: Մերս էնտեղ էր ապրում: Ես էլ էնտեղ մնացի: Մեր հողերը տվեցին ցանելու: Հետո մերս ինձ ամուսնացրեց Ծաղիկի հետ: Արդեն վաթսունհինգ տարի միասին ապրում ենք: Մեզ մի աղջիկ ծնվավ հոն՝ Քեսաբը:

1915 թ. քեսաբցիներն ալ պիտի լեռը բարձրանային, բայց ստիպված աքսոր ելան: Հետո կամավորական շարժման ժամանակ քեսաբցիները երկու հազար կամավոր տվեցին հայկական լեգեոնին: Բայց էնտեղ ալճիրցիներ ալ կային, ասում են, փոխանակ թուրքին կրակեն՝ մեզ էին կրակում: Աղ ժամանակ հեռախոս, հեռագիր չկար, աղավնիի վրա նամակ էին կապում, որ թռնի իր բույնը, խաբար տանի, թե զորքը ու՞ր է:

Մեր Տիգրանն ալ հայելիով գնդացրի վրա էր կրակում. շուռ է տվել հրետանին՝ գերմանացու ու թուրքի վրա է սկսել կրակել, էդենցով թուրքը պարտվեց:

Ես ճարպիկ էի, մեր քաջերի հետ ծանոթացա: Մեր ֆրանսիական սահմանապահները, երբ բռնեցին իմ հորեղբոր տղին, ես գնացի, խոսեցի, ազատել տվի: Ես ատրճանակ անգամ ունեի արդեն:

Մինչև 1939 թիվը ֆրանսիացին, անգլիացին, Սաուտ Արաբիան զորքով շրջապատել էին մեզ: Օր մը էդ անգլիացի զինվորներից մեկը ինձ բռնեց, հարցրեց. - Ո՞վ ես:

Ըսի. - Ես մարդ եմ:

Անգլիացին ըսավ. - Մենք քեզ բռնելու ենք:

Ըսի. - Եթե ինձ ձեռք տաս, ձեռքս կմտցնեմ ջիգյարդ դուրս կհանեմ:

Ըսավ. - Լա՛վ, հիմա գնա կապիտանի մոտ:

Ըսի. - Չե՛մ էրթա գիշերով: Թուղթ մը գրիր, տուր ինձի, կէրթամ:

Երկու սալդատ տվեց, թուղթ մըն ալ գրեց տվեց ինձի: Գնացինք ֆրանսիացի կապիտանի մոտ. - Հովհաննեսը դու՞ ես:

- Այո՛, - ըսի:

- Էս մարդուն ու՞ր եք բերել, - ըսավ կապիտանը: Ինձի ազատ թողուց: Արդեն լավ էր վիճակս: Էրթող, գացող կուգար, կուտեր-կխմեր, կերթար: Բայց հայրենիքը քաղցր էր, 1946-ին եկանք Հայաստան: Բայց 1949-ին մեզ աքսորեցին… Վերադարձանք հաստատվեցանք Էջմիածնի երրորդ սովխոզում. կաշխատինք, կապրինք…

* Արաբ բեդվինները սպիտակ գլխաշորի վրա սև պարանից հյուսված օղակ են կրում:

175 (175).
ՄԱՐՏԻՐՈՍ ԳՅՈՋԱԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1898 Թ., ԲԵՅԼԱՆ)

Թուրքին յաթաղանը ցիրուցան ըրավ հայերի օջախները: Ինչ ունեինք-չունեինք թալանեցին, տունտեղ տակնուվրա ըրին, մեզ էլ քշեցին Արաբստանի անապատները. անոթի, ծարավ, մուրալով կերթայինք, ու՞ր էրթալնիս մենք ալ չիտեինք:

Հայրս չդիմացավ, արյունը խեղդեց իրեն, ոգին տվեց ձեռքերիս վրա: Եղբայրներիցս ամենից մեծը թուրքի ասկյար էր՝ Մըսըրից (Եգիպտոսից) չեկավ: Չորս եղբայրներս, մայրս, մեր գյուղացիների հետ մուրալով, գնում ենք: Գնում ենք, բայց որը կմեռնի, որը՝ կկորչի, որն էլ, չդիմանալով ո՛չ անոթությանը, ո՛չ էլ քայլելուն, կպառկի ճամփի եզրին՝ մահը դիմավորելու:

Ես մերոնցից առանձնացա, որ մի քիչ հաց գըտնեմ ամենափոքր եղբորս՝ Մկրտիչի համար: Ան գրկի երեխա էր դեռ: Տոպրակիս մեջ մի քանի պատառ հացով՝ հասա մերոնց մոտ: Նայեցի՝ մորս, նայեցի՝ եղբայրներիս, տեսա՝ ամենափոքր եղբայրս ոչ մեկի գրկին չըկար: Ես հարցրեցի. - Ու՞ր է եղբայրս:

Մայրս դատարկ մի ամաո ցույց տվեց, սկսեց հոնգուր-հոնգուր լալ: Չի կարողանում խոսել:

Դարձա ինձնից մեծ՝ Միլիտոս եղբորս, հարցրեցի: Նա լալով ասաց. - Մի ամաո ցորենով արաբներին ծախեցինք:

Մինչև իմ ետ դառնալս ադ ցորենն ալ արդեն կերել էին: Որ մեկ արաբին ծախել են՝ տեղը ցույց տըվեցին, բայց արաբի մոտ գնալն իզուր կլիներ, քանի որ հետ տանելու ցորեն չէր մնացել:

Արաբի այդ գյուղից դուրս ելանք, բայց սրտիցս արյուն է կաթում: Բավական քայլելուց հետո, արաբների կալի մոտից էինք անցնում, տեսա՝ մրջյունները առուի պես ցորեն են տանում իրենց բույնը: Իսկույն մրջյունների ճամփի վրա մի փոքր փոս շինեցի, մեր ցորենի ամենափոքր ամաոը դրեցի փոսի մեջ: Երկու հատ էլ շյուղ դրեցի ամաոի մեջ, որ ընկնող մրջյունը շյուղի վրայից ետ ելնի: Ընկնող մրջյունը բերնի հատիկը թափում էր, ետ էր դառնում: Այսպիսով սպասեցի այնքաո, որ ամաոը լցվեց: Մերոնց ասացի. - Դուք գնացեք, ես ձեզ կհասնեմ:

Ցորենով լիքը ամաոը առա, վազեցի արաբի տուները: Տաոտեր արաբը թույլ տվեց, որ ներս մտնամ: Մտա, ի՜նչ տեսնեմ, փոքր եղբորս առաջ լցված են տեսակ-տեսակ ուտելիքներ: Ցորենը արաբին տվի, աղաչեցի, որ եղբորս ետ տա: Արաբ կինը, երբ որ տեսավ արցունքներս, իր աչքերն էլ լցվեցին, իրենց լեզվով ի՞նչ ասաց մարդուն, չհասկացա, բայց մարդը դարձավ ինձ, նշմարով հասկացրեց, այսինքն՝ որ տա՛ր եղբորդ: Փաթաթվեցի եղբորս վզին, բայց արի տես, որ եղբայրս չի ուզում հետս գալ: Փորը կշտացած է, այլևս կգա՞:

Տեսավ, որ վիզս ծռված դուրս եմ գնում, արյունը քաշեց, ելավ տեղից, փաթաթվեց վիզս: Եկանք հասանք մերոնց: Մորս աչքերը լաց լինելուց կաս-կարմիր էին: Երբ տեսավ երեխան, թևերը բացեց, վազեց, երեխան հափշտակեց գրկիցս, սեղմեց կրծքին, սկսեց հոնգուր-հոնգուր լալ: Հետո եկանք Հալեպ:

176 (176).
ՍԻՐՎԱՐԴ ԳՅՈՋԱԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1906 Թ., ԲԵՅԼԱՆ)

Երբ Դեր Զորեն վերադարձել էինք ու ապրում էինք մեր տանը, մեր Բեյլանի Աթըխ գյուղի վրա հարձակվան Զեյթունի թուրքերը: Մեր հայերն ալ հավաքվեցան, որոշեցին դիմադրել: Ճրանսան ալ ուժ տվավ: Ես ինը-տասը տարեկան էի: Երկու վեդրո փիլավը կեփեին, ձեռքս կուտային, բողչա մըն ալ հացը կոնակս կուտային, վախն ի՞նչ բան է՝ չգիտեի, ֆեդայիներուն ճաշ կտանեի:

- Աղջի՜կս, որտեղ թաշկինակը կապած ըլլա սըրընխի վրա, անտե՛ղ կդնես կուգաս:

Առտուն՝ մի տեղ, ցերեկը՝ ուրիշ տեղ, գիշերը մի ուրիշ տեղ կտանեի: Անոնց ուտելիքը իմ վի՛զս էր:

Ժողովուրդը եկեղեցին հավաքվավ: Չոլուխ-չոջուխ բոլո՛րը: Մի հատ դորտյոլցի կնիկ կար, անունը Տիգրանուհի, զենքը ձեռքին երեք օր կովում էր եկեղեցու մեջեն, հրացանով խփում էր թուրքերուն, կհիշե՞մ...

177 (177).
ՀԱԿՈԲ ՓԱՇԱՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ԲԵՅԼԱՆ)

1914 թվին ես յոթ-ութ տարեկան էի, մեզի տարին Հավրանի չոլը: Հետո՝ ետ դարձուցին: Ջեմալ փաշան Դամասկոսեն Երուսաղեմ ճամփա էր շինել տալիս. մինչ այդ «խամ յոլը» կըսեին, այսինքն՝ անկարգ ճամփա էր: Հայերուն հոն կբանացնեին: Դրամ չէին տար, բայց ալյուր, ձեթ և ուրիշ բաներ կուտային: Ես երեխա էի, յոթ տարեկան: Ես ալ մեծերուն հետ կաշխատեի...

178 (178).
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1887 Թ., ԴՅՈՐՏՅՈԼ)

Ես ավարտել էի Դյորտյոլի Կենտրոնական վարժարանը: 1915-ին, որպես զինվոր, բոլորին հավաքեցին տարան: Մենք՝ քսանյոթ ուսուցիչներս, գնացինք Ավնի բեյի մոտ, բայց՝ անօգուտ. յոթ հարյուր հիսուն հոգի բոլորին հավաքեցին, ես ալ, պապաս ալ մեջը, միայն տղամարդկանց հավաքեցին՝ տասնհինգից մինչև հիսուն տարեկան: Մեր թաղի մեջ, կառավարական տան առջև՝ լա՜ց, կո՜ծ. բոլորը կուլային:

Դյորտյոլը պիտի դիմադրեր, բայց մարդիկ հետո հրաժարվեցին և հնազանդվեցին: Սաոակ կաթողիկոսը չէր ուզում կովենք: Ջեմալ փաշան Ադանայի վալին էր:

Առավոտյան դեմ պաշարեցին, խուժեցին ներս, տուն-տուն հավաքեցին բոլոր տղամարդկանց՝ յոթ հարյուր հիսուն հոգի: Էրզին ըսված գյուղ մը կար, պիտի հոն գիշերեինք: Մեկ կիլոմետր մնացած դեպի արևմուտք մեզ դարձուցին, ձորի մեջ տարին. ամեն կողմը երկու հարյուր հիսուն թուրք զինվոր պատրաստ են, զինված, մեզ պիտի ջարդեն: Արևը մայր մտավ: Մեր քարավանը մտավ այդ ձորը: Լրիվ մթնելեն վերջը հրաման եկավ՝ ծունկի եկե՛ք: Մերոնց շատերուն մոտ տասնոց հրացաններ կային: Այդ միջոցին հրաման եկավ զինվորներին՝ սվինները բացե՛լ: Մեր՝ յոթ հարյուր հիսուն հոգու ոտքերի ձայնը չի լսվում, քարացել ենք վախից...

Հանկարծ ձորի երկու կողմի բլուրներից մեկի վրա ավստրիացի մեծ գեներալ մը տնկվեցավ՝ սպիտակ հագած, սպիտակ ձիու վրա նստած: Ադ տեսնելով, կոմանդորը հրամայեց՝ անմիջապե՛ս սվինները վար իջեցնել: Գեներալին տեսնելով՝ իրենց ընելիքը չկրցան ընել: Հրաման տվին մեզ՝ քայլեցե՛ք դեպի ծով...

Հետո մեզ մտցուցին եղեգնուտ-ճաոիճի մեջ: Ջուրը՝ մինչև ծունկը, քայլել սկսանք, բոլորը՝ մտավորականներ, դոկտորներ (բժիշկներ), ուսուցիչներ: Վերջին անգամ մենք Նորեն Ավնի բեյին դիմեցինք: Մենք՝ քսանյոթ ուսուցիչներս, խնդրեցինք, որ մենք չերթանք, այլ՝ էրթանք՝ մեր պաշտոնը շարունակենք: Ավնի բեյը կատղեց, ըսավ. - Առաջին անգամ ուսուցիչները պիտի կախենք. անոնք էին երեխաներին հեղափոխություն սովորեցնողը: Քանի որ Վահան Կարապետյանը հանդըգներ էր կովել, սպանեցին նրան, ոտքերը կապած, շունի պես քարշ տվին ձիու ետևից:

Վերջապես գիշերը հասանք գյուղը՝ Էրզին, որը մի ավերակ էր դարձել: Մինչև մեր այնտեղ հասնելը, մեր պառկելիք տեղը ջուր էին բաց թողել, որ թրջվենք: Չորս կողմը պաշարեցին: Սավառ-մավառ գետինը փըռեցինք, ջուրին մեջ նստանք: Էրզինի հայ տղաները բողոք գրեցին, թե՝ որքա՜ն շուտ մոռացած եք մեր աղուհացը, թուրքե՜ր...

Օրը փետրվար 14 էր, ցո՜րտ:

Չոր փայտ ուզեցինք, տղաները բերին: Օջախները վառեցինք, մեկ կողմեն՝ մեր թրջված հագուստները չորցնելու, մյուս կողմեն՝ ճաշ եփելու:

Թուրք զաբիթները սկսան մեզ խուզարկել, ամենափոքր դանակն անգամ հավաքեցին: Անոնք որ տասնոց ունեին, թաղեցին հողին մեջ: Ով ոտքի ճամփա՝ արտաքնոց, պիտի գնար, ոստիկան մը դրին գըլխին:

Ինժեներ Մարկո Պոլոն՝ իտալացի, ինձ վերցրեց թարգմանիչ, որ ճանապարհաշինությանը օգնեմ: Ինձ դարձրին պահեստապետ: Տասնյոթ հազար բանվորություն կար:

Գրող Զորբապի համար Մանուկ չաուշը հարյուր հիսուն ոսկի հավաքեց, որ ոստիկաններին տա, Զորբապին ազատեն: Բայց Զորբապը չհամաձայնեց, ըսավ. «Աս ժողովուրդին ու՞ր ձգեմ»:

Ջեմալ փաշան Զորբապի հետ դասընկեր էր, վեց սինի տեսակ-տեսակ ուտելիքներ դրկեց, Զորբապը մերժեց, ըսավ. «Եթե ուզում է ինձ լավություն ընել, թող Թալեաթին ըսե, թող ազատեն բոլորի՜ն»:

Չորս-հինգ օր Օթել Բարոնում պահելեն վերջը, Խարանի դաշտում սպանեցին Զորբապին:

Ադ յոթ հարյուր հիսուն հոգիս փոխ առ փոխ կրակի շուրջը կտաքանալինք: Առավոտյան հրաման եկավ՝ ոտքի՛ ելեք: Շարժվեցանք դեպի Օսմանիե: Այնտեղ ևս մեզ ըսին՝ հինգ րոպե հանգստացեք: Հետո քշեցին մեզ Քանլը գեչիդ (Արյունոտ անցք): Այդտեղը մացառուտ տեղ մըն էր: Ադ յոթ հարյուր հիսուն հոգիս անտառի մեջ ենք: Մեզ շրջապատեցին: Աստծոն ալ խոշոր գնացել էր. անձրև՜ մը սկսավ: Ժանդարմները կգոռան՝ օ՜լա՛ն, գյավուրլա՜ր, քաչմայը՛ն (ծո՛, գյավուրնե՜ր, մի՛ փախչեք):

Մենք՝ ջահելներս, բղավում ենք՝ ույույը՛ն, քորքմասը՛ն (լսում ենք, մի՛ վախենաք): Սիրտ պետք էր՝ ծերունիներուն տրտունջները լսելու. Աստծո հետ կըռվու՜մ էին՝ դեմ դիմաց...

Առավոտ եղավ: Անձրևը շարունակվում է: Ճանապարհը վերելք է: Ինչքան գնում ես, այնքան ետ ես գնում: Այդտեղ զինվորական կառքերը չեն կարող ցեխի մեջ գնալ: Երկու հարյուր-երեք հարյուր հոգու աշխատացնում են: Մեզ որ տեսան՝ լացուկոծը սկսան: Անձրևը հեղեղ դարձավ:

Հասանք մինչև Հասանբեյլի, մութը կոխեց: Ո՛չ Աստված է խղճում, ո՛չ թուրքը: Դուն մի ըսեր, հին ժամանակվանից անտեղերը հայեր կապրին եղեր, մեզի մտցուցին ադ տների ախոռները: Այդտեղ կար Լյութֆի բեյ անունով աղա մը: Ան տանուտեր-քեհյաներուն կըսե՝ ամեն մեկդ ձեր տունը տարեք աս հայերուն:

Քեհյաները կըսեն՝ մենք երաշխավոր ենք, թող մեր տուները տանինք հայերը: Լյութֆի բեյը թողեց, որ մեզ բաժանեն տները: Անմիջապես տաքացանք, հյուրասիրվեցինք:

Առավոտյան ես դուրս եկա: Ճանապարհը շինելու համար քար կար: Հյոթաճիայեն հայերը բեռցած էին, հարյուր մետր խորություն ունեցող ձորից քարերը պիտի կոնակով բարձրացնեին վեր, ով չէր կրնար տանիլ՝ ղրբաջով կխփեին:

Հաջորդ օրը ևս գնացինք աշխատելու, տարին երկու հարյուր հիսուն-երկու հարյուր հիսուն հոգի: Այսպիսով, Էնթիլիի մեջ աշխատցուցին երեք ամիս: Կըռնակով քար կկրեինք:

Պոլսո մեջ հայերու հետ ապրած մի թուրք կար՝ Իզմայիլ Հակկը բեյ. ան շատ լավ մարդ էր, եկավ ինձ կանչեց, ըսավ. - Դուն իմ մոտ պիտի մնաս: Ինձի տուր քու ժողովուրդին անունները. ով վաթսուն տարեկան է, գրի՛ր անունները, բե՛ր:

Գնացի գրեցի. հարյուր հոգի եղավ: Եվ այդ մարդը ցուցակը առավ, Հալեպ մենդիլ մըֆետիշին (խուզարկության պետին) գրեց, որ սրանք պիտի ղրկվին ետ: Պապային ալ մի վեցիկա (թույլտվության կտրոն) տվեց, որ ոչ ոք բան չկրնա ըսել…

179 (179).
ՄԱՐԻ ԽԱԼԲՈՒՐՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԴՅՈՐՏՅՈՂ)

Վեց տարեկան էի, որ աքսոր հանեցին: Պապաս տեր հայր էր Դյորտյողում: Կանչեցին, ըսին՝ վաղը պիտի դուրս էլլաք աստեղեն: Ադ գիշերը մենք դուրս եկանք գյուղեն: Ջորիի մը վրա մեզ նստեցուցին՝ ինձ ու մեծ քույրս, պզտիկ քույրերուս խուրջիններու մեջ դրին, ջորիին քովերը կախեցին, դուրս ելանք գյուղեն: Բոլոր մերիններուն հետ էինք՝ հորեղբայրս, մորեղբայրս, աւոնց հետ մայրս, հայրս, մորաքույրներս՝ բոլորը ընտանիքներով: Տանում էին մեզ Հալեպ: Թրենով Թոփրաքկալեից բերին Հալեպ:

Տղամարդկանց հավաքեցին: Հորս բռնեցին, ձեռքերը կապած տարին. ալ չտեսա աւոր: Կըսեն քի թրնախները քաշեցին: Հորեղբորս մեռցուցին՝ աւոր, տղայինն հետ, Մուրադ գետը նետեցին: Ես տեսա ջուրին վրա աւոնց լեշերը կուգային: Հետո մեզ քալելով տարին դեպի Դեր Զոր: Հոն չոլը մնացինք, սոված մնացինք, սովածութենեն շատերը մեռան, ձմերուկին կեղևը կփնտրեինք, չէինք գտնար: Հետո այնտեղեն մի արաբ եկավ մորս ըսավ. - Աս աղջիկը տուր ինձի, ինձի աղջիկ ընեմ, - ըսավ, - ետ դառնաս նե կուտամ քեզի, չէ նե՝ ինձի աղջիկ կըլլա: - Մամաս չտվավ:

- Մեռնիմ ալ նե, թող քովս ըլլա, - ըսավ:

Արաբը շատ համոզեց մորս: Մայրս մտածեց՝ կրնա ըլլալ, որ աղջիկս ողջ մնա:

Ես ոտքերս գետնին զարկի. - Չե՛մ ուզեր, - ըսի, բայց լսող չկար: Սոված էինք: Երեխաները առանց ջուրի ուռան, մեռան: Արաբը ինձի տարավ իր տունը: Աւոր ընպատակը աւն էր, որ ինձի մեծցնե, իր տղաներուն մեկին հետ ամուսնացնե:

Ինձի ըսավ. - Քու անունը Արուս է:

Վերջը ադ մարդուն զինվոր տարին: Ամենեն առաջ քշեր են ադ մարդը, մեռեր է:

Արաբին կնիկը ըսավ ինձի. - Քու ոտքդ ուղուրսուզ էր, գնա՛ աս տունեն:

Ես դուրս եկա, անտեր-աւտիրական փողոց էլա: Լալով կերթամ: Մեկ ալ տեսա մոլլա մը ըսավ. - Ու՞ր կերթաս կոր, աղջի՛կ:

Ըսի. - Տեր-տիրական չունիմ, կերթամ կոր:

- Եկու՛ր քովս, - ձեռքես բռնեց, տարավ իր տունը: Կնիկին ըսավ. - Ասոր պիտի նայիս:

Կնիկը ըսավ. - Ես իմ ունեցած չոջուխներեն օսաննմիշ եղած եմ, չե՛մ նայիր: - Ամմա հետո կնիկը փափկեցավ, ես մնացի հոն: Ադ կինը աղջիկ մը ուներ, Բաղդադ հարս էր գնացած: Եկավ, հաց, խուրմա, ամեն ինչ բերավ, վերջը էդ աղջիկը մնաց մեզ մոտ մեկ ամիս և ինձ շատ սիրեց, մորը ըսավ. - Տու՛ր ինձ աս աղջիկը, ես իմ չոջուխին պես կնայիմ:

- Ա՛ռ, տա՛ր, - ըսավ մայրը:

Ինձի առավ աղջիկը, Մուրադ գետի վրա ղայըղով տարավ:

Ադ աղջիկը մի չոջուխ ուներ և մի մարդ: Հացի խըտլըխ էր հոն: Ցորենը բերում էին, քաշում էին քարով, ալյուր էին աւնում, հետո հաց էին շինում, ուտում:

Մեկ ալ ըսին, քի անգլիացին, ֆրանսացին կուգան կոր: Արաբները փախան Դեր Զորեն: Տեսա, որ ինձի հոն պիտի ձգեն: Ադամկ ալ եղավ: Ինձի իրենց հետ չտարին, փողոցը ձգեցին: Աւձրևը կուգա՛, սովա՛ծ, ծարա՛վ, անտեղը պատի կողքը պառկա, քունս տարել է:

Մեկ ալ տեսա մեկը ոտքով կզարնե կոր ինձի: Մարդ մըն էր, մուշամբա հագած էր: Ըսավ. - Էլի՛ր, դուն ո՞վ ես:

Ըսի. - Ես ո՛չ մեկը չունիմ:

Ադ մարդը մեղքցավ ինձի, տարավ իր տունը. հարուստ մարդ էր: Կնիկին հագուստները տվին, ինձի հագցուցին: Համազան էր, կերակուր էին եփում: Ինձ ալ տվին, կերա: Ես հոն մնացի: Մարդը շունկան մեծ խանութ ուներ: Օր մը կնիկը ըսավ. - Հաց տամ, հորդ (այսինքն՝ իրենց տան հորը) տար:

Ես ալ առի ուտելիքները, տարի շուկա: Դու մի ըսեր, իմ քաղաքացի մարդիկները՝ Դեր Զորը մնացածները, բերեր են, խանը լեցուցեր են:

Մեր դրացիին տղան ինձի տեսավ, ճանչցավ, մեկ ալ տեսնամ փաթըր-փաթըր վար իջավ խանեն. - Դուն հա՞յ ես, - ըսավ:

- Ո՛չ, - ըսի:

- Դուն տեր Գրիգորին աղջիկը չե՞ս:

- Այո՛, - ըսի:

- Դուն իմ քու՛յրն ես, - ըսավ:

Ես ըսի. - Հիմա հաց կտանիմ հորս, իրիկունը կգամ մեր տունը:

Մեր ծանոթ հայերը եկան հորս խանութը, հարցուցին. - Քու քովդ հայ աղջիկ կա՞:

- Չէ՛, - ըսավ, - չիկա:

- Ունե՛ս:

- Չունե՛մ:

- Ինչ որ ալ ըսես, մենք օրենքով կուգանք կառնենք, կտանենք, - ըսին:

Իրիկվան դեմը եկան ըսին հորս. - Հանե՛ աղջիկը:

- Մենք հայ աղջիկ չունի՛նք, - ըսավ:

Մարդը ինձի տարավ պաճեց փայտանոցը, որ ինձի չգտնան: Անկե վերջը տունը-տեղը իրար անցուցին հայերը, ինձի գտան, սկսան ինձի համոզել: Մեկը ըսավ. - Թող աղջիկը համոզվի, զորով չտանենք:

Ամենեն վերջը ես ըսի. - Ես պիտի երթամ:

Առավոտ եղավ, էդ արաբ մարդը չէր կրցեր քնանալ, կըսե. - Տվե՛ք իմ աղջիկը, աւ ի՛մս է:

Հայերը կըսեն. - Կտանինք ֆրանսացի կոմանդորին քովը, աւ ինչ ըսե՝ թող աւնկն ըլլա, - մեկը՝ բիլեզիկ կուտա, մյուսը՝ գերդաձըխ կուտա:

Ֆրանսացի կոմանդորը ըսավ. - Մենք զորով չենք կրնար առնել, - հարցուց ինձի. - Աղջի՛կս, դուն ընտրե, ո՞ր մեկը կուզես, եղբո՞րդ կուզես, թե՞ պապայիդ (արաբ) կուզես:

Ես ըսի. - Եղբա՛յրս կուզեմ: Բոլորը՝ ուռա՛ ըսին, ուրախացան: Հետո հայերը ինձ առին իրենց հետ, տարին Հալեպ: Ուրիշ որբացած երեխաներ ալ կային ինձի պես: Ամեն մեկին իրեն բարեկամին քովը տարին: Ինձ ալ տվին Արիս քեռիիս: Վերադարձին Իսկենդերուն գացինք, այլևս՝ Դյորտյոլ չգացինք: Անտեղեն Անդրաւինկ եղբորս հետ գնացինք Շամ, Դամասկոս՝ հորեղբորս տղային քովը: Դամասկոսում հորեղբորս տղային գործը լավ չէր: Գնացինք Ջեբել Դրուզ մնացինք: Հոն ամուսնացա ուրֆացի Աբրահամին հետ: Հետո ալ 1946-ին հինգ երեխայով եկանք Հայաստան:

180 (180).
ԳԵՎՈՐԳ ՏԵՐ–ՍԱՀԱԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԴՅՈՐՏՅՈՂ)

1915 ապրիլի 14-ին Գրիգոր Զոհրապը* Թալեաթ փաշայի տանը ընդունդ էր խաղում: Մի քանի օրեն հայ մտավորականներուն բռնում են, Զոհրապը չի հավատում, գնում է Թալեաթի մոտ՝ բողոքի: Թալեաթը պաղարյունությամբ կպատասխանե. - Ձեր բողոքը իզուր է…

Հայրս Գրիգոր Զոհրապին Օթել Բարոնում** կհանդիպի, կըսե. - Ես ղասաբխանեեն կուգամ կոր: Հոն մի հատ հայ չձգեցին ողջ: Էկու՛ր քեզի ազատեմ…

Բայց Զոհրապը կպատասխանե. - Եթե ես էրթամ, բոլո՛ր հայերուն կմորթեն…

181 (181).
ՍՐԲՈՒՀԻ ՄԱԿԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ԱԴԱՆԱ)

Ես հազիվ տասներկու տարեկան էի, երբ թուրք կառավարությունը մոտ երեք հազար զինվոր բերեց, մտցրեց Ադանա, որ կազմակերպեն Ադանայի հայերի աքսորը: Թուրք զինվորները սկզբում վախով մտան Ադանա, որովհետև կվախնային, որ աւոնք կապստամբեն:

Մեզ քշեցին ոտքով, քալե՛ հա՛ քալե՛: Անոթի, ծարավ, հիվանդ, ուժասպառ: Դեր Զորի մոտ Մեսկենե ըսված տեղ մը կար, հայերը վրաններ զարկին, տակը մտան քիչ մը հանգչելու: Օրական առնվազն երկու հարյուր կիսամեռ, դեռ ողջ մարդկանց կտանեին թաղելու: Տիֆը հնձում էր ժողովրդին: Օր մը էկան իմ հորաքույրին ու մեծ հորս ալ ուզեցին տանել, որոնք բռնված էին տիֆով: Հայրս աղաչեց, պաղատեց, ունեցած վերջին դեղին ոսկիները տվեց, որ իր քրոջը չտանեն…

Ադ հորաքույրս տասներեք տարեկան աղվորիկ աղջիկ մը ուներ, աւոնը՝ Արուսյակ: Օր մը էլանք, որ գիշերը քնացած տեղերնիս ադ աղջիկին փախցուցեր են: Փնտրեցինք, բայց ու՞ր կգտնաս…

Վերջապես, ինչ երկարացնեմ, տարիներ անցան, գաղթականութենեն պիտի ետ գանք Ադանա: Հորս ձեռքը բռնած կքալեինք, լսեցինք, որ փախցված հայ աղջիկներուն հայերը ազատել, բերել են, հավաքել են տունի մը մեջ: Մենք ալ գացինք տեսնելու: Տեսանք, որ մեջերնին խոշոր կնիկ մը՝ քեռի ըսելով մեզ մոտեցավ: Հայրս կնայի, չի ճանչնար: Հայ պաշտոնյան, որ կհըսկեր, արգելեց մեզ մոտենալ: Մեկ էլ ադ կնիկը գետինը իևկավ, սկսավ լալ, ըսելով. - Քեռի՛, քեռի՛, ես Արուսյակն եմ, չճանցա՞ր ինձի:

Հայրս լսեց, վազեց մոտը, ևորեն չթողեցին:

- Քեռի՛, օգնի՛ր ինձի…

Հոն քահանա մը կար: Հայրս մոտեցավ ադ քահանային, ըսավ. - Հոս բաղնիք չիկա՞:

- Ո՛չ, բայց ես մաքրել կուտամ աւոր…

Հայրս դրամ տվավ, որ լվան, մաքրեն Արուսյակին: Լվացին, մաքրեցին, բերեցին մեր քովը: Խոսեցինք մինչև իրիկուն: Իրիկուն եղավ պիտի բաժնվինք, որ հետևյալ օրը պիտի գանք պաշտոնապես կարգադրենք: Արուսյակը ըսավ. - Քեռի՛, ըսե աւկողինս թող փոխեն:

Հայրս ադ ալ կարգադրեց:

Դու մի ըսեր, աս մեր աղվորիկ Արուսյակի թուրք ամուսինը կհետևի, կուգա մինչև Ադանա, կգտնա ասոնց տեղը, կըսե. - Ես ձեզի խոշոր գումար կուտամ, միայն իմ կինս ինձի տվեք:

* Գրիգոր Զոհրապի մասին ավելի մանրամասն տե՛ս նրա դստեր՝ Դոլորես Զոհրապ–Լիպմանի պատմած հուշը՝ [240(240).]:

** Հալեպում հյուրանոց, որը պատկանել է հայի:

Հորս հետ էկան բանակցելու: Հայրս ժամանակ ուզեց մտածելու: Մյուս քրոջ աղջկան բերել տվավ, որ խորհրդակցի: Անոր միջոցով Արուսյակին հարցուցին, ան ըսավ. - Ո՛չ, ան շատ լավ մարդ էր, ինձի շատ լավ նայեցավ, բայց ես թուրքի կնիկ չե՛մ ըլլար: Ես հղի եմ, բայց ծնած զավակս պիտի խեղդեմ:

Եվ աղանկ ալ ըրավ: Ծննդաբերության ժամանակ ինքն իր ձեռքով իր և իր զավակի հարցերը լուծեց ու մեռավ:

182 (182).
ՄԻՔԱՅԵԼ ՔԵՇԻՇՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1904 Թ., ԱԴԱՆԱ)

1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ ես հինգ տարեկան էի: Այդ սարսափելի գիշերը թուրքերեն կոչվեց «Ջամուզ դելլիդի» այսինքն՝ «գոմեշը գժվեց»: Քանի որ, իրոք, սուլթանը գժվել էր: Նրա հրամանով մարդկանց մորթեցին, մոտ երեսուն հազար հայ սպանեցին, տները քանդեցին, վառեցին, մոխիր դարձուցին: «Ավերակ դարձավ շքեղ Ադանան», որը նաև թուրքերեն «ղըյմա Ադանա» կկոչվի, այսինքն՝ «մսաղաց Ադանա»:

Կոտորածից հետո ով ողջ էր մնացել, բոլորին հավաքեցին տարին Ադանա ըրմաղը (գետը), սուլթան Համիդին լուր ղրկեցին, որ հայերին բոլոր հավաքել ենք, բերել գետին եզերքը, իրմե հրաման կսպասենք: Մեկ կողմը ջուր, մեկ կողմը՝ կրակ:

Պապաս ինձի գրկած էր: Ես կհիշեմ, շալկեն կտեսնայի: Մամաս ալ մեզի հետ էր, գետին եզերքը լեցուցեր էին: Սուլթանեն հրաման եկավ՝ ներումի հրաման: Մեզ ալ. - Փադիշահըմ չո՜ք յաշա (թագավորը շա՜տ ապրի) ըսել տվին: Տուն եկանք, բայց սպանվողները՝ սպանվեցան: Գացինք տուներնիս և շարունակեցինք ապրել:

Այդ ներումեն հետո դպրոց մը բացվավ՝ Արքայական վարժարանը: Հայրս ըսավ. «Տղա՛ս, առաջ դպրոց չիկար, հիմա հայերեն դպրոց բացին: Հայերեն սորվիր»: Ես ուրախացա:

Դպրոց կերթայինք, ո՛չ տառ գիտենք, ո՛չ բան: Արդեն արգելված էր հայերեն խոսիլը և սորվիլը. ոչ միայն լեզուն կկտրեին, նաև թևերուն տակ խաշված տաք հավկիթ կդնեին, որ խոստովանվի, որ հայերեն կսորվեցնեն, եթե կխոստովանվեր՝ կտանեին կկախեին կամ՝ կսպանեին:

Մեզ գիրքեր բերին Պոլիսեն: Տառերը դահիա չըսորված՝ գիրքին թուղթերը կպատռվեին: Մենք վայրենի ժողովուրդ էինք, ո՛չ գիրք էինք տեսած, ո՛չ թուղթ: Հետո վարժապետը տեսավ, որ գիրքին թուղթերը կըպատռվին, տախտակի մը վրա, պաստրմա կտրելիք փայտի պես բռնելիքով, փակցուցին տառերը: Այբ, բեն, գիմ, մինչև և, օ, ֆ սորվանք: Այդ տարին դպրոց գնացինք, քանի թիվին՝ չգիտեմ: 1915 թվին հասանք մինչև գումարում-հանում:

1915 թ. որոշում եկավ, որ հայերուն աքսորեն և այդ որոշումը կատարելու սկսան. մնացողը՝ մնաց, անոնք, որոնց հարազատներեն զինվոր գնացած էին, անոնց ընտանիքներեն աքսոր չտարին:

- Թյուրք դինի ղաբըլ էդեր սեն՝ քալըն (եթե թուրքի հավատքը կընդունիք՝ մնացեք), թե չէ՝ գնացեք: Ժողովուրդը գոմեշի արաբաներով, էշերով, ոմանք ոտքով քալելով քշեցին մինչև Ղաթմա: Մեկ գացած տեղերնիս նորեն կտանեին, որ հոգնենք ու ճամփին մեռնինք: Մեզի մաս-մաս աքսորեցին Դեր Զորի կողմը և մեր բաժինը՝ ահագին հայեր, աքսորեցին Ռաս ուլ Այն, որը կնշանակե գետնին տակեն բխող առաքյալի ջուր: Ռասուլ (առաքյալ) այն (ակ-ջուր)՝ առաքյալի սուրբ ջուր: Այնտեղեն ալ տարան անապատները, մասմաս սպանեցին, ինչ ըրին, ալ չգիտեմ: Մեր ընտանիքը մնաց Ռաս ուլ Այն: Պապաս նաջար էր (ատաղձագործ), զորանոցներ կշիներ, անոր շնորհիվ մնացինք հոն: Ժողովուրդը հոն շատ էր: Տիֆ հիվանդություն մը եկավ: Ժողովուրդը սկսավ հիվանդանալ: Անապատում հայերը ոչխարների պես փռված, պառկած էին գետինը: Մամաս ալ հոն տիֆեն մեռավ: Առավոտը կելլեին, չէ՞ որ տիֆը մահացուցիչ հիվանդություն է, այդ պառկած ժողովուրդին մեջեն մեռածներուն կտանեին, փոս մը կփորեին, մեջը կլեցնեին, կփակեին: Եվ ասանկով ժողովուրդը էրթալով քիչցավ: Տանում, մորթում էին կամ մարդիկը իրենց-իրենց մեռնում էին: Մենք մի տեղ էինք, ուր արհեստով աշխատողներուն կապրեցնեին: Այնտեղ թուրք չերքեզներ կային, կուգային հայ աղջիկներուն կտանեին, կբռնաբարեին, ետքը նորեն ետ կբերեին:

Հետո թուրքն ու գերմանացին պարտվեցան, սկսան փախչել: Գերմանացիները երկաթգիծ կսարքեին: Մենք Բեռլին-Բաղդադ երկաթգծի վրա կաշխատեինք: Ես տասնչորս տարեկան էի: Վելհասըլ անգլիացիները ավելի ուժեղ դուրս եկան, գերմանացիներն ու թուրքերը փախչել սկսան: Ես ալ իմ ընկերներով եկա Մուսուլ քաղաքը: Այդտեղ սկսանք ապրիլ՝ խեղճ ու կրակ: Կուժով ջուր կծախեի: Մեկը կտոր մը հաց կուտար, կտոր մը պանիր կամ քանի մը հատ զեյթին, չանթայիս մեջ կլեցնեի: Այդտեղ անգլիացիները որբ հայերուն հավաքեցին, կերակրեցին և ղրկեցին Բաղդադի կողմը՝ Բախուվա: Այդտեղ ասորիներ ալ կապրեին: Այդտեղ, վրաններուն տակ մեզի կկերակրեին, ուտելիք կուտային, մենք կապրեինք: Մենք չորս ընկերներով իրար համոզեցինք ու փախանք, գացինք Բաղդադ: Այնտեղ երկու եկեղեցի կար հայկական. մեկը հին էր, չէին օգտագործեր, հոն պառկանք: Սկսանք գործ փնտրել: Ես պաղպաղակ ծախողի մոտ ծառա եղա, այնտեղ սրճարանի պես մարդիկ կնստեին ալա-թուրքա դոնդուրմա (պաղպաղակ) կուտեին: Ես ալ կտանեի-կբերեի, դրամը կտայի տիրոջս: Այդտեղ շատ հարուստ հրեա մը կտեսնա ինձի: Ես ալ տասնչորս-տասնհինգ տարեկան եղա արդեն: Աս հրեան աս դոնդուրմաջիեն ինձի ուզեր է, ո՞վ գիտե, ծախու առեր է, ի՞նչ ըրեր է, չգիտեմ, շատ հարուստ հրեա մըն էր: Ան ըսավ. «Քեզ պիտի տանիմ մեր տունը, հոն հանգիստ պիտի ապրիս»: Աս մարդուն հետ գացի իրեն տունը, պալատի պես տուն, կին մըն ալ ուներ և տունին մեջը ծառա եղա: Աղտեղ նկուղ կար, վերևը էլփազեի (հովահար) պես բան մը կար, որ երբ հանըմը քնանար, ես պիտի քաշեի, հով ընեի, քանի որ ան ժամանակ էլեկտրականություն չկար: Հետո ամառը իրենց հետ ամառնոց տարին, 4 ծառա ունեին, ես ալ՝ հինգ. մեկը՝ ճաշ եփող, մեկը՝ լվացք ընող, մեկը՝ երեխան կնայի, մյուսը՝ մաքրություն կընե, ես ալ՝ սեղանը կդնեի, կհավաքեի: Բավական ժամանակ անցավ այսպես: Բախուվայի հայերը ցրվեցան: Մեկ ընտանիք մը եկավ, որը իմ բարեկամս էր, որը Ադանա պիտի գնար, ըսավ. - Պապադ ողջ է, Ադանա է, մենք պիտի երթանք, կուզե՞ս դուն ալ եկուր:

Գնացի հրեա տիրոջս ըսի. - Հայրս ողջ է եղեր, ես Ադանա պիտի երթամ, գտնամ անոր:

Հրեան փարա տվավ ինձի, որ գոմեշի արաբա նստիմ: Բաղդադեն մինչև Հալեպ տասնհինգ օրեն հասանք: Հալեպ հասանք, այնտեղ Ադանա գնացող պոեզ կար, գացի հորս գտա այնտեղ: Սկսանք ապրիլ: Ես արդեն տասնվեց տարեկան եմ: Ուզեցի դպրոց երթալ, բայց չկրցա սորվիլ: Խելքս միտքս թուրք կոտորելն էր. չէ՞ որ այդքան տեսարաններ տեսած էի: Էլոյան ազգանունով մարդ մը կար, ըսի.

- Ինձի հայկական բանակի մեջ կամավոր գրեցեք:

Ոչ միայն ես, այլև հայ որբ աղջիկներ ալ կամավոր կգրվեին: Բավական զորք հավքեցին. ճակատին եռագույն դրված գլխարկ կդնեինք: Այսպես բավական կռվելեն հետո չեղյալ համարեցին Ադանայի հայկական կառավարությունը: Ֆրանսացիք հայերուն լքեցին, չուզեցին հայերուն պաշտպանել: Մեզի, յոթանասուն հոգու չափ, ղրկեցին Բեյրութ: Մենք ուզեցինք Հայաստան երթալ: Դու մի ըսեր՝ Հայաստանը բոլշևիկ եղեր է: Մեզի ղրկեցին Պոլիս: Ձմեռը եկավ, ցու՜րտ, մրսում ենք. ազգային խնամատարությունեն ուզեցինք բաթանիա, որ չմրսինք: Անոնք մեզի պահեցին:

Պոլիս որ եկանք, հույները իրենց բանակին համար զինվոր կտանեին: Այնտեղ Թորգոմ փաշա մը կար: Հայերն ալ հույներու հետ կկռվեին, որ վերջն ալ Հայաստանի համար կռվինք: Գացինք, մոտ երեք հարյուրի չափ հայ կար, սկսանք ծառայել: Հետո մի քանի ընկերներով դուրս եկանք բանակեն, գացինք ծառայելու պարտիզանական ջոկատի մեջ: Մեր կապիտանը՝ Անաստասը, հույն էր: Գացինք պարտիզան եղանք Անաստաս կապիտանի մոտ: Աս մեզ տարավ, դեռ զենք չունեինք: Հրաման եկավ, որ հույները պիտի քաշվին: Մեր Անաստաս կապիտանը թողեց մեզի: Հետո արդեն մենք զինված էինք: Այնտեղ մենք սպասում էինք թուրքերուն: Հետո սկսեցին կրակել, մարդուն գընդակ մը կդիպնա՝ կմեռնի: Գնդակները վերջանան նե, գնդակ մեզի ո՞վ պիտի տա, ավելի լավ է, որ էրթանք Իզմիր, դանակ շինել տանք, որ թուրք սպանենք, արյունը խմենք, միսը ուտենք, թուրքին անունը ջնջենք: Այդպես Մանասաեն Իզմիրի ճամփին վագոնները լիքն են, ժողովուրդը մեղուի փեթակի պես լցված է, կախված են: Վագոնը շարժվելուն պես՝ կթափվեին, կմեռնեին: Իզմիր գացինք, գտանք հորեղբորս տղային՝ Միսաք չաուշ Քեշիշյանին, որը Անդրանիկի զինվորն էր եղել ու առաջնորդին ղավազը (օգնականը) եղած էր: Ըսին, որ Մուստաֆա Քեմալը բոլոր Թուրքիան գրավում է, աս երկիրեն պետք է փախչիլ: Ինչպե՞ս փախչինք, նավ չիկա, լողացողներուն վրա տաք ջուր կթափեն, որ խեղդվին: Թուրքերը եկան, սկսան կրակել, բոլորին սպանել: Աղ Միսաք չաուշը եկավ, ըսավ. - Մեր տունը պաշտպանելու համար, աս շենքին մեջ կմնանք, մինչև մեռնինք. - երկու արկղ ձեռքի ռումբ-նռնակ բերավ, երկու արկղ ալ գնդակ բերավ. - մինչև մեռնիլնիս կկըռվինք, - ըսավ: Հետո ան գնաց առաջնորդարան, եկավ մեզի ըսավ. - Թուրքական դրոշակը բարձրացուցին, թուրք զինվորները սկսան քալել փողոցներով, ալ հոս մնալու տեղ չէ:

Այս լուրը ստանալուս պես ծովափ գացինք: Խըղդվին նավը կար՝ Եգիպտոսի նավ մը: Ես ալ նավակին մեջ ինքզինքս նետեցի: Արամ Կայծակը* օր մը առաջ գացեր էր, ես ալ ճամփա էլա. երկու դեղին ոսկի պիտի տայինք, որ նավակը մեզի նավ հասցնի: Նավը մեզ չառավ՝ կապիտանը կընդունի, չընդունիր: Երկու դեղին ոսկի տվինք, մերդիվեններուն վրա մեզի կեցուցին, կապիտանը էրթալուն պես երկու դեղին ոսկի ալ տվինք, էլանք նավ: Հոն էր նաև հորեղբորս տղան՝ Միսաք չաուշը: Միսաք չաուշը գնաց Պոլիս, անկե Բուլգարիա անցավ, գնաց Անդրանիկի թիկնապահը դարձավ: Այդտեղեն գացինք Հունաստան՝ Սախըզ ադա: Այդտեղ ես մնացի: Թուրքին դեմ կռվող հինգ հարյուր հոգի էինք: Հետո ինձի բռնեցին, ազատ աքսոր պիտի ղրկեին Կրետե կղզին: Մեր նավը եկավ, աղ նավով մի կերպ փախա Աթենք: Բարեկամներ ունեի, Վահան Դագեսյանի տունը գնացի: Ես տասնութ տարեկան էի, ավազակի պես հագած էի: Երկու ամիս մնալեն վերջը գացի Մագեթոնիայի կողմը:

Հետո Բուլգարիա գացի, հոն ալ չկրցա ապրիլ, եկա Բեյրութ: Հոն ո՛չ արհեստ ունիմ, ո՛չ ալ հարուստ հայր ունիմ: Գտա պապայիս: Եվ այնտեղ ինձի փոքր եղած ժամանակվա ընկերներս տարին կուսակցականություն սորվեցուցին: 24 թվին Հարություն Մաղոյանի հետ կուսակցական դարձա: Շատ հայտնի, պայքարող կոմունիստ մը եղա: Մաղոյանի գիրքին մեջը անունս կա: Արհմիություն ենք ստեղծած, բանտարկված ենք: Հայտնի կոմունիստ եմ եղել, խմորատիպ թերթեր եմ տարածել: Ամիսը մեկ անգամ կուգային մեր տունը կխուզարկեին, օրական երեք անգամ ստորագրություն կառնեին, որ քաղաքեն դուրս չգամ, որպես վտանգավոր մարդ: Ես ալ մերժեցի, ըսի՝ ալ չպիտի գամ: Այնտեղ սյուրիթեի պետը (անվտանգության պետը, անունը՝ Բուշեթ) ինձի առաջարկեց գնալ Ֆրանսա. հոն կոմունիստները շատ են: Չգացի: Աղ Բուշեթը ըսավ. - Քեզի կջարդենք, կծեծենք, դուն ո՞վ ես:

Աղ տեսակ պետին ըսի. - Դուն ֆրանսացի ես, ես արաբական երկիր կապրիմ և գոհ եմ, դու՛ն ֆրանսացի ես, դու՛ն գնա քո երկիրը:

Եվ այստեղ տասներկու ոստիկանով հարձակվեցին վրաս, աղվոր մը ծեծեցին: Կուսակցական եղած

* Արամ Կայծակը եղել է Կիլիկիայի ազատագրական պայքարի հայտնի դեմքերից:

ժամանակ Դամասկոս, Հալեպ, ուրիշ տեղեր թոուցիկներ կտանեի, առանց վախի: Մինչև 1946 թիվը ծառայել եմ կուսակցությանը և ետո եկանք Հայաստան: Այստեղ ալ աշխատեցա: Լենինականի պրեսին տակ կաշի կտրող կաշխատեի: Լենինականում ապրած ժամանակ, երբ Երևան եկած էի, վերադարձա, տեսա ընտանիքս աքսորել են, ըսել են՝ ձեր կուսակցությունը բուրժուական կուսակցություն է: Կինս կըսե՝ գոնե ամուսինս գա, նոր տարեք: Չեն լսեր. կհավաքեն ամեն ինչ, կթալանեն, կթափեն, կտանեն, հինգ երեխայով կաքսորեն, շատ կտանջվին: Հետո մեզ արդարացրին: Վերադարձանք: Լենինականում, Երևանում գովասանագրեր ունիմ ստացած լավ աշխատանքիս համար: Հիմա անհատական թոշակառու եմ:

183 (183).
ԱՐՈՒՍՅԱԿ ՆԵՖԵՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1906 Թ., ԱԴԱՆԱ)

Ադ ժամանակ ես ինը տարեկան էի: Մորաքույրըս ասաց մամայիս. - Ու՞ր ես տանում էս էրեխեքին, աքսորում պիտի մեռնեն, քանի որ հրաման է ելած՝ որուն ամուսինը թուրքի զինվոր է դարձած, անոր ընտանիքը աքսոր չպիտի ղրկեն: Բայց մենք ամեն ինչ ծախել էինք արդեն: Այնպես որ, մերկ-տկլոր մնացինք Ադանայում: Հետո 1921 թվին, երբ ֆրանսիացին դուրս եկավ, թուրքը նորեն մտավ, սկսավ հայերին, հույներին կոտորել: Մենք բոլորս ձգեցինք մեր տուն-տեղերը, դուրս եկանք Ադանայեն: Գնացինք Հունաստան: 1946 թ. ալ եկանք Հայաստան:

184 (184).
ՎՐԵԺ ԷԴՅՈՒՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԱԴԱՆԱ)

1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ ես երեք տարեկան էի, երբ ծնողներիս կորսնցուցի: Տեղահանության ժամանակ կհիշեմ, թրեն մը էկավ, մեզի անասունի պես խոթեցին մեջը՝ գլուխնուս զարնելով, հրելով և ծեծելով: Մեզի Հալեպ տարին, ես մարդ չունիմ, ննայող չունիմ: Հայոց եկեղեցի տարին, հոն այնքան թշվառներ կային, շերտ մը հաց և երկու հատ զեթին տվին: Օր մըն ալ Ղուկաս անունով տղու մը հետ Թել–Ավիվի անապատին մեջ գտնվեցա: Ղուկասին փաթթված, ավազի մեջ մնացինք, խամսի մը էլավ, մեզի իր տակը առավ: Էդտեղեն հարյուրապետ մը կանցնի, երկու գլուխ կտեսնա, իր զինվորներուն կըսե. - Նայեցե՛ք ո՞վ են:

Ադ հարյուրապետին զինվորները եկան մեզի ավազներու մեջեն հանեցին, քամիոն մը դրին, տարին զինվորական հիվանդանոց: Գերմանացի բժիշկ մը կար, մեզի դարմանեց: Բայց Ղուկասը չդիմացավ, մեռավ, ես մնացի:

Հարյուրապետին անունը Սալահեթդին էր: Ինձի առավ, ըսավ. - Մենք հայ տղոց հետ պատերազմ չենք ըներ կոր, - և ինձի Պոլիս տարավ, որբանոց դրավ: Պետական բարձր պաշտոնյա մը, որը այլազգ էր, ինձի հոգեզավակ առավ, անունս դրավ Մուզաֆֆեր Հիդայետ:

Տարիներ անցան, պատերազմը վերջացավ: 1918 թ. զինադադարը եղավ, գիս որդեգրող մարդը ըսավ. - Նայե՛, ծովեզերքը քուկիններեդ եկեր են:

- Ես չգիտեմ, իմիններս ովքե՞ր են: Գացի տեսնելու: Թուրքերը ինձի փախցուցին, բայց հայերուն կազմակերպությունն այնքան ուժեղ էր, որ մեկը եկավ իմ ականջես բռնեց տարավ: Սկյուտարին հազարապետը ցուցակ մը կազմած է եղեր. բոլոր հայերը ուր են, անոր ցուցակով հավաքեցին տարին Սկյուտար, բայց հայերը քաշվեցան, քանի որ երկու օրը անգամ մը կառավարությունն կփոխվեր:

Փիրե Մեհմեդ անունով թուրք մը ինձի իր քովը առավ, հոն մնացի մինչև պատերազմին վերջը: Հետո հայերի կոմիտեն ինձի առավ տարավ Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցիին դիմացը՝ Ուզունյան որբանոցը, հոն շատ հայ տղաք, աղջիկներ կային: Սրճարանի մեջ խաճվեջիի չրախ էի: Տեղավորվեցա Սկյուտար:

Հետո մարդ մը ինձի հայ գաղթականաց որբոց խնամատարությունը հանձնեց, որի տնօրենը Թումանյան անունով մեկն էր: Բայց թուրքերը մեզի պրոպագանդ կընեին, որ եթե հայերուն երթաք՝ ձեզի պիտի տանջեն, սա՛նկ պիտի ընեն, նա՛նկ պիտի ընեն:

Հետո պետական բարձր պաշտոնյա մը ինձի որդեգրեց: Անոնք զավակ չունեին: Ջմերուկ առնելու պես եկան ինձի առին տարին իրենց տունը: Ադ տունին տիկինը շատ աղվոր ինձի նայեցավ: Իմ անունը Քարաբաշ Միհրանի եղավ: Անոնց քովեն ելնելեն վերջը խանութ վարձեցի: Վերջը կամաց-կամաց դրամ հավաքեցի, ադ խանութներուն տերը դարձա: 1928 թվին ամուսնացա: Տիկինս ալ ադանացի էր: Ես հիմա հանգըստի եմ կոչված:

185 (185).
ԱՐՈՒՍՅԱԿ ՍՏԵՓԱՆԻ ՎԱՆԵՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԱԴԱՆԱ)

Ես տասնութ օրվա կնքված եմ եղել, երբ սկսվել է Ադանայի ջարդը: Թուրքերը կացինները ձեռքերնին բռնած՝ հարձակվել են հայերի տների և խանութների վրա: Հայրս և մայրս կպատսպարվին հայ եկեղեցիին

մը մեջ: Թոքաթին գերապայծառ սրբազանը ոսկիները քսակին մեջ լեցուցած կուգա, ամեն մեկ հայի կյանքի համար մեկ-մեկ ոսկի կուտա, կազատե:

Հայրս, մայրս՝ երկու երեխայով ու ինձ գրկած, դուրս կգան բանտարկված եկեղեցիին մեջեն, կտեսնան փողոցները դիակները լցված, մայրերուն փորերը ճեղքված, բացված, մանուկը մոր ծծին վրա սպանված, մեծ հայրս ալ սպանվել է, Ռուբեն մորեղբայրս ձիու վրա փախել է: Այդ 1909-ին էր:

Մերոնք կտեղափոխվին պարտեզներու մեջ: Հետո Թելլալը կպոռա. «Ով տուն ունի՝ թող երթա իր տունը»: Բայց երեք օրվա մեջ երեսուն հազար հայ է կոտորվել: Մեր տունն էլ վառել էին: Մերոնք ալևի բարեկամ մը կունենան: Ան պապայիս, մամայիս և ինձ՝ տասնըհինգ օրական խունդախով կտանի իր տունը: Ոչ մի շոր չեն ունեցել: Ալևիի կնիկը իր հին շորերուն մեջ կփաթթե ինձի: Հայրս նրանց հողի վրա չարդախ մը կշինե, հոն մենք կրնակինք մեծ եղբորս՝ Նիկողոս և քրոջս՝ Ազնիվին հետ: Հետո մենք գնացինք Իզմիր, ապրում էինք Մանիսայում:

1915 թվին Մանիսայի հայերը աքսոր չտարին: Քանի որ Իզմիրի առաջնորդը փաշային դասընկերն է եղեր, իզմիրցիները աքսոր չգացին: Մենք աքսոր չենք տեսած: Բայց լսած եմ, որ մորաքույրս աքսորի ժամանակ ոտքերը կուտին, չկրնար քալել: Արաբ մարդու մը ոսկի կուտան, էշի վրա կնստեցնեն: Էշին վրա արմավ կա եղեր, մորաքույրս կուտե, բայց ան ալ Դեր Զորի անապատին մեջ կմեռնի: Մյուս մորաքույրիս ալ չորս աղջիկներով Դեր Զոր կղրկեն, տղամարդկանց և տղաներուն կտանին կջարդեն, երբ կնիկները առանձին կմընան, արաբները աղջիկներուն ալ կփախցնեն: Անոնց ընտանիքեն որևէ մեկը չվերադարձավ: Երբ պատերազմեն վերջը անգլիացիները Ադանա մտան, մենք ալ Ադանա գացինք: Անգլիացիներեն վերջը ֆրանսիացիները եկան:

1919-ին Ադանա եկած էին շատ մը կամավորներ: Անոնցմե շատերը թուրքերուն փախցուցած հայ աղջիկներուն ամին, ամուսնացան: Քույրս Այնթապի ձեռագործ կաշխատի եղեր, օր մը Կարապետ անունով կամավոր մը կըսե. - Ժակետիս աստառը քանդված է, ո՞վ կկարե:

Քույրս կկարե: Երեք կին կմոտենան քրոջս, կուզեն այնթապի ձեռագործ գնել: Քույրս ցույց կուտա: Անոնք քրոջս կհարցնեն. - Ո՞րտեղացի եք:

- Ադանացի եմ, Մարլյան Ստեփանին աղջիկն եմ, - կըսե քույրս:

Այդ կիները քրոջս անունը կանունեն, կերթան, հարց ու փորձ կընեն: Քույրս երբ աշխատանքեն եկավ, պատմեց. - Անուն, ազգանուն ուզեցին, կարծեմ՝ այս իրիկուն պիտի մեր տունը գան:

Ես ինը տարեկան էի: Փողոցը ջրեցի, ավլեցի: Մայրս չիքյոֆթե ըրավ, կերանք: Հազիվ ամանները պիտի լվար, ադ մարդիկ եկան, ըսին. - Այսօր նպատակի մը համար եկած ենք: Ամերիկա եղբայր ունինք, կուզենք ձեր աղջկան ձեռքը խնդրել:

Հայրս ըսավ. - Իմ աղջիկը կույս չէ. Իզմիր ամուսնացած էր, ամուսինը մեռած է, երբ Ադանա եկանք, հետերնիս բերինք:

- Ադիկա խնդիր չէ, - ըսին կիները:

Այդպիսով քույրս Ամերիկա հարս գնաց:

1920-ին, երբ ֆրանսացիները Ադանան ձգեցին, դուրս եկան, մենք Լաթաքիա գնացինք, քանի որ Իզմիր նավ չկար: Լաթաքիա իջանք, արաբները ըսին. «Եթե դերձակ կա՝ թող վար իջնա նավեն»:

Հայրս իջավ իր ընտանիքով: Մեզի մի սենյակ տվին, ուր արդեն երեք ընտանիք կար: Հորս տարին դերձակի մը մոտ: Հայրիկիս թև մը կուտան, կըսեն. «Անցուր աս թևը»: Հայրս կանցնե: Հոն ժուռնալիստ մը կըհանդիպի, կըսե. «Ես ձեզի լավություն պիտի ընեմ, ձեզ համար խանութ մը պիտի առնեմ, առջևը դերձակի խանութ կընեք՝ կապրիք»:

Հետո տեղափոխվանք Ֆրանսա: Նիսում գըտանք մամայիս հորեղբորը տղան և աղջիկը, անոնց եղբայրները Դեր Զորում զոհվել էին: Մամայիս երկու հորեղբայրները նույնպես սպանված էին Դեր Զորում:

186 (186).
ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ՏԱՐՍՈՆ)

Տարսոնը Կիլիկիայումն է, Ադանայի մոտը, Մերսինի մոտը՝ Միջերկրական ծովի ափին: Աքսորը դեռ չսկսած՝ պապաս մի թուրք ընկեր ուներ, եկավ ըսավ հորս. «Այս գիշեր ձեզի պիտի աքսորեն, պետք է քո ընտանիքով հեռանաս»:

Հայրս լսեց այդ թուրք ընկերոջ խոսքը, և իսկույն ճամփա ելանք:

Այդպիսով մենք փրկվեցանք...

187 (187).
ՂԱԶԱՐՈՍ ԽՐԻՄՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1911 Թ., ՏԱՐՍՈՆ)

Հայրս արհեստով պղնձագործ-կլայեգործ էր, նաև զինագործությամբ կզբաղվեր:

1915 թվին արդեն հորս տարել էին թուրքական բանակ: Մի անգամ պատահաբար եկավ մեզ տեսնելու, հետո գնաց: Էդ գնալն էր, որ գնաց: Անոր համար ալ մեզի աքսոր չհանեցին, թուրքական բանակում ծառայող զինվոր ունինք ըսելով, չնայած լուր ստացանք, որ մեռած է:

1921 թվին ես իննունկես տարեկան էի, երբ դուրս եկանք Սուրիայի նավահանգիստը՝ Լաթաքիա: Հետո

անցանք Բելրութ, ոնց մայրս ինձի տվավ հայ ազգային որբանոց՝ Մամուլետ, որտեղ ինձի պես հարյուր տասը որբեր կային: Հետո մեզի փոխադրեցին ամերիկյան որբանոց:

1923 թվին սննդի պակասության պատճառով բոլորս ալ հավկուրություն ստացանք: Որբանոցի գրեթե բոլոր որբերը մալարիա ընկան՝ ալ մեռնող, մեռնողի:

Մեզի թուղթ ու մատիտ բաժանեցին, որպեսզի ով որ հարազատ ուներ՝ նամակ գրեր, որ գային իրեն տաներին: Անկե վերջն է, որ ինձի փոխադրեցին Բելրութի Անթիլիասի որբանոցը...

188 (188).
ՍՈՂՈՄՈՆ ՌՈՒԲԵՆԻ ԵԹԵՆԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ՄԵՐՍԻՆ)

Թշնամիս թող չտեսնա ան, ինչ որ մեր աչքերը տեսան Դեր Զորի ճամփին... Սիրտս կանգ կառնե, որ կհիշեմ ադ բոլորը...

Աղջիկ-կնիկ, երեք-չորս հարյուր ոոգի գոտիներնին հանած, իրար կապված, իրար հետևից Եփրատ գետը կնետվեինք, որ թուրքի բաժին չդառնան...

Ջուրին երթալը չէիր տեսնար, լեշերը դուրս ելած էին, բերդի պես իրար վրա դիզված էին..., շուները կատղած էին մարդու միս ուտելեն...

189 (189).
ԿԱՐԱՊԵՏ ԵՂՅԱՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1898 Թ., ԿՈՆԻԱ)

Մեր ընտանիքը Կոնիայի Նիդե թաղը կապրեր: Երբ հայրս իր մեռնելը զգաց, կանչեց ինձ ըսավ. - Էկու՛ր, Կարապետ, տղաս: Ասկե վերջը տունին մեծը դու՛ն ես: Աքսոր որ տանեն, քույրերուդ հյուսերուն կապած ոսկիները կհանես, կհավաքես, վրադ կպահես:

Երբ աքսորի լուրը էլավ, ես պապայիս ըսածին պես, ոսկիները մեջքս կապեցի: Ինձի տարին թուրքի բանակ, քույրերուս դեպի Դեր Զոր: Բանակում կտեսնայի, որ ամեն օր մեր հայերը քիչ-քիչ կպակսեին. գլուխնին ուտում էին: «Արմենակ, - ըսի ընկերոջս, - արի փախինք»: Գիշեր մը, մութին մեջ սողալով, փախանք, հասանք ջուրի մը մոտ: Ըսի. - Ամա՛ն, Արմենակ, էկուր քիչ մը ջուր խմենք, լվացվինք, զովանանք:

Արմենակը էկավ, լվացվեցինք, ան քիթին տակեն երգում էր.

Վերքերով լի ջան ֆեդա եմ
Թափառական, տուն չունիմ...

Մեկ ալ կին մը էկավ ջուր առնելու: Լսել էր հայերեն երգը, ըսավ.

- Դուք հա՞յ եք, շու՛տ փախեք, հիմա ամուսինս կգա, ան ղաչաղ արաբներից է, կգա, ձեզ կխփե: Ես այսինչ հայ հարուստի աղջիկն եմ, տունին մեկ հատիկն էի, գացեք ըսեք ծնողքիս, թող գան ազատեն ինձի:

Տեսանք, որ ադ աղջկա ամբողջ երեսները և դոշերը կապույտ մելանով ծեծված էին: Հազիվ աղջիկը գնաց, մարդ մը եկավ՝ թոփուզը ձեռքին: Եկավ, մեր երկուսի գլխուն թոփուզով սկսավ խփել, մեր հագուստները հանեց, մեջքիս ոսկիներն ալ հետը, էլավ գնաց: Մեզի ձգեց վարտիք-շապիկով: Ես Արմենակին ըսի. - Ասոնց մեծն ալ կա երևի, էկուր էրթանք գտնանք, բողոքենք:

Գացինք, տեսանք հեռուեն չադրը մը երևաց: Մոտեցանք: Շուները շրջապատեցին մեզի: Ադ արաբ շեյխի վրանը կըլլա: Մեզի առին ներս տարին: Մենք շեյխին պատմեցինք: Հոն նստած մարդիկ իրար անցան: Գացին մեզի ուտելիք՝ ապուր, հաց բերին, կերանք, հոգնած էինք, ընկանք քնացանք: Առտուն ելանք տեսանք, քի մեր հագուստները կախված են, ոսկիներն ալ մեջը: Դու մի ըսեր, շեյխը փնտրել, գտնել է տվել, մեղքցեր է մեզ: Ես հոն մնացի, սկսա աշխատիլ: Զադրը կավլեի, ուղտով ջուր կբերեի հեռուեն, ոտնաման կշինեի անոնց համար:

Օրին մեկը թուրքի օթո մը եկավ, մեջեն թուրք մը իջավ. - Գյավո՛ր, դուն ի՞նչ ես անում այստեղ, - ըսավ:

Շեյխը սկսավ խնդրել, որ ինձի ձեռք չտան: Օրին մեկն ալ ինձի արաբի հագուստ հագցուց, ղրկեց իր քրոջ քովը: Ծամփին բռնեցին, հարցուփորձ ըրին. - Վեսիկա (բանակից ազատվելու թուղթ) ունե՞ս:

- Չէ՛:
- Անունդ:
- Կարապետ Եղյայան:
- Մուստաֆա՛ պիտի ըլլաս ասկե վերջը:
- Չե՛մ ըլլար:
- Բերե՛ք ֆալախան:

Սկսան ծեծել վաթսունվեց հատ: Հետո նորեն հարցուցին. - Անունդ ի՞նչ է:

- Կարապետ Եղյայան:
- Չէ՛, Մուստաֆա՛ պիտի ըլլաս:
- Չե՛մ ըլլար:

Նորեն վաթսունվեց հատ ֆալախա զարկին: Վերջը ջղայնացած հրամայեց. - Աս գյավուրին զնդան նետեցեք:

Բանտում մնացի մի քանի ժամանակ: Մի օր պահակին հետ խոսեցա, որ մեկ ոսկի տամ, աչքը գոցե, ես փախիմ: Տվի: Փախա: Ետևես լսեցի՝ դյուդիկներով սկսան ձայն տալ, որ փախող կա: Գետինը, փոսին մեջ, խողովակ մը կար, իջա մեջը, մեջն ալ կեղտոտ ջրերը

Ես ըսի. - Դրամը՝ ինձմե, վարպետությունը՝ քեզմե:

Աս խեղճ ու կրակ մարդուն առի տարի տունս, լոգցուցի, հագցուցի: Աս մարդը յախըշընխալը մարդ մը դարձավ: Հալեպի ամենեն աղվոր փողոցներեն մեկում խանութ բռնեցի, սկսանք աշխատցնել: Աս Վահանը աղվոր կոշիկներ կշիներ: Բոլոր ֆրանսացի բարձրաստիճան մարդիկ կուգային մեր խանութը՝ իրենց կնիկներուն կոշիկ առնելու: Կշեռքի վրա դնեիր նե՝ քաշ չուներ, թեթև էին մեր կոշիկները:

Օր մը թուրք զաբիթ մը եկավ, մահանա բռնեց, թե խանութին թաբելան ծուռ դրված է: Ըսավ, դրամը առավ գնաց: Ալ սորված էր՝ ամեն օր կուգար դրամը կառներ, կէրթար: Օր մըն ալ նորեն էկած էր, ես շատ ջղայնացած էի առոր վրա. մեյ մըն ալ ժեներալ Գորոյի աղջիկը խանութնիս մտավ՝ կոշիկ առնելու, ըսավ. - Ինչու՞ տխուր եք:

Ես պատմեցի զաբիթին ըրածը:

Ըսավ. - Մեյ մըն ալ գա ան, օձիքը դարձուր, նյումերոն նայե, ինձի ըսե, պապաս անոր գործեն կհանե:

Օր մըն ալ ես որպես աշկերտ սխալ մը ըրի, աս Վահանը ինձի ապտակեց, ես շատ նեղվեցա, ըսի. - Ամա՛ն, վարպետ, հա՛մ դրամը ես տամ, հա՛մ ապտակը ուտեմ:

- Կարապե՛տ, տղա՛ս, - ըսավ, - արհեստը ասոր մեջն է, օղլու՛մ, քեզ ծեծողին մոտ գնա:

Օր մըն ալ աս Վահանը ըսավ. - Ես Ամերիկա պիտի էրթամ, դուն ալ եկուր էրթանք:

- Ես չե՛մ գար, - ըսի:

Ան գնաց: Նկար մը ղրկեց, ետևը գրված. «Կարապետ, ես հոս լավ եմ, դուն ալ եկուր»:

Ես նորեն չգնացի: Էլա ամուսնացա, ընտանիքս առի, Հայաստան էկա:

կերթային: Մտածեցի՝ հարկավ տեղ մը կթափվի աս աղտոտությունը: Գնացի՛, գնացի՛, վրաս-գլուխս կեղտի մեջ: Տեսա քարեր կան: Լարծուն քարերը բռնելով իջա: Քիչ հեռուն մարդ մը եզով հերկ կըներ: Ինձի տեսավ կեղտի մեջ կորած, ջին կարծեց, վախեն արորմարոր թողեց, փախավ: Ես մոտեցա, արորեն կախված չըխըրնը բացի, մեջի հացը կերա, փորս կշտացուցի, ոտքս առի ու գացի: Շատ գացի, տեսա թուրքի գերեզման մը: Անոնց գերեզմաններն ալ սենյակի պես կըլլան: Վրաս գլուխս թա՛ց, կեղտո՛տ, մտա՝ քնացա: Մեյ մըն ալ առտուն արթնցա չանգըլ-չանգըլ ձայնեն, մարդ մը էշին վրա նստած հեռուեն կուգա: Ես գերեզմաններն դուրս էլա: Աս մարդը ինձի տեսնելուն պես էշը ձգեց փախավ: Ես անոր հացն ալ կերա: Ետքը մտածեցի՝ մարդը կարող է ետ գա էշը փնտրելու:

Ադտեղեն ալ հեռացա, գացի Եփրատի ջուրով լողացա, մաքրվեցա: Վարտիքիս մեջ ջուր լցվեցավ, բալոնի պես ուռեցավ, ինձի մյուս ափը քշեց, անցա:

Հարցնելով, հարցնելով, մերիններին գտա: Տեսա մեկ քույրս մեռած, ամուսինը՝ սպանված, երկու երեխան մնացել են որբ:

Երբ հայերուն աֆլըխ՝ ներում տվին, ես ինձ ազատ զգացի, գացի Հալեպ: Ծամփին մյուս քույրս ալ մեռավ: Ժամանակները գեշ էին: Հացը վեսիկայով էր: Օր մը հացի հերթին մեջը տեսա հայ մարդու մը ջղայնացնում են, քյուֆիր-քյաֆիր, մարդը խըրսեն թե անոթութենեն ինկավ գետին, մարեցավ: Ես աս մարդուն մեղքցա, վերցուցի, տարի ճաշարան մը, կերցուցի, վրան հալ եկավ, հարցուցի. - Դու ո՞վ ես:

- Ինձի կըսեն ֆարմասոն Վահան: Իզմիրեն եմ, առաջ թուրս ա՛չ կկտրեր, ձա՛խ կկտրեր: Հիմա ինձի մի՛ նայիր, հալս՝ հա՛լ չէ: Նե՛ դրամ ունիմ, նե՛ հալ, ես կոշկակար եմ, աղվոր վարպետ եմ:

190 (190).
ՍԱԹԵՆԻԿ ԳՈՒՅՈՒՄՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ԿՈՆԻԱ)

Մեր Կոնիայի վիլայեթը Էլմալու գյուղը կար, ես հոն ծնած եմ: Կըսեն, որ անոր բնակիչները հին ժամանակ Ղարաբաղեն եկած են:

Շահ Աբասի օրոք ղարաբաղցիներուն շատ կնեղեն եղեր, անոր համար ալ տասը-տասնհինգ ընտանիք կըսեն. «Ալ աս ապրելու տեղ չէ»: Տոպրակը կանցնեն գլուխնեն, մեջը կլեցնեն իրենց ունեցած ոսկի դրամները, կերթան Թուրքիա կհասնին: Քանի մը ընտանիք Բուրդուր կհասնին՝ հոն կմնան, քանի մը ընտանիք Սպարտա կհասնին՝ հոն կմնան, մնացածներն ալ Էլմալու կհասնին՝ կմնան: Այնպես որ, մեր Էլմալուի լեզուն ճիշտ Ղարաբաղի լեզուն է: Գիտե՞ս ինչու Էլմալու էր մեր տեղին անունը. գաղթած հայերը հողը կցանեն, կտնկեն, շատ աղվոր խնձոր կհասցնեն, ադ ձևով մեր տեղին անունը կմնա Էլմալու, այսինքն՝ խընձորի տեղ: Թուրքերը Էլմալու քազասը կըսեին, այսինքն՝ Էլմայի տեղանք, քանի որ «Էլմա» թուրքերեն խընձոր կնշանակե:

Ես ծնվել եմ Կոնիայի վիլայեթի Էլմալու գյուղում: 1915 թվին թուրքերը էկան, առաջ էրիկ մարդոցը զինվոր տարին, կիներուն ըսին՝ ձեզի գաղթական պիտի հանենք: Մեկական էշ տվին՝ ամեն մեկ ընտանիքին: Մամաս ուներ չորս հատ բելուզ՝ էրկուսս մեծ էինք, մեկը՝ գիրկը, մեկն ալ՝ ձեռքը: Կեսուրը ծեր էր, անոր ընտեցրեց էշուն վրա: Էրկու տարեկան բելուզը տվավ կեսուրին գիրկը, մնացածնիս ալ քալելով գացինք: Ոտքերնիս արյունոտվեցին, հագուստներնիս պատառոտվեցին, վրանիս ալ հալ չմնաց: Գացինք Հալեպի կողմը...

Մեր պզտիկ բելուզը չէր կրնար քալել: Թուրք ժանդարմն ըսավ. - Աս չոջուխը քալել չի կարողանում, - առավ, նետեց քարերուն վրա:

Մուհաջիրները՝ վա՛խ կըսեն, կուլան: Մամաս գնաց, տեսավ՝ բելուզը գետինը չաբալամիշ կըլլա, հոգին կուտա...

Հասանք Պապ անունով գյուղի մը: Մեկալ բելուզը և կեսուրը անոթութենեն մեռան:

Մամաս սկսավ լվացք ընելով մեզ պահել: Պապաս թուրքի բանակեն փախել, եկել, փնտրել, գտել էր մեզի: Թուրքերը իմացան քի թուրքի բանակեն փախած է՝ էկան մեր աչքին առաջ մորթեցին պապալիս...

Վերջը մամաս ալ մեռավ, ես լրիվ որբ մնացի...:

1915-ի Մեծ ջարդին ժամանակ իմ ծնողքը ևս հատակված ըլլալուն, 1918-են մինչև 1922 թիվը ես եղած եմ Իզմիրի հայկական որբանոցը: Հոն հայ որբուհիները ինձի գործ գործել սորվեցուցին, անոնց հետ կաշխատեի, անոնց հետ տխուր երգեր կերգեինք և միասին հե՛մ կուլայինք, հե՛մ կգործեինք:

Կհիշեմ Խրիմյան Հայրիկը եկավ Իզմիր: Ան տեսավ, որ հայերը բավական լավ վիճակի են, քանի որ ոսկիի շուկան և ուրիշ շատ բաներ հայերուն ձեռքն էր: Ան քարոզ կարդաց և ըսավ. «Սիրելի՛ հայրենակիցներ, դուք Թուրքիայի հողին վրա կապրիք, անոր համար ալ միշտ պետք է ուշադիր ըլլաք, որ ձեր հավատքը և լեզուն պահեք, ձեր ունեցած-չունեցածը պահեք, որ ուրիշները չտիրանան: Անոր համար ինձմե ձեզ խրատ՝ մարուլի պես մի՛ բացվիք, այլ՝ կաղամբի պես գոցվեցեք: Այսինքը՝ ամեն ունեցած-չունեցած հարստությունիդ՝ մի՛ ցուցնեք թուրքերուն»:

Իզմիրի հայերը շատ լավ դիրք ունեին, ճոխ կյանքով կապրեին: Բայց թուրքերը նախանձեցին հայերուն ունեցվածքին, ուզեցին իրենք տիրանալ անոնց ամեն ինչին՝ և՛ զարդերուն, և՛ հողերուն, և՛ տուներուն, ամե՛ն ինչերուն...

Ես շատ քաղաքներ եղած եմ, բայց Իզմիրի զարդերուն պես ո՛չ մի տեղ չեմ տեսած: Հայերը ոսկերիչներ էին մեծ մասամբ: Գեղեցիկ զարդեր կշինեին, զարմանալի գեղեցիկ:

Անտեղի ճոխությունը, հարստությունը ես ո՛չ մի տեղ տեսած չեմ: Մենք երբ որբանոցն էինք, մեզի պղտույտի կտանեին, առաջին անգամ Զարլը Զապլինին հոն տեսա: Մենք բոլորս սուսիկ-փուսիկ կնստեինք, վերջը մեզի շոկոլադի կտոր մը կուտային, կուտեինք, մայթերուն վրա զույգ-զույգ կքալեինք՝ ջաֆջաֆլը ջամեքաններուն նայելով: Բայց երբ Քեմալը եկավ, մեր որբանոցն ալ ցըրվեցավ: Մենք քանի օր անտե՛ր-անտիրական մայթերուն վրա մնացինք: Թուլումբայով ջուր կհանեինք, ջուրին ամանը կբերեինք, կլցնեինք, կտանեինք, որ մեծերը խմեն: Քեմալը եկավ նե հայերուն, հույներուն, բոլոր քրիստոնյաներուն ծովը թափեց, Իզմիրը կրակի տվին: Կրակը կուտեր մարդկանց, չոջուխները խուճդախի մեջ գետինները նետված վրաները կկոխկրտեին, խուճդախի չոջուխները ծովը կնետեին, ծովին վրա անոնք սալլամիշ կըլլային...

Ետքը մեզի փոխադրեցին Հունաստան: Հոն ես գորգի գործարանին մեջը գորգ կգործեի: Ֆաբրիկային մեջը ինձի պես որբուհիներ շատ կային, հե՛մ կաշխատեինք, գորգ կգործեինք, հե՛մ կերգեինք, հե՛մ կհիշեինք մեր անցյալը ու կուլայինք...

Ֆաբրիկային էշիքը քարոտ է, քարոտ,
Հայ որբերուն սիրտերը մայրի են կարոտ,
- Հայ աղջիկնե՛ր, աղջիկնե՛ր, ինչու՞ եք դեղնած,
- Խորոզկանչին կէլլանք, մայրի՛կ, անկից ենք դեղնած...

Ետքը ամուսնացա: Տուն-տեղ եղանք: Աղջիկ մը, տղա մը ունեցա, եկանք Հայաստան:

Ես տղայիս ընտանիքին հետ հաստատված եմ Հրազդանի շրջանում: Աղջիկս՝ Երևանում, իր ընտանիքով Երևան կմնա...

191 (191).
ՆԵՐՍԵՍ ՄՈՎՍԵՍԻ ԳԱԼԲԱԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ԿՈՆԻԱ, ԷԼՄԱԼՈՒ Գ.)

Էլմալուն Անթալիայի մոտ է: Մեր նախնիները 17-րդ դարում, Շահ Աբասի՝ Նախիջևանի գաղթի ժամանակ Շուշիից են փախել, թվով երեք հարյուր ընտանիք: Նրանց մի մասը մնացել է Բոլու քաղաքում: Երեսուն ընտանիք շարունակել են ճանապարհը դեպի Բուրդուր, Սպարտա, մինչև հասել են Միջերկրականի ափը: Ֆինիկիա նավահանգստի մոտ կղզիներ կան: Այնտեղ բնակություն են հաստատել:

Էն ժամանակ սուլթան Մահմուդի ժամանակն է եղել: Հայերը գնում են Օմար աղայի մոտ, մեծ ովերներ կտանին, կխնդրեն իրենց տեղ տալ: Էն ժամանակ Թուրքիայում քիչ հայեր կային: Օմար աղան կհարցնի. - Ի՞նչ գործ կրնեք:

Հայերը կըսեն. - Կոշկակար, հյուսն, դարբին, քարտաշ ենք:

Էդ յոթ հայ ընտանիքները կկոչվեին՝ Իսպիրներ, Ցորղանջիներ, Գալբակջիներ, Ադամյաններ և ուրիշներ: Օմար փաշան կլսե ասոնց, կհամաձայնվի, կըսե. - Գնացե՛ք, մահ եկե՛ք, որտեղ ձեզ դուր կգա, էնտեղից էլ տեղ կտամ ձեզ:

Էն ժամանակ Թուրքիայում շատ արհեստավորներ չկային: Էլմալուն կոչվել է Ղափլան դերեսի (Վագրի ձոր): Էդտեղ հյուսիսային կողմից բարձր սար է, երկու կողմից սարալանջեր են, որոնց միջին մասում երեսուն-քառասուն խորանարդ մետր ջուր է հոսում: Սարի վերևը հարթավայր է լինում: Հայերը որոշում են էդտեղ բնակվել: Նրանք մտածում են՝ արևմտյան սարալանջը ուզել: Օմար փաշան մեկ կիլոմետր հող է տալիս առանձին հայերի համար, որտեղ թուրք չի բնակվել: Էդ յոթը ընտանիքը տուն են շինում, խաանութ են բացում, արհեստանոցներ են բացում, գետը հունի մեջ են մտցնում: Գետի շուրջը պատ են շարում, ջուրը թունելի մեջ են վերցնում: Ջրաղաց են հիմնում: Էնտեղ էլ սևաճող է, քար չկա: Քարահանքից ջրաղացի քար են ջարդում: Գոմեշները լծած՝ քարը բերում են: Հայը աշխատասեր, ստեղծող ժողովուրդ է, նրանց սկսում են սիրել ու հարգել: Հետո եկեղեցի են շինում: Պոլիսից տերտեր են հրավիրում: Դպրոց են կառուցում: Շենքի ներքևը՝ դպրոց, վերևը՝ հյուրերի համար իջևան են դարձնում: Երեխաները չորս-հինգ տարեկանից հաճախում են դպրոց:

Պոլիսից դասատուներ են կանչում: Խանութները շատանում են, շուկա են բացում: Առևտուր են սկսում անել: Այսպես իրենց խաղաղ կյանքով հայերը ապրել են:

1908 թվին հյուրիեթ որ եղավ, Թուրքիան հայերին ազատություն էր խոստացել: Իբր, հայերին ազատություն տվին: Սուլթան Համիդին գահից գցում են: Թալեաթ փաշան, որը Թուրքիո արտաքին գործերի մինիստր նշանակվեց, ասեց, որ եթե հայերին լրիվ չըոչնչացնենք, նրանք միշտ մեզնից պահանջ կունենան: Թագավոր կար, բայց դեր չէր կատարում:

1914 թվին սկսեցին հայերին թուրքական բանակ տանել: Մինչ այդ հայերին զինվոր չէին տանում: Առաջին անգամ հայերից յոթանասուն հոգի հավաքեցին: Երկրորդ հավաքին քառասուն հոգի հավաքեցին: Մնացին շատ քիչ մարդիկ: Երեք քեռի ունեի, բոլորին տարան բանակ՝ չվերադարձան:

1915 թ. հունվարի 6-ին հորս էլ տարան: Հորեղբորս տղան հարյուր ոսկի էր տվել ու ազատվել բանակից: Ինձ տվին նրա մոտ՝ արհեստի: Մի տարի հետո նրան էլ տարան: Ես մնացի մեջտեղը: Մի յոթանասուն տարեկան մարդ կար, ասաց. «Ես քեզ փող չեմ տա, ինչ որ աշխատես կեսը՝ քեզ, կեսը՝ ինձ: Փինաչի կլինե՞ս գյուղում»:

Գնացի գյուղ, աշխատեցա: Հարյուր փութ ցորեն ստացա: Մայրս հիվանդ էր, չէր աշխատում:

1915 թվի աշնանը՝ սեպտեմբերին, գյուղից եկա տեսա, որ թուրք ժանդարմները կանգնած են, հայկական թաղերը փակել են, ոչ դուրս են թողնում, ոչ ներս են թողնում: Իմ բերած ցորենը ներս տարան: Գնացի քեռուս տղի մոտ, ըսի. - Հայկական թաղը շրջապատել են, հույների ժամկոչին սպանել են:

Նա ասաց. - Արի էրթանք:

Էկանք, տեսանք, որ հայկական եկեղեցին բացել են, զենք են փնտրել, չեն գտել: Երեք օր հետո կանչել են ութսուն տարեկան տերտերին, ասել. - Կառավարության հրամանն է՝ հայերին պիտի աքսորենք: Բուրդուրի հայերը պրդեն աքսորված են:

Քառասուն տարեկաններն վեր ութ հոգու աքսորեցին: Մեզ Ստանոզ ղրկեցին: Մորաքույրիս տղան կար՝ Փափազյան Հակոբը, ճամփին կատակ էր անում, խըզակոթով խփեց ժանդարմը, ըսավ. «Գյավու՛ր, կատակ չընե՛ս»: Հասանք Ստանոզ: Ժանդարմը մեզ ըսավ. - Վաղը պիտի գնանք ճանապարհ շինելու: Ձեր փողերը բերեք, ինձ տվեք, ես պահեմ, - մեր փողերը հավաքեց:

Հասանք Բուրդուր: Ժանդարմը մեզ տարավ հանձնեց քաղմաս: Քաղմասի չաուշը հարցրեց. - Դու ո՞վ ես:

Ես տվի իմ քեռու անունը, որին ինքը ճանաչում էր: Ես ըսի. - Ժանդարմը մեր փողերը հավաքեց:

- Ինչու՞ շուտ չասեցիք, - ասեց ու կանչեց ժանդարմին, - սրանց փողերը վերցրե՞լ ես:

- Ես ձեզ ճանապարհին պիտի սպանված ըլլայի, - ասաց ժանդարմը:

Հետո մեզ տարին Աքշեհիր: Հոն լիճ կար: Լոտկա ըստեցրին, լճի մյուս կողմը հանեցին: Հոն բնակչություն չկար: Լոտկայից դուրս եկանք, տեսանք, որ Աքշեհիրի, Աֆիոն-Գարահիսարի, Ազիզիեի հայ կանանց, ծերերին և երեխաներին տարել են: Հաջորդ օրը մեզ հանեցին ճամփա: Հատուկ չեթեների խումբ կար, երբ ծովի ափից մենք արդեն հեռացանք, սկսեցին ջարդել, փշրել, սպանել: Ով թեթև վիրավոր էր՝ լաց լինելով ճամփա ընկավ:

Չորս-հինգ կիլոմետր հազիվ էինք քալլում. հաց չկար, ջուր չկար, սոված, ծարավ:

Մի օր սարալանջով գնում էինք, մեր շուրջը ամայի տարածություն էր, մարդ չկար: Մեկ էլ տեսանք՝ քրդերը հեղեղի նման իջնում են սարից, դանակը, սուրը, տապարը վերցնող վրանիս եկավ: Թուրք ժանդարմները թողեցին, որ նրանք մեզ վրա գան: Եկան սկսեցին խուզարկել, կողոպտել, թալանել: Մենք շարունակեցինք ճանապարհը: Երևի տասնհինգ-քսան օր քալլում էինք: Մենք փոքր էինք՝ քալլում էինք, բայց մեծերը չէին կարող քալլել, հոգնում էին:

Հասանք Հայմանա: Էնտեղ քրդերը եկան, ժամը չորսի ժամանակը սարալանջից չորս-հինգ կիլոմետր հեռու մի բոց բարձրացավ: Մարդիկ ասացին «պաժա՛ր է»:

Ժանդարմը ասեց. - Մարդկանց են վառում: Ես ձեզ չտարա էնտեղ, որ ձեզի չվառեն:

Մյուս առավոտ գացինք, տեսանք, որ չորս կողմը պատ, վրեն բաց մի տեղ էր, հայերին լցրել են մեջը ու վառել: Ամեն օր համալրում էին նորերով, խառնում էին ու նորից ջարդում էին: Աստծո օրը ջարդում էին: Մենք սոված ենք, ուտելիք չկա: Ջրերի ցոկի միջից գարին էինք գտնում, որ ուտենք: Կանանց լրիվ տկլորացնում էին, փող էին փնտրում կամ փորերը ճղում էին՝ աղիքների մեջ ոսկի էին փնտրում: Հղի կանանց կանգնացնում էին ու հարցնում՝ փորի միջինը ի՞նչ է: Փորը ճղում էին, որ պտուղը տեսնեն, քանի որ գրազ էին գալիս:

Հասանք մի տեղ, որտեղ աղի լիճ կար: Մեզ երկու մասի բաժանեցին: Մենք մնացինք կանանց հետ: Չգիտեինք՝ ե՞րբ է վերջանալու էդ դժոխքը: Աստծու օրը՝ կոտորած, մեծերին մորթում էին, երեխաքը մնում էին անտեր:

Գնացինք հասանք Նեմշեհիր: Դա Կեսարիայի մոտ Ինջե սու (Բարակ ջուր) կոչվող տեղն է: Հետո մըտանք Կեսարիա: Էնտեղ հայեր կային: Հայերի թաղական խորհուրդը եկավ, եկեղեցու դռները բացեցին, ասին. - Առե՛ք, ձեզ մոմ տանք:

Հաջորդ օրը եկան սկսան պոռալ. - Աքշեհիրցի կա՞, էլմացի կա՞...

Տեսա՝ մեր հայրենակից Լևոնն է: Եկավ փաթաթվեց, ըսավ. - Իմ ընտանիքը ու՞ր է:

- Մնացին երկիր:

Լևոնն ասաց. - Մարդ գտնամ ձեզի, տանի:

Հովհաննես հորեղբոր տղան եկավ, մեզ տարավ թուրքական ռաբոչի բատալիոն:

1922 թվին Ադամյան Նիկողոսը մեզ վերցրեց, տարավ Ինջե սու: Գնացինք Ուլու ղշլա: Էնտեղ պոեզի կայարան կար: Բաց վագոնները մեզ լցրին, տարան Մերսին: Տեսանք՝ թուրքերը արաբներին սպանում են: Հասանք Թաշլաճան: Մեզ հանեցին լցրին նավ:

Աթաթյուրքը սկսեց կոտորել հային և հույնին: Էդ

ժամանակ չեթեներ ալ կային: Տղամարդկանց տապորներով են ջարդել: Ես տեսել եմ մի մարդ, որ վիզը կտրված էր, կարծում էի մեռած է, բայց ողջ էր մնացել: Մորը սպանում էին, երեխեն մնում էր մորը դիակի վրան: Եթե հարազատներ կային, տանում պահում էին, չէ՝ թուրքական որբանոց էին տանում, թլպատում, թուրքացնում: Թուրք ժանդարմ մը երկու տարեկան տղային ասել է. - Դու վաղը ով գիտի՝ ի՞նչ պատիժ պիտի դառնաս մեր գլխին, - վերցրել է երեխային, շպրտել է: Մայրը հարձակվել է վրան, ժանդարմը մորն էլ է սպանել:

1922 թվին մինչև Բուրսա թուրքերը հայերին ու հույներին ջարդել են: Ընկնողը չի վեր կացել: Հետո մեզ Դեդե Աղաջից Հունաստան տարան, հունական եկեղեցին լիքն էր հայ գաղթականներով: Հունաստանն ալ պատերազմի մեջ էր: Նրանց համար էլ դժվար էր: Սոված էի, ձեռս պարզեցի՝ մի կտոր հաց տվին: Նոր տարու օրերն էին: Մենք սոված ենք, տկլոր: Ադյալները վրաներս գցած՝ տղայի մը հետ գնացինք Փիրեյայի նավահանգիստը, բայց մերոնք չկային: Դեկտեմբեր 25-ն էր, ցուրտ էր: Դողում ենք: Մի կողմից ոջիլները, մյուս կողմից՝ տաքությունը, հիվանդ ենք: Նավահանգստում չպահեցին, քանի որ ոջլոտ էինք ու հիվանդ: Գնացինք գինիի բոչկաների մոտ քնեցինք: Կողքիս տղան մեռավ: Նրան տարան թաղեցին: Ես մեկ ամիս մնացի Փիրեյա: Հետո մայրս եկավ: Փող էլ չկա մոտս: Մայրս ինձ տարավ հացի տեղը, ասաց. «Վա՛յ, երեխես մեծացել է»: Հինգ-վեց ամիս հոն մնացինք: Քանի մը էլմացի ընտանիք կար: Քեռիս եկավ, ընտանիքին տարավ, մեզի թողեց Էնտեղ: Ես մամայիս հետ գացի Լիպազմա, քեռիս Էնտեղ խանութ ուներ: Մենք հույս ունեինք, որ նա մեզ կօգնի, բայց մեզ չընդունեց: Մայրս մի չուլ կապեց երկու փայտի վրա, վրանի պես մեջը մտանք, ապրել սկսանք:

Սկսեցի աշխատիլ: Ջուգարանի փոս եմ փորում, փող են տալիս, մորս, եղբայրներուս եմ պահում: Մի օր էլ եկա աշխատանքից, տեսա, որ մեր չադրը չկա: Գնացի քեռուս մոտ ըսի. - Մերոնք ու՞ր են:

- Քոքինիա են գնացել, - ըսավ:

- Ես չգիտեմ էդ ու՞ր է:

Դու մի ասա՝ Հին ու Նոր Քոքինիա կա: Գիշերը վրա տվեց: Մի պատի տակ լուսացրի: Մի մարդ եկավ, ըսավ.

- Արի՛ երթանք կամուրջի վրա:

Գնացինք: Տեսա՝ Նիկողոս ախպերս: Միասին գնացինք Քոքինիա, մերոնց գտանք: Մի անկողնի մեջ ոտ ու գլուխ հինգ հոգի պառկում էինք, ոչ անկողին ունեինք, ոչ մի բան: 1925 թ. էնտեղ Մկրտիչը ծնվավ: Ես հավկուր եղա, էդ սնունդի պակասությունից էր: Աչքերս կուրացան: Չեմ տեսնում ոչինչ: Մայրս ու ես սկսանք լաց լինել: Քեռիս մեզ մի օր չպահեց:

Սևագործ բանվորություն եմ արել: Մի հույն եկավ ինձ տեսավ, ասաց՝ քառասուն դրախմի* կտամ: Գնացի: Թազա շենք էր կառուցել, գիբիլը լցվել էր: Ես մաքրեցի: Մինչև ժամը չորսը աշխատեցի: Մարդը գոհ մընաց, հարյուր դրախմի տվավ: Այդ օրը Զատիկ էր: Գացի միս առի, բան-ման առի, տուն տարի: Էնտեղ տասընչորս ամիս աշխատեցա: Մայրս տուն-տեղ դրեց: Մենք մեզ հավաքեցինք:

1927 թվին քեռիս եկավ ըսավ. - Փող չե՞ս հավաքել:

- Հազար յոթ հարյուր դրախմի եմ հավաքել, - ըսի:

- Ոսկի դարձրու, - ըսավ: Առավ տարավ, որ ոսկի դարձնի, բայց մեզ չտվեց, ինքը կերավ:

Քեռուս երեխեքը մեզ հետ եկան Հայաստան: 1988 թվի երկրաշարժի ժամանակ ես նրանց ընտանիքը երկու և կես տարի պահեցի իմ տան մեջ, բայց ոչ մի շնորհակալություն չհայտնեցին:

Երկար տարիներ Քանաքեռցեսում և Գյումուշգեսում եմ աշխատել: Ինձ պարգևատրել են մեդալներով: Հիմա մեծ եմ արդեն, թոշակի եմ անցած:

192 (192).
ՊԱՅԾԱՌ ԵՐԿԱԹԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1887 Թ., ԿԵՍԱՐԻԱ)

Ծ նվել եմ 1887 թ. Չոմախլուղում, որը Կեսարիայի գյուղերից էր: Մայրս տասնչորս տարեկան ամուսնացել էր և երկու երեխա ունեցել, որոնք մահացել էին: Ինձ վրա շատ կդողային: Մամաս հմայիլներ անցուցեր էր վիզս, որ չմեռնիմ: Ահա թե ինչու, երբ հայրս՝ Հակոբ Գալֆան, պանդուխտ է գնում, քսանհինգ օրվա ճամփան ոտքով, ձիով կանցնին, ինձ ալ՝ ինքը ամսական, հետերնին կտանին Կ. Պոլիս:

1896-ին Կ. Պոլսի հայերի կոտորածը սարսափելի եղավ: Վերեն վար բոլոր հայերուն մորթում էին: Ազգային գերեզմանատանը բլուր մը կար. մորթվածներուն, մեռածներուն, նետվածներուն դիակներեն կազմված բլուր մըն էր: Մենք մի ազգական ունեինք, այդ մեռածներուն տակեն եղած էր. եկավ մեզ պատմեց. ինչե՜ր տեսան այս աչքերը, ինչե՜ր լսեցին այս ականջները:

1907 թ. ամուսնացա, Ադաբազար գնացինք: Այնտեղ ինձ մոտ մի աղջիկ եկավ, թե՝ քեզի Կրթասիրաց միությունն պիտի տանիմ: Հագված, շքված գնացի. անմիջապես ընտրեցին ատենապետ, իսկ տիկին Զաբել Կարագյանը արդեն ընտրված էր նախագահ: Այնտեղ ինձ խնդրեցին պիեսներ գրել ու բեմադրել:

Արդեն ընդհանուր պատերազմին եղբայրս թուրքական բանակ կանչված էր, իսկ քսանչորս տարեկան բժիշկ եղբայրս թիֆով հիվանդացավ, մեռավ: Աշխարհը փլվեց գլխիս: Անոր կորսնցուցի, ես ալ խելքս կորսընցուցի:

Հայրս մի թուրք հավատարիմ բանվոր ուներ, եկավ թե. - Գիդեջեգսինի՞զ (Գնալու՛ եք):

* Դրախմի՝ հունական դրամ:

1914-ին առտու մը խոր քնից զարթնեցի եկեղեցու զույգ զանգերի ձայնից. լսելով այդ զանգերի դողանջները, զարմացա: Իմ սենյակի լուսամուտից երևում էր այն ընբանցքը, որով գնում էին տեղի Ս. Կարապետ եկեղեցին: Տեսա տղամարդիկ շտապում էին ժողովի՝ լուռ ու մտահոգ. եկեղեցին լցվեց, դուռները գոցվեցան: Դռնփակ ժողովը տևեց մինչև կեսգիշեր, ոչ ոք իրավունք չուներ դուրս գալու: Կանայք լաց ու կոծով ուտելիք էին տանում եկեղեցիի մեջ բանտարկվածներին: Իբր ժողովի կանչեցին, երեք օր վերջը միայն դուրս եկան: Ձեթե Իբրահիմի հրամանն էր այդ: Հայ տղամարդիկ դուրս էին գալիս արյունլվա, քիթ-բերաննին ծեծված, վիրավոր, ոտքերնուն եղունգները քաշված, ուրիշները կիսամեռ, պատգարակի վրա՝ անշունչ: Ամբողջ քաղաքը աի ու սարսափի մեջ էր: Հրաման կար ութ օրվա ընթացքում զենքերը հանձնել կառավարությանը: Բոմբա շինողը հայ Խորեն Երեմյանն էր: Վա՛յ նրան, եթե որևէ մեկը զենք ունենար իր մոտը: Կառքերը գնում էին բեռնված, լցված զենքերով, որոնք ժամանակին պահվել էին զգուշությամբ: Ծուկան փակ էր:

Ամուսինիս ալ կանչեցին եկեղեցի: Խորանի առջև նստած չեթե Իբրահիմը հարցրեց՝ զենք ունի՞ք: Մենք ալ զենքը թաղած էինք հողին մեջը: Հողին մեջեն կամաց մը հանեցի, դրի իրենց սունդուկին մեջը. մարդիկ տարին զենքը: Ձեթե Իբրահիմի մոտ ես ալ գնացի մորս հետ: Ձեթեն խամշիյով զարկավ մորս, ես ալ անոր վրա փովեցա, որ ինձի հասնի հարվածը, եկանք տուն: Արդեն սկսված էր աքսորը: Անատոլիայի գյուղերեն սկսել էին տեղահանել հայերին: Մենք հույս ունեինք, որ մեզ չեն հասնի:

1915 թ. օգոստոսին տուն-տեղ, այգի թողինք, ընկանք անջրդի անապատները: Ջհավորները խարազաններով քշում էին անտեր, անտիրական, խեղճ հայերուն:

Ութը օրվա մեջ պարպվեցավ Ադաբազարը: Գյուղերեն իջավ թուրք խուժանը, սկսավ թալանը, տարին հայերի ունեցվածքը: Խլում էին իրար ձեռքե ամեն ինչ՝ ուտելիք, հագնելիք, զարդեղեն, ամանեղեն, նստարան, տախտակամած, առաստաղ. խլում էին իրար ձեռքե ինչ որ կար: Մեր տան դիմացը թուրք մը կապրեր: Օր մը եկավ մեզ ըսավ. - Դուք կմնաք, աքսոր չեք գնա, քանի որ զինվոր ունիք թուրքական բանակում ծառայած և մեռած: Ես մի ընկեր ունեմ, թող գա ձեզ օգնի:

- Աղեկ, - ըսինք:

Մեկ էլ տեսանք, այդ նույն թուրքը, մեկ ալ ուրիշ թուրք մը, դուրսը հայ աղջիկ մը բռնաբարել են. դուրսը աղմուկ-ճվճվոց մը: Ես որ գլուխս դուռնեն դուրս հանեցի, թուրքը ինձ տեսավ, ամչցավ, ըսավ. - Դուն իմ տունս կուգաս, ես քեզ կփրկեմ, - բայց անոր աչքերը լըլըը՛ր-լըլըը՛ր կփայլեին, վախցա, չգնացի, ամուսինս ալ չիկա:

Մենք ութը օր ետքը պատրաստվեցանք, որ էրթանք: Արաբան, որի մեջ պիտի տեղավորվեինք, թերս դարձավ, մամաս արաբայի տակը մնաց, թևը կոտրվեցավ: Այդպես ցաված ձեռքով, անձրևի տակ հասանք Արիֆին: Մեզմե առաջ գացողները արդեն տեղավորվել էին, մենք դուրսը մնացինք, անձրևի տակը: Ես խնդրեցի. - Գոնե մամայիս տեղավորենք, ձեռքը կոտրված է, - բայց իզուր:

Հետո մեզ տարին Էսքիշեհիր, որտեղ հավաքված էին զանազան հագուստներ հագած, զանազան բարբառներով խոսող հայեր: Էսքիշեհիրեն ալ կոնիա պիտի տանեին մեզի: Մեր գույքերը հանձնեցինք: Այդտեղ հանդիպեցանք Սուքիասյանների տղային, որը երկաթուղու պաշտոնյա էր: Ան Ադաբազարից ինձ կճանչընար, մեր հավաքույթներին կուգար: Ադ տղան մեզ ասաց. - Ձեր գույքերը և՛տ վերցրեք:

Այդտեղ մի կնիկ ալ եկավ, որը ևս ըսավ. - Ջինվորի ընտանիքները պիտի մնան, աքսոր չպիտի գնան:

Ես մորս կխնդրեմ. - Մամա՛, էլի՛ր, գնա՛, խընդրի՛ր: Մայրս երեսի վրա պառկած, թևի ցավից տառապում է: Ըսավ. - Չե՛մ ուզեր, ամենն ալ մի շուն են, որու՞ն էրթամ խնդրեմ:

Ես ճարպկությունս ունեցա մեր գույքերը գնացքից վար նետեցի: Մամաս գնաց խնդրեց Չեմալ բեյին: Ան ալ կըսե. - Ինձի համար ավելի արժե բանակում քո զոհված զավակը, քան ապրող մի զինվորը: Գնա սենյակ մը բռնե, ժանդարմաներուն գրասենյակին քովը, որ ձեզ չտանջեն, քանի որ տղադ ծառայած էր թուրքական բանակում:

Մենք հոն սենյակ մը վարձեցինք: Աղեկ կհիշեմ ադ տունը: Թավանը՝ ցածր, բայց պատուհանեն հրապարակը կերևար: Ես ադ պատուհանին առջևը նստած կտեսնայի, թե ինչպես Պոլիսեն Էսքիշեհիր բերին մեր հայ մտավորականներուն՝ Չոճրապին, Վարուժանին, Սիամանթոյին և ուրիշներուն, անտեղեն ալ Դեր Զոր պիտի տանեին:

Ասոնք բոլորն ալ քղլալը յախա-քրավաթով էին, բայց արդեն վրայի հագուստները գզգզվել, պատառպատառ էին եղել: Ամեն գիշեր մենք լսում էինք նրանց աղեկտուր ձայները, քանի որ անխղճորեն ծեծում էին նրանց: Ես Դեր Զոր չեմ գնացած, բայց ամեն ինչ տեսած եմ: Բոլորին ալ, որ եկած, անցած են Էսքիշեհիրեն, որ բերին անոնց Պոլիսեն՝ հելլաք եղած, բորիկ, արյունլվա ոտքերով, ծվեն-ծվեն հագուստներով: Քանի մը օրեն ասոնց քշեցին, տարին...

Մամաս հաջորդ օրը շուկայեն խաղող առավ, տարավ անոնց, որ ուտեն: Մեր քովը խան մը կար, եկող գաղթականները հոն կդեցնեին: Ցածր առաստաղով, լի ճանճերով, փոքրիկ տեղ մըն էր, հոն լցրել էին երեխաներին, որոնք երկաթե վանդակին ետևեն կուլային՝ խոշտանգված, դալկահար, մերկ ու անոթի մանուկներ՝ մի պատառ հացի համար ձեռքերնին մեկնած... Մինչև այսօր չե՛մ կրնար մոռնալ այդ խանը: Վա՜խ, յավրիկներս, մարդ արարածը ինչպես այդ օրին էր հասցրել ձեզ: Երկու օր ետև անոնց ալ քշեցին, տարին: Ու՞ր: Աստված գիտե: Ադ խեղճ պզտիկներուն ոչխարի գառնուկների պես քշեցի՛ն, տարի՛ն: Ետքը ավելի մեծերը բերին. տասնութ-քսան տարեկան հայ տղաներ բերին, նոր գաղթականներու նոր քարավաններ: Անոնց ալ չորս օր բանտարկված պահեցին՝ ո՛չ հաց, ո՛չ ջուր. իրավունք չկար դուրս գալու: Մի տղա մի կերպ դուրս գալ ուզեց, որ ջուր խմի: Պահակ զաբիթը բռնեց, սկսավ

վրաճ պոռալ. - Գյավու՛ր, ինչու՞ ես էստեղ, - ու սկսավ մտրակով ծեծել: Տղաճ՝ ամոթի, ծարավ, ցավեն կպոռար. օգնող չկար...

Օր մըն ալ խանին առջևը բերին երեսուն հոգիանոց պոլսեցիներու խումբ մը, որոնց առաջնորդում էին երկու ժանդարմներ: Մարդիկ կերպարանափոխված էին, վայրկյան առ վայրկյան պատրաստ գլորվելու, ուզում էին մի բան ասել անցորդներին, բայց մտրակը վրա էր հասնում. ամոնց մեջև էր նաև մեր հայ երգի ներդաշնակող Կոմիտասը...

Խանի առջև Անկարայից աքսորված կիներ ու երեխաներ, իսկ այնտեղ, ուր ձիերն են կապում և ձիերի կեղտն է կուտակված, մարդիկ կծկվել էին. մեկը՝ ոեծնծում էր, մյուսը՝ հառաչում... այս այն մարդիկն էին, որ հանդիպել էինք...: Նրանք երեք օր ճամփա քալող, հուսահատ մարդիկ էին, որ մի պատառ հաց ու ջուր էին աղերսում հայացքով, ցավատանջ գալարումներով օրորվում էին Խոջաբըլըխի խանին մեջը: Մայրս առավոտը երկու տոպրակ ուտելիք տարավ ամոնց, որպես իր տղայի հոգու հացը: Որդեկորույս մայրերի լալահառաչ վայնասունը, ցավատանջ գալարումները աննկարագրելի էին...

Երկու օր հետո այդ անտեր կանանց ու երեխաների քարավանը ևս ճամփա հանեցին: Անկարայում սպանել էին ամոնց ամուսիններուն և որդիներուն: Ժամանակին հայերու լեզուն կտրած էին, որ հայերեն չխոսին, ամոր համար Քյոթահիայի, Բուրսայի, Ադանայի, Կեսարիայի, Էսքիշեհիրի հայերը անհնչյալ լեզուն էին խոսում: Ամոնք պիտի գնային Կոնիա, Էրեյլի, Բոզանդի մինչև Դեր Զոր:

Կերթա ու կերթա ցավի քարավանը,
Թուրքը հեգնում է հայու ցավը,
Կերթա, կերթա լռիկ ողբալով,
Անանուն ցավեր լի տանջանքներով,
Արյուն ոտքերով նա կանցնի սարեր,
Նոթի ու ծարավ կիջնի մութ ձորեր,
Արձագանք կուտան լեռներ, հովիտներ,
Ընկած զոհերի տխուր հեծծյուններ,
Եվ սակայն կերթա՛, կերթա՛ քարավանը...

Քանի որ մեր տունը ժանդարմ կոմանդորի մոտն էր, այս բոլորը տեսնում էինք: Դրա համար էլ տուներնիս փոխեցինք, ուրիշ տուն մը վարձեցինք՝ կամուրջին քովը: Արդեն ամուսինս ալ հիվանդանոցը կաշխատեր և պայուսակը ուսը գցած վրաններուն տակի հիվանդներուն դեղ կբաժներ, որ իրեն ալ աքսոր չտանին:

Մի օր, երբ գնացել էի հայոց թաղը, տեսա մոալլ են բոլորը: Այդ մարդիկ նստած էին տանը ու իրար հետ խոսում էին փսփսուքով, նկատվում էր, որ վախենում են: Թադևոս Էֆենդին շատոնց մոոցեր էր Էֆենդի ըլլալը. ան կառապան էր դարձել ու լսել էր, որ Իբրահիմ Էֆենդին կառքի մեջ նստած իր բարեկամին ըսեր էր. «Վաղը պիտի հայերուն սպանեն, ջա՛րդ պիտի ըլլա»:

Կեսգիշերին մեյմըն ալ ատրճանակները սկսան փա՛թ-փա՛թ կրակել: Ես ալ, երկու չոջուխները ձեռքիս, եղբորս հիշատակ ջութակը բոնած, դուրս փախա: Դուռի ըսեր, այդտեղ հրդեհ կա եղեր, խանութները վառվում էին. թուրքերը մտել թալանում էին:

Մեյ մըն ալ լուր եկավ, որ ամուսինս՝ Արմենակը, բոնված է. դեղատնից կայարան են տարել տասը հոգու հետ: Ի՞նչ պիտի անեմ՝ չգիտեմ: Ծրար մը պատրաստեցի, շորեր-խմորեղենով, գնացի կայարան: Տեսա փշալարերի ետևում են. ժանդարմները հսկում են ու չեն թողնում ո՛չ մեկին մոտենալ: Փորձեցի մոտենալ, ներողամիտ ժպիտով ըսի. - Կուզեմ ամուսնուս հետ խոսիլ:

Ժանդարմը ըսավ. - Դուք իմ պոռալուս մի՛ ճանյիք, ես երբ ան կողմը երթամ, դուք մոտեցեք խոսեցեք, ես ալ ընտանիքի հայր եմ, ես ալ երեխաներ ունեմ: Արյուն է գնում սիրտես, երբ տեսնում եմ ձեր վիճակը:

Այնպես որ, թուրքերուն մեջն ալ լավ մարդիկ կային: Մի՞թե ազգությանն մեջն է ճշմարիտ մարդը:

Արմենակին մոտեցանք. ան նույնիսկ ժպտում էր երեխաներին, հակառակ որ գիտեր, որ իրեն մորթելու են տանում:

Ժանդարմը եկավ մոտեցավ ինձ, ասեց. - Գնացեք, խնդրեք. կարող է ազատեն:

- Մայրիկ, շուտ գնա Ջեմալ բեյի մոտ, խնդրիր, գուցե փրկենք Արմենակին:

Մայրս նորեն էլավ գնաց Ջեմալ բեյի մոտ, որն արդեն թուրքական զինվոր եղբորս մաճը գիտեր:

Ջեմալ բեյը կլսե մորս խնդրանքը, որ իր փեսան հիվանդանոցը կաշխատի, դեղագործ է, ժողովրդին պետք մարդ է:

Ջեմալ բեյը կըսե. - Ամենքին ղրկում ենք՝ դեղագործ մը մեզ պետք է, - թուղթ մը կուտա, որ ամոր ազատեն:

Արմենակը եկավ: Բայց տյուֆյուզ վարակված էր, ընկավ ամկողին: Սառը փաթաթում էինք գլխին, շատ կաթ էինք խմցնում, ամընդհատ լողացնում էինք՝ ազատվեց:

Անցավ երկու տարի: Արդեն կախաղան էին բարձրացրել Խորեն Երեմյանին, որպես բոմբա պատրաստող: Ամենքը մի կողմի վրա էինք փախել. մայրը Էսքիշեհիր էր մնացել, աղջիկը՝ տաճիկն էր տարել: Մյուսները մտածում էին հարցուփորձով գտնել իրենց կորցրած սիրելիներին: Մենք ալ ընտանիքով տեղափոխվեցինք Կ. Պոլիս, հետո ալ 1923 թ. զրահաանավով՝ Եգիպտոս, ուր բավական շատ հասարակական գործունեություն եմ ծավալած, բեմադրելով մի շարք թատերգություններ, հրատարակելով իմ գրած բանաստեղծությունների ժողովածուն: 1948 թ. Եգիպտոսից եկանք Հայաստան: Տղաս՝ Միհրան Երկաթը, դարձավ օպերայի՝ սիրված ժողովրդական արտիստ, աղջիկս՝ Մարին, դարձավ ասեղնագործության ու կարուձևի վաստակաշատ ուսուցչուհի: Նրա ցուցահանդեսները բազմիցս ցուցադրվել են և՛ Հայաստանում, և՛ այլ երկրներում: Ես ալ հարյուր երկու տարեկան եմ, փառք Աստծո, խելքս տեղն է:

193 (193).
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ ՕՈՒԼԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1896 Թ., ԿԵՍԱՐԻԱ)

Սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած հայկական կոտորածների ժամանակ՝ 1896 թվին, Կեսարիա քաղաքում իմ վաղամեռիկ հայրը՝ Տիգրան Օուլիկյանը (Զուլուքյան կամ Զուլուխյան) ամուսնացած է եղել իմ մոր՝ Գյոլինի Բալամուտյանի հետ: Մայրս՝ նորապսակ հարս, այդ ժամանակ վեց ամսական հղի է եղել՝ իր առաջնեկ զավակով, երբ թուրքերը մտնում են իրենց տունը և իմ մոր աչքերի առաջ կացինով սպանում են իր ամուսնուն՝ իմ հորը: Այդ սարսափելի տեսարանի առաջացրած աղաղակը և լաց ու կոծը խեղդելու համար թուրքերը կացնի մի հարված են հասցնում նաև իմ մոր ծոծրակին, որտեղից սկսում է արյուն հոսել: Մայրս փախչում է և բարձրանում իրենց տան երդիկը: Դրսից հարևան կանայք կանչում են իրեն, որպեսզի փախչեն, և ինքը ցատկելով երդիկից ցած՝ միանում է հարևան կանանց ու միասին փախչում են ավելի ապահով տեղ:

Բուժօգնության պակասի հետևանքով, ծոծրակի վերքից երեք օր արյուն է հոսում: Երեք օր հետո հարևան կանանց միջոցով բժշկական օգնություն են գըտնում և կարեր են դնում այդ խոր վերքին վրա: Այդ կարերի սպին մնաց մինչև իր կյանքի վերջը:

Երեք ամիս հետո ծնվում եմ ես: Անցան տարիներ: Մենք ապրեցինք Կեսարիայում մինչև 1914 թվականը, ապա քեռիներիս օգնությամբ գնացի Եգիպտոս՝ Կահիրե:

Կեսարիայում մենակ և անօգնական մնացած մայրըս 1915 թվի Մեծ եղեռնի ժամանակ, երբ իրենց տեղահանել են, անցել է աքսորի ճամփաներով, տարել է ամեն զրկանք և դժվարությամբ հասել է Կահիրե, ուր ապրեց մեր ընտանիքում մինչև իր մաճը՝ 1953 թվականը:

Իմ կնոջ՝ Անժելի հայրը, Անդրեաս Թեքեյանն ալ 1915 թվին սպանվել է թուրքերի ձեռքով, երբ իր մեծ աղջիկը՝ Սաթենիկը, եղել է տասը տարեկան, իսկ Անժելը՝ ութ տարեկան: Անժելի մայրը, այսինքն իմ զոքանչը՝ Նարինգյուլ Մխչավագյան-Թեքեյանը ունեցել է տասնմեկ երեխա, որոնցից իննը մահացել էին աքսորի ճամփաներին և միայն ողջ էին մնացել երկու աղջիկները, որոնց նա վերցնում է իր հետ, ինչպես նաև իր տագրոջ վեց տարեկան աղջկան՝ Մարիին, և մեծ դժվարություններով ու տառապանքներով, չորսով միասին անցնում են Դեր Զորի անապատի միջով: Ճանապարհին մի էշ են ճարում, որի վրա դրված փայտե արկղի մեջ կծկված նստեցնում է երեք փոքրիկ աղջիկներին, իսկ ինքը՝ Նարինգյուլը, կողքից նրանց հսկելով, քայլում է ոտքով: Այսպիսով հասնում է Սիրիայի Համմա քաղաքը, ուր խեղճ մայրը բուրդ գզելով ու սանրելով կարողանում է ապրուստ ճարել և պահել երեք աղջնակներին: Հետո Նարինգյուլը լուր է ուղարկում Եգիպտոսի Ֆայում քաղաքում ապրող իր երկու տագրերին՝ Տիրանին և Բյուզանդին, որ իրենք ողջ են մնացած: Եվ նրանց օգնությամբ տեղափոխվում են Եգիպտոս:

1930 թվականին Կահիրեում ես հանդիպեցի Նարինգյուլի փոքր աղջկան՝ Անժելին, և մենք ամուսնացանք, ունեցանք երեք տղա՝ Տիգրան, Անդրանիկ և Հակոբ:

1963 թվին բոլորս միասին եկանք Հայաստան:

194 (194).
ԱՆՆԱ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ*
(ԾՆՎ. 1900 Թ., ԿԵՍԱՐԻԱ)

Տասնհինգ տարեկան էի, երբ աքսոր հանեցին: Ճամփաները քալում էինք: Գաղթական դարձանք, Մուհաթթա եկանք: Կհիշեմ, հորս հետ էի: Բոլոր տղամարդկանց ջուրը գցեցին: Հայրս ասաց. - Ուրիշի հետ չգնաք, ես կգամ ձեզ կտանեմ:

Մենք այնտեղ մնացինք, մի մարդ եկավ, ասաց. - Ձեզ տանեմ:

Մենք ասինք. - Չէ՛, մեր պապան պիտի գա, տանի:

Նա քրոջս տարավ:

Բաց երկնքի տակ քնեցինք: Օրվա մեջ քայլում էինք ու քայլում: Ճամփին կամաց-կամաց քչացանք, քանի որ շատերը մեռան, սպանվեցին կամ մնացին ճամփաներին:

Առավոտ մամաս մեզ ուտելիք բերեց: Պապաս չուզեց ուտել: Քանի որ գիտեր, որ իրենց պիտի սպանեն: Եկան, բոլոր տղամարդկանց հավաքեցին, տարան և սպանեցին: Սև օրեր էին: Հետո հավաքեցին մեր ունեցած դրամները, զարդերը: Սիրտս չի դիմանում, որ պատմեմ: Առավոտյան պապայիս սպանեցին: Գիշերը մեզ նորից ոտքի հանեցին: Մի մարդ Եփրատ գետից դուրս ելավ, տեսանք: Մի աղմուկ-աղաղակ: Էդ մարդը եկավ, իրա կնոջը և երեխային համբուրեց և կնոջը գըրկած ջուրը ընտվեց, որ իր կինը թուրքի ձեռք չանցնի, բայց երեքին էլ սպանեցին ջրի մեջ: Մենք Եփրատ գետի ափով գնացինք: Հորս սպանել էին: Մենք լաց լինելով գնում էինք: Մայրս ինձ և իր եղբորը՝ Գրիգորին առավ, տարավ ջրի ափը, ասաց. - Մենք պիտի ջուրը ընտվինք:

Մայրս մեզ գցեց ջուրը, որ խեղդվենք, պրծնենք, բայց սիրտը չդիմացավ, լաց եղավ, մեզ հանեց ջրից:

Իմ ձեռքին մի բիլեզիկ կար: Մի արաբ կին եկավ, ասաց մորս. - Էս բիլեզիկը և աղջիկդ տուր ինձ:

---

* Վերապրողը հուշը պատմել է թուրքերեն, որը մենք ներկայացնում ենք թարգմանաբար (Վ. Ս.):

Մայրս ասաց. - Սա ամուսնացած է, ամուսինը անկյար է:

Արաբ կինը սկսավ քաշքշել իմ ձեռքից: Մայրս մյուս կողմից էր քաշում: Իմ ուշքը գնաց: Դիմացից մի հեծյալ եկավ: Մայրս էդ հեծյալից ջուր ուզեց, որ ինձ տա, ուշքս ետ գա: Ջուրը թափեց ինձ վրա, ուշքի եկա: Խմեցի: Շարունակեցինք քայլել: Մի տեղ հասանք, ուր ջուր կար: Մի սաթըլ ունեինք, դրանով ջուր խմեցինք:

Գիշեր եղավ: Օրվա մեջ այնքան էինք քայլել, որ հոգնել էինք, փուշերը մեր ոտքերը ծակծկել էին: Էնպիսի հալի ենք՝ փերուշանությո՛ւն: Հետո երեք օր Ուրֆայի խանի մեջ մնացինք: Ես էնտեղ կարմրուկով հիվանդացա: Ստիպված մեր էշը ծախեցինք: Մնացինք առանց որևէ բանի: Ես հիվանդ եմ, բայց մայրս ինձ տարավ իր հետ: Երեք օր մնացինք Բումբուշում: Անկողին՝ չկա, ուտելիք՝ չկա, շուկա՝ կա, բայց՝ փող չկա: Ոտքերս ցավում են, ես ցավից լաց եմ լինում: Ցորենի մի կալ տեսանք: Այնտեղ երեք օր մնացինք: Գետինը թափված ցորենի հատիկները սկսեցինք հավաքել ու ծամել, գոնե մի բան կերած լինենք: Երեսնիս, աչքերնիս՝ բոլոր հարդ եղավ: Բոլորիս ոտքերի վրա հալ չկար: Մամաս մեզ բերեց հասցրեց Հալեպ: Մի դպրոց կար, էնտեղ մնացինք:

Մի արաբ կին եկավ, ինձ ուզեց տանի: Մայրս ասաց. - Գնա՛, աղջի՛կս, ես եղբորդ՝ Գրիգորի հետ կըմնամ էստեղ:

Արաբ կինը ինձ տարավ, պահեց: Մեկ տարի հոն մնացի: Արդեն զինադադար եղավ: Մայրս և մյուս գաղթականները ետ եկան: Մեկ էլ տեսա՝ իմ եղբայր Գրիգորը եկել է մեր տան մոտի ծորակից ջուր խմելու: Եղբայրս ասաց. - Վե՛ր կաց, արի՛ մեզ մոտ:

Ես եկա, արաբ մորս ասեցի. - Գնա՞մ մորս մոտ:

Ան թույլ տվեց: Ես Գրիգորի հետ գնացի, մորս գտա, փաթաթվեցինք, համբուրվեցինք: Մայրս ասաց. - Էլ քեզ ես չե՛մ թողնի նրանց մոտ:

195 (195).
ԱՐՍԵՆ ՍՎԱՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1901 Թ., ԿԵՍԱՐԻԱ)

Պապայիս զինվոր տարին: Մենք օլուխ-չոջուխ զինվորական ընտանիք ենք ըսելով, մեզ գյուղերը աքսորեցին: Ջամիի մը մեջ կոխեցին, իբր դպրոց պիտի տանեն մեզի, բայց բոլորին ալ սպանեցին, մեզի ալ սյունեթ ըրին՝ թուրքացուցին: Ոնց եղավ, հայրս զինվորութենեն փախավ, եկավ մեզի գտավ, փախցուց տարավ, բայց իրեն Սվազի ճամփուն վրա սպանեցին. մեր ընտանիքեն տասներկու հոգու կախաղան հանեցին: Եղբայրս քանի տարեկան էր, չգիտեմ, քույրս երկու տարեկան էր, ես մեծցուցի: Հետո հայեր եկան մեզի տարին, անոնք շապինգարահիսարցի էին. ով որ մեզ կմոտենար, մենք կվախնայինք, վախերնես «Մենք թու՛րք ենք» կպոռայինք:

Ադ շապինգարահիսարցի տղաները մեզ մեջտեղ հանեցին, - Հա՛յ են, - ըսին: Մեզ Կեսարիո որբանոցը տարին, հետո ալ՝ Իզմիր. բոլորս չորս հարյուր հոգի էինք: Չորս հայ հարուստներ մեզ կպահեին: Օր մը Անդրանիկ զորավարը եկավ մեզի տեսնելու: Հարց ու փորձ ըրավ, տեսավ չորս հարյուր որբի համար ճաշ կեփվի, փայտե գդալ մը առավ՝ «Կեցի՛ր, մեյ մը համը տեսնամ» ըսավ: Տեսավ, քի տունին ճաշեն ավելի համով է, ուրախացավ: Դարձավ մեզի ըսավ. «Տղե՛ք, լավ կերե՛ք, շիտակ կեցե՛ք, մեծցե՛ք, Հայաստանը փրկեցե՛ք»:

1922-ին, Իզմիրի աղետին, քեռիիս սպանեցին: Ամենուն ծովը թափեցին: Մենք ալ ամերիկյան կոլեջն էինք: Ամենքիս ալ Կորֆու կղզին տարին: Հոն կոշկակարություն սորվեցա: Հետո մեր որբանոցի խոհարար «Մայրիկը» որդեգրեց ինձ, իր տունը տարավ, անոր թոռնիկին՝ Մելինեին հետ ալ ամուսնացա: Հետո Հունաստանում տուն-տեղ եղանք, ան ալ քանդեցինք, եկանք Հայաստան:

196 (196).
ԿԱՐԱՊԵՏ ՏԻԳՐԱՆԻ ՔԵԼԵԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1904 Թ., ԷՎԵՐԵԿ)

1915-ին օր մը մունետիկը եկավ ըսելու, թե քանչորս ժամ ունինք մեկնելու պատրաստության համար: Մենք կկարծեինք, որ երկու-երեք ամսվա համար էր: Էվերեկեն ճամփա ելանք մոտավորապես հարյուր ընտանիքի հետ: Մեր ընտանիքը կբաղկանար հայրս՝ Տիգրան, մայրս՝ Թագուհի, եղբայրներս՝ Գրիգոր, Սեդրակ, Կարապետ, Հարություն և Անդրանիկ: Փոխադրության համար ունեինք չորս էշ: Մեկնումի հաջորդ օրը կիներ առևանգվեցան և մենք կողոպտվեցանք թուրք և քյուրդ գյուղացիներեն՝ ոստիկաններու աջակցությամբ, որոնք, իբր, մեզի պիտի պաշտպանեին: Օրական ութ ժամ քալելով՝ երկու ամսեն Ղաթմա հասանք, որը Հալեպի մոտն է:

Էվերեկեն Նիդե 101 կմ էր, Էրեյլի՝ 99 կմ, Ուլաքիզլա՝ 44 կմ, Բոզանդի՝ 43 կմ, Գարահիսալի՝ 40 կմ, Ադանա՝ 42 կմ, Սեյհան՝ 48 կմ, Թոփրաքկալե՝ 33 կմ, Օսմանիե՝ 10 կմ, Դյորտյոլ՝ 37 կմ, Քըրք-խան՝ 65 կմ, Մուսլիմիա՝ 100 կմ, Ղաթմա՝ 15 կմ: Ամբողջ մեր ճամփան՝ 677 կմ: Բայց տրված ըլլալով, որ կառուցված ճամփաներով չանցնենք, պետք է նվազագույնը 800 կմ հաշվել:

Կիները առևանգումեն և կողոպուտեն խուսափելու համար այր մարդիկ, ընդհանրապես տարեցները, գիշերները պահակություն կընեին: Հաստատելու համար, թե չենք քնանար, հերթաբար իրար կձայնեին «Քարաքո՜լ», որը կնշանակե՝ ոստիկան ու մյուսը կպատասխաներ, «հազր օլ» այսինքն՝ պատրաստ եղիր:

Ղաթմա սավաններով սարքված վրաններու ծով մը կար: Ժողովուրդը առուծախով կամ փոխանակելով ապրելու ճար մը կգտներ: Դժվարագույն հարցը խմելու ջուրն էր, լվացվելու մասին մտածելու հարց չկար: Ջուրի հոր մը կար, մեկ ժամ քալելով հոն երեք-չորս ժամ պոչ պետք էր բռնել: Մերթ ընդ մերթ իշխանությունը կորոշեր այն ընտանիքները, որոնք պետք էր քամփեն մեկնեին Դեր Զոր կամ Դամասկոս: Անոնք, որ Դամասկոսի ճամփան բռնեցին, ավելի մեծ հնարավորություն ունեցան ապրելու: Մենք Դեր Զոր երթալու հրաման ստացանք: Հալեպեն Դեր Զոր 330 կմ էր, հոն սկսավ չարդը: Թուրք ոստիկանները, որ սկզբունքով մեզի պիտի պաշտպանեին, ամեն գիշեր մեզմե դրամ կուզեին, թույլ կուտային, որ բեդվինները պղծեն կամ առևանգեն մեր կիները: Դիմադրողները կգլխատվեին: Գողությունները և սպանությունները անդադար էին: Վեցյոթը հարյուր հոգի էինք, երբ մեկնեցանք, ամեն առավոտ տեղվույն վրա կձգեինք մեռյալներ և հոգևարք վիճակի մեջ անձեր: Թուրք ոստիկանները թույլ չէին տար վիրավորները խնամել և մեռելները թաղել:

Հալեպեն Մեսքենե 95 կմ, հոն խանի մը մեջ տեղավորված էինք, դիմացեն հայեր վազելով եկան, առանց որևէ հագուստի, գրեթե մերկ: Անոնք մեզի նշան ըրին, որպեսզի չշարունակենք, քիչ մը անդին մեծ սպանդներ տեղի կունենային: Ոստիկանները Հալեպեն նոր ուժ ուզեցին մեզի Ռաքքա տանելու համար: Մեսքենեեն մինչև Ռաքքա 95 կմ է: Շատեր անձնասպան եղած էին՝ ինքզինքնին Եփրատ գետի մեջ նետելով: Անոնց ուռած դիակները գետեզերքին վրա կտեսնեինք: Վերջապես հասանք: Հալեպեն Ռաքքա 190 կմ է: Քաղաք մտնալու համար պետք էր մյուս ափը անցնիլ: Մեզ թույլ չտվին, այսպիսով նույն ափը մնացինք երկու ամիս, հոն շատ կային օձ և էբեմ գէօմեճ, որ դիակները ծածկող հողի վրա կբուսնի:

Ռաքքա Դիարբեքիրցի հայ մը կար, որուն գլուխը դեպի առաջ կախված էր՝ ծոծրակին կացինի հարված մը ստացած ըլլալուն հետևանքով:

Օր մը սևամորթ բեդվին մը եկավ, որ արհեստավորներու՝ ատաղձագործ, որմնադիր, դարբին պետք ուներ՝ գյուղի իր տան գործերը շինել տալու համար: Բան մը, որ քիչ մը հույս ներշնչեց: Բայց վերջը չեմ գիտեր ինչու հետևանք չունեցավ:

Ժողովուրդը սկսավ քիչ մը հանդուրժելի կյանք մը կազմակերպել: Մեր քամփը կգտնվեր Եփրատ գետեն քալելով մեկ ժամ հեռավորության վրա: Երկու եղբայրներս չորս էշերով կերթային ջուր բերելու՝ յուրաքանչյուրը քսան լիտրանոց թիթեղամաններով: Այսպիսով յուրաքանչյուր թիթեղ ջուրը կծախեին կես ղուրուշի: Այդ ջուրը պետք էր ձգել ամաններու մեջ, որպեսզի ցեխը հատակը նստի ու ջուրը ըլլա ըմպելի: Այսպես հոն մնացինք մոտավորապես մեկ ու կես տարի: Բայց ժամանակ մը վերջ մեր երկու էշերը սատկեցան, և երկուքն ալ գողացան:

Աչքերովս տեսա շուները, որ գետնի վրա հայ մանուկներու դիակները կուտեին:

Հայրս դարբին էր, իբր լավ ճանչցված արհեստավոր Էվերեկի մեջ գործեր կըներ քաղաքապետարանին համար, ուրկե մարդիկ եկան առաջարկելու՝ մընալ պայմանով, որ իսլամությունը ընդունի և այսպիսով ազատի իր և իր ընտանիքի կյանքը: Հորս մերժման պատճառով է, որ գաղթականության ենթարկվեցանք: Ուրֆայեն մարդիկ եկան, արհեստավորներ իրենց քաղաքը տանելու, առանց մահմեդական ըլլալու մասին խոսելու: Այսպիսով Ուրֆա գացինք: Հոն վերադարձած երկու հայ դարբիններ ալ կային, մեկը՝ բնիկ ուրֆացի, մյուսը՝ բիլեճիկցի: Կրոնքի մասին չէր խոսվեր, ինչ որ հայերուն թույլ կուտար ապրելու, մյուս կողմեն քաղաքը կսկսեր վերակառուցվել, բայց թուրքերու, քյուրդերու և հայերու միջև խռովություններ ծագեցան, որոնց հետևանքով հայրս և մեծ եղբայրս բանտարկվեցան: Պզտիկ ըլլալուս ես ամեն օր իրենց ճաշ կտանեի:

Օր մը շուն մը ծունկս խածավ: Այդ ժամանակ Մուհամեդ աղա անունով թուրքի մը քովը կաշխատեի: Ան քյուրդերու գյուղ մը տարավ ինձի, հոն մոլլան ինձի բոլորովին մութ սենյակի մը մեջ փակեց և վերքիս վրա աղոթեց: Երկու օր այդ մութ սենյակին մեջ մնալե վերջ ծունկիս վրա վիրակապով մը տուն վերադարձա, քանի մը օր վերջ վերքս բոլորովին բուժվեցավ: Այդ ժամանակաշրջանին է, որ եղբայրս՝ Անդրանիկը, մահացավ՝ գաղթականության դժվարություններեն տկարացած: Ուրֆա մնացինք երկու և կես տարի: Լսեցինք, որ գաղթականները կրնան իրենց տուները երթալ: Ծնողքս որոշեցին Էվերեկ վերադառնալ: Այսպիսով Հալեպ գացինք, բայց հոն տեղեկացանք, որ լուրերը սխալ էին և մեզի արգելված էր տուն վերադառնալ:

Գրեթե մեկ տարի Հալեպ մնացինք: Հայրս և երկու մեծ եղբայրներս գործ գտան իբր մեքանիսիեն: Ես լոկոմոտիվով շատ կհետաքրքրվեի: Ամեն առավոտ կայարան կերթայի զանոնք նայելու համար: Օր մը ուշադրությամբ կդիտեի վակոնները դարձնող կամուրջը: Այս գործողության համար վակոնը կանշարժացվեր մասնավոր փայտե մութակներով: Ասոնցմե մեկը ինկավ փոսին մեջ, պզտիկ ըլլալուս փոսին մեջ սահեցա և փայտը վեր հանեցի: Գերմանացի վերակացուն ըրածս գնահատեց և ինձի հարցուց, թե՝ ո՞վ եմ: Պատասխանեցի, որ գաղթական հայ մըն եմ: Հակառակ որ այդ ժամանակ հայերուն թույլ չէր տրվեր կայարանը աշխատիլ, ինձի հարմար վարձատրությամբ գործի առավ: Այսպիսով, լոկոմոտիվի վարիչի օգնական եղա՝ քանչորս ժամ Հալեպ-Ադանա երթուդարձ, քանչորս ժամ՝ հանգիստ ընելով:

Տարի մը մնալե վերջ հայրս որոշեց Էվերեկ վերադառնալ: Ճամփա ելանք դեպի Սիս (Կոզան), ուր իրեն պարտական թուրքերեն դրամ կակնկալեր: Ձեռքը բան մը չանցավ: Մեկ շաբաթ մնալե վերջ Ադանա գացինք՝ հոնկե ձիերու կառքերով Էվերեկ երթալու: Մեզի ճամփորդությունը արգելեցին և մնացինք Ադանա: 1921-ին հայրս Սերայ, այսինքն՝ կառավարչատան մոտ խանութ մը վարձեց և սենյակ մը՝ իբր բնակարան, հայկական եկեղեցիին մոտ: Ամեն անգամ որ թուրք և

քյուրդ չեթեները հայերուն վրա կհարձակեին, ասոնք եկեղեցվո թաղը կապաստանեին: Մեր տունը երեքչորս ընտանիք էինք:

Օր մը Զորավար Անդրանիկը Ադանա եկավ, իրեն մեծ ընդունելություններ եղան: Պատուհաններեն հայկական դրոշակը՝ եռագույնը, կծածաներ, փողոցները հայկական երգեր կերգեին: Ֆրանսական բանակին մեջ ծառայող հայ լեգեոնականները պր. Տամատյանի* հետ կառավարչատուն գացին ու վրան հայկական եռագույնը պարզեցին: Այդ օրը հայերուն ամենաուրախ օրը եղավ: Պահ

197 (197).
ԱՐՓԻՆԵ ԲԱՐԹԻԿԵԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ԱՖԻՈՆ–ԳԱՐԱՀԻՍԱՐ)

Մենք շատ լավ էինք Ափիոն-Գարահիսարում: Ապրում էինք խաղաղ: Թուրքերուն հետ ալ շատ լավ էինք: Անոնք ալ մեզի հետ շատ լավ կվարվեին:

1915 թ. գարնանն էր, օր մը եկան մեր քաղաքի բոլոր հայ տղամարդկանց հավաքեցին, հարցուցին՝ ձեզի պիտի տեղահանենք. ընտանիքո՞վ կուզեք, թե՞ միայն ձեզի:

Մեր տղամարդիկ ըսեր են՝ անշուշտ ընտանիքով տեղափոխվինք:

Սկսեցին տուներուն էղած-չեղածը ծախել:

Հորեղբորս կինը՝ Շեքեր հանըմը իր ընտանիքով և մորաքույրս իր ընտանիքով եկան մեզ միացան: Ծամփա էլանք: Ծովի պես լեփ-լեցուն ժողովուրդ էր, ոտքով սկսանք քալել: Ոչխարի հոտի պես կքշեին մեզի. ենթակա վիճակ էր: Որտեղ գիշեր էր լինում, հոն քնում էինք: Շատ օրեր քայլեցինք, մինչև Կոնիայի կայարանը հասանք: Մենք ութը աղջիկ-կնիկ էինք և յոթը տղամարդ: Հորեղբորս աղջիկը հնձմե փոքր էր: Փափուք մը էլավ, որ ով որ գնա, Կոնիայեն կարող է փախիլ: Հոն մեզի ծանոթ մը էլավ՝ Մարկոս անունով: Ան ինձի ըսավ՝ առաս ծրարը ձեռքդ, առանց խոսելու ետևես էկուր: Ինձի տարավ հարուստներու թաղամասը, հոն ձգեց: Գնաց, որ մերոնց բերե: Մեյմըն ալ նորեն էկավ, ըսավ՝ շուտ էկուր ետևես: Ինձի տարավ Գրիգոր Զոպյան անունով մարդու մը տունը: Հազիվ մի քիչ շունչ էինք քաշել, հանգիստ էինք: Հոն երեք-չորս ամիս մնացինք: Հորեղբորս չար տղա մը ուներ: Ան օր մը թուրքի տղային ծեծեր էր, անոր ծնողքն ալ ոստիկանատուն լուր էին տվել: Էկան մեզի բոլորիս լեցուցին թաթար-արաբաև, տարին նորեն Կոնիայի կայարանը, որտեղ շատ հայեր կային ամեն կողմեն հավաքված՝ և՛ հայախոս, և՛ թուրքախոս…

Օր մըն ալ հրաման էլավ, որ պիտի շարժվինք, ով դրամ ունի՝ կրնա թրենով ճամփորդել, ով չէ՝ ոտքով: Դրամ ունեցողները լեցվեցան վագոնի մը մեջ: Թրենը գնաց, գնաց Բոզանթիում կեցավ: Այս կողմը թրենին գիծն էր, այն կողմը՝ անտառ էր: Մեզի վար իջեցուցին: Բաց երկնքի տակ պիտի գիշերեք ըսին: Գիշերը՝ ցուրտ, մարդիկ իրար վրա կնստեին, որ տաքնան…

Հաջորդ օրը նորեն հրաման էկավ, որ պիտի քալենք: Ոտքով գնում ենք: Մարդու ծո՛վ է: Քալելեն ոտքերնիս ցավում էին: Անոթի, ծարավ, ջուր չկա, ուղտերու ոտնաթետքերու մեջը կուտակված աննձրևաջրերը կխմեինք…

Մեյ մըն ալ իրարանցում մը սկսավ, մարդիկ սկսան մի կողմի վրա վազել, տեսանք՝ ի՞նչ. հոն հոր մը կա, մեջը ջուր կա: Գացինք, խմեցինք, քիչ մը զովացանք…

Քիչ մը հետուն թուրքի գյուղն էր, մեկ ալ տեսանք սայլապան մը սայլը քշեց էկավ մեր ճամփով: Պապաս դրամ տվավ, մեր տոպրակները վրան դրինք, քիչ մը շունչ առանք, գոնե ձեռքերնուս ծանրությունները թեթևցավ…

Աս ձևով քալելեն հասանք մինչև Մուսա դաղ: Հոն արդեն ոչ մի հայ չէր մնացած, գյուղերը, տները դատարկված էին, բոլորը բարձրացել էին լեռան գագաթը, անտեղեն կովում էին թուրքին դեմը: Ծառերուն տակը տեսանք շատ անուշիկ երիտասարդի մը գլուխը, քիչ մը անկողմը՝ անոր մարմինն ալ ինկած էր, խեղճին սպանել էին թուրքերը, հագուստներից երևում էր, որ ինքը հայ էր: Մեր տղամարդիկ հողը փորեցին, անոր մարմինն ու գլուխը մեկտեղեցին ու թաղեցին:

Գիշեր էղավ, հորեղբորս աղջկան հետ չուլ մը փռեցինք, պառկանք: Մեծերը կրակ վառեցին, շուրջը նստան, զրուցեցին, որ գիշերը անցնի…

Հաջորդ օրը նորեն հրաման էկավ քալելու: Քալելո՛վ, քալելո՛վ հասանք մինչև Կատմա: Արդեն աշուն էր, ցուրտ էր: Ժողովուրդը ուզում էր շուտ տեղ հասնի, որ չաղըր զարնի, տակը մտնա, քանի որ աննձրևները սկսել էին արդեն: Հոնտեղեն եղբորս կանչեցի, ըսի՝ էկուր քովս, իրարանցումին մեջը ալ գալը չտեսա: Այդ վերջին անգամն էր, որ եղբորս տեսա: Ալ չգիտեմ՝ կորա՞վ, գողացա՞ն, թե՝ ի՞նչ եղավ…

Անոթի ենք, ոչինչ չունենք ուտելու, խոտ ենք քաղում, ուտում և կամ ձիերուն կեղտի միջի չմարսված գորեեն ենք ուտում: Վերջապես հիվանդացանք. փորերնիս կցավի, լուծ ընկանք: Դու մի ըսեր՝ ադ տիֆ էր կամ դիզանթերի. արյու՞ն, թարա՞խ կուգար: Մենք մեր ունեցած դեղերը բոլորը բաժանել էինք՝ ասոր-անոր: Հիմա մեզի դեղ չէր մնացել: Ծուրջերնիս բոլորը մեռնում էին. «Ահ, մեր տունը ըլլա՛ր, ա՛հ, մեր պետքարանը ըլլա՛ր» կըսեինք: Քանի որ ամեն ինչ բացօթյա էր, սեֆիլությու՛ն, անտանելի՛ վիճակի մեջ էինք… Ադ ժամանակ էր, որ տասնյոթ տարեկան Իլմոնիկ քույրս թուրքին կընիկները ուզեցին փախցնել, մորաքույրս քշեց անոնց, բայց գիշերը եկել էին, սուս ու փուս գլխին տոպրակ անցուցեր, տարել էին՝ փախցրել…

Սոսկալի էր նաև Ագնես մորաքույրիս վիճակը: Ան մի տեղ ընկել, մնացել էր, ծծկեր երեխաև գիրկը, ինքը տիֆով հիվանդ, այդպես օրերը կանցնին, ինքը չի զգար: Մեյ մըն ալ աչքերը կբանա, որ գիրկի երեխաև մեռել է, նույնիսկ որդնոտե՛լ է, ինքը չի զգացել: Հետո ան ինքզինքը կհավաքե, կուգա մեզ կգտնա:

Վերջը թուրքի կառավարութենեն հրաման եկավ, որ թուրքի բանակին մեջ ով որ զինվոր ունի, ան ազատվում է աքսորեն: Շատերը աս ձևով ազատվան: Բայց տասնհինգ տարեկաննե վեր տղաներուն հավաքում, տանում էին բանակ: Օր մըն ալ մեր ճամփին տեսանք շատ մը երիտասարդներ՝ իրար ետևից ընկած. հայտնի է, որ շարքի կեցուցած, սպանած էին բոլորին ալ…

Օրե՛ր, ամիսնե՛ր ադ ձևով անցան: Հալեպեն մարդ մը կուգար, արաբալով հաց կբերեր, կբաժաներ: Հորեղբայրս մոտեցավ անոր ըսավ. - Ի՞նչ կուզես տամ քեզի, միայն մեզի Հալեպ տար:

Մարդը սկզբում վախեցավ մեզ տանիլ, ըսավ. - կտանիմ, բայց եթե ձեզի բռնող ըլլա, ըսեք, որ Շամ պիտի էրթաք՝ թուրք զինվորներուն հագուստ կարելու…

Ան մեզի տարավ Հալեպ: Հորեղբայրս կերթա Մանուկ Կարաչայ անունով մարդու մը տունը, կըսե. - Շատ կխնդրեմ, դուն մեզի օգնեա, տունի մը ճարը տեսնաս: Մերոնք հիվանդ են, գարուններ ի վեր փողոցներն ենք, ո՛չ տուն, ո՛չ անկողին, ո՛չ պետքարան, միկրոպ է ամեն տեղ, շատերը մեռան, մերոնք հիվանդ են, գոնե մեզ փրկե:

Աս Մանուկ Կարաչայն իր լվացարարուհուն կըհրամայե, որ մի տուն գտնա մեզի համար:

Ան մի տուն գտավ մեզի համար: Գնացինք, մըտանք այդ տունը: Տանտիրոջ հետ պայմանավորվել էինք, որ մեր տունեն դուրս չպիտի էլլանք, որ մեզի չըտեսնեն, չբռնեն: Մեր տանտերը մեզ ուտելիք էր բերում: Նա մեկ տղա, մեկ աղջիկ ուներ: Աղջիկը ամուսնացած էր թուրք սպայի հետ: Ադ թուրք սպան մտածել է, որ այսքան մարդ էկան իրենց տունը, այն էլ հիվանդ, պետքարանին փոսը կլեցվի, ո՞վ պիտի դատարկե: Մեզի ուզեց ադտեղեն դուրս հանել:

Ան լվացարար կինը մեզի ուրիշ տուն մը գտավ: Մենք փոխադրվեցանք հույնի մը տուն: Ան ավելի լավ տուն էր: Հատակը մոզաիկա էր: Տանտերը հույն էր, բայց արաբերեն կխոսեին, երեք տղա ուներ, երկու աղջիկ: Մենք արդեն «դասերնիս» սորված էինք, արդեն Հաջի մայրիկն էր, հարսը, հորեղբորս աղջիկը և ես: Ով հարցներ, պիտի ըսեինք. «Մեր ծնողքը կորած է, աս խավաջաև՝ պարոնը, հնձի կպահե, մինչև ծնողքս գըտնըվի»: Երբ գալիս էին փնտրելու, հորեղբայրս, որ զինվորական տարիք ուներ, կմտցնեինք յուքլիգին մեջը՝ պատի մեջ փորված տեղը, ուր անկողինները կդնեին: Օր մը նորեն էկան զաբիթները՝ փախստական զինվոր փնտրելու: Հորեղբորս կինը մուսհնին նորեն թաքցրեց յուքլիգին մեջը: Զաբիթը ըսավ. - Հոս նայե նայինք, հնձի լոլո մի կարդար, դու մարդ ունիս պահած:

Հորեղբորս կինը զգրոց մը ուներ, մեջը արծաթ գդալներ, զարդեր, մարգարիտներ կային, հանեց, անոնց ներ տվավ:

Զաբիթը ըսավ. - Ամեն ամիս մենք պիտի գանք ստուգելու, ներս չենք մտներ, - այսինքն, ներսինի կանենե, կէրթան:

Ասկե վերջը մեզի տարին Մեսքենե: Ագնես մորաքույրս, որը մեզի հետ էր արդեն, քյուրք մը կհագներ, որուն մեջը ոսկիներ էին կարված: Քանի որ անոնք շատ հարուստ էին, Ափիոն-Գարահիսարին մեջը անոնք ցրենի արտեր ունեին, ծախեցին, իրենց անթիվ-անհամար ոսկիները կարեցին քյուրքին մեջը: Օր մը ադ Ագնես մորաքույրս պարտեզին մեջ պետքարան էրթալու ատենը, թուրքերը կբռնեն, կտանին: Մեկ շաբաթ կորսընվեցավ, հետո ետ բերին: Հագուստները վրայեն հանված, տկլոր, գզգզված մազերով, ո՞վ գիտե ի՛նչ էին ըրեր, որ խեղճ Ագնես մորաքույրս խենթեցած եկավ…

Հետայրս, որ շատ զարգացած, լավ մարդ մըն էր, երբ տեսավ իր կնոջը այդ վիճակին մեջ, շատ ազդվեցավ, հիվանդացավ, անկողին ընկավ…: Ան արդեն շատ ծեր էր, հոգեվարքի մեջ էր, երբ նորեն մեզ հավաքեցին, որ առաջ տանեն: Ամեն կողմեն «Ցալլա՛, յալլա՛» կըսեին, կմխթեին, որ շարժվինք, մենք հիվանդ քեռայրս դրինք ուղտի մը վրա, բայց ան չդիմացավ, ուղտից վայր իջկավ ու մեռավ…

Հորեղբորս ու Հաջի մայրիկենց ընտանիքներն ալ ամբողջությամբ ոչնչացան, մարդ չմնաց ողջ:

Քույրիկս՝ Իլմոնիկը, որին թուրքերը փախցրել, տարել էին, հետո իրենց խուժան տղայի հետ ամուսնացրել, երկու զավակ էր ունեցել՝ մեկի անունը Հադիջե, մյուսինը՝ Զիչեկ: Ադ ամուսին ըլլալիքը միշտ կըսե եղեր Իլմոնիկ քրոջս. «Եթե փախչես, քեզ ալ, քո երեխաներին ալ կմորթեմ»: Քույրիկիս ադ խուժան ամուսինը մարդ է սպանում և բանտ է ընկնում: Այդ ժամանակ Իլմոնիկ քույրս կտեսնա, որ քանի մը հայեր իրենց օթոն են լվանում, կմոտենա, կխոսի, հայերը կմեղքնան, գաղտնի իրեն և իր զավակներին օթոն կդնեն, կբերեն Հալեպ: Երբ Իլմոնիկը էկավ, բոլորս շա՜տ ուրախացանք: Երեխաներին կնքեցինք, անունները դրինք Ալիս և Վեհանուշ:

Արդեն բավական ժամանակ էր անցած: Պատերազմը վերջանում էր: Գերմանացիները գնում էին: Մեզի հրաման էկավ՝ ամեն մեկը իր տեղը վերադառնա:

Սկսանք ետ դառնալ: Թրենով գնացինք Ադանա: Հոն տասը օր մնացինք: Հոն հնդիկ զինվորներ կային, մեզի փիլավ կբերեին՝ վրան կծու բիբեռով ու միսով, որ ուժ առնենք, այնքան, որ հյուծված էինք: Հետո

* Միհրան Տամատյան (1863, Կ.Պոլիս – 1945, Կահիրե) – հասարակական, քաղաքական գործիչ: 1920 թ. օգոստոսի 4-ին Ադանայում Ազգային գերագույն խորհուրդը Տամատյանի նախագահությամբ հռչակել է անկախ հանրապետություն՝ Ինքնավար Հայաստան Ֆրանսիայի հովանավորության ներքո, որը սակայն մեկ օր է տևել. ֆրանսիական զինվորական իշխանությունները շուտով ցրել են:

Կոնիա գնացինք: Հոն ադ նույն Գրիգոր Զոպյանի տունը մնացինք: Վերջն ալ Աֆիոն-Գարահիսար եկանք: Հոն մեր ծանոթ թուրքերը մեզի շատ լավ ընդունեցին: Արդեն լուր էին առել, որ գալիս ենք: Մեր տուները ազատել էին, մաքրել: Կաթի սեր և այլ ուտելիքներ էին պատրաստել, որ գալու ըլլանք ըե ուտենք: Բայց շատ չկրցանք մնալ Աֆիոն-Գարահիսարում: Հորեղբայրս գործով գնաց Իզմիր: Հետո ալ մեզ բոլորիս տարավ Իզմիր, մեյ մըն ալ սկսավ քեմալականների շարժումը: Իզմիրը կրակի տվին: Առաջին կրակը Հայնոցը տվին: Ս. Ստեփանոս եկեղեցին այրեցին: Քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին մտած էին, որ պաշտպանվենք: Վերջը հայերս փախանք, գնացինք ծովեզերք: Ծովին վրա լի՛քը նավակներ էին, բայց թուրքերը նախօրոք բոլոր նավակները ծակել էին, որ ջուր լցվեն ու հայերը չկրնան ազատվիլ: Նավակ էին նստում խեղճ հայերը, քիչ մը կլողար նավակը, վերջը՝ լը՛կ-լը՛կ, ջուրը կլեցվեր մեջը: Բոլորը ծովի մեջ շուռ կուգային, ծովի վրա լի՛քը ուռած մարմիններ էին: Մեզի տարան Բալջովա: Ծովուն եզերքը փայտե բարաքներ կային, հոն լեցուցին: Սկսան մեզի աչքե անցնել: Սիրուն աղջիկներուս բռնում, քաշում, քաշքշում, տանում էին: Ես մանր-մունր պզտիկ աղջիկ էի, փեշերուս տակը պահվտեցա: Մեր Մարիին երեսը մուր քսած էին ու մազերը խուզել էին. այլանդակ տեսք մը առած էր, նայեցին, չճանչցան. - Ցարամազ (անպետք), ըսեցին, ձգեցին, այսինքը՝ գործի չի գար, ոչ մեկին պետքը չէ: Անդիեն կլսվեին թուրքերուս ձայները, որ դանակները սրում էին, որ մեզի մորթեն: Հայ աղջիկ մը տեսավ, որ հերթը իրեն պիտի գա, ինքզինքը պատուհանեն վար նետեց, բայց չմեռավ. վարը ուրիշ զինվորներ կան եղեր, քանի մը օրեն ետքը բերին արդեն աննճանաչելի վիճակի մեջ...

Դրամ ունեցողը փախչում էր: Հաջի մայրիկին ըսի. - Սա Արամին դրամ տուր, թող հոգին ազատե: Բայց Հաջի մայրիկը սխը ձեռք ուներ, չտվավ: Արամը, որ այնքան իմ եղբորս կնմաներ, լողալով-լողալով հասել էր նավը, բարձրացել էր, բայց գետին էր ընկել քիթուբերանեն արյուն էր թափվել, ան ալ անանկ մեռավ...

Ամերիկացին շոգենավեր էր բերել, որ մեզի Հունաստան փոխադրեն: Քանի որ Ռեմալը ըսեր էր՝ Թուրքիան թուրքինն է, ո՛չ մի քրիստոնյա չպիտի մնա:

Երկու կողմը թուրք զինվոր էր կայնած: Մեզ քաշում, քաշքշում էին: Այդ խճողումին մեջ հորեղբորս տղան, որ մեզ հետ էր, կորսնցուցինք: Մենք բարձրացանք նավ...

Նավը մեզ հասցրեց Հունաստան: Հոն աշխատեցանք: 1924-ին ամուսնացա Միքայել Բարթիկյանին հետ: Նա Աթենքում հայտնի հասարակական գործիչ էր, հայտնի լրագրող, հրատարակում էր «Ամրոց» թերթը: Հետո հրատարակեց «Հելլեն դիքը»: Աթենքում ծընվեցին մեր երեք տղաները՝ Վահեն, Հրաչը և Պարթևը: Երբ սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը, բավական շատ դժվար օրեր ունեցանք, քանի որ Հունաստանը ֆաշիստներու տիրապետության տակ էր: Ամուսինս ալ համայնավար գաղափարներու տեր էր: Նույնիսկ օր մը ես ոտքես վիրավորվեցա, գնդակը մտավ մեջը: Բուժարան տարին, գնդակը հանեցին: Տնեցիներս լուր չունեին: Լավ է, որ մեր բախալին՝ նպարավաճառին կնոջը տեսա պատուհանեն, ըսի, որ մերոնց լուր տա: Եկան, ինձի տուն տարին:

Պատերազմի ժամանակ Վահեն Կիպրոսի Մելքոնյան կրթարանում էր սովորում, Հրաչը՝ հունական գիմնազիայում, իսկ Պարթևը՝ իտալական դպրոց կէրթար, որ ձրի ճաշ ուտեր գոնե:

1946 թվին ներգաղթեցինք, էկանք Հայաստան: Սկզբում մեզ գցել էին շատ հեռու մի գյուղ: Հետո Երեվան փոխադրվեցինք և Նոր Կիլիկիայի առաջին շարքում հողամաս տվին, տուն շինեցինք: Ամուսինս սկսավ աշխատել Գիտությունների ակադեմիայի գրադարանում: Տղաներս սկսան սովորիլ: Վահեն ու Հրաչը պատմաբան դարձան, Պարթևը՝ երկրաբան: Վահեն Մատենադարանի գրադարանում բաժնի վարիչ է, Հրաչը՝ պատմական գիտությունների դոկտոր, աշխատում է Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում: Ան հիմա Միջին դարերու պատմության բաժնի վարիչն է: Վերջերս Հայաստանի, Աթենքի և Հռոմի Թիբերինա ակադեմիաների թղթակից անդամ ընտրվեցավ: Ան գրեթե ամեն օր կուգա ինձի տեսնալու, միևնույն չձգեր ինձի:

198 (198).
ՍԱՐԳԻՍ ԵԹԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ԱՖԻՈՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ)

1915 թվին մեր հայերուն մեծ մասը, որոնք կապրեին Աֆիոն-Գարահիսար, Ուշաք, Էսքիշեհիր, Աքշեհիր, Բուրսա, Բիլեջիկ, Քյոթահիա, Ադանա, Մարաշ, Այնթապ՝ թրքախոս էր: Աս բոլորն ալ աքսորվան: Ասոնց մեղքը ի՞նչ էր: Իրենք չիմացան:

Ես կհիշեմ՝ հայերը եկեղեցի էին գնում, ծունկ չբռնում, գետնին հարում, նամազի պես աղոթում էին: Պատարագից հետո թուրքերեն քարոզ էր լինում՝ հնու-հնազանդ ըլլալ կառավարությանը, օգնել Օսմանյան կայսրությանը՝ հարատևելու և ոչ մի ջանք չխնայել կատարելու իրենց վրա դրված պարտքը «վաթանի» նկատմամբ: Մենք՝ հայերս, համարվում էինք օսմանցիներ, հայ կանայք թուրքի նման չադրա կհագնեին, միայն հայերունը ճերմակ մաճրամա էր, իսկ թուրքերունը՝ սև չադրա, որ զանազանեն իրարմե:

Երբ ես ծնվում եմ, մայրս հիվանդանում է, կուրծքը քաշվում է և ինձ կաթ չի կարողանում տալ: Էն ժամանակ արհեստական կեր չկար: Մերոնք ալ ինձի հաշվի չեն առնում, աշխատում են հիվանդ մորս բուժել: Մեծ հորաքույրս ինձ կտանի մի թուրք կնոջ մոտ և կխնդրե, որ իր տղային հետ ինձ ևս կուրծք տա:

1915 թվի սկզբում համատարած գաղթը սկսավ:

Հետո ոմանց որոշ արտոնություններ տրվեցին: Օրինակ՝ թուրքական բանակում ծառայողների կամ զոհվածների ընտանիքներին և թուրքացող ներին աքսոր չտարին: Դեռ մենք չէինք գաղթել, մեր քաղաքը եկան քարավաններով գաղթականներ: Մեր Աֆիոն-Գարահիսարում ունեինք Իզմիրի կայարան և Պոլսո կայարանից դեպի խորքերը գնացող երկաթգիծ:

Մեզ մոտ աքսորը քիչ մը ուշ եղավ: Մեզ մոտ սելջուկներ կային, նրանց մզկիթը կոչվում էր թյուլբե: Սելջուկների թյուլբեն գտնվում էր հայերի թաղամասում: Այդ թյուլբեն մի օր հրդեհ էր եղել, հայերը օգնել էին, թյուլբեն չէր վառվել: Անոր համար հայերուս կսիրեին սելջուկները: Հայ կանայք գնացին խնդրելու: Սելջուկ շեյխը մեռել էր: Տղան էր նրան փոխարինում: Սելջուկ տղային մայրը ասում է իր որդուն. - Կաթս քեզ հարամ կընեմ, եթե ասոնց չօգնես: Աս հայերը մեզի ամանաթ են, եթե ձեռք տանք՝ Ալլահը կպատժի մեզի:

Մեր հայ կանայք կըսեն. - Մեր տղամարդկանց տարել են: Մենք երեխաներով ու՞ր գնանք:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայից, թուրքից զինվոր էին տանում: Այնպես որ, հյուրիեթի ժամանակ բոլորին բանակ տարին: Իմ հայրն ալ թուրքական բանակ տարել էին, ադոր համար մեզ չաքսորեցին: Շատերուն ալ սելջուկները ազատեցին՝ չաքսորվեցին: Բայց ուրիշները աքսոր գնացին: Թուրքերը, չեչենները անոնց թալանում էին: Իրենց վրայի ոսկիները կողոպտում էին: Անոր համար հայ կանայք ոսկիները կուլ էին տալիս, որ չգտնեն, բայց թուրքերը հայ կանանց որովայնը պատռում էին, նույնիսկ հղիներուն, որ ոսկի գտնան:

Երբ զինադադար եղավ, մեր հայրը մեզի՝ երեք եղբայր և մեկ քույր, տարավ Իզմիրի ամերիկյան որբանոցը: Այնտեղ 1922 թվին քեմալականները եկան, գրավեցին: Միսիս Վենեթը մեր տերն էր: Ան շատ լավ կին էր: Հայ աղջիկ մը որդեգրեց, Ամերիկա գնաց: Մեզի հայ հարուստները պահեցին: Մենք տասնհինգ հազար հայ որբեր էինք: Իզմիրում Մեսրոպյան վարժարանը կար, որի տնօրենն էր Անդրանիկ Կարապետյանը:

Իզմիրի աղետը 1922-ին եղավ: Քեմալականները Անատոլիայից Իզմիր եկան, խուժանը լցվեց քաղաքը: Առաջ՝ Հայնոցը՝ Հայ թաղը: Մենք որբանոցի առաջ բարիկադներ սարքեցինք: Իզմիրը կրակներուն մեջ կվառվեր, երբ մենք հինգ որբեր փախանք, ծովը նետվեցանք, լողալով հասանք իտալական նավի մը, որը մեզի տարավ Փիրեյա: Պոլսից հազարավոր որբեր բերին միացուցին մեզի, բոլորիս տարին Քորֆու կղզին՝ Ադրիական ծովին մոտ:

1923 թվին իտալացիները սկսան ռմբակոծել մեր որբանոցը, շատերը վիրավորվեցան: Մեզ, որ արդեն մեծ էինք, ուղարկեցին Քավալա, Դրամա: Ես սկսա կոշկակարություն ընել:

1932 թվին Հայաստանեն Շահվերդյան անունով մեկը եկավ և մեզ բերեց Հայաստան, մոտ հինգ-վեց հազար հայ էինք, նավը մեզ հասցրեց Բաթումի: Սկզբում Ստեփանավան՝ Գյուլագարակ էի, հետո տեղափոխվեցի Երևան:

Հետո, տարիներ հետո ես իմացա, որ մեր բոլոր ազգականներուն մորթել են, մնացածներն ալ Դեր Զոր չեն հասել: Հայրս զոհվել է Դարդանելի նեղուցի մոտ, հորեղբորս Ամիլե թաբուրում են սպանել: Քույրս տիֆով է մահացել: Մեր Տեր Սահակ քահանայի երկու սիրուն աղջիկներին թուրքերը ուզեցել են փախցնել: Քահանան դիմադրել է: Երբ տեսել է, որ անհնարին է, իր քովը պահած կըլլա մեր քաղաքի՝ Աֆիոն-Գարահիսարի ափիոն թույնը, ինքը կխմե, աղջիկներուն ալ կուտա՝ անոնք ալ կթունավորվին, տեղն ու տեղը կմեռնին:

199 (199).
ԱՍԱՏՈՒՐ ՀՈՎՍԵՓԻ ՄԵՆԵՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ԱՖԻՈՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ)

1914 թվին պապալիս տարան թուրքական բանակ, էլ չեկավ: Մենք ապրում էինք թուրքական թաղում: Մամաս ժամանակին կաթ էր տվել մեր դրացի թուրք ընտանիքի չոջուխին: Այնպես որ, երբ 1915 թվին ջարդը պիտի ըլլար, մեր ադ դրացի թուրքը էկավ մամայիս ըսավ. «Դուռը բաց ձգեցեք, եկեք մեր տունը»:

Մամաս մեզի հավաքեց, էլանք, գացինք դրացի թուրքին տունը:

Գիշերը ժամը երկուքին թուրքերը եկան: Դուռը զարկին: Մեր դրացի թուրքը էլավ ըսավ. «Հոս մեծ պաշտոնյա կապրի»:

Անոնք հավատացին, էլան գնացին:

Մեր փողոցը մեկ հայ նպարավաճառ ընտանիք մը կար: Թուրքերը անոնց հորն ու մորը և տղային մորթեցին, իսկ աղջկան ալ բռնաբարեցին: Էդ մեր դրացի բարի թուրքը էդ աղջկան մեղքցավ, ներս առավ, պահեց մեզի հետ:

Այնպես որ, թուրքերուն մեջ ալ լավերը կան:

200 (200).
ՍՄԲԱՏԻԼ ԲԵՐԲԵՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԱՖԻՈՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ)

Ես հորս չեմ հիշում: Թուրքերը հորս սպանել էին: Ռեռուս ալ տանջանքներով մեռցրել էին: Մեծ եղբորս թուրքական բանակ տարին, բայց նա փախավ, եկավ թուրքական բանակեն: Մամաս եղբորս պահեց խոտի դեզի մեջ, իսկ դրացի թուրք կնիկը մատնեց կառավարությանը: Եկան, գտան, նորեն տարին: Մյուս եղ-

բայրս փոքր էր, անոր ալ տարին։ Հետո իմացանք, որ տասնյոթ հայ տղաների հետ գիշերով սպանել, գցել էին գյուղի կամուրջին տակը։ Էնպես որ, տղամարդ չըմնաց մեզ մոտ, երբ աքսոր էլանք։

Դեր Զորում հինգ մորաքույրներիս փախցրին, տարին, վերջն ալ անոնց գլուխները կտրեցին, խշտիկներու վրա ցցեցին, որ մենք տեսնանք, անոնց ջանդակներն ալ գցեցին Եփրատը։ Մամայիս հորաքույրին միայն կեսը գտանք, մասաս թաղեց հողին մեջը։ Բոլորին կոտորեցին, մարդ չթողին...

Լալեն մամայիս աչքերը կուրացան։ Ետքը մեզ հրաման տվին՝ ետ էրթալ մեր տեղերը...

Հույնի օրոք լավ էինք։ Ամմա վերջը հույնի-թուրքի կռիվը սկսավ... Թուրքերը սկսան քրիստոնյաներուն կոտորել։

Մարիամ Աստվածածնի օրն էր. գնացի եկեղեցի՝ օրհնված խաղող բերելու։ Տերտերը քարոզ կուտար. «Հայե՛ր, եկե՛ք, վիրավորներուն վերքերը կապեցե՛ք»։ Ես ալ ըսի մորս՝ կէրթամ ջուր կուտամ վիրավորներուն։ Մամաս չթողեց։

Այդ ժամանակ հույնը քաշվեց։ Մենք ալ այդ հույն կռվող զինվորներուն հետ սկսանք փախչիլ։ Մի տեղ թուրքերը մեծ կրակ էին արել, մեջը հայերուն էին գցում։ Մամայիս բռնեցին, կրակի մեջ գցեցին, մենք՝ ես ու քույրս, սկսանք պոռալ, չկրցանք մորս կրակի միջից ազատել։ Այդ միջոցին քրոջս ալ կորցրի։ Դաշտի մեջ միևնակս մնացի։ Գիշերը հողը փորեցի, վրաս քաշեցի, քնեցի։ Առավոտյան տեսա զինվորներ են եկել, գլխիս կանգնել, ասացին. - Աղջի՛կ ջան, արի՛ մեզ հետ։

Ես վախեցա, ասացի. - Դուք թուրք եք, ես ձեզ հետ չե՛մ գա։

Ըսին. - Չէ՛, մենք հույն ենք, արի՛։ Լա՛վ, դու՛ գնա։ Էդտեղ երեք հատ թուն ել կա. որ մեկը որ լույս չկա, ան թունելը մտիր ու պոռա՝ «գաղթականներ, մուհաջիրներ»։

Ես ադաևն ալ ըրի, կին մը ինձի բռնեց, նայեց երեսս, ըսավ.

- Վու՛յ, ջեհենեմը գնաս, ես ալ իմ կորած աղջիկս կարծեցի քեզ։

Հույն զինվոր մը եկավ ադ կնոջը ըսավ. - Ինչու՞ չես վերցնում աս աղջկան, մեղք է, աո մխիթարվիր, հազիվ փախել, եկել է։

- Չէ՛, չե՛մ կրնար, ես իմ երեխեքին չե՛մ կարող պահել, ևրան ինչպե՞ս պահեմ։

Էդ հույն զինվորը տեսավ՝ ես լաց եմ լինում, սկսավ ինձ մխիթարել. - Մի լար, աղջիկ, երևի քու մայրը չի մեռել, գնացել է, պիտի գա, քույրդ էլ կգտնաս, մի լաց։

Բայց ես չեմ հավատում անոր խոսքերուն, լաց եմ լինում։

Հույն զինվորը ինձ մի քիչ պաքսիմատ տվավ, իր ջուրի ամաևեն ջուր տվավ, խմեցի, ինձի ալ մի ուրիշ կնիկի տվավ, որ ինձ տերություն ըևե, բայց էս կնիկն էլ չպահեց։

Ես ժողովրդի հետ գնացի. տեսնեմ՝ մի կին ընտած էրկանը է աղում։ Ես գնացի էդ կնոջից մի քիչ հաց ուզեցի։ Ան ինձի ըսավ. - Հաց չկա, մի քիչ ալ գնա, անտեղը գիլգիլ կա բուսած, ա՛ռ, կե՛ր։

Ինձ վրա էլ հա՛լ չկար. անոթութենեն ուշքս գընաց, ընկա։ Երբ արթնացա, տեսա գետնին պառկած եմ, ականջիս ձայներ են գալիս։ Հույն զինվորներուն ըսի, որ հոս հոր է, մեջը մարդ կա։ Հույն զինվորները եկան էրկանքը անոնդին քաշեցին, տեսան խալի է փըղված, անոր տակը, հորին մեջը լիքը թուրք չեթե կա, սպասում են, որ մեզ սպանեն։ Հույն զինվորները անոնց կոտորեցին։ Հետո ուրիշ թուրք զինվորներ եկան, մեզ գտան։ Բոլորիս կանգնեցրին, երկու մարդու առանձնացրին մեզնից, պառկեցուցին գետնին, սկսան անոնց կաշիները քերթել և խնդալով ըսել. «կո՛վ ենք մորթում»։ Մարդոց կաշին դժվարությամբ հանեցին։ Էդ խեղճ մարդիկ ողջ-ողջ կտանջվեին, էդ ի՛նչ ձայն էր, ի՛նչ բորչըդուք. մարդիկ բանգը՛ր-բանգը՛ր կբոռային։ Վերջապես անոնց մաշկահան արեցին և ըսին. - Քանի որ դուք՝ գյավուրնե՛ր, հայտնել եք թուրք չեթեներուն տեղը, ձեր արժանի պատիժը ա՛ս է։

Մենք բոլորս ալ կուլանք, կողբանք, վախերնես կդողանք։ Ես հազիվ փախա, ոտքով սկսա քալել քանի մը հոգիներու հետ։ Մեզի գերի բռնեցին. չեն թողնում ոչ մի տեղ էրթալ։ Հազիվ տասներկու տարեկան տղա մը ննտած կեղտոտում էր ճամփի եզրին։ Տանկ մը կար, տանկը պայթեց, ադ տղաև ալ աչքիս առջևը անհետացավ։

Երբ թուրքերը տեսան իրենց տանկը վառվեց, «գյավուր գէ՛ղի» ըսելով փախան։ Թուրք զինվոր մը ինձի ուզեց իր հետը տանիլ։ Բայց ադ հույն զինվորը չըթողեց, ինձ ասավ. - Մի՛ գնա, քո մամայիդ պես քեզ ալ կվառեն։

Ես ան ատենը հասկցա, որ այդ հույն զինվորը տեսել էր մորս վառվիլը և ինձ խաբում էր, որ ինձ մխիթարի, միշտ ասում էր՝ մամադ պիտի գա։ Ես ալ հույսով էի մնում։

Հետո գնացք մը եկավ, մեջը լիքը մարդ, տեղ չկար ննտելու։ Ես մենակ, ոչ ոք չունեմ, այնքան ժողովուրդ կա, որ դռնեն կախված են՝ խաղողի ողկույզի պես։ Ինձ ալ կապեցին դուռնեն, որ աստիճաններուն վրայեն չընկնեմ։ Թուղթ մըն ալ ձեռքս տվին և ըսին. «Աս թուղթը կտանես հայկական եկեղեցի, քեզ կտանեն մամայիդ քովը»։ Ճամփին բացօթյա գնացքը կերթա, քամին կփչե, կարծես հիմա պիտի պոկվեմ։ Կամուրջի մը վրա մեր գնացքը պայթեցուցին, բայց, քանի որ ես դուռնեն կապված էի, հրաշքով ազատվա, մեջի մարդիկ ջարդուխուրդ եղան։ Մի քանի հոգիի հետ նորեն սկսանք քալել։ Երկաթգծի ճամփով քալեցինք, վերջապես հասանք Իզմիր։ Իզմիրի շուկային մեջը կպտտվեի, որ գոնե մեկը ինձի մեղքնա, կտոր մը հաց կամ ուրիշ բան մը տա։ Մեկ ալ ի՞նչ տեսնամ, աչքերուս չհավատացի, քույրիկս կնիկի մը հետ դիմացս ելավ, ըսի. - Քույրի՛կ, - փաթթվեցա։

- Գնա՛, դու իմ քույրը չես, իմ քույրը մարալի պես էր, անունը Սմբյուլ էր, - ըսավ՝ զզվելով ինձմե։

- Ա՛խ, քույրիկ, ե՛ս եմ, Սմբյուլն եմ, մեր մամայիս թուրքերը այրեցին կրակի մեջ։ Ես անոթի-ծարավ, քալելեն հոգնած աս վիճակիս եմ հասած, - ըսի։

Ան ժամանակ քույրս ինձի ճանչցավ, առավ տարավ եկեղեցի՝ Ս. Ստեփանոսը։ Հոն մարդ մը քյուֆլոտած հաց տվեց ինձի։ Կերա, շատ անոթի էի, բայց իրենց ունեցածն ալ ադ էր։

Հոն ըսին՝ պիտի էրթանք հաց ճարելու։ Քույրիկս ըսավ. - Քույրիկիս ալ տարեք ձեզի հետ։ Ադ մարդոց հաց հասավ, ինձի չհասավ։ Մինչև սպասեցի, որ ևորեն հաց թխեն, իմ ընկերները գնացին, ես մնացի, սկսա լալ։ Նոր գտած քրոջս ալ կորցրեցի։ Հետո մի կնիկ մեղքցավ ինձի, շոր մը տվավ, հագա՝ թե չէ տկլոր էի։ Ադ կնիկը ինձի տարավ Ս. Ստեփանոս եկեղեցին։ Թուրքերը ադ ընթացքում եկեղեցին պայթեցրել էին։ Ավերակներուն մեջեն քույրիկիս ևորեն գտա։ Իր վրա եղած ոսկեղենները իր վարտիքին մեջ պահեցինք, քանի որ թուրքը որ տեսնա՝ կառնե. «Գյավու՛ր, ներդե՞ գյոթիրիյորսըն» (Գյավու՛ր, ու՞ր ես տանում) ասելով, ունեցածչունեցածը առնում էին։ Հայերուն, հույներուն ծովն էին գցում։ Ջահել, ահել, երեխա, մայր չէին նայում։ Թուրք զինվորները խշտիկներով ծակծկում էին բոլորին, երեխաներին բռնում գցում, մեծերին շպրտում էին ծովը։ Ջուրին վրա լիքը մարդ էր, ջուրը չէիր տեսնար։ Թուրքը Իզմիրում հազար հինգ հարյուր հայ երեխեք հավաքեց, բենզինը լցրեց, վառեց։ Ամերիկացին տեսավ՝ չօգնեց։ Ադոր համար ես ատելով ատում եմ ամերիկացուն, ադոր համար ալ ես Ամերիկա չե՛մ երթար։ 1924 թվին եկել եմ Հունաստանեն, դժվարությունն շա՛տ եմ տեսեր. մազութ եմ լցրել գործարանում, բամբակ եմ քաղել դաշտերում, ամե՛ն գործ արել եմ, ամե՛ն։ Եթե օրը հարյուր մանեթ ալ տան ևե՝ ևորեն Ամերիկա չե՛մ երթա... Մեզի բռնեցին գերի տարին. պահածո պատրաստելու տեղ մըն էր։ Հոն մնացինք։ Ջուր չկա։ Թենեքե պահածոյի բանկայով ջուր էին տալիս օրը մեկ անգամ, մի քիչ ալ՝ հաց։ Նոր ծնված երեխեքը սովից մեռնում էին. մայրերը կաթ չունեին, սեֆիլությու՛ն...

Թուրք զինվորները, ձեռքերնին խշտիկներով, գալիս էին, մեզ ասում. - Գյավուրլա՛ր, ևե՞ էդիյօրսըն (Գյավուրնե՛ր, ի՞նչ եք անում)։ - Գալիս, տեսնում էին սիրուն աղջիկ կա, առնում, տանում էին, քի՛մ-քիմե՛ (ո՛վ-ու՛մ)։ Պզտիկ պատուհան մը կար, հետուն աղբյուր մը տեսանք, բայց ով որ գնա՝ սպանում են։ Թուրք զինվոր մը ծառին ետևը կայնած է, ով գա ջուրին քովը՝ սպանում, փոում է գետնին։ Քույրս ինձ ըսավ. - Չէրթա՛ աղբյուրը, կսպանեն...

Հետո եկան թուրք զինվորները, ըսին. - Ձեզի ծովեզերք պիտի տանենք։ Ծովեզերքում լի՛քը մարդ, մըրջյունի պես ծեփված են։ Մարդ մը եկավ մոտեցավ մեզի, թե՝ ես պատրաստ եմ ձեզի դրամով ազատել, նավ ընտեցնել, միայն թե աղջիկս ձեզի հետ տարեք։

Դու մի ըսեր, ադ մարդը իր ընտանիքը ղրկել է, աղջիկը մնացել է, ուզում է անոր ալ ղրկել մեզի հետ։ Թուղթերնիս շինեց, եկավ, ըսավ. - Դուք հոն սոված չեք մնար, կնիկս հոն ձեզի կօգնի։

Ամմա նավի մոտ չեն թողնում, թուղթերը ստուգում են։ Մեզի ծանոթ մարդու մը կնիկի շորեր էին հագցըրել, որ փախնի, բայց այդ մարդուն կնիկին սպանեցին, անոր դիակը գետինը մնաց։ Մարդը գիժ կնիկ ձևանալով կծոտում էր ասոր-անոր։ Թուրքերը ըսին. «Բու գյավուր դելի դըր» (Այս գյավուրը խենթ է)։ Վեր ձգեցին, նավ ելանք, ադ մարդն ալ մեզի հետ։ Նավը շարժվեց։ Չգիտենք՝ ու՞ր ենք գնում։ Նավը կանգնեց Սալոնիկ։ Հույնը մեզ շատ լավ դիմավորեց։ Պրասայով ճաշ տվին. չէ՞ որ ներսերնիս չորցած, ցամքած էր. պրասան մարդու ներսը կշինե եղեր։ Մեզի քանի մը օր պահեցին, կերցուցին, խմցուցին, ուժի բերեցին։ Քրոջս ամուսինը երեք երեխայով հոն՝ ադ քաղաքն էր. եկավ մեզի գտավ։ Ինձի տարին հրեայի մը տունը։ Անոնք շատ հարուստ էին։ Պզտիկ երեխա ունեին, ես ադ երեխան սայլակով կպտտցնեի, ամաևները կլվայի, տունին փոշիները կառնեի։ Օր մը հրեա տանտիկինս ինձի ըսավ. - Ռեզի մեր հրեական դպրոցը պիտի դնենք, կերթա՞ս։

Ըսի. - Չէ՛, ես հայ եմ։

Ես գիշերով անոնց քովեն ալ փախա...

Գացի, ֆաբրիկա մտա, աշխատեցա։

Վերջն ալ Հայաստան եկա, պսակվեցա, չորս զավակ ունեցա։ Անոնց ուսումի տվի, ամուսնացրի։ Հիմա յոթը թոռ ունեմ։ Բայց էլ առողջություն չունեմ։ Շա՛տ դարդ եմ տեսել, շա՛տ աշխատել, շա՛տ չարչարվել եմ, մինչև այս օրվան հասել եմ։ Փառքդ մե՛ծ լինի, Աստված...

201 (201).
ԳԵՂԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԱՖԻՈՆ–ԳԱՐԱՀԻՍԱՐ)

1915-ին մեզի աքսոր հանեցին, Աֆիոնեն մինչև Կոնիա ոտքով անցանք... Վերջն ալ Իզմիր անցանք։ Իզմիրի 1922-ին աղետը կհիշեմ։ Եոացած ջուր էին բացել հայերուն վրա, որ ջուրին մեջ մեռնին։ Շատ փող ունեցողները ասում էին ղալըղջիներուն. «Ա՛ռ աս ոսկիները, տա՛ր ինձի ֆրանսական, անգլիական նավերուն քովը հասցուր»։ Ջամադանով փողը կառնեին թուրքերը, ղայըղը կնստեցնեին, քիչ մը տեղ կտանեին, ղայըղը շուռ կտային, որ հայերը խեղդվին ջուրին մեջը՝ նավերուն չհասնին, չազատվին։

202 (202).
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1890 Թ., ԷՍԿԻՇԵՀԻՐ)

1915-ին, Չալդարանի հայերուն աքսորի հանելեն տասը օր առաջ, եկան հարյուրի չափ հայ երիտասարդներու անուևները կարդացին։ Ես ալ ադոնց մեջն էի։ Բայց հայրս քառասուն ոսկի տվավ զաբիթներուն, ինձի ազատեցին։ «Հայդե բաքալըմ» (դե՛, առաջ) ըսին, մնացածներուն ոտքով քշեցին դեպի

Բանդրմա: Քանի մը օր ետքը եկան, ամբողջ գյուղը պաշարեցին, աքսորի հանեցին: Ծնողներուս տարին, կացինով գլուխները կտրեցին: Ես մնացի մենակ՝ երկու քույրերուս և մորաքույրիս հետ: Անոնց մեջքերուն կապեցի հորս ունեցած ոսկիները: Ճամփա ընկանք: Ճամփին մեծ քրոջս թուրքերը փախցուցին, պզտիկ քույրս, որ տասներեք տարեկան էր, ջահել մորաքույրիս հետ ձեռք-ձեռքի տված, իրեն գցեց Եփրատ գետը, որ իրենք ալ թուրքի ձեռքը չանցնին: Օրվա մեջ տասը- տասնըհինգ հոգի կկախեին ծառերեն: Մնացածներին քշեցին ոտքով դեպի Դեր Զոր: Ճանապարհին ես փախա: «Հայ եմ» ըսի, հույները առին ինձի, պահեցին: Վերջը հույն տղաներու հետ մտերմացա, փախանք անտառները, պարտիզան. չորս հարյուր հոգի էինք: Կկռվեինք թուրքին դեմը: Մեզմե ով որ գերի իյնար, կտանեին Անկարա, կախաղան կհանեին: Մեզմե տասնչորս հոգի կախեցին: Մեղքերնին ան էր, որ փախել էին:

Թուրքին կառավարությունը հրաման հանեց՝ մեկ տարվան մեջ հայերուն կոտորել: Ձեչենները զենքերը առած եկան մեզ կոտորելու: Ան ժամանակ երեք միլիոն հայություն կոտորվեց, կըսեն մեկուկես միլիոն կոտորվեց, բայց սու՛տ է. երեք միլիոն կոտորվեց, միայն կես միլիոն Դեր Զորում կոտորեցին: Երեք հարյուր հազար՝ Ռաս ուլ Այնում, Արաբիայի չոլերում: Օրական տասը-տասնհինգ հոգի կփորեին, հարյուրավոր մեռելներ կթաղեին, խոլերայեն կմեռնեին: Ադոնց հաշիվը բոնո՞ղ եղավ: Միևնաս ան ունենով տղա մը, որ յարալու է եղել, լեշերու տակեն ազատվել, փախել էր, Եփրատի ափին տեսել է պզտիկ քույրս՝ Ծնորհիկը, և ջահել մորաքրոջս տկլոր՝ ափին ընկած: Դու մի ըսեր՝ անոնց լեշերը ջուրը ափ է հանել, արաբներն ալ անոնց շորերը վրայեն հանել են, մերկ դիակները գցել են ափին՝ գազաններուն, ագռավներուն կեր դառնալուն: Աս **բոլորը** հետո Միհասը ինձ պատմեց, շատ տարի հետո...

Հայերը հարուստ էին մեր կողմերը:

Ամենալավ տունը, ամենալավ խանութը հայերունն էր: Թուրքերը ուզեցին հայերուն տեղահանել, որ հայերի ունեցած-չունեցածը իրենց վերցնեն: Աս **պլանը** իրականացրին: Հայերը աքսոր ելլելու ժամանակ **ամեն** մարդ իր փողերը, ոսկիներն առավ հագուստներուն **մեջ** կարեց, քամարներուն մեջ դրավ, իր վրա վերցուց՝ ձեղ օրվա համար: Թուրքը ձիավորներ դրեց հայերուն վրա, իբր թե պիտի պահպանեն, ամմա հայերը ան**թի**-ծարավ չոլերը ինկան՝ ուժասպառ: Թուրքերը հատուկ հեռացնում էին հայերուն ճամփան, որ գետի **ջուրի** չհանդիպին, ջուր չխմեն, չաշխուժանան, որ ուժասպառ ընկնեն մեռնեն: Ողջ մնացածներուն երթալեն վերջը, թուրքերու նոր խումբ մը կուգար, որ ինկածներուն **տկլորցնեն**, սոդթեն, թալանեն: Իսկ ոմանք ալ, որ **ընկել** էին ճամփեն դուրս, սողալով մի կերպ հասել են **ջրին**, խմել, ուժ առել, փրկվել: Մեր Հաջի Գաբրիելը այդպես էր ազատվել... Վերջը ան ալ Հայաստան եկավ, հոս թաղվեցավ: Ան ալ Էսքիշեհիրցի էր:

Հույնը գրավեց Էսքիշեհիրը, բայց բոլշևիկ **ռուսը** թուրքին զենք ու ոսկի տվավ: Հույները ի՞նչ պիտի **ընե**ին՝ կոտորվեցան: Հունաստան փախողները՝ ազատվան: Իզմիրը հույների կողմից գրավված էր, բայց թուրքերը կրակի տվին: Ռումանիան մեզ չընդունեց: Ըսավ՝ բանվոր չեմ ուզեր, վաճառական ըլլա ան՝ կուզեմ:

Բուլգարիան ըսավ՝ հայերը հողեն դուրս թող էլլան: Անտեղ մի հարուստ հայ վաճառական կար, գնաց, խնդրեց թագավորին, որ մեզի ընդունենք: Վերջն **ալ** 32 թվին Հայաստան եկանք, կապրինք հիմա Նոր Բութանիա:

203 (203).
ԵՂԻՍԱԲԵԹ ԳԱՎԳԱՎՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ԷՍՔԻՇԵՀԻՐ)

Զաղաղարաանեն մեզի աքսորեցին դեպի Ռասուլիա (Ռաս ուլ Այն): Մամաս թուրքերուն համար ջուր կկրեր, փոխարենը պատառ մը հաց կուտային իրեն, իքըն ալ կբերեր ինձի կկերցներ, որ անոթութենեն չմեռնինմ: Մամաս ինձի տղայի քուրջեր հագցուցած էր, քանի որ աղջիկներուն կփախցնեին: Ես ծածուկ կելլեի սիգարեթի պոչերը կհավաքեի հորեղբայրիս համար: Հայերին շատերուն մաղարայի մեջ լեցուցին, վրանին կիր լեցուցին, կրակի տվին, այրեցին:

Թուրքերը փայտե թոփուզ ունեին՝ քյու՛թ դեի գըլուխնուն կզարնեին, կմեռցնեին: Մեր Մարգրիտը մեռելներուն, լեշերուն մեջեն ելեր էր, տեսել է, որ մարդ չիկա, փախեր, էկեր էր, մեզ գտավ:

Հայ կնիկները թաքնված էին թփերուն տակը: Մեկուն կրծքի երեխան սկսավ լաց ըլլալ, մայրը ըսավ՝ աս երեխան մեր բոլորին մահվան պատճառ պիտի ըլլա, սեղմեց կրծքին, որ չլացի, երեխային մեռցուց իր գիրկին մեջը: Շատերը իրենց Եփրատը նետեցին: Սուզեկի պես խորն է անոր ջուրը, կհիշեմ: Եփրատին մեջ ալ մեռան, խեղդվան: Մամայիս քույրը, մայրը, հարսը՝ ախպոր կնիկը գացին իրենց ջուրը գցեցին, որ թուրքին ձեռքը չանցնին: Թուրքերը մեզի աղվոր մը տանջեցին: Սաջերը կրակի վրա կդնեին, որ կարմրի, անոնց վրայեն կքալեցնեին, ոտքերնուն տակերը՝ դաբանները կայրեին և կամ կնալեին, տանջամահ կընեին:

Շատ խեղճացել էինք: Ոտքերուս տակը յարաներ էին եղել: Ուտելիք չկա, մտածեցի կոշիկներս ծախեմ, հացի դրամ ըլլա: Թուրք տղա մը կոշիկներս առավ: Ադ ձույն գիշերը երեք տարեկան քույրիկս երկար անոթի մնալեն վերջը ուտելիք կերավ՝ ուռավ, մեռավ: Շաոին տակը թաղեցինք: Գիշերը սոված չախկալները եկել, հողից հանել էին մեր սիրուն Հայկուշին, բզկտել, կերել էին...

Մինչև Ռաս էլ Այն գացեր ենք՝ Հալեպեն անդին: Մեզի սևկյետ պիտի ընեին, այսինքն, պիտի ջարդեին, ամմա հրաման էկավ. «Որուն ընտանիքին մեջը թուրքական բանակի զինվոր կա՝ անոնց ընտանիքը պիտի ազատվի կոտորածեն»:

Ասանկով ողջ մնացինք...

204 (204).
ՍԱՄՎԵԼ ՓԱՓԹՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ԷՍՔԻՇԵՀԻՐ)

Ծնվել եմ Զալղարաանում: Երբ 1915 թվին աքսոր մեզ հանեցին, ես կհիշեմ, թե ինչպես Էսքիշեհիրեն մեզ ոտքով տարին Սիվրիհիսար: Հետո՝ Հայմանա, հետո՝ Ղըրշեհիր, հետո ոտքով մեզ բերին Ղայսերի՝ Կեսարիա: Ճանապարհին ինչե՞ր ասես չտեսանք, ինչե՞ր ասես չքաշեցինք:

Կհիշեմ, աղջիկները և կանայք խաչ կհանեին, գետին մեջ կնետվեին, ադ ժամանակ նամու՛ս կար, բա՛ն կար...: Խարբերդի մոտերն էինք: Կհիշեմ, օր մը երկու զաբիթեներ իրար հետ գրազի բռնվեցան մի հայ հղի կնոջ վրա.

- Շու քարընընն քարնը նէսի՞ վար (Այս կնոջ փորում ի՞նչ կա):

- Գյավուր ղըր՝ քըզ օլուր (Գյավուր է՝ աղջիկ կլինի):

- Յօ՛ք, օղլան օլուր (Ո՛չ, տղա կլինի):

Գրազ եկան, իմ աչքի առաջ դաշույնով կնոջ փորը ողջ-ողջ ճեղքեցին: Ես ադ իմ աչքովս տեսած եմ:

Երբ Կեսարիա հասանք, մեզի բերին, լեցուցին մեծ սրահի մը մեջ: Կեսարիայի վալին եկավ հարցուց.
- Էրմէնի բաջիլա՛ր (հայ քույրե՛ր), արդյոք ճանապարհին ձեզ նեղություն տվող եղա՞վ:

Մեր հայ կանայք ալ ուժ առին, սկսան պատմել, թե ինչպես թուրք հսկիչ ժանդարմները գիշերները մեզի կծեծեին, մեր հայ աղջիկներուն ու հարսներուն կտանեին..., իսկ առավոտյան՝ հալից ընկած, ետ կբերեին...

Վալին ջղայնացավ, ըսավ. - Ամո՛թ, և ասոնք մեր ազգին զավակներն են, - ու հրամայեց իր ոստիկաններուն, - տարե՛ք այս ժանդարմներուն, զնդանը նետեցե՛ք: Դուք մոռացա՞ք, որ Անդրանիկը երբ կուգար, ծակե-ծուկ կմտնայիք: Էրմէնիլե՛ր (հայե՛ր), հեչ չվախնաք, կեսարիայի հայ հարուստները շատ են, ձեզի լավ կպահեն...

Եվ մեզ սկսան բաժանել հայերու վրա: Իմ ջահել մայրս ու մի եղբայրս մեռել էին ճամփին՝ հոգնությունից ու անոթությունից, մյուս եղբայրս ալ մեռեր էր տիֆից: Մեր ընտանիքեն մնացել էի միայն ես: Ինձի պես անտեր մնացած տղոցն ալ մտցուցին Ս. Կարապետ վանքի որբանոցը, որտեղ սովորեցի: Հետո մեզի տարին ամերիկյան որբանոցը՝ հոն ալ սորվեցա: Հետո յոթ տարի Անկարայում, թուրքական բանակում, որպես սպա ծառայեցի: Անկարայից անցա Երուսաղեմ: Մի արաբի մոտ աշխատեցա: Ադ բարի մարդն ինձ իր հոգեզավակը դարձուց: Արաբերեն կխոսեին անոր տունին մեջ: Հետո 1925-ին Երուսաղեմեն Հունաստան անցա: 1932-ին Հունաստանեն միևնակս, քարավանին մաս կազմելով, եկա Հայաստան: Գիտցած հայերենս գրեթե մոռցած էի... Հոս սկսա կամաց-կամաց վերհիշել...: 1935-ին ամուսնացա: 1942-ին ռազմաճակատ զորակոչվեցա: Երեք-չորս տեղեն վիրավորվեցա, բայց շարունակեցի կռվել հայկական 89-րդ դիվիզիայի կազմում: 1945 թ. հասանք Բեռլին: Մայիսի 9-ն էր: Ռայխստագի մոտ գերմանացիներ հավաքվեցին մեր շուրջը: Մի գերմանացի ծերուկ, մոտ ութսուն տարեկան, հարցրեց թուրքերենով. - Իչինիզդէ թյուրքջէ բիլէն յօ՞ք մը (Ձեր մեջ թուրքերեն գիտցող չկա՞):

Մեր մարտիկները չհասկացան: Ես մոտեցա, ըսի. - Բեն բիլիրիմ (Ես գիտեմ):

- Օղլու՛մ, սէն ան՞ միլլէթ սըն (Տղա՛ս, դու ո՞ր ազգից ես):

- Էրմէնի իմ (Հայ եմ):

- Նէ՞ դիօրսըն, ջանը՛մ, բու օրդուսը էրմէնի դը՞ր (Ի՞նչ ես ասում, ջա՛նս, այս հայկակա՞ն գունդ է):

- Հէ՛, էրմէնի օրդուսու դըր Թամանյան 89-րդ դիվիզիա (Այո՛, հայկական գունդ է՝ Թամանյան 89-րդ դիվիզիան է):

- Գէլմէնիզ ան էրդէ՞ն (Որտեղի՞ց եք եկել):

- Էրմէնիստան (Հայաստանից):

- Էրմէնիստան վա՞ր մը (Հայաստանը կա՞ արդյոք): Հէփսի էրմէնիլէրի քէամէդի՞լէր (Բոլոր հայերը չկոտորվեցի՞ն):

- Էրմէնիստան հէլբէ՛թ դէ վար (Հայաստան իհարկե՛ կա):

- Սէն թյուրքջէ նա՞սը բիլիրսին (Դու թուրքերեն ինչպե՞ս գիտես):

- Բէն Անկարադա եդի սէնէ զաբիթ օլմուշ ըմ թուրք օրդուսը (Ես Անկարայում թուրքական բանակում յոթը տարի սպա եմ եղել):

- Ուրեմն եկել եք ձեր վրե՞ժը լուծեք գերմանացիներից: Ձունքի բիզ սէբէբ օլդուք (քանի որ մենք պատճառ եղանք) ջարդին, արյունահեղությանը: Ես ալ ադ ժամանակ գերմանական բանակի զինվոր էի Թուրքիայում: Հոն ալ թուրքերեն սորվեցա...

Է՛, ո՞րը հիշեմ, ո՞րը պատմեմ, ես ալ չգիտեմ:

Բեռլինի փողոցները մաև էինք գալիս՝ առոք-փառոք, աղջիկ մը պառավի հետ կխոսեր, ինձի տեսնալուն պես ժպտալով ծեր կնոջս ըսավ. - Տե՛ս, աս երիտասարդը ինձի փրկեց:

Ես հիշեցի այդ հրեշտակի պես աղջկա դեմքը: Մի քանի օր առաջ շենք մը մտել էի՝ ավտոմատը ձեռքիս, շենքը կործանված էր և ամայի: Տուն մը մտա, խալի մը կախված էր պատեն, մտածեցի՝ պոկեմ... Դու մի ըսեր՝ ետևը դուռ է եղեր... բացի, հրեշտակի պես աղջիկ մը (էդ աղջիկն էր) վախեն կդողար, ինձի տեսնելով՝ ավելի վախնալ-դողալ սկսավ, որ ուր որ է իրեն պիտի սպանեմ, ըսավ. - Նի՛խտ, կամարա՛տ, նի՛խտ, կամարա՛տ (Ո՛չ, ընկե՛ր, ո՛չ, ընկե՛ր. այսինքն՝ մի՛ սպանիր ինձ, ընկեր): Ես մեղքցա անոր, շալակս առի, սանդուխներեն վար տարի: Ահա ադ աղջիկն էր, որ մատով ինձ ցույց կուտար պառավին՝ որպես իր փրկարարին: Է՛, շատ ծանր օրեր, ամիսներ, տարիներ անցուցինք՝ ասդին-անդին, սոված-ծարավ, վիրավոր-հիվանդ, բայց ողջ-առողջ վերադարձանք: Ադրբեջանցիները սաբոն կուտեին, որ հիվանդ ձևանան և բանակեն ազատվին:

Մեր հայկական դիվիզիայեն շատերը զոհվեցան: Երբ հասել էինք Ֆրանկֆուրտ գետի մոտ, Ստա-

լինը հրաման բրավ, որ հանգստանանք: Մեր հրամանատար Նվեր Սաֆարյանն բսավ. - Ի՞նչ է, հասնեմ էնտեղ՝ հանգստանա՞մ, չմտնա՞մ, քշե՛ք, տղե՛րք, մտե՛ք…:

Սաֆարյանը լավ մարդ էր, երբ տղաներեն մեկը կփնթփնթար, որ պատերազմը երկար տևեց, Սաֆարյանը, փոխանակ կոպիտ հրաման մը արձակելու, կըսեր. - Ճի՛շտ է, տղանե՛ր ջան, հոգնել եք, բայց Հայաստանի դռան բանալին կորցրել են, դռները փակ են, մեզ չեն ընդունում…

Իսկ երբ հաղթանակը եղավ, բսավ. - Ուրախացե՛ք տղե՛րք, Հայաստանի դռան բանալին գտնվել է, մեզ տու՛ն են կանչում…:

Օր մը Հակոբիկ թոռս եկավ սենյակս, տեսավ նստած կուլամ, բսավ. - Պապի՛կ, ինչու՞ կուլաս…

Ըսի. - Է՜, բալա՛ ջան, անցյալս միտս ընկավ, կուլամ…

Է՜, ինչե՛ր տեսանք, ինչե՛ր անցուցինք, սա միայն իմ կյանքը չէ, սա հայ ժողովրդի ճակատագիրն է…

205 (205).
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1902 Թ., ԷՍՔԻՇԵՀԻՐ, ՅԱՅԼԱ Գ.)

Հայրս զբաղվում էր հողագործությամբ և շերամապահությամբ: Այդ ժամանակ սուլթան Համիդի թագավորության միապետական իշխանությունն էր, որը տևեց մոտ երեսուն տարի: Արևմտյան Հայաստանի նահանգներում՝ Մուշ, Վան, Էրզրում, Երզնկա, Անատոլիա, Կիլիկիայում՝ Հաճըն, Զեյթուն և այլ տեղերում, միշտ ճնշում էին ու հայերին կոտորում, հատկապես 1894-96, 1909 թվերին:

Այդ թվերին հայերը ստեղծել են անլեգալ կուսակցություններ, որպեսզի հայերի պաշտպանությունը կազմակերպեն, բայց այդ կազմակերպությունները միջոցներ չունեին, ցրված էին, նաև չկար հայկական պետականություն:

1908 թվին, երբ նոր սահմանադրություն ընդունվեց, երիտթուրք կուսակցությունը գլխավորում էին Թալեաթը, Էնվերը, Ջեմալը: Դոկտոր Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը և հազարավոր երիտասարդ թուրքեր 1908 թ. կառավարության գլուխ անցան, կազմակերպեցին պառլամենտ, իսկ սուլթան Ռեշիդին թագավոր դրին, բայց՝ միապետական իրավունքներից զրկված:

Այդ նոր կուսակցության լոզունգն էր «Կեցցե՛, սահմանադրությունը. արդարություն, հավասարություն, ուրախ լինեն բոլոր ազգերը»: Այդ լոզունգը ոգևորեց նաև հայերին, և հայերը օժանդակեցին Իթթիհատ վե թերեքիի կուսակցության ղեկավարներին, որոնք հայերին ազատություն տալու խոստումներ էին շռայլում դաշնակցական և հնչակյան կուսակցության կազմակերպություններին: Բայց մեկ տարի չանցած՝ 1909 թ. Ադանայի հայերի ջարդը կատարեցին: 1912 և 1913 թթ. սկսեցին դաշնակցական և հնչակ կուսակցության անդամներին ձերբակալել ու բանտարկել:

Ես հիշում եմ, 1913 թ. գարնան մի կիրակի առավոտ մեր գյուղը շրջապատեցին զինված զինվորներ՝ իրենց հրամանատարով: Նրանց հետ էր նաև քաղաքապետը՝ ժանդարմներով: Գյուղի բոլոր տղամարդկանց հավաքեցին ու եկեղեցում բանտարկեցին: Մեր գյուղը հարյուր քսան ընտանիք էր, բոլոր տները մանրամասն խուզարկեցին, դպրոցը և եկեղեցին, բողոքականների ժողովարանը, բայց ոչ մի բան չգտան: Գյուղի առաջավոր մարդկանցից մի քանիսին կանչեցին իրենց մոտ, զրուցեցին, քննեցին, համոզվեցին, որ մեր գյուղում իրոք ոչ մի դաշնակ, հնչակ չկա, հետո բաց թողին բանտարկվածներին, պահանջեցին կերակրել զինվորներին և գնացին:

Իթթիհատ վե թերաքի կուսակցության կոմիտեն գաղտնի նիստ է գումարում՝ Թալեաթի նախագահությամբ, որտեղ մասնակցում էին Էնվերը, դոկտ. Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը և ուրիշներ, որոշում են ընդունում Թուրքիայում ապրող հայերին բնաջնջել, և այդ նիստում մշակում են բնաջնջման ծրագիրը՝ չթողնել ոչ մի հայ, սկսած նորածին երեխայից մինչև ամենավերջին ծերերը: Այդ կոմիտեի նիստում զեկուցողն էր դոկտ. Նազըմը: Նա իր զեկուցման մեջ նշում է. «Ես Թուրքիան կենդանացնելու համար ձեզի ընկեր, եղբայր եղա, միայն թուրքն է ապրելու այս հողի վրա՝ անկախ, ինքնիշխան. ոչ թուրք տարրերը թող ջնջվին, ո՛չ մի հայ. ջնջե՛լ բոլորին»: Նույնանման իր նյութում դոկտոր Բեհաեդդին Շաքիրը առաջարկում է բնաջնջել բոլոր հայերին՝ նորածնից մինչև ծերը: Այդ որոշումը պետք է սուլթան Ռեշիդը ստորագրեր, բայց քանի որ Թալեաթը կասկածում էր, թե Ռեշիդը կստորագրի, նա կապվեց գերմանական դեսպանի հետ, որ նա մի քանի րոպե առաջ գնա թագավորի մոտ: Եվ նրա ներկայությամբ Թալեաթ փաշան տարավ այդ գաղտնի ժողովի որոշումը, որը գերմանական դեսպանի ներկայությամբ և նրա ազդեցությամբ ստորագրել են տալիս, որով էլ 1915 թ. ապրիլի 24-ին ի կատար ածվեց հայերի կոտորածը:

Ես սովորում էի գյուղի ծխական դպրոցի չորրորդ դասարանում, երբ 1914 թ. Թուրքիայի կուսակցության կողմից փակ նամակ բաժանեցին բոլոր գյուղերի մուխտարներին: Իմ հորեղբայրը մեր գյուղի տանուտերն էր, ինքն էլ ստացավ այդպիսի փակ նամակ, որը պատվիրված էր խստիվ պահել փակի տակ և չբացել:

1914 թ. մայիսին Էսքիշեհիրից չորս ժանդարմով եկավ ժանդարմների պետը, պահանջեց այդ փակ նամակը, որը լավ պահել էր հորեղբայրս: Նամակի անկյունները ստուգեցին, որ բացված չըլլա: Նամակի չափերը՝ հիսունով յոթանասուն սանտիմետր էր: Հորեղբորս վերցրին իրենց հետ և գնացին եկեղեցիի մոտ: Մեր եկեղեցին գյուղի մեջտեղն էր, և չորս կողմը ազատ հրապարակ էր: Գյուղի ժողովրդին հավաքեցին, և նվագողներով, դավուլ զուռնայի նվագի տակ ժանդարմի պետը բաց արեց փակ նամակը և կպցրեց եկեղեցիի պատին: Այն կարմիր գույնի էր, մեջտեղը թուրքական գերբն էր՝ զենքով շրջանակված, տակը մեծ տառերով գրված էր. «Սեֆերբերլիք», որով հայտարարվում էր երկիրը ռազմական դրության մեջ: Քանի որ Թուրքիան մտնում էր համաշխարհային պատերազմի մեջ, հայտարարվում էր քսան տարեկանից մինչև քառասունհինգ տարեկան տղամարդկանց զինակոչ: Այն ժամանակ առանձնապես առաջին հերթին հայերին տարան զինվոր: Իմ հորը նույնպես տարան զինվոր:

1915 թ. ապրիլի 24-ին գործնականում կատարվեց հայերի բնաջնջումը: Հուլիսի 3-ին Էսքիշեհիրից մեր գյուղը եկան հարյուր հիսուն հոգի ժանդարմներ և ամբողջ գյուղի բնակիչներին՝ ծեր ու երեխա, հանեցին աքսոր: Ժանդարմները և շրջակայքի թուրք գյուղացիները թալանում էին հայերի ունեցվածքը: Կանայք, երեխաները և ծերերը լալով, ողբալով հասանք Սաքարիա գետի աջ ափին Իգդիր անունով մի թուրքական գյուղ, իսկ ժողովրդի մեծ մասը անցավ գետի ձախ ափը՝ Մայիսլու գյուղը:

Ես այդ ժամանակ տասներեք տարեկան էի և լավ հիշում եմ, մեր գյուղում տասնմեկ ընտանիք բողոքականներ կային, որոնց նույնպես այդ օրը աքսոր էին հանած, երբ Իգդիր գյուղից հրաման եկավ, որ բողոքականները հետ վերադառնան իրենց տունը և տիրանան իրենց ապրանքին: Հաջորդ օրը տասը բողոքական ընտանիքներ վերադարձան գյուղ, իսկ մենք շարունակեցինք մեր ճամփան: Մենք հասանք մինչև Էսքիշեհիր, իսկ մյուսներին տարել էին Արաբիա և այնտեղից Դեր Զոր՝ կոտորելու: Նրանք հարյուր ընտանիք էին, որոնցից միայն չորս-հինգ հոգի էին փրկված: Մենք մնացինք Էսքիշեհիր: Մեզ ուղարկեցին Կոնիա, որը մեծ քաղաք էր: Այնտեղ մնացինք մեկ ամիս, բաց դաշտում: Ես միշտ գնում էի գնացքի կայարանը:

Մի օր կայարանում գնացքի միջից ձայն լսեցի, որը ինձ էր կանչում: Տեսա՝ հայրս էր: Հազիվ հարցրեց, թե մենք ու՞ր ենք, ես ասացի, որ բոլորս Կոնիայում ենք: Գնացքը շարժվեց: Ես այլևս երբեք չտեսա իմ հորը:

Մի քանի օր հետո, օրվա կեսերին մի խումբ ձիավոր ժանդարմներ եկան մեր բնակած վայրը և առանձնացրին մոտ երեք-չորս հարյուր ընտանիք, մոտ հազար երկու հարյուր հոգի կլինեի, մեզ քշեցին: Երեկոյան մութն ընկավ, բայց մեզ հանգիստ չտվեցին: Մոտեցանք մի գետի ափին, չթողին, որ ջուր խմենք: Փոքր երեխաներ, ծերեր չէին կարող քայլել, ուժասպառ էին, մահամերձ վիճակում թողնում էինք տեղում, իսկ ժանդարմները մի քիչ սպասում էին նրանց մոտ, ով որ ուժ ուներ՝ ծեծելով բերում, խառնում էին թափորին: Այդ դրությունից ելք գտնելու համար ժողովրդից մի քանի մարդիկ փող հավաքեցին ու տվին ժանդարմների պետին, որ մեզ հանգստի իրավունք տա: Հետո մենք շարունակեցինք, ինը օր ճանապարհ գնացին և հասանք Պոզկր գյուղաքաղաքը, որը մի ձորի մեջ էր: Իհարկե, ճանապարհին մահացող ու կորածներ եղան, բայց քանակը չեմ կարող ասել:

Մենք չէինք իմանում՝ մեր ճակատագիրը ինչ է լինելու: Մյուս օրը եկան հիսուն-վաթսուն տարեկան մարդկանց առանձնացրին, մեզ էլ հետը և ասին, որ գյուղերն են ղրկելու: Մեզ հետ մի ընտանիք կար, որոնց տղայի անունը Ռուբեն էր: Նրա հետ մեզ հրամայեցին գոմերը մաքրել, իսկ մայրս նրանց տնային գործերն էր անում: Հետո դարձա այդ գյուղի չոբանը, իսկ հետո՝ գյուղի մոլլայի բատրակը:

Մոլլայի մոտ ձմեռվա աշխատանքս էր անասուններին կերակրելը, ջրելը, գոմ մաքրելը, եզներին խնամելը, իսկ գարնանը և աշնանը՝ վար կանեի եզան գութանով, որի համար առավոտյան լուսաբացին էի վեր կենում, եզներին կերակրում, գնում էինք արտը վարելու, իսկ ամռանը, բերքահավաքի ժամանակ, հանգիստ չունեինք: Ցորենը, գարին հնձում էինք ձեռքի մանգաղով, լուսաբացից մինչև մութն ընկնելը: Այդ հնձած ցորենն ու գարին եզան կամով էինք ծեծում: Գիշեր ու ցերեկ աշխատում էի, ամենածանր ամիսներն էին:

1917 թ. ամառվա վերջին ամսին Թուրքիայի թագավոր սուլթան Ահմադ Ռեշիդը մահացավ: 1918 թ. գարնանը Գերմանիան և Թուրքիան պատերազմից պարտված դուրս եկան: Ես դուրս եկա մոլլայի մոտից, նաև մայրս: Վարձեցինք եզներով սայլ ու վրան լցրինք մեր վաստակած ցորենի տոպրակները, շարժվեցինք դեպի Ղարաման: Զինադադար եղավ, մեզ թույլ տվեցին գնալ մեր գյուղերը: Մենք գնացքով հասանք Էսքիշեհիր: Մեր գյուղի հարյուր քսան ընտանիքից մնացել էր քառասուն ընտանիք: Իմ չորս ընտանիքներից մնացել էր երեք հոգի:

1919 թ. փետրվարին նոր կառավարություն կազմըվեց, ընտրվեց Քեմալը: Նա ժողովրդից վերցրեց զենք, ձի, հագուստ, ուտելիք: Նա իր հակառակորդներին ճըշնեց և Անկարան մայրաքաղաք հայտարարեց:

Քեմալական իշխանությունները եկան տիրացան դաշնակցային պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի զինվորների թողած ռազմամթերքին:

1920 թ. վերջերին հունական պատերազմը սկըսվեց Քեմալի դեմ, Իզմիրի և Բուրսայի ճակատով առաջ շարժվեց: Իսկ Մուստաֆա Քեմալը՝ իշխանությունն իր ձեռքը առնելուն պես չեթեական խմբերի կազմակերպման հետ, 1919 թ. կազմակերպեց պաշտոնական զինվորական ծառայության թուրքական բանակ:

Հունական զորքերը Բուրսայի ճակատով հասան Բիլեջիկ, իսկ Իզմիրի կողմից՝ մինչև Աֆիոն-Գարահիսար: Այդ շրջանում մինչև Անկարա բնակվող հայերին ու հույներին տեղափոխեցին դեպի արևելքի խորքերը՝ Խարբերդ և Դիարբեքիր:

1921 թ. փետրվար ամսի վերջերին Էսքիշեհիրից ժանդարմներ եկան մեր գյուղը՝ տղամարդկանց նույնպես աքսորելու: Ես և մի քանի տղամարդիկ, մեր հարևան Մարտիրոս անունով մի տղա, որը իմ հասակին էր, գիշերը փախանք անտառ: Առավոտյան չլսացած՝ տղամարդկանց հավաքել էին տներից ու տարել Էսքիշեհիր: Մեզ նման անտառ փախածներ շատ կային: Բայց մի քանի օր հետո իմ մայրը և մեր դրացի Մարտիրոսի մայրը եկան ասին, որ եթե մենք չհանձնվենք, իրենց պիտի աքսորեն: Մենք գնացինք հանձնվանք: Մեզ քշեցին Սիվրիհիսար: Մեզ տարին կառավարական

շենքը, խուզարկեցին, հետո տարին հայկական եկեղեցին: Մենք՝ հայերս, վաթսուն-յոթանասուն հոգի էինք, իսկ եկեղեցում կար մոտ հինգ հարյուր հոգի աքսորյալ հայ և հույն: Նույն օրը երկու հարյուր հոգի դուրս հանեցին ու տարան, երկու օր հետո էլ մեզ հանեցին և քշեցին դեպի արևելք: Մենք կլինենինք երկու հարյուր հոգի: Երկու օր հետո հասանք Համոնալի մի զորանոցը, որտեղ մեզ երկու-երեք օր բանտարկեցին, հետո վաթսուն հոգու ջոկեցին, տարին գոմերը: Ժանդարմների պետը մեզ տարավ, որ իրեն համար տուն շինենք:

Երբ հունական զորքերը հարձակվեցին Աֆիոն-Գարահիսարի վրա, մեզ աքսորեցին դեպի Բայլու քաղաքը: Մեկ էլ անտառից կրակ բաց թողին. դրանք չեթեներն էին, որ զինաթափ արեցին ժանդարմներին: Նրանք մի աղյալ փոեցին, մեզ ասին՝ ով ինչ ունի՝ վրան գցի, ում մոտ ոսկի մնա՝ կգնդակահարենք: Հետո մենք անցանք Ենիխան քաղաքով, Սվազով: Սվազում կար հայկական եկեղեցի, որտեղ երկու հարկանի մի շենք կար՝ առանձին սենյակներով: Ամեն մի սենյակում ութ-տասը հոգի մերոնց տեղավորեցին: Տեղի առաջնորդ Սարգիս վարդապետը հավաքեց քաղաքի հայ բնակիչներին ու հանձնարարեց նրանց, որ մեզ աշխատանք տան, որ դրամ ստանանք: Հայերը մեզ կերակրում էին, մենք վաթսուներկու հոգի էինք: Բայց հետո տարան Թոքաթ, որտեղ շատ հույն տղամարդիկ կային աքսորված: Մեզ տանում էին շրջակա ճանապարհները շինելու:

Մի օր, հոկտեմբեր ամիսն էր, Սվազից քսան-երեսուն ձիու փորղոլուններով հայ տղաներ եկան, որոնք Սվազի ամերիկյան կոլեջի տղաներն էին: Ասեցին, որ թուրքական կառավարությունը թույլ է տվել բոլոր հայ որբերին Ամերիկա տանել: Ես գնացի Սվազ, ընդունվեցի որբանոց: Անմիջապես նամակ գրեցի իմ ընկերներին՝ Հովսեփին, Մարտիրոսին և Հակոբին, որ ես Սվազի հայկական որբանոցի սան եմ: Նրանք էլ եկան:

1922 թ. ամառվա վերջին և աշնան սկզբին թուրքական զորքերը ճեղքեցին հունական ռազմաճակատը, վաթսուն հազար հույն զինվոր ոչնչացրին և շատ գերի վերցրին, որոնց Անկարայի փողոցներով անցկացրին որպես հաղթանակի ցույց: Թուրքական սահմաններից դուրս քշեցին հույն զինվորներին, որոնց մի մասը ծովը թափվեց Իզմիրի, Բալիքքեսերի և Մուտանիայի ափերին: Մեզ թույլատրեցին մեկնել արտասահման: Հասանք Սամսուն, նավակներով հասցրին Նավին, որը անգլիական Կարմիր խաչի նավ էր, հետո փոխադրվեցինք հունական մի նավ, որը մեզ տարավ Փիրեյա: Մեզ տեղավորեցին վրանների տակ: Այնտեղ ես տիֆով հիվանդացա: Ինձ հիվանդանոց տարին: Լավացա: Սկսեցի աշխատել մի ագարակատիրոջ մոտ: Հետո գնացի Սալոնիկ: Իմացա, որ տատիկս, քույրս և եղբայրս գտնվում են Գավալա քաղաքում: Գնացի Գավալա: Գտա տատիկիս, քրոջս, եղբորս, հորեղբորս, որը գտնվում էր Սիրիայում: Աշխատանքի անցա ծխախոտի գործարանում: Երկու սենյականոց տուն շինեցի փայտից: Քրոջս և փեսայիս բերեցի մեզ մոտ:

1925 թ. Աթենք եկավ Դանուշ Շահվերդյանը, և ցուցակագրեցին Սովետական Հայաստան փոխադրվելու համար: Եկանք նախ՝ Դավալու, հետո՝ Երևան, Բութանիա թաղամասը: Սկսեցինք աշխատել ծխախոտագործարանում: 1930 թ. ամուսնացա, ունեցա չորս երեխա: Բոլորն էլ սովորեցին, բարձրագույն ուսում ստացան: 1931 թ. ինձ ընտրեցին քաղսովետի դեպուտատ և նշանակեցին Բութանիա թաղամասի լիազոր: Նոր թաղամասում չկար խմելու ջրի ծորակ, էլեկտրականություն, ռադիո: Իմ ջանքերով և Աղասի Խանջյանի օգնությամբ քսան օրում կարգավորվեց թաղամասը: 1940 թ. հրավիրեցին ինձ Լենինգրադ՝ երեք ամսով վերապատրաստման կուրսերի: Վերադարձա, նշանակվեցի ծխախոտի գործարանի ցեխի պետ և արհմիության նախագահ: 1967 թ. գործարանը ստացավ նոր մեքենաներ, որոնք արտադրում էին նոր սիգարետներ: 1973 թվից թոշակի եմ անցել: Ստացել եմ մի շարք շքանշաններ և մեդալներ:

206 (206).
ՍԱՌԱ ԲԵՐԲԵՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ԷՍՔԻՇԵՀԻՐ)

Մենք շատ մեծ գերդաստան էինք, Էսքիշեհիր կմնայինք: Քառասուն հոգով սեղան կնստեինք: Հիմա միանգամ մնացած եմ: Մեր գլխին եկած-անցածը հեքիաթներում մեջ չըլլար: Մեզի տունեն-տեղեն հանեցին: Հայրիկներուն տարին մեզանից: Մեզի ալ աքսորեցին: Ճամփան սովա՜ծ-ծարա՜վ, ոտքով կքալեինք, չէր լըմընանար...: Ջիչ մը ետ մնայիր, թուրք զաբիթները կըխփեին: Ճամփին երկու կողմը մեռելներ ինկած էին, վրաներնին կոխկոտելով կանցնեինք, մե՜ղք ունի, ամմա ի՞նչ կրնայինք ընել, ոտք դնելու տեղ չիկար, ամեն տեղ մեզմե առաջ գացողներուն դիակները փռված էին: Մեր ալ ուժերնիս չէր պատեր, որ առաջ էրթայինք կամ ետ մնայինք՝ մեզ կխփեին: Մի քիչ կերթայինք, նորեն կխփեին... ասանկով աքսոր քշեցին, ճամփին էկան մեզ սոթդեցին, մորե մերկ մնացինք: Մամաս լաթ մը առջևը կապեց, որ գոնե ամոթը գոցե: Մեկ թաս ջուր ուզեինք նե, ոսկի մը տուր՝ կուտանք, կըսեին... Ճարահատ ցեխաջուր, շեռաջուր, ինչ գտած ենք՝ խմած ենք: Ինդո՞ր է, քի մեռած չենք: Մայրերուն աչքին առաջը զավակներուն կսպանեին, զավակներուն աչքին առաջը մայրերուն կսպանեին... երազի պես կհիշեմ, բայց կհիշեմ:

Հետո մենք Իզմիր անցանք: Մամաս շնորհքով կին էր, վերջը-վերջը բժիշկի մը քով սկսավ աշխատիլ. սենյակը կավլեր-կսրբեր, վերքերը կկապեր, մեզ ալ կպահեր: Մեկ ալ լուր եկավ, քի մամայիս ախպարը եկել է: Մամաս ուրախ-ուրախ գնաց, մեկ ալ տեսեր էր, քի դիակն են բերած: Խեղճ մայրիկս նորեն սուգը մտավ, մենք պզտիկ ենք դեռ, սովա՜ծ, ծարա՜վ, ոջլոտվա՜ծ, ան՜ոթի: Մամաս շինության վրա սկսավ հող կրել, պըզտիկ զամբյուղով մը կկրեր, շահած դրամովը մեզ կպահեր:

Հետո լուր եկավ, որ հայրիկս բանտարկյալներուն հետ բերված է մեր քաղաքը: Կերթայինք բանտի դուռը: Պզտիկ լուսամուտ մը կար, մի կտոր հաց կերկըցընեինք, հազար ձեռք կերկարեր: Այնքան, որ անոթի էին: Վերջը, երբ հույնը եկավ, հայրս բանտեն դուրս եկավ, մեզի գտավ: Հետո Հունաստանեն Հայաստան եկանք: Հոս ալ շատ դժվարություն տեսանք՝ պատերա՜զմ, սո՜վ: Է՛, ո՞րը ըսեմ, ո՞րը պատմեմ...

207 (207).
ՖԱՐՆԸՄ ԲՈՒՐՍԱԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ԷՍՔԻՇԵՀԻՐ)

Երբ մեզի աքսոր հանեցին, ես երեխա էի, տիկնիկը ձեռքս էր: Թուրքերը մեզ քշեցին, տարին մինչև Կոնիա: Դեր Զոր գացողներին առանձնացրել էին, որ ճամփա հանեն: Մամաս հիվանդ էր: Հայրս ալ հաց կբաժներ գաղթականներուն: Հայրս գնաց, խնդրեց, ըսավ. - Կինս հիվանդ է, չի կրնար քալել:

Ըսել էին. - Լա՛վ, տար ջրի այն կողմը:

Կհիշեմ, հայրս շալկեց բավական շիշկո մորս և անցուց, լողալով հասցուց գետի այն կողմը: Աս-ան կողմեն ձայներ լսվեցին. - Ա՛յ մարդ, ամո՛թ է:

Հայրս ըսավ. - Ամոթ-մամոթ չիկա՛, հոգիներնիս պիտի ազատենք:

Ես ութը տարեկան էի:

Եղբորս զինվոր տարին, գնաց ու չեկավ: Բոլորին քշեցին Դեր Զոր:

Մենք փրկվեցինք: Հետո ալ հույնի զինվորը պատերազմ արեց թուրքի հետ: Թուրքը ըսավ. - «Հույնը, հայը վտանգավոր են», - հավաքեց, որ սպանի: Հորս տարին: Հարցուցեր են. - Ո՞վ փող ունի:

Հայրս մինչև գրպանեն հանել է փողը, սպանել են:

Մեկ ալ տեսանք՝ թուրքը բոլոր հայերին Բուրսայեն քշեց Ենջա: Վը՛զ-վը՛զ գնդակները կթռնեին, կըխփեին, ժողովրդին չէին թողնում բարձրանա նավը: Ջենջիլը (խարիսխը) ինկած չէր, որ նավը շուտ փախչի թուրքեն: Ով ուզում էր նավ բարձրանալ, հո՛պ ջուրը նետվում էին՝ լողալով բարձրանում էին նավ: Նավի սանդուղքները պարանից էին, ես վախեցա, ինձ օգնեցին՝ վեր ելա: Ով էլավ, փրկվավ: Թուրքը կրակեց, նավը քաշվեցավ:

Էնքա՜ն անասուն, էնքա՜ն ունեցվածք, ամե՜ն ինչ մնաց թուրքին: Մերկ, տկլոր հոգիներնիս ազատեցինք: Բերանդ ք...քնեմ, թու՛րք:

Վերջը Հայաստան եկանք, որ թագավոր ունենանք. էստեղ խոսել կվախնայինք: Բա՜ չկար ուտելու: Սովից կոտորվանք: Երեք տարեկան աղջիկ մը ու չորս տարեկան տղա մը ունեինք՝ մեռան: Մարդս ալ մեռավ: Մնացի մենակ:

208 (208).
ՀԱՅԿՈՒՀԻ ՉԵՇՄԵՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԷՍՔԻՇԵՀԻՐ)

Իզմիրի աղետի ժամանակ հույն զինվորներուն թուրքերը քշեցին: Մենք մնացինք թուրքի բերանը: Ծովեզերքը՝ միլի-միլիոն մարդ ջուրը կնետվեին, որ ազատվին: Մամաս չորս աղջիկ ուներ: Բոլորիս ալ նետել է ամերիկյան նավի մը մեջ: Նավը մեզ բերավ, հասցուց Պոլիս, բայց ոչինչ չունենք՝ մերկ ու տկլոր ենք: Դպրոց պիտի էրթանք, ոտքերնիս կոշիկ չկա: Մայրս ձեռագործ ընելով մեզի պահել է, հետո բերել է Հալեպ: Հալեպում պապայիս գտանք: Ան քանի տարի բանտարկված ու աքսորված էր:

209 (209).
– ՍԻՆԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1912 Թ., ԷՍՔԻՇԵՀԻՐ, ՄՈՒՐԱԴՉԱՅ)

Ես երկրորդ գաղթն եմ հիշում: Երկրորդ անգամ տեղահան արեցին մեզ ու տարին Էսքիշեհիր: Մեզ՝ մորս, տատիկիս, երկու քույրերիս և մորաքրոջս աղջիկներին տարան: Քարավանի վերջից մենք էինք գնում: Ես տատիկիս ձեռքը բռնած էի: Թուրք ոստիկան մը մոտեցավ ըսավ. - Թող դրա ձեռքը:

Տատիկս ըսավ. - Ես ո՞նց կարող եմ թողնել իմ թոռան ձեռքը:

Ոտքով մենք հասանք Սեբաստիա: Ալիս գետի ափին մեզ հանգիստ տվեցին: Մայրս ինձ ու իմ երկու քույրիկներին աղքատախնամի որբանոցը տարավ: Մեր գյուղից տասներկու որբեր կային այնտեղ: Մենք չէինք հասկանում, թե ինչու էինք որբանոցում: Օրիորդ Աշխենի ձեռքի տակ սովորում էինք նկարել Արարատ լեռը, բայց սնունդ չկար: Մի օր ընկերս ինձ ըսավ. - Արի, սուտ հիվանդ ըլլանք, թող մեզ լավ սնունդ տան:

Բերեցին բժիշկ: Մեզ ստուգեց, տարան առանձին սենյակ: Էնտեղ մի տոպրակ կար, մեջը չոր հացի

փշրանքներ: Որբանոցում ես քոս ընկա: Ինձ մերկացրին, լողացրին, ծծումբը քսեցին մարմնիս՝ չորացավ, ետքը լողացրին:

Մեզ տարան Սամսուն: Մեծահասակ տղաները գտան, որ եկեղեցու գավիթում թուրքերը լցրել են հայկական գրքերը, որ այրեն, բայց չեն հասցրել: Ես մի փոքր Աստվածաշունչ գտա, վերցրի ինձ: Հետո մեզ փոխադրեցին Հունաստան, Էտիսոս կղզին: Մենք բարձունքի վրա էինք: Տակառներ կային, ձիթապտուղ էինք հավաքում:

Հետո հայրս Բուլղարիայից փնտրել ու գտել է մեզ ու մորս: Միացանք ու միասին եկանք Հայաստան:

210 (210).
ՄԱՐԻ ՄԻՀՐԱՆԻ ՈՍԿԵՐՉՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1913 Թ., ԶՄՅՈՒՌՆԻԱ)

1922-ին, Իզմիրի աղետի ժամանակ, ես տասը տարեկանեն վեր էի, լավ կհիշեմ: Այդ օրը մենք տանն էինք: Մեյ մըն ալ սաստիկ լաց ու կոծի ձայներ լսեցինք դուրսեն: Դուրս վազեցինք, տեսանք մեր թաղը՝ Հայնոցը, կրակի տված են: Ամեն մարդ տուները ձգած՝ կվազեր դեպի քորնիշ՝ ծովեզերք: Մենք մամայիս փեշեն բռնած փախանք դեպի ծովեզերք: Ամբողջ հայերն ու հույները հավաքված էին անտեղ: Ալ լացուկոծ, իրարանցում, ետևը կրակ էր, առաջը՝ ջուր: Ի՞նչ պիտի ընեինք՝ չգիտեինք: Նավաճանգիստը շատ մը նավակներ կային, որոնք կրնային ծովին խորքը խարիսխ ձետած շոգենավերուն հասցնել մեզի, բայց թուրք նավավարները, զգալով մեր ձեղ վիճակը, միայն ոսկի էին ուզում:

Ալ ով ինչ ուներ՝ զարդեղեն, ոսկեղեն, հանում տալիս էին, որ իրենց կյանքը փրկեն: Բայց շատ նավավարներ ալ խային էին, երբ հայերուն ոսկեդրամները և զարդերը կառնեին, նավակ կնստեցնեին, նավակը հազիվ քիչ մը տեղ կերթար, առաջվընե բացված ծակեն ծովին ջուրը կլեցվեր նավակին մեջը, նավակը թերս կդառնար, լողալ չգիտցողը՝ կխեղդվեր: Ծովի վրա լիքը դիակներ էին: Քանի մը երիտասարդներ ջուրը ձետվեցան, բայց լողալ չգիտեցողը՝ ջուրը կկլլեր և կխեղդվեր:

Իմ Ծաղիկ մորաքույրիս տղան՝ Գառնիկը, որ հազիվ տասնյոթ տարեկան կըլլար, մեյ մըն ալ տեսանք ծովը ձետվեցավ ու սկսավ լողալ: Մենք բոլորս վախով կնայեինք, որ ադ խորունկ ծովին մեջը ինչպե՞ս պիտի լողար, բայց ան աղվոր կլողար: Լողալո՜վ, լողալո՜վ հասավ հեռուն խարիսխ ձետած իտալական նավուն, շոլլվեցավ կախված պարանին վրայով, բարձրացավ նավուն վրա, ինքզինքը ազատեց:

Մենք՝ քարափը կայնածներս, տեսանք, ուրախացանք, որ մեր Գառնիկը ազատվեցավ: Մենք քանի մը օր մնացինք հոն՝ բաց երկնքի տակ, հուսահատ վիճակի մեջ: Օրեր վերջ հունական նավ մը եկավ, մեզի տարավ Հունաստան՝ Փիրեյա: Հոն մեր Գառնիկին հանդիպեցանք: Ան պատմեց, որ շոգենավին ծխնելույզին մեջը մտեր է, գլուխին խըսիր գլխարկը գլխուն տակը դրեր է և ադ ձևով թաքնված հասեր է մինչև Փիրեյա: Ան ճարպիկ ըլլալուն շուտ մը գործ գտած էր, սկսած է քույրիա ծախել փողոցե-փողոց: Վերջը ան Եգիպտոս հաստատվեցավ և քանի որ աղվոր ձեռք ուներ՝ ոսկերիչ էր, պզտիկ խանութ մը բացավ, սկսավ աշխատիլ: Ան գրելու շնորհք ալ ուներ. «Ներգաղթը» անունով պիես մը գրեց, և ադ պիեսը բեմադրվեցավ հայրենադարձության տարիներուն, հասույթն ալ հատկացվեցավ Հայաստանի բնակարաններու շինության և ներգաղթի ֆոնդին:

30-ական թվերուն եկանք Հայաստան: 1947-ին Գառնիկ Սվազլյանն ալ իր ընտանիքով եկավ Հայաստան: Մենք իրար գտանք, բայց ան շուտ մեռավ:

Երևանի Արաբկիր թաղամասում տուն շինեցինք, ամուսնացա, զավակներու տեր դարձա, թոռներու տեր դարձա: Հազիվ պիտի շունչ քաշեի, հիմա ալ աչքերս սկսան չտեսնալ, բայց իմ հարազատները ինձ շատ լավ կնային, փա՜ռք Աստծո:

211 (211).
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1901 Թ., ՅՈԶՂԱՏ, ՀԱՋԻ Գ.)

1915-ի հուլիսի վերջը խաղողը դեռ խակ էր: Զորումին պատկանող Հաջի գյուղի բոլոր հայ մարդիկը հավաքելե վերջ բանտարկեցին: Ես մոտավորապես տասնչորս տարեկան էի: Մեծ եղբայրս ինձմե երկու տարու մեծ էր և ինձ ազատ ձգած էր: Հայրս հիսունհինգ տարեկան էր, երբ բանտարկեցին, հորեղբայրս՝ քառասունհինգ տարեկան էր. Զորախ տարին դաշտերուն մեջ աշխատելու: Մեզի ըսին թե քանի մը օրեն ճամփա պիտի ելլեք: Մեր գյուղը՝ Հաջի գյուղը, երկու հարյուր հիսուն ընտանիք կար: Մեր ընտանիքը տասներեք հոգի էր: Մեծ հայրս, մեծ մայրս, հայրս, մայրս, հորեղբայրըս, կինը և երկու ընտանիքներուն զավակները:

Կառավարությունը մեզի երեք սայլ տրամադրեց: Հորս և հորեղբորս վիզը լալեով կապված ճամփա ելանք: Երբ Զորում հասանք լալեները հանեցին: Այսպիսով ճամփորդեցինք Մեսիթոզ՝ 31 կմ, Զորում՝ 50 կմ, Ալաջա՝ 53 կմ, Յոզղատ՝ 31 կմ, Օսման փաշա՝ 63 կմ, Թոզույեսերի՝ 242 կմ, Բողազլյան՝ 53 կմ, Էրիքիէթ՝ 11 կմ, Կեսարիա: Յոզղատ մեր կառքերը փոխվեցան: Սկզբի կառքերը Հաջի գյուղի կառապաններուն կը-

պատկանեին, այսպիսով անոնք ետ վերադարձան: Հոն հանդիպեցանք Սոնկուրլյու տարագիր հայերի մոտավորապես հարյուր հոգի, որոնցմե երկուքը քահանա էին, իսկ մնացյալը ամեն տարիքի այր մարդիկ: Իրիկնամուտին ոստիկանները եզները կապելու չվանները փոխ առին: Հետևյալ առավոտ չվանները վերադարձուցին արյունոտ: Բոլորս ալ գուշակեցինք, թե այդ չվաններով կախած կամ խեղդած էին տարագիր հայերը: Մեր կառապանը, տեղեկանալով պատահածը, կկրկներ. «Ալլահ բունդան մեմնուն քալմազ» (Աստված ասկե գոհ չի մնար):

Բողազլյան քաղաքեն դուրս հանդիպեցանք Բողազլյանի գայմագամը և Յոզղատի փոխ վալին, որոնք ոստիկանի ձեռքի թուղթը ստորագրեցին: Երբ Քըզըլըրմաղի կամուրջը անցանք, ոստիկան մը՝ թոփալ Գասպարը ետևեն հրացանազարկ ընելե վերջ, ձիուն վրայեն վար ձետեց և ձին առավ: Արդեն սկիզբեն ձին կուզեր, բայց Գասպարը չէր տար՝ ըսելով, որ կաղ ըլլալուն չէր կրնար քալել: Նույն իրիկուն, երբ քարավանը կանգ առավ Հոն Դեփե խանին առջևը, մեր հսկիչ ոստիկաններեն քանի մը հատը եկան և այր մարդիկը տարին խանին մեջ: Հոն հագուստները հանվեցնելե վերջ, մերկ ձգեցին: Քիչ վերջ զենքի պայթյուններ լսեցինք: Հետո ոստիկան մը եկավ մեզի ըսելու, թե՝ հանդարտեցեք, մի՛ վախնաք, վաղը բոլորը ետ կուգան:

Հետևյալ առտու ճամփա ելանք, պարզվեցավ, որ բոլոր այր մարդիկ սպանված էին: Ի միջի այլոց հայրս և հորեղբայրս ճամփուն վրա իրենց աչքին առջև պր. Էքմեքճյան Կարապետը և պր. Փափազյան Կարապետը ղամայով սպանված էին: Քիչ անդին գյուղացիներու հանդիպեցանք անոնք ըսին. «Եթե ճամփան շարունակեք՝ պիտի սպանվիք»:

Ինձի մեկը ուզեց տանիլ, մորս հարցուցի, ան ըսավ՝ ազատ ես որոշելու: Միայն թե եթե Աստված այս սև օրերուն վերջ տա, Ամերիկա երկու եղբայր և մեկ քույր ունիմ, զանոնց քով երթալ կուզեմ: Այսպիսով պզտիկ կերպասի վաճառականի մը քովը մնացի: Տիրոջս նպատակն էր զիս մահմեդականացնել, վերջն ալ իր աղջկան հետ ամուսնացնել:

Ամառը՝ ռամազանի ժամանակ, երբ այգի կերթայինք, ես խոշոր քարի մը վրա ելլելով էզան կըկանչեի: Ինձի կխնդրեին, որ իրենց համար ալ ես աղոթեմ: Քրիստոնյայի մը, որ մահմեդական է դարձած, աղոթքը ավելի ազդու կկատեին: Մեկ տարի հոն մնացի: Վերջը աղաս ինձի երեսունհինգ ղուրուշ տվավ, ես ալ քիչ մը խնայողություն ունեի, եղբորս և հորեղբորս որդոց հետ քալելով երկիր վերադարձանք: Երկու շաբաթեն հասանք: Մեզի այնպես կթվեր, որ մեր ծնողները մեզի հոն կսպասեն և թևերը բաց մեզ պիտի ընդունին: Հոն Էրզրումեն եկած թուրք մուհաջիրներ կային: Ո՛չ տուն, ո՛չ ծնողք: Կրկին զգացինք մեր ցավը: Մեր տունը դիտեցինք դուրսեն: Մեր նախկին թուրք դրացիները մեզ մեկ շաբաթ հյուրասիրեցին: Շաբաթ մը վերջ քալելով Մարզվան գացինք՝ ես, եղբայրս և զարմիկս:

Զարմիկս, եղբայրս, ես ալ ներկի ֆաբրիկայի մեջ աշխատանք գտանք: Մահմեդականությունը ընդունելուս համար ողջ մնացած էինք: Այսպիսով ապրեցանք մինչև 1918 զինադադարը, որմե վերջ վերադարձանք մեր Հաջի գյուղը և ետ առինք մեր տուները, մեր այգիները: Հոն մնացինք մինչև Ռեմալի գալը:

Տուն-տեղ ըլլալե վերջ ես ամուսնացա: Տարի մը վերջ տղաս՝ Աբրահամը ծնավ: Ես երկաթագործությամբ կզբաղեի: Մեր թուրք երեսփոխանը ոչ մեկ հայու թույլ չէր տար որ մոտակա գյուղերը երթալով գործ ընե: Այսպես ղալայիջի Օնիկը և կառապանը միայն մեր գյուղը կգործեին, ինչ որ բավական չէր:

Երեք տարի տուրք չառնելե վերջ ինձմե տասնութ բանկնոտ պահանջեցին: Ես ծախելով մյուս տունս և քսաներկու կտոր մշակելի հողերս ձգելե վերջ Պոլիս տեղափոխվեցա: Հոն ջաղացքի մը մեջ աշխատեցա, որուն տերը հույն էր, իսկ տնօրենը՝ հայ: 12 հուլիս 1925-ին Պոլիսեն ձավ առինք, կնոջս և տղուս հետ հասանք Մարսիլիա:

212 (212).
ԱՐՇԱԿՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1903 Թ., ՅՈԶՂԱՏ)

Ես փոքր էի: Հիշում եմ, մի օր մի դալալ եկավ, սկսավ պոռալ. - Ով մինչև տասնհինգ-տասնվեց տարեկան զավակ ունի՝ թող պատրաստվի:

Իրարանցումը սկսավ: Ըրին, դրին, հավաքվեցին: Մորքուրս ալ մի դուռ անդին կապրեր, ան ալ իր չորս ուխտներով միացավ մեզի: Լուսամուտները գոցեցինք, տունեն դուրս ելանք, հագած-կապած, գիտես քի քեբաբ ուտելու կերթանք կոր: Արաբաները բերին, մեզի մեջը լեցուցին:

Վեց օր գացինք Յոզղատի սարերը: Ջուր չկա, հաց չկա: Ժողովուրդին բերանը կչորնա...: Մեկ էլ մի ձիավոր էկավ, ըսավ. - Գյավուրլար ա՜ֆ գելդի սիզե (Գյավուրնե՛ր, ձեզ ներում շնորհվեց):

Մեր հայ միամիտ կնիկները սկսեցին ձիուն սըմ-

Ժանդարմաները վրա հասան, սկսան պոռալ, կանչել, մեզ իրարմե հեռացնել, - Իրար մի՛ խառնվեք, - կպոռան: Ադ հայերն ալ մեզմե բեթեր. աւոթի, սոված, վեց օր քայլել ենք և ալ՝ ծեծվա՛ծ, վիրավո՛ր…

Ադ իրարաևցումին մեջ մեզ մըն ալ մի սև ամպ եկավ մեզի ծածկեց: Ժանդարմները մեզ կորցրին: Մենք ադ հայերուն սկսանք օգնել. ով ինչով կրնար՝ պատառ մը հացի փշրանք, կա՛մ խոտ կուտայինք, կա՛մ հագուստնիս կպատռեինք աւոնց վերքերը կկապեինք: Չէինք մտածում, որ վաղը մեզի ալ ադ օրին պիտի ձգեն ադ անխի՛ղճ, անաստվածնե՛րը…

Սև ամպերը մեզմե հեռացան, ժանդարմները նորեն իրենց գործին անցան. մե՛կը խրբաջով, մե՛կը շըղթայով կմխթեն, որ առաջ էրթանք…: Մեզ տարին թուրքի տուներու մեջ մտցուցին, իբր պիտի հաևգըստանանք: Գիշերը մեզ վրա հարձակվեցին: Դուռները հաևեցին, սիլահներով մեզ վրա էկան: Մամայիս շորերուն մեջը ոսկիներ կային կարված, առին տարին, ինչ որ կար մնացած՝ մեզի թալաևեցին, մորե մերկ ձգեցին… Միաձանը, Շամրիկը, Օսաննան, ես ալ պզտիկ աղջիկ՝ ամենս գացինք մուրացկանության: Մեր ուևեցածը չտաևեին ևե, գոնե կծախեինք, մի կերպ կապրեինք… Շամրիկը շատ աւոթի էր, քանի օր բերանը բան չէր դրել. մի տուն էր գնացել, տեսել էր թուրքի կնիկը յոխա է էփում, աղջկա սիրտը կուզե: Շամրիկին կուտան, ան տաք-տաք կուտե, կուրծքերը կուտին, տեղն ու տեղը կմեռնի…

Մեկ ալ դալալ մը եկավ, ըսավ. «Հայդէ՛, գյավուր քէսմէյէ գիդէիմ. բալթա-քյուրէգ ալալըն, գյավուր քէսմէյէ գիդէիմ» (Շտապե՛ք, գյավուր մորթելու պիտի գրնանք, կացին-բահ վերցրեք, գյավուր մորթելու գնանք):

Միտքս կուգա ևե, սիրտս կկանգնի…

Այդտեղ թուրքական գյուղ մը կար: Թուրք կնիկները էկան, լացին մեր վրա էնենց, ոնց որ աղջևնին մեռել կա դրված:

Ադ վիրավոր հայերուն մորթելե առաջ աևոնց շորերը վրաևեն հաևեցին, որ մեջը կարված ոսկիները իրենց մնան: Թևենքեևները լցվել էին ոսկիևներով…

Ադ վիրավոր հայերուն տարին մորթեցին. մեզմե քիչ մը անդին՝ ձորին բերանը, հայերուն որ կմորթեին, թուրքերը գալիս ոսկի էին փնտրում մորթվածների վրա…

Մի հայու աղջիկ կար, Արշալույս էր աևունը: Ան երկար մազեր ուևեր հյուսված: Արշալույսը շատ աղվորիկ էր, աևոր ալ տարին վիզը կտրեցին, մազն ալ ձեռքին փաթթած էկավ ժանդարմը, բերավ մեր առջև գցեց Արշալույսին գլուխը, ըսավ. - Ցա՝ թուրք պիտի ըլլաք, յա՝ ասոր պես պիտի ըլլաք:

Մենք կուլանք, կուլա՛նք…, մեկ կողմեն ալ՝ կդողանք: Բոլորս ալ կնիկ, աղջիկ, չոջուխ ենք, մեջերնիս տղամարդ չիկա. երկու տասնյոթ տարեկան մանչեր կան աևոնց ալ դեևգերուն տակ պահած են, որ չգտնան:

Լա՛ց, կո՛ծ… Աստված յարդըմ ընե, Է՛յ, թուրք, ալլահդան բուլսուն, ալչա՛խ թուրք (Աստված օգնական լինի, է՛յ թու՛րք, Աստծուց գտնես, ստո՛ր թուրք):

Մեյ մըն ալ նայինք, քի մենծ զաբիթներ եկան, սկսան խոսիլ մեզի հետ՝ արդեն աևուշությունով. - Քույրիկնե՛ր, մայրիկնե՛ր, խնդրում ենք ձեզ աղվոր մտածեցեք, քի թուրք պիտի ըլլա՞ք, թե՞ չէ: Դուք լսեցիք մորթվողների մասին: Կուզե՞ք աևոնց պես ըլլալ: Ավելի աղեկ չէ՞ դուք ալ թուրք ըլլաք, թե չէ ձեզի ալ պիտի մորթենք:

- Վա՛յ, իմամ էֆենդի, - ասաց մորաքույրս, - ինչ դժվար բան ըսիք մեզի, գիտե՞ք:

- Է՛, մայրիկ, դու՛ք գիտեք:

Մորաքույրս մեր ձեռքերեև բռնած կտանի լեռան վրա աղոթելու. «Ամա՛ն, Աստվա՛ծս, մեզի փրկե…»:

Օր մըն ալ ադ իմամը նորեն եկավ. - Նե՞ դյուշունդունիզ մի. թուրք օլաջաքսընը՞զ սըն (ի՞նչ մտածեցիք, թուրք պիտի դառնա՞ք):

Մորաքույրս նորեն սկսավ խոսիլ. - Դինդեն դյոնմեսի դոլա՞յ մը (Հավատքը փոխելը դյուրի՞ն է):

- Ղոլայ դեյիլ, ամմա, ջանըն քուրթարմագ իույչուն՝ ղոլայ դըր (Դյուրին չէ, բայց հոգին ազատելու համար՝ դյուրին է):

Մորաքույրս շատ բեջերիքլի էր, չքաշվեցավ, նորեն ըսավ. - Խնդրում ենք մեզի մի քանի օր դաճա ժամանակ տվեք:

Երևի իմամին խոշին գնաց մորքուրիս համարձակությունը և մաքուր թուրքերեև խոսիլը, ըսավ. - Հա՛, կտամ, կերևա որ շատ հավատքդ կսիրես, ես ներում եմ. դինդեն դյոնմեսի զոռ դըր, հելբե՛թ, հայդե՛ (Հավատքից հրաժարվելը, իհարկե, դժվար է, դե՛):

- Չոք ղուրբան օլայըմ սիզե (Շատ շնորհակալ եմ ձեզ):

Մորաքույրս հե՛մ կխոսի կոր հե՛մ կուլա կոր ուրախութենեև*:

Ադ ձևով ալ մենք երկու-երեք ամիս հոն մնացինք: Հետո լսեցինք, որ ինչքան հայ աղջիկ կա մնացած, պիտի տաևեն:

Պապայիս ու հորեղբորս ասկյար էին տարել: Պապաս վիրավորվել էր, ընկել էր հիվանդանոց: Հետո դուրս էր եկել, հորեղբորս հետ ճամփա ընկել՝ մեզ գըտնելու:

Բայց ճանապարհին պապաս, սաստիկ հյուծված ըլլալով, չի դիմանար, ճամփին կմեռնի, հորեղբորս ամանաթ կուտա իր պայուսակը, մեջը իր ժամացույցը, կըսե. - Տա՛ր, տու՛ր մերիններուն՝ թող ծախեն, դրամ ընեն, ապրվին:

Հորեղբայրս բերեց հորս ժամացույցը, տվավ մորըս: Մենք իմացանք, որ հայրս մեռած է. սկսանք լալ, ողբալ: Հորաքույրս ողբ հյուսեց, սկսավ երգել, լսողին սիրտը կծակծկվեր, կլսեիք, կուլայիք…

Հետո հրաման էլավ՝ ո՛ր թուրքի տանը գյավուր քըզը իլաև գյավուր օղլաև վար՝ վերեջեգսինիզ (թուրքի տանը գյավուրի աղջիկ կամ գյավուրի տղա կա՝ պիտի տաք):

Իրիցկին մը կար, տասնյոթ տարեկան տղա մը ուևեր. մինչև ադ ժամանակ գաղտնի պահած էր: Թուրքերը գտան, տարին, մորթեցին: Իրիցկինին աղջկան ալ թուրք զաբիթ մը փախցուց, տարավ իրեև կնիկ ըրավ: Իրիցկինը կուլար, կողբար, կուզեր ադ թուրքին ձեռքեև գոնե աղջիկը ազատի…

* Պատմողը ևս սկսեց սաստիկ լալ:

Մի օր ալ տեսանք մեր ծանոթ աղջիկներեև մեկը՝ Ֆիլորը, վրան-գլուխը արյուններուն մեջ, հագուստները բզիկ-բզիկ էկավ մեր մոտը: Պատմեց, որ իրենց աղջիկների խումբին բոլորին մորթել են, ինքը դիակների տակից, լերդացած արյունների միջից վիրավոր վիճակով, հազիվ դուրս է պրծել, մի կերպ եկել է մեզ գտել: Լալով ըսավ. - Ոտքերնիդ պագնեմ, եկե՛ք ամենքս փախնենք, հիմա ձեզի ալ կմորթեն…

Եվ իսկապես հետո սկսան աղջիկներին փախցընել, կնիկներին տանել մորթել, չոջուխներին գլուխները կտրել, գնդակի պես ասդին-անդին նետել… Ֆիլորի մորն ալ տարին մորթեցին: Մեկն ալ երեխան գիրկը, մորը վիզը կտրել էին, չոջուխը մեռած մորը կուրծքը ուտելով ապրել էր, ամմա աևոր գլուխն ալ ֆուտբոլի գնդակ ըրին: Մի չաղ Աասևեթ կար, համամին սաբաբն էր, աևոր ալ ցցի վրա նստեցուցին, բանգը՛ր-բանգը՛ր կպորար. ադաևկ ալ մեռավ…

Վերջը նորեն մորաքույրս մեզի ազատեց: Ան շատ աղվոր դերձակուհի էր: Ժանդարմայի կնիկին հագուստները ինքը կկարեր: Մորաքույրս խնդրեց աևոր, որ ըսե ամուսնուն, որի անունը Շյուքրի Էֆենդի էր, որ ան մեզի խնայի… Մեկ ալ տեսանք ժանդարմա մը էկավ՝ ձիու վրա նստած, ըսավ. - Էստեղ գյավուրներ կայինք, ու՞ր են:

Մենք վախեևում ենք ձայն հաևել:

- Մի՛ վախեցեք, - ըսավ ան:

Մայրս և մորաքույրս հազիվ ձայն տվին:

- Բիզ իք (Մենք ենք):

- Քո՛րքմայընըզ, - ասաց ժանդարմը, - սաիաթ բիրի բեքլեևիզիզ բեևի (Մի՛ վախեցեք, ժամը մեկին ինձ սպասեք):

Դու մի ըսեր, ադ ան թուրք կնկա ամուսինն Շյուքրի Էֆենդի ժանդարմն է:

Գիշերը ժամը մեկին ամենքս՝ մորաքույրս, մայրըս, մորաքրոջս տղան, ես, պզտիկ քույրս հագնվեցանք, սպասեցինք ժանդարմային գալուն:

Ան եկավ, ձին կայնեցրեց. - Հազը՞ր եք:

- Հազը՛ր ենք:

Ձիուն վրա նստած ինքը մեզ ճամփա ցուցուևելով մութի մեջ կերթաևք, ամա կվախևաևք, որ մեզ կըբռևեն: Մեկ ալ շուն մը սկսավ հաչել:

- Ալլա՛հ, սեև պահապան օլ (Աստվա՛ծ, դու պահապան եղիր): Գնացինք, գնացինք: Բոլորիս ժանդարմը տարավ մի գյուղ, տունի մը առաջ, դուռը խփեց, ներսեև կնիկ մը ելավ:

- Բուլըար քի՞մ (Սրանք ովքե՞ր են):

- Բևնիմ ադամլար դըր (Իմ մարդիկն են):

Մեզ տեղ տվեցին, իրար քով կծկվանք, իբր պիտի քևաևանք, ամմա ո՞վ կքևաևա: Առտուն էլանք: Նորեն ճամփա էլանք: Ոտքով, քալե՛, քալե՛ չվերջացար…

Վերջապես ժանդարմը մորս ըսավ. - Աստեղ պիտի իջնաք:

- Շա՛տ գոհ ենք, Շյուքրի էֆենդի, - ըսավ մայրըս…

Վեց ամիս էր անցել, տուներնիս ձգած էինք ևատեր: Եկանք, տեսանք դուռները, պատուհանները կոտրված, ապակիները փշրված, միայև տուներնիս կա: Ադ ալ մե՛ծ բան էր: Մորս տասներկու երեխեքից միայև երկուսս ետ եկանք, մյուսները մեռան ճամփին՝ սովից, ծարավից: Կհիշեմ պզտիկ քույրս, որ մեռավ. ջուր ուզեց, ջուր չկար: Բերևեն փրփուրներ էլավ, մեռավ: Հետո ալ տունին մեջը կհիշեինք ադ տեսածներնիս, կսոսկայինք մեր տեսածներեև…

Տարիներ անցան, մեծացանք, ամուսնացանք, տուն-տեղ եղանք: 1921 թ. թուրք չեթեները Ցոզղատ էկան: Ամուսինիս բանակ տարին: Պզտիկ տղայիս շորերը վրաս կապեցի, գնացինք Մյուտանիա: Քույրս ալ մեզմե առաջ գնաց Բուրսա: Մի նամակ առի մարդուցս, գրել էր. «Արշակուհի, հո՛ն մնա»: Արդեն մորաքույրս, հորաքույրս հոն էին: Մենք ալ փող ուևեինք: Աֆիոնեև, Կոնիայեև, բոլոր տեղերեև մարդիկ եկել էին Իզմիր: Եկեղեցին բերևեբերան լիքն էր:

Առաջնորդը մորուքը ածիլել փախել էր: Առաջնորդարանի հինգ դոներուն առջևը թուրք զաբիթներ կեցած էին, եկեղեցիներուն քամբանաները կզարկեն կոր. օգնությո՛ւն կկանչեն ամեն կողմեն: Հինգ աղջիկներ՝ անգլիացի, ֆրանսիացի, իտալացի, ամերիկացի, դանիացի, ճակատնին կարմիր խաչի նշան կապած, մայրերուն, չոջուխներուն, վիրավորներուն օգնեևին: Ժողովուրդը ի՞նչ ընելը չէր գիտեր:

Իզմիրը վառվո՛ւմ էր… Մովեզերքը վառվում էր ալեֆներուն մեջը…

Մարդիկ ինչ ընելնին շվարած էին…: Աղջիկներին տոպրակներու մեջ էին դնում, որ չփախցնեն…: Անա՛-բաբա՛ գյունի էր*: Թուրքը մի բան տեսավ՝ կուզեր ձեռքեն առնել, թալանել: Մեկը էկավ մատնիս ուզեց խլել: Ես հեմեև բուղդուրի տոպրակը կոնակս առի, մամաս ալ մանչուն՝ Միհրանին գրկեց, յալլա՛, գնացինք մտանք ֆրանսիական դպրոցը, քիչ մը շունչ առինք…: Ժողովրդին քշել էին նավահանգստի կողմը: Նավահանգստի մոտ ոմանք ջուրն էին նետվում, լողալով գնում հասնում օտար շոգենավերուն շուլլըվում-պըլըլվում, վեր էին բարձրանում, որ հոգինին ազատեն, ուրիշ երկիր հասնեն…

Իսկ ովքեր ջուրը ինկած էին, կլողնայինն, ցամաքեև աևոնց վրա եռացա՛ծ ջուր էին բաց թողնում: Վերջը կրակը եկավ մեր կեցած ֆրանսական դպրոցն ալ լափեց, անտեղեև դուրս վազեցինք… ու՞ր վազենք… ամե՛ն կողմ կրակներու մեջն էր…: Ով փող ուևեր, ով կրցեր էր, մտեր էր անգլիացիներուն հյուրանոցը: Ադ հյուրանոցն ալ այնքա՛ն լցվել էին, որ պահակը ալ ոչ մեկին ներս չէր առնում՝ ևո՛, կըսեր փեզեվեևգը: Դուռը չէր բացեր: Մենք սկսանք լեզու թափել, չգիտցած անգլերեևով՝ չաթ-փաթ, պզտիկ Միհրանիկը կցուցնենք, կըսենք՝ մեղքցե՛ք մեզի, ևե՛րս առեք: Վերջը հինգ ոսկի տվինք, մեզի ներս առին հյուրանոցը, ան ալ համարեևյակ բոլորը լիքն են, հո՛դ չէ, բաբա՛մ, սեևյա՛կ չենք ուզում, միայև հոգիներնիս կուզենք… ինչ որ է. մեր կյանքը փրկեցինք: Մեր տված ոսկիները տարել են ամերիկյան դեսպանատուն են տվել: Հատուկ նավակ

* Թուրքերեև բառացի թարգմանվում է՝ մայրիկ–հայրիկի օր (իմա՝ թոռ ու բոռ):

բերեցին, մեզ մեջը նստեցրին, տարին Միդիլլի: Սպասում ենք նավին գալուն: Մեկ ալ լսեցինք՝ հոյները կպոռան. - Էրքեթե՛ (Եկա՛վ):

Շոգենավը եկավ: Մյուսները տոմս ունեն, մենք՝ չունենք...: Հրաման ելավ.

- Ով տոմս չունի՝ մի կողմ քաշվի...: Մենք մի կողմ քաշվեցինք: Ամերիկյան ժանդարմները շղթա կազմած կանգնած են, ոչ մեկին չեն թողնում...: Գնացի մեծին քովը՝ խնդրեցի: Ես ջաճեյ էի, չոջուխը՝ գիրկս: Տեսավ՝ մեղքցավ: Տասը ոսկին ձեռքես առավ, տոմս տվավ մեզի: Բարձրացանք նավը: Փիրեյա հասանք:

Մի բան չունենք հագնելիք... փոքր երեխան գիրկս: Մայրս գնաց Փիրեյայի փողոցներուն գետինը կավլեր, մենք հարդի վրա կքնանայինք՝ չաղրիհն մեջը...

Երեք տարի մի կերպ ապրեցանք, առանց տղամարդու, վերջը թերթի միջոցով սկսանք փնտրել մեր հարազատներուն: Եկեղեցիի պատարագի ժամանակ քահանան կհայտներ՝ ո՛վ որ երկրումն է: Մենք ալ իմացանք, որ մեր տղամարդը Սուրիայումն է...

Ան ալ եկավ մեզի գտավ... Ինչե՛ր էր տեսել, ինչե՛ր էր անցուցեր... աքսորականներուն հետ մինչև Եփրատ էր հասել, տեսել էր շատ սրտաճմլիկ բաներ. կպատմեր: Մայր մը Դեր Զոր երթալու ճամփին Եփրատի ափին կթողնի իր զավակին, որ մեկը գա՝ տանի, բայց սիրտը չըլլար, ետ կուգա կտեսնա, որ երեխան սոված-ծարավ ավազի հետ կխաղա, կվերցնե կտանի իր հետ Դեր Զոր, որ իր հետ մեռնի: Ուրիշ դեռ շա՛տ բաներ...:

Վերջը մենք անցանք Աթենք, հոն հայկական թաղամաս մը կար. ֆիքսը կապրեինք: Տղաս մեծցավ, 1947-ին եկանք Հայաստան: Հազիվ տղաուս ամուսնացուցինք, տուն-տեղ պիտի ըլլայինք մեր սիրելի Հայրենիքին մեջ, 1949 թվականին, գիշեր մը եկան մեզ առին տարին...: Մենք՝ բանե բեխաբար, չենք հասկանում ու՞ր են տանում, ինչու՞ են տանում, դու մի ըսեր՝ մեզի Սիբի՛ր են տանում...

Յոթը տարի ալ հոն մնացինք, թոռնիկներս հոն ծնվեցան: Վերջը եկանք Նոր Մարաշում հողամաս տվին: Չունի-չիկայով տուն շինեցինք, մեջը մտանք...

Հորաքույրս տղա մը ուներ: Ան Իզմիրի փախեփախի ժամանակ Ամերիկա էր անցեր: Հիմա լավ դիրքի է: Տղայիս նամակ է գրել, կանչում է մեզի...

Ամեն օր տուներնուս մեջը ըսի-ըսավ կա՝ Ամերիկա պիտի երթանք ըսելով...

Ամա՛ն, յավրու՛մ, ո՞րը ըսեմ, ո՞րը խոստովանվիմ: Իմ գոլխուս եկածը էփած հավիհն գոլխուն անգամ չի գար...

213 (213).
ԲԱՐՈՒՆԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՓԱՓԱԶՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1906 Թ., ՅՈԶՂԱՏ, ԲՈՂԱԶԼՅԱՆ Գ.)

Մեր ընտանիքը տասնչորս հոգի էր: Պապս գյուղի մեծն էր՝ մխտարը: Իմ կնունքը կատարվել է տեղի լուսավորչական եկեղեցիին մեջ: Կնունքիս հրավիրված են եղել նաև մեր բարեկամ թուրքերը: Իմ ավազանի անունը Բարունակ է, բայց հետո թուրքերը իմ անունը Իբրահիմ դրեցին:

Ես մեկ քույր ունեի՝ Ֆիլոր անունով, իսկ եղբայրը՝ Մուշեղը: Ունեի չորս հորաքույր՝ Պայծառ, Սանդուխտ, Հինա, Վերժին: Մեծ մայրիկիս անունը Նարգադ էր, մեծ հայրիկինս՝ Հայրապետ, հորս՝ Հովհաննես, մորս՝ Հնազանդ: Մայրս նույն գյուղեն էր: Մենք զբաղվում էինք հողագործությամբ, խաղող, մրգեր էինք աճեցնում: Մեզ տեղաւհանեցին և Հունաստանից թուրքեր բերին բնակեցրին:

Մեր գյուղը հինսուն ընտանիք հայ ուներ, մի եկեղեցի կարմիր քարերով՝ հայերը շինած էին, բայց թերի մնաց: 1975 թ. այդ եկեղեցին մեջիթ են դարձրել, քովը միհարե են տնկել: Որպես դպրոց էր ծառայում մորաքրոջս սենյակը, ուր երեսուն-քառասուն երեխա հավաքվում էին, գրաճանաչություն և աղոթքներ էինք սովորում: Ես ևս մեկ տարի այնտեղ սովորել եմ: Մեր գյուղերը միայն հայեր էին և հայախոս էին: Բայց շատ քըչերն էին գրագետ: Մորս կողմից պապս և երկու քեռիներս գրագետ էին:

Մեր տան մեջ թոնդիր ունեինք: Հատուկ ննջարան, մաճճակալներ չունեինք, գետինը կպառկեինք: Տեղի կիները բամբակից ու բրդից հագուստներ կգործեին: Ամեն տուն ջուլհակի դազգահ ուներ: Մայրս և հորաքույրս կգործեին: Էրիկ մարդիկ խոնջանով փալթո կհագնեին: Հայ կանայք երկար վարիք կհագնեին, գլուխները յազմա էին կապում: Աղջիկները մազերը մատիտի հաստությամբ բարակ-բարակ կհյուսեին: Աղջիկների հագուստները բաց գույնի կլինին: Տղան իրավունք չուներ աղջիկ ընտրելու: Մնողները կընտրեին, կնշանեին: Տղան աղջկան չէր տեսնի:

Կտուրները հողից էին: Պահում էինք կով, գոմեշ, ոչխարներ: Կտոնեինք Ս. Մնունդը, Կաղանդը, Տերընդեզը, Համբարձումը, Զատիկը: Տոնական օրերին չպետք է խոով մնաս, և եթե դու ունևոր ես և ուրիշը չունի, պետք է տալ չունևորին, որ նրանց աչքը չմնա քո վրա: Հարսանիքներին և տոներին ուրախ հնչում էր զուռնա-դհոլը, շուրջպար բռնած կերգեին ու կպարեին: Գդալներով կպարեին կամ «Զեյբեք հավասը» այսինքն՝ զեյբեքներու պարը կպարեին՝ դամաս խրած գոտիին մեջ: Եթե մատաղ անեին, մատաղացուն օրհնել կուտային, կեփեին, բլղուրով փիլավ կեփեին, հողից քասաների մեջ կլցնեին և ճանապարհի վրա կդնեին, որ ճամփորդները անցնին, ուտեն: Հարսանիքի նվագն ու պարը թուրքական էր: Գյուղի մեջտեղը մի աղբյուր կար, որը շատ ջուր ուներ, Թորոս էֆենդիի աղբյուր կըսեին: Մի հատ ալ ջրաղաց ունեինք: Պետությունը հարկ կառներ նայած ունեցվածքի. քանի՞ փեթակ ունես, քանի՞ ոչխար ունես, ինչքա՞ն արտ ունես: Բերքի յոթը մասը քեզի կձգեր, մեկ մասը՝ պետությունը կառներ:

1915 թվին տղամարդկանց հավաքեցին, մտցրին եկեղեցի, էլ բաց չթողին, պարաններով կապեցին: Տասներկու տարեկանից վեր տղաներին ևս տարին ընրանց հետ: Տղամարդկանց ձեռքերը՝ երկու-երկու հոգիներունը իրար կապեցին, գյուղեն հանեցին, Բողազլյանի մոտ Գյավուրդերեսի տարին: Կըսեին այդ ձորին մեջը շատ հայեր մորթված են և անունը մնացած է Գյավուրդերեսի: Լսեցինք, որ Սամո, Շապա, Թորուն անունով թուրքեր հայերուն կացիններով սպանել են, իսկ Հաշիմ, Դելի Շաքիր և ուրիշներ, հինգ հոգի, վերևը ընտած դիտել են:

Մի թուրք Շեխե աղա կար, հաճախ մեր տանն էր ուտում: Տատիկս գնաց, խնդրեց նրան, որ ազատեն պապիկիս: Նա ասաց. - Հողը քեզ լուր կտա, բայց ես՝ ոչ:

Տարան բոլորին սպանեցին: Ոչ ոք չազատվեց այդ սպանդից: Հրամանը Թալեաթեն էր: Մեր ընտանիքից պապս էր և պապիս ախպոր տղան: Հայրս թուրքական բանակումն էր արդեն: Երրորդ օրը եկան ժանդարմները, ասին. - Երկու օրվա ուտելիք վերցրեք, ուրիշ բան պետք չէ վերցնել: Ամեն հայ ընտանիք իր սայլով պիտի տեղափոխվի Կեսարիա:

Մեզի քշեցին: Իմ մայրը երկու տարի առաջ ին վանդացել էր, վիզը վերք էր եղել, նրան տարել էին Կեսարիա: Այնպես որ, Կեսարիայի ճամփան գիտեր: Բայց մեզ տարին արտերի միջով: Մայրս զգաց, որ ուրիշ տեղ են տանում: Հրաման եկավ. - Իջե՛ք, լցվե՛ք ձորը:

Ժողովուրդը իրար խառնվեց: Լա՛ց, կո՛ծ, իրարանցու՛մ: Ոստիկանները տեսան, որ ժողովուրդը չի հանդարտվում, սկսեցին խփել: Երբ որ մի գյուղ հայաթափում էին, լուր էին տալիս շրջակա ամբոխին, որ գան թալանեն: Մեկ էլ տեսանք սև մրջյունների պես ղամաներով, կացիններով, դանակներով զինված մարդիկ հարձակվեցին մեզ վրա՝ ոչ մեծ կնային, ոչ պզտիկ, սկսեցին կոտորել: Տատիկս կարմիր գոգնոց էր կապած, անգամ այդ գոգնոցի համար կովում էին, թե՝ ո՞վ պիտի տանի: Շուրջը՝ դիակներ, սպանված մայրերի կրծքերի վրա ընկած երեխաներ: Ես շվարած նայում էի: Իմ ոտքին կարմիր կոշիկներ կային, հայրս էր բերել քաղաքից: Մի տղա տեսավ կոշիկներս, ղամայով խըփեց գլխիս, ես ուշագնաց ընկա: Տղան կոշիկներս հանել էր...

Գիշերվա կեսին ուշքի եկա, աչքս բացի, բայց մի աչքս չի բացվում, փակ է, գլխիս վերքի արյունը չորացել էր մեջը: Լսեցի երեխաների ձայներ, որոնք սպանված մայրերի կրծքերի վրա ընկած՝ արյուն են ծըծում կաթի փոխարեն: Մինչև առտու դրանք մեռան: Ես էլա մերոնց փնտրելու: Տեսա գետնին դիակներ արյունների մեջ, բոլորը մերկ, առանց հագուստների, տկլոր, այլանդակված պառկած, ուռած, ճանճերը վխտում են...

Ես մորս եմ փնտրում դիակների մեջ: Հիշում եմ, մորս ձեռքին խալ կար, բայց՝ մայրս չկա: Տեսա Հինա քրոջս, սիրտը պայթել էր: Մորս և եղբայրներիս չգտա: Մայրս շատ գեղեցիկ էր: Մի թուրք, որը միշտ մեր տունը կուգար, մորս կճանչնա, կըսե. - Ես քեզի կազատեմ: Գիտե՞ս ձեր ոսկիներու տեղը:

Մայրս կըսե. - Այո՛, քիսաներով թաղված են հողի մեջ:

Թուրքը մորս կտանի իր տունը: Կգնան, մայրս ցույց կտա զարդերի տեղը: Հողը կփորեն, քիսաները կհանեն՝ մեջը լիքը ոսկեղեն: Մայրս կխնդրե այդ թուրքին, գնալ կոտորածի տեղը և գտնել իր զավակներին:

Մայրս թուրքին կուտա մի չարշաֆ, որ ինձի մեջը փաթթե, չէ՞ որ մերկ ենք: Թուրքը կուգա: Ես, մի տղա ու երկու աղջիկ ենք: Բոլորս վիրավոր ենք: Արյունը երեսներիս չորցած է: Մենք ձորի մեջ ենք: Մեկ էլ տեսանք՝ ձիու վրա մի թուրք եկավ: Ես մոտեցա:

Թուրքը հարցրեց. - Դու ու՞մ տղան ես:

- Քյոխվա Հայրապետի տղան եմ, - ըսի:

Էդ ժամանակ մյուս երեք վիրավորները մոտեցան: Թուրքը չարշաֆը ցույց տվավ, ըսավ. - Ու՞մն է սա:

Ես ըսի. - Դեղեին ես, - քանի որ եզերքը կարմիր թելով աշխատված էր:

Թուրքը խնդաց, ըսավ. - Ես քեզի պիտի տանիմ մորդ մոտ:

Ճամփին մի աղբյուր տեսանք: Ես իմ վերքերը լվացի: Ան ինձ տարավ իմ մոր մոտ: Մայրս ինձ տեսավ, ուրախացավ: Վերքերս լվաց, դեղ դրավ, անկողին մտցրեց:

Էդ թուրքը արդեն երկու կնիկ ուներ, մորս հետ ալ ամուսնացավ: Մորս անունը Ճաթմա դրեց, իմ անունն ալ՝ Իբրահիմ: Ինձի ալ թլպատեցին: Մեր ընտանիքից միայն ես ու մայրս ողջ մնացինք՝ էն էլ թուրքի կին դարձած:

Մայրս էդ թուրքից մի աղջիկ ունեցավ: Թուրք հայրացուս մի ուրիշ հայ կնիկ ալ բերեց անունը Թըրվանդա: Էդ Թրվանդան կնախանձի մորս, որ երեխա ունի: Կուտա տասը ոսկի թուրք տղաներին, կըսե. - Տարե՛ք էս տղային սպանեք:

Մայրս լսեց էդ լուրը:

Օր մը մենք մորս հետ ելանք ոչխար կթելու, եկանք տեսանք մորս նոր ծնած երեխային եղունգները սևցած, դու մի ասա, Թրվանդան թունավորել էր: Էդ մեռավ: Մայրս էդ թուրքից մի ուրիշ աղջիկ էլ ունեցավ, անունը Նադիե դրեցին: Էդ աղջիկը հազիվ քառասուն օրական էր, օր մը մայրս կլսի, որ Թրվանդան տասը ոսկի է տվել թուրք տղաներին, որ ինձ սպանեն: Մայրս լսեց էդ լուրը, ինձ ասաց. - Գնա՛ թուրք Հաշիմ աղայի մոտ: Նա մեզ ծանոթ է: Իր տանը տասնմեկ հոգի հայ է պահում: Գնա՛ ասա թող մեզի ալ պահի:

Ես գնացի Հաշիմ աղայիմ մոտ, ասի. - Մերս բարև ուղի, խնդրեց, որ եթե կընդունես, գանք քո տունը ապրինք, մեր դրությունը շա՛տ վատ է:

Հաշիմ աղան համաձայնվեց: Ես ան ժամանակ տասնմեկ տարեկան էի: Եկա մորս ասի: Մերս թուրքից ծնված քառասուն օրական աղջկա բերանը ճակնդեղի էմզիկ դրեց, մենք փախանք: Թուրքը իրիկունը կուգա, կտեսնա գյավուրի աղջիկը իր տղի հետ փախել է: Թըրվանդան կըսե՝ ես էս երեխան կպահեմ: Մենք մնացինք էդ մեր ծանոթ թուրքի տանը: Էդ թուրքերի մեջ մի մարդ կար, նա ուզում էր մորս: Հաշիմ աղան ասեց՝ էդ լավ

մարդ է: Մերս գնաց դրա կնիկը դարձավ, ինձ էլ տարավ հետը: Մերս էդ թուրքից 1920 թ. մի տղա ունեցավ: Ես արդեն տասնչորս տարեկան էի:

Իմ քեռիները թուրքի բանակ գացած էին, հայերն ու թուրքերը նույն հագուստները հագած էին, նրանք կարողանում են փախչել: Իսկ հայրս, որ Էրզրումում էր ծառայում, էնտեղ էլ սպանվում է: Քեռիներս կլսեն, որ իրենց քույրը՝ այսինքն իմ մայրը, թուրքերը փախցրել են, եկան մեզի գտան: Մերս արդեն երկրորդ երեխով էր: Մերս ինձի ասաց. - Ես քեզի պիտի ղրկեմ քեռուդ մոտ:

Քեռիս ինքը երեխա էր ունեցել, ինն էլ մորթվել էին: Ես գնացի քեռուս մոտ ապրեցի:

1925 թ. ես քեռուս հետ եկա Պոլիս, քանի որ գավառների հայերը կամաց-կամաց Պոլիս էին գալիս: Մերս ինձնից հետո երկու աղջիկ էր ունեցել էդ թուրքից, բայց ինձ հետ նամակակցում էր և այդպիսով իր կարոտը առնում: Մայրս իր գլխեն անցկացրածը բոլորը գրի էր առել մի մեծ հաստ տետրակի մեջ, բայց երևի կորել է:

Մորս և իմ փախուստից հետո թուրքից ծնված մորս Նադիե աղջիկը, որին թողինք ու փախանք, Թըրվանդան կպահի: Տարիներ կանցնին: Էդ թուրքը շատ հարուստ կըլլա, կփոխադրվի Բողազլյան, տասներկու սենյակով տուն կունենա, ծառաներ կունենա: Դրա երկու թուրք կնիկները կմեռնին: Թուրք մարդն էլ կմեռնի: Կմնան Թրվանդան և քույրս: Մի թուրք աղա կնշանվի Նադիե քրոջս հետ: Հարսանիքի օրը մայրս կլսե, որ իր աղջիկը հարս պիտի տանին իրենց տան առջևեն, Ուզունլու գյուղը պիտի տանին, երբ հարսնորները կուգան դաուլ-զուռնայով, խեղճ մերս կերթա, ձեռքերը կբացի, կկայնի ճամփի մեջտեղը, կխնդրի. - Կայնե՜ք, հարսին երեսը բացե՜ք, գոնե տեսնեմ:

Բայց Թրվանդան, որը չար կին էր, չի թողել: Արաբան կքշեն, կերթան: Կտանին Ուզունլու գյուղը: Նադիեն երեք երեխա կունենա: Թուրք հայրը կմեռնի: Նադիեն կուգա իր հոր տունը՝ Բողազլյան, որ իր հոր ունեցվածքին տիրանա:

Թրվանդան արդեն ծերացած, կհիվանդանա: Մի սենյակի մեջ պառկած կըլլա: Ձմեռ ժամանակ էլեկտրական պլիտա դրած կըլլան անկողինին քովը, հիվանդին մոտը մարդ չըլլար, վերմակը կբռնկվի, կըսկսի վառվիլ: Ծեր Թրվանդան ուժ չունենար, որ վեր կենա անկողինեն: Ծառաները իրար կանցնին, կուզեն օգնել: Նադիեն կուգա կըսե. - Սենյակին դուռը փակեք, թող վառվի: Նա չթողեց, որ իմ հարազատ մայրը իմ երեսը տեսնար, նա արժանի է էդ տեսակ մահվան:

1925 թ. ինձ թուրքական բանակ կանչեցին: Ես մտածեցի՝ այդքան բան տեսնելես վերջ թուրքի զինվոր ինչպե՞ս կրնամ ըլլալ: Բայց պասպորտ չէին տալիս: Սվազցի պր. Մուրադը ինձ օգնեց և պարսկական պասպորտ հանեց: Ես 1927 թ. ներգաղթի հետ Հայաստան եկա, բայց ներգաղթ կոմիտեն ինձ չընդունեց, ասեց. - Պետք է Պարսկաստան երթաս:

Ես շա՜տ խնդրեցի, ըսի. - Ես իսլամ երկիրեն եկեր եմ հայրենիք, դուք ինձ նորեն իսլամ երկի՞ր եք ղրկում:

Վեց ամիս պայմանաժամ տվին: Գնացի Ալափարս գյուղում հողագործ աշխատեցի: Առաջին անգամ Հայաստանի մեջ դդում, բադրջան ցանեցինք: Հոս տեղի մարդիկ չգիտեին սուջուխ, զեյթուն, սուրճ: Կհիշեմ սուրճին հատիկները մեր դրացին առել էր ու խաշել: Հետո ես իրենց սովորեցրի, որ պետք է բովել, աղալ հետո շաքարով ու ջրով եփել: Վեց ամիս հետո ինձ նորեն կանչեցին, որ երթամ Պարսկաստան: Ես չուզեցի: Մի տարի էլ ավելցուցին, մինչև 1934 թվին ինձ կանչեց Հրազդանի շրջանային զինկոմիսարը, ըսավ. - Դուն մինակ տղա ես, գնա բանակ ծառայի:

Ինձ Քանաքեռի գնդում թնդանոթի վրա դրեցին: Ծառայեցի, վերադարձա: Նշանվեցի, ամուսնացա: 1936 թ. եկանք ընտանիքով հաստատվանք Երևան: Սարի թաղում տուն շինեցի, քարտաշ դարձա: Արհեստավոր դարձա, առաջավոր վարպետ դարձա: Հայկական տուֆ քարի երեսունվեց տեսակներն ալ ձեռքես անցած են:

Հայրենական պատերազմին ես հեծելազորի մեջ էի: Մեզ ղրկեցին Պարսկաստան՝ Թավրիզ: 1945 թ. հրաման եկավ, որ Թուրքիա պիտի մտնանք, բայց վերջը Ճապոնիայի Հերոսիման եղավ, կանգ առանք: Ես լավ թուրքերեն գիտենալուս գաղտնի գործակալության մեջ կաշխատեի: Իմ անունը Ռահիմ էր:

1950 թ. մորս թուրք ամուսինը կմեռնի: Մայրս նամակ գրեց ինձ, որ ես իրեն բերեմ Հայաստան, գոնե կյանքի վերջում միասին ըլլանք: Ես գնացի ներգաղթ կոմիտե, խնդրեցի, բայց մերժում ստացա: Նորեն դիմում գրեցի, ըսի. «Կա՛մ թողեք ես գնամ իմ տանջված մորս բերեմ Հայրենիք, կա՛մ դուք բերել տվեք՝ ես ծախսը կհոգամ»: Բայց հրաժարվեցին օգնել:

1951 թ. խեղճ մայրս Կեսարիայում կհիվանդանա, թուրքից ծնված քույրս նրան կտանի հիվանդանոց: Երկու օր հետո մայրս կմեռնի՝ սրտի մեջ կարոտը պահած: Թուրքերը մի փոս կփորեն, կթաղեն, բայց իրենց գերեզմանում չեն թաղեր, որ չպղծի: Խեղճ մայրս ղարիբ էր, ղարիբ էլ գնա՜ց: Էդպես մայրս մահացավ՝ առանց ինձ տեսնելու:

Ես իմ հալալ մորը չտեսա, բայց 1970 և 1975 թվերին քույրս ինձ ու կնոջս հրավիրեց: Գնացինք Կեսարիա, քրոջս տունը: Մեր տունը: Մեր տունը առնավուտներ՝ ալբանացիներ, եկած նստած էին: Էդ գյուղի հին թուրքերը ինձ հիշեցին, քանի որ մենք իրար հետ հաշտ ու խաղաղ ապրել էինք նախքան կոտորածը: Ալ ու մորթեցին, ոչխար մորթեցին, հյուրասիրեցին, պտըտցուցին, լավ ժամանակ անցկացրինք միասին:

214 (214).
ՎԵՐՈՆԻԿԱ ԳԱՍՊԱՐԻ ԲԵՐԲԵՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ՅՈԶՂԱՏ, ԲՈՂԱԶԼՅԱՆ Գ.*)

Ծնվել եմ 1907 թ. Անատոլիայի Յոզղատ գավառի Բողազլյան գավառաքաղաքում՝ մտավորականի ընտանիքում: Հայրս՝ Գասպար Բերբերյանը, դպրոց էր ավարտել, լավ ֆրանսերեն, թուրքերեն գիտեր, կաշխատեր կառավարության մեջ: Հայրիկիս քեռին դատախազ էր, հայրիկս անոր մոտը կաշխատեր որպես թուրքական կառավարական փաստաբանի թարգմանիչ-քարտուղար: 1912 թ. հորս՝ Գասպարին, թուրքական բանակ կզորակոչեն, որ մասնակցի Բալկանյան ճակատի կռիվներուն: Ան բանակին մեջ ալ թարգմանիչի պաշտոն կկատարե և քանի որ իրենց օգտակար մարդ էր, չեն սպաներ: Մինչև 1920 թիվը հայրս կծառայե թուրքական բանակին մեջ և Կարաբեքիրի զորքին հետ, որպես թուրքական զինվոր, կհասնի Նախիջևան: Անտեղ չուզեր հայերու կոտորածին մասնակցել և կփախի թուրքական բանակեն, հետո, երբ մենք եկանք Հայաստան, իրար գտանք:

Քանի որ հայրս մեզ հետ չէր, պապս ինձ, որպես ամենամեծ թոռնիկի, տարել է իրենց տունը և ես այնտեղ էի մնում: Պապս՝ Հակոբ քահանա Բերբերյանը, տեղի Ս. Աստվածածին եկեղեցու ավագ քահանան էր: Ան իր պատկառազդու տեսքով, իր գիտելիքներու պաշարով և իր վարած պաշտոնով Բողազլյան քաղաքի հայտնի դեմքերից էր: Նրա օջախը տեղի ամենալուսավորյալ տունն էր: Գրեթե ամեն երեկո այնտեղ էին հավաքվում քաղաքի մտավորականները և պապիկի առանձնասենյակում զրուցում էին հետաքրքիր նյութերի, քաղաքական անցուդարձի շուրջ և կամ գաղտնի ու ցածրաձայն երգում հայրենասիրական երգեր: Իսկ ես քանի որ փոքր էի, շուտ էին ինձ քնացնում: Ձևայած ես քնած էի լինում, բայց արթնանում էի, քանի որ ինձ շատ հետաքրքրում էին այդ զրույցները, և ես գաղտնի դուրս էի սահում իմ անկողնից, անցնում էի հյուրերի սենյակը և մի անկյունում կծկված լսում անոնց պատմածներն ու երգածները՝ աշխատելով մտապահել բոլորը:

Ես ավելի շատ կապված էի պապիս հետ: Իմ մեծ մոր անունը իրիցկին Նարիկ էր: Նրա աղջիկների անունները Մարիամ, Սիմա էր: Ուներ երկու հորեղբայրներ՝ մեկը՝ քսան տարեկան, մյուսը՝ տասնհինգ տարեկան: Մեկի անունը Հարություն էր, մյուսինը՝ Խաչեր: Հարություն հորեղբայրս Բարունի Պերպերյանի հայրն էր, որը մեզ հայրություն էր անում, քանի որ մեր հայրը բանակում էր: Հարություն հորեղբայրս վարսավիր էր, մյուսը փոքր էր, դեռ աշակերտ էր: Ուներ երկու հորաքույր՝ Նազելի և Սանդուխտ անուններով: Մերոնք հողագործ էին:

Բողազլյան գյուղաքաղաքը տափարակ էր: Գրեթե ծառ չկար, քանի որ հողի տակը աղի հանքեր կային, բայց լավ ցորեն էր բուսնում: Իմ լսածով Բողազլյանում յոթ հարյուր ընտանիք էր ապրում, հայ և թուրք իրար հետ համերաշխ ապրում էին: Խանութպանները և արհեստավորները հայեր էին: Տների մեծ մասը երկու հարկանի էր ու քարաշեն: Մենք երկու տուն ունեինք: Մեկը պապիս տունն էր, մյուսը՝ հորս ու մորս: Մեր տունը շուկայի ճամփի վրա էր: Ունեինք անասուններ՝ գոմեշներ, կովեր, ձիեր, գառներ, բայց երբ 1915 թվին ջարդը սկսավ, մեր գոմեշները հանդից եկել էին ու դռան առաջ բառաչում էին, որ մենք ներս առնենք, բայց մենք վախից դուռը փակել էինք, որ թուրք ասկյարները ներս չխուժեն, էդպես էլ մեր խեղճ անասունները դուրսը մնացին, թուրքերը առան-տարան:

Մեր տան դռները զույգ էին: Ապահովության համար դուռին ետևը սյուրկյու կար, հատուկ հարմարություն: Ներս մտնողը դռան վրայի չխկչխկոցը կզարներ, որ լսեինք: Մեր տանը միշտ հյուրեր էին լինում, որոնց սուրճով էինք հյուրասիրում: Բացի հյուրասենյակից երկու ուրիշ սենյակներ ալ ունեինք: Հացատուն ունեինք, մեջը թոնդիր կար: Քովը մարագ կար՝ անասունների համար, հավանոց կար, ամբողջը մնաց թուրքերին:

Մեր թաղը Քիլիսե մահալը կկոչվեր, այսինքն՝ եկեղեցու թաղ: Բոլոր հայերը աշխատում էին, հարգանք ունեին: Պապիկս զինվորությունեն վերադարձած էր և դպրոցին մեջ տղաներուն դաս կուտար: Պապիկս ինձ գրաճանաչություն է սովորեցրել: Ես մի տիկնիկ ունեի, ջարդի ժամանակ ընկավ ջարդ ու խուրդ եղավ: Կհիշեմ խաղ մը կխաղայինք. երկու կողմը իրար մեջք բռնած կանգնում էինք, ով հայու անուն ասեր՝ եկուր հայերու կողմը անցիր կըսեինք, ով թուրքի անուն տար՝ մյուս կողմը կանցներ, և իրար կքաշեինք, որ կողմը որ շատ էր՝ ան կհաղթեր:

Մեզ մոտ հարսանիքներու ժամանակ թուրքերեն երգեր սկսած էին երգել: Հայերուն և թուրքերուն արտերն առանձին էին, բայց իրար հետ սիրով էինք: Հայերու թաղը ավելի լավն էր, մաքուր ու բարեկարգ էր, բայց թուրքերուն թաղը խառն էր, փողոցները խառըխշտի էին: Տան մեջ լավաշ էինք թխում ամեն օր: Խմորը կլորում էինք, շփում, վրան խաչ էին անում, վրան ծածկում, որ հասնի: Թոնդիրը վառում էին: Թոնդիրը բարձր էր, կավից էր: Հացատունին մեջ օջախ ալ կար, անցքը դեպի կտուրն էր գնում: Փայտ չկար շատ, անասունի թրիք էլ էինք վառում: Նոր տարուն Մարիամ ապուր էին եփում կորկոտով ու ծիրանի չիրով, որին անուշապուր էին ասում: Նոր տարուն խմորեղեն էին թխում գյուղատնտեսական գործիքներու ձևով կամ հաց էին թխում՝ մեջը քառուն փարա էին դնում, ում որ ընկներ, ան կերթար խանութ բան-ման կգներ, կբերեր, բոլորը միասին կուտեին:

Մայրիկս «Սինգեր» կարի մեքենա ուներ, պապիկս էր գնել, երբ ան նոր հարս է եղել: Մայրիկս շատ շնորհ-

* Բողազլյան – գյուղ պատմական Փոքր Հայքում, Սեբաստիայի նահանգի Յոզղատ գավառում: 1915 թ. հայերը 400 տուն էին, որոնք զբաղվում էին հողագործությամբ: Ունեին Ս. Մինաս եկեղեցին: Հայկական Խորենյան վարժարանն ուներ 60 աշակերտ: Բողազլյանը քարուքանդ է արվել, հայ բնակիչները ոչնչացվել ու արտաքսվել են:

քով, գեղեցիկ կին է եղել: Տերտեր պապիկիս եկեղեցական շորերը ինքն էր կարում:

Մենք մեր անասունների միսն էինք օգտագործում: Ցորենը քիչ խաշում էին, չորացնում, սանդի մեջ դնում ծեծում, թեփը քամում էին տալիս, բլղուր էր լինում: Խմելու ջուրը սակավ էր: Մի քիչ հեռվից էշով գնում բերում էին: Էշի վրա հատուկ հարմարանք կար չորս տեղով շինված՝ կուժերու համար: Մեր տանը կարմիր քարից մուլոխ ունեինք, մեջը ջուրը թորվում էր, զտվում, շատերը գալիս էին հիվանդի համար տանում էին: Իսկ լողանալու համար թոնդիրը ջուր էին դնում, տաքանում էր, տան մեջ լողանում էինք, բաղնիք չէինք գնում: Մեզ մոտ կանաչ կավի հանք կար, դրանով գլուխ էին լվանում, լավ մաքրում էր: Ամեն տուն իր զուգարանն ուներ: Պապիկս ամեն շաբաթ գիշեր կլողանար, որ հաջորդ օրը՝ կիրակի Ս. Պատարագի արարողությունը կատարի: Ամեն շաբաթ իրիկուն մեր տանը մաս էր թխվում: Նշխար էր թխվում: Մասի տախտակն առանձին էր, հացինը՝ առանձին: Մասն ու նշխարը կիրակի առավոտ եկեղեցի էին տանում, ժողովրդին բաժանում: Պապս աղոթագիրք ուներ, վրան արծաթով Քրիստոսը կար խաչված:

Արհեստները հիմնականում հայերու ձեռքն էին: Շատ կոշկակարներ կային, վարսավիրներ կային, փակ շուկային մեջը խանութներ ունեին: Հարություն հորեղբայրս էլ վարսավիրի խանութ ուներ: Շուկային մեջ ուտելիք և պտուղներ ալ կծախեին: Շատ մուրացկաններ կային: Բարիկենդանին խմորեղեններ էինք շինում, առաջ՝ աղքատներուն էինք բաժանում, հետո՝ մենք էինք ուտում:

Ամենամեծ գերդաստանը հարուստ Արաբ օղլու Գևորգ աղայինն էր: Ան ոչխարի, բրդի վաճառական էր: Հայ ոսկերիչներ կային: Ամեն տեսակ զարդեր կշինեին՝ մատանիներ, շղթաներ, ապարանջաններ: Հայերը լավ էին ապրում: Թուրքերը խեղճ էին, կարկտած, քրջոտ շորերով: Բեկեր կային, որ հարուստ էին, կալվածքներ ունեին ու մշակներ կաշխատեցնեին:

Հագուստեղենի կտորը Եվրոպայից և այլ քաղաքներից կգար:

Բողազլյանի մեր հին եկեղեցին թուրքերու կողմե քանդված էր, ևորը՝ Ս. Լուսավորիչն էր: Ես պապիս հետ միշտ եկեղեցի կերթայի: Պասի ժամանակ օրական երեք անգամ եկեղեցական ժամերգություն էր լինում: Փոքր հորեղբայրս իր ընկերներուն հետ կերգեին, դպիրություն կընեին: Մեր եկեղեցին մեծ էր, խորաններ ուներ, պատարագի, մկրտության առանձին տեղ ուներ: Երգչախումբը հատուկ տեղ ուներ, վերևը բալկոնի պես տեղ ուներ: Ամեն մարդ իր միդարը կտաներ, որը էնտեղ կմնար: Ով շատ եկեղեցասեր էր, առաջը կնստեր: Եկեղեցիին մեջ սրբապատկերներ կային, ևոնցմե մեկը պապս Ս. Էջմիածինեն էր բերած: Դուրսը զանգ կար: Ս. Ծնունդին, Ծաղկազարդին, Զատիկին անպայման բոլորը ժամ կերթային, վերջն ալ ներկված հավկիթ կխաղային, կուրախանային: Ուդ, ջութակ, քանոն, դուդուկ կնվագեին: Հարսանիքի ժամանակ հարսին եկեղեցի կտանեին պսակադրության, հետո տուն կտանեին: Բոլոր տոները կկատարեին, իրարու տուն կերթային, սուրճ, քաղցրավենիք կհյուրասիրեին:

Բարիկենդանը Ս. Ծնունդին էր լինում՝ ձմռանը: Ցոթը օր ծոմ էին պահում: Միս, ձուկ չէին ուտում: Մեծ պահքին հիսուն օր ծոմ կպահեին: Երեխաները մինչև կեսօր ծոմ կպահեին: Զատիկից մեկ օր առաջ նավակատիքը էր, ձուկ էին ուտում: Ս. Ծնունդի նախորդ օրը Խթում էր: Ավագ հինգշաբթին Քրիստոսի ոտնլվան էր, եկեղեցի էին գնում, քահանան Քրիստոսի նման աշակերտների ոտքերը կլվար: Ուրբաթ օրը Քրիստոսի խաչելության օրն է, արյուն է թափվել Քրիստոսից, դրա համար էդ օրը էինք ներկում հավկիթները՝ սոխի կճեպով:

Ս. Զատիկի օրը լավ պատարագ կլիներ, ուրախություն, կեր ու խում կլիներ: Զատիկից հետո Կարմիր կիրակին էր լինում: Արդեն թույլ էր տրվում հարսանիք անել, քանի որ հիսուն օր պասի ժամանակ հարսանիք չէր լինում:

Օգոստոսի 15-ին Ս. Աստվածածնի տոնն էր լինում: Նորեն ուրախություն, ճվագում էին ու երգում, քանի որ հայկական թաղը առանձին էր, թուրք չկար, մարդիկ ազատ երգում էին: Լավ տոներ էին, լավ սովորություններ ունեինք: Մեր տոներուն թուրքերը անգամ կուգային, շատ կսիրեին Զատիկի կարմիր հավկիթ ուտել մեզի հետ:

Ամուսնությունները կամ սիրահարվելով կըլլային, բայց կար, որ իրարու երեսը չտեսած, ծնողները կստիպեին ամուսնանալ: Փոքր հորքուրիս տվին առանց տեսնելու: Կհիշեմ, հորքուրս չէր ուզում, պառկած լաց էր լինում: Հետո ծեծեցին, զոռով ամուսնացավ, բայց էնքան լավ մարդ էր, որ հետո հորքուրս զղջում էր դրա համար: Ամուսնալուծում չկար: Կար նաև աղջիկ փախցընելու սովորությունը, բայց միշտ տերտերի Ս. Պսակին պիտի արժանանային: Մինչև ջարդը երկու հոգի թուրքի հետ ամուսնացան: Մի թուրքը հայ և թուրք կնիկ ուներ, հայի հետ խոսելուց երեսը թթվացնում էր, իսկ թուրք կնիկի հետ խոսելու ժամանակ՝ ժպտալով էր խոսում:

Աղջիկ ուզելու համար ծնողները կգնային աղջկա ձեռքը խնդրելու: Եթե համաձայն լինեին, խոսքկապ կընեին, մատանի մը մատը կանցնեին: Հարսանիքի նախօրյակին՝ ուրբաթ օրը սինիի վրա հարսնացուին համար ընծաներ էին բերում: Շաբաթ օրը հարսնացուին բաղնիք էին տանում: Կիրակի օրը գալիս էին քավորը, քավորակինը հարսին եկեղեցի տանելու: Քավորակինը հարսին հագցնում էր: Կեսուրը, կեսարը չէին գալիս: Հարսին հագցնելու ժամանակ ուրախանում էին, երգում, պարում էին, տանում էին եկեղեցի: Հարսի երեսին քող էին գցում: Հարսի հագուստը կամ սպիտակ, կամ վարդագույն կլիներ: Նշանդրեքին աղջկա հայրը հագուստ, կոշիկ կառներ, իսկ հարսնիքին՝ տղայի կողմը կըներ: Հարսին թագով հարսնիքի հագուստ կհագցնեին, թյուլը երեսին կգցեին: Կանանց հագուստները արդեն 1900-ական թվերուն եվրոպականացած էին:

Ամուսնանալուց հետո եղբայրներ, քույրեր, հարսներ, թոռներ իրար հետ սիրով կապրեին: Տնփեսա գրեթե չէին երթար: Մեզ մոտ մեկ տղա մը տնփեսա էր գնացած, ևոր «հարս մանուկ» կըսեին ծաղրական:

Հարսը ամուսնու տան մեջ պիտի հնազանդվեր: Եթե կեսուրը հիվանդ էր կամ ծեր, հարսը կտևօրիներ տուներին: Ձխոսկանությունը կար «լեզու պահում էինք»:

Հիվանդը որ մահամերձ էր լինում, տերտերը հաղորդություն էր տալիս: Ննջեցյալին սև էին հագցնում: Փոքրերին գերեզմանատուն չէին տանում: Հայկական գերեզմանները պառկած էին, ան իմաստով, որ մենք՝ հայերս, թուրքի ձեռքը գերի ենք և իրավունք չունինք տնկված գերեզմանաքար դնելու, իսկ թուրքերինը տընկված է վրայի քարը: Մեզ մոտ արժանի մեռելների շորերը կտանեին, վրան կուլային, կողբային: Մեռելատաը ճաշ չէր եփվում: Մարդիկ՝ հարևանները, բարեկամները դուրսեն ճաշ կբերեին, որ մեռելատերերը ուտեն: Իսկ կիրակի օրը մեռելատերը մատաղ էր անում, բոլորին հրավիրում էր, ուտում էին միասին:

Մեզ մոտ հիվանդանում մեռնում էին տիֆից: Երբ այդ հիվանդությունը տունը կմտներ՝ տունը կմաքրեր կելլար: Այսինքն՝ բոլորը կմեռնեին: Ծաղիկի հիվանդությունը ևս տարածված էր: Ան ալ դեմքին վրա հետքեր կձգեր: Սկարլաթինայով երեխաները կհիվանդանային: Մեզ մոտ մի հատ բժիշկ կար, Ստամբուլ սորված էր, անունը դոկտոր Գրիգոր Էֆենդի Ոաքըջյան էր: Ան կեսարացի էր: Եկել էր մեզ մոտ, տուն էր շինել, ապրում էին: Մի դեղագործ կար:

Ծննդաբերության ժամանակ տատմերներ կային, բայց մեռնողներ կըլլային, որոնք որբ երեխա կթողնեին: Որբին կամ աղջկա մայրը կամ տղային մայրը կպահեր: Ամուսինը ևորեն կամուսնանար, որ երեխային պահեն:

Մեզ մոտ հայերը թուրքերից զանազանվում էին գլուխնին կապած փաթթոցեն: Թուրքերը կանաչ փաթթոց կկապեին, հայերը՝ ճերմակ: Հայերը ավելի քաղաքավարի կհագնեին: Թուրք կանայք չադրա էին կրում, իսկ կեսարացիները հարս աղջկան գլխին շալ էի գցում: Չադրան վրանին էին գցում փելերինի պես, երեսնին՝ քող, իսկ գյուղացիները հասարակ էին հագնում, որ աշխատեն: Ջեմալ Աթաթյուրքը հրաման տվավ, որ չադրան հանեն, գլխու փաթթոցները հանեն:

Թուրքերը մեզի կուգային, կերթային: Մի օր բեկի տունը գացինք, տեսանք ատլասների վրա պառկած էր: Տատիկս հարցուց՝ վատ բան չի՞ սպասվում: Ես ալ ըսի խոսքին մեջ մտնալով՝ մեզի վատ բան չը՞լլար: Բեկի կնիկը թերս երեսս նայեցավ, ըսավ. «Որ ըլլա, առաջին ներթին աս լակոտին ուղարկելու է»: Ադ միակ գեշ խոսակցությունն էր, որ լսած եմ, թե չէ հայ ու թուրք իրար հետ լավ էին:

Մեզ մոտ ֆեդայի չկար: Քանի որ անտառ չկար, որ ապաստանեին: Երկու վարժապետ ունեինք, որոնք ֆեդայական երգեր էին երգում, բայց ֆեդայի չէին: Կիլիկիայի կողմից երկու ֆեդայի էին եկել Ձաթ գյուղը: Անոնցմե մեկը՝ Դորտյոլից էր, մյուսը՝ չգիտեմ որտեղից էր, բայց «Ռոո Մանուկ» կըսեին, մեկ աչքը չուներ: Ասոնք գնում են Ձաթ գյուղը: Թուրքական ոստիկանները կիմանան, կպաշարեն Ձաթ գյուղը, տերտերին մորուքը փետտում են, որ խոստովանի: Ստիպված հայտնում են այդ ֆեդայիների տեղը, գնում բռնում են, էնքան են ծեծում, վերջն ալ չորսոտանի, խեղճացրած բերին մեզ մոտ ու սպանեցին: Ֆեդայիները՝ պաշտպանում էին հայերի պատիվը: Մեր երկիրը եղել է Ժիրայր անունով ֆեդայի մը, որը տարբեր կերպարանքներով էր հանդես եկել, վերջը կեսարիայի մեջ բռնել էին:

Ջարդից առաջ մի հայ կար, նրան բռնեցին կառավարության շենքի մոտ, ծառից կախեցին, քանի որ ինքը կառավարական գաղտնիքը հայտնել էր հայերին:

Էս բաները գաղտնի էին խոսում:

Մեր պատից կախված էին Վարդան Մամիկոնյանի, Տիգրան Մեծի նկարները: Բայց երբ պատերազմը եղավ, ոչնչացրինք էդ պատկերները:

Թուրքական կառավարական շենքին տակը բանտ կար, ջարդեն առաջ հայ տղամարդկանց հոն տարին: Եթե հայ ու թուրք խնդիր ունենային, քեռիս դատապաշտպան էր, անոր կդիմեին: Պապս ալ հայերուն ներկայացուցիչն էր: Հայի թուրքի կռիվ ըլլար, եթե արդար էր՝ հայը կհաղթեր, իսկ հայը հայու հետ վիճաբանությունը տերտերները կհաշտեցնեին:

Մեր բոլոր ծննդականները եկեղեցին կուտար: Տների համար փաստաթղթեր ունեին: Մեր փաստաթղթերը, պասպորտները անգամ վառել էին: Մենք շատ գրքեր ունեինք: Կաշվե կազմով մեծ «Հայսմավուրք» ունեինք, հայատառ թուրքերենով Աստվածաշունչ ունեինք: Ձանի որ շատ հայեր հայերեն չէին գիտեր: Մենք շատ աղոթագրքեր և այլ գրքեր վառեցինք: Ինչպես նաև հայկական թերթեր, որոնք ստանում էինք Ստամբուլից: Երբ 1914-ին պատերազմը սկսվեց, մենք թերթերնև իմացանք:

Մինչև 1908 թ. հյուրիեթը հայերը զինվոր չէին երթար, բայց հետո, իբր հայերն ալ թուրքերուն եղբայր են ու հավասար են, 1912 թ. Բալկանյան պատերազմին մասնակցելու համար հորս բանակ տարին:

Նախքան կոտորածը թուրքական ոստիկանները նկան գենքերը հավաքեցին: Հարուստ Կարապետ էֆենդիի տղան ասել էր՝ գենք չկա: Ոստիկանները խուզարկել էին, գտել էին, անոր եղունգները քաշել էին, թևերուն տակն ալ խաշած հավկիթ էին դրել ու կապել: Հետո արդեն պարզ դանակ անգամ չթողեցին:

Նախքան կոտորածը 1915 թ. հուլիսի սկիզբն էր, դեռ ևոր ցորենն էինք հավաքելու, մեր քաղաքի դայմադամը՝ Ջեմալ բեյը, գալիս է: Հայ ու թուրք գնում են դիմավորելու: Երեք օր հետո Ջեմալ բեյը եկավ մեր տունը, սուրճ հրամցուցինք: Էդ դայմադամ Ջեմալ բեյը հորեղբորս հարցեր տվավ, եղավ գնաց:

Շաբաթ օրը, իրիկվան դեմ բոլոր տղամարդկանց կհավաքեն՝ թուրքական բանակ ղրկելու, բայց այնտեղ հայերը կզատեն թուրքերից: Տերտեր պապիկս, որ լիազորված էր հայերի իրավունքը պաշտպանելու, կըտեսնա, որ հայերին ջոկում են թուրք գինակոչիկներից, կըսե. - Ինչու՞ հայերին ջոկում եք:

Թուրք հազարապետը կըսե. - Փափա՛զ էֆենդի, հայերը պիտի գնան ճանապարհ շինելու, թուրքերը պիտի գնան ռուսական ճակատ:

Հաջորդ օրը կիրակի էր: Պապս Ս. պատարագը վերջացրել, հազիվ տուն էր եկել: Դեռ շունչ չառած, բոթը հասավ մեզի: Արթին աղային տղան ջրաղաց-

պան էր: Առտուն կելլա կերթա աշխատանքի, կտեսնա ջրաղացին քովը լիքը մարդկանց գլուխներ, ոտքեր, ձեռքեր: Լեզուն վախեն բռնված ճնհին կուգա տուն, կը-պատմե տեսածը: Արթին աղան տղայի հետ եկան պապիկիս պատմեցին, ըսին. - Էրեկվա զինվոր տարվածները գիշերով մորթել են:

Պապիկս ասում է. - Գնացեք, բողոքեք ղայմաղամին:

Արթին աղան կերթա ղայմաղամին բողոքելու, բայց ան ալ գիշերը տուն չի գար:

Հաջորդ օրը՝ երկուշաբթի, երկու թուրք ժանդարմ քոփալներով էկան: Ուրիշ անգամ, երբ մեր տունը ժանդարմ կուգար, քաղաքավարի կերպով կսպասեին, որ փափազ էֆենդիին հագնվի ու իրենց հետ գնա: Այս անգամ էկան, կոշտ կերպով ըսին. - Հայդե՛, քալը՛ն (դե՛, վե՛ր կացեք):

Պապիկիս տարին ղայմաղամին մոտ: Պապիկիս հետ տարել են նաև տեղի երևելիներին, վաճառականներին, մտավորականներին: Մի թուրք ասում է պապիս. - Փափա՛զ էֆենդի, մոտիկացավ վերջին ժամդ, ի՞նչ ունիս ըսելիք:

Պապիկս ծունկ կչոքե, կաղոթե: Անտեղեն թուրք զինվոր մը կացինով կհարվածե, պապիկիս գլուխը կը-գլորվի գետին: Կսկսին ֆուտբոլ խաղալ իմ խելացի պապիկիս գլխուն հետը:

Մեկ էլ դուռը բացինք, տեսանք տնից, հանդից, խանութից հայերին հավաքեցին, տարան երկու-երեք հոգու ձեռքերը իրար կապած, տարին լեցուցին բանտը: Եթե կնանիքը ձայն հանեին, ծեծում էին, ասում էին՝ «Վաղը նամակ կստանաք»: Արդեն հանցագործներին հանել էին բանտերից: Թուրքական կառավարությունը հրաման էր տված, որ ով որ հայ պահի իր տան մեջ՝ կպատժվի:

Շրջապատի թուրքերը կանգնած նայում էին: Մեկ էլ դպրոցական հորեղբայրս շնչակտուր ներս ընկավ՝ գլուխը պատերին խփելով. «Քսան ղուրուշի փամփուշտը խնայեցի՛ն, կացինով էին կոտորում բոլորին»:

Ատկե վերջը մարագի մեջեն դեպի հայաթը փորելով տեղ բացինք, որ հորեղբայրս թաքնվում էր էնտեղ օրվա մեջ: Գիշերը բացում էինք, որ օդ առնի: Հինսուն օր տղամարդ էին փնտրում, որ մորթեն: Հետո թուրքական կառավարությունը խորամանկության դիմեց, ըսավ. «Հայե՛ր, դուրս եկեք, ով թաքնված է՝ թող դուրս գա, գնա աշխատանքի»: Հայերը դուրս եկան թաքնված տեղերից, բայց սկսեցին բռնել էդ հայերին էլ:

Հինսուն օր հետո 1916 թ. մարտին ղայմաղամը հրամայեց. «Մեկ կիլոգրամ հայու միս ողջ չպիտի մնա, բոլոր հայերին պիտի կոտորեք»:

Մինչ այդ, բոլոր հայկական գյուղերից շատ հայեր էին կոտորվել, ողջ մնացողները փախել, եկել էին մեզ մոտ թաքնվել: Կառավարությունը էնպես էր արել, որ հայի գյուղ գնալու համար թուրքի գյուղով պիտի անցնեին: Նախքան կոտորածը մեր մոտի Գևորգ աղայի միջնակ տղին ստիպել էին, որ զենքի տեղը ասի: Հայերը ոստիկաններին աճագին կարմիր ոսկի էր տվել, որ իրենց ձեռք չտան, բայց առաջին անգամ դրանց մորթեցին: Դրանց ընտանիքից մի հատ ծին ողջ չմնաց: Բոլորին մորթել էին: Թուրք մեծավորներից մեկը հետո հորեղբորս եկել պատմել էր:

Առանց տղամարդկանց մնացած ընտանիքները՝ կիները, օրորոցի մանուկները, ծերերը, բոլորին հանում էին ու քշում: Այդ ժամանակ շատերը մտածում էին, որ իրենց ունեցածը տան թուրքին կամ աղջիկը կնության տան, միայն թե ազատեն իրենց զավակներին: Եղան մայրեր՝ իրենց երկու-երեք զավակներուն պահ տվին արաբ ընտանիքներուն, քանի որ սիրուն երեխաներին փախցնում էին, տանում բռնաբարում, հավատափոխ անում:

Մեր տան պատից մի մեծ քար էին հանած, հորեղբայրս՝ Հարությունը Բերբերյանը, սողում, մտնում էր մեջը ու թաքնվում էր: Ով գալիս էր ժանդարմներեն՝ չէր գտնում:

Իմ իրիցկին տատս, որը պահած էր ադ Հարությունը հորեղբորս, օր մը կերթա հազարապետ Սելամի բեկին քովը, որը ամուսնացած էր մեզի ծանոթ հայ աղջկա մը հետ, կըսե հազարապետին. - Սելամի բեկ, Հարությունը տունն է, ի՞նչ պիտի ըլլա:

Հազարապետ Սելամի բեկը կոճակը համազգեստին վրայեն կպոկե, կըսե. - Աս կոճակը որ ժանդարմին հետ, որ ղրկեմ, Հարությունը թող գա:

Առավոտուն ժանդարմ մը եկավ՝ թախ-թախ դուռը զարկավ, ըսավ. - Հարությունը թող գա ղայմաղամին քովը՝ իր սափրիչի գործիքներով:

Հարությունը հորեղբայրս իր սափրիչի գործիքները հավաքեց, ժանդարմներուն հետ դուրս գնաց: Ադ պահուն ալ թուրք սափրիչ մը ղայմաղամին կթրաշե եղեր: Ադ ալ առաջին անգամ ածելի կզարնե, ղայմաղամին երեսը կարյունե: Սելամի բեկը ղայմաղամին կըսե. - Թող Հարությունը թրաշե:

Հարությունը հորեղբայրս կհանե իր գործիքները, առոք փառոք ղայմաղամին կթրաշե, կվերջացնե: Դուրս է գալիս, որ տուն գա, կտեսնա գերդաստաններով բոլորին կապկպած աքսոր են տանում: Ղայմաղամը կհրամայե. - Ժանդարմ մը թող Հարությունին տուն տանի:

Հարությունը եկավ տուն: Ան քսան տարեկան էր, բայց արդեն ութսունի չափ էր երևում: Հարությունը հորեղբայրս տեսավ, որ ճար չկա. - Ալ թուրքին չպիտի հավատամ, - ըսավ, խաշխաշի յուղը և կապույտ պըղինձարջասպի քարը խառնեց իրար, ըսավ, - ես իմ կնոջս կխմցնեմ, վերջը՝ ես ալ կխմեմ, դուք ինչ կուզեք՝ եղեք:

Հարությունը հորեղբայրս թույնը կնոջը խմցուց: Մի՛շտ երեք րոպե վերջը ընտանիքին ներում եկավ: Քսանհինգ հոգի հորեղբորս սայիլեն ազատվան: Հորեղբայրս իսկույն տասնհինգ ձվի դեղնուցը իրար խառնեց, կնոջը խմցուց: Կինը փսխեց, ազատվեցավ, ողջ մնաց:

Մեր գերդաստանը շատ մեծ էր: Մեր գերդաստանեն շատերը թուրքական կառավարությանն էին ծառայում, պաշտոնյաներ էին: Օրինակ՝ հայրս թարգմանիչ էր, Կարապետ աղային մեծ եղբայրը դատապաշտպան էր՝ վճիռ կայացնող: Բայց նախքան կոտո-

րածը, հայերուն զենքերը հավաքելու ժամանակ, Կարապետ աղային տարել էին ոտքերուն և ձեռքերուն մատներուն եղունգները քաշել էին՝ սարսափելի տանջանքների ենթարկելով: Կարապետ աղային կինը, երեք տղաներով, թոռներով, հարսներով, նաև աղջիկը, փեսան՝ թոռներով, նաև Կարապետի եղբայրը՝ Սուքիասի ընտանիքը՝ Սուքիասը, կինը, տղան. ադ բոլորը առաջին ջարդին զոհվեցին: Թուրք բեկը երբ հրաման տըվավ, որ մի կին հայու միս չպիտի թողնեք, Սուքիասին աղջիկները՝ Եսթերը և Փրլանթին բեկին կինը տարել էր պահելու: Ադ աղջիկները հուսահատված թույն կխըմեն, կմեռնին: Բեկին կինը դուռը կզարնե, աղջիկները չեն բանար: Բեկին կինը քացով կուտա, դուռը կբանա, կտեսնա, որ Սուքիասին աղջիկները փրփուրը բերանին գետինը փռված են: Բեկին կնիկը անտարբեր կըսե. - Ղարթ գյավուր էին. թուրքություն չընդունեցին՝ մեռան, տարե՛ք, տվեք շներուն, թող հոշոտեն:

Բեկին կնիկը անոնց վիզերեն չվաններ կանցնե, կքաշեն, շուներուն կուտան, որ ուտեն: Էդ տեղերը, որ էդ դիակները գցել էին, մենք հետո բանջար հավաքելու էինք գնացել, ասում էին՝ Էստեղ Էսթերին ու Փրլանթին են շպրտել:

Մեր գերդաստանին մեջ ուրիշ շատ հորեղբայրներ, քեռիներ կային: Տատիկիս քեռու տղան Անկարայում պառլամենտի անդամ էր՝ Բարսեղ աղա կըսեին: Ան երկու հարկանի հյուրանոց ուներ: Օր մը պառլամենտի ժողովի ժամանակ բեկը ըսեր է. - Բարսե՛ղ աղա, թուրքությունը ընդունե, գլուխդ չալմա կապե, անունդ փոխե. հայերուն հարցը ուրի՛շ է...

- Ո՛չ, - ըսեր է Բարսեղ աղան, ես թուրք չե՛մ ըլլար:

Բայց այդ եղած է վերջին ժողովը. անոր ալ սպանել են: Ադ ալ գնաց: Բարսեղն ալ գնաց:

Հետո թուրքերը մտել, գրավել էին հյուրանոցը:

Հետո հայուն մեկը հողամասի հաշիվ ունի եղեր թուրքի մը հետ: Էդ թուրքը ժանդարմի մը հետ կերթա, աթոռը կքաշե, կնստի: Էդ հայուն լեզուն կտրել կուտա, ականջները կտրել կուտա: Հետո ալ կըսե՝ տարե՛ք, սպանե՛ք:

Մեր քաղաքի դոկտորին՝ Գրիգոր Ռախըջյանին ալ եկան տանելու: Հիշում եմ ոոմաթիզմայով պառկած էր, գիշերով էկան, տարին: Էդտեղ Իբրահիմ բեկին աղջիկը կըսե հորը. - Եթե աս դոկտորը չըլլար, ես մեռած կըլլայի:

Աղջկա հայրը՝ բեկը, ձիավոր կղրկե դոկտորին բերել կուտա ղայմաղամին քովը:

Ղայմաղամը կըսե. - Ռեցեպտ մը գրե:

Ադ դոկտորին ձեռքերը կսկսին դողալ: Ղայմաղամը կըսե. - Բանի պետք չէ. տարե՛ք, մորթեցե՛ք:

Ադ հայ դոկտորը մի աղջիկ ուներ՝ Մայրենի անունով: Ան իմ տարեկիցս էր: Ադ աղջկան Իբրահիմ բեկը կուղարկե իր արտը, որ վար անի: Խեղճ աղջիկը՝ արև չտեսած աղջիկ, ա՞րտ կրնա վարել: Դոկտորին կինը կերթա Իբրահիմ բեկին կխնդրե, որ իր աղջիկին ազատե ադ գերությունեն: Իբրահիմ բեկը իր ծառային կհրամայե, որ աղջիկը ետ բերի: Ծառան աղջկան մորը կնստեցնե էշին, ինքն ալ ձիու վրա կնստեցնե աղջկան:

Ճամփին մորը հրացանով կսպանի, աղջկան ալ կբռնաբարե: Էդ դոկտորին աղջիկը կխենթանա: Ադ սրիկա ծառային անունը Սիմսար էր: Վերջը մենք ադ դոկտորին աղջկան առինք պահեցինք: Հորեղբայրս մի հայ արաբացի գտավ, ըսավ. - Աս աղջիկին Կեսարիա կտանիս, իր հետավոր ազգա կանին տունը կտանիս:

Երբ հայրս թուրքական զինվոր էր, օր մը իրիցկին տատիկս գիշերը երազ մը կտեսնա, որ իբր հայրս տունին յուքլիքին մեջը լիքը գանգեր, ոսկորներ բերեր, լցրեր է: Իրիցկին տատիկս կըսե՝ Գասպար, տղաս, ինչո՞ հոս բերիր լեցրիր: Հայրս կպատասխանե՝ օրին մեկը թանգարան պիտի շինվի, աս ամբողջը մեջը պիտի դրվի, որ աշխարհը տեսնա:

1918-ին արդեն ջարդը դադրած էր: Զինադադար էր: Թուրք գաղթականներ էկած լցված էին հայերուն տները: Ձե՞ր որ ոուսը գրաված էր շատ հողեր: Օր մը թուրք կնիկներ մը եկան մեր դուռը զարկին, ջուր խընդրեցին: Մամաս ըսավ ինձի. - Վերոնիկա՛, ջուր բեր:

Ադ չադրայով թուրք կիներեն մենք մոտեցավ մորս, գաղտնի ըսավ. - Մայրի՛կ, դուք հայ եք, ի սեր հայության, ինձի ասոնց ձեռքեն ազատեք: Իմ անունը Անգնիկ է: Ինձի փախցուցած են:

Մայրս ըսավ. - Այսօր դուն գնա, ես փեսայիս հետ խոսիմ, տեսնանք ի՞նչ կրնանք ընել:

Փեսաս իրիկունը տուն եկավ: Մամաս պատմեց: Փեսաս ըսավ. - Երեխա մը ղրկենք: Անգնիկին թող բերե:

Տասը տարեկան Հակոբիկին ղրկեցինք: Ան գընաց Անգնիկին բերավ: Թուրքերը կտեսնան Անգնիկը չընկա: Էկան լցված մեր տունը, ըսին. - Տվե՛ք մեր աղջիկը:

Իրիցկին տատիկս օգնություն պոռաց: Ժանդարմա մը կանցներ դուրսեն, էկավ: Տատիկս ըսավ. - Աս թուրքերը էկած են աղջիկ կուզեն: Մենք խաբար չենք:

Ժանդարմը ադ թուրք կնիկներին դուրս հանեց մեր տունեն, Անգնիկը մնաց մեր տունը: Ազատվեցավ: Վերջը մենք Անգնիկին որբանոց դրինք: Էնտեղեն Բեյրութ կտանին որբերին: Մի խոսքով Անգնիկը հայ մնաց:

Կհիշեմ, ջարդին երրորդ օրն էր, թուրքի չադրայով մայրս չորս տարեկան քրոջս հետ գնում է իր մոր տունը: Մայր ու աղջիկ խորհուրդ անելու ժամանակ սայլերը բերել են, դրսում՝ գոռում-գոչյուն: Բոլորին աքսոր են տանում: Մայրս կըսե. - Ես հոս չեմ ապրիր:

Ժանդարմը կըսե. - Էդ շուկայի կողմից գնա ձեր տունը:

Մայրիկս շշկլվում է, չորս տարեկան քրոջս կըկորսնցնե: Մայրիկս մի կերպ եկավ տուն: Մեկ էլ տեսանք՝ փոքր քույրիկս մինակը եկել, գտել էր մեր տունը: Ուրախացանք, իրար գտանք: Բայց մայրիկս պատմեց, որ տատիկին տարին սայլերով:

Ես վազեցի դուրս իյնալ-էլլալով գացի տատիս տունը հասա, տեսա դռները բաց, մեջը դատարկ: Մարիամ տատիկս աքսորին մեջ մեռ-մեռնակ կմնա մեռելներին, արյուններուն մեջը: Դու մի ըսեր ժանդարմներ կուգան կմորթեն:

Մի Սարդալայի Աննա մը կար: Ան մտել էր դիակներին տակը, շունչը բռնած մնացել էր: Հետո, որ ժանդարմները գնում են, աս Աննան կամաց-կամաց

փորսող կուգա մեր գեղին կմոտենա, ամմա՝ ուռած փքված, տկլոր: Մի հատ թաշկինակ անգամ չէին թողած, որ ամոթը ծածկեր: Թաղին թուրք լակոտները կտեսնան ասոր, կըսեն. - Ամա՛ն, դև է գալիս, - վախից փախչում են:

Աննան կուգա իր տունը: Կտեսնա դուռը՝ բաց: Իր տասնչորս տարեկան մի հատիկ տղան տված կըլլա դրացի թուրքին: Կերթա ադ թուրքին: Թուրքը տունը մի ոչխար կմորթե, մաշկը կհանե, Աննային մեջը կփաթթե, Աննային վերքերը կբուժե: Բայց Աննային մեկ աչքը դուրս ինկած էր: Ան կպատմեր, որ տատիկիս մորթեր էին աքսորի ճամփին:

Ջարդի ժամանակ մեր գյուղը մեծահարուստ Գևորգ աղա Արաբ օղլի մը կար: Աքսորի ժամանակ ադ Արաբ օղլի Գևորգ աղան թուրքերուն կըսե՝ ինչ կուզեք կուտամ ձեզի, միայն իմ գերդաստանս ազատվի: Գևորգ աղան փթերով կարմիր ոսկի կուտա թուրքերուն, բայց անոր ալ բռնեցին, տարին, բանտարկեցին: Իրեն ամբողջ գերդաստանին ալ տնից հանեցին, մորթելու տարին: Այնտեղ Գևորգ աղային չորս տարեկան թոռը կճանչնա թուրք ժանդարմին, որ իր հորը ծանոթ է, կերթա ոտքերուն կպլլվի: Թուրք ժանդարմը կըմեղքնա էդ երեխային, կառնե, կտանի իր տունը: Լուրը կերթա, կհասնի ղայմաղամին, որ էդ չորս տարեկան երեխային ժանդարմը տարավ իր տունը: Գիշերով կուգան, կառնեն երեխային, կտանին իր հարազատներուն մորթված տեղը՝ կսպանեն: Խեղճ Գևորգ աղային տրված այդքան կարմիր ոսկիներն ալ իզուր կերթան:

Նախքան կնահիքի կոտորածը սկսվելը մեր քաղաքի Իդելի գյուղից մի ընտանիք փախել, եկել էր մեր գյուղը: Մեզ մոտ որ տղամարդկանց հավաքեցին, նրանց տղամարդկանց էլ տարել մորթել էին: Կինը ժանդարմին հետ կպայմանավորվի, որ եթե իրեն և իր չորս զավակներին ազատե, իր հետ կամուսնանա: Ջարդը կշարունակվի: Կինը ճուսաճատությունեն թույն կըխմե, կմեռնի: Առավոտը զինադադար եղավ: Չորս զավակները եկան, որ օգնեն մորերնուն: Տասնհինգ ձվի դեղնուց խմցուցին, բայց չօգնեց: Թուրք ժանդարմը կտեսնա, որ կինը՝ Լուսաբերը մեռեր է, կսկսի թալանել անոր տունը: Թոփերով խադիֆեներ, ուրիշ թանկ բաներ, ամբո՛ղջ կհավաքե՝ կերթա:

Միշտ է, շատերը ձևականորեն թուրք դարձան, անունները փոխեցին: Անոնց տարան կառավարական շենքը, իրենց մոլլան ասում էր. «Ձեր կեղտոտ կրոնը թողնում եք, մեր կրոնն եք ընդունում չէ՞»: Հայերն ալ «հա՛» էին ասում ու ստորագրում էին ու տուն էին ղըրկում: Ո՛չ գրել կար, ո՛չ փաստաթուղթ:

Ծատ հայ կիներ ստիպված թուրքի կին դարձան, բայց հետո շատերը ետ եկան: Ղայմաղամ բեկը մի հայ կին առավ: Անկե մի տղա ունեցավ: Էդ հայ կնոջ եղբայրը Ամերիկայեն հրավեր ղրկեց իրեն: Կինը ձգեց թուրք մարդուն ու տղին, գնաց Ամերիկա:

1924-ին զինադադարեն ետքը, երբ Քեմալ Աթաթյուրքը եկավ կառավարության գլուխը, հայերը բողոքեցին, ըսին. «Թուրքերը մեզի շատ վնասներ տվին, մեր հարազատներուն մորթեցին», հետո դատավարություն եղավ և շատ թուրք մեծավորներ պատժվեցան:

Մի հայ աղջիկ պահված էր թուրքի տանը: Ադ թուրք մարդ ու կինը էդ հայ աղջկան պահում էին իրենց տղի հետ ամուսնացնելու համար, բայց հայ աղջիկը սիրահարված էր Խաչեր հորեղբորս վրա: Օրին մեկը անլուր ղրկեց, որ ես ուզում եմ Խաչերի հետ ամուսնանալ: Հայերը հեռագիր քաշեցին, իբր թե էդ աղջկա հորեղբայրը հետու երկիրեն կանչում է իրեն: Էդ աղջիկը կփախի թուրքի տունեն, եկավ մեր տունը: Թուրքը, որ իր տղայի համար պահած էր էդ աղջիկը, կըսե. «Ես սրա քիթն էի մաքրում, ո՞նց դավաճանեց մեզի»: Դրանց տղան սպայական դպրոցն ավարտեց, եկավ մեր տունը: Խնդրեց, աղաչեց: Հորեղբայրս մտածեց, որ մի փորձանք կելլա, նորեն կփախցնեն աղջիկին. Եփրեմ կառապանին ըսավ. - Գիշերը ձիերդ լավ կկերակրես, մեր հարսին կտանիս Կեսարիա:

Մենք անոր գլխուն չադրա գցեցինք, ղրկեցինք Կեսարիա: Բայց էդ սպա թուրքը կառավարությանը լուր կուտա, կըսե՝ գտեք իմ հայ հարսնացուին: Բայց մի թուրք հարյուրապետի կին կար, որը հայ էր, գնում է, խնդրում է, որ էդ հայ աղջիկը արդեն հայ մարդու է առած, հիմա ալ հղի է՝ պիտի ազատվի:

Էսպես էդ թուրքերը թշնամացան մեզի հետ: Էդ թուրքը էկավ ըսավ. «Երկու ժամ ձեզի ժամանակ, դուրս պիտի գաք ձեր տնից»:

Մենք ստիպված դուրս եկանք մեր տնից: Գնացինք մի թուրքի տուն, որը մեզի հետ լավ էր: Էդ թուրքը մեզի իր տունը առավ, հաց-բաճ տվեց:

1924-ին մենք փոխադրվանք Պոլիս: Մեկ տարի մնացինք Պոլիսի գաղթականյանը: Ռուսաստանեն նավ եկավ, մեզի յոթ հոգիով Բաթումի բերավ: Մեզի հետ ոչ մի տղամարդ չկար: Բաթում եկանք, աղքատություն էր տիրում: Հորեղբայրս եկել էր մեզ դիմավորելու: Գնացինք նստանք, մազութով էր գնացքը աշխատում: Մեզ իջեցրին Դավալլու կայարանը, վրանների տակ, հաց-մաց բաժանեցին: Հորեղբայրս մեզ տարավ Նախիջևան, հայրիկիս մոտ: Հազիվ մեկուկես տարի միասին ապրեցանք, հայրիկս մահացավ: Հետո եկանք Երևան: Հունաստանեն եկած մի տղայի՝ սիվրիհիսարցի Ալեքսան Մկրտչյանի բոլոր հարազատները աքսորում սպանվել էին, մնացել էին ինքը ու իր քույրը: Գնում են խոտ հավաքելու, էդտեղ մի հայ տղի փորը թուրքերը դուրս են թափում: Վախից էս աղջկա լեզուն ետ է գնում: Հետո մի տղա սրանց տանում է իր տունը: Իրենց մոտի փողերը տալիս են նրան, բայց մի քանի օրից նա դուրս է հանում: Էդ աղջիկին տալիս են ղասաբի. էնտեղ ջուր է կրում, հիվանդանում է: Հրաման է գալիս, որ հայերը ետ վերադառնան. բոլորը հավաքվում են, բայց աղջիկը հիվանդանում է խոլերայով ու մեռնում: Եղբայրը հրեշտակ քրոջը թաղում է, լսում է, որ իր հորքուրը Էսքիշեհիրը կապրի և ամուսինը ատաղձագործ ըլլալուն չեն աքսորված: Գնում է նրանց մոտ: Արհեստ է սովորում: Օղորմի իրանց: Նրանք էլ 1924-ին Պոլսից գնում են Հունաստան, էնտեղից էլ՝ Հայաստան:

1927-ին արդեն Ալեքսանը մի փոքր տուն էր շինել Երևանում: Որբ տղա էր, լավ տղա էր, ամուսնացանք, ուրախ էինք, որ թուրքի ճիրաններից ազատված ենք: Բայց աս Սումգայիթը ճիշտ մեր տեսած եղեռնն էր: Թուրքը մնացել է նույնը: Մեր կյանքը տխուր է անցել, միշտ մրմուռ կա մեր սիրտերուն մեջ...

215 (215).
ԱՆՈՒՇ ԹՈՓԱԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ՅՈԶՂԱՏ, ԷՅԼԵՆՋԵ Գ.)

Էրիկմարդոց խմբով տարին հայոց եկեղեցին լեցուցին, մորթեցին, մեռցուցին, լեցուցին ջուրին մեջը:

Մենք Յոզղատի Էյլենջե գյուղեն ենք: Ես հինգ տարեկան էի: Մամայիս քովն էի, կհիշեմ: Մենք մեր հին տունը մնացինք, քանի որ պապաս թուրքական զինվոր էր գացած:

216 (216).
ՀԵՐՄԻՆԵ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1912 Թ., ՅՈԶՂԱՏ)

Բիթուն ընտանիքս դանակով գացած է: Կեսուրս օրը երեք անգամ կուլար, իր տղաներուն դանակով մորթել էին: Կեսուրս կեսարացի էր, Յոզղատ հարս եկեր է, թուրքերը ըսեր են. - Աս մեկուկես տարեկան տղան մեզի տուր:

- Չե՛մ կրնար տալ. - ըսեր է կեսուրս, չի՛ տվել:

Ադ մեկ զավակին վրա կդողար կըսեր. «Գէօրէչիմ գյուն սէնդէն դըր» (տեսնալիք օրս քեզինց է): Կեսուրս շատ մաքրասեր էր: Ամեն ուրբաթ մաքրություն կընեինք: Հաջի մայրիկ մը ունեինք, օր մը ինձի ըսավ. - Հերմինե՛, մի՛ թաքցներ. հղի ես:

Գիշեր մը Աստվածամայրը եկավ երազս, ըսավ. «Հերմինե՛, Ս. Հակոբից և Քրիստոսից Հակոբ անունով մանչ մը պիտի տա Աստված»: Նաև տեսա, որ երեք աստղ փայլեց: Ադ կնշանակե դժվար պիտի ծնվի, բայց հաջող պիտի ըլլա: Նահատակված հայրս գերեզման չունեցավ, և անոր անունը կրող մանչ մը պիտի ունենայի: Ուխտ ըրի, ըսի. «Աստվածամա՛յր, Քրիստո՛ս և Ս. Հակո՛բ: Նահատակներուս՝ պապայիս, հորեղբայրիս, մորեղբայրիս փոխարեն Հակոբ մը պիտի տա ինձի Աստված»:

Աստվածածինը ըսավ. «Քու ուխտը չընդունի՝ Աստված որու՞ն պիտի ընդունի»: Մամայիս ալ պատմեցի ադ երազս:

Ս. Ծնունդին օրը սանջիով, Աստվածամոր օգնությամբ, ազատվեցի: Բժիշկը եկավ ըսավ. - Աս շա՛տ շնորհքով տղա մը պիտի ըլլա:

Հակոբս մեծցավ, եկեղեցիին մեջ դպիր դարձավ:

Կհիշեմ մանկությունս: Ես չորս-հինգ տարեկան էի, ընտանիքիս անդամներուն՝ տղամարդկանց տրին Քեսկին Մադենին հանել են, Անկարային մոտը տարել են մերինները: Ուզեցել են պապայիս մեռցնել, որ մամայիս՝ Տիրուհուն տիրանան: Մամաս Տեր հայրին հարսն էր: Տեր հայրը շատ հավատացյալ էր, պատարագի ժամանակ ոտքը օդին կբարձրանա եղեր: Քեսկին Մադենիին եկեղեցիին բաղը թաղած են անոր՝ Գրիգոր Տեր-Գրիգորյանին: Անոր մեռնելեն վերջը երեք օր լույս կծագի շիրիմին:

Փափազին հարսը շատ գեղեցիկ և շատ հարուստ կըլլա, վրան գլուխը ոսկի-արծաթ: Մեր գյուղը թուրք օնբաշի մը կուգա, կըսե մամայիս. - Փափազըն գէլինը (Տեր հայրի հարս), մեղք ես, էկուր ինձի հետ, ես քեզի կազատեմ:

Մամաս չուզեր էրթալ. - Ո՛չ ոսկիդ, ո՛չ ալ քեզի կուզեմ, - կըսե, չընդունիր:

Ադ օնբաշին տասնմեկ գող կղրկե, որ կողոպտեն մեր ունեցածը: Եղբորս ծունկին վրա անոր երեք երեխաները կմորթեն: Հետո կգտնան արծաթ ոսկիները, կառնեն, կերթան: Ինչ տանջանքներով, աղի արցունքով քաղաք կիջնանք: Մամաս ոտքով կը քալե՝ քառասուն օրվա քույրս գիրկը: Սաղչալը անունով գյուղ մը մեկ տարի կմնանք: Մեծ մայրիկս՝ հրիցկինը, կաղոթե: Ազատվեցանք ադ տեղեն: Գյուղեն ելանք, մեր տունը ետ եկանք: Մայրս կուլա մինչև վերջը: Ինձ կըպատմե տեսածները, կուլա՛-կուլա՛: Ես պզտիկ եմ, բայց կմտաճոգվիմ մորս վիճակը տեսնելով: Մտածեցի՝ ի՞նչ կրնամ ընել: Մեկեն զգացում մը եկավ վրաս, ըսի. «Քանի որ Աստված մը կա, ես պիտի աղոթեմ, որ մամաս չի լա, Աստված պաշտպան ըլլա»: Ադ միջոցին մեր ապրած տեղը մանկապարտեզի եկեղեցին բացվեցավ: Օրիորդս՝ Գյուլլի անունով աղվորիկ աղջիկ մըն էր, ըսավ. «Ես քեզի աղոթք պիտի սորվեցնեմ, բայց գիրք չունիմ, մամաս ջարդի ժամանակ վախեն բոլորը այրել է»: Ամենքս դպրոցին մեջ որբ ենք, գիրք՝ չկա, բայց օրիորդիս ըսած «հավատով խոստովանիմ և երկիր պագանիմ» առանց գրքի գոց սորվեցա: Մեկ անգամ լեցո՛ւն որբեր: Ես օր մը դպրոցեն եկա ուրախ, քի աղոթք ենք սովորել: Մենք՝ որբ, դրամ՝ չիկա, պապա՝ չիկա, ազգական՝ չիկա: Ըսի. «Աղոթք մը սորվեցա»:

Մամաս սուփրայի վրա քիչ մը բլղուր էր գտել, փիլավ էր եփել, դռնչաղըյով՝ փեմբե ամանին մեջը: Քույրս, եղբայրս պզտիկ են, մայրս՝ քսաներկու տարեկան: Ես ըսի. «Աս կերակուրը առանց աղոթքի չուտվի՛ր»:

Քույրս, ախպարս հի՛չ ձայն չհանեցին. «Անոթի՛ ենք» չըսին: Ես երեսով պատին դարձա, մամաս կարպետ մը գետինը փռած էր, վրան ծունկի եկա, սկսա աղոթել «Հավատո խոստովանիմը»: Վերջը կերանք աղ փիլավը: Ես կաղոթեմ «Փառք ի բարձունս», «Տեր ողորմեաս». կսնդրեմ Աստվածամորը՝ օգնի: Քանի որ հաց՝ չիկա, հայր՝ չիկա, եղբայր՝ չիկա: Հիմա ամեն բան կըմոռնամ, բայց ադ մանկությանս աղոթքները կհիշեմ: Աստված մեզի օգնեց, բայց բոլո՛րը մեռան. ջահե՛լ, ջահե՛լ մեռան:

Ես ուրիշներուն կըսեմ. «Դուք ապրիլի 24-ին միայն սուգ կպահեք, բայց անոնք երեք հարյուր վաթսունհինգ օր սուգ կպահեն: Անոնք ձեզի համար մեռան: Ինչու՞ դուք հայերեն չեք խոսիր, ինչու՞ դուք ձեր եկեղեցիին շուրջը չեք»:

217 (217).
ԻՍԿՈՒՀԻ ՀԵԹՈՒՄՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1915 Թ., ՍՏԵՆՈԶ)

Պողոս պապաս թուրքական զինվոր գացեր է և չէ եկած, չեմ ճանչնար: Կըսեին որ մեռցուցեր են բոլոր հայերուն. «Բաբալար գիթդի, բաբալար» (Հայրերը, գնացին, հայրերը):

Պապային թուրք ծանոթները մեզի նայեցան:

Աթաթյուրքը Անկարա մտավ, Հաոին հասավ: Հայերուն, հույներուն «դու՛րս գացեք» ըսավ:

1922-ի երկրորդ սեփերբերլիքին մեջ մորաքույրներս, հորաքույրներս մեռան: Քասթեմոնիի մեջ որքան հայ կար՝ բոլորն ալ ծովը թափեցին: Հետո մեզի վափորը լեցուցին: Մենք անտեր, անտիրական աղջիկներ էինք: Չէ՞ քի տեր չունեինք, Պոլիսեն կարճ բոյով Տեր Գալուստը եկավ մեզի քեֆիլ եղավ, ըսավ. «Ես պատասխանատու եմ, ես կնայիմ»:

Հոս կայարանը կա՞ յա, հոն տարիներո՛վ նստեր ենք, ո՛ր մեկս Խզմեթի գացեր է, ո՛ր մեկս փաբրիկա գացեր, բաներ է: Ադ ձևով մեծցեր ենք: Ես բողոքական որբանոցի մեջ երեսուն տարի օրիորդ եղած եմ, այսինքն՝ վարժուհի եղած եմ: Քառասուն որբ աղջիկներ ունեի: Ամենուն ալ ամուսնացուցի, ամմա ես մինակ մնացի: Պարոն Գյուզելյանը գացած, անոնց ժողված բերած էր Անատոլուեն: Հիմա մեկ հատ մը կա, մինչև հիմա կուգա ժողովարան, կհանդիպինք: Աղվոր դպրոց էր, մեկ հարկը տասներեք աղջիկ կար քովս: Մամայություն ըրի անոնց: Դասերնին կսորվեցնեի: Օրը չորս անգամ կհամբուրեի: Դասերեն ով տասը թիվ ստանար՝ կհամբուրեի: Օր մը ծեծած չեմ ո՛չ մեկին: Ադոր համար սիրտս հանգիստ է: Մեր պարոնը կըսեր. «Մի՛ շփացներ»:

Աստված օգնեց, ես անոնց մեծցուցի:

218 (218).
ԸՆԾԱ ՆՇԱՆԻ ԺԵՄՊԵՐԾՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1898 Թ., ԱՄԱՍԻԱ)

Ես ծնված եմ 1898 թվականին Ամասիայում: Մինչև 1915 թ. Մեծ եղեռնը մեր վեց հոգուց բաղկացած ընտանիքը ապրել է հանգիստ ու խաղաղ՝ Ամասիայի գեղեցիկ բնության մեջ: Ունեցել եմ մայր, հայր, երեք քույր և մի փոքր եղբայր:

Տեղահանելուց առաջ եկան թուրքական բանակի զորահավաք կատարեցին և բոլոր ընտանիքներու տղամարդկանց հավաքեցին: Բայց ճամփին մորթեցին բոլորին:

Ես ամուսնացած էի և երկու զավակի տեր՝ մեկը աղջիկ, մյուսը՝ գրկի տղա: Այդ ժամանակ ես եղել եմ տասնութ տարեկան:

Մի օր եկան երկու թուրք պաշտոնյա և սկսեցին մեզ համոզել, որ լավ կլինի եթե թրքանանք և ընդունենք իրենց հավատքը՝ մուսուլմանությունը, քանի որ դրանից հետո մենք կապրենք ազատ և ոչ ոք իրավունք չի ունենա մեզ նեղացնելու: Բայց քանի որ մայրս շատ հավատացյալ էր, մերժեց նրանց, և այդպիսով մենք էլ ընկանք սև ցուցակի մեջ:

1915 թ. ապրիլի սկզբին թուրք զաբիթները եկան և բոլորին տեղահան արեցին: Մենք կարողացանք միայն ձեռքի իրեր վերցնել, մեր զարդեղենները և մեր ոսկիները:

Այդ տեղահանությունը աքսոր էր, որը տևեց վեց ամիս և ոտքով մեզ հասցրին Դեր Զոր կոչված անապատը: Ես միշտ կհիշեմ արցունքներով, թե ինչպիսի անմարդկային, դաժան վերաբերմունքով մեզ քշում էին ոչխարների պես, տաք արևի տակ, շիկացած ավազների վրայով և հազար ու մի տանջանքների ենթարկելով: Բավական քայլելուց հետո, երբ հեռացել էինք մեր գյուղից, թուրքերը սարքեցին մի խառնաշփոթ վիճակ և օգտվելով առիթից, աչքի ընկնող սիրուն աղջիկներին ու երեխաներին գողացան ու փախցրին: Նույնպես և իմ երկու տարեկան շատ սիրուն, շիկահեր մազերով աղջնակին գողացան, իսկ փոքրիկ տղա զավակս իմ գրկումն էր: Պատկերացնում եք, ի՜նչ լաց, ի՜նչ ողբ էր լինում, բայց ոչ մի բան չէր օգնում, բացի մտրակների հարվածներից, որ լռեցնել էր տալիս թշվառ մայրերին, ստիպում էին շարունակել ճանապարհը: Որոշ ժամանակ անց ես ուժասպառ եղա՝ իմ գրկում եղած փոքրիկ տղաս գրկելով: Իմ տասնչորս տարեկան եղբայրը իմ վիճակը տեսնելով, որ չեմ կարողանում արագ քայլել և անընդհատ զաբիթների մտրակներին եմ արժանանում, իմ գրկից վերցրեց փոքրիկին և շարունակեցինք քայլել ճանապարհը: Որոշ ժամանակ եղբայրս տանում էր իր գրկում իմ երեխային: Հասանք մի տեղ, ուր այդ թուրքերը ուրիշ թուրքերի հանձնեցին մեզ: Սրանք ավելի գազան էին: Սրանք սկսեցին իրենց բաժին հասած թալանը, կողոպուտը՝ ծեծելով ու խոշտանգելով: Այդ ժամանակ երկու զաբիթներ իրար հետ սկսեցին մրցել, մեկի ձեռքին մի փոքրիկ երեխա կար հափշտակված, մյուսն էլ՝ իմ եղբոր գրկից խլած իմ փոքր տղաս: Սրանք մրցում էին , թե ո՛ր մեկերնին կարող են հեռու նետել իրենց ձեռքինը: Իմ փոքր տղայիս էնպես գցեցին հեռու, տաք ավազի ու քարերի վրա, որ խեղճը ջարդ ու խուրդ եղավ:

Ես տեսա էդ բոլորը՝ ինձ թվաց, որ խելագարվում եմ, սկսեցի լաց լինել, ողբալ, բայց ինձ էլ բռնեցին ու զոռով հանեցին հագուստներս, ինչպես մյուսներին ևս, և սկսեցին ոսկի փնտրել: Մայրս ընդամենը քառասուն տարեկան էր, նրան էլ մերկացրին, տեսան ոսկի չկա, բռնեցին գցեցին Եփրատ գետը: Ես և իմ քույրերը լաց ենք լինում, ողբում, բայց գազանը՝ գազան է և իր որսը հոշոտում է ինչպես որ ուզում է: Այս վերջին հարվածին իմ մի քույրը չդիմացավ, մեր մորը ետևից ինքն էլ իրան գցեց Եփրատ գետը: Ես մնացի իմ մյուս քրոջս՝ Ռեբեկայի հետ և շարունակեցինք մեր խաչը տանել: Ի միջի այլոց, իմ աղջկա անունը ես հետագային դրեցի իմ քույր Ռեբեկայի անունով, որը հետո խոլերայից մահացավ ճամփին: Ես միշտ իմ աղջկան կըսեմ. «Դուն իմ քու՛յրս ես »: Այդ իրարանցումին մեջ ինձի կթվար, որ ես հոգեկան խանգարում եմ ստացել արդեն: Քանի որ չէի զգում, թե ի՞նչ է կատարվում ինձ հետ: Միայն աղոթում էի Աստծուն, որ մեզ ազատի այդ տանջանքներեն, և հրաշք պատահեցավ: Տեսիլքի պես Մարիամ Աստվածածինը իջավ իմ առաջ՝ գլխին մեծ լուսապսակով և ինձի ըսավ այս խոսքերը. «Աղջի՜կս, քո անունը Ընծա է, այսինքն դու Աստծո տված պարգևն ես, հավատքդ չուրանա՛ս, փրկությունը մոտ է, հավաքի՛ր քո ուժերը, քա՛ջ եղիր»: Եվ տեսիլքը անհետացավ: Այդ տեսիլքից հետո ես նոր ուժ ստացած շարունակեցի իմ ճամփան: Ինչ խե՜ղճ էինք, կհիշեմ, թե տաք ավազների ու քարերի վրա քայլելուց ոտքիս տակի կաշին երեք անգամ փոխվեց: Բայց ի՜նչ արած, Եփրատի ափերի կողքով գնու՜մ էինք ու գնու՜մ: Մինչև հասանք մի բացատի և կանգ առանք դադարի, իբր թե պիտի հանգստանանք, բայց ի՜նչ կատարվեց: Մեկ էլ սկսվեց լաց ու կոծը, գոռոցը: Ուրեմն այն փոքրիկները, որ իրենց ինչ լինելը դեռ չգիտեն, ո՛չ իրենց անունը գիտեն, ո՛չ իրենց հայ լինելը գիտեն, ո՛չ հավատքին ինչ լինելը գիտեն, թուրքերը հավաքում, տանում էին թուրքական որբանոց, որ թրքացնեն, թըլպատեն, իսկ ովքեր մեծ էին՝ բռնում շպրտում էին Եփրատը՝ իրենց մայրերու աչքերին առաջ: Դիմանալ էր պետք այդքան չարչարանքներին, բայց ես Աստվածածինի խոսքով դիմանում էի և ամեն ինչ տանում էի, մինչև հասանք Դեր Զոր: Այնտեղ տեսանք, որ մեր խումբը շատ է նոսրացած: Քանի որ շատերը ճամփին էին մնացել: Մնածներուն հոտը աշխարհն էր բռնել: Կեղտից, միկրոբից խոլերայի հիվանդությունը տարածվեց մեր մեջ, շատերը այդ ձևով մեռան, ինչպես որ ըսի արդեն, իմ Ռեբեկա քույրս ալ քսանչորս ժամվա մեջ վարակվեց ու մեռավ:

Հետո Դեր Զորի անապատը եկան ամերիկացիները և հավաքեցին ողջ մնացածներուն, տարին Հալեպ: Ինձի ալ տարին, լողացրին, հագցրին, որբանոցի պես մի տեղում պատսպարեցին այրի մնացած կանանց, որոնք ձեռագործներ կաշխատեին, որ դրանք դրկեն ուրիշ երկրներ վաճառեն:

Այդ ժամանակ ես հանդիպեցա բիթլիսցի Ռուբենին, ամուսնացանք, տղա մը և հինգ աղջիկներ ունեցանք: Հետո փոխադրվեցանք Ռումինիա, ուր զավակներս դպրոց գացին:

1946 թվին ներգաղթեցինք եկանք Հայաստան, թե՝ վայաստան, մենք ալ չիմացանք:

1948 թվին տղայիս որպես քաղաքական հանցագործ բռնեցին, քանի որ ընկերների մոտ ասել էր, թե երեք հարյուր գրամ հացով ինքը չի կշտանում: Հենց իր ընկերները դավաճանել, մատնել էին: Մի քանի ամիս բերդում մնալուց հետո դատարանի վճռով նրան տանում են Կարագանդա, ածուխի հանքերում աշխատացնելու: Յոթ տարի նա մնաց բանտարկված, իսկ մեզ՝ ամուսիններով, չորս աղջիկներուս հետ, աքսորեցին Ալթայան երկրամաս:

Ես իմ բախտը անիծելով ապրեցի, որ թուրքի աքսորից հետո հայի աքսորին էլ արժանացանք: Յոթը տարի մեր ընտանիքը տանջվեց այդ դաժան սառնամանիքի տափաստաններում: Ստալինի մահը ոմանց շատ ցավ պատճառեց, բայց մեզ համար եղավ փրկություն: Մեզ արդարացրին: Վերադարձանք: Բնակարանով ապահովեցին, բայց մենք արդեն կորցրել էինք մեր առողջությունը, մահացավ ամուսինս: Խեղճը Զորավար Անդրանիկի բանակում կռվել էր, միշտ երազել էր Հայաստանն ազատ, անկախ տեսնել, որ մեր պետական շենքի վրա ծածանվի եռագույնը, այդպես ալ չտեսած մեռավ:

219 (219).
ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ՍԱՄՍՈՒՆ)

1914 թվին, երբ Առաջին ընդհանուր պատերազմը սկսվեց, թուրքերը եկան հայ տղամարդկանց հավաքեցին, թուրքական բանակ տանելու համար, բայց հետո մեզի լուր բերող եղավ, որ նրանց բոլորին էլ ճամփին կացինով սպանել են: Դրանց մեջ էր նաև իմ հայրը:

Հետո հերթը եկավ մեզ: Եկան բոլորիս տներից հանեցին: Աղջիկ, կնիկ, երեխա, բոլորին քշեցին չոլերը: Ոնց որ սուրույի մեջին ուլիկը ջոկեն մայր այծից, էնպես էլ ինձ ջոկեցին իմ մորից: Ինձ խորեցին հողի մեջ, մարմինս թաղեցին, միայն գլուխս դուրսն էին թողել, ասելով. «Վաղն էլ սրան կսպանենք» ու գնացին սիրուն աղջիկներին սկսեցին ջոկել, տգեղներին կամ սպանում էին, կամ գետն էին շպրտում: Հղի կնիկների փորերը ճեղքում էին, որ իմանան միջինը տղա՞ է, թե՞ աղջիկ: Կույս աղջիկների կրծքերի պտուկներն էին կտրում, իսկ կանանց կրծքերը կտրում, գցում էին նրանց ուսը:

Ես էդ բոլորը իմ թաղված տեղիցս տեսել եմ իմ աչքերով: Մութը որ ընկավ, էդ մարդասպանները ինձ էդպես թողին գնացին: Ես սկսեցի վախիցս լաց լինել: Էդտեղով անցնող մի թուրք լսում է իմ նվնվոցը, եկավ ինձ քաշեց, դուրս հանեց ու տարավ իր տունը: Էդ թուրքը ինձ տարավ մոլլայի մոտ, ինձ սյուննեթ ըրին: Գյուղի մեջտեղը պառկացրին, որ էկող-գնացողը տեսնի, որ մեկ հատ մուսուլման էլ ավելացավ: Ինձ նման մի ուրիշ հայ տղա էլ կար էդտեղ: Նրա տերն էլ ստիպել է, որ իր անունը ու հավատքը փոխի, նա մեծ էր՝ չի փոխեց: Թուրքերը ասին. «Գյավուր դըր՝ վուրը՛ն» (գյավուր է՝

խփե՛ք) և հավաքված թուրքերը քարերով էնքան խփեցին, որ լղճեցին, արյունը չոռալ սկսավ: Ես մնացի էդ թուրքի մոտ, իրա ոչխարներն էի պահում:

Մամաս՝ Արեգնազը, շատ սիրուն կին էր, ևրան էլ մի ուրիշ թուրք էր փախցրել: Իմ տերը մի օր ինձ ղըրկեց, որ իմ մորս մոտ գնամ, իրան տեսնեմ: Գնացի, տեսա, երեք-չորս թուրք կնիկների, որոնք էդ թուրքի մյուս կնիկներն էին, մայրս էլ ևրանց հետ նստած, տերևի տոլմա էր փաթաթում: Մայրս ինձ տեսավ, ոչինչ չասաց, ոչինչ չտվեց, միայն մի տերև ջրի մեջ թաթախեց տվեց ինձ, որ ուտեմ: Ես շատ տխուր եկա իմ տիրոջ մոտ: Իմ տերը ինձ տվեց մոլլայի մոտ, որ թուրքերեն սովորեմ: Մոլլան իբր դաս էր տալիս ու ասում. «Ով մի գյավուր սպանի, ևրա հոգին դրախտ կերթա»: Ես շատ վախենում էի, որ ինձ էլ կսպանեն, բայց ես պատրաստ էի եղած, և արդեն ինձ մուսուլման էին համարում: Իմ տերը ինձ ծառայի պես էր բանեցնում: Ամեն օր ինձ ասում էր. «Գյավու՛ր, շու քօյուճլար պու՛ր, գեթի՛ր» (Գյավու՛ր, այս ոչխարները քշի՛ր, բե՛ր): Ինձ ամենաճվաստացուցիչ գործերն էին տալիս: Ինքը նստում էր պետքի, ինձ ասում էր. «գյավու՛ր, քար բե՛ր, ոտս մաքրի՛ր»: Մի օր էլ ես ուշացրի քարը տանել, տերս ինձ վրա ջղայնացավ, մի մեծ քար վերցրեց իմ գլխին պիտի տար, բայց հարսը իրան մեջ գցեց, և ես ազատվա, ինձ չսպանեց:

Մի օր էլ եկան մեզ հավաքեցին, տարին Պոլիս՝ Գատըգյուղ: Էնտեղ Արամյան դպրոցը գնացի: Երեք-չորս տարի մնացի Պոլիս: Պոլիսում հատուկ գրասենյակ կար, օգնում էին մեզ անտեր-անտիրական մնացածներիս:

Հայաստան գալու ժամանակ ուրախ երգելով ու պարելով եկանք, բայց էստեղ էլ շատ նեղություններ տեսանք: Է՛, իմ գլխից շատ բան է անցել, շա՛տ... Սիրտը մղկտում է, երբ հիշում եմ էդ դեպքերը ու զարմանում, թե ո՞նց ես ողջ եմ մնացել:

220 (220).
ԱՐՏԱՎԱԶԴ ԿԱՐԱՊԵՏԻ ԿՏՐԱՄՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1901 Թ., ԱԴԱԲԱԶԱՐ)

Մարդը մարդ պետք է լինի, միևնույնն է, հայ է, թե՝ թուրք:

Ծնվել եմ 1901 թ. Ադաբազարում: 1913 թվին Գերմանիան մատնությամբ Թուրքիայի հետ բարեկամացավ, և հայ երիտասարդությունը Ամիլե թաբուրի* մեջ աշխատելու տարան: Էդ տարածներին աշխատեցնում էին Բեռլին-Բաղդադ երկաթգծի վրա: Էդ ճանապարհը հայերն են սարքել:

Գերմանիայի Վիլհելմ կայսրը հավաքեց իր երկրի քրդերին և ուղարկեց Թուրքիա: Թուրքական կառավարությունն ալ մեզ թողեց անոնց ձեռքը:

Թուրքերը տարին սպանեցին Գրիգոր Զոհրապին և շատ ուրիշների գլուխները քարերով ջարդեցին: Միայն Կոմիտասն ազատվեց: Հայերին տանում էին Դեր Զոր: Ճամփին երկու կողմը սպանվածներ էին: Մարդիկ մեռնում էին: Հարազատները չէին հասցնում թաղել, թողնում էին բաց երկնքի տակ, առաջ անցնում: Չախկալները գալիս, հոշոտում էին նրանց մարմինները:

Մեր չորս կողմը ժանդարմներ էին: Ճամփաները՝ ցեխոտ ջրեր էինք խմում: Ժանդարմները Պապի անապատում, ձեռքերնին վառվող կրակներով պտըտվում էին, մարդկանց վառում: Պապայիս ու նրա եղբորը՝ Կարապետին էդպես կրակով վառեցին ու սպանեցին: Շատ անհայտ ճամփաներ գացինք, ետ մնացողներին մտրակով ծեծում էին: Մարդիկ տիֆից, խոլերայից հիվանդացան: Անոթությունն են աչքերուս վրա փառ եկավ: Մորս փեշը բռնած կույր-կույր քայլում էի: Մորս ասում էի. - Գցիր ինձ Եփրատ գետը, մեռնեմ ավելի լավ է, քան թե՝ կույր ապրեմ:

Մայրս ինձ չգցեց գետը: Ճամփին մի ժանդարմ մոտեցավ մորս, ըսավ.

- Վէլիդէ՛, ընդէ՞ գիդիյորսընըզ: (Տիկի՛ն, ու՞ր եք գնում):

- Ալլահ բիլիյօր (Աստված գիտի): Աստված որտեղ որ հոգիս առնե:

- Մենք ձեզի տանում ենք ոչխարի պես մորթելու:

Մամաս ըսավ. - Ասո՛ր ալ մորթիր, անո՛ր ալ մորթիր, մյուսի՛ն ալ մորթիր, ինձ՛ի ալ մորթիր: Ես քեզի աղոթք կընեմ:

Ժանդարմը մորս ըսավ. - Տիկի՛ն, ձերոնց հավաքիր, ես ձին առաջ կքշեմ, իբր ձեզ չեմ տեսնում, դուք փախեք:

Մայրս անոր քանի մը ոսկի տվավ և շուրջինները փնտրելով՝ ըսավ. - Վարդու՛հի, Սիրու՛շ, Արշալու՛յս, Հայկանու՛շ, Սիրվա՛րդ՝ քովես քալլեցեք:

Փախինք, բայց ու՞ր պիտի փախնենք: Մենք պառկանք ցեխերուն մեջ, մեռելներուն արանքը, արյունոտներուն մեջը, որ մարդ մեզ չտեսնա: Ոտքերի ձայները որ կտրվեցին, մենք վեր կացանք, ետ եկանք: Էդտեղ Համամ անունով վաճառական խան մը կար, հոն մտանք, ես չեմ տեսնում, բայց քնացանք իբրև թե:

Լույսը բացվեց, թուրքերը նորեն պաշարեցին մեզի: Մայրս անոնց ալ դրամ տվավ: Անոնք մեզի Եփրատ գետը նավով անցուցին, ըսին՝ գնացեք Ռաքքա: Ես մորս պոչեն բռնած գնում էի: Տեղ մը հասանք, հոն պատերը կանգուն, առանց կտուրի տուն մըն էր: Մերս աղջիկներուն հոն թաքցրեց, ինքը գնաց խանութներուն աղջը ավլելով, մուրացկանություն ընելով մեզի ուտելիք էր բերում, որ սովից չմեռնենք: Էդտեղ կան եղեր սասունցիներ: Դրանք մորս հաց-մաց կուտային, մերս կբերեր իր աղջիկներուն և ինձի կուտար, որ ուտենք:

Գրեթե միշտ ես մորս փեշը բռնած էի քալլում: Օր մը մարդ մը մորս հարցուց. - Ի՞նչ է եղեր աս չոջուխին աչքը: Գնա քառասուն փարայի լապատ շաքար առ:

Մամաս ըսավ. - Մենք փարան ի՞նչ բան է՝ չգիտենք: Մենք փարան մոոցած ենք:

Էդ մարդը ըսավ. - Դուք էստեղ սպասեք:

Գնաց մի կտոր լապատ շաքար բերեց, ասեց. - Կտանես լավ կծեծես, փոշի կդարձնես: Ջուրը կեռացնես, վրան լավ կծածկես, տղայիս երեսը շոգիին վրա կբռնես: Հետո էդ շաքարը կցանես աչքերուն և կկապես, կպառկեցնես:

Մայրս էդպես էլ ըրավ: Առավոտը նորեն նույնը ըրավ: Մեկ ալ տեսա արդեն սկսում եմ տեսնել: Էդ ժամանակ ես տասնյոթ տարեկան էի: Ռաքքա մնացինք: Հոն արաբներ էին: Աչքերս որ բացվեցին, սկսա կատու, շուն սպանել, տանել մերոնց, որ ուտենք: Սոված ենք, դրամ չունենք: Աշխատանք չունենք: Էնենց եղավ, որ արաբներից ողորմություն էի խնդրում:

Մեյ մըն ալ մորեխը եկավ: Երկինքը չէր երևում: Մեկ էլ մի տղա եկավ. - Ախպեր ջան, հա՞յ ես: Որտեղի՞ց ես:

- Պարտիզակցի եմ, Կարապետ Կարագյաև է անունս:

Ադ տղուն հետ ընկերացա: Հետո անի ալ Հայաստան եկավ, համալսարանում դասախոս դարձավ:

Հետո զինադադար եղավ: Մեզի տարին Հալեպ: Հալեպ Բաբըլֆարաջեն եկանք Պոլիսի կայարանը, նորեն՝ Ադաբազար: Մերս իր երկու ախպոր հետ գյուղ գնաց, ինձի ղրկեցին Սկյուդար, որ սորվիմ: Ոտքերս աքսորի ճամփաները քայլելեն վերքեր էին եղած: Գացինք Պոլսո Ազգային խնամատարությունը, որ գոնե որքանոց երթամ: Բայց ինձի ըսին, որ իրենք միայն առանց ծնողքի որբերին են պահում: Ես ետ էի դառնում, մել մըն ալ մեկ աղջիկ մը պոռաց. - Արտավա՛զդ, ի՞նչ ես անում հոս:

- Էկեր եմ որքանոց գրվիմ, հորքուր ունիմ դեի՝ չեն ընդունում:

Ադի մեզ հետ փախած աղջիկներից էր: Գնաց, խնդրեց, հետո ինձ ընդունեցին: Ինձի տարին Եդիքուլեի գազազ Արթինի սարքած Ս. Փրկիչ հիվանդանոցը: Ոտքերուս վերքերը բուժեցին, խնամեցին:

Հետո մերս կանչեց ինձի Հունաստան: Ադի արդեն 1921 թիվն էր: Երկու տարի ալ մնացի Միդիլիի կղզին, հետո գացինք Դրամա:

1924 թ. եկանք Հայաստան: Մեզի բերին Լենինական (այժմ՝ Գյումրի): Ցուրտ, սառույց ձմեռ է: Մենք սովոր չենք ադ տեսակ ցուրտին, բայց ընտելացանք:

1941 թվին գացի Հայրենական պատերազմին մասնակցեցա, մինչև Գերմանիա հասա, երեք անգամ վիրավորվա: Սև մահվան թուղթս եկել է, մերոնք սկսել են լալ, ողբալ: Հետո ալ ես եկա՝ մեղալներով:

221 (221).
ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՕՀԱՆՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ԱԴԱԲԱԶԱՐ)

Ծնվել եմ Ադաբազար:

1914 թ. մեր տղամարդկանց թուրքական կառավարությունը հավաքեց, տարան թուրքական բանակ, որից հետո ընտանիքներուն ըսին՝ կառքեր վարձեք, մոտիկ տեղ պիտի գնանք: Ով փող ուներ՝ ֆուրդուն վարձեց, ով չուներ՝ ոտքով: Մենք ալ չոջուխ էինք, մորերնուս փեշեն բռնած գնացինք ոտքով: Երկար գնացինք: Առաջին կանգառնիս եղավ Կոնիան: Էնտեղ փոխանակ մեզի քաղաք մտցնեն, սարերում ոստիկանների հսկողության տակ պահեցին՝ սոված, ծարավ: Մյուս առավոտ մեզի ճամփա հանեցին դեպի Բոզգուր: Այնտեղան անցանք: Օրերով, շաբաթներով ոտքով քալլում էինք, ոտքերնիս արյունոտ քալլում էինք: Ոստիկանները մտրակներով խփում էին ու ասում. - Հայդե՛, շուտ արեք, չեթեները կուգան:

Շատերը չդիմացան, ճանապարհին մեռան: Դիակները մնում էին գետնին: Գիշերը գայլերը ուտում էին: Մեզ քալլեցնում էին ոտքով: Արդեն քչացել էինք, քանի որ շատ շատերը մեռել էին: Մեկ էլ Իդե անունով մի գյուղի մոտ հասանք: Էնտեղ մեզ վրա հարձակվեցին, սկսվեց թալանը. «Փարանըզ յո՞ք. չքարընը՛զ» (փող չկա՞. հանե՛ք) ասելով խեղճերի շորերը ճղճղում էին: Արդեն երկար քալլելեն ոտքերնիս արյունոտված էր:

Եկանք հասանք Շիրք, իջանք մի քիչ հանգստանալու: Առավոտյան իմացանք. «Մուդարէբէ բիթդի» (պատերազմը վերջացավ):

Այնպես որ, Դեր Զոր չհասանք:

Ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույցը հավաքեց ճանապարհին թափված որբերին ու կանանց, բերեց թրեն նստեցրեց, հասցրեց Պոլիս:

Պոլիս Բոսֆորի Ասիական մասում Չենգըէօյը քուլեյը Քեմալ փաշայի զորանոցն էր: Դաշնակցությունը գնել էր դրամով, հայ որբերուն պահում էր էնտեղ, հայկական դրոշակը՝ կարմիր, կապույտ, նարնջագույնը, ծածանվում էր շենքի վրա: Որբանոցի մեջ մեզ կրթում էին «Առավոտ լուսոն» կերգեինք, օրինավոր կրթություն կուտային: Նույնիսկ Հովհաննես Թումանյանը եկավ մեր որբանոցը: Ան հանգանակություն ըրավ Պոլիսի մեջ. «Հայաստանի մեջ հացի կտոր չկա, եթե կուզեք հայ ժողովուրդը ապրի, ձեր կոկորդեն կըտրեցեք, օգնեցեք հայ ժողովրդին»: Կնիկները իրենց զարդերը, մատանիները հանեցին, տվին:

1922 թվին, երբ հույն կառավարությունը Իզմիրի պատերազմը կորսնցուց, քեմալական զորքերը մտան Պոլիս, երգելով.

Իզմիր դաղլարընա,
Չիչէքլէր աչար,
Քյաֆիր յունան ասքէր
Եյ գիբի դաչար:

Իզմիրի լեռներում
Ծաղիկներն են բացվում,
Անաստված հույնի գինվորը
Քամու պես է փախչում:

* Թուրքական բանակում գործող աշխատանքային գումարտակ:

Էդ երգելով սկսան Պոլիսը թալանել:

Մենք սկզբում ամերիկյան որբանոցում էինք, հետո դաշնակցությունը իր ձեռքը առավ որբանոցը: Բայց թուրքերը նավթով վառում էին մեր որբանոցը, մենք քարերով խփում էինք: Դաշնակցականները տեսան, որ չպիտի ըլլա, Անդրանիկի զորքեն մարդիկ բերին, որ մեզի պաշտպանեն:

Ամերիկացիները տեսան, որ գլուխ չեն հանում, մավունա՝ նավակ մը բերին, հազարավոր որբերիս մեջը լեցուցին, տարին Գումգաբուի Մայր եկեղեցին: Թուրքերը եկան, Մայր եկեղեցիի վրա ալ հարձակվան: Ան անգամ ռումինական «Դացիա» շոգենավը բերին, մեզի բերներերան մեջը լեցուցին, Միջերկրական ծովի վրայով մեզ տարին հունական կղզի մը, քանի որ գիշերով ծովի վրա փոթորիկ էր բարձրացել: Առավոտյան մեր նավը շարունակեց իր ճամփան, Քորֆու կղզին հասանք: Հոն ամերիկյան որբանոցում ապրանք: Հետո ամերիկացիները հունական Սերա կղզիի վրա հսկա որբանոց մը կառուցեցին, Էնտեղ ապրանք քանի մը տարի:

Մի օր էլ մեզի ըսին՝ պետք է Եգիպտոս գնաք: Ամերիկյան դեսպանատունը մեզի թուղթ տվեց, որով որբեր փոխադրվեցին Եգիպտոս: Հոն ապրա մինչև 1947 թ., որից հետո եկա Հայաստան: Իմ երազս էր՝ հողամաս ստանալ, վրան տուն սարքել, հաստատվիլ Երևանի մեջ: Բայց իմ փափագը չկատարվավ, որովհետև մեզ 1949 թվին անտեղի տեղը ձերբակալեցին: Եգիպտոսեն եկածներին շատ տանջեցին, որովհետև Եգիպտոսը անգլիական գաղութ էր, անգլերեն գիտեինք, «Կամք» կերթայինք, ֆուտբոլ կխաղայինք, ադ բոլորը հանցա՞նք է եղել՝ չէի՞նք գիտեր: Բռնեցին մեզի լցրեցին պետական անվտանգության շենքին նկուղը: Հոն բերնեբերան լիքը ժողովուրդ էր: Քնելու տեղ չկար, բոլորը ոտքի վրա կանգնած էին անցկացնում ամբողջ գիշերը:

Սաթենիկ Մխիթարյանը երկու ատենակալների հետ ինձ դատեց: Ես ինքս էնքան զարմացա, որ դրանք մեզի երկու-երեք րոպեի մեջ դատեցին, աքսորեցին Սիբիրի խորքերը: Գարեգին Նժդեհի հետ երեք-չորս օր եղել եմ Ռոստովի մարզի բանտում: Հետո ինձ ղրկեցին Կրասնոյարսկի կրայ, եղա ևս Կրասնոտուրիսկ «ներմեցական պլենների լագերը» (գերմանական գերիների ճամբարը): Տարիներով տանջվել ու չարչարվել եմ...

Վերջապես 1956 թ. Խրուշչովի շնորհիվ ետ եկա: Կինս ևս երեք երեխայով շատ էր տանջվել: Նրան անվանել են դաշնակցականի կին, գործ չեն տվել: Ազատվելուց, Երևան գալուց հետո էլ տուն տեղ չտվեցին, խաբեցին: Էսպես անցավ իմ կյանքը:

222 (222).
ՎԱԶԳԵՆ ՀՈՎՍԵՓԻ ՍԱԴԱԹՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ԱԴԱԲԱԶԱՐ)

1915 թվին ընտանիքով մեզ աքսորեցին անապատները: Մենք երկու ընտանիքով հարուստ էինք, և մեր ծնողները մի հույն հյուրանոցի տիրոջ հետ պայմանավորվեցին, որ պահի իր նկուղում: Այսպես փըրկվանք, իսկ մնացածներին աքսորեցին Դեր Զոր:

Այդ նկուղում մենք մնացինք մոտ մեկ տարուց ավելի: Ամեն օրվա համար տալիս էինք մեկ ոսկի: Երբ մեր դրամը վերջացավ, այդ հույնը իր թուրք ծանոթների միջոցով մեզ ձևակերպեց որպես թուրքական գինվորների հագուստները լվացող: Այդ ձևով էլ մենք ազատվանք, մինչև 1918 թ. գինադադարը մնացինք այդտեղ, հետո մեր տունը վերադարձանք: Մեր տանը թուրքեր էին տիրացել:

Հետո լսեցինք, որ իմ հորեղբորս՝ Սմբատ եպիսկոպոս Սադաթյանին՝ 1915 թվի ապրիլի 24-ին թուրքերը բռնել են և մյուս մտավորականների հետ աքսորել են անապատները: Նրան տարել են, ստիպել են, իր ձեռքերով իր գերեզմանը փորել են տվել ու սպանել, գցել փոսը:

1920 թ. հույները եկան, գրավեցին մեր քաղաքը, բայց 1922 թվին հույները թողեցին և փախան, մենք էլ նրանց հետ գնացինք Իզմիր: Էնտեղ քրիստոնյաները կուտակվել էին: Ամենագլխավոր եկեղեցիի մեջ հայերը հավաքվել էին՝ մոտ մի քանի հազար հայ: Բոլորը սպասում էին, որ թուրքերը կարող են գալ և մեզ ջարդել: Դրա համար փող հավաքեցին, նամակ գրեցին ֆրանսերենով, թե մեզ սպասում է ջարդ: Մի տղա թուրքերեն խոսելով՝ հասնում է ֆրանսական դեսպանատուն: Դեսպանը ֆրանսական դրոշակով և իր խմբով եկավ, եկեղեցու մեջ գտնված հայերին տարավ նավահանգիստ, ուր լիքը հայեր ու հույներ էին: Հեռվում կանգնած էին ֆրանսական, իտալական, անգլիական զրահանավեր, մեկ-մեկ գինվորներ էին դուրս գալիս նավերից, որ մեզ թուրքերը չկոտորեն: Բայց գիշերները թուրքերը գալիս էին աղջիկ փախցնելու, սկսվում էր աղմուկ, իրարանցում: Նավերից պրոժեկտորները գցում էին, որ նրանք վախենան ու փախին:

Մոտ մեկ ամիս բացօթյա մնացինք: Վերջապես հունական նավերով մեզ Հունաստան հասցուցին: Չէին հարցնում՝ հայ ես, թե՝ հույն: Ժողովուրդը խուռներամ գնում էր, շատերը ոտքի տակ էին ընկնում: Ամեն մարդ ուզում էր իր կյանքը փրկել: Մեզ Հունաստանում շատ լավ ընդունեցին ու պահեցին:

1932 թվին հայրենադարձությամբ եկանք Հայաստան:

1949 թվին մեզի աքսորեցին Ալտայսկի կրայ, որպես դաշնակցական: Վեց տարի հոն մնացինք, որպես դերձակ աշխատեցա:

Վերջապես 1956 թվին մեզի արդարացուցին, որպես անմեղ ետ եկանք Հայաստան:

223 (223).
ՀԱՅԿՈՒՀԻ ԱԶԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ԱԴԱԲԱԶԱՐ)

Ադաբազարում թուրքերն անգամ հայախոս էին: Երբ Առաջին համաշխարհային պատերազմը սկսվավ, քաղաքի բոլոր մեծամեծներին լցրին ժամը և ծեծելով ստիպեցին զենքերը հանձնել: Եկեղեցու դռները փակեցին: Ներսը ամեն ինչ պիտի ըլլար՝ ուտել, խըմել, պառկել, միզել: Ալ հաշիվդ ըրե՝ եկեղեցու սրբությունը ինչպե՞ս պղծվեց: Տասը-տասնհինգ օր տղամարդիկ մնացին եկեղեցիին մեջը: Թուրքերը սկսան տունե-տուն զենք փնտրել: Պարտեզները անգամ՝ ծառ, ծաղիկ, տակնուվրա ըրին, հողի մեջ թաքցրած զենք էին փնտրում: Շատերն իրենց զենքերը հանձնեցին, որ փրկվեն: Շատերն ալ ժամեն դուրս էկան այնքան ծեծված ու խոշտանգված, ոտքերնին, քիթ-բերաննին ուռած, չդիմացան՝ մեռան:

Մեր տունը, որը բարձր տուն էր՝ քարաշեն, կողքը բեռջեկըլը՝ շերամատուն, ունեինք, որտեղ թուրք ասկյարներն էին տեղավորված, իսկ զաբիթն ու իր օգնականը մեր տանն էին տեղավորված: Ամեն առավոտ թալիմի՝ մարզանքի էին դուրս գալիս մեր տունին պարտեզը:

Հայրիկիս ծեծել էին, բայց չէր խոստովանել, որ զենք ունի թաղված պարտեզին հողին մեջը:

Թուրք զաբիթը, որ մեր տունն էր ապրում, մեծ մայրիկիս օր մը կանչեց, ըսավ. - Մայրա՛մ հանըմ, ձեզի սևքիեթ՝ աքսոր, պիտի ղրկենք, եկեք ձեզ ընտանիքով ղրկեմ իմ ընտանիքիս քովը՝ Պոլիս:

Ան գիտեր՝ մեր գլուխը ինչ պիտի գար:

Հայրիկս, որն արդեն եկեղեցիին մեջ կերած ծեծերեն ուժասպառ էր, ըսավ. - Ամա՛ն, ասքա՛ն ժողովուրդ, ու՞ր պիտի աքսորեն, - չհավատաց, Պոլիս չըգնացինք:

Հետո սկսավ աքսորը: Տուներեն դուրս էին հանում հայերին, պոռալով. - Քալքը՛ն, չըխը՛ն, լըխը՛ն, գիդը՛ն (Վե՛ր կացեք, դու՛րս գնացեք, վառե՛ք, գնացե՛ք): Աս խոսքերը լսեցինք մինչև Էրեյլի. իրենց լոզունգն էր:

Էկան ոստիկաններով տուներեն հանեցին: Ու՞ր էրթանք: Սարերը գնչուներ՝ չինգեներ կային: Ամեն մարդ իր ապրանքը դուրս թափեց, որ վաճառի: Ո՞վ է առնողը: Տանող՝ տանողի, սկսվեց թալանը: Գնչուները էկան, տեսան ամեն ինչ թափված է փողոցը, առին տարին ինչ որ տեսան:

Ամբողջ քաղաքը դատարկվեց: Ու՞ր պիտի գընանք:

Հրաման էկավ. - Գնացե՛ք կայարան:

Մի թուրք դրացի ունեինք, ոաճչպար էր, իր արաբան բերավ, ըսավ՝ ինչ կլեցնեք, լեցրեք, ձեզի տանեմ կայարան: Ադաբազարի կայարանի անունը Արիֆիե էր: Գնացինք կայարան: Տեսանք ամեն մարդ իր բարեկամներով՝ հորեղբայրներով, մորեղբայրներով լեցված են հոն: Գնացք չի ներիքի, որ տանի այդքան ժողովուրդին: Վերջապես գնացք մը էկավ, հրաման էկավ, որ ունեցածնիս թողնենք, մտնենք վագոն: Բոլորը լցվան մեջը՝ ամեն ինչ թողնելով կայարանում: Իրար վրա լցված հասանք Էսքիշեհիր:

Էսքիշեհիրում իջանք թե չէ, մի աննձրև սկսվեց, ժողովուրդը թրջվեց, ինչ կար-չկար՝ ջուրի երեսը կլողար: Սոսկալի աննձրև էր: Էդ երևի առաջին քարավանն էր: Ադաբազար երեք հարյուր հազար հայ կար:

Հաջորդ օրը արև արեց: Ժողովուրդը իր թրջված իրերը արևի հանեց: Կայարանում արևի տակ նստել ենք, ոստիկանն ալ գլուխնուս վերևն է: Մայրիկս խընդրեց ոստիկանին, որ գնանք շուքին նստինք, քանի որ արևը վառում էր: Ոստիկանը ըսավ. - Ասքան աղջիկ ունես, մեկը տուր ինձի՝ թողնեմ քեզ շուքին նստես:

Մայրիկս ըսավ. - Ո՛չ մեկն ալ չե՛մ տար, արևին ալ կնստիմ...

Ադիկա աղեկ կհիշեմ: Հոն քանի մը օր մնացինք: Տեսանք Էսքիշեհիրի հայերին ալ սկսան հավաքել, մեզի հետ գնացք դրին:

Հորեղբորս տղան՝ Ազարյան Վաղարշակը, Էսքիշեհիրի կայարանում պաշտոնյա էր: Երկու եղբայր միասին հոն կաշխատեին: Մեզի տեսան, ըսին.

- Ձեզի պիտի աքսորեն: Աղջիկներիդ մեկը գոնե ոստեղ ձգե:

Բայց մայրս ոչ մեկիս ալ չթողեց:

Հետո Վաղարշակը առաջարկած է նաև Գրիգոր Զոհրապին Պոլիս ղրկել, բայց նա մերժած է:

Հասանք Կոնիա: Հոն ալ մի քիչ մնացինք: Հետո Կոնիայի հայերուն ալ հավաքեցին, մեր՝ աղաբազարցիներիս, Էսքիշեհիրցիների և ուրիշ տեղերե եկած հայերուն հետ խառնելով, մեզ նորեն գնացք դրին, հասանք Էրեյլի: Անտեղի ժողովուրդին ալ հավաքեցին, բոլորիս միասին աքսոր ղրկեցին...

Մե՛ծ, ամայի՛ տարածություններ: Աչքդ կտրածին չափ չոլ-անապատի մեջ լցրել են հայ ժողովրդին...

Էրեյլիեն ոտքով ճամփա հանեցին մեզի մինչև Բոզանդի: Ան անցյալի Բյուզանդիոնն է եղել:

Հոն բավական մնացինք:

Լուրեր էին հասնում, որ եթե առաջ գնանք՝ պիտի մեզ մորթեն: Անոր համար հարյուր ոտքը կախ էր գըցում, որ ուշանանք, չէրթանք առաջ...

Բաց տարածության վրա ամեն կողմեն հավաքված հայերը կարպետներով, գույն-գույն շորերով չադրներ են խփած, ճանճերը կվխտան, ջուր չկա, հաց չկա, խոտ կքաղեինք կուտեինք, որ անոթի չմեռնենք...

Թուրքերը կուգային կհարցնեին. - Նէ՞ վար սաթըլը (ի՞նչ կա ծախու):

Մայրիկները կըսեին. - Բիթ վար սաթըլը, ալըրսը՞զ (Ոչիլ կա ծախու, կառնե՞ք), - որովհետև արդեն ոջլոտված էինք:

Թուրքերը ոստիկանի հագուստով, բայց հանցագործի երեսով, կուգային, կքաշդեին մեր չադրները. - Քալքը՛ն, չըխը՛ն, լըխը՛ն, գիդը՛ն (Վե՛ր կացեք, դու՛րս գնացեք, վառե՛ք, գնացե՛ք), - կըսեին: Երբ շատերը

կէրթային, մենք ոտքերնիս կախ կգցեինք, քանդված չադրրը նորեն կլարեինք, կմտնայինք տակը, որ չըգնանք: Հայրս ասում էր. - Առաջ չգնանք. ինչքան կըրնանք ոտքերնիս կախ գցենք:

Արդեն մայրիկս ու քույրերս հիվանդացան տիֆով: Միայն ես ու հայրս չհիվանդացանք: Բայց հետո ես ալ սթմա՝ ջերմ, ընկա:

Հայրս մտածեց մի տուն վարձի՝ հիվանդներուն խնամի:

Ոստիկանը ըսավ. - Ու՞ր եք գնում:

Հայրս բացատրեց. - Տուն մը վարձեմ հիվանդներուն խնամեմ:

- Հիվանդ են՝ թող մեռնին, - ըսավ անզգա ոստիկանը:

Խամշիով հորս վզին տվեց, արյունը չոռաց...

Մեղքերնիս ան էր, որ հա՛յ էինք և ուզում էինք մեզ համար մի տուն վարձել: Արդեն հիվանդները պառկած են, ես ալ հետերնին: Հայրս մինակը մեզ կնայեմե: Բայց հրաման կար, որ տղամարդ տանը չպիտի ըլլա: Հայրս օրվա մեջ անտառները կպտտեր, գիշերը գաղտնի տուն կուգար, չամիչ կբերեր: Հետո լսեցինք, որ հացթուխներուն և զինվորի ընտանիքներուն աքսոր չեն տանելու: Անոր համար հայրս ամեն օր հինգ փարայի խմոր կառներ, վրան կքսեր, իբր թե հացթուխ է...

Տիֆով հիվանդները չամիչ ու հաց կուտեին: Հայրիկս, որ ողջ-առողջ գիշերը տուն կուգար, կուրախանայինք: Ալ չգիտեմ չամիչ-հացը օգնեց, թե՝ Աստված. կամաց-կամաց տիֆով հիվանդ մայրս և քույրերս բավական աղեկցան, բայց դեռ պառկած են: Ես հազիվ ոտքի վրա հիվանդներին խնամում եմ, չուքալիները կթափեմ...

Օր մըն ալ գիշերը երազ մը տեսա. պետքարանին քովը մորուքով մարդ մը կար. «Աղջի՛կս, մի՛ մտածեր. կփրկվեք» ըսավ: Ես անոր ճանչցա եկեղեցու գմբեթի վրայի նկարեն: Ադի ըսավ, ես ուրախացա, եկա մայրիկս ըսի. - Ասա՛նկ-ասա՛նկ երազ տեսա:

Մայրս ըսավ. - Ադի Աստված հայրիկն է, հիվանդները Աստծո հրամանով պիտի աղեկնան: - Եվ իսկապես էլ առանց դեղի լավացան:

Օր մը ասանկ պետքարանի վերևի բալկոնեն մորաքրոջս աղջիկը կպոռա. - Հայկուհի՛, ու՞ր կապրիք:

- Մենք ալ ձեղնաճարկում ենք:

- Կուգամ՝ կտեսնամ:

Եկավ, բայց իրար օգնելու հնա՛ր չիկա: Գոնե իրար գտնանք այդ ժխորին մեջ... Մորաքրոջս ամուսինը և իմ հայրիկը կմտածեն՝ աս հիվանդները ու՞ր տանենք:

Մորաքրոջս ամուսինը, իմ հայրիկը և Սուրեն Խեսջյանի հայրը՝ Տիգրան Էֆենդին, մորքուրօղլի են: Կհանդիպին իրար, կընեն, որ մի հույն, կաշառքով, հույնի անունով մեզ կրնա տանիլ, անցնել Տավրոսի լեռները, ուր Բեռլին-Բաղդադ երկաթուղու վրա աշխատող են փնտրում, երկաթագործ որ աշխատի, բայց երեք հարյուր ոսկի են ուզում: Բոլորս ընտանիքով՝ օլուխչոջուխ, միայն երեք տղամարդ ունենինք: Այդ երեք արհեստավորները իբր պիտի երթան թունել բացեն Բեռլին-Բաղդադ երկաթգծի համար: Տիգրան Էֆենդին փող ուներ, երկու հարյուր ոսկին ինքը տվավ, հարյուր ոսկին ալ՝ հիսուն-հիսուն կիսելով, մենք ու մորաքրոջս ամուսինը տվեցինք, քամերները պարպեցինք, նստեցինք էշերը: Բոզանդիեն ադ հույնը մեզի վեզիկայով՝ այսինքն անցագրով պիտի դուրս հանե: Գիշերով, ջորիներով ճամփա էլանք: Ունեցածնիս ալ ի՞նչ է, բախըր-չախըր, սընխը սանր, ուրիշ բան չկա: Հիվանդ ենք, անկարող քայլելու: Տավրոսի լեռը ո՞նց պիտի բարձրանանք: Տիգրանենք չորս հոգի, մենք՝ տասը-տասներկու հոգի: Ջորիներն ու էշերը պիտի բարձրանան Թաշ դուրմազ՝ «Քար չի կանգնում» սարի գլուխը, որը Տավրոսի լեռներուն մեջտեղն է: Թեոդիկն ալ մեզի հետ էր, ան որպես գրագետ մարդ դրամ տվեր էր, եկած էր մեզ հետ: Շուրջերնիս գյուղ չիկա: Միայն թունել բացող բանվորներն են: Բոլորն ալ զինվորութենե ամիլե թաբուրից փախած մարդիկ են: Մենք Ղուշչուպար գյուղը պիտի բարձրանանք: Մեզ լցրին մի կազարմայի մեջ: Մենք երեք ընտանիք ենք՝ մորաքույրենքս, Խեսջյաններ և մենք: Մի սենյակի մեջ ենք լցված, բայց հոգիներնիս ազատած ենք աքսորեն: Խեսջյանը կըսեր. «Աս քաշվելի՛ք բան չէ, չեքիջ է պետք, որ ոջիլները կոտրենք»: Այնքան շա՛տ ոջիլ կար զինվորներեն մնացած:

Առավոտյան մեր երեք տղամարդիկը էլան գացին երկաթագործության: Հայրս դերձակ մարդ, մուրճով գործ չէ ըրած, մուրճը մատերուն խփել էր, սաստիկ ցավացրել: Ալ հաշիվդ ըրե, ադ ձևով թունել պիտի բացեն, որ Բեռլին-Բաղդադի երկաթգիծը անցնի: Բոլոր մեհենդիզները գերմանացի էին: Ես էլեկտրական լամպ առաջին անգամ հոն տեսա: Թունելը փորեցին, մինչև պատերազմի վերջանալը երկաթգիծը միացուցին:

Սուրենի մայրը երկու քեռի ուներ՝ Ներսես և Պետրոս Էֆեյաններ: Անոնք որպես գերմանացի սպա կաշխատեին, կերթային հետուներեն հայ որբեր կբերեին մեծ մայրիկիս կուտային, որ պահի մինչև մի ճար գտնեին:

Օր մը ադ Պետրոսն ու Ներսեսը, որոնք Գերմանիայում էին ուսում ստացել ու լավ պաշտոնյա էին, եկան, որ Սուրենի պապային, մամային տանին գծի վրա, որ Պոլիս փախցնեն: Առաջ երկու երեխաներին, հետո՝ հորն ու մորը տարին հասցրին Խաչկըրըն (խաչակիր բառից էր այդ վայրի անունը), իսկ մենք մնացինք մինչև զինադադարը: Բոլորիս ներում շնորհեցին: Ի՞նչ մեղք էինք գործել՝ չիմացանք: Ետ եկանք, բայց շատ պակսած: Մեկին մայրը չիկա, մեկին քույրը չիկա, մեկալին՝ հայրը, եղբայրը չիկան...: Այդպես լացո՛վ, ողբո՛վ գնացինք ետ՝ Ադաբազար:

Մեր տունը քարուքանդ եղած էր, բայց թուրքեր էին մտել ապրում էին: Մեծ մայրիկս անոնց դուրս հանեց, թուրքերը գնացին: Էդ մեր ազնիվ, շինարար ժողովուրդը նորե՛ն սկսավ շինել տուները: Հորեղբայրներուս, մորեղբայրներուս տուները դատարկ մնացին: Հայրս կարի մեքենա առավ, խանութ բացավ:

Հազիվ ինքզինքնիս գտանք, միլլիջիները եկան: Միլլիջիները ազգայնականներն էին՝ զինված: Մենք զարմացանք: Այլևս անցյալի խեղճ ու կրակ թուրքը չէր, որ պատերազմից պարտված էր դուրս եկել: Մինչև ատամները զինված միլլիջիները եկան, սկսեցին իրենց գործը: Քեմալը կազմակերպել էր հայերին, հույներին ու չերքեզներին, ովքեր մահմեդական չէին՝ քշել...

Էլի իմ հորեղբոր տղան՝ Ներսեսը, եկավ, ըսավ. «Շու՛տ ըրեք, փախե՛ք, միլլիջիները եկած են, պիտի կոտորեն»:

Տուն, ունեցած-չունեցած ապրանքները, խանութը, որը հայրիկս նոր էր ստեղծել, թողինք, գնացինք Իզմիր: Լավ է հույնը շոգենավերը բերեց, հայերուն և հույներուն օգնեց, որ փախչեն Հունաստան: Քեմալականները վառում էին գյուղերը, ի՛նչ որ հանդիպում էին...

Մենք եկանք Հունաստան: Ազատվեցանք: Հույն կառավարությունը Ադաբազարից, Էսքիշեհիրից, Իզմիրից եկած հայ գաղթականներին տնավորեց, նույնիսկ դպրոցները փակեց, որ մեզ ապաստան տրվի: Օրական երկու դրախմի կուտար՝ մարդ գլուխ: Գաղթականներին տուն տվավ: Մենք մնացինք Դրամայում, Կավալայում, հետո՝ Սալոնիկում...

1925 թվին ներգաղթով եկանք Հայաստան:

«Ամա՛ն, էրթա՛նք, - ըսավ հայրիկս, - թուրքին ձեռքեն ազատվի՛նք»: Էկանք հոս՝ Երևան: Ուսում առի, գիշերային դպրոցում սովորեցի, կոմսոմոլ ընդունվեցի, հետո գնացի Թիֆլիս սովորելու, քաղպարապմունքների էի գնում կիրակի օրերը, ЗКУ համալսարանում սովորեցի, այնտեղ ընդունվեցի պարտիայի շարքերը: Հանդիպեցի Մացակին: Ժիր, ճարպիկ աղջիկ էի, հագիվ էի ազատություն ստացել: Ամուսնացանք: Հանրակացարանում էինք ապրում: Թիֆլիսում էլ մայրացա, եկանք Երևան: Պարտիական աշխատանքի նշանակվեցի: Առաջ կոմսոմոլի կենտկոմումն էի աշխատում, կոլակաթափման աշխատանքներին էի մասնակցում, կոլխոզ շարժմանն էի աջակցում: Հետո եկավ 1937 թիվը: Սկսեցին մարդկանց բռնել: Ես կոմսոմոլի կենտկոմում ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչն էի. արտասահմանի հետ կապ ունենալուս համար ինձ մեղադրեցին: Այդ ժամանակ Անաստաս Միկոյանը եկավ Երևան. արդեն Ամատունին, Ենգիբարյանը, Աբուլյանը բռնված էին: Միկոյանը եկավ ըսավ՝ ի՞նչ է միայն մտավորականներին եք բռնել, կոմսոմոլի աշխատողների մեջ չկա՞ն ժողովրդի թշնամիներ: Ամուսնուս ալ բռնեցին որպես ժողովրդի թշնամի: Թուղթ մը կբերեն ամուսնուս առաջը կդնեն, որ ամուսինս ստորագրե: Ամուսինս չի ստորագրեր, իսկ Շաղբաթյանը կստորագրե: Ան ալ որբ էր եղած: Քշեցին աքսոր՝ Սիբիր, անտառներում, ճահիճներում ծառ կտրելու: Կինը ամուսնու համար սաբոկներ ճարեց, առավ, տարավ Սիբիր, որ ճահիճներուն մեջը աշխատելու ժամանակ հագնի: Կինը մեծ դժվարությամբ գնում, հասնում է Սիբիրի լագերի դուռը: Պահակը չի թողնում ներս մտնի: Կասի՝ արի ինձ հետ եղիր, հետո՝ գնա ներս, ամուսնուդ տեսնելու: Կինը չի համաձայնվում, ետ է գալիս, սաբոկները ձեռքին՝ առանց ամուսնուն տեսնելու:

Այնպես որ, ամուսնուս ալ բռնեցին, ժողովով ինձ հեռացրին կուսակցությունից, որպես ժողովրդի թշնամի: Ես դրսից լսում էի՝ իմ մասին ժողովը որոշում է հանում, լսում եմ ու լաց լինում: Ինձ ծանոթ մի տղա եկավ ձեռքս բռնեց, ուզեց ինձ տուն տանել, ըսի՝ գործ չունես, քեզ ալ կմեղադրեն, որպես ժողովրդի թշնամի...: Ի՛նչ ցավ է, գիտե՞ս: Այնքա՛ն հարգանքից հետո՝ ժողովրդի թշնամիի անուն վաստակիլ: Ամուսինս՝ բանտարկված, ես՝ կուսակցութենեն հեռացված: Մնացի անգործ: Շատ սոված, դժվար օրեր ունեցանք զավակներիս հետ: Հետո ստիպված լուսանկարչություն սովորեցի: Սկսա աշխատիլ, երեխաներս փոքր էին, շատ խեղճացել էինք: Պատերազմը սկսվեց: Տղամարդիկ ճակատ մեկնեցին: Ես աշխատեցի, ընտանիքս պահեցի: Հետո ամուսինս վերադարձավ: Վերականգնեցին ինձ ու նրան: Սկսեցի աշխատել պետական արխիվում որպես լուսանկարիչ: Ամուսինս չդիմացավ այդ հուզումներին՝ վախճանվեց:

Հիմա թոշակառու եմ, աշխատանքի և կուսակցության վետերան եմ, ապրում եմ տղայիս ընտանիքի հետ:

224 (224).
ՍԻՐՎԱՐԴ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ԱԴԱԲԱԶԱՐ)

Ադաբազարեն մեզ ոտքով տարին Աֆիոն-Գարահիսար: Ըսին. «Քա՛լքըն, չը՛խըն» (Ելե՛ք, վե՛ր կացեք): Երկու օրեն հասանք Կոնիա: Անտեղ հայերը վրաններ էին խփած: Մենք իջանք, քաղաք մտանք: Ես, մամաս, մորաքույրս միասին էինք: Պապաս թուրքի զինվոր էր: Պապաս կգրե քեռիիս, որը դոկտոր Թիրիաքյանն էր, «Ազատե՛ մերիններուն»:

Ադանկով քեռիս կիմանա, որ մենք Կոնիա ենք: Ուրբաթ օրը, որ Էնվեր փաշան մզկիթ կերթա, քեռիս՝ թուրք բանակի հայտնի բժիշկ, զինվորներուն բարև կուտա, Էնվերի աոջևը ծունկի կուգա, կըսե. - Էֆենդի՛մ, ես եկել եմ աղաչելու քեզ: Ես մայր, հայր չունիմ: Ունիմ երկու քույր, որոնք աքսորված են, հրամայե՝ ազատեն:

Էնվեր փաշան շատ կհարգեր քեռիիս: Հրամանը եկավ, որ դոկտոր Թիրիաքյանի ընտանիքը ետ թող էրթա աքսորեն:

Վալին հայ կըլլա: Ոստիկանները կուգան, Էնվերի հրամանը կկատարեն:

Կիրակի օր մը մեզի ըսին. «Պիտի էրթաք»: Մեզ թրենով ետ բերեցին Ադաբազար:

Հետո քեմալականները քեռուս զինվոր տարին Բուրսայեն՝ Էսքիշեհիր:

Մենք 1921 թվին Ադաբազարեն փախանք Միդիլլի՝ Իզմիրի դիմացը: Հոն դերձակություն սորվեցա: Հարուստ քաղաք էր, բայց գործ չկար: Առաջ հույներուն ազատեցին, հետո՝ հայերուն:

Նավով էկանք Մակեդոնիա, անտեղեն ալ՝ Հայաստան:

225 (225).
ԼՈՒԻՍԻԿ ԲՈԴՈՒՐՑԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԱԴԱԲԱԶԱՐ)

Ես շատ փոքր էի, բայց մշուշի պես կհիշեմ: Մենք Ադաբազարում էինք ապրում, երբ էկան մեզի աքսոր հանեցին: Ոտքով տարին Կոնիա, հետո՝ Գարափուար, անկե ալ՝ Էսքիշեհիր: Ճամփան բոլոր հայերուն կոտորեցին, իսկ մորեղբորս՝ Հարութին, որը թուրքական բանակեն փախել էր, մեր աչքին առաջ դրին չամի ճյուղերուն վրա, այրեցին: Անոր մարմինին հալված յուղերը խեժի պես կաթկթեցին: Մայրս ասի երգը իր եղբոր՝ Հարութի վրա էր ճյուսել, կերգեր ու լաց կըլլար.

Չամդան սաքըզ աքըլօր,
Հարութ բանա բաքըլօր,
Բաքմա՛, Հարու՛թ, քարդաշըմ,
Ջիլէրիմի յաքըլօր:

Եղևնուց խեժմն է կաթում,
Հարութը ինձ է ձայնում,
Հարու՛թ, եղբայրս, մի՛ ձայիր,
Դու իմ հոգիս ես այրում:

226 (226).
ՄԱՐԻ ԵՐԿԱԹԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԱԴԱԲԱԶԱՐ)

Մ իհրան խալֆան՝ թուրքական զինվորական աստիճան ունեցող մորեղբայրս, Անկարայում թուրքական բանակի բժիշկ էր և վեց ամսվա զոհված էր, երբ 1915 թ. եկան մեզ տեղահանեցին: Ամեն մարդ իր ունեցվածքը, տունն ու տեղը թողեց, դուրս էկավ տունեն:

Ես փոքր էի, բայց լավ կհիշեմ: Մամաս ի՛նչ ամաս-չամաս, ի՛նչ աղվոր բան կար մեր տունին մեջը՝ ապակյա թանկարժեք վազոներ, հնաոճ պատեն կախված մեծ հայելի և շատ ուրիշ բաներ, առնում էր ջղայնացած զարնում էր պատին, կոտրում և ասում. «Չե՛մ ուզեր թուրքին մնա. ավելի աղեկ է կոտրեմ»: Ես իմ խաղալիք տիկնիկներս լեցուցի թենեքե տուփի մը մեջ, վրան ալ մամաս քիչ մը ուտելիք դրեց, տարավ տեղավորեց արաբայի մը վրա: Հազիվ արաբային վրա պիտի եղայինք, որ ճստինք ու շարժվինք, արաբան թերս դարձավ, մեծ մայրիկս ճստած տեղեն դուրս ինկավ փողոցի քարերուն, փոշիներուն վրա՝ ձեռքը կոտրվեց:

Ո՛չ բժիշկ կա, ո՛չ մի ճար: Մեզի ադ վիճակով ճամփա հանեցին դեպի Էսքիշեհիր:

Տարին մեզի Էսքիշեհիր, լեցուցին խանի մը մեջ: Մեր քովի խանը, որը մերինին պես աղտոտ էր ու մութ, հոն ալ բերին լեցուցին Պոլիսեն աքսորված բոլոր մտավորականներուն: Անոնք ալ ըսես ճե՝ բոլալը օձիքներով, յախա-քրավաթ, հագած, կապած, բայց արդեն վրանին գլուխնին պա՛տո-պա՛տո, գզգզվա՛ծ:

Մենք ամեն գիշեր լսում էինք անոնց լաց ու կոծի ձայներն ու հառաչանքները, որովհետև թուրք զաբիթներն ու ոստիկանները անոնց սաստիկ ծեծում էին:

Քանի մը օրեն անոնց բոլորին տարին: Լսեցինք, որ անոնց շատ տանջանքներով սպանել են:

Մեզի աքսոր չտարին, քանի որ Միհրան մորեղբայրս, որ թուրքական բանակում բժիշկ էր ծառայած, դեռ նոր էր զոհված: Մենք հոն մնացինք: Մայրս միշտ կուլար՝ հիշելով իր վաղամեռիկ եղբորը: Մայրս արվեստ շատ կսիրեր: Տունեն ելնելու պահին ան չէր մոռցած իր սիրելի ջութակը հետը վերցնել: Ադ տխուր պահերուն մայրս իր ձեռքն էր առնում իր ջութակը և կսկսեր տխու՛ր-տխու՛ր նվագել ու լաց լինել:

Ադ խանի մեջը ո՛չ սեղան ունեինք, ո՛չ ալ աթոռ: Մայրս գետնին ծունկի եկած կնկարեր: Կհիշեմ՝ ան օրին մեկը նկարեց աղյուծ մը, որը պզտիկ ոչխար մը կհոշոտեր: Ան նկատի ուներ իր ամմեղ, ջահել եղբորը, որը զոհ գնաց թուրքական բանակում:

Օրին մեկը թուրքական զաբիթները նորեն եկան, նորեն ուզում էին մեզ աքսորել՝ այս անգամ Բաղդադի կողմը, բայց մայրս նորեն խոսեց, պատմեց, փաստաթղթեր ցույց տվեց, և նորեն մորեղբորս հանգամանքով ազատվեցանք աքսորեն:

Զինադադարեն ետքը մեզի նավով Պոլիս տարին: Պոլիսեն՝ Եգիպտոս անցանք: Եգիպտոսեն ալ 1947 թվին Հայաստան եկանք:

Աստեղը սկսա աշխատիլ Պիոներ պալատում, որպես ձեռագործի և ասեղնագործության դասատու:

Իմ աշխատանքները բարձր են գնահատել, քանի-քանի անգամներ ցուցահանդեսներում ցուցադրված են և՛ հայրենիքում, և՛ արտասահմանում: Շատ անգամներ ալ անհատական ցուցահանդեսներ տված եմ, որտեղ ներկայացված են իմ աշխատանքներս՝ ասեղնագործություններս, հայկական տարազներով տիկնիկներս և ծաղիկներս:

Երազս է, որ այդ բոլորը մեկ ալբոմի մեջ գունավոր լույս տեսնան:

227 (227).
ՍԻՐԵՆԱ ԱՐԱՄԻ ԱԼԱՃԱՃՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ԱԴԱԲԱԶԱՐ)

Ժամանակին դրախտի մեջ էինք, դժոխքի մեջ ինկանք: Քանի անգամ անունս փոխած են, քանի անգամ ընտանիքս փոխած են:

1915 թվին ես հինգ տարեկան էի, երբ Անատոլուի ժողովուրդին աքսոր հանեցին: Ես ալ անոնց մեջն էի:

Գոհ չեմ ողջ մնալուս, բայց սիրտս կարյունի, քանի միտքս կուգան ծնողքս:

Մենք շերամագործ էինք: Մարտին Հակոբյանը հորս՝ Արամ Ալաճաճեանի, հետ շերամի հունդերը կաճեցներ, տուփերու մեջ կլեցուներ, մինչև Արաբստան առուտուր կընեին: Ամբողջ կոտորեցին, փչացուցին մեր ունեցածը: Հիմա, երբ Ադաբազար կերթամ, մեր տունը կտեսնամ՝ կուլամ, կհիշեմ մեր անցյալի կյանքը: Չոջուխ էի, բան մը չէի գիտեր, բայց խելացի էի, ամեն բան կհիշեմ: Աս երեսս, կտեսնա՞ս, աքսորի մեջ արաբները կապույտ մելանով ծակծկած են, որ ֆելահ արաբ ինձի դարձնեն:

Առաջին ընդհանուր պատերազմի ժամանակ թուրքը գերմանացիին հետն էր: Ամերիկան, Ֆրանսիան, Անգլիան և Իտալիան իրարու հետ էին:

Պատերազմը սկսավ: Բոլոր օտար կոնսուլատները՝ ով օտար էր, պիտի ելլար, երթար: Առաջին անգամ մեր պապաներուն, քեռայրներուն, ախպարներուն, ով որ քսան տարի անց էր, ժողվեցին, ըսին՝ թուրքական զինվոր պետք է ըլլան:

Ռուսական կոնսուլատեն պապայիս կկանչեն, կըսեն. «Շուտ աստեղեն դուրս եկուր, քու կյանքդ վտանգի տակ է»:

Պապաս, մամաս շերամի գործով զբաղված էին, ես ալ հաջի եղած մեծ մամայիս քովն էի: Այնպես որ, պապաս, մամաս կելլան շտապ կերթան Ռուսաստան: Պատերազմը սկսավ: Ճամփաները գոցվեցան: Երկիրեն դուրս ելլալու հրաման չկար: Ռուսաստանեն թուրք մարդ մը կվարձե, կղրկե, որ մեզի գտնա, բայց ան կուգա, մեզի չգտնար, քանի որ թուրք ժանդարմները գյուղին շուրջբոլորը կապեցին: Մարդ դուրս չէր կրնար ելլալ: Ով որ փորձ կըներ՝ չաթ կընեին, կզարնեին:

Պապաս տասներկու թանեքե ոսկի թաղած էր, բայց ես հաջի մեծ մայրիկիս հետը աքսոր ելա, հետերնիս ոչինչ չունեինք: Վրանիս մեկ հատ հագուստ ունեինք: Գիշերը անձրևի տակ կթրջվեինք, առտուն արևի տակ կչորնար, վրաննես մուխ կելլեր:

Չորս տարի պատերազմի շրջանին լեռներուն մեջը կթափառեինք՝ անոթի, ծարավ: Թուրքերը բլղուր կծախեին, հաջի մայրիկս բլղուր կառներ, գրպանս կըլեցներ, ճամփան կքալեինք, բերաննիս կկեցնեինք՝ հավերուն պես: Ուր էրթայինք ճե, գետինը մեռելներով լեցուն կըլլար, մեզմե առաջ գացող ները մեռած, սեփ-սև եղած, իրար վրա ինկած էին: Մինչև Դեր Զոր հասանք ճե՝ արդեն պատերազմը վերջացավ: Եվրոպացին հաղթեց: Ճամփաները բացվեցան:

Աքսորի ճամփաներուն մեծ մամաս քովս մեռավ: Անծեր էր, անոթությանը, հոգնությանը չդիմացավ: Ալ ամեն բան մեջս էր: Ժանդարմները ձիերու վրա նստած խրբաջով մեզ կզարնեին ու կպոռային՝ «հօրուի՛ն» (քալեցե՛ք):

Դեր Զորը ամենեն գեշ տեղն էր, տաքությունը շունչդ կչորցնե: Գետինը խոտ չիկա, որ ուտես: Երեք անգամ հաջի մայրիս կորսնցուցի, բայց հետո հաջի մայրս ճամփին մեռավ: Ես մնացի լրիվ որբ, անապատի ավազներուն մեջը կը տապլտկեի, երբ ինձի գտան: Արաբ էրիկ-կնիկ մը ինձի տարին իրենց վրանը: Արաբ նոր մայրս նստավ, իմ մազերս սկսավ մաքրել ոջիլնե-

րեն: Ինձի լոգցուց: Կեղտոտ հագուստներս այրեց, իրեն հագուստները ինձի հագցուց, վրաս մարդու շնորհք եկավ: Ասենք՝ ինձի շատ կսիրեին: Իրենք զավակ չունեին, ինձի զավակի տեղ ընդունեցին: Ես իրենց համար կերգեի, թատրոն կխաղայի: Արաբ հայրս ինձի քառասուն փարա կուտար, որ շաքարով աքլոր առնեմ: Ինձի ոսկի բիլեզիկներ դրած էին ձեռքերուս և ոտքերուս, նաև սքանչելի ոսկե վզնոց մը ունեի: Բայց որպեսզի ինձ չըգան չտանին, անոնք օր մը ձեռքերս ոտքերս բռնեցին, չորս հոգով դեմքս կապույտ մելանով սկսան ծակծկել, մինչև կուրծքս: Ես, ըսես ճե, ցավեն կպոռամ, բայց լսող չիկա: Դու մի ըսեր՝ ադ իրենց սովորությունն է, իբր ինձի արաբ դարձուցին:

Ամբողջ պատերազմի տևողության ընթացքին ես անապատը, անոնց մոտ մնացի: Երբ գինադադար եղավ, ամերիկացիները եկան անապատ հայ որբերուն հավաքելու: Ինձի հարցուցին. - Էշու՞ էսմաք (անունդ ի՞նչ է):

Ես ալ ըսի. - Մելրամ:

- Հորդ անունը:

- Աբու Էմին (արաբ հորս անունն եմ տալիս):

- Մորդ անունը:

- Հաճի Էասում (արաբ մորս անունն եմ տալիս):

Արաբ փոլիսը, որին խոստացած էին ամեն մեկ հայ որբ գտնելու համար՝ մեկ կարմիր ոսկի, ինձի ըսավ. - Աղջի՛կս, դուն արաբ չե՞ս կրնար ըլլալ:

Իսկապես ալ մազերս դեղին էին, աչքերս՝ կապույտ, ինձի «Մոսկով» (ռուս) կըսեին, քանի որ մազերս ալ քիչ խըվըղո էին: Արաբ փոլիսը ըսավ. - Դուն հայ ես, քու պապադ, մամադ Հալեպ են, քեզ կպապսեն կոր:

Ես, ըսես ճե, կվախնամ կոր. - Էմմի՛ (մայրիկ), ինձի մի թող որ տանին, - կպոռամ, կուլամ կոր:

Փոլիսը ըսավ ինձի. - Աղջի՛կս, դուն ո՞ր քաղաքեն ես:

Ես մորս երեսը կնայիմ, քի ի՞նչ պիտի ըսեմ:

Անոնք հասկցան, որ ես վախենում եմ: Ամերիկացին ըսավ արաբ մորս. - Հանը՛մ, աս չոջուխը քեզմե կվախնա կոր, խնդրեմ դուրս ելիր:

Արաբ մայրս դուրս ելավ սենյակեն:

Աս ամերիկացիները ինձի իրենց գիրկը առին, ինձի շաքար-շոկոլա տվին: Ես մտածեցի, որ ասոնք լավ մարդիկ են: Աս ամերիկացին ըսավ. - Բեյբի՛ (փոքրիկ), խաչ ինչպե՞ս կհանեն, - և սկսավ երեք մասները մե՛կ ճակատին տանիլ, մե՛կ կրծքին վրա տանիլ, իբր խաչ կհանե:

Ես որ ադ տեսա, ըսի. - Լէ՛ (ո՛չ), անա՛ղնկ չէ, ասա՛ղնկ է, - և իմ աջ ձեռքի երեք մատներով սկսեցի ճիշտ ձևով խաչ հանել:

Ամերիկացիները ադ տեսնելուն պես՝ ուրախ ծափ տվին և ըսին. - Բրավո՛, շի իզ արմինըն (կեցցե՛ս, նա հայուհի է):

Ադ ձևով հասկցան, որ ես հայու զավակ եմ: Արաբ կնիկը ներս վազեց, ըսավ ինձի. - Ի՞նչ ըսիր, քի ասոնք ուրախացան, ծափ տվին:

Ես զարմացած ըսի. - Բան չըսի, - միտքես անգամ չանցավ, որ խաչ հանելս վկայություն մըն էր, որ ես քրիստոնյա եմ:

Արաբ ոստիկանը ըսավ. - Ասոր տանինք Հալեպ, քի ինչ ըլլալը որոշեն:

Ինձի ձիուն վրա նստեցուցին, տարին: Արաբ մայրս ալ մեր ետևեն սկսավ քալել: Քիչ մը անդին ջուրին մեջը էշ մը տեսավ, վրան նստավ, ետևնես եկավ: Գյուղեն դուրս եկանք, տեսա արաբ պապաս եկեր է, ձեռքերը պարզած՝ ինձի գրկեց, ըսավ. - Մեյրա՛մ, քեզի թագավորին պալատն ալ տանին նէ, էլիր մերին տունը եկուր:

Ինձի տարին Հալեպ: Մտանք խոշոր շենք մը: Դուռին երկու կողմերը ճնդիկ զինվորներ կեցած էին: Արաբ մայրս դուրսը ձգեցին: Ան էշով միասին կեցած է դուրսը: Ինձի ներս տարին: Գրագիրները սեղաններուն առջևը նստած չըքըր չըքըր դակտիլոյով կգրեն կոր: Ինձի ըսին. - Թահալի՛ (եկու՛ր):

Նորեն հարցուցին հորս, մորս անունները: Ես նորեն իմ արաբ մամայիս, պապայիս անունները տվի: Ալ ինը տարեկան եմ եղած: Ամերիկացին ըսավ. - Չէ՛, դուն հայու աղջիկ ես: Դու պետք է ճիշտը ըսես, որ քեզի ազատենք անոնց քովեն, - ինչ ըսին նէ՝ չըսի:

- Հայա խաչ հանելդ, - ըսավ ամերիկացին:

Անտեղ ես առաջին անգամ տեսա մարդ մը, ձեռքին փայտի մը կտոր առած, կխոսի կոր: Ես ալ միտքես ըսի. «մեջլու՛մ» (խե՛նթ է): Դուն մի ըսեր, տելեֆոն է: Ծնեքեն դուրս եկանք: Տեսա արաբ մայրս էշով կսպասե կոր: Փաթթվեցա, երկուքս սկսանք լալ: Անտեղեն արաբ փաշա մը եկավ մեզի տեսավ, ըսավ. - Ա՛յ կնիկ, ես քսանհինգ հատ առած պահած էի, - ան ալ սկսավ լալ, քանի որ կպահե եղեր, որ անոնցմե երեխա ունենա:

Ամերիկացիները ինձի բռնեցին, օթոյի մը մեջ դրին: Ես ալ օթո չեմ տեսած, կկարծեմ, որ ուր որ է պիտի թռի: Ինձի տարին Ահարոն պատվելիի որբանոցը: Քանի մը օր վերջը Ադաբազարի ամերիկյան որբանոցի տնօրինուհի միսս Մերի Քինը նամակ մը կգրե Ահարոն պատվելիին, որ իրեն տասնհինգ հայ աղջիկ ղրկե, որոնք ըլլան լավ սովորող: Մյուս աղջիկներուն հետ ինձի ալ Կարպիս անունով տնտեսը ճամփա հանեց: Մեյ մըն ալ ետևես կլսեմ. - Ամմի՛, - կնիկ մը՝ չարշաֆի մեջ փաթթված: Ան իր չարշաֆը բացավ, որ երեսը երևա, տեսա արաբ մայրս էր: Խեղճ կինը այդքան օրեր կսպասե եղեր մեր որբանոցին առջևը, որ գուցե ինձ նորեն տեսնե: Բայց մեզի թրեն դրին և Ադաբազար տարին: Որբանոցին մեջ ամեն մեկուն քովը մեզի մեյ մեկ հատ պառկեցուցին: Միսս Մերի Քինի ձեռքին տակը մենք բոլորս ալ բարձր ուսում և կրթություն ստացանք: Անգլերեն լեզուն բլբուլի պես կխոսեի:

Օր մը միսս Մերին ըսավ. - Դուն հոս անգլերենդ պիտի մոռնաս, ղրկեմ քեզի Պոլիս, կարևոր մարդոց տունը խնամատարություն ընես:

Ես՝ կուլամ, արդեն մայր չունիմ, հայր չունիմ, հազիվ միսս Մերիին ընդունած էի իմ հարազատ մորս տեղը: Այնքան որ իրար կսիրեինք: Եվ ինքն ալ ինձ կգնահատեր որպես ուշիմ, գիտակից և գործունյա անձ մը: Ան հանձնարարական մը տվավ ինձի, որ երթամ Պոլիս և ներկայանամ այդ ընտանիքին:

Գացի Պոլիս: Քանի քանիները ինձի կըսեին. «Աս իմ զավակս է», ես ձայն չէի հաներ:

Մարտին Հակոբյանը ողջ էր, ինձի ճանչցավ, ըսավ. - Գիտե՞ս, պապադ, մամադ չկան:

Ես սկսա լալ:

- Հիչ հոգդ չընես, ես հո՛ս եմ, - ըսավ:

Հույնի պատերազմը սկսավ: Անոնք Անգլիա գացին: Ալ՝ իրենց չտեսա: Բայց Վիոլեթ և Էդվին Լաֆոնթենները ինձի տարին իրենց տունը, մեծցուցին, իրենց զավակներն ալ ինձի հետ մեծցան: Ինձի շատ կսիրեին. «Սինի, սինի» կըսեին: Մինչև վերջը անոնց քովը մնացի, անոնց զավակներուն զավակներն ալ դաստիարակեցի, անգլերեն սորվեցուցի, քաղաքավարության կանոններուն վարժեցուցի: Անոնք ալ լավ մարդիկ դարձան: Հիտլերի պատերազմեն առաջ որոշեցին երթալ Անգլիա՝ իրենց զավակներն ալ հետերնին գացին:

Վերջը Պոլիսի մեջ Հնդկաստանի և Եգիպտոսի պրենսեզներուն տուները մնացած եմ, անոնց չոջուխներուն մեծցուցած, դաստիարակած եմ:

Այսպես անցավ իմ կյանքը: Երիտասարդ ատենըս շատ քաղաքավար հայ տղա մը դեմս ելավ, որը հիացած էր և՛ իմ արտաքին գեղեցկությամբ, և՛ իմ լեզուներուս իմացությամբը, բայց պատճառաբանած էր, որ այդ գեղեցիկ դեմքին վրայի կապույտ կետերը չըլլային նէ՝ մենք կամուսնանայինք: Այնպես որ, արաբներուն ըրած դեմքիս աս դաճվածքները պատճառ դարձան, որ ծերությանս մեջ մեն-մենակ մնամ...:

228 (228).
ՄՈՒՇԵՂ ՍԱՐԳՍԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1890 Թ., ՆԻԿՈՄԵԴԻԱ, ԱՐՄԱՇ, ԽԱՍՔԱԼ)

Մենք մեր տան մեջ տասներկու հոգի էինք: Մեծ պապս՝ Տեր Հակոբ քահանան, մեր գյուղի Ս. Հակոբ եկեղեցիի տերտերն էր: Հայրս և հորեղբայրս թուրքական բանակումն էին: Ինձ ալ ուզեցին բանակ տանիլ: Տարին Պոլիս՝ բժշկական քննության, բայց հասակս շատ կարճ էր, պատի վրա գծված գիծեն ցած էի, ինձի բանակ չտարին, երկու տարիով ետ գցեցին: Ես գացի տեսա՝ գյուղի մը մեջ կտավատի ձեթ են հանում: Ես սկսա անոնց հետ աշխատիլ: Մեկ ալ տեսա՝ թուրք զաբթիաները եկած են, բանակեն փախած զինվոր են փնտրում: Ես փախա, թաքնվեցի, մի թուրքի գոմը մտա: Աղջիկ մը եկավ հարցուց. - Ու՞ր է ձեթ հանող տղան:

Թուրք կինը ըսավ. - Չիտեմ: Երևի գյուղի մեջն է, - հետո, երբ աղջիկը գնաց, թուրքի կինը ինձ ըսավ, - ամա՛ն, տղաս, գնա, եթե ձեռքերնին անցնիս, քեզի կսպաննեն, ինձի ալ հետդ:

- Յա՛, Տեր Աստվա՛ծ, - ըսի ես, դուրս եկա:

Մեր տունը քանդեցին, անասուններին քշեցին, մեջի եղածները թալանեցին: Աքսորի ճամփաներու մեր հսկիչ պահակները անխիղճ չեչեններ էին: Ճամփին հրաման եկավ՝ մարդագլուխ մեկ-մեկ ոսկի հավաքել: Այնքան անխիղճ էին, որ մեզ հոգնեցնելու համար մեր գացած ճամփով ետ կդարձնեին, սարերով, ձորերով կտանեին, որ հոգնինք, կոտորվինք: Արդեն ո՛չ հաց կար, ո՛չ ջուր:

Հորաքույրիս մարդը, երիտասարդ աղջիկը մեռան, ուտելիք չիկար, խմելիք չիկար: Իմ աչքերով տեսա քառասուն-հիսուն հայ աղջիկներ ձեռք-ձեռքի բռնեցին, Եփրատ գետը նետվեցին, որ թուրքերուն ձեռքը չանցնին: Փոքր երեխաներին սուրերու վրա կհանեին, կսպանեին, որ չմեծնան, մեծ մարդ չդառնան: Գիշերները բացօթյա գետնին կքնանայինք: Բայց ամենեն գեշը ան էր, որ խեղճ պապս, որ արդեն ծեր էր, քալելեն կքրտներ և ստիպված կփոխեր իր հագուստները, էդ ժամանակ էլ կորավ նրա ոսկե ժամացույցը:

Քանի որ հայրս և հորեղբայրս թուրքական բանակում էին, մեզ հրաման տվին ետ դառնալու: Մենք ոտքով ետ դարձանք, բայց արդեն շատ քիչ մարդ էր մնացել: Այնպես որ, մենք Դեր Զոր չմտանք: Մեզ ստիպեցին թուրքական գյուղ գնալ: Հոն բնակություն հաստատեցինք: Մամաս, քույրերս, պապս, տատս, հոն մնացին երեք-չորս տարի, մինչև պատերազմի վերջը: Թուրքերուն համար կաշխատեինք, գործ կընեինք: Մի հայ կնիկ կար մեզ հետ, Եղիսաբեթ անունով: Նա թուրքերին հայտնել է, որ տերտերի փողը նավթի թենեքեով է: Հաջորդ օրը գողերը եկան, մտան ներս: Նավթ՝ չկար, լույս՝ չկար, մութին մեջը գողերը եկան, ոսկի փնտրեցին, չգտան, մեր հագնելիքները մեչոկների մեջ լցրին, շալակեցին ու տարին:

Տեր-Հակոբ պապս էդ թուրքերի գյուղի մեջ, խեղճության մեջ մեռավ: Նա, որ որպես քահանա հարյուրավոր մեռելներ էր թաղած, իր վրա «Հայր մեր» ըսող մը չեղավ:

1918 թվին երբ զինադադար եղավ, մենք մեր գյուղը՝ Խասքալ գնացինք: Տեսանք՝ մեր տունը պարապ էր: Հետո հույնի-թուրքի կռիվը սկսավ: Հույները կառավարական զինվորներով եկան Իզմիրի վրայով, Բուրսայի վրայով հարձակվեցան, առաջ անցան: Հույներուն հետ հայ կամավորներ ալ կային՝ Թորգոմ փաշայի ղեկավարությամբ: Քեմալը մտավ Իզմիր, ահագին հույն, հայ կոտորվեցին: Քեմալի ժամանակ ինձ թուրքի բանակ տարին: Բանակում խիստ էր: Ես Պոլիս կծառայեի:

Տասը հազար հայերու նավով Հունաստան տարին: Ես էի, մայրս, մեծ մայրս, երեք քույրերս և եղբայրս: Սկզբում մեզ տարին Միդիլլի կղզին: Հետո մենք Սալոնիկ գնացինք, հորեղբայրներս էնտեղ էին: Սկսեցինք աշխատիլ: Ես կաշեգործ դարձա:

1947 թվին կազմակերպված ներգաղթով Հայաստան եկանք:

229 (229).
ԲԱՐՈՒՀԻ ԶՈՐԵՔՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ՆԻԿՈՄԵԴԻԱ)

1915 թ. երբ մեզի աքսոր քշեցին, մենք տասներկու ամիս անապատին մեջը մնացինք: Չորս քույրով փախանք անտառները: Ջրի մեջ լողալով՝ Խաբուր գետը անցանք, արաբ բեդվինների քովը հասանք: Անոնք մեր ոչլոտված մազերը խուզեցին, մեր երեսները մելանով ծեծեցին, որ հայ ըլլալնիս չիմացվի: Իրենց ոչխարները մեզի տվին, որ արածացնենք:

Ծամի մոտ զինվորական մի տեղ կար, հայտարարեցին. «Ում տունը հայ կա՝ թող բերե հանձնե»: Մեր արաբը բարի էր, մեզի չտարավ:

Ետքը մենք փախանք, հայերու որբանոցը մըտանք:

Անտեղեն Հունաստան անցանք: Հունաստանեն ալ Հայաստան եկանք:

230 (230).
ԲԱՐՈՒՀԻ ՍԻԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1900 Թ., ՆԻԿՈՄԵԴԻԱ)

Ծնվել եմ 1900 թ. Նիկոմեդիայի Օվաճըք գյուղում:

Մենք մեր տեղը լավ կապրեինք, տուն, տեղ ունեինք: Ստամբուլում հայ փաշաները մեծ գործի վրա էին: Թուրքերը վախենում էին հայերեն, քանի որ առևտուրը, ամեն ինչը իրենց ձեռքն էր: Ուզեին նե, կառավարությունն ալ իրենց ձեռքը կառնեին..., անոր համար մեզի մեր տուն ու տեղեն հանեցին, գցեցին աքսորի ճամփաները:

Տասներկու ամիս անապատում ենք մնացել, ո՛չ հաց, ո՛չ ջուր, ո՛չ տուն, ո՛չ մի բան: Ինը հոգինոց ընտանիքեն միայն ես ողջ մնացի. մամայիս սպանեցին աչքիս առջևը, քույրիկիս փախցուցին, մյուս քույրիկս փոքր էր՝ հիվանդացավ, մեռավ, միջնեկը՝ կորավ, իրար չգըտանք, հարսիս փորը պատռեցին. - Գյավուրի փորինը աղջի՞կ է, թե՞ տղա, - ըսավ մի ասկյար:

- Գյավուրը տղա չի՛ ծներ, տե՛ս, - ըսավ ու պատռեց մեր աչքին առջև...

Ես, ուրիշ չորս աղջիկներու հետ, հազիվ փախա անտառները, այնտեղ գետ մը կար, լողալով անցանք: Մի արաբ ինձ տարավ իր տունը, ըսավ. - Աղջի՛կս, ճիշտ է, ձեր օրենքին մեջ չկա, բայց արի՛ երեսդ մելանով ծեծեմ, որ քեզ հայ չկարծեն:

Ես ալ լացի. նե՛ տեղաշոր ունեմ, նե՛ հագուստ:

Երեսս ծեծեցին, հատ հյուսերս խուզեցին: Տունին գործերը կընեի…

Օր մը ադ արաբը էշուն վրա դրած մի հայ տղա բերավ, անոր անունը Աբդուլլա դրին, բայց ետ ինձ գաղտագողի ըսավ, որ իր իսկական անունը Ավետիս էր, անոր ալ մեր տերը ոչխարները տվեց, որ տանի արածացնի:

Շամ քաղաքի մոտը գինվորական տեղ մը կար, հայտարարեցին, որ որուն տունը հայ կա՝ թող բերի հանձնի: Իմ տերը մեզի չտարավ: Օր մը ադ Ավետիսին հետ գիշերով փախանք, հայկական որբանոցը մտանք:

Անտեղեն մեզի տարին Հունաստան, թուզի ֆաբրիկան աշխատանք: Հետո ալ՝ 1928-ին, Հայաստան եկանք:

231 (231).
ԳԵՂԵՑԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԵՍԱՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1901 Թ., ՆԻԿՈՄԵԴԻԱ)

1915 թվի Մեծ եղեռնի ժամանակ ես տասնըչորս տարեկան էի: Աքսորն սկսվեց: Մեր ընտանիքը տասներկու ջանով գացինք, երկու ջան ողջ մնացինք: Ճանապարհին մեզ խամշիներով կծեծեին, կտանջեին, ջուր չէին տար: Մենք քալելով հասանք Դևլեթ, Էսքիշեհիր, Կոնիա, Էրեյլի, Բոզանթի, Ղանըը Գեչիթ, Բաբ, Մեսքենե, Աբուարար, Տիգրանակերտ, Շամ, Բաղդադ, Դեր Զոր…: Անանկ որ, մրջյունը ուր կոխած է, հոն գացած եմ: Չգացած տեղս չէ մնացած:

Տիգրանակերտում մայրս մահացավ: Մայրս մեռնելու ժամանակ ըսավ. «Տղա՛ս, Գեղեցի՛կ, քույրիկիդ լավ նայե, ես պիտի մեռնիմ»:

Մեսքենեում՝ քույրս սովեն, հիվանդությունեն, տանջանքներեն մեռավ: Խոշոր հորեր փորած էին, մեռածներուն, ողջ հիվանդներուն մեջը կնետեին: Հայրս ճանապարհին մնաց: Ես մնացի միանակ: Գացի ժողովուրդին հետ՝ ոտքով, արևներուն տակը: Ճանապարհին ամեն կողմ ուռած, նեխված, տկլորացրած, այլանդակված դիակներ էին: Մեզի տարին Հալեպ, անտեղեն՝ Մեսքենե, Աբուարար, Դիպսի, Տիգրանակերտ, Ջարաբուլուս:

Մեր քաշած տանջանքներն ու չարչարանքները շատ-շատ էին: Քալելեն հոգնած, հագիվ տեղ մը կընստեինք, որ հանգչինք, չեչենները կուգային, մեզ կվնասեին: Մեր ունեցած-չունեցածը կգողնային: Շորերը վրաներես կհանեին, կտանեին: Աղվոր երեխաներուն կփախցնեին: Հարս ու աղջիկներուն կտանեին, պատիվներուն վրայեն կանցնեին, վերջն ալ կսպանեին, խոշոր փոսերուն մեջը կնետեին: Կուգային երեք-չորս հարյուր հոգի կառնեին կտանեին կջարդեին, ձորը կլեցնեին կամ՝ Եփրատ գետը:

Չեչենները եկան հայերուն ջարդելու: Արաբները մեզի լավ կնայեին: Բայց չեչեններն ու թուրքերը կտանեին հայերուն, կչարչարեին, կջարդեին, ունեցած-չունեցածը կթալանեին, կփախնեին: Չեչենները ուզեցին ինձի տանել սպանել, բայց ես փախա, ժողովուրդին միացա: Դեր Զորին մեջը արաբներուն քովը մնացի: Եփրատի քենարով կերթայի, մեկ ալ ձայն մը լսեցի, տեսա երկու երեխա՝ մեկը աղջիկ, մեկը տղա՝ հագիվ ութտասը տարեկան: Դիմացն ալ արաբ կին մը էշը կշրե: Ան երբ տեսավ, որ ես երեխաներուն բռնեցի, ինքն ալ երեխաներուն առավ գնաց, ես մնացի մենակ: Գացի Տիգրանակերտ, հոն Սարգիս անունով տղայի մը հետ ծանոթացա: Արաբի մոտ մնացինք:

Ըսելս ան է, որ թուրք ժողովուրդը, Թալեաթը, Էնվերը, Ջեմալը հայ ժողովուրդը աքսորեցին: Եվ ամեն մեկուն համար մեյ-մեկ կարմիր ոսկի ստացան: Թուրքերը շատ վնաս տվին հայ ժողովուրդին: Ես շատ տանջանք քաշած եմ: Անոր համար առանց արցունքի չեմ կրնար աս բոլորը պատմել: Դեր Զորի ջարդին մեջեն ամեն մարդ իր եղբայրը, քույրը, հարազատը սկսավ փնտրել: Ես ամենն ալ կորսնցուցած էի: Մեն-մենակ էի մնացած: Մերոնք բոլորն ալ դանակով գացին:

Արաբին քովը որ մնացի, անոնց եփածը, թափածը, ամեն ինչը սորվեցա: Իմ անունս Հասան դրին: Ես տակառներով ջուր կբերեի հետու տեղեն: Վերջը փախա ադ արաբներուն քովեն: Եփրատը ձեղ տեղ մը կար, լողացի անցա: Արաբ կին մը ձեռքը տվավ՝ թաա՛լի, ըսավ, այսինքն՝ արի՛, ինձի ազատեց:

Ես թուրքերեն շատ քաշած եմ: Դարաբասրայի կողմեն Ջարաբլուս գացի: Նիզիպ ուզում եմ երթալ, որ անտեղեն Այնթապ, Քիլիս, Ղաթմա, Տիգրանակերտ պիտի երթանք: Վերջը-վերջը Տիգրանակերտեն եկա Իզմիթ:

Ադ ժամանակ շատ երգեր կերգեին, տխուր երգեր, բայց ես չեմ կրնար հիշել, մոռցեր եմ:

Ես հիմա եկեր եմ Հայաստան: Հիմա ունիմ տասնըչորս թոռնիկ: Ամուսնացած են, երեխաներու տեր են: Ես այստեղ ունիմ Նվարդիկս, Անուշիկս, Աշոտս, Կարապետս: Անոնք ինձ կպահեն: Իմ ուժս անոնք են: Տղա մըն ալ ունիմ, Արզնի է: Ես հոն անոր քովը կմնամ, անոր անունը Վաղարշակ է: 1946 թիվեն Հայաստան կապրիմ:

232 (232).
ԵՎՆԻԿԵ ՓԱՓԱԶՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ՆԻԿՈՄԵԴԻԱ, ԱՐՄԱԾ)

Մենք ուժասպառ Դեր Զոր հասանք: Տասնյոթ հոգի մեկ չադրի մեջ էինք: Ամեն առտու մեկ հոգի մեռած կըլլար, խոլերա բռնվեր էին, մեկիկ-մեկիկ մեռան:

Առտու մը հայրս էլավ, քովինին շարժեց, տեսավ՝ փայտի պես բան մըն էր. «Էլեք, տղե՛ք, - ըսավ, - Սիմիթը մեռավ»: Թաղեցին:

Քեռիս ալ չեթե էր: Օր մը սարերուն մեջ կկորսվի, կտեսնա՝ ոչխարները կերթան եղեր, կըսե՝ աս ոչխարները տե՞ր ունին զահար: Կերթա անոնց ետևեն. կհասնի արաբ հարուստի մը քով: Արաբը պապային կպահե, օրական վեց թենեքե ջուր կկրե եղեր հորեն: Հորն ալ դժվար է եղեր, թենեքեն ձեռքը հորի մեջ վար պիտի իջնար, ուրիշ պզտիկ ամանով մը քիչ-քիչ ջուրը պիտի լցներ թենեքեին մեջը, հետո ծանր-ծանր վեր պիտի

ելնար, ամմա ասանկով հոգին փրկել է: Հետո մենք հրաշքով փրկվանք:

1920 թվին գացինք Հունաստան: Աշխատեցի թուզի ֆաբրիկայում՝ ինձ նման եղեռնից ազատված աղջիկներու հետ:

Հետո եկանք Հայաստան:

233 (233).
ՀԱԿՈԲ ԹԵՐՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ՆԻԿՈՄԵԴԻԱ, ԱՐՄԱԾ)

1915 թվի ապրիլի 24-ին, Զատիկի կիրակի օրը մեզ տարին մեծ ձոր մը: Անտեղ շատ դիակներ կային, բոլորին ալ մերկացուցած վիճակում շարած էին իրար վրա՝ խաչի ձևով, կարծես փայտի գերաններ են իրար վրա շարած: Ադոնց բոլորին մերկացրել էին, ջարդել, սպանել էին, իրար վրա կուտակել: Հետո Օսման կառավարության հրամանը եկավ, որ «շաբաթօրյակ» պիտի ըլլա, բոլորին թաղեցին, որ խոլերա չըլլա: Եփրատ գետին մոտ հազարներով մարդ լցված էին, Զատիկ կիրակի օր էր: Մենք չադրների տակ էինք: Հրաման եկավ, թուրքերը հարձակվեցին, սկսեցին կոտորել, ջարդել հայերին, և որպեսզի միջազգային դատի առջև չըլսվի, որ ժողովրդին կոտորեցին, «տեղահանել ենք» ըսին:

234 (234).
ԱՆԺԵԼ ՍՐԱՊՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ԲՈՒՐՍԱ)

Ադ ժամանակ ես տասը տարեկան էի: Ռուլրս վեց ամսական էր, երբ մեզ աքսոր հանեցին Բուրսայեն: Ճամփին մեր բարեկամները կորսնցուցինք: Մամաս լալեն ինձի կըսեր. - Նայե՛, ճամփուն վրա շուները հայերու լեշերը կուտեն կոր. մարդիկ դեռ հոգի չեն տված անգամ…

Ճամփուն պզտիկ քույրս, որ վեց ամսական էր, հիվանդացավ: Մեզ հետ եկող կնիկները ըսին մորս. - Ո՛չ կաթ ունիս, ո՛չ հաց ունիս, որ երեխային կաթ տաս. ձգե՛ ճամփուն քովը, էրթանք…

Մամաս ըսավ. - Չէ՛, չե՛մ ձգեր. - փեշդիմալով կռնակը կապեց չոջուխը, գնացինք: Ճամփին ալ սովածութենեն, թե հոգնածութենեն, չգիտեմ, մորս աչքերը կուրացան: Կռնիայի մոտ մեր ունեցած-չունեցածը գողցան, տարին: Մայրս՝ կույր-կույր կուլա՛ր-կողբա՛ր, կըսեր. - Աստվա՛ծ սիրեք, գոնե մի յորղան տվեք:

- Աստվածը մե՛նք ենք, - ըսին ու սկսան ծեծել մորս…

Ճամփին արաբա մը տեսանք: Ես խնդրեցի. - Ի՞նչ կըլլա, գոնե կույր մայրս և երեխան ճստին:

Արաբան քշող մարդը մեղքցավ մորս, ինձ ու երեխային արաբայի վրա առավ: Հագիվ քիչ մը տեղ գնացել էինք, մեկ ալ ուրիշ արաբա մը դիմացեն եկավ, կամուրջի վրա իրար զարնվեցան, մեր արաբան ջուրը ինկավ: Ես կրցա երեխային խունդախը բռնել, բայց ջուրին մեջն եմ…

- Ամա՛ն, - ըսավ մայրս, - ամեն ինչ կորսնցուցի, երեխեքս ալ գնացին:

Աղեկ քի անտեղ հայ տղաներ կային, ըսին. - Մի՛ վախնար, - իրենց ճետեցին ջուրը, մեզի ազատեցին…

Ջուրեն էլանք, թաց-թաց կքալենք կոր: Ջաբիթները տե՞ր ունին զահար: Կերթա անոնց ետևեն. կհասնի արաբ հարուստի մը քով: Արաբը պապային կպահե, օրական վեց թենեքե ջուր կկրե եղեր հորեն: Հորն ալ դժվար է եղեր, թենեքեն ձեռքը հորի մեջ վար պիտի իջնար, ուրիշ պզտիկ ամանով մը քիչ-քիչ ջուրը պիտի լցներ թենեքեին մեջը, հետո ծանր-ծանր վեր պիտի

ցեն աղջիկներ կընտրեին, կամուսնանայինք, տուն-տեղ կըլլայինք: Ամերիկացիք ֆաբրիկաներ բացած էր. դեզգեեի կաշխատցներ, հայ որբերը հոն կաշխատեին կամ Ամերիկա կղրկեին՝ որբերուն տերություն կընեին:

Իմ մեծ մորեղբայրս պզտիկ խանութ մը ուներ, իրեն համար դերձակություն կըներ, քիչ մըն ալ մեզի կօգներ: Մի օր աս մորեղբորս խանութին կտիրանա թուրք մը, իրեն դուրս կընե խանութեն: Այնպես որ, մենք լրիվ տկլոր մնացինք...

Մեր ողորմածիկն ալ՝ այսինքն՝ ամուսինս, Անդրանիկ փաշայի զինվորը եղած էր: Իմ ամուսինին կողմը յոթ եղբայր և երկու քույր էին: Թուրքերը աս յոթ տղաներուն զինվոր էին տարել: Ասոնք բոլորն ալ փախել, գնացել էին Էրզրում և միացել Անդրանիկի խմբին...

Ամուսինս կպատմեր, որ Անդրանիկը պզտիկ տղա է եղել: Խոտերուն մեջը իր հորը թուրքերը կմորթեն, տղան կտեսնա հորը արյուններուն մեջը:

Աս Անդրանիկը գացեր է Նուպար փաշային ըսեր է. - Նուպա՛ր փաշա, ի՞նչ կըլլա, ինձի զինվոր առ:

Նուպար փաշան կըսե. - Դուն ի՞նչ կրնաս ընել, պզտիկ ես...

- Ես ձիերուն տակերը կմաքրեմ, բայց վրեժս կլուծեմ:

Այդպիսով Անդրանիկը զինվոր կըլլա, շատ դըժվար օրեր կանցնե: Մյուս կամավորներուն հետ կերթա, կտեսնա տասը-տասնհինգ հայ աղջիկներ տանջված, լլկված կուլան, կըսեն. - Ամա՜ն, մեզի ազատեցեք:

Անդրանիկը կըսե իր զինվորներուն. - Ասոնց հագցուցեք:

Ով որ երկու ժակետ ուներ, մեկը կհանե, ով երկու շալվար ուներ՝ կհանե, գլխարկ-մլխարկ կհագցնեն ասոնց, կըլլան տղա զինվորներ, Անդրանիկ փաշան կնայի, կըսե. - Զինվորներս շատցան: Երևի թուրքերը խաոնվեցան մեզի, բոլորին պիտի ստուգեմ:

Աղջիկներուն անուններն ալ տղայի անուններ դրած են, մեկը՝ Պողոս, մյուսը՝ Մարտիրոս:

Անդրանիկը կհարցնե. - Դուն որտեղե՞ն ես:

- Ամա՜ն, - կըսեն զինվորները, - մենք ասոնց ազատել ենք, մեր հետ կտանինք կոր, թուրքերեն ազատեցինք:

Անտեղեն մեկ տղա հագած աղջիկ դուրս եկավ, ըսավ. - Անդրանի՜կ փաշա, ոտքերդ լվամ՝ ջուրը խմեմ. մեզի հետդ տար...

Անոնք ալ միացան մեզի: Էլանք լեռը, սկսանք խոտ ուտել: Վեց ամիս խոտով փորերնիս կլեցնեինք: Քանի որ քյուրդ մշակ մը ունեինք, որը մեզ ուտելիք կբերեր, անոր թուրքերը բռնել էին, նեղել, ըսել էին Անդրանիկի գլուխը եթե չբռնես, քո գլուխը պիտի կտրենք: Անոր համար Անդրանիկը այլևս ադ քյուրդին ուտելիքի չէր ղրկում, իր մոտ էր պահում, որ փորձանք չգա անոր գլխին:

Անդրանիկի խումբը շատ մը հերոսություններ կընե: Հետո, որ Անդրանիկը Բուլգարիա՝ Սիմիոն թագավորին մոտ կերթա, կբարևե, ձեռքը կթոթվե, կտեսնա, որ թագավորը շատ տխուր է ու մտածկոտ, կըսե. - Ի՞նչ կմտածես:

- Ա՛խ, թուրքը կուգա կոր կհասնի մեզ: Ռուսը մեր պապն է, կօգնե մեզի, բայց մինչև հասնի՝ ու՛շ կըլլա. թուրքը արդեն եկած կըլլա, իմ զինվորներս ալ քիչ են:

- Ադ զինվորներդ ինձ տուր, - կըսե Անդրանիկը, - ես անոնց աջ ու ձախ նետել կսորվեցնեմ, անանկ, որ ոնց որ մի քանի կողմից են կրակում: Աջ ու ձախ որ կրակեն, թուրքը կվախնա, կըսե՝ աս ինչքա՞ն շատ զինվոր կա:

Ադպես ալ ըրավ: Անդրանիկը Բուլգարիայի հերոս դարձավ, Բուլգարիան ազատվեցավ թուրքին ձեռքեն: Ադոր համար ալ թագավորը մեզի հայերուս ընդունեց Անդրանիկին խաթեր համար, իսկ Անդրանիկին մեծ պալատ մը տվավ: Անդրանիկը հոն ամուսնացավ:

Անդրանիկը վերջը հիվանդացավ, մեռնելու ժամանակ ըսեր է. - Բութ մատս կտրեցեք, Հայաստան տարեք, թաղեցեք, շատ չարչարվեցա, բայց Հայաստանում ինձի չհասկացան:

Մեր տանտերը, որ բուլգար էր, կըսեր. «Պարադի ժամանակ թագավորեն վերջը Անդրանիկին նկարը կըտանեին: Ժամանակ պիտի ըլլա ձեր Հայաստանին դռները պիտի բացվին: Այն ատենն ալ Անդրանիկին պիտի ճանչնան»: Իրա՛վ ալ ելավ բուլգար տանտերին ըսածը:

235 (235).
ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1908 Թ., ԲՈՒՐՍԱ)

1915 թվին, ընդհանուր տեղահանության ժամանակ մեր գյուղից ժողովրդին հավաքած տանում էին: Մենք չգիտեինք, թե մեզ ու՞ր են տանում: Չնայած փոքր էի, բայց մինչև հիմա մտքիցս չի գնում էդ մեր ողբերգական վիճակը:

Մեր գերդաստանը վաթսուներկու հոգի էինք, վերադարձանք միայն չորս հոգի: Ոմանց՝ թուրքական բանակ տարան՝ էնտեղ կոտորեցին, ոմանք՝ աքսորի ճամփին մեռան, ջարդվան: Քեռիիս, որը մեծ դժվարությամբ փախել էր թուրքական բանակից, հետապնդեցին ու սպանեցին: Հայրս ևս փախել էր թուրքական բանակից և Կոնիայի մի ագարակում թաքնվել էր մինչև զինադադարը: Մայրս, քույրս, պապս աքսորի ճամփաներին ոջիլից տիֆով հիվանդացան: Կոնիայի չորային տափաստաններով քայլում էինք սոված ու ծարավ: Էնտեղ թուրքերը աճեցնում էին խաշխաշ՝ օփիում, որը գույնզգույն կակաչի ծաղիկներով էր: Մեր հայ կանայք սկսեցին օգնել բերքահավաքի աշխատանքներին և մի քիչ հացի փող էին ստանում: Ամեն օր մեծ ու փոքր նստած՝ ոջիլ էին սպանում: Մեծահասակ մարդիկ, պատերի տակ նստած, որդերի պես մեծ-մեծ ոջիլներ էին սպանում, շատերը դրանցից էլ տիֆով հիվանդացան:

Պապս Չայ սդասիոն ըսված տեղը մեզ տարավ: Էնտեղ մի փուռ կար, տատս չորս տարի, մինչև զինադադարը հոն աշխատեց ու մեզ պահեց:

Մի օր հինգ-վեց թուրք տղաներ ինձ բռնեցին, թե՝ մեզի հայերեն հայհոյանք պիտի սորվեցնես: Ես ըսի. - Չե՛մ սորվեցնի:

Անոնք ըսին. - Ձսորվեցնես՝ էս քարը հինգ անգամ պիտի տանիս, բերես:

Սկսան ինձ խոշտանգել, մինչև որ հայ մը, Հովսեփ անունով, եկավ ինձ օգնեց, ազատեց: Վերադարձա: Վրանին տակը տեսա մայրս տիֆով մահացած է: Պապը էլ մահանալու վրա է: Ես փոքր էի, ոչինչ չէի կարող անել: Նրանց դիակները օրերով մնացին մեջտեղը:

Պատահականորեն մեր գյուղի քահանան եկավ, ըսավ. - Գրիգորի՛ս, քեզ էսպե՞ս պիտի տեսնայի: Պապիս առավ, տարավ ու թաղեց:

Ես մնացի տատիս հետ մենակ: Ոտքիս եղունգները ջարդվել էին, քայլել չէի կարողանում: Մի օր տատիս հետ մտանք էդտեղի բացօթյա շուկան, ուր ամեն ինչ կար, բայց ես չէի տեսել ոչ մի պտուղ, հարցրի. - Տատի՛, սրանք ի՞նչ են:

- Ձավա՛կս, սրանք դեղ են, - ըսավ խեղճ տատս, քանի որ ինքը փող չուներ, որ գներ: Էդ ժամանակ մի բարի մարդ լսել է մեր խոսակցությունը, տոպրակի մեջ լցված տանձ, խնձոր և ուրիշ մրգեր բերեց, որ ես ուտեմ:

Ճանապարհին բեռնատար գնացքների վագոնների մեջ լցված, հասանք Էսքիշեհիր: Այնտեղ հորս գտանք: Ինձ ճանաչեց: Հետո որ իմացավ, հարցրեց. - Պապաս ու՞ր է:

- Մեծ մարդ էր՝ մեռավ, - ըսին:

Հայրս հետո տեսավ, որ ո՛չ կինը կա, ո՛չ աղջիկը: Փովեց վագոնի մեջ, սկսեց լաց լինել: Հասանք մեր գյուղը: Տեսանք՝ մեր տունը քանդել են: Մտանք տատիկիս տունը: Էնտեղ էլ ամեն ինչ թալանել էին: Չորս տարի հոն մնացինք: Հետո թուրք-հունական 1919-1920 թվականներու պատերազմին հույները Բուրսան գրավեցին: Այդ նահանջների ու առաջխաղացումների ժամանակ հայերը վախից փախչում էին քաղաք: Տատս չուզեց դուրս գալ իր տնից: Ես էլ հայերի հետ փախա: Բայց տեսա, որ առանց տատի չեմ կարող, նորից վերադարձա մի խումբ հայերի հետ: Ճամփին չեթեները հարձակվան մեզ վրա, սկսան թալանել, ով ինչ ուներ՝ հավաքեցին: Ինձ էլ ստուգեցին՝ բան չգտան, ապտակեցին երեսիս ու բաց թողին:

Մի օր զինված մի խումբ չեթեներ սկսան տները մտնել, թալանել ու սպանել: Էդ ժամանակ մեր տունն էլ մտան: Մենք էլ մետաքսաթել էինք փաթաթում: Մի կին կար մեզ հետ աշխատող: Նա իր ոսկիները իսկույն թաքցրեր խոզանակի տակը: Էկան չեթեները, բայց չըգտան:

Երբ որ Հունաստանը պարտվեց, նահանջի ժամանակ հայերը նորից գաղթի ճամփան բռնեցին: Ճամփին՝ Մուդանիա նավահանգստում ֆրանսական նավատորմը եկավ, հույն նահանջողներին կրակեց: Մենք մնացինք անպաշտպան: Շաբաթներով մնացինք էդտեղ: Էդտեղ էլ մեզ կոտորեցին: Հատկապես տղամարդկանց կանչում էին. - Էրմէնի՛, գէ՛լ, (Հա՛յ, արի), մի քիչ գործ կա, - ասում էին, տանում էին՝ ու էլ չէր վերադառնում:

Էդտեղ հորս մեշոկի մեջ շաբաթներով թաքնված պահեցինք: Մի օր գնացինք անտառ, ձիթապտուղի ծառեր էին: Էնտեղ հայերի դիակներ էին ընկած: Ուրեմն հայերին տանում էին էնտեղ ու սպանում: Էդտեղ հորեղբորս տարան ու էլ ետ չեկավ:

Հիշում եմ, նավ նստելու համար մարդիկ իրար հրմշտկում էին, շատերը ոտքի տակ էին ընկնում ու մեռնում: Էդպիսիներին շատ տեսանք:

Մեր բոլոր հարստությունը ծովափին մնաց՝ թուրքերուն. միայն մեկ հատ վերմակ, մեկ հատ դոշակով բարձրացանք ամերիկյան Կարմիր խաչի նավը, որը մեզի տարավ Սիլիվրի նավահանգիստը: Էդտեղից՝ Չորլուից՝ Բուլղարիա անցանք:

Քեմալական շարժումին հավատացինք, բայց՝ խաբվեցանք:

1946 թվին Բուլղարիայեն Հայաստան եկանք:

236 (236).
ԱՎԵՏԻՍ ՆՈՐԻԿԻ ՆՈՐԻԿՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1909 Թ., ԲՈՒՐՍԱ, ԵՆԻՋԵ Գ.)

Մեր Բուրսայի Ենիջե գյուղում մետաքսի գործարան կար:

Մեր գերդաստանը երեք եղբայր էին՝ առանձին ընտանիքներով: Մեր ընտանիքը ինը հոգի էինք՝ չորս եղբայր, երեք քույր, հայրս, մայրս և մեծ մայրս:

Եկան թուրքերը, մեզի շարան-շարան քշեցին: Ժանդարմների հսկողության տակ քայլում էինք լեռներով ու ձորերով՝ սոված, ծարավ: Գիշեր-ցերեկ քայլում էինք, մինչև հասանք Չայ սդասիոն ըսված տեղը: Էդ բացօթյա տեղ մըն էր, հոն պիտի մնայինք, որ շարունակեինք մեր ճանապարհը:

Մի առավոտ թուրքերը եկան, քանդեցին մեր վրանները, մեզ նորեն քշել սկսան, բայց մերոնք իրենց ունեցած ոսկեղենները տարին թուրք մեծավորին տվին: Ան ալ մեզ տարավ բաժանեց շրջակա գյուղերի վրա: Այնպես որ, մենք Դեր Չոր այլևս չգնացինք: Մեզ և քսան ընտանիքի տարան Դևե Դերե գյուղը: Էդ գյուղում մի հատ աղբյուր կար, անասուններն ու մարդիկ էդ ջուրն էին խմում: Մեծահասակ տղամարդ չկար: Բոլորը կանայք և երեխեք էին: Մեզ տեղավորեցին գոմերում: Էդտեղի բնակիչները, որոնք թուրքեր էին, որոշ ժամանակ մեզի չմոտեցան: Հետո մեր մեծահասակները հավաքվում, գնում են գյուղի հոջային մոտ: Պարզվում է, որ էդ գյուղացիներին ասել են, թե հիմա գյավուրներ են գալու, դրանք թուրքերին սպանող մարդիկ են: Դրա համար էլ էդ գյուղացիները մեզնից վախենում են: Էնտեղ մերոնցից շատերը հիվանդությունից, սովից մեռան: Եղբայրներս մեծ էին, քույրերս ալ մեծ էին՝ մի

կերպ դիմացան: Բայց մեծ մասս ճանապարհին մեռավ: Չորս տարի հոն մնացինք: Դաշտերում խոտ էինք հավաքում, հավաքված ցորենի վերջին հատիկներն էինք հավաքում, ուտում:

Իմ երեք հորեղբայրներուս իրենց ընտանիքներով քշել էին Դեր Զոր, և բոլորն էլ կոտորվել էին: Նայում էին ծննդականները, ովքեր բողոքական էին, ընրանց աքսոր չէին տանում: Էսպես տարիները անցան: Զինադադարեն հետո վերադարձանք մեր Ենիջե գյուղը: Փոքր եղբայրս տիֆ էր: Տեսանք՝ մեր տունը կիսաքանդ էր և բոշաներն եկել մտել, ապրում էին մեջը: Դրանք Բոսնիայից եկած մուսուլման գաղթականներ էին: Բոլոր տները թալանված էին ու դատարկ, շատերն ալ՝ քանդված:

Հետո, երբ թուրք-հունական պատերազմը սկսավ, մեր Ենիջե գյուղը ճակատամարտի մեջտեղը մընաց: Հույները Իզմիրին տիրացել էին, թուրքերը պաշարված էին, բայց մեծ տերությունները օգնեցին թուրքերուն, և հույները պարտվեցին:

Մենք ամեն ինչ թողինք՝ մեր այգին, մեր ունեցվածքը, մեր տունը-տեղը և փախուստի դիմեցինք: Երբ հույները պարտվում էին մեր գյուղից Բուրսա գնացինք, այնինչ պետք է գնայինք մի որևէ նավահանգիստ՝ կամ Մուտանիա, կամ Գեմլեիք: Դրա համար էլ անկանոն եղավ մեր գնալը:

Մեր գնալու ժամանակ թուրքերը լուսամուտներից կրակում էին մեզ վրա: Ծովափը արդեն լիքն էր գաղթականներով: Բոլորն ալ սպասում էին, որ նավ ննստին: Էդ ժամանակ հունական բանակը հանձնվեց թուրքերին: Նավահանգստում հավաքված բնակչությունը շատ զոհ տվեց: Մենք յոթը հոգի էինք: Ամեն մեկը գլուխն առած՝ փախչում էր: Մեկ կողմը ծովն էր, մեկ կողմը՝ անտառ: Էդ ժամանակ ես հիվանդ էի, տված էի ու հոգնած: Բայց ստիպված բոլորի հետ քարշ գալով գնացինք՝ Գեմլեիք նավահանգստից մինչև Մուտանիա ոտքով: Գնում էինք գյուղերու միջով: Թուրքերը մեզ հետապնդում էին և հասնողին սպանում: Ովքեր փոքր երեխաներ ունեին, երեխաներին չէին կարող տանել, թողնում էին ճամփին, որոնք էլ մեռնում էին: Մեզնից առաջ գնացողները գետնին թողել էին երեխաներին ու վրաները քթոցներ էին ծածկել, որ գոնե օդ առնեն. էդ խեղճ մանուկները լաց էին լինում՝ անտեր-անտիրական մնացած: Մենք լսում էինք նրանց լացը, բայց չէինք կարողանում օգնել, քանի որ ուլիկների պես հազիվ մագլցելով բարձրանում էինք ժայռերի վրայով: Ով որ սայթաքեր՝ կընկներ ծովը: Ուրիշ ճամփա չկար:

Վերջապես հասանք Մուտանիայի նավահանգիստը: Շատերը իրար կորցրել էին: Ես հորս հետ էի: Բուրսայի ամբողջ հայությունը էդտեղ էր կուտակված: Ովքեր կարողացան՝ փախան, ովքեր մնացին, երբ հունական բանակը քաշվեց, թուրքերը եկան ու բոլորին կոտորեցին: Մենք թաքցրեցինք իմ եղբայրներին, որ չկոտորեն: Մենք մեր ամբողջ հարստությունը թողինք էդ նավահանգստում, նավ բարձրացանք: Նավը մեզ տարավ Մարմարա ծովով հասցրեց Սիլվան: Էնտեղ էլ շատ գաղթականներ կային: Իջանք նավից, գնացինք Չորլու քաղաքը: Դեռ հունական բանակը հոն էր:

1946 թվին բուլկարական Սիլիվրի քաղաքեն եկանք Հայաստան:

237 (237).
ՄԵԼԻՆԵ ԹԵՐՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1905 Թ., ԲԻԼԵՋԻԿ)

Մինչև Իզմիրի աղետը, մենք Բիլեջիկ կապրեինք: Թուրքը եկավ, ուզեց հույնին դուրս հանել Իզմիրեն: Հույն ըսավ՝ ես ծախս եմ արել, որտեղ որ գրավել եմ, անտեղ ալ կվատեմ: Էլեկտրական թելերը միացուցին և քաղաքը կրակի տվին: Ես ադ ժամանակ տասնըվեց տարեկան էի: Հույնը ուզում էր, որ իր ըրած ծախսերը տան:

Հետո մենք եկանք Բանդըրմա: Մեկ գիշեր մնացինք ծովեզերքը, բաց երկնքի տակ: Հետո բարեգործականը հատուկ նավ ղրկեց, որ մեզ՝ հայերուս ազատի:

Երկրորդ օրը նավը եկավ: Հայերը լցվեցին մեջը: Նավը շղթաները վեր քաշեց, ծովեզերքը լի՛քն էր հայերով:

Քեմալը բռնեց բոլոր հայերուն թունելի մը մեջ լեցուց, երկու կողմեն նավթ լցրեց, վառեց բոլոր հայերուն: Ես աչքովս տեսած եմ: Ան երիտասարդները, որոնք լողալ գիտեին, սկսան լողալ ջուրին մեջը: Մեր նավը քաշվեց, երիտասարդները լողալով ուրիշ նավի մը մոտեցան, որ ան իրենց վերցնե, բայց նավին մեջեն եռացած ջուր բացին վրանին, շոգին կեղլա՛ր, բոլոր հայ երիտասարդները ջուրին մեջ մեռա՛ն: Ես ադ պատկերը չե՛մ կրնա մոռնալ…

238 (238).
ՀԱՅԿՈՒՀԻ ԲՈՂՋԱՋՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1910 Թ., ՔԱՍՏԵՄՈՒՆԻ, ՅԱՅԼԱ Գ.)

Մեր գյուղը հիասուն հայ տուն էր: Իմ հայրը կեսգիշերին տունեն փախեր էր: Թուրքերը եկան գիշերը ժամը 3-ին: Գազյաղը լեցուցեր էին թենեքեներուն մեջը, եկան կրակի տվին մեր գյուղը: Միայն մեկ մարդ ազատվեցավ, ան ալ փորեր էր հողը մտեր էր մեջը: Մայրս միշտ կուլար, «Ութը հոգինոց ընտանիքս վառվեց». - կըսեր: Ես ալ հրաշքով փրկվել եմ, մամաս ինձի երրորդ հարկեն վար նետեր է, ընկեր եմ, կոտրտեր եմ: Վերջը պապաս եկեր ինձ գտեր է: Ծրթունքս ալ մինչև հիմա, տե՛ս, ասանկ անշնորհք մնացած է:

239 (239).
ԳԵՎՈՐԳ ՋՈՒԼԱԼՅԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ՉԱՆԱՔԿԱԼԵ)

Նախքան 1915 թ. հայերի զանգվածային տարագրությունը, թուրք իշխանությունները բոլոր հայ տղամարդկանց հավաքագրեցին զինվոր և, նրանց ձեռքը ոչ մի զենք չտալով, շատ բնակավայրերում տարբեր ձևերով սպանեցին:

Մի քանի վայրերում, ինչպես և մեր քաղաքում, ուր հայոց կողմանե թուրք իշխանության դեմ զենքով ապստամբության փորձ չէր եղած, հայ զինվորներին զենքով վարժություններ սորվեցուցին և թուրքական բանակի մեջ պիտի մտցնեին, բայց հետո նրանց ձեռքեն ալ զենքերը վերցուցին և շատ քչերին բանակի մեջ պահեցին. անոնց որ լավ լեզուներ գիտեին, լավ թնդանոթաձիգ էին կամ ինժեներ ու բժիշկ, իսկ մնացածներուն համար կազմեցին ամիլե թաբուրը (աշխատանքային գումարտակ): Այս բոլորն, անշուշտ, գերմանացոց խորհրդով էր պատրաստված և, քրիստոնյա գերմանացիներուն քթին տակ ու աչքին առաջ հայ քրիստոնյա, անզեն մարդկանց, կաշվե մտրակների տակ, առանց շունչ առնելու, քարհանքերում և ճանապարհաշինություններում չարաչար աշխատեցնում էին: Նրանք հիվանդանում էին, հյուծվում, հաշմանդամ դառնում: Նրանց, շարքից հանելով, մեռցնում էին:

Եվ ահա այդ ժամանակ հորս ևս ամիլե թաբուր կտանեն՝ աշխատացնելու մյուս հայերու հետ: Ձեռքի կառք մը կուտան՝ մի անիվով. ուրիշները հող պիտի լցնեին, ինքն ալ պիտի տաներ թափեր: Այնքան դաժանությամբ էին աշխատեցնում, պատմում էր հայրս, որ հալից ընկնում էին: Մի օր ալ ևս այդ կարգով շուտշուտ չկրցել է աշխատել, և վերակացուն ըսեր է՝ թող կառքը: Եվ ձեռքը տվել է քլունգը, բայց արդեն ձեռքերը ուռել էին: Աշխատելու ժամանակ վերակացուն նկատել է, որ ուրիշներուն շինածները հայրս փչացնում է. այս անգամ ավելի կբարկանա և ձեռքը կուտա մի բաո: Հայրս շատ կնեղվի, բայց ի՞նչ կարող է ընել: Մի օր ալ, այդպես բահով հողը մի կողմից մյուս կողմը թափելու ժամանակ, ստուգման կուգա ճանապարհաշինության հնժեներ հարյուրապետը: Հայրս բահով հողը նետելու ժամանակ, հողը հարյուրապետին վրա կթափի: Սաստիկ բարկացած՝ նա հորս վրա կուգա՝ մտրակով խփելու, հայրս անմիջապես նրա թևը բռնում է, դեռ ինքը չխփած, ասում, որ ինքը դերձակ է, որ արհեստավոր մարդ է, այսպիսի գործերից գաղափար չունի և նույնպես զինվորականներուն, ծովայիններուն հագուստ գիտե կարել:

Հարյուրապետը, լսելով այդ բոլորը, անմիջապես միտքը փոխում է, մտրակը իջեցնում է ու ասում. - Թո՛ղ այդ բահը և արի՛ ինձ հետ:

Բոլոր աշխատողները զարմանում են հորս հանդգնության վրա և կարծում, որ հայրս պիտի ծանր պատժվի, բայց պատահում է անսպասելին: Հորս տանելով պահեստի պես մի տեղ՝ դուրս է բերում մի թոփ կտոր և ասում. - Կրնա՞ս ինձի մի լավ կոստյում կարել: - Ան երևի, միևնույն ատեն ուզում էր ստուգել, թե արդյոք հորս ըրածը խորամանկություն չէ՞, որ թեթև գործի անցընենք իրեն: Հայրս ուրախանում է, որ ամիլե թաբուրից ազատվեց, ասում է. - Ամենայն սիրով, բե՛յ իմ, բայց ինչո՞վ պիտի ձևեմ, կարեմ. գործիք է պետք:

- Այդ բոլորը կլինի, - կըսե, հորս կտանի պահեստին ներսի կողմը:

Ի՞նչ տեսնե՝ կարի մեքենաներ, այն էլ տեսա՛կ-տեսա՛կ, և ամե՛ն ինչ հայոց լքյալ գույքերից: Հորս կըսե. - Ընտրի՛ր քեզի մի հարմար տեղ և աշխատի՛ր:

Հայրս մի տեղ կդասավորվի և կկարե, կհագցնե հարյուրապետին ու հետո կհասկնա, որ նա է եղել հայոց ամիլե թաբուրի լիազոր ղեկավարը:

Հայրս այլևս սկսում է դերձակությամբ զբաղվիլ և ամբողջ պատերազմի շրջանին զինվորականներու համար հագուստներ կկարե: Ինչ խոսք, վարձք չի ստանում, բայց դրամական նվերներ կուտան եղեր:

Հայրս պատմում է, որ մի գերմանացի օդանավորդ կար, անունը՝ Մանիկ: Նա ամեն անգամ օդ բարձրանալիս անպայման մի անգլիական կամ ֆրանսիական օդանավ վար կառնե եղեր ու վար իջեցնելուց հետո, դրամական մեծ նվեր կտանա եղեր: Ամեն անգամ այդ նվերը առնելուն պես, կուգա եղեր հորս մոտ՝ կոստյում կարվելու և լավ դրամ կտա եղեր: Հայրս ասում էր, երբ արդեն Գերմանիան պարտվելու մոտ էր, եկավ ինձ մոտ Մանիկը և ըսավ. «Գերման կապու՛տ» (կապիտուլացիա): Արդեն հաղթելու ոչ մի հույս չէր մնացած թուրք զինվորի համար. սոված ու հյուծված բանակը սկսում է քայքայվել, ու զինվորները խումբ առ խումբ փախչում են:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սաստիկ տուժած, ամեն ինչ կորցրած, ողջ մնացած հայերը, 22մած ու մոլորված, ցրվեցին աշխարհով մեկ:

Տեր ու տիրական չունենալով, իրենց կորցրածից, կողոպտվածից ո՛չ մի հատուցում չստանալով թուրք ջարդարար, կողոպտիչ կառավարությունից, ի՞նչ պետք է ընեին, ինչո՞վ պետք է ապրեին այդ տուժյալ մարդիկ, և ո՛չ ոք չհոգաց նրանց մասին: Բայց հայ ժողովուրդը չհուսահատվեց և սկսավ իր գլխուն ճարը նայել:

Առաջին համաշխարհային պատերազմը վերջանալու վրա էր, և ողջ մնացած հայերը ցրված էին տարբեր երկրներ: Այդ մարդիկ ինչպե՞ս պիտի ապրեին, ինչպե՞ս պիտի իրենց գոյությունը պահպանեին, եթե անոնցմե շատերը արհեստավորներ չըլլային: 1915 թ. աքսորի ժամանակ մեր հարազատներից հորեղբորս, մորեղբորս ընտանիքները մեր քարավանից բաժանեցին, նրանց քշեցին դեպի Սիրիա՝ Դամասկոսի մոտերքը: Այդ ժամանակ թուրքերն ու գերմանացիները կա-

րիք ունեին արհեստավոր մարդկանց: Մի նոր հրաման կուգա, թե այդ քարավանում եղած արհեստավոր մարդիկ իրենց ընտանիքներով ջոկվեն ու բերվեն Շամ՝ Սուրիո մայրաքաղաքը: Այդ արհեստավորներն իրենց ընտանիքներով ողջ մնացին: Իսկ արհեստավոր չեղողներին քշեցին դեպի Ռաքքա և այնտեղից էլ ուրիշ քարավաններով տարան մինչև Դեր Զորի անապատները: Այնպես որ, արհեստ գիտենալը փրկեց այդ մարդկանց:

Հնուց մարդիկ արհեստի ու արհեստավորի մասին ասել են. «Արհեստը ոսկե ապարանջան է մարդու բազկին», կամ՝ «Արհեստավորը երբեք սոված չի մնար. եթե մինչև կեսօր հաց չճարե, կեսօրեն վերջ՝ անպայմա՛ն կճարե»: Մարդը շնորհակալություն կհայտնե ավազակին, որ միայն իր դրամները վերցրեց, որովհետև իր թևին ունի ոսկի ապարանջան: Ավազակը կզարմանա, թե ինչպե՞ս է, որ նա ոսկի ապարանջան ունի իր թևին, և ինքը չտեսավ: Մարդը կըսե, որ իր արհեստն է իր թևին և դա երբե՛ք չի՛ գողացվիր:

Եվ այսպես մի քանի ժամվա մեջ ոորս ազատեցին ամիլե թաբուրից (աշխատանքային գումարտակից), ու մենք հազիվ փախանք թուրք խուժաններից: Այնտեղ մնացինք որոշ ժամանակ: Էլ ի՞նչ դպրոց, ի՞նչ բան, ով որ մի արհեստ ուներ՝ աշխատում էր, ով որ արհեստ չուներ՝ պարապ-սարապ մաև էր գալիս, մինչև որ ռուսական նավերը եկան, մեզ տարան ռուսական Քեֆալոնիա կղզին: Այնտեղ նույնպես հայ որբեր ու որբուհիներ բերին: 1922 թ., սեպտեմբեր ամիս: Ես արդեն բավական ընտելացել էի կարելու մեջ: Հայրս խանութ մը բացավ, ես ալ հետը սկսա աշխատել, որ գոյությունիս պահենք: Հույն պետությունը ֆիզիկական բնաջնջումից ազատեց մեզի: Անոնք որ արհեստ ունեին՝ աշխատեցին, իսկ չունեցողները շատ տառապեցին, ինչ հետերնին բերել էին՝ ծախեցին ու կերան և, ի վերջո, հյուծվեցին ու մահացան, որովհետև այդ կղզում ոչ մի միջոց չկար, որ արհեստ չունեցողները աշխատանք մը ճարեին. նույնիսկ տեղացի ժողովուրդը շատ աղքատ էր: Այս կղզին մոտիկ է Իտալիային, մանավանդ Սիցիլիային, ու միշտ երկրաշարժներն անպակաս էին. տարիներ հետո մենք իմացանք, որ մի ուժեղ երկրաշարժ մեծ վնաս է հասցրել կղզուն:

1922 թվին, նախ՝ հայրս գնաց Եգիպտոս: Վերջապես, շատ ամիսներ հետո, հայրս երկու ոսկի ուղարկեց՝ մորս անունով, մուտքի հրավերով: Այդ ժամանակ ոչ մի տերություն անցագիր չէր տալիս հայերուս: Մեր ազգին համար հանձն առավ Տեր Նանսենը, և մենք նանսենյան լեսե-փասեյով անցանք Եգիպտոս, 1924 թ.: Հայրս ինձի ընկեր ըրավ ինձնից վարպետ մեկու մը հետ, որովհետև խանութը մերն էր: Ու ես գրեթե մեկ տարի, առանց ոորս աջակցության, ընտանիքիս՝ մորս, ոորս, եղբորս ապրուստը հոգացի, գրեթե անչափահաս տարիքիս. հյութապես բոլոր հայերն ալ տուժել էին եղեռնեն և Իզմիրի աղետեն:

Կնոջս՝ Շաքեի ոսկերիչ հայրը՝ Քերոբե Աղաչրաքյանը, Պոլսում մեծ ծառայություններ է ըրած Մեծ եղեռնեն որբացած հայ որբերին ու որբանոցներին: Չնայած ինքն ալ ուներ խնամքի կարոտ երեք աղջիկներ՝ Սիրարփին, Շաքեն և Ադրինեն, բայց իր շահածի մեծ մասը՝ ուտելիք, հագուստներ և շատ ուրիշ բաներ, կառնե կտաներ եղեր իր «զավակներուն», որոնց այնքան նվիրված էր, որ նույնիսկ շատերուն իրար հետ ամուսնացուցած, տուն-տեղ ըրած է՝ օժիտով, ամեն ինչով: Եվ նրա երախտիքը այնքան բարձր են գնահատած, որ նույնիսկ «Որբերու հայր» տիտղոսին ու ոսկե մեդալի են արժանացուցած:

Իսկ կնոջս քրոջ՝ Սիրարփիին ամուսինը՝ Գաոնիկ Սվազլյանը, տասնութ տարեկանեն Իզմիրի աղետեն հազիվ փախած, ծովը նետված է և լողալով հասած հունական նավու մը, որը իրեն տարած է նախ՝ Հունաստան, հետո՝ Եգիպտոս: Ան դեռ 30-ական թվերեն շատ հոդվածներ կգրեր թերթերուն մեջ, որ տարբեր երկրներու մեջ ցիր ու ցան եղած հայերը ներշնչվին ու գան հավաքվին Մայր Հայրենիքում: Կհիշեմ անոր գրած «Ներգաղթը» պիեսը ի՛նչ խանդավառությամբ բեմադրվեց Ալեքսանդրիայում, Կահիրեում և ուրիշ տեղերում և հասույթը հատկացվեց ներգաղթի ֆոնդին ու Հայաստանի մեջ բնակարաններ կառուցելու նպատակին...:

Իրականության մեջ ալ աներևակայելի՛ ոգևորություն էր ներգաղթի նախօրեին. կհիշեմ, մարդիկ ոսկիներ էին տալիս, որ իրենց թիվը շուտ ելլա, որ շուտ գան Հայաստան...:

Եգիպտոսեն մեզի հետ շատ հայտնի ընտանիքներ եկան Հայաստան. ինչպես օրինակ՝ «Արև» թերթի խմբագիր Հակոբ Արամյանը, երգչուհի Գոհար Գասպարյանն ու Արմինե Թյությունջյանը՝ իր ամուսինն, հոգեբան Հովսեփ Թյությունջյանի հետ, երգիչ Միհրան Երկաթը, անոր բանաստեղծուհի մայրը՝ Պայծառ Երկաթը, քույրը՝ արվեստագետ Մարի Երկաթը, Վանի հերոսամարտի ղեկավար Արմենակ Եկարյանի տղան ու աղջիկը, պատմագիր Սմբատ Բյուրատի տղան, բժիշկ-մտավորականներ Գարեգին Ամատյանը, Շամլյանը, Զավեն Դոլաբջյանը, գրող Պերճ Զեյթունցյանը, քանդակագործ Արտո Ձաքմաքչյանը, նկարիչներ Հակոբ Հակոբյանը, Աիդա Բոյաջյանը, լուսանկարիչ՝ Անդրանիկ Քոչարը, երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանը, Կարո Չալիկյանը, պատմաբաններ՝ Հակոբ Նալբանդյանը, Առաքել Պատրիկը, Արամ Տեր-Ղեվոնդյանը և շատ ու շատ ուրիշ հայտնի ընտանիքներ ոչ միայն Եգիպտոսեն, այլև Ֆրանսայեն, Հունաստանեն, Սուրիայեն, Լիբանանեն, Իրաքեն, Բալկանյան երկրներեն, նույնիսկ Ամերիկայեն...: Աշխարհի բոլոր կողմերեն հայրենադարձները եկան Հայրենիքը շենցընելու. շատերն իրենց հարստությունն ու ֆաբրիկաները բերին, շատերն ալ՝ իրենց ձեռքի և մտքի շնորհքը...

240 (240).
ԴՈԼՈՐԵՍ ԳՐԻԳՈՐԻ ՋՈՀՐԱՊ–ԼԻՊՄԱՆԻ ՊԱՏՄԱԾԸ
(ԾՆՎ. 1892 Թ., Կ. ՊՈԼԻՍ)

Ամեն բան կհիշեմ: Վերջին գիշերվա ամեն մեկ վայրկյանը կհիշեմ: Հայրս՝ Գրիգոր Ջոհրապը ճաշի եկավ: Կճաշեինք կոր, հազիվ լմնցած էինք, դուռը զարնվեցավ, երկու-երեք ոոգի եկան, տարին հայրիկիս: Տաճկերեն ինչ խոսեցան, չեմ գիտեր. ես պզտիկ աղջիկ մըն էի: Տաճկերեն երկու-երեք բառ գիտեի, անոնք ալ մոռցած եմ, չեմ ալ ուզեր հիշել:

Ան ժամանակ մայրս՝ Կլարան և քույրս՝ Հերմինը, տունն էին: Եղբայրներս Եվրոպա էին, ոոն կուսաանեին: Մենք երկու քույր և երկու եղբայր էինք: Բարեբախտաբար եղբայրներես մեկը Գերմանիա էր, մեկալը՝ Զվիցերիա: Ամենքնիս ալ աղվոր ֆրանսերեն կխոսեինք. երբ որ ես ֆրանսերեն կխոսեի, կգիտնային, որ ես ֆրանսացի եմ: Ֆրանսական դպրոց չեմ գացած, ես գերմանական դպրոց գացած եմ, բայց աղվոր վարժուհիներ ունեի, նաև շատ կճամփորդեինք: Մայրս մեզի կառներ, կտաներ Եվրոպա, Զվիցերիա: Մենք կբնակեինք Պոլիս՝ Այազ Փաշա: Գերմանական դեսպանատունին քովը եվրոպական թաղ մըն էր Ազարյաններու ապարտըմանը: Մենք մեջի բնակիչները կճանչնայինք. մեկ հատը դիպլոմատ մըն էր, մյուս տունը Ազարյանն իր երկու աղջիկներուն և փեսաներուն տված էր, անանկ որ շենքը բարեկամներով լեցված էր:

Մեր տունը բարեկամներ շատ կուգային: Հայրս իր բյուրոն ուներ. փաստաբան էր, բայց տունն ալ կուգային: Շատ անգամ կուգային, կըսեին. «Էֆենդի՛, բարեկամ մը ունիմ, վանեն եկած է, քանի մը վայրկյան կրնա՞ք տալ»: Ռուվի սենյակին մեջը հայրս կընդուներ և՛ ամենաճանչցված մեկուն և թե՛ վանեցի համեստ մարդուն: Ան կուգար ոորս կտեսնար, իրեն տված խըրատն ալ կառներ, քիչիկ մըն ալ ոորս տված ստակն ալ կառներ, կելլար, կերթար:

Մայրս հայուհի էր, անունը Կլարա Ցազըճյան էր, պոլսեցի էր: Երբ մեր հայրիկին տարին, մայրս ոուսական դեսպանատուն գնաց, ոոնտեղը ըսավ, որ ասանկ-ասանկ բան մը եղավ: Մայրս իմ ձեռքեն կբռներ, կերթայինք ճանչցած տաճիկներուն տունը: Մայրս կըսեր. «Կաղաչե՛մ, օգնեցե՛ք. իրավունք չունիք Գրիգոր Ջոհրապին պես երեսփոխան մարդուն ձեռք դպցնել»: Բայց մարդ մտիկ չէր ըներ:

Թալեաթը, որ մինչ այդ մեր տունը կուգար, անանկ աղեկ կհիշեմ անոր, հայրիկիս տանելնեն վերջը օր մը փողոցը ինձի տեսավ, ճանչցավ, ձեռքով ըրավ, ամմա ես գլուխս դարձուցի: Ան միշտ կուգար մեզի: Շատ մարդիկներ կուգային մեր տունը: Թալեաթը կուգար, թուղթ կխաղային ոորս հետ մեկտեղ, կլյուբը կըտեսնային իրար, աղեկ բարեկամ էին, բայց տաճիկներուն բարեկամությունը բան մը ըսել չէ, վստահելի չէ:

Անկե վերջը մեզի ալ քշել ուզեցին՝ մայրս, քույրս և շնիկնիս, որ եղբայրս հետը բերած էր Գերմանիայեն: Բայց դեսպանատուներուն մեջ շատ ճանչըցված էինք: Դեսպանները իրար եկան և ըսին. «Չենք կրնար թույլ տալ, որ այս ընտանիքը քշվի. մեկ բան մը կրնանք ընել նե՝ երկիրեն դուրս հանելու ենք»: Եվ պետք եղածը ըրին. թուղթեր տվին, որ դուրս ելլանք: Մենք Եվրոպա եկանք: Ավստրիա եկանք: Սաուինանգլուխը հասանք նե, ես գերմանացիի պես գերմաներեն կխոսեի: Գերմանացի մարդը ըսավ. «Ինչո՞ կերթանք կոր»: Ես ալ ըսի. «Սա սաուինային գիծը անցնես նե, ես ալ քեզի կըսեմ»: Բայց աղեկ գերմաներեն կխոսեի, գերմանացիի պես կխոսեի: Ծնողքս ամեն բանով ոոգ տարած էր մեզի: Պզտիկ աղջիկ էի, շատ աղեկ դաշնակ կզարնեի: Երբ ոորս բարեկամները կուգային, «Եկու՛ր, քիչ մը դաշնակ զարկ», կըսեին: Ամեն անգամ հայրս մեզի հետ կզբաղվեր: Սքանչելի պառկելու սենյակ մը ուներ՝ Բոսֆորին վրա պատուհաններով–փեղկերով: Հայրս կանուխ անկողին կպառկեր, ալ փողոց ելլալ չէր ուզեր: Մեկ գիշեր մը ես հայերենով իրեն կպատմեի իմ կարդացած գիրքս, մեկ գիշեր ալ՝ քույրս: Մենք շատ գրքեր կկարդայինք: Հայրս մեզի ստակ չէր տար: Բայց աղեկ գերմանական լիբրերի մը կար: Մայրս գացած, ըսած էր. «Իմ աղջիկներս գիրք ուզեն նե, տվեք, բայց աղեկ գրքեր տվեք»: Դիմացը աղվոր պատիսըրի մը կար: Մայրս ոոն կերթար կըսեր. «Աղջիկներս դպրոցեն ելլան, գան նե, ինչ ուզեն նե՝ տվեք, հաշիվը ինձի կղրկեք»: Բայց ես գրպանս ստակ չունեի: Հոստեղը՝ Ամերիկայի մեջ, նոր ծնած պզտիկի մը գրպանը ստակ կդնեն: Ես անանկ բան չէի գիտեր: Ատեն-ատեն պորտբոնես պառկելու սենյակի դուռնեն կկախեի, հայրս կհասկըներ, որ պարապ է, մեջը ոսկի մը կդներ:

Ինքը կզգար, որ պատերազմի ժամանակ երկրի վիճակը գեշ է, բայց մենք պոլիտիկայով չէինք զբաղիր: Հայրս կտեսնայինք, երբ սեղան կնստեինք, կճաշեինք: Հորս ամեն ըսածը միտքս է: Ես խրատ կհարցնեի: Ան կըսեր. «Աղեկ աշխատելու եք, լեզուներ աղեկ գիտնալու եք»: Մեր տունին մեջը հայերեն կխոսեինք, բայց երբ հայրս կճամփորդեր նե, իր նամակները ֆրանսերեն կգրեր, քանի որ մենք հայերեն կարդալ–գրել չէինք գիտեր: Ան Փարիզ կերթար, Ավստրիա կերթար:

Հայրս շատ կսիրեր մեզի, բայց շատ ալ խիստ կըլլար մեզի հետ. կուզեր, որ մենք աղեկ աշխատինք: Արժանի ըլլայինք նե, նույնիսկ ծեծ կուտեինք: Օրին մեկը եկած էր իրեն աշխատելու սենյակը, կարմիր կաշիե մեբլեր կային, անոնք գոցված էին:

- Ներ՛ս եկեք, - ըսավ հայրս մեզի: Եղբայրներս ադ օրը տունն էին, անոնք գացին՝ անոնք մեկ-մեկ կերան: Քույրս գնաց՝ ան ալ մեկ հատ մը կերավ: Ես դուռին դիմացն էի:

- Մոտեցի՛ր, - ըսավ ինձի:

- Ինչպե՞ս մոտենամ, - ըսի, - ես ալ ծեծ պիտի ուտեմ, - ըսի և չկերա ծեծ: Ան մեզի շատ կսիրեր, բայց նաև խիստ էր:

Եղբայրներես Արամը՝ պզտիկն էր, Լևոնը՝ մեծն

էր: Գերմանիո մեջ մեծը ինժեներ–էլեկտրիսիեն կսորվեր, պզտիկը՝ Ջվիցերիո մեջ դպրոց կերթար: Քույրիկիս անունը Հերմին էր:

Պատերազմի ժամանակ Ջվիցերիո մեջ մնացինք: Հոնկեց ետքը մորս հետ Պոլիս գացինք՝ տեսնելու թի մեր ապարտըմանը ի՞նչ եղավ: Շատ աղվոր շտկված ապարտըման մը ունեինք: Քույրս ըսավ. «Ես Պոլիս չեմ երթար»: Անոր վրա ես աղեկ բարեկամություն կրնամ ընել: Մեկ հատ զվիցերիական «Լը թան» լրագիրին մեջը մյուզիքի վրա գրող կորեսպոնտան մը կճանչնայի, անոր ըսի նէ, «Թող չերթա, - ըսավ, - ես անոր Փարիզ կտանիմ», ըսավ: Փարիզ տարավ քրոջս, կինն ալ բուն ֆրանսացի կին մըն էր: Հոնտեղը Տեր-Ներսեսյանները կային: Գիտե՞ք Սիրարփի Տեր-Ներսեսյանը, որ վերջը պատմաբան–գիտնական, պրոֆեսոր եղավ, անոնք ալ հոն էին: Անոնց ալ մայրս լուր ղրկեց, որ «Հերմինը կուգա կոր, անոր քիչիկ մը հոգ տարեք»: Անանկ որ, քույրս ֆրանսերենի դժվարություն ունենար նե, մայրս կերթար Սիրարփիին և Արաքսիին կհարցներ. «Ի՞նչ ընենք, որ աս աղջիկս ավելի դյուրություն ունենա ֆրանսերեն խոսելու»:

Վերջը հորմես քանի մը նամակ եկավ, բայց պոստայով չեկավ: Թենեքեյով յուղ կղրկեին, մեկ հատ նամակը յուղի թենեքեին մեջը պահված էր: Չէ նե մեզի չպիտի հասներ: Մեկ նամակ մը եկավ. «Ինձի համար աղոթք ըրեք: Աստված ինձի ողորմի» ըսելով՝ լմնցուց նամակը. և ինքն ալ անհետացավ: Այլևս նամակ չեկավ:

Ադ ապարտըմանը մենք վարձով կապրեինք: Անոր տերոջը՝ Ազարյանին զավակները, մեր շենքին մեջն էին: Մենք չորրորդ հարկն էինք: Մինչև վերջը մենք անոնց հետ բարեկամ մնացած ենք, հաջորդ ժեներասիոններուն հետն ալ: Անոնց աղջիկներուն հետ, թոռներուն հետ կապ ունիմ մինչև հիմա: Ես անոր հրավիրած էի Ամերիկա: Ես շատ տեղ, շատ երկիր տեսած եմ: Ես մորս կորսնցուցի, ամուսնացա Փարիզի մեջ: Եղբայրս Բուկարեստ էր, ես և քույրս հոն գացինք: Եղբայրս անանկ աղվոր դիրքի էր. անոր շոֆերին տունը ինձի տային նե, երջանիկ կըլլայի, անանկ աղվոր էր՝ պարտեզով, ամեն ինչով:

Ես ամուսնիս՝ Հենրիին, ճանչցած էի Ռիվիերա: Ան իր քրոջը հետ եկած էր: Անկե վերջը եղբայրս ըսավ ինձի և քրոջս. «Իմ քովս եկեք՝ Ռումանիա»: Մենք գացինք: Հարկավ անոր հետ տարբեր էր կյանքը: Սքանչելի տուն մը ուներ, ծառաներ, օթո ուներ, շատ հաջողած էր: Ժամանակ կուզեր, որ իմ թուղթերս հանվեին, որ Ամերիկա գայինք: Իմ ամուսինս բիրայի գործ կըներ. բիրայի ամերիկյան երրորդ մեծ ֆաբրիկը ուներ: Ինքը Ամերիկա ծնած էր, անոր ընտանիքը բիրայի ֆաբրիկ մը ուներ: Հոս՝ Նյու Յորք էին եկած և հաջողած էին այս երկրին մեջը: Ինքը այստեղ ազգականներ ուներ, անոնք ինձի ծուռ նայեցան: Մենք՝ ամուսինիս քրոջը զավակը, Կոլումբիա համալսարանին մեջը փիլոսոփիի դասախոս էր: Անիկա ինձի հավնեցավ, անոր կնիկն ալ հավնեցավ ինձի: Անիկա անցած տարի մեռավ:

Արամ եղբայրս սիրտի հիվանդությունով պառկած էր: Լուր առի, որ ծանր է: Ուզեցի երթալ, տեսնալ եղբորս: Երկուշաբթի ճամփա ելա: Բայց Արամը չճանչցավ, արդեն ծանր էր:

Իսկ Լևոն եղբայրս Ռումանիայեն դուրս հանելու համար դոլլար ուզեցին: Վիեննայեն մեծ բանկիր մը եկավ, ինձի հավնեցավ, որ ես շատ աղվոր գերմաներեն կխոսեի, տեսավ, որ ես տարբեր եմ: Ան ինձի ըսավ.

- Ստակ տալու ես ասոր-անոր:

Ես ըսի. - Կուտամ: Ռումանիայի մեջ շատերուն ստակ տվի: Եղբայրս երկիրեն դուրս հանեցի, բայց արդեն կոտրած մարդ մըն էր: Ես դիպլոմատիկ շրջապատին մեջ ճանչցված էի: Օրին մեկը հոլանդացի մը ճանչցավ, ըսի.

- Գնանք եղբորս համար գործ գտնանք:

Ան հասկցավ ինձի, ըսավ.

- Ես կգտնամ Հոլանդայի մեջ:

Երեք շաբաթեն թելեֆոն ըրավ, ըսավ.

- Եղբորդ համար տեղ մը ունիմ, կընդունին կոր: Ասոր վրա եղբայրս ելավ, Հոլանդա գնաց: Ան հոլանդերեն չէր գիտեր, սքանչելի գերմաներեն կխոսեր, անոր համար Վիեննա գնաց: Վերջը Նյու Յորքի մեջ քույրս մեռավ:

Վերջը լուր եկավ, որ եղբայրս հիվանդ է: Ելա Վիեննա գացի, հիվանդանոց գացի, բայց եղբայրս մեռավ:

Մայրս ասի, Փարիզ բերի: Վերջին օրվա պատկերը կհիշեմ: Մայրս շատ գեղեցիկ, էլեկանտ ու խելացի մեկն էր:

Առաջին պատերազմեն վերջը գացինք Պոլիս, մեր բոլոր եղած-չեղածը ծախեցինք: Վերջեն իմացանք, որ հորս բանկային ստակները տաճիկները առած էին, նաև մեր տունին մեջը եղած ստակները, իրեն տանելեն վերջը եկան, իբր թուղթ կփնտրեին, ստակ գտան, ինչ գտան նե՝ առին, տարին: Տաճիկներեն ի՞նչ կսպասեք: Մեր գրադարանը ձգեցինք Պոլիս: Միայն աս գորգը բերինք: Եթե հիշողությունը սիրտին մեջը չըլլա նե, ուրիշ բան մը օգուտ չունի:

Ես մեծ գումար մը ունեի, որ եկեղեցիին համար ինֆորմեյշն սենտըր ընել ուզեցի, գիրքերը պահելու ընպատակին ուզեցի հատկացնել*:

Հոսկե քանի մը տարի առաջ Երրորդ ավընյու կերթայի, պզտիկ խանութ մը կար, ապակիին մեջը տեսա մարդ մը, որ կոշիկ կշինե, ես ալ ներս մտա, հարցուցի.

- Դուն հա՞յ ես, - ըսի:

- Հարկավ հայ եմ, - ըսավ:

- Դուն հայ ես նե, ե՛ս ալ հայ եմ: Ես Գրիգոր Զոհրապի աղջիկն եմ, - ըսի:

Ան ձեռքի չեքիջը նետեց, երկու ձեռքերս առավ, պագավ: Անիկա ինձի շատ ավելի կդիպչի, քան թե ուսյալ մարդիկները գան դե, ինձի երկու խոսք ավելի ըսեն:

Աս բոլոր հուշերը իմ սիրտիս մեջն են ...:

---

* 1987 թ. Նյու Յորքում Հայ Առաքելական եկեղեցու Ամերիկայի Արևելյան թեմի Առաջնորդարանին կից հիմնադրվել է Գրիգոր և Կլարա Զոհրապ տեղեկատվական կենտրոնը:

II

ՊԱՏՄԱԿԱՆ

ՉՐՈՒՅՑՆԵՐ



1 (241).
ԱՆԴՐԱՆԻԿ ՋՈՐԱՎԱՐԸ ԵՎ ՔՑՈՍԱ ԲԻՆԲԱՇԻՆ

Մի օր սուլթան Համիդը Անդրանիկի վրա կըղրկե իր Քյոսա բինբաշիին: Անդրանիկը կերթա Քյոսա բինբաշիի չադրըը սուրով կպատռե, կտեսնա Քյոսա բինբաշին քնած է, կըսե. - Նամարդությունէ քեզի պատկած տեղդ խփեմ: Վաղը կգա՛ս, կոխվ ունիմ քեզի հետ:

Առավոտ կըլլա, Քյոսա բինբաշին կուգա Անդրանիկի դիմացը:

Անդրանիկը կըսե. - Մի՛ հատ խփեմ՝ ձիուդ ճալը կթոցնեմ, մի՛ հատ ալ խփեմ՝ ձիուդ ականջը կթոցնեմ, մի՛ հատ խփեմ՝ ճակատիդ՝ ա՛լ դուն գիտեցիր: Դուն որու՞ն վրա կուգաս, գիտե՞ս: Ես Անդրա՛նիկն եմ, քեզի սուլթան Համիդն է ղրկել, դուն մեղավոր չես: Էլի՛ր, ե՛տ գնա ու ալ մեկ ալ չի՛գաս:

Քյոսա բինբաշին կհավաքե իր զորքն ու փասափուսան, սուսուփուս կհեռանա:

Անանկ, որ Անդրանիկեն շա՛տ կվախնային թուրքերը, ոչ ոք չէր ուզեր աւոր հետ կռվիլ. «Անդրանիկ փաշա գյա՛ղի», - կըսեին ու կփախչեին:

2 (242).
ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Սուլթան Համիդը երեսուներեք տարի ննստավ: 1908 թ. «Հյուրիէթ, ադէլէթ, օքումէթ, Մուսաֆաթ միլլէթէ»* ըսավ, այսինքն՝ իրար հետ բոլորը եղբոր պես պիտի ապրինք, ըսավ: Բայց երեք ամիս չանցած՝ ջարդի հրաման տվավ: Կիլիկիայում՝ Հաճընի, Դյորտյոլի, Ադանայի, Սիսի և այլ տեղերի հայերին սկսեցին ջարդել: Երեք օրվա մեջ երեսուն հազար հայ կոտորեցին:

Էդ ջարդը մոտեցավ Մարաշին:

Մեր զեյթունցիները լսեցին, որ Կիլիկիո հայերին ջարդում են, իշխանները լուր ղրկեցին Մարաշ՝ թուրք կառավարությանը ըսին. - Չըլլա՛, որ Մարաշի մեջ մի հայու դպնաք, կգանք Մարաշ քաղաքը բոլոր կվառենք:

Թուրք կառավարողները վախցան զեյթունցիներեն, ջարդը դադրեցուցին: Ադ ժամանակ է, որ աս երգը էլավ.

«Կոտորածն անգութ, հայերը թող լան,
Անապատ դարձավ շքեղ Կիլիկիան...**»:

3 (243).
ԿԻԼԻԿԻՈ ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ՍԻՍԻ ՆՇԽԱՐՆԵՐԸ

Մեր տոհմը Կիլիկիո Լևոն Վեցերորդ թագավորի սերնդից է: Սկզբում եղել ենք թագավորական տոհմ, հետո՝ կաթողիկոսական օջախ: Մեր նախահայրերից էր Գնել վարդապետ Աջապահյանը, որը երեսուներեք տարեկան հասակում կառուցել է տվել Աջապահյան վանքը: Թուրք բեկը, որ կտեսնա, կըսե՝ սա ոչ թե վանք է, այլ՝ ամրոց: Ան հիմա մզկիթ է դարձած:

Կպատմեն, որ երբ Գնել վարդապետ Աջապահյանը կուգա այդ կողմերը, կտեսնա ջրհոր մը, որի մեջի ջուրը չորցած կըլլա: Գնել վարդապետ Աջապահյանը կուգա՝ մեկ ձեռքին Գրիգոր Լուսավորիչի աջը, մյուս ձեռքին՝ խաչը, կսկսի աղոթել, և հորին մեջի ջուրը կսկըսի գալ: Ադ տեսակ հրաշք եղա՛ծ է: Մեր օջախում կպահեինք և՛ Գրիգոր Լուսավորիչի աջը, և՛ Լևոն թագավորի փղոսկրե գդալը, և՛ նրա սուրը, որի վրայի ադամանդները հանված էին: Մամաս կպատմեր, որ ադ բոլորը հետերնիս առինք, ճամփա ելանք, երբ 1915 թվին թուրքերը եկան մեզի դուրս հանեցին Սիսեն: Թուրք ժանդարմները մտրակով կծեծեին, ով որ դուրս գար շարքեն կամ՝ ետ մնար: Լա՛ց, կո՛ծ, իրարանցու՛մ, սովա՛ծ, ծարավ, արևի տակ խաշվելո՛վ քայլեցնում էին: Հայերը ծեծ ուտելով հասան մինչև Գաստոն քաղաքը: Անոթութենեն ձիերու կեղտին մեջի չմարսված գարիները կըփնտրեին, կուտեին, որ փորերնին բան մը մտնար: Հոն սկսած էր արդեն քոլերայի համաճարակը: Մեռնող՝ մեռնողի: Հայրս մեռել թաղող դարձած էր: Արդեն դիակները իրար վրա կնետեին մեծ փոսի մը մեջ, հողը վրան կուտային, այնքան որ շա՛տ էին մեռնողները: Փոքր երեխաներին թուրքերը մինչև վիզը հողի մեջ կթաղեին, գլուխները դուրս թողնելով:

Վերջը մեզի Սուր-Սայդա քաղաքը տարին: Ջեռքներնիս՝ դրամ չկա: Մամաս ստիպված Լևոն թագավորի փղոսկրյա գդալը ծախեց, այդ դրամով տասնչորս կիլոգրամ եգիպտացորենի ալյուր գնեց, որ մեզի կերցնի: Ադ ալ մեզ պահեց երևի, որ չմեռանք: Վերջը մամաս սկսավ աշխատիլ ամերիկյան հիվանդանոցին մեջ որպես լվացարարուհի: Անտեղեն մամաս բրդյա բաթանիե մը բերել էր. բոլոր ընտանիքով ադ բաթանիեին տակ կըմտնայինք, կքնանայինք: Օր մը բաթանիեն լվացինք, փշալարերու վրա փռեցինք, որ չորանա՝ գողացան. մենք երեխեքով սկսանք լալ: Ամերիկյան հիվանդանոցի գլխավոր բժիշկը տեսավ վիճակնիս, մեղքցավ, մի նոր աղյալ տվավ մեզի: Երբ մայրս դրամ ունեցավ, գընաց էդ Լևոն թագավորի գդալը դրամով ետ առավ, որը հիմա մյուս բաներու հետ թանգարանումն է:

Վերջը մենք գացինք Մարաշ: Քիչ մը շունչ քաշեցինք: Քանի որ անտեղ արդեն ֆրանսացիները մըտած էին, խաղաղություն եղավ: Բայց անոնց ալ չթողեցին: Գիշերով ֆրանսացիները իրենց ձիերի ամբակներուն տակերը քեչե էին կապել, որ փախչելու ժամանակ մարդ չիմանա: Անոնց ետևեն թուրքերը մտան, սկսան ջարդե՛լ, փշրե՛լ, կոտորե՛լ: Մարաշի հայկական եկեղեցին կրակի տվին, մոմի պես վառեցին: Մենք ստիպված դուրս եկանք Մարաշեն: Անցանք Բեյլրութ: Քանի մը տարի հոն մնացինք, վերջը 1946-ին եկանք Հայաստան:

4 (244).
ԱՌԵՎԱՆԳՎԱԾ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Երեք հարյուր տարի աս ավետարանը մեր օջախումն է եղել, մեր մեծերը կպատմեին, որ 1650 թվերուն էր. մերոնք Զատիկի օր մը Մուրադ գետը լվացք են տարել, տեսել են գետի միջով մի սնդուկ է գալիս: Ջեռքի փայտով քաշում են, վերցնում, բացում են: Քառասուն մետաքսյա թաշկինակների մեջ փաթթված է եղել ադ ավետարանը, թե ո՞վ է գցել գետը, հայտնի չէ: Մերոնք բերում են տուն, տեսնում են ձեռագիր ավետարան է: Անոր պահպանակները և մեջի նկարները ոսկի էին, վրայի խաչը արծաթից էր, մագաղաթյա թերթիկները 1200 թվից էին: Տոնական օրերուն եկեղեցու երգողները կուգային մեր ավետարանը կտանեին, պատարագեն վերջը կբերեին մեր տունը, կդնեին:

Օր մը բրդերը կուգան կգողնան, կտանին մեր ավետարանը:

Ավետարանը կըսե. - Ինձի դրեք սեղյակը, մոմեր վառեք քովս:

Աս բրդերը ավետարանը բամբակի վրա կդնեն, քովերն ալ մոմեր կվառեն: Մոմին մեկը շուռ կուգա, կայրվի, բամբակը կվառվի:

Տանտերը կըսե. - Գնացե՛ք, ավետարանը ազատե՛ք:

Կէրթան, կտեսնան կրակե հրդեհ է, բայց ավետարանը հետու ընկած է: Աս հրաշքը որ կտեսնեն բրդերը, ավետարանը կբերեն ետ կուտան:

1895 թ. մի թուրք կգողնա, կտանի քաղաք կծախի: Օխուի Եզնիկ եպիսկոպոսը կտեսնա, կուգա Մելքոն հորեղբորս կըսե. - Մելքո՛ն, ես քեզի վկայություն կուտամ, որ էդ քո՛ ավետարանն էր:

Մելքոնը կէրթա, կխնդրե թուրք Մավալիեն, որ իր ավետարանը տա, բայց ան՝ չի տար: Քսան տարի կմնա ադ թուրքին քովը: Թուրքին կնիկը ավետարանին մետաքսե փաթթոցները կհանե, իր և իր չորս երեխեքի գլուխները որպես գլխաշոր կկապե: Երկու օր հետո ադ թուրքին կնիկը կմեռնի: Մարդը կըսե՝ էրթամ հայ կնիկ մը բերեմ, որ ավետարանին տերություն անի: Կէրթա մի հայ աղջիկ կփախցնե, կբերե իր տունը, իր չորս էրեխեքի վրա:

Մելքոնը զենքը ձեռքին հինգ ամիս լեռները կըթափառեր: Օր մըն ալ էկավ նորեն թուրքին ըսավ. - Մավալի՛, տու՛ր իմ ավետարանը:

- Չե՛մ իտար, - կըսե թուրքը:

Օր մըն ալ տեսանք թուրքը ավետարանը գրկած էկավ: Դու մի ըսեր, գիշերը չէր քնել, քունը չէր տարել, երազին մեջը չարչըրկվել էր, ավետարանը սկսել էր խոսել, ասել էր. - Ինձի տար, իմ տեղը դիր, տիրոջս տուր:

Մավալին թևին տակը դրած գալիս է Մելքոնին տունը, ասում. - Ա՛ո քու ավետարանը: Երազիս աւ ինձի ըսավ. «Տա՛ր, ինձի իմ տեղը դիր, թե չէ՝ քեզի կգցեմ երկու ցուլերուն մեջտեղը, քեզ կսպանեն»:

Ադ ձևով ավետարանը նորեն էկավ մեր օջախը:

Դեռ մենք Օխու* գյուղումն էինք. էդ ավետարանը գալիս տանում էին եկեղեցի: Ուխտավորները գալիս էին, նվերներ էին բերում:

Իմին հորեղբայրս չէր աշխատում: Ադ ավետարանից էկած հասույթով էր իր ընտանիքը պահում:

Օր մը մեկը պարպիչ էր ընկել, բերանը ծռվել, կոնակն էր անցել: Տարին ավետարանը՝ բուժվեց:

1921 թվին Մելքոն հորեղբայրիս խորթ տղան՝ Մանուկը, բնակություն էր հաստատել Ֆրանսա: Անիկա Մելքոն հորեղբայրիս նամակ նամակի ետևեն կղըրկե, որ արի՛, քեզ բերենք Ֆրանսա, Ոսկի ավետարանն էլ հե՛տդ բեր, հոս աճագի՛ն դրամ կշահիս:

Էդ նամակի մասին կլսեն մեր գյուղացիները, Ոս-

---

* 1908 թ. հոչակվեց Օսմանյան Թուրքիայի «Սահմանադրությունը», որի կարգախոսն էր. «Ազատություն, արդարություն, եղբայրություն, հավասարություն ժողովըրդին»:

** Այս երգն ամբողջությամբ տե՛ս մեր «Կիլիկիա. արևմտահայոց բանավոր ավանդությունը», Երևան, 1994, էջ 173-174, նաև սույն ժողովածուի Պատմական երգեր բաժնում:

* Բալուի գյուղերից մեկը:

կի ավետարանը իրենց գյուղին պատիվն էր, աւոր ուժն ու զորությունը: Մելքոն հորեղբայրիս կըսեն. - Մելքո՛ն, չըլլա՛ որ էրթաս Ֆրանսա:

Բայց աւոր խորթ տղան շատ կգրե, հորեղբայրս ալ պոստով կղրկե ավետարանը: Ֆրանսական կառավարությունը կբռնագրավե, կըսե. - Աս հինություն է, արժեքավոր բան է, մենք թանգարանը կդնենք: Բայց ինա շատ դրամ կուտա, կառնե ավետարանը, ետքն ալ կտանի Ամերիկա, կհաստատվի Փրովիդենսում: 1967 թվականին Երևանում բնակվող օխուցիները և ես՝ Մուրադենց Ոսկի ավետարանին տեր Թրվանդա Մուրադյանս, քառասուն-հիսուն հոգիով հավաքվեցինք, գացինք Մատենադարան, մի ճամակ գրեցինք Մատենադարանին, որ Մելքոնի խորթ տղան՝ Մանուկը, խաբեությունով Ֆրանսա է տարել մեր Ոսկե ավետարանը, ան-կե վերջն ալ Ամերիկա է տարել: 1976-ին Մելքոնի տղան՝ Գասպարը, գնացել է ԱՄՆ, չի ստացվել Ոսկե ավետարանը բերել:

Ինչ երկարացնեմ, ետքը, որ Մատենադարանի փոխտնօրեն Բաբկեն Չուգասզյանը գնաց Ամերիկա, ան օրինավոր կերպով բերավ մեր Ոսկե ավետարանը: Հիմա ան կգտնվի Հայաստանի Մատենադարանում: Չուգասզյանն ալ իր գիրքին մեջը գրած է մեր Ոսկե ավետարանին մասին:*

5 (245).
ՎԱԽԵՑԱԾ ՄՈԼԼԱՆ

Մեծ եղեռնը ցիրուցան ըրավ բոլորիս: Ես ընկա թուրքերու մեջ: Տասնյոթ-տասնութ տարեկան հազիվ կըլլայի: Անունս փոխեցին, թուրքի անուն դրին: Հորս թուրք աղային դաշտերն էի վարում, գիշերն ալ եզներն էի արածացնում:

Թուրքերու գերեզմանատները ճանապարհի եզրին են լինում: Գերեզմանատան քարերու մեջ իմ հասակիս խոտ էր բուսած: Եզներին քշեցի գերեզմանատուն, ես ալ մի քարի մոտ պառկեցի:

Լուսադեմին աչքերս բացի, եզները կուշտ պառկած՝ որոճում էին: Դարձա ճանապարհի կողմը, տեսնամ՝ ի՜նչ, գյուղի մոլլան էշի վրա նստած մյուս գյուղն է գնում: Վախիցս քարի ետևում թաքնվեցի, ամմա հազս բռնեց՝ խեղդվելով մի քանի անգամ հազացի: Թուրքի մոլլան երբ ձայնս լսեց, էշից ընկավ. «Ցա ալլահ» գոռալով՝ փախավ իրենց գյուղը:

Ես իսկույն եզները հանեցի գերեզմանատնից, քշեցի ուղիղ աղային դաշտը: Վախը սրտիս մեջ սկսա դաշտը վարել:

Օր մը ետքը գյուղի մեջ լուր էլավ՝ իբր մոլլան գերեզմանատնից անցնելու ժամանակ ուրվականը դեմն է ելել, խփել է իրեն ու մոլլան վախից սատկել է: Փառք տվի Աստծուս, որ ինձ տեսնող չեղավ: Եթե իմանային, որ ադ ուրվականը գյավուրի լակոտ մըն է, ինձի պատառ-պատառ կընեին:

6 (246).
ԹՈՒՐՔ ԲԱՆՏԱՊԱՀԸ ԵՎ ՀԱՅՐՍ

Գյոզալյանները շատ սիրուն և ուժեղ են եղել: Հայրս պատմում էր, որ իր հոր հորեղբայրը թուրքական փաշլևանի հետ մենամարտի է բռնվել:

Ադ թուրք փաշլևանը կուգա Բեյլանի հայկական Սոուկ-Օլուկ գյուղը, կասի. «Բերե՛ք ձեր փաշլևաններին»: Եվ մի քանիսին կգցի գետնին:

Գյոզալյանը դուրս կուգա: Փաշլևանի ներկայացուցիչը կըսե. - Մի՛ մտի մենամարտի մեջ, կպարտվե՛ս, քանի որ թուրք փաշլևանի մարմինը յուղոտված է:

Գյոզալյանը կուգա, մատերով փաշլևանի փորը կբռնե, աղիքները դուրս կթափե...

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հորս թուրքական բանակի զորակոչ կվերցնեն և առանց պատճառի բանտ կկոխեն, որ տանեն սպանեն:

Բանտապետը հորս կհարցնե. - Դու Գյոզալ օղլու Գևոյի տղա՞ն ես:

Հայրս կըսե. - Այո՛:

Բանտապետը կըսե. - Տա՛ր ձիս թիմարի:

Հայրս ձին կառնի, կթիմարի, կբերի:

Բանտապետը կըսե. - Ես քեզ չըսի՞ տար ձիս լա՛վ թիմարի, - ու աչքով կանի, այսինքն կուզե հասկըցնել, որ՝ գնա՛ ու փախի՛, քանի որ որոշում կա ձեր բոլորին սպանել...

Հայրս գլխի կընկնի, կփախչի, կյանքը կփրկի, կերթա թուրքի մը մոտ թուրքի անունով կաշխատի:

7 (247).
ԹՈՒՐՔ ԱՀՄԵԴԸ ԵՎ ՀԱՅՐՍ

Բեյլանի մեր տան նկուղը գինանոց էր, քանի որ միշտ թուրքերի հարևանությամբ էինք ապրում և միշտ պետք է գինված ըլլայինք: Օրին մեկը ողորմածիկ հայրս, մայրս ինձի առին, գացինք Օթլը ղայան, այսինքն՝ խոտավետ քարափը, որ մեր սև կովի համար խոտ բերենք: Ես փոքր էի, հայրս ինձ թողեց մորս հետ:

* Տե՛ս Չուգասզյան Բ., Ձեռագրերի աշխարհում, Երևան, 1985, էջ 140-144:

Ես խոտի վրա պառկած էի, հորս գենքն ալ քովս: Հայրս գնաց խոտ քաղելու, մայրս ալ գնաց աւոր ետևեն: Չգիտեմ ինչպես քունս էր տարել, երբ հայրս եկավ, իր գենքը արդեն չկար: Շատ ընդացավ մորս վրա, որ թողել էր աւուշադրությանս: Անմիջապես մեզ ձիու վրա դրեց, բերեց տուն: Հետո գնաց Ահմեդի գյուղը, քանի որ նա էր գողացողը: Նույն գիշերն Ահմեդն իմանում է, որ այդ հորս գենքն է, բերում, հանձնում է մեր գյուղապետին: Հայրս մենակ կգնա Ահմեդի գյուղը: Գյուղապետից կըհարցնե Ահմեդի տունը: Գյուղապետը կըսե. - Էդ ավազակի տունը ինչպե՞ս ցույց տամ, - բայց հետո ցույց կտա:

Հայրս կգնա Ահմեդի տունը, քացով կտա, կբանա Ահմեդի դուռը, ներս կմտնի:

Ահմեդը կտեսնա հորս, կըսե. - Մարտիրո՜ս դալի, ես իմացա, որ քո գենքն է՝ բերեր, տվել եմ ձեր գյուղապետին:

Հայրս կըսե. - Ձեռքերդ վե՛ր, առաջս ընկի՛ր, - կտանի, իրենց գյուղի սրճարանում կնստեցնի:

Գերմանիայում կրթված գավառապետ մուսյո Ժոզեֆը կուգա, Ահմեդը աւոր ոտքերը կիյնա: Մուսյո Ժոզեֆը կըսե. - Գնա՛, Մարտիրոս դալիի ոտքերը համբուրի, որ քեզ կյանքդ բաշխի:

Հաջորդ օրը Ահմեդը մի էշաբեռ յուղ, մածուն, մի հատ էլ ընդ ծնած կով կբերե հորս ընվեր, բայց հայրս չի ընդունիր, կըսե. - Աս բոլորը ե՛տ տար, գողությունը մոռցի՛ր, աշխատիր մա՛րդ դառնալ:

8 (248).
ԲԵՅԼԱՆՑԻ ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Ողորմածիկ հայրս ու մայրս պատմում էին, որ 1915 թվին իրենց քշեցին Սիրիայի անապատները: Մեծ հորեղբորս թուրքերը սպանել են, մյուս երկու հորեղբայրներս փոքր են եղել, Սիրիայի անապատներում թափառելուց հետո որբանոց են ընկել: 1919 թ. ով դիմացել էր ու ողջ էր մնացել, վերադարձել էր իր պապենական կալվածքները: 1925 թ., իմ ծնված օրը, հայրս խաղողի այգի է տնկել իմ անունով: Ես հիշում եմ, այդ այգին առատ բերք էր տալիս, չնայած այգիները ջրովի չէին, և պարարտանյութ չկար, միայն տարվա մեջ մեկ անգամ ծըծումբ էին ցանում, որպեսզի ծովից եկած խոնավությունը չփչացնի որթը:

1939 թ., երբ Ալեքսանդրետի սանջակը տրվեց թուրքերուն, ֆրանսացիները ետ քաշվեցին, դուրս եկան Կիլիկիայից: Հայերը չցանկացան մնալ թուրքերի հետ: Եգիպտոսից «Խդևի» նավը եկավ, մեր ունեցածը Բեյլանի Սոուկ-օլուկ գյուղից իջեցրին նավահանգիստ: Մեծ քրոջս ձեռքը բռնած՝ իջա նավի մոտ: Երբ նավի մեքենաները տեսա, շատ վախեցա, սկսեցի դողալ, այդ ժամանակ ժեներալ դը Գոլն էր անցնում, ժպտալով իմ գլուխը շոյեց, որ չհուզվեմ...: Նավը մեզ տարավ Թարթուս քաղաքը՝ Միջերկրականի ափին. ասում էին, որ Թադևոս առաքյալն է հիմնել այդ քաղաքը: Տասը-տասնհինգ օր վրանների տակ մնացինք այնտեղ, որից հետո մեքենաներով մեզ տեղափոխեցին Բեյրութ, հետո՝ Սուր քաղաքը՝ Բեյրութի մոտ, որտեղ մեզ տեղավորեցին արաբների հարևանությամբ: Սկզբում շատ դժվար էր, քանի որ արաբները մեզ համարում էին պիղծ ժողովուրդ. հայ կինը եթե մոտենար մսավաճառի սեղանի վրա դրված մսին և մատը դներ մսի վրա, մսավաճառը զայրացած միսը կշպրտեր: Բայց հետզհետե ընտելացան մեզ, և արդեն միասին սեղան էինք ընդտում: Ֆրանսիական կառավարությունը բավական ջրովի հողեր մեզ հատկացրեց, քանի որ ծովից կես կիլոմետր հեռու գետնից ջուր էր բխում, և հողերը ոռոգվում էին: Այնքան ճոխ էր բուսականությունը Սուրում, որ եթե ձիավորը մտներ արտի մեջ՝ չէր երևա:

Ֆրանսիական կառավարությունը մեզ ձրի շինանյութ տրամադրեց, տներ կառուցեցինք, սկսեցինք աշխատել, ապրել: Վարձատրվում էինք ըստ ընտանիքի անդամների թվի, թեկուզ մեկ հոգի աշխատեր: Վատն այն էր միայն, որ շատ ճաճիճներ կային, և շատերը մալարիայով հիվանդացան: Ժեներալ դը Գոլը բժիշկների ու բուժքույրերի հետ եկավ, դեղին խինինի հատիկներ բաժանեց բոլորին: Ցոթ տարի մնացինք այնտեղ, մեր ապրուստը շատ լավ էր: Մեր մայրերի ու քույրերի թևերը լիքն էին ոսկե ապարանջաններով: Ամեն մի ընտանիք աշխատում էր իրեն հատկացված հողամասի վրա, իրեն հատկացված դրամական վարկը ստանում էր, լծկան անասուններն ու գյուղատնտեսական գործիքները ստանում էր ձրի, աշխատում ու ապրում էինք: Ամեն մի գյուղ իր տարածքն ուներ, իր դպրոցը, նաև՝ եկեղեցին: Իսկ մեզանից դեպի Սուր՝ Սիդոն ու Դիրոս քաղաքներն էին, որոնք Աստվածաշնչում հիշատակվում են, բայց պրդեն ծովի հատակն էին անցել՝ իրենց հինամյա ամրոցների փլատակներով... Անգործ արաբները ծովի ավազաջուրը մաղելով, ոսկիի փոշի էին հանում:

Հետագայում, երբ ներգաղթ կոմիտեի ներկայացուցիչներն եկան, հորս հետ ընկերություն անող արաբները մեզ զգուշացրին, որ չգնանք Հայաստան, եթե գընանք, ասում էին, սև հաց անգամ չպիտի գտնաք: Ցոթը տարվա ընթացքում հարյուր քսանհինգ հեկտար պըտղատու այգիներ ունեցանք, ցորենի դաշտեր, որոնք մի տարի ցորեն էին տալիս, երկու տարի՝ ուրիշ բերք: Ջըմռանը ամեն ինչի պաշար էինք անում, որսորդները գընում էին վարազ էին որսում, որոնք բաժանուս էին իրար մեջ: Եվ սկսվում էր խնջույքների շրջանը...

1946 թ. տուն, տեղ, այգի, ամե՛ն ինչ թողեցինք, եկանք Հայաստան: Սկզբում մեզ Նոյեմբերյանի խուլ գյուղերը գցեցին, հետո մեծ դժվարությամբ կարողացանք տեղափոխվել Երևանի Ախպարաշեն ու Մեռելաշեն թաղամասերը*, կառուցեցինք մեր տունը, ամուսնացա և իմ հինգ զավակների հետ այժմ ապրում եմ այստեղ:

* Երբ 1946-1947 թթ. հայրենադարձները բնակություն հաստատեցին և շենացրին այդ ամայի տարածքը, այն կոչվեց Ախպարաշեն (Ախպար – եղբայր բառից, ինչպես հեգնանքով նորեկներին անվանում էին տեղացիները), սակայն քանի որ նրանցից շատ-շատերը չդիմանալով ցրտին և կյանքի այլ դժվարություններին մեռնում էին՝ կից թաղամասը կոչվեց Մեռելաշեն (այժմ՝ Արարատյան զանգված):

9 (249).
ՉԱԹ ԳՅՈՒՂԻ ԻՆՃԵՑԱՆ ՍԱՄՎԵԼԸ

1915 թվին, երբ Ցոզղատի Բողազլյան գյուղաքաղաքեն մեզ տարան մորթելու, Չաթ գյուղից էլ հայերին կհանեն: Չաթ գյուղը մեր գյուղից մեկուկես ժամ հեռու էր: Չաթ գյուղի տղամարդկանց էլ ձեռքերը կապկըպած կտանին ձորը սպանելու: Հայր ու տղայի մը ձեռքերն ալ իրար կապված կըլլան: Տղան՝ Սամվելը, կըսե. «Հայրի՛կ, ես փախչիմ պիտի, կացինով չսպանվեմ, գնդակով թող մեռնեմ»:

Սամվելը ձեռնակապերը մի կերպ կքանդե ու կըփախչի: Հաջորդ օրը կհասնի գյուղ, կմտնա մի թուրքի տուն, պատից կախված հրացանը և փամփուշտները կառնե, խոհանոց կմտնա՝ յուխա մըն ալ կառնե, ուտելով կերթա: Ճամփին կտեսնա չորս թուրք ժանդարմ երգելով կուգան՝ հայերից թալանված ապրանքներով կըսեն. «Բաշը՝ բեյլիք, մալը՝ յաղմա, էրմենի՛» (Գլուխը՝ պետությանը, ապրանքը՝ թալանի, հա՛յ):

Հոգին սիրեմ, Սամվե՛լ, մի գնդակով երկու ժանդարմներուն կսպառե, վերջն ալ մյուս երկուսին կսպառե, բոլորը կմեռնին: Սամվելը առնոց հրացանները կըվերցնե, կերթա, կմտնա առտաղը:

Ուրիշ հայ երիտասարդներ ալ կփախչին կգան առտաո, Սամվելի խումբը կդառնա 360 հոգի: Սրանք թուղթ կգրեն թուրք աղաներին, կսպառնան, թե՝ մեզի ա՛ս տուր, մեզի ա՛ն տուր: Էսենց հինգ տարի Սամվելը իր քաջերի խմբով կոտորեց թուրքերին: Սամվելի խըմբում մի աղջիկ ալ կկռվի, Սամվելը դրա հետ կամուսնանա:

Երբ զինադադար եղավ, Քեմալը նստեց, աշխարհքը խաղաղվեց: Հայերը ետ եկան իրենց տները: Քեմալը կկանչե Կարապետ Սարաֆյանին, կըսե. «Սամվելը հինգ տարի կոտորեց, ջարդեց: Քանի որ թուրքը ըրավ՝ և ստացավ: Հալա՛լ է: Հիմա թուղթ եմ գրում, Սամվելը թող զենքը ցած դնե: Հերի՛ք է: Սամվելը թող գա ո՛ր երկիրը կուզե, ես ղրկեմ, թող ապրի»:

Քեմալը չորս զինվոր կդնե Սարաֆյանի հետ, կերթան: Սամվելը պաշարած կըլլա թուրքական գյուղ մը, ինքն ալ քարայրի մը մեջ նստած կըլլա: Սարաֆյանը լուր կղրկե Սամվելին: Սամվելը կըսե. «Թող ներս գա»:

Կարապետ Սարաֆյանը ներս կմտնա, կտեսնա Սամվելը նստած է, թուրք աղաները ձեռքերը դոշերին դրած կայնած, սպասում են, թե երբ Սամվելը հրաման պիտի տա, որ իրենց տները վառե պիտի:

Սամվելը կտեսնա Կարապետ Սարաֆյանին, կհամբուրե ձեռքը: Կարապետը կըսե. «Նայե՛, տղա՛ս, Քեմալը ըսավ, որ աս նամակը տամ քեզի: Քեմալը ըսավ՝ զենքդ ցած դնես, գաս ո՛ր երկիրը կուզես, քեզ պիտի ղրկե»:

Սամվելը կըսե. «Է՛, հայրի՛կ, զենքս տամ թուրքին, որ ինձ սպանե՞: Քանի իմ բազուկները կան, ես պիտի կովիմ»:

Սարաֆյանը ժանդարմներուն հետ կուգա Անկարա, կպատմե Քեմալին:

Էն ժամանակ ֆրանսիացիները Կիլիկիայումն էին: Ֆրանսիական զորքը էնտեղ էր: Սամվելը իր տղաներին կըսե. «Տղա՛ք, էլե՛ք, էրթանք Կիլիկիա»:

Սամվելի կինը էդ գիշեր մի տղա ծնած կըլլա: Տղաները կըսեն. «Երեխան ալ բերենք»: Սամվելը կըսե. «Երեխան մեզ կխանգարե. երեք կիլոգրամ մսի համար չեմ կարող 360 հոգի զոհել»:

Սամվելը իր քաջերով դուրս կուգա քարայրից, կիջնեն Կեսարիա: Թուրքերը կհետևին առնոց, կտեսնան, որ Սամվելը դուրս եկավ թաքստոցեն: Թուրքերը օղակի մեջ կառնեն, բայց այնքան վարժ կրակող էր, որ երեք հարյուր մետրի վրա հավկիթը դներիր՝ կկրակեր ճիշտ վրան: Թուրքերը կտեսնան նրանց, կվախենան, կըսեն «Սրանք մարդակեր են, լուսանա՝ մեզ կկոտորեն: Ավելի լավ է օղակը բացենք: Թող դուրս գան»: Թուրք զինվորները երկու մասի կբաժնվին: Սամվելը իր տղաներով դուրս կգա, կհասնի Կիլիկիա: Սամվելը կերթա, կներկայանա ֆրանսական ժեներալին, կըսե. «Մենք և դուք քրիստոնյա ենք»:

Ժեներալը կըսե. «Զենքերնիդ փոխեք, հագուստնիդ փոխեք, մեր զորքին միացեք: Ջահան գետի վրա մի կամուրջ կա, թուրքական գնացքը վաղը առավոտ ժամը վեցին պիտի գա, անցնի էդ կամուրջի վրայով: Պետք է հաշիվը մաքրել»:

Սամվելը կըսե. «Ես էս գիշեր կվերցնեմ էդ կամուրջը»:

Ջյունը էկած նստած կըլլա: Սամվելը չորս հոգու սպիտակ շապիկ կհագցնե, կըսե. «Երկու հոգի պիտի անցնի կամուրջի էն կողմը, երկու հոգի՝ էս կողմը: Պատրոնի փիտիլը պիտի կապեք, պիտի կամուրջը պայթեցնեք»:

Տղաները կերթան: Թուրք պահակները քնած կըլլան: Տղաները կընեն գործողությունը: Ժամը առավոտվա վեցին գնացքը կուգա, կամուրջը կպայթի՝ գնացքն ալ հետը: Սամվելը կերթա ֆրանսական ժեներալին կըսե. «Կամուրջը վերցված է»:

Ժեներալը կզարմանա, օդանավեր կբարձրացնե երկինքը, որ տեսնան: Կտեսնան, որ կամուրջը չկա: Ժեներալը կմտածե. «Սրանց հագուստ, զենք տամ, վառվա՛ծ են՝ մա՛րդ կուտեն»: Սամվելի տղաները կլցվին զորանոցը, բայց ֆրանսական ժեներալը ո՛չ զենք կուտա, ո՛չ հագուստ: Սամվելը կըսե. «Ես, որպես քրիստոնյա, քեզ հանձնվեցի, բայց՝ դու ինձ դավաճանեցիր: Դոները բա՛ց, ես կհրամայեմ, տղաները կցրվին», - Սամվելին կաթված կիջնա, կմեռնի:

10 (250).
ՀՈՐՍ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ

Հայրս՝ Մովսես Բալաբանյանն ինձ պատմել է, երբ փրանկի (ֆրանսական) զորքը հարձակվել էր թուրքերի վրա, մեր Առաքելը մեկ-մեկ անհետանում էր, երբեմն՝ կարճ, երբեմն՝ երկար ժամանակով: Իրեն միշտ

զգուշացնում էի, որ երբ տեղ գնա՝ իմաց տա կամ առանձին չգնա: Մի երեկո տեսնեմ Առաքելը չկա: Տղաներից ոչ ոք չգիտեր, թե նա ուր է գնացել: Գիշերը մոտենում էր կեսին: Արդեն որոշել էի գնալ փնտրելու, երբ հեռվից լսեցի նրա կոշիկների ձայնը: Նա հագնում էր ֆրանսական զինվորի կոշիկ՝ տակը մեծ-մեծ մեխերով, և դրանք ձիու պայտի պես կլոր շարքով մեխված էին կոշիկի կրունկին: Երբ Առաքելը քայլում էր, մեր Գևորգն ասում էր. - Կույր ձին եկավ, կույր ձին գնաց…

Առաքելը գնում է գյուղ՝ Բիթիաս, տեսնի ինչ կա, չկա: Օրը մթնում է, և նա միամիտ սկսում է լեռ բարձրանալ գյուղի ճամփով: Երբ մոտենում է գյուղի ծայրին, հանկարծ թուրքի ասկյարների պահակը ձայն է տալիս. «Հե՛յ, ո՞վ ես, կանգնի»: Իսկ մեր Առաքելը ձայնի ուղղությամբ կրակում է մթության մեջ:

- Ամմա՛ն, մեռա, - լսվում է մեռնող ասկյարի ձայնը:

Առաքելն սկսում է վազել ճամփով: Քիչ անց, մի ուրիշ տեղ, էլի թշնամին ձայն է տալիս, որ կանգնի, ո՞վ է եկողը: Առաքելն այդ ուղղությամբ էլ է կրակում և այստեղ էլ է սպանում մեկին: Սկսում է ավելի արագ վազել: Նույն պատմությունը կրկնվում է երրորդ անգամ. Առաքելս երեք ասկյարի սպանում է: Այս անգամ արդեն նրա ուղեղն սկսում է աշխատել, թե՝ ուղիղ ճամփով պետք չէ գնալ: Վերջապես նա շեղվում է ճամփից և մեծ դժվարություններ հաղթահարելուց հետո ու երկար ժամանակ տատապելուց հետո, մի կերպ գալիս ու հասնում է մեզ մոտ, և այդ դեպքից հետո նա այլևս մենակ չի գնում ոչ մի տեղ:

Այդ գիշեր այդ հատվածի թուրքական զորքերի մեջ խուճապ է առաջանում: Նրանք լուր են տարածում, թե ֆրանսական զորքը հարձակվել է թուրքական պահակակետի վրա, և բոլորը խուճապահար թողնում են իրենց դիրքերն ու փախչում:

Հետագայում մի թուրք սպա պատմեց հետևյալը. «Ես այդ ժամանակ կապավորի սպա էի և իմ տրամադրության տակ եղած ասկյարներով հսկում է Բիթիաս-Սանդրանկ ճամփաների անցուդարձը: Այդ գիշեր ես գնացել էի կենտրոն Բիթիաս, մեր բինբաշու (հազարապետ) մոտ: Ժամը 11-ը կլիներ: Հանկարծ երկու զինվոր շնչակտուր ներս ընկան սենյակս ու ասացին, որ ֆրանսական զինվորները հարձակվել են մեր թուրք զինվորների վրա, երեքին սպանել են և իրենք անցել են առաջ գնացել: Մենք՝ թուրքերս, դրանից առաջ լուր ունեինք, թե Մուսա լեռան վրա էժնէբի (օտարերկրյա, իմա՝ ֆրանսիական) զորք կա…»:

Պատմում էր հայրս ու քա՜ֆ-քաֆ ծիծաղելով ավելացնում. - Խեղճ թուրքերը ուրտեղե՞ն գիտնային, որ դա մեր Առաքելն էր՝ իր ֆրանսական կոշիկներով ու դիպուկ կրակելու վարպետությամբ: Մենք՝ մուսալեռցիներս, համեմատած թուրքերի զորքերուն շա՜տ քիչ էինք, քիչ էինք, բայց՝ քա՜չ էինք…

Ուրիշ անգամ մըն ալ նորեն դեռ Մուսա լեռան վրա կռվում ենք, մեկ էլ անձրևը ուժեղացավ: Թշնամին սկսեց քայլ առ քայլ բարձրանալ դեպի վեր: Մենք զենքերի ձայներից զգում և հասկանում էինք, որ թշնամին բարձրանում է, բայց հրաման կար՝ ոչ ոք իր տեղեն չշարժվի:

Ես մի տասնյակ մարտիկներով հսկում էի Բիթիասի մի ելքը դեպի լեռ, դեպի Գյարմեր շեր (Կարմիր ժայռ): Մյուս կողմից ոչ մի շարժում չկար: Մենք արդեն գիտեինք, որ թշնամին գտել էր բարձրանալու թույլ տեղը՝ Ռեբուսիայի կողմից:

Այդ գիշեր, մեծ ճակատամարտի գիշերը, հրաման եկավ սուրհանդակի միջոցով. «Խիստ գաղտնի պահել հսկելու տեղերը, չծխել, բարձրաձայն չխոսել, կրակ չվառել: Կարգը խախտողները տեղում կգնդակահարվեն»: Մենք իրար հետ պիտի խոսեինք ձեռքի հպումով, իսկ դրսից եկողը պիտի հայտներ մեզ ծանոթ նշանաբան՝ թռչունի ձայնը:

Կեսգիշերն անց, հանկարծ հեռվում խառնաշփոթ աղմուկ բարձրացավ, ես հասկացա, որ ամեն տեսակ զենքերի կրակոցներ էին լսվում: Գևորգը փափսաց. - Հե՛յ վախ, թշնամին բարձրացավ Դամլաջըք:

Ես ականջ դրի և ուշի ուշով սկսեցի լսել: Կրակոցների ձայները կամաց-կամաց սկսեցին ցած իջնել: Ես մոտեցա և ամեն մեկի ականջին փսփսացի. - Տըղա՛ք, թշնամին փախչում է . ա՛յ լսեցեք:

Շուտով բոլորը համոզվեցին, որ այդպես էր:

Առավոտյան սուրհանդակը եկավ և պաշար բերեց մեզ՝ ասելով. - Այս գիշեր դուշմանը փախավ: Մենք զոհեր չունենք, գրավել ենք մեծ թվով փամփուշտներ, զենքեր, մի ձի, մի ջորի և մի քիչ էլ ալյուր:

Այդ դեպքից հետո թշնամին էլ չէր համարձակվում գրոհել մեզ վրա…:

Մեր երկրացի Գապագյան Եսային ժամանակին ինձ պատմել է. «Մեծ ճակատամարտի օրը, երեկոյան դեմ թշնամին բավական առաջացավ, բայց մեր քաջերի զենքի ճշմման տակ, թշնամին հարկադրված եղավ նահանջել: Թշնամին այդ գիշեր ճամբար դրեց մեր՝ Սընջառեն տայրը կոչված հարթավայրում: Պետրոս Դմլաքյանը մեզ՝ երեսուն հոգուս կանչեց ու ասաց. - Իմ աղյո՛ծ եղբայրներ, եթե թշնամին մնաց մեր լեռան վրա այս գիշեր, վաղը՝ մեր վերջն է: Մեր ուժերով այս գիշեր նրանց այնպես հարվածենք, որ հավիտյան չմոռանան: Գնացե՛ք, բոլորդ էլ ճարեցե՛ք փամփուշտով հրացան, ատրճանակ, բոմբաներ (ձեռնաշեն ռումբեր) ու երկու ժամից հետո այստեղ լինեք:

Մենք՝ երեսուն տղաներով գնացինք, մի ժամ հետո վերադարձանք նույն տեղը:

Պետրոսը կանչեց տեր Աբրահամին և ասաց նրան. - Տե՛ր հայր, պահպանիչ կարդա մեր գլխին. վաղը մեր դիակները չեն կարող գտնել, որ արարողություն կատարես:

Տեր հայրը պահպանիչն ասաց և գնաց: Մնացինք մենք: Նա կրկին դարձավ դեպի մեզ և հրամայեց. - Հիմա, հենց այստեղ քնենք:

Մենք իրար գրկած, բաց երկնքի տակ քնեցինք: Ինչքան էինք քնել, չեմ հիշում, երբ մեկն ինձ բզեց. - Վե՛ր կաց, վե՛ր կաց:

Արթնացանք բոլորս: Պետրոսը ձայն տվեց և ասաց. - Եղբայրնե՛ր, հիմա մենք պիտի գնանք թուրքերի վրա: Նրանց օղակենք. մի ելք թողնենք, այն էլ ճամփա՝ դեպի ցած: Հինգ-հինգ մենք պիտի մոտենանք նրանց ճամբարին: Բոլորդ պիտի գտնեք հարմար դիրքեր, փոսեր, ժայռեր կամ խրամատներ: Ես հրաման

կտամ բարձրաձայն, ֆրանսերենով, դուք՝ կկրակեք ճամբարի վրա և կթաքնվեք: Նրանք մաճախուճապ պիտի փախչին:

Մենք մոտեցանք ճամբարին, երբ գրեթե բոլորը քնած էին: Հատուկենտ ասկյարներ կրակ վառած, չորս կողմը նստած զրուցում էին: Մենք լրիվ տեղավորված էինք, երբ ազդանշանը լսվեց: Մենք պատրաստվեցինք: Խորհրդավոր ու լուռ մթության մեջ լսվեց Պետրոսի ֆրանսերեն հրամանը՝ ուշադրությո՛ւն, կրա՛կ:

Վեց տեղերից կրակ բացեցինք թշնամու վրա և մեր ոումբերն էլ նետեցինք: Նրանց վրաններից քսաներեսուն մետր հեռավորության վրա էինք: Այդ պահին նրանց բաշ կոմանդորը (գլխավոր հրամանատար) ամբողջ ձայնով բոռաց թուրքերեն. - Տղանե՛ր, ձեր գլուխները ազատեցեք:

Թշնամին յուրայինների վրա կրակելով՝ սկսեց փախչել: Կոմանդորի բղավոցները, ասկյարների կրակոցները, ռումբերի պայթյուններն այնպիսի աղմուկ բարձրացրին, կարծես երկինքը փուլ եկավ: Մենք, ըստ նախնական հրամանի, պառկեցինք մեր տեղերում: Մինչև տասը րոպե ամեն ինչ վերջացավ: Իսկ մենք, ինչպես եկել էինք գաղտագողի, այնպես էլ վերադարձանք ճամբար՝ ողջ, առողջ և շատ բարձր տրամադրությամբ:

Երբ տեղ հասանք, Պետրոսն ասաց. - Հիմա գնացեք, հանգիստ քնեցեք:

Մենք գնացինք «տուն» և քնեցինք:

Այս էջը բացակայում է Տիգրան Անդրեասյանի գրքի մեջ, սակայն այնտեղ կա մի նախադասություն. «Հաջորդ առտու իմացանք, թե՝ առտվան դեմ թշնամին քաշված, հեռացած է, անձրևին տակը անոթի գիշեր մը անցնելե հետո...» (էջ 66): Ես հարց տվի, թե ինչու՞ ինքը (Տիգրան Անդրեասյանը) իր գրքի մեջ չի գրել այդ մասին: Եսայի ամին (հորեղբայր) պատասխանեց. - Ես քանի մը անգամ պատմեցի իրեն այս բանը և խնդրեցի, որ գրի իր մոտ: Նա ասաց՝ կգրեմ, բայց հետո չիմացա՝ գրե՞ց, թե՝ ոչ:

Իսկ մեր մուսալեռցի Տոնիկյան Հակոբը ինձ պատմել է հետևյալը. «Ես թուրքի ասկյար էի: Գիշերով փախա: Քանի օր ու գիշեր քայլում էի, լավ չեմ հիշում: Գնում էի միայն գիշերները: Երբեմն կույրի նման, երբեմն՝ կատվի նման, գողի պես: Քաղցած, ծարավ, ոտաբոբիկ, կիսամերկ: Հագինս ո՛չ զինվորի, ո՛չ էլ գեղջուկի կերպարանք էր տալիս ինձ, քանի որ սկզբից հին հագուստ էին տվել ինձ և այն էլ գուցե զոհված զինվորի հագուստ էր: Մաքուր չէր և շատ հոտ էր գալիս վրայից: Ես լվացի: Այն չորս տեղից ծակված էր: Ասացին, որ դրանք գնդակների տեղեր են: Մի օր երեկոյան դեմ, իմ թաքնված տեղից նկատեցի, որ թուրքական զորքը շարժվում է դեպի Մուսա լեռ: Մեծ զգուշությամբ հետևում էի թուրքական զորքին և միշտ ճարպկորեն թաքնվում, որ ինձ չնկատեն: Ամբողջ մի գիշեր գնալով՝ լուսադեմին հասա Բիթիասի մոտերքը, ինձ ծանոթ տեղերը: Այդ օրը քնեցի խիտ թփերի մեջ, երբ զարթնեցի, արևը մայր էր մտնում, իսկ ես լսում էի զինվորների ձայներ ու թնդանոթների կրակոցներ: Երբ մութն ընկավ, զենքերի ձայները մարեցին: Բիթիասի ներքևի պարտեզների միջով սկսեցի կամաց-կամաց բարձրանալ դեպի վեր: Ինչպես բարձրացա, հիմա չեմ կարող հիշել: Բարեբախտաբար ես առանց իմանալու շրջանցել էի թշնամու առաջավոր գիծը և մոտեցել մերոնց դիրքերին: Հանկարծ ես մի ձայն լսեցի, որը խոսում էր մեր բարբառով: Կրկին ու կրկին ականջ դրի և համոզվեցի, որ մերոնք են, սկսեցի վազել դեպի ձայնը: Այդ պահին մեկը ձայն տվեց. - Դուղա՛, տօն ու՞վն իս (Տղա՛, դու ո՞վ ես):

Ես հազիվ կարողացա մի բառ ասել. - Իս իմ, դուղա՛, իս իմ (Ես եմ, տղա՛, ես եմ):

Ես ոստա ու չկարողացա վեր կենալ: Նրանք իրենց դիրքերից կանչում էին, բղավում. - Արի՛, շու՛տ արի՛...

Իսկ ես այլևս չէի կարողանում խոսել ու վեր կենալ: Այդ պահին ես նկատեցի, որ ոտքերս աճավոր ձևով ուռել էին: Ինձ թվում էր, թե կապված էի գետնին: Մոտեցան ինձ երկու կտրիճներ: Հազիվ կարողացա ասել. - Ջու՛ր տվեք...

Էլ բան չեմ հիշում: Աչքերս բացի, տեսա, որ անկողնում եմ և մի տարեց կին ոտքերիս վերքերն է լվանում: Նա ինձ բերեց մի թաս տաք ճաշ-ապուր: Ես խմեցի, քիչ անց նորից քնեցի: Ութը օր անց ես արդեն լավ էի զգում և խնդրեցի, որ ուղարկեն ճակատ: Մի քանի օր անց ինձ զենք տվին և նշանակեցին իմ զորախումբը:

11 (251).
ՔՂԵՑԻ ՏԻՐՈՒՀԻՆ

Ես կհիշեմ՝ 1914 թ. հայ տղամարդկանց կրճավաքեին, բանակ կտանեին և ճանապարհին կսպանեին: Իմ հայրս Ամերիկայեն էկավ՝ յա՛ դեկտեմբեր էր, յա՛ հունվար: Մեր գյուղի բեկը՝ Քյամիլ բեկը, էկավ ղայմաղամի հետ՝ հորեղբորս և հորս ուզում էին տանել: Հայրս ըսավ. - Մեզի մի քանի օր ժամանակ տվեք, մենք նոր ենք եկած, հանգստանանք, լողանանք:

Սրանք գնացին, հայրս և հորեղբայրս փախան Ֆրանսա:

Հայ տղամարդկանց Տիգրանակերտեն, Քղիեն, Մուշեն, Խնուսեն կհավաքեին Էրզրումի սարերը, Ղարախալի սարերը կտանեին, որ Թուրքիայի ամենաբարձր սարերն են, Էրզրումեն մոտ հիսուն կիլոմետր է: Բոլորին պարտադիր նամակ գրել էին տալիս: Նամակները ղրկում էին հարազատներին, հետո խըշտիկներով սպանում էին: Ադ սպանված հայերի դիակների տակից տասներկու հոգի սաղ մնացել էին, էկան Քղիի Դարմանա գյուղը՝ մեր տունը: Հայրս ու հորեղբայրս փախել էին, մայրս էր տունին մեծը: Ես ու մայրս մենակ էինք ապրում: Մեր տունը գյուղին քենարն էր: Բայց մայրս գիտեր, որ փախստական-դասալիք զինվոր պահողը կպատժվի կառավարության կողմեն: Բայց ի՞նչ ընե, օգնել է պետք: Ըսավ. - Դուռը կբացեմ՝ առանց ձայնի ներս մտեք:

Մայրս փոքր դուռը բացեց, տասներկու հոգին ներս առավ: Այն ատեն լուսավորություն չկար, լամպա կվառեինք: Մեկին ոտքը ցուրտը տարել էր: Մայրս խոշոր ամանով յուղ բերավ, ոտքը մեջը դրեց, գուլպան կտրեց հանեց, մարդուն ոտքին մաշկն ալ հետը դուրս եկավ: Մարդուն ուշքը գնաց: Մենք մեր տներում յուկիկներ ունեինք, որոնց մեջ գաղտնի ճամփա կար դեպի հարևանի տունը: Մայրս սորվեցուց փախուստի ճամփան: Կհիշեմ մայրս փալասները կդներ, դասալիքները ոտքերը կտաքացնեին:

Քամիլ բեկի տունը մեր տան դիմացն էր: Իմ մոր անունը Տիրուհի էր: Գիտեր, որ Տիրուհու մարդը փախած է, ուրիշ մարդ չիկա տանը: Օր մը լուսամուտից տեսնում է տղամարդ, լուր է տալիս ղայմաղամին, թե՝ եկե՛ք, Տիրուհու տանը փախստական կա: Ղայմաղամը տասը յուզբաշիով գալիս են Քամիլ բեկի տունը, կանչում են գյուղի հայ մխտարին: Մայրս դիմացնին էլավ ըսավ. - Էֆենդի՛մ, տանը փախստական չկա՛, կառավարության ձեռքը երկար է, կարող եք նայել:

Բայց մայրս փախստականներին արդեն սովորեցրել էր, ո՛ր կողմից պիտի փախնին կա՛մ մարագ, կա՛մ ախոռ և կա՛մ հակառակ դեպքում՝ հարևանի տունը:

Պաշարեցին մեր տունը: Երկու հոգի դուրսը պահակ կանգնավ, յուզբաշին ու ղայմաղամը իրենց ջանդրմաներով մտան տուն, փնտրեցին: Սեղանի վրա մոխրամանը գտան՝ ծխախոտի մնացուկներով: Ղայմաղամը մորս ասեց. - Հալա՛լ ըլնի քեզ, այս տանը մարդ կա, մենք փնտրեցինք՝ չգտանք, բայց այս գործը հալա՛լ ըլի քեզ:

Այսպես մինչև մարտ ամիս մամաս դրանց պահեց: 1936 թ., երբ ես Հալեպ գնացի, շինարարության վրա կաշխատեի, ամեն մարդ իր գլխեն եկածը կպատմեր, ես էլ սկսա պատմել իմ գլխու եկածը, թե մայրս տասներկու հոգի պահեց փախստական: Մի մարդ դեղին բլոյդներով, 40-50 տարեկանի մոտ, չուտեր ու խիստ մտիկ կըներ ինձի, մեկեն թռավ, երեսս պագեց.

- Տղե՛րք, - ըսավ, - ես մտիկ էի տալիս, թե ինչքա՛ճիշտ կհիշե իր կյանքը. իսկապես ասոր մայրը՝ Տիրուհին, մինչև գարուն տասներկու հոգի պահեց, մեկի ոտքը ցուրտը տարել էր, ես ալ անոնց մեջն էի, իմ անունս ալ Փիլիպոս է, չարսանջաքցի:

12 (252).
ՀԱՃԸՆՑԻ ՃԵՐԵՃՑԱՆՆԵՐԸ

Մեր Հաճընը յայլա տեղ էր, բոլորը գալիս էին օդափոխության:

Ջարդի ժամանակ իմ մոր կողմից Ճերեճյան գերդաստանի ամենամեծը Նազարեթն էր. նրանք յոթը եղբայր էին՝ Հովհաննես, Կարապետ, Մինաս, Մանուկ, Սարգիս, Գևորգ: Նազարեթը ուներ յոթ տղա զավակ: Ամենամեծը՝ Հովսեփը՝ հետո Զաքարիան, Թորոսը, Վարդեվառը, Հակոբոսը, Արսենը և Հարությունը:

Հաճընո ջարդին Թորոս Ճերեճյանը, իր տասնըչորս տարեկան Մաթևոս տղայի ձեռքեն բռնած, երկու փոքր երեխաներն ալ գիրկը, գալիս է մինչև Հաճընի կամուրջը, որ այդ երեխաները էնտեղ թողնի ու վերադառնա, մյուս երեխաներին ու կնոջն ալ բերի, բայց կըտեսնա, որ օդանավը կրակ է թափում: Ներքևից էլ թուրքերը տուներն են վառում: Վերը՝ կրակ, վարը՝ կրակ:

- Հայրի՛կ, փախի՛ք, - կըսե տասնչորս տարեկան երեխան: Կփախին դեպի Ադանա և Սիս: Այնպես որ, մյուս երեխաները և կինը կմնան տանը: Իսկ կամուրջի վրա թողած փոքր գրկի երեխաներին ալ կըկորցնե: Միայն մի երեխայով կփախչի: Ճանապարհին մի թուրք դեմը կելնե: Մարթինով կխփե, գլուխը կճեղքե, Թորոսը կընկնի գետնին: Թուրքը կկարծե, որ նա մեռավ, կթողնի կիեռանա: Ջրի ափին մի քանի ժամանակ կմնա ընկած: Ջրի ձայնից կամաց-կամաց կզարթնի, բայց ուղեղը տեղը չի՝ խելքը կփախչի, չի հիշի, որ տղան իր հետը չէ: Կշարունակե իր ճամփան: Մոտ երկու-երեք ժամվա ճամփա երթալեն վերջը, նոր կհիշե, որ Մաթևոսը ու՞ր է, կպոռա՝ Մաթևո՛ն, Մաթևո՛ն: Մինչև էսօր չի գտնում դրան էլ: Կգա կհասնի ֆրանսական պոստ: Կպատմե, որ Հաճընը պատերազմի մեջ է: Ֆրանսացի զինվորները չեն հավատար, կըսեն. - Հինգ րոպե ժամանակ ենք տալիս, եթե ուրիշ փախչողներ ալ գան, ուրեմն դուն ճիշտ ես, քեզ ազատ կթողնենք, թե չէ՝ քեզ կձերբակալենք:

Հինգ րոպե չանցած՝ իրար ետևից կուգան փախչողները, կանցնին Սիս: Սիսում իրեն կբուժեն: Իրեն բուժող քույրը Շահսենեմ կըլլա, որի հետ ալ կամուսնանա և կանցնի Բեյրութ, կունենա երկու զավակ՝ Մաթևոս և Ազնիվ:

Իսկ Նազարեթի տղա Վարդեվառ Ճերեճյանը շա՜տ սիրուն տղամարդ է եղել: Հայդուկ է եղել, գերի են բռնել և հարյուր մեկ տարվա բանտարկություն են տվել: Վարդեվառը փախչում է թուրքական բանտից: Նորից բանտարկում են ու հրաման է գալիս՝ Հաճընի կամուրջից անցկացնել ու սպանել: Երեք ժանդարմները կտանին Վարդեվառին սպանելու, ան կըսե ժանդարմներուն. - Խնդրու՛մ եմ, մի րոպե թողեք էրթամ կընոջս հալալըլխը առնեմ:

Ժանդարմները կթողնեն: Վարդեվառը կբարձրանա տուն՝ կնոջ մոտ, կինն ալ պզտիկ Արմենին օրորոցում կաթ կուտար, կըսե. - Օսանո՛, ջենդրմները վայը ընձի բէքլէմիշ գիգէնէն, ես ալ էգո հալալըլխ առնիլօ: Ես գաշթոմ, վէյը կօն, քէ հայցընէն ընէ, ասօ՝ ես խաբօյ չեմ, Վայդէվային չէմ դիսէ (Օվսաննա՛, ոստիկանները ներքևում ինձ են սպասում, ես ևկա հրաժեշտ տալու: Ես գնում եմ, եթե գան, քեզ հարցնեն, ասա՝ ես լուր չունեմ, Վարդեվառին չեմ տեսել):

Եվ Վարդեվառը բակի կողմի պատուհանից կըցատկե, կփախչի, կփրկվի: Հետո ալ կանցնի Լիբանան: Վարդեվառի տղան է Արմեն Ճերեճյանը, որ պրոֆեսոր է, նաև Արսեն ու Արամայիսը անոր տղաներն են:

Իսկ Նազարեթի երկրորդ զավակը՝ Զաքարիա Ճերեճյանը, եղած է կառավարական մարդ: Ադանայի մեջ շատ հայերու փրկած է Իսպիր Աղաջրյանի հետ:

Զաքարիան ունեցել է հինգ տղա: Մեծը՝ Նազարեթ Մերեճյանը (Կուժունի), «Նոր Հաճընի» խմբագիրն է: Սարգիսը երկրորդ տղան է, Բեյրութում ունի «Սալոն Սարգիս»: Երրորդը՝ Հարությունն է Կուժունին: Ան բոլոր կուսակցությունները միացրեց «Հայ» անունին շուրջը: Վահրիճն ալ՝ չորրորդ եղբայրն է: Հինգերորդը՝ Հայաստանում դասախոս է, իսկ Զաքարիայի եղբոր տղան՝ Էդվարդ Մերեճյանը Վաշինգտոնում բարձր պաշտոն է զբաղեցնում. նա Ամերիկայի պրեզիդենտի օգնականն է արտաքին քաղաքականության գործով...

13 (253).
ՓԱՌԱՆՁԵՄԻՆ ՎՐԵԺԸ

Որ մը աքսորի ճամփաներին Փառանձեմ անունով անուշիկ աղջիկ մը կփախցնեն, կտանին: Ան ալ նշանված կըլլա: Թուրքը կտանի իր տունը: Ինքը՝ կնիկ ունի, ասիկա ալ՝ երկրորդը պիտի ըլլա: Անոգին ժամանակ կանցնի, թուրքին առաջվա կնիկը իր տեքորը կըսե. - Մինչև երբ աս գյավուր ղզի հետ պիտի ապրի:

- Ի՞նչ կրնանք ընել, - կըսե այն:

- Գիշերը գյավուր ղզըն շերբեթ կխմե, էկու՛ր, թույն դնենք մեջը: Գյավուր ղզը էօլյուրէրիմ (գյավուրի աղջկան մեռցնենք):

Դու մի ըսեր աս Փառանձեմն ալ բանալիին ծակեն մտիկ կընե, քի իր մասին աղանկ բաներ կխոսեին:

Իրիկուն կըլլա, սպասուհին կուգա թուղթին մեջեն բան մը կհանե պիտի խառնե շերբեթին մեջը, աղջիկը արթուն կըլլա կըսե. - Ի՞նչ կընես:

- Ինձի թուրք խառնումը հրամայեց քեզ մեռցնել, - կըսե սպասուհին:

Աղջիկը կուլա՛, կուլա՛: Կմտածե՝ էրթա իրեն հարազատներուն գտնա:

Հին չարշաֆի մը մեջ կփաթթվի, կերթա գետինները պառկած գաղթականներուն մեջը մորը կփնտրե: Կտեսնա, որ չուլ-փալասի վրա մայրը մեռնակը պառկած է: Կհարցնե. - Մայրի՛կ, հեչ մեկը դուն չունի՞ս, քի միևնո՛ւն պառկած ես:

- Չէ՛ չունիմ, ես մենակ եմ, այսօր-վաղը կմեռնիմ:

Աղջիկը կըսե. - Աղեկ մտածե, աղջիկ մը չունե՞ր:

Մայրը կճանչնա աղջկան, կփաթաթվին կուլան: Մայրը արդեն հիվանդ էր, ուրախութենեն սիրտը կպայթի կմեռնի:

Աս Փառանձեմին հին նշանածը կփնտրե կգտնա, կտեսնա, որ Փառանձեմը եկած է, մայրը մեռած է, ինքն ալ մենակ է մնացած, կըսե. - Ինչ եղած է՝ եղած է. գիտեմ քու կամքովդ չէ՛ եղած, եկու՛ր քեզ տանիմ, ամուսնանանք:

Աղջիկը կըսե. - Ես ալ չե՛մ էրթար ո՛չ թուրքին, ո՛չ ալ քեզի. փորիս մեջ օ՛ձ մը կա:

Կէրթա, առանձին, չորս պատին մեջը, մենակը կուզե թուրքին լամուկեն ազատվիլ: Հենց որ չոջուխը կծնվի, կխեղդե ձեռքովը, ինքն ալ թույն կխմե՝ կմեռնի:

14 (254).
ՔԵՍԱԲՅԻ ՎԻԿՏՈՐԸ

1915 թվին թուրքերը հայերից մի աղջիկ էին փախցրել, այդ աղջիկը չկար ու չկար: Դու մի ասա՝ անոր առեր տարեր տվեր էին Դամասկոսի արաբ մոլլային: Մոլլան կըսե. - Եթե օրերեն մեկ օր բերանեդ հանես, որ հայու աղջիկ ես, ես քեզ ոչխարի պես կմորթեմ:

Էս աղջիկը կվախենա, ձայնը կտրած տարիներով կապրի հոն: Կունենա հինգ տղա, երկու աղջիկ, մոլլան կսատկի:

Աս երեխեքին մայրը կկանչե իր զավակներին կըսե. - Բերե՛ք դանակը՝ ինձ մորթեցեք:

Զավակները կըսեն. - Խելագարվե՞լ ես, ի՞նչ է:

Մայրը կսկսի պատմել. - Ես քարից, թփից չեմ, ես հայու զավակ եմ: Հիմա որ ձեր մոլլա հայրը մեռավ, ես ձեզ կրնամ ճիշտը ըսել, որ ես հայ եմ, Զեսաբ գյուղից եմ, Մուսա լեռան կողմի Զեսաբից: Ծովի կողմը փլված վանքին քովը մեր երկու հարկանի տունն էր, հորս, մորս անունները ա՛ս, ա՛ս էր: Գացե՛ք, զավակնե՛րս, փընտրե՛ք, գտե՛ք:

Հինգ տղաները նստում են մեքենա, գնում են Զեսաբ ստուգելու: Մարդու բան չեն ըսեր: Ինչ որ մայրը ըսեր էր, փնտրում են. ծովի կողմը տեսնում են մի վանք կա, քովը երկու հարկանի տուն կա, մի կին է իջնում սանդուղից: Բարձրանում են վերև.

- Վալա էլ ազիմ (աստված վկա) սա մեր մոր տունն է, մեր փնտրածնիս է: Կհարցնեն, - Կարելի՞ է:

- Ֆատտա՛լ (հրամե՛):

- Չվախենա՛ս, մայրի՛կ, մի բան պիտի հարցնենք, դուք ինչյա՞ն եք:

- Ամուսինս տունը չէ, գյուղ գնաց, - կըսե կինը վախենալով:

Ադ կինը երկու եղբայր է ունենում, անոնք ալ ներսը նստած կըլլան: Կինը գնում է ներս, եղբայրներին ասում. - Հինգ արաբ են եկել:

- Թութուն ունե՞ս պահած:

- Չէ՛:

- Չենք ունե՞ս պահած:

- Չէ՛:

- Ինչու՞ կվախենաս. քալե էրթանք, տեսնանք՝ էդ մահմեդականները ի՞նչ են ուզում:

Գալիս են ներս, հինգ տղաներին բարևում են, նստում: Տղաներն սկսում են հարցնել. - Տանտերը, Աբրահամը ո՞վ է:

- Ե՛ս եմ:

- Մենք եկել ենք հարցնելու, դու պիտի ասես հորդդ անունը, մորդ ո՛վ ըլլալը, ով ունես-չունես պիտի ասես:

Մարդը բոլորի անունները մեկ-մեկ կըսե, վերջն ալ կըսե. - Մեկ հատ ալ կա կորած է:

Տղաները կըսեն. - Վալլա՛ էլ ազիմ, սա՛ է. ոչ մի կասկած չկա այլևս: Բա քո կորած քրոջդ անունը ի՞նչ էր:

- Վիկտոր էր:

- Գիտես ի՞նչ կա, դու մեր քեռին ես:

- Ձեր քույրը՝ Վիկտորը մեր մայրն է. տեսե՛ք մայրերնիս ինչ անուններ որ տված է, ճիշտ ձեր ըսած անուններն են:

Մարդը ապշած կմնա:

Տղաները կըսեն. - Հիմա մենք պիտի գնանք, քեզի ալ պիտի տանենք հետերնիս քո քրոջ՝ Վիկտորի մոտ:

Տղաները ելնում են, էս մարդուն առնում, գնում, հասնում են Դամասկոս. - Հե՛ն ա մեր մայրը, տեսնանք քեզի պիտի ճանչնա՞:

Մայրը գալիս է. - Էհլե՛ն, սեհլե՛ն (Բարև՛, Աստծու բարին), չիմացա ո՞վ եք, - կըսե:

Տղաներից մեկը կմոտենա քեռիներին կըսե. - Գացե՛ք, ձեր բարբառով սկսեք խոսել, իր անունը ըսեք:

- Լալո՛, աս՝ Աբրահամն ի, աս՝ Օհաննեսն ի, տոն՝ չի՞ս Վիկտորը:

Կինը լսելուն պես կփաթաթվի, կուշաթափվի:

Մեծ տղան կըսե. - Մա՛յր, ահա քու երազը կատարեցինք. մեր հայրը չկատարեց, մե՛նք կատարեցինք: Վաղը գնալու ենք Զեսաբ:

Բոլորով նստում են ավտո, Վիկտորին ալ հետերնին են տանում: Հասնում են Զեսաբ:

Տղան կըսե. - Մա՛յր, դու ասեցիր ձեր տունը կարող ես գտնել:

Էս մայրը, յալլա՛, գլուխը առնում, գնում է իր գիտցած ճամփայով, վանքի քովը երկու հարկանի տունը կերթա, կսկսի տունին պատե՛րը համբուրել, քարե՛րը համբուրել...: Աբրահամն ու Օհաննեսը կերթան ոչխար կմորթեն: Կուտեն-կխմեն, քեֆ կանեն:

Անոնք կհասնին իրենց մուրազին, դուք ալ հասնիք ձեր մուրազին, ամբողջ աշխարհն ալ թող հասնի իր մուրազին:

15 (255).
ՀԱՅՈՒՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Աս պատմությունը իրականություն եղած բան է: Մի բիձա ինձ պատմած է, որը իր աչքովը տեսած է:

1915 թ., երբ հայերուն սկսել են կոտորել, մի մարդ ու կնիկ կըլլան, կունենան երկու տղա, մեկը՝ յոթ տարեկան, մեկը՝ ինը տարեկան: Մարդուն թուրքերը կմորթեն, կնիկը կլացի մարդուն դիակին վրա: Այդտեղը թուրքին հետը գերմանացի սպա մըն ալ կըլլա: Գերմանացիին սիրտը կփլվի, կմտածե՝ աս գեղեցիկ կնիկին մարդուն սպանեցին, տղաներն ալ աղվորիկ բաներ են, մե՛ղք են... Գերմանացին նշմարով կհասկցնե հայ կնիկին, որ աս տղաներուն մեկը տուր ինձի, քեզի և մյուս տղայիդ ղրկեմ ուրիշ երկիր՝ ազատվիք:

Կնիկը մեծ տղային կուտա ադ գերմանացիին: Ան ալ վագոնը կդնե, կղրկե Գերմանիա: Կնիկին ալ նամակ կգրե, որ մենք տղա չունեինք էս տղին հարազատիդ պես կնայիս, կուտեցնես, կխմեցնես, դպրոց կդնես, աղջիկին հետ թող սորվի:

Գերմանացին մյուս տղային ու նրա մորը կուղարկե Ֆրանսա, որ ազատվին ջարդեն:

Ադ գերմանացին ծոցատետրի մեջ կգրե. «Ես տղան ղրկեցի Գերմանիա՝ իմ տունս»:

Կանցնի երեսուն տարի: Էս տղան կտրվի: Մարդը իր աղջկան կամուսնացնի ադ տղուն հետ, կունենա մի տղա:

Գերմանացի մարդը կմեռնի: Տղան հոր դարակները կքրքրե, կկարդա հոր ծոցատետրին մեջ, որ «Ես էդ տղային մոր հետ ղրկեցի Ֆրանսա, մյուս տղային ալ ղրկել եմ Գերմանիա՝ իմ տունը»:

Տղան տետրակը կդնե գրպանը. - Հը՛, - կըսե, - կնի՛կ, պիտի էրթանք Ֆրանսա:

Կառնի իր կնիկն ու երեխեն, կերթան Ֆրանսա՝ հյուրանոց մը: Կնիկին կըսե. - Ես մի քիչ գնամ մաճ գամ:

Աս տղան կառնե մեքենա մը, կըսե գերմաներենով. - Ինձի տարեք հայկական եկեղեցի:

Կերթա հայկական եկեղեցի, կըսե. - Ես հայ որբ եմ եղել, ինձ Գերմանիա են տարել, հոն սովորել եմ, ո՛վ կգտնա աս կնիկիս՝ շատ դրամ կտամ:

Հայերը կփնտրեն եկեղեցիին ցուցակներուն մեջ, կըսեն. - Ադ տեսակ կնիկ մը ու տղա մը Լիոն կապրին:

Տղան շատ դրամ կուտա, կելլա, կերթա:

Կնիկին կըսե. - Կնի՛կ, Լիոն պիտի էրթանք: - Կերթան Լիոն, կիջնան հյուրանոց մը:

Կնիկին կըսե. - Կնի՛կ, ես քիչ մը երթամ մաճ գամ:

Կերթա մեքենա մը կբռնե, կերթա ուղիղ հայկական եկեղեցի, կըսե. - Ես հայ որբ մըն եմ եղել, Գերմանիա եմ մեծացել, էս կնիկը ո՛վ գտնի, էսքան դրամ կտամ:

Ո՞վ դրամ չուզեր:

Հայերը կսկսին փնտրել: Մի հայ մարդ կգտնա: Ան ալ ադ բիձան կըլլա, որ ինձի պատմեց աս պատմությունը: Կուգա կըսե տղային. - Գնա՛, ուզածդ մայրն ու տղան, ամմա այնքան քեսիբ են, ուտելի՛ք անգամ չունին, քանի որ տղան գործազուրկ է:

Տղան կըսե. - Տղային բե՛ր քովս: Ըսե՝ աշխատանք կա քեզ համար: - Կհանե աճագին դրամ կուտա աս հայ բիձային, բիձան կուրախանա:

Տղան կուգա, կներկայանա աս Գերմանիայեն եկողին: Աս կնայի, քի իրեն շատ կնմանի. ախպեր են, չէ՞: Արցունքները կթափվին: Կնա՛յի, կնա՛յի, խելքը կերթա, բայց ձայն չի հաներ, կըսե. - Անունդ ի՞նչ է:

- Գաբրիել:

- Ո՞վ ունիս:

- Մայր մը:

- Անունը ի՞նչ է:

- Վարդուհի:

- Ես Գերմանիայեն եմ եկել, դուն ամեն օր պիտի մեր միսը, հացը բերես, ամեն օր մեզի հետ պիտի ըլլաս, միասին պիտի ուտենք, գիշերը քու տունդ պիտի երթաս:

Էս տղան կերթա կբերե ամեն ինչը: Աս կհանե

հազար ֆրանկ մը կկոխէ աւոր գրպանը, կըսէ. - Ձեր տունը պակաս-մակաս թէ ունիք՝ գնա առ: Տղան զարմացած կերթայ տուն, մորը կըսէ. - Մա՛յր, էս Գերմանիայեն եկած մարդը կա՛մ գիժ է, կա՛մ մեր բախտն է. ինձի կուտեցնեն, կխմցնեն, դրամն ալ գրպանս կկոխէ, ինձի ճամփու կդնեն:

Մյուս օրը նորեն նույն բանը կըսեն: Ասանկ քանի մը օր: Օր մըն ալ կըսէ. - Ես կուզեմ ձեր տունը գալ, կնիկիս, երեխիս հետը: Աս դրամն ալ առ տունիդ կարևոր բաները կառնես:

Տղան կերթայ, կպատրաստէ ամեն ինչը, կուգա կըսէ. - Կրնաք հրամել, բայց քո անունը ի՞նչ է: - Իմ անունը չեմ ըսեր հիմա, - կդառնա կնիկին, - կնի՛կ, ելի՛ր պատրաստվիր, տղաներս հետ պիտի երթանք մաս գալու:

Գնում եմ, մի մեքենա ես վերցնում, գնում եմ տղի տունը: Կտեսնամ՝ խեղճ ու կրակ ծերացած կնիկ մը, աչքերեն արցունք կվազէ՝ թաշկինակը կապած գլուխը:

Աս կհարցնէ. - Մայրի՛կ, քո անունը ի՞նչ է:

- Իմ անունը Վարդուհի է:

- Պատմի՛ր քո կյանքը:

Կնիկը կսկսի պատմել. - Մի հատ մեծ, մի հատ պզտիկ տղա ունեի, երբ թուրքերը ամուսինիս մորթեցին, հոն գերմանացի սպա մը կար, իմ մեկ տղային առավ տարավ. չեմ գիտեր, ի՛նչ եղավ, աս մեկն ալ՝ քովըս է, միասին կապրինք:

Տղան գրպանեն կհանէ հոր գրած տետրակը կը կարդա, կպարզվի իրականությունը:

Կսկսին իրար համբուրվիլ: Օտար կնիկը կզարմանա՝ տեսնելով այս բոլորը: Տղան կըսէ մորն ու եղբորը. - Էլե՛ք, հավաքվեցե՛ք, աս ձեր ունեցած-չունեցածը հայ աղքատներուն բաժնեցե՛ք, պիտի երթանք Գերմանիա, միասին պիտի ապրինք, ես հոն ամեն ինչ ունիմ:

Տղան մորն ու եղբորը, կնիկին ու երեխին կառնէ կերթայ Գերմանիա: Ատոնք կհասնին իրենց մուրազին, դուք ալ հասնիք ձեր մուրազին:

16 (256).
«ԷԿԻՐ ԻՄ ՅՈՐ ՀԱ՛Յ ՄԵՌՆԻՄ»

Գևորգ ախպարը Մեծ եղեռնի ժամանակ յոթութ տարեկան էր և հիմա լավ կհիշէ, թե իր հայրը ինչպես առին տարին, իր քրոջը քարավանեն քաշկռտելով փախցուցին: Կհիշէ շատ վայրագություններ, ալան, թալան, լաց ու կոծ: Կհիշէ ճամփաներու եզրին հայ դիակներ անարյուն, որոնք գիշատիչ թռչուններու կեր էին դարձած ու հիմա ինք կերթա հոն, ուր այդ գազանությունները եղան: Ան կհասնի Արաբկիր, իրենց գյուղը: Քանի մը անգամ գնաց-եկավ իրենց տունին առջևը. դիտեց իրենց տունը, ուր մայրը իրեն ծնունդ տված էր, ուր իր մանկությանը հասակ առած էր: Կարծես իր հոգիեն կտոր մը կար աւոր մեջ: Ճպոտ ծերուկ մը իրեն կհետևեր հայացքով: Գևորգ ախպարը նրա մեջ տեսավ իր պապերուն սպանողը, իրենց հնամենի տան զավթիչը, ան ուզեց կռիվ տալ, բայց զապեց իրեն: Հայ ըլլալուն վախը սրտին մեջն էր: Հոն մոտ էր այն գյուղը, ուր իր Վերժին քույրը գյուղի մուխթարին կնության էր տրված: Ան չգիտեր ինչ ըներ: Ոչ մեկ դուռ կրնար զարնել, ոչ մեկ տուն կրնար մտնել, մի կտոր բան ուտել: Եվ խոր շունչ քաշեց, «Աստվա՛ծ, օգնիր ինձ» ըսավ և քայլերով մոտեցավ գյուղի աղբյուրին: Ան իր աչքերուն չհավատաց, երբ աղբյուրի գլխին կանգնած տեսավ պառավ մը, որն այնքան կնմաներ իր քրոջը. «Ի՛նքն է, ի՛նքն է» մտածեց Գևորգ ախպարը: Հակառակ այդքան տարիներուն, որ հիսունյոթ տարի էր անցած, աւոնց աչքերը իրար ճանչցան: Այդ արյան ձայնն էր, որ կխոսեր աւոնց հոգիներուն մեջ: Այդ պահուն, երբ աւոնց հայացքները գրկեցին միմյանց, աւոնց մարմիններեն սարսուռ մը անցավ: Դող մը եկավ աւոնց արդեն վտիտ ծունկերուն: Պառավը շփոթվեցավ: Ջուրին կուժը ձեռքին, պաղած նայվածքը դիմացը կեցած մարդուն հառած՝ եղած տեղը սառած մնաց, կարծես հուզումեն լեզուն կապվեցավ, ինչ ընելը չգիտցավ: Բայց այդ ի՞նչ ալեկոծում կար իրենց ներսիդին, որքան ուզեցին իրարու փաթթվիլ, ողջագուրվիլ ու կարոտ առնել տարիներու, բայց պետք չէր, որ մարդ տեսնար իրենց: Հոն աղբյուրին գլուխը աւոնք բաներ մը փսփսացին իրարու, հասկցան իրար: Ժամադրվեցան գիշերվա մութին հանդիպիլ:

Եվ իննհիսունամյա պառավը, վերջին անգամ համբուրելով իր թոռնիկներին ու աւկողնում քնացնելով, դուրս է գալիս այն տնից, ուր ապրել էր հիսունյոթ տարին: Վերժին պառավը հուզում մը կապրեր: Ան տարիներու անցյալ մը կտեսնար իր հիշողության մեջ: Ան կտեսնար ամբողջ ժողովուրդ մը, որ բռնած էր մահվան ճամփան: Դող մը եկավ վրան: Աչքերը ամուր գոցեց: Բայց ականջները լսեցին փլատակ զանգակներու ղողանջ, հոսող արյան կանչ: Աչքերը գոց տեսավ, թե հայ կույսեր ինչպես լլկվեցան: Տեսավ, թե ինչպես իր գեղեցկությունովը հիացած իրեն քարավաններից դուրս քաշեցին: Մինչ ինք ընդդիմանալով կպոռար. «Չե՛մ ուզեր, ես կմեռնի՛մ»: Եվ հիմա ալ իր թևեն կքաշեին, բայց արդեն իր եղբայրն էր, որ կքաշեր: Վերժին ցընցվեցավ: Ու այդ ցնցումեն ուշքի եկավ, քայլեց եղբոր թևին կոթնած: Քայլեց, նորեն հայուն խաչը շալակին, հասավ սուրիական սահմանը՝ անկե ալ Հալեպ:

Երբ կհարցնեն, թե ինչու եկար, ի՞նչ գլխեդ անցավ. «Ի՞նչ ըսեմ, տղա՛ս, գլուխս եկածը շա՛տ է: Ես հարյուրեն ավելի եմ: Ես արաբկիրցի եմ: Գլխավորս (ամուսինս) Խաչեր կկոչվեր: Իրմե ունիմ երեք զավակ, որոնց երկուքը հիմա Հայաստան կապրին՝ իրենց զավակներով ու թոռներով: Ջարդի ատեն տասը օր կըլլար, որ ամուսինիս զինվորական փրկագին տված էինք: Շատ ուրախ էի: Բայց չար օր մը եկավ, գեղին էրիկ մարդիկը հավաքեցին ու տարին, աւոնք ետ չեկան, ջարդեցին: Շատ զուլումներ տեսանք, թուրքերը զիս պիտի փախցնեին, բայց աներ հայրս զիս տվավ այդ գյուղի մուխթարին: Շա՛տ լացի, բայց՝ մնացի: Անկե ալ ունեցա երեք զավակ: Հիսունյոթ տարի հոն մնացի, բայց ես իմ հայու աղոթքս կընեի, հայու Աստված կըպաշտեի: Եկող-գացողնեն եղբորս մասին լուր կառնեի, որ Հալեպ է: Էկեր իմ յոր հա՛յ մեռնիմ»:

17 (257).
ՎԱՐԴԵՐԵՍԸ

Մեզի ազգական էր Վարդերես Գարագյոզյանը: Ան Պոլիսի մեջ ուսումը վերջացնելե վերջը կառավարության կողմե կուղարկվի Վան՝ թուրք տղոցը թուրքերեն սորվեցնելու: Դպրոցին թուրք տնօրենը կըսե. - Վարդերես անունը հայու անուն է, պետք է փոխենք, ըսենք՝ Վաթանիե, որ աշակերտները չիմանան, որ դուն հայ ես:

Ադ ձևով ստիպված կաշխատի դպրոցին մեջը: Բայց կնկատե, որ ամեն օր սևերուն մեջ փաթթված կին մը կկանգնի դպրոցին ավերակներուն անկյունը և գաղտնի կհետևի իրեն:

Օր մըն ալ ադ կինը իր երեխային ձեռքով հաց, քամած մածուն և խաշած ձու կդրկե: Վարդերեսը կզարմանա: Հետո կիմանա, որ ադ կինը հայ աղջիկ է եղած, որին եղեռնի ժամանակ թուրքերը փախցուցած են...

18 (258).
ՄԵԾ ՀՈՐ ԿՏԱԿԸ

1915 թ. աքսորի ճամփին զաբիթ մը կառնե կտանի հայ աղջիկ մը իր տունը, մորը կըսե. - Ես քույր չունիմ, աս ինձի բաջը պիտի ըլլա: Ես ասոր սիրեցի:

- Դե՛, լա՛վ, - կըսե մայրը:

Անոգին ադեն ասոնք քույր-եղբայր կըլլան: Էս զաբիթին հայրն ու մայրը օր մը հյուր կերթան ուրիշ քաղաք: Էս տղան աղջիկին կըսե. - Իմ պապիկը մի սնդուկ թաղած է հողին մեջը:

Աղջիկը կըսե. - Տեղը գիտե՞ս:

- Գիտե՛մ:

- Արի էրթանք նայինք:

Կերթան, կփորեն, կբանան սնդուկը, ի՞նչ տեսնան՝ տերտերի հագնելիք շորեր, խաչեր: Ուրեմն ժամանակին ադ զաբիթին մեծ հայրը հայ եղեր է: Թուրք զաբիթը դարձի կուգա: Խիղճը կխայթե իրեն ըրածներուն համար: Վերջը աս թուրք տղան աս հայ աղջկան կտանի Պոլիս, անտեղ կամուսնանան հայկական եկեղեցիով:

19 (259).
«ԹՈՂ ԼՈՒՅՍ ԻՋՆԱ ԱՆՈՐ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ»

Առաջ Թուրքիո մեջ հայերը իրենց ազնիվ և նվիրված աշխատանքով հարգանքի արժանի էին: Հայերը թուրքերուն հետ շատ հաշտ ու խաղաղ կապրեին, բայց Առաջին ընդհանուր պատերազմի ժամանակ հայերը շատ կորուստներ ունեցան:

Թուրքիո շատ գավառներու մեջ հայերը թրքախոս էին. սկսիմ մեր քաղաքէն՝ Աֆիոն-Գարահիսար, Ուշաք, Էսքիշեհիր, Աքշեհիր, Բուրսա, Կեսարիա, Յոզղատ, Չար, Կեմերեկ, Կոնիա, Ադանա, Բիլեճիկ, Քյոթահիա, Մարաշ, Այնթապ, Էլմալը և ուրիշ շատ տեղերու հայեր թրքախոս էին, բայց նաև շատ եկեղեցասեր:

Ես պզտիկ տղա էի, կհիշեմ, կերթայի եկեղեցի, կտեսնայի՝ մեծ մարդիկ, կիներ ծունկի իջած կաղոթեին: Պատարագեն վերջ ալ թուրքերեն քարոզ կտրվեր: Քարոզին մեջ հայ տերտերը կըսեր. «...Հայ քրիստոնյաներ, իրարու հետ սիրո՛վ եղեք, այլազգիներուն հետ սիրո՛վ եղեք, հլու հնազանդ եղեք Օսմանյան կառավարության, ինչով կրնաք օգնեցե՛ք աւոր հարատևությանը, ոչ մեկ ջանք խնայեցեք կատարելու ձեր քաղաքացիական պարտքը...»:

Կհիշեմ թուրք կիները սև չատրա կհագնեին, իսկ հայ կիները՝ ճերմակ մահրամա, որ իրարմե զանազանվեին: Աւոնք ալ իրարու հետ շատ սիրով, համերաշխ էին:

Կպատմեն, թե մեր քաղաքը՝ Աֆիոն-Գարահիսար, մեծ հրդեհ կըլլա: Ատ ժամանակ ալ մայրս զիս կը ծնի, բայց վախեն ծանր կհիվանդանա, իր կուրծքի կաթերը կքաշվին և չի կրնար զիս կերակրել: Ատ ատեն Բայց կնկատե, որ ամեն օր սևերուն մեջ փաթթված կին մը կկանգնի դպրոցին ավերակներուն անկյունը և գաղտնի կհետևի իրեն:

Օր մըն ալ ադ կինը իր երեխային ձեռքով հաց, քամած մածուն և խաշած ձու կդրկե: Վարդերեսը կզարմանա: Հետո կիմանա, որ ադ կինը հայ աղջիկ է եղած, որին եղեռնի ժամանակ թուրքերը փախցուցած են...

18 (258).
ՄԵԾ ՀՈՐ ԿՏԱԿԸ

1915 թ. աքսորի ճամփին զաբիթ մը կառնե կտանի հայ աղջիկ մը իր տունը, մորը կըսե. - Ես քույր չունիմ, աս ինձի բաջը պիտի ըլլա: Ես ասոր սիրեցի:

- Դե՛, լա՛վ, - կըսե մայրը:

Անոգին ադեն ասոնք քույր-եղբայր կըլլան: Էս զաբիթին հայրն ու մայրը օր մը հյուր կերթան ուրիշ քաղաք: Էս տղան աղջիկին կըսե. - Իմ պապիկը մի սնդուկ թաղած է հողին մեջը:

Աղջիկը կըսե. - Տեղը գիտե՞ս:

- Գիտե՛մ:

- Արի էրթանք նայինք:

Կերթան, կփորեն, կբանան սնդուկը, ի՞նչ տեսնան՝ տերտերի հագնելիք շորեր, խաչեր: Ուրեմն ժամանակին ադ զաբիթին մեծ հայրը հայ եղեր է: Թուրք զաբիթը դարձի կուգա: Խիղճը կխայթե իրեն ըրածներուն համար: Վերջը աս թուրք տղան աս հայ աղջկան կտանի Պոլիս, անտեղ կամուսնանան հայկական եկեղեցիով:

19 (259).
«ԹՈՂ ԼՈՒՅՍ ԻՋՆԱ ԱՆՈՐ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ»

Առաջ Թուրքիո մեջ հայերը իրենց ազնիվ և նվիրված աշխատանքով հարգանքի արժանի էին: Հայերը թուրքերուն հետ շատ հաշտ ու խաղաղ կապրեին, բայց Առաջին ընդհանուր պատերազմի ժամանակ հայերը շատ կորուստներ ունեցան:

Թուրքիո շատ գավառներու մեջ հայերը թրքախոս էին. սկսիմ մեր քաղաքէն՝ Աֆիոն-Գարահիսար, Ուշաք, Էսքիշեհիր, Աքշեհիր, Բուրսա, Կեսարիա, Յոզղատ, Չար, Կեմերեկ, Կոնիա, Ադանա, Բիլեճիկ, Քյոթահիա, Մարաշ, Այնթապ, Էլմալը և ուրիշ շատ տեղերու հայեր թրքախոս էին, բայց նաև շատ եկեղեցասեր:

Ես պզտիկ տղա էի, կհիշեմ, կերթայի եկեղեցի, կտեսնայի՝ մեծ մարդիկ, կիներ ծունկի իջած կաղոթեին: Պատարագեն վերջ ալ թուրքերեն քարոզ կտրվեր: Քարոզին մեջ հայ տերտերը կըսեր. «...Հայ քրիստոնյաներ, իրարու հետ սիրո՛վ եղեք, այլազգիներուն հետ սիրո՛վ եղեք, հլու հնազանդ եղեք Օսմանյան կառավարության, ինչով կրնաք օգնեցե՛ք աւոր հարատևությանը, ոչ մեկ ջանք խնայեցեք կատարելու ձեր քաղաքացիական պարտքը...»:

Կհիշեմ թուրք կիները սև չատրա կհագնեին, իսկ հայ կիները՝ ճերմակ մահրամա, որ իրարմե զանազանվեին: Աւոնք ալ իրարու հետ շատ սիրով, համերաշխ էին:

Կպատմեն, թե մեր քաղաքը՝ Աֆիոն-Գարահիսար, մեծ հրդեհ կըլլա: Ատ ժամանակ ալ մայրս զիս կը ծնի, բայց վախեն ծանր կհիվանդանա, իր կուրծքի կաթերը կքաշվին և չի կրնար զիս կերակրել: Ատ ատեն

20 (260).
ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՇԱՆ

Երբ Կոնիայեն դուրս եկանք, մեզ բերին Իզմիր: Բոլորս մանտրուք էինք: Իզմիրի ջարդը դեռ չէր եղած: Անդրանիկը եկավ մեր որբանոցը, բոլորը խնդրեցին՝ մի բան խոսի. ոչի՛նչ չկրցավ խոսիլ, շրթունքները կը-դողային, այնքա՜ն հայ որբեր տեսնելով ուզվել էր. ոչի՛նչ չկրցավ ըսել. արցունքները պիտի թափվեին, եթե չզսպեր իրեն:

Կըսեին, որ դաշնակները ստիպել էին Անդրանիկին, որ բոլշևիկներուն դեմ կռվի, բայց նա կպատասխաներ. - Ես հայերու դեմ չե՛մ կրնար ձեռք բարձրացնել:

Դաշնակցականները կտանին աղոր Փարիզ: Անմիշտ ճերմակ ձիու վրա կնստի եղեր, կըսեին. - Ի՞նչ կըլլա, ճերմակ ձին մի՛ նստիր. քեզի կկրակեն:

- Իմ մարմինիս գնդակ չի՛ կպնիր, - կըսե Անդրանիկը:

Անդրանիկ Զորավարին ժակետը հանել են, որ մաղի պես է, իսկ մարմինին գնդակ չէր կպնիր, քանի որ խաչ կհաներ հետո նոր՝ կոխվը կսկսեր:

21 (261).
ԲԱԼՈՒՅԻ ԿԻՐԱԿՈՍԸ

Ծնվել եմ Բալուլում 1923 թվին: Հորս, մորս թուրքերը սպանել էին: Հորեղբայրս ինձ ու փոքր եղբորս 1929 թվին բերեց Սուրիա, մեզ դրեց Նոր գյուղի որբանոցը, որտեղ երեք տարի մնացինք: Հետո մեզ Ամերիկա պիտի ղրկեին, բայց չգնացինք: Ես ու եղբայրս եկանք մեծ եղբորս մոտ՝ Հալեպ, Զեյթուն խան:

1933-ին գնացինք Զզիրե Թելբրաք գյուղը, որտեղ շատ քրդահայեր կային. անոնք մաքուր հայեր էին ազգությամբ, բայց իրենց լեզուն կորցրել էին: Մենք հոն ապրեցանք մինչև 1947 թիվը: Եղբայրներս մնացին հոն, ես ընտանիքով եկա Հայաստան: Ծամփին առաջնեկ զավակս ծնվեց: Մեզ բերին Սիսիան, Սառնակումք գյուղը: Գալուս երրորդ օրը աշխատանքի անցա կոլխոզի մեջ: Ինձի շատ կսիրեին բոլորը, կըսեին՝ Կիրակոսը մեկ հատ է կոլխոզում:

Բայց 1949 թ. գիշեր մը, առանց հարցաքննության, եկան, թե դուք պիտի տեղափոխվեք ուրիշ տեղ: Մեքենան դրին մեզի, քշին տարան: Հետո բեռնատար գնացք մեզի դրին, տարին Ալթայսկի կրայ* . ես, կինս՝ Մայրանուշը, տղաս՝ Վազգենը, չիմացանք մեր մեղքը մինչև վերջ: Միայն ոստիկանները մեզի հանձնեցին կագեբե: Մեզի կարգադրեցին՝ դուք ան Սլավգորոդսկ ոայոնի Անդրեևկա գյուղից որևէ տեղ էրթալու իրավունք չունե՛ք: Ձէ՞ որ մենք տաք երկրից եկած ենք, ոչ մի տաք հագուստ չունեինք: Ձմեռից մինչև փետրվար ամիսը քառասուն աստիճան ցուրտին մեջ չարուխով աշխատել եմ, անասնապահություն ըրել, ո՛չ վալինկա, ո՛չ տաք շոր. չվալները կփաթաթեի ոտքերուս, որ չսառչեն: Մի հատ թելեգրելկա չունեի, կնկաս զարդերը վաճառեցի, օժիտի կտորները ծախեցինք, տաք շոր առինք: Փետրվարն էր արդեն, այդպես ապրեցանք: Ստալինի մահից հետո մեր վիճակը լավացավ: Մեզի ազատեցին 1956 թվին: Մինչև հիմա չիմացա, որն էր մեղքը: Անմեղ մարդ էի: Ես եղբայրներս թողի հոն, էկա հայրենիքս շենցնելու, որ թուրքական հողերը առնենք: Ձէ՞ որ պատգամավորները, որ Հայաստանեն կուգային մեզի պրոպագանդա կընեին, որ եկե՛ք, հավաքվե՛ք Հայաստանում, որ մեր հողերն ալ թուրքին ձեռքեն առնենք: Մենք ալ անոնց խոսքերուն հավատացինք, եկանք Հայաստան:

Հետո ունեցա չորս զավակ: Բայց ինձի շատ կըմտահոգե հայկական հողերուն հարցը: Քանի որ Ղարաբաղի հարցը չի լուծվում, ա՜ն մեր հողերուն հարցը ևե՛չ չի լուծվիր: Ես շա՜տ հիասթափված եմ, շա՜տ: Եթե զավակներս Ամերիկա էրթան, ես ալ կէրթամ: Առաջ ես մեղադրում էի արտագաղթողներուն, հիմա՝ բան չեմ կարող ասել:

* Ալթայի երկրամաս (Սիբիր):

22 (262).
ԱՅՆԹԱՊՑԻ ՍԵԴՐԱԿԸ

Մեր ցեղին մեջ չորս Հեքիմյան Գևորգ կա: Ըսե՝ ինչու՞: Անոր պատմությունը շատ տխուր է:

Ես ունեցել եմ յոթը մեծ հորեղբայր. անոնցմե մեկին անունը եղել է Գևորգ: Ան իր բարությամբ ու հանդարտ բնավորությամբ բոլոր բարեկամների, հարևանների և ընկերների կողմից սիրվել է և հարգվել: Գևորգին, ինչպես մյուս բոլորին, աքսոր կքշեն դեպի Դեր Զոր: Դեր Զորում, ինչպես բոլորը, նույնպես և Գևորգ մեծ հորեղբորս ընտանիքը անապատի մեջ անոթի ու անօգնական իրենց օրերը կհաշվեին: Օր մըն ալ արաբ մարդ ու կին մը կուգան, Գևորգ հորեղբորս հետ կսկսին ձեռքով-ոտքով խոսիլ, հասկցնել, թե՝ շուտով թուրքերը բոլորիդ պիտի սպանեն, գոնե ձեր այս մի տղուն տվեք մեզի, մենք կպահենք, գոնե ան փրկվի: Եվ ցույց են տալիս Գևորգի երեխաներից մեկին՝ Սեդրակին:

Գևորգ հորեղբայրս և կինը չեն համաձայնվում: Բայց ադ արաբն ու իր կինը այնքան են գալիս-գնում, որ վերջիվերջո Գևորգ հորեղբայրս և իր կինը կմտածեն, որ, իրապես, թող իրենց մեկ զավակը գոնե ազատվի: Կհամաձայնվին: Արաբները Սեդրակի ձեռքեն կըբռնեն, կտանին...

Սեդրակը ամբողջ ճանապարհին կուլա, արաբի վրանը կհասնին՝ կուլա, գիշերը պիտի քնանա՝ կուլա, առավոտը կելլա՝ կուլա, ոչ մի բան չի ուտեր, չի խմեր: Արաբները կմտածեն, որ ադ երեխան դարդից պիտի մեռնի, կվերցնեն Սեդրակին, ետ կբերեն Դեր Զորի անապատը: Բայց ի՜նչ կտեսնան, որ թուրքերը բոլորին այրել են...

Սեդրակը, երբ կտեսնա իր ծնողների, քույրերի, եղբայրների և մյուս հարազատների կիսայրված դիակները, սարսափահար՝ արդեն ինքը կմոտենա արաբներին և կպլլվի անոնց փեշերեն...: Արաբ կինը ևս տեսնալով այդ սրտաճմլիկ տեսարանը, ինքը ևս կհուզվի, կսկսի Սեդրակի հետ լալ և անոր նորեն իրենց վրանը կտանին...

Կանցնին տարիներ, Սեդրակը կմեծանա անապատում և լսելով, որ Հալեպում շատ հայեր կան, կգնա Հալեպ, ավտոմեքենա վարել կսորվի և իր մտքին մեջ միշտ կպահե իր ծնողների և հորեղբայրների անունները...

Օրին մեկը, իմ պապս՝ Սիմոնը, որը Հալեպում հայտնի օղի թորող էր, կտեսնա, որ երիտասարդ տղա մը կանգնած է իր խանութին առջևը և իրեն կնայի: Քանի մը օր իրար վրա ադ երիտասարդը կուգա, կնայի՜, կընայի՜ պապիս: Վերջապես Սիմոն պապս զարմացած իր տղային՝ Ռուբենին կկանչե, կըսե. - Տե՛ս, աս տղան ամեն օր կուգա, ինձի բի՛չ-բի՛չ կնայի, չգիտեմ ուզածը ի՞նչ է:

Ռուբենը ևս ուշադիր կսկսի զննել երիտասարդին և մեկեն ի մեկ կպոռա. - Պապա՛, սա մեր Սեդրակն է:

Սիմոն պապս և Ռուբենը կվազեն խանութեն դուրս, կփաթթվին տղային ու կգրկախառնվին: Այդ ժամանակ Սեդրակը մեկ-մեկ բոլորի անունները կուտա՝ դուն Սիմոն հորեղբայրս ես, դուն Ռուբենն ես, ան՝ Հովհաննեսն է, ես ալ Գևորգի տղա Սեդրակն եմ: Եվ Սեդրակը կսկսի արցունքով պատմել, թե ինչպես բոլորին այրել են Դեր Զորում...

Եվ անկե վերջը կորոշեն, որ մեր տոհմին մեջը ով տղա զավակ ունենա, անունը Գևորգ պիտի դնեն: Ահա թե ինչու, մեր ընտանիքին մեջ չորս Գևորգ Հեքիմյան կա:

Հիմա Սեդրակը ողջ-առողջ ապրում է Ամերիկայում, մոտ 90 տարեկան է և խոր ծերության մեջ անգամ հիշում է իր տխուր մանկությունը:

Մեր անմեղ զոհերի հիշատակը ինձ հանգիստ ու դադար չի տվել երբեք, և վաթսունական թվականներից ընկիրվել եմ Ազգային շարժման պայքարին: 1968 թվին մեր խմբի ընկերների հետ բանտարկվել ու աքսորվել եմ Մորդովիայի անմարդաբնակ տափաստանները, քանի որ մենք համարձակվել էինք գաղտնի տպել «Հանուն հայրենիքի» ամսագիրը...

Հետագայում, երբ ազատ արձակվեցինք ու վերադարձանք Երևան, մեր խումբը՝ «Հայ դատը», ետ չընկնգնեց իր գաղափարներից և շարունակեց իր գործունեությունը: «Հայ դատի» կամավորները, մեր մյուս ազատամարտիկների հետ, մինչև հիմա կովում են Արցախում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում...

23 (263).
ԿԵՍԱՐԱՑԻ ՄԵՐ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

1915-ին մեծ հայրս՝ Տիգրան Ավագյանը, և մեծ մայրս՝ Շահնուրը, իրենց երեք դուստրերուն՝ Միածանի, Անահիտի և Վեհանուշի հետ գաղթականության ճամփան կբռնեն: Վեց ամիս թափառելե վերջ կհասնին Հալեպի մոտ Ղաթմա կոչված վայրը, ուր կմնան շաբաթ մը՝ սավաններով ու կարպետներով հարմարցված վրաններու տակ: Հալեպ մտնալը բացարձակապես արգելված էր: Օր մը Տիգրան մեծ հայրս տեսնելով, որ պահապան ոստիկանը մեկու մը հետ վիճելով զբաղված է, առիթեն օգտվելով սահմանը կանցնի ու կմտնե Հալեպ: Բլուրի մը վրա սրճարանի մը մեջ օղի խմելու ատեն մեկը անոր կըսե. - Տիգրա՜ն բեյ:

Մեծ հայրս կտեսնե, որ իր նախկին գործավորներեն մեկն է, որ գինքը կտանի Սևքիաթի (կառավարատուն) շենքը, որուն մուդուրն էր, այսինքն՝ տնօրենը: Ան կորոշե, որ Տիգրանի ընտանիքը և իրեն ծանոթ քառասուն ընտանիքներ, փոխանակ՝ Դեր Զորի, Դամասկոսի ուղղությամբ Հավրան ղրկեն, ուր կմնան երեք տարի: Երբ անգլիական բանակը Դամասկոս կուգա, անոնք կանցնին Բեյրութ: Հոն ութը օր մնալե վերջ կանցնին Մերսին, որը այդ ժամանակ ֆրանսական հովանիին ներքո էր: Հոն կմնան մինչև 1921 թիվը՝ ֆրանսացիներու Կիլիկիայէն քաշվելու օրը: Նույն գիշերը թուրքերը քաղաք կխուժեն և կտիպեն, որ հայերը պատահական նավերով գիշերանց փախչին: Մերսինի մեջ Տիգրանի մեծ աղջիկը՝ Միածանը 1921-ին ամուսնացած էր Հայկ Քիթապճյանի հետ, որը հայրս պիտի ըլլար: Տիգրան մեծ հայրս իր կնոջ և երկու աղջիկներուն՝ Անահիտին և Վեհանուշին հետ կերթա Պոլիս, Տիգրանի եղբոր՝ Սարիմի մոտ: Տիգրանը Պոլիսի Գեդիկ փաշա թաղին մեջը նպարավաճառի խանութ մը կբանա և իր ընտանիքին ապրուստը կապահովե: 1924-ին առաջին ներգաղթով Բաթումեն անցնելով, կհաստատվին Լենինական, ապա՝ Երևան:

Անահիտ ծնած է Կեսարիա 1908-ին, կամուսնանա իզմիրցի Հովսեփ Գույումճյանի հետ, ծնված 1902 թ., կունենան երկու աղջիկ, Հերմինե՝ ծնված 1928-ին Երևան, որը ատամնաբույժ կդառնա, և Ալիս-Իվետա՝ ծնված 1936-ին, որը կդառնա բժշկուհի:

Վեհանուշ՝ ծնված Կեսարիա 1912-ին, Երևանի մեջ կամուսնանա բժիշկ վիրաբույժ վանեցի Մեսրոպ Ծատախյանի հետ, որը ծնած էր 1907-ին: Անոնք կունենան երկու զավակ՝ Պետրոս (ծն. Երևան 1941-ին) կավարտե պոլիտեխնիկի ինստիտուտը, և Աիդա (ծն. Երևան 1945-ին) կդառնա ակնաբույժ:

Տիգրանի դուստր Միածանը ծնված էր 1903 թվին և, ինչպես ըսի, ամուսնացած էր 1890 թ. Աքսարայ ծնված Հայկ Քիթապճյանի հետ: Միածան Մերսինի հայկական որբանոցին ուսուցչական կազմին մեջը էր, ուր կային նաև Արշակ Չոպանյան, Մամբրե վարդապետ Սիրունյան, որը հետագային Եգիպտոսի առաջնորդը դարձավ, նաև Զապել Եսայան: Միածան կունենա երեք զավակ՝ Մամաս, որը 1922-ին կծնվի և մեկ տարի կապրի: Հետո կծնվիմ ես՝ Մամաս-Վահե 1924-ին Ալեքսանդրիո մեջ, և քույրս Մարին՝ 1927-ին:

1945-ին, մորս՝ Միածանի մահեն վերջը հորս հետ տեղափոխվեցանք Ֆրանսա, Լիոնի մեջ հաստատվեցանք: Հիմա հանգստի եմ կոչված:

24 (264).
ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՋԳԱՑՈՒՄՆԵՐ

Իմ տատիկը պատմել է . «Մեր տանը ունեցել ենք երկու օձ, որոնք դովլաթ էին բերում մեզ. դրանք ոչ մեկին չէին կծում, ներս ու դուրս էին անում ազատ: Եղեռնի տեղահանության նախօրյակին էդ օձերն սկսեցին գալարվել, անհանգիստ շարժումներ անել, ներս ու դուրս էին անում անհանգիստ, իրենց խփում էին բակի քարերին: Մենք էլ զարմացել էինք, թե էդ ի՞նչ բան է: Էդ նույն գիշերը լուսադեմին թուրքերը եկան և սկսեցին կոտորել»:

25 (265).
ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Մերինները Թոմարզա կապրեին, կաշխատեին: 1915-ին մեծ մայրիկիս գյուղի ոստիկանատունը կկանչեն, կըսեն. - Թուրք պիտի ըլլաս:

Մեծ մայրիկս ալ կըսե. - Եթե ամուսինս թուրք ըլլա, ես ալ կըլլամ:

Վերջը մեծ հայրիկիս հայրը կկանչե իր տղային, կըսե. - Թուրք եղիր:

Մեծ հայրիկս կըսե. - Ո՛չ, մենք կմեռնինք, թուրք չե՛նք ըլլար:

Ան ատեն ոստիկանը կըսե. - Զգեցե՛ք աս խարթ գյավուրը, թուրք ըլլա նե անկե ի՞նչ խեր պիտի էլլա:

Մեծ մայրիկս ալ մամային հետ գաղտնի կփախին ծառերուն տակեն, որ մարդ չտեսնա իրենց: Մամաս ադ ատենը հազիվ չորս-հինգ տարեկան է եղեր: Չէ՞ քի մամաս պզտիկ է, ետ կմնա: Ժանդարմա մը կտեսնա անոր, խամշիով կզարնե մամային գլխուն, մամաս կմարի գլխու ցավեն, կիյնա գետին: Մամաս միշտ գլխուն վրա ցույց կուտար ադ վերքերուն տեղերը: Ժանդարմը կկարծե, որ մամաս մեռած է, արյուններուն մեջը կձգե, կերթա:

Անտեղ ալ հույն ընտանիք մը կապրի եղեր, իսկ հույներուն ան ժամանակ ձեռք չէին տալիս, մամային կառնեն, կտանին իրենց տունը: Հայ բարեկամ մը կտեսնա, որ մամային ադ հույները իրենց տունը տարին, անմիջապես կուգա, կգտնա մեծ մայրիկիս, կըսե. «Քու աղջիկդ ես հույներուն տանը տեսա»: Մեծ մայրիկս անմիջապես անոր հետ կերթա այդ հույներուն տունը, կգտնա մամային, կառնե, կբերե իր տունը: Մամաս միշտ կըսեր. «Ես հույներուն շա՛տ կսիրեմ, քանի որ անոնք իմ կյանքը փրկած են»:

Ադ ձևով մեծ մայրիկս իր աղջիկը կգտնա, բայց իր տղան չի գտնար և միշտ կանիծեր. «Օջաքլարընդա բալքուշլար էօթսի՛ն» (Ձեր օջախներուն բուերը թող վայե՛ն) կըսեր ու կուլար իր կորած տղային հիշելով:

Պապաս ալ վեց եղբայր և մեկ քույր են եղեր: Ասոնք երկու եղբայր Ամերիկա կերթան, մեկը ճամփին կմեռնի: Կմնան Հարությունը, Խաչիկը, Արամը, Կարապետը, Նիկողոսը և մեկ քույր մը՝ Մարիամը:

Անոնց բոլորին ալ աքսոր կհանեն. հայրիկս՝ Նիկողոսը, յոթ տարեկան կըլլա: Ամենեն մեծը Կարապետն է եղեր: Ադ Կարապետը երկու աղջիկ ունի եղեր: Ճամփան գացած ատենը խեղճերը անոթութենեն մեռեր են, ինչպես և Կարապետին կինը: Հաջորդ օրը կըտեսնան, որ հողին մեջեն երկու ոտքերուն ոսկորները տնկվեր են, քանի որ չախկալները կերեր են: Մեծ մայրիկս կըսե. «Եթե ես մեռնիմ, ինձի խորունկ թաղեցեք»: Ամենքը ճամփին մեռեր են: Եղբոր երկու աղջիկները կան եղեր իրենց հետ, ըսեր են. «Աս աղջիկները ևս պիտի մեռնին, գոնե աստեղի ֆրանսական մայրապետներուն վանքը կա, հոն ձգենք, թող ողջ մնան»: Մայրապետներուն հանձնելեն վերջը իրենց ճամփան կշարունակեն:

«Մենք, - կըսեր մեծ մայրիկս, կպատմեր, կուլար, - ճամփի խոտերը կփրցնեինք: Ուրիշ բան չկար ուտելու»:

Վերջը ասոնք Արաբստան՝ Մուսուլի կողմը գացեր են, անտեղը քրիստոնյա արաբներ կան եղեր, անոնք հորեղբորս և մայրիկիս ադ երկու եղբայրներուն կառնեն, կպահեն: Կերակուր կուտան, բայց անոնք չեն կըրնար ուտել, քանի որ չուտելեն, չուտելեն անոնց ներսը չորցեր էր: Ան երկու եղբայրներուն կամաց-կամաց կաթ, թան կխմցնեն, որ ներսերնին բացվի: Հորեղբայրս մեծ է եղեր, կաշխատի: Պապաս յոթ տարեկան է եղեր, երկար մազեր ունի եղեր, աղվոր չոջուխ մըն է եղեր:

Վերջը անգլիացիները կուգան հայ որբ ժողվելու: Արաբները չեն ուզեր տալ հայրիկիս: Բայց հարևան արաբները կխամազեն, կըսեն. «Ան տունն ալ հայ մաներ կան»:

Հայրիկս իր եղբոր հետ կվերադառնա իրենց քաղաքը՝ Թոմարզա, բայց միշտ կափսոսային, թե ի՛նչ անխելք էին, որ ադ երկու աղջիկներուն ֆրանսական մասեորներուն քովեն չառին:

Վերջը հայրիկս Թոմարզային մեջ կամուսնանա մայրիկիս հետը, երեք աղջիկ կունենան:

26 (266).
ԿՈՒՅՐ ՋԱՏԻԿԸ

Հայրիկիս բարեկամը տարիքոտ մարդ մըն էր՝ անունը Ջատիկ աղա էր:

Ջատիկ աղան օր մը մեզի էկավ, հայրիկիս ըսավ. - Նիկողո՛ս, ես այսօր եկեղեցի գացի աղոթեցի, ըսի որ՝ յա Աստված, վաթսուն տարվա մեղքերս ինձ պիտի հարցնես՝ շա՛տ լավ, բայց քառասուն տարվա քաշածս ալ ես քեզի պիտի հարցնեմ, - ըսի ու լացի:

Հայրիկս ալ ըսավ. - Շա՛տ շիտակ ըսեր ես:

Քանի որ աքսորին մեջը թուրքերը Ջատիկին ծեծեր էին, և մարդը քառասուն տարի կույր կպտտեր:

27 (267).
ՄԵԾ ՄԱՅՐԻԿՍ

Մեծ մայրս իր ամուսինին պատերազմի ժամանակ հորին մեջը կպահե, որ թուրքի զինվոր չտանին, քանի որ գիտեին, տանում էին և սպանում: Մեյմըն ալ լուր կտարածվի, որ հրաման եղած է. «Հայերուն բանակ չպիտի տանին»: Մեծ մայրս իր ամուսինին հորեն դուրս կհանե, կբերե սեդիրին վրա կնստեցնե, կտեսնա մեծ հայրիկիս երեսը դեփ-դեղին եղած է, այնքան որ հյուծված էր: Վերջն ալ հրաման կուգա. «Հայ տղամարդիկ թող դուրս գան, պիտի հաշտվինք»: Մեծ հայրիկս կերթա, որ հաշտվին, կբռնեն քելեփչեները ձեռքերուն կանցնեն, կտանին գետին եզերքը, կմորթեն բոլորին ալ:

Մեծ մայրս կըսե. «Արմենա՛կ, եթե գիտնայի, որ ա՛ս պիտի ըլլար քո վերջը, աղքա՛ն երկար քեզի հորին մեջը չէի պահեր»:

Մեծ մայրս կունենա աղջիկ մը և երկու զույգ տղաներ: Ֆրանսացիները կուգան երեխաներուն կհավաքեն, կտանին որբանոց: Մեծ մորս երկու տղոցն ալ կտանին:

Մեծ մայրս և իր քովը մնացած աղջիկը քաթանով գետինը փռելու քիլիմ կհյուսեն, որ տաճիկներուն ծախեն, ապրին:

Ջարդը կսկսի, ալան-թալան. աղջիկներուն պատիվն ալ ձեռք կուտան:

Մեծ մայրս իր աներոջը կըսե. - Հարսանիքիս այնքա՛ն շատ ոսկի վրաս կախած էին, հանենք պտուկ մը լեցնենք:

Երբ որ տաճիկները տունը կխուժեն, աներոջս ադ ոսկեղենները կուտա անոնց, կըսե. «Առե՛ք աս բոլո՛րը, միայն՝ մի՛ դպնաք աղջիկներուս և հարսիս»:

Գալով պապային պապային, որ ջարդին ժամանակ տասը տարեկան է եղած, ջարդեն հինգ-վեց տարի անցած մինչև գիշեր հորը հետ կաշխատի եղեր: Գիշերն ալ արթուն կմնան եղեր, որ տաճիկները գան նե՝ արթուն ըլլան:

Որբևայրի մնացած մեծ մայրիկս կամուսնանա իրմե շատ պզտիկ ադ տղային հետ, որը հազիվ տասնըվեց տարեկան էր, ան ալ ինչու՞ համար՝ որպեսզի գլխուն վրա տեր մը ունենա: Տղային պապան համաձայն չըլլար ադ անհարմար ամուսնությանը, կուգա մեծ մայրիկիս փայտով կծեծե, կըսե. - Դուն էշու չափ կնիկ, զավակի տեր կնիկ, գլուխե կհանես իմ տո՛ւնս: Բայց անոնք կամուսնանան, որ մեծ մայրս պաշտպան մը ունենա: Հետո հայրս՝ Նազարը, կծնվի, հետո՝ հորաքույրս և մյուսները: Վերջը ադ երիտասարդ մեծ հայրիկըս կհիվանդանա: Ապանտեսիտը կպպթի, բժիշկները չեն հասկնար՝ կմեռնի: Մեծ մայրիկս ալ կիյնա, ուսը դուրս կելլա՝ ա՛խ թևս, կըսե, անկողին կիյնա, կուլա ցավեն: Պապաս՝ Նազարը, ընդամենը տասնմեկ տարեկան հորմեն կզրկվի, մայրն ալ՝ անկողինը, չգիտնար անգամ, թե ինչպես իր երիտասարդ ամուսնուն թաղեցին:

Պապայիս հորեղբայրը Նազարին կհարցնե. - Ան չէ ամմա, մենք՝ փարա չունենինք, մայրդ՝ անկողինը, պապայիդ պատանքը ո՞վ ըրավ, գիտե՞ս: Էմին Գրիգորը կտավի վաճառական էր՝ ա՛ն ըրավ և դրամը կուզե կոր:

Պապաս՝ Նազարը ադ պզտիկ տարիքին կերթա Էմին Գրիգորին տունը, կըսե. - Մենք աղքատ մարդիկ ենք, մայրս հիվանդ պառկած է, եկած եմ հարցնելու, թե քանի ոսկի բռնեց հորս պատանքը: Կուզեմ գիտնալ, որ դրամ ունենամ նե, բերեմ. չեմ ուզեր հայրս պարտքով պառկի:

Էմին Գրիգորը կըսե. - Հարյուր հինհսուն ղուրուշ բռնեց:

Օր մը հայրս կերթա մեկ ոսկի կուտա Գրիգորին: Ուրիշ օր մըն ալ հինհսուն ղուրուշ կուտա, կըսե. - Ալ հանգիստ եմ, որ հայրս պարտքով չպառկիր:

Էմին Գրիգորը դրամը գրպանը կդնե, կըսե. - Ես ճելալ ըրի քեզի, ալ դուն պարտքդ վճարել գիտցար, - աղջիկին ալ կըսե. - Չայ մը բերե՛ք, բարձ մը բերե՛ք, դրե՛ք կոնակը, խմորեղեն բերե՛ք, թող ուտե:

Հայրս առաջին անգամ հոնտեղը չայ կխմե:

Տարիներ անցան, պապաս հայտնի մարդ դարձավ, բոլորը մատով կցուցընեին Նազարին շինած տուները: Փա՛ռք Աստծո, լավ դիրքի եղանք: Բայց ճակատագիրը դուն տես: Ադ Էմին Գրիգորը, որ մեծ հորս պատանքին դրամը ուզած էր՝ մեռավ: Տղան՝ Ղըզըլ ըրմաղին մեջ խեղդվեցավ, աղջիկը՝ խենթեցավ, մաքրություն ընելու հիվանդություն ունեցավ, կոնքի ոսկորը մաշեցավ, հիվանդանոց դրվեցավ: Հայրս ամեն ծախսը իր վրա վերցուց, ադ հիվանդին օրապահիկի ծախսերը ինքը կըներ: Գործողություն կընեն ոսկորը կպցնելու, հայրս պլատին կբերե՝ կդնեն, բայց գործողությունը հաջող չանցնի: Աղջիկը այդ վիճակին տուն կուգա կտեսնա հայրը՝ մեռած, մայրը՝ մեռած, բոլորին թաղումին ծախսերը հայրս ըրած էր: Այնպես որ, ի՞նչ է կյանքը, ի՞նչ է հարստությունը, ի՞նչ է գեղեցկությունը, ի՞նչ է գիտությունը. մարդ ոչ մի բանի վրա հույս չպետք է դնե, քանի որ ադ բոլորը Աստված կտնօրինե: Կարևորը Աստծո խոսքն է, որը կըսե՝ ամեն բանե առաջ ապավինիր ինձ:

Ադ մարդը հարուստ էր, իմ մեծ հորս պատանքը ըրած է, բայց իրեն և իր ընտանիքին համար ոչինչ կրցավ ընել: Հայրը մեռավ՝ հայրս թաղեց, մայրը մեռավ՝ հայրս թաղեց, աղջիկը խենթեցավ մեռավ՝ հայրս թաղեց: Ինչքա՛ն ճիշտ են «Ի՛նչ էի, ի՛նչ դարձա և դեռ ի՛նչ պիտի դառնամ» խոսքերը:

28 (268).
ՄԵՐԻՆՆԵՐԸ

Մերինները Նիկոմեդիայի Մերդեգյոզ գյուղեն էին: Ադտեղը Զենգիլեր, Սյոլեզ և Նոր գյուղ հայկական գյուղերն ալ կային: Ադի Պարտիզակին մոտ է: Մերիններն ալ թուրք լավ բարեկամներ ունին եղեր: Ադ թուրքերը կուգան կըսեն. - Փաթըրդը մը պիտի ըլլա, եկեք ձեզի Պոլիս փախցնենք:

Ամմա մորս հայրը ականջ չի դներ, կըսե. - Իմ գյուղացիները՝ ուր, ես ալ՝ հոն:

Քանի որ ինքը Աստուծո կողմեն տրված շնորհք ունի եղեր. բույսերով կդարմանե եղեր, ադ շնորհքն ալ իր հորմեն ժառանգած է եղեր և բոլորին կհասնի եղեր: Անոր համար ալ բոլորին կողմե սիրված է եղեր:

Գիշեր մը թուրքերը կուգան տուները կկոխեն, կսկըսին ջարդել, ծեծել, կողոպտել: Մամայիս հայրը ստիպված իր ընտանիքը կհավաքե, տունեն դուրս կելլա:

Կսկսվի աքսորը: Բոլորին պես ոտքով կսկսին քալել, կհոգնին: Տիֆոյի հիվանդությունը կսկսի: Ադտեղ մեծ հայրս ալ կվարակվի: Ալ մեռնողները անքան շա՛տ կըլլան, քի մեռելներուն վրայեն կցատկեն եղեր: Մեծ հայրս կզգա, որ պիտի մեռնի, կկանչե աղջկան, կըսե. «Ես քեզի բան մը պիտի սորվեցնեմ, - արդեն մամաս Երուսաղեմ գացած էր, հաջի եղած էր, - ասկե վերջը քու անունդ հաջի Աղավնի պիտի ըլլա, մամադ՝ հաջի Տիգրանուհի, պապադ՝ հաջի Ավետիս, կմեռնիմ կոր, աղջի՛կը», - կըսե հայրը: Եվ հոն կմեռնի: Պապային հոն կձգեն, առանց թաղելու, քանի որ զաբթիեները խամշիով կսկըսին զարնել աջ ու ձախ, ով որ ետ մնացած է: Կձգեն մեծ պապային, իրենք առաջ կերթան: Մայրս՝ հաջի Աղավնին, երկու պզտիկ եղբայրները և իր մայրը՝ հաջի Տիգրանուհին, անոր քույրը՝ հաջի Հրանուշը և անոր ախպարը կշարունակեն ճամփան դեպի Դեր Զոր ոտքով, անոթի, ծարավ:

Օր մըն ալ հաջի Հրանուշը և հաջի Տիգրանուհին պզտիկներուն կըսեն. «Դուք մեզի հոս սպասեցեք, մենք ձեզի ուտելիք պիտի բերենք»: Կերթան ու ալ մեկ ալ իրար չեն տեսնար: Մամաս՝ հաջի Աղավնին, իր երկու պզտիկ եղբայրներով կմնա…

Շատ անտանելի չարչարանքներեն վերջը թուրք մը կազատե ասոնց և ետ կուգան իրենց գյուղը: Կգբաղվին շերամապահությամբ և մետաքս կշինեն: Քանի որ Պարտիզակին մոտ էին, եղբայրները կերթան Պարտիզակ աշխատելու, իսկ կիները եկեղեցական համայնք մը կա եղեր, հոն տեր հայր մը շարական կսորվեցնե: Մայրս ալ իր հոր տված Աստվածային շնորհքով և բույսերով կդարմանե հիվանդները:

29 (269).
ԻՄ ԴԵԴԵԻՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Դեդես երբ պիտի մեռներ, ըսեր է. - Աղջիկնե՛րս, տունը հավաքեցե՛ք, ճաշերը եփեցե՛ք, ջուրը տաքցուցե՛ք. ես պիտի մեռնիմ: Աղջիկները կանչել են տերհայրը, ան աղոթեր է, և դեդես մեռեր է: Ան ալ պատմություն ուներ:

Դեդեենքս տասնմեկ հատ հացի փուռ ունեին եղեր, անոր համար անուննին Օսփըրոնջը դրած էին: Իմ դեդեին գերդաստանը հնհիսունհինը հոգի է եղեր: 1915 թ. ջարդեն միայն մեկն է ազատված. ադիկա Երվանդ Թրփաճջյանն էր: Անոր պապան Մկրտիչ Թըրփաճջյանն էր: Դեդես շատ հարուստ կըլլա: Թուրքերը կըսեն. «Եկուր քու ոսկիներուդ տեղը մեզի ըսե, մենք քեզի ազատենք»: Ամմա արդեն անոր կինը՝ Մանուշակը, ոսկիները թաղած կըլլա հողին մեջը:

Մկրտիչ Թրփաճջյանը կերթա թաղված ոսկիներուն տեղը ցույց կուտա թուրքերուն: Անոնք կփորեն, կհանեն ոսկիները, վերջն ալ ձեռքերը կկապեն կտանին կմեռցնեն: Իմին դեդեիս եղբայրը՝ Լևոնը, կտեսնա ադ բոլորը, լեղին կպատռի, կմեռնի:

Վերջը ադ Մկրտիչին տղան՝ Երվանդ Թրփաճջյանը, որը կմնա՝ խեղճ վիճակի և Մերդինի մեջ չոբան կըլլա: Դեդեիս լուր կուտան: Դեդես կմեղքնա, կերթա անոր ետ կբերե: Գլուխը աղտոտութենեն ամբողջ վերք կըլլա: Երվանդը հետո կամուսնանա: Անոր աղջիկը վերջը հարս առինք, եղբորս կինը դարձավ: Այնպես որ, Երվանդին «Ջարդի չոջուխ» կըսեինք:

Մեր Տիգրանակերտ ի՛նչ փորեցին՝ թենեքեներով ոսկի հանեցին հորերուն մեջեն: Հայերը իրենց ոսկին, արծաթը, բախչրը փորեր, թաղեր էին հողին մեջ կա՛մ օջախին մեջ, կա՛մ ալ ձյունին մեջը, քանի որ ձյունը կպահեին որպես սառնարան: Մեջը խալի, ոսկի և ուրիշ բաներ պահեր են հայերը, որ հետո գան առնեն, ամմա թուրք մուհաջիրները կուգան, կփնտրեն, կըգտնան, կառնեն:

30 (270).
ԱՆՆԱՅԻՆ ՀԻՇԱՏԱԿԸ

Պապայիս ընտանիքը չորս եղբայր մեկ քույր են եղած: Քույրը՝ Աննան, շա՛տ գեղեցիկ է եղեր: Առաջին պատերազմին չորս տղաներուն տարեր են թուրքի բանակ, կոտորեր են: Ադ խառը օրերուն Աննային ձեռքը թուրք մը կխնդրե: Աննային մայրը կըսե. - Իշդե, ամուսնացիր, հանգի՛ստ կյանք կունենաս:

Ամմա Աննան կըսե. - Ես թուրքի հետ չեմ ամուսնանար, ձեզի հետ աքսոր կերթամ, - բոլորին հետ ինքն ալ աքսոր կերթա: Ճամփին ղայսերցի էրքեկներուն (կեսարացի տղամարդկանց) ձեռքերը իրար կապած կտանին կացիններով կսպանեն, չուխուրին մեջը կլեցուներ: Աննային ալ կտանին, առտուն ետ կբերեն՝ տանջված, այլակերպված:

Աննան ադ անպատվությունը չի տանիր, ինքզինքը գետը կնետե: Մամաս իմ անունը Աննա դրած է՝ անոր անունովը:

31 (271).
ԽԱԹՈՒՆ ՄԱՅՐԻԿԸ

Խաթուն մայրիկը խարբերդցի էր, մեկ պզտիկ մանչ մը ուներ՝ Նշան անունով: Աքսորի ժամանակ ան արաբներուն մեջ կիյնա, կաշխատի եղեր անոնց համար, որ մեկ ժամ ուտելիք տան:

Օրին մեկը երկու աղվորիկ աղջիկներ վազելեն կուգան ադ այգին, կհարցնեն Խաթուն մայրիկին. - Տիկի՛ն, դուք հա՛յ եք:

- Այո՛, հայ եմ, - կըսե Խաթունը՝ ուրախանալով, որ հայու երես կտեսնա:

Աղջիկները կհարցնեն. - Ան պարտեզին մեջը հոր կա՞:

Խաթունը կըսե. - Անտեղը հոր մը կա, պարտեզը ջրելու համար է:

Աղջիկները կըսեն. - Մենք նշանված էինք, մեր հայ նշանածներուն առին տարին մորթեցին: Հիմա ան արաբները մեզի հետ ամուսնանալ կուզեն կոր: Մենք մեր նշանածներուն վրա ուրիշի հետ չենք ամուսնանար:

Երկուքն ալ ինհին կվազեն ինքզինքնին հորը կընետեն:

Ադ միջոցին երկու արաբ կուգան ձիերով, ան տիկին Խաթունին կհարցնեն. - Հոստեղը երկու աղջիկ եկա՞ն:

- Այո եկան, - կըսե ինքզինքեն ելած, քանի որ ինքն ալ չէր սպասեր, որ ադ տեսակ բան մը պիտի տեսնար, - երկուքն ալ ինքզինքնին հորը նետեցին:

Արաբները կըսեն. - Դուն ինչու՞ ադ հորին տեղը իրենց ցույց տվիր, - կըսեն ու կսկսին աղվոր մը ծեծել ադ Խաթուն մայրիկին:

Խաթուն մայրիկը արդեն անակնկալի եկած, փորն ալ պարապ, անոթի կըլլա, չի դիմանար ադ ծեծին, ինքզինքը կկորսնցնե, կմարի կիյնա:

Ան դեպքը ինքը կպատմեր և կուլար, կըսեր. - Վա՜ղ եմ ըսեր, գյուզելի՛մ աղջիկներուն ես չկրցա ազատել, ինչ միտքես չէր անցներ, քի ադ տեսակ ինքզինքնուն վերջը կուտան:

32 (272).
ՏԻԿԻՆ ԱՂԱՎՆԻՆ ԵՎ ՀԱՅՐ ՍՈՒՐԲԸ

Հայր սուրբ մը Ամերիկայի նահանգե մը կուգա Լոս Անջելես: Մերին ծանոթ տիկին Աղավնին կերթա լսելու անոր քարոզը: Կնայի հայր սուրբին աչքերուն, կսիրահարվի: Կզգա, որ Աստծո մոտ մեղք ունի իր վարմունքը, կուզե ազատվիլ ադ հայր սուրբին մտապատկերեն, բայց չի կրնար: Խեղճ կնոջ վրա ներվային վիճակ մը կուգա:

Տիկին Աղավնիին տղան հոգեբան բժիշկ էլած էր համալսարանեն, կզգա մոր տարօրինակ վիճակը, կառնե նամակ մը կգրե հայր սուրբին, թե մենք նորեն կուզենք ձեզի տեսնալ և լսել:

Օրին մեկը ադ նույն հայր սուրբը նորեն կուգա Լոս Անջելես, տղան կըսե մորը. - Ռո հավնած հայր սուրբդ եկավ, էլի՛ր, եկեղեցի գնա:

Մայրը չուզեր երթալ, ինքզինքեն կվախնա: Տղան կէրթա ադ հայր սուրբին իրենց տունը կհրավիրե: Սեղան կնստին: Տիկին Աղավնիս կնայի՛, կնայի՛, անոր երեսը կնայի…

Հայր սուրբը կհարցնե. - Տիկի՛ն, դուք ինչպե՞ս եկաք աստեղ, որտեղացի՞ եք:

Կինը կսկսի պատմել. - Ես թոմարզացի եմ, ծընողքս հարուստ էին: Մեզի աքսոր հանեցին: Ինձմե պզտիկ եղբայր մը ունեի, ճամփան չեթեները զոռով մորըս ձեռքեն հափշտակեցին, փախցուցին: Խեղճ մայրս օրը երեք ժամ կուլար, իր տղային կհիշեր և կըսեր. «Անուշի՛կ զավակս, եթե գիտնայի, որ քեզի պիտի չեթեները փախցնեն, այդքան երկա՛ր քեզ չէի խնամի»: Քանի որ Զավեն եղբայրս թոնիրը ինկած էր, այրված էր սաստիկ, և մայրս շա՛տ երկար անոր մեհլեմներով՝ տնային դեղերով, հազիվ առողջացուցած էր:

Հայր սուրբը իր աքեմին թևերը վեր կտոդեն, ցույց կուտա այրվածքի հետքերը, կըսե. - Ադ տղան ե՛ս եմ:

Տիկին Աղավնիին ուրախությունը մեկ աշխարհ կըլլա, կըսե. - Պարապ տեղը չէ, որ ա՛ս աչքերը ինձի կհետապնդեին քեզի տեսած օրես ի վեր:

Ադ ձևով իրար կորսունցած քույր և եղբայր իրար կգտնան:

33 (273).
ՀԻՆ ԱՄՈՒՍԻՆԸ

Մամայիս մեծ մայրիկը Կեսարիայի Գիզի գյուղեն կաքսորեն: Ամուսինին կտանին: Մեծ մայրիկս ան ժամանակ հինգ տարեկան է եղեր, երեք տարեկան եղբայր մը ունին եղեր, ճամփուն վրա չոջուխը. - Ջու՛ր-ջու՛ր, - կըսե:

Մայրը կըսե. - Հոն տեղը ջուր կա, գնա՛ խմե:

Ադ պահուն չեթեները կուգան: Մայրը ադդին կընայի, անդին կնայի, տղային չի տեսնար, աղջիկը կընակը կառնե, խումբին հետ ճամփա կելլա: Ատոնք Թոմարզայի գյուղը կհաստատվին: Հայ մարդ մը կելլե իրեն կուզե, կամուսնանա: Բավական տարի իրար հետ կապրին: Օրին մեկը գյուղը մարդ մը կուգա, քահանային կգտնա: Մարդը կհարցնե, կիմանա, որ իր կինն ու աղջիկը հոն են: Քահանան մարդուն կառնե տուն կբերե, անոր կըսե. - Ես կնոջդ հետ կխոսիմ:

Կերթան ադ կնոջ տունը. - Աս քու ամուսի՞նդ է, - կըսե քահանան:

Կինը կըսե. - Այո՛, բայց եկանք թափառական, աս իմ նոր մարդը մեզի տեր կանգնեց: Հիմա ի՞նչ ընեմ:

Հին ամուսինը կըսե. - Տե՛ր հայր, ինձի երթա՛լ կմնա, թող իրար խեր տեսնան, ես իրենց պատճառ չըլլամ, - մարդը կելլա, կերթա, մոտակա գյուղերուն մեջ կամուսնանա:

Ադ կնոջ աղջիկը, այսինքն՝ իմ մեծ մայրիկը, կամուսնանա Նիկողոս անունով տղու մը հետ:

Մարդուն մեկը կըսե. - Նիկողո՛ս, սա արտին մեջը աշխատող մարդը կա՞ յա, ադ քո իսկական աներհայրդ է:

Նիկողոսը կէրթա ձեռքը կհամբուրե, կըսե. - Ես քու փեսադ եմ:

- Է՛յ, տղա՛ս, աղջկաս խերը տես: Առանց հայր մեծցավ, գոնե դու՛ն տեր դարձիր:

Ժամանակ մը վերջ կլսեն, որ մարդը մեռեր է: Նիկողոսը կէրթա թաղումին կմասնակցի, պատանքը կընե, կթաղե:

Այնպես որ, թափառական հայուն ճակատագիրն է աս, որ տուն ու տեղեն եղած, իրար կորսնցուցին...:

34 (274).
ՈՒՇԱՑԱՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

1922 թվին վաճեցի տիկին Սիրանուշը իր երկու մանչով, տիկին Աստղիկն ալ՝ Սրբուհի աղջիկին հետ, կեսուրս՝ տիկին Աղավնին, իր Սուրեն տղային հետ և Խաթուն Մայրիկը՝ իր Նշան տղային հետ, Կարսեն իտալական նավով կուգան Պոլիս:

Ամենն ալ այգիները կաշխատին: Տիկին Աստղիկը աղջիկ մը ուներ՝ երկար մազերով, Սրբուհի անունով: Մայրը ամուսնացուց անոր Վարուժան անունով սամաթիացի տղու մը հետ: Ադ Սրբուհին երեք զավակ ունեցավ: Ասկե երկու տարի առաջ 1994 թ. հայերեն թերթին մեջը Պարսկաստանեն մեկը կգրե, որ «Կփըընտրեմ կինս՝ Աստղիկ, և աղջիկս՝ Սրբուհին»: Մեկը կարդացեր է, թերթը բերեր է, Վարուժանին հարցուցեր է, որ՝ աս քու կի՞նդ և կեսուր մայրի՞կդ է: Ան ալ կըսե՝ այո՛, կինս և կեսուր մայրս է:

Կհեռաձայնեն Պարսկաստան ադ մարդուն, որ քո կինդ և աղջիկդ Պոլիս են: Մարդը անմիջապես Պոլիս կուգա: Ադ միջոցին տիկին Աստղիկն ալ հիվանդ կպառկի եղեր: Փեսան ալ կատակ կընե կըսե. - Մայրի՛կ, շուտ աղեկցի՛ր, քեզի պիտի ամուսնացնենք:

- Ամմա՜ն, ատեն չունիմ, - կըսե տիկին Աստղիկը, - մինչև աս տարիքս մնացեր եմ, հիմա՞ պիտի ամուսնանամ:

Վերջը մարդը Պոլիս եկեր է: Եկեղեցիին միջոցով տունը գտեր է: Տիկին Աստղիկն ալ հիվանդ պառկած է: Իրար կգտնան, կփաթթվին, կուլան, կպատմեն իրենց գլուխեն անցածները: Մարդը քանի մը օր կեցեր է, ըսեր է . «Ես Պարսկաստանը շա՜տ տուներ, դրամ ունիմ, էրթամ, ծախեմ անոնք, ետ գամ Պոլիս»: Եվ Պարսկաստան կերթա: Մարդը փաստաբան է եղեր: Գացեր է, որ տունը ծախե, սիրտի տագնապեն կմեռնի: Ադ լուրը կլսե կինը և վիշտեն կմեռնի Պոլիսին մեջը:

Անկե վերջ աղջիկը՝ Սրբուհին, Պարսկաստան կերթա, որ պապային տուները ծախե, դրամները առնե: Կառավարությունը կըսե՝ աստեղեն 10 ոսկի չեք կրնար դուրս հանել. միայն հայկական եկեղեցիին կրնաք տալ: Սրբուհին ալ ադ բոլոր դրամները հայկական եկեղեցիին կուտա, կվերադառնա Պոլիս:

35 (275).
ՀԱՅ ՄԱՐԴՈՒՆ ՀԱՅ ՍԵՐԸ

Տիկին Աղավնին ալ Դեր Զոր կիյնա իր երկու աղջիկներով: Իսկ ամուսինը կամուսնանա թուրքի մը հետ, երեք զավակ ալ անկե կունենա. մեկը՝ պիլոտ կըլլա, մեկը՝ միհնիստր:

Տարիներ կանցնին: Տիկին Աղավնիին հայ մարդը կուգա հայկական եկեղեցին, հայ մարդու մը կհանդիպի, կըսե՝ կճանչնա՞ս իմ ընտանիքս: Մարդը կըսե՝ այո՛, Պոլիս, Բախըր գյուղ կբնակին:

Հայ մարդը նամակ կգրե, նկար կստանա, ծոցը կպահե, միշտ կհանե կհամբուրե: Անոր թուրք կինը օր մը կտեսնա՝ աս ո՞վ է, կըսե:

Մարդը կըսե. - Աս իմ հայ կինս է: Մի նեղվիր, ես պիտի երթամ:

Օր մը մարդը կէլլա, կէրթա և կգտնա: Ծերու՛կ կին մը, ծերու՛կ մարդ մը իրար կհանդիպին: Հուզումեն մարդը փաթ դեի կմեռնի:

Ադ մարդու տղաքը և թուրք կինը կըսեն. - Մեր հայրը քրիստոնյա էր, ադ օրենքով սլ պետք է թաղենք:

Կտանեն Բալըքլըի* հայկական գերեզմանատունը: Հայկական օրենքով, պատարագով կթաղեն:

36 (276).
ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Թուրք ընտանիք մը աքսորի ժամանակ հայ պզտիկ տղա մը կփախցնե, կբերե տուն, ուր ուրիշ թուրք տղաքներ ալ կային՝ ադ ընտանիքին զավակները:

Ադ թուրք տղաները աս տղային գյավուր կըսեն միշտ, աս տղան ալ սիրտին կդնե կուլա: Դրացիները կտեսնան, կըսեն. «Ինչու՞ կուլաս, դուն հա՛յ ես»:

Տղան կհիշե, որ իր անունը Հարություն է եղած, քույրը՝ Մարիամ, որին իր աչքին առջևը մեռցուցած են, բայց իր մականունը չէր հիշեր: Մայրը, հայրը ո՞վ է՝ չգիտեր, անանկ ալ չի գտնար:

Բայց ինքը կդիմե թուրքական կառավարությանը և կըսե. «Ես հայ քրիստոնյա եմ, իմ անունը Հարություն է»: Եվ կփոխե իր անունը, բայց մականունը կմնա Փաշալը:

Ան հայկական եկեղեցի կերթա, և երբ մեռավ, անոր հայկական գերեզմանատունը թաղեցին:

---

* Մինչև օրս Կ. Պոլսում գործող 16 բարեկարգ գերեզմանատներից մեկը:

37 (277).
ՀԱՎԱՏԱՓՈԽ ՈՒՄՈՒԴԸ

Ումուդ անունով տղա մը, որ թուրք է, իր տունին մեջ թուղթ մը կգտնա, չի հասկնար, թե ի՞նչ լեզվով է գրված, կտանի մեկու մը կըսե. - Աս ի՞նչ է գրված:

Ան կնայի, կըսե. - Ատոնք հայերեն գիրեր են:

Ումուդը կտանի քահանային կարդացնել կուտա թուղթը:

Քահանան կկարդա, կըսե. - Աս քո հոր մկըրտության թուղթն է:

Ումուդը կըսե. - Մենք թուրք մուսուլման ենք:

- Ո՛չ, - կըսե քահանան, - ձերոնք հայ քրիստոնյա են եղած:

Ումուդը եկեղեցիին մեջ կմկրտվի, հայ քրիստոնյա կդառնա՝ Հուսիկ անունով: Եվ ամեն կիրակի եկեղեցի կհաճախե:

38 (278).
ՄԵՆՔ՝ ԿԵՍԱՐԱՑԻՆԵՐՍ

Մենք կեսարացի ենք: Պապայիս ընտանիքը շատ հարուստ էր, պապաս բաստըրմա կծախեր: Կեսարիա մեր անունով փողոց կար, Շալճյան փողոց կըսեին: Հայրս երեք երեխա ուներ:

Սեֆերբերլիքին մերինները քառասուն օր ամտառներուն մեջ տանջվել են: Վերջը տաճիկի մը հետ կընկերանան, առևտուր կընեն, Ստամբուլ կուգան: Հայրս ինքնուրույն լեզու կսորվի: Վերջը Կարս կերթա աշխատելու: Եղբայրներով լրագիր կծախեն: Աղքատության մեջ կիյնան: Ամեն ինչ կծախեն: Թերզիի չրախ կըլլա, բայց մուրացկանություն չեն ըներ: Պտուղ կծախե, պորտուկալ կծախե, կոշիկ կներկե, դերձակություն կընե, բաստըրմա կծախե, քիչ մը շնորհքի կուգա: Կեսարիա կուգա կամուսնանա: Ետքը եկանք հոս՝ Պոլիս:

39 (279).
ԿԵՍՈՒՐ ՄԱՅՐԻԿՍ

Կեսուր մայրիկս Կարսեն փախեր էր Բաթում, հոն մեկ-երկու ամիս մնացեր են, երբ մեջտեղները քիչ մը հանգստացեր է, նորեն վերադարձեր է Կարս՝ իր Սուրեն տղային հետ:

Եկեր են, իրենց տունը քարուքանդ են գտել: Դրացիները կուգան կըսեն. - Ամուսինդ եկավ, քեզի փնտրեց, չգտավ, ելավ գնաց:

Արդեն կեսուրիս ամուսինն ալ Անդրանիկի զինվոր է եղեր:

Կեսուրս իրար կանցնի, կերթա Պոլիս, պատրիարքարան կդիմե, բայց չի գտնար իր ամուսինը:

Արդեն պատերազմ էր, կմտածե՝ ինչ պիտի ընեմ, ետ Կարս էրթամ. կմնա Պոլիս իր Սուրեն տղային հետ և կապրին Սամաթիա* : Ադ ձևով այլևս մարդ ու կին իրար չեն գտնար:

Ինչե՜ր կան աս ձևով, որ իրար կորսնցուցած են:

40 (280).
ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

... Գազի Անթեպ եկեղեցի մը կար: Տեսանք՝ զանգակը վար կառնեին, մզկիթ կշինեին...

Ադանայի մեջ ալ Ս. Եղիա եկեղեցին է, որ մզկիթի է վերածված: Ալ կրնաք երևակայել մեր վիճակը...: Ուզեցինք ներս մտնալ, կոշիկներնիս հանեցինք, ներս մտանք: Ամեն ինչ նույնն էր, միայն խորանը չիկար, վերածվել էր Ցաղ ջամիսիի...

Խարբերդը յոթը հատ հայկական գյուղ կար. մեկին անունը Գեղեցիկ էր: Իրավ գեղեցիկ էր. թութերը առանց կուտի հասել էին, սքանչելի բնություն էր...

«Բիյուկ Էլազ» օթելը իջանք: Քիչ մը հանգստանալե վերջ վար իջանք, հայկական եկեղեցի պիտի փնտրենք: Գացի մոտեցա հյուրանոցի աշխատակցին: Ան սքանչելի երիտասարդ մըն էր, ըսի. - Այստեղ հայկական եկեղեցի կա՞ր:

- Աբլա՛, բէն դէ քյուրդ իմ (Քույրի՛կ, ես ևս քյուրդ եմ), եկեղեցին մեր քովն է եղել, հիմա ալյուրի գործարան է դարձած:

Գացինք տեսանք միայն նախշազարդ դուռը մնացած էր հիմեն: Մարդ մը տեսա, կաթ կբերեր կոր. - Բե՛յ պապա, աստեղը ի՞նչ էր, - հարցուցի:

- Ա՜հ, աղջի՛կս, - ըսավ, - աս հայերուն եկեղեցին էր, հայերը գացին, մերիններն ալ ասանկ ըրին:

Հետո ուրիշ եկեղեցի մը գացինք: Ան [illegible] էր: Վարդապետին հարցուցի. - Հոս հայ ընտանիքներ կան եղեր՝ տասը-տասնհինգ ընտանիք, կրնա՞ք տեսնալ:

Ան բան չպատասխանեց: Հեռաձայն տվավ, տասնութ տարեկան Աղավնի անունով փարթամ աղջիկ մը եկավ մորը հետ: Մեզ օթոյին մեջը դրին Խարբերդը պտտցուցին: Մեզի տարին իրենց Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին, որը հետաքրքիր ձևով էր շինված: Լեռը փորեր էին, մոտ երեսուն աստիճան վար իջանք, որ եկեղեցի մտնանք, սքանչելի եկեղեցի մը մեր առջևը պարզվեցավ...

---

* Կ. Պոլսո հայաշատ թաղամաս:

** Իմա՝ ասորի:

41 (281).
ՄԵՐ ԿԱՐՍԸ

Աստվածի՛կս, մարդոց մեջը բարին արթընցընես…

Թուրքերը մեր ամեն ինչը առին: Կարսի մեր եկեղեցին առին իրենց դպրոց շինեցին: Մեզմե վերջը ամեն տարի ադ դպրոցին պատերը կփլին եղեր, նորեն կշինեն եղեր: Չեն գիտեր քի ադի Աստուծմեն պատիժ է իրենց: Ինչու ադ նույն Աստվածը, որ աշխարհը բոլոր շինեց, ամեն բան ստեղծեց՝ մարդոց ապրելու համար, անոնց դպրոցը կփլցնե: Որովհետև ադ հայերուն եկեղեցին եղած էր, մեր հավատքին եկեղեցին եղած էր:

Ան, որ Աստծուն չի հավատար, պատիժը կըգտնա:

42 (282).
ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Անցած տարի Թոմարզա մեր ծննդավայրը գացի, տեսա: Մեր հայկական եկեղեցիին մեջը տուն ըրեր են, թուրքերը կապրին կոր: Էվերեկ Փենեսի եկեղեցիները մեկը ջամի ըրեր են, մյուսը՝ մարզանքի սրահ:

Առաջ հունիսի 11-ին Ս. Գրիգոր Լուսավորչին օրը կըլլար, ամեն կողմեն ուխտի կուգային: Հիմա ու՞ր պիտի երթան:

43 (283).
ՍՎԱԶԻ ՀԱՅԵՐԸ

Առաջ մենք Սվազ կապրեինք: Հոն հայկական դպրոց չի կար, անոր համար ալ մենք աղվոր հայերեն չիտենք:

Սվազի մեջ Թավրա գյուղը կար, մենք հոն կապրեինք: Առաջ հոն այլազգ հեչ չի կար: Հայկական եկեղեցիներ շատ ունեինք՝ Ս. Նշան, Ս. Վարվառ, Ս. Քառասուն Մանուկ: Հոն Անապատ կար, Ջերմի ջուր կար, հիվանդները հոն կլոգնային, կաղեկնային:

Զունքի մեր եկեղեցիքը քակված էին: Տարին մեկ պատրիարքարանեն կրոնավոր կուգար՝ նոր ծընվածները կմկրտեր: Շաբաթը մեկ ալ մեկու մը տունը կհավաքվեինք, բամբասանք կըներինք, քիչ մը Ավետարան կկարդայինք, կերգեինք, մեր տուները կերթայինք:

44 (284).
ԹՈՒՐՔ ՀԱԶԱՐԱՊԵՏԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Նախքան եղեռնը Անատոլուի և Թուրքիայի մեջ չորս միլիոն հայ կար: Շատերուն կոտորեցին, մորթեցին: Մենք ինչու՞ հայր, մայր, քույր, եղբայր չունինք: Շատերն ալ հավատափոխ եղած են: Աս ամենը ըսելով չի՛ լըմըննար:

Օր մը մեր բարեկամ Հակոբի տղային՝ Սարգիսին, թուրքական բանակ զինվորության կտանին:

Հազարապետը կկանչե ադ Սարգիսը, կըսե. - Դիմացս նստե: Ըսե նայիմ, ու՞րտեղացի ես:

Սարգիսը կըսե. - Պոլսեցի եմ:

Հազարապետը կըսե. - Ինձի նայե, քեզի մեկ ամիս հրաման կուտամ, գնա՛ Պոլիս, ծնողքդ տե՛ս, ե՛տ եկուր: Ամմա գիտցած ըլլաս, միայն քեզի կըսեմ՝ իմ մամաս հա՛յ է: Աս բանը ո՛չ մեկը չպիտի իմանա, միայն քեզի կըսեմ, քանի որ արյունը կքաշե կոր: Գիտցած ըլլաս, եթե մեկու մը ըսես, քեզի կմեռցնեմ, եթե իմացվի: Ադ իմ կյանքիս գաղտնիքն է, գիտցած ըլլաս:

Այնպես որ, թուրքերուն մեջն ալ շա՛տ հայեր կան, ոմանք գիտեն իրենց ինքնությունը, ոմանք՝ ոչ:

45 (285).
ՇԱՏԵՐՈՒՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Անցյալ օրը շուկայեն սմբուկ պիտի գնեի, ծախող մարդը ըսավ. «Ներսը աղվո՛րը կա»: Ես ըսի. - Իմամ բայըլդի (իմամը ուշաթափվեց) պիտի շինեմ:

Մարդը ինձ նայեցավ և ըսավ. - Ներսը ավելի աղվորը կա:

Հետո մարդը ներս եկավ հետս, գնածներս օթոյին ետևը տեղավորեց և կամացուկ ըսավ. - Ես բիթլիսցի եմ, ջարդի ժամանակ մեզ մուսուլման դարձուցած են: Մայրս տակավին ողջ է. հայերեն կաղոթե, հայերեն կխոսի և կհասկնա:

Աս է եղած Թուրքիո հայության շատերուն ճակատագիրը:

46 (286).
ԵՐԿԻՆՔԵՆ ԻՋԱԾ ԼՈՒՅՍԸ

Օր մը թրքուհի մը ինձի ըսավ. - Աբլա՛, քեզի բան մը պիտի հարցնեմ. մենք Իզմիթ կնստինք: Հոն լեռան գագաթը ամեն գիշեր լույս մը կիջնա երկինքեն: Մենք՝ գյուղացիներս, հավաքվեցանք, որոշեցինք, որ երևի անտեղ գանձ մը կա և գացինք հոջային հարցնելու:

Հոջան ըսավ, որ անցյալին անտեղը քրիստոնեա թաղ մը եղած է, և քահանաները կը գիտնան: Մենք ալ գացինք քահանա մը գտանք, անոր հարցուցինք: Քահանան ըսաւ. «Ադ անկարելի՛ բան է. հոն գանձ չկա, որ լույս ալ տա»: Աբլա՛, հիմա քեզի կհարցնեմ, դուն ի՞նչ խորհուրդ կուտաս:

Ես ալ իրեն ըսի. - Դուք միայն ոսկիի և գանձի մասին կմտածեք. չե՞ք կարծեր թե անցյալին շատ նահատակներ եղած են և անոնց վրա երկինքեն լույս կիջնա: Ադ մասին ձերին մեծերը ոչ մեկ բան չե՞ն ըսած ձեզի:

47 (287).
ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀԱՄՇԵՆՑԻ ՀԱՅԵՐԸ

Համշենի բնակիչներուն գրեթե բոլորն ալ հավատափոխ դարձած հայեր են: Անոնց անունները Ահմեդ, Մուհամմեդ, Հասան է, բայց կըսեն, որ երբ համշենցի կիները խմոր կշաղեն, քրիստոնյաներուն պես խմորին վրա ձեռքով խաչ կքաշեն և իրենք ալ գրեթե մեզի պես հայերեն կխոսին:

Օր մը կես գիշերով հիվանդանոց գացած էինք. տալոջս ամուսինը ծանր հիվանդ էր: Բժիշկին քովը հիվանդ կար, ըսին՝ սպասենք: Դուրսը նստած իրար հետ կխոսեինք, մեր քովն ալ գյուղացի թուրք կին մըն նըստած էր: Ան սկսավ ինձի թուրքերենով հարցունել. - Սիզ նէ՞րդէնսինիզ (Դուք որտեղե՞ն եք):

Ես ալ ըսի. - Բիզ՝ Էրզրումդան, Յոզղատդան ըզ դըր (Մենք Էրզրումից, Յոզղատից ենք):

Դուն մի ըսեր, ան ականջ դրեր է մեր հայերեն խոսելուն, ըսավ. - Աբլա՛, սիզ դէ բիզիմ կիբի քօնուշույօրսունուզ (Քույրի՛կ, դուք էլ մեզ պես եք խոսում):

Ես ըսի. - Քօնուշ, բաքալըմ (Խոսիր, տեսնեմ):

Ան սկսավ խոսիլ. - Մայրիկս հիվանդ է՝ հիվանդանոց բերեր ենք…

Ադ միջոցին անոր մայրը և քույրը բժիշկին սենյակեն դուրս ելան:

Ես հայերենով մորը ըսի. - Անցյա՛լ ըլլա:

Մայրը հայերեն պատասխանեց. - Քիչ մը պաղեր եմ: Աղջիկս բժիշկին հետ զրուցեց, ան ըսավ՝ հիվանդդ աղեկ է:

Դուն մի՛ ըսեր, անոնք համշենցի հայեր են՝ մահմեդական դարձած…

48 (288).
ԿԱՌԱՊԱՆ ՄԵՀՄԵԴԸ

Իմ ծնողքս ադաբազարցի եղած են: Աքսորեն վերջը կարգ մը քաղաքներ պարպվեցան, կարգ մը տեղեր ալ հավատափոխ եղան, թրքախոս դարձան:

Ադաբազար առաջվնե թուրքախոս չէ եղած: Նույնիսկ շատ մը թուրքեր հայերեն սորված են, մանավանդ շուկային մեջ հայերեն կխոսեին:

Ադաբազարցի հայ այրերը թուրքերեն գիտեին, բայց կիները բնավ չէին գիտեր:

Երբ Թուրքիան Հանրապետություն հռչակվեց, աքսորեն վերադարձողներ եղան: Ոմանք նորեն իրենց քաղաքը գացին, ոմանք ալ կամ Պոլիս մնացին, կամ երկրեն դուրս գացին:

Հայութենեն բոլորովին պարպվեցավ նաև մեր Ադաբազարը: Մինչև որոշ թվական մը որևէ հայ այցելուի համար իսկ ըլլալով իրավունք չուներ երթալու այդ կողմերը: Մենք կերպով մը հարմարած էինք կացությանը:

Հանրապետության որոշ թվականե մը վերջ որպես զբոսապտույտ սկսան շրջագայել: Ադ թույլտվությունեն օգտվելով՝ հայրիկիս հետ գացինք Ադաբազար: Հայրիկս ուզեց ծանոթ փնտրել, բայց՝ իզուր: Քիչ մը վերջը հայրիկս ուզեց շոգեկառքին կայարանը երթալ: Բեռնակիրի պես մարդ մը դեմը ելավ և հորս հետ սկսավ հայերեն խոսիլ: Ես զարմացա: Բաժանվելեն վերջը ըսի. - Հայրի՛կ, Ադաբազարը հայ չէր մնացած, ինո՞ր աս մարդը մնացեր է:

Հայրիկս ըսավ. - Աս խոսողը հայ չէր, թուրք էր: Աս մեր կառապան Մեհմեդն էր:

49 (289).
ԹՈՍՈՒՆԸ

Իզմիթի Բախչեջիկի կողմը առաջ ամբո՛ղջ հայ էր: Ջարդի ժամանակ շատերուն աքսոր հանեցին, շատերուն մորթեցին, շատ աղջիկներու ալ տարին իրենց կնիկ դարձուցին: Ես թուրք բարեկամ մը ունեի Թոսուն անունով: Ինձի օրին մեկը ըսավ. - Բենիմ մամամ էրմենի դըր (իմ մայրը հայ է), բայց իմ պզտիկությանս ձգեր,

գացեր է Բուլգարիա: Հայրը մեծ ոսկերիչ է եղեր, ըսեր է. «Թուրքեն ծնված չոջուխդ ձգե՛, մեզի հետ եկուր Բուլգարիա երթանք»:

Աղջիկը ադանկ ալ կընե: Պապաս թուրք էր, ննրեն ամուսնացավ թուրքի մը հետ, ննր եղբայրներ ունեցա: Տարիներ անցան, օրին մեկը Բուլգարիայեն մարդ մը եկավ, հարց ու փորձ ըրավ քի՝ ասանկ Թոսուն անունով մեկը կա՞: Մայրը անոր կփնտրե կոր: Ես մորս նամակ գրեցի Բուլգարիա, «Մամա՛, ես մեծցա, կուզեմ քեզի տեսնալ»: Մայրս նամակին պատասխանեց քի՝ «Կաղանդին Թաքսիմ* տուրիստ պիտի գամ»: Ընտանիքովս գացի, ես իրեն չե՛մ ճանչնար: Տեսա քի՝ ինձի կնմանի կոր, կապույտ աչքով, կլոր երեսով. - Մամա՛, - ըսի, - ես Թոսու՛նն եմ:

Ալ արցունքները կվազեն, փաթթվեցանք, համբուրվեցանք: Հեմեն օթոն դրի գյուղ տարի, գյուղացիները հավաքվեցան, ըսի. «Մամա՛ս է եկեր: Մամա՛ս, ի՞նչ կուզես, հրամմե կեր»: Մենք բոլորս լացինք, պապաս անգամ լացավ, հիշեց իր անցյալը, իր հայ կնիկին: Ամմա ի՞նչ կրնայինք ընել: Ա՛ս էր մեր ճակատագիրը: Ամիս մը նստեցավ մեր տունը:

Ըսի. - Ի՞նչ կուզես առնեմ քեզի:

Բուլգարիայում հիմա հայ մարդ ունի եղեր: Հազարապետ տղա ունի եղեր, երկու աղջիկ ունի եղեր: Խեղճ կնիկը ոչ մեկին չի պատմել իր գաղտնիքը:

Ըսի. - Մամա՛, մնա՛ հոս:

Ըսավ. - Ո՛չ, զավակներ ունիմ, չե՛մ կենար, Նուբարը, Անուշը, Սիրարփիս մե՛ղք են:

Մամաս գնաց Բուլգարիա, իր ընտանիքին քովը:

Վեց ամիս անցավ, մամայիս տղան՝ հազարապետ Նուբարը, կնիկին հետ Բուլգարիայեն էկավ Քարաքեոյ**: Գացի կնիկիս հետ: Ամմա չե՛մ ճանչնար, սկսա պոռալ. - Նուբա՛ր, քարտաշը՛մ, բէն բուրդա յըմ (Նուբա՛ր, եղբա՛յրս, ես այստեղ եմ):

Տեսա ձեռքով ըրավ, մոտեցավ, գրկեց ինձի. - Վա՛յ, դուն իմիս եղբա՛յրս ես, մամաս չըսած էր մինչև հիմա. փաթթվեցանք: Շիտակ գյուղ տարի:

Թոսունը հե՛մ կուլար, հե՛մ կպատմեր կոր. չէ՞ որ արյու՛նը կքաշե:

Օր մը հազարապետ Նուբարը կնիկին հետ Թոսունը բերավ մեր խանութը, ըսավ. - Տե՛ս, ասոնք հա՛յ են:

Նուբարը մեզ տեսնալով ըսավ. - Բարև՛ ձեզի: Աս Թոսունը ձեզի շա՛տ կսիրե եղեր: Միշտ կըսե՝ շա՛տ աղվոր հայ բարեկամներ ունիմ: Անոր համար ալ ինձի հոս բերավ: Մինչև հիմա չգիտեինք, որ մենք եղբայր ունինք Թուրքիո մեջ:

Սուրճ բերինք, խմեցին: Գացին:

Մեզմե վերջը Թոսունը Նուբարին տարեր է ոսկերիչներուն: Ալ Նուբարին կնիկին ոսկիներով ողողել է. «Ի՞նչ կուզես՝ մատանի, պանտատիվ, ա՛ռ քեզի հիշատակ մեզմե», - ըսելով ձվիրել է: Աս ամենուն մենք շայիդ ենք:

50 (290).
ԹՈՒՐՔԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅԸ

Պապաս՝ Նազարը, Դիզե՝ Սև ծովի ափին եղած ատենը հոն երկու թաղամաս կա եղեր. Վերին Դիզե և Շուկայի Դիզե: Կտեսնա, որ Վերին Դիզեեն եկողը անպայման հայ կըլլա, շուկայեն եկողը՝ հույն: Վերինները կկոչվին Արտաշեն, այսինքն՝ արտը շեն պահող:

Ադտեղը պապաս հազիվ քսաներկու տարեկան, կառավարական մարդու մը հետ կբարեկամանա: Օր մը ադ մարդու հետ կուտե, կխմե, մարդը սիգար կըհրամցնե, հայրս կըսե. - Ես ադկե չեմ ծխեր, իմիս մարկաս կծխեմ:

Օր մը ադ մարդը իր տունը կհրավիրե պապայիս: Պարտեզներուն մեջ խոշոր տուն մը կմտնա հայրս, կուտեն, կխմեն: Հայրս պատին վրա զենք մը կտեսնա, կըսե. - Ո՛վ գիտե, աս զենքով քա՛նի հայ սպանած ես:

Մարդը կդառնա կըսե. - Դուն ի՞նչ տեսակ կխոսիս կոր: Աս խոսքիդ համար քեզ կփճացնեի. ոչ թե ես հայ մեռցուցեր եմ, այլ՝ շա՛տ հայեր ազատեր եմ: Երբ որ Անդրանիկին չեթեները գյուղը կոխեր են, հայրս հայ դրացիին տունը փախեր է: Անդրանիկի չեթեները կասկածեր են, թե հայրս ադ տունեն ներս մտած է: Ետևեն եկեր են՝ տունը խուզարկելու: Հայը հորս իր կնոջը անկողինը խոթեր է, որպեսզի չկասկածին, տնեցիներուն դուռը բանալ տված է և ինքն ալ պահմտած է: Ադոր փոխարեն ես հայերուն բարեկամ դարձած եմ. շա՛տ հայեր ազատած եմ: Նայե՝ դուն դեռ երիտասարդ ես, առաջին սխալդ գործեցիր. «Ես ադ սիգարը չեմ ծխեր» ըսելով: Մեյ մըն ալ ադ տեսակ բան մի՛ ըներ: Միշտ դիմացինիդ մակարդակին իջիր, որպեսզի սիրված անձնավորություն մը ըլլաս:

Անոր համար ադ լավ թուրք մարդուն խոսքերը հայրս իր ամբողջ կյանքին մեջ կհիշեր և մեզի ալ կըպատմեր:

* Կ. Պոլսո թաղամաս:

** Թուրքիո գյուղերից:

III

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՐԳԵՐ



1. ՋՈՐԱՀԱՎԱՔԻ, ՋԻՆԱՀԱՎԱՔԻ ԵՎ ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ ԵՐԳԵՐ

1 (291).
ՋԻՆՎՈՐԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Հազար ինճ հարյուր տասնչորս թվին
Հանեցին, կարդացին ասկյարի ֆերման,
Ջա՜ն, կերթամ, մայրի՛կ, ջա՜ն կերթամ, քույրի՛կ,
Զինվոր եմ՝ կերթամ, մուրադսըզ կերթամ:

Մայրի՛կ, Աստվա՜ծ սիրես, չանթաս լավ կարե,
Հարսը թե պզտիկ է՝ խաթըրը նայե,
Ջա՜ն կերթամ, մայրի՛կ, ջա՜ն կերթամ, քույրի՛կ,
Զինվոր եմ՝ կերթամ, մուրադսըզ կերթամ:

2 (292).
ՄՆԱ՜Ս ԲԱՐՑԱՎ, ՔԱ՜ՂՑՐ ՄԱՅՐԻԿ

Մնա՜ս բարյավ, քա՜ղցր մայրիկ,
Ես պիտի երթամ,
Տուր մայրական համբույր վերջին.
Սիրտս թող հովնա:

Երկնքի մութ ամպերը
Կամար են կապել,

Մեր հայ տղերքի սիրտը
Խավար է պատել:

Հայրեր կուլան, մայրեր կողբան.
Սու՛գ է, վայնասու՛ն,
Բաժանումի ժամն է հասել.
Սիրտ չի դիմանում:

3 (293).
ԱՀԱ ԿԵՐԹԱՄ, ՍԻՐԵ՛ԼԻ ՄԱՅՐ

Ահա կերթամ, սիրե՛լի մայր,
Մնա՜ս բարով դուն հիմա,
Այսքան ճնշման տակ ընկած,
Հայը ինչպե՞ս դիմանա:

Սեբաստիա երբ կերթայի,
Երկու օրեն կուգայի,

Երկու օրս կըլլար տարի,
Ես քեզ կկարոտնայի:

Մնա՜ս բարով, սիրելի մայր,
Վերադարձիս սպասե,
Պատերազմի դաշտին վրա
Ընկերս ինձ կսպասե:

4 (294).
ՍԵՎ ԾՈՎԻՆ ՎՐԱ, ՄԱՅՐԻ՛Կ

Սև ծովին վրա, մայրի՛կ,
Ղայըղ չի բանիր,
Ձեռքերնիս թուլցած է, մայրի՛կ,
Հրացան չի բռնիր:

Լաղըմ-լաղըմ կուգաս, մայրի՛կ,
Գետերուն ջուրը,

Ինչ սաստիկ կկտրե, մայրի՛կ,
Թուրք ազգին սուրը:

Ճամփա չկա, մայրի՛կ,
Գամ հասնիմ քեզի,
Աշխարհը պատել է, մայրի՛կ,
Հայ ազգին վիշտը:

5 (295).
ՄԱՅՐԻ՛Կ, ՋԻՍ ՋԻՆՎՈՐ ԳՐԵՑԻՆ

Մայրի՛կ, մայրի՛կ, գիս զինվոր գրեցին ու տարին,
Ձենքը ձեռքս չտվին, Ամիլե թաբուր գրեցին,
Թոքաթի Եաթմիշ գյուղը չորս օրեն կարճ էր,
Եաթմիշի քարերը կոտրելու խարճ էր,
Թոքատի ջուրերը անքա՜ն առատ էր,

Բոլորին հույսը վերադառնալ էր:
Օրե՜ր, օրե՜ր, ի՜նչ օրերու կերթամ,
Կերթամ, կերթամ, զինվոր ես կերթամ,
Քար կոտրելու ես կերթամ:

6 (296).
ՋԻՆՎՈՐՆԵՐԻՆ ԲԱԼՈՒ ՏԱՐԻՆ

Զինվորներին Բալու տարին,
Մայրեր-քույրեր ննտան լացին,

Անտեղը շատ փոսեր փորեցին,
Անկե վերջն ալ մեջը թաղվեցին:

7 (297).
ՄԱՄԻ ՀԱՎԱՍԸ

Ձութ, եզ ունիմ, կուտամ ծախու,
Քանի կուզեն՝ թող ծախվին,
Թյուֆանգմ առնեմ զիմ Գիգոյին,
Տանեմ գրեմ ֆեդայի:

Ամիսմ մինակ մնացել է՝
Թամամ քսանմեկ տարի,
Ջիմ Գիգոյի ի՞նչն է պակաս,
Որ չեն գրի ֆեդայի:

Ելի՛ր, լա՜ո, մի՛ քնանար,
Ձգենք մեր ժամ, աշխատանք,
Օտարը մեզ ֆայդա չունի,
Ելի՛ր, կապեմ քո թյուֆանգ:

Ա՛խ, տե՛ր Աստված, հոգիս չառնես,
Ես իմ Գիգոյին տեսնեի՝
Թևին՝ թյուֆանգ, դոշին ֆիշենգ,
Ա՛խ, այդ օրը մեռնեի:

8 (298).
ԸՆԿԵՐՆԵՐՍ ՂՐԿԵԼ ԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ընկերներս ղրկել եմ դեպի Ռուսաստան,
Շատ բարևներ տարեք ամեն ջանջիգյար,
Մենք ձեզմե կուզինք ոչ ոսկի-արծաթ,
Մենք ձեզմե կուզինք միայն ծակ-երկաթ:*

Ընկերներս ղրկել եմ դեպի Հայաստան,
Շատ բարևներ տարեք հայոց ամենայն,
Երբ որ չըլլանք միասան՝
Կըլլանք ցիրուցան:

9 (299).
ԹՈՒՐՔԻ ԲԱՆԱԿ ԵՐԹԱԼՈՒ ԵՄ

Թուրքի բանակ երթալու եմ,
Հրացան բռնելու եմ,

Ես ի՞նչ ընեմ Տաճկաստան.
Ահա կերթամ Հայաստան:

10 (300).
ԵՐԿԻՆՔ ՆԱՅԵԼՍ ԿՈՒԳԱ

Երկինք նայելս կուգա,
Դար վեր հայիլս կուգա,

Էկավ անցավ վատ թուրքը.
Վրեժ լուծելս կուգա:

11 (301).
ԱՆԱ՛, ՕՑԱՆԴԸ՛Ր ԲԷՆԻ, ԳԻԴԷԻՄ ԹԱԱԼԻՄԸ

Անա՛, օյանդը՛ր բէնի, գիդէիմ թաալիմէ,
Այնալը-մարթինը ալալըմ էլիմէ,
Գիթմէյէ դօղրու վաթան յօլընա,
Բունա ծլհիմ յօլու դէրլէր.
Ալլա՛հ սաքլասընը,
Էրմէնիլէր չօքդըր դէրլէր.
Ալլա՛հ քուրթարսընը:

ՄԱ՛ՅՐ, ԱՐԹՆԱՑՐՈՒ՛ ԻՆՁ, ԳՆԱՄ ՎԱՐԺԱՆՔԻ

Մա՛յր, արթնացրու՛ ինձ, գնամ վարժանքի,
Ձեռքս վերցնեմ հայլեպատ-մարթին,
Գնալու եմ ուղիղ ճամփով հայրենի,
Սրամ մահվան ճամփա կասեմ.
Աստվա՜ծ պահպանի,
Հայերս այնտեղ շատ ու շատ են.
Աստվա՜ծ թող փրկի:

12 (302).
ԱՍՔՑԱՐԸՆ ՇԱՐՔԸԼԱՐԸ

Սաբախդան քալքդըմ, անամ աղլըյօր,
Բաբամ աթընը զէնգինը բաղլըյօր,
Բաքդըմ քի գիզլիջէ, յամա՜ն, աղլըյօր,
Բինի բիր ուղրուևա գիդէն յավրուլար:

ԱՍԿՑԱՐԻ ԵՐԳԵՐ

Առավոտյան վեր կացա՝ մայրս էր լաց լինում,
Հայրս ձիու ասպանդակն էր կապում,
Տեսա՝ ծածուկ սաստիկ էր լաց լինում,
Հազարը մեկի պես գնում են որդիները:

---

* Իմա՝ հրացան:

13 (303).

Գէթի՛ր, աւա՛մ, գէթի՛ր, էլինի ծփէիմ,
Էմդիիմ սհւդթհւ ճէլալ էդէիմ,
Ասքէրէ գիդէրսէմ՝ բէլքի գէլէմէմ,
Բինի բիր ուղրընա գիդէն յավրուլար:

Մոտեցրու՛, մա՛յր, ձեռքդ համբուրեմ,
Ծծած կաթը ինձ հալալ ասեմ.
Ասկյար թե գնամ, գուցե ետ չգամ,
Հազարը մեկի պես գնում են որդիները:

14 (304).

Թրէնէ բինինջէ՝ դուշ գիբի ուչար,
Մէմլէքէթ յօլլարը գծզհւմդէն ուչար,
Բինը բիր ուղրընա գիդէն յավրուլար:

Գնացք ննտեցի՝ ծտի պես թռավ,
Հայրենիքի ճամփան աչքիցս թռավ,
Հազարը մեկի պես գնում են որդիները:

15 (305).

Թրէնէ բինդիմ, թրէն սալադը,
Ջալըմ ֆէլէք յուրէիմի էլլէդի,
Նէ դէդի դէ զալըմ դօքտօր.
Բէնի դուրբէթդէ յօլլադը:

Գնացք ննտեցի, գնացքն օրորվեց,
Նենգ ճակատագիրն ինձ դավեց,
Ի՞նչ ասաց դաժան բժիշկը.
Ինձ օտարությունն ուղարկեց:

16 (306).

Էրզրումդան չքդըմ բաշըմ սէլամէթ,
Մէսքէնէ գէլինջի՝ ղօփթը ղըյամէթ,
Անամա, բաբամա աչը ալամէթ,
Գէլինն Մաքրուհիըմ քի՞մէ էմանէթ:

Էրզրումից դուրս եկա գլուխս հանգիստ,
Մէսքէնէ հասանք՝ աղմուկ-աղաղակ,
Մորս ու հորս վատ լուր հաղորդեք,
Մաքրուհի հարսս ու՞մ պիտի թողնեմ:

17 (307).

Աբրահամըն յօրղանը յհւքէ դհւրդհւլէր,
Ղարագօզլհւ Վահոամըմը վուրդուլար,
Սահաթ հւչդէն սօնրա մէզարա քօյդըլար,
Չօնթարը դա բաղլամասընը ղըրդըլար:

Աբրահամի վերմակը յուքը դրեցին,
Սև աչքերով Վահրամիս խփեցին,
Ժամը երեքից հետո գերեզման դրեցին,
Չոնթարի նվագարանը կոտրեցին:

18 (308).

Ղշլանընն իչինդէ բիր փընար աքար,
Ասքէրլէր օթուրմուշ չամաշըր յըքար,
Բինը բիր ուղրընա գիդէն յավրուլար:

Ջորանոցի մեջ մի աղբյուր է հոսում,
Ասկյարները նստած լվացք են անում,
Հազարը մեկի պես գնում են որդիները:

19 (309).

Ճհւրուչէ-յհւրուչէ թաբուրըմա քավուշդըմ,
Էվէլ ալլահ մարինիմէ գհւվէնդիմ,
Բինը բիր ուղրընա գիդէն յավրուլար:

Քայլելով-քայլելով ես հասա գնդիս,
Աստծուց առաջ հրացանիս վստահեցի,
Հազարը մեկի պես գնում են որդիները:

20 (310).

Գիդէ-գիդէ ղօնդուրամա ղում դօլդու,
Ղում յէրինէ յուրէիմէ քան դօլդու,
Բինը բիր ուղրընա գիդէն յավրուլար:

Գնալով-գնալով ոտնամանս ավազ լցվեց,
Ավազի տեղ սրտումս արյուն լցվեց,
Հազարը մեկի պես գնում են որդիները:

21 (311).

Ղըյմա՛, չէրքէ՛զ, ղըյմա՛ դաթլը ջանըմա,
Ճէնի նշանլըմ վար քարալար բաղլար,
Բինը բիր ուղրընա գիդէն յավրուլար:

Խնայի՛ր, չերքե՛զ, խմայի՛ր քաղցր հոգիս,
Նոր նշանած ունեմ՝ սևեր կկապի,
Հազարը մեկի պես գնում են որդիները:

22 (312).

Ասքյարա գիթթիմ՝ գէլիրիմ դէյի,
Մարթինիմի դօլդուրդըմ՝ վուրարըմ դէյի.
Հէչ աքլըմդան գէչմէդի՝ ծլհւրհւմ դէյի,
Բինը բիր ուղրընա ծլէն յավրուլար:

Ասկյար գնացի՝ ետ գնալու համար,
Հրացանս լցրեցի՝ խփելու համար,
Մտքովս չանցավ՝ թե կմեռնեմ,
Հազարը մեկի պես մեռնում են որդիները:

23 (313).

Չրթդըմ Գյավուր դաղընն* բաշընա՝
Քարը դիզլէյէ-դիզլէյէ,
Ցարալար գծզ-գծզ օլդը,
Չէրրահ բէքլէյէ-բէքլէյէ:

Բարձրացա Գյավուր լեռան գագաթը,*
Ջյան վրա մագլցելով-մագլցելով,
Վերքերս աչք-աչք դարձան
Բժշկի սպասելով-սպասելով:

24 (314).

Ջէհհզըմ սանդրքդա բասըլը քաղը,
Սէվգհլի նշանլըմ քհմլէրէ՞ քաղը,
Արաբ չծլէրհնդէ բէնի արադը,
Բինը բիր ուղրընա գիդէն յավրուլար:

Օժիտս սնդուկում դարսված մնաց,
Սիրելի նշանածս արդյոք ու՞մ մնաց,
Ինձ փնտրեց արաբի անապատում.
Հազարը մեկի պես գնում են որդիները:

25 (315).

Բհթլիս քափուսընդա չընար աղաջը,
Այրըլըք շէրբէթի զէհհրդէն աջը,
Սծյլէհն անէմէ. անէմ աղլասընն,
Անէմդէն բաշխա յալան աղլար:

Բիթլիսի դարբասի մոտ ծառ կա չինարի,
Բաժանման օշարակը դառն է թույնից,
Ասացեք մորս, մայրս թող լաց լինի.
Մորիցս բացի ուրիշը կեղծ կլացի:

26 (316).

Սծյլէսհն դէստանլար դհլլէրդէն-դհլէ,
Գէլհն դէ գծրհւն Զէյթունն դաղլարդա
Էրմէնհ ֆէդայհ չօք դըր դաղլարդա,
Բինը բիր ուղրընա ծլէն յավրուլար:

Բերնից բերան վիպերգը թող վիպեն,
Զեյթունի լեռներում թող գան ու տեսնեն,
Հայ ֆեդայիներ շատ կան լեռներում.
Հազարը մեկի պես մեռնում են որդիները:

27 (317).

ԻԳԻԹԼԷՐ ԱՍՔԷՐԷ ԳԻԴԻՅՕՐ ԴԷՅԻ

Իգիթլէր ասքէրէ գիդհյօր դէյի,
Խալխա իլէ քէթէ ազընխ,
Ամա՛ն, ամա՛ն, յազընխ օլդու,
Իգիթլէրէ յազընխ օլդու:

ՔԱՋԵՐՆ ԻԲՐ ԱՍԿՅԱՐ ԷԻՆ ԳՆՈՒՄ

Քաջերն իբր ասկյար էին գնում,
Բաղարջ ու գաթա պաշարով,
Ավա՛ղ, ավա՛ղ, ափսոս եղան,
Քաջերին ափսոս եղավ:

28 (318).

ԷԳԻՆԴԷՆ ԱԾԱՅԸ ՋԻՆՋԻՐ ՉԷՔԴԻԼԷՐ

Էգինդէն աշալը զինջիր չէքդիլէր,
Գիդէն իգիթլէրի սույա դէքդհւլէր,
Իգիթլէ՛ր, իգիթլէ՛ր, բաբա իգիթլէր,
Սու իչինդէ յաթան, շիրի՛ն իգիթլէր:

ԱԿՆԻՑ ԴՈՒՐՍ ՇՂԹԱ ՔԱՇԵՑԻՆ

Ակնից դուրս շղթա քաշեցին,
Գնացող քաջերին ջուրը թափեցին,
Քաջե՛ր, քաջե՛ր, հերո՛ս քաջեր,
Ջրամույն եղած, անու՛շ հերոսներ:

29 (319).

ՂԸՇԼԱՂԸՆ ԾՆԻՆԴԷ ԲԻՐ ԲՀՒԾՀՒՔ ՀԱՎԼՈՒ

Ղըշլաղընն ծնինդէ բիր բհւյհւք հավլու,
Աղալար օթուրմուշ օյնըյօր թավլու,
Իգիթլէր գիդհյօր քօլլարը բաղլը,
Քիմիսի՝ նշանլը, քիմիսի՝ էվլի:

ՋՈՐԱՆՈՑԻ ԱՌԱՋ ՄԻ ՄԵԾ ԲԱԿ

Ջորանոցի առաջ մի մեծ բակ,
Աղաները նստած կխաղան ձարտ,
Քաջերը գնում են՝ ձեռները կապված,
Մեկը՝ նշանված, մեկը՝ պսակված:

* Գյավուր լեռ է կոչվել, որովհետև այնտեղ շատ հայեր են զոհվել:

30 (320).

ՂԸՕԼԱՂԸՆ ԾՆԻՆԴԷ ՉԻՖԹ ՓԸՆԱՐ ԱՔԱՐ

Ղըշլաղըն ծնինդէ չիֆթ փընար աքար,
Ղուրշում փաթրթըսը յուրէիմ յաքար,
Ծիմդի բէնիմ անամ յօլումա բաքար,
Նշանլում դա դույսա՝ սաչլարը յօլար:

ՋՈՐԱՆՈՑԻ ԱՌԱՋ ՁՈՒՅԳ ԱՂԲՅՈՒՐ Է ՀՈՍՈՒՄ

Ջորանոցի առաջ զույգ աղբյուր է հոսում,
Գնդակների աղմուկը սիրտս է այրում,
Հիմա մայրս իմ ճամփին է նայում,
Նշանածս լսելով՝ մազերն է փետտում:

31 (321).

ՍՍԻՐՍԻ-ՍՍԻՐՍԻ ԻՉԻ ԷՐՔԷՔ ՈՒՇԱՔԸ

Սիւրսի-սիւրսի իչի էրքէք ուշաքը,
Դէշէհինի իչի՝ ուֆաք ուշաքը.
Էլի՝ թուֆէնկլի, փէլի՝ ֆիշէնկլի,
Բիզիմ բէյլէրիմիզ ևէրդէ՞ քալդը:

ՇԱՐՔԵՐԻ ՄԵՋ՝ ԲԱՆՎՈՐ ԱՅՐԵՐ

Շարքերի մեջ՝ բանվոր այրեր,
Անկողնի մեջ՝ փոքրիկ տղաներ.
Ձեռքին՝ հրացան, կրծքին՝ փամփուշտակալ,
Մեր մեծերը որտե՞ղ մնացին:

32 (322).

ԽՈՒՐՇՈՒՆ ՔՈՒՐՄՈՒՇ ՔՕԼԼԱՐԸՆԱ

Խուրշուն քուրմուշ քօլլարընա,
Քարշը քօյմուշ էլլէրինէ,
Իզին վէրմիշ Ալամանիա՝
Սօյլէթմէմիշ դիլլէրինի:

ԹԵՎԵՐԻՆ ԱՄՐԱՑՐԵԼ Է ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ

Թևերին ամրացրել է փամփուշտներ,
Դեմ դիմաց դրել է ձեռքերը,
Թույլատրել է Գերմանիան՝
Շրարբառեցին լեզուները:

ՈՒԼԱՆ ԳՅԱՎՈՒ՛Ր, ԴՕՂՐՈՒ ՍՕՑԼԷ

33 (323).

- Ուլաև գյավու՛ր, դօղրու սօյլէ,
Սէնդէ մարթին վա՞րմը՞ղ:
- Հայը՛ր, էֆէնդի՛մ, իֆդիրադըր,
Բիլմէ՛մ, գօրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գօրմէդի՛մ:
(Պատեն կախված է՝ չե՛մ ըսեր):

ԳՅԱՎՈՒ՛Ր ՏՂԱ, ՃԻՇՏՆ ԱՍԱ

- Գյավու՛ր տղա, ճիշտն ասա,
Ռո մոտ հրացան կա՞:
- Ո՛չ, տե՛ր իմ, հերյուրանք է,
Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել:
(Պատեն կախված է՝ չե՛մ ըսեր):

34 (324).

- Ուլաև գյավու՛ր դօղրու սօյլէ,
Սէն թիւրք զաբիթ օլդիւրդիւ՞ն միւ:
- Հայը՛ր, էֆէնդի՛մ, իֆդիրադըր,
Բիլմէ՛մ, գօրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գօրմէդի՛մ:
(Վեց-յոթը հատ սպանած եմ):

- Գյավու՛ր տղա, ճիշտն ասա,
Դու թուրք զաբիթ սպանե՞լ ես:
- Ո՛չ, տե՛ր իմ, հերյուրանք է,
Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել:
(Վե՛ց-յո՛թը հատ սպանած եմ):

35 (325).

- Ուլաև գյավու՛ր, դօղրու սօյլէ,
Սէնին արքադաշընն վա՞րմը:
- Հայը՛ր, էֆէնդի՛մ, իֆդիրադըր,
Բիլմէ՛մ, գօրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գօրմէդի՛մ:
(Հինգ հարյուր հոգի ենք՝ չե՛մ ըսեր):

- Գյավու՛ր տղա, ճիշտն ասա,
Դու ընկերներ շատ ունե՞ս:
- Ո՛չ, տե՛ր իմ, հերյուրանք է,
Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել:
(Հի՛նգ հարյուր հոգի ենք՝ չե՛մ ըսեր):

36 (326).

- Ուլաև գյավու՛ր, դօղրու սօյլէ,
Սէրօփ փաշայը թանը՞մը՞ղընն:
- Հայը՛ր, էֆէնդի՛մ, իֆդիրադըր,
Բիլմէ՛մ, գօրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գօրմէդի՛մ:
(Գիտեմ՝ չե՛մ ըսեր, գիտեմ՝ չե՛մ ըսեր):

- Գյավու՛ր տղա, ճիշտն ասա,
Սերոբ փաշային ճանաչու՞մ ես:
- Ո՛չ, տե՛ր իմ, հերյուրանք է,
Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել:
(Գիտեմ՝ չե՛մ ըսեր, գիտեմ՝ չե՛մ ըսեր):

37 (327).

- Ուլաև գյավու՛ր, դօղրու սօյլէ,
Սէն Մէրսիհէ բօմբա յօլադը՞նմը:
- Հայը՛ր, էֆէնդի՛մ, իֆդիրադըր,
Բիլմէ՛մ, գօրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գօրմէդի՛մ:
(Այո՛, ղրկե՛լ եմ, չե՛մ ըսեր):

- Գյավու՛ր տղա, ճիշտն ասա,
Դու Մերսին ռումբ ուղարկե՞լ ես:
- Ո՛չ, տե՛ր իմ, հերյուրանք է,
Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել:
(Այո՛, ղրկե՛լ եմ. չե՛մ ըսեր):

38 (328).

- Ուլաև գյավու՛ր, դօղրու սօյլէ,
Բանքայը բասաև սէ՞նմիսին:*
- Հայը՛ր, էֆէնդի՛մ, իֆդիրադըր,
Բիլմէ՛մ, գօրմէ՛դիմ, բիլմէ՛մ, գօրմէդի՛մ:
(Մե՛նք էինք՝ չե՛մ ըսեր, հայոց ազգը չե՛մ մատներ):

- Գյավու՛ր տղա, ճիշտն ասա,
*Բանկը ներխուժողը դու՞ էիր:**
- Ո՛չ, տե՛ր իմ, հերյուրանք է,
Չգիտե՛մ, չե՛մ տեսել, չգիտե՛մ, չե՛մ տեսել:
(Մե՛նք էինք՝ չե՛մ ըսեր, հայոց ազգը չե՛մ մատներ):

39 (329).

ՓՐԿԻՉԻՆ** ՅՕԼԼԱՐԸ

Փրկիչին յօլլարը թաշ ընաև թիքէն,
Օլմասընը ջինևանդա թիքէն,
Փրկիչին քափուսը դաղլարա բաքար,
Հասդալար օթուրմուշ սըրայա բաքար:

Դօքթօրլար գէլինջէ՝ յուրէգլէր քալքար,
Քօրքարըմ. Զարդարյան բանա բաքաջաք,
Բիրազ դու՛ր, Զարդարյա՛ն, սօլուք ալալըմ,
Ջանըմ ընաև թէնիմի թէլիմ օլալըմ:

Ղըյմա՛, դօքթօ՛ր Զարդարյան, ղըյմա՛ ջանըմա,
Ցիրմի բէշ յաշընդա քօ՛յմա թօփրաղա,
Չօլուք-չօջուղում վար քալըր մէյդանդա,
Չինքի յազընք օլաջաք յարիմ իլէն բանա:

Մէզարըմը Բալընքլըյա*** քօյսունլար,
Թասֆիրիմի բաշ ուջումա քօյսունլար,
Գէլէն-գէչէն՝ ջահիլ ծլմիւշ դէսինլէր,
Հէ՛մ հասրէթլիք, հէ՛մ ղուրբէթլիք բաշըմա:

ՓՐԿԻՉԻ** ՃԱՄՓԱՆԵՐԸ

Փրկիչի ճամփաները քար ու տատասկ,
Աշխարհում թող չաճի տատասկ,
Փրկիչի դուռը լեռներին է նայում,
Հիվանդները նստած՝ հերթ են սպասում:

Բժիշկների գալուն պես՝ սրտերն են թունդ եղնում,
Վախենում եմ. Զարդարյանն ինձ է քննելու,
Զարդարյա՛ն, սպասի՛ր, մի քիչ շունչ առնեմ.
Մարմինս ու հոգիս քեզ հանձնեմ:

Խնայի՛ր, բժի՛շկ Զարդարյան, խնայի՛ր ինձ,
Քսանհինգ տարեկան ինձ հող մի՛ մտցնի,
Անտեր կմնան մանուկներս իմ,
Ափսոս կլինի ինձ ու իմ յարին:

*Շիրիմս Բալընքլըյում*** թող դնեն,*
Նկարս գլխիս վրա թող դնեն,
Եկող-անցնողը՝ վաղամեռ էր թող ասեն,
Ե՛վ կարոտություն, և՛ պանդխտություն՝ գլխիս:

40 (330).

ԹՈՒՅՔԸ ԷԿԱՎ ԳԵՂԸ ՄՏԱՎ

Թույքը էկավ գեղը մտավ,
Տղեքին ասկեղ տարավ,
Աչքերնուս քունը թռավ:
Գիշեր-ցերեկ մայման աշքիս արցունքս կտրավ,
«Սահա՛կ» կանչելով սոլոխս հատավ.
- Էկո՛, Սահա՛կ, էկո՛, տղա՛ս,
Մրմուղը կուտէ հոգիս,
Չեմ դիմանար կարոտիդ…

Տնեցիք բյություն, դուռ-դրացի,
Քեզի կը հիշեն՝ «Աստվա՛ծ» կը կանչեն,
Աստուծո ձեռքը քու վրադ ըլլա,
Գացած-էկած ճամփադ անփորձանք ըլլա,
Սաղ-սելամեթ ըգաս ու գեղը մտնաս,
Սիրած աղջիկադ հոգով տիրանաս,
Մեյդ ու պապդ, ջինս-ջիբիլլեթըդ
Պսակդ պագնեն և ուրախանան:

---

* Պատմական շերտավորումներ ունեցող այս երգի հատվածները գրի ենք առել մի քանի բանասացներից: Ըստ աղաբազարցի երգասաց Մանճիկ Կիրակոսյանի (ծնվ. 1929 թ.) երգի այս մասը հորինվել է Սոլես գյուղից Զարեհ Խաչոյանի շուրջ: Նա Բանկ Օտոմանի գործողության դատավարության ժամանակ թուրք ոստիկանից խնդրում է զուգարան գնալ: Մտնում է, ծորակի բռնիչը հանում, դրանով իր փորը պատռում, աղիքները դուրս թափում ու մեռնում է, բայց չի խոստովանում:

** Պոլսո Ս. Փրկիչ հիվանդանոցը:

*** Ս. Փրկիչ հիվանդանոցին կից գերեզմանատունը:

41 (331).

ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ ԵՐԳ

Ես ծնվել եմ Ադաբազար,
Կանչեցին ինձ զինվորության,
Ես ալ ըսի շատ համարձակ.
- Զգելով ես սիրելի մայր,
Չորս քույրեր ալ պատվական.
Եթե վիզս անգամ կտրեք,

Թուրքի զինվոր չե՛մ ըլլար ես:
Բռնեցին ինձ, տարին Խասկալ,
Ծեծով, ջարդով նետեցին բանտ,
Չեն հասկանար հասարակ բան.
Փոխանակ թուրք ասկյար դառնամ,
Անդրանիկին զինվոր կըլլամ:

42 (332).

ԲԱՆՏԻՍ ԴՌՆԵՐՆ ԷԻՆ ՅՈԹԸ ՔԱՐԵՐՈՎ

Բանտիս դռներն էին յոթը քարերով,
Ծենքն էր ամուր պատած երկաթ ճաղերով,
Հանկարծ լսվեց դռներու ձայն,
Թուրք զինվորներ ներս նետվեցան:
Առտուն կանուխ ժամը չորսին,
Մահվան յաֆթան կրծքիս դրին,
Կախաղանին առաջը տարին,
Վերջին խոսքս ըսել տվին.
- Բանկոնակս նվեր տարեք մայրիկիս,
Մի՛ ըսեք, թե որդիդ կախվավ,

Այլ՝ պանդուխտ է բանտին մեջ:
Ժամացույցս նվեր տվեք քույրիկիս,
Մի՛ ըսեք, թե եղբայրդ կախվավ,
Այլ՝ պանդուխ է բանտին մեջ:
Հոգիս տարեք իմ սիրելի Նազլուին,
Մի՛ ըսեք, թե յարդ կախվավ,
Այլ՝ պանդուխ է բանտին մեջ:
Գերեզմանս դու՛ք փորեցեք,
Գերեզմանիս քարին վրա՝
Նահատակ է՝ գրեցեք:

43 (333).

ՂԱՍԱԲ ՄԻՍԱՔ*

Ասլան գիբի էջէլիմ բու.
Ծլիմիմէ սէբէբ օլան
Աջէբ բու հալիմէ աջը՞ր մը,
Քէնդիրլէր, անն՛մ, յաղլանը՞ր մը,
Բաշը աչըք, այաքն յալնայաք,
Բէնիմ գիբի սալլանը՞ր մը:

Բու նէ՞ հալ դըր, ղասա՛բ Միսաք,
Բու հալինէ ջան դայանը՞ր մը,
Ղօյուն գիբի ասըլմըշ սըն,
Սէնի գöրէն դայանը՞ր մը,
Էֆէնդի՛մ, ամա՛ն, ամա՛ն:

Բաքըըմ՝ բէյազ էնթարի գէյդիրդիլէր
Գէջէ վաքիդ՝ ռույա գիբի,
Դարաղաջըմըն աջըիբինդէն
Թէշլիմ աքար Ջըհան** գիբի,
Դարաղաջըմ հազըրդըլար,
Աննէմ բէքլէր մէհման գիբի:

Բու նէ՞ հալ դըր, ղասա՛բ Միսաք,
Բու հալինէ ջան դայանը՞ր մը,
Ղօյուն գիբի ասըլմըշ սըն,
Սէնի գöրէն դայանը՞ր մը,
Էֆէնդի՛մ, ամա՛ն, ամա՛ն:

*ՄՍԱԳՈՐԾ ՄԻՍԱՔԸ**

Առյուծի պես վախճանն իմ.
Մահվանս պատճառ դարձողը
Արդյոք կգթա՞ այս վիճակիս,
Պարանները, մա՛յր իմ, կյուղվե՞ն,
Գլուխը բաց, ոտքը բոբիկ
Արդյոք ինձ պես կճոճվի՞:

Սա ի՞նչ վիճակ է, մսագո՛րծ Միսաք,
Այս վիճակիդ մարդ կդիմանա՞,
Կախված ես դու ինչպես ոչխար,
Քեզ տեսնողը կդիմանա՞,
Տե՛ր իմ, ավա՛ղ, ավա՛ղ:

Տեսա՝ ճերմակ շապիկ հագցրեցին
Երազի պես մութ գիշերվա,
Արցունքները կախաղանից
*Ջըհանի** պես հոսում էին,*
Կախաղանս պատրաստեցին.
Մայրս մեհյանի պես ինձ կսպասե:

Սա ի՞նչ վիճակ է, մսագո՛րծ Միսաք,
Այս վիճակիդ մարդ կդիմանա՞,
Կախված ես դու ինչպես ոչխար,
Քեզ տեսնողը կդիմանա՞,
Տե՛ր իմ, ավա՛ղ, ավա՛ղ:

* Այս վիպերգը երգել է այնթապցի Հեքիմյան Գևորգը: Ըստ նրա, Միսակը 1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ մսագործ (ղասաբ) է եղել: Տեսնելով այդ ահավոր ջարդը, նա, վրեժով լցված, իր խանութի նկուղում մի քանի թուրք է սպանել, մսերը խորոված արել ու կերցրել թուրքերին: Վերջում թուրքական կառավարության կողմից գործը բացվել է, և մսագործ Միսակին ոչխարի պես կախաղան են բարձրացրել: Երգասացն ավելացնում է. «Արդյոք ճիշտ է, թե՝ սխալ, ստույգ չեմ կարող ասել»:

** Կիլիկիայի կենտրոնով հոսող գետ:

44 (334).

ՀԱՆԻՅԱԴԱ ԲԷՆԻՄ ԹՈՒԶ-ԷՔՄԷԻՄ ՅԻՅԷՆԼԷՐ

Հանիյադա բէնիմ թուզ-էքմէիմ յիյէնլէր,
«Ախբաբ öլմէդէն՝ բէն öլիրիմ», - դիյէնլէր,
Բէն բանա էթդիմ, անա՛մ, քի՞մէ նէ՛ դէյիմ.
Էլիմ լէ դիւշդիւմ, քի՞մէ նէ՛ դէյիմ:

Չըքա-չըքա շու բէքադա բաքարըմ,
Դէլի գöնլիւմ աթէշլէրդէ յաքարըմ,
Մէվլամ իզին վէրիրսէ, մախբուսդան չքարըմ,
Էլիմ լէ դուշդիւմ, քի՞մէ նէ՛ դէյիմ:

Սէյիսլէր աթլարը յէմլիյօր,
Մախբուսխանէ խւսդիւմիզէ դամլըյօր,
Բէն բանա էթդիմ, անա՛մ, քի՞մէ նէ՛ դէյիմ.
Էլիմ լէ դիւշդիւմ, քի՞մէ նէ՛ դէյիմ:

Բաբամ չաղըըլարը դօլանըյօր,
Անամ դա բաշ խւսդիւմդէ աղլըյօր,
Բիչարէ նըշանլըմ քարալար բաղլըյօր,
Բէն բանա էթդիմ, անա՛մ, քի՞մէ նէ՛ դէյիմ.
Էլիմ լէ դիւշդիմ, քի՞մէ նէ՛ դէյիմ:

Արարա դաղընը* դումամ բիւրիւդիւ,
Տըլիկ Սարգիս, Թալաք** Միսակ վուրուլմուշ,
Բէն բանա էթդիմ, անա՛մ, քի՞մէ նէ՛ դէյիմ.
Էլիմ լէ դիւշդիւմ, քի՞մէ նէ՛ դէյիմ:

ՈՒ՞Ր ԵՆ ԻՄ ԱՂ ՈՒ ՀԱՑՆ ՈՒՏՈՂՆԵՐԸ

Ու՞ր են իմ աղ ու հացն ուտողները
«Ընկերս չմեռած՝ ես մեռնեմ», - ասողները,
Ինքս ինձ արի, մա՛յր իմ, ու՞մ ի՛նչ ասեմ.
Ձեռքովս ընկա, ու՞մ ի՛նչ ասեմ:

Ծուլըվելով՝ պատուհանից կնայեմ,
Խելառ կյանքս կրակներում կվառեմ,
Աստված կամենա՝ բանտից կազատվեմ.
Ձեռքովս ընկա, ու՞մ ի՛նչ ասեմ:

Ձիապանները ձիերին են կերակրում,
Բանտի կտուրից մեր վրա է կաթկթում,
Ինքս ինձ արի, մա՛յր իմ, ու՞մ ի՛նչ ասեմ.
Ձեռքովս ընկա, ու՞մ ի՛նչ ասեմ:

Հայրս վրաններն է շրջում,
Մայրս՝ գլխիս վրա լաց լինում,
Խեղճ նշանածս սևեր է կապում,
Ինքս ինձ արի, մա՛յր իմ, ու՞մ ի՛նչ ասեմ.
Ձեռքովս ընկա, ու՞մ ի՛նչ ասեմ:

Արարա լեռան մշուշն է պատել,*
*Տըլիկ Սարգիսն ու Թալաք** Միսակը խփվել են,*
Ինքս ինձ արի, մա՛յր իմ, ու՞մ ի՛նչ ասեմ.
Ձեռքովս ընկա, ու՞մ ի՛նչ ասեմ:

45 (335).

ԷՖԷ-ԹՕՐՕՍ***

Էնգիւրիւդէն չըքդըղըմը գöրմիւշլէր,
Քըր աթըմըն յիւրիւյիւշիւնդէն բիլմիշլէր՝
Ծու գէլէն Էֆէ-Թօրօս դէմիշլէր:
Դօղուրմազ օլայդըն, ա՛յ անամ, բաշըմ բէլալը.
Էլլէրիմ՝ քէլէփչէ, բօղազըմ՝ հալքալը:

Էնգիւրիդէն չըքդըմ սահաթ բէշ իդի,
Բէնիմ արխադաշլարըմ՝ օն բէշ իդի,
Ծլդիւրդիւդիւմ չէրքէզ՝ յուզ օն բէշ իդի:
Դօղուրմազ օլայդըն, ա՛յ անամ, բաշըմ բէլալը.
Էլլէրիմ՝ քէլէփչէ, բօղազըմ՝ հալքալը:

Անքարանըն ըշըքլարը փառլըյօր,
Ջալըմ դիւշմանլար ուռգան յաղլըյօր,
Ուռգանըն խւսդիւնէ քանըմ դամլըյօր:
Դօղուրմազ օլայդըն, ա՛յ անամ, բաշըմ բէլալը.
Էլլէրիմ՝ քէլէփչէ, բօղազըմ՝ հալքալը:

*ԹՈՐՈՍ ԷՖԵՆԴԻՆ****

Էնգյուրիից դուրս գալս են տեսել,
Նժույգիս դոփյունից են հասկացել՝
Այս եկողը Էֆե-Թորոսն է, ասել են:
Չծնվեի փորձանքոտ գլխով, մա՛յր իմ,
Ձեռնակապ՝ ձեռքիս, շղթաներ՝ վզիս:

Էնգյուրիից դուրս եկա ժամը հինգն էր,
Իմ ընկերները՝ տասնհինգն էին,
Սպանածս չերքեզները՝ հարյուր տասնհինգ էին:
Չծնվեի փորձանքոտ գլխով, մա՛յր իմ,
Ձեռնակապ՝ ձեռքիս, շղթաներ՝ վզիս:

Անկարայի լույսերն են փայլում,
Դաժան թշնամիները օղակն են յուղում,
Օղակի վրա արյունս է կաթում:
Չծնվեի փորձանքոտ գլխով, մա՛յր իմ,
Ձեռնակապ՝ ձեռքիս, շղթաներ՝ վզիս:

* Հայ կամավոր լեգեոնականները 1918 թ. Արարա լեռան (Պաղեստին) մոտ պարտության են մատնել թուրք-գերմանական զորքերին՝ արժանանալով ֆրանսիական ու անգլիական դաշնակիցների խրախուսանքին: Այդ խիզախ մարտերում զոհվել են նաև Տըլիկյան Սարգիսն ու Թալաքյան Միսակը, իսկ երգասաց Մարիամ Բաղդիշյանի ամուսինը՝ Կարապետը, հաղթական վերադարձել է տուն և իր կնոջը սովորեցրել կռվի ժամանակ հորինված այս երգը:

** Կրճատված է հայկական ազգանվան «-յան» վերջավորությունները:

*** Այս երգի խոսքերը հազիվ վերհիշեց չաղարանցի (Էսքիշեհիր)՝ Փաթըրյան Սամվելը (ծնվ. 1900 թ.): Ըստ նրա, էֆե՝ էֆենդի (պարոն) Թորոսն իր վրիժառու խմբով շատ վնասներ է հասցրել թուրքերին, որոնք նրան մահվան են դատապարտել: Թորոսի մայրը փորձել է փրկագնով ազատել իր որդուն, բայց թուրքերը յուղոտած պարանով կախել են նրան:

- Ամմայը՛ն օղլումու, ալալըմ սաթըն, -
Թօրօսումն անասը՝ բիր քյուչյուք քաղըն, -
Ջէրիմդէ բուլունուր բին բէշ յիւզ ալթըն:

- Վարը՛ն, սօյլէին անամա, բօղչամ աչմասըն,
Ղուխա շալվարըմա ուչքուր թաքմասըն,
«Օղլուն Թօրօս գէլիր դիյէ» յօլա բաքմասըն.
Ղայրը բէն սըլամա վարամազ օլդում,
Իսկուհի ընշանըմ գօրէմէզ օլդում,
Դարաջըք սօքաքդամն գէչէմէզ օլդում:

Շու դաղընն արդընդա բիր գէզէն օլսա,
Ձայըրը-չիմէնի յօքլալան օլսա,
Էրմէնի միլլէթէ բիր բէյլիք օլսա՝
Ղուշ գիբի դօնօրիզ մէչդանդա,
Բիզ օլկուրուզ միլլէթ յօլընա:

- *Մի՛ կախեք տղիս՝ ծախու կառնեմ, -*
Թորոսի մայրը՝ մի փոքրիկ կին, -
Գրպանումս կգտնվի հազար հինգ հարյուր ոսկի:

- *Գնացե՛ք, ասացե՛ք մորս՝ օժիտս չբացի,*
Բոդյա շալվարիս խոնջամ չանցկացնի,
«Թորոս տղաս գալիս է» ասելով՝ ճամփին չնայի.
Արդեն ես օգնել չեմ կարող հայրենիքիս,
Տեսնել չեմ կարող Իսկուհի նշանածիս,
Անցնել չեմ կարող այս նեղ փողոցից:

Թե լեռները մի հսկող լինի,
Թուփ ու խոիվ խուզարկող լինի,
Հայ ազգին մի թագավոր թե լինի՝
Միտի պես հրապարակում կսավառնենք,
Մեր ազգի փառքի ճամփին կգոհվենք:

2. ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾԻ ԵՐԳԵՐ

1 (336).

ՀՈՒՐՐՅԷԹ, ԱԴԱԼԷԹ, ՄՈՒՍԱՎԱԹ, ՅԱՇԱՍԸ՛Ն ՄԻԼԼԷԹ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԿԵՑՑԷ՛ ԱԶԳԸ

Գէջէլէր գիւնդիւզ օլդու,
Դիլլէրիմիզ սազ օլդու,
Հուրրյէթին աշքընա
Չօք ջանլար ֆէդա օլդու:

Գիշերները ցերեկ դարձան,
Մեր լեզուները սազ դարձան,
Ազատության սիրուն համար
Շատ-շատերը զոհվեցան:

2 (337).

ՔԱԼՔԸ՛Ն, ՀԷ՛Յ, ՎԱԹԱՆԴԱՇԼԱ՛Ր

ՎԵ՛Ր ԿԱՑԵՔ, ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵ՛Ր

Քալքը՛ն, հէ՛յ, վաթանդաշլա՛ր,
Սէվինէլիմ յօլդաշլա՛ր,
Իշդէ սիզէ հիւրրյէթ.
Յաշասըն օսմանըլար:

Վե՛ր կացեք, հայրենակիցնե՛ր,
Ուրախանանք, ընկերնե՛ր,
Ահա ձեզի ազատություն.
Թող ապրեն օսմանցիները:

3 (338).

ՈՒՅԱ՛Ն, ՍՈՒԼԹԱ՛Ն ՀԱՄԻԴ, ՈՒՅԱ՛Ն

ՋԱՐԹՆԻ՛Ր, ՍՈՒԼԹԱ՛Ն ՀԱՄԻԴ, ՋԱՐԹՆԻ՛Ր

Փէնջէրէդէն քար գէլիյօր,
Բա՛ք դրշարը քի՞մ գէլիյօր,
Ույա՛ն, սուլթա՛ն Համիդ, ույա՛ն.
Քան աղլյօր բիւթիւն ջիհան:*
Ամա՛ն, ամա՛ն, մայրի՛կ:

Պատուհանից ձյուն է գալիս,
Տե՛ս դրսից ո՞վ է գալիս,
Ջարթնի՛ր, սուլթա՛ն Համիդ, զարթնի՛ր.
Ողջ աշխարհն արյուն է լալիս:
Ավա՛ղ, ավա՛ղ, մայրի՛կ:

Ձայա ինդիմ. չայ գէչիլմէզ,
Սու բուլանդը. հիչ իչիլմէզ,
Ույա՛ն, սուլթա՛ն, զալըմ սուլթա՛ն.
Քան աղլյօր բիւթիւն ջիհան:
Ամա՛ն, ամա՛ն, մայրի՛կ:

Գետափ իջա. գետն անցնել չի լինի,
Ջուրը պղտոր է. խմել չի լինի.
Ջարթնի՛ր, սուլթա՛ն, դաժան սուլթա՛ն.
Ողջ աշխարհն արյուն է լալիս:
Ավա՛ղ, ավա՛ղ, մայրի՛կ:

* Ակնարկում է 1894-1896 թթ. հայկական կոտորածները:

Թուզլու օլուր Իստանբուլուն ֆադըղը,
Թաշդան օլուր էրմէնիհին յասդըղը,
Քյօ օլասըն շու մէչդանըն դօսթլուդու.*
Ալդըլար նազլը յարիմ, դուչան աղլասըն
Ամա՛ն, ամա՛ն, մայրի՛կ:

Աղի է լինում Ստամբուլի պիստակը.
Քարից է լինում հայերի բարձը.
*Կուրանար այս հրապարակային բարեկամությունը.**
Տարան սիրած յարիս, լսողը թող լաց լինի:
Ավա՛ղ, ավա՛ղ, մայրի՛կ:

4 (339).

ՓԱԴԻՇԱՀ ՕԹՈՒՐՄՈՒՇ ԹԱԽԴԸՆԴԱՆ ԲԱՔԱՐ

ՏԻՐԱԿԱԼԸ ՆՍՏԱԾ՝ ԳԱՀԻՑ Է ԴԻՏՈՒՄ

Փադիշահ օթուրմուշ թախդընդան բաքար.
Թախդընընն ալթընդա ալ-քանլար աքար.
Բալթայը վուրընջա՝ յաթթը օլկուէր.
Աջայիբ հալլէրէ դէուշդէ էրմէնի:

Տիրակալը նստած՝ գահից է դիտում,
Գահի տակից ալ արյուն է հոսում.
Կացինով խփված՝ դիակները փովեցին.
Ողբալի վիճակի մեջ ընկավ հայը:

Շէֆքէթլիմ օթուրմուշ թախդընդան բաքար.
Գյավուրուն քանլարը սէլ գիբի աքար.
Հէուրրյէթ իսդիյէնէլէր դէրէդէ քօքար.
Աջայիբ հալլէրէ դէուշդէ էրմէնի:

Տիրակալը նստած՝ գահից է դիտում,
Հայերի արյունը հեղեղի պես է հոսում.
Ազատության ձգտողները ձորում են ընկում.
Ողբալի վիճակի մեջ ընկավ հայը:

5 (340).

ՂԸՅՄԱ ԱԴԱՆԱ.** / ՋԱՐԴՎԱԾ ԱԴԱՆԱ**

Հէ՛յ, չամլա՛ր, չամլա՛ր, ալընը-աջընխ, չամլա՛ր,
Հէր գէունէշ վուրունջա՝ սաքընզ դամլար,
Սաքընզ դամլար սա՝ յէուրէիմ աղլար.
Ադաննա ըրմաղը՝ սէլ գիտի աքար.
Օ՛ֆ, իշդէ գէլդիմ սաննա, ղըլմա՛ Ադաննա,
Օ՛ֆ, իշդէ գօրդէում սիզի, ղըլմա՛ չօջուքլար:

Հե՛յ, մայրիննե՛ր, մայրիննե՛ր, հպարտ մայրիննե՛ր,
Ամեն արև դիպչելիս՝ խեժն է կաթկթում,
Խեժը ծորալիս՝ սիրտս է լաց լինում.
Ադանա գետն է հեղեղի պես հոսում.
Ավա՛ղ, քեզ եկա, քարդվա՛ծ Ադանա,
Ավա՛ղ, ձեզ տեսա, մանուկնե՛ր մորթված:

Ադանա քօփրիւսիւ թախդա դընր, թախդա,
Էրմէնի մուհաջիրի գէլիր բու հավթա,
Ադանա ըրմաղը՝ լէշ իլէն քանլար,
Քալդընրը՛ն լէշլէրի՝ Ադանա քօքար.
Օ՛ֆ, իշդէ գէլդիմ սաննա, ղըլմա՛ Ադանա,
Օ՛ֆ, իշդէ գօրդէում սիզի, ղըլմա՛ չօջուքլար:

Ադանայի կամուրջն է փայտյա,
Հայ գաղթականները կգան այս շաբաթ,
Ադանայի գետը՝ արյուն ու դիակ,
Հավաքե՛ք դիակները. կհոտի Ադանան.
Ավա՛ղ, քեզ եկա, քարդվա՛ծ Ադանա,
Ավա՛ղ, ձեզ տեսա, մանուկնե՛ր մորթված:

6 (341).

ԱԴԱՆԱՑԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Առավոտյան արշալույսին
Չորս կողմերնիս պատեցին.
Հազարավոր գնդակներ
Կարկուտի պես տեղացին:

Եվ հայերուն դիակները
Ասդին, անդին փռեցին:

Արյան կարմիր գույներով
Խեղճ Ադանան ներկեցին

Կացիններու հարվածներով
Դուռ , պատուհան կոտրեցին.
Չթողեցին փայլուն տուն
Ու բոլորն ալ ալրեցին:

7 (342).

ԱԴԱՆԱՑԻ ՈՂԲԸ***

Կոտորածն անգութ՝ հայերը թող լան,
Անապատ դարձավ շքեղ Ադանան,

Կրակն ու սուրը և անխիղճ թալան,
Ռուբինյանց տունը, ա՛խ, ըրին վերան:

* Նկատի ունի 1908 թ. Օսմանյան Թուրքիայի Սահմանադրությունը, որը Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդներին, անկախ ազգությունից ու դավանանքից, խոստանում էր «Ազատություն, Արդարություն, Եղբայրություն, Հավասարություն»:

** Այս երգը հորինվել է 1909 թ. Ադանայի կոտորածի առիթով:

*** Գրող, պատմագիր Սմբատ Բյուրատի (Տեր-Ղազարենց) (1862, Ջեյթուն – 1915, Մեծ եղեռնի ճահճատակ) բանաստեղծության ժողովրդականացած այս տարբերակը մեզ է հաղորդել զեյթունցի Կարապետ Թոզլյանը (ծնվ. 1903 թ.): Թեպետ նա անգրագետ էր, բայց իր բացառիկ հիշողությամբ մտապահել էր իր լսած գրեթե բոլոր երգերը, որոնք ինչպես ինքն է պատմել, «ամեն իրիկուն քնանալեն առաջ աղոթքի պես» մրմնջացել է ինքն իր համար, քանի որ «եթե կոմունիստները լսեին՝ կբռնեին...»: Հետևաբար նա մեծ ուրախությամբ էր մեզ հաղորդում իր հիշածները, որպեսզի գրի առնվեն, «չմոռացվին, գալիք սերունդներն ալ սորվին...»:

Րոպե մը չանցած ու անզեն հայեր
Ինկան սուրին տակ խուժանին առջև,
Ժամեր, դպրոցներ բոցի մեջ կորան,
Բյուրավոր հայեր անհնա մեռան:

Անգութ թուրքերը որբացրին, թողին.
Ջավակը՝ մորմեն, հարսը՝ իր փեսեն,
Ջարդ ու խուրդ ըրին ինչ որ պատահեց,
Կերան, կշտացան հայու արյունեն:

Երեք օր-գիշեր կրակը՝ ներսեն,
Թշնամու սուրը, գնդակը՝ դուրսեն,
Ջնջեցին հայեր երկրի երեսեն,
Արյուն կվազեր հայ փողոցներեն:

Պարապ է, հե՛յ վախ, հարուստ Ադանան,
Մոխիր է դարձեր ամբողջ Կիլիկիան,
Միայն ապրեցավ Հաճընը սիրուն,
Ինչու՞ չի շարժիր ապառաժ Զեյթուն:

8 (343).
ԻՆՉ ՈՐ ՏԵՍԱ ԵՍ ԻՄ ԱՉՔՈՎ

Ինչ որ տեսա ես իմ աչքով
Ու ականջովս լսեցի,
Թող չտեսնան սարի գիլանք
Ու թշնամին մեր բախտի:

Ո՞նց համբերեմ, հոգի՛ ջան:
Ո՞նց համբերեմ, ախպե՛ր ջան:*

Գրկանոցներ թալին փախան խեղճ մայրեր,
Ոուտ ու տկլոզ կմախքացած մանուկներ,
Հայացքները Աստծուն հառած հիվանդներ,
Խոպոտ ձայնով իրենց մաճը կաղերսեն:

Ո՞նց համբերեմ, հոգի՛ ջան:
Ո՞նց համբերեմ, ախպե՛ր ջան:

Գիշեր ու զոր լաց ու ողբ եմ ես լսում,
Չունիմ հանգիստ, չունիմ դադար, չունիմ քուն,
Աչքս փակում՝ մեռելներ եմ միշտ տեսնում,
Կորցրեցի ազգ, բարեկամ, հող ու տուն:

Ո՞նց համբերեմ, հոգի՛ ջան:
Ո՞նց համբերեմ, ախպե՛ր ջան:

Վառվող գոմի էրդիկից թալի իմ ախպոր,
Քուր-ախպեր փախանք սոված ու տկլոր,
Բերի, հասցրի էս Հայաստան իմ ախպոր,
Ջեն լև տարան, մացի մենակ ու մոլոր:

Ո՞նց համբերեմ, հոգի՛ ջան:
Ո՞նց համբերեմ, ախպե՛ր ջան:

Էս աշխարքը դարձավ դժոխք, մեռելտուն,
Մեր ու մանուկ մացին անտեր ու անտուն,
Մեկը չեղավ բուներ ձեռքը թշնամու,
Թուրք գազանին մնաց մեր հող ու մեր տուն:

9 (344).
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԴՈՒ ՄԵՐ ԳԱՎԱՌ

Վասպուրական դու մեր գավառ,
Դու միշտ հերոս գտնվեցար,
Թշնամու դեմ պայքարեցար,
Հայր-որդիներ շատ զոհվեցան:

Սայլեր էկան երերալեն,
Մայրեր էկան մրմռալեն,
Էկան կանգնան փաշի դռան
- Ջարար յոք դըր, - փաշեն ասաց, -
Ռառսուն ոսկի խփողին տվավ:

Ավերեցին ու քանդեցին,
Ցավ ու դարդը մեզ թողեցին,
Գարուն բացվեց, գարուն էկավ,
Անձրևի տեղ արյուն էկավ:

Բերկրու Սև սարից թուրքը իջավ ցած,
Հազար-հազարով դիակ փովեցավ,
Վերան ըլնես դու, Բերկրու անկուշտ գետ,
Հազար-հազարով, արյուն խմող գետ:

10 (345).
ԱՆԴՈՔ-ԾՈՎԱՍԱՐ

«Անդոք-Ծովասար» քեֆիլներն ըսին,
Նորեն գոռացին զինված բյուրդերը,
Մի օր քրդախառն հայոց գյուղերից
Վառան փաշային ողջույն տվեցին:

Առավոտ կանուխ, երբ որ արթնացան,
Չորս հազար զորքով պաշարված տեսան,
Որոնց դեմ երսուն քաջերով միայն
Արձակ, համարձակ կովիլ սկսան:

Անտեղվան քյուրդեր վախցան, գոռացին.
«Ցամա՜ն, ֆեդա՛յի, դուրբան ձեր ոտքին,
Խնայեցե՛ք մեր պատիվ, ընտանիք,
Թողե՛ք որ ապրինք ներքև մեր հարկին»:

Քյուրդեր սարսափած փախուստի դարձան,
Իննսուն զոհ տվին, շատ մը հրացան,
«Ծուտ ընենք, - ըսին, - փախչինք.
Ահա ուր որ է հայերը կգան»:

* Երգասաց Ծողեր Տոնոյանը (ծնվ. 1901 թ., Մուշ) վառվող գոմի միջից մի կերպ դուրս է պրծել՝ ազատելով նաև իր փոքրիկ եղբորը, որին գրկած դժվարությամբ հասցրել է Արևելյան Հայաստան, բայց 1937 թ. նրան բանտարկել են, աքսորել և անհետ կորցրել: Ավելի մանրամասն Տե՛ս նույնի պատմած հուշը [I.8(8)]:

11 (346).
ԱՂԵՏ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

Այս ի՞նչ պատահեց Հայոց Աշխարհին,
Ողբերգություն է համաշխարհային,
Ինչու՞ է, իրոք, այսպես ստացվել,
Կարկուտը միշտ ծեծած տեղն է ծեծել:

Իրավ եմ ասում, ո՞ր մեղքին համար.
Մենք այլոց տունը երբեք չենք քանդել,
Մեր պաշտած հողը էլ ինչու՞ համար
Լքեց մեզ ու իր գիրկը չամփոփեց:

Հիմա հայության մի մասը չկա,
Որպես մի մեծ վերք մեր սրտում մնաց,
Կործանվեց տունս՝ դարձավ ավերակ,
Աստվա՛ծ, նման բախտ թշնամուս չտաս:

ՎԱ՛Յ, ԱՄԱ՛Ն

12 (347).

Ես ի՞նչ պիտ ընեմ տառապյալ կյանքը,
Վա՛յ, ամա՛ն,

Ես պիտի անցնիմ Աստծո փառքը,
Ա՛խ, ամա՛ն:

13 (348).

Ցոթը աղջիկ փախան, գացին,
Վա՛յ, ամա՛ն,

Երեքին՝ զարկին, չորսին՝ բռնեցին,
Ա՛խ, ամա՛ն:

14 (349).

Պզտիկ Տիգրանուհիին տունը այրեցին,
Վա՛յ, ամա՛ն,

Անոր պես հարուստը մոլլային տվին,
Ա՛խ, ամա՛ն:

15 (350).

Երեք խոջաներ գետին փորեցին,
Վա՛յ, ամա՛ն,

Երիտասարդ հայ տղուն ողջ-ողջ թաղեցին,
Ա՛խ, ամա՛ն:

16 (351).

Անոր քույրիկը տարին խաչեցին,
Վա՛յ, ամա՛ն,

Խաչեն վեր առին՝ ծովը նետեցին,
Ա՛խ, ամա՛ն:

17 (352).

Դպրոցը մտան, վարժուհուն բռնեցին,
Վա՛յ, ամա՛ն,

Բերանը բացեցին՝ լեզուն կտրեցին,
Ա՛խ, ամա՛ն:

18 (353).

Մայրի՛կ, բողջաղ ածիր, էլար, ու՞ր գացիր,
Վա՛յ, ամա՛ն,

Դեր Զորի ճամփաները մեռնելու՞ գացիր,
Ա՛խ, ամա՛ն:

ԲՈՒՐԱՍԸ ՎԱՆԴԸՐ

Բուրասը Վանդըր,
Էթաքը քանդըր,
Գիդէն գէլմիյօր,
Աջաբ ընէ՞ հալդըր:

19 (354).
ԱՅՍՏԵՂԸ ՎԱՆՆ Է

Այստեղը Վանն է,
Ծուրջը արյուն է,
Գնացողը՝ ետ չի գալիս,
Արդյոք ի՞նչ վիճակ է:

ԲՈՒՐԱՍԸ ՄՈՒՇԴԸՐ

Բուրասը Մուշդըր,
Ցօլը յօխուշդըր,
Գիդէն գէլմիյօր,
Աջաբ ընէ՞ իշդըր:

20 (355).
ԱՅՍՏԵՂԸ ՄՈՒՇՆ Է

Այստեղը Մուշն է,
Ճամփան բարձունք է,
Գնացողը՝ ետ չի գալիս,
Արդյոք ի՞նչ բան է:

21 (356).

ՀԱՎԱԴԱ ԲՈՒԼՈՒԹ ՅՕՔ

Հավադա բուլութ յօք,
Բու նէ՞ դումանդըր,
Մահլէդէ օլիւմ յօք,
Բու նէ՞ ֆիկանդըր,
Ծու եմէն յօլլարը
Նէ դէ յամանդըր,
Ահու եմէնդըր,
Գյիւլիւ չէմէնդըր,
Գիդէն գէլմիյօր,
Աջաբ նէդէ՞նդըր:

ԵՐԿՆՔՈՒՄ ԱՄՊ ՉԿԱ

Երկնքում ամպ չկա,
Այս ի՞նչ մշուշ է,
Թաղում մահ չկա,
Այս ի՞նչ կականն է,
Այս Եմենի ճամփեքը
Ինչքան դժվար են,
Ահավոր Եմեն է,
Վարդը չաման է,
Գնացողը՝ ետ չի գալիս,
Արդյոք ինչի՞ց է:

22 (357).

ԷՐԶԻՆՋԱՆ ԴՈՒՄԱՆ ՕԼԴՈՒ

Էրզինջան դուման օլդու,
Հալիմիզ յաման օլդու,
Նէ՛ ջանլար դուրբան օլդու,
Այրըլդըք Էրզինջանդան՝
Օթդան, օջախդան, ջանդան:
Օ՛յ, նէննի, նէննի, նէննի,
Անասըզ, դուզու, նէննի,
Պապասըզ, յավրու, նէննի,
Քիմսէսիզ, յավրու, նէննի:

ԵՐԶՆԿԱՆ ԾՈՒԽՈՎ ՊԱՏԵՑ

Երզնկան ծուխով պատեց,
Մեր վիճակը ողբալի դարձավ,
Ի՛նչ մարդիկ զոհ դարձան,
Երզնկայից հեռացանք՝
Հունձքից, օջախից.
Օ՛յ, նեննի, նեննի, նեննի,
Առանց մայր, գառնուկ, նեննի,
Առանց հայր, ձագուկ, նեննի,
Առանց տեր, ձագուկ, նեննի:

23 (358).

ՂԱՆԼԸ ԹԷԼԼԱԼ ՉԱՐՇԸԼԱՐԴԱ ԲԱՂԸՐԴԸ

Ղանլը թէլլալ չարշըլարդա բաղըրդը,
Էրմէնիլէր սեվքիաթա պյիւրկւդի,
Բիւթիւն ջիհան գէլդի սէյիրէ չքդը,
Ծու քյաֆիրին էթթիինէ բաքըը:

ԱՐՅՈՒՆՈՏ ՄՈՒՆԵՏԻԿԸ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՁԱՅՆ ՏՎԵՑ

Արյունոտ մունետիկը շուկաներում ձայն տվեց,
Հայերին տեղահանության քշեցին,
Ողջ աշխարհը եկավ նայելու,
Այս անաստվածի արածները դիտելու:

24 (359).

ՀԷ՛Յ, ԱՂԱԼԱ՛Ր, ԲՕՅԼԷ ԶՈՒԼՈՒՄ ՕԼՈՒ՞Ր ՄՈՒ

Հէ՛յ, աղալա՛ր, բօյլէ զուլում օլու՞ր մու,
Հէրքէս վաթանընդան սիւրգիւն օլու՞ր մու,
Յա՛թ, փադիշահը՛մ, յա՛թ գօրէսին ոիւյա,
Ղուրանա յաքըշմազ յափդըղըն իշլէր:

Հիւքիւմէթթէ օթուրան հէփիսի աղա,
Գիդին յալվարըն օլու՞ր մը չարէ,
Փադիշահըն էմրի դիր՝ բուլունմազ չարէ,
Աղլայա-աղլայա չխարդը դաղա:

ՀԵ՛Յ, ՊԱՐՈՆՆԵ՛Ր, ԱՅՍՊԵՍ ՏԱՌԱՊԱՆՔ ԿԼԻՆԻ՞

Հե՛յ, պարոննե՛ր, այսպես տառապանք կլինի՞,
Բոլորին հայրենիքից աքսորել կլինի՞,
Քնի՛ր, թագավո՛րս, քնի՛ր և երազ տես,
Կատարած գործերդ Ղուրանին վայել չեն:

Կառավարության մեջ բոլորն են աղա,
Գնանք խնդրենք՝ կլինի՞ մի ճար,
Թագավորի հրամանն է՝ ճար չկա,
Լալով-ողբալով բարձրացրին սար:

25 (360).

ԿԻԼԻԿԸ ԲԱԼԷՆ

Էնվէր վէ Թալաաթ տիժգը փաշիսէն
Սաքաք իդուն մըհանըրլըկէն,
Բըթըն մաֆ իրէն էրմանը միլլաթէն,
Լիգվընէն թըղ չիրնիր՝ չվա՞ զադ ացէն:

Հազուր էնը հարէր դըսնըհէնկ դարէն,
Իդուվ փրթըվիլը Կիլիկը էրմանէն,
Չա՞ միդք գունիր էն մադսըմ չուջըխնէն,
Ծառվընէն թըղ գըդրիր քըլընն գիխիւդնէն:
Չու՞ց մինք բըր մառնունք էրմանը չուջըխնէն,
Ճօրը քարվիցուն հիդվէն քուրվըդէն,
Դիր գայնիւղ չիդուվ էրմանը միլլաթէն,
Չու՞ց մինք բըր մառնունք Կիլիկը բալէն:
Ֆէրմանէն հասուվ միր յութը կէդէն.
«Մըհանըր բըր ըննուն բըթըն կէդանդէն»:
Չա՞ իր միր միդքը՝ միր Զաբալ Մուսէն,
Չու՞ց մինք բըր մառնունք իհալէն հալէն,
Խուսքը լավիցուվ Ցաղուբինց Իսալէն.
«Լիող թըղ ըննին, - ասուց կիդանդէն, -
Վէզ չը՛բըր ձոինք մինք միր դուշմանէն.
Նիդինք, նիդըդվինք, միռնինք միր խուղէն»:

ԿԻԼԻԿԻՈ ԱՂԵՏԸ

Էնվեր և Թալեաթ թուրք փաշաները
Պատճառ դարձան գաղթականության,
Լրիվ ոչնչացրին հայ ժողովրդին,
Լեզուները չորանար՝ ինչու՞ ասացին,
Հազար ինն հարյուր տասնհինգ թվին,
Եղավ կոտորածը Կիլիկիո հայության,
Ի՞նչ մեղք ունեին մատղաշ մանուկները,
Թող կոտրվեին սուր բռնող ձեռքերը,
Ինչպե՞ս մոռանանք հայ մանուկներին,
Ջուրը նետվեցին քույրերով միասին,
Տեր կանգնող չեղավ հայ ժողովրդին,
Ինչպե՞ս մոռանանք Կիլիկիո աղետը:
Հրամանը հասավ մեր յոթ գյուղերը.
«Գաղթական պիտ լինեն բոլոր գյուղացիները»:
Ո՞րն էր մեր մեղքը՝ մեր Մուսա լեռան,
Ինչպե՞ս մոռանանք վիճակը հայության,
Եսայի Յաղուբյանի խոսքերը հնչեցին.
«Թող լեռ բարձրանան, - ասաց բոլորին, -
Թշնամու առաջ մենք վիզ չե՛նք ծռի.
Զարկենք, զարկվենք, մեր հողում մեռնենք»:

26 (361).

ԵԴԵՍԻԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ*

Ով ցանկալի Եդեսիա՝ քրիստոնեության հանգն էիր,
Բազմաթիվ ժողովրդով հնության աղբյուր էիր,
Գոհության իսկ արժանի պճնյալ տաճար ունեիր,
Արդ ո՛չ տաճար, ո՛չ ժողովուրդ, ո՛չ քարոզիչ չմնաց:

Հազար ափսոս Եդեսիո՝ կորսնցուց ժողովուրդը,
Միամիտ և ջերմեռանդ գառնուկի նման հոտը,
Ջնեցին ոչխարի պես մինչև փոքր մանուկը,
Ո՛չ երկինքեն և երկրեն տեսնող, լսող չմնաց:

Երբ մեր անգութ թշնամիք հանկարծ հարձակվեցին,
Խեղճուկ և տկար հայեր սառած-ապշած մնացին,
Ոմանք երկյուղեն փախչելով՝ ձորը նետվեցին,
Շատեր կոտրան, կպռան՝ ճարի հասնողներ չմնացին:

Խեղճ ժողովուրդին մեծ մասը պատսպարվելու համար
Խուժեց եկեղեցին՝ կյանք ազատելու համար,
Գոնե երկինքեն օգնություն հուսալու համար,
Հրո ճարակ եղան, ազատող մը չմնաց:

Երբ սգաբեր արշալույսը տիրեց քաղաքին վրա,
Եկան մեր վատ թշնամիները եկեղեցու վրա,
Ալ ճար չմնաց, կուզես՝ լաց, կուզես՝ գոռա,
Ասեղնետին առաջն առնող առաջնորդ չմնաց:

Այրեցին եկեղեցին յուր ամբողջ ժողովուրդով,
Հուր ու բոց բորբոքվեց քարյուղի կրակով,
Ավար առին սուրբ անոթներ, անթիվ մասունքներ,
Ի՞նչ կրնեք, ու՞ր կտանիք. իշխան չմնաց:

Նույն պահին բոլոր ընտանիքին բռնեցին գերի տարին,
Տուներու մեջ ինչ որ գտան ավարի տարին,
Ընտանեկան գույքը ուղտերուն բեռնած տարին,
Ոջիլի կերակուր եղանք. փոխելու շոր չմնաց:

Ուրիշ տեղ մը պատրաստելով՝ դռան կից փորեցին,
Այդ տեղը չբավելով՝ ժամուն գավիթը դիմեցին,
Գետինը փորեցին, կիզյալ դիակները լեցուցին,
Վրան ալ կիր լեցուցին. դիմանալու սիրտ չմնաց:

27 (362).

ՀԱԼԱԾՎԱԾ ԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐԵՆ

Հալածված ենք Հայաստանի լեռներեն,
Ո՞վ չի վախնար հուրով սրով մեռնելեն,
Դար ու սարեր անցանք, դադար չունեցանք,
Դիակներեն անցանք, արցունք չունեցանք:

Արևի տակ մեռնիլն, Աստվա՛ծ իմ, վատ է,
Պուտ մը ջուրի մեր շրթունքը կարոտ է,
Մանուկները կուրծքերուն վրա մորթեցին,
Հորերուն մեջ ողջ մայրերը լեցուցին:

- Ու՞ր է, մայրի՛կ, ու՞ր է իմին հայրիկը:
- Չե՞ս գիտեր, որ վատ է թուրքին դանակը:
- Ու՞ր է մայրիկ, ու՞ր է անոր դիակը:
- Արցունքն իջավ մինչև սրտիս հատակը:

Հայ աղջիկներ ձեռնե ի ձեռ բռնեցին,
Իրենք զիրենց Եփրև** գետը նետեցին,
Երկու օր վերջն ալ խեղճ մայրերուն գիտցուցին,
Խեղճ մայրերուն անմխիթար լացուցին:

---

* Այս երգը Ուրֆացիները լալով-ողբալով կըսեին (Ծ.Բ.):
** Իմա՝ Եփրատ:

28 (363).

ԵՓՐԱՏ ԳԵՏՆ ԱԼ ԵՂԱՎ, ՄԱՅՐԻ՛Կ

Եփրատ գետն ալ եղավ, մայրի՛կ,
հայոց գերեզման.
Հայ աղջիկներ, մայրի՛կ,
ջուրը նետվեցան:

Քանը դերեյին* մեջը, մայրի՛կ,
արյուն հոսեցավ.
Լեռներ ու ձորեր, մայրի՛կ,
դիակով լցվան:

29 (364).

ԲԼԲՈՒԼՆ ԱԼ ԿԿԱՆՉԵ. ԳԱՐՈՒ՛Ն Է, ԳԱՐՈՒ՛Ն

Բլբուլն ալ կկանչե. գարու՛ն է, գարու՛ն,
Մի՛ բանար յարանիս. խորու՛ն է, խորու՛ն,

Ամա՛ն, ողորմա՛ծ Տեր, աս ի՞նչ Դեր Զոր է.
Լալեն աչվնիս կապեր է փերդե:

30 (365).

ԴԵՐ ԶՈՐ ԿԵՐԹԱՆՔ ՇԱՐՎԵ-ՇԱՐԱՆ

Դեր Զոր կերթանք շարվե-շարան,
Ուտել, խմել մենք մոռցանք,
Աչվըներս էղեր են ցավ,
Աջաբ Աստված մեզ մոռցա՞վ:

Դեր Զոր կերթանք լալագին,
Մեր վիճակն է ցավալի.
Չիկա լույս մը, որ բացվի
Ճամփուն վրա ավազի:

Դեր Զոր կերթանք լալագին,
Ցավերուն մեջ մտացրիվ.
- Էլե՛ք, քալե՛ք, - կմխտեն
Խամշիներով ահագին:

Տարագիր ենք, տուն չունինք,
Աքսորված ենք, քուն չունինք,
Չկա մեկը, որ չափե
Մեր տառապանքն ասքան մեծ:

Վրանին առջև ուժասպառ
Հայրս է պառկած հոգեվարք,
Մայրս ալ՝ սիրտով հրեշտակի,
Հացի կարոտ կմեռնի:

Լալեն արցունքս ցամքեցավ
Կաթիլ-կաթիլ հոսելեն,
Անմեղ հոգիս մաշեցավ
Աս ամենը տեսնալեն:

31 (366).

ՍԻՒՐԳԻՒՆԻՒՆ ԲԱՑՐԱՂԸ ԱՉԸԼԴԸ

Սիւրգիւնիւն բայրաղը աչըլդը,
Դույուդուղու գիբի հէր շէյդէյիշդի,
Գէնջ օլանլար դաղլարա քաչդը,
Ջանընդան վազ գէչէն դաղլարա քաչդը:

Սիւրգիւնլիւք չըքդը, քօյ բօշալդը,
Բէնիմ ղըյմէթլի մալըմ թիւրքլէրէ քալդը,
Չօլուք-չօջուք յօլջը օլդը,
Ալան-թալան բաշլադը:

Աղանա յափըլմըշ բօզ քիրէմիթթէն,
Ցախամըզ բիթմէդի քարադան, բիթդէն,
Ալլահ բիզէ քուրթարսըն բու սէֆիլլիքդէն.
Բիշէյ դէմէմ՝ սէն դէ բէնզէյէսին բիզէ.
Էլինդէքի սիլահ իլէն ծէլէսի՛ն սէ՛ն:

ԱՔՍՈՐԻ ԱՀԱԶԱՆԳԸ ՀՆՉԵՑ

Աքսորի ահազանգը հնչեց,
Լավելուն պես ամեն ինչ փոխվեց,
Երիտասարդները փախան լեռներ,
Կյանքից ձեռ քաշողը փախավ լեռ:

Աքսորն սկսվեց. գյուղը պարպվեց,
Արժեքավոր իրերս թուրքերին մնաց,
Մանուկ ու ծեր ճամփորդ դարձան,
Ալան-թալանն սկսվեց:

Ադանան շինված է գորշ աղյուսից,
Ոջիլից, կեղտից չազատվեց օճիքը մեր,
Աստված փրկի այս թշվառությունից մեզ,
Ոչինչ չեմ ասում՝ դու՛ էլ դառնաս մեզ պես.
Ձեռքիդ հրացանովը դու՛ էլ մեռնես:

32 (367).

ԴԷՐ ԶՕՐ ՉՕԼԻՒՆԴԷ**

Աղաջլարդան դուշ ուչթու,
Ցանըը յուրէգ թութուշթու,
Ցա՛նմա, յու՛րէիմ, յա՛նմա,
Բու այրըլըք բիզէ դիւշթիւ,
Բու մուհաջիրլիք բիզէ դիւշթիւ,
Բու դէրգօրլուք բիզէ դիւշթիւ:

*ԴԵՐ ԶՈՐԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ***

Ծառերից հավք թռավ,
Վառեց սիրտս՝ բռնկեց,
Մի՛ վառվիր, սիրտ իմ, մի՛ վառվիր.
Այս բաժանումն է մեր բաժին,
Այս գաղթականությունն է մեր բաժին,
Այս դերզորականությունն է մեր բաժին:

---

* Արյան ձոր է կոչվել, քանի որ այնտեղ շատ հայեր են մորթվել:

** 1888 թ. Մուսա լեռում ծնված Քալաշյան Եղիսաբեթը դեռևս 1956 թ. առաջին անգամ մեզ հաղորդել է սույն վիպերգից հատվածներ (Տե՛ս Սվազլյան Վ. *Մուսա լեռ*, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 16, Երևան, 1984, էջ 130-131):

33 (368)

Դէր Զօրա գիդէրսէմ՝ գէլէմէմ բէլքի,
Նէ՛ էքմէգ, նէ՛ սու՝ ծիւրիւմ բէլքի.
Դէր Զօր վարմադան էրմէնի մուհաջիրի
Օթուրմուշ հիւնգիւ՛ր-հիւնգիւ՛ր աղլըյօր:

Դեր Զոր թե գնամ՝ գուցե ետ չգամ,
Առանց հաց, առանց ջուր՝ գուցե և մեռնեմ,
Դեր Զոր չհասած հայ գաղթականը նստած
Հոնգուր-հոնգուր կուլա:

34 (369).

Վարա-վարա, վարդըմ Դէր Զօր չօլիւնէ,
Ինդիրդիլէր բիզի Դէր Զօր դիւզիւնէ,
Դէր Զօր դէդիքլէրի բիւյիւք քասաբա,
Քէսիլէն քէլլէլէր գէլմէզ հէսաբա:

Գնալով-գնալով հասանք Դեր Զորի անապատը,
Իջեցրին մեզ Դեր Զորի հարթավայրը,
Դեր Զորն էր մեծ տեղավայր,
Կտրված գլուխներին հաշիվ չկար:

35 (370).

Դէր Զօր չօլլէրինի բիւրիւդիւ դուման,
Ամանը՛մ, յա՛ման, հալըմըզ յաման,
Ինսան վէ յէշիլ բօյանըը քանա,
Դինինին ուղրունա ծէլէն էրմէնի:

Մշուշն է պատել Դեր Զոր անապատին,
Ավա՛ղ, ավա՛ղ, մեր վիճակն է ողբալի.
Մարդ ու կանաչ արյունով ներկվեցին,
Հավատի համար մեռնող հայեր:

36 (371).

Դէր Զօր չօլլէրինի բիւրիւդիւ դուման,
Ամանը՛մ, յա՛ման, հալըմըզ յաման,
Ալլահդան բաշխա յօք դըր դէրման,
Դինինին ուղրունա ծէլէն էրմէնի:

Մշուշն է պատել Դեր Զոր անապատին,
Ավա՛ղ, ավա՛ղ, մեր վիճակն է ողբալի.
Աստծուց բացի չունենք մենք ոչինչ,
Հավատի համար մեռնող հայեր:

37 (372).

Դէր Զօր չօլիւնէ չադըր քուրդուլար.
Էրմէնի միլլէթի չօլէ դօքթիւլէր,
Քալանլարը ըրմաքլարա դօքթիւլէր,
Քիւքիւրդ իլէն քիւ՛քիւր-քիւ՛քիւր յաքդըլար:

Դեր Զորի անապատում վրան լարեցին,
Հայերին անապատը լցրեցին,
Մնացածներին գետերում խեղդեցին,
Կամ՝ անխղճորեն ծծմբով վառեցին:

38 (373).

Դէր Զօր դէդիքլէրի բիւյիւք քասաբա,
Քէսիլէն էրմէնի գէլմէզ հէսաբա,
Օսմանլը էֆրադը դօնմիւշ ղասաբա,
Դինինին ուղրունա ծէլէն էրմէնի:

Դեր Զոր կոչվածն էր մի մեծ տեղավայր,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի պետերը մսագործ դարձան,
Հավատի համար մեռնող հայեր:

Միաժամանակ նա մեզ պատմել է. «Արաբստանի անապատում մեր եղած ժամանակ կենդանիների պես էինք՝ ո՛չ հագուստ, ո՛չ ապրուստ, ո՛չ լվացվել, ո՛չ խմել…: Բնական պետքի համար անգամ ժանդարմը գլխուդ կայնած կըլլար. ո՛չ կին կճանչնային, ո՛չ աղջիկ, ո՛չ նամուս…: Կերակու՞ր, ի՞նչ կերակուր. խո՛տ էինք հավաքում, անասունների պես խո՛տ էինք արածում: Աղ գտնվեր նէ՝ աղեկ. կթաթխեինք աղին. ավելի համով կըլլար: Մեկ-մեկ հեռուեն արաբներ կերևային. բեդվի (բեդվին) արաբները ոչխար-մոչխար շատ ունեին, ամմա տուն-տեղ չունեին. չադըրներուն տակ կապրեին: Աղ քրիստոնյա արաբները մեզի կմեղքնային. քիչ մը փիլավ տային նէ՝ ձեռքով-մատներով կըլպստեինք, կուտեինք. չունքի ջիգյարը անու՛շ է…: Իմին երեք պզտիկ ձագուկներս ալ աքսորի ճամփաները մեռան: Անոր համար աս տարիքիս մեն-մենակ մնացած եմ…»:

70-ամյա այս կինը հավաքարար էր աշխատում Վարդաշենի դպրոցում, հազիվ իր գոյությունը պահպանում: Վիպերգի հատվածները կատարելիս նա վերհիշում էր իր դառն անցյալն ու իր կորցրած զավակներին. արցունքներն անվերջ հոսում էին նրա աչքերից, ձայնը խզվում էր ու չէր կարողանում երգել. մի փոքր շունչ էր առնում, կրկին սկսում էր երգել ու կրկին արտասվել…

Հետագա տասնամյակներին իմ երկար որոնումների ընթացքում, երբ նոր բանասացի մոտ սկսում էի արտասանել կամ երգել արդեն ինձ ծանոթ քառյակները, նրանցից շատերը սկսում էին կամաց-կամաց վերհիշել ու, վերապրելով իրենց ողբալի անցյալը, դժվարությամբ, հառաչանքներով, արցունքախառն հեկեկոցներով սկսում էին երգել՝ վերհիշելով նորանոր դրվագներ սրտակեղեք ու երկարապատում եղերերգերից:

39 (374).

Ցօզղատ քասաբա շիրին քասաբա,
Ռէսիլէն էրմէնի գէլմէզ ճէսաբա,
Օսմանլը էֆրադը դէնմիւշ դասաբա,
Դինինին ուղրուևա ծլէն էրմէնի:

Ցոզղատն էր մի սիրուն բնակավայր,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի մեծերը մսագործ դարձան,
Հավատի համար մեռնող հայեր:

40 (375).

Ուրֆա դէդիքլէրի իգիթ քասաբա,
Ռէսիլէն էրմէնի գէլմէզ ճէսաբա,
Օսմանլը ասքէրի դէնմիւշ դասաբա,
Դինինին ուղրուևա ծլէն էրմէնի:

Ուրֆա կոչվածն էր հերոս բնակավայր.
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի զինվորները մսագործ դարձան,
Հավատի համար մեռնող հայեր:

41 (376).

Քըրըք խան դէդիքլէրի քիւչիւք քասաբա,
Ռէսիլէն էրմէնի գէլմէզ ճէսաբա,
Օսմանլը զաբիթլէրի դէնմուշ դասաբա,
Դինինին ուղրուևա ծլէն էրմէնի:

Քըրըք խան կոչվածն էր մի փոքրիկ ավան,
Մորթված հայերին էլ հաշիվ չկար,
Օսմանցի սպաները մսագործ դարձան,
Հավատի համար մեռնող հայեր:

42 (377).

Սիվազդան չխդըմ բաշըմ սէլամէթ,
Դէր Ջօրա վարընջա քօփթու-քընյամէթ,
Բու քադար մուճաջիր քիմէ՞ էմաճէթ,
Դինինին ուղրուևա ծլէն էրմէնի:

Սվազից դուրս եկանք հանգիստ գլխով,
Դեր Ջորում իրարանցում էր ահավոր,
Այսքան գաղթական վստահված է ու՞մ,
Հավատի համար մեռնող հայեր:

43 (378).

Սուարդան չխդըն բաշըմ սէլամէթ,
Դէր Ջօրա վարընջա քօփթու-քընյամէթ,
Էրմէնի շաշընդը՝ բու նէ՞ դիր հիքմէթ,
Դինինին ուղրուևա ծլէն էրմէնի:

Հանգիստ գլխով դուրս եկա Սուարից,
Դեր Ջորում աղմուկ էր ահռելի,
Հայերն ապշեցին՝ սա ի՞նչ արհավիրք,
Հավատի համար մեռնող հայեր:

44 (379).

Դէր Ջօր չծլիւնդէ բիր սրա միշմիշ,
Էրմէնի մուճաջիրի թիֆօյա դիւշմիւշ,
Օ՛յ անամ, օ՛յ անամ, հալիմիզ յաման,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդընդըմ զաման:

Դեր Ջորի աճապատում մի շարք ծիրանի,
Հայ գաղթականները վարակվել են տիֆ,
Վա՛յ մայրիկ, վա՛յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի աճապատում մեր եղած ժամանակը:

45 (380).

Դէր Ջօր չծլիւնդէ բիր սրա միշմիշ,
Էրմէնի մուճաջիրի աջընդան ծլմիւշ,
Ամանը՛մ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդընդըմ զաման:

Դեր Ջորի աճապատում մի շարք ծիրանի,
Հայ գաղթականները մեռնում են սովից,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի աճապատում մեր եղած ժամանակը:

46 (381).

Դէր Ջօրուև իչինդէ նաճէլէր բիթէր,
Ծլմիւշլէրինև քօքուսու դիւնյալա յէթէր,
Բու սիւրգիւնլիւիք բիզէ ծլիւմդէն բէթէր,
Դինինին ուղրուևա ծլէն էրմէնի:

Դեր Ջորի աճապատում անանուխն է բուսել,
Դիակների ճեխահոտն աշխարհն է բռնել,
Այս աքսորը մեզ մահից վատթար է,
Հավատի համար մեռնող հայեր:

47 (382).

Գիդէ-գիդէ՝ գիդմէզ օլդու դիզլէրիմ,
Աղլա-աղլայա՝ գօրմէզ օլդու գօզլէրիմ,
Ամանը՛մ, յա՛ման, հալիմիզ յաման,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդընդըմ զաման:

Գնալով-գնալով՝ հոգնեցին ծնկներս,
Լալով-ողբալով կուրացան աչքերս,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի աճապատում մեր եղած ժամանակը:

48 (383).

Դէր Ջօրա գիդէրքէն լասդիղիմ քայդը,
Իննէդէն-իփլիղէ թիւրքլէրէ քալդը,
Խաբէրի դուլանընն բէլի բիքիւլդիւ,
Դինինին ուղրուևա ծլէն էրմէնի:

Կոշիկս սաճեց Դեր Ջորի ճամփին,
Ասեղից մինչև թելը մնաց թուրքերին,
Մեջքը կոտրվեց լուրը լսողի,
Հավատի համար մեռնող հայեր:

49 (384).

Էրմէնի՛, էրմէնի՛, շաշխընն էրմէնի,
Բու գիւնէ ուլաշմընշ քօն վէ թօփալը,
Ամանը՛մ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդընդըմ զաման:

Հայե՛ր, հայե՛ր, շվարած հայեր,
Այս օրվան հասան կույր ու կաղերը,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի աճապատում մեր եղած ժամանակը:

50 (385).

Ջատիկ-կիրակի չադըր սօքդիւլէր,
Չօլուք-չօջուք յօլա դօքդիւլէր,
Ամանը՛մ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդընդըմ զաման:

Ջատիկ-կիրակի վրաները քանդեցին,
Մանուկ ու ծեր ճամփա հանեցին,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի աճապատում մեր եղած ժամանակը:

51 (386).

Ջատիկ-կիրակի չադըր սօքդիւլէր,
Բիւթիւև էրմէնիլէրի չծլէ դօքդիւլէր,
Քէչի գիբի էրմէնիլէրի քէսդիլէր,
Դինինին ուղրուևա ծլէն էրմէնի:

Ջատիկ-կիրակի վրաները քանդեցին,
Բոլոր հայերին աճապատը լցրին,
Այծերի պես հայերին մորթեցին,
Հավատի համար մեռնող հայեր:

52 (387).

Դէր Ջօր չծլիւնդէ բիթմէդի յէշիլ,
Աղարդը սաչլարըմ, դօքդիւլդիւ դիշիմ,
Ամանը՛մ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդընդըմ զաման:

Դեր Ջորի աճապատում կանաչ չի բուսնի,
Մազերս ճերմակեցին, ատամներս թափվեցին,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի աճապատում մեր եղած ժամանակը:

53 (388).

Դէր Ջօր չծլիւնդէ բիթմէդի յէշիլ,
Ղուրշունա դիզդիլէր էլլի բին քիշի,
Մէրաքդան դօքդիւլդիւ միլլէթին դիշի,
Դինինին ուղրուևա ծլէն էրմէնի:

Դեր Ջորի աճապատում կանաչ չի բուսնի,
Հիսուն հազար մարդ գնդակահարեցին,
Ժողովրդի ատամները վշտից թափվեցին,
Հավատի համար մեռնող հայեր:

54 (389).

Դէր Ջօր չծլիւնդէ բիթմէդի յէշիլ,
Բիր գիւզէլ բաջըմ վար՝ աթէշէ դիւշմիւշ,
Անալար-բաբալար էսիր դիւշմիւշ,
Էրմէնի միլլէթի դաղլարա դիւշմիւշ:

Դեր Ջորի աճապատում կանաչ չի բուսնի,
Կրակն է ընկել քույրս գեղեցիկ,
Հայրերին-մայրերին գերեվարեցին,
Հայ ժողովրդին լեռները գցեցին:

55 (390).

Էրմէնիլէրի մաղարայա դօղուրդուլար,
Քիրէչ դօքիւփ, աթէշ վէրիփ յաքթըլար,
Ամանը՛մ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդընդըմ զաման:

Հայերին քարանձավի մեջ լցրեցին,
Այրած կիրը կրակի տալով՝ վառեցին,
Ավա՛ղ, ավա՛ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի աճապատում մեր եղած ժամանակը:

56 (391).

Դէր Ջօր չծլիւնդէ հիչ աղաչ հինչիր,
Էլիմդէ՝ քէլէփչէ, բօյնըմդա՝ զինչիր,
Չինչիր քըմընդաղըչա՝ յուրէիմ հինչիր,
Դինինին ուղրուևա ծլէն էրմէնի:

Դեր Ջորի աճապատում երեք թզենի,
Ձեռքիս՝ ձեռկապ, շղթան՝ վզիս,
Շղթան շարժվելիս, սիրտս է մղկտում,
Հավատի համար մեռնող հայեր:

57 (392).

Սաբախդաձ քալքթըմ՝ քափը քափալը,
Բիճ քաշը գէլիյօր էլի զօփալը,
Ուղրուձա բրաքմըշ քօռ վէ թօփալը,
Դիճիճիճ ուղրուձա ծլէճ էրմէճի:

Առավոտյան վեր կացա՝ դուռը փակ գտա,
Հազարապետն եկավ՝ ձեռքին կար մահակ,
Կույր ու կաղերին գցել էր իր առաջ,
Հավատի համար մեռնող հայեր:

58 (393).

Սաբախդաձ քալքթըմ՝ գիւճէշ փաղլըյօր,
Չէթէլէր օթուրմուշ մարթին յաղլըյօր,
Դիլէրիմ Ալլահդաձ՝ վէրսին բիր իմաճ,
Դիճիճիճ ուղրուձա ծլէճ էրմէճի:

Առավոտյան վեր կացա՝ արևն էր փայլում,
Չեթեները նստած հրացանն են յուղում,
Խնդրեցի Աստծուց, որ ցույց տա ճար,
Հավատի համար մեռնող հայեր:

59 (394).

Սաբախդաձ քալքթըմ՝ գիւճէշ փաղլըյօր,
Օսմալը ասքէրի սիլաճ յաղլըյօր,
Էրմէճիյէ բաքդըմ՝ յա՜մաճ աղլըյօր,
Դիճիճիճ ուղրուձա ծլէճ էրմէճի:

Առավոտյան վեր կացա՝ արևն էր փայլում,
Օսմանցի ասկյարը իր զենքն էր յուղում,
Հայերին նայեցի՝ սաստի՜կ էին լաց լինում,
Հավատի համար մեռնող հայեր:

60 (395).

Սաբախդաձ քալքթըմ՝ գիւճէշ փաղլըյօր,
Գիւճէշիճ աթէշի բէճի յաքլըյօր,
Ջուլում չէչէճլէր մավզէր յաղլըյօր,
Դիճիճիճ ուղրուձա ծլէճ էրմէճի:

Առավոտյան վեր կացա՝ արևն էր փայլում,
Արևի շողերն ինձ էին այրում,
Դաժան չեչեները մաուզեր են յուղում,
Հավատի համար մեռնող հայեր:

61 (396).

Սաբախդաձ քալքթըմ՝ գիւճէշ փաղլըյօր,
Չէչէճլէր օթուրմուշ թիւֆէնգ յաղլըյօր,
Անալար-բաբալար քաճ-յաշ աղլըյօր,
Դիճիճիճ ուղրուձա ծլէճ էրմէճի:

Առավոտյան վեր կացա՝ արևն էր փայլում,
Չեչեները նստած հրացանն են յուղում,
Մայր ու հայրերը՝ արյուն-արցունք են թափում,
Հավատի համար մեռնող հայեր:

62 (397).

Սաբախդաձ քալքթըմ՝ գիւճէշ փաղլըյօր,
Անամ-բաբամ դուրմադաճ աղլըյօր,
Դիւշմաճ գէլմիշ քօլլարըմը բաղլըյօր,
Դիճիճիճ ուղրուձա ծլէճ էրմէճի:

Առավոտյան վեր կացա՝ արևն էր փայլում,
Հայրս-մայրս անընդհատ լաց էին լինում,
Թշնամին եկել իմ ձեռքերն է կապում,
Հավատի համար մեռնող հայեր:

63 (398).

Սաբախդաձ քալքթըմ՝ չանթամա բաքթըմ,
Աղլայա-սըզլայա բօյնումա թաքթըմ,
Մալըմը միւլքիմը դօվլաթա սաթդըմ,
Փահասընը սօ՞րսա՝ յարըմ էքմէյէ:

Առավոտյան վեր կացա, պայուսակս նայեցի,
Լաց ու կսկիծով վզիցս կախեցի,
Ունեցվածքս պետությանը ծախեցի,
Գինը թե հարցնես՝ կես կտոր հացի:

64 (399).

Սաբախդաձ քալքթըմ՝ չանթամա բաքթըմ,
Աղլայա-սըզլայա բօյնումա թաքթըմ,
Բիր լօխմա էքմէյէ հասրէթլիք չէքթիմ,
Դիճիճիճ ուղրուձա ծլէճ էրմէճի:

Առավոտյան վեր կացա, պայուսակս նայեցի,
Լաց ու կոծով վզիցս կախեցի,
Մի պատառ հացի կարոտ մնացի,
Հավատի համար մեռնող հայեր:

65 (400).

Սաբախդաձ քալքթըմ՝ հավա դումաճ դըր,
Անամ-բաբամ յօք դըր հալիմ յամաճ դըր,
Բունդաճ սօնրա գիւլմէք բաճա հարամ դըր,
Դիճիճիճ ուղրուձա ծլէճ էրմէճի:

Առավոտյան վեր կացա՝ երկինքն էր մշուշոտ,
Հայր-մայր չունեմ՝ վիճակս է ահավոր,
Սրանից հետո ժպտալ չե՞մ կարող,
Հավատի համար մեռնող հայեր:

66 (401).

Դէր Ջօր դէդիքլէրի բիւյիւք քասաբա,
Ջալըճաճ քըզլար գէլմէզ հէսաբա,
Ամաճը՜մ, յա՜մաճ, հալիմիզ յամաճ,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդըղըմ զամաճ:

Դեր Ջոր կոչվածն է մի մեծ տեղավայր,
Առևանգված կույսերի հաշիվը չկա,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի անապատում մեր եղած ժամանակը:

67 (402).

Թիւրքլէր բաշլադը էվլադ քաչըրմայա,
Անալար ղըյմադը յիւզիւ ծփմէյա,
Բաքթըմ քի գիզլիջէ աղլըյօր յամա՜ճ,
Դիճիճիճ ուղրուձա ծլէճ էրմէճի:

Թուրքերն սկսեցին զավակ փախցնել,
Մայրերը չհասցրին երեսը համբուրել,
Տեսա՝ ծածուկ սաստի՜կ էին լաց լինում,
Հավատի համար մեռնող հայեր:

68 (403).

Գյուզէլլէրի խափլա-խափլա քաչըրդըլար,
Չիրքիճլէրի՝ փէյճիր գիբի քէսդիլէր,
Վայ ամա՜ճ, վայ ամա՜ճ, հալիմիզ յամաճ:
Դէր Ջօր չծլիւնդէ քալդըղըմ զամաճ:

Սիրուհներին հափշտակելով փախցրին,
Տգեղներին՝ պաճիրի պես ջարդեցին,
Ավա՜ղ, ավա՜ղ, մեր վիճակն է ողբալի,
Դեր Ջորի անապատում մեր եղած ժամանակը:

69 (404).

Բիճդիք արաբայա, իճդիք Քաթմայա,
Օրադա բաշլադը էվլադ քաչմայա,
Թիւրքլէր բաշլադը ալըփ-քաչմայա,
Դիճիճիճ ուղրուձա ծլէճ էրմէճի:

Բարձրացանք սայլը, Քաթմայում իջանք,
Այնտեղ սկսեցին փախցնել զավակ,
Թուրքերն սկսեցին առնել ու փախչել,
Հավատի համար մեռնող հայեր:

70 (405).

Դէր Ջօր չծլիւնդէ յօրըլդում, քալդըմ,
Անամը, բաբամը յօլդա բրաքթըմ,
Վա՜յ անամ, վա՜յ անամ, հալիմիզ յամաճ,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդըղըմ զամաճ:

Դեր Ջորի անապատում հոգնեցի, մնացի,
Մորս ու հորս ճամփին թողեցի,
Վա՜յ մայրիկ, վա՜յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի անապատում մեր եղած ժամանակը:

71 (406).

Դէր Ջօր չծլիւնդէ շաշըրդըմ, քալդըմ,
Յիթիրդիմ անամը, յիթիրդիմ բաբամը,
Վա՜յ անամ, վա՜յ անամ, հալիմիզ յամաճ,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդըղըմ զամաճ:

Դեր Ջորի անապատում շվարեցի, մնացի,
Մորս ու հորս այնտեղ կորցրեցի,
Վա՜յ մայրիկ, վա՜յ մայրիկ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի անապատում մեր եղած ժամանակը:

72 (407).

Դէր Ջօր չծլիւնդէ վուրուլդում, քալդըմ,
Աննէ՛, բէն բու ջանդաճ բըքթըմ, օսաճդըմ,
Ամա՜ճըմ, յա՜մաճ, հալիմիզ յամաճ,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդըղըմ զամաճ:

Դեր Ջորի անապատում խփվեցի, մնացի,
Մայրի՜կ, ես այս կյանքից ձանձրացա, զզվեցի,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի անապատում մեր եղած ժամանակը:

73 (408).

Դէր Ջօր չծլիւնդէ դիւշթիւմ յարալը,
Բիր դօքթօր յօք դըր՝ յարամ բաղլայաճ,
Ամա՜ճըմ, յա՜մաճ, հալիմիզ յամաճ,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդըղըմ զամաճ:

Դեր Ջորի անապատում վիրավոր ընկա,
Վերքս կապելու մի բժիշկ չկա,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի անապատում մեր եղած ժամանակը:

74 (409).

Դէր Ջօր չծլիւնդէ չիւրիւդիւմ, քալդըմ,
Ղարղալարա թաճին օլդում, քալդըմ,
Ամա՜ճըմ, յա՜մաճ, հալիմիզ յամաճ,
Դէր Ջօր չծլիւնդէ քալդըղըմ զամաճ:

Դեր Ջորի անապատում փտեցի, մնացի,
Կերակուր դարձա ես ագռավներին,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Ջորի անապատում մեր եղած ժամանակը:

75 (410).

Դէր Զօր չօլիւնդէ յարալը չօքդըր,
Գէ՛լմէ, դօքթօ՛ր, գէ՛լմէ՝ չարէսի յօ՛քդըր,
Ալլահդան բաշխա քիմսիմիզ յօ՛քդըր,
Դինինին ուղրունա օ̈լէն էրմէնի:

Դեր Զորի անապատում վիրավոր շատ կա,
Մի՛ գա բժի՛շկ, մի՛ գա. մեկ է հույս չկա,
Աստծուց բացի էլ ո՛չ ոք չկա,
Հավատի համար մեռնող հայեր:

76 (411).

Օթուրմըշլար հօջա-քէշիշ աղլըյօր,
Ջանդարմալար քօլլարընը բաղլըյօր,
Իրիցկին դէ բաշ ուջունդա աղլըյօր,
Դինինին ուղրունա օ̈լէն էրմէնի:

Տեր հայրը նստած արցունք է թափում,
Ոստիկանները ձեռքերն են կապում,
Իրիցկինը նստած լաց է լինում,
Հավատի համար մեռնող հայեր:

77 (412).

Դէր Զօր չօլիւնդէ ջան թէլէֆ օլդու,
Գիդէ-գիդէ դունդուրամա դում դօլդու,
Ղում յէրինէ յուրէիմէ քան դօլդու,
Դինինին ուղրունա օ̈լէն էրմէնի:

Դեր Զորի անապատում ինչքա՜ն մարդ զոհվեց,
Գնալով-գնալով կոշիկս ավազ լցվեց,
Ավազի տեղ սրտումս արյուն լցվեց,
Հավատի համար մեռնող հայեր:

78 (413).

Յօ՛լ վէրին էրմէնիյէ, դումանլը դաղլար,
Էլլէրի քօյնունդա քըզ-գէլին աղլար,
Ամա՛նըմ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չօլիւնդէ քալդըղըմ զաման:

Ճամփա՛ տվեք հայերին, մշուշո՛տ լեռներ,
Ձեռները ծոցում հարս-աղջիկ կուլան,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը:

79 (414).

Յօ՛լ վէր, Խաբու՛ր,* յօ՛լ վէր, գէչէլիմ չօլիւ,
Էվլադըմ չըս-չըբլախ արաբըն քօյիւ,
Ամա՛նըմ, յա՛ման, հալիմիզ յաման,
Դէր Զօր չօլիւնդէ քալդըղըմ զաման:

Ճամփա՛ տուր, Խաբու՛ր, անապատն անցնեմ,*
Զավակս մերկ-տկլոր արաբի գյուղումն է,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը:

80 (415).

Յօ՛լ վէր, Խաբու՛ր, յօ՛լ վէր, գէչէլիմ չօլիւ,
Չըս-չըբլախ յէթիշէյիմ ղարիբ յէրլէրէ,
Ամա՛նըմ, յա՛ման, հալիմիզ յաման,
Դէր Զօր չօլիւնդէ քալդըղըմ զաման:

Ճամփա՛ տուր, Խաբու՛ր, անապատն անցնեմ,
Մերկ-տկլոր հասնեմ ես օտար վայրեր,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը:

81 (416).

Յօ՛լ վէր, Խաբու՛ր, յօ՛լ վէր, գէչէլիմ չօլիւ,
Դօնսուզ արաբա օլայըմ քօլէ,
Ամա՛նըմ, յա՛ման, հալիմիզ յաման,
Դէր Զօր չօլիւնդէ քալդըղըմ զաման:

Ճամփա՛ տուր, Խաբու՛ր, անապատն անցնեմ,
Անվարտիք արաբին ծառա դառնամ ես,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը:

82 (417).

Մուխդաջ օլդուք սու իչմէյէ.**
- Խուդամըն աչքընա իմդադ օլասըն, -
Սու դա իչմէյէ իզին վէրմէդի,
Դինինին ուղրունա օ̈լէն էրմէնի:

*Կարոտ եղանք ջուր խմելու.***
- Աստծո՛ սիրուն. դա՛ մեզ կփրկի, -
Ջուր խմելու էլ հրաման չտվին,
Հավատի համար մեռնող հայեր:

83 (418).

Յէփրատ գէտին քօփրիւսիւ դարդըր. գէչիլմէզ,
Քանըդըր սուլարը. բիր թաս իչիլմէզ,
Էրմէնի քանըյլա սու դա իչիլմէզ,
Դինինին ուղրունա օ̈լէն էրմէնի:

Եփրատ գետի կամուրջը նեղ է. չի անցնվի,
Ջրերն արնոտ են. մի թաս չի խմվի,
Հայերի արյունով ջուրը չի խմվի,
Հավատի համար մեռնող հայեր:

---

* Դեր Զորի մոտով հոսող գետ:

** Ուժասպառ ու պապակ գաղթականներին բերում, նստեցնում էին ջրի մոտ, բայց չէին թույլ տալիս խմել, իսկ մոտեցողներին գնդակահարում էին, պատմել է գեյթունցի Եվա Չոլյանը (ծնվ. 1903 թ.), [I.140(140).]:

84 (419).

Դէր Զօր չօլլէրի դիքէնդըր. գէչիլմէզ,
Յեփրատ գէտին սուլարը աչըղըր. բիր թաս իչիլմէզ,
Էրմէնի քանըյլա սու դա իչիլմէզ,
Դինինին ուղրունա օ̈լէն էրմէնի:

Դեր Զորի անապատը փշոտ է. չի անցնվի,
Եփրատ գետի ջրերը դառն են. մի թաս չի խմվի,
Հայերի արյունով ջուրը չի խմվի,
Հավատի համար մեռնող հայեր:

85 (420).

Դէր Զօր չօլլէրի թաշլըդըր. գէչիլմէզ,
Յեփրատ գէտին սուլարը աչըղըր. բիր թաս իչիլմէզ,
Էրմէնի քանըյլա սու դա իչիլմէզ,
Դինինին ուղրունա օ̈լէն էրմէնի:

Դեր Զորի անապատը քարոտ է. չի անցնվի,
Եփրատ գետի ջրերը դառն են. մի թաս չի խմվի,
Հայերի արյունով ջուրը չի խմվի,
Հավատի համար մեռնող հայեր:

86 (421).

Դէր Զօրըն իչինդէ զինջիրլի դույու,
Էրմէնիլէր իչդի զէհիրլի սույու,
Ամա՛նըմ, յա՛ման, հալըմըզ յաման,
Դէր Զօր չօլիւնդէ քալդըղըմ զաման:

Դեր Զորի մեջ շղթայով ջրհոր,
Հայերը խմեցին ջուրը թունավոր,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը:

87 (422).

Դէր Զօր քօփրիւսիւ դարդըր. գէչիլմէզ,
Քան օլմուշ սուլար. բիր թաս իչիլմէզ,
Անադան-բաբադան վազ գէչիլմէզ,
Դինինին ուղրունա օ̈լէն էրմէնի:

Դեր Զորի կամուրջը նեղ է. անցնել չի լինի,
Ջրերն արնոտ են. մի թաս խմել չի լինի,
Մորից-հորից բաժանվել չի լինի,
Հավատի համար մեռնող հայեր:

88 (423).

Դէր Զօր քօփրիւսիւ դարդըր. գէչիլմէզ,
Քան աքըյօր սուլարը՝ բիր թաս իչիլմէզ,
Էրմէնի մուհաջիրի գէրի դօ̈նէմէզ,
Դինինին ուղրունա օ̈լէն էրմէնի:

Դեր Զորի կամուրջը նեղ է. անցնել չի լինի,
Ջրերն արնոտ են. մի թաս խմել չի լինի,
Հայ գաղթականը էլ ետ չի դառնա,
Հավատի համար մեռնող հայեր:

89 (424).

Դէր Զօր քօփրիւսիւ դարդըր. գէչիլմէզ,
Քանադլը քուշ օլսան. գէրի գէչիլմէզ,
Էրմէնի միլլէթի դինդէն վազ գէչմէզ,
Դինինին ուղրունա օ̈լէն էրմէնի:

Դեր Զորի կամուրջը նեղ է. անցնել չես կարող,
Թևավոր հավք լինես. ետ գալ չես կարող,
Հայ ազգն իր հավատն ուրանալ չի կարող,
Հավատի համար մեռնող հայեր:

90 (425).

Դէր Զօր յօլլարը ուզա՛խդըր, ուզա՛խ,
Յօլլարա բաքար բաջը-անալար,
Գէջէլէր ուզուն. օլմույօր սաբահ,
Չօլուք-չօջուքդա քալմըյօր դէրման:

Դեր Զորի ճամփաները հեռու՜ են, հեռու՜,
Քույր ու մայրերը ճամփեքին են նայում,
Գիշերներն են երկար. առավոտ չի բացվում,
Մեր խեղճ երեխաներին մի ճար չի մնում:

91 (426).

Դէր Զօր յօլլարը ուզա՛խդըր, ուզա՛խ,
Իխդիար փէդէրիմ յօլլարա բաքար,
- Հէ՛յ, մուհաջիրլէ՛ր, յօլ գօ̈րիւնդիւ՝
Բէնիմ ղարիբ բաշըմա,
Ալթըմ՝ չամուր, իւսդիւմ՝ յաղմուր,
Դաղլար-թաշլար դայանմազ բիզիմ ահուզարընա:

Դեր Զորի ճամփաները հեռու՜ են, հեռու՜,
Ծերունի հայրս ճամփաներին է նայում.
- Հե՜յ, գաղթականնե՜ր, ճամփան երևաց
Իմ տարագիր գլխին,
Տակս՝ ցեխ, վրաս՝ անձրև,
Լեռներ-ժայռեր չեն դիմանա մեր տառապանքին:

92 (427).

Ամա՛ն, Մահմու՛դ փաշա, սէն գէլ իմանա,
Ջանդարմալար դօ̈նմիւշ դասաբա,
Ամա՛նըմ, յա՛ման, հալիմիզ յաման,
Դէր Զօր չօլիւնդէ քալդըղըմ զաման:

Վա՜յ, խղճի արի՛ դու Մահմու՛դ փաշա,
Ոստիկանները մսագործ դարձան,
Ավա՜ղ, ավա՜ղ, ողբալի է մեր վիճակը,
Դեր Զորի անապատում մեր եղած ժամանակը:

93 (428).

Դէր Զօրա գէղդի բիր Ծէքիր փաշա,
Աթընը բաղլադը Դէլիքլի թաշա,*
Էրմէնի սըղմադը դաղ իլէ թաշա,
Դիճինճիճ ուղրուճա ծլէճ Էրմէնի:

Դեր Զոր եկավ մի Ծեքիր փաշա,
Նժույգը կապեց Ծակ քարի վրա,*
Զորերում հայերին տեղ չմնաց,
Հավատի համար մեռնող հայեր:

94 (429).

Դէր Զօր չծլէճնդէ թօզդաճ-դումաճդաճ
Գծզլէրիմ գծրմէյօր չիմլէր-չիմէճլէր,
Զաբիթլէր չըքմըշլար դիճդէճ-իմաճդաճ,
Դիճինճիճ ուղրուճա ծլէճ Էրմէնի:

Դեր Զորի աճապատի փոշուց-մշուշից
Աչքերս չեն տեսնում դաշտ- մարգագետին,
Ոստիկանները կորցրել են հավատ ու խիղճ,
Հավատի համար մեռնող հայեր:

95 (430).

Դէր Զօր չծլէճնդէ թօզդաճ-դումաճդաճ,
Մէճլէճմաճլար չըքմըշ դիճդէճ-իմաճդաճ,
Ամա՜ճ, փադիշա՜ճըմ, ճէ՞ օլդուք, ճէ՞ օլաջաղըզ,
Էրմէնի միլլէթի մա՞ֆ մը օլաջաք:

Դեր Զորի աճապատի փոշուց-մշուշից
Մուսուլմանները դուրս են եկել հավատից,
Վա՜յ, թագավո՜րս, ի՞նչ եղանք, ի՞նչ ենք լինելու,
Մի՞թե հայ ազգը պիտի վերջանա:

96 (431).

Դէր Զօր չծլէճնդէ ուզաճմը2, յաթմը2,
Քէլլէսի յօքդը, քի հէուզէճնէ բաքայը2մ,
Էրմէնիլէր բու գէճնէ օլաշմը2,
Դիճինճիճ ուղրուճա ծլէճ Էրմէնի:

Դեր Զորի աճապատում փուվել, պառկել է,
Գլուխը չկա, որ դեմքը տեսնեմ,
Այս օրվան հասած խեղճ հայերը,
Հավատի համար մեռնող հայեր:

97 (432).

Ճըխա-չըխա, չըխդըմ յօխուշ բաշընա,
Նէլէ՜ր գէղդի Էրմէնիճիճ բաշընա,
Հըզըր Աղլա՜ճըմ, ճը՜զըր, յէթի՜շ,
Էրմէնի միլլէթիճի քուրթա՜ր, գէչի՜ր:

Ելա, բարձրացա գագաթը սարի,
Ինչե՜ր ասես չեկավ գլուխը հայի,
Հզո՜ր Աստված, օգնության հասիր,
Հայ ժողովրդին փրկի՜ր, ազատի՜ր:

98 (433).

Դիքդիիմ աղաջլար մէյվայա դծնդիւ,
Մուճաջիր գիդէնիճ յարընը դծնմէդի,
Ծու մուճաջիրլիք իջաթ էդէն
Ջէնճէթ յիւզիւ գծրմէսիճ:

Ծնկած ծառերս պտղավորվեցին,
Կեսը ետ չեկավ գաղթականների,
Այս գաղթականությունը ճնարողը
Թող չարժանանա դրախտի:

99 (434).

Մէյվասընզ աղաջլար մէյվայա դծնդիւ,
Մուճաջիր գիդէնիճ յարընը դծնմէդի,
Ծու սիւրգիւնլիւք իջաթ էդէն
Ջէհէնճէմ յօլուճա ղուրբաճ օլսուն:

Անպտուղ ծառերը պտղավորվեցին,
Կեսը ետ չեկավ գաղթականների,
Այս աքսորը ճնարողը
Դժոխքի ճամփին թող զոհվի:

100 (435).

Պողոս Նուբար փաշա, սէն բիճլէ՜ր յաշա,
Էրմէնիլէրի թօփլաթը դաղլարդաճ թաշդաճ,
Ցաշա՜, Անդրաճի՜կ փաշա, սէն բիճլէ՜ր յաշա.
Էրմէնիլէրի թօփլադը Էրմէնիսդաճա:

Պողոս Նուբար փաշա, դու հազա՜ր ապրես,
Անապատներից հայերին հավաքեց,
Անդրանի՜կ փաշա, դու հազա՜ր ապրես.
Հայերին Հայաստանում հավաքեց:

101 (436).

Դիլլէրդէն դիլէ սծյլէճսիճ դէսթաճընմ,
Ղարիբ էլլէրէ յաճայընմ դէրդիմի,
Սէֆիլ էրմէնիլէր դէսթաճ սծյլէդի,
Դիճինճիճ ուղրուճա՝ յաշա՜ էրմէճի...

Բերանից բերան վիպերգն այս հյուսենք,
Օտարներին մեր վիշտը պատմենք,
Վիպերգը հյուսեցին թշվառ հայերը,
Հավատի համար՝ հայերը կապրե՜ն...

* Մարաշում մի մեծ ժայռ կար, որի միջից ջուր էր հոսում. Դէլիքլի թաշ (Ծակ քար) էին ասում (Մ.Բ.):

102 (437).

Սամսոճ, Տրապիզօճ, Ամասիա, Կիւրիւճ,
Գէլի՜ճ դէ Սվազըճ հալիճի գօրիւ՜ճ,
Թաշընճա՞ճ մը յօղուրդմուշ սուճ, ջանըմ կէմէրէկ,
Բիր Զէյթուճ քալմըշդըր էշիճ, կէմէրէ՜կ:

Սամսուճ, Տրապզոճ, Ամասիա, Կիւրիւճ,
Եկե՜ք, որ տեսնե՜ք վիճակը Սվազի,
Քարի՞ց ես կերտված, հոգիս Կեմերեկ,
Զեյթունճ է միայճ ընկերդ, կեմերե՜կ:

103 (438).

Հալէպդէճ* չքթընմ յայաճ,
Դայա՜ճ, դադիզլէրի՜մ, դայա՜ճ,
Ծիմդի ջաճդարմալար գէլիր.
Քիմի՝ աթլը, քիմի՝ յայաճ:

Հալեպից դուրս եկա ոտքով,*
Դիմացե՜ք, իմ ծնկնե՜ր, դիմացե՜ք.
Հիմա ոստիկաճները կգաճ.
Ոմանք՝ հեծյալ, ոմանք՝ հետիոտճ:

104 (439).

Հէ՜յ, ճէ՛դէիմ, ճէ՛ դէիմ,
Վա՜յ, հալընճա, էրմէնի,
Էվի բարխը թէրք՝ էդէյիմ,
Ցավրումու ալըփ գիդէյիմ:

Հե՜յ, ի՜նչ ասեմ, ի՜նչ ասեմ,
Վա՜յ, ձեր վիճակին, հայե՜ր,
Տուճ ու տեղս թող ճեմ, գճամ,
Ջավակս առճեմ ու գճամ:

105 (440).

Հէ՜յ, Գյավուր դաղլար,**
Դէրդէ դայաճաճ աղլար,
Էվլիլէր էվէ վարմըշ.
Ղարիբ էրմէնի ճէրդէ՞ աղլայ::

*Հե՜յ, Գյավուրի լեռներ,**
Վշտիճ դիմացողը կույա,
Տճավորները տուճ ուճեճ.
Ղարիբ հայը որտե՞ղ լա:

106 (441).

Սու բաղլադըմ քիլիգէ,
Դաղըթթըմ էրիքլիքէ.
Բէճ բուրդա էսիր քալդըմ.
Դայաճամամ ղարիբլիքէ:

Ջուրը կապեցի առվիճ,
Բաժաճեցի մարգերիճ,
Ես այդտեղ գերի մճացի,
Օտարության չտոկացի:

107 (442).

Ձայ թաշը օխա դէյի դութարլար,
Սարը ճիւզիւմ լէբլէբիյէ ղաթարլար,
Էրմէնի միլլէթի Դէր Զօր աթարլար,
Աղլաճ սաճափլընք էթսիճ բու չծլլէրէ:

Գետաքարճ իբր կշռաքար եճ բոճում,
Դեղիճ խաղողճ իբր լեբլեբի ծախում,
Հայ ժողովրդիճ Դեր Զոր եճ քշում,
Աստված աճապատիճ աճի տերություճ:

108 (443).

Քաճը դամլար ալ քայաճընճ իճւսդիւճդէճ,
Իմդաղըմ յօք զալըմ թիւրքիւճ դօսթընճդաճ,
Ասպաղ սօյար ճազլը յարիմ իճւսդիւճդէճ,
Ալթուճ յիւզիւք չքարըր փարմաղընճդաճ:

Արյուճն է կաթում շեկ ժայռի վրայից,
Հույս չուճեմ դաժան թուրք ծաճոթից,
Հագուստն է կողոպտում սիրած յարիս վրայից,
Ոսկե մատաճին է հաճում նրա մատից:

109 (444).

Դէրսիմ դծրթ դաղ իչիճդէ,
Գիւլ-բաղլար իչիճդէ,
Դէրսիմ դէ ճէփ սաքլասընճ.
Էրմէնի չօք իչիճդէ:

Դերսիմն է չորս լեռան մեջ,
Վարդ-այգիների մեջ,
Դերսիմը հար թող ապրի.
Շատ հայեր կան նրա մեջ:

* Հայերին բոլոր վայրերից բերում-հավաքում էին Հալեպ, հետո խումբ-խումբ քշում դեպի Դեր Զորի աճապատներ (Մ.Բ.):
** Գյավուր դաղ (Գյավուրի լեռ) եճ ասվաճել, որովհետև այնտեղ շատ հայեր եճ ճահատակվել (Մ.Բ.):

110 (445).

Դիարբէքիր օջախդըր,
Մարդին յըխըլաջախդըր,
Ամա՜ն, ֆէդայի՜, ա՛լ մարթին,
Վէ՛ր դուշմանա ջէվաբը:

Դիարբեքիրն է օջախ,
Մերդինը՝ պիտի կործանվի,
Ա՛խ, ֆեդա՛, հրացանդ ա՛ռ,
Թշնամուն տու՛ր պատասխան:

111 (446).

Էրզրում դաղլարը քարդըր՝ գէչիլմէզ,
Սօուքդուր սուլարը՝ բիր թաս իչիլմէզ,
Ալ մարթին, չըք դաղլարա,
Նուրի Հասան.* վախըթլար գէչմիշ:

Էրզրումի սարերը ձյուն է՝ չի անցնվի,
Սառն են ջրերը՝ մի թաս չի խմվի,
Վերցրու հրացանը, ելիր սարերը,
Նուրի Հասան. ժամանակն անցավ:*

112 (447).

Շու Ֆընտըճաղընը դա ճէր թարաֆը դաղլըք,
Դաղլարընըն դա ճէր թարաֆը բաղլըք,
Էրմէնիլէր վարիդը ճէ՛մ յիգիթ, ճէ՛մ խաթրընազ.
Օ յէրլէրդէ սաճիփսիզ քալդը, ամա՜ն Ալլահ:

Ֆընդըջագի շուրջ բոլոր՝ լեռներ,
Լեռների շուրջ բոլոր՝ այգիներ,
Հայեր կային կտրիճ և պատվարժան,
Այդ վայրերն անտեր մնացին, ա՜խ Աստված:

113 (448).

Թալաթ փաշա ճէջիմ գիբի,
Բըլըբլարը սիջիմ գիբի,
Բըլըբընա թէլ-թէլ սըչթըմ.
Սէ՞ն դէ մի օլդուն բիզիմ գիբի:

*Նժույգս կապեցի Մակ քարի** վրա,*
Կուրանա՛ս դու, Էնվե՛ր փաշա,
Հայ երիտասարդ էլ չմնա՛ց,
Անցավ վարդը, անցավ սոխակը, ի՛նչ ասեմ,
Կուզես՝ լաց, կուզես՝ խնդա, ի՛նչ ասեմ:

114 (449).

Նժույգս կապեցի Մակ քարի վրա,
Կուրանա՛ս դու, Էնվե՛ր փաշա,
Դու չծնվեի՛ր, դու սատակեի՛ր,
Շու՛ն-Թալեաթ փաշա.
Հայերին ցրեցին լեռ ու անապատ:

115 (450).

Թալաթ բաղլադըմ Դէլիքլի թաշա,
Օճիքի քայմաքամ, բիր Էնվէր փաշա,
Բու քադար մուճաջիր քիմէ՞ Էմանաթ.
Էրմէնիլէրի դաղըթըն դաղլարդան թաշա:

Նժույգս կապեցի Մակ քարի վրա,
Տասներկու կայմական, մեկ Էնվեր փաշա,
Այսքան գաղթական ու՞մ է վստահված.
Հայերին ցրեցին լեռ ու անապատ:

116 (451).

Բիրէր-բիրէր սայդըմ դօրթ սէճէ օլդու,
Էրմէնի ասքէրի Նաբլուսու*** ալդը.
Էրմէնի ասքէրի բին բէշ յիւզ բիշի.
Ինգիլիզ, ֆրանսըզ շաշդը բու իշէ:

Մեկ-մեկ հաշվեցի չորս տարին,
*Հայ կամավորները Նաբլուսը*** գրավեցին.*
Հայերը հազար հինգ հարյուր հոգի էին.
Անգլիացին, ֆրանսիացին ապշեցին:

117 (452).

Թալեաթ փաշա ճէջիմ գիբի,
Բըլըբլարը սիջիմ գիբի,
Բըլըբընա թէլ-թէլ սըչթըմ.
Սէ՞ն դէ մի օլդուն բիզիմ գիբի:

Թալեաթ փաշան հսկայի պես,
Բեղերը բարակ պարանի պես,
Թել-թել ք...քեմ քո բեղերին.
Դու՞ էլ մեզ նմանվեցիր:

118 (453).

Թալաթ փաշա էշէք գիբի,
Բըլըբլարը յուլար գիբի,
Բըլըբընա թէլ-թէլ սըչթըմ.
Սէ՞ն դէ մի օլդուն բիզիմ գիբի:

Թալեաթ փաշան ավանակի պես,
Բեղերը բարակ սանձի պես,
Բեղերիդ թել-թել ք...քեմ.
Դու՞ էլ նմանվեցիր մեզ:

* Նուրի Հասանը եզդի ազգային հերոս էր, որ կռվում էր հայ ֆեդայիների հետ:

** Մարաշում մի մեծ խոռոչով ժայռ կար, որի միջից ջուր է հոսել, այն անվանել են Դէլիքլի թաշ (Մակ քար) (Մ.Բ.):

*** 1918 թ. հայ լեգեոնականները Արարայի ճակատամարտով նվաճեցին Նաբլուսի անառիկ դիրքերը:

119 (454).

ԷՐՄԷՆԻՆԻՆ ՔԱԴԷՐԻ*

Ախշամդաճ յաղդը շիդդէդլի յաղմուր,
Վուրմա՛, չէչէ՛ճ, վուրմա՛. սօխախլար չամուր,
Ցարամ բէյիւքդիւր. քաճըմ աքրյօր,
Վուրմա՛, չէչէ՛ճ, վուրմա՛. դօրթ դուրշուճ յէթէ՛ր,
Չէչէճին ղուրշուճը ծլիւմդէճ բէթէր:

Սիլաճրճ սէսիճէ աճամ ուլաճդը,
Իւսդիւմէ քափաճդը. քաճա բօյաճդը,
Նէ՛ զուլիւմիմիշ էրմէճինճին քադէրի,
Վուրմա՛, չէչէ՛ճ, վուրմա՛. դօրթ դուրշուճ յէթէ՛ր,
Չէչէճին ղուրշուճը ծլիւմդէճ բէթէր:

Հորդ աննման տեղաց գիշերով,
Մի՛ խփիր, չեչե՛ճ, փողոցներն են ցեխոտ,
Վերքս մեծ է. արյունս հոսում է,
Մի՛ խփիր, չեչե՛ճ, չորս գնդակը հերի՛ք է,
Չեչենի գնդակը մահից էլ վատ է:

Ջենքի ձայնից մայրիկս զարթնեց,
Ընկավ կրծքիս. արյունով ներկվեց,
Հայերի ճակտի գիրն ի՛նչ սև է եղել,
Մի՛ խփիր, չեչե՛ճ, չորս գնդակը հերի՛ք է,
Չեչենի գնդակը մահից էլ վատ է:

120 (455).

ՄՈՒՐԱԴԸՆ** ՉԷՎՐԷՍԻ

Մուրաղընճ չէվրէսինճէ դումանլար չօքդիւ,
Ղարիբ էրմէճինճին բէլիճի բիւքդիւ,
Չէրքէզ էլիլլէճ քանլար դօքիւլդիւ,
Հի՛չ քիմսէ աջըլըբի իմդադ վէրմէդի.
Դինսիզ օսմանլը վուրդու, չալդը, օյնադը,
Քյաֆիր ալամաճ դա սէյիր էլլէդի:

Մուրադ ըրմադը քանա բօյանդը,
Սաճաբսըզ էրմէճի այադ ալթը գիթթի,
Դօսթ-դիւշմաճ քալմադը սէյիր էլլէդի,
Հի՛չ քիմսէ աջըլըբի իմդադ վէրմէդի.
Դինսիզ օսմանլը վուրդու, չալդը, օյնադը,
Քյաֆիր ալամաճ դա սէյիր էլլէդի:

Մուրա՛դ սույը, նէ՞րդէ սէճին դուրադընճը,
Զօ՛ք չաղըրդըմ. իշիթմէդի քուլադընճը.
Սաճաբսը՛զ էրմէճի այադ ալթը գիթթի.
Հի՛չ քիմսէ աջըլըբի իմդադ վէրմէդի.
Դինսիզ օսմանլը վուրդու, չալդը, օյնադը,
Քյաֆիր ալամաճ դա սէյիր էլլէդի:

Մուրադի շուրջ ամպերն են կուտակվել,
Գաղթական հայի մեջքն է կռացել,
Ձերքեզի ձեռքով արյուն է հեղվել,
Ո՛չ ոք չօգնեց ու չցավակցեց.
Անհավատ օսմանցին, խփեց, նվագեց, պարեց,
Նենգ գերմանացին հմայված դիտեց:

Մուրադ գետն արյունով ներկվեց,
Ոտնատակ գնացին անհաշիվ հայեր,
Թշնամի-բարեկամ դիտեցին անտարբեր,
Ո՛չ ոք չօգնեց ու չցավակցեց.
Անհավատ օսմանցին խփեց, նվագեց, պարեց,
Նենգ գերմանացին հմայված դիտեց:

Որտե՞ղ է քո կանգառը, Մուրա՛դ գետ,
Շա՛տ կանչեցի. քո ականջը չլսեց.
Նահատակվեցին անհաշի՛վ հայեր.
Ո՛չ ոք չօգնեց ու չցավակցեց.
Անհավատ օսմանցին, խփեց, նվագեց, պարեց,
Նենգ գերմանացին հմայված դիտեց:

121 (456).

ՄԱՐԱՇԻ ՀԱՅԵՐԻՆ ՄՈԽՐԱՑՐԻՆ***

Մարաշա Մարաշ դէրլէր, յամա՜ն, յամա՜ն,
Մարա՜շ, բու Նա՞սըլ Մարաշ դէրլէր,
Մարաշընճ իչինդէ քիլիսէ յաճար,
Քիլիսէ իչինդէ էրմէճին յաճար:

Ուֆաջըգ թաշ իլէճ յօլ յափթըլար,
Ջըբըլ-ջըբըլ յօլլարընճա բասըլմազ,
Էրմէճիլէր քօմիւրլէջթիլէր, յամա՜ն,
Սէլ գիբի յա՜ղ գիդիյօր, յամա՜ն:

Ավա՜ղ, Մարաշին Մարաշ են ասում,
Մարա՜շ, քեզ ինչպե՞ս են Մարաշ ասում,
Երբ քո մեջ եկեղեցի են հրկիզում,
Եկեղեցու մեջ՝ հայեր մոխրացնում:

Փոքրիկ քարերով էր շինված ճամփան,
Ճամփով քայլելը դարձավ անհնար.
Հայերին մոխրացրին, ավա՜ղ,
Ճա՜րպն է հոսում հեղեղ դարձած:

* Իր դառն ճակատագիրը հիշելով, Հայկուհի Միկյանը (ծնվ. 1912 թ., Կեսարիա) արցունքներով է մեզ հաղորդել այս երգը: Հալածվելով քեմալականներից՝ ընտանիքով ապաստանել է Իզմիրում: Իզմիրի աղետից մազապուրծ՝ նավով հասել Հունաստան, բայց գործազրկությունից հուսահատված՝ փոխադրվել Եգիպտոս: 1948 թ. հայրենադարձվել է Հայաստան: 1949 թ. շատ ուրիշների հետ աքսորվել են Սիբիր: 1956 թ. ինքն արդարացվել ու վերադարձել է Երևան, բայց արդեն բոլոր հարազատներին կորցրած, մենակ, լքված ու հետին չքավորության մեջ:

** Եփրատ գետի թուրքերեն անվանումն է:

*** Նկատի ունի Մարաշի Ս. Քառասուն Մանկանց եկեղեցու մեջ լցված հայերի ողջակիզումը քեմալականների կողմից, երբ բարձունքի վրա կառուցված եկեղեցու շեմից մարդկային հալված ճարպը հոսել է ներքև ու սառել: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս մարաշցի բանասաց Եվգինե Մայիկյանի (ծնվ. 1898 թ.) հուշը [I.148(148).]:

122 (457).

ՅԱՋԸԽԼԱՐ ՕԼԴՈՒ ԷՐՄԷՆԻԼԷՐԸ*

Յազըխլա՛ր օլդու բէնիմ քօջամընը աշիրէթինէ,
Դիւշման ողնդու թաթլը յուրդլարըմընզա,
Զաթ Օլուխ սույը աքթը,
Զանդրըլար** Հաճընը յաքթը,
Յազըխ օլդու սանա, ղօջա՛ Հաճընը,
Վիրանէյէ բայղուշլար ծթթու.
Բինդիրդիլէր դէվէլէրէ անա, բաջընը...

Գուռնաշէնէ*** ուղրադը գէչիւմիւզ,
Օրադա ղափըշթըլար բիզիմ մալընմընզը,
Քիրազդան**** գէչթի օբամընզ,
Թափանա դիւշդիւ յօլումուզ,
Դինլէյի՛ն, է՛յ, անա՛, բա՛ջը, քարդաշլա՛ր.
Յաղմայա գիթթի թիւ՛մ բիզիմ մալընմընզ:

Ղըսուխդան ինդի գէչիւմիւզ,
Ղարս-բազարա ուղրադը օբամընզ,
Ջիւանդան գէչիրդիլէր անա, բաջը, քարդաշլարը.
Այյաղ ալթընա գէթդի նամուսումուզ, ջանընմընզ,
Օսմանիյէդէ օղնդու գէչիւմիւզ,
Հասան-բէյէ դիւշթիւ յօլումուզ:

Խանէլէրի խարաբ օլմուշ.
Օ դա էրմէնիդիր դիյէ,
Աղբէզ մէյդանընընդա քօնդուք ճէփիմիզ.
Օրդա քէմիւլդիւ անա, բաջը, քարդաշլար,
Հալեպդէն գէչդի քալանընմընզ.
Դէր Զօր չէլիւ օլդու բիզէ վաթան.
Այյաղ ալթընա գիթթի սաճիբսի՛զ էրմէնի:

*ԱՓՍՈՍ ԵՂԱՆ ՀԱՅԵՐԸ**

Ափսո՛ս եղավ ամուսնուս կալվածքը,
Թշնամին զավթեց մեր շեն տները,
Հոսում էր Զաթ Օլուխի աղբյուրը,
*Երբ չանդրները** այրեցին Հաճընը,*
Ափսո՛ս եղավ քեզ, հսկա՛ Հաճընն,
Ավերակներիդ վայում են բվերը.
Մայրերին, քույրերին բարձեցին ուղտերը...

*Գուռնաշենից*** անցավ մեր թափորը,*
Այնտեղ թալանեցին մեր ունեցվածքը,
*Քիրազից**** անցավ մեր թափորը,*
Դեպի Թափան ուղղվեց մեր ճամփան,
Լսեցե՛ք, հե՛յ, մա՛յր, քո՛ւյր, եղբայրնե՛ր,
Կողոպուտի գնաց մեր ող՛ջ ունեցվածքը:

Կածանից իջեցրին մեր բեռները,
Ղարս-բազար ուղևորվեց մեր թափորը,
Ջրհան գետից անցան մայր, քույր, եղբայրները.
Ոտնատակ գնաց մեր ող՛ջ կյանքն ու պատիվը,
Օսմանիեում իջևանեց մեր թափորը,
Հասան-բեյ հասավ մեր ճանապարհը:

Քանդվել էին նաև տները,
Քանի որ հայերն էին տերերը,
Աղբեզ հրապարակում նստոտեցրին բոլորիս.
Այնտեղ մոխրացրին մայր, քույր, եղբայրներին,
Հալեպից անցանք ողջ մնացածներս.
Մեր հանգրվանը դարձավ անապատը Դեր Զորի.
Ոտնատակ գնաց անտե՛ր հայը :

123 (458).

ՇԻՄԴԻ ԱԴԱՆԱՑԱ ԳԷԹՄԷԼԻ ԴԷՑԻԼ*****

Շիմդի Ադանայա գէթմէլի դէյիլ,
Գիդիփ դէ օ հալլարը գօրմէլի դէյիլ,
Զօրէքզաբթի գիւնիւ կոչնակ չէքիլդի,
Բիւթիւն էրմէնիլէր ժամա դօքիլդիւ:

Բէնի ծլդիւրէն դօյդու՞ մը օլա,
Լիոալարըմը սայդը՞ մը օլա,
Բէնիմ բուրդա վուրուլդուդումու
Անամ, բաբամ դույդու՞ մը օլա:

Ադանացը յօլլարը թաշլըք,
Ջէրիմիզդէ քալմադը բէշ փարա խաշլըխ,
Ամա՛ն, ադանա՛լը, ջանը՛մ ադանալը,
Ջէրիմիզդէ քալմադը բէշ փարա խաշլըխ:

*ՀԻՄԱ ԱԴԱՆԱ ԳՆԱԼ ՊԵՏՔ ՉԷ*****

Հիմա Ադանա գնալ պետք չէ,
Գնալ, այդ վիճակը տեսնել պետք չէ,
Շորեքշաբթի օր կոչնակ հնչեցրին,
Բոլոր հայերին եկեղեցու մեջ լցրին:

Ինձ սպանողը կշտացա՞վ արդյոք,
Ոսկիներս հաշվե՞ց արդյոք,
Այստեղ իմ խփվելս
Մայրս, հայրս լսեցի՞ն արդյոք:

Ադանայի ճամփաներն են քարոտ,
Մեր գրպանում չմնաց հինգ գրոշ,
Ավա՛ղ, ադանացի, հոգի՛ս ադանացի.
Գրպանումս չմնաց հինգ գրոշ:

---

* Հաճընցի Խաչեր Դաքեսյանը (ծնվ. 1896 թ.) արցունքներով էր վերհիշում այս բոլոր իրադարձությունները:
** Թուրք կանայք:
*** Հայկական գյուղ Հաճընում:
**** Լեռ Հաճընի մոտ:
***** Այս երգերը հորինվել են ֆրանսիական զորքերի նահանջից հետո՝ քեմալականների հարձակման և 1921 թ. Կիլիկիայի հայության բռնագաղթի օրերին:

124 (459).

ՆԷԼԷ՛Ր ԳԷԼԴԻ ԷՐՄԷՆԻՆԻՆ ԲԱԾԸՆԱ

Օդալար յափդըրդըմ բիր ուչթան ուջա,
Իչինդէ յաթմադըմ բիր գիւն, բիր գէջէ,
Ղօնմա՛, բիւլբիւ՛լ, ղօնմա՛ մէզար թաշընա,
Նէլէ՛ր գէլդի էրմէնիհին բաշընա:

Թֆէնգիմ չադրդա ասըլը քալդը,
Ջէհիզիմ սանդըքդա բասըլը քալդը,
Ղօնմա՛, բիւլբիւ՛լ, ղօնմա՛ մէզար թաշընա,
Նէլէ՛ր գէլդի էրմէնիհին բաշընա:

ԻՆՉԵ՞Ր ԵԿԱՎ ՀԱՅԵՐԻ ԳԼԽԻՆ

Մայրից ծայր շինեցի սենյակներ,
Մեջը չքնեցի մի օր, մի գիշեր,
Մի՛ թառիր, սոխա՛կ, շիրմաքարիս,
Ինչե՞ր եկավ հայերի գլխին:

Հրացանս վրանում կախ տված մնաց,
Օժիտս սնդուկում դարսված մնաց,
Մի՛ թառիր, սոխա՛կ, շիրմաքարիս,
Ինչե՞ր եկավ հայերի գլխին:

125 (460).

ՄԻՆՔ ԻԼԻՐ ԻՆՔ ԴՕՆԷՆ ԴԻՂԷՆ

Մինք իլիրինք դօնէն դիղէն,
Պաժանվել ինք ընդանիքէն,
Գարօդ մնացինք միր կէղանդէն,
Գուլամ գարօդօվ-գարօդօվ:

Լիոնիրուն միջ գութափառինք,
Միր բիշուրը միր հիդ գաոնինք,
Միր գիրուձը կարը հուց ի,
Գանաչ խունդ ի ու լիղը ճօր:

Սուրփ կրքը միչ գունէնք կրվուձ.
«Շուդը կնուց, քիչը մնուց»,
Համփերութին շատ լավ պուն ի,
Համփիրէ՛, հիկկէ՛ս, համփիրէ՛:

ՄԵՆՔ ԵԼԵԼ ԵՆՔ ՏՆԻՑ ՏԵՂԻՑ

Մենք ելել ենք տնից, տեղից,
Բաժանվել ենք ընտանիքից,
Կարոտ մնացինք մեր գյուղերին,
Կուլամ կարոտով-կարոտով:

Լեռների մեջ կթափառենք,
Մեր պաշարը մեր հետ կառնենք,
Մեր կերածը գարի հաց է,
Կանաչ խոտ է ու լեղի ջուր:

Սուրբ Գրքի մեջ ունենք գրված,
«Շատը գնաց, քիչը մնաց»,
Համբերությունը շատ լավ բան է,
Համբերի՛, հոգի՛ս, համբերի:

126 (461).

1915 ՍԷՆԷՍԻՆԻՆ ՋՈՒԼՄԻՒ

Բիր րիւզգար էսթի ալէմ դիւնյայա,
Զուլիւմ սէրփիլդի հէփ աճալիյէ,
Դաղլար, վադիլէր բօյանդը ալա,
Գիւն-գիւնէշ բաթթը քօյու դումանա,
Ենի եթիշմէ ինսան-քուզուլար
Վաթան ուղրունա դուրբան օլդուլար,
Բինլէրջէ մուրադ բիրդեն ուչթուլար:
Ա՛խ, բու նէ՞ թէդբիր, է՛յ վախ յազընլար,
Ղարիբ անննէլէր ֆիգան էյլէդի.
Քանը յաշ իլէ «յավրու՛մ» մէլէդի:
Արզուլու գէլինն քարալար գիյդի,
Ջէլալդան դիւշիւփ, չէֆայա գիրդի,
Նազը բիւյիւմիւշ մասում յավրուլար,
Բօյուննլարը էյրի յօլա բաքթըլար,
Ջէֆք ուսէֆադան հասրէթ քալդըլար,
Քուրու էքմէլէ մայիլ օլդուլար:
Է՛յ, յարաբբիմ, հա՞նգի գյիւն աջէր
Գէչէջէք րիւզգար, բիթէջէք շու հարբ,
Եթէր դէյի՞լ մի չէքդիղիմիզ էգիյէթ
Ցա հաք ռահիմ էյլէ մէրհամէթ:
Ջինանդէ ադամ գիւն գիւնէ ազդը,
Ինթիքամ իչինն քույուլար քազդը,
Ալ-քան ադէթա բիր թաամ սանդը,
Ցըրթըջը դուշա արխադաշ օլդու:
Խովուք դէդէդէն թօռընա ուլաշդը,
Քիմին գիւնահը, քիմէ դօլաշդը,
Եդի հիւքիւմէթ այաղա քալքդը,

1915 ԹՎԻ ՏԱՌԱՊԱՆՔԸ

Մի մրրիկ եկավ ամբողջ աշխարհին,
Տառապանք բերեց ողջ ժողովրդին,
Լեռներ ու ձորեր կարմիր ներկվեցին,
Օր ու արևը մշուշում խավարեցին:
Նորահաս-գառնուկ մանուկներ
Հանում հայրենիքի ողջակիզվեցին,
Հազարավոր իդեր մեկից խամրեցին:
Ա՛խ, այս ինչ հրաման էր, ավա՛ղ,
Ղարիբ մայրեր լաց ու կոց եղան,
Արյուն արցունքով «զավա՛կս» մղկտաց:
Կարոտած հարսը սևերը կապեց,
Փառքից գլորվեց, տանջանքի մատնվեց:
Նրբին մեծացած փոքրիկ մանուկներ,
Վզերնին ծուռ՝ ճամփին նայեցին,
Հաճույքից, խաղից կարոտ մնացին,
Չորացած՝ հացին կարոտ մնացին:
Է՛յ, Աստվա՛ծ, ո՞ր օրը արդյոք
Պիտ անցնի հողմը, վերջանա պատերազմը:
Բավական չէ՞ մեր ողբն ու հոգսը,
Ո՛վ Աստված, ողորմա մեզ ու գթա մեզ:
Աշխարհում մարդը օր օրի կատղեց,
Վրեժի համար թակարդներ լարեց,
Կարմիր արյունը ուտելիք նկատեց,
Գիշատիչ թռչունին դարձավ նա ընկեր:
Ագռավը պապից թոռանը հասավ.
Մեկի մեղքը մյուսի վիզն անցավ,
Ցոթ տերություններ ոտքի կանգնեցին,

Դուշմուշ բիր միլլէթ արադա քալդը:
Էրմէնի գօզդէն դուշդուն Թուրքլադաձ,
Սուրգունլուք իչին օքունդու ֆէրման,
Եր գօստէրիլդի Դէր Զօր արաբիստան,
Զուլդաձ, հասրդաձ քուրուլդու օթախ:
Էվ, բարք, թիշարէթ բիրդէն բիչիլդի,
Ճաքիր բիր միլլէթ օլդու մուհաջիր:
Էմզիկլի, հասդա, յաշլը, համիլէ՝
Սէր-սէֆիլ դուշթուն իզսիզ յօլլարա:
Ազիզ յավրուլար դաղլար աշըրդը,
Նազիկ թօփուքլար ալ քանա բաթթը:
Դիրջիկ վէ խամչը գիտիգչէ արթթը,
Անա շաշըրըփ Էվլադը աթթը,
Հասդա դէրմանըդ յօլլարդա քալդը,
Ջանավարլարըն եմի արթըլդը:
Օլաձ ֆէրյաթլար յուրէգ դաղլաթթը,
Ինսաֆլը օլաձ դալաձամադը,
Ինսաֆսըզ դուլլար գյուլ՚ուփ հայքըրդը,
Զուլում քէնդինէ բիր ֆըրսաթ սաձդը,
Հարամ մալ իլէ մալ-մուլք արթըրդը,
Բաթըլըք իլէ ջաձ քարարթը:
Ց՚ա, ազիզ Ալլա՚հ, Էլլէ՚, ինայէթ,
Թօվբէ յուրէգդէն գյունաձրմըզը աֆ էդ,
Սէլամէթ իլէ բիզէ խէլասէթ,
Զիրա սէնդէդիր ռահմէթ վէ գուդրէթ,
Շուքու՚ր օլսուն, Ցարա՚բ, սէնին իսմինէ,
Էրմէնի միլլէթի դիրիլդի գինէ,
Դուվա իդէլիմ բիզ շէհիդլէրէ,
Հէլալ էթսինլէր քանլարը բիզէ:

Ընկած մի ժողովուրդ ոտատակ տվին:
Հայը Թուրքիայում աչքից հանեցին,
Տեղահանության հրաման տվին,
Տեղ ցույց տվեցին՝ Դեր Զորն Արաբիայի,
Չուլ ու թաղիքից օթևան շինեցին:
Տուն, տեղ, ունեցվածք ողջ կողոպտեցին,
Խեղճ ժողովրդին գաղթական դարձրին:
Ծծկեր, հիվանդ, տարիքոտ, ծոցվոր՝
Թշվառներն ընկան ճամփեքն ամայի:
Անմեղ մանուկները լեռներ կտրեցին,
Նուրբ ներքանիներն արյունով ներկվեցին:
Մտրակն ու մահակը գնալով սաստկացրին,
Ծվարած մայրեր զավկին շպրտեցին,
Հիվանդ և անուժ ճամփին մնացին,
Գազանների կերն ավելացրին:
Եղած խնդրանքները սիրտ պատառեցին,
Խիղճ ունեցող ներն էլ չտոկացին,
Անխիղճ մարդիկ խնդացին, հռհռացին,
Աղետը իրենց մի առիթ կարծեցին,
Անիծված ապրանքով ունեցվածք ավելացրին,
Ունայնությամբ հոգիներնին սևացրին:
Ո՛վ, Տե՛ր Արարիչ, գթա դու մեզի,
Մեղա՛, սրտովին, մեր մեղքերը ների՛ր,
Խաղաղությամբ հասցրու ավարտին,
Քանզի քոնն է ուժն ու զորությունը,
Փա՛ռք քեզ, քո անվան, Տե՛ր իմ,
Հայ ազգը վերականգնվեց կրկին.
Աղոթեք մեր նահատակներին.
Հեղված արյունը թող հալալ լինի:

127 (462).
ՎԱՐԱԳԱ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՑ

Վարագա Սուրբ Խաչից
Բերեր եմ ձեզ լուր,
Խղճացեք հայ ազգին՝
Տվեք մեյ-մեկ սուր:

128 (463).
ԱՇԽԱՐՀԵ ԱՇԽԱՐՀ ՄԱՆ ԵԿԱ

Աշխարհե աշխարհ ման եկա,
Տատիկիս ոդաթումբը չգտա,
Ո՞րտեղից ես նրան գտնեի,
Երբ թուրքերը կախել էին ծառից:

Մայրիկիս ոդաթումբը ես գտա,
Աղի արցունք թափեցի վրան,
Իմ արցունքներից, մայրի՛կ ջան,
Հողաթումբիդ կանաչ բուսավ:

Հայրիկիս ոդաթումբը փնտրեցի,
Բայց ո՞րտեղից ես գտնեի այն,
Երբ գազան, անխիղճ թուրքերը
Նրան մորթել էին անխնա:

129 (464).
ԱՔՍՈՐԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՐԳ

Քայլեցեք, քայլեցեք ողջ մնացողներ,
Էրթանք, հասնինք մեր գյուղեր,
Շինենք մեր ավեր տներ,
Ցանենք մեր խոպան արտեր:

130 (465).
ԱՍԼԱՆԲԵԿԸ ՎԱՌԵՑԱՎ*

Ասլանբեկը վառեցավ, յոթը տուն մնաց,
Նշանու աղջիկները կարգելու մնաց:

Խոսե՛, ժիժի՛, խոսե՛, տանձերը հասնին.
Պապասըզ տղաքը մուրազնուն հասնին:

Տանձերը հասել են. ժողովող մը չիկա.
Պապասըզ տղաքը կարգող մը չիկա:

---

* «Թուրքերը Ասլանբեկը (Նիկոմեդիա) յոթ անգամ վառեր էին: Մեր հայերը յոթ անգամ նորեն նոր շիներ, նստեր էին: Վերջին անգամը 1921 թ. թուրք չեթեները էկան, Ասլանբեկը չորս կողմեն պաշարեցին: Մենք հայերս հազիվ Իզմիր փախանք, ամմա Իզմիրն ալ կրակի տվին. հայերուն և հույներուն ծովը թափեցին»: Այս դեպքերին ականատես ասլանբեկցի Հայրապետյան Մանվելը (ծնվ. 1915 թ.) արցունքներով էր հիշում այդ բոլորը և հեկեկալով երգում այս սրտառուչ երգը:

131 (466).
ԻԶՄԻՐԻՆ ԶՈՒԼՄՈՒՄ — *ԻԶՄԻՐԻ ԱՂԵՏԸ*

Քարա դէնիզ՝ ֆրթընա,
Ալ փըրթընը սըրթընա,
Մայրի՛կ, դուշման գէլլիյօր
Քըզընն քալմըշ յօլընա:

Սև ծովում՝ առեղ փոթորիկ,
Ունեցածդ առ շալակիդ,
Մա՛յր, թշնամին է գալիս,
Աղջիկդ մնացել է ճամփին:

Ա՛խ, մայրի՛կ ջան, աղլարըմ,
Յուրիէիմէ յարա քաղլարըմ,
Աննէմի դայիբ էթթիմ,
Գէչէ-գուննուզ աղլարըմ:

Ա՛խ, մայրի՛կ ջան, ես կուլամ,
Սրտիս վերքեր փաթթման,
Մայրիկիս եմ ես կորցրել,
Գիշեր-ցերեկ կուլամ ես:

Ցազը յազդըմ թաշընա.
Գէլէն-գէչէն օքուսուն,
Թաշ աթթըմ. թուֆենգ չըքդը,
Նէլէ՛ր գէլդի բաշըմա:

Գիր գրեցի ես քարին.
Անցնող-դարձողն ընթերցի,
Քար գցեցի, պայթյուն լսեցի,
Ինչե՛ր եկավ իմ գլխին:

132 (467).
ԻԶՄԻՐԻ ԱՂԵՏԸ

Աֆիոնեն դուրս էկանք,
Իզմիր քաղաքը մտանք,
Ազիզ մորս չգտա.
Հոնգու՛ր-հոնգու՛ր լաց էղա:

Ա՛խ, մամա՛ ջան, խաբեցին,
Ինձի քեզնից բաժնեցին,
Քեզ ալ կրակը նետեցին.
Ջրթը՛ր-չրթը՛ր այրեցին:

Սև պոեզը գալիս ա,
Հույն զինվորներ բերում ա.
- Ամա՛ն, տղե՛րք, շուտ հասե՛ք,
Մամաս ձեռքից գնում ա:

Իզմիր քաղքեն դուրս էկանք,
Սալոնիկի մեզ տարան,
Ազիզ մորս չգտա.
Թաղաև ախպորս գտա:

Ախպարս ինձ հարց տվավ.
- Ու՞ր թողուցիր մեր մաման:
- Իզմիրի ճամփին նա մեռավ,
Առանց թաղել նա մնաց,
Ազատելու ճար չեղավ.
Թուրքի բաժին նա դարձավ:

Սալոնիկեն դուրս էկանք,
Երևան քաղաք ես էկա,
Աշխատեցա, ապրեցա,
Մեծացա ու պսակվա:

Վեց որդիներ ունեցա,
Բայց Իզմիրը չմոռցա,
Ա՛խ, մամա՛ ջան, խաբեցին,
Թուրքերը քեզ վառեցին:

133 (468).
ՍԱՊԵՍ ՑՐՎԱՆՔ ԱՄԵ՛Ն ԿՈՂՄ

Մենք ալ ունինք մանչ-աղջիկ,
Ճա՛ր ալ չունինք, որ փախչինք,
Գթացե՛ք մեր խեղճության,
Արտասվելով մենք ըսինք.
«Ցաշասը՛ն Ադալէթ, Մուսաֆաթ,
Ցաշասը՛ն Միլլէթ...»:*

Էլանք Պոլիս գնացինք,
Ժամուն դուռը մնացինք,
Հաց ու զեյթուն տվեցին,
Երեք օր մեզ պահեցին:

Անկե փախանք Հունաստան,
Շատ շատերն ալ՝ Ֆրանսա,
Մեկալները՝ Եգիպտոս.
Սապես ցրվանք ամե՛ն կողմ:

---

* «Կեցցե՛ Ազատությունը, Հավասարությունը, Կեցցե՛ Ժողովուրդը...»: Թուրքական (1908 թ.) Սահմանադրության խոստացած բարեփոխումներն էին, որոնք սին դուրս եկան:

3. ՈՐԴԵԿՈՐՈՒՅՍ ՄԱՅՐԵՐԻ, ՈՐԲԻ ԵՎ ՈՐԲԱՆՈՑԻ ԵՐԳԵՐ

1 (469).

ՄՈՒՍԱՆ ՓԱԽՑՐԵՑ ՇԱՀՆԻԿԻՆ

Թեջիր գեղի* քյոշեն հովը կտանի,
Մուսաո Շահնիկը շալկած կտանի…
Աս օրս մի՛ խոսեք. իմ սիրտը փուխր է,
Վարդով թե կզարնեն, գիտեմ թե՝ փուշ է,

Վարդը դալեն կառնեն՝ տեր չունի դեի,
Կհրեն, կմշտեն՝ ղարիբ է դեի…
Վարդին հոտը անուշ է, դալիկը՝ փուշ է,
Ամեն մարդու յավրուն՝ իրեն անուշ է:

2 (470).

ՄՈՒՍԱ-ՇՈՒՆ ՏԱՐԱՎ ՀԱՑՈՑ ԳՅՈՒԼԻՋԱՐ

Մուսա-շուն տարավ հայոց Գյուլիզար,
Աչքերը հանեց, պտուկը պոկեց.
Աս ի՜նչ անգութ ժամանակ է.

Մեզի օգնո՛ղ մը չեղավ,
Աս ի՜նչ թշվառ ժամանակ է.
Մեղքցող մը մեզ չեղավ:

3 (471).

ԱՌԵՎԱՆԳՎԱԾ ՊԱՑԾԱՌԻԿԸ

Թութաստանեն կորսվեցա,
Թշնամիին ձեռքը ինկա,
Թող մայրիկս նստի ու լա,
Բոլոր ազգով նստեն ու լան:

Բան չզգացի, վա՛յ, իմ խելքիս,
Բռնվեցավ մարմինս, հոգիս,
Ո՛չ բարեկամ, ո՛չ ազգական,
Չեղան ինձի մեկ օգնական:

- Շու՛տ ոտքի ելե՛ք ու փնտրեցե՛ք,
Սար ու ձոր իրար անցուցեք,
Պայծառիկին շուտով գտեք,
Բերեք իր խեղճ մորը տվեք:

Խեղճի դիակը երբ որ գտանք,
Մեծ ու պստիկ շա՛տ հուզվեցանք,
Ոչ թե միայն մայրը թող լա.
Բոլոր ազգով նստենք ու լանք:

4 (472).

ԹՈՒՐՔԵՐԸ ՏԱՐԵԼ ԵՆ, ՈՐԴԻ՛Ս, ՀԱՑՈՑ ԿՈՒՅՍԵՐԸ

- Աս ի՞նչ սուգ է, մայրի՛կ, մայրի՛կ,
Մեր թաղին մեջը:
- Թուրքերը տարել են, որդի՛ս,
Հայոց կույսերը:

- Ի՞նչ ծանր է, մայրի՛կ, մայրի՛կ,
Հայ ազգին վերքը,

Ի՜նչ խորունկ է, մայրի՛կ, մայրի՛կ,
Հայ ազգին վիշտը:

Ես գնում եմ մայրի՛կ, մայրի՛կ,
Կովելու համար.
Կովեմ ու մեռնեմ
Հայ ազգին համար:

5 (473).

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻՆ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

Մայրի՛կ, մարթինս վար բեր,
Քերեմեթ պիտի էրթամ,
Աս իրիկուն, թե չիգամ,
Վաղը՝ անպայման կուգամ…

Խաբախլընխին յափրախը,
Մայրի՛կ, յաթախս գիտցա,
Սոլեսին թուրքին փարաճ,
Մայրի՛կ, վաստակս գիտցա:

Ջորին վարը կապել եմ,
Մայրի՛կ, կեր տվող չիկա,
Համբարձումին զարկեր են,
Մայրի՛կ, դին վերցնող մը չիկա:

Նշանծոն ըրած ֆիստանը
Բազը-բազը հագցուցեք:

Ջարուհին շա՛տ խաս է,
Պզտիկ ախպորս առեք,
Խաբախլընխին յափրախը
Պատանքիս տեղ ծածկեցեք…

- Համբարձու՛մ, տղա՛ս, քեզ ու՞ր զարկին,
Ո՞ր քարերուն, ժայռերուն.
«Հայրի՛կ-մայրի՛կ» կանչեցիր,
Բանգը՛ր-բանգը՛ր պոռացիր:

Հարությունին սահաթը
Ժամը յոթը կզարնե,
Համբարձումին կոչնակը
Տխու՛ր-տխու՛ր կհնչե…

* Հայկական թաղամաս Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

ԵՍ ԻՄ ՅԱՎՐՈՒԻՍ ԿԱՐՈ՛Տ ԵՄ, ԿԱՐՈ՛Տ

6 (474).

Էլլամ կայնիմ, մեջքիս գոտին չարձակիմ,
Յավրուիս խոսքերը ծոցես չթափվին,
Յավրուիս խոսքերը զեհիրեն աջի.

- Մի՛ լար, մայրի՛կ ջան, ես նորեն կուգամ,
Տասնհինգ օրեն երազիդ կուգամ:

7 (475).

Մերդիվենին տակի քարը ըլլայի,
Յավրուս գար-էրթար, ոտքը պագնեի,

Ա՛խ, երանի ծնված չըլլայի,
Ես իմ յավրուիս մարը չըլլայի:

8 (476).

Ադ դիմացի թեփեն լեռ մը կա,
Լեռին մեջը գեղ մը կա,

Գեղին մեջը դուման կա,
Աջաբ յավրուս անտե՞ղ կա:

9 (477).

Դեր Զորի ճամփան քարոտ է, քարոտ,

Ես իմ յավրուիս կարո՞տ եմ, կարո՞տ:

10 (478).

ՔԱՌՍՈՒՆ ՄԱՆԿԱՆ ՔԱՐԵՐԸ*

Քառսուն Մանկան քարերը,
Բարով չի բերեն մարերը,

Բերեր ի՞նչ խեր են տեսեր,
Դրեր են սև-սև հողերը:

11 (479).

ՍԱ ԴԻՄԱՑԻՍ ԼԵՌՆԵՐԸ

Սա դիմացիս լեռները
Սև-սև ամպեր են հագեր,

Հայ որբուկներուն համար
Աղի արցունք են թափեր:

12 (480).

ՈՒՐՖԱՆԸՆ ԷԹՐԱՖԸ ԴՈՒՄԱՆԼԸ ԴԱՂԼԱՐ

Ուրֆանըն էթրաֆը դումանլը դաղլար,
Էրմէնի յանըյօր. գօզլէրի աղլար,
Ուրֆանըն էթրաֆընա էքին էքէնլէր,
Էքինի էքէնլէր, գիւզէլի սէչէրլէր,
Չըքմա՛, ջէլլա՛ն, շու դաղլարա.
Սէնի ավլարլար,
Անադան, բաբադան այրը քօյարլար:

Ուրֆայի շուրջ լեռներն են մշուշոտ,
Հայերը վաղում են. աչքերն են արցունքոտ,
Ուրֆայի շուրջ հունձքն են հնձում,
Հունձքը հնձում են, սիրուհին ընտրում,
Մի շրջիր, եղնի՛կ, այս լեռներում.
Քեզ կփախցնեն,
Մորից, հորից քեզ կհեռացնեն:

Ուրֆանըն էթրաֆընդա գէզէր բիր ջէլլան,
Յավրուսունու քայբէթմիշ, արըյօր, յամա՛ն,
Ջէլլան, սէնին գիբի յուրէիմ յարա,
Արալըփ, բուլամադըմ դէրդիմէ չարէ,
Չըքմա՛, ջէլլա՛ն, շու դաղլարա.
Սէնի ավլարլար,
Անադան, բաբադան այրը քօյարլար:

Մի եղնիկ է շրջում Ուրֆայի շուրջբոլոր,
Կորցրել է ճագին, փնտրում է մոլոր,
Եղնի՛կ, իմ սիրտն էլ է քո պես վիրավոր.
Փնտրեցի, չգտա դարդիս ճար բուժող,
Մի՛ շրջիր, եղնի՛կ, այս լեռներում.
Քեզ կփախցնեն:
Մորից, հորից քեզ կհեռացնեն:

Ուրֆանըն էթրաֆը դումանլը դաղլար,
Քօյ վէրին, գէչէիմ, դումա՛նլը դաղլար,
Սըլադան յավրում վար.
Օ՛ֆ, չէքէր, աղլար:

Ուրֆայի շուրջ մշուշոտ լեռներ,
Թույլ տվեք անցնեմ, մշուշո՛տ լեռներ,
Ճավակ ունեմ օտար երկրում.
Հառաչում է ու հեկեկում:

* Երգասացը ոչ մի տեղեկություն չի հաղորդել: Ըստ երևույթին այս երգը հյուսվել է Մարաշի բարձունքին որձաքարերից կառուցված Քառսուն Մանկանց եկեղեցու մասին, որը 1920 թ. քեմալականները հրկիզեցին այնտեղ եղած հազարավոր հայերի հետ մասին:

13 (481).

ԻՍԹԻՔԱՄԸՆ ԴԱՐԴԸՐ ՅՕԼՈՒ

Իսթիքամընց դարդըր յօլու,
Դիւշման սարդը սաղը-սօլը,
Էրմէնի քըզլար ալդըլար,
Քաչըրդըլար, քիլմէմ յօլու:

ԲԱՐՁՈՒՆՔԻ ՃԱՄՓԱՆ ՆԵՂ Է

Բարձունքի ճամփան նեղ է,
Թշնամին պատեց աչ ու ձախ,
Հայ աղջիկներին առան,
Փախցրեցին՝ չգիտեմ ճամփան:

14 (482).

ԱՐԱԲԿԻՐ ՅԷՆԻ ՅԱՓԸ

Արաբկիր յէնի յափը,
Դօգէրիմ դէմիր քափը,
Յիթիրմիշիմ մայրիկիմ.
Արարըմ քափը-քափը:

ԱՐԱԲԿԻՐԸ ՆՈՐ Է ՇԻՆՎԱԾ

Արաբկիրը նոր է շինված,
Երկաթե դուռը նոր է ձուլված,
Կորցրել եմ մայրիկիս,
Փնտրում եմ դռներն ընկած:

15 (483).

ԱՐԱԲԱԼԱՐ ՉԷՔԻԼԻՐ, ՅԻՒՔԼԷՐ ԲԱՂԼԱՆԸՐ

Արաբալար չէքիլիր, յիւքլէր բաղլանըր,
Էրմէնի քըզլարը սէչիփ ալընըր,
Յօ՛լ վէր, Ուրանը՛ն դաղլար,
Բիզ գիդէչէիզ,
Անամըզ, բաբամըզ բիզ բուլաջալըզ:

ՍԱՅԼԵՐԸ ՔԱՇՈՒՄ, ԲԵՒՆԵՐՆ ԵՆ ԿԱՊՈՒՄ

Սայլերը քաշում, բեռներն են կապում,
Հայ աղջիկներին ընտրելով առնում,
Ծամփա՛ տվեք, Ուրանի՛ լեռներ,
Մենք գնալու ենք,
Մեր հորն ու մորը մենք գտնելու ենք:

16 (484).

ՀԱՅԱԹԸՆ ՉԷՀՄԷԻՍԻ ԲՈՒԶ ԳԻԲԻ ԱՔԱՐ

Հայաթըն չէշմէսի բուզ գիբի աքար,
Թիւրք բաջըլարը չաղըրդաճ բաքար,
Էրմէնի գէլիյօր էլլէրի բաղլա,
Անալար աղլըյօր՝ չօջուղում դիյէ,
Գէլինլէր աղլըյօր՝ քօջամում դիյէ,
Քըզլար ազլըյօր՝ նամուսում դիյէ:

ԲԱԿԻ ԱՂԲՅՈՒՐԸ ՍԱՌՈՒՅՑԻ ՊԵՍ Է ՀՈՍՈՒՄ

Բակի աղբյուրը սառույցի պես է հոսում,
Թուրք բաջիները վրանից են նայում.
Հայերն են գալիս ձեռնակապերով.
Մայրերն են լալիս՝ զավակս ասելով,
Հարսներն են լալիս՝ ամուսինս ասելով,
Աղջիկներն են լալիս՝ պատիվս ասելով:

17 (485).

ՈՒՌՈՒՄ ՀԷԼԷՆԻՆ* ՍՈՒԼԱՐԸ ՍՕՈՒ՛Ք-ՍՕՈՒ՛Ք ԱՔԱՐ

Ուռում Հէլէնին սուլարը սօու՛ք-սօու՛ք աքար,
Զավալլը մուհաջիրլէր չաղըրդաճ բաքար,
Քըզլար աղլըյօր՝ նամուսում դիյէ,
Գէլինլէր աղլըյօր՝ քօջամում դիյէ,
Անալար աղլըյօր՝ չօջուխում դիյէ,
Զէնգինլէր աղլըյօր՝ մալըմըզ դիյէ,
Ֆախիրլէր աղլըյօր՝ ջանըմըզ դիյէ:

ՀՈՒՅՆ ՀԵԼԵՆԻ ՋՐԵՐԸ ՊԱ՛Ղ-ՊԱ՛Ղ ԵՆ ՀՈՍՈՒՄ*

Հույն Հելենի ջրերը պա՛ղ-պա՛ղ են հոսում,
Խեղճ գաղթականները վրանից են նայում,
Աղջիկները լալիս են՝ պատիվս ասելով,
Հարսները լալիս են՝ ամուսինս ասելով,
Մայրերը լալիս են՝ զավակս ասելով,
Հարուստները լալիս են՝ ունեցվածքս ասելով,
Խեղճերը լալիս են՝ մեր կյանքն ասելով:

18 (486).

ՅԷՇԻԼ ՂՈՒՐԲԱՆ ՕԼԱՑԸՄ ԳԷՉԷՆ ԳԻՒՆԼԷՐԷ, ՄԱՅՐԻ՛Կ

Յէշիլ ղուրբան օլալըմ գէչէն գիւնլէրէ, մայրի՛կ,
Քըրըղը քանաթլարըմ. քալդըմ չծլլէրդէ՝
Անասըզ, բաբասըզ, մայրի՛կ,
Դիւշդիւմ դիյար ղուրբէթթէ, մայրի՛կ,
Ցա բէն աղլամայըմ, մայրի՛կ,
Քիմլէ՞ր աղլասըն, մայրի՛կ:

ԴԱԼԱՐ ՋՈՀ ԴԱՌՆԱՄ ԱՆՑՅԱԼ ՕՐԵՐԻՆ, ՄԱՅՐԻ՛Կ

Դալար զոհ դառնամ անցյալ օրերին, մայրի՛կ,
Փշրվեցին թևերս, մնացի անապատում՝
Առանց մայր, առանց հայր, մայրի՛կ,
Ընկա օտար վայրեր, մայրի՛կ,
Եթե ես լաց չլինեմ, մայրի՛կ,
Ովքե՞ր լաց լինեն, մայրի՛կ:

* Տեղավայրի անուն է:

19 (487).

ԱՐԱԴԸՂԸՄ ՉԷՇՄԷ ԲՈՒԶ ԳԻԲԻ ԱՔԱՐ

Արադըղըմ չէշմէ բուզ գիբի աքար,
Էրմէնի քըզլարը չաղըրդաճ բաքար,
- Քօ՛յ վէրին, փօլի՛ս բէյլէր, բիզ դէ գիդէլիմ,
Դէր Ջօր չծլլէրինդէ բիզ դէ ծլէլիմ:

ՓՆՏՐԱԾՍ ԱՂԲՅՈՒՐԸ ՍԱՌՈՒՅՑԻ ՊԵՍ Է ՀՈՍՈՒՄ

Փնտրածս աղբյուրը սառույցի պես է հոսում,
Հայ աղջիկները վրանից են նայում,
- Ծամփա՛ տվե՛ք, սպա՛ բեկեր, մենք ևս գնանք,
Դեր Ջորի անապատում մենք ևս մեռնենք:

20 (488).

ԱՐԱԴԸՂԸՄ ՉԷՇՄԷ ԲՈՒԶ ԳԻԲԻ ԱՔԱՐ

Արադըղըմ չէշմէ բուզ գիբի աքար,
Էրմէնի քըզլարը չաղըրդաճ բաքար,
- Քօ՛յ վէրին, ասքէրլէր, բիզ դէ գիդէլիմ,
Դէր Ջօր չծլլէրինդէ բիզ դէ ծլլիմ:

ՓՆՏՐԱԾՍ ԱՂԲՅՈՒՐԸ ՍԱՌՈՒՅՑԻ ՊԵՍ Է ՀՈՍՈՒՄ

Փնտրածս աղբյուրը սառույցի պես է հոսում,
Հայ աղջիկները վրանից են նայում,
- Ծամփա՛ տվե՛ք, ասկյարներ, մենք ևս գնանք,
Դեր Ջորի անապատում մենք ևս մեռնենք:

21 (489).

ՇՈՒ ԴԱՂԸՆ ԱՐԴԸՆԴԱ ԷՐՄԷՆԻ ՔԸԶԸ ՎԱՐ

- Շու դաղըն արդընդա էրմէնի քըզը վար,
Գիդի՛ն-բաքը՛ն չանթասընդա նէսի՞ վար,
- Գիւզէլ գօզլէրի վար,
Սրմա սաչլարը վար:

ԱՅՍ ԼԵՌԱՆ ԹԻԿՈՒՆՔԻՆ ՀԱՅ ԱՂՋԻԿ ԿԱ

- Այս լեռան թիկունքին հայ աղջիկ կա,
Գնացե՛ք, տեսե՛ք պայուսակում ի՞նչ կա,
- Դեղեցիկ աչքեր կան,
Եվ մետաքս մազեր:

22 (490).

ՇՈՒ ԴԱՂԸՆ ԱՐԴԸՆԴԱ ԷՐՄԷՆԻ ՔԸԶԸ ՎԱՐ

- Շու դաղընց արդընդա էրմէնի քըզը վար,
Գիդի՛ն-բաքը՛ն չանթասընդա նէսի՞ վար,
- Ազըջըք թուզ վար, ազըջըք դա՝ օթ:

ԱՅՍ ԼԵՌԱՆ ԹԻԿՈՒՆՔԻՆ ՀԱՅ ԱՂՋԻԿ ԿԱ

- Այս լեռան թիկունքին հայ աղջիկ կա,
Գնացե՛ք, տեսե՛ք պայուսակում ի՞նչ կա,
- Մի քիչ աղ ու մի քիչ խոտ կա:

23 (491).

ՇՈՒ ԴԱՂԸՆ ԲԱՇԸՆԴԱ ԲԻՐ ՔՈՒՉՈՒ ՄԷԼԷՐ

Շու դաղընց բաշընդա բիր քուզու մէլէր,
Օ քուզուճուն սէսի բօյրիւմիւ դէլէր,
Նիյէ՞ մէլիյօրսըն, քուզու՛մ, սէն բանա սօյլէ,
Անասըզ յավրուլար բօյլէ մի՞ մէլէր:

ՄԻ ԳԱՌ Է ՄԱՅՈՒՄ ԱՅՍ ԼԵՌԱՆ ԼԱՆՋԻՆ

Մի գառ է մայում այս լեռան լանջին,
Սիրտս է մաշում ձայնը գառնուկի,
Ինչու՞ ես մայում, գառնու՛կ, ասա՛ ինձ՝
Մայրագուրկ ձագերն այդպե՞ս են լալիս:

24 (492).

ՎԱՐԱ, ՎԱՐԱ ՎԱՐԴԸՄ ՇՈՒ ՔԱՐԱ ԹԱՇԱ

Վարա, վարա վարդըմ շու քարա թաշա,
Հասրէթ քալդըմ բաջը-քարդաշա,
Ցազըլաճ յազը գէլիրիմիշ բաշա՝
Նէլէ՛ր գէլդի էրմէնիճին բաշընա:

ԳՆԱՑԻ, ԳՆԱՑԻ, ՀԱՍԱ ՍԵՎ ՔԱՐԻՆ

Գնացի, գնացի, հասա սև քարին,
Կարոտս մնացի քույր-եղբայրներիս,
Իմ ճակատագիրն է եկել գլխիս,
Ինչե՞ր եկան հայերիս գլխին:

25 (493).

ԹԷՔԷՐԴԱՂԴԱ ԲԷՇԻՔԹԱԾ

Թէքէրդաղդա Բէշիքթաշ,
ՆԷ՛ աճամ վար, ՆԷ՛ բաբամ, ՆԷ՛ դէ քարդաշ,
Ղօնմա՛, բիւլբիւ՛լ, ղօնմա՛, մէզար թաշընա.
Քարա թօփրաք օլսուն բանա արխադաշ:

ԹԵՔԵՐԴԱՂՈՒՄ Է ԲԵՇԻՔԹԱԾԸ

Թեքերդաղում է Բեշիքթաշը,
Ո՛չ մայր կա, ո՛չ հայր և ո՛չ եղբայր,
Մի՛ թառիր շիրմաքարիս, սոխա՛կ,
Սև հողը թող դառնա ինձ բարեկամ:

26 (494).

ԻՍՏԱՆԲՈՒԼՈՒՆ ՕՐԹԱՍԸ՝ ԲԷՇԻՔԹԱՇ

Իստանբուլուն օրթասը՝ Բէշիքթաշ,
Նէ՛ անամ վար, նէ բաբամ, նէ դէ քարդաշ,
Բունդան սօնրա բէշլի-մարթին օլաջաք
Հէ՛մ արխադաշ, հէմ յօղդաշ, հէմ դէ քարդաշ:

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՄԵՋՏԵՂՈՒՄ՝ ԲԵՇԻՔԹԱՇ

Ստանբուլի մեջտեղում՝ Բեշիկթաշ,
Ո՛չ մայր ունեմ, ո՛չ հայր և ո՛չ եղբայր,
Հետևյուս հինգնոց-հրացանն է ինձ
Ե՛վ ընկեր, և՛ բարեկամ, և՛ եղբայր:

27 (495).

ԱՆՆԷ՛, ԲԷՆԻՄ ԲԱԲԱՄ ՅՕ՞Ք ՄՈՒ

Աննէ՛, բէնիմ բաբամ յօ՞ք մու,
Նէրդէ քալդը, գէլմէդի,
Չօք ծքսհւզլէր գհւլդհւ,
Ամմա բէնիմ յհւզհւմ գհւլմէդի:

ՄԱ՛ՅՐ, ԵՍ ԱՐԴՅՈՔ ՀԱՅՐ ՉՈՒՆԵՄ

Մա՛յր, ես արդյո՞ք հայր չունեմ,
Որտեղ մնաց, դեռ չեկավ,
Շատ որբուկներ ուրախացան,
Բայց իմ դեմքը չժպտաց:

28 (496).

ԳԻԴԷ՛Ն, ԳԻԴԷ՛Ն, ԷՐՄԷՆԻ ՔԸՉԼԱ՛Ր

Գիդէ՛ն, գիդէ՛ն, էրմէնի քըզլա՛ր,
Բիր գհւն ծլհւմ բիզէ դհւշէր,
Դհւշմանա ավրաթ օլմամայա՝
Եփրատըն իչինդէ ծլհւմ բուլայըմ:

ԳՆԱՅՈ՛Ղ-ԳՆԱՅՈ՛Ղ, ՀԱՅ ԱՂՋԻԿՆԵ՛Ր

Գնացո՛ղ-գնացո՛ղ, հայ աղջիկնե՛ր,
Մի օր մահը դեմ կգա մեզ,
Թշնամուն կին չդարձած՝
Եփրատի մեջ գտնենք մահ:

29 (497).

ԹՈՒԻՐՔ ՉԱՈՒԾՈՒ ՎԷ ԷՐՄԷՆԻ ՔԸՉԸ

- Իստանբուլդա բիր յար սէվդիմ՝
Էրմէնի, էրմէնի, էրմէնի,
Էրմէնի նա՞սըլ դա գծլնհւ
Վէրմէլի, վէրմէլի, չաու՛շ, վէրմէլի:

- Ծանդըմ, չաու՛շ, յանդըմ սէնհւն էլհւնդէն,
Էլհւնդէն, չաու՛շ, էլհւնդէն,
Ծլմէլհւնջէ քուրթուլամամ սէնհւն դհւլհւնդէն,
Դհւլհւնդէն, չաու՛շ, դհւլհւնդէն.
Չօք սալլամա, չաու՛շ,
Ղասաթուրան ֆոլլար բէլհւնդէն,
Ֆոլլար բէլհւնդէն, բէլհւնդէն:

ԹՈՒՐՔ ՉԱՈՒԾՆ ՈՒ ՀԱՅՈՒՀԻՆ

- Ստամբուլում մի յար սիրեցի՝
Հայուհի, հայուհի, հայուհի,
Հայուհին ինչպե՞ս իր սիրտը
Կտա, կտա, կտա չաուշին:

- Վաովեցի, չաու՛շ, վաովեցի ես քո ձեռքից,
Քո ձեռքից, չաու՛շ, քո ձեռքից,
Մեռնելով կազատվեմ ես քո լեզվից,
Քո լեզվից, չաու՛շ, քո լեզվից.
Շատ մի՛ օրորվիր, չաու՛շ,
Լայն սվինը կպոկեմ քո մեջքից,
Կպոկեմ քո մեջքից, քո մեջքից:

30 (498).

ՄՈՒՀԱՋԻՐ ՔԸՉԸ

Բէն բիր մուհաջիր քըզըլըմ,
Ինթիքամ յըղդըզըլըմ,
Աչըլըն բէնիմ հալիմէ,
Ցուրէգլէրէ սըզըլըմ:

Ղըյմա՛ բէնի, էֆէնդի՛մ,
Բէն դէ սէնհւն գիբիյդիմ,
Գհւլ բախչէնհւն իչինդէ
Ղօնչագհւլ գիբիյդիմ:

Նաո աղաչը քուրուդու,
Նէ՛ արանդը, նէ՛ սօրուդու,
Անամ, բաբամ, քարդաշլար
Հէփ բիր գհւնդէ վուրուդու:

ԳԱՂԹԱԿԱՆ ԱՂՋԻԿԸ

Ես գաղթական աղջիկմ՛ եմ,
Վրեժի աստղիկն եմ,
Ցավակցեք իմ վիճակին,
Սրտերին ցավ տվողն եմ:

Խնայիր ինձ դու, իմ տե՛ր,
Ես էլ քեզ նման էի,
Վարդերի այգու մեջ
Կոկոն վարդի նման էի:

Ջորացավ մեր նոնենին,
Ո՛չ փնտրեցին, ո՛չ հարցրին,
Հորս, մորս, եղբայրներիս,
Մեկ օրվա մեջ մորթեցին:

Նէրդէ՞ էրմէնհւնհւ օջաղը,
Նէրդէ՞ քալդը բուջաղը,
Բունդան սօնրա թհւթմէսի՛ն
Օսմանլընըն օջաղը:

ՈՒ՞Ր ՄՆԱՑ ՀԱՅԻ ՕՋԱԽԸ,

Ու՞ր մնաց հայի օջախը,
Ու՞ր մնաց նրա ամբարը,
Այսուհետև թող չծխա՛
Նաև օսմանցու օջախը:

31 (499).

ՂԱՐԻԲԻՄ

Ղարիբիմ բու վաթանդա,
Ղարիբ դուշլար ծթէրլէր,
Գծլնհւմ բիթթի՝ հիչ օղդու,
Դուրմույօր չծլլէրհւնդէ:

Գիդերիմ էլհւնհզդէն
Քուրթուլուրում դհւլհւնհզդէն,
Եշիլ էծրդէկ օլայըմ
Սու իչմէմ գծլհւնհւզդէն:

Բհւլբլհւլ, ն՞է ծթէրսհն
Չուխուր օվադա,
Անամ սէնի արար՝
Բուլմազ յուվադա:

Է՛յ, յուջէ դաղլար,
Է՛յ, սօղուք սուլար,
Բէն ղարիբ դհւշդհւմ,
Բէնիմ անամ աղլար:

Ղարիբիմ, ղարիբ դուշում,
Հարդա դուշամ՝ յէրիմ յօք,
Ղար-ղըշի բիր վաթան.
Բէն բիր վաթանսըզ դուշում:

ՈՒ՞Ր ՄՆԱՑ ՀԱՅԻ ՕՋԱԽԸ,

Ու՞ր մնաց հայի օջախը,
Ու՞ր մնաց նրա ամբարը,
Այսուհետև թող չծխա՛
Նաև օսմանցու օջախը:

31 (499).

ՊԱՆԴՈՒԽՏ ԵՄ

Պանդուխտ եմ ես այս երկրում,
Պանդուխտ հավքերն են դալկլյում,
Կյանքս գնաց՝ բան չմնաց,
Ես չեմ մնա անապատում:

Կգնամ ձեր ձեռքից,
Կպրծնեմ ձեր լեզվից,
Կանաչ բաղ թե դառնամ,
Ջուր չեմ խմի ձեր լճից:

Սոխա՛կ, ի՞նչ ես երգում
Խորը ձորակում,
Մայրդ քեզ կփնտրի՝
Չի գտնի բնում:

Հե՛յ, հեռու սարեր,
Հե՛յ, պաղ-պաղ ջրեր,
Ես պանդուխտ ընկա,
Իմ մայրը կուլա:

Պանդուխտ եմ, պանդուխտ հավք եմ,
Որտեղ ընկնեմ՝ տեղ չունեմ,
Ջյուն-ձմեռ մի երկրի.
Ես առանց հայրենիք հավք եմ:

32 (500).

ԱՌԱՎՈՏՈՒՆ ԿԵԼԼԱՄ՝ ԱՉՔՍ ՉԻ ԲԱՑՎԻՐ

Առավոտուն կելլամ՝ աչքս չի բացվիր,
Ցարաներս շատ են, մեկն ալ չի գոցվիր,

Դովները զարնեմ, մեկն ալ չի բացվիր,
Վախիմ այս աշխարհին մեղավորը ես եմ:

33 (501).

ԵՐԿՈՒ ՃՅՈՒՂԻ ԱՐԱՆՔՈՒՄ ԵՄ ՄՆԱՑԵՐ

Երկու ճյուղի արանքում եմ մնացեր,
Բուի նման լեռներում եմ մնացեր,

Ո՛չ օր տեսա, ո՛չ էլ մուրազ եմ առեր,
Ես էլ էսպես սև բախտով եմ մնացեր:

34 (502).

ՄՈՐՄԵՆ ԱԼ ԿԶԱՏԵՆ ՔՅՈՐՓԵ ԳԱՈՒՆԵՐԸ

Մորմեն ալ կզատեն քյորփե գաուները,
Արընով ալ իլլիքցան սրտիս դոները,

Սևեր հագնիմ, ընկնիմ լեռները,
Ընձի կըսեն՝ մի՛ լար, ես ընդո՞ր չի լամ:

35 (503).

ԴԱԼՂԱ-ԴԱԼՂԱ ԿԸՆԵ ՊՈԼԻՍԱ ԾՈՎԸ

Դալղա-դալղա կընե Պոլիսա ծովը,
Ի՛նչ անուշ կփչե հայրիկիս հովը,

Տերը նասիբ ըներ՝ երթայի քովը,
Առնեի մուրազս, ընկնեի ծովը:

36 (504).

ԴԱԼՂԱ-ԴԱԼՂԱ ԿԸՆԵ ԲԵՅՐՈՒԹԻ ԾՈՎԸ

Դալղա-դալղա կընե Բեյրութի ծովը,
Ի՛նչ անուշ կփչե սևդայիմ հովը,

Երկու քրոջ նման մեկ սեր ունեինք,
Ֆալաքը բաժանեց, զատվիլ չուզեցինք:

37 (505).
ԱՄԱ՛Ն, ՔՈՒՅՐԻ՛Կ, ՈՒ՞Ր ԷՐԹԱՆՔ

Ամա՛ն, քույրի՛կ, ու՞ր էրթանք,
Ֆենեռ չունինք ու՞ր էրթանք,

Հիմա թուրքերը կուգան,
Մութ գիշեր է ու՞ր էրթանք:

38 (506).
ԹՈՒՐՔԻՆ ԽՈՍՔՈՎ, ԱՆՈՐ ԶՈՌՈՎ

Թուրքին խոսքով, անոր զորով
Մեր տուներեն դուրս էկանք,

Մենք փչացանք, բայց՝ չմեռանք.
Աս չոլերը մենք ինկանք:

39 (507).
ՃԱՄՓԱ՛ ՏՎԵՔ, ՏԱՎՐՈՍԻ՛ ԼԵՌՆԵՐ

Ճամփա՛ տվեք, Տավրոսի՛ լեռներ,
Մենք էրթանք պիտի,

Մեր հայրերն ու մայրերը
Մենք գտնանք պիտի:

40 (508).
ՃԱՄՓԱ՛ ՏՎԵՔ, ԳՅԱՎՈՒՐԻ՛ ԼԵՌՆԵՐ*

Ճամփա՛ տվեք, Գյավուրի՛ լեռներ,
Մենք էրթանք պիտի,

Դեր Զորի կես ճամփին
Մենք մեռնինք պիտի:

41 (509).
Ա՛Խ, ԻՄ ՍԵՎ ԲԱԽՏ, ԻՆՉՈՒ՞Մ ՍԱՊԵՍ

Ա՛խ, իմ սև բախտ, ինչու՞ սապես
Քույր ու եղբայր բաժնեցիր,

Ինչու՞, ինչու՞ հայ որբերը
Անհայր, անմայր թողուցիր:

42 (510).
ՈՐԲԸ ՈՒՐ ԿԵՐԹԱ՝ ԴՈՒՌԸ ԿԳՈՑԵՆ

Որբը ուր կերթա՝ դուռը կգոցեն,

Պատառ մը հաց կուտաս. սիրտը կխոցեն:

43 (511).
ԵՍ ԱՍ ԱՇԽԱՐՀ ԷԿԱ՝ ՀԵ՛Շ ՉԽՆԴԱՑԻ

Ես աս աշխարհ էկա՝ հե՛չ չխնդացի.

Իմ աղեկ օրերս սևով անցուցի:

44 (512).
ԳԵՐ ՈՋԻԼՆԵՐ, ՆԻՀԱՐ ՈՋԻԼՆԵՐ՝ ԱՆԹԻՎ, ԱՆՀԱՄԱՐ

Գեր ոջիլներ, նիհար ոջիլներ՝ անթիվ, անհամար,

Մեր մատներուն, եղունգներուն շատ են անհարմար:

45 (513).
ԳԼՈՒԽԴ ԿՈՑՐԻ՛, ԹԱԼԵԱ՛Թ ՓԱՇԱ

Գլուխդ կոտրի՛, Թալեա՛թ փաշա,
Հողը մտնա՛ս դուն.

Մեզ դարձուցիր որբ ու անտեր,
Թողիր առանց տուն:

46 (514).
ԵՍ ՈՐԲ ՏՂԵԿՄ՝ ԵՄ

Ես որբ տղեկմ՝ եմ՝ անհայր ու անմայր,
Չունեմ մի մեծ քույր, չունեմ մի եղբայր,
Տեսեք իմ լաթեր պատառ-պատառ են,
Չունեմ մի կոշիկ, որ ոտքս հագնեմ:

Ուրիշ տղաներ կուշտ-կուշտ հաց կուտեն,
Երբ որ գիշեր գա՝ մահիճ կմտնեն,
Ինչու՞ ես ծնա, եկա աս աշխարհ,
Մի՞թե տեսնելու միայն տառապանք:

* Գյավուրի լեռ են անվանել, քանի որ այնտեղ շատ «գյավուրներ» («անհավատ հայեր») են մորթվել (Ծ.Բ.):

47 (515).
ԾՆՈՂՆԵՐՈՒՑ ՇՈՒՏ ԶՐԿՎԱՆՔ՝ ՔՈՒՐ-ԱԽՊԵՐ

Ծնողներուց շուտ զրկվանք՝ քուր-ախպեր,
Էդ ի՞նչ դաժան բախտ ունեցանք, իմ ախպեր,
Վաթսուն ջանի վառուկներից պրծանք մենք,
Թուրքի ճանկից ազատվանք՝ քուր-ախպեր:

Կանչե՛, կոու՛նկ, կանչե՛,
Քանի գարուն է,
Քանի գարուն է,
Աշխրքին գարուն է,
Ըննձի դուման է:

48(516).
Ա՛Խ, Ի՛ՆՉ ՕՐԵՐ ԵՆ

Ա՛խ, ի՛նչ օրեր են էկել, ախպե՛ր ջան,
Ա՛խ, կոունկնե՛ր էկան, Մեղրագետա ջուր խմեցին,
Ա՛խ, կոունկներուն թամբիհ կէնիմ,
Էրթան աւուշի դռներ:

Աստված օր կսիրեք, խորո՛տ կոունկներ,
Դուք էրթաք հետու ու ցուրտ Սիբիրներ,
Իմ մեկուճար ախպոր մեկ լուրըմ տարեք,
Մեղրագետուց մի պուտ աւուշ ջուր տարեք:

Կոունկնե՛ր ջան, կոունկնե՛ր,
Աստվածն օր կսիրիք,
Էրթաք բանտեր պտտիք,
Իմ աւուշ ախպեր մեկ ու ճար է,
Խաբար մը բերիք, ա՛խ, կոունկնե՛ր:

Քուրդ մոլոր մի թռչուն է, ի՛մ ախպեր,
Մշո աւուշ Վարդենիսա, տե՛ր ախպեր,
Վաթսուն ջանի վառուկներից պրծար, ի՛մ ախպեր,
Քզի լե տարավ, Ստալին կերավ, խե՛ղճ ախպեր:

49 (517).
ԱՄԸՐԿՈՒ ՃԱՄՓԵՆ

Ամըրկու ճամփեն երկար ու դուզ է,
Ամըրկան կայնէ՝ որբերը կուզե:
Չե՛մ գա, չե՛մ էրթա, մայրի՛կ ջան,

Չե՛մ գա, չե՛մ էրթա, Ամըրկա.
Հորից բաժնվելը դարդ ու բալա է,
Մորից բաժնվելը զուլում կրակ է:

50 (518).
ԱՄԸՐԿԱՑԻՆ ԷԿԱՎ՝ ՍԱՀԱԹԸ ՇՈՂԱՑ

Հեռագիր տվին Ամըրկա,
Միատըր Բրաուընը եկավ,
Ամըրկացին էկավ՝ սահաթը շողաց,

Որբերիս որ տեսավ՝ ոտքերը դողաց,
Որբերիս հավաքեց, ոչ մեկին չթողեց
Անտեր, անպաշտպան:

51 (519).
ՀՄԼԱ ՄԵՆՔ

Հմլա մենք ինգլիզից պակա՞ս ենք,
Հմլա մենք ֆրանկսուզից պակա՞ս ենք,

Հորի՞ մեզ չեն իտա ավտոնոմիա.
Հավքենք մեր չուլ-փալաս էրթանք Ամըրկա:

52 (520).
ՈՐԲԱՆՈՑԻՆ ՃԱՄՓԱՆ ՔԱՐՈՏ Է, ՔԱՐՈՏ

Որբանոցին ճամփան քարոտ է, քարոտ,
Հայ որբերը մայրերուն կարոտ են, կարոտ:

Որբանոցին ճամփան քարոտ է, քարոտ,
Հայ որբերը հայրերուն կարոտ են, կարոտ:

Հայրիկիս բունեցին, բանտը նետեցին,
Ծեծելեն-փետելեն հոգին հանեցին:

Մայրիկս հիվանդ էր, բժիշկ ալ չիկար,
Մայրի՛կ ջան, ի՞նչ ընեմ, դրամ ալ չիկար:

Մայրիկս ջուր ուզեց, ջուր տվող չիկար,
Մայրի՛կ ջան, ի՞նչ տայի, երբ ջուր ալ չիկար:

Իմ մատիս ոսկի մատնիք բնավ չէր վայլեր,
Իմ մեկ հատիկ մայրիկս հողին չէր վայլեր:

Իմ մատիս ոսկի մատնիք բնավ չէր վայլեր,
Իմ մեկ հատիկ հայրիկս հողին չէր վայլեր:

Տավրոս լեռներուն, ձորերուն մեջը
Լիճ է կազմել, մայրի՛կ, հայոց արյունը:

Մայրիկիս գերեզմանը շիշով փորեցին,
Հայրիկիս գերեզմանը բաճով փորեցին,
Հայերուն ոսկորներն ալ մեջը լեցուցին:

53 (521).
ՈՐԲԱՆՈՑԻՆ ԲԱԿԵՐԸ ՔԱՐՈՏ ԵՆ, ՔԱՐՈՏ

Որբանոցին բակերը քարոտ են, քարոտ,
Հայ որբերուն սիրտերը մայրի են կարոտ:

Կամաց կտրե, հացագո՛րծ, որ բարակ չըլլա,
Հայ որբերը սեղանեն աւոթի չէլլան:

Որբանոցին զանգակը ամպի պես գոռաց,
Հայ որբերուն արցունքը սելի պես գնաց:

Որբանոցին ծառերը սալլամիշ կըլլան,
Հայ որբերուն սրտիկը արյուն է կուլա:

54 (522).
ՈՐԲԱՆՈՑԻՆ ՎՐԱՑԵՆ ՍԵՎ ՂՈՒԻՇ ՄԸ ԱՆՑԱՎ

Որբանոցին վրայեն սև ղուշ մը անցավ,
Հայ որբերուն օրերը սևերով անցավ:

Որբանոցին ծառերը սալլամիշ կըլլան,
Հայ որբերը մեծերուն յալվարմիշ կըլլան:

Կամաց կտրե, հացագո՛րծ, որ բարակ չըլլա,
Հայ որբերուն փորիկը աւոթի չմնա:

Որբանոցին էշիքը տաշած է, տաշած,
Հայ որբերուն սիրտերը մաշած է, մաշած:

55 (523).
ՓԱԲԼԻԿԱՑԻՆ ԷՇԻՔԸ ՏԱՇԱԾ Է*

Փաբլիկայինն էշիքը տաշած է, տաշած,
Հայ որբերուն սիրտերը մաշած են, մաշած,
- Հայ աղջիկնե՛ր, աղջիկներ՛,

Ինչու՞ եք դեղնած,
- Խորոզ խոսուն կէլլանք, մայրի՛կ,
Անկից ենք դեղնած:

56 (524).
ՈՐԲ ՀԱՐՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Ձեռքս թոթվեցին, սիրտս խոցեցին,
Դառնաղետ կերպով ինձի լացուցին:
Օ՛ֆ, մնաք բարյավ:

Եղբայրս անցավ, տար վեր նայեցավ,
Աչքին արցունքները պուլ-պուլ հոսեցան:
Օ՛ֆ, մնաք բարյավ:

Ահա մոտեցավ բաժանման ժամը,
Ես չեմ մոռանար իմ բոլոր ցավը:
Օ՛ֆ, մնաք բարյավ:

Իմ գդալս կոտրեցեք, պարտեզը ննտեցեք,
Իմ կերած պատառս որբերուն տվեք:
Օ՛ֆ, մնաք բարյավ:

Առանց դիոլ զուռնի ինձ հարս հագցուցին,
Առանց հայր, առանց մայր ինձ հարս դարձուցին:
Օ՛ֆ, մնաք բարյավ:

Իմ պնակս ջարդեցեք, հայաթը ննտեցեք,
Իմ բաժին կերակուրս աղքատաց տվեք:
Օ՛ֆ, մնաք բարյավ:

Եկե՛ք, քույրե՛ր, եկե՛ք, քովս նստեցեք,
Թաշկինակ առեք, աչքս սրբեցեք:
Օ՛ֆ, մնաք բարյավ:

Ստիպված եմ, սիրելի՛ քույր, պիտի բաժնվինք,
Մեր որբանոցեն դուրս պիտի հանվիմ:
Օ՛ֆ, մնաք բարյավ:

57 (525).
ԵԼԵ՛Ք, ԵԼԵ՛Ք, ՀԱ՛Ց ՈՐԲԵՐ

- Դեռ ծույլերը ելած չեն,
Երեսինն լվացած չեն,
Ելե՛ք, ելե՛ք, հա՛յ որբեր,
Երգեցեք անուշ երգեր.

- Ջըմըլա՛, զըմըլա՛,
Կերակու՛ր, կերակու՛ր,
Բայց ի՞նչ ապուր.
Ուսուցչապետ Հալկազուն:

58 (526).
ՄԵՆՔ՝ ՋԻԲԵՅԼԻ** ԱՋՆԻՎ ՍԱՆԵՐ

Մենք՝ Ջիբեյլի ազնիվ սաներ,
Կուզենք ըլլալ վառ ջահեր,

Ջիբեյլի ջինջ երկինքի տակ
Կուզենք ըլլալ գրասեր:

* Կոնիացի Գույումջյան Սաթենիկը (ծնվ. 1902 թ.) դառն արցունքներով էր երգում այս և նախորդ երգերն ու պատմում. «Հունաստանում, երբ որբանոցեն ետքը մեզի փաբլիկա (իմա՝ ֆաբրիկա) տարին աշխատացնելու, որբանոցի երգերուն պես երգեր շինած էինք, աղջիկներով հե՛մ կաշխատեինք, հե՛մ կերգեինք, հե՛մ ալ կուլայինք...»:

** «Բեյրութում ամերիկացի բողոքականներուն որբանոցն էր, որը հայ լուսավորչական որբերուն ալ կծառայեր» (Մ.Բ.):

59 (527).
ԱՐՄԱՇԻ ՀԱՑ ՈՐԲԵՐԸ

Արմաշի վանքի հայ որբերը ի՞նչ կուտեն.
Երկուշաբթի օրը՝ ֆասուլիա,
Երեքշաբթի օրը՝ մախարնա,
Չորեքշաբթի օրը՝ փաթաթես,
Հինգշաբթի օրը՝ ոսպապուր,
Ուրբաթ օրը՝ փախլա-սուպ,
Շաբաթ օրը՝ չոր-բուլղուր,
Կիրակի օրը՝ միս կուտեն:

60 (528).
ԲԵՇԻԿԹԱՇԻ ՈՐԲԱՆՈՑԸ

Այստեղ վերևը՝ բլուրին,
Բեշիկթաշի բարձունքին,
Մեր օրրանն է հայրենի,
Ուր սնվում է մեր հոգին:

Հոս է մեր տուն գթության,
Թռչնակներուն բույնը տաք,
Հայ որբունյաց ապաստան,
Սարի մը տակ՝ լուռ, մենակ:

61 (529).
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՐԲԵՐՆ ԵՆՔ ՄԵՆՔ

Անթիլիասի որբերն ենք մենք,
Դելիկո՛ ախպեր, Դելիկո՛ ջան,

Գիրք ու դպրոց մեզ համար է,
Դելիկո՛ ախպեր, Դելիկո՛ ջան:

62 (530).
ՄԵՐ ՇԱ՛Տ ՍԻՐԵԼԻ, ԳԵՂԵՑԻԿ ԱՆԹԻԼԻԱՍ

Շատ վայրերեն մենք հոս բերված,
Մեծ ընտանիք մըն ենք կազմած,
Մեր տունն է Անթիլիաս,
Գեղեցիկ Անթիլիաս:

Ըլլանք մեկ սիրտ, մեկ հոգի,
Թող գովվի մեր ընտանիք,
Միշտ խաղաղ է մեր տուն.
Հոս կա սեր և միություն:

Ալ չիկա խարբերդ կամ թե՝ Կեսարիա,
Մարաշ ու Ադանա, Տարսոն կամ թե՝ Թալաս,
Այլ՝ մեր շա՛տ սիրելի, գեղեցիկ Անթիլիաս:

Ալ չիկա խարբերդ կամ թե՝ Կեսարիա,
Մարաշ ու Ադանա, Տարսոն կամ թե՝ Թալաս,
Այլ՝ մեր շա՛տ սիրելի, գեղեցիկ Անթիլիաս:

4. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԵՐԳԵՐ ՈՒ ՎԻՊԵՐԳԵՐ

1 (531).
ՍԱՍՈՒՆ ԷԼԱՎ, ԱՊՏՏԱՄԲԵՑ

Սասուն Էլավ, ապստամբեց,
Աշխարհիս մեջ հանեց թունդ,
Ամըրկա, Եվրոպ ցնցեց,
Քաջանց բանակ գունդ առ գունդ:

Թուրքը լսեց ու կատաղեց,
Զորքեր հանեց բյուրավոր,
Հիսուն հազար քրդեր կանչեց
Արյունարբու, զորավոր:

Հայոց սրտեր թրթռացին,
Հայու ձայնը որոտաց,
Կտրիճները առաջ գացին,
Ազատությունը թնդաց:

Սեգ Սասունը պաշարեցին
Այն վայրենի քյուրդերը,
Թնդանոթներ որոտացին,
Քարուքանդ արին գյուղերը:

Ա՜խ, սասունցի, քա՛ջ սասունցի,
Ձեր արյունին մենք ղուրբան,
Միության սուրբ սերմեր ծլին,
Ազատության մենք ղուրբան:

Սասուն գավառ անտառներով,
Պարսպապատ բարձր լեռներով,
Դեմ կանգնեց միշտ թուրք զորքին,
Սասուն բուրե տաք արյան հոտ:

2 (532).
Ա՜խ, ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Ա՜խ, Վասպուրական, տխուր Հայաստան,
Անթիվ հերոսներ քեզմե զոհվեցան,
Անեղ կովի մեջ այնքան դիմացան,
Ի սեր ազգության նահատակվեցան:

Վան փոքրիկ քաղաք գավառակներով,
Լցվան դիակներ հարյուր հազարով,
Ներկվեցավ դաշտը կարմիր արյունով,

Ձայն տվին ամպեր, երկինք ու աստղեր,
Այնպես կգոռան ու կհրամայեն,
Որ Եվրոպան և Ամերիկան լսեն:

Ա՜խ, բավ է հայեր՝ միշտ այսպես գերի,
Թողնենք հայրենիք՝ դիմենք օտարին,
Օտարն է սիրում մեզ իբրև հյուրի,
Մեր հացն ու ջուրը դարձնում է աղի:

3 (533).
ԲԻԹԼԻՍ ՔԱՂԱՔ՝ ՇԱՏ ԼԵՌՆԱՅԻՆ

Բիթլիս քաղաք՝ շատ լեռնային,
Նամակ չկար Անդրանիկից,
Առավոտյան արշալույսին
Հաշիվ չկար թուրքի զորքին:

Կանչեք թող գա Կայծակին
Քաջ հերոս Անդրանիկին,

Ձայն տվեք Դժոխք-Հրայրին՝
Շուտ հասնի մեր հավարին:

Թուրք զորքերը՝ թնդանոթով,
Հայ կտրիճներ՝ մոսիներով,
Քաջ Անդրանիկ փայլուն սրով
Ջարդեց թուրքին հարյուրներով:

4 (534).
ԴՈՒՇՄԱՆ ԳՕԿՕ, ՁԵՑԹՈՒՆՑԻԴՈՒՔ — *ԹՇՆԱՄԻՆ ԵԿԱՎ, ՁԵՑԹՈՒՆՑԻՆԵՐ*

Դուշման գօկօ, զէյթունցիդո՞ւք,
Թիֆօնգ առէք, ծա տըստիցէք,
Թուլքին տէմը գադրաջ իլէք,
Սիվ ասգէյնին սբանիցէք:

Զէյթունցիդոնք գադրաջ ունանք,
Թուլքին վիյա հայիֆ ունանք,
Մի մաչիյուն սույփ գաթըն դէդ,
Ջանգօվ-ջանգօվ այնի քամինք:

Զէյթունցիդո՞ւք, իդվէ իլէ՞ք,
Թուլքին տէմը վազ չձոէ՞ք,
Սիվ դուշմօնը սբանիցէ՞ք,
Շուղրան* տայ վայ՝ ճօյը քայիցէ՞ք:

Պէրտիզ Ձայը մինք ձիձվիցօնք,**
Իլօնք ղշլէյնն մինք գինխիցօնք,
Ասգայդաքը յէսիյ առօնք,
Միյ բայօխը մինք դընգիցօնք:

Գէցցէ՛ Զէյթո՛ւն, աբյը՛ Զէյթո՛ւն,
Թղու չդիսնօ ըսդյգութուն,
Քանի ունանք միզ բիս քաչիյ,
Գէցցէ՛ Զէյթո՛ւն, աբյը՛ Զէյթո՛ւն:

Թշնամին եկավ, զեյթունցիներ,
Հրացան առեք, ձի նստեցեք,
Թուրքի դեմը հերոսացեք,
Ասկյարներին սպանեցեք:

Կտրիճ զեյթունցիներ ունենք,
Թուրքի հանդեպ վրեժ ունենք,
Մեր մայրերի սուրբ կաթի տեղ,
Բռով-բռով արյուն քամենք:

Զեյթունցինե՛ր, ոտքի ելե՛ք,
Թուրքի առաջ վիզ չծռե՛ք,
Սև թշնամուն սպանեցե՛ք,
Շուղրից վար՝ջուրը գլորե՛ք:*

*Բերդիս Ձայում մենք կովեցինք,***
Ելանք, զորանոցը գրավեցինք,
Ասկյարներին գերի վերցրինք,
Մեր դրոշը մենք պարզեցինք:

Կեցցե՛ Զեյթո՛ւն, ապրի՛ Զեյթո՛ւն,
Թող չտեսնի ստրկություն,
Քանի ունենք մեզ պես քաջեր,
Կեցցե՛ Զեյթո՛ւն, ապրի՛ Զեյթո՛ւն:

5 (535).
ՁԵՑԹՈՒՆՑԱ՛ ԻՆՔ, ՁԵՑԹՈՒՆՑԱ՛ — *ՁԵՑԹՈՒՆՑԻ՛ ԵՆՔ, ՁԵՑԹՈՒՆՑԻ՛*

Զէյթունցա՛ ինք, զէյթունցա՛,
Ազօդ գաբյինգ՝ վօխ չունանք,
Դուշմանաո դէմ իլինք, գայմամք,
Զէյթունցա՛ ինք, զէյթունցա՛:

Զեյթունցի՛ ենք, զեյթունցի՛,
Ազատ կապրինք՝ վախ չունենք,
Թշնամու դեմ կովեցինք,
Զեյթունցի՛ ենք, զեյթունցի՛:

* Կամուրջ Զեյթունի մոտ, Արյան ձորի վրա:
** Նկատի ունի զեյթունցիների 1895 թ. ապստամբությունը:

Գդրաջ ինք, գդրա՛ջ, այնչ իյթօնք,
Այնչ իյթօնք, սույգյուն չիյթօնք,
Դուշմանդօցմէ հայիֆ առնօնք,
Զէյթունցա՛ ինք, զէյթունցա՛:

Հայ անունի համօյ մինք գըմիոնօնք,
Վանաձի համօյ՝ էրին գըթափօնք,
Միր վանաձը, հայըթանը գազադօնք,
Զէյթունցա՛ ինք, զէյթունցա՛:

Կտրիճ ենք, կտրի՛ճ, առաջ գնանք,
Առաջ գնանք, աքսոր չգնանք,
Թշնամուց մենք վրեժ առնենք,
Զեյթունցի՛ ենք, զեյթունցի՛:

Հայ անվան համար մենք կմեռնենք,
Հայրենյաց համար արյուն կթափենք,
Հայրենիքն ու հայությունը կազատենք,
Զեյթունցի՛ ենք, զեյթունցի՛:

6 (536).
ՋԷԲԷԼ ՄՈՒՍԷՆ ՀԱՐԲԸ — *ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ*

Յոթը ուր բայմանում ֆէրման կրվիցուվ,
Մէճլիսէն խարարնէն կիղանդէն հասուվ,
Մուսա լիոուն իհալին փարթիզան իղուվ,
Դուշման խուրըմաթէն քարշա գանիցուվ:
Զագուդ բիհիցունը միրում, քուրվըդում,
Քառսօն ուր ձիձվըցունը սրդում հավադում,
Հազրնում ասկարնէն հուրըմնա իրէն,
Իհալէն մըլգըդում խանդուգ չափիցէն:
Մուսա լիոը իղուվ յոթը կիղէն խալա,
Դուշման խուրըմաթէն իթօղ մինձ յարա,
Թուփիրում, մավգէրնում հուրըմնա իրէն,
Հարըրնում սադօյը թուղէն վէ կնցէն:
Ֆրանսըզը վափօրնէն թէսատուփ իգէն,
Դմլակյան, Դումանյան, Աբաջյան կնցէն,
Պողոս-Նուբար փաշէն թէլէգրաֆ ղըվէն,
Հէնկ հազար իհալէն նուր ծմըր պիրէն:

Ցոթը օր պայմանով հրաման գրվեց,
Ժողովի որոշումը հասավ գյուղեր,
Մուսա լեռան ժողովուրդը պարտիզան դարձավ,
Թշնամի կառավարության դեմ ելավ, կանգնավ:
Մակատ պահեցինք մայրով, քույրերով,
Քառասուն օր կռվեցինք սրտով, հավատով,
Հարձակվեցին զինվորներ հազարավոր,
Լցվեցին ձորեր ժողովրդի արկերով:
Մուսա լեռը դարձավ յոթ գյուղերի բերդ,
Թշնամի կառավարության մեծ ցավ պատճառեց,
Թնդանոթով, մաուզերով վրա տվեցին,
Հարյուրով դիակներ թողին, գնացին,
Ֆրանսիական նավերը պատահմամբ եկան,
Դմլակյան, Դումանյան, Աբաջյան գնացին,
Պողոս-Նուբար փաշային հեռագիր տվեցին,
Հինգ հազար ժողովրդին նոր կյանք բերեցին:

7 (537).
ԳԴՐԷՋ ՎԱՐԹՈՒՀԷՆ* — *ՀԵՐՈՍ ՎԱՐԴՈՒՀԻՆ**

Բարունը միշքը գաբուձ իր,
Թվինգը յուսէն շանգուձ իր,
Միգօրը ծառը պոնուձ իր,
Մինձ-մինձ քարիր գուշրճիր,
Դուշմանը ճամպունք գուփանգիր,
Սրդէն միչը գուանսիր.
«Մըլլէյս բուշ թըղ չասնի,
Դուշմանէն գօրսքը թըղ ձանգի»:
Գօժը յուսէն դրուձ իր,
Դուշմանը մըլգին չըր վախիր,
Խմիլը ճօր գուդանիր,
Գէնճիրէն յարդըմ գուինիր:
Սարպին անցնուող Վարթուհէն,
Կուդալը դրուձ էր յուսէն,
Հիովին ուգուող մըլգըդէն
Սաբաբ իղուվ էր գըժէն:
Ջաճիլ, հալվուր ձիձվիցէն,
Սրդում, հավադում նիդիցէն,
Շուդ անսկարնա շրճիցէն,
Ազադլըդը բիհիցէն:

Պարանը մեջքին կապել էր,
Հրացանը ուսից կախել էր,
Կացինը ձեռքը բռնել էր,
Մեծ-մեծ քարեր շրջում էր:
Թշնամու ճամփան փակում էր,
Սրտի խորքից ասում էր.
«Գնդակս զուր թող չանցնի,
Թշնամու կուրծքը թող ծակի»:
Կուժը ուսին դրել էր,
Թշնամու արկից վախ չուներ,
Խմելու ջուր տանում էր,
Ջահել ներին օգնում էր:
Բարձրից անցնող Վարդուհին,
Սափորը դրել էր ուսին,
Հեռվից եկող գնդակը
Կոտրեց նրա սափորը:
Ջահել, անել կովեցին,
Սրտով, հավատով խփեցին,
Շատ զինվորներ գլորեցին,
Ազատությունը պահեցին:

* Նկատի ունի Մուսա լեռան հերոսամարտում իր քաջագործություններով աչքի ընկած հերոսուհի Վարդուհի Նաշալյանին:

8 (538).

ՈՒՑԱ՛Ն, ՄՈՒՍԱԴԱՂԼԸ՛, ՈՒՑԱ՛Ն

Չէքդիմ քըլըջը վուրդում թաշա,
Թաշ յարըլդը բաշդան բաշա,
Մուսա դաղլը բինլէր յաշա,
Ույա՛ն, Մուսադաղլը՛, ույա՛ն,
Նամ քալդըրդըն ջՒմլէ ջիհան:

Օսմանլընըն ֆաքէրլէրի,
Մուսա դաղըն յիղիթլէրի,
Բին-բինլէրջէ մարթինլէրի,
Ույա՛ն, Մուսադաղլը՛, ույա՛ն,
Նամ քալդըրդըն ջՒմլէ ջիհան:

Օսմանլընըն վափուրլարը,
Մուսա դաղըն դա թօփլարը,
Բին-բինլէրջէ բօմբալարը,
Ույա՛ն, Մուսադաղլը՛, ույա՛ն,
Նամ քալդըրդըն ջՒմլէ ջիհան:

Ֆրանսըզըն վափուրլարը,
Մուսա դաղըն դուվալարը,
Բին-բինլէրջէ չօճուքլարը,
Ույա՛ն, Մուսադաղլը՛, ույա՛ն,
Նամ քալդըրդըն ջՒմլէ ջիհան:

ՋԱՐԹՆԻ՛Ր, ՄՈՒՍԱԼԵՌՑԻ՛, ՋԱՐԹՆԻ՛Ր

Քաշեցի սուրս, զարկեցի քարին,
Քարը ճեղքվեց գլխից գլուխ,
Մուսալեռցին հազար ապրի,
Ջարթնի՛ր, մուսալեռցի՛, զարթնի՛ր,
Ողջ աշխարհում հռչակվեցիր:

Օսմանական զինվորները,
Մուսա լեռան կտրիճները,
Հազար-հազար մարթինները,
Ջարթնի՛ր, մուսալեռցի՛, զարթնի՛ր,
Ողջ աշխարհում հռչակվեցիր:

Օսմանական նավերը,
Մուսա լեռան արկերը,
Հազար-հազար գնդակները,
Ջարթնի՛ր, մուսալեռցի՛, զարթնի՛ր,
Ողջ աշխարհում հռչակվեցիր:

Ֆրանսիական մեծ նավերը,
Մուսալեռցոց աղոթքները,
Հազար-հազար մանուկները,
Ջարթնի՛ր, մուսալեռցի՛, զարթնի՛ր,
Ողջ աշխարհում հռչակվեցիր:

9 (539).

ՄԵՆՔ ՄՈՒՍԱԼԵՌՑԻ ՔԱՋ ԿՏՐԻՃՆԵՐ ԵՆՔ*

Մենք մուսալեռցի քաջ կտրիճներ ենք,
Բոլորս ալ վարժ զենք կրողներ ենք,
Թուրքը մեզի կուզե տեղահան անել.
Անապատներում մեզ բնաջնջել:

Մենք չենք կամենար լինել շանսատակ,
Մենք կուզենք թողնել մի լավ հիշատակ,
Փառքով մեռնելը մեզի պատիվ է.
Նահատակվելը ազգին պարծանք է:

Թե մեր զենքերը մեզ բավարար չէ,
Անտառը մեզի անառիկ բերդ է,
Թե հազարներ գան, խուժեն մեր վրա,
Անոնցմե շատը ողջ ետ չի դառնա:

Լեռնցի ենք մենք՝ բոլորս ալ քաջ,
Մենք չենք խոնարհի թշնամու առաջ,
Առյուծի նման կկռվենք քաջ-քաջ,
Ձիր ու ցան կանենք բանակը տաճկաց:

Կվայելե՞ արդյոք մուսալեռցիին
Ոչխարի նման հոշոտվի գայլից,
Քանի սուր ու զենք ունենք մեր ձեռքին,
Ջարդ ու խուրդ կանենք մոութը գայլի:

ԵԿԵ՛Ք, ՄՈՒՍԱԼԵՌՑԻ ԵՂԲԱ՛ՅՐՔ,

Եկե՛ք, մուսալեռցի եղբա՛յրք,
Չխոնարհվենք թուրքերուն,
Չենքը ձեռքին պաշտպանվենք
Մենք մեր խիտ անտառներում:

Անգութ թուրքը որոշել է
Բնաջնջել հայերուն,
Հափշտակել ու անպատվել
Մեր դեռահաս կույսերուն:

Ալ չխաբվի՛ք, հա՛յ եղբայրներ
Թուրքերու կեղծ խոսքերուն,
Պետք է կռվենք մենք քաջաբար,
Չհանձնվե՛նք թշնամուն:

Պատերազմի փողը հնչեց
Մուսա լեռան կիրճերում,
Հայ կտրիճներ զինված, պատրաստ՝
Դիմադրեցին թշնամուն:

Մուսալեռցիները անվախ կռվեցին,
Տասնութ քաջ նահատակվեցին,
Իրենց սուրբ արյամբ մեզ փրկեցին,
Հայի անունը բա՛րձր պահեցին:

* Երգը հորինվել է 1915 թ.՝ մուսալեռցիների հիսուներեք օր տևած աշխարհացույց հերոսամարտի անմիջական տպավորությունների ներքո:

10 (540).

ՄԵՐ ՄՈՒՍԱԼԵՌՑԻԴ ԼՐԻՎ ՀԵՐՈՍ ԵՆ*

Մեր մուսալեռցիք լրիվ հերոս են,
Իրար նայելով կքաջալերվեն,
Վախն ինչ բան է՝ երբեք չգիտեն,
Քանի որ ունեն քեզի, Մուսա՛ լեռ:
Հա՛յ, մուսալեռցիք, ջա՛ն, մուսալեռցիք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք:

Մեր Մուսա լեռն էր լրիվ ծառաստան,
Կոչվում էր նաև փոքրիկ Հայաստան,
Հա՛յ, մուսալեռցիք, ջա՛ն, մուսալեռցիք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք:

Մենք յոթը գյուղով սարը բարձրացանք,
Թշնամու առաջ չխոնարհվեցանք,
Քառասուն օրում մենք շատ զոհ տվինք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք:
Հա՛յ, մուսալեռցիք, ջա՛ն, մուսալեռցիք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք:

Ես մուսալեռցի Կարոն եմ երգիչ,
Ջեռքս առել եմ թուղթ ու գրիչ,
Երգում եմ երգս՝ հայ ազգն իմանա,
Ինձանից իրեն հիշատակ մնա:
Հա՛յ, մուսալեռցիք, ջա՛ն, մուսալեռցիք,
Հայոց պատիվը բարձր պահեցինք:

11 (541).

ՍԵԲԱՍՏԱՑՈՒ ՄԱՐՏԱԿՈՉԸ

Ծո՛, պետք է, պետք է, պետք է,
Թուր, հրացան, զենք պետք է,
Երբ որ թշնամին ալ գա,
Վրան հարձակիլ պետք է:

Ով որ ազգը ուրանա,
Ջույգ աչքերով կուրանա,
Կատարյալ աղքատի պես
Դռնեն ի դուռ մուրա նա:

Մենք վարդանա ենք հոգով,
Չիկա մեր մեջ օտար ոք,
Հիսուսն է մեր մեծ Տերը,
Ո՞վ սովորեցուց մեզ Սերը:

Ծո՛, պետք է, պետք է, պետք է,
Թուր, հրացան, զենք պետք է,
Երբ որ թշնամին ալ գա,
Վրան հարձակիլ պետք է:

12 (542).

ՈՒՐՖԱՆԸՆ ԻԳԻԹԼԷՐԻ**

Ուրֆա բՒկՒնք՝ այրըլմազ,
Դիբի ղալի՝ դաղըլմազ,
Ուրֆանըն իգիթլէրի
Հիչ բիր յէրդէ բուլունմազ:

*ՈՒՐՖԱՑԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ***

Ուրֆան մեծ է՝ չի քաժանվի,
Հիմքն ամուր է՝ չի փլվի,
Ուրֆայի կտրիճները
Ոչ մի տեղում չի գտնվի:

13 (543).

ՀԱՃԸՆ ԷԼԻ ԲԱՑ ՔԱԼԴԸՐՄԸՉ***

ՑՒռչէ դաղդա թՒփՓէնքլէր ծթէր՝
Քահյալարը գէլսին դիյէ,
Հաճընն էլի բաշ քալդըրմըշ՝
Խօզան օղլու գիթսին դիյէ:

*ՀԱՃԸՆԸ ԿՐԿԻՆ Է ԸՄԲՈՍՏԱՑԵԼ****

Բարձր լեռներում զենքերն են շաչում՝
Հսկիչները թող գան ասելով,
Հաճընը կրկին է ըմբոստացել՝
Խոզան օղլուն գնա ասելով:

14 (544).

ԿԱԹՕՂԻԿՕՍԴԱՆ ԳԷԼԴԻ ՔԱՐԱ ԽԱԲԷՐԸ****

Կաթօղիկօսդան գէլդի բիր քարա խաբէր,
Ջին Թօրօս***** դէդի. - Հի՛չ էթմէյին քէդէր.
Քէֆէնիմիզ հազըր, մէզարլար աչըք,
Վուրալը՛մ, քարդաշլա՛ր, շանըմըզ քալսըն:

*ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ ԵԿԱՎ ՍԵՎ ԼՈՒՐԸ ****

Կաթողիկոսից մի սև լուր եկավ,
*Ջին Թորոսն***** ասաց. - Շմտածե՛ք բնավ.*
Պատանքներն են պատրաստ, շիրիմներն են բաց,
Խփե՛նք, եղբայրնե՛ր, մեր փառքը թող մնա:

* Ժողովրդայնացած այս երգը հորինել է մուսալեռցի աշուղ Կարո Բլաղյանը:
** Երգը հյուսվել է 1915 թ. հոկտեմբերին, Ուրֆայի դյուցազնական հերոսամարտի օրերին:
*** Երգը հյուսվել է 1920 թ., Հաճընի ութամսյա հերոսամարտի օրերին:
**** Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խաբայանն ու հարուստ երևելիները դեմ էին ինքնապաշտպանությանը և արգելել էին զենքի դիմել, սակայն մի խումբ հերոսներ, այնուամենայնիվ, փորձում են ընդդիմանալ թշնամուն և նահատակվում են:
***** Ժողովուրդն իր սիրելի խիզախ հերոս Թորոսի անվանն ավելացրել է «Ջին» (աներևույթ ոգի) մականունը:

Թիթրէթթի բիւթիւն դաղլարը թաշը,
Թօրօս, Բարձում,* Հակոբ՝ բուլար յօղդաշը,
Հաճընընց օրթասը՝ բիր ուզուն չարշը,
Տիգրանընց էվի քալայա քարշը:
Գէրիդէն գէլիյօր զաբիթ-բիճբաշը,
Սէլամա դուրդուլար Տիգրանա քարշը:

Բօրօզանջը բօրույու չալամազ օլդու,
Ասքէր թալինի ալամազ օլդու,
Բինբաշը քօմութ վէրէմէզ օլդու,
Հիւջիւմ բօրուսուդնաձ Բարձում վուրուլդու.
- Մարթինինի ա՛լ դա, թէ՛զ ուլաշ, Տիգրա՛ն:

Ղարս Բազարը քուրթարաձ Ջին Թօրօս,
Ինգլթէրէյէ վարդը սօյլէնդի՝ ճէրօս.
- Գյավու՛ր խընզըր, - դէյի սիւնգյիւ, սօխդիւլար,
Քէսիլէն դուրբաձլարը գէ՛լ, գօ՛ր, կաթօ՛ղիկոս:

- Վուրուլսուձլա՛ր, - դիյէ յազըլդը ֆէրմաձ:
Աղալար սօյլէդին. - վուրուլսու՛ն բուձլար,
Բուձլար վուրուլմազ սա՝ ճալիմիզ յամա՛ն:
Օ զալիմ խաֆիյէլէր դէ թէզ դուրթու մէսքէն:

Զէվիրիփ քօլլարը արայա ալդըլար,
Մարթին-ֆիշէնգ իլէն իշլէրինէ դալդըլար,
Վուրուլաձ՝ ոջսուզ նէֆէր իդի, բիր դէ՝ բինբաշը,
Մարաշլը Ալինին դէ վարդը բու իշթէ էլի:

Զաթ Օլըխ** բաշընձդա յաթմըշ դօրթ ասլաձ՝
Վիւջուդում Ջին Թորոս, Ղաճրամաձ Տիգրաձ,
Բէզիրգաձ Հակօբ, Գիւդէլէշ Բարձում,
Բուձլար վէրդիլէր օրդույա մէյդաձ:

Ցնցվեցին բոլոր լեռների քարերը,
Թորոս, Բարձում,* Հակոբ՝ ընկերներ էին,
Հաճընի մեջ՝ մի երկար շուկա,
Տիգրանի տունն էր բերդի դիմաց:
Հետևից գալիս է զաբիթ-հազարապետը,
Բարևի են կանգնում Տիգրանի դեմը:

Փողհարը շեփոր հնչեցնել չկարողացավ,
Ասկյարն իր կերը վերցնել չկարողացավ,
Հազարապետը հրաման տալ չկարողացավ,
Հարձակման ազդանշանին Բարձումը խփվեց.
- Հրացանդ ա՛ռ, շուտ հասի՛ր, Տիգրա՛ն:

Ջին Թորոսը Ղարս Բազարն էր ազատել,
Անգլիա գնալով՝ հերոսի կոչում ստացել.
- Խոզ-գյավու՛ր, - ասելով՝ սվին խրեցին,
Մորթված զոհերիդ ե՛կ, տե՛ս, կաթողիկո՛ս:

- Թող խփվե՛ն, - ասելով՝ գրվեց հրաման:
Երևելիները ևս ասեցին. - Թող խփվե՛ն սրանք,
Եթե սրանք չխփվեն՝ մեր վիճակը կդառնա վատ:
Այդ ենթգ լրտեսները շուտով գրավեցին վայրը:

Ոլորելով ձեռքերը՝ մեջտեղնին առան,
Հրացանի գնդակով իրենց գործը տեսան,
Խփվող ներն իրն էին, մեկն էլ՝ հազարապետը,
Այստեղ խառն էր նաև մարաշցի Ալիի ձեռքը:

Զաթ Օլըխի** գլխին պառկած են չորս առյուծ՝
Հոգյակ Ջին Թորոսը, հերոս Տիգրանը,
Վաճառական Հակոբն ու գնդլիկ Բարձումը,
Սրանք բացեցին կռվի ասպարեզը:

Անգլիական դրոշը բոցերում վառվեցավ,
Ասկյար-ոստիկաններն արյամբ կշտացան,
Բազեներին բռնեցին, գցեցին թակարդ,
Նման ցավերը մեր սրտերից դուրս չի գա բնավ:

Դերձակյանի ապարանքը ծխով ծածկվեց,
Հազարապետն ասաց. - Դե՛, փախչե՛նք:
Դերձակյանի ապարանքը ծխնելույզով քարաշեն,
Մի՛ հապաղե՛ք, լա՛ց եղեք, մայրեր ու քույրեր:

Անպատմելի բախտ ունեցար դու, խե՛ղճ Հաճընի,
Երեսունհինգ հազար հայի տվեցիր ցավ,
Թո՛ղ վառվի բոցերում կաթողիկոսի թագը,
Թո՛ղ չլսեն նրա խոսքը, թո՛ղ ճերմակեն մազերը.
Լուսինը խավարեց, աստղերը խամրեցին,
Հաճընի թրքուհիները, ա՛խ, խնդացին, պարեցին:

ԱԴՈՒՐ ՓԱՇԱ***

Ադու՛ր փաշա, քա՛լքսաձա,
Չամ չըրալը յա՛քսաձա,

*ԱԴՈՒՐ ՓԱՇԱ****

Ադուր փաշա, ոտքի՛ ելիր,
Մարխիդ կրակը վառի՛ր,

* Համբարձում անվան կրճատ ձևն է:
** Զաթ Օլուխ (Հատվող աղբյուր) են անվանել Հաճընի այն վայրը, որտեղ երկու աղբյուրները միմյանց են միացել:
*** Երգը հորինվել է 1920 թ. ապրիլի 1-ից սկսված և ընդմիջումներով 314 օր տևած Այնթապի դյուցազնական հերոսամարտի առիթով, որի ղեկավարն էր Ադուր Լևոնյանը: Այնթապցի երգասաց Գևորգ Հեքիմյանի վերհուշով. «1920 թ. Ալի Քըլընջն աճոեղի զորքով հարձակվեց Այնթապի վրա: Այնթապի ինքնապաշտպանության ղեկավար Ադուր Լևոնյանը, որը կազմակերպում էր ռումբեր պատրաստելու գործը, այնթապցիներու կերակուրի պղինձներն անգամ հալեցնել տված, որ բոմբաներ շինեն: Ադուր փաշան իր կամավորներով արշավեց, դուրս եկավ պաշարումեն: Ալի Քըլընջի քսանչորս հազարանոց զորքը մեկ գիշերվա մեջ սարսափահար ետ փախավ. «Գյավուրն գծզի քան դօլդու (Հալի աչքն արյուն լցվեց, այսինքն՝ հայը վրեժով լցվեց) ասելով»:

Թիւրքլէր հիւջիւմ էդիյօր,
Կամավորլա՛ր, ա՛րշ էդին:

Ադու՛ր փաշա, քա՛լք գիդէք,
Ֆէնէրլէրի յա՛քսանա,
Թիւրքլէր աթէշ աչըյօր,
Բօմբալարը սա՛չսանա:

Քօլէջդէն հինդիմ յայան,
Մէնդիլիմ դօլու փայամ,
Ադուր փաշա գէլիյօ՛ր,
Դայա՛ն, օսմա՛նլը, դայա՛ն:

16 (546).

ՑԱՇԱ՛, ՄԱՆՈՒԿ ՁԱՈՒԻԾ*

Բէնի թիւքէթթի, արքադա՛շ,
Բու գօղսիւմդէքի յարալար,
Հէլբէթ շէիդ օլաջաղըմ.
Ցաշա՛ վաթաձ, յաշա՛ միլլէթ:

Հիւջիւմ բօրուսը չալընըր,
Քիմի՝ քաչար, քիմի՝ դուրուր,
Հէրքէս քադէրինի գօրիւր.
Ցաշա՛ վաթաձ, յաշա՛ միլլէթ:

Նասիբ օլսուն սէլամէթէ,
Վարըրսանըզ մէմլէքէթէ,
Մանուկ չաուշ շէհիթ դիւշդիւ.
Ցաշա՛ վաթաձ, յաշա՛ միլլէթ:

*ԿԵՑՑԵ՛, ՄԱՆՈՒԿ ՁԱՈՒԻԾԸ**

Ինձ մաշում են, ընկե՛ր,
Կրծքիս այս վերքերը,
Անշուշտ, պիտի գոհվեմ.
Կեցցե՛ հայրենիք, կեցցե՛ ժողովուրդ:

Հարձակման փողը հնչեց,
Ոմանք կմնան, ոմանք կփախչեն,
Ամենքն իրենց բախտը կտեսնեն.
Կեցցե՛ հայրենիք, կեցցե՛ ժողովուրդ:

Ազատության բախտ վիճակվի,
Բարով հասնեք մայր-երկիր.
Մանուկ չաուշն ընկավ, գոհվեց.
Կեցցե՛ հայրենիք, կեցցե՛ ժողովուրդ:

17 (547).

ԹՕՓԱԼ ՀԱԳՕԲՈՒՆ** ԻԳԻԹԼԸԽԸ

Հասան բէյինին հուդիւնդէ սօղուք յէլ էսէր,
Թօփալ Հագօփ յօլլարը քէսէր,
Թօփալ Հագօփ սազլըղա քաչթը:
Քայմաքամ գէլդի սազլըղը բասդը,
Թօփալ Հագօփ նիսբէթդէն աթէշ աչթը,
Ցիւզ ալթմըշ թաձէ թիւրք ասքէր քէսթի:
Թօփալ Հագօփ բէշ դաքքա սէսիճի քէսթի,
Օճընը երիճէ քըրք թաձէ ասքէր քէսթի,
Քայմաքամընը ջիդէրիճի քօքդէն սօքթիւ:
Թօփալ Հագօփ յիւզ քիշի բաղլադը,
Գարաբեդ աղա հէփսիճի դէ բօղազլադը,
Թոփալ Հագօփ մարթինիճի յաղլըյօր,
Աղընը դուլաձ մհւսլհւմաձլարը աղլըյօր:
«Ձիղ յումուրթա յէդիմ դհւշհւմդէ,
Աքըլ էրմիյօր բու բէճիմ իշիմէ,
Իքի թաբուր ասքէր դհւշդհւ փէշիմէ,
Թհւրքլէր շաշդը բու բէճիմ իշիմէ»:

*ԹՈՓԱԼ ՀԱԿՈԲԻ** ՍԽՐԱՆՔԸ*

Հասան բեյի վրայից զով քամի փչեց,
Թոփալ Հակոբը ճամփաները կտրեց,
Թոփալ Հակոբը եղեգնուտում դարանակալվեց:
Ղայմաղամն եկավ եղեգնուտը շրջապատեց,
Թոփալ Հակոբը ի հեճուկս կրակ բացեց,
Հարյուր վաթսուն թուրք ասկյար ջարդեց:
Թոփալ Հակոբը հինգ րոպե կրակը դադարեցրեց,
Դրա փոխարեն քառասուն ասկյար գլխատեց,
Ղայմաղամի թոքերն արմատից պոկեց:
Թոփալ Հակոբը հարյուր հոգու կապկպեց,
Իսկ կարապետ աղան բոլորին խեղդամահ արեց,
Թոփալ Հակոբն իր հրացանը յուղոտեց,
Իր անունը լսող մուսլումաններին լացացրեց:
«Հում հավկիթ կերա երազումն իմ,
Խելք չի հասնում իմ բռնած գործին,
Երկու գունդ ասկյար ընկավ իմ ետին,
Թուրքերը զարմացան իմ բռնած գործին»:

* Ինքնապաշտպանական կռիվների ընթացքում թուրքական բանակում ծառայող հայ զինվորները գաղտնի օգնել են իրենց հայրենակիցներին, ինչպես հերոսի մահով զոհված Մանուկ չաուշը (տասնապետ), որի շուրջ հյուսվել է այս երգը (Մ.Բ.):
** Թոփալ (կաղ) Հակոբը Ադանայում Հասան բեյի ինքնապաշտպանական կռիվների ժամանակ հայտնի ազգային հերոս է եղել: Պատմում են, որ նա հինգ տարեկան եղած ժամանակ թուրք զաբիթին բռնել է, մատներով նրա փորը պատռել, սիրտն ու թոքերը արմատից հանել ու սոսու ծառից կախ տվել: Հետագայում, երբ օձը նրա ոտքը խայթել է և նա զգացել է, որ պիտի մեռնի, իր ոտքը կացինով կտրել է և այդ օրվանից «Թոփալ Հակոբ» մականունն է վաստակել: Նրա խումբը քառասուն հերոսներից է բաղկացած եղել: Երբ Թոփալ Հակոբն իր զինակիցներով սպանվել է, խումբը հասանբեյցի Ավետիսի գլխավորությամբ մնացել է երեսուներեք հոգի: Այդ խմբում է կռվել նաև երբեմնի լեգեոնական, այս երգը կատարող, 103 տարեկան հասանբեյցի Հովհաննես Թայմազյանը (Վարդեվառ մականունով):

18 (548).

ՀԱՃԸՆԸՆ ՔԱՀՐԱՄԱՆԼԱՐԸ*

Նիսանըն դօրդիւնդէ Հաճընն քարըշդը,
Իբր Օղլու Մուհամէդ չարշիյա դիւշդիւ,
Չանլար չալընդը, ինսանլար շաչդը,
Աղլայա սըզլայա էվլէրէ դիւշդիւ:

Բըլըքյան Հրանտ գէնջին բիրիդիր,
Իլք փօսթադա վուրդու բիր քէրէդէն,
Ֆրսանդ ըդը Հաջի Օսմանընն յուրէյի.
Գօզ'իւնդէն վուրուլդու՝ քաչթը գէրիյէ:

Ցաղլօղլու դամընդա վարդը քընք քիշի,
Բուլունմազ բու յիղիթլէրին էշի,
Արաբ սաչլը Արշակ քումանդան բաշը
Աթար մարթինինի սէմայա քարշը:

Գիւրնէգ դաղընդան ոէդիֆ յուրիւդիւ,
Հաճընն քահրամանլարը ծնէ արշ էթթի,
Հաճընն քահրամանլարը արշ էթթի յուրուդիւ,
- Ալամա՜մ Հաճընը, - դէդի դէյիւս բինբաշը:

Դէր Համբարձում բաբա խաչընը ալդը,
Չէնգին ալիէլէրդէն էրզէգ գէթիրդի,
Չէնգին ալիէլէրդէն էրզէգ բիթիրդի,
Հաճընն քահրամանլարընընն քէյֆինի գէթիրդի:

19 (549).

ԴՕՂԱՆ ԲԷՅ** ԻԼԷ ԱՐԱՄ ՉԱՒԻՇ***

Դօղան բէյ դէ գէլդի գիրդի Հաճընա,
Արամ չաուշ գիթթի յէթիշթի օնա,
- Արա՜մ չաուշ, դէրլէր բէնիմ աղընմա,
Ղօփուշ ախընընդա գծնդիւմ քաղընը,
Հաճընդա քալմադը չանդըր**** աղը,
Շիւքիւր մուրազընմա էրմէդի՞մ մի բէն,
Ուրումլընդա բասթըմ չէրքէզ բէլլէրի,
Ցէրէ յաթթընար ուզուն-ուզուն բօլլարը,
Արամ չաուշ սէչթի քաթընր սօլլարը,
Շիւքիւր մուրազընմա էրմէդի՞մ մի բէն:

ԴՈՂԱՆ ԲԵՅՆ** ՈՒ ԱՐԱՄ ՉԱՒԻՇԸ***

Դողան բեյն էլ եկավ, մտավ Հաճընը,
Նրա ետից հասավ Արամ չաուշը,
- Արա՜մ չաուշ են անվանում ինձ,
Ղոփուշենց ախոռում թաղեցի դատավորիդ,
*Չանդըր**** անունը Հաճընում չթողեցի,*
Չհասա՞ արդյոք փառքիս նպատակին:
Հույնի գյուղում չերքեզ բեկերին շրջապատեցի,
Հասակով մեկ գետնին փռեցի,
Արամ չաուշը, ջորիների ընտիրը ընտրեցի,
Չհասա՞ արդյոք փառքիս նպատակին:

20 (550).

ՀԱՃԸՆՑԻ ՄՈՒՐԱԴԸ*****

Հաճընի հողում ծնված ընկեր,
Ռո ըրաձին մենք մատաղ,
Մութ պատերուն խաչված ընկեր,
Սուրբ տանջանքիդ մենք մատաղ;

Հուրա՜, հուրա՜, հուրա՜,
Քաջ անունդ անմահանա,
Հուրա՜, հուրա՜, հուրա՜,
Քաջ անունդ միշտ շողշողա:

---

* Ըստ հաճընցի երգասաց Նազենի Սաթամյանի (ծնվ. 1926 թ.), այս երգը հորինվել է Հաճընի 1920 թ. ինքնապաշտպանության օրերին:

** Կոզան օղլի Դողան բեյը թուրքական կանոնավոր բանակի հրամանատար էր, որը 1920 թ. իր զորքով պաշարեց Հաճընը:

*** Թուրքական բանակի սպա Արամ Կայծակը (Թերզյան) Հաճընի 1920 թ. ութամսյա հերոսական ինքնապաշտպանության «Վրեժ» խմբի փոխհրամանատարն էր, որը սպանեց Դողան բեյին (Մ.Բ.):

**** Հայերեն խոսող թուրք կանայք:

***** Այս երգը նվիրվել է Սասնո (1894 թ.) և հետագա այլ հերոսամարտերի ղեկավարին՝ ազգային հերոս Մեծն Մուրադին, Համբարձում Պոյաճյանին (1867, Հաճընց – 1915, Կեսարիա):

Քաջ հաճընցի ընկեր Մուրադ,
Դու կովեցար քաջաբար,
Պատվի շարքով հեռացել ես,
Դուն ալ հինկար քաջաբար:

Հուրա՜, հուրա՜, հուրա՜,
Քաջ անունդ անմահանա,
Հուրա՜, հուրա՜, հուրա՜,
Քաջ անունդ միշտ շողշողա:

Սուրը պատյանեն հանեցիր,
Հուրա՜, ասիր՝ վազեցիր,
Առավոտյան ժամը չորսին
Բիթլիս քաղաքը գրավեցին:

Հուրա՜, հուրա՜, հուրա՜,
Քաջ անունդ անմահանա,
Հուրա՜, հուրա՜, հուրա՜,
Քաջ անունդ միշտ շողշողա:

21 (551).

ՔԱՋԵՐՆ ԱՀԱ ՇԱՐԱՆ-ՇԱՐԱՆ*

Քաջերն ահա շարան-շարան,
Սրտերը վրեժի մեյ-մեկ խորան,
Վրե՜ժ, կռի՜վ, մա՜հ կպոռան.
Մահ իմացյալ՝ անմահություն:

Առած ի սուր, մարշ ի բերան,
Արևմտի գագաթի վրան,
Կգոռգոռան Սեգան վրան.
Հաճընցիներ ծարավ արյան:

Հառա՛ջ, հառա՛ջ, հաճընցինե՛ր,
Մեր ոխերիմ թուրքն է եկել,

Հառա՛ջ, կովե՛ք՝ ի զե՜ն, ի զե՜ն.
Տեսնենք թշնամին ի՞նչ կուզե:

Ազատության դրոշակին պլլված,
Կովի՛ք՝ վատին առաջ կանգնած,
Կովի՛ք անվախ, կովի՛ք քաջ-քաջ.
Ետ չի՛ դառնանք՝ սուրանք առաջ:

Օ՜ն, համազոր կրա՜կ կրկին,
Գրավե՛ք թուրքին դիրքն անառիկ,
Կովի՛ք անդուլ քաջերու պես.
Շուտ կհասնին օգնության մեզ:

22 (552).

ՕԴԱՆԱՎԷՆ ԷԿԱՎ ՄԵԾ ԱՎԵՏԻՍՈՎ

Օդանավն էկավ մեծ ավետիսով,
Մեր սրտերը լցան ուրախ հույսերով,
Թափառին բոլոր մարտիկներն անզեն.
Անոնք հոգիով թուրք ջարդել կուզեն:

Եղբայրներն արդեն նամակ գրեցին,
«Կովեցե՛ք, եղբա՛յրք, կհասնի՛ք», - ըսին,
Սակայն ի՜նչ խաբար, օրերնիս անցան.
Հազար հոգիեն երկուք չերևցան:

Ապրիլ կամ՝ մեռնիլ, կտրի՜ճ հաճընցի,
Գրավենք՝ ըսին, թե ոչ՝ կմեռնինք,
Գրավենք զմեզ թնդանոթն ահեղ,**
Թող հաղթանակը տանինք փառահեղ:

Այսպես ըսելով մի քանի քաջեր,
Ջուրը լողալով ճամփա բռնեցին,
Գիշեր ու ցերեկ լեռներ մնացին,
Թշնամյաց դիակք գետին փռեցին:

23 (553).

Ո՛Վ, ՀԱՃԸՆՑԻ ՔԱՋ ՊԱՏԱՆԻ

Ո՛վ, հաճընցի քաջ պատանի,
Մահվան լուրդ ո՞վ թող տանի,
Քեզպեսներուն միշտ երա՜նի,
Դուք եք հույսը Հայաստանի:

Խունկով, մոմով գամ ես քեզ մոտ,
Արցունք թափեմ ես սգավոր,
Քեզ տեսնելով լացին բոլոր,
Նստած կուլամ ես ամեն օր:

Դուն ո՞վ ունիս, որ քեզի լա,
Գերեզմանիդ վրա ողբա,
Թշնամիեն վրեժ առնե,
Հաճընո համար օգնող չկա:

Արտասուքս հեղեղ դարձավ,
Պայծառ օրս խավարեցավ,
Հաճընո ձորեր արյուն լցվան,
Քանի կտրիճներ զոհվեցան:

Երեք հարյուր հայ քաջերով,
Բոլոր զինված մոսիններով,
Դողան բեյին մենք ջարդ տալով,
Հաճընն ինկավ՝ «Վրե՜ժ» գոռալով:

Առնեմ սուրս, ելնեմ առաջ,
Թուրքեր ջարդեմ ես աջ ու ձախ,
Ուրախ գերեզման իջնայի,
Հաճընը ազատված տեսնայի:

---

* 1920 թ. Հաճընի ութամսյա հերոսական դյուցազնամարտին նվիրված Արամ-Ասպետի այս և այլ բանաստեղծությունները հաճընցիները ժողովրդականացրել ու իրենցն են համարում:

** Ինքնապաշտպանության անցած հաճընցիները թշնամու թնդանոթը գրավում են, բայց մեջն արկ չի լինում, որ կրակեն և չեն կարողանում պաշտպանվել:

24 (554).

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՑԱՆԸ*

Թալեաթ փաշան փախավ Բեռլինից,
Թեհլերյանը հասավ ետին,
Ջարկավ ճակտին՝ փռեց գետնին.
Գինի լի՛ց, ախպեր ջա՛ն,
Գինի լի՛ց, խմողաց աման՛շ:

Թալեաթ փաշան դրին հողը,
Լուրը ղրկին՝ ցնկած մորը,
Կեցցե՛ գերման դատավորը.
Գինի լի՛ց, ախպեր ջա՛ն,
Գինի լի՛ց, խմողաց աման՛շ:

25 (555).

Ա՛Խ, ՀԱՅՐԵՆԻՔ

Ա՛խ, հայրենիք, ե՞րբ պիտ տեսնեմ քեզ ազատ,
Ուրախ, զվարթ, ապահովված, առանց ցավ,
Տիգրանակերտ, Մուշ, Բայազետ, դեպի Վան,
Հայ զորքերով ըլլան մեզի պահապան:

Թուրքը հարձակվավ բազում զորքերով,
Կիլիկիան լցվավ լաց ու կոծերով:

Մատաղ մանկտիք զոհ եղան, դացին,
Անմեղ արյունով ճահատակվեցին,
Ոմանք կիսամեռ, դեռ բաց աչքերով
Օգնության համար երկինք կնային:

Ա՛խ, հայրենիք, ե՞րբ պիտ տեսնեմ քեզ պայծառ,
Լուսավորված, ուսում առած ու կրթված,
Գահին ճստած արժանավոր հայ իշխան,
Հայ տառերով գրե հայոց հրաման:

Ի՞նչ անեմ այսպես դառնացած կյանքը,
Ե՞րբ պիտի տեսնեմ Հայկազյանց գահը.
Ծագե՛, արշալույս, ծագե՛ մեր վրա,
Ծագե՛ հայության, հայ ազգին վրա:

Ըլլանք մենք ստրուկ օտարի համար,
Հայկազյանց սիրուն ընկնենք քաջաբար:

26 (556).

ՄԻԱՑԵ՛Ք, ՀԱՅԵ՛Ր, ՄԻԱՑԵ՛Ք

Մշո դաշտեն ելեր, կուգանք,
Խամշին փաթթեց Լևոն արքան,**
Օտարական ենք մնացել.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք:

Զուգինք իշխան մեզի համար,
Կամ թե՝ արքա տիրակալ,
Որ դառնա մեր ազգին պաշտպան.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք:

Կար ժամանակ Արարայում,***
Երբ կռվում էինք բանակում,
Միությունը շատ լավ բան է.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք:

Հայրենիքմ՝ ունինք՝ Հայաստան,
Այդ է հույսը մեր հայության,
Էլ չենք ապրի արտասահման.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք:

Ցոթը թիթեղ կարմիր ոսկին
Տվին ֆրանսըզ ժեներալին,
Չհավատաք օտարի խոսքին.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք:

Հայ խնդիրը լուծվի շուտով,
Հոն հավաքվինք ամբողջ ազգով,
Ծաղկացնենք մեր ճիգ ու ջանքով.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք:

---

* Սողոմոն Թեհլերյան (1896-1960 թթ.) – հայ ազգային վրիժառու: 1921 թ. Բեռլինում սպանել է Հայոց ցեղասպանությունն իրագործած և անպատիժ մնացած երիտթուրք կառավարության ղեկավարներից Թալեաթ փաշային:

** Նկատի ունի Հայկական Կիլիկիայի Լևոն Բ Մեծագործ արքային (1198-1219 թթ.):

*** 1918 թ. ֆրանսիական բանակում հայ կամավոր լեգեոնականները Պաղեստինում՝ Արարայի մոտ, պարտության են մատնել թուրք-գերմանական զորքերին և հաղթանակ նվաճել:

5. ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁ ԵՐԳԵՐ

1 (557).

ԱՆՑԵՐ ԹՈՂԻՆՔ ՄՇՈ ԱՆՈՒՇ ԴԱՇՏ, ԴՈՒՐԱՆ

Անցեր թողինք Մշո անուշ դաշտ, դուրան,
Սուրբ օթևան, տուն ու տանիք ու վաթան,
Մատուռ ու վանք, գիրք ու կանոն, Ավետրան,
Մնաց անտեր, մնաց՝ ընկավ շան բերան:

Դարը շուռ էկավ, քարը շուռ էկավ մըր ճամփին,
Ցաք ու ցրիվ արեց մըզի թշնամին:

Էս ինչ էկավ մըր գլխուն, լաո՛,
Մշուշ պատեց աշխարհուն,

Կարմրատոտիկ կռունկնե՛ր, դուք չմոռնաք սուրբ պատգամ,
Մեղրագետու զուլալ ջրից կուշտ խմեք,
Ջեր բներ լե շինեք քիվին Կարապետա մեր Սուրբ տան,
Կռունկնե՛ր ջան, կռունկնե՛ր, ձըզի մեռնիմ, խորոտնե՛ր:

2 (558).

ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Վան-Վասպուրական,
Դու իմ ծննդավայրն ես,
Իմ տխուր անցյալն ես,
Ինչքան հեռու ես,
Այնքան՝ մոտիկ ես:

Վա՛ն, ես քեզ սիրեցի
Քո անարատ հող ու ջրի համար,
Վանա լճի լուսնկա գիշերների համար,
Վարագա սարի բուրավետ ծաղիկների համար,
Անուշահոտ, անմահական խնձորի համար:

Դու իմ երազներում ես,
Մորս կարոտներումն ես,
Բոլոր վանեցիների սրտումն ես,
Որոնք կան և հիմա՝ չկան:

Վան-Վասպուրական,
Դու իմ ծննդավայրն ես,
Ուրեմն՝ շա՛տ քաղցր ես:

3 (559).

ԱՎԱ՛Ղ, ՍՈՒՐՄԱԼՈՒ*

Ա՛յ Սուրմալու, ջա՛ն Սուրմալու,
Ձկա զանգակի ձայն, չկա հայ բարբառ,
Դարձել ես բնավեր գայլերի անտառ,
Դպրոցներով հարուստ, մարդաշեն գավառ:

Ավա՛ղ, ավա՛ղ, Սուրմալու,
Օձն է նստել բնիդ վրա, Սուրմալու՛:

Ավա՛ղ, ավա՛ղ, Սուրմալու,
Օձն է նստել բնիդ վրա, Սուրմալու՛:
Անբախտ Արարատը յուր սև ամպերով
Ողբում է կորուստդ, քաղցր Սուրմալու՛,
Դարձել ես ավերակ, հողին հավասար,
Հայաստանի փառք ու պարծանք, Սուրմալու՛:

Ավա՛ղ, ավա՛ղ, Սուրմալու,
Օձն է նստել բնիդ վրա, Սուրմալու՛:

Քնքուշ հայ աղջկա երգի փոխարեն,
Ագռավն է վայում սև բախտդ, Սուրմալու,
Թող սգա հայ ազգը կորստիդ համար,
Հայաստանի փառք ու պարծանք, Սուրմալու՛:

Ավա՛ղ, ավա՛ղ, Սուրմալու,
Օձն է նստել բնիդ վրա, Սուրմալու՛:
Թողել ու եկել ենք մեր այգիները,
Վաղվել, մոխիր են դարձել մեր շեն գյուղերը,
Ուզինք չտալ Վան ու Բիթլիս, Էրզրում,
Քեզ էլ ահոնց վրա տվինք, Սուրմալու՛:

Ավա՛ղ, ավա՛ղ, Սուրմալու,
Օձն է նստել բնիդ վրա, Սուրմալու՛:

Այգեպանդ չկա՝ այգիդ զարդարե,
Ձորս կողմդ խավար, մութ գիշեր է,
Երանի Աստված քեզի պաշտպաներ.
Արդյոք մի օր կգնա՞նք Սուրմալու:

Ավա՛ղ, ավա՛ղ, Սուրմալու,
Օձն է նստել բնիդ վրա, Սուրմալու՛:

4 (560).

ՃՈՐՈԽԻ** ԱՓԻՆ

Վշտոտ սրտով, կարոտ աչքով,
Բեկված հոգով, արցունք աչքով
Քեզ եմ դիմում, իմ հայրենի,
Հարազատ գետ, անգին Ճորոխ:

Մաղկափթիթ դաշտ ու հանդից,
Անտառներից ու լեռներից:

Ասա՝ լսեմ, ի՞նչ լուր ունես
Իմ հարազատ հայրենիքի

Ասա՝ լսեմ, ի՞նչ լուր ունես
Իմ մանկության վեհ օրրանից,
Պարզ ու զուլալ, սառն ու վճիտ
Աղբյուրներից, գետակներից:

---

* Սուրմալուն (Իգդիր) 1920 թ. գրավվեց թուրքերի կողմից և 1921 թ. Կարսի պայմանագրով անցավ Թուրքիային:

** Ճորոխ գետի կենտրոնական մասում է գտնվել երբեմնի հայաշատ Արդվին քաղաքը, որը ևս Թուրքիային է անցել:

Ու՞ր են արդյոք, քո սիրելի
Հայ զավակներդ՝ հոգով արի,
Ինչու՞ լռեց նրանց ձայնը,
Սև սուգ պատեց շեն երկիրը:

Չհամբերեց Էլ Ճորոխը,
Ալիքները տվեց իրար
Ջավկին կորցրած մոր կսկիծով,
Այսպես խոսեց նա ցավատանջ:

- Բավ է խառնես իմ վերքերը,
Հայրենասեր, հեգ ալևոր,
Նախկին վճիտ իմ ջրերը
Այժմ դառել են արցունքի ծով:

Իմ սիրասուն զավակների
Շիրիմներն են միայն մնում,
Որոնց մեղմ ու զով զեփյուռը
Սվսվում է ու համբուրում:

Վատ թշնամին, նենգ դրացին,
Կովի չելավ դեմ հանդիման,
Այլ՝ նա դիմեց խարդավանքի,
Սուտ երդումի ու սուտ խոստման:

Խաղաղ մարդկանց, անզեն մարդկանց
Կապկպեցին չվաններով,
Շարան-շարան ձորեր տարան,
Խոցոտեցին ավիններով:

Այժմ թեև իմ ափերը
Սուգ են հագել ու սուգ կապել,
Սակայն մոտ է այն մեծ օրը,
Որ կբերե խինդ ու ծափեր:

Ջոհվածների կորյունները
Կդառնան մեծ-մեծ առյուծներ,
Հայրենական արևի տակ
Անվախ, հզոր քաջ մարտիկներ:

Էլ չեն խաբվի նենգ թշնամու
Սուտ խոստումից, երդումից,
Սուրը ձեռքին դեմ դուրս կգան,
Կջախջախեն բունը հիմքից:

Նոր այն ժամին զոհվածների
Ոսկորները կթարմանան
Ու հայ ազգի զավակները
Իրենց երկրին կտիրանան:

5 (561).

ՋԷԲԷԼՄՈՒՍԷՆ ՂԱՐԻԲԸ

Ցասընձա խնթրիցն
Այարում ծիօն հիզնիլն,
Ջէբէլ Մուսա ուրթիլն,
Թիզինքն թէզ քաղիլն,
Ընղայզինէն ունդայզ քաղիլն:*

Ցասընձա խնթրիցն
Այարում ծիօն հիզնիլն,
Հայաստան ուրթիլն,
Խիլք ու շնիւրք սուրվիլն,
Միր վաթանը շինցընիլն:**

Դուզմը՛շ իրէք զմասինէն,
Արաղ լցրէք ղաղըղնէն,
Հազօր անիշ թըղ ըննօ
Հայաստան ուրթօղ գէնջիրէն:

Ստծուց խնդրեցի
Թամբած ձի հեծնել,
Գնալ Մուսա լեռ,
Թզենուց թուզ քաղել,
*Ընկուզենուց ընկույզ քաղել:**

Ստծուց խնդրեցի
Թամբած ձի հեծնել,
Հայաստան մեկնել,
Դպրոց հաճախել,
Խելք ու շնորհք սովորել,
*Մեր հայրենիքը շենացնել:***

Լցրեք լիքը սեղանները,
Օղին լցրեք բաժակները,
Հազար անուշ թող լինի
Հայաստան գնացող ջահելներին:

6 (562).

ՑԱՆԿԱՄ ՏԵՍՆԵԼ ԻՄ ԿԻԼԻԿԻԱՆ

Երբ որ բացվին դռներն հույսի,
Եվ մենք Երկիր դառնանք կրկին,
Ջքնաղ երկիր մեր Հայրենյաց,
Որ բռնությամբ առին մեզնից:

Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.
Օդը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ,
Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.
Վանքեր, բերդեր հոնտեղ շա՜տ կան:

Երբ որ լուծվի Հայոց Հարցը,
Եվ մեզ տրվի նախնյաց հողը,
Մենք կվարենք մեր արտերը,
Կշենացնենք մեր գյուղերը:

Ցանկամ տեսնել Սասուն ու Վան,
Զեյթուն, Հաճընն և Մուսա Դաղ,
Տարսոն, Մարաշ, Սիս ու Այնթապ,
Կծաղկացնենք մենք անպայման:

---

* Երգը հորինվել է 1939 թ. հետո, երբ Ալեքսանդրետի սանջաքը հանձնվել էր Թուրքիային, ընդ որում՝ նաև Մուսա լեռը, իսկ մուսալեռցիները բռնագաղթվել էին Այնջար:

** Երգի այս հատվածը հյուսվել է 1946 թ. զանգվածային հայրենադարձության նախօրեին, երբ Մայր–Հայաստանը կանչում էր իր աշխարհասփյուռ զավակներին:

7 (563).

ՄԵՐ ՔԵՍԱԲԸ

Բարձր է Կասիոսի գագաթը,
Գերի մնաց ինչպես Արարատը,
Թուրքին մնաց ցանքն ու արտը,
Ավելացավ քեսաբցու դարդը:

Ոչ մի այլ ազգ չկար մեջդ,
Այժմ դռանդ է կայնած մեջիդը,
Աղոթք արեք հայոց ժամին,
Թող խորտակվի թուրքի ջամին:

Կիլիկիայի մնացորդ ես, Քեսա՜բ,
Երազներից մեզ հուսախաբ,
Գործերդ մնացին կիսատ,
Ով պանծալի դու մեր Քեսա՜բ:

Ունիս գյուղեր բազմազան,
Անուններով զանազան,
Ուր կար ժամեր այլազան,
Տերտեր, պատվելի, սրբազան:

Ո՜վ, դու չարքաշ քեսաբցի՛,
Տերն էիր դու քո հացի,
Արի և քաջ գյուղացի,
Մնացորդնե՛ր կիլիկիացի:

Հայոց գյուղերի բեկոր,
Մնացել ես դու կամակոր,
Արդյոք կգա՞ սիրուն մի օր,
Հավաքվենք շուրջդ բոլոր:

Փանոսն եմ ես քեսաբցի,
Շատ երկրներ պտտեցի,
Քո նմանը չհանդիպեցի,
Ո՜վ, պանծալի դու մեր Քեսաբ:

8 (564).

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ*

Գյուղիդ ծայրը՝ վտակիդ քովիկ,
Ծառերուդ մոտ կանաչ, զովիկ,
Խրճիթ մը կար հանգստ սիրուն,
Իմ աննման, Հայրենի՛ տուն:

Կբաբախեն հոն անդադար,
Ջույգ մը սրտեր լոկ ինձ համար,
Հորս, մորս անուշ սրտեր
Գոհարներու հետ չեմ փոխեր:

Օրորոցս հին ու ցածրիկ,
Հոն անկյուն մը կգտնեք ինձ,
Հոն բացվեցան լեզվիս կապեր,
Նախկին քայլերս հոն եմ արել:

Ուրախություն, հաճույք ու սեր՝
Հայրենի տունս եմ լեցուցեր,
Արևուն տակ չկա՛ մեկ բան
Իմ հայրենի՛ տանս նման:

9 (565).

ՕՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՅՍՔԱՆ ՏԱՐՈՎ

Օտարություն այսքան տարով,
Կուլամ հայրենյաց կարոտով,
Օտարական ենք մնացել.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք:

Մանուկ զավակներս մորթեցին,
Կույս աղջիկներս փախցուցին,
Բռնի կրոնքեն հանեցին.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք:

Գևորգ Չաուշն առաջն ընկած,
Փամփուշտները խաչաձև կապած,
Մոսիները ձեռքը բռնած.
Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք:

Կարմիր, կապույտ, նարնջագույն,
Թող գան բոլոր, ուտեն երդում,
Քանի մենք չենք մեկ հոտ-հովիվ,
Չենք ունենա ազատ Հայրենիք:

10 (566).

ԱՅՍՔԱՆ ՏԱՐԻ ԹԱՓԱՌԵՑԻՆՔ

Այսքան տարի թափառեցինք,
Դարձյալ օտար հող մնացինք,
Մեր անուշիկ Հայաստանից
Հեռու-հեռու բնակվեցինք:

Հայրենիքից պանդուխտացա,
Դառն ցավի հանդիպեցա,
Թողի հարազատ կին, որդի՝
Սև հողին արժանացա:

11 (567).

ՆԵՐԳԱՂԹԻ ԼՈՒՐԸ

Օտարության ժամանակ է.
Արդյոք սա ի՞նչ խղճմտանք է,
Համբերությունն շատ լավ կյանք է.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛:

---

* Այս և «Կարոտցեր եմ Հայրենիքիս» [18(574).] երգերն առաջին անգամ լսել եմ արժանահիշատակ հորիցս՝ Գառնիկ Սվազլյանից (1946 թ., Ալեքսանդրիայում), և, հիշողությամբ վերհիշելով, զետեղել եմ սույն ժողովածուի մեջ:

Հեռացեր եմ տունես-տեղես,
Կորուցեր եմ հարազատներ,
Կարոտ մնացեր հայրենիքես.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛:

Օտարության մեջ ինկեր ենք,
Կուլամ կարոտո՛վ-կարոտո՛վ.
Հայ Խնդիրը լուծվեր շուտով.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛:

Ուրախացիր, մի՛ լար տխուր,
Ոտքիդ վրա կալնի՛ր ամուր.
Շուտով կլսես ներգաղթի լուր.
Համբերե՛, հոգի՛ս, համբերե՛:

12 (568).
ԵՐԵՎԱՆ ԵՐԹԱԼ ԿՈՒԶԵՄ

Երևան երթալ կուզեմ,
Քերական կարդալ կուզեմ,

Ես ի՞նչ ընեմ քերական,
Երբ բոլորն ենք ուսումնական:

13 (569).
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԹԱԼՈՒ ԵՄ

Հայաստան երթալու եմ,
Մշտական մնալու եմ,

Ես ի՞նչ ընեմ օտար աշխարհ.
Ահա կերթամ Հայաստան:

14 (570).
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԹԱԼ ԿՈՒԶԵՄ

Հայաստան երթալ կուզեմ,
Երևան տեսնալ կուզեմ,

Մասիս սարի կատարին
Դրոշակ պարզել կուզեմ:

15 (571).
ՀԵ՛Յ ՋԱՆ, ԵՐԵՎԱ՛Ն

Կարոտցեր եմ քեզի, շքեղ Երևան,
Շատ ծովերեն բարձր ոսկե լիճ Սևան,
Ջկներ ունիս խորքումդ՝ կողակ ու իշխան,
Հոգիս վկա լինի, կյանքս քեզ կուտամ:

Հե՛յ ջան, Երևա՛ն, դու իմ Հայաստան,
Հե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան:

Երևա՛ն, սիրելիս, դու միշտ անսասան,
Շրջապատված ունիս այգի, բուրաստան,
Օդդ, ջուրդ՝ անուշ, տեսքդ՝ աննման,

Ով չի սիրում քեզի՝ հայ չէ իսկական:

Հե՛յ ջան, Երևա՛ն, դու իմ Հայաստան,
Հե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան:

Երբ որ ես կմեռնեմ, Հայաստան տարեք,
Արարատյան դաշտում դիակս թաղեք,
Արարատյան գինով բաժակներ լցրեք,
Շշով խորովածը լավաշով կերեք:

Հե՛յ ջան, Երևա՛ն, դու իմ Հայաստան,
Հե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան:

16 (572).
ՀԱՅԱՍՏԱՆԸՆ ԴԷՍԹԱՆԸ

Քիմ դիր յազաև դէսթանը,
Օ սէվէր Հայաստանը,
Ա՛յ սազընը էլիճէ,
Չալ Հայաստան դէսթանը:

Ցաշասը՛ն էրմէնիլէր,
Դայանդըլար բու գիւնէ,
Ցախընըլարդա յօլջույուզ՝
Դիւշմանա գիւլէ-գիւլէ:

Օյնարըմ ճէմ դէ չալարըմ,
Չալարըմ ճէմ դէ օյնարըմ,
Հայաստանը գօրդիւքջէ
Ցըլդըզլարա ճօփլարըմ:

Արարատըն գագաթը՝
Ասլանլարըն յուվասը,
Օրալար թիւրքիւն դէյի՛լ.
Էրմէնիներին յուվասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ով գրել է այս վիպերգը,
Նա սիրում է Հայաստանը,
Ջեռքդ վերցրու քո սազը,
Նվագիր Հայաստանի երգը:

Հայերը թող միշտ ապրեն,
Տոկացին, հասան այս օրին,
Շուտով մենք ճամփա կելնենք՝
Թշնամու վրա խնդալով:

Կպարեմ և կերգեմ,
Կնվագեմ և կպարեմ,
Հայաստանը տեսնելուս պես
Ես աստղերին կթռչեմ:

Արարատի գագաթը
Ադյուծների բույնն է,
Այդ վայրերը թուրքինը չե՛ն.
Հայերի քնօրրանն է:

Ստալինն դիր բաբամըզ,
Միկոյան՝ հալաթըմըզ,
Բաղրամյան՝ քարդաշըմըզ,
Մացակ Պապյան՝ ռէխիմիզ:

Ստալինը մեր հայրն է,
Միկոյանը մեր կյանքն է,
Բաղրամյանը մեր եղբայրն է,
Մացակ Պապյանը՝ դեկավարն է:

17 (573).
ՀԱՅԻ ԵՐԿԻՐ, ՀԱՅԻ ՀՈՂ

Հայեր ունինք խելացի,
Քաջեր ունինք սիրելի,
Ողջ աշխարհով ճոչակվեց
Բաղրամյանը պանծալի:

Հայի երկիրը, հայի հողը
Մինչև ե՞րբ թուրքը տիրի,

Բա՛վ է մեզի սպասելիք.
Ջենքի դիմե՛ք, հա՛յ որդիք:

Ջոհվածների սուրբ արյունը
Վրեժ առնել կկանչե,
Բաղրամյանի հրամանով՝
Կատյուշայով պիտ բուժենք:

18 (574).
ԿԱՐՈՏՑԵՐ ԵՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Ա՛յ քարավան, ջա՛ն քարավան, քշի՛ր քո ճամփան,
Կարոտցեր եմ Հայրենիքիս. քունս չի տանիր:

Լուսնակ գիշեր քեզ կկանչեմ ու դուն չես լսեր,
Կարոտցեր եմ ազիզ եղբորս. քունս չի տանիր:

Անապատի փշերից դեն քշի՛ր քո ճամփան,
Կարոտցեր եմ Մասիս լեռան. քունս չի տանիր:

Դարդաձելի ննեղությունեն ազատի՛ր մեզի,
Կարոտցեր եմ իմ սուրբ հողիս. քունս չի տանիր:

Հայաստանեն նավը եկավ դեպի Լիբանան,
Լիբանանեն հայեր տարավ դեպի Հայաստան:

Ա՛յ քարավան, ջա՛ն քարավան, քշի՛ր Հայաստան,
Կարոտցեր եմ Հայրենիքիս. քունս չի տանիր:

19 (575).
ՄԵՐՆ Է ԿԱՐՍՆ ՈՒ ԱՐԴԱՀԱՆ

Քշի՛ր, հե՛յ ջան քարավան,
Մեզ կպապսե Հայաստան.
Թող ողջ աշխարհն իմանա՝
Մերն է Կարսը ու Արդահան:

Կեցցե՛ս դու, Հայր Ստալին.
Սրբի պես մեզ փրկեցիր,
Մեզ չսիրող թուրքերի
Սրտիցը վերք բացեցիր:

Կուզե՛նք զայն, կուզե՛նք զայն.
Մերն է Կարսն ու Արդահան,

Թե չիտան՝ զեն-զորքով
Պիտի առնե Բաղրամյան:

Ամբողջ վեց դար ազգովին
Եղանք գերի օտարին,
Բայց աչքերնիս կնային
Արդահանին ու Կարսին:

Կարս, Արդահանը մեզի
Պիտի շուտով դարձվի,
Որ այդ հողերն ամայի
Փոխակերպենք դրախտի:

20 (576).
ՂԱՐԱԲԱՂԸ ՄԵՐ ՓՈՔՐԻԿ

Ղարաբաղը մեր փոքրիկ
Մասն է Հայոց աշխարհի.

Ինչու՞ թողնենք օտարին,
Երբ հայերն են հոն բնիկ:

21 (577).
ՄԵՐ ՀԱՑ ԵՂԲԱՅՐՆԵ՛Ր, ՄԵՆՔ ՇԱ՛Տ ԼՌԵՑԻՆՔ

Մեր հայ եղբայրնե՛ր, մենք շա՛տ լռեցինք,
Բավական է մեզ ասչափ համբերենք,

Մեր Ղարաբաղը մեզնից խլեցին,
Հիմա ուժ ունենք՝ ետ առնենք նորից:

22 (578).
ԵԿԵ՛Ք, ԵՂԲԱՅՐՆԵ՛Ր, ԻՐԱՐ ՄԻԱՆԱՆՔ

Լռեց զանգը կյանքիս,
Էս ավերակ վանքիս՝
Էլ աղոթք չկա...
Ա՛խ, ես ու՞ր գնամ.
Ուրիշ տեղ հայրենիք չկա:

Մենք պարտավոր ենք հիշել զոհերին,
Հայ ժողովրդի ննահատակներին,

Թող հողը ձեր վրա միշտ թեթև լինի,
Ա՛խ, ես ու՞ր գնամ. չկա ուրիշ հայրենիք:

Մենք հայ ենք, հայ էլ կմնանք,
Եկե՛ք, եղբայրնե՛ր, իրար միանանք.
Վանա ծովին, Էրզրումին,
Ղարաբաղին տիրանանք:

6. ԵՐԳԵՐԻ ՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1(579).
ԴԷՐ ՋՈՐՈՒՆ ԻՉԻՆԴԵ*
III.2.46(381).



*Վերապրողներից մեր կատարած ձայնագրությունները նոտագրել են.
— Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու Մանուկ Մանուկյանը – թիվ՝ 1, 3, 12, 14–16, 18, 21, 22:
— Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու Ալինա Փահլևանյանը – թիվ՝ 2, 4, 7–10, 13, 17, 19, 20:
— Երաժշտագետ Կարո Ձալիկյանը – թիվ՝ 5, 6, 11:

2(580).
ՍԱԲԱԽԴԱՆ ՔԱԼՔԸԹԸՄ
III.2.59()394.



3(581).
ԴԵՐ ՋՈՐ ԿԵՐԹԱՆՔ ԼԱԼԱԳԻՆ
III.2.30(365).



4(582).
ԲՈՒՐԱՍԸ ՎԱՆԴԸՐ
III.2.19(354).



5(583).
ՀՈՒՐԱՆԱՑ ՄՈՒՇԿԵՐ
(Որորոցային)
III.2.20(355).



6(584).
ԷՐԶԻՆՑԱՆ ՏՈՒՐՍՆ ՕԼՈՂՈՒ
III.2.22(357).




Ռո - ռո - ռան ա - րան ջրր ըն - ռո - ռան ա - րան ջրր
ըն - ռո - ռան ա - րան ջրր
ա - ռա - ւօտ ա - ռա - ւօտ
ա - ռա - ւօտ
ա - ռա - ւօտ

8(586).
ՀԱԼԱԾՎԱԾ ԵՆՔ ՀԱՑԱՍՏԱՆԻ ԼԵՌՆԵՐԵՆ
III.2.27(362).



9(587).
Ա՛Խ, ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
III.4.2(532).



10(588).
ԱՎԱ՛Ղ, ՍՈՒՐՄԱԼՈՒ
III.5.3(559).





11(589).
ՎԱՐԱԳԱ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՑ
III.2.127(462).



12(590).
ՄԵՐ ՄՈՒՍԱԼԵՌՑԻՔ ԼՐԻՎ ՀԵՐՈՍ ԵՆ
III.4.10(540).



13(591).
Ո՛Վ, ՀԱՃԸՆՑԻ ՔԱՋ ՊԱՏԱՆԻ
III.4.23(553).





14(591).
ՕԴԱՆԱՎՆ ԷԿԱՎ
III.4.22(552).



15(593).
ԱԴՈՒՐ ՓԱՇԱ
III.4.15(545).



16(594).
ՑԱՇԱՀ, ՄԱՆՈՒԿ ՉԱՈՒԾ
III.4.16(546).



17(595).
ԾՆՈՂՆԵՐՈՒՑ ԾՈՒՑ ԶՐԿՎԱՆՔ՝ ՔՈՒՐ-ԱԽՊԵՐ
III.3.47(515).





18(596).
ՈՐԲԱՆՈՑԻՆ ՎՐԱՑԵՆ ՍԵՎ ՂՈՒԾ ՄԸ ԱՆՑԱՎ
III.3.54(522).



19(597).
ԱՄԲՐԿՈՒ ՃԱՄՓԵՆ
III.3.49(517).



20(598).
ՀԸՄԼԱ ՄԵՆՔ
III.3.51(519).



21(599).
ՄԵՐ ՇԱ՛Տ ՍԻՐԵԼԻ, ԳԵՂԵՑԻԿ ԱՆԹԻԼԻԱՍ
III.3.62(530).



22(600).
ԿԱՐՈՏՑԵՐ ԵՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ
III.5.18(574).



ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անգլ. – Անգլերեն
Արաբ. – Արաբերեն
Հուն. – Հունարեն
Ռուս. – Ռուսերեն
Քրդ. – Քրդերեն
Ֆր. – Ֆրանսերեն

ԲԱՌԱՐԱՆ*

Ա

Աբա – լայն թիկնոց, վերարկու
Աբլա – մեծ քույր
Ադաթ – սովորություն
Ադալեթ – արդարություն
Աղըմ – քայլ
Աղյալ (ռուս.) – անկողնի ծածկոց
Աթար – գոմաղբ
Ալամ – ամբոխ, մարդկություն
Ալեֆ – բոց
Ալթուն – ոսկի
Ախլակ – կողպեկ
Ախպապ – ընկեր
Ախր – վերջ, վախճան
Ակռա – ատամ
Ամագ – երախտիք
Ամըր, Էմիր – հրաման
Ամիլե թաբուր – թուրքական բանակում գործող աշխատանքային գումարտակ
Ամմա, ըմմա – բայց, սակայն
Ամմի – հորեղբայր
Ամմի օղլի, Էմմի օղլի – հորեղբոր տղա
Ամր, Էմիր – հրաման
Ամուջա – հորեղբայր
Այ – 1. լուսին, 2. ամիս
Այը – արջ
Այիբ – ամոթ
Այնա – հայելի
Անա – մայր
Անթարի – վերնազգեստ
Անջախ – հազիվ
Անտիկա – հին, հնօրյա
Աշջի – խոհարար
Աշք – սեր
Ապանտեսիտ (ֆր.) – կույր աղիք
Ապարտըման (ֆր.) – հարկաբաժին
Աջաբ, աջաբա – արդյոք
Աջի – դառը, լեղի, կծու
Առիք – առաստաղ
Առօնդ, ըոընդ – լավ
Ասկյար – թուրքական զինվոր
Ավա – կրկին
Ավարա – դատարկապորտ
Ավընյու (անգլ.) – պողոտա
Արաբա – սայլ, կառք
Արզահալ – դատավճիռ
Արսըզ – անզգա
Աֆերիմ – կեցցես, ապրես
Աֆլըղ – ներում

Բ

Բադամ, բադեմ – նուշ
Բազար – շուկա
Բազը – երբեմն
Բաթանիե – ծածկոց
Բաթման – չափի միավոր
Բալ – մեղր
Բալա, բելա – փորձանք
Բալդըզ – քենի, կնոջ քույր
Բալըխջի – ձկնորս
Բալթա – կացին
Բալլա, բելլի – հայտնի
Բալոն (ֆր.) – փուչիկ
Բախալ – նպարավաճառ
Բախըր – պղինձ
Բախըրջի – պղնձագործ
Բախշիշ – դրամական պարգև, նվեր
Բախչա – այգի
Բաճար – գարուն
Բաղզը, բազը – երբ
Բամբիտ անել (ռուս.) – ռմբակոծել
Բայըր, բայիր – զառիթափ, զառիվայր, զառիվեր
Բայղուշ – բու
Բայրուխ, բայրաղ – դրոշակ
Բանկա (ռուս.) – ամամ
Բաջը – քույր
Բաս (անգլ.) – ավտոբուս
Բասմա – չիթ
Բաստոն – ձեռնափայտ, գավազան
Բաստուրմա – ապուխտ
Բարաբուր, բարեբար – միասին
Բարութ – վառոդ
Բեգիր – չորի
Բեդել – փրկագին
Բեթեր – վատթար
Բեժընցի (ռուս.) – փախստական
Բելեդիե բաշքան – քաղաքապետ
Բելքի – գուցե
Բեյազ – բամբակից հյուսված կտոր
Բեսլեմե – ծառա, սպասուհի
Բեստիլ – պաստեղ
Բերբեր – սափրիչ
Բերդանգ – հրացան
Բերետ (ռուս.) – փոքրիկ գլխարկ
Բըթըն, բյություն – ամբողջ, բոլոր
Բըլըխ – բեղ
Բիլազուկ – ապարանջան
Բիձա – ծեր մարդ
Բիհ – հազար
Բինա – վրանածածկ խրճիթ
Բինբաշի – հազարապետ
Բիրա (ֆր.) – գարեջուր
Բյուրո (ֆր.) – 1. գրասենյակ, 2. գրասեղան, 3. պահարան
Բյություն – բոլոր
Բոլ – առատ
Բողազ – վիզ, կոկորդ
Բողչա – ծրար, կապոց
Բոմբա – ռումբ
Բոշ – պարապ
Բոշա – գնչու
Բոչկա (ռուս.) – տակառ
Բոստան – բանջարանոց
Բոտին (ռուս.) – ճտկավոր կոշիկ
Բորշչ (ռուս.) – կաղամբով, ստեբղինով և բազուկով արգանակ
Բորոզան – շեփոր
Բորու – խողովակ
Բոքոն (ռուս.) – թխված մեծ հաց
Բրիգադիր (ռուս.) – խմբավար, օղակավար
Բրոնիա (ռուս.) – նախատեսված անցաթուղթ
Բուզ – սառույց
Բուլ – թուփ
Բուլավկա (ռուս.) – ապահով ասեղ
Բուխարի փափախ – կարակուլ մորթուց գլխարկ
Բուխերիկ – պատի մեջ օջախ
Բունջուխ – հուլունք

Գ

Գազլաղը – նավթ
Գելին – հարս
Գեոլոգ (ռուս.) – հանքաբան
Գերդանլըխ – վզնոց
Գյամի – նավակ
Գյոլ – լիճ
Գյոռնաֆշտիկ – ուրվական
Գյուգյում – կարաս
Գյուլլա – հրացանի գնդակ
Գրանից, գրանիցա (ռուս.) – սահման
Գրուզավիկ (ռուս.) – բեռնատար մեքենա

Դ

Դաբաղխանե – կաշի մշակելու վայր
Դաբան – ներքնա
Դաբանջա – ատրճանակ
Դալ – ճյուղ
Դալալ – 1. մուճետիկ, 2. միջնորդ
Դալլաք – սափրիչ
Դակտիլո (ֆր.) – գրամեքենա
Դահա – դեռ
Դաղ – լեռ
Դամար – երակ
Դայախ – երկար փայտ, հենարան
Դայի – մորեղբայր
Դայմա – միշտ
Դավուլ – թմբուկ
Դարա – սանր
Դարաղաջ – կախաղան
Դարմըդաղին – ցիր ու ցան
Դարվազ – դարպաս
Դեդե – մեծ հայր
Դելեգացիա (ռուս.) – պատգամավորություն
Դեմիրճի – երկաթագործ
Դենգ – հակ
Դերեբեյի – 1. ավատատեր, 2. բռնակալ
Դերիա (ռուս.) – շրջազգեստ
Դեփիկ – աքացի
Դիբ – հատակ
Դիլիմ – շերտ
Դին – հավատ
Դիվանբաշի – դատավոր
Դիրագ, դիրեգ – սյուն
Դիրլիք – հանգիստ
Դմբլեկ – թմբուկ
Դյուզան – կարգ ու կանոն
Դյուրգար – ատաղձագործ
Դոլաբ – պահարան
Դոկտոր – բժիշկ
Դոկումենտ (ռուս.) – փաստաթուղթ
Դոնդուրմա – պաղպաղակ
Դոնյաղի – ճրագու
Դոշակ – ներքնակ
Դուզ – 1. ուղիղ, 2. հարթավայր
Դուզախ – թակարդ
Դուլբիճ – հեռադիտակ
Դուշման – թշնամի

Ե

Եթիմ – որբ
Ել – քամի
Եմենի – հողաթափի նման կոշիկ
Եմիշ – սեխ
Եշիլ – 1. կանաչ գույն, 2. մոլլայի կանաչ փաթթոց

Զ

Զաբիթ, զաբթիա – ոստիկան, սպա
Զաթը – արդեն
Զալ, սալ – դաճիճ, սրահ
Զաճար – գուցե
Զայիֆ – նիհար, նվազ
Զանաճաթ, զենաճաթ – արհեստ
Զանգակ – 1. զանգ, 2. փափուկ, երկար լավաշանման հաց
Զեհիր – թույն
Զենգին – հարուստ
Զենջիլ – 1. շղթա, 2. խարիսխ
Զիաճ – վնաս
Զիբիլ – աղբ
Զոոտեխնիկ (ռուս.) – անասնաբույժ
Զսկեղեն – ոսկեղեն
Զուբուն – արևելյան վերնազգեստ
Զուլում – փորձանք, պատիժ

Է

Էդյուկասիոն (ֆր.) – կրթություն, դաստիարակություն
Էզան – մահմեդական աղոթք
Էլ – օտար

* Բնագրերում հանդիպող ծագումը չնշված բառերը թուրքերենից և կամ թուրքերենի միջոցով այլ լեզուներից են փոխառնված (Վ. Ս.):

Էմեք, ամագ – երախտիք
Էմզիք – ծծելիք
Էմին – վստահելի
Էյրեթի – խախուտ
Էշիք – շեմ
Էշխե – հրոսակ
Էպիդեմիա (ռուս.) – համաճարակ
Էվակուացնել – տեղափոխել
Էրթեսի – հաջորդ
Էփեի – բավականաչափ
Էքիզ – զույգ
Էքմեք – հաց

Ը
Ըռահաթ – հանգիստ
Ըրմաղ – գետ

Թ
Թաբախ – մատուցարան, ափսե
Թազա – նոր, թարմ
Թալիմ – վարժանք
Թախդա – տախտակ
Թախըմ, թաքըմ – 1. խումբ, 2. զորքի դասակ
Թամամ – ճիշտ, լրիվ, ամբողջ
Թամբիհ էնիլ – հանձնարարել
Թային – թոշակ
Թաջիր – վաճառական
Թավան – առաստաղ
Թավլա – գոմ, փարախ, ախոռ
Թարաֆ – կողմ
Թեզ – 1. արագ, շուտ, 2. վաղ
Թեզբեխ – ձեռքի համրիչ
Թելեգրեյկա (ռուս.) – վերմակի պես կարված վերնազգեստ
Թելեֆոն (ֆր.) – հեռաձայն
Թելլալ – մուենետիկ
Թեյարա (արաբ.) – օդանավ
Թենեքե – 1. թիթեղ, 2. թիթեղյա արկղ
Թենջիրե – կաթսա
Թերաս (հուն.) – պատշգամբ
Թերբիե – դաստիարակություն
Թեփե – գագաթ
Թեքեր – անիվ
Թեքլիֆ – հրավեր
Թընդիր – թոնիր
Թիքա – պատառ
Թյություն – ծխախոտ
Թյուֆենգ, թյուֆանգ, թյուֆեք – հրացան
Թոխմախ – սանդի փայտյա մուրճ
Թոփ – 1. արկ, 2. խաղալու գնդակ
Թոփալ – կաղ
Թոփուզ – գուրզ
Թրեն (ֆր.) – գնացք
Թրնախ – եղունգ
Թումբաք – վարտիք

Ժ
Ժաժգատիլ (ռուս.) – հրաճաք
Ժակետ (ֆր.) – բաճկոն
Ժեներասիոն (ֆր.) – սերունդ
Ժեոմետրի (ֆր.) – երկրաչափություն
Ժում – մեկ անգամվա բաժին

I
Իզ – հետք
Իթ – շուն
Իմդադ – օգնություն
Ինադ – կամակորություն
Ինգլիզ – անգլիացի
Ինթիքամ – վրեժ
Ինսաֆ – խիղճ
Ինվալիդ (ռուս.) – հաշմանդամ
Ինֆորմեյշըն (անգլ.) – տեղեկատվություն
Իշաոտիկ – առանց թիկունքի, երկար աթոռ
Իշդահի – ախորժակ
Իս – ծուխ, մուխ
Իսդիքամ – դիրք, խրամատ
Իսքալա – նավահանգիստ
Իփլիք – թել, դերձան
Իֆդիրա – հերյուրանք

Լ
Լագեր – ճամբար
Լալե – վզի երկայն կապանք
Լահանա – կաղամբ
Լաղըմ – կոյուղի
Լապատկա (ռուս.) – բահ
Լափա – շիլա
Լեբլեբի – բոված սիսեռ
Լեշ – գեշ, դիակ
Լեպլեպի – բովված սիսեռ
Լիբրերի (ֆր.) – գրախանութ
Լիտերատյուր (ֆր.) – գրականություն
Լիրա – ոսկեդրամ
Լոկանտա (հուն.) – ճաշարան
Լոկոմոտիվ (ֆր.) – շոգեկառք
Լոտկա (ռուս.) – նավակ
Լուսվիկ – փարչ

Խ
Խաբախ – դդում
Խաբախլըխ – դդմենի
Խաբար – լուր
Խադիֆե – թավիշ
Խազան – մեծ կաթսա
Խազեյին (ռուս.) – տեր
Խազընխ – սուր ցից
Խազմա – քլունգ
Խազնա – գանձ
Խալաթ (ռուս.) – տնային զգեստ
Խալդըրըր – քարուղի
Խալիչա – գորգ
Խալխա – օղակ
Խամ – 1. խակ, 2. անփորձ
Խամազել – մատնել
Խամշի – մտրակ
Խամսին (արաբ.) – հարավի մրրկահողմ
Խայթան – հյուսված պարան
Խային – ընկճ, դավաճան
Խան – իջևան
Խանչալ – դաշույն
Խաշլըխ – գրպանի դրամ
Խաս – ընտիր
Խասաբ – հաշիվ
Խավուր – տապ
Խարաբա – ավերակ

Խարթ – կոշտ, կոպիտ
Խարջլըխ – ծախսելու դրամ
Խեր – բախտ, հաջողություն, լավություն
Խզմեթ – մաքրություն
Խզմեթջի – ծառա
Խընսիր – թաղիք
Խընվըր – գանգուր
Խըտլըխ – սով
Խըրխա – բամբակյա բաճկոն
Խըրս – հերս, ջղայնություն
Խիյախ – հրաշալի
Խոլերա (ռուս.) – ժանտախտ
Խոնջան – լայն վարտիք
Խոջա – 1. ուսուցիչ, 2. հարուստ
Խոջախանում – ուսուցչուհի
Խովա – դույլ
Խովուշ – ընդարձակ տեղ
Խորաթել – խոսել, զրուցել
Խորոզ – աքլոր
Խսիր – թաղիք
Խրբաջ – մտրակ
Խրխա – քուրձ
Խուլ – քնավորություն
Խունդախ – բալուլ, բարուր
Խունի – ձագար
Խուշ, ղուշ – թռչուն
Խուրմա – արմավ
Խուրջին – փամփուշտ
Խուրջին – երկկողմանի տոպրակ

Կ
Կազարմա (ռուս.) – զորանոց
Կալբաս (ռուս.) – երշիկ
Կալյասկա (ռուս.) – կառք
Կալոշ (ռուս.) – կրկնակոշիկ
Կայմակամ – քաղաքագլուխ
Կանալիզացիա (ռուս.) – կոյուղի
Կանդալ (ռուս.) – ձեռնակապ
Կաչկա (ռուս.) – սայլ
Կատիլոկ (ռուս.) – զինվորական մետաղյա ամաս
Կարավաթ (ռուս.) – մահճակալ
Կեպի (ռուս.) – բանվորական գլխարկ
Կերոսինկա (ռուս.) – կրակարան
Կլյուբ (ֆր.) – ակումբ
Կոզեր (ռուս.) – 1. պատրվակ, 2. առիթ
Կողինք – անկողին
Կոմիսիա (ռուս.) – հանձնաժողով
Կորեսպոնդենտ (ֆր.) – թղթակից
Կորիդոր (ռուս.) – միջանցք
Կոֆե – սուրճ
Կոիշ (ռուս.) – տանիք
Կոուշկա (ռուս.) – բաժակ
Կուլա – կուժ
Կուլակ (ռուս.) – հարուստ հողատեր
Կուկուրուզ (ռուս.) – եգիպտացորեն

Հ
Հազըրիլ – պատրաստել
Հալ – վիճակ
Հալալլըխ – հրաժեշտ
Հախ – բաժին, հասանելիք
Համամ – բաղնիք
Համբալ – բեռնակիր
Հայաթ – 1. կյանք, 2. բակ
Հայդուկ – 1. հրոսակ, 2. հերոս
Հաշտ – միջանցք, գավիթ
Հաջի – մահտեսի
Հասրաթ – կարոտ
Հավա – օդ
Հավանգ – սանդ
Հավուզ – ավազան
Հարամ – ապօրեն, անարդար
Հարամի – ավազակ
Հարբ – կռիվ, պատերազմ
Հեղլաք – ուժասպառ
Հեմեն – իսկույն
Հեյբե – խուրջին
Հեսաբ – հաշիվ
Հերքեշ – ամեն ոք
Հեքիմ – բժիշկ
Հըզըր – հզոր
Հյուրիեթ, հիւրրյէթ – ազատություն
Հոքմաթ, հյուքյումեթ – կառավարություն
Հունար – շնորհք

Ղ
Ղաբահաթ – հանցանք
Ղադա – ցավ
Ղաղը – դատախազ
Ղաղըն – տիրուհի
Ղադիֆե – թավիշ
Ղազան – կաթսա
Ղազընխ, ղազուխ – ցից
Ղաթ – շերտ
Ղաթրան – ձյութ
Ղալա – բերդ
Ղալայիջի – կլայեգործ
Ղալը – կեղծ
Ղալեմ – մատիտ
Ղալմաղալ – աղմուկ
Ղամա – դաշույն
Ղամիշ – եղեգն
Ղայըղ – նավակ
Ղայըղջի – նավավար
Ղայիշ – գոտի, փոկ
Ղաչաղ – դասալիք
Ղասաբ – մսագործ
Ղասաբխանե – սպանդանոց
Ղասաթուրան – լայնեզր սվին
Ղավազ – օգնական պաշտոնյա
Ղավուրմա – յուղով տապակած միս
Ղարավաշ – աղախին
Ղարար – 1. սահման, 2. որոշում
Ղարընջա – մրջյուն
Ղարթ – կոշտ
Ղարիբ – պանդուխտ, օտարական
Ղարղա – ագռավ
Ղարշա – դիմաց
Ղափաղ – կափարիչ
Ղաֆա – գլուխ
Ղաֆես – վանդակ
Ղըթլըխ – սով
Ղշլա – զորանոց
Ղոլթուխ – անուտ
Ղոնախ – 1. պալատ, 2. իջևան, 3. հյուր

Ղադու – դիտավորյալ
Ղամաթ – բախտ
Ղուզի – գառնուկ
Ղութի – արկղ, տուփ
Ղութնի – մետաքսախառն հյուսվածք
Ղուլ – ծառա
Ղուլաղ – ականջ
Ղում – ավազ
Ղումանդա ընել – հրամայել
Ղույու – փոս, հոր
Ղունդուրաչի – կոշկակար
Ղուսուր – հանցանք, սխալ
Ղուրբեթ – օտար աշխարհ
Ղուրմիշ ընել – 1. լարել, 2. կառուցել
Ղուրշուն – արճիճ, փամփուշտ

Ճ

Ճախդ – ջանք
Ճամբազ – 1. լարախաղաց, 2. ճարպիկ
Ճանդարմ, ժանդարմա – ոստիկան
Ճտնոց – վզնոց

Մ

Մալ – 1. ապրանք, 2. անասուն
Մալարիա – ջերմախտ
Մահանա – ոտիթ, պատճառ
Մաղարա – քարանձավ
Մամի – դայակ, մանկաբարձ
Մայմա – թաշկինակ
Մանաստըր (անգլ.) – կուսանոց
Մասյոր (ֆր.) – մայրապետ
Մավզեր – հրացանի տեսակ
Մավունա, մավնա – բեռնատար մեծ նավակ
Մատրոս (ռուս.) – ծովային զինվոր
Մարաբա – գութանավոր
Մարուլ – բարդածաղկավոր բույս, հազար
Մափուս – բանտ
Մեբլ (ֆր.) – կահույք
Մեզար – գերեզման
Մեթալիք – մետաղադրամ
Մելան – թանաք
Մեհլեմ – բալասան, քսուկ
Մեհյուր – կնիք
Մեյդան – հրապարակ
Մեյվա – պտուղ
Մենդիլ – թաշկինակ
Մեշոկ (ռուս.) – տոպրակ
Մեջիդիե – թուրքական դրամ
Մերդիվեն – սանդուղք
Մեքանիսիեն (ֆր.) – մեքենագետ
Մթել – տոպրակ
Միներե – մզկիթի աշտարակ
Մինդեր – բազմոց
Մինիստր (ֆր.) – նախարար
Միշմիշ (արաբ.) – ծիրան
Մխդար – գյուղապետ
Մյուդիր, մյուդուր – տնօրեն, վերակացու
Մյուլք – ունեցվածք
Մոբիլիա – կահույք
Մոդիստրա (ֆր.) – դերձակուհի
Մոսին – հրացանի տեսակ
Մուզիկա (ռուս.) – երաժշտություն
Մութլախա – անպայման
Մութֆախ – խոհանոց
Մուխանդաթ – նենգ
Մուխտար – տանուտեր, գյուղապետ
Մուհաբեթ – սեր, համերաշխություն
Մուհաջիր – գաղթական
Մուհդաջ – ապավեն, հույս
Մունդիր (ռուս.) – զինվորական համազգեստ
Մուշամբա – 1. մոմլաթ, 2. անձրևանոց
Մուշտարի, մուշթերի – հաճախորդ
Մուսլուխ – ծորակ

Յ

Յաբանի – վայրենի
Յաբանջի – օտարական
Յազմա – կանացի գլխաշոր
Յաթախ – անկողին
Յալվար ընլլալ – աղաչել
Յախա – օձիք
Յայա (հուն.) – մեծ մայր
Յայլա – ամառանոց
Յաման – կողմ
Յանի – իբր
Յասդըղ, յասթըք – բարձ
Յավրու – ձագուկ, զավակ
Յարամազ – անպետք, անարժան
Յարդըմ – օգնություն
Յափրախ – տերև
Յափու – ծեփվածք
Յաֆթա – ցուցանակ
Յոլ – ճանապարհ
Յոլդաշ – ընկեր
Յոնջա – առվույտ
Յորղան – վերմակ
Յուլար – սանձ
Յուխա – ջրով, խմորով շաղված բարակ հաց
Յումրուխ – բռունցք
Յուքլիք – անկողինները պահելու պատի մեջ փորվածք

Ն

Նալ – պայտ
Նալբանդ – պայտար
Նալին – փայտյա ոտնամաման
Նաղդ – կանխիկ
Նաղլ անել – պատմել
Նամազ – մահմեդական աղոթքի ծես
Նամահրամ – ամուսնանալու համար ազգականական արգելք չունեցող
Նամուս – պատիվ
Նաչալնիկ (ռուս.) – կառավարիչ, պետ
Նաչաղ – կարճ կոթով փոքր կացին, տապար
Նաջար – ատաղձագործ
Նարգիլե (արաբ.) – կլկլակ
Նաֆաս, նենֆես – շունչ
Նենե (ֆր.) – մեծ մայր
Նըրս (ֆր.) – բուժքույր, դայակ
Նինսան – ապրիլ ամիս
Նումրո, նյումերո – համար, թիվ

Շ

Շաբխա, շապխա – գլխարկ, գդակ
Շամաթա – աղմուկ
Շայիդ – վկա
Շաշըրմիշ ընել – զարմանալ
Շարաֆ – պատիվ
Շարթ – պայման
Շափլախ – ապտակ
Շաֆախ – արևածագ
Շեմշիե – հովանոց
Շինել (ռուս.) – զինվորական վերարկու
Շիշգո – գեր
Շոշ (ռուս.) – խճուղի

Չ

Չաբալամիշ ընլլալ – չարչարվել, տվայտել
Չադըր – վրան
Չալել – նվագել
Չալմա – գլխի փաթթոց
Չախկալ – շնագայլ
Չախմախ – հրահան
Չաղ – նպատակ
Չամադան – ճամպրուկ
Չամուր – ցեխ
Չայիր – մարգագետին
Չայդախ – ձեղնահարկ
Չանախ – կավից կամ հախճապակուց աման
Չարդախ – պատշգամբ
Չարշաֆ – սավան
Չարշի – շուկա
Չարուխ – տրեխ
Չաուշ – ենթասպա
Չափալախ – ապտակ
Չբլախ, չըլբախ – մերկ
Չեթե – հրոսակ
Չեկիստ (ռուս.) – հատուկ ծառայության աշխատակից
Չեմբեր – գլխաշոր
Չենգե, չենե – ծնոտ
Չեշիթ – տեսակ
Չեքիջ, չաքուջ – մուրճ
Չեքիրգե – մորեխ
Չըխըն – կապոց, ծրար
Չոբան – հովիվ
Չոլ – անապատ, անմարդաբնակ վայր
Չոնգուր – երաժշտական գործիք
Չոջուխ – երեխա
Չորբա – արգանակ
Չոփ – 1. շյուղ, 2. աղբ
Չվան – պարան
Չրախ – 1. աշակերտ, 2. օգնական
Չուլ – քուրծ, լաթ
Չուլկի (ռուս.) – գուլպա
Չուխա – բրդյա գործվածք
Չուխուր – փոս, հոր

Պ

Պադվալ (ռուս.) – նկուղ
Պաժար (ռուս.) – հրդեհ
Պաժարնի կամանդա (ռուս.) – հրշեջ խումբ
Պալատկա (ռուս.) – վրան
Պալկովնիկ (ռուս.) – գնդապետ
Պալոկ (ռուս.) – բաժին, ճաշաբաժին
Պաչկա (ռուս.) – տուփ, փաթեթ
Պապուկ – պապիկ, մեծ հայր
Պավարոտ (ռուս.) – ոլորապտույտ ճանապարհ
Պատիսըրի (ֆր.) – քաղցրավենիքի խանութ
Պատրոն (ռուս.) – փամփուշտ
Պարադ (ռուս.) – շքերթ
Պարալիչ (ռուս.) – կաթված
Պարախոդ (ռուս.) – շոգենավ
Պարավոզ (ռուս.) – շոգեքարշ
Պարտիա (ռուս.) – կուսակցություն
Պեչատ (ռուս.) – կնիք
Պեչենի (ռուս.) – թխվածքաբլիթ
Պեստիլ – պաստեղ
Պերեվարոտ (ռուս.) – հեղաշրջում
Պիլա (ռուս.) – սղոց
Պիլոտ (ֆր.) – օդաճավորդ
Պիվա (ռուս.) – գարեջուր
Պլաստինկա (ռուս.) – ձայնասկավառակ
Պլեն (ռուս.) – գերի
Պլետ (ռուս.) – մտրակ
Պլոմբել (ռուս.) – կնքել
Պլոտնիկ (ռուս.) – ատաղձագործ
Պոեզ, պոեզդ (ռուս.) – գնացք
Պոլ (ռուս.) – հատակ, գետին
Պոլիտիկա (ֆր.) – քաղաքականություն
Պոպոք – ընկույզ
Պորտբոնե (ֆր.) – դրամապանակ
Պոռժեկտոր (ֆր.) – լուսարձակ
Պրիմիտիվ (ֆր.) – 1. նախնական, 2. հնաոճ, 3. պարզունակ
Պրոպուսկ (ռուս.) – անցաթուղթ
Պուլիմյոտ (ռուս.) – հրաձիգ

Ջ

Ջադ – եգիպտացորեն
Ջալլաթ – դահիճ
Ջամեքան – ապակյա ցուցափեղկ
Ջամըզ – գոմեշ
Ջամի – մզկիթ
Ջան – 1. հոգի, 2. շունչ, 3. անձ
Ջանդակ – 1. մարմին, 2. դիակ
Ջանդըրմա, ժանդարմա – ոստիկան
Ջասադ – դիակ
Ջավահիր – գոհար
Ջեբ – գրպան
Ջեբհանե – զինամթերք
Ջեզա – պատիժ
Ջեզվե – սուրճ եփելու աման
Ջեհեննեմ – դժոխք
Ջեհիզ – օժիտ
Ջերախ, ջերահ – վիրաբույժ
Ջեփե – ռազմաճակատ
Ջիգյար – թոք
Ջիզմե – երկարաճիտ կոշիկ
Ջիհան – աշխարհ
Ջին – չար ոգի
Ջինս – ցեղ
Ջղարա, սիկարա – ծխախոտի գլանակ
Ջոմարդ – առատաձեռն
Ջուդար – պատասխան
Ջուվալ – պարկ

Ռ

Ռաբոչի բատալյոն (ռուս.) – աշխատանքային գումարտակ
Ռամազան – մահմեդական ամանոր
Ռայոն (ռուս.) – շրջան

Ռեհիճ (ռուս.) – գրավ
Ռենկ – գույն
Ռեցեպտ – դեղատոմս
Ռյույա – երազ
Ռոմաթիզմա – հոդացավ
Ռութ – մերկ

Ս

Սաբաբ – պատճառ
Սաբախտան – առավոտյան
Սաբահաղարշը – լուսադեմ
Սաբըր – համբերություն
Սաղըր, սեդիր – բազմոց
Սաթըլ, սիթիլ – ջրաման
Սաթլըջաճ – թոքերի բորբոքում
Սալլամիշ ըլլալ – օրորվել
Սալոմ (ռուս.) – հարդ
Սալոճ (ֆր.) – դահլիճ, սրահ
Սախալ – մորուք
Սախդել – վճռասել, հաշմել
Սահաբ – տեր
Սահաթ – 1. ժամ, 2. ժամացույց
Սաղ – 1. ամբողջ, 2. ողջ, 3. աջ կողմ
Սաղանախ – հորդ անձրև
Սաղլամ – ամուր
Սամալիոտ (ռուս.) – օդանավ
Սաման – հարդ
Սանջի – խիթ
Սաչախ – ծոպ
Սապոգ (ռուս.) – երկարաճիտ կոշիկ
Սապոն – օճառ
Սաջ – 1. բարակ թիթեղ, 2. բով
Սաստավ (ռուս.) – կառախումբ
Սարայ (ռուս.) – պալատ
Սարը – դեղին
Սարմա – 1. թուփ, 2. թփով տոլմա
Սարոչկա (ռուս.) – վերնաշապիկ
Սել – հեղեղ
Սելավ – ջրհեղեղ, հեղեղ
Սեյուդ – ուռենի
Սենտըր (ֆր.) – կենտրոն
Սեվքիաթ – առաքում, հավաքագրում
Սետկա (ռուս.) – ցանց
Սերին – զով
Սեփեթ – քթոց
Սեքսեն – ութսուն
Սեֆերբերլիք – 1. զորաշարժ, 2. տեղահանություն
Սեֆիլ – թշվառ
Սըթըրվել – մի կերպ համակերպվել
Սըթմա – դողէրոցք
Սընըղջի – ոսկրային կոտրվածքները բուժող
Սըր – գաղտնիք
Սըրըխ – երկար, բարակ փայտե ձող
Սըրմա – ոսկեթել
Սիլա – երկիր
Սիլաճ – զենք
Սիլլե – ապտակ
Սինեմա (ֆր.) – շարժապատկեր
Սինի – մատուցարան
Սինյալ (ֆր.) – ազդանշան
Սինոր – սահման
Սինսիլե – գերդաստան
Սիվիլ (ֆր.) – քաղաքացիական

Սյունգի – խշտիկ
Սյունեթ ընել – թլպատել
Սյուրգյու – նիգ, սողնակ, մղլակ
Սյուրգյուճ – աքսոր
Սոթտել – կողոպտել
Սոլ – ձախ
Սոլուխ – շունչ
Սոխախ – նրբանցք, փողոց
Սոմոն, սոմի (հուն.) – փոի երկարավուն հաց
Սոնրա – վերջ
Սոֆու – մոլեռանդ
Ստանցիա (ռուս.) – կայարան
Սու – ջուր
Սութուֆ (արաբ.) – տանձիք
Սուխարի (ռուս.) – չորացրած հաց
Սուչ – հանցանք
Սուրույ – հոտ (անասունի)

Վ

Վազո (ֆր.) – ծաղկաման
Վաթան յոլդաշ – հայրենակից
Վալի – նահանգապետ
Վալիզ – ճամպրուկ
Վալինկա (ռուս.) – թաղիքից երկայնավիզ ոտնաման
Վախըտ – ժամանակ
Վախշի – վայրի
Վակզալ, վոկզալ (ռուս.) – կայարան
Վալենկի գրուզինսկի (ռուս.) – ռազմական վրացական
Վասիաթ – ավանդ, կտակ
Վափոր – շոգենավ
Վեդրո (ռուս.) – դույլ
Վեշ (ռուս.) – բեռ
Վերգի – հարկ
Վիդիո թեյպ (անգլ.) – տեսաերիզ
Վիշկա (ռուս.) – աշտարակ

Տ

Տալերկա, տարելկա (ռուս.) – ափսե
Տապոր (ռուս.) – կացին
Տավարնի (ռուս.) – ապրանքատար
Տեստի – կուժ, սափոր
Տերիտորիա (ռուս.) – տարածք
Տնազ անել – ծաղրել
Տոմատես – լոլիկ
Տրիվոգ (ռուս.) – աճազանգ

Ց

Ցիլինդըր, սիլինդըր (ֆր.) – տղամարդու եվրոպական գլխարկ
Ցիրկ (ռուս.) – կրկես

Ու

Ուբորնի (ռուս.) – զուգարան
Ուղուր – բախտ, հաջողություն
Ուղուրթ – ուղիղ, ճիշտ
Ումբր, ումր – կյանք
Ումուդ – հույս, ապավեն
Ույուզ – բոր հիվանդություն

Փ

Փաբլիկա, ֆաբրիկա (ֆր.) – գործարան
Փաթաթես – գետնախնձոր, կարտոֆիլ
Փալամ – համեստ
Փախլա, բակլա – լոբազգի բույս

Փահլեվան – լարախաղաց
Փայ – բաժին
Փանդանտիվ (ֆր.) – վզից կախելու զարդ
Փանթալոն (ֆր.) – շալվար
Փաշափորթ, պասպորտ (ֆր.) – անձնագիր
Փարա – դրամ
Փարթի (ֆր.) – 1. խումբ, 2. հավաքույթ
Փափազ – տերտեր
Փեմբե – վարդագույն
Փեշքեշ – նվեր
Փերդե, փարդա – վարագույր
Փերուշան – թշվառ
Փիդե – կլոր, բարակ հաց
Փիլաքաճ – սանդուղք
Փիրե – լու
Փոթուր – ծալքերով, լայն շալվար
Փոլիս (ֆր.) – ոստիկան
Փորթուղալ – նարինջ
Փոնջի – փոապան, փուո ունեցող
Փրենսեզ (ֆր.) – իշխանուհի
Փուս – մշուշ

Ք

Քազըն (անգլ.) – զարմիկ
Քաթիպ – քարտուղար, գրագիր
Քալփաթին – աքցան
Քամար, քյամար – գոտի
Քամբանա (ֆր.) – եկեղեցու զանգակ
Քամինո (ֆր.) – բեռնատար մեքենա
Քանեփա (ֆր.) – բազմոց
Քասա, քյասե – խորունկ ափսե
Քարաքոլ (արաբ.) – ոստիկան
Քարդաշ – եղբայր
Քարթուշ – վառոդ
Քաֆիա – գլխին փաթաթելու տղամարդու մեծ շալ
Քեզաբ – ազոտաթթու
Քեթեն, քաթան – 1. կտավճատ, 2. կտավ
Քել – ճաղատ
Քելեփչե – ձեռնակապ
Քեմփ, քամփ (անգլ.) – ճամբար
Քենար – եզր
Քենդիր – պարան
Քենքյուլ – մազափունջ
Քեշիշ – տերտեր
Քեչա, քեչե – թաղիք
Քեչել, քաչալ – ճաղատ
Քեսիկ – քսակ
Քեփի (ռուս.) – բանվորական գլխարկ
Քեֆիլ – երաշխավոր
Քէոփրի – կամուրջ
Քըզ – աղջիկ
Քըզքարդաշ – քույր
Քհլիմ – կարպետ
Քիսա – 1. դրամապանակ, 2. տոպրակ
Քիրա – վարձ
Քիրեչ – կիր
Քյար – օգուտ
Քյարփինջ – աղյուս

Քյաֆիր – անաստված, անխիղճ, տմարդ
Քյորփե – մատղաշ, փոքրիկ
Քյութիգ – կոճղ
Քյուլախ – գլխանոց
Քյուքյուրդ – ծծումբ
Քյուֆ – բորբոսն
Քոլա (ֆր.) – օսլա
Քոլոզ – փաթթոցավոր գլխանոց
Քոնսուլատ – դեսպանություն
Քոջա, հոջա – 1. ամուսին, 2. տեր, 3. ուսուցիչ
Քոփալ – մահակ
Քոք – արմատ
Քրավաթ (ֆր.) – փողկապ
Քուլլի (արաբ.) – բոլոր, ամբողջ
Քուլոտիա (հուն.) – օղակաձև փոքրիկ հաց՝ վրան քունջութով
Քուրջ – լաթ, ձորձ, ցնցոտի
Քուրք – մուշտակ
Քֆրել – հայհոյել

Օ

Օթել (ֆր.) – հյուրանոց
Օթո, օթոմոբիլ (ֆր.) – ինքնաշարժ մեքենա
Օղլան, օղուլ – տղա
Օմուզ – ուս
Օյա – ասեղնագործ
Օճ – տասը
Օճբաշի – տասնապետ
Օրթա – մեջտեղ
Օրթախ – գործընկեր
Օրման – անտառ
Օֆիս (ֆր.) – գրասենյակ
Օֆիցեր (ռուս.) – սպա

Ֆ

Ֆալաք – ճակատագիր
Ֆայդա – օգուտ
Ֆանդ – հնար
Ֆանֆար – փողային նվագարան
Ֆասուլիա – լոբի, ոլոռ
Ֆեղլահ (արաբ.) – հողագործ գյուղացի
Ֆեներ – լապտեր
Ֆես – այր մարդու սև ծոպով կոնաձև կարմիր գլխարկ
Ֆեսիքա, վեսիքա – 1. կտրոն, 2. անցագիր
Ֆերմաճ – հրաման
Ֆընդըխ – կաղին
Ֆըրսաճդ – առիթ
Ֆիդա – զոհ
Ֆիդայի, ֆեդայի – անձնազոհ կռվող, ազատամարտիկ
Ֆիլդիշի – փղոսկր
Ֆիկաճ – ողբ, կական
Ֆիշենք – հրաճան
Ֆիստան – շրջազգեստ
Ֆիտիլ – պատրույց
Ֆորմա (ռուս.) – 1. ձև, 2. համազգեստ
Ֆրոնտ (ռուս.) – ճակատ
Ֆուլ (արաբ.) – բակլա
Ֆուռուճ – փուո
Ֆուրգոն – մարդատար սայլ

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նյութի համարը	Ֆոնդի համարը[1]	Նյութի գրառման վայրը և ծագումը[2]	Գրառման տարեթիվը	Բանասացը	Ծննդյան տարեթիվը
	I. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՀՈՒՇԵՐ				
1(1).	Ձեռ.–3	Երևան<Սասուն	1940	Եղիազար Կարապետյան	1886
2(2).	Ս.Բ.–10*-11*	Աշնակ<Սասուն	1989	Խաչիկ Խաչատրյան	1900
3(3).	Ս.Բ.–3*-4*	Աշնակ<Սասուն	1989	Հակոբ Գրիգորյան	1903
4(4).	Ս.Բ.–22*-23*	Աշնակ<Սասուն	1989	Առաքել Դավթյան	1904
5(5).	Վ.Ս.–1+138*	Թալին<Սասուն	1997	Մուշեղ Հովհաննիսյան	1908
6(6).	Վ.Ս.–2+171*	Երևան<Տարոն	1998	Ռեհան Մանուկյան	1910
7(7).	Վ.Ս.–3	Երևան<Մուշ	1981	Տոնական Տոնոյան	1893
8(8).	Ս.Բ.–38*/ Վ.Ս.–4	Երևան<Մուշ	1981	Ծողեր Տոնոյան	1901
9(9).	Վ.Ս.–5+138*	Երևան<Մուշ	1997	Սեդրակ Հարությունյան	1904
10(10).	Ս.Բ.–1*	Լոս Անջելես<Մուշ	1989	Սաթենիկ Պետրոսյան	1908
11(11).	Ս.Բ.–55*	Երևան<Մուշ	1989	Արշակ Ստեփանյան	1908
12(12).	Վ.Ս.–6+120*	Երևան<Մուշ	1996	Հրանտ Գասպարյան	1908
13(13).	Վ.Ս.–7+138*	Թալին<Մուշ	1997	Հրաչ Հովհաննիսյան	1915
14(14).	Ս.Բ.–31*	Աշնակ<Բիթլիս	1989	Խաչատուր Ղուկասյան	1898
15(15).	Վ.Ս.–8	Երևան<Բիթլիս	1990	Թագուհի Անտոնյան	1900
16(16).	Ձեռ.–29–30	Երևան<Բիթլիս	1980	Սոկրատ Մկրտչյան	1901
17(17).	Ս.Բ.–6*	Երևան<Բիթլիս	1989	Հմայակ Բոյաջյան	1902
18(18).	Վ.Ս.–9+193*	Երևան<Բիթլիս	1998	Աղավնի Մկրտչյան	1909
19(19).	Վ.Ս.–10+207*	Երևան<Բիթլիս	1998	Սրբուհի Մուրադյան	1911
20(20).	Վ.Ս.–11+207*	Երևան<Բիթլիս	1998	Նվարդ Մուրադյան	1912
21(21).	Ս.Բ.–58* – քրդերեն	Երևան<Սղերդ	1989	Հակոբ Մուրադյան	1903
22(22).	Վ.Ս.–12+131*	Երևան<Շատախ	1997	Անդրեաս Գյուլանյան	1905
23(23).	Վ.Ս.–13+131*	Արարատ<Շատախ	1997	Հայրիկ Մուրադյան	1905
24(24).	Վ.Ս.–14+131*	Երևան<Շատախ	1997	Էդուարդ Դաշտոյան	1907
25(25).	Ձեռ.–9	Երևան<Շատախ	1970	Սահակ Բազյան	1913
26(26).	Ս.Բ.–59*	Երևան<Վան	1989	Թովիկ Բաղդասարյան	1901
27(27).	Ս.Բ.–33*	Երևան<Վան	1989	Մանվել Մարության	1901
28(28).	Վ.Ս.–15+119*	Երևան<Վան	1997	Աղասի Քանքանյան	1904
29(29).	Ս.Բ.–46*	Երևան<Վան	1989	Սմբատ Դավթյան	1905
30(30).	Վ.Ս.–16+119*	Երևան<Վան	1997	Սիրակ Մանասյան	1905
31(31).	Վ.Ս.–17+143*	Երևան<Վան	1997	Վարսիկ Աբրահամյան	1905
32(32).	Ս.Բ.–48*	Երևան<Վան	1989	Սիրանուշ Թութունջյան	1906
33(33).	Վ.Ս.–18+193*	Երևան<Վան	1998	Պատրիկ Սարոյան	1906
34(34).	Վ.Ս.–19+207*	Երևան<Վան	1998	Մաքրուհի Սահակյան	1907
35(35).	Ս.Բ.–55*	Երևան<Վան	1989	Արծրուն Հարությունյան	1907
36(36).	Վ.Ս.–20+143*	Երևան<Վան	1997	Երվանդ Շիրակյան	1907
37(37).	Ս.Բ.–51*-52*/ Վ.Ս.–21	Երևան<Վան	1989	Ղազար Գևորգյան	1907
38(38).	Վ.Ս.–22+132*	Երևան<Վան	1997	Նշան Աբրահամյան	1908
39(39).	Ս.Բ.–41*-42*	Երևան<Վան	1989	Ազնիվ Ասլանյան	1908
40(40).	Վ.Ս.–23+204*	Երևան<Վան	1989	Քաջբերուհի Շահինյան	1908
41(41).	Վ.Ս.–24+132*	Երևան<Վան	1997	Սիլվա Բյուզանդյան	1908
42(42).	Ս.Բ.–39*	Երևան<Վան	1989	Սարգիս Բադալյան	1909

[1] Ժողովածուի նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի արխիվում.
Վ.Ս. – Վերժինե Սվազլյանի ֆոնդ
Ս.Բ. – ՀՀ ԳԱԱ Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի ֆոնդ
Վ.Ք. – Վահե Քիթապճյանի ֆոնդ
Ձեռ. – Ձեռագիր հուշերի ֆոնդ
* – Ցեսագրված հուշի արխիվային համարը
** – Նոտագրված երգի արխիվային համարը

[2] Նյութի գրառման վայրը նշված է ըստ քաղաքի, իսկ Երևանի շրջակայքը՝ ըստ Մեծ եղեռնից վերապրողների բնակված արվարձանների:

43(43).	Վ.Ս.–25+119*	Երևան<Վան	1997	Վարազդատ Հարությունյան	1909
44(44).	Վ.Ս.–26+140*	Երևան<Վան	1997	Արծվիկ Թերզյան	1910
45(45).	Ձեռ.–25	Երևան<Վան	1970	Լուսիկ Բալասանյան	1910
46(46).	Վ.Ս.–27+204*	Երևան<Վան	1999	Վարդգես Ալեքսանյան	1911
47(47).	Վ.Ք.–1	Լիոն<Վան	1994	Աղավնի Բարսեղյան	1911
48(48).	Վ.Ս.–28	Երևան<Վան	2000	Ծողիկ Մկրտչյան	1911
49(49).	Վ.Ս.–29+183*	Երևան<Վան	1998	Վարդուհի Փոթիկյան	1912
50(50).	Վ.Ս.–30+130*	Երևան<Վան	1997	Դերենիկ Սարոյան	1912
51(51).	Վ.Ս.–31+140*	Երևան<Վան	1997	Արմիկ Թերզյան	1912
52(52).	Ս.Բ.–39* – քրդերեն	Լուսավան<Մոկք	1988	Ղուկաս Կարապետյան	1901
53(53).	Վ.Ս.–32	Երևան<Բայազետ	1974	Կամսար Խաչատրյան	1898
54(54).	Վ.Ս.–33+143*	Երևան<Իգդիր	1997	Էվելինա Կանայան	1909
55(55).	Վ.Ս.–34+207*	Երևան<Իգդիր	1998	Ծաղիկ Չինիմյան	1910
56(56).	Վ.Ս.–35	Երևան<Իգդիր	2000	Հրանտ Խոնդկարյան	1911
57(57).	Վ.Ս.–36+216*	Երևան<Ալաշկերտ	1998	Անդրանիկ Սիմոնյան	1902
58(58).	Վ.Ս.–37+193*	Երևան<Ալաշկերտ	1998	Պարույր Խաչատրյան	1908
59(59).	Վ.Ս.–38+204*	Երևան<Ալաշկերտ	1998	Լուսիկ Մարտիրոսյան	1909
60(60).	Ս.Բ.–169*	Երևան<Ալաշկերտ	1989	Միհրան Բաղդասարյան	1909
61(61).	Վ.Ս.–39+193*	Երևան<Ալաշկերտ	1998	Նվարդ Գևորգյան	1910
62(62).	Վ.Ս.–40+193*	Երևան<Ալաշկերտ	1998	Վարդուշ Կիրակոսյան	1911
63(63).	Վ.Ս.–41+143*	Երևան<Ալաշկերտ	1997	Գուրգեն Մուրադյան	1914
64(64).	Վ.Ս.–42+130*	Երևան<Կարս	1997	Նատալիա Բարսեղյան	1889
65(65).	Վ.Ս.–43+140*	Երևան<Կարս	1997	Անմման Առաքելյան	1903
66(66).	Վ.Ս.–44+216*	Երևան<Կարս	1998	Փեփրոնե Թումասյան	1910
67(67).	Վ.Ս.–45	Երևան<Կարս	1990	Սիրանուշ Պետրոսյան	1910
68(68).	Վ.Ս.–46+216*	Երևան<Կարս	1998	Արմենուհի Եղիկյան	1910
69(69).	Վ.Ս.–47	Երևան<Կարս	1998	Փառանձեմ Տեր-Հակոբյան	1912
70(70)	Վ.Ս.–48	Երևան<Կարս	2000	Խանումա Ջալիլ	1912
71(71).	Վ.Ս.–49+140*	Երևան<Կարս	1997	Աղասի Կարոյան	1913
72(72).	Վ.Ս.–50+130*	Երևան<Կարս	1997	Էմմա Ասատրյան	1914
73(73).	Վ.Ս.–51+182*	Երևան<Արդվին	1998	Ստեփան Հովակիմյան	1910
74(74).	Վ.Ս.–52+182*	Երևան<Արդվին	1998	Նեկտար Գասպարյան	1910
75(75).	Վ.Ս.–53+138*	Երևան<Բաբերդ	1997	Արշալույս Տեր-Նազարեթյան	1905
76(76).	Վ.Ս.–54+182*	Երևան<Բաբերդ	1998	Մասիս Կոջոյան	1910
77(77).	Վ.Ս.–55	Էջմիածին<Ծ.Գարահիսար	1978	Մկրտիչ Խաչատրյան	1907
78(78).	Վ.Ս.–56	Սարի Թաղ<Ծ.Գարահիսար	1978	Հակոբ Թերզյան	1910
79(79).	Վ.Ս.–57	Նոր Ջեյթուն<Սեբաստիա	1970	Համբարձում Սահակյան	1898
80(80).	Վ.Ս.–58/ Ս.Բ.–25*	Նոր Սեբաստիա<Սեբաստիա	1982/89	Սուրեն Սարգսյան	1902
81(81).	Վ.Ս.–59	Նոր Սեբաստիա<Սեբաստիա	1978	Սաթենիկ Դողրամաջյան	1903
82(82).	Ձեռ.–32 –գերմաներեն	Ռադեբյուլ<Սեբաստիա	1978	Անդրանիկ Գավուքջյան	1905
83(83).	Ս.Բ.–25*/ Վ.Ս.–60+138*	Երևան<Սեբաստիա	1989/97	Հովհաննես Զադրջյան	1908
84(84).	Վ.Ս.–61	Նոր Արեշ<Սեբաստիա	1988	Մելինե Խանզադյան	1908
85(85).	Վ.Ս.–62+143*	Նոր Արեշ<Սեբաստիա	1997	Հայկուշ Օհանյան	1908
86(86).	Վ.Ս.–63	Նյու Ցորք<Սեբաստիա	1979	Արաքսի Օնբաշյան	1909
87(87).	Ս.Բ.–54*	Երևան<Դևրիկ	1989	Խորեն Գյուլբենկյան	1900
88(88).	Ձեռ.–16	Երևան<Գյուրին	1989	Մանվել Սահակյան	1901
89(89).	Ձեռ.–31	Երևան<Էրզրում	1975	Հարություն Գրիգորյան	1898
90(90).	Ձեռ.–33	Երևան<Էրզրում	1970	Լորիս Պապիկյան	1903
91(91).	Վ.Ս.–64	Կ.Պոլիս<Էրզրում	1996	Օվսաննա Նալբանդյան	1905
92(92).	Վ.Ս.–65	Վարդաշեն<Էրզրում	1983	Մարիամ Տեր-Մկրտչյան	1908
93(93).	Վ.Ս.–66+169*	Երևան<Էրզրում	1998	Իշխան Հայկազյան	1909
94(94).	Վ.Ս.–67	Հրազդան<Խնուս	1980	Սիրանուշ Նասոյան	1900
95(95).	Ս.Բ.–53*	Երևան<Երզնկա	1989	Գառնիկ Ստեփանյան	1909
96(96).	Վ.Ս.–68	Դիլիջան<Դերջան	1975	Առաքել Թագոյան	1902
97(97).	Ս.Բ.–47*	Երևան<Կամախ	1989	Տիգրան Օհանյան	1902
98(98).	Վ.Ս.–69	Նոր Ջեյթուն<Թոխաթ	1972	Աննիկ Մարիկյան	1892
99(99).	Ձեռ.–23	Նոր Արաբկիր<Արաբկիր	1970	Հովհաննես Գինոսյան	1902
100(100).	Վ.Ս.–70+118*	Նոր Արաբկիր<Արաբկիր	1996	Հայկազ Թորիկյան	1902
101(101).	Վ.Ս.–71+118*	Նոր Արաբկիր<Արաբկիր	1996	Սարգիս Ամալյան	1904
102(102).	Ձեռ.–16	Նոր Արաբկիր<Արաբկիր	1970	Ղազար Գյումիշգերդանյան	1905
103(103).	Վ.Ս.–72	Նոր Արաբկիր<Արաբկիր	1977	Պետրոս Կիկիշյան	1906
104(104).	Վ.Ս.–73	Նոր Արաբկիր<Արաբկիր	1977	Սրբուհի Կիկիշյան	1909
105(105).	Վ.Ս.–74+132*	Նոր Արաբկիր<Արաբկիր	1997	Արփեն Աղաջանյան	1909

106(106).	Վ.Ռ.–2	Լիոն<Արաբկիր	1996	Մուշեղ Դեմիրճյան	1910
107(107).	Վ.Ս.–75	Սարի Թաղ<Խարբերդ	1971	Հայկազ Աճեմյան	1892
108(108).	Ս.Բ.–21*	Նուբարաշեն<Խարբերդ	1989	Եղսա Խալաջանյան	1900
109(109).	Ս.Բ.–53*	Նուբարաշեն<Խարբերդ	1988	Հակոբ Հոլոբիկյան	1902
110(110).	Ս.Բ.–189*/ Վ.Ս.–76+120*	Երևան<Խարբերդ	1996	Սարգիս Խաչատրյան	1903
111(111).	Ս.Բ.–6*	Բեյրութ<Խարբերդ	1989	Սարգիս Մարտիրոսյան	1903
112(112).	Վ.Ս.–77	Նոր Մարաշ<Խարբերդ	1985	Թրվանդա Մուրադյան	1905
113(113).	Վ.Ս.–78+135*	Նոր Խարբերդ<Խարբերդ	1997	Ստեփան Ստեփանյան	1907
114(114).	Վ.Ս.–79+135*	Նոր Խարբերդ<Խարբերդ	1997	Փայլուն Տերտերյան	1907
115(115).	Վ.Ս.–80	Երևան<Խարբերդ	1987	Արամ Գյոսեյան	1908
116(116).	Վ.Ս.–81	Սարի Թաղ<Խարբերդ	1978	Եղսա Անտոնյան	1910
117(117).	Ս.Բ.–57*	Երևան<Խարբերդ	1989	Մարգարիտ Նաջարյան	1910
118(118).	Վ.Ս.–82	Նոր Արեշ<Խարբերդ	1986	Ռոբեր Գալընյան	1912
119(119).	Վ.Ս.–83	Նոր Խարբերդ<Ղրի	1985	Գարեգին Թուրուջիկյան	1903
120(120).	Վ.Ս.–84+130*	Նոր Սեբաստիա<Բալու	1997	Հազարխան Թորոսյան	1902
121(121).	Վ.Ռ.–3	Լիոն<Բալու	1987	Կարապետ Ֆարաջյան	1906
122(122).	Վ.Ս.–85	Փարիզ<Բալու	1999	Սարգիս Սարոյան	1911
123(123).	Վ.Ս.–86	Նոր Մալաթիա<Մալաթիա	1980	Արշալույս Թաշճյան	1908
124(124).	Վ.Ս.–87+204*	Անդրանիկավան<Մալաթիա	1998	Մարի Վարդանյան	1905
125(125).	Վ.Ս.–88+204*	Անդրանիկավան<Մալաթիա	1998	Վերգինե Նաջարյան	1910
126(126).	Վ.Ս.–89	Նոր Մալաթիա<Մալաթիա	1980	Գրիգոր Էքիզյան	1921
127(127).	Վ.Ս.–90	Լոս Անջելես<Տիգրանակերտ	1979	Հովհաննես Գյոոօղլյան	1904
128(128).	Վ.Ս.–91	Շենգավիթ<Տիգրանակերտ	1990	Կարապետ Մկրտչյան	1910
129(129).	Վ.Ս.–92 – քրդերեն	Կ.Պոլիս<Մերդին	1996	Եվա Թոփալյան	1909
130(130).	Վ.Ս.–93 – քրդերեն	Կ.Պոլիս<Մերդին	1996	Մարիամ Ախոյան	1909
131(131).	Վ.Ս.–94	Սարի Թաղ<Ադիյաման	1973	Մարիամ Քարաջյան	1903
132(132).	Ջեռ.–28	Նոր Արաբկիր<Եդեսիա	1980	Խաչեր Աբլապուտյան	1893
133(133).	Վ.Ս.–95	Նոր Արաբկիր<Եդեսիա	1987	Խորեն Աբլապուտյան	1893
134(134).	Վ.Ս.–96+120*	Նոր Արաբկիր<Եդեսիա	1987/96	Նվարդ Աբլապուտյան	1903
135(135).	Վ.Ս.–97	Այգեստան<Եդեսիա	1987	Հայկանուշ Տեր-Պետրոսյան	1910
136(136).	Վ.Ս.–98	Կ.Պոլիս<Եվդոկիա	1996	Նվարդ Շիրինյան	1909
137(137).	Վ.Ս.–99+135*	Նոր Զեյթուն<Զեյթուն	1997	Գյուրջի Քեշիշյան	1900
138(138).	Վ.Ս.–100+118*	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983/96	Հովսեփ Բշտիկյան	1903
139(139).	Վ.Ս.–101	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Կարապետ Թոզլյան	1903
140(140).	Վ.Ս.–102	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Եվա Չուլյան	1903
141(141).	Վ.Ս.–103	Նոր Զեյթուն<Զեյթուն	1978	Սեդրակ Գայբակյան	1903
142(142).	Վ.Ս.–104	Արմավիր<Զեյթուն	1981	Սամվել Արջիկյան	1907
143(143).	Վ.Ս.–105	Նոր Զեյթուն<Զեյթուն	1978	Գայանե Ատուրյան	1909
144(144).	Վ.Ս.–106	Նոր Արաբկիր<Ճընդղջաց	1985	Հարություն Ալբոյաջյան	1904
145(145).	Վ.Ս.–107	Սարի Թաղ<Հաճըն	1983	Ահարոն Մանկրյան	1903
146(146).	Վ.Ս.–108	Սարի Թաղ<Հաճըն	1981	Երվանդ Քարամյան	1903
147(147).	Վ.Ս.–109+194*	Նուբարաշեն<Հաճըն	1999	Եբրուհի Ջրտըխյան	1906
148(148).	Վ.Ս.–110	Շենգավիթ<Մարաշ	1974	Վերգինե Մալիկյան	1898
149(149).	Վ.Ս.–111	Նոր Զեյթուն<Մարաշ	1974	Մաքրուհի Հալաջյան	1900
150(150).	Վ.Ս.–112+135*	Նոր Զեյթուն<Մարաշ	1997	Լևոն Էվրենգեջյան	1908
151(151).	Վ.Ս.–113	Նոր Զեյթուն<Մարաշ	1989	Արամ Մոմջյան	1909
152(152).	Վ.Ս.–114+143*	Վարդաշեն<Այնթապ	1997	Գևորգ Կարամանուկյան	1900
153(153).	Վ.Ս.–115	Նոր Արաբկիր<Այնթապ	1980	Հակոբ Ջրջյան	1900
154(154).	Վ.Ս.–116	Նոր Զեյթուն<Այնթապ	1987	Նուրիցա Քյուրքջյան	1903
155(155).	Վ.Ս.–117+95*	Նոր Կիլիկիա<Այնթապ	1987	Կարապետ Կարամանուկյան	1907
156(156).	Վ.Ս.–118	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1989	Մովսես Փանոսյան	1885
157(157).	Վ.Ս.–119	Էջմիածին<Մուսա լեռ	1958	Մովսես Բալաբանյան	1891
158(158).	Վ.Ս.–120	Գյումրի<Մուսա լեռ	1988	Հովհաննես Իփրեջյան	1896
159(159).	Վ.Ս.–121+98*	Նոր Սեբաստիա<Մուսա լեռ	1995	Տոնիկ Տոնիկյան	1898
160(160).	Վ.Ս.–122+118*	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1996	Ասատուր Սուպուկյան	1901
161(161).	Վ.Ս.–123+132*	Նոր Սեբաստիա<Մուսա լեռ	1997	Պետրոս Սաֆարյան	1901
162(162).	Վ.Ս.–124	Վարդաշեն<Մուսա լեռ	1979	Իսկուհի Կոշկարյան	1902
163(163).	Վ.Ս.–125	Նոր Կիլիկիա<Մուսա լեռ	1976	Գրիգոր Գյոզալյան	1903
164(164).	Վ.Ս.–126	Հրազդան<Մուսա լեռ	1981	Բենիամին Բիսլամյան	1903
165(165).	Վ.Ս.–127+203*	Այնճար<Մուսա լեռ	1997	Թովմաս Հաբեշյան	1903
166(166).	Վ.Ս.–128	Փարիզ<Մուսա լեռ	1999	Դավիթ Դավիթյան	1905
167(167).	Վ.Ս.–129	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1975	Սարգիս Ադամյան	1906
168(168).	Վ.Ս.–130	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Մարիամ Բաղդիշյան	1909

169(169).	Վ.Ս.–131	Նոր Կիլիկիա<Մուսա լեռ	1979	Գևորգ Չիֆթչյան	1909
170(170).	Վ.Ս.–132	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1985	Գարուն Անտոնյան	1910
171(171).	Վ.Ս.–133+194*	Նոր Նորք<Մուսա լեռ	1998	Ասատուր Մախուլյան	1911
172(172).	Վ.Ս.–134	Նոր Մալաթիա<Քեսաբ	1973	Հովհաննես Աբելյան	1903
173(173).	Վ.Ս.–135+194*	Նոր Մալաթիա<Քեսաբ	1998	Գյուլինիա Մուսոյան	1903
174(174).	Վ.Ս.–136	Էջմիածին<Քեսաբ	1977	Հովհաննես Բոյնմշակյան	1904
175(175).	Վ.Ս.–137	Արարատյան գ.<Բեյլան	1975	Մարտիրոս Գյոզալյան	1898
176(176).	Վ.Ս.–138	Էջմիածին<Բեյլան	1977	Սիրվարդ Գյոզալյան	1906
177(177).	Վ.Ս.–139	Էջմիածին<Բեյլան	1981	Հակոբ Փաշայան	1907
178(178).	Վ.Ս.–140	Էջմիածին<Դյորտյոլ	1980	Հարություն Վարդանյան	1887
179(179).	Վ.Ս.–141	Նոր Մարաշ<Դյորտյոլ	1989	Մարի Խալբուրջյան	1909
180(180).	Վ.Ս.–142	Էջմիածին<Դյորտյոլ	1980	Գևորգ Տեր-Սահակյան	1909
181(181).	Վ.Ս.–143	Նոր Մալաթիա<Ադանա	1985	Սրբուհի Մակարյան	1903
182(182).	Վ.Ս.–144	Նոր Արաբկիր<Ադանա	1975	Միքայել Քեշիշյան	1904
183(183).	Վ.Ս.–145	Նոր Մալաթիա<Ադանա	1986	Արուսյակ Նեֆերյան	1906
184(184).	Վ.Ս.–146	Կ.Պոլիս<Ադանա	1996	Վրեժ Էդյուրյան	1909
185(185).	Ս.Բ.–43*	Երևան<Ադանա	1989	Արուսյակ Վանեսյան	1909
186(186).	Վ.Ս.–147	Նոր Կիլիկիա<Տարսոն	1979	Պետրոս Քեշիշյան	1909
187(187).	Վ.Ս.–148	Նոր Կիլիկիա<Տարսոն	1979	Ղազարոս Խրիմյան	1911
188(188).	Վ.Ս.–149	Նոր Կիլիկիա<Մերսին	1980	Սողոմոն Եթենիկյան	1900
189(189).	Վ.Ս.–150	Շենգավիթ<Կոնիա	1970	Կարապետ Եղյայան	1898
190(190).	Վ.Ս.–151	Հրազդան<Կոնիա	1984	Սաթենիկ Գույումջյան	1902
191(191).	Վ.Ս.–152+216*	Նոր Արաբկիր<Կոնիա	1999	Ներսես Գալբակյան	1902
192(192).	Վ.Ս.–153	Նոր Արաբկիր<Կեսարիա	1988	Պայծառ Երկաթ	1887
193(193).	Վ.Ս.–154	Նոր Մալաթիա<Կեսարիա	1972	Հարություն Ծուլիկյան	1896
194(194).	Վ.Ս.–155 – թուրքերեն	Նոր Մալաթիա<Կեսարիա	1965	Աննա Նաջարյան	1900
195(195).	Վ.Ս.–156	Նոր Արեշ<Կեսարիա	1986	Արսեն Սվաճյան	1901
196(196).	Վ.Ռ.–4	Լիոն<Էվերեկ	1986	Կարապետ Քելեկյան	1904
197(197).	Վ.Ս.–157	Նոր Կիլիկիա<Ա.Գարաճիսար	1990	Արփինե Բարթիկյան	1903
198(198).	Վ.Ս.–158+118*	Նոր Արաբկիր<Ա.Գարաճիսար	1996	Սարգիս Եթարյան	1907
199(199).	Վ.Ս.–159+121*	Վարդաշեն<Ա.Գարաճիսար	1997	Ասատուր Մենեջյան	1907
200(200).	Վ.Ս.–160	Այգեստան<Ա.Գարաճիսար	1989	Սմբյուլ Բերբերյան	1909
201(201).	Վ.Ս.–161	Նոր Արեշ<Ա.Գարաճիսար	1979	Գեղամ Խաչատրյան	1909
202(202).	Վ.Ս.–162	Նոր Բութանիա<Էսքիշեհիր	1979	Հովհաննես Պարոնյան	1890
203(203).	Վ.Ս.–163	Նոր Բութանիա<Էսքիշեհիր	1980	Եղիսաբեթ Գավգավյան	1900
204(204).	Վ.Ս.–164	Նոր Բութանիա<Էսքիշեհիր	1980	Սամվել Փաթըրյան	1900
205(205).	Ջեռ.–19	Երևան<Էսքիշեհիր	1970	Հովհաննես Գասպարյան	1902
206(206).	Վ.Ս.–165	Նոր Բութանիա<Էսքիշեհիր	1988	Սառա Բերբերյան	1905
207(207).	Վ.Ս.–166	Նոր Բութանիա<Էսքիշեհիր	1988	Ֆարնըմ Բուրսալյան	1908
208(208).	Վ.Ս.–167	Նոր Բութանիա<Էսքիշեհիր	1977	Հայկանուշ Զեշմեջյան	1909
209(209).	Ս.Բ.–25*	Երևան<Էսքիշեհիր	1989	– Սինանյան	1912
210(210).	Վ.Ս.–168	Նոր Արաբկիր<Զմյուռնիա	1973	Մարի Ոսկերչյան	1913
211(211).	Վ.Ռ.–5	Լիոն<Ցոզղատ	1978	Հովհաննես Վարժապետյան	1901
212(212).	Վ.Ս.–169	Նոր Մարաշ<Ցոզղատ	1978	Արշակուհի Պետրոսյան	1903
213(213).	Ս.Բ.–17*-20*	Երևան<Ցոզղատ	1989	Բարունակ Փափազյան	1906
214(214).	Ս.Բ.–12*-14*/ Վ.Ս.–170+121*	Երևան<Ցոզղատ	1989/96	Վերոնիկա Բերբերյան	1907
215(215).	Վ.Ս.–171	Կ.Պոլիս<Ցոզղատ	1996	Անուշ Թոփալյան	1910
216(216).	Վ.Ս.–172	Կ.Պոլիս<Ցոզղատ	1996	Հերմինե Տերտերյան	1912
217(217).	Վ.Ս.–173	Կ.Պոլիս<Ստենոզ	1996	Իսկուհի Հեթումյան	1915
218(218).	Վ.Ս.–174	Շենգավիթ<Ամասիա	1977	Ըննա Ճեմպերճյան	1898
219(219).	Վ.Ս.–175+169*	Երևան<Սամսուն	1998	Մեսրոպ Մինասյան	1910
220(220).	Վ.Ս.–176+132*	Նոր Արեշ<Ադաբազար	1997	Արտավազդ Կտրաճյան	1901
221(221).	Վ.Ս.–177+143*	Նոր Արեշ<Ադաբազար	1998	Աշոտ Օհանյան	1905
222(222).	Վ.Ս.–178+130*	Երևան<Ադաբազար	1997	Վազգեն Սադաթյան	1907
223(223).	Վ.Ս.–179	Երևան<Ադաբազար	1988	Հայկուհի Ազարյան	1908
224(224).	Վ.Ս.–180	Նոր Բութանիա<Ադաբազար	1979	Սիրվարդ Անդրեասյան	1908
225(225).	Վ.Ս.–181	Սարի Թաղ<Ադաբազար	1984	Լուսիկ Բոդուրյան	1909
226(226).	Վ.Ս.–182	Նոր Զեյթուն<Ադաբազար	1979	Մարի Երկաթ	1910
227(227).	Վ.Ս.–183	Կ.Պոլիս<Ադաբազար	1997	Սիրենա Ալաճաճյան	1910
228(228).	Վ.Ս.–184+207*	Սարի Թաղ<Նիկոմեդիա	1998	Մուշեղ Հակոբյան	1890
229(229).	Վ.Ս.–185	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1979	Բարուհի Զորեքյան	1900
230(230).	Վ.Ս.–186	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1982	Բարուհի Սիլյան	1900

231(231).	Վ.Ս.–187+121*	Նոր Արեշ<Նիկոմեդիա	1997	Գեղեցիկ Եսայան	1901
232(232).	Վ.Ս.–188	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1979	Եվգինկե Փափազյան	1908
233(233).	Վ.Ս.–189	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1979	Հակոբ Թերզյան	1910
234(234).	Վ.Ս.–190	Այգեստան<Բուրսա	1972	Անժել Սրապյան	1905
235(235).	Վ.Ս.–191+135*	Երևան<Բուրսա	1997	Դավիթ Դավթյան	1908
236(236).	Վ.Ս.–192+135*	Երևան<Բուրսա	1997	Ավետիս Նորիկյան	1909
237(237).	Վ.Ս.–193	Սարի Թաղ<Բիլեջիկ	1977	Մելինե Թերզյան	1905
238(238).	Վ.Ս.–194	Կ.Պոլիս<Հաստեմունի	1996	Հայկուհի Բողչաջյան	1910
239(239).	Վ.Ս.–195	Շենգավիթ<Չանաքկալե	1980	Գևորգ Ջուլալյան	1907
240(240).	Ս.Բ.–94	Նյու Յորք<Կ.Պոլիս	1989	Դոլորես Ջոհրապ–Լիպման	1892

II.

ՊԱՏՄԱԿԱՆ ՋՐՈՒՅՑՆԵՐ

1(241).	Վ.Ս.–196	Նոր Կիլիկիա<Մերսին	1984	Սողոմոն Եթենիկյան	1900
2(242).	Վ.Ս.–197	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Կարապետ Թոզլյան	1903
3(243).	Վ.Ս.–198	Այգեստան<Սիս	1980	Անահիտ Աջապահյան	1920
4(244).	Վ.Ս.–199	Նոր Մարաշ<Խարբերդ	1980	Թրվանդա Մուրադյան	1905
5(245).	Վ.Ս.–200	Արարատյան զ.<Բեյլան	1970	Մարտիրոս Գյոզալյան	1898
6(246).	Վ.Ս.–201	Արարատյան զ.<Բեյլան	1990	Գևորգ Գյոզալյան	1925
7(247).	Վ.Ս.–202	Արարատյան զ.<Բեյլան	1990	Գևորգ Գյոզալյան	1925
8(248).	Վ.Ս.–203	Արարատյան զ.<Բեյլան	1990	Գևորգ Գյոզալյան	1925
9(249).	Վ.Ս.–204	Երևան<Ծոզղատ	1997	Բարունակ Փափազյան	1906
10(250).	Վ.Ս.–205	Էջմիածին<Մուսա լեռ	1986	Արտաշես Բալաբանյան	1926
11(251).	Վ.Ս.–206	Նոր Խարբերդ<Քղի	1985	Գարեգին Թուրուջիկյան	1985
12(252).	Վ.Ս.–207	Արարատյան զ.<Հաճընը	1986	Նազենի Սաթամյան	1926
13(253).	Վ.Ս.–208	Նոր Զեյթուն<Այնթապ	1985	Նուրիցա Քյուրքչյան	1903
14(254).	Վ.Ս.–209	Նոր Կիլիկիա<Մուսա լեռ	1985	Գևորգ Չիֆթչյան	1909
15(255).	Վ.Ս.–210	Նոր Կիլիկիա<Մուսա լեռ	1985	Գևորգ Չիֆթչյան	1909
16(256).	Վ.Ս.–211	Նոր Արաբկիր<ՆորԱրաբկիր	1995	Գրիգոր Ամալյան	1945
17(257).	Վ.Ս.–212	Սան Ֆրանցիսկո<Ադանա	1979	Անգին Աշչյան	1910
18(258).	Վ.Ս.–213	Նոր Զեյթուն<Մարաշ	1980	Մայրանուշ Վարդյան	1900
19(259).	Վ.Ս.–214	Նոր Արաբկիր<Ա.Գարաճիսար	1996	Սարգիս Եթարյան	1907
20(260).	Վ.Ս.–215	Հրազդան<Կոնիա	1980	Սաթենիկ Գույումջյան	1902
21(261).	Վ.Ս.–216	Նոր Զեյթուն<Բալու	1983	Կիրակոս Դանիելյան	1923
22(262).	Վ.Ս.–217	Նոր Զեյթուն<Այնթապ	1987	Գևորգ Հեքիմյան	1937
23(263).	Վ.Ս.–218	Փարիզ<Կեսարիա	1999	Վահե-Մամաս Քիթապճյան	1924
24(264).–50(290).	Վ.Ս.–219 – 245	Թուրքիա	1996/1997	Վերապրողների սերունդներ	—

III.

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1. ՋՈՐԱՀԱՎԱՔԻ, ՁԻՆԱՀԱՎԱՔԻ ԵՎ ԲԱՆՏԱՐԿՑԱԼԻ ԵՐԳԵՐ

1(291).	Վ.Ս.–246	Նոր Արաբկիր<Արաբկիր	1989	Սրբուհի Կիկիշյան	1909
2(292).	Վ.Ս.–247	Սարի Թաղ<Ադաբազար	1988	Անիցա Թոքաթլյան	1908
3(293).	Վ.Ս.–248	Նոր Զեյթուն<Ադաբազար	1990	Մարի Երկաթ	1910
4(294).	Վ.Ս.–249	Սարի Թաղ<Ադաբազար	1989	Լուսիկ Բոդուրյան	1909
5(295).	Վ.Ս.–250	Նոր Զեյթուն<Թոքաթ	1970	Անգին Մարիկյան	1892
6(296).	Վ.Ս.–251	Նոր Մարաշ<Բալու	1980	Հազարխան Թորոսյան	1902
7(297).	Վ.Ս.–252	Նոր Արեշ<Ադաբազար	1989	Մանգին Կիրակոսյան	1929
8(298).	Վ.Ս.–253	Նոր Մարաշ<Բալու	1980	Հազարխան Թորոսյան	1902
9(299).	Վ.Ս.–254	Արարատյան զ.<Հաճընը	1986	Երվանդ Ալբարյան	1923
10(300).	Վ.Ս.–255	Նոր Զեյթուն<Խարբերդ	1972	Հարություն Մարտիկյան	1899
11(301).	Վ.Ս.–256	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Սողոմե Փաշայան	1903
12(302).	Վ.Ս.–257	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Մարիամ Բաղդիշյան	1909
13(303).	Վ.Ս.–258	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Մարիամ Բաղդիշյան	1909
14(304).	Վ.Ս.–259	Նոր Մալաթիա<Ադանա	1986	Արուսյակ Նեֆերյան	1906
15(305).	Վ.Ս.–260	Նոր Մալաթիա<Ադանա	1986	Արուսյակ Նեֆերյան	1906
16(306).	Վ.Ս.–261	Նոր Արաբկիր<Ադանա	1988	Անգին Հաճյան	1910
17(307).	Վ.Ս.–262	Նոր Հաճընը<Հաճընը	1976	Նազարեթ Բալբուջակյան	1906
18(308).	Վ.Ս.–263	Նոր Մալաթիա<Ադանա	1983	Սրբուհի Մակարյան	1903
19(309).	Վ.Ս.–264	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Եվա Չուլյան	1903

20(310).	Վ.Ս.–265	Այգեստան<Այնթապ	1983	Մարիճե Նիդելյան	1925
21(311).	Վ.Ս.–266	Այգեստան<Բեյլան	1987	Հակոբ Փաշայան	1907
22(312).	Վ.Ս.–267	Այգեստան<Եդեսիա	1987	Հայկանուշ Տեր-Պետրոսյան	1910
23(313).	Վ.Ս.–268	Այգեստան<Զեյթուն	1986	Հայկ Սյուլաճյան	1907
24(314).	Վ.Ս.–269	Նոր Զեյթուն<Մարաշ	1986	Զաքել Վարդյան	1902
25(315).	Վ.Ս.–270	Շենգավիթ<Բիթլիս	1986	Ռեբեկա Մելքոնյան	1924
26(316).	Վ.Ս.–271	Նոր Զեյթուն<Զեյթուն	1986	Կարապետ Թոզլյան	1903
27(317).	Վ.Ս.–272	Նոր Զեյթուն<Զեյթուն	1986	Կարապետ Թոզլյան	1903
28(318).	Վ.Ս.–273	Նոր Զեյթուն<Զեյթուն	1986	Կարապետ Թոզլյան	1903
29(319).	Վ.Ս.–274	Նոր Զեյթուն<Զեյթուն	1986	Կարապետ Թոզլյան	1903
30(320).	Վ.Ս.–275	Նոր Զեյթուն<Զեյթուն	1986	Կարապետ Թոզլյան	1903
31(321).	Վ.Ս.–276	Նոր Զեյթուն<Զեյթուն	1986	Կարապետ Թոզլյան	1903
32(322).	Վ.Ս.–277	Նոր Զեյթուն<Զեյթուն	1986	Կարապետ Թոզլյան	1903
33(323).	Վ.Ս.–278	Նոր Արեշ<Ադաբազար	1989	Մանգին Կիրակոսյան	1929
34(324).	Վ.Ս.–279	Նոր Արեշ<Հասան Բեյ	1972	Նուրիցա Հարմանդալյան	1900
35(325).	Վ.Ս.–280	Նոր Արաբկիր<Արաբկիր	1963	Արմենիկ Չաքմաքչյան	1898
36(326).	Վ.Ս.–281	Նոր Զեյթուն<Զեյթուն	1980	Կարապետ Թոզլյան	1903
37(327).	Վ.Ս.–282	Նոր Կիլիկիա<Մերսին	1980	Սողոմոն Եթենիկյան	1900
38(328).	Վ.Ս.–283	Նոր Զեյթուն<Այնթապ	1982	Գևորգ Հեքիմյան	1937
39(329).	Վ.Ս.–284	Նոր Արաբկիր<Կեսարիա	1989	Պալծառ Երկաթ	1887
40(330).	Վ.Ս.–285	Նոր Արաբկիր<Բուրսա	1997	Մարիամ Ղասաբյան	1921
41(331).	Վ.Ս.–286	Նոր Զեյթուն<Ադաբազար	1989	Մարի Երկաթ	1910
42(332).	Վ.Ս.–287	Նոր Մարաշ<Բալու	1989	Կիրակոս Դանիելյան	1923
43(333).	Վ.Ս.–288	Նոր Զեյթուն<Այնթապ	1989	Գևորգ Հեքիմյան	1937
44(334).	Վ.Ս.–289	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1989	Մարիամ Բաղդիշյան	1909
45(335).	Վ.Ս.–290	Նոր Բութանիա<Էսքիշեհիր	1986	Սամվել Փաթրյան	1900

2. ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾԻ ԵՐԳԵՐ

1(336).	Վ.Ս.–291	Նոր Արաբկիր<Կոնիա	1998	Ներսես Գալբակյան	1902
2(337).	Վ.Ս.–292	Երևան<Խարբերդ	1996	Սարգիս Խաչատրյան	1903
3(338).	Վ.Ս.–293	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Մարիամ Բաղդիշյան	1909
4(339).	Վ.Ս.–294	Նոր Զեյթուն<Այնթապ	1987	Գևորգ Հեքիմյան	1937
5(340).	Վ.Ս.–295	Արմավիր<Մուսա լեռ	1976	Կարապետ Ախոյան	1895
6(341).	Վ.Ս.–296	Երևան<Ադանա	1960	Օվսաննա Լուսինյան	1891
7(342).	Վ.Ս.–297**	Նոր Զեյթուն<Զեյթուն	1980	Կարապետ Թոզլյան	1903
8(343).	Վ.Ս.–298	Թալին<Մուշ	1979	Շողեր Տոնոյան	1901
9(344).	Վ.Ս.–299	Սարի Թաղ<Վան	1997	Վարսենիկ Աբրահամյան	1905
10(345).	Վ.Ս.–300	Անդրանիկավան<Մալաթիա	1998	Մարի Վարդանյան	1905
11(346).	Վ.Ս.–301	Սարի Թաղ<Վան	1997	Վարսենիկ Աբրահամյան	1905
12(347).	Վ.Ս.–302	Հրազդան<Կոնիա	1980	Սաթենիկ Գույումջյան	1902
13(348).	Վ.Ս.–303	Նոր Արաբկիր<Արաբկիր	1963	Արմենիկ Չաքմաքչյան	1898
14(349).	Վ.Ս.–304	Լոս Անջելես<Տիգրանակերտ	1989	Ռսկի Դաղուր	1909
15(350).	Վ.Ս.–305	Նոր Զեյթուն<Խարբերդ	1988	Մայրենի Սարուխանյան	1908
16(351).	Վ.Ս.–306	Նոր Բութանիա<Էսքիշեհիր	1987	Հայկան Չեշմեջյան	1909
17(352).	Վ.Ս.–307	Նոր Զեյթուն<Մարաշ	1989	Թագուհի Հալապյան	1912
18(353).	Վ.Ս.–308	Նոր Արաբկիր<Ադաբազար	1973	Լուիզ Պոումյան	1900
19(354).	Վ.Ս.–309**	Կ.Պոլիս<Թոմարզա	1997	Մարիամ Միրզայան	1927
20(355).	Վ.Ս.–310**	Կ.Պոլիս<Թոմարզա	1997	Մարիամ Միրզայան	1927
21(356).	Վ.Ս.–311	Կ.Պոլիս<Թոմարզա	1997	Մարիամ Միրզայան	1927
22(357).	Վ.Ս.–312**	Կ.Պոլիս<Թոմարզա	1997	Մարիամ Միրզայան	1927
23(358).	Վ.Ս.–313	Նոր Խարբերդ<Խարբերդ	1996	Փայլուն Տերտերյան	1907
24(359).	Վ.Ս.–314	Նոր Արաբկիր<Արաբկիր	1996	Արփեն Աղաջանյան	1909
25(360).	Վ.Ս.–315	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1977	Պողոս Սուպկուկյան	1887
26(361).	Վ.Ս.–316	Նոր Արաբկիր<Եդեսիա	1975	Խաչեր Աբլապուտյան	1893
27(362).	Վ.Ս.–317**	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Մարիամ Բաղդիշյան	1909
28(363).	Վ.Ս.–318	Նոր Խարբերդ<Խարբերդ	1997	Փայլուն Տերտերյան	1907
29(364).	Վ.Ս.–319	Նոր Արաբկիր<Արաբկիր	1972	Լուիզ Վարժապետյան	1900
30(365).	Վ.Ս.–320**	Վարդաշեն<Էրզրում	1983	Մարիամ Տեր-Մկրտչյան	1909
31(366).	Վ.Ս.–321	Նոր Մալաթիա<Կեսարիա	1983	Հայկուհի Միկյան	1912
32(367).	Վ.Ս.–322	Վարդաշեն<Մուսա լեռ	1956	Եղիսաբեթ Քալաշյան	1888
33(368).	Վ.Ս.–323	Էջմիածին<Մուսա լեռ	1987	Սառա Դերմիշյան	1896
34(369).	Վ.Ս.–324	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1987	Մարիամ Բաղդիշյան	1909
35(370).	Վ.Ս.–325	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1987	Սողոմե Փաշայան	1903

36(371).	Վ.Ս.–326	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1987	Գարուն Անտոնյան	1910
37(372).	Վ.Ս.–327	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Կարապետ Թոզլյան	1903
38(373).	Վ.Ս.–328	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Եվա Չուլյան	1903
39(374).	Վ.Ս.–329	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Գայանե Ատուրյան	1909
40(375).	Վ.Ս.–330	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Սիրանուշ Գալաջյան	1910
41(376).	Վ.Ս.–331	Նոր Զեյթուն<Մարաշ	1983	Մայրանուշ Վարդյան	1900
42(377).	Վ.Ս.–332	Նոր Զեյթուն<Մարաշ	1983	Մաքրուհի Հայաջյան	1900
43(378).	Վ.Ս.–333	Նոր Զեյթուն<Մարաշ	1983	Զաբել Վարդյան	1902
44(379).	Վ.Ս.–334	Նոր Զեյթուն<Մարաշ	1983	Մարի Ժամկոչյան	1904
45(380).	Վ.Ս.–335	Նոր Զեյթուն<Մարաշ	1986	Նվարդ Դանիելյան	1912
46(381).	Վ.Ս.–336**	Վարդաշեն<Մուսա լեռ	1956	Եղիսաբեթ Քալաշյան	1888
47(382).	Վ.Ս.–337	Նոր Արաբկիր<Հաճընճ	1976	Սարգիս Ցաուհիյան	1898
48(383).	Վ.Ս.–338	Նոր Հաճընճ<Հաճընճ	1976	Սրբուհի Բալբուջակյան	1905
49(384).	Վ.Ս.–339	Արարատյան գ.<Հաճընճ	1976	Նազենի Սաթամյան	1926
50(385).	Վ.Ս.–340	Էջմիածին<Քեսաբ	1985	Նազենի Աբրահամյան	1900
51(386).	Վ.Ս.–341	Էջմիածին<Քեսաբ	1985	Տիրուհի Դեդեյան	1903
52(387).	Վ.Ս.–342	Էջմիածին<Քեսաբ	1985	Վարսիկ Այանյան	1907
53(388).	Վ.Ս.–343	Էջմիածին<Քեսաբ	1985	Վարսիկ Գազազյան	1910
54(389).	Վ.Ս.–344	Էջմիածին<Քեսաբ	1985	Գյուլինիա Մուսոյան	1912
55(390).	Վ.Ս.–345	Էջմիածին<Բեյլան	1986	Սիրվարդ Գյոզալյան	1906
56(391).	Վ.Ս.–346	Էջմիածին<Բեյլան	1986	Լուսածին Գալենքերյան	1927
57(392).	Վ.Ս.–347	Արարատյան գ.<Բեյլան	1986	Քլարուհի Բահարյան	1929
58(393).	Վ.Ս.–348	Նոր Զեյթուն<Այնթապ	1986	Նուրիցա Գյուրքջյան	1903
59(394).	Վ.Ս.–349**	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Մարիամ Բաղդիշյան	1909
60(395).	Վ.Ս.–350	Նոր Կիլիկիա<Այնթապ	1978	Կարապետ Կարամանուկյան	1907
61(396).	Վ.Ս.–351	Այգեստան<Այնթապ	1980	Մարիննե Նիդելյան	1925
62(397).	Վ.Ս.–352	Նոր Արեշ<Հասան Բեյ	1960	Նուրիցա Հարմանդյան	1900
63(398).	Վ.Ս.–353	Նոր Արեշ<Դյորտյոլ	1982	Մարիամ Բոյաջյան	1909
64(399).	Վ.Ս.–354	Նոր Մարաշ<Դյորտյոլ	1982	Մարիամ Խալբուրջյան	1909
65(400).	Վ.Ս.–355	Նոր Մարաշ<Եդեսիա	1985	Սրբուհի Մուրադյան	1896
66(401).	Վ.Ս.–356	Նոր Արաբկիր<Եդեսիա	1985	Նվարդ Աբլապուտյան	1903
67(402).	Վ.Ս.–357	Նոր Արաբկիր<Եդեսիա	1985	Հայկանուշ Տեր-Պետրոսյան	1910
68(403).	Վ.Ս.–358	Նոր Արաբկիր<Սամսուն	1997	Մեսրոպ Մինասյան	1910
69(404).	Վ.Ս.–359	Նոր Արաբկիր<Տարսոն	1985	Ղազարոս Խրիմյան	1911
70(405).	Վ.Ս.–360	Նոր Կիլիկիա<Տարսոն	1986	Ալիս Քեշիշյան	1920
71(406).	Վ.Ս.–361	Այգեստան<Սիս	1986	Անահիտ Աջապահյան	1920
72(407).	Վ.Ս.–362	Նոր Մալաթիա<Ադանա	1986	Վիկտորիա Սինանյան	1900
73(408).	Վ.Ս.–363	Նոր Մալաթիա<Ադանա	1986	Սրբուհի Մակարյան	1903
74(409).	Վ.Ս.–364	Նոր Մալաթիա<Ադանա	1986	Արուսյակ Նեֆերյան	1906
75(410).	Վ.Ս.–365	Նոր Մալաթիա<Ադանա	1987	Երանուհի Չափարյան	1912
76(411).	Վ.Ս.–366	Նոր Կիլիկիա<Մերսին	1987	Սողոմոն Եթենիկյան	1900
77(412).	Վ.Ս.–367	Նոր Կիլիկիա<Մերսին	1987	Արշալույս Բաղչինյան	1927
78(413).	Վ.Ս.–368	Նոր Խարբերդ<Խարբերդ	1985	Թագուհի Թուրուջիկյան	1905
79(414).	Վ.Ս.–369	Նոր Մարաշ<Խարբերդ	1985	Թրվանդա Մուրադյան	1905
80(415).	Վ.Ս.–370	Սարի Թաղ<Խարբերդ	1986	Եղսա Անտոնյան	1910
81(416).	Վ.Ս.–371	Նոր Մալաթիա<Մալաթիա	1986	Արշալույս Թաշճյան	1908
82(417).	Վ.Ս.–372	Նոր Մալաթիա<Կեսարիա	1986	Հայկուհի Միկյան	1912
83(418).	Վ.Ս.–373	Ծենգավիթ<Սեբաստիա	1958	Վերժին Տաղավարյան	1898
84(419).	Վ.Ս.–374	Նոր Արեշ<Սեբաստիա	1986	Մելինե Խանզադյան	1908
85(420).	Վ.Ս.–375	Նոր Արեշ<Օրդու	1986	Հասմիկ Հաճադյան	1908
86(421).	Վ.Ս.–376	Ծենգավիթ<Նիդե	1986	Թագուհի Տեր-Եղիշյան	1926
87(422).	Վ.Ս.–377	Հրազդան<Կոնիա	1986	Սաթենիկ Գույումջյան	1902
88(423).	Վ.Ս.–378	Նոր Արաբկիր<Սամսուն	1997	Մեսրոպ Մինասյան	1910
89(424).	Վ.Ս.–379	Այգեստան<Ա.Գարահիսար	1986	Սմբյուլ Բերբերյան	1909
90(425).	Վ.Ս.–380	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1986	Օվսաննա Աբիկյան	1893
91(426).	Վ.Ս.–381	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1986	Ազգանուշ Աբիկյան	1898
92(427).	Վ.Ս.–382	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1986	Բարուհի Սիլյան	1900
93(428).	Վ.Ս.–383	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1986	Օվսաննա Չորեքյան	1893
94(429).	Վ.Ս.–384	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1986	Բարուհի Չորեքյան	1902
95(430).	Վ.Ս.–385	Սարի Թաղ<Ադաբազար	1982	Լուսիկ Բոդուրյան	1909
96(431).	Վ.Ս.–386	Երևան<Ադաբազար	1982	Հայկուհի Ազարյան	1909
97(432).	Վ.Ս.–387	Նոր Արեշ<Ադաբազար	1982	Մաննիկ Կիրակոսյան	1929
98(433).	Վ.Ս.–388	Նոր Բութանիա<Բուրսա	1982	Ծաղիկ Քյոմիրջյան	1905

99(434).	Վ.Ս.–389	Նոր Բութանիա<Բուրսա	1982	Վաղվաղա Մուսուլյան	1910
100(435).	Վ.Ս.–390	Երևան<Բանդըրմա	1982	Բեաթրիս Վերանյան	1924
101(436).	Վ.Ս.–391	Ծենգավիթ<Կ.Պոլիս	1980	Շաքե Չուլալյան	1914
102(437).	Վ.Ս.–392	Նոր Զեյթուն<Զեյթուն	1980	Կարապետ Թոզլյան	1903
103(438).	Վ.Ս.–393	Նոր Զեյթուն<Զեյթուն	1980	Սիրանուշ Գալաջյան	1910
104(439).	Վ.Ս.–394	Նոր Արեշ<Ադանա	1986	Վիկտորիա Սինանյան	1900
105(440).	Վ.Ս.–395	Նոր Զեյթուն<Մարաշ	1986	Զաբել Վարդյան	1900
106(441).	Վ.Ս.–396	Նոր Արաբկիր<Արաբկիր	1986	Սրբուհի Կիկիշյան	1909
107(442).	Վ.Ս.–397	Նոր Արաբկիր<Այնթապ	1987	Արշալույս Ջրջյան	1905
108(443).	Վ.Ս.–398	Նոր Արաբկիր<Սամսուն	1997	Մեսրոպ Մինասյան	1910
109(444).	Վ.Ս.–399	Նոր Մարաշ<Բալու	1985	Կիրակոս Դանիելյան	1923
110(445).	Վ.Ս.–400	Նոր Արաբկիր<Տիգրանակերտ	1973	Վահան Շապշապյան	1889
111(446).	Վ.Ս.–401	Նոր Արաբկիր<Սամսուն	1997	Մեսրոպ Մինասյան	1910
112(447).	Վ.Ս.–402	Նոր Արաբկիր<Ֆընդըջագ	1987	Հարություն Ալբոյաջյան	1904
113(448).	Վ.Ս.–403	Նոր Զեյթուն<Մարաշ	1987	Մայրանուշ Վարդյան	1900
114(449).	Վ.Ս.–404	Նոր Մալաթիա<Քեսաբ	1987	Նազենի Աբրահամյան	1900
115(450).	Վ.Ս.–405	Նոր Արաբկիր<Եդեսիա	1987	Խորեն Աբլապուտյան	1893
116(451).	Վ.Ս.–406	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1987	Մարիամ Բաղդիշյան	1909
117(452).	Վ.Ս.–407	Նոր Կիլիկիա<Մերսին	1986	Սողոմոն Եթենիկյան	1900
118(453).	Վ.Ս.–408	Նոր Կիլիկիա<Ադանա	1986	Սարգիս Կիրակոսյան	1903
119(454).	Վ.Ս.–409	Նոր Մալաթիա<Կեսարիա	1986	Հայկուհի Միկյան	1912
120(455).	Վ.Ս.–410	Էջմիածին<Մուսա լեռ	1987	Սառա Դերմիշյան	1896
121(456).	Վ.Ս.–411	Ծենգավիթ<Մարաշ	1975	Վերգինե Մայիկյան	1898
122(457)	Վ.Ս.–412	Նոր Հաճընճ<Հաճընճ	1976	Խաչեր Դաքեսյան	1896
123(458).	Վ.Ս.–413	Նոր Մալաթիա<Ադանա	1986	Հովհաննես Թայմազյան	1886
124(459).	Վ.Ս.–414	Նոր Արաբկիր<Արաբկիր	1982	Սրբուհի Կիկիշյան	1909
125(460).	Վ.Ս.–415	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1987	Մարիամ Բաղդիշյան	1909
126(461).	Վ.Ս.–416	Նոր Արաբկիր<Կեսարիա	1987	Պայծառ Երկաթ	1887
127(462).	Վ.Ս.–417**	Կ.Պոլիս<Սամսուն	1997	Սիլվա Տալտապանյան	1930
128(463).	Վ.Ս.–418	Երևան<Արդվին	1997	Նենտար Գասպարյան	1910
129(464).	Վ.Ս.–419	Երևան<Կ.Պոլիս	1999	Զոհրապ Ղասաբյան	1919
130(465).	Վ.Ս.–420	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1982	Մանկիկ Հայրապետյան	1915
131(466).	Վ.Ս.–421	Այգեստան<Ա.Գարահիսար	1982	Սմբյուլ Բերբերյան	1909
132(467).	Վ.Ս.–422	Այգեստան<Ա.Գարահիսար	1982	Սմբյուլ Բերբերյան	1909
133(468).	Վ.Ս.–423	Նոր Զեյթուն<Ադաբազար	1982	Մարի Երկաթ	1910

3. ՈՐԴԵԿՈՐՈՒՅՍ ՄԱՅՐԵՐԻ, ՈՐԲԻ ԵՎ ՈՐԲԱՆՈՑԻ ԵՐԳԵՐ

1(469).	Վ.Ս.–424	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1982	Օվսաննա Աբիկյան	1893
2(470).	Վ.Ս.–425	Նոր Մալաթիա<Մալաթիա	1986	Արշալույս Թաշճյան	1908
3(471).	Վ.Ս.–426	Սարի Թաղ<Ադաբազար	1985	Անիցա Թոկատլյան	1908
4(472).	Վ.Ս.–427	Սարի Թաղ<Բուրսա	1985	Մարիամ Բանտիկյան	1922
5(473).	Վ.Ս.–428	Սարի Թաղ<Ադաբազար	1985	Անիցա Թոքատլյան	1908
6(474).	Վ.Ս.–429	Սարի Թաղ<Ադաբազար	1985	Անիցա Թոքատլյան	1908
7(475).	Վ.Ս.–430	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1986	Ազգանուշ Աբիկյան	1898
8(476).	Վ.Ս.–431	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1986	Բարուհի Սիլյան	1900
9(477).	Վ.Ս.–432	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1986	Բարուհի Չորեքյան	1902
10(478).	Վ.Ս.–433	Նոր Արեշ<Ադաբազար	1989	Մաննիկ Կիրակոսյան	1929
11(479).	Վ.Ս.–434	Այգեստան<Ա.Գարահիսար	1982	Սմբյուլ Բերբերյան	1909
12(480).	Վ.Ս.–435	Նոր Արեշ<Ռոդոսթո	1985	Հակոբ Գյուրջյան	1925
13(481).	Վ.Ս.–436	Աթենք<Կեսարիա	1984	Աննուկ Միկյան	1924
14(482).	Վ.Ս.–437	Նոր Արաբկիր<Արաբկիր	1982	Սրբուհի Կիկիշյան	1909
15(483).	Վ.Ս.–438	Նոր Մարաշ<Մարաշ	1984	Թագուհի Հալապյան	1922
16(484).	Վ.Ս.–439	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Մարիամ Բաղդիշյան	1909
17(485).	Վ.Ս.–440	Նոր Զեյթուն<Զեյթուն	1984	Եվա Չուլյան	1903
18(486).	Վ.Ս.–441	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Մարիամ Բաղդիշյան	1909
19(487).	Վ.Ս.–442	Աթենք<Ռոդոսթո	1984	Մարի Իզմիրլյան	1903
20(488).	Վ.Ս.–443	Նոր Արաբկիր<Սամսուն	1997	Մեսրոպ Մինասյան	1910
21(489).	Վ.Ս.–444	Աթենք<Կեսարիա	1984	Աննուկ Միկյան	1924
22(490).	Վ.Ս.–445	Ծենգավիթ<Սեբաստիա	1958	Վերժին Տաղավարյան	1898
23(491).	Վ.Ս.–446	Ծենգավիթ<Սեբաստիա	1958	Վերժին Տաղավարյան	1898
24(492).	Վ.Ս.–447	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Մարիամ Բաղդիշյան	1909

25(493).	Վ.Ս.–448	Աթենք<Ռոդոսթո	1984	Մարի Իզմիրլյան	1903
26(494).	Վ.Ս.–449	Աթենք<Կ.Պոլիս	1984	Ադրինե Ալաճաճյան	1923
27(495).	Վ.Ս.–450	Կ.Պոլիս<Սամսուն	1997	Սիլվա Տալտապանյան	1930
28(496).	Վ.Ս.–451	Աթենք<Կեսարիա	1984	Աննուկ Միկյան	1924
29(497).	Վ.Ս.–452	Աթենք<Կ.Պոլիս	1984	Ադրինե Ալաճաճյան	1923
30(498).	Վ.Ս.–453	Այգեստան<Բիլեջիկ	1986	Հրաչուհի Ջինանյան	1919
31(499).	Վ.Ս.–454	Սարի Թաղ<Բաբերդ	1997	Արշալույս Նազարեթյան	1905
32(500).	Վ.Ս.–455	Նոր Արաբկիր<Արաբկիր	1972	Նազարեթ Վարժապետյան	1892
33(501).	Վ.Ս.–456	Նոր Արաբկիր<Արաբկիր	1972	Նազարեթ Վարժապետյան	1892
34(502).	Վ.Ս.–457	Նոր Արաբկիր<Արաբկիր	1972	Լուիզ Վարժապետյան	1900
35(503).	Վ.Ս.–458	Աթենք<Կ.Պոլիս	1984	Ադրինե Ալաճաճյան	1923
36(504).	Վ.Ս.–459	Աթենք<Ռոդոսթո	1984	Նվարդ Գալֆայան	1896
37(505).	Վ.Ս.–460	Աթենք<Ռոդոսթո	1984	Հայկանուշ Գալֆայան	1898
38(506).	Վ.Ս.–461	Երևան<Բիլեջիկ	1979	Սիրվարդ Տեր-Մերկերյան	1909
39(507).	Վ.Ս.–462	Այգեստան<Սիս	1985	Աննահիտ Աջապահյան	1920
40(508).	Վ.Ս.–463	Նոր Կիլիկիա<Տարսոն	1986	Ալիս Քեշիշյան	1920
41(509).	Վ.Ս.–464	Հրազդան<Կոնիա	1986	Սաթենիկ Գույումջյան	1902
42(510).	Վ.Ս.–465	Այգեստան<Ա.Գարաճիսար	1986	Սմբյուլ Բերբերյան	1909
43(511).	Վ.Ս.–466	Այգեստան<Ա.Գարաճիսար	1986	Սմբյուլ Բերբերյան	1909
44(512).	Վ.Ս.–467	Այգեստան<Ա.Գարաճիսար	1986	Սմբյուլ Բերբերյան	1909
45(513).	Վ.Ս.–468	Նոր Բութանիա<Բուրսա	1985	Սառա Հաջի-Մինասյան	1908
46(514).	Վ.Ս.–469	Նոր Արաբկիր<Տարսոն	1985	Ղազարոս Խրիմյան	1911
47(515).	Վ.Ս.–470**	Թալին<Մուշ	1979	Ծողեր Տոնոյան	1901
48(516).	Վ.Ս.–471	Թալին<Մուշ	1979	Ծողեր Տոնոյան	1901
49(517).	Վ.Ս.–472**	Երևան<Բիթլիս	1998	Աղավնի Մկրտչյան	1909
50(518).	Վ.Ս.–473	Երևան<Բիթլիս	1998	Աղավնի Մկրտչյան	1909
51(519).	Վ.Ս.–474**	Երևան<Բիթլիս	1998	Աղավնի Մկրտչյան	1909
52(520).	Վ.Ս.–475	Նոր Կիլիկիա<Տարսոն	1985	Ալիս Քեշիշյան	1920
53(521).	Վ.Ս.–476	Նոր Բութանիա<Նիկոմեդիա	1985	Բարուհի Զորեքյան	1902
54(522).	Վ.Ս.–477**	Հրազդան<Կոնիա	1985	Սաթենիկ Գույումջյան	1902
55(523).	Վ.Ս.–478	Հրազդան<Կոնիա	1985	Սաթենիկ Գույումջյան	1902
56(524).	Վ.Ս.–479	Սարի Թաղ<Ադաբազար	1985	Լուսիկ Բոդուրյան	1909
57(525).	Վ.Ս.–480	Նոր Արեշ<Կեսարիա	1986	Արսեն Սվաճյան	1901
58(526).	Վ.Ս.–481	Նոր Արաբկիր<Ֆընդըջագ	1986	Հարություն Ալբոյաջյան	1904
59(527).	Վ.Ս.–482	Սարի Թաղ<Ադաբազար	1985	Անիցա Թոքատլյան	1908
60(528).	Վ.Ս.–483	Հրազդան<Կոնիա	1985	Սաթենիկ Գույումջյան	1902
61(529).	Վ.Ս.–484	Նոր Արաբկիր<Տարսոն	1985	Ղազարոս Խրիմյան	1911
62(530).	Վ.Ս.–485**	Նոր Զեյթուն<Մարաշ	1982	Արամ Մոմջյան	1909

4. ՀԱՑԵՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԵՐԳԵՐ ՈՒ ՎԻՊԵՐԳԵՐ

1(531).	Վ.Ս.–486	Երևան<Սասուն	1970	Եղիազար Կարապետյան	1886
2(532).	Վ.Ս.–487**	Երևան<Վան	1996	Աղասի Քանքանյան	1904
3(533).	Վ.Ս.–488	Երևան<Բիթլիս	1997	Աղավնի Մկրտչյան	1909
4(534).	Վ.Ս.–489	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Կարապետ Թոզլյան	1903
5(535).	Վ.Ս.–490	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Կարապետ Թոզլյան	1903
6(536).	Վ.Ս.–491	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1978	Պողոս Սուպկուկյան	1887
7(537).	Վ.Ս.–492	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1978	Պողոս Սուպկուկյան	1887
8(538).	Վ.Ս.–493	Արմավիր<Մուսա լեռ	1978	Կարապետ Ախոյան	1885
9(539).	Վ.Ս.–494	Նոր Կիլիկիա<Մուսա լեռ	1985	Գևորգ Չիֆթչյան	1909
10(540).	Վ.Ս.–495**	Արարատյան գ.<Մուսա լեռ	1984	Դշխուհի Դուդակյան	1934
11(541).	Վ.Ս.–496	Սարի Թաղ<Սեբաստիա	1979	Սենեքերիմ Կոզմանյան	1882
12(542).	Վ.Ս.–497	Նոր Արաբկիր<Եդեսիա	1984	Խորեն Արլապուտյան	1893
13(543).	Վ.Ս.–498	Սարի Թաղ<Հաճըն	1984	Ահարոն Մանկրյան	1903
14(544).	Վ.Ս.–499	Արարատյան գ.<Հաճըն	1986	Նազենի Սաթամյան	1926
15(545).	Վ.Ս.–500**	Նոր Զեյթուն<Այնթապ	1987	Գևորգ Հեքիմյան	1937
16(546).	Վ.Ս.–501**	Նոր Զեյթուն<Այնթապ	1987	Գևորգ Հեքիմյան	1937
17(547).	Վ.Ս.–502	Նոր Սեբաստիա<Հասան Բեյ	1980	Հովհաննես Թայմազյան	1886
18(548).	Վ.Ս.–503	Արարատյան գ.<Հաճըն	1986	Նազենի Սաթամյան	1926
19(549).	Վ.Ս.–504	Սարի Թաղ<Հաճըն	1983	Ահարոն Մանկրյան	1903
20(550).	Վ.Ս.–505	Արարատյան գ.<Հաճըն	1986	Նազենի Սաթամյան	1926
21(551).	Վ.Ս.–506	Արարատյան գ.<Հաճըն	1986	Նազենի Սաթամյան	1926

22(552).	Վ.Ս.–507**	Արարատյան գ.<Հաճըն	1986	Նազենի Սաթամյան	1926
23(553).	Վ.Ս.–508**	Արարատյան գ.<Հաճըն	1986	Նազենի Սաթամյան	1926
24(554).	Վ.Ս.–509	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Կարապետ Թոզլյան	1903
25(555).	Վ.Ս.–510	Նոր Արեշ<Ադաբազար	1989	Մաննիկ Կիրակոսյան	1929
26(556).	Վ.Ս.–511	Նոր Զեյթուն<Զեյթուն	1983	Կարապետ Թոզլյան	1903

5. ՀԱՑԵՐԵՆԱԲԱՂԺ ԵՐԳԵՐ

1(557).	Վ.Ս.–512	Թալին<Սասուն	1979	Ծողեր Տոնոյան	1901
2(558).	Վ.Ս.–513	Երևան<Վան	1979	Ծնորհիկ Քանքանյան	1912
3(559).	Վ.Ս.–514**	Արարատ<Ծատախ	1997	Հայրիկ Մուրադյան	1905
4(560).	Վ.Ս.–515	Երևան<Արդվին	1970	Վարդան Մազմանյան	1889
5(561).	Վ.Ս.–516	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1956	Հովհաննես Դուդակյան	1910
6(562).	Վ.Ս.–517	Նոր Զեյթուն<Զեյթուն	1990	Կարապետ Թոզլյան	1903
7(563).	Վ.Ս.–518	Նոր Մալաթիա<Քեսաբ	1986	Փանոս Քիթաբըզյան	1912
8(564).	Վ.Ս.–519	Ալեքսանդրիա<Կեսարիա	1946	Գառնիկ Սվազլյան	1904
9(565).	Վ.Ս.–520	Նոր Արեշ<Ադաբազար	1997	Արտավազդ Կտրաձյան	1901
10(566).	Վ.Ս.–521	Երևան<Կարս	1998	Փեփրոնե Թումասյան	1910
11(567).	Վ.Ս.–522	Այգեստան<Սիս	1979	Աննահիտ Աջապահյան	1920
12(568).	Վ.Ս.–523	Նոր Կիլիկիա<Մուսա լեռ	1986	Գևորգ Չիֆթչյան	1909
13(569).	Վ.Ս.–524	Վանաձոր<Քեսաբ	1987	Վարդան Կարագյոզյան	1916
14(570).	Վ.Ս.–525	Լոս Անջելես<Դյորտյոլ	1989	Հակոբ Տեր-Պողոսյան	1920
15(571).	Վ.Ս.–526	Շենգավիթ<Նիդե	1978	Թագուհի Տեր-Եղիշյան	1926
16(572).	Վ.Ս.–527	Արարատյան գ.<Հաճըն	1987	Երվանդ Ալբարյան	1923
17(573).	Վ.Ս.–528	Արարատյան գ.<Բեյլան	1985	Գևորգ Գյոզալյան	1925
18(574).	Վ.Ս.–529**	Ալեքսանդրիա<Կեսարիա	1946	Գառնիկ Սվազլյան	1904
19(575).	Վ.Ս.–530	Նոր Զեյթուն<Այնթապ	1985	Գևորգ Հեքիմյան	1937
20(576).	Վ.Ս.–531	Նոր Զեյթուն<Այնթապ	1990	Գևորգ Հեքիմյան	1937
21(577).	Վ.Ս.–532	Նոր Զեյթուն<Զեյթուն	1990	Կարապետ Թոզլյան	1903
22(578).	Վ.Ս.–533	Սարի Թաղ<Վան	1997	Վարսիկ Աբրահամյան	1905

6. ԵՐԳԵՐԻ ՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1(579).	Վ.Ս.–534	Վարդաշեն<Մուսա լեռ	1956	Եղիսաբեթ Քալաշյան	1888
2(580).	Վ.Ս.–535	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Մարիամ Բաղդիշյան	1909
3(581).	Վ.Ս.–536	Վարդաշեն<Էրզրում	1983	Մարիամ Տեր-Մկրտչյան	1908
4(582).	Վ.Ս.–537	Կ.Պոլիս<Թոմարզա	1997	Մարիամ Միրզայան	1927
5(583).	Վ.Ս.–538	Կ.Պոլիս<Թոմարզա	1997	Մարիամ Միրզայան	1927
6(584).	Վ.Ս.–539	Կ.Պոլիս<Թոմարզա	1997	Մարիամ Միրզայան	1927
7(585).	Վ.Ս.–540	Նոր Զեյթուն<Զեյթուն	1980	Կարապետ Թոզլյան	1903
8(586).	Վ.Ս.–541	Նոր Մալաթիա<Մուսա լեռ	1984	Մարիամ Բաղդիշյան	1909
9(587).	Վ.Ս.–542	Երևան<Վան	1996	Աղասի Քանքանյան	1904
10(588).	Վ.Ս.–543	Արարատ<Ծատախ	1997	Հայրիկ Մուրադյան	1905
11(589).	Վ.Ս.–544	Կ.Պոլիս<Սամսուն	1997	Սիլվա Տալտապանյան	1930
12(590).	Վ.Ս.–545	Արարատյան գ.<Մուսա լեռ	1984	Դժխուհի Դուդակյան	1934
13(591).	Վ.Ս.–546	Արարատյան գ.<Հաճըն	1986	Նազենի Սաթամյան	1926
14(592).	Վ.Ս.–547	Արարատյան գ.<Հաճըն	1986	Նազենի Սաթամյան	1926
15(593).	Վ.Ս.–548	Նոր Զեյթուն<Այնթապ	1987	Գևորգ Հեքիմյան	1937
16(594).	Վ.Ս.–549	Նոր Զեյթուն<Այնթապ	1987	Գևորգ Հեքիմյան	1937
17(595).	Վ.Ս.–550	Թալին<Մուշ	1979	Ծողեր Տոնոյան	1901
18(596).	Վ.Ս.–551	Հրազդան<Կոնիա	1985	Սաթենիկ Գույումջյան	1902
19(597).	Վ.Ս.–552	Երևան<Բիթլիս	1998	Աղավնի Մկրտչյան	1909
20(598).	Վ.Ս.–553	Երևան<Բիթլիս	1998	Աղավնի Մկրտչյան	1909
21(599).	Վ.Ս.–554	Նոր Զեյթուն<Մարաշ	1982	Արամ Մոմջյան	1909
22(600).	Վ.Ս.–555	Ալեքսանդրիա<Կեսարիա	1946	Գառնիկ Սվազլյան	1904

THE ARMENIAN GENOCIDE

TESTIMONIES OF THE EYE-WITNESS SURVIVORS

VERJINÉ SVAZLIAN

(Summary)

During the past years, interest toward the fatal events of the Armenian Genocide has grown, especially when Turkish historiographers obstinately tried to distort the true historical facts. In this respect, the popular songs and memoirs created under the immediate impression of the said events are, besides the official published documents, of an exceptional historico-cognitive value; in spite of their importance, however, they had almost not been recorded and studied until recently.

As a result of the Genocide of the Armenians in 1915, the deportation from Cilicia (1921) and the disaster of Izmir (1922), more than 1.5 million Western Armenians were exterminated, while those who were rescued and miraculously survived, remained homeless and deprived of their motherland; they were compelled to migrate and to settle in different countries of the world, creating the Armenian Diaspora as a historical reality.

After long wanderings, many of the eye-witness survivors of these tragic events have been repatriated to the Motherland from Constantinople, the Balkan countries, Greece, France, Syria, Lebanon, Iraq, Egypt and settled in newly-built localities symbolizing their former native cradles.

The present collection includes oral memoirs and folk songs of historical character (in Armenian and Turkish languages), which we have inscribed since 1956 in Armenia and partly in the Diaspora; they have been narrated and sung by Armenian repatriates, representatives of the senior generation of eye-witnesses, miraculously saved from the Genocide and deported from 70 localities of Western Armenia, Cilicia and Anatolia.

These factual documents truthfully depict the mobilization, the arm-collection, the mass exile, massacre and slaughter organized by the government of Young Turks, as well as the heroic self-defensive battles of Van, Sassoun, Moush, Shatakh, Shapin-Garahissar, Moussa Dagh, Urfa and later (1920-1921), of Ayntap and Hadjn.

Although the Turkish autocracy cruelly suppressed the heroic resistance started in various localities, nevertheless, the fearless Armenian heroes, who fought for their elementary human rights and for the physical survival of their nation, recorded brilliant pages in the history of the national-liberation struggle of the Armenian people.

In the process of recording the materials, we have tried to be faithful to the oral speech of our 550 narrators and to the specific dialect of their language. Some interpretations are given by special footnotes.

Besides the memoirs and songs, the collection includes also a historico-scientific introduction, where, along with the historical events, we have analysed the recorded oral folk materials (600 units), the original texts and notes of which are kept as a special fund (Verjiné Svazlian Fund) in the archives of the Museum-Institute of the Armenian Genocide of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

The collection is provided with a glossary of foreign words and dialects, footnotes, historical map, songs accompanied by musical notes, information about the narrators and their photographs.

The present oral testimonies, which have been inscribed (written down, audio- and video-recorded) word by word, fragment by fragment in the course of 45 years, are, by reason of their originality and historical value, unique factological and documental evidences reflecting, in a simple folk language, the tragic events of the Armenian Genocide.

LE GENOCIDE DES ARMENIENS

TEMOIGNAGE DES SURVIVANTS

VERJINÉ SVAZLIAN

(Résumé)

Ces dernières années le problème du Génocide des Arméniens devient de plus en plus actuel, car l'historiographie turque altère obstinément les faits historiques dignes de foi. Dans cette optique, outre les documents officiels publiés, une grande valeur historique et factologique s'attache aux chants folkloriques et commémoratifs, composés sous l'impression immédiate des événements mentionnés, qui n'ont jamais encore été enregistrés ni étudiés.

Après le Génocide de 1915, la désertation de la Cilicie par les Arméniens (1921) et la catastrophe de Smyrne (1922), lorsqu'on compte plus de 1.5 millions de victimes parmi les Arméniens d'Arménie Occidentale, de Cilicie et d'Anatolie, ceux qui échappent par miracle au massacre, restés sans abri et sans patrie, sont contraints à se disperser à travers le monde en créant la Diaspora Arménienne en tant que phénomène historique.

Après de longues errances, ayant trouvé asile à Constantinople, en Grèce, en France, en Syrie, au Liban, en Iraq, en Egypte, dans les pays Balkaniques et ailleurs, nombre de ces Arméniens se rapatrient ensuite en Arménie Soviétique et s'installent dans les localités nouvellement construites qui portent le nom de leur pays d'origine.

Le présent recueil inclut les récits commémoratifs oraux et les chants folkloriques de caractère historique de 70 localités (en arménien et en turc), composés par les Arméniens déportés d'Arménie Occidentale, d'Arménie Cilicienne et des provinces peuplées d'Arméniens d'Anatolie, représentants de la génération aînée des rapatriés, témoins oculaires sauvés par miracle du Génocide, que nous avons enregistrés à partir de 1956 en Arménie et partiellement dans la Diaspora.

Ces documents factologiques sont des témoignages authentiques des recrutements de soldats, des rassemblements militaires, des déportations en masse et des massacres organisés par les gouvernments des Jeunes Turcs, ainsi que des héroïques batailles d'autodéfense livrées en ces jours tragiques par les Arméniens de Van, Sassoun, Mouch, Chatakh, Chapin-Garahissar, Moussa Dagh, Ourfa et d'autres lieux, de même que plus tard (1920-1921) par ceux d'Ayntap et de Hadjen.

Bien que ces mouvements de libération nationale aient été écrasés par l'autocratie turque, les courageux héros ayant combattu pour les droits élémentaires de l'homme et l'existence physique de la nation ont brillé d'un éclat sans pareil dans l'histoire de la lutte de libération nationale du peuple arménien.

En enregistrant ces sujets, nous avons tâché de rester fidèle au langage oral de nos 550 narrateurs et à ses particularités linguistiques et dialectales; les renseignements indispensables sont donnés en annotations.

Outre les sujets ethnographiques, le recueil inclut une introduction scientifique où, parallèlement aux événements historiques, les sujets folkloriques oraux (600 unités) enregistrés sont analysés. Les originaux et leurs enregistrements sont conservés aux Archives du Musée-Institut du Génocide des Arméniens de l'Académie Nationale des Sciences d'Arménie, fonds Verjiné Svazlian.

Le recueil est muni d'un glossaire de mots dialectaux et étrangers, de commentaires, une carte historique, de notations des chants, de renseignements sur les témoins oculaires sauvés par miracle du Génocide et de leurs photographies.

Les mémoires enregistrés (par écrit, ainsi que sur cassettes audio et vidéo) au cours de 45 années, mot par mot, phrase par phrase, et présentés dans ce recueil sont d'une originalité et d'une valeur historique telles qu'ils en deviennent des témoignages factologiques et documentaires dignes de foi, exprimant en simple langage populaire les événements du Génocide des Arméniens.

ГЕНОЦИД АРМЯН

СВИДЕТЕЛЬСТВА ОЧЕВИДЦЕВ

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

(Резюме)

С годами более актуальной становится проблема Геноцида Армян, тем более что турецкие историографы пытаются исказить достоверные исторические события. В этом смысле, кроме опубликованных официальных материалов, важный историко-фактологический интерес представляют также создававшиеся под непосредственным впечатлением названных событий народные воспоминания и песни исторического характера, которые до сих пор по разным причинам не были записаны и исследованы.

После Геноцида армян 1915 года, депортации из Киликии (1921 г.) и бедствия Измира (1922 г.), более чем 1.5 миллионов западных армян было уничтожено, а чудом спасшиеся, оставшиеся без дома и Родины, расселились в различных странах мира, создав Армянскую Диаспору как историческое явление.

После долгих странствий и скитаний многие из очевидцев-свидетелей этих трагических событий периодически репатриировали на Родину – в Армению из Константинополя, Греции, Франции, Сирии, Ливана, Ирака, Египта, балканских и других стран и поселились во вновь отстроенных местностьях, которые символизировали их некогда былую колыбель.

Настоящий Сборник включает устные народные воспоминания и песни исторического характера (армянские и туркоязычные), изложенные свидетелями-очевидцами из 70 местностей Западной Армении, Киликии и Анатолии. Эти народоведческие материалы, которые мы стали записывать начиная с 1956 года в Армении и частично – в Диаспоре, устно передали нам чудом спасшиеся от Геноцида представители старшего поколения репатриантов.

Эти народоведческие и фактологические материалы правдиво отображают организованные младотурками воинские призывы и военные сборы, массовые высылки и бойни армян, а также вспыхнувшие в те трагические дни героические самооборонительные сражения Вана, Сасуна, Муша, Шатаха, Шапин-Гараисара, Муса Дага, Урфы, позднее (1920-1921 гг.) – Айнтапа и Аджна.

Хотя и освободительные движения были подавлены турецким правительством, самоотверженные герои, которые боролись за свои элементарные человеческие права и физическое существование нации, оставили блестящий след в истории армянской национально-освободительной борьбы.

В процессе записи материалов мы старались быть верны устной речи наших 550 сказителей, их языковым и диалектологическим особенностям; необходимые сведеня даны отдельными примечаниями.

Помимо воспоминаний очевидцев, Сборник включает научное введение, где параллельно с историческими событиями исследованы записанные устные народные материалы (600 единиц), оригиналы и записи которых хранятся в Фонде Вержине Свазлян архива Музей-Института Геноцида армян НАН Республики Армения.

Кроме воспоминаний очевидцев, и песен исторического характера Сборник имеет словарь диалектологических и иноязычных слов, историческую карту, нотирования песен, сведения об информаторах и их фотографии.

В течение 45 лет слово за словом, фрагмент за фрагментом записанные (на бумаге, а также – на аудио- и видео кассетах) и представленные данным томом устные народоведческие материалы своей самобытностью и историко-познавательной ценностью становятся достоверными, фактологическими, документальными свидетельствами, простым народным языком отображающими события Геноцида армян.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ – 11
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ – 13
ՊԱՏՄԱԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ – 19

I. ՀԱՑՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՀՈՒՇԵՐ

1 (1). Եղիազար Կարապետյանի պատմածը (ծնվ. 1886 թ., Սասուն) – 42
2 (2). Խաչիկ Խաչատրյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Սասուն) – 52
3 (3). Հակոբ Գրիգորյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Սասուն) – 54
4 (4). Առաքել Դավթյանի պատմածը (ծնվ. 1904 թ., Սասուն) – 54
5 (5). Մուշեղ Հովհաննիսյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Սասուն) – 55
6 (6). Ռեհան Մանուկյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Տարոն) – 57
7 (7). Տոնական Տոնոյանի պատմածը (ծնվ. 1893 թ., Մուշ) – 58
8 (8). Ծողեր Տոնոյանի պատմածը (ծնվ. 1901 թ., Մուշ) – 60
9 (9). Սեդրակ Հարությունյանի պատմածը (ծնվ. 1904 թ., Մուշ) – 63
10 (10). Սաթենիկ Պետրոսյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Մուշ) – 64
11 (11). Արշակ Ստեփանյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Մուշ) – 66
12 (12). Հրանտ Գասպարյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Մուշ) – 69
13 (13). Հրաչ Հովհաննիսյանի պատմածը (ծնվ. 1915 թ., Մուշ) – 71
14 (14). Խաչատուր Ղուկասյանի պատմածը (ծնվ. 1898 թ., Բիթլիս) – 72
15 (15). Թագուհի Անտոնյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Բիթլիս) – 72
16 (16). Սոկրատ Մկրտչյանի պատմածը (ծնվ. 1901 թ., Բիթլիս) – 73
17 (17). Հմայակ Բոյաջյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Բիթլիս) – 76
18 (18). Աղավնի Մկրտչյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Բիթլիս) – 79
19 (19). Սրբուհի Մուրադյանի պատմածը (ծնվ. 1911 թ., Բիթլիս) – 80
20 (20). Նվարդ Մուրադյանի պատմածը (ծնվ. 1912 թ., Բիթլիս) – 81
21 (21). Հակոբ Մուրադյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Սղերդ) – 82
22 (22). Անդրեաս Գյուլանյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Շատախ) – 83
23 (23). Հայրիկ Մուրադյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Շատախ) – 87
24 (24). Էդուարդ Դաշտոյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Շատախ) – 89
25 (25). Սահակ Բազյանի պատմածը (ծնվ. 1913 թ., Շատախ) – 90
26 (26). Թովիկ Բաղդասարյանի պատմածը (ծնվ. 1901 թ., Վան) – 92
27 (27). Մանվել Մարությանի պատմածը (ծնվ. 1901 թ., Վան) – 94
28 (28). Աղասի Քանքանյանի պատմածը (ծնվ. 1904 թ., Վան) – 98
29 (29). Սմբատ Դավթյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Վան) – 99
30 (30). Սիրակ Մանասյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Վան) – 101
31 (31). Վարսիկ Աբրահամյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Վան) – 103
32 (32). Սիրանուշ Թութունջյանի պատմածը (ծնվ. 1906 թ., Վան) – 104
33 (33). Պատրիկ Սարոյանի պատմածը (ծնվ. 1906 թ., Վան) – 106
34 (34). Մաքրուհի Սահակյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Վան) – 108
35 (35). Արծրուն Հարությունյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Վան) – 109
36 (36). Երվանդ Շիրակյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Վան) – 110
37 (37). Ղազար Գևորգյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Վան) – 111
38 (38). Նշան Աբրահամյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Վան) – 116
39 (39). Ազնիվ Ասլանյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Վան) – 119
40 (40). Քաջբերուհի Շահինյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Վան) – 121
41 (41). Սիլվա Բյուզանդյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Վան) – 121

42 (42). Սարգիս Բադալյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Վան) – – – – – – 122
43 (43). Վարազդատ Հարությունյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Վան) – – – – – – 123
44 (44). Արծվիկ Թերզյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Վան) – – – – – – 125
45 (45). Լուսիկ Բալասանյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Վան) – – – – – – 125
46 (46). Վարդգես Ալեքսանյանի պատմածը (ծնվ. 1911 թ., Վան) – – – – – – 126
47 (47). Աղավնի Բարսեղյանի պատմածը (ծնվ. 1911 թ., Վան) – – – – – – 126
48 (48). Ծողիկ Մկրտչյանի պատմածը (ծնվ. 1911 թ., Վան) – – – – – – 127
49 (49). Վարդուհի Փոթիկյանի պատմածը (ծնվ. 1912 թ., Վան) – – – – – – 128
50 (50). Դերենիկ Սարոյանի պատմածը (ծնվ. 1912 թ., Վան) – – – – – – 129
51 (51). Արմիկ Թերզյանի պատմածը (ծնվ. 1912 թ., Վան) – – – – – – 129
52 (52). Ղուկաս Կարապետյանի պատմածը (ծնվ. 1901 թ., Մոկք) – – – – – – 130
53 (53). Կամսար Խաչատրյանի պատմածը (ծնվ. 1898 թ., Բայազետ) – – – – – – 131
54 (54). Էվելինա Կանայանի պատմածը (ծնվ. 1909 թ., Իգդիր) – – – – – – 136
55 (55). Ծաղիկ Չիլինմյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Իգդիր) – – – – – – 137
56 (56). Հրանտ Խոնդկարյանի պատմածը (ծնվ. 1911 թ., Իգդիր) – – – – – – 137
57 (57). Անդրանիկ Սիմոնյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Ալաշկերտ) – – – – – – 138
58 (58). Պարույր Խաչատրյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Ալաշկերտ) – – – – – – 140
59 (59). Լուսիկ Մարտիրոսյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Ալաշկերտ) – – – – – – 141
60 (60). Միհրան Բաղդասարյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Ալաշկերտ) – – – – – – 141
61 (61). Նվարդ Գևորգյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Ալաշկերտ) – – – – – – 143
62 (62). Վարդուշ Կիրակոսյանի պատմածը (ծնվ. 1911 թ., Ալաշկերտ) – – – – – – 143
63 (63). Գուրգեն Մուրադյանի պատմածը (ծնվ. 1914 թ., Ալաշկերտ) – – – – – – 144
64 (64). Նատալիա Բարսեղյանի պատմածը (ծնվ. 1889 թ., Կարս) – – – – – – 145
65 (65). Աննա Առաքելյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Կարս) – – – – – – 145
66 (66). Փեփրոնե Թումասյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Կարս) – – – – – – 146
67 (67). Սիրանուշ Պետրոսյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Կարս) – – – – – – 147
68 (68). Արմենուհի Եղիկյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Կարս) – – – – – – 148
69 (69). Փառանձեմ Տեր-Հակոբյանի պատմածը (ծնվ. 1912 թ., Կարս) – – – – – – 148
70 (70). Խանումա Ջալիլի պատմածը (ծնվ. 1912 թ., Կարս) – – – – – – 150
71 (71). Աղասի Կարոյանի պատմածը (ծնվ. 1913 թ., Կարս) – – – – – – 151
72 (72). Էմմա Ասատրյանի պատմածը (ծնվ. 1914 թ., Կարս) – – – – – – 153
73 (73). Ստեփան Հովակիմյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Արդվին) – – – – – – 154
74 (74). Նեկտար Գասպարյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Արդվին) – – – – – – 155
75 (75). Արշալույս Տեր-Նազարեթյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Բաբերդ) – – – – – – 157
76 (76). Մասիս Կոջոյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Բաբերդ) – – – – – – 158
77 (77). Մկրտիչ Խաչատրյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Շապին-Գարահիսար) – – – – – – 160
78 (78). Հակոբ Թերզյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Շապին-Գարահիսար) – – – – – – 161
79 (79). Համբարձում Սահակյանի պատմածը (ծնվ. 1898 թ., Սեբաստիա) – – – – – – 161
80 (80). Սուրեն Սարգսյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Սեբաստիա) – – – – – – 163
81 (81). Սաթենիկ Դողրամաջյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Սեբաստիա) – – – – – – 174
82 (82). Անդրանիկ Գավուքջյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Սեբաստիա) – – – – – – 178
83 (83). Հովհաննես Զադրջյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Սեբաստիա) – – – – – – 179
84 (84). Մելինե Խանզադյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Սեբաստիա) – – – – – – 180
85 (85). Հայկանուշ Օհանյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Սեբաստիա) – – – – – – 180
86 (86). Արաքսի Օնբաշյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Սեբաստիա) – – – – – – 180
87 (87). Խորեն Գյուլբենկյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Դևրիկ) – – – – – – 182
88 (88). Մանվել Սահակյանի պատմածը (ծնվ. 1901 թ., Գյուրին) – – – – – – 186
89 (89). Հարությունը Գրիգորյանի պատմածը (ծնվ. 1898 թ., Էրզրում) – – – – – – 186
90 (90). Լորիս Պապիկյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Էրզրում) – – – – – – 191
91 (91). Օվսաննա Նալբանդյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Էրզրում) – – – – – – 198
92 (92). Մարիամ Տեր-Մկրտչյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Էրզրում) – – – – – – 198
93 (93). Իշխան Հայկազյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Էրզրում) – – – – – – 199
94 (94). Սիրանուշ Նասոյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Խնուս) – – – – – – 199
95 (95). Գառնիկ Ստեփանյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Երզնկա) – – – – – – 200
96 (96). Առաքել Թագոյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Դերջան) – – – – – – 202
97 (97). Տիգրան Օհանյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Կամախ) – – – – – – 206
98 (98). Աննիկ Մարիկյանի պատմածը (ծնվ. 1892 թ., Թոխաթ) – – – – – – 207
99 (99). Հովհաննես Գինոսյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Արաբկիր) – – – – – – 208
100 (100). Հայկազ Թորիկյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Արաբկիր) – – – – – – 209
101 (101). Սարգիս Ամալյանի պատմածը (ծնվ. 1904 թ., Արաբկիր) – – – – – – 210
102 (102). Ղազար Գյումիշգերդանյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Արաբկիր) – – – – – – 211
103 (103). Պետրոս Կիկիշյանի պատմածը (ծնվ. 1906 թ., Արաբկիր) – – – – – – 212
104 (104). Սրբուհի Կիկիշյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Արաբկիր) – – – – – – 215

105 (105). Արփեն Աղաջանյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Արաբկիր) – – – – – – 215
106 (106). Մուշեղ Դեմիրճյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Արաբկիր) – – – – – – 216
107 (107). Հայկազ Աճեմյանի պատմածը (ծնվ. 1892 թ., Խարբերդ) – – – – – – 216
108 (108). Եղսա Խալաջանյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Խարբերդ) – – – – – – 217
109 (109). Հակոբ Հոլոբիկյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Խարբերդ) – – – – – – 218
110 (110). Սարգիս Խաչատրյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Խարբերդ) – – – – – – 222
111 (111). Սարգիս Մարտիրոսյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Խարբերդ) – – – – – – 224
112 (112). Թրվանդա Մուրադյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Խարբերդ) – – – – – – 226
113 (113). Ստեփան Ստեփանյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Խարբերդ) – – – – – – 227
114 (114). Փայլուն Տերտերյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Խարբերդ) – – – – – – 228
115 (115). Արամ Քյոսեյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Խարբերդ) – – – – – – 228
116 (116). Եղսա Անտոնյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Խարբերդ) – – – – – – 229
117 (117). Մարգարիտ Նաջարյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Խարբերդ) – – – – – – 230
118 (118). Ռոբեր Գալընյանի պատմածը (ծնվ. 1912 թ., Խարբերդ) – – – – – – 231
119 (119). Գարեգին Թուրուջիկյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Քղի) – – – – – – 232
120 (120). Հազարխան Թորոսյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Բալու) – – – – – – 232
121 (121). Կարապետ Ճարաշյանի պատմածը (ծնվ. 1906 թ., Բալու) – – – – – – 233
122 (122). Սարգիս Սարոյանի պատմածը (ծնվ. 1911 թ., Բալու) – – – – – – 236
123 (123). Արշալույս Թաշճյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Մալաթիա) – – – – – – 238
124 (124). Մարի Վարդանյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Մալաթիա) – – – – – – 238
125 (125). Վերգինե Նաջարյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Մալաթիա) – – – – – – 239
126 (126). Գրիգոր Էքիզյանի պատմածը (ծնվ. 1921 թ., Մալաթիա) – – – – – – 240
127 (127). Հովհաննես Քյոոօղլյանի պատմածը (ծնվ. 1904 թ., Տիգրանակերտ) – – – – – – 241
128 (128). Կարապետ Մկրտչյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Տիգրանակերտ) – – – – – – 242
129 (129). Եվա Թոփալյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Մերդին) – – – – – – 244
130 (130). Մարիամ Ախոյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Մերդին) – – – – – – 245
131 (131). Մարիամ Քարաջյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Ադիյաման) – – – – – – 245
132 (132). Խաչեր Աբլապուտյանի պատմածը (ծնվ. 1893 թ., Եդեսիա) – – – – – – 246
133 (133). Խորեն Աբլապուտյանի պատմածը (ծնվ. 1893 թ., Եդեսիա) – – – – – – 250
134 (134). Նվարդ Աբլապուտյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Եդեսիա) – – – – – – 250
135 (135). Հայկանուշ Տեր-Պետրոսյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Եդեսիա) – – – – – – 254
136 (136). Նվարդ Շիրինյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Եվդոկիա) – – – – – – 254
137 (137). Գյուրջի Քեշիշյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Զեյթուն) – – – – – – 254
138 (138). Հովսեփ Բշտիկյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Զեյթուն) – – – – – – 256
139 (139). Կարապետ Թոզլյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Զեյթուն) – – – – – – 262
140 (140). Եվա Չուլյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Զեյթուն) – – – – – – 266
141 (141). Սեդրակ Գայբակյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Զեյթուն) – – – – – – 266
142 (142). Սամվել Արջինյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Զեյթուն) – – – – – – 267
143 (143). Գայանե Ատուրյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Զեյթուն) – – – – – – 267
144 (144). Հարություն Ալբոյաջյանի պատմածը (ծնվ. 1904 թ., Ֆընդըջաղ) – – – – – – 269
145 (145). Ահարոն Մանկրյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Հաճըն) – – – – – – 271
146 (146). Երվանդ Քարամյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Հաճըն) – – – – – – 271
147 (147). Եբրուհի Ջրտըխյանի պատմածը (ծնվ. 1906 թ., Հաճըն) – – – – – – 272
148 (148). Վերգինե Մայիկյանի պատմածը (ծնվ. 1898 թ., Մարաշ) – – – – – – 273
149 (149). Մաքրուհի Հալաջյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Մարաշ) – – – – – – 275
150 (150). Լևոն Էվրենգեջյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Մարաշ) – – – – – – 275
151 (151). Արամ Մոմջյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Մարաշ) – – – – – – 276
152 (152). Գևորգ Կարամանուկյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Այնթապ) – – – – – – 277
153 (153). Հակոբ Ջրջյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Այնթապ) – – – – – – 277
154 (154). Նուրիցա Քյուրքջյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Այնթապ) – – – – – – 278
155 (155). Կարապետ Կարամանուկյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Այնթապ) – – – – – – 279
156 (156). Մովսես Փաճոսյանի պատմածը (ծնվ. 1885 թ., Մուսա լեռ) – – – – – – 279
157 (157). Մովսես Բալաբանյանի պատմածը (ծնվ. 1891 թ., Մուսա լեռ) – – – – – – 282
158 (158). Հովհաննես Իփրեջյանի պատմածը (ծնվ. 1896 թ., Մուսա լեռ) – – – – – – 283
159 (159). Տոնիկ Տոնիկյանի պատմածը (ծնվ. 1898 թ., Մուսա լեռ) – – – – – – 285
160 (160). Աստուր Սուպուկյանի պատմածը (ծնվ. 1901 թ., Մուսա լեռ) – – – – – – 288
161 (161). Պետրոս Սաֆարյանի պատմածը (ծնվ. 1901 թ., Մուսա լեռ) – – – – – – 289
162 (162). Իսկուհի Կոշկարյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Մուսա լեռ) – – – – – – 289
163 (163). Գրիգոր Գյոզալյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Մուսա լեռ) – – – – – – 289
164 (164). Բենիամին Բիսլամյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Մուսա լեռ) – – – – – – 301
165 (165). Թովմաս Հաբեշյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Մուսա լեռ) – – – – – – 301
166 (166). Դավիթ Դավիթյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Մուսա լեռ) – – – – – – 302
167 (167). Սարգիս Ադամյանի պատմածը (ծնվ. 1906 թ., Մուսա լեռ) – – – – – – 303

168 (168). Մարիամ Բաղդիշյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Մուսա լեռ) – – – – – 304
169 (169). Գևորգ Չիֆթէյլանի պատմածը (ծնվ. 1909 թ., Մուսա լեռ) – – – – – 305
170 (170). Գարուն Անտոնյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Մուսա լեռ) – – – – – 306
171 (171). Ասատուր Մախուլյանի պատմածը (ծնվ. 1911 թ., Մուսա լեռ) – – – – – 306
172 (172). Հովհաննես Աբելյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Քեսաբ) – – – – – 309
173 (173). Գյուլինիա Մուսոյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Քեսաբ) – – – – – 311
174 (174). Հովհաննես Բոյնմշակյանի պատմածը (ծնվ. 1904 թ., Քեսաբ) – – – – – 311
175 (175). Մարտիրոս Գյոզալյանի պատմածը (ծնվ. 1898 թ., Բեյլան) – – – – – 314
176 (176). Սիրվարդ Գյոզալյանի պատմածը (ծնվ. 1906 թ., Բեյլան) – – – – – 314
177 (177). Հակոբ Փաշայանի պատմածը (ծնվ. 1907 թ., Բեյլան) – – – – – 314
178 (178). Հարություն Վարդանյանի պատմածը (ծնվ. 1887 թ., Դյորտյոլ) – – – – – 315
179 (179). Մարի Խալբուրդջյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Դյորտյոլ) – – – – – 316
180 (180). Գևորգ Տեր-Սահակյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Դյորտյոլ) – – – – – 317
181 (181). Սրբուհի Մակարյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Ադանա) – – – – – 317
182 (182). Միքայել Քեշիշյանի պատմածը (ծնվ. 1904 թ., Ադանա) – – – – – 318
183 (183). Արուսյակ Նեֆերյանի պատմածը (ծնվ. 1906 թ., Ադանա) – – – – – 320
184 (184). Վրեժ Էդյուրյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Ադանա) – – – – – 320
185 (185). Արուսյակ Վանեսյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Ադանա) – – – – – 320
186 (186). Պետրոս Քեշիշյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Տարսոն) – – – – – 321
187 (187). Ղազարոս Խրիմյանի պատմածը (ծնվ. 1911 թ., Տարսոն) – – – – – 321
188 (188). Սողոմոն Եթենիկյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Մերսին) – – – – – 322
189 (189). Կարապետ Եղյայանի պատմածը (ծնվ. 1898 թ., Կոնիա) – – – – – 322
190 (190). Սաթենիկ Գույումջյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Կոնիա) – – – – – 323
191 (191). Ներսես Գալբակյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Կոնիա) – – – – – 324
192 (192). Պայծառ Երկաթի պատմածը (ծնվ. 1887 թ., Կեսարիա) – – – – – 326
193 (193). Հարություն Ծուլիկյանի պատմածը (ծնվ. 1896 թ., Կեսարիա) – – – – – 329
194 (194). Աննա Նաջարյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Կեսարիա) – – – – – 329
195 (195). Արսեն Սվաջյանի պատմածը (ծնվ. 1901 թ., Կեսարիա) – – – – – 330
196 (196). Կարապետ Քելեկյանի պատմածը (ծնվ. 1904 թ., Էվերեկ) – – – – – 330
197 (197). Արփինե Բարթիկյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Աֆիոն-Գարահիսար) – – – 332
198 (198). Սարգիս Եթարյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Աֆիոն-Գարահիսար) – – – 334
199 (199). Ասատուր Մենեջյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Աֆիոն-Գարահիսար) – – – 335
200 (200). Սմբյուլ Բերբերյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Աֆիոն-Գարահիսար) – – – 335
201 (201). Գեղամ Խաչատրյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Աֆիոն-Գարահիսար) – – – 337
202 (202). Հովհաննես Պարոնյանի պատմածը (ծնվ. 1890 թ., Էսքիշեհիր) – – – – 337
203 (203). Եղիսաբեթ Գավգավյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Էսքիշեհիր) – – – – 338
204 (204). Սամվել Փաթրյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Էսքիշեհիր) – – – – – 339
205 (205). Հովհաննես Գասպարյանի պատմածը (ծնվ. 1902 թ., Էսքիշեհիր) – – – – 340
206 (206). Սառա Բերբերյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Էսքիշեհիր) – – – – – 342
207 (207). Ֆարնըմ Բուրսալյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Էսքիշեհիր) – – – – 343
208 (208). Հայկանուշ Չեշմեջյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Էսքիշեհիր) – – – – 343
209 (209). – Սինանյանի պատմածը (ծնվ. 1912 թ., Էսքիշեհիր) – – – – – 343
210 (210). Մարի Ոսկերչյանի պատմածը (ծնվ. 1913 թ., Զմյուռնիա) – – – – – 344
211 (211). Հովհաննես Վարժապետյանի պատմածը (ծնվ. 1901 թ., Ցոզղատ) – – – – 344
212 (212). Արշակուհի Պետրոսյանի պատմածը (ծնվ. 1903 թ., Ցոզղատ) – – – – 345
213 (213). Բարունակ Փափազյանի պատմածը (ծնվ. 1906 թ., Ցոզղատ) – – – – 348
214 (214). Վերոնիկա Բերբերյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Ցոզղատ) – – – – 351
215 (215). Անուշ Թոփալյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Ցոզղատ) – – – – – 357
216 (216). Հերմինե Տերտերյանի պատմածը (ծնվ. 1912 թ., Ցոզղատ) – – – – – 357
217 (217). Իսկուհի Հեթումյանի պատմածը (ծնվ. 1915 թ., Ստենոզ) – – – – – 358
218 (218). Ըննա Ճեմպերճյանի պատմածը (ծնվ. 1898 թ., Ամասիա) – – – – – 358
219 (219). Մեսրոպ Մինասյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Սամսուն) – – – – – 359
220 (220). Արտավազդ Կտրաժյանի պատմածը (ծնվ. 1901 թ., Ադաբազար) – – – – 360
221 (221). Աշոտ Օհանյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Ադաբազար) – – – – – 361
222 (222). Վազգեն Սադաթյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Ադաբազար) – – – – 362
223 (223). Հայկուհի Ազարյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Ադաբազար) – – – – 363
224 (224). Սիրվարդ Անդրեասյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Ադաբազար) – – – – 365
225 (225). Լուսիկ Բոդուրյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Ադաբազար) – – – – – 366
226 (226). Մարի Երկաթի պատմածը (ծնվ. 1910 թ., Ադաբազար) – – – – – 366
227 (227). Սիրենա Ալաճաճյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Ադաբազար) – – – – 366
228 (228). Մուշեղ Հակոբյանի պատմածը (ծնվ. 1890 թ., Նիկոմեդիա) – – – – – 368
229 (229). Բարուհի Զորեքյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Նիկոմեդիա) – – – – – 369
230 (230). Բարուհի Սիլյանի պատմածը (ծնվ. 1900 թ., Նիկոմեդիա) – – – – – 369

231 (231). Գեղեցիկ Եսայանի պատմածը (ծնվ. 1901 թ., Նիկոմեդիա) – – – – – 370
232 (232). Եվգինկե Փափազյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Նիկոմեդիա) – – – – – 370
233 (233). Հակոբ Թերզյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Նիկոմեդիա) – – – – – 371
234 (234). Անժել Սրապյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Բուրսա) – – – – – 371
235 (235). Դավիթ Դավթյանի պատմածը (ծնվ. 1908 թ., Բուրսա) – – – – – 372
236 (236). Ավետիս Նորիկյանի պատմածը (ծնվ. 1909 թ., Բուրսա) – – – – – 373
237 (237). Մելինե Թերզյանի պատմածը (ծնվ. 1905 թ., Բիլեջիկ) – – – – – 374
238 (238). Հայկուհի Բողչաջյանի պատմածը (ծնվ. 1910 թ., Քաստեմունի) – – – – 374
239 (239). Գևորգ Զուլալյանի պատմածը (ծնվ. 1907 թ., Չանաքկալե) – – – – – 375
240 (240). Դոլորես Զոհրապ–Լիպմանի պատմածը (ծնվ. 1892 թ., Կ. Պոլիս) – – – – 377

II. ՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՒՑՑՆԵՐ

1 (241). Անդրանիկ Զորավարը և Քյոսա բինբաշին – – – – – – – 380
2 (242). Կիլիկիայի կոտորածը – – – – – – – – 380
3 (243). Կիլիկիո քաղաքամայր Սիսի նշխարները – – – – – – – – 380
4 (244). Առևանգված Ավետարանը – – – – – – – – 381
5 (245). Վախեցած մոլլան– – – – – – – – – 382
6 (246). Թուրք բանտապահը և հայրս – – – – – – – – 382
7 (247). Թուրք Ահմեդը և հայրս – – – – – – – – 382
8 (248). Բեյլանցի մեր ընտանիքը – – – – – – – – 383
9 (249). Չաթ գյուղի Ինճեկաև Սամվելը – – – – – – – – 384
10 (250). Հորս պատմածները – – – – – – – – 384
11 (251). Քղեցի տիրուհին – – – – – – – – 386
12 (252). Հաճընցի Ծերենճյանները – – – – – – – – 387
13 (253). Փառանձեմին վրեժը – – – – – – – – 388
14 (254). Քեսաբցի Վիկտորը – – – – – – – – 388
15 (255). Հայուն ճակատագիրը – – – – – – – – 389
16 (256). «Էկիր իմ յոր հա՛յ մեռնիմ» – – – – – – – – 390
17 (257). Վարդերեսը – – – – – – – – – 391
18 (258). Մեծ հոր կտակը – – – – – – – – – 391
19 (259). «Թող լույս իջնա աևոր գերեզմանին» – – – – – – – – 391
20 (260). Անդրանիկ Փաշան – – – – – – – – 392
21 (261). Բալուցի Կիրակոսը – – – – – – – – 392
22 (262). Այնթապցի Սեդրակը – – – – – – – – 392
23 (263). Կեսարացի մեր գերդաստանը – – – – – – – – 393
24 (264). Եղեռնի Նախազգացումներ – – – – – – – – 394
25 (265). Մեր ընտանիքը – – – – – – – – – 394
26 (266). Կույր Զատիկը – – – – – – – – – 394
27 (267). Մեծ մայրիկս – – – – – – – – – 395
28 (268). Մերինները – – – – – – – – – 395
29 (269). Իմ դեդեիս գերդաստանը – – – – – – – – 396
30 (270). Աննայիս հիշատակը – – – – – – – – 396
31 (271). Խաթուն մայրիկը – – – – – – – – 396
32 (272). Տիկին Աղավնիս և Հայր սուրբը – – – – – – – – 397
33 (273). Հիս ամուսինը – – – – – – – – – 397
34 (274). Ուշացած հանդիպում – – – – – – – – 398
35 (275). Հայ մարդուն հայ սերը – – – – – – – – 398
36 (276). Հարությունը – – – – – – – – – 398
37 (277). Հավատափոխ Ումուդը – – – – – – – – 399
38 (278). Մենք՝ Կեսարացիներս – – – – – – – – 399
39 (279). Կեսուր մայրիկս – – – – – – – – – 399
40 (280). Մեր կորուստները – – – – – – – – 399
41 (281). Մեր Կարսը – – – – – – – – – 400
42 (282). Մեր եկեղեցիները – – – – – – – – 400
43 (283). Սվազի հայերը – – – – – – – – – 400
44 (284). Թուրք հազարապետին գաղտնիքը – – – – – – – – 400
45 (285). Ծատերուն ճակատագիրը – – – – – – – – 400
46 (286). Երկինքեն իջած լույսը – – – – – – – – 401
47 (287). Մահմեդական համշենցի հայերը – – – – – – – – 401
48 (288). Կառապան Մեհմեդը – – – – – – – – 401
49 (289). Թոսունը – – – – – – – – – 401
50 (290). Թուրքին օգնող հայը – – – – – – – – 402

III. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1. ՋՈՐԱՀԱՎԱՔԻ, ՋԻՆԱՀԱՎԱՔԻ ԵՎ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԼԻ ԵՐԳԵՐ

1 (291). Ջինվորի հրաժեշտը – – – – – – – – – 404
2 (292). Մնա՜ս բարյավ, քա՜ղցր մայրիկ – – – – – – – – – 404
3 (293). Ահա կերթամ, սիրե՜լի մայր – – – – – – – – – 404
4 (294). Սև ծովին վրա, մայրի՜կ – – – – – – – – – 404
5 (295). Մայրի՜կ, զիս զինվոր գրեցին – – – – – – – – – 404
6 (296). Ջինվորներին Բալու տարին – – – – – – – – – 405
7 (297). Մամի հավասը – – – – – – – – – 405
8 (298). Ընկերներս ղրկել եմ Ռուսաստան – – – – – – – – – 405
9 (299). Թուրքի բանակ երթալու եմ – – – – – – – – – 405
10 (300). Երկինք նայելս կուգա – – – – – – – – – 405
11 (301). Անա՜, օյանդը՛ր բէնի, գիդէյիմ թաալիմէ – – – – – – – – – 405
12 (302). – 26 (316). Ասքէրին շարքըլարը – – – – – – – – – 405
27 (317). Իգիթլէր ասքէրէ գիդիյօր դէյի – – – – – – – – – 405—407
28 (318). Էգինդէն աշայը զինջիր չէքդիլէր – – – – – – – – – 407
29 (319). Ղըշլաղըն ծնինդէ բիր բէյկիւք հավլու – – – – – – – – – 407
30 (320). Ղըշլաղըն ծնինդէ չիֆթ փընար աքար – – – – – – – – – 407
31 (321). Սիւրմի-սիւրմի իչի էրքէք ուշաքլը – – – – – – – – – 408
32 (322). Խուրշում քուրմուշ քօլլարընա – – – – – – – – – 408
33 (323). – 38 (328). Ուլան գլավու՛ր, դօղրու սէյլէ – – – – – – – – – 408
39 (329). Փրկիչին յօլլարը – – – – – – – – – 408—409
40 (330). Թույքը էկավ գեղը մտավ – – – – – – – – – 409
41 (331). Բանտարկյալի երգ – – – – – – – – – 409
42 (332). Բանտիս դռներն էին յոթը քարերով – – – – – – – – – 410
43 (333). Ղասաբ Միսաք – – – – – – – – – 410
44 (334). Հանիյադա բէնիմ թուզ-էքմէէիմ յիչէնլէր – – – – – – – – – 410
45 (335). Էֆէ-Թօրօս – – – – – – – – – 411

2. ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾԻ ԵՐԳԵՐ

1 (336). Հիւրրյէթ, ադալէթ, միւսավաթ, յաշասը՛ն միլլէթ – – – – – – – – 412
2 (337). Քալքը՛ն, ՀԷ՛յ, վաթանդաշլա՛ր – – – – – – – – – 412
3 (338). Ույա՛ն, սուլթա՛ն Համիդ, ույա՛ն – – – – – – – – – 412
4 (339). Փադիշահի օթուրմուշ թախդընդան բաքար – – – – – – – – – 413
5 (340). Ղըյմա Ադաճա – – – – – – – – – 413
6 (341). Ադաճայի կոտորածը – – – – – – – – – 413
7 (342). Ադաճայի ողբը – – – – – – – – – 413
8 (343). Ինչ որ տեսա ես իմ աչքով – – – – – – – – – 414
9 (344). Վասպուրական դու մեր գավառ – – – – – – – – – 414
10 (345). Անդոք-Ծովասար – – – – – – – – – 414
11 (346). Աղետ ողբերգական – – – – – – – – – 415
12 (347). – 18 (353). Վա՛յ, ամա՛ն – – – – – – – – – 415
19 (354). Բուրասը Վանդըր – – – – – – – – – 415
20 (355). Բուրասը Մուշդըր – – – – – – – – – 415
21 (356). Հավադա բուլութ յօք – – – – – – – – – 416
22 (357). Էրզինջան դուման օլդու – – – – – – – – – 416
23 (358). Ղանըը թէլլալ չարշըլարդա բաղըրդը – – – – – – – – – 416
24 (359). ՀԷ՛յ, աղալա՛ր, բօյլէ զուլում օլու՛ր մու – – – – – – – – – 416
25 (360). Կիլիկը բալէն – – – – – – – – – 416
26 (361). Եդեսիայի կոտորածը – – – – – – – – – 417
27 (362). Հալածված ենք Հայաստանի լեռներեն – – – – – – – – – 417
28 (363). Եփրատ գետն ալ եղավ, մայրի՜կ – – – – – – – – – 418
29 (364). Բլրուկն ալ կկանչե. գարու՜ն է, գարու՜ն – – – – – – – – – 418
30 (365). Դեր Զոր կերթանք շարվե-շարան – – – – – – – – – 418
31 (366). Սիւրգիւնիւն բայրաղը աչըլդը – – – – – – – – – 418
32 (367). – 101 (436). Դէր Զօր չծլիւնդէ – – – – – – – – – 418
102 (437). – 118 (453). Սիւրգիւնլիւք շարքըլարը – – – – – – – – – 418—426
119 (454). Էրմէնիներն քաղէրի – – – – – – – – – 427—428
120 (455). Մուրադըն չէվրէսի – – – – – – – – – 429
121 (456). Մարաշըն էրմէնիլէրի քօմիւրլէշդիլէր – – – – – – – – – 429
122 (457). Ցազըխլար օլդու էրմէնիլէրէ – – – – – – – – – 430
123 (458). Ծիմդի Ադաճայա գէթմէլի դէյիլ – – – – – – – – – 430
124 (459). Նէյէ՛ր գէլդի էրմէնիներն բաշընա – – – – – – – – – 431
125 (460). Մինք իլիր ինք դօնէն դիդէն – – – – – – – – – 431
126 (461). 1915 սէնէսինին զուլմու – – – – – – – – – 431
127 (462). Վարագա Սուրբ Խաչից – – – – – – – – – 432
128 (463). Աշխարհե աշխարհ ման եկա – – – – – – – – – 432
129 (464). Աքսորից վերադարձի երգ – – – – – – – – – 432
130 (465). Ասլանքեկը վառեցավ – – – – – – – – – 432
131 (466). Իզմիրին զուլմու – – – – – – – – – 433
132 (467). Իզմիրի աղետը – – – – – – – – – 433
133 (468). Սապես ցրվանք ամե՛ն կողմ – – – – – – – – – 433

3. ՈՐԴԵԿՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐԵՐԻ, ՈՐԲԻ ԵՎ ՈՐԲԱՆՈՑԻ ԵՐԳԵՐ

1 (469). Մուսան փախցրեց Ծաճնիկին – – – – – – – – – 434
2 (470). Մուսա-շուն տարավ հայոց Գյուլիզար – – – – – – – – – 434
3 (471). Առևանգված Պայծառիկը – – – – – – – – – 434
4 (472). Թուրքերը տարել են, որդի՛ս, հայոց կույսերը – – – – – – – – – 434
5 (473). Համբարձումին վերջին խոսքը – – – – – – – – – 434
6 (474). – 9 (477). Ես իմ յավրուիս կարո՛տ եմ, կարո՛տ – – – – – – – – – 434
10 (478). Քառասուն Մանկան քարերը – – – – – – – – – 435
11 (479). Սա դիմացիս լեռները – – – – – – – – – 435
12 (480). Ուրֆանցն էթրաֆը դումանլը դաղլար – – – – – – – – – 435
13 (481). Իսթիքամըն դար դըր յօլը – – – – – – – – – 435
14 (482). Արաբկիր յէնի յափը – – – – – – – – – 436
15 (483). Արաբալար չէքիլիր, յօղլէր բաղլանըր – – – – – – – – – 436
16 (484). Հալաթըն չէշմէի բուզ գիբի աքար – – – – – – – – – 436
17 (485). Ուռում Հէյէնին սուլարը սօու՛ք-սօու՛ք աքար – – – – – – – – – 436
18 (486). Ցէշիլ դուրբան օլալըմ գէչէն գօճնլէրէ, մայրի՛կ – – – – – – – – – 436
19 (487). Արադըղըմ չէշմէ բուզ գիբի աքար – – – – – – – – – 437
20 (488). Արադըղըմ չէշմէ բուզ գիբի աքար – – – – – – – – – 437
21 (489). Ծու դաղըն արդընդա էրմէնի քըզը վար – – – – – – – – – 437
22 (490). Ծու դաղըն արդընդա էրմէնի քըզը վար – – – – – – – – – 437
23 (491). Ծու դաղըն բաշընդա բիր քուզու մէլէր – – – – – – – – – 437
24 (492). Վարա, վարա վարդըմ շու քարա թաշա – – – – – – – – – 437
25 (493). Թէքէրդաղդա Բէշիքթաշ – – – – – – – – – 437
26 (494). Իստանբուլուն օրթասը՝ Բէշիքթաշ – – – – – – – – – 438
27 (495). Աննէ՛, բէնիմ պապամ յօ՞ք մու – – – – – – – – – 438
28 (496). Գիդէ՛ն, գիդէ՛ն, էրմէնի քըզլա՛ր – – – – – – – – – 438
29 (497). Թօւրք չաուշու վէ էրմէնի քըզը – – – – – – – – – 438
30 (498). Մուհաջիր քըզը – – – – – – – – – 438
31 (499). Ղարիբիմ – – – – – – – – – 439
32 (500). Առավոտուն կելլամ՝ աչքս չի բացվիր – – – – – – – – – 439
33 (501). Երկու ճյուղի արանքում եմ մնացեր – – – – – – – – – 439
34 (502). Մորմեն ալ կզատեն բյորփե գառները – – – – – – – – – 439
35 (503). Դալղա-դալղա կընե Պոլիսա ծովը – – – – – – – – – 439
36 (504). Դալղա-դալղա կընե Բեյրութի ծովը – – – – – – – – – 439
37 (505). Ամա՛ն, քույրի՛կ, ու՞ր էրթանք – – – – – – – – – 440
38 (506). Թուրքին խոսքով, անոր զոռով – – – – – – – – – 440
39 (507). Ճամփա՛ տվեք, Տավրոսի՛ լեռներ – – – – – – – – – 440
40 (508). Ճամփա՛ տվեք, Գյավուրի՛ լեռներ – – – – – – – – – 440
41 (509). Ա՛խ, իմ սև բախտ – – – – – – – – – 440
42 (510). Որբը ուր կերթա՝ դուռը կգոցեն – – – – – – – – – 440
43 (511). Ես աս աշխարհի էկա՝ հե՛չ չխնդացի – – – – – – – – – 440
44 (512). Գեր ոջիլներ, ձիհար ոջիլներ՝ անթիվ, անհամար – – – – – – – – – 440
45 (513). Գլուխդ կոտրի՛, Թալեա՛թ փաշա – – – – – – – – – 440
46 (514). Ես որբ տղեկմ՛ եմ – – – – – – – – – 440
47 (515). Ծնողներուց շուտ զրկվանք՝ քուր-ախպեր – – – – – – – – – 441
48 (516). Ա՛խ, ի՛նչ օրեր են – – – – – – – – – 441

49 (517). Ամըրկու ճամփեն – – – – – – – – – – 441
50 (518). Ամըրկացին էկավ՝ սաճաթը [illegible]ց – – – – – – – – 441
51 (519). Հըմլա մենք – – – – – – – – – 441
52 (520). Որբանոցին ճամփան քարոտ է, [illegible] – – – – – – – – 441
53 (521). Որբանոցին բակերը քարոտ են, [illegible] – – – – – – – – 441
54 (522). Որբանոցին վրայեն սև ղուշ մը անցավ – – – – – – – – 442
55 (523). Փաբլիկայինի էշիքը տաշած է – – – – – – – – 442
56 (524). Որբ հարսի հրաժեշտը – – – – – – – – 442
57 (525). Ելե՛ք, ելե՛ք, հա՛յ որբեր – – – – – – – – 442
58 (526). Մենք՝ Ջիբելլի ազգիվ սաներ – – – – – – – – 442
59 (527). Արմաշի հայ որբերը – – – – – – – – 442
60 (528). Բեշիկթաշի որբանոցը – – – – – – – – 443
61 (529). Անթիլիասի որբերն ենք մենք – – – – – – – – 443
62 (530). Մեր շա՜տ սիրելի, գեղեցիկ Անթիլիաս – – – – – – – – 443

4. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԵՐԳԵՐ ՈՒ ՎԻՊԵՐԳԵՐ

1 (531). Սասուն Էլավ, ապստամբեց – – – – – – – – – 443
2 (532). Ա՜խ, Վասպուրական – – – – – – – – – 444
3 (533). Բիթլիս քաղաք՝ շատ լեռնային – – – – – – – – 444
4 (534). Դ&ձւշման գոկօ, զէյթունցիդ%՛ք – – – – – – – – 444
5 (535). Զէյթունցա՛ ինք, զէյթունցա՛ – – – – – – – – 444
6 (536). Զէբէլ Մուսէն հարբը – – – – – – – – 445
7 (537). Գդրէչ Վարթուհէն – – – – – – – – 445
8 (538). Ույա՛ն, Մուսադա՛ղը, ույա՛ն – – – – – – – – 446
9 (539). Մենք մուսալեռցի քաջ կտրիճներ ենք – – – – – – – – 446
10 (540). Մեր մուսալեռցիք լրիվ հերոս են – – – – – – – – 447
11 (541). Սեբաստացու մարտակոչը – – – – – – – – 447
12 (542). Ուրֆանցն իգիթլէրի – – – – – – – – 447
13 (543). Հաճընն Էլի բաշ քալդըրմըշ – – – – – – – – 447
14 (544). Կաթօղիկօսդամն գէղդի քարա խաբէրը – – – – – – – – 447
15 (545). Ադուր փաշա – – – – – – – – 448
16 (546). Ցաշա՛ Մանուկ չաուշ – – – – – – – – 449
17 (547). Թօփալ Հագօփումն իգիթլընը – – – – – – – – 449
18 (548). Հաճընցն քաճրամանլարը – – – – – – – – 450
19 (549). Դօղամն բէյ իլէ Արամ չաուշ – – – – – – – – 450
20 (550). Հաճընցի Մուրադը – – – – – – – – 450
21 (551). Քաջերն աճա շարան-շարան – – – – – – – – 451
22 (552). Օդանավն էկավ մեծ ավետիսով – – – – – – – – 451
23 (553). Ո՛վ, հաճընցի քաջ պատանի – – – – – – – – 451
24 (554). Սողոմոն Թեհլերյանը – – – – – – – – 452
25 (555). Ա՜խ, հայրենիք – – – – – – – – 452
26 (556). Միացե՛ք, հայե՛ր, միացե՛ք – – – – – – – – 452

5. ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁ ԵՐԳԵՐ

1 (557). Անտեր թողինք Մշո անուշ դաշտ, դուրան – – – – – – – – 453
2 (558). Վան-Վասպուրական – – – – – – – – – 453
3 (559). Ավա՛ղ, Սուրմալու – – – – – – – – – 453
4 (560). Ճորոխի ափին – – – – – – – – – 453
5 (561). Ջէբէլմուսէն ղարիբը – – – – – – – – – 454
6 (562). Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան – – – – – – – – 454
7 (563). Մեր Քեսաբը – – – – – – – – – 455
8 (564). Հայրենի տուն – – – – – – – – – 455
9 (565). Օտարություն այսքան տարով – – – – – – – – 455
10 (566). Այսքան տարի թափառեցինք – – – – – – – – 455
11 (567). Ներգաղթի լուրը – – – – – – – – – 455
12 (568). Երևան երթալ կուզեմ – – – – – – – – 456
13 (569). Հայաստան երթալու եմ – – – – – – – – 456
14 (570). Հայաստան երթալ կուզեմ – – – – – – – – 456
15 (571). Հե՛յ ջան, Երևա՛ն – – – – – – – – 456
16 (572). Հայաստանըն դէսթանը – – – – – – – – 456
17 (573). Հայի երկիր, հայի հող – – – – – – – – 457
18 (574). Կարոտցեր եմ Հայրենիքիս – – – – – – – – 457
19 (575). Մերն է Կարսն ու Արդահան – – – – – – – – 457
20 (576). Ղարաբաղը մեր փոքրիկ – – – – – – – – 457
21 (577). Մեր հայ եղբայրնե՛ր, մենք շա՜տ լռեցինք – – – – – – – – 457
22 (578). Եկե՛ք, եղբայրնե՛ր, իրար միանանք – – – – – – – – 457

6. ԵՐԳԵՐԻ ՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 (579). Դէր Զօրումն իչինդէ – – – – – – – – – 458
2 (580). Սաբախդան քալքդըմ – – – – – – – – – 459
3 (581). Դեր Զոր կերթանք լալագին – – – – – – – – – 459
4 (582). Բուրասը Վանդըր– – – – – – – – – 459
5 (583). Բուրասը Մուշդըր– – – – – – – – – 460
6 (584). Էրզնջան դուման օլդու – – – – – – – – – 460
7 (585). Ադանայի ողբը – – – – – – – – – 461
8 (586). Հալածված ենք Հայաստանի լեռներեն – – – – – – – – 462
9 (587). Ա՜խ, Վասպուրական – – – – – – – – – 462
10 (588). Ավա՜ղ, Սուրմալու – – – – – – – – – 463
11 (589). Վարագա Սուրբ Խաչից – – – – – – – – – 464
12 (590). Մեր մուսալեռցիք լրիվ հերոս են – – – – – – – – 464
13 (591). Ո՛վ, հաճընցի քաջ պատանի – – – – – – – – 464
14 (592). Օդանավն էկավ – – – – – – – – – 465
15 (593). Ադուր փաշա – – – – – – – – – 465
16 (594). Ցաշա՛, Մանուկ չաուշ – – – – – – – – 466
17 (595). Ծնողներուց շուտ զրկվանք՝ քուր-ախպեր – – – – – – – – 466
18 (596). Որբանոցին վրայեն սև ղուշ մը անցավ – – – – – – – – 467
19 (597). Ամըրկու ճամփեն – – – – – – – – – 468
20 (598). Հըմլա մենք – – – – – – – – – 468
21 (599). Մեր շա՜տ սիրելի, գեղեցիկ Անթիլիաս – – – – – – – – 469
22 (600). Կարոտցեր եմ հայրենիքիս – – – – – – – – – 469

ՎԵՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ABOUT THE AUTHOR

ԲԱՌԱՐԱՆ – – – – – – – – – – – 470

ՄԱՆՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – – – – – – – – – – 478

SUMMARY *(ամփոփում անգլերեն)* – – – – – – – – – 488

RÉSUMÉ *(ամփոփում ֆրանսերեն)* – – – – – – – – – 489

ՎԵՐԺԻՆԵ ԳԱՌՆԻԿԻ ՍՎԱՋՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համակարգչային շարվածք՝
Հարությունի Մարության, Քնարիկ Ավագյան
Սրբագրիչ՝
Դորա Մարտիրոսյան
Գրքի ձևավորման, էջադրման, ձայնանիշերի համակարգչային շարվածքի
աշխատանքները կատարվել են
«ԱՄՐՈՑ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆՈՒՄ

«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ

Տպաքանակ՝ 1000

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱԿԱՆԱՏԵՍ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



Սենեքերիմ Կոզմանյան
(1882 թ., Սեբաստիա)



Մովսես Փանոսյան
(1885 թ., Մուսա լեռ)



Վարդան Մազմանյան
(1886 թ., Արդվին)



Ազնիվ Աղա-Չրաքյան
(1886 թ., Կ.Պոլիս)



Եղիազար Կարապետյան
(1886 թ., Սասուն)



Պայծառ Երկաթ
(1887 թ., Կեսարիա)



Պողոս Սուպկուկյան
(1887 թ., Մուսա լեռ)



Հովհաննես Պարոնյան
(1890 թ., Էսքիշեհիր)



Մուշեղ Հակոբյան
(1890 թ., Նիկոմեդիա)



Մովսես Բալաբանյան
(1891 թ., Մուսա լեռ)



Դոլորես Զոհրապ-Լիպման
(1892 թ., Կ.Պոլիս)



Խաչեր Աբլապուտյան
(1893 թ., Եդեսիա)



Խորեն Աբլապուտյան
(1893 թ., Եդեսիա)



Տոնական Տոնոյան
(1893 թ., Մուշ)



Օվսաննա Աբիկյան
(1893 թ., Նիկոմեդիա)



Հարություն Ծուլիկյան
(1896 թ., Կեսարիա)



Հովհաննես Իփրեջյան
(1896 թ., Մուսա լեռ)



Ընծա Ճեմպերճյան
(1898 թ., Ամասիա)



Կամսար Խաչատրյան
(1898 թ., Բայազետ)



Վերգինե Մայիկյան
(1898 թ., Մարաշ)



Տոնիկ Տոնիկյան
(1898 թ., Մուսա լեռ)



Համբարձում Սահակյան
(1898 թ., Սեբաստիա)



Վերժին Տաղավարյան
(1898 թ., Սեբաստիա)



Հարություն Մարտիկյան
(1899 թ., Խարբերդ)



Գևորգ Կարամանուկյան
(1900 թ., Այնթապ)



Խորեն Գյուլբենկյան
(1900 թ., Դևրիկ)



Գյուրջի Քեշիշյան
(1900 թ., Զեյթուն)



Սողոմոն Եթենիկյան
(1900 թ., Մերսին)



Բարուհի Սիլյան
(1900 թ., Նիկոմեդիա)



Արտավազդ Կտրաձյան
(1901 թ., Աղաբազար)



Հազարխան Թորոսյան
(1902 թ., Բալու)



Առաքել Թագոյան
(1902 թ., Դերջան)



Հովհաննես Գասպարյան
(1902 թ., Էսքիշեհիր)



Սոկրատ Մկրտչյան
(1901 թ., Բիթլիս)



Շողեր Տոնոյան
(1901 թ., Մուշ)



Պետրոս Սաֆարյան
(1901 թ., Մուսա լեռ)



Ներսես Գալբակյան
(1902 թ., Կոնիա)



Զաբել Վարդյան
(1902 թ., Մարաշ)



Սուրեն Սարգսյան
(1902 թ., Սեբաստիա)



Ասատուր Սուպուկյան
(1901 թ., Մուսա լեռ)



Գեղեցիկ Եսայան
(1901 թ., Նիկոմեդիա)



Անդրանիկ Սիմոնյան
(1902 թ., Ալաշկերտ)



Նուրիցա Քյուրքջյան
(1903 թ., Այնթապ)



Արփինե Բարթիկյան
(1903 թ., Ա.Գարահիսար)



Նվարդ Աբլապուտյան
(1903 թ., Եղեսիա)



Հովսեփ Բշտիկյան
(1903 թ., Զեյթուն)



Սեդրակ Գայբակյան
(1903 թ., Զեյթուն)



Կարապետ Թոզլյան
(1903 թ., Զեյթուն)



Եվա Չուլյան
(1903 թ., Զեյթուն)



Լորիս Պապիկյան
(1903 թ., Էրզրում)



Սարգիս Խաչատրյան
(1903 թ., Խարբերդ)



Գրիգոր Գյոզալյան
(1903 թ., Մուսա լեռ)



Արշակուհի Պետրոսյան
(1903 թ., Յոզղատ)



Հովհաննես Աբելյան
(1903 թ., Քեսաբ)



Գյուլինիա Մուսոյան
(1903 թ., Քեսաբ)



Միքայել Քեշիշյան
(1904 թ., Աղանա)



Գառնիկ Սվազլյան
(1904 թ., Կեսարիա)



Սեդրակ Հարությունյան
(1904թ., Մուշ)



Աղասի Քանքանյան
(1904 թ., Վան)



Հովհաննես Քյոռօղլյան
(1904 թ., Տիգրանակերտ)



Հարություն Ալբոյաջյան
(1904 թ., Ֆընդըջագ)



Անուշ Գասպարյան
(1905 թ., Արդվին)



Արշալույս Տեր-Նազարեթյան
(1905 թ., Բաբերդ)



Մարի Վարդանյան
(1905 թ., Մալաթիա)



Դավիթ Դավիթյան
(1905 թ., Մուսա լեռ)



Անդրեաս Գյուլանյան
(1905 թ., Շատախ)



Հայրիկ Մուրադյան
(1905 թ., Շատախ)



Վարսիկ Աբրահամյան
(1905 թ., Վան)



Միրակ Մանասյան
(1905 թ., Վան)



Պետրոս Կիկիշյան
(1906 թ., Արաբկիր)



Եբրուհի Ջրտղխյան
(1906 թ., Հաճըն)



Պատրիկ Սարոյան
(1906 թ., Վան)



Սարգիս Եթարյան
(1907 թ., Ա.Գարահիսար)



Ստեփան Ստեփանյան
(1907 թ., Խարբերդ)



Անժել Թեքեյան
(1907 թ., Կեսարիա)



Վերոնիկա Բերբերյան
(1907 թ., Յոզղատ)



Մկրտիչ Խաչատրյան
(1907 թ., Շ.Գարահիսար)



Գևորգ Ջուլալյան
(1907 թ., Չանաքկալե)



Ղազար Գևորգյան
(1907 թ., Վան)



Արծրուն Հարությունյան
(1907 թ., Վան)



Երվանդ Շիրակյան
(1907 թ., Վան)



Մաքրուհի Սահակյան
(1907 թ., Վան)



Հայկուհի Ազարյան
(1908 թ., Աղաբազար)



Դավիթ Դավթյան
(1908 թ., Բուրսա)



Մարիամ Տեր–Սկրտչյան
(1908 թ., Էրզրում)



Լևոն Էվրենգեջյան
(1908 թ., Մարաշ)



Հրանտ Գասպարյան
(1908 թ., Մուշ)



Հովհաննես Չաղրջյան
(1908 թ., Սեբաստիա)



Նշան Աբրահամյան
(1908 թ., Վան)



Սիլվա Բյուզանդյան
(1908 թ., Վան)



Քաջբերուհի Շահինյան
(1908 թ., Վան)



Վարդուհի Փոթիկյան
(1908 թ., Վան)



Լուսիկ Մարտիրոսյան
(1909 թ., Ալաշկերտ)



Սրբուհի Կիկիշյան
(1909 թ., Արաբկիր)



Աղավնի Սկրտչյան
(1909 թ., Բիթլիս)



Ավետիս Նորիկյան
(1909 թ., Բուրսա)



Գառնիկ Ստեփանյան
(1909 թ., Երզնկա)



Գայանե Ատուրյան
(1909 թ., Զեյթուն)



Իշխան Հայկազյան
(1909 թ., Էրզրում)



Սիրարփի Սվազլյան
(1909 թ., Կ.Պոլիս)



Արամ Մոմջյան
(1909 թ., Մարաշ)



Մարիամ Բաղդիշյան
(1909 թ., Մուսա լեռ)



Գևորգ Չիֆթչյան
(1909 թ., Մուսա լեռ)



Վարազդատ Հարությունյան
(1909 թ., Վան)



Մարի Երկաք
(1910 թ., Աղաբազար)



Նվարդ Գևորգյան
(1910 թ., Ալաշկերտ)



Նեկտար Գասպարյան
(1910 թ., Արդվին)



Ստեփան Հովակիմյան
(1910 թ., Արդվին)



Մասիս Կոջոյան
(1910 թ., Բաբերդ)



Ծաղիկ Չինիմյան
(1910 թ., Իգդիր)



Փեփրոնե Թումասյան
(1910 թ., Կարս)



Վերգինե Նաջարյան
(1910 թ., Մալաթիա)



Մեսրոպ Մինասյան
(1910 թ., Սամսուն)



Հովհաննես Դուդակյան
(1910 թ., Մուսա լեռ)



Արծվիկ Թերզյան
(1910 թ., Վան)



Ռեհան Մանուկյան
(1910 թ., Տարոն)



Կարապետ Մկրտչյան
(1910 թ., Տիգրանակերտ)



Սարգիս Սարոյան
(1911 թ., Բալու)



Սրբուհի Մուրադյան
(1911 թ., Բիթլիս)



Հրանտ Խոնդկարյան
(1911 թ., Իգդիր)



Աստուր Մախուլյան
(1911 թ., Մուսա լեռ)



Վարդգես Ալեքսանյան
(1911 թ., Վան)



Շողիկ Մկրտչյան
(1911 թ.,Վան)



Երանուհի Չափարյան
(1912 թ., Աղանա)



Նվարդ Մուրադյան
(1912 թ., Քիթլիս)



Խանումա Ջալիլ
(1912 թ., Կարս)



Փառանձեմ Տեր-Հակոբյան
(1912 թ., Կարս)



Թագուհի Հալապյան
(1912 թ., Մարաշ)



Դերենիկ Սարոյան
(1912 թ., Վան)



Մարի Ոսկերչյան
(1913 թ., Զմյուռնիա)



Աղասի Կարոյան
(1913 թ., Կարս)



Սահակ Բազյան
(1913 թ., Շատախ)



Էմմա Աստրյան
(1914 թ., Կարս)



Շաքե Ջուլալյան
(1914 թ., Կ.Պոլիս)



Վարդուհի Պետիկյան
(1916 թ., Կ.Պոլիս)



Զոհրապ Ղասաբյան
(1919 թ., Կ.Պոլիս)



Հակոբ Տեր-Պողոսյան
(1920 թ., Դ-յորտյոլ)



Մարիամ Ղասաբյան
(1921 թ., Բուրսա)



Գրիգոր Էքիզյան
(1921 թ., Մալաթիա)



Կիրակոս Դանիելյան
(1923 թ., Բալու)



Աղրիանե Ալաճաճյան
(1923 թ., Կ.Պոլիս)



Երվանդ Ալբարյան
(1923 թ., Բեյրութ)



Վահե Քիթապճյան
(1924 թ., Ալեքսանդրիա)



Նազենի Սաթամյան
(1926 թ., Բեյրութ)



Արտաշես Բալաբանյան
(1926 թ., Մուսա լեռ)



Մարիամ Միրզայան
(1927 թ., Թոմարզա)



Գևորգ Հեքիմյան
(1937 թ., Հալեպ)

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

բանահավաք, բանագետ, ժողովրդագետը ծնվել է 1934 թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, Հայոց ցեղասպանությունից մազապուրծ, գրող–հասարակական գործիչ Գառնիկ Սվազլյանի ընտանիքում: 1947 թ. ծնողների հետ հայրենադարձվել է Մայր Հայաստան:

1956 թ. «Գերազանցությամբ» ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Հայոց լեզվի և գրականության բաժինը: 1956 թ. անձնական նախաձեռնությամբ սկսել է գրի առնել և անհետ կորստից փրկել Արևմտահայաստանից, Կիլիկիայից և Անատոլիայից տարագրված հայրենադարձների հաղորդած բանահյուսական բազմազան ստեղծագործություններն ու Հայոց ցեղասպանությունից վերապրած ականատես–վկաների պատմած հուշերը:

1958 թվականից աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում: Ասպիրանտական ուսումնառության ընթացքում եղել է Մ. Աբեղյանի անվան անհատական թոշակառու: 1961 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, իսկ 1996 թվականից նաև ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան–ինստիտուտում: 1965 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1995 թ. դոկտորական թեզերը:

Մասնակցել է հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովների՝ հանդես գալով բանագիտությանը, ժողովրդագիտությանն ու Հայ Դատին առնչվող թեմաներով: Հեղինակ է նաև բազմաթիվ գիտական հրատարակությունների, որոնք լույս են տեսել Հայրենիքում և Սփյուռքում:



ABOUT THE AUTHOR

VERJINÉ SVAZLIAN, ethnographer and folklorist, was born in 1934 in Alexandria (Egypt) in the family of the writer and public man Karnik Svazlian, himself an eye-witness survivor of Turkish tyranny.

In 1947, she has been repatriated with her parents to the Motherland, Armenia. In 1956, she has graduated with honours from the Department of the Armenian Language and Literature of the Kh.Abovian Armenian State Pedagogical Institute. Beginning from 1956, she has, on her own initiative, started to write down and thereby saved from a total loss the various folklore creations communicated by the repatriates forcibly deported from Western Armenia, Cilicia and the Armenian-inhabited provinces of Anatolia, as well as the narrated memoirs of the eye-witness survivors of the Genocide.

Starting from 1958, she has worked at the M.Abeghian Institute of Literature of the Academy of Sciences of Armenia. During her post-graduate studies, she has been a M.Abeghian grant-aided student. From 1961, she has worked at the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of Armenia and, from 1996, also at the Museum-Institute of the Armenian Genocide of the National Academy of Sciences of the Republic of Armenia. She has maintained her Candidate thesis in 1965 and her thesis for a Doctor's Degree in 1995.

She has participated in republican and international conferences, discoursing upon folklore, ethnography and the Armenian Action. She is also the author of a number of scientific papers published in the Motherland and in the Diaspora.

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
PUBLICATIONS:

«Սարգիս Հայկունի. Կյանքն ու գործը», Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973:
«Արցախ-Ուտիք», Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973:
«Տարոն-Տուրուբերան», Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 12, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:
«Վան-Վասպուրական», Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 15, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1998:
«Մուսա լեռ», Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 16, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984 [1985 թ. արժանացել է ՀՍՍՀ ԳԱ Նախագահության *«Գովեստագրին»* և Մուսա լեռ Հայրենակցական միության շնորհած *«Պատվավոր Մուսալեռցի»* Ոսկե մեդալին]:
«Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1994:
«Մեծ Եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1995:
«Մեծ Եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1997:
"Геноцид в воспоминаниях и туркоязычных песнях западных армян." Изд. "Гитутюн" НАН РА, Ереван, 1997.
"The Armenian Genocide in the Memoirs and Turkish Language Songs of the Eye-Witness Survivors." "Gitutiun" Publishing House of the NAS RA, Yerevan, 1999.
«Պոլսահայոց բանահիւսութիւնը», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2000:
«Հայոց Ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2000 [2000 թ. ապրիլի 24-ին, Հայոց Ցեղասպանության 85-ամյակի առթիվ արժանացել է ՀՀ ԳԱԱ Նախագահության *«Պատվոգրին»* Հայկական Հարցի, Հայոց Ցեղասպանության և Սփյուռքահայության պատմության ուսումնասիրության բնագավառում գիտական հետազոտությունների համար, որոնք կարևոր ներդրում են հայ պատմագիտության մեջ»]:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1915-1922թթ.)

